

LIBRARY OF THE
Massachusetts
Bible Society
Boston University

School of Theology Library
Catalog No. A. 200. 4(2) / B 1923
Family **INDO-EUROPEAN**
Sub-Family **ANATOLIAN**
Branch -
Group -
Language **MODERN ARMENIAN**
Dialect **Western**
Locality **Asia Minor**
Contents **BIBLE**
Version **Revision of**
Translator
Published by **ABS**
Place **Constantinople**
Date **1923**
Accession No. **457**
Accession Date **May 14 1930**
Price **8ds / \$1.75**

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ

Գ Ի Ր Ք

ՀԻՆ ԵԻ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ




ԵՐՐԱՅԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐՆԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՆՍԵԱՆ

1923



Printed in
Constantinople, Turkey.

WASSYOHUSLTS
BIBLE SOCIETY



FOUNDED 1804

Յ Ա Ն Կ

Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ա Ց

| ԳԻՐՔ | Գլուխ | Երես |
|--------------------------|-------|------|
| Մենդոց | 50 | 1 |
| Ելից | 40 | 56 |
| Ղեկառացաց | 27 | 102 |
| Թուաց | 36 | 135 |
| Երկրորդ Օրինաց | 34 | 181 |
| Յեսուայ | 24 | 222 |
| Գաաաուորաց | 21 | 249 |
| Հուսթայ | 4 | 276 |
| Ա. Թագաուորաց | 31 | 280 |
| Բ. Թագաուորաց | 24 | 317 |
| Գ. Թագաուորաց | 22 | 348 |
| Դ. Թագաուորաց | 25 | 383 |
| Ա. Մնացորդաց | 29 | 417 |
| Բ. Մնացորդաց | 36 | 449 |
| Եզրասայ | 40 | 488 |
| Նէեմեայ | 43 | 499 |
| Եսթերայ | 10 | 515 |
| Յորայ | 42 | 524 |
| Սաղմոսաց | 150 | 561 |
| Աւակաց | 31 | 655 |
| Ժողովողի | 12 | 688 |
| Երգ Երգոց | 8 | 699 |

Մ Ա Ր Գ Ա Ր Է Ո Ւ Թ Ի Ի Ն

| | | |
|------------------------|----|-----|
| Եսայեայ | 66 | 704 |
| Երեմեայ | 52 | 775 |
| Ողբք Երեմեայ | 5 | 847 |
| Եզեկիելի | 48 | 854 |
| Դանիելի | 12 | 912 |
| Ովսեայ | 14 | 930 |
| Յովելեայ | 3 | 941 |
| Ամովսայ | 9 | 945 |
| Աբդիու | 1 | 953 |
| Յոֆանու | 4 | 954 |
| Միքիայ | 7 | 956 |
| Նաուումայ | 3 | 962 |
| Ամբակուումայ | 3 | 965 |
| Սափոնեայ | 3 | 968 |
| Անգեայ | 2 | 972 |
| Զաքարեայ | 14 | 974 |
| Մաղաբեայ | 4 | 984 |

| ԱՒԵՏԱՐԱՆ | Գլուխ | Երես |
|-----------------|-------|------|
| Հաս Մատթէոսի | 28 | 1 |
| Հաս Մարկոսի | 16 | 35 |
| Հաս Ղուկասու | 24 | 57 |
| Հաս Յովհաննու | 21 | 95 |
| Գործք Աւուքելոց | 28 | 123 |

Թ Ո Ւ Ղ Թ Պ Օ Ղ Ա Ս Ի Ա Ռ Ա Ք Ե Լ Ա Յ Ն

| | | |
|---------------------|----|-----|
| Ա. Հուսթայեցիս | 16 | 160 |
| Ա. Կորնթացիս Ա. | 16 | 175 |
| Ա. Կորնթացիս Բ. | 13 | 190 |
| Ա. Գաղատացիս | 6 | 200 |
| Ա. Եփեսացիս | 6 | 205 |
| Ա. Փիլիպպեցիս | 4 | 210 |
| Ա. Կոլոսացիս | 4 | 214 |
| Ա. Թեսաղոնիկեցիս Ա. | 5 | 217 |
| Ա. Թեսաղոնիկեցիս Բ. | 3 | 221 |
| Ա. Տիմոթէոս Ա. | 6 | 223 |
| Ա. Տիմոթէոս Բ. | 4 | 227 |
| Ա. Տիտոս | 3 | 230 |
| Ա. Փիլիմոն | 1 | 232 |
| Ա. Եբրայեցիս | 13 | 233 |

Թ Ո Ւ Ղ Թ

| | | |
|--------------------------|----|-----|
| Յակոբու Ընդհանրական | 5 | 244 |
| Պետրոսի Ա. Ընդհանրական | 5 | 248 |
| Պետրոսի Բ. Ընդհանրական | 3 | 252 |
| Յովհաննու Ա. Ընդհանրական | 5 | 255 |
| Յովհաննու Բ. | 1 | 259 |
| Յովհաննու Գ. | 1 | 259 |
| Յուդայի Ընդհանրական | 1 | 260 |
| Յայանութիւն Յովհաննու | 22 | 261 |

Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա, արու և էգ ստեղծեց զանոնք: 28 - Ու Աստուած օրհնեց զանոնք, և Աստուած անոնց ըսաւ, Աճեցէք ու շատցէք ու երկիրը լեցուցէք, և անոր տիրեցէք. ու ծովու ձուկերուն ու երկինքի թռչուններուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն իշխեցէք:

29 - Եւ ըսաւ Աստուած, Ահա ձեզի տուի բոլոր երկրի վրայ եղած ամէն սերմ՝ ունեցող խոտը, ու ամէն ծառը՝ որուն մէջ սերմ՝ ասւող ծառի պտուղ կայ, ձեզի կերակուր պիտի ըլլայ. 30 - Ու երկրի բոլոր գազաններուն ու երկինքի բոլոր թռչուններուն և երկրի վրայ կենդանութեան շրջանը ունեցող բոլոր սողուններուն՝ ամէն կանանչ խոտը կերակուրի համար ք-ի. ու այնպէս եղաւ:

31 - Եւ Աստուած իր ամէն ըրածը տեսաւ, և ահա շատ բարի էր: Եւ իրեկուն ու առտու ըլլալով՝ վեցերորդ օրը եղաւ:

ԳԼ. Բ

Ու կատարուեցան երկինք ու երկիր և անոնց ամէն *գարգերը: 2 - Եւ Աստուած իր ըրած գործերը եօթներորդ օրը լմնաց, ու եօթներորդ օրը հանգստացաւ իր ըրած բոլոր գործերէն: 3 - Եւ օրհնեց Աստուած եօթներորդ օրը, ու սրբեց զանիկա. վասն զի անոր մէջ հանգստացաւ իր ամէն գործերէն՝ զորոնք Աստուած ստեղծեց ու ըրաւ:

4 - Ասանք են երկինքի ու երկրի ծրնունդները՝ անոնց ստեղծուած առեն, այն օրը որ Տէր Աստուած երկիրն ու երկինքը ըրաւ, 5 - Ու դաշտին բոլոր բոյսերը՝ գեռ երկրի վրայ չեղած, և դաշտին բոլոր խոտը՝ գեռ չըուսած. քանզի Տէր Աստուած երկրի վրայ տակաւին անձրև բերած չէր, ու գետինը գործելու մարդ չկար. 6 - Հապա երկրէ շոգի կ'ելլէր ու գետնին բոլոր երեսը կը ջրէր: 7 - Եւ Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը, և անոր ունգունքներուն կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ:

8 - Եւ Տէր Աստուած արեւելքին

կողմը Եդեմի մէջ պարտէզ տնկեց, ու իր շինած մարդը հոն դրաւ: 9 - Եւ Տէր Աստուած գետնէն՝ տեսնելու հաճելի և ուտելու աղէկ ամէն ծառը, ու պարտէզին մէջտեղը կենաց ծառը, և բարին ու չարը գիտնալու ծառն ալ բուսցուց: 10 - Եւ պարտէզը ջրելու համար Եդեմէ գետ մը կ'ելլէր, ու անկէ չորս գլխու կը բաժնուէր: 11 - Մէկուն անունը Փիսոն է. ասիկա Եւրպայի բոլոր երկիրը կը պտրտի, ուր ոսկի կայ. 12 - Եւ այն երկրին ոսկին ազնիւ է. *սուտակ ու եղնգնաքար կայ հոն: 13 - Ու երկրորդ գետին անունը Գեհոն է. ասիկա Գուշի բոլոր երկիրը կը պտրտի: 14 - Ու երրորդ գետին անունը Տիգրիս է. ասիկա Ասորեստանի արեւելեան կողմը կ'երթայ: Եւ չորրորդ գետը Եփրատ է: 15 - Եւ Տէր Աստուած առաւ մարդը, ու Եդեմի պարտէզին մէջ դրաւ, որպէս զի զանիկա գործէ ու պահէ: 16 - Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝ ըսելով, Պարտէզին ամէն ծառէն համարձակ կեր. 17 - Բայց բարւոյ ու չարի գիտութեան ծառէն մի ուտեր. քանզի այն օրը որ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս:

18 - Եւ Տէր Աստուած ըսաւ, Աղէկ չէ որ †Ադամ՝ մինակ ըլլայ. անոր օգնական մը ընեմ՝ իրեն յարմար: 19 - Եւ Տէր Աստուած դաշտին բոլոր գազանները ու երկինքի բոլոր թռչունները հողէն շինեց, և Ադամի առջեւ բերաւ, որպէս զի տեսնէ թէ անոնց ի՛նչ անուն կը դնէ. և Ադամ ի՛նչ անուն որ դրաւ շնչաւոր կենդանիի, այն եղաւ անոր անունը: 20 - Եւ Ադամ՝ բոլոր անասուններուն ու երկինքի թռչուններուն և դաշտի բոլոր գազաններուն անուններ դրաւ. բայց Ադամի իրեն յարմար օգնական մը չգտնուեցաւ: 21 - Եւ Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ Ադամի վրայ, ու անիկա քնացաւ. և անոր կողին ոսկորներէն մէկը առաւ ու անոր տեղը միս լեցուց. 22 - Եւ Տէր Աստուած Ադամէ առած կողին ոսկորը կին շինեց, ու զանիկա Ադամի բերաւ: 23 - Եւ Ադամ՝ ըսաւ, Հիմա ասիկա ոսկորէս ոսկոր ու մարմինէս մարմին է. ասիկա ‡կին կոչուի, քանզի եր †այրէն առնուեցաւ: 24 - Անոր հա-

*Եբբ. զօրքը

†Կ-մ, ազրիւր

*Եբբ. պտուխի
‡Եբբ. իշա

†Կ-մ, մարդը
‡Եբբ. իշ

մար այրը պիտի ձգէ իր հայրը ու իր մայրը, և իր կնոջ պիտի յարի. ու մէկ մարմին պիտի ըլլան: 25 - Եւ Ադամ ու իր կինը երկուքն ալ մերկ էին, ու չէին ամչնար:

ԳԼ. Գ.

Եւ Տէր Աստուծոյ ըրած դաշտի բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը. ու կնոջ ըսաւ, Իրաւ Աստուած ըսա՞ւ թէ Պարտէզին ամէն ծառէն պիտի չուտէք: 2 - Եւ կինը օձին ըսաւ, Պարտէզին ծառերուն պտուղէն կ'ուտենք. 3 - Բայց պարտէզին մէջ տէրը եղած ծառին պտուղէն՝ Աստուած ըսաւ, Անկէ մի ուտէք, եւ անոր մի դպչիք, որպէս զի չմեռնիք: 4 - Եւ օձը կնոջ ըսաւ, Այ թէ անշուշտ պիտի մեռնիք. 5 - Բանզի Աստուած գիտէ թէ այն օրը որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին, և աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով:

6 - Եւ կինը տեսնելով որ ծառը աղէկ էր կերակուրի համար, և հաճելի՝ աչքերուն, ու փոփաքելի՝ *իմաստուն ընելու՝ համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ, և իրեն հետ իր երկանն ալ տուաւ, և անկիա կերաւ: 7 - Աւ անոնց երկուքին աչքերը բացուեցան, ու մերկ ըլլալնին գիտցան. և թզենիի տերեւներ կարեցին, ու իրենց ծածկոցներ ըրին: 8 - Եւ օրուան զով ատենը պարտէզին մէջ պարտող Տէր Աստուծոյ ձայնը լսեցին. և Ադամ ու իր կինը Տէր Աստուծոյ երեսէն պարտէզին ծառերուն մէջ պահուեցան: 9 - Եւ Տէր Աստուած Ադամը կանչեց, ու ըսաւ անոր, Ո՛ւր ես: 10 - Եւ անկիա ըսաւ, Պարտէզին մէջ քու ձայնդ լսեցի, ու վախցայ, վասն զի մերկ էի, ու պահուեցայ: 11 - Եւ Աստուած ըսաւ, Ո՞վ պատմեց քեզի քու մերկ ըլլալդ. արդեօք կերա՞ր այն ծառէն՝ որու համար քեզի պատուիրեցի որ անկէ չուտես: 12 - Եւ Ադամ ըսաւ, Այն կինը՝ զոր ինծի հետ ըլլալու տուիր, ան ինծի տուաւ ծառէն, ու ես կերայ: 13 - Եւ Տէր Աստուած ըսաւ կնոջ, Ի՞նչ է այս քու ըրածդ. և կինը ըսաւ, Օձը

զիս խաբեց, ու ես կերայ: 14 - Եւ Տէր Աստուած օձին ըսաւ, Չայս ընելուդ համար՝ ամէն անասուններէն և դաշտին ամէն գազաններէն անիծեալ ըլլաս. փորիդ վրայ քալես, ու կեանքիդ բոլոր օրերը հող ուտես: 15 - Եւ քու կինն ու կնոջ մէջտեղ, և քու սերունդիդ ու անոր սերունդին մէջտեղ թշնամութիւն պիտի դնեմ. ան քու գլուխդ պիտի *ջախջախէ, և դուն անոր գարշապարը պիտի խայթես. 16 - Եւ կնոջ ըսաւ, Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցնեմ. ցաւով զաւակ ծնանիս, ու †երկանդ հնազանդ ըլլաս, ու անկիա քու վրագիչիս: 17 - Եւ Ադամի ըսաւ, Արովհետեւ դուն քու կնոջդ խօսքը մտիկ ըրիր, և այն ծառէն կերար, որու համար պատուիրեցի քեզի՝ ըսելով, Չուտես անկէ, երկիր քու պատճառաւ անիծեալ ըլլայ. կեանքիդ բոլոր օրերուն մէջ՝ նեղութիւնով ուտես անկէ. 18 - Եւ փուշ ու տատասկ բուսցրնէ քեզի, և դաշտին խոտը ուտես: 19 - Երեսիդ քրտինքովը ուտես *հացդ, մինչև գետինը դառնալդ, ուրկէ առնուեցար. քանզի հող էիք դուն, ու հողի պիտի դառնաս:

20 - Եւ Ադամ իր կնոջ անունը Եւա դրաւ. վասն զի ամէն կենդանութիւն ունեցողներուն մայրը անկիա էր: 21 - Եւ Տէր Աստուած Ադամի ու անոր կնոջ կաշիէ հանդերձներ շինեց, ու անոնց հագցուց: 22 - Եւ Տէր Աստուած ըսաւ, Ահա Ադամ՝ մեզմէ մէկուն պէս եղաւ՝ բարին ու չարը գիտնալու. և հիմա չըլլայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց ծառէն ալ առնէ և ուտէ ու յաւիտեան ապրի. 23 - Աւտի Տէր Աստուած Եդեմի պարտէզէն դուրս ըրաւ զանկիա, որպէս զի երկիրը գործէ, ուրկէ առնուեցաւ: 24 - Այսպէս վճնտեց Ադամը. ու Եդեմի պարտէզին արեւելեան կողմէն քերովքները ու ամէն կողմ՝ դարձող բոցեղէն սուրը դրաւ, կենաց ծառի՝ ճամբան պահելու համար:

*Եբբ. զարնէ
†Եբբ. զարնես
‡Եբբ. փոփաքդ էրկանդ ըլլայ
|| Այսինքն, կեանք

*Կա՛մ, տեսնելու

ԳԼ. Դ

Եւ Ադամ գիտցաւ իր Եւա կինը, ու ան յղացաւ, ու *կայէնը ծնաւ, և ըսաւ, Մարդ ստացայ Տէրոջմէն: 2 - Եւ դարձեալ անոր Հաբէլ եղբայրը ծնաւ. և Հաբէլ ոչխարներու հովիւ եղաւ, բայց կայէն երկիրը կը գործէր: 3 - Ու եղաւ որ ժամանակէ մը ետքը կայէն երկրի պտուղէն Տէրոջը ընծայ բերաւ: 4 - Եւ Հաբէլ ինք ալ իր ոչխարներուն առջինեկներէն ու անոնց պարարտներէն բերաւ. և Տէրը Հաբէլի ու անոր ընծային նայեցաւ, 5 - Բայց կայէնի ու անոր ընծային չնայեցաւ. ուստի կայէն խիստ բարկացաւ ու երեսը կախեց: 6 - Եւ Տէրը կայէնի ըսաւ, Ինչո՞ւ բարկացար, ու ինչո՞ւ երեսդ կախեցիր. 7 - Եթէ ազէկ ընես, ընդունելի չըլլար. և եթէ ազէկ չընես, †մեղքը դրանը քով պառկած է. և անիկա քեզի պիտի հնազանդի, ու դուն անոր պիտի իշխես:

8 - Եւ կայէն իր Հաբէլ եղբորը հետ խօսեցաւ. ու եղաւ որ երբ անոնք դաշտն էին, կայէն իր Հաբէլ եղբորը վրայ ելաւ ու սպաննեց զանիկա: 9 - Եւ Տէրը կայէնի ըսաւ, Ո՞ւր է քու եղբայրդ Հաբէլ: Եւ անիկա ըսաւ, Չեմ գիտեր. միթէ ես իմ եղբորս պահապանն եմ: 10 - Եւ Տէրը ըսաւ, Ի՞նչ ըրիր. քու եղբորդ արիւնին ձայնը գետնէն ինծի կը բողոքէ: 11 - Եւ հիմա դուն անիծեալ ես երկրէ, որ իր բերանը բացաւ եղբորդ արիւնը քու ձեռքէդ ընդունելու: 12 - Երբ երկիրը գործես, այսուհետեւ իր արդիւնքը չտայ քեզի. երկրի մէջ աստանդական ու թափառական ըլլաս: 13 - Եւ կայէն ըսաւ Տէրոջը, †իմ մեղքս թողութիւն գտնելու չափէն՝ աւելի մեծ է: 14 - Ահա զիս այսօր երկրի երեսէն վռնտեցիր, ու ես քու երեսէդ պիտի պահուիմ, ու երկրի մէջ աստանդական ու թափառական պիտի ըլլամ. և պիտի ըլլայ որ ով որ զիս գտնէ, զիս պիտի մեռցնէ: 15 - Եւ Տէրը ըսաւ անոր, Աւրեմն ով որ

*Այսինքն, ստացուած
 †կ-՝, մեղքի պատարագը
 †կ-՝, իմ պատիժս կրելու կարողութենէս

կայէնը սպաննէ, անկէ եօթնպատիկ վրէժ առնուի: Եւ Տէրը նշան մը դրաւ *կայէնի, որպէս զի զանիկա գտնող մէկը չմեռցնէ զանիկա:

16 - Եւ կայէն Տէրոջը առջեւէն ելաւ, ու Եդեմի արեւելեան կողմը, Նայիգ երկիրը, բնակեցաւ: 17 - Եւ կայէն իր կինը գիտցաւ, ու անիկա յղացաւ ու Ենովքը ծնաւ. և քաղաք մը կը շինէր այն քաղաքին անունը իր որդւոյն անուանը պէս Ենովք դրաւ: 18 - Եւ Ենովք ծնաւ Գայիրադը, և Գայիրադ ծնաւ Մայիելը, ու Մայիել ծնաւ Մաթուսայէլը, և Մաթուսայէլ ծնաւ Ղամէքը: 19 - Եւ Ղամէք իրեն երկու կին առաւ. մէկուն անունը Ադդա, ու միւսին անունը Սելլա էր: 20 - Եւ Ադդա ծնաւ Յոբէլը, որ վրանաբնակներուն ու հովիւներուն հայրն էր: 21 - Ու անոր եղբորը անունը Յոբալ էր, որ բոյոր քնարահարներուն ու սրնգահարներուն հայրն էր: 22 - Եւ Սելլա ալ ծնաւ Թոբէլկայէնը, որ պղնձէ ու երկաթէ ամէն գործիք կը շինէր. և Թոբէլկայէնի քոյրը Նաամա էր: 23 - Եւ Ղամէք իր կիններուն, Ադդայի ու Սելլայի, ըսաւ, Չայնա լսեցէք, ով Ղամէքի կիները, ականջ դրէք իմ խօսքիս. վասն զի ես մարդ մը սպաննեցի ինծի վէրք, ու երիտասարդ մը՝ ինծի հարուածք ըլլայով: 24 - Եթէ կայէնի համար եօթնպատիկ վրէժ առնուի, Ղամէքի համար ալ եօթանասուներեօթն անգամ:

25 - Եւ Ադամ դարձեալ իր կինը գիտցաւ, ու անիկա որդի մը ծնաւ, և անոր անունը †Սէթ դրաւ. քանզի ըսաւ, Աստուած ինծի կայէնի մեռցուցած Հաբէլին տեղ ուրիշ սերունդ մը տուաւ: 26 - Եւ Սէթ ալ որդի մը ծնաւ, ու անոր անունը Ենովս դրաւ. այն ատեն սկսուեցաւ Տէրոջը †անունը կանչել:

ԳԼ. Ե

Այս է Ադամի ազգաբանութեան գիրքը: Այն օրը որ Աստուած մարդը ստեղծեց, Աստուծոյ պատկերովս ըրաւ զանիկա. 2 - Աբու և էգ ստեղծեց

*կ-՝, կայէնի վրայ
 †Այսինքն, գրուած
 †կ-՝, անունովը

զանոնք և օրհնեց զանոնք, ու անոնց ատեղձման օրը անոնց անուներ *Ադամ՝ դրաւ:

3 - Եւ Ադամ՝ հարիւր երեսուն տարի ապրեցաւ, և իր նմանութիւնովը՝ իր պատկերին պէս «բոյ ծնաւ, և անոր անուներ Աէթ դրաւ: 4 - Եւ Ադամի օրերը Աէթը ծնանելէն ետքը ութ հարիւր տարի եղան, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 5 - Եւ Ադամի կեանքին բոլոր օրերը ինը հարիւր երեսուն տարի եղան, ու մեռաւ:

6 - Եւ Աէթ հարիւր հինգ տարի ապրեցաւ, ու ծնաւ Ենովը: 7 - Եւ Աէթ Ենովը ծնանելէն ետքը ութ հարիւր եօթը տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 8 - Եւ Աէթի բոլոր օրերը ինը հարիւր տասուերկու տարի եղան, ու մեռաւ:

9 - Ու Ենովս իննսուն տարի ապրեցաւ, և Կայնանը ծնաւ: 10 - Ու Ենովս Կայնանը ծնանելէն ետքը ութ հարիւր տասնըհինգ տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 11 - Ու Ենովսի բոլոր օրերը ինը հարիւր հինգ տարի եղան, ու մեռաւ:

12 - Եւ Կայնան եօթանասուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Մաղաղիէլը:

13 - Եւ Կայնան Մաղաղիէլը ծնանելէն ետքը ութ հարիւր քառասուն տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 14 - Եւ Կայնանի բոլոր օրերը ինը հարիւր տասը տարի եղան, ու մեռաւ:

15 - Եւ Մաղաղիէլ վաթսուներհինգ տարի ապրեցաւ, ու ծնաւ Յարեգը:

16 - Եւ Մաղաղիէլ Յարեգը ծնանելէն ետքը ութ հարիւր երեսուն տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 17 - Եւ Մաղաղիէլի բոլոր օրերը ութ հարիւր իննսուներհինգ տարի եղան, ու մեռաւ:

18 - Եւ Յարեթ հարիւր վաթսուներկու տարի ապրեցաւ, ու ծնաւ Ենովքը: 19 - Եւ Յարեգ Ենովքը ծնանելէն ետքը ութ հարիւր տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 20 - Եւ Յարեգի բոլոր օրերը ինը հարիւր վաթսուներկու տարի եղան, ու մեռաւ:

21 - Ու Ենովք վաթսուներհինգ տարի ապրեցաւ, և ծնաւ Մաթուսաղան:

22 - Ու Ենովք Մաթուսաղան ծնանելէն ետքը երեք հարիւր տարի Աստուծոյ հետ քալեց, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 23 - Եւ Ենովքի բոլոր օրերը երեք հարիւր վաթսուներհինգ տարի եղան: 24 - Ու Ենովք Աստուծոյ հետ քալեց, և չէր գտնուեր, քանզի Աստուած առաւ շանհկա:

25 - Եւ Մաթուսաղա հարիւր ութսուներեօթը տարի ապրեցաւ, ու ծնաւ Ղամէքը: 26 - Եւ Մաթուսաղա Ղամէքը ծնանելէն ետքը եօթը հարիւր ութսուներկու տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 27 - Եւ Մաթուսաղայի բոլոր օրերը ինը հարիւր վաթսուներինը տարի եղան ու մեռաւ:

28 - Եւ Ղամէք հարիւր ութսուներկու տարի ապրեցաւ, ու որդի մը ծնաւ: 29 - Եւ անոր անուներ *Նոյ դրաւ՝ ըսելով, Ասիկա մեզ պիտի հանգստացնէ մեր գործերէն ու մեր ձեռքերուն աշխատութենէն, զոր Տէրոջը անիծած երկրին պատճառաւ է իրեն: 30 - Եւ Ղամէք Նոյը ծնանելէն ետքը հինգ հարիւր իննսուներհինգ տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 31 - Եւ Ղամէքի բոլոր օրերը եօթը հարիւր եօթանասուներեօթը տարի եղան, ու մեռաւ:

32 - Եւ Նոյ հինգ հարիւր տարեկան եղաւ. և Նոյ ծնաւ Աէմը, Բամբը ու Յարեթը:

ԳԼ. 2

Եւ եղաւ որ երբ մարդիկ երկրի վրայ շատնալ սկսեցին, ու իրենց աղջիկներ ծնան, 2 - Աստուծոյ որդիները մարդոց աղջիկներուն գեղեցիկ ըլլալը տեսնելով՝ ամէն իրենց ընտրածներէն իրենց կիներ կ'առնէին: 3 - Եւ Տէրը ըսաւ, Իմ հոգիս միշտ մարդու վրայ պիտի չչմնայ. վասն զի անհկա մարմին է. բայց անոր օրերը հարիւր քսան տարի ըլլան: 4 - Այն օրերը երկրի մէջ հսկաներ կային. և անկէ ետքն ալ երբ Աստուծոյ որդիները մարդոց աղջիկներուն կը մտնէին, որոնք անոնց զաւակներ կը ծնանէին, ասոնք ի վաղուց հետէ զօրաւոր «-

*Այսինքն, մարդ

*Այսինքն, հանգստութիւն
†Եբր. շաիրէ

անուանի մարդիկներ էին : 5 - Եւ Տէրը երբ տեսաւ որ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շատնար, և անոնց սրտին խորհուրդներուն բոլոր գաղափարները միայն չար էին ամէն օր, 6 - Տէրը երկրի վրայ մարդը ստեղծելուն զգջաց, ու իր սրտին մէջ տրտմեցաւ. 7 - Եւ Տէրը ըսաւ, Երկրի վրայէն ջնջեմ մարդը զոր ստեղծեցի, մարդէն մինչև անասունները և սողունները ու երկինքի թռչունները, վասն զի զանոնք ստեղծելուս կը զրդջամ : 8 - Բայց Նոյ Տէրոջը առջև շնորհք գտաւ :

9 - *Այս է Նոյի պատմութիւնը՝. Նոյ իր դարուն մարդոցը մէջ արդար «- կատարեալ մարդ մըն էր. Նոյ Աստուծոյ ճեալեց : 10 - Եւ Նոյ ծնաւ երեք որդի, Սէմը, Գամը ու Յաֆեթը : 11 - Աւ երկիր Աստուծոյ առջև ապականեցաւ և երկիր անիրաւութեամբ լեցուեցաւ : 12 - Եւ Աստուած երկրի վրայ նայեցաւ, և ահա ապահանած էր, վասն զի երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան ապականեր էր : 13 - Եւ Աստուած ըսաւ Նոյի, Բոլոր մարմինին վերջը հասած է իմ առջեւ, քանզի երկիր անոնց Ժիջոցաւ անիրաւութեամբ լեցուեցաւ. և ահա ես զանոնք երկրի ճեալ պիտի աւերեմ : 14 - Արդ դուն քեզի խիթարեր փայտէ տապան մը շինէ. տապանին մէջ խորշեր շինէ, և զանիկա ներսէն ու դուրսէն ձիւթով ծեփէ : 15 - Եւ այս ձեւով շինես զանիկա. տապանին երկայնութիւնը երեք հարիւր կանգուն, լայնութիւնը յիսուն կանգուն, և բարձրութիւնը երեսուն կանգուն ըլլայ : 16 - Տապանին յլուսամուտ շինես, ու զանիկա մէկ կանգունի չափով լմնցնես վերէն, և տապանին դուռը մէկ կողմէն դնես. ներքնատունով, միջնատունով ու վերնատունով շինես զանիկա : 17 - Եւ ես ահա երկրի վրայ ջրհեղեղ պիտի բերեմ, երկինքի տակ կենդանութեան շունչ ունեցող բոլոր մարմինը կորսնցնելու համար. երկրի վրայ ինչ որ կայ՝ պիտի ստակի : 18 - Բայց քեզի ճեալ իմ ուխտս պիտի հաստատեմ, ու

տապանը պիտի մտնես դուն ու քու որդիներդ, և կինդ ու որդիներուդ կինները քեզի ճեալ : 19 - Եւ ամէն անասուններէն, ամէն մարմինէն, ամէնէն երկերկու հատ տապանը բերես, որպէս զի քեզի ճեալ ողջ մնան. արու և էգ ըլլան անոնք : 20 - Թռչուններէն իրենց տեսակին պէս, և ընկճանի անասուններէն իրենց տեսակին պէս, երկրի բոլոր սողուններէն իրենց տեսակին պէս, ամէնէն երկերկու հատ քեզի պիտի գան ողջ մնալու համար : 21 - Եւ դուն առ քեզի ամէն ուտելիքներէն որ կ'ուտուին, ու քովդ ժողվէ, որպէս զի քեզի և անոնց ուտելիք ըլլայ : 22 - Եւ ըրաւ Նոյ Աստուծոյ իրեն բոլոր պատուիրածին պէս, այնպէս ըրաւ :

ԳԼ. Է

Եւ Տէրը ըսաւ Նոյի, Դուն քու բոլոր տունովդ տապանը մտիր. վասն զի այս դարուն մարդոց մէջ քեզ իմ առջեւ արդար տեսայ : 2 - Ամէն մարդը անասուններէն քեզի եօթնական հատ առնես, արու և էգ. իսկ անմարդը անասուններէն երկերկու հատ՝ արու և էգ : 3 - Երկինքի թռչուններէն ալ եօթնական հատ «-նէ», արու և էգ, բոլոր երկրի վրայ անոնց սերունդը ողջ պահելու համար : 4 - Վասն զի եօթը օրէն ետքը երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև պիտի բերեմ, և ամէն էակը զոր բրի, երկրի վրայէն պիտի ջնջեմ : 5 - Եւ Նոյ Տէրոջը բոլոր իրեն պատուիրածին պէս ըրաւ : 6 - Եւ ջրհեղեղին երկրի վրայ եղած ատենը Նոյ վեց հարիւր տարեկան էր : 7 - Եւ Նոյ ու իր որդիները և իր կինը ու իր որդիներուն կիները իրեն ճեալ՝ ջրհեղեղին ջուրերուն պատճառաւ տապանը մտան : 8 - Մարդը անասուններէն ու անմարդը անասուններէն, և թռչուններէն ու երկրի վրայ ամէն սողացողներէն : 9 - Զոյգ զոյգ արու և էգ տապանին մէջ Նոյի գացին, ինչպէս Աստուած Նոյի պատուիրած էր : 10 - Եւ եղաւ որ եօթը օրէն ետքը ջրհեղեղին ջուրերը երկրի վրայ եկան : 11 - Նոյի կեանքին վեց հարիւրերորդ տարին, երկրորդ ամիսը, ամսուն տասներեօթներորդ օրը, Նոյն օրը մեծ անգուն-

*Եբբ. Ասանք են Նոյի ծնունդները
 †Եբբ. երեսէն ‡Ասմ, նոճիի
 †Ասմ, յարկ

գին բոլոր աղբիւրները ձեղքուեցան, ու երկինքի պատուհանները բացուեցան. 12 - Ու երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև եկաւ: 13 - Ճիշդ նոյն օրը Նոյ և Նոյի որդիները, Սէմ ու Քամ և Յաբելթ, և Նոյի կինը, ու անոր որդիներուն երեք կիները անոնց հետ տապանը մտան: 14 - Անոնք, ու բոլոր գազանները իրենց տեսակին պէս, և բոլոր բնական անասունները իրենց տեսակին պէս, ու երկրի վրայ սողացող բոլոր սողունները իրենց տեսակին պէս, և բոլոր թռչունները իրենց տեսակին պէս, ամէն տեսակ թեւաւոր թռչուն. 15 - Կենդանութեան շունչ ունեցող ամէն մարմինէն երկերկու հատ Նոյի քով տապանը մտան: 16 - Եւ քառասուն մանուկները արու և էգ մտան ամէն մարմինէն, ինչպէս Աստուած անոր պատուիրեց էր. և Տէրը անոր ետեւէն քառասուն գոցեց: 17 - Ու երկրի վրայ քառասուն օր ջրհեղեղ եղաւ. և ջուրերը շատցան ու տապանը վերցուցին, և անիկա երկրէ բարձրացաւ: 18 - Եւ ջուրերը զօրացան ու խիստ շատցան երկրի վրայ. ու տապանը ջուրերուն երեսին վրայ կը պտրտէր: 19 - Եւ ջուրերը երկրի վրայ խիստ շատ զօրացան, ու բոլոր երկինքին տակ եղող ամէն բարձր լեռները ծածկուեցան: 20 - Ջուրերը տասնհինգ կանգուն վեր բարձրացան, և լեռները ծածկուեցան: 21 - Ու երկրի վրայ շարժող ամէն մարմին, թէ՛ թռչուն, թէ՛ անասուն, թէ՛ գազան և թէ՛ երկրի վրայ սողացող ամէն սողուն և ամէն մարդ մեռան: 22 - Յամաքի վրայ եղող ամէնը՝ որ ուրնգունքներուն մէջ կենդանութեան շունչ ունէր, ամէնն ալ մեռան: 23 - Ու երկրի երեսին վրայ եղող ամէն էակ ջնջուեցաւ, մարդէն մինչև անասունը, սողունէն մինչև երկինքի թռչունը. անոնք երկրէ ջնջուեցան. ու միայն Նոյ մնաց և իրեն հետ տապանին մէջ եղողները: 24 - Եւ ջուրերը երկրի վրայ հարիւր յիսուն օր բարձրացած մնացին:

ԳԼ. Ը

Եւ Աստուած յիշեց Նոյը ու անոր հետ տապանին մէջ եղած բոլոր գազանները ու բոլոր անասունները. և Աստուած երկրի վրայ հով մը բերաւ, ու ջուրերը նուազեցան: 2 - Նաև անդունդին աղբիւրները ու երկինքի պատուհանները գոցուեցան, և երկինքի անձրեւը կտրեցաւ: 3 - Ու երթալով ջուրերը երկրի վրայէն կը քաշուէին, ու հարիւր յիսուն օրէն ետքը ջուրերը քիչցան: 4 - Եւ եօթներորդ ամիսը, ամսուն տասներեօթներորդ օրը, տապանը Արարատ լեռներուն վրայ նստաւ: 5 - Եւ ջուրերը երթալով կը քիչնային մինչև տասներորդ ամիսը. և տասներորդ ամսուն առաջին օրը լեռներուն գլուխները երեւցան:

6 - Ու եղաւ որ քառասուն օրէն ետքը Նոյ իր շինած տապանին պատուհանը բացաւ. 7 - Եւ ազուար սրձակեց, որ ելաւ ու անդին առին կը պտրտէր՝ մինչև երկրի վրայէն ջուրերուն ցամքիլը: 8 - Աղաւնին ալ քովէն արձակեց, որպէս զի տեսնէ թէ արդեօք երկրի վրայէն ջուրերը քիչցած են. 9 - Բայց աղաւնին իր ոտքին թաթը գնելու տեղ չգտաւ, ու դէպ ի ան՝ տապանը դարձաւ. վասն զի բոլոր երկրի երեսը ջուրեր կային. այն ատեն իր ձեռքը երկնցուց ու առաւ զանիկա, և իր քով տապանին մէջ բերաւ: 10 - Ու եօթը օր ալ սպասեց, և նորէն աղաւնին տապանէն արձակեց: 11 - Ու իրիկուան դէմ՝ աղաւնին անոր եկաւ, և ահա իր բերանը ձիթեանի նոր փրցուած տերև մը կար. ուստի Նոյ գիտցաւ որ ջուրերը երկրի վրայէն քիչցած են: 12 - Եւ եօթը օր ալ սպասեց, ու նորէն աղաւնին արձակեց, որ ա՛լ անոր չդարձաւ:

13 - Եւ եղաւ որ Նոյի կնիքը վեց հարիւր ու մէկ տարին, առաջին ամսուն առաջին օրը, ջուրերը երկրի վրայէն ցամքեցան. և Նոյ տապանին ծածկոցը վերցուց ու նայեցաւ, և ահա երկրի երեսը ցամքեր էր: 14 - Ու երկրորդ ամիսը՝ ամսուն քսանրեօթներորդ օրը երկիր չորցաւ:

15 - Եւ Աստուած խօսեցաւ Նոյի ու քսու, 16 - Տապանէն դուրս ելիր գուն ու քու կինդ և քու որդիներդ և քու որդիներուդ կիները քեզի

*Եբր. զօրացան

Հետ: 17 - Քեզի հետ եղող ամէն կենդանին ամէն մարմինէն՝ թէ՛ թռչունները, թէ՛ անասունները, և թէ՛ երկրի վրայ սողացող բոլոր սողունները քեզի հետ հանէ, որպէս զի երկրի վրայ բազմանան, ու երկրի վրայ ածին ու շատնան: 18 - Եւ Նոյ ու իր որդիները և իր կինը և իր որդիներուն կիները իրեն հետ ելան. 19 - Ամէն անասուն, ամէն սողուն ու ամէն թռչուն, երկրի վրայ ամէն շարժողները իրենց տեսակին պէս տապանէն ելան:

20 - Եւ Նոյ սեղան մը շինեց Տէրոջը, ու ամէն մարդուր անասունէն և ամէն մաքուր թռչունէն առաւ, ու սեղանին վրայ ողջակէզներ մատուց: 21 - Եւ Տէրը անոյշ հոտը հոտուրտաց, և Տէրը իր սրտին մէջ ըսաւ, Այլ ասկէ ետև մարդուն համար նորէն երկիրը պիտի չանիծեմ, * քանզի մարդուն սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է, ոչ ալ նորէն պիտի ջարդեմ ամէն կենդանի մարմինը, ինչպէս ըրի: 22 - Քանի որ երկիր կը մնայ, սերմ ու հունձք, ցուրտ ու տաքութիւն, ամառ ու ձմեռ, և ցորեկ ու գիշեր պիտի չզաղարին:

ԳԼ. Թ

Եւ Աստուած օրհնեց Նոյը ու անոր որդիները, և ըսաւ անոնց, Աճեցէք ու շատցէք, ու երկիրը լեցուցէք. 2 - Եւ ձեր վախը ու երկիւղը երկրի բոլոր գազաններուն վրայ, ու երկինքի բոլոր թռչուններուն վրայ պիտի ըլլայ. անոնք երկրի վրայ բոլոր շարժողներուն հետ, ու ծովու բոլոր ձուկերուն հետ ձեր ձեռքը արուած են: 3 - Ամէն շարժուն կենդանին ձեզի կերակուր ըլլայ. ամէնը ձեզի բանջարի պէս տուի: 4 - Բայց միսը ողջութիւնովը, այսինքն անոր արիւնովը, չուտէք: 5 - Եւ անշուշտ ձեր կեանքին համար արիւննիդ պիտի խընդրեմ. ամէն գազանին ձեռքէն ու մարդուն ձեռքէն պիտի խնդրեմ զայն. մարդուն կեանքը եղբօրը ձեռքէն պիտի խնդրեմ: 6 - Ով որ մարդու արիւն թափէ, իր արիւնն ալ մարդ է պիտի թափուի. քանզի Աստ-

ուած իր պատկերին պէս ստեղծեց մարդը: 7 - Եւ դուք աճեցէք ու շատցէք, երկրի վրայ բազմացէք ու անոր մէջ շատցէք:

8 - Եւ Աստուած խօսեցաւ Նոյի ու անոր որդիներուն անոր հետ՝ ըսելով, 9 - Եւ ես ահա ձեզի հետ ու ձեզմէ ետքը ձեր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, 10 - Եւ ձեզի հետ եղող ամէն շնչաւոր կենդանին հետ, թէ՛ թռչունին, թէ՛ անասունին և թէ՛ ձեզի հետ եղող երկրի ամէն գազանին հետ, տապանէն ելածներուն ամէնուն հետ, ու երկրի բոլոր անասուններուն հետ: 11 - Եւ ձեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, որ մէյմըն ալ ամէն մարմին ջրհեղեղին ջուրերէն չկորսուի. ոչ ալ նորէն ջրհեղեղ ըլլայ երկիրը արեւու համար: 12 - Եւ ըսաւ Աստուած, Իմ ու ձեր մէջտեղ, և ձեզի հետ եղող ամէն շնչաւոր կենդանին՝ մէջտեղ յաւիտենական դարերու համար ըրած ուխտիս նշանը այս է. 13 - Իմ աղեղս ամպին մէջ պիտի դնեմ, և այն պիտի ըլլայ իմ ու երկրի մէջտեղ եղած ուխտին նշանը: 14 - Եւ պիտի ըլլայ որ՝ երբ երկրի վրայ ամպ բերեմ, աղեղը ամպին մէջ պիտի տեսնուի. 15 - Եւ իմ ու ձեր մէջտեղ, ու ամէն մարմինէն ամէն շնչաւոր կենդանին մէջտեղ եղած իմ ուխտս պիտի յիշեմ. և մէյմըն ալ ամէն մարմինը կորսնցընելու համար ջուրերը հեղեղ պիտի չըլլան: 16 - Եւ աղեղը ամպին մէջ պիտի ըլլայ, ու անոր պիտի նայիմ, որպէս զի Աստուծոյ՝ ու երկրի վրայ եղող ամէն մարմինէն բոլոր կենդանի անասունին մէջտեղ եղած յաւիտենական ուխտը յիշեմ: 17 - Եւ Աստուած Նոյի ըսաւ, Այս է այն ուխտին նշանը զոր ես հաստատեցի իմ ու երկրի վրայ եղող ամէն մարմինին մէջտեղ:

18 - Եւ Նոյի որդիները որոնք տապանէն ելան, Սէմ, Քամ ու Յաբեթ էին. և Քամ Քանանու հայրն էր: 19 - Այս երեքը Նոյի որդիներն էին, և ասոնցմէ բոլոր երկիր տարածուեցան:

20 - Եւ Նոյ սկսաւ երկիրը գործել, ու այգի անկեց. 21 - Եւ գինիէն խմեց ու գինովցաւ, և իր վրանին մէջ մերկացաւ: 22 - Ու Քանանու հայրը Քամ

* կամ, թէև.

իր հօրը մերկութիւնը տեսաւ, ու դուրս ելաւ - իր երկու եղբայրներուն պատմեց: 23 - Եւ Աէմ ու Յաբեթ հանդերձ առին, և իրենց երկուքին ուսերուն վրայ դրին, ու ետ ետ երթալով իրենց հօրը մերկութիւնը ծածկեցին. և իրենց երեսը ետևնուն դարձաւ ըլլալով իրենց հօրը մերկութիւնը չտեսան: 24 - Եւ Նոյ իր գինիէն արթննալով իր պզտիկ որդւոյն իրեն բրածը իմացաւ. 25 - Ու ըսաւ, Անիծեալ ըլլայ Քանան. ծառաներու ծառայ ըլլայ իր եղբայրներուն: 26 - Նաև ըսաւ, Օրհնեալ ըլլայ Աէմի Տէր Աստուածը, և Քանան *անոր ծառան ըլլայ: 27 - Աստուած թող ընդարձակէ Յաբեթը, ու Աէմի վրանները բնակի, և Քանան *անոր ծառան ըլլայ:

28 - Ու Նոյ ջրհեղեղէն ետքը երեք հարիւր յիսուն տարի ապրեցաւ: 29 - Եւ Նոյի բոլոր օրերը ինը հարիւր յիսուն տարի եղան, ու մեռաւ:

ԳԼ Ժ

Եւ Նոյի որդիներուն, Աէմի, Քամի ու Յաբեթի, ծնունդներն ասոնք են. ու ջրհեղեղէն ետքը անոնց որդիներ ծնան:

2 - Յաբեթի որդիները Գոմեր, Մագոգ, Մադա, Յաւան, Թոբէլ, Մոսոր ու Թիրաս էին: 3 - Եւ Գոմերի որդիները Ագքանազ, Իփաթ ու Թորգոմա էին: 4 - Եւ Յաւանի որդիները Եղիսա, Թարսիս, Կիտացիք ու Իոդացիք էին: 5 - Ազգերուն կզգիները իրենց երկիրներովը, ամէն մէկը իր լեզուին պէս, ազգերուն մէջ իրենց տոհմերովը ասոնցմէ բաժնուեցան:

6 - Եւ Քամի որդիները Քուշ, Մեսարեմ, Փութ ու Քանան էին: 7 - Եւ Քուշի որդիները Սաբա, Եւիլա, Սաբաթա, Ռեգմա ու Սերեթաքա էին: Եւ Ռեգմայի որդիները Սաբա ու Իեդան էին: 8 - Եւ Քուշ ծնաւ Ներրովթը. ասիկա սկսաւ երկրի վրայ զօրաւոր ըլլալ: 9 - Ասիկա Տէրօջը առջև զօրաւոր որսորդ մըն էր. անոր համար կ'ըսուի, Տէրօջը առջև Ներրովթի պէս զօրաւոր որսորդ: 10 - Եւ իր թագաւորութեան սկիզբը Բաբե-

լոն և Արեք ու Աքադ և Քաղանէ էր Սենաար երկրին մէջ: 11 - Այն երկրէն *Ասորեստան գնաց, ու Նինուէն և Ռոբովթ քաղաքը ու Քաղան շինեց. 12 - Նինուէի ու Քաղայի մէջտեղ Ռէսէնն ալ շինեց. ասիկա մեծ քաղաք մըն էր. 13 - Եւ Մեսարեմ ծնաւ Դուդացիները, Անամացիները, Դարացիները, Նեփթուքացիները, 14 - Պաթուրեսացիները ու Քասղուքացիները (ուրկէ Փղշտացիք էլան) ու Կափթորացիներն ալ: 15 - Եւ Քանան ծնաւ իր անդրանիկը Սիդոնը, Նաև Քետը, 16 - Յերուսացին, Ամօրհացին, Գերզեսացին, 17 - Խևացին, Արուկեցին, Ասենացին, 18 - Արուադացին, Սամարացին և Ամաթացին. ու ետքը Քանանացւոց ցեղերը տարածուեցան: 19 - Եւ Քանանացւոց սահմանը, Սիդոնէ Գերարա անցնելով մինչև Գազա, Սոդոմ ու Գոմօր, և Ադմա ու Սեբոյիմ, մինչև Դասա է: 20 - Քամի որդիները, իրենց տոհմերովը, իրենց լեզուներովը, իրենց երկիրներուն ազգերուն մէջ ասոնք են:

21 - Եւ Յաբեթի մեծ եղբօրը Աէմի ալ, որ Եբերի բոլոր որդիներուն հայրն էր, *դիւնեց ծնան: 22 - Աէմի որդիները Եղամ, Ասուր, Արփաքսադ, Դուդ ու Արամ էին: 23 - Եւ Արամի որդիները Հուս, Հուլ, Գաթեր ու Մաշ էին: 24 - Եւ Արփաքսադ ծնաւ Սաղան, և Սաղա ծնաւ Եբերը: 25 - Ու Եբերի երկու որդի ծնան. մէկուն անունը Գազէկ էր. քանզի երկիր անոր օրերը բաժնուեցաւ. և անոր եղբօրն անունը Յեկտան էր: 26 - Ու Յեկտան ծնաւ Եղմովդադը, Սաղափը, Ասարմօթը, Յարաքը, 27 - Ադորամը, Ուզայը, Իեկղան, 28 - Գեբադը, Աբիմէլը, Սաբան, 29 - Ոփիրը, Եւիլան ու Յոբաքը. ամէն ասոնք Յեկտանի որդիներն էին: 30 - Եւ ասոնց բնակութիւնը եղաւ Մեսայէ մինչև Սոփեր, արեւելեան լեռը: 31 - Աէմի որդիները, իրենց տոհմերովը, իրենց լեզուներովը, իրենց երկիրներուն մէջ իրենց ազգերովը ասոնք են: 32 - Նոյի որդիներուն տոհմերը, իրենց ծնունդներուն ու ազգերուն համեմատ, ասոնք են. և ջրհեղեղէն ետքը

*Կամ, անոնց †Կամ, Ռոդացիք

*Եբր. Ասուր
†Այսինքն, բաժանում

ազգերը ստոնցմէ տարածուեցան երկրի վրայ:

ԳԼ. ԺԱ

Եւ բոլոր երկրի լեզուն մէկ, ու խօսուածքը մէկ էր: 2 - Ու եղաւ որ երբ արեւելքէն կը չուէին, Սենաար երկրին մէջ դաշտ մը գտան ու հոն բնակեցան: 3 - Եւ իրարու ըսին, Եկէք ազիւսներ շինենք ու զանոնք կրակով եփենք: Եւ ազիւսները անոնց քարի տեղ եղան, ու ձիւթը անոնց ցեխի տեղ եղաւ: 4 - Եւ ըսին, Եկէք մեզի քաղաք մը ու աշտարակ մը շինենք, որուն գլուխը մինչև երկինք հասնի, և մեզի անուն ստանանք, որ չըլլայ թէ բոլոր երկրի վրայ ցրուինք: 5 - Եւ Տէրը մարդոց որդիներուն շինած քաղաքն ու աշտարակը տեսնելու իջաւ: 6 - Եւ Տէրը ըսաւ, Ահա անոնք մէկ ժողովուրդ են, ու ամէնուն լեզուն մէկ է. և ասիկա շինելու սկսեցին. ու հիմա ինչ որ շինել կը խորհին, անոնցմէ պիտի չարգիլուի: 7 - Եկէք, իջնենք, և անոնց լեզուն հոն խառնակենք, որպէս զի ամէն մէկը իր ընկերին լեզուն չհասկնայ: 8 - Եւ Տէրը անկէ բոլոր երկրի երեսը ցրուեց զանոնք. ու քաղաքը շինելէն դադարեցան: 9 - Անոր համար անոր անունը Գաբելոն կոչուեցաւ, քանզի Տէրը հոն բոլոր երկրի լեզուն խառնակեց. և Տէրը անկէ բոլոր երկրի երեսը ցրուեց զանոնք:

10 - Սէմի ծնունդները ասոնք են. Սէմ հարիւր տարեկան էր երբ ծնաւ Արփաքսադը ջրհեղեղէն երկու տարի ետքը: 11 - Եւ Սէմ Արփաքսադը ծնանելէն ետքը հինգ հարիւր տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 12 - Եւ Արփաքսադ երեսունը-հինգ տարի ապրեցաւ, ու ծնաւ Սաղան: 13 - Եւ Արփաքսադ Սաղան ծնանելէն ետքը չորս հարիւր երեք տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 14 - Եւ Սաղա երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Եբերը: 15 - Եւ Սաղա Եբերը ծնանելէն ետքը չորս հարիւր երեք տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 16 - Եւ Եբեր երեսունը-չորս տարի ապրեցաւ, և ծնաւ Փաղէկը: 17 - Եւ Եբեր

Փաղէկը ծնանելէն ետքը չորս հարիւր երեսուն տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 18 - Եւ Փաղէկ երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Ռագաւը: 19 - Եւ Փաղէկ Ռագաւը ծնանելէն ետքը երկու հարիւր ինը տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 20 - Եւ Ռագաւ երեսունուերկու տարի ապրեցաւ, ու ծնաւ Սերուզը: 21 - Եւ Ռագաւ Սերուզը ծնանելէն ետքը երկու հարիւր եօթը տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 22 - Եւ Սերուզ երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Նաքովը: 23 - Եւ Սերուզ Նաքովը ծնանելէն ետքը երկու հարիւր տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 24 - Եւ Նաքովը քսանըինը տարի ապրեցաւ, ու ծնաւ Թարան: 25 - Եւ Նաքովը Թարան ծնանելէն ետքը հարիւր տասներինը տարի ապրեցաւ, և տղաքներ ու աղջիկներ ծնաւ: 26 - Եւ Թարա եօթանասուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Աբրամը, Նաքովը և Առանը:

27 - Եւ Թարայի ծնունդները ասոնք են. Թարա ծնաւ Աբրամը, Նաքովը ու Առանը. և Առան ծնաւ Ղովար: 28 - Եւ Առան մեռաւ իր հօրը Թարայի առջև իր ծննդեան երկրին, Քաղզէացւոց Ուր + առ + ին, մէջ: 29 - Եւ Աբրամ ու Նաքովը իրենց կիներ առին. Աբրամի կնոջ անունը Սարա էր, և Նաքովի կնոջ անունը Մեղքա՝ աղջիկը Առանի, որ Մեղքայի ու Յեւթայի հայրն էր: 30 - Եւ Սարա ամուլ էր - չէր ծնաներ: 31 - Եւ Թարա իր որդին Աբրամը ու իր թուը Առանի որդին Ղովար և իր որդւոյն Աբրամի կինը, իր հարսը Սարան, առաւ ու անոնց հետ Քաղզէացւոց Ուր + առ + էն ելաւ դէպ ի Քանանու երկիրը երթալու համար. ու եկան մինչև իսառան, և հոն բնակեցան: 32 - Ու Թարայի օրերը երկու հարիւր հինգ տարի եղան. և Թարա իսառանի մէջ մեռաւ:

ԳԼ. ԺԲ

Եւ Տէրը ըսաւ Աբրամի, Քու երկրէդ և քու ազգակիաններէդ ու քու հօրդ տունէն գնա այն երկիրը՝ զոր ես քեզի պիտի ցուցնեմ. 2 - Եւ քեզ

*Այ-ին-ն, խառնակութիւն

մեծ ազգ պիտի ընեմ, ու քեզ պիտի օրհնեմ, և քու անունդ պիտի մեծցընեմ. ու դուն *օրհնեալ պիտի ըլլաս: 3 - Եւ քեզ օրհնողները պիտի օրհնեմ, ու քեզ անիծողները պիտի անիծեմ. ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին: 4 - Եւ Աբրամ գնաց ինչպէս Տէրը անոր ըսեր էր. Ղովտ ալ անոր հետ գնաց. ու Աբրամ եօթանասունըհինգ տարեկան էր երբ Խառանէ ելաւ: 5 - Եւ Աբրամ իր կինը Սարան ու իր եղբորորդին Ղովտը, և իրենց բոլոր ստացուածքը և Խառանի մէջ իրենց ստացած հողիները առնելով՝ ելան որ Քանանու երկիրը երթան. և Քանանու երկիրը եկան: 6 - Եւ Աբրամ այն երկրէն մինչև Սիւքէմի տեղը, մինչև Մօրէի կաղնին, անցաւ. և այն ատեն Քանանացիները կային այն երկրին մէջ: 7 - Եւ Տէրը երեւցաւ Աբրամի ու ըսաւ, Քու սերունդիդ պիտի տամ այս երկիրը: Եւ հոն սեղան շինեց Տէրօջը որ իրեն երեւցաւ: 8 - Եւ անկէ դէպ ի Բեթէլի արեւելեան կողմը եղող լեռը չուեց, ու իր վրանը բացաւ, Բեթէլը արեւմտեան կողմը ու Գային արեւելեան կողմը *անէնալ. և հոն Տէրօջը սեղան շինեց, ու Տէրօջը անունը կանչեց: 9 - Եւ Աբրամ միշտ դէպ ի հարաւ կը չուէր:

10 - Աւ այն երկրին մէջ սով եղաւ. և Աբրամ Եգիպտոս իջաւ հոն պանդրխտանալու համար. վասն զի այն երկրին մէջ սովը սաստիկ էր: 11 - Աւ եղաւ որ երբ Եգիպտոս մտնելու մտեցաւ, իր կնոջ Սարայի ըսաւ, Ահա գիտեմ որ դուն գեղեցիկ տեսքով կին մըն ես. 12 - Եւ պիտի ըլլայ որ երբ Եգիպտացիք քեզ տեսնեն, պիտի ըսեն, Ասիկա անոր կինն է. ու զիս պիտի մեռցնեն, բայց քեզ ողջ թողուն. 13 - Եւ նորհաք ըրէ, ըսէ թէ դուն իմ քոյրս ես. որպէս զի քու պատճառաւդ ինծի աղէկ ըլլայ, ու քու պատճառաւդ իմ անձս ապրի: 14 - Եւ եղաւ որ երբ Աբրամ Եգիպտոս մտաւ, Եգիպտացիք տեսան կինը, որ շատ գեղեցիկ էր: 15 - Փարաւոնի իշխաններն ալ տեսան, ու գովեցին զանկա Փարաւոնի առջև. և կինը Փարաւոնի տունը առնուեցաւ: 16 -

Եւ անոր համար Աբրամի բարիք ըրաւ. ու անկա ոչխարներ ու արջառներ և էշեր ու ծառաներ և աղախիներն ու էգ էշեր և ուղտեր ունեցաւ: 17 - Եւ Տէրը մեծ հարուածներով զարկաւ Փարաւոնը ու անոր տունը՝ Աբրամի կնոջ Սարայի համար: 18 - Եւ Փարաւոն կանչեց Աբրամը, ու ըսաւ, Այս ի՞նչ է զոր ինծի ըրիր. ինչո՞ւ ինծի չյայտնեցիր թէ ասիկա քու կինդ է. 19 - Ինչո՞ւ համար, Ասիկա քոյրս է, ըսիր. և իչ հասց *բ զանկա ինծի կին պիտի առնէի. բայց հիմա ահա կինդ. առ ու գնա: 20 - Եւ Փարաւոն իր մարդոցը պատուիրեց անոր համար. ու զանկա իր կնոջմով ու իր բոլոր ստացուածքով զրկեցին:

ԳԼ. ԺԳ

Եւ Աբրամ իր կնոջմով ու իր բոլոր ունեցածներով Եգիպտոսէ դէպ ի Քանանա՝ հարաւակողմը ելաւ, ու Ղովտ ալ իրեն հետ: 2 - Եւ Աբրամ շատ հարուստ էր անասուններով, արծաթով ու ոսկիով: 3 - Եւ իր *ալիս իջեւաններով գնաց հարաւային կողմէն մինչև Բեթէլ, այն տեղը ուր էր առաջ իր վրանը, Բեթէլի ու Գայիի մէջտեղ, 4 - Այն սեղանին տեղը զոր հոն առաջ շիներ էր. և Աբրամ հոն Տէրօջը անունը կանչեց: 5 - Եւ Աբրամի հետ գացող Ղովտն ալ ոչխարներ ու արջառներ ու վրաններ ունէր: 6 - Եւ այն երկիրը բաւական չէր անոնց որ մէկտեղ բնակին. քանզի անոնց ստացուածքը շատ ըլլալով՝ չէին կրնար մէկտեղ բնակիլ: 7 - Եւ Աբրամի անասուններուն հովիւներուն ու Ղովտի անասուններուն հովիւներուն մէջտեղ վէճ կար. և այն ատեն Քանանացիները ու Փերեզացիները կը բնակէին այն երկրին մէջ: 8 - Եւ Աբրամ ըսաւ Ղովտի, Կ'աղաչեմ քեզի, իմ ու քու մէջտեղ, և իմ հովիւներուս ու քու հովիւներուդ մէջտեղ վէճ չըլլայ, վասն զի մենք եղբայր ենք: 9 - Բոլոր երկիրը քու առջեւդ չէ՞. կ'աղաչեմ, զատուէ ինձմէ. եթէ *ալիս ձախ կողմը երթաս, ես ալ կողմը կ'երթամ, և եթէ ալ կողմը երթաս, ես ձախ կողմը կ'երթամ: 10 - Եւ Ղովտ իր աչքերը վեր վերցուց, ու Յորդանանու ամէն կողմը

*Եբր. օրհնութիւն

նայեցաւ՝ որ ամէն տեղ ջրուած էր, Տէրը Սողոմը ու Գոմորը կորսնցնելէն առաջ մինչև Սեգովր Տէրոջը գրախտին պէս, Եգիպտոսի երկրին պէս էր : 11 - Եւ Ղովա Յորդանանու բոլոր կողմը ընտրեց իրեն, ու Ղովա դէպ ի արեւելք չուեց. և իրարմէ զատուեցան : 12 - Աբրամ Քանանու երկրին մէջ բնակեցաւ. Ղովա ալ դաշտֆաղաքներուն մէջ բնակեցաւ, ու իր վրանը Սողոմի քով բացաւ : 13 - Եւ Սողոմի մարդիկը խիստ չար ու մեղաւոր էին Տէրոջը առջև :

14 - Եւ Տէրը Աբրամի ըսաւ, Ղովտի անկէ զատուելէն ետքը, Հիմա աչքերդ վեր վերցուր, ու քու եղած տեղէդ դէպ ի հիւսիս ու հարաւ և դէպ ի արեւելք ու արեւմուտք նայէ :

15 - Վասն զի այդ բոլոր երկիրը զոր կը տեսնես, քեզի ու քու սերունդիդ պիտի տամ յաւիտեան : 16 - Եւ քու սերունդդ երկրի փոշիին պէս ա՛նիպիտի ընեմ. այնպէս որ եթէ մէկը երկրի փոշին կրնայ համրել, քու սերունդդ ալ համրուի : 17 - Ելիր, այդ երկիրը պտրտէ անոր երկայնութեանը ու լայնութեանը համեմատ. քանզի զանկա քեզի պիտի տամ : 18 - Եւ Աբրամ վերցուց իր վրանը, ու եկաւ և բնակեցաւ Մամբրէի կաղնիներուն մէջ, որ Քեբբոնի մէջ է, և հոն սեղան շինեց Տէրոջը :

ԳԼ. ԺԴ

Ու եղաւ որ Սենաարի Ամարփաղ թագաւորին, Ելլասարի Արիովք թագաւորին, Եղամի Քողողագոմոր թագաւորին և Գոյիմի Թադգաղ թագաւորին ժամանակները, 2 - Ասոնք Սողոմի Բարսա թագաւորին հետ և Գոմորի Բարսա թագաւորին հետ, Ադմայի Սենար թագաւորին հետ և Սեբոյիմի Սիմորո թագաւորին հետ ու Բաղայի (այսինքն Սեգովրի) թագաւորին հետ պատերազմեցան : 3 - Ասոնց ամէնը ժողովուեցան Սիդգիմ ձորին մէջ, որ է Ադի ծովը : 4 - Տասուերկու տարի Քողողագոմորի ծառայութիւն ըրին, ու երեքտասաներորդ տարին ապստամբ եղան : 5 - Եւ չորեքտասաներորդ տարին Քողողագոմոր ու իրեն հետ եղող թագաւորները եկան, ու Աստարովթ-կառնայիմի մէջ եղող

Ռափայինները, ու Համի մէջ Զուզեցինները, և Շաւէ Կարիաթեմի մէջ Էմիմները, 6 - Եւ Քուեցինները իրենց Աէիր լեռանը վրայ՝ մինչև անապատին քով եղող *Էլփառանը զարկին : 7 - Եւ դարձան ու եկան †Ենմասեփաթ, այսինքն Կադէս. և Ամաղեկացուց բոլոր նահանգը, ու Ասասան թամարի մէջ բնակող Ամօրհացիներն ալ զարկին : 8 - Եւ Սողոմի թագաւորը, ու Գոմորի թագաւորը, և Ադմայի թագաւորը, ու Սեբոյիմի թագաւորը, և Բաղայի (այսինքն Սեգովրի) թագաւորը ելլելով, Սիդգիմ ձորին մէջ անոնց հետ պատերազմելու շարուեցան, 9 - Այսինքն Եղամի Քողողագոմոր թագաւորին հետ, և Գոյիմի Թադգաղ թագաւորին հետ, ու Սենաարի Ամարփաղ թագաւորին հետ, և Ելլասարի Արիովք թագաւորին հետ, այս չորս թագաւորը այն հինգին հետ : 10 - Եւ Սիդգիմ ձորը նաւթի հորերով լեցուն էր. և Սողոմի ու Գոմորի թագաւորները փախան, և հոն ինկան. ու մնացածները լեռը փախան : 11 - Եւ անոնք Սողոմի ու Գոմորի ամէն բարիքը, ու անոնց բոլոր պաշարները առին ու գացին : 12 - Եւ Սողոմի մէջ բնակող Աբրամի եղբորորդին Ղովտը ու անոր բոլոր բարիքը առին ու գացին :

13 - Եւ փախստական մը եկաւ, ու այս բաները Եբրայեցի Աբրամի պատմեց. և անկա Եսթողի ու Աների եղբորը Ամօրհացի Մամբրէի կաղնիներուն մէջ կը բնակէր. վասն զի անոնք Աբրամի հետ դաշնակից էին : 14 - Եւ Աբրամ երբ իր եղբորը գերի առնուիլը լսեց, իր տանը մէջ ծնած երեք հարիւր տասներութ կրթուած ծառաները հանեց, ու անոնց ետեւէն ինկաւ մինչև Գան : 15 - Եւ ինքն ու իր ծառաները գիշերով գունդ գունդ անոնց վրայ յարձակեցան, ու զարկին զանոնք, և քչեցին զանոնք մինչև Քորա, որ Գամասկոսի †հիւսիսային կողմն է : 16 - Եւ բոլոր բարիքը ետ բերաւ. և իր եղբայրը Ղովան ալ ու անոր բարիքը և կիները ու ժողովուրդն ալ ետ բերաւ :

*Այսինքն, Փառանի բեւեկներն
†Այսինքն, դատաստանի աղբիւր
‡Եբր. ձախ

17 - Եւ ինք՝ Քողոզագոմորը ու անոր հետ եղող թագաւորները զարնելէն ու դառնալէն ետքը, Սողոմի թագաւորը զանհկա դիմաւորելու ելաւ դէպ ի Շաւէ ձորը (այսինքն թագաւորի ձորը): 18 - Եւ Սաղէմի թագաւորը Մելքիսեդեկ հաց ու գինի հանեց. ու անհկա Բարձրեալ Աստուծոյ քահանան էր: 19 - Եւ օրհնեց զանհկա. ու ըսաւ, Օրհնեալ ըլլայ Աբրամ, երկինքի ու երկրի տէրը եղող Բարձրեալ Աստուծոյ: 20 - Եւ օրհնեալ ըլլայ Բարձրեալ Աստուծոյ, որ քու թշնամիներդ քու ձեռքդ մատնեց: Եւ անհկա ամէնէն տասանորդ տուաւ անոր:

21 - Եւ Սողոմի թագաւորը ըսաւ Աբրամի, Մարդիկը ինծի տուր, ու քարիքը դուն քեզի առ: 22 - Եւ Աբրամ ըսաւ Սողոմի թագաւորին, Երկինքի ու երկրի տէրը եղող Բարձրեալ Տէր Աստուծոյ վերցուցի իմ ձեռքս, 23 - Որ դերձանէ մինչև կօշիկի կապ բան մը չառնեմ ինչ որ քուկդ է, որ չըլլայ թէ Աբրամը ես հարստացուցի բնես, 24 - Բաց ի տղաքներուն կերածէն, ու ինծի հետ եկող մարդոցը, այսինքն Աների ու Եսքոզի ու Մամբրէի քաժիններէն. թող անոնք իրենց բաժինը առնեն:

ԳԼ. ԺԵ

Այս բաներէն ետքը տեսիլքի մէջ Տէրոջը խօսքը Աբրամի եղաւ՝ ըսելով, Մի վախնար, ով Աբրամ, ես քեզի վահան եմ, -- քու վարձքդ խիստ շատ պիտի ըլլայ: 2 - Եւ Աբրամ ըսաւ, Ով Տէր Եհովա, ինծի ի՞նչ պիտի տաս, քանի որ առանց զաւկի կը մնամ, և իմ տանս տիրողը այս Բամասկացի Եղիազարն է: 3 - Նաև ըսաւ Աբրամ, Որովհետև ինծի սերունդ չտուիր, ահա իմ տանս *ժառանգ ինծի ժառանգ կ'ըլլայ: 4 - Եւ ահա Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, Անհկա քեզի ժառանգ պիտի չըլլայ. բայց ան պիտի ըլլայ քու ժառանգդ՝ որ քու մէջքէդ պիտի ելլէ: 5 - Եւ դուրս հանեց զանհկա, ու ըսաւ, Հիմա դէպ ի երկինք նայէ, ու աստղերը համրէ, եթէ զանոնք համրելու կարող ես. և ըսաւ անոր, Քու

սերունդդ այսպէս պիտի ըլլայ: 6 - Եւ անհկա հաւատաց Տէրոջը, որ անոր արդարութիւն ըլլաւ սեպեց:

7 - Եւ ըսաւ անոր, Ես եմ Տէրը որ քեզ Քաղդէացուց Ուր +առաւէն հանեցի՝ այս երկիրը քեզի ժառանգութիւն տալու համար: 8 - Եւ անհկա ըսաւ, Ով Տէր Եհովա, ի՞նչպէս գիտնամ թէ ես զանհկա պիտի ժառանգեմ: 9 - Եւ ըսաւ անոր, Ինծի երեք տարեկան երինջ մը, ու երեք տարեկան այծ մը, և երեք տարեկան խոյ մը, ու տատրակ մը, և աղաւնիի ձագ մը առ: 10 - Եւ անհկա բոլոր ասոնք առաւ անոր, ու ասոնց մէջտեղէն կտրեց, և ամէն մէկ կտորը իր մասին հետ դիմացէ դիմաց դրաւ. բայց թռչունները չկտրեց: 11 - Եւ երբ դիերուն վրայ գիշատիչ թռչուններն իջան, Աբրամ վաճակեց զանոնք: 12 - Ու երբ արեւը մարը կը մտնէր, Աբրամի վրայ խորունկ քուն մը իջաւ, և ահա անոր վրայ մեծ մթութեան սուկում մը ինկաւ: 13 - Եւ Տէրը ըսաւ Աբրամի, Ստոյգ գիտցիր որ քու սերունդդ իրենցը չեղած երկրի մէջ պանդուխտ պիտի ըլլան, *և ծառայութիւն պիտի ընեն. ու հանչորս հարիւր տարի պիտի չարչարեն զանոնք: 14 - Բայց այն ազգը որու պիտի ծառայեն, ես պիտի դատեմ. և անկէ ետքը շատ ստացուածքով պիտի ելլեն: 15 - Եւ դուն խաղաղութեամբ քու հայրերուդ պիտի երթաս. աղէկ մը ծերացած պիտի թաղուիս: 16 - Եւ անոնք չորրորդ դարուն մէջ հոս պիտի դառնան. վասն զի Ամօրհացուց անօրէնութիւնը դեռ լեցուած չէ: 17 - Եւ եղաւ որ երբ արեւը մարը մտաւ ու խաւար եղաւ, ահա միսած հնոց մը ու վառած ջահ մը այն կտորներուն մէջ տեղէն անցաւ: 18 - Այն նոյն օրը Տէրը Աբրամի հետ ուխտ մը րրաւ՝ ըսելով, Քու սերունդիդ տուի այս երկիրը Եգիպտոսի գետէն մինչև մեծ գետը, այսինքն Եփրատ գետը. 19 - Կենեցիները, և կենեզացիները, ու կեդմոնացիները, 20 - Եւ Քետացիները, ու Փերեզացիները, 21 - Եւ Ռափայիները, և Ամօրհացիները, ու Քանանացիները, և Գերգեսացիները ու Յերուսացիները:

*Եբր. որդին

*Եբր. և անոնց

ԳԼ. ԺԶ

Եւ Աբրամի կինը Սարա չէր ծնաներ անոր. ու Եգիպտացի աղախին մը ունէր որուն անունը Հագար էր: 2 - Եւ Սարա ըսաւ Աբրամի, Ա՛հա չիմա՛ Տէրը արգիլեց զիս ծնանելէն. ուրեմն աղախինիս մօտի, գուցէ անկէ զաւակ ստանամ: Եւ Աբրամ Սարայի խօսքը մօտիկ ըրաւ: 3 - Եւ Աբրամի կինը Սարա իր Եգիպտացի աղախինը Հագարը առաւ, Աբրամի Քանանու երկրին մէջ տասը տարի բնակելէն ետքը, և զանիկա իր էրկանը Աբրամի տուաւ՝ անոր կին ըլլալու: 4 - Ան ալ մտաւ Հագարի, որ յղացաւ. և երբ իր յղի ըլլալը իմացաւ, իր տիկինը իր աչքին առջև անարգուեցաւ: 5 - Եւ Սարա ըսաւ Աբրամի, Ինձի եղած անիրաւութիւնը քու վրայ ըլլայ. ես իմ աղախինս գիրկդ տուի, ու երբ անիկա իմացաւ իր յղի ըլլալը, ես անոր աչքին առջև անարգուեցայ. Տէրը իմ ու քու մէջտեղ դատաստան ընէ: 6 - Եւ Աբրամ ըսաւ Սարայի, Ա՛հա աղախինդ քու ձեռքդ է, քու աչքերուդ հաճոյ երեւցածին պէս ըրէ անոր. ու երբ Սարա նեղեց զանիկա, անոր երեսէն փախաւ Հո֊տ: 7 - Եւ Տէրոջը հրեշտակը գտաւ զանիկա անապատին մէջ ջուրի աղբիւրի մը քով Սուրի ճանապարհին մէջ եղած աղբիւրին քով: 8 - Եւ ըսաւ, Այ՛ Սարայի աղախինը Հագար, ուրկե՞րկու գաս, և ո՛ւր կ'երթաս: Եւ անիկա ըսաւ, Իմ Սարա տիկնոջս երեսէն կը փախչիմ: 9 - Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր, Իարձիր քու տիկնոջդ, ու անոր ձեռքին տակ հնազանդ եղիր: 10 - Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր, Քու սերունդդ խիստ պիտի շատցնեմ, այնպէս որ շատութենէն պիտի չհամրուի: 11 - Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր, Ա՛հա դուն յղի ես, ու որդի պիտի ծնանիս, և անոր անունը Իսմայէլ զնես. քանզի Տէրը քու տառապանքդ յսեց: 12 - Եւ անիկա վայրենի մարդ մը պիտի ըլլայ. անոր ձեռքը ամէնուն վրայ, ու ամէնուն ձեռքն ալ անոր վրայ պիտի ըլլայ. և անիկա իր բոլոր եղբայրներուն առջև պիտի բնակի:

*Այսինքն, Աստուած պիտի լսէ

13 - Եւ անիկա իրեն հետ խօսող Տէրոջը անունը կանչեց՝ Է֊ել֊ւ, Իուն իմ տեսիլքիս Զէլ էրէ֊յա՛ծ Աստուածն ես. քանզի ըսաւ, Արդե֊ք *ո՞ղջ եմ՝ հոս՝ իմ տեսիլքէս ետքը: 14 - Անոր համար այն ջրհորին անունը Էլահայրոյի ջրհոր՝ դրաւ. ա՛հա անիկա կազէսի ու Բարադի մէջտեղ է: 15 - Եւ Հագար որդի մը ծնաւ Աբրամի. և Աբրամ Հագարի իրեն ծնած որդւայն անունը Իսմայէլ դրաւ: 16 - Եւ Աբրամ ութսունըվեց տարեկան էր, երբ Հագար Իսմայէլը ծնաւ Աբրամի:

ԳԼ. ԺԷ

Եւ երբ Աբրամ իննսուներինը տարեկան էր, Տէրը Աբրամի երեւցաւ, ու ըսաւ անոր, Ես եմ Ամենակարող Աստուածը. իմ առջեւս քալէ, ու կատարեալ եղիր: 2 - Եւ իմ ու քու մէջտեղ իմ ուխտս պիտի դնեմ, ու խիստ պիտի շատցնեմ քեզ: 3 - Եւ Աբրամ իր երեսին վրայ ինկաւ, ու Աստուած անոր հետ խօսեցաւ՝ ըսելով, 4 - Ա՛հա իմ ուխտս քեզի հետ է, և ազգերու բազմութեան հայր պիտի ըլլաս. 5 - Աւ այսուհետեւ քու անունդ ԷԱբրամ հրսուի, հապա քու անունդ ԷԱբրահամ ըլլայ. վասն զի քեզ ազգերու բազմութեան հայր ըրի: 6 - Եւ քեզ խիստ պիտի աճեցընեմ, ու քեզ ազգեր պիտի ընեմ. ու քեզմէ թագաւորներ պիտի ելլեն: 7 - Եւ իմ ու քու մէջտեղ, ու քեզմէ ետքը քու սերունդիդ մէջտեղ իրենց ազգերուն մէջ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը, որ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած ըլլամ: 8 - Եւ պիտի տամ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ յաւիտենական ժառանգութեան համար այն երկիրը ուր պանդուխտ եղար, բոլոր Քանանու երկիրը. ու անոնց Աստուած պիտի ըլլամ: 9 - Եւ Աստուած ըսաւ Աբրահամի, Աւտի դուն ու քեզմէ ետքը քու սերունդդ իրենց ազգերուն մէջ՝ պահէք իմ

*Եբր. կը տեսնե՞մ
 †Այսինքն, տեսիլքիս կենդանի Աստուածայն ջրհորը
 ‡Այսինքն, հայր բարձր
 ††Այսինքն, հայր բազմութեան

ուխտա: 10 - Այս է իմ ու ձեր մէջտեղ, և քեզմէ ետքը քու սերունդիդ մէջտեղ եղած իմ ուխտս՝ զոր պիտի պահէք: Չեզմէ ամէն արուն թլփատուի: 11 - Չեր անթլփատութեան մարմինը թլփատէք, ու ասիկա իմ ու ձեր մէջտեղ եղած ուխտին նշանը ըլլայ: 12 - Եւ ձեր ազգերուն մէջ ամէն ութ օրուան արու շաբաթ, կամ տունը ծնածը, կամ քու սերունդէդ չեղող բոլոր օտարականներէն ստակով ծախու առնուածը թլփատուի: 13 - Քու տունդ ծնածը և ստակովդ ծախու առնուածը անշուշտ պիտի թլփատուի. և իմ ուխտս ձեր մարմինին մէջ յաւիտենական ուխտ մը ըլլայ: 14 - Եւ անթլփատ արուն՝ որուն անթլփատութեան մարմինը թլփատուած չէ, այն անձը իր ժողովուրդէն պիտի *կորսուի. անիկա իմ ուխտս անարգած է:

15 - Եւ Աստուած ըսաւ Աբրահամի, Քու կնոջդ Սարայի անունը Սարա մի կանչեր, հապա անոր անունը †Սառա ըլլայ: 16 - Ու զանիկա պիտի օրհնեմ, նաև անկէ որդի մը պիտի տամ քեզի. ու պիտի օրհնեմ զանիկա, ու ազգերու մայր պիտի ըլլայ. ժողովուրդներու թագաւորներ պիտի ելլեն անկէ: 17 - Եւ Աբրահամ երեսի վրայ ինկաւ ու խնդաց, և իր սրտին մէջ ըսաւ, Հարիւր տարեկան մարդուն զաւակ պիտի ըլլայ արդեօք. և Սառա, որ իննսուն տարեկան է, պիտի ծնանի: 18 - Եւ Աբրահամ ըսաւ Աստուծոյ, Թող Իսմայէլ ապրի քու առջեւդ: 19 - Եւ Աստուած ըսաւ, Այո, քու կինդ Սառա որդի պիտի ծնանի քեզի, ու անոր անունը †Իսահակ պիտի դնես. և անոր հետ ու անկէ ետքը անոր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը: 20 - Եւ Իսմայէլի համար ալ լսեցի քեզի. ահա օրհնեցի զանիկա, ու պիտի աճեցնեմ զանիկա ու խիստ պիտի շատցնեմ. անիկա տասուերկու իշխան պիտի ծնանի, և մեծ ազգ մը պիտի ընեմ զանիկա: 21 - Բայց գալ տարի այս ատեն Սառայի քեզի ծնանելու Իսահակին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ:

22 - Եւ անոր հետ խօսիլը լմացուց, ու Աստուած Աբրահամի քովէն վեր ելաւ: 23 - Եւ առաւ Աբրահամ իր որդին Իսմայէլը, ու բոլոր իր տունը ծնածները, և բոլոր ստակով ծախու առնուածները, Աբրահամի ընտանիքին մէջ գտնուած ամէն արուն, ու նոյն օրը անոնց անթլփատութեան մարմինը թլփատեց, ինչպէս Աստուած անոր ըսեր էր: 24 - Եւ Աբրահամ իննսունը տարեկան էր երբ իր անթլփատութեան մարմինը թլփատուեցաւ: 25 - Եւ իր որդին Իսմայէլ տասուերեք տարեկան էր երբ իր անթլփատութեան մարմինը թլփատուեցաւ: 26 - Նոյն օրը թլփատուեցաւ Աբրահամ ու իր որդին Իսմայէլ: 27 - Եւ իր տանը բոլոր մարդիկը, թէ՛ իր տունը ծնած և թէ՛ օտարականներէն ստակով ծախու առնուած, իրեն հետ թլփատուեցան:

ԳԼ ԺԸ

Եւ Տէրը երեւցաւ անոր Մամբրէի կաղնիներուն մէջ: Ու անիկա օրուան տաք ատենը վրանին դուռը նստեր էր. 2 - Եւ իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա երեք մարդիկ կայներ էին իրեն մօտ. ու երբ տեսաւ զանոնք, վրանին դռնէն վազեց զանոնք դիմաւորելու, ու մինչև գետինը թռելով խոնարհութիւն ըրաւ, 3 - Եւ ըսաւ, Տէր իմ, հիմա եթէ շնորհք գտայ քու առջեւդ, կ'ազաչեմ քեզի, քու ծառայիդ բնակարանէն մի անցնիր: 4 - Կ'ազաչեմ ձեզի, քիչ մը ջուր բերուի, ու ստքերնիդ լուացէք, ու ծառին տակ հանգստացէք: 5 - Եւ պատառ մը հաց բերեմ, ու սիրտերնիդ զօրացուցէք, ետքը անցէք. քանզի ատոր համար ձեր ծառային քով եկաք: Եւ անոնք ըսին, Ինչպէս ըսիր, այնպէս ըրէ: 6 - Եւ Աբրահամ արտորալով դէպի վրանը Սառայի գնաց, ու ըսաւ, Շուտով երեք գրիւ բարակ ալիւր շաղէ ու շօթեր շինէ: 7 - Եւ Աբրահամ վազեց արջառներուն, ու մատղաշ ու աղէկ որթ մը առաւ ու պատանիի մը տուաւ. ան ալ շուտով պատրաստեց զանիկա: 8 - Եւ կողի ու կաթ ու իր պատրաստած որթը առաւ և անոնց առջև դրաւ. ու ինք ծառին տակ անոնց քով կայնեցաւ, ու անոնք

*Եբր. կորուի
 †Այսինքն, իշխանուհի
 ‡Այսինքն, խնդութիւն

կերան: 9 - Եւ ըսին իրեն, Ո՞ւր է քու Սառա կինդ. ու ինք ըսաւ, Ահա վրանին մէջ է: 10 - Եւ Տէրը ըսաւ, *Պալտարի՛՝ անշուշտ քեզի պիտի դառնամ, և ահա քու կինդ Սառա որդի մը պիտի ունենայ. և Սառա մտիկ կ'ընէր վրանին դրանը մէջ՝ որ Անոր ետեւն էր. 11 - Եւ Աբրահամ ու Սառա ծերացած էին ու օրերնին անցուցած. և Սառայէ պակասած էր կանանց օրէնքին մէջ ըլլալը: 12 - Եւ Սառա իր մտաքին մէջ խնդաց՝ ըսելով, Ես պառուելէս ետքը զուարճութիւն պիտի ունենամ, տէրս ալ ծերացած ըլլալով: 13 - Եւ Տէրը ըսաւ Աբրահամի, Սառա ինչո՞ւ խնդաց՝ ըսելով, Մի՞թէ ես իրաւցընէ պիտի ծնանի՞մ, որ պառուեր եմ. 14 - Տէրոջը առջև դժուարին բան կ'այ արդեօք. սահմանուած ժամանակին, *գալ տարի՛, քեզի պիտի դառնամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ: 15 - Եւ Սառա ուրացաւ ու ըսաւ, Չխնդացի. քանզի վախցաւ: Եւ Անիկա ըսաւ, Ոչ, խընդացիր:

16 - Եւ մարդիկը ելան անկէ, ու երեսնին դէպ ի Սողոմ շիակեցին. և Աբրահամ զանոնք յուզարկելու համար անոնց հետ գնաց: 17 - Եւ Տէրը ըսաւ, Մի՞թէ Աբրահամէ պահէ՞մ ինչ որ ընելու եմ. 18 - Որովհետև Աբրահամ անշուշտ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ըլլայ, ու երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուին: 19 - Քանզի գիտեմ զանիկա, որ իր որդիներուն ու իրմէ ետքը իր տանը պիտի պատուիրէ, և անոնք արդարութիւն ու իրաւունք ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն. որպէս զի Տէրը Աբրահամի վրայ բերէ ինչ որ խօսեցաւ: 20 - Եւ Տէրը ըսաւ, Որովհետև Սողոմի ու Գոմորի ազազակը շատցաւ, և անոնց մեղքը խիստ ծանրացաւ, 21 - Հիմա պիտի իջնեմ տեսնելու թէ բոլորովին ինծի եկած ազազակին պէս ըրի՞ն. և եթէ ոչ՝ գիտնամ: 22 - Եւ այն մարդիկը անկէ ելան ու դէպ ի Սողոմ գացին. և Աբրահամ տակաւին Տէրոջը առջև կայներ էր:

23 - Եւ Աբրահամ մօտեցաւ ու ըսաւ, Արդեօք ամբարշտին հետ ար-

դարն ալ պիտի կորսնցնես. 24 - Թերեւս այն քաղաքին մէջ յիսուն արդար ըլլան. արդեօք անոր մէջ եղած յիսուն արդարին համար չխնայելով պիտի կորսնցնե՞ս այն տեղը. 25 - Քա՛ւ լիցի քեզ այսպիսի բան մը ընելի՛՝ որ արդարը ամբարշտին հետ մեռցնես, ու արդարը ամբարշտի պէս ըլլայ. քա՛ւ լիցի քեզ. մի՞թէ բոլոր երկրի Դատաւորը արդարութիւն պիտի չընէ՞: 26 - Եւ Տէրը ըսաւ, Եթէ Սողոմի մէջ յիսուն արդար գտնեմ՝ քաղաքին մէջ, անոնց համար բոլոր տեղը պիտի խնայեմ: 27 - Եւ Աբրահամ պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա հիմա, ես որ հող ու մոխիր եմ, Տէրոջը հետ խօսելու սկսեցի. 28 - Թերեւս յիսուն արդարէն հինգ պակաս ըլլայ, այն հինգին համար բոլոր քաղաքը պիտի կորսնցնե՞ս: Եւ Անիկա ըսաւ, Եթէ հոն քառասունը հինգ գտնեմ, չեմ կորսնցներ: 29 - Եւ դարձեալ խօսեցաւ անոր ու ըսաւ, Թերեւս հոն քառասուն գտնուի: Եւ Անիկա ըսաւ, Քառասունին համար ալ չեմ ըներ: 30 - Եւ ինք ըսաւ, Ո՛հ, Տէրը չբարկանայ, ու խօսիմ. Թերեւս հոն երեսուն գտնուի: Եւ Տէրը ըսաւ, Եթէ հոն երեսուն գտնեմ, չեմ ըներ: 31 - Եւ ինք ըսաւ, Ահա հիմա Տէրոջը հետ խօսելու սկսեցի. Թերեւս հոն քսան գտնուի: Եւ Անիկա ըսաւ, Քսանին համար ալ չեմ կորսնցներ: 32 - Եւ ինք ըսաւ, Ո՛հ, Տէրը չբարկանայ, ու միայն այս անգամ խօսիմ. Թերեւս հոն տասը գտնուի: Եւ Անիկա ըսաւ, Տասնին համար ալ չեմ կորսնցներ: 33 - Եւ Տէրը Աբրահամի հետ խօսիլը լմնցուցածին պէս՝ գնաց. Աբրահամ ալ իր տեղը դարձաւ:

ԳԼ. ԺԹ

Եւ այն ե կու հրեշտակները իրիկուսան դէմ Սողոմ եկան. ու Ղովտ Սողոմի դուռը նստեր էր. և Ղովտ տեսնելով զանոնք դիմաւորելու ելաւ, ու իր երեսը մինչև գետին շտեղծ խոնարհութիւն ըրաւ. 2 - Ու ըսաւ, Աղէ, իմ տէրերս, կ'աղաչեմ, ձեր ծառային տունը դարձէք, և գիշերը հոն կեցէք ու ոտքերնիդ լուացէք. ու առտուանց կանուխ ելէք ու ձեր ճամբան գացէք: Եւ անոնք ըսին. Ոչ, գի-

*Եբր. կենաց ժամանակին

Շէրը փողոցը կը կենանք: 3 - Եւ շատ բռնադատեց զանոնք, ու անոր դարձան և անոր տունը մտան. ու անոնց խնճոյք բրաւ և բաղարջ եփեց, ու կերան:

4 - Բայց անոնց պառկելէն առաջ քաղաքին մարդիկը, «յօնն» Սողոմոնցիք, երիտասարդներէն մինչև ծերերը, ամէն կողմէն բոլոր ժողովուրդը տունը պատեցին. 5 - Եւ Ղովտը կանչեցին ու անոր ըսին, Ո՞ւր են այն մարդիկը որոնք այս գիշեր քեզի եկան. զանոնք դուրս հանէ մեզի, ու գիտնանք զանոնք: 6 - Եւ Ղովտ դռնէն դուրս ելաւ անոնց քով, ու իր ետեւէն դուռը գոցեց, 7 - Եւ ըսաւ, Եղբայրներս, կ'աղաչեմ՝ ձեզի, չարութիւն մի ընէք: 8 - Ահա հիմա երկու աղջիկ ունիմ, որոնք այր մարդ չեն գիտեր. զանոնք հիմա ձեզի դուրս հանեմ, ու ձեր աչքին առջև աղէկ եղածը ըրէք անոնց. բայց միայն այս մարդոցը բան մը մի ընէք. քանզի անոր համար իմ յարկիս շուքին տակ մտան: 9 - Եւ անոնք ըսին, Մէկդի կեցիր. ու ըսին ալ, Ասիկա պանդխտութեան եկաւ, ու դատաստան ընել կ'ուզէ. հիմա քեզի անոնցմէ գէշ կ'ընենք: Եւ սաստիկ բռնադատեցին մարդը, «յօնն» Ղովտը, ու դուռը կուտրելու մտեցան: 10 - Բայց այն մարդիկը ձեռքերքերնին երկնցուցին, ու Ղովտը տանը մէջ քովերնին առին ու դուռը գոցեցին. 11 - Եւ տանը դուռը կայնած մարդիկը կուրութեամբ զարկին պրզտիկէն մինչև մեծը, այնպէս որ դուռը գտնելէն թուլցան:

12 - Եւ մարդիկը ըսին Ղովտի, Հոս ուրիշ ո՞վ ունիս. փեսաներդ ու որդիներդ և աղջիկներդ, ու քաղաքին մէջ ո՞վ որ ունիս այս տեղէն հանէ.

13 - Վասն զի մենք այս տեղը պիտի կորսնցնենք. քանզի անոնց աղաղակը Տէրոջը առջև մեծ եղաւ. ու Տէրը մեզ զրկեց զանիկա կորսնցնելու:

14 - Եւ Ղովտ ելաւ, ու իր աղջիկները առնող փեսաներուն խօսեցաւ ու ըսաւ, Ելէք ու այս տեղէն գացէք, վասն զի Տէրը պիտի կորսնցնէ այս քաղաքը. բայց իր փեսաներուն ծաղր ընող մը երեւցաւ:

15 - Եւ առտու եղածին պէս՝ հրեշտակները արտորցուցին Ղովտը՝ ըսելով, Ելիր, կինդ ու հոս գտնուած եր-

կու աղջիկդ առ, որպէս զի քաղաքին *անօրէնութեանը մէջ չկորսուիս: 16 - Եւ երբ անիկա կը անանար, այն մարդիկը բռնեցին անոր ձեռքէն ու անոր կնոջ ձեռքէն և անոր աղջիկներուն ձեռքերէն, Տէրոջը անոր ողորմելովը, ու հանեցին զանիկա և քաղաքին դուրսի դին դրին: 17 - Ու եղաւ որ երբ զանոնք դուրս հանեցին, Քիւրասաւ, Անձղ «չարել» համար փախիր. ետիդ մի նայիր և բոլոր դաշտին մէջ մի կայնիր. լեռը փախիր, չըլլայ որ կորսուիս: 18 - Եւ Ղովտ ըսաւ անոնց, Ոչ, Տէր իմ, շնորհք ըրէ. 19 - Ահա հիմա ծառագ քու առջեւդ շնորհք գտաւ, ու իմ կեանքս ազատելով ինծի մեծ երախտիք ըրիր. և ես չեմ կրնար լեռը փախիլ, չըլլայ որ չարիք հասնի ինծի ու մեռնիմ: 20 - Ահա այս քաղաքը՝ «չ հոն փախչելու մտ է, ու այն պզտիկ է. շնորհք ըրէ, հոն փախչիմ, (չէ՞ որ անիկա պզտիկ է,) և իմ անձս ողջ մնայ: 21 - Ու ըսաւ անոր, Ահա այդ բանին մէջ ալ քու աղաչանքդ ընդունեցի, որ այս քաղաքը չկորսնցնեմ՝ որու համար խօսեցար: 22 - Շուտ ըրէ հոն փախիր, քանզի դուն մինչև հոն չհասնիս, ես բան մը չեմ կրնար ընել. անոր համար այն քաղաքին անունը †Սեգովը ‡գրաւ: 23 - Արեւը երկրի վրայ կը ծագէր, երբ Ղովտ Սեգովը մտաւ: 24 - Այն ատեն Տէրը Սողոմի ու Գոմորի վրայ ծծումբ ու կրակ տեղաց Տէրոջը կողմանէ՝ երկինքէն: 25 - Եւ այն քաղաքները, ու բոլոր դաշտը, և այն քաղաքներուն բոլոր բնակիչները ու երկրի վրայ բուսածը կորսնցուց: 26 - Ու ետեւէն անոր կինը երբ նայեցաւ, ու աղի արձան եղաւ:

27 - Եւ Աբրահամ՝ առտուանց կանուխ ելլելով՝ Տէրոջը առջև կայնած տեղը ելաւ. 28 - Եւ Սողոմի ու Գոմորի ու բոլոր դաշտի երկրին վրայ նայելով՝ տեսաւ որ ահա այն երկրէն հնոցի մուխի պէս մուխ կ'ելլէր:

29 - Այսպէս եղաւ՝ որ երբ Աստուած այն դաշտին քաղաքները կը կորսնցնէր, Աստուած Աբրահամը միտքը բերաւ, ու երբ Ղովտի բնակած

*Կամ, պատիժին
†Այսինքն, պզտիկ
‡Կամ, դրուեցաւ

քաղաքները կը կորսնցնէր, այն կործանուածին մէջտեղէն Ղովտը հանեց: 30 - Եւ Ղովտ Սեգովէէ ելաւ, ու լեւը բնակեցաւ, և իր երկու աղջիկները իրեն հետ. քանզի Սեգովրի մէջ բնակելու կը վախնար. ու այրի մը մէջ բնակեցաւ ինք ու իր երկու աղջիկները: 31 - Եւ մեծ աղջիկը պղտիկին ըսաւ, Մեր հայրը ծեր է, ու երկրի մէջ մէկը չկայ՝ որ ամէն երկրի սովորութեանը պէս մեզի մտնէ: 32 - Եկուր մեր հօրը գինի խմցնենք, ու իրեն հետ պառկինք, ու մեր հօրմէն սերունդ պահենք: 33 - Եւ այն գիշերը իրենց հօրը գինի խմցուցին, ու մեծ աղջիկը մտաւ ու իր հօրը հետ պառկեցաւ. և Ղովտ չիմացաւ անոր պառկելն ու ելլելը: 34 - Ու եղաւ որ հետեւեալ օրը մեծ աղջիկը պղտիկին ըսաւ, Ահա երէկ գիշեր հօրս հետ պառկեցայ. այս գիշեր ալ անոր գինի խմցնենք, և մտիր ու իրեն հետ պառկէ, ու մեր հօրմէն սերունդ պահենք: 35 - Եւ այն գիշերն ալ իրենց հօրը գինի խմցուցին, և պղտիկ աղջիկը ելաւ ու անոր հետ պառկեցաւ. և Ղովտ չիմացաւ անոր պառկելն ու ելլելը: 36 - Այսպէս Ղովտի երկու աղջիկները իրենց հօրմէն յղի քնացին: 37 - Եւ մեծը որդի մը ծնաւ, ու անոր անունը Մովսէս դրաւ. ասիկա Մովսէսը քաղաք հայրն է մինչև այսօր: 38 - Եւ պղտիկն ալ որդի մը ծնաւ, ու անոր անունը Բենամին դրաւ. ասիկա Ամմոնացւոց հայրն է մինչև այսօր:

ԳԼ Ի

Եւ Աբրահամ անկէ դէպ ի հարաւային երկիրը չուեց, և Կադէսի ու Սուրի մէջտեղ բնակեցաւ, ու Գերարայի մէջ պանդուխտ եղաւ: 2 - Եւ Աբրահամ իր կնոջ Սառայի համար, Ասիկա իմ քոյրս է, ըսաւ. և Գերարայի թագաւորն Աբրիմէլէք Ժուդդրկեց, ու առաւ Սառան: 3 - Եւ Աստուած եկաւ Աբրիմէլէքի գիշերը երազի մէջ ու ըսաւ անոր, Ահա այդ կնոջ համար զոր դուն առիր, պիտի մեռնիս. քանզի անիկա այր ունի: 4 - Բայց Աբրիմէլէք անոր մօտեցած չէր, և ըսաւ, Ով Տէր, արդար ազգ այ պիտի մեռցնե՞ս: 5 - Ինք ինծի, Անիկա հո՞ քոյրս է, չը-

սա՞ւ. և սա ալ, Անիկա իմ եղբայրս է, ըսաւ. ես այս բանը ուղիղ սրտով ու մաքուր ձեռքերով ըրի: 6 - Եւ Աստուած անոր ըսաւ երազի մէջ, Ես ալ գիտցայ որ այս բանը ուղիղ սրտով ըրիր, նաև քեզ ինծի դէմ մեղք դործելէ ետ պահեցի. անոր համար քեզ չթողուցի որ անոր մօտենաս: 7 - Բայց չիմա կինը իր էրկանը դարձուր. քանզի անիկա մարգարէ է, և քեզի համար աղօթք թող ընէ որ ապրիս. և եթէ դուն զանիկա ետ չտաս, գիտցիր որ անշուշտ պիտի մեռնիս դուն և ամէն քուկիսներդ:

8 - Ուստի առտուանց կանուխ ելաւ Աբրիմէլէք, ու կանչեց իր բոլոր ծառաները, և բոլոր այս բաները անոնց պատմեց. ու մարդիկը շատ վախցան: 9 - Եւ Աբրիմէլէք կանչեց Աբրահամը ու ըսաւ անոր, Մեզի ի՞նչ ըրիր. ու ես քեզի ի՞նչ յանցանք ըրի, որ իմ վրաս ու թագաւորութեանս վրայ մեծ մեղք մը բերիր. չգործուելու գործեր գործեցիր ինծի: 10 - Եւ Աբրիմէլէք ըսաւ Աբրահամի, Ի՞նչ տեսար որ այս բանը ըրիր: 11 - Եւ Աբրահամ ըսաւ, Ես կարծեցի որ իրաւցրնէ այս տեղ Աստուծոյ վախը չկայ, ու կնոջս համար զիս կը մեռցնեն: 12 - Եւ տակաւին իրաւցրնէ իմ քոյրս է. հօրս աղջիկն է, բայց մօրս աղջիկը չըլլալով իմ կինս եղաւ: 13 - Եւ երբ Աստուած զիս իմ հօրս տունէն օտարութեան հանեց, ըսի ատոր, ինծի ընելու շնորհքդ այս ըլլայ. ուր որ երթալու ըլլանք, հոն ինծի համար բտս թէ իմ եղբայրս է: 14 - Եւ Աբրիմէլէք ոչխարներ ու արջառներ և ծառաներ ու աղախիսներ առաւ, և Աբրահամի տուաւ. անոր կինը Սառան ալ անոր ետ տուաւ: 15 - Եւ Աբրիմէլէք ըսաւ, Ահա իմ երկիրս քու առջեւդ է. ուր որ կ'ուզես, բնակէ: 16 - Եւ Սառայի ըսաւ, Ահա եղբորդ հազար կտոր արծաթ տուի. ահա այն քեզի աչքերու ծածկոց ըլլայ բոլոր քեզի հետ եղողներուն առջև և ամէնուն: Այսպէս անիկա յանդիմանուեցաւ: 17 - Եւ Աբրահամ աղօթք ըրաւ Աստուծոյ. և Աստուած բժշկեց Աբրիմէլէքը ու անոր կինը և անոր աղախիսները, ու կը ծնանէին. 18 - Քանզի Տէրը Աբրա-

*Եբբ. ականջներուն խօսեցաւ

համի կնոջ Սառայի համար՝ Արիմե-
լէքի ընտանիքին բոլոր արգանդները
գլխովին գոցեր էր:

ԳԼ. ԻԱ

Եւ Տէրը իր ըսածին պէս Սառայի
այցելութիւն ըրաւ. և իր զրուցածին
պէս ըրաւ Տէրը Սառայի. 2 - Եւ Սա-
ռա յղացաւ, ու որդի մը ծնաւ Աբ-
րահամի իր ծերութեան ատենը, այն
նոյն ժամանակին՝ որ Աստուած ըսեր
էր անոր: 3 - Եւ Աբրահամ իրեն ծնած,
այսինքն Սառայի իրեն ծնած, իր որդ-
ւոյն անունը Իսահակ դրաւ: 4 - Եւ
Աբրահամ թլփատեց իր որդին Իսա-
հակը երբ ութ օրուան եղաւ, ինչպէս
Աստուած իրեն պատուիրէր էր: 5 -
Եւ Աբրահամ հարիւր տարեկան էր
երբ իր որդին Իսահակ ծնաւ իրեն: 6 -
Եւ Յառա ըսաւ, Աստուած զիս
խնդացուց. ամէն լսողը ինծի հետ
պիտի խնդայ: 7 - Կառ ըսաւ, Աբրա-
համի ո՞վ կ'ըսէր որ Սառա տղաքներ
պիտի սնուցանէ. քանզի իր ծերու-
թեան ատեն իրեն որդի ծնայ: 8 -
Եւ տղան մեծցաւ ու կաթէն կտրուե-
ցաւ. և Աբրահամ մեծ խնձոյք ըրաւ
Իսահակի կաթէն կտրուած օրը:

9 - Եւ Սառա տեսնելով որ Եգիպ-
տացի Հագարի որդին, զոր Հագար Աբ-
րահամի ծնաւ, ծաղր կ'ընէ, 10 - Ըսաւ
Աբրահամի, Վա՛նտէ այս աղախինը ու
անոր որդին. վասն զի այս աղախինին
որդին իմ որդւոյս Իսահակի հետ ժա-
ռանգ պիտի չըլլայ: 11 - Եւ այս բանը
Աբրահամի շատ դժուար երեւցաւ՝ իր
որդւոյն պատճառաւ: 12 - Եւ Աստուած
ըսաւ Աբրահամի, Տղուն համար ու
աղախինիդ համար՝ այդ բանը թող քե-
զի դժուար չերեւնայ. Սառայի քեզի
ըսած բոլոր խօսքը մտիկ ըրէ, քանզի
Իսահակով քեզի սերունդ պիտի կոչ-
ուի: 13 - Եւ աղախինին որդին ալ
ազգ մը պիտի ընեմ, վասն զի անիկա
քու սերունդդ է: 14 - Ու Աբրահամ
առտուանց կանուխ ելաւ, և հաց ու
տիկ մը ջուր առաւ, ու Հագարի
տուաւ՝ անոր ուսին վրայ դնելով, և
տղան ալ գոգոց, ու զրկեց զանիկա.
և գնաց անիկա ու Բերսաբէէի անա-
պատին մէջ անդին ասդին կը պտը-
տէր: 15 - Եւ տիկէն ջուրը հատաւ,
ու մացառներէն մէկուն տակ ձգեց

տղան: 16 - Եւ նետընկէցի մը չափ
հեռու դնաց ու դիմացը նստաւ,
քանզի ըսաւ, Տղուն մեռնիլը չտեսնեմ.
և դիմացը նստելով իր ձայնը վերցուց
ու լացաւ: 17 - Եւ Աստուած տղուն
ձայնը լսեց. ու Աստուծոյ հրեշտակը
երկինքէն կանչեց Հագարը, ու անոր
ըսաւ, Հագար, քեզի ի՞նչ եղաւ. մի
վախնար, վասն զի Աստուած լսեց
տղուն ձայնը՝ անոր եղած տեղէն:
18 - Ելիր, տղան վերցուր, ու ձեռ-
քովդ օգնէ անոր. վասն զի մեծ ազգ
մը պիտի ընեմ զանիկա: 19 - Եւ
Աստուած Հագարէ աչքերը բացաւ, ու
ջրհոր մը տեսաւ. և գնաց ու տիկը
ջրով լեցուց, ու տղուն խմցուց: 20 - Եւ
Աստուած տղուն հետ էր, որ մեծցաւ
ու անապատը բնակեցաւ և աղէղնա-
ւոր եղաւ: 21 - Ու Փառանի անապա-
տին մէջ բնակեցաւ. և մայրը անոր
կին մը առաւ Եգիպտոսի երկրէն:

22 - Ու եղաւ որ այն ատեն Արիմե-
լէք և իր սպարապետը Փիթող խօսե-
ցան Աբրահամի՝ ըսելով, Աստուած
քեզի հետ է ամէն բանի մէջ՝ ինչ որ
գործես: 23 - Եւ հիմա հոս ինծի եր-
դում ըրէ Աստուծով, որ ինծի ու իմ
զաւկիս և իմ սերունդիս հետ նեն-
գութեամբ պիտի չվարուիս. հապա իմ
քեզի ըրած երախտիքիս պէս պիտի
ընես ինծի ու այս երկրին՝ որուն մէջ
բնակեր ես: 24 - Եւ Աբրահամ ըսաւ,
Ես երդում կ'ընեմ: 25 - Ու Աբրա-
համ յանդիմանեց Արիմելէքը ջրհորի
մը համար՝ զոր Արիմելէքի ծառաները
բռնութեամբ առած էին: 26 - Եւ Ա-
րիմելէք ըսաւ, Այդ բանը ով ընելը
չեմ գիտեր. և դուն ալ չիմացուցիր
ինծի, ու ես ալ լսած չէի, բայց միայն
այսօր: 27 - Եւ Աբրահամ ոչխարներ
ու արջառներ առաւ ու Արիմելէքի
տուաւ, ու երկուքն ալ ուխտ ըրին:
28 - Եւ Աբրահամ ոչխարներէն եօթը
հատ էգ գառներ գատ դրաւ: 29 - Ու
Արիմելէք ըսաւ Աբրահամի, Ի՞նչ պի-
տի ըլլան այդ եօթը էգ գառները զո-
րոնք դուն գատ դրիր: 30 - Եւ անիկա
ըսաւ, Այս եօթը էգ գառները իմ
ձեռքէս առնես, որպէս զի անոնք
ինծի վկայութիւն ըլլան թէ այս հորը
ես փորեր եմ: 31 - Անոր համար այն տե-
ղին անունը *Բերսաբէէ կոչեց. քանզի

*Այսինքն, ջրհոր երգման

երկուքն ալ հոն երգում ըրին: 32 - Եւ Բերսաբէէի մէջ ուխտ ըրին. այն ատեն ելաւ Աբիմէլէք ու անոր սպարապետը Փիքոզ, և Փղշտացւոց երկիրը դարձան:

33 - Եւ Աբրահամ ծառեր տնկեց Բերսաբէէի մէջ. ու հոն յաւիտենական Աստուծոյ, Եհովայի, անունը կանչեց: 34 - Եւ Աբրահամ շատ օրեր պանդխտութիւն ըրաւ Փղշտացւոց երկրին մէջ:

ԳԼ. ԻԲ

Ու եղաւ որ այս բաներէն ետքը Աստուած փորձեց Աբրահամը, ու ըսաւ անոր, Ով Աբրահամ. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ: 2 - Եւ անիկա ըսաւ, Հիմա քու սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը առ, ու Մօրիայի երկիրը գնա, և հոն զանիկա ողջակէզ ըրէ լեռներէն մէկուն վրայ՝ զոր ես քեզի պիտի ըսեմ: 3 - Եւ Աբրահամ առտուանց կանուխ ելաւ, ու իր իշուն համետը դրաւ, և իրեն հետ երկու ծառայ ու իր Իսահակ որդին առաւ. և ողջակէզի համար փայտ ճեղքեց, ու ելաւ գնաց այն տեղը զոր Աստուած իրեն ըսաւ: 4 - Ու երրորդ օրը Աբրահամ իր աչքերը վեր վերցուց, ու հեռուէն տեսաւ այն տեղը: 5 - Եւ Աբրահամ ըսաւ իր ծառաներուն, Ինչք իշուն հետ հոս մնացէք, և ես ու տղան մինչև հոն երթանք, ու երկրպագութիւն ընենք, և նորէն ձեզի դառնանք: 6 - Ու Աբրահամ ողջակէզին փայտերն առաւ, ու իր որդւոյն Իսահակի վրայ դրաւ, և ինք իր ձեռքը առաւ կրակը ու դանակը, ու երկուքը մէկտեղ գացին: 7 - Եւ Իսահակ իր հօրը Աբրահամի խօսեցաւ ու ըսաւ, Հայր իմ. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ, որդիս: Եւ անիկա ըսաւ, Ահա կրակը ու փայտը, բայց ողջակէզ ըլլալու գառը ո՞ւր է. 8 - Եւ Աբրահամ ըսաւ, Աստուած իրեն ողջակէզ ըլլալու գառը պիտի պատրաստէ, որդեակ իմ: Այսպէս երկուքը մէկտեղ գացին: 9 - Ու եկան այն տեղը զոր Աստուած անոր ըսեր էր. և Աբրահամ հոն սեղան շինեց ու փայտերը շարեց, և իր որդին Իսահակը կապեց, ու զանիկա սեղանը, փայտերուն վրայ, դրաւ: 10 - Եւ Աբրահամ իր ձեռքը

երկնցուց, ու դանակը առաւ որպէս զի իր որդին մորթէ: 11 - Եւ Տէրոջը հրեշտակը երկինքէն անոր կանչեց ու ըսաւ, Աբրահամ, Աբրահամ. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ: 12 - Եւ ըսաւ, Տղուն ձեռք մի դպցներ, և անոր բան մը մի ըներ. քանզի հիմա գիտցայ որ Աստուծոյ կը վախնաս. որովհետև քու մէկ հատիկ որդիդ ինձմէ չխնայիր: 13 - Եւ Աբրահամ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա էր ետեւը խիտ մացառներուն մէջ եղջիւրներէն բռնուած խոյ մը կար. ու Աբրահամ գնաց ու խոյը առաւ, և զանիկա իր որդւոյն տեղ ողջակէզ մատուց: 14 - Եւ Աբրահամ այն տեղին անունը Եհովայի կոչեց, որ մինչև այսօր կ'ըսուի, Տէրը լեռանը մէջ պիտի երեւնայ: 15 - Եւ Տէրոջը հրեշտակը երկրորդ անգամ երկինքէն Աբրահամը կանչեց, 16 - Ու ըսաւ, Իմ անձիս վրայ երգում ըրի, կ'ըսէ Տէրը, որովհետև այս բանը ըրիր, ու ինձի համար քու մէկ հատիկ որդւոյդ չխնայեցիր, 17 - Քեզ օրհնելով պիտի օրհնեմ, ու քու սերունդդ երկինքի աստղերուն ու ծովեզերքը եղող աւազին պէս խիստ պիտի շատցնեմ. և քու սերունդդ իր թշնամիներուն †քաղաքները պիտի ժառանգէ. 18 - Ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին, որովհետև իմ ձայնիս ալիանջ դրիր: 19 - Այսպէս Աբրահամ իր ծառաներուն դարձաւ, ու ելան ու մէկտեղ Բերսաբէէ գացին. և Աբրահամ Բերսաբէէի մէջ կը բնակէր:

20 - Ու եղաւ որ այս բաներէն ետքը Աբրահամի պատմուեցաւ՝ ըսելով, Ահա Մեղքա ինք ալ որդիներ ծնաւ քու եղբօրդ Նաբովրի. 21 - Առջինեկ որդին Հուսը, և անոր եղբայրը Բուզը, ու Արամի հայրը կամուէլը, 22 - Եւ Քաղազը ու Ասաւը և Փաղգատը ու Յեղլափը և Բաթուէլը: 23 - Եւ Բաթուէլ ծնաւ Ռեբեկան. այս ութ որդիները Մեղքա ծնաւ Աբրահամի եղբօրը Նաբովրի: 24 - Եւ անոր հարձը որուն անունը Ռեուամ էր, անիկա ալ ծնաւ Տէբաքը և Գաամը ու Թաքաւը և Մաաքան:

*Այսինքն, Տէրը պիտի տեսնէ. ի՞նչ, Տէրը պիտի նախատեսուի †Եբր. գուռը

ԳԼ. ԻԳ

Եւ Սառա հարիւր քսանըօթը տարի ապրեցաւ. այստան եղան Սառայի կեանքին տարիները : 2 - Եւ Սառա մեռաւ Կարիաթ-արբայի մէջ, որ է Քեբրոն, Քանանու երկրին մէջ. ու Աբրահամ Սառայի համար սուգ ընէր ու ողբալու եկաւ. 3 - Եւ Աբրահամ իր մեռելին քովէն ելաւ, ու Քեօի որդիներուն հետ խօսեցաւ՝ ըսելով, 4 - Ես ձեր մէջ օտարական ու պանդուխտ եմ. ձեր մէջ ինծի գերեզմանի ստացուածք տուէք, որպէս զի իմ երեսիս առջեւէն մեռելս թաղեմ : 5 - Եւ Քեօի որդիները պատասխան տուին Աբրահամի ու անոր ըսին, 6 - Տէր իմ, մտիկ ըրէ մեզի, դուն մեր մէջ իշխան Աստուծոյ ես. մեր ամէնէն ընտիր գերեզմանին մէջ թաղէ քու մեռելդ. քու մեռելդ թաղելու համար՝ մեզմէ մէկը չխնայեր իր գերեզմանը քեզի տալու : 7 - Եւ Աբրահամ ելաւ, ու խոնարհութիւն ըրաւ այն երկրին ժողովուրդին, Քեօի որդիներուն. 8 - Եւ անոնց զուցեց՝ ըսելով, Եթէ կը հաճիք որ ես իմ երեսիս առջեւէն մեռելս թաղեմ, ինծի մտիկ ըրէք, և ինծի համար Սահառի որդւոյն Եփրոնի հետ խօսեցէք, 9 - Որ իր արտին ծայրը եղած *Մաքփելայի այրը ինծի տայ. անիկա ձեր մէջ ինծի գերեզմանի ստացուածք ըլլալու համար յման գնով տայ : 10 - Ու Եփրոն Քեօի որդիներուն մէջ կը նստէր : Եւ Քեօացի Եփրոն պատաստան տուաւ Աբրահամի երբ իր քաղաքին դուռը մտնող բոլոր Քեօի որդիները կը լսէին, ու ըսաւ, 11 - Ոչ, տէր իմ, ինծի մտիկ ըրէ. արտը քեզի կուտամ, և հոն եղած այրն ալ քեզի կուտամ. իմ ժողովուրդիս որդիներուն առջև զայն քեզի տուի. թաղէ քու մեռելդ : 12 - Եւ Աբրահամ այն երկրին ժողովուրդին առջև խոնարհութիւն ըրաւ. 13 - Ու Եփրոնի խօսեցաւ, երբ այն երկրին ժողովուրդը կը լսէին, ու ըսաւ, Բայց եթէ զայն ինծի պիտի գաս, կ'աղաչեմ քեզի, ինծի մտիկ ըրէ. ես արտին ստակը տամ. առ ինծմէ, ու ես իմ մեռելս հոն թաղեմ : 14 - Եւ Եփրոն պատասխան տուաւ Աբրահամի ու

անոր ըսաւ, 15 - Տէր իմ, լսէ ինծի. գեօինը չորս հարիւր սիկղ արծաթ կ'առի. իմ ու քու մէջտեղ այն ինչ է. ուրեմն թաղէ քու մեռելդ : 16 - Եւ Աբրահամ Եփրոնի մտիկ ըրաւ. ու Աբրահամ կշռեց արծաթը ու գոսոս Եփրոնի, ինչպէս անիկա Քեօի որդիներուն առջև խօսեր էր, այսինքն չորս հարիւր սիկղ արծաթ՝ վաճառականներուն մէջ անցած գնով : 17 - Ու Եփրոնի արտը որ Մաքփելայի մէջ Մամբրէի դիմաց է, արտը ու հոն եղած այրը, ու անոր բոլորտիքի սահմաններուն մէջ եղած արտին մէջի բոլոր ծառերը 18 - Աբրահամի ստացուածք ըլլալու համար հաստատուեցան, անոր քաղաքին դունէն մտնող բոլոր Քեօի որդիներուն առջև : 19 - Եւ անկէ ետքը Աբրահամ իր կինը Սառան թաղեց Մամբրէի դիմաց եղող Մաքփելայի արտին այրին մէջ, որ է Քեբրոն՝ Քանանու երկրին մէջ : 20 - Եւ արտը ու հոն եղած այրը Քեօի որդիներէն Աբրահամի գերեզմանի ստացուածք ըլլալու համար հաստատուեցան :

ԳԼ. ԻԴ

Եւ Աբրահամ օրերն անցուցած ու ծերացած էր. ու Տէրը ամէն բանի մէջ օրհնեց Աբրահամը : 2 - Եւ Աբրահամ ըսաւ իր տանը երէց ծառային, որ իր բոլոր ունեցածին վերակացուն էր, կ'աղաչեմ քեզի, ձեռքդ իմ երանքիս տակ դիր. 3 - Եւ քեզ կ'երգմնցնեմ՝ Տէրոջմով, որ երկինքի Աստուածն ու երկրի Աստուածն է, որ իմ որդւոյս կին չառնես Քանանացուց աղջիկներէն, որոնց մէջ ես կը բնակիմ. 4 - Հապա իմ երկիրս ու իմ ազգականներուս երթաս, ու իմ որդւոյս Խահակի անկէ կին առնես : 5 - Եւ ծառան ըսաւ անոր, Գուցէ կինը իմ ետեւէս այս երկիրը գալ չուզէ. կ'ըլլայ որ քու որդիդ այն երկիրը դարձնեմ ուրկէ դուն ելար : 6 - Եւ Աբրահամ ըսաւ անոր, Զգուշացիր որ իմ որդիս հոն չդարձնես : 7 - Երկինքի Տէր Աստուածը, որ զիս իմ հօրս տունէն ու իմ ծննդեան երկրէս հանեց, և որ խօսեցաւ ինծի, ու երդում ըրաւ ինծի՝ ըսելով, Այս երկիրը քու սերունդիդ պիտի տամ, անիկա իր հրեշտակը

*Այսինքն, կրկնութիւն

քու առջեւէդ պիտի զրկէ, ու դուն անկէ իմ որդւոյս կին պիտի առնես: 8 - Եւ եթէ կինը քու ետեւէդ գալ չուզէ, այս իմ երգումէս դուն անպարտ կ'ըլլաս. միայն թէ իմ որդիս հոն չդարձնես: 9 - Եւ ծառան իր տէրոջը Աբրահամի երանքին տակ զբաւ իր ձեռքը, ու այս բանին համար երգում ըրաւ անոր:

10 - Եւ ծառան իր տէրոջը ուղտերէն տասը ուղտ առաւ ու գնաց, քանզի իր տէրոջը բոլոր բարեքները իր ձեռքն էին. և ելաւ ու գէպ ի *Միջագետ Նաբովրի քաղաքը գնաց:

11 - Եւ քաղաքին դուրսիցին ուղտերը նստեցուց ջրհորի մը քով իրիկուան դէմ՝ կիներուն ջուր քաշելու ելած ատենը: 12 - Եւ ըսաւ, Ով Տէր, իմ տէրոջս Աբրահամի Աստուածը, կ'աղաչեմ քեզի, յաջողէ ինձի այսօր, և իմ տէրոջս Աբրահամի բարերարութիւն ըրէ:

13 - Ահա ես ջուրի աղբիւրին քով կը կայնիմ. և այս քաղաքին բնակիչներուն աղջիկները ջուր հանելու կ'ելլեն: 14 - Եւ ըլլայ թէ՛ երբ աղջկան ըսեմ, Շնորհք ըրէ, սափորդ իջեցուր որպէս զի խմեմ, ու անհկա ըսէ թէ խմէ, ու քու ուղտերուդ ալ խմցնեմ, անհկա ըլլայ քու Իսահակ ծառայիդ համար սահմանածդ. և ասով գիտնամ որ իմ տէրոջս բարերարութիւն ըրի:

15 - Ու եղաւ որ տակաւին իր խօսքը չլմնցուցած, ահա Աբրահամի եղբօրը Նաբովրի կնոջ Մեղքայի որդւոյն Բաթուէլի ծնած Ռեբեկան եկաւ, իր ուսին վրայ սափորը ունենալով: 16 - Եւ աղջիկը խիստ գեղեցիկ տեսքով կոյս մըն էր, ու այր մարդ մը զանհկա գիտցած չէր. և անհկա իջաւ աղբիւրը, ու իր սափորը լեցուց ու կը դառնար:

17 - Եւ ծառան զանհկա գիտնորելու վազեց, ու ըսաւ, Շնորհք ըրէ, քու սափորէդ ինձի քիչ մը ջուր խրմցուր: 18 - Եւ անհկա ըսաւ, Խմէ, տէր իմ. ու շուտով սափորը իր ձեռքին վրայ իջեցուց, և խմցուց անոր: 19 - Եւ երբ անոր խմցուց լմնցուց, ըսաւ, Ուղտերուդ այ ջուր քաշեմ, մինչև ամէնը խմեն: 20 - Եւ շուտով սափորը աւազանին մէջ պարպեց, ու նորէն հորը վազեց ջուր քաշելու, և անոր

բոլոր ուղտերուն համար ջուր քաշեց: 21 - Եւ մարդը զարմանալով անոր վրայ՝ լուռ կը մնար, մտածելով թէ արդեօք Տէրը անոր ճամբան յաջողէ՞ց թէ ոչ: 22 - Ու երբ ուղտերը խմելը լմնցուցին, մարդը կէս սիկոսակիէ օղակ մը, և անոր ձեռքերուն համար տասը սիկոսակիէ երկու ապարանջան հանեց, ու անոր քոտու. 23 - Ու ըսաւ, Դուն որուն աղջիկն ես, կ'աղաչեմ, ըսէ ինձի. քու հօրդ տունը մեզի համար գիշերը կենալու տեղ կա՞յ: 24 - Եւ անհկա ըսաւ անոր, Ես Մեղքայի որդւոյն Բաթուէլի աղջիկն եմ, զոր Մեղք Նաբովրի ծնաւ: 25 - Նաև ըսաւ անոր, Մենք շատ յարգ ու ճարակ ունինք, և գիշերը կենալու տեղ ալ: 26 - Ու մարդը խոնարհեցաւ ու Տէրոջը երկրպագութիւն ըրաւ: 27 - Եւ ըսաւ, Օրհնեալ ըլլայ իմ տէրոջս Աբրահամի Տէր Աստուածը, որ իմ տէրս իր ողորմութենէն ու իր ճշմարտութենէն չզրկեց. քանի որ ես ճամբուն մէջ էի, Տէրը զիս իմ տէրոջս եղբայրներուն տունը առաջնորդեց: 28 - Եւ աղջիկը վազեց, ու այս բաները իր մօրը տունը պատմեց:

29 - Եւ Ռեբեկա եղբայր մը ունէր Լաբան անունով. ու Լաբան դուրս վազեց դէպ ի աղբիւրը մարդուն քով: 30 - Վասն զի տեսնելով օղակը, և իր քրոջը ձեռքերուն վրայի ապարանջանները, ու լսելով իր քրոջը Ռեբեկայի խօսքերը, որ կ'ըսէր թէ Այն մարդը այսպէս խօսեցաւ ինձի, մարդուն եկաւ. և ահա անհկա ուղտերուն քով աղբիւրին մօտ կայներ էր:

31 - Ու ըսաւ անոր, Եկուր, սվ Տէրոջը օրհնեալը, ինչո՞ւ դուրսը կայներ ես. քանզի տունը պատրաստեցի, և ուղտերուն համար տեղ մը: 32 - Ու մարդը տունը եկաւ. և ուղտերը քակեց, և ուղտերուն յարգ ու ճարակ, և անոր ոտքերը ու անոր հետ եղող մարդոց ոտքերը լուալու ջուր տուաւ: 33 - Եւ անոր առջև կերակուր դրուեցաւ. բայց անհկա ըսաւ, Մինչև իմ խօսքերս չզրուցեմ, չեմ ուտեր. և Լաբան ըսաւ, Զրուցէ: 34 - Ու անհկա ըսաւ, Ես Աբրահամի ծառան եմ: 35 - Եւ Տէրը մեծապէս օրհնեց իմ տէրս, ու մեծ մարդ մը եղաւ. և անոր հօտեր ու աղջուներ և արծաթ

*Եբր. Աբրամ Նահաբուրայիմ

ու ոսկի, և ծառաներ ու աղախիններ, և ուղտեր ու էշեր տուաւ: 36 - Եւ իմ տէրոջս կինը Սաուա իր պառու- թեան ատենը որդի մը ծնաւ իմ տէ- րոջս, որ բոլոր ունեցածը անոր տուաւ: 37 - Եւ իմ տէրս ինձի եր- դում ընել տուաւ՝ ըսելով, Զրլայ որ իմ որդւոյս կին առնես ֆանա- նացւոց աղջիկներէն, որոնց երկիրը ես կը բնակիմ: 38 - Հապա իմ հօրս տունը ու իմ ազգատոհմս երթաւ, ու իմ որդւոյս կին առնես: 39 - Եւ ես իմ տէրոջս ըսի, Գուցէ կինը իմ ետե- լէս չգայ: 40 - Եւ անիկա ինձի ըսաւ, Տէրը, որուն առջեւ ես կը քալեմ, իր հրեշտակը քեզի հետ պիտի դրկէ, ու քու ճամբագ պիտի յաջողէ, և իմ որդւոյս իմ ազգատոհմէս ու իմ հօրս տունէն կին պիտի առնես: 41 - Իսկ դուն այն ատեն իմ երգումէս ան- պարտ պիտի ըլլաս, երբ իմ ազգա- տոհմս երթալով, քեզի հէջ չտան, այն ատեն իմ երգումէս անպարտ պի- տի ըլլաս: 42 - Եւ աղբիւրն եկայ այսօր, ու ըսի, Ով Տէր, իմ տէրոջս Աբրահամի Աստուածը, եթէ հիմա այս իմ երթալու ճամբաս դուն կը յաջողես, 43 - Ահա ես ջուրին աղ- բիւրին քով կը կայնիմ: և ըլլայ որ աղջիկը ջուր քաշելու գայ, և ես ա- նոր ըսեմ թէ Ծնորհք ըրէ, ինձի քու սափորէդ քիչ մը ջուր խմցուր, 44 - Եւ անիկա ինձի՝ Դուն ալ խմէ, և ուղտերուդ համար ալ ջուր քա- շեմ ըսէ, թող անիկա ըլլայ Տէրոջը սահմանած կինը իմ տէրոջս որդւոյն համար: 45 - Եւ իմ սրտիս մէջ տա- կաւին խօսքը չլմնցուցած, ահա Ռե- բեկա կ'ելլէր սափորը իր ուսին վրայ ունենալով, և աղբիւրը իջաւ ու ջուր քաշեց. և ըսի անոր, Ծնորհք ըրէ, ինձի ջուր խմցուր: 46 - Եւ անիկա շուտով սափորը իր ուսէն վար առաւ ու ըսաւ, Խմէ, և ուղտերուդ ալ խմցը- նեմ. ուստի ես խմեցի, և ուղտերուն ալ խմցուց: 47 - Եւ հարցուցի անոր ու ըսի, Դուն որուն աղջիկն ես. և անիկա ըսաւ, Մեղքայի Նաբովբի ծնած որդւոյն Բաթուէլի աղջիկն եմ. այն ատեն օղակը անոր քիթը, ու ապարանջանները անոր ձեռքերուն վրայ դրի: 48 - Եւ խոնարհեցայ ու Տէրոջը երկրպագութիւն ըրի, և իմ տէրոջս Աբրահամի Տէր Աստուածը

օրհնեցի, որ իմ տէրոջս եղբօրը աղջիկը իր որդւոյն առնելու համար զիս ուղիղ ճամբան առաջնորդեց: 49 - Եւ հիմա եթէ իմ տէրոջս շնորհք ու ճշմարտու- թիւն պիտի ընէք, ինձի պատմեցէք. և եթէ ոչ՝ չարէ՛ն ինձի ըսէք, որ ես աջ կող- մը կամ ձախ կողմը դառնամ: 50 - Լաբան ու Բաթուէլ պատասխան տուին ու ըսին, Այս բանը Տէրոջմէն է. մենք քեզի գէշ կամ աղէկ չենք կրնար ըսել: 51 - Ահա Ռեբեկա քու առջեւդ է, առ ու գնա. և Տէրոջը ըսածին պէս թող քու տէրոջդ որդ-ւոյն կին ըլլայ: 52 - Եւ եղաւ որ երբ Աբրահամի ծառան անոնց խօսքերը լսեց, մինչև գետին Խանաբէլ երկր- պագութիւն ըրաւ Տէրոջը: 53 - Եւ ծառան արձաթեղէն զարդեր ու ոս- կեղէն զարդեր և հանդերձներ հա- նեց, ու Ռեբեկայի տուաւ. և անոր եղբօրը ու մօրը պատուական ընծա- ներ տուաւ: 54 - Եւ կերան ու խմե- ցին ինք ու իրեն հետ եզող մարդիկը, ու գիշերը հա՛ն մնացին, և առտուանց ելան, ու ինք ըսաւ, Զիս իմ տէրոջս զրկեցէք: 55 - Եւ աղջկան եղբայրը ու մայրը ըսին, Թող աղջիկը քանի մը օր, գոնէ տասը օր, մեր քով կե- նայ, «- ետքը երթայ: 56 - Եւ ինք ըսաւ անոնց, Զիս մի արգիլէք, քանզի Տէրը իմ ճամբաս յաջողեց. թող տուէք զիս որ տէրոջս երթամ: 57 - Եւ անոնք ըսին, Աղջիկը կանչենք ու անոր բերանը փնտուենք: 58 - Եւ կան- չեցին Ռեբեկան ու ըսին անոր, Այս մարդուն հետ կ'երթա՞ս. և անիկա կ'երթամ ըսաւ: 59 - Ու իրենց քոյրը Ռեբեկան ու անոր դայեակը և Աբրա- համի ծառան ու անոր մարդիկը զըր- կեցին: 60 - Եւ օրհնեցին Ռեբեկան ու ըսին անոր, Դուն մեր քոյրն ես. հազարաւոր բիւրերու հայր ըլլաս, և քու սերունդդ իր թշնամիներուն *քա- ղաքները ժառանգէ: 61 - Եւ Ռեբեկա ու իր աղախինները ելան և ուղտերը հեծան, ու այն մարդուն ետեւէն գա- ցին. և ծառան առաւ Ռեբեկան ու գնաց: 62 - Եւ Իսահակ Լահայրոյի ջրհո- րէն դարձած կու գար. վասն զի ա- նիկա հարաւային երկիրը կը բնակէր: 63 - Եւ Իսահակ իրիկուան գէմ դաշ-

*Եբր. դուռը

տը ելեր էր *մտածութիւն ընելու. ու իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա ուղտեր կու գային: 64 - Եւ Ռեւելիա իր աչքերը վերցուց, ու երբ Իսահակը տեսաւ, ուղտէն վար իջաւ. 65 - Եւ ըսաւ ծառային, գաշտին մէջ գէպ ի մեզ եկող այդ մարդը ո՞վ է. և ծառան ըսաւ, Իմ տէրս է. ու ինք քօղը առաւ ու ծածկուեցաւ: 66 - Եւ ծառան իր բոլոր բրած բաները պատմեց Իսահակի: 67 - Եւ Իսահակ զանիկա իր մօրը Սառայի վրանը տարաւ, ու առաւ Ռեբեկան, որ իր կինը եղաւ. և ինք սիրեց զանիկա: Ու Իսահակ մխիթարուեցաւ իր մօրը †վրայով:

ԳԼ ԻԵ

Եւ Աբրահամ նորէն կին մը առաւ, ու անոր անունը Քեաուրա էր: 2 - Եւ անիկա Չեմբանը ու Յեկասնը և Մազանը ու Մադիանը և Յեսքոկը ու Սովէն ծնաւ անոր: 3 - Եւ Յեկասն ծնաւ Սաբան ու Գեդանը. և Գեդանի որդիները Ասուրիմ ու Լատուսիմ և Լովովիմ էին: 4 - Եւ Մադիանի որդիները Գեփա ու Ափէր և Ենովք ու Աբիդա և Ելգազա էին. ասոնք ամէնը Քեաուրայի որդիներն էին:

5 - Եւ Աբրահամ իր բոլոր ունեցածը Իսահակի տուաւ. 6 - Բայց Աբրահամի հարձերուն որդիներուն Աբրահամ պարգեւներ տուաւ, և իր կենդանութեան ատենը զանոնք իր որդւոյն Իսահակի քովէն դէպ ի արեւելք՝ արեւելեան երկիրը զրկեց:

7 - Եւ Աբրահամի կեանքին տարիներուն օրերը զոր ինք ապրեցաւ, հարիւր եօթանասունըհինգ տարի էին: 8 - Եւ Աբրահամ աղէկ ծերութեամբ ծերացած ու իր օրերը լեցուած՝ ականդեց իր հոգին ու մեռաւ, և իր ժողովուրդին խառնուեցաւ: 9 - Եւ իր որդիները, Իսահակ ու Իսմայէլ, Թաղեցին զանիկա Մաքփելայի այրին Աջ, որ Քեաացի Սահառի որդւոյն Յփրոնի արտին մէջ Մամբրէի դիմաց է. 10 - Այն արտը զոր Աբրահամ Քեաի որդիներէն ծախու առած էր. հոն թաղուեցաւ Աբրահամ և իր կինը Սառա:

11 - Ու եղաւ որ Աբրահամի մեռնելէն ետքը Աստուած օրհնեց անոր որդին Իսահակը. և Իսահակ Լահայրոյի ջրհորին քով բնակեցաւ:

12 - Եւ ասոնք են Աբրահամի որդւոյն Իսմայէլի ծնունդները, զոր Սառայի Եգիպտացի աղախինը Հագար ծնաւ Աբրահամի: 13 - Եւ Իսմայէլի որդւոց անունները ասոնք են իրենց անուններովը ու իրենց ծնունդներովը. Իսմայէլի անդրանիկը Նարէօթ, ետքը Կեդար, Ադբեէլ, Մաբսամ, 14 - Մասմա, Գումա, Մասսէ, Քոդադ, 15 - Թեմա, Յեաուր, Նափէս ու Կեգմա: 16 - Ասոնք են Իսմայէլի որդիները. և իրենց վրաններովը ու իրենց գեղերովը իրենց անունները ասոնք են. իրենց ազգերուն համեմատ տասուերկու իշխաններ էին: 17 - Եւ Իսմայէլի կեանքին օրերը հարիւր երեսունըեօթը տարի եղան. և իր հոգին աւանդելով մեռաւ, ու իր ժողովուրդին խառնուեցաւ: 18 - Եւ Իսմայէլը՝ ջե+ բնակեցան Եւիլայէ մինչև Սուր, որ Եգիպտոսի դիմաց Ասորեստան երթալու ճամբուն վրայ է. բոլոր իր եղբայրներուն առջև *բնակեցաւ:

19 - Եւ Աբրահամի որդւոյն Իսահակի ծնունդները ասոնք են. Աբրահամ ծնաւ Իսահակը: 20 - Եւ Իսահակ քառասուն տարեկան էր, երբ †Միջագետէ Ասորի Բաթուէլի աղջիկը, Ասորի Լաբանի քոյրը Ռեբեկան, իրեն կին առաւ: 21 - Եւ Իսահակ աղաչեց Տէրոյը իր կնոջ համար՝ ամուլ ըլլալուն պատճառաւ. և Տէրը անոր աղաչանքը ընդունեց. ու անոր կինը Ռեբեկա յղացաւ: 22 - Եւ աղաքները անոր արգանդին մէջ կը կռուէին. ու ըսաւ, Եթէ այսպէս է, ինչո՞ւ եղաւ ինձի ասիկա. և Տէրոյը հարցնելու գնաց: 23 - Ու Տէրը ըսաւ անոր, Երկու ազգ կան արգանդիդ մէջ, և քու որովայնէդ երկու ժողովուրդ պիտի զատուի. ու ժողովուրդին մէկը միւսէն զօրաւոր պիտի ըլլայ, և մեծը պիտի ծառայէ պզտիկին: 24 - Ու երբ անոր ծնանելու օրերը լեցուեցան, ահա երկուորեակ էին անոր արգանդին մէջ: 25 - Եւ առաջինը ելաւ կարմրագոյն, բոլոր մարմնը

*Կամ, աղօթք
†Կամ, մահաւանէն ետև

*Եբր. ինկաւ
†Եբր. Փատան արամէ

մազոտ վերարկուի պէս էր. ու անոր անունը *Եսաւ գրին: 26 - Եւ անկէ ետքը անոր եղբայրը ելաւ, ու անոր ձեռքը Եսաւի գարշապարէն բռներ էր, և անոր անունը †Յակոբ գրին. ու անոնց ծնած ատենը Իսահակ վաթսուն տարեկան էր: 27 - Եւ մանուկները մեծցան. ու Եսաւ դաշտի մարդ, վարպետ որսորդ եղաւ. իսկ Յակոբ հանգարտ բարքով մարդ էր ու վրաններու մէջ կը բնակէր: 28 - Եւ Իսահակ կը սիրէր Եսաւը, վասն զի անոր որսէն կ'ուտէր. բայց Ռեբեկա Յակոբը կը սիրէր:

29 - Օր 52 երբ Յակոբ ապուր կ'եփէր, Եսաւ դաշտէն եկաւ և «նօթ»-իկէ կը մարէր: 30 - Եւ Եսաւ Յակոբի ըսաւ, Շնորհք ըրէ, այդ շիկաթանէն տուր որ ուտեմ, քանզի կը մարիմ. անոր համար անոր անունը †Եղովմ կոչուեցաւ: 31 - Եւ Յակոբ ըսաւ, Ծախէ ինծի այսօր քու անդրանկութեանդ իրաւունքը: 32 - Ու Եսաւ ըսաւ, Ահա մեռնելու կը մօտենամ, և անդրանկութենէն ինծի ի՞նչ օգուտ կայ: 33 - Եւ Յակոբ ըսաւ, Այսօր ինծի երդում ըրէ. և անիկա երդում ըրաւ անոր, ու իր անդրանկութեան իրաւունքը ծախեց Յակոբի: 34 - Այն ատեն Յակոբ հաց ու սպէ ապուր տուաւ Եսաւի. և անիկա կերաւ ու խմեց, ու ելաւ գնաց. այսպէս Եսաւ էր անդրանկութիւնը անարգեց:

ԳԼ ԻԶ

Ու երկրին մէջ սով եղաւ, առաջուան սովէն զատ՝ որ Աբրահամի օրերը եղեր էր. և Իսահակ Գերարա գնաց Փղշտացոց Աբիմելէք թագաւորին: 2 - Եւ Տէրը երեցաւ անոր, ու ըսաւ, Եգիպտոս մի իջներ, բնակէ այն երկրին մէջ զոր քեզի պիտի ըսեմ. 3 - Պանդուխտ եղիր այս երկրին մէջ, ու ես քեզի հետ պիտի ըլլամ, և քեզ պիտի օրհնեմ. վասն զի բոլոր այս երկիրները քեզի ու քու սերունդիդ պիտի տամ, ու քու հօրդ Աբրահամի քրած երդումն պիտի հաստատեմ.

*Այսինքն, մազոտ †Այսինքն, գարշապար բռնող, և՛ խաբող ‡Այսինքն, կարմիր

4 - Եւ քու սերունդդ երկիրքի աստղերուն չափ պիտի շատցնեմ, և բոլոր այս երկիրները քու սերունդիդ պիտի տամ. ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին. 5 - Վասն զի Աբրահամ իմ ձայնիս ականջ դրաւ, և իմ հրամաններս ու պատուիրանքներս, իմ կանոններս ու օրէնքներս պահեց:

6 - Եւ Իսահակ բնակեցաւ Գերարայի մէջ: 7 - Ու այն տեղին մարդիկը հարցուցին «նո՞ր իր կնոջ համար. և անիկա ըսաւ, Իմ քոյրս է. քանզի իմ կինս է, ըսելու վախցաւ. չըլլայ որ, ըստ, այս տեղին մարդիկը զիս մեռցրնէն Ռեբեկայի համար. վասն զի անիկա տեսքով գեղեցիկ էր: 8 - Ու եղաւ որ երբ հոն շատ ատեն կեցաւ, Փղշտացոց թագաւորը Աբիմելէք պատուհանէն նայեցաւ ու տեսաւ, և ահա Իսահակ իր կնոջ Ռեբեկայի հետ կը խաղար: 9 - Եւ Աբիմելէք կանչեց Իսահակը ու ըսաւ, Ահա իրաւեցրնէ անիկա քու կինդ է. և ի՞նչ պէս Անիկա իմ քոյրս է, ըսիր. ու Իսահակ ըսաւ անոր, Քանզի ըսի թէ Չըլլայ որ անոր պատճառաւ մեռնիմ: 10 - Եւ Աբիմելէք ըսաւ, Ի՞նչ է այս քու մեզի ըրածդ. քիչ մնաց որ ժողովուրդէն մէկը քու կնոջդ հետ պառկէր, ու մեր վրայ յանցանք պիտի բերէիր: 11 - Եւ Աբիմելէք էր բոլոր ժողովուրդին պատուիրեց՝ ըսելով, Ով որ այս մարդուն կամ անոր կնոջ դպչելու ըլլայ, անշուշտ պիտի սպաննուի:

12 - Եւ Իսահակ այն երկրին մէջ ցանեց, ու այն տարին հարիւրապատիկ արդիւնք քաղեց. և Տէրը օրհնեց զանիկա: 13 - Ու մարդը բարձրացաւ ու երթալով մեծցաւ. այնպէս որ խիստ մեծ եղաւ: 14 - Եւ ունեցաւ ոչխարներ ու արջառներ և շատ ծառաներ. ու Փղշտացիք նախանձեցան անոր: 15 - Եւ իր հօրը Աբրահամի օրերը իր հօրը ծառաներուն փորած բոլոր ջրհորները Փղշտացիք գոցեցին, ու հողով լեցուցին զանոնք: 16 - Եւ Աբիմելէք ըսաւ Իսահակի, Գնա մեզմէ, վասն զի մեզմէ շատ աւելի պօրաւոր եղար: 17 - Եւ Իսահակ գնաց անկէ ու իր վրանները Գերարայի ձորին մէջ բացաւ, ու հոն բնակեցաւ:

18 - Եւ Իսահակ նորէն փորեց այն

Ջրհորները, գործնք իր հօրը Աբրահամի օրերը փորեր էին, ու Աբրահամի մեռնելէն ետքը Փղշտացիք գոցեր էին, և իր հօրը դրած անուններուն պէս անոնց անուններ դրաւ: 19 - Աւ Իսահակի ծառաները այն ձորին մէջ փորեցին, ու հոն *վազուն ջուրի հօր գտան: 20 - Եւ Գերարայի հովիւները Իսահակի հովիւներուն հետ կը կրուուէին՝ ըսելով, Զուրը մերն է. անոր համար այն ջորին անունը †Էսէք դրաւ. քանզի անոր հետ կուուեցան: 21 - Եւ ուրիշ հօր մը փորեցին. ու անոր համար ալ կուուեցան. և անոր անունը ‡Սիդնա դրաւ: 22 - Աւ անկէ չուեց, և ուրիշ հօր մը փորեց. և անոր համար չկուուեցան. և անոր անունը Սիորովթ դրաւ՝ ըսելով, Քանզի հիմա Տէրը մեզ ընդարձակեց, ու երկրի մէջ պաղաբեր պիտի ըլլանք:

23 - Եւ անկէ Բերաբէէ ելաւ: 24 - Աւ այն գիշերը Տէրը երեւցաւ անոր ու ըսաւ, Ես քու հօրդ Աբրահամի Աստուածն եմ. մի վախնար, վասն զի ես քեզի հետ եմ, և իմ ծառայիս Աբրահամի համար քեզ պիտի օրհնեմ, ու քու սերունդդ պիտի շատցնեմ: 25 - Եւ հոն սեղան մը շինեց ու Տէրոջը անունը կանչեց, և հոն իր վրանը բացաւ. ու Իսահակի ծառաները հօր մը փորեցին հոն:

26 - Եւ Աբրամէլէք ու իր բարեկամը Ոքոզաթ ու իր սպարապետը Փիքօղ Գերարայէ անոր գացին: 27 - Եւ Իսահակ ըսաւ անոնց, Ի՞նչ պատճառաւ ինձի եկաք. որովհետեւ զիս ատեցիք ու զիս ձեզմէ վաճառեցիք: 28 - Եւ անոնք ըսին, Աստուգիւ տեսանք որ Տէրը քեզի հետ է, ու ըսինք, Հիմա մեր մէջ, այսինքն մեր ու քու մէջ տեղ, երդում մը ըլլայ, և քեզի հետ ուխտ բնենք, 29 - Արպէս զի մեզի գէշութիւն չընես, ինչպէս մենք քեզի բան մը չըրինք, միայն թէ քեզի աղէկութիւն ըրինք, ու քեզ խաղաղութեամբ յուզարկեցինք: Գուն հիմա Տէրոջը օրհնեայն ես: 30 - Եւ ինք անոնց խնձոյք ըրաւ, ու անոնք կերան ու խմեցին: 31 - Եւ առասուանց կանուխ ելան ու իրարու երդում ըրին.

և Իսահակ յուզարկեց զանոնք, ու անոնք խաղաղութեամբ իրմէ գացին: 32 - Աւ եղաւ որ նոյն օրը Իսահակի ծառաները եկան, և անոր պատմեցին իրենց փորած ջորին համար, ու անոր ըսին, Զուր գտանք: 33 - Եւ ինք անոր անունը *Սաբէէ դրաւ. անոր համար մինչև այսօր այն քաղաքին անունը †Բերաբէէ է:

34 - Աւ Եսաւ քառասուն տարեկան էր երբ իրեն կին առաւ Քեաացի Բէէրիի աղջիկը Յուզիթը ու Քեաացի Ելօնի աղջիկը Բասեմաթը: 35 - Եւ ասոնք Իսահակի ու Ռեբեկայի սրտից աւելան:

ԳԼ ԻԷ

Աւ եղաւ որ երբ Իսահակ ծերացաւ, ու իր աչքերը տեսնելու զօրութենէն տկարացան, իր մեծ որդին Եսաւը կանչեց ու ըսաւ անոր, Արդեակ իմ. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ: 2 - Եւ Իսահակ ըսաւ, Ահա ես ծերացեր եմ, «- մեռնելու օրը չեմ գիտեր. 3 - Եւ հիմա զէնքերդ, կապարձդ ու աղեղդ, առ, և դաշար ելիք ու ինձի որս մը որսա. 4 - Եւ իմ սիրածիս պէս ինձի խորտիկներ ըրէ, ու ինձի բեր որ ուտեմ, որպէս զի մեռնելէս առաջ իմ հոգիս քեզ օրհնէ: 5 - Եւ Ռեբեկա լսեց երբ Իսահակ իր որդւոյն Եսաւի կը զրուցէր. ու Եսաւ դաշար գնաց որս մը որսալու և բերելու:

6 - Եւ Ռեբեկա իր որդւոյն Յակոբի զրուցեց՝ ըսելով, Ահա ես լսեցի երբ քու հայրդ քու եղբօրդ Եսաւի խօսեցաւ ու ըսաւ, 7 - Ինձի որս բեր, ու ինձի համար խորտիկներ ըրէ, որպէս զի ուտեմ ու մեռնելէս առաջ քեզ Տէրոջը առջև օրհնեմ: 8 - Եւ հիմա, որդեակ իմ, ինչ որ ես քեզի պատուիրեմ, իմ խօսքս մտիկ ըրէ. 9 - Հիմա դէպ ի հօտը գնա, ու անկէ ինձի երկու աղէկ ուլ բեր այժերէն, և զանոնք քու հօրդ համար խորտիկներ ընեմ իր սիրածին պէս. 10 - Աւ հօրդ տար որ ուտէ, որպէս զի իր մեռնելէն առաջ քեզ օրհնէ: 11 - Աւ Յակոբ ըսաւ իր մօրը Ռեբեկայի, Ահա իմ եղբայրս Եսաւ մտադա մտարդ մըն է, ու ես լերկ

*Էքր. կենդանի †Այսինքն, կուիւ
‡Այսինքն, թշնամութիւն
ՍԱՅԻՆԻՆ, ընդարձակութիւն

*Այսինքն, երդում
†Այսինքն, ջրհոր երգ ման

մտորդ մըն եմ. 12 - Կուցէ հայրս զիս շօշափէ, ու ես իր աչքին խաբողի մը պէս երեւնամ, և իմ վրաս անէծք բերեմ ու ոչ թէ օրհնութիւն: 13 - Եւ իր մայրը ըսաւ անոր, Արդեակ իմ, քեզի հաշտեալ անէծքը իմ վրաս ըլլայ. միայն թէ գուն իմ խօսքս մտիկ ըրէ, ու գնա ինծի բեր զանի: 14 - Եւ անիկա գնաց, ու առաւ և իր մօրը բերաւ. ու մայրը անոր հօրը սիրածին պէս խորտիկները ըրաւ: 15 - Եւ Ռեբեկա իր մեծ որդւոյն Եսաւի ազնիւ հանդերձները առաւ, որոնք տանը մէջ իր քով էին, ու իր պզտիկ որդւոյն Յակոբի հազցուց: 16 - Եւ այժի ուլերուն մտրթերը անոր ձեռքերուն ու անոր լերկ պարանոցին վրայ դրաւ. 17 - Եւ իր ըրած խորտիկները ու հացը իր որդւոյն Յակոբի ձեռքը տուաւ:

18 - Եւ անիկա իր հօրը եկաւ, ու ըսաւ, Ով հայր իմ. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ. ո՞վ ես դուն, որդեակ իմ: 19 - Ու Յակոբ իր հօրը ըսաւ, Ես քու անդրանիկ որդիդ Եսաւ եմ. ինծի ըսածիդ պէս ըրի. շնորհք ըրէ, ելիր, նստէ և իմ որսէս կեր, որպէս զի քու հոգիդ զիս օրհնէ: 20 - Եւ Իսահակ ըսաւ իր որդւոյն, Ի՞նչպէս այդչափ շուտով գտար, որդեակ իմ. ու անիկա ըսաւ, Քանզի Տէրը քու Աստուածդ իմ առջեւս բերաւ: 21 - Եւ Իսահակ ըսաւ Յակոբի, Մօտ եկուք որպէս զի քեզ շօշափեմ, որդեակ իմ, թէ արդեօք դուն իմ որդիս Եսաւ ես, թէ ոչ: 22 - Եւ Յակոբ իր հօրը Իսահակի մօտեցաւ, որ շօշափեց զանիկա, ու ըսաւ, Չայնը Յակոբի ձայնն է, բայց ձեռքերը Եսաւի ձեռքերն են: 23 - Այսպէս չճանչցաւ զանիկա, քանզի անոր ձեռքերը իր եղբօրը Եսաւի ձեռքերուն պէս մազոտ էին. և օրհնեց զանիկա. 24 - Ու ըսաւ, Ի՞նչն էս իմ որդիս Եսաւ. և անիկա ըսաւ, Ես եմ. 25 - Եւ ինք ըսաւ, Մօտ բեր ինծի, ու իմ որդւոյս որսէն ուտեմ, որպէս զի իմ հոգիս քեզ օրհնէ. և մօտեցուց անոր, ու կերաւ. և գինի բերաւ անոր, ու խմեց: 26 - Եւ անոր հայրը Իսահակ ըսաւ անոր, Հիմա մօտեցիր, ու զիս համբուրէ, որդեակ իմ: 27 - Եւ անիկա մօտեցաւ ու համբուրեց զանիկա. և անոր հանդերձին հօտը հօտուրաց, ու օրհնեց զանիկա և ըսաւ, Ահա իմ որդւոյս հօտը Տէ-

րոջը օրհնած արտին հօտին պէս է: 28 - Ուստի Աստուած ասց քեզի երկինքի ցօղէն ու երկրի պարարտութենէն, և ցորենի ու գինիի առատութիւն. 29 - Թող ժողովուրդներ քեզի ծառայեն և ազգեր քեզի խոնարհութիւն ընեն. քու եղբայրներուդ տէրը եղիր, և քու մօրդ որդիները քեզի խոնարհութիւն ընեն. քեզ անիծողը անիծեալ ըլլայ, ու քեզ օրհնողը՝ օրհնեալ: 30 - Եւ եղաւ որ էրբ Իսահակ դարեցաւ Յակոբը օրհնելէ, ու հազիւ թէ Յակոբ իր հօրը Իսահակի առջեւէն ելեր էր, անոր եղբայրը Եսաւ որսէն եկաւ: 31 - Եւ անիկա ալ խորտիկներ ըրաւ, ու իր հօրը բերաւ և իր հօրը ըսաւ, Թող իմ հայրս ելլէ ու իր որդւոյն որսէն ուտէ, որպէս զի քու հոգիդ զիս օրհնէ: 32 - Եւ անոր հայրը Իսահակ ըսաւ անոր, Ի՞նչն ո՞վ ես. և անիկա ըսաւ, Ես քու որդիդ, քու անդրանիկդ, Եսաւ եմ: 33 - Ու Իսահակ խիստ շատ տարտափեցաւ ու ըսաւ, Այն որսը բռնող ու ինծի բերողը ո՞վ էր, որ ես քու գալէդ առաջ ամէնէն կերայ, և օրհնեցի զանիկա. ալ անշուշտ անիկա օրհնեալ պիտի ըլլայ: 34 - Երբ Եսաւ իր հօրը խօսքերը լսեց, խիստ մեծ ու դառն աղաղակով լացաւ, և իր հօրը ըսաւ, Չիս, զիս ալ օրհնէ, ով հայր իմ: 35 - Եւ անիկա ըսաւ, Քու եղբայրդ եկաւ նենդութեամբ ու քու օրհնութիւնդ առաւ: 36 - Եւ ինք ըսաւ, Անոր անունը Յակոբ կոչուելուն համար է որ այս երկու անգամ զիս խաբեց. իմ անդրանկութեան իրաւունքս առաւ, և ահա հիմա օրհնութիւնս ալ առաւ: Կաւ ըսաւ, Ինծի համար օրհնութիւն մը չթողուցի՞ր: 37 - Եւ Իսահակ պատասխան տուաւ ու ըսաւ Եսաւի, Ահա զանիկա քեզի տէր ըրի, և անոր բոլոր եղբայրները իրեն ծառաներ ըլլալու տուի, ու զանիկա ցորենով ու գինիով հաստատեցի. ալ հիմա քեզի ի՞նչ ընեմ, որդեակ իմ: 38 - Եւ Եսաւ իր հօրը ըսաւ, Ով հայր իմ, քու օրհնութիւնդ միայն մէ՞կ է. զիս, զիս ալ օրհնէ, ով հայր իմ. ու Եսաւ իր ձայնը վերցուց ու լացաւ: 39 - Եւ իր հայրը Իսահակ պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ահա քու բնակութիւնդ երկրի պարարտութենէն, ու վերէն՝ երկինքի ցօղէն ըլլայ: 40 - Եւ քու սրովդ

ապրիս, ու եղբօրդ ծառայութիւն ընես. և ըլլայ որ անի մոլորած ատենդ անոր լուծը քու պարանոցէդ կտարես:

41 - Եւ Եսաւ ատեց Յակոբը այն օրհնութեանը համար՝ որով իր հայրը օրհնեց զանհիկա. ու Եսաւ իր սրտին մէջ ըսաւ, իմ հօրս սուգին օրերը մօտ են, այն ատեն իմ եղբայրս Յակոբը կը մեռցնեմ: 42 - Եւ Ռեբեկայի պատմուեցան իր մեծ որդւոյն Եսաւի խօսքերը. ու իր պզտիկ որդին Յակոբը կանչել տուաւ, ու ըսաւ անոր, Ահա քու եղբայրդ Եսաւ քեզ մեռցնել Խորհելով քու վրայովդ ինքզինք կը մխիթարէ: 43 - Եւ հիմն, որդեակ իմ, իմ խօսքս մտիկ ըրէ, ու ելիր դէպ ի Խառան իմ Լաբան եղբօրս փախիր. 44 - Եւ անոր քով ատեն մը կեցիր, մինչև եղբօրդ բարկութեան անցնիլը, 45 - Մինչև եղբօրդ բարկութիւնը քեզմէ անցնի, ու քու անոր բրածոյ մոռնայ. ետքը քեզ անկէ բերել կու տամ. ինչո՞ւ ձեր երկուքէն ալ մէկ օրուան մէջ զրկուիմ:

46 - Եւ Ռեբեկա ըսաւ Իսահակի, Քետի աղջիկներուն պատճառաւ հոգիէս զզուեր եմ. եթէ Յակոբ այս երկրին աղջիկներէն, ասոնց պէս Քետի աղջիկներէն, կին առնէ, ալ այս կեանքս ի՞նչ պէտք է ինծի:

ԳԼ ԻԸ

Եւ Իսահակ կանչեց Յակոբը ու օրհնեց զանհիկա և անոր պատուիրեց ու ըսաւ, Քանանու աղջիկներէն կին չառնես: 2 - Ելիր, դէպ ի Միջագետ քու մօրդ հօրը Բաթուէլի տունը գնա, և անկէ քու մօրդ եղբօրը Լաբանի աղջիկներէն քեզի կին առ. 3 - Աւանակարող Աստուածը քեզ օրհնէ, ու քեզ աճեցնէ, և քեզ շատցնէ. ու շատ ժողովուրդներու հօյր ըլլաս: 4 - Եւ քեզի Աբրահամի օրհնութիւնը տայ, քեզի ու քեզի հետ քու սերունդիդ. որպէս զի ժառանգես քու պանգրխտացած երկիրդ, զոր Աստուած Աբրահամի տուաւ: 5 - Եւ Իսահակ զրկեց Յակոբը, և անհիկա դնաց դէպ ի Միջագետ Ասորի Բաթուէլի որդւոյն Լաբանի, որ Յակոբի ու Եսաւի մօրը Ռեբեկայի եղբայրն էր:

6 - Եւ Եսաւ տեսնելով որ Իսահակ օրհնեց Յակոբը, ու զրկեց զանհիկա

դէպ ի Միջագետ՝ անկէ իրեն կին առնելու համար, և որ զանհիկա օրհնած ատենը պատուիրեց անոր՝ ըսելով, Քանանու աղջիկներէն քեզի կին չառնես, 7 - Եւ որ Յակոբ հնազանդեցաւ իր հօրը ու իր մօրը ու Միջագետ գնաց. 8 - Եսաւ Եսաւ տեսնելով որ Քանանու աղջիկները իր հօրը Իսահակի հաճելի չեն, 9 - Այն ատեն Եսաւ Իսմայէլի գնաց, և իր արարած կիներէն զատ՝ Աբրահամի որդւոյն Իսմայէլի աղջիկը Նաբէօթի քոյրը Մայէլէթը իրեն կին առաւ:

10 - Եւ Յակոբ Բերսաբէէէ ելաւ ու դէպ ի Խառան գնաց: 11 - Եւ տեղ մը հասաւ ու գիշերը հոն մնաց, որովհետև արեւը մարը մտած էր. և այն տեղի քարերէն առաւ ու իր գլխուն տակ դրաւ, և այն տեղը պառկեցաւ: 12 - Աւ երազ մը տեսաւ, և ահա սանդուխ մը երկրի վրայ դրուած էր, որուն գլուխը երկինք կը հասնէր, և ահա Աստուծոյ հրեշտակները անկէ կ'ելլէին ու կ'իջնէին: 13 - Եւ ահա Տէրը կայնեցաւ անոր վրայ ու ըսաւ, Ես եմ Եհովա, քու հօրդ Աբրահամի Աստուածը ու Իսահակի Աստուածը. Այդ երկիրը, որուն վրայ դուն կը պառկիս, քեզի ու քու սերունդիդ պիտի տամ. 14 - Եւ քու սերունդդ երկրի աւազին չափ շատ պիտի ըլլայ, ու դէպ ի արեւմուտք և արեւելք, և դէպ ի հիւսիս ու հարաւ պիտի տարածուի. ու երկրի բոլոր ազգերը քեզմով ու քու սերունդովդ պիտի օրհնուին: 15 - Եւ ահա ես քեզի հետ եմ, ու ամէն ուր որ երթաս քեզ պիտի պահեմ, ու քեզ այս երկիրը պիտի դարձնեմ. քանզի մինչև որ իմ քեզի զրուցածս չընեմ, քեզ պիտի չթողում: 16 - Եւ Յակոբ արթնցաւ իր քունէն ու ըսաւ, Իրաւցընէ Տէրը այս տեղ է եղեր, ու ես չգիտցայ: 17 - Եւ վախցաւ ու ըսաւ, Ի՞նչ ահաւոր է այս տեղը. այս ուրիշ բան չէ՞ բայց միայն Աստուծոյ տունը, ու այս է երկինքի դուռը: 18 - Եւ Յակոբ առտուանց կանուխ ելաւ, ու իր գլխուն տակ դրած քարը առաւ, և զանհիկա արձան կանգնեց ու անոր գլուխը իւր թափեց: 19 - Եւ այն տեղին անունը *Բեթէլ դրաւ. բայց ա-

*Այսինքն, Աստուծոյ տունը

առաջ այն քաղաքին անունը Լուզ էր: 20 - Եւ Յակոբ ուխտ ըրաւ ուրաւ, Եթէ Աստուած ինձի հետ ըլլայ, ու այս երթալու ճամբուս մէջ զիս պահէ, և ինձի ուտելու հաց ու հագնելու հանդերձ տայ, 21 - Եւ իմ հօրս տունը խաղաղութեամբ դառնամ, Տէրը ինձի Աստուած ըլլայ. 22 - Եւ այս քարը զոր ես արձան կանգնեցի, Աստուծոյ տունը ըլլայ. և այն ամէնէն զոր ինձի տաս, քեզի տասանորդ տամ:

ԳԼ. ԻԹ

Եւ Յակոբ *ճամբայ ելաւ" ու †արեւելեան ժողովրդոց" երկիրը եկաւ: 2 - Եւ նայեցաւ ու ահա դաշտին մէջ հոր մը կար, և ահա հոն անոր քով ոչխարներու երեք հօտ պառկեր էր. քանզի այն հորէն կը խմցնէին հօտերը, ու հորին բերանը մեծ քար մը կար: 3 - Եւ բոլոր հօտերը հոն կը ժողվուէին. ու հովիւները հորին բերնէն քարը մէկզի կը գլորէին ու հօտերը կը խմցնէին, և քարը նորէն իր տեղը հորին բերանը կը դնէին: 4 - Եւ Յակոբ ըսաւ անոնց, Ով եղբայրներս, ուրկէ՞ էք դուք. և անոնք ըսին, Մենք Խառանէ ենք: 5 - Ու ըսաւ անոնց, Նաքովի որդին Լաբանը կը ճանչնա՞ք. և անոնք ըսին, Կը ճանչնանք: 6 - Եւ ըսաւ անոնց, Ողջ առողջ է. և անոնք ըսին, Ողջ է, և ահա անոր Ռաբէլ աղջիկը ոչխարներուն հետ կուգայ: 7 - Եւ անհկա ըսաւ, Ահա տակաւին †իրիկուն ըլլալու շատ ատեն կայ, և հօտերուն ժողվուելու ատենը չէ. ոչխարները խմցուցէք ու գացէք արածեցէք: 8 - Եւ անոնք ըսին, Մենք չենք կրնար, մինչև բոլոր հօտերը մէկտեղ չժողվուին. ու երբ հորին բերնի քարը մէկզի գլորեն, այն ատեն ոչխարները կը խմցնենք: 9 - Եւ երբ տակաւին անոնց հետ կը խօսէր, Ռաբէլ իր հօրը ոչխարներուն հետ եկաւ. վասն զի անհկա էր անոնց հովիւը: 10 - Ու եղաւ որ երբ Յակոբ իր մօրեղբօրը Լաբանի Ռաբէլ աղջիկը, ու իր մօրեղբօրը Լաբանի ոչխարները տե-

սաւ, այն ատեն Յակոբ մօտեցաւ, և քարը հորին բերնէն գլորեց, ու իր մօրեղբօրը Լաբանի ոչխարները խմցուց: 11 - Եւ Յակոբ համբուրեց Ռաբէլը, ու ձայնը վերցնելով լացաւ: 12 - Եւ Յակոբ պատմեց Ռաբէլի թէ ինք անոր հօրը *ազգականը ու Ռեբեբեկայի որդին է. ան ալ վազեց ու իր հօրը պատմեց: 13 - Ու երբ Լաբան իր քրոջը որդւոյն Յակոբի վրայով լսեց, զանհկա դիմաւորելու վազեց, և գրկեց ու համբուրեց զանհկա ու իր տունը տարաւ. և անհկա պատմեց Լաբանի՝ բոլոր այս բաները: 14 - Եւ Լաբան ըսաւ անոր, Իբաւցընէ դուն իմ սկորս ու մարմինս ես. և անոր հետ լման ամիս մը կեցաւ:

15 - Եւ Լաբան ըսաւ Յակոբի, Գուն իմ եղբայրս ըլլալուդ համար ինձի ձրի՞ պիտի ծառայես. ըսէ ինձի, ի՞նչ ըլլայ քու վարձքդ: 16 - Եւ Լաբան երկու աղջիկ ունէր. մեծին անունը Լիա ու պզտիկին անունը Ռաբէլ էր: 17 - Եւ Լիայի աչքերը տկար էին, բայց Ռաբէլ դէմքով ու տեսքով գեղեցիկ էր: 18 - Եւ Յակոբ սիրեց Ռաբէլը, ու ըսաւ, Քու պզտիկ աղջկանդ Ռաբէլի համար եօթը տարի քեզի կը ծառայեմ: 19 - Եւ Լաբան ըսաւ, Անհկա քեզի տալը ուրիշ մարդու մը տալէն աղէկ է. բնակէ ինձի հետ: 20 - Եւ Յակոբ Ռաբէլի համար եօթը տարի ծառայեց. ու զանհկա սիրելուն պատճառաւ իրեն քանի մը օրի չափ երեւցաւ:

21 - Եւ Յակոբ ըսաւ Լաբանի, Իմ կինս սուր. քանզի օրերս լեցուած են, որպէս զի ես անոր մանեմ: 22 - Եւ Լաբան այն տեղին բոլոր մարդիկը ժողվեց ու ինձոյք ըրաւ: 23 - Ու եղաւ որ իրիկունը իր Լիա աղջիկը առաւ և անոր բերաւ. ու անհկա անոր մտաւ: 24 - Եւ Լաբան իր աղախինը Զեղփան իր աղջկան Լիայի աղախին տուաւ: 25 - Ու երբ առտու եղաւ, ահա անհկա Լիա էր. ու Յակոբ Լաբանի ըսաւ, Ի՞նչ է այս քու ինձի ըրածդ. ես քեզի Ռաբէլի համար չճառայեցի՞. ուստի ինչո՞ւ զիս խաբեցիր: 26 - Եւ Լաբան ըսաւ, Մեր երկրին մէջ այսպիսի բան չըլլար, պզտիկը մեծէն առաջ տալ: 27 - Լմցուր ա-

*Եբբ. ուղքերը վերցուց
†Եբբ. արեւելքի որդւոց
‡Եբբ. օրը մեծ է

*Եբբ. եղբայրը

սոր հարսանիքն շարաթը, և ինծի եօթը տարի ալ ծառայելուք համար՝ զայն ալ քեզի տամ: 28 - Եւ Յակոբ այնպէս ըրաւ, ու Լեւի շարաթը լմնցուց. և Լեւին իր Ռաբէլ աղջիկը անոր կին ըլլալու տուաւ: 29 - Աւ Լարան իր Բաղղա աղախինը իր աղջկան Ռաբէլի աղախին տուաւ: 30 - Եւ Յակոբ Ռաբէլի ալ մտաւ, ու Ռաբէլը Լիայէ աւելի սիրեց. և Լեւին եօթը տարի ալ ծառայեց:

31 - Եւ Տէրը երբ Լիայի տանիք ըլլալը տեսաւ, անոր արգանդը բացաւ. բայց Ռաբէլ ամուլ էր: 32 - Եւ Լիա յղացաւ ու որդի մը ծնաւ, և անոր անունը *Ռուբէն գրաւ. քանզի ըսաւ, Տէրը իմ տառապանքիս նայելուն համար, ասկէ ետեւ այրս զիս պիտի սիրէ: 33 - Եւ նորէն յղացաւ ու որդի մը ծնաւ, ու ըսաւ, Արովհետեւ Տէրը իմ տանիք ըլլալս լսեց, անոր համար ինծի այս որդին ալ տուաւ. ու անոր անունը †Շամուոն գրաւ: 34 - Եւ դարձեալ յղացաւ ու որդի մը ծնաւ, ու ըսաւ, Հիմա այս անգամ այրս ինծի հետ պիտի միաւորի, քանզի երեք որդի ծնայ իրեն. անոր համար անոր անունը ‡Լեւի գրաւ: 35 - Եւ մէյմին ալ յղացաւ ու որդի մը ծնաւ, և ըսաւ, Այս անգամ պիտի գոհանամ Տէրոջմէն. անոր համար անոր անունը ||Յուդա գրաւ. ու դադարեցաւ ծնանելէ:

ԳԼ Լ

Եւ երբ Ռաբէլ տեսաւ որ ինք Յակոբի զարմանք չծնաւ, Ռաբէլ իր քրոջ նախանձեցաւ, ու Յակոբի ըսաւ, Ինծի զաւակներ տուր, եթէ ոչ՝ կը մեռնիմ: 2 - Եւ Յակոբի բարկութիւնը բոլորեցաւ Ռաբէլի դէմ, ու ըսաւ, Խիթէ ես Աստուծոյ տեղ եմ, որ արգանդի պատուը քեզմէ արգիլեց: 3 - Եւ անհկա ըսաւ, Ահա իմ աղախինս Բաղղա, անոր մտիր. ու անհկա իմ ծունկերուս վրայ ծնանի, և ես ալ անկէ որդիներ ստանամ: 4 - Աւ իր Բաղղա աղախինը անոր կին ըլլալու տուաւ, և Յակոբ անոր մտաւ: 5 - Աւ

Բաղղա յղացաւ ու Յակոբի որդի մը ծնաւ: 6 - Եւ Ռաբէլ ըսաւ, Աստուած ինծի դատաստան ըրաւ, ու իմ ձայնս ալ լսեց և ինծի որդի մը տուաւ. անոր համար անոր անունը *Քան գրաւ: 7 - Եւ Ռաբէլի աղախինը Բաղղա դարձեալ յղացաւ ու Յակոբի երկրորդ որդի մը ծնաւ: 8 - Եւ Ռաբէլ ըսաւ, Իմ քրոջս հետ մեծ ըմբշամարտութիւնով մտրանչեցայ և յաղթեցի. ու անոր անունը †Նեփթաղիմ գրաւ:

9 - Երբ Լիա տեսաւ որ ինք ծնանելէ դադարեցաւ, իր աղախինը Զեղփան տուաւ ու Յակոբի կին ըլլալու տուաւ զանհկա: 10 - Եւ Լիայի աղախինը Զեղփա Յակոբի որդի մը ծնաւ: 11 - Եւ Լիա ըսաւ, Բաղղա յաջողեցաւ. ու անոր անունը ‡Քադ գրաւ: 12 - Եւ Լիայի աղախինը Զեղփա երկրորդ որդի մը ծնաւ Յակոբի: 13 - Եւ Լիա ըսաւ, Երանելի եմ ես. քանզի աղջիկները ինծի երանի՛ պիտի ըսեն. ու անոր անունը ||Ասեր գրաւ:

14 - Եւ Ռուբէն գնաց ցորենի հունձքի օրերը ու արտին մէջ մանրագործներ գտաւ, ու իր մօրը Լիայի բերաւ. ու Ռաբէլ ըսաւ Լիայի, Կ'աղաչեմ, տուր ինծի որդւոյդ մանրագործներէն: 15 - Եւ անհկա ըսաւ անոր, Իմ այրս առնելդ քիչ եկաւ որ իմ որդւոյս մանրագործներն ալ պիտի առնես. և Ռաբէլ ըսաւ, Ուստի քու որդւոյդ մանրագործներուն համար այս գիշեր քեզի հետ պառկի: 16 - Եւ իրիկունը երբ Յակոբ դաշտէն կու գար, Լիա զանհկա դիմաւորելու ելաւ, ու ըսաւ, Ինծի պիտի մանես. քանզի իրաւցրնէ վարձքով առի քեզ իմ որդւոյս մանրագործներովը. և այն զիշերը անոր հետ պառկեցաւ: 17 - Եւ Աստուած լսեց Լիայի. ու յղացաւ ու Յակոբի հինգերորդ որդի ծնաւ: 18 - Եւ Լիա ըսաւ, Աստուած ինծի վարձք տուաւ, որովհետեւ աղախինս իմ էրկանս առի. և անոր անունը §Իսաքար գրաւ: 19 - Եւ Լիա նորէն յղացաւ ու Յակոբի վեցերորդ որդի ծնաւ: 20 - Եւ Լիա ըսաւ, Աստուած ինծի բարի պարգև

*Այսինքն, ահա որդի
†Այսինքն, յսելը
‡Այսինքն, միաւորութիւն
§Այսինքն, գոհութիւն

*Այսինքն, դատող
†Այսինքն, ըմբշամարտութիւնս
‡Այսինքն, բաղղ
§Այսինքն, երանելի §Այսինքն, վարձք

մը պարգեւեց. այս անգամ այս ինծի հետ պիտի բնակի, որովհետեւ իրեն վեց որդի ծնայ, ու անոր անունը *Չարուզն գրաւ: 21 - Եւ անկէ ետեւ աղջիկ մը ծնաւ, ու անոր անունը †Իննա գրաւ:

22 - Եւ Աստուած յիշեց Ռաբէլը, ու Աստուած լսեց անոր, և անոր արգանդը բացաւ: 23 - Ու յղացաւ ու որդի մը ծնաւ. և ըսաւ, Աստուած իմ նախատինքս վերցուց: 24 - Եւ անոր անունը ‡Յովսէփ գրաւ, ու ըսաւ, Տէրը ինծի ուրիշ որդի մըն ալ պիտի աւելցնէ:

25 - Ու եղաւ որ երբ Ռաբէլ Յովսէփը ծնաւ, Յակոբ ըսաւ Լաբանի, Թող տուր զիս որ իմ տեղս ու իմ երկիրս երթամ: 26 - Իմ կիներս ու տղաքներս, որոնց համար քեզի ծառայեցի, տուր ինծի որ երթամ. քանզի քեզի բրած ծառայութիւնս դուն գիտես: 27 - Եւ Լաբան ըսաւ անոր, Եթէ քու առջեւ շնորհք գտայ, կ'ազաչեմ քեզի, ինչի. +անգի «փորձով գիտցայ» որ Տէրը քեզի համար զիս օրհնեց: 28 - Եւ ըսաւ, Բու վարձքդ ինծի իմացուր, ու պիտի վճարեմ: 29 - Եւ անիկա ըսաւ անոր, Բուն գիտես որ ես ի՛նչպէս ծառայեցի քեզի, ու քու անասուններդ ի՛նչպէս էին իմ քովս: 30 - Վասն զի իմ գալէս առաջ քիչ էր քու ունեցածդ և խիստ շատցաւ, ու Տէրը քեզ օրհնեց իմ գալովս. և հիմա ես ալ իմ տանս համար ե՞րբ պիտի աշխատիմ: 31 - Ու անիկա ըսաւ, Բեզի Ի՞նչ տամ: Եւ Յակոբ ըսաւ, Ինծի բան մը մի տար. եթէ այս բանը ինծի բնես, նորէն քու հօտերդ կ'արածեմ - կը պահեմ: 32 - Այսօր քու բոլոր հօտերուդ մէջէն անցնիմ, անկէ ամէն պիտակ ու խայտախարիւ ոչխարը, և ամէն սև ոչխարը ու խայտախարիւ և պիտակ այծերը զատեմ, ու իմ վարձքս անոնք ըլլան: 33 - Եւ հասկէ ետեւ իմ արգարութիւնս քու առջեւ պիտի յայտնուի, երբ իմ վարձքիս հոգ տանիս. իմ քովս գտնուած ամէն պիտակ

ու խայտախարիւ չեղած այծ ու սև չեղած ոչխար գողցուած սեպուի: 34 - Եւ Լաբան ըսաւ, Թող քու ըսածիդ պէս ըլլայ: 35 - Ու այն օրը զատեց բոլորախայտ ու խայտախարիւ նոխազները, և բոլոր պիտակ ու խայտախարիւ էգ այծերը, և ամէն ճերմակ ունեցողը, ու բոլոր սև ոչխարները, և իր որդիներուն ձեռքը տուաւ: 36 - Եւ իր ու Յակոբի մէջտեղ երեք օրուան ճամբայի միջոց գրաւ. և Յակոբ Լաբանի մնացած հօտերը կ'արածէր:

37 - Ու Յակոբ իրեն դպար կաղամախի և նուշի ու սօսիի գաւազաններ առաւ, և անոնց կեղեւները տեղ տեղ հանեց, այնպէս որ գաւազաններուն մէջ եղած ճերմակը կ'երեւնար: 38 - Եւ իր կեղեւած գաւազանները ջուր խմցնելու աւազաններուն մէջ գրաւ, որպէս զի երբ հօտերը ջուր խմելու գան, այն գաւազանները ոչխարներուն առջև ըլլան, և անոնք խմելու եկած ատեննին տաքնան: 39 - Ու ոչխարները գաւազաններուն առջև տաքնալով բոլորախայտ, պիտակ և խայտախարիւ գաւազաններ կը ծնանէին: 40 - Եւ Յակոբ կը զատէր գառները, ու հօտերուն երեսը Լաբանի հօտերուն մէջ եղած բոլորախայտ ու ամէն սև ոչխարները կը գարձներ. և իր հօտերը զատ գրաւ, ու զանոնք Լաբանի հօտերուն քով չգրաւ: 41 - Եւ երբ զօրաւոր ոչխարները կը տաքնային, Յակոբ այն գաւազանները ոչխարներուն առջև առջև աւազաններուն մէջ կը դնէր, որպէս զի գաւազաններուն առջև տաքնան: 42 - Բայց տկար ոչխարներուն չէր դնէր. այսպէս տկարները Լաբանին՝ ու զօրաւորները Յակոբին կ'ըլլային: 43 - Եւ մարդը խիստ հարստացաւ, ու շատ հօտեր, և ազատիներ ու ծառաներ, և ուղտեր ու էշեր ունեցաւ:

ԳԼ. ԼԱ

Եւ լսեց Լաբանի որդւոց գրուցածները, որոնք կ'ըսէին, Յակոբ մեր հօրը բոլոր ունեցածը առաւ, ու բոլոր այս փառքը մեր հօրը ստացուածքէն ստացաւ: 2 - Եւ Յակոբ Լաբանի երեսը տեսաւ, և ահա իրեն երէկուան ու միւս օրուան պէս չէր: 3 - Եւ Տէրը

*Այսինքն, բնակութիւն
†Այսինքն, դատաստան
‡Այսինքն, պիտի աւելցնէ
|| Եբր. հմայեցի
§ Եբր. վաղուան օրը

ըսաւ Յակոբի, Քու հայրերուդ երկիրը ու քու ազգականներուդ դարձիր, ու ես քեզի հետ պիտի ըլլամ:

4 - Եւ Յակոբ Քելզ զրկեց, ու Ռաքէլը և Լիան դաշտը իր հօտերուն քով կանչել տուաւ. 5 - Ու ըսաւ անոնց, Ես ձեր հօրը երեսը կը տեսնեմ, որ ինծի երէկուան ու միւս օրուան պէս չէ. բայց իմ հօրս Աստուածը ինծի հետ եղաւ: 6 - Եւ դուք գիտէք որ ես իմ բոլոր զօրութիւնովս ձեր հօրը ծառայեցի: 7 - Իսկ ձեր հայրը զիս խաբեց ու իմ վարձքս տասը անգամ փոխեց. բայց Աստուած չթողուց զանհկա որ ինծի փսաս մը ընէ: 8 - Վա՛ն զի եթէ անհկա այսպէս ըսէր, Քու վարձքդ պիտակները ըլլան, այն ատեն բոլոր ոչխարները պիտակ կը ծնանէին. և եթէ այսպէս ըսէր, Քու վարձքդ բոլորախայտները ըլլան, այն ատեն բոլոր ոչխարները բոլորախայտ կը ծնանէին: 9 - Այսպէս Աստուած ձեր հօրը հօտերը առաւ ու ինծի տուաւ: 10 - Եւ եղաւ որ հօտերուն ջերմացած ատենը, աչքերս վերցուցի ու երագի մէջ տեսայ, և ահա հօտերուն հետ զուգաւորող նոխազները ու խոյերը ամէնն ալ խայտախարիւ, պիտակ և գորշախայտ էին: 11 - Եւ Աստուծոյ հրեշտակը ըսաւ ինծի երագի մէջ, Ով Յակոբ. ու ես ըսի, Ահա հո՛ւ եմ: 12 - Եւ ըսաւ, Հիմա աչքերդ վեր վերցուր, ու հօտերուն հետ զուգաւորող նոխազներուն նայէ. ամէնը խայտախարիւ, պիտակ ու գորշախայտ են. քանզի Լաբանի բոլոր քեզի բրածները տեսայ: 13 - Ես եմ Բեթէլի Աստուածը, ուր արձան օծեցիր, և հոն ինծի ուխտ բրիր. հիմա ելիր գնա այս երկրէն, ու քու ծննդեանդ երկիրը դարձիր:

14 - Եւ Ռաքէլ ու Լիա պատասխան տուին ու ըսին անոր, Տակաւին մեր հօրը տունը մեզի համար բաժին ու ժառանգութիւն կա՞յ. 15 - Մենք օտարականներ չսեպուեցա՞նք անոր. քանզի մեզ ծախեց, ու մեր ստակն ալ բոլորովին կերաւ: 16 - Վասն զի բոլոր հարստութիւնը զոր Աստուած մեր հօրմէն վերցուց, մերն է ու մեր զաւակներունն է. և հիմա ինչ որ Աստուած քեզի ըսաւ, բրէ:

17 - Ուստի Յակոբ ելաւ, ու իր որդիները ու կիները ուղտերուն վրայ հեծցուց. 18 - Եւ իր բոլոր անասուն-

ները, ու իր բոլոր ստացուածքը զոր ինք ստացաւ, իր ստացած անասունները զորոնք Միջագետի մէջ ստացաւ, ճամբայ հանեց Քանանու երկիրը դէպ ի իր Իսահակ հայրը երթալով: 19 - Եւ Լաբան իր խաչինքը ասրակտուր ընելու գացեր էր. ու Ռաքէլ իր հօրը *կուռքերը գողցաւ: 20 - Եւ Յակոբ Ասորի Լաբանէ գաղտուկ փախաւ. քանզի իր փախչիլը չգիտցուց անոր: 21 - Այսպէս անհկա իր բոլոր ունեցածովը փախաւ, ու ելաւ ու Գետէն անցաւ, և իր երեսը դէպ ի Գաղատադ լեռը շիտկեց:

22 - Ու երբորդ օրը Յակոբի փախչիլը Լաբանի պատմուեցաւ: 23 - Եւ անհկա իր եղբայրները հետը առնելով, անոր ետեւէն եօթը օրուան ճամբայ գնաց, ու անոր հասաւ Գաղատադ լեռը: 24 - Եւ Աստուած գիշերուան երագի մէջ Ասորի Լաբանի եկաւ ու ըսաւ անոր, Զգոյշ կեցիր որ Յակոբի աղէկ կամ գէշ չգրուցես: 25 - Ուստի Լաբան հասաւ Յակոբի. և Յակոբ իր վրանը լեռը կանգներ էր. ու Լաբան իր եղբայրներուն հետ Գաղատադ լեռը իջաւ:

26 - Եւ Լաբան ըսաւ Յակոբի, Ի՞նչ է այս քու բրածդ որ ինձմէ գաղտուկ փախար, և իմ աղջիկներս սրով առնուած գերիներու պէս վարեցիր: 27 - Ինչո՞ւ փախչիլդ գաղտուկ պահեցիր և ինձմէ փախար, ու ինծի չիմացուցիր, որ ես քեզ ուրախութեամբ ու երգերով, թմբուկներով ու քնարներով զրկէի: 28 - Եւ չթողուցիր զիս որ իմ որդիներս ու աղջիկներս համբուրէի. հիմա այս բանը անմտութեամբ բրիր: 29 - Զեզի չարիք ընելու զօրութիւն ունիմ՝ ձեռքիս մէջ, բայց ձեր հօրը Աստուածը երէկ գիշեր ինծի խօսեցաւ՝ ըսելով, Զգոյշ կեցիր որ Յակոբի աղէկ կամ գէշ չգրուցես: 30 - Եւ հիմա՝ թէպէտեւ քու հօրդ տանը շատ փոփաքելուդ համար գացիր, բայց ինչո՞ւ իմ աստուածներս գողցար: 31 - Եւ Յակոբ պատասխան տուաւ ու ըսաւ Լաբանի, Գաղտուկ երթալուս պարտաւոր էի որ վախցայ, քանզի ըսի, Զրկայ որ քու աղջիկներդ բռնութեամբ ինձմէ առնես.

*Եբր. թերափիմները
†Եբր. Լաբանի սիրտը գողցաւ

32 - Բայց քու աստուածներդ որով որ գտնես, թող անիկա չապրի. մեր եղբայրներուն առջև քննէ «-նայե, եթէ իմ քովս քու մէկ բանդ գտնես» առ. քանզի Յակոբ չէր գիտեր որ Ռաբէլ գողցեր էր զանոնք: 33 - Եւ Լաբան Յակոբի վրանը ու Լիայի վրանը և երկու աղախիւններուն վրանը մտաւ, բայց չգտաւ. ետքը Լիայի վրանէն ելաւ ու Ռաբէլի վրանը մտաւ: 34 - Եւ Ռաբէլ առաւ կուռքերը, ու զանոնք ուղտի պատափին մէջ դրաւ, ու վրան նստաւ. և Լաբան բոլոր վրանը փնտռեց, բայց չգտաւ: 35 - Եւ անիկա իր հօրը ըսաւ, Իմ տէրօջ աչքերուն ծանր չերեւնայ, որ քու առջեւդ չեմ կրնար ոտք ելլել. քանզի կանանց սովորութեանը մէջ եմ: Այսպէս փնտռեց, բայց կուռքերը չգտաւ:

36 - Եւ Յակոբ բարկացաւ ու Լաբանի հետ կը վիճէր. և Յակոբ պատասխան տուաւ ու ըսաւ Լաբանի, Ի՞նչ է իմ յանցանքս, ի՞նչ է իմ մեղքս, որ տաքութիւնով ետեւէս ինկար: 37 - Արովհետեւ իմ բոլոր կարասիքս խառնեցիր, քու տանդ ամէն կարասիքէն ինչ որ գտար, հոս իմ եղբայրներուս ու քու եղբայրներուդ առջև դիր, որպէս զի երկուքիս մէջտեղ դատաստան կտրեն: 38 - Լմանքս ան տարի է որ քեզի հետ եմ. ոչխարներդ ու այծերդ ձագ չձգեցին, և քու հօտիդ խոյերը չկերայ: 39 - Գլաններէն գիշատուածը չբերի քեզի, փասար ես կը քաշէի. ցորեկը գողցուածը ու գիշերը գողցուածը իմ ձեռքէս կը պահանջէիր: 40 - Այսպէս էի. ցորեկը տաքը ու գիշերը ցուրտը կը մաշէր զիս, և աչքերէս քունս կը փախչէր: 41 - Այսպէս եղայ քսան տարի քու տանդ մէջ. քու երկու աղջիկներուդ համար տասնըչորս տարի ծառայեցի քեզի, և հօտերուդ համար վեց տարի ծառայեցի, և իմ վարձքս տասր անգամ փոխեցիր: 42 - Եթէ իմ հօրս Աստուածը, Աբրահամի Աստուածը և Իսահակի Երկիւղը ինձի հետ չըլլար, իրաւքնէ զիս հիմա դատարկ կը զրկէիր. Աստուած իմ տառապանքս ու իմ ձեռքիս աշխատութիւնը տեսաւ, ու երէկ գիշեր թշ յանդիմանեց:

43 - Եւ Լաբան պատասխան տուաւ ու ըսաւ Յակոբի. Այս աղջիկները իմ աղջիկներս են, և այս որդիները իմ

որդիներս են, և այս հօտերը իմ հօտերս են. և ամէնը զոր կը տեսնես, իմս են. և ի՞նչ ընեմ այսօր այս իմ աղջիկներուս կամ իրենց ծնած զաւակներուն: 44 - Աւստի հիմա եկուր, ես ու դուն ուխտ ընենք, որ իմ ու քու մէջտեղ վկայութեան համար ըլլայ: 45 - Եւ Յակոբ քար մը առաւ ու արձան կանգնեց զանիկա: 46 - Եւ Յակոբ իր եղբայրներուն ըսաւ, Քարեր ժողվեցէք. և անոնք քարեր առին ու դէզ մը ըրին, և հսն դէզին վրայ հօց կերան: 47 - Ու Լաբան անոր անունը *Եէկար-ասհատութա դրաւ, բայց Յակոբ անոր անունը †Գաղաադ դրաւ: 48 - Եւ Լաբան ըսաւ, Այս դէզը իմ ու քու մէջտեղ վկայ մըն է այսօր. անոր համար անոր անունը Գաղաադ ըսուեցաւ: 49 - Եւ ‡Մասփա ալ ըսեց. քանզի ըսաւ, Մեր իրարմէ զատուած ատենը, իմ ու քու մէջտեղ Տէրը դիտէ: 50 - Եթէ իմ աղջիկներս վշտացնես, և կամ եթէ իմ աղջիկներուս վրայ «-բէշ կիներ առնես, մեզի հետ մէկը չկայ. ահա իմ ու քու մէջտեղ վկայ Աստուած է: 51 - Եւ Լաբան ըսաւ Յակոբի, Ահա այս դէզը, և ահա իմ ու քու մէջտեղ իմ կանգնած արձանս: 52 - Այս դէզը վկայ՝ ու այս արձանը վկայ է, որ այս դէզէն չանցնիմ քեզի գուլ, և դուն այս դէզէն ու այս արձանէն չանցնիս ինձի գուլ, չարիք ընել համար: 53 - Աբրահամի Աստուածը և Նաքովրի աստուածը, անոնց հայրերուն աստուածը մեր մէջ դատաւոր ըլլան: Եւ Յակոբ իր հօրը Իսահակի Երկիւղովը երդում ըրաւ:

54 - Եւ Յակոբ զոհեր մատուց լեռանը վրայ, ու իր եղբայրները հաց ուտելու հրաւիրեց և հաց կերան, ու գիշերը լեռը մնացին: 55 - Եւ Լաբան առտուանց կանուխ ելաւ, ու իր որդիները ու իր աղջիկները համբուրեց ու օրհնեց զանոնք. և Լաբան գնաց ու իր տեղը դարձաւ:

*Այսինքն, վկայութեան դէզ (Բայց գետնէն)
 †Այսինքն, վկայութեան դէզ (Եբրայեցիներէն)
 ‡Այսինքն, դիտանոց

ԳԼ. ԼԲ

Եւ Յակոբ իր ճամբան գնաց, ու Աստուծոյ ճրեշտակները անոր պատահեցան: 2 - Եւ Յակոբ երբ տեսաւ զանոնք, ըսաւ, Այս Աստուծոյ բանակն է, և այն տեղին անունը *Մանայիմ գրաւ:

3 - Եւ Յակոբ իր առջեւէն պատգամաւորներ զրկեց իր եղբօրը Եսաւի զէպի Սէիր երկիրը, Եզովմի գաւառը: 4 - Եւ պատուիրեց անոնց՝ ըսելով, իմ տէրոջս Եսաւի այսպէս ըսէք, Քու ծառայ Յակոբ այսպէս կ'ըսէ, Լաբանի քով պանդխտութիւն ըրի, ու մինչև հիմա ուշացայ: 5 - Եւ ունիմ արջաւներ ու էշեր, հօտեր ու ծառաներ և աղախիններ. և զրկեցի իմ տէրոջս իմացնելու, որպէս զի քու առջևդ շնորհք գտնեմ: 6 - Եւ պատգամաւորները դարձան Յակոբի ու ըսին, Քու եղբօրդ Եսաւի գացինք, ու անիկա ալ չորս հարիւր մարդով քեզ գիմաւորելու կու գայ:

7 - Եւ Յակոբ խիստ վախցաւ ու խռովեցաւ. և իրեն հետ եղած ժողովուրդը ու հօտերը և արջաւները և ուղտերը երկու խումբի բաժնեց, 8 - Ու ըսաւ, Եթէ Եսաւ մէկ խումբին հասնի, ու զայն զարնելու ըլլայ, միւս խումբը կ'ազատի: 9 - Եւ Յակոբ ըսաւ, Ով իմ հօրս Աբրահամի Աստուածը, ու իմ հօրս Իսահակի Աստուածը, ով Տէր, որ ըսիր ինծի, Քու երկիրդ ու քու հայրենիքդ դարձիր, ու քեզի բարիք ընեմ: 10 - Արժանի չեմ այն ամէն ողորմութիւններուն և ամէն հաւատարմութեանը, զոր դուն քու ծառայիդ ցուցուցիր. քանզի իմ գաւաղանովս անցայ այս Յորդանանէն, և հիմա երկու խումբի *էր եղայ: 11 - Կ'աղաչեմ քեզի, ազատէ զիս իմ եղբօրս Եսաւի ձեռքէն. որովհետև ես անկէ կը վախնամ, որ չըլլայ թէ գայ ու զարնէ զիս, * - մայրը աղաքներովը: 12 - Եւ դուն ըսիր թէ Անշուշտ քեզի բարիք պիտի ընեմ, ու քու սերունդդ ծովի աւազին չափ պիտի ընեմ, որ շատութենէն չհամբուիր:

13 - Եւ այն գիշերը հօն կեցաւ. ու իր ձեռքը գանուածէն իր եղբօրը Եսաւի համար ընծաներ պատրաստեց:

14 - Երկու հարիւր այժ և քսան նոխազ, երկու հարիւր էգ ոչխար և քսան խոյ, 15 - Երեսուն ծիծ տուող ուղտ իրենց ձագերովը, քառասուն կով ու տասը ցուլ, քսան էգ էշ և տասը աւանակ: 16 - Եւ ամէն մէկ հօտը զատ զատ իր ծառաներուն ձեռքը յանձնեց, ու ըսաւ իր ծառաներուն, Առջեւս անցէք, ու հօտերը իրարմէ քիչ մը հեռու թողուցէք: 17 - Եւ առջեւէն գացողին պատուիրեց՝ ըսելով, Երբ իմ եղբայրս Եսաւ քեզի պատահի ու քեզի հարցնէ, ըսելով՝ Թէ Գուն որո՞ւն ես և ո՞ւր կ'երթաս, և այս առջեւդ եղածները որո՞ւն են: 18 - Այն ատեն ըսէ որ Քու ծառայիդ Յակոբին է. իմ տէրոջս Եսաւի զրկած ընծան է. և ահա ինք ալ ետենիս է: 19 - Եւ այսպէս երկրորդին ու երրորդին և հօտերուն ետեւէն բոլոր գացողներուն պատուիրեց՝ ըսելով, Այս խօսքին պէս զրուցեցէք Եսաւի երբ զինք գտնէք: 20 - Եւ ահա քու ծառայ Յակոբ ալ ետենիս է, ըսէք. քանզի ըսաւ, Առջեւս գացող ընծաներով անոր երեսը կը կակուղցնեմ, և անկէ ետքը անոր երեսը կը տեսնեմ. թերեւս զիս ընդունի: 21 - Այսպէս ընծաները անոր առջևէն գացին, և ինք այն գիշերը հօն մնաց բանակին մէջ: 22 - Եւ այն գիշերը ելաւ, ու իր երկու կիները և իր երկու աղախինները ու իր տասնըմէկ որդիները առաւ, և Յաբոկի անցքէն անցաւ: 23 - Եւ առաւ զանոնք ու վտակէն անցուց, և իր բաւր ունեցածը անցուց:

24 - Եւ Յակոբ մինակ մնաց, ու մարդ մը կը գօտէմարտէր անոր հետ մինչև արշալոյս: 25 - Եւ երբ տեսաւ որ իր ոյժը անոր չհասաւ, անոր զստին ամուլաջիլին դպաւ, և անոր հետ գօտէմարտած ատենը Յակոբի զստին ամուլաջիլը *խախտեցաւ: 26 - Եւ անիկա ըսաւ, Թող տուր զիս, քանզի արշալոյսը †երեցաւ. և Յակոբ ըսաւ, Չեմ թողուր քեզ մինչև զիս չօրհնես: 27 - Եւ անիկա ըսաւ անոր, Ի՞նչ է անունդ. ան ալ ըսաւ, Յակոբ է: 28 - Եւ անիկա ըսաւ, Այ մէյ մըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա †Խարայէլ. վասն զի Աստուծոյ հետ ու մար-

*Ասիւն, երկու բանակներ

*Կամ, թմրեցաւ †Եբբ. ելաւ †Ասիւն, Աստուծոյ հետ մարանչող

դոց հետ մարտնչեցար, և յաղթեցիր: 29 - Եւ Յակոբ հարցուց ու ըսաւ, Շնորհք բրէ, անունդ ըսէ ինչի: Եւ անիկա ըսաւ, Ինչո՞ւ իմ անունս կը հարցնես. և հոն օրհնեց զանիկա: 30 - Եւ Յակոբ այն տեղին անունը *Փանուէլ գրաւ. քանզի Եսայ, Դէմ առ դէմ տեսայ զԱստուած, ու իմ անձս ողջ մնաց:

31 - Եւ Փանուէլէ անցածին պէս արեւը անոր վրայ ծագեցաւ. ու իր զստին վրայ կը կադար: 32 - Անոր համար Իսրայէլի որդիները զստին վրայի †թմրած ջիղը՝ չեն ուտեր մինչև այսօր. որովհետև Յակոբի զստին †թմրած ջիղին՝ դպաւ:

ԳԼ. ԼԳ

Եւ Յակոբ իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա Եսաւ կու գար ու անոր հետ չորս հարիւր մարդ. և իբր զաւակները Լիայի ու Ռաքէլի ու երկու աղախիններուն բաժնեց: 2 - Եւ աղախինները իրենց զաւակներովը առջեւը գրաւ, և Լիան իր զաւակներովը ետեւը, և Ռաքէլը ու Յովսէփ Եսայի ետեւը: 3 - Եւ ինք անոնց առջև անցաւ, ու մինչև իր եղբօրը մօտենալուն, գետնին հաւասար եօթը անգամ խոնարհութիւն ըրաւ: 4 - Ու Եսաւ զանիկա դիմաւորելու վազեց ու գրկեց զանիկա, և անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա. և լացին: 5 - Ու Եսայ իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ կիները ու զաւակները, և ըսաւ, Աստիք քու ի՞նչդ են. և անիկա ըսաւ, Աստուծոյ քու ծառայիդ պարգեւած զաւակներն են: 6 - Այն ատեն աղախինները ու անոնց զաւակները մօտեցան ու խոնարհութիւն ըրին: 7 - Եւ Լիա ալ ու իր զաւակները մօտեցան ու խոնարհութիւն ըրին. և ետքը Յովսէփ ու Ռաքէլ մօտեցան ու խոնարհութիւն ըրին: 8 - Ու Եսայ ըսաւ, Այս քու բոլոր խումբդ ի՞նչ պիտի ըլլայ, որու ես պատահեցայ. և Յակոբ ըսաւ, Իմ տէրոջս առջև շնորհք գտնելու համար է: 9 - Ու Եսաւ ըսաւ, Ես շատ ու-

նիմ, եղբայր իմ, քուկդ քեզի ըլլայ: 10 - Եւ Յակոբ ըսաւ, Ոչ, կ'աղաչեմ քեզի, եթէ հիմա քու առջեւդ շնորհք գտայ, իմ ձեռքէս ընծաս ընդունէ. քանզի քու երեսդ Աստուծոյ երեսը տեսնելու պէս տեսայ, և ինծի հաճեցար: 11 - Շնորհք բրէ, քեզի բերուած ընծաս առ. քանզի Աստուած ողորմեցաւ ինծի, և քանզի ես ամէն բան ունիմ. և ստիպեց անոր, ու ան ալ ընդունեց: 12 - Եւ անիկա ըսաւ, Ել լինք երթանք. ու ես քու առջեւդ կ'երթամ: 13 - Եւ Յակոբ ըսաւ անոր, Իմ տէրս գիտէ որ զաւակները մատաղաշ են, ու ինծի հետ եղած հօտերը ու արջաւները ձագերով են. և եթէ մէկ օր բռնութեամբ վարեն զանոնք, բոլոր հօտերը պիտի մեռնին: 14 - Ուրեմն թող իմ տէրս իր ծառային առջև անցնի. ու ես կամաց կամաց առջեւս եղած անասուններուն ստքովը ու տղաքներուն ստքովը կ'երթամ, մինչև իմ տէրոջս Սէիր հասնիմ: 15 - Եւ Եսաւ ըսաւ, Արդ ինծի հետ եղող ժողովուրդէն քու քովդ ձգեմ. և անիկա ըսաւ, Ի՞նչ պէտք է. թող իմ տէրոջս առջև շնորհք գտնեմ: 16 - Այսպէս Եսաւ այն օրը իր ձամբան դարձաւ դէպ ի Սէիր:

17 - Եւ Յակոբ Սոկքովթ չուեց, ու իրեն տուն մը շինեց և իր հօտերուն փարախներ շինեց. անոր համար այն տեղին անունը †Սոկքովթ ըսուեցաւ:

18 - Եւ Յակոբ Միջագետէ դարձած ատենը Սիւքեմացոց Սաղէմ քաղաքը եկաւ, որ Քանանու երկրին մէջ է, և քաղաքին առջև բնակեցաւ:

19 - Եւ իր վրանը կանգնած արտին կալուածքը Սիւքեմի հօրը Եմովրի որդիներէն ծախու առաւ †հարիւր կտոր ստակի: 20 - Եւ հոն սեղան մը շինեց, ու անունը Խելէլօհէ-Իսրայէլ գրաւ:

ԳԼ. ԼԴ

Եւ Լիայի Յակոբի ծնած աղջիկը Դինա այն երկրին աղջիկները տեսնելու ելաւ: 2 - Ու այն երկրին իշխանը

*Եբբ. օրհնութիւնս
 †Այսինքն, փարախներ
 ‡Կամ, հարիւր գառնուկի
 ॥Այսինքն, Աստուած Իսրայէլի Աստուածը

*Այսինքն, Աստուծոյ երեսը
 †Կամ, ամուլաջիկը
 ‡Կամ, ամուլաջիկին

Խեւացի Եմովրի որդին Սիւքէմ տեսաւ զանիկա, և առաւ ու պառկեցաւ անոր հետ ու պղծեց զանիկա: 3 - Եւ անոր հոգին Յակոբի Դինա աղջկանը յարեցաւ. ու սիրեց աղջիկը, և աղջկան քաղցրութեամբ խօսեցաւ: 4 - Աւ Սիւքէմ իր հօրը Եմովրի գրուցեց՝ ըսելով, Այս աղջիկը ինձի կին առ: 5 - Եւ Յակոբ լսեց որ անիկա իր Դինա աղջիկը պղծեց. բայց իր որդիները իր հօտերուն հետ դաշտն էին, ու մինչև անոնց գալը Յակոբ լուռ կեցաւ:

6 - Եւ Սիւքէմի հայրը Եմովր գնաց Յակոբի, որպէս զի անոր հետ խօսի: 7 - Եւ Յակոբի որդիները լսածուն պէս՝ դաշտէն եկան. և մարդիկը դրժուարեցան ու խիստ բարկացան. քանզի Յակոբի աղջկանը հետ պառկելով՝ Խորայելի մէջ անգամովիւն ըրաւ, որ այսպէս ըլլալու չէր: 8 - Աւ Եմովր խօսեցաւ անոնց հետ՝ ըսելով, Իմ Սիւքէմ որդւոյս հոգին ձեր աղջկան սիրահարեցաւ. կ'աղաչեմ ձեզի, զանիկա անոր կնութեան տուէք: 9 - Եւ մեզի հետ խնամովիւն ըրէք. ձեր աղջիկները մեզի տուէք ու մեր աղջիկները ձեզի առէք: 10 - Եւ մեզի հետ բնակեցէք ու այս երկիրը ձեր առջև պիտի ըլլայ. անոր մէջ բնակեցէք ու առուտուր ըրէք, և անոր մէջ կալուածներ ստացէք: 11 - Աւ Սիւքէմ ըսաւ աղջկան հօրը ու անոր եղբայրներուն, Թող ձեր առջև շնորհք գտնեմ, և ինչ որ ինձի ըսէք, կուտամ: 12 - Խնդրեցէք ինձմէ խիստ շատ օժիտ ու ընծայ, ու ինձի ըսածնուդ պէս պիտի տամ. միայն թէ աղջիկը ինձի տուէք՝ կին ըլլալու համար: 13 - Եւ Յակոբի որդիները խաբէութեամբ պատասխան տուին Սիւքէմի ու անոր հօրը Եմովրի, ու ըսին, (քանզի անիկա իրենց Դինա քոյրը պղծեց,) 14 - Եւ ըսին անոնց, Մեկք այս բանը չենք կրնար ընել, որ մեր քոյրը անթիփատ մարդու մը տանք. վասն զի այդ մեզի ամօթ բան մըն է. 15 - Բայց միայն ասով կը հաճինք ձեզի, եթէ ձեզմէ ամէն արուն թրփատուելով՝ մեզի պէս ըլլաք, 16 - Այն ատեն մեր աղջիկները ձեզի կուտանք, և ձեր աղջիկները մեզի կ'առ-

նենք, ու ձեզի հետ կը բնակինք, ու յետի հետ մէկ ժողովուրդ կ'ըլլանք: 17 - Բայց եթէ մեզի մտիկ չընելով՝ չթիփատուիք, այն ատեն մենք մեր աղջիկը կ'առնենք ու կ'երթանք: 18 - Եւ անոնց խօսքը հաճելի եղաւ Եմովրի ու Եմովրի որդւոյն Սիւքէմի: 19 - Եւ այն պատանին այս բանը ընելու չուշացաւ, քանզի Յակոբի աղջկանը զմայլած էր. և իր հօրը տանը մէջ եղողներուն ամէնէն պատուականն էր անիկա:

20 - Աւ Եմովր և անոր որդին Սիւքէմ իրենց քաղաքին դուռը եկան, ու իրենց քաղաքին մարդոցը հետ խօսեցան՝ ըսելով, 21 - Այս մարդիկը խաղաղութեամբ կը վարուին մեզի հետ. ուստի թող «չ» երկրին մէջ բնակին, ու անոր մէջ առուտուր ընեն, քանզի ահա երկիրը ընդարձակ է անոնց առջև. Եւ, անոնց աղջիկները մեզի կիներ առնենք և մեր աղջիկները անոնց տանք: 22 - Բայց այն մարդիկը մեզի հետ բնակելու, մէկ ժողովուրդ ըլլալու համար միայն այս բանով կը հաճին մեզի, որ անոնց թիփատուելուն պէս, մեր ամէն արուն թիփատուի. 23 - Անոնց հօտերը ու անոնց ստացուածքը և ամէն անատուները մերը չեն ըլլար. միայն թէ մենք անոնց հաճինք, որ մեզի հետ բնակին: 24 - Աւ Եմովրի և անոր որդւոյն Սիւքէմի մտիկ ըրին այն ամէնը՝ որ անոր քաղաքին դռնէն դուրս կ'ելլէին. և ամէն արու որ անոր քաղաքին դռնէն դուրս կ'ելլէր, թիփատուեցաւ:

25 - Աւ եղաւ որ երրորդ օրը երբ անոնք ցաւի մէջ էին, Յակոբի երկու որդիները, Եմուտն ու Ղեւի, Դինայի եղբայրները, ամէն մէկը իր սուրը առաւ, և համարձակ քաղաքը մտան ու սպաննեցին ամէն արուն. 26 - Եւ Եմովրը և անոր որդին Սիւքէմը սուրի բերնէ անցուցին. և Սիւքէմի տունէն առին Դինան ու դուրս ելան: 27 - Եւ Յակոբի որդիները սպաննուածներուն վրայ եկան, ու քաղաքը կողոպտեցին իրենց քոյրը պղծելուն համար. 28 - Անոնց հօտերը ու անոնց արջառները ու էշերը և քաղաքին մէջ եղածը ու դաշտին մէջ եղածը առին. 29 - Եւ անոնց բոլոր ստացուածքը ու անոնց բոլոր աղաքները ու կինները գերի առին, և տու-

*Եբր. սրահն

ներուն մէջ բոլոր գտնուածը կողոպտեցին: 30 - Եւ Յակոբ ըսաւ Շմաւոնի ու Ղեւիի, Ձիս այս երկրին բնակիչներուն, Քանանացոց ու Փերեզացոց, մէջ *ատելի ընելով՝ զիս փորձանքի մէջ ձգեցիք. և ինծի հետ քիչ մարդիկ ըլլալով՝ անոնք իմ՝ վրաս պիտի հաւաքուին ու զիս պիտի զարնեն, և ես ու իմ տունս պիտի կորսուինք: 31 - Ու անոնք ըսին, Հապա մեր քոյրը բոզի պէս գործածել պէ՞տք էր անոր:

ԳԼ ԼԵ

Եւ Աստուած ըսաւ Յակոբի, Ելիր, վեր դէպ ի Բեթէլ գնա ու հոն բնակէ, և հոն սեղան մը շինէ Աստուծոյ որ քեզի երեւցաւ, քու եղբորդ Եսաւի երեսէն փախած ատենդ: 2 - Եւ Յակոբ իր ընտանիքին ու բոլոր իրեն հետ եղողներուն ըսաւ, Ձեր մէջ եղող օտար աստուածները վերցուցէք, ու մաքրուեցէք և հանդերձնիդ փոխեցէք: 3 - Ու ելլելով դէպ ի Բեթէլ վեր երթանք. ու հոն սեղան մը շինեմ՝ Աստուծոյ, որ իմ նեղութեանս օրը ինծի լսեց, ու իմ գացած ճամբուս մէջ ինծի հետ էր: 4 - Եւ իրենց ձեռքը եղած բոլոր օտար աստուածները ու իրենց ականջները եղած օղերը Յակոբի տուին. և Յակոբ թաղեց զանոնք Սիւքէմի մօտ եղած բեւեկնիին տակ: 5 - Ու ճամբայ ելան. և իրենց բոլորաիքը եղած քաղաքներուն վրայ Աստուծոյ վախը ինկաւ, ու Յակոբի որդիներուն ետեւէն չինկան: 6 - Եւ Յակոբ Քանանու երկրին մէջ եղող Լուզ, այսինքն Բեթէլ, Եկաւ, ինք ու իրեն հետ եղող բոլոր ժողովուրդը: 7 - Եւ հոն սեղան մը շինեց, ու այն տեղին անունը †Ել-Բեթէլ դրաւ. քանզի իր եղբորը երեսէն փախած ատենը Աստուած հոն իրեն երեւցեր էր:

8 - Եւ Ռեբեկայի դայեակը Դեբօրա մեռաւ, ու Բեթէլի վարի կողմը կաղնիին տակ թաղուեցաւ. ու անոր անունը †Ալօն-պախութ դրուեցաւ:

9 - Եւ Աստուած նորէն երեւցաւ Յակոբի երբ անիկա Միջագետէ դարձեր էր, ու օրհնեց զանիկա: 10 - Եւ

*Եբր. գարշահոտ
†Այսինքն, Բեթէլի Աստուածը
‡Այսինքն, կաղնի սգոյ

Աստուած ըսաւ անոր, Քու անունդ Յակոբ է. ա՛լ մէյմըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ ըլլայ քու անունդ. ու անոր անունը Իսրայէլ դրաւ: 11 - Եւ Աստուած ըսաւ անոր, Ես Ամենակարող Աստուած եմ. աճիս ու շատնաս. քեզմէ ազգ ու ազգերու բազմութիւն ըլլայ, և քու երանքէդ թագաւորներ ելլեն: 12 - Ու այն երկիրը զոր Աբրահամի և Իսահակի տուի, քեզի պիտի տամ. ու քեզմէ ետքը քու սերունդիդ պիտի տամ այն երկիրը: 13 - Եւ Աստուած այն տեղ ուր անոր հետ խօսեցաւ, անոր քովէն վեր ելաւ: 14 - Ու Յակոբ քարէ արձան մը կանգնեց այն տեղ՝ ուր Աստուծոյ իրեն հետ խօսեցաւ. և անոր վրայ թափելու նուէր մատուց ու անոր վրայ իւղ թափեց: 15 - Եւ Յակոբ այն տեղին անունը ուր Աստուած իրեն հետ խօսեցաւ, Բեթէլ դրաւ:

16 - Ու Բեթէլէ ճամբայ ելան. ու դեռ Եփրատի չեկած քիչ մը ճամբայ մնալով՝ Ռաբէլ ծնաւ, և ծնած ատենը շատ դժուարութիւն քաշեց: 17 - Ու եղաւ որ երբ իր ծնանելուն շատ դժուարութիւն կը քաշէր, ծնուցիչը ըսաւ անոր, Մի վախնար, քանզի աս ալ քեզի որդի է: 18 - Եւ եղաւ որ երբ անոր հոգին կ'ելլէր, (քանզի մեռաւ,) անոր անունը *Բենօնի դրաւ. բայց անոր հայրը †Բենիամին կոչեց զանիկա: 19 - Եւ Ռաբէլ մեռաւ, ու թաղուեցաւ Եփրատի ճամբան, որ Բեթէլէ հէմ է: 20 - Եւ Յակոբ անոր գերեզմանին վրայ արձան մը կանգնեց, որ մինչև այսօր Ռաբէլի գերեզմանին արձանն է:

21 - Եւ Իսրայէլ ճամբայ ելաւ, և իր վրանը †Միկատալ-եղերի անդի կողմը կանգնեց: 22 - Ու եղաւ որ երբ Իսրայէլ այն երկիրը կը բնակէր, Ռուբէն գնաց ու իր հօրը Բազղա հարձին հետ պառկեցաւ. և Իսրայէլ լսեց
*Իսրայէլ:

Արդ Յակոբի որդիները տասուերկու էին. 23 - Լիայի որդիները՝ Յակոբի անդրանիկը Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար ու Չաբուղոն. 24 - Ռաբէլի որդիները՝ Յովսէփ ու Բենիա-

*Այսինքն, նեղութեանս որդին
†Այսինքն, աջ ձեռքին որդին
‡Այսինքն, հօտի աշտարակ

մին. 25 - Եւ Ռաբէլի Բազզա ազախինին որդիները՝ Գան ու Նեփթաղիմ: 26 - Եւ Լիայի Զեղփա ազախինին որդիները՝ Գազ ու Ասեր: Ասոնք են Յակոբի որդիները, որոնք Միջագետի մէջ ծնան անոր:

27 - Եւ Յակոբ եկաւ իր Տօրը Իսահակի դէպ ի Մամբրէ, Արբայի քաղաքը, այսինքն՝ Քերրոն, ուր Արբաճամ ու Իսահակ պանդխտութեամբ բնակեցան: 28 - Եւ Իսահակի օրերը չարիւր ու թաւն տարի եղան: 29 - Եւ Իսահակ ծերացած ու օրերը լեցուած՝ աւանդեց չոզին ու մեռաւ, և իր ժողովուրդին խաւնուեցաւ. ու անոր որդիները Եսաւ ու Յակոբ թաղեցին զանիկա:

ԳԼ. ԼԶ

Եւ ասոնք են Եսաւի ծնունդները, որ է Եդովմ: 2 - Եսաւ իրեն կիներ առաւ Քանանու աղջիկներէն, Քետացի Ելօնի աղջիկը Ադգան, ու Խեւացի Սերեգօնի աղջկանը Անայի աղջիկը Ողիբաման, 3 - Եւ Իամայէլի աղջիկը, Նաբէօթի քոյրը Բասեմաթը: 4 - Եւ Ադգա ծնաւ Եսաւի՝ Եղիփազը, ու Բասեմաթ ծնաւ Ռագուէլը: 5 - Եւ Ողիբամա ծնաւ Յեուսը ու Յեգղոմը և Կորխը. ասոնք են Եսաւի որդիները որոնք ծնան իրեն Քանանու երկրին մէջ:

6 - Ու Եսաւ առաւ իր կիները ու տղաքները և աղջիկները ու իր ասոնք բոլոր մարդիկը, և իր Տօտերը ու իր բոլոր անասունները, և իր բոլոր ստացուածքը զոր Քանանու երկրին մէջ ստացաւ, և իր եղբորը Յակոբի երեսէն առեւ երկիր մը գնաց. 7 - Քանգի իրենց ստացուածքին շատ բլլալուն Տամար չէին կրնար մէկտեղ բնակիլ. և իրենց Տօտերուն պատճառաւ իրենց պանդխտութեամբ բնակած երկիրը բաւական չէր իրենց: 8 - Ու Եսաւ Աէր լեռը բնակեցաւ. Եսաւ Եդովմն է:

9 - Եւ Աէր լեռը եզոյ Եդովմայէցոց Տօրը Եսաւի ծնունդները ասոնք են: 10 - Եսաւի որդոց անունները ասոնք են. Եսաւի կնոջ Ադգայի որդին Եղիփազ, և Եսաւի կնոջ Բասեմաթի որդին Ռագուէլ: 11 - Եւ Եղիփազի որդիները Թեման, Օմար, Աեփով և Գոթամ ու Կենէզ էին:

12 - Եւ Թամնա Եսաւի որդւոյն Եղիփազի չարճն էր, որ Եղիփազի՝ Ամաղէկը ծնաւ. Եսաւի կնոջ Ադգայի որդիները ասոնք էին: 13 - Եւ Ռագուէլի որդիները ասոնք են. Նաճաթ, Զարա, Սամմա ու Մէզա. ասոնք էին Եսաւի կնոջ Բասեմաթի որդիները: 14 - Եւ Եսաւի կնոջ Սերեգօնի աղջկանը Անայի աղջկանը Ողիբամայի որդիները ասոնք են. և ծնաւ Եսաւի՝ Յեուսը ու Յեգղոմը և Կորխը:

15 - Եսաւի որդւոցմէ եզոյ իշխանները ասոնք են. Եսաւի անդրանկան Եղիփազի որդիները՝ Թեման իշխան, Օմար իշխան, Աեփով իշխան, Կենէզ իշխան, 16 - Կորխ իշխան, Գոթամ իշխան, Ամաղէկ իշխան. Եդովմի երկրին մէջ Եղիփազէ եզոյ իշխանները ասոնք են. ասոնք Ադգայի որդիներն էին: 17 - Ու Եսաւի որդւոյն Ռագուէլի որդիները ասոնք են. Նաճաթ իշխան, Զարա իշխան, Սամմա իշխան, Մէզա իշխան. Եդովմի երկրին մէջ Ռագուէլէ եզոյ իշխանները ասոնք են. Եսաւի կնոջ Բասեմաթի որդիները ասոնք էին: 18 - Ու Եսաւի կնոջ Ողիբամայի որդիները ասոնք են. Յեուս իշխան, Յեգղոմ իշխան, Կորխ իշխան. Եսաւի կնոջմէ Անայի աղջիկը եզոյ Ողիբամայէ շնորհ իշխանները ասոնք էին: 19 - Ասոնք են Եսաւի, այսինքն Եդովմի որդիները, և ասոնք են անոնց իշխանները:

20 - Եւ այն երկրին մէջ բնակող Քուեցի Աէրի որդիները ասոնք են. Ղոտան և Սորաղ ու Սերեգօն և Անա, 21 - Ու Դիսօն ու Եսեր և Դիսան. ասոնք էին Քուեցոց իշխանները, Աէրի որդիները, Եդովմի երկրին մէջ: 22 - Եւ Ղոտանի որդիները Գոուի ու Զեմամ էին, ու Ղոտանի քոյրը Թամնա: 23 - Եւ Սորայի որդիները ասոնք են. Գաղուան ու Մանաբաթ և Գերաղ, Աեփով ու Օնամ: 24 - Եւ Սերեգօնի որդիները ասոնք են. Ալիա ու Անա. ասոնք Անան է, որ իր Տօրը Սերեգօնի էշերը արածած ատենը անապատին մէջ ջերմուկները գառաւ: 25 - Եւ Անայի որդիները ասոնք են. Դիսօն, ու Անայի աղջիկը Ողիբամա: 26 - Եւ Դիսօնի որդիները ասոնք են. Ամաղան ու Եսբան և Յեթրան ու Քառան: 27 - Եսերի որդիները ասոնք են. Բաղզան ու Զաաւան և Ական: 28 - Դիսանի

որդիները ասոնք են . Հուս ու Աւան : 29 - Քուեցւոց իշխանները ասոնք են . Ղոտան իշխան, Սորաղ իշխան, Սեբեգօն իշխան, Անա իշխան, 30 - Իխօն իշխան, Եսեր իշխան, Իխան իշխան . ասոնք են Քուեցւոց իշխանները Սեիրի երկրին մէջ իրենց իշխանութեան գաւառները համեմատ :

31 - Եւ ասոնք են այն թագաւորները որ Եդովմի երկրին մէջ թագաւորեցին, Իսրայէլի որդիներուն վրայ թագաւորի մը թագաւորելէն առաջ :

32 - Եւ Բէովրի որդին Բազա թագաւորեց Եդովմի մէջ . ու անոր քաղաքին անունը Իեննաբա էր :

33 - Եւ Բազա մեռաւ , ու անոր տեղ Բուրացի Զարայի որդին Յորաբ թագաւորեց :

34 - Եւ Յորաբ մեռաւ , ու անոր տեղ Թեմանացւոց երկրէն Հուսամ թագաւորեց :

35 - Եւ Հուսամ մեռաւ , ու անոր տեղ Բազադի որդին Ադադ թագաւորեց , որ Մովարի դաշտին մէջ Մադիանացիները կոտորեց .

և անոր քաղաքին անունը Աւիթ էր :

36 - Եւ Ադադ մեռաւ , ու անոր տեղ Մասրեկացի Սամադա թագաւորեց :

37 - Եւ Սամադա մեռաւ , ու անոր տեղ Գեաին քով Ռոբովթէ եղող Սաւուդը թագաւորեց :

38 - Եւ Սաւուդ մեռաւ , ու անոր տեղ Աքոբորի որդին Բազանանան թագաւորեց :

39 - Եւ Աքոբորի որդին Բազաանան մեռաւ , ու անոր տեղ Ադադ թագաւորեց .

և անոր քաղաքին անունը Փոգով էր . ու անոր կնոջ անունը Մետաբէէլ էր , որ Մէզաաբի աղջկանը Մատրեթի աղջիկն էր :

40 - Եւ իրենց ասոնքն ու իրենց տեղերուն համեմատ իրենց անուններովը՝ Եսաւէ եղած իշխաններուն անունները ասոնք են . Թամնա իշխան , Գադուա իշխան , Յեթաթ իշխան , Ողիբամա իշխան :

41 - Ելա իշխան , Փինօն իշխան , Կենէզ իշխան , Թեման իշխան , 42 - Մաբգար իշխան , Մագեդիէլ իշխան , Իրամ իշխան :

43 - Ասոնք են Եդովմի իշխանները իրենց բնակութեանը համեմատ՝ իրենց ստացուածքի երկրին մէջ . այս է Եսաւ Եդովմայեցւոց հայրը :

ԳԼ ԼԷ

Եւ Յակոբ իր հօրը պանդխտացած

երկրին , Քանանու երկրին , մէջ բնակեցաւ : 2 - Ասոնք են Յակոբի ծնունդները . Յովսէփ տասներօթը տարեկան էր , երբ իր եղբայրներուն հետ հօտերը կ'արածէր .

և պատանի ըլլալով՝ իր հօրը կրնէրուն Բազալայի որդիներուն հետ ու Զեդփայի որդիներուն հետ էր .

և Յովսէփ անոնց չար լուրը անոնց հօրը կը բերէր : 3 - Եւ Իսրայէլ իր բոլոր որդիներէն աւելի կը սիրէր Յովսէփը ,

քանզի իր ծերութեանը որդին էր անիկա . և բազմազոյն պատմութեան մը շինեց անոր :

4 - Եւ անոր եղբայրները տեսնելով որ իրենց հայրը կը սիրէ զանիկա իր բոլոր եղբայրներէն աւելի ,

ատեցին զանիկա ու խաղաղութեամբ չէին կրնար խօսիլ անոր հետ :

5 - Եւ Յովսէփ երազ մը տեսաւ ու իր եղբայրներուն պատմեց . և անոնք աւելի ատեցին զանիկա :

6 - Ու ըսաւ անոնց , Կ'ազաչեմ՝ ձեզի , մտիկ ըրէք այս իմ տեսած երազս .

7 - Ահա մենք դաշտին մէջ որաներ կը կապէինք , և ահա իմ որաս ելաւ ու շիտակ կանգնեցաւ .

և ահա ձեր որաները անոր բոլորտիքը կայնեցան , ու իմ որայիս երկրպագութիւն ըրին :

8 - Եւ անոր եղբայրները ըսին անոր , Իրաւքընէ մեր վրայ պիտի թագաւորե՞ս , կամ իրաւքընէ մեր վրայ պիտի տիրե՞ս .

և անոր երազներուն ու խօսքերուն համար աւելի ատեցին զանիկա :

9 - Եւ ուրիշ երազ մըն ալ տեսաւ , ու զանիկա իր եղբայրներուն պատմեց ,

ու ըսաւ , ահա երազ մըն ալ տեսայ , և ահա արեւը ու լուսինը ու տասներմէկ աստղեր ինծի երկրպագութիւն ըրին :

10 - Եւ իր հօրը ու իր եղբայրներուն պատմեց . և իր հայրը յանդիմանեց զանիկա ,

ու ըսաւ անոր , Ի՞նչ է այս քու տեսած երազդ . միթէ ես ու քու մայրդ և քու եղբայրներդ իրաւքընէ՞ պիտի գանք՝ մինչև գետին քեզի խոնարհութիւն ընելու :

11 - Ու եղբայրները նախանձեցան անոր , բայց հայրը եւ Գրգը պահեց այս խօսքը :

12 - Եւ անոր եղբայրները գացին որ իրենց հօրը հօտերը Սիւքէմի մէջ արածէն :

13 - Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփի , Քու եղբայրներդ Սիւքէմի մէջ չե՞ն արածեր ոչխարները . եկուր ես քեզ անոնց զրկեմ . ու անիկա ըսաւ , Ահա ես հոս եմ :

14 - Եւ ըսաւ անոր , Գնա , նայէ թէ քու եղբայրներդ ողջ առն՞ղջ

են, և հօտերը ո՞ղջ են, ու ինծի լուր մը բեր. այսպէս զրկեց զանհկա Քեր-րոնի հովիտէն. և ան ալ Սիւքէմ՝ եկաւ: 15 - Աւ մարդ մը գտաւ զանհկա, որ դաշտին մէջ ասդին անդին կը պարտէր. և այն մարդը հարցուց անոր՝ ըսելով, Ի՞նչ կը փնտռես: 16 - Եւ անհկա ըսաւ, Իմ՝ եղբայրներս կը փնտռեմ՝ կ'աղաչեմ, ըսէ ինծի, անոնք ո՞ւր կ'արած են: 17 - Եւ այն մարդը ըսաւ, Ասկէ ելան. քանզի լսեցի որ 'Բօթա-յիմ՝ երթանք, կ'ըսէին: Եւ Յովսէփ իր եղբայրներուն ետեւէն գնաց, ու զանոնք 'Բօթայիմի մէջ գտաւ: 18 - Եւ երբ զանհկա հեռուէն տեսան, դեռ ինք անոնց չմտեցած, զանհկա մեռցնելու դաւաճանութիւն ըրին: 19 - Աւ իրարու ըսին, Ահա այն *երազ տեսնողը՝ կու գայ. 20 - Աւստի հիմա եկէք մեռցնենք զանհկա, ու գուբի մը մէջ նետենք, ու ըսենք թէ Չար գազան մը կերաւ զանհկա. և տեսնենք թէ անոր երազները ի՞նչ պիտի ըլլան: 21 - Աւ Ռուբէն լսածին պէս՝ անոնց ձեռքէն ազատեց զանհկա, ըսելով, Չմեռցնենք զանհկա. 22 - Եւ Ռուբէն ըսաւ անոնց, Արիւն մի թափէք, Բայ զանհկա այս գուբը նետեցէք՝ որ անապատին մէջ է, և անոր ձեռք մի զարնէք. զայս՝ 'Է֊Էր՝ որպէս զի կարենայ ազատել զանհկա անոնց ձեռքէն, իր հօրը դարձնելու համար: 23 - Աւ եղաւ որ Յովսէփ իր եղբայրներուն քով եկածին պէս՝ մերկացուցին Յովսէփը իր պատմութեանէն, այսինքն իր վրայի բազմագոյն պատմութեանէն: 24 - Եւ առին զանհկա ու գուբը նետեցին. և գուբը դատարկ էր, մէջը ջուր չկար: 25 - Եւ նստան հաց ուտելու. ու իրենց աչքերը վերցուցին ու տեսան, և ահա Իսմայելացուց մէկ կարաւանը կու գար Քաղապէ, որ իրենց ուղտերը համեմտեցնով և բայտասնով ու զմուռսով բեռնաւորած՝ Եգիպտոս տանելու կ'երթային: 26 - Եւ Յուդա ըսաւ իր եղբայրներուն, Ի՞նչ օգուտ կ'ըլլայ եթէ մեր եղբայրը մեռցնենք, ու անոր արիւնը ծածկենք. 27 - Եկէք Իսմայելացիներուն ծախենք զանհկա, և մեր ձեռքը անոր չղպչի. քանզի անհկա մեր եղբայրը * - մեր մարմինն է. և ա-

նոր եղբայրները հաճեցան: 28 - Աւ երբ Մագիանացի վաճառականներ կ'անցնէին, Յովսէփը գուբէն քաշեցին ու գուբս հանեցին եւ եղբայրները, և Իսմայելացիներուն ծախեցին Յովսէփը քսան հարծաթի. անոնք ալ Յովսէփը Եգիպտոս տարին: 29 - Եւ Ռուբէն դէպ ի գուբը դարձաւ, և ահա Յովսէփ գուբին մէջ չէր. ու իր հանդերձները պատուեց: 30 - Եւ դարձաւ իր եղբայրներուն ու ըսաւ, Տղան չկայ, ու ես ո՞ւր երթամ:

31 - Եւ առին Յովսէփի պատմութեանը, ու այժերէն նոխազ մը մորթեցին և պատմութեանը արիւնը թաթխեցին: 32 - Աւ զրկեցին բազմագոյն պատմութեանը, ու իրենց հօրը տարին, ու ըսին, Չայս գտանք մենք. գիտցիր հիմա թէ ասիկա քու որդւոյդ պատմութեանն է՝ թէ ոչ: 33 - Եւ անհկա ճանչցաւ զայն, ու ըսաւ, Իմ որդւոյս պատմութեանն է, չար գազան մը կերած է զանհկա. Յովսէփ անշուշտ գիշատուեցաւ: 34 - Եւ Յակոբ պատուեց իր հանդերձները, ու քուրձ հագաւ իր մեջքին վրայ. և իր որդւոյն համար շա՞ն օրեր սուգ ըրաւ: 35 - Աւ իր բոլոր որդիները ու իր բոլոր աղջիկները զինք մխիթարելու ելան. բայց ինք մխիթարուիլ չէր ուզեր. ու ըսաւ, Ես սուգով պիտի իջնեմ գերեզման՝ իմ որդւոյս քով: Այսպէս անոր հայրը լացաւ անոր համար: 36 - Եւ Մագիանացիները ծախեցին զանհկա Եգիպտոսի մէջ՝ Կարաւանի *ներքինին, Պետափրէ. դահճապետին:

ԳԼ. ԼԸ

Աւ եղաւ որ այն տան Յուդա իր եղբայրներուն քովէն իջաւ ու Ագոգոմացի մէկուն քով գնաց որուն անունը Իրաս էր: 2 - Եւ Յուդա Շաւա անունով Քանանացիի մը աղջիկը տեսաւ, ու առաւ զանհկա և մտաւ անոր: 3 - Աւ անհկա յղացաւ ու որդի մը ծնաւ, և անոր անունը Լըր դրաւ: 4 - Աւ նորէն յղացաւ ու որդի մը ծնաւ, և անոր անունը Օնան դրաւ: 5 - Եւ դարձեալ որդի մըն ալ ծնաւ, ու անոր անունը Սելոմ՝ դրաւ. և

*Եբր. երազներու տէրը

*Այսինքն, պայտասականին, իմ, սենեկապետին

Երբ զանհկա ծնաւ՝ Յոգոս Բեզիբի մէջ էր :

6 - Եւ Յուդա իր առջինեկ աղուն էրի կին մը առաւ, որուն անունն էր Թամար : 7 - Եւ Յուդայի առջինեկը էր չար էր Տերոջը առջև . ու Տերը մեռցուց զանհկա : 8 - Եւ Յուդա ըսաւ Օնանի, Մտիր քու եղբորդ կնոջ, ու օտագրութեան իրաւունքը կատարէ անոր, և քու եղբորդ սերունդ հանէ : 9 - Եւ Օնան գիտցաւ որ սերունդը իրենը պիտի չըլլար . անոր համար երբ իր եղբորը կնոջ կը մտնէր, «Եր՛ջ գեւինը կը թափէր, որպէս զի իր եղբորը սերունդ չտայ : 10 - Եւ այս բրած բանը Տերոջը առջև գէշ երեւցաւ, ու զանհկա ալ մեռցուց : 11 - Եւ Յուդա իր Թամար հարսին ըսաւ, Որբեւարի նստէ քու հօրդ տունը մինչև իմ Սելլով՝ որդիս մեծնայ . քանզի ըսաւ, չըլլայ որ սա ալ իր եղբայրներուն պէս մեռնի . և Թամար գնաց ու իր հօրը տունը նստաւ :

12 - Եւ շատ օրերէն ետքը մեռաւ Նուայի աղջիկը, Յուդայի կինը . և Յուդա մխիթարուեցաւ . ու Թամնա գնաց իր հօտերը ասրակտուր ընողներուն ինք ու իր բարեկամը Ոգողումացի Իրաս : 13 - Եւ զրուեցուեցաւ Թամարի՝ ըսելով, Ահա քու սկեսրայրդ գէպ ի Թամնա կ'ելլէ՝ իր ոչխարները ասրակտուր ընելու : 14 - Ան ալ իր որբեւարութեան հանդերձները հանեց իր վրայէն, ու քօզով մը ծածկուեցաւ ու փաթթուեցաւ, և Թամնայի ճամբուն մէջ եղող Ենայիմի մուտքը նստաւ . քանզի տեսաւ որ Սելլով մեծցաւ, ու ինք անոր կին ըլլալու չարուեցաւ : 15 - Երբ Յուդա տեսաւ զանհկա, բող կարծեց, քանզի իր երեսը ծածկեր էր : 16 - Եւ ճամբան անոր դարձաւ ու ըսաւ, Շնորհք բրէ, քեզի մտնեմ՝ քանզի չէր գիտեր թէ անհկա իր հարսն է : Եւ անհկա ըսաւ, Ինձի մտնելու համար ի՞նչ կու տաս ինձի : 17 - Ան ալ ըսաւ, Ես +եզի այծի ուլ մը կը զրկեմ՝ հօտերէն . և անհկա ըսաւ, Գրաւ մը կու տամ մինչև զրրկելդ : 18 - Եւ Յոգոս ըսաւ, Ի՞նչ գրաւ տամ քեզի . ու անհկա ըսաւ, Քու կնիքդ ու ժապաւէնդ և ձեռքիդ դաւազանը ուր : ան ալ տուաւ անոր ու մտաւ անոր, և Թամար անկէ յղի մնաց : 19 - Եւ ելաւ ու գնաց, ու իր

վրայէն քօզը հանեց ու իր որբեւարութեան հանդերձները հագաւ : 20 - Եւ Յուդա իր բարեկամին, Ոգողումացիին, ձեռքով այծին ուլը զրկեց, որպէս զի կնոջ ձեռքէն գրաւը առնէ . բայց չգտաւ զանհկա : 21 - Եւ այն տեղի մարդոց հարցուց՝ ըսելով, Ճամբուն վրայ Ենայիմի մէջ եղած բողը ո՞ւր է . և անոնք ըսին, Հոս բող չկար : 22 - Եւ դարձաւ Յուդայի ու ըսաւ, Զգտայ զանհկա, և այն տեղի մարդիկն ալ ըսին թէ Հոս բող չկար : 23 - Եւ Յուդա ըսաւ, Իրեն թող ըլլայ, որպէս զի խայտառակ չըլլանք . ահա ես այս ուլը զրկեցի, ու դուն չգար զանհկա : 24 - Եւ եղաւ որ երեք ամիսի չափ ետքը Յուդայի պատմուեցաւ՝ ըսելով, Քու հարսդ Թամար պոռնկեցաւ, նաև ահա պոռնկութենէն յղի մնաց . և Յուդա ըսաւ, Հանեցէք զանհկա, ու այրուի : 25 - Երբ զանհկա դուրս կը հանէին, գրաւէրը իր սկեսրայրին զրկեց՝ ըսելով, Ես այս բաներուն տէրօջմէն յղի եմ . նաև ըսաւ, Շնորհք բրէ, գիտցիր թէ այս կնիքն ու ժապաւէնը և գաւազանը որո՞ւնն են : 26 - Եւ Յուդա ճանչցաւ ու ըսաւ, Անհկա ինձմէ արդար է . վասն զի զանհկա իմ որդւոյս Սելլովի չտուի . ու մէյմըն ալ նորէն չգիտցաւ զանհկա :

27 - Ու եղաւ որ անոր ծնած ատենը՝ ահա անոր արգանդին մէջ երկուորեակ էին : 28 - Եւ եղաւ որ երբ կը ծնանէր, Բէլէ ձեռքը երկնցուց . և մանկաբարձը առաւ ու անոր ձեռքին վրայ կարմիր դերձան կապեց՝ ըսելով, Առաջ սա ելաւ : 29 - Եւ անհկա իր ձեռքը ետ քաշածին պէս՝ ահա անոր եղբայրը ելաւ . և Ժակոբ ըսաւ, Ինչո՞ւ ցանկը պատուեցիր . այս պատառումը քու վրայ ըլլայ . անոր համար անոր անունը *Փարէս դրուեցաւ : 30 - Ու ետքը ձեռքին վրայ կարմիր դերձան ունեցող եղբայրը ելաւ, և անոր անունը Զարա դրուեցաւ :

ԳԼ. ԼԹ

Ու Յովսէփը Եգիպտոս իջեցուցին . և Փարաոնի ներքինին, Եգիպտացի Պետափրէս +դահճապետը, ծախու

*Այսինքն, պատառում +Որ էր թիկնապահապետ

առաւ զանհկա Իսայիէլացիներուն ձեռքէն, որոնք զանհկա հոն իջեցուցին: 2 - Եւ Տէրը Յովսէփի հետ էր, ու անհկա յաջողակ մարդ մըն էր. ու իր Եգիպտացի տէրօջը տունն էր անհկա: 3 - Եւ անոր տէրը տեսաւ որ Տէրը անոր հետ է. և թէ ինչ որ ընէր, Տէրը կը յաջողէր անոր ձեռքով: 4 - Եւ Յովսէփ շնորհք գտաւ անոր առջև ու կը ծառայէր անոր, որ իր տանը վրայ վերակացու ըրաւ զանհկա, և իր բոլոր ունեցածը անոր ձեռքը յանձնեց: 5 - Ու եղաւ որ զանհկա իր տանը ու իր բոլոր ունեցածին վրայ վերակացու ըրած ժամանակէն՝ Տէրը Եգիպտացիին տունը օրհնեց Յովսէփի համար. և թէ՛ տանը մէջ և թէ՛ դաշտին մէջ անոր բոլոր ունեցածին վրայ Տէրօջը օրհնութիւնը եղաւ: 6 - Եւ իր բոլոր ունեցածը Յովսէփի ձեռքը թողուց. ու ինչ որ կար անոր քով՝ չէր գիտեր, իր կերած հացէն զատ: Եւ Յովսէփ գեղեցիկ էր գէմքով ու գեղեցիկ՝ տեսքով:

7 - Եւ եղաւ որ այս բաներէն ետքը՝ անոր տէրօջը կինը աչք տնկեց Յովսէփի վրայ, ու ըսաւ, Պառկէ ինծի հետ: 8 - Բայց անհկա չհաճեցաւ, ու իր տէրօջը կնոջ ըսաւ, Ահա իմ տէրս տանը մէջ իմ քովս ինչ որ կայ՝ չգիտեր. և իր բոլոր ունեցածը իմ ձեռքս յանձնեց. 9 - Այս տանը մէջ ինծմէ մեծը չկայ. ու բա՛ն մը ինծմէ չարգիլեց՝ քեզմէ զատ, վասն զի դուն անոր կինն ես. ուրեմն ես ի՛նչպէս այս մեծ չարութիւնը ընեմ, ու Աստուծոյ գէմ մեղանչեմ: 10 - Եւ քանի որ անհկա օրէ օր Յովսէփի կը զրուցէր, անհկա մտիկ չէր ընէր անոր՝ որ հետը պառկի իմ հետը ըլլայ: 11 - Ու եղաւ որ օր մը իր գործին համար տուն եկաւ, և հոն տանը մէջ տանը մարդոցմէն մէկը չկար: 12 - Ու րիկնը բռնեց անոր հանդերձէն՝ ըսելով, Պառկէ ինծի հետ. և անհկա իր հանդերձը անոր ձեռքը թողուց, ու փախաւ դուրս ելաւ: 13 - Ու երբ տեսաւ որ անհկա իր հանդերձը անոր ձեռքը թողուց ու դուրս փախաւ, 14 - Իր տանը մարդիկը կանչեց, և զրուցեց անոնց՝ ըսելով, Նայեցէք, մեզի Երբայեցի մը բերաւ մեզ խայտառակ ընելու համար. անհկա ինծի եկաւ՝ ինծի հետ պառկելու համար, ու ես բարձր ձայ-

նով պառացի. 15 - Ու երբ լսեց իմ բարձր ձայնով պառալս, իր հանդերձը քովս թողուց, և փախաւ դուրս ելաւ: 16 - Ու մինչև որ անոր տէրը տուն եկաւ, անոր հանդերձը իր քով պահեց: 17 - Եւ խօսեցաւ անոր այս խօսքերուն պէս՝ ըսելով, Այն Երբայեցի ծառան, զոր դուն մեզի բերիր, զիս խայտառակ ընելու համար եկաւ ինծի: 18 - Ու երբ իմ ձայնս վերցուցի ու պառացի, իր հանդերձը քովս թողուց ու դուրս փախաւ:

19 - Եւ եղաւ որ երբ անոր տէրը լսեց իր կնոջ խօսքերը զորոնք զրուցեց իրեն՝ ըսելով, Քու ծառայ ինծի այս պէս ըրաւ, իր բարկութիւնը բորբոքեցաւ: 20 - Եւ Յովսէփի տէրը առաւ զանհկա ու բանտը դրաւ, այն տեղը, ուր թագաւորին բանտարկեալները կապուած էին. և հոն բանտին մէջ մնաց: 21 - Բայց Տէրը Յովսէփի հետ էր, ու սղորմութիւն ցուցուց անոր. և բանտապետին առջև շնորհք գանել տուաւ անոր: 22 - Ու բանտապետը Յովսէփի ձեռքը յանձնեց բանտին մէջ եղած բոլոր բանտարկեալները. և հոն ամէն գործը ատենողը անհկա էր: 23 - Բանտապետը անոր ձեռքը եղած մէկ բանին չէր նայեր. վասն զի Տէրը անոր հետ էր, և անոր ամէն ըրածները Տէրը կը յաջողէր:

ԳԼ. Խ

Ու եղաւ որ այս բաներէն ետքը՝ Եգիպտոսի թագաւորին մատուռակը ու հացագործը իրենց տէրօջը, Եգիպտոսի թագաւորին, գէմ՝ յանցանք գործեցին: 2 - Եւ Փարաւոն բարկացաւ իր երկու ներքիններուն, այսինքն մատուռակապետին ու հացագործապետին. 3 - Եւ զանոնք դահճապետին տանը բանտին մէջ բանտարկեց՝ ուր Յովսէփ բանտարկուած էր: 4 - Եւ դահճապետը Յովսէփի ապապրեց անոնց համար, ու անհկա կը ծառայէր անոնց. և անոնք ասին մը բանտը մնացին:

5 - Եւ Եգիպտոսի թագաւորին մատուռակը ու հացագործը, որոնք բանտին մէջ կապուած էին, երկուքն ալ մէկ գիշեր մէյմէկ երազ տեսան, ամէն մէկուն երազին նշանակութեանը պէս: 6 - Եւ Յովսէփ առաւունց անոնց

եկաւ, ու տեսաւ զանոնք որ խռովեր էին: 7 - Ու իր տէրոջը առնը իրեն հետ բանտարկուած Փարաւոնի ներքինիներուն հարցուց՝ ըսելով, Ինչո՞ւ համար ձեր երեսները արտում են այսօր: 8 - Եւ անոնք ըսին անոր, Երազ տեսանք, ու զանհկա մեկնող չկայ. և Յովսէփ ըսաւ անոնց, Չէ՞ որ Աստուծոյ կը վերաբերին մեկնութիւնները. աղէ, պատմեցէք ինձի:

9 - Եւ մատուակապետը իր երազը պատմեց Յովսէփի, ու ըսաւ անոր, Երազիս մէջ *տեսայ որ՝ առջևս որթ մը կար. 10 - Եւ որթին վրայ երեք ուսկային, և այն բողբոջելուն պէս ծաղիկ բացաւ, ու անոր ողկոյզները խաղող հասցուցին. 11 - Եւ Փարաւոնի գաւաթը ձեռքս էր. ու խաղողները առի և Փարաւոնի գաւաթին մէջ ճմլեցի, ու գաւաթը Փարաւոնի ձեռքը տուի: 12 - Եւ Յովսէփ անոր ըսաւ, Ատոր մեկնութիւնը այս է. երեք ուսը երեք օր է. 13 - Երեք օրէն ետքը Փարաւոն գլուխդ պիտի վերցնէ, ու քեզ նորէն քու պաշտօնիդ պիտի դարձնէ. և Փարաւոնի գաւաթը անոր ձեռքը պիտի տաս՝ անոր մատուակը եղածիդ առաջուան սովորութեանը պէս: 14 - Բայց քեզի բարիք եղած ատեն զիս միտքդ բեր, և կ'ազատեմ քեզ, ինձի բարերարութիւն ըրէ, և զիս Փարաւոնի առջև յիշելով՝ զիս այս տունէն դուրս հանէ. 15 - Քանզի իրացընէ գողցուեցայ Եբրայացուց երկրէն. և հոս ալ բան մը չըրի որ զիս այս գուրը նետեն:

16 - Երբ հացագործապետը տեսաւ որ աղէկ մեկնութիւն տուաւ, ըսաւ Յովսէփի, Ես ալ երազիս մէջ տեսայ որ գլխուս վրայ երեք շերմակ սակառունէի. 17 - Եւ ամէնուն վրայի սակառին մէջ հացագործի շինած Փարաւոնի ամէն կերակուրներէն կար. ու թռչունները կ'ուտէին զանոնք գլխուս վրայի սակառէն: 18 - Եւ Յովսէփ պատասխան տուաւ ու ըսաւ, Ատոր մեկնութիւնը այս է. 19 - Երեք սակառը երեք օր է. Երեք օրէն ետքը Փարաւոն վրայէդ պիտի վերցնէ քու գլուխդ, ու քեզ ծառէ մը պիտի կախէ. և թըռ-

չունները վրայէդ քու մարմինդ պիտի ուտեն:

20 - Ու եղաւ որ երրորդ օրը Փարաւոնի ծննդեան օրն էր, և իր բոլոր ծառաներուն խնձոյք ըրաւ. և իր ծառաներուն մէջ մատուակապետին ու հացագործապետին գլուխները վերցուց: 21 - Ու դարձուց մատուակապետը իր պաշտօնին, և անհկա գաւաթը Փարաւոնի ձեռքը տուաւ. 22 - Բայց հացագործապետը կախել տուաւ, ինչպէս Յովսէփ մեկներ էր անոնց: 23 - Եւ մատուակապետը միտքը չբերաւ Յովսէփը, հապա մոռցաւ զանհկա:

ԳԼ ԽԱ

Ու եղաւ որ լման երկու տարիէ ետքը, Փարաւոն երազին մէջ տեսաւ որ գետին եղերքը կայներ էր: 2 - Եւ ահա գետնէն գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմնով եօթը երինջներ ելան, ու *մարգագետնին վրայ՝ կ'արածուէին: 3 - Եւ ահա անոնց ետեւէն՝ գետնն ուրիշ եօթը երինջներ ելան զազիր տեսքով ու նիհար մարմնով, ու հիւսն երինջներուն քով գետին եղերքը կայնեցան. 4 - Եւ զազիր տեսքով ու նիհար մարմնով երինջները կերան եօթը գեղեցիկ տեսքով ու պարարտ երինջները: Ետքը Փարաւոն արթնցաւ: 5 - Եւ քնացաւ, ու երկրորդ անգամ երազին մէջ տեսաւ որ մէկ ծղօտի վրայ եօթը պարարտ ու աղէկ հասկեր կ'ելլէին: 6 - Եւ ահա անոնց ետեւէն եօթը նիհար ու խորշակահար հասկեր կը բուսնէին. 7 - Եւ այն նիհար հասկերը կլլեցին եօթը պարարտ ու լեցուն հասկերը: Եւ Փարաւոն արթնցաւ, և ահա երազ էր: 8 - Ու եղաւ որ առտուանց անոր հոգին նեղացաւ, ու կանչել տուաւ Եգիպտոսի բոլոր մագերը և այն տեղի բոլոր իմաստունները. ու Փարաւոն պատմեց անոնց իր երազները, բայց մէկը չկար որ զանոնք Փարաւոնի մեկնէ:

9 - Այն ատեն մատուակապետը գրուցեց Փարաւոնի՝ ըսելով, Այսօր ես իմ յանցանքներս կը յիշեմ: 10 - Փարաւոն բարկացաւ իր ծառաներուն, ու զիս դահճապետին տունը բանար

*Եբր. և ահա

+կամ, վանդակագործ, և համ, նաչիհի

*կամ, պրտուններուն մէջ

դրաւ, զիս ու հացագործապետար .

11 - Եւ ես ու անիկա մէկ գիշեր երազ տեսանք . ամէն մէկս իր երազին նշանակութեանը պէս երազ տեսանք :

12 - Եւ հոն մեզի հետ դաժճապետին ծառան, Երբայեցի պատանի մը, կար, ու անոր պատմեցինք, և անիկա մեկնեց մեզի մեր երազները . ամէն մէկուս՝ իր երազին պէս մեկնեց :

13 - Ու ինչպէս անիկա մեզի մեկնեց, այնպէս եղաւ . զիս իմ պաշտօնիս դարձուց, ու զանիկա կախեց :

14 - Այն ատեն Փարաւոն Ֆարֆորկեց ու կանչեց Յովսէփը, և շուտով բանաէն հանեցին զանիկա . և ամիլուեցաւ ու իր հանդերձները փոխեց ու Փարաւոնի եկաւ :

15 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Երազ տեսայ, ու զանիկա մեկնող մը չկայ . և քեզի համար լսեցի որ կ'ըսեն, թէ լսած երազդ կը մեկնես :

16 - Եւ Յովսէփ պատասխան տուաւ Փարաւոնի ու ըսաւ, Ոչ թէ ես, Աստուած պիտի տայ խաղաղութեան պատասխան Փարաւոնի :

17 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Երազիս մէջ տեսայ որ գետին եզերքը կայներ էի .

18 - Եւ ահա գետէն եօթը երինջներ ելան պարարտ մարմնով ու գեղեցիկ տեսքով, և մարգագետնին վրայ կ'արածուէին :

19 - Եւ ահա անոնց ետեւէն ուրիշ եօթը երինջներ ելան՝ նիհար ու խիստ զազիր տեսքով և վախ մարմնով, որ անոնց պէս զազիր բնաւ չտեսայ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ :

20 - Եւ նիհար ու զազիր երինջները կերան այն առաջուան եօթը պարարտ երինջները .

21 - Ու անոնց փորը մտնելէն ետքը՝ չէր գիտցուէր թէ անոնք անոնց փորը մտան . հապա անոնց տեսքը առաջուանին պէս զազիր էր : Ետքը արթնցայ :

22 - Եւ Ֆարֆոր երազիս մէջ տեսայ՝ որ ահա մէկ ժողովի վրայ եօթը լեցուն ու ազէկ հասկեր կ'ելլէին .

23 - Եւ ահա անոնց ետեւէն եօթը չոր, նիհար «խորշակահար հասկեր կը բուսնէին .

24 - Եւ նիհար հասկերը կլլեցին այն եօթը ազէկ հասկերը : Ու պատմեցի մոգերուն, բայց մէկը չկայ որ ինձի մեկնէ :

25 - Եւ Յովսէփ ըսաւ Փարաւոնի, Մէկ է Փարաւոնի երազը . Աստուած իր ընելիքը յայտնեց Փարաւոնի :

26 -

Եօթը ազէկ երինջները եօթը տարի են, և եօթը ազէկ հասկերը եօթը տարի են . երազը մէկ է :

27 - Եւ անոնց ետեւէն ելած եօթը նիհար ու զազիր երինջները եօթը տարի են, և եօթը պարապ «-խորշակահար հասկերը եօթը տարուան սով է :

28 - Փարաւոնի զրուցած խօսքս այս է . Աստուած իր ընելիքը Փարաւոնի ցուցուցեր է :

29 - Ահա բոլոր Եգիպտոսի երկրին մէջ եօթը տարի մեծ առատութիւն պիտի գայ .

30 - Եւ անոնց ետեւէն եօթը տարի սով պիտի գայ, ու Եգիպտոսի երկրին մէջ բոլոր առատութիւնը պիտի մոռցուի . և սովը պիտի սպառէ երկիրը .

31 - Ու երկրին մէջ առատութիւնը պիտի չգիտցուի՝ անկէ ետքը գալու սովին պատճառաւ . վասն զի խիստ սաստիկ պիտի ըլլայ :

32 - Եւ երազը երկու անգամ Փարաւոնի կրկնուելուն պատճառը այս է որ այս բանը Աստուծմէ հաստատուեցաւ, և Աստուած շուտով պիտի ընէ զայն :

33 - Ուստի հիմա թող Փարաւոն հանձարեղ ու իմաստուն մարդ մը գտնէ, ու զանիկա Եգիպտոսի երկրին վրայ կեցնէ :

34 - Թող Փարաւոն «յապէս» ընէ, ու երկրի վրայ գործակալներ գնէ, ու Եգիպտոսի երկրին արմտիքներէն առատութեան եօթը տարիներուն մէջ հինգէն մէկը առնէ :

35 - Եւ այն գալու ազէկ տարիներուն բոլոր պաշարը ժողովեն, ու Փարաւոնի ձեռքին տակ ցորեն դիզեն, և քաղաքներուն մէջ պաշար պահեն :

36 - Ու Եգիպտոսի երկրին մէջ ըլլալու եօթը տարուան սովին դէմ այս պաշարը երկրին համար պահուի, որպէս զի երկիրը սովէն չկորսուի :

37 - Եւ այս բանը Փարաւոնի աչքին ու անոր բոլոր ծառաներուն աչքին ազէկ երեւցաւ :

38 - Եւ Փարաւոն ըսաւ իր ծառաներուն, Կրնա՞նք գտնել ասոր պէս մէկը, որ իր ներսիդին Աստուծոյ Հոգին ունի :

39 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Որովհետեւ Աստուած այս ամէնը քեզի գիտցուց, քեզի պէս հանձարեղ ու իմաստուն չկայ :

40 - Իսկ իմ տանս վրայ կեցիր, և իմ բոլոր ժողովուրդս քու բերանդ նային . ես միայն ամոռնով քեզմէ մեծ ըլլամ :

41 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Ահա քեզ Եգիպտոսի բոլոր երկրին վրայ կեցուցի :

42 - Եւ Փարա-

ւոն իր ձեռքէն մատանին հանեց, ու Յովսէփի ձեռքը դրաւ, և անոր բեհեզէ հանդերձներ հագցուց, ու անոր պարանոցը ոսկի մանեակ անցուց: 43 - Եւ զանհկա իր երկրորդ կառքը հեծցուց, ու կը պօռային անոր առջեւէն, Ծնրադրութիւն ըրէք. և Եգիպտոսի բոլոր երկրին վրայ կեցուց զանհկա: 44 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Ես Փարաւոն եմ, և առանց քեզի բնաւ մէկը իր ձեռքը կամ իր ոտքը չվերցնէ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ: 45 - Ու Փարաւոն Յովսէփի անունը *Փսոմֆթոմփանէ դրաւ, և †Արեգ քաղաքին՝ Պետափրա քուրմին ազջիկը Ասանէթը անոր կին ըլլալու տուաւ. ու Յովսէփ Եգիպտոսի երկիրը պտրտելու ելաւ:

46 - Եւ Յովսէփ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին առջև ելած ատեն երեսուն տարեկան էր: Եւ Յովսէփ Փարաւոնի առջեւէն ելաւ, ու Եգիպտոսի բոլոր երկիրը պտրտեցաւ: 47 - Եւ առատութեան եօթը տարիներուն մէջ երկիրը խիստ շատ արդիւնք տուաւ: 48 - Ու Եգիպտոսի երկրին մէջ եղած եօթը տարիներուն բոլոր պաշարը ժողովեց, ու քաղաքներու մէջ դրաւ պաշարը. ամէն քաղաքին բոլորտիքը եղած արտերուն պաշարը նոյն +առախին մէջ դրաւ: 49 - Եւ Յովսէփ ծովու աւազին չափ խիստ շատ ցորեն դիզեց. այնպէս որ հաշիւի չգալուն համար չափելը ձգեց:

50 - Եւ սովին տարիներուն գալէն առաջ՝ Յովսէփի երկու որդի ծնան, որ Արեգ քաղաքին Պետափրա քուրմին ազջիկը Ասանէթ ծնաւ անոր: 51 - Եւ Յովսէփ առջինեկին անունը †Մանասէ դրաւ. քանզի ըսաւ, Աստուած ինձի մոռցուց իմ բոլոր վիշտերս ու իմ հօրս բոլոր տունը: 52 - Եւ երկրորդին անունը †Եփրեմ դրաւ. քանզի ըսաւ, Աստուած իմ տառապանքիս երկրին մէջ աճեցուց զիս:

53 - Ու Եգիպտոսի երկրին մէջ եղած առատութեան եօթը տարին անցաւ: 54 - Եւ Յովսէփի ըսածին պէս, սովին եօթը տարին գալ սկսեց. և

բոլոր երկիրներուն մէջ սով եղաւ, բայց Եգիպտոսի բոլոր երկրին մէջ հաց կար: 55 - Ու երբ Եգիպտոսի բոլոր երկիրը անօթեցաւ, ժողովուրդը հացի համար Փարաւոնի աղաղակեց. և Փարաւոն ըսաւ բոլոր Եգիպտացիներուն, Յովսէփի գացէք. ինչ որ ձեզի ըսէ, ըսէ՛ք: 56 - Ու երկրի բոլոր երեսին վրայ սով եղաւ. և Յովսէփ բացաւ բոլոր շտեմարանները, ու Եգիպտացիներուն պաշար ծախեց. և սովը սաստկացաւ Եգիպտոսի երկրին մէջ: 57 - Ու բոլոր աշխարհ Եգիպտոս կու գային՝ Յովսէփէ պաշար ծախու առնելու. վասն զի ամէն երկրի մէջ սովը սաստկացաւ:

ԳԼ. ԽԲ

Եւ երբ Յակոբ իմացաւ Եգիպտոսի մէջ պաշար ըլլալը, Յակոբ ըսաւ իր որդիներուն, Ինչո՞ւ իրարու կը նայէք: 2 - Եւ ըսաւ, Ահա լսեցի որ Եգիպտոսի մէջ պաշար կայ. հոն իջէք ու անկէ մեզի համար ծախու առէք, որպէս զի ողջ մնանք ու չմեռնինք: 3 - Եւ Յովսէփի տասը եղբայրները իջան՝ Եգիպտոսէ ցորեն ծախու առնելու: 4 - Բայց Յակոբ Յովսէփի եղբայրը Բենիամինը անոր եղբայրներուն հետ չդրկեց. քանզի ըսաւ, Զըլլայ սք փորձանք մը պատահի անոր:

5 - Եւ Իսրայէլի որդիները հոն գացողներուն հետ պաշար ծախու առնելու եկան. քանզի Քանանու երկրին մէջ սով կար: 6 - Եւ Յովսէփ այն երկրին իշխանն էր. և ինք երկրին բոլոր ժողովուրդին պաշար կը ծախէր. ու Յովսէփի եղբայրները եկան, ու իրենց երեսները մինչև գետինը խոնարհութիւն ըրին անոր: 7 - Եւ Յովսէփ իր եղբայրները տեսածին պէս ճանչցաւ զանոնք, բայց ինքզինք անոնց չճանչցուց, ու անոնց հետ խստութեամբ խօսեցաւ, և անոնց ըսաւ, Ուրկէ՞ եկաք. և անոնք ըսին, Քանանու երկրէն կերակուր ծախու առնելու եկանք: 8 - Եւ Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ, բայց անոնք զինք չճանչցան: 9 - Եւ Յովսէփ անոնց վրայով իր տեսած երազները միտքը բերաւ, ու ըսաւ անոնց, Ի՞նչ լրտեսներ էք. երկրին *տկարութիւնը տես-

*Այսինքն, երկրին փրկիչը
 †Եբր. Օն առախի
 ‡Այսինքն, մոռցնող
 §Այսինքն, պաղաքեք

նելու եկած էք: 10 - Եւ ըսին անոր ,
 Ոչ , տէր իմ , հապա քու ծառաներդ
 կերակուր ծախու առնելու եկանք :
 11 - Մենք ամէնս մէկ մարդու որդի-
 ներ ենք , մենք շիտակ մարդիկ ենք . ծա-
 ռաներդ լրտեսներ չեն : 12 - Եւ ա-
 նիկա ըսաւ անոնց , Ոչ , հապա երկրին
 տկարութիւնը տեսնելու եկած էք :
 13 - Եւ անոնք ըսին , Մենք քու ծա-
 ռաներդ ֆանանու երկրին մէջ մէկ
 մարդու որդիներն ըլլալով՝ տասուեր-
 կու եղբայրներ ենք . և ահա «Բէն»
 պղտիկը այսօր մեր հօրը քով է , ու
 միւսը չկայ : 14 - Եւ Յովսէփ ըսաւ
 անոնց , Այս է զոր ձեզի գրուցեցի՝
 ըսելով , թէ դուք լրտեսներ էք . 15 -
 Ասով պիտի փորձուիք . Փարաւոնի
 կենացը համար՝ դուք ասկէ պիտի
 չելլէք , եթէ ձեր պղտիկ եղբայրը հոս
 չգայ : 16 - Ձեզմէ մէկը ձեր եղբայրը
 բերելու զրկեցէք , ու դուք բանար
 դրուիք , որպէս զի ձեր խօսքերը փոր-
 ձուին , թէ արդեօք ձեր մէջ ճշմար-
 տութիւն կայ . և եթէ ոչ , Փարաւոնի
 կենացը համար՝ դուք լրտեսներ էք :
 17 - Եւ երեք օր բանարը դրաւ զա-
 նոնք :
 18 - Եւ երրորդ օրը Յովսէփ ըսաւ
 անոնց , Այսպէս ըրէք որպէս զի ողջ
 մնաք . Լսու զի ես Աստուծոյ կը վախ-
 նամ : 19 - Եթէ դուք շիտակ մարդիկ
 էք , ձեր եղբայրներէն մէկը ձեր բան-
 տարկուած տանը մէջ արգիլուի . և
 դուք գացէք , ձեր տանը անօթու-
 թեանը համար պաշար տարէք . 20 -
 Ու ձեր պղտիկ եղբայրը ինծի բերէք ,
 որպէս զի ձեր խօսքերը շիտակ ելլեն ,
 ու չմեռնիք : Եւ այնպէս ըրին : 21 - Ու
 իրարու ըսին , Իրաւցընէ մեր եղբօրը
 վրայով յանցաւոր ենք . փասն զի մենք
 տեսանք անոր հոգիին նեղութիւնը՝
 երբ ինք մեզի աղաչեց , ու մտիկ չը-
 րինք . անոր համար այս նեղութիւնը
 մեր վրայ եկաւ : 22 - Եւ Ռուբէն պա-
 տասխան տուաւ անոնց՝ ըսելով , Ես
 ձեզի չգրուցեցի , ըսելով թէ Տղուն
 դէմ մեղք մի գործէք . և դուք մտիկ
 չըրիք . և ահա հիմա անոր արիւնը
 Բեզէ կը պահանջուի : 23 - Եւ անոնք
 չէին գիտեր որ Յովսէփ կը հասկնար .
 փասն զի թարգմանով կը խօսէր իրենց
 հետ : 24 - Եւ անոնցմէ զատուեցաւ
 ու յացաւ . և նորէն անոնց դարձաւ ,
 ու խօսեցաւ անոնց հետ . և անոնցմէ

Շմաւոնը առաւ , ու անոնց աչքի
 առջև կապեց զանիկա :
 25 - Ետքը Յովսէփ հրաման ըրաւ որ
 անոնց ամանները ցորենով լեցնեն , ու
 ամէն մէկուն ստակը իր քուրձին մէջ
 դնեն , և անոնց ճամբու պաշար տան :
 Ու այսպէս ըրաւ անոնց : 26 - Եւ ա-
 նոնք իրենց էշերուն վրայ բեռցուցին
 ցորենին , ու անկէ գացին : 27 - Եւ
 անոնցմէ մէկը իջեւանին մէջ իր իշուն
 կեր տալու համար իր քուրձը բացա-
 ծին պէս՝ իր ստակը տեսաւ , որ ահա
 իր քուրձին բերանն էր : 28 - Ու իր
 եղբայրներուն ըսաւ , Իմ ստակս ետ
 տրուեցաւ , և ահա հոս իմ քուրձս
 մէջ է . ու անոնց սիրար խռովեցաւ ,
 ու վախնալով իրարու ըսին , Ի՞նչ է
 այս զոր Աստուծոյ մեզի ըրաւ :
 29 - Ու եկան ֆանանու երկիրը ի-
 րենց հօրը Յակոբի , և բալոր իրենց
 գլուխը եկածները պատմեցին անոր՝
 ըսելով , 30 - Այն երկրին տէրը եղող
 մարդը մեզի խստութեամբ խօսեցաւ ,
 ու մեզ երկիրը լրտեսողներու տեղ
 դրաւ : 31 - Եւ ըսինք անոր , Մենք
 շիտակ մարդիկ ենք , լրտեսներ չենք .
 32 - Մենք , մեր հօրը որդիքը , տաս-
 ուերկու եղբայրներ ենք . մէկը չկայ ,
 և «Բէն» պղտիկը ֆանանու երկրին
 մէջ մեր հօրը քով է այսօր : 33 - Եւ
 այն երկրին տէրը եղող մարդը ըսաւ
 մեզի , Ձեր շիտակ մարդիկ ըլլալը
 ասկէ գիտնամ . ձեր եղբայրներէն
 մէկը իմ քովս ձգեցէք , և ձեր ընտանիքին անօ-
 թութեանը համար պաշար առէք ու
 գացէք . 34 - Եւ ձեր պղտիկ եղբայրը
 ինծի բերէք , որպէս զի գիտնամ թէ
 դուք լրտեսներ չէք , հապա շիտակ
 մարդիկ էք . «Բէն» ձեր եղբայրը
 ձեզի կու տամ , ու այս երկրին
 մէջ առու-
 տուր ըրէք : 35 - Ու եղաւ որ իրենց
 քուրձերը պարպած ատեննին ,
 ահա ամէն մէկուն ստակին ծրարը
 իր քուր-
 ձին մէջ էր . և իրենք ու իրենց
 հայրն
 այ ստակին ծրարները
 տեսածնուն
 պէս վախցան : 36 - Եւ անոնց
 հայրը
 Յակոբ ըսաւ անոնց ,
 Ձիս անորդի թո-
 դուցիք . Յովսէփ չկայ ,
 Շմաւոն չկայ ,
 Բենիամինն ալ
 պիտի առնէք .
 տանց
 ամէնը իմ գլխուս
 եկաւ : 37 - Եւ
 Ռուբէն խօսեցաւ
 իր հօրը ու ըսաւ ,
 Եթէ ես զանիկա
 քեզի չբերեմ ,
 իմ
 երկու որդիներս
 մեռցուր .
 զանիկա իմ
 ձեռքս յանձնէ ,
 ու ես քեզի
 ետ կը

քերեմ՝ զանհկա . 38 - Բայց Յոյս
բաւ , իմ որդիս ձեզի հետ չիջնէ .
վասն զի անոր եղբայրը մեռած է , ու
անհկա մինակ մնաց . և եթէ ձեր եր-
թալու ճամբուն մէջ անոր փորձանք
մը պատահելու ըլլայ , իմ ճերմակ
մտպերս տրամուլթիւնով գերեզման
պիտի իջեցնէք :

ԳԼ ԽԳ

Եւ սովը սաստկացաւ երկրին մէջ :
2 - Աւ եղաւ որ երբ Եգիպտոսէ բերած
պաշարնին կերան հատցուցին , հայրեր-
նին ըսաւ անոնց , Գացէք նորէն մեզի
քիչ մը ուտելիք ծախու առէք : 3 - Եւ
Յուդա զրուցեց անոր՝ ըսելով , Այն
մարդը մեզի հաստատ վկայութեամբ
խօսելով՝ ըսաւ , Եթէ ձեր եղբայրը
ձեզի հետ չըլլայ , իմ երեսս պիտի չտես-
նէք : 4 - Եթէ մեր եղբայրը մեզի հետ
զրկես , կ'իջնենք ու քեզի ուտելիք
ծախու կ'առնենք . 5 - Բայց եթէ
չզրկես , չենք իջներ . վասն զի այն
մարդը ըսաւ մեզի , Եթէ ձեր եղբայրը
ձեզի հետ չըլլայ , իմ երեսս պիտի չը-
տեսնէք : 6 - Եւ Իսրայէլ ըսաւ , Ին-
չո՞ւ համար չարութիւն ըրիք ինծի՝
այն մարդուն իմացնելով թէ ուրիշ
եղբայր ունիք : 7 - Եւ անոնք ըսին ,
Այն մարդը մեզի համար ու մեր ազ-
գականներուն համար ճշդիւ հարցուց՝
ըսելով , Ձեր հայրը տակաւին ո՞ղջ է ,
*բիշ եղբայր ունի՞ք . և մենք այս
խօսքերուն համեմատ պատասխան
տուինք անոր . արդեօք մենք կրնայի՞նք
գիտնալ որ անհկա պիտի ըսէ թէ Ձեր
եղբայրը իջեցուցէք : 8 - Եւ Յուդա իր
հօրը Իսրայէլի ըսաւ , Տղան ինծի հետ
զրկէ , ու ելլենք երթանք , որպէս զի
ողջ մնանք ու չմեռնինք , մենք ալ ,
դուն ալ , մեր ընտանիքներն ալ : 9 -
Ես երաշխաւոր կ'ըլլամ անոր համար .
զանհկա իմ ձեռքէս պահանջէ . եթէ
զանհկա քեզի չբերեմ , ու քու ան-
ջեղ չկայնեցնեմ , յաւիտեան քեզի
յանցաւոր ըլլամ : 10 - Քանզի եթէ
չյապաղէինք , մինչև հիմա երկրորդ
անգամ դարձած կ'ըլլայինք : 11 - Եւ
անոնց հայրը Իսրայէլ ըսաւ անոնց ,
Եթէ այդպէս է , հիմա զայս ըրէք .
Ձեր ամաններուն մէջ երկրիս ամէնէն
աղէկ պտուղներէն առէք , ու մարդուն
քնծայ տարէք , քիչ մը բալասան և

քիչ մը մեղր , համեմներ ու զմուռս ,
փստուղ ու նուշ . 12 - Եւ ձեռքեր-
նիդ կրկնապատիկ ստակ առէք , ու
ձեր քուրձերուն բերանը եղած ստակը ,
որ ետ բերուեցաւ , ձեռքերնիդ
ետ տարէք . գուցէ սխալմունք եղած
էր . 13 - Եղբայրնիդ ալ առէք , ու
ելէք նորէն այն մարդուն գացէք : 14 -
Եւ Ամենակարող Աստուած ձեզի
շնորհք գտնել տայ այն մարդուն առջև ,
որպէս զի ձեր միւս եղբայրը ու Բենիա-
մինը թող տայ ձեզի . և ես եթէ ան-
զուակ մնալու եմ , թող անզուակ
մնամ :

15 - Եւ մարդիկը առին այս ընծա-
ները , ու ձեռքերնին կրկնապատիկ
ստակ առին՝ նաև Բենիամինը , ու ելան
Եգիպտոս իջան , և Յովսէփի առջև
կայնեցան : 16 - Եւ երբ Յովսէփ Բե-
նիամինը անոնց հետ տեսաւ , իր տանը
վերակացուին ըսաւ , Տուն տար այս
մարդիկը , ու *պարարա կենդանիներ՝
մորթէ և պատրաստէ . վասն զի այս
մարդիկը կէսօրին ինծի հետ պիտի
ճաշեն : 17 - Եւ այն մարդը Յովսէփի
ըսածին պէս ըրաւ . ու այն մարդը
Յովսէփի տունը տարաւ մարդիկը :
18 - Եւ մարդիկը վախցան Յովսէփի
տունը տարուելնուն համար , ու ըսին ,
Առաջին անգամին մեր քուրձերուն մէջ
դարձած ստակին համար կը տար-
ուինք , որ մեր վրայ յարձակի , ու մեր
վրայ իյնայ , մեզ ծառաներ առնէ ու
մեր էշերը : 19 - Եւ Յովսէփի տանը
վերակացուն եղող մարդուն մօտե-
ցան , ու տանը դրանը մէջ խօսեցան
անոր , 20 - Աւ ըսին , Ո՛հ , տէր , սակէ
առաջ կերակուր ծախու առնելու
իջանք : 21 - Աւ եղաւ որ երբ իջեւանը
եկանք , ու մեր քուրձերը բացինք ,
ահա ամէն մէկուս ստակը իր քուրձին
բերանն էր , մեր ստակը լման կշիռ-
քովը . և զանհկա մեր ձեռքովը ետ
բերինք . 22 - Աւ ձեռքերնուս մէջ ու-
րիշ ստակ բերինք՝ կերակուր ծախու
առնելու համար . չենք գիտեր թէ ո՞վ
դրաւ մեր ստակը մեր քուրձերուն
մէջ : 23 - Եւ անհկա ըսաւ , Խաղաղու-
թիւն ձեզի , մի վախնաք . ձեր Աստ-
ուածը և ձեր հօրը Աստուածը ձեզի
գանձ տուաւ ձեր քուրձերուն մէջ . †եւ

*Եբբ . մորթելիք
†Եբբ . ձեր ստակը ինծի եկաւ

առի ձեր ստակը: Եւ նմաւոնը դուրս
հանեց անոնց:

24 - Աւ այն մարդը Յովսէփի տունը
տարաւ մարդիկը, և ջուր տուաւ
նոնց, ու իրենց ոտքերը լուացին, ու
անոնց էշերուն կեր տուաւ: 25 - Եւ
անոնք ընծաները պատրաստեցին՝ մին-
չև Յովսէփի կէսօրուան գալը. քանզի
իմացան որ իրենք հոն հաց պիտի ու-
տեն: 26 - Եւ երբ Յովսէփ տուն եկաւ,
իրենց ձեռքը եղած ընծաները անոր
մատուցին տանը մէջ, ու մինչև գե-
տինը շտապ անոր խոնարհութիւն
ըրին: 27 - Եւ անոնց ողջութիւնը
հարցուց՝ ըսելով, Այն ձեր ծեր հայրը,
որուն վրայով խօսեցաք ինչի, աղէկ
է. տակաւին ո՞ղջ է: 28 - Եւ ըսին,
Քու ծառայ մեր հայրը աղէկ է, տա-
կաւին ողջ է. և ծռեցան ու խոնար-
հութիւն ըրին: 29 - Եւ իր աչքերը
վերցուց, ու իր մօրը սրդին, իր եղ-
բայրը Բենիամինը, տեսաւ, և ըսաւ,
Ա՞ս է ձեր պզտիկ եղբայրը, որուն
վրայով խօսեցաք ինծի. ու ըսաւ Բե-
նիամինի, Աստուած ողորմի քեզի, որդ-
եակ իմ: 30 - Եւ Յովսէփ շուտով
ելաւ. քանզի իր աղիքը գալարեցան
իր եղբօրը վրայ, և լալու տեղ կը
փնտռէր. ու ներքին սենեակը մտաւ
ու հոն լացաւ: 31 - Եւ լուաց իր երեսը
ու դուրս ելաւ. և զսպեց ինքզինք, ու
ըսաւ, Հաց բերէք: 32 - Եւ իրեն զատ,
ու անոնց զատ, և իրեն հետ ուտող
Եգիպտացիներուն զատ դրին. քանզի
Եգիպտացիները Երրայեցւոց հետ հաց
չէին կրնար ուտել, վասն զի Եգիպ-
տացիներուն զգուելի էր: 33 - Եւ
նստան անոր առջև, անդրանիկը իր
անդրանկութեանը պէս, և պզտիկը իր
պզտիկութեանը պէս. և մարդիկը
իրարու նայելով կը զարմանային:
34 - Եւ անիկա իր առջեւէն բաժին-
ներ դրկեց անոնց. բայց Բենիամինի
բաժինը միւսներուն բաժինին հինգ
անգամն էր. և խմեցին ու անոր հետ
մեկտեղ զուարթացան:

ԳԼ. ԽԻ

Եւ իր տանը վերակացուին հրա-
ման ըրաւ՝ ըսելով, Այս մարդոց քուր-
ձերը տանել կրցածնուն չափ ուտելիք
լեցուր, ու ամէն մէկուն ստակը իր
քուրձին բերանը դիր: 2 - Եւ առջեւ

պզտիկին քուրձին բերանը իմ գա-
ւաթս, արծաթ գաւաթը, աւ իր պա-
շարին ստակը դիր: Աւ անիկա Յովսէ-
փի ըսած խօսքին պէս ըրաւ:

3 - Եւ առտուանց լուացածին պէս
մարդիկը զրկուեցան, իրենք ու իրենց
էշերը: 4 - Անոնք քաղաքէն ելլելով
դեռ չհեռացած, Յովսէփ իր տանը
վերակացուին ըսաւ, Ելի՛ր, այն մար-
դոց ետեւէն վազէ, ու անոնց հասիր
և ըսէ անոնց, Ինչո՞ւ բարիին փոխա-
րէն չար հատուցիք. 5 - Այս այն չէ՞
որուն մէջէն իմ տէրս կը խմէ, ու ա-
նով կը հմայէ. այսպէս ընելով գե-
շութիւն ըրիք: 6 - Եւ անիկա հասաւ
անոնց, և ըսաւ անոնց այս նոյն խօս-
քերը: 7 - Եւ ըսին անոր, Ինչո՞ւ իմ
տէրս այսպիսի խօսքեր կը գրուցէ.
Քա՛ւ լիցի որ քու ծառաներդ այսպիսի
բան մը ընեն: 8 - Ահա մեր քուրձե-
րուն բերանը գտած ստակնիս Բանա-
նու երկրէն քեզի ետ բերինք. ուրեմն
ի՞նչպէս քու տէրոջդ տունէն արծաթ
կամ ոսկի պիտի գողնանք: 9 - Քու
ծառաներէդ որո՞ւն քով որ գտնուի,
թող անիկա մեռնի, ու մենք ալ իմ
տէրոջս ծառաներ ըլլանք: 10 - Եւ ա-
նիկա ըսաւ, Հիմա ճիշդ ձեր ըսածին
պէս թող ըլլայ. որուն քով որ գրա-
նուի, ան ինծի ծառայ ըլլայ, ու դուք
անպարտ ըլլաք. 11 - Ուտի ամէն
մէկը արտորնօք իր քուրձը գետինը
իջեցուց, ու ամէն մէկը իր քուրձը
բացաւ, 12 - Եւ անիկա մեծէն սկսեց
փնտռել, ու մինչև պզտիկը նայեցաւ.
և գաւաթը Բենիամինի քուրձին մէջ
գտնուեցաւ:

13 - Այն ատեն իրենց հանդերձները
պատուեցին. և ամէն մէկը իր էշը բեռ-
ցուց ու քաղաքը դարձան: 14 - Եւ
Յուդա ու անոր եղբայրները Յովսէփի
տունը եկան, և անիկա տակաւին հոն
էր. ու անոր առջև գետինը ինկան:
15 - Եւ Յովսէփ ըսաւ անոնց, Այս
ի՞նչ բան է զոր ըրիք. չէ՞ք գիտեր որ
ինծի պէս մարդ մը անշուշտ կը հմայէ:
16 - Եւ Յուդա ըսաւ, Իմ տէրոջս
ի՞նչ ըսենք, ի՞նչ խօսինք, կամ ի՞նչ-
պէս արգարացնենք ինքզինքնիս. Աստ-
ուած քու ծառաներուդ յանցանքը
բռնեց. ահա մենք մեր տէրոջը ծառա-
ներ ենք, մենք ալ՝ անիկա ալ՝ որուն
քով գաւաթը գտնուեցաւ: 17 - Եւ
անիկա ըսաւ, Քա՛ւ լիցի որ ես այդ-

պէս քնեմ. հապ այն մարդը որուն քով գաւաթը գտնուեցաւ, անհկա ինծի ծառայ ըլլայ, ու դուք խաղաղութեամբ ձեր հօրը ելէք:

18 - Այն ատեն Յուդա մօտեցաւ անոր ու ըսաւ, Ոհ, տէր իմ, շնորհք ըրէ, թող քու ծառայ խօսք մը խօսի իմ տէրօջս ականջներուն, ու ծառայ յիդ վրայ քու բարկութիւնդ չբորբոքի. վասն զի դուն Փարաւոնի պէս ես: 19 - Իմ տէրս իր ծառաներուն հարցուց՝ ըսելով, Հայր կամ եղբայր ունի՞ք: 20 - Եւ մենք ըսինք մեր տէրօջը, թէ ձեր հայր մը ունինք, և թէ անիկա իր ծերութեան արեւը շնորհ պղծ տիկ որդի մը անի, ու անոր եղբայրը մեռած է, և միայն անհկա իր մօրմէն մնաց, ու անոր հայրը կը սիրէ զանհկա:

21 - Եւ քու ծառաներուդ ըսիր, Ինծի իջեցուցէք զանհկա, որ *տեսնեմ: 22 - Եւ իմ տէրօջս ըսինք, Տղան իր հայրը չկրնար ձգել. քանզի եթէ իր հայրը ձգելու ըլլայ, անհկա պիտի մեռնի: 23 - Եւ քու ծառաներուդ ըսիր, Եթէ ձեր պզտիկ եղբայրը ձեզի հետ չիջնէ, իմ երեսս մէյմըն ալ պիտի չտեսնէք: 24 - Ու երբ քու ծառայ յիդ իմ հօրս ելանք, իմ տէրօջս խօսքերը պատմեցինք անոր: 25 - Եւ մեր հայրը ըսաւ, Գացէք նորէն, ու մեզի քիչ մը կերակուր ծախու առէք: 26 - Եւ մենք ըսինք, Չենք կրնար իջնել. եթէ մեր պզտիկ եղբայրը մեզի հետ ըլլայ, այն ատեն կ'իջնենք. վասն զի պիտի չկրնանք տեսնել այն մարդուն երեսը, եթէ մեր պզտիկ եղբայրը մեզի հետ չըլլայ: 27 - Եւ քու ծառայ իմ հայրս ըսաւ մեզի, Դուք գիտէք որ իմ կինս երկու արդի ծնաւ ինծի. 28 - Եւ մէկը քովէս ելաւ, ու ես ըսի, Անշուշտ հապանէ մը գիշատուած է, ու մինչև հիմա զինք չտեսայ: 29 - Եւ եթէ ասիկա ալ քովէս առնէք, ու անոր փորձանք մը պատահի, իմ ճերմակ մազերս տրամուլթիւնով գերեզմանը պիտի իջեցնէք: 30 - Ուստի հիմա՝ երբ քու ծառայ յիդ իմ հօրս երթամ, ու տղան մեզի հետ չըլլայ, անոր հոգին տղուն հոգւոյն հետ կապուած ըլլալով, 31 - Երբ տեսնէ թէ տղան մեզի հետ չէ, պիտի մեռնի. և ծառաներդ քու ծառայ յիդ

մեր հօրը ճերմակ մազերը տրամուլթիւնով գերեզմանը պիտի իջեցնենք: 32 - Վասն զի ծառայ տղուն համար իմ հօրս երաշխաւոր եղայ՝ ըսելով, Եթէ ես զանհկա քեզի չբերեմ, իմ հօրս յաւիտեան յանցաւոր ըլլամ: 33 - Ուստի հիմա կ'աղաչեմ քեզի, տղուն տեղ ծառայ իմ տէրօջս ծառայ մնայ, և տղան իր եղբայրներուն հետ ելլէ. 34 - Քանզի եթէ տղան ինծի հետ չըլլայ, ի՞նչպէս ելլեմ իմ հօրս. չըլլայ որ իմ հօրս գալու փորձանքը տեսնեմ:

ԳԼ. ԽԵ

Եւ Յովսէփ չկրցաւ զսպել ինքզինք բոլոր իր քով կայնողներուն առջև, ու պուաց, Քովէս դուրս հանեցէք բոլոր մարդիկը. և երբ Յովսէփ ինքզինք իր եղբայրներուն ճանչցուց, քովը մարդ մը չկեցաւ: 2 - Եւ ձայնը վերցնելով լացաւ. ու Եգիպտացիք լսեցին, ու Փարաւոնի տունն ալ լսեց: 3 - Եւ Յովսէփ ըսաւ իր եղբայրներուն, Ես Յովսէփն եմ. իմ հայրս տակաւին ո՞ղջ է. ու եղբայրները չէին կրնար պատասխան տալ անոր, վասն զի անոր առջև ապշած մնացին: 4 - Եւ Յովսէփ ըսաւ իր եղբայրներուն, Ինծի մօտ եկէք. անոնք ալ մօտ եկան. և ըսաւ, Ես ձեր եղբայրը Յովսէփն եմ, զոր Եգիպտոս արքայ-ծախեցիք: 5 - Ուստի հիմա զիս հոս ծախելուդ համար մի վշտանաք, ու ձեզի ծանր չերեւնայ. վասն զի Աստուած զրկեց զիս ձեր առջեւէն՝ կեանք պահելու համար: 6 - Քանզի երկրիս վրայ սովին երկրորդ տարին է սյս. և տակաւին հինգ տարի կայ՝ որ ոչ վարուցան, ոչ ալ հունձք պիտի ըլլայ: 7 - Եւ Աստուած զիս ձեր առջեւէն զրկեց՝ որպէս զի երկրի վրայ ձեզի սերունդ պահէ, և մեծ ազատութիւնով ձեզ ապրեցնէ: 8 - Եւ հիմա զիս հոս զրկողը դուք չէք, հապա Աստուած է. ու զիս Փարաւոնի հայր, և իր բոլոր տանը տէր, ու Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրաւ: 9 - Շուտով իմ հօրս ելէք, ու ըսէք անոր, Այսպէս կ'ըսէ քու Յովսէփ որդիդ, Աստուած բոլոր Եգիպտոսի տէր ըրաւ զիս. չուշանաս, ինծի իջնես. 10 - Եւ Գեսեմի երկրին մէջ պիտի բնակիս, որպէս զի ինծի մօտ ըլլաս, դուն ու քու որդի-

*Եբր. աչքս անոր վրայ գնեմ

Ներդ, և քու որդիներուդ որդիները, և հօտերդ ու արջառներդ, և քու բոլոր ունեցածդ. 11 - Եւ հոն քեզ պիտի սնուցանեմ. վասն զի տակաւին հինգ տարի սով կայ. չըլլայ որ դուն ու քու տունդ և քու բոլոր ունեցածդ չքաւորութիւն քաշէք: 12 - Եւ ահա ձեր աչքերը ու իմ եղբօրս Բենիամինի աչքերը կը տեսնեն որ ձեզի խօսողը իմ բերանս է: 13 - Ու Եգիպտոսի մէջ իմ ունեցած բոլոր փառքս, ու ձեր բոլոր տեսածը պատմեցէք իմ հօրս. և շուտով իմ հայրս հոս իջեցուցէք: 14 - Եւ իր եղբօրը Բենիամինի պարանոցին վրայ ինկաւ ու լացաւ: Բենիամին ալ անոր պարանոցին վրայ լացաւ: 15 - Եւ իր բոլոր եղբայրները համբուրեց, ու անոնց վրայ լացաւ. և անկէ ետքը իր եղբայրները իրեն խօսեցան:

16 - Եւ այս լուրը Փարաւոնի տանը մէջ լսուեցաւ թէ Յովսէփի եղբայրները եկեր են. և Փարաւոնի ու անոր ծառաներուն հաճելի եղաւ: 17 - Եւ Փարաւոն ըսաւ Յովսէփի, Քու եղբայրներուդ ըսէ, Չայս բրէք. ձեր անասունները բեռցուցէք, ու Քանանու երկիրը գացէք. 18 - Եւ ձեր հայրը ու ձեր ընտանիքները առէք, ու ինծի եկէք. և Եգիպտոսի երկրին աղէկ Խեղճեզի տամ, ու երկրին պարարտութենէն ուտէք: 19 - Եւ քեզի հրաման եղաւ. զայս բրէք. ձեր տղաքներուն համար ու ձեր կիներուն համար Եգիպտոսի երկրէն կառքեր առէք ձեզի, և ձեր հայրը բերէք ու եկէք: 20 - Եւ ձեր կարասիքին *մի նայիք*. վասն զի բոլոր Եգիպտոսի երկրին բարիքը ձերն է:

21 - Եւ Իսրայէլի որդիները այնպէս բրին. և Յովսէփ անոնց կառքեր տուաւ Փարաւոնի խօսքին պէս, ու ճամբու համար պաշար տուաւ անոնց: 22 - Անոնց ամէն մէկուն զատ զատ փոխելու հանգերձներ տուաւ, բայց Բենիամինի երէք հարիւր կար արծաթ ու հինգ ձեռք փոխելու հանգերձ տուաւ: 23 - Եւ իր հօրը ասոր պէս բաներ զրկեց. տասը էշ Եգիպտոսի բարիքներով բեռցած, և տասը էգ էշ ցորենով ու հացով և ուտելիքներով բեռցած, իր հօրը ճամբորդութեանը համար: 24 - Այսպէս իր եղբայրները զրկեց, ու գա-

ցին. և ըսաւ անոնց, Ճամբուն մէջ չխառովիք:

25 - Եւ անոնք Եգիպտոսէ ելան, ու գէպ ի Քանանու երկիրը իրենց հօրը Յակոբի գացին. 26 - Եւ անոր պատմեցին՝ ըսելով, Յովսէփ տակաւին ողջ է, ու Եգիպտոսի բոլոր երկրին իշխանը անիկա է: Եւ Յակոբի սիրտը մարեցաւ, քանզի անոնց չհաւատաց: 27 - Եւ անոր պատմեցին Յովսէփի բոլոր խօսքերը զորոնք իրենց ըսեր էր, ու երբ տեսաւ Յովսէփի զրկած կառքերը զինք տանելու համար, անոնց հօրը Յակոբի հոգին ողջնցաւ: 28 - Եւ Իսրայէլ ըսաւ, Բաւական է. իմ որդիս Յովսէփ տակաւին ողջ է. երթամ ու մեռնելէս առաջ տեսնեմ զանիկա:

ԳԼ. ԽԶ

Եւ Իսրայէլ իր բոլոր ունեցածով ճամբայ ելաւ, ու Բերսաբէէ եկաւ. և իր հօրը Իսահակի Աստուծոյն զօհեր մատուց: 2 - Ու Աստուած գիշերուան տեսիլքի մէջ խօսեցաւ Իսրայէլի ու ըսաւ, Յակոբ, Յակոբ. և անիկա ըսաւ, Ահա ես հոս եմ: 3 - Եւ ըսաւ անոր, Ես եմ Աստուած, քու հօրդ Աստուածը. Եգիպտոս իջնելու մի վախնար, վասն զի հոն մեծ ազգ մը պիտի ընեմ քեզ. 4 - Ես քեզի հետ Եգիպտոս պիտի իջնեմ, նաև քեզ անշուշտ պիտի հանեմ, ու Յովսէփ պիտի դնէ իր ձեռքը քու աչքերուդ վրայ: 5 - Եւ Յակոբ ելաւ Բերսաբէէէ, ու Իսրայէլի որդիները տարին իրենց հայրը Յակոբը, ու իրենց տղաքները և իրենց կիները այն կառքերով, զորոնք Փարաւոն զրկեց զանիկա տանելու համար: 6 - Եւ առին իրենց անասունները ու իրենց ստացուածքը զորոնք Քանանու երկրին մէջ ստացեր էին, ու Եգիպտոս եկան Յակոբ ու անոր բոլոր սերունդը իրեն հետ. 7 - Իր որդիները ու իր որդւոց որդիները իրեն հետ, իր աղջիկները ու իր որդւոց աղջիկները և իր բոլոր սերունդը իրեն հետ Եգիպտոս բերաւ:

8 - Եւ ասոնք են Իսրայէլի որդւոց անունները որոնք Եգիպտոս եկան. Յակոբ ու անոր որդիները. Յակոբի անգրանիկը Ռուբէն. 9 - Եւ Ռուբէնի որդիները՝ Էնովք ու Փաղղուս և Իսրոն ու Քարմի: 10 - Եւ Շմուոնի որդիները՝

*Եբբ. ձեր աչքը չխնայէ

Յամուէլ ու Յամին և Ոհադ ու Յաբին և Սահաու, ու Քանանացի կնոջ որդին Սաուդ: 11 - Եւ Դեւի որդիները՝ Գերսոն, Կահաթ ու Մերարի: 12 - Եւ Յուդայի որդիները՝ Էր ու Օնան և Սելուժ ու Փարէս և Չարա. բայց Էր ու Օնան Քանանու երկրին մէջ մեռան. և Փարէսի որդիները՝ Եսոն ու Համուլ: 13 - Եւ Իսաքարի որդիները՝ Թովզա ու Փուա և *Յոր ու Սամրոն: 14 - Եւ Չաբուզոնի որդիները՝ Սարեգ ու Ելոն և Յաղէլ: 15 - Ասոնք են Լիայի որդիները, զորոնք Միջագետի մէջ ծնաւ Յակոբի, ու անոր Իինա աղջիկը. անոր բոլոր որդիները ու աղջիկները երեսունուիրեք հոգի էին: 16 - Եւ Գադի որդիները՝ Սափոն ու Անգի, Սունի և Եսբոն, Էրի ու Արոզի և Արելի: 17 - Եւ Ասերի որդիները՝ Յեմնա ու Յեսուա և Յեսուի ու Բարիա, և անոնց քոյրը Սարա. և Բարիայի որդիները՝ Քաբեր ու Մեղքիէլ: 18 - Ասոնք են Չեզգայի որդիները՝ զոր Լաբան իր Լիա աղջկան տուաւ. և անիկա ծնաւ ասոնք Յակոբի՝ տասնվեց հոգի: 19 - Յակոբի կնոջ Ռաքէլի որդիները՝ Յովսէփ ու Բենիամին: 20 - Եւ Յովսէփի՝ Եգիպտոսի երկրին մէջ Մանասէ ու Եփրեմ ծնան, զորոնք Արեգ քաղաքի քուրմին, Պետափրայի, աղջիկը Ասանէթ ծնաւ անոր: 21 - Եւ Բենիամինի որդիները՝ Բաղա ու Բոքոր և Ասբէլ, Գերա ու Նէեման, Էհի ու Ռովա, Մուբիմ և Ոփիմ ու Արեգ: 22 - Ասոնք են Ռաքէլի որդիները՝ որոնք ծնան Յակոբի, ամէնը տասնչորս հոգի: 23 - Եւ Իանի որդիները՝ Հուսիմ: 24 - Եւ Նեփթաղիմի որդիները՝ Յասիէլ ու Գունի և Յասեր ու Սիլլեմ: 25 - Ասոնք են Բաղզայի որդիները՝ զոր Լաբան իր Ռաքէլ աղջկան տուաւ. ու անիկա Յակոբի ասոնք ծնաւ. ամէնը եօթը հոգի էին: 26 - Յակոբի հետ Եգիպտոս եկող բոլոր հոգիները, որ անոր երանքէն ելած էին, Յակոբի որդւոց կիներէն զատ՝ ամէնը վաթսուներկեց հոգի էին: 27 - Եւ Յովսէփի որդիները՝ որ Եգիպտոսի մէջ անոր ծնան, երկու հոգի էին. Եգիպտոս գացող Յակոբի տանը բոլոր հոգիները եօթանասուն էին:

28 - Եւ անիկա Յուդան իր առջե-

*Կա՛մ, Յասուբ

ւէն զրկեց Յովսէփի, որ Գեսեմը ցուցրնէ իրեն. և անոնք Գեսեմի երկիրը եկան: 29 - Եւ Յովսէփ իր կառքը պատրաստեց, ու իր հայրը Իսրայէլը զիմաւորելու համար Գեսեմ ելաւ. և երբ անոր դէմը ելաւ, անոր պարանոցին վրայ ինկաւ, ու շատ մը ատեն անոր պարանոցին վրայ լացաւ: 30 - Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփի, Հիմա քու երեսդ տեսնելէս ետքը Թող մեռնիմ, վասն զի տակաւին ողջ ես: 31 - Եւ Յովսէփ իր եղբայրներուն ու իր հօրը տանը ըսաւ, Ելլե՛մ և Փարաւոնի պատմեմ, ու ըսեմ՝ անոր, Իմ եղբայրներս ու իմ հօրս բնաւանիքը՝ որ Քանանու երկրին մէջ էին, ինծի եկան. 32 - Եւ այն մարդիկը հովիւներ են, վասն զի խաչինքի տէր են, և իրենց հօտերը ու իրենց արջառները և իրենց բոլոր ունեցածը բերին: 33 - Եւ ըլլայ որ երբ Փարաւոն ձեզ կանչէ, ու ըսէ Թէ Ի՞նչ է արհեստնիդ, 34 - Ըսէք, Քու ծառաներդ մեր մանկութենէն մինչև հիմա՝ մենք ալ, մեր հայրերն ալ, խաչինքի տէր ենք. որպէս զի Գեսեմի երկրին մէջ բնակիք. վասն զի ամէն հովիւ Եգիպտացւոց առջև գարշելի է:

ԳԼ ԽԷ

Եւ Յովսէփ եկաւ ու պատմեց Փարաւոնի ու ըսաւ, Իմ հայրս ու եղբայրներս, և անոնց հօտերն ու արջառները, և անոնց բոլոր ունեցածը եկան Քանանու երկրէն, և ահա Գեսեմի երկիրն են: 2 - Եւ իր եղբայրներուն մէջէն հինգ մարդ առաւ, ու զանոնք Փարաւոնի առջև ներկայացուց: 3 - Եւ Փարաւոն ըսաւ անոր եղբայրներուն, Ի՞նչ է ձեր արհեստը. և անոնք Փարաւոնի ըսին, Քու ծառաներդ հովիւներ ենք, մենք ալ, մեր հայրերն ալ: 4 - Նաև ըսին Փարաւոնի, Այս երկրին մէջ պանդխտանալու եկանք. վասն զի Քանանու երկրին մէջ սովին սաստկանալուն համար, քու ծառաներուդ հօտերուն արծելիք չկայ. ուստի հիմա շնորհք բրէ, ծառաներդ Գեսեմի երկրին մէջ բնակինք: 5 - Եւ Փարաւոն խօսեցաւ Յովսէփի՝ ըսելով, Քու հայրդ ու եղբայրներդ քեզի եկան. 6 - Եգիպտոսի երկիրը առջեւդ է. քու հայրդ ու եղբայրներդ երկրին ամէնէն աղէկ տեղը բնակեցուր. Գեսեմի երկրին մէջ Թող

բնակին . և եթէ անոնց մէջ ճարպիկ մարդիկ ըլլալը գիտես, զանոնք իմ հօտերուս վրայ վերակացու ըրէ:

7 - Եւ Յովսէփ իր հայրը Յակոբը բերաւ, ու Փարաւոնի առջև հանեց . և Յակոբ օրհնեց Փարաւոնը: 8 - Եւ Փարաւոն ըսաւ Յակոբի, Քու կեանքիդ տարիններուն օրերը ո՞րչափ են: 9 - Եւ Յակոբ ըսաւ Փարաւոնի, Իմ պանդխտութեանս տարիններուն օրերը հարիւր երեսուն տարի են . իմ կեանքիս տարիններուն օրերը քիչ ու ցաւով եղան, ու իմ հայրերուս պանդխտութեան օրերուն մէջ եղած իրենց կեանքին տարիններուն օրերուն չհասան: 10 - Եւ Յակոբ օրհնեց Փարաւոնը, ու գուրս ելաւ Փարաւոնի առջեւէն:

11 - Եւ Յովսէփ Եգիպտոսի երկրին ամէնէն աղէկ կողմը, Ռամսէսի երկրին մէջ, բնակեցուց իր հայրն ու եղբայրները, և անոնց կայուածք տուաւ, ինչպէս Փարաւոն հրամայեալ էր: 12 - Եւ Յովսէփ իր հայրն ու եղբայրները և իր հօրը բոլոր տունը անոնց բնտանիքներուն համեմատ հացով կը սնուցանէր:

13 - Եւ բոլոր երկրին մէջ հաց չկար, վասն զի սովը խիստ սաստկացաւ . ու Եգիպտոսի երկիրը և Քանանու երկիրը սովին պաածառաւ նուազեցաւ: 14 - Եւ Յովսէփ պաշար ծախու առնողներէն՝ Եգիպտոսի երկրին մէջ ու Քանանու երկրին մէջ գանուած բոլոր ստակը ժողվեց . և Յովսէփ Փարաւոնի տունը տարաւ ստակը: 15 - Եւ երբ Եգիպտոսի երկրին ու Քանանու երկրին մէջ ստակը հատաւ, բոլոր Եգիպտացիները եկան Յովսէփի ու ըսին, Մեզի հաց տուր . քանզի ստակ չըլլալուն համար ինչո՞ւ մեռնինք քու առջեւ: 16 - Եւ Յովսէփ ըսաւ, Ձեր անասունները բերէք, և եթէ ստակ չկայ, ձեր անասուններուն փոխարէն տամ ձեզի: 17 - Եւ անոնք իրենց անասունները Յովսէփի բերին, և Յովսէփ հաց տուաւ անոնց՝ ձիերուն փոխարէն, ու ոչխարներուն փոխարէն, և արջառներուն փոխարէն, ու էշերուն փոխարէն . և այն տարին զանոնք հացով կերակրեց իրենց բոլոր անասուններուն փոխարէն:

18 - Եւ երբ յմնցաւ այն տարին, հետեւեալ արին եկան անոր ու ըսին, Մեր տէրոջմէն չենք պահէր որ ստակը

հատաւ, և զբ անասուններն ալ մեր տէրոջն եղան . ալ բան մը չմնաց մեր տէրոջը առջև, բայց մեր անձերը ու երկիրը: 19 - Ինչո՞ւ համար քու աչքիդ առջեւ մեռնինք մենք ու մեր երկիրը . մեզ ու մեր երկիրը հացով ծախու առ, և մենք մեր երկիրովը Փարաւոնի ծառաներ ըլլանք . և սերմ տուր զբի որպէս զի ապրինք ու չմեռնինք, և երկիրը ամայի չըլլայ: 20 - Եւ Յովսէփ բոլոր Եգիպտոսի երկիրը Փարաւոնի համար ծախու առաւ . քանզի Եգիպտացուց վրայ սովին սաստիկ ըլլալուն համար՝ անոնց ամէն մէկը իր արտը ծախեց, ու երկիրը Փարաւոնի եղաւ: 21 - Եւ Եգիպտոսի սահմանին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը՝ ժողովուրդը *բաղաքէ քաղաք՝ փոխադրեց: 22 - Միայն քուրմերուն երկիրը ծախու չառաւ . վասն զի քուրմերը Փարաւոնէ խառն ըստին ունէին, ու կ'ուտէին իրենց բաժինը, զոր Փարաւոն կու տար անոնց . անոր համար իրենց երկիրը չծախեցին: 23 - Եւ Յովսէփ ըսաւ ժողովուրդին, Ահա այսօր ծախու առի ձեզ ու ձեր երկիրը Փարաւոնի համար . արդ ձեզի սերմ խառն, ու սերմանեցէք երկիրը: 24 - Եւ երբ արդիւնքին հինգէն մէկը Փարաւոնի պիտի տաք, ու չորս մասը ձերը պիտի ըլլայ, որպէս զի արտին սերմ ու ձեզի և ձեր տանը մէջ եղողներուն ու ձեր տղաքներուն ուտելիք ըլլայ: 25 - Եւ ըսին, Մեզ ապրեցուցիր . թող մեր տէրոջը առջեւ շնորհք գանենք, ու Փարաւոնի ծառաներ ըլլանք: 26 - Եւ Յովսէփ այս օրէնքը հաստատեց Եգիպտոսի երկրին մէջ մինչև այսօր՝ որ հինգէն մէկը Փարաւոնի ըլլայ . բաց ի քուրմերուն երկրէն, որ Փարաւոնի չեղաւ:

27 - Եւ Իսրայէլ կը բնակէր Եգիպտոսի երկրին մէջ, Գեսեմի երկիրը . ու հոն կայուածք ստացան, և աճեցան ու խիստ շատցան:

28 - Եւ Յակոբ Եգիպտոսի երկրին մէջ տանրեթի տարի ապրեցաւ . ու Յակոբի կեանքին տարիններուն օրերը հարիւր քառասունըթի տարի եղան:

29 - Ու երբ Իսրայէլի մեռնելու օրերը մօտեցան, կանչեց իր Յովսէփ որդին, ու ըսաւ անոր, Եթէ հիմա քու առ-

*Եբր. քաղաքներու

ջեւդ շնորհք գտայ, կ'աղաչեմ՝ քեզի, ձեռքդ իմ երանքիս տակ դիր, և ինձի մարդասիրութիւն ու ճշմարտութիւն ըրէ. կ'աղաչեմ՝ քեզի, զիս Եգիպտոսի մէջ մի թաղեր. 30 - Հապա իմ հայրերուս հետ ննջեմ, ու դուն զիս Եգիպտոսէ հանես, և զիս անոնց գերեզմանը թաղես: Եւ անիկա ըսաւ, Ես քու ըսածիդ պէս պիտի ընեմ: 31 - Եւ ինք ըսաւ, Ինձի երգում՝ ըրէ. և անիկա երգում՝ ըրաւ անոր: Եւ Խարայէլ *անկողնին գլխուն վրայ երկրպագութիւն ըրաւ:

ԳԼ. ԽԸ

Եւ եղաւ որ այս բաներէն ետքը Յովսէփի ըսուեցաւ, Ահա քու հայրդ հիւանդ է. և անիկա իր երկու որդիները, Մանասէն ու Եփրեմը, իրեն հետ առաւ: 2 - Եւ Յակոբի պաամուեցաւ ու ըսուեցաւ, Ահա քու որդիդ Յովսէփ քեզի կու գայ. և Խարայէլ ու ժողջաւ ու անկողնին վրայ նստաւ: 3 - Եւ Յակոբ ըսաւ Յովսէփի, Ամենակարող Աստուած Քանանու երկիրը Լուզի մէջ երեւցաւ ինձի ու օրհնեց զիս. 4 - Եւ ըսաւ ինձի, Ահա քեզ պիտի աճեցնեմ ու շատցնեմ, և քեզ շատ ժողովուրդներու հայր պիտի ընեմ. և այս երկիրը քեզմէ ետքը քու սերունդիդ յաւիտենական կալուածք ըլլալու պիտի տամ: 5 - Եւ հիմա քու երկու որդիներդ, որոնք ծնան քեզի Եգիպտոսի երկրին մէջ, քեզի Եգիպտոս գալէս առաջ, իմն են. Եփրեմը ու Մանասէն Ռուբէնի ու Շամուոնի պէս իմն պիտի ըլլան: 6 - Եւ անոնցմէ ետքը քու ծնած որդիներդ քուկդ ըլլան, -- իրենց ժառանգութեանը մէջ իրենց եղբայրներուն անուններովը կանչուին: 7 - Եւ երբ Միջագետէ կու գայի, Քանանու երկրին մէջ այն ճամբուն վրայ, որ տակաւին Եփրատա երթալու քիչ մը տեղ կայ, Ռաբէլ մեռաւ իմ քովս ու զանիկա հոն Եփրատայի՝ այսինքն Բեթլէհէմի ճամբուն մէջ թաղեցի:

8 - Եւ Խարայէլ տեսաւ Յովսէփի որդիները, ու ըսաւ, Ո՞վ են ասոնք: 9 - Եւ Յովսէփ ըսաւ իր հօրը, Իմ որդիներս են՝ զորոնք Աստուած հոս ինձի տուաւ. և անիկա ըսաւ, Ենորհք ըրէ,

ինձի բեր զանոնք, որպէս զի օրհնեմ: 10 - Եւ Խարայէլի աչքերը ծերութենէն ծանրացած էին, -- յնչէ՞ որ չէր կրնար տեսնել. և զանոնք մօտեցուց անոր, ու անիկա համբուրեց զանոնք և գրկեց: 11 - Ու Խարայէլ ըսաւ Յովսէփի, Ես չէի յուսար որ քու երեսդ տեսնեմ, և ահա Աստուած ինձի քու սերունդդ ալ ցուցուց: 12 - Եւ Յովսէփ հանեց զանոնք անոր ծունկերէն, և իր երեսը մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ: 13 - Եւ Յովսէփ առաւ անոնց երկուքն ալ, Եփրեմը իր աջ ձեռքով Խարայէլի ձախ կողմը, և Մանասէն իր ձախ ձեռքով Խարայէլի աջ կողմը, ու մօտեցուց անոր: 14 - Եւ Խարայէլ իր աջ ձեռքը երկնցուց, ու Եփրեմի գլխուն վրայ դրաւ, որ պրզտիկն էր, ու իր ձախ ձեռքը Մանասէի գլխուն վրայ. անիկա խորհրդով իր ձեռքերը փոխեց. վասն զի Մանասէ անդրանիկն էր: 15 - Եւ օրհնեց Յովսէփը ու ըսաւ, Այն Աստուածը՝ որուն առջև իմ հայրերս Աբրահամ ու Իսահակ քալեցին, այն Աստուածը, որ ծնած ատենէս մինչև այսօր զիս կերակրեց, 16 - Այն Հրեշտակը, որ զիս ամէն շարիքներէ ազատեց, օրհնէ այս աղաքները, և իմ անունս ու իմ հայրերուս Աբրահամի և Իսահակի անունը ասոնց վրայ կանչուի, ու երկրի մէջտեղը խիստ շատնան: 17 - Եւ երբ Յովսէփ տեսաւ որ իր հայրը աջ ձեռքը Եփրեմի գլխուն վրայ դրաւ, իրեն հաճելի չեղաւ. և իր հօրը ձեռքը բռնեց, որպէս զի զանիկա Եփրեմի գլխուն վրայէն Մանասէի գլխուն վրայ փոխադրէ: 18 - Եւ Յովսէփ ըսաւ իր հօրը, Ոչ այդպէս, հայր իմ. վասն զի անդրանիկը այս է. քու աջ ձեռքդ անոր գլխուն վրայ դիր: 19 - Եւ իր հայրը չուզեց, ու ըսաւ, Գիտեմ, որդեակ իմ. գիտեմ, ասիկա ալ ժողովուրդ պիտի ըլլայ, և ասիկա ալ մեծ պիտի ըլլայ. բայց անոր պատիկ եղբայրը անկէ աւելի մեծ պիտի ըլլայ, ու անոր սերունդը խիստ մեծ ազգ պիտի ըլլայ: 20 - Եւ այն օրը օրհնեց զանոնք ու ըսաւ, Խարայէլ քեզմով պիտի օրհնէ, «Աստուած քեզ Եփրեմի պէս և Մանասէի պէս ընէ» ըսելով. ու Եփրեմը Մանասէէ առաջ դրաւ:

21 - Եւ Խարայէլ ըսաւ Յովսէփի, Ահա ես կը մեռնիմ. և Աստուած

*Կա՛մ, գաւազանին

ձեզի հետ պիտի ըլլայ, ու ձեզ ձեր հայրերուն երկիրը պիտի դարձնէ. 22 - Եւ ես քու եղբայրներէդ մէկ բաժին աւելի տուի քեզի, զոր Ամօրչացիներուն ձեռքէն իմ սրովս ու աղեղովս առի:

ԳԼ. ԽԹ.

Եւ Յակոբ կանչեց իր որդիները ու բոսաւ, ժողովուեցէք, որպէս զի վերջին օրերը ձեր գլխուն գալիքը պատմեմ ձեզի:

2 - Ժողովուեցէք ու ահանջ տուէք, ով Յակոբի որդիները, Ու ձեր հօրը Իսրայէլի մտիկ ըրէք:

3 - Ով Ռուբէն, իմ անդրանիկս, իմ ոյժս ու իմ զօրութեանս սկիզբը, Յարգութեան կատարելութիւնը ու զօրութեան կատարելութիւնը դուն ես:

4 - Զուրի պէս եռացիր, առաջին պիտի չըլլաս.

Վասն զի քու հօրդ անկողինը ելար. Այն ատեն պղծեցիր զանի: (Իմ անկողինս ելաւ:)

5 - Շմաւոն ու Ղեւի եղբայրներ քն. Սուրբերնին անիրաւութեան գործիքներ են:

6 - Իմ հոգիս անոնց խորհուրդներուն չմանէ,

Իմ պատիւս անոնց ժողովքին հետ չմիանայ.

Վասն զի իրենց բարկութիւնով մարդ սպաննեցին,

Եւ իրենց կամապաշտութիւնով ցուլի ջիղ կտրեցին:

7 - Անիծեալ ըլլայ անոնց բարկութիւնը, վասն զի խիտ էր,

Ու անոնց սրամտութիւնը, վասն զի սաստիկ էր.

Զանոնք Յակոբի մէջ պիտի բաժնեմ, Ու զանոնք Իսրայէլի մէջ պիտի ցրուեմ:

8 - Ով Յուդա, քու եղբայրներդ քեզ պիտի գովեն.

Քու ձեռքդ քու թշնամիներուդ պարանոցին վրայ ըլլայ.

Քու հօրդ որդիները քեզի երկրպագութիւն ընեն:

9 - Յուդա առիւծի ձագ է. Որդեակ իմ, կողոպուտն ելար:

Առիւծի պէս ծունկ կրկնեց, մատակ առիւծի պէս պառկեցաւ.

Զանիկա ո՞վ պիտի արթնցնէ:

10 - Իշխողութիւնը Յուդայէ պիտի չպակտի,

Ոչ ալ անոր ոտքերուն մէջտեղէն օրէնսդիրը,

Մինչև որ *Սելովը գայ.

Ու ժողովուրդները անոր պիտի հնազանդին.

11 - Իր յաւանակը որթին պիտի կապէ, Ու իր էգ իշուն ձագը ամէնէն աղէկ որթին.

Իր պատմու ճանը գինիով պիտի լուայ, Ու իր հանդերձը խաղողի արիւնով:

12 - Իր աչքերը գինիէն կարմիր, Ու իր ահուաները կաթէն ճերմակ պիտի ըլլան:

13 - Զարուղոն ծովուն եզերքը պիտի բնակի,

Ու անիկա նաւերուն հանգիստը պիտի ըլլայ,

Եւ անոր սաչմանը մինչև Սիգոն պիտի հասնի:

14 - Իսաքար ուժեղ էշ մըն է Որ գոմերուն մէջտեղ կը պառկի:

15 - Եւ տեսնելով որ հանգստութիւնը աղէկ էր,

Ու երկիրը՝ որ գեղեցիկ էր, Իր ուսը բեռցնելու խոնարհեցուց,

Ու հարկատու ծառայ եղաւ:

16 - Դան իր ժողովուրդը պիտի դատէ,

Իսրայէլի ցեղերէն մէկուն պէս:

17 - Դան ճամբու վրայ օձ մը պիտի ըլլայ,

Ու ճամբու վրայ իժ մը, Որ ձիուն գարշապարը կը խաճնէ,

Այնպէս որ հեծեալը ետեւը կ'իյնայ:

18 - Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի:

19 - Գաղի՝ գունդ մը վրան պիտի յարձակի.

Բայց վերջապէս ինք պիտի յարձակի:

20 - Ասերի հացը պարարտ պիտի ըլլայ.

Եւ ինք թագաւորի համագամ կերակուրներ պիտի տայ:

21 - Նեփթաղիմ գեղեցիկ խօսքեր տուող

Ազատ թողուած եղջերու մըն է:

22 - Յովսէփ պտղատու ոստ մըն է, Աղբիւրի քով քնի՝ պտղաբեր ոստ մը,

*Ա. յ. 12. 13, խաղաղը, իմ, որուն կը վայելէ

Որոշ բողոքները պատի վրայ կ'ելլեն.
23 - Աղեղնաւորները վշտացուցին զանիկա,

Ու նետաձիգ եղան առ, ու ատեցին զանիկա .

24 - Բայց անոր աղեղը զօրաւոր մնաց, եւ իր ձեռքերուն ըստուկները ուժով ցան,

Յակորի հզօր Աստուծոյն ձեռքերովը : Իսրայէլի վէժը եղող հովիւր անկէ է :

25 - Ասիք քու հօրդ Աստուծակէն է՝ որ քեզի պիտի օգնէ,

Եւ Ամենակարողէն՝ որ քեզ պիտի օրհնէ ,

Վերէն երկինքի օրհնութիւններովը , Ու վարը պառկող խորութեան օրհնութիւններովը ,

Ծիծերուն ու արգանդին օրհնութիւններովը :

26 - Քու հօրդ օրհնութիւնները *իմ նախնիքներու օրհնութիւններէն

Մինչև յաւիտենական բլուրներուն գագաթը՝ զօրացան .

Յովսէփի գլխուն վրայ պիտի ըլլան, Եւ անոր գագաթին վրայ՝ որ իր եղբայրներէն գերազանց է :

27 - Բենիամին պատառող գայլ պիտի ըլլայ .

Աւտուանց որսը պիտի ուտէ, Եւ գիշերը կողոպուտը պիտի բաժնէ :

28 - Ամէն տանք Իսրայէլի տառակուրտ ցեղերն են . և այս է՝ զոր անոնց հայրը խօսեցաւ անոնց , ու օրհնեց զանոնք . Եւ ամէն մէկուն օրհնութեանը պէս օրհնեց զանոնք :

29 - Եւ պատուիրեց անոնց ու ըսաւ , Ես իմ ժողովուրդիս պիտի խառնուիմ . իմ հայրերուս հետ այն այրին մէջ թաղեցէք զիս , որ Քեաացի Եփրոնի արտին մէջ է . 30 - Այն այրին մէջ՝ որ Քանանու երկիրը՝ Մամբրէի գիմաց եղող Մաքփելայի արտին մէջ է, զոր Աբրահամ արտին հետ մէկտեղ գերեզմանի կալուածքի համար Քեաացի Եփրոնէ ծախու առաւ :

31 - Աբրահամը ու անոր կինը Սառան հոն թաղեցին . Իսահակը ու անոր կինը Ռեբեկան հոն թաղեցին . Ես ալ Լիան հոն թաղեցի :

32 - Այն արտը ու հոն եղած այրը

Քեաի որդիներէն ծախու առնուեցան Եւ Յակոր երբ լմնցուց իր որդիներուն պատուէր ապր , իր սաքերը անկողինին մէջ ժողովեց . ու հոգին աւանդեց, և իր ժողովուրդին խառնուեցաւ :

ԳԼ Ծ

Եւ Յովսէփ իր հօրը երեսին վրայ ինկաւ, ու լացաւ անոր վրայ, և համբուրեց զանիկա : 2 - Եւ Յովսէփ իր բժիշկ ծառաներուն հրամայեց որ իր հայրը զմուտեն . և բժիշկները զմուտեցին Իսրայէլը :

3 - Եւ անոր քառատուն օրը լմնցաւ . վասն զի զմուտածներուն օրերը այսպէս կը լմնային . և Եգիպտացիք անոր համար եօթանատուն օր սուգ ըրին :

4 - Եւ երբ անոր սուգին օրերը անցան, Յովսէփ գրուցեց Փարաւոնի տանը՝ ըսելով , Եթէ հիմա ձեր առջև շնորհք գտայ, կ'աղաչեմ՝ ձեզի , Փարաւոնի ականջին գրուցեցէք ու ըսէք , 5 - Իմ հայրս ինծի երգում ընել տուաւ՝ ըսելով , Ահա ես կը մեռնիմ . իմ գերեզմանիս մէջ , զոր ես ինծի համար Քանանու երկրին մէջ փորեցի, զիս հոն թաղես . և հիմա շնորհք ըրէ , իմ հայրս թաղելու ելլեմ , ու նորէն գամ :

6 - Եւ Փարաւոն ըսաւ , Ելիր ու թաղէ քու հայրդ , ինչպէս անիկա քեզի երգում ընել տուաւ : 7 - Եւ Յովսէփ իր հայրը թաղելու ելաւ . և Փարաւոնի բոլոր ծառաները, անոր տանը ծերերը ու Եգիպտոսի երկրին բոլոր ծերերը անոր հետ ելան . 8 - Նաև Յովսէփի բոլոր տունը ու անոր եղբայրները և անոր հօրը տունը . միայն իրենց ընտանիքները ու իրենց հօտերը և իրենց արջառները Քեսեմի երկրին մէջ թողուցին :

9 - Եւ անոր հետ կառքեր ու ձիաւորներ ելան, ու շատ մեծ բանակ մը եղաւ . 10 - Եւ եկան Ատադի կալը , որ Յորդանանու անդի կողմն է . հոն մեծ ու խիստ սաստիկ լացով մը սղբացին, և իր հօրը համար եօթը օր սուգ ըրաւ :

11 - Եւ այն երկրին մէջ բնակող Քանանացիները երբ տեսան Ատադի կալին մէջի սուգին հանգիստը, ըսին, Այս մեծ սուգ մը ըլլալու է Եգիպտացիներուն . անոր համար անոր անունը *Աբէլմիսրաիմ՝

*Կամ, մշտնջենաւոր լեռներուն օրհնութիւններէն, և յաւիտենական բլուրներուն վայելչութենէն

*Այսինքն, սուգ Եգիպտացուց

գրին, որ Յորդանանու անդիի կողմն է: 12 - Եւ անոր որդիները բրին անոր՝ ինչպէս պատուիրեր էր: 13 - Եւ անոր որդիները Քանանու երկիրը տարին զանիկա, ու թաղեցին զանիկա Մամբրէի դիմաց եղող Մաքիելայի արտին այրին մէջ, զոր Աբրահամ գերեզմանի կալուածքի համար ծախու առաւ արտին հետ մէկտեղ Քետացի Եփրոնէ: 14 - Եւ Յովսէփ իր հայրը թաղելէն ետե Եգիպտոս դարձաւ, ինք ու իր եղբայրները և այն ամէնը որ իրեն հետ իր հայրը թաղելու ելան:

15 - Եւ Յովսէփի եղբայրները տեսնելով որ իրենց հայրը մեռաւ, ըսին իրենց Զօ, Քուցէ Յովսէփ ոխ պահելով՝ պիտի հատուցանէ մեզի այն ամէն չարիքը զոր բրինք իրեն: 16 - Եւ Յովսէփի պատգամաւոր զրկեցին՝ ըսելով, Քու հայրդ մեռնելէն առաջ պատուիրեց Բոզի ու ըսաւ, Յովսէփի այսպէս ըսէք: 17 - Հիմա շնորհք բրէ, քու եղբայրներուդ յանցանքը ու անոնց մեղքը ներէ, վասն զի քեզի չարութիւն բրին. և հիմա կ'աղաչենք քեզի, քու հօրդ Աստուծոյն ծառաներուն յանցանքը ներէ: Եւ Յովսէփ լացաւ երբ անոնք խօսեցան իրեն: 18 - Ու անոր եղբայրներն ալ գացին, և անոր առջև ինկան, ու ըսին, Ահա մենք քու ծառաներդ ենք: 19 - Եւ Յովսէփ ըսաւ անոնց, Մի վախնաք, միթէ ես Աստու-

ծոյ տեղն եմ: 20 - Եւ թէպէտ դուք ինծի դէմ չարութիւն խորհեցաք, Բայ Աստուած զայն աղէկի դէմն խորհեցաւ. այնպէս որ այս օրուան եղածին պէս՝ շատ ժողովուրդ ապրեցնէ: 21 - Եւ հիմա մի վախնաք, ես ձեզ ու ձեր ընտանիքները պիտի կերակրեմ: Այսպէս միթարեց զանոնք՝ քաղցրութեամբ խօսելով:

22 - Եւ Յովսէփ Եգիպտոս բնակեցաւ, ինք և իր հօրը տունը. և Յովսէփ հարիւր տասը տարի ապրեցաւ: 23 - Եւ Յովսէփ Եփրեմի որդիները մինչև երրորդ սերունդը տեսաւ, և Մանասէի որդւոյն Մաքիբի որդիներն ալ Յովսէփի ծունկերուն վրայ ծնան:

24 - Եւ Յովսէփ իր եղբայրներուն ըսաւ, Ահա ես կը մեռնիմ, ու Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու ձեզ այս երկրէն պիտի հանէ դէպ ի այն երկիրը՝ որու համար ինք երգում ըրաւ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի: 25 - Եւ Յովսէփ Իսրայէլի որդիներուն երգում ընել տուաւ՝ ըսելով, Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու իմ ոսկորներս ասկէ հանէք: 26 - Եւ Յովսէփ հարիւր տասը տարեկան ըլլալով մեռաւ. ու զմոսեցին զանիկա, և տապանի մը մէջ գրին Եգիպտոսի մէջ:

ԳԻՐԻՔ ԵԼԻՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Եգիպտոս գացող Իսրայէլի որդիներուն անունները ասոնք են. ամէն մէկր իր տունովը Յակոբի հետ գնաց. 2 - Ռուբէն, Շմաւոն, Դեբի ու Յուդա, 3 - Իսաքար, Զարուղոն և Բենիամին, 4 - Իան ու Նեփթաղիմ, Գադ ու Ասեր: 5 - Եւ Յակոբի երանքէն ելած բոլոր հոգիները եօթանասուն հոգի էին. Յովսէփ ալ Եգիպտոս էր:

6 - Եւ Յովսէփ ու անոր բոլոր եղբայրները և բոլոր այն ազգը մեռան: 7 - Եւ Իսրայէլի որդիները աճեցան ու բազմացան և շատցան ու խիստ զօրացան. և այն երկիրը անոնցմով լեցուեցաւ:

8 - Արդ Եգիպտոսի վրայ նոր թագաւոր մը ելաւ, որ Յովսէփը չէր ճանչնար: 9 - Եւ անիկա ըսաւ իր ժողովուրդին, Ահա Իսրայէլի որդիներուն

*Եբր. անոնց սրտին

ԳԼ. Բ

ժողովուրդը մեզմէ շատ ու զօրաւոր են. 10 - Եկէք իմաստութիւն բանեցրնենք անոնց դէմ, որ չըլլայ թէ շատնան, ու երբ պատերազմ պատահելու ըլլայ, անոնք ալ մեր թշնամիներուն հետ միանան, ու մեզի դէմ պատերազմին, և այս երկրէն ելլեն: 11 - Անոր համար գործավարներ դրին անոնց վրայ, որպէս զի շարչարեն զանոնք իրենց ծանր գործերովը. և Փարաւոնի շտեմարանի քաղաքներ, Փիթօմը ու Ռամսէսը, շինեցին: 12 - Եւ որչափ կը շարչարէին զանոնք, այնչափ ալ աւելի կը շատնային ու կ'աճէին. և անոնք Իսրայէլի որդիներէն ձանձրացան: 13 - Եւ Եգիպտոսի բռնութեամբ կը ծառայեցնէին Իսրայէլի որդիները: 14 - Եւ անոնց կեանքը ծանր գործով, կաւով ու անոթներով և դաշտին ամէն գործովը կը դառնացնէին. ինչ ծառայութիւն որ անոնց ընել տային՝ բռնութեամբ էր:

15 - Եւ Եգիպտոսի թագաւորը խօսեցաւ Եբրայեցւոց մանկաբարձներուն, որոնց մէկուն անունը Սեփրա ու միւսին անունը Փուա էր, 16 - Ու ըսաւ, Եբրայեցի կիներուն տղաքը առած ատեննիդ՝ նստարաններուն վրայ նայիք, եթէ տղայ է՝ մեռցնէք զանիկա, և եթէ աղջիկ է՝ թող ողջ մնայ: 17 - Բայց մանկաբարձները Աստուծոյ վստիցան, ու Եգիպտոսի թագաւորին իրենց ըսածին պէս չըրին. հապա արունները ողջ կը թողուին: 18 - Եւ Եգիպտոսի թագաւորը կանչեց մանկաբարձները, ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ այս բանը ըրիք, ու արունները ողջ թողուցիք: 19 - Եւ մանկաբարձները բռն Փարաւոնի, Քանզի Եբրայեցի կիները Եգիպտոսի կիներուն պէս չեն. վասն զի առոյգ են. մանկաբարձը անոնց չգացած՝ կը ծնանին: 20 - Անոր համար Աստուծոյ մանկաբարձներուն բարիք ըրաւ. և ժողովուրդը շատցաւ ու իխտա զօրացաւ: 21 - Եւ եղաւ որ մանկաբարձներուն Աստուծոյ վստիցան համար, անոնց տուներ շինեց: 22 - Եւ Փարաւոն իր բոլոր ժողովուրդին հրամայեց՝ ըսելով, Ամէն ծնած տղան գետը նետեցէք, և ամէն աղջիկը ողջ թողուցէք:

Եւ Ղեւիի տունէն մէկը գնաց, ու Ղեւիի հէ՛ն աղջիկը Կէն առաւ: 2 - Եւ կինը յղացաւ, ու որդի մը ծնաւ. և անոր գեղեցիկ ըլլալը տեսնելով՝ երէք ամիս պահեց զանիկա: 3 - Եւ երբ ա՛լ չէր կրնար պահել զանիկա, պատուեղէն տապանակ մը առաւ անոր համար, և կարով ու ձիւթով ծեփեց, և տղան մէջը դրաւ, ու գետին եզերքը եղած շամբին մէջ ձգեց: 4 - Եւ անոր քոյրը հետու կայնեցաւ, որպէս զի տեսնէ թէ ի՛նչ պիտի պատահի անոր: 5 - Եւ Փարաւոնի աղջիկը գետը իջաւ լուացուելու, և անոր աղախինները գետին եզերքը կը պարտէին. և երբ անիկա շամբին մէջտեղը տապանակը տեսաւ, իր աղախինը զրկեց, որ բերաւ զանիկա: 6 - Եւ երբ բացաւ, տղան տեսաւ, և ահա տղան կու լար. և խղճաց անոր վրայ, ու ըսաւ, Ասիկա Եբրայեցւոց տղաքներէն է: 7 - Ետքը անոր քոյրը ըսաւ Փարաւոնի աղջկան, Եթամ՝ ու քեզի Եբրայեցիներէն ծիծ տուող կին մը կանչե՞մ, որ տղան սնուցանէ քեզի համար: 8 - Եւ Փարաւոնի աղջիկը ըսաւ անոր, Գնա. և աղջիկը գնաց, ու տղուն մայրը կանչեց: 9 - Եւ Փարաւոնի աղջիկը ըսաւ անոր, Առայս տղան՝ որ սնուցանես ինծի համար, ու ես քու վարձքդ կու տամ. և կինը առաւ տղան ու սնուց զանիկա: 10 - Երբ տղան մեծցաւ, Փարաւոնի աղջկան բերաւ զանիկա, ու անոր որդին եղաւ. և անոր անունը *Մովսէս դրաւ, ու ըսաւ, Քանզի ջուրէն հանեցի զանիկա:

11 - Եւ այն օրերը երբ Մովսէս մեծցաւ, իր եղբայրներուն ելաւ, ու անոնց ծանր գործերուն նայեցաւ. և տեսաւ Եգիպտոսի մը՝ որ իր Եբրայեցի եղբայրներէն մէկը կը ծեծէր: 12 - Եւ երբ անդին ասդին նայելով տեսաւ որ մէ՛կը չկայ, մեռցուց Եգիպտոսին, ու աւագին մէջ թաղեց զանիկա: 13 - Եւ հետեւեալ օրը ելաւ, և ահա երկու Եբրայեցի մարդիկ կը կռուէին իրարու հետ, և ըսաւ անոր որ իրաւունք չունէր, Ինչո՞ւ քու ընկերիդ կը զարնես: 14 - Եւ անիկա ըսաւ, Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ.

*Մովսէս, ջուրէն հանուած

գի՞ս ու մեռցնելու միտք ունիս, ինչպէս Եգիպտացին մեռցուցիր: Եւ Մովսէս վախցաւ ու ըսաւ, Անշուշտ այս բանը իմացուած է:

15 - Եւ երբ Փարաւոն լսեց այս բանը, Մովսէսը մեռցնել կ'ուզէր, բայց Մովսէս Փարաւոնի երեսէն փախաւ, ու Մադիամու երկիրը բնակեցաւ. և հորի մը քով նստաւ: 16 - Եւ Մադիամու քուրմը եօթը աղջիկ ունէր. ու անոնք եկան և ջուր քաշեցին, ու իրենց հօրը հօտը խմցնելու համար աւազանները լեցուցին: 17 - Եւ հովիւները եկան ու վաճակեցին զանոնք. և Մովսէս ելաւ ու օգնեց անոնց, և անոնց հօտին ջուր խմցուց: 18 - Եւ երբ անոնք իրենց հօրը Ռազուէլի եկան, անիկա ըսաւ, Այսօր ի՞նչ պատճառաւ շուտ եկաք: 19 - Եւ ըսին, Եգիպտացի մը մեզ հովիւներուն ձեռքէն ազատեց, ու մեզի ալ շատ ջուր քաշեց, ու հօտին խմցուց: 20 - Ան ալ ըսաւ իր աղջիկներուն, Եւ ո՞ւր է անիկա. ինչո՞ւ այն մարդը այդպէս թող տուիք. կանչեցէք զանիկա՝ որպէս զի հաց ուտէ: 21 - Եւ Մովսէս հաճեցաւ այն մարդուն հետ բնակիլ, ու անիկա իր Սեպփօրա աղջիկը Մովսէսի տուաւ: 22 - Եւ ի՞նչ որդի մը ծնաւ, և անիկա անոր անունը *Գերշամ՝ դրաւ. քանզի ըսաւ, Պանդուխտ եղայ օտար երկրի մէջ:

23 - Եւ եղաւ որ շատ օրերէն ետքը Եգիպտոսի թագաւորը մեռաւ, և Իսրայէլի որդիները ծառայութեան պատճառաւ հառաչեցին ու աղաղակեցին. և ծառայութեան համար անոնց աղաղակը Աստուծոյ ելաւ: 24 - Եւ Աստուած անոնց հեծութիւնը լսեց. ու Աստուած յիշեց իր ուխտը՝ զոր Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ ըրէր էր: 25 - Եւ Աստուած նայեցաւ Իսրայէլի որդիներուն վրայ, ու Աստուած զիսցաւ անոնց վիճակը:

ԳԼ. Գ

Եւ Մովսէս Մադիամու քուրմին իր Յոթոր աներոջ հօտը կ'արածէր. ու հօտը անապատին ետին քշելով Աստուծոյ լեռը, Քորեբ, եկաւ: 2 - Եւ Տէրօջը հրեշտակը կրակի բոցով

*Այսինքն, հոն պանդխտացած

մորենինն մէջէն երեւցաւ անոր. և անիկա տեսաւ որ ահա մորենին կրակով կը վառէր, բայց մորենին չէր սպառեր: 3 - Եւ Մովսէս ըսաւ, Հիմա զառնամ ու այս մեծ տեսարանը տեսնեմ՝ թէ ինչո՞ւ համար մորենին չայրիր: 4 - Եւ Տէրը տեսաւ որ անիկա տեսնելու դարձաւ, Աստուած մորենինն մէջէն կանչեց անոր ու ըսաւ, Մովսէս, Մովսէս. և անիկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ: 5 - Եւ Աստուած ըսաւ, Հոս մի մօտենար. կօշիկներդ հանէ քու ոտքերէդ, վասն զի այն տեղը՝ որուն վրայ կայներ ես, սուրբ երկիր է: 6 - Եւ ըսաւ անոր, Ես եմ՝ քու հօրդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը. և Մովսէս իր երեսը պահեց, վասն զի Աստուծոյ նայելու վախցաւ:

7 - Եւ Տէրը ըսաւ, Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը արդարեւ տեսայ, և գործավարներուն պատճառաւ անոնց վերջո՞ւնք աղաղակը լսեցի. վասն զի անոնց նեղութիւնները գիտեմ. 8 - Եւ զանոնք Եգիպտացուց ձեռքէն ազատելու, ու զանոնք այն երկրէն աղէկ ու լայնարձակ երկիր մը, կաթ ու մեղր բղխող երկիր մը, Քանանացուց ու Քետացուց և Ամօրհացուց ու Փերեզացուց և Իեւացուց ու Յերուսացուց տեղը, հանելու իջայ: 9 - Եւ ահա հիմա Իսրայէլի որդիներուն աղաղակը ինձի հասած է. ու Եգիպտացիներուն անոնց ըրած հարստահարութիւնն ալ տեսայ: 10 - Ուստի եկուր հիմա՝ քեզ Փարաւոնի զրկեմ, և իմ ժողովուրդս Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանեաւ: 11 - Եւ Մովսէս ըսաւ Աստուծոյ, Ես ո՞վ եմ՝ որ Փարաւոնի երթամ, ու Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանեմ: 12 - Եւ ըսաւ, Անշուշտ ես քեզի հետ պիտի ըլլամ. և այս ըլլայ քեզի նշան՝ որ ես քեզ զրկեմ եմ. երբ ժողովուրդը Եգիպտոսէ հանեաւ, այս լեռանը վրայ պիտի պաշտէք զԱստուած:

13 - Եւ Մովսէս ըսաւ Աստուծոյ, Ահա ես կ'երթամ Իսրայէլի որդիներուն ու կ'ըսեմ անոնց, Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի զրկեց. և երբ ըսեն ինձի թէ Ի՞նչ է անոր անունը, ի՞նչ ըսեմ անոնց: 14 - Եւ Աստուած ըսաւ Մովսէսի, Ես եմ՝ ՈՐ ԷՆ: Եւ ըսաւ, Այսպէս պիտի ըսես Իսրայէլի

որդիններուն: Չիս ՈՐ ԷՆ զրկեց ձեզի: 15 - Եւ դարձեալ Աստուած ըսաւ Մովսէսի, Այսպէս պիտի ըսես Իսրայէլի որդիներուն: Ձեր հայրերուն Եհովա Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը զիս ձեզի զրկեց. իմ անունս յաւիտեան այս է, և ազգէ ազգ իմ յիշատակս այս է: 16 - Գնա Իսրայէլի ծերերը մէկտեղ ժողովէ, ու ըսէ անոնց, Ձեր հայրերուն Եհովա Աստուածը, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Աստուածը, երեւցաւ ինձի ըսելով, Արդարեւ այցելութիւն ըրի ձեզի, ու Եգիպտոսի մէջ ձեր քաշածը պիտի զրկեմ: 17 - Ու ըսի որ ձեզ Եգիպտոսի չարչարանքէն դէպ ի Քանանացոց ու Քետացոց և Ամօրհացոց ու Փերեզացոց և Խեւացոց ու Յերուսացոց երկիրը, կաթ ու մեղր բզիսող երկիրը, հանեմ: 18 - Եւ անոնք քու ձայնիդ մտիկ պիտի ընեն. և դուն ու Իսրայէլի ծերերը Եգիպտոսի Թափաւորին պիտի մտնէք, ու ըսէք անոր, Եբրայեցոց Աստուածը Եհովա մեզի հանդիպեցաւ. և հիմա կ'աղաչենք, երեք օրուան ճամբայ երթանք դէպ ի անապատը, որպէս զի մեր Եհովա Աստուծոյն զո՛ճ մատուցանենք: 19 - Եւ ես գիտեմ որ Եգիպտոսի Թափաւորը պիտի չթողու ձեզ որ երթաք, * ոչ ալ՝ զօրաւոր ձեռքով: 20 - Եւ ես ձեռքս պիտի երկնցնեմ, ու պիտի վարնեմ Եգիպտոսը իմ ամէն հրաշքներովս զորոնք անոր մէջ պիտի ընեմ. և անկէ ետքը ձեզ պիտի թողու որ երթաք: 21 - Եւ այս ժողովուրդին շնորհք պիտի տամ Եգիպտացոց առջև. ու երբ ելլէք, դատարկ պիտի չելլէք. 22 - Հապա ամէն կին իր դրացիին ու իր տանը մէջ բնակող կնոջմէն արծաթեղէն վարդեր ու ոսկեղէն վարդեր ու հանդերձներ պիտի խնդրէ, և անոնք ձեր որդիներուն ու աղջիկներուն վրայ պիտի դնէք. ու Եգիպտոսը պիտի կողոպտէք:

ԳԼ Գ

Եւ Մովսէս պատասխան տուաւ ու ըսաւ, Բայց ահա անոնք ինձի պիտի չհաւատան, ոչ ալ իմ ձայնս մտիկ պիտի ընեն. քանզի պիտի ըսեն թէ

Տէրը քեզի չերեւցաւ: 2 - Եւ Տէրը ըսաւ անոր, Այդ քու ձեռքինդ ի՞նչ է. և անհկա ըսաւ, Գաւազան: 3 - Եւ ըսաւ անոր, Գետինը ձգէ զայն. և զանհկա գետինը ձգեց, ու օձ եղաւ. և Մովսէս անոր առջեւէն փախաւ: 4 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ երկրնցուր ու պոչէն բռնէ. և անհկա իր ձեռքը երկնցուց ու զանհկա բռնեց, և գաւազան եղաւ իր ձեռքին մէջ. 5 - Որպէս զի հաւատան թէ իրենց հայրերուն Տէր Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը երեւցաւ քեզի:

6 - Եւ Տէրը դարձեալ ըսաւ անոր, Հիմա քու ձեռքդ ծոցդ դիր. ու անհկա իր ձեռքը ծոցը դրաւ. և երբ դուրս հանեց, ահա իր ձեռքը ձիւնի պէս սպիտակ բորոտ եղաւ: 7 - Եւ Տէրը ըսաւ, Ձեռքդ նորէն ծոցդ դիր. և անհկա նորէն իր ձեռքը ծոցը դրաւ, և երբ ծոցէն հանեց, ահա նորէն իր բնական մարմինին պէս եղաւ: 8 - Եւ ըլլայ որ՝ եթէ քեզի չհաւատան ու առաջին նշանին ձայնին մտիկ չընեն, ետքի նշանին ձայնին պիտի հաւատան: 9 - Իսկ եթէ այս երկու նշաններուն ալ չհաւատան, ու քու ձայնիդ ալ մտիկ չընեն, գետին ջուրէն առ, ու ցամաք դեպի թափէ. և այն ջուրը զոր գետէն առիր, ցամաքին վրայ արիւն պիտի ըլլայ:

10 - Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը, Ո՛հ, Տէր իմ, ես ճարտարախօս չեմ, ոչ երէկուրնէ ու մէկալ օրուրնէ, ոչ ալ ծառայիդ հեա խօսելէդ ետև. հապա ես ճանրախօս ու ճանրալեզու եմ: 11 - Եւ Տէրը ըսաւ անոր, Ո՞վ տուաւ մարդուն բերան. կամ ո՞վ բրաւ համբը կամ խուլը կամ աչք ունեցողը կամ կոյրը. չէ՞ որ ես Տէրս: 12 - Բւստի գնա հիմա, ու ես քու բերնիդ հեա պիտի ըլլամ, և քեզի պիտի սորվեցնեմ ինչ որ պիտի խօսիս: 13 - Եւ անհկա ըսաւ, Ո՛հ, Տէր իմ, կ'աղաչեմ, այս պարտաւոր որո՛ւ ձեռքով զրկել կ'ուզես՝ զրկէ: 14 - Եւ Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Մովսէսի դէմ, ու ըսաւ, Գեատացի Ահարոն քու եղբայրդ չէ՞. ես գիտեմ որ անհկա ճարտարախօս է. նաև ահա անհկա քեզ դիմաւորելու պիտի ելլէ, և քեզ տեսածին պէս իր սրտին մէջ պիտի ուրախանայ: 15 - Եւ

*կամ, եթէ ոչ

դուն խօսէ անոր, ու անոր բերանը խօսքեր դիր. և ես քու բերնիդ ու անոր բերնին հետ պիտի ըլլամ, ու ձեզի պիտի սորվեցնեմ ինչ որ պիտի ընէք : 16 - Եւ քու տեղդ անհկա թող խօսի ժողովուրդին . և անհկա քեզի բերնի տեղ ըլլայ, ու դուն անոր Աստուծոյ տեղ ըլլաս : 17 - Եւ այս գաւազանը ձեռքդ առ, որպէս զի անով նշանները ընես :

18 - Եւ Մովսէս գնաց ու իր Յոթոր աներոջը դարձաւ, ու ըսաւ անոր, Հիմա երթում ու Եգիպտոսի մէջ եղող եղբայրներուս դառնամ, և նայիմ թէ տակաւին ո՞ղջ են անոնք . ու Յոթոր ըսաւ Մովսէսի, Գնա խաղաղութեամբ :

19 - Եւ Տէրը Մադիամի մէջ ըսաւ Մովսէսի, Գնա, Եգիպտոս դարձիր . փասն զի քու կեանքդ փնտաող բոլոր մարդիկը մեռան : 20 - Եւ Մովսէս իր կինը ու իր որդիները առաւ, և իշու վրայ հեծցուց զանոնք, ու Եգիպտոսի երկիրը դարձաւ . և Մովսէս Աստուծոյ գաւազանը իր ձեռքը առաւ :

21 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Երբ դառնաս՝ Եգիպտոս երթաս, նայէ որ Փարաւոնի առջև բոլոր հրաշքները ընես, զորոնք քու ձեռքդ գրի . և ես անոր սիրտը պիտի խստացնեմ, ու ժողովուրդը պիտի չթողու : 22 - Եւ ըսես Փարաւոնի, Տէրը այսպէս կ'ըսէ, Իսրայէլ իմ որդիս, իմ անդրանիկս է :

23 - Եւ քեզի կ'ըսեմ, Իմ որդիս թող տուր, որպէս զի զիս պաշտէ . բայց եթէ զանհկա թող տայ չուզես, ահա ես քու որդիդ, և անոնք քու անդրանիկդ, կը սպաննեմ :

24 - Եւ եղաւ որ Ճամբան իջած տեղը Տէրը անոր պատահեցաւ, և ուզեց սպաննել զանհկա : 25 - Աւտի Աեպփորա տուր քար մը առաւ, ու իր որդւոյն անթիփատութիւնը թիփատեց, և անոր ստքերուն ձգեց, ու ըսաւ, Իրաւցրնէ դուն ինծի արիւնտա սյր մըն ես :

26 - Այսպէս Տէրը թող տուաւ զանհկա . այն ատեն թիփատութեանը համար Աեպփորա ըսաւ, Արիւնտա սյր մըն ես :

27 - Եւ Տէրը ըսաւ Ահարոնի, Գնա անապատը Մովսէսը գիմուորելու . և անհկա գնաց ու Աստուծոյ լեռանը վրայ պատահեցաւ անոր, և համբուրեց զանհկա : 28 - Եւ Մովսէս պատմեց Ահարոնի Տէրոջը բոլոր խօսքերը որ

զրկեց զինք, և բոլոր նշանները զորոնք իրեն պատուիրեց :

29 - Եւ Մովսէս ու Ահարոն գացին, ու Իսրայէլի որդիներուն բոլոր ձերերը ժողովեցին : 30 - Եւ Ահարոն Տէրոջը Մովսէսի ըսած բոլոր խօսքերը զուցեց անոնց . ու ժողովուրդին առջև նշաններն ըրաւ : 31 - Եւ ժողովուրդը հաւատաց . և երբ լսեցին թէ Տէրը սյցելութիւն ըրած է Իսրայէլի որդիներուն, և թէ անոնց առջև նեղութիւններուն նայած է, խոնարհեցան ու երկրպագութիւն ըրին :

ԳԼ. Ե

Եւ ետքը Մովսէս ու Ահարոն, Փարաւոնի մտան ու ըսին, Իսրայէլի Եհոփա Աստուածը այսպէս կ'ըսէ, Իմ ժողովուրդս թող տուր, որպէս զի անապատին մէջ ինծի տօնախմբութիւն ընեն : 2 - Եւ Փարաւոն ըսաւ, Եհոփա ո՞վ է, որ անոր խօսքը մօտիկ ընելով Իսրայէլը թող տամ . Եհոփան չեմ ճանչնար, և Իսրայէլն ալ չեմ թողուր : 3 - Եւ անոնք ըսին, Երբայցեւոց Աստուածը մեզի հանդիպեցաւ . հրաման տուր որ երեք օրուան ճամբայ անապատը երթանք, ու մեր Եհոփա Աստուծոյն զո՞ մատուցանենք, որ չըլլայ թէ ժանախտով կամ սրով մեզի գեմ էլլէ : 4 - Եւ Եգիպտոսի թագաւորն ըսաւ անոնց, Ավ Մովսէս ու Ահարոն, ինչո՞ւ ժողովուրդը իրենց գործերէն ետ կը թողուք . գացէք աշխատեցէք : 5 - Եւ Փարաւոն ըսաւ, Ահա հիմա երկրին ժողովուրդը շատ է, ու դուք կը հանգստացնէք զանոնք իրենց գործերէն :

6 - Եւ Փարաւոն այն օրը ժողովուրդին գործավարներուն ու անոնց վերակացուներուն հրամայեց՝ ըսելով, 7 - Երէկուան ու միւս օրուան պէս՝ ա՛լ մէյմըն ալ ժողովուրդին յարգ մի տար ազիւս շինելու համար . թող իրենք երթան ու իրենց յարգ ժողովեն : 8 - Եւ ազիւսներուն սակը, ինչպէս առաջ կը շինէին, անոնց վրայ դրէք, անկէ մի պակսեցնէք . փասն զի ծոյլ են, և անոր համար կը պօռան՝ ըսելով, Երթանք, մեր Աստուծոյն զո՞ մատուցանենք : 9 - Թող գործը այս մարդոց վրայ ծանրանայ, որպէս զի անով աշխատին, ու փուճ խօսքերու մօտիկ

չընեն: 10 - Եւ ժողովուրդին գործա-
վարներն ու վերակացուները ելան, և
ժողովուրդին խօսեցան՝ ըսելով, Փա-
րաւոն այսպէս կ'ըսէ, Ես ձեզի յարդ-
չեմ տար: 11 - Իսկ զացէք, ձեզի
յարդ առէք, ուր տեղ որ կրնաք գրա-
նել: Բայց ձեր գործէն բան մը պիտի
չպակսի: 12 - Այսպէս ժողովուրդը
Եգիպտոսի բոլոր երկրին մէջ ցրուե-
ցան՝ յարդի տեղ խողան ժողվելու
համար: 13 - Եւ գործավարները կը
ստիպէին զանոնք՝ ըսելով, Ձեր ամէն
օրուան գործը լմնցուցէք, ինչպէս երբ
յարդ ունէիք: 14 - Եւ Փարաւոնի
գործավարները Իսրայէլի որդիներուն
վրայ իրենց դրած վերակացուները ծե-
ծեցին ու ըսին, Ձեր վրայ դրուած ա-
ղիւսներուն սակը երէկ ու այսօր ին-
չ^օ չլմնցուցիք առաջուան պէս:

15 - Եւ Իսրայէլի որդիներուն վե-
րակացուները եկան ու Փարաւոնի բո-
ղոքեցին՝ ըսելով, Ինչ^օ քու ծառա-
ներուդ այսպէս կ'ընես: 16 - Քու ծա-
ռաներուդ յարդ չեն տար, ու ձեզի
կ'ըսեն թէ Աղիւսներ չինեցէք. և ա-
հա քու ծառաներդ ծեծ կերան, ու
յանցանք քու ժողովուրդիդն է: 17 -
Եւ անկիա ըսաւ, Ծոյլ էք դուք, ծոյլ.
անոր համար կ'ըսէք թէ Երթանք Տե-
րոջը զոհ մատուցանենք: 18 - Ուստի
հիմա գացէք բանեցէք, ու ձեզի յարդ
պիտի չտրուի, բայց աղիւսներուն
սակը պիտի տաք: 19 - Եւ Իսրայէլի
որդիներուն վերակացուները ինքզինք-
նին փորձանքի մէջ տեսան, երբ ըս-
ուեցաւ թէ Ամէն օրուան ձեր վրայ
դրուած աղիւսներուն թիւէն չպակսե-
ցընէք: 20 - Եւ Փարաւոնէ դուրս ելած
ատեննին հանդիպեցան Մովսէսի ու
Ահարոնի, որ զիրենք դիմաւորելու
կը սպասէին: 21 - Ու ըսին անոնց,
Տէրը ձեզի նոյն ու դատէ. վասն զի
գարշելի բրէք մեր հօտը Փարաւոնի
առջև, ու անոր ծառաներուն առջև,
մեզ սպաննելու համար անոնց ձեռքը
սուր տալով:

22 - Եւ Մովսէս Տէրոջը դարձաւ ու
ըսաւ, Ով Տէր, ինչ^օ այս ժողովուրդը
փորձանքի մէջ ձգեցիր, և զիս ինչ^օ
ղրկեցիր: 23 - Վասն զի քանի որ քու
անուովդ Փարաւոնի գրուցելու եկեր
եմ, անիկայս ժողովուրդը փորձանքի
մէջ ձգեց, ու դուն բնաւ չփրկեցիր
քու ժողովուրդդ:

ԳԼ. 2

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարա-
ւոնի ինչ ընելիքս հիմա պիտի տեսնես.
որ հզօր ձեռքով պիտի թողու զանոնք,
ու հզօր ձեռքով պիտի վռնտէ զանոնք
իր երկրէն: 2 - Եւ Աստուած խօսեցաւ
Մովսէսի ու ըսաւ անոր, Լս եմ Եհօ-
վա: 3 - Եւ Աբրահամի, Իսահակի ու
Յակոբի՝ Ամենակարող Աստուծոյ ա-
նունով երեւցայ: Բայց իմ Եհօվա
անունով անոնց չյայտնուեցայ: 4 -
Նաև անոնց հեա իմ ուխտս հաստա-
տեցի, որ անոնց ամա՛ Քանանու եր-
կիրը, անոնց օտարութեան երկիրը,
ուր պանդխտացան: 5 - Եւ լսեցի ալ
Իսրայէլի որդիներուն հառաչանքը,
զորոնք Եգիպտացիները ծառայեցու-
ցին. ու իմ ուխտս յիշեցի: 6 - Անոր
համար Իսրայէլի որդիներուն ըսէ, Ես
եմ Եհօվա. և ես ձեզ Եգիպտացոց
ծանր գործերուն տակէն պիտի հանեմ,
ու ձեզ անոնց ծառայութենէն պիտի
ազատեմ, և ձեզ երկնցած բազուկով
ու մեծ դատաստաններով պիտի փրկ-
կեմ: 7 - Եւ ձեզ ինծի ժողովուրդ
պիտի առնեմ, ու ձեզի Աստուած պի-
տի ըլլամ. և պիտի գիտնաք որ ձեզ
Եգիպտացոց ծանր գործերուն տակէն
հանող Տէրը, ձեր Աստուածը, ես եմ:
8 - Եւ ձեզ այն երկիրը պիտի տանիմ,
զոր Աբրահամի, Իսահակի ու Յակոբի
տալու *երդում՝ բրի", ու զայն ձեզի
ժառանգութիւն ըլլալու պիտի տամ.
Ես եմ Տէրը: 9 - Եւ Մովսէս Իսրայէլի
որդիներուն այսպէս գրուցեց. Բայց
անոնք հոգիի նեղութենէն ու գոր-
ծին ծանրութենէն մտիկ չըրին Մով-
սէսի:

10 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝
ըսելով, 11 - Մտի՛ր խօսէ Եգիպտոսի
Փարաւոն թագաւորին՝ որ Իսրայէլի
որդիները իր երկրէն արձակէ: 12 - Եւ
Մովսէս խօսեցաւ Տէրոջը առջև՝ ըսե-
լով, Ահա Իսրայէլի որդիները ինծի
մտիկ չըրին, հապա Փարաւոն ինծի
ինչպէս մտիկ պիտի ընէ. որ ես + ծան-
րալեզու եմ: 13 - Եւ Տէրը խօսեցաւ
Մովսէսի ու Ահարոնի, ու հրաման
տուաւ անոնց՝ որ Իսրայէլի որդիներուն
ու Եգիպտոսի Փարաւոն թագաւորին:

*Եբբ. ձեռքս վեր վերցուցի
†Եբբ. անթլփաա չըթոււնքներով

էրբան, Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն հանելու համար :

14 - Անոնց հայրերուն տուներուն գլուխները ասոնք են . Իսրայէլի անդրանկան Ռուբէնի որդիները՝ Ենոփք, Փաղղուս, Եսրոն և Քարմի. ասոնք են Ռուբէնի տոհմերը : 15 - Եւ Շմաւոնի որդիները՝ Յամուէլ, Յամին, Ոհապ, Յաքին, Սաշառ, և Քանանացի կնոջ որդին Սաուզ . ասոնք են Շմաւոնի տոհմերը : 16 - Եւ Ղեւի որդիներուն անունները իրենց ծնունդներուն համեմատ ասոնք են. Գերսոն, Կահաթ և Մերարի : Եւ Ղեւի կեանքին տարիները հարիւր երեսունըօթը տարի եղան : 17 - Գերսոնի որդիները իրենց տոհմերուն համեմատ Ղոբէնի ու Սեմէի էին : 18 - Եւ Կահաթի որդիները՝ Ամրամ, Իսասառ, Քեբրոն ու Ոգիէլ : Եւ Կահաթի կեանքին տարիները հարիւր երեսունուհրէք տարի եղան : 19 - Եւ Մերարիի որդիները՝ Մոողի ու Մուսի . Ղեւի տոհմերը իրենց ծնունդներուն համեմատ ասոնք են : 20 - Եւ Ամրամ իր հօրաքոյրը Յոքաբէզը իրեն կին առաւ, որ ծնաւ իրեն Ահարոնը ու Մովսէսը : Եւ Ամրամի կեանքին տարիները հարիւր երեսունըօթը տարի եղան : 21 - Եւ Իսասառի որդիները՝ Կորխ, Նափեկ և Զեքրի : 22 - Եւ Ոգիէլի որդիները՝ Միսայէլ, Եղիսափան և Սեթրի : 23 - Եւ Ահարոն իրեն կին առաւ Ամինադարի աղջիկը, Նաասոնի քոյրը Եգիպտէթը, և ծնաւ իրեն Նագարը ու Աբիուզը, Եղիսազարը ու Իթամարը : 24 - Եւ Կորխի որդիները՝ Ասիր, Եղկանա, և Աբիսաափ. ասոնք են Կորխեցւոց տոհմերը : 25 - Եւ Ահարոնի որդին Եղիսազար Փուտիէլի աղջիկներէն իրեն կին առաւ. և ծնաւ իրեն Փենէհէսը . ասոնք են Ղեւտացւոց հայրերուն գլուխները իրենց տոհմերուն համեմատ :

26 - Ասոնք են այն Ահարոնը ու Մովսէսը՝ որոնց ըսաւ Տէրը, Իսրայէլի որդիները իրենց զօրքերովը Եգիպտոսի երկրէն հանեցէք : 27 - Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանելու համար Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսողները ասոնք են . այս Մովսէսը ու Ահարոնը :

28 - Եւ այն օրը որ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Եգիպտոսի երկրին մէջ, 29 - Այն ատեն Տէրը Մովսէսի գրուցեց՝ ըսե-

լով, Ես եմ Եհովա. ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ, Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսէ : 30 - Եւ Մովսէս Տէրոջը առջև ըսաւ, Ահա ես *ծանրալեզու եմ, ու Փարաւոն ինչպէս մտիկ պիտի ընէ ինծի :

ԳԼ Է

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Նայէ, քեզ Փարաւոնի աստուած ըրի, ու քու եղբայրդ Ահարոն քու մարգարէդ ըլլայ . 2 - Իսկ խօսիս այն ամէնը զոր քեզի կը հրամայեմ, և քու եղբայրդ Ահարոն թող խօսի Փարաւոնի՝ որ Իսրայէլի որդիները իր երկրէն արձակէ : 3 - Եւ ես Փարաւոնի սիրտը պիտի խստացրնեմ, ու իմ նշաններս ու հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ պիտի շատցնեմ : 4 - Եւ Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ. ու ես իմ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի ձգեմ, և իմ զօրքերս, իմ ժողովուրդս Իսրայէլի որդիները, մեծ դատաստաններով պիտի հանեմ Եգիպտոսի երկրէն : 5 - Եւ երբ իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկնցնեմ ու Իսրայէլի որդիները անոնց մէջէն հանեմ, պիտի գիտնան Եգիպտացիք թէ ես եմ Տէրը : 6 - Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը իրենց պատուիրածին պէս ըրին . այնպէս ըրին : 7 - Եւ Մովսէս ու թտուն տարեկան էր, ու Ահարոն ու թտունուհրէք տարեկան էր, երբ Փարաւոնի հետ խօսեցան :

8 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 9 - Երբ Փարաւոն ձեզի խօսի ու ըսէ, Զեզի համար հրաշք ցուցուցէք, այն ատեն Ահարոնի ըսես թէ Գաւազանդ առ, ու Փարաւոնի առջև նետէ. և անկազ փիշապ պիտի ըլլայ : 10 - Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի՝ ու Տէրոջը պատուիրածին պէս ըրին . և Ահարոն իր գաւազանը նետեց Փարաւոնի առջև ու անոր ծառաներուն առջև, և փիշապ եղաւ : 11 - Եւ Փարաւոն ալ իմաստունները ու կախարդները կանչեց. և Եգիպտոսի մագերը՝ անոնք ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին : 12 - Եւ ամէն մէկը իր գաւազանը նետեց, ու անոնք փիշապներ եղան. բայց Ահարոնի գաւազանը անոնց գաւազանները կլլեց : 13 - Եւ Փարաւոնի

*Եբբ. անթ լիսաա շրթ ու նքներով

սիրտը կարծրացաւ, ու անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը զրուցեր էր:

14 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի սիրտը խստացաւ, ժողովուրդը արձակել չուզէր: 15 - Առաուանց Փարաւոնի գնա. ահա անիկա դէպ ի ջուրը կ'ելլէ. ու դուն գետին եզերքը անոր դիմաց կայնէ, և այն օձ դարձած գաւազանը ձեռքդ առ, 16 - Ու ըսէ անոր, Եբրայեցաց Եհովա Աստուածը զիս քեզի զրկեց՝ ըսելով, Արձակէ իմ ժողովուրդս, որպէս զի զիս պաշտեն անապատին մէջ. և ահա մինչև հիմա մտիկ չըրիր: 17 - Այսպէս կ'ըսէ Տէրը, Ասով գիտնաս թէ ես եմ Տէրը. Ահա ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջի ջուրերուն պիտի զարնեմ, ու արիւն պիտի դառնաս. 18 - Եւ գետին մէջ եղած ձուկերը պիտի մեռնին, ու գետը պիտի հոտի. և Եգիպտացիք պիտի զգուին գետէն ջուր խմելու:

19 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ըսէ Ահարոնի, Գաւազանդ առ, ու ձեռքդ երկնցուր. Եգիպտացաց ջուրերուն վրայ, անոնց առուներուն վրայ, անոնց գետերուն վրայ, ու անոնց լիճերուն վրայ, և անոնց բոլոր ջրակուտակներուն վրայ, որպէս զի արիւն ըլլան. ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ փայտ ու քարէ ամաններուն մէջի ջուրը արիւն ըլլան: 20 - Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը պատուիրածին պէս ըրին. և գաւազանը վերցուց, ու Փարաւոնի առջև և անոր ծառաներուն առջև գետին մէջի ջուրերուն զարկաւ, և գետին մէջի բոլոր ջուրերը արիւն դարձան: 21 - Եւ գետին մէջ եղած ձուկերը մեռան, ու գետը հոտեցաւ, և Եգիպտացիք չէին կրնար գետէն ջուր խմել. ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ արիւն կար: 22 - Եւ Եգիպտոսի մեզերն ալ իրենց կախարդութիւններով այնպէս ըրին. և Փարաւոնի սիրտը կարծրացաւ, ու Տէրոջը ըսածին պէս՝ անոնց մտիկ չըրաւ: 23 - Եւ Փարաւոն դարձաւ ու իր տունը եկաւ, ու *այս ալ անոր սրտին չդպաւ: 24 - Եւ բոլոր Եգիպտացիք գետին բոլորափքը փորեցին խմելու ջուրի համար. վասն զի գետին ջուրէն չէին կրնար խմել: 25 -

Եւ Տէրը գետը զարնելէն ետքը՝ եօթը օրը լմնցաւ:

ԳԼ. Ը

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի մտիք, ու ըսէ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս որպէս զի պաշտեն զիս: 2 - Եւ եթէ զանոնք արձակել չուզես, ահա ես քու բոլոր սահմաններդ գորտերով պիտի զարնեմ: 3 - Եւ գետը շատ գորտեր պիտի հանէ, ու անոնք պիտի ելլեն, ու քու տանդ և անկողնի սենեակիդ ու անկողնիդ, և քու ծառաներուդ տուներուն և քու ժողովուրդիդ, ու քու թոնիրներուդ և խմորի տաշտերուդ մէջ պիտի մտնեն: 4 - Եւ գորտերը քու վրայ և ժողովուրդիդ վրայ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ելլեն:

5 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ահարոնի «յապէ» ըսէ. Առուներուն վրայ, գետերուն վրայ ու լիճերուն վրայ ձեռքդ երկնցուր քու գաւազանովդ, ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանէ: 6 - Եւ Ահարոն երկնցուց իր ձեռքը Եգիպտոսի ջուրերուն վրայ. և գորտերը ելան ու Եգիպտոսի երկիրը ծածկեցին: 7 - Եւ մեզերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին, ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին:

8 - Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը և ըսաւ, Աղաչեցէք Տէրոջը, որ ինձմէ ու իմ ժողովուրդէս վերցնէ գորտերը, ու ժողովուրդը պիտի արձակեմ որպէս զի Տէրոջը զո՛ճ մատուցանեն: 9 - Եւ Մովսէս ըսաւ Փարաւոնի, Ժամանակ մը որոշէ ինձի, թէ ե՛րբ քեզի համար ու ծառաներուդ համար և ժողովուրդիդ համար աղաչեմ, որ քեզմէ ու քու տուներէդ գորտերը կորսուին, ու միայն գետին մէջ մնան: 10 - Եւ անիկա ըսաւ, Վաղը: Եւ ինք ըսաւ, քու խօսքիդ պէս ըլլայ, որպէս զի գիտնաս թէ մեր Եհովա Աստուծոյն պէս Զէն չկայ. 11 - Եւ քեզմէ ու քու տուներէդ և քու ծառաներէդ ու քու ժողովուրդէդ գորտերը պիտի վերնան. միայն գետին մէջ պիտի մնան: 12 - Եւ Մովսէս ու Ահարոն Փարաւոնի քովէն ելան. ու Մովսէս Տէրոջը աղաղակեց այն գորտերուն համար զորոնք Փարաւոնի վրայ

* Եբր. իր սիրտը այս բանին վրայ չդրաւ

քերեր էր: 13 - Եւ Տէրը Մովսէսի ըսածին պէս ըրաւ. ու տուներէն, բակերէն և արտերէն գորտերը մեռան: 14 - Եւ դէզ դէզ ժողովեցին զանոնք, ու երկիրը հտտեցաւ: 15 - Բայց երբ Փարաւոնն հանգստութիւն ըլլալը տեսաւ, իր սիրտը խտտացուց ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը ըսածին պէս:

16 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ըսէ Ահարոնի, Քու գաւազանդ երկնցուր, ու երկրի հողին զարկ, որպէս զի Եգիպտոսի բոլոր երկրին վրայ *մուն ըլլայ:

17 - Եւ այնպէս ըրին. քանզի Ահարոն իր գաւազանովը իր ձեռքը երկրնցուց ու երկրի հողին զարկաւ, և մարդոց վրայ ու անասուններուն վրայ մուն եղաւ. Եգիպտոսի բոլոր երկրին վրայ երկրին բոլոր հողը մուն եղաւ:

18 - Եւ մոգերն ալ իրենց կախարհութիւններովը այնպէս ըրին՝ որպէս զի մուներ հանեն, բայց չկրցան. այսպէս մարդոց ու անասուններուն վրայ մուն եղաւ: 19 - Եւ մոգերը ըսին Փարաւոնի, Այս Աստուծոյ մատն է. բայց Փարաւոնի սիրտը կարծրացաւ ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը ըսածին պէս:

20 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Աստուանց կանուխ ելիր, ու Փարաւոնի առջև կայնէ. (ահա անիկա դէպ ի ջուրը կ'ելլէ.) և ըսէ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս որպէս զի զիս պաշտեն. 21 - Հապա եթէ իմ ժողովուրդս չարձակես, ահա ես քու վրայ ու քու ծառաներուդ վրայ և քու ժողովուրդիդ վրայ ու քու տուներուդ վրայ շանաճանճ պիտի զրկեմ, և Եգիպտացուց տուները շանաճանճով պիտի լեցունին, նաև այն գետինը որուն վրայ անոնք էջ +ալին:

22 - Եւ այն օրը իմ ժողովուրդիս բնակած Գեսեմի երկիրը պիտի որոշեմ, ու հոն շանաճանճ պիտի չըլլայ. որպէս զի գիտնաս թէ երկրի մէջտեղը ես եմ Տէրը:

23 - Եւ իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջտեղ խտրութիւն պիտի դնեմ. վաղը այս նշանը պիտի ըլլայ.

24 - Եւ Տէրը այնպէս ըրաւ. ու Փարաւոնի տանը և անոր ծառաներուն տաներուն ու Եգիպտոսի բոլոր երկրին վրայ շատ շանաճանճ եկաւ. ու շանաճանճին պատճառաւ երկիրը սարուեցաւ:

25 - Եւ Փարաւոնն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ, Գացեք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք ու երկրին մէջ: 26 - Եւ Մովսէս ըսաւ, Արժան չէ այսպէս ընել. վասն զի Եգիպտացուց գարշելի «եպտոմի» Տէրոջը մեր Աստուծոյն զոհ պիտի մատուցանենք.

եթէ Եգիպտացուց գարշելի «եպտոմի» իրենց աչքին առջև զոհ մատուցանելու ըլլանք, պիտի չքարկոծեն մեզ:

27 - Մենք երեք օրուան ճամբայ պիտի երթանք անապատին մէջ, ու զոհ պիտի մատուցանենք մեր Տէր Աստուծոյն, ինչպէս ինք մեզի պատուիրէ:

28 - Եւ Փարաւոնն ըսաւ, Ես ձեզ թող կու տամ՝ որպէս զի երթաք անապատին մէջ ձեր Եհովա Աստուծոյն զոհ մատուցանէք, միայն թէ շատ հեռու չերթաք. ինձի համար աղաչեցէք:

29 - Եւ Մովսէս ըսաւ, Ահա ես քու քովէդ կ'ելլեմ՝ ու Տէրոջը կ'աղաչեմ՝ որ վաղը Փարաւոնէ, անոր ծառաներէն ու անոր ժողովուրդէն շանաճանճը երթնայ.

բայց Փարաւոնն մէյմըն ալ զի չխաբէ՝ ժողովուրդը թող չտալով Տէրոջը զոհ մատուցանելու:

30 - Եւ Մովսէս Փարաւոնի քովէն ելաւ, ու Տէրոջը աղաչեց:

31 - Եւ Տէրը Մովսէսի խօսքին պէս ըրաւ, ու Փարաւոնէ, անոր ծառաներէն և անոր ժողովուրդէն շանաճանճը վերցուց. հատ մըն ալ չմնաց:

32 - Եւ Փարաւոնն այն անգամին ալ իր սիրտը խտտացուց ու ժողովուրդը չարձակեց:

ԳԼ. Թ

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի մտիր, ու խօսէ անոր, Եբրայեցուց Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս՝ որպէս զի զիս պաշտեն. 2 - Քանզի եթէ զանախարձակել չուզես, ու տակաւին պինդ բռնես զանոնք, 3 - Ահա Տէրոջը ձեռքը դաշտին մէջ եղած քու հօտերուդ վրայ ըլլալով, ձիերուն, եշերուն, ուղտերուն, արջաւներուն ու ոչխարներուն վրայ խիստ սաստիկ կոտորած պիտի ըլլայ: 4 - Եւ Տէրը Իսրայէլի հօտերուն ու Եգիպտոսի հօտերուն մէջտեղ պիտի գատէ, և Իսրայէլի որդիներուն մէջ կ'անուշաւ պիտի չմեռնի: 5 - Եւ Տէրը ժամանակ որոշեց՝ բսելով, Վաղը Տէրը այս բանը պիտի ընէ երկրի վրայ:

* 11-2, ոջիլ

6 - Եւ հետեւեալ օրը Տէրը այս բանը ըրաւ, ու Եգիպտացոց բոլոր հօտերը մեռան. բայց Իսրայէլի որդիներուն հօտերէն մէ'կը չմեռաւ: 7 - Եւ Փարաւոնն իւր զրկեց, ու ահա Իսրայէլի հօտերէն մէ'կն ալ մեռած չէր. և Փարաւոնի սիրտը խստացաւ ու ժողովուրդը չարձակեց:

8 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի ու Ահարոնի, Առէք ձեզի ձեռքերնիդ լեցուն հնոցի մոխիր, և Մովսէս դէպ ի երկինք ցանէ զայն՝ Փարաւոնի առջև: 9 - Ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ փոշի պիտի ըլլայ, ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ խաղաւարտներ հանող ուռեցքներ պիտի ըլլան: 10 - Եւ հնոցի մոխիրը առին, ու Փարաւոնի առջև կայնեցան. և Մովսէս դէպ ի երկինք ցանեց զայն, ու մարդոց և անասուններուն վրայ խաղաւարտներ հանող ուռեցքներ եղան: 11 - Եւ մոգերը ուռեցքներուն պատճառաւ չկրցան կայնիլ Մովսէսի առջև. վասն զի ուռեցքները մոգերուն վրայ ալ, ու բոլոր Եգիպտացոց վրայ ալ եղան: 12 - Եւ Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը. ու անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը Մովսէսի ըսեր էր:

13 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Աստուանց կանուխ ելիր, ու Փարաւոնի առջև կայնէ, ու անոր ըսէ, Եբրայեցոց Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս, որպէս զի զիս պաշտեն. 14 - Քանզի այս անգամ իմ բոլոր հարուածներս պիտի զրկեմք ու *վրադ, և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ վրայ. որպէս զի գիտնաս թէ բոլոր երկրի մէջ ինծի պէս Բէլ չկայ: 15 - Քանզի հիմա իմ ձեռքս պիտի երկնցնեմ՝ որպէս զի քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ, ու երկրէ պիտի կորսուիս: 16 - Եւ ասոր համար քեզ վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի: 17 - Իսկ տակաւին իմ ժողովուրդիս դէմ կենալով՝ պիտի չարձակե՞ս զանոնք: 18 - Ահա ես վաղը այս ատեն խիստ սաստիկ կարկուտ պիտի տեղամ, որ անոր պէս Եգիպտոսի մէջ եղած չէ՝ անոր հաստատուած օրէն մինչև հիմա: 19 - Եւ հիմա իւր զրկէ

«- ժողովէ քու հօտերդ ու ինչ որ ունիս դաշտին մէջ. +անգի ամէն մարդ ու անասուն որ դաշտին մէջ գտնուի ու տուները ժողովուած չըլլայ, անոնց վրայ կարկուտ պիտի իջնէ, ու պիտի մեռնին: 20 - Փարաւոնի ծառաներէն ով որ Տէրոջը խօսքէն կը վախնար, իր ծառաները ու հօտերը տուներու մէջ ժողովեց: 21 - Եւ ով որ Տէրոջը խօսքին ուշադրութիւն չըրաւ, իր ծառաները ու իր հօտերը դաշտին մէջ թողուց:

22 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Քու ձեռքդ դէպ ի երկինք երկնցուր, ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ, և Եգիպտոսի երկրին մէջ եղած արտերուն բոլոր խոտին վրայ կարկուտ պիտի գայ. 23 - Եւ Մովսէս իր գաւազանը դէպ ի երկինք երկնցուց. ու Տէրը որտաւմ և կարկուտ զրկեց, ու երկրին վրայ կրակ կը վազէր. ու Տէրը Եգիպտոսի երկրին վրայ կարկուտ տեղաց: 24 - Եւ կարկուտ՝ ու կարկուտին մէջտեղը խառնուած կրակ եկաւ. այնպէս սաստիկ էր որ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ ազգ ըլլալէն հետէ անոր պէս եղած չէր: 25 - Եւ կարկուտը Եգիպտոսի բոլոր երկրին մէջ, դաշտը եղածին ամէնը, մարդէ մինչև անասուն զարկաւ. և կարկուտը դաշտին բոլոր խոտը վարկաւ, ու դաշտին բոլոր ծառերը կորեց: 26 - Միայն Գեսեմի երկրին մէջ, ուր Իսրայէլի որդիները իւր Բուսիէն, կարկուտ չեղաւ:

27 - Եւ Փարաւոնն իւր զրկեց, ու կանչեց Մովսէսը ու Ահարոնը և ըսաւ անոնց, Այս անգամ մեղանչեցի. Եհօվա արդար է, և ես ու իմ ժողովուրդս յանցաւոր ենք: 28 - Աղաչեցէք Տէրոջը՝ որ Աստուծոյ *որոտումները ու կարկուտը +դադարին. ու ձեզ պիտի արձակեմ, և ալ պիտի չկենաք: 29 - Եւ Մովսէս ըսաւ անոր, Քաղաքէն դուրս ելածիս պէս՝ իմ ձեռքերս Տէրոջը պիտի երկնցնեմ, «- որոտումները պիտի դադարին, և ալ կարկուտ պիտի չըլլայ, որպէս զի գիտնաս թէ երկիր Տէրոջն է: 30 - Բայց ես գիտեմ որ դուն ու քու ծառաներդ տակաւին Տէր Աստուծոյ չէք վախնար:

31 - Եւ թթանը ու գարին զարնուեցան. վասն զի գարին հասած էր, ու

*Եբր. սրտիդ վրայ

*Եբր. ձայները

+Եբր. հերկք են

քթանը սերմի գացած : 32 - Բայց ցուրենը ու հաճարը չգարնուեցան, վասն զի ուշ կը բուսնին :

33 - Եւ Մովսէս Փարաւոնի քովէն քաղաքէն դուրս ելաւ, ու իր ձեռքերը Տէրոջը երկնցուց . և որոտումները ու կարկուտը դադարեցան, ու երկրին վրայ անձրև չկաթեցաւ : 34 - Եւ Փարաւոն երբ անձրեւին ու կարկուտին և որոտումին դադարիլը տեսաւ, նորէն մեղանչեց, ու սիրտը խտացուց ինք ու իր ծառաները : 35 - Այսպէս Փարաւոնի սիրտը կարծրացաւ. ու Իսրայէլի որդիները չարձակեց, ինչպէս Տէրը Մովսէսի ձեռքով ըսեր էր :

ԳԼ Ժ

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Մտի՛ր Փարաւոնի. վասն զի ես անոր սիրտը ու անոր ծառաներուն սիրտը խտացուցի, որպէս զի այս իմ նշաններս ցուցնեմ անոնց մէջ . 2 - Եւ որպէս զի պատմես քու որդիիդ ու քու որդւոյդ որդիին ականջներուն՝ ինչ որ ըրի Եգիպտացուց մէջ, և իմ նշաններս զորոնք անոնց մէջ ցուցուցի, որպէս զի գիտնաք թէ ես եմ Տէրը :

3 - Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնի, ու ըսին անոր, Եբրայեցուց Եհովա Աստուածը այսպէս կ'ըսէ. Մինչև ե՞րբ պիտի չկամիս խոնարհիլ իմ առջեւս. արձակէ իմ ժողովուրդս որպէս զի զիս պաշտեն : 4 - Վասն զի եթէ իմ ժողովուրդս արձակել չուզես, ահա վաղը քու սահմաններուդ վրայ մարտիներ պիտի զրկեմ . 5 - Ու երկրի երեսը պիտի ծածկեն, և Զ'իւ պիտի չկրնայ տեսնել երկիրը . ու կարկուտէն ազատուած ձեզի մնացածը պիտի ուտեն, և արտին մէջ բուսած ձեր բոլոր ծառերը պիտի ուտեն . 6 - Եւ քու տուներդ ու քու բոլոր ծառաներուդ տուները և ամէն Եգիպտացուց տուները պիտի լեցուին. զոր ոչ քու հայրերդ, ոչ այլ քու հայրերուդ հայրերը տեսած են, իրենց երկրի վրայ եղած օրէն մինչև այսօր : Եւ գարձաւ ու Փարաւոնի քովէն դուրս ելաւ :

7 - Եւ Փարաւոնի ծառաները ըսին անոր, Մինչև ե՞րբ այս մարտը մեզի որոգայթ պիտի բլլայ . արձակէ մարդիկը որ իրենց Եհովա Աստուածը պաշտեն. տակաւին չե՞ս գիտեր որ Եգիպտոս

աւրուեցաւ : 8 - Եւ Մովսէսը ու Ահարոնը Փարաւոնի դարձուցին. և անիկա ըսաւ անոնց, Գացէք պաշտեցէք ձեր Եհովա Աստուածը . Բայց որոնք են գացողները : 9 - Եւ Մովսէս ըսաւ, Մեր մանուկներովը ու մեր ծերերովը պիտի երթանք, մեր աղաքներովը ու մեր աղջիկներովը, մեր հօտերովը ու մեր արջառներովը պիտի երթանք . քանզի տօն պիտի պահէք Տէրոջը : 10 - Եւ ըսաւ անոնց, Տէրը այնպէս ձեզի հետ ըլլայ, ինչպէս ես ձեզ ու ձեր աղաքները կ'արձակեմ . զգուշացէք, քանզի չարիք կան ձեր առջև : 11 - Ոչ այդպէս, հիմա դուք այր մարդիկներդ գացէք ու Տէրը պաշտեցէք. վասն զի դուք ատիկա կ'ուզէիք : Եւ Փարաւոնի առջեւէն վռնուեցան :

12 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Երկրնցուր քու ձեռքդ Եգիպտոսի երկրին վրայ մարտիներուն համար, որպէս զի Եգիպտոսի երկրին վրայ ելլեն, և երկրին բոլոր խոտը, կարկուտէն բոլոր մնացածը, ուտեն : 13 - Եւ Մովսէս երկնցուց իր գաւազանը Եգիպտոսի երկրին վրայ. ու Տէրը բոլոր այն օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արեւելեան հով փչել տուաւ . և երբ առտու եղաւ, արեւելեան հովը մարտիները բերաւ : 14 - Եւ մարտիները Եգիպտոսի բոլոր երկրին վրայ ելան, ու Եգիպտոսի բոլոր սահմաններուն վրայ իջան. խիստ սաստիկ էին. անոնցմէ առաջ այնպիսի մարտի չեղաւ, անոնցմէ ետքն այլ այնպէս պիտի չըլլայ : 15 - Եւ բոլոր երկրին երեսը ծածկեցին, ու երկիրը մթնցաւ, ու երկրին բոլոր խոտը և կարկուտէն մնացած ծառերուն ամէն պտուղները կերան. ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ եղած ծառերուն վրայ և արտին խոտերուն վրայ բնաւ կանանչեղէն չմնաց :

16 - Ուստի Փարաւոն շուտով կանչեց Մովսէսը ու Ահարոնը, և ըսաւ, Ձեր Տէր Աստուծոյն ու ձեզի դէմ մեղանչեցի . 17 - Եւ հիմա շնորհք բրէք, միայն այս անգամ՝ ներեցէք իմ յանցանքս, ու ձեր Տէր Աստուծոյն աղաչեցէք, որ իմ վրայէս միայն այս մահը վերցնէ : 18 - Եւ անիկա Փարաւոնի քովէն դուրս ելաւ, ու Տէրոջը աղաչեց : 19 - Եւ Տէրը խիստ սաստիկ ա-

*Եբր. ո՞վ և ո՞վ

քեւմտեան հով մը զրկեց, որ մարտի- ները վերցուց ու կարմիր ծովը քշեց զանոնք. Եգիպտոսի բոլոր սահմաննե- րուն մէջ մէկ մարտի չմնաց: 20 - Բայց Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, ու անիկա Իսրայէլի որդիները չարձակեց:

21 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ գէպի երկինք երկնցուր, որպէս զի Ե- գիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ, շօշափելի խաւար մը ըլլայ: 22 - Եւ Մովսէս իր ձեռքը գէպի երկինք եր- կրնցուց, ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ թանձր խաւար եղաւ երեք օր:

23 - Մէկզմէկ չէին տեսներ, և երեք օր մէկը իր տեղէն չէլաւ. բայց Իսրայէլի բոլոր որդիները իրենց բնակութիւննե- րուն մէջ լոյս ունէին:

24 - Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու ըսաւ, Գացէք, պաշտեցէք Եհովան. միայն ձեր հօտերը ու արջառները մնան. ձեր ընտանիքներն ալ ձեզի հետ թող երթան: 25 - Եւ Մովսէս ըսաւ, Պէտք է որ դուն մեր ձեռքը զոհեր ու ողջակէզ- ներ ալ տաս, որպէս զի մեր Տէր Աստուծոյն մատուցանենք:

26 - Եւ մեր հօտերն ալ ձեզի հետ պիտի երթան անոնցմէ կճղակ մը չմնալով. վասն զի մեր Տէր Աստուածը պաշտելու համար անոնցմէ պարտիմք առնել. ու մենք մինչև որ հոն չերթանք, չենք գիտեր թէ ինչո՞վ պիտի պաշտենք Տէրը:

27 - Եւ Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը, որ չուզեց արձակել զանոնք:

28 - Եւ Փարաւոն ըսաւ անոր, Քովէս գնա. զգուշութիւն ըրէ քու անձիդ, մէյմըն ալ իմ երես չտեսնես. քանզի այն օրը որ իմ երես տեսնես, պիտի մեռնիս:

29 - Եւ Մովսէս ըսաւ, Աղէկ ըսիր, մէյմըն ալ քու երեսդ պիտի չտեսնեմ:

ԳԼ. ԺԱ.

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի վրայ ու Եգիպտոսի վրայ հարուած մըն ալ պիտի բերեմ, անկէ ետև ձեզ աւ- կէ պիտի արձակէ. և երբ յեշ արձակէ, ձեզ ասկէ բոլորովին դուրս պիտի ընէ: 2 - Հիմա խօսէ ժողովուրդին ականջ- ներուն, ու ամէն մարդ իր դրացիէն, և ամէն կին իր դրացիէն արծաթեղէն զարդեր ու ոսկեղէն զարդեր խնդրէ: 3 - Եւ Տէրը շնորհք տուաւ ժողովուր- դին Եգիպտացուց առջև. Մովսէս ալ

Եգիպտոսի երկրին մէջ Փարաւոնի ծառաններուն առջև ու ժողովուրդին առ- ջև խիստ մեծ մարդ մըն էր:

4 - Եւ Մովսէս ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ես կէսգիշերին Եգիպտոսի մէջ- տեղը պիտի ելլեմ: 5 - Աւ Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը պիտի մեռնի, իր աթոռին վրայ նստող Փա- րաւոնի առջինեկէն մինչև աղացքին ետեւը եղող աղախինին առջինեկը և բոլոր անասուններուն առջինեկը: 6 - Աւ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մեծ աղաղակ պիտի ըլլայ, այնպէս որ անոր պէս ոչ եղած է, ոչ ալ նորէն պիտի ըլլայ: 7 - Եւ Իսրայէլի որդիներէն մէ- կո՛ւն գէմ, մարդէն մինչև անասուն, շուն մըն ալ պիտի չչարժէ իր լեզուն. որպէս զի գիտնաք թէ Տէրը Եգիպտաց- ւոց ու Իսրայէլի մէջտեղ տարբերու- թիւն կը դնէ: 8 - Եւ այս բոլոր քու- ծառաներդ ինծի պիտի իջնեն, ու ինծի խոնարհութիւն ընեն՝ ըսելով, Դուն ու բոլոր քեզի հետեւող ժողովուրդը ելէք. ու անկէ ետքը պիտի ելլեմ: Եւ Մովսէս սաստիկ բարկութեամբ Փարաւոնի քովէն դուրս ելաւ:

9 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւ- ոն ձեզի մտիկ պիտի չընէ, որպէս զի իմ հրաշքներս շատցնեմ Եգիպտոսի երկրին մէջ: 10 - Եւ Մովսէս ու Ահարոն այս ամէն հրաշքները Փարաւոնի առջև ըրին. և Տէրը կարծրացուց Փա- րաւոնի սիրտը, ու Իսրայէլի որդիները իր երկրէն չարձակեց:

ԳԼ. ԺԲ.

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ա- հարոնի Եգիպտոսի երկրին մէջ՝ ըսե- լով, 2 - Այս ամիսը ձեզի ամիսներուն սկիզբն ըլլայ. ձեզի տարւոյն ամիսնե- րուն առաջինն ըլլայ: 3 - Իսրայէլի բո- լոր ժողովքին գրուցեցէք՝ ըսելով, Այս ամսուն տասնին ամէն մէկը իրեն գառ- նուկ մը առնէ էրէնց հայրերուն տանը համեմատ, այսինքն տուն գլուխ մէյ- մէկ գառնուկ: 4 - Եւ եթէ մէկ տունը մէկ գառնուկին քիչ կու գայ, այն մարդ իր տանը քով եղած գրացիին հետ հոգիներուն համրանքին համեմատ առնէ. գառնուկին վրայով ամէն մէ- կուն իր կերածին չափ հաշիւ ընէք: 5 - Ձեր գառնուկը անարատ, արու, մէկ տարեկան ըլլայ. ոչխարներէն կամ

այծերէն առնէք զայն : 6 - Եւ մինչև այս ամսուն չորեքտասներորդ օրը պահէք զայն , ու Իսրայէլի ժողովքին բոլոր բազմութիւնը մտրթեն զանհկա 'իրիկուան դէմ' : 7 - Եւ արիւնէն առնեն ու տուներուն երկու կողմի դրանդիքներուն ու վերի սեմին վրայ քսեն , ուր զանհկա պիտի ուտեն : 8 - Եւ միտր այն գիշերը ուտեն . զանհկա կրակի վրայ խորոված՝ բազարջով «-լեղի խտտերով պիտի ուտեն . 9 - Անկէ՝ հում կամ ջուրի մէջ եփած չուտէք , բայց կրակի վրայ խորոված , անոր դլուխը ոտքերովը ու փորտաքովը մէկտեղ «-դէդ : 10 - Եւ անկէ բան մը չթողուք մինչև առտու . ու անկէ ինչ որ առտուան կը մնայ , կրակով այրէք : 11 - Եւ այսպէս պիտի ուտէք զայն . ձեր գօտիները մէջքերնիդ ու ձեր կօշիկները ոտքերնիդ և ձեր ցուպերը ձեռքերնիդ ըլլալով . զանհկա արտորնօք ուտէք . Տէրօջը †գատիկն է այն : 12 - Եւ այն գիշերը Եգիպտոսի երկրէն պիտի անցնիմ , ու Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը , մարդէ մինչև անասուն , պիտի զարնեմ . Եգիպտոսի բոլոր ‡աստուածներուն վրայ դատաստան պիտի կատարեմ . Ես եմ Տէրը : 13 - Եւ արիւնը ձեր եղած տուներուն վրայ նշանի համար ըլլայ . ու երբ արիւնը տեսնեմ , ձեր վրայէն պիտի անցնիմ . և հարուածը ձեր վրայ պիտի չգայ ՚եզ կորսնցնելու , երբ Եգիպտոսի երկիրը զարնեմ : 14 - Եւ այն օրը ձեզի յիշատակի համար ըլլայ , և զանհկա Տէրօջը տօն պահէք . ձեր Խտուանդին մէջ յաւիտենական կանոնով մը տօն պահէք զայն : 15 - Եօթը օր բազարջ ուտէք . նոյն խկ առաջին օրը ձեր տուներէն դուրս ձգէք խմորք . վտան զի առաջին օրէն մինչև եօթներորդ օրը ով որ խմորեայ հոյ ուտէ , այն անձը Իսրայէլէ պիտի կորսուի : 16 - Եւ առաջին օրը սուրբ ժողով մը ըլլայ , եօթներորդ օրն ալ ձեզի սուրբ ժողով մը ըլլայ . այն օրերը բնաւ դործ մը չգործուի , բայց ամէն մէկուն ուտելիքը , զայն միայն պատրաստէք : 17 - Եւ բազարջներուն քօնը պահէք . քանզի այն նոյն օրուան մէջ

ձեր զօրքերը Եգիպտոսի երկրէն հանցի . ուստի ձեր սերունդին մէջ յաւիտենական կանոնով մը այն օրը պահէք : 18 - Առաջին ամսուն չորեքտասներորդ օրուան իրիկունէն մինչև ամսուն քսանըմէկերորդ օրուան իրիկունը բազարջ պիտի ուտէք : 19 - Եօթը օր տուներնիդ խմոր չգտնուի . քանզի ով որ խմորեայ հոյ ուտէ , այն անձը Իսրայէլի ժողովքէն պիտի կորսուի , թէ՛ օտարական ըլլայ և թէ՛ երկրին բնակը : 20 - Խմորեայ բան մը պիտի չուտէք . ձեր բոլոր բնակութիւններուն մէջ բազարջ ուտէք :

21 - Եւ Մովսէս կանչեց Իսրայէլի բոլոր ծերերը , ու ըստ անոնց , Ձեր ընտանիքներուն համեմատ ընտրեցէք , ու առէք ձեզի Դոյ՛եհ գառ , ու զատկին համար մտրթեցէք : 22 - Եւ զոպայի փունջ մը առէք , ու կոնքին մէջ եղած արիւնին թաթխեցէք , և դրանը վրայի սեմին ու երկու քովի դրանդիքներուն վրայ՝ կոնքին մէջ եղած արիւնէն քսեցէք , և մինչև առտու ձեզմէ մէկը իր տանը դռնէն դուրս չելլէ . 23 - Քանզի Տէրը Եգիպտոսցիները զարնելու պիտի անցնի , և երբ դրանը վրայի սեմին ու երկու կողմի դրանդիքներուն վրայ արիւնը տեսնէ , Տէրը այն դրանը վրայէն պիտի անցնի , և պիտի չթողու սատակիչը՝ որ ձեր տուները մտնէ ՚եզ զարնելու համար : 24 - Եւ այս բանը քեզի ու քու որդիներուդ կանոն ըլլալու համար պահէք յաւիտենա : 25 - Եւ ըլլայ թէ երբ այն երկիրը գտք , զոր Տէրը ձեզի պիտի տայ իր ըսածին պէս , այս պաշտօնը պահէք : 26 - Եւ ըլլայ թէ երբ ձեր որդիները ձեզի քսեն թէ Այս պաշտօնով թ'նչ քսել կ'ուզէք , 27 - Բսէք որ Ասիկա Տէրօջը գատկին զոհն է , որ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն տուներուն վրայէն անցաւ , երբ Եգիպտոսցիները զարկաւ , ու մեր տուները ազատեց : Եւ ժողովուրդը խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ : 28 - Եւ Իսրայէլի որդիները գտցին , ու Տէրօջը Մովսէսի ու Ահարոնի պատուիրածին պէս ըրին . այնպէս ըրին :

29 - Եւ եղաւ որ կէսգիշերին Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը զարկաւ , իր ամբողջ նստող Փարաօնի առջինեկէն մինչև բանաի մէջ եղած զերիին առջինեկը և ամէն անա-

*Եբբ. երկու իրիկուններուն մէջտեղ
 †Եբբ. փեսախ , «-իւն» , անցնիլ
 ‡Կ-ժ , իշխաններուն
 ԽԵբբ. ազգերուն

տունին առջինեկր: 30 - Եւ յի գիշերը ելաւ Փարաւոն ու անոր բոլոր ծառաները և բոլոր Եգիպտացիք, ու Եգիպտոսի մէջ մեծ աղաղակ մը եղաւ. քանզի տուն մը չկար որ անոր մէջ մեռեալ չըլլար:

31 - Եւ գիշերով կանչեց Մովսէսը ու Ահարոնը և ըսաւ, Արիք, ու ելէք իմ ժողովուրդիս մէջէն դուք ալ և Իսրայէլի որդիքն ալ, ու գացէք պաշտեցէք Եհովան՝ ինչպէս ըսիք. 32 - Կա՛ն ձեր հօտերը ու ձեր արջառները առէք, ինչպէս ըսիք, ու գացէք. և զիս ալ օրհնեցէք: 33 - Եւ Եգիպտացիք բռնադատեցին ժողովուրդը որ շուտով այն երկրէն դուրս զրկեն զանոնք. քանզի ըսին, Ամէնքս ալ կը մեռնինք:

34 - Եւ ժողովուրդը իրենց զանգուածը դեռ չխմորած, իրենց խմորի տաշտերը իրենց լաթերովը փաթթած, ուսերնուն վրայ վերցուցին: 35 - Եւ Իսրայէլի որդիները Մովսէսի խօսքին պէս ըրին, ու Եգիպտացիներէն արծաթեղէն զարդեր և ոսկեղէն զարդեր ու հանդերձներ խնդրեցին: 36 - Եւ Տէրը ժողովուրդին շնորհ տուաւ Եգիպտացւոց առջև, այնպէս որ Եգիպտացիք անոնց խնդրածը տուին. ու անոնք կողապտեցին Եգիպտացիները:

37 - Եւ Իսրայէլի որդիները Ռամսէսէ դէպ ի Սոկքովթ չուեցին. ընտանիքներէն զատ վեց հարիւր հազարի չափ հեռեակ այր մարդիկ էին: 38 - Եւ անոնց հետ խառն բազմութիւն ալ ելաւ. և ոչխարները ու արջառները խիստ մեծ հօտ էին: 39 - Եւ Եգիպտոսէ իրենց հանած զանգուածէն անխմոր շօթեր եփեցին, վասն զի խմորեալ չէր. քանզի Եգիպտոսէ վաճառեցան, ու չէին կրնար ուշանալ. ու իրենց պաշար ալ չէին պատրաստեր:

40 - Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն բնակած ժամանակը չորս հարիւր երեսուն տարի էր: 41 - Եւ եղաւ որ չորս հարիւր երեսուն տարիներուն վերջը՝ այն նոյն օրը Տէրոջը բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրէն ելան: 42 - Ասիկա Տէրոջը համար պահելու գիշեր մըն է, վասն զի զանոնք Եգիպտոսի երկրէն հանեց. այս այն գիշերն է Տէրոջը համար Իսրայէլի բոլոր որդիներէն իրենց ազգերուն մէջ պահուելու:

43 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի ու Ահարոնի, Այս է գտակին կանոնը. բնաւ օտարական մը անկէ պիտի չուտէ. 44 - Բայց ամէն մարդու ստակով ծախու առած ծառան, երբ զանիկա թլփատես, այն ատեն թող ուտէ անկէ: 45 - Օտարականն ու վարձկանը անկէ պիտի չուտեն: 46 - Մէկ տան մէջ պիտի ուտուի այն. տունէն դուրս չհանես այն միսէն, ու անոր մէկ ոսկորը պիտի չկտորէք: 47 - Իսրայէլի բոլոր ժողովքը ընէ զայն: 48 - Եւ երբ օտարական մը քու քովդ պանդխտանալու ըլլայ, ու Տէրոջը զատիկ ընելու ըլլայ, անոր ամէն արուն թող թլփատուի, և այն ատեն զայն ընելու մտենայ, ու ինք երկրին բնակին պէս թող ըլլայ. քանզի անթլփատ մէկը բնաւ անկէ պիտի չուտէ: 49 - Երկրացիին ու ձեր մէջ բնակող օտարականին մէկ օրէնք ըլլայ: 50 - Եւ Իսրայէլի բոլոր որդիները Տէրոջը Մովսէսի ու Ահարոնի պատուիրածին պէս ըրին. այնպէս ըրին: 51 - Եւ եղաւ որ այն նոյն օրը Տէրը Եգիպտոսի երկրէն հանեց Իսրայէլի որդիները իրենց զօրքերովը:

ԳԼ ԺԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Արբէ ինծի ամէն անդրանիկը, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն արգանդ բացողը, մարդէն ալ անասունէն ալ. ան իմն է: 3 - Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին, Յիշեցէք այս օրը որ Եգիպտոսէ, ծառայութեան տունէն, ելաք, վասն զի Տէրը ձեզ ասկէ զօրաւոր ձեռքով հանեց. և խմորեալ հոս պիտի չուտուի: 4 - Դուք այսօր ելաք, Ապիպ ամսուն մէջ: 5 - Եւ ըլլայ որ երբ Տէրը տանելու ըլլայ քեզ Քանանացւոց ու Քետացւոց և Ամօրհացւոց ու Խեւացւոց և Յեբուսացւոց երկիրը, զոր քեզի տալու համար քու հայրերուդ երգումը ըրաւ, այն երկիրը որ կաթ ու մեղր կը բղխէ, այս ամսուն մէջ պիտի կատարես այս պաշտօնը: 6 - Եթէ օր բազարջ պիտի ուտես, և եթէ օրերոգ օրը տօն ըլլայ Տէրոջը: 7 - Այն եթէ օրերուն մէջ բազարջ պիտի ուտուի. ու քովդ խմորեալ հոս պիտի չտեսնուի. ոչ ալ քու քովդ խմոր պիտի տեսնուի քու բոլոր սահմաններուդ մէջ: 8 - Եւ այն օրը քու որդւոյդ պիտի պատմես՝ ըսելով, Այս անոր համար է զոր Տէրը ըրաւ ինծի,

երբ ես Եգիպտոսէ ելայ: 9 - Եւ ասիկա քեզի նշանի համար պիտի ըլլայ ձեռքիդ վրայ, ու քու աչքերուդ մէջտեղ յիշատակի համար, որպէս զի Տէրոջը օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ. վասն զի Տէրը քեզ զօրաւոր ձեռքով հանեց Եգիպտոսէ: 10 - Ուստի գուն այս կանոնը տարիէ տարի իր ատենին պիտի պահես: 11 - Եւ ըլլայ որ երբ Տէրը քեզ Քանանացոց երկիրը տանի, ինչպէս քեզի ու քու հայրերուդ երգումըրաւ, որ զանկիա քեզի տայ, 12 - Այն ամէնը որ արգանդ կը բանայ, Տէրոջը համար պիտի զատես. և քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուները Տէրոջը պիտի ըլլան: 13 - Եւ իշուն ամէն առջինեկը ոչխարով մը փրկես. և եթէ չփրկես, անոր վիզը կտրես, ու քու որդիներուդ մէջ մարդոց ամէն անդրանիկը պիտի փրկես: 14 - Եւ ըլլայ որ երբ քու որդիդ *օր մը՝ քեզի հարցնէ՝ ըսելով, Ի՞նչ է այս. անոր պիտի ըսես թէ Տէրը մեզ Եգիպտոսէ, ծառայութեան տունէն, զօրաւոր ձեռքով հանեց. 15 - Եւ եղաւ որ երբ Փարաւոն խտտացաւ «- մեզ արձակել չ-գէշ, Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը, մարդու առջինեկէն մինչև անասունի առջինեկը, մեռցուց. անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ'ընեմ, ու իմ որդիներուս ամէն առջինեկը կը փրկեմ: 16 - Եւ ասիկա քու ձեռքիդ վրայ նշանի համար, ու աչքերուդ մէջտեղ ճակատնոցի համար ըլլայ, վասն զի Տէրը մեզ Եգիպտոսէ զօրաւոր ձեռքով հանեց:

17 - Եւ եղաւ որ երբ Փարաւոն ժողովուրդը արձակեց, Աստուած զանոնք Փղշտացոց երկրին ճամբայէն չտարաւ, թէև այն ճամբան մտաէր. քանզի Աստուած ըսաւ, Զրկայ որ ժողովուրդը զղջայ երբ պատերազմը տեսնէ, ու Եգիպտոս գառնայ: 18 - Հապա Աստուած ժողովուրդը կարմիր ծովուն անապատին ճամբայէն պարտացուց. ու Խորայէլի որդիները գունդ գունդ Եգիպտոսի երկրէն ելան: 19 - Եւ Մովսէս Յովսէփի սկոռները իրեն հետ առաւ. վասն զի անկիա Խորայէլի որդիներուն հաստատ երգումը ընել տուաւ՝ ըսելով, Անշուշտ Աստուած ձեզի այցե-

լով թիւն պիտի ընէ, ու իմ սկոռներս ասկէ ձեզի հետ հանեցէք:

20 - Եւ Սոկրովթէ չուեցին, ու Ոթմոսի մէջ անապատին ծայրը իջեւան ըրին: 21 - Եւ Տէրը անոնց առջեւէն կ'երթար ցորեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցնելու համար, ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու համար, որպէս զի ցորեկ ու գիշեր երթան: 22 - Յորեկը ամպի սիւնը ու գիշերը կրակի սիւնը ժողովուրդին առջեւէն չպահսեցուց:

ԳԼ ԺԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Խորայէլի որդիներուն՝ որ դառնան ու Փիաիթի առջեւ, Մագդոցի ու ծովուն մէջտեղ, բանակ դնեն. Բէեզսեփոնի առջև՝ անոր դիմաց ծովուն քով բանակ դրէք: 3 - Եւ Փարաւոն Խորայէլի որդիներուն համար պիտի ըսէ թէ Երկրին մէջ *մուրաժ են, անապատը անոնց բոլորտիքը պատեց: 4 - Եւ Փարաւոնի սիրտը պիտի կարծրացնեմ, ու անոնց ետեւէն պիտի իյնայ. ու ես Փարաւոնի վրայ և անոր բոլոր զօրքերուն վրայ պիտի փռաւարտիմ, ու Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը: Եւ անոնք այնպէս ըրին:

5 - Եւ պատմուեցաւ Եգիպտոսի թագաւորին թէ ժողովուրդը փախաւ, և Փարաւոնի ու անոր ծառաներուն սիրտը ժողովուրդին դէմ դարձաւ, ու ըսին, Մենք ինչո՞ւ ըրինք այս բանը՝ որ Խորայէլը մեզի ծառայութիւն ընելէն թող առեինք: 6 - Եւ իր կառքը պատրաստեց, ու իր ժողովուրդը իրեն հետ առաւ: 7 - Եւ վեց հարիւրընասիր կառքեր ու Եգիպտոսի բոլոր կառքերը՝ և անոնց ամէն մէկուն վրայ ոստիկաններ առաւ: 8 - Եւ Տէրը Եգիպտոսի Փարաւոն թագաւորին սիրտը կարծրացուց, ու անկիա Խորայէլի որդիներուն ետեւէն ինկաւ. և Խորայէլի որդիները բարձր ձեռքով ելան: 9 - Բայց Եգիպտացիք անոնց ետեւէն ինկան. Փարաւոնի ամէն ձիերը «- կառքերը և անոր ձիաւորները ու զօրքերը, և հասան անոնց՝ որ բանակած էին ծովուն մտա Փիաիթի քով, Բէեզսեփոնի առջև:

*Եբբ. վազր

*Կա՛, շփոված

10 - Եւ երբ Փարաւոն մտեցաւ, Իսրայէլի որդիները իրենց աչքերը վերցուցին, և ահա Եգիպտացիք իրենց ետեւէն կու գային, ու խիստ վախցան. և Իսրայէլի որդիները աղաղակեցին Տէրոջը: 11 - Եւ ըսին Մովսէսի, Եգիպտոսի մէջ գերեզմաններ չըլլալուն համար մեզ անապատին մէջ մեռնելու բերիր. Ի՞նչ է այս մեզի ըրածդ որ մեզ Եգիպտոսէ հանեցիր: 12 - Այս չէ՞ր այն խօսքը զոր քեզի գրուցեցինք Եգիպտոսի մէջ՝ ըսելով, Թող տուր մեզ՝ որ Եգիպտացւոց ծառայութիւն ընենք. քանզի աւելի աղէկ է մեզի Եգիպտացւոց ծառայութիւն ընել, քան թէ անապատին մէջ մեռնիլ: 13 - Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին, Մի վախնաք, կայնեցէք, ու տեսէք Տէրոջը փրկութիւնը զոր այսօր պիտի ընէ ձեզի. վասն զի այսօրուան ձեր տեսած Եգիպտացիները մէյմըն ալ պիտի չտեսնէք յաւիտեան: 14 - Տէրը ձեզի համար պիտի պատերազմի, ու դուք լուսկեցէք:

15 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ինչո՞ւ ինձի կ'աղաղակես. ըսէ Իսրայէլի որդիներուն որ չուեն. 16 - Եւ դուն գաւառանդ վերցուր, ու ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, ու ճեղքէ գայն. և Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով երթան: 17 - Եւ ես ահա Եգիպտացւոց սիրտը պիտի կարծրացնեմ, ու անոնց ետեւէն պիտի երթան. և ես Փարաւոնի ու անոր բոլոր զօրքերուն վրայ, անոր կառքերուն ու անոր ձիաւորներուն վրայ պիտի փառաւորուիմ: 18 - Եւ երբ ես Փարաւոնի ու անոր կառքերուն և անոր ձիաւորներուն վրայ փառաւորուիմ, Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

19 - Եւ Աստուծոյ հրեշտակը, որ Իսրայէլի բանակին առջեւէն կ'երթար, ելաւ ու անոնց ետեւը գնաց. և ամպի սիւնը ելաւ անոնց առջեւէն ու անոնց ետին կայնեցաւ. 20 - Եւ Եգիպտացւոց բանակին ու Իսրայէլի բանակին մէջտեղ եկաւ, ու Եգիպտացւոց ամպ ու խաւար եղաւ, բայց Իսրայէլացւոց գիշերը լոյս կու տար. և բոլոր գիշերը իրարու չմտեցան:

21 - Եւ Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, ու Տէրը սաստիկ արեւելեան հովով դարձուց ծովը, բոլոր գիշերը, և ծովը ցամաք ըրաւ, ու ջու-

րերը ճեղքուեցան: 22 - Եւ Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով քալեցին. ու ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն պարիսպ եղան:

23 - Եւ Եգիպտացիք անոնց ետեւէն ինկան, ու Փարաւոնի բոլոր ձիերը, կառքերը ու ձիաւորները անոնց ետեւէն ծովուն մէջտեղը դացին: 24 - Եւ եղաւ որ առաւօտեան պահուն Տէրը Եգիպտացւոց բանակին նայեցաւ կրակի ու ամպի սիւնէն, ու Եգիպտացւոց բանակը խռովութեան մէջ ձգեց. 25 - Եւ անոնց կառքերուն անիւները հանեց, որոնք դժուարութեամբ առաջ կ'երթային. այնպէս որ Եգիպտացիք ըսին, Փախչինք Իսրայէլի երեսէն, վասն զի «՜» Եհօվա անոնց համար Եգիպտացւոց հետ կը պատերազմի:

26 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, որպէս զի ջուրերը Եգիպտացւոց վրայ, անոնց կառքերուն ու անոնց ձիաւորներուն վրայ դառնան: 27 - Եւ Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, և առտուան դէմ ծովը իր տեղը դարձաւ, ու Եգիպտացիք անոր դիմացէն փախան. և Տէրը թօթափեց Եգիպտացիները ծովուն մէջ: 28 - Եւ ջուրերը դարձան ու ծածկեցին Փարաւոնի կառքերը ու ձիաւորները և բոլոր զօրքերը՝ որոնք անոնց ետեւէն ծովուն մէջ մտան. ու անոնցմէ մէկն ալ չմնաց: 29 - Բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով կ'երթային, և ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն անոնց պարիսպ էին: 30 - Եւ Տէրը այն օրը Եգիպտացւոց ձեռքէն ազատեց Իսրայէլը. ու Իսրայէլ մեռած տեսաւ Եգիպտացիները ծովուն եզերքը: 31 - Եւ Իսրայէլ տեսաւ այն մեծ *գործը զոր Տէրը ըրաւ Եգիպտացւոց վրայ. ու ժողովուրդը վախցաւ Տէրոջմէն, ու հաւատաց Տէրոջը և անոր ծառային Մովսէսի:

ԳԼ. ԺԵ

Այն ատեն Մովսէս ու Իսրայէլի որդիները այս երգը երգեցին Տէրոջը, և խօսեցան ըսելով,
Պիտի երգեմ Տէրոջը, քանզի փառքով փառաւորեալ է.

*Եգի. ձեռքը

- Չին ու անոր հեծեալը ծովը նետեց:
 2 - Տէրն է իմ գորութիւնս ու իմ գովութիւնս,
 Եւ իմ փրկութիւնս եղաւ .
 Անիկա է իմ Աստուածս, ու պիտի փառաւորեմ զանիկա .
 Իմ հօրս Աստուածն է, ու պիտի բարձրացնեմ զանիկա:
 3 - Տէրը հզօր պատերազմող է .
 Անոր անունը ԵՂՈՎԱ է:
 4 - Փարաւոնի կառքերը ու անոր զօրքերը ծովը նետեց .
 Եւ անոր ընտիր ոստիկանները կարմիր ծովուն մէջ ընկղմեցան:
 5 - Անդունդները ծածկեցին զանոնք .
 Քարի պէս խորունկը իջան:
 6 - Քու աջ ձեռքդ, ով Տէր, փառաւորեալ է զօրութեամբ .
 Քու աջ ձեռքդ, ով Տէր, խորտակեց թշնամին:
 7 - Եւ քու փառքիդ մեծութիւնովը քեզի դէմ կեցողները կործանեցիր,
 Քու բարկութիւնդ զրկեցիր . ոչ զանոնք յարդի պէս կերաւ:
 8 - Եւ քու շունչիդ փչելովը ջուրերը ժողվուեցան .
 Հեղեղները դէզի պէս կայնեցան .
 Ծովուն մէջտեղը անդունդները պաղեցան:
 9 - Թշնամին ըսաւ, Պիտի հալածեմ, պիտի հասնիմ,
 Աւարը պիտի բաժնեմ .
 Իմ անձս անոնցմէ պիտի կշտանայ .
 Իմ սուրս պիտի քաշեմ,
 Իմ ձեռքս զանոնք պիտի աւրէ:
 10 - Քու հովդ փչեցիր, ծովը զանոնք ծածկեց .
 Զօրաւոր ջուրերուն մէջ կապարի պէս ընկղմեցան:
 11 - Ով Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս ո՞վ կայ:
 Սրբութեան մէջ փառաւորեալ, օրհնութեան մէջ սքանչելի,
 Հրաշքներ ընող՝ ո՞վ կայ քեզի նման:
 12 - Քու աջ ձեռքդ երկնցուցիր,
 Երկիր զանոնք կլլեց:
 13 - Քու սղորմութիւնովդ առաջնորդեցիր այս ժողովուրդին զոր դուն փրկեցիր .
 Քու զօրութիւնովդ սարիք զանոնք քու սուրբ բնակութիւնդ:
 14 - Ժողովուրդները պիտի լսեն ու սարտափին .

- Փղշտացւոց երկրին բնակիչները ցաւ պիտի բռնէ:
 15 - Այն ատեն Եդովմի իշխանները պիտի տագնապին .
 Մովաբի զօրաւորները պիտի դողան .
 Քանանու բոլոր բնակիչները պիտի հալին:
 16 - Անոնց վրայ վախ ու դող պիտի իյնայ .
 Քու բազուկիդ մեծութենէն քար պիտի կտրին,
 Մինչև անցնի քու ժողովուրդդ, ով Տէր,
 Մինչև անցնի այս ժողովուրդը զոր դուն ստացար:
 17 - Պիտի բերես զանոնք, ու քու ժառանգութեանդ լեռը պիտի տնկես զանոնք,
 Ով Տէր, այն տեղը՝ զոր քու բնակութեանդ համար շինեցիր .
 Ով Տէր, այն սրբարանին մէջ՝ զոր քու ձեռքերդ շինեցին:
 18 - Տէրը պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից:
 19 - Քանզի Փարաւոնի ձեռքը իր կառքերովը ու ձիաւորներովը ծովը մտան, և Տէրը ծովուն ջուրերը անոնց վրայ դարձուց . բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով գացին:
 20 - Եւ Ահարոնի քոյրը Մարիամ մարգարէուհին թմբուկը իր ձեռքը առաւ . ու բոլոր կիները թմբուկներով ու պարերով անոր ետեւէն ելան:
 21 - Եւ Մարիամ պատասխան տուաւ անոնց,
 Երգեցէք Տէրոջը, քանզի փառքով փառաւորեալ է .
 Չին ու անոր հեծեալը ծովը նետեց:
 22 - Եւ Մովսէս կարմիր ծովէն ճամբայ հանեց Իսրայէլը, ու Սուրի անապատ ելան . և երեք օրուան ճամբայ գացին անապատին մէջ, ու ջուր չգտան:
 23 - Աւ երբ Մեռա եկան, չէին կրնար խմել Մեռայի ջուրերէն, վասն զի դառն էին . անոր համար անոր անունը *Մեռա կոչուեցաւ:
 24 - Եւ ժողովուրդը արանջեց Մովսէսի դէմ՝ ըսելով, Ի՞նչ խմենք:
 25 - Եւ անիկա Տէրոջը ազատակեց, ու Տէրը անոր փայտ մը ցուցուց, զոր ջուրերուն մէջ դրածին պէս՝ ջուրերը անուշցան:
 Հոն անոնց կանոն ու գատաստան դրաւ, և

*Այնին, դառնութիւն

հոն փորձեց զանոնք, 26 - Եւ ըսաւ, Եթէ Տէրոջը քու Աստուծոյդ ձայնին ուշադրութեամբ մտիկ ընես, ու ինչ որ անոր առջև շիտակ է՝ ընես, և անոր պատուիրանքներուն ականջ դնես, ու անոր բոլոր կանոնները պահես, այն ախտերէն մէկը քու վրայ պիտի չբերեմ, զորոնք Եգիպտացոց վրայ բերի. քանզի ես եմ Տէրը՝ որ քեզ կը բժշկեմ:

27 - Եւ եկան Եղիմ, ու հոն տասուերկու ջուրի աղբիւրներ ու եօթանասուն արմաւենիներ կային. և հոն ջուրերուն քով բանակ դրին:

ԳԼ. ԺԶ

Եւ չուեցին Եղիմէ, ու Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը եկան Սին անապատը որ Եղիմի ու Սինայի մէջտեղ է, անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ ամսուն տասնըհինգերորդ օրը: 2 - Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը անապատին մէջ Մովսէսի ու Ահարոնի դէմ արտունջ բրին. 3 - Եւ Իսրայէլի որդիները ըսին անոնց, Երանի՛ թէ Տէրոջը ձեռքով մեռած ըլլայինք Եգիպտոսի երկրին մէջ, երբ մտի կաթասներուն քով նստած էինք, «- կուշտ հաց կ'ուտէինք. քանզի մեզ այս անապատը հանեցիք որ բոլոր այս ժողովքը անօթութենէ մեռցնէք:

4 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ահա ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղամ, և ժողովուրդը պիտի ելլէ ու օրէ օր ժողովէ ամէն մէկ օրուան պէտք եղածը, որպէս զի փորձեմ զանոնք թէ իմ օրէնքիս համեմատ պիտի քալեն թէ ոչ: 5 - Եւ ըլլայ որ վեցերորդ օրը բերածնին պատրաստեն, և անիկա ամէն օրուան ժողուածներնուն կրկինը ըլլայ:

6 - Եւ Մովսէս ու Ահարոն ըսին Իսրայէլի բոլոր որդիներուն, Այս իրիկուն պիտի գիտնաք որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանողը Եհովա է: 7 - Եւ առաւօտուն պիտի տեսնէք Տէրոջը փառքը, վասն զի Տէրոջը դէմ ձեր բրած արտունջը ինք լսեց, և մենք ո՞վ ենք՝ որ մեզի դէմ կը արանջէք: 8 - Եւ Մովսէս ըսաւ, Երբ Տէրը ձեզի իրիկունը ուտելու միս, ու առաւօտուն կշտանալու չափ հաց տայ, ուրիշ գիտնաք որ Տէրը լսած է իրեն դէմ բրած արտունջնիդ. և մենք ո՞վ ենք. ձեր արտունջը

մեզի դէմ չէ, հապա Տէրոջը դէմ: 9 - Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի, Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին ըսէ, Տէրոջը առջև մօտեցէք. վասն զի ձեր արտունջը լսեց:

10 - Եւ եղաւ որ երբ Ահարոն Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին կը խօսէր, անոնք դէպ ի անապատը նայեցան, և ահա Տէրոջը փառքը ամպին մէջ երեւցաւ: 11 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, Իսրայէլի որդիներուն արտունջը լսեցի. խօսէ անոնց՝ ըսելով, 12 - Իրիկուան դէմ միս պիտի ուտէք, ու առտուանց հացով պիտի կշտանաք. և պիտի գիտնաք թէ ես եմ Եհովա ձեր Աստուածը:

13 - Եւ եղաւ որ իրիկունը լորամարգիներ ելան ու բանակը ծածկեցին. և առտուանց բանակին բոլորտիքը ցողիջաւ: 14 - Ու երբ իջած ցօղը վերցաւ, ահա անապատին երեսին վրայ մանր թեփածալ բան մը կար, եղեամի պէս մանր, գետնին վրայ: 15 - Ու երբ Իսրայէլի որդիները տեսան, իրարու ըսին, *Ի՞նչ է այս. քանզի ինչ ըլլալը չէին գիտեր. ու Մովսէս ըսաւ անոնց, Այս է այն հացը զոր Տէրը ձեզի ուտելու տուաւ: 16 - Տէրոջը պատուիրած բանը այս է. ժողովեցէք անկէ ամէն մէկդ իր կերածին չափ. ամէն մէկդ իր վրանին մէջ եղողներուն համար, ձեր հոգիներուն համարանքին նայելով, մարդ գլուխ մէյմէկ օմէր առնէք: 17 - Եւ Իսրայէլի որդիները այնպէս բրին. և ո՞րը շատ և ո՞րը քիչ ժողովեց: 18 - Եւ երբ օմէրով կը չափէին, շատ ունեցողինը չաւելցաւ, ու քիչ ունեցողինը չաւելսեցաւ. ամէն մէկը իր կերածին չափ ժողովեց: 19 - Եւ Մովսէս ըսաւ անոնց, Մէկը անկէ մինչև առտու չպահէ: 20 - Բայց մտիկ չըրին Մովսէսի, հապա ոմանք թողուցին անկէ մինչև առտու, և որդնտեցաւ ու հոտեցաւ. և Մովսէս բարկացաւ անոնց: 21 - Եւ ամէն առտու կը ժողովէին անկէ ամէն մէկը իր կերածին չափ, ու արեւը տաքցածին պէս կը հալէր:

22 - Եւ եղաւ որ վեցերորդ օրը կրկնապատիկ ուտելիք, սյսինքն ամէն մէկուն համար երկու օմէր, ժողովեցին. և ժողովքին բոլոր իշխանները եկան ու

*Եբբ. Մանհու (ուրկէ կ'ելլէ մանուշակ, բառը)

պատմեցին Մովսէսի: 23 - Եւ անհկա
րաւ անոնց, Այս է Տէրոջը ըսածը.
Վաղը հանգստութեան սուրբ շաբաթն
է Տէրոջը. ինչ որ պիտի եփէք՝ եփե-
ցէք, և ինչ որ պիտի եռացնէք՝ եռա-
ցուցէք, ու ինչ որ կ'աւելնայ՝ ձեզի
համար առտուան պահուելու թողու-
ցէք: 24 - Եւ անհկա առտուան թողու-
ցին, Մովսէսի հրամայածին պէս. և
ոչ հոտեցաւ, ոչ ալ անոր մէջ որդ-
եղաւ: 25 - Եւ Մովսէս ըսաւ, Այսօր
կերէք զայն, վասն զի այսօր շաբաթ է
Տէրոջը. այսօր դաշտին մէջ անկէ պի-
տի չգանէք: 26 - Վեց օր պիտի ժող-
վէք զանհկա. բայց եօթներորդ օրը,
որ շաբաթ է, պիտի չգանուի: 27 - Եւ
եղաւ որ եօթներորդ օրը ժողովուրդէն
ուննք ժողվելու ելան, ու չգտան:
28 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Մինչև
ե՞րբ չէք ուզեր պահել իմ պատուի-
րանքներս ու օրէնքներս: 29 - Նայե-
ցէք որ Տէրը տուաւ ձեզի շաբաթը,
անոր համար վեցերորդ օրը ինք ձեզի
երկու օրուան հաց կու տայ. սակն
մէկդ իր տեղը թող նստի. մէկը իր
տեղէն չելլէ եօթներորդ օրը: 30 - Եւ
ժողովուրդը հանգստացաւ եօթներորդ
օրը: 31 - Եւ Իսրայէլի *որդիները անոր
անունը Ման գրին. ու այն գինձի
սերմի պէս ձերմակ՝ ու անոր համը մեղ-
րով շինուի՝ գաթայի պէս էր:

32 - Եւ Մովսէս ըսաւ, Տէրոջը հրա-
մայած բանը այս է. Անկէ օմէր մը լե-
ցուցէք՝ որպէս զի ձեր ազգերուն մէջ
պահուի. որպէս զի անոնք տեսնեն այն
հացը, զոր ձեզի կերցուցի անապատին
մէջ, երբ ձեզ Եգիպտոսի երկրէն հա-
նեցի: 33 - Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի,
Սափոր մը առ, ու անոր մէջ օմէր մը
լեցուն մանանայ դիր. և զանհկա ձեր
ազգերուն մէջ պահուելու համար Տէ-
րոջը առջև դիր: 34 - Ինչպէս Տէրը
Մովսէսի պատուիրեց, այնպէս Ահա-
րոն վկայութեան առջև դրաւ զանհկա,
որպէս զի պահուի. 35 - Եւ Իսրայէլի
որդիները քառասուն տարի կերան
մանանան, մինչև որ չէն երկիր եկան.
մանանան կերան, մինչև որ Քանանու
երկրին սահմանը եկան: 36 - Եւ օմէրը
արդուին տասներորդ մասն է:

Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժո-
ղովքը Տէրոջը խօսքին պէս իրենց գնաց-
քին համեմատ Սին անապատէն չուե-
ցին, և Ռափիգիմի մէջ բանակ դրին.
ու ժողովուրդին համար խմելու ջուր
չկար: 2 - Եւ ժողովուրդը Մովսէսի
հետ վիճեցաւ ու ըսաւ, Մեզի ջուր
տուր, որ խմենք. և Մովսէս ըսաւ ա-
նոնց, Ինչո՞ւ ինձի հետ կը վիճիք. ին-
չո՞ւ Տէրը կը փորձէք: 3 - Եւ ժողո-
վուրդը հոն ջուրի համար ծարաւեցաւ.
ու ժողովուրդը Մովսէսի դէմ արտունջ
ըրաւ ու ըսաւ, Ինչո՞ւ համար մեզ Ե-
գիպտոսէ հանեցիր, որ մեզ ու մեր որ-
դիները և մեր հօտերը ծարաւութեամբ
մեռցնես:

4 - Եւ Մովսէս Տէրոջը աղաղակեց՝
ըսելով, Ի՞նչ ընեմ այս ժողովուրդին.
գրեթէ պատրաստ են զիս քարկոծե-
լու: 5 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ժո-
ղովուրդին առջև անցիր, ու Իսրայէլի
ծերերէն քեզի հետ առ, և քու գա-
ւազանդ, որով գեար զարկիր, ձեռքդ
առ ու գնա: 6 - Ահա Քորեբի մէջ
ժայռին վրայ՝ հոն քու առջեւ կը
կայնիմ, և ժայռին զարկ, ու անկէ
ջուր պիտի ելլէ, և ժողովուրդը պիտի
խմէ: Եւ Մովսէս այնպէս ըրաւ Իսրա-
յէլի ծերերուն առջև: 7 - Եւ այն տե-
ղին անունը *Մասսա ու Մերիպա՝
դրաւ. վասն զի Իսրայէլի որդիները
հոն վիճեցան, և Տէրը փորձեցին՝ ըսե-
լով, Արդեօք Տէրը մեր մէջ է թէ ոչ:

8 - Այն ատեն Ամուզէկ եկաւ, ու
Ռափիգիմի մէջ Իսրայէլի հետ պատե-
րազմեցաւ: 9 - Եւ Մովսէս ըսաւ Յե-
սուի, Մեզի մարդիկ ընտրէ, ու Ամու-
զէկի հետ պատերազմելու ելիր. վաղը
ես ըլլուրին գլուխը պիտի կայնիմ՝ Աս-
տուծոյ գաւազանը ձեռքս առնելով:
10 - Եւ Յեսու Մովսէսի ըսածին պէս
ըրաւ, ու Ամուզէկի հետ պատերազմե-
ցաւ. և Մովսէս, Ահարոն ու Ոփր ըլլու-
րին գլուխը ելան: 11 - Եւ կ'ըլլար որ
երբ Մովսէս իր ձեռքերը վեր կը վեր-
ցնէր, Իսրայէլ կը յաղթէր, ու երբ
իր ձեռքերը վար կ'իջեցնէր, Ամուզէկ
կը յաղթէր: 12 - Եւ Մովսէսի ձեռ-
քերը ծանրանալուն՝ քար մը առին ու

*Եբբ. տունը

*Այսինքն, փորձութիւն ու վիճարա-
նութիւն

անոր տակ դրին , և ինք անոր վրայ նստաւ . ու Ահարոն և Ավր , մէկը մէկ կողմէն ու միւսը միւս կողմէն , անոր ձեռքերը վեր բռնեցին , ու մինչև արեգակին մարը մտնելը անոր ձեռքերը հաստատուն մնացին : 13 - Եւ Յեսուսուրի բերնէ անցուց Ամաղէկը ու անոր ժողովուրդը : 14 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Ասիկա յիշատակի համար գիրքի մէջ գրէ , ու Յեսուսի *իմացուր՝ որ Ամաղէկի յիշատակը երկինքի տակէն բոլորովին պիտի ջնջեմ : 15 - Եւ Մովսէս սեղան մը շինեց , ու անոր անունը †Եհովանիսի դրաւ , 16 - Ու ըսաւ , ‡Քանզի Տէրը երգում ըրաւ՝ Ը՛հեւ ը՛հե՛՛ Տէրը ազգէ ազգ պիտի պատերազմի Ամաղէկի դէմ :

ԳԼ. ԺԸ

Եւ Մովսէսի աները , Մադիամու բուրմը Յոթոր , լսեց այն ամէնը զոր Աստուած ըրաւ Մովսէսի ու իր Իսրայէլ ժողովուրդին , և թէ Տէրը Եգիպտոսէ հանեց Իսրայէլը , 2 - Եւ Մովսէսի աները Յոթոր առաւ Մովսէսի կինը Սեպօրան , զանկա ետ զրկելէն ետքը . 3 - Եւ անոր երկու որդիները՝ որոնց մէկուն անունը Գերսամ էր . վասն զի ինք ըսեր էր , Օտար երկրի մէջ պանդուխտ եմ . 4 - Եւ միւսին անունը Խեղիազար էր , վասն զի ը՛հեք էր , իմ հօրս Աստուածը իմ օգնականս էր , ու զիս Փարաւոնի սուրէն ազատեց : 5 - Եւ Մովսէսի աները Յոթոր անոր սրգիներովը ու անոր կնոջմովը եկաւ Մովսէսի դէպ ի անապատը՝ ուր անիկա բանակ դրեր էր Աստուծոյ լեռանը քով . 6 - Եւ իմացուց Մովսէսի՝ ը՛հեւ ը՛հե , Ես , քու աներդ Յոթոր , քեզի կու գամ , նաև քու կինդ իր երկու որդիները իրեն հետ ունենալով : 7 - Եւ Մովսէս իր աները զիմասուրելու ելաւ , և անոք խնարհութիւն ըրաւ , ու համբուրեց զանիկա . և իրարու ողջութիւն հարցուցին ու վրանը մտան :

*Եբբ . ականջներուն մէջ դիր
 †Այսինքն , Տէրը իմ գրօշակս է
 ‡Եբբ . Քանզի Տէրը էր ակթողին վրայ ձեռք վերցնելով երգում ըրաւ , Իմ , Որովհետև ձեռք վերցնեց Տէրոջը ակթողին դէմ ,
 ԽԱյսինքն , իմ Աստուածս օգնականս

8 - Եւ Մովսէս իր աներոջ պատմեց այն ամէնը՝ զոր Տէրը ըրաւ Փարաւոնի ու Եգիպտացիներուն՝ Իսրայէլի համար , և ճամբուն մէջ բոլոր իրենց քաշած աշխատութիւնը , ու Տէրոջը զանոնք ազատելը : 9 - Եւ Յոթոր ուրախացաւ բոլոր բարութիւններուն համար՝ զորոնք Տէրը ըրաւ Իսրայէլի , Փրկելով զանոնք Եգիպտացուց ձեռքէն : 10 - Եւ Յոթոր ըսաւ , Օրհնեալ ըլլայ Տէրը , որ ազատեց ձեզ Եգիպտացուց ձեռքէն ու Փարաւոնի ձեռքէն . վասն զի ազատեց ժողովուրդը Եգիպտացուց ձեռքին տակէն : 11 - Հիմա գիտեմ որ Եհովա բոլոր աստուածներէն մեծ է . քանզի ինչ բանի մէջ որ կը հպարտանային , անոնցմէ վեր երէցաւ : 12 - Եւ Մովսէսի աները Յոթոր ողջակէզ ու զոհեր բերաւ Աստուծոյ . և Ահարոն ու Իսրայէլի բոլոր ծերերը Մովսէսի աներոջ հետ Աստուծոյ առջև հաց ուտելու եկան :

13 - Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս ժողովուրդը դատելու նստաւ , ու ժողովուրդը առաւօտէն մինչև իրիկուն Մովսէսի քով կայնեցաւ : 14 - Եւ Մովսէսի աները երբ տեսաւ ինչ որ կ'ընէր Մովսէս ժողովուրդին , ըսաւ , Ի՛նչ է այս բանը՝ զոր դուն կ'ընես ժողովուրդին . ինչո՞ւ դուն մինակ կը նստիս , ու բոլոր ժողովուրդը առաւօտէն մինչև իրիկուն քու քովդ կը կայնի : 15 - Եւ Մովսէս ըսաւ իր աներոջ , Քանզի ժողովուրդը կու գայ ինձի՝ Աստուծոյ հարցնելու : 16 - Երբ անոնք բան մը ունենան՝ ինձի կու գան , և ես անոնց մէջտեղ դատաստան կ'ընեմ , ու Աստուծոյ կանոնները և օրէնքները անոնց կը գիտցնեմ : 17 - Եւ Մովսէսի աները ըսաւ անոր , Քու ըրածդ աղէկ բան չէ : 18 - Իրաւցընէ դուն պիտի մաշիս , դուն ալ ու քեզի հետ եղած այս ժողովուրդն ալ . վասն զի այս բանը քեզի շատ ծանր է . դուն միայն չես կրնար ընել ասիկա : 19 - Հիմա մտիկ ըրէ իմ խօսքս . ես քեզի խրատ տամ , ու Աստուած քեզի հետ պիտի ըլլայ : Ժողովուրդին համար Աստուծոյ առջև դուն գնա , որպէս զի դատերը դուն ներկայացնես Աստուծոյ . 20 - Եւ անոնց ստիճեցուր կանոնները ու օրէնքները , և գիտցուր անոնց

*Եբբ . մարդուն ու իր ընկերին

իրենց քայելու ճամբան ու իրենց ընելու գործը: 21 - Աւտի դուն բոլոր ժողովուրդէն կարող մարդիկ, Աստուծակ վախցող, ճշմարտասէր - ազասու թիւնը ատող մարդիկ ընտրէ, ու ասան՝ չազարապետներ, չարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ գիր անոնց վրայ: 22 - Աւ ամէն ատեն թող անոնք դատեն ժողովուրդը. և ամէն մեծ բանը քեզի ներկայացնեն, ու ամէն պղտիկ բանը անոնք դատեն. այսպէս քեզի *օգնելով՝ քու վրայէդ Բեւը կը թէթեւցնեն: 23 - Եթէ այս բանը ընես, ու Աստուած ալ քեզի *յալէ՛ պատուիրէ, այն ատեն կարող կ'ըլլաս գիմանալու, և բոլոր այս ժողովուրդն ալ խաղաղութեամբ իրենց տեղը կ'երթան:

24 - Եւ Մովսէս իր աներոջ խօսքը մտիկ բրաւ, ու անոր ամէն բաժըր բրաւ: 25 - Եւ Մովսէս բոլոր Իսրայէլէ կարող մարդիկ ընտրեց, ու զանոնք ժողովուրդին վրայ գլուխներ, այսինքն չազարապետներ, չարիւրապետներ, յիսնապետներ ու տասնապետներ կարգեց: 26 - Եւ ամէն ատեն անոնք կը դատէին ժողովուրդը. դժուարին բանը Մովսէսի կը ներկայացնէին, ու ամէն պղտիկ բանը իրենք կը դատէին: 27 - Եւ Մովսէս իր աները ճամբայ չանեց, ու անիկա իր երկիրը գնաց:

ԳԼ. ԺԹ

Երրորդ ամսուն մէջ՝ Իսրայէլի որդիներուն Եգիպտոսի երկրէն ելլելէն ետքը, նոյն օրը Աինայի անապատը եկան: 2 - Քանզի Ռափիգիմէ չուեցին, ու Աինայի անապատը եկան, ու անապատին մէջ բանակ դրին. և Իսրայէլ չոն լեռանը գիմաց բանակ դրաւ: 3 - Եւ Մովսէս Աստուծոյ ելաւ. ու Տէրը լեռնէն կանչեց զանիկա՝ րսելով, Զակորի ամեր այսպէս րսես, և Իսրայէլի որդիներուն իմացնես. 4 - Իս ք տեսաք ինչ որ բրի Եգիպտացուց, և Էւլէ՛ ձեզ արծիւի թեւերուն վրայ վերցուցի ու քովս բերի: 5 - Եւ չիմա եթէ իրացրնէ իմ ձայնիս չնայանդիք ու իմ ախաս պահէք, գուք ինծի սեպհական Ժողովուրդ պիտի ըլլաք ամէն ազգերէն. վասն զի բոլոր երկիր

իմն է: 6 - Եւ դուք ինծի քահանաներու թագաւորութիւն ու սուրբ ազգ մը պիտի ըլլաք. Իսրայէլի որդիներուն զրուցելու խօսքերդ ասոնք են:

7 - Եւ Մովսէս եկաւ ու ժողովուրդին ծերերը կանչեց, և Տէրոջը իրեն պատուիրած այս բոլոր խօսքերը անոնց առջև դրաւ: 8 - Եւ բոլոր ժողովուրդը միաբերան պատասխանեցին ու ըսին, Տէրոջը բոլոր բաժները պիտի ընենք: Եւ Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջը դարձուց:

9 - Եւ Տէրը բաւ Մովսէսի, Ահա ես քեզի կու գամ թանձր ամպի մը մէջ, որպէս զի ժողովուրդը լսէ՛ երբ ես քեզի հետ խօսիմ, ու նաև յաւիտեան քեզի հաւատայ: Եւ Մովսէս ժողովուրդին խօսքերը Տէրոջը պատմեց:

10 - Եւ Տէրը բաւ Մովսէսի, Գնա ժողովուրդին, և զանոնք սրբէ այսօր ու վաղը, և թող իրենց լաթերը լուան, 11 - Աւ երրորդ օրուան համար պատրաստ ըլլան. քանզի երրորդ օրը Տէրը բոլոր ժողովուրդին աչքին առջև Աինա լեռան վրայ պիտի իջնէ. 12 - Եւ դուն ժողովուրդին բոլորտիքը սահման դնես՝ րսելով, Ինքզինքնիդ լեռը ելլելէն կամ անոր ծայրին դպչելէն զգուշացուցէք. ով որ լեռանը դպչի, անշուշտ պիտի մեռցուի: 13 - Անոր ձեռք չդպչի. քանզի Գուլու անպատճառ պիտի քարկոծուի կամ նեաով զարնուի. թէ՛ անասուն ըլլայ և թէ՛ մարդ, պիտի չապրի. երբ փողին ձայնը երկար չնչուի, անոնք լեռը պիտի ելլեն:

14 - Եւ Մովսէս լեռնէն դէպի ժողովուրդը իջաւ, ու սրբեց ժողովուրդը. և անոնք իրենց լաթերը լուացին: 15 - Եւ անիկա բաւ ժողովուրդին, Երրորդ օրուան համար պատրաստ եղէք. չէր կիներուն մի մերձենաք:

16 - Եւ եղաւ որ երրորդ օրը ատուանց որոտումներ ու կայծակներ կ'ըլլային, և թանձր ամպ մը կար լեռանը վրայ, ու խիտա սաստիկ փողի ձայն մը, և բանակին մէջ եղած բոլոր ժողովուրդը զարհուրեցաւ: 17 - Եւ Մովսէս բանակէն Աստուծոյ առջև հանեց ժողովուրդը, և անոնք լեռանը տակ կայնեցան: 18 - Եւ Աինա լեռը բոլորովին կը միար, վասն զի Տէրը անոր վրայ կրակով իջաւ, ու անոր մուխը չնոցի մուխի պէս կ'ելլէր, և բոլոր

*Ե՛բ. հետ ասանելով

լեռը սաստիկ կը դողար: 19 - Եւ քանի որ փողին ձայնը շատ կը սաստկանար, Մովսէս խօսեցաւ, ու Աստուած ձայնով մը անոր պատասխան տուաւ: 20 - Եւ Տէրը Սինա լեռանը վրայ՝ լեռանը գլուխը իջաւ. ու Տէրը կանչեց Մովսէսը լեռանը գլուխը, և Մովսէս ելաւ: 21 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Իջիր, ժողովուրդին պատուիրէ, որ չըլլայ թէ Տէրը տեսնելու համար սահմանէն անցնին, ու անոնցմէ շատերը կորսուին: 22 - Եւ Տէրոջը մօտեցող քահանաներն ալ սրբուին, որ չըլլայ թէ Տէրը անոնց վրայ յարձակի: 23 - Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը, Ժողովուրդը չկրնար ելլել Սինա լեռը, վասն զի դուն մեզի պատուիրեցիր՝ ըսելով, Սահման դիր լեռանը ու զանհկա սրբէ: 24 - Եւ Տէրը ըսաւ անոր, Գնա, վար իջիր, ու Ահարոնի հետ մէկտեղ ելիր. բայց քահանաները ու ժողովուրդը Տէրոջը ելլելու համար սահմանէն չանցնին, որ չըլլայ թէ անոնց վրայ յարձակի: 25 - Ու Մովսէս ժողովուրդին իջաւ, և «յնպէ» խօսեցաւ անոնց:

ԳԼ Ի

Եւ Աստուած այս բոլոր խօսքերը գրուցեց՝ ըսելով,
 2 - Ես եմ՝ Եհովա, քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի:
 3 - Ինձմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս:
 4 - Դուն քեզի կուռք չչինես, ոչ ալ վերը երկինքի մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրի տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը.
 5 - Անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. վասն զի ես քու Տէր Աստուածդ նախանձառ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս.
 6 - Եւ կ'ողորմիմ՝ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:
 7 - Տէրոջը, քու Աստուծոյդ, անունը պարապ տեղ քերած չառնես. վասն զի Տէրը իր անունը պարապ տեղ քերած առնողը անմեղ պիտի չսեպէ:
 8 - Հանգստութեան օրը միտքդ բեր՝

զանհկա սուրբ պահելու համար: 9 - Վեց օր պիտի աշխատես, ու բոլոր գործդ ընես.
 10 - Բայց եօթներորդ օրը Տէրոջը, քու Աստուծոյդ, հանգստութեան օրն է. «յն օրը գործ մը չգործես, ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղջիկդ, ոչ քու ծառայդ ու աղախինդ, ոչ քու անասունդ, ոչ ալ *տանդ մէջ եղած օտարականդ.
 11 - Քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը ու բոլոր անոր մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանհկա:
 12 - Պատուէ քու հայրդ ու մայրդ, որպէս զի քու օրերդ երկայն ըլլան այն երկրին վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու տայ քեզի:
 13 - Սպանութիւն մի ըներ:
 14 - Շնութիւն մի ըներ:
 15 - Գողութիւն մի ըներ:
 16 - Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ:
 17 - Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու դրացիիդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն, և քու դրացիիդ ամենեւին մէկ բանին մի ցանկար:
 18 - Եւ բոլոր ժողովուրդը կը տեսնէին որոտումները ու կայծակները և փողին ձայնը ու լեռանը մխալը: Եւ երբ ժողովուրդը տեսաւ, ետ քաշուեցաւ ու հեռու կայնեցաւ.
 19 - Եւ ըսին Մովսէսի, Դուն խօսէ մեզի հետ, ու մտիկ կ'ընենք. բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որպէս զի չմեռնինք:
 20 - Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին, Մի վախնաք. վասն զի Աստուած ձեզ փորձելու եկաւ, այնպէս որ անոր վախը ձեր առջև ըլլայ, որպէս զի չմեղանչէք:
 21 - Եւ ժողովուրդը հեռու կայնեցաւ. ու Մովսէս մօտեցաւ այն թանձր խաւարին՝ ուր Աստուած էր:
 22 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Այսպէս պիտի ըսես Իսրայէլի որդիներուն, Դուք տեսաք որ ձեզի հետ երկինքէն խօսեցայ.
 23 - Ինձի հետ արծաթ աստուածներ չչինէք. ոչ ալ ոսկի աստուածներ չինէք ձեզի:
 24 - Ինձի հողէ սեղան մը չինես, ու անոր վրայ քու ողջակէզներդ ու խաղաղութեան

*Եբր. դւներուդ

զոհերդ , քու ոչխարներդ ու արջառ-
 ներդ մատուցանես . և ամէն տեղ , ուր
 իմ անունս յիշել կու տամ , քեզի
 պիտի գամ , ու քեզ պիտի օրհնեմ :
 25 - Եւ եթէ ինծի քարէ սեղան շինե-
 լու ըլլաս , տաշած քարէ չշինես .
 քանզի եթէ անոր վրայ երկաթ գոր-
 ծիք վերցնես , կը պղծես զանիկա :
 26 - Եւ աստիճաններով չելլես իմ սե-
 զանս , որպէս զի քու մերկութիւնդ
 չբացուի անոր վրայ :

ԳԼ ԻԱ

Եւ անոնց առջև դնելու դատաս-
 տաններդ ասոնք են . 2 - Եթէ Եբրա-
 յեցի ծառայ մը ծախու առնելու ըլ-
 լաս , անիկա վեց տարի պիտի ծառայէ ,
 և եօթներորդ «^{օր}» ձրի ազատ պիտի
 ելլէ : 3 - Եթէ մինակ մտաւ , մինակ
 պիտի ելլէ . եթէ կին ունէր , կինն ալ
 իրեն հետ պիտի ելլէ : 4 - Եթէ իր տէրը
 իրեն կին տուաւ , ու անիկա իրեն որ-
 դիներ կամ աղջիկներ ծնած է , կինը
 ու անոր տղաքը տէրոջը պիտի ըլլան ,
 ու ինք մինակ պիտի ելլէ : 5 - Իսկ
 եթէ ծառան յայտնի ըսելու ըլլայ թէ
 Ես կը սիրեմ իմ տէրս , իմ կինս ու
 իմ տղաքներս , չեմ «^{օր}» որ ելլեմ և
 ազատ ըլլամ , 6 - Այն ատեն անոր տէրը
 դատաւորներուն պիտի տանի զանիկա ,
 և դրանը կամ դրանդիքներուն մօտե-
 ցրնէ . ու անոր տէրը անոր ականջը հե-
 րիւնով պիտի ծակէ , և անիկա յա-
 ւիտեան ծառայ պիտի ըլլայ անոր :

7 - Եւ եթէ մէկը իր աղջիկը ազա-
 խին ըլլալու համար ծախէ , անիկա
 ծառաներուն ելլելուն պէս պիտի չելլէ :
 8 - Եթէ անիկա հաճելի չերեւնայ իր
 տէրոջը աչքին՝ որ զանիկա իրեն նշաներ
 էր , թող փրկել տայ զանիկա . Բայց
 զանիկա օտար ազգի ծախելու կարող
 չըլլայ , վասն զի խաբէութիւն ըրաւ
 անոր : 9 - Եւ եթէ զանիկա իր որդւոյն
 նշանած է , աղջկանց օրէնքին համե-
 մատ պիտի ընէ անոր : 10 - Եթէ իրեն
 ուրիշ կէ՞ տունէ , անոր ուտելիքը ,
 հանդերձը ու մերձաւորութիւնը պի-
 տի չկտրէ : 11 - Եւ եթէ անոր այս
 երեք բանը չընէ , այն ատեն անիկա ա-
 ոսանց ստակի ձրի պիտի երթայ :
 12 - Մարդ զարնոյ մեռցնողը ան-
 շուշտ պիտի մեռցուի : 13 - Իսկ եթէ
 դարանամս տ չեղաս , հապա զանիկա՝

Աստուած մասնեց անոր ձեռքը , քեզի
 տեղ մը պիտի սահմանեմ , որպէս զի
 անիկա հոն փախչի : 14 - Բայց եթէ
 մէկը իր դրացիին յի ունենայ , և զա-
 նիկա նենգութեամբ մեռցնէ , իմ սե-
 զանէս ալ պիտի առնես զանիկա՝ որ-
 պէս զի մեռնի : 15 - Եւ իր հօրը կամ
 մօրը զարնողը անշուշտ պիտի մեռցուի :

16 - Եւ մարդ գողցողը , թէ՛ զանիկա
 ծախած ըլլայ , և թէ՛ իր ձեռքը գտնուի ,
 անշուշտ պիտի մեռցուի :

17 - Եւ իր հայրը կամ մայրը անի-
 ծողը անշուշտ պիտի մեռցուի :

18 - Եւ եթէ մարդիկ իրարու հետ
 վէճ ընեն , ու մէկը միւսին քարով
 կամ բռուկով զարնէ , ու անիկա
 չմեռնի , հապա անկողին պառկի ,
 19 - Եթէ նորէն ելլէ ու ցուպով պար-
 տի , զարնողը անպարտ ըլլայ , միայն
 անոր *կորսնցուցած ժամանակին «^{օր}»
 թէ՛ «^{օր}» հատուցանէ , ու բոլորովին ա-
 ոռողջացնէ զանիկա :

20 - Եւ եթէ մէկը դաւազանով իր
 ծառան կամ իր աղախինը զարնէ , ու
 անիկա իր ձեռքին տակ մեռնի , ան-
 շուշտ անկէ վրէժ պիտի առնուի :

21 - Բայց եթէ օր մը կամ երկու օր
 ապրի , անկէ վրէժ չառնուի . քանզի
 անիկա իր ստակն է :

22 - Եւ եթէ մարդիկ կռուին , ու
 յղի կնոջ մը զարնելով՝ անոր տղան
 անցնել տան , և «^{օր}» զնաս մը չըլլայ ,
 անիկա անշուշտ այն կնոջ էրկանը իք
 վրայ դրած տոյժը պիտի քաշէ , դա-
 տաւորներուն «^{օր}» «^{օր}» «^{օր}» պէս հա-
 տուցանելով : 23 - Բայց եթէ զնաս մը
 ըլլայ , անձի տեղ անձ պիտի տաս ,
 24 - Աչքի տեղ աչք , ակուսյի տեղ
 ակուսյ , ձեռքի տեղ ձեռք , ոտքի
 տեղ ոտք , 25 - Խորանի տեղ խա-
 րան , վերքի տեղ վերք , հարուածի
 տեղ հարուած :

26 - Եւ եթէ մէկը իր ծառային
 աչքը կամ իր աղախինին աչքը զարնէ
 ու կուրցնէ , զանիկա իր աչքին փոխա-
 րէն ազատ պիտի արձակէ : 27 - Եւ
 եթէ իր ծառային ակուսն կամ իր ա-
 զախինին ակուսն թափէ , զանիկա իր
 ակուսյին փոխարէն ազատ պիտի ար-
 ձակէ :

28 - Եւ եթէ եզ մը իր եղջիւրնե-
 րովը մարդ մը կամ կին մը զարնէ մեռ-

*Եբր. նստիլը

ցրնէ, եզր անշուշտ պիտի քարկոծուի, ու անոր միտք պիտի չուտուի. բայց եզին տէրը անպարտ ըլլայ: 29 - Հապա եթէ եզը երէկուընէ չ'միւս օրուընէ զարնող է, և անոր տէրոջն ալ զրուցուած է, ու զանհկա պահած չէ, եթէ մարդ մը կամ կին մը մեռցնելու ըլլայ, եզը պիտի քարկոծուի, ու անոր տէրն ալ պիտի մեռցուի: 30 - Եթէ փրկանք մը ձգուի անոր վրայ, անհկա իր անձին ազատութեանը համար՝ ինչ որ իր վրայ ձգուի պիտի վճարէ: 31 - Թէ՛ տղայ մը և թէ՛ աղջիկ մը զարնելու ըլլայ էջ, այս դատաստանին պէս ըլլայ անոր: 32 - Եթէ եզը ծառայ մը կամ աղախին մը զարնէ, անոնց տէրոջը երեսուն սիկղ արծաթ պիտի տայ, ու եզը պիտի քարկոծուի:

33 - Եւ եթէ մէկը փոս մը բանայ, կամ մէկը փոս մը փորէ ու չծածկէ, և հոն եզ մը կամ էջ մը իյնալու ըլլայ, 34 - Վնասը փոսին տէրը պիտի քաշէ, «- անոնց տէրոջը ստակ պիտի տայ, և մեռածը իրը պիտի ըլլայ:

35 - Եւ եթէ մէկուն եզը իր դրացիին եզը զարնէ մեռցրնէ, ողջ եզը պիտի ծախեն, ու անոր ստակը բաժնեն, և մեռածն ալ բաժնեն: 36 - Իսկ եթէ եզին երէկուընէ չ'միւս օրուընէ զարնող ըլլայը գիտցուած ըլլալով, անոր տէրը զանհկա պահած չէ, անշուշտ եզին տէրը եզ պիտի հատուցանէ, ու մեռածը իրը պիտի ըլլայ:

ԳԼ. ԻԲ

Եթէ մէկը արջառ մը կամ ոչխար մը գողնայ, ու մորթէ կամ ծախէ զանհկա, մէկ արջառին տեղ հինգ արջառ, ու մէկ ոչխարին տեղ չորս ոչխար պիտի հատուցանէ: 2 - Եթէ գող մը «-ն ծակելու վրայ գտնուի, ու զարնուի մեռնի, անոր համար արիւն չթափուի: 3 - Եթէ անոր վրայ արեւը ծագեր էր, անոր համար արիւն պիտի թափուի. անհկա լման կրնար հատուցանել. եթէ բան մըն ալ չունենար, այն ատեն իր գողցած բանին համար կրնար ծախուիլ: 4 - Եթէ գողցածը իր ձեռքը ողջ գտնուի, թէ՛ եզ ըլլայ, թէ՛ էջ և թէ՛ ոչխար, կրկինը պիտի հատուցանէ:

5 - Եթէ մէկը արտի մը կամ այգիի

մը *փնաս տայ, թող տալով իր անասունը ուրիշի մը արտին մէջ արածելու, իր արտին ամէնէն աղէկ «բէ-ն-էն» ու իր այգիին ամէնէն աղէկ քեր-էն» պիտի հատուցանէ: 6 - Եթէ կրակ ցաթկէ ու ջանին փուշերուն փակչի, և դիզուած որաները կամ չհնձուած ցորենը կամ արտը այրի, կրակը վաւորը այրածին «բէ-ն-էն» լման պիտի հատուցանէ:

7 - Եթէ մէկը իր դրացիին ստակ կամ ամաններ տայ պահելու համար, և այն մարդուն տունէն գողցուի, եթէ գողը գտնուի, անհկա կրկինը պիտի հատուցանէ. 8 - Եթէ գողը չգտնուի, տանուտէրը դատաւորներուն պիտի տարուի, իր ձեռքը իր դրացիին ստացուածքին չդպցնելը «բէ-ն-էն» համար: 9 - Ամէն կերպ անիրաւութեան համար, թէ՛ եզի, թէ՛ իշու, թէ՛ ոչխարի և թէ՛ հանգերձի համար, չ'միւս ամէն կերպ կորսուած բանի համար՝ զոր ձեռքը հաստատէ թէ իրն է, երկու կողմին դատը դատաւորներուն առջև տարուի, «- դատաւորները որո՛ւ վրայ վճուելու ըլլան, անհկա իր դրացիին՝ կրկինը պիտի հատուցանէ:

10 - Եթէ մէկը իր դրացիին էջ մը կամ եզ մը կամ ոչխար մը կամ ինչեւիցէ անասուն մը պահելու համար տայ, ու անհկա մեռնի կամ փնասուի կամ թշնամին առնէ տանի» ու տեսնող մը չըլլայ, 11 - Այն «բէ-ն» երկուքին մէջտեղ Տէրոջը երգումն ըլլայ՝ իր դրացիին ստացուածքին ձեռք չդպցրնելուն համար. ու անոր տէրը պիտի ընդունի երբ «-մէ», և ինք պիտի չհատուցանէ: 12 - Եւ եթէ իրաւցրնէ իր քովէն գողցուեր է, ինք անոր տէրոջը պիտի հատուցանէ: 13 - Եթէ «բազան» պատառուած է, թող բերէ զանհկա՝ վկայութիւն ըլլալ «-համար. «- պատառուածին գինը պիտի չհատուցանէ:

14 - Եւ եթէ մէկը իր դրացիին «-ն» փոխ առնէ, ու անհկա փնասուելու կամ մեռնելու ըլլայ, անոր տէրը իրեն հետ չըլլալով, ինք անշուշտ պիտի հատուցանէ. 15 - Բայց եթէ անոր տէրը իրեն հետ էր, պիտի չհատուցանէ. եթէ վարձքով առնուած էր, վարձքին տեղ սեպուի:

*Եբբ. մէջ արածել տայ
†Եբբ. գերութեան քշուի

16 - Եւ եթէ մէկը չնշանուած աղջիկ մը խաբէ, ու անոր հետ պառկի, անշուշտ անոր օժիտը ինք տալով զանիկա իրեն կին պիտի ընէ: 17 - Եթէ անոր հայրը ամենեւին չուզէ անոր տալ, անիկա կոյսերուն օժիտին չափ ստակ պիտի *տայ:

18 - Կախարդ կինը չապրեցնես:

19 - Ով որ անասունի հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի:

20 - Միայն Տէրոջմէն զատ *բիշ աստուածներու զոհ ընողը բոլորովին պիտի կորսուի:

21 - Եւ օտարականը մի չարչարեր, ու զանիկա մի նեղեր. վասն զի դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք: 22 - Որբեւարին ու որբը բնաւ մի չարչարէք: 23 - Եթէ զանոնք չարչարէք ինչեւիցէ կերպով մը, ու անոնք ինծի բողոքելու ըլլան, անշուշտ պիտի լսեմ անոնց աղաղակը. 24 - Եւ իմ բարկութիւնս պիտի բորբոքի, ու ձեզ սրով պիտի մեռցնեմ. և ձեր կիները որբեւարի՝ ու ձեր տղաքները որբ պիտի ըլլան:

25 - Եթէ իմ ժողովուրդէս քու քովդ եղած աղքատ մէկուն փոխ ստակ տաս, վաչխ առնողի մը պէս մի ըլլար անոր, ու անոր վրայ վաչխ մի դներ:

26 - Եթէ քու դրացիիդ հանդերձը գրաւ առնես, արեւը մարը չմտած իրեն ետ դարձնես. 27 - Վասն զի այն է միայն անոր ծածկոցը, իր մարմինին հանդերձն է այն. ինչով պիտի պառկի. և պիտի ըլլայ որ երբ ինծի աղաղակէ, պիտի լսեմ, քանզի ես ողորմած եմ:

28 - Գատաւորները մի հայհոյեր, և քու ժողովուրդիդ իշխանը մի անիծեր:

29 - Քու արմախքներուդ ու հեղանիւթներուդ երախայրիները մի ուշացրներ. քու որդիներուդ անդրանիկները ինծի պիտի տաս: 30 - Քու եղիդ * ոչխարիդ ալ այսպէս պիտի ընես. եօթը օր մօրը հետ պիտի ըլլայ. ութը օրը զայն ինծի պիտի տաս:

31 - Եւ դուք ինծի սուրբ մարդիկ պիտի ըլլաք. և դաշտին մէջ գազաններէն պատառուածին միտը պիտի չուտէք. շուներուն պիտի նետէք զայն:

Սուտ լուր չտանիս. անօրէնի հետ ձեռքդ չդնես անիրաւ վկայ ըլլալով:

2 - Չարութիւն ընելու համար բազմութեան չհետեւիս. ու դատաստանի մէջ երբ * * * * * ծռելու համար շատերուն կողմը խտորելով՝ խօսք չխօսիս:

3 - Եւ աղքատին աշտուութիւն չընես իր դատին մէջ:

4 - Եթէ քու թշնամիիդ մուրած եղին կամ իշուն հանդիպելու ըլլաս, անշուշտ իրեն դարձնես զանիկա: 5 - Եթէ քեզ տաղին էջը բռնի տակ ինկած տեսնես, ու զանիկա ազատէլէն հրաժարելու ալ ըլլաս, անշուշտ անոր հետ էլ ազատես:

6 - Քու աղքատիդ դատին մէջ անոր իրաւունքը չծռես:

7 - Սուտ խօսքէն հեռու կեցիր, և անմեղը ու արդարը մի մեռցներ. վասն զի ես չարը պիտի չարգարացնեմ:

8 - Եւ կաշառք չառնես. վասն զի կաշառքը աչքը բաց մարդիկը կուրացնէ, և արգարներուն *խօսքերը կը խանգարէ:

9 - Եւ օտարականը մի նեղեր. վասն զի դուք օտարականին սիրար գիտէք. որովհետեւ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք:

10 - Եւ քու երկիրդ վեց տարի սերմանես, ու անոր արդիւնքը ժողվես.

11 - Բայց եօթներորդ * * * * * անգործ ձգես ու թողուս զայն, որպէս զի քու ժողովուրդիդ աղքատները ուտեն, և անոնցմէ մնացածը դաշտին անասունները ուտեն. քու այգիիդ * * * * * թիթաստանիդ ալ այսպէս ընես:

12 - Վեց օր քու գործդ գործէ, ու եօթներորդ օրը հանգստացիր, որպէս զի քու եղբ ու էջդ հանգստանայ, և քու աղախիւնիդ որդին ու օտարականը շունչ առնէ: 13 - Եւ բոլոր ձեզի գրուցածներու մէջ զգուշաւոր ըլլաք, և ուրիշ աստուածներուն անունը չխիշէք. ձեր բերնէն * * * * * չսուի:

14 - Տարին երեք անգամ ինծի տօն պահէ: 15 - Բազարջակերաց տօնը պահէ. քեզի պատուիրածիս պէս եօթը օր անխմոր հաց պիտի ուտես Սպիտակամուն մէջ սահմանուած ժամանակին. վասն զի այն * * * * * մէջ Եգիպ.

*Եբր. կշռէ

*Կամ, դատերը

տոսէ ելար . և բնաւ մէկը յեւրոս Դա-
տարկ չերեւնայ իմ առջեւ : 16 - Եւ
արտին մէջ ցանելու աշխատութեանդ
երախայրի պտուղը հնձելու տօնը ու
տարւոյն վերջը ժողովելու տօնը պահէ ,
երբ արտէն քու աշխատութիւնդ կը
ժողովես : 17 - Տարին երեք անգամ քու
ամէն արուներդ Տէր Եհովայի առջև
պիտի երեւնան :

18 - Իմ զոհիս արիւնը խմորեալ
հացով չմատուցանես , ու իմ տօնիս
ճարպը մինչև առտու պիտի չմնայ :

19 - Քու երկրիդ առաջին երախայրի-
ները քու Տէր Աստուծոյդ տունը
տանիս :

Ուլը իր մօրը կաթին մէջ չեփես :

20 - Ահա քու առջեւէդ հրեշտակ
մը կը զրկեմ , որ քեզ ճամբուն մէջ
պահպանէ , ու իմ պատրաստած տեղս
տանի քեզ : 21 - Անկէ զգուշացիր , ու
անոր խօսքը մտիկ ըրէ , անոր անհնա-
զանդ մի ըլլար . վասն զի անիկա ձեր
յանցանքը պիտի չներէ , քանզի իմ
անունս անոր վրայ է : 22 - Բայց եթէ
ուշագրութեամբ անոր խօսքը մտիկ
ընես , ու իմ բոլոր ըսածս ընես , այն
ատեն քու թշնամիներուդ թշնամի
պիտի ըլլամ , և քու հակառակորդնե-
րուդ հակառակորդ :

23 - Քանզի իմ
հրեշտակս քու առջեւէդ պիտի եր-
թայ , և քեզ Ամօրհացուց ու Քե-
տացուց և Փերեզացուց ու Քանանաց-
ուց , Խեւացուց ու Յերուսացուց պիտի
տանի , և ես պիտի ջարդեմ զանոնք :

24 - Անոնց աստուածներուն երկրպա-
գութիւն կամ ծառայութիւն չընես ,
ու անոնց ըրածին պէս չընես . հապա
բոլորովին կործանես զանոնք , ու անոնց
կուսքերը բոլորովին կտարտես :

25 -
Եւ ձեր Տէր Աստուածը պաշտէք , ու
ինք ձեր հացը ու ջուրը պիտի օրհնէ ,
և ձեր մէջէն հիւանդութիւնը պիտի
վերցնեմ :

26 - Քու երկրիդ մէջ վի-
ժող ու ամուլ պիտի չըլլայ . քու օրե-
րուդ թիւը պիտի լեցնեմ :

27 - Իմ
երկիւղս քու առջեւէդ պիտի զրկեմ ,
և պիտի կորսնցնեմ այն բոլոր ժողո-
վուրդը որու դուն կ'երթաս , ու քու
բոլոր թշնամիներուդ կանակը քեզի
պիտի դարձնեմ :

28 - Եւ քու առջե-
ւէդ իշամեղուն պիտի զրկեմ , որպէս
զի Խեւացիները , Քանանացիները ու
Քետացիները քու առջեւէդ վաճաճէ :

29 - Անոնք քու առջեւէդ մէկ տարու մն

մէջ պիտի չվաճաճեմ , որ չըլլայ թէ եր-
կիրը ամսոյի ըլլայ , ու քու վրադ դաշ-
տին գազանները շատնան : 30 - Ձա-
նոնք քու առջեւէդ կամաց կամաց
պիտի վաճաճեմ , մինչև որ դուն բազ-
մանաս ու երկիրը ժառանգես : 31 - Եւ
քու սահմաններդ կարմիր ծովէն մինչև
Փղշտացուց ծովը , ու անապատէն մին-
չև Եգիպտոս գետը պիտի դնեմ . վասն զի
այն երկրին բնակիչները քու ձեռքդ
պիտի տամ . ու զանոնք քու առջեւէդ
վաճաճես : 32 - Անոնց հետ ու անոնց
աստուածներուն հետ ուխտ չընես :

33 - Քու երկրիդ մէջ չբնակին , որպէս
զի քեզի մեղք գործել չտան ինձի
դէմ . վասն զի եթէ անոնց աստուած-
ները պաշտես , անշուշտ այն քեզի որո-
գայթ պիտի ըլլայ :

ԳԼ ԻԴ

Եւ ըսաւ Մովսէսի , Տէրօջը ելիւր
դուն ու Ահարոն , Նադաբ ու Աբիուդ ,
և Իսրայէլի ծերերէն եօթանասուն
հոգի , ու հեռուէն երկրպագութիւն
ըրէք :

2 - Եւ միայն Մովսէս մօտենայ
Տէրօջը , ու անոնք չմօտենան , ոչ ալ
ժողովուրդը անոր հետ ելլէ :

3 - Եւ Մովսէս եկաւ , ու Տէրօջը բո-
լոր խօսքերը և բոլոր դատաստանները
պատմեց ժողովուրդին . և բոլոր ժողո-
վուրդը միաձայն պատասխան տուին
ու ըսին , Տէրօջը զրուցած բոլոր խօս-
քերը պիտի ընենք :

4 - Եւ Մովսէս Տէ-
րօջը բոլոր խօսքերը գրեց , ու առ-
տուանց կանուխ ելաւ , ու լեռանը
տակ սեղան մը շինեց . ու Իսրայէլի
տասուերկու ցեղերուն համեմատ տաս-
ուերկու արձան կանգնեց :

5 - Եւ Իս-
րայէլի որդիներէն պատանիներ զրկեց ,
ու ողջակէզներ մատուցին և խաղա-
ղութեան զոհերու համար զուարակ-
ներ զոհեցին Տէրօջը :

6 - Եւ Մովսէս
արիւնին կէսը առաւ ու կոնքերու մէջ
դրաւ . և արիւնին կէսը սեղանին վրայ
սրսկեց :

7 - Եւ առաւ ուխտին գիրքը
« ժողովուրդին ականջներուն կար-
դաց . և անոնք ըսին , Տէրօջը բոլոր
ըսածը պիտի ընենք , ու անոնք պիտի
հնազանդինք :

8 - Եւ Մովսէս առաւ
արիւնը , ու ժողովուրդին վրայ սրսկեց ,
ու ըսաւ , Ահա բոլոր այս խօսքերուն
համեմատ Տէրօջը ձեզի հետ ըրած
ուխտին արիւնը :

9 - Այն տառն Մովսէս ու Ահարոն, Նադաբ ու Աբիուգ, և Խորայէլի ծերերէն եօթանասուն հոգի էլան : 10 - Եւ Խորայէլի Ասատուածը տեսան . ու անոր սոքերուն տակ աղիւսով յատակածի պէս շափիւղայ, և պայծառութեամբ բուն երկինքին պէս էր : 11 - Եւ Խորայէլի սրդիներուն բնաբեայներուն վրայ իր ձեռքը շերկնցուց, և զԱսատուած տեսան, ու կերան և խմեցին :

12 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Լեռը ելիր ինծի, ու հոն կայնէ, և պիտի տամ քեզի քարեղէն տախտակները ու իմ գրած օրէնքս և պատուիրանքներս՝ որպէս զի անոնց սորվեցնես : 13 - Եւ Մովսէս ու անոր պաշտօնեան Յետու էլան, և Մովսէս Աստուծոյ լեռը ելաւ : 14 - Եւ ըսաւ ծերերուն, դուք հոս մեզի սպասեցէք, մինչև որ ձեզի դառնանք . և ահա Ահարոն ու Ալր ձեզի հետ են, եթէ մէկը դատ մը ունենայ, թող անոնց երթայ :

15 - Եւ Մովսէս լեռը ելաւ, ու ամպը պատեց լեռը : 16 - Եւ Տէրօջը փառքը Սինա լեռանը վրայ հանգչեցաւ, ու ամպը պատեց զանհկա վեց օր . և եօթներորդ օրը Տէրը ամպին մէջէն կանչեց Մովսէսը : 17 - Եւ Տէրօջը փառաց ատելքը լեռանը գազաթին վրայ մուշղ կրակի պէս էր Խորայէլի սրդիներուն առջև : 18 - Եւ Մովսէս ամպին մէջ մտաւ ու լեռը ելաւ, և Մովսէս քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը կեցաւ :

ԳԼ ԻԵ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ բռնով : 2 - Զրուցէ Խորայէլի սրդիներուն՝ որ ինծի բնծայ բերեն . ամէն յօժար կամքով ասոր մարդէն պիտի առնէք իմ բնծաս : 3 - Եւ ձեր անոնցմէ առնելու բնծան այս է . ոսկի և արծաթ ու պղինձ : 4 - Եւ կապուտակ ու ծիրանեղոյն և կրկնակի կարմիր ու բարակ թթան և այծի մազ, 5 - Եւ կարմիր ներկուած խոյի մորթեր ու թէհաշի մորթեր և Սատիմի փայտեր, 6 - Լոյսի համար իւղ, օժման իւղի համար ու անուշախա խունկի համար հասեմներ, 7 - Եղնդնաքարեր ու եփուտին ու յանջապանակին վրայ գամուէղու քարեր :

8 - Եւ ինծի սրբարան մը շինեն՝ որպէս զի իրենց մէջ բնակիմ : 9 - Խորանին օրինակը և անոր բոլոր կարափքին օրինակը, բոլոր քեզի ցուցուցած իս պէս, ճիշդ այնպէս պիտի շինէք :

10 - Եւ Սատիմի փայտէ տապանակ մը շինեն . անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս, և անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս, և անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ :

11 - Եւ զանհկա զուտ ոսկիով պատես, ներսէն ու դուրսէն պատես զայն . և անոր վրայ բոլորաթիքը ոսկի շրջանակ մը շինես : 12 - Եւ անոր համար չորս ոսկի օղակ ձուլես, ու անոր չորս անանկիւնները դնես զանոնց, որպէս զի անոր մէկ կողմը երկու օղակ ու միւս կողմը երկու օղակ ըլլայ :

13 - Եւ Սատիմի փայտէ ձողեր շինես, ու զանոնք ոսկիով պատես : 14 - Եւ ձողերը տապանակին քովերը եղած օղակներուն անցնես, որպէս զի տապանակը անոնցմով վերցուի :

15 - Զողերը տապանակին օղակներուն մէջ մտան . անկէ չհանուին : 16 - Եւ տապանակին մէջ դնես վկայութիւնը՝ զոր քեզի պիտի տամ :

17 - Եւ զուտ ոսկիէ քառութիւն մը շինես, անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս, և անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ :

18 - Եւ ոսկիէ երկու քերովբէներ շինես քառութիւնին երկու ծայրին վրայ . † կռածոյ շինես զանոնք :

19 - Եւ մէկ քերովբէն մէկ ծայրէն ու միւս քերովբէն միւս ծայրէն շինես : 20 - Եւ քերովբէները թեւերնին վերէն տարածելով՝ իրենց թեւերովը քառութիւնը պիտի ծածկեն . և անոնց երեսները իրարու պիտի նայեն . քերովբէներուն երեսները դէպի քառութիւնը պիտի ըլլան :

21 - Եւ քառութիւնը տապանակին վրայ պիտի դնես . և քեզի տալու վկայութիւնս տապանակին մէջ դնես :

22 - Եւ հոն էս քեզի պիտի հանդիպիմ . ու քառութեանը վրայէն, վկայութեան տապանակին վրայ եղած երկու քերովբէներուն մէջտեղէն, Խորայէլի սրդիներուն համար բոլոր քեզի պատուիրելու բաներուս վրայով պիտի խօսիմ քեզի հետ :

23 - Եւ Սատիմի փայտէ սեղան մը

*Կամ, կափարիչ
†Կամ, ճախարակեսայ

շինես . անոր երկայնութիւնը երկու կանգուն , և անոր լայնութիւնը մէկ կանգուն , ու անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս պիտի ըլլայ : 24 - Եւ զանկիս զուտ ոսկիով պատես . ու անոր բոլորաթիւր ոսկի շրջանակ մը շինես : 25 - Եւ անոր չորս մատնաչափ սպառուած մը շինես . ու սպառուածին բոլորաթիւր ոսկի շրջանակ մը շինես : 26 - Եւ անոր չորս ոսկի օղակ շինես . ու անոր չորս անկիւնը չորս սուրբին քով դնես օղակները : 27 - Օղակները սպառուածին քով պիտի ըլլան , որպէս զի սեղանը վերցնելու համար՝ ձողերուն տեղեր ըլլան : 28 - Եւ ձողերը Սատիմի փայտէ շինես , ու վանոնք ոսկիով պատես . և սեղանը անոնցմով պիտի վերցուի : 29 - Եւ անոր սկուտեղները ու անոր խնկամանները և բաժակները ու գաւաթները շինես , որպէս զի անոնցմով թափելու նուէր մատուցուի . զանոնք զուտ ոսկիէ շինես : 30 - Եւ սեղանին վրայ առաջաւորութեան հացը դնես միշտ իմ առջև :

31 - Եւ զուտ ոսկիէ աշտանակ մը շինես . կռածոյ պիտի շինուի աշտանակը , «- անոր բունը , ճիւղերը , սկահակները , գնդակները ու ծաղիկները իրմէ ըլլան : 32 - Եւ անոր քովերէն վեց ճիւղեր ելլեն . աշտանակին մէկ քովէն երեք ճիւղ , և աշտանակին միւս քովէն երեք ճիւղ ելլեն . 33 - Մէկ ճիւղին վրայ նշաձե երեք սկահակ ըլլայ՝ գնդակով ու ծաղիկով , և միւս ճիւղին վրայ նշաձե երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով . աշտանակէն ելած վեց ճիւղերը սյապէս պիտի ըլլան : 34 - Եւ աշտանակին վրայ չորս նշաձե սկահակ պիտի ըլլայ իրենց գնդակներովը ու ծաղիկներովը : 35 - Եւ աշտանակէն ելած վեց ճիւղերուն՝ երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ , ու երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ , և երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ պիտի ըլլայ : 36 - Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէ պիտի ըլլան . ամէնը մէկ կտորէ՝ զուտ ոսկիէ կռածոյ պիտի ըլլան : 37 - Եւ անոր եօթը ճրագները շինես . ու անոր ճրագները վառուածատեն լոյսը առջեւէ տան : 38 - Եւ անոր ունելիները ու անոր բազմակալները զուտ ոսկիէ պիտի ըլլան : 39 - Անկիս բոլոր այս գործիքներով տաղանդ մը զուտ ոսկիէ պիտի շինուի :

40 - Եւ նայէ որ լեւը քեզի ցուցուած օրինակին պէս շինես զանոնք :

ԳԼ ԻԶ

Եւ խորանը շինես տասը վարագոյրներով՝ մանուած բարակ քթանէ ու կապուտակէ և ծիրանեգոյնէ ու կրկնակի կարմիրէ . վարպետի գործ շինես զանոնք քերովբէներով : 2 - Մէկ վարագուրին երկայնութիւնը քսանութ կանգուն և մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն պիտի ըլլայ . բոլոր վարագոյրներուն չափը մէկ ըլլայ : 3 - Հինգ վարագոյրները իրարու պիտի կցուին , և «- հինգ վարագոյրները իրարու պիտի կցուին : 4 - Եւ կցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ կապուտակեայ օղակներ շինես . միւս կցուածքին ծայրի վարագուրին եզերքն ալ այնպէս ընես : 5 - Մէկ վարագուրին վրայ յիսուն օղակ շինես , և միւս կցուածքին վրայ եղած վարագուրին ծայրն ալ յիսուն օղակ շինես . օղակները դիմացէ դիմաց պիտի ըլլան : 6 - Եւ յիսուն կարթածե ոսկի ճարմանդներ շինես . ու վարագոյրները ճարմանդներով կոճկես , և մէկ խորան պիտի ըլլայ :

7 - Եւ խորանին վրայ ծածկոց ըլլալու համար այժի մազէ վարագոյրներ շինես . տասներմէկ վարագոյրներ ընես զանոնք : 8 - Մէկ վարագուրին երկայնութիւնը երեսուն կանգուն , և մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն ըլլայ . տասներմէկ վարագոյրներուն չափը մէկ ըլլայ : 9 - Եւ հինգ վարագոյրները զատ ու վեց վարագոյրները զատ կցես . և վեցերորդ վարագոյրը խորանին առջեւի կողմէն երկպատիկ ընես : 10 - Եւ կցուածքին ծայրը եղած մէկ վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ , ու միւս կցուածքին ծայրը եղած վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ շինես : 11 - Եւ պղնձէ յիսուն կարթածե ճարմանդներ շինես , ու ճարմանդները օղակներուն անցնես , և վրանը կոճկես ու մէկ ըլլայ : 12 - Եւ վրանին վարագոյրներէն աւելորդ մնացածը , այսինքն վարագուրին աւելցած կէսը , խորանին ետեւէն կախուած պիտի մնայ : 13 - Եւ վրանին վարագոյրներուն երկայնութենէն մէկ կանգուն մէկ կողմէն ,

ու մէկ կանգուն միւս կողմէն աւելցածը խորանին՝ քովերը կախուած մնայ՝ զանհկա մէկ կողմէն ու միւս կողմէն ծածկելու համար : 14 - Եւ վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթերէն ծածկոց մը , ու առջ վրայէն թէհաշի մորթերէն ծածկոց մը շինես :

15 - Եւ խորանին տախտակները Սատիմի փայտէ շինես որ կանգնած մնան :

16 - Մէկ տախտակին երկայնութիւնը տասը կանգուն , և մէկ տախտակին լայնութիւնը մէկ ու կէս կանգուն պիտի ըլլայ : 17 - Ամէն մէկ տախտակը երկերկու ազուցիկ ծայրեր պիտի ունենայ իրարու համեմատ . խորանին բոլոր տախտակներուն պայպէս ընես :

18 - Եւ խորանին տախտակները շինես . դէպ ի հարաւ՝ հարաւային կողմը քսան տախտակ չիւնա :

19 - Եւ քսան տախտակներուն տակ քառասուն արծաթ խարիսխ շինես . մէկ տախտակին տակ իր երկու ազուցիկ ծայրը առջևն էլ - համար երկու խարիսխ , և միւս տախտակին տակ իր երկու ծայրը առջևն էլ - համար երկու խարիսխ պիտի ըլլայ :

20 - Եւ խորանին միւս կողմին համար հիւսիսային կողմը քսան տախտակ ,

21 - Եւ անոնց քառասուն արծաթ խարիսխները . մէկ տախտակին տակ երկու խարիսխ , ու միւս տախտակին տակ երկու խարիսխ չիւնա :

22 - Եւ խորանին ետեւի կողմին համար արեւմտեան կողմը վեց տախտակ շինես :

23 - Եւ խորանին անկիւններուն համար ետեւի կողմը երկու տախտակ շինես :

24 - Եւ վարէն պիտի կցուին , ու վերէն մէկ օղակով կցուած մէկ պիտի ըլլան . երկուքն ալ պայպէս պիտի ըլլան . անոնք երկու անկիւններուն համար պիտի ըլլան .

25 - Եւ «յապէ»՝ ասոնք ութ տախտակ պիտի ըլլան . ու անոնց արծաթ խարիսխները տասներեք խարիսխ պիտի ըլլան . մէկ տախտակին տակ երկու խարիսխ ու միւս տախտակին տակ երկու խարիսխ ըլլայ :

26 - Եւ Սատիմի փայտէ նիգեր շինես . խորանին մէկ քովի տախտակներուն համար հինգ շէշ ,

27 - Եւ խորանին միւս քովի տախտակներուն համար հինգ նիգ , ու դէպ ի արեւմտք խորանին ետեւի կողմի տախտակներուն համար հինգ նիգ պիտի ըլլայ .

28 - Եւ մէջտեղի նիգը , պայսինքն տախտակներուն մէջտեղ եղածը , մէկ ծայրէն

միւս ծայրը պիտի անցնի : 29 - Եւ տախտակները սակիով պատես , ու անոնց օղակները , պայսինքն նիգերուն տեղերը , սակիէ շինես . և նիգերը սակիով պատես :

30 - Եւ խորանը կանգնես իր ձեւին համեմատ , ինչպէս լեռանը վրայ քեզի ցուցուեցաւ :

31 - Եւ կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ վարագոյր մը շինես . անհկա վարպետի գործ քերովբէներով պիտի շինուի :

32 - Եւ զանհկա Սատիմի քառակուսի չորս սակիապատ սիւներու վրայ դնես . անոնց ճանկերը սակի պիտի ըլլան , «- չորս արծաթ խարիսխներու վրայ պիտի ըլլան :

33 - Եւ վարագոյրը ճարմանդներէն վար կախես , ու հոն վարագուրին ներսի կողմը վկայութեան տապանակը բերես . և վարագոյրը ձեզի պիտի բաժնէ սրբութիւնին ու սրբութեանց սրբութիւնին մէջտեղ :

34 - Եւ քառութիւնը վկայութեան տապանակին վրայ՝ սրբութեանց սրբութիւնին մէջ դնես :

35 - Եւ վարագուրին դուրսիդին սեղանը , ու սեղանին դիմաց խորանին հարաւային կողմը աշտանակը դնես . ու սեղանը հիւսիսային կողմը դնես :

36 - Եւ վրանին դրանը համար կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ նկարագործ դրան վարագոյր մը շինես :

37 - Եւ դրան վարագուրի համար Սատիմի քառակուսի հինգ սիւն շինես , ու զանոնք սակիով պատես . և անոնց ճանկերը սակիէ ըլլան . ու անոնց համար պղնձէ հինգ խարիսխ ձուլես :

ԳԼ ԻԷ

Եւ զոհի սեղանը Սատիմի փայտէ շինես , երկայնութիւնը հինգ կանգուն ու լայնութիւնը հինգ կանգուն . սեղանը քառակուսի ըլլայ , և անոր բարձրութիւնը երեք կանգուն ըլլայ : 2 - Եւ անոր եղջիւրները անոր չորս անկիւններուն վրայ շինես . անոր եղջիւրները իրմէ ըլլան . ու զանհկա պղնձով պատես : 3 - Եւ անոր մոխիրը ժողվելու համար անոր թաղարները ու անոր թիակները և անոր կանքերը ու անոր

*կա՛ , խոյակները

մասհանները ու անոր կրակի ամանները շինես . անոր բոլոր գործիքները պղնձէ շինես : 4 - Եւ անոր ցանցակերպ կասկարայ մը շինես պղնձէ, ու ցանցին վրայ չորս պղնձէ օղակ շինես անոր չորս անկիւններուն վրայ : 5 - Եւ զանիկա սեղանին շրջանակին տակ դնես ներքեւէն, որ ցանցը գրեթէ սեղանին մէջտեղը ըլլայ : 6 - Եւ սեղանին համար ձողեր շինես . ձողերը Սասիմի փայտէ ըլլան, ու զանոնք պղնձով պատես : 7 - Եւ անոր ձողերը օղակներուն պիտի անցունին, ու ձողերը սեղանին երկու քովերը պիտի ըլլան՝ զանիկա վերցնելու համար : 8 - Զանիկա տախտակներէ մէջը դատարկ պիտի շինես . լեռը քեզի ցուցուածին պէս՝ այնպէս պիտի շինեն զանիկա :

9 - Եւ խորանին սրահը շինես . հարաւային կողմին համար սրահին վարագոյրներէք մանուած բարակ քթանէ ըլլալով՝ մէկ քովի երկայնութիւնը հարիւր կանգուն պիտի ըլլայ : 10 - Եւ անոր քսան սիւները ու անոնց քսան խարիսները պղնձէ, և սիւներուն ճանկերը և անոնց կապերը արծաթէ պիտի ըլլան : 11 - Եւ նոյնպէս հիւսիսային կողմին համար «հին» երկայնութեանը նայելով՝ վարագոյրները հարիւր կանգուն երկայն պիտի ըլլան, ու անոր քսան սիւները և անոնց քսան խարիսները պղնձէ, սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ պիտի ըլլան : 12 - Եւ արեւմտեան կողմին համար սրահին լայնութեանը նայելով՝ վարագոյրները յիսուն կանգուն պիտի ըլլան, անոնց սիւները տասը ու անոնց խարիսները տասը պիտի ըլլան : 13 - Եւ սրահին արեւելեան կողմին համար՝ անոր լայնութիւնը արեւելեան կողմէն յիսուն կանգուն պիտի ըլլայ : 14 - Եւ «հին» մէկ քովին վարագոյրները տասներհինգ կանգուն պիտի ըլլան, անոնց սիւները երեք ու անոնց խարիսները երեք : 15 - Եւ միւս քովին վարագոյրները տասներհինգ կանգուն պիտի ըլլան, անոնց սիւները երեք ու անոնց խարիսները երեք : 16 - Եւ սրահին դրանը համար կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ քսան կանգունի նկարագործ վարագոյր մը պիտի շինես . անոնց սիւները չորս ու անոնց խարիսները չորս պիտի ըլլան : 17 -

Սրահին բոլորափքը եղած բոլոր սիւները արծաթ կապերով, ու անոնց ճանկերը արծաթէ, և անոնց խարիսները պղնձէ պիտի ըլլան : 18 - Սրահին երկայնութիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը ամէն տեղ յիսուն, և բարձրութիւնը հինգ կանգուն . լարագոյրները մանուած բարակ քթանէ պիտի ըլլան, ու անոնց խարիսները պղնձէ պիտի ըլլան : 19 - Խորանին բոլոր գործիքները իր ամէն պաշտօնին համար՝ և անոր բոլոր ցիցերը ու սրահին բոլոր ցիցերը պղնձէ պիտի ըլլան :

20 - Եւ դուն պատուիրես Իսրայէլի որդիներուն՝ որ քեզի *ծեծուած մարքուր ձէթ բերեն լոյսի համար, որ կանթեղները միշտ վառին : 21 - Ահարոն ու անոր որդիները ժողովքի խորանին մէջ՝ վկայութեանը առջեւի վարագուրին դուրսիցին՝ իրիկուրնէ մինչև առաւ Տերօջը առջև զայն լարեկարգադրեն . ասիկա անոնց յաւիտեանական կանոն ըլլայ իրենց ազգերուն մէջ Իսրայէլի որդւոցը կողմանէ :

ԳԼ ԻԸ

Եւ դուն քեզի մօտեցուր քու եղբայրդ Ահարոնը ու անոր որդիները իրեն հետ՝ Իսրայէլի որդիներուն մէջէն, որպէս զի ինձի քահանայութիւն ընեն . Ահարոնը և Ահարոնի որդիները, Նադաբը ու Աբիուդը, Եղիազուրը ու Իթամարը : 2 - Եւ քու եղբորդ Ահարոնի սուրբ զգեստներ պիտի շինես պատիւի ու փառքի համար : 3 - Եւ դուն ըսէ բոլոր իմաստուն միտք ունեցողներուն՝ զորոնք ես իմաստութեան հոգիով լեցուցի, որ Ահարոնի զգեստները շինեն՝ զանիկա օրհնելու համար՝ որպէս զի ինձի քահանայութիւն ընէ : 4 - Եւ անոնց շինելու զգեստները տանք են . լանջապանակ ու եփուտ և պատմուճան ու նկարագործ շապիկ, խոյր և գօտի . և սուրբ զգեստներ շինեն քու եղբորդ Ահարոնի ու անոր որդիներուն, որպէս զի ինձի քահանայութիւն ընեն :

5 - Եւ անոնք պիտի առնեն ոսկին ու կապուտակը և ծիրանեգոյնը ու կրկնակի կարմիրը և բարակ քթանը . 6 - Եւ

*Այսինչ, ծեծուած ձիթապտուղէն ինքիրմէ վազած

ոսկի Դէլէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ, կրկնակի կարմիրէ և մանուած բարակ քթանէ վարպետի գործ պիտի շինեն եփուտը : 7 - Անոր երկու ծայրերը երկու կցուած վակասներ պիտի ունենան, որպէս զի եփուտը միացած ըլլայ : 8 - Եւ եփուտին վրայ եղած ժապուէնը անոր շինուածքին պէս նոյն բանէն պիտի ըլլայ. ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ պիտի ըլլայ : 9 - Եւ երկու եղնգնաքարեր առնես, ու անոնց վրայ Խորայէլի որդիներուն անուները փորագրես : 10 - Անոնց անուներուն վեցը մէկ քարին վրայ, և մնացած վեց անուները միւս քարին վրայ, անոնց ծնունդներուն համեմատ Գորգոնի : 11 - Այն երկու քարերուն վրայ Խորայէլի որդիներուն անուները ակունք բանոզի գործով այսինքն կնիք փորագրելու պէս փորագրես. ոսկի խորշերու մէջ գամես զանոնք : 12 - Եւ երկու քարերը եփուտին ուսերուն վրայ պիտի դնես, որպէս զի Խորայէլի որդիներուն յիշատակի քարեր ըլլան, ու Ահարոն անոնց անուները յիշատակի համար իր երկու ուսերուն վրայ պիտի կրէ Տէրօջը առջև : 13 - Եւ ոսկիէ խորշեր պիտի շինես. 14 - Եւ զուտ ոսկիէ սլորուած հիւսուած՝ երկու շղթաներ պիտի շինես, ու հիւսուած շղթաները խորշերուն անցնես :

15 - Եւ գատաստանի լանջապանակը վարպետի գործ շինես. զանկա եփուտին շինուածքին պէս շինես. ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ շինես : 16 - Քառակուսի պիտի ըլլայ երկուքի ծայրուելով. անոր երկայնութիւնը մէկ թիզ ու անոր լայնութիւնը մէկ թիզ ըլլայ : 17 - Եւ անոր մէջ ակունքներու գամուածքին համեմատ չորս կարգ քարեր պիտի դամես. առ կարգը սարգիսն, տպագիսն ու զմուսիսն՝ առաջին կարգը պիտի ըլլայ. 18 - Եւ երկրորդ կարգը պիտի ըլլայ կարկեհան, շափելոյ ու ադամանդ. 19 - Եւ երրորդ կարգը պիտի ըլլայ գոճազմ, ակատ ու մեղեփիկ. 20 - Եւ չորրորդ կարգը պիտի ըլլայ ոսկեքար, եղնգնաքար ու յապիս. ասոնք ոսկի խորշերու մէջ գամուած պիտի ըլլան : 21 - Եւ քարերը Խորայէլի

որդիներուն անուներուն պէս տատուերկու պիտի ըլլան, անոնց անուներուն համեմատ. ամէն մէկը իր անուները տատուերկու ցեղին համեմատ՝ կնիք փորագրողի գործով Գորգոնի պիտի ըլլան : 22 - Եւ լանջապանակին վրայ զուտ ոսկիէ սլորուած հիւսուած շղթաներ պիտի շինես : 23 - Եւ լանջապանակին վրայ երկու ոսկի օղակներ շինես, ու այն երկու օղակները լանջապանակին երկու ծայրերուն վրայ դնես : 24 - Եւ այն երկու հիւսուած ոսկի շղթաները լանջապանակին ծայրը եղած երկու օղակներուն անցնես. 25 - Եւ երկու հիւսուած շղթաներուն Գորգոնի երկու ծայրերը այն երկու խորշերուն անցնես, ու զանոնք եփուտին առջևի կողմէն ուսերուն վրայ դնես : 26 - Եւ երկու ոսկի օղակներ ալ շինես, ու զանոնք լանջապանակին ներքի կողմէն՝ եփուտին կցուած եզերքին երկու ծայրերը դնես : 27 - Եւ Գորգոնի երկու ոսկի օղակներ շինես, ու զանոնք եփուտին երկու ուսերուն վարէն, անոր առջևի կողմի կցուածքին մօտ, եփուտին ժապուէնին վրայէն անցնես : 28 - Եւ լանջապանակը իր օղակներէն՝ կապուտակէ Գորգոնի լարով եփուտին օղակներէն կապեն, որպէս զի եփուտին ժապուէնին վրայ ըլլայ, ու լանջապանակը եփուտին վրայէն չգատուի : 29 - Եւ Ահարոն երբ սրբարանը մանէ, Խորայէլի որդիներուն անուները Տէրօջը առջև յիշատակի համար՝ միշտ իր սրտին վրայ եղած գատաստանի լանջապանակին վրայ պիտի կրէ : 30 - Եւ գատաստանի լանջապանակին մէջ Ռեզիմը ու Թուսիմը դնես. և Ահարոնի սրտին վրայ պիտի ըլլան, երբ անկա Տէրօջը առջև միշտ իր սրտին վրայ պիտի կրէ Խորայէլի որդիներուն գատաստանը :

31 - Եւ եփուտին պատմու ճանք բոլորովին կապուտակէ պիտի շինես : 32 - Եւ անոր մէջտեղը զլուսի առջևէ ճեղքուածք մը ըլլայ. ճեղքուածքին բոլորաբար զրահի ճեղքուածքին պէս հիւսուած եզերք ունենայ, որպէս զի չպատուի : 33 - Եւ անոր քղանցքներ

* Այսինքն, լոյսեր (յայտնութիւն) .
 † Այսինքն, կատարելութիւններ (ճշմարտութիւն)

բուն վրայ կապուտակէ ու ծիրանե-
գոյնէ և կրկնակի կարմիրէ նուաւր
պիտի շինես քղացքներուն բոլոր-
տիքը, ու անոնց մէջտեղ շուրջանակի
ոսկի զանգակներ: 34 - Պատմութեան
քղանցքին վրայ շուրջանակի ոսկի զան-
գակ մը ու նուաւ մը, ոսկի զանգակ մը
ու նուաւ մը պիտի ըլլայ: 35 - Եւ պաշ-
տօնի համար անիկա Ահարոնի վրայ
պիտի ըլլայ. ու Տէրոջը առջև սրբա-
բանը մտած ու ելած ատենը անոր
ձայնը պիտի լսուի որ չմեռնի:

36 - Եւ զուտ ոսկիէ թիթեղ մը պի-
տի շինես, ու անոր վրայ կնիք փորա-
գրելու պէս *ՍՐԲՈՒԹԻԻՆ ՏԵԱՌՆ՝
փորագրես: 37 - Եւ կապուտակ ժա-
պաւէն մը անցնես անոր՝ որ խոյրին
վրայ դրուի. և խոյրին վրայ անոր առ-
ջեւի կողմը ըլլայ: 38 - Եւ անիկա Ա-
հարոնի ճակատին վրայ պիտի ըլլայ,
որ Խարայէլի որդիներուն նուիրած բո-
լոր սուրբ ընծաներուն անօրէնութիւնը
Ահարոն կրէ. ու միշտ իր ճակատին
վրայ պիտի ըլլայ, որպէս զի անոնք ըն-
դունելի ըլլան Տէրոջը առջև:

39 - Եւ շապիկը բարակ քթանէ
նկարէն հիւսես, ու խոյրը բարակ
քթանէ պիտի շինես և գօտին նկարա-
գործ պիտի շինես:

40 - Եւ Ահարոնի որդիներուն շա-
պիկներ պիտի շինես, ու անոնց գօտի-
ներ պիտի շինես. և պատիւի ու փառքի
համար անոնց ապարօշներ պիտի շի-
նես: 41 - Եւ զանոնք քու եղբօրդ Ա-
հարոնի ու իրեն հետ իր որդիներուն
պիտի հագցնես. ու զանոնք պիտի օծես,
և ի պիտի օրհնես, ու սրբես զանոնք՝
որպէս զի ինձի քահանայութիւն ընեն,
42 - Եւ անոնց կառէ անդրավարտիք-
ներ պիտի շինես իբեւ մարմինին մեր-
կութիւնը ծածկելու համար. անոնց
մէջքերէն մինչև ծունկերը պիտի հաս-
նին: 43 - Եւ անոնք Ահարոնի ու ա-
նոր որդիներուն վրայ պիտի ըլլան՝ երբ
ժողովքի խորանը մտնեն, կամ երբ
սեղանին մօտենան սրբարանին մէջ
պաշտելու համար, որ չըլլայ թէ անօ-
րէնութիւն կրեն ու մեռնին. ասիկա
յաւիտենական կանոն մը ըլլայ իրեն ու
իրմէ ետքը իր սերունդին:

Եւ այս է զոր անոնց պիտի ընես
զանոնք սրբելու համար, որպէս զի ինձի
քահանայ ըլլան. արջաուներէն զուա-
րակ մը ու երկու անարատ խոյ առնես,
2 - Եւ անխմոր հաց ու իւղով շաղուած
անխմոր շօթեր և իւղով օծուած ան-
խմոր լաւաշներ «անէ». ասոնք ցորենի
բարակ ալիւրէն շինես. 3 - Եւ սակաւի
մը մէջ դնես. ու զանոնք սակաւին
մէջ, և զուարակը ու երկու խոյերը
մօտեցնես: 4 - Եւ Ահարոն ու անոր
որդիները ժողովքի խորանին դրանը
մօտեցնես, ու զանոնք ջրով լուսաւ: 5 -
Եւ զգետները պիտի առնես, ու շա-
պիկը և եփուտին պատմութեանը ու
եփուտը և լանջապանակը Ահարոնի
պիտի հագցնես. ու եփուտին ժապա-
ւէնովը գօտեւորես զանիկա: 6 - Եւ
խոյրը անոր գլուխը դնես, ու խոյրին
վրայ սուրբ պսակը դնես: 7 - Եւ օծ-
ման իւղը առնես, ու անոր գլխուն
վրայ թափելով՝ օծես զանիկա: 8 - Եւ
անոր որդիները մօտեցնես, ու անոնց
շապիկներ հագցնես. 9 - Եւ գօտիներ-
ովը գօտեւորես զանոնք, այսինքն Ա-
հարոնը ու անոր որդիները, ու անոնց
բլբլ-իւ ապարօշներ փաթթես. ու քա-
հանայութիւնը անոնցը ըլլայ յաւիտե-
նական կանոնով: Այսպէս պիտի օրհ-
նես Ահարոնը ու անոր որդիները:

10 - Եւ զուարակը ժողովքի խորա-
նին առջև մօտեցնես, ու Ահարոն և
անոր որդիները իրենց ձեռքը զուարա-
կին գլխուն վրայ դնեն: 11 - Եւ ժո-
ղովքի խորանին դրանը «Է՛ Տէրոջը
առջև մորթես զուարակը: 12 - Եւ
զուարակին արիւնէն առնես, ու մա-
տովդ սեղանին եղջիւրներուն վրայ
դնես, և ճաշք բոլոր արիւնը սեղա-
նին տակովը թափես: 13 - Եւ փորո-
տիքը ծածկող ամէն ճարպը ու լեար-
դին վրայ եղած թաղանթը և երկու
երկամունքը ու անոնց վրայ եղած
ճարպը առնես, և սեղանին վրայ այ-
րես: 14 - Բայց զուարակին միւսը ու ա-
նոր մորթը և անոր աղբը բանակին
դուրսիցին կրակով այրես. այս մեղքի
պատարագ է:

15 - Եւ խոյերուն մէկը առնես, և
Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռ-
քերը խոյին գլխուն վրայ դնեն: 16 -
Եւ այն խոյը մորթես, ու անոր արիւնը

*Այսինքն, Տէրոջը սրբացած
ԻՅԷՐ. անոնց ձեռքը պիտի լեցնես

առնես, և սեղանին վրայ շուրջանակի սրսկես: 17 - Եւ խոյր կտոր կտոր ընես, ու անոր փորտափքը և անոր սաքերը լուսա, ու զանան՝ անոր կտորներուն և գլխուն վրայ դնես: 18 - Եւ բոլոր խոյր այրես սեղանին վրայ. այս ողջակէզ է Տէրոջը. անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը:

19 - Եւ միւս խոյր առնես. ու Ահարոն և անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դնեն: 20 - Եւ խոյր մորթես, ու անոր արիւնէն առնես, և Ահարոնի աջ ափանջին բլթակին վրայ ու անոր որդիներուն աջ ափանջներուն բլթակին վրայ և անոնց աջ ձեռքին մեծ մատին վրայ ու անոնց աջ սաքին մեծ մատին վրայ դնես. և հասցնի արիւնը սեղանին վրայ շուրջանակի սրսկես: 21 - Եւ սեղանին վրայ եղած արիւնէն ու օծման իւղէն առնես, և Ահարոնի վրայ ու անոր զգեստներուն վրայ և անոր հետ իր որդիներուն վրայ ու իր որդիներուն զգեստներուն վրայ սրսկես. և անիկա ու անոր զգեստները և անոր հետ իր որդիները ու իր որդիներուն զգեստները սուրբ պիտի ըլլան: 22 - Եւ խոյէն առնես ճարպը ու դմակը և փորտափքը ծածկող ճարպը և լեարդին վրայ թաղանթը ու երկու երիկամունքը և անոնց վրայ եղած ճարպը ու աջ զիտար. վասն զի այս աստուծոյ օրհնութեան խոյն է: 23 - Եւ Տէրոջը առջև եղած անխմոր հացի սակառէն մէկ պան հացի ու մէկ իւղով հացի շօթ և մէկ լուսաշառիչ, 24 - Եւ ամէնը Ահարոնի ձեռքը ու անոր որդիներուն ձեռքը դնես, և զանոնք Տէրոջը առջև երեքցնելու ընծայ մատուցանես: 25 - Եւ անոնց ձեռքէն առնես զանոնք, ու սեղանին վրայի ողջակէզին վրայ այրես Տէրոջը առջև անոյշ հոտի համար. սափկա պատարագ մըն է Տէրոջը: 26 - Եւ Ահարոնի աստուծոյ օրհնութեան համար պատարագ խոյէն երբուժը առնես, ու զանիկա Տէրոջը առջև երեքցնելու ընծայ մատուցանես. և այն քու բաժինդ ըլլայ: 27 - Եւ Ահարոնի համար ու անոր որդիներուն համար եղած աստուծոյ օրհնութեան խոյէն երեքցնելու երբուժը ու բարձրացնելու զիտար սրբես: 28 - Եւ սափկա յաւիտենական

կանոնով Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ Իսրայէլի որդիներուն կողմանէ. վասն զի այս բարձրացնելու ընծայ է, և պիտի ըլլայ բարձրացնելու ընծայ, Իսրայէլի որդիներէն իրենց խաղաղութեան զոհերէն քան իրենց բարձրացնելու ընծան Տէրոջը:

29 - Եւ Ահարոնի սուրբ զգեստները իրմէ ետքը իր որդիներուն պիտի ըլլան, որպէս զի անոնցմով օծուին, ու անոնցմով օրհնուին: 30 - Եւ անիկա որ իր որդիներէն իր տեղ քահանայ ըլլալով սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար ժողովքի խորանը պիտի մտնէ, զանոնք եօթը օր հազնի: 31 - Եւ աստուծոյ օրհնութեան խոյր առնես, ու անոր միսը սուրբ տեղ մը եփես: 32 - Եւ Ահարոն ու անոր որդիները ժողովքի խորանին դրանը քով պիտի ուտեն խոյին միսը ու սակառին մէջի հացը: 33 - Եւ անոնք պիտի ուտեն այն բաները՝ որ իրենց օրհնութեան աստուծոյ կողմէն համար անոնցմով քաւութիւն եղաւ. և օտարական մը աստուծոյ պիտի չուտէ, վասն զի անոնք սուրբ են: 34 - Եւ եթէ օրհնութեան միսէն ու հացէն մինչև աւտու մնայ, այս աւելցածը կրակով այրես. անիկա պիտի չուտուի, վասն զի սուրբ է:

35 - Եւ Ահարոնի ու անոր որդիներուն այսպէս ընես, բոլորքէ զի ապարածիս պէս. եօթը օրուան մէջ կատարես անոնց օրհնութիւնը: 36 - Եւ օրը մէկ զուարակ մեղքի պատարագ ընես քաւութեան համար. ու սեղանին համար քաւութիւն ընելու առանդ մաքրես զանիկա, և սուրբ ընելու համար օծես զանիկա: 37 - Սեղանին համար եօթը օր քաւութիւն ընես, ու սուրբ ընես զայն. և սեղանը ամենասուրբ պիտի ըլլայ. ինչ որ սեղանին դպչի սուրբ պիտի ըլլայ:

38 - Եւ սեղանին վրայ ընելու զոհ այս է. միշտ ամէն օր մէկ տարեկան երկու գառներ. 39 - Մէկ գառը աստուծոյ մատուցանես, ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես: 40 - Եւ մէկ գառին հետ մէկ հիմենի քաւորդ ձեռուած ձէթով շաղուած մէկ տասնորդ բարակ սլիւր, և թափելու նուէրին համար մէկ հիմենի քաւորդ մը գինի մատուցանես: 41 - Եւ միւս գառը իրիկուան դէմ զոհես. ու աստուծոյ հացի ընծային պէս և անոր

*ԵՔ. երեքցնես

Թափելու նուէրին պէս ընես անոր. այս անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը : 42 - Ասիկա ձեր ազգերուն մէջ մշտնջենաւոր ողջակէզ պիտի ըլլայ Տէրոջը առջև ժողովքի խորանին դրանը + ւ, ուր ձեզի պիտի հանդիպիմ՝ քեզի հետ խօսելու : 43 - Եւ հոն Իսրայէլի որդիներուն պիտի հանդիպիմ, ու Իսրայէլիմ՝ փառքովս սուրբ պիտի ըլլայ : 44 - Եւ ժողովքի խորանը ու սեղանը պիտի սրբեմ. Ահարոնը ու անոր որդիներն ալ պիտի սրբեմ, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն : 45 - Եւ Իսրայէլի որդիներուն մէջ պիտի բնակիմ, ու անոնց Աստուած պիտի ըլլամ : 46 - Եւ պիտի գիտնան թէ անոնց Տէր Աստուածը ես եմ, որ անոնց մէջ բնակելու համար Եգիպտոսի երկրէն հանեցի զանոնք. ես եմ անոնց Տէր Աստուածը :

ԳԼ. Լ

Եւ խունկ ծխելու սեղան մը շինես. Սատիմի փայտէ շինես զանիկա . 2 - Անոր երկայնութիւնը կանգուն մը, ու անոր լայնութիւնը կանգուն մը, քառակուսի պիտի ըլլայ, և անոր բարձրութիւնը երկու կանգուն. անոր եղջիւրները իրմէ պիտի ըլլան : 3 - Եւ անոր վրայ ու անոր քովերը շուրջանակի՝ և անոր եղջիւրները զուտ ոսկիով պատես. ու շուրջանակի ոսկի պսակ մը շինես անոր : 4 - Եւ երկու ոսկի օղակներ շինես անոր. պսակին տակէն՝ անոր երկու քովերը երկու կողմերէն շինես, որպէս զի անոնցմով վերցուելու համար ձողերուն անցնելու տեղերը ըլլան : 5 - Եւ ձողերը Սատիմի փայտէ շինես, ու զանոնք ոսկիով պատես : 6 - Եւ զանիկա դնես վկայութեանը վրայի քառութիւնին առջև՝ վկայութեան տապանակին քով եղած վարագուրին առջև, ուր ես քեզի պիտի հանդիպիմ : 7 - Եւ Ահարոն անոր վրայ անուշահոտ խունկ պիտի ծխէ. ամէն առտու ճրագները շիտկած ատենը Իսրայէլի պիտի ծխէ : 8 - Եւ Ահարոն իրկուտան դէմ՝ ճրագները վառած ատենը Իսրայէլի պիտի ծխէ, որ Տէրոջը առջև մշտնջենաւոր խունկ ըլլայ ձեր ազգերուն մէջ : 9 - Անոր վրայ օտար խունկ, կամ ողջակէզ, կամ հացի բնծայ չմատուցանէք. ոչ ալ անոր վրայ նուէր թափէք : 10 - Եւ Ահարոն տարին անգամ մը անոր եղ-

ջիւրներուն վրայ քառութիւն պիտի ընէ. անիկա քառութիւններուն մեղքի պատարագին արիւնովը անոր վրայ քառութիւն պիտի ընէ տարին անգամ մը ձեր ազգերուն մէջ. ասիկա ամենասուրբ է Տէրոջը :

11 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 12 - Երբ Իսրայէլի որդիներուն գումարը առնելու ըլլաս՝ իրենց թիւին նայելով, այն ատեն անոնց ամէն մէկը իր հոգւոյն փրկանքը պիտի տայ Տէրոջը՝ զանոնք համրած ատենդ, որպէս զի անոնց մէջ հարուած չըլլայ երբ զանոնք համրես : 13 - Անոնք զայս պիտի տան. ամէն մէկը որ կ'անցնի՝ կը համրուի, սրբարանին սիկզին համեմատ կէս սիկզ արծաթ պիտի ունայ. մէկ սիկզը քսան կէրատ է. Տէրոջը բնծան կէս սիկզ պիտի ըլլայ : 14 - Ամէն քսան տարեկանէն վեր եղողը որ կ'անցնի, կը համրուի, ոչ բնծան Տէրոջը պիտի տայ : 15 - Երբ ձեր հոգիներուն քառութիւն ընելու համար Տէրոջը բնծայ տան, կէս սիկզէն ոչ հարուստը աւելի՝ ու ոչ ազքատը պակաս պիտի տայ : 16 - Եւ Իսրայէլի որդիներէն քառութեան արծաթը առնես, ու ժողովքի խորանին պաշտօնին տաս, որպէս զի Տէրոջը առջև յիշատակ ըլլայ Իսրայէլի որդիներուն՝ ձեր հոգիներուն քառութիւն ընելու համար :

17 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18 - Նաև պղնձէ աւազան մը շինես լուացման համար, ու անոր խաւիսին ալ պղնձէ ըլլայ. և ժողովքի խորանին ու սեղանին մէջտեղ դնես զայն, ու անոր մէջ ջուր լեցնես : 19 - Եւ Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան անկէ : 20 - Երբ անոնք ժողովքի խորանը մտնելու ըլլան, կամ երբ սեղանին մօտենալու ըլլան՝ պաշտօն կատարելու և կրակով Տէրոջը զոհ մատուցանելու համար, ջրով լուացուին, որպէս զի չմեռնին. 21 - Այսպէս իրենց ձեռքերը ու ոտքերը լուան, որպէս զի չմեռնին. և ասիկա իրենց յաւիտենական կանոն պիտի ըլլայ, թէ՛ իրեն և թէ՛ իր սերունդին իրենց ազգերուն մէջ :

22 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23 - Առ քեզի պատուական համեմներ, զուտ զմուռս հինգ հարիւր «էլզ, և անոր կէսին չափ՝ այսինքն երկու հարիւր յիսուն «էլզ, անուշահոտ

կինաման, ու երկու հարիւր յիսուն
 -իչ անուշահոտ խունկեղէզն, 24 - Լի-
 հինգ հարիւր -իչ կասիա՝ սրբարանին
 սիկղին համեմատ, ու մէկ չիմէն ձէթ.
 25 - Եւ սուրբ օծման իւղ շինես զայն՝
 իւզագործի արհեստով բաղադրուած.
 անիկա սուրբ օծման իւղ պիտի ըլլայ:
 26 - Եւ անով օծես ժողովքի խորանը,
 ու վկայութեան տապանակը, 27 - Եւ
 սեղանը ու անոր ամէն անօթները, և
 աշտանակը ու անոր գործիքները, և
 և խունկին սեղանը, 28 - Եւ ողջակէ-
 զին սեղանը իր ամէն գործիքներուն
 հետ մէկտեղ, և աւագանը ու անոր
 խարիսխը: 29 - Եւ սրբես զանոնք, որ-
 պէս զի ամենասուրբ ըլլան. ինչ որ ա-
 նոնց դպչի՝ սուրբ պիտի ըլլայ: 30 - Եւ
 Ահարոնը ու անոր որդիները օծես, ու
 սուրբ ընես զանոնք, որպէս զի ինծի
 քահանայութիւն ընեն: 31 - Եւ Իս-
 րայէլի որդիներուն գրուցես՝ ըսելով,
 Ասիկա ինծի սուրբ օծման իւղ պիտի
 ըլլայ ձեր ազգերուն մէջ: 32 - Մար-
 գու մարմինի վրայ պիտի չթափուի
 այն, և անոր բաղադրութեանը պէս
 անոր նմանը չչինէք. այս սուրբ է, ու
 ձեզի սուրբ պիտի ըլլայ: 33 - Ով որ
 անոր նմանը շինէ, կամ ով որ անկէ
 օտարականի վրայ դնէ, իր ժողովուր-
 դէն պիտի կորսուի:

34 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Առ-
 քեզի անուշահոտ համեմներ, այսինքն
 ստաշին ու եղունգն և քաղբան, ու՝ ա-
 նուշահոտ համեմները մաքուր կնդրու-
 կով. ամէնը հաւասար կշռով պիտի
 ըլլան. 35 - Եւ զանոնք իւզագործի
 արհեստով իրար խառնուած՝ բաղա-
 դրութիւն մը՝ խունկ շինես մաքուր ու
 սուրբ: 36 - Եւ անկէ իչ ձ ծեծես
 շատ բարակ, ու ժողովքի խորանին
 մէջ վկայութեանը առջև դնես, ուր
 ես քեզի պիտի հանդիպիմ. անիկա ձեզի
 ամենասուրբ պիտի ըլլայ: 37 - Եւ այն
 քու շինելու խունկիդ բաղադրու-
 թեանը համեմատ դուք ձեզի համար
 չչինէք. այն քեզի սուրբ պիտի ըլլայ
 Տէրոջը համար: 38 - Ով որ հստատելու
 համար անոր նմանը շինելու ըլլայ, իր
 ժողովուրդէն պիտի կորսուի:

*կ-մ, աղուած

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսե-
 լով, 2 - Ահա Յուդայի ցեղէն Ովրի
 որդւոյն Ուրիի որդին Բեսելիէլը անու-
 նովը կանչեցի. 3 - Եւ Ասատուծոյ Հո-
 գիովը, իմաստութիւնով ու հանճա-
 րով և գիտութիւնով ու ամէն իբր
 ճարտարութիւնով լեցուցի զանիկա,
 4 - Որպէս զի վարպետի գործեր հնա-
 րելով տակիով ու արծաթով և պղնձով
 գործէ. 5 - Եւ գամելու համար քարեր
 բանելով ու փայտեր քանդակելով
 ամէն կերպ արհեստ բանի: 6 - Եւ ահա
 Դանի ցեղէն Աքիսամայի որդին Ու-
 զիաբը տուի անոր հետ. ու ամէն իմաս-
 տունին սրտին մէջ իմաստութիւն դրի,
 որպէս զի բոլոր քեզի պատուիրածս
 ընեն. 7 - Ժողովքի խորանը, և վկա-
 յութեան տապանակը ու անոր վրայ
 եղած քաւութիւնը, և խորանին բոլոր
 կարասիները, 8 - Եւ սեղանը ու անոր
 անօթները, և մաքուր աշտանակը իր
 բոլոր գործիքներովը, և խունկին սե-
 զանը, 9 - Եւ ողջակէզին սեղանը իր
 բոլոր գործիքներովը, և աւագանը ու
 անոր խարիսխը, 10 - Եւ պաշտօնին
 զգեստները, ու Ահարոն քահանային
 սուրբ զգեստները, և անոր որդիներուն
 զգեստները, քահանայութիւն ընելու
 համար, 11 - Եւ օծման իւղը, ու սրբա-
 րանին համար անուշահոտ խունկը,
 բոլոր քեզի պատուիրածիս պէս պիտի
 ընեն:

12 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու
 ըսաւ, 13 - Զրուցէ նաև Իսրայէլի որ-
 դիներուն՝ ըսելով, Անշուշտ իմ՝ շա-
 բաթներս պահէք. վասն զի այս նշան
 մըն է իմ ու ձեր մէջտեղ ձեր ազգե-
 րուն մէջ, որպէս զի գիտնաք թէ ձեզ
 սուրբ ընող Տէրը ես եմ: 14 - Ուստի
 շաբաթը պահէք. վասն զի այն ձեզի
 սուրբ է. ով որ զանիկա պղծէ, ան-
 շուշտ պիտի մեռնի. քանզի ամէն ով
 որ այն օրը գործ մը գործէ, այն անձը
 իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի:
 15 - Վեց օր գործ պիտի գործուի,
 բայց եօթներորդ օրը, հանգստութեան
 շաբաթը, սուրբ պիտի ըլլայ Տէրոջը.
 ով որ շաբաթ օրը գործ մը գործէ,
 անշուշտ պիտի մեռցուի: 16 - Անոր
 համար Իսրայէլի որդիները պիտի պա-
 հեն շաբաթը, որպէս զի շաբաթը
 իրենց ազգերուն մէջ յաւիտենական

ուխա մը ընեն : 17 - Անիկա յաւիտե- նական նշան մըն է իմ ու Իսրայէլի որդիներուն մէջտեղ . քանզի Տէրը վեց օրուան մէջ ստեղծեց երկինքը ու երկիրը , և եօթներորդ օրը դադարեցաւ ու հանգստացաւ :

18 - Եւ երբ Աինա լեռանը վրայ Մովսէսի հետ խօսիլը լմնցուց, վկայութեան երկու տախտակները տուաւ անոր, Աստուծոյ մատովը գրուած քարէ տախտակներ :

ԳԼ. ԼԲ

Եւ ժողովուրդը տեսնելով որ Մովսէս ուշացաւ լեռնէն իջնելու , ժողովուրդը Ա.հարոնի քով ժողովուեցան ու ըսին անոր , Ելիր , մեզի աստուածներ շինէ որոնք մեր առջեւէն երթան . քանզի այն Մովսէսը , մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդը , չենք գիտեր թէ ի՞նչ եղաւ անոր : 2 - Եւ Ա.հարոն ըսաւ անոնց, Չեր կիներուն, ձեր աղաքներուն և ձեր աղջիկներուն ականջները եղած ոսկի օղերը հանեցէք , ու ինծի բերէք : 3 - Եւ բոլոր ժողովուրդը իրենց ականջները եղած ոսկի օղերը հանեցին ու Ա.հարոնի բերին : 4 - Եւ անիկա առաւ անոնց ձեռքէն , ու *տիպով մը շինեց , և ձուլածոյ որթ մը ըրաւ : Եւ ըսին , Ով Իսրայէլ , ասոնք են քու աստուածներդ , որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին : 5 - Եւ երբ Ա.հարոն տեսաւ *իւր , անոր առջև սեղան մը շինեց . և Ա.հարոն հրատարակել տուաւ ըսելով , Վաղը տօն է Տէրօջը : 6 - Եւ հետեւեալ առաւօտուն կանուխ ելան , ու ողջակէզներ մատուցին , և խաղաղութեան զոհեր բերին . և ժողովուրդը ուտելու ու խմելու նստան , ու խաղալու ելան :

7 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Գնա իջիր . վասն զի ապականեցաւ քու ժողովուրդդ զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր . 8 - Անոնք չուտով խոտորեցան այն ճամբայէն զոր իրենց պատուիրեցի . իրենց ձուլածոյ որթ շինեցին , և անոր երկրպագութիւն ըրին , ու անոր զոհեր մատուցին , ու ըսին , Ով Իսրայէլ , ասոնք են քու աստուածներդ որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին : 9 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Ես տեսայ այս

ժողովուրդը , և ահա այս խստապա- րանոց ժողովուրդ մըն է : 10 - Ուստի հիմա թող տուր զիս , որպէս զի իմ բարկութիւնս անոնց վրայ բորբոքի , ու փճացնեմ զանոնք , և քեզ մեծ ազգ մը ընեմ : 11 - Եւ Մովսէս իր Տէր Աստուծոյն առջև աղաչեց , ու ըսաւ , Ով Տէր , ինչո՞ւ քու բարկութիւնդ բորբոքի քու ժողովուրդիդ վրայ , զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր մեծ զօրութիւնով ու զօրաւոր ձեռքով . 12 - Ինչո՞ւ համար Եգիպտացիք խօսին ու ըսեն թէ Չարութեան համար հանեց զանոնք՝ որպէս զի լեռներուն մէջ մեռցնէ , ու զանոնք երկրի երեսէն փճացնէ . դարձիր քու աստիկ բարկութենէդ , ու *դադարէ այս չարիքը քու ժողովուրդիդ չե՞ս բերել : 13 - Յիշէ քու ծառաներդ Աբրահամը , Իսահակը ու Իսրայէլը , որոնց դուն քու անձովդ երգում ըրիր , ու ըսիր անոնց , Չեր սերունդը երկինքի ասաղերուն պէս պիտի շաացնեմ , և բոլոր այս երկիրը՝ որուն վրայով խօսեցայ , ձեր սերունդին պիտի տամ , ու զայն պիտի ժառանգեն յաւիտեան : 14 - Եւ Տէրը զղջաց այն չարիքին համար՝ զոր ըսեր էր թէ իր ժողովուրդին պիտի ընէ :

15 - Եւ Մովսէս դարձաւ ու լեռնէն իջաւ , ու վկայութեան երկու տախտակները իր ձեռքն էին . տախտակները իրենց երկու քովերէն գրուած էին . անոնք մէկ կողմէն ու միւս կողմէն գրուած էին : 16 - Եւ տախտակները Աստուծոյ գործն էին . ու տախտակներուն վրայ փորագրուած զիրը Աստուծոյ գրածն էր : 17 - Ու երբ Յետու պռնացող ժողովուրդին ձայնը լսեց , ըսաւ Մովսէսի , Բանակին մէջ պատերազմի ձայն կայ : 18 - Եւ անիկա ըսաւ , Այս յաղթողներու աղաղակի ձայն չէ , ոչ ալ յաղթուածներու աղաղակի ձայն է . հապա խաղի ձայն կը լսեմ ես : 19 - Եւ եղաւ որ բանակին մօտենալով որթը ու պար բռնողները տեսածին պէս , Մովսէսի բարկութիւնը բորբոքեցաւ . ու տախտակները իր ձեռքէն նետեց , ու լեռանը վարի գին կտորաց զանոնք : 20 - Եւ անոնց շինած որթը առաւ ու կրակով պրեց , ու մանր փոշի ըրաւ և ջուրին վրայ ցանեց ու Իսրայէլի որդիներուն խմցուց : 21 - Եւ Մովսէս ըսաւ Ա.հարոնի ,

*Կո՛մ , քանդակաւ ըրծի գրիչով

*Եբբ . զղջա

Այս ժողովուրդը ի նչ բրաւ քեզի, որ անոնց վրայ աշխատեմք մեծ մեղք մը բերի: 22 - Եւ Ահարոն բաւաւ, Թող իմ տերօջա բարկութիւնը չբորբոքի. դուն գիտես այս ժողովուրդը՝ որ չարին հակամիտեալ են. 23 - Եւ ինծի ըսին թէ Մեզի աստուածներ չինէ, որպէս զի մեր առջեւ են երթան, վասն զի այն Մովսէսը, մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդը, չենք զիտեր թէ անոր ինչ եղաւ: 24 - Եւ ես ըսի անոնց, Ով որ ոսկի ունի, թող հանէ. ու բերեն ինծի, և կրակը ձգեցի զայն, ու այս որթը ելաւ:

25 - Եւ երբ Մովսէս ժողովուրդին *անառակութիւնը տեսաւ, (քանզի Ահարոն թող տուեր էր զանոնք անառակութիւն ընելու՝ իրենց թշնամիներուն մէջ խայտառակ ըլլալու չափ,) 26 - Այն ատեն Մովսէս բանակին դուռը կայնեցաւ, ու բաւաւ, Ով որ Տէրոջը կողմէն է, թող ինծի գայ. և Ղեւիի բոլոր որդիները անոր քով ժողովուրդեցան: 27 - Եւ բաւաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Ամէն մարդ իր սուրը թող իր մէջքը գնէ, ու բանակին մէջ դռնէ դուռ անցնին դառնան, և ամէն մարդ իր եղբայրը, ու ամէն մարդ իր ընկերը, և ամէն մարդ իր դրացին մեռցնէ:

28 - Եւ Ղեւիի որդիները Մովսէսի խօսքին պէս ըրին. ու այն օրը ժողովուրդէն երեք հազար մարդու չափ ինկան: 29 - Քանզի Մովսէս ըսեր էր թէ Այսօր ձեզմէ ամէն մէկը իր սրդուցն վրայ ու իր եղբօրը վրայ ինքզինք Տէրոջը նուիրէ, որպէս զի ձեր վրայ օրհնութիւն տայ այսօր:

30 - Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս բաւաւ ժողովուրդին, Իսրայէլ մեծ մեղք գործեցիք. ու հիմա Տէրոջը պիտի ելլեմ, թերեւս քառութիւն մը ընեմ ձեր մեղքին համար: 31 - Եւ Մովսէս գարծաւ Տէրոջը ու բաւաւ, Ոհ, այս ժողովուրդը մեծ մեղք մը գործեց, իրեն ոսկիէ աստուածներ շինելով:

32 - Բայց հիմա եթէ անոնց մեղքերը կր ներես՝ ներքէ, եթէ ոչ՝ կ'աղաչեմ, աւրէ զիս քո գրած գիրքէդ: 33 - Եւ Տէրը բաւաւ Մովսէսի, Ով որ ինծի գէմ մեղանչեց, զանիկա իմ գիրքէս պիտի

աւրեմ: 34 - Ուստի հիմա գնա, ժողովուրդը այն տեղը տար, զոր քեզի ըսի. ահա իմ հրեշտակս քու առջեւէդ պիտի երթայ. բայց այցելութիւն ընելու օրս անոնց մեղքը իրենց վրայ պիտի բերեմ: 35 - Եւ Տէրը զարկաւ ժողովուրդը, Ահարոնի շինած որթը շինելուն համար:

ԳԼ. ԼԳ

Եւ Տէրը բաւաւ Մովսէսի, Ելիր ասկէ դուն ու ժողովուրդն ալ զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր, «- գնա այն երկիրը որու համար երդում ըրի Աբրահամի, Իսահակի ու Յակոբի՝ ըսելով, Քու սերունդիդ պիտի տամ զայն: 2 - Եւ քու առջեւէդ հրեշտակ մը պիտի զրկեմ, ու Քանանացին, Ամօրացին, Քետացին, Փերեզացին, Խեւացին ու Յեբուսացին պիտի վաճակեմ: 3 - Կաթ ու մեղր բղխող երկիրը պիտի ելլեմ. վասն զի *ձեզի հետ՝ պիտի չելլեմ, քանզի դուն խստապարանոց ժողովուրդ մըն ես. չըլլայ որ քեզ ճամբուն մէջ բնաջինջ ընեմ:

4 - Ու երբ ժողովուրդը այս չար խօսքը լսեց, սուգ բրաւ. և մէկը իր զարդը իր վրայ չգրաւ. 5 - Վասն զի Տէրը բաւաւ էր Մովսէսի, Ըսէ Իսրայէլի որդիներուն, Իսրայէլ խստապարանոց ժողովուրդ մըն էք. բայց մը ձեր մէջ ելլելու ըլլամ, ձեզ բնաջինջ պիտի ընեմ. ուստի հիմա ձեր վրայէն զարդերնիդ վերցուցէք, որպէս զի ձեզի ընելիքս գիտնամ: 6 - Եւ Իսրայէլի որդիները իրենց զարդերը հանեցին Քորեբ լեռան քով:

7 - Եւ Մովսէս առաւ խորանը, ու բանակին դուրսիցին՝ բանակէն հեռու կանգնեց զայն, և անոր անունը ժողովքի խորան դրաւ. և ով որ Տէրը կը խնդրէր, բանակին դուրսիցին եղած ժողովքի խորանը կ'ելլէր: 8 - Ու երբ Մովսէս խորանը կ'երթար, բոլոր ժողովուրդը կ'ելլէր, ու ամէն մէկը իր վրանին դուռը կը կայներ, ու Մովսէսի ետեւէն կը նայէր, մինչև անիկա խորանը մտնէր: 9 - Եւ Մովսէս խորանը մտածին պէս ամպի սիւնը կ'իջնէր, ու խորանին դուռը կը կայներ, և Տէրը Մովսէսի հետ կը խօսէր: 10 - Եւ բո-

*Կաթ, մերկ ըլլալը
 †Կաթ, մերկացուց զանոնք

*Եթէ, ձեր մէջ

լոր ժողովուրդը կը տեսնէր որ ամպի սիւնը խորանին դուռը կը կայնի . ու բոլոր ժողովուրդը կ'ելլէր , և ամէն մէկը իր վրանին դուռը երկրպագութիւն կ'ընէր : 11 - Եւ Տէրը կը խօսէր Մովսէսի հետ դէմ առ դէմ , ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի . ու Մովսէս նորէն բանակը կը դառնար . բայց անոր ծառան , Նաւէի որդին Յետու պատանին , խորանին մէջէն չէր հեռանար :

12 - Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը , Նայէ դուն կ'ըսես ինծի , Հանէ այս ժողովուրդը . ու դուն ինծի չգիտցուցիր թէ ո՛վ ինծի հետ պիտի գրկես . ու ըսիր , Քեզ անունովդ կը ճանչնամ , ու նաև իմ առջեւ շնորհք գաար : 13 - Ուտի հիմա կ'աղաչեմ , եթէ քու առջեւ շնորհք գաայ , ինծի ցուցուր ուրեմն քու ճամբադ՝ որպէս զի ճանչնամ քեզ , այնպէս որ քու առջեւ շնորհք գանեմ . ու *միաբդ բեր՝ որ այս ազգը քու ժողովուրդդ է : 14 - Եւ անհկա ըսաւ , Իմ ներկայութիւնս +եղի հեք պիտի երթայ ու քեզ պիտի հանգստացրնեմ : 15 - Եւ Մովսէս ըսաւ անոր , Եթէ քու ներկայութիւնդ մեզի հեք չերթայ , մեզ այս տեղէն մի հաներ : 16 - Քանզի ինչո՞վ պիտի գիացուի թէ ես ու քու ժողովուրդդ քու առջեւ շնորհք գասանք . չէ՞ որ քու մեզի հետ երթալովդ . այսպէս ես ու քու ժողովուրդդ երկրի երեսին վրայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զատուինք :

17 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Այս բանն ալ պիտի ընեմ՝ զոր դուն ըսիր , վասն զի իմ առջեւ շնորհք գաար , ու ես քեզ անունովդ կը ճանչնամ :

18 - Եւ անհկա ըսաւ , Կ'աղաչեմ , քու փառքդ ցուցուր ինծի : 19 - Եւ Տէրը ըսաւ , Իմ բոլոր բարութիւնս քու առջեւէդ պիտի անցնեմ , ու Տէրոջը անունը քու առջեւ պիտի կանչեմ , և որու որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ , ու որու վրայ որ պիտի գլթամ՝ կը գլթամ :

20 - Ու ըսաւ , Իսկ իմ երես չես կրնար տեսնել . վասն զի մարդ չկրնար զիս տեսնել ու ապրիլ : 21 - Եւ Տէրը ըսաւ , Ահա քովս տեղ մը կայ , ու ժայռին վրայ կայնէ . 22 - Եւ ըլլայ որ երբ իմ փառքս անցնելու ըլլայ , քեզ ժայռին խոռոչին մէջ դնեմ , ու քեզ

իմ ձեռքովս ծածկեմ , մինչև ես անցնիմ . 23 - Ետքը իմ ձեռքս պիտի վերցրնեմ , ու իմ ետիս պիտի տեսնես . բայց իմ երեսս պիտի չտեսնուի :

ԳԼ . ԼԳ

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Քեզի երկու քարէ տախտակներ կոփէ առաջունաններուն պէս , ու այն տախտակներուն վրայ պիտի գրեմ՝ առաջունան տախտակներուն վրայի խօսքերը զորոնք դուն կ'առարեցիր : 2 - Եւ առտուան համար պատրաստ եղիր , ու առտուանց Սինա լեռը ելիր , և հոն լեռանը գլուխը առջեւ կայնէ : 3 - Ու մէ'կը պիտի չելլէ քեզի հետ , և մէ'կը պիտի չտեսնուի բոլոր լեռանը վրայ , ոչ ալ այդ լեռանը ստորտը ոչխար կամ արջառ պիտի արածուի :

4 - Եւ առաջունաններուն պէս երկու քարէ տախտակներ կոփեց . ու Մովսէս առտուանց կանուխ ելաւ , ու Տէրոջը իրեն պատուիրածին պէս Սինա լեռը գնաց , և երկու քարէ տախտակները իր ձեռք առաւ : 5 - Եւ Տէրը ամպով իջաւ , ու հոն անոր քով կեցաւ . ու Տէրոջը անունը կանչեց : 6 - Եւ Տէրը անոր առջեւէն անցաւ , ու աղաղակեց , Տէր , Տէր Աստուած , ողորմած ու բարեբար , երկայնամիտ և առատ ողորմութիւնով ու ճշմարտութիւնով , 7 - Հազարներուն ողորմութիւն ընող , անօրէնութիւնը , յանցանքը ու մեղքքներով , բայց յանցանքը ամենեւին անպարտ չթողուր , հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ ու որդւոց որդիներուն վրայ , մինչև երրորդ ու չորրորդ ազգը հասուցանելով : 8 - Եւ Մովսէս աճապարելով մինչև գետինը խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ : 9 - Ու ըսաւ , Ով Տէր , եթէ հիմա քու առջեւ շնորհք գաայ , կ'աղաչեմ , թող իմ Տէրս մեզի հետ երթայ . *վասն զի ասիկա խստապարանոց ազգ մըն է . և ներէ մեր անօրէնութիւնը ու մեր մեղքերը , և մեզ քու ժառանգութիւնդ ըրէ :

10 - Եւ Տէրը ըսաւ , Ահա ես ուխտ մը կ'ընեմ . քու բոլոր ժողովուրդիդ առջև այնպիսի սքանչելիքներ պիտի ընեմ , որ բոլոր երկրի վրայ ու բոլոր

*Եբր . տես

*կա՛մ , թէ և

ազգաց մէջ չեղան . և բոլոր ժողովուրդը , որուն մէջ ես գուն , պիտի տեսնեն Տէրոջը գործը . քանզի հիանալի է այն բանը զոր քեզի պիտի ընեմ :

11 - Միտքդ պահէ ինչ որ ես քեզի կը պատուիրեմ այսօր . ահա պիտի վճռեմ քու առջեւէդ Ամօրհացին ու Քանանացին և Քետացին ու Փերեզացին և Խեւացին ու Յերուսացին :

12 - Չգուշացիր քու անձիդ , չըլլայ որ քու երթալու երկրիդ բնակիչներուն հետ ուխտ ընես , չըլլայ որ անիկա քու մէջտեղդ որոգայթ ըլլայ .

13 - Հապա անոնց բազմները կործանէք , ու անոնց կուռքերը փշրէք , և անոնց Աստուրովթները կտորտէք : 14 - Վասն զի ուրիշ Աստուծոյ երկրպագութիւն պիտի չընես . քանզի Եհովա Նախանձոտ կը կոչուի , և Նախանձոտ Աստուած է : 15 - Չըլլայ որ այն երկրին բնակիչներուն հետ ուխտ ընես , և անոնք իրենց աստուածներուն ետեւէն երթալով պոռնկութիւն ըրած ատեննին ու իրենց աստուածներուն զոհ ըրած ատեննին քեզ կանչեն , ու դուն անոնց զոհէն ուտես : 16 - Եւ ըլլայ որ անոնց ազգիկներէն քու որդիներուդ ինչ առնես , ու անոնց ազգիկները իրենց աստուածներուն ետեւէն երթալով պոռնկութիւն ըրած ատեննին քու որդիներուդ ալ պոռնկութիւն ընել տան՝ իրենց աստուածներուն ետեւէն + արեւելիքն ինչ :

17 - Քեզի ձուլածոյ աստուածներ չչինես :

18 - Բազարջակերաց տօնը պիտի պահես . Ապիպ ամսուն որոշ ժամանակին մէջ , քեզի պատուիրած իսպէս , եօթը օր բազարջ պիտի ուտես . վասն զի Ապիպ ամսուն մէջ Եգիպտոսէ ելար : 19 - Ամէն Տօրը արգանդը բացողը իմն է . և քու անասուններուդ մէջ ամէն արու առջինեկը , թէ՛ արջառ ըլլայ և թէ՛ ոչխար , իմն է : 20 - Բայց իշուն առջինեկը գառնուկով փրկես . և եթէ չես փրկեր , այն առեն անոր վիզը կարես : Քու որդիներուդ ամէն առջինեկը փրկես . ու մէ՛կը իմ առջեւ ձեռնունայն չերեւնայ :

21 - Վեց օր պիտի գործես , ու եօթներորդ օրը հանգստանաս . թէ՛ վարուցան ընելու և թէ՛ ճնձելու առեն հանգստանաս :

22 - Եւ շարաթներուն , պոսիքն ցօրենի հունձքին երախայրիներուն , տօնը ,

ու տարւոյն վերջը՝ արեւիսեան ժողովուրդ տօնը բռնես :

23 - Չեր ամէն արու զաւակը տարին երեք անգամ Իսրայէլի Աստուծոյն , Եհովա Տէրոջը , առջև երեւնայ : 24 - Վասն զի քու առջեւէդ ազգերը պիտի վճռեմ , և քու սահմաններդ պիտի ընդարձակեմ . ու տարին երեք անգամ քու Տէր Աստուծոյդ առջև երեւնալու ելած ատենդ մէ՛կը քու երկրիդ պիտի չցանկայ :

25 - Իմ *զոհերս խմորեալ հացով չնուիրես , ու զատկի տօնին զոհ մինչև առտու չմնայ : 26 - Քու երկրիդ երախայրիներուն առաջինները քու Տէր Աստուծոյդ տունը բերես :

Ուր իր մօրը կաթին մէջ չեփես :

27 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Գրէ այս խօսքերը . վասն զի այս խօսքերուն համեմատ քեզի հետ ու Իսրայէլի հետ ուխտ ըրի : 28 - Եւ անիկա հոն կեցաւ Տէրոջը հետ քառասուն օր ու քառասուն գիշեր . ոչ հաց կերաւ , ոչ ալ ջուր խմեց . և տախտակներուն վրայ ուխտին խօսքերը գրեց , այսինքն տասը պատուիրանքները :

29 - Եւ եղաւ որ երբ Մովսէս Մինա լեռնէն իջաւ , վկայութեան երկու տախտակները Մովսէսի ձեռքն էին լեռնէն իջած ատենը , ու Մովսէս իր երեսին մորթին լուսափայլ ըլլալը չէր գիտեր երբ Տէրը իրեն հետ խօսեցաւ : 30 - Եւ Ահարոն ու Իսրայէլի բոլոր որդիները առան Մովսէսը , և ահա անոր երեսին մորթը լուսափայլ էր , ու անոր մօտենալու վախցան : 31 - Եւ Մովսէս կանչեց զանոնք , ու Ահարոն ու ժողովքին բոլոր իշխանները դարձան անոր , ու Մովսէս խօսեցաւ անոնց հետ : 32 - Եւ անկէ ետքը Իսրայէլի բոլոր որդիները մօտեցան . ու պատուիրեց անոնց ամէն ինչ որ Տէրը խօսեր էր իրեն հետ Մինա լեռը : 33 - Եւ Մովսէս ֆուռն առնոց հետ խօսիլը լմացները՝ իր երեսը քօղ դրաւ : 34 - Բայց Մովսէս Տէրոջը առջև , անոր հետ խօսելու մտած առտենը , մինչև դուրս ելլելը քօղը կը վերցնէր . ետքը դուրս կ'ելլէր , ու իրեն պատուիրուածը Իսրայէլի որդիներուն կը խօսէր : 35 - Եւ Իսրայէլի որդիները Մովսէսի երեսը կը առնէին ,

*Եբր. զոհերուս արիւնը խմորեալ հացի վրայ չթափես

որ Մովսէսի երեսին մտնողը լուսափայլ էր. ու Մովսէս իր երեսը քողով կը ծածկէր մինչև Անոր հետ խօսելու մտնելը :

ԳԼ. ԼԵ

Եւ Մովսէս ժողովեց Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը, ու ըսաւ անոնց, Ասոնք են այն բաները զորոնք Տէրը պատուիրեց որ զանոնք ընէք: 2 - Վէց որ գործ գործուի, բայց եօթներորդօրը սուրբ պիտի ըլլայ ձեզի, այսինքն հանգստութեան շաբաթ Տէրոջը. այն օրը գործ գործողը պիտի մեռցուի: 3 - Շաբաթօրը ձեր բոլոր բնակարաններուն մէջ կրակ պիտի չվառէք:

4 - Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին՝ ըսելով, Տէրոջը պատուիրած բանը այս է՝ ըսելով, 5 - Ձեր մէջէն ընծայ առէք Տէրոջը. ով որ սրտով կը յօժարի, թող անկիւս Տէրոջը ընծան բերէ, ոսկի ու արծաթ և պղինձ, 6 - Ու կապուտակ և ծիրանեգոյն ու կրկնակի կարմիր և բարակ քթան ու այծի մազ, 7 - Եւ կարմիր ներկուած խոյի մորթեր, ու թէհաչի մորթեր և Սատիմի փայտեր, 8 - Ու լոյսի համար իւղ, և օժման իւղի համար ու անուշահոտ խունկի համար համեմներ, 9 - Եւ եղնգնաքարեր ու եփուտին համար և լանջապանակին համար գամուելու քարեր: 10 - Եւ ձեր մէջ ամէն սրտով իմաստուն եղողները թող գան, ու Տէրոջը բոլոր պատուիրած բաները շինեն. 11 - Խորանը, անոր վրանը, ու անոր ծածկոցը, անոր ճարմանդները, ու անոր տախտակները, անոր նիգերը, անոր սիւները, և անոր խարիսխները, 12 - Տապանակը ու անոր ձողերը, քառութիւնը, ու ծածկող վարագոյրը, 13 - Սեղանը ու անոր ձողերը ու անոր բոլոր անօթները, և առաջաւորութեան հացը, 14 - Եւ լոյսի աշտանակը ու անոր գործիքները և անոր ճրագները ու լոյսի իւղը, 15 - Եւ խունկին սեղանը ու անոր ձողերը, ու օժման իւղը, և անուշահոտ խունկը, ու խորանին դրան վարագոյրը, 16 - Ողջակէզին սեղանը ու անոր պղնձէ ցանցակէզի կտակարան, անոր ձողերը ու անոր բոլոր գործիքները, աւազանը ու անոր խարիսխը, 17 -

Սրահին վարագոյրները, անոր սիւները ու խարիսխները, և սրահին դրան վարագոյրը, 18 - Խորանին ցիցերը ու սրահին ցիցերը ու անոնց չուանները, 19 - Պաշտօնին զգեստները՝ սրբարանին մէջ պաշտելու համար, և Ահարոն քահանային սուրբ զգեստները ու անոր որդիներուն զգեստները, որպէս զի քահանայութիւն ընեն:

20 - Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Մովսէսի առջեւէն գացին: 21 - Եւ ամէն յօժարասիրտ եղողը ու ամէն բոլոր հոգիով կամեցողը եկան, ու ժողովքի խորանին գործին համար և անոր բոլոր պաշտօնին համար ու սուրբ զգեստներուն համար Տէրոջը ընծան բերին: 22 - Եւ եկան այրեր ու կիներ, որչափ որ սրտով կամեցող կային, «- ճարմանդներ և օղեր ու մատանիներ և *մանեակներ, ամէն տեսակ ոսկի զարդեր բերին. ամէն ընծայ բերող ոսկի ընծայ բեր» - Տէրոջը: 23 - Եւ այն ամէնը, որուն քով կը գտնուէր կապուտակ ու ծիրանեգոյն և կրկնակի կարմիր և բարակ քթան և այծի մազ ու կարմիր ներկուած խոյի մորթեր և թէհաչի մորթեր, բերին: 24 - Ամէն արծաթ ու պղինձ ընծայ տուողը Տէրոջը ընծան բերաւ, և որու քով որ պաշտօնին ամէն գործին «Կեանքի Սատիմի փայտեր կը գտնուէին» բերաւ: 25 - Եւ ամէն սրտով իմաստուն եղող կիները իրենց ձեռքերովը մանեցին, ու իրենց մանած կապուտակը, ծիրանեգոյնը, կրկնակի կարմիրը ու բարակ քթանը բերին: 26 - Եւ բոլոր սրտով փափաքող և յաջողակութիւն ունեցող կիները այծի մազ մանեցին: 27 - Եւ իշխանները եղնգնաքարեր ու եփուտին և լանջապանակին համար գամուելու քարեր բերին, 28 - Եւ լոյսի համար ու օժման իւղի համար և անուշահոտ խունկի համար՝ համեմներ ու իւղ: 29 - Իսրայէլի որդիները յօժարակամ ընծայ բերին Տէրոջը, ամէն մարդ ու կին, որոնք յօժարութիւն ունէին բերելու ամէն կէրպ գործի համար, զոր Տէրը Մովսէսի ձեռքով պատուիրեց որ շինուի:

30 - Եւ Մովսէս ըսաւ Իսրայէլի որդիներուն, Ահա Տէրը Յուդայի ցեղէն Ովրի որդւոյն Ուրիի որդին Բեսելիէլը:

*Կա՛մ, լանջագեղ կամարներ

անունովը կանչեց. 31 - Աւատուծոյ Հոգիովը՝ իմաստութիւնով, հանճարով և գիտութիւնով ու ամէն ինչ ճարտարութիւնով լեցուց զանիկա, 32 - Որպէս զի վարպետի գործեր հնարելով՝ ոսկիի ու արծաթի և պղնձի վրայ բանի. 33 - Եւ գամելու համար քարեր բանելով ու փայտեր քանդակելով՝ ամէն կերպ վարպետի գործ ընէ: 34 - Եւ անոր սրտին մէջ սորվեցնելու ինչ-որ մէկ գրաւ, անորն ալ՝ ու Գանի ցեղէն Աքիսամայի որդւոյն Ողիարի ալ: 35 - Սրտի իմաստութիւնով լեցուց զանոնք, որպէս զի ամէն տեսակ գործ գործող և հնարքներ՝ հնարող քանդակագործի ու արուեստաւորի գործը, նաև կապուտակի ու ծիրանեգոյնի և կրկնակի կարմիրի և բարակ քթանի վրայ նկարագործողի և ուտայնանկի բարձր ընէն:

ԳԼ ԼԶ

Այն ատեն Բեսելիէլ ու Ողիար և ամէն սրտով իմաստուն եղողը, որոնց որ Տէրը իմաստութիւն ու հանճար տուաւ սրբարանին պաշտօնին ամէն կերպ գործերը ընել զիտնալու համար, Տէրոջը բոլոր պատուիրածին պէս գործեցին: 2 - Եւ Մովսէս կանչեց Բեսելիէլը ու Ողիարը ու ամէն սրտով իմաստուն եղողը, որուն սրտին մէջ Տէրը իմաստութիւն գրաւ, այսինքն այն ամէնը՝ որուն սիրտը կը փափաքէր բանելու համար գործի մօտենալու: 3 - Եւ անոնք առին Մովսէսէ բոլոր ընծաները, զորոնք Իսրայէլի որդիները բերին սրբարանին պաշտօնին գործը անոնցով ընելու համար: Ու անոնք տակաւին ամէն առտու կամուսը ընծաներ կը բերէին անոր:

4 - Եւ սրբարանին ամէն գործը բանող բոլոր իմաստուն մարդիկը՝ ամէն մէկը իր բրած գործէն եկան. 5 - Եւ Խօսեցան Մովսէսի՝ բտելով, ժողովուրդը աւելի կը բերէ քան որչափ պէտք էր Տէրոջը շինել պատուիրած բաներուն գործին համար: 6 - Եւ Մովսէս պատուիրեց քարոզ կարգալ բանակին մէջ՝ բտելով. Այ ոչ մարգ, ոչ ալ կին գործ մը գործեն սրբարանին ընծային համար: Այսպէս ժողովուրդը ընծայ բերելէն դադարեցան: 7 - Եւ

այն նիւթերը բոլոր գործը շինելու համար բաւական էին իրենց, ու աւելի ալ:

8 - Եւ խորանին գործը բանողներէն բոլոր սրտով իմաստուն եղողները մանուած բարակ քթանէն ու կապուտակէն և ծիրանեգոյնէն ու կրկնակի կարմիրէն տասը վարագոյր շինեցին. զանոնք վարպետի գործ՝ քերովբէներով շինեցին: 9 - Մէկ վարագուրին երկայնութիւնը քանըութ կանգուն, ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն էր. ամէն վարագոյրներուն չափը մէկ էր: 10 - Եւ հինգ վարագոյրը իրարու կցեց, ու Ք-՝ հինգ վարագոյրն ալ իրարու կցեց: 11 - Եւ կցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ կապուտակէ օղակներ շինեց. միւս կցուածքին ծայրի վարագուրին եզերքն ալ այնպէս ըրաւ: 12 - Մէկ վարագուրին վրայ յիսուն օղակ շինեց, և միւս կցուածքին վրայ եղած վարագուրին ծայրն ալ յիսուն օղակ շինեց. օղակները դիմացէ դիմաց էին: 13 - Եւ յիսուն հատ կարթաձև ոսկի ճարմանդներ շինեց, ու վարագոյրները ճարմանդներով իրարու հետ կոճկեց, այնպէս որ խորանը մէկ եղաւ:

14 - Եւ խորանին վրայի վրանին համար այժի մագէ վարագոյրներ շինեց. զանոնք տասներմէկ վարագոյր շինեց: 15 - Մէկ վարագուրին երկայնութիւնը երեսուն կանգուն, ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն ըլլալով՝ տասներմէկ վարագուրին չափը մէկ էր: 16 - Եւ հինգ վարագոյրները զատ, ու վեց վարագոյրները զատ կցեց: 17 - Եւ կցուածքին ծայրի վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ, ու միւս կցուածքին ծայրի վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ շինեց: 18 - Եւ յիսուն հատ կարթաձև պղինձ ճարմանդներ շինեց, որպէս զի վրանը կոճկէ ու մէկ ըլլայ: 19 - Եւ վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածկոց մը, ու անոր վրայէն թէհաշի մորթերէ ծածկոց մը շինեց:

20 - Եւ խորանին համար Սատիմի փայտէ կանգնած տախտակներ շինեց: 21 - Մէկ տախտակին երկայնութիւնը տասը կանգուն, և մէկ տախտակին լայնութիւնը մէկ ու կէս կանգուն էր: 22 - Ամէն մէկ տախտակ իրարու համեմատ երկերկու ագուցիկ ծայր ունէր. խորանին բոլոր տախտակներուն

այսպէս բրաւ: 23 - Եւ խորանին տախտակները «յոյդե» շինեց. դէպ ի հարաւ՝ անոր հարաւային կողմին համար քսան տախտակ շինեց: 24 - Եւ քսան տախտակներուն տակ քառասուն արծաթ խարիսխ, այսինքն մէկ տախտակին տակ իր երկու ծայրը անցնելու - համար երկու խարիսխ, ու միւս տախտակին տակ իր երկու ծայրը անցնելու - համար երկու խարիսխ շինեց: 25 - Եւ խորանին միւս կողմին համար դէպ ի հիւսիս քսան տախտակ շինեց. 26 - Ու անոնց քառասուն արծաթ խարիսխ, մէկ տախտակին տակ երկու խարիսխ, ու միւս տախտակին տակ երկու խարիսխ, շինեց: 27 - Եւ խորանին ետեւի կողմին համար դէպ ի արեւմուտք վեց տախտակ շինեց. 28 - Եւ խորանին ետեւի կողմի անկիւններուն համար երկու տախտակ շինեց: 29 - Եւ անոնք վարէն կը միանային, ու վերէն ալ մէկ օղակով մէկտեղ կը միանային. երկուքին ալ երկու անկիւններուն այսպէս բրաւ: 30 - Այսպէս ութ տախտակ էին. ու անոնց արծաթ խարիսխները տասնըվեց խարիսխ էին, ամէն մէկ տախտակին տակ երկերկու խարիսխ ըլլալով: 31 - Եւ Սատիմի փայտէ նիզեր շինեց խորանին մէկ քովի տախտակներուն համար հինգ, 32 - Ու խորանին միւս քովի տախտակներուն համար հինգ նիզ, և խորանին դէպ ի արեւմուտք եղած ետեւի կողմի տախտակներուն համար հինգ նիզ: 33 - Եւ մէջտեղի նիզը այնպէս շինեց, որ տախտակներուն մէջտեղէն մէկ ծայրէն մինչև միւս ծայրը անցնի: 34 - Եւ տախտակները սակիով պատեց. ու անոնց օղակները սակիէ շինեց՝ նիզերուն տեղեր ըլլալու համար. նիզերն ալ սակիով պատեց:

35 - Եւ կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ թթանէ շինեց վարագոյրը. վարպետի գործ՝ քերովբէներով շինեց զանիկա: 36 - Եւ Սատիմի փայտէ չորս սիւն շինեց անոր, ու սակիով պատեց զանոնք. անոնց ճանկերը սակի էին. և անոնց չորս արծաթ խարիսխ ձուլեց: 37 - Եւ խորանին զրանը համար կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ թթանէ նկարագործ գրան վարագոյր մը շինեց. 38 - Եւ անոր հինգ սիւնները ու անոնց ճանկերը շինեց. և անոնց խո-

յակները ու անոնց կապերը սակիով պատեց. և անոնց հինգ խարիսխները պղնձէ էին:

ԳԼ. ԼԵ

Եւ Բետելիէլ Սատիմի փայտէ շինեց տապանակը. անոր երկայնութիւնը երկուք ու կէս կանգուն, ու անոր լայնութիւնը մէկ ու կէս կանգուն, և անոր բարձրութիւնը մէկ ու կէս կանգուն էր: 2 - Եւ ներսէն ու դուրսէն զուտ սակիով պատեց զանիկա. և անոր բոլորաթիւքը սակի շրջանակ մը շինեց: 3 - Եւ անոր չորս անկիւններուն համար չորս սակի օղակներ ձուլեց, այսինքն անոր մէկ կողմէն երկու օղակ՝ ու միւս կողմէն երկու օղակ: 4 - Եւ Սատիմի փայտէ ձողեր շինեց, ու զանոնք սակիով պատեց: 5 - Եւ ձողերը տապանակին քովերը եղած օղակներուն անցուց, որպէս զի անոնցմով տապանակը վերցուի:

6 - Եւ քաւութիւնը զուտ սակիէ շինեց. անոր երկայնութիւնը երկուք ու կէս կանգուն, ու անոր լայնութիւնը մէկ ու կէս կանգուն էր: 7 - Եւ երկու սակիէ քերովբէներ շինեց. զանոնք կուսածոյ շինեց քաւութիւնին երկու ծայրերէն: 8 - Մէկ քերովբէն մէկ քովի ծայրէն, ու միւս քերովբէն միւս քովի ծայրէն ըլլալով, քերովբէները քաւութիւնէն, երկու ծայրերէն շինեց: 9 - Եւ քերովբէները երեսն թեւերը վերէն տարածելով՝ իրենց թեւերովք քաւութիւնը կը ծածկէին, ու անոնց երեսները իրարու կը նայէին. քերովբէներուն երեսները քաւութիւնին վրայ էին:

10 - Եւ սեղանը Սատիմի փայտէ շինեց. անոր երկայնութիւնը երկու կանգուն, ու լայնութիւնը մէկ կանգուն, և բարձրութիւնը մէկ ու կէս կանգուն էր: 11 - Եւ զուտ սակիով պատեց զայն. ու անոր բոլորաթիւքը սակի շրջանակ մը շինեց: 12 - Եւ անոր բոլորաթիւքն ալ չորս մատնաչափ սպառուած մը, ու սպառուածին բոլորաթիւքը սակի շրջանակ մը շինեց: 13 - Եւ չորս սակի օղակ ձուլեց անոր համար, ու օղակները անոր չորս ոտքերուն քով չորս անկիւնները դրաւ: 14 - Օղակները սպառուածին քով ըլլալով՝ սեղանը վերցնելու համար ձողերուն տեղերն էին: 15 - Եւ սեղանը վերցնելու հա-

մար ձողերը Սատիմի փայտէ շինեց, ու զանոնք ոսկիով պատեց : 16 - Եւ սեղանին վրայ եղած անօթները, անոր սկուտեղները ու խնկամանները և նուէր մասաւցանելու գաւաթները ու բաժակները զուտ ոսկիէ շինեց :

17 - Եւ աշտանակը զուտ ոսկիէ շինեց. կռածոյ շինեց աշտանակը. անոր բունը ու ճիւղերը, անոր սկաշակները, գնդակները ու ծաղիկները իրմէ էին :

18 - Եւ անոր քովերէն վեց ճիւղեր կ'ելլէին. աշտանակին մէկ քովէն երեք ճիւղ՝ ու աշտանակին միւս քովէն երեք ճիւղ. 19 - Մէկ ճիւղին վրայ նշաձե երեք սկաշակ՝ գնդակով ու ծաղիկով, և միւս ճիւղին վրայ նշաձե երեք սկաշակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակէն ելած վեց ճիւղերը այսպէս էին :

20 - Եւ աշտանակին վրայ գնդակներով ու ծաղիկներով չորս նշաձե սկաշակներ կային : 21 - Եւ անկէ ելած վեց ճիւղերուն նայելով՝ երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը, ու երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը, և երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը կային : 22 - Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէ էին. ամէնը մէկ՝ զուտ ոսկիէ կռածոյ էին : 23 - Եւ անոր եօթը ճրագները և ունեյիները ու անոր բազմակալները զուտ ոսկիէ շինեց : 24 - Զանկիս իր բոլոր գործիքներովը մէկ տաղանդ զուտ ոսկիէ շինեց :

25 - Խունկի սեղանը Սատիմի փայտէ շինեց. անոր երկայնութիւնը կանգուն մը, ու անոր լայնութիւնը կանգուն մը, քառակուսի բլլալով, և անոր բարձրութիւնը երկու կանգուն էր. անոր եղջիւրները իրմէ էին : 26 - Եւ անոր վրայ ու շուրջանակի քովերը և անոր եղջիւրները զուտ ոսկիով պատեց. և բոլորաբար ոսկի շրջանակ մը շինեց անոր : 27 - Եւ անոր համար անոր շրջանակին տակէն՝ անոր երկու քովերը երկու կողմէն երկու ոսկի օղակներ շինեց, որ անոնց ձողերուն տեղերը բլլալով՝ անոնցմով վերցուի : 28 - Եւ ձողերը Սատիմի փայտէ շինեց, ու զանոնք ոսկիով պատեց : 29 - Եւ սուրբ օծման իւղը ու մաքուր անուշահոտ խունկը շինեց իւզագործի արհեստով :

Եւ ողջակէզի սեղանը Սատիմի փայտէ շինեց. անոր երկայնութիւնը հինգ կանգուն, ու անոր լայնութիւնը հինգ կանգուն, քառակուսի էր, և անոր բարձրութիւնը երեք կանգուն : 2 - Եւ անոր եղջիւրները չորս անկիւններուն վրայ շինեց. անոր եղջիւրները իրմէ էին. ու պղնձով պատեց զայն : 3 - Եւ սեղանին բոլոր գործիքները, այսինքն թաղարները և թիակները ու կոնքերը և մասհանները ու կրակի ամանները, շինեց. անոր բոլոր գործիքները պղնձէ շինեց : 4 - Եւ սեղանին համար անոր շրջանակին տակէն գրեթէ մէջտեղը պղնձէ ցանցակերպ կասկարայ մը շինեց : 5 - Եւ պղնձէ կասկարային չորս անկիւնները չորս օղակներ ձուլեց ձողերուն տեղերը բլլալու համար : 6 - Եւ ձողերը Սատիմի փայտէ շինեց, ու զանոնք պղնձով պատեց : 7 - Եւ ձողերը սեղանին քով եղած օղակներուն անցուց, որպէս զի անհկասանոցմով վերցուի. զանհկաս տախտակներով շինեց, «- մէջը դատարկ : 8 - Եւ պղնձէ աւազանը ու անոր պղնձէ խարիսխը ժողովքի խորանին դուռը խումբերով ժողվուող կիներուն հայելիներէն շինեց :

9 - Եւ սրահը շինեց. հարաւային կողմին համար, սրահին վարագոյրները, մանուած բարակ քթանէ բլլալով, հարիւր կանգուն էին : 10 - Անոնց սիւները քսան ու անոնց պղնձէ խարիսխները քսան էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթ էին : 11 - Եւ հիւսիսային կողմին համար վարագոյրները հարիւր կանգուն. անոնց քսան սիւները ու անոնց քսան խարիսխները պղնձէ էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթ էին : 12 - Եւ արեւմտեան կողմին համար՝ վարագոյրները յիսուն կանգուն էին. անոնց սիւները ասոր ու անոնց խարիսխները տասն էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթ էին : 13 - Եւ արեւելեան կողմին համար վարագոյրները յիսուն կանգուն էին : 14 - Դրանց մէկ կողմին վարագոյրները տասներհինգ կանգուն, անոնց սիւները երեք ու անոնց խարիսխները երեք էին : 15 - Եւ միւս կողմին համար այս այսինքն սրահին դրանը մէկ կողմէն

ու միւս կողմէն, վարագոյրները տասնըջինգ կանգուն, անոնց սիւները երեք ու անոնց խարխոխները երեք էին: 16 - Արաճին բոլոր վարագոյրները շուրջանակի մանուած բարակ քթանէ էին: 17 - Եւ սիւներուն խարխոխները պղնձէ, սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ, և անոնց խոյակները արծաթապատ, ու սրաճին բոլոր սիւներն ալ արծաթ կապերով էին: 18 - Եւ սրաճին դրանը վարագոյրը նկարագործ էր, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ. երկայնութիւնը քսան կանգուն, և լայնութեանը մէջի բարձրութիւնը, սրաճին վարագոյրներուն համեմատ, ճինգ կանգուն էր: 19 - Եւ անոնց սիւները չորս, ու անոնց պղնձէ խարխոխները չորս էին, անոնց ճանկերը արծաթէ, և անոնց խոյակները արծաթապատ, ու կապերը արծաթ էին: 20 - Եւ խորանին ու շուրջանակի սրաճին բոլոր ցիցերը պղնձէ էին:

21 - Ասիկա է խորանին, այսինքն վկայութեան խորանին, հաշիւը, որ Մովսէսի պատուիրածին պէս՝ Աւետացւոց պաշտօնին համար Ահարոն քահանային որդւոյն Իթամարի ձեռքով հաշուեցաւ: 22 - Եւ Յուդայի ցեղէն Ովրի որդւոյն Ուրի որդին Բեսելիէլ ըրաւ այն ամէնը զոր Տէրը Մովսէսի պատուիրեց: 23 - Եւ վարպետ քանդակագործը, և կապուտակով ու ծիրանեգոյնով և կրկնակի կարմիրով ու բարակ քթանով նկարագործողը, Դանի ցեղէն Աքիսամայի որդին Ռոզիսը, անոր հետ էր:

24 - Այս շինուածքին համար գործածուած բոլոր ոսկին, այսինքն սրբարանին բոլոր շինուածքին նուիրուած ոսկին, սրբարանին սիկզին համեմատ, քսանըինը տաղանդ ու եօթը հարիւր երեսուն սիկզ էր: 25 - Եւ ժողովքէն համրուողներուն արծաթը, սրբարանին սիկզին համեմատ, հարիւր տաղանդ ու հազար եօթը հարիւր եօթանասունըճինգ սիկզ էր: 26 - Քսան տարեկանէն վեր համրուելու անցնողներէն ամէն մէկը պէգա մը, այսինքն սրբարանին սիկզին համեմատ, կէս սիկզ «—», վեց հարիւր երեք հազար ճինգ հարիւր յիսուն մարդիկ ըլլալով: 27 - Եւ սրբարանին խարխոխները ու վարագուրին խարխոխները ձու-

լելու համար հարիւր տաղանդ արծաթ գնաց. մէկ խարխոխը մէկ տաղանդ ըլլալով, հարիւր տաղանդէն հարիւր խարխոխ եղաւ: 28 - Եւ հազար եօթը հարիւր եօթանասունըճինգ «իլդ «թ—թ—» սիւներուն ճանկերը շինեց, ու անոնց խոյակները պատեց, և զանոնք կապեց: 29 - Եւ նուիրուած պղինձը եօթանասուն տաղանդ ու երկու հազար չորս հարիւր սիկզ էր, 30 - Եւ անով ժողովքի խորանին դրանը խարխոխները ու պղնձէ սեղանը և անոր պղնձէ կասկարան ու սեղանին բոլոր գործիքները: 31 - Եւ շուրջանակի սրաճին խարխոխները ու սրաճին դրանը խարխոխները և խորանին բոլոր ցիցերը ու շուրջանակի սրաճին բոլոր ցիցերը շինեց:

ԳԼ. ԼԹ

Եւ կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ շինեցին պաշտօնի հանդերձները, սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար. և Ահարոնի համար սուրբ զգեստները շինեցին, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս:

2 - Ու եփուտը շինեց ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ:

3 - Եւ ոսկին բարակ թիթեղներ ըլլալու ծեծեցին, և թելեր կարեցին, որպէս զի կապուտակին, ծիրանեգոյնին և կրկնակի կարմիրին ու բարակ քթանին հետ վարպետութեամբ գործեն:

4 - Կոճկուող վակասներ շինեցին անոր, «յինքն եփ—քին», որ երկու ծայրէն կը կոճկուէր:

5 - Եւ եփուտին վրայ եղած ժապաւէնը նոյննիւն էր. անոր գործին համեմատ, ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ էր, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս:

6 - Եւ ոսկի խորշերու մէջ եղնգնաքարերը գամեցին, «— անոնց վրայ Խարայելի որդիներուն անունները կնիք փորագրելու պէս փորագրեցին:

7 - Եւ զանանք եփուտին ուսերուն վրայ դրաւ, որպէս զի յիշատակի քարեր ըլլան Խարայելի որդիներուն, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս:

8 - Եւ լանջապանակը ճարտարութեամբ եփուտին գործին պէս ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և

կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ շինեց . 9 - Քառակուսի , երկուքի ծայլուող , շինեցին լանջապանակը . մէկ թիզ երկայնութեամբ ու մէկ թիզ լայնութեամբ , երկուքի ծայլուող էր : 10 - Եւ անոր վրայ չորս կարգ քարեր գամեցին . այս կարգը սարգիոն , սպագիոն ու զմրուխտ՝ առաջին կարգն էր . 11 - Եւ երկրորդ կարգը կարկէշան , շափիւղայ ու ադամանդ էր . 12 - Եւ երրորդ կարգն էր գոճաղմ , սկաա ու մեղեսիկ . 13 - Եւ չորրորդ կարգն էր սկեքար , եղնգնաքար ու յասպիս . ասոնք սկի խորշերու մէջ գամուած էին : 14 - Եւ քարերը Իսրայէլի որդւոց անուններուն համեմատ , անոնց անուններուն պէս , տասուերկու էին . ամէն մէկուն անունը , տասուերկու ցեղերուն համեմատ , կնիք փորագրողի գործով փորագրուած էր : 15 - Եւ լանջապանակին վրայ զուտ սկիէ սլորուած հիւսուած շղթաներ շինեցին : 16 - Եւ երկու սկի խորշ ու երկու սկի օղակ շինեցին . և երկու օղակները լանջապանակին երկու ծայրերը դրին : 17 - Եւ լանջապանակին ծայրերը եղած երկու օղակներուն անցուցին երկու սկիէ հիւսուած շղթաները : 18 - Եւ երկու հիւսուած շղթաներուն մէջ երկու ծայրերը երկու խորշերուն անցուցին . ու ասոնք եփուտին ուսերուն վրայ անոր առջեւի կողմը դրին : 19 - Եւ «-բէշ երկու սկի օղակներ սլ շինեցին , և «-ան+ լանջապանակին ներսի կողմէն եփուտին կցուած եզերքին երկու ծայրերը դրին : 20 - Եւ «-բէշ երկու սկի օղակներ շինեցին , ու զանոնք եփուտին երկու ուսերուն վարէն , անոր առջեւի կողմի կցուածքին մօտ , եփուտին ժապաւէնին վրայէն անցուցին : 21 - Եւ լանջապանակը իր օղակներէն՝ կապուտակէ շինեցին , որպէս զի եփուտին ժապաւէնին վրայ բլլայ , ու լանջապանակը եփուտին վրայէն չզատուի , Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս :

22 - Եւ եփուտին պատմու ճանը ուտայնանկի գործով բոլորովին կապուտակէ շինեց : 23 - Եւ պատմու ճանին մէջտեղը դրահի ճեղքուածքին պէս ճեղքուածք մը կար . «- ճեղքուածքին բոլորափրը հիւսուածք կղերք ունէր , որպէս զի չպատուի : 24 - Եւ պատմու

ճանին քղանցքներուն վրայ կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ «- մանուած բարակ + թանկե նուուեր շինեցին : 25 - Եւ զուտ սկիէ զանգակներ շինեցին , ու զանգակները նուուերուն մէջտեղը , պատմու ճանին քղանցքներուն վրայ շուրջանակի նուուերուն մէջ , դրին : 26 - Պատմու ճանին քղանցքներուն վրայ շուրջանակի զանգակ մը ու նուու մը , զանգակ մը ու նուու մը կար , պաշտօնին համար , Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս :

27 - Եւ Ահարոնի ու անոր որդիներուն համար բարակ քթանէ ոստայնանկի գործ շապիկներ շինեցին : 28 - Եւ խոյրը բարակ քթանէ , ու հանդէսի ապարօշները բարակ քթանէ , ու կաաւեղէն անդրավարափքները մանուած բարակ քթանէ , 29 - Եւ գօտին մանուած բարակ քթանէ , կապուտակէ , ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ նկարագործ շինեցին , Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս :

30 - Եւ սուրբ պսակին թիթեղը զուտ սկիէ շինեցին , ու անոր վրայ կնիք փորագրելու պէս՝ ՍՐԲՈՒԹԻԻՆ ՏԵԱՌՆ գրեցին . 31 - Եւ անոր կապուտակ ժապաւէն մը անցուցին , որպէս զի վերէն խոյրին վրայ դրուի , Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս :

32 - Ուստի խորանին , այսինքն ժողովքի վրանին , բոլոր գործը լմնցաւ . և Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս բրին . այնպէս բրին : 33 - Եւ խորանը Մովսէսի բերին . վրանը ու անոր բոլոր գործիքները , անոր ճարմանդները , անոր տախտակները , անոր նիգերը և անոր սիւները ու խարիսիները , 34 - Եւ կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածկոցը , ու թէհաչի մորթերէ եղած ծածկոցը , և ծածկող վարագոյրը , 35 - Վկայութեան տապանակը ու անոր ձողերը , և քաւութիւնը , 36 - Սեղանը «- անոր բոլոր անօթները և առաջաւորութեան հացը , 37 - Զուտ «-իէ աշտանակը իր ճրագներովը , այսինքն կարգու դրուած ճրագներովը ու իր բոլոր գործիքներովը , և լոյսի իւղը , 38 - Եւ սկի սեղանը ու օծման իւղը և անուշահոտ խունկը ու խորանին դրանը վարագոյրը , 39 - Պղնձէ սեղանը ու անոր պղնձէ կասկարան , անոր ձողերը և անոր բոլոր գործիք-

ները, աւագանը ու անոր խորհիւրը, 40 - Արաճին վարագոյրները, անոր սիւները ու խորհիւնները, և սրահին դրանը վարագոյրը, անոր շուանները ու ցիցերը, և խորանին, այսինքն ժողովքի վրանին, պաշտօնին համար եղած բոլոր կարասիները, 41 - Սրբարանին մէջ պաշտելու համար՝ պաշտօնին հանդերձները ու Ահարոն քահանային սուրբ զգեստները, և անոր սրգիներուն զգեստները, որպէս զի քահանայութիւն ընեն: 42 - Այն ամէնուն պէս՝ զորոնք Տէրը Մովսէսի պատուիրեց, այնպէս բրին Իսրայէլի սրգիները ամէն գործը:

43 - Եւ Մովսէս բոլոր շինուածքին նայեցաւ, և ահա Տէրոջը պատուիրածին պէս ըրին զայն. այնպէս ըրին, և Մովսէս օրհնեց զանոնք:

Գ Լ Խ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըստ ըսելով, 2 - Առաջին ամսուն առաջին օրը կանգնես խորանը, այսինքն ժողովքի վրանը: 3 - Եւ անոր մէջ դնես վկայութեան տապանակը, ու վարագուրովը ծածկես տապանակը: 4 - Եւ սեղանը ներս բերես, ու անոր վրայ շարուելու հացերը շարես և աշտանակը ներս բերես, ու անոր ճրագները վառես: 5 - Եւ վկայութեան տապանակին առջև դնես խունկին ոսկի սեղանը, ու խորանին դրանը վարագոյրը դնես: 6 - Եւ խորանին, այսինքն ժողովքի վրանին, դրանը առջև ողջակէզի սեղանը դնես: 7 - Եւ ժողովքի վրանին ու սեղանին մէջտեղ դնես աւագանը, ու անոր մէջ ջուր դնես: 8 - Եւ շուրջանակի սրահը կանգնես, ու սրահին դրանը վարագոյրը դնես: 9 - Եւ օձման իւզը առնես, ու խորանը և անոր մէջ եղած ամէն բաները օձես, և զանիկա ու անոր ամէն անօթները սրբես, որպէս զի սուրբ ըլլան: 10 - Եւ ողջակէզի սեղանը ու անոր բոլոր գործիքները օձես, ու սեղանը սրբես, և սեղանը՝ ամենասուրբ պիտի ըլլայ: 11 - Եւ աւագանը ու անոր խորհիւրը օձես, ու սրբես զանիկա: 12 - Եւ Ահարոնը ու անոր սրգիները ժողովքի խորանին դրանը մօտեցնես, ու զանոնք ջրով լուսաւ: 13 - Եւ Ահարոնի հագցնես

սուրբ զգեստները, ու օձես զանիկա, և սրբես զանիկա, որպէս զի ինծի քահանայութիւն ընէ: 14 - Եւ անոր սրգիներն ալ մօտեցնես, ու անոնց շապիկներ հագցնես: 15 - Եւ անոնց հայրը օձածիդ պէս օձես զանոնք, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն. և անոնց օձումը իրենց ազգերուն մէջ յաւիտենական քահանայութեան համար պիտի ըլլայ:

16 - Եւ Մովսէս Տէրոջը իրեն բոլոր պատուիրածին պէս ըրաւ. այնպէս ըրաւ: 17 - Եւ եղաւ որ երկրորդ տարին, առաջին ամսուն առաջին օրը, խորանը կանգնուեցաւ: 18 - Եւ Մովսէս կանգնեց խորանը, ու անոր խորհիւնները դրաւ, և անոր տախտակները կանգնեց, ու անոր նիգերը անցուց, ու սիւները կանգնեց: 19 - Եւ խորանին վրայ տարածեց վրանը, ու վերէն վրանին ծածկոցը անոր վրայ դրաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 20 - Եւ վկայութիւնը առաւ ու տապանակին մէջ դրաւ. և ձողերը տապանակին վրայ անցուց, ու վերէն տապանակին վրայ քաւութիւնը դրաւ: 21 - Եւ տապանակը խորանին մէջ բերաւ, ու ծածկող վարագոյրը դրաւ, և վկայութեան տապանակը ծածկեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 22 - Եւ ժողովքի վրանին մէջ, խորանին հիւսիսային կողմը, վարագուրին գուրսիդին դրաւ սեղանը: 23 - Եւ անոր վրայ շարուելու հացերը շարեց Տէրոջը առջև, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 24 - Եւ ժողովքի վրանին մէջ, սեղանին դիմաց, խորանին հարաւային կողմը դրաւ աշտանակը: 25 - Եւ Տէրոջը առջև ճրագները վառեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 26 - Եւ ժողովքի վրանին մէջ վարագուրին առջև դրաւ ոսկի սեղանը: 27 - Եւ անոր վրայ անուշահոտ խունկ ծխեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 28 - Եւ խորանին դրանը վարագոյրը դրաւ: 29 - Եւ խորանին, այսինքն ժողովքի վրանին, դրանը քով ողջակէզին սեղանը դրաւ. ու անոր վրայ ողջակէզը ու հացի ընծան մատուց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեք էր: 30 - Եւ ժողովքի վրանին ու սեղանին մէջտեղ դրաւ աւագանը, և անոր մէջ լուացուելու համար ջուր դրաւ: 31 - Եւ Մովսէս ու

*Եբբ. սրբութիւն սրբութեանց

Ահարոն և անոր որդիները իրենց ձեռքերը ու սաքերը անկէ կը լուսյին : 32 - Ժողովքի վրանը մասձ ատեննին, և սեղանին մօտենալու ատեննին կը լուսցուէին , ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր : 33 - Եւ խորանին ու սեղանին բոլորտիքը սրահը կանգնեց , և սրահին դրանը վարագոյրը դրաւ : Այսպէս Մովսէս Բարձր գործը լմնցուց : 34 - Եւ ամպ մը ծածկեց ժողովքի վրանը , և Տէրոջը փառքը լեցուց խորանը : 35 - Եւ Մովսէս չէր կրնար մտնել ժողովքի վրանը , վասն զի ամպը

անոր վրայ կը կենար , ու Տէրոջը փառքը լեցուցեր էր խորանը : 36 - Եւ Խորայէլի որդիները իրենց բոլոր ճամբորդութիւններուն մէջ՝ երբ ամպը խորանին վրայէն վերնար , այն առէն կը չուէին : 37 - Եւ եթէ ամպը չվերնար , մինչև անոր վերնալու օրը չէին չուեր : 38 - Քանզի ցորեկը Տէրոջը ամպը խորանին վրայ էր , և գիշերը անոր վրայ կրակ կար , Խորայէլի բոլոր ժողովուրդին առջև՝ իրենց ամէն ճամբորդութիւններուն մէջ :

ԳԻՐԲ ԴԵՒՏԱՅԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Տէրը կանչեց Մովսէսը , ու ժողովքի խորանէն խօսեցաւ անոր՝ ըսելով , 2 - Խօսէ Խորայէլի որդիներուն ու ըսէ անոնց , եթէ ձեզմէ մէկը անատուներէն ընծայ մատուցանելու ըլլայ Տէրոջը , ձեր ընծան արջառներէն կամ հօտերէն պիտի մատուցանէք :

3 - Եթէ անոր ընծան արջառներէն ողջակէզ է , արու անարատ պիտի մատուցանէ . ու ժողովքի խորանին դրանը քով պիտի մատուցանէ զայն , Տէրոջը առջև ընդունելի ըլլալու համար : 4 - Եւ իր ձեռքը ողջակէզին գլխուն վրայ պիտի դնէ , ու այն իրեն քառութիւն ըլլալու համար ընդունելի պիտի ըլլայ : 5 - Եւ զուարակը պիտի մորթէ Տէրոջը առջև . ու Ահարոնի որդիները , քահանաները , արիւն պիտի մօտեցնեն , և ժողովքի խորանին դրանը քով եղած սեղանին վրայ շուրջանակի պիտի սրկեն արիւնը : 6 - Եւ ողջակէզին մորթը պիտի հանէ , ու կտոր կտոր պիտի ընէ « զլակէզ » : 7 - Եւ Ահարոն քահանային որդիները սեղանին վրայ կրակ պիտի դնեն , ու կրակին վրայ փայտեր շարեն . 8 - Եւ Ահարոնի որդիները , քահանաները , սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ պիտի

շարեն կտորները , գլուխը ու ճարպը . 9 - Բայց անոր փորտիքը ու սաքերը ջրով պիտի լուսյ , և քահանան պիտի այրէ ամէնը սեղանին վրայ , ողջակէզ «- Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու համար :

10 - Եւ եթէ անոր ողջակէզի ընծան հօտերէն , այսինքն ոչխարներէն կամ այծերէն , է , արու անարատ պիտի մատուցանէ : 11 - Եւ պիտի մորթէ զանիկա Տէրոջը առջև սեղանին հիւսիսային կողմը . ու Ահարոնի որդիները , քահանաները , սեղանին վրայ շուրջանակի պիտի սրկեն անոր արիւնը : 12 - Եւ կտոր կտոր պիտի ընէ զայն գլխովը ու ճարպովը . և քահանան սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ պիտի շարէ զանոնք : 13 - Եւ փորտիքը ու սաքերը ջրով պիտի լուսյ . ու քահանան ամէնը պիտի բերէ ու սեղանին վրայ այրէ . ասիկա ողջակէզ «- անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը :

14 - Եւ եթէ ողջակէզի համար Տէրոջը «- Գանձել » ընծան թուռներէն է , այն ատեն անիկա իր ընծան տատարակներէն կամ աղաւնիի ձագերէն պիտի մատուցանէ : 15 - Եւ քա-

* Եբբ. տանը

հանան սեղանին մօտ բերէ զայն ու անոր գլուխը փրցնէ, և սեղանին վրայ պիտի այրէ, ու անոր արիւնը սեղանին հէջ քովը քամուի: 16 - Եւ անոր կանառքը ու աղբը պիտի զատէ, և սեղանին արեւելեան կողմը եղած մոխրանոցը նետէ: 17 - Եւ զանհկա թեւերէն պիտի պատուէ առանց զատելու. ու քահանան պիտի այրէ զանհկա սեղանին վրայ, կրակին վրայի փայտերուն վրայ. ասիկա ողջակէզ -- անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը:

ԳԼ. Բ

Ա երբ մէկը հացի ընծայ մատուցանելու ըլլայ Տէրոջը, անոր ընծան բարակ ալիւրէ պիտի ըլլայ. ու անոր վրայ իւղ պիտի թափէ, և կնդրուկ դնէ վրան. 2 - Եւ Ահարոնի որդիներուն, քահանաներուն, պիտի բերէ զայն. ու քահանան անկէ իր ձեռքը լեցուն անոր բարակ ալիւրէն ու իւղէն պիտի առնէ բոլոր կնդրուկին հետ մէկտեղ, և քահանան յիշատակի համար սեղանին վրայ այրէ՝ Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու համար. 3 - Եւ հացի ընծայէն մնացածը Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ. ասիկա ամենասուրբ պատարագ մըն է Տէրոջը:

4 - Եւ եթէ թոնիրի մէջ եփած հացի ընծայ մատուցանելու ըլլաւ, բարակ ալիւրէ իւղով շաղուած անխմոր շօթեր կամ իւղով օծուած անխմոր լաւաշներ պիտի ըլլայ:

5 - Եւ եթէ քու ընծադ տապակի վրայ եփած հացի ընծայ է, բարակ ալիւրէ իւղով շաղուած անխմոր պիտի ըլլայ: 6 - Կտոր կտոր պիտի կտրտես զայն, ու վրան իւղ թափես. ասիկա հացի ընծայ է:

7 - Եւ եթէ քու ընծադ սանի հէջ եփած հացի ընծայ է, բարակ ալիւրէ իւղով պիտի շինուի: 8 - Եւ ասոնցմէ շինուած հացի ընծան Տէրոջը պիտի բերես, ու քահանային ներկայացնես, և ինք սեղանին մօտեցնէ զայն: 9 - Եւ քահանան ընծայէն անոր յիշատակը պիտի առնէ, ու սեղանին վրայ այրէ՝ Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու:

10 - Եւ ընծայէն մնացածը Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ. ասիկա ամենասուրբ պատարագ մըն է Տէրոջը:

11 - Հացի ընծան զոր դուք Տէրոջը պիտի մատուցանէք, բնաւ խմորեալ պիտի չշինուի. վասն զի պատարագի համար ամենեւին խմոր կամ մեղր պիտի չայրէք Տէրոջը: 12 - Ասոնք իբրև երախայրի պատարագի ընծայ մատուցանէք Տէրոջը. բայց սեղանին վրայ պիտի չայրուին անուշահոտութեան համար: 13 - Եւ քու ամէն հացի ընծայիդ աղ պիտի դնես, ու քու հացի ընծայէդ քու Աստուծոյդ ուխտին աղը պակաս չընես. քու ամէն ընծայիդ աղ ալ մատուցանես:

14 - Եւ եթէ առաջին պտուղներուն ընծան մատուցանելու ըլլաւ Տէրոջը, առաջին պտուղներուն ընծային համար՝ կրակով բոհած թարմ հասկերէն ծեծուած ցորեն մատուցանես.

15 - Եւ անոր վրայ իւղ պիտի թափես, ու կնդրուկ դնես վրան. ասիկա հացի ընծայ է: 16 - Եւ քահանան անոր ծեծուած ցորենէն ու անոր իւղէն, անոր բոլոր կնդրուկովը անոր յիշատակը պիտի այրէ, Տէրոջը պատարագ ըլլալու համար:

ԳԼ. Գ

Եւ եթէ անոր ընծան խաղաղութեան զոհ է, երբ արջառներէն կը մատուցանէ, թէ՛ արու ըլլայ և թէ՛ էգ, Տէրոջը առջև անարատ պիտի մատուցանէ զայն: 2 - Եւ իր ձեռքը իր ընծայած անուշահոտ գլխուն վրայ պիտի դնէ, ու ժողովքի խորանին գուռը մորթէ զայն. և Ահարոնի որդիները, քահանաները, սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկեն արիւնը: 3 - Եւ խաղաղութեան զոհէն պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը, այսինքն փորտիքը ծածկող ճարպը ու փորտիքին վրայ եղած բոլոր ճարպը: 4 - Եւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին թաղանթը երիկամունքներով մէկտեղ պիտի փրցնէ. 5 - Եւ Ահարոնի որդիները սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ ողջակէզին հետ պիտի այրեն ասոնք, Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու համար:

6 - Եւ եթէ խաղաղութեան զոհի համար Տէրոջը մատուցանելու ընծան հօտերէն է, թէ՛ արու ըլլայ և թէ՛ էգ, անարատ պիտի մատուցանէ զայն:

7 - Եթէ անհկա իր ընծային համար գառ մատուցանէ, Տէրոջը առջև պիտի բերէ զայն, 8 - Եւ ձեռքը իր ընծային գլխուն վրայ պիտի դնէ, ու ժողովքի խորանին առջև մորթէ զայն. և Ահարոնի որդիները սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկեն անոր արիւնը: 9 - Եւ խաղաղութեան զոհին պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը, այսինքն անոր ճարպը ու բոլոր դմակը *ասկէն փրցնելով, և փորտիքը ծածկող ճարպը ու փորտիքին վրայ եղած բոլոր ճարպը, 10 - Եւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին թաղանթը երիկամունքներով մէկտեղ պիտի փրցնէ: 11 - Եւ քահանան սեղանին վրայ պիտի սյրէ ասոնք՝ Տէրոջը †պատարագ ըլլալու համար:

12 - Եւ եթէ անոր ընծան այժ է, Տէրոջը առջև պիտի բերէ զայն. 13 - Եւ իր ձեռքը անոր գլխուն վրայ պիտի դնէ, ու ժողովքի խորանին առջև մորթէ զայն. և Ահարոնի որդիները սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկեն անոր արիւնը: 14 - Եւ անհկա իր ընծային պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը, այսինքն փորտիքը ծածկող ճարպը ու փորտիքին վրայ եղած բոլոր ճարպը: 15 - Եւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին թաղանթը երիկամունքներով մէկտեղ պիտի փրցնէ: 16 - Եւ քահանան սեղանին վրայ պիտի սյրէ զանոնք, անուշահամ պատարագ ըլլալու համար. ամէն ճարպը Տէրոջն է: 17 - Ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակարաններուն մէջ յաւաքեանկան կանոն ըլլայ, որ ոչ ճարպ ուտէք՝ ոչ ալ արիւն:

ԳԼ. Գ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Եթէ անձ մը սխալմամբ մեղանչէ, ու Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը ընէ, 3 - Եթէ օծուած քահանան ժողովուրդը յանցաւոր ընելու մեղք մը գործելու ըլլայ, իր գործած մեղքին համար արջառներէն անարատ

զուարակ մը մեղքի պատարագ մատուցանէ Տէրոջը. 4 - Եւ ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը առջև պիտի բերէ զուարակը, ու իր ձեռքը զուարակին գլխուն վրայ դնէ, և Տէրոջը առջև մորթէ զուարակը: 5 - Եւ օծուած քահանան զուարակին արիւնէն պիտի առնէ ու ժողովքի խորանը բերէ: 6 - Եւ քահանան իր մտար արիւնը պիտի թաթխէ, ու Տէրոջը առջև, սրբարանին վարագոյրին առջև եօթը անգամ սրսկէ արիւնէն: 7 - Եւ քահանան արիւնէն +իշ ֆշ պիտի դնէ Տէրոջը առջև անուշահամ խունկի սեղանին եղջիւրներուն վրայ, որ ժողովքի խորանին մէջ է. ու զուարակին հաշիւը բոլոր արիւնը ժողովքի խորանին դրանը քով եղած ողջակէզի սեղանին յատակը թափէ: 8 - Եւ մեղքի պատարագ եղած զուարակին բոլոր ճարպը, այսինքն փորտիքը ծածկող ճարպը, ու փորտիքին վրայ եղած բոլոր ճարպը անկէ պիտի վերցնէ. 9 - Եւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին վրայի թաղանթը երիկամունքներով մէկտեղ պիտի փրցնէ, 10 - Խաղաղութեան զոհին արջառէն փրցուելուն պէս. և քահանան ողջակէզի սեղանին վրայ պիտի սյրէ զանոնք: 11 - Եւ զուարակին մորթը ու անոր բոլոր միսը գլխովը ու ոտքերովը, և անոր փորտիքը ու ազրը, 12 - Այսինքն բոլոր զուարակը, բանակին գուրսիգին մաքուր տեղ մը, մոխիր թափուած տեղը, պիտի հանէ, և փայտերու վրայ կրակով այրէ զայն. մոխիր թափուած տեղը այրուի:

13 - Եւ եթէ Իսրայէլի բոլոր ժողովքը *անզխտութեամբ սխալին, ու Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը ընելով յանցաւոր ըլլան, 14 - Երբ իմացուի այն ըրած մեղքերնին, ժողովքը մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը պիտի մատուցանէ. ու ժողովքի խորանին առջև բերէ զանհկա: 15 - Եւ ժողովքին ծերերը իրենց ձեռքերը զուարակին գլխուն վրայ պիտի դնեն Տէրոջը առջև. ու զուարակը Տէրոջը առջև պիտի մորթուի: 16 - Եւ օծուած քահանան

*ԵՔԵ. ողնայարէն
†ԵՔԵ. պատարագի հաց

*ԵՔԵ. սխալի, ու ժողովքին աչքէն զաղտուկ պահուի բանը

զուարակին արիւնէն ժողովքի խորանը պիտի բերէ : 17 - Եւ քահանան իր մտաւր արիւնը պիտի թաթխէ, ու Տէրոջը առջև վարագուրին առջև եօթը անգամ սրսկէ : 18 - Եւ արիւնէն իւր ժողովքի խորանին մէջ Տէրոջը առջև եղած սեղանին եղջիւրներուն վրայ պիտի դնէ . ու հապտիս բոլոր արիւնը ժողովքի խորանին դրանը քով եղած ողջակէզի սեղանին յատակը թափէ : 19 - Եւ անոր բոլոր ճարպը պիտի վերցընէ անկէ , ու սեղանին վրայ սյրէ : 20 - Եւ մեղքի պատարագ եղած զուարակին ինչպէս բրաւ , այս զուարակին ալ այնպէս պիտի ընէ . ու քահանան անոնց համար քաւութիւն ընէ, ու անոնց թողութիւն ըլլայ : 21 - Եւ բանակէն դուրս պիտի հանէ զուարակը , ու ինչպէս առաջին զուարակը սյրեց , զայս ալ այնպէս պիտի սյրէ . ժողովքին համար մեղքի պատարագ մըն է այս :

22 - Երբ իշխան մը մեղք գործելու ըլլայ , ու իր Տէր Աստուծոյն արգելած բաներէն մէկը սխալմամբ ընելով յանցաւոր ըլլայ , 23 - Եթէ իր բրած մեղքը իրեն ծանուցուի , իրեն համար այծերէն արու անարատ նոխազ մը ընծայ պիտի բերէ . 24 - Եւ իր ձեռքը նոխազին գլխուն վրայ պիտի դնէ , ու զանկա Տէրոջը առջև ողջակէզին մորթուելու տեղը մորթէ . մեղքի պատարագ մըն է այս : 25 - Եւ քահանան մեղքի պատարագին արիւնէն իր մատովը պիտի առնէ , ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ պիտի դնէ , և անոր հապտիս արիւնը ողջակէզի սեղանին յատակը թափէ : 26 - Եւ անոր բոլոր ճարպը խաղաղութեան զոհին ճարպին պէս սեղանին վրայ պիտի սյրէ . ու քահանան անոր մեղքին համար քաւութիւն ընէ , և թողութիւն ըլլայ անոր :

27 - Եւ եթէ երկրին ժողովուրդէն մէկը սխալմամբ մեղանչէ , ու Տէրոջը արգելած բաներէն մէկը ընելով յանցաւոր ըլլայ , 28 - Եթէ իր բրած մեղքը իրեն ծանուցուի , իր բրած մեղքին համար իր ընծան այծերէն անարատ էգ այծ մը պիտի բերէ : 29 - Եւ իր ձեռքը մեղքի պատարագին գլխուն վրայ պիտի դնէ , ու մեղքի պատարագ եղած հապտիս ողջակէզներուն մորթուելու տեղը մորթէ : 30 - Եւ քահանան իր մատովը անոր արիւնէն պիտի առնէ , ու ողջա-

կէզի սեղանին եղջիւրներուն վրայ դնէ , և հապտիս բոլոր արիւնը սեղանին յատակը թափէ : 31 - Եւ անոր բոլոր ճարպը խաղաղութեան զոհին ճարպը փրցուելուն պէս պիտի փրցնէ . ու քահանան պիտի սյրէ զանկա սեղանին վրայ անոյշ հոտի համար Տէրոջը առջև . և քահանան անոր համար քաւութիւն ընէ , ու անոր թողութիւն պիտի ըլլայ : 32 - Եւ եթէ մեղքի պատարագի համար գառ մատուցանելու ըլլայ , անարատ էգ մը պիտի բերէ . 33 - Եւ իր ձեռքը մեղքի պատարագին գլխուն վրայ պիտի դնէ , ու ողջակէզներուն մորթուելու տեղը մեղքի պատարագի համար մորթէ զայն : 34 - Եւ քահանան իր մատովը մեղքի պատարագին արիւնէն պիտի առնէ , ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ դնէ . և հապտիս բոլոր արիւնը սեղանին յատակը թափէ : 35 - Եւ խաղաղութեան զոհէն գառին ճարպը փրցուելուն պէս ասոր բոլոր ճարպը պիտի փրցնէ . ու քահանան սեղանին վրայ պիտի սյրէ զայն՝ Տէրոջը պատարագներուն հետ , և քահանան անոր բրած մեղքին համար քաւութիւն ընէ , ու թողութիւն ըլլայ անոր :

ԳԼ Ե

Եւ եթէ անձ մը մեղանչէ , ու երգումի ձայնը լսելով վկայ ըլլայ , կամ քահապետ ըլլայ կամ գիտցած , եթէ չիմացնէ , իր յանցանքը պիտի կրէ : 2 - Կամ անձ մը անմաքուր բանի մը կամ անմաքուր գազանի մը դիին կամ անմաքուր անասունի մը դիին կամ անմաքուր սողունի մը դիին դպչելու ըլլայ , թէպէտև չգիտնալով , անկա անմաքուր ու յանցաւոր պիտի «Եպտի» : 3 - Կամ մարդու անմաքութեան , որեւիցէ պիղծ ընող անմաքութեան , դպչելու ըլլայ չգիտնալով , ինք զայն գիտցած ատեն յանցաւոր պիտի ըլլայ : 4 - Կամ անձ մը չարիք կամ բարիք ընելու համար բերնովը անխորհուրդ գրուցելով երգում ընելու ըլլայ , (ինչպէս մարդիկ երգումով անխորհուրդ կը գրուցեն ,) եթէ չգիտնալով ըլլայ , ինք զայն գիտցած ատեն ատեն մէկուն մէջ յանցաւոր պիտի ըլլայ : 5 - Եւ եթէ այս բաներէն մէկուն մէջ յանցաւոր ըլլայ , անոր հա-

մար իր մեղք գործելը խոստովանի .
 6 - Եւ իր ըրած մեղքին համար իր
 յանցանքին պատարագը , հօտերէն
 էգ մը , այսինքն էգ գառնուկ մը , կամ
 այծերէն էգ ուլ մը , մեղքի պատա-
 րագի համար պիտի բերէ Տէրոջը . ու
 քահանան քաւութիւն ընէ անոր իր
 մեղքին համար :

7 - Եւ եթէ ոչխար կամ այծ բերե-
 լու կարող չըլլայ , իր ըրած յանցան-
 քին համար երկու սատրակ կամ ա-
 ղաւնիի երկու ձագեր պիտի բերէ Տէ-
 րոջը , մէկը մեղքի պատարագ , և միւսը
 ողջակէզ ըլլալու համար : 8 - Եւ քա-
 հանային պիտի բերէ զանոնք , ու անի-
 կա նախ պիտի մատուցանէ մէկը՝ որ
 մեղքի պատարագ է , և անոր գլուխը
 իր վիզէն չզատելով փրցնէ . 9 - Եւ
 մեղքի պատարագին արիւնէն սեղանին
 ձէլ քովը պիտի սրսկէ , ու մնացած ա-
 րիւնը սեղանին յատակը պիտի քամ-
 ուի . սահկա մեղքի պատարագ է . 10 -
 Եւ միւսը ըստ օրինի ողջակէզ պիտի
 ընէ . ու քահանան անոր քաւութիւն
 ընէ իր ըրած մեղքին համար , և անոր
 թողութիւն ըլլայ :

11 - Եւ եթէ երկու սատրակ կամ
 աղաւնիի երկու ձագեր բերելու կա-
 րող չըլլայ , այն ատեն մեղք գործողը
 իր ընծային համար արգուի մը սասնե-
 ըրող մասը բարակ ալիւր պիտի բերէ
 մեղքի պատարագի համար . ոչ անոր
 վրայ իւղ պիտի դնէ , ոչ ալ վրան
 կնդրուկ դնէ . վասն զի մեղքի պատա-
 րագ է այն : 12 - Եւ քահանային պի-
 տի բերէ զայն , ու քահանան անկէ իր
 ձեռքը լեցուն անոր յիշատակին հա-
 մար առնէ , ու սեղանին վրայ այրէ
 Տէրոջը պատարագներուն հետ . մեղքի
 պատարագ է այն : 13 - Եւ քահանան
 քաւութիւն պիտի ընէ անոր՝ այս բա-
 ներուն մէկուն մէջ ըրած մեղքին հա-
 մար , ու անոր թողութիւն ըլլայ . և
 հասցա՞ջ հացի ընծայի պէս քահանային
 պիտի ըլլայ :

14 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի
 բնէրով , 15 - Եթէ անձ մը յանցանք
 մը ընէ ու սխալմամբ Տէրոջը սուրբ բա-
 ներուն մէջ մեղք գործէ , իր յանցանքի
 պատարագին համար սրբարանին սիկ-
 զին համեմատ՝ քու արժեցուցած իգ-
 չափ սիկզի արծաթով հօտերէն անա-
 րատ խոյ մը պիտի բերէ Տէրոջը : 16 -
 Եւ սուրբ բաներուն մէջ իր ըրած

ձևաւ պիտի հատուցանէ , ու անոր
 վրայ հինգերորդ մաս մըն ալ աւելցնէ ,
 և քահանային տայ զայն . ու քահա-
 նան յանցանքի պատարագի խոյովը
 քաւութիւն ընէ անոր , և թողութիւն
 ըլլայ անոր :

17 - Եւ եթէ անձ մը մեղանչէ , ու
 Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը
 ընէ , թէև անգիտութեամբ , անհկա
 յանցաւոր է , ու իր անօրէնութիւնը
 պիտի կրէ : 18 - Եւ քու արժեցուցա-
 ծ իգ պէս՝ յանցանքի պատարագի հա-
 մար հօտերէն անարատ խոյ մը պիտի
 բերէ քահանային . ու քահանան անոր
 համար քաւութիւն պիտի ընէ՝ անոր
 անգիտութեամբ սխալելուն համար .
 և անոր թողութիւն պիտի ըլլայ :
 19 - Ասիկա յանցանքի պատարագ է .
 անհկա անշուշտ յանցաւոր եղած է
 Տէրոջը առջև :

ԳԼ . 9

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսե-
 լով , 2 - Եթէ անձ մը մեղանչէ , ու
 Տէրոջը դէմ յանցանք մը ընէ , և իր
 գրացիին ստութիւն խօսի աւանդի մը
 համար , կամ իր ձեռքը յանձնուած
 բանի մը համար , և կամ յափշտակ-
 ուած բանի մը համար , կամ իր գրա-
 ցիին խարդախութիւն ընելու ըլլայ .
 3 - Կամ կորսուած բան մը գանէ , և
 ուրանալով սուտ տեղ երգում ընէ ,
 բոլոր այս բաներէն մէկուն մէջ զոր
 մարդ կրնայ ընել , մեղանչելու ըլլայ :
 4 - Այն ատեն մեղք գործելուն ու
 յանցաւոր ըլլալուն համար , բռնու-
 թեամբ յափշտակած բանը , կամ
 խարդախութեամբ առած բանը , կամ
 իրեն յանձնուած աւանդը , կամ գտած
 կորուստը ետ պիտի տայ . 5 - Կամ ա-
 մէն բան , որուն համար սուտ տեղ եր-
 գում ըրած է , անհկա լման պիտի հա-
 տուցանէ , ու անոր վրայ հինգերորդ
 մաս մը աւելցնէ , և իր յանցանքի պա-
 տարագին օրը , որու որ կը վերաբերէր ,
 անոր պիտի տայ : 6 - Եւ իր յանցան-
 քի պատարագը Տէրոջը պիտի բերէ ,
 այսինքն հօտերէն անարատ խոյ մը ,
 քու արժեցուցած իգ համեմատ , քա-
 հանային դէպէքէք յանցանքի պատա-
 րագի համար : 7 - Եւ քահանան անոր
 համար քաւութիւն պիտի ընէ Տէրոջը
 առջև . և ինչ բանի համար որ յան-

ցանք ըրած է, [Թողութիւն պիտի ըլլայ անոր :

8 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 9 - Պատուիրէ Ահարոնի ու անոր որդիներուն և ըսէ, Ողջակէզին օրէնքը այս է . ողջակէզը բոլոր գիշերը մինչև սուտու սեղանը եղած կրակին վրայ պիտի ըլլայ, ու սեղանին կրակը Դէպ անոր մէջ վառած պիտի մնայ : 10 - Եւ քահանան իր քթանէ պատմու ճանք պիտի հագնի, ու էր քթանէ վարտիքը մարմինին վրայէն հագնի, և կրակով սյրուած ողջակէզին մոխիրը սեղանին վրայէն պիտի վերցնէ, ու սեղանին քով դնէ : 11 - Եւ իր զգեստները պիտի հանէ, և ուրիշ զգեստներ հագնի ու մոխիրը բանակէն դուրս մաքուր տեղ մը պիտի հանէ : 12 - Եւ սեղանին վրայի կրակը անոր մէջ Դէպ վառած պիտի ըլլայ * - պիտի չմարի. և քահանան ամէն առտու անոր վրայ փայտեր այրէ, ու անոր վրայ ողջակէզը շարէ, և անոր վրայ խաղաղութեան զոհերուն ճարպը պիտի այրէ : 13 - Կրակը սեղանին վրայ միշտ վառած պիտի ըլլայ * - պիտի չմարի :

14 - Եւ հացի ընծային օրէնքը այս է . Ահարոնի որդիները պիտի մատուցանեն զանկա Տէրոջը առջև՝ սեղանին առջև : 15 - Եւ իր ձեռքը լեցուն անկէ, այսինքն հացի ընծային բարակ ալիւրէն, ու անոր իւղէն, և հացի ընծային վրայ եղած բոլոր կնգրուկը պիտի վերցնէ, և անոր յիշատակը սեղանին վրայ անոյշ հոտի համար այրէ Տէրոջը : 16 - Եւ անկէ մնացածը Ահարոն ու անոր որդիները պիտի ուտեն . անխմոր հացեր չիւտելով՝ սուրբ տեղը պիտի ուտուի այն . Ժողովքի խորանին սրահին մէջ ուտեն զայն : 17 - Խմորով պիտի չեփուի . իմ պատարագներէս անոնց տուի զայն իրենց բաժին ըլլալու . սահկա մեղքի ու յանցանքի պատարագներու պէս ամենասուրբ է : 18 - Ահարոնի որդիներուն բոլոր արունները պիտի ուտեն զայն . Տէրոջը պատարագներէն ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ այս . ամէն անոնց դպչողը սուրբ ըլլայ :

19 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 20 - Ահարոնի ու անոր որդիներուն օծուելու օրը Տէրոջը մատուցանելու զոհերին այս է . արդուին տասներորդ մասը բարակ ալիւր ամէն

օր հացի ընծայի համար, պիտի մարտնչուի, կէտը առաւօտուն ու կէտը իրիկունը : 21 - Տապակի մէջ եփելու համար իւղով պիտի շինուի . *բաղադրեալ պիտի բերես զայն, և հացի ընծային եփած կտորուանքը անոյշ հոտի համար Տէրոջը պիտի մատուցանես : 22 - Եւ իր որդիներէն իր տեղը օծուելու քահանան պիտի մատուցանէ զայն . սահկա Տէրոջը յաւիտենական կանոն ըլլալով՝ բոլորովին պիտի այրուի : 23 - Եւ քահանային ամէն հացի ընծան բոլորովին պիտի այրուի, պիտի չուտուի :

24 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 25 - Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և ըսէ, Մեղքի պատարագին օրէնքը այս է . Ողջակէզին մորթուած տեղը պիտի մորթուի մեղքի պատարագը Տէրոջը առջև . այս ամենասուրբ է : 26 - Մեղքի պատարագը մատուցանող քահանան պիտի ուտէ զայն . սուրբ տեղը, Ժողովքի խորանին սրահը, պիտի ուտուի . 27 - Ինչ որ անոր միտին դպչի՝ սուրբ պիտի ըլլայ . և եթէ անոր արիւնէն հանդերձի մը վրայ ցաթքէ, սուրբ տեղը պիտի լուսազայն՝ որուն վրայ ցաթքեր էր : 28 - Եւ հողէ ամանը որուն մէջ եռացուցուած է *յա Դէպ, պիտի կտորուի . ու եթէ պղնձէ ամանի մէջ եռացուցուած ըլլայ, պիտի շփուի ու ջրով լուացուի : 29 - Քահանաներուն բոլոր արունները պիտի ուտեն զանկա . այս ամենասուրբ է : 30 - Եւ ամէն մեղքի պատարագ՝ որուն արիւնէն Ժողովքի խորանը կը բերուի սուրբ տեղին մէջ քաւութիւն ընելու համար, պիտի չուտուի, կրակով պիտի այրուի :

ԳԼ. Է

Եւ յանցանքի պատարագին օրէնքը այս է . այս ամենասուրբ է . 2 - Ողջակէզը մորթած տեղերին յանցանքի պատարագը պիտի մորթեն, և անոր արիւնը սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկէ . 3 - Եւ անկէ բոլոր ճարպը, այսինքն դմակը ու փորտաիքը ծածկող ճարպը, պիտի մատուցանէ . 4 - Եւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին վրայի թաղանթը երիկամունքներով

*Կամ, կտոր կտոր եղած

մէկտեղ պիտի փրցնէ. 5 - Եւ քաջանան սեղանին վրայ պիտի այրէ ասոնք՝ Տէրոջը պատարագ ըլլալու. ասիկա յանցանքի պատարագ է : 6 - Քաջանաներուն ամէն արուն պիտի ուտէ զւայն. սուրբ տեղը պիտի ուտուի, քանզի ամենասուրբ է : 7 - Մեղքի պատարագը ինչպէս որ կ'ըլլայ, յանցանքի պատարագն ալ այնպէս ըլլայ. անոնց օրէնքը մէկ է. անով քառութիւն ընող քաջանային պիտի ըլլայ այն : 8 - Եւ քաջանայ մը որ մէկուն ողջակէզը կը մատուցանէ, այն քաջանան իր մատուցած ողջակէզին մտրթը իրեն պիտի առնէ : 9 - Եւ բոլոր թանիրի մէջ եփուած՝ ու բոլոր ասնի մէջ և տապակի վրայ շինուած հացի ընծան, զանիկա մատուցանող քաջանային պիտի ըլլայ : 10 - Եւ ամէն իւզով շաղուած կամ *առանց իւզի՝ հացի ընծան Ահարոնի բոլոր որդիներուն պիտի ըլլայ. ամէն մէկուն բաժինը հաւասար պիտի ըլլայ : 11 - Եւ Տէրոջը մատուցանելու խաղաղութեան զոհին օրէնքը այս է. 12 - Եթէ շնորհակալութեան համար մատուցանէ զայն, այն աստէն շնորհակալութեան զոհին հետ իւզով շաղուած անխմոր շօթեր ու իւզով օծուած անխմոր լաւաշներ և բարակ ալիւրէ իւզով շաղուած բաղադրեալ շօթեր պիտի մատուցանէ : 13 - Շնորհակալութեան համար եղած իր խաղաղութեան զոհին շօթերէն զատ՝ խմորեալ հացէ ընծայ մը պիտի մատուցանէ : 14 - Եւ անկէ, այսինքն ամէն ընծաներէն, մէկ հատ բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէ Տէրոջը. և ասիկա խաղաղութեան զոհին արիւնը սրկող քաջանային պիտի ըլլայ : 15 - Եւ շնորհակալութեան համար՝ իր խաղաղութեան զոհին միւր մատուցուած օրը պիտի ուտուի. անկէ մինչև առտու չմնայ : 16 - Եւ եթէ իր ընծան ուխտի համար է կամ կամուար զոհ է, զոհը մատուցած օրը պիտի ուտուի, ու մնացածը հետեւեալ օրը պիտի ուտուի. 17 - Եւ զոհին միսէն երրորդ օրուան մնացածը կրակով այրուի : 18 - Եւ եթէ երրորդ օրը իր խաղաղութեան զոհին միսէն ուտուելու ըլլայ, ընդունելի պիտի չըլլայ, ոչ ալ անիկա մատուցանողին զոհ պիտի սեպուի. պղծու-

թիւն պիտի ըլլայ, ու անկէ ուտող անձը իր անօրէնութիւնը պիտի կրէ : 19 - Եւ ամէն քեռի անմաքուր բանի դպած միւր պիտի չուտուի, կրակով պիտի այրուի. սակայն ամէն մաքուր եղողը պիտի ուտէ Իսրայէլի տան զոհին : 20 - Բայց այն անձը՝ որ իր անմաքութիւնը իր վրայ ունենալով, Տէրոջը խաղաղութեան զոհէն միս ուտէ, այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : 21 - Եւ ամէն քեռի անմաքուր բանի մը՝ թէ՛ մարդու անմաքութեան, թէ՛ անմաքուր անասունի, և թէ՛ ամէն կերպ անմաքուր *պիղծ բանի՝ մը դպչող անձը եթէ Տէրոջը խաղաղութեան զոհին միսէն ուտելու ըլլայ, այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : 22 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Բնաւ արջաուի կամ ոչխարի կամ այծի ճարպ չուտէք : 24 - Եւ մեռած անասունին ճարպը ու գիշատուածին ճարպը ամէն գործի մէջ պիտի գործածուի, բայց անկէ բնաւ պիտի չուտէք : 25 - Քանզի ով որ Տէրոջը պատարագ մատուցուելու անասունին ճարպէն ուտելու ըլլայ, այն ուտող անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : 26 - Եւ ձեր ամէն բնակարաններուն մէջ բնաւ արիւն պիտի չուտէք, թէ՛ թռչունի ըլլայ և թէ՛ անասունի : 27 - Ամէն անձ որ ինչչեւիցէ արիւն ուտէ, այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : 28 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 29 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Իր խաղաղութեան զոհը Տէրոջը մատուցանողը իր խաղաղութեան զոհէն ընծայ պիտի բերէ Տէրոջը : 30 - Տէրոջը պատարագները իր ձեռքովը պիտի բերէ. երբուծով ճարպը պիտի բերէ, որպէս զի երբուծը երեքցնելու ընծայի համար երեքցուի Տէրոջը առջև : 31 - Եւ քաջանան ճարպը պիտի այրէ սեղանին վրայ. բայց երբուծը Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ : 32 - Եւ ձեր խաղաղութեան զոհերէն աջ զիտար քաջանային պիտի տաք՝ բարձրացնելու ընծայի համար : 33 - Ահարոնի որդիներէն՝ խաղաղութեան զոհին արիւնը

*Եբէ. չոր

*կա՛, սողունի

ու ճարպը ով որ մատուցանէ , աջ
 զիսար անոր բաժինը պիտի բլլայ :
 34 - Քանզի անոնց խաղաղութեան զո-
 ճերէն երեքցնելու երբուծը և բարձրա-
 ցնելու զիսար Իսրայէլի որդիներէն
 առի , և զանոնք յաւիտենական կա-
 նոնով Իսրայէլի որդիներէն Ա.Տարոն
 քահանային ու անոր որդիներուն առի :
 35 - Ասիկա Տէրոջը պատարագներէն
 Ա.Տարոնի և անոր որդիներուն օժման
 իրաւունքի համար «բ-եց» , զանոնք
 Տէրոջը քահանայութիւն ընելու մօտե-
 ցուցած օրը , 36 - Զորոնք օժած օրը
 Տէրը հրամայեց որ Իսրայէլի որդի-
 ներէն իրենց ցեղերուն մէջ յաւիտե-
 նական կանոնով անոնց տրուի :

37 - Ողջակէզին , հացի ընծային և
 մեղքի պատարագին և յանցանքի պա-
 տարագին ու օրհնութիւններուն և
 խաղաղութեան զոհին օրէնքը այս է ,
 38 - Զոր Տէրը պատուիրեց Մովսէսի
 Սինա լեռը , այն օրը որ Իսրայէլի որ-
 դիներուն պատուիրեց իրենց ընծաները
 Տէրոջը մատուցանելու Սինայի անա-
 պատին մէջ :

ԳԼ Ը

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսե-
 լով . 2 - Աւ Ա.Տարոնը ու անոր որդի-
 ները իրեն հետ , և զգեասները ու օժ-
 ման իւզը և մեղքի պատարագին զուա-
 րակը ու երկու խոյերը և անխմոր հացին
 սակաւը . 3 - Եւ ժողովք բոլոր ժողովքը
 մէկտեղ ժողովքի խորանին դուռը : 4 -
 Եւ Մովսէս Տէրոջը իրեն պատուիրա-
 ծին պէս ըրաւ . ու ժողովքը մէկտեղ
 ժողովուեցաւ ժողովքի խորանին դուռը :
 5 - Եւ Մովսէս ըրաւ ժողովքին , Այս
 է բանը զոր Տէրը պատուիրեց ընելու :
 6 - Եւ Մովսէս մօտեցուց Ա.Տարոնը ու
 անոր որդիները , և զանոնք ջրով լուաց .
 7 - Եւ անոր հազցուց շապիկը , ու ա-
 նոր մէջքը կապեց գօտին , և պատմու-
 ճանը հազցուց անոր , ու եփուտը անոր
 վրայ դրաւ , ու եփուտին ժապաւէնովը
 փաթթեց ու անով գօտեւորեց զա-
 նիկա : 8 - Եւ լանջապանակը անոր
 վրայ դրաւ , ու լանջապանակին մէջ
 Ուրիմը ու Թուրիմը դրաւ : 9 - Եւ
 խոյրը անոր գլուխը դրաւ , ու խոյրին
 վրայ անոր առջեւի կողմէն սակի թի-
 թեղը , այսինքն սուրբ պսակը , դրաւ ,
 Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս :

10 - Եւ Մովսէս օժման իւզը առաւ ,
 ու խորանը և բոլոր անոր մէջ եղած-
 ները օժեց ու սրբեց զանոնք . 11 - Եւ
 անկէ սեղանին վրայ սրսկեց եօթը ան-
 գամ . և սեղանը ու անոր բոլոր գոր-
 ծիքները , և աւազանը ու անոր խա-
 րխիւր օժեց , զանոնք սրբելու համար :
 12 - Եւ օժման իւզէն Ա.Տարոնի գլխուն
 վրայ թափելով՝ զանիկա սրբելու հա-
 մար օժեց : 13 - Եւ Մովսէս մօտեցուց
 Ա.Տարոնի որդիները , ու անոնց շապիկ-
 ներ հազցուց , և մէջքերնին գօտի կա-
 պեց , ու անոնց գլուխը ապարօշներ
 փաթթեց , Տէրոջը Մովսէսի պատուի-
 րածին պէս :

14 - Եւ մեղքի պատարագին զուա-
 րակը մօտեցուց . և Ա.Տարոն ու անոր որ-
 դիները իրենց ձեռքերը մեղքի պատա-
 րագ բլլալու զուարակին գլխուն վրայ
 դրին : 15 - Եւ մորթեց զանիւ . և Մով-
 սէս արիւնը առաւ , ու իր մատովը սե-
 զանին եղջիւրներուն վրայ դնելով
 շուրջանակի , մաքրեց սեղանը . ու
 արիւնը սեղանին յատակը թափեց . և
 անոր վրայ քաւութիւն ընելու համար
 սրբեց զայն : 16 - Եւ փորտիքին վրայ
 եղած բոլոր ճարպը և լեարդին թա-
 ղանթը ու երկու երիկամունքը , և
 անոնց ճարպը առաւ . ու Մովսէս սե-
 զանին վրայ այրեց զանիւ : 17 - Բայց
 զուարակը , այսինքն անոր մորթը և
 միսը , ու անոր աղբը , բանակին դուր-
 սիդին կրակով այրեց , Տէրոջը Մով-
 սէսի պատուիրածին պէս :

18 - Եւ ողջակէզին խոյր մօտեցուց .
 և Ա.Տարոն ու անոր որդիները իրենց
 ձեռքերը խոյին գլխուն վրայ դրին :
 19 - Եւ մորթեց զանիւ . և Մովսէս
 շուրջանակի սեղանին վրայ սրսկեց ա-
 րիւնը . 20 - Եւ խոյը կտոր կտոր ըրաւ .
 ու Մովսէս այրեց գլուխը և կտորները
 ու ճարպը . 21 - Եւ փորտիքը ու սա-
 քերը ջրով լուաց . և Մովսէս բոլոր
 խոյը սեղանին վրայ այրեց . ասիկա ող-
 ջակէզ «- անուշահոտ պատարագ մըն
 էր Տէրոջը , ինչպէս Տէրը Մովսէսի
 պատուիրեց :

22 - Եւ մօտեցուց միւս խոյը , այսինքն
 օրհնութեան խոյը . և Ա.Տարոն ու ա-
 նոր որդիները իրենց ձեռքերը խոյին
 գլխուն վրայ դրին . 23 - Եւ մորթեց
 զանիւ . ու Մովսէս անոր արիւնէն ա-
 ռաւ , և Ա.Տարոնի աջ ականջին բլթա-
 կին վրայ , ու անոր աջ ձեռքին մեծ

մատին վրայ, և անոր աջ ուղքին մեծ մատին վրայ դրաւ: 24 - Եւ Ահարոնի որդիները մօտեցուց, ու Մովսէս այն արիւնէն անոնց աջ ալիանջներուն բլթակներուն վրայ, և անոնց աջ ձեռքերուն մեծ մատերուն վրայ, ու անոնց աջ ուղքերուն մեծ մատերուն վրայ դրաւ. և Մովսէս սեղանին վրայ շուրջանակի սրակեց հառաջ արիւնը: 25 - Եւ ճարպը, դմակը ու փորտաիքին վրայ եղած բոլոր ճարպը և լեարդին թաղանթը ու երկու երկկամուկը և անոնց ճարպը ու աջ զիտը առաւ: 26 - Եւ Տէրոջը առջև եղած անխմոր հացի սակառէն անխմոր շօթ մը, իւղով հացի շօթ մը ու լաւաշ մը առաւ, և ճարպերուն վրայ ու աջ զտին վրայ դրաւ: 27 - Եւ ամէնը Ահարոնի ու անոր որդիներուն ձեռքը գնելով՝ զանոնք Տէրոջը առջև երեքցնելու ընծայ *մատուց: 28 - Եւ Մովսէս անոնց ձեռքէն առաւ զանոնք, ու սեղանը եղած ողջակէզին վրայ այրեց. ասոնք օրհնութեան համար անուշահոտ պատարագ էին Տէրոջը: 29 - Եւ Մովսէս երբուծը առաւ ու Տէրոջը առջև երեքցնելու ընծայ մատուց. ասիկա օրհնութեան խոյէն Մովսէսի բաժինը եղաւ, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս: 30 - Եւ Մովսէս օժման իւղէն ու սեղանին վրայ եղած արիւնէն առնելով Ահարոնի վրայ «- անոր հանդերձներուն վրայ, և անոր հետ անոր որդիներուն վրայ ու անոր որդիներուն հանդերձներուն վրայ սրակեց. և Ահարոնը «- անոր հանդերձները և անոր հետ անոր որդիները ու անոր որդիներուն հանդերձները սրեց:

31 - Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի ու անոր որդիներուն, Միտր ժողովքի խորանին դրանք քով եռացուցէք, և հոն օրհնութեան սակառին մէջի հացերովը կերէք զանիկա, ինչպէս՝ ինծի պատուիրուեցաւ՝ ըսելով թէ Ահարոն ու անոր որդիները պիտի ուտեն զանոնք: 32 - Եւ միտէն ու հացէն աւելցածը կրակով այրեցէք: 33 - Եւ եօթը օր ժողովքի խորանին դռնէն դուրս մի ելէք, մինչև ձեր օրհնութեան օրերուն վերջին օրը. վասն զի ձեր օրհնութիւնը եօթը օր կ'ըլլայ: 34 - Այս օրուան

եղածին պէս, ձեզի համար քաւութիւն ընելու, Տէրը հրաման ըրաւ «յոպէս» ընել: 35 - Ուստի ցորեկը ու գիշերը եօթը օր ժողովքի խորանին դրանք քով պիտի նստիք, ու Տէրոջը պահպանութիւնը պիտի ընէք, որպէս զի չմեռնիք. քանզի այսպէս պատուիրուած է ինծի Տէրոջը: 36 - Եւ Ահարոն ու անոր որդիները Տէրոջը Մովսէսի ձեռքով պատուիրած ամէն բաները ըրին:

ԳԼ. Թ

Եւ եղաւ որ ութերորդ օրը Մովսէս կանչեց Ահարոնը ու անոր որդիները և Խարայէլի ծերերը. 2 - Եւ ըսաւ Ահարոնի, Առ քեզի մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը, ու ողջակէզի համար խոյ մը. անոնք անարատ ըլլան. և Տէրոջը առջև մօտեցուր: 3 - Եւ Խարայէլի որդիներուն պիտի խօսիս՝ ըսելով, Մեղքի պատարագի համար այժերէն նոխազ մը, և ողջակէզի համար զուարակ մը ու գառնուկ մը առէք. մէկ տարեկան՝ անարատ ըլլան: 4 - Նաև խաղաղութեան զոհերուն համար Տէրոջը առջև զոհելու արջառ մը ու խոյ մը ու իւղով շաղուած հացի ընծայ պիտի առնէք. վասն զի այսօր Տէրը ձեզի պիտի երեւնայ: 5 - Եւ Մովսէսի պատուիրածը ժողովքի խորանին առջև բերին. ու բոլոր ժողովքը մօտեցան ու Տէրոջը առջև կայնեցան: 6 - Եւ Մովսէս ըսաւ, Այս է Տէրոջը պատուիրած բանը. ասիկա ըրէք, ու Տէրոջը փառքը ձեզի պիտի երեւնայ: 7 - Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի, Սեղանին մօտեցիր, ու քու մեղքի պատարագը և ողջակէզը ըրէ, և քեզի համար ու ժողովուրդին համար քաւութիւն ըրէ. և ժողովուրդին ընծան մատուցանելով՝ անոնց համար քաւութիւն ըրէ Տէրոջը պատուիրածին պէս:

8 - Ուստի Ահարոն սեղանին մօտեցաւ, և իրեն համար եղած մեղքի պատարագին զուարակը մորթեց: 9 - Եւ Ահարոնի որդիները արիւնը մօտեցուցին անոր. ու անիկա իր մատը արիւնը թաթխեց, ու սեղանին եղջիւրներուն վրայ դրաւ, և հառաջ արիւնը սեղանին յատակը թափեց. 10 - Բայց մեղքի պատարագէն ճարպը ու երկկամուկները և լեարդին թաղանթը սեղանին վրայ այրեց, ինչպէս Տէրը Մովսէսի

* եքր. երեքցուց
 † կա՛, ես պատուիրուեցի

պատուիրեր էր: 11 - Եւ միտր ու մորթը բանակին դուրսիդին կրակով այրեց: 12 - Եւ ողջակէզը մորթեց. ու Ահարոնի որդիները արիւնը անոր բերին, և սեղանին վրայ շուրջանակի սրակեց զայն: 13 - Եւ ողջակէզը կտորներովը ու գլխովը անոր բերին, և սեղանին վրայ այրեց: 14 - Եւ փորսախքը ու սաքերը լուաց, ու սեղանին վրայի ողջակէզին վրայ այրեց:

15 - Եւ ժողովուրդին ընծան մօտեցուց, ու ժողովուրդին համար մեղքի պատարագ ըլլալու նոխարը առաւ, և մորթեց զանիկա, ու մեղքի պատարագը առ առջուտանին պէս: 16 - Եւ ողջակէզը մօտեցուց ու ըստ օրինի մատուց: 17 - Եւ հացի ընծան մօտեցուց, ու անկէ ձեռքը լեցուց և սեղանին վրայ այրեց, առառուան ողջակէզէն զառ: 18 - Եւ ժողովուրդին խաղաղութեան զոհ ըլլալու արջառը ու խոյր մորթեց. և Ահարոնի որդիները արիւնը անոր բերին, ու սեղանին վրայ շուրջանակի սրակեց զայն: 19 - Եւ արջառէն ճարպերը, ու խոյէն դմակը և փրփրփր ծածկող հարպը, ու երիկամունքները ու լեարդին թաղանթը բերին. 20 - Եւ ճարպերը երբուծներուն վրայ դրին, ու ճարպերը սեղանին վրայ այրեց: 21 - Եւ Ահարոն երբուծները ու աջ զիսար Տէրոջը առջև երերցնելու ընծայ մատուց, Մովսէսի պատուիրածին պէս:

22 - Եւ Ահարոն իր ձեռքերը ժողովուրդին վրայ վերցուց ու օրհնեց զանոնք. և մեղքի պատարագը ու ողջակէզը և խաղաղութեան զոհերը մատուցանելէն ետքը իջաւ: 23 - Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքի խորանը մտան, և առջև ելլելով ժողովուրդը օրհնեցին. և Տէրոջը փառքը բոլոր ժողովուրդին երեւցաւ: 24 - Եւ Տէրոջը առջևէն կրակ ելաւ, ու սեղանին վրայ եղած ողջակէզը և ճարպը այրեց. և բոլոր ժողովուրդը տեսնելով՝ աղաղակեցին ու երեսնուն վրայ ինկան:

ԳԼ. Ժ

Եւ Ահարոնի որդիները, Նադաբ ու Աբիուդ, ամէն մէկը իր բուրվառը առաւ, ու անոր մէջ կրակ դրին և վրան խունկ դրին, ու Տէրոջը առջև օտար կրակ մատուցին, զոր ինք պատուիրած չէր անոնց: 2 - Եւ Տէրոջը առ-

ջևէն կրակ ելաւ, ու սպառեց զանոնք, և Տէրոջը առջև մեռան: 3 - Այն ատեն Մովսէս ըստ Ահարոնի, Այս է զոր Տէրը խօսեցաւ՝ ըսելով, Ինծի մօտեցողներուն մէջ սուրբ պիտի սեպուիմ, ու բոլոր ժողովուրդին առջև փառաւորուիմ. և Ահարոն լուռ կեցաւ: 4 - Եւ Մովսէս կանչեց Ահարոնի հօրեղբօրը Աղիէլի որդիները, Միսայէլը ու Եղիսափանը, և ըստ անոնց, Մօտեցէք, ձեր եղբայրները սրբարանին առջևէն բանակին դուրսիդին վերցուցէք: 5 - Եւ անոնք մօտեցան, ու Մովսէսի ըսածին պէս՝ զանոնք իրենց շապիկներովը բանակէն դուրս վերցուցին:

6 - Եւ Մովսէս ըստ Ահարոնի ու անոր որդիներուն, Եղիսափարի և Իթամարի, Գլուխնիդ մի բանաք ու հանդերձնիդ մի պատուէք, որպէս զի չմեռնիք, և բոլոր ժողովուրդին վրայ բարկութիւն չգայ. բայց ձեր եղբայրները, Խորայէլի բոլոր առնը, Տէրոջը բրած այրումին վրայ թող լան: 7 - Եւ դուք ժողովքի խորանին դռնէն դուրս մի ելէք, որպէս զի չմեռնիք. վասն զի Տէրոջը օծման իւրը վրանիդ է. և անոնք Մովսէսի ըսածին պէս ըրին:

8 - Եւ Տէրը խօսեցաւ Ահարոնի՝ ըսելով, 9 - Երբ ժողովքի խորանը մանէք թէ՛ դուն և թէ՛ քու որդիներդ քեզի հետ, գինի կամ օղի չիսէք, որպէս զի չմեռնիք. ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ, 10 - Որպէս զի սուրբին ու անսուրբին մէջտեղ, և անմաքուրին ու մաքուրին մէջտեղ տարբերութիւն գնէք. 11 - Եւ որպէս զի Խորայէլի որդիներուն սորվեցնէք բոլոր կանոնները, զորոնք Տէրը Մովսէսի ձեռքով զրուցած է անոնց:

12 - Եւ Մովսէս խօսեցաւ Ահարոնի ու անոր մնացած որդիներուն, Եղիսափարի ու Իթամարի. Տէրոջը պատարագներէն աւելցած հացի ընծան առէք, ու սեղանին քով բաղարջ կերէք. վասն զի անիկա ամենատուր է: 13 - Սուրբ տեղը կերէք զանիկա, վասն զի Տէրոջը պատարագներէն քու իրաւունքդ ու քու որդիներուդ իրաւունքն է. քանզի ինծի այսպէս պատուիրուած է: 14 - Եւ երերցնելու երբուծը ու բարձրացնելու զիսար՝ դուն ու քու որդիներդ և քու աղջիկներդ քեզի հետ մաքուր տեղ մը պիտի ուտէք. վասն զի Խորայէլի որդիներուն խաղաղութեան զոհերէն քու

իրաւունքիդ ու քու որդիներուդ իրաւունքին համար տրուած են : 15 - Բարձրացնելու զիստը ու երերցնելու երբուժը ճարպին պատարագներովը Տէրոջը առջև երերցնելու համար պիտի բերեն . և Տէրոջը պատուիրածին պէս քուկդ ու քեզի հետ քու որդիներուդ պիտի ըլլայ յաւիտեանական կանոնով :

16 - Եւ Մովսէս մեղքի պատարագին նոխազը զգուշութեամբ փնտռեց, և ահա այրուած էր . ուստի Ահարոնի մնացած որդիներուն , Եղիազարի ու Իթամարի , բարկացաւ՝ ըսելով , 17 - Ինչո՞ւ մեղքի պատարագը սուրբ տեղը չկերպք . քանզի այս ամենասուրբ է . ու Տէրը տուաւ ձեզի , որպէս զի ժողովքին անօրէնութիւնը վերցնէք .- Տէրոջը առջև անոնց համար քաւութիւն ընէք : 18 - Ահա անոր արիւնը սրբարանին մէջ չբերուեցաւ . դուք իմ պատուիրածիս պէս անպատճառ սուրբ տեղը ուտելու էիք զայն : 19 - Եւ Ահարոն ըսաւ Մովսէսի , Ահա այսօր իրենց մեղքի պատարագը ու ողջակէզը Տէրոջը առջև մատուցին , ու գլխուս այսպիսի բաներ եկան . և է՛ի այսօր մեղքի պատարագը ուտելու ըլլայի , Տէրոջը առջև հաճելի պիտի ըլլա՞ր արդեօք : 20 - Եւ երբ Մովսէս զայն լսեց , հաւնեցաւ :

ԳԼ. ԺԱ.

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով անոնց , 2 - Խօսեցէք Իսրայելի որդիներուն ու ըսէք , Երկրի վրայ եղած բոլոր անասուններէն ձեր ուտելու անասունները ասոնք են . 3 - Ամէն ճեղքուած կճղակ ունեցող կճղակարաշխ .- որո՞ճացող անասունը պիտի ուտէք : 4 - Բայց որո՞ճացողէն կամ կճղակարաշխ եղածէն ասոնք պիտի չուտէք . ուղար , վասն զի անիկա թէև կ'որո՞ճայ , բայց կճղակարաշխ չէ , անիկա ձեզի անմաքուր ըլլայ : 5 - Եւ ճագարը , վասն զի անիկա կ'որո՞ճայ , բայց կճղակարաշխ չէ , անիկա ձեզի անմաքուր ըլլայ : 6 - Եւ նապատակը , որ թէև կ'որո՞ճայ , բայց կճղակարաշխ չէ , անիկա ձեզի անմաքուր ըլլայ : 7 - Եւ խոզը , որ թէև կճղակարաշխ է և ճեղքուած կճղակ ունի , բայց չորո՞ճար , անիկա ձեզի անմաքուր ըլլայ : 8 - Ասոնց միսէն պիտի չու-

տէք , ու դիերուն չդպչիք . ձեզի անմաքուր են :

9 - Զուրերուն մէջ բոլոր եղածներէն ասոնք պիտի ուտէք . Զուրերու մէջ , այսինքն ծովերու մէջ և գետերու մէջ , ամէն թև ու թեփ ունեցողը պիտի ուտէք : 10 - Եւ ծովերու մէջ ու գետերու մէջ եղած բոլոր անթև ու անթեփ եղածները՝ Զուրերուն բոլոր զեռուններէն և Զուրերուն մէջ եղած շունչ ունեցող բոլոր կենդանիներէն՝ պիտի ըլլան ձեզի : 11 - Անոնք ձեզի պիտի պիտի ըլլան . անոնց միսէն պիտի չուտէք , և անոնց դիերէն պիտի զգուժիք : 12 - Զուրերուն մէջ եղած բոլոր անթև ու անթեփ եղածները ձեզի պիտի ըլլան :

13 - Եւ թռչուններուն մէջ ասոնք պիտի պիտի սեպէք , պիտի չուտուին . պիտի են արծիւր և պասկուճը ու գետարծիւր , 14 - Եւ ցինը ու անգղը իր տեսակին պէս , 15 - Եւ ամէն ագուաւր իր տեսակին պէս , 16 - Եւ ջայլամը ու բուն , և կկուն ու բազէն իր տեսակին պէս , 17 - Եւ հաւպատիրը ու հողամաղը և քաջահաւը , 18 - Եւ կարսպը , և հաւալուսը , ու սև անգղը , 19 - Եւ արագիւր .- քարաղբը իր տեսակին պէս , և յապոպը , ու չիղջը :

20 - Ամէն չորս ոտքի վրայ քալող թռչող զեռուն ձեզի պիտի ըլլայ : 21 - Սակայն ասոնք պիտի ուտէք . բոլոր չորս ոտքի վրայ քալող թռչող զեռուններէն՝ երկրի վրայ ցաթկելու համար ոտքերնուն վրայ ազգը ունեցողները : 22 - Անոնցմէ ասոնք պիտի ուտէք . մարախը իր տեսակին պէս , ու գրուիճը իր տեսակին պէս , և խարագուլը իր տեսակին պէս , ու ջորեակը իր տեսակին պէս : 23 - Բայց հաշտ բոլոր չորս ոտքով թռչող զեռունները ձեզի պիտի ըլլան : 24 - Եւ ասոնցմով դուք անմաքուր պիտի ըլլաք . ամէն անոնց դիերուն դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ : 25 - Եւ ամէն անոնց դիերը վերցնողը իր հանդերձները պիտի լուայ , ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ : 26 - Բոլոր անասունները որոնք կճղակարաշխ են , բայց կճղակինն ճեղքուած չէ , և չեն որո՞ճար , անմաքուր են ձեզի . ով որ անոնց դիերն դպչի , անմաքուր պիտի ըլլայ :

27 - Եւ բոլոր չորս ոտքի վրայ քալող անասուններէն՝ թաթերնուն վրայ

քաղաղներուն ամէնը անմաքուր ըլլայ ձեզի . ամէն անոնց դիերուն դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ : 28 - Եւ անոնց դիերը վերցնողը իր լաթերը պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ . անոնք անմաքուր են ձեզի :

29 - Եւ երկրի վրայ սողացող սողուններուն մէջ ասոնք անմաքուր ըլլան ձեզի . աքիսը ու մուկը և *տիտեռը իր տեսակին պէս , 30 - Եւ կովադիանն ու մողէսը և քարաթօշը ու խոմէթը և գետնառիւծը : 31 - Բոլոր սողացողներուն մէջ ձեզի անմաքուր եղածները ասոնք են . ամէն անոնց մեռածին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ :

32 - Եւ անոնց մէկ մեռածը ինչ բանի վրայ որ իյնայ, թէ՛ փայտէ աման ըլլայ կամ հանդերձ կամ մորթ կամ քուրձ, ի՛նչ տեսակ գործածական ամանն որ ըլլայ, անմաքուր պիտի ըլլայ . ջուրը պիտի ձգուի այն, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ, և ետքը մաքուր սեպուի : 33 - Եւ ասոնց մէկը ո՛ր հողէ ամանին մէջ իյնալու ըլլայ, ամէն անոր մէջ եղածը անմաքուր պիտի ըլլայ, ու այն մանչ պիտի կոտրէք : 34 - Ամէն ուտուելու կերակուրը որուն վրայ †ջուր կայ, «- անոնց մէջ մէջը իջնայ», անմաքուր պիտի ըլլայ . նոյնպէս ամէն ամանի մէջ եղած բոլոր խմուելու խմելիքը անմաքուր պիտի ըլլայ : 35 - Եւ ամէն բան՝ որուն վրայ ասոնց դին կ'իյնայ, անմաքուր պիտի ըլլայ . Բէ՛ թոնիր ըլլայ և թէ՛ վառարան, պիտի աւրուի . ասոնք անմաքուր են ու անմաքուր պիտի սեպուին ձեզի : 36 - Բայց աղբիւրը կամ հորը, ‡ուր ժողվում ջուր կայ, մաքուր պիտի ըլլայ . սակայն անոնց դիերուն դպչողը անմաքուր ըլլայ :

37 - Եւ եթէ անոնց դին ցանուելու սերմի մը վրայ իյնայ, մաքուր պիտի ըլլայ այն : 38 - Բայց եթէ սերմին վրայ ջուր դրուած ըլլայ, ու անոր վրայ անոնց դին իյնայ, այն ձեզի անմաքուր պիտի ըլլայ :

39 - Եւ եթէ ձեր ուտուելու կենդանիներէն մէկը մեռնի, անոր դիին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ :

*կամ, կրիան
†կամ, այսպէս ջուր գայ
‡կամ, կամ ջրակուտակը

40 - Եւ անոր դինն ուտողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ . և անոր դին վերցնողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ :

41 - Եւ երկրի վրայ սողացող ամէն սողուն պիղծ է . պիտի չուտուի այն :

42 - Երկրի վրայ բոլոր սողացող սողուններէն ամէն իր փորին վրայ քաղաղը, կամ ամէն չորս ոտքի վրայ պարտողը, և կամ ամէն բնագմտանի եղածները պիտի չուտէք, վասն զի պիղծ են :

43 - Բնաւ սողացող սողունով մը անձերնիդ մի պղծէք . ոչ ալ անոնցմով պղծուելով անձերնիդ անմաքուր ընէք :

44 - Որովհետեւ ես եմ՝ ձեր Տէր Աստուածը, ուստի սրբեցէք անձերնիդ ու սուրբ եղէք, վասն զի ես սուրբ եմ . ու բնաւ երկրի վրայ սողացող սողունով մը անձերնիդ մի պղծէք : 45 - Փանզի ես եմ՝ Եհովան, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի, որպէս զի ձեզի Աստուած ըլլամ . ուստի սուրբ եղէք, վասն զի ես սուրբ եմ :

46 - Չորքոտանիներուն և թռչուններուն ու ջուրերուն մէջ շարժող բոլոր շնչաւոր կենդանիներուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն օրէնքը այս է . 47 - Որպէս զի անմաքուրին ու մաքուրին մէջ տեղ և ուտուելու անասունին ու չուտուելու անասունին մէջ տեղ տարբերութիւն դնէք :

ԳԼ. ԺԲ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի սրգիներուն ու ըսէ, Եթէ կին մը սերմ առնէ ու արուզաւակ ծնանելու ըլլայ, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ . իր դաշտանին համար զատուելու օրերուն համեմատ անմաքուր պիտի ըլլայ : 3 - Եւ ութերորդ օրը «չ» անթլիփատութեան մարմինը պիտի թլիփատուի : 4 - Եւ անիկա իր մաքրուելուն արիւնովը երեսունուիրէք օր պիտի նստի . ու մինչև իր մաքրուելու օրերուն լմնալը՝ բնաւ սուրբ բանի մը պիտի չդպչի, ոչ ալ սրբարանը մտնէ : 5 - Բայց եթէ անիկա աղջիկ ծնանելու ըլլայ, երկու շաբաթ անմաքուր պիտի ըլլայ իր դաշտանի †մանակին պէս, և վաթսուներկեց օր իր մաքրուելուն արիւնովը պիտի նստի :

6 - Եւ երբ աղայ կամ աղջիկ զաւկի

Համար իր մաքրուելու օրերը լմնան , ժողովքի խորանին գուռը ողջակէզի համար մէկ տարեկան գառ , ու մեղքի պատարագի համար ազաւնիի ձագ մը կամ տատրակ մը պիտի բերէ քահանային , 7 - Որ պիտի մատուցանէ զանհկա Տէրօջր առջև ու քաւութիւն ընէ անոր համար , և անհկա իր արիւնին աղբիւրէն պիտի մաքրուի : Արուկամ էգ զաւակ ծնանողին օրէնքը այս է : 8 - Եւ եթէ գառ բերելու կարող չէ , երկու տատրակ կամ ազաւնիի երկու ձագ առնէ , մէկը ողջակէզի ու միւսը մեղքի պատարագի համար , և քահանան քաւութիւն ընէ անոր համար , ու անհկա մաքրուի :

ԳԼ. ԺԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով , 2 - Մարդու մը մարմինին մորթին մէջ ուռեցք կամ քոս կամ պաղպաջ ըլլալով՝ անոր մարմինին մորթին մէջ բորստութեան ախտին պէս նշան մը երեւնալու ըլլայ , այն ատեն անհկա Ահարոն քահանային , կամ անոր որդիներէն , քահանաներէն , մէկուն պիտի բերուի : 3 - Եւ քահանան պիտի նայի մարմինին մորթին մէջ եղած ախտին նշաններուն . ու եթէ ախտին մէջի մազերը ճերմակի դառնալով՝ ախտը մարմինին մորթէն խորունկ երևնայ , բորստութեան ախտ է այն . և քահանան պիտի նայի անոր , ու *պիտի ծանուցանէ անոր անմաքուր ըլլալը : 4 - Ապա եթէ անոր մարմինին մորթին մէջ պաղպաջը ճերմակ է ու մորթէն խորունկ չերեւնար , և մազն ալ ճերմակի դարձած չէ , այն ատեն քահանան եօթը օր գոցուած պիտի պահէ ախտակիրը : 5 - Եւ քահանան եօթներորդ օրը պիտի նայի անոր . ու եթէ ախտը գեռ կը կենայ , ու մորթին մէջ տարածուած չէ , այն ատեն քահանան եօթը օր այ գոցուած պիտի պահէ զանհկա : 6 - Եւ քահանան եօթներորդ օրը նորէն պիտի նայի անոր , ու եթէ շլացած ըլլայ , ու մորթին մէջ տարածուած չըլլայ , քահանան *պիտի ծանուցանէ անոր մաքուր ըլլալը՝ . ախկա Գոյն քոս մըն է . և անհկա իր լա-

թերը պիտի լուայ , ու մաքուր ըլլայ : 7 - Բայց եթէ իր մաքրուելուն համար քահանայէն նայուելէն ետքը՝ քոսը մորթին մէջ տարածուի , քահանան նորէն պիտի նայի անոր : 8 - Եւ քահանային նայած ատենը եթէ քոսը մորթին մէջ տարածուած է , այն ատեն քահանան անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ . բորստութիւն է :

9 - Երբ մարդու մը վրայ բորստութեան ախտը ըլլայ , անհկա քահանային պիտի տարուի . 10 - Եւ քահանան պիտի նայի . և եթէ մորթին մէջ ճերմակ ուռեցք կայ ու ճերմակի դարձեր է մազը , և ուռեցքին մէջ ողջ միսի նշան կայ , 11 - Ասիկա անոր մարմինին մորթին մէջ չինցած բորստութիւն է . և քահանան անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ , գոցուած չպահէ զանհկա , վասն զի անմաքուր է :

12 - Եթէ բորստութիւնը մորթին մէջ տարածուեր է , ու ախտակիրն բոլոր մորթը գլխէն մինչև սոքը , այսինքն քահանային աչքերուն բոլոր տեսած տեղը , բորստութիւնը պատեր է , 13 - Եւ քահանան տեսնէ որ բորստութիւնը անոր բոլոր մարմինը պատած է , այն ատեն ախտակիրն մաքուր ըլլալը ծանուցանէ . *անպի բոլորովին ճերմակի դարձաւ , անհկա մաքուր է : 14 - Բայց երբ անոր վրայ ողջ միս տեսնուի , անհկա անմաքուր պիտի ըլլայ : 15 - Եւ քահանան պիտի տեսնէ ողջ միսը , և անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ . ողջ միսը անմաքուր է . բորստութիւն է : 16 - Իսկ եթէ ողջ միսը փոխուի նորէն ու ճերմակի դառնալու ըլլայ , այն ատեն քահանային պիտի գայ . 17 - Եւ քահանան պիտի տեսնէ զանհկա . ու եթէ ախտը ճերմակի դարձեր է , այն ատեն քահանան ախտակիրն մաքուր ըլլալը ծանուցանէ . անհկա մաքուր է :

18 - Եւ եթէ մարմինին մորթին մէջ պալար ըլլայ ու առողջանայ , 19 - Եւ պալարին տեղը ճերմակ ուռեցք կամ քիչ մը կարմրած ճերմակ պաղպաջ ըլլայ , քահանային պիտի ցուցուի այն : 20 - Եւ երբ քահանան տեսնէ որ մորթէն ցած կ'երեւնայ , և մազը ճերմակի դարձած է , քահանան անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ . անհկա պալարէ ելած բորստութեան ախտ է . 21 - Եւ եթէ քահանան տեսնէ որ ճերմակ մազ

*Եբբ. զանհկա անմաքուր պիտի ընէ
†Եբբ. զանհկա մաքուր պիտի ընէ

չկայ անոր մէջ, ու մորթէն ցած չէ՝
բայց շացած է, այն ատեն քահանան
եօթը օր գոցուած պիտի պահէ զանի-
կա: 22 - Եւ եթէ մորթին մէջ տա-
րածուած է, այն ատեն քահանան ա-
նոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. ախտ
է այն: 23 - Բայց եթէ պաղպաղը իր
տեղը կը կենայ * - չէ տարածուեր,
պալարին սպին է. և քահանան անոր
մաքուր ըլլալը պիտի ծանուցանէ:

24 - Իսկ եթէ մարմինին մորթին մէջ
կրակի սյրած ըլլայ, ու *սյրածին
նշանը քիչ մը կարմրած ճերմակ կամ
բոլորովին ճերմակ պաղպաղ ըլլայ,
25 - Քահանան անոր նայած ատենը
եթէ պաղպաղին մէջ մազը ճերմակի
գարձած է, ու մորթէն խորունկ կ'երև-
նայ, անիկա սյրածէն առաջ եկած
բորոտութիւն է. և քահանան անոր
անմաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա
բորոտութեան ախտ է: 26 - Բայց եթէ
քահանային նայած ատենը, պաղպա-
ղին մէջ մազը ճերմակ չէ, ու մորթէն
խորունկ չէ, հապա շացած է, այն
ատեն քահանան եօթը օր գոցուած
պիտի պահէ զանիկա: 27 - Եւ եօթնե-
րորդ օրը քահանան պիտի նայի անոր.
եթէ մորթին մէջ տարածուած է,
քահանան անոր անմաքուր ըլլալը ծա-
նուցանէ. անիկա բորոտութեան ախտ
է: 28 - Եւ եթէ պաղպաղը իր տեղը
կը կենայ ու մորթին մէջ տարածուած
չէ, հապա շացած է, անիկա սյրածին
ուռեցքն է. և քահանան անոր մա-
քուր ըլլալը ծանուցանէ. վասն զի սյ-
րածին սպին է: 29 - Եւ եթէ մարդու
մը կամ կնոջ մը գլուխը կամ կզակը
ախտ մը ըլլայ, 30 - Քահանան պիտի
տեսնէ ախտը. և եթէ մորթէն խորունկ
երեւնայ, ու անոր մէջ բարակ դեղին
մազ ըլլայ, այն ատեն քահանան անոր
անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ.
անիկա գոնջութիւն է, գլուխի կամ
կզակի բորոտութիւն է: 31 - Եւ եթէ
քահանան գոնջութեան ախտը տեսնէ
որ մորթէն խորունկ չերեւնար, ու անոր
մէջ սև մազ չկայ, այն ատեն քահա-
նան գոնջութեամբ ախտացածը եօթը
օր գոցուած պիտի պահէ: 32 - Եւ եօթ-
ներորդ օրը քահանան ախտակրին պի-
տի նայի, ու եթէ գոնջութիւնը տա-
րածուած չէ, և անոր մէջ դեղին մազ

չկայ, ու գոնջութիւնը մորթէն խո-
րունկ չերեւնար, 33 - Անիկա պիտի
ածիլուի, բայց գոնջութիւնը պիտի
չածիլէ. և քահանան եօթը օր ալ
գոցուած պիտի պահէ գոնջութիւն ու-
նեցողը: 34 - Եւ եօթներորդ օրը քա-
հանան գոնջութիւն ունեցողին պի-
տի նայի. և եթէ գոնջութիւնը մոր-
թին մէջ տարածուած չէ, ու մորթէն
խորունկ չերեւնար, այն ատեն քահա-
նան անոր մաքուր ըլլալը ծանուցանէ.
և անիկա իր լսութեամբ պիտի լուայ, ու
մաքուր ըլլայ: 35 - Բայց եթէ իր մաք-
րուելէն ետքը գոնջութիւնը մորթին
մէջ տարածուի, 36 - Այն ատեն քա-
հանան պիտի նայի անոր. և եթէ գոն-
ջութիւնը մորթին մէջ տարածուած
է, այն ատեն քահանան *՝ դեղին մազ
պիտի չփնտռէ. անիկա անմաքուր է:
37 - Բայց եթէ գոնջութիւնը եղածին
պէս կը կենայ, և անոր մէջ սև մազ
բուսեր է, գոնջութիւնը բժշկուած է.
անիկա մաքուր է, ու քահանան անոր
մաքուր ըլլալը ծանուցանէ:

38 - Եւ եթէ մարդ մը կամ կին մը
իր մարմինին մորթին մէջ պաղպաղ-
ներ, այսինքն ճերմակ պաղպաղներ,
ուռենայ, 39 - Այն ատեն քահանան
պիտի նայի, և եթէ անոնց մարմիննե-
րուն մորթին մէջի պաղպաղները շա-
ցած ճերմակ ըլլան, անիկա մորթին մէջ
գոյացած պիտի է. անիկա մաքուր է:

40 - Եւ եթէ մարդու մը գլխուն
մազը թափելու ըլլայ, անիկա կնտակ
է, քոյց մաքուր է: 41 - Եւ եթէ անոր
երեսին կողմէն գլխուն մազերը ինկած
ըլլան, անիկա ճեղ է, քոյց մաքուր է:
42 - Հապա եթէ կնտութեան կամ
ճեղութեան մէջ քիչ մը կարմրած
ճերմակ վերք մը ըլլայ, այն անոր
կնտութեանը կամ ճեղութեանը մէջ
գոյացած բորոտութիւն է: 43 - Այն
ատեն քահանան պիտի նայի անոր. և
եթէ անոր կնտութեանը կամ ճեղու-
թեանը մէջ, վերքին ուռեցքը քիչ մը
կարմրած ճերմակ ըլլայ, մարմինին
մորթին մէջ եղած բորոտութեան երե-
ւոյթին պէս, 44 - Այն մարդը բո-
րոտ է, անմաքուր է. քահանան ան-
պատճառ անոր անմաքուր ըլլալը
պիտի ծանուցանէ. անոր ախտը իր
գլուխն է:

45 - Եւ ախտ ունեցող բորոտին հան-
դերձը պատուուած պիտի ըլլայ, և անոր

*Կամ, սյրածը առողջանալով

գլուխը մերկ , ու անոր * շրթունքները ծածկուած պիտի ըլլան , և ձայն պիտի տայ թէ Անմաքուր եմ, անմաքուր : 46 - Ախար իր վրայ եղած բոլոր օրերը անմաքուր պիտի սեպուի . անիկա անմաքուր է , մինակ պիտի նստի . անոր բնակութիւնը բանակէն դուրս պիտի ըլլայ :

47 - Եւ այն հանդերձը որուն մէջ բորոտութեան ախտ կայ , թէ՛ բուրդէ հանդերձ ըլլայ և թէ՛ քթանէ հանդերձ , 48 - Բթանեղէնի կամ բրդեղէնի առէչի կամ թեզանի մէջ կամ մորթի մէջ և կամ մորթէ շինուած ամէն բանի մէջ , 49 - Այսինքն՝ եթէ հանդերձի կամ մորթի մէջ , կամ առէչի կամ թեզանի մէջ , կամ մորթէ շինուած ամէն կերպ բանի մէջ քիչ մը կանանչ կամ կարմրած ախտի նշան ըլլայ , բորոտութեան ախտ է , ու քահանային պիտի ցուցուի : 50 - Եւ քահանան պիտի նայի ախտին , ու եօթը օր գոցուած պիտի պահէ ախտացեալ բանը : 51 - Եւ եօթներորդ օրը ախտացեալ բանին պիտի նայի . եթէ ախտին նշանը տարածուած է հանդերձի մը մէջ , կամ առէչի կամ թեզանի մէջ , կամ մորթի մէջ , և կամ դործածուելու համար մորթէ շինուած ամէն բանի մէջ , այս ախտը բորբոքած բորոտութիւն է . անմաքուր է : 52 - Ուտի անիկա պիտի այրէ բրդեղէն կամ քթանեղէն հանդերձը , կամ առէչը կամ թեզանը , կամ ամէն կերպ մորթէ շինուած բանը որուն մէջ այն ախտը կայ . որովհետեւ բորբոքած բորոտութիւն է այն , կրակի մէջ պիտի այրուի : 53 - Եւ եթէ քահանան տեսնէ որ ախտին նշանը հանդերձին մէջ , կամ առէչին կամ թեզանին մէջ , կամ ամէն կերպ մորթէ շինուած բանին մէջ տարածուած չէ , 54 - Այն ատեն քահանան պիտի հրամայէ որ այն ախտացեալ բանը լուան . ու նորէն եօթը օր գոցուած պիտի պահէ զայն : 55 - Եւ ախտացեալ բանին լուացուելէն ետքը եթէ քահանան տեսնէ որ ախտի նշանը իր գոյնը չէ փոխեր , ու ախտը տարածուած ալ չէ , անիկա անմաքուր է . կրակի մէջ պիտի այրես զայն . անոր տակ կամ վրայ փտութիւն կայ : 56 - Եւ եթէ քահանան տեսնէ որ անոր լուացուելէն ետքը ախտին նշանը

չլացած է , այն ատեն այն ախտացեալ բանը հանդերձէն կամ մորթէն կամ առէչէն և կամ թեզանէն պիտի պատուէ : 57 - Եւ եթէ այն հանդերձին մէջ , կամ առէչին կամ թեզանին մէջ , կամ ամէն կերպ մորթէ շինուած բանին մէջ նորէն երեւնալու ըլլայ , անիկա տարածուած բորոտութիւն է . վրան ախտ ունեցող բանը կրակի մէջ այրես : 58 - Եւ այն հանդերձը , կամ առէչը կամ թեզանը , կամ ամէն կերպ մորթէ շինուած բանը , որ լուացուելէն ետքը ախտը անկէ գացած է , նորէն պիտի լուացուի ու մաքուր ըլլայ : 59 - Բուրդէ կամ քթանէ հանդերձի մէջ , կամ առէչի կամ թեզանի մէջ , կամ մորթէ շինուած ամէն կերպ բանի մէջ երեւցած բորոտութեան ախտին օրէնքը այս է , անոր մաքուր կամ անմաքուր ըլլալը ծանուցանելու համար :

ԳԼ ԺԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 2 - Բորոտին օրէնքը այս է իր մաքրուելու օրը . Անիկա քահանային պիտի տարուի . 3 - Եւ քահանան բանակէն դուրս պիտի ելլէ , ու քահանան պիտի նայի . ու եթէ բորոտին բորոտութեան ախտը բժշկուած է , 4 - Այն ատեն քահանան պիտի հրամայէ որ մաքրուելու մարդուն համար երկու սղջ և մաքուր թուչուն ու եղեւնափայտ ու կրկնակի կարմիր և զօպայ առնուի : 5 - Եւ քահանան պիտի հրամայէ որ թուչունին մէկը հոգէ ամանի մը մէջ * կենդանի ջուրի վրայ մորթուի : 6 - Եւ սղջ թուչունը ու եղեւնափայտը և կրկնակի կարմիրը ու զօպան պիտի առնէ , և ատնք սղջ թուչունին հետ կենդանի ջուրին վրայ մորթուած թուչունին արեանը մէջ պիտի թաթխէ . 7 - Եւ բորոտութենէն մաքրուելու մարդուն վրայ եօթը անգամ սրկէ ու մաքրէ զանիկա . և սղջ թուչունը զէպ ի դաշտը արձակէ : 8 - Եւ մաքրուելու մարդը իր հանդերձները պիտի լուայ , ու իր բոլոր մազերը ամիլէ , և ջրով պիտի լուացուի ու մաքրուի . և անկէ ետեւ բանակը պիտի մտնէ , ու եօթը օր իր վրանին դուրսդիւն պիտի կենայ : 9 - Եւ եօթներորդ

* կամ , ընչացքը

* Այսինքն , ակի

օրը իր բոլոր մազերը ածիլէ, իր գլուխը ու մօրուքը և յօնքերը, այսինքն իր բոլոր մազերը, ածիլէ. և իր լաթերը պիտի լուայ, ու իր մարմինը ջրով լուայ ու մաքուր ըլլայ :

10 - Եւ ութերորդ օրը երկու անաբաա արու գառ, ու մէկ տարեկան մէկ անարաատ էգ գառ, և հացի ընծայի համար իւզով շաղուած երեք տասանորդ բարակ ալիւր, ու մէկ ճաշակ իւզ պիտի առնէ : 11 - Եւ մաքրող քահանան մաքրուելու մարդը ատնցմով Տէրոջը առջև ժողովքի խորանին դուռը պիտի կայնեցնէ : 12 - Եւ քահանան արու գառին մէկը պիտի առնէ ու մօտեցնէ յանցանքի պատարագի համար, ու իւզին ճաշակը պիտի առնէ, և զանոնք Տէրոջը առջև երեքցնելու ընծայ պիտի ընէ : 13 - Եւ գառը պիտի մորթէ մեղքի պատարագին ու ողջակէզին մորթուած տեղը, սուրբ տեղը պիտի խորհէ. վասն զի յանցանքի պատարագը մեղքի պատարագին պէս քահանայինն է. ասիկա ամենատուրը է : 14 - Եւ քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու քահանան մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, ու անոր աջ ոտքին մեծ մատին վրայ պիտի դնէ զայն : 15 - Եւ քահանան իւզին ճաշակէն + Իւ իւ իւ պիտի առնէ, ու իր ձախ ձեռքին մէջ թափէ : 16 - Եւ քահանան աջ մատը իր ձախ ձեռքին մէջ եղած իւզին պիտի թաթխէ, ու իր մատովը Տէրոջը առջև եօթը անգամ սրսկէ այն իւզէն : 17 - Եւ քահանան իր ձեռքին մէջ մնացած իւզէն մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարագի արիւնին վրայ պիտի դնէ : 18 - Եւ քահանան իր ձեռքին մէջ մնացած իւզը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ, ու անոր համար քաւութիւն պիտի ընէ Տէրոջը առջև : 19 - Ետքը քահանան մեղքի պատարագը պիտի մատուցանէ, և իր անմաքրութենէն մաքրուելու մարդուն համար քաւութիւն ընէ, ու անկէ ետև ողջակէզը մորթէ : 20 - Եւ քահանան ողջակէզը ու հացի ընծան սեղանին վրայ պիտի մատուցանէ, ու անոր համար քաւութիւն ընէ, և անիկա պիտի մաքրուի :

21 - Եւ եթէ անիկա աղքատ ըլլայ ու այսչափին իր կարողութիւնը չհասնի, այն ատեն անոր քաւութիւն ընելու համար երեքցնելու յանցանքի պատարագի գառնուկ մը, և հացի ընծայի համար իւզով շաղուած տասանորդ մը բարակ ալիւր ու ճաշակ մը իւզ պիտի առնէ : 22 - Եւ երկու տատարակ կամ աղաւնիի երկու ձագ, զորն որ գտնէ, և մէկը մեղքի պատարագ ու միւսը ողջակէզ ըլլայ : 23 - Եւ ութերորդ օրը իր մաքրուելուն համար զանոնք քահանային պիտի բերէ ժողովքի խորանին դուռը Տէրոջը առջև : 24 - Եւ քահանան պիտի առնէ յանցանքի պատարագին գառնուկը ու իւզին ճաշակը, և զանոնք Տէրոջը առջև երեքցնելու ընծայ մատուցանէ : 25 - Եւ յանցանքի պատարագին գառնուկը պիտի մորթէ, ու քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, ու անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դնէ զայն : 26 - Եւ քահանան իւզէն իր ձախ ձեռքին մէջ պիտի թափէ : 27 - Եւ քահանան իր աջ մատովը իր ձախ ձեռքին մէջ եղած իւզէն Տէրոջը առջև եօթը անգամ պիտի սրսկէ : 28 - Եւ քահանան իր ձեռքին մէջ եղած իւզէն մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարագին արիւնը եղած տեղին վրայ պիտի դնէ : 29 - Եւ քահանան իր ձեռքին մէջ մնացած իւզը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ՝ Տէրոջը առջև անոր համար քաւութիւն ընելով : 30 - Եւ տատարակներէն կամ աղաւնիի ձագերէն մէկը, զորն որ գտնէ : 31 - Այսինքն որու որ իր ձեռքը հասնի, մէկը մեղքի պատարագի համար և միւսը ողջակէզի համար՝ հացի ընծային հետ մէկտեղ պիտի մատուցանէ. և քահանան մաքրուելու մարդուն համար քաւութիւն ընէ Տէրոջը առջև : 32 - Բորտութեան ախա ունեցողին ու իր մաքրուելուն համար կարողութիւն չունեցողին օրէնքը այս է :

33 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 34 - Երբ մտնէք Քանանու երկիրը՝ զոր ձեզի ստացուածք

ըլլալու պիտի տամ, և ձեր ստացուածքը եղած երկրին մէկ տանը մէջ բորոտութեան հարուածը տալու ըլլամ, 35 - Այն տանը աէրը պիտի գայ, ու իմացնէ քահանային՝ ըսելով, Ինծի կ'երեւայ որ տանս մէջ ախտ կայ: 36 - Եւ քահանան պիտի հրամայէ որ տունը պարպեն, դեռ ինք տեսնելու ներս չմտած, որպէս զի տանը մէջ եղած բաներէն մէկը անմաքուր չըլլայ. ու անկէ ետեւ քահանան տունը տեսնելու պիտի մտնէ. 37 - Եւ ախտին նշաններուն պիտի նայի, ու եթէ ախտը տանը պատերուն վրայ քիչ մը կանանչած կամ կարմրած փոս տեղեր ըրեր է, ու անոնք պատին երեսէն խորունկ կ'երեւան, 38 - Այն ատեն քահանան տունէն պիտի ելլէ տանը դուռը, և եօթը որ տունը պիտի գոցէ: 39 - Ու եօթներորդ օրը քահանան նորէն պիտի գայ ու նայի. և եթէ ախտը տանը պատերուն վրայ տարածուած է, 40 - Այն ատեն քահանան պիտի հրամայէ որ ախտացեալ քարերը հանեն, և քաղաքէն դուրս անմաքուր տեղ մը նետեն զանոնք: 41 - Եւ տանը ներսէն շուրջանակի քերել պիտի տայ, ու անոնց քերած հողը քաղաքին դուրսիցին անմաքուր տեղ մը պիտի թափեն: 42 - Եւ ուրիշ քարեր պիտի առնեն ու այն քարերուն տեղը դնեն, և ուրիշ հող պիտի առնեն ու տունը ծեփեն: 43 - Եւ եթէ քարերը հանելէ ետքը ու տունը քերելէ և ծեփելէ ետքը ախտը նորէն գայ ու տանը մէջ երեւան ելլէ, 44 - Այն ատեն քահանան պիտի գայ ու նայի. և եթէ ախտը տանը մէջ տարածուած է, տանը մէջ բորոքած բորոտութիւն կայ. անմաքուր է այն: 45 - Եւ տունը, այսինքն անոր քարերը ու փայտերը ու տանը բոլոր թէփառք հողը, փլցնէ և քաղաքին դուրսիցին անմաքուր տեղ մը հանէ: 46 - Եւ ով որ այն տունը մտնէ անոր բոլոր գոցուած օրերը, մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ: 47 - Եւ այն տունը պառկողը իր հանգերձները պիտի լուայ, ու այն տանը մէջ հաց ուտողը իր հանգերձները պիտի լուայ: 48 - Եւ եթէ քահանան գայ ու նայի որ տունը ծեփուելէն ետքը ախտը տանը մէջ տարածուած չէ, այն ատեն քահանան այն տանը մաքուր ըլլալը ծանուցանէ, վասն զի ախտը բժշկուած է: 49 - Եւ

տանը մաքրութեանը համար երկու թռչուն ու եղեւնափայտ և կրկնակի կարմիր ու զոպայ պիտի առնէ: 50 - Եւ պիտի մորթէ թռչունին մէկը հողէ ամանի մը մէջ կենդանի ջուրի վրայ: 51 - Եւ եղեւնափայտը ու զոպան և կրկնակի կարմիրը ու ողջ թռչունը պիտի առնէ, ու զանոնք մորթուած թռչունին արեանը և այն կենդանի ջուրին մէջ պիտի թաթխէ, ու եօթը անգամ տանը վրայ սրսկէ. 52 - Եւ թռչունին արիւնովը ու այն կենդանի ջրով և այն ողջ թռչունով ու եղեւնափայտով և զոպայով. ու կրկնակի կարմիրով պիտի մաքրէ տունը. 53 - Եւ ողջ թռչունը քաղաքին դուրսիցին դէպի դաշտը պիտի արձակէ, ու տանը համար քառութիւն ընէ, և պիտի մաքրուի այն:

54 - Բոլոր բորոտութեան ախտին ու գոնջութեան, 55 - Եւ հանգերձի կամ տան մը բորոտութեան, 56 - Եւ ուռեցքի ու քոսի և պաղպաղի օրէնքը այս է: 57 - Բանի հը ո՛ր ատեն պնմաքուր ըլլալը ու ո՛ր ատեն անոր մաքրուելը՝ սորվեցնելու համար՝ բորոտութեան օրէնքը այս է:

ԳԼ. ԺԵ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 2 - Խօսեցէք Իսրայէլի որդիներուն ու ըսէք անոնց, Երբ մարդու մը մարմինէն ծորում ըլլայ, անոր ծորումը անմաքուր է: 3 - Եւ իր ծորումին ժամանակը իր անմաքրութիւնը այս պիտի ըլլայ. Ե՛րբ իր մարմինէն իր ծորումը վազէ, կամ իր մարմինը իր ծորումէն գոցուի, այս է իր անմաքրութիւնը: 4 - Ամէն անկողին՝ որուն վրայ ծորում ունեցողը կը պառկի, անմաքուր է. և ամէն բան՝ որուն վրայ անիկա նստի, անմաքուր պիտի ըլլայ: 5 - Եւ անոր անկողինին դպչող մարդը իր հանգերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 6 - Եւ ծորում ունեցողին նստած բանին վրայ նստողը իր հանգերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 7 - Եւ ծորում ունեցողին մար-

*Կամ, Բան հը ե՛րբ անմաքուր է ու ե՛րբ մաքուր է, Ինչ ընելի՛ք

մինին դպչողը իր հանդերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 8 - Եւ ծորում ունեցողը մաքուր մարդու մը վրայ թքնելու ըլլայ, անիկա իր հանդերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 9 - Եւ ամէն թամբ որուն վրայ ծորում ունեցողը կը հէծնէ, անմաքուր պիտի ըլլայ: 10 - Եւ ամէն անոր տակ եղած բանին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. ու զանոնք վերջնողը իր հանդերձները պիտի լուայ, և ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 11 - Եւ ծորում ունեցողը իր ձեռքը ջուրը չխոթած՝ որու որ դպչելու ըլլայ, անիկա իր հանդերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 12 - Եւ ծորում ունեցողին դպած հողէ ամանը պիտի կտարուի, ու ամէն փայտէ աման ջուրը պիտի խոթուի:

13 - Եւ երբ ծորում ունեցողը իր ծորումէն մաքրուի, իր մաքրուելուն համար եօթը օր պիտի համրէ իրեն, և իր հանդերձները լուայ, ու իր մարմինը կենդանի ջուրի մէջ լուայ, և մաքուր պիտի ըլլայ: 14 - Եւ ութերորդ օրը երկու տատարակ կամ աղաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն, ու Տէրոջը առջև ժողովքի խորանին դուռը դայ, և զանոնք քահանային տայ: 15 - Եւ քահանան անոնց մէկը մեղքի պատարագ, ու միւսը ողջակէզ պիտի ընէ, և քահանան Տէրոջը առջև քառութիւն ընէ անոր իր ծորումին համար:

16 - Եւ եթէ մարդու մը զուգաւորութեան սերմը իրմէ ելլելու ըլլայ, իր բոլոր մարմինը ջրով պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 17 - Եւ ամէն հանդերձ, ու ամէն մորթ՝ որուն վրայ զուգաւորութեան սերմ կայ, ջրով պիտի լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 18 - Եւ երբ մարդ մը կնոջը հետ զուգաւորելու համար պառկի, անոնք երէ՞ք ու ջրով պիտի լուացուին, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլան:

19 - Եւ եթէ կին մը ծորում ունենայ, «- անոր մարմինին ծորումը արիւն է, եօթը օր զատուած պիտի կենայ. և ամէն օր անոր դպչողը մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 20 - Եւ անոր զատուած ատենը ինչ բանի վրայ որ

պառկի, այն բանը անմաքուր պիտի ըլլայ, և ինչ բանի վրայ որ նստի, այն բանը անմաքուր պիտի ըլլայ: 21 - Եւ ամէն անոր անկողինին դպչողը իր հանդերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 22 - Եւ ով որ դպչի բանի մը՝ որուն վրայ անիկա նստաւ, իր հանդերձները պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 23 - Եւ անոր անկողինին դպչողը, կամ բանի մը՝ որուն վրայ անիկա կը նստի, մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ: 24 - Եւ եթէ մարդ մը անոր հետ պառկի, այնպէս որ անոր պղծութիւնը իրեն դպչի, այն Բարբէ Եօթը օր անմաքուր պիտի ըլլայ, և ամէն անկողին որուն վրայ անիկա պառկի՝ անմաքուր ըլլայ:

25 - Եւ կին մը՝ եթէ դաշտանին ատենը չեկած, իր արեանը ծորումը շատ օրեր վազէ, կամ իր դաշտանէն աւելի վազելու ըլլայ, իր անմաքրութեանը ծորումին բոլոր օրերը իր դաշտանին օրերուն պէս պիտի ըլլայ. անիկա անմաքուր է: 26 - Անոր ծորումին բոլոր օրերը ամէն անկողին, որուն վրայ անիկա կը պառկի, իր դաշտանին անկողինին պէս պիտի ըլլայ իրեն, և ինչ բանի վրայ որ կը նստի, իր դաշտանին անմաքրութեանը պէս անմաքուր պիտի ըլլայ: 27 - Եւ ամէն անոնց դպչողը անմաքուր պիտի ըլլայ, ու իր հանդերձները պիտի լուայ, և ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ: 28 - Եւ եթէ իր ծորումէն մաքրուի, այն ատեն եօթը օր պիտի համրէ իրեն, ու անկէ ետեւ մաքուր ըլլայ: 29 - Եւ ութերորդ օրը երկու տատարակ կամ աղաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն, ու ժողովքի խորանին դուռը քահանային պիտի բերէ զանոնք: 30 - Եւ քահանան մէկը մեղքի պատարագ ու միւսը ողջակէզ պիտի ընէ. և քահանան Տէրոջը առջև քառութիւն պիտի ընէ անոր իր անմաքրութեանը ծորումին համար:

31 - Այսպէս Իսրայէլի որդիները իրենց անմաքրութենէն պիտի զզուազանէք. որպէս զի իրենց մէջ եղած իմ խորանս պղծելով՝ իրենց անմաքրութեան պատճառաւ չմեռնին: 32 -

Ծորում ունեցողին, և իրմէ զուգա-
 ւորութեան սերմը ելլելով անմա-
 քուր եղողին, 33 - Աւ իր դաշտանով
 հիւանդ եղող կնոջ, և ծորում ունե-
 ցող մարդու կամ կնոջ, ու անմա-
 քուր կնոջ հետ պառկող մարդու օ-
 բէնքը այս է:

ԳԼ. ԺԶ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Ահա-
 րոնի երկու որդիներուն մեռնելէն ետքը,
 որոնք Տէրոջը առջև մօտեցան ու մե-
 ռան. 2 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի,
 Խօսէ քու եղբորդ Ահարոնի որ ամէն
 ատեն սուրբ տեղը, վարագուրին ներ-
 սիդին, տապանակին վրայ եղած քա-
 ւութիւնին առջև չմօտնէ, որպէս զի
 չմեռնի. վասն զի ամպի մէջ պիտի
 երեւնամ քաւութիւնին վրայ: 3 -
 Ահարոն այս քանի՜ պիտի մօտնէ սրբա-
 րանը. մեղքի պատարագի համար զու-
 րակով մը, և ողջակէզի համար խոյով
 մը: 4 - Կտաւէ սուրբ շապիկ պիտի
 հագնի, և իր մարմինին վրայէն կտաւէ
 վարտիք ունենայ, ու իր մէջքը կտաւէ
 դօտի կապէ, և իր գլուխը կտաւէ խոյր
 դնէ. ասոնք սուրբ զգեստներ են.
 ուստի իր մարմինը ջրով պիտի լուայ,
 ու զանոնք հագնի: 5 - Եւ Խորայէլի
 որդիներուն ժողովքէն մեղքի պատա-
 րագի համար այծերէն երկու նոխազ,
 ու ողջակէզի համար մէկ խոյ պիտի
 առնէ: 6 - Եւ Ահարոն իր մեղքի պա-
 տարագին զուարակը պիտի մատու-
 ցանէ, և իրեն համար ու իր տանը հա-
 մար քաւութիւն պիտի ընէ: 7 - Եւ եր-
 կու նոխազը պիտի առնէ, ու Տէրոջը
 առջև ժողովքի խորանին դուռը կեցնէ:
 8 - Եւ Ահարոն այն երկու նոխազնե-
 րուն վրայ վիճակներ պիտի ձգէ. մէկ
 վիճակը Տէրոջը համար՝ ու միւս վի-
 ճակը ազատ արձակուելու նոխազին
 համար: 9 - Եւ Ահարոն պիտի մօտեցնէ
 այն նոխազը որուն վրայ Տէրոջը վիճակը
 ելաւ, ու մեղքի պատարագ ընէ զա-
 նիկա: 10 - Եւ այն նոխազը որուն
 վրայ ազատ արձակուելու վիճակը
 ելաւ, Տէրոջը առջև ողջ պիտի կայ-
 նեցնէ՝ որպէս զի անով քաւութիւն
 ընէ, «- ազատ արձակուելու համար
 դէպ ի անապատը զրկէ:

11 - Եւ Ահարոն իր մեղքի պատա-
 րագին զուարակը պիտի մատուցանէ,

և իրեն համար ու իր տանը համար քա-
 ւութիւն պիտի ընէ, և իր մեղքի պա-
 տարագին զուարակը մորթէ: 12 - Եւ
 Տէրոջը առջև եղած սեղանին վրայէն
 բուրվառը լեցուն կրակի կայծեր պի-
 տի առնէ, ու բարակ ձեծուած անու-
 շահոտ խունկէն իր ձեռքերը լեցնէ,
 ու վարագուրին ներսիդին բերէ: 13 -
 Եւ խունկը կրակին վրայ պիտի դնէ
 Տէրոջը առջև, ու խունկին *մուխը
 վկայութիւնին վրայի քաւութիւնը
 պիտի ծածկէ, որպէս զի չմեռնի: 14 -
 Եւ զուարակին արիւնէն պիտի առնէ,
 ու իր մատով քաւութիւնին վրայ ա-
 րեւելեան կողմը սրսկէ, և իր մատով
 արիւնէն քաւութիւնին առջև եօթը
 անգամ սրսկէ:

15 - Եւ ժողովուրդին համար մեղքի
 պատարագ ըլլալու նոխազը պիտի մոր-
 թէ, ու անոր արիւնը վարագուրին ներ-
 սիդին պիտի բերէ. և զուարակին արիւ-
 նովը բրածին պէս ընէ անոր արիւնովը,
 այսինքն քաւութիւնին վրայ ու քա-
 ւութիւնին առջև սրսկէ զայն: 16 - Եւ
 սրբարանին համար քաւութիւն պիտի
 ընէ՝ Խորայէլի որդիներուն անմաքու-
 թիւններէն ու անոնց բոլոր մեղքերուն
 յանցանքներէն «բէել՝ զանիկ». այս-
 պէս պիտի ընէ ժողովքի խորանին հա-
 մար ալ, որ անոնց հետ «- անոնց ան-
 մաքութիւններուն մէջ կը կենայ: 17 - Եւ
 սրբարանը քաւութիւն ընելու
 մտած ատեն, մինչև որ իրեն համար
 ու իր տանը համար և Խորայէլի բոլոր
 ժողովքին համար քաւութիւն ընէ ու
 դուրս ելլէ, ժողովքի խորանին մէջ
 մարդ մը պիտի չըլլայ: 18 - Ետքը Տէ-
 րոջը առջև եղած սեղանը պիտի ելլէ,
 ու անոր համար քաւութիւն ընէ. և
 զուարակին արիւնէն ու նոխազին արիւ-
 նէն առնէ, և սեղանին եղջիւրներուն
 վրայ շուրջանակի դնէ: 19 - Եւ արիւ-
 նէն իր մատով եօթը անգամ անոր
 վրայ պիտի սրսկէ. ու Խորայէլի որդի-
 ներուն անմաքութիւններէն մաքրէ,
 ու սուրբ ընէ զայն:

20 - Եւ սրբարանին ու ժողովքի խո-
 րանին և սեղանին համար քաւութիւն
 ընելը լմնցնելէն ետքը, ողջ նոխազը
 պիտի մօտեցնէ. 21 - Եւ Ահարոն իր
 երկու ձեռքերը ողջ նոխազին գլխուն
 վրայ պիտի դնէ, ու Խորայէլի որդիներ-

*Եբբ. ամպը

բունբոյոր անօրէնութիւնները և անոնց բոլոր յանցանքները և բոլոր մեղքերը պիտի խոստովանի անոր վրայ . և զանոնք նոխազին գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու մը ձեռքով անապօստը զրկէ : 22 - Եւ նոխազը անոնց բոլոր անօրէնութիւնները իր վրայ «-» անբնակ երկիր մը պիտի տանի . և հարցը անապատին մէջ թող տայ նոխազը :

23 - Եւ Ահարոն ժողովքի խորանը պիտի մտնէ , ու սրբարանը մտնելու ժամանակին հաղած կտաւէ հանդերձները հանէ , և զանոնք հոն դնէ : 24 - Եւ սուրբ տեղը իր մարմինը ջրով պիտի լուայ , ու իր հանդերձները հազնի , և ելլէ իր ողջակէզը ու ժողովուրդին ողջակէզը մատուցանէ , ու իրեն համար և ժողովուրդին համար քաւութիւն ընէ : 25 - Եւ մեղքի պատարագին ճարպը սեղանին վրայ պիտի այրէ :

26 - Եւ նոխազը ազատ արձակելու տանողը իր հանդերձները պիտի լուայ , ու իր մարմինը ջրով լուայ , և ետքը բանակը մտնէ :

27 - Եւ այն մեղքի պատարագին զուարակը ու մեղքի պատարագին նոխազը , որոնց արիւնը քաւութիւն ընելու համար սուրբ տեղը բերուեցաւ , բանակէն դուրս պիտի հանեն , և անոնց մորթերը ու անոնց միտերը և անոնց ազրը կրակով այրեն : 28 - Եւ զանոնք այրողը իր հանդերձները պիտի լուայ , ու մարմինը ջրով լուայ , ու ետքը բանակը մտնէ :

29 - Եւ այս ձեզի յաւիտենական կանոն ըլլայ , որ եօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն տասներորդ օրը ձեր անձերը պիտի խոնարհեցնէք , ու բնու գործ մը չգործէք , թէ՛ երկրացին և թէ՛ ձեր մէջ գտնուող օտարականը :

30 - Քանզի այն օրը «հանա» ձեզի քաւութիւն պիտի ընէ ձեզ մտքբելու համար , որպէս զի ձեր բոլոր մեղքերէն մաքրուիք Տէրօջը առջև : 31 - Այն ձեզի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ , և յաւիտենական կանոնով մը պիտի խոնարհեցնէք ձեր անձերը : 32 - Եւ իր հօրը տեղը քահանայութիւն ընելու համար օծուած ու օրհնուած քահանան քաւութիւնը պիտի ընէ , և հազնի կտաւէ հանդերձները , այսինքն սուրբ հանդերձները . 33 - Եւ ամենատուրը տեղին համար քաւութիւն

պիտի ընէ , և ժողովքի խորանին համար ու սեղանին համար քաւութիւն ընէ , և քահանաներուն ու ժողովքին բոլոր ժողովուրդին համար քաւութիւն ընէ : 34 - Եւ տսիկա ձեզի յաւիտենական կանոն ըլլայ Իսրայէլի սրգիններուն համար իրենց բոլոր մեղքերուն քաւութիւն ընելու տարին անգամ մը : Եւ անիկա Տէրօջը Մովսէսի պատուիրածին պէս ըրաւ :

Գ.Լ. ԺԷ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 2 - Խօսէ Ահարոնի ու անոր սրգիններուն և Իսրայէլի բոլոր սրգիններուն , ու ըսէ անոնց , Այս է զոր Տէրը պատուիրեց՝ ըսելով , 3 - Իսրայէլի տունէն ով որ արջառ մը կամ ոչխար մը և կամ այծ մը բանակին մէջ մորթէ , կամ բանակէն դուրս մորթէ , 4 - Եւ Տէրօջը խորանին առջև Տէրօջը զոհ մատուցանելու համար ժողովքի խորանին դուռը չբերէ , արիւն պիտի սեպուի այն մարդուն . անիկա արիւն թափած է , ու այն մարդը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի . 5 - Որպէս զի Իսրայէլի սրգինները այն զոհերը զորոնք հիմա դաշտի մէջ կը մորթեն , Տէրօջը բերեն , այսինքն ժողովքի խորանին դուռը քահանային բերեն , և խաղաղութեան զոհերու համար զանոնք Տէրօջը զոհեն : 6 - Եւ քահանան պիտի սրկէ արիւնը ժողովքի խորանին դուռը՝ Տէրօջը սեղանին վրայ , ու ճարպը անոյշ հոսի համար այրէ Տէրօջը առջև : 7 - Եւ իրենց զոհերը ա՛լ չզոհեն դեւերուն , որոնց ետեւէն երբեք պունկութիւն ըրին . տսիկա անոնց յաւիտենական կանոն պիտի ըլլայ իրենց ազգերուն մէջ : 8 - Եւ պիտի ըսես անոնց , Իսրայէլի տունէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականներէն մարդ մը ողջակէզ կամ զոհ մատուցանելու ըլլայ , 9 - Եւ զանիկա Տէրօջը մատուցանելու համար ժողովքի խորանին դուռը չբերէ , այն մարդը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի :

10 - Եւ Իսրայէլի տունէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականներէն մարդ մը ինչեւիցէ արիւն ուտելու ըլլայ , իմ երեսս այն արիւն ուտող անձին վրայ պիտի տնկեմ , ու զանիկա իր ժողովուրդին մէջէն կորսնցնեմ . 11 -

Վասն զի մարմինն կենդանութիւնը արիւնին մէջ է. և ես ձեզի տուի զայն, որպէս զի սեղանին վրայ ձեր հոգիներուն համար քաւութիւն ընէք. քանզի հոգիին համար քաւութիւն ընողը արիւնն է : 12 - Անոր համար Խորայէլի որդիներուն ըսի, Չեզմէ մէկը արիւն չուտէ. ձեր մէջ պանդխտացած օտարականն ալ արիւն չուտէ : 13 - Եւ Խորայէլի որդիներէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականէն մէկը ուտուելու անասունի կամ թռչունի որս որսալու ըլլայ, անոր արիւնը պիտի թափէ, ու հոգով ծածկէ զայն : 14 - Վասն զի ամէն մարմինի կենդանութիւնը իր արիւնն է. անիկա է բուն կենդանութիւնը. ուստի Խորայէլի որդիներուն ըսի, Բնաւ մարմինի մը արիւնը պիտի չուտէք, քանզի ամէն մարմինի կենդանութիւնը իր արիւնն է. ով որ ուտէ զայն՝ պիտի կորսուի : 15 - Եւ երկրացիներէն կամ օտարականներէն՝ զի կամ գիշատուած ուտող ամէն մարդ իր լաթերը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ, ու ետէ մաքուր ըլլայ : 16 - Բայց եթէ չլուայ զանոնք, և իր մարմինը չլուայ, այն ատեն իր անօրէնութիւնը պիտի կրէ :

ԳԼ. ԺԸ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով,
 2 - Խօսէ Խորայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Ես եմ Եհովա ձեր Աստուածը :
 3 - Այն ձեր բնակած Եզրպատի երկրին բրածին պէս պիտի չընէք. և Քանանու երկրին բրածին պէս՝ ուր ձեզ պիտի տանիմ, պիտի չընէք, ու անոնց կանոններուն համեմատ պիտի չքայէք :
 4 - Իմ գատատաններս պիտի ընէք, և իմ կանոններս պահէք, որպէս զի անոնցմով քայէք. ես եմ Տէրը, ձեր Աստուածը :
 5 - Ուստի իմ կանոններս ու իմ գատատաններս պիտի պահէք, զորոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի. ես եմ Տէրը :
 6 - Բնաւ մէկը իր մօտ ազգականին չմօտենայ՝ անոր մերկութիւնը բանալու համար. ես եմ Տէրը :
 7 - Քու հօրդ մերկութիւնը կամ քու մօրդ մերկութիւնը չբանաս. անիկա քու մայրդ է, անոր մերկութիւնը չբանաս :
 8 - Քու հօրդ կնոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու հօրդ մերկութիւնն է :
 9 - Քու հօրդ ազգական կամ քու մօրդ ազգական, քու բրօջդ, մերկութիւնը, թէ՛ տանը մէջ ծնած ըլլայ թէ՛ դուրսը ծնած, անոնց մերկութիւնը չբանաս :
 10 - Քու որդւոյդ ազգական կամ քու ազգականդ ազգական մերկութիւնը՝ անոնց մերկութիւնը չբանաս, վասն զի անոնց մերկութիւնը քուկդ է :
 11 - Քու հօրդ կնոջ ազգական մերկութիւնը, քու հօրմէջ ծնած քու քոյրդ ըլլալովը, անոր մերկութիւնը չբանաս :
 12 - Քու հօրդ քրոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու հօրդ ազգականն է :
 13 - Քու մօրդ քրոջ մերկութիւնը չբանաս, վասն զի անիկա քու մօրդ ազգականն է :
 14 - Քու հօրդ եղբօր մերկութիւնը չբանաս, անոր կնոջ չմօտենաս. անիկա քու հօրաքոյրդ է չմօտենալու :
 15 - Քու հարսիդ մերկութիւնը չբանաս. անիկա քու որդւոյդ կինն է, անոր մերկութիւնը չբանաս :
 16 - Քու եղբօրդ կնոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու եղբօրդ մերկութիւնն է :
 17 - Կնոջ մը ու անոր ազգական մերկութիւնը չբանաս. և անոր որդւոյն ազգիկը կամ անոր ազգական ազգիկը չառնես՝ անոնց մերկութիւնը բանալու համար, անոնք անոր ազգականներն են. անօրէնութիւն է այն :
 18 - Եւ կին մը իր քրոջ հետ չառնես զանիս իր կենդանութեան ատենը վշտացնելու համար՝ միւսին մերկութիւնը բանալով :
 19 - Եւ իր անմաքուր թեանը ատեն զատուած կնոջ մը չմօտենաս՝ անոր մերկութիւնը բանալու :
 20 - Եւ զուգաւորութեան համար քու դրացիիդ կնոջ հետ չպառկիս, անոր հետ պրզուելով :
 21 - Քու սերունդէդ Մողորի համար կրնի անցընելու չթողուս, և քու Աստուծոյդ անունը չպղծես. ես եմ Տէրը :
 22 - Եւ արուի հետ կնոջ հետ պառկելու պէս չպառկիս՝ պղծութիւն է այն :
 23 - Եւ բնաւ անասունի մը հետ չզուգաւորիս, անոր հետ պղծուելով. ու բնաւ կին մը անասունի մը տուջև չկայնի՝ անոր հետ զուգաւորելու. գարշութիւն է այն :
 24 - Ասոնց մէկովն ալ բնաւ չպրզուիք, վասն զի բոլոր ասոնցմով պրզուեցան այն ազգերը զորոնք ձեր առջեւն պիտի գնան :
 25 - Եւ այն երկրին պղծուելովը՝ անոր անօրէնու-

նիկա քու հօրդ մերկութիւնն է :
 9 - Քու հօրդ ազգական կամ քու մօրդ ազգական, քու բրօջդ, մերկութիւնը, թէ՛ տանը մէջ ծնած ըլլայ թէ՛ դուրսը ծնած, անոնց մերկութիւնը չբանաս :
 10 - Քու որդւոյդ ազգական կամ քու ազգականդ ազգական մերկութիւնը՝ անոնց մերկութիւնը չբանաս, վասն զի անոնց մերկութիւնը քուկդ է :
 11 - Քու հօրդ կնոջ ազգական մերկութիւնը, քու հօրմէջ ծնած քու քոյրդ ըլլալովը, անոր մերկութիւնը չբանաս :
 12 - Քու հօրդ քրոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու հօրդ ազգականն է :
 13 - Քու մօրդ քրոջ մերկութիւնը չբանաս, վասն զի անիկա քու մօրդ ազգականն է :
 14 - Քու հօրդ եղբօր մերկութիւնը չբանաս, անոր կնոջ չմօտենաս. անիկա քու հօրաքոյրդ է չմօտենալու :
 15 - Քու հարսիդ մերկութիւնը չբանաս. անիկա քու որդւոյդ կինն է, անոր մերկութիւնը չբանաս :
 16 - Քու եղբօրդ կնոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու եղբօրդ մերկութիւնն է :
 17 - Կնոջ մը ու անոր ազգական մերկութիւնը չբանաս. և անոր որդւոյն ազգիկը կամ անոր ազգական ազգիկը չառնես՝ անոնց մերկութիւնը բանալու համար, անոնք անոր ազգականներն են. անօրէնութիւն է այն :
 18 - Եւ կին մը իր քրոջ հետ չառնես զանիս իր կենդանութեան ատենը վշտացնելու համար՝ միւսին մերկութիւնը բանալով :
 19 - Եւ իր անմաքուր թեանը ատեն զատուած կնոջ մը չմօտենաս՝ անոր մերկութիւնը բանալու :
 20 - Եւ զուգաւորութեան համար քու դրացիիդ կնոջ հետ չպառկիս, անոր հետ պրզուելով :
 21 - Քու սերունդէդ Մողորի համար կրնի անցընելու չթողուս, և քու Աստուծոյդ անունը չպղծես. ես եմ Տէրը :
 22 - Եւ արուի հետ կնոջ հետ պառկելու պէս չպառկիս՝ պղծութիւն է այն :
 23 - Եւ բնաւ անասունի մը հետ չզուգաւորիս, անոր հետ պղծուելով. ու բնաւ կին մը անասունի մը տուջև չկայնի՝ անոր հետ զուգաւորելու. գարշութիւն է այն :
 24 - Ասոնց մէկովն ալ բնաւ չպրզուիք, վասն զի բոլոր ասոնցմով պրզուեցան այն ազգերը զորոնք ձեր առջեւն պիտի գնան :
 25 - Եւ այն երկրին պղծուելովը՝ անոր անօրէնու-

Թիւնը անոր վրայ պիտի հասնուցանեմ, ու այն երկիրը իր բնակիչները պիտի փսխէ: 26 - Ուստի դուք իմ կանոններս ու դատաստաններս պահէք, ու այս պղծութիւններէն մէկն ալ չընէք, ոչ երկրացին, ոչ ալ ձեր մէջ պանդրիստացող օտարականը: 27 - Քանզի ձեզմէ առաջ եղած այն երկիրն մարդիկը այս բոլոր պղծութիւնները բրին, ու այն երկիրը պղծուեցաւ: 28 - Որքէն գրեցէ՛ որ չըլլայ թէ այն երկիրը ձեզ ալ դուրս փսխէ զայն պղծած ատեննիդ, ինչպէս ձեզմէ առաջ եղած ազգերը փսխեց: 29 - Քանզի ով որ այս ամէն պղծութիւններէն մէկը ընելու ըլլայ, զայն բնող անձինք իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսուին: 30 - Ուստի իմ հրամաններս պահէք, որպէս զի ձեզմէ առաջ գործուած պիղծ սովորութիւններէն մէկը չընէք, ու անոնցմով չպղծուիք. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

ԳԼ ԺԹ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Խորայէլի որդիներուն բոլոր ժողովքին ու ըսէ անոնց, Գուք սուրբ եղէք, քանզի ես, ձեր Եհովա Աստուածը, սուրբ եմ:

3 - Ձեր ամէն մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ. և իմ շաբաթներս պիտի պահէք. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

4 - Կուռքերուն մի դառնաք, և ձեզի ձուլածոյ աստուածներ մի չիւնէք. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

5 - Եւ եթէ խաղաղութեան զոհ մատուցանէք Տէրոջը, «յնպէ» մատուցէք որ ընդունելի ըլլայ: 6 - Չոհր մատուցած օրերնիդ և հետեւեալ օրն ալ պիտի ուտուի. ու երրորդ օրուան մնացածը կրակով պիտի այրուի: 7 - Եւ եթէ անկէ երրորդ օրը ուտուելու ըլլայ, անիկա պիղծ է, պիտի չընդունուի: 8 - Եւ զանիկա ուտողը իր անօրէնութիւնը պիտի կրէ, վասն զի Տէրոջը սուրբ բանը պղծեց, ու այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի:

9 - Եւ ձեր երկրին հունձքը հնձելու ատեննիդ՝ քու արտիդ եզերքը լման չհնձես, ու քու հունձքէդ ինկած հասկերը չժողվես: 10 - Եւ քու այգիդ ճուաքաղ չընես, այսինքն այգիիդ մէջ

մնացած ողկոյզները չքաղես. զանոնք աղքատին և օտարականին համար թողու. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

11 - Գողութիւն մի ընէք. սուտ մի գրուցէք, և մէկզմէկ մի խտրէք: 12 - Եւ իմ անունովս սուտ տեղը երգում մի ընէք, ու ձեր Աստուծոյն անունը մի պղծէք. ես եմ՝ Տէրը:

13 - Քու գրացիիդ զրկանք մի ըներ, և յափշտակութիւն մի ըներ. քեզի վարձքով բանողին օրական վարձքը մէկ գիշեր մինչև առտու քու քովդ չմնայ: 14 - Խուլին մի հայհոյէր, ու կոյրին առջև գայթակղութիւն մի գներ, հապա քու Աստուծմէդ վախցիր. ես եմ՝ Տէրը:

15 - Գատաստանի մէջ անիրաւութիւն մի ընէք. աղքատին աշառութիւն մի ըներ, և մեծը մի շողոքորթեր. քու գրացիդ արդարութիւնով դատէ: 16 - Քու ժողովուրդիդ մէջ չորախօսութիւն ընելու չպարտիս. քու ընկերիդ արիւնը չմտնես. ես եմ՝ Տէրը: 17 - Եղբայրդ քու սրտիդ մէջ չափես. քու գրացիդ անպատճառ յանդիմանես, որպէս զի անոր համար մեղք չկրես: 18 - Վրէժ չառնես, և քու ժողովուրդիդ որդիներուն ոխ չպահես, հապա քու ընկերդ քու անձիդ պէս սիրես. ես եմ՝ Տէրը:

19 - Իմ կանոններս պահէք. քու անասունիդ մէկ տեսակը ուրիշ տեսակի հետ զուգաւորել չտաս. քու արտիդ մէջ զանազան սերմ չցանես. և երկու նիւթէ գործուած այլախառն հանդերձ չհագնիս:

20 - Եւ եթէ մէկը կնոջ մը հետ պառկելով զուգաւորութիւն ընէ, ու անիկա մէկու մը նշանուած աղախինն է ու փրկուած չէ, ոչ ալ անոր ազատութիւն տրուած, անոնք պիտի պատժուին. անոնք պիտի չմեռնին, վասն զի կինը ազատ չէր: 21 - Եւ մարդը իր յանցանքին պատարագը Տէրոջը պիտի բերէ ժողովքի խորանին դուռը, խոյ մը յանցանքի պատարագի համար: 22 - Եւ քահանան յանցանքի պատարագին խոյովը Տէրոջը առջև քառութիւն պիտի ընէ անոր իր բրած մեղքին համար. և անոր բրած մեղքը պիտի ներուի իրեն:

23 - Ու երբ այն երկիրը մտնէք, ու ամէն տեսակ ծառեր անկէք՝ «յնպէ» ուտելու համար, այն ատեն անոր

պտուղը չթլփատուածի պէս անմաքուր պիտի սեպէք. անհկա ձեզի երեք տարի չթլփատուածի պէս սեպուելով պիտի չուտուի: 24 - Եւ չորրորդ տարին անոր բոյսը պտուղը Տէրը փառաւորելու համար սուրբ պիտի ըլլայ: 25 - Եւ հինգերորդ տարին անոր պտուղը պիտի ուտէք, որպէս զի իր արգիւնքը ձեզի համար աւելցնէ. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը: 26 - Միշտ արիւնովը չուտէք. չհմայէք և գուշակութիւն չընէք: 27 - Ձեր գլուխներուն եզերքի մտկերը չկտրէք, ու քու մօրուքիդ եզերքը չաւրես: 28 - Եւ մէկուն աստուածը համար ձեր մարմինին վրայ կտրածներ չընէք, ու ձեր վրայ գիրի նշան չընէք. ես եմ՝ Տէրը:

29 - Աղջիկդ պունիկ ընելով մի պղծեր, որպէս զի երկիրը պունկութեան մէջ չիյնայ, ու երկիրը չարութիւնով չլեցուի:

30 - Իմ շարժներս պահէք, ու իմ սրբարանս յարգէք. ես եմ՝ Տէրը: 31 - Վշուկներուն մի նայիք, և հմայողներուն քան մի հարցնէք, որպէս զի անոնցմով չպղծուիք. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

32 - Մտղը ճերմկածին առջև ոտք ելիր, և ծերը պատուէ, ու քու Աստուծակդ վախցիր. ես եմ՝ Տէրը:

33 - Եւ եթէ օտարական մը ձեր երկրին մէջ ձեր քով պանդխտանալու ըլլայ, չնեղէք զանհկա: 34 - Ձեր քով պանդխտացող օտարականը ձեր երկրին բնակին պէս ըլլայ ձեզի, և քու անձիդ պէս սիրես զանհկա, վասն զի դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք. ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

35 - Գատաստանի մէջ անիրաւութիւն չընէք. կանգունի մէջ, կշիռքի մէջ ու չափի մէջ ալ: 36 - Ձեր կշիռքները լման, ձեր կշիռքի քարերը լման, ձեր արգուն լման ու հիմներ լման պիտի ըլլայ. ձեզ Եգիպտոսի երկրէն հանող Տէրը, ձեր Աստուածը, ես եմ: 37 - Ուստի իմ՝ բոյսը կանոններս ու իմ՝ բոյսը դատաստաններս պահէք, և ընէք զանոնք. ես եմ՝ Տէրը:

ԳԼ Ի

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Նաև Խորայէի որդիներուն ըսես, Խորայէի որդիներէն և Խորայէի

մէջ պանդխտացող օտարականներէն ով որ իր սերունդէն Մողղքի տայ, անշուշտ պիտի մեռցուի. երկրին ժողովուրդը քարերով պիտի քարկոծեն զանհկա: 3 - Եւ ես իմ՝ երեսս այն մարդուն վրայ պիտի տնկեմ, ու զանհկա իր ժողովուրդին մէջէն կորսնցնեմ, վասն զի անհկա իր սերունդէն Մողղքի տուած է՝ իմ սրբարանս պղծելու ու իմ՝ սուրբ անունս անարգելու համար: 4 - Եւ եթէ այն մարդը իր սերունդէն Մողղքի տուած ատենը, երկրին ժողովուրդը չտեսնելու գայով, զանհկա չմեռցնեն, 5 - Այն ատեն ես իմ՝ երեսս պիտի տնկեմ այն մարդուն վրայ ու անոր ընտանիքին վրայ, և զանհկա և Մողղքի հետ պունկութիւն ընելու համար այն մարդուն ետեւէն բոլոր գացողները իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսնցնեմ: 6 - Եւ վշուկներուն ու հմայողներուն ետեւէն՝ երթալու դարձող մարդուն վրայ ալ երեսս պիտի տնկեմ, ու զանհկա իր ժողովուրդին մէջէն կորսնցնեմ: 7 - Ուստի սրբեցէք ձեր անձերը, ու սուրբ եղէք, քանզի ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը: 8 - Եւ իմ՝ կանոններս պահէք, ու ըրէք զանոնք. ես եմ՝ Տէրը որ ձեզ կը սրբեմ:

9 - Ով որ իր հայրը կամ իր մայրը անիծէ, անշուշտ պիտի մեռցուի. անհկա իր հայրը կամ իր մայրը անիծեց, անոր արիւնը իր վրայ ըլլայ: 10 - Եւ ով որ «բէշ մարդու մը կնոջ հետ շնութիւն ընէ, իր դրացիին կնոջ հետ շնութիւն ընողը անշուշտ պիտի մեռցուի. շնացողն ալ շնացեալն ալ պիտի մեռցուին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ: 12 - Եւ եթէ մարդ մը իր հարսին հետ պառկի, անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին, գարշութիւն ըրին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ: 13 - Եւ եթէ մարդ մը կնոջ հետ պառկելու պէս արուի հետ պառկի, երկուքն ալ պղծութիւն ըրին. անշուշտ պիտի մեռցուին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ: 14 - Եւ եթէ մարդ մը՝ կին մը առ անոր մայրը սունէ, անօրէնութիւն է. անհկա ալ անոնք ալ կրակով պիտի

*Եք. պունկեալ

այրուին, որպէս զի ձեր մէջ անօրէնութիւն չըլլայ: 15 - Եւ եթէ մարդ մը անասունի հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի, ու անասունը պիտի սպաննէք: 16 - Եւ եթէ կին մը որեւիցէ անասունի հետ զուգաւորելու համար անոր մօտենայ, կինն ալ, անասունն ալ պիտի սպաննես. անոնք անշուշտ պիտի մեռցուին. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ: 17 - Եւ եթէ մարդ մը իր քոյրը առնէ, իր հօրը ազջիկը կամ իր մօրը ազջիկը, ու անոր մերկութիւնը տեսնէ, ու ազջիկն ալ անոր մերկութիւնը տեսնէ, չարութիւն է. անոնք իրենց ժողովուրդին աչքին առջև պիտի կորսուին. անիկա իր քրոջ մերկութիւնը բացաւ. իր անօրէնութիւնը պիտի կրէ: 18 - Եւ եթէ մարդ մը իր դաշտանին մէջ եղող կնոջ մը հետ պառկի ու անոր մերկութիւնը բանայ, ինք անոր աղբիւրը բացաւ, կինն ալ իր արեան աղբիւրը բացաւ. երկուքն ալ իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսուին: 19 - Եւ քու մօրդ քրոջ կամ քու հօրդ քրոջ մերկութիւնը չբանաս. վասն զի եթէ մէկը իր ազգականին մերկութիւնը բանալու ըլլայ, երբեք ալ իրենց անօրէնութիւնը պիտի կրեն: 20 - Եւ եթէ մարդ մը իր հօրեղբօրը կնոջ հետ պառկի, իր հօրեղբօրը մերկութիւնը բացաւ. անոնք իրենց մեղքը պիտի կրեն. անգլուակ պիտի մեռնին: 21 - Եւ եթէ մարդ մը իր եղբօրը կինը առնէ, պղծութիւն է այն. անիկա իր եղբօրը մերկութիւնը կը բանայ. անգլուակ պիտի ըլլան:

22 - Ուստի իմ բոլոր կանաններս և իմ բոլոր դասաստաններս պահէք, ու ընէք զանոնք, որպէս զի այն երկիրը ուր ձեզ պիտի տանիմ հոն բնակելու, դուրս չփոխէ ձեզ: 23 - Եւ պիտի չքալէք այն ազգերուն սովորութիւններովը, զորոնք ձեր առջեւէն պիտի վաճառուին. քանզի այս ամէն բաները ըրին անոնք, ու ես զզուեցայ անոնցմէ. 24 - Եւ ըսի ձեզի, Անոնց երկիրը դուք պիտի ժողովուրդէք, ու ես զանիկա ձեզի պիտի տամ ստացուածք ըլլալու, երկիր մը որ կաթ ու մեղր կը բերէ. ես եմ՝ Տէրը, ձեր Աստուածը, որ ահա ազգերէն զատեցի ձեզ: 25 - Ուստի մաքուր ու անմաքուր անասուններուն մէջտեղ, և անմաքուր ու մաքուր թռչուններուն մէջտեղ տարբերութիւն պիտի դնէք.

և ձեր անձերը չպղծէք անասուններով կամ թռչուններով կամ գետնի վրայի բոլոր սողուններով, զորոնք ես զատեցի ձեզի իբրև անմաքուր: 26 - Եւ դուք սուրբ պիտի ըլլաք ինծի. քանզի ես Տէրս սուրբ եմ, ու ձեզ «-բէշ ազգերէն զատեցի՝ որպէս զի իմն ըլլաք:

27 - Վահուկ կամ հմայող եղազը, թէ՛ այր ըլլայ և թէ՛ կին, անշուշտ պիտի մեռցուի. քարերով քարկոծեն զանոնք. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ:

ԳԼ. ԻԱ

Եւ Տէրը բնաւ Մովսէսի, Խօսէ Ահարոնի որդիներուն, քահանաներուն, ու ըսէ անոնց, Քահանայ իջ մէկուն ի հասանք համար անմաքուր չըլլայ իր ժողովուրդին մէջ. 2 - Բայց միայն իր մօտ ազգականին համար, այսինքն իր մօրը ու իր հօրը և իր որդւոյն ու իր ազգիան և իր եղբօր համար, 3 - Եւ իր կոյս քրոջ համար որ մօտ է իրեն ու երկան տրուած չէ, կրնայ անմաքուր ըլլալ: 4 - Անիկա իր ժողովուրդին մէջ գլխաւոր մարդ ըլլալով, անմաքուր պիտի չըլլայ՝ ինքզինք պղծելով: 5 - Անոնք գլուխին փետելով կնտակ պիտի չընեն, և իրենց մօրուքին եզերքը չածիլեն, ու իրենց մարմինին վրայ կտրածներ չընեն: 6 - Սուրբ պիտի ըլլան իրենց Աստուծոյն. և իրենց Աստուծոյն անունը չպղծեն, վասն զի Տէրոջը պատարագները «- իրենց Աստուծոյն հացը անոնք կը մատուցանեն. ուստի սուրբ պիտի ըլլան: 7 - Պոռնիկ կամ պղծուած կին չառնեն, և իր այրէն արձակուած կին մը չառնեն. վասն զի «ահանան սուրբ է իր Աստուծոյն: 8 - Ուստի պիտի սրբես զանիկա, վասն զի քու Աստուծոյդ հացը անիկա կը մատուցանէ. անիկա սուրբ պիտի ըլլայ քեզի, քանզի ես Տէրս, որ ձեզ կը սրբեմ, սուրբ եմ: 9 - Եւ եթէ քահանայի մը ազջիկը պոռնկութիւն ընելով պղծուելու ըլլայ, իր հայրը կը պղծէ. անիկա կրակով պիտի այրուի:

10 - Եւ իր եղբայրներէն մեծ եղող քահանան, որուն գլխուն վրայ օծման իւղը թափուած է, ու զգեստները հագնելու օրհնուած, իր գլուխը պիտի չքանայ, և իր լաթերը չպատուէ, 11 - Եւ մեռած մարդու մը քով չերթայ, ոչ

ալ իր Տօրը կամ իր մօրը համար անմաքուր ըլլայ : 12 - Եւ սրբարանէն դուրս չելլէ, ու իր Աստուծոյն սրբարանը չպղծէ, վասն զի իր Աստուծոյն օծման իւղին պասկը իր վրայ է. ես եմ Տէրը : 13 - Եւ անհկա կոյս մը իրեն կին պիտի առնէ. 14 - Որբեւորի կամ արձակուած կամ պղծուած կամ բող չառնէ. հապա կին ըլլալու համար իր ժողովուրդէն կոյս մը առնէ, 15 - Որպէս զի իր սերմը չպղծէ իր ժողովուրդին մէջ, վասն զի ես եմ Տէրը, որ կը սրբեմ զանհկա :

16 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 17 - Խօսէ Ահարոնի ու ըսէ, Քու սերունդէդ իրենց ազգերուն մէջ ով որ իր վրայ արատ մը ունի, թող չմտտենայ իր Աստուծոյն հացը մատուցանելու. 18 - Վասն զի բնաւ արատ ունեցող մարդ մը պիտի չմտտենայ. կոյր մարդը, կաղը, կամ կարճունչը, կամ *իւր անբարեբան մէջ աւելորդ բան մը ունեցողը՝ 19 - կամ սաքը կտարած, կամ ձեռքը կտարած մարդը, 20 - կամ սապատողը, կամ թզուկը, կամ իր աչքին մէջ բիծ ունեցողը, կամ քոտտը, կամ սրքիւնտար, կամ փոշտանկը. 21 - Ահարոն քահանային սերունդէն արատ մը ունեցող մարդը Տէրոջը պատարագները մատուցանելու պիտի չմտտենայ, քանզի արատաւոր ըլլալով իր Աստուծոյն հացը մատուցանելու պիտի չմտտենայ : 22 - Անհկա իր Աստուծոյն հացը պիտի ուտէ, թէ՛ ամենասուրբ բաներէն և թէ՛ սուրբ բաներէն. 23 - Միայն վարագուրին քով պիտի չմտնէ, և սեղանին չմտտենայ, վասն զի արատ ունի, ու իմ սուրբ բաներս չպղծէ, քանզի զանոնք սրբող Տէրը ես եմ : 24 - Եւ Մովսէս խօսեցաւ այն բաները Ահարոնի ու անոր որդիներուն և Իսրայէլի բոլոր որդիներուն :

ԳԼ. ԻԲ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն՝ որ Իսրայէլի որդիներուն հարցած սուրբ բաներէն քղզոյշ կենան,

* կամ, ակամջատար
 † կամ, ամորձիքը ճմլուածը, կամ, միորձին † Եբ. գառ

և իմ սուրբ անունս չպղծեն այն բաներով զորոնք ինծի կը սրբեն. ես եմ Տէրը : 3 - Ըսէ անոնց, Ձեր բոլոր սերունդէն ձեր ազգերուն մէջ՝ ով որ իր անմաքուրութիւնը իր վրայ ունենալով մօտենայ այն սուրբ բաներուն զորոնք Իսրայէլի որդիները կը սրբեն Տէրոջը, այն անձը իմ առջեւէս պիտի կորսուի. ես եմ Տէրը : 4 - Ով որ Ահարոնի ցեղէն բորոտ ըլլայ, կամ ծորում ունենայ, սուրբ բաներէն պիտի չուտէ մինչև իր մաքրուիլը. և ով որ մեռելէ պղծուած բանի մը դպչի, կամ մարդ մը սրուն զուգաւորութեան սերմը իրմէ ելած է, 5 - կամ ով որ դպչի սրեւիցէ սողունի մը որով կրնայ անմաքուր ըլլալ, կամ մարդու մը որմէ կրնայ անմաքուր ըլլալ, սրեւիցէ անմաքուրութիւն զոր անհկա ունենայ, 6 - Ասոնց դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, և սուրբ բաներէն չուտէ, հապա իր մարմինը ջրով լուայ. 7 - Եւ երբ արեգակը մարը մտնէ, մաքուր պիտի ըլլայ, ու ետքը սուրբ բաներէն ուտէ, վասն զի անհկա իր հացն է : 8 - Անհկա մեռած կամ գազանաբեկ պիտի չուտէ, որպէս զի անով չպղծուի. ես եմ Տէրը : 9 - Եւ իմ կարգադրութիւնս պիտի պահէն, որպէս զի անոր համար մեղք չկրեն, ու զայն պղծելուն համար չմեռնին. ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ :

10 - Բնաւ օտարական մը սուրբ բանէ պիտի չուտէ. քահանային հիւրը կամ վարձկանը սուրբ բանէ պիտի չուտէ : 11 - Բայց քահանային իր ստակով ծախու առած անձը ու իր տունը ծնածը անկէ պիտի ուտէ. անոնք անոր կերակուրէն պիտի ուտեն : 12 - Եթէ քահանային ազջիկը օտարականի մը հետ ամուսնանայ, անհկա նուիրուած սուրբ բաներէն պիտի չուտէ : 13 - Բայց եթէ քահանային ազջիկը սրբեւորի կամ արձակուած ըլլայ ու զաւակ չունենայ, և իր Տօրը տունը դառնայ, այն ասէն իր ազջիկութեան ժամանակին պէս իր Տօրը հացէն պիտի ուտէ. սակայն բնաւ օտարական մը անկէ չուտէ :

14 - Եւ եթէ մարդ մը անգիտութեամբ սուրբ բանէ մը ուտէ, անոր վրայ չինգերորդ մաս մը պիտի աւելցնէ, ու սուրբ բանովը մէկտեղ քահանային տայ. 15 - Եւ Իսրայէլի որդիներուն Տէրոջը մատուցած սուրբ բաները

չպղծեն. 16 - *Ու իրենց սուրբ բաները ուտելով՝ յանցանքի անօրէնութիւնը իրենց վրայ չբերեն՝, վասն զի ես եմ՝ Տէրը որ զանոնք կը սրբեմ՝:

17 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18 - Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և Իսրայէլի բոլոր որդիներուն, ու ըսէ անոնց, Իսրայէլի առնէն կամ Իսրայէլի մէջ քահա՞յն օտարականներէն անոնց ողջակէզի համար Տէրոջը մատուցածը՝ իրենց բոլոր ուխտերուն և բոլոր կամուտը ընծաներուն համար, իր զոհը մատուցանող ամէն մարդը .

19 - Արջառներէն, ոչխարներէն կամ այծերէն՝ անարատ արու պիտի մտնէ, որպէս զի ձեզի համար ընդունելի ըլլայ: 20 - Բնաւ արատ մը ունեցողը պիտի չմատուցանէք, վասն զի ձեզի համար ընդունելի չըլլար: 21 - Եւ ուխտ կատարելու համար կամ կամուտը ընծայի համար՝ ով որ արջառներէն կամ ոչխարներէն Տէրոջը խաղաղութեան զոհ մատուցանելու ըլլայ, անարատ պիտի ըլլայ այն, որպէս զի ընդունուի .

Բնաւ արատ պիտի չըլլայ անոր վրայ: 22 - Կոյր, կամ Բի կողմէ կոտորած կամ կտրուած կամ խաղաւարտ ունեցող, կամ քոտտ կամ որքիւնտ եղածներէն Տէրոջը պիտի չմատուցանէք, ոչ ալ ասոնցմէ Տէրոջը պատարագի համար սեղանին վրայ պիտի դնէք: 23 - Բայց անբաճկերուն մէջ աւելորդութիւն կամ պակասութիւն ունեցող զուարակը կամ ոչխարը կամ մարդի ընծայի համար մատուցանես, սակայն ուխտի համար պիտի չընդունուի այն: 24 - Ահարոնի քոտտը կամ քոտտը կամ փրցուածը կամ կտրուածը չմատուցանէք Տէրոջը, և ձեր երկրին մէջ չընէք այն բաները: 25 - Եւ օտարականի մը ձեռքէն ալ՝ ամէն ասոնցմէ ձեր Աստուծոյն խաղաղութեան չմատուցանէք, վասն զի անոնց մէջ խեղութիւն ու արատ կայ. անոնք ձեզի համար ընդունելի պիտի չըլլան:

26 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 27 - Երբ զուարակ կամ ոչխար կամ այծ ծնի, եօթը օր իր մօրը քով պիտի մնայ. և ութերորդ օրը ու

անկէ ետքը Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ պատարագի ընծայի համար: 28 - Եւ կովը կամ ոչխարը իր ձագով մէկտեղ մէկ օրուան մէջ չմորթէք:

29 - Եւ երբ գոհութեան զոհ մատուցանէք Տէրոջը, «յապէ» պիտի մատուցանէք որ ձեզի համար ընդունելի ըլլայ. 30 - Նոյն օրը պիտի ուտուի անիկա, անկէ մինչև առտու չթողուք. ես եմ՝ Տէրը:

31 - Ուստի իմ պատուիրանքներս պահէք, և ընէք զանոնք. ես եմ՝ Տէրը:

32 - Եւ իմ սուրբ անունս չպղծէք, որպէս զի ես սրբուիմ Իսրայէլի որդիներուն մէջ. ես եմ՝ Տէրը որ ձեզ կը սրբեմ, 33 - Որ ձեզի Աստուած ըլլալու համար՝ ձեզ Եզրպատտի երկրէն հանեցի. ես եմ՝ Տէրը:

ԳԼ ԻԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Տէրոջը տօները զորոնք դուք սուրբ ժողով պիտի կոչէք, իմ տօներս ասանք են: 3 - Վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը հանգստութեան շաբաթը ըլլալով սուրբ ժողով է. բնաւ գործ պիտի չգործէք. Տէրոջը շաբաթ պիտի ըլլայ ձեր բոլոր բնակչութիւններուն մէջ:

4 - Տէրոջը տօները, զորոնք իրենց ատենին համեմատ սուրբ ժողովներ պիտի քարոզէք, ասանք են: 5 - Առաջին ամսուն չորեքասաներորդ օրը իրիկուան դէմ Տէրոջը զատիկն է: 6 - Եւ նոյն ամսուն հնգետասաներորդ օրը բազարձակերաց տօնն է Տէրոջը. եօթը օր բազարձ պիտի ուտէք: 7 - Առաջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք: 8 - Եւ եօթը օր պատարագ պիտի մատուցանէք Տէրոջը. եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք:

9 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 10 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ մանէք այն երկիրը զոր ձեզի կու տամ, ու անոր հունձքը հնձէք, ձեր հունձքէն երախայրի որայ մը քահանային բերէք. 11 - Ան ալ Տէրոջը առջև երեքցնելով պիտի մատուցանէ որան, որպէս զի ձեզի համար ընդունելի ըլլայ. քահանան շաբաթին

*Կամ, Ու քահանաները անոնց վրայ յանցանքի անօրէնութիւնը չբերեն՝ երբ անոնք իրենց սուրբ բաները ուտեն
†Եբ: հայ

հետեւեալ օրը պիտի մատուցանէ զայն: 12 - Եւ որան մատուցած օրերնիդ՝ ողջակէզի համար մէկ տարեկան անատարատ գառ մը մատուցանէք Տէրոջը:

13 - Եւ անոր հացի ընծան իւղով շաղուած երկու տասանորդ բարակ ալիւր պիտի ըլլայ: ասիկա անուշահոտ պատարագի համար է Տէրոջը: և անոր թափելու նուէրը հիմէնին չորրորդ մասը գինի պիտի ըլլայ: 14 - Եւ մինչև այն օրը որ ձեր Աստուծոյն ընծան կը մատուցանէք, հաց կամ բոճրած ցորեն կամ թարմ հասկեր չուտէք: ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակարաններուն մէջ այս յեղի յաւիտենական կանոն պիտի ըլլայ:

15 - Եւ շաբաթին հետեւեալ օրէն՝ որ դուք նուիրման որան բերիք, լման եօթը շաբաթ պիտի համրէք ձեզի:

16 - Մինչև եօթներորդ շաբաթին հետեւեալ օրը յիսուն օր պիտի համրէք, և նոր հացի ընծայ մատուցանէք Տէրոջը: 17 - Ձեր բնակարաններէն՝ երեքընէլու ընծայի համար երկու հաց պիտի բերէք, որոնք երկու տասանորդ բարակ ալիւրէ ըլլալով խմորեալ եփած պիտի ըլլան: ասիկա երախայրի է Տէրոջը: 18 - Եւ հացին հետ մէկ տարեկան եօթը հատ անարատ գառներ, և արջառներէն մէկ զուարակ ու երկու խոյ պիտի մատուցանէք Տէրոջը, որոնք հացի ընծաներուն ու թափելու նուէրներուն հետ ողջակէզ «- անուշահոտ պատարագ պիտի ըլլան Տէրոջը: 19 - Եւ մեղքի պատարագին համար այծերէն մէկ նոխազ, և խաղաղութեան զոհի համար մէկ տարեկան երկու գառներ պիտի մատուցանէք: 20 - Եւ քահանան երախայրի հացին հետ երեքընէլու ընծայի համար երկու գառները պիտի մատուցանէ Տէրոջը առջև: անոնք սուրբ պիտի ըլլան Տէրոջը, և քահանային պիտի ըլլան: 21 - Եւ այն նոյն օրը պիտի քարոզէք որ ձեզի սուրբ ժողով ըլլայ: բնաւ ծառայութեան գործ չգործէք: ասիկա յեղի յաւիտենական կանոն ըլլայ ձեր բոլոր բնակարաններուն մէջ ձեր ազգերուն մէջ:

22 - Եւ երբ ձեր երկրին հունձքը հնձէք, հնձած ասեղդ արտին եղբրք յման չհնձես, ու հունձքիդ մնացած հասկերը չժողվես: զանոնք աղքատին ու օտարականին թողու: Ես եմ Տէրը ձեր Աստուածը:

23 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 24 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Եօթներորդ ամսուն մէջ ամսուն առաջին օրը ձեզի հանգստութեան օր, փող հնչեցնելուն յիշատակը, սուրբ ժողով պիտի ըլլայ: 25 - Բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք, հապա պատարագ մատուցանէք Տէրոջը:

26 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 27 - Նաև այս եօթներորդ ամսուն տասներորդ օրը քաւութեան օրը ըլլալով սուրբ ժողով ըլլայ ձեզի: և պիտի խոնարհեցնէք ձեր հոգիները, ու պատարագ մատուցանէք Տէրոջը:

28 - Եւ այն օրը բնաւ գործ չգործէք, վասն զի Տէրոջը ձեր Աստուծոյն առջև ձեզի համար քաւութիւն ընելու՝ օր քաւութեան է: 29 - Քանզի ով որ նոյն օրը չխոնարհի, իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի: 30 - Եւ ով որ նոյն օրը գործ մը գործէ, այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսնցնեմ: 31 - Բնաւ գործ մը պիտի չգործէք: ասիկա ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակարաններուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ: 32 - Այս ձեզի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ, և ձեր հոգիները պիտի խոնարհեցնէք: ամսուն իններորդ օրը «- ան իրիկունը ձեր շաբաթը պիտի պահէք իրիկունէ մինչև իրիկուն:

33 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 34 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Այս եօթներորդ ամսուն հնգետասներորդ օրը եօթը օր տաղաւարահարաց տօն է Տէրոջը: 35 - Առաջին օրը սուրբ ժողով պիտի ըլլայ, բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք: 36 - Եօթը օր պատարագ մատուցանէք Տէրոջը: և ութերորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ ձեզի, և պատարագ մատուցանէք Տէրոջը: ամսախմբութեան օր է այն, բնաւ ծառայութեան գործ չգործէք: 37 - Տէրոջը պատարագ, այսինքն ողջակէզ ու հացի ընծայ, զոհ և թափելու նուէրներ՝ ամէն օրուան պէտք եղածը մատուցանելու համար ձեր սուրբ ժողովներ կոչելու Տէրոջը տօները ասոնք են, 38 - Տէրոջը շաբաթներէն զատ, և ձեր ընծաներէն զատ, ու ձեր բոլոր ուխտերէն զատ, և ձեր բոլոր Տէրոջը տալու կամուր ընծաներէն զատ: 39 - Նաև եօթներորդ ամսուն հնգետասներորդ

որը երկրի արդիւնքը ժողոված ատեն-
նիդ եօթը օր տօն պիտի պահէք Տէ-
րոջը . առաջին օրը շաբաթ և ութե-
րեդ օրը շաբաթ պիտի պահէք : 40 - Եւ
առաջին օրը ձեզի գեղեցիկ ծառերու
պտուղ , արմաւենիի սաւեր ու տերե-
ւախիտ ծառերու սաւեր և ձորի ուռի-
ներու սաւեր պիտի առնէք , ու Տէրոջը
ձեր Աստուծոյն առջև եօթը օր ուրա-
խանաք : 41 - Եւ այս տօնը տարին
եօթը օր պիտի պահէք Տէրոջը . ձեր
ազգերուն մէջ յաւիտենական կանոն
ըլլայ այն . եօթներորդ ամսուն մէջ
պիտի բնէք զայն : 42 - Եօթը օր տա-
ղաւարներու մէջ պիտի բնակիք , Իս-
րայէլի բոլոր բնակները տաղաւարնե-
րու մէջ բնակին . 43 - Որպէս զի ձեր
սերունդները գիտնան թէ Իսրայէլի որ-
դինները Եզրպտոսի երկրէն հանած ա-
տենս տաղաւարներու մէջ բնակեցուցի
զանոնք . ես եմ Տէրը ձեր Աստուածը :
44 - Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն
պատմեց Տէրոջը տօները :

ԳԼ ԻԲ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսե-
լով , 2 - Պատուիրէ Իսրայէլի որդիներ-
ուն՝ որ ծեծուած մաքուր ձէթ բերեն
քեզի լոյսի համար , որպէս զի միշտ
ճրագ վառի : 3 - Ժողովքի խորանին
մէջ , վկայութեանը վարագուրին դուր-
սիդին , Ահարոն միշտ պիտի պատա-
րագէ զայն՝ իրիկունէ մինչև առտու
Տէրոջը առջև Լուսեղոս համար . սակա
ձեր ազգերուն մէջ յաւիտենական
կանոն ըլլայ : 4 - Ճրագները զուտ սա-
ւաշտանակին վրայ Տէրոջը առջև միշտ
պիտի պատրաստէ :

5 - Եւ բարակ ալիւր պիտի առնես ,
ու անով տասուերկու շօթ եփես . ամէն
մէկ շօթը երկու տասանորդէ պիտի ըլ-
լայ : 6 - Եւ զանոնք Տէրոջը առջև մա-
քուր սեղանին վրայ երկու կարգով
պիտի դնես . ամէն մէկ կարգը վեց վեց
հատ ըլլայ : 7 - Եւ սա-
կարգին վրայ զուտ կնիքուկ պիտի դնես ,
որպէս զի հացին վրայ պատարագի յիշատակ ըլ-
լայ Տէրոջը : 8 - Իսրայէլի որդիներուն
կողմանէ յաւիտենական ուխտով ա-
մէն շաբաթ օր միշտ Տէրոջը առջև զա-
նիկա պիտի կարգադրէ : 9 - Եւ անիկա
Ահարոնի ու անոր որդիներուն պիտի
ըլլայ , ու սուրբ տեղը ուտեն զանիկա .

վասն զի այն՝ Տէրոջը պատարագներէն
յաւիտենական կանոնով ամենասուրբ
է անոր :

10 - Եւ Իսրայէլի որդիներուն մէջ
Իսրայէլացի կնոջ մը որդին ելաւ , որուն
հայրը Եզրպտացի էր . ու այն Իսրայե-
լացի կնոջ որդին Իսրայէլացի մարդու
մը հետ բանակին մէջ կռուեցաւ . 11 -
Եւ այն Իսրայէլացի կնոջ որդին հայ-
հոյեց Տէրոջը անունը ու անիծեց . և
Մովսէսի բերին զանիկա . ու անոր մօրը
անունը Սողոմիթ էր , Դանի ցեղէն՝
Դաբբիի աղջիկը : 12 - Եւ բանտարկե-
ցին զանիկա , մինչև որ Տէրոջը հրա-
մանը յայանուի իրենց : 13 - Եւ Տէրը
խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 14 - Այն
հայհոյող մարդը բանակէն դուրս
հանէ , և բոլոր լսողները ձեռքերնին
անոր գլխուն վրայ դնեն , ու բոլոր ժո-
ղովքը քարկոծեն զանիկա : 15 - Եւ
պիտի խօսիս Իսրայէլի որդիներուն՝ ըսե-
լով , Ով որ իր Աստուածը կ'անիծէ ,
իւր մեղքը պիտի կրէ : 16 - Եւ Տէրոջը
անունը հայհոյողը անշուշտ պիտի մեռ-
ցուի . բոլոր ժողովքը անշուշտ պիտի
քարկոծեն զանիկա . թէ՛ օտարական
ըլլայ և թէ՛ երկրացի , Տէրոջը անունը
հայհոյողը պիտի մեռցուի :

17 - Եւ ով որ մարդ մը կը սպաննէ ,
անշուշտ պիտի մեռցուի : 18 - Եւ ան
որ անասուն մը կը մեռցնէ , անասունի
տեղ անասուն պիտի հատուցանէ :
19 - Եւ եթէ մարդ մը իր դրացիին խե-
ղութեանը պատճառ ըլլայ , իր բրածին
պէս պիտի բնեն իրեն . 20 - Բեկման
տեղ բեկում , աչքի տեղ աչք , ակ-
ուսյի տեղ ակուսյ . ինչպէս անիկա
մարդու մը խեղութիւն պատճառէր է ,
նոյնպէս պիտի ըլլայ իրեն : 21 - Եւ
անասուն մեռցնողը պիտի հատուցանէ
զայն . բայց մարդ մեռցնողը պիտի
մեռցուի : 22 - Թէ՛ օտարականին հա-
մար և թէ՛ երկրացիին համար՝ ձեր
օրէնքը մէկ պիտի ըլլայ . վասն զի ես
եմ Տէրը ձեր Աստուածը :

23 - Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի
որդիներուն որ այն անիծող մարդը
բանակէն դուրս հանեն , և քարերով
քարկոծեն զանիկա . ու Իսրայէլի որ-
դիները Տէրոջը Մովսէսի պատուիրա-
ծին պէս ըրին :

ԳԼ. ԻԵ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի Աինա լեռը՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ այն երկիրը մօտեցը զոր ես ձեզի պիտի տամ, թող այն երկիրը հանգստութեան շաբաթ մը պահէ Տէրոջը: 3 - Վեց տարի քու արագ պիտի ցանես, և քու այգիդ վեց տարի յօտես, ու անոր արգիւնքը ժողովես. 4 - Բայց եօթներորդ տարին երկրին համար հանգստութեան շաբաթ, այսինքն Տէրոջը համար շաբաթ, ըլլայ. քու արագ պիտի չցանես, և քու այգիդ չյօտես. 5 - Քու *արտիդ ինքիրմէ բուսածը պիտի չհնձես, և քու չյօտած այգիդ խաղողները չժողովես. հանգստութեան տարի ըլլայ անիկա երկրին: 6 - Եւ երկրին շաբաթը ձեզի կերակուր պիտի ըլլայ, քեզի և քու ծառայիդ և քու աղախինիդ ու քու վարձկանիդ, և քու քովդ պանդխտացած օտարականիդ, 7 - Եւ քու անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կենդանիներուն կերակուր ըլլայ անոր բոլոր արգիւնքը:

8 - Եւ դուն քեզի տարիներու եօթը շաբաթ համրես, այսինքն եօթը անգամ՝ եօթը տարի. ու տարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունընը տարի պիտի ըլլայ քեզի: 9 - Եւ եօթներորդ ամսուն ատաներորդ օրը ազգարարութեան փոքր պիտի հնչեցնես, քառութեան օրը ձեր բոլոր երկրին մէջ պիտի հնչեցնէք փողը: 10 - Եւ յիսներորդ տարին պիտի սրբէք, ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար ազատութիւն քարոզ կարգալ տաք. ասիկա ձեզի Յօբելեան *օրը ըլլայ. և ձեզմէ ամէն մէկը իր ստացուածքին պիտի դառնայ, ու ձեզմէ ամէն մէկը իր ազգատոհմին դառնայ: 11 - Այս յիսներորդ տարին Յօբելեան տարի ըլլայ ձեզի. ոչ պիտի ցանէք, ոչ ալ ինքիրմէ բուսածը պիտի հնձէք, և ձեր չյօտած *այգիէն պիտի չժողովէք. 12 - Վասն զի Յօբելեան *օրէ է, այն ձեզի սուրբ պիտի ըլլայ. արաէն անոր արգիւնքը պիտի ուտէք: 13 - Այս Յօբելեան տարին

ձեզմէ ամէն մէկը իր ստացուածքին պիտի դառնայ:

14 - Եւ եթէ քու դրացիիդ բան մը ծախելու ըլլաս, կամ քու դրացիիդ ձեռքէն ծախու առնելու ըլլաս, ձեզմէ մէկը իր ընկերին անիրաւութիւն պիտի չընէ. 15 - Յօբելեան *օրէն ետքը եղած տարիներուն հաշիւովը ծախու պիտի առնես քու դրացիէդ, անիկա ալ արգիւնքին տարիներուն հաշիւովը պիտի ծախէ քեզի: 16 - Տարիներուն շատութեանը նայելով պիտի աւելցընես անոր գինը, և տարիներուն քիչութեանը նայելով պիտի պակսեցնես անոր գինը. վասն զի անիկա արգիւնքին հաշիւովը կը ծախէ քեզի: 17 - Եւ ձեզմէ մէկը իր ընկերին անիրաւութիւն չընէ, ու քու Աստուծակդ պիտի վախնաս. քանզի ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը:

18 - Եւ իմ կանոններս պիտի ընէք, ու իմ դատաստաններս պահէք և ընէք զանոնք ու այն երկրին մէջ ապահովութեամբ պիտի բնակիք: 19 - Եւ երկիրը իր արգիւնքը պիտի տայ, ու մինչև կշտանալիդ պիտի ուտէք. և անոր մէջ ապահովութեամբ պիտի բնակիք: 20 - Եւ եթէ ըսէք թէ եօթներորդ տարին ինչ պիտի ուտենք. ահա պիտի չցանենք ու ձեր արգիւնքները պիտի չժողովենք. 21 - Ուրեմն վեցերորդ տարին ձեր վրայ պիտի *գրկեմ իմ օրհնութիւնս, և երէք տարուան արգիւնք պիտի տայ: 22 - Եւ ութերորդ տարին պիտի ցանէք, ու հին արգիւնքէն պիտի ուտէք մինչև իններորդ տարին. մինչև անոր արգիւնքին հասնիլը հինէն պիտի ուտէք:

23 - Եւ երկիրը պիտի չծախուի մշանջեմապէս. վասն զի երկիրը իմն է, ու դուք իմ քովս պանդխտաներ ու հիւրեր էք: 24 - Եւ ձեր կալուածքին բոլոր երկրին մէջ փրկանք պիտի տաք երկրին համար: 25 - Եթէ քու եղբայրդ ազգատանայ և իր ստացուածքին հէ՛մա՛ը ծախէ, ու եթէ անոր մօտ ազգականը անոր գայ, անիկա իր եղբօրը ծախածը պիտի փրկէ: 26 - Եւ եթէ մտորդը փրկող մը չունի, ու ինքիրմէ կարողանայ դայն փրկել, 27 - Այն ատեն իր ծախելէն հաշիւ ընէ տարի-

*Եբր. հունձրից

*Եբր. հրամայեմ
+Եբր. ձեռնհաս ըլլալով

ները, և աւելցածը ետ տայ այն մարդուն՝ որու ծախած էր, ու իր ստացուածքին դառնայ: 28 - Բայց եթէ անոր ետ տալու կարող չէ, այն ատեն իր ծախած բանը ծախու առնողին ձեռքը պիտի մնայ մինչև Յորելեան տարին, և Յորելեան Գարնի պիտի ելլէ, ու Գարնի իր ստացուածքին պիտի դառնայ:

29 - Եւ եթէ մէկը պարսպաւոր քաղաքի մէջ բնակելու տուն մը ծախէ, զանհկա ծախելէն մինչև լման տարի մը կրնայ փրկել զայն. անոր փրկանքը մէկ տարուան մէջ պիտի ըլլայ: 30 - Եւ եթէ բոլոր տարուան լմանալուն անհկա չփրկուի, այն ատեն պարսպաւոր քաղաքին մէջ եղած տունը միշտ ծախու առնողին պիտի մնայ իր ազգերուն մէջ. Յորելեան Գարնի այն Գարնի պիտի չդառնայ: 31 - Բայց բոլորաբար պարսպաւոր չեղած գիւղաքաղաքներուն տուները երկրին արտերուն պէս պիտի սեպուին. անոնք կրնան փրկուիլ, ու Յորելեան Գարնի պիտի դառնան: 32 - Իսկ Ղևտացոց քաղաքներուն մէջ իրենց կալուածքի քաղաքներուն տուները Ղևտացիները միշտ կրնան փրկել: 33 - Եւ եթէ մէկը Ղևտացիներէն «ծախու առնելու» ըլլայ, այն ատեն իր կալուածքը եղած քաղաքին մէջի ծախուած տունը՝ Յորելեան Գարնի պիտի դառնայ. վասն զի Իսրայէլի որդիներուն մէջ Ղևտացոց քաղաքներուն տուները իրենց կալուածքն են: 34 - Բայց իրենց քաղաքներուն արուարձաններուն արտերը պիտի չծախուին, վասն զի անոնց յաւիտենական կալուածքն է այն:

35 - Եւ եթէ քու եղբայրդ քու քովդ ազգատանայ ու անոր ձեռքը տկարանայ, անոր պիտի օգնես օտարականի ու պանդուխտի պէս, որպէս զի քու քովդ ապրի: 36 - Անկէ վաշխ ու տոկոսիք պիտի չառնես, հապա քու Աստուծմէդ վախնաս, որպէս զի եղբայրդ քու քովդ ապրի: 37 - Քու ստակդ վաշխով պիտի չտաս անոր, և քու կերակուրդ տոկոսիքով չտաս: 38 - Ես եմ՝ Տէրը ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի՝ Քա-

նանու երկիրը ձեզի տալու համար, և ձեզի Աստուած ըլլալու համար:

39 - Եւ եթէ եղբայրդ քու քովդ ազգատանայ, ու ինքզինք քեզի ծախէ, զանհկա ծառայի մը պէս պիտի չգործածես: 40 - Անհկա քու քովդ վարձկանի կամ պանդուխտի պէս պիտի ըլլայ, «- ծառայէ քեզի մինչև Յորելեան տարին: 41 - Եւ այն Գարնի քու քովէդ պիտի ելլէ ինք ալ ու իր որդիներն ալ իրեն հետ, և իր ազգատոհմին դառնայ, ու իր հայրերուն կալուածքին դառնայ: 42 - Քանզի անոնք իմ ծառաներս են, զորոնք Եգիպտոսի երկրէն հանեցի. անոնք ծառայի ծախուելուն պէս պիտի չծախուին: 43 - Խրատուածք պիտի չիչխես անոր վրայ, հապա քու Աստուծմէդ վախնաս: 44 - Քու ունենալու ծառայդ ու ազախինդ ձեր բոլորաբար եղած ազգերէն ըլլան. ծառայ ու ազախին անոնցմէ կրնաք ծախու առնել: 45 - Նաև ձեր քով բնակող օտարականներուն զաւակներէն, կամ անոնցմէ և կամ ձեր քով եղող անոնց ընտանիքներէն որոնք ձեր երկիրը ծնած են՝ կրնաք ծախու առնել, որպէս զի ձեր ստացուածքը ըլլայ: 46 - Եւ ձեզմէ ետքը ձեր որդիներուն ժառանգութեան ստացուածք ըլլալու համար թողուք զանոնք, որպէս զի միշտ ձեր ծառաները ըլլան. բայց ձեր եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, համար՝ իրարու վրայ խստութեամբ պիտի չիչխէք:

47 - Եւ եթէ քու քովդ եղած օտարականը կամ պանդուխտը հարստանայ ու անոր քով Գարնի քու եղբայրդ ազգատանայ, և քու քովդ պանդուխտացած օտարականին, կամ այն օտարականին ընտանեաց Գարնի ազգականին ինքզինք ծախելու ըլլայ, 48 - Ինքզինք ծախելէն ետքը անհկա կրնայ փրկուիլ. էր եղբայրներէն մէկը կրնայ փրկել զանհկա: 49 - Անոր հօրեղբայրը կամ հօրեղբորորդին փրկէ զանհկա, կամ իր ազգատոհմին մէջ իր մօտ ազգականներէն մէկը փրկէ զանհկա. կամ եթէ կարողանայ, ինքզինք թող փրկէ: 50 - Եւ անհկա, ծախու առնողին հետ, ինքզինք անոր ծախած տարիէն մինչև Յորելեան տարին հաշիւ պիտի ընէ, և իր փրկուելուն ստակը տարիներուն հաշիւովը ըլլայ. անոր Գարնի վարձկանի ժամանակին պէս հաշուուի:

*Եֆբ. փրկելու

†Եֆբ. ծախուած տունը և իր կալուածքին քաղաքը

51 - Եթէ տակաւին շատ տարի կայ, անոնց նայելով՝ իր ծախուած գինէն իր փրկանքը պիտի տայ . 52 - Եւ եթէ Յորելեան տարիին քիչ տարի մնացեր է, անոր հետ հաշիւ պիտի ընէ , -- իր տարիներուն համեմատ իր փրկանքը տայ : 53 - Ինք անոր քով տարեկան վարձկանի պէս պիտի սեպուի . -- ան ալ խատուութեամբ չիշխէ անոր վրայ քու առջեւդ : 54 - Եւ եթէ այս կերպերով չփրկուի, Յորելեան տարին ինք ալ ու իր որդիներն ալ իրեն հետ պիտի ելլեն : 55 - Վասն զի Իսրայէլի որդիները իմ ծառաներս են . Եգիպտոսի երկրէն իմ հանած ծառաներս են անոնք . ես եմ Տէրը ձեր Աստուածը :

ԳԼ. ԻԶ

Դուք ձեզի չաստուածներ ու կուռքեր պիտի չչինէք , և ձեզի արձաններ պիտի չկանգնէք , և ձեր երկրին մէջ պատկերաւոր կոթող պիտի չգնէք՝ անոր երկրպագութիւն ընելու համար . վասն զի ես եմ Տէրը ձեր Աստուածը : 2 - Իմ շարաթներս պիտի պահէք, ու իմ սրբարանս յարգէք . ես եմ Տէրը : 3 - Եթէ իմ կանոններովս քարէք, և իմ պատուիրանքներս պահէք ու զանոնք ի գործ գնէք , 4 - Ես ալ ձեզի անձրեւը ատենին պիտի տամ , և երկիրը իր արգիւնքը պիտի տայ , ու դաշտին ծառերը իրենց պտուղը պիտի տան . 5 - Եւ ձեր կայր մինչև այգեկութիւն պիտի հասնի , ու այգեկութիւն մինչև ցանելու ժամանակ հասնի . և ձեր հացը կուշտ պիտի ուտէք, ու ձեր երկրին մէջ ապահովութեամբ բնակիք : 6 - Եւ խաղաղութիւն պիտի տամ երկրին, ու հանգիստ պիտի պառկիք, և վախցնող մը պիտի չըլլայ . ու երկրին շար գազանները պիտի հատցնեմ, և ձեր երկրէն սուր պիտի չանցնի : 7 - Եւ ձեր թշնամիները պիտի հալածէք , ու անոնք սրով պիտի իյնան ձեր առջև : 8 - Եւ ձեզմէ հինգ հոգին հարիւրաւորը պիտի հալածէ , և ձեզմէ հարիւր հոգին բիւրաւորը պիտի հալածէ , ու ձեր թշնամիները սրով պիտի իյնան ձեր առջև : 9 - Եւ ձեզի պիտի նայիմ, ու ձեզ աճեցնեմ և շատցնեմ, ու ձեզի հետ իմ ուխտս հաստատեմ : 10 - Եւ հին պաշարը պիտի ուտէք, ու նորին

*տեղ ընելու համար՝ հինը դուրս պիտի հանէք : 11 - Եւ իմ խորանս ձեր մէջ պիտի դնեմ, ու իմ հոգիս ձեզմէ պիտի չզուլի . 12 - Եւ ձեր մէջ պիտի քալեմ, ու ձեզի Աստուած ըլլամ, և դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք : 13 - Ես եմ Տէրը ձեր Աստուածը , որ ձեզ Եգիպտոսացոց երկրէն հանեցի , որպէս զի անոնց ծառայ չըլլաք, ու ձեր լուծին կապերը խորտակեցի , և ձեզ բարձրագլուխ քաղցուցի : 14 - Բայց եթէ ինծի մտիկ չընէք, ու այս բոլոր պատուիրանքներս չկատարէք , 15 - Եւ իմ կանոններս անարգէք, ու ձեր հոգին իմ դատաստաններէս զզուի, այնպէս որ իմ բոլոր պատուիրանքներս չընէք, ու իմ ուխտս աւրէք, 16 - Ես ալ ձեզի զայս պիտի ընեմ, այսինքն ձեր վրայ աչք փճացնող և սիրտ մարեցնող վախը , ծիւրականտախտը ու հրատապնապ տենդը պիտի զրկեմ, և ձեր սերմը պարապ տեղ պիտի սերմանէք . վասն զի ձեր թշնամիները պիտի ուտեն զայն . 17 - Եւ իմ երեսս ձեր վրայ պիտի տնկեմ, ու ձեր թշնամիներուն առջև պիտի սպաննուիք . ձեզ ատողները պիտի իշխեն ձեր վրայ , ու ձեզ հալածող մը չեղած ատեն պիտի փախչիք : 18 - Եւ եթէ ատոնցմով ալ ինծի մտիկ չընէք , այն ատեն ձեր մեղքերուն համար ձեզ եօթնպատիկ ալ պիտի պատժեմ : 19 - Եւ ձեր զօրութեան հպարտութիւնը պիտի խորտակեմ, ու ձեր երկիրը երկաթի պէս և ձեր երկիրը պղնձի պէս պիտի ընեմ : 20 - Եւ ձեր դժբաղ պարապ տեղ պիտի հասնի, ու ձեր երկիրը իր արգիւնքը պիտի չտայ , և երկրին ծառերը իրենց պտուղը չտան : 21 - Եւ եթէ դուք ինծի հետ հակառակ երթաք ու չուղէք ինծի մտիկ ընել , այն ատեն ձեր մեղքերուն համեմատ եօթնպատիկ հարուածք պիտի աւելցնեմ ձեր վրայ : 22 - Եւ ձեր վրայ դաշտի գազանները պիտի զրկեմ, ու ձեզ անգաւակ պիտի ընեն, ու ձեր անասունները ջարդեն , և ձեզ պիտի քիչցնեն . ու ձեր ճամբաները անապատ պիտի դառնան : 23 - Եւ եթէ ատոնցմով ալ չխրատուիք ինծմէ , ու ինծի հետ հակառակ երթաք, 24 - Այն ատեն ես ալ ձեզի հետ հակառակ պիտի

*Եբր. երեսէն

երթամ, և ես ալ ձեր մեղքերուն համար եօթնպատիկ պիտի պատժեմ ձեզ: 25 - Եւ ձեր վրայ ուխտիս վրէժը առնող սուրբ պիտի զրկեմ, ու ձեր քաղաքներուն մէջ պիտի ժողվուիք, և ձեր մէջ ժանտախտ պիտի զրկեմ, ու թշնամիին ձեռքը պիտի մատնուիք: 26 - Ձեր հացին ցուպը կոտրած ատենս, տասը կին մէկ թոնիրի մէջ պիտի եփեն ձեր հացը, և ձեր հացը կշռով պիտի արուի ձեզի. ու պիտի ուտէք և չկշտանաք:

27 - Եւ եթէ ասոնցմով ալ ինծի մտիկ չընէք, հապա հակառակ երթաք ինծի հետ, 28 - Այն ատեն ես ալ ձեզի հետ հակառակ պիտի երթամ բարկութեամբ, և ձեր մեղքերուն համար եօթնպատիկ պիտի պատժեմ ձեզ: 29 - Եւ ձեր աղաքներուն միւր պիտի ուտէք, ու ձեր աղջիկներուն միւր ուտէք: 30 - Եւ ձեր բարձր տեղերը պիտի աւրեմ, ու ձեր արեգական կուռքերը կոտրեմ, և ձեր գիերը ձեր կուռքերուն դիերուն վրայ պիտի դնեմ, ու իմ հոգիս ձեզմէ պիտի զզուի: 31 - Եւ ձեր քաղաքները աւերակ՝ ու ձեր սուրբ տեղերը ամայի պիտի ընեմ, և ձեր անոյշ հօտը պիտի չհօտուրտամ: 32 - Եւ այն երկիրը ամայի պիտի ընեմ, որպէս զի հոն բնակող ձեր թշնամիները զարմանան անոր վրայ: 33 - Եւ ձեզ ազգերուն մէջ պիտի ցրուեմ, ու ձեր ետեւէն սուր պիտի քաշեմ, և ձեր երկիրը ամայի պիտի ըլլայ, ու ձեր քաղաքները աւերակ: 34 - Այն ատեն երկիրը իր ամայութեան բոլոր օրերը իր շաբաթները պիտի վայելէ, երբ դուք ձեր թշնամիներուն երկիրը ըլլաք. երկիրը այն ատեն հանգիստ ըլլալով՝ իր շաբաթները պիտի վայելէ: 35 - Իր ամայութեան բոլոր օրերը պիտի հանգրտանայ. քանզի ձեր շաբաթներուն մէջ չէր հանգստանար, երբ անոր վրայ կը բնակէիք: 36 - Եւ ձեզմէ ոչ մնացածներուն սրտին դողում պիտի բերեմ իրենց թշնամիներուն երկիրներուն մէջ, ու հովէն քշուած տերեւին ձայնը պիտի հալածէ զանոնք, և սուրի բերէ փախչելու պէս պիտի փախչին անոնք, ու հալածող մը չեղած ատեն պիտի իյնան: 37 - Եւ հալածող մը չեղած ատեն՝ սուրի երեսէ քիչէլ՝ պէս իրարու վրայ պիտի իյնան. և պիտի չկրնաք ձեր թշնամիներուն առջև կայնիլ:

38 - Եւ ազգերուն մէջ պիտի կորսուիք, ու ձեր թշնամիներուն երկիրը ձեզ պիտի ուտէ: 39 - Եւ ձեզմէ մնացածները իրենց անօրէնութիւնովը պիտի հային ձեր թշնամիներուն երկիրներուն մէջ: նաև իրենց հայրերուն անօրէնութիւններովը մէկտեղ պիտի հային:

40 - Եւ եթէ խոստովանին իրենց անօրէնութիւնը ու հայրերուն անօրէնութիւնը՝ ինծի դէմ գործած իրենց յանցանքներովը, և թէ իրենց ինծի հետ հակառակ երթալը: 41 - Ու նաև իմ անոնց հետ հակառակ երթալս, ու զանոնք իրենց թշնամիներուն երկիրը բերելս. եթէ այն ատեն անոնց անթիփատ սիրար խոնարհի, և իրենց անօրէնութեան պատիժը յօժարութեամբ ընդունին, 42 - Այն ատեն պիտի յիշեմ Յակոբի հետ ըրած ուխտս, նաև Իսահակի հետ ըրած ուխտս, և Աբրահամի հետ ըրած ուխտս ալ պիտի յիշեմ, ու այն երկիրն ալ պիտի յիշեմ:

43 - Եւ յերեսէ այն երկիրը պիտի ձգուի անոնցմէ, ու իր շաբաթները պիտի վայելէ, քանի որ անոնցմէ ամայի մնայ. և անոնք իրենց անօրէնութեան պատիժը յօժարութեամբ պիտի ընդունին. քանզի իմ դատաստաններս անարգեցին, ու անոնց հոգիները իմ կանոններէս զզուեցան: 44 - Այսու ամենայնիւ երբ իրենց թշնամիներուն երկիրը ըլլան, զանոնք պիտի չմերժեմ, և զանոնք բոլորովին կորսնցնելու՝ ու անոնց հետ ըրած ուխտս ջնջելու չափ պիտի չզգուիմ անոնցմէ. վասն զի ես եմ Տէրը անոնց Աստուածը: 45 - Բայց անոնց համար պիտի յիշեմ իբեհնայ նախնիքներուն ուխտը, զորոնք Եզրիպտոսի երկրէն հանեցի՝ ազգերուն առջև անոնց Աստուած ըլլալու համար. ես եմ Տէրը:

46 - Ասոնք են այն կանոնները և դատաստանները ու օրէնքները զորոնք Տէրը տուաւ իր ու Իսրայէլի որդիներուն մէջտեղ Սինա լեռը Մովսէսի ձեռքով:

ԳԼ. ԻԷ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ մէկը ուխտ ընելու ըլլայ, անձերուն գինը քու արժեքուցածիդ պէս՝ Տէրոջը պիտի ըլլայ: 3 - Եւ քու կարելու գինը այսպէս պիտի ըլ-

լայ . Գտան տարեկանէն մինչև վաթսուէն տարեկան եղող արուին կտրելու գինդ , սրբարանին սիկղին համեմատ , յիսուն սիկղ արծաթ պիտի ըլլայ . 4 - Եւ եթէ էգ է , քու կտրելու գինդ երեսուն սիկղ պիտի ըլլայ : 5 - Եւ եթէ հինգ տարեկանէն մինչև քսան տարեկան է , այն ատեն արուին համար քու կտրելու գինդ քսան սիկղ , ու էգին համար տասը սիկղ պիտի ըլլայ : 6 - Եւ եթէ մէկ ամսականէն մինչև հինգ տարեկան ըլլայ , այն ատեն արուին համար կտրելու գինդ հինգ սիկղ արծաթ , ու էգին համար կտրելու գինդ երեք սիկղ արծաթ պիտի ըլլայ : 7 - Եւ եթէ վաթսուէն տարեկանէն վեր ըլլայ , արուին համար քու կտրելու գինդ տասը հինգ սիկղ , ու էգին համար տասը սիկղ պիտի ըլլայ : 8 - Եւ եթէ քու կտրելու գնոյդ անոր կարողութիւնը չհասնի , անհկա քահանային առջև պիտի ելլէ , ու անոր գինը քահանան կտրէ . քահանան ուխտ ընողին կարողութեանը նայելով անոր գին պիտի կտրէ :

9 - Եւ եթէ երբեք Տէրոջը զոհ մատուցուելու անատուներէն է , անոնցմէ ինչ որ Տէրոջը տայ , սուրբ պիտի ըլլայ . 10 - Ինք պիտի չփոխէ զայն , և աղէկը գէշին հետ կամ գէշը աղէկին հետ չփոխէ . և եթէ անատուներ անատուի հետ երբէք փոխելու ըլլայ , այն ատեն այն ընծայուած ու անոր փոխանակը սուրբ պիտի ըլլայ : 11 - Եւ եթէ երբեք Տէրոջը զոհ չմատուցուելու անմաքուր անատուներէն ըլլայ , այն ատեն քահանային առջև պիտի հանէ այն անատուներ . 12 - Ու քահանան անոր աղէկութեանը կամ գէշութեանը նայելով գին պիտի կտրէ . քահանան ինչ գին որ կտրէ , այնպէս թող ըլլայ : 13 - Իսկ եթէ զանհկա երբէք փրկելու ըլլայ , այն ատեն քու կտրած գնոյդ վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ :

14 - Ու երբ մարդ մը իր տունը Տէրոջը սուրբ ըլլալու համար ընծայէ , այն ատեն քահանան անոր աղէկութեանը կամ գէշութեանը նայելով գին պիտի կտրէ . քահանան անոր ինչ չին որ կտրէ , այնպէս պիտի կենայ : 15 - Եւ եթէ ընծայողը իր տունը փրկելու ըլլայ , քու կտրած գնոյդ ստակին վրայ հինգերորդ մաս մը պիտի աւել-

ցընէ , ու երբ անորը պիտի ըլլայ : 16 - Եւ եթէ մարդ մը իր կալուածքին արտէն ընծայելու ըլլայ Տէրոջը , այն ատեն քու կտրած գինդ անոր սերմին համեմատ պիտի ըլլայ . մէկ քու գարիի սերմի համար յիսուն սիկղ արծաթ ըլլայ : 17 - Եթէ իր արտը Յորելեան տարիէն ընծայէ , քու կտրած գնոյդ պէս պիտի կենայ : 18 - Եւ եթէ իր արտը Յորելեան բարիէն ետքը ընծայէ , քահանան անոր հետ ստակը մինչև Յորելեան տարիին մնացած տարիներուն նայելով հաշիւ պիտի ընէ , ու քու կտրած գինէդ վար պիտի իջեցընէ : 19 - Իսկ եթէ արտը ընծայողը երբէք փրկելու ըլլայ զանհկա , այն ատեն քու կտրած գնոյդ ստակին վրայ հինգերորդ մաս մը աւելցնէ , ու այն բոլոր պիտի հաստատուի անոր : 20 - Եւ եթէ արտը չփրկէ , կամ արտը ուրիշի մը ծախած ըլլայ , ալ նորէն պիտի չփրկուի այն . 21 - Հապա արտը երբ Յորելեան տարիին մէջ դառնայ , նուիրուած արտի պէս սուրբ պիտի ըլլայ Տէրոջը . անոր կալուածքը քահանայինը պիտի ըլլայ :

22 - Եւ եթէ մէկը Տէրոջը ընծայէ իր ծախու առած արտը , որ իր կալուածքին արտէն չէ , 23 - Այն ատեն քահանան անոր հետ քու կտրած գնոյդ հաշիւը ընէ մինչև Յորելեան տարին , և այն օրը քու կտրած գինդ սուրբ բանի պէս պիտի տայ Տէրոջը : 24 - Յորելեան տարին , արտը ծախողին , այսինքն որ ուր կը վերաբերի գետնի կալուածքը , անոր պիտի դառնայ : 25 - Եւ քու բոլոր կտրած գիներդ սրբարանին սիկղին համեմատ պիտի ըլլան . սիկղը քսան կերատ ըլլայ :

26 - Միայն թէ անատուներուն առջինէկը առջի ծնած ըլլալուն համար Տէրոջը ըլլալով , մէկը պիտի չընծայէ զայն . թէ՛ արջառ ըլլայ և թէ՛ ոչխար , Տէրոջն է : 27 - Եւ եթէ անմաքուր անատուներէն է , քու կտրած գնոյդ համեմատ պիտի փրկէ զայն . ու անոր վրայ հինգերորդ մաս մը աւելցնէ . և եթէ չփրկուի , քու կտրած գնովդ թող ծախուի :

28 - Բայց մարդու մը իր բոլոր ունեցած մարդոցմէն և անատուներէն ու իր կալուածքին արտէն Տէրոջը նուիրածը պիտի չծախուի ու չփրկուի . ամէն նուէր ամենատուր է Տէրոջը : 29 -

Մարդոցմէ նուիրուած նուէր մը բնաւ պիտի չփրկուի, հապա անշուշտ պիտի մեռցուի :

30 - Եւ երկրին բոլոր տասանորդը , Քէ՛ երկրին հունտերէն և Քէ՛ ծառերուն պտուղէն, Տէրոջնէ . անիկա սուրբ է Տէրոջը : 31 - Եւ եթէ մարդ մը իր տասանորդներէն երբէք փրկել ուզէ , անոր վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ : 32 - Եւ արջառներուն ու ոչխարներուն ամէն տասանորդը , գա-

ւազանին տակէն ամէն անցնողին տասներորդը , սուրբ պիտի ըլլայ Տէրոջը : 33 - Աղէկին ու գէշին մէջտեղ տարբերութիւն պիտի չդնէ ու չփոխէ զայն . և եթէ երբէք փոխելու ըլլայ , այն ատեն այն ալ , անոր փոխանակն ալ սուրբ պիտի ըլլայ , պիտի չփրկուի :

34 - Տէրոջը՝ Իսրայէլի որդիներուն համար Սինա լեռը Մովսէսի պատուիրած պատուիրանքները ասանք են :

ԳԻՐՔ ԹՈՒՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Տէրը Մովսէսի խօսեցաւ Սինայի անապատը ժողովքի խորանին մէջ՝ անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարին երկրորդ ամսուն առաջին օրը՝ ըսելով , 2 - Առէք Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին գումարը իրենց ազգատոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ՝ ամէն մէկ արուն իրենց անուններուն թուովը համարելով : 3 - Դուն ու Ահարոն Իսրայէլի մէջ բոլոր պատերազմելու *կարող եղողները՝ քսան տարեկանէն վեր անոնց գունդերուն համեմատ պիտի համրէք : 4 - Եւ ձեզի հետ ամէն ցեղէն մէյմէկ մարդ պիտի ըլլայ - անոնց ամէն մէկը իր հօրը տանը իշխանը ըլլայ :

5 - Եւ ձեզի հետ կենալու մարդոց անունները ասանք են . Ռուբէնէ՛ Սեզիուրի որդին Եղիսուր , 6 - Շմուոնէ՛ Սուրիսազայի որդին Սաղամիէլ , 7 - Յուդայէ՛ Ամինազաբի որդին Նասսան , 8 - Իսաքարէ՛ Սովգարի որդին Նաթանայէլ , 9 - Չաբուղոնէ՛ Բեզոնի որդին Եղիսար , 10 - Յովսէփի որդիներէն Եփրեմէ՛ Ամիուզի որդին Եղիսամա , Մանասէ՛ Փաղատուրի որդին Գամադիէլ , 11 - Բենիամինէ՛ Գեդեօնի որդին Աբիգան , 12 - Դանէ՛ Ամիսա-

զայի որդին Աքիեզեր , 13 - Ասերէ՛ Եքրանի որդին Փաքիէլ , 14 - Գադէ՛ Դագուէլի որդին Եղիասափ , 15 - Նեփթաղիմէ՛ Ենանի որդին Աքիրէ : 16 - Ասոնք էին ժողովքին երեւելիները , իրենց հայրերուն ցեղերուն իշխանները , Իսրայէլի հազարապետները :

17 - Եւ Մովսէս ու Ահարոն այս երէնց անուններովը յիշուած մարդիկը առին . 18 - Եւ երկրորդ ամսուն առաջին օրը բոլոր ժողովքը ժողվեցին , որոնք իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ՝ քսան տարեկանէն վեր ամէնը մէկ մէկ համրուելով երէնց անուններուն թիւովը արձանագրուեցան : 19 - Տէրը Մովսէսի ինչպէս որ պատուիրեց , անիկա Սինայի անապատին մէջ այնպէս համրեց զանոնք :

20 - Եւ Իսրայէլի անդրանիկ որդւոյն Ռուբէնի որդիները իրենց սերունդովը , իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ , քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները , ամէն մէկ արուն երէնց անուններուն թիւովը , 21 - Ռուբէնի ցեղէն համրուածները քառասունըվեց հազար հինգ հարիւր հոգի էին :

22 - Շմուոնի որդիները իրենց սերունդովը , իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ , քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները , ամէն մէկ արուն

*Եէր . ելլողները

Իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 23 - Շմաւոնի ցեղէն համրուածները յիսու՛նըինը հազար երեք հարիւր հոգի էին :

24 - Գաղի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 25 - Գաղի ցեղէն համրուածները քառասունըհինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի էին :

26 - Յուդայի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 27 - Յուդայի ցեղէն համրուածները եօթանասունըչորս հազար վեց հարիւր հոգի էին :

28 - Իսաքարի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 29 - Իսաքարի ցեղէն համրուածները յիսունըչորս հազար չորս հարիւր հոգի էին :

30 - Չաբուղոնի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 31 - Չաբուղոնի ցեղէն համրուածները յիսունըեօթը հազար չորս հարիւր հոգի էին :

32 - Յովսէփի որդիներէն Եփրեմի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 33 - Եփրեմի ցեղէն համրուածները քառասուն հազար հինգ հարիւր հոգի էին :

34 - Մանասէի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 35 - Մանասէի ցեղէն համրուածները երեսունուերկու հազար երկու հարիւր հոգի էին :

36 - Բենիամինի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան

տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 37 - Բենիամինի ցեղէն համրուածները երեսունըհինգ հազար չորս հարիւր հոգի էին :

38 - Դանի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 39 - Դանի ցեղէն համրուածները վաթսուներկու հազար եօթը հարիւր հոգի էին :

40 - Ասերի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իրենց անու՛ններուն թիւովը, 41 - Ասերի ցեղէն համրուածները քառասունըմէկ հազար հինգ հարիւր հոգի էին :

42 - Նեփթաղիմի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իբե՛ն, անու՛ններուն թիւովը, 43 - Նեփթաղիմի ցեղէն համրուածները յիսունուերեք հազար չորս հարիւր հոգի էին :

44 - Ասոնք են այն համրուած հոգիները, զորոնք Մովսէս, Ահարոն ու Իսրայէլի իշխանները համրեցին. «յ» էլ ինչպէ՛ս թատուերկու մարդիկ էին, ամէն մէկը իր հայրերուն տանը կողմէն :

45 - Այսպէս Իսրայէլի որդիներուն ամէնը իրենց հայրերուն տուներուն համեմատ, Իսրայէլի մէջ քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները համրուեցան : 46 - Եւ բոլոր համրուածները վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին :

47 - Բայց Ղեւտացիները իրենց հայրերուն ցեղովը ասոնց հետ չհամրուեցան. 48 - Քանզի Տէրը խօսեր էր Մովսէսի՝ ըսելով, 49 - Միայն Ղեւտացոնց ցեղը պիտի չհամրես, և Իսրայէլի որդիներուն հետ անոնց գումարը պիտի չառնես. 50 - Բայց դուն Ղեւտացիները վկայութեան խորանին ու անոր բոլոր կարասիներուն և անոր վերաբերեալ բոլոր բաներուն վերակացու պիտի դնես. անոնք պիտի վերցնեն խորանը ու անոր բոլոր կարասիները, և

անոր սպասուորութիւնը անոնք պիտի ընեն . ու խորանին բոլորաիբր անոնք պիտի բանակին : 51 - Եւ խորանին չուելու ատենը Աւետացիները վար պիտի առնեն զայն , ու խորանին իջեւան ընելու ատենը Աւետացիները պիտի կանգնեն զայն . և անոր մօտեցող օտարականը պիտի մեռցուի :

52 - Եւ Իսրայէլի որդիները իրենց գունդերովը ամէն մէկը իր բանակին քով ու ամէն մէկը իր դրօշակին քով իջեւան պիտի ընեն : 53 - Բայց Աւետացիները վկայութեան խորանին բուրաիբր պիտի բանակին , որպէս զի Իսրայէլի որդիներուն ժողովքին վրայ բարկութիւն չգայ . ու Աւետացիները վկայութեան խորանին պահպանութիւնը պիտի ընեն : 54 - Եւ Իսրայէլի որդիները Տերօջը Մովսէսի ամէն պատուիրածին պէս ըրին . այնպէս ըրին :

ԳԼ Բ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով , 2 - Իսրայէլի որդիներուն ամէն մէկը իր դրօշակին քով իրենց հայրերուն ատենը նշանովը իջեւան պիտի ընեն . ժողովքի խորանին դիմաց շուքանակի իջեւան ընեն :

3 - Եւ առջեւի կողմը՝ դէպ ի արեւելք իջեւան ընողները Յուդայի բանակին * զօրքերը ըլլան՝ իրենց գունդերուն կարգովը . և Ամինադաբի որդին Նաասոն Յուդայի որդիներուն իշխան պիտի ըլլայ : 4 - (Եւ անոր համրուած զօրքը եօթանասուներչորս հազար վեց հարիւր հոգի էին :) 5 - Եւ անոր քով իջեւան ընողները Իսաքարի ցեղը պիտի ըլլայ . և Սովգարի որդին Նաթանայէլ Իսաքարի որդիներուն իշխան պիտի ըլլայ : 6 - (Եւ անոր համրուած զօրքը յիսուներչորս հազար չորս հարիւր հոգի էին :) 7 - Եւ Գադի Զաբուլոնի ցեղը . և Քեղոնի որդին Եղիար Զաբուլոնի որդիներուն իշխան պիտի ըլլայ : 8 - (Եւ անոր համրուած զօրքը յիսուներեօթը հազար չորս հարիւր հոգի էին :) 9 - Յուդայի բանակին մէջ համրուածներուն ամէնը , իրենց գունդերուն համեմատ , հարիւր ութսուներվեց հազար չորս հարիւր հոգի էին :) Ասոնք առջեւէն պիտի չուեն :

10 - Հարաւային կողմը Ռուբէնի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը . և Ռուբէնի որդիներուն իշխան՝ Սեգիուրի որդին Եղիսուր պիտի ըլլայ : 11 - (Եւ անոր համրուած զօրքը քառասուներվեց հազար հինգ հարիւր հոգի էին :) 12 - Եւ անոր քով իջեւան ընողները Շմաւոնի ցեղը պիտի ըլլայ . ու Շմաւոնի որդիներուն իշխան՝ Սուրիսագայի որդին Սաղամիէլ պիտի ըլլայ : 13 - (Եւ անոր համրուած զօրքը յիսուներինը հազար երեք հարիւր հոգի էին :) 14 - Ու Եւրուբի Գադի ցեղը և Գադի որդիներուն իշխան՝ Գազուէլի որդին Եղիասափ պիտի ըլլայ : 15 - (Եւ անոր համրուած զօրքը քառասուներհինգ հազար վեց հարիւր յիսուներ հոգի էին :) 16 - Ռուբէնի բանակին մէջ համրուածներուն ամէնը , իրենց գունդերուն համեմատ , հարիւր յիսուներմէկ հազար չորս հարիւր յիսուներ հոգի էին :) Եւ երկրորդ ասոնք պիտի չուեն :

17 - Ետքը Աւետացուց բանակին հետ բանակներուն մէջտեղը ժողովքի խորանը պիտի չուէ : ամէն մարգ իր տեղը իրենց դրօշակներուն քով իջեւան ընողներուն պէս պիտի չուեն :

18 - Արեւմտեան կողմը Եփրեմի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը . ու Եփրեմի որդիներուն իշխան՝ Ամիուդի որդին Եղիսամա պիտի ըլլայ : 19 - (Եւ անոր համրուած զօրքը քառասուներ հազար հինգ հարիւր հոգի էին :) 20 - Եւ անոր քով Մանասէի ցեղը . ու Մանասէի որդիներուն իշխան՝ Փադասուրի որդին Գամաղիէլ պիտի ըլլայ : 21 - (Եւ անոր համրուած զօրքը երեսուներկու հազար երկու հարիւր հոգի էին :) 22 - Ու Եւրուբի Բենիամինի ցեղը . և Բենիամինի որդիներուն իշխան՝ Գեդեօնի որդին Աբիդան պիտի ըլլայ : 23 - (Եւ անոր համրուած զօրքը երեսուներհինգ հազար չորս հարիւր հոգի էին :) 24 - Եփրեմի բանակին մէջ համրուածներուն ամէնը , իրենց գունդերուն համեմատ , հարիւր ութ հազար հարիւր հոգի էին :) Եւ երրորդ ասոնք պիտի չուեն :

25 - Հիւսիսային կողմը Դանի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը . և Դանի որդիներուն իշխան՝ Ամիսագայի որդին Աբիգեղը պիտի ըլլայ : 26 - (Եւ անոր համրուած զօրքը վաթսուներկու

*Եբր. դրօշակը ըլլայ

Հազար եօթը հարիւր հոգի էին:) 27 - Եւ անոր քով իջեւան ընողները Ասերի ցեղը պիտի ըլլայ . ու Ասերի որդիներուն իշխան՝ Եքրանի որդին Փագիէլ պիտի ըլլայ: 28 - (Եւ անոր համրուած զօրքը քառասունըմէկ հազար հինգ հարիւր հոգի էին:) 29 - Ու երբ Նեփթաղիմի ցեղը . ու Նեփթաղիմի որդիներուն իշխան՝ Ենանի որդին Աքիրէ պիտի ըլլայ: 30 - (Եւ անոր համրուած զօրքը յիսունուիրեք հազար չորս հարիւր հոգի էին: 31 - Դանի բանակին մէջ համրուածներուն ամէնը հարիւր յիսունըեօթը հազար վեց հարիւր հոգի էին:) Ասոնք իրենց դրօշակներովը ամէնուն ետեւէն պիտի շուեն:

32 - Իսրայէլի որդիներէն իրենց հայրերուն տուներովը համրուածները ասոնք են. բանակներուն մէջ համրուածներուն ամէնը իրենց գունդերուն կարգովը վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին: 33 - Բայց Ղեւտացիները չհամրուեցան Իսրայէլի որդիներուն հետ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրէր էր: 34 - Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս ըրին. այսպէս իրենց դրօշակներովը իջեւան կ'ընէին, ու այսպէս անոնք ամէն մէկը իրենց տոհմերուն կարգովը և իրենց հայրերուն տուներովը կը շուէին:

ԳԼ. Գ

Եւ Ահարոնի ու Մովսէսի ազգաբանութիւնը այս է, Տէրոջը Մովսէսի հետ Սինայ լեռանը վրայ խօսած օրը: 2 - Եւ Ահարոնի որդիներուն անունները ասոնք են. անդրանիկը Կադար, և Աբիուզ, Եղիազար ու Իթամար: 3 - Ասոնք էին Ահարոնի որդիներուն, քահանաներուն, անունները, որոնք օծուած օրհնուած էին քահանայութիւն ընելու: 4 - Եւ Կադար ու Աբիուզ Սինայի անապատին մէջ Տէրոջը առջև օտար կրակ մատուցած առեւնին մեռան Տէրոջը առջև, ու անոնք որդի չունէին. և Եղիազար ու Իթամար իրենց հօրը Ահարոնի առջև քահանայութիւն ըրին:

5 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 6 - Ղեւիի ցեղը մօտեցուր, ու զանոնք Ահարոն քահանային առջև կայնեցուր, որպէս զի անոր սպասաւորու-

թիւն ընեն: 7 - Եւ անոր պահպանութիւնը ու բոլոր ժողովքին պահպանութիւնը ժողովքի խորանին՝ առջև պիտի պահեն խորանին պաշտօնը ընելով: 8 - Եւ ժողովքի խորանին բոլոր կարասիները ու Իսրայէլի որդիներուն պահպանութիւնը պիտի պահեն՝ խորանին պաշտօնը ընելով: 9 - Եւ Ահարոնի ու անոր որդիներուն պիտի տաս Ղեւտացիները. ասոնք Իսրայէլի որդիներէն բոլորովին անոր տրուած են: 10 - Եւ Ահարոնը ու անոր որդիները իրենց քահանայական պաշտօնը կատարելու պիտի կարգես. և մօտեցող օտարականը պիտի մեռցուի:

11 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 12 - Եւ ես ահա Իսրայէլի որդիներուն մէջէն Ղեւտացիները առի, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն հօրը արգանդը բացող առջինեկին տեղ. ուստի Ղեւտացիները իմ պիտի ըլլան:

13 - Քանզի ամէն առջինեկը իմն է. երբ Եգիպտոսի երկրին մէջ բոլոր առջինեկները զարկի, Իսրայէլի մէջ բոլոր առջինեկները մարդէն մինչև անասուն սրբեցի ինծի. անոնք իմ պիտի ըլլան. ես եմ՝ Տէրը:

14 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի Սինայի անապատին մէջ՝ ըսելով, 15 - Համրէ Ղեւիի որդիները իրենց հայրերուն տուներուն և իրենց ազգատոհմերուն նայելով. մէկ ամսականէն վեր եղող ամէն արուն պիտի համրես: 16 - Եւ Մովսէս Տէրոջը խօսքին համեմատ համրեց զանոնք, ինչպէս իրեն պատուիրուեցաւ: 17 - Եւ Ղեւիի որդիները իրենց անուններովը ասոնք էին. Գերսոն և Կահաթ ու Մերարի: 18 - Եւ Գերսոնի որդիներուն անունները իրենց տոհմերովը ասոնք են. Ղուրենի ու Սեմէի: 19 - Եւ Կահաթի որդիները իրենց տոհմերովը Ամրամ և Իսահաա, Քերրոն ու Ողիէլ էին: 20 - Եւ Մերարիի որդիները իրենց տոհմերովը Մոոգի ու Մուսի էին. Ղեւտացուց տոհմերը իրենց հայրերուն տուներուն համեմատ ասոնք են:

21 - Գերսոնէ Ղուրենեանց տոհմը և Սեմէեանց տոհմը եղաւ. Գերսոնեանց տոհմերը ասոնք են: 22 - Ասոնցմէ համրուածները, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուններուն թիւին համեմատ համրուածները, եօթը հազար հինգ հարիւր հոգի էին: 23 - Գերսոնեանց

տոհմերը խորանին ետեւի կողմը դէպ ի արեւմուտք իջեւան պիտի ընեն: 24 - Եւ Գերտնեանց հօրը տանը իշխանը Լայէլի որդին Եղիաափ պիտի ըլլայ: 25 - Եւ ժողովքի խորանին մէջ Գերտնի որդիներուն պահպանութեանը յանձնուած բաները ստանալ են. խորանը ու վրանը, անոր ծածկոցը և ժողովքի խորանին դրանը վարագոյրը, 26 - Խորանին և սեղանին բոլորաբար եղած սրահին վարագոյրները, և սրահին դրանը վարագոյրը, և անոր ամէն գործին համար եղած չղանները:

27-Եւ Կահաթէ Ամրամեանց տոհմը ու Իսահաուեանց տոհմը և Քեբրոնեանց տոհմը ու Ոգիէլեանց տոհմը եղաւ. Կահաթեանց տոհմերը ասոնք են. 28 - Մէկ ամսականէ վեր եղող բոլոր արունները իբեհյ թիւին համեմատ՝ ութ հազար վեց հարիւր հոգի էին, որոնք սրբարանին պահպանութիւնը կ'ընէին: 29 - Կահաթի որդիներուն տոհմերը խորանին հարաւային կողմը իջեւան պիտի ընեն: 30 - Եւ Կահաթեանց տոհմերուն հօրը տանը իշխանը Ոգիէլի որդին Եղիաափան ըլլայ: 31 - Եւ անոնց պահպանութեանը յանձնուած բաները ստանալ են. ստապանակը ու առաջադրանքի սեղանը և աշտանակը ու սեղանները և սրբարանին գործիքները, որոնցմով պաշտօն կ'ընեն, և վարագոյրը ու անոր վերաբերեալ ամէն բաները: 32 - Եւ Ղեւտացոց իշխաններուն իշխանը՝ Ահարոն քահանային որդին Եղիազար պիտի ըլլայ, որ սրբարանին պահպանութիւնը ընողներուն վրայ վերակացու պիտի ըլլայ:

33 - Մերարիէ Մոողեանց տոհմը և Մուսեանց տոհմը եղաւ. ասոնք են Մերարիի տոհմերը: 34 - Եւ անոնց համբուսները, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արունները իբեհյ թիւին համեմատ, վեց հազար երկու հարիւր հոգի էին: 35 - Եւ Մերարեանց տոհմերուն հօրը տանը իշխանը Աբիքէլի որդին Սուրիէլ ըլլայ. ասոնք խորանին հիւսիսային կողմը իջեւան պիտի ընեն: 36 - Եւ Մերարիի որդիներուն պահպանութեանը յանձնուած բաները ստանալ են. խորանին տախտակները, ու անոր նիգերը և սիւները ու խարխիսները, և անոր բոլոր գործիքները ու անոր վերաբերեալ ամէն բաները,

37 - Եւ շուրջանակի որահին սիւները, անոնց խարխիսները և ցիցերը ու անոնց չուանները:

38 - Եւ խորանին առջեւի կողմը, այսինքն ժողովքի խորանին առջեւ դէպ ի արեւելք, իջեւան ընողները Մովսէս ու Ահարոն և անոր որդիները պիտի ըլլան, որ սրբարանին պահպանութիւնը Իսրայէլի որդիներուն պահպանութեանը համար պահպանեն. ու մօտեցող օտարականը պիտի մեռցուի:

39 - Ղեւտացոց բոլոր համբուսները, որոնք իրենց տոհմերով Տէրջը խօսքին համեմատ Մովսէս ու Ահարոն համբեցին, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արունները քսանուերկու հազար էին:

40 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Իսրայէլի որդիներուն մէկ ամսականէ վեր բոլոր առջինեկ արունները համբէ, ու անոնց անուններուն թիւը առ:

41 - Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր առջինեկներուն փոխարէն՝ Ղեւտացիները պիտի առնես ինծի համար. ես եմ՝ Տէրը. ու Ղեւտացոց անասունները՝ Իսրայէլի որդեաց անասուններուն բոլոր առջինեկներուն տեղ: 42-Եւ Մովսէս համբեց Իսրայէլի որդիներուն բոլոր առջինեկները, ինչպէս Տէրը իրեն պատուիրեց: 43 - Եւ բոլոր առջինեկ արունները իբեհյ անուններուն թիւին համեմատ, մէկ ամսականէ վեր համբուոզները, քսանուերկու հազար երկու հարիւր եօթանասուերկու հոգի էին:

44 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 45-Իսրայէլի որդիներուն մէջ ամէն առջինեկներուն տեղ Ղեւտացիները, և անոնց անասուններուն տեղ Ղեւտացոց անասունները առ, որպէս զի Ղեւտացիները իմն ըլլան. ես եմ՝ Տէրը: 46 - Եւ Ղեւտացոց իբեհյ աւելցած՝ Իսրայէլի որդիներուն երկու հարիւր եօթանասուերկու հոգիներուն փրկանք ըլլալու համար, 47 - Մարդ գլուխ հինգ սիկզ պիտի առնես. սրբարանին սիկզին համեմատ պիտի առնես. մէկ սիկզը քսան կերատ է: 48 - Եւ անոնց մէջ աւելցածներուն փրկանքին ստակը Ահարոնի ու անոր որդիներուն տաս: 49 - Եւ Մովսէս Ղեւտացիներով փրկուածներուն աւելցածներէն փրկանքին ստակը առաւ: 50 - Իսրայէլի որդիներուն առջինեկ-

ներէն սրբարանին սիկզին համեմատ , հազար երեք հարիւր վաթսուներհինգ «իւլ արծաթ առաւ : 51 - Եւ Մովսէս Տէրօջը խօսքին պէս՝ փրկուածներուն ասակը Ահարոնի ու անոր որդիներուն տուաւ , ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր :

Գ.Լ. Գ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով , 2 - Ղեւիի որդիներուն մէջէն Կահաթի որդիներուն գումարը առ , իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ : 3 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը , ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանողը հասի : 4 - Ժողովքի խորանին մէջ Կահաթի որդիներուն պաշտօնը ամենասուրբ բաները պիտի ըլլան : 5 - Եւ երբ բանակը չուելու ըլլայ , Ահարոն ու անոր որդիները պիտի գան , ու ծածկոցին վարագոյրը իջեցնեն , և անով վկայութեան տապանակը ծածկեն : 6 - Եւ թէհաշի մորթերէ ծածկոցը անոր վրայ պիտի դնեն , ու անոր վրայ բոլորովին կապուտակ լաթ մը տարածեն , և անոր ձողերը պիտի անցնեն : 7 - Եւ առաջաւորութեան սեղանին վրայ կապուտակ լաթ մը տարածեն , ու անոր վրայ սկուտեղները և խնկամանները ու գաւաթները և թափելու նուէր մատուցանելու բաժակները դնեն , ու հանապազօրեայ հացերը անոր վրայ պիտի ըլլան : 8 - Եւ անոնց վրայ կրկնակի կարմիրէ լաթ մը տարածեն , ու թէհաշի մորթերէ ծածկոցով ծածկեն զայն . և անոր ձողերը անցնեն : 9 - Եւ կապուտակէ լաթ մը առնեն , ու ծածկեն լոյսի աշտանակը և անոր ճրագները ու անոր ունեւիները և բաղմակակները ու անոր բոլոր իւղի ամանները , որոնցմով կը ծառայեն անոր : 10 - Եւ զանիկա իր ամէն գործիքներովը թէհաշի մորթերէ ծածկոցի մը մէջ դնեն , ու լծակի մը վրայ դնեն զայն : 11 - Եւ ոսկի սեղանին վրայ կապուտակ լաթ մը տարածեն , ու թէհաշի մորթերէ ծածկոցով մը ծածկեն զայն . և անոր ձողերը անցնեն : 12 - Եւ սրբարանին պաշտօնին գործածուած բոլոր գործիքները պիտի առնեն , ու կապուտակ լաթի մը մէջ փաթթեն ,

և թէհաշի մորթերէ ծածկոցով ծածկեն զանիկա , ու լծակի մը վրայ դնեն : 13 - Եւ «դջւիւղի սեղանէն մութիւնները հանելով՝ անոր վրայ ծիրանեգոյն լաթ տարածեն , 14 - Եւ անոր վրայ պաշտօնին համար գործածուած անոր բոլոր գործիքները , սյսինքն կրակի ամանները , մասհանները ու թիակները և կոնքերը (սեղանին բոլոր գործիքները) այն լաթի վրայ դնեն , ու անոր վրայ թէհաշի մորթերէ ծածկոց մը տարածեն . և անոր ձողերը անցնեն : 15 - Եւ Ահարոն ու անոր որդիները բանակին չուած ատենը՝ սրբարանը ու սրբարանին բոլոր կարասիները ծածկելը լմնցնեն . ու ետքը Կահաթի որդիները զանազան վերցնելու գան . բայց սուրբ բաներու չգպչին , որպէս զի չմեռնին . Կահաթի որդիներուն բեռները ասոնք պիտի ըլլան ժողովքի խորանին մէջ : 16 - Եւ Ահարոն քահանային որդին Եղիազար լոյսի իւղին ու անուշահոտ խունկին և հանապազօրեայ հացի ընծային ու օծման իւղին վրայ վերակացու պիտի ըլլայ . և բոլոր խորանին ու անոր մէջի ամէն բաներուն , սրբարանին ու անոր կարասիներուն վրայ վերակացու ըլլայ : 17 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով , 18 - Ղեւտացուց մէջէն Կահաթեանց տոհմերուն ցեղը մի կորսնցնէք . 19 - Բայց անոնց այսպէս ըրէք որ ամենասուրբ բաներուն մօտեցած ատեննին ողջ մնան ու չմեռնին . Ահարոն ու իր որդիները գան , ու անոնց ամէն մէկուն իր պաշտօնը ու իր բեռը որոշեն : 20 - Ու երբ սուրբ բաները կը ծածկեն , անոնք տեսնելու համարներս չմանեն , որպէս զի չմեռնին : 21 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 22 - Նաև Գերսոնի որդիներուն գումարը առ , իրենց հայրերուն տուներուն ու իրենց տոհմերուն համեմատ : 23 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանողները պիտի համրես : 24 - Գերսոնեանց տոհմերուն ծառայելու ու բեռ վերցնելու պաշտօնը այս է . 25 - Անոնք պիտի վերցնեն խորանին վարագոյրները ու ժողովքի խորանը , անոր ծածկոցը ու անոր վրայի թէհաշի ծածկոցը , և ժո-

ղովքի խորանին գրանը վարագոյրը . 26 - Եւ խորանին ու սեղանին բոլորտիքը եղած սրահին վարագոյրները ու սրահը մանեկու գրան վարագոյրը ու անոնց շուանները և անոնց պաշտօնին բոլոր գործիքները պիտի վերջնեն . ու ասոնց հարկաւոր եղած բոլոր սպասաւորութիւնները պիտի ընեն : 27 - Գերտոնեանց որդիներուն բոլոր պաշտօնը , իրենց ամէն բեռներուն ու իրենց ամէն պաշտօններուն համար , Ահարոնի ու անոր որդիներուն հրամանովը պիտի ըլլայ . և անոնց բոլոր բեռները անոնց պահպանութեանը յանձնէք : 28 - Գերտոնեանց որդւոցը տոհմերուն պաշտօնը այս պիտի ըլլայ ժողովքի խորանին մէջ . և անոնց պահպանութիւնը Ահարոն քահանային որդւոյն Իթամարի ձեռքին մակ պիտի ըլլայ :

29 - Մերարիի որդիներն ու համրես , իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ . 30 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին ծառայութիւնը ընելու համար գունդին մէջ ամէն մանողները համրես : 31 - Եւ ժողովքի խորանին մէջ անոնց ամէն պաշտօններուն համեմատ՝ անոնց յանձնուած բեռները ասոնք են . խորանին տախտակները , ու անոր նիգերը , և անոր սիւները և խարիսխները , 32 - Եւ շուրջանակի սրահին սիւները , ու անոնց խարիսխները և ցիցերը ու շուանները՝ անոնց ամէն գործիքներովը և անոնց ամէն պաշտօնովը . անոնց պահպանութեան բեռները եղած գործիքները անուաններովը պիտի յանձնէք ունայ : 33 - Այս է Մերարիի որդւոցը տոհմերուն պաշտօնը ժողովքի խորանին մէջ , իրենց բոլոր պաշտօններուն համեմատ , Ահարոն քահանային որդւոյն Իթամարի ձեռքին տակ :

34 - Եւ Մովսէս ու Ահարոն և ժողովքին իշխանները համրեցին կահաթեանց որդիները անոնց տոհմերուն ու անոնց հայրերուն տուներուն համեմատ , 35 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանողները . 36 - Ու անոնց համրուածները իրենց տոհմերովը երկու հազար եօթը հարիւր յիսուն հոգի էին : 37 - Ասոնք են ժողովքի խորանին բոլոր ծառայու-

թիւնը ընող կահաթեանց տոհմերուն համրուածները , զորոնք Մովսէս ու Ահարոն համրեցին , ինչպէս Տէրը Մովսէսի ձեռքով պատուիրեր էր :

38 - Եւ Գերտոնի որդիներուն համրուածները իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ , 39 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանողները համրուածները : 40 - Եւ անոնց համրուածները իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ՝ երկու հազար վեց հարիւր երեսուն հոգի էին : 41 - Ասոնք են ժողովքի խորանին մէջ բոլոր ծառայութիւն ընող Գերտոնի որդիներուն տոհմերէն համրուածները , զորոնք Մովսէս ու Ահարոն համրեցին Տէրոջը պատուիրածին պէս :

42 - Եւ Մերարիի որդւոց տոհմերուն համրուածները իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ , 43 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանողները համրուածները : 44 - Եւ անոնց համրուածները իրենց տոհմերովը երեք հազար երկու հարիւր հոգի էին : 45 - Ասոնք են Մերարիի որդւոց տոհմերուն համրուածները , զորոնք Մովսէս ու Ահարոն համրեցին , ինչպէս Տէրը պատուիրեր էր Մովսէսի ձեռքով :

46 - Ղեւտացւոց բոլոր համրուածները՝ զորոնք Մովսէս ու Ահարոն և Իսրայէլի իշխանները համրեցին իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ , 47 - Երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ պաշտօնը ու բեռ կրելու ծառայութիւնը ընելու ամէն մանողները , 48 - Այսինքն անոնց համրուածները ութ հազար հինգ հարիւր ութսուն հոգի էին : 49 - Ասոնք Տէրոջը պատուիրածին պէս համրուեցան Մովսէսի ձեռքով , ամէն մէկը իր պաշտօնին ու իր բեռին նպելով . այսպէս համրուեցան անոնք , ինչպէս Տէրը պատուիրեց Մովսէսի :

ԴԼ. Ե

Ե Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Հրամանն ըրէ Իսրայէլի որդիներուն որ բանակէն դուրս ձգեն ամէն բորտար, և ամէն ծորում ունեցողը, ու մեռելէ մը ամէն անմաքուր եղողը: 3 - Արուն ալ էգն ալ դուրս ձգեցէք. բանակէն դուրս պիտի ձգէք զանոնք, որպէս զի չպղծեն իրենց բանակները՝ որոնց մէջտեղը ես կը բնակիմ: 4 - Եւ Իսրայէլի որդիները այնպէս ըրին, ու բանակէն դուրս ձգեցին զանոնք. ինչպէս Տէրը Մովսէսի խօսեցաւ, այնպէս ըրին Իսրայէլի որդիները:

5 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, Խօսէ Իսրայէլի որդիներուն, 6 - Երբ մարդ մը կամ կին մը մարդոց ամէն մեղքերէն մէկը գործելով՝ Տէրոջը դէմ մեղանչէ, ու այդ անձը յանցաւոր ըլլայ, 7 - Այն ատեն իր ըրած մեղքը պիտի խոստովանի, և անիկա իր ըրած փաստը լման պիտի հատուցանէ, ու անոր վրայ հինգերորդ մաս մը աւելցնէ. ու զանիկա փաստը քաշողին պիտի տայ: 8 - Եւ եթէ այն քաշողը մարդուն մէկ ազգականն է ըլլայ, որու այս փաստը հատուցուի, այն անձն եղած փաստը Տէրոջը հատուցուելով, քահանային պիտի ըլլայ բացի քաւութեան խոյէն, որով այն յանցանոր մարդուն համար քաւութիւն պիտի ըլլայ:

9 - Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներուն ամէն ընծան զոր կը բերեն քահանային, անոր պիտի ըլլայ: 10 - Եւ ամէն մէկուն սուրբ բաները անոր պիտի ըլլան. ամէն մարդ ինչ որ տայ քահանային, անոր ըլլայ:

11 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 12 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Եթէ մարդու մը կինը խտորի ու անոր անհաւատարմութիւն ընէ, 13 - Եւ մէկը անոր հետ պառկելով զուգաւորի, ու անոր այրը տեսած չըլլալով Բանը գաղտուկ մնայ, և անոր պղծուած ատենը տեսնող մը չըլլայ, ու կինը չըռնուի, 14 - Եւ երբ անը վրայ նախանձաւորութեան ոգի գայով իր կնոջ պղծուելուն համար նախանձի, կամ կինը պղծուած չըլլալով երբ անը վրայ նախանձաւորութեան ոգի գայ ու նախանձի, 15 - Այն ատեն այն մարդը իր կինը քահանային պիտի

բերէ, և անոր ընծային համար գարիբ պիտի ըլլէ արդուին ասաներորդ բաժինը պիտի բերէ. իւր պիտի չլծափէ անոր վրայ, ոչ ալ կնոջուկ դնէ վրան, վասն զի նախանձաւորութեան ընծայ մըն է այն, յիշատակի ընծայ որ մեղքը կը յիշատակէ: 16 - Եւ քահանան կինը պիտի մօտեցնէ, ու Տէրոջը առջև կայնեցնէ: 17 - Եւ քահանան հողէ ամանով սուրբ ջուր պիտի առնէ. ու քահանան խորանին յատակը եղած հողէն պիտի առնէ, և ջուրին մէջ դնէ: 18 - Եւ քահանան Տէրոջը առջև պիտի կայնեցնէ կինը, ու կնոջ գլուխը բանայ, և յիշատակի ընծան, այսինքն նախանձաւորութեան ընծան, անոր ձեռքը պիտի տայ. ու անէծքին լեզի ջուրը քահանան իր ձեռքը պիտի ունենայ. 19 - Եւ քահանան անոր երգումը ընել պիտի տայ, ու ըսէ կնոջը, Եթէ մարդ մը քեզի հետ չպառկեցաւ, և եթէ քու էրկանդ անհաւատարմութիւն ընելով չպղծուեցար, անէծքին այս լեզի ջուրը քեզի փաստ մը չընէ. 20 - Իայց եթէ քու էրկանդ անհաւատարմութիւն ընելով պղծուեցար, և քու այրէդ զատ ուրիշ մարդ մը քեզի հետ պառկեցաւ, 21 - (Այն ատեն քահանան կնոջ անէծքի երգումը ընել պիտի տայ, և քահանան կնոջ պիտի ըսէ,) Տէրը քեզ քու ժողովուրդիդ մէջտեղը անէծքի ու երգումի համար պիտի դնէ, երբ Տէրը քու զիստդ փառացնէ ու քու փորդ ուռեցնէ. 22 - Եւ այս անէծքին ջուրը քու աղիքներուդ մէջ պիտի երթայ, որպէս զի քու փորդ ուռեցնէ, ու քու զիստդ փառացնէ. և կինը պիտի ըսէ, Ամէն, ամէն: 23 - Եւ քահանան այս անէծքները գիրքի մը մէջ պիտի գրէ, ու այն լեզի ջուրը պիտի աւրէ: 24 - Եւ անէծքին լեզի ջուրը այն կնոջ պիտի խմցնէ. ու անէծքին ջուրը անոր ներսիդին պիտի երթայ՝ լեզի ըլլալու համար: 25 - Եւ քահանան կնոջ ձեռքէն նախանձաւորութեան ընծան պիտի առնէ, ու Տէրոջը առջև երեքցնէ ընծան, և սեղանին մօտեցնէ զայն: 26 - Եւ քահանան ընծայէն իր ձեռքը լեցուն պիտի առնէ յիշատակի համար, ու սեղանին վրայ պիտի այրէ զայն. ու ետքը այն ջուրը կնոջ պիտի խմցնէ: 27 - Եւ ջուրը անոր խմցնելէն ետեւ՝ եթէ անիկա պղծուած է, ու իր էրկանը անհա-

աատարմութիւն ըրած է, անէծքին ջուրը լեղի ըլլալով՝ երբ մանէ անոր ներսիդին, անոր փորը պիտի ուռենայ, ու անոր զիտար *փտի, և կինը իր ժողովուրդին մէջ անիծեալ պիտի ըլլայ: 28 - Իսկ եթէ կինը պղծուած չըլլալով մաքուր է, փնաս պիտի չկրէ, ու զաւակ պիտի ծնանի: 29 - Նախանձաւորութեան օրէնքը սյս է, երբ կին մը իր էրկանը անհաւատարմութիւն ընելով պղծուի, 30 - Կամ երբ մարդու մը վրայ նախանձաւորութեան ոգի գայ ու իր կնոջ վրայ նախանձի, Տէրոջը առջև պիտի կայնեցնէ կինը, և քահանան կատարէ այս բոլոր օրէնքը անոր վրայ: 31 - Եւ այն մարդը ազատ պիտի ըլլայ յանցանքէն, և կինը իր յանցանքը պիտի կրէ:

ԳԼ. 9

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Եթէ մարդ մը կամ կին մը ինքզինք Տէրոջը նուիրելու համար †ուխտաւորի մեծ ուխտ ընելու ըլլայ, 3 - Գինիէ և օղիէ պիտի զգուշանայ. գինիի քացախ կամ օղիի քացախ չիմէ, և բնաւ խաղողի օշարակ չիմէ, ու խաղող կամ չամիչ չուտէ: 4 - Ինքզինք նուիրելուն բոլոր օրերը †արթէն եղած քան մը չուտէ, կուտերէն մինչև կեղեւը: 5 - Ինքզինք նուիրելու ուխտին բոլոր օրերը իր գլխուն ածելի չդպցնէ. մինչև ինքզինք Տէրոջը նուիրած օրերուն լմննայը ինք սուրբ ըլլայ. և իր գլխու մազերուն վարսքը թող տայ որ աճի: 6 - Ինքզինք Տէրոջը նուիրած բոլոր օրերը մեռած †մարմինի մը չմօտենայ. 7 - Իր հօրը համար կամ մօրը համար, իր եղբօր կամ իր քրոջը համար ինքզինք պիտի չպղծէ, երբ անոնք մեռնին, քանզի իր Աստուծոյն հուխար իր գլխուն վրայ է: 8 - Ինքզինք նուիրելուն բոլոր օրերը ինք սուրբ է Տէրոջը: 9 - Եւ եթէ իր քով յանկարծ մարդ մը մեռնի, ու իր նուիրած գլուխը պղծուի, իր մաքրուելու օրը իր գլուխը ածիլէ. եօթներորդ օրը ածիլէ զայն. 10 - Եւ ութերորդ օրը ժու-

ղովքի խորանին դուռը երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագ բերէ քահանային: 11 - Եւ քահանան մէկը մեղքի պատարագ ու միւսը ողջակէզ պիտի մատուցանէ, և մեռելին պատճառաւ եղած մեղքին համար քաւութիւն պիտի ընէ անոր. ու նոյն օրը պիտի սրբէ անոր գլուխը: 12 - Եւ իր ուխտին օրերը Տէրոջը նուիրէ, ու յանցանքի պատարագի համար մէկ տարեկան գառնուկ մը բերէ. և առաջուան օրերը պիտի չհամրուին, որովհետեւ իր ուխտը պղծուեցաւ:

13 - Եւ ուխտաւորին օրէնքը սյս է. Երբ ինքզինք նուիրելուն օրերը լմննան, անիկա ժողովքի խորանին դուռը պիտի բերուի. 14 - Եւ իր զո՛ւր Տէրոջը պիտի մատուցանէ, մէկ տարեկան անարատ արու գառնուկ մը ողջակէզի համար, ու մէկ տարեկան անարատ էզ գառնուկ մը մեղքի պատարագի համար, և անարատ խոյ մը խաղաղութեան զո՛ւր համար. 15 - Եւ սակաւ մը բարակ ալիւրէ իւղով շողուած անխմոր շօթեր, ու իւղով օծուած անխմոր լաւաշներ, և անոնց հացի ընծան ու թափելու նուէրը մատուցանէ: 16 - Եւ քահանան անոր մեղքի պատարագը ու անոր ողջակէզը Տէրոջը առջև մօտեցնելով պիտի մատուցանէ: 17 - Եւ խոյը խաղաղութեան զո՛ւր պիտի մատուցանէ Տէրոջը՝ անխմոր հացին սակաւովը. ու քահանան անոր հացի ընծան ու թափելու նուէրը մատուցանէ: 18 - Եւ ուխտաւորը իր նուիրած գլուխը պիտի ածիլէ ժողովքի խորանին դուռը. ու իր նուիրած գլխուն մազը առնէ և խաղաղութեան զո՛ւրին տակ եղած կրակին մէջ դնէ: 19 - Եւ քահանան խոյէն՝ եփած թեւը, և սակաւէն մէկ անխմոր շօթ ու մէկ անխմոր լաւաշ առնէ, և ուխտաւորին ձեռքերուն վրայ դնէ մազերուն ածիլուելէն ետքը. 20 - Եւ քահանան երերցնելու ընծայ մատուցանէ զանոնք Տէրոջը առջև. ասոնք երերցնելու երբուժով ու բարձրացնելու զիտով քահանային համար սուրբ են. և անկէ ետեւ ուխտաւորը գինի թող խմէ: 21 - Ուխտաւորի մը «- անոր նուիրուելուն համար Տէրոջը խոստացած իր ընծային օրէնքը սյս է, իր ձեռքը հասածէն զատ. անիկա իր բրած խոստմունքը իր նուիրուելուն օրէնքովը պիտի կատարէ:

*ԵՔԵ. իյնայ †ԵՔԵ. նագիրի
 †ԵՔԵ. գինիի որթէն †ԵՔԵ. անձի
 §ԵՔԵ. նուիրուիլը

22 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23 - Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և ըսէ, Այսպէս պիտի օրհնէք Իսրայէլի որդիները՝ ըսելով անոնց, 24 - Տէրը օրհնէ քեզ, և պահէ քեզ. 25 - Տէրը պայծառացնէ իր երեսը քովրադ, ու ողորմի քեզի. 26 - Տէրը իր երեսը քովրադ վերցնէ, և խաղաղութիւն տայ քեզի: 27 - Եւ իմ անունս Իսրայէլի որդիներուն վրայ պիտի դնեն, ու ես պիտի օրհնեմ զանոնք:

ԳԼ Է

Եւ եղաւ որ՝ այն օրը որ Մովսէս լմնցուց խորանը կանգնելը, և զանկաւ ու անոր բոլոր անօթները օծեց ու սրբեց, և սեղանը ու անոր բոլոր գործիքները օծեց ու զանոնք սրբեց, 2 - Այն ատեն Իսրայէլի իշխանները, իրենց հայրերուն տանը գլուխները, Ժողովուրդին համրուելուն վրայ վերակացու եղող ցեղերուն իշխանները, ընծաներ տուին: 3 - Եւ բերին իրենց ընծաները Տէրոջը առջև, վեց ծածկուած սայլեր և տասուերկու եզներ. ամէն երկու իշխանները մէկ սայլ, և ամէն մէկը մէկ մէկ եզ. և մօտեցուցին զանոնք խորանին առջև: 4 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 5 - Անոնցմէ առ, ու Ղեւտացուց տուր ատոնք՝ ամէն մէկուն իր պաշտօնին նայելով, որպէս զի Ժողովքի խորանին պաշտօնին մէջ գործածուին: 6 - Եւ Մովսէս առաւ սայլերը ու եզները, ու զանոնք Ղեւտացուց տուաւ: 7 - Երկու սայլը ու չորս եզը Գերսոնի որդիներուն տուաւ՝ անոնց պաշտօնին նայելով. 8 - Եւ չորս սայլը և ութ եզը Մերարիի որդիներուն տուաւ, Ահարոն քահանային որդւոյն Իթամարի *վերակացութեամբ եղած անոնց պաշտօնին նայելով: 9 - Բայց կահամթի որդիներուն չտուաւ. վասն զի սրբարանին պաշտօնը անոնց վրայ բխարով, իրենց ուսերովը պիտի վերցնէին:

10 - Եւ սեղանին օծման օրը անոր նուիրման հանդէսին համար իշխանները ընծաներ տուին. և իշխանները իրենց ընծաները սեղանին առջև մատուցին: 11 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ահա ինչն անուիրման հանդէսին համար՝

ամէն մէկ իշխան մէկմէկ օր իրենց ընծաները մատուցանեն:

12 - Եւ առաջին օրը իր ընծան մատուցանողը Յուդայի ցեղին էլիսաբն Ամինադարի որդին Նասսոն էր: 13 - Եւ այս էր անոր ընծան. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 14 - Տասը *էլ ռսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 15 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 16 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 17 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հաս մէկ տարեկան գառներ. Ամինադարի որդւոյն Նասսոնի ընծան այս էր:

18 - Երկրորդ օրը մատուցանողը Իսաբարի իշխանը Մովգարի որդին Նաթանայէլ էր: 19 - Անոր մատուցած ընծան այս էր. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 20 - Տասը *էլ ռսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 21 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 22 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար. 23 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հաս մէկ տարեկան գառներ. Մովգարի որդւոյն Նաթանայէլի ընծան այս էր:

24 - Երրորդ օրը Ժաբոնայի ընծան Զաբուլոնի որդիներուն իշխանը Բեզոնի որդին Եզիսար էր: 25 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 26 - Տասը *էլ ռսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 27 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 28 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 29 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հաս

*Եբր. ձեռ. քով

մէկ տարեկան գառներ. Վեղոնի որդւոյն Եղիարի ընծան այս էր:

30 - Չորրորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Աեգիուրի որդին Եղիսուր էր: 31 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 32 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 33 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 34 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 35 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. Աեգիուրի որդւոյն Եղիսուրի ընծան այս էր:

36 - Հինգերորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Սուրիտագայի որդին Սաղամիէլ էր: 37 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 38 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 39 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 40 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 41 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սուրիտագայի որդւոյն Սաղամիէլի ընծան այս էր:

42 - Վեցերորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Գագուէլի որդին Եղիասափ էր: 43 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 44 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 45 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 46 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 47 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ,

հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. Գագուէլի որդւոյն Եղիասափի ընծան այս էր:

48 - Եօթներորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Ամիուրի որդին Եղիսամա էր: 49 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 50 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 51 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 52 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 53 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ամիուրի որդւոյն Եղիսամայի ընծան այս էր:

54 - Ութերորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Փագասուրի որդին Գամաղիէլ էր: 55 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 56 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 57 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 58 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 59 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. Փագասուրի որդւոյն Գամաղիէլի ընծան այս էր:

60 - Իններորդ օրը ճարտարագէտներն որդիներուն իշխանը Գեդէօնի որդին Աբիգան էր: 61 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 62 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն, 63 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 64 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 65 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ,

Հինգ խոյ, Հինգ նոխազ և Հինգ հատ մէկ տարեկան գառներ. Գեղէօնի որդւոյն Աքիզանի ընծան այս էր :

66 - Տասներորդ օրը մարտի 2-րդ թանի որդիներուն իշխանը Ամիսագոյի որդին Աքիզեր էր : 67 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 68 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն», 69 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 70 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 71 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, Հինգ խոյ, Հինգ նոխազ և Հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ամիսագոյի որդւոյն Աքիզերի ընծան այս էր :

72 - Մեծասաներորդ օրը մարտի 3-րդ թանի որդիներուն իշխանը Եքրանի որդին Փագիէլ էր : 73 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 74 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն», 75 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 76 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 77 - Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ, Հինգ խոյ, Հինգ նոխազ և Հինգ հատ մէկ տարեկան գառներ. Եքրանի որդւոյն Փագիէլի ընծան այս էր :

78 - Երկուսասաներորդ օրը մարտի 4-րդ թանի որդիներուն իշխանը Ենանի որդին Աքիբէ էր : 79 - Անոր ընծան այս էր. սրբարանին սիկզին համեմատ, հարիւր երեսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար իւղով շաղուած բարակ ալիւրով, 80 - Տասը «իչ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն», 81 - Մէկ զուարակ, մէկ խոյ և մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 82 - Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 83 - Եւ խաղաղութեան զոհի համար եր-

կու արջառ, Հինգ խոյ, Հինգ նոխազ և Հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ենանի որդւոյն Աքիբէի ընծան այս էր :

84 - Սեղանին օծուած օրը անոր նուիրման հանդէսին համար Խորայէլի իշխաններէն Նուր-Մար-Մար ընծաները ասանք էին. տասուերկու արծաթ սկուտեղ, տասուերկու արծաթ կոնք և տասուերկու ոսկի խնկաման, 85 - Ամէն մէկ արծաթ սկուտեղ հարիւր երեսուն «իչէ և ամէն մէկ կոնք եօթանասուն «իչէ էր. այս ամաններուն բոլոր արծաթը երկու հազար չորս հարիւր «իչ էր, սրբարանին սիկզին համեմատ.

86 - Տասուերկու ոսկի խնկաման խունկով լեցուն, ամէն մէկ խնկաման, սրբարանին սիկզին համեմատ, տասնական «իչ ըլլալով, խնկամաններուն բոլոր ոսկին հարիւր քսան «իչ էր :

87 - Ողջակէզի համար բոլոր արջառները տասուերկու զուարակ, խոյերը տասուերկու, մէկ տարեկան գառները տասուերկու էին, իրենց հացի ընծայովը. և մեղքի պատարագի համար այծերէն նոխազները տասուերկու :

88 - Եւ խաղաղութեան զոհի համար բոլոր արջառները քսանը չորս զուարակ էին, խոյերը վաթսուն, նոխազները վաթսուն, և մէկ տարեկան գառները վաթսուն էին: Այս էր սեղանին նուիրման հանդէսը՝ անոր օծուելէն ետքը :

89 - Եւ երբ Մովսէս ժողովքի խորանը կը մանէր Անոր հետ խօսելու, այն ատեն իրեն խօսողին ձայնը վկայութեան տապանակին վրայ եղած քառութիւնին վրայէն, երկու քերովբէներուն մէջտեղէն, կը լսէր, ու ինք Անոր հետ կը խօսէր :

ԳԼ. Ը

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Ահարոնի ու ըսէ անոր, երբ ճրագները վառես, եօթը ճրագները աշտանակին առջեւի կողմէն լոյս պիտի տան : 3 - Եւ Ահարոն այնպէս բրաւ. անոր ճրագները աշտանակին առջեւի կողմը վառեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց : 4 - Եւ աշտանակին շէնքը այսպէս էր. *Կռածոյ ոսկիէ էր. անոր բունէն մինչև անոր ծաղիկները կռածոյ էին. Տէրոջը Մովսէսի

*Կռած, ճախարակեայ

ցուցուցած գաղափարին պէս՝ այնպէս շինեց աշտանակը :

5 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ լսելով , 6 - Իսրայէլի որդիներուն մէջէն Ղեւտացիները առ , ու մաքրէ զանոնք : 7 - Եւ զանոնք մաքրելու համար այսպէս պիտի ընես անոնց . * մաքրութեան ջուր սրսկես անոնց վրայ , ու անոնք իրենց բոլոր մարմինները թող ածիլեն , և իրենց հանդերձները լուան ու մաքրուին : 8 - Ետքը զուարակ մը թող առնեն ու անոր հացի ընծային համար իւզող շաղուած բարակ ալիւր . դուն ալ ուրիշ զուարակ մը պիտի առնես մեղքի պատարագի համար : 9 - Ու Ղեւտացիները ժողովքի խորանին առջև մօտեցնես . և Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը ժողվես : 10 - Ու Ղեւտացիները Տէրոջը առջև մօտեցնես , ու Իսրայէլի որդիները իրենց ձեռքերը Ղեւտացիներուն վրայ դնեն : 11 - Եւ Ահարոն Իսրայէլի որդիներուն կողմէն՝ Ղեւտացիները Տէրոջը առջև †ընծայ պիտի մատուցանէ , և անոնք Տէրոջը պաշտօնը կատարելու համար ըլլան : 12 - Ու Ղեւտացիները իրենց ձեռքերը զուարակներուն գլխուն վրայ պիտի դնեն . ու Ղեւտացիներուն քաւութիւն ընելու համար մէկ զաւարակ մեղքի պատարագ , ու միւսը ողջակէզ մատուցանես Տէրոջը : 13 - Եւ Ղեւտացիները Ահարոնի ու անոր որդիներուն առջև կայնեցնես , ու զանոնք ընծայ մատուցանես Տէրոջը : 14 - Այսպէս պիտի զատես Ղեւտացիները Իսրայէլի որդիներուն մէջէն , ու Ղեւտացիները իմ պիտի ըլլան : 15 - Եւ անկէ ետեւ Ղեւտացիները ժողովքի խորանին գործը ընելու մտնեն : Այսպէս պիտի մաքրես զանոնք , և ընծայ մատուցանես զանոնք . 16 - Քանզի անոնք բոլորովին ինծի տրուած են Իսրայէլի որդիներուն մէջէն . Իսրայէլի որդիներուն մէջ մօրը արգանդը բացող բոլոր անդրանիկներուն տեղ ինծի առի զանոնք : 17 - Վասն զի Իսրայէլի որդիներուն բոլոր անդրանիկները , թէ՛ մարդու և թէ՛ անասունի , իմն են . Եգիպտոսի երկրին մէջ բոլոր անդրանիկները զարկած օրէս՝ զանոնք սրբեցի ինծի համար : 18 - Եւ Իսրայէլի որդիներուն բո-

լոր անդրանիկներուն տեղ Ղեւտացիները առի : 19 - Եւ Իսրայէլի որդիներուն մէջէն Ղեւտացիները բոլորովին Ահարոնի ու անոր որդիներուն տուի , որպէս զի ժողովքի խորանին մէջ Իսրայէլի որդիներուն պաշտօնը ընեն , և Իսրայէլի որդիներուն համար քաւութիւն ընեն , որպէս զի Իսրայէլի որդիներուն վրայ հարուած չգայ՝ երբ Իսրայէլի որդիները սրբարանին մօտենան :

20 - Եւ Մովսէս ու Ահարոն և Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Ղեւտացուց վրայով Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս ըրին Ղեւտացիներուն . Իսրայէլի որդիները այնպէս ըրին անոնց . 21 - Ու Ղեւտացիները մաքրուեցան , և իրենց հանդերձները լուացին , և Ահարոն ընծայ մատուց զանոնք Տէրոջը առջև . ու Ահարոն անոնց համար քաւութիւն ըրաւ , որպէս զի զանոնք մաքրէ : 22 - Եւ անկէ ետեւ Ղեւտացիները ժողովքի խորանին մէջ մտան՝ Ահարոնի ու անոր որդիներուն առջև իրենց պաշտօնը ընելու համար . Ղեւտացուց վրայով Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս , այնպէս ըրին անոնց :

23 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ լսելով , 24 - Ղեւտացուց խոսեց այս ըլլայ . Քանզի տարեկանէ վեր եղողները ժողովքի խորանին պաշտօնը ընելու գունդին մէջ պիտի մտնեն . 25 - Եւ յիսուն տարեկան ըլլալէ ետքը պաշտօնին գունդէն պիտի դադարին , ու ալ ծառայելու չեն . 26 - Սակայն ժողովքի խորանին մէջ պահպանութիւնը պահելու պիտի օգնեն իրենց եղբայրներուն , և ծառայութիւն պիտի չընեն . այսպէս պիտի ընես Ղեւտացիներուն իրենց պահպանութիւններուն համար :

ԳԼ . Թ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի Սինայի անապատին մէջ , անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարին առաջին ամսուն մէջ՝ ըսելով , 2 - Իսրայէլի որդիները իր որոշուած ժամանակին թող ընեն զատիկը : 3 - Այս ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ՝ պիտի ընէք զայն՝ իր որոշուած ժամանակին . անոր բոլոր կանոններուն ու անոր բոլոր կարգադրութիւններուն .

* Եբբ. մեղաց , խճ , մեղքի պատարագի † Եբբ. երեքնելու ընծայ պիտի երեքնէ

Համեմատ պիտի ընէք զայն : 4 - Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդիներուն որ զատիկը ընեն : 5 - Եւ անոնք առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ՝ զատիկը ըրին Սինայի անապատին մէջ . Տէրօջը Մովսէսի բռնոր պատուիրածին պէս՝ Իսրայէլի որդիները այնպէս ըրին :

6 - Եւ կային ոմանք՝ որ մարդու մեռելէ պղծուած ըլլալով, այն օրը չկրցան զատիկը ընել . և այն օրը Մովսէսի ու Ահարոնի առջև եկան . 7 - Եւ այն մարդիկը ըսին անոր , Մենք մարդու մեռած մարմինէ պղծուած ենք . քնչո՞ւ համար Իսրայէլի որդիներուն մէջ Տէրօջը պատարագը իր որոշուած ժամանակին մատուցանելէն արգիլուինք : 8 - Եւ Մովսէս բաւ անոնց , կեցեք , *նայիմ՝ Տէրը ի՛նչ կը պատուիրէ ձեր վրայով :

9 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 10 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ , Եթէ ձեզմէ կամ ձեր սերունդէն մէկը մեռած մարմինէ մը պղծուի , կամ չեռաւոր ճամբորդութեան մէջ ըլլայ , անիկա ալ զատիկը պիտի ընէ Տէրօջը . 11 - Երկրորդ ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ ընեն զայն , բազարջով ու լեղի խոտերով ուտեն զայն . 12 - Անկէ մինչև առտու բան մը չթողուն , և անկէ ոսկոր մը չկտարեն . զատիկն բոլոր կանոններուն համեմատ ընեն զայն : 13 - Բայց եթէ մաքուր եղող ու ճամբորդութեան մէջ չեղող մարդը զատիկը ընելը զանց ընէ , այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի , վասն զի Տէրօջը պատարագը իր որոշուած ժամանակին չմատուց . այն մարդը իր մեղքը պիտի կրէ : 14 - Եւ եթէ օտարական մը ձեր մէջ պանդխտանայ , ու զատիկը ընելու ըլլայ Տէրօջը , զատիկն կանոնին և անոր կարգադրութեանը համեմատ պիտի ընէ . թէ՛ օտարականին և թէ՛ երկրին բնակին համար մէկ կանոն պիտի ունենաք :

15 - Եւ այն օրը որ խորանը կանգնուեցաւ , վկայութեան վրանին վրայովը ամպը պատեց խորանը . ու իրիկուանէ մինչև առտու խորանին վրայ կրակի երեւութով կը կենար : 16 - Միշտ այսպէս էր . ցրե՛լէ ամպը կը ծած-

կեր զայն , և զիշերը՝ կրակին երեւոյթը : 17 - Ու երբ ամպը խորանէն կը վերնար , անկէ ետև Իսրայէլի որդիները կը չուէին . և ուր որ ամպը կը կենար , չոն Իսրայէլի որդիները իջեւան կ'ընէին : 18 - Տէրօջը հրամանովը Իսրայէլի որդիները կը չուէին , և Տէրօջը հրամանովը իջեւան կ'ընէին . ամպը խորանին վրայ որչափ ատեն որ կը կենար , անոնք իրենց վրաններուն մէջ կը մնային : 19 - Եւ երբ ամպը շատ օրեր խորանին վրայ մնար , Իսրայէլի որդիները Տէրօջը պահպանութիւնը կը պահէին , ու չէին չուեր : 20 - Նոյնպէս ալ երբ ամպը խորանին վրայ քիչ օր կենար , Տէրօջը հրամանին համեմատ իջեւան կ'ընէին , ու Տէրօջը հրամանին համեմատ կը չուէին : 21 - Նոյնպէս ալ երբ ամպը իրիկուանէ մինչև առտու մնար , առտուանց ամպին վերելած ատենը կը չուէին . թէ՛ ցորեկ ըլլար և թէ՛ գիշեր , ամպին ելած ատենը կը չուէին . 22 - Կամ երկու օր , կամ մէկ ամիս , և կամ մէկ տարի , որ ամպը խորանին վրայ կենալով մնար , Իսրայէլի որդիները իջեւան կ'ընէին ու չէին չուեր . բայց երբ վերնար , կը չուէին : 23 - Տէրօջը հրամանին համեմատ իջեւան կ'ընէին , և Տէրօջը հրամանին համեմատ կը չուէին . Մովսէսի ձեռքով *բարձր Տէրօջը հրամանին համեմատ Տէրօջը պահպանութիւնը կը պահէին :

ԳԼ. Ժ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 2 - Քեզի երկու հառ արծաթէ փող շինէ . կռածոյ պիտի շինես զանոնք , որպէս զի ժողովքը կանչելու համար ու բանակներուն չուելուն համար *գործածես : 3 - Եւ երբ զանոնք հնչեցընեն , բոլոր ժողովքը քովդ պիտի ժողվուին ժողովքի խորանին դուռը : 4 - Եւ եթէ *պի՛ն մէկը հնչեցնեն , իշխանները , Իսրայէլի հազարապետները , քովդ պիտի ժողվուին : 5 - Եւ երբ ազդարարութեան համար հնչեցնէք , արեւելքը իջեւան ընող բանակները պիտի չուեն : 6 - Ու երբ երկրորդ անգամ ազդարարութեան *պի՛ն հնչեցնէք , հարաւային կողմը իջեւան ընող բանակ-

*Նբբ. մօտիկ ընեմ

*Նբբ. քեզի ըլլան

ները պիտի չուեն . անոնց չուելուն համար ազգարարութեան ԳՊԷ պիտի հնչեցնեն : 7 - Եւ երբ ժողովուրդը ժողովելու ըլլաք , ԳՊԷ պիտի հնչեցնէք , քայց ազգարարութիւն պիտի չընէք : 8 - Եւ փողերը հնչեցնողները Ահարոնի որդիները , քահանաները , պիտի ըլլան . և ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտեանական կանոն ըլլայ ձեզի : 9 - Եւ եթէ պատերազմելու երթաք ձեր երկրին մէջ ձեզի նեղութիւն առողջ թշնամիին դէմ , փողերով ազգարարութիւն պիտի ընէք . ու պիտի յիշուիք Տէրոջը ձեր Աստուծոյն առջև , և ձեր թշնամիներէն ազատուիք : 10 - Եւ ձեր ուրախութեան օրերուն ու ձեր տօներուն և ձեր ամսագլուխներուն մէջ փողերը պիտի հնչեցնէք ձեր ողջակէզներուն վրայ ու ձեր խաղաղութեան զօհերուն վրայ , որպէս զի ձեզի յիշատակի համար ըլլան ձեր Աստուծոյն առջև . ետեմ՝ Տէրը ձեր Աստուածը :

11 - Եւ եղաւ որ երկրորդ փարին երկրորդ ամսուն քաներորդ օրը վիսյութեան խորանին վրայէն ամպը վերելաւ : 12 - Եւ Խորայէլի որդիները իրենց գնացքին համեմատ չուեցին Սինայի անապատէն . ու ամպը Փառանի անապատին մէջ կեցաւ : 13 - Եւ առաջ Մովսէսի ձեռքով ԳՊԷ Տէրոջը հրամանին պէս չուեցին : 14 - Եւ առաջ Յուդայի որդիներուն բանակին դրօշակը չուեց իրենց գունդերուն կարգովը . ու անոր գունդին վրայ Ամինադաբի որդին Նասաոն էր : 15 - Եւ Իսաքարի որդիներուն ցեղին գունդին վրայ Սովգարի որդին Նաթանայէլ էր : 16 - Եւ Չաբուղոնի որդիներուն ցեղին գունդին վրայ Քեղոնի որդին Եղիար էր : 17 - Եւ խորանը վար իջեցուցին . ու խորանը վերցնող Գերսոնի որդիները և Մերարիի որդիները չուեցին : 18 - Եւ Ռուբէնի բանակին դրօշակը չուեց իրենց գունդերուն կարգովը . ու անոր գունդին վրայ Սեղիուրի որդին Եղիսուր էր : 19 - Եւ Շմուոնի որդիներուն ցեղին գունդին վրայ Սուրիսադայի որդին Սաղամիէլ էր . 20 - Եւ Գադի որդիներուն ցեղին գունդին վրայ Գագուէլի որդին Եղիասափ էր : 21 - Եւ սրբարանը վերցնող Կահաթացիները չուեցին . ու խորանը կը կանգնուէր մինչև անոնց գալը : 22 - Եւ Եփրեմի որդիներուն բանակին դրօշակը

չուեց իրենց գունդերուն կարգովը . ու անոր գունդին վրայ Ամիուդի որդին Եղիսամա էր : 23 - Եւ Մանասէի որդիներուն ցեղին գունդին վրայ Փաղասուրի որդին Գամաղիէլ էր : 24 - Եւ Բենիամինի որդիներուն ցեղին գունդին վրայ Գեղէօնի որդին Աբիդան էր : 25 - Եւ Իանի որդիներուն բանակին դրօշակը իրենց գունդերուն կարգովը բոլոր բանակներուն *ետեւէն չուեց* . ու անոր գունդին վրայ Ամիսադայի որդին Աքիեզեր էր : 26 - Եւ Ասերի որդիներուն ցեղին գունդին վրայ Եքրանի որդին Փագիէլ էր : 27 - Եւ Նեփթաղիմի որդիներուն ցեղին գունդին վրայ Ենանի որդին Աքիբէ էր : 28 - Այս էր Խորայէլի որդիներուն չուելուն կարգը իրենց գունդերուն համեմատ , երբ կը չուէին :

29 - Եւ Մովսէս իր աներոջ , այսինքն Մադիանացի Ռագուէլի որդւոյն Յուբաբի , ըսաւ , Մենք կը չուենք այն տեղը՝ որուն համար Տէրը ըսաւ որ Չեզի պիտի տամ . ձեզի հետ եկուր , ու բարեք պիտի ընենք քեզի . վասն զի Տէրը Խորայէլի †բարեք խոստացաւ : 30 - Եւ անիկա ըսաւ անոր , Չեմ երթար , այլ իմ երկիրս ու իմ՝ ազգականներուս պիտի երթամ : 31 - Եւ ինք ըսաւ , Շնոհք ըրէ , մեզ մի թողուր . քանզի անապատին մէջ մեր իջեւան ընելու տեղերը գիտես , ու մեզի †առաջնորդ կ'ըլլաս : 32 - Եւ եթէ մեզի հետ երթալու ըլլաս , ինչ բարութիւն որ Տէրը մեզի ընէ , մենք ալ քեզի նոյն բարութիւնը կ'ընենք :

33 - Եւ անոնք Տէրոջը լեռնէն երեք օրուան ճամբայ չուեցին . ու Տէրոջը ուխտին տապանակը երեք օրուան ճամբայով անոնց առջեւէն կ'երթար , անոնց հանգստանալու տեղ գտնելու համար : 34 - Եւ երբ բանակէն կը չուէին , Տէրոջը ամպը ցորեկը անոնց վրայ էր :

35 - Եւ տապանակին չուելու ատենը Մովսէս կ'ըսէր , Ելիւր , ով Տէր , ու քու թշնամիներդ թող ցրուին , ու քեզ աատղները առջեւէդ փախչին : 36 - Եւ անոր կենալու ատենը ինք կ'ըսէր , Ով Տէր , Խորայէլի հազարաց բիւրաւորներուն դարձիւր :

*Կա՛մ , թիկնապահ եղաւ
 †Եբբ . վրայով բարեք խօսեցաւ
 ‡Եբբ . աչք : Յոր . իթ . 15 :

ԳԼ. ԺԱ

Եւ ժողովուրդը չարաչար տրտունջ կ'ընէր Տէրոջը *առջև . ու Տէրը լսեց , և իր բարկութիւնը բորբոքեցաւ , ու անոնց մէջ Տէրոջը կրակը վառեցաւ , և բանակին ծայրերը եղողները կորսնցուց : 2 - Եւ ժողովուրդը աղաղակեց Մովսէսի . ու Մովսէս աղօթեց Տէրոջը , և կրակը դադարեցաւ : 3 - Եւ այն տեղին անունը †Տաբերա գրաւ , Տէրոջը կրակին անոնց մէջ այրելուն համար : 4 - Եւ անոնց մէջի խառնիճազանճ բազմութիւնը շատ ցանկացան . ու Իսրայէլի որդիներն ալ †դարձեալ լացին , և ըսին , Ո՞վ մեզի ուտելու միս պիտի տայ . 5 - Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկերը , վարունգները ու սեխերը և պրասները ու սոխերը և խստորները միտքերնիս կու գան : 6 - Եւ հիմա մեր անձը չորցաւ . մանանայէն զատ ուրիշ բան մը չկայ աչքերնուս առջև : 7 - Եւ մանանան գինձի սերմի պէս , ու անոր գոյնը սուտակի գոյնի պէս էր : 8 - Ժողովուրդը կը պտըտէր ու կը ժողվէր զայն , և աղացքի մէջ կ'աղային , կամ անկանի մէջ կը ծեծէին . և պտուկներու մէջ կ'եփէին , ու անկէ շօթեր կը շինէին . և անոր համը իւղոտ գաթաներու համին պէս էր : 9 - Եւ գիշերը երբ բանակին վրայ ցօղ կ'իջնէր , մանանան ալ անոր վրայ կ'իջնէր : 10 - Այն ատեն Մովսէս լսեց որ ժողովուրդը իրենց տոհմերովը ամէն մէկը իր վրանին դուռը կու լան . և Տէրոջը բարկութիւնը խիստ բորբոքեցաւ , ու Մովսէսի ալ գէշ երեւցաւ այս քանը : 11 - Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը , Ինչո՞ւ քու ծառագ չարչարեցիր , ու ինչո՞ւ քու առջեւ շնորհք չգտայ , որ այս բոլոր ժողովուրդին բեռը իմ վրաս կը դնես : 12 - Միթէ ե՞ս եմ յղացեր այս բոլոր ժողովուրդը , կամ ե՞ս եմ ծներ ասոնք , որ ինձի կ'ըսես , Իայեակի մը կաթնկեր աղան քիչէ առնելուն պէս զանոնք գիրկդ առ , * * * մինչև այն երկիրը զոր անոնց հայրերուն * * * երդում ըրիր : 13 - Ես ուրկէ՞ միս պիտի ունենամ , որ այս բոլոր ժողովուրդին տամ . քանզի իմ բոլորտիքս կու

լան ու կ'ըսեն , Միս տուր մեզի որ ուտենք : 14 - Ես մինակ չեմ կրնար կրել այս բոլոր ժողովուրդը , վասն զի այս ինձի շատ ծանր է : 15 - Եւ եթէ ինձի այսպէս պիտի ընես , կ'աղաչեմ , մէկէն մեռցուր զիս , եթէ շնորհք գտայ քու առջեւ , որպէս զի իմ չարիքս չտեսնեմ : 16 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Ինձի Իսրայէլի ծերերէն եօթանասուն հոգի ժողվէ , զորոնք դուն գիտես թէ ժողովուրդին ծերերը ու գլխաւորներն են . և զանոնք ժողովքի խորանը բեր , ու հոն քեզի հետ կայնին . 17 - Եւ ես հոն պիտի իջնեմ՝ ու խօսիմ քեզի հետ . և քու վրագ եղած Հոգիէն պիտի առնեմ , ու անոնց վրայ պիտի դնեմ , որպէս զի ժողովուրդին բեռը վերցնեն քեզի հետ , ու դուն մինակ չվերցնես : 18 - Եւ ըսէ ժողովուրդին , Աղուան համար սրբուեցէք , ու միս պիտի ուտէք . վասն զի Տէրոջը ականջներուն լացիք՝ ըսելով , Ո՞վ մեզի միս պիտի կերցնէ . քանզի Եգիպտոսի մէջ աղէկ կ'ապրէինք . ուստի Տէրը ձեզի միս պիտի տայ , ու դուք պիտի ուտէք : 19 - Դուք ոչ թէ միայն մէկ օր պիտի ուտէք , և ոչ երկու օր , ոչ հինգ օր , ոչ տասը օր , ոչ ալ քսան օր . 20 - Լման մէկ ամիս մինչև քթերնէդ դուրս գալը պիտի * * * , այնպէս որ զգուիք . որովհետեւ ձեր մէջ եղող Տէրը արհամարհեցիք , և անոր առջև լացիք՝ ըսելով , Ինչո՞ւ մենք Եգիպտոսէ ելանք : 21 - Եւ Մովսէս ըսաւ , Այս ժողովուրդը , որոնց մէջ կը գտնուիմ , վեց հարիւր հազար հետեւակ հոգի են , ու դուն ըսիր , Ես անոնց միս պիտի տամ՝ որ լման մէկ ամիս ուտեն . 22 - Անոնց բաւական ըլլալու համար միթէ քու ոչխարները ու արջառները մորթուին . կամ անոնց բաւական ըլլալու համար ծովուն բոլոր ձուկերը մէկտեղ հաւաքուին : 23 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Միթէ *տկա՞ր է Տէրոջը ձեռքը . հիմա կը տեսնես թէ քեզի ըսածիս պէս պիտի ըլլա՞յ թէ ոչ : 24 - Եւ Մովսէս ելաւ , ու Տէրոջը խօսքերը ժողովուրդին զրուցեց . և ժողովուրդին ծերերէն եօթանասուն հոգի ժողվեց , ու զանոնք խորանին բոլորտիքը կայնեցուց : 25 - Եւ Տէրը ամպի մը մէջ իջաւ , ու անոր հետ խօսեցաւ , և անոր վրայ

* Եբր . ականջներուն
 † Այսինքն , հրկիզութիւն
 ‡ Կամ , նստան

Եբր . կարծ

եղած Հոգին անու, ու այն եօթա-
նասուն ծերերուն վրայ դրաւ. և եղաւ
որ Հոգին անոնց վրայ հանգչելուն՝
մարգարէութիւն ըրին, *բայց անկէ
եաւ չըրին: 26 - Եւ երկու հոգի բա-
նակին մէջ մնացին, մէկուն անունը
Նիզադ էր ու միւսին անունը Մովգագ.
և Հոգին հանգչեցաւ անոնց վրայ. ու
անոնք այն գրուողներէն էին, բայց
խորանը եկած չէին. և բանակին մէջ
մարգարէութիւն կ'ընէին: 27 - Եւ
պատանի մը վազեց ու պատմեց Մով-
սէսի և ըսաւ, Երգող ու Մովգագ
մարգարէութիւն կ'ընեն բանակին մէջ:
28 - Եւ Նաւէի որդին Յեսու, Մովսէսի
†ընտրեալ ծառան, պատասխանտուաւ
ու ըսաւ, Տէր իմ Մովսէս, արգիլէ գա-
նոնք: 29 - Եւ Մովսէս ըսաւ անոր,
Ինծի՞ համար կը նախանձիս. երանի՞
թէ Տէրոջը բոլոր ժողովուրդը մարգա-
րէներ ըլլային, և Տէրը իր Հոգին
անոնց վրայ դնէր: 30 - Եւ Մովսէս
բանակը քաշուեցաւ, ինք ու Իսրայէլի
ծերերը:

31 - Եւ Տէրոջմէն հով մը ելաւ, ու
ժովուն կողմէն լորամարգիններ բերաւ,
ու բանակին վրայ մէկ օրուան ճամբայ
մէկ կողմէն և մէկ օրուան ճամբայ միւս
կողմէն՝ բանակին բոլորտիքը տարա-
ծեց, երկրի երեսին վրայէն երկու կան-
գունի չափ Բարձր: 32 - Եւ ժողովուրդը
այն բոլոր օրը ու բոլոր գիշերը և հե-
տեւեալ բոլոր օրը ելլելով՝ լորամար-
գինները ժողովեցին. քիչ ժողովողը տասը
քու ժողովեց. և իրենց համար բանա-
կին բոլորտիքը շարժեց՝ փոխեցին զա-
նոնք: 33 - Եւ երբ դեռ միւսը իրենց ակ-
ռաներուն վրայ էր, տակաւին չճամ-
ուած՝ Տէրոջը բարկութիւնը ժողովուր-
դին վրայ բորբոքեցաւ. ու Տէրը խիստ
մեծ հարուածով վարկաւ ժողովուրդը:
34 - Եւ այն տեղին անունը †Կիրբօթ-
հաթթավա դրուեցաւ, վասն զի հոն
թաղեցին ցանկացող ժողովուրդը:
35 - Եւ Կիրբօթ-հաթթավայէ Ասե-
րովթ չուեց ժողովուրդը, ու Ասերով-
թի մէջ †մնացին:

Եւ Մարիամ ու Ահարոն Մովսէսի
զէմ խօսեցան՝ անոր առած Եթէով-
պացի կնոջը համար, քանզի անկա Ե-
թէովպացի կին առեր էր, 2 - Ու ըսին,
Միթէ Տէրը միայն Մովսէսի՞ ձեռքով
խօսեցաւ. չէ՞ որ մեր ձեռքով ալ խօ-
սեցաւ. և Տէրը լսեց: 3 - Եւ Մովսէս
չառ հեզ մարդ մըն էր՝ երկրի վրայ
եղած բոլոր մարդոցմէ աւելի: 4 - Եւ
խաղոյն Տէրը ըսաւ Մովսէսի և Ահարոնի
ու Մարիամի, Իսուք երեքդ ալ ժո-
ղովքի խորանը ելէք. և երեքն ալ ելան:
5 - Եւ Տէրը ամպին սիւնովը իջաւ, ու
խորանին դուռը կայնեցաւ. և Ահա-
րոնը ու Մարիամը կանչեց, ու անոնք
երկուքն ալ ելան: 6 - Եւ ըսաւ անոնց,
Հիմա իմ խօսքս մտիկ ըրէք. եթէ ձեզմէ
մէկը մարգարէ ըլլայ, ես Տէրս ինքզինքս
տեսելքի մէջ կը ճանչցնեմ անոր, և
երազի մէջ կը խօսիմ անոր հետ: 7 -
Իմ ծառաս Մովսէս այնպէս չէ, որ իմ
բոլոր տանս մէջ հաւատարիմ է. 8 -
Անոր հետ բերան ի բերան, յայտնա-
պէս կը խօսիմ, և ոչ թէ առակով.
ու անկա Տէրոջը կերպարանքը կը
տեսնէ. ուստի իմ ծառայիս Մովսէսի
զէմ խօսելու ինչո՞ւ չվախցա՞ք: 9 - Եւ
Տէրոջը բարկութիւնը անոնց վրայ բոր-
բոքեցաւ. ու ինք գնաց: 10 - Եւ ամպը
վերացաւ խորանէն, ու ահա Մարիամ՝
ձիւնի պէս բորոտ եղաւ. և Ահարոն
Մարիամի նայեցաւ, և ահա անկա
բորոտ էր: 11 - Եւ Ահարոն ըսաւ Մով-
սէսի, Ոհ, տէր իմ, կ'աղաչեմ, մեր
վրայ մեղք մի դնէր. քանզի յիմարու-
թիւն ըրինք, ու մեղք գործեցինք.
12 - Թող շնամանի այն մեռած գլուխ՝
որ իր մօրը արգանդէն ելած ատենը
անոր մարմինն կէսը սպառուած է:
13 - Եւ Մովսէս աղաղակեց Տէրոջը՝
ըսելով, Կը խնդրեմ քեզմէ, ով Ասա-
ուած, բժշկէ զանկա: 14 - Եւ Տէրը
ըսաւ Մովսէսի, Եթէ անոր հայրը միայն
անոր երեսը թքնելու ըլլար, եթէ օր
պիտի չամչնա՞ր. թող անկա եթէ օր
բանակէն դուրս գոցուած պահուի, ու
անկէ եաւ ընդունուի: 15 - Եւ Մա-
րիամ բանակէն դուրս եօթը օր գոց-
ուած մնաց. ու ժողովուրդը չչուեց
մինչև Մարիամի ընդունուիլը:

*Կա՛մ, և չգաղարեցան
†Եբբ. ընտրեալներէն Կա՛մ երիտա-
սարդներէն եղող
‡Այսինքն, ցանկութեան գերեզման-
ներ †Եբբ. էին

ԳԼ. ԺԳ

Եւ ետքը ժողովուրդը Ասերովթէ շուեցին, ու Փառանի անապատը իջե-
 ւան ըրին: 2 - Եւ Տէրը խօսեցաւ Մով-
 սէսի՝ ըսելով, 3 - Մարդիկ զրկէ որ
 լրտեսեն Քանանու երկիրը, զոր Իսրա-
 յէլի որդիներուն պիտի տամ. անոնց
 ամէն մէկը իշխան ըլլալով՝ մէյմէկ
 մարդ իր հայրերուն ցեղին կողմէն
 զրկէք: 4 - Եւ Մովսէս Տէրոջը հրա-
 մանին համեմատ զրկեց զանոնք Փա-
 ռանի անապատէն. բոլոր այն մարդիկը
 Իսրայէլի որդիներուն գլխաւորներն
 էին, 5 - Որոնց անունները ասոնք են.
 6 - Ռուբէնի ցեղէն՝ Զաքուրի որդին
 Սամուա, Շմաւոնի ցեղէն՝ Քուռի որ-
 դին Սափատ, 7 - Յուդայի ցեղէն՝ Յե-
 փոնէի որդին Քազէր, 8 - Իսաքարի ցե-
 ղէն՝ Յովսէփի որդին Իգաղ, 9 - Եփ-
 րեմի ցեղէն՝ Նաւէի որդին Օսէս, 10 -
 Բենիամինի ցեղէն՝ Ռափուի որդին
 Փաղտի, 11 - Զաբուղոնի ցեղէն՝ Սու-
 դիի որդին Գեդզիէլ, 12 - Յովսէփի
 ցեղէն՝ այսինքն Մանասէի ցեղէն՝ Սու-
 սիի որդին Գադգի, 13 - Իանի ցեղէն՝
 Գամաղիի որդին Ամիէլ, 14 - Ասերի
 ցեղէն՝ Միքայէլի որդին Սաթուր, 15 -
 Նեփթալիմի ցեղէն՝ Վափսիի որդին
 Նարի, 16 - Գադի ցեղէն՝ Մաքքիի որ-
 դին Գուէլ:

17 - Ասոնք են այն մարդոց անուն-
 ները զորոնք Մովսէս զրկեց երկիրը
 լրտեսելու. և Մովսէս Նաւէի որդւոյն
 *Օսէսի անունը †Յետու գրաւ: 18 - Եւ
 Մովսէս զրկեց զանոնք Քանանու եր-
 կիրը լրտեսելու, ու ըսաւ անոնց, Այս
 հարաւային կողմէն դէպի վեր երթա-
 յով, լեռը ելէք. 19 - Եւ այն երկրին
 ինչպէս ըլլայր ու հոն բնակող ժողո-
 վուրդին զօրաւոր կամ տկար, քիչաւոր
 կամ շատաւոր ըլլայր տեսէք. 20 - Եւ
 այն երկիրը ուր անոնք կը բնակին՝ ի՞նչ-
 պէս է, աղէ՞կ է թէ գէշ. և ի՞նչպէս
 են այն քաղաքները ուր անոնք կը բնա-
 կին, վրաններէ՞ բաղկացած են թէ
 պարսպաւոր են. 21 - Եւ երկիրը ի՞նչ-
 պէս է, պարա՞րտ է թէ անբեր, մէջը
 ծառեր կա՞ն թէ ոչ: Եւ ժիր եղէք,
 ու այն երկրին պատուէն տուէք: Եւ
 այն օրերը խաղողին նոր ելած օրերն

*Այսինքն, փրկիչ
 †Այսինքն, Տէր փրկիչ

էին: 22 - Եւ ելան ու այն երկիրը լրա-
 սեցին Սին անապատէն մինչև դէպի
 Եմաթ երթալու Բոթր: 23 - Եւ հարա-
 ւային կողմէն ելան, ու դէպի Քեբրոն
 եկան. ու հոն իջ Բալէի՝ Ենակի որդի-
 ները, Աքիման, Սէսի և Թոլմի. ու
 Քեբրոն Եգիպտոսի Տայանիս քաղաքէն
 եօթը տարի առաջ շինուած էր: 24 -
 Եւ մինչև Եսբողի ձորը եկան, ու անկէ
 խաղողի ողկոյզ մը կարեցին ուռովը
 մէկտեղ, և երկու հոգի լծակով վեր-
 ցուցին զանիկա. և նուռերէն ու թու-
 զերէն ալ քարէն: 25 - Իսրայէլի որդի-
 ներուն անկէ կտրած ողկուղին համար
 այն տեղին անունը *Եսբողի ձոր դրուե-
 ցաւ: 26 - Եւ քառասուն օրէն ետքը
 այն երկիրը լրտեսելէն դարձան. 27 -
 Եւ գալով հասան Մովսէսի ու Ահա-
 րոնի և Իսրայէլի որդիներուն բոլոր ժո-
 ղովքին, Փառանի անապատը, Կա-
 դէս. և անոնց բոլոր ժողովքին լուր
 բերին. և երկրին պատուը ցուցուցին
 անոնց: 28 - Եւ պատմեցին անոր ու
 ըսին, Մեզ զրկած երկիրդ գացինք.
 Իրաւցրնէ կաթ ու մեղր կը բխէ այն,
 և անոր պատուը այս է: 29 - Բայց այն
 երկրին մէջ բնակող ժողովուրդը զօ-
 րաւոր է, և քաղաքները պարսպաւոր
 և խիստ մեծ են. նաև հոն Ենակի որ-
 դիները տեսանք: 30 - Ամաղեկացիք
 այն երկրին հարաւային կողմը կը բնա-
 կին. ու Քեաացիք և Յեբուսացիք ու
 Ամօրհացիք լեռները կը բնակին, և
 Քանանացիք ծովուն քով ու Յորդա-
 նանու եզերքը կը բնակին: 31 - Եւ քա-
 ղէք ժողովուրդը Մովսէսի առջև լռե-
 ցուց, ու ըսաւ, Աղէ, ելլենք, ու ժա-
 ոանդենք զայն. քանզի մենք անշուշտ
 կարող ենք անոր տիրելու: 32 - Բայց
 անոր հետ ելլող մարդիկը ըսին, Մենք
 այն ժողովուրդին վրայ ելլելու կարող
 չենք, վասն զի անոնք մեզմէ զօրաւոր
 են: 33 - Եւ իրենց լրտեսած երկրին
 համար գէշ լուր բերին Իսրայէլի որ-
 դիներուն՝ ըսելով, Այն երկիրը, որուն
 մէջտեղէն անցանք զանիկա լրտեսելու
 համար, իր բնակիչները ուտող երկիր
 մըն է. և անոր մէջի բոլոր ժողովուրդը
 զոր մենք տեսանք, յաղթահասակ մար-
 դիկ են: 34 - Եւ հոն տեսանք հսկա-
 ները, Ենակի որդիները, որ հսկաներէն
 են. այնպէս որ մենք մեր աչքին մա-

*Այսինքն, ողկուղի

քախի պէս երեւցանք , և այնպէս ալ անոնց աչքին երեւցանք :

ԳԼ. ԺԴ

Եւ բոլոր ժողովքը ձայնը վերցնելով աղաղակեց . և ժողովուրդը լացաւ այն գիշերը : 2 - Եւ Խորայէլի բոլոր որդիները արանջեցին Մովսէսի ու Ահարոնի դէմ . ու բոլոր ժողովքը բաւաւ անոնց , Երանի՛ թէ Եգիպտոսի երկրին մէջ մեռած ըլլայինք . կամ Երանի՛ թէ այս անապատին մէջ մեռած ըլլայինք : 3 - Եւ ինչո՞ւ համար Տէրը մեզ այս երկիրը բերաւ , որ սրով իյնանք , և մեր կիները ու մեր որդիները յափշտակուին . աղէկ չը՞լար մեզի որ Եգիպտոս դառնանք : 4 - Եւ իրարու ըսին , Մեզի զօրագլուխ մը ընտրենք , ու Եգիպտոս դառնանք : 5 - Եւ Մովսէս ու Ահարոն իրենց երեսին վրայ ինկան Խորայէլի որդիներուն բոլոր ժողովուրդը ժողովքին առջև : 6 - Եւ երկիրը լրատողներէն Նաւէի որդին Յետու ու Յեփոնէի որդին Քաղէբ իրենց հանդերձները պատուեցին . 7 - Եւ Խորայէլի որդիներուն բոլոր ժողովքին խօսեցան՝ ըսելով , Այն երկիրը , որուն մէջտեղէն անցանք զանիկա լրատուելու համար , խիստ բարի երկիր մըն է . 8 - Եթէ Տէրը մեզի հաճի , մեզ այն երկիրը պիտի տանի , և զանիկա մեզի պիտի տայ , որ կաթ ու մեղր բղխող երկիր մըն է : 9 - Միայն թէ Տէրոջը դէմ ապաստամբ մի ըլլաք . և այն երկրին ժողովուրդէն մի վախնաք , քանզի անոնք մեր կերակուրն են . անոնց * պաշտպանութիւնը գացած է իրենց վրայէն , ու Տէրը մեզի հեռ է . անոնցմէ մի վախնաք : 10 - Եւ բոլոր ժողովքը ըսին թէ քարերով քարկոծեն զանոնք . բայց Տէրոջը փառքը ժողովքի խորանին մէջ բոլոր Խորայէլի որդիներուն երեւցաւ : 11 - Եւ Տէրը բաւաւ Մովսէսի , Այս ժողովուրդը մինչև ե՞րբ զիս պիտի արհամարհէ , և իրենց մէջ ըրած բոլոր հրաշքներովս ալ մինչև ե՞րբ պիտի չհաւատան ինձի : 12 - Ես զանոնք ժանտախտով պիտի զարնեմ , ու կորսնցնեմ զանոնք . և քեզ անոնցմէ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ընեմ : 13 - Եւ Մովսէս բաւաւ Տէրոջը , Այն

առեւ Եգիպտոսցիք պիտի լսեն . (քանզի դուն քու կարողութիւնովդ այս ժողովուրդը անոնց մէջէն հանեցիր .) 14 - Եւ անոնք պիտի պատմեն այս երկրին բնակիչներուն . * անոնք լաւ են որ դուն , ով Տէր , այս ժողովուրդին մէջտեղն ես , որ դուն , ով Տէր , դէմ առ դէմ կը տեսնուիս , և որ քու ամպը անոնց վրայ կը կայնի , և որ ցորեկը ամպի սիւնով ու գիշերը կրակի սիւնով կը քալես անոնց առջեւէն : 15 - Հիմա եթէ այս ժողովուրդը մէկ մարդու պէս մեռցնելու ըլլաս , քու համբաւդ լսող ազգերը պիտի խօսին՝ ըսելով , 16 - Տէրը այս ժողովուրդը , անոնց երգումով խոստացած երկիրը տանելու կարող չըլլալուն համար , անապատին մէջ մեռցուց զանոնք : 17 - Եւ հիմա թող իմ Տէրոջս կարողութիւնը մեծ ըլլայ , ինչպէս խօսեցար՝ ըսելով , 18 - Տէրը երկայնամիտ է , և առատ՝ ողորմութիւնով , անօրէնութիւնը ու յանցանքը ներող . բայց յանցանքը ամենեւին անպարտ չթողուր , հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ՝ մինչև երրորդ ու չորրորդ ազգը հատուցանելով : 19 - Կաղաչեմ , քու մեծ ողորմութեանդ համեմատ ներէ այս ժողովուրդին անօրէնութիւնը , ինչպէս ներեցիր այս ժողովուրդին Եգիպտոսէ մինչև հոս : 20 - Եւ Տէրը բաւաւ , Քու խօսքիդ պէս ներեցի . 21 - Բայց կենդանի եմ ես , որ բոլոր երկիր Տէրոջը փառքովը պիտի լեցուի . 22 - Քանզի բոլոր այն մարդիկը որոնք Եգիպտոսի մէջ ու անապատին մէջ իմ փառքս ու իմ ըրած հրաշքներս տեսան , և մինչև հիմա զիս տասը անգամ փորձեցին , ու իմ խօսքս մտիկ չըրին , 23 - Պիտի չտեսնեն այն երկիրը զոր իրենց հայրերուն * քաւ՝ երգում ըրի . զիս արհամարհողներուն մէկն ալ պիտի չտեսնէ զայն . 24 - Բայց սրով հեռ եմ ծառաս Քաղէբ ուրիշ միտք ունեցաւ , ու ինձի * բոլոր սրտով հնազանդեցաւ , ես ալ՝ զանիկա իր գացած երկիրը պիտի տանիմ , և անոր սերունդը պիտի ժառանգէ զայն : 25 - Եւ Ամուդեկացիք ու Քանանացիք ձորերու մէջ կը նստին . վաղը դարձէք , և դէպ ի անապատը կարմիր ծովուն ճամբան չուեցէք :

* Եբբ. հովանին . Սաղ. ճիւղ. 5 : Ես . Լ 2, 3 : Երեմ. խը . 45 :

* Եբբ. իմ ետեւէս լեցուց

26 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 27 - Մինչև ե՞րբ այս չար ժողովքին ինծի դէմ արանջելուն համբերե՞մ. ես լսեցի Իսրայելի որդիներուն արատնջը որ ինծի դէմ կը արանջեն: 28 - Ըսէ անոնց, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ինչպէս դուք իմ ականջներուս խօսեցաք, այնպէս պիտի ընեմ՝ ձեզի. 29 - Ձեր դիերը այս անապատին մէջ պիտի իյնան. և ձեր բոլոր հաշիւին համեմատ, ձեզմէ սմէն համրուածները, քսան տարեկանէ վեր եզրղները, դուք առաջ որ ինծի դէմ արանջեցիք, 30 - Անշուշտ պիտի չմտնէք այն երկիրը՝ որուն մէջ ձեզ ընակեցնելու *երդում՝ բերի, բաց ի Յեփոնէի որդիէն Քաղէբէ ու Նաւէի որդիէն Յեսուէ: 31 - Բայց ձեր որդիները, որոնց համար դուք ըսիք թէ պիտի յափշտակուին, զանոնք պիտի տանիմ, և ձեր չհաւնած երկիրը անոնք պիտի քառանեն: 32 - Բայց ձեր դիերը այս անապատին մէջ պիտի իյնան: 33 - Եւ ձեր որդիները անապատին մէջ քառասուն տարի պիտի քանդուին, ու ձեր պառնկութիւնները կրեն, մինչև որ ձեր դիերը անապատին մէջ սպառին: 34 - Ինչպէս երկիրը քառասուն օրուան մէջ լրտեսեցիք, այնպէս ալ այն օրերուն թիւին համեմատ՝ ամէն մէկ օրուան տեղ մէյմէկ տարի *եղելով՝ քառասուն տարի պիտի կրէք ձեր անօրէնութիւնները, ու իմ յեղէ հեռանալս ճանչնաք: 35 - Ես Տէրս ըսի, ինծի դէմ ժողովուած բոլոր այդ չար ժողովքին անշուշտ պիտի ընեմ այս բանը. անոնք այս անապատին մէջ պիտի սպառին, ու հոն մեռնին: 36 - Եւ այն մարդիկը զորոնք Մովսէս զրկեց այն երկիրը լրտեսելու, որոնք դարձան ու երկրին վրայով գէշ լուր հանելով բոլոր ժողովքը անոր դէմ արանջելու գրգռեցին, 37 - Այն մարդիկը որոնք այն երկրին վրայով գէշ լուր հանեցին, հարուածով մեռան Տէրոջը առջև: 38 - Բայց Նաւէի որդին Յեսու և Յեփոնէի որդին Քաղէբ, որոնք երկիրը լրտեսելու գացող մարդոցմէն էին, ողջ մնացին: 39 - Եւ Մովսէս այս խօսքերը Իսրայելի բոլոր որդիներուն կրօնեց, ու ժողովուրդը մեծ սուգ բրաւ:

*Եբր. ձեռքս վերցուցի
 †Եբր. գիտնան ‡Եբր. արած են

40 - Եւ առաւանց կանուխ լեռանը գլուխը ելան՝ ըսելով, Ահա մենք առաջ ենք, և Տէրոջը ըսած տեղը պիտի ելլենք. վասն զի մեզք գործ եցինք: 41 - Եւ Մովսէս ըսաւ, Ինչո՞ւ այդպէս Տէրոջը հրամանէն դուրս կ'ելլէք. այդ բանը պիտի չյաջողի: 42 - Մի ելլէք, (քանզի Տէրը ձեր մէջ չէ,) չլլայ որ ձեր թշնամիներուն առջև ջարդուիք. 43 - Վասն զի Ամաղեկացիք ու Քանանացիք հոն ձեր առջև են, և սրով պիտի իյնաք. դուք Տէրոջմէն ետ դառնալնուդ համար՝ Տէրը ձեզի հետ պիտի չլլայ: 44 - Բայց անոնք յամառութիւն ընելով՝ լեռանը գլուխը ելան. սակայն Տէրոջը ուխտին տապանակը ու Մովսէս բանակին մէջէն չզատուեցան: 45 - Այն ատեն այն լեռանը վրայ բնակող Ամաղեկացիք ու Քանանացիք իջան, և զարկին զանոնք, ու հալածեցին զանոնք մինչև Զօրմա:

ԳԼ. ԺԵ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայելի որդիներուն և ըսէ անոնց, Երբ մտնէք ձեր բնակութեան երկիրը զոր ձեզի պիտի տամ, 3 - Եւ Տէրոջը անոյշ հոս նուիրելու համար՝ արջառներէն կամ հօտերէն պատարագ պիտի մատուցանէք Տէրոջը, ողջակէզ կամ ուխտ կատարելու զո՞՛ թէ՛ կամուտը ընծայի համար, և թէ՛ ձեր տօներուն մէջ, 4 - Այն ատեն իր զո՞՛ր Տէրոջը մատուցանողը հացի ընծայի համար հիմէնի մը չորրորդ մասը իւզով շաղուած մէկ տասանորդ բարակ ալիւր պիտի մատուցանէ: 5 - Եւ ողջակէզին կամ զո՞՛հին հետ մէկ գառի համար՝ հիմէնի մը չորրորդ մասը գինի թափելու նուէր պիտի ընես. 6 - Կամ խոյի մը համար՝ հիմէնի մը երրորդ մասը իւզով շաղուած երկու տասանորդ բարակ ալիւր հացի ընծայ պիտի ընես. 7 - Եւ թափելու նուէրի համար հիմէնի մը երրորդ մասը գինի՝ անոյշ հոսի համար Տէրոջը պիտի մատուցանես: 8 - Եւ երբ ողջակէզի համար, կամ ուխտ կատարելու զո՞՛հի համար, կամ խաղաղութեան զո՞՛հի համար գլուարակ մը մատուցանես Տէրոջը, 9 - Այն ատեն զուարակին հետ կէս հիմէն իւզող շաղուած երեք տասանորդ բարակ ալիւրէ հացի ընծայ մատուցա-

նես. 10 - Եւ թափելու նուէրի համար կէս հիմէն գինի մատուցանես. ափկա Տէրոջը անուշահոտ պատարագ մըն է: 11 - Ամէն մէկ զուարակի կամ խոյի համար, կամ ոչխարի կամ այծի համար այսպէս պիտի ըլլայ: 12 - Ձեր պատրաստելու թիւին նայելով՝ անոնց թիւին համեմատ ամէն մէկուն այնպէս պիտի ընէք: 13 - Երկրին ամէն բնակը այս բաները այնպէս պիտի ընէ, Տէրոջը անուշահոտ պատարագ մատուցանելու համար: 14 - Եւ եթէ ձեր քով պանդխտացած օտարականը, կամ ձեր ազգերուն մէջ ձեր մէջ բնակող Տէրոջը անուշահոտ պատարագ ընելու ըլլայ, ձեր բրածին պէս անիկա ալ այնպէս պիտի ընէ: 15 - Ով ժողովք, ձեզի համար և չէր *ալ պանդխտացած օտարականին համար մէկ կանոն պիտի ըլլայ. ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոնով՝ Տէրոջը առջև ինչպէս էք դուք, այնպէս պիտի ըլլայ օտարականն ալ: 16 - Ձեզի համար և ձեր քով պանդխտացած օտարականին համար մէկ օրէնք ու մէկ կարգադրութիւն պիտի ըլլայ:

17 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ այն երկիրը մտնէք ուր ձեզ պիտի տանիմ՝, 19 - Եւ ըլլայ որ երբ այն երկրին հացէն ուտէք, բարձրացնելու ընծայ մատուցանէք Տէրոջը. 20 - Ձեր առաջին խմորէն շօթ մը բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք. կալի բարձրացնելու ընծան ինչպէս կ'ընէք, այս ալ այնպէս պիտի բարձրացնէք: 21 - Ձեր առաջին խմորէն բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը ձեր ազգերուն մէջ:

22 - Իսկ եթէ սխալիք ու չընէք այս բոլոր պատուիրանքները՝ զորոնք Տէրը ըսաւ Մովսէսի, 23 - Նաև այն ամէնը զորոնք Տէրը ձեզի պատուիրեց Մովսէսի ձեռքով այն օրէն ի վեր՝ որ Տէրը պատուիրեց ձեր ազգերուն մէջ յա-ի-ի-ի-ի-ի. 24 - Եւ ըլլայ որ եթէ ժողովքը սխալմամբ յանցանք մը ընէ, այն ատեն բոլոր ժողովքը Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար՝ մէկ զուարակ պիտի մատուցանէ ըստ օրինի հացի ընծայով ու թափելու նուէրով, և մեղքի պատարագի համար այծերէն մէկ նոխալ: 25 - Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողով-

քին համար, ու թողութիւն պիտի ըլլայ անոնց, վասն զի սխալմունք էր. և անոնք իրենց սխալելուն համար իրենց ընծան Տէրոջը պատարագ բերին, ու նաև իրենց մեղքի պատարագը՝ Տէրոջը առջև. 26 - Ուստի Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին ու անոնց մէջ պանդխտացած օտարականներուն թողութիւն պիտի ըլլայ. քանզի բոլոր ժողովուրդը սխալման մէջ էր:

27 - Եւ եթէ անձ մը սխալմամբ մեղք գործէ, այն ատեն մեղքի պատարագի համար մէկ տարեկան էգ այծ մը պիտի բերէ. 28 - Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ սխալմամբ մեղք գործող անձին համար. երբ Տէրոջը առջև սխալմամբ մեղք գործէ, անոր համար քաւութիւն պիտի ընէ, ու անոր թողութիւն ըլլայ: 29 - Սխալմամբ մեղք գործողին համար թէ՛ Իսրայէլի որդիներուն մէջի բնակին համար, և թէ՛ անոնց մէջ պանդխտացած օտարականին համար, մէկ օրէնք պիտի ունենայք:

30 - Բայց այն անձը որ *յանդգնութեամբ բնակ'ընէ, թէ՛ երկրին բնակը ըլլայ և թէ՛ օտարական, անիկա Տէրը կը նախատէ. այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի, 31 - Տէրոջը խօսքը արհամարհելուն ու անոր պատուիրանքը զանց ընելուն համար այն անձը անշուշտ պիտի կորսուի. անոր անօրէնութիւնը իր վրայ պիտի ըլլայ:

32 - Եւ երբ Իսրայէլի որդիները աւնապատն էին, մարդ մը գտան որ շաբաթ օրը փայտ կը ժողվէր: 33 - Եւ անոնք որ փայտ ժողվելու վրայ գտան զանիկա, Մովսէսի ու Ահարոնի և բոլոր ժողովքին առջև բերին: 34 - Եւ բանտարկեցին զանիկա, վասն զի անոր ինչ ընելիքն ծանուցուած չէր: 35 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Այն մարդը անպատճառ պիտի մեռցուի. բոլոր ժողովքը բանակէն դուրս քարերով պիտի քարկոծեն զանիկա: 36 - Եւ բոլոր ժողովքը Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս՝ բանակէն դուրս հանեցին զանիկա, և քարերով քարկոծեցին, ու մեռաւ:

37 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 38 - Խօսէ Իսրայէլի որդիներ-

*Եբր. բարձր ձեռքով.

րուն ու ըսէ անոնց , որ իրենց ծոպեր չինեն իրենց հանդերձներուն քղանցքներուն վրայ՝ իրենց ազգերուն մէջ . ու քղանցքի ծոպերուն վրայ կապոյտ ժապաւէն մը դնեն . 39 - Եւ անկա ձեզի ծոպ պիտի ըլլայ , որպէս զի դուք տեսնէք զայն ու Տէրոջը բոլոր պատուիրանքները միտքերնիդ բերէք , և ընէք զանոնք . ու ձեր սիրտերուն և ձեր աչքերուն շահութիւններուն չհետեւիք , որոնց ետեւէն դուք *կը մտնուիք . 40 - Այնպէս որ միտքերնիդ բերէք ու ընէք իմ բոլոր պատուիրանքներս , ու սուրբ ըլլաք ձեր Աստուծոյն առջև : 41 - Ես եմ՝ ձեր Տէր Աստուածը , որ ձեզի Աստուած ըլլալու համար՝ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի . ես եմ՝ Եհովա ձեր Աստուածը :

ԳԼ. ԺԶ

Եւ Ղեւիի որդւոյն Կահաթի որդւոյն Իսահաուի որդին Կորխ , և Ռուբէնի որդիներէն Եղիաբի որդիները , Գաթան ու Աբիրոն և Փաղեթի որդին Օն †եղան , 2 - Եւ Իսրայէլի որդիներէն երկու հարիւր յիսուն հոգի ժողովքի խորհրդական գլխաւորներն անուանի մարդիկ երեւոյ հետ առնելով Մովսէսի առջև եկան , 3 - Եւ Մովսէսի ու Ահարոնի վրայ ժողովուեցան , ու ըսին անոնց , Այ՛ հերիք է ըրածնիդ . վասն զի բոլոր ժողովքը ամէնն ալ սուրբ են , և Տէրը անոնց մէջ է . և ինչո՞ւ Տէրոջը ժողովուրդին վրայ դուք ձեզ կը բարձրացնէք : 4 - Եւ երբ Մովսէս աչալսեց , իր երեսին վրայ ինկաւ . 5 - Ու խօսեցաւ Կորխի և անոր բոլոր ժողովքին՝ ըսելով , Վաղը Տէրը պիտի ցուցնէ թէ ո՞րն է իրը , և ո՞րն է սուրբը , ու զանիկ իրեն պիտի մօտեցնէ . և ո՞րը որ ինք կ'ընարէ , իրեն պիտի մօտեցնէ : 6 - Ասկա ըրէք . առէք ձեզի բուրվառներ , դուն ով Կորխ , և քու բոլոր ժողովքդ . 7 - Եւ վաղը անոնց մէջ կրակ դրէք , ու Տէրոջը առջև անոնց վրայ խունկ դրէք . և սուրբը անկա ըլլայ , զոր Տէրը կ'ընարէ . ալ հերիք է ըրածնիդ , ով Ղեւիի որդիներ : 8 - Եւ Մովսէս բաւ Կորխի , Լսեցէք , ով Ղեւիի որդիներ . 9 - Պղտի՞կ բան կ'երեւ-

նայ ձեզի՝ որ Իսրայէլի Աստուածը ձեզ իրեն մօտեցնելու համար Իսրայէլի ժողովքէն զատեց ձեզ , որպէս զի Տէրոջը խորանին պաշտօնը ընէք , և ժողովքին առջև կայնիք՝ անոնց սպասաւորութիւնը ընելու . 10 - Եւ քեզ ու քեզի հետ քու բոլոր եղբայրներդ , Ղեւիի որդիները , երեւ մօտեցուց , ու դուք քահանայութիւնն ալ կը փնտռէք : 11 - Ուրեմն դուն ու քու բոլոր ժողովքդ Տէրոջը դէմ ժողովուեցաք . և Ահարոն ո՞վ է՝ որ անոր դէմ դուք տրտունջ կ'ընէք : 12 - Եւ Մովսէս Եղիաբի որդիները , Գաթանը ու Աբիրոնը , կանչելու համար հարգ զրկեց . և անոնք ըսին , Չենք ելլեր . 13 - Մեզ անապատին մէջ մեռցնելու համար՝ կաթ ու մեղր բղխող երկրէ մը մեզ հանելդ քի՞չ բան է , որ նաև մեր վրայ տիրապետել կ'ուզես : 14 - Եւ մեզ կաթ ու մեղր բղխող երկիր մը չտարիր , ոչ ալ մեզի արտի ու այգիի ժառանգութիւն տուիր . միթէ այս մարդոց աչքէ՞րը պիտի հանես . մենք չենք ելլեր : 15 - Եւ Մովսէս խիստ բարկացաւ , ու ըսաւ Տէրոջը , Մի նայիր անոնց ընծաներուն . անոնցմէ էջ մին ալ չառի , և անոնց մէկո՞ւն չարիք մը չըրի : 16 - Եւ Մովսէս ըսաւ Կորխի , Վաղը դուն ու քու բոլոր ժողովքդ Տէրոջը առջև ներկայանաք , դուն և անոնք ու Ահարոն . 17 - Եւ առէք ամէն մէկդ ձեր բուրվառները , ու անոնց մէջ խունկ դրէք , և ամէն մէկը իր բուրվառը առնելով , այսինքն երկու հարիւր յիսուն բուրվառները , և դուն ալ ու Ահարոն ամէն մէկդ ձեր բուրվառները Տէրոջը առջև մօտեցուցէք : 18 - Եւ ամէն մէկը իր բուրվառը առնելով՝ անոնց մէջ կրակ դրին , ու անոնց վրայ խունկ դրին , և ժողովքի խորանին դուռը կայնեցան Մովսէսի ու Ահարոնի հետ : 19 - Եւ Կորխ անոնց դէմ ժողովքի խորանին դուռը ժողովեց բոլոր ժողովքին երեւցաւ :

20 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով , 21 - Այդ ժողովքին մէջէն զատուեցէք , որպէս զի շուտով կորսնցնեմ առնք : 22 - Բայց անոնք երեսնուն վրայ ինկան ու ըսին , Ով Աստուած , բոլոր մարդոց հոգի-

*Եբբ. պառնկութիւն կ'ընէք
†Եբբ. առին

Եբբ. մարմինի

ներուն Աստուածը , մէկ մարդուն մեղանչելովը՝ բոլոր ժողովքին վրայ պիտի գայ քու բարկութիւնդ :

23 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 24 - Խօսէ ժողովքին ու ըսէ , Կորիւի , Դաթանի ու Աբիրոնի բնակութեանը բոլորտիքէն հեռացէք : 25 - Եւ Մովսէս ելաւ ու Դաթանի և Աբիրոնի գնաց , և Իսրայէլի ծերերը անոր ետեւէն գացին : 26 - Եւ խօսեցաւ ժողովքին՝ ըսելով , Այդ չար մարդոց վրաններուն քովէն ետ քաշուեցէք , ու անոնց մէկ բանին մի դպչիք , որպէս զի անոնց բոլոր մեղքերովը չկորսուիք : 27 - Այսպէս անոնք Կորիւի , Դաթանի ու Աբիրոնի բնակութեանը բոլորտիքէն հեռացան . և Դաթան ու Աբիրոն և անոնց կիները ու անոնց որդիները և ընտանիքը իրենց վրաններուն դուռը ելան կայնեցան : 28 - Եւ Մովսէս ըսաւ , Ասով պիտի գիտնաք թէ Տէրն է զիս զրկողը բոլոր այս գործերը ընելու , և ոչ թէ ես ինձմէ քան ՚չ քրէ . 29 - Այսինքն՝ եթէ ասոնք ամէն մարդու մեռնելուն պէս մեռնին , և եթէ ամէն մարդու պատահածը ասոնց ալ պատահի , Տէրը զիս զրկած չէ : 30 - Բայց եթէ Տէրը *հրաշք մը ընէ , և երկիր իր բերանը բանայ ու զանոնք և անոնց բոլոր ունեցածը կլլէ , ու անոնք ողջ ողջ դժոխք իջնեն , այն ատեն պիտի գիտնաք որ այս մարդիկը Տէրը անարգեցին : 31 - Եւ եղաւ որ այս բոլոր խօսքերը խօսիլը լմնցուցածին պէս , անոնց տակի գետինը պատուեցաւ . 32 - Եւ երկիր իր բերանը բացաւ , ու զանոնք և անոնց տուները ու Կորիւի ունեցած՝ բոլոր մարդիկը և բոլոր անոնց ինչքը կլլեց : 33 - Եւ անոնք ու բոլոր անոնցները ողջ ողջ դժոխք իջան . և երկիր ծածկեց զանոնք , ու ժողովքին մէջէն կորսուեցան : 34 - Եւ անոնց բոլորտիքը եղած բոլոր Իսրայէլը անոնց ձայնէն փախան . քանզի ըսին , Չըլլայ որ երկիր մեզ ալ կլլէ : 35 - Եւ Տէրոջմէ կրակ ելաւ , ու խունկ մատուցանող երկու հարիւր յիսուն հոգին սպառեց :

36 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 37 - Խօսէ Ահարոն քահանային որդւոյն Եղիազարի , որ բուրվառները այն սյրուսին մէջէն վերցնէ . և

դուն անոնց ղէջ ելա՞ծ կրակը անդին ցրուէ . քանզի անոնք սուրբ եղան : 38 - Այդ իրենց հոգիներուն դէմ՝ մեղք գործողներուն բուրվառներէն թիթեղներ շինեն՝ սեղանը պատելու համար . վասն զի անոնք Տէրոջը առջև մատուցուելով՝ սուրբ եղած են . և Իսրայէլի որդիներուն նշան պիտի ըլլան : 39 - Ու Եղիազար քահանան այն սյրուած մարդոց մատուցած պղնձէ բուրվառները առաւ . և զանոնք սեղանը պատելու համար թիթեղներ շինեցին . 40 - (Իսրայէլի որդիներուն յիշատակ ըլլալու համար , որպէս զի Ահարոնի սերունդէն չեղող օտար մէկը Տէրոջը առջև խունկ մատուցանելու չմտենայ , և Կորիւի պէս ու անոր ժողովքին պէս չըլլայ .) Ինչպէս Տէրը ըսաւ անոր՝ Մովսէսի ձեռքով :

41 - Եւ հետեւեալ օրը Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Մովսէսի դէմ՝ ու Ահարոնի դէմ՝ արտունջ ըրին՝ ըսելով , Դուք Տէրոջը ժողովուրդը մեռցուցիք : 42 - Եւ եղաւ որ երբ ժողովքը Մովսէսի ու Ահարոնի դէմ՝ ժողովուած էին , դէպ ի ժողովքի խորանը նայեցան , և ահա ամպը ծածկեց զայն , ու Տէրոջը փառքը երեւցաւ : 43 - Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքի խորանին առջև եկան : 44 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 45 - Այդ ժողովքին մէջէն ելէք , որպէս զի շուտով սպառեմ զանոնք . և ասոնք երեսունու վրայ ինկան : 46 - Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի , Բուրվառը առ , ու մէջը սեղանին վրայէն կրակ դիր , և ղրա՞ խունկ դիր , ու շուտով ժողովքը գնա , ու անոնց համար քաւութիւն ըրէ , վասն զի Տէրոջմէ բարկութիւն ելաւ . ժանտախար սկսաւ : 47 - Եւ Ահարոն Մովսէսի ըսածին պէս քաւութիւն առաւ , ու ժողովքին մէջ վազեց , և ահա ժանտախար սկսած էր ժողովուրդին մէջ , և ղրա՞ խունկ դրաւ , ու ժողովուրդին համար քաւութիւն ըրաւ . 48 - Եւ մեռելներուն ու ողջերուն մէջտեղ կայնեցաւ . ու ժանտախար դադարեցաւ : 49 - Եւ ժանտախտէն մեռածները տասներչորս հազար եօթը հարիւր հոգի էին , Կորիւի բանին համար մեռածներէն զատ : 50 - Եւ Ահարոն դարձաւ Մովսէսի՝ ժողովքի խորանին դուռը , ու ժանտախար դադարեցաւ :

*ԵՔԸ. ստեղծագործութիւն

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն, ու անոնցմէ իբէնջ հայրերուն տուներուն համեմատ մէյմէկ գաւազան, այսինքն իրենց հայրերուն տուներուն բոլոր իշխաններէն տասուերկու գաւազան, առ. ամէն մարդուն անունը իր գաւազանին վրայ գրէ: 3 - Եւ Ահարոնի անունը Ղեւիի գաւազանին վրայ պիտի գրես. վասն զի անոնց հայրերուն տանը իշխանին համար մէկ գաւազան պիտի ըլլայ: 4 - Եւ զանոնք ժողովքի խորանը՝ վկայութիւնին առջև դնես, ուր ձեզի պիտի հանդիպիմ: 5 - Եւ պիտի ըլլայ որ իմ ընտրած մարդուն գաւազանը պիտի ծաղկի. ու պիտի դադրեցնեմ ինծմէ Իսրայէլի որդիներուն տրտունջը՝ որոնք կը տրտնջեն ձեր վրայով:

6 - Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդիներուն. ու անոնց բոլոր իշխանները իրենց հայրերուն տուներուն համեմատ տասուերկու գաւազան տուին անոր, ամէն մէկ իշխանին համար մէյմէկ գաւազան, և Ահարոնի գաւազանը անոնց գաւազաններուն մէջ էր: 7 - Եւ Մովսէս գաւազանները Տէրոջը առջև դրաւ վկայութեան խորանին մէջ: 8 - Եւ եղաւ որ հեռեւեալ օրը Մովսէս վկայութեան խորանը մտաւ. և ահա Ղեւիի տանը կողմէն արեւմտեայ Ահարոնի գաւազանը ծաղկեցաւ ու ծլեցաւ և ծաղիկ բացաւ ու նուշեր հասցուց: 9 - Եւ Մովսէս բոլոր գաւազանները Տէրոջը առջևէն դուրս հանեց Իսրայէլի բոլոր որդիներուն առջև. ու անոնք տեսան, և ամէն մէկը իր գաւազանը առաւ: 10 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ահարոնի գաւազանը վկայութիւնին առջև ետ դարձուր, որպէս զի ապաստամբներուն նշան ըլլալու համար պահուի. ու անոնց տրտունջը ինծմէ վերցնես, որպէս զի չմեռնին: 11 - Եւ Մովսէս Տէրոջը իրեն պատուիրածին պէս բրաւ, այնպէս բրաւ: 12 - Եւ Իսրայէլի որդիները խօսեցան Մովսէսի ըսելով, Ահա կը մեռնինք, կը կորսուինք. մենք ամէնքս կը կորսուինք: 13 - Ամէն ով որ Տէրոջը խորանին մօտենայ՝ կը մեռնի. ամէնքս ալ պիտի մեռնինք:

Եւ Տէրը ըսաւ Ահարոնի, Դուն ու քեզի հետ քու որդիներդ և քու հօրդ տունը սրբարանին անօրէնութիւնը պիտի կրէք. և դուն ու քեզի հետ քու որդիներդ ձեր քահանայութեան անօրէնութիւնը պիտի կրէք: 2 - Եւ քու հօրդ ցեղէն, այսինքն Ղեւիի ցեղէն, եղող քու եղբայրներդ մօտեցնես, որպէս զի քեզի հետ միանան, ու քեզի սպասաւորութիւն ընեն. և դուն ու քեզի հետ քու որդիներդ վկայութեան խորանին առջև պիտի ըլլաք: 3 - Եւ քու պահպանութիւնը ու բոլոր խորանին պահպանութիւնը պիտի պահես. միայն թէ սրբարանին անօթներուն ու սեղանին չմօտենան, որպէս զի ոչ անոնք մեռնին՝ ոչ ալ դուք: 4 - Եւ անոնք ձեզի հետ պիտի միանան, ու ժողովքի խորանին պահպանութիւնը պիտի պահես՝ խորանին ամէն պաշտօնին նայելով. և օտար մէկը պիտի չմօտենայ ձեզի: 5 - Եւ սրբարանին պահպանութիւնը ու սեղանին պահպանութիւնը պիտի պահէք, որպէս զի ալ Իսրայէլի որդիներուն վրայ բարկութիւն չըլլայ: 6 - Եւ ահա ես Իսրայէլի որդիներուն մէջէն ձեր եղբայրները, Ղեւտացիները, առի. անոնք ձեզի Տէրոջը համար պարգև տրուած են, որպէս զի ժողովքի խորանին պաշտօնը ընեն: 7 - Եւ դուն ու քեզի հետ քու որդիներդ սեղանին բոլոր բաներուն համար և վարագուրին ներսը եղած բաներուն համար ձեր քահանայութիւնը պիտի պահէք, ու պաշտօնը կատարէք. ձեր քահանայութիւնը չեղբ պարգեւի պաշտօն տուի, և մօտեցող օտարականը պիտի մեռցուի:

8 - Եւ Տէրը խօսեցաւ Ահարոնի, Եւ ես ահա Իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներէն իմ ընծաներուն պահպանութիւնը քեզի տուի. և անոնք օժման իրաւունքի համար քեզի և քու որդիներուդ տուի յաւիտենական կանոնով: 9 - Ամէնք քու կողմէն պիտի ըլլան ամենատուր բաներէն՝ *որ չեն այրուիր. անոնց ամէն հացի ընծաներուն, անոնց ամէն մեղքի պատարագներուն և անոնց ամէն յանցանքի պատարագներուն բոլոր ընծաները, զը-

*Եբր. կրակէն

րոնք ինձի պիտի հատուցանեն, ամենատուրք են քեզի ու քու որդիներուդ համար: 10 - Ամենատուրք տեղին մէջ պիտի ուտես զայն . ամէն արու պիտի ուտէ զայն . անիկա սուրբ պիտի ըլլայ քեզի: 11 - Այս ալ քուկդ պիտի ըլլայ . անոնց պարգեւներուն բարձրացընելու ընծան, և Իսրայէլի որդիներուն բոլոր երեքցնելու ընծաները . քեզի և քեզի հետ քու որդիներուդ ու քու աղջիկներուդ սուր զանոնք յաւիտենական կանոնով . քու տանդ մէջ ամէն մաքուր եղողը անկէ պիտի ուտէ: 12 - Ամէնէն աղէկ իւզին և ամէնէն աղէկ գինիին ու ցորենին բոլոր երախայրիները, զորոնք Տէրոջը պիտի մատուցանեն, քեզի սուր: 13 - Անոնց երկրին մէջ եղած ամէն քերտերու երախայրիները, զորոնք Տէրոջը պիտի բերեն, քուկդ պիտի ըլլան . քու տանդ մէջ ամէն մաքուր եղողը անկէ պիտի ուտէ: 14 - Իսրայէլի մէջ ամէն նուիրուած բանը քուկդ պիտի ըլլայ: 15 - Ամէն մարմինի ամէն արգանդ բացողը զոր Տէրոջը կ'ընծայեն, թէ՛ մարդ ըլլայ և թէ՛ անասուն, քուկդ պիտի ըլլայ . միայն թէ մարդուն առջինեկը անշուշտ պիտի փրկես . և անմաքուր անասունին առջինեկն ալ պիտի փրկես: 16 - Ու երբ փրկուելու պիտի մտնէ ամէն սուտ ըլլան, արբարանին սիկզին համեմատ հինգ սիկզ արծաթի * գնով պիտի փրկես . «Ի՛նչ քսան կերատ է: 17 - Բայց կովին առջինեկը և ոչխարին առջինեկը կամ՝ այծին առջինեկը պիտի չփրկես . անոնք սուրք են . անոնց արիւնը սեղանին վրայ պիտի սրսկես, ու անոնց ճարպը պիտի սյրես անուշահոտ պատարագ ըլլալու Տէրոջը . 18 - Եւ անոնց միւս քուկդ պիտի ըլլայ, երեքցնելու երբուծին ու աջ զիտին քուկդ ըլլալուն պէս: 19 - Սուրբ բաներէն ամէն բարձրացնելու ընծաները, զորոնք Իսրայէլի որդիները Տէրոջը կը մատուցանեն, քեզի և քեզի հետ քու որդիներուդ ու աղջիկներուդ սուր յաւիտենական կանոնով . անիկա Տէրոջը առջև քեզի և քեզի հետ քու սերունդիդ աղի ուխտ մըն է յաւիտեան: 20 - Եւ Տէրը ըսաւ Ահարոնի, Անոնց երկրին մէջ դուն ժառանգութիւն պիտի չունենաս, ու անոնց մէջ բա-

ժին չունենաս . Իսրայէլի որդիներուն մէջ քու բաժինդ ու ժառանգութիւնդ էս էմ:

21 - Եւ ահա Իսրայէլի բոլոր տասանորդը Ղեւիի որդիներուն սուր ժառանգութեան համար իրենց պաշտօնին փոխարէն, ժողովքի խորանին պաշտօնը ընելուն համար: 22 - Եւ Իսրայէլի որդիները ա՛լ ժողովքի խորանին պիտի չմօտենան, որպէս զի մեղք չկրեն ու չմեռնին: 23 - Եւ ժողովքի խորանին պաշտօնը Ղեւտացիները պիտի ընեն, ու իրենց անօրէնութիւնը իրենք պիտի կրեն . ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն պիտի ըլլայ, որ անոնք Իսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն չունենան: 24 - Քանզի Իսրայէլի որդիներուն տասանորդը, զորոնք Տէրոջը կ'ընծայեն, Ղեւտացուց ժառանգութիւն տուի . այս պատճառաւ անոնց համար ըսի որ Իսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն չունենան:

25 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 26 - Այսպէս խօսէ Ղեւտացիներուն ու ըսէ անոնց, Երբ Իսրայէլի որդիներէն տասանորդը առնէք զոր անոնց կողմանէ ձեզի ժառանգութեան համար տուի, այն ատեն անկէ տասանորդին տասներորդ մասը բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը: 27 - Եւ այս ձեր բարձրացնելու ընծան կալի ցորենի պէս և հնձանի բերքի պէս պիտի սեպուի ձեզի: 28 - Այսպէս Իսրայէլի որդիներէն ձեր առած բոլոր տասանորդներէն դուք ալ բարձրացընելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը . և անոնցմէ՛ Տէրոջը բարձրացնելու ընծան Ահարոն քահանային պիտի տաք: 29 - Բոլոր ձեզի եղած ընծաներէն Տէրոջը ամէն բարձրացնելու ընծան բոլորովին անոր ամենալաւէն, անոր սուրբ մասէն, պիտի մատուցանէք: 30 - Ուստի պիտի ըսես անոնց, Երբ անոր ամենալաւէն մատուցանէք, այն ատեն հոգեւոր կալի արդիւնքի պէս, ու հնձանի արդիւնքի պէս սեպուի Ղեւտացիներուն: 31 - Եւ ամէն տեղ պիտի ուտէք զայն դուք ու ձեր ընտանիքները . վասն զի ժողովքի խորանին մէջ ձեր ընտանիք պաշտօնին փոխարէն ձեր վարձքն է այն: 32 - Եւ անկէ ամենալաւը մատուցանելէն ետքը անոր համար մեղք պիտի չկրէք, ու Իսրայէլի

* Եբբ. քու արժեքուցածովդ

որդիներուն սուրբ բաները չպզծէք , որպէս զի չմեռնիք :

ԳԼ. ԺԹ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ա-
 Տարոնի՝ ըսելով , 2 - Այս է օրէնքին
 կանոնը զոր Տէրը պատուիրեց՝ ըսելով ,
 Խօսէ Իսրայէլի որդիներուն որ քեզի
 կարմիր երինջ մը բերեն անարատ ու
 անբիծ , որուն վրայ լուծ դրուած չըլ-
 լայ : 3 - Եւ Եղիազար քահանային պի-
 տի տաք զանհկա , որպէս զի բանակէն
 դուրս հանէ , ու իր առջև մորթեն զա-
 նհկա : 4 - Եւ Եղիազար քահանան իր
 մատովը անոր արիւնէն պիտի առնէ ,
 ու դէպ ի ժողովքի խորանին առջեւի
 կողմը եօթը անգամ պիտի սրսկէ անոր
 արիւնէն : 5 - Ետքը իր աչքին առջև
 պիտի սյրեն երինջը . անոր մորթը ու
 միսը և անոր արիւնը ազրովը մէկտեղ
 պիտի սյրեն : 6 - Եւ քահանան պիտի
 առնէ եղևին փայտ , զոպայ ու կրկնակի
 կարմիր , և երինջին սյրուած կրակին
 մէջ պիտի նետէ : 7 - Եւ քահանան
 իր հանգերձները ու իր մարմինը ջրով
 պիտի լուայ , ու ետքը բանակը մտնէ .
 և քահանան մինչև իրիկուն անմա-
 քուր պիտի ըլլայ : 8 - Եւ զանհկա սյ-
 րողը իր հանգերձները ու իր մարմինը
 ջրով պիտի լուայ , և մինչև իրիկուն
 անմաքուր ըլլայ : 9 - Եւ մաքուր մարդ
 մը երինջին մոխիրը պիտի ժողվէ , ու
 բանակին դուրսիցին մաքուր տեղ մը
 դնէ . և Իսրայէլի որդիներուն ժողով-
 քին համար պիտի պահուի , մեղաց հա-
 մար մաքրութեան ջուր ըլլալու : 10 -
 Եւ երինջին մոխիրը ժողվողը իր հան-
 գերձները պիտի լուայ , ու մինչև իրի-
 կուն անմաքուր ըլլայ . և ասիկա Իս-
 րայէլի որդիներուն ու անոնց մէջ պան-
 դրիտացող օտարականին համար յա-
 ւախենական կանոն պիտի ըլլայ :

11 - Ով որ մեռած մարդու մը մար-
 մինին դպչի , եօթը օր անմաքուր պիտի
 ըլլայ : 12 - Անհկա *անով զինք մաք-
 րել պիտի տայ երրորդ օրը , և եօթ-
 ներորդ օրը մաքուր պիտի ըլլայ . բայց
 եթէ չմաքրուի երրորդ օրը , եօթնե-
 րորդ օրը մաքուր պիտի չըլլայ : 13 - Ով
 որ մեռած մարդու մը մարմինին դպչի՝
 ու ինքզինք չմաքրէ , Տէրոջը խորանը

կը պզծէ . և այն անձը Իսրայէլէ պիտի
 կորսուի . անոր վրայ մաքրութեան
 ջուրը չսրսկուելուն համար անհկա
 անմաքուր է . իր անմաքրութիւնը տա-
 կաւին իր վրայ է : 14 - Վրանի մէջ
 մեռնող մարդուն համար օրէնքը այս
 է . այն վրանին մէջ ամէն մտնողը և
 այն վրանին մէջ ամէն եղողը եօթը օր
 անմաքուր պիտի ըլլայ : 15 - Եւ ամէն
 բաց ամանը որ իր վրայ կապուած խուփ
 չունի , անմաքուր պիտի ըլլայ : 16 -
 Եւ ով որ դպչի դաշտի վրայ սրով
 սպաննուածի մը , կամ իր մահու
 ուածի մը , կամ մարդու ոսկորի մը և
 կամ գերեզմանի մը , եօթը օր անմա-
 քուր պիտի ըլլայ : 17 - Եւ անմաքուր
 եղողին համար՝ այն մեղաց համար սյ-
 րուած էրինջն մոխիրէն առնելով՝ ա-
 մանի մը մէջ վրան կենդանի ջուր
 դնեն . 18 - Եւ մաքուր մարդ մը զո-
 պայ պիտի առնէ , ու զայն ջուրը
 խոթէ , և վրանին վրայ ու բոլոր ա-
 մաններուն վրայ և հոն եղած մարդոց
 վրայ , ու ոսկորի մը կամ սպաննուածի
 մը կամ մեռածի մը և կամ գերեզ-
 մանի մը դպչողին վրայ պիտի սրսկէ :
 19 - Եւ մաքուր մարդը պիտի սրսկէ
 անմաքուրին վրայ երրորդ օրը ու եօթ-
 ներորդ օրը . և եօթներորդ օրը զա-
 նհկա պիտի մաքրէ , անհկա ալ իր
 հանգերձները պիտի լուայ ու ջրով
 լուացուի , և իրիկունը մաքուր ըլլայ :
 20 - Բայց այն մարդը որ անմաքուր ըլ-
 լայով չմաքրուի , այն անձը ժողով-
 քին մէջէն պիտի կորսուի , վասն զի Տէ-
 րոջը սրբարանը պզծեց . անոր վրայ
 մաքրութեան ջուրը չսրսկուեցաւ , ա-
 նհկա անմաքուր է : 21 - Եւ յաւախե-
 նական կանոն մը ըլլայ անոնց , որ մաք-
 րութեան ջուրը սրսկողը իր լաթերը
 պիտի լուայ . ու մաքրութեան ջուրին
 դպչողը մինչև իրիկուն անմաքուր պի-
 տի ըլլայ : 22 - Եւ անմաքուր անձը
 ինչ բանի որ դպչի , այն ալ անմաքուր
 պիտի ըլլայ . ու անոր դպչող մարդը
 մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ :

ԳԼ. Ի

Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժո-
 ղովքը Սին անապատը եկան առաջին
 ամսուն , ու ժողովուրդը կապէսի մէջ
 իջեւան բրաւ . և Մարիամ հոն վախ-
 ճանեցաւ , ու հոն թաղուեցաւ :

Այսինքն , մաքրութեան ջրով

2 - Եւ ժողովքին խօսելու ջուր չկար. ու Մովսէսի և Ահարոնի վրայ հաւաքուեցան: 3 - Եւ ժողովուրդը Մովսէսի հետ վիճելով խօսեցան ու ըսին, Երանի՛ թէ մենք ալ մեռնելինք երբ մեր եղբայրները մեռան Տէրոջը առջև: 4 - Եւ ինչո՞ւ Տէրոջը ժողովուրդը այս անապատը բերիք, որ մենք ու մեր անասունները հոն մեռնինք: 5 - Եւ ինչո՞ւ մեզ Եգիպտոսէ հանեցիք՝ մեզ այս գեշ տեղը բերելու համար. հո՞նք ոչ սերմ ցանելու տեղ է, ոչ ալ թզենիներու ու այգիներու և նունենիներու. խմելու ջուր անգամ չկայ: 6 - Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքին առջեւէն ելելով ժողովքի խորանին դուռը գացին, ու իրենց երեսին վրայ ինկան. և Տէրոջը փառքը անոնց երեւցաւ:

7 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 8 - Գաւազանը առ, ու ժողովքը ժողովէ դուռն ու քու եղբայրդ Ահարոն, և անոնց աչքերուն առջև խօսեցէք ապառաժին, ու իր ջուրը պիտի տայ. և դուռն ապառաժէն ջուր պիտի հանես անոնց, ու ժողովքին և անոնց անասուններուն խմցնես: 9 - Եւ Մովսէս առաւ գաւազանը Տէրոջը առջեւէն, ինչպէս իրեն պատուիրեց: 10 - Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքը ապառաժին առջև ժողովեցին. և ըսաւ անոնց, Լսեցէք հիմա, ով ապատամբներ, ձեզի այս ապառաժէն ջուր հանենք: 11 - Եւ Մովսէս իր ձեռքը վերցուց, ու գաւազանովը երկու անգամ ապառաժին զարկաւ. և առատորէն ջուր ելաւ, և ժողովքը ու անոնց անասունները խմեցին:

12 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի, որովհետեւ ինծի չհաւատացիք Իսրայէլի որդիներուն աչքերուն առջև զիս *փառաւորելու, անոր համար այս ժողովուրդը դուք պիտի չտանիք այն երկիրը զոր անոնց տուի:

13 - †Մերիպայի ջուրը այս է. վասն զի Իսրայէլի որդիները Տէրոջը դէմ վիճեցան, և ինք փառաւորուեցաւ անոնց մէջ:

14 - Եւ Մովսէս Կադէսէ դեպտաններ զրկեց Եգիպտի թագաւորին «...», Այսպէս կ'ըսէ քու եղբայրդ Իսրայէլ, Մեզի պատահած բոլոր նեղու-

թիւնը գիտես. 15 - Ինչպէս մեր հայրերը Եգիպտոս իջան, և բնակեցանք Եգիպտոսի մէջ շատ տարեք. և Եգիպտացիք չարչարեցին մեզ ու մեր հայրերը: 16 - Եւ երբ մենք Տէրոջը աղաղակեցինք, լսեց մեր ձայնը. և հրեշտակ մը զրկեց, ու մեզ Եգիպտոսէ հանեց. և ահա մենք քու սահմանիդ ծայրի Կադէս քաղաքին մէջ ենք. 17 - Շնորհք ըրէ, անցնինք քու երկրէդ. արտերէն ու այգիներէն պիտի չանցնինք, և հորերէն ջուր պիտի չխմենք. արքունական ճամբայէն պիտի երթանք, աջ կամ ձախ կողմը պիտի չխտարինք՝ մինչև որ քու սահմանէդ անցնինք: 18 - Եւ Եգիպտոսը ըսաւ անոր, *Իմ երկրէս՝ պիտի չանցնիս, ապա թէ ոչ՝ սրով քու դէմդ կ'ելլեմ: 19 - Եւ Իսրայէլի որդիները ըսին անոր, Մենք մեծ ճամբայէն կ'անցնինք, և եթէ ես ու իմ անասուններս քու ջուրէդ խմենք, անոր գինը կը հատուցանեմ. առանց ուրիշ բան մը ընելու իմ սոքերովս կ'անցնիմ: 20 - Եւ անիկա ըսաւ, Պիտի չանցնիս. և Եգիպտոս մեծ բազմութիւնով ու հզօր ձեռքով անոնց դէմը ելաւ: 21 - Այսպէս Եգիպտոս իր սահմանէն Իսրայէլի ճամբայ տալ չուզեց. ուստի Իսրայէլ զարձաւ անկէ:

22 - Եւ Կադէսէ չուեցին, ու Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Հովրլեռը եկան: 23 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի Հովրլեռը՝ Եգիպտի երկրին սահմանին քով ըսելով, 24 - Ահարոն իր ժողովուրդին պիտի խառնուի. քանզի Մերիպայի ջուրին քով իմ հրամանիս դէմ ապատամբութիւն ընելնուդ համար պիտի չմտնէ այն երկիրը զոր Իսրայէլի որդիներուն տուի: 25 - Ահարոնը ու անոր որդին Եղիազարը առ, ու Հովրլեռը հանէ զանոնք. 26 - Եւ Ահարոնը իր զգեստներէն մերկացուր, ու անոր որդւոյն Եղիազարի հագցուր զանոնք. վասն զի Ահարոն իր ժողովուրդին պիտի խառնուի, ու հոն մեռնի: 27 - Եւ Մովսէս Տէրոջը պատուիրածին պէս ըրաւ. ու բոլոր ժողովքին աչքին առջև Հովրլեռը ելան: 28 - Եւ Մովսէս մերկացուց Ահարոնը իր զգեստներէն, ու անոր որդւոյն Եղիազարի հագցուց զանոնք. և Ահարոն հոն լեռանը գլուխը

*Եբբ. սրբելու
†Այսինքն, Վիճաբանութեան

*Եբբ. Ինծմէ

մեռաւ . ու Մովսէս ու Եղիազար լեռնէն իջան: 29 - Եւ երբ բոլոր ժողովքը տեսան որ Ահարոն մեռաւ , Իսրայէլի բոլոր տունը Ահարոնի համար երեսուն օր լացին :

ԳԼ. ԻԱ.

Եւ հարաւային կողմը բնակող Արադի *Քանանացի թագաւորը լսելով որ Իսրայէլ Աթարիմի ճամբայէն կու գայ, Իսրայէլի հետ պատերազմեցաւ , և անոնցմէ գերիներ տուաւ : 2 - Եւ Իսրայէլ ուխտ բրաւ Տէրոջը ու բաւաւ, Եթէ այս ժողովուրդը իմ ձեռքս մատնես , անոնց քաղաքները †բոլորովին պիտի կորսնցնեմ: 3 - Եւ Տէրը Իսրայէլի ձայնը լսեց , ու Քանանացիները անոր յետէ մատնեց . և Իսրայէլ բոլորովին կորսնցուց զանոնք ու անոնց քաղաքները , և այն տեղին անունը ‡Հօրմա դրաւ :

4 - Ու Եգովմի երկրին բոլորտիքէն անցնելով Հովր լեռնէն Կարմիր ծովուն ճամբան չուեցին . ու ճամբուն մէջ ժողովուրդին սիրտը նեղացաւ : 5 - Եւ ժողովուրդը Աստուծոյ դէմ ու Մովսէսի դէմ խօսեցան՝ ըսելով, Ինչո՞ւ մեզ Եգիպտոսէ հանեցիք՝ որ անապատին մէջ մեռնինք. քանզի հաց չկայ, ջուր չկայ . և այս չնչին հացէն մեր սիրտը զրուեր է: 6 - Եւ Տէրը ժողովուրդին վրայ կիզող օձեր զրկեց , ու խածին ժողովուրդը , այնպէս որ Իսրայէլէ շատ ժողովուրդ մեռաւ : 7 - Եւ ժողովուրդը Մովսէսի եկան ու բռին, Տէրոջը դէմ ու քեզի դէմ խօսելովնիս մեղանչեցինք . աղօթք բրէ Տէրոջը , որ մեր վրայէն օձերը վերցնէ . և Մովսէս ժողովուրդին համար աղաչեց: 8 - Եւ Տէրը բաւ Մովսէսի, Քեզի կիզող օձ մը շինէ , ու զանհկա ձողի մը վրայ դիր . և ըլլայ թէ ով որ խածնուի՝ անոր նայի ու ապրի: 9 - Եւ Մովսէս պղնձէ օձ մը շինեց , ու զանհկա ձողի մը վրայ դրաւ . և եղաւ որ օձ մը երբ մարդ մը խածնէր, անհկա պղնձէ օձին նայածին պէս կ'առողջանար :

10 - Եւ Իսրայէլի որդիները չուեցին , ու Որովթի մէջ իջեւան բրին :

*Կա՛մ , Քանանիս
†Կա՛մ , պիտի նզովեմ
‡Այսինքն , նզովք էմ , խալաւ կործանոււմ

11 - Եւ Որովթէ չուեցին , ու Իյէւաբարիմի մէջ դէպ ի անբեւեւան կողմը Մովարի դիմացի անապատին մէջ , իջեւան բրին: 12 - Անկէ ալ չուեցին և Չարեդ ձորին մէջ իջեւան բրին:

13 - Անկէ չուեցին, ու իջեւան բրին Աւնոնի միւս կողմը այն անապատին մէջ որ Ամօրհացուց սահմանէն կ'ելլէ, վասն զի Աւնոն Մովաբացուց սահմանն է, Մովաբացուց ու Ամօրհացուց մէջտեղ : 14 - Անոր համար Տէրոջը պատերազմներուն գիրքին մէջ կ'ըսուի , Սուֆայի մէջ Վասէպը , Ու Աւնոնի գետերը ,

15 - Եւ Արի կեցած տեղը վազող Ու Մովարի սահմանը կայացող Գետերուն յորձանքը :

16 - Եւ անկէ Չրհորը ելան . տարիս այն ջրհորն է որու համար Տէրը ըսեր էր Մովսէսի , Ժողովուրդը ժողովէ , ու ես անոնց ջուր պիտի տամ . 17 - Այն ատեն Իսրայէլ այս երգը երգեց .

Ով հոր, բղխէ . երգեցէք անոր .

18 - Հօրը իշխանները փորեցին, ժողովուրդին ազնուականները օրէնսդրին հրամանովը՝ Իրենց գաւազաններովը փորեցին զայն :

19 - Եւ անապատէն դէպ ի Մաթանա , ու Մաթանայէ դէպ ի Նասայիէլ , ու Նասայիէլէ դէպ ի Բամօթ , 20 - Եւ Բամօթէ Մովարի դաշտին մէջ դէպ ի *Եսիմոն նայող Փասգայի գագաթը եղած հովիտը ըսեցին :

21 - Եւ Իսրայէլ դեսպաններ զրկեց Ամօրհացուց Սեհոն թագաւորին՝ ըսելով , 22 - Քու երկրէդ անցնինք . արտիկամ այգիի մէջ չենք մտներ , հորն ջուրէ չենք խմեր . մինչև քու սահմանէդ անցնելնիս արքունական ճամբայէն կ'երթանք : 23 - Եւ Սեհոն իր սահմանէն ճամբայ շտուաւ Իսրայէլի հապա Սեհոն իր բոլոր ժողովուրդը ժողովեց , և դէպ ի անապատը Իսրայէլի դէմը ելաւ , ու Յասաս եկաւ , և Իսրայէլի հետ պատերազմեցաւ : 24 - Եւ Իսրայէլ սուրի բերնէ անցուց զանհկա , ու տիրեց անոր երկրին, Աւնոնէ մինչև Յարսկ , մինչև Ամմոնի որդիներուն երկրէ . վասն զի Ամմոնի որդիներուն սահմանը դժուարին էր : 25 - Եւ Իսրայէլ բոլոր այս քաղաքները տուաւ

*Կա՛մ , անապատը

ու Իսրայէլ Ամօրհացւոց բոլոր քաղաքներուն մէջ բնակեցաւ, Եսերոնի մէջ ու անոր բոլոր գեղերուն մէջ. 26 - Քանզի Եսերոն Ամօրհացւոց Սեհոն թագաւորին քաղաքն էր. վասն զի անիկա Մովաբի առաջուան թագաւորին հետ պատերազմելով, անոր ձեռքէն անոր բոլոր երկիրը մինչև Առնոն առած էր: 27 - Անոր համար առակ խօսողները կ'ըսեն.

Եսերոն եկէք.

Թող Սեհոնի քաղաքը շինուի ու պատրաստուի.

28 - Վասն զի Եսերոնէ կրակ ելաւ,

Ո՛վ Սեհոնի քաղաքէն բոց.

Մովաբի Արը պրեց;

Ո՛վ Առնոնի բարձր տեղերուն տէրերը:

29 - Վա՛յ քեզ, Մովաբ,

Ով Քամովսի ժողովուրդ, կորսուեցար.

Իր փախած որդիները ու աղջիկները

Ամօրհացւոց Սեհոն թագաւորին գերութեան տուաւ.

30 - Զանոնք նետերով զարկինք.

Եսերոն կորսուեցաւ մինչև Իերոն, և կորսնցուցինք զանոնք

Մինչև Մեդաբայի քով եղած Կօփա:

31 - Այսպէս Իսրայէլ Ամօրհացւոց երկիրը բնակեցաւ: 32 - Եւ Մովսէս հօրդ զրկեց Յազերը լրտեսելու, ու անոր գեղերը առին, և հոն եղած Ամօրհացիները վռնատեցին:

33 - Եւ դարձան ու Բասանի ճամբան ելան. և Բասանի Ովգ թագաւորը՝ ինք ու իր բոլոր ժողովուրդը անոնց դէմ Եգրայի մէջ՝ պատերազմի ելան:

34 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Անկէ մի վախնար. քանզի քու ձեռքդ մատնեցի զանիկա ու անոր բոլոր ժողովուրդը և անոր երկիրը. և դուն Եսերոնի մէջ բնակող Ամօրհացւոց Սեհոն թագաւորին ըրածիդ պէս պիտի ընես անոր:

35 - Այսպէս զարկին զանիկա և անոր որդիները ու անոր բոլոր ժողովուրդը, այնպէս որ մէկն ալ չմնաց. և անոր երկրին տիրեցին:

ԳԼ. ԻԲ

Եւ Իսրայէլի որդիները չուեցին, ու Մովաբի դաշտերուն մէջ Յորդանա-

նու անդի կողմը Երիքովի գետի իջեւան ըրին:

2 - Եւ Սեպփորի որդին Բաղակ տեսաւ այն ամէնը զորոնք Իսրայէլ ըրաւ Ամօրհացւոց:

3 - Եւ Մովաբ խիստ վախցաւ ժողովուրդէն, վասն զի շատուոր էին. ու Մովաբ Իսրայէլի որդիներուն երեսէն տագնապի մէջ էր:

4 - Եւ Մովաբ Մագիամու ծերերուն ըսաւ, Հիմա այս ժողովուրդը պիտի լզեն մեր բոլորաիքը եղած ամէնը, ինչպէս արջաուր դաշտին խտոր կը լզէ:

Եւ Սեպփորի որդին Բաղակ Մովաբի թագաւորն էր այն ատեն:

5 - *Եւ Բէովրի որդւոյն Բաղաամի դեսպաններ զրկեց Փաթուր քաղաքը, (որուն ժողովուրդին որդւոցը երկիրը, Գեաին եզերքն էր), զանիկա կանչելու և բսելու, Ահա Եգիպտոսէ ժողովուրդ մը ելաւ.

ահա երկրին երեսը ծածկեց, և իմ դիմացս կը նստի. 6 - Ուստի հիմա կ'աղաչեմ, եկուր, ինծի համար անիծէ այս ժողովուրդը. քանզի անիկա ինծմէ զօրաւոր է.

Թերեւս կարող ըլլամ զանիկա զարնել, ու երկրէս վռնտեմ զանիկա. վասն զի գիտեմ որ քու օրհնածդ օրհնեալ է, և քու անիծածդ՝ անիծեալ:

7 - Եւ Մովաբի ծերերը ու Մագիամու ծերերը իրենց ձեռքերուն մէջ հմայութեան վարձքերով գացին, և Բաղաամի եկան ու Բաղակի խօսքերը ըսին անոր:

8 - Եւ անիկա ըսաւ անոնց, Այս գիշեր հոս մնացէք. և Տէրը ինչ որ ինծի խօսելու ըլլայ, անոր համեմատ պատասխան պիտի տամ ձեզի. ու Մովաբի իշխանները Բաղաամի քով մնացին:

9 - Եւ Աստուած Բաղաամի եկաւ ու ըսաւ, Ո՛վ են այդ քու քովդ եղած մարդիկը:

10 - Եւ Բաղաամ ըսաւ Աստուծոյ, Մովաբի թագաւորը Սեպփորեան Բաղակ քան ինծի զրկեց՝ ըտե՛ւ՛ւ, 11 - Ահա Եգիպտոսէ ելող ժողովուրդը երկրին երեսը ծածկեց. հիմա եկուր, անիծէ զանիկա ինծի համար, որ թերեւս կարող ըլլամ անոր յաղթել ու զանիկա վռնտել:

12 - Եւ Աստուած ըսաւ Բաղաամի, Ատոնց հետ չերթաս, ժողովուրդը չանիծես. վասն զի անիկա օրհնեալ է:

13 - Եւ Բաղաամ առ-

*Այս, Եւ Փաթուր քաղաքը դեսպաններ զրկեց Բէովրի որդւոյն Բաղաամի՝ որուն հայրենիքը Գեաին եզերքն էր

տուանց ելաւ , ու ըսաւ Բաղակի իշխաններուն , 'Իսւք ձեր երկիրը գացէք . վասն զի Տէրը զիս չթողուր ձեզի հետ երթալ : 14 - Եւ Մովսէսի իշխանները ելան , ու Բաղակի եկան և ըսին , Բաղամ մեզի հետ գալ չուզեց :

15 - Եւ Բաղակ գարձեալ անոնցմէ աւելի շատ ու աւելի պատուաւոր իշխաններ զրկեց : 16 - Եւ անոնք Բաղամի եկան ու ըսին անոր , Սեպտորի որդին Բաղակ այսպէս կ'ըսէ , Կ'աղաչեմ , ինծի գալէ մի հրաժարիր . 17 - Քանզի քեզի շատ պատիւ պիտի ընեմ , և ինծի ինչ որ ըսես՝ պիտի ընեմ , ուստի կ'աղաչեմ , եկուր , անիծէ այս ժողովուրդը ինծի համար : 18 - Եւ Բաղամ պատասխան տուաւ ու ըսաւ Բաղակի ծառաներուն , Եթէ Բաղակ իր տունովը լեցուն արծաթ ու ոսկի տայ ինծի , իմ Տէր Աստուծոյս խօսքէն չեմ կրնար անցնիլ՝ պզտիկ կամ մեծ բան մը ընելու : 19 - Եւ հիմա կ'աղաչեմ , այս գիշեր դուք ալ հոս կեցէք , որպէս զի գիտնամ թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ինծի : 20 - Եւ Աստուած գիշերը Բաղամի եկաւ , ու ըսաւ անոր , Եթէ մարդիկը քեզ կանչելու գան , ելիր , անոնց հետ գնա . բայց ինչ որ քեզի խօսիմ , միայն զայն ընես :

21 - Եւ Բաղամ անտուանց ելաւ , ու իր իշուն համետը դրաւ , և Մովսէսի իշխաններուն հետ գնաց : 22 - Ու երթալուն համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ , ու Տէրոջը հրեշտակը ճամբուն վրայ կայնեցաւ իբրև անոր թշնամի մը . և անիկա իր իշուն վրայ հեծած էր , ու անոր երկու ծառաները իրեն հետ էին : 23 - Ու էշը տեսաւ Տէրոջը հրեշտակը , որ ճամբուն վրայ կայնած էր ու իր ձեռքը մերկ սուր մը ունէր , ու էշը ճամբայէն դարձաւ և արտը մտաւ . ու Բաղամ էշը ձեծեց , որպէս զի ճամբան դարձնէ զանիկա : 24 - Եւ Տէրոջը հրեշտակը այգիներուն նեղ ճամբուն մէջ կայնեցաւ , -- ու մէկ կողմէն պատ ու միւս կողմէն պատ կար : 25 - Եւ երբ էշը Տէրոջը հրեշտակը տեսաւ , պատին քով խոթուեցաւ , և Բաղամի սաքը պատին քով ճնշեց . ան ալ նորէն ձեծեց զանիկա : 26 - Եւ Տէրոջը հրեշտակը առաջ գնաց , ու նեղ տեղ մը կայնեցաւ , ուր աջ կամ ձախ կողմը խտորելու ճամբայ չկար : 27 - Եւ երբ էշը

Տէրոջը հրեշտակը տեսաւ , Բաղամի տակ նստաւ . ու Բաղամի բարկութիւնը բորբոքեցաւ , և գաւազանով ձեծեց էշը : 28 - Եւ Տէրը իշուն բերանը բացաւ , ու անիկա Բաղամի ըսաւ , Ի՞նչ ըրի քեզի , որ այսպէս երեք անգամ զիս ձեծեցիր : 29 - Եւ Բաղամ ըսաւ իշուն , Զիս ծագր ընելու համար . երանի՜ թէ ձեռքս սուր մը ըլլար , որպէս զի հիմա քեզ մեռցնէի : 30 - Եւ էշը ըսաւ Բաղամի , Ես այնքու էշդ չեմ , որուն վրայ կը հեծնէիր՝ քու մանկութենէդ՝ մինչև այսօր . քեզի այսպէս ընել իմ սովորութիւնս էր . ու անիկա ըսաւ , Ոչ : 31 - Այն ատեն Տէրը բացաւ Բաղամի աչքերը . ու երբ տեսաւ որ Տէրոջը հրեշտակը ճամբուն վրայ կայնած էր , և իր ձեռքը մերկ սուր մը ունէր , իր երեսին վրայ ինկաւ ու երկրպագութիւն ըրաւ : 32 - Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր , Ինչո՞ւ այսպէս երեք անգամ քու էշդ ձեծեցիր . ահա ես +եզի թշնամութիւն ընելու ելայ . վասն զի +-- ճամբագ ուղիղ չէ իմ առջեւս . 33 - Եւ էշը զիս տեսաւ , ու այս երեք անգամ է որ իմ առջեւէս մէկդի քաշուեցաւ . եթէ անիկա իմ առջեւէս մէկդի չքաշուէր , հիմա ես քեզ անշուշտ մեռցուցեր ու զանիկա ողջ թողուցեր էի : 34 - Եւ Բաղամ ըսաւ Տէրոջը հրեշտակին , Մեզք գործեցի , չգիտնալով որ ճամբուն վրայ ինծի դէմ կայներ էիր . ուստի եթէ քեզի անհաճոյ կ'երեւնայ ի՞նչե՞րաւ , ես դառնամ : 35 - Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ Բաղամի , Գնա այդ մարդոց հետ , բայց այն խօսքը զոր քեզի պիտի զրուցեմ , զայն միայն խօսիս . և Բաղամ գնաց Բաղակի իշխաններուն հետ :

36 - Եւ Բաղակ երբ լսեց որ Բաղամ կու գայ , զանիկա դիմաւորելու ելաւ իջ սահմանը եղող Առնոն գետին քովի Մովսէսացոց մէկ քաղաքը , որ սահմանին ծայրն է : 37 - Եւ Բաղակ ըսաւ Բաղամի , Քեզ կանչելու յատկապէս չգրկեցի . ինչո՞ւ չեկար ինծի . արդեօք քեզի պատիւ ընելու կարողութիւն չունիմ : 38 - Եւ Բաղամ ըսաւ Բաղակի , Ահա ես քեզի եկայ . բայց ես բնաւ զօրութիւն ունիմ՝ բան մը ըսելու , Աստուած իմ բերանս ինչ

*կա՛մ , քու կգ ըլլայէս

խօսք որ դնէ, զայն պիտի խօսիմ: 39 - Եւ Բաղաամ Բաղակի հետ գնաց, ու Կարիաթ-հուսովթ եկան: 40 - Եւ Բաղակ արջառներ ու ոչխարներ մորթեց, ու Բաղաամի և անոր հետ եղող իշխաններուն զրկեց:

41 - Ու երբ առտու եղաւ, Բաղակ առաւ Բաղաամը, և Բահաղի բարձր տեղերը հանեց զանիկա. ու անկէ ժողովուրդին ծայրը տեսաւ:

ԳԼ ԻԳ

Եւ Բաղաամ ըսաւ Բաղակի, Հոս ինծի եօթը սեղան շինէ, ու հոս ինծի եօթը զուարակ և եօթը խոյ պատրաստէ: 2 - Եւ Բաղակ Բաղաամի ըսածին պէս ըրաւ. և Բաղակ ու Բաղաամ ամէն մէկ սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուցին: 3 - Եւ Բաղաամ ըսաւ Բաղակի, Ի՞նչ քու ողջակէզիդ քով կայնէ, ու ես երթամ, թերեւս Տէրը իմ գիմացս ելլէ. և ինչ որ ինծի ցուցնէ՝ քեզի պիտի ըսեմ. ու *բարձր տեղ մը ելաւ: 4 - Եւ Աստուած Բաղաամի հանդիպեցաւ. ու Բաղաամ ըսաւ անոր, Եօթը սեղան պատրաստեցի, ու ամէն մէկ սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուցի: 5 - Եւ Տէրը Բաղաամի բերանը խօսք դրաւ ու ըսաւ, Իարձիր Բաղակի և այսպէս խօսէ: 6 - Եւ դարձաւ անոր. և ահա անիկա իր ողջակէզին քով կայներ էր, ինք ու Մովաբի բոլոր իշխանները: 7 - Եւ իր առակը սկսեց ու ըսաւ,

Մովաբի թագաւորը Բաղակ զիս Արամէ,

Արեւելեան լեռներէն, բերաւ, ըտե՛ւ՛ւ, Եկուր, Յակոբը անիծէ ինծի, Եկուր, Իսրայէլը նզովէ:

8 - Աստուծոյ շանիծածը ի՞նչպէս անիծեմ,

Կամ Տէրոջը շնորհածը ի՞նչպէս նզովեմ.

9 - Վասն զի ապառաժներուն գլխէն կը տեսնեմ զանիկա,

Եւ բլուրներէն կը նայիմ՝ անոր. Ահա այս ժողովուրդը զսա պիտի բնակի,

Ու ազգերուն հետ պիտի չսեպուի: 10 - Յակոբի փոշին ո՞վ կրնայ համրել,

Եւ Իսրայէլի քառորդը ո՞վ կրնայ հաշուել.

Թող իմ՝ անձս արդարներուն մահովը մեռնի,

Ու իմ վախճանս անոնց վախճանին պէս ըլլայ:

11 - Եւ Բաղակ ըսաւ Բաղաամի, Այդ ի՞նչ ըրիր ինծի. ես քեզ բերի իմ թշնամիներս անիծելու, և ահա դուն բոլորովին օրհնեցիր: 12 - Եւ անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ինչ որ Տէրը իմ բերանս դնէ, զայն խօսելու հոգ տանելու չե՞մ:

13 - Եւ Բաղակ նորէն ըսաւ անոր, Կ'աղաչեմ, ինծի հետ ուրիշ տեղ մը եկուր, որպէս զի զանոնք տեսնես անկէ. անոնց միայն մէկ ծայրը տեսնես, և անոնց ամէնը պիտի չտեսնես. ու անկէ անիծէ զանոնք ինծի համար:

14 - Եւ տարաւ զանիկա Սօփիմի արտը, *Փասգայի գլուխը, ու եօթը սեղան շինեց, և ամէն մէկ սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուց:

15 - Եւ ըսաւ Բաղակի, Ի՞նչ հոս քու ողջակէզիդ քով կայնէ, ու ես հոն Տէրը գիմուորեմ: 16 - Եւ Տէրը Բաղաամի գիմաց ելաւ, և անոր բերանը խօսք դրաւ ու ըսաւ, Բաղակի դարձիր ու այսպէս ըսէ:

17 - Եւ երբ եկաւ անոր, ահա անիկա իր ողջակէզին քով կայներ էր. Մովաբի իշխաններն ալ անոր հետ էին. և Բաղակ ըսաւ անոր, Տէրը ի՞նչ խօսեցաւ:

18 - Եւ անիկա իր առակը սկսեց ու ըսաւ, Ելիր, ով Բաղակ, ու լսէ.

Ով Սեպօրի որդի, ինծի մտիկ ըրէ: 19 - Աստուած մարդ չէ՝ որ սուտ խօսի,

Ոչ ալ մարդու որդի՝ որ զղջայ. Ինք ըսաւ, ու պիտի չընէ՞, Կամ ինք խօսեցաւ, ու տեղը պիտի չբերէ՞:

20 - Ահա հրեման առի օրհնելու. և ինք օրհնեց, Ու ես չեմ կրնար ետ դարձնել:

21 - Յակոբի վրայ անօրէնութիւն մը չզննեց,

Ոչ ալ Իսրայէլի վրայ անզգամութիւն տեսաւ.

Անոր Տէր Աստուածը իրեն հետ է. Եւ անոր մէջ թագաւորի ցնծութեան ձայն կայ:

*Կամ, առանձին և կամ, բաց

*Կամ, բլուրին

22 - Զանոնք Եգիպտոսէ հանողը Աստուած է .

Անհկա միեղջերուի պէս *ոյժ ունի :

23 - Քանզի Յակորի գէմ կախարհութիւն չըլլար,

Ու Իսրայէլի գէմ՝ գիւթութիւն չբանիր .

Յակորի ու Իսրայէլի վրայով՝ ժամանակին

Պիտի բուռի թէ Աստուած ինչե՛ր ըրաւ :

24 - Ահա այս ժողովուրդը մատակ առիւծի պէս պիտի ելլէ,

Ու առիւծի մը պէս պիտի բարձրանայ .

Ու պիտի չպառկի մինչև որսը չուտէ ,

Ու սպաննուածներուն արիւնը չիմէ :

25 - Եւ Բաղակ ըսաւ Բաղամի ,

Ոչ անէ՞ք տուր անոնց , ոչ ալ օրհնութիւն :

26 - Ու Բաղամի պատասխան տալով՝ Բաղակի ըսաւ , Մի՞թէ ես

քեզի չխօսեցա՞յ ըսելով , Ինչ որ Տէրը

խօսի , զայն պիտի ընեմ :

27 - Եւ Բաղակ ըսաւ Բաղամի ,

Եկուր , ուրիշ տեղ մը տանիմ՝ քեզ ,

Թերեւս Աստուած հաճի , որ անկէ ա-

նիծես զանոնք ինծի համար : 28 - Ուստի

Բաղակ տարաւ Բաղամի ֓ոգովրի

գազաթը , որ գէպի Եսիմոն կը նայի :

29 - Ու Բաղամի ըսաւ Բաղակի , Հոս

ինծի եօթը սեղան չինէ , ու հոս ինծի

եօթը զուարակ ու եօթը խոյ պատ-

րաստէ : 30 - Եւ Բաղակ Բաղամի

ըսածին պէս ըրաւ , ու ամէն մէկ սե-

ղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյ-

մէկ խոյ մատուց :

ԳԼ ԻԴ

Երբ Բաղամի տեսաւ որ Տէրը կը հաճի Իսրայէլը օրհնել , միւսանգամներուն պէս հմայքներ փնտռելու չգնաց , այլ իր երեսը գէպի անապատը դարձուց : 2 - Ու Բաղամի իր աչքերը վերցրնելով տեսաւ որ Իսրայէլ իր ցեղերուն կարգովը *աշխի՞ Գ՛ջ բանակած է . ու Աստուծոյ Հոգին անոր վրայ եկաւ . 3 - Ու իր առակը սկսելով՝ ըսաւ , Բե՛սովրի որդւոյն Բաղամի խօսքը , Ու աչքը ՚րաց մտորուն խօսքը , 4 - Աստուծոյ խօսքերը լսող , Ու Ամենակարողին տեսիլքը տեսնող , Քնանալու պէս գետինը ինկող Ու աչքերը ըսաց եղողին խօսքը այս է .

*կա՛մ , փառք

+կա՛մ , գոց

5 - Ով Յակոր , քու վրաններդ , Ու ով Իսրայէլ , քու խորաններդ ի՛նչ գեղեցիկ են .

6 - Զորերու պէս տարածուեցան . Գետերու քով եղող պարտէզներու պէս ,

Տէրոջը տնկած հալուէի ծառերուն

Ու ջուրին եզերքը եղող եղեւիններուն պէս են :

7 - Անոր գոյլերէն ջուր պիտի վազէ , Ու անոր սերմը առատ ջուրերու մէջ պիտի ըլլայ .

Անոր թագաւորը Ագագէ աւելի պիտի բարձրանայ ,

Ու թագաւորութիւնը աճի :

8 - Զանհկա Եգիպտոսէ հանողը Աստուած է .

Միեղջերուի պէս ոյժ ունի .

Իրեն թշնամի եղող ազգերը պիտի ուտէ ,

Անոնց ոսկորները պիտի կտարտէ , ու զանոնք իր նետերովը պիտի զարնէ :

9 - Առիւծի պէս նստաւ պառկեցաւ , ու մատակ առիւծի պէս .

Զանհկա ո՞վ պիտի արթնցնէ :

Քեզ զօհնողները օրհնեալ ըլլան ,

Ու քեզ անիծողները՝ անիծեալ :

10 - Այն ատեն Բաղակ շատ սրդո-

ղեցաւ Բաղամի , ու ձեռքերը իրա-

րու զարկաւ . և Բաղակ ըսաւ Բա-

ղամի , Ես քեզ կանչեցի որպէս զի

իմ թշնամիներուս անէ՞ք տաս , և

ահա այս երեք անգամ է որ անոնց օրհ-

նութիւն տուիր : 11 - Ուստի դուն հի-

մա քու տեղդ փախիր . Քեզի շատ պա-

տիւ ընեմ՝ ըսի , բայց ահա Տէրը քեզ

պատիւէ զրկեց : 12 - Եւ Բաղամի

ըսաւ Բաղակի , Ես քու զրկած գե-

պաններուդ ալ չխօսեցա՞յ ըսելով ,

13 - Բաղակ եթէ ինծի իր տունովը

լեցուն արծաթ ու ոսկի տայ , ես Տէ-

րոջը խօսքէն չեմ կրնար անցնիլ՝ որ

ինքիրմէս աղէկ կամ գէշ բան մը

ընեմ . Տէրը ինչ որ ըսէ , զայն պիտի

խօսիմ : 14 - Եւ ահա ես հիմա իմ՝

*հայրենիքս կ'երթամ . եկուր , քեզի

հասկցնեմ թէ այս ժողովուրդը վերջին

օրերը ի՛նչ պիտի ընէ քու ժողովուր-

դիդ : 15 - Այն ատեն իր առակը սկսե-

լով՝ ըսաւ , Բե՛սովրի որդւոյն Բաղամի խօսքը ,

*Եբբ . ժողովուրդիս

Ու աչքը բաց մարդուն խօսքը ,
16 - Աստուծոյ խօսքերը լսող ,
Եւ Բարձրեալին գիտութիւնը գիտցող ,
Ու Ամենակարողին յետիւքը տեսնող ,
Եւ Գեանալս - պէ՞ գետինը ինկող
Ու աչքը բաց եղող Գարգուսն խօսքը
այս է .

17 - Զանկկա պիտի տեսնեմ՝ բայց
Հիմա չէ .

Զանկկա պիտի զննեմ, բայց մօտերս չէ .
Յակորէ Ասող մը պիտի ծագի ,

Ու Իսրայէլէ իշխանութեան գաւազան
մը պիտի ելլէ ,

Եւ Մովսէսի իշխանները պիտի զարնէ ,
Ու Սեթի բոլոր որդիները բնաջինջ
պիտի ընէ :

18 - Նաև Եդովմ՝ պիտի նուաճի ,
Սէիր ալ իր թշնամիներէն պիտի նը-
ւաճի :

Բայց Իսրայէլ քաջութիւն պիտի ընէ .
19 - Եւ Յակորէ ելլող պիտի իշխէ ,
Ու քաղաքին մէջ մնացորդը պիտի
կորսնցնէ :

20 - Ետքը Ամադէկի նայեցաւ , ու
իր առակը սկսելով՝ ըսաւ ,
Ամադէկ ազգերուն գլուխն է ,
Բայց վերջը բոլորովին պիտի կորսուի :

21 - Ու Կենեցիին նայեցաւ , և իր
առակը սկսելով՝ ըսաւ ,
Արդարեւ քու նւտած տեղդ անառիկ է ,
Ու քու բոյնդ ապառաժի վրայ դրեր ես :

22 - Բայց Կենեցին պիտի աւրուի ,
Մինչև որ Ասուր քեզ գերի տանի :

23 - Ետքը իր առակը սկսելով՝ ըսաւ ,
Ափսո՛ս , երբ Աստուած այս բաները
ընէ , ո՞վ ողջ պիտի մնայ :

24 - Ու Նաև Կիսացուց եզերքներէն
նաւեր պիտի գան ,
Եւ Ասուրը պիտի չարչարեն , ու Եբերը
չարչարեն .

Բայց անոնք ալ բոլորովին պիտի կոր-
սուին :

25 - Ետքը Բաղաս մ՝ ելաւ գնաց , ու
իր տեղը դարձաւ . Բաղակ ալ իր ճամ-
բան գնաց :

ԳԼ ԻԵ

Եւ Իսրայէլ Սատիմի մէջ բնակե-
ցաւ , ու ժողովուրդը Մովսէսի ազջիկ-
ներուն հետ սկսաւ պրօնկութիւն ընել :
2 - Ու անոնք ժողովուրդը հրաւիրեցին
իրենց աստուածներուն զրհերուն . ու

*Կամ , ծայրերը

ժողովուրդը զհէրէն ուտելով անոնց
աստուածներուն երկրպագութիւն ը-
րին : 3 - Եւ Իսրայէլ Բելփեգովրի յա-
րեցաւ . ուստի Տէրօջը բարկութիւնը
Իսրայէլի վրայ բորբոքեցաւ : 4 - Եւ
Տէրը Մովսէսի ըսաւ , ժողովուրդին
բոլոր իշխանները առ , ու զանոնք Տէ-
րօջը առջև արեւին դէմ կախէ , որ-
պէս զի Տէրօջը աստաիկ բարկութիւնը
Իսրայէլէ դառնայ : 5 - Եւ Մովսէս Իս-
րայէլի դատաւորներուն ըսաւ , Մեռ-
ցուցէք ամէն մէկդ ձեր մարդիկը որոնք
Բելփեգովրի յարեցան : 6 - Եւ ահա
Իսրայէլի որդիներէն մէկը եկաւ , ու իր
եղբայրներուն Մադիանացի կին մը բե-
րաւ՝ Մովսէսի աչքին առջև , ու Իս-
րայէլի որդիներուն բոլոր ժողովքին
առջև , երբ անոնք ժողովքի խորանին
դրանը քով կու լային : 7 - Եւ Ահա-
րոն քահանայի որդւոյն Եղիազարի որ-
դին Փենեհէս այս Բանը տեսնելով՝ ժո-
ղովքին մէջէն ելաւ , ու ձեռքը դե-
ղարդ մը առաւ , 8 - Եւ Իսրայէլացի
մարդուն ետեւէն սենեակը մտաւ , ու
երկուքն ալ , այսինքն Իսրայէլացի
մարդը և կինը փորէն խոցեց . ու հար-
ուածը Իսրայէլի որդիներէն դադարե-
ցաւ : 9 - Ու հարուածէն մեռածները
քսանըջորս հազար հոգի էին :

10 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝
ըսելով , 11 - Ահարոն քահանայի որդ-
ւոյն Եղիազարի որդին Փենեհէս իմ
բարկութիւնս Իսրայէլի որդիներէն
դարձուց , որովհետև անկկա ինծի հա-
մար նախանձ ունեցաւ անոնց մէջ .
այսպէս ես իմ նախանձովս Իսրայէլի
որդիները բնաջինջ չըրի : 12 - Ասոր
համար ըսէ՛ որ Ահա ես անոր կու տամ
իմ խաղաղութեան ուխտս . 13 - Եւ ա-
նոր ու անկէ ետքը անոր սերունդին յա-
ւիտենական քահանայութեան ուխտ
մը ըլլայ , որովհետև իր Աստուծոյն նա-
խանձը ունեցաւ , ու Իսրայէլի որդինե-
րուն համար քաւութիւն ըրաւ : 14 -
Եւ Մադիանացի կնոջ հետ զարնուող
Իսրայէլացի մարդուն անունը Զամբրի
էր , որ Սայուի որդին . Դմուսնեանց
մէկ տոհմին իշխանն էր : 15 - Ու զար-
նուող Մադիանացի կնոջ անունը
Քաղբի էր , որ Մադիամու մէջ ազգա-
մոհմի իշխան եղող Սուրի ազջիկն էր :
16 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝
ըսելով , 17 - Մադիանացուց թշնա-
մութիւն ըրէք ու զանոնք զարկէք .

18 - Քանզի անոնք իրենց բրած նեն-
գութիւններովը ձեզի թշնամութիւն
ըրին Փոգովրի գործին մէջ ու իրենց
քրոջ գործին մէջ, այսինքն Մադիա-
նացի իշխանին աղջկան Քազբիի, որ
հարուածին օրը զարնուեցաւ Փոգովրի
համար :

ԳԼ. ԻԶ

Ու հարուածէն ետքը Տէրը Մով-
սէսի և Ահարոնի որդւոյն Եղիազար
քահանային խօսեցաւ՝ ըսելով, 2 - Իս-
րայէլի որդիներուն բոլոր ժողովքին
գումարը առէք, անոնց հայրերուն
տուներուն համեմատ, քսան տարե-
կանէ վեր եղողները, այսինքն Իսրա-
յէլի մէջ բոլոր պատերազմելու *կարող
եղողները, համբէլով: 3 - Ուստի Մով-
սէս ու Եղիազար քահանան Մովսրի
դաշտերուն մէջ Երիքովի դէմոյ Յոր-
դանանու մօտ անոնց հետ խօսեցան՝
ըսելով, 4 - Քսան տարեկանէ վեր եղող-
ները համբէլեք, ինչպէս Տէրը Մովսէսի
ու Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի
որդիներուն հրամայեց:

5 - Ռուբէն, Իսրայէլի անդրանիկը,
և Ռուբէնի որդիները. Ենովքէ Ենովք-
եանց տոհմը, Փազզուսէ Փազզուսեանց
տոհմը, 6 - Եսրոնէ Եսրոնեանց տոհմը,
Քարմիէ Քարմեանց տոհմը յաւաքելով:
7 - Ռուբենեանց տոհմերը ասոնք են.
ու անոնց համրուածները քառասուն-
ու իրէք հազար եօթը հարիւր երեսուն
հոգի էին: 8 - Եւ Փազզուսի որդին Ե-
ղիաբ էր: 9 - Ու Եղիսարի որդիները
Նամուէլ, Իաթան ու Արիբոն էին.
այս Իաթանը ու Արիբոնը ժողովքին
մէջ երեւելիներ էին, ու ասոնք էին որ
Տէրոջը գէմ կեցող Կորիի ժողովքին
մէջ Մովսէսի ու Ահարոնի գէմ կե-
ցան. 10 - Եւ երկիր իր բերանը բա-
նայով կլկեց զանոնք ու Կորիսն ալ,
այն ժողովքին մեռած ատենը, երբ
կրակը այն երկու հարիւր յիսուն մար-
դիկը կերաւ. ու անոնք աֆրոն օրի-
նակ եղան: 11 - Բայց Կորիի որդի-
ները չմեռան:

12 - Շմուոնի որդիները իրենց տոհ-
մերովը. †Նամուէլէ Նամուէլեանց՝
տոհմը, Յամինէ Յամինեանց տոհմը,
Յաքինէ Յաքինեանց տոհմը, 13 - Զա-

*Եֆր. ելլողները
†Կոմ, Յամուէլէ Յամուէլեանց

րայէ Զարայեանց տոհմը, Սաւուզէ
Սաւուզեանց տոհմը յաւաքելով:
14 - Շմուոնեանց տոհմերը ասոնք են, քսան-
ու երկու հազար երկու հարիւր հոգի:

15 - Գազի որդիները իրենց տոհմե-
րովը. Սափոնէ Սափոնեանց տոհմը,
Անգիէ Անգեանց տոհմը, Սունիէ Սուն-
եանց տոհմը, 16 - Ազենիէ Ազենեանց
տոհմը, Էրիէ Էրեանց տոհմը, 17 -
Արօզիէ Արօզեանց տոհմը, Արեյիէ Ա-
րելեանց տոհմը յաւաքելով:
18 - Գազի որդիներուն տոհմերը ասոնք են. ու ան-
ոնց համրուածները քառասուն հա-
զար հինգ հարիւր հոգի էին:

19 - Յուզայի որդիները էր ու Օնան
էին. բայց էր ու Օնան Քանանու երկ-
րին մէջ մեռան: 20 - Եւ Յուզայի որ-
դիները իրենց տոհմերովը ասոնք էին.
Սելլօմէ Սելլօմեանց տոհմը, Փարէսէ
Փարէսեանց տոհմը, Զարայէ Զարայ-
եանց տոհմը յաւաքելով:
21 - Ու Փա-
րէսի որդիները ասոնք էին. Եսրոնէ Ես-
րոնեանց տոհմը, Համուլէ Համուլեանց
տոհմը յաւաքելով:
22 - Յուզայի
տոհմերը ասոնք են. անոնց համրուած-
ները եօթանասունըկեց հազար հինգ
հարիւր հոգի էին:

23 - Իսաքարի որդիները իրենց տոհ-
մերովը. Թովղայէ Թովղայեանց տոհմը,
Փուայէ Փուայեանց տոհմը, 24 - Յա-
ուբէ Յասուբեանց տոհմը, Սամրօնէ
Սամրօնեանց տոհմը յաւաքելով:
25 -
Իսաքարի տոհմերը ասոնք են. անոնց
համրուածները վաթսուներչորս հազար
երեք հարիւր հոգի էին:

26 - Զարուզոնի որդիները իրենց տոհ-
մերովը. Սարեգէ Սարեգեանց տոհմը,
Ելօնէ Ելօնեանց տոհմը, Յաղէլէ Յա-
ղէլեանց տոհմը յաւաքելով:
27 -
Զարուզոնի տոհմերը ասոնք են. անոնց
համրուածները վաթսու հազար հինգ
հարիւր հոգի էին:

28 - Յովսէփի որդիները իրենց տոհ-
մերովը Մանասէ ու Եփրեմ էին: 29 -
Մանասէի որդիները. Մաքիրէ Մաքիր-
եանց տոհմը յաւաքելով. ու Մաքիր
ծնաւ Գաղաազը, ու Գաղաազէ Գա-
ղաազեանց տոհմը յաւաքելով:
30 -
Գաղաազի որդիները ասոնք են. Իե-
զերէ Իեզերեանց տոհմը, Քեզեզէ Քե-
զեզեանց տոհմը, 31 - Ու Ասրիէլէ Աս-
րիէլեանց տոհմը, ու Աիւքէմէ Աիւ-
քեմեանց տոհմը, 32 - Ու Սեմիգայէ
Սեմիգայեանց տոհմը, ու Ոփերէ Ոփեր-

եանց տոհմը յառաջ ելաւ : 33 - Ու Ռփերի որդին Սալպատադ աղաքներ չունեցաւ, միայն աղջիկներ ունեցաւ : ու Սալպատադի աղջիկներուն անունները Մաալա, Նուա, Էգզա, Մեղքա ու Թերսա էին : 34 - Մանասէի տոհմերը ասոնք են, ու անոնց համրուածները յիսուսուերկու հազար եօթը հարիւր հոգի էին :

35 - Եփրեմի որդիները իրենց տոհմերովը ասոնք են . Սուտաղայէ Սուտաղայեանց տոհմը, Բոքորէ Բոքորեանց տոհմը, Թաանէ Թաանեանց տոհմը յառաջ ելաւ : 36 - Եւ Սուտաղայի որդիները ասոնք են . *Էրանէ Էրանեանց տոհմը՝ յառաջ ելաւ : 37 - Եփրեմի որդիներուն տոհմերը ասոնք են . անոնց համրուածները երեսունուերկու հազար հինգ հարիւր հոգի էին : Յովսէփի որդիները իրենց տոհմերովը ասոնք են :

38 - Բենիամինի որդիները իրենց տոհմերովը . Բաղայէ Բաղայեանց տոհմը, Ասբէլէ Ասբէլեանց տոհմը, Աքիրամէ Աքիրամեանց տոհմը, 39 - Սուփամէ Սուփամեանց տոհմը, Ոփիմէ Ոփիմեանց տոհմը յառաջ ելաւ : 40 - Ու Բաղայի որդիները Արեդ ու Նէեման էին . Արեդէ Արեդեանց տոհմը, Նէեմանէ Նէեմանեանց տոհմը յառաջ ելաւ : 41 - Բենիամինի որդիները իրենց տոհմերովը ասոնք են . ու անոնց համրուածները քառասունըհինգ հազար վեց հարիւր հոգի էին :

42 - Դանի որդիները իրենց տոհմերովը ասոնք են . Սուհամէ Սուհամեանց տոհմը յառաջ ելաւ . Դանի տոհմերը իրենց տոհմերովը ասոնք են : 43 - Սուհամեանց բոլոր տոհմերուն համրուածները վաթսուներչորս հազար չորս հարիւր հոգի էին :

44 - Ասերի որդիները իրենց տոհմերովը . Յեմնայէ Յեմնայեանց տոհմը, Յեսուիէ Յեսուիեանց տոհմը, Բարիայէ Բարիայեանց տոհմը : 45 - Բարիայի որդիներէն Քարերէ Քարերեանց տոհմը, Մեղքիէլէ Մեղքիէլեանց տոհմը յառաջ ելաւ : 46 - Ու Ասերի աղջկան անունը Սարա էր : 47 - Ասերի որդիներուն տոհմերը ասոնք են . անոնց համրուածները յիսուսուերեք հազար չորս հարիւր հոգի էին :

48 - Նեփթաղիմի որդիները իրենց տոհմերովը . Յասիէլէ Յասիէլեանց տոհմը, 49 - Գունիէ Գունեանց տոհմը, Յասերէ Յասերեանց տոհմը, Սիլլեմէ Սիլլեմեանց տոհմը յառաջ ելաւ : 50 - Նեփթաղիմի տոհմերը իրենց տոհմերովը ասոնք են . ու անոնց համրուածները քառասունըհինգ հազար չորս հարիւր հոգի էին :

51 - Այս է Իսրայէլի որդիներուն գումարը, վեց հարիւր ու մէկ հազար եօթը հարիւր երեսուն :

52 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 53 - Այն երկիրը ժառանգութեան համար ասոնց բաժնուի՝ երէնց անուններուն թիւին համեմատ : 54 - Շատուոր եղողին՝ ժառանգութիւնը շատ տաս, ու քիչուոր եղողին՝ ժառանգութիւնը քիչ տաս . ամէն մէկուն իր համրանքին համեմատ ժառանգութիւն տրուի : 55 - Բայց երկիրը վիճակով բաժնուի, ու իրենց նահապետաց ցեղերուն անուններուն համեմատ ժառանգեն : 56 - Շատուորի ու քիչուորի մէջ ժառանգութիւնը վիճակով բաժնուի :

57 - Ու Ղեւտացւոց համրուածները իրենց տոհմերովը ասոնք են . Գերսոնէ Գերսոնեանց տոհմը, Կահաթէ Կահաթեանց տոհմը, Մերարիէ Մերարեանց տոհմը յառաջ ելաւ : 58 - Ղեւտացւոց տոհմերը ասոնք են . Ղարենեանց տոհմը, Քերրոնեանց տոհմը, Մողեանց տոհմը, Մուսեանց տոհմը ու Կորիսեանց տոհմը : 59 - Եւ Կահաթեանց ծնաւ Ամրամը : Ու Ամրամի կնոջ անունը Յոքաբեդ էր, Ղեւիի աղջիկը, որուն մայրը զանիկա Եգիպտոսի մէջ ծնաւ Ղեւիի . ու անիկա Ամրամի ծնաւ Ահարոնը ու Մովսէսը և անոնց քոյրը Մարիամը : 60 - Եւ Ահարոնի Նադաբ և Աբիուդ, Եղիազար ու Իթամար ծնան : 61 - Բայց Նադաբ ու Աբիուդ Տէրոջը առջև օտար կրակ մատուցած ատեննին մեռան : 62 - Արդ ասոնցմէ համրուածները, այսինքն մէկ ամսականէ վեր եղող բոլոր արունները, քսանուերեք հազար հոգի էին . քանզի անոնք Իսրայէլի որդիներուն հետ չհամրուեցան, Իսրայէլի որդիներուն մէջ անոնց ժառանգութիւն չտրուելուն համար :

63 - Մովսէսի դաշտերուն մէջ, Երիքովի դէմք Յորդանանու մօտ, Իսրա-

*Կա՛մ, Էդենէ Էդենեանց

յէլի որդիները չաշիւի անցընող Մովսէսի ու Եղիազար քահանային չամբաները ասոնք են : 64 - Եւ ասոնց մէջ բնաւ մարդ մը չկար Իսրայէլի որդիներուն «...» չամբուածներէն, զորոնք Մովսէս ու Ահարոն քահանան Սինայի անապատին մէջ չամբեցին : 65 - Քանզի Տէրը անոնց չամբար ըսեր էր որ Անշուշտ անապատին մէջ պիտի մեռնին . ուստի անոնցմէ մարդ մը չմտաց , բաց ի Յեփոնեան Քաղէբէ ու Նաւեան Յետուէ :

ԳԼ ԻԷ

Ու Յովսէփի որդւոյն Մանասէի տոհմերէն՝ Մանասէի որդւոյն Մաքիբի որդւոյն Գաղաադու որդւոյն Ոփերի որդւոյն Սալպատդի աղջիկները մտնեցան . ու աղջիկներուն անուանները ասոնք են . Մալաա , Նուա , Էգդա , Մեղքա ու Թերաա : 2 - Ասոնք Մովսէսի և Եղիազար քահանային ու իշխաններուն և բոլոր ժողովքին առջև կայնեցան ժողովքի խորանին դուռը , ու ըսին , 3 - Մեր չայրը անապատին մէջ մեռաւ . ու անհկա Տէրոջը դէմ՝ ժողովուածներուն ժողովքին մէջ , Կորխի ժողովքին մէջ չէր , բայց անհկա իր մեղքովը մեռաւ , ու աղաքներ չունէր : 4 - Ինչո՞ւ չամբար մեր չօրը անուներ իր տոհմին մէջէն վերնայ աղայ չունենալուն չամբար . մեզի կայուածք տուէք մեր չօրը եղբայրներուն մէջ : 5 - Ու Մովսէս անոնց դատար Տէրոջը առջև դրաւ : 6 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով , 7 - Սալպատդի աղջիկները շիտակ խօսեցան . անպատճառ անոնց ժառանգութեան կայուածք ասա իրենց չօրը եղբայրներուն մէջ , ու անոնց չօրը ժառանգութիւնը իրենց վրայ դարձնես . 8 - Եւ Իսրայէլի որդիներուն խօսիս ու ըսես , Եթէ մարդ մը մեռնի , ու աղայ չունենայ , անոր ժառանգութիւնը իր աղջկան վրայ դարձնէք . 9 - Եւ եթէ անհկա աղջիկ ալ չունենայ , այն ատեն անոր ժառանգութիւնը իր եղբայրներուն տաք . 10 - Եւ եթէ եղբայրներ ալ չունենայ , այն ատեն անոր ժառանգութիւնը իր չօրեղբայրներուն տաք . 11 - Ու եթէ չօրեղբայրներ ալ չունենայ , անոր ժառանգութիւնը իր տոհմին մէջ իր ամենէն մօտ ազգականին տաք ,

ու ան ըլլայ անոր ժառանգը . և սահկա Իսրայէլի որդիներուն դատաստանի կանոն ըլլայ , ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց :

12 - Ետքը Տէրը Մովսէսի ըսաւ , Այդ Աբարիմի լեռը ելիր , ու տես այն երկիրը , զոր Իսրայէլի որդիներուն պիտի տամ . 13 - Եւ զայն տեսնելէդ ետքը , դուն ալ քու ժողովուրդիդ պիտի խառնուիս , ինչպէս քու եղբայրդ Ահարոն խառնուեցաւ . 14 - Որովհետեւ դուք իմ՝ չրամանիս դէմ ապստամբութիւն ըրիք Սին անապատին մէջ՝ ժողովքին չակառակութիւն ըրած ատենը , ու անոնց առջև զիս չփառաւորեցիք այն ջուրին քով : (Այս է Կադէսի Մերիպայի ջուրը Սին անապատին մէջ :)

15 - Եւ Մովսէս խօսեցաւ Տէրոջը ու ըսաւ , 16 - Տէրը , բոլոր մարդոց չօգիներուն Աստուածը , այս ժողովուրդին վրայ մարդ մը կեցնէ , 17 - Որպէս զի անհկա անոնց առջեւէն ելլէ ու մտնէ , ու զանոնք չանէ ու մտցնէ , որպէս զի Տէրոջը ժողովքը անձովիւ ոչխարներու պէս ըլլայ :

18 - Եւ Տէրը ըսաւ Մովսէսի , Առքեզի Նաւէի որդին Յետուն , որուն վրայ չօգի կայ , ու անոր վրայ ձեռքդ դիր . 19 - Եւ զանհկա Եղիազար քահանային ու բոլոր ժողովքին առջև կայնեցուր , և անոնց աչքին առջև անոր պատուէր տուր . 20 - Ու քու փառքէդ անոր վրայ դիր , որպէս զի Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը «...» չնազանդութիւն բնեն : 21 - Եւ անհկա Եղիազար քահանային առջև պիտի կայնի , ու Տէրոջը առջև Ուրիմին կանոնովը քանոր պիտի չարցնէ , անոր խօսքովը պիտի ելլեն , ու անոր խօսքովը մտնեն , ինք և իրեն չեա բոլոր Իսրայէլի որդիները ու բոլոր ժողովքը : 22 - Եւ Մովսէս այնպէս ըրաւ , ինչպէս Տէրը անոր չրամայեր էր . առաւ Յետուն , ու զանհկա Եղիազար քահանային ու բոլոր ժողովքին առջև կայնեցուց : 23 - Եւ իր ձեռքերը անոր վրայ դնելով՝ անոր պատուէր տուաւ , ինչպէս Տէրը Մովսէսի ձեռքով խօսեր էր :

*Եբր. չորրեցիք
 †Կամ, Եղիազար անոր չամբար պիտի չարցնէ

ԳԼ. ԻԸ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով . 2 - Պատուիրէ Իսրայէլի որդիներուն ու անոնց ըսէ , Իմ անուշահոտ պատարագներուս ընծայուած հացը՝ որոշուած ատեն ինծի մատուցանելու զգուշութիւն ընէք : 3 - Ու անոնց ըսես , Ասոնք են այն պատարագները զորոնք Տէրոջը պիտի մատուցանէք . Օրը երկու հատ մէկ տարեկան անարատ գառներ մշտնջենաւոր ողջակէզի համար : 4 - Մէկ գառը առտուանց մատուցանես , ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես : 5 - Եւ մէկ արգուին տասներորդ մասը բարակ ալիւրով հացի ընծայ ընէ , որ շաղուած պիտի ըլլայ հիմէնի մը քառորդ ծեծուած իւզով : 6 - Ասիկա Սինա լեռանը վրայ *ասմանուած մշտնջենաւոր ողջակէզ է , Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու համար : 7 - Ու անոր թափելու նուէրը մէկ գառին համար՝ հիմէնի մը չորրորդ մասն ըլլայ . օղին սուրբ տեղին մէջ թափելու նուէր ընես Տէրոջը . 8 - Եւ միւս գառը իրիկուան դէմ մատուցանես . « առտուան հացի ընծային ու անոր թափելու նուէրին պէս ընես , Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու :

9 - Իայց շաբաթ օրը մէկ տարեկան երկու անարատ գառներ , ու իւզով շաղուած երկու տասանորդ բարակ ալիւր հացի ընծայի համար , ու անոր թափելու նուէրը պիտի մարտնչանէ : 10 - Ասիկա մշտնջենաւոր ողջակէզէն ու անոր թափելու նուէրէն զատ ամէն շաբաթ օր « ան ողջակէզը պիտի ըլլայ :

11 - Եւ « եր ամազլուխներուն մէջ Տէրոջը ողջակէզ մատուցանէք երկու զուարակ , մէկ խոյ « եօթը հատ մէկ տարեկան անարատ գառներ . 12 - Եւ ամէն մէկ զուարակին համար իւզով շաղուած երեք տասանորդ բարակ ալիւր հացի ընծայ , և մէկ խոյին համար իւզով շաղուած երկու տասանորդ բարակ ալիւր հացի ընծայ , 13 - Ու ամէն մէկ գառին համար իւզով շաղուած մէյմէկ տասանորդ բարակ ալիւր հացի ընծայ մարտնչանէ , Տէրոջը ողջակէզ « անուշահոտ պատարագ ըլլալու : 14 - Եւ անոնց թափելու նուէր-

ները՝ ամէն մէկ զուարակին համար կէս հիմէն , ու մէկ խոյին համար հիմէնին երրորդ մասը , և ամէն մէկ գառին համար հիմէնին չորրորդ մասը գինի պիտի ըլլայ . սսիկա տարւոյն սմիսներուն համար ամսէ ամիս մարտնչանէ : « եւ « ողջակէզն է : 15 - Եւ մշտնջենաւոր ողջակէզէն զատ՝ մեղքի պատարագի համար այծերէն նոխազ մը իր թափելու նուէրովը մէկտեղ մատուցուի Տէրոջը :

16 - Եւ աւաջին ամսուն շրեքտասաներորդ օրը զատիկ է Տէրոջը : 17 - Ու այն ամսուն հնգետասաներորդ օրը տօն է . եօթը օր բաղարջ ուտուի : 18 - Աւաջին օրը սուրբ ժողով պիտի ըլլայ , բնաւ ծառայական գործ մը չընէք . 19 - Եւ Տէրոջը պատարագ « ողջակէզ մատուցանէք , երկու զուարակ , մէկ խոյ ու եօթը հատ մէկ տարեկան գառներ . անարատ ըլլան ձեզի . 20 - Եւ անոնց հացի ընծան իւզով շաղուած բարակ ալիւր ըլլայ . ամէն մէկ զուարակին համար երեք տասանորդ , ու մէկ խոյին համար երկու տասանորդ մատուցանէք : 21 - Եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէյմէկ տասանորդ մատուցանէք . 22 - Եւ ձեզի քառութիւն ընելու համար մէկ նոխազ մեղքի պատարագ մարտնչանէ : 23 - Ասոնք մշտնջենաւոր ողջակէզ եղող առտուան ողջակէզէն զատ պիտի մատուցանէք : 24 - Այն եօթը օրերուն ամէն մէկ օրը ասոնց պէս Տէրոջը անուշահոտ *պատարագ ընէք . մշտնջենաւոր ողջակէզէն զատ սսիկա ու ստոր թափելու նուէրը պիտի մատուցուին : 25 - Եւ եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ ձեզի , բնաւ ծառայական գործ մը չընէք :

26 - Եւ երախայրիներուն օրը , երբ ձեր շաբաթներուն քօնին մէջ Տէրոջը նոր հացի ընծայ կը մատուցանէք , սուրբ ժողով ըլլայ ձեզի , բնաւ ծառայական գործ մը չընէք . 27 - Ու Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար երկու զուարակ , մէկ խոյ « մէկ տարեկան եօթը հատ գառներ մատուցանէք . 28 - Եւ անոնց հացի ընծան՝ ամէն մէկ զուարակին համար երեք տասանորդ , մէկ խոյին համար երկու տասանորդ , 29 - Եօթը գառներէն ամէն

*Եբբ. եղած

*Եբբ. պատարագի հաց

մէկ գառին համար մէյմէկ տասանորդ իւզով շաղուած բարակ ալիւր մարտի 30 - Եւ ձեզի քաւութիւն ընելու համար այծերէն մէկ նոխազ մարտի 31 - Մշտնջենաւոր ողջակէզէն ու անոր հացի ընծայէն զատ, մարտի 1 իրենց թափելու նուէրներովը մատուցանէք . անարատ ըլլան ձեզի :

Գ.Լ. Իթ

Եւ եօթներորդ ամսուն մէջ ամսուն առաջին օրը սուրբ ժողով ըլլայ ձեզի , բնաւ ծառայական գործ մը չընէք . փող հնչեցնելու օր ըլլայ ձեզի: 2 - Եւ Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար մէկ զուարակ , մէկ խոյ «- եօթը հատ մէկ տարեկան գառներ մատուցանէք : 3 - Եւ անոնց հացի ընծան մէկ զուարակին համար երեք տասանորդ , «- մէկ խոյին համար երկու տասանորդ , 4 - Եւ եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէյմէկ տասանորդ իւզով շաղուած բարակ ալիւր ըլլայ . 5 - Եւ ձեզի քաւութիւն ընելու համար այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 6 - Արտի Տէրոջը անուշահոտ պատարագ մարտի 7 , ամսամուտի ողջակէզը ու անոր հացի ընծան , և մշտնջենաւոր ողջակէզը ու անոր հացի ընծան , և ասոնց թափելու նուէրները իրենց կանոնովը մարտի 8 զատ :

7 - Եւ այս եօթներորդ ամսուն տասներորդ օրը սուրբ ժողով ըլլայ ձեզի . ու ձեր անձերը պիտի խոնարհեցնէք , «- ամենեւին գործ մը չընէք : 8 - Եւ Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար մէկ զուարակ , մէկ խոյ «- եօթը հատ մէկ տարեկան գառներ մատուցանէք . անոնք ձեզի անարատ ըլլան . 9 - Եւ անոնց հացի ընծան մէկ զուարակին համար երեք տասանորդ , մէկ խոյին համար երկու տասանորդ , 10 - Եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէյմէկ տասանորդ իւզով շաղուած բարակ ալիւր ըլլայ : 11 - Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 12 , բաց ի քաւութիւն օրը մարտի 13 մեղքի պատարագէն ու մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու անոնց թափելու նուէրներէն :

12 - Եւ եօթներորդ ամսուն հնգետասաներորդ օրը սուրբ ժողով ըլլայ ձեզի , բնաւ ծառայական գործ մը չը-

նէք , ու եօթը օր Տէրոջը տօն պահէք : 13 - Եւ Տէրոջը ողջակէզ «- անուշահոտ պատարագի համար տասուիրեք զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասներջորս գառներ մատուցանէք . անոնք անարատ պիտի ըլլան . 14 - Եւ անոնց հացի ընծան տասուիրեք զուարակներէն ամէն մէկ զուարակին համար երեք տասանորդ , «- երկու խոյերէն ամէն մէկ խոյին համար երկու տասանորդ , 15 - Եւ տասներջորս գառներէն ամէն մէկ գառին համար մէյմէկ տասանորդ իւզով շաղուած բարակ ալիւր ըլլայ . 16 - Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 17 , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն ու անոր հացի ընծայէն և թափելու նուէրէն :

17 - Եւ երկրորդ օրը տասուերկու զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասներջորս անարատ գառներ մարտի 18 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 19 - Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 20 , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրներէն :

20 - Եւ երրորդ օրը տասներմէկ զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասներջորս անարատ գառներ մարտի 21 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 22 - Ու մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 23 , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :

23 - Եւ չորրորդ օրը տասը զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասներջորս անարատ գառներ մարտի 24 - Անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 25 - Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ մարտի 26 , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :

26 - Եւ հինգերորդ օրը ինը զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասներջորս անարատ գառներ մարտի 27 .

27 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 28 - Ու մէկ նոխազ մեղքի պատարագ մարտնչանէ , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :

29 - Եւ վեցերորդ օրը ութ զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասնըջորս անարատ գառներ մարտնչանէ .

30 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 31 - Ու մէկ նոխազ մեղքի պատարագ մարտնչանէ , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրներէն :

32 - Եւ եօթներորդ օրը եօթը զուարակ , երկու խոյ «- մէկ տարեկան տասնըջորս անարատ գառներ մարտնչանէ .

33 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակներուն , խոյերուն ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան . 34 - Ու մէկ նոխազ մեղքի պատարագ մարտնչանէ , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :

35 - Ութերորդ օրը ձեզի տօնախմբութիւն ըլլայ . բնաւ ծառայական գործ մը չընէք : 36 - Եւ Տէրօջը ողջակէզ «- անուշահոտ պատարագի համար , մէկ զուարակ ; մէկ խոյ «- մէկ տարեկան եօթը անարատ գառներ մատուցանէք .

37 - Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները , զուարակին , խոյին ու գառներուն համար , իրենց թիւին համեմատ , ըստ օրինի պիտի ըլլան .

38 - Ու մէկ նոխազ մեղքի պատարագ մարտնչանէ , բաց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :

39 - Ձեր տօներուն մէջ ասոնք պիտի մատուցանէք Տէրօջը , ձեր ուխտերուն ու ձեր կամուտը ընծաներուն ողջակէզներէն , հացի ընծաներէն , թափելու նուէրներէն ու խաղաղութեան զօհերէն զատ :

40 - Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն պատմեց այն ամէնը զոր Տէրը Մովսէսի պատուիրէր էր :

ԳԼ Լ

Եւ Մովսէս Իսրայէլի որդւոց ցեղերու իշխաններուն խօսեցաւ ըսելով , 2 - Տէրօջը պատուիրած բանը այս է . եթէ մարդ մը Տէրօջը ուխտ ընէ , կամ երդում ընելով իր անձը կապելու ըլլայ , իր խօսքը պարտապ չհանէ . բոլոր իր բերնէն ելածին պէս ընէ :

3 - Եւ եթէ կին մը Տէրօջը ուխտ ընէ , ու իր մանկութեան ատենը իր հօրը տանը մէջ չեն կապելու ըլլայ , 4 - Եւ անոր հայրը անոր ուխտը ու անձին վրայ կապած կապը լսէ , և անոր հայրը բան մը չըսէ անոր , այն ատեն անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին , ու անձին վրայ կապած բոլոր կապերն ալ պիտի հաստատուին : 5 - Բայց եթէ անոր հայրը իր լսած օրը զանհկա արգիլէ , այն ատեն անոր բոլոր ուխտերը ու անձին վրայ կապած կապերը անվաւեր պիտի ըլլան . և Տէրը անոր թողութիւն պիտի տայ . քանզի անոր հայրը զանհկա արգիլեց :

6 - Եւ եթէ ուխտ բրած կամ իր շրթունքներէն իր անձը կապող անխորհուրդ խօսք մը ելած ըլլալով ամուսնանայ , 7 - Ու անոր սյրը լսէ , և լսած օրը անոր բան մը չըսէ , այն ատեն անոր ուխտերը պիտի հաստատուին , ու իր անձին վրայ կապած կապերն ալ պիտի հաստատուին : 8 - Բայց եթէ անոր սյրը իր լսած օրը զանհկա արգիլէ , այն ատեն անոր վրայ եղած ուխտը ու շրթունքներէն ելած անխորհուրդ խօսքը որով իր անձը կապեր էր՝ անվաւեր կ'ընէ . և Տէրը անոր թողութիւն պիտի տայ :

9 - Բայց որբեւարի կամ արձակուածի մը ուխտը «- իր անձին վրայ կապած ինչեւիցէ կապը իր վրայ հաստատա պիտի մնայ : 10 - Եւ եթէ անհկա իր երկանը տանը մէջ ուխտ բրած էր , կամ երդումով իր անձին վրայ կապ կապեր էր , 11 - Ու անոր սյրը լսելով բան մը ըսած չէր անոր և զանհկա արգիլած չէր , այն ատեն անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին , ու իր անձին վրայ կապած կապերը հաստատա պիտի մնան : 12 - Բայց եթէ անոր սյրը իր լսած օրը զանոնք խափանեց , այն «- րէն ուխտ ընելու ու իր անձը կապելու համար անոր բերնէն ելած բոլոր խօսքերը անվաւեր պիտի

ըլլան, ասոնք անոր այրը խափանեց զանոնք. և Տէրը անոր թողութիւն պիտի տայ : 13 - Կառ իւր ամէն ուխտը ու անձը խոնարհեցնելու համար ըրած կապող երգումը անոր այրը կրնայ հաստատել, ու անոր այրը կրնայ խափանել : 14 - Եւ եթէ անոր այրը օրէ օր անոր բան մը չըսէ, այն ատեն անոր ամէն ուխտերը ու վրան եղած ամէն կապերը կը հաստատեն . իր լսած օրը անոր բան մը չըսելուն համար զանոնք հաստատած կ'ըլլայ : 15 - Բայց եթէ լսած օրէն ետքը կերպով մը խափանէ զանոնք, այն ատեն ինք պիտի կրէ անոր անօրէնութիւնը : -

16 - Երկան մը ու անոր կնոջ մէջ տեղ, և հօր մը ու մանկութեան ատեն իր հօրը տունը բնակող աղջկան մէջ տեղ պահուելու կանոնները ասոնք են, զորոնք Տէրը Մովսէսի պատուիրեց :

ԳԼ. ԼԱ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2 - Մադիանացիներէն Իսրայէլի որդիներուն վրէժը առնես . ու ետքը քու ժողովուրդիդ խառնուիս : 3 - Եւ Մովսէս ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, 2 եզմէ մարդիկ պատրաստուին պատերազմի համար, ու Մադիամու վրայ երթան, որ Մադիամէ Տէրոջը վրէժը առնեն : 4 - Իսրայէլի բոլոր ցեղերուն ամէն մէկէն հազարական մարդ պատերազմի զրկէք : 5 - Եւ Իսրայէլի հազարաւորներէն ամէն մէկ ցեղէն հազարական մարդ ընտրուեցաւ . ոչսինքն տասուերկու հազար հօգի պատերազմի համար պատրաստուած : 6 - Եւ Մովսէս պատերազմի զրկեց զանոնք, ամէն մէկ ցեղէն հազարական մարդ . ու անոնց հետ Եղիազար քահանային որդին Փենէհէսը պատերազմի չիւնց, որուն ձեռքն էին սուրը անօթները ու ազդարարութեան փողերը : 7 - Եւ Մադիանացուց զէմ պատերազմեցան, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեց էր . ու անոնց բոլոր այր մարդիկը մեռցուցին . 8 - Եւ անոնց սպաննուածներուն հետ Մադիամու թագաւորներն ալ, Եփն, Բոկոմը, Սուրը, Ուրը և Ուօրէն, Մադիամու հինգ թագաւորները, սպաննեցին, ու Բէսփրի որդին Բազամը սրով մեռցուցին : 9 - Եւ Իսրայէլի որդիները Մադիանացուց կի-

նէրը ու տղաքները գերի առին, ու անոնց բոլոր անասունները և հօտերը ու ստացուածքը աւար առին : 10 - Եւ անոնց բնակած բոլոր քաղաքները ու բոլոր գեղերը կրակով այրեցին : 11 - Եւ բոլոր աւարը ու բոլոր կողոպուտը առին մարդէ մինչև անասուն : 12 - Եւ գերիները ու կողոպուտը և աւարը Մովսէսի, Եղիազար քահանային ու Իսրայէլի որդիներուն ժողովքին, բանակը բերին, որ Երէքովի Կիսայ Յորդանանու մօտ Մովսէսի դաշտերուն մէջ էր :

13 - Եւ Մովսէս ու Եղիազար քահանան և ժողովքին բոլոր իշխանները բանակէն դուրս ելան զանոնք դիմուորելու : 14 - Եւ Մովսէս պատերազմէն դարձող զօրաց իշխաններուն, հազարապետներուն ու հարիւրապետներուն սրդողեցաւ . 15 - Եւ Մովսէս անոնց ըսաւ, Արդեօք բոլոր կիները ո՞ղջ թողուցիք : 16 - Ահա Բազամի խրատովը ասոնք պահուելու են, որ Իսրայէլի որդիները Տէրոջը զէմ մեղանչեցին Փոզովրի գործին մէջ, և Տէրոջը ժողովքին վրայ այն հարուածը եկաւ : 17 - Ուստի հիմա տղաքներէն ամէն արուն մեռցուցէք, ու բոլոր կիները որոնք այր մարդ գիտցած են արուի հետ պառկելով մեռցուցէք : 18 - Եւ կիներէն այն բոլոր մանկահասակ աղջիկները որոնք այր մարդ գիտցած չեն արուի հետ պառկելով՝ ձեռքի ողջ թողուցէք : 19 - Եւ դուք եօթը օր բանակին դուրսը մնացէք . ով որ մարդ մեռցուցեր է, ու ով որ մեռածի դպեր է, երբորդ օրը ու եօթներորդ օրը թող մնաքուի, թէ՛ դուք և թէ՛ ձեր գերիները : 20 - Եւ ամէն հանդերձ, ու ամէն մորթէ շինուած աման, և այժի մտղէ շինուած ամէն բան, ու ամէն փայտեղէն աման մաքրեցէք :

21 - Եւ Եղիազար քահանան պատերազմի գացող զօրքերուն ըսաւ, Ասիկա է այս օրէնքին կանոնը՝ զոր Տէրը Մովսէսի հրամայեց : 22 - Միայն սակին, արծաթը, պղինձը, երկաթը, անագը ու կապարը, 23 - Ամէն կրակը մտնելու բանը կրակէ անցնէք, ու մաքուր պիտի ըլլայ, բայց մաքրութեան ջրով մաքրուի . սակայն կրակը չմտնող ամէն բան ջուրէ անցնէք : 24 - Ու

* Եբր. խօսքովը

Եօթներորդ օրը ձեր հանդերձները չուաք և մաքուր ըլլաք, ու ետքը բանակին մէջ մտնէք :

25 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 26 - Գուն Եղիազար քահանային ու ժողովքին նահապետութեանց իշխաններուն հետ՝ առնուած կողոպուտին գումարը առ, մարդէ մինչև անասուն: 27 - Եւ այն կողոպուտը պատերազմի գացող պատերազմողներուն ու բոլոր ժողովքին հաւասարապէս բաժնեա: 28 - Եւ պատերազմի գացող պատերազմողներէն Տէրոջը հասր առնեա, հինգ հարիւրէն մէկը՝ թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն և թէ՛ ոչխարներէն: 29 - Այս հասր անոնց կէս բաժինէն պիտի առնեա, ու Եղիազար քահանային տաս իբրև Տէրոջը ընծայ: 30 - Եւ Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն յիսունէն մէկը առնեա, թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն, թէ՛ ոչխարներէն և թէ՛ ամէն անասուններէն. ու զանոնք Տէրոջը խորանին պահպանութիւնը ընող Ղեւտացիներուն տաս: 31 - Եւ Մովսէս ու Եղիազար քահանայն Տէրոջը Մովսէսի հրամայածին պէս ըրին:

32 - Եւ կողոպուտը, այսինքն պատերազմող զօրքին առած աւարին՝ *գումարը այս էր. վեց հարիւր եօթանասունըհինգ հազար ոչխար, 33 - Եօթանասունուերկու հազար արջառ, 34 - Ու վաթսուներմէկ հազար էշ. 35 - Եւ մարդոցմէն՝ այր մարդու անկողին չգիացող կիներուն ամէնը երեսունուերկու հազար հոգի էին:

36 - Եւ պատերազմի գացողներուն ինչ կէս բաժինը այս էր. ոչխարներուն թիւը երեք հարիւր երեսունըեօթը հազար հինգ հարիւր էր. 37 - Ու ոչխարներէն Տէրոջը հասր վեց հարիւր եօթանասունըհինգ եղաւ. 38 - Եւ արջառները երեսունըվեց հազար ըլլալով՝ անոնցմէ Տէրոջը հասր եօթանասունուերկու արջառ եղաւ. 39 - Ու էշերը երեսուն հազար հինգ հարիւր ըլլալով՝ անոնցմէ Տէրոջը հասր վաթսուներմէկ էշ եղաւ. 40 - Եւ մարդիկը տասներվեց հազար հոգի ըլլալով՝ անոնցմէ Տէրոջը հասր երեսունուերկու հոգի եղաւ: 41 - Եւ Մովսէս Տէրոջը

նուիրուած հասր Եղիազար քահանային տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեց էր:

42 - Եւ Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն ալ, զոր Մովսէս պատերազմողներէն զատեց էր, Տէրոջը հասր: 43 - Եւ ժողովքին կէս բաժինը երեք հարիւր երեսունըեօթը հազար հինգ հարիւր ոչխար, 44 - Երեսունըվեց հազար արջառ, 45 - Երեսուն հազար հինգ հարիւր էշ, 46 - Ու տասներվեց հազար հոգի էր: 47 - Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն, թէ՛ մարդէն, թէ՛ անասունէն, յիսունէն մէկը առնելով, Տէրոջը խորանին պահպանութիւնը ընող Ղեւտացիներուն տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեց էր:

48 - Եւ զօրքին հազարաւորներուն վերակացուները, այսինքն հազարապետները ու հարիւրապետները, Մովսէսի մօտեցան. 49 - Ու Մովսէսի ըսին, Քու ծառաներդ մեր ձեռքին տակ եղող պատերազմողներուն գումարը առինք, ու մեզմէ մարդ մը պակաս չէ: 50 - Ուստի ամէն մէկս ինչ որ գտանք՝ Տէրոջը ընծայ բերինք, ոսկիէ զարդեր, շղթաներ, ապարանջաններ, մատնիներ, օղեր ու *մանեակներ, որ Տէրոջը առջև մեր հոգիներուն քաւութիւն ընենք: 51 - Եւ Մովսէս ու Եղիազար քահանայն անոնցմէ ոսկին առին, ամէնն ալ բանուած զարդեր էին: 52 - Եւ հազարապետներէն ու հարիւրապետներէն Տէրոջը մատուցուած ընծային բոլոր ոսկին տասներվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկղ էր: 53 - Պատերազմողներուն ամէն մէկը իրեն համար կողոպուտ առեց էր: 54 - Եւ Մովսէս ու Եղիազար քահանայն հազարապետներէն ու հարիւրապետներէն ոսկին առին, և ժողովքի խորանը բերին, որպէս զի Տէրոջը առջև Իսրայէլի որդիներուն յիշատակն ըլլայ:

ԳԼ. ԼԲ

Եւ Ռուբէնի որդիները ու Գադի որդիները խիստ շատ անասուններ ունէին. ուստի Յազերի երկիրը ու Գազաադու երկիրը տեսնելով, որ ահա այն տեղը անասուն պահելու յարմար

*Կամ, մնացորդը, և կամ, բազմութիւնը

*Կամ, լանջագեղ կամարներ

տեղ մըն է , 2 - Գաղի որդիները և Ռուբէնի որդիները գացին , ու Մովսէսի , Եղիազար քահանային և ժողովքի իշխաններուն հետ խօսելով ըսին , 3 - Ատարովթ , Գերոն , Յազեր , Նամրա , Եսերոն , Եղէաղէ , Սերամա , Նարաւ ու Բէան , 4 - Այսինքն Տէրօջը Իսրայէլի ժողովքին առջև զարկած երկիրը , անասուն ու հէլաւ յարմար երկիր մըն է , ու քու ծառաներդ անասուններ ունին . 5 - Եւ ըսին , Եթէ մենք քու առջեւ շնորհք գտանք , այս երկիրը քու ծառաներուդ կալուածքի համար տրուի . մեզ Յորդանանէ մի անցներ :

6 - Եւ Մովսէս Գաղի որդիներուն և Ռուբէնի որդիներուն ըսաւ , Ձեր եղբայրները պատերազմի երթան , ու դուք այս տեղ նստիք : 7 - Եւ ինչո՞ւ համար Իսրայէլի որդիներուն սիրտը էր թուլցնէք , որ չանցնին այն երկիրը զոր Տէրը անոնց տուած է : 8 - Ձեր հայրերն ալ այսպէս ըրին , երբ զանոնք Կադէս-բառնեսայէ զրկեցի երկիրը լքատեսելու համար : 9 - Քանզի անոնք մինչև Եսրոզի ձորը ելան ու երկիրը տեսան , և Իսրայէլի որդիներուն սիրտը թուլցուցին , որպէս զի չմտնեն այն երկիրը զոր Տէրը անոնց տուեր էր : 10 - Եւ նոյն օրը Տէրօջը բարկութիւնը բորբոքեցաւ , ու երդում ընելով ըսաւ , 11 - Եզիպտոսէ ելած մարդիկը , քսան տարեկանէ վեր եղողները , բոլոր սրտով ինծի չհնազանդելնուն համար , բնապիտի չտեսնեն այն երկիրը , որու համար Արբասամի , Իսահակի ու Յակոբի երդում ըրի ուր . 12 - Բաց ի կենեգեան Յեփոնէի որդիէն Քաղէրէ ու Նաւէի որդիէն Յեսուէ , որոնք կատարելապէս Տէրօջը հնազանդ եղան : 13 - Եւ Տէրօջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ , ու զանոնք քառասուն տարի անապատին մէջ պտրացուց , մինչև որ Տէրօջը առջև չարութիւն ընող ազգը բոլորովին սպառեցաւ : 14 - Եւ ահա դուք ձեր հայրերուն տեղը ելաք մեղաւոր մարդոց զաւակներու պէս , որպէս զի Տէրօջը սատիկ բարկութիւնը Իսրայէլի վրայ նորէն աւելցնէք : 15 - Վասն զի եթէ դուք անկէ խտորիք , ան ալ նորէն այս ժողովուրդը անապատին մէջ պիտի ձգէ . ու դուք այս բոլոր ժողովուրդին կորուստին պատճառ պիտի ըլլաք :

16 - Եւ անոնք մօտեցան անոր ու ըսին , Մենք այս տեղ մեր անասուններուն համար փարախներ , ու մեր ընտանիքներուն համար քաղաքներ շինենք . 17 - Բայց մենք զէնքերնիս առնենք , ու շուտով Իսրայէլի որդիներուն առջեւէն երթանք , մինչև որ զանոնք իրենց տեղերը տանինք . և մեր ընտանիքը պարսպաւոր քաղաքներու մէջ բնակին երկրիս բնակիչներուն պատճառաւ . 18 - Ու մինչև որ Իսրայէլի որդիներուն ամէն մէկը իր ծառանգութիւնը չթառանգէ , մենք մեր տունները չդառնանք : 19 - Իսկ մենք Յորդանանու անդիի կողմը անոնց հետ ծառանգութիւն պիտի չառնենք . վասն զի մեր ծառանգութիւնը Յորդանանու աօղիի կողմը դէպ ի արեւելք ինկած է :

20 - Եւ Մովսէս ըսաւ անոնց , Եթէ այս բանը ընէք , ու Տէրօջը առջև պատերազմի համար վրանիդ զէնք առնէք , 21 - Եւ Տէրօջը առջև դուք ամէնդ ալ զէնքերով Յորդանանէ անցնիք , մինչև որ անիկա իր թշնամիները իր առջեւէն վռնատէ , 22 - Եւ այն երկիրը Տէրօջը առջև նուաճի , անկէ ետեւ երբեք դառնաք , Տէրօջը առջև ու Իսրայէլի առջև անմեղ պիտի ըլլաք . և այս երկիրը Տէրօջը առջև ձեզի կալուածք պիտի ըլլայ : 23 - Բայց եթէ այսպէս չընէք , ահա Տէրօջը դէմ մեզք գործեցիք . ու գիտցէք որ ձեր մեղքը ձեզ պիտի գանէ : 24 - Ձեր ընտանիքներուն համար քաղաքներ , ու ձեր հօտերուն համար փարախներ շինեցէք , ու ձեր բերնէն ելածը ըրէք :

25 - Եւ Գաղի որդիները և Ռուբէնի որդիները խօսեցան Մովսէսի ըսելով , Ծառաներդ մեր տէրօջը պատուիրածին պէս պիտի ընենք : 26 - Մեր զաւակները , մեր կիները , մեր հօտերը ու մեր բոլոր անասունները հոս Գաղատա դու քաղաքներուն մէջ մնան . 27 - Բայց ծառաներդ մեր տէրօջը ըսածին պէս՝ ամէնս ալ դունդ գունդ պատրաստուինք , ու Տէրօջը առջեւէն անցնինք պատերազմի համար :

28 - Այն ատեն Մովսէս Եղիազար քահանային ու Նաւէի որդւոյն Յեսուէի և Իսրայէլի որդւոցը ցեղերուն նահապետութեանց իշխաններուն այս պատուերը տուաւ անոնց վրայով . 29 - Եւ Մովսէս ըսաւ անոնց , Եթէ Գաղի որդիները և Ռուբէնի որդիները Տէրօջը

առջև ամէնն ալ պատերազմի համար պատրաստուած՝ ձեզի հետ Յորգանանէ անցնին, ու այն երկիրը ձեր առջև նուաճի, այն ատեն Գաղաադու երկիրը անոնց կալուածք սաք. 30 - Բայց եթէ պատրաստուած ձեզի հետ չանցնին, անոնց կալուածքը ձեզի հետ Քանանու երկրին մէջ ըլլայ: 31 - Իսկ Գազի որդիները և Ռուբէնի որդիները պատասխան տուին ու ըսին, Տէրը քու ծառաներուդ ի՞նչպէս պատուիրեց՝ այնպէս պիտի ընենք: 32 - Մենք զէնքերնիս առած՝ Տէրոջը առջեւէն Քանանու երկիրը պիտի անցնինք. բայց մեր ժառանգութեան կալուածքը Յորգանանու ասորի կողմը ըլլայ: 33 - Ուտի Մովսէս անոնց, այսինքն Գազի որդիներուն և Ռուբէնի որդիներուն և Յովսեփեան Մանասէի կէս ցեղին, տուաւ Ամօրհացուց Սեհն թագաւորին թագաւորութիւնը, ու Բասանի Ովզ թագաւորին թագաւորութիւնը, երկիրը իր քաղաքներովը՝ երկրին քաղաքներուն բոլորափքը եղած սահմաններովը:

34 - Եւ Գազի որդիները պարսպաւոր քաղաքներ շինեցին, այսինքն Դեբոնը, Ատարովթը ու Արոէրը, 35 - Եւ Ատրոթ-սովփանը, Յագերը ու Յօգբէհան, 36 - Եւ Բեթնամման ու Բեթարանը, և հօտերու փարախներ ալ շինեցին:

37 - Ռուբէնի որդիներն ալ Եսեբոնը, Եղէաղէն ու Կարիաթեմը շինեցին. 38 - Ու Նաբաւը և Բէէլմօնը, (որոնց անունները փոխեցին,) ու Սեբաման. ու իրենց շինած քաղաքներուն *Իբէնց անունները՝ դրին:

39 - Եւ Մանասեան Մաքիրի որդիները Գաղաադ գացին, ու առին զանիկա, և անոր մէջ քնակաւ Ամօրհացիները վռնակեցին: 40 - Եւ Մովսէս Գաղաադը տուաւ Մանասեան Մաքիրի, որ հոն բնակեցաւ: 41 - Ու Մանասեան Յայիր գնաց անոնց գիւղաքաղաքները առաւ, ու զանոնք † Հաւօթ յայիր՝ անուանեց: 42 - Եւ Նոբահ գնաց, ու Կանաթը ու անոր գեղերը առաւ, և զանիկա իր անունովը Նոբահ կոչեց:

ԳԼ. ԼԳ

Մովսէսի ու Ահարոնի ձեռքով Եգիպտոսի երկրէն իրենց զօրքերովը ելլող Իսրայէլի որդիներուն իջեւանները ստոնք են: 2 - Եւ Մովսէս Տէրոջը հրամանովը անոնց իջեւաններուն համեմատ անոնց գնացքները գրեց. ու անոնց գնացքներուն համեմատ անոնց իջեւանները ստոնք են: 3 - Առաջին ամսուն մէջ, այսինքն առաջին ամսուն հնգետասաներորդ օրը, Ռամսէսէ չուեցին. զատկին հետեւեալ օրը Իսրայէլի որդիները բարձր ձեռքով ելան բոլոր Եգիպտացուց աչքերուն առջև. 4 - Ու Եգիպտացիք Իբէնց Թեբեբեբ կը թաղէին, քանզի Տէրը անոնց բոլոր անդրանիկները ջարդեց. և Տէրը անոնց աստուածներուն վրայ դատաստան ըրաւ:

5 - Եւ Իսրայէլի որդիները Ռամսէսէ չուելով՝ Սոկքովթ իջեւան ըրին: 6 - Ու Սոկքովթէ չուելով՝ անապատին ծայրը եղած Ոթմը իջեւան ըրին: 7 - Եւ Ոթմէ չուելով՝ դէպ ի Փիաիթոթ դարձան, որ Բէէզուեփոնի դիմացն է, ու Մագդողի առջև իջեւան ըրին: 8 - Եւ Փիաիթոթի առջևէն չուելով, ու ծովուն մէջէն անցնելով՝ անապատը Էլօն, և Ոթմի անապատին մէջ երեք օրուան ճամբայ քալելով՝ Մեոա իջեւան ըրին: 9 - Եւ Մեոայէ չուելով՝ Եղիմ եկան. ու Եղիմի մէջ տասուերկու ջուրի աղբիւր ու եօթանասուն արմուէնի կային. ու հոն իջեւան ըրին: 10 - Եւ Եղիմէ չուելով՝ Կարմիր ծովուն քով իջեւան ըրին: 11 - Եւ Կարմիր ծովէն չուելով՝ Սին անապատը իջեւան ըրին: 12 - Եւ Սին անապատէն չուելով՝ Դափկա իջեւան ըրին: 13 - Եւ Դափկայէ չուելով՝ Եղուս իջեւան ըրին: 14 - Ու Եղուսէ չուելով՝ Ռափիգիմ իջեւան ըրին. ու հոն ժողովուրդին համար խմելու ջուր չկար: 15 - Եւ Ռափիգիմէ չուելով՝ Սինայի անապատը իջեւան ըրին: 16 - Ու Սինայի անապատէն չուելով՝ Կիբթօթ-հաթթավայ իջեւան ըրին: 17 - Եւ Կիբթօթ-հաթթավայէ չուելով՝ Ասերովթ իջեւան ըրին: 18 - Ու Ասերովթէ չուելով՝ Ռաթամա իջեւան ըրին: 19 - Եւ Ռաթամայէ չուելով՝ Ռեմօն-փարէս իջեւան ըրին: 20 - Ու Ռեմօն-փարէսէ չուելով՝ Լեբնա իջեւան ըրին:

*Կամ, ուրիշ անուններ
 †Այսինքն, Յայիրի գիւղաքաղաքները.
 Դատ. Ժ. 4: գ թագ. 7. 13:

21 - Եւ Լերնայէ չուելով՝ Ռէսաս իջե-
 ւան ըրին : 22 - Ու Ռէսասայէ չուելով՝
 Կէէլաթա իջեւան ըրին : 23 - Եւ Կէէ-
 լաթայէ չուելով՝ Սօփար լեռը իջեւան
 ըրին : 24 - Ու Սօփար լեռնէն չուելով՝
 Քարադա իջեւան ըրին : 25 - Եւ Քա-
 րադայէ չուելով՝ Մակեղօթ իջեւան
 ըրին : 26 - Ու Մակեղօթէ չուելով՝
 Թաաթ իջեւան ըրին : 27 - Եւ Թաա-
 թէ չուելով՝ Թարա իջեւան ըրին : 28 -
 Ու Թարայէ չուելով՝ Մատեկա իջեւան
 ըրին : 29 - Եւ Մատեկայէ չուելով՝
 Հասմօնա իջեւան ըրին : 30 - Ու Հաս-
 մօնայէ չուելով՝ Մօսերօթ իջեւան
 ըրին : 31 - Եւ Մօսերօթէ չուելով՝
 Բանէ-յական իջեւան ըրին : 32 - Ու
 Բանէ-յականէ չուելով՝ Հօրգադգադ
 իջեւան ըրին : 33 - Ու Հօրգադգադէ
 չուելով՝ Ետերաթա իջեւան ըրին :
 34 - Ու Ետերաթայէ չուելով՝ Երօնա
 իջեւան ըրին : 35 - Աւ Երօնայէ չուե-
 լով՝ Փասին-գաբեր իջեւան ըրին : 36 -
 Եւ Փասին-գաբերէ չուելով՝ Սին անա-
 պատը, այսինքն Կադէս, իջեւան ըրին :

37 - Եւ Կադէսէ չուելով՝ Հովր լեռը
 իջեւան ըրին, որ Եդովմի երկրին ծայրն
 է : 38 - Ու Ահարոն քահանան Տերօջը
 հրամանովը Հովր լեռը ելաւ, և հոն
 մեռաւ, Խորայէլի որդիներուն Եգիպ-
 տոսի երկրէն ելլելուն քառասներորդ
 տարին՝ հինգերորդ ամսուն առաջին
 օրը : 39 - Եւ Ահարոն Հովր լեռանը
 վրայ մեռած առեն հարիւր քսանուի-
 րէք տարեկան էր :

40 - Եւ Քանանու երկրին հարաւա-
 յին կողմը բնակող Արադի *Քանանիս
 թագաւորը Խորայէլի որդիներուն գալը
 յսէց :

41 - Եւ Հովր լեռնէն չուելով՝ Սել-
 մօնա իջեւան ըրին : 42 - Ու Սելմօնայէ
 չուելով՝ Փունոն իջեւան ըրին : 43 - Ու
 Փունոնէ չուելով՝ Որովթ իջեւան ըրին :
 44 - Եւ Որովթէ չուելով՝ Մովարի
 սահմանին մէջ եղող Եյէ-արարիմ
 իջեւան ըրին : 45 - Եւ Եյէ-արարիմ
 չուելով՝ Գերոն-գադ իջեւան ըրին :
 46 - Ու Գերոն-գադէ չուելով՝ Գեյ-
 մոն-դէրլաթ էմ իջեւան ըրին : 47 - Ու
 Գեյմոն-դէրլաթ էմէ չուելով՝ Նարաի
 առջև Արարիմի լեռները իջեւան ըրին :
 48 - Եւ Արարիմի լեռներէն չուելով՝
 Երիքովի գիւնջը Յորդանանու մօտ՝ Մո-

վարի դաշտերուն մէջ իջեւան ըրին :
 49 - Ուստի անոնք Յորդանանու մօտ
 Մովարի դաշտերուն մէջ իջեւան ըրին,
 Բեթեսիմօթէ մինչև Արէլլաաիմ :

50 - Եւ Տէրը Մովարի դաշտերուն
 մէջ Երիքովի գիւնջը Յորդանանու մօտ
 խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 51 - Իս-
 րայէլի որդիներուն խօսէ ու անոնց ըսէ,
 Երբ Յորդանանէ Քանանացոց երկիրը
 անցնիք, 52 - Այն երկրին բոլոր բնա-
 կիչները ձեր առջեւն զլռնաւք, ու ա-
 նոնց բոլոր պատկերաւոր կօթողները
 կործանեւք, և անոնց բոլոր թափօն
 կուռքերը կործանեւք, ու անոնց բոլոր
 բարձր տեղերը փլցնեւք : 53 - Եւ այն
 երկիրը ձեր իշխանութեանը տակ ան-
 ցընելով՝ անոր մէջ բնակիք. քանզի
 այն երկիրը ձեզի տուի որպէս զի ժա-
 ուանգէք : 54 - Եւ այն երկիրը վիճա-
 կով ժառանգէք ձեր տոհմերուն հա-
 մեմատ. շատուոր եղողին ժառանգու-
 թիւնը շատ պիտի տաք, ու քիչուոր
 եղողին ժառանգութիւնը քիչ պիտի
 տաք. տեղի մը վիճակը որու որ ելլէ,
 անոր ըլլայ իւր-առիւթ. ձեր հայրերուն
 ցեղերուն համեմատ ժառանգէք : 55 -
 Բայց եթէ այն երկրին բնակիչները ձեր
 առջեւն զլռնաւք, այն առեն անոնցմէ
 սղջ թողուցածնիդ ձեր աչքերուն փու-
 շեր ու ձեր կողերուն տատասկներ պի-
 տի ըլլան. ու ձեր բնակած երկրին մէջ
 ձեզի թշնամութիւն պիտի ընեն : 56 -
 Եւ պիտի ըլլայ որ ինչ որ անոնց ընելու
 մտածեր էի, նոյն պիտի ընեմ ձեզի :

ԳԼ ԼԳ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսե-
 լով, 2 - Խորայէլի որդիներուն պատ-
 ուիրես ու անոնց ըսես, երբ դուք Քա-
 նանու երկիրը մտնէք, ձեզի ժառան-
 գութիւն իյնալու երկիրը այս պիտի
 ըլլայ, Քանանու երկիրը իր սահման-
 ներովը. 3 - Եւ ձեր հարաւային սահ-
 մանը Սին անապատէն մինչև Եդովմ
 ըլլայ, և ձեր հարաւային սահմանը ա-
 րեւելքէն՝ Ադի ծովուն ծայրէն *սկսի. 4 - Ու ձեր հարաւային սահմանը Ակ-
 րարիմի գաւի վերը պարտելով մինչև
 Սին համի, ու անիէ ելլելով՝ Կադէս-
 բաանայի հարաւային կողմը երթայ,
 ու Ասար-ադգաբէ ելլելով՝ Ասեմոն

*Կ-Տ, Քանանացի

*Նէր, ըլլայ

Հասնի . 5 - Եւ Ասեմոնէ մինչև Եգիպտոսի հեղեղատը պարտելով ծովուն մէջ լմնայ սահմանը :

6 - Իսկ ձեր արեւմտեան սահմանը մեծ ծովն ըլլայ . ձեզի արեւմտեան սահման այն ըլլայ :

7 - Եւ ձեր հիւսիսային կողմի սահմանը այս ըլլայ . մեծ ծովէն մինչև Հովր լեռը նշանակէք . 8 - Հովր լեռնէն մինչև Եմաթ նշանակէք , ու անկէ սահմանը մինչև Սեդադ հասնի . 9 - Եւ այն սահմանը մինչև Զեփրոն էլլէ , ու Ասար-ենանի մէջ լմնայ . ձեր հիւսիսային սահմանը այս ըլլայ :

10 - Եւ ձեր արեւելեան սահմանին համար Ասար-ենանէ մինչև Սեփամ նշանակէք . 11 - Ու այս սահմանը Այինի արեւելեան կողմէն՝ Սեփամէ Բեբղա իջնէ . ու այս սահմանը արեւելքի կողմէն իջնելով՝ մինչև Քենեթի ծովուն եզերքը հասնի . 12 - Եւ այս սահմանը Յորդանան իջնէ , ու Ադի ծովուն մէջ վերջանայ : Երկիրը իր շրջակայ սահմաններովը ձեզի այս ըլլայ :

13 - Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն պատուիրեց ու ըսաւ , Ասիկա է այն երկիրը զոր դուք վիճակով պիտի ժառանգէք , ինչպէս Տէրը հրամայեց ինն ու կէս ցեղի տալու զանիկա . 14 - Քանզի Ռուբէնի որդիներուն ցեղը իրենց հայրերուն տուներուն համեմատ , ու Գադի որդիներուն ցեղը իրենց հայրերուն տուներուն համեմատ , և Մանասէի կէս ցեղը իրենց ժառանգութիւնը առին : 15 - Այս երկուք ու կէս ցեղը իրենց ժառանգութիւնը առին Երեքովի Գադի Յորդանանու ասդի կողմը դէպ ի արեւելք :

16 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով , 17 - Ասանք են այն մարդոց անունները՝ որոնք երկիրը ժառանգութեան համար ձեզի պիտի բաժնեն . Եղիազար քահանան ու Նաւէի որդին Յեսու . 18 - Եւ ամէն ցեղէն ալ մէյմէկ իշխան առնէք , այն երկիրը ժառանգութեան բաժնելու : 19 - Եւ այն մարդոց անունները ասոնք են . Յուդայի ցեղէն Յեփոնէի որդին Քաղէբ , 20 - Նմաւոնի որդիներուն ցեղէն Ամիուդի որդին Սամուէլ , 21 - Բենիամինի ցեղէն Քասաղօնի որդին Ելզադ , 22 - Իանի որդիներուն ցեղէն իշխան՝ Եգլիի որդին Բոկկի , 23 - Յովսէփի որդիներէն Մանասէի որդիներուն ցեղէն իշխան՝

Եփօսի որդին Անիէլ , 24 - Ու Եփրեմի որդիներուն ցեղէն իշխան՝ Սափաթանի որդին Կամուէլ , 25 - Եւ Զարուզանի որդիներուն ցեղէն իշխան՝ Փառնակի որդին Եղիսափան , 26 - Եւ Իսաքարի որդիներուն ցեղէն իշխան՝ Ազանի որդին Փաղաթէլ , 27 - Ու Ասերի որդիներուն ցեղէն իշխան՝ Սելոմիի որդին Աքիուդ , 28 - Ու Նեփթալիմի որդիներուն ցեղէն իշխան՝ Ամիուդի որդին Փաղայէլ : 29 - Ասանք են այն Ժարդիլ՝ որոնց Տէրը հրամայեց որ Քանանու երկրին մէջ Իսրայէլի որդիներուն ժառանգութիւն բաժնեն :

ԳԼ ԼԵ

Եւ Տէրը Մովսէսի դաշտերուն մէջ Երեքովի Գադի Յորդանանու մօտ խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով , 2 - Պատուիրէ Իսրայէլի որդիներուն , որ իրենց ժառանգութեան կալուածքէն Ղեւտացոց բնակելու քաղաքներ տան . նաև քաղաքներուն բոլորաիքը եղած արուարձանները Ղեւտացոց տար : 3 - Եւ քաղաքները բնակութեան համար ըլլան անոնց , ու արուարձանները անոնց արջառներուն , * հօտերուն ու բոլոր անասուններուն համար ըլլան : 4 - Ու Ղեւտացոց տալու քաղաքներնուդ արուարձանները քաղաքին պարիսպէն դուրս շուրջանակի հազարական կանգուն ընդհանուր անունն : 5 - Ուստի քաղաքին դուրս արեւելեան կողմէն երկու հազար կանգուն , հարաւային կողմէն երկու հազար կանգուն , արեւմտեան կողմէն երկու հազար կանգուն , ու հիւսիսային կողմէն երկու հազար կանգուն չափէք . և քաղաքը մէջտեղը պիտի ըլլայ . անոնց քաղաքներուն արուարձանները այսպէս ըլլան : 6 - Եւ ձեր Ղեւտացոց տալու քաղաքներէն վեցը ապաստանի քաղաք ըլլալու որոշէք , որպէս զի սպաննողը հոն փախչի . ու ասոնցմէ զատ քառասունուերկու քաղաք տար : 7 - Ղեւտացոց տալու քաղաքներնուդ ամէնը քառասունըութ քաղաք ըլլայ . զանոնք իրենց արուարձաններովը Գադի : 8 - Եւ այն քաղաքները զորոնք Իսրայէլի որդիներուն կալուածքէն պիտի տար , շատուոր եղողէն շատ՝ ու քիչ-

* ԵՅՐ . ստացուածքին

ուոր եղողէն քիչ առնէք. ամէն մէկը իր առած ժառանգութեանը չափովը իր քաղաքներէն Ղեւտացւոց պիտի սայ:

9 - Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 10 - Իսրայէլի որդիներուն խօսիս ու անոնց ըսես, Երբ Յորդանանէ Քանանու երկիրը անցնիք, 11 - Ձեզի քաղաքներ որոշէք, որոնք ապաստանի քաղաքներ ըլլան ձեզի, որպէս զի սխալմամբ մարդ զարնող սպաննողը հոն փախչի: 12 - Եւ այն քաղաքները ձեզի ապաստանարան ըլլան որոնք վրէժխնդիր եղողէն, ու սպաննողը դատաստանի համար ժողովքին առջև չերեւցած չմեռնի: 13 - Եւ ձեր տալու քաղաքներէն վեցը ձեզի ապաստանի քաղաք ըլլան: 14 - Քաղաքներէն երեքը Յորդանանու սողի կողմը տաք, ու քաղաքներէն երեքը Քանանու երկրին մէջ տաք, և անոնք ապաստանի քաղաքներ ըլլան: 15 - Այս վեց քաղաքները Իսրայէլի որդիներուն ու օտարականին և ձեր մէջ բնակող պանդուխտին ապաստանարան ըլլան, և ով որ սխալմամբ մարդ մեռցնէ՝ հոն փախչի:

16 - Իսկ եթէ մարդ իջ երկաթէ գործիքով մէկը զարնէ մեռցնէ, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի մեռցուի: 17 - Կամ եթէ մահառիթ բռնաբարով մը մէկուն զարնէ՝ որ մեռնի, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի մեռցուի: 18 - Կամ եթէ ձեռքով գործածուելու փայտեղէն մահառիթ գործիքով մը զարնէ՝ որ մեռնի, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի մեռցուի: 19 - Արեան վրէժխնդիրը պիտի մեռցնէ մարդասպանը. երբ անոր հանդիպի՝ թող մեռցնէ զանիկա: 20 - Կամ եթէ թշնամութեամբ հրէ մէկը, ու նենգութեամբ վրան բռն ինտեյով՝ զանիկա մեռցնելու ըլլայ, 21 - Կամ թէ թշնամութեան պատճառաւ ձեռքովը զարնէ անոր՝ որ մեռնի, զարնողը անպատճառ մեռցուի. անիկա մարդասպան է. արեան վրէժխնդիրը երբ մարդասպանին հանդիպի՝ զանիկա մեռցնէ:

22 - Բայց եթէ յանկարծ ու առանց թշնամութեան հրէ, կամ թէ առանց նենգութեան անոր վրայ գործիք մը նետէ, 23 - Կամ թէ առանց տեսնելու անոր վրայ ինչեւիցէ մահառիթ քար մը ձգէ՝ որ մեռնի, և անիկա անոր թշնա-

մին չէր, ու անոր չարիքը չէր ուզեր, 24 - Այն առեւ ժողովքը սպաննողին ու արեան վրէժխնդրին մէջտեղ սյսօրէնքներուն համեմատ դատաստան ընէ: 25 - Եւ ժողովքը պիտի ազատէ սպաննողը արեան վրէժխնդրին ձեռքէն, ու ժողովքը զանիկա նորէն իր ապաւինած ապաստանի քաղաքը դարձնէ. ու անիկա հոն պիտի բնակի, մինչև որ սուրբ իւղով օծուած քահանայապետը մեռնի: 26 - Բայց եթէ սպաննողը իր ապաւինած ապաստանի քաղաքին սահմանէն երբէք դուրս ելլէ, 27 - Ու արեան վրէժխնդիրը զանիկա իր ապաստանի քաղաքին սահմանէն դուրս գանէ, և արեան վրէժխնդիրը սպաննողը մեռցնելու ըլլայ, մահապարտ չսեպուի: 28 - Քանզի անիկա իր ապաստանի քաղաքը նստելու էր, մինչև որ քահանայապետը մեռնէր. բայց քահանայապետին մեռնելէն ետքը սպաննողը իր կալուածքին երկիրը դառնայ: 29 - Ասոնք ձեզի դատաստանի կանոններ ըլլան ձեր ազգերուն մէջ - ձեր բոլոր բնակութիւններուն մէջ:

30 - Ով որ մարդ կը մեռցնէ, սպաննողը վկաններուն բերնով մեռցուի. բայց մարդ մը մեռցնելու համար՝ Գոյն մէկ վկայի վկայութիւնը բռն չըլլայ: 31 - Եւ մահապարտ սպաննողին կեանքին համար փրկանք չառնէք. քանզի անիկա անպատճառ մեռցուելու է: 32 - Ու ապաստանի քաղաքը փախչողին համար փրկանք չառնէք, որպէս զի անիկա իր քաղաքը դառնայ նոսր քահանայապետին մահէն առաջ: 33 - Ուստի ձեր բնակած երկիրը չպղծէք, քանզի արիւնը կը պղծէ երկիրը. ու անոր մէջ թափուած արիւնին համար երկրին որիւր բռն ինտեյով ինչ քաւութիւն չըլլար, բայց եթէ՝ զանիկա թափողին արիւնովը: 34 - Ուրեմն ձեր բնակած երկիրը չպղծէք, որուն մէջտեղը ես պիտի բնակիմ. քանզի ես Տէրս կը բնակիմ Իսրայէլի որդիներուն մէջ:

ԳԼ. 19

Եւ Յովսէփի որդիներուն տոհմերէն Մանասէի որդւոյն Մաքբրի որդւոյն Գադասագու որդիներուն տոհմին իշխանները մօտեցան, ու Մովսէսի առջև

և Իսրայելի որդիներուն նահապետութեանց իշխաններուն առջև խօսեցան, 2 - Ու ըսին, Տէրը մեր աէրաջ հրամայեց, որ երկիրը Իսրայելի որդիներուն վիճակով ժառանգութիւն ապ. ու Տէրը մեր աէրաջ հրամայեց, որ մեր եղբօրը Սալպատգի ժառանգութիւնը անոր ազջիկներուն ապ: 3 - Արդ եթէ անոնք Իսրայելի որդիներուն «-բէշ ցեղի մը որդւոց կին ըլլան, անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ժառանգութեանէն պիտի վերնայ. ու ո՛ր ցեղի մարդոց որ կին ըլլան, այն ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի, ու մեր ժառանգութեան վիճակէն պիտի վերնայ: 4 - Եւ Իսրայելի որդիներուն Յորեկեան «-բին՝ անոնց ժառանգութիւնը իրենց այրերուն ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի. ու այ՞ կերպով անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ցեղին ժառանգութեանէն պիտի վերնայ:

5 - Եւ Մովսէս Տէրոջը հրամանով Իսրայելի որդիներուն պատուիրեց ու ըսաւ, Յովսէփի որդիներուն ցեղը շիտակ կը խօսի: 6 - Սալպատգի ազջիկներուն վրայով Տէրոջը հրամայած ու ըսած խօսքը այս է. Որոնց որ կը հաճին անոնք, թող անոնց կին ըլլան, միայն թէ իրենց հօրը ցեղէն եղողներուն կին

ըլլան. 7 - Որպէս զի Իսրայելի որդիներուն ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի. քանզի Իսրայելի որդիներուն ամէնն ալ իրենց հայրերուն ցեղին ժառանգութեանը պիտի յարին: 8 - Եւ ամէն ազջիկ՝ որ Իսրայելի որդւոց ցեղերուն մէջ կալուածքի մը ժառանգ կ'ըլլայ, իր հօրը ցեղէն եղող մէկուն կին ըլլայ, որպէս զի Իսրայելի որդիներուն ամէն մէկը իր հայրերուն ժառանգութիւնը ժառանգէ. 9 - Եւ ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի, բայց Իսրայելի որդւոց ցեղերուն ամէն մէկը իր ժառանգութեանը յարի:

10 - Եւ Տէրը Մովսէսի ինչպէս հրամայեց, Սալպատգի ազջիկները այնպէս ըրին: 11 - Քանզի Սալպատգի ազջիկները, Մաալա, Թերսա, Էգղա, Մեղքա ու Նուա, իրենց հօրեղբօրորդիներուն հետ ամուսնացան: 12 - Այսպէս Յովսէփեան Մանասէի որդիներուն առհմերէն եղողներու կին եղան, ու անոնց ժառանգութիւնը իրենց հօրը ցեղին և ազգատոհմին մէջ մնաց:

13 - Ասոնք են այն պատուիրանքները ու դատաստանները, զորոնք Տէրը Մովսէսի դաշտերուն մէջ Երիքովի «-բայ Յորդանանու մօտ՝ Մովսէսի ձեռքով Իսրայելի որդիներուն պատուիրեց:

ԳԻՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ասոնք են այն խօսքերը զորոնք Մովսէս բոլոր Իսրայելի զրուցեց Յորդանանու սագիի կողմը անապատին մէջ, որ Սուփի գիմացի դաշտը՝ Փառանի, Տոփէլի, Դորանի, Ատերովթի ու Տիգա-հապի մէջտեղն է: 2 - (Քորեբէ մինչև Կադէս-բառնեայ տասներմէկ օր է Սէիր լեռան ճամբայով:) 3 - Արդ քառասներորդ տարին մետասաներորդ ամսուն առաջին օրը՝ Մովսէս Իսրայելի որդիներուն զրուցեց ինչ որ Տէրը անոր

պատուիրեք էր անոնց համար, 4 - Եստրոնի մէջ բնակող Ամօրհացւոց Սեհարայի մէջ բնակող Բաասնի Ովգթագաւորը զարնելէն ետքը. 5 - Յորդանանու սագիի կողմը Մովսէս սկսաւ այս օրէնքը յայտնել՝ ըսելով,

6 - Մեր Տէր Աստուածը Քորեբի վրայ մեզի խօսեցաւ ու ըսաւ, Այս լեռը կենալնիդ հերիք է. 7 - Իարձէք, չուեցէք ու գացէք Ամօրհացւոց լեռը և անոր ամէն շրջակայ տեղերը, դաշ-

տերը , լեռները ու հովիտները , և հա-
րաւային կողմը ու ծովեզերքը , Քա-
նանացւոց երկիրը ու Լիբանան , մինչև
մեծ գետը , Եփրատ գետը : 8 - Ահա
այն երկիրը ձեր առջև գրի . գացէք ու
ժառանգեցէք այն երկիրը , զոր Տէրը
ձեր հայրերուն , Աբրահամի , Իսա-
հակի ու Յակոբի , երգում քրաւ որ
այս անոնց ու անոնցմէ ետքը անոնց
զաւակներուն :

9 - Եւ այն ատեն ես ձեզի խօսեցայ
ու քոսի , Ես մինակ չեմ կրնար ձեզ
տանիլ . 10 - Ձեր Տէր Աստուածը ձեզ
չառցուց , և ահա դուք այսօր երկինքի
ասաղերուն շափ շատ էք : 11 - Ձեր
հայրերուն Տէր Աստուածը ձեր եղա-
ծէն հազարապատիկ աւելցնէ ձեզ , ու
ձեզի բաժին պէս ձեզ օրհնէ : 12 - Ես
մինակ ի՞նչպէս կրնամ ձեր նեղու-
թիւնը , ձեր բեռը ու հակառակու-
թիւնը կրել : 13 - Դուք ձեր ցեղերէն
իմաստուն ու հանճարեղ և անուանի
մարդիկ տուէք , ու ես զանոնք ձեր վրայ
իշխաններ կեցնեմ : 14 - Իսկ դուք
ինծի պատասխան տուիք ու ըսիք ,
Այդ ըսած խօսքդ ընելը աղէկ է : 15 -
Քուտի ես ձեր ցեղերուն երեւելիները ,
իմաստուն ու անուանի մարդիկ , առի ,
և զանոնք ձեր վրայ իշխաններ կար-
գեցի , այսինքն ձեր ցեղերուն մէջ
հազարապետներ , հարիւրապետներ ,
յիսնապետներ , տասնապետներ ու ու-
տիկաններ :

16 - Եւ այն ատեն ձեր դատաւոր-
ներուն պատուիրեցի՝ ըսելով , Ձեր եղ-
բայրներուն դատերը մտիկ ըրէք , ու
ամէն մարդուն դատը , թէ՛ իր եղբօր
հետ ըլլայ և թէ՛ օտարականի հետ ,
արդարութեամբ դատեցէք . 17 - Դա-
տաստանի մէջ աչառութիւն չընէք ,
պղտիկին մեծի պէս մտիկ ընէք , բնաւ
մարդու մը երեսէ չբաշուիք . քանզի
դատաստանը Աստուծոյ է . ու ձեզի
դժուար երեւցած դատը ինծի ներկա-
յացուցէք , որպէս զի վանկիկ մտիկ
ընեմ : 18 - Եւ այն ատեն ձեր ամէն
ընելու բաները ձեզի պատուիրեցի :

19 - Ետքը Բորերէ չուեցինք , ու
ինչպէս մեր Տէր Աստուածը մեզի պատ-
ուիրեք էր , Ամօրհացւոց լեռանը ճամ-
բով՝ այն ձեր տեսած բոլոր մեծ ու ա-
հագին անապատէն անցանք , ու մինչև
Կադէս-բառնեայ եկանք : 20 - Եւ ձեզի
ըսի , Դուք Ամօրհացւոց լեռը եկաք ,

զոր մեր Տէր Աստուածը մեզի կու տայ :
21 - Նայէ , քու Տէր Աստուածդ եր-
կիրը քու առջևդ դրաւ . «-բժն ելիր ,
ժառանգէ զանի» , ինչպէս քու հայ-
րերուդ Տէր Աստուածը քեզի ըսաւ . մի
վախնար ու մի զարհուրիր :

22 - Եւ դուք ամէնդ իմ քովս
եկաք , ու ինծի ըսիք , Մեզմէ առաջ
մարդիկ զրկենք , որպէս զի երկիրը
լրտեսէն մեզի համար , ու մեզի գան
պատմեն թէ ի՞նչ ճամբով հսն պիտի
ելլենք , ու ի՞նչ քաղաքներու մէջ պի-
տի մտնենք : 23 - Եւ այս խօսքը ինծի

հաճոյ թուելով , ձեզմէ տասուերկու
մարդ առի , ամէն մէկ ցեղէն մէյմէկ

մարդ : 24 - Եւ անոնք գացին՝ լեռը
ելան , ու մինչև Եսքոզի ձորը հասան ,
ու այն երէտը լրտեսեցին : 25 - Եւ այն
երկրին պտուղէն ձեռքերնին առնելով
մեզի բերին , ու մեզի գրուցեցին՝ ըսե-
լով , Աղէկ է այն երկիրը զոր մեր Տէր
Աստուածը մեզի կու տայ : 26 - Բայց

դուք չուզեցիք ելլել , ու ձեր Տէր Աս-
տուծոյն հրամանին դեմ դրիք . 27 -
Եւ ձեր վրաններուն մէջ տրտնջելով
ըսիք , Տէրը մեզ ատելուն համար Ե-

զիպատսի երկրէն մեզ դուրս հանեց ,
որպէս զի մեզ Ամօրհացւոց ձեռքը
մատնէ , ու մեզ կորսնցնէ : 28 - Մեր
պիտի ելլենք . մեր եղբայրները մեր սիր-
տերը թուլցուցին , որովհետեւ ըսին ,
Այն ազգը մեզմէ մեծ ու բարձրահա-

սակ է , քաղաքները մեծ ու մինչև եր-
կինք պարսպաւոր են , ու հսն նաև Ե-
նակի որդիները տեսանք : 29 - Եւ ձեզի
ըսի , Մի զարհուրիք ու անոնցմէ մի
վախնար . 30 - Ձեր Տէր Աստուածը որ
ձեր առջևէն կ'երթայ , անիկա ձեզի
համար պիտի պատերազմի , ինչպէս
Եզիպատսի մէջ ձեր աչքերուն առջև
ձեզի քրաւ :

31 - Ու անապատին մէջ
այ տեսար որ , ինչպէս մարդ մը իր
զաւակը կը տանի , քու Տէր Աստուածդ
այ քու բոլոր քալած ճամբաներուդ
մէջ մինչև այս տեղ գալդ քեզ այն-
պէս տարաւ : 32 - Եւ ասով այ ձեր
Տէր Աստուծոյն չհաւատացիք , 33 -
Որ ճամբուն մէջ ձեր առջևէն կ'եր-
թար ձեզի իջեւանելու տեղ փնտաւրու
համար , գիշերը կրակի մէջ երթալու
ճամբանիդ ձեզի ցուցնելով , ու ցորեկն
այ ամպի մէջ : 34 - Եւ Տէրը ձեր խօս

*Եբր . հայեցուցին

քերուն ձայնը լսելով բարկացաւ , ու երգում ընելով՝ ըսաւ , 35 - Այս մարդոցմէն , այս անօրէն ազգէն , բնաւ մարդ մը պիտի չտեսնէ այն բարի երկիրը , զոր ձեր հայրերուն տալու երգում բրի . 36 - Բայց միայն Յեփոնէի որդին Քաղէբ պիտի տեսնէ զայն , ու անոր կոխած երկիրը իրեն ու իր որդիներուն պիտի տամ , որովհետեւ անհկա կատարելապէս Տէրոջը հետեւեցաւ : 37 - Չեզի համար Տէրը ինծի ալ բարկացաւ , ու ըսաւ , Գուն ալ հոն պիտի չմանես . 38 - Այլ քու *սպասաւորդ , Նաւէի որդին Յեսու , անհկա չոն պիտի մտնէ , զօրացուր զանհկա , լասն զի այն երկրէ անհկա պիտի ժառանգեցնէ Իսրայէլի : 39 - Եւ այն ձեր պզտիկ տղաքը , որոնց համար կ'ըսէիք թէ աւար պիտի ըլլան , ու այն ձեր որդիները որոնք այսօր աղէկը ու գէշը չեն ճանչնար , անոնք պիտի մանեն հոն . անոնց պիտի տամ այն երկրէ , ու անոնք պիտի ժառանգեն զայն : 40 - Բայց դուք ետ դարձէք , ու Կարմիր ծովուն ճամբայէն դէպ ի անապատը չուեցէք :

41 - Ետքը դուք պատասխան տուիք ու ինծի բոխք , Մենք Տէրոջը առջև մեզք գործեցինք . մենք պիտի ելլենք պատերազմինք , ինչպէս մեր Տէր Աստուածը մեզի պատուիրեց . ու ամէն մէկդ իր պատերազմական զէնքը առնելով , †թեթեւամտութեամբ ուզեցիք՝ լեռը ելլել : 42 - Եւ Տէրը ինծի ըսաւ , Անոնց ըսէ , Մի ելլէք ու մի պատերազմիք , քանզի ես ձեր մէջ չեմ . չըլլայ որ ձեր թշնամիներուն առջև ջարդուիք : 43 - Ես ալ ձեզի խօսեցայ , բայց դուք մտիկ չըրիք , հապա Տէրոջը հրամանին դէմ գրիք , և յամառութիւն ընելով լեռը ելաք : 44 - Ու այն լեռանը վրայ բնակող Ամօրհացիները մեղուներու պէս ձեր դէմը ելլելով ձեզ հալածեցին , ու Սէիրի մէջ ձեզ զարկին մինչև Հօրմա : 45 - Եւ դառնալով Տէրոջը առջև լացիք , սակայն Տէրը ձեր ձայնը չլսեց ու ձեզի ականջ չդրաւ : 46 - Եւ Կադէսի մէջ շատ օրեր կեցաք , որչափ օրեր որ հոն կեցաք :

ԳԼ Բ

Այն ատեն ետ դարձանք ու Կարմիր ծովուն ճամբայէն դէպ ի անապատը չուեցինք , ինչպէս Տէրը ինծի ըսէր էր , ու շատ օրեր Սէիր լեռանը բոլորաիքը պտրտեցանք : 2 - Եւ Տէրը ինծի խօսեցաւ ու ըսաւ , 3 - Այլ հերիք է այդ լեռանը բոլորաիքը պտրտելիդ . հիւսիսային կողմը դարձէք : 4 - Եւ ժողովուրդին պատուիրէ ու ըսէ , Գուք հիմա Սէիր բնակող ձեր եղբայրներուն , Եսաւի որդիներուն , սահմանէն պիտի անցնիք . անոնք ձեզմէ պիտի վախնան , բայց դուք մեծապէս զգուշացէք . 5 - Անոնց հետ մի ծեծկուիք . քանզի ես ձեզի անոնց երկրէն մէկ օտնաբայլ տեղ ալ տալու չեմ , որովհետեւ Սէիր լեռը Եսաւի ժառանգութիւն տուեր էմ : 6 - Կերակուրը ստակով ծախու առնէք անոնցմէ և ուտէք , և ջուրն ալ ստակով ծախու առնէք անոնցմէ ու խմէք . 7 - Քանզի քու Տէր Աստուածդ քու ձեռքիդ ամէն գործերուն մէջ օրհնեց քեզ . անհկա գիտէ որ դուն այս մեծ անապատին մէջ կը պտրտիս . քու Տէր Աստուածդ այս քառատուն տարին քեզի հետ էր , ու բանի մը պակասութիւն չքաշեցիր :

8 - Ուստի մենք մեր եղբայրներուն , Եսաւի որդիներուն , քովէն , որոնք Սէիր կը բնակէին , դաշտի ճամբայէն , Ելաթէ ու Գասիոն-գաբերէ անցանք . ու հոն դառնալով Մովարի անապատին ճամբայէն անցանք : 9 - Եւ Տէրը ինծի ըսաւ , Մովարացուց թշնամութիւն մի ըներ , ու անոնց հետ պատերազմ մի ըներ . քանզի անոնց երկրէն քեզի ժառանգութիւն տալու չեմ , որովհետեւ Արը Դովտի որդիներուն ժառանգութիւն տուի : 10 - (Այն ատեղը առաջ Էմիմները կը բնակէին , որոնք մեծ ու շատուոր ու Ենակիմներուն պէս երկայնահասակ ազգ մըն էին . 11 - Անոնք ալ Ենակիմներուն պէս հսկաներ կը սեպուէին . ու Մովարացիք զանոնք Էմիմ կը կոչէին : 12 - Եւ Սէիրի մէջ առաջ Քուեցիք կը բնակէին , բայց Եսաւի որդիները զանոնք վռնտելով ու իրենց առջեւէն զանոնք ջարդելով անոնց տեղը բնակեցան . ինչպէս Իսրայէլացիք ըրին իրենց ժառանգութեանը երկրին , զոր Տէրը անոնց տուաւ :) 13 - Հիմա ելլէք Զարեգ

*Եբր. առջեւդ կայնողը †Կոմ , ժողովուեցաք , և խմ , պատրաստութիւն տեսաք

ծորէն անցէք . ու մենք Չարեգ ծորէն անցանք :

14 - Մեր պարտած օրերը , Կադէս . բառնեայէ ելլելէն մինչև Չարեգ ծորէն անցնելնիս , երեսունըութ տարի եղաւ . մինչև որ բանակին մէջէն պատերազմնդ մարդոց այն բոլոր ազգը հասաւ , ինչպէս Տէրը անոնց երգում ըրեր էր :

15 - Եւ զանոնք բանակին մէջէն բնաջինջ ընելու համար՝ Տէրոջը ձեռքն ալ անոնց վրայ էր , մինչև որ անոնք հասան :

16 - Ու երբ բոլոր պատերազմնդ մարդիկը ժողովուրդին մէջէն մեռան ու հասան , 17 - Տէրը ինծի խօսեցաւ՝ ըսելով . 18 - Գուն այսօր Մովսրի սահմանը եղած Արէն պիտի անցնիս , 19 -

Ու Ամմոնի որդիներուն *սահմանին պիտի մօտենաս . անոնց թշնամութիւն մի ընէր , և անոնց հետ մի ծեծկուիր . քանզի Ամմոնի որդիներուն երկրէն քեզի ժառանգութիւն տալու չեմ , որովհետև զանհկա Ղովտի որդիներուն ժառանգութիւն տուի :

20 - (Այն ալ հսկաներու երկիր կը սեպուէր . առաջ այն տեղը հսկաներ կը բնակէին , ու Ամմոնացիք զանոնք Չամգուսիմ կը կոչէին . 21 -

Որոնք Ենակիմներուն պէս մեծ ու շատուոր և երկայնահաստակ ազգ մըն էին . բայց Տէրը զանոնք բնաջինջ բրաւ անոնց առջեւէն , որոնք վաճառեցին զանոնք , և անոնց տեղը բնակեցան . 22 -

Ինչպէս Սէիր բնակող Եսաւի որդիներուն համար ալ բրաւ , երբ Գուեցիները բնաջինջ բրաւ անոնց առջեւէն . և զանոնք վաճառեցին , ու անոնց տեղը բնակեցան մինչև այսօր :

23 - Եւ Աւացիները , որոնք մինչև Գազա †գիւղաքաղաքներու մէջ կը բնակէին , զանոնք ալ Կափթորէ ելլող Կափթորացիք ջարդեցին , ու անոնց տեղը բնակեցան :

24 - Ելէք , չուեցէք ու Առնոն ծորէն անցէք . ահա Եսեբոնի թագաւորը , Ամօրհացի Սեհոնը , ու անոր երկիրը քու ձեռքդ տուի . սկսէ զանիկ ժառանգել , ու անոր հետ պատերազմ ըրէ :

25 - Այսօր քու անունիդ վախը ու սոսկումը բոլոր երկիրնքի տակ եզոյ ազգերուն վրայ պիտի սկսիմ դնել , այնպէս որ քու համբաւդ լսողները քու երեսէդ դողան ու տազնապին :

26 - Եւ Կադէսի մօտի անապատէն Եսեբոնի Սեհոն թագաւորին խաղաղու-

թեան խօսքերով դեպքաններ զրկեցի՝ ըսելով , 27 - Անցնիմ՝ քու երկրէդ . *մեծ ճամբայէն՝ պիտի երթամ , - ու ջկամ՝ ձախ կողմը չեմ խտարիր :

28 - Կերակուրը ինծի ստակով ծախէ որ ուտեմ , ու ջուրն ալ ինծի ստակով տուր որ խմեմ . միայն թէ սաքերովս անցնիմ . 29 -

Ինչպէս Սէիր բնակող Եսաւի որդիները ու Ար բնակող Մովսրացիք ինծի ըրին , մինչև որ ես Յորդանանէ անցնիմ՝ դէպ ի այն երկիրը զոր մեր Տէր Աստուածը՝ մեզի պիտի տայ :

30 - Բայց Եսեբոնի Սեհոն թագաւորը չուզէց որ մենք անկէ անցնինք . վասն զի քու Տէր Աստուածդ անոր հոգին խտացուցեր էր ու սիրաւ կարծրացուցեր էր , որպէս զի զանհկա քու ձեռքդ տայ , ինչպէս այսօր էլ Գուեցիս :

31 - Եւ Տէրը ինծի ըսաւ , Ահա Սեհոնը ու անոր երկիրը սկսայ քու ձեռքդ տալ . սկսէ անոր տիրել , որպէս զի անոր երկիրը ժառանգես :

32 - Ուստի Սեհոն ինք իր բոլոր ժողովուրդովը Յասայի մէջ մեր դէմն ելաւ , որպէս զի մեզի հետ պատերազմի :

33 - Եւ մեր Տէր Աստուածը զանհկա մեր ձեռքը մատնեց , ու մենք զանհկա և անոր որդիները ու անոր բոլոր ժողովուրդը զարկինք . 34 -

Եւ նոյն ատեն անոր բոլոր քաղաքները առինք , ու անոր բոլոր քաղաքներուն մէջ եղած այր մարդիկը , կիները ու տղաքները կորսնցուցինք , անոնցմէ մէկ ալ ողջ չթողուցինք . 35 -

Միայն անասունները ու առած քաղաքներնուս աւարները մեզի առինք :

36 - Առնոն ձորին եզերքը եղած Արուէրէն ու ձորին մէջ եղած քաղաքէն մինչև Գազաադ բնաւ մեզի դէմ դնող քաղաք մը չեղաւ . մեր Տէր Աստուածը ամէնն ալ մեր ձեռքը մատնեց :

37 - Միայն թէ Ամմոնի որդիներուն երկրին , ու բոլոր Յարակ ձորին կողմերուն և լեռնային քաղաքներուն , ու մեր Տէր Աստուծոյն բոլոր մեզի արգիլած տեղերուն չմօտեցար :

Գ Լ . Գ

Անկէ դարձանք Բասանի ճամբան ելանք , ու Բասանի Ուղղ թագաւորը ինք , իր բոլոր ժողովուրդովը Նդրայի

*Եբր . դիմաց + Կամ , Ասեբիմի

*Եբր . ճամբայէն ճամբայէն

մէջ մեր դէմն ելաւ պատերազմելու համար 2 - Եւ Տէրը ինծի բառ, Անկէ մի վախնար, վասն զի զանկիա ու անոր բոլոր ժողովուրդը ու երկիրը քու ձեռքդ կու տամ. ու անոր ալ Եսեբոնի մէջ ընակող Ամօրհացուց Սեհոն թագաւորին ըրածիդ պէս ըրէ: 3 - Եւ մեր Տէր Աստուածը Բասանի Ովգ թագաւորն ալ ու անոր բոլոր ժողովուրդը մեր ձեռքը տուաւ. և մենք այնպէս ջարդեցինք *զաննք, որ անոնցմէ մէկ ալ ողջ չմնաց: 4 - Եւ նոյն ատեն անոր բոլոր քաղաքները առինք. *քաղաք մըն ալ չմնաց, զոր անոնցմէ առած չըլլանք. վաթսուն քաղաք այսինքն բոլոր Արգովբի գաւառը, Բասանի մէջ Ովգի թագաւորութիւնը: 5 - Ասոնց ամէնն ալ բարձր պարիսպներով, դռներով ու դռնափակներով ամրացած քաղաքներ էին, անպարիսպ քաղաքներէն զատ, որոնք խիւս շատ էին: 6 - Եւ զանոնք բնաջինջ ըրինք, ինչպէս Եսեբոնի Սեհոն թագաւորը ըրինք, ամէն քաղաքներու մէջ մարդիկը, կիները ու աղաքները կորսնցնելով: 7 - Սակայն բոլոր անասունները ու քաղաքներուն աւարները մեզի առինք: 8 - Եւ այն նոյն ժամանակին՝ Յորդանանու անդի կողմը եղող Ամօրհացուց երկու թագաւորներուն ձեռքէն առինք երկիրը, Առնոն ձորէն մինչև Հերմոն լեռը: 9 - Սիդոնացիք Հերմոնի Սարիօն կ'ըսէին, բայց Ամօրհացիք զանկիա Սանիր կը կոչէին: 10 - Բոլոր դաշտի քաղաքները, բոլոր Գաղաադը ու բոլոր Բասանը մինչև Աելքա ու Էդրայի, Բասանի մէջ եղած Ովգի թագաւորութեան քաղաքները *իս: 11 - Քանզի հսկաներուն †մնացորդէն միայն Բասանի Ովգ թագաւորը մնացեր էր. ահա անոր մահի՞ք, որ երկաթէ մահի՞ք մըն է, Ամմոնի որդիներուն Ռաբբային մէջ կեցած է. երկայնութիւնը ինը կանգուն է, ու լայնութիւնը չորս կանգուն է մարդու կանգունով: 12 - Եւ նոյն ժամանակին մէջ այս մեր առած երկիրը, Առնոն ձորին վրայ եղող Արոտրէն մինչև Գաղաադ լեռանը կէտը, իր քաղաքներովը Ռուքենեանց ու Գադեանց տուի: 13 - Ու

Գաղաադի մնացածը ու բոլոր Բասանը, այսինքն Ովգի թագաւորութիւնը *բոլոր Արգովբի գաւառը, բոլոր Բասանի հետ, որ հսկայից երկիր կ'ըսուէր, Մանասէի կէս ցեղին տուի: 14 - Եւ Մանասեան Յայիր բոլոր Արգովբի գաւառը առաւ մինչև Գեսուրացուց ու Մաքաթացուց սահմանը, ու զանոնք իր անուևովը մինչև այսօր *Բասան-հաւօթ-յայիր՝ կոչեց: 15 - Այսպէս Գաղաադը Մաքբրի տուի: 16 - Եւ Գաղաադէ մինչև Առնոն ձորը, (այսինքն ձորին մէջտեղը որ սահմանն է,) ու մինչև Ամմոնի որդիներուն սահմանը եղած Յաբոկ ձորը, Ռուքենեանց ու Գադեանց տուի, 17 - Նաև դաշտը Յորդանանու սահմանովը Քեներեթէ մինչև դաշտային ծովը, այսինքն մինչև Աղի ծովը, արեւելեան կողմը եղած Ասեդովթ-փասգայի տակ: 18 - Եւ այն ատեն ձեզի պատուիրեցի ու ըսի, Ձեր Տէր Աստուածը այս երկիրը ձեզի ժառանգութիւն տուաւ. *որի դուք ամէնդ որ կարիճներ էք, զէնքերնիդ առէք, ու Իսրայէլի որդիներուն, ձեր եղբայրներուն, առջև անցէք: 19 - Բայց ձեր կիները, ձեր որդիները ու ձեր անասունները, (*որովհետեւ ձեր անասուններուն շատ ըլլալը գիտեմ,) թող մնան ձեր քաղաքներուն մէջ, զորոնք ես ձեզի տուի, 20 - Մինչև որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգստացնէ, ու մինչև որ անոնք ալ ժառանգեն այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը Յորդանանու անդի կողմը անոնց պիտի տայ. ու ետքը ձեզմէ ամէն մէկը դառնայ իր ժառանգութեանը զոր ես ձեզի տուի: 21 - Այն ատեն Յեսուի պատուիրեցի՝ ըսելով, Քու աչքերդ տեսան ինչ որ ձեր Տէր Աստուածը այս երկու թագաւորներուն ըրաւ. այնպէս ալ պիտի ընէ Տէրը այն ամէն թագաւորութիւններուն, †որոնց վրայ դուն պիտի երթաս: 22 - Անոնցմէ չվախնաք. վասն զի ձեր Տէր Աստուածը ինք կը պատերազմի ձեզի համար: 23 - Եւ այն ատեն Տէրոջը աղաչեցի ու ըսի, 24 - Ով Տէր Եհովա, դուն սկսեցիր քու մեծութիւնդ ու քու զօրաւոր ձեռքդ

*Եբբ. զանկիա, անոր մնացորդ չթողելու չափ
†Կամ, բազմութենէն

*Այսինքն, Յայիրի գիւղաքաղաքներուն Բասանը
†Եբբ. որ դուն հոն կ'անցնիս

քու ծառայիդ ցուցնելու. վասն զի երկինքի մէջ կամ երկրի վրայ ո՞վ է այն աստուածը, որ քու գործերուդ ու քու զօրութեանդ պէս ԳՐԻՆՆԵՆ րնելու կարող ըլլայ: 25 - Շնորհք բրէ որ անցնիմ, ու Յորդանանու անդիի կողմի բարի երկիրը, այն բարի լեռը ու Լիբանանը, տեսնեմ: 26 - Բայց Տէրը ձեր պատճառաւ ինծի սրդողելով՝ իմ խնդիրքս չընդունեց. և Տէրը ինծի ըսաւ, Այլ հերիք է քեզի. մէյմըն ալ այդ բանը ինծի չգրուցես: 27 - Փաստայի գագաթը էիր, ու դէպ ի արեւմուտք, չիւսիս, հարաւ ու արեւելք աչքերդ վերցուր, ու քու աչքերովդ դիտէ. քանզի դուն այս Յորդանանէն պիտի չանցնիս: 28 - Աւ Յեսուի պատուէր տալով զանհկա զօրացուր, ու անոր սիրտ տուր. քանզի անհկա պիտի անցնի այս ժողովուրդին առջև, և քու դիտելու երկիրդ անհկա պիտի ժառանգեցնէ անոնց: 29 - Աւստի մենք հովիտին մէջ Բեթփեգովրի դիմաց նստանք:

ԳԼ. Գ

Եւ հիմա, ով Իսրայէլ, իմ քեզի սորվեցուցած կանոններս ու դատատաններս մտիկ բրէ, որպէս զի զանոնք րնելով ողջ մնաք, ու մտնէք ժառանգէք այն երկիրը զոր ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեզի կու տայ: 2 - Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցնէք, ու անկէ բան մը չպակսեցրնէք, այլ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքները պահէք, զորոնք ես ձեզի կը պատուիրեմ: 3 - Ձեր աչքերը ատան ինչ որ Տէրը Բեթփեգովրի բրաւ. վասն զի քու Տէր Աստուածդ Բեթփեգովրը ետեւէն գացող բոլոր մարդիկը ձեր մէջէն կորսնցուց: 4 - Բայց դուք որ ձեր Տէր Աստուծոյն յարեցաք, ամէնգայսօր ողջ էք: 5 - Ահա ձեզի կանոններ ու դատատաններ սորվեցուցի, ինչպէս իմ Տէր Աստուածս ինծի պատուիրեց, որպէս զի զանոնք ի գործ դնէք այն երկրին մէջ, ու բ պիտի մտնէք ժառանգելու համար: 6 - Աւստի դուք զանոնք պահեցէք ու բրէք. վասն զի ձեր իմաստութիւնը ու հանճարը այս պիտի ըլլայ ազգերուն առջև, որոնք այս բոլոր կանոնները լսելով պիտի բսն, Իրացրնէ այս մեծ ազգը իմաստուն

ու հանճարեղ ժողովուրդ մըն է: 7 - Քանզի ո՞ր ազգը այնչափ մեծ է, որ իր աստուածները իրեն մօտ ըլլան, ինչպէս մեր Եհովա Աստուածը Բեթ Բեթ է ամէն բանի մէջ զոր անկէ կը խընդրենք: 8 - Աւ ո՞ր ազգը այնչափ մեծ է, որ իմ այսօր ձեր առջև դրած այս բոլոր օրէնքիս նման արդար կանոններ ու դատատաններ ունենայ: 9 - Միայն քեզ աղէկ նայէ, ու քու հոգւոյդ շատ զգուշութիւն բրէ, որ չըլլայ թէ աչքերուդ տեսած բաները մտնաս, և չըլլայ թէ կեանքիդ բոլոր օրերուն մէջ քու սրտէդ ելլեն. այլ զանոնք քու որդիներուդ ու որդւոցդ որդիներուն սորվեցնես: 10 - Այն օրը որ դուն Քորեք քու Տէր Աստուծոյդ առջև կեցեր էիր, Տէրը ինծի ըսաւ, Ժողովուրդը ինծի ժողովէ, ու իմ խօսքերս լսել պիտի տամ անոնց, որպէս զի սորվին ինծմէ վախնայը որչափ օրեր որ երկրի վրայ պիտի ապրին, ու իրենց որդիներուն ալ սորվեցնեն: 11 - Եւ դուք մտանայով լեռանը տակ կայնեցաք. ու լեռը խաւարով, ամպով ու մառախուղով ԳՐԻՆՆԵՆ, *մինչև երկինք՝ կրակով կը բորբոքէր: 12 - Եւ Տէրը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ. դուք անոք խօսքերուն ձայնը լսեցիք. ու նմանութիւն մը չտեսաք, բայց միայն ձայն լսեցիք: 13 - Եւ իր ուխտը, տասը պատուիրանքները, ձեզի իմացուց, ու պատուիրեց որ զանոնք րնէք. և զանոնք երկու հաս քարէ տախտակներու վրայ գրեց: 14 - Եւ այն ատեն Տէրը ինծի պատուիրեց, որ ձեզի կանոններ ու դատատաններ սորվեցնեմ, որպէս զի զանոնք ի գործ դնէք այն երկրին մէջ, ու բ պիտի մտնէք ժառանգելու համար:

15 - Արեմն ձեր հոգիներուն աղէկ զգուշութիւն բրէք. որովհետեւ այն օրը որ Տէրը Քորեք վրայ կրակին մէջէն ձեզի խօսեցաւ, բնաւ նմանութիւն մը չտեսաք. 16 - Զըլլայ որ անօրինիք, ու ձեզի կուսք մը կամ որեւիցէ ԳՐԻՆՆԵՆ պատկերը, թէ՛ արտի և թէ՛ էզի նմանութիւնը, 17 - Կամ երկրի վրայ եղող անասունի մը նմանութիւնը, կամ օդին մէջ թռչող թռչունի թռչունի մը նմանութիւնը, 18 - Կամ երկրի վրայ անասունի մը նմանութիւնը,

*Եբր. մինչև երկինքի սիրտը
+Եբր. նմանութեան

Համ երկրի տակ ջուրերու մէջ եզոզ ձուկի մը նմանութիւնը շինէք . 19 - Նաև չըլլայ որ աչքերդ երկինք վերցընելով , ու արեւը կամ լուսինը կամ սատղերը - երկինքի բոլոր զարդը տեսնելով խաբուիս , ու անոնց երկրպագութիւն ընես , և զանոնք պաշտես . որովհետև քու Տէր Աստուածդ զանոնք բոլոր երկինքի տակ եզոզ ազգերուն համար կարգաւորեց : 20 - Բայց Տէրը ձեզ առաւ , ու ձեզ երկաթի հնոցէն , Եգիպտոսէ , հանեց , որպէս զի իրեն *սեպհական ժողովուրդ ըլլաք , ինչպէս այսօր ելած է :

21 - Եւ Տէրը ձեր պատճառաւ ինծի սրգողելով երգում ըրաւ որ Յորդանանէ չանցնիմ , ու չմտնեմ այն բարի երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ժառանգելու համար : 22 - Արդ ես այս երկրին մէջ պիտի մեռնիմ , ու Յորդանանէ պիտի չանցնիմ . բայց դուք պիտի անցնիք ու այն բարի երկիրը պիտի ժառանգէք : 23 - Զգոյշ կեցէք , չըլլայ որ ձեր Տէր Աստուծոյն ձեզի հետ ըրած ուխտը մոռնաք , ու ձեզի կուռք մը չորհեցէ բանի մը նմանութիւնը շինէք զոր քու Տէր Աստուածդ քեզի արգիլեց : 24 - Քանզի քու Տէր Աստուածդ մաշող կրակ է . անհկա նախանձառ Աստուած է :

25 - Երբ դուք որդիներ ու որդւոց որդիներ ծնանելու ըլլաք , և այն երկրին մէջ շատ տաէն նստելու ըլլաք , այն տաէն եթէ անօրինիք , և կուռք մը չորհեցէ բանի նմանութիւնը շինէք , ու ձեր Տէր Աստուծոյն առջև շարութիւն ընէք ու զանհկա բարկացընէք , 26 - Այսօր երկինքը ու երկիրը ձեզի վկայ կը բռնեմ , որ դուք անպատճառ շուտով պիտի կորսուիք այն երկրէն զոր Յորդանանէ անցնելով պիտի ժառանգէք . այն տեղը կեանքերնիդ երկար պիտի չըլլայ , այլ բոլորովին բնաջինջ պիտի ըլլաք : 27 - Եւ Տէրը ձեզ ազգերուն մէջ պիտի ցրուէ , ու նաև սակաւութիւ պիտի մնաք այն ազգերուն մէջ , ուր Տէրը ձեզ պիտի քշէ : 28 - Եւ հոն մարդու ձեռքով շինուած քարէ ու փայտէ տաճարներ պիտի պաշտէք , որոնք ոչ կը տեսնեն , ոչ կը լսեն , ոչ կ'ուտեն ու ոչ կը հոտուրան : 29 - Եւ հոն քու Տէր

Աստուածդ պիտի փնտռես . ու եթէ զանհկա բոլոր սրտովդ և բոլոր հոգւովդ փնտռելու ըլլաս , պիտի գտնես : 30 - Երբ քու վրագ նեղութիւն գայ ու այս բոլոր բաները վերջին օրերը քեզի պատահին , եթէ քու Տէր Աստուծոյդ դառնաս ու անոր խօսքը մտիկ ընես , 31 - Քու Տէր Աստուածդ , սորմամբ Աստուած ըլլալուն համար , քեզ պիտի չթողու , ու քեզ չկորսնցնէ . ու նաև քու հայրերուդ երգում ըրած ուխտը պիտի չմոռնայ :

32 - Արդ քեզմէ առաջ եղած առաջուան օրերուն համար , այսինքն Աստուծոյ՝ մարդը երկրի վրայ ստեղծած օրէն ի վեր , երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը հարցուր , թէ արդեօք ստոր պէս մեծ բան մը եղած է , ու ստոր պէս բան մը լուռած է : 33 - Արդեօք ազգ մը կրակին մէջէն խօսող Աստուծոյն ձայնը քու լսածիդ պէս լսեր ու ողջ մնացե՞ր է : 34 - Կամ թէ Աստուած մէկ ազգը - ըլի՞ն ազգի մը մէջէն իրեն առնելու համար փորձելով , հրաշքներով , զարմանալի գործերով , պատերազմով , զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով և մեծ հարկութիւններով զգալ *ուզե՞ր է , ինչպէս ձեր Տէր Աստուածը Եգիպտոսի մէջ ձեզի համար այս բոլոր բաները ըրաւ ձեր աչքերուն առջև : 35 - Ահեկա քեզի ցուցուեցաւ , որպէս զի գիտնաս թէ Եհովա ինք Բայն Աստուած է . անկէ ուրիշ Աստուծոյ չկայ : 36 - Քեզ խրատելու համար իր ձայնը երկինքէն լսել տուաւ քեզի , ու երկրի վրայ իր մեծ կրակը քեզի ցուցուց , ու անոր խօսքերը կրակին մէջէն լսեցիր : 37 - Եւ քու հայրերդ սիրելուն համար անոնցմէ ետքը անոնց սերունդը ընտրեց , ու իր ներկայութեամբ մեծ զօրութիւնով քեզ Եգիպտոսէ հանեց . 38 - Որպէս զի քեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր քու առջեւէդ վաճաէ , ու քեզ տանի անոնց երկիրը . քեզի ժառանգութիւն տալու , ինչպէս այսօր ինչ ժառանգե՞ս : 39 - Եւ այսօր գիտցիր ու սրտիդ մէջ դիր , որ վերը երկինքի մէջ ու վարը երկրի վրայ Եհովա ինք Բայն Աստուած է , ուրիշ մը չկայ : 40 - Ուստի անոր կանոնները ու պատուիրանքները պահես , զորոնք ես այսօր քեզի կը պատ-

*Եբր. ժառանգութեան

*Եբր. փորձե՞ր

ուիրեմ, որպէս զի քեզի ու քեզմէ ետքը քու որդիներուդ աղէկ ըլլայ, ու նաև քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ մշտնջենապէս :

41 - Այն ատեն Մովսէս Յորդանանու աօրի կողմը դէպ ի արեւելք երեք քաղաք զտեսց . 42 - Որպէս զի երէկուքնէ ու միւս օրուքնէ աաեւութիւն չունեցող, ու անգիտութեամբ իր դրացին մեռցնող մարդասպանը հոն փախչի, ու այս քաղաքներէն մէկուն մէջ փախչելով ողջ մնայ : 43 - Ուրբեհանց համար դաշտային երկրի վրայ անապատին մէջ Բոսորը, և Գադեանց համար Գաղաադու մէջ Ռամովթը, ու Մանասեանց համար Բասանի մէջ Գովդանը շարեց :

44 - Ասիկա է այն օրէնքը զոր Մովսէս Իսրայէլի որդիներուն առջև դրաւ .

45 - Եւ ասոնք են այն վկայութիւնները, կանոնները և դատաստանները, զորոնք Մովսէս Իսրայէլի որդիներուն խօսեցաւ, անոնց Եգիպտոսէ ելած ատենը, 46 - Յորդանանու աօրի կողմը Բեթփեգովրի դիմացի հովիտին մէջ, Եսեբոնի մէջ բնակող Ամօրհացուց Աեհոն թագաւորին երկրին մէջ, զոր Մովսէս ու Իսրայէլի որդիները զարկին իրենց Եգիպտոսէ ելած ատենը, 47 - Եւ անոր երկիրը ու Բասանի Ովգ թագաւորին երկիրը, այսինքն Յորդանանու աօրին արեւելեան կողմը Բնաիւղ Ամօրհացուց երկու թագաւորներուն երկրները, 48 - Աւնոն ձորին եզերքը եզող Արոէրէն մինչև Սիօն լեւը որ Հերմոն կ'ըսուի, 49 - Ու Յորդանանու աօրին արեւելեան կողմը եղած բոլոր դաշտը մինչև Ասեղովդ-փասագոյի ներքև դաշտի ծովուն քով ժառանգեցին :

ԳԼ Ե

Եւ Մովսէս բոլոր Իսրայէլը կանչեց ու անոնց ըսաւ, Լսէ, ով Իսրայէլ, այս կանոնները ու դատաստանները զորոնք ես այսօր ձեր ախանջներուն կը խօսիմ սորվեցէք զանոնք և զգուշութեամբ ի դործ դրէք : 2 - Մեր Տէր Աստուածը Քորեբի վրայ մեզի հետ ուխտ ըրաւ : 3 - Տէրը այս ուխտը մեր հայրերուն հետ չըրաւ, հապա մեզի հետ, որ մենք ամէնս այսօր հոս ողջ ենք : 4 - Տէրը լեռանը վրայ կրակին մէջէն մեզի հետ

դէմ առ դէմ խօսեցաւ . 5 - Ու ես այն ատեն Տէրոջը ու ձեր մէջտեղ կայնեցայ, որպէս զի Տէրոջը խօսքերը ձեզի պատմեմ : վասն զի դուք կրակէն վախնայով լեւը չեղաք .) և ըսաւ,

6 - Ես եմ Եհովա քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի :

7 - Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս :

8 - Գուն քեզի կուռք չչինես, ոչ ալ վերը երկինքի մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրի տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը . 9 - Անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես . վասն զի ես, քու Տէր Աստուածդ, նախանձառ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը, որոնք կ'ատեն զիս .

10 - Եւ կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը, որոնք կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն :

11 - Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղ Բեբաւոյ չառնես . վասն զի Տէրը իր անունը պարապ տեղ Բեբաւ առնողը անմեղ պիտի չսեպէ :

12 - Հանգստութեան օրը զգուշութիւն ըրէ սուրբ պահելու, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց :

13 - Վէց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ ընես . 14 - Բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է . այն օրը գործ մը չգործես, ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղջիկդ, ոչ քու ծառայ ու աղախինդ, ոչ քու եզդ ու էշդ, ոչ քու ամէն անասունդ, ոչ ալ քու տանդ մէջ եղած օտարականդ, որպէս զի քու ծառայ ու աղախինդ ալ քեզի պէս հանգստանայ : 15 - Եւ միտքդ բերես որ դուն Եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր, ու քու Տէր Աստուածդ զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով քեզ անկէ հանեց . անոր համար քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց որ հանգստութեան օրը պահես :

16 - Պատուէ քու հայրդ ու մայրդ, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց, որպէս զի քու օրերդ երկար ըլլան, ու քեզի աղէկ ըլլայ այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ :

17 - Ապանութիւն մի ընէր :
 18 - Ու շնութիւն մի ընէր :
 19 - Եւ գողութիւն մի ընէր :
 20 - Ու քու գրացիիդ գէմ սուտ վկայութիւն մի ընէր :
 21 - Եւ քու գրացիիդ կնոջ մի ցանկար . քու գրացիիդ տանը , կամ անոր արտին , կամ անոր ծառային , կամ անոր աղախինին , կամ անոր եղին , կամ անոր իշուն , և քու գրացիիդ ամենեւին մէկ բանին մի ցանկար :
 22 - Տէրը այս խօսքերը լեռանը վրայ կրակին , ամպին ու մառախուղին մէջէն բարձր ձայնով ձեր բոլոր ժողովքին գրուցեց , և ուրիշ բան չաւելցուց . ու երկու հատ քարէ տախտակի վրայ գրեց զանոնք , ու ինծի տուաւ : 23 - Իսկ լեռանը կրակով վառած ատենը , երբ խաւարին մէջէն անոր ձայնը լսեցիք , իմ քով եկաք դուք , այսինքն ձեր ցեղերուն բոլոր գլխաւորները և ձեր ծերերը , ու ըսիք , 24 - Ահա մեր Տէր Աստուածը իր փառքը ու մեծութիւնը մեզի ցուցուց , ու անոր ձայնը կրակին մէջէն լսեցինք . այսօր տեսանք որ Աստուած մարդու հետ խօսեցաւ , ու մարդը ողջ մնաց : 25 - Եւ հիմա մենք ինչո՞ւ մեռնինք . (քանզի այս մեծ կրակը մեզ պիտի սպառէ .) եթէ մենք մեր Տէր Աստուծոյն ձայնը մէյմըն ալ լսելու ըլլանք , պիտի մեռնինք : 26 - Վասն զի բոլոր մարմինէն ո՞վ է որ կրակի մէջէն խօսող կենդանի Աստուծոյն ձայնը մեզի պէս լսեց ու ողջ մնաց : 27 - Դուն մօտեցիր և մեր Տէր Աստուծոյն բոլոր ըսելու Իօօօօ լսէ , ու մեր Տէր Աստուածը քեզի հետ ինչ որ խօսի , դուն մեզի ըսէ . մենք մօտիկ կ'ընենք ու կը կատարենք : 28 - Եւ Տէրը ձեր խօսքերուն ձայնը լսեց , երբ դուք ինծի կը խօսէիք , ու Տէրը ինծի ըսաւ . Այս ժողովուրդին քեզի ըսած խօսքերուն ձայնը լսեցի . անոնց ամէն ըսածը շիտակ է : 29 - Երանի՛ թէ անոնց սիրան ալ այնպէս ըլլար , որ ինծմէ վախնալով իմ բոլոր պատուիրանքներս միշտ պահէին , որպէս զի իրենց աղէկ ըլլար , ու իրենց որդիներուն ալ յաւիտեան : 30 - Գնա անոնց ըսէ , Դուք ձեր վրանները գարձէք : 31 - Բայց դուն հոս ինծի հետ կեցիր , ու բոլոր անոնց սորվեցնելու պատուիրանքներդ , կանաններդ ու դատաստաններդ քեզի ըսեմ , որպէս զի զանոնք կատարեն այն երկրին

մէջ զոր ես անոնց կու տամ ժառանգութեան համար :
 32 - Արդ զգոյշ եղէք ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրածին պէս ընելու , ու աջ դին կամ ձախ դին չխտորիք :
 33 - Ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրած բոլոր ճամբաներուն մէջ քալէք , որպէս զի ապրիք , ու ձեզի աղէկ ըլլայ , և ձեր ժառանգելու երկրին մէջ երկայնակեաց ըլլաք :

ԳԼ. 9

Եւ ասոնք են այն պատուիրանքները , կանոնները ու դատաստանները , զորոնք ձեր Տէր Աստուածը ինձի պատուիրեց ձեզի սորվեցնելու համար , որպէս զի ձեր մօտեցելու ու ժառանգելու երկրին մէջ ի գործ դնէք զանոնք . 2 - Որպէս զի քու Տէր Աստուծմէդ վախնաս , ու անոր ամէն կանոնները ու պատուիրանքները , զորոնք ես քեզի կը պատուիրեմ , քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ պահես , թէ՛ դուն , թէ՛ քու որդիդ և թէ՛ քու որդւոյդ որդին , որպէս զի քու օրերդ երկար ըլլան : 3 - Արդ , ով Իսրայէլ , մօտիկ ըրէ , ու զգուշութիւն ըրէ զանոնք կատարելու , որպէս զի քեզի աղէկ ըլլայ , և կաթ ու մեզր բղխող երկրին վրայ խիստ շատնաս , ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի խոստացաւ :

4 - Ով Իսրայէլ , մօտիկ ըրէ . մեր Տէր Աստուածը *մի միայն* Տէր է : 5 - Ու քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ , բոլոր հոգւովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես : 6 - Եւ այս խօսքերը զորոնք ես այսօր քեզի պատուիրեցի , քու սրտիդ մէջ ըլլան . 7 - Ու զանոնք քու որդիներուդ կրկին և կրկին անգամ սորվեցրնես . և թէ՛ տանդ մէջ նստած ատենդ , թէ՛ ճամբայ քալած ատենդ , և թէ՛ պառկելու ու ելլելու ատենդ անոնց վրայով խօսիս . 8 - Եւ զանոնք նշանի համար ձեռքիդ վրայ կապես , ու ճակատանցի համար աչքերուդ մէջ ատեղը ըլլան . 9 - Եւ անոնք քու տանդ դրանդիքներուն վրայ և դռներուդ վրայ գրես :
 10 - Ու երբ քու Տէր Աստուածդ քեզ տանի այն երկիրը , որուն համար քու հայրերուդ , Աբրահամի , Իսա-

*Եֆր. մէկ

Հակի ու Յակորի, երգում ըրաւ, որ քեզի մեծ ու գեղեցիկ քաղաքներ տայ, զորոնք դուն շինած չես, 11 - Եւ ամէն բարիքներով լեցուած տուներ՝ զորոնք դուն լեցուցած չես, ու փորուած ջրհորներ՝ զորոնք դուն փորած չես. այգիներ ու ձիթենիներ՝ զորոնք դուն տնկած չես. ու երբ ուտես ու կշտանաս, 12 - Զգոյշ կեցիր, որ չըլլայ թէ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանող Տէրը մոռնաս: 13 - Քու Տէր Աստուծոյ վախնաս, ու զանկապ պաշտես, և անոր անունով երգում ընես: 14 - Օտար աստուածներուն, ձեր բոլորաբար եղող ժողովուրդներուն աստուածներուն, ետեւէն չերթար. 15 - (Վասն զի քու Տէր Աստուծոյ որ քու մէջտեղդ է, նախանձոտ Աստուած է.) չըլլայ որ քու Տէր Աստուծոյ բարկութիւնը քու վրայ բորբոքի, ու քեզ երկրի երեսէն բնաջինջ ընէ:

16 - Ձեր Տէր Աստուածը չփորձէք, ինչպէս Մասայի մէջ փորձեցիք: 17 - Ձեր Տէր Աստուծոյն պատուիրանները, ու ձեզի պատուիրած վկայութիւնները ու կանոնները զգուշութեամբ պահէք: 18 - Եւ Տէրոջը առջև ինչ որ ուզիլ ու հաճեյի է, զայն ընես, որպէս զի քեզի աղէկ ըլլայ, ու մտնես ժառանգես այն բարի երկիրը զոր Տէրը քու հայրերուդ երգում ըրաւ +եզի +ուլ-, 19 - Եւ քու ամէն թշնամիներդ քու առջևէդ հալածես, ինչպէս Տէրը ըսաւ:

20 - Երբ վաղը քու որդիդ քեզի հարցնէ ու ըսէ թէ Ի՞նչ պիտի ըլլան այն վկայութիւնները, կանոնները ու դատաստանները զորոնք մեր Տէր Աստուածը ձեզի պատուիրեց. 21 - Այն ատեն քու որդւոյդ պիտի ըսես, Մենք Եգիպտոսի մէջ Փարաւոնի ծառայ էինք, և Տէրը զօրաւոր ձեռքով մեզ Եգիպտոսէ հանեց. 22 - Նաև Տէրը մեր աչքերուն առջև Եգիպտոսի վրայ, Փարաւոնի վրայ ու անոր բոլոր տանը վրայ մեծ ու սոսկալի նշաններ ու հրաշքներ բրտաւ. 23 - Եւ մեզ անկէ հանեց, որպէս զի մեզ տանի ու մեր հայրերուն երգումով խոտացած երկիրը տայ մեզի: 24 - Ուստի Տէրը մեզի պատուիրեց որ այս բոլոր կանոնները ի գործ դնենք, ու մեր Տէր Աստուծ-

մէն վախնանք, որպէս զի մեզի աղէկ ըլլայ միշտ, ու ողջ պահէ մեզ, ինչպէս ենք այսօր: 25 - Եւ եթէ մեր Տէր Աստուծոյն առջև այս բոլոր պատուիրանները զգուշութեամբ կատարենք, ինչպէս ինք մեզի պատուիրեց, այն մեզի արդարութիւն պիտի սեպուի:

ԳԼ. Է

Երբ քու Տէր Աստուծոյ տանի քեզ այն երկիրը, ուր պիտի մտնես ժառանգելու համար, ու քու առջևէդ շատ ազգեր հալածէ, այսինքն Քեաացիները, Գերգեսացիները, Ամօրհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Խեւացիները ու Յեբուսացիները, այս եօթը ազգերը, որոնք քեզմէ մեծ ու զօրաւոր են, 2 - Ու երբ քու Տէր Աստուծոյ զանոնք քու ձեռքդ տայ, զանոնք զարնես ու բոլորովին կորսնցնես. անոնց հետ ուխտ չընես ու անոնց չողորմիս. 3 - Ոչ ալ անոնց հետ խնամութիւն ընես. քու աղջիկդ անոր աղուն չտաս, ու անոր աղջիկը քու աղուդ չտանես. 4 - Վասն զի քու աղաքներդ իմ ծառայութեան պիտի դարձնեն օտար աստուածներ պաշտելու. ու Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ բորբոքելով ձեզ շուտով պիտի կորսնցնէ: 5 - Սակայն անոնց այսպէս ըրէք. անոնց սեղանները կործանեցէք, անոնց արձանները խորտակեցէք, անոնց Աստարովթները կտրեցէք, ու անոնց քանդակուած կուռքերը կրակով այրեցէք: 6 - Քանզի դուն քու Տէր Աստուծոյ սուրբ ժողովուրդն ես. և քու Տէր Աստուծոյ երկրի երեսին վրայ եղող բոլոր ազգերուն մէջէն քեզ ընտրեց, որպէս զի դուն անոր սեպհական ժողովուրդ ըլլաս: 7 - Տէրը որ ձեզ սիրեց ու ընտրեց, ամէն ազգերէն շատուոր ըլլայնուդ համար չէ, քանզի դուք ամէն ազգերէն քիչուոր էիք. 8 - Այլ Տէրը ձեզ սիրելուն համար, ու ձեր հայրերուն ըրած երգումը պահելու համար, Տէրը ձեզ զօրաւոր ձեռքով ծառայութեան տունէն հանեց, և Եգիպտոսացոց Փարաւոն թագաւորին ձեռքէն ազատեց: 9 - Արդ գիտցիր որ քու Տէր Աստուծոյ ինքն է Աստուած, հաւատարիմ Աստուածը, որ զինք սիրողներուն ու իր պատուիրանները պահողներուն մինչև հազար

*ԵՔԵ. չար

ազգը ուխտ ու ողորմութիւն կը պահէ .
 10 - Եւ զինք ատողներուն ալ իրենց
 երեսին դէմ պատիժը կու տայ, ու զա-
 նոնք կը կորսնցնէ . զինք ատողին պա-
 րիժը չուշացնէր, անոր երեսը կու տայ :
 11 - Ուրեմն պահէ դուն այն պատուի-
 րանքները, կանոնները ու դատաստան-
 ները զորոնք ես այսօր քեզի կը պատ-
 ուիրեմ, որպէս զի զանոնք ընես :

12 - Ուստի եթէ այս դատաստան-
 ները լսելով զանոնք պահես ու ի գործ
 դնես, քու Տէր Աստուածդ ալ քեզի
 համար քու հայրերուդ երգումը ըրած
 ուխտը ու ողորմութիւնը պիտի պահէ .

13 - Նաև քեզ պիտի սիրէ և քեզ
 օրհնէ ու քեզ պիտի շատցնէ . և քու
 որովայնիդ պտուղը, քու յրկրիդ
 պտուղը, քու ցորենդ, քու գինիդ,
 քու իւղդ, կովերուդ ծնունդը ու
 ոչխարներուդ հօտերը պիտի օրհնէ այն
 երկրին վրայ զոր Տէրը քու հայրերուդ
 երգումը ըրաւ քեզի տալու : 14 - Իուն
 ամէն ազգերէն աւելի օրհնեալ պիտի
 ըլլաս . ու ձեր մէջ և ձեր անասուննե-
 րուն մէջ, թէ՛ արուններէն և թէ՛ էգե-
 րէն, ամուլ պիտի չգտնուի : 15 - Եւ
 Տէրը ամէն հիւանդութիւնները քեզմէ
 պիտի վերցնէ . ու այն Եգիպտացւոց
 գէշ ցաւերը զորոնք դուն գիտես, բնաւ
 քու վրայ պիտի չբերէ, այլ զանոնք
 քու բոլոր թշնամիներուդ վրայ պիտի
 զրկէ : 16 - Եւ դուն պիտի սպառես
 այն բոլոր ազգերը, զորոնք քու Տէր
 Աստուածդ քու ձեռքդ պիտի տայ .
 ու քու աչքդ անոնց չի նայէ, ու անոնց
 աստուածները չպաշտես, վասն զի այն
 քեզի որոգայթ պիտի ըլլայ : 17 - Եթէ
 սրտիդ մէջ ըսես թէ Այն ազգերը
 ինձմէ շատուոր են, ես ի՞նչպէս կրնամ
 զանոնք հալածել, 18 - Անոնցմէ մի
 վախնար, այլ միշտ յիշէ ինչ որ քու
 Տէր Աստուածդ ըրաւ Փարաւոնի ու
 բոլոր Եգիպտացիներուն : 19 - Այն մե-
 ծամեծ փորձերը որոնց դուն տկանա-
 տես եղար, այն նշանները ու հրաշք-
 ները, այն զօրաւոր ձեռքը ու բարձր
 բազուկը, որոնցմով քու Տէր Աստ-
 ուածդ քեզ հանեց . քու Տէր Աստ-
 ուածդ այնպէս պիտի ընէ այն բոլոր
 ազգերուն, որոնցմէ դուն կը վախնաս :

20 - Ու նաև քու Տէր Աստուածդ ա-
 նոնց վրայ իշամեղու պիտի զրկէ, որ-
 պէս զի մնացածները ու քու երեսէդ
 պահոււորողները կորսուին : 21 - Ու-

րէ՛ճ անոնց երեսէն մի վախնար . քանզի
 քու Տէր Աստուածդ, այն զօրաւոր ու
 ահարկու Աստուածը, ձեր մէջ է :
 22 - Եւ քու Տէր Աստուածդ այն ազ-
 գերը քու առջեւէդ կամաց կամաց
 պիտի վաճառէ . զանոնք չես կրնար մե-
 կէն հատցնել, որ չըլլայ թէ դաշտին
 գաղանները վրայ շատնան : 23 - Եւ
 քու Տէր Աստուածդ զանոնք քու
 ձեռքդ պիտի մատնէ, ու զանոնք մեծ
 կործանումով պիտի կործանէ, մինչև
 «Քնք բնաջինջ ըլլան» : 24 - Նաև ա-
 նոնց թագաւորները քու ձեռքդ պիտի
 տայ, և անոնց անուները երկինքի
 տակէն ոչնչացնես . ու բնաւ մէկը պի-
 տի չկրնայ քեզի դէմ կենալ, մինչև
 զանոնք կորսնցնես : 25 - Անոնց աստ-
 ուածներուն քանդակուած կուռքերը
 կրակով այրես . ու անոնց վրայ եղած
 ոսկիին ու արծաթին աչք տնկելով
 զանոնք քեզի չառնես, որպէս զի անոնց-
 մով որոգայթի չբռնուիս . վասն զի ա-
 նոնք քու Տէր Աստուծոյդ առջև գար-
 շելի են : 26 - Արդ գարշելի բան մը
 տունդ մի տանիր, որպէս զի դուն ալ
 անոր պէս նզովուած չըլլաս . անկէ բոլո-
 րովին զզուիս, ու զանիկա խիստ գար-
 շելի սեպես, վասն զի նզովուած է այն :

ԳԼ . Ը

Ամէն պատուիրանքները զորոնք ես
 այսօր կը պատուիրեմ ձեզի, զզոյշ եղէք
 որ ընէք, որպէս զի ապրիք ու շատնաք
 ու մանէք ժառանգէք այն երկիրը,
 զոր Տէրը ձեր հայրերուն երգումով
 խոստացաւ : 2 - Ու միտքդ պահէ այն
 բոլոր ճամբան, որ քու Տէր Աստուածդ
 այս քառասուն տարին քեզ անապա-
 տին մէջ պտրացուց, քեզ խոնարհե-
 ցնելու, փորձելու ու սրտիդ մէջինը
 իմանալու համար, թէ արդեօք դուն
 անոր պատուիրանքները պիտի պահես
 թէ ոչ : 3 - Եւ Տէրը քեզ խոնարհե-
 ցուց, անօթեցուց և մանանայով կե-
 րակրեց, զոր ոչ դուն կը ճանչնայիր
 և ոչ քու հայրերդ, քեզի իմացնելու
 համար թէ ոչ միայն հացով կ'ապրի
 մարդ, հապա մարդը Տէրոջը բերնէն
 ելած ամէն խօսքով կ'ապրի : 4 - Այս
 քառասուն տարին քու վրայէդ լա-
 թերդ չհինցան, ու սաքերդ չուռեցան :

5 - Եւ սրտիդ մէջ գիտնաս որ ինչ-
 պէս մարդ մը կը խրատէ իր որդին .

քու Տէր Աստուածդ ալ քեզ այնպէս
կը խրատէ : 6 - Ուրեմն քու Տէր Աս-
տուծոյդ պատուիրանքները պահես ,
որպէս զի անոր ճամբաներուն մէջ քա-
լես , ու անկէ վախնաս : 7 - Քանզի քու
Տէր Աստուածդ աղէկ երկիր մը կը
տանի քեզ , այնպէս երկիր մը՝ որ դաշ-
տերէ ու լեռներէ բղխող գետերով ,
աղբիւրներով ու խորունկ ջուրերով
լեցուն է . 8 - Այնպէս երկիր մը՝ որ ցո-
րենով , գարիով , սյգիններով , թղենի-
ներով և նունենիներով լեցուն է . իւր
տուող ձիթենիներու ու մեղրի երկիր .
9 - Այնպէս երկիր մը՝ ուր *կուշտ հաց
պիտի ուտես , ու անոր մէջ բնաւ բան
մը պիտի չպակսի քեզի . երկիր մը՝
որուն քարերը երկաթ են , ու անոր
լեռներէն պղինձ պիտի հանես :

10 - Ուտի երբ ուտես ու կշտանաս ,
քու Տէր Աստուածդ օրհնես այն աղէկ
երկիրը քեզի տալուն համար : 11 - Քու
անձիդ զգուշութիւն ըրէ , չըլլայ որ
քու Տէր Աստուածդ մոռնաս ու չպա-
հես անոր պատուիրանքները , դատա-
տանները ու կանոնները զորոնք ես
այսօր քեզի կը պատուիրեմ : 12 - Ու
երբ ուտես ու կշտանաս , և գեղեցիկ
տուներ շինես ու բնակիս անոնց մէջ ,
13 - Ու երբ արջուներդ և հօտերդ
շտանան , ու նաև արծաթդ ու ոսկիդ
շտանայ , և քու ամէն ունեցածդ շտա-
նայ , 14 - Զըլլայ որ սիրող հպարտա-
նայ , և քու Տէր Աստուածդ մոռնաս ,
որ Եգիպտոսաց երկրէն , ծառայու-
թեան տունէն , քեզ հանեց , 15 - Եւ
այն մեծ ու ահագին , և կիզող օձերով
ու կարիճներով լեցուն , չոր ու անջուր
անապատին մէջ քեզ պարտցուց , ու
քեզի ապառաժ քարէն ջուր հանեց .
16 - Եւ անապատին մէջ քու հայրե-
րուդ չճանչցած մանանայովք քեզ կե-
րակրեց , որպէս զի քեզ խոնարհեցնէ
ու փորձէ , և վերջը քեզի բարիք ընէ .
17 - Եւ սրտիդ մէջ չըսես թէ Այս
հարստութիւնը իմ կարողութիւնովս
ու իմ ձեռքիս ուժովք վասակեցայ .
18 - Հապա քու Տէր Աստուածդ յի-
շես , քանզի հարստութիւն ստանա-
լու համար քեզի դժ տուողը ան է ,
որպէս զի քու հայրերուդ իր երգու-
մով բրած ու խոր հաստատէ , ինչպէս
այսօր և՛ դեռես :

19 - Եւ եթէ քու Տէր Աստուածդ
մոռնալով ուրիշ աստուածներու ե-
տեւէ երթաս , զանոնք պաշտես ու
անոնց երկրպագութիւն ընես , ես այսօր
ձեզի կը վկայեմ որ դուք բոլորովին
պիտի կորսուիք . 20 - Այն ազգերուն
պէս զորոնք Տէրը ձեր առջեւէն պիտի
կորսնցնէ , այնպէս որ պիտի կորսուիք ,
վասն զի ձեր Տէր Աստուծոյն խօսքը
մտիկ չըրիք :

ԳԼ. Թ

Ով Խորայէլ , մտիկ ըրէ . Գու՛ն այսօր
Յորդանանէ կ'անցնիս , որպէս զի եր-
թաս քեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր ,
ու մինչև երկինք պարսպաւոր մեծ քա-
ղաքներ ժառանգես , 2 - Այն մեծ ու
երկայնահասակ ազգը , Ենակիմերուն
որդիները , զորոնք դուն կը ճանչնաս ,
ու նաև լսեր ես թէ Ենակի որդիներուն
մով կրնայ դէմ դնել :

3 - Արդ դուն այսօր գիտցիր որ քու
Տէր Աստուածդ ինք քու առջեւդ
կ'անցնի իբրև մաշող կրակ մը , ու
զանոնք պիտի կորսնցնէ , և քու առջե-
ւէդ զանոնք պիտի նուաճէ , և դուն
զանոնք պիտի հալածես ու շուտով
կորսնցնես , ինչպէս Տէրը քեզի ըսաւ :

4 - Երբ քու Տէր Աստուածդ զանոնք
քու առջեւէդ հալածէ , սրտիդ մէջ
չըսես թէ Տէրը իմ արդարութեանս
համար զիս այս երկիրը բերաւ որպէս
զի ժառանգեմ . քանզի Տէրը այս ազ-
գերը իրենց անօրէնութեանը համար
քու առջեւէդ կը վաճառէ : 5 - Ոչ թէ
քու արդարութեանդ ու սրտիդ ուղ-
ղութեանը համար կը մանես անոնց
երկիրը ժառանգելու . այլ քու Տէր
Աստուածդ այն ազգերուն անօրէնու-
թեանը համար զանոնք քու առջեւէդ
կը վաճառէ , և որպէս զի հաստատէ այն
խօսքը՝ որու համար քու հայրերուդ ,
Աբրահամի , Իսահակի ու Յակոբի , եր-
գում բրաւ :

6 - Ուտի գիտցիր որ քու
արդարութեանդ համար չէ որ քու
Տէր Աստուածդ այս բարի երկիրը քեզի
ժառանգել կու տայ . քանզի դուն
խտապարանոց ժողովուրդ մըն ես :

7 - Միտքդ պահէ ու մի մոռնար որ
դուն քու Տէր Աստուածդ անապատին
մէջ բարկացուցիր . Եգիպտոսի երկրէն
ելած օրէդ մինչև հոս եկած օրդ Տէ-
րոջը անհնապանդ եղաք : 8 - Քորերի

* Եբր. առանց չքաւորութեան

Մէջ ալ Տէրը բարկացուցիք . և Տէրը ձեզ կորսնցնելու համար ձեզի բարկացաւ : 9 - Երբ ես լեռը ելայ , որպէս զի քարեղէն տախտակները առնեմ , այսինքն Տէրոջը ձեզի հետ ըրած ուխտին տախտակները , քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը կեցայ . ոչ հաց կերայ և ոչ ջուր խմեցի . 10 - Այն ատեն Տէրը տուաւ ինծի Աստուծոյ մատովը գրուած երկու քարեղէն տախտակները . ու անոնց վրայ գրուած էին բոլոր այն խօսքերը զորոնք ժողովքին օրը լեռանը վրայ կրակին մէջէն Տէրը ձեզի զրուցեց : 11 - Արդ քառասուն օրէն ու քառասուն գիշերէն ետքը Տէրը երկու քարեղէն տախտակները , այսինքն ուխտին տախտակները , ինծի տուաւ : 12 - Եւ Տէրը ինծի ըսաւ , Ել ու շուտով ասկէ վար իջիր , քանզի ապականեցաւ քու ժողովուրդդ զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր . իմ պատուիրած ճամբայէս շուտով խտորեցան , իրենց ձուլածոյ կուռք շինեցին : 13 - Ու նաև Տէրը ինծի հետ խօսելով ըսաւ , Ես այս ժողովուրդին նայեցայ , և ահա խստապարանոց ժողովուրդ մըն է ան . 14 - Թող տուր զիս որ զանոնք կորսնցնեմ , ու անոնց անունը երկինքի տակէն բնաջինջ ընեմ , և քեզ անոնցմէ զօրաւոր ու բազմաթիւ ազգ մը պիտի ընեմ :

15 - Այն ատեն ես դարձայ , լեռնէն վար իջայ ու լեռը կրակով կ'այրէր . և ուխտին երկու տախտակները երկու ձեռքերուս վրայ էին : 16 - Ետքը նայեցայ տեսայ որ ձեր Տէր Աստուծոյն դէմ մեղք գործելով՝ ձեզի ձուլածոյ որթ շիներ էիք , Տէրոջը ձեզի պատուիրած ճամբայէն շուտով խտորեր էիք . 17 - Այն ատեն այն երկու տախտակները բռնեցի , ու իմ երկու ձեռքերուս վրայէն վար նետեցի , և ձեր աչքերուն առջև զանոնք կտարտեցի : 18 - Ետքը առաջուան պէս Տէրոջը առջև *աղաչեցի քառասուն օր ու քառասուն գիշեր . ոչ հաց կերայ ոչ ալ ջուր խմեցի , ձեր գործած բոլոր մեղքին համար . վասն զի Տէրոջը առջև չարութիւն ընելով զանհկա բարկացուցեր էիք . 19 - Քանզի վախցայ այն սոսկայի բարկութենէն՝ որով Տէրը ձեր վրայ բարկացաւ ձեզ կորսնցնելու հա-

մար . սակայն Տէրը այն անգամին ալ ինծի լսեց . 20 - Եւ Տէրը Ահարոնի խիստ բարկացաւ , այնպէս որ զանհկա պիտի կորսնցնէր . ու նոյն ատեն Ահարոնի համար ալ աղօթք ըրի : 21 - Եւ ձեր ըրած մեղքը , այսինքն որթը , առի , ու զանհկա կրակով այրեցի . ետքը զանհկա ծեծելով լաւ մը փշրեցի , մինչև որ մանր փոշի եղաւ . և այն փոշին լեռնէն իջնող տուռին մէջ նետեցի :

22 - Նաև Տարերայի , Մասայի ու Կիբրօթ-հաթթավայի մէջ Տէրը բարկացուցիք : 23 - Ու երբ Տէրը ձեզ կադէս-բառնեայէ զրկեց , և Յօդ ըսաւ , Ելէք ու իմ ձեզի տուած երկիրս ժառանգեցէք , այն ատեն ձեր Տէր Աստուծոյն հրամանին անհնազանդութիւն ըրիք , ու անոր չհաւատալով անար խօսքը մտիկ չըրիք : 24 - Ձեզ ճանչցած օրէս ի վեր Տէրոջը անհնազանդ էք :

25 - Ուստի ես քառասուն օր ու քառասուն գիշեր որ աղաչեցի , Տէրոջը առջև աղաչեցի , որովհետև Տէրը ըսաւ որ ձեզ կորսնցնէ : 26 - Եւ ես Տէրոջը աղաչելով ըսի , Ով Տէր Եհովա , մի կորսնցնէր քու ժողովուրդդ ու ժառանգութիւնդ զոր քու մեծութիւնովդ ազատեցիր , ու զօրաւոր ձեռքով Եգիպտոսէ հանեցիր : 27 - Քու ժառանգերդ , Աբրահամը , Իսահակը ու Յակոբը , յիշէ , և այս ժողովուրդին խստութեանը , անօրէնութեանը ու մեղքին մի նայիր . 28 - Չըլլայ որ այն երկրին , ուրկէ մեզ հանեցիր , բնակչները ըսեն թէ Տէրը կտրող չըլլալով զանոնք տանելու այն երկիրը զոր անոնց խոստացեր էր , կամ զանոնք ատելով , հանեց զանոնք որպէս զի անպատին մէջ մեռցնէ : 29 - Որովհետև անոնք քու ժողովուրդդ ու ժառանգութիւնդ են , զորոնք դուն քու մեծ զօրութիւնովդ ու բարձր բազուկովդ Եգիպտոսէ հանեցիր :

ԳԼ. Ժ

Այն ատեն Տէրը ինծի ըսաւ , Քեզի առաջուաններուն պէս երկու հաս քարէ տախտակներ կոփէ , ու լեռը ինծի ելիր , ու նաև քեզի փայտէ տապանակ մը շինէ . 2 - Եւ տախտակներուն վրայ քու կտորած առաջուան տախտակներուդ վրայի խօսքերը պիտի

*Եբբ. ինկայ

գրեմ, ու զանոնք տապանակին մէջ դնես : 3 - Ուստի ես Սատիսի փայտէ տապանակ մը շինեցի, ու առաջուանին պէս երկու հասարէ տախտակներ կոփեցի, ու այն երկու տախտակները ձեռքս առնելով լեւը ելայ : 4 - Եւ տախտակներուն վրայ առաջուան գրուածքին պէս այն սասը խօսքերը գրեց, զորոնք Տէրը ձեզի լեւանը վրայ կրակին մէջէն խօսեցաւ ժողովքին օրը, և Տէրը զանոնք ինծի տուաւ : 5 - Անկէ դառնալով լեւնէն վար իջայ, ու տախտակները շինած տապանակիս մէջ դրի, որպէս զի այն տեղը կենան, ինչպէս Տէրը ինծի պատուիրեց :

6 - Եւ Իսրայելի որդիները Բերաթբանէ-յականէ Մօսէրա չուեցին . հոն մեռաւ Աշարոն, ու հոն թաղուեցաւ, և անոր որդին Եզիազար անոր տեղ քահանայ եղաւ : 7 - Անկէ Գադգադ, ու Գադգադէ ջուրի առուններու երկիրը, Ետերաթա, չուեցին :

8 - Այն ատեն Տէրը Ղեւիի ցեղը զատեց, որպէս զի Տէրոջը ուխտին տապանակը կրէ, Տէրոջը առջև կենայ որպէս զի անոր ժառայութիւնն ընէ, ու անոր անունովը օրհնէ, մինչև այսօր :

9 - Այս պատճառաւ Ղեւիի եղբայրներուն հետ բաժին ու ժառանգութիւն չունի . անոր ժառանգութիւնը Տէրն է, ինչպէս քու Տէր Աստուածդ անոր ըսաւ :

10 - Եւ ես առաջուան օրերուն համեմատ քառասուն օր ու քառասուն գիշեր լեւանը վրայ կեցայ, ու Տէրը այս անգամին ալ ինծի մտիկ ընելով չուզեց քեզ կորսնցնել : 11 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Ելի՛ր ու ժողովուրդին առջևէն չուէ, որպէս զի մտնեն ու ժառանգեն այն երկիրը զոր անոնց հայրերուն երգումը քի անոնց տալու համար :

12 - Ուրեմն, ով Իսրայել, հիմա քու Տէր Աստուածդ քեզմէ ի՞նչ կը պահանջէ . միայն թէ քու Տէր Աստուածդ վախնաս, անոր ամէն ճամբաներուն մէջ քալես և զանկա սիրես, ու նաև քու բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ քու Տէր Աստուածդ պաշտես, 13 - Եւ Տէրոջը պատուիրանքները ու կանոնները պահես, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, որպէս զի քեզի ազէկ ըլլայ : 14 - Ահա երկինք ու երկինքներուն երկինքը, նաև երկիր ու բոլոր անոր մէջ եղածը քու Տէր Աս-

տուծոյդ և Վերաբերին : 15 - Միայն թէ Տէրը քու հայրերուդ հաւնեցաւ ու զանոնք սիրեց, և անոնցմէ ետքը անոնց զաւակները, այսինքն ձեզ, ընտրեց բոլոր ազգերուն մէջէն, ինչպէս այսօր և Վերաբերին : 16 - Ուստի ձեր սիրտերուն անթլփատութիւնը թլփատեցէք, ու ձեր պարանոցները ա՛լ մի խօտացնէք. 17 - Քանզի ձեր Տէր Աստուածը աստուածներուն Աստուածը ու տերերուն Տէրն է . մեծ, հզօր ու անհեղ Աստուածն է, որ աչառութիւն չընէր ու կաշառք չառնէր . 18 - Անկա որբին ու որբեւորին իրաւունք կ'ընէ, պանդուխտը կը սիրէ, ու անոր հաց ու հանդերձ կու տայ : 19 - Ուրեմն պանդուխտը սիրեցէք . քանզի դուք ալ Եզիպտացուց երկրին մէջ պանդուխտ էիք : 20 - Քու Տէր Աստուածդ վախնաս, ու զանկա պաշտես, և անոր յարիս, ու անոր անունովը երգումընես : 21 - Քու պարծանքդ անկա է, և քու Աստուածդ անկա է, որ քեզի համար այս մեծ ու սքանչելի բաներն ըրաւ, զորոնք դուն քու աչքերովդ տեսար : 22 - Քու հայրերդ եօթանասուն հոգի էին երբ Եզիպտոս իջան . ու հիմա քու Տէր Աստուածդ քեզ երկինքի աստղերուն պէս շատցուց :

ԳԼ. ԺԱ

Ուրեմն դուն քու Տէր Աստուածդ սիրես, ու միշտ անոր պատուիրած բաները, կանոնները, դասաստանները ու պատուիրանքները պահես : 2 - Եւ այսօր գիտցէք, որ ձեր որդիներուն չէ ի՞նչ, որովհետև անոնք չեն գիտեր, ու չտեսան ձեր Տէր Աստուծոյն խրատը, անոր մեծութիւնը, զօրաւոր ձեռքը ու բարձր բազուկը, 3 - Եզիպտոսի մէջ Եզիպտացուց Փարաօնն թագաւորին ու անոր բոլոր երկրին վրայ ըրած նշանները ու գործերը . 4 - Եւ ինչ որ ըրաւ Եզիպտացուց զօրքերուն, ձերուն ու կառքերուն . ու երբ անոնք ձեր ետևէն ինկան, ինչպէս Տէրը կարմիր ծովուն ջուրերը անոնց վրայ գարձուց ու զանոնք կորսնցուց մինչև այսօր . 5 - Եւ ինչ որ ըրաւ ձեզի անապատին մէջ մինչև ձեր հոս գալը . 6 - Ու ինչ որ Ռուբէնեան Եզիպտի որդիներուն,

*Եբր. յորդել տուաւ

Գրածանի ու Աբիրունի, ըրաւ . Ի՛նչպէս
 երկիր իր բերանը բացաւ , ու զանոնք
 իրենց ընտանիքներովը , իրենց վրան-
 ներովը ու իրենց ամէն ստացուածքովը
 բոլոր Խորայելի մէջէն կլլեց : 7 - Սա-
 կայն Տէրոջը ըրած բոլոր մեծ գործերը
 ատենողը ձեր աչքերն են : 8 - Ուրեմն
 պահեցէք այն ամէն պատուիրանքները
 զորոնք ես այսօր ձեզի կը պատուիրեմ,
 որպէս զի զօրանաք, ու մտնէք ժառան-
 գէք այն երկիրը , ուր կ'երթաք զա-
 նիկա ժառանգելու . 9 - Եւ ձեր օրերը
 երկար ըլլան այն երկրին վրայ զոր Տէրը
 ձեր հայրերուն երգում՝ ըրաւ՝ անոնց
 և անոնց սերունդին տալու , այնպիսի
 երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ :

10 - Քանզի այն երկիրը , ուր դուք
 պիտի մտնէք զանիկա ժառանգելու
 համար , Եզիպտոսի երկրին պէս չէ ,
 ուրկէ ելաք . ուր երբ սերմ կը ցանէիր,
 բանջարի պարտէզի պէս ոտքովդ աճը
 ջուր կու տայիր . 11 - Այլ ձեր մտնե-
 լու ու ժառանգելու երկիրը լեռներու
 ու հովիտներու երկիր մըն է . երկինքի
 անձրեւին ջրովը կը ջրուի . 12 - Այն-
 պիտի երկիր մըն է, զոր քու Տէր Աստ-
 ուածդ կը դարմանէ . քու Տէր Աստու-
 ծոյդ աչքը տարւոյն սկիզբէն մինչև
 վերջը միշտ անոր վրայ է : 13 - Ուստի
 եթէ ուշադրութեամբ մտիկ ընէք իմ
 պատուիրանքներս , զորոնք այսօր ձեզի
 կը պատուիրեմ, ու ձեր Տէր Աստուածը
 սիրէք , և զանիկա ձեր բոլոր սրտովը
 ու բոլոր հոգւովը պաշտէք , 14 - Այն
 ատեն ձեր երկրին անձրեւը , առաջին
 ու վերջին անձրեւը , իրենց ատենին
 պիտի տամ , և քու ցորենդ , քու գի-
 նիդ ու քու իւղդ պիտի ժողվես : 15 -
 Ու նաև քու արտիդ մէջ խոտ պիտի
 տամ անասուններուդ համար, որպէս
 զի ուտես ու կշտանաս : 16 - Ձեր ան-
 ձերուն զգուշութիւն ըրէք , չըլլայ որ
 ձեր սիրալը խաբուի, ու դուք չե՞ր
 ճամբայէն խտտրելով օտար աստուած-
 ները պաշտէք, ու անոնց երկրպագու-
 թիւն ընէք . 17 - Եւ Տէրը ձեզի դէմ
 սաստիկ բարկանալով երկինքը բոցէ ,
 որպէս զի անձրև չըլլայ ու երկիր իր
 պտուղը չտայ, և Տէրոջը ձեզի տուած
 բարի երկրէն շուտով կորսուիք :

18 - Այս իմ խօսքերս ձեր սրտին ու
 հոգւոյն մէջ դրէք , ու զանոնք նշանի
 համար ձեր ձեռքերուն վրայ կապե-
 ցէք , ու ճակատնոցի համար ձեր աչ-

քերուն մէջտեղ ըլլան . 19 - Եւ զա-
 նոնք ձեր աղոյք սորվեցուցէք , ու
 տունը նստած ատենդ , ճամբան քա-
 լած ատենդ և պտուկելու ու ելլելու
 ատենդ զանոնք խօսիս . 20 - Եւ զանոնք
 քու տանդ դրանդիքներուն վրայ ու
 դռներուդ վրայ գրես . 21 - Որպէս զի
 այն երկրին վրայ, զոր Տէրը ձեր հայրե-
 րուն երգում՝ ըրաւ անոնց տալու , ձեր
 օրերը ու ձեր սրդիներուն օրերը շատ-
 նան իբրև երկինքի օրեր երկրի վրայ :

22 - Քանզի եթէ այս իմ ձեզի պատ-
 ուիրած բոլոր պատուիրանքներս զգու-
 շութեամբ պահէք ու կատարէք , և
 ձեր Տէր Աստուածը սիրէք , ու անոր
 բոլոր ճամբաներուն մէջ քալէք և անոր
 յարիք , 23 - Տէրն ալ այս ամէն ազ-
 գերը ձեր առջեւէն պիտի վռնտէ , և
 դուք ձեզմէ մեծ ու զօրաւոր ազգերու
 վրայ պիտի տիրէք : 24 - Ձեր ոտքին ա-
 մէն կոխած տեղը ձերը պիտի ըլլայ .
 ձեր սահմանը անապատէն ու Լիբա-
 նանէ, գետէն, այժմէն Եփրատ գետէն,
 մինչև *արեւմտեան ծովը պիտի ըլլայ :
 25 - Բնաւ մէկը պիտի չկարենայ ձեզի
 դէմ դնել . ձեր Տէր Աստուածը ձեր
 ամէն կոխած երկրին վրայ ձեզմէ վախ
 մը ու սոսկում մը պիտի բերէ, ինչպէս
 ձեզի ըսաւ :

26 - Ահա ես այսօր ձեր առջև օրհ-
 նութիւն ու անէծք կը դնեմ . 27 -
 Օրհնութիւնը՝ եթէ հնազանդութիւն
 ընէք ձեր Տէր Աստուծոյն պատուի-
 րանքներուն, զորոնք ես այսօր ձեզի կը
 պատուիրեմ . 28 - Եւ անէծքը՝ եթէ
 ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքնե-
 րուն չհնազանդիք , ու խոտորիք այն
 ճամբայէն զոր ես այսօր ձեզի կը պատ-
 ուիրեմ, ու ձեր չճանչցած օտար աստ-
 ուածներուն ետեւէն երթաք : 29 -
 Ուստի երբ քու Տէր Աստուածդ քեզ
 տանի այն երկիրը , ուր պիտի մանես
 ու ժառանգես , օրհնութիւնը Գարի-
 ւին լեռանը վրայ, ու անէծքը Գեբաղ
 լեռանը վրայ տաս : 30 - †Ահա տանք
 Զորդանանու անդիի կողմը արեւմտեան
 ճամբուն վրայ, Մօրէի կաղնիներուն
 մօտ, Գաղգաղայի դիմացի հովիտին
 մէջ բնակող Քանանացուց երկրին մէջ
 են : 31 - Որովհետև դուք Զորդանանէ
 պիտի անցնիք, որպէս զի մտնէք ու ժա-
 ռանգէք այն երկիրը զոր ձեր Տէր Աստ-

*Եբբ. ետեւի †Եբբ. 25^o որ

ուածը ձեզի պիտի տայ, ու զանհկա պիտի ժառանգէք և անոր մէջ պիտի բնակիք: 32 - Ուրեմն զգուշու թեամբ ի գործ դրէք այն ամէն կանոնները ու դասատանները, զորոնք ես այսօր ձեր առջև կը դնեմ:

ԳԼ. ԺԲ

Ասոնք են այն կանոններն ու դասատանները, զորոնք դուք պահելու և ընելու էք այն երկրին վրայ զոր ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեզի պիտի տայ ժառանգելու համար, որչափ ժամանակ որ երկրի վրայ ապրիք: 2 - Այն բոլոր տեղերը, ուր ձեր յաղթելու ազգերը բարձր լեռներու վրայ, բլուրներու վրայ ու ամէն տերեւայից ծառերու տակ իրենց աստուածները պաշտեր են, բոլորովին կործանէք. 3 - Նաև անոնց սեղանները փլցնէք, և անոնց արձանները կտորտէք, անոնց Աստարովթները կրակով այրէք, ու անոնց աստուածներուն կուռքերը կտոր կտոր ընէք, և անոնց անուները այն տեղէն ոչնչացնէք:

4 - Ի՞նչ ձեր Տէր Աստուծոյն այսպէս պիտի չընէք. 5 - Հապա դուք պիտի փնտռէք այն տեղը, զոր ձեր Տէր Աստուածը ձեր ամէն ցեղերուն մէջէն պիտի ընտրէ իր անուանը բնակութեան համար, ու հոն պիտի երթաք. 6 - Եւ ձեր ողջակէզները, ձեր զոհերը, ձեր տասանորդները, *ձեր բարձրացնելու ընծաները, ձեր ուխտերը, ձեր կամուտոր ընծաները ու ձեր արջառներուն ու ոչխարներուն առջինեկները հոն տանիք. 7 - Եւ հոն ձեր Տէր Աստուծոյն առջև ուտէք, և ձեր Տէր Աստուածը ձեզ օրհնելուն համար՝ ձեր ամէն ձեռք զարկած բաներուն մէջ ուրախանաք, թէ՛ դուք և թէ՛ ձեր ընտանիքը:

8 - Մի ընէք այն ամէնուն համեմատ, զոր մենք այսօր այս տեղ կ'ընենք, այսինքն ամէն մարդ իր աչքերուն հաճոյ եղածին պէս. 9 - Քանզի մինչև հիմա չհասաք այն հանգստութեանը ու ժառանգութեանը զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ: 10 - Բայց դուք Յորդանանէ պիտի անցնիք, ու պիտի բնակիք այն երկրին մէջ զոր

*Եբբ. ձեռքերնուդ

ձեր Տէր Աստուածը ձեզի ժառանգութիւն պիտի տայ. ու ձեր բոլոր շրջակայ թշնամիներէն ձեզ պիտի հանգրտացնէ, ու ապահովութեամբ պիտի բնակիք. 11 - Եւ այն տեղը զոր ձեր Տէր Աստուածը պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը համար, բոլոր ձեզի պատուիրածներս հոն տանիք, ձեր ողջակէզները, ձեր զոհերը, ձեր տասանորդները, ձեր բարձրացնելու ընծաները ու ձեր բոլոր ուխտերուն ընտիր շնորհները, զորոնք Տէրոջը պիտի ուխտէք. 12 - Եւ ձեր Տէր Աստուծոյն առջև ուրախութիւն ընէք, թէ՛ դուք, թէ՛ ձեր աղաքները ու աղջիկները, ձեր ծառաները ու աղախիները, և թէ՛ ձեր դռները եղող Ղեւտացին, վասնզի անհկա ձեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի:

13 - Զգոյշ կեցիր, չըլլայ որ ամէն տեսած տեղդ քու ողջակէզներդ մատուցանես. 14 - Այլ քու ողջակէզներդ այն տեղը մատուցանես զոր Տէրը քու ցեղերէդ մէկուն մէջ պիտի ընտրէ, ու հոն իմ բոլոր պատուիրած բաներս կատարես: 15 - Սակայն քու ամէն *քաղաքներուդ մէջ սրտիդ ուղածին պէս անուներ մտնիք, ու միս ուտես, որչափ որ քու Տէր Աստուածդ քեզի օրհնութիւն տուեր է. ու զանհկա անմաքուր ու մաքուր մարդը այժեամի ու եղջերուի պէս ուտեն: 16 - Բայց արիւնը չուտէք. զանհկա ջուրի պէս գետինը թափէք:

17 - Յորենիդ, գինիիդ ու իւղիդ տասանորդները, արջառներուդ ու ջօտերուդ առջինեկները, բոլոր ուխտերուդ ուխտերդ, և կամուտոր ու բարձրացնելու ընծաներդ քու դռներուդ մէջ պիտի չկրնաս ուտել. 18 - Այլ զանոնք քու Տէր Աստուծոյդ առջև Տէր Աստուծոյդ ընտրած տեղը ուտես, թէ՛ դուն, թէ՛ քու աղադ ու աղջիկդ, թէ՛ ծառագ ու աղախիներդ, և թէ՛ քու դռներդ եղող Ղեւտացին. և քու Տէր Աստուծոյդ առջև քու բոլոր ձեռք զարկած բաներուդ վրայ ուրախանաւ: 19 - Զգոյշ կեցիր, չըլլայ որ Ղեւտացին անտես ընես, քանի որ ողջ ես քու երկրիդ վրայ:

20 - Ու երբ քու Տէր Աստուածդ քեզի ըսածին պէս քու սահմանդ մեծ-

*Եբբ. դռներուդ

ցրնէ, ու սիրադ միս ուտել ուզելով՝
 Միս ուտեմ ըսես, սրտիդ բոլոր ցանկու-
 կութեանը պէս միս ուտես: 21 - Եթէ
 քեզմէ հեռու ըլլայ այն տեղը զոր քու
 Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր ա-
 նունը հոն դնելու համար, քեզի պատ-
 ուիրածիս պէս քու արջառներէդ ու
 ոչխարներէդ մորթես, զորոնք Տէրը
 քեզի պիտի տայ, ու քու սրտիդ բոլոր
 ցանկութեանը պէս քու քաղաքներուդ
 մէջ ուտես: 22 - Եւ այծեամբ ու եղ-
 ջերուն ինչպէս կ'ուտուի, զանոնք ալ
 այնպէս ուտես. անմաքուր ու մաքուր
 մարդը անխորաքար ուտեն: 23 - Բայց
 աղէկ զգուշացիր որ արիւնը չուտես.
 վասն զի արիւնը ոգին է, ու ոգին մի-
 սին հետ չուտես: 24 - Չանիկա չու-
 տես, այլ ջուրի պէս գետինը թափես:
 25 - Չանիկա մի ուտեր, որպէս զի
 քեզի ու քեզմէ ետքը քու որդիներուդ
 աղէկ ըլլայ՝ Տէրոջը առջև ուղիղ սեպ-
 ուածը ընելովդ: 26 - Բայց քու նուի-
 բելու բաներդ և ուխտերդ առնես, ու
 Տէրոջը ընտրած տեղը երթաս: 27 -
 Եւ քու ողջակէզներդ, միսը ու ա-
 րիւնը, քու Տէր Աստուծոյդ սեղանին
 վրայ մատուցանես. բայց քու գոհե-
 րուդ արիւնը քու Տէր Աստուծոյդ սե-
 ղանին վրայ թափուի, ու միսը ուտես:

28 - Չգոյշ եղիր հնազանդելու այս
 բոլոր խօսքերուն զորոնք քեզի պատ-
 ուիրեցի, որպէս զի քու Տէր Աստու-
 ծոյդ առջև աղէկ ու հաճոյ եղածը
 ընելովդ՝ քեզի ու քեզմէ ետքը քու
 որդիներուդ յաւիտեան աղէկ ըլլայ:

29 - Երբ քու Տէր Աստուածդ քու
 առջեւէդ ջարդէ այն ազգերը որոնց
 երկրէ զուն ժառանգելու պիտի եր-
 թաս, ու երբ զանոնք ժառանգես ու
 անոնց երկրին մէջ բնակիս, 30-Չգոյշ
 կեցիր, չըլլայ որ անոնց քու առջեւէդ
 բնաջինջ ըլլալէն ետքը անոնց հետե-
 ւելով որոգայթի մէջ իյնաս, և չըլլայ
 որ անոնց աստուածներուն վրայով
 հարցուփորձ ընես՝ ըսելով, Այս ազ-
 գերը ի՞նչպէս իրենց աստուածները կը
 պաշտէին. ես ալ այնպէս ընեմ: 31 -
 Իուն քու Տէր Աստուծոյդ այնպէս չը-
 նես, քանզի անոնք Տէրոջը ատելի եղած
 բոլոր գարշելի բաները իրենց աստ-
 ուածներուն կ'ընէին. որովհետև ա-
 նոնք իրենց աստուածներուն պատ-
 շտէն համար մինչև անգամ իրենց
 տղաքները ու աղջիկները կրակով կ'այ-

րէին: 32 - Ես քեզի ինչ որ կը պատ-
 ուիրեմ, զգուշացիր զայն ընելու. ա-
 նոր վրայ բան մը չաւելցնես, ու անկէ
 բան մը չպակսեցնես:

ԳԼ. ԺԳ

Եթէ ձեր մէջէն մարգարէ մը կամ
 երազատես մը ելլէ, ու ձեզի նշան մը
 կամ հրաշք մը տայ, 2 - Եւ ձեզի ըսած
 նշանը կամ հրաշքը կատարուի, ու
 ձեզի ըսէ թէ Երթանք օտար աստ-
 ուածներ պաշտենք, զորոնք դուք չէք
 ճանչցած, 3 - Այն մարգարէին կամ
 երազատեսին խօսքը մտիկ մի ընէք.
 քանզի ձեր Տէր Աստուածը ձեզ կը
 փորձէ, որպէս զի հասկնայ թէ արդ-
 եօք դուք ձեր Տէր Աստուածը ձեր բո-
 լոր սրտովը ու բոլոր հոգովը կը սի-
 րէ՛ք: 4 - Չեր Տէր Աստուծոյն հետե-
 ւող ըլլաք ու անկէ վախնաք, անոր
 պատուիրանքները պահէք ու անոր խօս-
 քին հնազանդութիւն ընէք, զանիկա
 պաշտէք ու անոր յարիք: 5 - Եւ այն
 մարգարէն կամ երազատեսը պիտի
 մեռցուի, վասն զի ձեզ Եգիպտոսի
 երկրէն հանող ու ձեզ ծառայութեան
 տունէն ազատող ձեր Տէր Աստուծոյն
 դէմ ապստամբութիւն խօսեցաւ, որ-
 պէս զի ձեզ խտարեցնէ այն ճամբա-
 յէն զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պատ-
 ուիրեց որ անոր մէջ քալէք. այսպէս
 չարութիւնը ձեր մէջէն վերցնէք:

6 - Եթէ քու մօրդ աղան, քու եղ-
 բայրդ, կամ քու տղադ, կամ աղջիկդ,
 կամ ծոցիդ կինը, և կամ քու բարե-
 կամիդ զոր քու անձիդ պէս իջ «երե»,
 քեզ մոլորեցնել ուզելով ծածկաբար
 ըսէ, Երթանք և օտար աստուած-
 ներ պաշտենք, զորոնք ոչ դուն ճանչ-
 ցար, ոչ ալ քու հայրերդ, 7 - Չեր բո-
 լորափքը եղող ազգերուն աստուածնե-
 րէն, թէ՛ ձեզի մօտ ըլլան, և թէ՛ ձեզմէ
 հեռու, երկրի մէկ ծայրէն մինչև միւս
 ծայրը, 8 - Անոր հաւանութիւն չտաս,
 ոչ ալ անոր մտիկ ընես. քու աչքդ
 անոր չիմայէ, ոչ ալ անոր վրայ գութ
 ունենալով պահես զանիկա. 9 - Այլ
 անշուշտ մեռցնես, ու զանիկա մեռ-
 ցրնելու համար նախ քու ձեռքդ անոր
 վրայ ըլլայ, ու ետքը բոլոր ժողովուր-
 դին ձեռքը. 10 - Քարերով քարկոծես
 զանիկա, որպէս զի մեռնի. քանզի ու-
 զեց քեզ ապստամբեցնել քու Տէր Աս-

տուժակդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեց: 11 - Եւ բոլոր Խորայել լսելով վախնայ, ու մէյմքն ալ ձեր մէջ ասոր պէս չարութիւն մը չընեն:

12-Եթէ քու Տէր Աստուծոյդ՝ բնակութեան համար քեզի տուած քաղաքներէն մէկուն վրայով լսես, որ կ'ըսեն թէ 13 - Ձեր մէջէն քանի մը՝ չար մարդիկ՝ ելան, ու իրենց քաղաքին բնակիչները սպասամբեցուցին, ըսելով, Եթանք ձեր չճանչցած օտար աստուածները պաշտենք, 14 - Այն ատեն ազէկ մը քննես ու հարցուփորձ ընես, ու երբ տեսնես որ ըսած բանը ճշմարիտ ու ստոյգ է, և այն գարշելի բանը ձեր մէջ եղած է, 15 - Այն քաղաքին բնակիչները անպատճառ տւրի բերնէ անցնես, թէ՛ զայն և թէ՛ անոր մէջ եղած բոլոր բաները նզովելով. անասուններն ալ տւրի բերնէ անցնես: 16 - Եւ անոր բոլոր աւարը անոր հրապարակին մէջ ժողվես, ու այն քաղաքը և անոր բոլոր աւարը քու Տէր Աստուծոյդ համար բոլորովին կրակով այրես. ու անկիա յաւիտեան աւերակ ըլլայ, մէյմքն ալ չչինուի: 17 - Եւ այն նզովուածէն ձեռքիդ մէջ բան մը չփակչի, որպէս զի Տէրը իր սաստիկ բարկութենէն դառնայ, քեզի ողորմութիւն ու զթութիւն ընէ, և քեզ շատցնէ, ինչպէս քու հայրերուդ երգում՝ բրաւ, 18 - Եթէ դուն քու Տէր Աստուծոյդ ձայնին հնազանդութիւն ընելով անոր բոլոր պատուիրանքները պահես, գործք ես այսօր քեզի կը պատուիրեմ, ու Տէր Աստուծոյդ առջև ուղիղ եղածն ընես:

ԳԼ. ԺԴ

Որովհետեւ դուք ձեր Տէր Աստուծոյն որդիներն էք, մեռելի համար ձեր մարմինին վրայ կտրածներ չընէք, ու ձեր աչքերուն մէջաեղի մտկերը չփետէք: 2 - Քանզի դուն քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողովուրդն ես. և Տէրը երկրի վրայ եղած բոլոր ժողովուրդներուն մէջէն քեզ ընտրեց, որպէս զի իրեն սեպհական ժողովուրդ ըլլաս: 3 - Բնաւ սրբոյժ բան մը չուտես:

4 - Ասոնք են ձեր ուտելու անասուն-

ները. արջաւոր, ոչխարը ու այծը, 5 - Եղջերուն, այծեամբ, զիթը, խարբուզը, այծքաղը, յամայրը ու անաւութը: 6 - Եւ չորքտանիներուն մէջ ամէն կճղակաբաշխ (այսինքն կճղակը երկուքի բաժնուած) ու որոճացող անասունները ուտէք: 7 - Բայց որոճացողներէն կամ կճղակաբաշխ եղողներէն ասոնք չուտէք. ուղար, նոպատակը ու ճագարը. քանզի ասոնք թէպէտե կ'որոճան, բայց կճղակաբաշխ չեն. ասոնք ձեզի անմաքուր ըլլան: 8 - Եւ խոզը, որ թէև կճղակաբաշխ է, բայց չորոճար, անկիա ձեզի անմաքուր ըլլայ: Ասոնց միտը չուտէք, ու ասոնց դիերուն չդպչիք:

9 - Չուրերուն մէջ բոլոր եղածներէն ասոնք ուտէք. ամէն թև ու թեփ ունեցողը ուտէք, 10 - Բայց ամէն թև ու թեփ չունեցողը չուտէք. անկիա ձեզի անմաքուր ըլլայ:

11 - Ամէն մաքուր թռչունը ուտէք: 12 - Եւ ձեր չուտելու օրէնքները ասոնք են. արծիւը և պատկուճը ու գեատարծիւը, 13 - Եւ ցինը ու անգղը և ուրուրը իր տեսակին պէս, 14 - Ու ամէն ագռաւը իր տեսակին պէս, 15 - Եւ ջայլամը ու բուն և կկուն ու բաղէն իր տեսակին պէս, 16 - Եւ հաւպատիրը ու քաջահաւը և կարապը, 17 - Եւ հաւաղուար ու սե անգղը և հողամաղը, 18 - Եւ արագիլը ու քարագրը իր տեսակին պէս, և յոպապը ու չիղջը: 19 - Եւ ամէն թռչող զեռունները ձեզի անմաքուր ըլլան. ասոնք պիտի չուտուին: 20 - Ամէն մաքուր թռչունները ուտէք:

21 - Ինքիբմէ մեռածը բնաւ չուտէք. զանկիա քու դռներդ եղող պանդուխտին տաս որպէս զի ուտէ, կամ օտարազգիի մը ծախես. քանզի դուն քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողովուրդն ես:

Ուլը իր մօրը կաթին մէջ չեփես:

22 - Տարիէ տարի քու ցանած սերմիդ արդիւնէն, արաէն ելած ամէն արմախքներէն, անպատճառ տասանորդ տաս: 23 - Եւ քու ցորենիդ, զինիիդ ու իւղիիդ տասանորդը, ու արջառներուդ և ոչխարներուդ առջինեկները քու Տէր Աստուծոյդ առջև ուտես, այն տեղը զոր ինք իր անուանը բնակութեանը համար պիտի բնարէ. որպէս զի միշտ քու Տէր Աստուծակդ

*Նէր. Բեյխարի որդիներ

վախնալ սորվիս : 24 - Աւ Եթէ քու Տէր Աստուծոյդ քեզ օրհնելուն համար ճամբան քեզի հեռու իյնայ , և այն տեղը , զոր քու Տէր Աստուծոյդ պիտի ընտրէ իր անունը հոն դնելու համար , քեզմէ հեռու ըլլալով կարող չըլլաս զանոնք հոն անել : 25 - Այն ատեն զանոնք ստակ ընես , ու ստակը ծրարելով ձեռքդ առնես , և քու Տէր Աստուծոյդ ընտրելու տեղը երթաս . 26 - Աւ այն ստակը սրտիդ բոլոր ցանկացած բաներուն , արջառներու կամ ոչխարներու , դինիի կամ օղիի , ու սրտիդ ամէն ուզած բանին տաս . և հոն քու Տէր Աստուծոյդ առջև ուտես և ուրախանաս դուն և քու ընտանիքդ : 27 - Աւ քու դռներդ եզոզ Ղեւտացին ալ զանց չընես , քանզի անիկա քեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի : 28 - Ահա երեք տարիին վերջը այն նոյն տարիին արմօտիքներուն բոլոր աստանորդը հանես , և զանիկա քու քաղաքներուդ մէջ պահես . 29 - Աւ Ղեւտացին , որ քեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի , և դռներդ եզոզ օտարականը , որքը ու որբեւորին զան և ուտեն կշտանան . որպէս զի քու Տէր Աստուծոյդ քեզ օրհնէ քու ձեռքիդ ըրած ամէն գործերուն մէջ :

ԳԼ. ԺԵ

Ամէն եօթներորդ տարին թողութիւն ընես : 2 - Աւ թողութեան կանոնը այս է . Ամէն պարտատէր որ իր դրացիին բան մը փոխ տուած է , զանիկա պիտի թողու . իր դրացիէն կամ եղբորմէն պիտի չպահանջէ զայն , վասն զի թողութիւն քարոզուած է Տէրոջը : 3 - Օտարազգիէն պիտի պահանջես , բայց քու եղբորմէդ առնելիքդ պիտի թողուս . 4 - *Մինչև որ քու քովդ աղքատ չգանուի . վասն զի Տէրը անշուշտ քեզ պիտի օրհնէ այն երկրին մէջ , զոր քու Տէր Աստուծոյդ քեզի ժառանգութիւն պիտի տայ , որպէս զի անոր աչրես : 5 - Միայն եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին ամէն կերպով հնազանդիս , ու այս բոլոր պատուիրանքները , զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ , զգուշութեամբ ի գործ դնես , 6 - Քու Տէր Աստուծոյդ ալ քեզի ըստ-

ծին պէս քեզ պիտի օրհնէ , և դուն շատ ազգերու փոխ պիտի տաս , բայց դուն փոխ պիտի չառնես , ու դուն շատ ազգերու վրայ պիտի տիրես , բայց անոնք քու վրայ պիտի չտիրեն :

7 - Քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկրին մէջ , քու քաղաքներէդ մէկուն մէջ , եթէ եղբայրներէդ մէկը աղքատ ըլլայ , խտտարտութիւն չընես ու աղքատ եղբորդ ձեռքդ չգոցես :

8 - Հապա անպատճառ ձեռքդ պիտի բանաս անոր , ու անոր կարօտութեանը բաւական ըլլալու չափ անոր փոխ տաս :

9 - Չգոյշ կեցիք , չըլլայ որ սրտիդ մէջէն չար խորհուրդ մը անցնես , ու Եօթներորդ տարին , թողութեան տարին , մօտ է՝ ըսելով , աղքատ եղբորդ վրայ անգութ աչքով նայիս ու անոր փոխ տաս . և ան ալ քեզի դէմ Տէրոջը ազդակէ , ու դուն մեղքի տէր ըլլաս :

10 - Անպատճառ անոր պիտի տաս , ու անոր տալու ատենդ սիրապէս չնեղուի . վասն զի քու Տէր Աստուծոյդ այս պատճառաւ քու ամէն գործերուդ ու ամէն ձեռք զարկած բաներուդ մէջ քեզ պիտի օրհնէ : 11 - Որովհետեւ երկրին մէջէն աղքատ պակաս պիտի չըլլայ , անոր համար քեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ , Քու երկրիդ մէջ եղած աղքատ ու չքաւոր եղբորդ ձեռքդ բաց ըլլայ :

12 - Եւ եթէ քու եղբայրներէդ Եւրայեցի մարդ մը կամ կին մը քեզի ծախուի , անիկա վեց տարի քեզի ծառայութիւն պիտի ընէ , ու եօթներորդ տարին զանիկա քու քովէդ ազատ պիտի արձակես :

13 - Եւ քու քովէդ ազատ արձակելու ատենդ զանիկա պարտալ չարձակես . 14 - Քու ոչխարներէդ , քու կալէդ և քու հնձանէդ անպատճառ պարզե տաս անոր . քու Տէր Աստուծոյդ ինչպէս քեզ օրհնեց , նոյնպէս պիտի տաս անոր :

15 - Եւ միտքդ բերես որ դուն ալ Եզրպատտի երկրին մէջ ծառայ էիր , ու քու Տէր Աստուծոյդ քեզ անիւ փրկեց . այս պատճառաւ այսօր քեզի կը պատուիրեմ այս բանը : 16 - Բայց եթէ քեզ և քու տունդ սիրելուն համար , ու անիկա քու քովդ հանգիստ ըլլալուն համար , Քովէդ չեմ ելլեր՝ ըսէ , 17 - Այն ատեն հերիւն մը առնես ու անոր ահանջը

*Եբր. չար

*Կա՛մ, Այնպէս

դրանք վրայ ծաղկես, և անիկա քեզի յաւիտեան ծառայ ըլլայ. աղախինիդ ալ այսպէս ընես: 18 - Զանկիա քու քովէդ ազատ արձակելդ դժուար չերեւնայ քեզի. վասն զի քեզի վեց տարի ծառայութիւն ըրաւ, ոչ վարձկանի մը վարձքին կրկնապատիկ «բէտեռ»-ն. ու քու Տէր Աստուածդ ամէն գործերուդ մէջ քեզ պիտի օրհնէ:

19 - Քու արջառներէդ ու հօտերէդ ծնած ամէն արու առջինեկները քու Տէր Աստուծոյդ պիտի նուիրես. արջառներուդ առջինեկներովը չգործես, ու առջինեկ ոչխարներուդ բուրդը չկարես: 20 - Տարիէ տարի քու Տէր Աստուծոյդ առջև, Տէրոջը ընտրած տեղը, պիտի ուտես զանոնք դուն և քու ընտանիքդ: 21 - Բայց եթէ անոնք արատաւոր ըլլան, կող կամ կոյր ըլլան, կամ ինչեւիցէ «բէռ գէշ արատ մը»-նէն, զանոնք քու Տէր Աստուծոյդ չզոհես: 22 - Այնպիսին քու քաղաքներուդ մէջ պիտի ուտես. անմաքուր ու մաքուր եղողները անխտրաբար «բէռ»-ն այժեամի ու եղջերուի պէս: 23 - Միայն անոր արիւնքը չուտես, ջուրի պէս գետինը թափես զայն:

ԳԼ. ԺԶ

Ապիպ ամսուն զգուշութիւնով նայէ, որպէս զի զատիկը ընես քու Տէր Աստուծոյդ. վասն զի քու Տէր Աստուածդ Ապիպ ամսուն մէջ գիշերով հանեց քեզ Եգիպտոսէ: 2 - Զատկին համար քու Տէր Աստուծոյդ ոչխարներ ու արջառներ մորթես այն տեղը զոր Տէրը պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը համար. 3 - Անոր հետ խմորեալ հաց չուտես, եօթը օր նեղութեան անխմոր հաց պիտի ուտես անոր հետ. վասն զի Եգիպտոսի երկրէն տագնապով ելար. որպէս զի քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ Եգիպտոսի երկրէն ելած օրդ միտքդ բերես: 4 - Եւ քու բոլոր սահմաններուդ մէջ եօթը օր բնաւ խմոր չերեւնայ քովդ. ու առաջին օրուան իրիկունը մորթած միսէդ մինչև առտու չմնայ: 5 - Քու Տէր Աստուծոյդ քեզի տուած քու քաղաքներէդ մէկուն մէջ բնաւ կարող չըլլաս զատիկը մորթել. 6 - Հապա միայն այն տեղ՝ զոր քու Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը հա-

մար, հոն պիտի մորթես զատիկը իրիկունան դէմ՝ արեւին մտած ատենը, Եգիպտոսէ ելած ժամանակդ: 7 - Եւ քու Տէր Աստուծոյդ ընտրած տեղը զանիւ եփես և ուտես. և առտուանց դառնաս՝ *տունդ երթաս: 8 - Վեց օր բաղարջ ուտես. ու եօթներորդ օրը քու Տէր Աստուծոյդ համար տօնախմբութեան օր ըլլայ, և գործ մը չընես:

9 - Իսկ քեզի եօթը շաբաթ համբերես. «-» եօթը շաբաթը հունձքերուն մէջ մանգաղ դրած տաւնէդ պիտի սկսիս համբել: 10 - Ետքը քու Տէր Աստուծոյդ շաբաթներուն տօնը ընելով, քու Տէր Աստուծոյդ քեզի տուած օրհնութեանը համեմատ, ձեռքէդ եկած կամաւոր ընծան պիտի տաս. 11 - Եւ այն տեղ զոր քու Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը համար, հոն քու Տէր Աստուծոյդ առջև ուրախութիւն ընես դուն ու քու աղաղ և աղջիկդ, քու ծառայ ու աղախինդ, ու քու քաղաքներդ եղող Աւետացին, և ձեր մէջ գանուած օտարականը, որքը ու որբեւարին: 12 - Ու Եգիպտոսի մէջ ծառայ ըլլալդ միտքդ բերելով՝ այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնես:

13 - Քու կալիդ ու հնձանիդ Բեռեռ ժողովէդ ետքը եօթը օր տաղաւարահարաց տօնը պահես: 14 - Եւ տօնիդ մէջ ուրախութիւն ընես դուն ու քու աղաղ և աղջիկդ, քու ծառայ ու աղախինդ, և քաղաքներդ եղող Աւետացին, օտարականը, որքը ու որբեւարին: 15 - Քու Տէր Աստուածդ քու բուրբ բերքերդ ու ձեռքիդ բարբ գործերը օրհնելուն համար, Տէրոջը ընտրած տեղը քու Տէր Աստուծոյդ եօթը օր տօն պահելով ուրախութիւն ընես:

16 - Տարին երեք անգամ, այսինքն քաղաքջակերաց տօնին, շաբաթներու տօնին ու տաղաւարահարաց տօնին, քու ամէն արուններդ քու Տէր Աստուծոյդ առջև պիտի երեւնան այն տեղ զոր ինք պիտի ընտրէ. ու Դեռ Տէրոջը առջև յետք պարսպ չերեւնայ: 17 - Ամէն մէկը, քու Տէր Աստուծոյդ քեզի տուած օրհնութեանը համեմատ, ձեռքէն եկածին չափ դիպի Բեռեռ:

18 - Քու Տէր Աստուծոյդ քեզի

*Եբբ. վրաններդ
†Կամ, տունդ. Եբբ. դռներդ

տուած ամէն քաղաքներուն մէջ քու
ցեղերուդ համեմատ քեզի դատաւոր-
ներ ու ոստիկաններ կարգես, ու անոնք
արդար դատաստանով ժողովուրդը
դատեն: 19 - Իրաւունքը չդարձնես,
աչառութիւն չընես ու կաշառք չառ-
նես. վասն զի կաշառքը իմաստուննե-
րուն աչքը կը կուրացնէ, ու արդար-
ներուն խօսքը սուտ կը հանէ: 20 - Ար-
դարութեան, արդարութեան Բայն հե-
տեւող ըլլաս, որպէս զի ողջ մնաս և
քու Տէր Աստուծոյդ քեզի տալու եր-
կիրը ժառանգես:

21 - Քու Տէր Աստուծոյդ համար
չինելու սեղանիդ քով ինչեւիցէ ծառէ
անտառ չանկես քեզի: 22 - Արձան
ալ չկանգնես քեզի, որմէ քու Տէր
Աստուածդ կը զզուի:

ԳԼ. ԺԷ

Արատ մը կ'ա՛ծ ինչեւիցէ Կապիտու-
թիւն մը ունեցող արջաւոր կամ ոչ-
խարը քու Տէր Աստուծոյդ զո՛հ չմա-
տուցանես. վասն զի այս բանը քու
Տէր Աստուծոյդ առջև պիղծ է:

2 - Եթէ քու Տէր Աստուծոյդ քեզի
տուած քաղաքներէն մէկուն մէջ ձեզմէ
այնպէ՛ս մարդ մը կամ կին մը գտնուի,
որ քու Տէր Աստուծոյդ առջև չարու-
թիւն ընելով ու անոր ուխտը չպահե-
լով, 3 - Իմ հրամանիս դէմ՝ երթայ
ուրիշ աստուածներու, արեգակին
կամ լուսնին և կամ երկինքի որեւիցէ
էզարդերուն ծառայութիւն ու երկր-
պագութիւն ընէ. 4 - Եւ այս բանը
քեզի պատմուի, ու դուն լսելէդ ետքը
աղէկ մը քննութիւն ընես, և ա՛հա
բանը ճշմարիտ ու ստոյգ է, որ Խորա-
յելի մէջ այնպիսի պղծութիւն մը
եղած է, 5 - Այն ատեն այս չարու-
թիւնը ընող մարդը կամ կինը դռներդ
հանես, և այն մարդը կամ կինը քա-
րերով քարկոծես, ու մեռնի: 6 - Ե-
այն մահապարտը երկու կամ երեք
վկայի բերնովը մեռնի. մէկ վկայի բեր-
նովը չմեռնի: 7 - Զանկիս մեռցնելու
համար, առաջ վկաներուն ձեռքը ա-
նոր վրայ պիտի ըլլայ, ու անկէ ետքը
բոլոր ժողովուրդին ձեռքը. այս կեր-
պով չարութիւնը ձեր մէջէն վերցնես:

8 - Երբ *զանազան տեսակ արիւնհե-
ղութիւններու, դատերու կամ վէրքե-
րու վրայով՝ քու քաղաքներուդ մէջ
եղած վէճերուն վճռահատութիւնը
խիստ դժուար երեւնայ քեզի, այն տ-
տեն ելլես և քու Տէր Աստուծոյդ ընտ-
րած տեղը երթաս, 9 - Ու Ղեւտացի
քահանաներուն և այն ժամանակի դա-
տաւորներուն մօտենալով Խորհուրդ
հարցնես. ու անոնք դատարանին
վճիռը քեզի պիտի ըսեն: 10 - Եւ պի-
տի ընես այն վճռին համեմատ զոր Տէ-
րոջը ընտրած տեղը քեզի կ'ըսեն, ու
ինչ որ քեզի սորվեցնեն՝ զգուշու-
թեամբ ի գործ դնես. 11 - Անոնց քեզի
սորվեցուցած օրէնքը ու քեզի զրուցած
դատաստանը պիտի կատարես. անոնց
քեզի յայտնած խօսքէն չխտտորիս ոչ
աջ դին և ոչ ձախ դին: 12 - Բայց
եթէ մարդ մը յանդգնութիւն ընելով,
քու Տէր Աստուածդ հոն պաշտելու
կեցող քահանային կամ դատաւորին
Խօսք մտիկ չընէ, այն մարդը պիտի
մեռնի, ու չարութիւնը Խորայելէ վեր-
ցընես: 13 - Եւ բոլոր ժողովուրդը լսե-
լով վախնայ, ու մէյմըն ալ յանդգնու-
թիւն չընէ:

14 - Երբ քու Տէր Աստուծոյդ քեզի
տուած երկիրը մտնես, ու անոր տիրե-
լով հոն բնակիս, ու ըսես, Իմ բոլոր-
տիքս եղող ամէն ազգերուն պէս ես
ալ իմ վրաս թագաւոր մը դնեմ.
15 - Անպատճառ քու Տէր Աստուծոյդ
ընտրած Խորհրդ վրայ թագաւոր դնես.
քու եղբայրներէդ մէկը վրայ թագա-
ւոր դնես. քու եղբայրդ չեղող օտա-
րականը դնելու կարող չըլլաս: 16 -
Սակայն չըլլայ որ անկա իրեն համար
ձիեր շատցնէ, ոչ ալ շատ ձիեր ժող-
վելու համար ժողովուրդը Եզիպտոս
դարձնէ. որովհետեւ Տէրը ձեզի ըսաւ
որ Մէյմըն ալ այն ճամբան չդառ-
նաք: 17 - Նաև անկա իրեն կիներ
չչնացնէ, որպէս զի սիրտը չխտտորի.
ու իրեն համար խիստ շատ արծաթ ու
ոսկի չժողվէ: 18 - Եւ իր թագաւո-
րութեան աթոռին վրայ նստածին պէս,
այս օրինաց Գիրգի՛ն օրինակը Ղեւտացի
քահանաներուն քով եղած օրէնալէն՝
իրեն համար գիրքի մը մէջ գրէ: 19 -

*Եբբ. արեան և արեան մէջտեղ, դա-
տի ու դատի մէջտեղ, կամ վէրքի ու
վէրքի մէջտեղ

*Այսինքն, իբրև կոնց հովանի
†Եբբ. գէշ բան ‡Եբբ. զօրքին

Եւ անհկա իր քով մնայ, ու իր կեանքին բոլոր օրերուն մէջ կարգայ . որպէս զի իր Տէր Աստուծո՛վն վախնալ սորվի, և այս օրէնքին բոլոր խօսքերը ու այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնէ . 20 - Որպէս զի իր սիրտը իր եղբայրներուն վրայ չհարտամնայ, ու այս պատուիրանքներէն աջ դին կամ ձախ դին չխոտորի . որպէս զի իր թագաւորութեանը վրայ երկար կեանք մը վայելէ Խորայելի մէջ թէ՛ ինք և թէ՛ իր որդիները :

ԳԼ. ԺԸ

Աւետացի քահանաները, Աւելի բոլոր ցեղը, Խորայելի հեա բաժին ու ժառանգութիւն չունենան . Տէրոջը պատարագները ու անոր ժառանգութիւնը ուտեն : 2 - Վասն որոյ անոնք իրենց եղբայրներուն մէջ ժառանգութիւն չունենան . անոնց ժառանգութիւնը Տէրը ինք է, ինչպէս անոնց բաւ :

3 - Եւ այս պիտի ըլլայ քահանաներուն իրաւունքը ժողովուրդին կողմէն երբ զո՛հ կը մատուցանեն, թէ՛ արջառ ըլլայ այն և թէ՛ ոչխար . թեւը, ծնօտները ու քաղիրթը քահանային պիտի տան : 4 - Քու ցորենիդ, գինիիդ ու իւզիդ երախայրիները, ու նաև ոչխարներուդ առաջին բուրդը անոր պիտի տաս . 5 - Վասն զի քու Տէր Աստուծո՛ղ քու բոլոր ցեղերուդ մէջէն զանհկա բնարեց, որպէս զի Տէրոջը անունովը ժառայութիւն ընելու միշտ կենան ինք ու իր որդիները :

6 - Ու երբ Աւետացի մը քու քաղաքներէդ մէկէն, այսինքն բոլոր Խորայելի մէջ իր պանդխտացած տեղէն, ելլէ, ու իր սրտին բոլոր փափաքովը Տէրոջը բնարած տեղը գայ, 7 - Այն տատեն հոն Տէրոջը առջև կեցող բոլոր իր Աւետացի եղբայրներուն պէս իր Տէր Աստուծոյն անունովը ծառայութիւն ընէ . 8 - Ու միւսներուն հեա հաւատար բաժին պիտի ուտէ, իր հայրենական * Ժառանգութեանը զիններէն՝ գաս :

9 - Երբ քու Տէր Աստուծո՛ղ քեզի տուած երկիրը մտնես, այն ազգերուն գարշելի գործերուն պէս ընել չսորվիս :

*Կ-ժ, եկամուտներէն

10 - Ձեր մէջ չգանուի այնպիսի մարդ մը, որ իր տղան կամ աղջիկը կրակէ անցնէ կամ բազդ նայի կամ գուշակութիւն կամ հմայութիւն և կամ գիւթութիւն ընէ . 11 - Նաև կախարդ կամ վհուկ կամ նշանագէտ կամ մետելահմայ չգործի . 12 - Վասն զի ով որ այս բաները կ'ընէ, Տէրոջը առջև գարշելի է . ու այս գարշելի բաներուն համար քու Տէր Աստուծո՛ղ քու առջեւէդ կը հալածէ զանոնք : 13 - Քու Տէր Աստուծո՛ղ առջև կատարեալ ըլլաս . 14 - Վասն զի այն ազգերը որոնց դուն պիտի տիրես, գուշակներուն ու բազդ նայողներուն մտիկ կ'ընեն . բայց քու Տէր Աստուծո՛ղ քեզի այսպէս ընելու հրաման չտուաւ :

15 - Քու Տէր Աստուծո՛ղ քու եղբայրներուդ մէջէն՝ ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի . անոր մտիկ ըրէք .

16 - Ինչպէս Քորեբ լեռ ժողովքին օրը քու Տէր Աստուծո՛վ խնդրեցիր՝ ըսելով, Իմ Տէր Աստուծոյս ձայնը մէյմըն ալ չլսեմ, ու այս մեծ կրակը մէյմըն ալ չտեսնեմ, որպէս զի չմեռնիմ : 17 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Ասած խօսքերնին շիտակ է . 18 - Քեզի պէս մարգարէ մը պիտի հանեմ անոնց իրենց եղբայրներուն մէջէն, և իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ . ու ինչ որ անոր պատուիրեմ, անոնց պիտի զրուցէ : 19 - Եւ ով որ մտիկ չընէ իմ խօսքերս, զորոնք անհկա իմ անունովս պիտի խօսի, այն մարդէն ես ձեռք պիտի խնդրեմ :

20 - Իսկ եթէ մարգարէ մը յանդգնի իմ չպատուիրած խօսքս իմ անունովս զրուցել, կամ օտար աստուածներու անունով բան մը զրուցել, այն մարգարէն պիտի մեռնի : 21 - Եւ եթէ դուն քու սրտիդ մէջ ըսես թէ Տէրոջը չխօսած բանը ի՛նչպէս գիտնանք . 22 - Եթէ մարգարէ մը Տէրոջը անունովը բան մը ըսէ, ու այն բանը իրօք չկատարուի, Տէրոջը չբաժնի խօսքը այն է . այն մարգարէն յանդգնու թեամբ զրուցեր է զայն . անկէ չվախնաս :

ԳԼ. ԺԹ

Երբ քու Տէր Աստուծո՛ղ բնաջինջ ընէ այն ազգերը որոնց երկիրը քու Տէր

*Եբր. քու մէջէդ, եղբայրներէդ,

Աստուածդ քեզի պիտի տայ, և դուն զանոնք վռնտելով՝ անոնց քաղաքներուն ու ատներուն մէջ բնակիս, 2 - Քեզի երեք քաղաք զատես քու երկրիդ մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ժառանգելու. 3 - Քեզի ճամբայ պատրաստես, և քու Տէր Աստուծոյդ քեզի ժառանգութեան համար տուած քու երկրիդ սահմանը երեքի բաժնես. որպէս զի ամէն մարդասպան հոն փախչի :

4 - Եւ հոն փախչելու ու ողջ մնալու մարդասպանին կանոնը այս է. Այն մարդը որ երէկուրնէ ու միւս օրուրնէ թշնամութիւն չունենալով՝ անգիտութեամբ իր դրացին մեռցնէ. 5 - Չոր օրինակ՝ եթէ մէկը իր դրացիին հետ անտառը երթայ փայտ կտրելու համար, ու իր ձեռքով տապարը փայտ կտրելու վերցուցած ատեն երկաթը կ'թէն դուրս ցաթկելով դրացիին հանդիպի և զանհկա մեռցնէ, անհկա այս քաղաքներէն մէկուն մէջ փախչի, որպէս զի ապրի. 6 - Չրլայ որ արեան վրէժխնդիրը սիրտը այրելուն համար մարդասպանին ետեւէն իյնայ, և ճամբան հեռու ըլլալով անոր հասնի ու զանհկա մեռցնէ, թէպէտե մեռնելու արժանի չէր, որովհետեւ երէկուրնէ ու միւս օրուրնէ անոր դէմ թշնամութիւն չունէր : 7 - Ասոր համար ես քեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ, որ քեզի երեք քաղաք զատես :

8 - Եւ եթէ քու Տէր Աստուածդ քու հայրերուդ երգում՝ ըրածին պէս քու սահմաններդ ընդարձակէ, ու քու հայրերուդ խոտացած բոլոր երկիրները քեզի տայ, 9 - Եթէ պահես ու կատարես այս բոլոր պատուիրանքները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, և քու Տէր Աստուածդ սիրես ու միշտ անոր ճամբաներուն մէջ քալես, այն տաճն այս երեք քաղաքին վրայ ուրիշ երեք քաղաք ալ աւելցնես : 10 - Որպէս զի քու երկրիդ մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն պիտի տայ, անմեղ արիւն չթափուի, ու դուն արեան պարտական չըլլաս :

11 - Բայց եթէ մարդ մը իր դրացիին ռի ունենալով անոր դարանամուտ ըլլայ, ու անոր դէմ ելլելով զանհկա զարնէ մեռցնէ, ու երբ այս քաղաքներէն մէկուն մէջ փախչելու ըլլայ, 12 - Այն տաճն իր քաղաքին ծերերը

մարդ զրկեն, ու զանհկա անկէ առնեն, և արեան վրէժխնդրին ձեռքը տան, որպէս զի մեռնի : 13 - Քու աչքդ անոր չինայէ. ու Իսրայէլի մէջէն անմեղ արիւնը վերցնես, որպէս զի քեզի աղէկ ըլլայ :

14 - Քու կալուածքիդ մէջ, զոր քու Տէր Աստուծոյդ քեզի ժառանգութիւն տուած երկրին մէջ պիտի ժառանգես, չըլլայ որ փոխես քու դրացիիդ սահմանը զոր «- նախահայրերդ հաստատեցին :

15 - Մարդու մը որեւիցէ անօրէնութեանը ու մեղքին համար, որով կրնայ յանցաւոր ըլլալ, մէկ վկայ *բաւական չտեպուի*. երկու կամ երեք վկաներու բերնով հաստատուի «մէ» բան :

16 - Եթէ մարդու մը դէմ սուտ վկայ ելլէ, ու անոր վրայով անօրէնութեան մը համար վկայէ, 17 - Այն ատեն այն երկու մարդիկը, որոնց մէջ տեղ «յ» հակառակութիւնը կայ, Տէրըը առջև «- այն ժամանակի քահանաներուն ու դատաւորներուն առջև կայնին. 18 - Եւ դատաւորները աղէկ մը քննեն. և եթէ այն վկան սուտ վկայ ըլլալով իր եղբորը դէմ սուտ վկայութիւն ըրեր է, 19 - Այն ատեն, ինչպէս անհկա իր եղբորը ընել խորհեցաւ, նոյնը ըրէք անոր, ու չարութիւնը ձեր մէջէն վերցուցէք. 20 - Եւ ուրիշներն ալ լսելով վախնան, ու մէյմըն ալ ձեր մէջ այնպիսի գէշ բան մը չընեն : 21 - Քու աչքդ չինայէ. անձի տեղ անձ, աչքի տեղ աչք, ահուպի տեղ ահուպ, ձեռքի տեղ ձեռք, ու սաքի տեղ սաք դէր՛ի դէր՛ի :

ԳԼ Ի

Երբ քու թշնամիներուդ դէմ պատերազմելու ելլես, ու ձիեր և կառքեր «- քեզմէ շատուոր ժողովուրդ տեսնես, անոնցմէ չվախնաս. վասն զի քեզ Եգիպտացուց երկրէն հանող քու Տէր Աստուածդ քեզի հետ է : 2 - Ու երբ պատերազմի մօտենաս, քահանան մօտենալով՝ ժողովուրդին պիտի խօսի, 3 - Ու անոնց ըսէ, Ով Իսրայէլ, մահկ ըրէ. այսօր դուք ձեր թշնամիներուն դէմ պատերազմելու կը մօտենաք. սրտերնիդ չթուլնայ, մի վախնաք, մի

*Եբր. չելլէ, իմ, չկենայ

զարհուրիք, ու անոնց երեսն մի դռ-
դարք. 4 - Վասն զի ձեր Տէր Աստուածը
ձեզի հետ կ'երթայ, ձեզի համար ձեր
թշնամիներուն դէմ՝ պատերազմելու
և ձեզ ազատելու :

5 - Այն ատեն ոտականները ժողո-
վուրդին խօսելով՝ պիտի ըսեն, Ով որ
նոր տուն շիներ է ու անոր նաւակա-
տիքը չէ բրեր, երթայ իր տունը դառ-
նայ. չըլլայ որ պատերազմին մէջ մեռ-
նի, և ուրիշ մէկը նաւակատիքը բնէ .

6 - Եւ ով որ այգի անկեր է ու անոր
պտուղէն դեռ չէ կերած, երթայ իր
տունը դառնայ. չըլլայ որ պատերազ-
մին մէջ մեռնի, ու անոր առաջին
պտուղը ուրիշ մարդ մը ուտէ :

7 - Եւ ով որ կնոջ մը նշանուած է ու զանի-
կա չէ առած, երթայ իր տունը դառ-
նայ. չըլլայ որ պատերազմին մէջ
մեռնի, ու զանիկա ուրիշ մարդ մը
առնէ :

8 - Եւ ոտականները իրենց
խօսքը շարունակելով պիտի ըսեն ժո-
ղովուրդին, Ով որ վախկտա ու թու-
լասիրա է, թող երթայ իր տունը դառ-
նայ. չըլլայ որ իր եղբայրներուն սիրան
ալ իր սրտին պէս թուլցնէ : 9 - Ու
երբ ոտականները ժողովուրդին առջև
իրենց խօսքը լմնցնեն, *ժողովուրդին
վրայ զօրապետներ կարգեն :

10 - Երբ քաղաքի մը կը մօտենաս
անոր հետ պատերազմելու համար, զա-
նիկա խաղաղութեան հրաւիրէ : 11 -
Եթէ քեզի խաղաղութեան պատաս-
խան տալու ըլլայ, ու դռները քեզի
բանայ, մէջը գանուած բոլոր ժողո-
վուրդը քեզի հարկատու ըլլան, ու
քեզի ծառայութիւն ընեն :

12 - Բայց եթէ քեզի հետ խաղաղութիւն ընել
չուզէ ու պատերազմ ընէ, այն ատեն
զանիկա պաշարես . 13 - Ու երբ քու
Տէր Աստուածդ քու ձեռքդ մտանէ
զանիկա, անոր բոլոր արունները սուրի
բերնէ անցնես . 14 - Բայց կիները,
տղաքները ու անասունները և ինչ որ
կայ այն քաղաքին մէջ, անոր բոլոր
աւարը, քեզի համար առնես . և քու
Տէր Աստուածդ քեզի մտանած քու
թշնամիներուդ աւարը ուտես :

15 - Ահա այսպէս պիտի բնես քեզմէ խիստ
հեռու եղող ամէն քաղաքներուն,
որոնք այս ազգերուն քաղաքներէն չեն :

16 - Ասկայն քու Տէր Աստուածդ քեզի
ժառանգութիւն տուած այս ազգերուն
քաղաքներուն մէջ՝ բնաւ չունչ ունե-
ցող մը ողջ չթողու . 17 - Վասն զի
Քեռացիները, Ամօրհացիները, Քա-
նանացիները, Փերեզացիները, Խեւա-
ցիները ու Յերուսացիները բոլորովին
պիտի կորսնցնես, ինչպէս քու Տէր Աստ-
ուածդ քեզի պատուիրեց . 18 - Որպէս
զի ձեզի շարվեցնեն իրենց բոլոր դար-
չութիւններուն համեմատ ընել, ինչ-
պէս անոնք իրենց աստուածներուն
կ'ընեն . ու դուք Տէրոջը ձեր Աստու-
ծոյն առջև մեղք չգործէք :

19 - Երբ քաղաքի մը դէմ պատե-
րազմես, ու զանիկա առնելու համար
երկար ժամանակ պաշարելու ըլլաս,
անոր ծառերուն տապար չզարնես ու
զանոնք չաւրես, վասն զի անոնցմէ
պիտի ուտես . ուրեմն զանոնք չկարես .
քանզի դաշտին ծառը *մարդ է որ քու
երեսէդ պաշարման մէջ մտնէ : 20 -
Բայց այն ծառերը զորոնք կը ճանչնաս
թէ ուտուելու պտուղ չեն բերեր, զա-
նոնք աւրես ու կարես, և քեզի հետ
պատերազմող քաղաքին դիմաց անանց-
մով պատնէշներ շինես, մինչև անի-
կա նուաճի :

ԳԼ. ԻԱ

Եթէ քու Տէր Աստուածդ քեզի
ժառանգութիւն տուած երկրին մէջ
դաշտի վրայ ինկած *մեռցուած մարդ
մը գտնուի, ու զանիկա զարնողը չբիտ-
ցուի . 2 - Այն ատեն քու ծերերդ ու
գատաւորներդ ելլեն, և մեռցուած
մարդուն ելած տեղէն մինչև շրջակայ
քաղաքները չափեն . 3 - Ու մեռցուա-
ծին մօտ եղող քաղաքին ծերերը ար-
ջառներէն չգործածուած *լուծի
տակ չմտած երինջ մը առնեն . 4 - Եւ
այն քաղաքին ծերերը երինջը չհեր-
կուած ու չցանուած ապառաժ ձոր մը
իջեցնեն, ու այն ձորին մէջ երինջին
վիզը կարեն : 5 - Եւ Վելիի որդիները,
քահանաները, մօտենան, վասն զի քու
Տէր Աստուածդ զանոնք բնարեց իրեն
ծառայութիւն ընելու, ու Տէրոջը ա-
նունով օրհնելու համար . և ամէն վէճ
ու ամէն վէրք անոնց խօսքովը պիտի

*կամ, զօրապետները ժողովուրդին
զլուխը անցնին

*կամ, մարդու պէս քեզի օգնութեան
կը հասնի պաշարման մէջ

գաւտուի: 6 - Եւ այն մեռցուածին մօտ եղող քաղաքին բոլոր ծերերը ձորին մէջ վիզը կտրած երինջին վրայ ձեռքերնին լուան: 7 - Եւ պատասխան տալով ըսեն, Մեր ձեռքերը չթափեցին այս արիւնը, ու մեր աչքերը չտեսան: 8 - Ով Տէր, քաւէ քու Խորայէլ ժողովուրդդ զոր դուն փրկեցիր, ու անմեղ արիւնը քու Խորայէլ ժողովուրդիդ մի սեպեր: այսպէս այն արեանը համար քաւութիւն պիտի ըլլայ անոնց: 9 - Իսկ դուն Տէրօջը առջև ուղիղ եղածը ընելով՝ անմեղ արիւնը քեզմէ վերցնես:

10 - Երբ քու թշնամիներուդ դէմ պատերազմի ելլես, և քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ տայ, ու անոնցմէ գերիններ առնես, 11 - Եւ գերիններուն մէջէն գեղեցիկ տեսքով կին մը տեսնես, ու զանիկա սիրելով քեզի կին առնելու ըլլաս, 12 - Զանիկա քու տունդ տանիս, և անիկա իր գլուխը ածիլէ ու իր ըզունգները կտրէ: 13 - Եւ իր վրայէն գերութեան լաթերը հանէ ու քու տունդ նստի, և ամբողջ ամիս մը իր հօրը ու մօրը համար լայ. ու անկէ ետև անոր մօտենաս, և դուն անոր սյրը ըլլաս, ան ալ քու կինդ ըլլայ: 14 - Եթէ անկէ գոհ չըլլաս, զանիկա ազատ պիտի արձակես. բայց ստակով բնաւ չծախես, ոչ ալ ծառայեցնես, որովհետև լկեցիր զանիկա:

15 - Եթէ մարդ մը երկու կին ունենայ, ու մէկը սիրելի և միւսը ատելի ըլլայ. ու սիրելին ալ և ատելին ալ անոր զաւակներ ծնանին, և եթէ անգրանիկ զաւակը ատելի կնոջմէն ծնած է, 16 - Իր ստացուածքը որդիներուն բաժնելու օրը կարող չըլլայ սիրելիին զաւակը անգրանկացնելու, ու ատելիէն ծնած անգրանիկը երեսէ ձգելու: 17 - Հոպա ատելիին զաւակը անգրանիկ ճանչնալով՝ բոլոր իր ձեռքը գրանուածէն երկու բաժին տայ անոր. վասն զի իր զօրութեան սկիզբը անիկա է. անգրանկութեան իրաւունքը անոր կը վերաբերի:

18 - Եթէ մարդ մը ստամբակ ու անհնազանդ աղայ մը ունենայ, որ իր հօրը ու իր մօրը խօսքը բնաւ մտիկ չընեն, ու երբ զանիկա խրատեն անոնց չհնազանդիր: 19 - Այն ատեն անոր հայրը ու մայրը զանիկա բռնելով, քաղաքին ծերերուն ու անոր բնակատե-

ղին դուռը հանեն: 20 - Եւ քաղաքին ծերերուն ըսեն, Այս մեր աղան ստամբակ ու անհնազանդ է, մեր խօսքը մտիկ չընեն, որկրամուլ ու գինեմուլ է: 21 - Այն ատեն անոր քաղաքին բոլոր մարդիկը քարերով քարկոծեն զանիկա, որպէս զի մեռնի. ու չարութիւնը ձեր մէջէն վերցնես. և բոլոր Խորայէլ լսելով վախնան:

22 - Ու երբ մարդ մը մահու արժանի մեղք մը գործէ, և զանիկա մեռցնելու համար ծառէ մը կախես, 23 - Անոր մարմինը ծառին վրայ գիշերը չմնայ, հոպա նոյն օրը անպատճառ թաղես զանիկա. վասն զի կախուածը Աստուծոյ անիծածն է. ու չպղծես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ժառանգելու համար:

ԳԼ. ԻԲ

Երբ տեսնես որ եղբօրդ եզր կամ ոչխարը իր ճամբայէն խտտորեր է, զանոնք անտես չընես. անպատճառ զանոնք քու եղբօրդ դարձնես: 2 - Բայց եթէ քու եղբայրդ քեզի մօտ չէ, կամ զանիկա չես ճանչնար, այն ատեն քու տունդ առնես զայն, ու մինչև քու եղբօրդ զանիկա փնտռելը քու քովդ թող կենայ. ետքը զանիկա անոր դարձնես: 3 - Անոր իշուն ալ այսպէս ընես, զգեստին ալ այսպէս ընես. նաև եղբօրդ ամէն կորսուած բանը զոր դուն կը գտնես, այսպէս ընես. չըլլայ որ զանոնք անտես ընես:

4 - Երբ տեսնես որ եղբօրդ էջը կամ եզր ճամբուն վրայ ինկեր է, զանոնք անտես չընելով անպատճառ անոր հետ վերցնես:

5 - Կնոջ մը վրայ այր մարդու հագուստ չըլլայ, ու այր մարդը կնոջ հագուստ չհագնի. քանզի ով որ ատնք կ'ընէ, քու Տէր Աստուծոյդ առջև պիղծ է:

6 - Եթէ ճամբան ծառի մը վրայ կամ գետնի վրայ ձագերով կամ հաւկիթներով թռչունի մը բոյն հանդիպի քու առջեւդ, ու մայրը ձագերուն կամ հաւկիթներուն վրայ նստած ըլլայ, մայրը իր ձագերով մէկտեղ չառնես: 7 - Անպատճառ մայրը արձակես, ու ձագերը քեզի առնես. որպէս զի աղէկ ըլլայ քեզի, ու կեանքդ երկայն ըլլայ:

8 - Նոր տուն շինած տաճար տանի-
քիդ շրջ ինչ շրջանակ մը շինես ,
որպէս զի շրջայ թէ մէկը անկէ վար
իյնայ , ու քու տունդ արեան պարտա-
կան ընես :

9 - Այգիիդ մէջ այլեւայլ սերմեր
չցանես , որպէս զի ցանած սերմիդ ար-
դիւնքը ու այգիիդ բերքը չպղծուի :

10 - Եզ մը ու էշ մը մէկտեղ երկե
Տերկելու չգործածես :

11 - Բուրդով ու քթանով գործուած
այլայլախառն հանդերձ չհագնիս :

12 - Հագած հանդերձիդ չորս ծայրը
ծոպեր շինես :

13 - Եթէ մարդ մը կին առնէ , ու
անոր մտանալէն ետքը զանհկա ա-
տէ , 14 - Եւ անոր վրայ զրպարտու-
թեան խօսքեր գնելով անոր անունը
գէշ հանէ , ու ըսէ , Ես այս կինը առի ,
բայց երբ անոր մտեցայ , անոր վրայ
կուտութիւն չգտայ . 15 - Այն տաճն
աղջկան հայրը ու մայրը աղջկան կու-
տութեան նշանը առնեն , և դուռը հա-
նեն քաղաքին ծերերուն առջև . 16 -
Ու աղջկան հայրը ծերերուն պիտի
ըսէ , Իմ աղջիկս այս մարդուն կին
տուի , ու առելով զանհկա , 17 - Ահա
անոր վրայ զրպարտութեան խօսքեր կը
գնէ , ըսելով թէ Ես քու աղջկանդ
վրայ կուտութիւն չգտայ . բայց ահա
իմ աղջկանս կուտութեան նշանը . և
լսածը քաղաքին ծերերուն առջև պի-
տի փռեն : 18 - Ետքը այն քաղաքին
ծերերը այն մարդը առնեն ու զանհկա
*պատժեն , 19 - Եւ Իսրայէլացի կոյս
աղջկան անունը աւրելուն համար անկէ
հարիւր *իչ արծաթ աղյժ առնեն , ու
աղջկան հօրը տան . և անհկա անոր
կինն ըլլայ , ու իր բոլոր կեանքին մէջ
կարող չըլլայ զանհկա արձակելու :

20 - Բայց եթէ այս բանը ստոյգ է ,
ու աղջկան վրայ կուտութիւն չէ գրա-
նուեր , 21 - Այն տաճն աղջիկը իր հօրը
տանը դուռը հանեն , ու անոր քաղա-
քին մարդիկը քարերով քարկոծեն
զանհկա որպէս զի մեռնի . որովհետեւ
Իսրայէլի մէջ անզգամութիւն ընելով
իր հօրը տունը պառնկութիւն ըրեր է .
այս կերպով չարութիւնը ձեր մէջէն
վերցնես :

22 - Եթէ մէկը այր ունեցող կնոջ
մը հետ պառկած գտնուի , այն տաճն

երկուքն ալ մեռնին , թէ՛ այն կնոջ
հետ պառկող մարդը և թէ՛ այն կինը .
ու Իսրայէլէ չարութիւնը վերցնես :

23 - Եթէ կոյս աղջիկ մը մարդու մը
նշանուած ըլլայ , ու մարդ մը քաղաքի
մէջ գանելով զանհկա՝ անոր հետ
պառկի , 24 - Երկուքն ալ այն քա-
ղաքին դուռը հանէք , ու զանոնք քա-
րերով քարկոծէք որպէս զի մեռնին .
աղջիկը՝ քանզի քաղաքին մէջ գտնու-
ել չկանչուըռտեց , և մարդը՝ քանզի
իր դրացիին կինը լիկեց . ու չարու-
թիւնը ձեր մէջէն վերցնես :

25 - Բայց եթէ մարդ մը նշանուած
աղջիկ մը գաշտի մէջ գտնէ , ու զա-
նհկա բռնադատելով անոր հետ պառ-
կի , այն տաճն անոր հետ պառկող
մարդը միայն մեռնի : 26 - Եւ աղջկան
բան մը չընես . աղջիկը մահու արժանի
յանցանք մը չունի . վասն զի ինչպէս
մէկը իր դրացիին վրայ կը յարձակի
ու զանհկա կը մեռցնէ , այս դիպումն
ալ այնպէս է : 27 - Քանզի գաշտի մէջ
գտաւ զանհկա . ու թէև նշանուած
աղջիկը կանչուըռտեց , բայց զինք ա-
զատող մը չկար :

28 - Եթէ մարդ մը նշանուած կոյս
աղջիկ մը գտնէ , և զանհկա բռնադա-
տելով անոր հետ պառկի , ու *բանը
իմացուի . 29 - Այն տաճն անոր հետ
պառկող մարդը աղջկան հօրը յիտան
*իչ արծաթ պիտի տայ , ու անհկա իր
կինն ըլլայ . որովհետեւ լիկեց զանհկա ,
իր բոլոր կեանքին մէջ զանհկա արձա-
կելու կարող չըլլայ :

30 - Զըլլայ որ մարդ մը իր հօրը կինը
առնէ , ու իր հօրը քղանցքը բանայ :

ԳԼ. ԻԳ

Ամորձիքը ճգմուած կամ կտրուած
մարդը Տերոջը ժողովքը չմտնէ : 2 -
Պառնկորդին Տերոջը ժողովքը չմտնէ ,
ու անոր զաւակը մինչև տասներորդ
ազգը Տերոջը ժողովքը չմտնէ :

3 - Ամմոնացին ու Մովարացին Տե-
րոջը ժողովքը չմտնեն , ու մինչև անոնց
տասներորդ ազգը անոնց զաւակը Տերոջը
ժողովքը չմտնէ յաւիտեան . 4 - Քանզի
երբ դուք Եգիպտոսէ ելաք , ճամբուէ
մէջ հացով ու ջրով ձեզ չզիմաւորե-
ցին . ու Միջագետի Փաթուր քաղաքէն

*Կա՛, յանդիմանեն

*Եբբ. գանուին

Բեովրի սրգին Բաղասամը վարձքով բե-
րել տուին, որպէս զի քեզ անիծէ: 5 -
Բայց քու Տէր Աստուածդ չուզեց Բա-
ղասամի մտիկ ընել, հապա քու Տէր
Աստուածդ անէծքը քեզի օրհնութեան
դարձուց, որովհետեւ քու Տէր Աստ-
ուածդ քեզ սիրեց: 6 - Քու բոլոր կեան-
քիդ մէջ անոնց խաղաղութիւնը ու
աղէկութիւնը չփնտռես յաւիտեան:

7 - Չրլլայ որ Եգովմայեցին ատես,
քանզի անիկա քու եղբայրդ է: Եգիպ-
տացին ալ չատես, քանզի անոր երկ-
րին մէջ պանդուխտ էիր: 8 - Ասոնց
ծնած զաւակներուն երրորդ ազգը Տէ-
րոջը ժողովքը թող մտնեն:

9 - Երբ թշնամիներուդ դէմ բանա-
կով կ'երթաս, ամէն չար բանէ զգու-
շանաս: 10 - Եթէ ձեր մէջ մարդ մը
երազափորձութեան պատճառաւ մա-
քուր չէ, թող բանակէն դուրս ելլէ,
ու բանակին մէջ չմանէ: 11 - Եւ իրիկ-
ուան դէմ ջրով լուացուի, ու արեւը
մտածին պէս բանակին մէջ մանէ:

12 - Նաև բանակէն դուրս աեղ մը
ունենաս, որպէս զի հոն դուրս ելլես:

13 - Ու զէնքերուդ մէջ ցից մը ունե-
նաս, որպէս զի երբ դուրսը նստելու
ըլլաս, անով փորես, ու դառնաս քու
յաւելուածդ ծածկես: 14 - Քանզի

քու Տէր Աստուածդ, քեզ ազատելու
համարութեամբ շնամիներդ քու ձեռքդ
մատնելու համար, քու բանակիդ մէջ
կը քայլէ. ուստի քու բանակդ մաքուր
ըլլայ, որպէս զի անիկա քու վրագ աղ-
տեղութիւն մը տեսնելով քեզմէ ետ
չդառնայ:

15 - Ծառայ մը որ տէրջմէն քառու-
շէ քու քովդ ապաստաներ է, իր տե-
րոջը ձեռքը չմատնես: 16 - Թող քեզի
հետ բնակի իր հաւնած տեղը քու քա-
ղաքներէդ մէկուն մէջ ուր ինք կ'ուզէ,
և զանիկա չնեղես:

17 - Իսրայէլի աղջիկներէն բող չըլ-
լայ, ու Իսրայէլի աղոցմէն իգացեալ
չըլլայ: 18 - Որեւիցէ ուխտի համար
բողի վարձքը կամ շունի գինը քու
Տէր Աստուածոյդ տունը չտանիս. քանզի
քու Տէր Աստուածոյդ առջև երկուքն
ալ պիղծ են:

19 - Ստակը կամ ուտելիքը և կամ
որեւիցէ բանը որ շահով կրնայ տրուիլ,
քու եղբորդ շահով չտաս: 20 - Օտա-
րականէն շահ տունես, բայց քու եղ-
բորմէդ շահ չառնես, որպէս զի քու

Տէր Աստուածդ քու ամէն ձեռք զար-
կած գործերուդ մէջ քեզ օրհնէ այն
երկրին վրայ, ուր պիտի մտնես զանիկա
ժառանգելու համար:

21 - Երբ քու Տէր Աստուածոյդ ուխտ
մը ընես, առանց ուշացնելու կատա-
րես, քանզի քու Տէր Աստուածդ ան-
պատճառ զանիկա քեզմէ պիտի պա-
հանջէ, ու մեղքի տէր պիտի ըլլաս:

22 - Բայց եթէ ուխտ ընել չուզես,
այն քեզի մեղք չըլլար: 23 - Ինչ որ
բերնովդ կը խոստանաս ու քու կամ-
քովդ քու Տէր Աստուածոյդ կ'ուխտես,
քու շրթունքներէդ ելածը զգուշու-
թեամբ կատարես:

24 - Երբ քու դրացիիդ սյգին կը
մտնես, ուղածիդ շափ խաղող ուտես
ու կշտանաս, բայց ամանիդ մէջ
չդնես: 25 - Երբ քու դրացիիդ հունձ-
քին մէջ կը մտնես, ձեռքովդ հաս-
կերը փրցնես, բայց դրացիիդ հունձ-
քին մանգաղ չզարնես:

ԳԼ ԻԻ

Եթէ մէկը կին մը առնէ ու անոր
այրը ըլլայ, և անոր վրայ անարգու-
թեան բան մը գանելուն համար անի-
կա իր աչքին հաճոյ չըլլայ, այն ատեն
անոր արձակման թուղթ մը գրէ ու ա-
նոր ձեռքը տայ, և իր տունէն ճամբէ:

2 - Ու երբ անիկա անոր տունէն ելլե-
լով երթայ ուրիշ երկան մը կ'ըլլայ,
3 - Եթէ ետքի այրն ալ զանիկա առե-
լով արձակման թուղթ մը գրէ, ու
անոր ձեռքը տալով իր տունէն ճամբէ,
կամ եթէ անոր հետ կարգուած ետքի
այրը մեռնի, 4 - Առաջին այրը, որ զա-
նիկա ճամբեր էր, կարող չըլլայ զա-
նիկա դարձեալ իրեն կին առնել, ա-
նոր պղծուելէն ետքը. քանզի Տէրոջը
առջև պղծութիւն է այս բանը. և այս-
պէս դուն մեղքով չլեցնես այն երկիրը
զոր քու Տէր Աստուածդ քեզի ժա-
ռանգութիւն կու տայ:

5 - Նոր ամուսնացած մարդը պատե-
րազմի չերթայ, ու անոր բնաւ պաշ-
տօն մը չարուի. տարի մը իր տանը մէջ
ազատ թող նստի, ու իր առած կինը
ուրախացնէ:

6 - Չըլլայ որ հարս չաղօրիքը կամ
անոր վերի քարը գրաւ առնէ. քանզի եր
ընէրէն կեանքը գրաւ առած կ'ըլլայ:

7 - Եթէ մարդ մը գտնուի, որ իր եղ-

բայրներէն, այսինքն Իսրայէլի սրբիներէն, մէկը գողնալով զանհկա ծառայեցուցեր է կամ ծախեր է, այն գողը թող մեռնի. ու ձեր մէջէն չարութիւնը վերցնես :

8 - Բորտութեան փառին համար զգուշութիւն ըրէք, Աւետացի քահանաներուն բոլոր ձեզի սարվեցուցած բաները ճշդիւ պահելու և ընելու. ինչ որ անոնց պատուիրեր եմ զգուշութեամբ ի գործ դնէք : 9 - Միտքդ բեր ինչ որ քու Տէր Աստուածդ Մարիամի բրաւ ճամբուն մէջ՝ Եգիպտոսէ ելած ատեննիդ :

10 - Երբ քու դրացիիդ բան մը փոխտաս, գրաւն առնելու համար անոր տունը չմտնես. 11 - Իուրոր կայնիս ու փոխ առնող մարդը գրաւը քեզի դուրս բերէ : 12 - Եւ եթէ այն մարդը աղքատ է, անոր գրաւովը չպառկիս. 13 - Արեւը մտածին պէս անպատճառ անոր գրաւը ետ տաս, որպէս զի անհկա իր հանդերձովը պառկի ու քեզ օրհնէ. և քու Տէր Աստուծոյդ առջև այս բանը քեզի արդարութիւն սեպուի :

14 - Աղքատ ու կարօտ վարձկանին զրկանք չընես, Ի՛նչ քու եղբայրներէդ և թէ՛ քու երկրիդ մէջ քու քաղաքներդ գանուող օտարականներէն ըլլայ : 15 - Նոյն օրը արեւը չմտած անոր վարձքը հատուցանես, քանզի անհկա աղքատ է, ու անոր խելքը միտքը անոր վրայ է. չըլլայ որ քեզի համար Տէրօջը բողբէ, ու մեղքի տէր ըլլաս :

16 - Տղոց յանցանքին համար հայրերը չմեռցուին, ու հայրերուն յանցանքին համար տղաքը չմեռցուին. ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի :

17 - Օտարականին «- որբին իրաւունքը չձուես, ու որբեւարին հանդերձը գրաւ չառնես : 18 - Եւ միտքդ բեր որ դուն Եգիպտոսի մէջ ծառայ էիր, ու քու Տէր Աստուածդ քեզ անկէ ազատեց. անոր համար ես քեզի կը պատուիրեմ որ այս բանը ընես :

19 - Երբ քու արտիդ մէջ հունձքդ հնձես, ու արտին մէջ որայ մը մտցած ըլլաս, զանհկա առնելու համար ետ չգառնաս. անհկա օտարականին, որբին ու որբեւարին թող ըլլայ. որպէս զի քու Տէր Աստուածդ քու ձեռքերուդ ամէն գործին մէջ քեզ օրհնէ : 20 - Զիթենիդ թօթ վելէդ ետքը վրան ճաշածները ոտակ սա չփնտռես. անհկա

օտարականին, որբին ու որբեւարին թող ըլլայ : 21 - Եւ այգիիդ խազողները ժողվելէդ ետքը ճաշքաղ չընես. անհկա օտարականին, որբին ու որբեւարին թող ըլլայ : 22 - Եւ միտքդ բեր որ Եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր. անոր համար ես քեզի կը պատուիրեմ որ այս բանը ընես :

ԳԼ ԻԵ

Երբ մարդոց մէջ վէճ մը ըլլայ և դատաստանի երթան, դատարանները անոնց դատը մտիկ ընելով իրաւունք ունեցողը արդարացնեն, ու յանցաւորը դատապարտեն : 2 - Եւ յանցաւոր եղողը եթէ ծեծի արժանի է, դատաւորը զանհկա պառկեցնէ, ու անոր յանցանքին համեմատ իր առջև ծեծել տայ զանհկա թուով : 3 - Քառասունէ աւելի զարնել չտայ. չըլլայ որ սակէ աւելի զարնելովը՝ եղբայրդ քու աչքիդ առջև անարգուի :

4 - Կալի մէջ աշխատող եզին դունչը չկապես :

5 - Երբ եղբայրներ մէկտեղ բնակին, ու անոնց մէկը առանց զաւկի մեռնի, մեռնողին կինը դուրսը օտար մարդու հետ չկարգուի. տագրը անոր մօտենայ և զանհկա իրեն կին առնէ, ու տագրութեան պարտաւորութիւնը անոր հատուցանէ. 6 - Եւ անոր ծնած առջինեկ աղան մեռնող եղբօրը անունովը *կոչուի, որ չըլլայ թէ անոր անունը Իսրայէլէ ջնջուի : 7 - Եւ եթէ այն մարդը իր հարսը առնել չուզէ, այն ատեն հարսը դուռը ելլէ ծերերուն ու բսէ, Իմ տագրս Իսրայէլի մէջ իր եղբօրը անունը հաստատելէն կը հրատարի. տագրութեան պարտաւորութիւնը ինծի հատուցանել չուզեր :

8 - Այն ատեն անոր քաղաքին ծերերը զանհկա պիտի կանչեն, ու անոր խօսին. և եթէ անհկա հաստատ կենալով բսէ թէ Ասիկա չեմ ուզեր առնել, 9 - Այն ատեն հարսը անոր պիտի մօտենայ ծերերուն առջև, և անոր ոտքէն կօշիկը հանէ, ու անոր երեսը թքնէ, և խօսելով պիտի բսէ, Իր եղբօրը առնը չինել չուզող մարդուն այսպէս կ'ըլլայ :

10 - Եւ անոր անունը Իսրայէլի մէջ կօշիկը հանուած մարդուն տունը բաւի :

*Եբր. կենայ

11 - Երբ երկու մարդիկ իրարու հետ կը ծեծկուին, և մէկուն կինը՝ զարնոցին ձեռքէն իր այրը ազատելու համար մօտենայ, ու ձեռքը երկնցնելով անոր ամօթոյքը բռնէ, 12 - Այն ատեն անոր ձեռքը կտրես, և քու աչքդ բնաւ անոր չխնայէ :

13 - Մտխադիգ մէջ տեսակ տեսակ մեծ ու պղտիկ կշիռքի քարեր չըլլան :

14 - Տանդ մէջ տեսակ տեսակ մեծ ու պղտիկ արդուներ չըլլան :

15 - Քու կշիռքիդ քարը լման ու արդար ըլլայ, քու արդուդ լման ու արդար ըլլայ, որպէս զի քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ : 16 - Քանզի ամէն այս բաները ընողը, ամէն անիրաւութիւն ընողը, քու Տէր Աստուծոյդ առջև պիղծ է :

17 - Եգիպտոսէ ելած ատենդ ճամբան Ամաղէկի քեզի ըրածը միաքդ պահէ :

18 - Ճամբուն մէջ ինչպէս քեզ դիմաւորեց, և քու ետեւէդ ելող բոլոր տկարները կտարեց, երբ դուն աշխատած ու յոգնած էիր, ու Աստուծմէ չվախցաւ : 19 - Ուստի երբ քու Տէր Աստուածդ քու բոլոր շրջակայ թշնամիներէդ քեզ հանգստացնէ այն երկրին մէջ զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն կու տայ որպէս զի անոր տիրես, այն ատեն Ամաղէկի յիշատակը երկինքի տակէն բոլորովին վերցնես. չըլլայ որ մոռնաս :

ԳԼ. ԻԶ

Երբ մանեա այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն կու տայ, և զանկա ժառանգես ու հոն բնակիս, 2 - Այն ատեն երկրին ամէն պատուհներուն երախայրիններէն պիտի առնես, զորոնք քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկրէն ժողվերես, ու կողովի մը մէջ դնելով երթաս այն տեղը զոր քու Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անունը հոն դնելու համար : 3 - Եւ այն օրերը եղող քահանային երթաս ըսես, Ես այսօր քու Տէր Աստուծոյդ առջև կը խոստովանիմ որ ես մտայ այն երկիրը, որու համար Տէրը մեր հայրերուն երգում ըրեր էր մեզի տալու : 4 - Ետքը քահանան կողովը քու ձեռքէդ առնելով զանկա քու Տէր Աստուծոյդ սեղանին առջև պիտի դնէ :

5 - Եւ դուն պատասխան տալով՝ քու Տէր Աստուծոյդ առջև ըսես, Իմ հայրս, Թափառական Ասորի մը ըլլալով, Եգիպտոս իջաւ, ու հոն քիչ հոգիներով պանդխտութիւն ընելով մէկ մեծ, զօրաւոր ու շատուոր ազգ մը եղաւ :

6 - Ու Եգիպտոսցիք մեզ չարչարեցին, մեզ նեղեցին և մեր վրայ ծանր ծառայութիւններ դրին : 7 - Ու մենք մեր հայրերուն Տէր Աստուծոյն աղաղակեցինք. և Տէրը մեր ձայնը լսելով մեր նեղութիւնը, աշխատութիւնը ու մեզի եղած զրկանքը՝ տեսաւ :

8 - Եւ Տէրը զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով, մեծ ահարկութիւններով, նշաններով ու հրաշքներով մեզ Եգիպտոսէ հանեց :

9 - Եւ մեզ այս տեղը բերաւ, ու մեզի այս երկիրը, կաթ ու մեղր բղխող երկիրը, տուաւ :

10 - Եւ արդ, ով Տէր, ինձի տուած երկրիդ պատուհներուն երախայրինները +եզ բերի : Ու զանոնք քու Տէր Աստուծոյդ առջև դնելով՝ Տէր Աստուծոյդ առջև երկրպագութիւն ընես : 11 - Եւ քու Տէր Աստուծոյդ քեզի ու քու տանդ տուած բոլոր բարեքներովը ուրախութիւն ընես, դուն ալ, Ղեւտացին ալ, և ձեր մէջ եղող օտարականն ալ :

12 - Երբորդ տարին տասանորդի տարի ըլլալով, երբ դուն քու արդիւնքներուդ բոլոր տասանորդները զատես լմնցնես, և զանոնք Ղեւտացիին, օտարականին, որբին ու որբեւարիին տաս, որպէս զի անոնք ալ քու քաղաքներուդ մէջ ուտեն կշտանան : 13 - Այն ատեն քու Տէր Աստուծոյդ առջև ըսես, Սուրբ եղած բանը բոլորովին տունէս հանեցի, և քու բոլոր հրամայած պատուիրանքներուդ համեմատ զանկա Ղեւտացիին, օտարականին, որբին ու որբեւարիին տուի. քու պատուիրանքներդ զանց չըրի, ու անոնք չմոռցայ :

14 - Սուգիս օրերուն մէջ անկէ չկերայ, ու անմաքուր բանի մը չգործածեցի, և անկէ մեռելի համար չտուի. Իմ Տէր Աստուծոյս խօսքը մտիկ ըրի. ինձի ինչ որ պատուիրեցիր, անոր համեմատ ըրի : 15 - Նայէ երկինքէն քու սուրբ բնակարանէդ, և օրհնէ քու Իսրայէլ ժողովուրդդ, ու այն երկիրը զոր տուիր մեզի, ինչպէս մեր հայրերուն երգում ըրած էիր +աւ-, երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ :

16 - Այսօր քու Տէր Աստուածդ

քեզի կը պատուիրէ որ այս կանոնները ու դատաստանները ի գործ դնես . ուստի բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ պահես ու կատարես զանոնք : 17 - Իսկ այսօր Տէրոջը խօսք կուտաս , որ անիկա քեզի Աստուած բլլայ , ու դուն անոր ճամբաներուն մէջ քայլես , և անոր կանոնները , պատուիրանքները ու դատաստանները պահես , ու խօսքը մտիկ ընես . 18 - Տէրն ալ այսօր քեզի խօսք կու տայ , որ դուն իրեն սեպհական ժողովուրդ բլլաս , ինչպէս քեզի բաւ , որպէս զի անոր բոլոր պատուիրանքները պահես . 19 - Եւ բոլոր իր ստեղծած ազգերէն գերազանց ընէ քեզ գովութիւնով , համբաւով ու փառքով , որպէս զի սուրբ ժողովուրդ մը բլլաս քու Տէր Աստուծոյդ՝ իր բաւին պէս :

Գ.Լ. ԻԷ

Եւ Մովսէս Իսրայէլի ծերերուն հետ ժողովուրդին պատուիրելով՝ բաւ , Պահեցէք այն բոլոր պատուիրանքները զորոնք ես այսօր ձեզի կը պատուիրեմ : 2 - Ու Յորդանանէ քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկիրը անցած օրդ՝ քեզի մեծ քարեր կանգնես , ու զանոնք կիրով ծեփես . 3 - Եւ այս օրէնքին բոլոր խօսքերը անոնց վրայ գրես , երբ անցնիս ու մտնես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ , երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ , ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի բաւ : 4 - Ուստի երբ Յորդանանէ անցնիս , այս օրուան քեզի պատուիրածիս պէս՝ այս քարերը Գերաղ լեռան վրայ կանգնես , ու զանոնք կիրով ծեփես : 5 - Եւ հոն քու Տէր Աստուծոյդ սեղան մը շինես , քարերէ շինուող սեղան մը . անոնց վրայ երկաթ չդպցնես : 6 - Սփռու քու Տէր Աստուծոյդ սեղանը ամբողջ քարերէ շինես , ու անոր վրայ քու Տէր Աստուծոյդ սղջակէզներ մատուցանես . 7 - Եւ խաղաղութեան զոհեր մատուցանելով՝ հոն ուտես , ու քու Տէր Աստուծոյդ առջև ուրախանաս . 8 - Եւ այս օրէնքին բոլոր խօսքերը քարերուն վրայ խիստ պարզ կերպով մը գրես : 9 - Եւ Մովսէս Ղեւտացի քահանաներուն հետ բոլոր Իսրայէլի խօսելով՝ բաւ , Ով Իսրայէլ , լուռ կեցիր ու մտիկ ըրէ . Իսկ այսօր քու Տէր Աս-

տուծոյդ ժողովուրդը եզար . 10 - Ուստի քու Տէր Աստուծոյդ խօսքը մտիկ ընելով ի գործ դնես անոր պատուիրանքները ու կանոնները , զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ : 11 - Եւ նայն օրը Մովսէս ժողովուրդին պատուիրելով՝ բաւ , 12 - Երբ Յորդանանէ անցնիք , ժողովուրդը օրհնելու համար Գարիգին լեռան վրայ աւանք թող կայնին . Շմուսն , Ղեւի , Յուգա , Իսաքար , Յովսէփ ու Բենիամին . 13 - Եւ անէծքի համար Գերաղ լեռան վրայ աւանք թող կայնին . Ռուբէն , Գադ , Ասեր , Զաբուլոն , Իսակար ու Նեփթալիմ : 14 - Եւ Ղեւտացիք Իսրայէլի բոլոր մարդոցը հետ խօսելով՝ բարձր ձայնով պիտի բռնեն , 15 - Անիծեալ բլլայ այն մարդը՝ որ արուեստաւորի ձեռագործ , ու Տէրոջը առջև պիտի գործուած կամ ձուլածոյ կուռք կը շինէ , ու գաղաւկ տեղ մը կը դնէ . և բոլոր ժողովուրդը պատասխան տալով՝ Ամէն պիտի բռնեն : 16 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ՝ հայհոյութիւն կ'ընէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 17 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր դրացիին սահմանը կը փոխէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 18 - Անիծեալ բլլայ ան՝ որ կոյրը եւ ճամբայէն կը խտարեցնէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 19 - Անիծեալ բլլայ ան՝ որ պանդուխտին , որբին ու որբեւորին իրաւունքը կը ծռէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 20 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր հօրը կնոջ հետ կը պառկի . քանզի իր հօրը քղանցքը կը բանայ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 21 - Անիծեալ բլլայ ան՝ որ սեւիցէ անասունի հետ կը պառկի . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 22 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը եզրղ իր քրոջ հետ կը պառկի . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 23 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր զաքանչին հետ կը պառկի . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 24 - Անիծեալ բլլայ ան՝ որ իր դրացին գաղաւկ կը մեռցնէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 25 - Անիծեալ բլլայ ան՝ որ անմեղ մարդը մեռցնելու համար կաշառք կ'առնէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի բռնեն : 26 - Անիծեալ բլլայ

ան՝ որ այս օրէնքին ամէն խօսքերուն մէջ չկենար որ զանոնք կատարէ . և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ :

ԳԼ ԻԸ

Եւ եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքը ուշագրութեամբ մտիկ ընելով՝ զգուշութեամբ ի գործ դնես անոր բոլոր պատուիրանքները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, քու Տէր Աստուծոյդ երկրի բոլոր ազգերէն գերազանց պիտի ընէ քեզ : 2 - Եւ եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին չնազանդիս, այս բոլոր օրհնութիւնները քու վրայ գալով քեզի պիտի հասնին : 3 - Քաղաքի մէջ օրհնեալ, ու դաշտի մէջ օրհնեալ պիտի ըլլան : 4 - Քու որովայնիդ պտուղը, քու երկրիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը օրհնեալ պիտի ըլլան : 5 - Քու կողովդ ու տաշտդ օրհնեալ պիտի ըլլան : 6 - Մտած ատենդ օրհնեալ, ու ելած ատենդ օրհնեալ պիտի ըլլան : 7 - Տէրը քու առջեւէդ ջարդել պիտի տայ քու վրայդ ելլող թշնամիներդ . անոնք քեզի դէմ մէկ ճամբով պիտի ելլեն, և քու առջեւէդ եօթը ճամբով պիտի փախչին : 8 - Տէրը քու շտեմարաններուդ ու ամէն ձեռք զարնելու բաներուդ մէջ օրհնութիւն պիտի դրկէ քեզի . և քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկրին մէջ քեզ պիտի օրհնէ : 9 - Եթէ քու Տէր Աստուծոյդ հրամանները պահելով՝ անոր ճամբաներուն մէջ քալես, Տէրը քեզի երգում ըրածին պէս քեզ իրեն սուրբ ժողովուրդ պիտի հաստատէ . 10 - Ու երկրի ամէն ժողովուրդները պիտի տեսնեն որ Տէրոջը անունը քու վրայ կը կոչուի, ու քեզմէ պիտի վախնան : 11 - Եւ Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ, քու որովայնիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը ու քու երկրիդ պտուղը շարունակ այն երկրին վրայ զոր Տէրը քու հայրերուդ երգում ըրաւ քեզի տալու : 12 - Տէրը իր բարութեան գանձը, այսինքն երկինքը, քեզի պիտի բանայ, որպէս զի քու երկրիդ անձրեւը ատենովը տայ, ու քու ձեռքիդ ամէն գործը օրհնէ . և դուն շատ ազգերու փոխ պիտի աւաս, բայց դուն փոխ պիտի չառնես : 13 - Տէրը ժողովուրդներու-

զլուիս պիտի ընէ քեզ, և ոչ թէ պոչ . դուն միշտ վրայ պիտի ելլես, ու բնավար պիտի չիյնաս, եթէ քու Տէր Աստուծոյդ պատուիրանքները մտիկ ընելով պահես ու կատարես, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, 14 - Եւ օտար աստուածներուն ետեւէն երթալու համար, «- անոնց ծառայութիւն ընելու համար, աջ կողմը կամ ձախ կողմը չխոտարիս այն բոլոր խօսքերէն զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ :

15 - Բայց եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին չչնազանդիս, և չպահես ու չընես անոր բոլոր պատուիրանքները ու կանոնները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, այն ատեն այս ամէն անէծքները քու վրայ գալով քեզի պիտի հասնին : 16 - Քաղաքի մէջ անիծեալ, ու դաշտի մէջ անիծեալ պիտի ըլլան : 17 - Քու կողովդ ու տաշտդ անիծեալ պիտի ըլլան : 18 - Քու որովայնիդ պտուղը, երկրիդ պտուղը, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը անիծեալ պիտի ըլլան : 19 - Քու մտած ատենդ անիծեալ՝ ու քու ելած ատենդ անիծեալ պիտի ըլլան : 20 - Եւ Տէրը քու ամէն ձեռք զարկած գործիդ մէջ անէծք, տառապանք ու յանգիմանութիւն պիտի դրկէ քեզի՝ քու չար գործերուդ ու զիս ձգելուդ համար, մինչև որ շուտով բնաջինջ ըլլաս ու կորսուիս : 21 - Տէրը քեզի ժանտախտը պիտի փակցնէ, մինչև որ քեզ հասցնէ այն երկրին վրայէն, ուր դուն կը մանես զանիկա ժառանգելու : 22 - Եւ Տէրը քեզ պիտի զարնէ ծիրական ախտով, հրատազնապ տենդով, ջերմով ու այրող տաքութիւնով, *երաշտութեամբ, խորշակահարութեամբ ու արհաւիրք գալուէով . և անոնք պիտի հալածեն քեզ մինչև որ կորսուիս : 23 - Եւ գլխուդ վրայի երկինքը պղնձէ, ու տակդ եղած երկիրը երկաթէ պիտի ըլլայ : 24 - Տէրը անձրեւի տեղ հող ու փոշի պիտի տայ քու երկրիդ, «- երկինքէն քու վրայ պիտի իջնեն մինչև որ դուն բնաջինջ ըլլաս : 25 - Տէրը քու թշնամիներուդ առջև քեզ ջարդել պիտի տայ . անոնց դէմ մէկ ճամբով պիտի ելլես, և անոնց առջեւէն եօթը ճամբով պիտի փախչիս . ու երկրի բոլոր թագաւորու-

*Էյամ, սրտով

Թիւններուն մէջ Թափառական պիտի ըլլաս: 26 - Եւ քու մտքովնդ երկինքի բոլոր Թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլայ . և զանոնք մը պիտի չըլլայ: 27-Տէրը Եգիպտոսի պալարներով, Թանշով, քոտտուլթեամբ ու եռքով պիտի զարնէ քեզ, որպէս զի անոնցմէ չկարենաս բժշկուիլ: 28 - Տէրը ապշուլթիւնով, կուրուլթիւնով ու սրտագողով պիտի զարնէ քեզ. 29 - Եւ ինչպէս կոյրը խաւարի մէջ ձեռքովը կը խարխափէ, դուն ալ կէսօրուան ստեն այնպէս պիտի խարխափես, ու գործերուդ մէջ բարեբաղդուլթիւն պիտի չունենաս. և միշտ զրկանք ու յափշտակուլթիւն պիտի կրես, ու ինչ ազատող պիտի չըլլայ: 30 - Գուն կնոջ մը պիտի նշանուիս, ու անոր հետ ուրիշը պիտի պառկի. սուն պիտի շինես, ու անոր մէջ դուն պիտի չբնակիս. այգի պիտի տընկես, ու անոր խաղողը պիտի չժողովես: 31 - Քու եզդ քու աչքիդ առջև պիտի մտնուի, բայց դուն անկէ պիտի չուտես. քու էշդ քու առջեւէդ պիտի յափշտակուի, ու քեզի ետ պիտի չտրուի. հօտերդ քու Թշնամիներուդ պիտի մտանուին, ու զանոնք քեզի ազատող պիտի չըլլայ: 32 - Քու տղաքներդ ու աղջիկներդ ուրիշ ժողովուրդի մը պիտի տրուին, և աչքերդ պիտի տեսնեն, ու բոլոր օրը անոնց համար անեցած խորոհուլթիւնով պիտի նուազին. և ձեռքդ պիտի չհասնի օգնելու: 33 - Քու երկրիդ արդիւնքը ու քու բոլոր աշխատուլթիւնդ քեզի անծանօթ ժողովուրդ մը պիտի ուտէ. և դուն ամէն օր միայն զրկանք ու ճնշում պիտի կրես. 34 - Եւ աչքերուդ տեսած բաներէն պիտի խենդենաս: 35 - Տէրը քու ծունկերդ ու սրունքներդ, ու ստքիդ Թաթէն մինչև գլխուդ գագաթը գէշ պալարներով պիտի զարնէ, ու պիտի չկրնաս բժշկուլթիւն գտնել: 36 - Տէրը պիտի տանի քեզ և քու վրագ դրած Թագաւորդ այնպիսի ազգի մը՝ զոր ոչ դուն ճանչցած ես, ոչ ալ քու հայրերդ. և հոն օտար ստատածներու, փոյտի ու քարի, ծառայուլթիւն պիտի բնես: 37 - Եւ դուն զարմանքի ու առակի և կատակի ենթակայ պիտի ըլլաս այն բոլոր ժողովուրդներուն մէջ, ուր Տէրը քեզ պիտի տանի: 38 - Արտիդ մէջ շատ սերմ պիտի հանես, ու

քիչ արդէն պիտի ժողովես. քանզի մտրտաները պիտի ուտեն զանիկա: 39 - Այգիներ պիտի տնկես ու դարմանես, բայց գինին պիտի չիմես, ու իսկուր պիտի չժողովես. քանզի զանիկա որդերը պիտի ուտեն: 40 - Քու ամէն սահմաններուդ մէջ ձիթենիներ պիտի ունենաս, բայց իւղով պիտի չօծուիս. քանզի քու ձիթենիներդ իրենց պարտէ պիտի Թափեն: 41 - Տղաքներ ու աղջիկներ պիտի ծնանիս, բայց քուկդ պիտի չըլլան. քանզի անոնք գերուլթեան պիտի երթան: 42 - Բոլոր ծառերդ ու երկրիդ պտուղները խառնիճը պիտի *ուտէ: 43 - Ձեր մէջ եղող օտարականը քեզմէ գերազանց պիտի ըլլայ, և շատ պիտի բարձրանայ, ու դուն շատ վար պիտի իջնես: 44 - Անիկա քեզի փոխ պիտի տայ, բայց դուն անոր փոխ պիտի չտաս. անիկա գլուխ պիտի ըլլայ, բայց դուն պոչ պիտի ըլլաս: 45 - Եւ այս բոլոր անէծքները քու վրագ պիտի գան, քեզ պիտի հալածեն, ու քեզի պիտի հասնին, մինչև որ դուն բնաջինջ ըլլաս. որովհետեւ քու Տէր Աստուծոյդ խօսքին հնազանդուլթիւն չըրիր, և քեզի հրամայած պատուիրանքները ու կանոնները չպահեցիր: 46 - Եւ անոնք քու վրագ ու քու սերունդիդ վրայ նշան ու հրաշք պիտի ըլլան յաւիտեան: 47-Որովհետեւ դուն ամէն բանին առատուլթեանը համար՝ ուրախուլթեամբ և յօժար սրտով քու Տէր Աստուծոյդ ծառայուլթիւն չըրիր, 48 - Անոր համար դուն անօլթուլթիւնով, ծարաւով, մերկուլթիւնով ու ամէն բանի՝ կարօտուլթիւնով ծառայուլթիւն պիտի բնես քու Թշնամիներուդ, զորոնք Տէրը քու վրագ պիտի զրկէ. և քու պարանոցիդ վրայ երկաթէ լուծ պիտի դնէ, մինչև որ բնաջինջ ընէ քեզ: 49 - Տէրը քու վրագ հեռուէն, երկրի ծայրէն, արծիւի Թռչելուն պէս ազգ մը պիտի բերէ, այնպիսի ազգ մը որուն լեզուն դուն չես հասկնար, 50 - Պինդերես ազգ մը, որ ձերերուն պատիւ պիտի չընէ, ու ազայոց վրայ գուլթ պիտի չունենայ. 51 - Եւ անիկա քու անասուններուդ պտուղը ու երկրիդ պտուղը պիտի ուտէ, մինչև որ դուն բնաջինջ ըլլաս. որովհետեւ քեզի ցորեն, գինի,

*Եբր. գրաւէ

իւղ, կովերուդ ծնունդները ու սչխարներուդ հօտերը պիտի չթողու, մինչև որ քեզ բնաջինջ ընէ: 52 - Եւ անիկա քու բոլոր քաղաքներուդ մէջ քեզ պիտի պաշարէ, մինչև որ կործանին քու բարձր ու ամուր պարիսպներդ, որոնց դուն ապաւիններ ես, քու բոլոր երկրիդ մէջ. և քեզ պիտի պաշարէ քու ամէն քաղաքներուդ մէջ - քու բոլոր երկրիդ մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ: 53 - Ու պաշարման ատեն և քու թշնամիիդ քեզ նեղը ձգած ատենը՝ քու որովայնիդ պտուղը, քու Տէր Աստուծոյդ քեզի տուած քու տղաքներուդ և աղջիկներուդ միտը, պիտի ուտես: 54 - Ձեր մէջ քնքուշ ու խիստ փափուկ մարդը իր եղբոր ու իր ծոցի կնոջ և իր ողջ թողուցած որդիներուն ծուռ աչքով պիտի նայի, 55 - Որպէս զի իր ուտելու որդիներուն միսէն անոնց մէկո՛ւն չտայ. քանզի պաշարման ատեն, ու քու թշնամիիդ ամէն քաղաքներուդ մէջ քեզ նեղը ձգած ատենը, «-բիշ բան մը պիտի չմնայ անոր: 56 - Ձեր մէջ խիստ քնքուշ ու փափուկ եղող կինը, որ իր փափկութենէն ու քնքուշ ըլլալէն ոտքը գեանի վրայ կոխելու սորված չէր, իր ծոցի երկան, իր տղուն, իր աղջկան, 57 - Եւ իր ոտքերուն մէջտեղէն ելող տղու ընկերին, ու իր ծնած զաւակներուն ծուռ աչքով պիտի նայի. քանզի պաշարման ատեն, ու քու թշնամիիդ քու քաղաքներուդ մէջ քեզ նեղը ձգած ատենը, ամէն բանին պակսելուն համար զանոնք ծածկաբար պիտի ուտէ:

58 - Եթէ դուն այս գիրքին մէջ գրուած այս օրէնքին ամէն խօսքերը զգուշութեամբ չկատարես, և այս, ՔՈՒ ԵՂՈՎ Ա ԱՍՏՈՒԱԾԻ, պատուական ու ահաւոր անունէն չվախնաս, 59 - Տէրն ալ անսովոր հարուածներով, մեծ ու երկարատե հարուածներով, գէշ ու երկայն հիւանդութիւններով պիտի գարնէ քեզ և քու սերունդդ. 60 - Ու Եգիպտոսի բոլոր հիւանդութիւնները՝ որոնցմէ դուն կը վախնաս, քու վրագ պիտի դարձնէ. ու անոնք քեզի պիտի փակչին: 61 - Նաև այս օրինաց գիրքին մէջ չգրուած ամէն հիւանդութիւնը ու ամէն հարուածը Տէրը քու վրագ պիտի բերէ, մինչև որ դուն բնաջինջ ըլլաս: 62 - Եւ քու Տէր Աստուծոյդ խօսքին հնազանդութիւն

չընելուդ համար, դուք որ շատութեան կողմանէ երկինքի ասաղերուն պէս էիք, խիստ սակաւաթիւ պիտի մնաք: 63 - Եւ ինչպէս Տէրը ձեզի աղէկութիւն ընելով ու ձեզ շատցնելով ձեր վրայ ուրախացաւ, այնպէս ալ ձեզ կորսնցընելով ու բնաջինջ ընելով ձեր վրայ պիտի ուրախանայ, և պիտի ջնջուիք այն երկրին վրայէն, ուր հիմա կ'երթաք զանիկա ժառանգելու: 64 - Եւ Տէրը երկրի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը բոլոր ժողովուրդներուն մէջ պիտի ցրուէ քեզ, ու հոն ծառայութիւն պիտի ընես օտար աստուածներու, փայտի ու քարի, զորոնք ոչ դուն ճանչցեր էիր՝ ոչ ալ քու հայրերդ: 65 - Եւ այն ազգերուն մէջ հանգստութիւն պիտի չգանես, ու ոտքիդ թաթին հանգչելու տեղ պիտի չըլլայ. և հոն Տէրը քեզի դողացող սիրտ, աչքի նուազում ու հոգիի արամութիւն պիտի տայ. 66 - Եւ քու կեանքդ քու առջեւդ կախման մէջ պիտի ըլլայ, ու գիշեր ցորեկ պիտի վախնաս, և քու կեանքիդ վրայ ապահով պիտի չըլլաս. 67 - Ու սրտիդ ահուդողէն և աչքերուդ տեսած բաներէն, առաւօտուն պիտի ըսես, Երանի՛ թէ իրիկուն ըլլար, ու իրիկունն ալ պիտի ըսես, Երանի՛ թէ առաւ ըլլար: 68 - Եւ Տէրը նաւերով Եգիպտոս պիտի դարձնէ քեզ այն ճամբայով, որու համար քեզի ըսի թէ զանիկա մէյմըն ալ պիտի չտեսնես. և հոն ծառաներ ու աղախիններ ըլլալու պիտի ծախուիք ձեր թշնամիներուն, և ծախու առնող պիտի չըլլայ:

ԳԼ. ԻԹ

Ասոնք են այն ուխտին խօսքերը, զորոնք Տէրը Մովսէսի հրամայեց Իսրայէլի որդիներուն հետ ընելու Մովարի երկրին մէջ, անոնց հետ Քորեբի վրայ ըրած ուխտէն զատ:

2 - Ուստի Մովսէս բոլոր Իսրայէլը կանչելով՝ անոնց ըսաւ, Դուք տեսաք այն ամէնը՝ զոր Տէրը ձեր աչքերուն առջև Եգիպտոսի երկրին մէջ ըրաւ Փարաւոնի, և անոր բոլոր ծառաներուն, ու անոր բոլոր երկրին. 3 - Այսինքն այն մեծ փորձութիւնները, նշանները ու մեծ հրաշքները, զորոնք դուն քու աչքերովդ տեսար. 4 - Եւ

Տէրը մինչև այսօր չտուաւ ձեզի ոչ ոքի սիրտ մը որ իմանաք, և ոչ աչքեր որ տեսնէք, ոչ ալ ականջներ որ լսէք: 5 - Ու ես քառասուն տարի անապատին մէջ ձեզ պաշտօնացի. ձեր վրայի լաթերը չհինցան, ու սաքերնուդ կօշիկները չմաշեցան: 6 - Հաց չկերաք ու գինի կամ օղի չխմեցիք, որպէս զի գիտնաք թէ ես ձեր Տէր Աստուածն եմ: 7 - Ու երբ այս ատեղ եկաք, Եսեբոնի Սեհոն թագաւորը և Բասանի Ուփ թագաւորը մեր առջև ելան ձեզի հետ պատերազմելու, ու մենք զարկինք զանոնք. 8 - Եւ անոնց երկիրը առինք, ու զանկաւ Ռուբենեանց, Գադեանց ու Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուինք: 9 - Ուստի այս ուխտին խօսքերը պահէք ու կատարէք, որպէս զի ձեր ամէն գործին մէջ յաջողութիւն գտնէք:

10 - Այսօր դուք ամէնքդ ձեր Տէր Աստուծոյն առջև կը կայնիք. ձեր *ցեղերուն իշխանները, ձեր ծերերը, ձեր ոտականները — բոլոր Իսրայէլի մարդիկը, 11 - Ձեր տղաքները, ձեր կիները, և քու բանակիդ մէջ եղող օտարականդ, քու փայտ կտրողէդ մինչև քու ջրկիրդ. 12 - Որպէս զի քու Տէր Աստուծոյդ ուխտին ու անոր երդումին մէջ մտնես, զոր այսօր քու Տէր Աստուածդ քեզի հետ կ'ընէ, 13 - Որպէս զի քեզ այսօր իրեն ժողովուրդ հաստատէ, և ինք քեզի Աստուած ըլլայ, ինչպէս քեզի բաւալ, ու ինչպէս քու հայրերուդ, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երգումըրաւ: 14 - Ու ես այս ուխտը և այս երդումը միայն ձեզի հետ չեմ ընէր, 15 - Հապա այսօր մեզի հետ ձեր Տէր Աստուծոյն առջև հաս կայնողներուն հետ, և այսօր մեզի հետ հոս չեղողներուն հետ ալ. 16 - Քանզի դուք գիտէք թէ ի՛նչպէս բնակեցանք Եգիպտոսի երկրին մէջ, և ի՛նչպէս անցանք այն ազգերուն մէջէն որ դուք անցաք. 17 - Ու անոնց քով եղած անոնց գարշելի բաները, և անոնց փայտէ, քարէ, արծաթէ ու սակիէ կուռքերը տեսաք: 18 - Զըլլայ որ ձեր մէջ այր մարդ կամ կին մարդ կամ աղգատահմ կամ ցեղ մը գտնուի, որ իր սիրտը այսօր ձեր Տէր Աստուծմէն խտտրեցնելով, երթայ այն ազգաց աստ-

ուածներուն ծառայութիւն ընէ. չըլլայ որ ձեր մէջ թոյն ու դառնութիւն բերող արմատ մը գտնուի. 19 - Եւ չըլլայ որ Դէլ այս անէծքին խօսքերը լսելով՝ սրտին մէջ իրեն օրհնութիւն տալով ըսէ, Թէեւ իմ սրտիս յամառութեանը մէջ քալեմ, ինծի խաղաղութիւն կ'ըլլայ, և այսպէս անկաւ իր ծարուութեանը վրայ գինովութիւն աւելցնէ. 20 - Տէրը պիտի չհաճի անոր խնայել, հապա այն ատեն Տէրօջը բարկութիւնը ու նախանձը այն մարդուն վրայ պիտի բորբոքի, և այս գիրքին մէջ գրուած ամէն անէծքը անոր վրայ պիտի իջնէ, ու Տէրը անոր անունը երկինքի տակէն բնաջինջ պիտի ընէ: 21 - Եւ Տէրը այս օրինաց գիրքին մէջ գրուած ուխտին ամէն անէծքներուն համեմատ անոր վրայ չարիք հասցնելու համար՝ զանկաւ Իսրայէլի բոլոր ցեղերէն պիտի զատէ, 22 - Եւ պիտի ըսէ յետագայ ազգը, այսինքն ձեզմէ ետքը ելող զաւակներնիդ, ու հեռու երկրէ եկող օտարականը, երբ տեսնեն այն երկրին հարուածները ու անոր հիւանդութիւնները, որոնցմով Տէրը զանկաւ պիտի նեղէ. 23 - Ու երբ Գեհէն ընէ այն բոլոր երկիրը ծծումբ, աղ ու սյրած ըլլալով, հոն բան մը չցանուիր, ու պտուղ մը չբերէր, և խոտ մը չբուսնիր՝ Սոդոմի, Գոմորի, Ադմոյի ու Սեբոյի մի աւերումին պէս, զորոնք Տէրը իր բարկութիւնովը ու սրամտութիւնովը բնաջինջ ըրաւ: 24 - Նաև ամէն ազգերը պիտի ըսեն, Ինչո՞ւ համար Տէրը այս երկրին այսպէս ըրաւ. այս մեծ սրամտութեան ու բարկութեան պատճառով ի՞նչ է: 25 - Եւ անոնց պիտի ըսեն, Պատճառը այս է՝ որ անոնք մերժեցին իրենց հայրերուն Տէր Աստուծոյն ուխտը, զոր անոնց հետ ըրեր էր՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանած ատեն, 26 - Եւ գացին ուրիշ աստուածներու ծառայեցին, ու անոնց երկրպագութիւն ըրին, այնպիսի աստուածներու՝ զորոնք իրենք բնաւ չէին ճանչցած, և զորոնք Տէրը սրոշած չէր անոնց: 27 - Ուստի Տէրօջը բարկութիւնը այն երկրին դէմ բորբոքեցաւ, որ այս գիրքին մէջ գրուած ամէն անէծքները անոր վրայ բերէ. 28 - Եւ Տէրը բարկութեամբ, սրամտութեամբ ու մեծ զայրացմամբ զանոնք իրենց երկրէն արմատաքի խլելով՝ ուրիշ երկիր

*Եբր. ձեր իշխանները, ձեր ցեղերը

մը նետեց , ինչպէս այսօր իւր ԳԻՐԻՆԻ :
29 - Մածուկ բաները մեր Տէր Աստուծոյն իւր վերաբերին , բայց յայտնուած բաները մեզի ու մեր որդիներուն ԳԻՐԻՆԻ էն յաւիտեան , որպէս զի այս օրէնքին ամէն խօսքերը կատարենք :

ԳԼ . Լ

Աւերք այս քեզի ցուցուցած բուներս , թէ՛ անէծքը և թէ՛ օրհնութիւնը , քու վրայ գան , ու դուն զառնէրք քու սրտիդ մէջ նորէն յիշես այն բոլոր ազգերուն մէջ , ուր քու Տէր Աստուծոյդ քեզ պիտի վաճառէ , 2 - Եւ դուն քու Տէր Աստուծոյդ դառնաս , և բոլոր սրտովդ ու բոլոր հոգովդ անոր խօսքին հնազանդիս , թէ՛ դուն և թէ՛ քու որդիներդ , ինչպէս ես այսօր քեզի պատուիրեցի , 3 - Քու Տէր Աստուծոյդ ալ քեզ գերութենէդ դարձնելով պիտի սղորմի քեզի , ու նորէն պիտի ժողվէ քեզ այն ամէն ազգերէն , որոնց մէջ քու Տէր Աստուծոյդ քեզ ցրուեր էր : 4 - Եթէ մինչև երկինքին ծայրը վաճառուած ալ ըլլաս , քու Տէր Աստուծոյդ քեզ անկէ պիտի ժողվէ , ու անկէ պիտի առնէ քեզ . 5 - Եւ քու Տէր Աստուծոյդ քու հայրերուդ ժառանգած երկիրը պիտի դարձնէ քեզ , ու զանհկա պիտի ժառանգես , և քեզի աղէկութիւն ընելով քու հայրերէդ աւելի պիտի շատցնէ քեզ : 6 - Եւ քու Տէր Աստուծոյդ քու սիրտդ և քու որդիներուդ սիրտը պիտի թլիփատէ , որպէս զի քու Տէր Աստուծոյդ բոլոր սրտովդ ու բոլոր հոգովդ սիրես որպէս զի ապրիս : 7 - Եւ քու Տէր Աստուծոյդ այս բոլոր անէծքները քու թշնամիներուդ վրայ , քեզ ատողներուն ու հալածողներուն վրայ , պիտի դարձնէ : 8 - Եւ դուն պիտի դառնաս , ու Տէրսը խօսքին հնազանդիս , ու կատարես անոր բոլոր պատուիրանքները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ : 9 - Եւ քու Տէր Աստուծոյդ քու ձեռքերուդ բոլոր գործերը , որովայնիդ պտուղը , անասուններուդ պտուղը ու երկրիդ պտուղը շատցնելով քեզի յաջողութիւն պիտի տայ . քանզի Տէրը աղէկութիւն ընելով նորէն պիտի ուրախանայ քու վրայ , ինչպէս քու հայրերուդ վրայ ուրախացաւ , 10 - Երբ դուն քու Տէր Աստուծոյդ խօսքին հնա-

զանդիս , ու այս օրինաց գիրքին մէջ գրուած անոր պատուիրանքները ու կանոնները պահես , և բոլոր սրտովդ ու բոլոր հոգովդ քու Տէր Աստուծոյդ դառնաս :

11 - Քանզի այս պատուիրանքը զոր ես այսօր քեզի կը պատուիրեմ , քեզի անհամոզանքի չէ , ու քեզմէ հեռու ալ չէ : 12 - Անհկա երկինքը չէ , որ ըսես թէ Մեզի համար ո՞վ պիտի ելլէ երկինքը , և զանհկա մեզի պիտի բերէ որպէս զի լսենք ու ընենք . 13 - Եւ անհկա ծովուն անդիի կողմն ալ չէ , որ ըսես թէ Մեզի համար ծովուն անդիի կողմը ո՞վ պիտի անցնի , ու զանհկա մեզի պիտի բերէ որպէս զի լսենք ու ընենք . 14 - Քանզի այս խօսքը քեզի շատ մօտ է , քու բերնիդ ու սրտիդ մէջ է , որպէս զի դուն զանհկա կատարես :

15 - Նայէ , ես այսօր կեանքը ու բարին , մահը ու շարը քու առջեւդ դրի .

16 - Արովհետեւ ես այսօր քեզի կը պատուիրեմ որ քու Տէր Աստուծոյդ սիրես , անոր ճամբաներուն մէջ քայլես , ու անոր պատուիրանքները , կանոնները ու դատաստանները պահես , որպէս զի ապրիս ու շատնաս , և քու Տէր Աստուծոյդ քեզ օրհնէ այն երկրին մէջ , ուր կ'երթաս ժառանգելու համար :

17 - Բայց եթէ քու սիրտդ դառնայ , ու հնազանդութիւն չընես , հապա մուրհակով ուրիշ աստուածներու երկրպագութիւն ընես ու զանոնք պաշտես ,

18 - Ձեզի այսօր կը ծանուցանեմ որ անշուշտ պիտի կորսուիք , - երկար կեանք պիտի չունենաք այն երկրին վրայ , ուր մտնելու և զանհկա ժառանգելու համար Յորդանանէ կ'անցնիք :

19 - Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բռնեմ՝ ձեզի , որ կեանքը ու մահը , օրհնութիւնը ու անէծքը ձեր առջև դրի . ուրեմն կեանքը ընարէ որպէս զի ապրիս դուն և քու սերունդդ . 20 - Քու Տէր Աստուծոյդ սիրելով՝ անոր խօսքին հնազանդութիւն ընես , ու անոր յարիս , (վասն զի քու կեանքդ ու օրերուդ երկայնութիւնը ան է ,) որպէս զի դուն բնակիս այն երկրին վրայ զոր Տէրը քու հայրերուդ , Աբրահամի , Իսահակի ու Յակոբի , երգում՝ ըրաւ անոնց տալու :

ԳԼ. ԼԱ.

Ե Մովսէս գնաց բոլոր Իսրայէլի զրուցեց այս խօսքերը : 2 - Ու անոնց ըսաւ , Ես այսօր հարիւր քսան տարեկան եմ . այլ ելլելու ու մտնելու կարողութիւն չունիմ . և Տէրը ինձի ըսաւ , Դուն այս Յորդանանէն պիտի չանցնիս : 3 - Քու Տէր Աստուածդ ինքքու առջեւդ պիտի անցնի , ու այս ազգերը քու առջևէդ ինք պիտի կորսնցնէ , և դուն անոնց ժառանգութեանը պիտի տիրես . - Տէրոջը ըսածին պէս Յեսուս պիտի անցնի քու առջեւդ : 4 - Եւ Տէրը անոնց այնպէս պիտի ընէ , ինչպէս Ամօրհասցւոց Սեհոն ու Ովգ թագաւորներուն և անոնց երկրին ըրաւ , զանոնք բնաջինջ ընելով . 5 - Եւ Տէրը զանոնք ձեր ձեռքը պիտի տայ , ու իմ ձեզի բոլոր պատուիրածիս պէս պիտի ընէք անոնց : 6 - Ու ժողովքք ու քաջ եղէք , մի վախնաք ու անոնց երեսէն մի զարհուրիք . քանզի քու Տէր Աստուածդ ինք քեզի հետ կ'երթայ . անհկաքեզ չթողուր ու քեզ երեսէ չձգեր :

7 - Եւ Մովսէս Յեսուսն կանչեց , ու բոլոր Իսրայէլի առջև անոր ըսաւ , Ու ժողովիր ու քաջ եղիր . քանզի այս ժողովուրդը դուն պիտի տանիս այն երկիրը զոր Տէրը անոնց հայրերուն երգում ըրաւ անոնց ապու . ու զանհկա դուն պիտի ժառանգեցնես անոնց : 8 - Եւ քու առջեւէդ գացողը նայն ինքն Տէրն է . անհկաքեզի հետ պիտի ըլլայ . անհկաքեզ պիտի չթողու ու քեզ երեսէ պիտի չձգէ . մի վախնար ու մի զարհուրիր :

9 - Արդ Մովսէս այս օրէնքը գրեց , և զանհկա Տէրոջը ուխտին տապանակը վերցնող Ղևտացի քահանաներուն , ու Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ . 10 - Եւ Մովսէս անոնց պատուիրելով ըսաւ , Ամէն եօթներորդ տարին , թողութեան տարիին առեներ , տանգաւարահարացտոնին , 11 - Երբ բոլոր Իսրայէլ կու գայ քու Տէր Աստուծոյդ՝ առջև երեւնալու անոր ընտրած տեղը , այն օրէնք բոլոր Իսրայէլի առջև այս օրէնքը պիտի *կարգաք , որպէս զի լսեն : 12 - Ժողովեցէք ժողովուրդը . սյրերը , կիները , տղաքները ու քաղաքներդ եղող օտարականգ , որպէս զի լսեն , և սորվելով

ձեր Տէր Աստուծմէն վախնան , ու այս օրէնքին բոլոր խօսքերը պահեն ու կատարեն . 13 - Եւ անոնց չգիտցող տղաքները լսելով՝ ձեր Տէր Աստուծմէն վախնալ սորվին , բոլոր այն օրերուն մէջ որչափ որ պիտի տարիք այն երկրին վրայ զոր ժառանգելու համար Յորդանանէ կ'անցնիք :

14 - Եւ Տէրը Մովսէսի ըսաւ , Ահա մեռնելու օրերդ մօտեցան . Յեսուսն կանչէ , ու ժողովքի խորանին մէջ ներկայացէք , որպէս զի անոր պատուէր տամ : Ուստի Մովսէս ու Յեսուս գացին ժողովքի խորանին մէջ ներկայացան :

15 - Եւ Տէրը ամպի սիւնով խորանին մէջ երեւցաւ , ու ամպի սիւնը խորանին դրանը վրայ կայնեցաւ : 16 - Եւ Տէրը Մովսէսի ըսաւ , Ահա դուն քու հայրերուդ հետ պիտի ննջես , ու այս ժողովուրդը պիտի ելլէ , ու իր գացած երկրին օտար աստուածներուն ետեւէն երթալով՝ անոր մէջ շնութիւն պիտի ընէ , և զիս պիտի թողու , ու իրեն հետ ըրած ուխտս պիտի խափանէ :

17 - Եւ այն օրը իմ բարկութիւնս անոնց վրայ բորբոքելով՝ զանոնք պիտի մերժեմ , ու երես անոնցմէ պիտի ծածկեմ , ու բնաջինջ պիտի ըլլան . և շատ չարիքներու ու նեղութիւններու հանդիպելով՝ այն օրը պիտի ըսեն , Մեր Աստուածը մեր մէջ չըլլալուն համար չէ՞ որ մենք այս չարիքները կը կրենք :

18 - Եւ այն օրը ես իմ երես բոլորովին պիտի ծածկեմ՝ անոնց ըրած բոլոր չարութեանը համար , որովհետև ուրիշ աստուածներու դարձան : 19 - Ուստի հիմա այս երգը գրեցէք , ու Իսրայէլի որդիներուն սորվեցուցէք , զանհկա անոնց բերանը դնելով , որպէս զի այս երգը Իսրայէլի որդիներուն մէջ ինձի վկայութեան համար ըլլայ :

20 - Քանզի զանոնք պիտի տանիմ՝ այն կաթ ու մեզր բղխող երկիրը , որու համար ես անոնց հայրերուն երգում ըրի . և անոնք պիտի ուտեն ու կշտանան և զիրնան . ու երբ ուրիշ աստուածներու դառնալով և անոնց ծառայութիւն ընելով՝ զիս պիտի արհամարհեն , ու իմ ուխտս պիտի խափանեն :

21 - Իսկ երբ անոնք շատ չարիքներու ու նեղութիւններու հանդիպին , այս երգը անոնց առջև վկայութիւն պիտի տայ . որովհետև անոնց զաւակներուն բերնէն պիտի չմոռցուի . վասն զի գիտեմ

*Եբբ. կարգաս †Եբբ. ժողովէ

անոնց խորհուրդը՝ զոր այսօր կ'ընեն , քանի որ դեռ իմ երգումով խոստացած երկիրս տարած չեմ զանոնք : 22 - Աստի Մովսէս նոյն օրը այս երգը գրեց , ու Իսրայէլի որդիներուն սորվեցուց զանիկա :

23 - Եւ Տէրը Նաւէի որդւոյն Յետուի պատուիրելով ըսաւ , Զօրացիր ու քաջ եղիր . քանզի Իսրայէլի որդիները դուն պիտի սանիս այն երկիրը , որու համար անոնց երգում էր . ու ես քեզի հետ պիտի ըլլամ :

24 - Աւ երբ Մովսէս այս օրէնքին բոլոր խօսքերը գիրքի մը մէջ գրեց լմնցուց , 25 - Տէրօջը ուխտին տապանակը վերցնող Ղեւտացիներուն պատուիրեց Մովսէս ու ըսաւ , 26 - Այս օրէնքին գիրքը առէք , ու զանիկա ձեր Տէր Աստուծոյն ուխտի տապանակին քով դրէք , որպէս զի հոն քեզի դէմ վկայութեան համար ըլլայ . 27 - Քանզի ես քու տապանութիւնդ ու քու պարանոցիդ խստութիւնը գիտեմ . ահա այսօր , որ տակաւին ես ձեզի հետ ողջ եմ , դուք Տէրօջը դէմ ապստամբութիւն կ'ընէք . ալ ս'ըջափ աւելի իմ մեռնելէս ետքը : 28 - Զեր ցեղերուն բոլոր ծերերը ու ձեր սասիկանները իմ առջեւ ժողովեցէք , որպէս զի անոնց այս խօսքերը զրուցեմ , որ լսեն . և երկինքը ու երկիրը վկայ բռնեմ անոնց . 29 - Քանզի գիտեմ որ իմ մեռնելէս ետքը դուք անշուշտ *անօրէնութիւն պիտի ընէք , ու իմ ձեզի պատուիրած ճամբայէս պիտի խոտորիք . ու ետքի օրերը չարիքներու պիտի հանդիպիք . որովհետեւ Տէրօջը առջև չարութիւն պիտի ընէք , ու ձեր ձեռքերուն գործերովը զանիկա պիտի սրդողցնէք : 30 - Աստի Մովսէս այս երգին խօսքերը Իսրայէլի բոլոր ժողովքին ականջներուն ամբողջ զրուցեց :

ԳԼ. ԼԲ

Ով երկինք , ականջ դրէք որ խօսիմ .

Ու երկիր իմ բերնիս խօսքերը թող մտիկ ընէ :

2 - Իմ խրատս անձրեւի պէս պիտի կաթի .

Իմ խօսքս ցօղի պէս պիտի իջնէ .

*Եբբ. պիտի տապանիք

Անձրեւի պէս կանանչեղէնի վրայ , Ու առատ անձրեւներու պէս խոտի վրայ .

3 - Քանզի Տէրօջը անուներ պիտի կանչեմ .

Մեր Աստուծոյն պատիւ տուէք :

4 - *Աստուծոյ գործը կատարեալ է .

Քանզի անոր ամէն ճամբաները իրաւունք են .

Աստուած հաւատարիմ է , ու անիրաւութիւն չունի .

Անիկա արդար և ուղիղ է :

5 - Ասոնք ապականեցան , իրենց արատը անոր որդիներուն չէ .

Ասիկա խոտորած ու ծռած ազգ մըն է :

6 - Տէրօջը ըրած հասուցումնիդ ատիկա՞ է ,

Ով յիմար ու անմիտ ժողովուրդ ,

Անիկա քու Հայրդ չէ՞ , որ քեզ ստացաւ ,

Քեզ ստեղծեց ու քեզ հաստատեց :

7 - Հին օրերը միաքի բեր ,

Անցած դարերուն տարիները մտածէ .

Քու հօրդ հարցուր , ու թող քեզ պատմէ .

Քու ծերերուդ հարցուր , ու թող քեզի ըսեն .

8 - Երբ Բարձրեալը ազգերուն ժառանգութիւն բաժնեց ,

Ու Ադամի որդիները տարածեց ,

Ազգերուն սահմանները

Իսրայէլի որդիներուն թիւովը դրաւ .

9 - Քանզի Տէրօջը բաժինը իր ժողովուրդն է ,

Ու իր ժառանգութեան վիճակը Յակոբ է :

10 - Զանիկա ամայի երկրի մէջ ,

Անկոխ * - ահագին անապատի մէջ †գտաւ .

Զանիկա ‡պաշտպանեց , խրատեց ,

Ու իր աչքին բերին պէս պահեց :

11 - Ինչպէս արծիւը իր բոյնը կը գրգռէ ,

Կը շարժի իր ձագերուն վրայ ,

Իր թեւերը կը տարածէ , զանոնք վրան կ'առնէ

Ու թեւերովը կը վերցնէ ,

12 - Այնպէ՞ս ու Տէրը միայն զանիկա պարտցուց ,

*Եբբ. Վէմին . բ Թագ . իբ . 3 : իգ . 3 : Սող . ժր . 2 , 31 , 46 : Ամբ . ա . 12 :

†Կա՛մ , հոգաց

‡Կա՛մ , պարտցուց

Ու անոր հետ օտար սատուած չկար :
 13 - Չանհկա երկրի բարձր տեղերուն վրայ *Նանեց,
 Որպէս զի արտերուն պատուղը ուտէ .
 Ու անոր՝ վէմէն մեղր ;
 Ու ապառաժ վէմէն իւղ ծծել տուաւ .
 14 - Անոր կովերու իւղ ու ոչխարներու կաթ Երջոց,
 Գառներու ու Բասանի խոյերու և նախազներու ճարպով ,
 Ու ցորենի †ընտիր ալիւրով .
 Եւ խաղողին արիւնը՝ գինի խմեցիր :
 15 - Ու †Խորայէլ գիրնալով աքացեց .
 (Գիրցար, հասարցար, իւղ կապեցիր .)
 Աւ իր Արարիչ Աստուածը թողուց,
 Եւ իր փրկութեան Վէմը արհամարհեց :
 16 - Օտար անոնցներով անոր նախանձը գրգռեցին,
 Ու գարշելի բաներով զանհկա սրդողցուցին :
 17 - Դեւերուն զոհ մատուցին, և ոչ Աստուծոյ,
 Իրենց չգիտցած սատուածներուն,
 Նոր աստուծոց եղողներուն,
 Արոնցմէ ձեր հայրերը չվախցան :
 18 - Դուն քեզ ծնանող Վէմը մոռցար ,
 Ու քեզ ստեղծող Աստուածը միտքէդ հանեցիր :
 19 - Եւ Տէրը տեսնելով զգրուեցաւ Որովհետեւ իր տղաքները ու աղջիկները չէին սրդողցուցին :
 20 - Ու բաւ , Անոնցմէ երեսու ծածկեմ ,
 Ու տեսնեմ թէ անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ .
 Վասն զի անոնք ծուռ ազգ մըն են,
 Անհաւատարիմ որդիներ են :
 21 - Անոնք չատուածներով իմ նախանձս գրգռեցին,
 Ու իրենց սնտոի բաներովը զիս սրդողցուցին .
 Ես այ անպիտան ժողովրդով մը անոնց նախանձը պիտի գրգռեմ ,
 Ու անմիտ ազգով մը զանոնք պիտի սրդողցնեմ :
 22 - Քանզի իմ բարկութենէս կրակ վառեցաւ ,

Եւ դժոխքին մինչև ներքին տեղերը պիտի այրէ .
 Երկիրը և անոր արմտիքը պիտի ուտէ,
 Ու լեռներուն հիմերը պիտի բռնկցնէ :
 23 - Անոնց վրայ շարիքներ պիտի դրգեմ ,
 Իմ նետերս անոնց վրայ նետելով պիտի հատցնեմ :
 24 - Անօթութեամբ պիտի մաշին,
 Ու *հրատապնապ տենդով՝ և դառն ժանտախտով պիտի հատնին,
 Ու անոնց վրայ գազաններուն ահուաները
 Ու գետնի վրայ սողացողներուն թոյնը պիտի զրկեմ :
 25 - Դուրսէն սուրը ու փներսէն վախը Երիտասարդները ու կոյս աղջիկները ,
 Կաթնկեր տղաքները
 Ու ալեւոր ծերերը պիտի ջարդեն :
 26 - Ըսի որ զանոնք երբեք ամէն կողմը ցրուեմ ,
 Անոնց յիշատակը մարդոց մէջէն վերցընեմ ,
 27 - Միայն թէ թշնամիին բարկութենէն վախցայ,
 Չըլլայ որ անոնց հակառակորդները ուրանան .
 Չըլլայ որ բռն թէ Այս բոլոր բանը ընողը
 Մեր բարձր ձեռքն է, և ոչ թէ Տէրը :
 28 - Քանզի անոնք խորհրդակորոյս ազգ մըն են,
 Ու անոնց մէջ իմաստութիւն չկայ :
 29 - Երանի՛ թէ իմաստուն ըլլային ,
 ասոյս բանը հասկնային ,
 Եւ իրենց վախճանը մտածէին :
 30 - Մարդ մը հազարը ի՞նչպէս կը հաւաքէր ,
 Ու երկու մարդ տասը հազարը ի՞նչպէս կրնար փախցնել ,
 Եթէ անոնց Վէմը զանոնք չծախէր ,
 Ու Տէրը զանոնք չմտանէր :
 31 - Քանզի անոնց վէմը մեր Վէմին պէս չէ ,
 Ու մեր թշնամիները այս քանին դատաւոր ըլլան .
 32 - Վասն զի անոնց որթը Սողոմի որթէն է ,
 Ու Գամրի արտէն է .
 Անոնց խաղողները թունաւոր խաղողներ են ,

*Եբբ. հեծցուց
 †Եբբ. երիկամունքներուն ճարպով
 ‡Եբբ. Յեսուրուն. Գլ. 19. 3, 26: Ես. 10. 2 :

*Կաթ, կոյծակով
 †Եբբ. սենեակներէն

- Ու անոնց ողկոյզները դառն են.
- 33 - Անոնց գինին վիշապներուն *ժանտուլթիւնը
- Ու իժերուն մահառիթ թոյնն է:
- 34 - Ասիկա իմ քովս պահուած,
- Ու իմ շտեմարաններուս մէջ կնքուած չէ՞ արդեօք:
- 35 - Իմն է վրէժխնդրութիւնը ու հատուցումը.
- Անոնց սաքը «...» ժամանակին պիտի գլորի.
- Վասն զի անոնց կորստեան օրը մօտ է,
- Ու անոնց գլխուն գալիքները կ'արտորան:
- 36 - Քանզի Տէրը իր ժողովուրդը պիտի դատէ,
- Ու իր ծառաներուն վրայ պիտի գլխայ:
- Որովհետեւ պիտի տեսնէ անոնց տկարութիւնը,
- Երբ գոցուած ու ձգուած չկայ.
- 37 - Եւ պիտի բռնէ, Մըր են անոնց սատուածները,
- Այն վէճը՝ որուն վրայ իրենց յոյսը դրեր էին,
- 38 - Անոնց զօհերուն ճարպը ուսողները,
- Ու թափելու նուէրներուն գինին խմողները.
- Թող ելլեն ու ձեզի օգնեն,
- Եւ ձեզի պաշտպան ըլլան:
- 39 - Հիմա նայեցէք, որ լիայն ԵՍ ԵՄ՝,
- Ու ինձմէ ուրիշ Աստուած չկայ.
- Ես կը մեռցնեմ ու ես կ'սպրեցնեմ.
- Ես կը զարնեմ ու ես կը բժշկեմ,
- Ու իմ ձեռքէս ազատող մը չկայ:
- 40 - Քանզի ձեռքս երկինք վերցնելով կ'ըսեմ,
- Ես յաւիտեան կենդանի եմ:
- 41 - Եթէ փայլակի պէս սուրս սրեմ,
- Ու ձեռքս դատաստանի երկնցնեմ,
- Իմ թշնամիներուս վրէժխնդրութիւն պիտի ընեմ,
- Եւ զիս ատողներուն հատուցում ընեմ:
- 42 - Սպաննուածներուն ու գերիներուն արիւնէն,
- Թշնամեաց իշխաններուն գլխէն
- Իմ նետերս արիւնով պիտի արբեցրնեմ,
- Ու իմ սուրս միս պիտի ուտէ:
- 43 - Ով ազգեր, անոր ժողովուրդին ուրախակից եղէք,

Քանզի իբ ծառաներուն արեան վրէժը պիտի խնդրէ.

Իր թշնամիներէն վրէժ պիտի առնէ, Եւ իր երկրին «- ժողովուրդին քառութիւն պիտի ընէ:

44 - Ուստի Մովսէս Նաւեան Յեսուրի հետ եկաւ, ու այս երգին բոլոր խօսքերը ժողովուրդին տկանջներուն գրուցեց: 45 - Ու երբ Մովսէս այս ամէն խօսքերը բոլոր Իսրայէլի գրուցեց լմնցուց, 46 - Անոնց բառ, Ձեր սրտին մէջ դրէք այն ամէն խօսքերը զորոնք այսօր ձեզի վկայութիւն բերի, որպէս զի զանոնք ձեր տղոց պատուիրէք, որ այս օրէնքին ամէն խօսքերը պահեն ու կատարեն: 47 - Քանզի տաիկա ձեզի պարսպ բան մը չէ, որովհետեւ ձեր կեանքն է. ու այս բանով երկայնակեաց պիտի ըլլաք այն երկրին վրայ, որու համար Յորդանանէ կ'անցնիք զանիկա ժառանգելու:

48 - Եւ Տէրը նոյն օրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 49 - Այդ Աբարիմ լեռը ելիր, Մովաբի երկրին մէջ եզող Երիքովի դիմացի Նաբաւ լեռը, ու տես Քանանու երկիրը զոր Իսրայէլի որդիներուն կալուածք պիտի տամ: 50 - Եւ դուն այն քու ելած լեռանդ վրայ մեռնիս, ու քու ժողովուրդիդ խառնուիս, ինչպէս քու եղբայրդ Ահարոն Հովր լեռան վրայ մեռաւ, ու իր ժողովուրդին խառնուեցաւ. 51 - Որովհետեւ Իսրայէլի որդիներուն մէջ, Սին անապատը, Կադէսի հակառակութեան ջուրերուն վրայ ինձի անհնազանդ եղաք. քանզի Իսրայէլի որդիներուն մէջ զիս *չփառաւորեցիք: 52 - Ուստի այն երկիրը լիցուէն պիտի տեսնես, բայց դուն հոն պիտի չմտնես, այն երկիրը զոր ես Իսրայէլի որդիներուն կու տամ:

ԳԼ. ԼԳ

Եւ այս է այն օրհնութիւնը, որով Աստուծոյ մարդը Մովսէս իր մեռնելէն առաջ Իսրայէլի որդիները օրհնեց.

2 - Ու բառ,

Տէրը Սինայէ եկաւ,

Ու Սէիրէ անոնց երեւցաւ,

Եւ Փառան լեռնէն փայլեցաւ,

*Ա. յ. Ի. Կ. Ի. Թոյնը
†Եբբ. ես՝ ես եմ

*Եբբ. չարեցիք
†Եբբ. դիմացէն

Ու բիւրաւոր սուրբերով եկաւ .
 Անոր աջ ձեռքէն օրէնքին կրակը ելաւ
 անոնց :

3 - Այո , անիկա ժողովուրդները կը սիրէ .
 Բոլոր սուրբերը քու ձեռքդ են .
 Ու անոնք քու խօսքերդ ընդունելու համար
 Քու ստքերուդ քով կը նստին :

4 - Մովսէս մեզի առաւ օրէնքը ,
 Յակոբի ժողովքին ժառանգութիւնը :

5 - Ու երբ ժողովուրդին գլխաւորները Իսրայէլի ցեղերուն հետ մէկտեղ ժողովուրդեցան ,
 Ինք *Իսրայէլի մէջ իշխան՝ եղաւ :
 6 - Ռուբէն թող ապրի ու չմեռնի ,
 Եւ անոր ժողովուրդը շատուոր ըլլան :
 7 - Եւ Յուդայի համար այս բանը ըսաւ ,
 Ով Տէր , Յուդայի ձայնը լսէ ,
 Ու զանիկա իր ժողովուրդին տար .
 Անոր ձեռքերը իրեն բաւական ըլլան ,
 Եւ անոր թշնամիներուն դէմ՝ օգնական եղիր :

8 - Ու Ղեւիի համար ըսաւ ,
 Քու Թուամիմդ և Ուրիմդ քու սուրբ մարդուդ ըլլայ ,
 Զոր Մասայի մէջ փորձեցիր ,
 Ու Մերիպայի ջուրին վրայ անոր հետ փիճեցար :

9 - Ան որ իր հօրը ու մօրը համար Չանիկա չտեսայ՝ ըսաւ ,
 Եւ իր եղբայրները չճանչցաւ ,
 Ու իր որդիները չգիտցաւ .
 Քանզի անոնք քու խօսքիդ զգուշութիւն ըրին ,
 Ու քու ուխտդ պահեցին :

10 - Քու դատաստաններդ Յակոբի ,
 Ու քու օրէնքդ Իսրայէլի անոնք պիտի սորվեցնեն .
 Քու առջեւդ խունկ պիտի մատուցանեն ,
 Ու քու սեղանիդ վրայ ողջակէզ :

11 - Ով Տէր , անոր զօրութիւնը օրհնէ ,
 Ու անոր ձեռքին գործը ընդունէ .
 Անոր վրայ ելլողներուն ու անոր թշնամիներուն մէջքը կտարէ ,
 Որպէս զի մէյմին այլ չեղլեն :

12 - Բեռիամիմի համար ըսաւ ,
 Տէրօջը սիրելին անոր քով ապահովութեամբ բնակի .

Աստուծոյ միշտ զանիկա պաշապանէ ,
 Ու անոր *ուսերուն մէջ բնակի :

13 - Ու Յովսէփի համար ըսաւ ,
 Անոր երկիրը Տէրօջմէն օրհնեալ ըլլայ
 Երկինքի ընտիր պարգեւներովը , ցօղովը ,
 Ու վարը պառկող անդունդներովը ,
 14 - Եւ արեգակէն յառաջ եկած ընտիր բերքերովը ,
 Ու Դամիսներուն ընտիր արդիւնքներովը ,
 15 - Եւ հին լեռներուն քընտիր պտուղներովը ,
 Ու մշանջեաւոր բլուրներուն ընտիր պարգեւներովը ,
 16 - Եւ երկրի ու անոր առատութեանը ընտիր պարգեւներովը ,
 Ու մորենիին մէջ բնակողին բարեհաճութիւնովը .

Աստուծոյ Յովսէփի գլխուն վրայ ,
 Իր եղբայրներուն մէջ երեւելի եղողին գազաթին վրայ , թող գան :

17 - Անիկա իր ցուլին առջինեկին պէտքեղեցիութիւն ունի ,
 Ու իր եղջիւրները մեղջերուի եղջիւրներուն կը նմանին .
 Անոնցմով պիտի զարնէ ժողովուրդները
 Մինչև երկրի ծայրերը .
 Աստուծոյ Եփրեմի բիւրաւորները
 Ու Մանասէի հազարաւորները :

18 - Եւ Զաբուղոնի համար ըսաւ ,
 Ուրախացիր , ով Զաբուղոն , քու ելած առեւտր ,
 Ու դուն , ով Իսաքար , քու վրաններուդ մէջ :
 19 - Փողովուրդները լեռը հրաւիրելով՝
 Հոն արդարութեան զոհեր պիտի մատուցանեն .
 Քանզի անոնք ծովերուն առատութիւնը
 Ու աւազին ծածուկ գանձերը պիտի ծծեն :

20 - Ու Գադի համար ըսաւ ,
 Գադը ընդարձակողը օրհնեալ ըլլայ .
 Մասակ առիւծի պէս կը նստի ,
 Ու թեւեր և գլուխներ կը գիշատէ .
 21 - Եւ անիկա Երեմի առաջին մասը իրեն յարձաք տեսաւ .

*Եբր. Յետուրունի մէջ թագաւոր. Գլ. 1Բ. 45 :

*Կամ, ասհմաններուն
 †Եբր. յուսիններուն
 ‡Եբր. գլխովը

Քանդի հոն օրէնագրին աստ ըստինին
 մէջ պահուեցաւ,
 Եւ ժողովուրդին գլխաւորներովը գա-
 լով
 Տէրոջը արդարութիւնը ու անոր դա-
 տաստանները
 Իսրայէլի հետ ի գործ դրաւ:
 22 - Եւ Քանի համար ըսաւ,
 Քան առիւծի ձագ է,
 Անիկա Բասանէ պիտի ցաթկէ:
 23 - Աւ Նեփթաղիմի համար ըսաւ,
 Նեփթաղիմ՝ Աստուծոյ շնորհքովը կը շ-
 ասցամ,
 Եւ Տէրոջը օրհնութիւնովը լցուած,
 Արեւմուտքը ու հարաւը պիտի ժա-
 ւանգէ:
 24 - Աւ Ատերի համար ըսաւ,
 Ատեր որդիներէ օրհնուի.
 Իր եղբայրներուն հաճոյ ըլլայ,
 Աւ ոտքը իւղի մէջ թաթխէ:
 25 - Քու *կօշիկներդ երկաթէ ու պղնձէ
 ըլլան,
 Եւ քու †ոյժդ քու օրերուդ չափ ըլլայ:
 26 - †Իսրայէլի Աստուծոյն պէս չկայ,
 Անիկա քեզի օգնութիւն ընելու հա-
 մար
 Իր մեծ վայելչութիւնովը երկինքներու
 Եւ ամպերու վրայ կը նստի:
 27 - Յաւիտենական Աստուածը †եղի
 սպաւէն է,
 Աւ անոր յաւիտենական բազուկները
 ††եղի պաշտպան են՝.
 Քանդի թշնամիները քու առջեւէդ
 պիտի վռնատէ,
 Աւ Զաննի կոտրէ՝ պիտի ըսէ:
 28 - Եւ Իսրայէլ սպասովութեամբ
 առանձին պիտի բնակի.
 Յակորի աղբիւրը ցորենի ու գինիի
 երկրին մէջ պիտի ըլլայ,
 Աւ անոր երկինքէն ցօղ պիտի կաթի:
 29 - Երանի՛ քեզ, սվ Իսրայէլ՝ ո՞ր
 ժողովուրդը քեզի պէս
 Տէրոջը ձեռքով փրկուած է.
 Վասն զի քու օգնութեանդ ստպարը
 Աւ յաղթութեանդ սուրը անիկա է.
 Քու թշնամիներդ քեզի պիտի Տխոնար-
 չին,

Աւ անոնց բարձր տեղերը պիտի կո-
 խես:

ԳԼ. ԼԴ

Եւ Մովսէս Մովարի դաշտերէն
 Նաբաւ լեռանը վրայ Երիքովի դիմացի
 Փառայի գագաթը ելաւ. և Տէրը ա-
 նոր ցուցուց բոլոր Քաղաքու երկիրը
 մինչև Քան, 2 - Նաև բոլոր Նեփթա-
 ղիմը, ու Եփրեմի և Մանասէի երկիրը,
 ու Յուդայի բոլոր երկիրը մինչև ա-
 րեւմտեան ծովը, 3 - Եւ հարաւային
 կողմը ու Երիքովի հովիտին դաշտը,
 4 - Արմաւենեաց քաղաքը մինչև Աե-
 գովը: 4 - Եւ Տէրը անոր ըսաւ, Այս է
 այն երկիրը՝ որու համար Արրահամի,
 Իսահակի ու Յակորի երգումը ըրի՛
 ըսելով, Քու սերունդիդ պիտի տամ
 զանիկա. աս քու աչքերուդ ցու-
 ցուցի, բայց դուն հոն պիտի չանցնիս:
 5 - Աւտի Տէրոջը ծառան Մովսէս
 հոն Մովարի երկրին մէջ Տէրոջը ըսա-
 ծին պէս մեռաւ. 6 - Եւ զանիկա Բեթ-
 փեգովի դիմաց, Մովարի երկիրը ձորի
 մը մէջ թաղեց. ու մինչև այսօր ա-
 նոր գերեզմանը մարդ մը չգիտցաւ:
 7 - Եւ Մովսէս իր մեռած առեւը հարիւր
 քսան տարեկան էր. անոր աչքերը
 չակարացան, ու անոր ոյժը չգնաց:
 8 - Եւ Իսրայէլի որդիները Մովարի
 դաշտերուն մէջ Մովսէսի համար երե-
 սուն օր լացին. ու Մովսէսի համար
 սուգի լացին օրերը լմնցան:
 9 - Եւ Նաւէի որդին Յեսու իմաս-
 տութեան հոգևով լեցուեցաւ, որով-
 հետև Մովսէս իր ձեռքերը անոր վրայ
 դրեր էր. ու Իսրայէլի որդիները անոր
 հնազանդութիւն ըրին, և Տէրը ինչ
 որ Մովսէսի պատուիրեր էր, այնպէս
 ըրին:
 10 - Եւ անկէ ետև Տէրոջը երես առ
 երես ճանչցած Մովսէսին պէս՝ Իսրա-
 յէլի մէջ մարգարէ մը չեղաւ, 11 -
 Այն բոլոր նշաններով ու հրաշքնե-
 րով, զորոնք Տէրը զրկեց զանիկա Ե-
 գիպատի երկրին մէջ ընելու Փարա-
 ւոնի ու անոր ամէն ծառաներուն և
 անոր բոլոր երկրին, 12 - Աւ այն բոլոր
 զօրաւոր ձեռքով և բոլոր մեծ սա-
 կումով զոր Մովսէս ըրաւ բոլոր Իս-
 րայէլի աչքին առջև:

*Կամ, կղպակներդ
 †Կամ, հանգիստդ
 ‡Եբբ. Յեսուրունի
 և Եբբ. սակն են §Կամ, ստեն

ԳԻՐԳ ՅԵՍՈՒԱՅ



ԳԼՈՒԽ Ա

Տէրօջը ծառային Մովսէսի մեռնելէն ետքը Տէրը Մովսէսի սպասաւորին Նաւէի որդւոյն Յեսուի հետ խօսեցաւ՝ ըսելով, 2 - Իմ՝ ծառաս Մովսէս մեռաւ. հիմա ել «- անցիր այդ Յորդանանէն դուն և այս բոլոր ժողովուրդը՝ այն երկիրը զոր ես Խորայէլի որդիներուն կու տամ: 3 - Ձեր սաքին բոլոր կոխած տեղերը ձեզի պիտի տամ, ինչպէս Մովսէսի ըսի, 4 - Անապատէն ու այս Լիբանանէն մինչև մեծ գետը, «յփն» Եփրատ գետը, Քեաացուց բոլոր երկիրը մինչև մեծ ծովը արևմտեան կողմը ձեր սահմանը ըլլայ: 5 - Քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ մա՛րդ մը չկարենայ քեզի դէմ դնել. ինչպէս Մովսէսի հետ էի, քեզի հետ «լ յնդէ» պիտի ըլլամ. քեզ պիտի չթողում ու քեզ անաես պիտի չընես: 6 - Զօրացիր ու քաջասիրտ եղիր. քանզի այս ժողովուրդին դուն պիտի ժառանգեցընես այն երկիրը, որու համար ասոնց հայրերուն երգում ըրի ասոնց տալու: 7 - Միայն թէ զօրացիր ու խիտ քաջ եղիր, որպէս զի իմ՝ ծառայիս Մովսէսի բոլոր քեզի պատուիրած օրէնքը պահես ու ընես. անկէ աջ կամ ձախ կողմ չխտարիս, որպէս զի քու ամէն երթալու տեղդ՝ *յաջողութիւն գտնես: 8 - Այս օրինաց զիրքը քու բերնէդ չզատուի, հապա զիշեր ցօրեկ անօր վրայ մտածես, որպէս զի բոլոր անօր մէջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յառաջ կը տանիս, և այն ատեն յաջողութիւն կը գտնես: 9 - Դձաքեզի կը պատուիրեմ, Զօրացիր ու քաջասիրտ եղիր, մի վախնար ու մի զարհուրիր. քանզի քու ամէն երթալու տեղերդ քու Տէր Աստուածդ քեզի հետ է: 10 - Անկէ ետքը Յեսու ժողովուրդին սատկաններուն պատուիրելով

ըսաւ, 11 - Բանակին մէջէն անցէք, ու ժողովուրդին ապապրելով ըսէք, Ձեզի պաշար պատրաստեցէք. քանզի երեք օրէն ետև դուք այս Յորդանանէն պիտի անցնիք, որպէս զի երթաք ժառանգէք այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը ձեզի ժառանգութիւն կու տայ:

12 - Եւ Ռուբենեանց ու Գադեանց և Մանասէի կէս ցեղին Յեսու խօսեցաւ ու ըսաւ, 13 - Միտքերնիդ բերէք այն խօսքը, զոր Տէրօջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց՝ ըսելով, Ձեր Տէր Աստուածը ձեզ հանգստացուց, ու այս երկիրը ձեզի տուաւ: 14 - Ձեր կիները, ձեր տղաքները և ձեր անասունները թող բնակին այն երկրին մէջ զոր Մովսէս ձեզի տուաւ Յորդանանու սաղիի կողմը. բայց դուք ամէնդ որ ուժով կարիճներ էք, *պառապինեալ ձեր եղբայրներուն առջև անցնելով, անոնց օգնութիւն ընէք, 15 - Մինչև որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգրատացնէ, և անոնք ալ ժառանգեն այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը անոնց կու տայ. ու երբ ձեր ժառանգութեան երկիրը դառնաք, և ժառանգէք զանիկա զոր Տէրօջը ծառան Մովսէս ձեզի տուաւ Յորդանանու սաղիի կողմը դէպ ի արեւելք:

16 - Եւ անոնք Յեսուի պատասխան տուին ու ըսին, Քու ամէն պատուիրածներդ պիտի ընենք, և ուր որ մեզ զրկես՝ պիտի երթանք: 17 - Ինչպէս Մովսէսի հնազանդութիւն կ'ընէինք, այնպէս ալ քեզի հնազանդութիւն պիտի ընենք. միայն թէ քու Տէր Աստուածդ քեզի հետ ըլլայ, ինչպէս Մովսէսի հետ էր: 18 - Ամէն մարդ որ քու հրամանիդ դէմ դնէ, և ամէն ինչ որ անօր պատուիրես՝ քու խօսքերդ մտիկ չընէ, պիտի մեռցուի. միայն թէ զօրացիր ու քաջասիրտ եղիր:

*կամ, խելացութեամբ վարուիս.
 Բ Օր. իթ. 9:
 †Եբր. Չէ՞ որ

*կամ, գունդ գունդ

ԳԼ. Բ

Եւ Նաւէի որդին Յեսու Սատիմէ երկու մարդ զրկեց՝ ծածկաբար երկիրը լրատելու համար, ու անոնց ըսաւ, Գացէք այն երկիրը ու Երիքովը տեսէք. և անոնք գացին ու Ռախար անունով պառնիկ կնոջ մը տունը մտան, և հոն մնացին: 2 - Այն ատեն Երիքովի թագաւորին լուր տրուեցաւ՝ ըսելով, Ահա այս գիշեր երկիրը լրատելու համար Իսրայէլի որդիներէն մարդիկ եկեր են հոս: 3 - Ու Երիքովի թագաւորը Ռախարի հար գրկեց՝ ըսելով, Քեզի եկող ու տունդ մտնող մարդիկը դուրս հանէ. քանզի անոնք այս բոլոր երկիրը լրատելու եկեր են: 4 - Եւ կինը այն երկու մարդը առաւ պահէց, ու ըսաւ, Իրաւ այն մարդիկը ինծի եկան, բայց ուրկէ ըլլաւնին չգիտցայ: 5 - Ու դռներուն գոցուելու ատենը, մութուն, այն մարդիկը դուրս ելան. և այն մարդոց ուր երթալը չէմ գիտեր. շուտով անոնց ետեւէն ինկէք, որպէս զի անոնց հասնիք: 6 - Իսկ ինք տանիքը հանելով զանոնք, պահեր էր քթանի եղէգներուն մէջ՝ զորոնք տանիքին վրայ դիզուած ունէր: 7 - Ուստի մարդիկը Յորդանանու ճամբով մինչև անցքերը անոնց ետեւէն ինկան, և անոնց ետեւէն ինկողները դուրս ելլելէ ետքը դուռը գոցեցին:

8 - Ու երբ անոնք դեռ չէին քնացած, կինը տանիքին վրայ անոնց քով ելաւ, 9 - Եւ մարդոցը ըսաւ, Ես գիտեմ որ Տէրը այս երկիրը ձեզի տուաւ, ու ձեր վախը մեր վրայ ինկաւ, և ձեր պատճառաւ այս երկիրն բոլոր բնակիչները հալեցան: 10 - Քանզի մենք լսեցինք թէ ինչպէս Տէրը ձեր Եգիպտոսէ ելած ատենը կարմիր ծովուն ջուրերը ձեր առջեւէն ցամքեցուց. նաև ինչ որ դուք ըրիք Յորդանանու անդի կողմը Բաբելոն Ամորհացուց երկու թագաւորներուն, Սեհոնի ու Ովգի, զորոնք բնաջինջ ըրիք: 11 - Ուստի այս բաները լսածնու պէս սիրտերնիս հալեցաւ, ու ձեր երեսէն վախաւորուած համար մէկուն վրայ † համարձակութիւն չմնաց. քանզի ձեր Եհովա Աստուածը վերը երկինքին մէջ ու վարը երկրի վրայ Աստուած անհկա է: 12 -

Հիմա կ'աղաչեմ, Տէրոջմով երգում ըրէք ինծի, որ ես ձեզի ողորմութիւն ընելու համար, դուք ալ իմ հօրս տանը ողորմութիւն ընէք. և ինծի * ճշմարիտ նշան մը տուէք: 13 - Որ իմ հայրս, մայրս, եղբայրներս, քոյրերս, ու բոլոր անոնց վերաբերեալները ողջ պիտի թողուք, և մեր անձը մահուանէ պիտի ազատէք: 14 - Ու այն մարդիկը անոր ըսին, Եթէ այս մեր բանը չյայտանէք, ձեր ատեղը մեր անձերը մեռնին. ու երբ Տէրը այս երկիրը ձեզի տայ, քեզի ողորմութիւն ու հաւատարմութիւն պիտի ընենք: 15 - Ետքը զանոնք չուանով մը պատուհանէն վար իջեցուց. (քանզի իր տունը բերդին պարսպին վրայ էր, ու ինք պարսպին վրայ կը բնակէր.) 16 - Եւ անոնց ըսաւ, Լեռը գացէք, չըլլայ որ հալածողները ձեզի հանդիպին, ու հոն երեք օր պահուեցէք, մինչև որ հալածողները ետ դառնան, անկէ ետև ձեր ճամբան գացէք: 17 - Եւ այն մարդիկը անոր ըսին, Ահա մենք այդ մեզի ընել տուած երգումէդ այս կերպով անպարտ կ'ըլլանք: 18 - Երբ մենք այս երկիրը մտնենք, այս կարմիր դերձանէ չուանը այն պատուհանին վրայ կապես, ուրկէ մեզ իջեցուցիր. և քու հայրդ, մայրդ, եղբայրներդ ու քու հօրդ բոլոր տունը քու քովդ այս տանը մէջ ժողովես: 19 - Ու անոնց ով որ քու տանդ դռնէն դուրս ելլէ, անոր արիւնը իր գլխուն վրայ ըլլայ. մենք անպարտ ենք. բայց քու քովդ այս տանը մէջ բոլոր եզոզներուն եթէ ձեռք մը դպչի, անոնց արիւնը մեր գլխուն վրայ ըլլայ: 20 - Եւ եթէ այս մեր բանը մէջն յայտնես, այն ատեն քու մեզի ընել տուած երգումէդ անպարտ կ'ըլլանք: 21 - Ու կինը ըսաւ, Ձեր խօսքերուն պէս՝ այնպէս թող ըլլայ. և թողուց զանոնք, ու անոնք գացին. և այն կարմիր չուանը պատուհանին վրայ կապեց:

22 - Եւ անոնք անկէ լեռնակողմը գացին, ու հոն երեք օր նստան, մինչև որ հալածողները ետ դարձան. ու հալածողները զանոնք ամէն ճամբու մէջ փնտռեցին, բայց չգտան: 23 - Այն ատեն այն երկու մարդիկը ետ դառնալով լեռնէն վար իջան, և անցնելով

* Այսինքն, ապահովութեան, կամ, հաւատարմութեան

† Եբբ. պառկեցան † Եբբ. հոգի

Նաւէի որդւոյն Յեսուի գացին , ու իրենց պատահած բոլոր բաները անոր պատմեցին : 24 - Եւ Յեսուի ըսին , Իրաւցընէ Տէրը այն բոլոր երկիրը մեր ձեռքը տուաւ , ու այն երկրին բոլոր ընտանիքները մեր երեսէն հպեցան :

ԳԼ. Գ

Ու Յեսու առտուանց կանուխ ելաւ . և ինք ու բոլոր Իսրայէլի որդիները Սաւտիմէ չուեցին , ու մինչև Յորդանան եկան . և անցնելէ առաջ հսն իջեւան ըրին : 2 - Ու երեք օրէն ետքը ոստիկանները բանակին մէջէն անցան . 3 - Եւ ժողովուրդին պատուիրելով ըսին , Երբ ձեր Տէր Աստուծոյն ուխտին տապանակը տեսնէք , ու Ղեւտացի քահանաները՝ որոնք զանհկա կը տանին , դուք ալ ձեր տեղերէն ելէք , ու անոր ետեւէն գացէք : 4 - Բայց ձեր ու անոր մէջտեղ երկու հազար կանգունի չափ միջոց պիտի ըլլայ . անոր չմտենաք , որպէս զի երթալու ճամբանիդ գիտնաք . քանզի տակէ առաջ այս ճամբայէն անցած չէք : 5 - Եւ Յեսու ժողովուրդին ըսաւ , Արբեցէք ձեր անձերը . քանզի Տէրը վաղը ձեր մէջ հրաշքներ պիտի ընէ : 6 - Անկէ ետև Յեսու քահանաներուն խօսեցաւ ըսելով , Ուխտին տապանակը վերցուցէք , ու ժողովուրդին առջև անցէք : Ուստի անոնք ուխտին տապանակը վերցուցին , ու ժողովուրդին առջևէն գացին :

7 - Եւ Տէրը ըսաւ Յեսուի , Այսօր պիտի սկսիմ բոլոր Իսրայէլի աչքին առջև քեզ մեծցնել , որպէս զի գիտնան թէ ինչպէս Մովսէսի հետ էի , քեզի հետ ալ «յողէ» պիտի ըլլամ : 8 - Հիմա դուն ուխտին տապանակը վերցնող քահանաներուն պատուիրելով ըսես , Երբ Յորդանանու ջուրին եղերքը հասնիք , Յորդանանու մէջ կայնեցէք :

9 - Ու Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ , Հոս մտնեցէք , և ձեր Տէր Աստուծոյն խօսքերը մտիկ ըրէք : 10 - Ու Յեսու ըսաւ , Ասով պիտի գիտնաք , որ կենդանի Աստուածը ձեր մէջ է , ու ձեր առջևէն Քանանացիները , Քետացիները , Խեւացիները , Փերեզացիները , Քերգեսացիները , Ամօրհացիները ու Յերուսացիները բոլորովին պիտի վաճարուին : 11 - Ահա բոլոր երկրի Տէրօջը

ուխտին տապանակը ձեր առջև պիտի անցնի Յորդանանու մէջ : 12 - Եւ հիմա դուք Իսրայէլի ցեղերէն տասուերկու մարդ առէք . ամէն ցեղէն մէյմէկ մարդ : 13 - Ու երբ բոլոր երկրի Եհովա Տէրօջը տապանակը վերցնող քահանաներուն ոտքերը Յորդանանու ջուրին մէջ մտնեն , Յորդանանու ջուրը պիտի կտրի , ու վերէն իջնող ջուրը կարկառակոյտի մը պէս պիտի կայնի :

14 - Ու երբ ժողովուրդը Յորդանանէ անցնելու համար իրենց վրաններէն չուեցին , ուխտին տապանակը վերցրնող քահանաները ժողովուրդին առջևէն կ'երթային . 15 - Ու տապանակը վերցնողները մինչև Յորդանան հասնելով՝ տապանակը վերցնող քահանաներուն ոտքերը ջուրին եղերքը մխուածին պէս՝ (վասն զի հունձքի բոլոր ժամանակը Յորդանանու ջուրը առատանալով իր բոլոր եղերքները կը կտրէ ,) 16 - Այն ատեն վերէն իջնող ջուրը կայնեցաւ , ու Սարթանի քով եզրը Ադամ քաղաքէն շատ հեռու կարկառակոյտի մը պէս բարձրացաւ . ու դաշտի ծովը , սյսինքն Ազի ծովը , իջնողը լմնցաւ կտրեցաւ . և ժողովուրդը Երիքովի դիմաց անցաւ : 17 - Ու Տէրօջը ուխտին տապանակը վերցնող քահանաները Յորդանանու մէջ ցամաքի վրայ հաստատ կայնեցան . ու բոլոր Իսրայէլ ցամաքով անցաւ , մինչև որ բոլոր ժողովուրդին Յորդանանէ անցնիլը լմնցաւ :

ԳԼ. Դ

Ու երբ բոլոր ժողովուրդին Յորդանանէ անցնիլը լմնցաւ , Տէրը խօսեցաւ Յեսուի ու ըսաւ , 2 - Ժողովուրդէն տասուերկու մարդ առէք , ամէն ցեղէն մէյմէկ մարդ , 3 - Ու անոնց պատուիրելով ըսէք , Ասկէ Յորդանանու մէջէն , քահանաներուն ոտքերուն ամուր կեցած տեղէն , ձեզի տասուերկու քար վերցուցէք , և զանոնք ձեզի հետ տարէք , ու գրէք այն տեղը՝ ուր այս գիշեր իջեւան պիտի ընէք : 4 - Եւ Յեսու Իսրայէլի որդիներէն իր որոշած տասուերկու մարդիկը կանչեց , ամէն ցեղէն մէյմէկ մարդ . 5 - Ու Յեսու անոնց ըսաւ , Յորդանանու մէջ ձեր Տէր Աստուծոյն տապանակին առջև անցէք , ու Իսրայէլի որդիներուն ցեղերուն թի-

առի՛ր՝ ամէն մէկդ ձեր ուսերուն վրայ մէյմէկ քար վերցուցէք ասիւք . 6 - Որպէս զի տակա ձեր մէջ նշան ըլլայ . երբ վաղը ձեր որդիները յեղի հարցնելու ըլլան ու ըսեն թէ Այս քարերը ի՞նչ պիտի ըլլան ձեզի , 7 - Անոնց ըսէք , Քանզի Տէրոջը ուխտի տապանակին առջեւէն Յորդանանու ջուրերը կտրուեցան . երբ անիկա Յորդանանէ կ'անցնէր Յորդանանու ջուրը կտրուեցաւ . ու այս քարերը Իսրայէլի որդիներուն մէջ յիշատակի համար պիտի ըլլան յաւիտեան : 8 - Եւ Իսրայէլի որդիները Յեսուէի պատուիրածին պէս ըրին . ու Յորդանանու մէջէն տասուերկու քար առին , Իսրայէլի որդիներուն ցեղերուն թիւովը , ինչպէս Տէրը Յեսուէի հրամայեր էր , և զանոնք իրենց հետ իջեւանի տեղը տարին , ու հոն դրին : 9 - Եւ Յեսու ասիւք տասուերկու քարեր ալ կանգնեց Յորդանանու մէջ , ուխտին տապանակը վերցնող քահանաներուն ոտքերուն կեցած տեղը , ու մինչև այսօր հոն են : 10 - Եւ տապանակը վերցնող քահանաները Յորդանանու մէջ կայնեցան , մինչև որ լմրնցաւ այն բոլոր խօսքը զոր Տէրը Յեսուէի պատուիրեց՝ ժողովուրդին ըսել , ինչպէս Մովսէս Յեսուէի պատուիրեր էր . և ժողովուրդը արտորայով անցաւ : 11 - Ու երբ բոլոր ժողովուրդին անցնիր լմնցաւ , այն առեւն Տէրոջը տապանակը ու քահանաները ժողովուրդին առջև անցան : 12 - Եւ Ռուբէնի որդիները ու Գադի որդիները և Մանասէի կէս ցեղը սպառազինեալ՝ Իսրայէլի որդիներուն առջև անցան , ինչպէս Մովսէս անոնց ըսեր էր . 13 - Քառասուն հազարի չափ պատրաստուած զօրք Տէրոջը առջև՝ պատերազմի համար Երիթովի դաշար անցան : 14 - Նոյն օրը Տէրը բոլոր Իսրայէլի աչքերուն առջև Յեսուէն մեծցուց , ու անոր կեանքին բոլոր օրերուն մէջ՝ Մովսէսէ վախցածնուն պէս անկէ կը վախնային : 15 - Եւ Տէրը խօսեցաւ Յեսուէի՝ ըսելով , 16 - Վկայութեան տապանակը վերցնող քահանաներուն հրաման ըրէ որ Յորդանանէ ելլեն : 17 - Ուստի Յեսու քահանաներուն հրամայեց ու ըսաւ , Յորդանանէ ելէք : 18 - Ու երբ Տէրոջը ուխտին տապանակը վերցնող քահանաները Յորդանանու

մէջէն ելան , և քահանաներուն ոտքերուն թաթերը ցամաքի վրայ կոխեցին , Յորդանանու ջուրը իր տեղը դարձաւ , ու առաջուան պէս իր բոլոր եղերքներուն վրայ քալեց : 19 - Եւ առաջին ամսուն տասներորդօրը ժողովուրդը Յորդանանէ դուրս ելլելով , Գազգաղայի մէջ Երիթովի արեւելեան կողմը իջեւան ըրին : 20 - Եւ այն տասուերկու քարը զորոնք Յորդանանէ առեր էին , Յեսու Գազգաղայի մէջ կանգնեց . 21 - Եւ Իսրայէլի որդիներուն խօսեցաւ՝ ըսելով , Վաղը եթէ ձեր որդիները իրենց հայրերուն հարցնելու ըլլան ու ըսեն թէ Այս քարերը ի՞նչ են , 22 - Ձեր տղոց իմացընէք՝ ըսելով , Իսրայէլ այս Յորդանանէն ցամաքով անցաւ : 23 - Որովհետև ձեր Տէր Աստուածը ձեր առջեւէն Յորդանանու ջուրերը ցամքեցուց մինչև որ դուք անցաք , ինչպէս ձեր Տէր Աստուածը կարմիր ծովուն մէջ ալ ըրաւ , զոր ցամքեցուց մեր առջեւէն մինչև որ մենք անցանք . 24 - Որպէս զի երկրի ամէն ազգերը գիտնան որ Տէրոջը ձեռքը զօրաւոր է , և դուք ձեր Տէր Աստուծոմէն միշտ վախնաք :

ԳԼ. Ե

Ու երբ լսեցին Ամօրհացուց բոլոր թագաւորները , որոնք Յորդանանու աօրին արեւմտեան կողմը իւր Բաալեին , ու Քանանացուց բոլոր թագաւորները , որոնք ծովեզերքին քով իւր Բաալեին , թէ Տէրը Իսրայէլի որդիներուն առջեւէն , մինչև անոնց անցնելը , Յորդանանու ջուրերը ցամքեցուցեր է , անոնց սիրտը հալեցաւ ու Իսրայէլի որդիներուն երեսէն անոնց վրայ համարձակութիւն չմնաց : 2 - Այն առեւն Տէրը Յեսուէի ըսաւ , Քեզի * գայլախազէ դանակներ շինէ , ու դարձիր Իսրայէլի որդիները նորէն թրլփաատէ : 3 - Եւ Յեսու իրեն գայլախազէ դանակներ շինեց , ու Բլուր անթլփատութեանց ըսաւ որ Իսրայէլի որդիները թլփատեց : 4 - Եւ այս է պատճառը , որու համար Յեսու զանազան թրլփատեց . Եգիպտոսէ ելած բոլոր ժողովուրդին արուները , ամէն պատերազմող մարդիկը , Եգիպտոսէ ելլելէ ետքը

*Կա՛մ , սուր . Տես Ել . դ . 25 : 15

անապատին մէջ ճամբան մեռան: 5 - Ու բոլոր ելած ժողովուրդը թլփատուած էր. բայց Եգիպտոսէ ելլելէ ետքը անապատին մէջ ճամբան ծնած բոլոր ժողովուրդը չթլփատեցին: 6 - Քանզի Իսրայէլի որդիները քառասուն տարի անապատին մէջ պարտեցան, մինչև որ Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընող բոլոր ազգը, այսինքն Եգիպտոսէ ելլող պատերազմական մարդիկը, սպառեցան. որովհետև Տէրը անոնց երդումը րաւ որ բնաւ անոնց չցուցնէ այն երկիրը, այն կաթ ու մեղր բղտող երկիրը, զոր Տէրը անոնց հայրերուն երդումը բեր էր մեզի տալու: 7 - Ուստի անոնց տեղ անոնց զաւակները հանեց, ու զանոնք թլփատեց Յեսու. քանզի անթլփատ էին, որովհետև ճամբուն մէջ թլփատած չէին զանոնք: 8 - Ու երբ բոլոր ժողովուրդին թլփատուելը լմնցաւ, բանակին մէջ իրենց տեղը նստան մինչև որ առողջացան: 9 - Այն ատեն Տէրը Յեսուի ըսաւ, Այսոր Եգիպտոսի նախատինքը ձեր վրայէն վերցուցի. ուստի այն տեղին անունը մինչև այսօր † Գաղգաղա ըսուեցաւ: 10 - Եւ Իսրայէլի որդիները Գաղգաղայի մէջ բանակեցան. ու ամուսն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ Երիքովի դաշտերուն մէջ զատիկը ըրին: 11 - Եւ զատիկին հետեւեալ օրը այն երկրին պտուղէն բազարջ կերան, ու նոյն օրը բոհրած ցորեն ալ կերան:

12 - Եւ հետեւեալ օրը երբ այն երկրին պտուղէն կերան, մանանան դադարեցաւ. ու անկէ ետքը Իսրայէլի որդիներուն համար ա՛լ մանանայ չէր գտնուեր. և այն տարին Քանանու երկրին պտուղէն կերան:

13 - Ու երբ Յեսու Երիքովի մօտ էր, աչքերը վերցնելով տեսաւ որ ահա իր դիմաց մարդ մը կայներ էր, և անոր ձեռքը մերկ սուր մը կար. ու Յեսու անոր մօտենալով անոր ըսաւ, Մեզմէ՞ ես թէ մեր թշնամիներէն ես. 14 - Եւ անիկա ըսաւ, Ոչ, այլ ես Տէրոջը զօրավարն եմ, ու հիմա եկայ: Եւ Յեսու երեսի վրայ գետինը ինկաւ ու երկրպագութիւն րաւ, և անոր ըսաւ, Իմ տէրս իր ծառային ի՞նչ կը հրամայէ: 15 - Ու Տէրոջը զօրավարը Յե-

*Եբբ. գլորեցի
† Այսինքն, գլորում

սուի ըսաւ, Ուրբէրէդ կօշիկներդ հանէ, քանզի կայնած տեղդ սուրբ է. և Յեսու ալ այնպէս ըրաւ:

ԳԼ. 2

Ու Երիքով Իսրայէլի որդիներուն * պատճառաւ ամուսն կերպով մը փակուած էր. ելլող ու մտնող չկար: 2 - Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Նայէ, Երիքովը ու անոր թագաւորը և զօրաւոր կարիճները քու ձեռքդ տուի: 3 - Ուստի ամէն պատերազմական մարդիկը քաղաքին բոլորտիքը դաւնալով՝ մէկ անգամ քաղաքին բոլորտիքը պարտիք վեց օր այսպէս ընես: 4 - Եւ տապանակին առջև եօթը քահանայ եօթը † Յորելեան փողերը առնեն. ու եօթներորդ օրը քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պարտիք, և քահանաները փողերը հնչեցնեն: 5 - Ու երբ Յորելեան եղջիւրները երկար հնչեցնեն, և դուք փողերուն ձայնը լսէք, բոլոր ժողովուրդը մեծ աղաղակ մը հանէ. և քաղաքին պարիսպները վար պիտի իյնան, ու ժողովուրդին ամէն մէկը շիտակ յառաջ երթալ ներս պիտի մտնէ:

6 - Եւ Նաւէի որդին Յեսու քահանաները կանչեց ու անոնց ըսաւ, Ուխտին տապանակը վերցուցէք, ու Տէրոջը տապանակին առջևէն եօթը քահանայ եօթը Յորելեան փողեր առնեն: 7 - Ետքը ժողովուրդին ըսաւ, Անցէք ու քաղաքին բոլորտիքը պարտեցէք, և զինուորները Տէրոջը տապանակին առջև անցնին: 8 - Ու երբ Յեսու ժողովուրդին պատուիրեց, եօթը քահանաները, որոնք եօթը Յորելեան փողերը առնէին, Տէրոջը առջև անցնելով՝ փողերը հնչեցուցին, ու Տէրոջը ուխտին տապանակը անոնց ետեւէն կ'երթար:

9 - Եւ զինուորները փողերը հնչեցընող քահանաներուն առջևէն կ'երթային, բայց վերջապահները՝ տապանակին ետեւէն. ու քահանաները փողերը հնչեցնելով կ'երթային: 10 - Եւ Յեսու ժողովուրդին պատուիրելով՝ ըսաւ, Ինչպէ՞ս աղաղակ մի հանէք, և ձայներնիդ չլսուի, ու ձեր բերնէն խօսք մը չելլէ, մինչև այն օրը որ ես ձեզի ըսեմ թէ Աղաղակ հանեցէք. այն ատեն ա-

*Եբբ. երեսն
† Կամ, խոյի եղջիւրէ

զաղակեցէք : 11 - Ուստի Տէրոջը տապանակին քաղաքին բոլորաիքը մէկ անգամ պարտելէն ետև բանակը դարձան, ու գիշերը բանակին մէջ մնացին :

12 - Եւ Յեսու առաւուանց կանուխ ելաւ, ու քահանաները Տէրոջը տապանակը վերցուցին :

13 - Եւ եօթը Յոբելեան փողերը կրող եօթը քահանաները Տէրոջը տապանակին առջեւէն կ'երթային՝ փողերը հնչեցնելով, ու զինուորները անոնց առջեւէն կ'երթային, ու վերջապահները՝ Տէրոջը տապանակին ետեւէն. և բահանաները փողերը հնչեցնելով կ'երթային :

14 - Երկրորդ օրն ալ քաղաքին բոլորաիքը մէկ անգամ պարտելով բանակը դարձան. վեց օր այսպէս ըրին :

15 - Ու եօթներորդ օրը կանուխ ելան՝ արշալուսին ծագած ատենը, ու քաղաքին բոլորաիքը եօթը անգամ պարտեցան : 16 - Ու եօթներորդ անգամին երբ քահանաները փողերը հնչեցուցին, Յեսու ժողովուրդին ըսաւ, Ազաղակեցէք, քանզի Տէրը այս քաղաքը ձեր ձեռքը տուաւ :

17 - Եւ քաղաքը ու բոլոր անոր մէջ եղածը Տէրոջմէ նզովուած ըլլան, միայն Ռախաբ պուռնիկը մեր զրկած լրտեսները պահելուն համար ողջ մնայ, թէ՛ ինք և թէ՛ իրեն հետ տանը մէջ բոլոր եղողները :

18 - Բայց դուք ամէն կերպով զգուշանաք նզովուածէն. չըլլայ որ նզովուածէն առնելով դուք ալ նզովուած ըլլաք, ու Իսրայէլի բանակը նզովքի մէջ ձգելով՝ զանկաւ նեղութեան հանգպցնէք :

19 - Եւ բոլոր արծաթը ու ոսկին և պղնձէ ու երկաթէ ամանները Տէրոջը համար տուրք ըլլան. Տէրոջը գանձը մանեն :

20 - Ուստի ժողովուրդը ազաղակեց, որովհետև փողերը հնչուեցան. ու երբ ժողովուրդը փողերուն ձայնը լսեց, ու ժողովուրդը բարձրաձայն ազաղակեց, պարիսպները վար ինկան. և ժողովուրդին ամէն մէկը շիտակ յառաջ քաղաքը մանելով՝ քաղաքը սուին :

21 - Ու բոլոր քաղաքին մէջ եղողը, այր և կին, երիտասարդ և ծեր, արջառ, ոչխար ու էջ սուրի բերնէ առջնելով կորսնցուցին :

22 - Եւ Յեսու այն երկիրը լրտեսող երկու մարդոցն ըսաւ, Այն պուռնիկ կնոջ տունը գացէք, ու

ինչպէս անոր երգում ըրիք, կինը ու անոր ամէն ունեցածը անկէ դուրս հանեցէք :

23 - Ուստի այն լրտես երիտասարդները գացին, ու Ռախաբը և անոր հայրը ու մայրը ու եղբայրները և անոր ամէն ունեցածը դուրս հանեցին, ու անոր բոլոր ազգատոհմն ալ դուրս հանեցին, և զանոնք Իսրայէլի բանակին դուրսը կեցուցին :

24 - Ու քաղաքը և բոլոր անոր մէջ եղածը կրակով այրեցին, միայն արծաթը ու ոսկին և պղնձէ ու երկաթէ ամանները Տէրոջը տանը գանձին մէջ դրին :

25 - Այսպէս Յեսու ողջ պահեց Ռախաբ պուռնիկը ու անոր հօրը տունը և անոր ամէն ունեցածը, ու անկա իսրայէլի մէջ բնակեցաւ մինչև այսօր. քանզի անկա պահեց այն լրտեսները զորոնք Յեսու զրկեց եր Երեքովը լրտեսելու համար :

26 - Եւ այն առէն Յեսու երգում ընելով՝ ըսաւ, Տէրոջը առջև անիծեալ ըլլայ այն մարդը՝ որ ելլէ ու այս Երեքով քաղաքը շինէ. իր անդրանիկով անոր հիմերը դնէ, ու անոր դռներն ալ իր պզտիկ տղով կանգնէ :

27 - Եւ Տէրը Յեսուի հետ էր, ու անոր համբաւը բոլոր երկրին մէջ տարածուեցաւ :

ԳԼ. Է

Բայց Իսրայէլի որդիները նզովքի վրայով յանցանք գործեցին. քանզի Յուդայի ցեղէն Զարայի որդւոյն Զարգիի որդւոյն Քարմիի որդին Աբար նզովուածէն առաւ, ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի որդիներուն վրայ բորբոքեցաւ :

2 - Եւ Յեսու Երեքովէ մարդիկ զրկեց դէպ ի Գայի, որ Բեթաւանի մօտ է՝ Բեթէլի արեւելեան կողմը, և խօսեցաւ անոնց՝ ըսելով, Ելէք ու այն երկիրը լրտեսեցէք. և այն մարդիկը ելան ու Գային լրտեսեցին :

3 - Եւ Յեսուի դարձան ու անոր ըսին, Բոլոր ժողովուրդը չելլէ, քանզի երկու կամ երեք հազար մարդու չափ ելլեն ու Գային զարնեն. բոլոր ժողովուրդը հոն տանելով մի յոգնեցներ. քանզի անոնք քիչուոր են :

4 - Ուստի ժողովուրդէն երեք հազարի չափ մարդ հոն ելան, բայց Գայիէ

*Եբր. պատգամաւորները
†Կա՛մ, Զամբրիի. ա Մ՛ն. բ. 6:

մարդոց առջեւէն փախան. 5 - Եւ Գա-
 յի մարդիկը անոնցմէ երեսունըվեց
 մարդու չափ զարկին, քանզի զանոնք
 դրանը առջեւէն մինչև Աբարիմ՝ հա-
 լածեցին, ու զառիվայրին վրայ զանոնք
 զարկին. ուստի ժողովուրդին սիրաբ
 հայեցաւ ու ջուրի պէս եղաւ:

6 - Եւ Յեսու իր հանդերձները պատ-
 աելով Տէրոջը տապանակին առջև երե-
 սին վրայ գետինը ինկաւ մինչև իրի-
 կուն, թէ՛ ինք և թէ՛ Իսրայէլի ծե-
 րերը, ու իրենց գլխուն վրայ հող ցա-
 նեցին: 7 - Եւ Յեսու ըսաւ, Ահ, Տէր
 Եհովա, ինչո՞ւ համար այս ժողովուրդը
 Յորդանանու սագիի կողմը անցուցիր,
 որպէս զի մեզ Ամորհացուց ձեռքը
 մատնես ու մեզ կորսնցնես. երանի՛ թէ
 Յորդանանու անդիի կողմը գո՛հ ըլլա-
 լով մնայինք: 8 - Ահ, Տէր, Իսրայէլ
 իր թշնամիներուն առջև կռնակ դար-
 ձնելէն ետե՛ւ ալ ես ի՞նչ ըսեմ. 9 -
 Որովհետեւ Քանանացիները ու երկրին
 բոլոր բնակիչները լսելով՝ մեզ պիտի
 պաշարեն, ու մեր անունը երկրի վրա-
 յէն բոլորովին պիտի վերցնեն. այն ա-
 տեն քու մեծ անունդ ի՞նչ պիտի ընես:

10 - Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Ոտքի
 վրայ ելիր. ինչո՞ւ համար այսպէս երե-
 սիդ վրայ ինկեր ես. 11 - Իսրայէլ մեղք
 գործեց, և իմ անոնց հրամայած ուխտս
 զանց ըրին. քանզի նզովուածէն առին,
 ու գողութիւն ըրին և սուտ զրուցե-
 ցին, ու նաև իրենց կարասիներուն մէջ
 դրին. 12 - Ուստի Իսրայէլի որդիները
 պիտի չկրնան իրենց թշնամիներուն
 առջև կենալ. իրենց թշնամիներուն
 առջև կռնակ պիտի դարձնեն, քանզի
 նզովուած եղան. և ալ ձեզի հետ պի-
 տի չըլլամ, եթէ դուք նզովուածը ձեր
 մէջէն բնաջինջ չընէք: 13 - Ելիր, ժո-
 ղովուրդը սրբէ, ու ըսէ, Վազուան
 համար սրբուեցէք. քանզի Իսրայէլի
 Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Ավ Իս-
 րայէլ, ձեր մէջ նզովուած կայ. մինչև
 որ նզովուածը ձեր մէջէն չվերցնէք,
 քու թշնամիներուդ առջև պիտի չկըր-
 նաս կենալ: 14 - Ուստի աւատուանց
 ձեր ցեղերով մօտենաք, ու Տէրը ո՛ր
 ցեղը վիճակով բռնելու ըլլայ, անիկա իր
 ազգատոհմերով մօտենայ. և Տէրը
 ո՛ր ազգատոհմը բռնելու ըլլայ, անիկա
 իր տուներով մօտենայ. ու Տէրը ո՛ր
 տունը բռնելու ըլլայ, անիկա իր մար-
 դոցմով մօտենայ. 15 - Եւ սվ որ նզով-

ուածով բռնուի, կրակով պիտի այ-
 րուի, թէ՛ ինք և թէ՛ իր ամէն ունե-
 ցածը. քանզի Տէրոջը ուխտը զանց
 ըրաւ, ու Իսրայէլի մէջ անզգամու-
 թիւն ըրաւ.

16 - Ուստի Յեսու աւատուանց կա-
 նուխ ելաւ, ու Իսրայէլը իր ցեղերովը
 մօտեցուց, և Յուդայի ցեղը բռնուե-
 ցաւ. 17 - Ու Յուդայի ազգատոհմերը
 մօտեցուց, և Զարայեանց ազգատոհմը
 բռնուեցաւ. ու Զարայեանց տոհմը
 իր մարդոցմովը մօտեցուց, և Զաբդի
 բռնուեցաւ. 18 - Ետքը անոր տունը
 իր մարդոցմովը մօտեցուց, և Յուդայի
 ցեղէն Զարայի որդւոյն Զաբդի որդ-
 ւոյն Քարմիի որդին Աքար բռնուե-
 ցաւ: 19 - Այն ատեն Յեսու Աքարի
 ըսաւ, Որդիս, հիմա Իսրայէլի Տէր Աս-
 տուծոյն փառք տուր, ու «-» մեզդ
 անոր խոստովանէ, և քու ըրածդ հիմա
 ինձի յայտնէ, ինձմէ մի պահեր: 20 -
 Ու Աքար պատասխան տուաւ Յեսուի
 և ըսաւ, Իրաւցընէ ես Իսրայէլի Տէր
 Աստուծոյն դէմ մեղք գործեցի, ու
 այսպիսի այսպիսի բան մը ըրի. 21 -
 Այսինքն աւարին մէջ ազուոր բռն-
 «-» Բաբելոնի վերարկու մը, ու եր-
 կու հարիւր սիկզ արծաթ, և յիսուն
 սիկզի ծանրութեամբ սակի լեզու մը
 տեսայ, ու անոնց ցանկալով առի. և
 ահա անոնք իմ վրանիս մէջ հողին տակ
 պահուած են, ու արծաթը անոր տակ
 է: 22 - Ուստի Յեսու լրաբերներ զրկեց.
 ու անոնք վրանը վազեցին. և ահա
 վրանին մէջ պահուած էր այն, ու ար-
 ծաթը անոր տակ էր. 23 - Եւ զանոնք
 վրանին մէջէն առնելով Յեսուի ու բո-
 լոր Իսրայէլի որդիներուն բերին, և զա-
 նոնք Տէրոջը առջև դրին:

24 - Այն ատեն Յեսու ու իրեն հետ
 բոլոր Իսրայէլ՝ Զարայեան Աքարը ու
 այն արծաթը և վերարկուն ու սակի
 լեզուն և անոր աղաքը, աղջիկները,
 արջաւները, էջերը, սչխարները, վրանը
 ու անոր ամէն բանը առին, և զանոնք
 Աքովրի ձորը հանեցին: 25 - Ու Յեսու
 ըսաւ, Ինչո՞ւ համար դուն մեզ նեղե-
 ցիր. Տէրը այսօր քեզ պիտի նեղէ.
 ուստի բոլոր Իսրայէլ զանիկա քարե-
 րով քարկոծեցին, ու զանոնք քարե-
 րով քարկոծելէ ետեւ կրակով այրե-
 ցին: 26 - Ետքը անոր վրայ մեծ քարա-
 կայտ մը դիպեցին, «-» ինչպէս մինչև
 այսօր: Ու Տէրը իր սաստիկ բարկու-

Թենէն դողարեցաւ . այս պատճառաւ այն տեղին անուըր *Աքովրի ձոր ըսուեցաւ մինչև այսօր :

Գ. Ը

Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Մի վախնար ու մի զարհուրիր . բոլոր պատերազմող մարդիկը քեզի հետ առ, ու ելիր դէպ ի Գայի գնա . ահա Գայի թագաւորը ու անոր ժողովուրդը և անոր քաղաքը ու անոր երկիրը քու ձեռքդ տուի . 2 - Եւ Երեքովի ու անոր թագաւորին ըրածիդ պէս Գայի ու անոր թագաւորին ալ ընես , միայն թէ անոր աւարը ու անասունները ձեզի առնէք : Քաղաքին ետեւի կողմէն դարաններ պատրաստես : 3 - Ուստի Յեսու ու բոլոր պատերազմող մարդիկը սաք ելան, որպէս զի Գայի վրայ երթան . և Յեսու երեսուն հազար զօրաւոր մարդ ընարեց , ու զանոնք գիշերով զրկեց . 4 - Եւ անոնց պատուիրելով ըսաւ, Նայեցէք , դուք քաղաքին ետեւէն այն քաղաքին համար դարանի մէջ պիտի նստիք . քաղաքէն շատ մի հեռանաք , և ամէնգ ալ պատրաստ ըլլաք . 5 - Ու ես ինծի հետ եղող բոլոր ժողովուրդով քաղաքին պիտի մօտենամ . ու երբ անոնք առաջին անգամին պէս մեզի դէմ ելլեն , անոնց առջեւէն պիտի փախչինք . 6 - Ու անոնք մեր ետեւէն պիտի ելլեն , մինչև որ զանոնք քաղաքէն զատենք . որովհետև անոնք պիտի ըսեն թէ Մեր առջեւէն փախան առաջին անգամին պէս . ու մենք անոնց առջեւէն պիտի փախչինք : 7 - Այն ատեն դուք դարանէն ելլէք ու քաղաքը առնէք , քանզի ձեր Տէր Աստուածը զանիկա ձեր ձեռքը պիտի տայ : 8 - Ու երբ քաղաքը առնէք , քաղաքը կրակով այրէք . Տէրոջը ըսածին պէս ընէք . ահա ձեզի պատուիրեցի : 9 - Եւ Յեսու զանոնք զրկեց , ու անոնք գացին դարանը նստան Բեթէլի ու Գայի մէջտեղ , Գայի արեւմտեան կողմէն . և Յեսու այն գիշերը ժողովուրդին մէջ մնաց :

10 - Ու Յեսու առտուանց կանուխ ելաւ ու ժողովուրդը աչքէ անցուց , և ինք Իսրայէլի ծերերուն հետ ժողովուր-

դին առջեւէն դէպ ի Գայի գնաց . 11 - Եւ իրեն հետ եղող բոլոր պատերազմական մարդիկն ալ ելան , ու մօտենալով քաղաքին առջև գացին , ու Գայիի հիւսիսային կողմը բանակեցան . և անոնց ու Գայիի մէջտեղ ձոր մը կար : 12 - Եւ հինգ հազարի չափ մարդաւաւ , ու զանոնք դարանի մէջ նստեցուց Բեթէլի ու Գայիի մէջտեղ *քաղաքին արեւմտեան կողմը : 13 - Ու ժողովուրդը քաղաքին հիւսիսային կողմը դրին բոլոր բանակը , ու քաղաքին արեւմտեան կողմը՝ դարանը . և Յեսու այն գիշերը ձորին մէջ գնաց :

14 - Ու երբ Գայիի թագաւորը գառնի տեսաւ , քաղաքին մարդոցմով շուտով ու կանուխ դուրս ելաւ , որպէս զի ինք ու իր բոլոր ժողովուրդը որոշ ժամանակով մը դաշտի վրայ Իսրայէլի դէմ պատերազմին , ու չէր գիտեր որ քաղաքին ետեւը իրեն համար դարան պարսպապատ էր : 15 - Եւ Յեսու ու բոլոր Իսրայէլ անոնց առջև զիրենք զարնուածի պէս ցուցնելով՝ անապատին ճամբան փախան : 16 - Ու քաղաքին մէջ եղող բոլոր ժողովուրդը ժողովուրդեցաւ որպէս զի զանոնք հալածեն , ու Յեսուի ետեւէն իյնալով քաղաքէն զատուեցան : 17 - Եւ Գայիի ու Բեթէլի մէջ մարդ չմնաց՝ որ Իսրայէլի ետեւէն չելլէ . ուստի քաղաքը բաց թողուցին , ու Իսրայէլի ետեւէն ինկան :

18 - Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Ձեռքդ եղած նիզակը դէպ ի Գայի երկնցուր , քանզի զանիկա քու ձեռքդ պիտի տամ . և Յեսու ձեռքը եղած նիզակը դէպ ի քաղաքը երկնցուց . 19 - Ու դարանակալները շուտով իրենց տեղէն ելան , և անիկա իր ձեռքը երկնցուցածին պէս , վազեցին քաղաքը մտան ու առին զանիկա , և շուտով մը քաղաքը կրակով բռնկցուցին : 20 - Ու Գայիի բնակիչները ետեւին դարձան տեսան որ ահա քաղաքին ծուխը մինչև երկինք կ'ելլէր . և անոնք հոս կամ հոն փախչելու կարողութիւն չունէին . ու անապատը փախչող ժողովուրդն ալ իր ետեւէն ինկողներուն վրայ դարձաւ : 21 - Եւ Յեսու ու բոլոր Իսրայէլ երբ տեսան որ դարանակալները քաղաքը առին , ու քաղաքին ծուխը վեր կ'ելլէր , իրենք ալ ետ դարձան ու Գա-

*Այսինքն, նեղութեան, խաժ, խռովութեան

*Կամ, Գայիի

յի մարդիկը զարկին : 22 - Միւսներն ալ քաղաքէն անոնց դէմը ելան . ուստի մէկ կողմանէ ասոնք՝ ու միւս կողմանէ ալ անոնք ըլլալով , Գայիի հարդիւն Իսրայելացուց մէջտեղ մնացին . ու զանոնք զարկին մինչև որ անոնցմէ մարդ մը ողջ չմնաց ու չազատեցաւ : 23 - Եւ Գայիի թագաւորը ողջ բռնեցին , ու զանհկա Յեսուի բերին :

24 - Ու երբ Իսրայելացիք Գայիի բոլոր բնակիչները , զիրենք չալածողները , գաշտին ու անապատին մէջ ջարդեցին , ու անոնց ամէնն ալ սուրի բերնէ իյնալով հատան , բոլոր Իսրայելացիք Գայի դարձան , ու զանհկա սուրի բերնէ անցուցին : 25 - Եւ այն օրը ինկածներուն ամէնը , թէ՛ այր մարդ և թէ՛ կին մարդ , տասուերկու հազար էր , այսինքն Գայիի բոլոր մարդիկը : 26 - Ու Յեսու նիզակով երկնցուցած ձեռքը ետ չքաշեց մինչև որ Գայիի բոլոր բնակիչները բնաջինջ ըրաւ : 27 - Բայց Իսրայելացիք անասունները ու քաղաքին աւարը իրենց առին , Տէրօջը Յեսուի հրամայած խօսքին համեմատ : 28 - Եւ Յեսու Գային այրեց , ու զանհկա մշանջենաւոր աւերակներու դէզ ըրաւ մինչև այսօր : 29 - Եւ Գայիի թագաւորը ծառէ մը կտիսեց մինչև իրիկուն . ու արևին մոնելու ատենը՝ Յեսու հրամայեց որ անոր մեռած մարմինը ծառէն վար իջեցնեն , և զանհկա քաղաքին դրանը առջեւ նետեցին , ու անոր վրայ մեծ քարակոյտ մը դիպեցին , որ չէ կոչուի մինչև այսօր :

30 - Այն ատեն Յեսու Իսրայելի Տէր Աստուծոյն սեղան մը շինեց Գեբաղ լեռան վրայ , 31 - Ինչպէս Տէրօջը ծառան Մովսէս Իսրայելի որդիներուն պատուիրեր էր . «- Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած ինչպէս՝ Յեսու՝ այս սեղանը ամբողջ քարերէ շինեց , որոնց վրայ երկաթ չէր դրած . և անոր վրայ Տէրօջը ողջակէզներ ու խաղաղութեան զօհեր մատուցին : 32 - Եւ հոն այն քարերուն վրայ գրեց Մովսէսի օրինաց գիրքին օրինակը զոր Իսրայելի որդիներուն առջև գրեց : 33 - Ու բոլոր Իսրայել և անոնց ծերերը ու ստիկանները և դատաւորները տապանակին մէկ կողմէն ու միւս կողմէն՝ Տէրօջը ուխտին տապանակը վերցնող Աւետացի քահանաներուն առջեւէն կ'երթային , թէ՛ օտարականները և թէ՛ բնակները .

անոնց կէսը Գարիզին լեռանը կողմը՝ ու կէսն ալ Գեբաղ լեռանը կողմը խնայեցան , ինչպէս Տէրօջը ծառան Մովսէս պատուիրեր էր առաջ որ Իսրայելի ժողովուրդը օրհնեն : 34 - Եւ անկէ ետև օրէնքին բոլոր խօսքերը կարգաց , թէ՛ օրհնութիւնները և թէ՛ անէծքները , ինչ որ գրուած էր օրինաց գիրքին մէջ : 35 - Մովսէսի բոլոր պատուիրածներէն բնաւ խօսք մը չմնաց , որ զանհկա Յեսու Իսրայելի բոլոր ժողովքին և անոնց կիներուն ու տղաքներուն և անոնց մէջ պարտող օտարականին առջև չկարդայ :

ԳԼ Թ

Ու երբ Յորդանանու առդի կողմը եղող բոլոր թագաւորները , որոնք լեռան վրայ , դաշտի վրայ ու մեծ ծովուն բոլոր եզերքը մինչև Լիբանանի դիմաց չէ բնակէին , այսինքն Քետացիք , Ամօրհացիք , Քանանացիք , Փերեզացիք , Խեւացիք ու Յեբուսացիք , այս բաները լսեցին , 2 - Միաբանութեամբ ժողովուրդեցան որպէս զի Յեսուի ու Իսրայելի դէմ պատերազմին :

3 - Բայց Գաբաւոնի բնակիչները երբ լսեցին ինչ որ Յեսու Երիքովի ու Գայիի բեր էր , 4 - Իրենք ալ վարպետութիւն մը բանեցուցին . գացին պաշարներ պատրաստեցին , ու իրենց էջերուն վրայ հին քուրձեր ու հին , պատուած ու կարկատուած գինիի տիկեր դրին , 5 - Եւ իրենց սաքերուն կօշիկները հինցած ու կարկատուած էին , ու վրանին ալ հին լաթեր առին . և բոլոր իրենց պաշար առած հացը չարցած աւելած էր . 6 - Ու բանակը գացին Յեսուի՝ Գաղգաղայի մէջ , և անոր ու Իսրայելի մարդոցն ըսին , Մենք հեռու երկրէ կու գանք . ուստի հիմա մեզի հետ դաշնակցութիւն բերէ : 7 - Այն ատեն Իսրայելի մարդիկը այն Խեւացիներուն ըսին , Գուցէ դուք մեր մէջ կը բնակիք , ու ձեզի հետ ինչպէս դաշնակցութիւն ընենք : 8 - Բայց անոնք Յեսուի ըսին , Մենք քու ծառաներդ ենք . և Յեսու անոնց ըսաւ , Գուցէ ո՞վ էք և ուրի՞ց կու գաք : 9 - Ու անոր ըսին , Քու ծառաներդ խիտ հեռու երկրէ եկած են քու Եհովա Աստուծոյդ

*Եբր. կապուած

անուանը համար, քանզի անոր համբաւը ու Եգիպտոսի մէջ բոլոր բրածները լսեցինք. 10 - Աւ նաև Յորդանանու անդիի կողմը քնակալ Ամօր հացուց երկու թագաւորներուն, Եսբոնի Ահնի թագաւորին ու Աստարովթ քնակալ Բասանի Ավգ թագաւորին, դէմ բոլոր բրած բաները լսեցինք. 11 - Եւ մեր ծերերը ու մեր երկրին բոլոր բնակիչները մեզի խօսեցան ու ըսին, Ձեռքերնիդ ճամբու համար պաշար առէք, և զանոնք դիմաւորելու գացէք, ու անոնց ըսէք, Մենք ձեր ծառաներն ենք, հիմա մեզի հետ դաշնակցութիւն ըրէք: 12 - Այն օրը որ մենք ելանք ձեզի գալու համար, այս պաշարի հացերնիս մեր տուներէն տաք առինք, և ահա հիմա չորցած ու մգլած են. 13 - Եւ այս գինիի տիկերը նոր էին, երբ լեցուցինք, բայց ահա պատուուած են. ու այս մեր հանդերձները և կօշիկները ճամբուն խիստ երկայնութեանը համար հինցան: 14 - Աւ անոնց պաշարին նայելով՝ այն մարդիկը բնդունեցին, ու Տերօջը չհարցուցին: 15 - Եւ Յեսու անոնց հետ խաղաղութիւն ըրաւ, ու անոնց ուխտեց որ զանոնք ապրեցնէ. և ժողովքին իշխաններն ալ անոնց երդում ըրին:

16 - Աւ անոնց հետ դաշնակցութիւն ընելէ երեք օր ետքը լսեցին որ անոնք իրենց դրացիներն են, ու իրենց մէջ կը բնակին: 17 - Եւ Իսրայէլի որդիները չուելով՝ երրորդ օրը անոնց քաղաքները մտան. ու անոնց քաղաքները Գարաւոն, Կեփիրա, Բերովթ և Կարիաթարիմ էին: 18 - Աւ Իսրայէլի որդիները զանոնք չգարկին, քանզի ժողովքին իշխանները Իսրայէլի Տէր Աստուծոյն անուշակէ անոնց երդում ըրեր էին. բայց բոլոր ժողովքը իշխաններուն դէմ տրանջեցին:

19 - Եւ ամէն իշխանները բոլոր ժողովքին ըսին, Մենք Իսրայէլի Տէր Աստուծոյն անուշակէ անոնց երդում ըրինք, ու հիմա չենք կրնար անոնց դպչիլ: 20 - Անոնց այսպէս ընենք. զանոնք սղջ թողունք, որպէս զի մեր վրայ բարկութիւն չգայ անոնց երդում ընելնու համար: 21 - Աւստի իշխանները անոնց ըսին, Թող սղջ մնան, բայց բոլոր ժո-

ղովքին փոյտակոտորներ ու ջրկիրներ ըլլան. և քայտախորներ ու ջրէնէր ելան, ինչպէս իշխանները անոնց ըսին:

22 - Ետքը Յեսու զանոնք կանչեց, ու անոնց խօսեցաւ՝ ըսելով, Ինչո՞ւ համար մեզ խաբեցիք ու ըսիք թէ Ձեզմէ շատ հեռու ենք, ու դուք մեր մէջ կը բնակիք: 23 - Աւրեմն դուք հիմա անիծեալ էք, ու իմ Աստուծոյս տանը համար ձեզմէ ծառայ, փոյտակոտոր ու ջրկիր չպակտի: 24 - Եւ անոնք Յեսուի պատասխան տուին ու ըսին, Քանզի քու ծառաներդ ստուգիւ իմացան, որ քու Եհովա Աստուածդ իր ծառային Մովսէսի հրամայեր է այս բոլոր երկիրը ձեզի տալու, ու այս երկրին բոլոր բնակիչները ձեր առջեւ են բնաջինջ ընելու. ուստի մենք ձեր պատճառաւ մեր անձերուն համար շատ վախցանք ու այս բանը ըրինք: 25 - Եւ ահա հիմա քու ձեռքդ ենք. քեզի ինչ որ հաճոյ ու արգար կ'երեւնայ, զայն ըրէ մեզի: 26 - Աւստի անոնց այնպէս ըրաւ, և զանոնք Իսրայէլի որդիներուն ձեռքէն ազատեց, ու զանոնք չմեռցուցին: 27 - Եւ Յեսու նոյն օրը փոյտակոտոր ու ջրկիր ըրաւ զանոնք ժողովքին ու Տերօջը սեղանին համար, որպէս զի Տերօջը ընտրելու տեղը ծառայէն մինչև այսօր:

ԳԼ Ժ

Աւ երբ Երուսաղէմի Ադոնիսեդեկ թագաւորը լսեց թէ Յեսու Գային առաւ ու զանիկա բոլորովին կործանեց, և Քէ ինչ որ Երիքովի ու անոր թագաւորին ըրաւ, Գայիի ու անոր թագաւորին ալ այնպէս ըրաւ, և թէ Գաբաւոնի բնակիչները Իսրայէլացուց հետ հաշտութիւն ըրին, ու անոնց մէջ մնացին, 2 - Շատ վախցան ինչ որ ինչո՞ւ ըրէր. քանզի Գաբաւոն թագաւորանիստ քաղաքի մը պէս մեծ քաղաք մըն էր, ու անիկա Գայիէ մեծ էր, և անոր բոլոր մարդիկը զօրաւոր էին: 3 - Ասոր համար Երուսաղէմի Ադոնիսեդեկ թագաւորը Քեբրոնի Հօհամ թագաւորին, Յերիմութի Փիրամ թագաւորին, ու Լաքիսի Յափիէ թագաւորին, ու Էզղոնի Գարիթ թագաւորին յարգ զրկեց, ըսելով, 4 - Ինծի ելէք ու ինծի օգնութիւն ըրէք որպէս զի Գաբաւոնը զարնենք. քանզի Յեսուի հետ

*Կամ, Իսրայէլի մարդիկը անոնց պաշարէն առին

ու Իսրայէլի որդիներուն հետ հաշտու-
թիւն ըրաւ : 5 - Ուստի Ամօրհասցեաց
հինգ թագաւորները , Երուսաղէմի
թագաւորը , Քերթոնի թագաւորը ,
Յերիմուլթի թագաւորը , Լաքիսի թա-
գաւորը * - Էզրոնի թագաւորը , ժող-
վուեցան , և իրենք ու իրենց բոլոր
բանակները ելան , և Գաբաւոնի քով
բանակ դրին , ու անոր դէմ պատե-
րազմ ըրին :

6 - Եւ Գաբաւոնի բնակիչները Գաղ-
գաղայի մէջ բանակը Յեսուի Գաղ-
ղիկեցին՝ ըսելով , Քու ծառաներէդ
ձեռքդ մի քաշեր , շուտով մեզի ել ,
մեզ ազատէ ու մեզի օգնութիւն ըրէ .
քանզի լեռնաբնակ Ամօրհասցեաց բոլոր
թագաւորները մեր վրայ ժողվուեցան :

7 - Եւ Յեսու ինք ու իրեն հետ բոլոր
պատերազմական մարդիկը և զօրքին
բոլոր զօրաւորները Գաղգաղայէ ելան :

8 - Ու Տէրը Յեսուի ըսաւ , Անոնցմէ մի
վախնար , քանզի զանոնք քու ձեռքդ
տուի . բնաւ անոնցմէ մէկը պիտի չկա-
րենայ քու առջեւդ կայնիլ :

9 - Եւ Յեսու Գաղգաղայէ բոլոր գիշերը * քա-
լելով՝ յանկարծակի անոնց վրայ հա-
տաւ :

10 - Ու Տէրը խռովեցուց զանոնք
Իսրայէլի առջև , և զանոնք Գաբաւոնի
Տօք մեծ կոտորածով մը կոտրեց , ու
զանոնք Բեթորոն ելլելու ճամբուն
վրայ հալածեց , և զանոնք մինչև Ա-
զեկա ու Մակեդա զարկաւ : 11 - Ու
երբ անոնք Իսրայէլի առջևէն կը փախ-
չէին ու Բեթորոնէ վար կ'իջնէին , Տէրը
անոնց վրայ երկինքէն խորհրտով մեծ
քարեր նետեց մինչև Ազեկա , ու մե-
ռան . կարկուտին քարերէն մեռնող-
ները Իսրայէլի որդիներուն սրով մեռ-
ցուցածներէն շատ էին :

12 - Այն ատեն Յեսու Տէրոջը հետ
խօսեցաւ , այն օրը որ Տէրը Ամօրհա-
ցիները Իսրայէլի որդիներուն ձեռքը
տուաւ , ու Իսրայէլի առջև ըսաւ ,
Արև , դուն Գաբաւոնի դիմաց կայնէ .
Լուսին , դուն ալ Այեղոնի ձորին դի-
մաց կայնէ : 13 - Ու արեւը կայնեցաւ ,
և լուսինը իր տեղը մնաց , մինչև որ
ժողովուրդը իր թշնամիներէն վրէժ
տուաւ : Միթէ ասիկա Ուղիղին գիր-
քին մէջ գրուած չէ՞ . ուստի արեւը
երկինքին մէջտեղը կայնեցաւ ու լման
մէկ օրի չափ մտնելու չարտորաց :

14 - Անոր պէս օր մը չեղաւ , ոչ առաջ
ու ոչ ետքը , որ Տէրը մարդու ձայնը
լսեց . քանզի Տէրը Իսրայէլի համար
պատերազմեցաւ :

15 - Ետքը Յեսու ու անոր հետ բո-
լոր Իսրայէլ Գաղգաղա՝ բանակը դար-
ձան : 16 - Եւ հինգ թագաւորները
փախան , ու Մակեդա , այրին մէջ ,
պահուեցան : 17 - Եւ Յեսուի պատ-
մուեցաւ՝ ըսելով , Այն հինգ թագա-
ւորները Մակեդա , այրին մէջ , պահ-
ուած գտնուեցան :

18 - Եւ Յեսու ըսաւ ,
Այրին բերանը մեծ քարեր գլորեցէք ,
ու անոր վրայ մարդիկ դրէք որպէս զի
պահպանութիւն ընեն . 19 - Բայց դուք
մի կայնիք , ձեր թշնամիները հալածե-
ցէք , ու անոնց ետեւիները զարկէք ,
և անոնց թող մի տաք որ իրենց քա-
ղաքները մտնեն . քանզի ձեր Տէր Աստ-
ուածը զանոնք ձեր ձեռքը մտանց :

20 - Ու երբ Յեսու Իսրայէլի որդիե-
րուն հետ զանոնք խիստ մեծ կոտորա-
ծով մը կոտրեց , ու զանոնք հասցուց
լմնցուց , և անոնց փախստականները
պարսպաւոր քաղաքներու մէջ մտան ,
21 - Բոլոր ժողովուրդը խաղաղու-
թեամբ Մակեդա , բանակը , Յեսուի
դարձաւ . * - Իսրայէլի որդիներուն
դէմ բնաւ մէկը իր լեզուն չչարժեց :

22 - Այն ատեն Յեսու ըսաւ , Այրին
բերանը բացէք , ու այրէն այն հինգ
թագաւորները հանեցէք ինծի բէրէ+ :

23 - Եւ այնպէս ըրին , ու այրէն այն
հինգ թագաւորները , այսինքն Երու-
սաղէմի թագաւորը , Քերթոնի թագա-
ւորը , Յերիմուլթի թագաւորը , Լա-
քիսի թագաւորը * - Էզրոնի թագա-
ւորը , հանեցին անոր քարէն :

24 - Ու երբ
այս թագաւորները Յեսուի արջ-
նեցին , Յեսու Իսրայէլի բոլոր մարդիկը
կանչեց , ու իրեն հետ գացող պատե-
րազմիկներուն գլխաւորներուն ըսաւ ,

Մտեցէք ու ձեր ոտքերը այս թագա-
ւորներուն պարանոցներուն վրայ դրէք .
և անոնք մտաեցան և իրենց ոտքերը
անոնց պարանոցներուն վրայ դրին :

25 - Եւ Յեսու անոնց ըսաւ , Մի վախ-
նաք ու մի զարհուրիք , ու ժողցէք և
քաջասիրտ եղէք . քանզի Տէրը այսպէս
պիտի ընէ ձեր ամէն թշնամիներուն ,
որոնց հետ դուք պիտի պատերազմիք :

26 - Եւ անկէ ետեւ Յեսու զանոնք զար-
կաւ մեռցուց , ու զանոնք հինգ ծառէ
կախեց , և ծառերուն վրայ մինչև իրի-

* Եբր . ելլելով

կուն կախուած մնացին: 27 - Ու արեւի մտնելու ատենը Յեսու հրամայեց, ու զանոնք ծառերուն վրայէն իջեցուցին, և իրենց պահուած սյրին մէջ նետեցին զանոնք, ու սյրին բերանը մեծ քարեր դրին, «բն» է ինչն մինչև այսօր:

28 - Եւ Յեսու նոյն օրը Մակեդան ալ առաւ. ու զանիկա սուրի բերնէ անցուց, և անոր թագաւորը ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորսնցուց, և մէ'կը ողջ չթողուց. ու Մակեդայի թագաւորին ալ այնպէս ըրաւ, ինչպէս Երիքովի թագաւորին ըրած էր:

29 - Ետքը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Մակեդայէ Լեբնայ անցան, ու Լեբնայի դէմ պատերազմեցան:

30 - Եւ Տէրը զանիկա ալ անոր թագաւորովը Իսրայէլի ձեռքը մտանեց, և զանիկա ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, «- մէ'կը ողջ չթողուցին. և անոր թագաւորին այնպէս ըրին, ինչպէս Երիքովի թագաւորին ըրած էին:

31 - Ետքը Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ Լեբնայէ Լաքիս անցան, և անոր քով բանակելով անոր դէմ պատերազմեցան. 32 - Եւ Տէրը Լաքիսը Իսրայէլի ձեռքը մտանեց, և զանիկա երկրորդ օրը առնելով, զանիկա ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, ինչպէս Լեբնայի ըրած էին:

33 - Այն ատեն Գազերի Հօրամ թագաւորը Լաքիսի օգնութիւն ընելու ելաւ. և Յեսու զանիկա ու անոր ժողովուրդը կոտորեց, այնպէս որ անոնցմէ մէ'կը ողջ չմնաց:

34 - Ետքը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Լաքիսէ Էզղոն անցան, և անոր քով բանակելով, անոր դէմ պատերազմ ըրին. 35 - Եւ զանիկա նոյն օրը առնելով սուրի բերնէ անցուցին. ու Յեսու նոյն օրը անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորսնցուց, ինչպէս Լաքիսի ըրած էր:

36 - Ետքը Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ Էզղոնէ Քեբրոն ելան, ու անոր դէմ պատերազմ ըրին. 37 - Եւ զանիկա առնելէ ետքը սուրի բերնէ անցուցին զանիկա ու անոր թագաւորը, և անոր բոլոր քաղաքները ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները, և մէ'կը ողջ չթողուցին, ինչպէս Էզղոնի ըրին. այսպէս զանիկա ու անոր մէջ

գտնուած բոլոր հոգիները կորսնցուց:

38 - Ետքը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Գաբիր դարձան, ու անոր հետ պատերազմեցան. 39 - Եւ զանիկա ու անոր թագաւորը և անոր բոլոր քաղաքները առին, ու զանոնք սուրի բերնէ անցուցին. և անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորսնցուցին, «- մէ'կը ողջ չթողուցին. ինչպէս Քեբրոնի ըրաւ, և ինչպէս Լեբնայի ու անոր թագաւորին ըրաւ, նոյնպէս ալ Գաբիրի ու անոր թագաւորին ըրաւ:

40 - Եւ Յեսու բոլոր լեռնային, հարաւային, դաշտային ու լեռներուն տակ եղած երկիրները և անոնց բոլոր թագաւորները զարկաւ, «- մէ'կը ողջ չթողուց, հապա ամէն շնչաւորը մեռցուց, ինչպէս Իսրայէլի Տէր Աստուածը պատուիրէր էր:

41 - Եւ Յեսու կադէս-բառնեայէ մինչև Գազա, ու բոլոր Գոսամի երկիրը մինչև Գաբաւոն զանոնք զարկաւ:

42 - Եւ այս բոլոր թագաւորները ու անոնց երկիրը Յեսու մէկէն առաւ. քանզի Իսրայէլի համար Իսրայէլի Տէր Աստուածը պատերազմ կ'ընէր:

43 - Եւ Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Գազգազա բանակը դարձան:

ԳԼ. ԺԱ

Եւ Հասորի Յարին թագաւորը երբ այս բաները լսեց, Մադոնի Յորբաբ թագաւորին և Սամրոնի թագաւորին ու Աքրափի թագաւորին, 2 - Եւ հիւսիսային լեռները ու Քեներեթի հարաւային դաշտը ու հովիտը և արեւմտեան կողմը՝ Իովրի գաւառներուն մէջ եզող թագաւորներուն, 3 - Արեւելեան ու արեւմտեան կողմը եզող Քանանացիներուն, Ամօր հացիներուն, Քետացիներուն, Փերեզացիներուն ու լեռնաբնակ Յեբուսացիներուն, և Հերմոնի տակ Մասիայի երկիրը եզող Խեւացիներուն հարկերը զրկեց: 4 - Ուստի անոնք իրենց բոլոր բանակներովը «- շատ ժողովուրդով ելան, որոնք ծովուն եզերքը եզող աւազին չափ բազմաթիւ էին, և իրենց հետ խիստ շատ ձիեր ու կառքեր հետ: 5 - Եւ այս բոլոր թագաւորները միաբանելով մէկտեղ գացին՝ Մառօնի ջուրին քով բանակեցան, որպէս զի Իսրայէլի հետ պատերազմին:

6 - Եւ Տէրը Յեսուի ըսաւ, Անոնց

երեսէն մի վախնար, քանզի վաղը այս ատեն ես անոնց ամէնը Իսրայէլի առջև կտարուելու պիտի մտանեմ՝. անոնց ձիերուն ջիղերը պիտի կտրես, ու անոնց կառքերն ալ կրակով այրես: 7 - Ուստի Յեսու և իրեն հետ բոլոր պատերազմական ժողովուրդը յանկարծակի Մառօնի ջուրին քով անոնց դէմ երթալով վրանին յարձակեցան: 8 - Եւ Տէրը զանոնք Իսրայէլի ձեռքը տուաւ, ու զանոնք զարկին, և մինչև մեծ Սիզոն ու Մասրեփօթ-մնայիմ, և մինչև Մասփայի հովիտը դէպ ի արեւելք հալածեցին, ու զանոնք զարկին՝ մինչև որ անոնցմէ մէկը չազատեցաւ: 9 - Եւ Յեսու անոնց այնպէս բռաւ, ինչպէս Տէրը իրեն բտեր էր. անոնց ձիերուն ջիղերը կտրեց, ու անոնց կառքերը կրակով այրեց:

10 - Եւ նոյն ատեն Յեսու դարձաւ՝ Հասորը առաւ, ու անոր թագաւորը սրով մեռցուց. քանզի Հասոր առաջ այս բոլոր թագաւորութիւններուն գլուխն էր. 11 - Եւ անոր մէջ գրտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, ու բնաջինջ բրին. բնաւ շնչաւոր մը չմնաց. ու Հասորը կրակով այրեց: 12 - Ուստի Յեսու այս թագաւորներուն բոլոր քաղաքները ու անոնց բոլոր թագաւորները առաւ, և զանոնք սուրի բերնէ անցընելով բնաջինջ բռաւ, ինչպէս Տէրոջը ծառան Մովսէս պատուիրէր էր: 13 - Բայց Իսրայէլ չայրեց այն քաղաքները՝ որոնք իրենց հողաբլուրներովը կը կենային, բայց միայն Հասորը՝ զոր Յեսու այրեց: 14 - Եւ այս քաղաքներուն բոլոր աւարը ու անասունները Իսրայէլի որդիները իրենց առին, բայց բոլոր մարդիկը սուրի բերնէ անցուցին, մինչև որ զանոնք բնաջինջ բրին, «- բնաւ շնչաւոր մը չթողուցին: 15 - Ինչպէս Տէրը իր Մովսէս ծառային պատուիրէր էր, նոյնպէս ալ Մովսէս Յեսուի պատուիրեց, ու Յեսու ալ այնպէս բռաւ. և ինչ որ Տէրը Մովսէսի պատուիրէր էր, բնաւ անոնց մէկը զանց չբռաւ:

16 - Ուստի Յեսու այն բոլոր երկիրը առաւ, լեռնակողմը ու բոլոր հարաւային կողմը և բոլոր Գոսամի երկիրը, հովիտը ու դաշար, և Իսրայէլի լեռը ու անոր հովիտը, 17 - Աէիր ելլող Քաւլակ լեռնէն մինչև Հերմոն լեռանը

տակ Լիբանանու հովտին մէջ եղող Բաազգագ, և անոնց բոլոր թագաւորները բռնեց ու զանոնք զարկաւ մեռցուց: 18 - Յեսու այս բոլոր թագաւորներուն հետ շատ օրեր պատերազմ բռաւ: 19 - Գաբաւանի մէջ բնակող Խեւացիներէն զատ Իսրայէլի որդիներուն հետ հաշտութիւն ընող քաղաք մը չկար. ամէնն ալ պատերազմով առին. 20 - Քանզի անոնց սրտին կարծրանալը ու պատերազմով Իսրայէլի դէմ դնելը Տէրոջմէն եղաւ, որպէս զի անոնց ողորմութիւն չըլլալով զանոնք կորսնցնէ ու բնաջինջ ընէ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրէր էր:

21 - Եւ այն ատեն Յեսու գնաց, ու լեռներէն, Քեբրոնէ, Գաբիրէ, Անարէ ու Յուզայի բոլոր լեռներէն, և Իսրայէլի բոլոր լեռներէն Ենակիմները կտրեց. Յեսու զանոնք իրենց քաղաքներով մէկտեղ կորսնցուց: 22 - Եւ Իսրայէլի որդիներուն երկրին մէջ Ենակիմներէն Գ'իւ չմնաց, բայց միայն Գազայի, Գէթի ու Ասեղովթի մէջ մնացին:

23 - Ու Յեսու բոլոր երկիրը առաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրէր էր, և Յեսու զանիկա Իսրայէլի ժառանգութիւնն առաւ, անոնց ցեղերուն բաժիններուն համեմատ. ու երկիրը պատերազմէն հանգստացաւ:

ԳԼ. ԺԲ

Ասոնք են այն երկրին թագաւորները՝ զորոնք Իսրայէլի որդիները զարկին ու անոնց երկիրները առին, Յորդանանու անդի կողմը դէպ ի արեւելք, Աւնոն ձորէն մինչև Հերմոն լեռը՝ արեւելեան կողմին բոլոր դաշտովը, 2 - Եսեբոնի մէջ բնակող Ամօրհացուց Սեհոն թագաւորը, որ Աւնոն ձորին եզերքը եղող Արսերէն, և ձորին մէջտեղէն, ու Գաղաադի կէսէն մինչև Ամմոնի որդիներուն սահմանը եղած Յաբոկ ձորը, 3 - Նաւե դաշտին, արեւելեան կողմէն մինչև Քեներեթի ծովը, ու արեւելեան կողմէն Բեթե-սիմթի ճամբան, ու հարաւային կողմէն Ասեղովթ-փասգայի տակ՝ մինչև դաշտի ծովը, այսինքն մինչև Ագի ծովը, կը տիրէր. 4 - Ու հսկաներուն մնացորդէն Բասանի Ովգ թագաւորին սահմանը, որ Ասաարովթի ու Եգրայի մէջ կը բնակէր, 5 - Եւ կը տիրէր Հեր-

ման լեռանը , ու Սելքայի և բոլոր Բասանի մինչև Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը , ու մինչև Գաղատայի կէտը , որ Եսեբոնի Սեհոն թագաւորին սահմանն էր : 6 - Ասոնք Տէրոջը ծառան Մովսէս Իսրայէլի որդիներուն հետ զարկաւ , ու անոց երկերեւեց Տէրոջը ծառան Մովսէս Ռուբենեանց , Գադեանց ու Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուաւ :

7 - Եւ ասոնք են երկրին թագաւորները , զորոնք Յեսու ու Իսրայէլի որդիները զարկին Յորդանանու առջի կողմը դէպ ի արեւմուտք , Լիբանանու հովտին մէջ եղող Բաաղզադէն մինչև Քալակ լեռը , որ Սէիր կ'իլլէ . և Յեսու անոց երկերեւեց Իսրայէլի ցեղերուն ժառանգութիւն տուաւ իրենց վիճակներուն համեմատ . 8 - Լեւներուն ու հովիտներուն և դաշտերուն մէջ ու լեռներուն ստորոտները և անապատը ու հարաւային կողմը Բաաղցիները , Ամորհացիները , Քանանացիները , Փերեզացիները , Խեւացիները ու Յեբուսացիները . 9 - Երիքովի թագաւորը մէկ , Բեթէլի քով եղող Գալիի թագաւորը մէկ , 10 - Երուսաղէմի թագաւորը մէկ , Քեբրոնի թագաւորը մէկ , 11 - Յերիմութի թագաւորը մէկ , Լաքիսի թագաւորը մէկ , 12 - Էզզոնի թագաւորը մէկ , Գազերի թագաւորը մէկ , 13 - Իաբիբի թագաւորը մէկ , Գադերի թագաւորը մէկ , 14 - Հորմայի թագաւորը մէկ , Արադի թագաւորը մէկ , 15 - Լեբնայի թագաւորը մէկ , Ողողոմի թագաւորը մէկ , 16 - Մակեդայի թագաւորը մէկ , Բեթէլի թագաւորը մէկ , 17 - Թափուայի թագաւորը մէկ , Ուփերի թագաւորը մէկ , 18 - Ափէկի թագաւորը մէկ , Լասարոնի թագաւորը մէկ , 19 - Մազոնի թագաւորը մէկ , Հասորի թագաւորը մէկ , 20 - Սամբոն-մառոնի թագաւորը մէկ , Աքսափի թագաւորը մէկ , 21 - Թանաքի թագաւորը մէկ , Մակեդոնի թագաւորը մէկ , 22 - Կադէսի թագաւորը մէկ , Կարմեղոս եղած Յեկնամի թագաւորը մէկ , 23 - Իովրի գաւառին մէջ Իովրի թագաւորը մէկ , Գաղզաղայի Գոյիմի թագաւորը մէկ , 24 - Թերսայի թագաւորը մէկ . այս թագաւորներուն ամէնը երեսունը մէկ էին :

ԳԼ. ԺԳ

Ու երբ Յեսու ծերացաւ ու տարիքը առաւ , Տէրը անոր ըսաւ , Իսու ծերացար ու տարիքդ առիւր . և Գալիսիա շատ երկիր մնաց ժառանգելու . 2 - Մնացած երկիրը առիկա է . Փղըշացւոց ամէն սահմանները , ու բոլոր Գեսուրը , 3 - Եգիպտոսի գիմաց եղող Սիովրէն մինչև Քանանացւոցը սեպուած Ակկարոնի սահմանին հիւսիսային կողմը , Փղշացւոց հինգ նախարարութիւնները , այսինքն Գաղացւոց , Ազովացւոց , Ասկաղոնացւոց , Գեթացւոց ու Ակկարոնացւոց , նաև Աւացւոց երկեր . 4 - Հարաւային կողմէն՝ Քանանացւոց բոլոր երկիրը ու Սիդոնացւոց Մէարան , մինչև Ափէկ - մինչև Ամորհացւոց սահմանը . 5 - Եւ Գեբաղացւոց երկիրը ու արեւելեան կողմէն բոլոր Լիբանան , Հերմոն լեռան տակ եղող Բաաղզադէ մինչև Եմաթի մուտքը , 6 - Բոլոր լեռնաբնակները՝ Լիբանանէ մինչև Մարեփոթ-մայիմ , բոլոր Սիդոնացիները . զանոնք Իսրայիի որդիներուն առջեւէն ես պիտի վճնաեմ . միայն թէ դուն Իսրայէլի ժառանգութիւն բաժնէ այն երկեր : Ինչպէս քեզի պատուիրեցի :

7 - Եւ հիմա այս երկիրը ժառանգութիւն բաժնէ ինը ցեղին , ու Մանասէի կէս ցեղին . 8 - Քանգի Ռուբենեանք ու Գադեանք անոր Գալիսի հետ առին իրենց ժառանգութիւնը զոր Մովսէս Յորդանանու անդի կողմը դէպ ի արեւելք անոնց տուաւ , Տէրոջը ծառային Մովսէսի տուածին պէս . 9 - Առնոն ձորին եզերքին վրայ եղող Արսէրէն , ու ձորին մէջ եղող քաղաքէն , Մեգաբոյի բոլոր դաշտովը , մինչև Գեբոն . 10 - Ու Եսեբոնի մէջ թագաւորող՝ Ամորհացւոց Սեհոն թագաւորին բոլոր քաղաքները , մինչև Ամմոնի որդիներուն սահմանը . 11 - Եւ Գաղատայը ու Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը և բոլոր Հերմոն լեռը ու բոլոր Բասանը մինչև Սելքա . 12 - Բասանի մէջ Ուզի բոլոր թագաւորութիւնը , որ Ասասարովթի ու Եգրայիի մէջ կը թագաւորէր . և հսկաներուն մնացորդէն անիկա մնացեր էր . բայց Մովսէս զանոնք զարկաւ ու վճնաց : 13 - Եւ Իսրայէլի որդիները Գեսուրացիները ու Մաքաթացիները չվճնակ-

ցին . և Գեսոււրացիները ու Մաքաթացիները մինչև այսօր Իսրայէլի մէջ բնակեցան : 14 - Միայն Ղեւիի ցեղին ժառանգութիւն չտուաւ . անոր ժառանգութիւնը Իսրայէլի Տէր Ասատուծոյն խառնեցաւ՝ պատարագներն են , ինչպէս անոր ըսեր էր :

15 - Եւ Մովսէս Ռուբէնի որդիներուն ցեղին , անոնց ազգատոհմներուն համեմատ , խառնեցաւ ինչն տուաւ .

16 - Ու անոնց սաճմանը առիւտ եղաւ . Առնոն ձորին եզերքին վրայ եղող Արտերէն ու ձորին մէջ եղող քաղաքէն , Մեդաբայի քով եղած բոլոր դաշտը ,

17 - Եսեբոն ու անոր բոլոր դաշտային քաղաքները , Իեբոն , Բամօթ-բաճաղ ու Բեթբէէլմօն , 18 - Եւ Յասասա , ու Կադեմօթ , ու Մեփայաթ ,

19 - Եւ Կարիաթեմ , ու Սեբամա , և Սարեթ-սաճաւ * Եմակ լեռան վրայ , 20 - Ու Բեթփեգովր , և Ասեղովթ-փասգա , ու Բեթթեսիմօթ , 21 - Եւ դաշտին ամէն քաղաքները , ու Եսեբոնի մէջ թագաւորող՝ Ամօրճացուց Սեճոն թագաւորին բոլոր թագաւորութիւնը ,

զոր Մադիամու իշխանները , Եւին , Բոկոմը , Սուրը , Աւրը ու Ռօբէն , այն երկրին մէջ բնակող Սեճոնի նախարարները , Մովսէս զարկաւ : 22 - Եւ Իսրայէլի որդիները Բէսովրեան Բաղաամ ճարցուկն ալ սրով մեռցուցին Քաճապանուածներուն հետ : 23 - Ու Ռուբէնի որդիներուն սաճմանը Յորդանան և անոր սաճմանը եղաւ . Ռուբէնի որդիներուն ազգատոհմներուն ժառանգութիւնը ասիկա է , այս քաղաքները ու ասոնց գեղերը :

24 - Եւ Մովսէս Գադի ցեղին , Գադի որդիներուն , իրենց ազգատոհմներուն համեմատ խառնեցաւ ինչն տուաւ : 25 - Ու անոնց սաճմանը ասիկա եղաւ . Յազեր ու բոլոր Գաղաադի քաղաքները , և Ամմոնի որդիներուն երկրին կէսը մինչև Արտեր , որ Ռաբբայի գիմաց է : 26 - Ու Եսեբոնէ մինչև Մասփայի Ռամովթը ու Բասանիմ , և Մանայիմէ մինչև Գաբիրի սաճմանը . 27 - Ու հովիտի մէջ՝ Բեթարամ ու Բեթնամրա , Սոկքովթ ու Սափոն՝ Եսեբոնի Սեճոն թագաւորին թագաւորութեան մնացորդը , Յորդանան ու անոր սաճմանը , մինչև Քեներեթի ծովուն

եզերքը , Յորդանանու անդիի կողմը դէպ ի արեւելք : 28 - Գադի որդիներուն ժառանգութիւնը իրենց ազգատոհմներուն համեմատ ասիկա է , այս քաղաքները ու ասոնց գեղերը :

29 - Եւ Մովսէս Մանասէի կէս ցեղին ալ խառնեցաւ ինչն տուաւ , որ Մանասէի որդիներուն կէս ցեղին եղաւ իրենց ազգատոհմներուն համեմատ :

30 - Ու անոնց սաճմանը ասիկա եղաւ . Մանայիմէ՝ Բասանի Ովգ թագաւորին բոլոր թագաւորութիւնը , բոլոր Բասան , ու Բասանի մէջ եղող Յայիրի բոլոր գիւղաքաղաքները , վաթսուն քաղաք . 31 - Ու Գաղաադի կէսը , և Աստարովթ ու Եդրայի , Բասանի մէջ Ովգի թագաւորութեան քաղաքները ,

Մանասեան Մաքիրի որդիներուն եղան , այսինքն Մաքիրի որդիներուն կէսին՝ իրենց ազգատոհմներուն համեմատ :

32 - Ասոնք են այն խառնեցուցը , զորոնք Մովսէս Մովարի դաշտերուն մէջ՝ Երիքովի Գաճաճ Յորդանանու անդիի կողմը դէպ ի արեւելք ժառանգութիւն տուաւ : 33 - Բայց Մովսէս Ղեւիի ցեղին ժառանգութիւն չտուաւ . անոնց ժառանգութիւնը Իսրայէլի Տէր Ասատուածն է , ինչպէս անոնց ըսաւ :

ԳԼ. ԺԴ

Ու Քանանու երկրին մէջ Իսրայէլի որդիներուն ժառանգած Գեղերը ասոնք են , զորոնք Եղիազար քահանան և Նաւեան Յեսու ու Իսրայէլի որդուց ցեղերուն նահապետութեան իշխանները ժառանգեցուցին անոնց : 2 - Ինն ու կէս ցեղերուն վիճակով Գաճաճ անոնց ժառանգութիւնը , ինչպէս Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեր էր : 3 - Քանգի Մովսէս երկուք ու կէս ցեղերուն Յորդանանու անդիի կողմը ժառանգութիւն տուեր էր . բայց անոնց մէջ՝ Ղեւացիներուն ժառանգութիւն տուած չէր . 4 - Որովհետեւ Յովսէփի որդիները երկու ցեղ էին , Մանասէ ու Եփրեմ . ու երկրին մէջ Ղեւացուց բաժին չտուին , բայց միայն քաղաքներ՝ բնակելու համար , ու արուարձաններն ալ՝ անոնց խաչինքներուն և ստացուածքներուն համար : 5 - Ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր , Իսրայէլի որդիները այնպէս ըրին , ու երկիրը բաժնեցին :

*Կաճ , հովիտի

6 - Եւ Յուդայի որդիները Գաղզա-
 ղայի մէջ Յեսուի մօտեցան, ու կենեզ-
 եան Յեփոնէի որդին Քաղէբ անոր ըսաւ,
 Դուն գիտես այն խօսքը զոր Տէրը Կա-
 դէս-բառնեայի մէջ Աստուծոյ մար-
 դուն Մովսէսի հետ խօսեցաւ ինծի ու
 քեզի համար: 7 - Երբ Տէրը ծառան
 Մովսէս գիս Կադէս-բառնեայէ զրկեց
 երկիրը լրտեսելու համար, ես քառա-
 սուն տարեկան էի. ու սրախ մէջ եղա-
 ծին պէս անոր լուր բերի: 8 - Սակայն
 ինծի հետ ելլող եղբայրներս ժողովուր-
 դին սիրար թուլցուցին. բայց ես իմ
 բոլոր սրտով իմ Տէր Աստուծոյս հնա-
 զանդեցայ: 9 - Եւ նոյն օրը Մովսէս
 երգում ըրաւ՝ ըսելով, Այն քու ստ-
 քիդ կոխած երկիրը անպատճառ քեզի
 ու քու որդիներուդ յաւիտեան ժա-
 ուանգութիւն պիտի ըլլայ. որովհետեւ
 իմ Տէր Աստուծոյս քու բոլոր սրտովդ
 հնազանդութիւն ըրիր: 10 - Արդ ահա
 Տէրը իր ըսածին պէս այս քառասու-
 նըհինգ տարին իմ կեանքս պահեց,
 այն ժամանակէն ի վեր՝ որ Տէրը այս
 խօսքը Մովսէսի ըսաւ, քանի որ Իսրա-
 յէլ անապատին մէջ կը պտրտէր. և
 ահա ես այսօր ութսունըհինգ տարե-
 կան եմ: 11 - Եւ այսօր տակաւին ու-
 ժով եմ, ինչպէս էի Մովսէսի գիս
 զրկած օրը. այն ատենի զօրութիւնս
 ինչպէս էր, հիմակուան զօրութիւնս
 ալ այնպէս է՝ պատերազմելու, և ելլե-
 լու ու մանելու կողմանէ: 12 - Ուստի
 հիմա ինծի տուր այն լեռը, որու հա-
 մար Տէրը այն օրը խօսեցաւ. քանզի
 դուն այն օրը լսեցիր որ Ենակիմները
 հոն ինչ քնակին, ու մեծ պարսպաւոր
 քաղաքներ «-նին». թերեւս Տէրը ինծի
 հետ ըլլայ, ու ես զանոնք վռնտեմ,
 ինչպէս Տէրը ըսաւ: 13 - Եւ Յեսու զա-
 նիկա օրհնեց, ու Յեփոնեան Քաղէբի՝
 Քերրոնը ժառանգութիւն տուաւ:
 14 - Ասոր համար Քերրոն կենեզեան
 Յեփոնէի որդւոյն Քաղէբի ժառանգու-
 թիւնը եղաւ մինչև այսօր, որովհետեւ
 Իսրայէլի Տէր Աստուծոյն բոլոր սրտով
 հնազանդութիւն ըրաւ: 15 - Ու Քեր-
 րոնի անունը առաջ †Կարիաթ-արբա
 էր. «- այն Արբա՝ Ենակիմներուն մէջ
 մեծ մարդ մըն էր:

Ու երկիրը պատերազմէն հանգստա-
 ցաւ:

ԳԼ. ԺԵ

Եւ Յուդայի որդիներուն ցեղին վի-
 ճակը իրենց տոհմերուն համեմատ՝
 մինչև Եզովմայեցւոց սահմանը կը
 հասնէր. հարաւային կողմէն Սին ա-
 նապատը «-նայ հարաւային ծայրն էր:
 2 - Եւ անոնց հարաւային սահմանը
 այսեղաւ. Ազիծովուն ծայրէն, այսինքն
 հարաւակողմը նայող ծոցէն, «-եւլ, 3 -
 Ու հարաւային կողմէն Ակրարիմի
 զառ ի վերը ելլելով Սին կ'անցնի,
 ու հարաւային կողմէն Կադէս-բառ-
 նեայ ելլելով Եսրոն կ'անցնի. ետքը
 դէպի Ադզար ելլելով Կարկայի կողմը
 կը պտրտի. 4 - Ետքը Ասեմոնէ անց-
 նելով Եգիպտոսի հեղեղաւոր կ'ելլէ,
 ու այս սահմանը ծովուն մէջ կը վերջա-
 նայ. ձեր հարաւային սահմանը այս է:
 5 - Եւ արեւելեան սահմանը Ազի
 ծովն է մինչև Յորդանանու ծայրը:
 Ու հիւսիսային կողմի սահմանը Յոր-
 դանանու ծայրը եղող ծոցէն ինչ «-ի.
 6 - Եւ այս սահմանը մինչև Բեթազղա
 կ'ելլէ, ու Բեթարաբայի հիւսիսային
 կողմէն կը պտրտի. և այս սահմանը
 մինչև Ռուբենեան Բաանի վէմը կ'ելլէ.
 7 - Ետքը այս սահմանը Աքովրի ձորէն
 Գաղգազա կը դառնայ, որ այն ձորին
 հարաւակողմը եղող Էզովմիի զառ
 ի վերին դիմաց է. և այս սահմանը
 Ենսամիւսի ջուրէն կ'անցնի, ու Ռով-
 գելի ազբիւրը կը վերջանայ. 8 - Եւ
 այս սահմանը Ենովմի որդւոյն ձորը՝
 հարաւային կողմէն Յերուսի, այսինքն
 Երուսաղէմի, քով կ'ելլէ. ետքը այս
 սահմանը մինչև այն լեռան գլուխը
 կ'ելլէ, որ արեւմտեան կողմէն Ենովմի
 ձորին դիմաց է, ու հիւսիսային կող-
 մէն Ռափայիներուն ձորին ծայրն է.
 9 - Եւ այս սահմանը լեռանը գլխէն
 մինչև Նափթովայի ջուրին ազբիւրը
 կը հասնի, ու Եփրոն լեռանը քաղաք-
 ները կ'ելլէ. ետքը այս սահմանը մինչև
 Բաազա, այսինքն Կարիաթարիմ, կը
 հասնի. 10 - Եւ այս սահմանը Բաա-
 ղայէ դէպի արեւմուտք Սէիր լեռը
 կը պտրտի, ու հիւսիսային կողմէն Յա-
 րիմ լեռանը քովէն կ'անցնի, որ Քե-
 սաղօն է. անկէ Բեթսամիւս կ'իջնէ,
 ու Թամնա կ'անցնի. 11 - Եւ այս սահ-

*Եբբ. իմ Տէր Աստուծոյս ետեւէն լե-
 ցուցի
 †Այսինքն, Արբայի քաղաքը

մանը Ակկարոնի քով կ'ելլէ դէպ ի Տիւսիս, ու այս սահմանը Սաքարոն հասնելով՝ Բաաղա լեռնէն կ'անցնի, ու Յաբնէլ կ'ելլէ. և այս սահմանը ծովուն մէջ կը վերջանայ:

12 - Եւ արեւմտեան սահմանը մեծ ծովուն եզերքն է. Յուդայի որդիներուն սահմանը շուրջանակի իրենց սոսմերուն համեմատ ասիկա է:

13 - Եւ Յեփոնեան Քաղէբի՝ Յուդայի որդիներուն մէջ Ենակի Տօրը Արբայի քաղաքը, այսինքն Քերրոնը բաժին տուաւ, ինչպէս Տէրը Յեսուի հրամայեր էր: 14 - Եւ Քաղէբ անկէ Ենակի երեք որդիները, Սէսին ու Աքիմանը և Թուլմին, Ենակի որդիները, վաճառեց: 15 - Եւ անկէ Գաբիի բնակիչներուն վրայ գնաց. (ու Գաբիի անունը առաջ Կարիաթ-սեփեր էր.)

16 - Եւ Քաղէբ ըսաւ, Ով որ Կարիաթ-սեփերը զարնէ ու առնէ, Իմ Աքսա աղջիկս անոր կնուծեան պիտի տամ:

17 - Եւ Քաղէբի եղբօրը Կենեզի որդին Գոթոնիէլ առաւ զանիկա. ու Քաղէբ իր Աքսա աղջիկը անոր կնուծեան տուաւ: 18 - Ու երբ անոր կ'երթար, զանիկա յորդորեց որ իր հօրմէն ազարակ մը ուզէ. և իշուն վրայէն վար իջաւ. ու Քաղէբ անոր ըսաւ, Ի՞նչ եղաւ քեզի:

19 - Եւ աղջիկը ըսաւ, Ինծի օրհնութիւն տուր. որովհետեւ ինծի հարաւային երկիր մը տուիր, ինծի «ջուրի աղբիւրներ» ալ տուր. ուստի անոր՝ վերի աղբիւրները ու վարի աղբիւրները տուաւ:

20 - Յուդայի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց սոսմերուն համեմատ ասիկա է:

21 - Ու Եգովմի սահմանին քով հարաւային կողմը Յուդայի որդիներուն ցեղին վերջին քաղաքները ասոնք են. Կարեսէլ, Եզեր, Յագուր, 22 - Կինա, Կէմօնա, Ադադա, 23 - Կադէս, Հասար, Յեթնան, 24 - Չիփ, Տէլէմ, Բաարօթ, 25 - Հասար-ադաթա, Կարիօթ, Եսրոն՝ որ է Հասար, 26 - Ամամ, Սամա, Մօլադա, 27 - Ասեր-գադգա, Եսեմն, Բեթփաղէթ, 28 - Ասեր-սուադ, Բերասրէէ, Բադիօթիա, 29 - Բաաղա, Էյիմ, Ասէմ, 30 - Էյթուղադ, Քէսիլ, Հօրմա, 31 - Սիկէլակ,

*Կ-ժ, ջրակայաններ
+Կ-ժ, Կարիօթ եսրոն

Մադմաննա, Սանսաննա, 32 - Լաբաովթ, Սէլէմ, Ային ու Ռեմօն. ամէնը քսանըինը քաղաք է, ու անոնց գեղերը:

33 - Գաշաավայրի մէջ՝ Եսթաուուդ, Սարաա, Անա, 34 - Չանով, Ենգանիմ, Թափուա, Ենայիմ, 35 - Յերիմութ, Ոգողոմ, Սոքով, Ազեկա, 36 - Սազարիմ, Աաիթայիմ և Գադերա (ու Գադերօթայիմ). ասանչորս քաղաք և անոնց գեղերը: 37 - Սէննան, Ադասա, Մադգադգադ, 38 - Գադասն, Մասփա, Յեկթովէլ, 39 - Լաքիս, Բազկաթ, Էզղոն, 40 - Քաբբօն, Լամա, Քիթլիս, 41 - Գադերօթ, Բեթգազոն, Նասամա ու Մակեդա. ասանրվեց քաղաք և անոնց գեղերը: 42 - Լեբնա, Եթեր, Ասան, 43 - Յեփթա, Անա, Նեսիբ, 44 - Կէիլա, Աքեզիբ և Մարեսա. ինը քաղաք ու անոնց գեղերը: 45 - Ակկարոն իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. 46 - Ակկարոնէ մինչև ծովը, Ասեդովթի քովի բոլոր քաղաքները իրենց գեղերովը. 47 - Ասեդովթ իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. Գազա իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը մինչև Եգիպտոսի հեղեղատը ու մինչև մեծ ծովը իր սահմաններովը:

48 - Եւ լեռնավայրի վրայ՝ Սամիր, Յաթիր, Սոքով, 49 - Գաննա, Կարիաթ-սաննա, այսինքն Գաբի, 50 - Անաբ, Եսթեմով, Անիմ, 51 - Գոսոմ, Քօղօն ու Գեղոն. ասանրմէկ քաղաք ու անոնց գեղերը: 52 - Երեբ, Գուամա, Եսան, 53 - Յանոււմ, Բեթթափուա, Ափեկա, 54 - Գամմատա, Կարիաթ-արբա, այսինքն Քերրոն, ու Սիովր. ինը քաղաք և անոնց գեղերը: 55 - Մասն, Կարմեղոս, Չիփ, Յետասա, 56 - Յեզրայէլ, Յեկգասամ, Չանով, 57 - Կային, Գաբասա ու Թամնա. ասարք քաղաք ու անոնց գեղերը: 58 - Ազուղ, Բեթսուր, Գեդովր, 59 - Մասարաթ, Բեթանովթ ու Էյթեկոն. վեց քաղաք ու անոնց գեղերը: 60 - Կարիաթ-բասադ, այսինքն Կարիաթարիմ ու Ռաբբա. երկու քաղաք ու անոնց գեղերը:

61 - Անապատին մէջ Բեթարարա, Մադգին, Սէքաբա, 62 - Ներսան, Ազի քաղաքը ու Ենգադգի. վեց քաղաք ու անոնց գեղերը:

63 - Բայց Յուդայի որդիները կարող

64 - Եւ Եգովմի սահմանին քով հարաւային կողմը Յուդայի որդիներուն ցեղին վերջին քաղաքները ասոնք են. Կարեսէլ, Եզեր, Յագուր, 22 - Կինա, Կէմօնա, Ադադա, 23 - Կադէս, Հասար, Յեթնան, 24 - Չիփ, Տէլէմ, Բաարօթ, 25 - Հասար-ադաթա, Կարիօթ, Եսրոն՝ որ է Հասար, 26 - Ամամ, Սամա, Մօլադա, 27 - Ասեր-գադգա, Եսեմն, Բեթփաղէթ, 28 - Ասեր-սուադ, Բերասրէէ, Բադիօթիա, 29 - Բաաղա, Էյիմ, Ասէմ, 30 - Էյթուղադ, Քէսիլ, Հօրմա, 31 - Սիկէլակ,

32 - Լաբաովթ, Սէլէմ, Ային ու Ռեմօն. ամէնը քսանըինը քաղաք է, ու անոնց գեղերը:

33 - Գաշաավայրի մէջ՝ Եսթաուուդ, Սարաա, Անա, 34 - Չանով, Ենգանիմ, Թափուա, Ենայիմ, 35 - Յերիմութ, Ոգողոմ, Սոքով, Ազեկա, 36 - Սազարիմ, Աաիթայիմ և Գադերա (ու Գադերօթայիմ). ասանչորս քաղաք և անոնց գեղերը: 37 - Սէննան, Ադասա, Մադգադգադ, 38 - Գադասն, Մասփա, Յեկթովէլ, 39 - Լաքիս, Բազկաթ, Էզղոն, 40 - Քաբբօն, Լամա, Քիթլիս, 41 - Գադերօթ, Բեթգազոն, Նասամա ու Մակեդա. ասանրվեց քաղաք և անոնց գեղերը: 42 - Լեբնա, Եթեր, Ասան, 43 - Յեփթա, Անա, Նեսիբ, 44 - Կէիլա, Աքեզիբ և Մարեսա. ինը քաղաք ու անոնց գեղերը: 45 - Ակկարոն իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. 46 - Ակկարոնէ մինչև ծովը, Ասեդովթի քովի բոլոր քաղաքները իրենց գեղերովը. 47 - Ասեդովթ իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. Գազա իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը մինչև Եգիպտոսի հեղեղատը ու մինչև մեծ ծովը իր սահմաններովը:

48 - Եւ լեռնավայրի վրայ՝ Սամիր, Յաթիր, Սոքով, 49 - Գաննա, Կարիաթ-սաննա, այսինքն Գաբի, 50 - Անաբ, Եսթեմով, Անիմ, 51 - Գոսոմ, Քօղօն ու Գեղոն. ասանրմէկ քաղաք ու անոնց գեղերը: 52 - Երեբ, Գուամա, Եսան, 53 - Յանոււմ, Բեթթափուա, Ափեկա, 54 - Գամմատա, Կարիաթ-արբա, այսինքն Քերրոն, ու Սիովր. ինը քաղաք և անոնց գեղերը: 55 - Մասն, Կարմեղոս, Չիփ, Յետասա, 56 - Յեզրայէլ, Յեկգասամ, Չանով, 57 - Կային, Գաբասա ու Թամնա. ասարք քաղաք ու անոնց գեղերը: 58 - Ազուղ, Բեթսուր, Գեդովր, 59 - Մասարաթ, Բեթանովթ ու Էյթեկոն. վեց քաղաք ու անոնց գեղերը: 60 - Կարիաթ-բասադ, այսինքն Կարիաթարիմ ու Ռաբբա. երկու քաղաք ու անոնց գեղերը:

61 - Անապատին մէջ Բեթարարա, Մադգին, Սէքաբա, 62 - Ներսան, Ազի քաղաքը ու Ենգադգի. վեց քաղաք ու անոնց գեղերը:

63 - Բայց Յուդայի որդիները կարող

64 - Եւ Եգովմի սահմանին քով հարաւային կողմը Յուդայի որդիներուն ցեղին վերջին քաղաքները ասոնք են. Կարեսէլ, Եզեր, Յագուր, 22 - Կինա, Կէմօնա, Ադադա, 23 - Կադէս, Հասար, Յեթնան, 24 - Չիփ, Տէլէմ, Բաարօթ, 25 - Հասար-ադաթա, Կարիօթ, Եսրոն՝ որ է Հասար, 26 - Ամամ, Սամա, Մօլադա, 27 - Ասեր-գադգա, Եսեմն, Բեթփաղէթ, 28 - Ասեր-սուադ, Բերասրէէ, Բադիօթիա, 29 - Բաաղա, Էյիմ, Ասէմ, 30 - Էյթուղադ, Քէսիլ, Հօրմա, 31 - Սիկէլակ,

32 - Լաբաովթ, Սէլէմ, Ային ու Ռեմօն. ամէնը քսանըինը քաղաք է, ու անոնց գեղերը:

33 - Գաշաավայրի մէջ՝ Եսթաուուդ, Սարաա, Անա, 34 - Չանով, Ենգանիմ, Թափուա, Ենայիմ, 35 - Յերիմութ, Ոգողոմ, Սոքով, Ազեկա, 36 - Սազարիմ, Աաիթայիմ և Գադերա (ու Գադերօթայիմ). ասանչորս քաղաք և անոնց գեղերը: 37 - Սէննան, Ադասա, Մադգադգադ, 38 - Գադասն, Մասփա, Յեկթովէլ, 39 - Լաքիս, Բազկաթ, Էզղոն, 40 - Քաբբօն, Լամա, Քիթլիս, 41 - Գադերօթ, Բեթգազոն, Նասամա ու Մակեդա. ասանրվեց քաղաք և անոնց գեղերը: 42 - Լեբնա, Եթեր, Ասան, 43 - Յեփթա, Անա, Նեսիբ, 44 - Կէիլա, Աքեզիբ և Մարեսա. ինը քաղաք ու անոնց գեղերը: 45 - Ակկարոն իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. 46 - Ակկարոնէ մինչև ծովը, Ասեդովթի քովի բոլոր քաղաքները իրենց գեղերովը. 47 - Ասեդովթ իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը. Գազա իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը մինչև Եգիպտոսի հեղեղատը ու մինչև մեծ ծովը իր սահմաններովը:

48 - Եւ լեռնավայրի վրայ՝ Սամիր, Յաթիր, Սոքով, 49 - Գաննա, Կարիաթ-սաննա, այսինքն Գաբի, 50 - Անաբ, Եսթեմով, Անիմ, 51 - Գոսոմ, Քօղօն ու Գեղոն. ասանրմէկ քաղաք ու անոնց գեղերը: 52 - Երեբ, Գուամա, Եսան, 53 - Յանոււմ, Բեթթափուա, Ափեկա, 54 - Գամմատա, Կարիաթ-արբա, այսինքն Քերրոն, ու Սիովր. ինը քաղաք և անոնց գեղերը: 55 - Մասն, Կարմեղոս, Չիփ, Յետասա, 56 - Յեզրայէլ, Յեկգասամ, Չանով, 57 - Կային, Գաբասա ու Թամնա. ասարք քաղաք ու անոնց գեղերը: 58 - Ազուղ, Բեթսուր, Գեդովր, 59 - Մասարաթ, Բեթանովթ ու Էյթեկոն. վեց քաղաք ու անոնց գեղերը: 60 - Կարիաթ-բասադ, այսինքն Կարիաթարիմ ու Ռաբբա. երկու քաղաք ու անոնց գեղերը:

61 - Անապատին մէջ Բեթարարա, Մադգին, Սէքաբա, 62 - Ներսան, Ազի քաղաքը ու Ենգադգի. վեց քաղաք ու անոնց գեղերը:

63 - Բայց Յուդայի որդիները կարող

64 - Եւ Եգովմի սահմանին քով հարաւային կողմը Յուդայի որդիներուն ցեղին վերջին քաղաքները ասոնք են. Կարեսէլ, Եզեր, Յագուր, 22 - Կինա, Կէմօնա, Ադադա, 23 - Կադէս, Հասար, Յեթնան, 24 - Չիփ, Տէլէմ, Բաարօթ, 25 - Հասար-ադաթա, Կարիօթ, Եսրոն՝ որ է Հասար, 26 - Ամամ, Սամա, Մօլադա, 27 - Ասեր-գադգա, Եսեմն, Բեթփաղէթ, 28 - Ասեր-սուադ, Բերասրէէ, Բադիօթիա, 29 - Բաաղա, Էյիմ, Ասէմ, 30 - Էյթուղադ, Քէսիլ, Հօրմա, 31 - Սիկէլակ,

չեղան Երուսաղէմի մէջ բնակող Յե-
բուսացիները վաճառել . ուստի Յեբու-
սացիները Յուդայի որդիներուն հետ
Երուսաղէմի մէջ կը բնակին մինչև
այսօր :

ԳԼ. ԺԶ

Եւ Յովսէփի որդիներուն վիճակը
այսպէս էլաւ . անոնց սահմանը Երիքովի
դիմաց Յորդանանէ Երիքովի ջուրին ա-
րեւելեան կողմէն այն անապատը կ'եր-
թայ, որ Երիքովէ լեւնակողմը՝ Բեթէլ
կ'ելլէ, 2 - Աւ Բեթէլէ Լուզ կ'ելլէ, և
Արքի-ատարօթի սահմանէն կ'անցնի ,
3 - Աւ արեւմտեան կողմէն Յեփայթի
սահմանը կ'իջնէ , մինչև վարի Բեթո-
րոնին սահմանը ու մինչև Գաղէր , և
ծովուն մէջ կը վերջանայ : 4 - Եւ Յով-
սէփի որդիները , Մանասէ ու Եփրեմ՝
ժառանգութիւն առին :

5 - Աւ Եփրեմի որդիներուն սահմանը
իրենց տոհմերուն համեմատ այս եղաւ .
այսինքն անոնց ժառանգութեան սահ-
մանը արեւելեան կողմէն Ատարօթ-ա-
ղար եղաւ մինչև վերի Բեթորոնը . 6 -
Եւ այս սահմանը հիւսիսային կողմէն
դէպի Մաքմեթաթ՝ ծովը կ'ելլէ , ու
այս սահմանը արեւելեան կողմէն մին-
չև Թէանթսելով կը պտըտի, ու ետքը
արեւելեան կողմէն Յանովէ կը մանէ ,
7 - Եւ Յանովէէ Ատարովթ ու Նաա-
րա կ'իջնէ, ու Երիքովի քովէն անցնե-
լով Յորդանան կ'ելլէ . 8 - Եւ այս
սահմանը Թափուայէ Կանա հեղեղաւր
կ'երթայ արեւմտեան կողմէն, ու ծո-
վուն մէջ կը վերջանայ : Եփրեմի որ-
դիներուն ցեղին ժառանգութիւնը
իրենց տոհմերուն համեմատ ասիկա է .
9 - Նաև Եփրեմի որդիներուն համար
զատուած քաղաքները Մանասէի որ-
դիներուն ժառանգութեանը մէջ են ,
քոյր քաղաքները իրենց գեղերովը :

10 - Եւ անոնք Գաղերի մէջ բնա-
կող Քանանացիները չվաճառեցին . ու
Քանանացիները մինչև այսօր Եփրեմի
մէջ բնակելով , հարկատու ծառաներ
եղան :

ԳԼ. ԺԷ

Եւ ասիկա եղաւ Մանասէի ցեղին
վիճակը , քանզի անկա Յովսէփի անդ-
րանիկն էր . Մանասէի անդրանիկը Մա-
քիը, Գաղաաղի հայրը, պատերազմող

մարդ մը ըլլալուն համար, Գաղաաղ ու
Բաասան անորը եղան : 2 - Եւ Մանասէի
միւս որդիներն ալ , Աբիեգերի որդի-
ները , Քեղեքի որդիները , Ասրիէլի որ-
դիները, Սիւքէմի որդիները, Ոփերի որ-
դիները, ու Սեմիգայի որդիները իրենց
տոհմերուն համեմատ ժառանգու-
նուեցան . Յովսէփեան Մանասէի արու-
զաւակները իրենց տոհմերուն համե-
մատ ասոնք էին : 3 - Եւ Մանասէի
որդւոյն Մաքիըի որդւոյն Գաղաաղի
որդւոյն Ոփերի որդին Սալպաաղ տղաք-
ներ չունէր, բայց միայն աղջիկներ, ու
անոր աղջիկներուն անունները ասոնք
են, Մաալա , Նուա , Էզղա , Մեղքա
ու Թերաս : 4 - Ասոնք Եղիազար քա-
հանային առջև, Նաւեան Յեսուի առ-
ջև , ու իշխաններուն առջև ներկայա-
նալով ըսին, Տէրը Մովսէսի հրամայեց
որ մեր եղբայրներուն մէջ մեզի ժա-
ռանգութիւն արուի : Եւ Յե-
րոջը հրամանով անոնց հօրը եղբայր-
ներուն մէջ անոնց ժառանգութիւն
տուաւ : 5 - Եւ Մանասէի՝ Յորդանա-
նու անդիի կողմը եղող Գաղաաղի ու
Բաասանի երկրէն զատ տասը բաժին ին-
կաւ . 6 - Քանզի Մանասէի աղջիկները
անոր աղոցը մէջ ժառանգութիւն ա-
ռին, ու Գաղաաղու երկիրը Մանասէի
միւս որդիներուն եղաւ :

7 - Եւ Մանասէի սահմանը ասիկա
եղաւ . *Ասերէ մինչև Մաքմեթաթ՝ որ
Սիւքէմի դիմաց է , ու այս սահմանը
աջ կողմը դառնալով մինչև Թա-
փուայի աղբիւրին +*Վ բնակողներուն
կը հասնի : 8 - Թափուայի երկիրը Մա-
նասէի եղաւ, ու Մանասէի սահմանին
մէջ եղող Թափուա +*Ղա+ը Եփրեմի
որդիներուն եղաւ : 9 - Եւ այս սահ-
մանը Կանա հեղեղաւր կ'իջնէ, հեղե-
ղատին հարաւային կողմէն : Մանասէի
քաղաքներուն մէջ ասոնք Եփրեմի քա-
ղաքներն են . և Մանասէի սահմանը
հեղեղատին հիւսիսային կողմն է , ու
ծովուն մէջ կը վերջանայ : 10 - Հա-
րաւային կողմը Եփրեմի , ու հիւսիսա-
յին կողմը Մանասէի ըլլալով , անոնց
սահմանը ծովը եղաւ . և հիւսիսային
կողմէն Ասերի, ու արեւելեան կողմէն
Իսաքարի հետ կը միանան : 11 - Եւ
Իսաքարի ու Ասերի սահմաններուն մէջ՝
Բեթսան ու անոր գիւղաքաղաքները ,

*Կա՛, Ասեր-մաքմեթաթէ

և Յեզղամ՝ ու անոր գիւղաքաղաքները, և Դովրի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Ենդովրի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Թանաքի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, Մակեդոնի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները. այս երեք գաւառը Մանասէի եղան: 12 - Եւ Մանասէի որդիները չկրցան այս քաղաքներուն բռնաբարելու. ու Քանանացիները կամակորուժեամբ այն երկրին մէջ բնակեցան: 13 - Աւ Իսրայէլի որդիները երբ ուժովցան՝ հարկատու ըրին Քանանացիները, բայց զանոնք չվճնտեցին իսպառ:

14 - Եւ Յովսէփի որդիները Յեսուի հետ խօսեցան ու ըսին, Ինչո՞ւ համար ինծի հայր մէկ վիճակ ու մէկ բաժին ժառանգութիւն տուիր, ու ես բազմաթիւ ժողովուրդ մըն եմ. քանզի Աստուած մինչև հիմա զիս օրհնեց:

15 - Եւ Յեսու անոնց ըսաւ, Եթէ դուն բազմաթիւ ժողովուրդ ես, անասուր ելիր ու զանհկա կարէ, և Փերեզացոց ու Ռափայիներուն երկրին մէջ քեզի Կեդ ըրէ, որովհետև Եփրեմի լեռը քեզի նեղ կու գայ:

16 - Եւ Յովսէփի որդիները ըսին, Լեռը մեզի համար չէ. ու հովիտի երկրին մէջ՝ Բեթսանի մէջ ու անոր գիւղաքաղաքներուն մէջ, և Յեզրայէլի հովիտին մէջ բնակող բոլոր Քանանացիները երկաթէ կառքեր ունին:

17 - Աւ Յեսու Յովսէփի տանը, այսինքն Եփրեմի ու Մանասէի, հետ խօսելով ըսաւ, Դուն բազմաթիւ ժողովուրդ ես, ու շատ ոյժ ունիս. քեզի հայր մէկ վիճակ չըլլայ.

18 - Լեռը քուկդ ըլլայ. և որովհետև անհկա անտառ է, զանհկա կարէ, ու մինչև ծայրը քուկդ ըլլայ. քանզի դուն Քանացիները անկէ պիտի վճնտես, թէև անոնք երկաթէ կառքեր ունենան ու զօրաւոր ըլլան:

ԳԼ ԺԸ

Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Սելովի մէջ ժողովուեցան, և հոն ժողովքի խորանը կանգնեցին, ու երկիրը անոնց առջև նուաճեցաւ:

2 - Աւ Իսրայէլի որդիներուն մէջ եօթը ցեղ մնացեր էր, որոնք իրենց ժառանգութիւնը առած չէին: 3 - Եւ Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ,

Մինչև ե՞րբ անհոգութիւն պիտի ընէք, ու պիտի չերթաք ժառանգելու այն երկիրը զոր ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեզի տուաւ: 4 - Ահի հի գեղէն երեք մարդ *ընարեցէք, ու զանոնք զրկեմ՝, որպէս զի ելլեն այն երկրին մէջ պարտին, ու զանհկա իրենց ժառանգութեանը համեմատ գրեն, ու երբ ինծի դառնան:

5 - Եւ զանհկա եօթը մասերու բաժնեն. Յուդա իր սահմանին մէջ հարաւային կողմը կենայ, ու Յովսէփի տունը իրենց սահմաններուն մէջ հիւսիսային կողմը կենան:

6 - Եւ դուք երկիրը եօթը բաժին գրեցէք, ու հոս ինծի բերէք, և մեր Տէր Աստուծոյն առջև հոս ձեզի համար վիճակ ձգեմ: 7 - Քանզի Ղեւտացիները ձեր մէջ բաժին չունին, որովհետև անոնց ժառանգութիւնը Տէրոջը քահանայութիւնն է. և Գադ ու Ռուբէն և Մանասէի կէս ցեղը Յորդանանու անդի կողմը դէպի արեւելք՝ իրենց ժառանգութիւնները առին, զորոնք Տէրոջը ծառան Մովսէս անոնց տուաւ:

8 - Եւ այն մարդիկը ելան գացին. ու Յեսու այն երկիրը գրելու գացողներուն պատուիրեց՝ ըսելով, Գացէք և այն երկրին մէջ պարտելով զանհկա գրեցէք. ետքը ինծի դարձէք, որպէս զի հոս Սելովի մէջ Տէրոջը առջև ձեզի համար վիճակ ձգեմ:

9 - Եւ այն մարդիկը գացին, ու այն երկրին մէջ պարտեցան, և զանհկա էր քաղաքներովը եօթը բաժին ընելով՝ զիրքի մը վրայ գրեցին, ու Սելով, բանակը, եկան Յեսուի:

10 - Եւ Յեսու Սելովի մէջ Տէրոջը առջև անոնց համար վիճակ ձգեց. ու Յեսու հոն երկիրը բաժնեց Իսրայէլի որդիներուն՝ իրենց բաժիններուն համեմատ:

11 - Եւ Նափի Բենիամինի որդիներուն ցեղին վիճակը ելաւ իրենց սահմաններուն համեմատ. ու իրենց վիճակին սահմանը Յուդայի որդիներուն ու Յովսէփի որդիներուն մէջտեղը ելաւ:

12 - Եւ անոնց հիւսիսային կողմի սահմանը Յորդանանէ եղաւ. ու այս սահմանը հիւսիսային կողմէն Երեքովի քով կ'ելլէ, և դէպի արեւմուտք լեռը վեր կ'ելլէ, ու Բեթաւանի անապատին մէջ կը վերջանայ.

13 - Եւ սահմանը անկէ ելելով Լուզէ կ'անցնի, Լուզի, այսինքն

*Եբր. տուէք

Բեթէլի, հարաւային կողմէն. ետքը այս սասմանը Ատարօթ-ադար կ'իջնէ, որ վարի Բեթորոնին հարաւային կողմը եղող լեռանը քով է: 14 - Եւ այս սասմանը արեւմտեան ծայրը հասնելով, դէպ ի հարաւ կը դառնայ հարաւային կողմէն Բեթորոնի դիմացի լեռնէն, ու կը վերջանայ Կարիաթ-բաադի մէջ, որ է Կարիաթարիմ, Յուդայի որդիներուն քաղաքը: Արեւմտեան ծայրը ասիկա է: 15 - Եւ հարաւային կողմը Կարիաթարիմի ծայրէն «Կեւլ», սասմանը դէպ ի արեւմուտք կ'երթայ, ու Նափթովայի ջուրին աղբիւրը կ'ելլէ: 16 - Եւ այս սասմանը Ռափայիններուն հովիտին մէջ, հիւսիսային կողմը եղող Ենովմի որդւոյն ձորին դիմացի լեռանը եզերքը կ'իջնէ, ու Յեբուսի քովէն դէպ ի հարաւ Ենովմի ձորէն իջնելով Ռովգելի աղբիւրը կ'իջնէ: 17 - Եւ հիւսիսային կողմէն նշան կտրելով Ենսամիւս կ'ելլէ, ու «Կե Եդովմի» զառ ի վերին դիմաց եղող Գալիլովթ կ'ելլէ, և Ռուբենեան Բաանի վէմը կ'իջնէ: 18 - Ետքը Արաբայի դիմացի կողմէն դէպ ի հիւսիս անցնելով Արաբա կ'իջնէ: 19 - Ետքը այս սասմանը դէպ ի հիւսիս Բեթադայի քովէն կ'անցնի, ու այս սասմանը Աղի ծովուն հիւսիսային ծոցը «Յորդանանու հարաւային ծայրը կը վերջանայ: Հարաւային սասմանը ասիկա է: 20 - Եւ արեւելեան կողմի սասմանը Յորդանան է: Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը շուրջանակի իր սասմաններովը անոնց տոհմերուն համեմատ ասիկա է:

21 - Եւ ասոնք են Բենիամինի որդիներուն ցեղին քաղաքները իրենց տոհմերուն համեմատ. Երիքով, Բեթադա, Եմեկկասիս, 22 - Բեթարաբա, Սեմարիմ, Բեթէլ, 23 - Աւիմ, Փարա, Եփրա, 24 - Քեփարամոննա, Հոփնի ու Գաբա. տասուերկու քաղաք և անոնց գեղերը: 25 - Գաբաւոն, Ռամա, Բերովթ, 26 - Մափա, Կեփրա, Մոսա, 27 - Ռէկեմ, Յերփայէլ, Թարադա, 28 - Սելա, Էլէփ, Յեբուս, այսինքն Երուսաղէմ, Գաբաթ «- Կարիաթ. տասնչորս քաղաք և անոնց գեղերը: Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է:

ԳԼ. ԺԹ

Ու երկրորդ վիճակը Շմաւոնի էլաւ, Շմաւոնի որդիներուն ցեղին իրենց տոհմերուն համեմատ. ու անոնց ժառանգութիւնը Յուդայի որդիներուն ժառանգութեան մէջ եղաւ: 2 - Եւ իրենց ժառանգութեան մէջ «Կառա» ունեցան. Բերսաբէէ, (Սաբէէ,) Մոլադա, 3 - Ասեր-սուադ, Բադա, Ասէմ, 4 - Էլթուզադ, Բաթուլ, Հորմա, 5 - Սիկելակ, Բեթմարբաբովթ, Ասեր-սուսա, 6 - Բեթլաբաւովթ և Սարուհէն. տասուերեք քաղաք ու անոնց գեղերը: 7 - Ային, Ռեմոն, Եթեր և Ասան. չորս քաղաք ու անոնց գեղերը: 8 - Եւ այս քաղաքներուն բոլորաբար եղած բոլոր գեղերը՝ մինչև «Բաադեթ-բէեր» - հարաւային Ռաման: Շմաւոնի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է: 9 - Շմաւոնի որդիներուն ժառանգութիւնը Յուդայի որդիներուն բաժինէն եղաւ, քանզի Յուդայի որդիներուն բաժինը շատ էր իրենց. անոր համար Շմաւոնի որդիները անոնց ժառանգութեանը մէջ ժառանգութիւն առին:

10 - Ու երրորդ վիճակը Զաբուղոնի որդիներուն էլաւ իրենց տոհմերուն համեմատ. և անոնց ժառանգութեանը սասմանը մինչև Սարիդ եղաւ: 11 - Ու անոնց սասմանը դէպ ի ծովը ու Մարազա կ'ելլէ, և Գաբաթ կը հասնի, ու Յեկնամի դիմաց եղող ձորը կը հասնի, 12 - Եւ Սարիդէ դէպ ի արեւելեան կողմը՝ Քաաղովթ-թարօրին սասմանը կը դառնայ, ու Գաբարաթէ ելլելով՝ վեր Յափիէ կ'ելլէ, 13 - Եւ անկէ դէպ ի արեւելք անցնելով Գեթ-քոփեր և Իթազասին կ'անցնի, ու Ռեմոն-մեթօար և Նուա կ'ելլէ: 14 - Ետքը այս սասմանը հիւսիսային կողմէն Ենաթօն կը պարտի, ու Յեփթայէլի ձորին մէջ կը վերջանայ: 15 - Եւ Կատաթ ու Նաաղօլ և Սամթօն ու Յադելա և Բեթլէհէմ. տասուերկու քաղաք ու անոնց գեղերը: 16 - Զաբուղոնի որդիներուն ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գեղերը:

*Կաթ, Բաադեթ-բէեր-ռաման հարաւային կողմէն

17 - Չորրորդ վիճակը Իսաքարի ելաւ, Իսաքարի որդիներուն իրենց սոսմերուն համեմատ. 18 - Ու անոնց սոսմանը ասիկա եղաւ. Յեզրայէլ ու Քասելովթ և Սունամ, 19 - Ու Ափերէմ և Սիան ու Անարէթ, 20 - Եւ Ռաբբիթ ու Կէսիօն ու Աբէս, 21 - Եւ Ռամաթ ու Ենգանիմ և Ենքադդա ու Բեթփատես. 22 - Եւ այս սոսմանը Թարօր, Սասիմա ու Բեթսամիւս կը հասնի, ու անոնց սոսմանը Յորդանանու մէջ կը վերջանայ. տասնըվեց քաղաք ու անոնց գեղերը: 23 - Իսաքարի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց սոսմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գեղերը:

24 - Եւ Տինգերորդ վիճակը Ասերի որդիներուն ցեղին ելաւ իրենց սոսմերուն համեմատ: 25 - Ու անոնց սոսմանը ասիկա եղաւ. Քեղկաթ ու Ազի և Բեաէն ու Աքաափ, 26 - Եւ Ալամէլէք ու Ամուդ և Մասադ. ու արեւմտեան կողմէն մինչև Կարմեղոս և Սիօր-լեւնաթ կը հասնի, 27 - Ու արեւելեան կողմէն դէպ ի Բեթդագոն կը դառնայ, ու հիւսիսային կողմէն Չարուղոն, Յեփթայէլի ձորը, Բեթամէկ ու Նիիէլ կը հասնի, և ձախ կողմէն Քարօղ կ'ելլէ, 28 - Ու Եբրօն և Բոթր ու Համմօն և Կանա, մինչև մեծ Սիգոն. 29 - Ետքը այս սոսմանը Ռամա կը դառնայ մինչև Տիւրոս ամուր քաղաքը, և այս սոսմանը Ուսա դառնալով ծովուն մէջ՝ Աքեղիբի վիճակին մէջ կը վերջանայ. 30 - Ու Ամմա և Ափէկ ու Բոթր. քսանուերկու քաղաքներ ու անոնց գեղերը: 31 - Ասերի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց սոսմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գեղերը:

32 - Վեցերորդ վիճակը Նեփթաղիմի որդիներուն ելաւ, այսինքն Նեփթաղիմի որդիներուն իրենց սոսմերուն համեմատ: 33 - Ու անոնց սոսմանը ասիկա եղաւ. Հելեփէ «- Ալօնէ մինչև Սանանիմ, ու Ագամի-Նագեբ և Յարնէլ մինչև Լակոււմ, ու «սոսմանը Յորդանանու մէջ կը վերջանայ: 34 - Եւ այս սոսմանը արեւմտեան կողմէն Ազանօթ-թարօր կը դառնայ, ու անկէ Հուկօկ կ'ելլէ. և հարաւային կողմէն մինչև Չարուղոն կը հասնի, ու արեւմտեան կողմէն մինչև Ասեր, և արեւելեան կողմէն մինչև Յուդա ու Յոր-

դանան կը հասնի. 35 - Եւ պարսպաւոր քաղաքները՝ Ասեդիմ, Սէր, Ամաթ, Ռեկկաթ, 36 - Քեներեթ, Ադամա, Ռամա, Հասոր, 37 - Կադէս, Եզրայի, Ենհասոր, Յարօն, 38 - Մակդաղիէլ, Հարէմ, Բեթանաթ ու Բեթսամիւս. տասնըինը քաղաք և անոնց գեղերն են: 39 - Նեփթաղիմի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց սոսմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գեղերը:

40 - Եօթներորդ վիճակը Իանի որդիներուն ցեղին ելաւ իրենց սոսմերուն համեմատ: 41 - Եւ անոնց ժառանգութեան սոսմանը ասիկա եղաւ. Սարաա ու Եսթաւուդ և Իրամէս, 42 - Ու Սաղաբին և Այեղան ու Յեթլա, 43 - Եւ Ելօն ու Թամնաթա և Ակկարոն, 44 - Ու Ելթեկէ և Գաբաթոն ու Բաալօթ, 45 - Ու Եհուդ և Բանէ-բարակ ու Գեթրեմօն, 46 - Եւ Մէարկօն ու Ռակկոն, Յոպպէի դիմացը եղած սոսմանովը մէկտեղ: 47 - Եւ Իանի որդիներուն սոսմանը իրենց պարի եկաւ. ուստի Իանի որդիները ոտք ելան, ու Լէսէմի հետ պատերազմեցան, և զանիկա առնելէ ետքը սուրի բերնէ անցուցին, ու զանիկա ժառանգելով անոր մէջ բնակեցան, և Լէսէմը իրենց հօրը Իանի անունովը Իան կոչեցին: 48 - Իանի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց սոսմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գեղերը:

49 - Ու երկիրը իր սոսմաններովը բաժնելը լմնցնելէն ետքը, Իսրայէլի որդիները Նաւեան Յեսուի իրենց մէջ ժառանգութիւն տուին. 50 - Տէրօջը հրամանով անորուզած քաղաքը, Թամնաթ-սարան, իրեն տուին Եփրեմի լեռանը վրայ. ու անիկա քաղաքը շինեց, և անոր մէջ բնակեցաւ:

51 - Ասոնք են այն ժառանգութիւնները զորոնք Եղիազար քահանան և Նաւեան Յեսու ու Իսրայէլի որդիներուն ցեղերուն նահապետները Սելովի մէջ Տէրօջը առջև, ժողովքի խորանին դրանը քով, վիճակով բաժնեցին. ու երկիրը բաժնելը լմնցուցին:

ԳԼ. Ի

Եւ Տէրը խօսեցաւ Յեսուի՝ ըսելով, 2 - Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ,

Մովսէսի ձեռքով այն իմ ձեզի ըսած ապաստանի քաղաքներս ձեզի համար որոշեցէք. 3 - Որպէս զի սխալմամբ «-անգիտութեամբ մարդ զարնող սպաննողը հոն փախչի . ու անոնք ձեզի ապաստանարան ըլլան արեան վրէժինդիր եղողէն . 4 - Եւ «անգիտութեամբ» «պաննող» այն քաղաքներէն մէկուն մէջ թող փախչի , ու քաղաքին դուռը կայնի , և այն քաղաքին ծերերուն իր իրաւունքը խօսի , որպէս զի լսեն . ու անոնք զանհկա քաղաքին մէջ իրենց քով առնելով՝ անոր ատեղ մը տան , որպէս զի իրենց հետ բնակի : 5 - Ու երբ արեան վրէժինդիրը անոր ետեւէն իյնայ , սպաննողը անոր ձեռքը չտան . քանզի անհկա իր դրացին անգիտութեամբ մեռցուցեր է , և առաջունէ անոր դէմ թշնամութիւն մը չունէր : 6 - Եւ անհկա այն քաղաքին մէջ պիտի բնակի , մինչև որ դատաստանի համար ժողովքին առջև կայնի , «-մինչև որ այն օրերը եղող քահանայապետը մեռնի . ետքը սպաննողը թող դառնայ , իր քաղաքը ու իր տունը երթայ , սյսինքն այն քաղաքը ուրկէ փախեր էր :

7 - Ուտի Գալիլեայի մէջ Կազէսը՝ * զատեցին Նեփթաղիմի լեռնակողմը , Սիւքէմը՝ Եփրեմի լեռնակողմը , և Կարիաթ-արբան՝ սյսինքն Քեբրոնը՝ Յուզայի լեռնակողմը : 8 - Ու Երիքովի * յիմա՝ Յորդանանու անդի կողմը դէպի արեւելք՝ Ռուբէնի ցեղէն՝ անապատին դաշտին մէջ Բոտորը , և Գազի ցեղէն՝ Գազատագու մէջ Ռամավթը , ու Մանասէի ցեղէն՝ Բասանի մէջ Գովզանը տուին : 9 - Բոլոր Իսրայէլի որդիներուն համար ու անոնց մէջ բնակող օտարականին համար որոշուած քաղաքները ստանք են . որպէս զի ամէն ով որ սխալմամբ մարդ մեռցնէ , հոն փախչի , ու արեան վրէժինդիրին ձեռքով չմեռնի , մինչև որ դատաստանի համար ժողովքին առջև չկայնի :

ԳԼ. ԻԱ

Ու Ղեւտացուց նահապետները Եզրիազար քահանային , Նաւեան Յեսուի և Իսրայէլի որդուց ցեղերուն նահապետներուն մօտեցան , 2 - Ու Քանանու

երկիրը Սելովի մէջ խօսեցան անոնց՝ ըսելով , Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեց որ մեզի բնակելու համար քաղաքներ , ու մեր անասուններուն համար անոնց արուարձանները արուին : 3 - Ու Իսրայէլի որդիները Տէրոջը հրամանով իրենց ժառանգութիւններէն այս քաղաքները ու անոնց արուարձանները Ղեւտացուց տուին :

4 - Եւ «-առջին» վիճակը Կահաթեանց ազգատոհմներուն ելաւ . ու Ղեւտացիներէն Ահարոն քահանային որդիներուն վիճակով տասուիրէք քաղաք ելաւ , Յուզայի ցեղէն , Շմուոնի ցեղէն ու Բենիամինի ցեղէն : 5 - Եւ Կահաթի միւս որդիներուն՝ Եփրեմի ցեղին ազգատոհմներէն ու Գանի ցեղէն և Մանասէի կէս ցեղէն վիճակով տասը քաղաք «-եց» : 6 - Ու Գերսոնի որդիներուն՝ Իսաքարի ցեղին ազգատոհմներէն և Ասերի ցեղէն ու Նեփթաղիմի ցեղէն և Բասանի մէջ եղող Մանասէի կէս ցեղէն վիճակով տասուիրէք քաղաք «-եց» : 7 - Մերարիի որդիներուն իրենց տոհմերուն համեմատ՝ Ռուբէնի ցեղէն , Գազի ցեղէն ու Զաբուղոնի ցեղէն տասուերկու քաղաք «-եց» : 8 - Ու Իսրայէլի որդիները այս քաղաքները ու անոնց արուարձանները վիճակով Ղեւտացուց տուին , ինչպէս Տէրը պատուիրէր էր Մովսէսի ձեռքով :

9 - Եւ Յուզայի որդիներուն ցեղէն ու Շմուոնի որդիներուն ցեղէն այս իրենց անունովը յիշուած քաղաքները տուին , 10 - Ու Ահարոնի որդիներուն եղան , որոնք Ղեւիի որդիներէն եղող Կահաթեանց ազգատոհմներէն էին . քանզի առաջին վիճակը անոնցն էր : 11 - Եւ անոնց՝ Յուզայի լեռանը վրայ Ենակի հօրը Արբայի քաղաքը , սյսինքն Քեբրոնը , տուին անոր շրջակայ արուարձաններովը . 12 - Եւ քաղաքին ազարակները ու գեղերը Յեփոնեան Քաղէբի կալուածք տուին : 13 - Ուտի Ահարոն քահանային որդիներուն՝ սպաննողի համար ապաստանի քաղաք ըլլաւ «-առ» Քեբրոնը տուին իր արուարձաններովը , նաև Լեբնան իր արուարձաններովը , ու Եսթեմովը իր արուարձաններովը , 15 - Եւ Քօզօնը իր արուարձաններովը , ու Գաբիրը իր արուարձաններովը , 16 - Եւ Այինը իր

* Եբր. սրբեցին

արուարձաններովը , ու Յետաան իր արուարձաններովը , և Բեթսամիւսը իր արուարձաններովը . այս երկու ցեղէն ինը քաղաք *--ին : 17 - Ու Բենիամինի ցեղէն՝ Գաբաւոնը իր արուարձաններովը , Գաբան իր արուարձաններովը , 18 - Անաթովթը իր արուարձաններովը , ու Գազմօնը իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 19 - Ահարոնի որդիներուն , քահանաներուն , բուլբ քաղաքները տասուիրեք քաղաք էին՝ ու անոնց արուարձանները :

20 - Եւ Կահաթի որդիներէն մնացած Ղեւտացի Կահաթեանց ազգատոհմներն ալ Եփրեմի ցեղէն վիճակով քաղաքներ առին . 21 - Ու անոնց՝ Եփրեմի լեռնակողմը սպաննողի համար ապաստանի քաղաք ըլլաւ *--ին : 22 - Սիլա իր արուարձաններովը , նաև Գազերը իր արուարձաններովը , 22 - Եւ Կաբսեմը իր արուարձաններովը , ու Բեթորոնը իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 23 - Եւ Գանի ցեղէն՝ Ելթեկէն իր արուարձաններովը , Գաբաթօնը իր արուարձաններովը , 24 - Այեղոնը իր արուարձաններովը , *-- Գեթրեմօնը իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 25 - Եւ Մանասէի կէս ցեղէն՝ Թանաքը իր արուարձաններովը , ու Գեթրեմօնը իր արուարձաններովը , յերկու քաղաք *--ին : 26 - Կահաթի որդիներուն մնացած ազգատոհմերուն բոլոր քաղաքները տասն էին , և անոնց արուարձանները :

27 - Ու Ղեւտացւոց ազգատոհմերէն եղող Գերսանի որդիներուն՝ Մանասէի կէս ցեղէն սպաննողի համար ապաստանի քաղաք ըլլաւ *--ին : Բասանի մէջ Գովզանը իր արուարձաններովը , նաև Բեեսաարան իր արուարձաններովը , յերկու քաղաք *--ին : 28 - Եւ Իսաքարի ցեղէն՝ Կեսիօնը իր արուարձաններովը , Գաբարաթը իր արուարձաններովը , 29 - Յերիմուլթը իր արուարձաններովը , Ենգանիմը իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 30 - Եւ Ասերի ցեղէն՝ Մասաղը իր արուարձաններովը , 31 - Արգօնը իր արուարձաններովը , Քեղկաթը իր արուարձաններովը , և Բոսըր իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 32 - Ու Նեփթաղիմի ցեղէն՝ սպաննողի համար ապաստանի քաղաք ըլլաւ *--ին :

*--ին Գալիլեայի մէջ Կադէսը իր արուարձաններովը , նաև Եմաթովթը իր արուարձաններովը , ու Կարթանը իր արուարձաններովը , երեք քաղաք *--ին : 33 - Գերսոնեանց բոլոր քաղաքները անոնց ազգատոհմերուն համեմատ տասուիրեք քաղաք էին՝ ու անոնց արուարձանները :

34 - Եւ մնացած Ղեւտացիներուն , այսինքն Մերարիի որդիներուն ազգատոհմերուն , Զաբուզոնի ցեղէն Յեկնամը իր արուարձաններովը , Կարթան իր արուարձաններովը , 35 - Գեֆան իր արուարձաններովը *-- Նասաղօր իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին :

36 - Եւ Ռուբէնի ցեղէն՝ Բոսորը իր արուարձաններովը , ու Յասաան իր արուարձաններովը , 37 - Կադեմօթը իր արուարձաններովը , ու Մեփայաթը իր արուարձաններովը , չորս քաղաք *--ին : 38 - Եւ Գադի ցեղէն սպաննողի համար ապաստանի քաղաք ըլլաւ *--ին : Գազաադի մէջ Ռամովթը իր արուարձաններովը , նաև Մանայիմը իր արուարձաններովը , 39 - Եսերոնը իր արուարձաններովը , *-- Յագերը իր արուարձաններովը , ամէնը չորս քաղաք *--ին : 40 - Ղեւտացւոց ազգատոհմերէն մնացած Մերարիի որդիներուն բոլոր քաղաքները իրենց տոհմերուն համեմատ իրենց վիճակովը տասուերկու քաղաք եղան :

41 - Իսրայէլի որդիներուն կալուածքներուն մէջ Ղեւտացւոց բոլոր քաղաքները քառասուներութ քաղաք էին՝ ու անոնց արուարձանները : 42 - Այս քաղաքներուն ամէն մէկը իր բուլբարիքը արուարձաններ ունէր . այս քաղաքներուն ամէնն ալ այնպէս էին :

43 - Եւ Տէրը Իսրայէլի տուաւ այն բոլոր երկիրը զոր անոնց հայրերուն տալու երդումը բեր էր . և զանիկա ժառանգեցին ու անոր մէջ բնակեցան : 44 - Եւ Տէրը զանոնք ամէն կողմէն հանգստացուց , ինչպէս անոնց հայրերուն երդումը բեր էր . ու անոնց բոլոր թշնամիներէն բնաւ մէկը չկրցաւ անոնց դէմ դնել . 45 - Եւ Տէրը անոնց ամէն թշնամիները անոնց ձեռքը տուաւ : 45 - Եւ Տէրը Իսրայէլի տանը համար որչափ բարի խօսքեր որ զրուցեր էր , անոնցմէ բան մը չպակսեցաւ . ամէնն ալ կատարուեցան :

ԳԼ. ԻԲ

Այն ատեն Յեսուս երէն կանչեց Ռուբենեանները, Գաղեանները ու Մանասէի կէս ցեղը, 2 - Եւ անոնց ըսաւ, Տէրոջը ծառան Մովսէս ինչ որ ձեզի հրամայեր էր, դուք անոնց ամէնն ալ պահեցիք. ու իմ խօսքս մտիկ ըրիք ամէն բանի մէջ զոր ձեզի պատուիրեցի: 3 - Այսչափ շատ օրեր մինչև այսօր ձեր եղբայրները չթողուցիք, և ձեր Տէր Աստուծոյն* պատուիրանքները ամբողջ պահեցիք: 4 - Ու հիմա ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրները հանգրտացուց, ինչպէս անոնց ըսաւ. ուստի հիմա դարձէք, ձեր վրանները -- ձեր կալուածքի երկիրը գացէք զոր Տէրոջը ծառան Մովսէս Յորդանանու անդիի կողմը ձեզի տուաւ: 5 - Միայն թէ աղէկ զգուշութիւն ընէք ի գործ դնելու այն պատուիրանքը ու օրէնքը զոր Տէրոջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց, որ ձեր Տէր Աստուածը սիրէք, և անոր ամէն ճամբաներուն մէջ քայլէք, ու անոր պատուիրանքները պահէք, և անոր յարիք, ու ձեր բոլոր սրտովը և բոլոր հոգովը զանիկա պաշտէք: 6 - Ու Յեսուս օրհնեց զանոնք և արձակեց. ու անոնք իրենց վրանները գացին: 7 - (Եւ Մանասէի կէս ցեղին Մովսէս իւր -- ասէր էր Բասանի մէջ, ու իսկէսին Յեսուս, անոնց եղբայրներուն հետ, Յորդանանու առիի կողմը տուաւ դէպ ի արեւմուտք:) Ու երբ Յեսուս զանոնք իրենց վրանները զրկեց, զանոնք օրհնեց. 8 - Եւ անոնց խօսեցաւ՝ ըսելով, Շատ հարստութիւնով ու խիստ շատ անասուններով, արծաթով, ոսկիով, պղնձով, երկաթով ու խիստ շատ հանդերձներով ձեր վրանները դարձէք, -- ձեր թշնամիներուն աւարը ձեր եղբայրներուն հետ բաժնեցէք:

9 - Ուստի Ռուբենի որդիները, Գաղի որդիները ու Մանասէի կէս ցեղը Քանանու երկիրը Սելովի մէջ Իսրայէլի որդիներէն զատուեցան գացին, որպէս զի իրենց ժառանգութեան երկիրը, այսինքն Քաղաադու երկիրը, երթան, զոր Մովսէսի ձեռքով Գաղեանները հրամանով տուեր էին:

10 - Ու երբ Յորդանանու մօտ տեղերը եկան, այն կողմը որ Քանանու երկիրն մէջ է, Ռուբենի որդիները, Գաղի որդիները ու Մանասէի կէս ցեղը հոն Յորդանանու քով սեղան մը շինեցին, երեսութով մեծ սեղան մը: 11 - Ու Իսրայէլի որդիները լսեցին* որ ասա Ռուբենի որդիները, Գաղի որդիները և Մանասէի կէս ցեղը Քանանու երկիրն կողմը Յորդանանու մօտ, ուր Իսրայէլի որդիները անցեր էին, սեղան մը շինեցին: 12 - Ու երբ Իսրայէլի որդիները լսեցին, Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Սելովի մէջ ժողվուեցան, որպէս զի անոնց վրայ երթան պատերազմելու համար: 13 - Եւ Իսրայէլի որդիները Ռուբենեանց, Գաղեանց ու Մանասէի կէս ցեղին՝ Քաղաադու երկիրը զրկեցին Եղիազարի որդին Փենէհէս քահանան, 14 - Եւ անոր հետ տասը իշխան, այսինքն Իսրայէլի ամէն ցեղերուն նահապետութիւններէն մէյմէկ իշխան, որոնց ամէն մէկը Իսրայէլի հազարաւորներուն նահապետութեանց իշխաններ էին. 15 - Եւ անոնք Քաղաադու երկիրը գացին Ռուբենի որդիներուն, Գաղի որդիներուն ու Մանասէի կէս ցեղին, և անոնց հետ խօսեցան՝ ըսելով, 16 - Տէրոջը բոլոր ժողովքը այսպէս կ'ըսէ. Այդ ի՞նչ մեղք է, զոր դուք Իսրայէլի Աստուծոյն դէմ գործեցիք՝ այսօր Տէրոջմէ խտարելով, և այսօր Տէրոջը դէմ ապստամբութիւն ընելու համար ձեզի սեղան շինեցիք: 17 - Միթէ Փոգովրի անօրէնութիւնը պզտիկ բան մըն է մեզի, որմէ մինչև այսօր չմտքուեցանք, ու Տէրոջը ժողովքին վրայ այն հարուածը եկաւ. 18 - Եւ դուք այսօր Տէրոջմէ խտարեցաք. ուստի եթէ դուք այսօր Տէրոջմէ ապստամբիք, ան ալ վաղը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ պիտի բարկանայ: 19 - Սակայն եթէ ձեր կալուածքի երկիրը անմտքուր իջ հարէք, Տէրոջը կալուածքի երկիրը անցէք, ուր Տէրոջը խորանը կանգնած է, ու մեր մէջ ժառանգութիւն առէք. և մեր Տէր Աստուծոյն սեղանէն զատ ձեզի սեղան շինելով Տէրոջը ապստամբ մի ըլլաք, ու մեզմէ ալ մի ապստամբիք: 20 - Երբ Զարայեան Աքար նզովուածէն -- ասէր ըսելով մեղք գործեց, միթէ

*Եբբ. պատուիրանքին պահպանութիւնը

*Եբբ. ըսելով, Ահա

Տէրօջ Քարկութիւնը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ չեկա՞ւ, ու այն մարդը իր անօրէնութեանը մէջ մինակ չմեռաւ :

21 - Եւ Ռուբէնի որդիները, Գադի որդիները ու Մանասէի կէս ցեղը պատասխան տուին, ու Իսրայէլի հազարապետներուն ըսին, 22 - *Աստուածներուն Եհովա Աստուածը, աստուածներուն Եհովա Աստուածը՝ ինք գիտէ. ու Իսրայէլ ալ թող գիտնայ, եթէ այ՞ քօնը ապստամբութեան համար, կամ Տէրոջը դէմ՝ յանցանք գործելու համար ըրինք, մեզ այսօր չչապրեցնէ.

23 - Եթէ մեզի սեղան շինեցինք Տէրոջմէ ետ դառնալու համար, կամ անոր վրայ ողջակէզ ու հացի ընծայ մատուցանելու համար, և կամ անոր վրայ խաղաղութեան զօհեր ընելու համար, Տէրը ինք քննութիւն ընէ: 24 - Այլ մենք ասիկա մեր վախէն շինեցինք, մտածելով որ գուցէ վաղը ձեր որդիները մեր որդիներուն խօսին՝ ու ըսեն թէ Գուք Իսրայէլի Տէր Աստուծոյն հետ ի՞նչ ունիք.

25 - Ով Ռուբէնեանք ու Գադեանք, Տէրը մեր ու ձեր մէջ Յորդանանը սահման դրաւ, Գուք Տէրոջմէ բնաւ բաժին չունիք. և այ՞ Կերպօ՛ւ ձեր որդիները մեր որդիներէն Տէրոջը երկիւզը վերցնեն. 26 - Այս պատճառաւ ըսինք, Հիմա մեզի սեղան մը շինենք, քօյս ոչ թէ ողջակէզի համար, ոչ ալ զօհի համար, 27 - Այլ որպէս զի անիկա մեր ու ձեր մէջ, և մեզմէ ետքը մեր սերունդներուն մէջ վկայութիւն ըլլայ, որպէս զի մեր ողջակէզներովը, մեր պատարագներովը ու մեր խաղաղութեան զօհերովը Տէրոջը ծառայութիւնը Անոր առջև ընենք, ու վաղը ձեր որդիները մեր որդիներուն չըսեն թէ Գուք Տէրոջմէ բաժին չունիք:

28 - Ու ըսինք, Եթէ մեզի կամ ձեր սերունդին վաղը այ՞ քօնը ըսելու ըլլան, պիտի ըսենք թէ Տեսէք Տէրոջը սեղանին օրինակը, զոր մեր հայրերը շինեցին, ոչ թէ ողջակէզի համար կամ զօհի համար, հապա մեր ու ձեր մէջ վկայութիւն մը ըլլալու համար: 29 - Քա՛ւ լիցի որ մենք

Տէրոջմէ ապստամբինք, ու այսօր Տէրոջմէ ետ դառնալով, խորանին առջև եղող մեր Տէր Աստուծոյն սեղանէն զատ ողջակէզի համար, հացի ընծայի համար և զօհի համար սեղան շինենք:

30 - Ու երբ Փենէհէս քահանան և անոր հետ եղող ժողովքին իշխանները, ու Իսրայէլի հազարապետները Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի որդիներուն ըսած խօսքերը լսեցին, իրենց հաճոյ երեւցաւ.

31 - Ու Եղիազարի որդին Փենէհէս քահանան Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի որդիներուն ըսաւ, Այսօր գիտցանք որ Տէրը մեր մէջ է, որովհետեւ դուք Տէրոջը դէմ այս յանցանքը չգործեցիք, և Իսրայէլի որդիները Տէրոջը ձեռքէն ազատեցիք:

32 - Այսպէս Եղիազարի որդին Փենէհէս քահանան և իշխանները Ռուբէնի որդիներուն ու Գադի որդիներուն քովէն, Գաղաադու երկրէն, Քանանու երկիրը Իսրայէլի որդիներուն դարձան, և անոնց լուր բերին: 33 - Ու այս բանը Իսրայէլի որդիներուն հաճոյ երեւցաւ, և Իսրայէլի որդիները զԱստուած օրհնեցին, և Ռուբէնի որդիներուն և Գադի որդիներուն բնակած երկիրը կործանելու համար անոնց վրայ երթանք պատերազմինք չըսին:

34 - Եւ Ռուբէնի որդիները ու Գադի որդիները այն սեղանին անունը վկայութիւն դրին, որովհետեւ ըսին, Անիկա մեր մէջ վկայ է, որ մեր Աստուածը Եհովան է:

ԳԼ. ԻԳ

Ու շատ օրերէն ետքը՝ որ Տէրը հասգրտացուցեր էր Իսրայէլը անոր բոլորտիքը եղած ամէն թշնամիներէն, Յետու ծերացած ու տարիքը առած էր: 2 - Եւ Յետու կանչեց բոլոր Իսրայէլը, անոր ծերերը, իշխանները, դատաւորները ու սատիկանները, և անոնց ըսաւ, Ես ծերացայ ու տարիքս առի. 3 - Եւ դուք տեսաք այն ամէնը, զոր ձեր Տէր Աստուածը ձեր առջև ըրաւ այս բոլոր ազգերուն. քանզի ձեր Տէր Աստուածը ինք ձեզի համար պատերազմ ըրաւ: 4 - Կայեցէք, ես ձեզի այս մնացած ազգերը վիճակով ժառանգութիւն բաժնեցի ձեր ցեղերուն համեմատ, Յորդանանէ, իմ կտարած բոլոր ազգերովս մէկատեղ, մինչև մեծ ծովը դէպ ի ա-

*Կա՛մ, Աստուածներուն Աստուածը Եհովան է, աստուածներուն Աստուածը Եհովան է. ք Օր. Ժ. 17: †ԵՔԲ. մի ապրեցնէր

րեւմուտք: 5 - Եւ ձեր Տէր Աստուածը ինք ձեր առջեւէն պիտի հալածէ զանոնք ու պիտի վռնակէ, և անոնց երկիրը դուք պիտի ժառանգէք, ինչպէս ձեր Տէր Աստուածը ձեզի ըսաւ: 6 - Ուստի խիստ ժիր եղէք, որպէս զի Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած բոլոր բաները զգուշութեամբ ի գործ դնէք, ու անկէ աջ կողմը կամ ձախ կողմը չխտորիք: 7 - Որպէս զի ձեր քով մնացած այս ազգերուն *հետ չխառնուիք*, ու անոնց աստուածներուն անունները չյիշէք, և անոնցմով երգում չընէք, ու անոնց չծառայէք և անոնց երկրպագութիւն չընէք: 8 - Հապա ձեր Տէր Աստուծոյն յարիք, ինչպէս մինչև այսօր բրիք: 9 - Եւ Տէրը ձեր առջեւէն մեծ ու զօրաւոր ազգեր վռնակէ, ու մինչև այսօր բնաւ մէկը չկրցու ձեզի դէմ դնել: 10 - Ձեզմէ մէկը անոնց հազարը պիտի հալածէ, քանզի ձեր Տէր Աստուածը ինք ձեզի համար կը պատերազմի, ինչպէս ձեզի ըսաւ: 11 - Ուստի ձեր անձերուն աղէկ զգուշութիւն ընէք, որպէս զի ձեր Տէր Աստուածը սիրէք: 12 - Բայց եթէ անկէ դառնալու ըլլաք, ու ձեր քով մնացած այս ազգերուն մնացորդին յարիք, և անոնց հետ խառնուիք, և անոնք ալ ձեզի հետ, 13 - Ստոյգ գիտցէք որ ձեր Տէր Աստուածը մէյմըն ալ այս ազգերը ձեր առջեւէն պիտի չվռնակէ. հապա անոնք ձեզի որոգայթ ու գայթակղութիւն պիտի ըլլան, և ձեր կողերուն խթաններ, ու ձեր աչքերուն փուշեր, մինչև որ բնաջինջ ըլլաք այս բարի երկրին վրայէն զոր ձեր Տէր Աստուածը ձեզի տուաւ: 14 - Եւ ահա ես այսօր ամէն երկրին ճամբան կ'երթամ, ու դուք ձեր բոլոր սրտովը ու բոլոր հոգովը գիտէք որ ձեր Տէր Աստուածը ձեզի համար որչափ բարի խօսքեր որ ըսաւ, անոնցմէ բան մը չպակսեցաւ. անոնց ամէնն ալ ձեր վրայ կատարուեցան, անոնցմէ բնաւ խօսք մը գետինը չինկաւ: 15 - Ու ինչպէս ձեր Տէր Աստուծոյն ձեզի համար ըրած ամէն բարի խօսքերը ձեր վրայ կատարուեցան, նոյնպէս Տէրը ամէն չար խօսքերը ձեր վրայ պիտի բերէ, մինչև որ բնաջինջ ընէ ձեզ այս բարի երկրին վրայէն, զոր

ձեր Տէր Աստուածը ձեզի տուաւ: 16 - Եթէ ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրած ուխտը զանց ընէք, ու երթաք օտար աստուածներ պաշտէք, և անոնց երկրպագութիւն ընէք, Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ պիտի բորբոքի, ու այն ձեզի տուած բարի երկրին վրայէն շուտով պիտի կորսուիք:

ԳԼ. ԻԳ

Եւ Յեսու Իսրայէլի ամէն ցեղերը Սիւքեմի մէջ ժողովեց, ու Իսրայէլի ծերերը, իշխանները, դատաւորները և ստիկանները կանչեց. ու անոնք Աստուծոյ տուջև կայնեցան: 2 - Եւ Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Առաջ ձեր հայրերը, Աբրահամի հայրը ու Նաբոլրի հայրը Թարա, *Գետին անդիի կողմը բնակեցան, և օտար աստուածներ պաշտեցին: 3 - Ու ես ձեր հայրը Աբրահամը Գետին անդիի կողմէն առի, ու զանիկա Քանանու բոլոր երկրին մէջ պտրացուցի, և անոր սերունդը շատցուցի, ու Իսահակը անոր տուի. 4 - Եւ Իսահակի Յակոբը ու Եսաւը տուի. ու Եսաւի Սէիր լեռը ժառանգութիւն տուի. և Յակոբ ու անոր որդիները Եգիպտոս իջան: 5 - Եւ Մովսէսը ու Ահարոնը զրկելով Եգիպտոսը զարկի, (ինչպէս անոր մէջ բրի,) ետքը ձեզ հանեցի: 6 - Ուստի ես ձեր հայրերը Եգիպտոսէ հանեցի, և դուք ծովը եկաք. ու Եգիպտացիները կառքերով ու ձիաւորներով մինչև Կարմիր ծովը ձեր հայրերուն ետեւէն ինկան: 7 - Այն ատեն անոնք Տէրոջը աղաղակեցին, և անիկա ձեր ու Եգիպտացուց մէջտեղ խաւար ձգեց, ու ծովը անոնց վրայ բերելով զանոնք ծածկեց. և ձեր աչքերը Եգիպտոսի մէջ ըրած բաներս տեսան. ու շատ ժամանակ անապատին մէջ բնակեցաք: 8 - Ետքը ձեզ բերի Յորդանանու անդիի կողմը բնակող Սմօրհացուց երկիրը, ու ձեզի հետ պատերազմ բրին. և զանոնք ձեր ձեռքը տուի, ու անոնց երկիրը ժառանգեցիք. և զանոնք ձեր առջեւէն բնաջինջ բրի: 9 - Ետքը Մովսէսի թագաւորը Սեպփօրեան Բաղակ ելաւ, ու Իսրայէլի

*Եբբ. մէջ չմանէք

*Այսինքն, Եփրատի

դէմ պատերազմ ըրաւ, և Բարդ զրկեց Բէովրեան Բաղասամը կանչելու, որպէս զի ձեզ նզովէ. 10 - Բայց չուզեցի Բաղասամի մտիկ ընել. ու անկա ձեզ բուլտրովին օրհնեց, և անոր ձեռքէն ձեզ ազատեցի: 11 - Ետքը Յորդանանէ անցնելով Երիքով եկաք, ու Երիքովի բնակիչները, Ամօրհացիները, Փերեզացիները, Քանանացիները, Քեռացիները, Քերգեսացիները, Խեւացիները ու Յեբուսացիները ձեզի դէմ պատերազմ ըրին, ու զանոնք ձեր ձեռքը տուի:

12 - Եւ ձեր առջեւէն իշամեղուները զրկեցի, որոնք զանոնք, այսինքն Ամօրհացաց երկու թագաւորները, ձեր առջեւէն վռնտեցին. ոչ քու սրովդ և ոչ քու աղեղովդ վնասեցան: 13 - Ու ձեզի երկիր մը տուի, որուն մէջ դուք չաշխատեցաք, և քաղաքներ՝ զորոնք դուք չընեցիք, ու անոնց մէջ կը բնակիք. և կ'ուտէք այն այգիներէն ու ձիթենիներէն զորոնք դուք չանկեցիք:

14 - Ուստի հիմա դուք Տէրոջմէն վախցէք, և անոր հաւատարմութեամբ ու ճշմարտութեամբ ծառայութիւն ըրէք, և այն աստուածները, որոնց ձեր հայրերը Գետին անդիի կողմը ու Եգիպտոսի մէջ ծառայութիւն ըրին, մէկդի ձգեցէք, և Տէրը պաշտեցէք:

15 - Բայց եթէ Տէրոջը ծառայութիւն ընելը ձեզի հաճոյ չերեւնար, ձեզի ընտրեցէք այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք. Գետին անդիի կողմը ձեր հայրերուն պաշտած աստուածները, թէ Ամօրհացաց աստուածները որոնց երկրին մէջ դուք կը բնակիք. բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք:

16 - Եւ ժողովուրդը պատասխան տուաւ ու ըսաւ, Քա՛ւ լիցի՝ որ մենք Եհովան թողունք և ուրիշ աստուածներ պաշտենք. 17 - Քանզի *Եհովա ինքն է մեր Աստուածը՝, որ մեզ ու մեր հայրերը Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեց, և ինք մեր աչքերուն առջև այս մեծ նշաններն ըրաւ, ու մեզ պահեց մեր ամէն գոցած ճամբուն մէջ և ամէն ազգերուն մէջ, որոնց մէջէն անցանք: 18 - Ու Եհովա բոլոր ազգերը ու այ՛ երկրին մէջ բնակող Ամօրհացիները մեր առջեւէն վռնտեց. մենք ալ Եհովան

պիտի պաշտենք, որովհետեւ մեր Աստուածը ինքն է:

19 - Եւ Յեսու ժողովուրդին ըսաւ, Դուք չէք կրնար Եհովան պաշտել, քանզի անկա սուրբ Աստուած է. ու անկա նախանձոտ Աստուած ըլլալով՝ ձեր յանցանքները ու մեղքերը չներեր:

20 - Քանզի երբ Եհովան թողուք ու օտար աստուածները պաշտէք, այն ատեն պիտի դառնայ, ու ձեզի բարիք *ընելու տեղ՝ ձեզ չարչարելով բնաջինջ պիտի ընէ:

21 - Եւ ժողովուրդը Յեսուի ըսաւ, Ոչ, հապա մենք Եհովան պիտի պաշտենք:

22 - Ու Յեսու ժողովուրդին ըսաւ, Դուք ձեր անձերուն վկայ էք, որ դուք ձեզի Եհովան ընտրեցիք՝ զանկա պաշտելու համար. (ու անոնք ըսին, Վկայ ենք.)

23 - Ուրեմն հիմա ձեր մէջ եղած օտար աստուածները վերցուցէք, և ձեր սիրտը Իսրայէլի Տէր Աստուծոյն դարձուցէք: 24 - Ու ժողովուրդը Յեսուի ըսաւ, Մենք մեր Տէր Աստուածը պիտի պաշտենք, ու անոր խօսքը մտիկ ընենք:

25 - Եւ նոյն օրը Յեսու ժողովուրդին հետ ուխտ ըրաւ, ու Սիւքեմի մէջ անոր կանոն ու դատաստան դրաւ:

26 - Եւ Յեսու այս խօսքերը Աստուծոյ օրինաց գիրքին մէջ գրեց, ու մեծ քար մը առաւ, և զանկա Տէրոջը սրբարանին քով եղած բեւեկնիին տակ կանգնեց: 27 - Ու Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Ահա այս քարը մեզի վկայ ըլլայ, քանզի ասիկա Տէրոջը մեզի հետ խօսած բոլոր խօսքերը լսեց. ուստի ասիկա ձեզի վկայ ըլլայ, որպէս զի չըլլայ թէ ձեր Աստուածը ուրանաք:

28 - Ետքը Յեսու ժողովուրդը արձակեց, «- ամէն մարդ իր ժառանգութեանը քնաց:

29 - Եւ այս բաներէն ետքը Տէրոջը ծառան Նաւեան Յեսու մեռաւ, հարիւր տասը տարեկան ըլլալով. 30 - Ու զանկա իր ժառանգութեանը սահմանին մէջ Գաաա լեռան հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը Թամնաթ-աարայի մէջ թաղեցին:

31 - Եւ Յեսուի բոլոր օրերուն մէջ, ու Յեսուէ ետքը ողջ մնացող և Իսրայէլի համար Տէրոջը ըրած ամէն գոր-

*Կա՛մ, մեր Եհովա Աստուածը ինքն է

*Եք: ըրած ըլլալէն ետքը

ծերը գիտցող ծերերուն բոլոր օրերուն մէջ, Իսրայէլ Տէրօջը ծառայութիւն ըրաւ :

32 - Եւ Յովսէփի սուրբները, զորոնք Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հաներ էին, Սիւքէմի մէջ թաղեցին ագարակին այն մասին մէջ զոր Յակօբ Սիւքէմի հօրը Եմովրի որդիներէն հարիւր

*կար արծաթի՝ ծախու աւեր էր. ու անհկա Յովսէփի որդիներուն ժառանգութիւնն եղաւ :

33 - Ահարոնի որդին Եղիազար ալ մեռաւ, ու զանհկա Եփրեմի լեռը, անոր որդւոյն Փենէհէսի արուած բլուրին վրայ թաղեցին :

ԳԻՐՔ ԴԱՏԱԻՈՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Եւ Յետոբի մեռնելէն ետքը Իսրայէլի որդիները Տէրօջը հարցուցին ու ըսին, Մեզի համար Քանանացոց վրայ առաջ ո՞վ ելլէ՝ անոնց հետ պատերազմելու : 2 - Եւ Տէրը ըսաւ, Յուդա թող ելլէ. ահա երկիրը անոր ձեռքը տուի : 3 - Եւ Յուդա իր եղբօրը Շմուլոնի ըսաւ, Ինձի հետ իմ վիճակս ելիր, ու Քանանացոց հետ պատերազմինք, և ես ալ քեզի հետ քու վիճակդ երթամ. ու Շմուլոն անոր հետ գնաց : 4 - Եւ Յուդա ելաւ, ու Տէրը Քանանացիները ու Փերեզացիները անոնց ձեռքը տուաւ. ու անոնցմէ Բեզեկի մէջ տասը հազար մարդ կտարեցին : 5 - Եւ Բեզեկի մէջ Ադոնիբեզեկը գտնելով անոր հետ պատերազմեցան, ու Քանանացիները և Փերեզացիները զարկին : 6 - Եւ Ադոնիբեզեկ փախաւ. բայց անոնք անոր ետեւէն իյնալով զանհկա բռնեցին, ու անոր ձեռքերուն ու ոտքերուն մեծ մատերը կտրեցին : 7 - Եւ Ադոնիբեզեկ ըսաւ, Ձեռքերնուն ու ոտքերնուն մեծ մատերը կտրուած եօթանասուն թագաւորներ իմ սեղանիս տակ ինչո՞ք գլխուսը կը ժողվէին. ես ինչպէս ըրի, Աստուած ալ ինձի այնպէս հատուցում ըրաւ : Եւ զանհկա Երուսաղէմ տարին, ու հոն մեռաւ :

8 - Եւ Յուդայի որդիները Երուսաղէմի հետ պատերազմ ընելով զանհկա

առին, ու սուրի բերնէ անցընելով քաղաքը կրակով այրեցին :

9 - Անկէ ետե Յուդայի որդիները վար իջան, որպէս զի լեռնակողմը ու հարաւային կողմը ու դաշտի մէջ բնակող Քանանացոց դէմ պատերազմին :

10 - Եւ Յուդա Քերրոնի մէջ բնակող Քանանացիներուն վրայ գնաց. (ու Քերրոնի անունը առաջ կարիաթարբա էր.) և անոնք Սէսին, Աքիմանը ու Թոլմին զարկին :

11 - Եւ անկէ Դաբիբի բնակիչներուն վրայ գնաց. (ու Դաբիբի անունը առաջ կարիաթասփեր էր.) 12 - Եւ Քաղէբ ըսաւ, Ով որ կարիաթասփերը զարնէ ու առնէ, իմ աղջիկս Աքսան անոր կնութեան պիտի տամ :

13 - Ուստի Քաղէբի պզտիկ եղբօրը Կենեզի որդին Գոթոնիէլ զարնուաւ զանհկա. և Քաղէբ իր աղջիկը Աքսան անոր կնութեան տուաւ :

14 - Ու երբ աղջիկը անոր կ'երթար, զանհկա յորդորեց որ իր հօրմէն ագարակ մը ուզէ, և էչէն վար իջաւ. ու Քաղէբ ըսաւ անոր, Քեզի ի՞նչ եղաւ :

15 - Եւ աղջիկը անոր ըսաւ, Ինձի օրհնութիւն տուր. որովհետեւ ինձի հարաւային երկիր մը տուիր, ինձի ջուրի աղբիւրներ ալ տուր : Ուստի Քաղէբ վերի աղբիւրները ու վարի աղբիւրները տուաւ անոր :

16 - Եւ Մովսէսի աներոջ Կենեցիին որդիները Յուդայի որդիներուն հետ

*Կա՛մ, գառնուկի

Արմուսենեաց քաղաքէն Արապի հա-
բաւային կողմը եղող Յուդայի անա-
պատը ելան, ու գացին ժողովուրդին
հետ բնակեցան :

17 - Եւ Յուդա իր եղբորը Շամուոնի
հետ գնաց. ու Սեփաթի մէջ բնակող
Քանանացիները զարկին, և զանկա
նզովեցին, ու այն քաղաքին անունը
*Հորմա կոչեցին : 18 - Ետքը Յուդայ-
եանք Գազան ու անոր սահմանը, և
Ասկազոնը ու անոր սահմանը, և Ակ-
կարոնը ու անոր սահմանը առին : 19 -
Եւ Տէրը Յուդայի հետ էր, ու անկա
լեռանը տիրեց, բայց հովիտներուն բնա-
կիչները չկրցաւ վաճակել, քանզի ա-
նոնք երկաթէ կառքեր ունէին : 20 -
Ու Քերրոնը Գազէրի տունն, ինչպէս
Մովսէս ըսեր էր. ու անկէ Ենակի երեք
որդիները վաճակեց :

21 - Եւ Բենիամինի որդիները Երու-
սաղէմի մէջ բնակող Յերուսացիները
չվաճակեցին. ու Յերուսացիք Բենիա-
մինի որդիներուն հետ Երուսաղէմի
մէջ բնակեցան մինչև այսօր :

22 - Եւ Յովսէփի տունն ալ Բեթէլի
վրայ ելան, ու Տէրը անոնց հետ
էր : 23 - Եւ Յովսէփի տունը Բեթէլը
լրտեսեցին. (ու այն քաղաքին անունը
առաջ Լուզ էր.) 24 - Եւ պահապան-
ները մարդ մը տեսան որ այն քաղա-
քէն կ'ելէր, ու անոր ըսին, Շնորհք
ըրէ, քաղաքը մանելու կողմը մեզի
ցուցուր, ու քեզի ողորմութիւն կ'ը-
նենք : 25 - Եւ անկա քաղաքը մանե-
լու կողմը ցուցուց անոնց. ու քաղաքը
տուրի բերնէ անցուցին, բայց այն
մարդը և անոր բոլոր ազգատոհմը թող
տուին. 26 - Ու այն մարդը Քեաացուց
երկիրը գնաց, և հոն քաղաք մը շինեց,
ու անոր անունը Լուզ կոչեց, և մինչև
այսօր անոր անունը այս է :

27 - Եւ Մանասէ Բեթսանը և անոր
գիւղաքաղաքները, Թանաքը ու անոր
գիւղաքաղաքները, Գովրի բնակիչները
և անոր գիւղաքաղաքները, Յերզաամի
բնակիչները ու անոր գիւղաքաղաք-
ները, Մակեդոնի բնակիչները ու ան-
որ գիւղաքաղաքները չզարկաւ. և Քա-
նանացիք կամակորութեամբ այս երկ-
րին մէջ բնակեցան : 28 - Ու երբ Իսրայէլ
ուժովցաւ, Քանանացիները հարկատու
ըրաւ, բայց զանոնք բոլորովին չվաճակեց :

29 - Եփրեմ ալ Գազերի մէջ բնա-
կող Քանանացիները չվաճակեց. ու Քա-
նանացիք անոր հետ Գազերի մէջ բնա-
կեցան :

30 - Զարուզոն կեթրոնի բնակիչ-
ները և Նաազոյի բնակիչները չվաճա-
կեց. ու Քանանացիք անոնց մէջ բնա-
կելով հարկատու եղան :

31 - Ասեր Ակքովի բնակիչները, ու
Սիդոնի, Աքզարի, Աքեզբի, Ելբայի,
Ափէկի ու Բոթի բնակիչները չվաճա-
կեց. 32 - Հապա Ասերեանք այն եր-
կիրը բնակող Քանանացուց մէջ բնա-
կեցան, որովհետև զանոնք չվաճակեցին :

33 - Նեփթաղիմ Բեթսամիւսի բնա-
կիչները ու Բեթսամիթի բնակիչները
չվաճակեց, հապա այն երկիրը բնակող
Քանանացուց մէջ բնակեցաւ. և Բեթ-
սամիւսի ու Բեթսամիթի բնակիչները
անոր հարկատու եղան :

34 - Եւ Ամօրհացիք Գանի որդիները
լեռան վրայ նեղը ձգեցին, քանզի ա-
նոնց թող չառին որ հովիտները իջ-
նեն : 35 - Ու Ամօրհացիք կամակորու-
թեամբ Հարէս լեռը, Այեղօնի ու Սա-
ղարինի մէջ, բնակեցան. բայց երբ
Յովսէփի տանը ձեռքը ուժովցաւ, ա-
նոնք հարկատու եղան : Եւ Ամօրհաց-
ուց սահմանը Ակրարիմի զառի վե-
րէն, Վէմէն, ի վեր էր :

ԳԼ Բ

Եւ Տէրօջը հրեշտակը Գաղգաղայէ
Բոքիմ ելաւ ու ըսաւ, Ձեզ Եգիպտոսէ
հանեցի, և ձեզ այն երկիրը բերի, որու
համար ձեր հայրերուն երգումը ըրեր
էի. ու ըսի որ Ձեզի հետ ըրած ուխտս
յաւիտեան պիտի չաւրեմ. 2 - Եւ այս
երկրին բնակիչներուն հետ դաշնակ-
ցութիւն մի ընէք, անոնց սեղանները
փլցուցէք. բայց դուք իմ խօսքիս հնա-
զանդութիւն չըրիք. ինչո՞ւ համար
այս բանը ըրիք : 3 - Ես ալ ըսի, Զա-
նոնք ձեր առջեւէն պիտի չվաճակեմ,
հապա անոնք ձեզի թշնամի, ու անոնց
աստուածներն ալ ձեզի որողայթ պիտի
ըլլան : 4 - Ու երբ Տէրօջը հրեշտակը բո-
լոր Իսրայէլի որդիներուն այս խօսքերը
ըսաւ, ժողովուրդը ձայնը վերցնելով
լացաւ : 5 - Եւ այն ատղին անունը *Բոքիմ
կոչեցին. ու հոն Տէրօջը զս' մատուցին :

*Այսինքն, նզովք

*Այսինքն, լացողներ

6 - Ու երբ Յեսու ժողովուրդը արձակեց, Իսրայէլի որդիները ամէն մէկը իր կալուածքը գնաց՝ երկիրը ժառանգելու համար : 7 - Եւ ժողովուրդը, Յեսուի բոլոր օրերուն մէջ, ու Յեսուէ ետքը սղջ մնացող և Իսրայէլի համար Տէրոջը բրած ամէն մեծ գործերը տեսնող ծերերուն բոլոր օրերուն մէջ, Տէրոջը ծառայութիւն րրին : 8 - Եւ Տէրոջը ծառայութիւն Նաւեան հարիւր ասար տարեկան մեռաւ : 9 - Ու զանկաւ իր ժառանգութեանը սահմանին մէջ Կառա լեռանը հիւսիսային կողմը, Եփրեմի լեռը, *Թամնաթ-հարեսի մէջ, թաղեցին : 10 - Եւ այն դարուն բոլոր մարդիկը իրենց հայրերուն խառնուեցան. ու անոնցմէ ետքը ուրիշ ազգ մը ելաւ, որ Տէրը ու Իսրայէլի համար անոր բրած գործերը չճանչցան :

11 - Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը սուջև չարութիւն րրին ու Բահայիմը պաշտեցին : 12 - Եւ թողուցին իրենց հայրերուն Տէր Աստուածը, որ զիրենք Եգիպտոսի երկրէն հաներ էր, ու օտար աստուածներու ետեւէ գացին, այսինքն իրենց բոլորաիքը եղող ազգերուն ասի իւր աստուածներուն, ու անոնց երկրպագութիւն րրին, և Տէրը սրդողցուցին : 13 - Ուստի Տէրը թողուցին և Բահայը ու Աստարոթը պաշտեցին : 14 - Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք կողոպտիչներու ձեռքը մտանեց, ու զանոնք կողոպտեցին. և զանոնք չրջակայ թշնամիներուն ծախեց, ու ալ չէին կրնար իրենց թշնամիներուն սուջև կայնիլ : 15 - Ուր որ երթային՝ Տէրոջը ձեռքը անոնց վրայ էր չարիք ընելու համար, ինչպէս Տէրը ըսեր էր, և ինչպէս անոնց երգում րրեր էր. ու խիստ մեծ նեղութեան մէջ էին :

16 - Եւ Տէրը դատաւորներ հանեց, որոնք կողոպտիչներուն ձեռքէն ազատեցին զանոնք : 17 - Սակայն իրենց դատաւորներուն ալ մտիկ չրրին, ու օտար աստուածներու ետեւէ երթալով պռունկութիւն րրին, ու անոնց երկրպագութիւն րրին. շուտով խտարեցան այն ճամբայէն՝ որուն մէջ իրենց հայրերը կը քայլին Տէրոջը հրամաններուն հնազանդելով, քոչ ասոնք այն-

պէս չրրին : 18 - Ու երբ Տէրը անոնց դատաւորներ կը հանէր, Տէրը դատաւորին հետ ըլլալով, դատաւորին բոլոր օրերը զանոնք իրենց թշնամիներուն ձեռքէն կ'ազատէր. քանզի անոնց նեղութիւն սուտղներուն ու չարչարողներուն երեսէն անոնց հեծութիւններուն համար Տէրը կը զղջար : 19 - Ու երբ այն դատաւորը մեռնէր, կը դառնային նորէն օտար աստուածներու ետեւէ կ'երթային, զանոնք կը պաշտէին և անոնց երկրպագութիւն կ'ընէին, ու իրենց հայրերէն աւելի անորէնութիւն կ'ընէին. իրենց շար գործերէն ու իրենց *ճուռ ճամբայէն չէին դառնար : 20 - Ուստի Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքելով ըսաւ, Որովհետև այս ազգը իրենց հայրերուն պատուիրած ուխտս զանց ընելով, իմ՝ ձայնիս հնազանդութիւն չրրին, 21 - Ես ալ այսուհետև անոնց սուջեւէն բնաւ մէկը պիտի չվճնատմ այն ազգերէն զորոնք Յեսու իր մեռած ստեղծութիւնը : 22 - Որպէս զի անոնցմով Իսրայէլը փորձեմ, թէ արդեօք իրենց հայրերուն պէս զգուշութիւն պիտի ընեն Տէրոջը ճամբան քալելու, թէ ոչ : 23 - Ուստի Տէրը այս ազգերը թող առաւ, և շուտով չվճնատեց, ու զանոնք Յեսուի ձեռքը չմտանեց :

ԳԼ. Գ

Եւ ասոնք են այն ազգերը զորոնք Տէրը թող առաւ, որպէս զի անոնցմով Իսրայէլը, այսինքն Քանանացուց բոլոր պատերազմները ամէն չգիացողները, փորձէ : 2 - (Միայն ասոր համար՝ որ Իսրայէլի որդիներուն սերունդը, մանաւանդ առաջուրնէ չգիացողները, պատերազմ տարին ու գիանան.) 3 - Փղշաացուց հինգ նախարարութիւնները, և բոլոր Քանանացիները ու Միդոնացիները, Կրանան լեռը բնակող Խեւացիները, Բասողհերման լեռնէն մինչև Էմաթի մուտքը : 4 - Ասոնցմով պիտի փորձէր Իսրայէլը որպէս զի գիանայ թէ արդեօք պիտի հնազանդին Տէրոջը պատուիրանքներուն, զորոնք Մովսէսի ձեռքով անոնց հայրերուն հրամայեր էր :

*Որ Յես. ժթ. 50 և իգ. 30 կ'ըսուի թամնաթ-ասրա

*Եբր. կաբծը

5 - Եւ Իսրայէլի որդիները Քանանացոց, Քեթացոց, Ամօրհացոց, Փերեզացոց, Խեւացոց ու Յեբուսացոց մէջ բնակեցան. 6 - Եւ անոնց աղջիկները իրենց կին առին, ու իրենց աղջիկներն ալ անոնց աղջը սուին, և անոնց աստուածները պաշտեցին: 7 - Եւ Իսրայէլի որդիները Տէրօջը առջև չարութիւն ըրին, և իրենց Տէր Աստուածը մոռնալով Բաճաղիմը ու Աստարովթը պաշտեցին: 8 - Եւ Տէրօջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք Միջագետի Քուսարասթեմ թագաւորին ձեռքը մատնեց. և Իսրայէլի որդիները ութ տարի ծառայութիւն ըրին Քուսարասթեմի:

9 - Ետքը Իսրայէլի որդիները Տէրօջը ազազակեցին. ու Տէրը Իսրայէլի որդիներուն փրկիչ մը հանեց, Քաղէբի պզտիկ եղբորը Կենեզի որդին Գոթունիէլը, որ զանոնք ազատեց: 10 - Եւ Տէրօջը Հոգին անոր վրայ ըլլալով Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէր. ու երբ պատերազմի ելաւ, Տէրը Միջագետի Քուսարասթեմ թագաւորը անոր ձեռքը սուաւ, և անոր ձեռքը Քուսարասթեմի գէմ զօրացաւ: 11 - Աւերկիրը քառասուն տարի հանգստացաւ, և Կենեզեան Գոթունիէլ մեռաւ:

12 - Աւ Իսրայէլի որդիները նորէն Տէրօջը առջև չարութիւն ըրին. և Տէրօջը առջև չարութիւն ընելնուն համար Տէրը Մովաբի Էգզոն թագաւորը Իսրայէլի գէմ ու ժողցուց. 13 - Եւ անհկա Ամմոնի ու Ամոնէկի որդիները իր քով ժողկեց, և գնաց Իսրայէլը զարկաւ ու Արմուէնեաց քաղաքին տիրեց: 14 - Եւ Իսրայէլի որդիները Մովաբի Էգզոն թագաւորին տասնըութ տարի ծառայութիւն ըրին:

15 - Աւ Իսրայէլի որդիները Տէրօջը ազազակեցին, և Տէրը անոնց փրկիչ մը հանեց, Բենիամինեան Քերայի որդին Աւովդը որ *աճեկագործ էր. ու Իսրայէլի որդիները անոր ձեռքով Մովաբի Էգզոն թագաւորին բնծայ զրկեցին: 16 - Եւ Աւովդ մէկ +կանգնաչափ երկայնութեամբ երկսայրի սուր մը շինեց իրեն, ու զանհկա լաթերուն տակէն իր աջ ազդրին վրայ կապեց:

*ԵՔԸ. աջ ձեռքը գոցուած մարդ +կամ, թղաչափ

17 - Եւ ընծան Մովաբի Էգզոն թագաւորին տարաւ. (ու Էգզոն խիտ գէր մարդ մըն էր.) 18 - Աւ երբ ընծան սուաւ լմնցուց, ընծան կրող մարդիկը ետ զրկեց: 19 - Եւ ինք Գաղգաղայի մծա եղած *քարահանքէն ետ դարձաւ ու ըսաւ, Ով թագաւոր, քեզի ծածուկ խօսք մը ունիմ. և անհկա ըսաւ, Լուռ +կեցիր. ու բոլոր անոր քով եղողները դուրս ելան: 20 - Եւ Աւովդ անոր քով մծտեցաւ, ու անհկա նստեր էր իրեն յատկացեալ ամառնային վերնատանը մէջ. և Աւովդ անոր ըսաւ, Քեզի Աստուծոյ կողմանէ խօսք մը ունիմ. ու անհկա աթոռին վրայէն ելաւ: 21 - Եւ Աւովդ իր ձախ ձեռքը երկնցնելով սուրը իր աջ ազդրին վրայէն քաշեց ու անոր փորը խոթեց, 22 - Այնպէս որ երկաթին ետեւէն կոթն ալ ներս մտաւ. ու գիրուցը երկաթը բռնեց, այնպէս որ սուրը անոր փորէն չկրցաւ հանել, ու ազբը դուրս ելաւ: 23 - Եւ Աւովդ սրահն ելաւ ու վերնատանը դռները անոր վրայէն գոցեց ու կղպեց. 24 - Եւ ինք ելաւ գնաց: Աւ անոր ծառաները գացին նայեցան որ ահա վերնատանը դռները կղպուած էին. ու ըսին, Անհկա անտարակոյս իր ամառնային սենեակին մէջ †հարկաւորութեան գացած է: 25 - Եւ անոնք սպասեցին՝ մինչև որ ամչցան, բայց ահա վերնատանը դռները չէր բանար. ու բանալին առին բացին, և ահա իրենց տէրը գետնի վրայ ինկած մեռած էր: 26 - Աւ քանի որ անոնք կը տնտնային՝ Աւովդ փախաւ, և քարահանքէն անցնելով ողջ աւողջ Սէիրա հասաւ:

27 - Աւ երբ հասաւ, Եփրեմի լեռանը վրայ փող հնչեցուց, և Իսրայէլի որդիները անոր հետ այն լեռնէն վար իջան, ու ինք անոնց առջեւէն կ'երթար: 28 - Եւ անոնց ըսաւ, Իմ ետեւէս եկէք, քանզի Տէրը ձեր թշնամիները, Մովաբացիները, ձեր ձեռքը սուաւ. ուստի անոր ետեւէն իջան, և Սովաբի առջեւէն՝ Յորդանանու անցքերը բռնեցին, ու թող չտուին որ մարդ մը անցնի: 29 - Եւ այն ժամանակ Մո-

*կամ, փորուած ժայռերէն
+կամ, կեցէք
†ԵՔԸ. սաքերը ծածկած է
||կամ, Մովաբի երկեզ երեւաւ-

վարէ տասը հազարի չափ մարդ կոտորեցին, «բոն» ամէնն ալ յաղթանդամ ու զօրաւոր մարդիկ էին. և մէկը չկրցաւ փախչիլ: 30 - Ու այն օրը Մովսէս Իսրայէլի ձեռքին տակ նուաճեցաւ. ու երկիրը ութսուն տարի հանգրտացաւ:

31 - Եւ անկէ ետեւ Անաթի որդին Սամեզար ելաւ, ու եզնեբու խթանով մը Փղշտացիներէն վեց հարիւր մարդ կոտորեց. և ասիկա ալ Իսրայէլը ազատեց:

ԳԼ. Դ

Եւ Աւովդի մեռնելէն ետքը Իսրայէլի որդիները Տէրոջը առջև նորէն չարութիւն րրին. 2 - Ու Տէրը մտանեց զանոնք՝ Քանանացուց Յաբին թագաւորին ձեռքը, որ Հասարի մէջ կը թագաւորէր. և անոր զօրագլուխը Սիսարա էր, ու ազգաց Արիսոթին մէջ կը բնակէր: 3 - Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին. քանզի անիկա ինը հարիւր երկաթէ կառքեր ունէր, ու անիկա քսան տարի Իսրայէլի որդիները սաստիկ նեղեց:

4 - Եւ այն ատեն Դեբօրա մարգարէուհին, Ղարիգօթի կինը, Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէր: 5 - Ու անիկա Եփրեմի լեռանը վրայ, Ռամայի ու Բեթէլի մէջտեղ, Դեբօրայի արմուէնին տակ կը բնակէր, և Իսրայէլի որդիները դատաստանի համար անոր կ'ելլէին: 6 - Ու Դեբօրա Ժորդի կէտէ, և Նեփթաղիմի Կադէսէն Աբինոամի որդին Բարակը կանչեց, ու անոր ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը +եղի չհրամայեց՝ ըսելու, Գնա, Թաբօր լեռը ելիր, ու Նեփթաղիմի որդիներէն և Զաբուղոնի որդիներէն քեզի հետ տասը հազար մարդ առ, 7 - Ու ես Յաբինի զօրագլուխը Սիսարան, և անոր կառքերը ու զօրաց բազմութիւնը քու դիմացդ պիտի հանեմ՝ Կիսոն հեղեղատին քով, ու զանիկա քու ձեռքդ պիտի մտանեմ: 8 - Եւ Բարակ անոր ըսաւ, Եթէ դու ալ ինծի հետ երթաս, կ'երթամ. բայց եթէ ինծի հետ չերթաս, չեմ երթար: 9 - Եւ անիկա ըսաւ, Անշուշտ ես քեզի հետ պիտի երթամ, բայց քու երթալու ճամբուդ մէջ դուն փառք մը չես ստանար. քանզի Տէրը Սիսարան կնոջ մը ձեռքը

պիտի մտանէ: Ու Դեբօրա ելաւ Բարակի հետ Կադէս գնաց: 10 - Եւ Բարակ Զաբուղոնը ու Նեփթաղիմը Կադէսի մէջ *ժողովեց, և տասը հազար մարդով ելաւ. Դեբօրա ալ անոր հետ ելաւ:

11 - (Ու Մովսէսի աներոջ Յորաբի որդիներէն Կենեցի Քաբեր Կենեցիներէն զատուեր էր, ու իր վրանը Կադէսի մօտ Սանանիմի Կաղնիին քով կանգնէր էր:)

12 - Այն ատեն Սիսարայի իմացուցին որ Աբինոամի որդին Բարակ Թաբօր լեռը ելեր է: 13 - Եւ Սիսարա իր բոլոր կառքերը, ինը հարիւր երկաթէ կառքերը, ու իրեն հետ եղող բոլոր զօրքը ազգաց Արիսոթէն Կիսոն հեղեղաւոր ժողովեց:

14 - Եւ Դեբօրա ըսաւ Բարակի, Ոտք ելիր, քանզի Տէրը այսօր Սիսարան քու ձեռքդ մտանեց. միթէ Տէրը քու առջեւէդ չելա՞ւ: Ու Բարակ Թաբօր լեռնէն իջաւ, և իրեն հետ ասոր հազար մարդ կար: 15 - Ու Տէրը Սիսարան և բոլոր կառքերը ու բոլոր բանակը Բարակի առջև սուրի բերնով խորատկեց. և Սիսարա կառքէն վար իջաւ ու սաքով փախաւ: 16 - Եւ Բարակ կառքերը ու բանակը մինչև ազգաց Արիսոթը հալածեց, ու Սիսարայի բոլոր բանակը սուրի բերնով ինկաւ, ու մա՛րդ մը չմնաց:

17 - Եւ Սիսարա սաքով Կենեցի Քաբերի կնոջ Յայէլի վրանը փախաւ. քանզի Հասարի Յաբին թագաւորին ու Կենեցի Քաբերի տանը մէջտեղ խազազութիւն կար: 18 - Ուստի Յայէլ Սիսարան դիմաւորելու ելաւ ու անոր ըսաւ, Տէր իմ, դարձիր, ինծի դարձիր, մի վախնար: Ուստի անիկա դէպի վրանը անոր դարձաւ, և կինը զանիկա վերմակով մը ծածկեց: 19 - Եւ անիկա կնոջը ըսաւ, Ենորհք րբէ, ինծի քիչ մը ջուր տուր որ խմեմ, քանզի ծարւած եմ: Ան ալ կաթին տիկը բացաւ, ու անոր խմցուց. ետքը զանիկա ծածկեց: 20 - Եւ անիկա կնոջը ըսաւ, Վրանին դուռը կեցիր, ու եթէ մարդ մը գայ, քեզի հարցնէ ու ըսէ թէ Այս տեղ մարդ կա՞յ, Զկայ ըսես: 21 - Ու Քաբերի կինը Յայէլ վրանին

*Եբր. կանչեց
†Եբր. մարդ իր սաքը

մէկ ցիցը առաւ , և ուռն ալ ձեռքը բռնելով՝ կամացուկ մը անոր քով գնաց , ու ցիցը անոր ծամելիքը մխելով մինչև գետինը գամեց , և անհկա յոգնած ըլլալուն համար խորունկ քունի մէջ էր . այսպէս մեռաւ : 22 - Եւ ահա Բարակ Սիսարայի ետեւէն կը վազէր , և Յայէլ զանհկա դիմաւորելու ելաւ ու անոր բաւ , Եհուր , քու փնտաւած մարդդ քեզի ցուցնեմ : ու անհկա կնոջը հետ ներս մտաւ , և ահա Սիսարայ մեռած պառկեր էր , ու ցիցը անոր ծամելիքին մէջ էր :

23 - Եւ Աստուած այն օրը Քանանացւոց Յաբին թագաւորը Իսրայէլի սրգիներուն առջև կորագլուխ ըրաւ : 24 - Ու Քանանացւոց Յաբին թագաւորին դէմ Իսրայէլի սրգիներուն ձեռքը օրէ օր կը զօրանար , մինչև որ Քանանացւոց Յաբին թագաւորը բնաջինջ ըրին :

ԳԼ Ե

Եւ այն օրը Գերօրա ու Աբինոամի սրգին Բարակ երգեցին ու ըսին ,

2 - Իսրայէլի զօրավարներուն առաջնորդելուն

Ու ժողովուրդին յօժարակամ անձնանուէր ըլլալուն համար՝

Տէրը օրհնեցէք :

3 - Ով թագաւորներ , մտիկ ըրէք ,

Ով նախարարներ , սկանջ գրէք .

Ես Տէրոջը պիտի երգեմ ,

Իսրայէլի Տէր Աստուծոյն սաղմոս պիտի ըսեմ :

4 - Ով Տէր , երբ դուն Սէիրէ ելար ,

Ու Եզովմի դաշտէն չուեցիր ,

Երկիր շարժեցաւ , երկինք անշնա տեղաց ,

Ամպերն ալ ջուր կաթեցուցին :

5 - Տէրոջը երեսէն լեռները հալեցան , Իսրայէլի Տէր Աստուծոյն երեսէն Սինա ալ հալեցաւ :

6 - Անաթի սրգւոյն Սամեգարի օրերը , Յայէլի օրերը ,

Մեծ ճամբաները *անկոխ էին՝ ,

Ու ճանապարհորդները խտորնակ ճամբաներէ կ'երթային :

7 - Իսրայէլի մէջ զօրավարներ չմնացին ,

Չմնացին , մինչև որ ես Գերօրա ելայ ,

*Եբբ. պակսեցան

Մինչև որ ելայ Իսրայէլի մէջ մայր ըլլալու :

8 - Նոր աստուածներ ընտրեցին .

Այն ատեն Երեմի Դուներուն մէջ պատերազմ եղաւ .

Արդեօք Իսրայէլի քառասուն հազար զօրին մէջ

Վահան կամ նիզակ երեւցա՞ւ :

9 - Իմ սիրաս Իսրայէլի իշխաններուն վրայ է .

Ով ժողովուրդին անձնանուէր եղողներ ,

Տէրը օրհնեցէք :

10 - Ճերմակ էշերու վրայ հեծնողներ , Գատասանի ատեանը նստողներ ,

Ու ճամբու վրայ պարտողներ , զրուցեցէք :

11 - *Աղեղնաւորներուն ձայնէն «պար-»

«-ա՞»

Ջուր հանելու տեղերուն մէջ , Հոն Տէրոջը արդարութիւնները ,

Ու Իսրայէլի մէջ անոր զօրավարներուն արդարութիւնները պատմեն .

Այն ատեն Տէրոջը ժողովուրդը դուները իջան :

12 - Արթնցիր , արթնցիր , ով Գերօրա , Արթնցիր , արթնցիր «- երգ ըսէ .

Ով Բարակ , ելիր .

Ով Աբինոամի սրգի , քու գերութիւնդ գերի ըրէ :

13 - Այն ատեն փախստականները ժողովուրդին զօրաւորներուն վրայ յարձակեցան .

Տէրը ինծի հետ

Զօրաւորներուն դէմ իջաւ :

14 - Եփրեմի արմատէն եղողները Ամաղէկի վրայ ելան .

Բենիամին քու ետեւէդ քու ժողովուրդիդ մէջ ելաւ .

Մաքիթ իշխաններ ,

Ու Զարուզանէ դպրի գրիչ բռնողներ իջան :

15 - Եւ Իսաքարի զօրավարները Գերօրայի հետ ,

Ու Իսաքար ալ Բարակի պէս Անոր ետեւէն հովիտը զրկուեցաւ .

Ռուբէնի Գատսներուն մէջ

Մեծ յուզմունք կար .

16 - Ինչո՞ւ համար փարախներուն մէջ նստար ,

*կամ , Ասոր բաժնողներուն , և կամ , ժողովուրդներուն
 †կամ , հեղեղաւորներուն

Որ *Տօտերուն մայելը՝ լսես :
 Ռուբէնի տաճարուն մէջ
 Մեծ տարակուսանք կար :
 17 - Գաղատագ Յորդանանու անդիւի
 կողմը կը բնակէր ,
 Ու Գան ինչո՞ւ համար նաւերու մէջ
 պանդուխտ մնաց :
 Ասեր ծովուն եզերքը կը նստէր ,
 Ու իր նաւահանգիստներուն քով կը
 բնակէր :
 18 - Զարուզոն ու Նեփթաղիմ՝ այն-
 պիտի ժողովուրդ մըն է ,
 Որ դաշտին բարձր տեղերը զինք մաս-
 ուան վտանգի մէջ կը դնէ :
 19 - Թագաւորները եկան , պատերազմ՝
 րրին .
 Այն տաէն Քանանացւոց Թագաւոր-
 ները
 Մակեդոնի ջուրին քով Թանաքի մէջ
 պատերազմ՝ րրին .
 Ստակ չչահեցան :
 20 - Երկինքէն պատերազմ՝ րրին .
 Ասողերը իրենց շրջաններէն
 Սիսարայի դէմ պատերազմ՝ րրին :
 21 - Կիսոն հեղեղատար , այն հին հե-
 ղեղատար ,
 Կիսոն հեղեղատար զանոնք քշեց սա-
 րաւ :
 Ով իմ անձս , անոնց զօրութիւնը կո-
 խեցիր :
 22 - Այն տաէն ձիերուն սմբակները
 Սաստիկ վազելուն համար կտոր կտոր
 եղան ,
 Զօրաւորներուն վազցնելովը :
 23 - Տէրոջը հրեշտակը ըսաւ , Մա-
 րովը նզովեցէք ,
 Անոր բնակիչները սաստիկ նզովեցէք
 Քանգի Տէրոջը օգնութեանը ,
 Զօրաւոր Քանգիներուն դէմ Տէրոջը
 օգնութեանը , չեկան :
 24 - Կենեցի Քաբերի կինը Յայել
 կիներուն մէջ « Գնէ » աւելի օրհնեալ
 ըլլայ .
 Վրաններու մէջ Բնախ կիներէն
 Աւելի օրհնեալ ըլլայ :
 25 - Սիւսա ջուր ուղեց . կաթ տուաւ ,
 Իշխաններուն ամանովը կոգի մատուց :
 26 - Անիկա իր ձեռքը ցիցին ,
 Ու իր աջ ձեռքը հիւսի ուռին երկրն-
 ցուց ,
 Ու Սիսարայի զարնելով գլուխը ճեղ-
 քեց .

Ու յեջ անոր ծամելիքը միտելով խո-
 ցեց :
 27 - Անիկա ծռեցաւ , Յայելի սաքերուն
 մէջ ինկաւ փռուեցաւ ,
 Ոտքերուն մէջ ծռեցաւ ինկաւ .
 Ուր որ ծռեցաւ , հոն մեռած ինկաւ :
 28 - Սիսարայի մայրը պատուհանէն
 նայեցաւ ,
 Ու վանդակին ետեւէն աղաղակեց .
 Ինչո՞ւ համար անոր կառքը կ'ուշա-
 նայ գալու ,
 Ինչո՞ւ անոր կառքերուն քայլերը ետ
 կը մնան :
 29 - Անոր իմաստուն տիկինները անոր
 պատասխան տուին ,
 Ինք ալ իր խօսքերուն պատասխանը
 իրեն կու տար ,
 30 - Անշուշտ անոնք աւար գտան ,
 Զանիս բաժնելու վրայ են .
 Ամէն կարիճի համար մէկ կամ երկու
 աղջիկ ,
 Իսկ Սիսարայի համար գոյնզգոյն աւար
 մը ,
 Գոյնզգոյն նկարագործ աւար մը ,
 Երկու կողմը բանուած ու գոյնզգոյն
 վզնոցներ աւար « Գնէ » պիտի ըլ-
 լան :
 31 - Ով Տէր , քու բոլոր Թշնամիներդ
 Այսպէս կորսուին .
 Իսկ զԱնիկա սիրողները
 Իր զօրութիւնովը ելլող արեւուն պէս
 ըլլան :
 Ու երկիրը քառասուն տարի հան-
 գրասացաւ :

ԳԼ. 2

Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը առ-
 ջև չարութիւն րրին , ու Տէրը զանոնք
 եօթը տարի Մագիանացւոց ձեռքը
 մտանեց : 2-Եւ Մագիանացւոց ձեռքը
 Իսրայէլի վրայ ուժովցաւ , « Իսրա-
 յէլի որդիները Մագիանացւոց պատ-
 ճառաւ իրենց համար լեռներու մէջ
 խռոչներ , քարայրներ և պատնէշներ
 շինեցին : 3 - Ու երբ Իսրայէլացիք սերմ
 կը ցանէին , Մագիանացիք անոնց վրայ
 կ'ելլէին . և Ամաղեկացիք ու արեւելքի
 բնակիչներն ալ կ'ելլէին . 4 - Եւ ա-
 նոնց դէմ բանակ կազմելով գեանին
 բերքը կ'աւրէին մինչև Գաղա , ու Իս-
 րայէլի սպարաւս մը չէին թողուր , ոչ
 ոչխար , ոչ արջառ և ոչ էջ . 5 - Քանգի
 անոնք իրենց հօտերովը ու վրաններովը :

*Կա՛մ , հօտերուն մէջ սրինգի ձայնը

կ'ելլէին, և մարտի պէս բազմութեամբ կու գային. թէ՛ անոնք և թէ՛ անոնց ուղտերը չէին համբուեր. ու Իսրայէլ երկիրը կու գային զանհկա տարելու համար: 6 - Եւ Իսրայէլ Մագիանացւոց պատճառաւ շատ աղքատացաւ. ու Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին:

7 - Ու երբ Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին Մագիանացւոց պատճառաւ, 8 - Տէրը Իսրայէլի որդիներուն մարգարէ մը զրկեց. ու անհկա ըսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ես ձեզ Եզիպտոսէ հանեցի, ու ձեզ ծառայութեան տունէն դուրս բերի, 9 - Եւ ձեզ Եզիպտացւոց ձեռքէն, ու բոլոր ձեզի նեղութիւն տուողներուն ձեռքէն ազատեցի, և զանոնք ձեր առջեւէն վանելով անոնց երկիրը ձեզի տուի:

10 - Ու ձեզի ըսի, Ես եմ ձեր Եհովա Աստուածը. մի վախնաք Ամօրհացւոց աստուածներէն, որոնց երկրին մէջ կը բնակիք. բայց դուք իմ խօսքս մտիկ չրիք:

11 - Եւ Տէրոջը հրեշտակը եկաւ, ու Աբիեղերեան Յովասի բեւեկնիին տակ նստաւ, որ Եփրայի մէջ էր. ու անոր որդին Գեդէօն հնձանին մէջ ցորեն կը ծեծէր՝ Մագիանացւոց երեսէն փախցընելու համար: 12 - Եւ Տէրոջը հրեշտակը անոր երեւցաւ, ու ըսաւ, Ով զօրաւոր կարիճ, Տէրը քեզի հետ է:

13 - Եւ Գեդէօն անոր ըսաւ, Ո՛հ, տէր իմ, Եթէ Տէրը մեզի հետ է, ինչո՞ւ համար այս բոլոր բաները մեր գլուխը եկան. և ո՞ւր են անոր ամէն հրաշքները, զորոնք մեր հայրերը մեզի կը պատմեն՝ ըսելով թէ Տէրը մեզ Եզիպտոսէ հանեց. բայց հիմա Տէրը մեզ երեսէ ձգեց, ու մեզ Մագիանացւոց ձեռքը մտանեց: 14 - Եւ Տէրը անոր նայեցաւ ու ըսաւ, Այդ քու զօրութիւնովդ գնա, որպէս զի Իսրայէլը Մագիանացւոց ձեռքէն ազատես. չէ՞ որ ես քեզ զրկեցի: 15 - Ու անհկա անոր ըսաւ, Ո՛հ, Տէր իմ, Իսրայէլը ինչո՞վ ազատեմ. ահա իմ *ազգասահման Մանասի ցեղին ամէնէն աղքատն է, ու ես իմ հօրս տանը ամէնէն պղտիկն եմ: 16 - Եւ Տէրը անոր ըսաւ, Ես անշուշտ քեզի հետ պիտի ըլլամ, ու Մա-

գիամը մէկ մարդու պէս պիտի զարնես: 17 - Եւ անհկա անոր ըսաւ, Կ'ազաչեմ, եթէ ես քու աչքիդ առջև շնորհք գտայ, ինձի նշան մը ցուցուր, որպէս զի գիտեմ թէ ինձի հետ խօսողը դունն էս: 18 - Կ'ազաչեմ՝ որ տակէ չերթաս, մինչև ես քեզի գամ, իմ ընծաս բերեմ՝ ու քու առջեւդ դնեմ: Եւ անհկա ըսաւ, Ես կը սպասեմ մինչև դուն դառնաս: 19 - Ու Գեդէօն ներս մտաւ, այժերէն ուլ մը և մէկ արդու ալիւրէ բաղարջ շօթեր պատրաստեց. միտր սակառի մը մէջ դրաւ, ու արգանակն ալ պտուկի մը մէջ դրաւ, և անոր առջև հանեց բեւեկնիին տակ ու անոր մատուց: 20 - Եւ Աստուծոյ հրեշտակը անոր ըսաւ, Միտր ու բաղարջ շօթերը առ, այս վէմին վրայ դիր, ու արգանակը թափէ: Եւ անհկա այնպէս ըրաւ: 21 - Ետքը Տէրոջը հրեշտակը իր ձեռքի գաւազանին ծայրը երկընցուց, ու միտին և բաղարջ շօթերուն դպաւ. ու վէմէն կրակ ելլելով միտը և բաղարջ շօթերը այրեց. ու Տէրոջը հրեշտակը անոր աչքերուն առջեւէն գնաց: 22 - Եւ Գեդէօն տեսաւ որ անհկա Տէրոջը հրեշտակն է. ու Գեդէօն ըսաւ, Ո՛հ, Տէր Եհովա, որ Տէրոջը հրեշտակը երես առ երես տեսայ: 23 - Բայց Տէրը անոր ըսաւ, Խաղաղութիւն ըլլայ քեզի, մի վախնար. պիտի չմեռնիս:

24 - Եւ Գեդէօն հոն Տէրոջը սեղան մը շինեց, ու անոր անունը *Եհովա-շալօմ կոչեց, որ մինչև այսօր Աբիեղերեանց Եփրային մէջ կեցած է:

25 - Եւ այն գիշերը Տէրը անոր ըսաւ, Քու հօրդ զուարակը, եթէր սարեկան երկրորդ զուարակը, առ, և քու հօրդ ունեցած Բահաղի սեղանը փլցուր, ու քովի Աստարովթը կարէ: 26 - Եւ խոսքս սպասած քարին գլուխը օրինաւոր կերպով՝ քու Տէր Աստուծոյդ սեղան մը շինէ, ու երկրորդ զուարակը առ, և քու կարած Աստարովթիդ փայտերովը ողջակէզ ըրէ: 27 - Եւ Գեդէօն իր ծառաներէն տասը մարդ առաւ, և Տէրոջը իրեն ըսածին պէս ըրաւ, ու իր հօրը տունէն, և քաղաքին մարդոցմէն վախնալով այս բանը ցորեկը ընելու՝ գիշերը ըրաւ:

*Եբր. հաղարաւորս. տես Միք. ե. 2:

*Այսինքն, Տէր խաղաղութեան, խաղաղութիւն Տեսան
+Կամ, այս ամբողջին զլիաւն բաց տեղը

28 - Աւ երբ քաղաքին մարդիկը առաւօտուն կանուխ ելան, տեսան որ Բաճաղի սեղանը փլած, և անոր քովի Ասաարովթը կտրած, ու երկրորդ զուարակը շինուած սեղանին վրայ ողջակէզ եղած էր: 29 - Աւստի իրարու բռին, Այս բանը ո՞վ ըրաւ. և փնտռեցին ու քննեցին. ու ըսուեցաւ թէ Այս բանը Յովասի որդին Գեղէօն ըրաւ: 30 - Եւ քաղաքին մարդիկը Յովասի բռին, Որդիդ դուրս հանէ որպէս զի մեռնի, քանզի Բաճաղի սեղանը փրկուցեր, ու անոր քովի Ասաարովթը կտրեր է: 31 - Եւ Յովաս իր վրայ եկող բոլոր մարդոցն ըսաւ, Միթէ Բաճաղի իրաւունքը դո՞ւք պիտի պաշտպանէք, կամ թէ զանհկա դո՞ւք պիտի ազատէք. ով որ անոր իրաւունքը պաշտպանէ, թող մեռցուի մինչև առտու. եթէ անհկա աստուած է, թող ինք իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ, իր սեղանը փրցնելուն համար: 32 - Եւ նայն օրը զանհկա *Յերոբաաղ անուանեց, քանզի ըսաւ, թող Բաճաղ իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ, իր սեղանը փրցնելուն համար:

33 - Եւ բոլոր Մադիանացիները, Ամազեկացիները ու արեւելքի բնակիչները մէկտեղ ժողովուեցան, ու Յորդանէն անցնելով Յեզրայէլի հովտին մէջ բանակեցան: 34 - Եւ Տէրօջը Հողին Գեղէօնի վրայ հանգչեցաւ, ու անհկա փող հնչեցուց, և Աբիեզերեանք անոր ետեւէն ժողովուեցան: 35 - Աւ բոլոր Մանասէի պատգամաւորներ զրկեց, ան ալ անոր ետեւէն ժողովուեցաւ. և Ասերի, Զարուղանի ու Նեփթադի ուլ պատգամաւորներ զրկեց, ու անոնք գացին զանոնք դիմաւորել:

36 - Եւ Գեղէօն Ասաուծոյ ըսաւ, Եթէ ըսածիդ պէս Իսրայէլը իմ՝ ձեռքովս ազատելու ես, 37 - Ահա ես կուլին մէջ բուրդի գզաթ մը կը դնեմ. եթէ միայն գզաթին վրայ ցօղ, ու բոլոր գետնին վրայ չորութիւն ըլլայ, այն ատեն պիտի գիտնամ որ ըսածիդ պէս Իսրայէլը իմ՝ ձեռքովս պիտի ազատես: 38 - Եւ այնպէս եղաւ. վասն զի առաւօտուն կանուխ ելաւ, ու գզաթը քամեց, և գզաթէն ցօղը հանեց, որ կոնք մը լեցուն ջուր եղաւ:

39 - Այն ատեն Գեղէօն Ասաուծոյ ըսաւ, Քու բարկութիւնդ իմ՝ վրաս չբորբոքի, ու միայն այս անգամ ալ խօսիմ. միայն այս անգամ՝ գզաթովը փորձեմ. հիմա միայն գզաթին վրայ չորութիւն՝ ու բոլոր գետնին վրայ ցօղ ըլլայ: 40 - Եւ այն գիշերը Ասաուած այնպէս ըրաւ. միայն գզաթին վրայ չորութիւն՝ ու բոլոր գետնին վրայ ցօղ եղաւ:

ԳԼ Է

Եւ Յերոբաաղ, այսինքն Գեղէօն, ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը կանուխ ելան, Հարօղի աղբիւրին քով բանակեցան. ու Մադիամու բանակը անոր հիւսիսային կողմը, դէպի Մօրէի բլուրը, հովիտին մէջ էր: 2 - Եւ Տէրը ըսաւ Գեղէօնի, Քեզի հետ եղող ժողովուրդը շատ է. չե՞մ «չե՞ր Մադիամը անոնց ձեռքը տալ, չըլլայ որ Իսրայէլին ձի դէմ պարծենայ ու ըսէ թէ իմ՝ ձեռքս զիս ազատեց: 3 - Աւստի հիմա քարոզ կարգալ տաս որպէս զի ժողովուրդը լսէ, ու ըսես, Ով որ վատասիրտ ու երկչոտ է, թող ետ դառնայ, և շուտով Գաղաադ լեռնէն երթայ. ու ժողովուրդէն քանուերկու հազար հոգի ետ դարձան, ու տասը հազար մնացին: 4 - Եւ Տէրը ըսաւ Գեղէօնի, Ժողովուրդը տակաւին շատ է. ջուրին քով իջեցուր զանոնք, ու հոն քեզի համար զանոնք փորձեմ. և որո՞ւ համար քեզի ըսեմ՝ թէ Ատիկա քեզի հետ երթայ, անհկա քեզի հետ թող երթայ. ու որո՞ւ համար քեզի ըսեմ՝ թէ Ատիկա քեզի հետ չերթայ, անհկա թող չերթայ: 5 - Աւստի ժողովուրդը ջուրին քով իջեցուց. և Տէրը Գեղէօնի ըսաւ, Ով որ շուրի լափելուն պէս ջուրը լեզուովը լափէ, զանհկա զտակայնեցնես. ու ով որ խմելու համար իր ծունկերուն վրայ ծռի, զանհկա ալ զար իայնեցնէ»: 6 - Եւ ձեռքը բերանը դանելով լափողներուն թիւը երեք հարիւր մարդ էր, և բոլոր մնացած ժողովուրդը իրենց ծունկերուն վրայ ծռեցան ջուր խմելու համար: 7 - Աւ Տէրը Գեղէօնի ըսաւ, Այն երեք հարիւր մարդոցմով, որոնք Չուրը լափեցին, ձեզ պիտի ազատեմ, և Մադիամը քու ձեռքդ պիտի մտանեմ. ու բոլոր հաշտ ժողովուրդը, ամէն մարդ, իր տեղը

*Այսինքն, Բաճաղ ջատագովութիւն թող ընէ

Երթայ : 8 - Ուստի ժողովուրդը իրենց ձեռքը պաշար առին և իրենց փողերն ալ : Եւ Գեդէօն Իսրայէլի բոլոր մարդիկը , ամէն մէկը , իր վրանը զրկեց , բայց այն երեք հարիւր մարդը իր քով պահեց . ու Մադիամու բանակը անոր սակ հովիտին մէջ էր :

9 - Եւ նոյն գիշերը Տէրը անոր ըսաւ , Ոտք էլիր - - - Ի՛նչ բանակը իջիր , քանզի զանհկա քու ձեռքդ մատնեցի :

10 - Եւ եթէ դուն իջնելու կը վախնաս , նախ դուն քու ծառայիդ Փուրայի հետ բանակը իջիր .

11 - Եւ պիտի լսես թէ անոնք ի՛նչ կը խօսին . անկէ ետե քու ձեռքերդ պիտի ուժովան , որպէս զի բանակը իջնես :

12 - Ուստի ինք և իր ծառան Փուրա բանակին մէջի գունդերուն ծայրը իջան :

13 - Ու Մադիամ և Ամադէկ ու բոլոր արեւելիցիները մարտիներու պէս բազմութեամբ հովիտին մէջ պառկեր էին , և անոնց ուղտերը անթիւ էին , - - - ծովուն եզերքը եղող աւազին չափ շատ էին :

14 - Եւ Գեդէօն հօն երթալով լեռնային մարդ մը իր ընկերին երազ կը պատմէր ու կ'ըսէր , Ես երազ մը տեսայ , և ահա գարեղէն հաց մը դէպ ի Մադիամու բանակը կը գլորուէր , և վրանին հասնելով զանհկա զարկաւ որ ինկաւ , ու գլխի վար դարձուց , և վրանը ինկաւ :

15 - Ու անոր ընկերը պատասխան տուաւ և ըսաւ , Ատիկա ուրիշ բան չէ , բայց միայն Իսրայէլացի Յովտի որդւոյն Գեդէօնի սուրբ . Աստուած Մադիամը ու բոլոր բանակը անոր ձեռքը մատներ է :

16 - Եւ երբ Գեդէօն երազին պատմութիւնը ու անոր մեկնութիւնը լսեց , Տէրու ճշմարտութիւնը ըրաւ , և Իսրայէլի բանակը դարձաւ ու ըսաւ . Ոտք էլէք , քանզի Տէրը Մադիամու բանակը ձեր ձեռքը տուեր է :

17 - Եւ այն երեք հարիւր մարդը երեք գունդի բաժնելով , ամէնուն ձեռքը փողեր ու պարագ սափորներ տուաւ , և սափորներուն մէջ ալ ջահեր դրաւ .

18 - Ու անոնց ըսաւ , Ինձի նայեցէք և այնպէս որէք . ու երբ բանակին եզերքը հասնիմ , ես ի՛նչպէս որ ընեմ , դուք ալ այնպէս ընէք :

19 - Ու երբ ես ու բոլոր ինձի հետ եղողները փողը հնչեցընենք , այն ատեն դուք ալ բոլոր բանակին չորս կողմը փողերը հնչեցուցէք , և ըսէք , Տէրոջը ու Գեդէօնի - - - րը :

20 - Եւ Գեդէօն ու անոր հետ եղող հարիւր մարդը կէս գիշերուան պահուն սկիզբը , երբ պահապանները նոր դրած էին , բանակին եզերքը հասան , և փողերը հնչեցնելով ձեռքերնուն մէջ եղած սափորները կտարտեցին :

21 - Այն ատեն երեք գունդն ալ փողերը հնչեցուցին ու սափորները կտարտեցին , ու ձախ ձեռքով ջահերը , ու աջ ձեռքով փողերը բռնելով հնչեցնելու համար կը պռուպին - - - րէն , Տէրոջը ու Գեդէօնի սուրբ :

22 - Եւ ամէն մարդ բանակին բոլորափքը իր տեղը կայներ էր . ու բոլոր բանակը վազելով և ազազակելով կը փախչէին :

23 - Ու երբ այն երեք հարիւր մարդը երեւոյ փողերը հնչեցուցին , Տէրը բոլոր բանակին մէջ ամէն մարդուն սուրբ իր ընկերին վրայ դարձուց . և զօրքը մինչև Բեթաատա դէպ ի Սարերա , - - - մինչև Աբելմաուլայի սահմանը և Տարէթ փախաւ :

24 - Եւ Իսրայէլացիք Նեփթաղիմէ , Ատերէ և բոլոր Մանատէ ժողովուեցան , ու Մադիամացուց ետեւէն ինկան :

25 - Եւ Գեդէօն Եփրեմի բոլոր լեռնակողմը պատգամաւորներ զրկեց՝ ըսելով , Մադիամացիները գիմաւորելու իջէք , և անոնց առջեւէն ջուրերը բռնեցէք մինչև Բեթբարա , նաև Յորդանանը :

26 - Ուստի Եփրեմի բոլոր մարդիկը ժողովուեցան , ու ջուրերը բռնեցին մինչև Բեթբարա , նաև Յորդանանը :

27 - Եւ Մադիամու երկու իշխանները , Օրէբը ու Զէբը , բռնեցին . Օրէբը Օրէբի վէմին քով մեռցուցին , ու Զէբը Զէբի հնձանին քով մեռցուցին . և Մադիամացիները հալածեցին , ու Օրէբի և Զէբի գլուխները Գեդէօնի բերին Յորդանանու անդի ի կողմէն :

28 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

19 - Եւ Գեդէօն ու անոր հետ եղող հարիւր մարդը կէս գիշերուան պահուն սկիզբը , երբ պահապանները նոր դրած էին , բանակին եզերքը հասան , և փողերը հնչեցնելով ձեռքերնուն մէջ եղած սափորները կտարտեցին :

20 - Այն ատեն երեք գունդն ալ փողերը հնչեցուցին ու սափորները կտարտեցին , ու ձախ ձեռքով ջահերը , ու աջ ձեռքով փողերը բռնելով հնչեցնելու համար կը պռուպին - - - րէն , Տէրոջը ու Գեդէօնի սուրբ :

21 - Եւ ամէն մարդ բանակին բոլորափքը իր տեղը կայներ էր . ու բոլոր բանակը վազելով և ազազակելով կը փախչէին :

22 - Ու երբ այն երեք հարիւր մարդը երեւոյ փողերը հնչեցուցին , Տէրը բոլոր բանակին մէջ ամէն մարդուն սուրբ իր ընկերին վրայ դարձուց . և զօրքը մինչև Բեթաատա դէպ ի Սարերա , - - - մինչև Աբելմաուլայի սահմանը և Տարէթ փախաւ :

23 - Եւ Իսրայէլացիք Նեփթաղիմէ , Ատերէ և բոլոր Մանատէ ժողովուեցան , ու Մադիամացուց ետեւէն ինկան :

24 - Եւ Գեդէօն Եփրեմի բոլոր լեռնակողմը պատգամաւորներ զրկեց՝ ըսելով , Մադիամացիները գիմաւորելու իջէք , և անոնց առջեւէն ջուրերը բռնեցէք մինչև Բեթբարա , նաև Յորդանանը :

25 - Ուստի Եփրեմի բոլոր մարդիկը ժողովուեցան , ու ջուրերը բռնեցին մինչև Բեթբարա , նաև Յորդանանը :

26 - Եւ Մադիամու երկու իշխանները , Օրէբը ու Զէբը , բռնեցին . Օրէբը Օրէբի վէմին քով մեռցուցին , ու Զէբը Զէբի հնձանին քով մեռցուցին . և Մադիամացիները հալածեցին , ու Օրէբի և Զէբի գլուխները Գեդէօնի բերին Յորդանանու անդի ի կողմէն :

27 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

28 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

29 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

30 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

31 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

32 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

33 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

34 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

35 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

36 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

37 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

38 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

39 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

40 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

41 - Եւ Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

ԳԼ Ը

Ու Եփրեմեանք անոր ըսին , Այս մեզի ըրած բանդ ի՛նչ պիտի ըլլայ , որ Մադիամու դէմ պատերազմելու գացիր , և մեզ չկանչեցիր . ու անոր հետ սաստիկ վէճ ըրին : 2 - Եւ անհկա անոնց ըսաւ , Ես հիմա ձեզի պէս ի՛նչ բան ըրի . Եփրեմի ճաքաղուծիւնը Աբիեզերի այգեկաւթէն լաւագոյն չէ՞ արդեօք : 3 - Աստուած Մադիամու իշխանները , Օրէբը ու Զէբը , ձեր ձեռքը տուաւ . ես ձեզի պէս ի՛նչ բան կրցայ ընել : Այս խօսքը ըսածին պէս՝ անոր

վրայով անոնց սիրար հանգարտեցաւ :

4 - Եւ Գեղէօն Յորգանան եկաւ ,
 ու ինք և իրեն հետ եղող երեք հարիւր
 մարդիկը անցան . թէպէտև նուազած
 էին , բայց Քննիչը կը հալածէին : 5 -
 Ու Սոկրովթի մարդոցը ըսաւ , Շնորհք
 բրէք , ետեւէս եկող ժողովուրդին
 հացի նկանակներ տուէք , քանզի նուա-
 զած են . ու ես Մաղիամու թագա-
 ւորներուն , Չեբէէի ու Սաղմանայի ,
 ետեւէն ինչեք կը հալածեմ : 6 - Եւ
 Սոկրովթի իշխանները ըսին , Միթէ
 Չեբէէի ու Սաղմանայի ձեռքը արգէն
 քու ձեռքիդ մէջ է , որ մենք քու զօր-
 քիդ հաց տանք : 7 - Ու Գեղէօն ըսաւ ,
 Ուրեմն երբ Տէրը Չեբէէն ու Սաղմա-
 նան իմ ձեռքս տայ , ձեր մարմինները
 անապատին փուշերովը ու տատակ-
 ներովը պիտի ծեծեմ : 8 - Եւ անկէ
 Փանուէլ ելաւ , ու անոնց ալ այնպէս
 ըսաւ . բայց Փանուէլի մարդիկը Սոկ-
 րովթի մարդոցը տուած պատասխանին
 պէս պատասխան տուին : 9 - Ու Փա-
 նուէլի մարդոցն ալ խօսեցաւ ըսելով ,
 Երբ խաղաղութեամբ դառնամ , այդ
 աշտարակը պիտի փլցնեմ :

10 - Ու Չեբէէ ու Սաղմանա և ա-
 նոնց հետ անոնց բանակը արեւելքի
 բնակիչներուն բոլոր բանակէն մնացած
 զօրէ , ամէնը ասանրհինգ հազարի չափ
 մարդ , կարկարի մէջ էին . ու ինկած
 մեռածները հարիւր քսան հազար սու-
 սերամերկ մարդիկ էին : 11 - Եւ Գե-
 դէօն Նորահի ու Յօգբէհայի արեւել-
 եան կողմէն վրանաբնակներուն ճամ-
 բովը ելաւ , ու բանակը զարկաւ , քանզի
 բանակը անհոգ կը կենար : 12 - Եւ
 Չեբէէ ու Սաղմանա փախան . ու Գե-
 դէօն անոնց ետեւէն իյնալով , Մա-
 դիամու երկու թագաւորները , Չե-
 բէէն ու Սաղմանան , բռնեց , ու բոլոր
 բանակը տակնուվրայ ըրաւ :

13 - Եւ Յովասի որդին Գեղէօն *ա-
 բելը չեղած պատերազմէն ետ դար-
 ձաւ . 14 - Ու Սոկրովթի մարդոցմէն
 երիտասարդ մը բռնեց , և անոր հար-
 ցուց . ու անիկա Սոկրովթի իշխանները
 ու ծերերը , եօթանասուներեօթը մարդ ,
 գրեց *—*— անոր : 15 - Եւ Գեղէօն
 Սոկրովթի բնակիչներուն եկաւ , ու
 ըսաւ , Ահա Չեբէէ ու Սաղմանա ,
 որոնց համար զիս նախատեցիք՝ ըսելով ,

Միթէ Չեբէէի ու Սաղմանայի ձեռքը
 արգէն քու ձեռքիդ մէջ է , որ մենք
 քու նուազած մարդոցդ հաց տանք :
 16 - Ուստի քաղաքին ծերերը առաւ ,
 և անապատէն փուշեր ու տատակներ
 —— , և անոնցմով Սոկրովթի մար-
 դիկը պատժեց : 17 - Ու Փանուէլի
 աշտարակը փլցուց , և քաղաքին մար-
 դիկը կոտորեց :

18 - Եւ Չեբէէի ու Սաղմանայի ը-
 սաւ , Թաբօրի մէջ մեռցուցած մար-
 դիկնիդ ինչպէս հարդէ էին : Ու անոնք
 ըսին , ինչպէս ես դուն , անոնք ալ այն-
 պէս էին . ամէն մէկը թագաւորի տղու
 կը նմանէր : 19 - Եւ անիկա ըսաւ ,
 Անոնք իմ եղբայրներս , մօրս աղաք-
 ներն , էին : Կենդանի է Տէր , եթէ
 դուք զանոնք ողջ թողուիք , ես ձեզ
 չէի մեռցներ : 20 - Ու իր անդրանիկ
 տղուն Յեթերի ըսաւ , Ելիք , ասոնք
 մեռցուր : Բայց պատանին իր սուրբ
 չքաշեց . քանզի մանկահասակ ըլլա-
 լով վախցաւ : 21 - Ուստի Չեբէէ ու
 Սաղմանա ըսին , Իուն ելիք որ մեզ զար-
 նես , քանզի մարդուս պօքը իր հասակին
 համեմատ կ'ըլլայ . և Գեղէօն օտք
 ելաւ , ու Չեբէէն և Սաղմանան մեռ-
 ցուց . և անոնց ուղտերուն պարանոցին
 վրայ եղած մահիկները առաւ :

22 - Եւ Իսրայէլի մարդիկը Գեղէօնի
 ըսին , Մեր վրայ թագաւորէ դուն ու
 քու որդիդ և քու որդւոյդ որդին ,
 որովհետև մեզ Մադիամու ձեռքէն
 ազատեցիր : 23 - Ու Գեղէօն անոնց
 ըսաւ , Ես ձեր վրայ չեմ թագաւորեր ,
 ոչ ալ իմ որդիս ձեր վրայ պիտի թա-
 գաւորէ . ձեր թագաւորը Տէրը ըլլայ :

24 - Ետքը Գեղէօն անոնց ըսաւ ,
 Չեղմէ բան մը պիտի խնդրեմ . ամէն
 մարդ իր աւարին օղերը ինծի տայ .
 (քանզի անոնք Իսմայէլացի ըլլալով
 ոսկի օղեր ունէին) : 25 - Ու անոնք
 ըսին , Բոլոր սրտով կու տանք . ուստի
 լաթ մը փռեցին , ու ամէն մարդ իր
 աւարին օղերը հոն ձգեց : 26 - Եւ այն
 իր ուզած ոսկի օղերուն կշիռքը հա-
 զար եօթը հարիւր *իչ ոսկի եղաւ ,
 մահիկներէն , գինտերէն ու Մադիա-
 մու թագաւորներուն վրայի ծիրանի
 պատմու ճաններէն , և անոնց ուղտե-
 րուն պարանոցին վրայ եղած մանեակ-
 ներէն զատ : 27 - Ու Գեղէօն անոնց-
 մով եփուտ մը շինեց , և իր Եփրա քա-
 ղաքին մէջ դրաւ , ու բոլոր Իսրայէլ

*Կամ , Արեւի զառ ի վերէն

Հոն անոր ետեւէն երթալով պոռնկեցաւ . և Գեղէօնի ու անոր տանը որոգայթ եղաւ :

28 - Այսպէս Մադիամ Իսրայէլի որդիներուն առջև նուաճեցաւ , և այնպէս չկրցաւ գլուխ վերցնել . ու Գեղէօնի օրերը երկիրը քառասուն տարի հանգստացաւ :

29 - Եւ Յովտաի որդին Յերոբոամը գնաց , ու իր տանը մէջ նստաւ : 30 - Եւ Գեղէօն եօթանասուն տղայ ունէր իր երանքէն ելած , քանզի շատ կիներ ունէր : 31 - Աւ Սիւքէմի մէջ ունեցած հարճն ալ անոր տղայ մը ծնաւ , և անոր անունը Աբիմելէք դրաւ :

32 - Աւ Յովտաի որդին Գեղէօն բարի ծերութեամբ մեռաւ , և Աբիեզերեանց Եփրային մէջ իր հօրը Յովտաի գերեզմանը թաղուեցաւ :

33 - Եւ Գեղէօն մեռածին պէս՝ Իսրայէլի որդիները դարձան ու Բաճաղիմի ետեւէն երթալով պոռնկեցան , ու Բաճաղ-բերիթը իրենց աստուած ըրին :

34 - Եւ Իսրայէլի որդիները չյիշեցին իրենց Տէր Աստուածը , որ զիրենք ազատէր էր իրենց բոլորապէս եղած ամէն թշնամիներուն ձեռքէն : 35 - Աւ Յերոբոամի (այսինքն Գեղէօնի) տանը , անոր Իսրայէլի ըրած բոլոր բարութեանը համեմատ , զթուծիւն չըրին :

ԳԼ Թ

Աւ Յերոբոամի որդին Աբիմելէք Սիւքէմ իր մօրը եղբայրներուն գնաց . և անոնց հետ ու իր մօրը հօրը բոլոր ազգատոհմին հետ խօսեցաւ՝ ըսելով , 2 - Ենորհք ըրէք , Սիւքէմի բոլոր *բնակիչներուն ականջներուն զրուցեցէք թէ Ձեզի ո՞րը աղէկ է . Յերոբոամի բոլոր որդիներուն , եօթանասուն մարդոց , ձեր վրայ թագաւորե՞լը , թէ մէկ մարդուն ձեր վրայ թագաւորելը . և միտքերնիդ բերէք , որ ես ձեր սակորն ու ձեր մարմինն եմ : 3 - Աւստի իր մօրը եղբայրները անոր վրայով ամէն այս խօսքերը Սիւքէմի բոլոր բնակիչներուն ականջներուն զրուցեցին . ու անոնց սիրար Աբիմելէքի դարձաւ , քանզի ըսին թէ Անիկա մեր եղբայրն է : 4 - Եւ Բաճաղ-բերիթի տունէն եօթանասուն կտոր արծաթ տուին անոր , ու

*Եբբ . այր մարդոց

Աբիմելէք անոնցմով դատարկակեաց ու սրկայ մարդիկ վարձքով բանեց , և անոր ետեւէն գացին : 5 - Աւ Եփրայի մէջ իր հօրը տունը մտաւ , և իր եղբայրները , Յերոբոամի որդիները , եօթանասուն հոգի , մէկ քարի վրայ սպաննեց . բայց Յերոբոամի պառիկ աղան Յովտաի պահուելով ողջ մնաց : 6 - Ետքը բոլոր Սիւքէմի բնակիչները և Մելօնի բոլոր տունը մէկտեղ ժողովուեցան , ու գացին Սիւքէմի մէջ *պահապանաց կաղնիին քով Աբիմելէքը թագաւոր ըրին :

7 - Աւ երբ այն քան Յովտաի իմացուցին , անիկա գնաց Գարիզին լեռանը գլուխը կայնեցաւ , և ձայնը վերցնելով պոռաց ու անոնց ըսաւ , Ով Սիւքէմի բնակիչներ , ինձի մտիկ ըրէք , և Աստուած ձեզի մտիկ ընէ :

8 - Ծառերը գացին որ իրենց համար թագաւոր մը օժեն , ու ձիթենիին ըսին , Մեր վրայ թագաւոր եղիր : 9 - Բայց ձիթենին անոնց ըսաւ , Իմ պարարտութիւնս թողում , †որ ինձմով զԱստուած ու մարդիկը կը պատուեն , ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ :

10 - Եւ ծառերը թզենիին ըսին , Գուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր : 11 - Եւ թզենին անոնց ըսաւ , Իմ քաղցրութիւնս ու աղէկ պատուս թողում , ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ :

12 - Այն ատեն ծառերը որթին ըսին , Գուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր : 13 - Որթն ալ անոնց ըսաւ , ՉԱստուած ու մարդիկը ուրախացնող գինիս թողում , ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ :

14 - Այն ատեն ամէն ծառերը դժնիկին ըսին , Գուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր : 15 - Եւ դժնիկը ծառերուն ըսաւ , Եթէ դուք իրաւընէ զիս ձեր վրայ թագաւոր կ'օժէք , եկէք իմ հովանիս ատկ նստէք , եթէ ոչ դժնիկէն կրակ թող ելլէ , ու Լիբանանու եղեւինները այրէ :

16 - Եւ հիմա եթէ դուք Աբիմելէքը թագաւոր ընելով ճշմարտութեամբ ու արդարութեամբ վարուեցաք , և եթէ Յերոբոամի ու անոր տանը բարութիւն ըրիք , և եթէ անոր գործե-

*Կամ , արձանի
†Կամ , որուն համար Աստուած ու մարդիկ զիս կը պատուեն
‡Եբբ . երերում

րուն համեմատ անոր հատուցում՝ ըրիք.
 17 - (Քանզի իմ հայրս ձեզի համար պատերազմ՝ ըրաւ, ու իր անձը՝ վտանգի մէջ դրաւ, և ձեզ Մադիամու ձեռքէն ազատեց . 18 - Իսկ դուք այսօր իմ հօրս տանը դէմ ոտք ելաք, ու անոր սրդիները, եօթանասուն մարդ, մէկ քարի վրայ սպաննեցիք, ու անոր աղախինին տղան Աբիմեղէքը, ձեր եղբայրը ըլլալուն համար, Սիւքէմի բնակիչներուն վրայ թագաւոր ըրիք.) 19 - Ուստի եթէ այսօր Յերոբոամի ու անոր տանը վրայով ճշմարտութեամբ ու արդարութեամբ վարուեցաք, Աբիմեղէքի վրայ ուրախացէք, ան ալ ձեր վրայ թող ուրախանայ . 20 - Ապա թէ ոչ թող Աբիմեղէքէ կրակ ելլէ և Սիւքէմի բնակիչները ու Մելօնի տունը այրէ . և Սիւքէմի բնակիչներէն ու Մելօնի տունէն կրակ ելլէ և Աբիմեղէքը այրէ : 21 - Ետքը Յովաթամ փախաւ ազատեցաւ, ու Բէեր գնաց, և իր Աբիմեղէք եղբորմէն վախճալուն համար հոն բնակեցաւ :

22 - Եւ Աբիմեղէք Իսրայէլի վրայ երէք ասորի թագաւորեց : 23 - Ու Ասաուած Աբիմեղէքի և Սիւքէմի բնակիչներուն մէջ չար ոգի մը զրկեց, ու Սիւքէմի բնակիչները Աբիմեղէքի հետ նենգութեամբ վարուեցան . 24 - Որպէս զի Յերոբոամի եօթանասուն սրդիներուն եղած անիրաւութիւնը գայ, և անոնց Քաճաճ արիւնը անոնց եղբօրը Աբիմեղէքի վրայ հասնի, որ զանոնք սպաններ էր, ու Սիւքէմի բնակիչներուն վրայ՝ որոնք անոր ձեռքերը ու ժողջուցեր էին իր եղբայրները սպաննելու : 25 - Ուստի Սիւքէմի բնակիչները լեռներուն գլուխները անոր դարաններ պատրաստեցին, և ճամբան իրենց քովէն ամէն անցնողները կը թալլէին . ու այս քաջ Աբիմեղէքի իմացուցին : 26 - Եւ Աբեգի որդին Քաաղ ու անոր եղբայրները եկան, Սիւքէմի մէջ մտան . և Սիւքէմի բնակիչները անոր ապաւինեցան . 27 - Ու դաշար ելլելով իրենց սյգիներուն խաղողները քաղեցին, և կոխելով ուրախութիւն ըրին, ու իրենց աստուծոյն տունը մտնելով կերան ու խմեցին, և Աբիմեղէքը անիծեցին : 28 - Ու Աբեգեան Քաաղ ըսաւ, Աբիմեղէք ո՞վ է, և Սիւքէմ ո՞վ է որ մենք

անոր ծառայ ըլլանք . անիկա Յերոբոամի տղան չէ՞, ու Չեբուզ անոր փոխանորդը չէ՞ : Սիւքէմի հօրը Եմալի մարդոցը ծառայութիւն ըրէք . ու մենք ինչո՞ւ համար անոր պիտի ծառայենք : 29 - Երանի՛ թէ այս ժողովուրդը իմ ձեռքիս տակ անցնէր, ու ես Աբիմեղէքը վերցնէի . և Աբիմեղէքի ըսաւ, Չօրքերդ շատցուր ու ելիր :

30 - Եւ քաղաքին իշխանը Չեբուզ երբ Աբեգեան Քաաղի խօսքերը լսեց, խիտա բարկացաւ . 31 - Եւ ծածուկ կերպով մը Աբիմեղէքի պատգամաւորներ զրկեց՝ ըսելով, Ահա Աբեգեան Քաաղ ու իր եղբայրները Սիւքէմ եկան, և ահա անոնք քեզի դէմ քաղաքը ոտք կը հանեն : 32 - Ուստի հիմա դուն գիշերով ելիր, ու դաշար դարանի մէջ նստէ քեզի հետ եղող ժողովուրդով . 33 - Եւ առաւօտուն արեւը ծագածին պէս կանուխ ելիր, ու ելաւ քաղաքին վրայ յարձակէ . և ահա անիկա ու անոր հետ եղող ժողովուրդը քեզի դէմ պիտի ելլեն . այն ատեն ձեռքէդ եկածը ընես անոր :

34 - Ուստի Աբիմեղէք և անոր հետ եղող բոլոր ժողովուրդը գիշերով ելան, ու չորս գունդի քաճաճ Սիւքէմի դէմ դարանի մէջ նստան : 35 - Եւ Աբեգեան Քաաղ ելաւ ու քաղաքին դրանը առջև կայնեցաւ . և Աբիմեղէք իրեն հետ եղող ժողովուրդով դարաններէն դուրս ելաւ : 36 - Ու Քաաղ այն ժողովուրդը տեսնելով Չեբուզի ըսաւ, Ահա լեռներուն գլխէն ժողովուրդ կ'իջնէ : Ու Չեբուզ անոր ըսաւ, Լեռներուն շուքը քեզի մարդոց պէս կ'երեւնայ : 37 - Եւ Քաաղ դարձեալ խօսեցաւ ու ըսաւ, Ահա երկրին քարձր տեղերէն՝ ժողովուրդ կ'իջնէ, և գունդ մըն ալ Մեծնէնիմի կաղնիին ճամբով կու գայ : 38 - Ու Չեբուզ անոր ըսաւ, Ո՞ր է այն քու բերանդ, որով կ'ըստիր թէ Աբիմեղէք ո՞վ է՝ որ մենք անոր ծառայութիւն ընենք . քու վար զարկած ժողովուրդդ ատիկա չէ՞ . հիմա ելիր ու անոր հետ պատերազմ ըրէ : 39 - Ուստի Քաաղ Սիւքէմի բնակիչներուն առջևէն ելլելով՝ Աբիմեղէքի հետ պատերազմ ըրաւ : 40 - Եւ Աբիմեղէք զանիկա հալածեց, ու անիկա անոր առջևէն փախաւ, ու մինչև

*Եբբ. առջևը ձգեց

*Եբբ. պարտէն

գրանք առջև շատերը մեռած ինկան : 41 - Եւ Աբիմեէլէք Արուսայի մէջ նստաւ, ու Զեբուղ Գաաղը և անոր եղբայրները վաճակեց, որպէս զի ա՛լ Սիւքէմի մէջ չբնակին : 42 - Եւ Տեաեւեալ օրը ժողովուրդը դաշար ելաւ. ու երբ Աբիմեէլէք իմացաւ, 43 - Ի՛ր ժողովուրդը առաւ, երեք գունդի բաժնեց, և դաշտին մէջ դարանամուտ եղաւ. ու երբ տեսաւ որ ժողովուրդը քաղաքէն դուրս կ'ելլէ, անոնց վրայ յարձակելով զանոնք զարկաւ : 44 - Եւ Աբիմեէլէք ու անոր հետ եղող գունդը յարձակելով քաղաքին դրանք առջև կայնեցան. ու երկու գունդերը բոլոր դաշտին մէջ եղողներուն վրայ յարձակելով զանոնք զարկին : 45 - Եւ Աբիմեէլէք այն բոլոր օրը քաղաքին հետ պատերազմեցաւ ու քաղաքը սառաւ, և մէջը եղող մարդիկը կտարեց, ու քաղաքը փլցուց և հոն աղ ցանեց :

46 - Ու Սիւքէմի աշտարակին բոլոր բնակիչները երբ այ՛ Բանը լսեցին, Բերիթ աստուծոյն տանը բերդը մտան : 47 - Եւ Աբիմեէլէքի իմացուցին թէ Սիւքէմի աշտարակին բոլոր բնակիչները ժողովուրդ են : 48 - Այն ատեն Աբիմեէլէք իրեն հետ եղող բոլոր ժողովուրդով Սելմոն լեռը ելաւ. ու Աբիմեէլէք տապարը ձեռքը սունելով ծառի սատ մը կտրեց, ու զանիկա վերցուց իր ուսին վրայ դրաւ, և իրեն հետ եղող ժողովուրդին ըսաւ, Ահա տեսաք ինչ որ ես բրի, շուտով դուք ալ ինծի պէս բրեք : 49 - Ուստի ժողովուրդին ամէնն ալ մէյմէկ սատ կտրեցին, ու Աբիմեէլէքի ետեւէն գացին, և ասորէ բերդին քով դրին, ու անոնցմով բերդը կրակով այրեցին. այսպէս Սիւքէմի աշտարակին բոլոր մարդիկն ալ, որոնք հազարի չափ այր ու կին մարդիկ էին, մեռան :

50 - Եւ Աբիմեէլէք Թեբէս գնաց, ու Թեբէսը պաշարեց ու զանիկա սառաւ : 51 - Եւ քաղաքին մէջտեղը ամուր աշտարակ մը կար. ու քաղաքին բոլոր բնակիչները, թէ՛ այր և թէ՛ կին մարդիկ, հոն փախան, դուռը ներսէն գոցեցին ու աշտարակին տանիքը ելան : 52 - Եւ Աբիմեէլէք մինչև աշտարակը գնաց ու անոր հետ պատերազմ ըրաւ, և աշտարակին դրանք մտակեցաւ որպէս զի զանիկա կրակով այրէ : 53 - Ու կին մը Աբիմեէլէքի գլխուն վրայ

երկանաքարի կտոր մը նետեց, և անոր գագաթը կտարեց : 54 - Ու անիկա շուտով իր զէնքերը կտրող երիտասարդը կանչեց և անոր ըսաւ, Սուրդ քաշէ ու զիս մեռցուր, չըլլայ որ ինծի համար բսեն թէ Զանիկա կին մը մեռցուց : Եւ երիտասարդը զանիկա ասիւ խոցեց, ու մեռաւ : 55 - Ու Խորայէլի մարդիկը Աբիմեէլէքի մեռնիլը տեսնելով ամէն մարդ իր տեղը գնաց :

56 - Այսպէս Աստուած Աբիմեէլէքի ինքնուրուի դարձուց այն չարութիւնը զոր անիկա իր հօրը ըրեր էր իր եօթանասուն եղբայրները սպաննելով : 57 - Եւ Սիւքէմի մարդոցը բոլոր չարութիւնը Աստուած անոնց գլուխը դարձուց. ու Յերոբոամի որդւոյն Յովթամի անէծքը անոնց վրայ եկաւ :

ԳԼ Ժ

Եւ Աբիմեէլէքէ ետքը Իսաքարեան Գովգայի որդւոյն Փուայի որդին Թովղա ելաւ Խորայէլը ապառելու համար. ու անիկա Եփրեհի լեռը Սամիրի մէջ կը բնակէր : 2 - Եւ Խորայէլի մէջ քանուխրէք տարի դատաւորութիւն ըրաւ, ու մեռաւ և Սամիրի մէջ թաղուեցաւ :

3 - Ու անկէ ետև Գաղաադացի Յաւրի ելաւ, և Խորայէլի մէջ քանուխրէկու տարի դատաւորութիւն ըրաւ : 4 - Ու անիկա երեսուն որդի ունէր, որոնք երեսուն տաւանակի վրայ կը հեծնէին. և անոնք Գաղաադու երկրին մէջ երեսուն քաղաք ունէին, որոնք մինչև այսօր Յայիրի գիւղաքաղաքները կ'ըսուին : 5 - Եւ Յայիր մեռաւ ու կամօնի մէջ թաղուեցաւ :

6 - Եւ Խորայէլի որդիները նորէն Տերոջը առջև չարութիւն ըրին, ու Բաշաղիմը և Աստարովթը ու Ասորուց աստուածները և Սիգոնի աստուածները ու Մովաբի աստուածները և Ամմոնի որդիներուն աստուածները ու Փղշաացուց աստուածները պաշտեցին. և Տէրը թողուցին ու անոր ծառայութիւն չըրին : 7 - Եւ Տերոջը բարկութիւնը Խորայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք Փղշաացուց ձեռքը ու Ամմոնի որդիներուն ձեռքը մտանեց : 8 - Եւ անոնք այն տարիէն մինչև տասներորթ տարի Խորայէլի որդիները նեղեցին ու հարստահարեցին, այսինքն բո-

լոր Իսրայէլի որդիները , որոնք Յորդանանու անդի կողմը , Գաղաադու մէջ , Ամօրհացուց երկրին մէջ իջ բնակէին : 9 - Նաև Ամմոնի որդիները Յորդանանէ անցան , որպէս զի Յուդայի հետ , Բենիամինի հետ ու Եփրեմի տանը հետ ալ պատերազմ ընեն . ու Իսրայէլ խիստ մեծ նեղութեան մէջ էր :

10 - Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին ու ըսին , Քեզի դէմ մեզք գործեցինք , քանզի մեր Աստուածը թողուցինք ու Բահայիմը պաշտեցինք .

11 - Եւ Տէրը Իսրայէլի որդիներուն ըսաւ , Չէ՞ որ Յեզ աշտուտեցի Եգիպտացիներէն , Ամօրհացիներէն , Ամմոնի որդիներէն ու Փղշտացիներէն . 12 - Նաև երբ Արդանացիները , Ամաղեկացիները ու Մասնացիները ձեզ նեղեցին , ու դուք ինծի աղաղակեցիք , ես ձեզ անոնց ձեռքէն ազատեցի :

13 - Բայց դուք զիս թողուցիք և ուրիշ աստուածներու ծառայութիւն ըրիք . անոր համար ես մէյմըն ալ ձեզ պիտի չազատեմ : 14 - Գացէք ձեր ընտանիք աստուածներուն աղաղակեցէք . ձեր նեղութեան ատենը թող անոնք ձեզ ազատեն :

15 - Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը ըսին , Մեզք գործեցինք . քու աչքիդ առջև ինչ որ հաճելի է , զայն ըրէ մեզի . բայց միայն կ'աղաչենք , ազատէ մեզ այսօր : 16 - Ուստի իրենց մէջէն օտար աստուածները վերցուցին , ու Տէրոջը ծառայութիւն ըրին . և Անոր սիրտը իջաւ Իսրայէլի նեղութեանը համար :

17 - Եւ Ամմոնի որդիները ժողվուեցան , ու Գաղաադու մէջ բանակեցան . Իսրայէլի որդիներն ալ ժողվուեցան , ու Մասփայի մէջ բանակեցան : 18 - Եւ ժողվուելով «- Գաղաադու իշխանները իրարու ըսին , Ով որ Ամմոնի որդիներուն հետ պատերազմ ընելու սկսի , անիկա Գաղաադու բոլոր բնակիչներուն գլուխ ըլլայ :

19 - Եւ Տէրը Տալմայի որդիներուն հետ պատերազմ ընելու համար իջաւ Գաղաադու ծերերուն վրայ , ու Տալմայի որդիներուն հետ պատերազմ ընելու համար , ու Տէրը զանոնք իմ ձեռքս մտանէ , ես ձեզի գլուխ ըլլամ :

20 - Եւ Գաղաադու ծերերը Յեփթայէի ըսին , Տէրը մեր մէջ վկայ ըլլայ * որ ըսածիդ պէս պիտի ընենք : 21 - Ու Յեփթայէ Գաղաադու ծերերուն հետ գնաց . և ժողվուելով զանիկա իրենց վրայ գլուխ ու զօրապետ դրին . ու Յեփթայէ Մասփայի մէջ Տէրոջը առջև իր բոլոր խօսքերը զրուցեց :

22 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն թագաւորին պատգամաւորներ զրկեց՝ ըսելով , Գուն ինծի հետ ի՞նչ բան ունիս , որ ինծի եկար իմ երկրիս մէջ պատերազմ ընելու համար : 23 - Եւ Ամմոնի որդիներուն թագաւորը Յեփթայէի պատգամաւորներուն ըսաւ , Որովհետև Իսրայէլ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

24 - Ու Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր : 25 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

ԳԼ. ԺԱ.

Եւ Գաղաադացի Յեփթայէ զօրաւոր ու կարիճ մարդ մըն էր , ու անիկա պոռնիկ կնոջ մը զաւակ էր . ու Յեփթայէի հայրը Գաղաադ էր : 2 - Եւ Գաղաադի կինը անոր զաւակներ ծնաւ . ու երբ կնոջը զաւակները մեծցան , Յեփթայէն վռնտեցին , ու անոր ըսին ,

Գուն մեր հօրը տանը մէջ ժառանգութիւն պիտի չունենաս , քանզի դուն օտար կնոջ մը զաւակ ես : 3 - Ու Յեփթայէ իր եղբայրներուն երեսէն փախչելով՝ Տովբի երկրին մէջ բնակեցաւ . և Յեփթայէի քով սրիկայ մարդիկ ժողվուեցան ու անոր հետ կը պարտէին :

4 - Եւ եղաւ որ ատենէ մը ետքը Ամմոնի որդիները Իսրայէլի հետ պատերազմ ըրին : 5 - Ու երբ Ամմոնի որդիները Իսրայէլի հետ պատերազմ կ'ընէին , Գաղաադու ծերերը գացին որ Յեփթայէն Տովբի երկրէն առնեն : 6 - Եւ Յեփթայէի ըսին , Եկուր , մեզի զօրագլուխ եղիւր , որպէս զի Ամմոնի որդիներուն հետ պատերազմ ընենք :

7 - Ու Յեփթայէ Գաղաադու ծերերուն ըսաւ , Ահա դուք զիս ատեցիք և իմ հօրս տունէն զիս վռնտեցիք , ու հիմա որ նեղութեան մէջ էք , ինչո՞ւ համար ինծի եկար : 8 - Եւ Գաղաադու ծերերը Յեփթայէի ըսին , Անոր համար հիմա քեզի դիմեցինք , որ մեզի հետ երթաս ու Ամմոնի որդիներուն դէմ պատերազմ ընես , և մեզի , Գաղաադու բոլոր բնակիչներուն , գլուխ ըլլաս :

9 - Ու Յեփթայէ Գաղաադու ծերերուն ըսաւ , Եթէ դուք զիս դարձնէք Ամմոնի որդիներուն դէմ պատերազմ ընելու համար , ու Տէրը զանոնք իմ ձեռքս մտանէ , ես ձեզի գլուխ ըլլամ :

10 - Եւ Գաղաադու ծերերը Յեփթայէի ըսին , Տէրը մեր մէջ վկայ ըլլայ * որ ըսածիդ պէս պիտի ընենք : 11 - Ու Յեփթայէ Գաղաադու ծերերուն հետ գնաց . և ժողվուելով զանիկա իրենց վրայ գլուխ ու զօրապետ դրին . ու Յեփթայէ Մասփայի մէջ Տէրոջը առջև իր բոլոր խօսքերը զրուցեց :

12 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն թագաւորին պատգամաւորներ զրկեց՝ ըսելով , Գուն ինծի հետ ի՞նչ բան ունիս , որ ինծի եկար իմ երկրիս մէջ պատերազմ ընելու համար : 13 - Եւ Ամմոնի որդիներուն թագաւորը Յեփթայէի պատգամաւորներուն ըսաւ , Որովհետև Իսրայէլ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

14 - Ու Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

15 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

16 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

17 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

18 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

19 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

20 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն ըսաւ , Երբ որ Եգիպտոսէ ելած ատենը Առնոնէ մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ . հիմա զանիկա խաղաղութեամբ ես դարձուր :

* Եբբ. եթէ այնպէս քու ըսածիդ պէս չընենք

դիներուն թագաւորին նորէն պատգամաւորներ զրկեց, 15 - Եւ անոր ըսաւ, Յեփթայէ այսպէս կ'ըսէ. Իսրայէլ Մովաբի երկիրը ու Ամմոնի որդիներուն երկիրը չառաւ. 16 - Քանզի Եգիպտոսէ ելած ատենը Իսրայէլ մինչև Կարմիր ծովը անապատէն գնաց, ու Կադէս եկաւ. 17 - Եւ Իսրայէլ Եգովմի թագաւորին դեսպաններ զրկեց՝ ըսելով, Շնորհք ըրէ, քու երկրէդ անցնիմ. բայց Եգովմի թագաւորը մտիկ չըրաւ. այնպէս ալ Մովաբի թագաւորին զրկեց, ան ալ թող չտուաւ. ու Իսրայէլ Կադէսի մէջ մնաց: 18 - Եւ անապատին մէջէն գնաց, ու Եգովմի երկրին ու Մովաբի երկրին բոլորաբար պարտեցաւ. և Մովաբի երկրին արեւելեան կողմէն երթալով Առնոնի անդի կողմը բանակեցաւ, բայց Մովաբի սահմանին մէջ չմտաւ. քանզի Մովաբի սահմանը Առնոն էր: 19 - Աւ Իսրայէլ դեսպաններ զրկեց Ամորհացուց Սեհոն թագաւորին, (որ Եսեբոնի թագաւորն էր,) և Իսրայէլ անոր ըսաւ, Շնորհք ըրէ, քու երկրէդ անցնիմ, որպէս զի իմ տեղս երթամ: 20 - Բայց Սեհոն Իսրայէլի *Տրաման չտուաւ՝ որ իր սահմանէն անցնի ու Սեհոն իր բոլոր ժողովուրդը ժողովեց, և Յատայի մէջ բանակեցան, ու անկա Իսրայէլի դէմ պատերազմ ըրաւ: 21 - Եւ Իսրայէլի Տէր Ասաուածը Սեհոնը ու անոր բոլոր ժողովուրդը Իսրայէլի ձեռքը մտանեց, ու զանոնք զարկին. և Իսրայէլ այն երկրին մէջ բնակող Ամորհացուց բոլոր երկիրը առաւ: 22 - Աւ Իսրայէլ Ամորհացուց բոլոր սահմանը, Առնոնէ մինչև Յարոկ, ու անապատէն մինչև Յորդանան ժառանգեց: 23 - Ասաի հիմա որ Իսրայէլի Տէր Ասաուածը Ամորհացիները իր Իսրայէլ ժողովուրդին առջեւէն վռնտեր է, դո՞ւն պիտի ժառանգես այն երկրէ: 24 - Քու ասաւածոյդ Քամովի քեզի ժառանգութիւն տուածը դուն չե՞ս ժառանգեր. մենք ալ մեր Եհովա Ասաուածոյն մեր առջեւէն վռնտած «զգեր»-ն երկրէ կը ժառանգենք: 25 - Եւ հիմա դուն Մովաբի թագաւորէն, Սեպփորեան Բաղակէ, աւելի †գորաւոր ես. միթէ անկա բնաւ Իսրայէլի հետ ծեծ-

կուեցա՞ւ, կամ անոնց հետ պատերազմ՝ ըրա՞ւ: 26 - Իսրայէլ Եսեբոնի ու անոր գեղերուն մէջ, Արտերի ու անոր գեղերուն մէջ, և Առնոնի եզերքին վրայ եղող բոլոր քաղաքներուն մէջ երեք հարիւր տարի է որ կը բնակի. և ինչո՞ւ համար պատերազմ այնքան ատենի մէջ չազատեցիք: 27 - Ասաի ես քեզի դէմ՝ յանցանք մը չեմ ըրած, և դուն ինծի հետ պատերազմ՝ ընելով ինծի չարութիւն կ'ընես. այսօր Իսրայէլի որդիներուն ու Ամմոնի որդիներուն մէջ Գատաւոր եղող Տէրը թող դատաստան ընէ: 28 - Բայց Ամմոնի որդիներուն թագաւորը Յեփթայէի զրկած խօսքերը մտիկ չըրաւ:

29 - Այն ատեն Յեփթայէի վրայ Տէրօջը Հոգին եկաւ. ու անկա Գաղաադէ ու Մանաոէ անցաւ, Գաղաադու Մասփայէն ալ անցաւ, ու Գաղաադու Մասփայէն Ամմոնի որդիներուն վրայ գնաց: 30 - Եւ Յեփթայէ Տէրօջը ուխտ ըրաւ ու ըսաւ, Եթէ Ամմոնի որդիները բոլորովին իմ ձեռքս մտանես, 31 - Աւ Ամմոնի որդիներէն խաղաղութեամբ ետ դառնամ, այն ատեն իմ տանս դունէն զիս գիմաւորելու ելողը Տէրօջը թող ըլլայ, ու զանկա ողջակէզ մատուցանեմ: 32 - Եւ Յեփթայէ Ամմոնի որդիներուն վրայ գնաց, որպէս զի անոնց հետ պատերազմ ընէ, ու Տէրը անոր ձեռքը մտանեց զանոնք: 33 - Եւ Արտերէ մինչև Մեննիթ, քսան քաղաք, ու մինչև Աբէլքերամիմ սաստիկ կոտորածով ջարդեց զանոնք. ու Ամմոնի որդիները Իսրայէլի որդիներուն առջև նուաճեցան:

34 - Եւ Յեփթայէ Մասփա իր տունը եկաւ. ու ահա անոր աղջիկը թմբուկներով և պար բռնելով զանկա գիմաւորելու կ'ելլէր. և անկա անոր մէկ հաստիկ գաւակն էր, ու անկէ զատ աղայ կամ աղջիկ չունէր: 35 - Եւ Յեփթայէ երբ զանկա տեսաւ, իր լսութեքը պատուեց, ու ըսաւ, Ահ, աղջիկս, դուն զիս բոլորովին նկուն ըրիր, և դուն ինծի իմ նեղիչներէս մէկը եղար. քանզի ես բերանս բացի Տէրօջը, ու չեմ կրնար ետ դարձնել: 36 - Եւ աղջիկը անոր ըսաւ, Ավ հայր իմ, եթէ Տէրօջը բերանդ բացիր, բերնէդ ելածը ըրէ ինծի. քանզի Տէրը քու թշնամիներէդ, Ամմոնի որդիներէն, քեզի համար վրէժ խնդրութիւն ըրաւ: 37 - Եւ

* Եբր. չվատահեցաւ
† Եբր. աղէկ

իր հօրը ըսաւ , Միայն այս բանն ըրէ
ինձի . Ձիս երկու ամիս թող տուր
որպէս զի լեռներուն վրայ ելլեմ՝ ու
իջնեմ : ու ես իմ ընկերներովս իմ կու-
տութեանս վրայ լամ : 38 - Եւ անիկա
ըսաւ , Գնա . ու զանիկա երկու ամիս
թող տուաւ . և անիկա իր ընկերնե-
րով գնաց , ու լեռներուն վրայ իր կու-
տութիւնը լացաւ : 39 - Եւ երկու ամ-
սուն լմննալէն ետքը իր հօրը դարձաւ ,
ու անիկա իր ըրած ուխտը անով կա-
տարեց . և անիկա այր մարդ չճանչ-
ցաւ : 40 - Ու Իսրայէլի մէջ սովորու-
թիւն եղաւ , որ ատեն ատեն Իսրա-
յէլի աղջիկները երթան , ու Գաղատա-
դացի Յեփթայէի աղջկանը համար
տարին չորս օր լան :

ԳԼ. ԺԲ

Ու Եփրեմի մարդիկը ժողովուեցան ,
և դէպ ի հիւսիսային կողմը անցան , ու
Յեփթայէի ըսին , Ինչո՞ւ համար Ամմոնի
որդիներուն հետ պատերազմելու գա-
ցած ատենդ մեզ չկանչեցիր , որպէս զի
քեզի հետ երթայինք . հի՛մ Դե՛ս և լքու-
տունդ քու վրադ կրակով պիտի այ-
րենք : 2 - Եւ Յեփթայէ անոնց ըսաւ ,
Ես ու իմ ժողովուրդս Ամմոնի որդի-
ներուն հետ մեծ կռիւներ ունեցանք ,
և ձեզ կանչեցի , բայց դուք զիս անոնց
ձեռքէն չազատեցիք : 3 - Ես ալ երբ
տեսայ որ դուք զիս չէք ազատեր , հո-
գիս ձեռքիս մէջ դնելով Ամմոնի որ-
դիներուն վրայ գացի , ու Տէրը զանոնք
իմ ձեռքս մատնեց . և ինչո՞ւ համար
դուք այսօր ինձի դէմ պատերազմ
ընելու եկաք : 4 - Ու Յեփթայէ Գա-
ղատադու բոլոր մարդիկը ժողովելով Եփ-
րեմի հետ պատերազմ ըրաւ , և Գա-
ղատադու մարդիկը Եփրեմեանները
զարկին . քանզի ըսեր էին թէ Դուք ,
Գաղատադացիք , Եփրեմի մէջ * - Մա-
նասէի մէջ Եփրեմի փախստականներն
էք : 5 - Եւ Գաղատադացիք Եփրեմի
աւրելէն Յորդանանու անցքերը բռնե-
ցին , ու երբ Եփրեմի փախստական մը
թող տուէք անցնիմ՝ ըսէր , Գաղատա-
դու մարդիկը անոր կ'ըսէին , Եփրեմ
եա՞ն ես . ու անիկա Ոչ՝ կ'ըսէր . 6 - Եւ
անոնք անոր կ'ըսէին , Ուրեմն * Շիպպո-
ւթ ըսէ . ու անիկա Սիպպութ կ'ըսէր ,

(քանզի չէր կրնար շիտակ արտաբե-
րել .) ուստի զանիկա կը բռնէին , և
Յորդանանու անցքերուն մէջ կը սպան-
նէին . ու այն ատեն Եփրեմէ քառա-
սունուերկու հազար մարդ ինկաւ :

7 - Եւ Յեփթայէ Իսրայէլի մէջ վեց
տարի դատաւորութիւն ըրաւ . ու Գա-
ղատադացի Յեփթայէ մեռաւ , և Գա-
ղատադու քաղաքներէն Դե՛ս մէջ
թաղուեցաւ :

8 - Ու անկէ ետեւ Իսրայէլի մէջ
Բեթլէհէմացի Աբեսսան դատաւորու-
թիւն ըրաւ : 9 - Եւ անիկա երեսուն
աղայ ունէր , ու երեսուն աղջիկ , պը-
րոնք դուրս տուաւ , ու դուրսէն ալ իր
աղքը երեսուն աղջիկ ներս առաւ . ու
ինք Իսրայէլի մէջ եօթը տարի դատա-
ւորութիւն ըրաւ : 10 - Եւ Աբեսսան
մեռաւ , ու Բեթլէհէմի մէջ թաղ-
ուեցաւ :

11 - Եւ անկէ ետեւ Չաբուղոնացի
Ելօն Իսրայէլի դատաւոր եղաւ , ու Իս-
րայէլի մէջ ասար տարի դատաւորու-
թիւն ըրաւ : 12 - Եւ Չաբուղոնացի
Ելօն մեռաւ , ու Չաբուղոնի երկիրը՝
Այեղոնի մէջ թաղուեցաւ :

13 - Եւ անկէ ետեւ Փարաթոնացի
Հելլէլի որդին Աբգօն Իսրայէլի դատա-
ւոր եղաւ : 14 - Ու անիկա քառասուն
աղայ ու երեսուն թու ունէր , որոնք
եօթանասուն աւանակներու վրայ կը
հեծնէին . և ինք Իսրայէլի մէջ ութ
տարի դատաւորութիւն ըրաւ : 15 -
Ու Փարաթոնացի Հելլէլի որդին Աբգօն
մեռաւ , և Ամաղեկացոց լեռանք
վրայ , Եփրեմի երկիրը , Փարաթոնի
մէջ թաղուեցաւ :

ԳԼ. ԺԳ

Եւ Իսրայէլի որդիները նսրէն Տե-
րոջը սուջե չարութիւն ըրին . ու Տէրը
զանոնք քառասուն տարի Փղշտացոց
ձեռքը մատնեց :

2 - Եւ Դանի ցեղէն Մանուէ անու-
նով Սարաացի մարդ մը կար , ու անոր
կինը ամուլ էր և զաւակ չէր ծնաներ :
3 - Ու Տէրոջը հրեշտակը այս կնօջ
երեւցաւ և անոր ըսաւ , Ահա դուն
հիմա ամուլ ես ու չես ծնանիր , բայց
պիտի յղանաս ու որդի մը ծնանիս :
4 - Ուստի հիմա զգոյշ կեցիր , չըլլայ
որ գինի կամ օղի խմես , ոչ ալ ան-
մաքուր բան մը ուտես . 5 - Քանզի

* Այսինքն , հասկ , խմ , հեղեղ

աճա գուն պիտի յղանաս և որդի մը ծնանիս , ու անոր գլխուն վրայ ածելի պիտի չելլէ . քանզի այն տղան էր Տօրը արգանդէն Աստուծոյ ուխտաւորը պիտի ըլլայ , և անիկա Խորայելը Փղըշտացւոց ձեռքէն ազատելու պիտի սկսի : 6 - Ու կինը գնաց և իր էրկանը պատմեց՝ ըսելով , Աստուծոյ մարդ մը ինծի եկաւ , ու անոր գէմքը Աստուծոյ Տրեշտակի գէմքին պէս խիստ աճարկու էր . և անոր ուրկէ ըլլալը չճարցուցի , ոչ ալ անիկա իր անունը ինծի գրուցեց . 7 - Ու ինծի ըսաւ , Աճա գուն պիտի յղանաս ու որդի մը ծնանիս , և Տրմա գինի ու օղի չիմես , ու անմաքուր բան մը չուտես : քանզի այն տղան էր Տօրը արգանդէն մինչև իր մահուան օրը Աստուծոյ ուխտաւորը պիտի ըլլայ :

8 - Եւ Մանուէ Տերօջը աղաչելով ըսաւ , Կ'աղաչեմ , ով Տէր , այն Աստուծոյ մարդը , զոր գուն զրկեցիր , նորէն մեզի գայ , ու մեզի սորվեցնէ թէ այն ծնանելու տղուն ի՞նչ ընենք : 9 - Եւ Աստուած Մանուէի ձայնը լսեց , ու Աստուծոյ Տրեշտակը նորէն կնոջը եկաւ՝ երբ անիկա արտին մէջ նստեր էր . ու անոր այրը Մանուէ անոր հետ չէր : 10 - Եւ կինը շուտով վազեց , ու իր էրկանը պատմեց և անոր ըսաւ , Աճա այն օրը ինծի եկող մարդը նորէն ինծի երեւցաւ : 11 - Ու Մանուէ ելաւ իր կնոջ ետեւէն գնաց , և այն մարդուն քով մտնեցաւ ու անոր ըսաւ , Կնոջ հետ խօսող մարդը դ՞ու՞ն էս . ու անիկա ըսաւ , Ես եմ : 12 - Եւ Մանուէ ըսաւ , Երբ քու ըսածդ ըլլայ , տղուն պէտք եղածը ի՞նչ է , ու *ի՞նչ ընելու է : 13 - Եւ Տերօջը Տրեշտակը Մանուէի ըսաւ , Կինը ամէն ըսածէս թող զգուշանայ . 14 - Արթէն ելած բան մը բնաւ չուտէ և գինի ու օղի չիմէ , և անմաքուր բան մը բնաւ չուտէ , ու իմ ամէն պատուիրածս պահէ :

15 - Եւ Մանուէ Տերօջը Տրեշտակին ըսաւ , Կ'աղաչեմ , քիչ մը մեր քով նստէ , ու այժերէն ուլ մը պատրաստենք -- քու առջեւդ դնենք : 16 - Եւ Տերօջը Տրեշտակը Մանուէի ըսաւ , Ես քու քովդ նստիմ ալ՝ քու հացեդ պիտի չուտեմ . բայց եթէ սղջակեդ պիտի բնես , զանիկա Տերօջը ընծայէ . քանզի Մանուէ չգիտցաւ թէ անիկա Տերօջը

Տրեշտակն է : 17 - Եւ Մանուէ Տերօջը Տրեշտակին ըսաւ , Անունդ ի՞նչ է , որպէս զի երբ խօսքդ կատարուի , քեզ պատուենք : 18 - Ու Տերօջը Տրեշտակը անոր ըսաւ , Իմ անունս ինչ՞ու պատու կը հարցնես , որովհետև անիկա սքանչելի է : 19 - Եւ Մանուէ ուլը ու հացի ընծան առաւ , և ապուռածին վրայ Տերօջը ընծայեց . ու հրեշտակը Մանուէի և անոր կնոջը աչքերուն առջև հրաշք մը ըրաւ . 20 - Քանզի երբ բոցը սեղանէն գէպ ի երկինք վեր կ'ելլէր , Տերօջը Տրեշտակն ալ սեղանին բոցովը վեր ելաւ . և Մանուէ ու իր կինը կը նայէին , ու երեսի վրայ գետինը ինկան : 21 - Եւ Տերօջը Տրեշտակը մէյմըն ալ Մանուէի ու անոր կնոջ չերեւցաւ . այն ատեն Մանուէ հասկցաւ որ անիկա Տերօջը Տրեշտակն է : 22 - Ու Մանուէ իր կնոջ ըսաւ , Անշուշտ պիտի մեռնինք , քանզի զԱստուած տեսանք : 23 - Եւ կինը անոր ըսաւ , Եթէ Տէրը մեզ մեռցնել ուզէր , մեր ձեռքէն ողջակեզը ու հացի ընծան չէր ընդուներ , ու այս բոցը բաները մեզի չէր ցուցնէր , և այս միջոցին մէջ այսպիսի բօռք մեզի լսել չէր տար :

24 - Ու կինը որդի մը ծնաւ , և անոր անունը Սամփսոն կոչեց . ու տղան մեծցաւ , և Տէրը զանիկա օրհնեց : 25 - Ու Տերօջը Հոգին Սարաայի ու Եսթաւուզի մէջ *Իանի բանակին՝ մէջ սկսաւ անոր վրայ գալ :

ԳԼ. ԺԻ

Եւ Սամփսոն Թամնաթա իջաւ , ու Թամնաթայի մէջ Փղշտացւոց ազջիկներէն կին մը տեսաւ . 2 - Եւ նորէն էր քուշ ելաւ , ու իր հօրը և մօրը պատմեց ու ըսաւ , Թամնաթայի մէջ Փղշտացւոց ազջիկներէն կին մը տեսայ . ու Տրմա զանիկա ինծի կին առէք : 3 - Եւ անոր հայրը ու մայրը անոր ըսին , Միթէ քու եղբայրներուդ ազջիկներուն մէջ , ու իմ բոցը ժողովուրդիս մէջ կին չկայ՝ որ գուն անթլփատ Փղշտացիներէն կին առնելու պիտի երթաս . բայց Սամփսոն իր հօրը ըսաւ , Զանիկա ինծի առ , քանզի իմ աչքերուս անիկա հաճելի է : 4 - Եւ անոր հայրը ու մայրը չէին գիտեր որ այս

*Կամ , ի՞նչ ընենք անոր

*Կամ , Մահանէ-դանին . Գլ. Ժբ. 12 :

բանը Տէրոջմէն է, քանզի անհկա Փղըշ-տացիներէն առիթ մը կը փնտռէր. ու այն ատեն Փղշտացիները Խարայէի վրայ կ'իշխէին :

5 - Եւ Սամիսոն իր հօրը ու մօրը հետ Թամասթա իջաւ, ու մինչև Թամասթայի այգիները եկան, և ահա առիւծի կորիւն մը մանչելով անոր դէմը ելաւ: 6 - Ու Տէրոջը Հոգին անոր վրայ գալով ուլ մը ձեղքելու պէս զանհկա ձեղքեց, ու ձեռքին մէջ բան մը չկար. և ըրած բանը իր հօրը ու մօրը չպատմեց: 7 - Եւ իջաւ ու կնոջ հետ խօսեցաւ. և կինը Սամիսոնի աչքերուն հաճելի երեւցաւ:

8 - Ու ժամանակէ մը ետքը երբ գարձաւ կինը առնելու, առիւծին դին տեսնելու համար իր համբալէն խոտորեցաւ. և ահա առիւծին դին մէջ մեղուներու գունդ մը մեղր կար: 9 - Ու զանհկա ձեռքը առաւ և ուտելով կ'երթար, ու իր հօրը ու մօրը գնաց, և անոնց ալ տուաւ, ու կերան. բայց անոնց չըսաւ թէ մեղրը առիւծին դիէն հանեց:

10 - Եւ անոր հայրը այն կնոջ քով իջաւ, ու Սամիսոն հոն խնձոյք մը ըրաւ, քանզի երիտասարդները այսպէս կ'ընէին: 11 - Ու երբ զանհկա տեսան, երեսուն ընկեր բերին, որպէս զի անոր հետ ըլլան:

12 - Եւ Սամիսոն անոնց ըսաւ, Հիմա ձեզի հանելուկ մը պիտի ըսեմ. եթէ զանհկա այս խնձոյքին եօթը օրուանը մէջ ինծի բացատրէք ու գտնէք, ես ալ ձեզի երեսուն *չապիկ ու երեսուն ձեռք փոխելու հանդերձ կու տամ:

13 - Բայց եթէ չկարենաք զանհկա ինծի բացատրել, այն ատեն դուք ինծի երեսուն շապիկ ու երեսուն ձեռք փոխելու հանդերձ տաք. և անոր ըսին, Քու հանելուկդ մեզի ըսէ, որպէս զի լսենք:

14 - Ու անոնց ըսաւ, Կերողէն կերակուր ելաւ, ու հզօրէն անոյշ ելաւ: Եւ անոնք այս հանելուկը երեք օրուան մէջ չկրցան բացատրել:

15 - Ու Թեօթներորդ օրը Սամիսոնի կնոջ ըսին, Այրդ խաբէ որպէս զի հանելուկը մեզի բացատրէ, որ չըլլայ թէ քեզ ու քու հօրդ տունը կրակով այրենք. մեզ թալկելով համար կանչեցիք. այնպէս չէ: 16 - Եւ Սամիսոնի կինը անոր քով

լալով ըսաւ, Անշուշա դուն զիս ատեցիր ու զիս չսիրեցիր. իմ ժողովուրդիս որդիներուն հանելուկ մը ըսիր, ու ինծի չբացատրեցիր: Եւ անհկա ըսաւ անոր, Ահա իմ հօրս ու մօրս չյայտնեցի, ու քեզի պիտի յայտնեմ: 17 - Եւ իրենց խնձոյքին եօթը օրուանը մէջ անոր քով լացաւ. ու Սամիսոն եօթներորդ օրը անոր բացատրեց, քանզի իրեն նեղութիւն կու տար. անհկա ալ իր ժողովուրդին որդիներուն բացատրեց հանելուկը: 18 - Եւ քաղաքին մարդիկը եօթներորդ օրը արեւին մտնելէն առաջ անոր ըսին, Մեղրէն անոյշ ու առիւծէն զօրաւոր ի՞նչ կայ: Եւ անհկա ըսաւ անոնց, Եթէ դուք իմ երինջովս չհերկէիք, իմ հանելուկս չէիք կրնար գտնել: 19 - Ու Տէրոջը Հոգին անոր վրայ եկաւ, և անհկա Ասկաղոն իջաւ ու անոնցմէ երեսուն մարդ մեռցուց, և անոնց հանդերձները առաւ ու հանելուկը բացատրողներուն տուաւ, և սաստիկ բարկանալով իր հօրը տունը ելաւ: 20 - Ու Սամիսոնի կինը անոր բարեկամը եղող ընկերին տրուեցաւ:

ԳԼ. ԺԵ

Եւ եղաւ որ ժամանակէ մը ետքը ցորենի հունձքի օրերը՝ Սամիսոն այժեքէն ուլ մը առաւ, ու իր կնոջ այցելութեան գնաց ու ըսաւ, Ներքին սենեակին մէջ կնոջս քով մտնեմ. բայց կնոջը հայրը զանհկա չթողուց որ մտնէ: 2 - Եւ անոր հայրը ըսաւ, Իրաւցընէ կարծեցի որ դուն զանհկա բոլորովին ատեցիր, ու զանհկա քու ընկերիդ տուի. ահա անոր պզտիկ քոյրը անկէ գեղեցիկ է, հիմա անոր տեղ անհկա քեզի ըլլայ: 3 - Եւ Սամիսոն *անոնց համար՝ ըսաւ, Այս անգամ Փղշտացուցմէ անպարտ պիտի ըլլամ, եթէ անոնց չարութիւն մը ընեմ: 4 - Ու Սամիսոն գնաց երեք հարիւր աղուէս բռնեց, և ջահեր առաւ, ու աղ-է-ները պոչ պոչի դարձուց, ու երկու պոչերուն մէջտեղ ջահ մը դրաւ խալից: 5 - Եւ ջահերը կրակով բռնկցնելէն ետքը՝ զանոնք Փղշտացուց հունձքերուն մէջ ձգեց, ու դիզուած և չկրտուած հունձքերը ու մինչև անգամ

* Կամ, սաւան

+ Կամ, չորրորդ

* Կամ, անոնց

այգիները — ձիթենիները այրեց : 6 - Եւ Փղշտացիք ըսին , Այս բանը ո՞վ բրաւ : Ու ըսին , Թամնացիին փեսան Սամիսոն . քանզի անոր կինը առաւ և անոր ընկերին տուաւ : Ու Փղշտացիք ելան և կինը ու անոր հայրը կրակով այրեցին : 7 - Իսկ Սամիսոն անոնց ըսաւ , Թէև դուք այսպէս ըրիք , բայց ես վրէժ պիտի առնեմ՝ ձեզմէ , ու ետքը պիտի դադարիմ : 8 - Եւ զանոնք սրունքէն մինչև երանքը մեծ հարուածով մը վարկաւ . ու իջաւ Ետամ ապառաժին խուռչը բնակեցաւ :

9 - Եւ Փղշտացիք ելան ու Յուդայի մէջ բանակեցան , ու Լեքիի մէջ տարածուեցան : 10 - Եւ Յուդայեանք ըսին , Ինչո՞ւ համար մեր վրայ ելաք : Անոնք ալ ըսին , Սամիսոնը կապելու ելանք , որպէս զի մեզի ըրածին պէս մենք ալ անոր ընենք : 11 - Ու Յուդայէ երեք հազար մարդ Ետամ ապառաժին խուռչը իջան , և Սամիսոնի ըսին , Չե՞ս գիտեր որ Փղշտացիք մեր վրայ կ'իշխեն . ինչո՞ւ համար այս բանը մեզի ըրիր : Ու անիկա անոնց ըսաւ , Անոնք ինծի ինչպէս ըրին , ես ալ անոնց այնպէս ըրի : 12 - Եւ անոր ըսին , Մենք իջանք որ քեզ կապենք ու Փղշտացուց ձեռքը տանք : Եւ Սամիսոն անոնց ըսաւ , Ինծի երդում՝ ըրէք որ դուք զիս պիտի չմեռցնէք : 13 - Եւ անոնք անոր հետ խօսեցան ու ըսին , Ոչ . բայց հիմա քեզ պիտի կապենք ու անոնց ձեռքը տանք , և քեզ պիտի չմեռցրնենք . ու զանիկա երկու նոր չուանով կապեցին և ապառաժէն դուրս հանեցին :

14 - Երբ անիկա մինչև Լեքի եկաւ , Փղշտացիք աղաղակելով զանիկա դիմաւորեցին . և Տերօջը Հոգին անոր վրայ գալով՝ անոր թեւերուն վրայ եղող չուանները կրակով այրուած քթանի պէս եղան , ու կապերը ձեռքերէն քակուեցան : 15 - Եւ իշու ծնօտ մը դտաւ որ դեռ չորցած չէր , ու ձեռքը երկնցուց զանիկա առաւ և անով հազար մարդ մեռցուց : 16 - Ու Սամիսոն ըսաւ , Իշու ծնօտով դէզ դէզ չքեցի զանոնք , իշու ծնօտով հազար մարդ մեռցուցի : 17 - Ու երբ իր խօսքը լծնցուց , ծնօտը ձեռքէն նետեց , և այն տեղին անունը *Ռամաթ-Լեքի կոչեց :

18 - Եւ խիստ շատ ծարւելով Տերօջը աղաղակեց ու ըսաւ , Դուն քու ծառայիդ ձեռքով այս մեծ փրկութիւնը յաջողեցիր . և հիմա ծարուածով մեռնիմ , ու անթլիփառներուն ձե՞ռքը իյնամ : 19 - Եւ Սասուած *Լեքիի մէջ եղած փոսը բացաւ , ու անկէ ջուր ելաւ . և Սամիսոն խմեց , ու սգին իրեն դարձաւ , և ապրեցաւ . անոր համար անոր անունը †Ենգօրէ ըսուեցաւ , որ Լեքիի մէջ է մինչև այսօր :

20 - Ու անիկա Փղշտացուց օրերը Խորայէլի մէջ քսան տարի դատաւորութիւն ըրաւ :

ԳԼ. ԺԶ

Եւ Սամիսոն Գազա գնաց , ու հոն պրօնիկ կին մը տեսաւ և անոր մտաւ : 2 - Ու Գազացուց ըսուեցաւ թէ Սամիսոն հոս եկեր է : Եւ պաշարեցին , ու բոլոր գիշերը անոր դարանակալ եղան քաղաքին դրանը քով , ու բոլոր գիշերը լուռ կեցան և ըսին , Առաւօտուն կանուխ զանիկա կը մեռցնենք : 3 - Ու Սամիսոն մինչև կէսգիշեր քնացաւ , և կէսգիշերուն ելաւ , ու քաղաքին դրանը փեղկերը երկու սեմերովը բռնեց , և զանոնք նիգովը մէկտեղ փրցուց , ու կռնակը առնելով զանոնք Քերբոնի դիմացի լեռանը գլուխը հանեց :

4 - Եւ անկէ ետքը Սովրեկ հեղեղատին եզերքը բնակեց կին մը սիրեց , ու անոր անունը Իսաիլա էր : 5 - Եւ Փղշտացուց նախարարները կնոջ քով ելան ու անոր ըսին , Չանիկա խաբէ , ու անկէ հասկցիր թէ անոր մեծ զօրութիւնը ինչէ՞ն է , և թէ ինչո՞վ կրնանք անոր յաղթել , որպէս զի զանիկա կապենք ու հնազանդեցնենք . և մենք քեզի ամէն մէկս հազար հարիւր կար արծաթ կու տանք : 6 - Ու Իսաիլա Սամիսոնի ըսաւ , Կ'աղաչեմ , յայտնէ ինծի , թէ քու մեծ զօրութիւնդ ինչէ՞ն է , և քեզ հնազանդեցնելու համար ի՞նչ բանով կապել պէտք է : 7 - Ու Սամիսոն անոր ըսաւ , Եթէ զիս եօթը հատ չչորցած ‡թարմ ջիւերով՝ կապեն , կը տկարանամ , և — բիշ մարդոց մէկուն պէս

*Այսինքն , ծնօտի բլուր

*Կամ , ծնօտին
 †Այսինքն , կանչողին աղբիւրը . Սաղ. 17. 6 :
 ‡Կամ , դալար ստաւերով

կ'ըլլամ: 8 - Աւ Փղշտացւոց նախարարները անոր եօթը հաս չչորցած թարմ ջիւեր բերին . ու զանհկա անոնցմով կապեց: 9 - Եւ անոր քով ներքին սենեակին մէջ դարանակալներ նստեր էին: Աւ կինը անոր ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ ի՞նչ քան: այն ատեն անհկա ջիւերը կրակի հոտէն փրթած խծուծէ լարի պէս փրցուց, ու անոր ոյժը չհասկցուեցաւ: 10 - Եւ Դաւիթ ըսաւ Սամիսոնի, Ահա զիս խաբեցիր ու ինծի սուտ գրուցեցիր. հիմա կ'աղաչեմ, յայտնէ ինծի թէ ինչով կը կապուիս: 11 - Եւ անոր ըսաւ, Եթէ զիս նոր ու չգործածուած չուաններով աղէկ մը կապեն, այն ատեն կը տկարանամ, և ուրիշ մարդոց մէկուն պէս կ'ըլլամ: 12 - Եւ Դաւիթ նոր չուաններ առաւ, և անոնցմով զանհկա կապեց, ու անոր ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ ի՞նչ քան. (և դարանակալները ներքին սենեակին մէջ նստեր էին.) այն ատեն զանոնք իր թեւերէն մէկ դերձանի պէս փրցուց: 13 - Աւ Դաւիթ ըսաւ Սամիսոնի, Մինչև հիմա զիս խաբեցիր և ինծի սուտ գրուցեցիր. ըսէ ինծի թէ ինչով կը կապուիս: Աւ անհկա անոր ըսաւ, Եթէ գլխուս եօթը բաժին մազերը ազբով հիւսես: 14 - Եւ անհկա այնպէս ըրաւ, ու քորթարանին ցիցովը ամուրցուց, ու անոր ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ ի՞նչ քան: Եւ անհկա քունէն արթնցաւ, ու ուստայնին ցիցը ազբովը մէկտեղ քաշեց քորթաւ: 15 - Այն ատեն Դաւիթ անոր ըսաւ, Քու սիրտդ ինծի հետ չէ, ու ի՞նչպէս կ'ըսես թէ Քեզ կը սիրեմ. հիմա այս երեք անգամ է որ զիս խաբեցիր, ու ինծի չգրուցեցիր թէ քու մեծ զօրութիւնդ ինչէ՛ն է: 16 - Եւ սրով հետևեալ ամէն օր իր խօսքերովը անոր նեղութիւն կու տար, ու զանհկա կը բռնադատէր, այնպէս որ անոր սիրտը մինչև մահուան օրէ՛ն նեղացաւ, 17 - Բոլոր իր սրտին մէջ եղածը անոր գրուցեց, ու ըսաւ անոր, Իմ գլխուս վրայ ածելի չէ ելած. քանզի իմ մօրս արգանդէն ես Աստուծոյ ուխտաւոր եմ. եթէ ածիլուիմ, իմ ոյժս ինծմէ կ'երթայ ու կը տկարանամ, և ամէն մարդոց պէս կ'ըլլամ: 18 - Աւ երբ Դաւիթ տեսաւ որ անհկա բոլոր իր սրտին մէջ եղածը իրեն գրուցեց, Փղշտացւոց նախարար-

ները կանչել տուաւ ու ըսաւ, Այս անգամ ելէք. քանզի բոլոր իր սրտին մէջ եղածը ինծի գրուցեց: Այն ատեն Փղշտացւոց նախարարները անոր քով ելան, ու արծաթն ալ իրենց *հետ բերին: 19 - Եւ Դաւիթ զանհկա իր ծունկերուն վրայ քնացուց, ու մարդ մը կանչեց, և անոր գլխուն եօթը բաժին մազերը ածիլել տուաւ, ու սկսաւ զանհկա նեղել. և անոր ոյժը իրմէ գնաց: 20 - Աւ կինը ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ ի՞նչ քան. և անհկա քունէն արթննալով ըսաւ, Ելլեմ, ու առաջուան անգամներուն պէս թօթ վուիմ. և անհկա չէր գիտեր որ Տէրը իրմէ գացեր է: 21 - Աւ Փղշտացիք զանհկա բռնեցին և անոր աչքերը փորեցին, ու զանհկա Գազա իջեցուցուցին և ոտնակապերով կապեցին. ու բանտին մէջ ազօրեքի քար կը գարձներ:

22 - Եւ անոր գլխուն մազը, ածիլուելէն ետքը, բուսնիլ սկսաւ: 23 - Աւ Փղշտացւոց նախարարները ժողովուեցան, որպէս զի իրենց աստուծոյն Դաւիթի մեծ զօր մատուցանեն և ուրախութիւն ընեն. ու ըսին, Մեր աստուածը մեր ձեռքը մատանեց մեր թշնամին Սամիսոնը: 24 - Աւ ժողովուրդը զանհկա տեսնելով իրենց աստուածը գովեցին. քանզի ըսին, Մեր աստուածը մեր ձեռքը մատանեց մեր թշնամին, մեր երկիրը աւրոզը և մեր մեռելները շատցնողը: 25 - Աւ երբ անոնց սիրտը սուրախ էր, ըսին, Սամիսոնը կանչեցէք որ մեր առջև խաղայ: Աւստի Սամիսոնը բանտէն կանչեցին, ու անոնց առջև խաղաց. և զանհկա սիւներուն մէջ տեղ կայնեցուցին: 26 - Աւ Սամիսոն իր ձեռքէն բռնող պատանիին ըսաւ, Թո՛ղ տուր զիս, որ այս տունը վերցընող սիւները բռնեմ, ու անոնց վրայ կոթնիմ: 27 - Եւ տունը այր և կին մարդիկներով լեցուն էր. ու Փղշտացւոց բոլոր նախարարները հոն էին. և տանիքին վրայ երեք հազարի չափ մարդիկ ու կիներ կային, որոնք Սամիսոնի խաղաղը կը դիտէին: 28 - Եւ Սամիսոն Տէրոջը աղաղակելով ըսաւ, Ով Տէր Եհովա, կ'աղաչեմ, զիս յիշէ. Ով Աստուած, միայն այս անգամ ալ զիս ուժովուր, որպէս զի Փղշտացիներէն իմ երկու աչքերուս վրէժը մէկէն առ-

Նեմ: 29 - Աւ Սամփոսն այն տունը վեր-
ցնող երկու միջին սիւները , մէկը աջ
ձեռքովը ու միւսը ձախ ձեռքովը բը-
նելով , անոնց վրայ կռթնեցաւ . 30 -
Եւ Սամփոսն ըսաւ , Իմ անձս Փղշա-
ցիներուն հետ մեռնի . ու քաջ ու ժովը
ժուեցաւ , և տունը նախարարներուն ու
մէջը եղող բոլոր ժողովուրդին վրայ
ինկաւ . և իր մեռած ատենը մեռցու-
ցածները իր կենդանութեան ատենը
մեռցուցածներէն աւելի էին : 31 - Աւ
անոր եղբայրները և բոլոր հօրը տունը
իջան , ու զանկա վերցուցին . և հա-
նեցին իր հօրը Մանուէի գերեզմանը
Թաղեցին զանկա Սարայի ու Ես-
թաւուղի մէջտեղ : Եւ անկա Իսրա-
յէլի մէջ քսան տարի դատաւորու-
թիւն ըրաւ :

ԳԼ ԺԷ

Աւ Եփրեմի լեռնէն Միքա անունով
մարդ մը կար : 2 - Եւ անկա իր մօրը
ըսաւ , Քեզմէ առնուած այն հազար
հարիւր իբր արծաթը , որու համար ա-
նէժք տուիր ու իմ աւջեւս զրուցեցիր ,
ահա այն արծաթը իմ քովս է , զանի-
կա ես առի . ու մայրը անոր ըսաւ , Արդ-
եակ իմ , Տէրը քեզ օրհնէ : 3 - Եւ ա-
նկա հազար հարիւր իբր արծաթը իր
մօրը դարձուց . բայց անոր մայրը ըսաւ ,
Ես այն արծաթը իմ ձեռքէս բոլորու-
վին Տէրոջը նուիրեցի իմ աղուս հա-
մար , անով քանդակած ու թափծու
կուռք շինելու համար . ուստի հիմա
զանկա քեզի ես կու տամ : 4 - Իսկ
Միքա այն արծաթը իր մօրը դարձուց .
և մայրը երկու հարիւր իբր արծաթ
առաւ , ու զանոնք սկիւրիչին տուաւ ,
ան ալ անոնցմով քանդակած ու
թափծու կուռք շինեց . և անոնք Մի-
քայի տունը *գրուեցան : 5 - Աւ այս
մարդը Միքա՝ աստուածներու տուն
մը ունեցաւ . ու եփուտ և թերափիմ
շինեց , ու իր աղոցը մէկը օրհնեց որ
իրեն քահանայ եղաւ : 6 - Այն օրերը
Իսրայէլի մէջ թագաւոր չկար . ամէն
մարդ իր աչքին հաճելի եղածը կ'ընէր :

7 - Եւ Յուդայի ազգատոհմէն «-
Յուդայի Բեթլէհէմէն պատանի մը
կար . և անկա Ղեւտացի էր , ու հոն
կը բնակէր պանդխտի պէս : 8 - Եւ
այս մարդը Յուդայի Բեթլէհէմ քա-

ղաքէն ելաւ , որպէս զի «պր...» գտած
տեղը պանդխտութիւն ընէ , ու ճամ-
բորդութիւն ընելով՝ մինչև Եփրեմի
լեռը «- մինչև Միքայի տունը եկաւ :
9 - Եւ Միքա անոր ըսաւ , Աւրիկե՞
կու գաս : Աւ անկա անոր ըսաւ ,
Ես Ղեւտացի եմ «- Յուդայի Բեթլէ-
հէմէն կու գամ , և «պր...» գտած տեղս
պանդխտանալու կ'երթամ : 10 - Աւ
Միքա անոր ըսաւ , Իմ քովս բնակէ ,
և ինձի հայր ու քահանայ եղիր . և ես
քեզի տարուէ տարի տասը իբր ար-
ծաթ , ձեռք մը փոխելու հանդերձ ու
քու ուտելիքդ կու տամ : 11 - Եւ Ղեւ-
տացին հոն գնաց : Աւ Ղեւտացին այն
մարդուն հետ բնակելու հաւանու-
թիւն տուաւ . և այս պատանին անոր
որդիներէն մէկուն պէս եղաւ անոր :
12 - Աւ Միքա Ղեւտացին օրհնեց , և
պատանին անոր քահանան եղաւ , ու
Միքայի տունը կը բնակէր : 13 - Եւ
Միքա ըսաւ , Հիմա «պր...» գիտեմ որ
Տէրը ինձի բարիք պիտի ընէ , քանզի
այս Ղեւտացին իմ քահանաս եղաւ :

ԳԼ ԺԸ

Այն օրերը Իսրայէլի մէջ թագա-
ւոր չկար . ու այն օրերը Գանի ցեղը
իրեն ժառանգութիւն մը կը փնտռէր
բնակելու համար . քանզի մինչև այն
օրը Իսրայէլի ցեղերուն մէջ անոր քա-
նակ ժառանգութիւն ինկած չէր : 2 -
Եւ Գանի որդիները իրենց ազգատոհմ-
ներէն «- իրենց սահմաններէն , Սա-
րայէ ու Եսթաւուղէ , հինգ զօրաւոր
մարդ զրկեցին , որպէս զի երկիրը բա-
ստեմ ու քննեմ . և անոնք ըսին , Գացէք
երկիրը քննեցէք . ու անոնք Եփրեմի
լեռը մինչև Միքայի տունը եկան , և
զիշերը հոն մնացին : 3 - Աւ երբ անոնք
Միքայի տանը քով էին , Ղեւտացի
պատանին ձայնը ճանչցան , և հոն
դարձան ու ըսին , Ո՞վ քեզ հոս բե-
րաւ , և դուն հոս ի՞նչ կ'ընես , ու ին-
չու համար հոս կեցիր ես : 4 - Եւ ա-
նկա ըսաւ անոնց , Միքա ինձի այս-
պէս այսպէս ըրաւ , ու զիս վարձքով
բռնեց , որպէս զի անոր քահանայ ը-
լամ : 5 - Եւ անոր ըսին , Հիմա Աստու-
ծոյ հարցուր , որպէս զի զիանանք թէ
արդեօք մեր գացած ճամբան մեզի

*Եբր. եղան:

*Եբր. ի՞նչ ունիս հոս

պիտի յաջողի՞: 6 - Ու քահանան անոնց ըսաւ, Խաղաղութեամբ գացէք. ձեր երթալու ճամբան Տէրոջը առջև հասնէի է:

7 - Այն ատեն այն հինգ մարդիկը գացին Լայիս մտան, և անոր մէջ բնակող ժողովուրդը տեսան, որ Սիդոնացւոց պէս անհոգութեամբ հանգիստ ու յապաճով կը բնակէին, և այն երկրին մէջ փրատ սուռղ մը չկար՝ որ իշխէր անոնց վրայ. ու՝ Սիդոնացիներէն հեռու ըլլալով՝ բնաւ մարդու մը հետ գործ չունէին: 8 - Եւ այն հինգ մարդը Սարաա ու Եսթաւուղ դարձան իրենց եղբայրներուն. և անոնց եղբայրները անոնց ըսին, Իսուք ի՞նչ ըրէի: 9 - Ու անոնք ըսին, Ելէք, անոնց վրայ երթանք, քանզի մենք երկիրը տեսանք, և ահա շատ աղէկ է. ու դուք թո՞ղ կը կենաք. երթալու «- երկիրը ժառանգելու համար հա՞ մտնելու անհոգութիւն մի ընէք: 10 - Երբ հա՞ մտնէք, անհոգ ժողովուրդի մը ու շատ ընդարձակ երկրի մը մէջ պիտի մտնէք, որ Աստուած զանհկա ձեր ձեռքը տուեր է. ու այնպիսի տեղ մըն է՝ որ հոն երկրի վրայ եղող բաներէն մէ՛կը պակաս չէ:

11 - Եւ Դանի ազգատոհմէն, անկէ՛ պայտնքն Սարաայէ ու Եսթաւուղէ վեց հարիւր սպառազինեալ մարդիկ գացին: 12 - Ու ելան Յուզայի Կարիաթարիմը բանակեցան. անոր համար այն տեղը մինչև այսօր + Մահանէ-դան կ'ըսուի. ահա անհկա Կարիաթարիմի ետէն է: 13 - Եւ անկէ Եփրեմի լեռը անցան, ու մինչև Միքայի տունը եկան:

14 - Եւ Լայիսի երկիրը լրատեսելու գացող այն հինգ մարդը պատասխան տալով՝ իրենց եղբայրներուն ըսին, Գիտէ՞ք որ այս տուներուն մէջ եփուա, թերափիմ, և քանդակուած ու թափածու կուռք կայ. ու հիմա ձեր ընելու քանը գիտցէք: 15 - Այն ատեն անոնք դէպ ի հոն դառնալով այն Ղեւտացի պատանհին տունը, Միքայի տունը, մտան, ու անոր ողջութիւնը հարցուցին: 16 - Եւ Դանի որդիներէն եղող այն վեց հարիւր սպառազինեալ մարդիկը դրանը բերանը կայնեցան: 17 - Ու երկիրը լրատեսելու գացող այն հինգ

մարդիկը հոն մտան, և քանդակուած կուռքը, եփուաը, թերափիմը ու թափածու կուռքը տեսին. և քահանան այն վեց հարիւր սպառազինեալ մարդոց հետ դրանը բերանը կայներ էր: 18 - Ու երբ անոնք Միքայի տունը մտան, և քանդակուած կուռքը, եփուաը, թերափիմը ու թափածու կուռքը տեսին, քահանան անոնց ըսաւ, Իսուք ի՞նչ կ'ընէք: 19 - Ու Դանոնք ըսին անոր, Լուռ կեցիր, ձեռքդ բերնիդ վրայ դիր ու մեզի հետ եկուր, և մեզի հայր ու քահանայ եղիր. քեզի մէկ մարդու տա՞նք քահանայ ըլլալ աղէկ է, թէ Խարայէլի մէկ ցեղին ու մէկ ազգատոհմին քահանայ ըլլալ: 20 - Եւ քահանան սրտին մէջէն ուրախանալով՝ եփուաը, թերափիմը և քանդակուած կուռքը առաւ ու ժողովուրդին մէջ մտաւ: 21 - Եւ անոնք դարձան գացին, ու ընտանիքները և անասունները ու թանկագին կարասիները իրենց առջև դրին:

22 - Երբ անոնք Միքայի տունէն հեռացան, Միքայի տանը մօտ եղող տուներուն մարդիկը ժողովուեցան, ու Դանի որդիներուն երէ-էն հասան:

23 - Եւ Դանի որդիներուն երէ-էն կանչուըւտեցին, որոնք երեսնին դարձուցին ու Միքայի ըսին, Քեզի ի՞նչ եղաւ որ «յողէ» *բազմութիւնով կու գաս: 24 - Եւ անհկա ըսաւ, Իմ շինած աստուածներս ու քահանան առիք գացիք, և ասկէ ետև ինծի ի՞նչ կը մնայ. ու ինծի ինչո՞ւ համար կ'ըսէք թէ Քեզի ի՞նչ եղաւ: 25 - Եւ Դանի որդիները անոր ըսին, Մեր մէջ քու ձայնդ չլսուի. չըլլայ որ բարկասիրտ մարդիկ քու վրադ յարձակին, ու քու կեանքդ և քու ընտանիքիդ կեանքը կորսնցնես: 26 - Եւ Դանի որդիները իրենց ճամբան գացին. և Միքա տեսնելով որ անոնք իրմէ զօրաւոր են, դարձաւ իր տունը գնաց:

27 - Ու անոնք Միքայի շինածները և անոր քահանան տեսին, ու Լայիսի վրայ, հանգիստ և անհոգ կեցող ժողովուրդի մը վրայ, գացին, ու զանոնք սուրի բերնէ անցրնելով քաղաքը կրակով սյրեցին: 28 - Եւ անոնք Սիդոնէ հեռու ըլլալնուն ու մարդու մը հետ գործ չունենալնուն համար, զանոնք ա-

*Կա՛մ, չկար. ու անոնք հարստութիւն ունենալով, ու +Այսինքն, Դանի բանակը. Գլ. Ժգ. 25:

*Եբբ. ժողովուեցար

զատող մը չկար . և այն **+**աւաւ**+** բեթ-
րոսի հովիտին մէջ էր . ու քաղաքը
չինեցին և անոր մէջ բնակեցան : 29 -
Ու քաղաքին անունը իրենց հօրը Իս-
րայելեան Գանի անունովը Գան կոչե-
ցին , բայց քաղաքին անունը առաջ
Լայիս էր : 30 - Եւ Գանի որդիները
քանդակուած կուռքը կանգնեցին ի-
րենց . ու Մանասէի որդւոյն Գերսոնի
որդին Յովսաթան , ինք ու իր որդի-
ները , մինչև երկրին գերութեան օրը
Գանի ցեղին քահանաներն էին : 31 -
Ուստի անոնք Միքայի շինած կուռքը
իրենց պահեցին , որչափ ժամանակ որ
Աստուծոյ տունը Սելովի մէջ էր :

ԳԼ. ԺԹ

Եւ եղաւ որ (այն օրերը որ Իսրայելի
մէջ թագաւոր չկար ,) Եփրեմի լեռանը
կողմերը բնակող պանդուխտ Ղևտացի
մը կար , ու անկիա Յուդայի Բեթլէհէ-
մէն հարձ մը առաւ իրեն : 2 - Եւ անոր
հարձը անոր դէմ շնութիւն ընելով՝
անկէ իր հօրը տունը , Յուդայի Բեթ-
լէհէմը , գնաց , ու չորս ամիսի չափ հոն
կեցաւ : 3 - Եւ այրը ելաւ անոր ետե-
ւէն գնաց , որպէս զի քաղցրութեամբ
խօսի անոր հետ , ու զանկիա ետ բերէ .
և իրեն հետ **+**էր էր իր ծառան ու
երկու էշ . ու կինը զանկիա իր հօրը
տունը տարաւ . և աղջկան հայրը երբ
զանկիա տեսաւ , ուրախութեամբ զա-
նկիա դիմաւորեց : 4 - Ու աղջկան
հայրը , անոր աները , զանկիա ներս
առաւ , և երեք օր անոր հետ նստաւ . կե-
րան խմեցին ու գիշերները հոն մնացին :

5 - Եւ չորրորդ օրը երբ առաւօտուն
կանուխ ելան , անկիա ոտք ելաւ որ-
պէս զի երթայ . բայց աղջկան հայրը
իր փեսային ըսաւ , Կտոր մը հաց կեր
որպէս զի սիրտդ ուժովսայ , ու ետքը
կ'երթաք : 6 - Եւ նստան ու երկուքը
մէկտեղ կերան և խմեցին . ու աղջկան
հայրը այն մարդուն ըսաւ , Կ'աղաչեմ ,
այս գիշեր ալ հոս կեցիր , ու սիրտդ
զուարճանայ : 7 - Եւ այն մարդը ելաւ
որ երթայ , բայց անոր աներոջ զանկիա
բռնադատելուն համար դարձաւ գի-
շերը հոն մնաց : 8 - Ու հինգերորդ օրը
առաւօտուն կանուխ ելաւ որ երթայ .
և աղջկան հայրը ըսաւ , Կ'աղաչեմ ,
սիրտդ ուժովսուր . և ուշացան մինչև
կէսօրուան անցնիլը , ու երկուքը **+**ի-

րէլ կերան : 9 - Ու այն մարդը ելաւ
ինք , իր հարձը ու իր ծառան , ճամ-
բայ երթալու համար . բայց անոր ա-
ները , աղջկան հայրը , ըսաւ անոր ,
Ահա օրը իրիկուն ըլլալու վրայ է . կ'ա-
ղաչեմ , գիշերը հոս մնացէք . ահա օրը
կ'իջնէ , գիշերը հոս կեցիր , ու սիրտդ
զուարճանայ . և վաղը կանուխ ճամ-
բայ ելէք ու ձեր վրանը գացէք : 10 -
Եւ այն մարդը գիշերը մնալ չուզեց ,
ու ելաւ գնաց , ու մինչև Յերուսի ,
այսինքն Երուսաղէմի , գիմաց եկաւ ,
և իրեն հետ երկու համեստած էշ ու-
նէր , ու իր հարձն ալ իրեն հետ էր :

11 - Ու երբ Յերուսի մօտեցան , օր-
ուան շատ անցած ըլլալուն համար ,
ծառան իր տէրոջը ըսաւ , Եկուք այս
Յերուսացւոց քաղաքը խտորինք , ու
գիշերը հոն մնանք : 12 - Բայց տէրը
անոր ըսաւ , Իսրայելի որդիներէն
չեղող օտարազգիներուն քաղաքը չխ-
տորինք , հապա մինչև Փաբսա անց-
նինք : 13 - Եւ իր ծառային ըսաւ , Ե-
կուր այն տեղերէն մէկուն մօտենանք ,
ու գիշերը Փաբսայի կամ Ռամայի
մէջ մնանք : 14 - Եւ անցան գացին .
ու երբ Բենիամինի Փաբսային մօտե-
ցան՝ արեւը մտաւ : 15 - Եւ հոն դար-
ձան որպէս զի Փաբսա մտնեն ու գի-
շերը հոն մնան . և գնաց քաղաքին հրա-
պարակին մէջ նստաւ . ու մարդ մը
չկար որ զանոնք իր տունը առնէր՝ գի-
շերը անցընելու համար :

16 - Եւ ահա իրիկունը արտէն ծեր
մարդ մը կու գար՝ իր գործէն **+**աւաւ-
լով . ու անկիա Եփրեմի լեռնէն էր , և
Փաբսայի մէջ պանդխտացեր էր . իսկ
այն տեղին բնակիչները Բենիամինեանք
էին : 17 - Ու երբ անկիա աչքերը վեր-
ցուց և ճամբորդ մարդը քաղաքին
հրապարակին մէջ տեսաւ , ծեր մարդը
ըսաւ , Ո՞ւր կ'երթաս , և ուրկէ՞ կու
գաս : 18 - Ու անկիա ըսաւ , Մենք Յու-
դայի Բեթլէհէմէն մինչև Եփրեմի լե-
ռանը կողմերը կ'անցնինք . ես այն տե-
ղացի եմ , ու մինչև Յուդայի Բեթլէ-
հէմը գացի , և հիմա Տէրոջը տունը
կ'երթամ . ու զիս իր տունը ընդունող
մարդ մը չկայ . 19 - Բայց մեր էշերուն
համար յարգ ու ճարակ կայ . և ինձի
համար , քու աղախինիդ համար ու
քու ծառաներուդ հետ եղող մանչուն
համար հաց ու գինի ունիմ . բնաւ բան
մը պակաս չէ : 20 - Եւ այն ծեր մարդը

չառւ, Խաղաղութիւն քեզի. քու ա-
մէն պակասութեանդ հոգի իմ վրաս
ըլլայ. բայց գիշերը հրապարակին մէջ
մի մնար: 21 - Աւ զանհկա իր տունը
տարաւ, և էշերուն կեր տուաւ. ու ա-
նոնք ոտքերնին լուսլէն ետքը կերան
և խմեցին:

22 - Աւ երբ անոնց սիրտը կը զուար-
ճանար, ահա քաղաքին բնակիչներէն
չար մարդիկ տանը չորս կողմը պաշա-
րեցին, ու դուռը ձեռք առին. և տանը
տէրոջը, այն ծեր մարդուն, հետ խո-
սեցան ու ըսին, Տունդ եկող մարդը
հանէ, որպէս զի զանհկա գիանանք:

23 - Եւ այն տանուտէր մարդը անոնց
ելաւ, ու անոնց ըսաւ, Աչ, եղբայր-
ներս. կ'աղաչեմ, գէշութիւն մի ընէք.
այս մարդուն իմ տունս մանելէն ետքը
այս անգգամութիւնը մի ընէք:

24 - Ահա իմ կոյս աղջիկս, ու այն մար-
դուն հարձը հիմա ձեզի հանեմ, և
զանոնք լկեցէք, ու ձեր ուզածը ըրէք
անոնց, և այս մարդուն այս անգգա-
մութեան գործը մի ընէք:

25 - Բայց այն մարդիկը չուզեցին անոր խօսքը
մտիկ ընել. ու այն մարդը իր հարձը
բռնեց դուրս հանեց անոնց, և անոնք
զանհկա գիացան, ու բոլոր գիշերը զա-
նհկա լկեցին մինչև առաւօտ. ու երբ
արշալոյսը ծագեցաւ, զանհկա թող
տուին որ երթայ:

26 - Եւ այն կինը առտուան դէմ գնաց, ու ինկաւ այն
մարդուն տանը դրանը առջև, ուր իր
տէրը էջ կէտար. «- մինչև որ լուսցաւ
հոն հաց: 27 - Եւ անոր տէրը առա-
ւօտուն ելաւ, տանը դռները բացաւ,
որպէս զի ելէ իր ճամբան երթայ. և
ահա կինը, իր հարձը, տանը դրանը
առջև ինկեր էր, և ձեռքերը սեմին
վրայ էին:

28 - Աւ անոր ըսաւ, Ելիր
երթանք. բայց պատասխան տուող
չկար: Այն ատեն զանհկա իր իշուն
վրայ դրաւ, ու մարդը ելաւ իր տեղը
գնաց:

29 - Եւ երբ իր տունը հասաւ,
դանակ մը առաւ, ու իր հարձը բռնեց
և զանհկա ոսկորներովը տասուերկու
կտորի բաժնեց, ու Իսրայէլի ամէն
սահմանները զրկեց:

30 - Եւ ամէն
տեսնողները կ'ըսէին թէ Իսրայէլի որ-
դիներուն Եգիպտոսի երկրէն ելած օրէն
մինչև այսօր այսպիսի բան մը ոչ եղեր
է, ոչ ալ տեսնուեր է. ասոր վրայ
մտածեցէք, խորհուրդ ըրէք ու խօսե-
ցէք:

ԳԼ. Ի

Այն ատեն բոլոր Իսրայէլի որդի-
ները ելան, ու ժողովքը մէկ մարդու
պէս Իանէ մինչև Բերսաբէէ և Գա-
ղաադու երկիրը, Մասփայի մէջ, Տե-
րոջը առջև ժողովուեցան:

2 - Եւ բոլոր
ժողովուրդին, Իսրայէլի բոլոր ցեղե-
րուն, գլխաւոր մարդիկը չորս հարիւր
հազար սուր քաշող հեաեակ զօրք
ըլլալով, Ասաուծոյ ժողովուրդին ժո-
ղովքին մէջ ներկայացան:

3 - Եւ Բե-
նիամինի որդիները լսեցին որ Իսրայէլի
որդիները Մասփա ելեր են: Աւ Իսրա-
յէլի որդիները ըսին, Մեզի պատմեցէք
թէ այս չարութիւնը ինչպէս եղաւ:

4 - Եւ այն Ղեւտացի մարդը, մեռ-
ցուած կնոջ այրը, պատասխան տուաւ
ու ըսաւ, Ես ու իմ հարձս Բենիամինի
Փաբաան եկանք, որպէս զի գիշերը
հոն մնանք:

5 - Եւ Փաբաայի բնակիչ-
ները ինծի դէմ ոտք ելան, ու գիշե-
րով իմ եղած տունս պաշարեցին, և
զիս մեռցնել կ'ուզէին, ու իմ հարձս
լկեցին և մեռաւ:

6 - Ես ալ իմ հարձս
առի ու զանհկա կտոր կտոր ըրի, և
Իսրայէլի ժառանգութեանը բոլոր եր-
կիրը զրկեցի. քանզի անոնք Իսրայէլի
մէջ մեծ յանցանք ու անգգամութիւն
ըրին:

7 - Ահա դուք ամէնքդ ալ Իս-
րայէլի որդիներ էք, հոս ձեր մէջ խո-
սեցէք ու խորհուրդ ըրէք:

8 - Եւ բո-
լոր ժողովուրդը մէկ մարդու պէս ոտք
ելաւ, ու ըսաւ, Մեզմէ բնաւ մէկը իր
վրանը պիտի չերթայ, ու բնաւ մէկը
իր տունը չգառնայ:

9 - Եւ հիմա Փա-
բաայի ընելու բաներնիս ասիկա է.
Անոր վրայ վիճակով երթանք. 10 - Աւ
Իսրայէլի ամէն ցեղերէն՝ հարիւրէն
տասը, և հազարէն հարիւր, ու տասը
հազարէն հազար մարդ առնենք, որ-
պէս զի ժողովուրդին պաշար տանին.

անոնք ալ Բենիամինի Փաբաան մանե-
լով, անոր բնակիչներուն Իսրայէլի մէջ
ըրած բոլոր անգգամութեանը փոխա-
րէնը հատուցանեն:

11 - Եւ այն քա-
ղաքին վրայ երթալու համար՝ Իսրայէլի
բոլոր մարդիկը մէկ մարդու պէս միա-
բանութեամբ ժողովուեցան:

12 - Աւ Իսրայէլի ցեղերը Բենիամինի
բոլոր ցեղին մարդիկ զրկեցին ու ըսին,
Այս ինչ չարութիւն է որ ձեր մէջ
եղաւ:

13 - Եւ հիմա Փաբաայի մէջ
եղող այն չար մարդիկը տուէք, որպէս

զի վանանք մեռցնենք, ու չարութիւնը Իսրայէլէ վերցնենք: Բայց Բենիամինեանք իրենց եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, խօսքը մտիկ ընել չուզեցին: 14 - Աւ Բենիամինի որդիները Իսրայէլի որդիներուն դէմ՝ պատերազմ ընելու համար, երէնց քաղաքներէն Գաբատայի մէջ ժողովուեցան: 15 - Եւ այն օրը երէնց քաղաքներէն ելող Բենիամինի որդիները համրուեցան: «- քսանըվեց հազար սուր քաշող մարդ քոհնէնց», բաց ի Գաբատայի բնակիչներէն, որոնք եօթը հարիւր ընտիր մարդիկ համրուեցան: 16 - Այս բոլոր ժողովուրդին մէջ եօթը հարիւր ընտրուած աշեկագործ մարդիկ կային, որոնց ամէնն ալ պարսասիկով մագի վրայ քար կը նետէին առանց վրիպելու: 17 - Եւ Իսրայէլի մարդիկն ալ համրուեցան: «- Բենիամինէ վառ չորս հարիւր հազար սուր քաշող մարդ քոհնէնց», ասոնք ամէնն ալ պատերազմող մարդիկ էին:

18 - Աւ գացին Բեթէլ ելան. և Իսրայէլի որդիները Աստուծոյ հարցուցին ու ըսին, Բենիամինի հետ պատերազմելու համար ո՞վ մեզի առաջնորդ ըլլայ. և Տէրը ըսաւ, Յուզա առաջնորդ ըլլայ: 19 - Աւ Իսրայէլի որդիները առաւօտուն ելան և Գաբատայի դիմաց բանակեցան: 20 - Աւ Իսրայէլացիք Բենիամինի հետ պատերազմ ընելու ելան. և Իսրայէլացիք Գաբատայի քով անոնց դէմ շարուեցան պատերազմի համար: 21 - Աւ Բենիամինի որդիները Գաբատայէ ելան, և այն օրը Իսրայէլէ քսանուերկու հազար մարդ գետինը փռեցին: 22 - Աւ ժողովուրդը, այսինքն Իսրայէլացիք, ուժովցան, և նորէն գացին պատերազմելու համար շարուեցան նոյն տեղը, ուր առջի օրը շարուեր էին: 23 - (Աւ Իսրայէլի որդիները ելան, և Տէրօջը առջև մինչև իրիկուն լացին, ու Տէրօջը հարցնելով ըսին, Մեր եղբօրը Բենիամինի հետ պատերազմելու համար նորէն ելլե՞նք: Եւ Տէրը ըսաւ, Անոր դէմ ելէք:) 24 - Աւ երկրորդ օրը Իսրայէլի որդիները Բենիամինի որդիներուն մօտեցան: 25 - Աւ երկրորդ օրը Բենիամինեանք Գաբատայէ անոնց դէմ ելան պատերազմող:

Քաշող հազար. և Իսրայէլի որդիներէն նորէն տասնըութ հազար մարդ գետինը փռեցին. ասոնց ամէնն ալ սուր քաշող մարդիկ էին:

26 - Այն ատեն բոլոր Իսրայէլի որդիները, այսինքն բոլոր ժողովուրդը, ելան Բեթէլ գացին, ու հոն Տէրօջը առջև նստան լացին, և այն օրը մինչև իրիկուն ծոմ պահեցին, ու Տէրօջը առջև ողջակէզներ և խաղաղութեան զօհեր մտաուցին: 27 - Աւ Իսրայէլի որդիները Տէրօջը հարցուցին. (ու այն օրերը Աստուծոյ ուխտին տապանակը հոն էր. 28 - Եւ այն օրերը անոր առջև Ահարոնեան Եղիազարի որդին Փենէհէս կը կայնէր.) ու ըսին, Մեր եղբօրը Բենիամինի որդիներուն հետ պատերազմելու համար նորէն մէյմըն ալ ելլե՞նք, թէ ետ քաշուինք: Եւ Տէրը ըսաւ, Ելէք, քանզի վաղը զանոնք ձեր ձեռքը պիտի մտանեմ:

29 - Աւ Իսրայէլացիք Գաբատայի բուրտիքը դարանակալներ դրին: 30 - Եւ Իսրայէլի որդիները երրորդ օրը Բենիամինի որդիներուն վրայ գացին, ու միւս անգամներուն պէս Գաբատայի դիմաց շարուեցան: 31 - Այն ատեն Բենիամինի որդիները ժողովուրդին դէմը ելան, և քաղաքէն զատուեցան, ու առաջին անգամներուն պէս սկսան ժողովուրդը զարնել, ու երեսունի չափ Իսրայէլացի մեռցուցին այն ճամբաներուն մէջ՝ որոնց մէկը Բեթէլ կ'ելլէր ու միւսը դաշտի Գաբատան: 32 - Եւ Բենիամինի որդիները ըսին, Ահա անոնք մեր առջև առաջին անգամներուն պէս կը կտարուին: Աւ Իսրայէլի որդիները ըսին, Փախչինք ու զանոնք քաղաքէն դուրս ճամբաները հանենք: 33 - Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը իրենց տեղէն ելան, ու Բաալթամարի առջև շարուեցան: Եւ Իսրայէլի դարանակալները յանկարծ իրենց տեղէն, Գաբատայի դաշտէն, դուրս ելան: 34 - Աւ Գաբատայի առջև բոլոր Իսրայէլէ տասը հազար ընտրուած մարդ եկան, և պատերազմը սաստկացաւ. ու անոնք չէին գիտեր որ իրենց վրայ չարիք հասեր է: 35 - Եւ Տէրը Իսրայէլի առջև Բենիամինը զարկաւ. ու այն օրը Իսրայէլի որդիները Բենիամինէ քսանըհինգ հազար հարիւր մարդ

*Կա՛մ, Աստուծոյ տունը. տես հմբ. 23, 26:

Կա՛մ, Աստուծոյ տունը

կոտրեցին. անոնց ամէնն ալ սուր քաշող հարդի էին : 36 - Եւ Բենիամինի որդիները իրենց յաղթուիլը տեսան . քանզի Իսրայելացիք Քաթայի բոլորափքը դրած դարանակալներուն ապաւինելով Բենիամինեանց տեղ տուին : 37 - Եւ դարանակալները շուտով Քաթայի վրայ յարձակեցան, ու դարանակալները շրջապատուեցան, և բոլոր քաղաքը սուրի բերնէ անցուցին : 38 - Եւ Իսրայելացիք դարանակալներուն հետ ժամանակ մը որոշեր էին, որպէս զի քաղաքէն մեծ կրակով ծուխ հանեն : 39 - Այն ատեն Իսրայելի մարդիկը պատերազմին մէջ փախուստ ցուցուցին . ու Բենիամինեանք սկսան Իսրայելացիները զորներ, ու երեսուն մարդու չափ մեռցուցին . քանզի ըսին թէ Անաարակոյս անոնք մեր առջև առաջին պատերազմին պէս կը կոտորուին : 40 - Բայց երբ քաղաքէն կրակին ծուխը սիւնի պէս բարձրանալ սկսաւ, Բենիամինեանք ետեւնին դառնալով նայեցան որ քաղաքին հրդեհը երկինք կ'ելլէր : 41 - Ու երբ Իսրայելացիները նորէն ետ դարձան, Բենիամինեանք ապշեցան մնացին, քանզի տեսան որ չարիքը իրենց վրայ հասեր էր : 42 - Ուստի անոնք Իսրայելացուոց առջեւէն դէպ ի անապատին ճամբան դարձան . բայց պատերազմը անոնց հասաւ, ու քաղաքներէն ելլողները զանոնք իրենց մէջ մեռցուցին : 43 - Այսպէս Բենիամինեանները պաշարեցին, զանոնք հալածեցին, ու զանոնք դիւրութեամբ մինչև Քաթայի դիմաց արեւելեան կողմէն զարկին : 44 - Եւ Բենիամինէ տասներութ հազար մարդ ինկաւ . անոնց ամէնն ալ զօրաւոր մարդիկ էին : 45 - Ու հասցածէրը դարձան դէպ ի անապատը Ռեմոնի վէմը փախան . անոնցմէ ճամբաներուն մէջ հինգ հազար մարդ ճաքող ըրին . և զանոնք մինչև Փեդոմ հալածելով անոնցմէ երկու հազար մարդ զարկին : 46 - Ու Բենիամինէ այն օրը բոլոր ինկածները քսանըհինգ հազար սուր քաշող մարդ էին . անոնց ամէնն ալ զօրաւոր մարդիկ էին : 47 - Եւ վեց հարիւր մարդ դարձան ու անապատը, Ռեմոնի վէմը, փախան, ու Ռեմոնի վէմը չորս ամիս կեցան : 48 -

Եւ Իսրայելացիք Բենիամինի որդիներուն դառնալով զանոնք սուրի բերնէ անցուցին, քաղաքներուն մէջի մարդոցմէ մինչև անասունները, ու ինչ որ գանուեցաւ . ու բոլոր գանուած քաղաքներն ալ կրակով այրեցին :

ԳԼ. ԻԱ

Եւ Իսրայելի մարդիկը Մասփայի մէջ երգում ըրեր էին, ու ըսեր էին թէ Մեզմէ բնաւ մարդ մը իր աղջիկը Բենիամինի կին ըլլալու չտայ : 2 - Եւ ժողովուրդը *Բեթէլ երթալով հոն Աստուծոյ առջև մինչև իրիկուննաստան, ու ձայներնին վերցնելով մեծ լացով մը լացին, 3 - Եւ ըսին, Ով Իսրայելի Տէր Աստուածը, ինչո՞ւ համար այս բանը Իսրայելի մէջ պատահեցաւ, որ այսօր Իսրայելէ ցեղ մը պակսի : 4 - Ու հետեւեալ օրը ժողովուրդը կանուխ ելաւ, և հոն սեղան մը շինեցին, ու սղջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցին :

5 - Ու Իսրայելի որդիները ըսին, Իսրայելի ամէն ցեղերէն ժողովքին հետ Տէրօջը առջև չելլողը ո՞վ է . քանզի Տէրօջը առջև Մասփա չելլող մարդուն համար մեծ երգում ըրեր էին՝ ըսելով թէ Անիկա անպատճառ պիտի մեռնի : 6 - Այն ատեն Իսրայելի որդիները իրենց եղբօրը Բենիամինի համար ցաւելով ըսին, Այսօր Իսրայելէ ցեղ մը բնաջինջ եղաւ : 7 - Այս մնացածներուն ի՞նչ ընենք, որ անոնց կիներն աւնինք . քանզի մենք Տէրօջը անունովը երգում ըրինք որ մեր աղջիկներէն անոնց կին չտանք : 8 - Ու ըսին, Իսրայելի ցեղերէն ո՞վ է որ Տէրօջը առջև Մասփա չելաւ . և ահա Քաղաադու Յաբիսէ բնաւ մարդ մը եկած չէր բանակը ու ժողովքը : 9 - Ու ժողովուրդը աչքէ անցուցին . և ահա անոնց մէջ Քաղաադու Յաբիսի բնակիչներէն մարդ մը չգանուեցաւ : 10 - Այն ատեն ժողովքը խիստ զօրաւորներէն հոն տատուերկու հազար մարդ զրկեցին, ու անոնց պատուիրելով ըսին, Քացէք, և Քաղաադու Յաբիսի բնակիչները սուրի բերնէ անցուցէք, կիներն ալ ու աղաքներն ալ : 11 - Եւ ձեր ընելու բանը այս է . Ամէն այր մարդը ու այր

*Կա՛մ, նշան

*Կա՛մ, Աստուծոյ տունը. Գլ. Ի. 18, 26

մարդու անկողին գիտցող ամէն կինը կարանցուցէք: 12 - Եւ Գաղաադու Յաբիսի բնակիչներուն մէջ չորս հարիւր կոյս աղջիկներ գտան, որոնք արուի հետ պառկած չէին, ու այր մարդ չէին գիտեր, և զանոնք Քանանու երկրին մէջ Սելովի բանակը բերին: 13 - Ու բոլոր ժողովքը հարգեց զՌեմոնի վէմը եղող Բենիամինի որդիներուն խօսեցան, և զանոնք խաղաղութեան հրաւիրեցին: 14 - Ու այն ատեն Բենիամինեանք դարձան. և անոնց այն կիները առին, զորոնք Գաղաադու Յաբիսի կիներէն ողջ թողուցեր էին. բայց անոնց բաւական չեղան: 15 - Եւ ժողովուրդը Բենիամինի համար ցաւեցաւ. քանզի Տէրը Իսրայէլի ցեղերուն մէջ խրամատու թիւն ըրաւ:

16 - Ու ժողովքին ծերերը ըսին, Մնացածներուն ի՞նչ ընենք կիներ արու-համար. որովհետեւ Բենիամինի ցեղին կիները կորուսեցան: 17 - Եւ ըսին, Ողջ մնացող Բենիամինեանց ժառանգութիւն Բողոքոյ, որպէս զի Իսրայէլէ ցեղ մը բնաջինջ չըլլայ: 18 - Ու մենք անոնց մեր աղջիկներէն կին չենք կրնար տալ, քանզի Իսրայէլի որդիները երգում ընելով ըսին թէ Բենիամինի կին տուողը անիծեալ ըլլայ: 19 - Եւ ըսին, Ահա տարուէ տարի Տէրոջը տօնախմբութիւն կ'ըլլայ Սելովի մէջ, այն

տեղը՝ որ Բեթէլի հիւսիսային կողմը, ու Բեթէլէ Սիւքէմ ելող ճամբուն արեւելեան կողմը, և Դեբօնայի հարաւային կողմը կ'ըլլայ: 20 - Ու Բենիամինի որդիներուն պատուիրելով ըսին, Գացէք, այգիներուն մէջ պահուեցէք. 21 - Ու երբ տեսնէք որ Սելովի աղջիկները պար բռնելով խաղաղուելու են, այն ատեն այգիներէն ելէք, և ամէն մէկդ Սելովի աղջիկներէն ձեզի մէյմէկ կին յափշտակեցէք, ու Բենիամինի երկիրը գացէք: 22 - Եւ եթէ անոնց հայրերը կամ եղբայրները ձեզի գալով գանգատ ընեն, անոնց կ'ըսենք թէ Մեր սիրոյն համար շնորհք ըրէք անոնց. քանզի մենք պատերազմին մէջ անոնց ամէնուն մէյմէկ կին չպահեցինք. ու հիմա դուք չառիք անոնց որ յանցաւոր ըլլաք: 23 - Եւ Բենիամինի որդիները այնպէս ըրին, ու իրենց թիւին չափ պար բռնողներէն կիներ յափշտակելով՝ առին ու գացին իրենց ժառանգութիւնը դարձան, ու քաղաքները շինեցին և անոնց մէջ բնակեցան: 24 - Ու այն ատեն Իսրայէլի որդիները՝ անկէ ամէն մարդ իր ցեղին ու իր ազգատոհմին գնաց, և ամէն մարդ անկէ իր ժառանգութեանը ելաւ: 25 - Այն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար. ամէն մարդ իր աչքին հաճելի եղածը կ'ընէր:

ԳԻՐՔ ՀՌՈՒԹԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Բառաւորաց կառավարութեան օրերը երկրին վրայ սով եղաւ. և Յուդայի Բեթլէհէմէն մարդ մը իր կնոջ մով ու երկու որդիներով Մովաբի երկիրը պանդխտանալու գնաց. 2 - Եւ այն մարդուն անունը Ելիմէլէք, ու կնոջը անունը Նոեմի, ու երկու որդիներուն անունները Մաալոն ու Քելլոն էին. անոնք Եփրատացի էին Յուդայի Բեթլէհէմէն, և Մովաբի երկիրը գա-

ցին ու հոն բնակեցան: 3 - Եւ Նոեմիի այրը Ելիմէլէք մեռաւ. ու անիկա իր երկու որդիներովը մնաց, 4 - Որոնք իրենց Մովաբացի կիներ առին. մէկուն անունը Որփա, ու միւսին անունը Հուսթ էր. և անոնք հոն տասը տարիի չափ նստան: 5 - Ու Մաալոն և Քելլոն երկուքն ալ մեռան, և կինը իր երկու որդիներէն ու այրէն զուրկ մնաց:

6 - Եւ անիկա իր երկու հարսերովը ելաւ, որ Մովաբի երկրէն դառնայ. քանզի Մովաբի երկրին մէջ լսեր էր որ

Տէրը իր ժողովուրդին այցելութիւն
 բերէ է՝ անոնց հաց տալով : 7 - Աւ
 նիկա իր եղած տեղէն իր երկու հար-
 սերուն հետ ելաւ , և Յուդայի երկիրը
 դառնալու համար ճամբորդութիւն
 կ'ընէին : 8 - Աւ Նոեմի իր երկու հար-
 սերուն ըսաւ , Գացէք , և ամէն մէկդ
 թող իր մօրը տունը դառնայ . «- Տէրը
 ձեզի ողորմութիւն ընէ , ինչպէս դուք
 մեռածներուն ու ինծի բռիք . 9 - Տէրը
 ձեզի տայ որ ամէն մէկդ իր երկանը
 տունը հանգստութիւն գտնէ . ու զա-
 նոնք համբուրեց , և անոնք ձայներնին
 վերցնելով լացին . 10 - Աւ անոր ըսին ,
 Մենք անպատճառ քեզի հետ քու ժո-
 ղովուրդիդ կը դառնանք : 11 - Բայց
 Նոեմի ըսաւ , Այլ իմ աղջիկներս , ես
 դարձէք . ինչո՞ւ համար ինծի հետ պի-
 տի երթաք . միթէ իմ արգանդիս մէջ
 ուրիշ աղաքներ կա՞ն , որ ձեզի այր ըլ-
 լան : 12 - Ես դարձէք , իմ աղջիկ-
 ներս , «- գացէք . քանզի ես պառւեր
 եմ , ու նորէն պիտի չկարգուիմ . եթէ
 յոյս ունիմ՝ ըսելով՝ այս գիշեր կար-
 գուելու ըլլայի , ու աղաքներ ալ ծնա-
 նէի , 13 - Գուք մինչև անոնց մեծ-
 նայր պիտի սպասէի՞ք , և դուք ասոր
 համար պիտի չկարգուէիք ու այսպէ՞ս
 պիտի մնայիք . ոչ , աղջիկներս , քանզի
 *ձեզի համար շատ՝ կը ցաւիմ . որով-
 հետև Տէրոջը ձեռքը իմ վրաս †ծան-
 րացաւ : 14 - Աւ անոնք նորէն ձայներ-
 նին վերցնելով լացին : Եւ Արփա իր կե-
 սուրը համբուրեց , բայց Հուսթ անկէ
 չզատուեցաւ : 15 - Սակայն Նոեմի ըսաւ ,
 Ահա քու ներդ իր ժողովուրդին ու իր
 աստուածներուն դարձաւ . դուն ալ
 ներոջդ ետեւէն ետ դարձիր : 16 - Եւ
 Հուսթ ըսաւ , Իմ վրաս մի իյնար որ
 քեզ թողում , ու քեզմէ դառնամ .
 քանզի ուր որ երթամ՝ հոն պիտի եր-
 թամ , և ուր որ մնամ՝ հոն պիտի մնամ .
 քու ժողովուրդդ իմ ժողովուրդս ըլ-
 լայ , ու քու Աստուածդ իմ Աստուածս
 ըլլայ . 17 - Աւ որ մեռնիս՝ ես ալ հոն
 պիտի մեռնիմ ու հոն թաղուիմ . Տէրը
 ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ , եթէ
 զիս քեզմէ մահուանէ «-բիշ Բան Ժ
 զատէ : 18 - Երբ Նոեմի տեսաւ որ ա-
 նիկա միտքը դրեր է իրեն հետ գալու ,
 ալ չխօսեցաւ անոր :

19 - Աւ երկուքը Դելիզ գացին ,
 մինչև որ Բեթլէհէմ հասան . ու երբ
 Բեթլէհէմ մտան , ասոնց պատճառաւ
 բոլոր քաղաքը շարժեցաւ , ու կ'ըսէին ,
 Արդեօք Նոեմի ասիկա՞ է : 20 - Եւ ա-
 նիկա անոնց ըսաւ , Չիս *Նոեմի մի
 կանչէք , զիս †Մարա կանչեցէք . քան-
 զի Ս.մենակարողը դառնութեամբ լե-
 ցուց զիս . 21 - Ես լեցուն գացի , ու
 Տէրը զիս պարսպ դարձուց . ինչո՞ւ զիս
 Նոեմի կը կանչէք . քանզի Տէրը †ինծի
 դէմ վկայութիւն տուաւ , ու Ս.մենա-
 կարողը զիս վշտացուց : 22 - Այսպէս
 Նոեմի իր հարսին , Մովաբացի Հուս-
 թի , հետ Մովաբի երկրէն ետ դար-
 ձաւ . ու գարբի հնձոց սկիզբը Բեթլէ-
 հէմ հասան :

ԳԼ Բ

Եւ Նոեմի իր երկանը կողմանէ ազ-
 գական մը ունէր . անիկա Ելիմեղէքի
 ազգատոհմէն էր , ու շատ հարուստ
 մարդ մըն էր , և անոր անունը Բոոս էր :
 2 - Աւ Մովաբացի Հուսթ Նոեմիի ը-
 սաւ , Արտերը երթամ , և որուն աչ-
 քին առջև ողորմութիւն գտնելու ըլ-
 լամ , անոր ետեւէն երթամ «- հասկեր
 ժողովեմ : Եւ անիկա ըսաւ անոր , Գնա ,
 աղջիկս : 3 - Աւ անիկա գնաց , և արտի
 մը մէջ մտնելով հնձողներուն ետեւէն
 հասի կը ժողվէր . ու այնպէս պատա-
 հեցաւ որ անիկա Ելիմեղէքի ազգա-
 տոհմէն եղող Բոոսի արտին մէջ գըտ-
 նուեցաւ :

4 - Եւ ասա Բոոս Բեթլէհէմէ եկաւ ,
 ու հնձողներուն ըսաւ , Տէրը ձեզի հետ
 ըլլայ : Եւ անոնք ըսին , Տէրը քեզ
 օրհնէ : 5 - Աւ Բոոս հնձողներուն վրայ
 կեցող իր մանչուն ըսաւ , Այս աղջիկը
 որո՞ւնն է : 6 - Եւ հնձողներուն վերա-
 կացու մանչը պատասխան տուաւ ու
 ըսաւ , Նոեմիի հետ Մովաբի երկրէն
 դարձող Մովաբացի աղջիկն է . 7 - Եւ
 Դելի ըսաւ , Կ'աղաչեմ , որաներուն մէջ
 հնձողներուն ետեւէն հասի քաղեմ ու
 ժողվեմ . ու անիկա առաւուանց կա-
 նուիս եկաւ , ու մինչև հիմա կեցաւ ,
 Գոյն Բէ հիմա քիչ մը տունը նստաւ :

8 - Եւ Բոոս ըսաւ Հուսթի , Մտիկ

*Կամ , ձեզմէ աւելի
 †Եբր. ելաւ

*Այսինքն , հաճելի
 †Այսինքն , դառն
 ‡Կամ , զիս խոնարհեցուց

ըրէ , աղջիկս . հասի ժողովելու համար ուրիշին արտը չերթաս , ու այս ատեն ալ չգատուիս , հապա հոս իմ՝ աղջիկներուս քով կենաս . 9 - Քու աչքերդ անոնց հնձած արտին վրայ ըլլան , ու անոնց ետեւէն գնա . ահա մանչերուն ապապրեր եմ որ քեզի չդպչին . ու երբ ծարւիս՝ ամաններուն քով գնա , ու մանչերուն քաշած ջուրէն խմէ : 10 - Եւ աղջիկը երեսի վրայ ինկաւ , ու գեանէն երկրպագութիւն ընելով՝ անոր ըսաւ , Ինչէն է որ ես քու աչքերուդ առջև շնորհք կը գտնեմ , ու դուն ինծի հետ ծանօթութիւն կ'ընես . որովհետեւ ես օտար կին մըն եմ : 11 - Եւ Բոսս պատասխան տուաւ ու անոր ըսաւ , Քու երկանդ մեռնելէն ետքը դուն քու կեսորջդ ինչ որ ըրիր՝ բուրն ալ պատմեցին ինծի , և թէ ի՛նչ պէս քու հայրդ ու մայրդ և ծննդեանդ երկիրդ թողուցիր , ու եկար այն ժողովուրդին՝ զոր առաջուրնէ չէիր ճանչնար : 12 - Քու գործիդ փոխարէն Տէրը հատուցում ընէ , և քու վարձքդ Իսրայէլի Տէր Աստուծոյն կողմանէ առատապէս արուի , քանզի դուն եկար որպէս զի անոր թեւերուն տակ ապաստանարան մը գտնես : 13 - Ու անկա ըսաւ , Ով տէր իմ , քու աչքերուդ առջև շնորհք գտնեմ . քանզի դուն զիս միթարեցիր , ու քու աղախիննիդ քաղցրութեամբ խօսեցար , թէպէտեւ ես քու աղախիններէդ մէկուն պէս ալ չեմ : 14 - Եւ Բոսս կերակուրի ատեն անոր ըսաւ , Հոս եկուր , ու հացէն կեր և պատառդ քացախին մէջ թաթխէ : Ուստի անկա հնձողներուն քով նստաւ . ու անոր բոհած ցորեն տուաւ , ան ալ կերաւ կշտացաւ և աւելցածը պահեց : 15 - Ու երբ հասկ ժողովելու ելաւ , Բոսս իր մանչերուն պատուիրելով ըսաւ , Թող որաներուն մէջէն ալ ժողովէ , ու զանկա մի ամչցնէք : 16 - Եւ խուրձերէն ալ անոր համար գետինը ձգեցէք , ու թող տուէք որ ժողովէ , և զանկա մի յանդիմանէք : 17 - Ու անկա մինչև իրիկուն այն արտին մէջ հաւաքուի ժողովեց . ու երբ ժողովածը ծեծեց , մէկ արդուի չափ գարի եղաւ : 18 - Եւ զանկա առաւ ու քաղաքը մտաւ , և կեսուրը անոր ժողովածը տեսաւ . ու Հուսթ հանեց այն իր կշտացածէն աւելցածը անոր տուաւ : 19 - Եւ կեսուրը անոր ըսաւ , Այսօր

ուրկէ՞ հասի ժողովեցիր , և ո՞ւր բանեցար . քեզի ճանչուօրութիւն ընողը օրհնեալ ըլլայ : Այն ատեն անկա իր կեսորջ իմացուց թէ որո՞ւ քով բաներ է , ու ըսաւ , Այն մարդը , որուն քով ես այսօր բանեցայ , Բոսս կը կոչուի : 20 - Եւ Նոեմի իր հարսին ըսաւ , Անկա Տէրոջմէն օրհնեալ ըլլայ , որ կենդանիներէն ու մեռածներէն իր ողորմութիւնը չկարեց . և Նոեմի անոր ըսաւ , Այն մարդը մեր ազգատոհմէն է , անկա մօտ ազգական է մեզի : 21 - Ու Մովսարացի Հուսթ ըսաւ , Անկանաև ինծի ըսաւ թէ իմ մանչերուս քովէն չգատուիս , մինչև որ անոնք իմ բոլոր հունձքս լմնցնեն : 22 - Եւ Նոեմի իր հարսին Հուսթի ըսաւ , Աղէկ է , աղջիկս , որ դուն անոր աղջիկներուն հետ ելլես , ու քեզ ուրիշ արտի մը մէջ *չտեսնեն : 23 - Եւ անկա Բոսսի աղջիկներէն չգատուեցաւ . ու մինչև գարիին հունձքին և ցորենին հունձքին լմնալը հասի ժողովեց , ու իր կեսորջ քով կը բնակէր :

ԳԼ. Գ

Եւ անոր կեսուրը Նոեմի անոր ըսաւ , Աղջիկս , քեզի հանգստութիւն չփնտռե՞մ , որպէս զի քեզի աղէկ ըլլայ : 2 - Հիմա Բոսս մեր ազգականը չէ՞ , որուն աղջիկներուն քով կեցար դուն . ահա անկա այս զիշեր կալին մէջ գարին կը հոսէ : 3 - Եւ դուն լուացուէ ու ի՛նչ օծուէ , և լաթերդ հագիր ու կալը իջիր . և մինչև որ ուտելը ու խմելը չլմնցնէ , այն մարդուն մի յայանուիր : 4 - Ու երբ քնանայ , անոր պառկած տեղը իմացիր , և գնա անոր ստքերուն կողմէն ծածկոցը բաց ու պառկէ , և անկա քեզի պիտի իմացընէ թէ ի՛նչ ընելու ես : 5 - Ու Հուսթ անոր ըսաւ , Ամէն ինծի ապապրածներդ պիտի ընեմ : 6 - Եւ կալը իջաւ , ու կեսորջը ամէն ապապրածին պէս ըրաւ : 7 - Եւ Բոսս ուտելէն , խմելէն ու սիրտը զուարճանալէն ետքը՝ դիզուած գործի եղերքը պառկելու գնաց . և Հուսթ ալ կամացուկ մը գնաց , ու անոր ստքերուն կողմէն ծածկոցը բացաւ և պառկեցաւ : 8 - Ու կէսգիշերուն մարդը վախցաւ ,

*Եբբ. չհանդիպին

ու ծաւրով ԳԻՐՔ՝ որ ահա իր ոտքերուն քով կին մը պառկեր էր: 9 - Եւ ըսաւ, Իսկն ո՞վ ես: Ու անհկա ըսաւ, Ես քու աղախինդ Հուսթ եմ. և քու քղանցքդ քու աղախինիդ վրայ տարածէ, քանզի դուն մօտ ազգականս ես: 10 - Ան ալ ըսաւ, Իսկն Տէրոջմէ օրհնեալ ըլլաս, աղջիկս. քու ետքի աղէկութիւնդ առաջուանէն մեծ է, որովհետեւ ազքատ կամ հարուստ երեսասարգներուն ետեւէն չգացիր: 11 - Եւ հիմա, ով աղջիկս, մի վախնար, դուն ինծի ինչ որ ըսես, քեզի պիտի ընեմ. քանզի իմ քաղաքիս բոլոր ժողովուրդը՝ գիտէ որ դուն առաքինի կին մըն ես: 12 - Ու հիմա իրաւցընէ ես քու ազգականդ եմ, բայց ինծմէ մօտ քեզ ազգական ալ կայ: 13 - Այս գիշեր հոս կեցիր, ու եթէ անհկա առաւօտուն իր ազգականութեան պարտաւորութիւնը քեզի հատուցանել ուզէ, աղէկ, թող հատուցանէ. բայց եթէ անհկա ազգականութեան պարտաւորութիւնը քեզի հատուցանել չուզէ, այն ատեն ես կը հատուցանեմ, կենդանի է Տէր. մինչև առաւօտ հոս պառկէ:

14 - Ուստի մինչև առաւօտ անոր ոտքերուն քով պառկեցաւ. ու ԳԻՐՔ՝, երբ մարդիկ դեռ չէին կրնար մէկզմէկ ճանչնալ, ելաւ. և ԲՈՒՍՐՈՍ՝ ըսաւ, Մարդ չգիտնայ որ կալին մէջ կին մտեր է: 15 - Նաև ըսաւ, Վրայի ծածկոցդ բեր, ու զանհկա բռնէ: Եւ ՀՈՒՍԹ՝ զանհկա բռնեց. ու անոր վեց շաբաթ գարի չափեց, ու անոր վրայ բեռնաւորեց. և անհկա քաղաքը գնաց: 16 - Ու ՀՈՒՍԹ՝ իր կետրոջ դարձաւ, որ անոր ըսաւ, Ով աղջիկս, ի՞նչ պէս ես. ու անհկա անոր պատմեց ինչ որ այն մարդը ըրաւ իրեն. 17 - Եւ ըսաւ, ինծի այս վեց շաբաթ գարին տուաւ՝ ըսելով, Իսկ կետրոջ պարսպ չերթաս: 18 - Եւ ՆՈՒԲ՝ ըսաւ, Աղջիկս, նստէ, մինչև որ գիտնաս թէ ո՞ր գործը ի՞նչ պէս պիտի լիննայ. քանզի այն մարդը մինչև որ այս գործը այսօր չլինցնէ չհանգստանար:

*Եբր. ժողովուրդիս բոլոր դուռը ԳԻՐՔ, ո՞վ

ԳԼ. Գ

Եւ Բոսս դուռը ելաւ ու հաննատաւ. և ահա այն Բոսսի ըսած ազգականը կ'անցնէր. ու ԲՈՒՍՐՈՍ՝ անուշովը կանչեց զանհկա ու ըսաւ, Եկուր, հոս նստէ. և անհկա դարձաւ ու նստաւ: 2 - Այն ատեն անհկա քաղաքին ծերերէն տասը մարդ առաւ, ու անոնց ըսաւ, Այս անգ նստեցէք. և անոնք նստան: 3 - Ետք այն ազգականին ըսաւ, Մովսրի երկրէն դարձող Նոեմի մեր եղբորը Ելիմելէքի արաին բաժինը ծախելու վրայ է. 4 - Ու ես մտածեցի որ քեզի իմացընեմ ու ըսեմ, Զանհկա այս նստողներուն առջև ու իմ ժողովուրդիս ծերերուն առջև ծախու առ. եթէ ազգականութեան իրաւունքով զանհկա ծախու առնել կ'ուզես, ծախու առ. բայց եթէ ծախու առնել չես ուզեր, ինծի իմացուր որպէս զի գիտնամ. քանզի քեզմէ զատ ազգականութեան իրաւունքը կատարելու մէկը չկայ, ու քեզմէ ետքը ես եմ: Եւ անհկա ըսաւ, Ես ազգականութեան իրաւունքը կատարեմ: 5 - Ու Բոսս ըսաւ, Իսկն Նոեմի ձեռքէն արար ծախու առած օրդ՝ մեռնողին կնոջմէն, Մովսրացի Հուսթէ, ալ ծախու առնելու ես, որպէս զի մեռնողին անունը պահես իր ժառանգութեանը մէջ: 6 - Եւ ազգականը ըսաւ, Ես իմ ազգականութեան իրաւունքը չեմ կրնար կատարել, չըլլայ որ իմ ժառանգութիւնս աւրեմ. իմ ունեցած ազգականութեան իրաւունքը դուն կատարէ, քանզի ես չեմ կրնար կատարել: 7 - Ու Իսրայէլի մէջ առաջ այս ԲՈՒՍՐՈՍ՝ ինչ կար փրկելու ու ծախու առնելու գործերուն մէջ՝ ամէն բան հաստատելու համար, մարդը իր կօշիկը կը հանէր ու իր ընկերին կու տար. և ասիկա Իսրայէլի մէջ վկայութիւն կ'ըլլար: 8 - Ուստի ազգականը Բոսսի ըսաւ, Իսկն ծախու առ. ու իր կօշիկը հանեց:

9 - Եւ Բոսս ծերերուն ու բոլոր ժողովուրդին ըսաւ, Իսկն պիտի վկայէք, որ ես Ելիմելէքի բոլոր ստացուածքը, ու Քելանի և Մաալանի բոլոր ստացուածքը Նոեմի ձեռքէն ծախու առի. 10 - Ու Մաալանի կինը, Մովսրացի Հուսթն, ալ ինծի կին առի, որպէս զի մեռնողին անունը պահեմ իր ժառանգութեանը մէջ, ու մեռնու-

զին անուներ իր եղբայրներէն ու իր բնակարանին գունէն չվերնայ . դուք այս բանին համար այսօր վկայ էք : 11 - Այն ատեն դուռը եղող բոլոր ժողովուրդը ու ծերերը ըսին , Վկայ ենք . Տէրը քու տունդ մանող կինը Ռաբէլի ու Լիայի պէս ընէ , որոնք երկուքը Իսրայէլի տունը շինեցին . և դուն Եփրաթայի մէջ ուժովցիր , ու Բեթլէհէմի մէջ անուն վասակէ : 12 - Աւ քու տունդ Փարէսի տանը պէս ըլլայ , զոր Թամար ծնաւ Յուդայի , այն սերունդով զոր Տէրը պիտի տայ քեզի այս նորահասակ կնոջմէն :

13 - Եւ Բոոս Հուսթը առաւ , որ իրեն կին եղաւ , ու անոր մտաւ . և Տէրոջը սղորմութիւնովը յղացաւ ու որդի մը ծնաւ : 14 - Եւ կիները Նսեմիի ըսին , Օրհնեալ ըլլայ Տէրը , որ այսօր քեզ առանց մօտ ազգականի չթողուց ,

որպէս զի անոր անունը Իսրայէլի մէջ յիշուի . 15 - Աւ ասիկա քու հոգևոյդ միխթարութիւնը և ծերութեանդ *գաւազանը ըլլայ . քանզի զանիկա քեզ սիրող հարսդ ծնաւ , որ քեզի եօթը որդիէ ազէկ է : 16 - Աւ Նսեմի տղան առաւ իր գերկը դրաւ , և անոր դայեակը եղաւ : 17 - Եւ դրացի կիները անոր անուն դրին՝ ըսելով . Նսեմիի որդի մը ծնաւ , և անոր անունը Ովբէդ կոչեցին . ասիկա Դաւիթի հօրը Յեսսէի հայրն էր :

18 - Եւ Փարէսի ծնունդները ասոնք են . Փարէս ծնաւ Եսրոնը , 19 - Աւ Եսրոն ծնաւ †Արամք , և Արամ՝ ծնաւ Ամինադաբը , 20 - Աւ Ամինադաբ ծնաւ Նաստոնը , և Նաստոն ծնաւ Սաղմոնը , 21 - Աւ Սաղմոն ծնաւ Բոոսը , և Բոոս ծնաւ Ովբէդը , 22 - Աւ Ովբէդ ծնաւ Յեսսէն , և Յեսսէ ծնաւ Դաւիթը :

ՃԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ԹԱԳԱԻՈՐԱՅ

ԳԼՈՒԻ Ա

Աւ Եփրեմի լեռնէն Սրիմաթեմ սօփիմէ Եղկանա անունով Եփրաթացի մարդ մը կար , որ Սուփիի որդւոյն Թոփայի որդւոյն Եղիուսի որդւոյն Յերոամի որդին էր : 2 - Եւ անիկա երկու կին ունէր . մէկուն անունը Աննա , ու միւսին անունը Փենանա էր . ու Փենանա զաւակներ ունէր , բայց Աննա զաւակ չուներ : 3 - Եւ այն մարդը տարուէ տարի իր քաղաքէն կ'ելէր , որպէս զի Սելովի մէջ զօրութեանց Տէրոջը երկրագութիւն ու զո՛հ մատուցանէ . և հոն Հեղիի երկու որդիները , Ոփնի ու Փենէհէս , Տէրոջը քահանաներն էին : 4 - Աւ Եղկանա իր զո՛հ մատուցած օրը իր կնոջ Փենանայի և անոր տղաքներուն ու աղջիկներուն մէջ մէկ բաժին տուաւ . 5 - Իսկ Աննայի

Տիրկին բաժին տուաւ , քանզի անիկա Աննան կը սիրէր . բայց Տէրը անոր արգանդը գոցեր էր : 6 - Աւ անոր նախանձորդը Փենանա զանիկա կսկծեցնելու համար խիստ վշտացուց . որովհետեւ Տէրը անոր արգանդը գոցեր էր : 7 - Եւ Աննա տարուէ տարի Տէրոջը տունը ելած ատենը Եղանա այնպէս կ'ընէր . Փենանա ալ նոյնպէս Աննան կը վշտացընէր , ու անիկա կու լար և չէր ուտեր : 8 - Աւ այրը Եղկանա անոր քսաւ , Աննա , ինչո՞ւ կու լաս և ինչո՞ւ չես ուտեր , ու ինչո՞ւ համար սիրտդ այդպէ՞ տրտում է . միթէ ես քեզի տառ որդիէ լաւ չե՞մ :

9 - Եւ Աննա Սելովի մէջ ուտելէն ու խմելէն ետքը սաք ելաւ . (ու Հեղի քահանան Տէրոջը տաճարին սեմերուն քով աթոռի մը վրայ նստեր էր .) 10 -

*Եբբ . Խնամազուլթիւնը
†Կա՛մ , Բամբ , և Բամ

‡Կա՛մ , ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻՍ
||Որ է՝ Ռամա . տես հմբ . 19 :
§Կա՛մ , Երեւելի

Եւ արամալից հոգւով Տէրոջը առջև աղօթք բրաւ ու խիստ շատ լացաւ : 11 - Եւ ուխտ ընելով՝ ըսաւ , Ով Տէր զօրութեանց , եթէ քու ազախինիդ նեղութեանը նայիս ու զիս յիշես , և քու ազախինդ չմոռնալով՝ քու ազախինիդ *արու զուակ մը՝ տաս , զանհկա Տէրոջը պիտի նուիրեմ՝ իր կեանքին բոլոր օրերուն մէջ , ու անոր գրիտուն վրայ ամելի պիտի չելլէ : 12 - Աւ երբ անհկա Տէրոջը առջև իր աղօթքը շտացուց , Հեղի անոր բերնին կը նայէր : 13 - Եւ Աննա իր սրտին մէջէն կը խօսէր . միայն անոր շրթունքները կը շարժէին , բայց ձայնը չէր լսուեր . տնոր համար Հեղի զանհկա գինով կարծեց : 14 - Եւ Հեղի անոր ըսաւ , Մինչև ե՞րբ գինովութիւն պիտի ընես . քու գինիէդ հրաժարէ : 15 - Եւ Աննա պատասխան տուաւ ու ըսաւ , Ով տէր իմ , այդպէս չէ . ես վշտացած սրտով կին մըն եմ , և գինի կամ՝ օղի չեմ խմած . սակայն Տէրոջը առջև իմ սիրտս բացի : 16 - Քու ազախինդ չար կին մը մի կարծեր , քանզի իմ՝ վիշտբուս ու նեղութեանս շատութեանը համար մինչև հիմա խօսեցայ : 17 - Այն ատեն Հեղի պատասխան տուաւ ու ըսաւ , Գնա խաղաղութեամբ , և Խորայէլի Աստուածը քու խնդրուածքդ +եջ սայ՝ ինչ որ անկէ խնդրեցիր :

18 - Աւ անհկա ըսաւ , Քու ազախինդ թող քու առջեւ շնորհք գանէ . և կինը իր ճամբան գնաց , ու կերաւ , ու երեսը մէյմըն ալ չարամեցաւ : 19 - Եւ անոնք աւուուտուն կանուխ ելան , ու Տէրոջը առջև երկրպագութիւն ըրին , և Ռամա դարձան ու իրենց աունը գացին : Աւ Եղկանա իր Աննա կնոջ մօտեցաւ . և Տէրը զանհկա յիշեց : 20 - Աւ Աննա յղացաւ , և երբ ժամանակը հասաւ , աղայ մը ծնաւ , ու անոր անունը †Սամուէլ կոչեց՝ ըսելով , քանզի զանհկա Տէրոջմէն խնդրեցի : 21 - Եւ անոր այրը Եղկանա իր բոլոր ընտանիքովը Սելով ելաւ որպէս զի Տէրոջը առջև ատրեկան զոհը մատուցանէ , ու իր ուխտը խոստէ : 22 - Բայց Աննա չգնաց , քանզի իր երկանը

ըսաւ , Մինչև աղուն կաթ է կարուիրը էջ նստի՞մ . ետքը զանհկա կը ասնիմ , որպէս զի Տէրոջը առջև երեւնայ , ու միշտ հոն կենայ : 23 - Եւ այրը Եղկանա անոր ըսաւ , Աչքերուդ հաճեցի եղածը՝ ըրէ . մինչև զանհկա կաթէն կարես՝ նստէ . միայն թէ Տէրը իր խօսքը հաստատէ . ուստի կինը նստաւ , ու մինչև իր աղան կաթէն կարելը զանհկա կը անուցանէր :

24 - Եւ զանհկա կաթէն կարածին պէս իրեն հետ աւաւ , ու երեք զուարակով , մէկ արդու ալիւրով ու մէկ օրի գինիով զանհկա Տէրոջը տունը տարաւ , որ Սելովի մէջ էր . ու աղան փոքրիկ էր : 25 - Եւ Բէլ զուարակը մութեցին , ու աղան Հեղիի տարին : 26 - Եւ Աննա ըսաւ , Ո՛հ , տէր իմ , քու անձդ կենդանի է . ես այն կինն եմ , որ հոս քու քովդ կայնեցայ Տէրոջը աղօթք ընելու համար . 27 - Ես այս աղուն համար աղօթք ըրի , ու Տէրը իմ խնդրուածքս ինձի տուաւ՝ ինչ որ անկէ խնդրեցի : 28 - Հիմա ես ալ զանհկա Տէրոջը փոխ կու տամ . անհկա իր բոլոր կեանքին մէջ Տէրոջը փոխ տրուած ըլլայ . ու անհկա հոն Տէրոջը երկրպագութիւն ըրաւ :

ԳԼ. Բ

Եւ Աննա աղօթք բրաւ ու ըսաւ , Իմ սիրտս Տէրոջմով ուրախացաւ , իմ եղջիւրս Տէրոջմով բարձրացաւ . Բերանս իմ թշնամիներուս վրայ բացուեցաւ , Քանզի քու փրկութիւնովդ ուրախացայ :

2 - Տէրոջը պէս սուրբ չկայ , քանզի քեզմէ ուրիշ չկայ , Աւ մեր Աստուծոյն պէս վէմ չկայ :

3 - Ալ ասկէ ետեւ հպարտութիւնով մի պարծենաք , Աւ ձեր բերնէն ամբարտաւանութիւն չելլէ , Քանզի Տէրը գիտութեանց Աստուածն է , Աւ անհկա *Բնան գործը կը կշուէ :

4 - Զօրաւորներուն աղեղները կտարեցան , Աւ տկարները ոյժ հագան :

5 - Կուշտ եղողները հացի համար վարձկան եղան , Եւ անօթի եղողները իշխանս - թուղուցին .

*Եբբ. մարդոց սերունդ
 †Եբբ. իմ հոգիս թափեցի
 ‡Այսինքն , Աստուծոյ լսածը , իմ , Աստուծոյ անունը

Մինչև որ ամուլը եօթը զստի ծնաւ ,
Ու շատ զաւակ ունեցողը տկարացաւ :
6 - Մեռցնողը ու ողջացնողը ,
Գերեզմանը իջեցնողը ու վեր հանողը
Տէրն է :

7 - Աղքատացնողը ու հարստացնողը ,
Ցածցնողը ու բարձրացնողը Տէրն է :

8 - Անհկա աղքատը փոշիէն կը վեր-
ցընէ ,

Ու կարօտը աղբիւսէն կը հանէ ,
Որպէս զի իշխաններուն հետ նստեցնէ ,
Ու փառաց ամբողջ անոնց ժառանգե-
ցընէ .

Քանզի երկրի հիմերը Տէրօջն են ,
Ու աշխարհը անոնց վրայ հաստատեց :

9 - Անհկա իր սուրբերուն սոքերը կը
պահէ ,

Ու չարագործները մութին մէջ պիտի
*կորսուին .

Քանզի մարդ էր ուժովը յաղթող չը-
լար :

10 - Տէրօջը դէմ հակառակողները
պիտի կորսուին ,

Երկինքէն անոնց վրայ պիտի սրտայ .
Տէրը երկրի ծայրերը պիտի դատէ ,

Եւ իր թագաւորին սյծ պիտի տայ ,
Ու իր օծեալին եղջիւրը պիտի բարձ-
րացնէ :

11 - Ու Եղկանա Ռամա իր տունը
գնաց . և Սաճաւէլ մանուկը Հեղի քա-
հանային առջև Տէրօջը ծառայութիւն
կ'ընէր : 12 - Ու Հեղիի որդիները չար
մարդիկ ըլլալով՝ Տէրը չէին ճանչնար :

13 - Եւ քահանաներուն սովորութիւնը
այս էր , որ երբ ժողովուրդէն մէկը զոհ
մատուցանէր , միսին եփած սաւերը քա-
հանային սպասաւորը ձեռքը երեք-
ժանի մասնան մը տաւած կու գար .

14 - Ու զանհկա կաթնային կամ սա-
նին կամ եփարանին կամ պտուկին
մէջ կը խօթէր , ու մասնանը ինչ որ
հանելու ըլլար , քահանան զանհկա
իրեն կ'առնէր : Անանք Սելովի մէջ բու-
լոր հոն եկող Խորայեղացիներուն այս-
պէս կ'ընէին : 15 - Նաև ճարպը այրելէ
առաջ քահանային սպասաւորը կու
գար ու զոհ բնող մարդուն կ'ըսէր ,
Քահանային համար խորովելու միս
տուր , քանզի անհկա քեզմէ եփած
միս չառնէր , այլ հում ֆո կ'առնէ :

16 - Եւ այն մարդը երբ ըսէր թէ Թող
հիմա ճարպը այրեն , ու ետքը սրտիդ

ուզածին չափ առ . այն սաւեն կ'ըսէր ,
Ոչ , հիմա տուր . եթէ ոչ՝ բռնի կ'առ-
նեմ : 17 - Այսպէս այն երիտասարդ-
ներուն մեղքը Տէրօջը առջև շատ մեծ
էր , քանզի մարդիկ Տէրօջը զոհը կ'ար-
համարէին :

18 - Եւ Սամուէլ մանուկը քթանէ
եփուտ հագած՝ Տէրօջը առջև ծառա-
յութիւն կ'ընէր : 19 - Ու անոր մայրը

Քոյնի պղտիկ պատմուճան կը շինէր
անոր , ու տարուէ տարի երբ իր երկանը
հետ տարեկան զոհը ընելու կ'ելլէր ,
անոր կը տանէր : 20 - Եւ Հեղի Եղկա-
նան ու անոր կինը օրհնելով՝ ըսաւ ,

Տէրը քեզի այս կնոջմէն զաւակներ
տայ , Տէրօջը արուած փոխին տեղ . ու
անոնք իրենց տեղը գացին : 21 - Եւ
Տէրը այցելութիւն ըրաւ Աննայի , որ
յղացաւ , ու երեք տղայ ու երկու աղ-
ջիկ ծնաւ . Սամուէլ մանուկն ալ Տէ-
րօջը առջև մեծցաւ :

22 - Եւ Հեղի խիստ ծերացեր էր . ու
անոր որդիները ինչ որ կ'ընէին բոլոր
Խորայելի , և ինչպէս անոնք ժողովքի
խորանին առջև խուճերով ժողովուած
կիներուն հետ կը պառկէին , ամէնն ալ
կը լսէր : 23 - Եւ անոնց ըսաւ , Ինչո՞ւ
համար այսպիսի բաներ կ'ընէք . քանզի
ես այս բոլոր ժողովուրդին բերնէն
ձեզի համար գէշ խօսքեր կը լսեմ .

24 - Մի ընէ , աղաքս , քանզի աղէկ
չեն այն լուրերը զորոնք ես կը լսեմ .
դուք Տէրօջը ժողովուրդը կը մոլորե-
ցընէք : 25 - Եթէ մարդ մը մարդու
դէմ մեղք գործէ , *անոր դատաստանը
Աստուած կը կարէ . բայց եթէ մարդ
մը Տէրօջը դէմ մեղք գործէ , անոր
համար ո՞վ աղաչանք պիտի ընէ : Սա-
կայն անոնք իրենց հօրը խօսքը մտիկ
չէին ընէր , քանզի Տէրը զանոնք մեռ-
ցընել կ'ուզէր : 26 - Ու Սամուէլ մա-
նուկը օրէ օր կը մեծնար , և Տէրօջը սե-
մարդոց հաճոյ էր :

27 - Եւ Աստուծոյ մէկ մարդը Հե-
ղիի եկաւ , ու անոր ըսաւ , Տէրը այս-
պէս կ'ըսէ . Քու հօրդ տանը յայանա-
պէս երեւցայ , երբ անոնք Եզրիպտոսի
մէջ Փարաւոնի տանը շատայ էին .

28 - Ու Խորայելի բոլոր ցեղերէն զա-
նհկա ինձի քահանայ ընտրեցի , որպէս
զի իմ սեղանիս վրայ զոհ մատուցանէ ,

*Կա՛մ , անոր համար քաւութիւն կ'ըլ-
լայ Աստուծոյ առջև

*Եբր . յուս . կենան

խունկ ծխէ, ու իմ առջեւ եփուա
 հազնի. և Իսրայէլի որդիներուն բոլոր
 պատարագները քու հօրդ տանը տուի.
 29 - Ա - Ի՛մ տանս հա՛մար պատուիրած
 զո՛հերս ու ընծաներս ինչո՞ւ կ'անար-
 գէք, և քու որդիներդ ինձմէ աւելի
 կը փառաւորես, որպէս զի իմ ժողո-
 վուրդիս Իսրայէլի ընտիր զո՛հերովը
 ձեզ գերցնէք: 30 - Ասոր համար Իս-
 րայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ,
 Իրաւցընէ ըսեր էի որ քու տունդ ու
 քու հօրդ տունը յաւիտեան իմ առ-
 ջեւս պտըտին. բայց հիմա Տէրը կ'ըսէ,
 Ի՛նչ լիցի. քանզի ես զիս փառաւո-
 րողները պիտի փառաւորեմ, ու զիս
 արհամարհողները պիտի անարգուին:
 31 - Ահա օրեր պիտի գան, որ քու
 թեւզ ու քու հօրդ տանը թեւը պիտի
 կտրեմ, որպէս զի քու տանդ մէջ ծեր
 չգտնուի: 32 - Եւ Իսրայէլ ամէն աւե-
 ասկ բարութիւն վայելած առե՛ն, դուն
 ի՛մ տանս մէջ դժբաղդութիւն պիտի
 աեսնես, ու քու տանդ մէջ բնաւ ծեր
 պիտի չգտնուի: 33 - Եւ քու «Երա՛ն-
 դեք հա՛յա՛ծ մարդը զոր իմ սեղանէս
 չեմ կտրեր, քու աչքերդ նուաղեցնե-
 լու ու քու սիրտդ վշտացնելու համար
 պիտի հա՛յ. և քու տանդ բոլոր զաւակ-
 ները *երիտասարդութեան մէջ՝ պիտի
 մեռնին: 34 - Աւ քու երկու որդիներ-
 քուդ, Ոփնիի ու Փենէհէսի, գլուխը
 գալիքը քեզի նշան ըլլայ, այսինքն եր-
 կուքին ալ մէկ օրուան մէջ մեռնիրը:
 35 - Եւ ինձի հաւատարիմ՝ քահանայ
 մը պիտի հանեմ, որ բոլոր իմ սրտիս
 ու հոգւոյս մէջ եղածը կատարէ. և
 անոր հաւատարիմ տուն մը պիտի շի-
 նեմ. ու միշտ իմ օժեպիս առջեւ պի-
 տի պտըտի: 36 - Եւ քու տունէդ ով
 որ մնայ, կտոր մը արծաթի համար ու
 նկանակ մը հացի համար պիտի գոյ
 անոր երկրպագութիւն ընէ, ու ըսէ,
 Կ'աղաչեմ, զիս քահանայական պաշ-
 տօնի մը վրայ դիր, որպէս զի պատառ
 մը հաց ուտեմ:

ՔԼ. Գ

Եւ Սամուէլ մանուկը Հեղիի առ-
 ջե Տէրոջը ծառայութիւն կ'ընէր. և
 այն օրերը Տէրոջը խօսքը հոգուագիւտ
 էր -- յայտնի աեսիլք չկար: 2 - Աւ

*օր մը՝ Հեղի իր տեղը պառկեր էր. (և
 անոր աչքերը սկսեր էին ծանրանալ, ու
 չէր կրնար աեսնել.) 3 - Եւ Աստու-
 ծոյ կանթեղը տակաւին մարած չէր,
 ու Սամուէլ Տէրոջը տաճարին մէջ կը
 քնանար, ուր Աստուծոյ տապանակը
 կար: 4 - Եւ Տէրը կանչեց Սամուէլը -
 ու անիկա Հոս եմ ըսաւ. 5 - Եւ Հե-
 ղիի վազելով, ըսաւ, Ահա հա՛մ եմ.
 քանզի զիս կանչեցիր: Աւ անիկա ը-
 սաւ, Ես չկանչեցի. դարձիր պառկէ:
 Ան ալ դարձաւ պառկեցաւ: 6 - Եւ
 Տէրը մէյմըն ալ Ով Սամուէլ կան-
 չեց. ու Սամուէլ ելաւ Հեղիի գնաց
 ու ըսաւ, Ահա հա՛մ եմ. քանզի զիս
 կանչեցիր: Աւ անիկա ըսաւ, Որդեակ
 իմ, ես չկանչեցի. դարձիր պառկէ:
 7 - Եւ Սամուէլ տակաւին Տէրոջը յայնչ
 չէր ճանչնար, ու Տէրոջը խօսքը դեռ
 անոր յայտնուած չէր: 8 - Եւ նորէն
 երրորդ անգամ Տէրը կանչեց, Ով Սա-
 մուէլ, ու Սամուէլ ելաւ Հեղիի գնաց,
 ու ըսաւ, Ահա հա՛մ եմ. քանզի զիս
 կանչեցիր: Եւ Հեղի իմացաւ որ մա-
 նուկը կանչողը Տէրն է. 9 - Աւ Հեղի
 Սամուէլի ըսաւ, Գնա պառկէ, ու եթէ
 Ֆոյ՛ն ալ քեզ կանչէ, ըսես, Ով Տէր,
 խօսէ, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ:
 Աւ Սամուէլ գնաց իր տեղը պառկե-
 ցաւ: 10 - Եւ Տէրը եկաւ կայնեցաւ,
 ու առաջին անգամներուն պէս Սա-
 մուէլ, Սամուէլ, կանչեց. ու Սա-
 մուէլ ըսաւ, Խօսէ, Տէր, քանզի քու
 ծառայ մտիկ կ'ընէ: 11 - Այն առե՛ն
 Տէրը Սամուէլի ըսաւ, Ահա ես Իսրա-
 յէլի մէջ այնպիսի բան մը պիտի ընեմ,
 որ զանիկա ամէն լողին երկու ախանջ-
 ները պիտի խօսին: 12 - Այն օրը Հե-
 ղիի վրայ պիտի կատարեմ ամէն ինչ
 որ անոր տանը վրայով խօսեր եմ. պի-
 տի սկսիմ ու պիտի լմնցնեմ: 13 - Եւ
 իրեն իմացուցեր եմ որ անոր տունը
 պիտի դատեմ մինչև յաւիտեան,
 իր գիտցած անօրէնութեանը համար.
 քանզի անոր որդիները իրենց վրայ ա-
 նէճք կը բերեն, ու անիկա չյանդիմա-
 նեց զանանք: 14 - Այս պատճառաւ
 Հեղիի տանը համար երգում ըրի, որ
 Հեղիի տանը անօրէնութեանը՝ զո՛հե-
 րով ու ընծաներով յաւիտեան քառու-
 թիւն չըլլայ:

15 - Եւ Սամուէլ մինչև առտու

*Եբր. մարդ ըլլա՞նք պի՞տ

*Եբր. այն օրը

պառկեցաւ, ու ետքը Տէրոջը ասնը դռները բացաւ. և Սամուէլ վախցաւ այն տեսիլքը շեղի պատմելու: 16 - Բայց շեղի Սամուէլը կանչեց ու ըսաւ, Որդեակ իմ Սամուէլ, ու անհկա ըսաւ, Ահա հո՞ւ եմ: 17 - Եւ անհկա ըսաւ, Քեզի ըսած խօսքը ի՞նչ է. ինձմէ մի պահէր. Աստուած քեզի այսպէս ու տակէ աւելի ընէ, եթէ քեզի գրուցած բոլոր խօսքերէն մէկ խօսք ինձմէ պահէս: 18 - Եւ Սամուէլ բոլոր խօսքերը անոր պատմեց, անկէ չպահէց: Ու շեղի ըսաւ, Անհկա Տէրն է. իր աչքերուն հաճոյ երեւցածը թող ընէ:

19 - Եւ Սամուէլ մեծցաւ, ու Տէրը անոր հետ էր, և իր ըսած խօսքերէն մէկը գետինը չձգեց: 20 - Ու Դանէ մինչև Բերասբէէ բոլոր Իսրայէլ իմացաւ, որ Սամուէլ *հաստատուած է Տէրոջը մարգարէ ըլլալու: 21 - Եւ Տէրը Սելովի մէջ նորէն երեցաւ. քանզի Տէրը Սելովի մէջ Սամուէլի կը յայտնուէր Տէրոջը խօսքովը: Ու բոլոր Իսրայէլի մէջ Սամուէլի խօսքը կը տարածուէր:

Գ. Լ. Դ

Եւ Իսրայէլ պատերազմով Փղըշտացիները դիմաւորելու ելաւ, ու Աբենեզերի մէջ բանակեցաւ. ու Փղըշտացիք Ափէկի մէջ բանակեցան: 2 - Եւ Փղըշտացիք Իսրայէլի դիմաց շարուեցան, ու պատերազմը տարածուեցաւ, և Իսրայէլ յաղթուեցաւ Փղըշտացուց առջև, որոնք պատերազմի տապաւնեցին մէջ չորս հազար մարդու չափ կոտորեցին: 3 - Ու ժողովուրդը բանակը դարձաւ. և Իսրայէլի ծերերը ըսին, Ինչո՞ւ համար Տէրը Փղըշտացուց առջև կոտորեց մեզ այսօր. Տէրոջը ուխտին տապանակը Սելովէ մեր քով առնենք, ու մեր մէջ գտնուի, ու մեզ ազատէ մեր թշնամիներուն ձեռքէն: 4 - Ուստի ժողովուրդը *բարի զրկեց դէպ ի Սելով, և քերովբէներուն վրայ նատող զօրութեանց Տէրոջը ուխտին տապանակը անկէ վերցուցին. ու շեղի երկու որդիները, Ոփնի ու Փենէհէս, հոն Աստուծոյ ուխտին տապանակին հետ յին: 5 - Ու երբ Տէրոջը ուխտին տապանակը բանակին մէջ մտաւ, բոլոր Իսրայէլ մեծ ձայնով մը աղաղակեց,

*Կամ, հաւատարիմ

ու գետինը ձայն տուաւ: 6 - Եւ Փղըշտացիք այն աղաղակի ձայնը լսելով ըսին, Եբրայեցուց բանակին մէջ այս բարձրաձայն աղաղակը ի՞նչ պիտի ըլլայ. ու իմացան որ Տէրոջը տապանակը բանակը եկեր է: 7 - Եւ Փղըշտացիք վախցան, քանզի ըսին, Աստուած բանակին մէջ եկաւ. ու նաև ըսին, Վա՛յ մեզի, քանզի մինչև հիմա այսպիսի բան եղած չէ. 8 - Վա՛յ մեզի, այս զօրաւոր Աստուածներուն ձեռքէն ո՞վ մեզ պիտի ազատէ. ասոնք այն Աստուածներն են, որ Եգիպտոսը ամէն հարուածներով զարկին անապատին մէջ: 9 - Ու ժողովքը ու կարիճ եղէք, ով Փղըշտացիք, ըլլայ որ Եբրայեցուց ծառայ ըլլաք, ինչպէս անոնք ձեզի ծառայ եղան. ուստի կարիճ եղէք և անոնց հետ պատերազմեցէք: 10 - Ու երբ Փղըշտացիք պատերազմեցան, Իսրայէլ յաղթուեցաւ և ամէն մարդ իր վրանը փախաւ, ու շատ մեծ կոտորած եղաւ, և Իսրայէլէ երեսուն հազար հետեւակ զօրք ինկաւ. 11 - Նաև Աստուծոյ տապանակը առնուեցաւ. և շեղի երկու որդիները, Ոփնի ու Փենէհէս, մեռան:

12 - Եւ Բենիամինեան մարդ մը բանակէն վազելով՝ նոյն օրը Սելով հասաւ, ու իր լաթերը պատուեր էր, և իր գլխուն վրայ հող քրէր էր: 13 - Ու երբ հոն հասաւ, ահա շեղի աթոռով մը ճամբուն վրայ նստած կը սպասէր, քանզի Աստուծոյ տապանակին համար սիրտը կը դողար: Ու երբ այն մարդը քաղաքը մտնելով այս բանը պատմեց, բոլոր քաղաքը աղաղակեց: 14 - Եւ շեղի այն աղաղակին ձայնը լսելով ըսաւ, Այս աղմուկին ձայնը ի՞նչ պիտի ըլլայ: Ու այն մարդը շուտով վազեց եկաւ, ու ելա՞ծ Բանբը շեղի պատմեց: 15 - Եւ շեղի իննսունութ տարեկան էր, ու աչքերը այնպէս *տկարացած էին, որ չէր կրնար տեսնել: 16 - Եւ այն մարդը շեղիի ըսաւ, Զօրքին մէջէն եկողը ես եմ, և պատերազմէն այսօր փախայ. ու անհկա ըսաւ, Որդեակ, ի՞նչ եղաւ: 17 - Եւ լուր բերողը պատասխան տուաւ ու ըսաւ, Իսրայէլ Փղըշտացուց առջևէն փախաւ, ու ժողովուրդին մէջ մեծ կոտորած եղաւ, և քու երկու որդի-

*Եբր. կեցած

ներդ , Ոփնի ու Փենէճէս , մեռան , ու Աստուծոյ տապանակը առնուեցաւ : 18 - Ու երբ անիկա Աստուծոյ տապանակը յիշեց , Հեղի աթուէն կռնակի վրայ ինկաւ դրանը քով , և *վիզին սակորը կտարեցաւ ու մեռաւ , քանզի ծեր ու ծանրացած մարդ մըն էր . և անիկա Իսրայէլի մէջ քառասուն տարի դատաւորութիւն ըրած էր :

19 - Ու անոր հարսը , Փենէճէսի կինը , յղի ու ծնանելու մօտ ըլլալով , երբ Աստուծոյ տապանակին առնուելուն և իր կեսրայրին ու էրկանը մեռնելուն լուրը լսեց , ծունկ ծռելով ծնաւ , քանզի ցուերը անոր վրայ կոխեցին : 20 - Ու երբ կը մեռնէր , քովը կայնող կիները անոր ըսին , Մի վախ՛նար , վասն զի քու ծնածդ տղայ է . բայց անիկա պատասխան չտուաւ և ուշադրութիւն չըրաւ : 21 - Եւ աղուն անունը Իքարօդ կոչեց , ըսելով , Իսրայէլէ փառքը վերցաւ . (քանզի Աստուծոյ տապանակը առնուեցաւ , և անոր կեսրայրը ու այրը մեռան .) 22 - Անոր համար ըսաւ , Աստուծոյ տապանակին առնուելուն համար Իսրայէլէ փառքը վերցաւ :

ԳԼ Ե

Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակը առին , ու զանիկա Աբենեզերէ †Ազովտոս տարին : 2 - Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակը առին , ու զանիկա Իագոնի տունը տարին , և Իագոնի քով դրին : 3 - Ու հեռեւեալ օրը Ազովտացիք առաւօտուն կանուխ ելլելով , տեսան որ Իագոն Տէրօջը տապանակին առջև երեսի վրայ գետինը ինկեր էր . ու անոնք Իագոնը վերցուցին իր տեղը դրին : 4 - Եւ հեռեւեալ օրը Գաբիէլ առաւօտուն կանուխ ելան , ու տեսան որ Իագոն Տէրօջը տապանակին առջև երեսի վրայ գետինը ինկեր էր , և Իագոնի գլուխը ու ձեռքերուն երկու թաթերը կտարած՝ «- սեմին վրայ ինչա՞ էր , և միայն †Իագոնի մարմինը՝ մնացեր էր : 5 - (Այս պատճառաւ Իագոնի քուրմերը

ու Իագոնի տունը բոլոր մտնողները մինչև այսօր Ազովտոս եղող Իագոնի սեմին վրայ չեն կոխեր :) 6 - Անկէ ետև Տէրօջը ձեռքը Ազովտացուց վրայ ծանրացաւ , ու զանոնք կորսնցուց , և զանոնք Ազովտոսի ու անոր սահմաններուն մէջ թանչքի ուռեցքներով զարկաւ :

7 - Եւ Ազովտոսի բնակիչները այսպէս ըլլալը տեսնելով՝ ըսին , Իսրայէլի Աստուծոյն տապանակը մեր քով չկենայ . քանզի անոր ձեռքը մեր վրայ ու մեր աստուծոյն Իագոնի վրայ ծանրացաւ : 8 - Եւ Բաբելոնացիք , ու Փղշտացուց բոլոր նախարարները իրենց քով ժողվեցին , ու ըսին , Իսրայէլի Աստուծոյն տապանակը ի՞նչ ընենք , ու ըսին , Իսրայէլի Աստուծոյն տապանակը Գէթֆոխադրուի : Ու Իսրայէլի Աստուծոյն տապանակը Գէթֆոխադրեցին : 9 - Եւ զանիկա հին փոխադրելէ ետքը , Տէրօջը ձեռքը այն քաղաքին վրայ ըլլալով՝ մեծ խռովութիւն եղաւ . ու քաղաքին մարդիկը պզտիկէն մինչև մեծը զարկաւ . և անոնց վրայ թանչքի ուռեցքներ երեւցան :

10 - Եւ Աստուծոյ տապանակը Ակկարոն զրկեցին . ու երբ Աստուծոյ տապանակը Ակկարոն մտաւ , Ակկարոնացիք կանչուըւտելով ըսին , Իսրայէլի Աստուծոյն տապանակը մեզի բերին՝ որպէս զի մեզ ու մեր ժողովուրդը մեռցրնեն : 11 - Եւ Բաբելոնացիք , ու ըսին , Իսրայէլի Աստուծոյն տապանակը թող տուէք երթայ և իր տեղը դառնայ , որպէս զի մեզ ու մեր ժողովուրդը չմեռցնէ . քանզի բոլոր քաղաքին մէջ մահաւիթ տակում մը կար , «- հոն Աստուծոյ ձեռքը խիստ ծանրացեր էր : 12 - Եւ չմեռած մարդիկը թանչքի ուռեցքներով զարնուեցան , ու քաղաքին աղաղակը երկինք ելաւ :

ԳԼ Զ

Եւ Տէրօջը տապանակը Փղշտացուց երկրին մէջ եօթը ամիս մնաց : 2 - Ու Փղշտացիք երեւոյ քուրմերը ու բախտ նայողները կանչեցին ու ըսին , Եհսպայի տապանակին ի՞նչ ընենք . մեզի իմացուցէք թէ զանիկա ինչո՞վ իր տեղը զրկենք : 3 - Անոնք ալ ըսին , Եթէ Իսրայէլի Աստուծոյն տապանակը զրկէք ,

*Կա՛մ , կռնակին
†Այսինքն , անպատիւ
‡Որ է Ասեղովթ
||Կա՛մ , ձուկը . Եբբ . Իագոն

զանհկա պարապ չզրկէք, հապա անպատճառ յանցանքի պատարագ տուէք անոր. այն տատն կը բժշկուիք, ու ձեզի յայտնի կ'ըլլայ թէ ինչո՛ւ համար անոր ձեռքը ձեր վրայէն չերթար: 4 - Եւ անոնք ըսին, Անոր ի՞նչ տեսակ պատարագ մատուցանենք: Ու անոնք ըսին, Փղշտացւոց նախարարներուն թիւովը հինգ սակեղէն թանչքի ու ուեցքներ ու հինգ սակի մուկ ընչո՞ւր քանզի ձեր ամէնուն վրայ և ձեր նախարարներուն վրայ միեւնոյն հարուածը եղաւ: 5 - Եւ հիմա ձեր թանչքի ու ուեցքներուն պատկերները, ու ձեր երկիրը աւերող մուկերուն պատկերները շինեցէք, ու Իսրայէլի Աստուծոյն փառք տուէք. կարելի է որ իր ձեռքը ձեր վրայէն, ձեր աստուածներուն վրայէն ու ձեր երկիրն վրայէն *վերցնէ: 6 - Եւ ինչո՞ւ համար ձեր սիրտերը կը խտացնէք, ինչպէս Եգիպտացիք ու Փարաւոն իրենց սիրտերը խտացուցին. չէ՞ որ Աստուծոյն անոնց մէջ հրաշալի գործեր ընելէն ետքը՝ զանոնք թող տուին որպէս զի երթան: 7 - Հիմա նոր սայլ մը շինեցէք, ու երկու հաս կաթնաու երինջ տուէք, որոնց վրայ բնաւ լուծ դրուած չըլլայ. ու երինջները սայլին լծեցէք, և անոնց ձագերը անոնց ետեւէն տուն դարձուցէք: 8 - Ու Եհովայի տապանակը աւուէք, և զանհկա սայլին վրայ դրէք, ու այն սակեղէն †պատկերները զորոնք գուք յանցանքի համար անոր ընծայ պիտի տաք, պզտիկ արկղով մը անոր մէկ կողմը դրէք, ու զանհկա զրկեցէք որպէս զի երթայ: 9 - Եւ նայեցէք, եթէ իր սահմանին ճամբովը Բեթսամիւս ելլէ, այս մեծ չարիքը մեզի ընողը անհկա է. ապա թէ ոչ՝ գիտնանք որ անոր ձեռքը բռնուած մեզի դպած չէ, հապա այս բանը գիպուածով պատահեր է մեզի:

10 - Եւ այն մարդիկը այսպէս ըրին. երկու հաս կաթնաու երինջ տուին, ու զանոնք սայլին լծեցին, և անոնց ձագերը տան մէջ գոցեցին: 11 - Ու Տէրոջը տապանակը, և սակի մուկերուն ու իրենց թանչքի ու ուեցքներու պատկերներուն պզտիկ արկղը սայլին վրայ դրին: 12 - Ու երինջները շիտակ Բեթսամիւսի ճամբան բռնեցին, ու

մեծ ճամբայէն բառաչելով կ'երթային, և աջ կամ՝ ձախ կողմը չխոտորեցան. ու Փղշտացւոց նախարարները մինչև Բեթսամիւսի սահմանը անոնց ետեւէն գացին: 13 - Եւ Բեթսամիւսացիք հովիտին մէջ ցորենի հունձք կը հնձէին, ու իրենց աչքերը վերցնելով տապանակը տեսան, ու տեսնելուն համար ուրախացան: 14 - Եւ սայլը Բեթսամիւսացի Յեսուի արար մտաւ ու հոն կայնեցաւ, ուր մեծ քար մը կար. ու սայլին փայտերը ճեղքեցին, և այն երինջները Տէրոջը ողջակէզ մատուցին: 15 - Ու Ղեւտացիք Տէրոջը տապանակը և անոր հետ եղող սակի պատկերներուն պզտիկ արկղը վար իջեցուցին, ու այն մեծ քարին վրայ դրին. և այն օրը Բեթսամիւսի մարդիկը Տէրոջը ողջակէզներ ու զոհեր մատուցին: 16 - Ու Փղշտացւոց հինգ նախարարները այս բաները տեսնելէ ետքը՝ նոյն օրը Ակկարոն դարձան: 17 - Եւ այն սակեղէն թանչքի ու ուեցքները, զորոնք Փղշտացիք յանցանքի համար Տէրոջը ընծայ տուին, տանք էին. Մէկ հաս Ազովասի համար, մէկ հաս Գազայի համար, մէկ հաս Ասկաղոնի համար, մէկ հաս Գէթի համար ու մէկ հաս Ակկարոնի համար: 18 - Եւ սակի մուկերը Փղշտացւոց հինգ նախարարութիւններուն բոլոր քաղաքներուն թիւովը էին, պարսպաւոր քաղաքէն մինչև անպարիսպ գեղը, ու մինչև այն մեծ քարը՝ որուն վրայ Տէրոջը տապանակը դրուեցաւ. ու մինչև այսօր այն բեթսամիւսացի Յեսուի արարն մէջ է ինչո՞ւ:

19 - Եւ Տէրը Բեթսամիւսի մարդիկը զարկաւ, քանզի անոնք Տէրոջը տապանակին մէջ նայեցան. ու ժողովուրդէն յիսուն հազար եօթանասուն մարդ զարկաւ. և Տէրը ժողովուրդին մէջ կոտորած ընելուն համար ժողովուրդը սուգ բռնեց: 20 - Ու Բեթսամիւսի մարդիկը ըսին, Այս սուրը Տէր Աստուծոյն առջև ո՞վ կրնայ կայնիլ. ու մեր քովէն որո՞ւ ելլէ: 21 - Եւ կարիաթարիմի բնակիչներուն պատգամաւորներ զրկեցին՝ ըսելով, Փղշտացիք Տէրոջը տապանակը ետ բերին. իջէք ու զանհկա ձեր քով հանեցէք:

* Եբր. թեթեւցնէ
† Եբր. անօթները

ԳԼ. Է

Եւ կարիաթարիմի մարդիկը գացին, ու Տէրոջը տապանակը առնէ հանեցին, և զանիկա տարին Աբինադարի տունը որ բլուրին վրայ էր. ու անոր որդին Եզրազարը *որոշեցին որպէս զի Տէրոջը տապանակին պահպանութիւնը ընէ: 2 - Եւ տապանակը կարիաթարիմի մէջ դրուած օրէն ետքը շատ օրեր անցան, ու քսան տարի եղաւ և Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը ետեւէն հառաչեցին:

3 - Այն ատեն Սամուէլ Իսրայէլի բոլոր տանը խօսեցաւ՝ ըսելով, Եթէ դուք ձեր բոլոր սրտովը Տէրոջը դարձեր էք, ձեր մէջէն օտար աստուածները ու Աստարովթը վերցուցէք, և ձեր սիրտերը Տէրոջը պատրաստեցէք, ու միայն զանիկա պաշտեցէք. ու անիկա Փղշտացուց ձեռքէն ձեզ պիտի ազատէ: 4 - Եւ Իսրայէլի որդիները Բահազիմը ու Աստարովթը վերցուցին, ու միայն Տէրոջը ծառայութիւն ըրին:

5 - Եւ Սամուէլ ըսաւ, Բոլոր Իսրայէլը Մասփայի մէջ ժողվեցէք, ու ձեզի համար Տէրոջը աղօթք ընեմ:

6 - Եւ Մասփայի մէջ ժողվուեցան, ու ջուր քաշեցին և Տէրոջը առջև թափեցին. ու այն օրը ծով բռնեցին, և հոն ըսին, Տէրոջը դէմ մեզք գործեցինք: Եւ Սամուէլ Մասփայի մէջ Իսրայէլի որդիներուն դատաւորութիւն ըրաւ:

7 - Ու երբ Փղշտացիք լսեցին որ Իսրայէլի որդիները Մասփայի մէջ ժողվուեցան, Փղշտացուց նախարարները Իսրայէլի դէմ ելան. ու Իսրայէլի որդիները զայն լսելով Փղշտացուց երեսէն վախցան: 8 - Եւ Իսրայէլի որդիները Սամուէլի ըսին, Անդադար մեր Տէր Աստուծոյն աղաղակէ մեզի համար, որպէս զի մեզ Փղշտացուց ձեռքէն ազատէ: 9 - Ու Սամուէլ կաթնկեր գառնուկ մը առաւ, ու զանիկա բոլորովին ողջակէզ ըրաւ Տէրոջը. և Սամուէլ Իսրայէլի համար Տէրոջը աղաղակելով «ըթ + բ» ու Տէրը անոր պատասխան տուաւ:

10 - Ու երբ Սամուէլ ողջակէզը կը մատուցանէր, Փղշտացիք մտաեցան որպէս զի Իսրայէլի դէմ պատերազմ

ընեն. և Տէրը նոյն օրը Փղշտացուց վրայ մեծ ձայնով մը սրտաց, ու զանոնք խռովեցուց. ու Իսրայէլի առջև զարնուեցան: 11 - Եւ Իսրայէլի մարդիկը Մասփայէ ելլելով Փղշտացիները հալածեցին, ու մինչև Բեթքովրի տակ զանոնք կտարեցին: 12 - Այն ատեն Սամուէլ քար մը առաւ, և Մասփայի ու Սենի մէջտեղ կանգնեց, ու անոր անունը *Աբենեզեր կոչեց, ըսելով, Տէրը մինչև այս տեղ մեզի օգնեց: 13 - Եւ Փղշտացիք կորագլուխ եղան, ու մէյմըն ալ Իսրայէլի սահմանին մէջ չմտան. և Սամուէլի բոլոր օրերը Տէրոջը ձեռքը Փղշտացուց վրայ էր: 14 - Ու Փղշտացիք Իսրայէլէ սրչափ քաղաքներ որ առեր էին, Ակկարոնէ մինչև Գէթ, Բալաբն ու Իսրայէլի ետարուեցան ու Իսրայէլ անոնց սահմանները Փղշտացուց ձեռքէն ազատեց. և Իսրայէլի ու Ամօրհացուց մէջտեղ խաղաղութիւն կար:

15 - Եւ Սամուէլ իր կեանքին բոլոր օրերուն մէջ Իսրայէլը դատեց: 16 - Ու տարուէ տարի Բեթէլ, Գազաղաւ ու Մասփա կ'երթար կը պարտէր, և բոլոր այն տեղերը Իսրայէլը կը դատէր: 17 - Ու առնալ Ռամա կը դառնար, քանզի իր տունը հոն էր. և հոն կը դատէր Իսրայէլը, ու հոն Տէրոջը սեղան շինեց:

ԳԼ. Ը

Ու երբ Սամուէլ ծերացաւ, իր որդիները Իսրայէլի վրայ դատաւոր դրաւ: 2 - Եւ իր անդրանիկ որդւոյն անունը Յովէլ, ու երկրորդին անունը Աբիա էր, «- Բերաբէէի մէջ դատաւորութիւն կ'ընէին: 3 - Եւ անոր որդիները անոր ճամբաներուն մէջ չքալեցին, հապա ազահութեան ետեւէ իյնալով կաշառք կ'առնէին, և իրաւունքը կը ծռէին:

4 - Ու Իսրայէլի ամէն ծերերը ժողվուեցան, ու Ռամա Սամուէլի գացին, 5 - Եւ անոր ըսին, Ահա դուն ծերացեր ես, ու քու որդիներդ քու ճամբաներուդ մէջ չեն քալեր. «-» Գիմար մեր վրայ թագաւոր մը դիր, որպէս զի ամէն ազգերուն պէս մեզ + կառավարէ:

*Այսինքն, օգնութեան քար + Եբր. դատէ

*Եբր. սրբեցին

6 - Ու այս բանը Սամուէլի առջև գէշ երեւցաւ , որ ըսին թէ Մեզի թագաւոր մը տուր , որպէս զի մեզ կառավարէ . ու Սամուէլ Տէրոջը աղօթք բրաւ : 7 - Եւ Տէրը Սամուէլի ըսաւ , Ժողովուրդին խօսքը ու անոնց քեզի տմէն բտածը մտիկ ըրէ . քանզի անոնք քեզ չեն մերժեր , այլ զիս կը մերժեն , որպէս զի անոնց վրայ չթագաւորեմ : 8 - Զանոնք Եգիպտոսէ հանած օրէս մինչև այսօր ինչ որ ըրին , զիս թող տալով և ուրիշ աստուածներու ծառայութիւն ընելով , նոյնը քեզի ալ կ'ընեն : 9 - Ու հիմա դուն անոնց խօսքը մտիկ ըրէ . բայց անոնց յայտնի զկայութիւն ընես , ու անոնց վրայ իշխելու թագաւորին վարմունքը անոնց իմացնես :

10 - Եւ Սամուէլ Տէրոջը բոլոր խօսքերը իրմէ թագաւոր ուզող ժողովուրդին գրուցեց . 11 - Ու ըսաւ , Զեր վրայ իշխելու թագաւորին վարմունքը ասիկա պիտի ըլլայ . ձեր աղաքը պիտի առնէ , ու զանոնք իրեն համար իր կառքերուն ու ձիերուն վրայ պիտի դնէ . և իր կառքերուն տառնէն պիտի վազեն . 12 - Ու իրեն հազարապետներ ու յիսնապետներ պիտի ընէ , և իր արտերը պիտի հերկեն , ու հունձքերը հնձեն , և իր պատերազմական զէնքերը ու կառքերուն գործիքները շինեն : 13 - Եւ ձեր աղջիկները պիտի առնէ , որպէս զի իւղագործ , խոհարար ու հացեփեաց ըլլան : 14 - Եւ ձեր ընտիր արտերը , այգիները ու ձիթենիները առնելով իր ծառաներուն պիտի տայ : 15 - Եւ ձեր հունտերուն ու ձեր սպիտակներուն տասանորդը պիտի առնէ , ու զանիկա իր ներքինիներուն ու ծառաներուն պիտի տայ : 16 - Եւ ձեր ծառաները ու աղախիները , ու ձեր ամէնէն ազնիւ կարիճները , և ձեր էշերը պիտի առնէ ու իր ծառայութեանը գործածէ : 17 - Զեր հօտերուն տասանորդը պիտի առնէ , ու դուք անոր ծառաներ պիտի ըլլաք : 18 - Այն օրը դուք ձեր ընտրած թագաւորին պատճառաւ պիտի աղաղակէք , բայց Տէրը տոյն օրը ձեզի պատասխան պիտի չտայ :

19 - Սակայն ժողովուրդը Սամուէլի խօսքը մտիկ ընել չուզելով ըսին , Այ , անպատճառ մեր վրայ թագաւոր մը ըլլայ . 20 - Ու մենք ալ բոլոր ազգե-

րուն պէս ըլլանք , և մեր թագաւորը մեզ կառավարէ . անիկա մեր առջեւէն ելլէ , ու մեր *պատերազմներուն մէջ առաջնորդութիւն ընէ" : 21 - Եւ Սամուէլ ժողովուրդին բոլոր խօսքերը լսեց , ու զանոնք Տէրոջը ականջներուն գրուցեց : 22 - Եւ Տէրը Սամուէլի ըսաւ , Անոնց խօսքը մտիկ ըրէ , ու անոնց վրայ թագաւոր մը դիր : Այն ատեն Սամուէլ Իսրայէլի մարդոցն ըսաւ , Թող ամէն մարդ իր քաղաքը երթայ :

ԳԼ . Թ

Ու Բենիամինի արքայէն Աիս անունով զօրաւոր մարդ մը կար . ու անիկա Բենիամինեան Ափիայի որդւոյն Բեքավրաթի որդւոյն Սերօրի որդւոյն Արիէլի որդին էր : 2 - Եւ անիկա որդի մը ունէր , որուն անունը Սաւուղ էր . անիկա կարիճ ու գեղեցիկ էր , ու Իսրայէլի որդիներուն մէջ անկէ գեղեցիկ մարդ չկար . բոլոր ժողովուրդէն ուսէն վեր երկայն էր :

3 - Եւ Սաւուղի հօրը Աիսի էշերը կորսուեցան . ու Աիս իր որդւոյն Սաւուղի ըսաւ , Մանչերէն մէկը քեզի հետ առ , ու ելիր գնա էշերը փնտռէ :

4 - Ան ալ Եփրեմի լեռնէն անցաւ , և Սաղիսա երկրէն ալ անցնելով զանոնք չգտան . ետքը Սաղիմի երկրէն անցան , ու հոն ալ չէին . անկէ Բենիամինեանց երկիրը անցնելով հոն ալ զանոնք չգտան :

5 - Ու երբ անոնք Վուփի երկիրը եկան , Սաւուղ իրեն հետ եղող մանչուն ըսաւ , Եկուր ետ դառնանք , չըլլայ որ իմ հայրս էշերուն հոգի թողու ու մեզի համար հագայ :

6 - Բայց անիկա անոր ըսաւ , Ահա այս քաղաքին մէջ Ասաուծոյ մարդը կայ , ու անիկա պատուաւոր մարդ մըն է , անոր ամէն ըսածը անշուշտ կը կատարուի . հիմա հոն երթանք , թերեւս մեր երթալու ճամբան մեզի իմացնէ :

7 - Եւ Սաւուղ իր մանչուն ըսաւ , Բայց եթէ երթալու ըլլանք , այն մարդուն ի՞նչ տանինք . քանզի մեր ամաններէն հացը պակսեցաւ , ու Ասաուծոյ մարդուն տանելու ընծայ մը չունինք . մեր քով ի՞նչ ունինք :

8 - Եւ մանչը նորէն Սաւուղի

*Եբր. պատերազմները պատերազմի + կա՛մ , Սօփիմի . տես ԳԼ . Ա . 4 :

պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա իմ քովս մէկ սիկզին չորրորդ մասը արծաթ կայ . զանիկա Աստուծոյ մարդուն կու տամ, որպէս զի մեր ճամբան մեզի իմացնէ : 9 - (Առաջ Իսրայէլի մէջ մարդ մը երբ Աստուծոյ հարցընելու կ'երթար, այսպէս կ'ըսէր, Եկուր տեսանողին երթանք . քանզի այսօր մարգարէ ըստ առաջ տեսանող կ'ըսուէր :) 10 - Եւ Սաւուղ իր մանչուն ըսաւ, Աղէկ ըսիր, եկուր երթանք, ու Աստուծոյ մարդուն բնակած քաղաքը գացին : 11 - Ու երբ անոնք զառ ի վերէն դէպ ի քաղաքը կ'ելլէին, քանի մը աղջիկներ գտան, որոնք ջուր հանելու ելեր էին, ու անոնց ըսին, Տեսանողը հոս է . 12 - Եւ աղջիկները անոնց պատասխան տուին ու ըսին, Հոս է, ահա քու առջեւդ է . հիմա շուտըրէ, քանզի ժողովուրդին այսօր բարձր տեղին վրայ զոհ ընելուն համար, անիկա այսօր քաղաքը եկաւ . 13 - Քաղաքը մտնելուդ պէս զանիկա հոն կը գտնէք, քանի որ անիկա բարձր տեղը ելած չէ կերակուր ուտելու համար . քանզի մինչև անոց գալը ժողովուրդը կերակուր չուտեր, որովհետև անիկա կ'օրհնէ զոհը, ու անկէ ետքը հրաւիրուածները կ'ուտեն . հիմա ելէք, քանզի հիմա կը գտնէք զանիկա : 14 - Եւ անոնք քաղաքը ելան . ու երբ անոնք քաղաքին մէջ կը մտնէին, ահա Սամուէլ բարձր տեղը երթալով անոնց դէմը ելաւ :

15 - Եւ Սաւուղի գալէն օր մը առաջ Տէրը Սամուէլի յայտներ էր, ու ըսեր էր թէ 16 - Վաղը այս առեւն Բենիամինի երկրէն քեզի մարդ մը պիտի զրկեմ, և զանիկա իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան օծես, որպէս զի անիկա իմ ժողովուրդս Փղշաացուց ձեռքէն ազատէ . քանզի ժողովուրդիս նեղութեանը նայեցայ, որովհետև անոր ազազակը ինծի հասաւ : 17 - Ու երբ Սամուէլ Սաւուղը տեսաւ, Տէրը անոր ըսաւ, Ահա այս է քեզի ըսած մարդս . սանկա իմ ժողովուրդիս վրայ պիտի իշխէ : 18 - Եւ Սաւուղ դրանը մէջտեղ Սամուէլի մօտեցաւ, ու ըսաւ, Տեսանողին տունը ո՞ր է, կ'ազաչեմ, ինծի ցուցուր : 19 - Եւ Սամուէլ պատասխան տուաւ Սաւուղի ու ըսաւ, Տեսանողը ես եմ . իմ առջեւէս բարձր տեղը ելիր, քանզի այսօր ինծի հետ

կերակուր պիտի ուտէք . և վաղը քեզ կը զրկեմ, ու բոլոր սրտիդ մէջ եղածը քեզի կը պատմեմ : 20 - Եւ քու երեք օրուրնէ ի վեր կորսուած էշերուդ համար մի հոգար, քանզի անոնք գանուած են . ու Իսրայէլի բոլոր *փափաքը որո՞ւն է . քեզի ու քու հօրդ բոլոր տանը չէ՞ : 21 - Եւ Սաւուղ պատասխան տուաւ ու ըսաւ, Ես Իսրայէլի ցեղերուն ամէնէն պզտիկէն Բենիամինեան չե՞մ, ու իմ ազգատոհմս Բենիամինի ցեղին բոլոր ազգատոհմերուն պզտիկը չէ՞ . ուստի ինչո՞ւ համար ինծի այդպիսի խօսք զրուցեցիր : 22 - Եւ Սամուէլ առաւ Սաւուղը ու անոր մանչը, ու զանոնք Իերախի սարաւ, և զանոնք կոչնականներուն գլուխը նստեցուց, որոնք երեսուն մարդու չափ էին : 23 - Ու Սամուէլ խոհարարին ըսաւ, Բեր այն բաժինը զոր քեզի տուի, ու քեզի պատուիրեցի որ զանիկա քովդ պահես : 24 - Եւ խոհարարը ազդրը վրայի մակը վերցնելով, զանիկա Սաւուղի առջև դրաւ : Եւ Սամուէլ ըսաւ, Ահաւասիկ մնացածը, զանիկա առջեւդ դիր ու կեր . քանզի երբ ըսի որ ժողովուրդը †հրաւիրեր եմ, այն վայրկեանէն ի վեր անիկա քեզի համար պահուած է . ու այն օրը Սաւուղ Սամուէլի հետ կերաւ :

25 - Եւ բարձր տեղէն քաղաքը Իջան, ու Սամուէլ էր քանի տանիքին վրայ Սաւուղի հետ խօսեցաւ : 26 - Եւ առաւօտուն կանուխ ելան, ու լուսցածին պէս Սամուէլ Սաւուղը տանիքը կանչեց ու ըսաւ, Ելիր ու քեզ պիտի զրկեմ : Եւ Սաւուղ ելաւ, ու ինք և Սամուէլ մէկտեղ դուրս ելան : 27 - Երբ անոնք քաղաքին ծայրը կ'իջնէին, Սամուէլ ըսաւ Սաւուղի, Մանչուն ըսէ որ մեր առջև անցնի . (և անիկա անցաւ .) ու հիմա դուն հոս կեցիր, որպէս զի Աստուծոյ պատգամը քեզի իմացնեմ :

ԳԼ Ժ

Եւ Սամուէլ իւրին շիշը առաւ, ու անոր գլխուն վրայ թափեց, և զանիկա համբուրեց ու ըսաւ, Զէ՞ որ Տէրը քեզ իր ժառանգութեանը վրայ իշխան օ-

*Կամ, վայելչութիւնը
†Կամ, հրաւիրեմ

Ժեց: 2 - Այսօր ինձմէ գացած ատենդ Բենիամինի սահմանը Սելասհի մէջ՝ Ռաբէլի գերեզմանին քով երկու մարդ պիտի գանես, ու քեզի պիտի ըսեն, Գանուեցան այն էշերը զորոնք փրնաուելու գացած էիր. և ահա քու հայրդ էշերուն հօգը թողուց, ու ձեզի համար կը հոգայ, ու կ'ըսէ, Տղուս համար ի՞նչ ընեմ: 3 - Ու երբ անկէ անդին երթաս և Թաբօրի կաղնին հասնիս, հոն երեք մարդ քեզի պիտի հանդիպին, որոնց մէկը երեք ուլ, մէկը երեք հացի նկանակ ու մէկն ալ տիկ մը գինի տանելով՝ Աստուծոյ կ'ելլեն դէպ ի Բեթէլ: 4 - Ու քու սղջութիւնդ հարցնելով՝ քեզի երկու հաց պիտի տան, դուն ալ անոնց ձեռքէն պիտի առնես: 5 - Անկէ ետքը Աստուծոյ բլուրը պիտի երթաս, ուր Փղշտացուց բերգապահ զօրքը էջ ինչ, ու երբ հոն քաղաքը մանես, բարձր տեղէն իջնող մարգարէներու գունդի մը պիտի հանդիպիս, որոնք իրենց առջեւէն տաւիղ, թմբուկ, սրինգ ու քնար ունենալով մարգարէութիւն պիտի ընեն: 6 - Եւ քու վրագ Տէրոջը Հոգին պիտի գայ, ու անոնց հետ մարգարէութիւն պիտի ընես. և դուն պիտի փոխուիս, ուրիշ մարդ մը պիտի ըլլաս: 7 - Ու երբ այս նշանները քու վրագ գան, ձեռքէդ եկածը ընես, քանզի Աստուած քեզի հետ է: 8 - Եւ ինձմէ առաջ Գաղգադա իջնես. և ահա ես քեզի պիտի իջնեմ՝ սղջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցանելու համար. և դուն եօթը օր սպասես, մինչև որ ես քեզի գամ, ու քու ընելու գործդ քեզի իմացնեմ:

9 - Ու երբ անհկա իր կռնակը դարձուց՝ Սամուէլի քովէն երթալու համար, Աստուած անոր ուրիշ սիրտ մը տուաւ. և նոյն օրը այս բոլոր նշանները կատարուեցան: 10 - Ու երբ հոն բլուրը եկան, ահա մարգարէից գունդ մը անոր առջև ելաւ. և անոր վրայ Աստուծոյ Հոգին եկաւ, ու անոնց մէջ մարգարէութիւն ըրաւ: 11 - Եւ ամէն անոնք որ զանհկա առաջուրէ կը ճանչնային, երբ տեսան որ անհկա մարգարէներուն հետ մարգարէութիւն կ'ընէ, ժողովուրդը իրարու ըսին, Այս ի՞նչ բան է որ Կիսի որդւոյն հանդիպեր է. միթէ Սաւուղ ալ մարգարէներուն մէջ է: 12 - Եւ այն տեղի մարգարցմէ մէկը պատասխան տուաւ ու

ըսաւ, Հապա անոնց հայրը ո՞վ է: Անոր համար տիկա առակ մը եղաւ, Միթէ Սաւուղ ալ մարգարէներուն մէջ է: 13 - Ու երբ մարգարէութիւն ընելը լծնուց, բարձր տեղը եկաւ:

14 - Եւ Սաւուղի հօրեղբայրը անոր ու անոր մանչուն ըսաւ, Ո՞ւր գացիք: Ու անհկա ըսաւ, Էշերը փնտաւելու. բայց երբ տեսանք որ չկան, Սամուէլի գացինք: 15 - Եւ Սաւուղի հօրեղբայրը ըսաւ, Սամուէլ ձեզի ի՞նչ գրուցեց, պատմէ ինձի: 16 - Ու Սաւուղ էր հօրեղբօրը ըսաւ, Էշերուն զանուիրը մեզի յայանապէս իմացուց: Բայց թաթազաւորութեան վրայով Սամուէլի ըսած խօսքը անոր չյայտնեց:

17 - Եւ Սամուէլ ժողովուրդը Մասփայի մէջ Տէրոջը առջև ժողովեց: 18 - Ու Իսրայէլի որդիներուն ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Ես Իսրայէլը Եգիպտոսէ հանեցի, ու ձեզ Եգիպտացուց ձեռքէն և ձեզի նեղութիւն տուող բոլոր թագաւորներուն ձեռքէն ազատեցի: 19 - Ու դուք այսօր ձեր Աստուածը մերժեցիք, որ ձեր ամէն չարիքներէն ու նեղութիւններէն ձեզ ազատեց, ու անոր ըսիք, Անպատճառ մեր վրայ թագաւոր մը դիր: Ուրեմն հիմա ձեր ցեղերովը ու հազարաւորներովը Տէրոջը առջև կայնեցէք: 20 - Ու երբ Սամուէլ Իսրայէլի ամէն ցեղերը մօտեցուց, վիճակը Բենիամինի ցեղին ելաւ: 21 - Ետքը Բենիամինի ցեղը ազգատոհմներովը մօտեցուց, ու վիճակը Մասփի ազգատոհմին ելաւ. ետքը Կիսի որդւոյն Սաւուղի ելաւ: Բայց երբ զանհկա փրնաուեցին, անհկա չգանուեցաւ: 22 - Եւ նորէն Տէրոջը հարցուցին, Թէ Արգեօք այն մարդը հոս կու գո՞յ. ու Տէրը ըսաւ, Ահա անհկա կարասներուն մէջ տեղը պահուած է: 23 - Եւ վաղելով՝ զանհկա անկէ առին, ու ժողովուրդին մէջտեղը կայնեցաւ. և բոլոր ժողովուրդէն՝ ուսէն վեր երկայն էր: 24 - Ու Սամուէլ բոլոր ժողովուրդին ըսաւ, Տէրոջը ընտրած մարդը տեսա՞ք, որ բոլոր ժողովուրդին մէջ անոր պէս չկայ. և բոլոր ժողովուրդը ազազակեց ու ըսաւ, Կեցցէ՛ արքայ: 25 - Եւ Սամուէլ թագաւորութեան կանոնները ժողովուրդին գրուցեց, ու շնորհ գիրքի

*Եբր. թագաւորութիւններուն

մը մէջ գրեց, ու Տէրոջը առջև գրաւ .
և Սամուէլ բոլոր ժողովուրդը արձա-
կեց , «բոլոր» զի ամէն մարդ իր տունը
էրբայ : 26 - Սաւուղ ալ Գաբաա իր
տունը գնաց . ու խումբ մը մարդիկ ա-
նոր հետ գացին , որոնց սիրաը Ասա-
ուած գրդեց : 27 - Բայց չար մարդիկ
ըսին , Ասիկա մեզ ի՞նչպէս պիտի ա-
զատէ . ուստի զանիկա քամահրեցին ,
ու անոր ընծայ մը չտարին . բայց անի-
կա լուռ կեցաւ :

ԳԼ. ԺԱ

Եւ Ամիննացի Նասա ելաւ ու Գա-
ղատագու Յարիսի դէմ բանակեցաւ .
և Յարիսի բոլոր բնակիչները Նասաի
ըսին , Մեզի հետ դաշնակցութիւն ըրէ ,
ու քեզի ծառայենք : 2 - Բայց Ամին-
նացի Նասա անոնց ըսաւ , Ձեզի հետ
այս պայմանով դաշնակցութիւն կ'ը-
նեմ , որ ձեր ամէնուն աջ կողմի աչքը
փորեմ , ու այս բանը բոլոր Իսրայէլի
վրայ նախատինք դնեմ : 3 - Եւ Յա-
րիսի ծերերը անոր ըսին , Մեզի եօթը
որ ժամանակ տուր , որպէս զի Իսրա-
յէլի բոլոր սահմանները պատգամու-
ւորներ զրկենք , ու եթէ մեզ ազատող
չըլլայ , այն ատեն քեզի *անձնատուր
կ'ըլլանք :

4 - Ուստի պատգամաւորները Սա-
ւուղի Գաբաան գացին , և ժողովուր-
դին ականջներուն այս խօսքերը զրու-
ցեցին . ու բոլոր ժողովուրդը ձայներ-
նին վերցնելով լացին : 5 - Եւ ահա
Սաւուղ արտէն կու գար երեզներուն
ետեւէն . ու Սաւուղ ըսաւ , Ժողո-
ւրդին ի՞նչ եղաւ որ կու լան . ու
Յարիսի բնակիչներուն խօսքերը անոր
պատմեցին : 6 - Եւ այս խօսքերը երբ
լսեց , Աստուծոյ Հոգին Սաւուղի վրայ
եկաւ , ու անոր բարկութիւնը խիստ
բորբոքեցաւ : 7 - Եւ զոյգ մը եզ ա-
ռաւ , ու զանոնք կտոր կտոր ըրաւ ,
ու պատգամաւորներուն ձեռքով Իս-
րայէլի բոլոր սահմանները զրկեց՝ ըսե-
լով , Ով որ Սաւուղի ետեւէն ու Սա-
մուէլի ետեւէն չգայ , անոր եզներուն
այսպէս պիտի ընեն : Եւ ժողովուրդին
վրայ Տէրոջը վախը ինկաւ , ու ահնը
մէկ մարդու պէս ելան : 8 - Եւ Սա-
ւուղ Բեզեկի մէջ համրեց զանոնք , ու

*Եբր. կ'ելլենք

Իսրայէլի որդիները երեք հարիւր հա-
զար , և Յուդայի մարդիկը երեսուն
հազար էին : 9 - Ու եկող պատգամու-
ւորներուն ըսին , Գաղատագու Յարիսի
բնակիչներուն այսպէս ըսէք . Վաղը
երբ արեւը տաքնայ , ձեզի ազատու-
թիւն պիտի ըլլայ : Ուստի երբ պատ-
գամաւորները գացին և Յարիսի բնա-
կիչներուն այս բանը իմացուցին , անոնք
ուրախացան : 10 - Ու Յարիսի բնա-
կիչները ըսին Ամիննացիներուն , Վաղը
ձեզի անձնատուր կ'ըլլանք , ու ձեր աչ-
քերուն ինչ որ հաճելի ըլլայ , զայն
ըրէք մեզի : 11 - Եւ հեռեւեալ օրը
Սաւուղ ժողովուրդը երեք գունդի
բաժնեց , ու առաւօտեան պահուն բա-
նակին մէջ մտան . ու մինչև որ օրը
տաքցաւ , Ամիննացիները զարկին . և
մնացածները այնպէս ցրուեցան որ ա-
նոնցմէ երկու մարդ մէկտեղ չմնաց :

12 - Այն ատեն ժողովուրդը Սա-
մուէլի ըսաւ , Սաւուղ մեր վրայ թա-
գաւոր պիտի ըլլայ՝ ըսողը ո՞վ է . այն
մարդիկը տուէք որպէս զի մեռցնենք :
13 - Ու Սաւուղ ըսաւ , Այսօր մա՛րդ
մը չմեռցուի , քանզի այսօր Տէրը Իս-
րայէլի համար փրկութիւն ըրաւ :

14 - Եւ Սամուէլ ժողովուրդին ը-
սաւ , Եկէք Գաղգաղա երթանք , ու
հոն թագաւորութիւնը նորէն հաստա-
տենք : 15 - Ուստի բոլոր ժողովուրդը
Գաղգաղա գացին , ու հոն Գաղգա-
ղայի մէջ Տէրոջը առջև Սաւուղը թա-
գաւոր ըրին , և հոն Տէրոջը առջև խա-
ղաղութեան զոհեր մատուցին . ու Սա-
ւուղ և բոլոր Իսրայէլի մարդիկը հոն
մեծ ուրախութիւն ըրին :

ԳԼ. ԺԲ

Եւ Սամուէլ բոլոր Իսրայէլի ըսաւ ,
Ահա դուք ինծի ինչ որ գրուցեցիք , ես
ձեր խօսքը մտիկ ըրի , ու ձեր վրայ թա-
գաւոր դրի : 2 - Եւ ահա հիմա ձեր առ-
ջեւէն թագաւորը կ'երթայ . բայց ես
ծերացայ ու մազերս ճերմկեցան . և
ահա իմ որդիներս ձեզի հետ են . ու
ես իմ մանկութենէս մինչև այսօր ձեր
առջև քայլեցի : 3 - Ահա ես հոս կայնե-
մ . Տէրոջը առջև ու անոր օժեպին
առջև ինծի համար յայտնապէս զրու-
ցեցէք , թէ ես որո՞ւն եզը առի , ու
որո՞ւն էչը առի , որո՞ւ զրկանք կամ
անիրաւութիւն ըրի , ու որո՞ւն ձեռ-

քէն կաշառք առի և անով իմ աչքերս գոցեցի . ու ես ձեզի ետ դարձրնեմ : 4 - Եւ ըսին, Մեզի զրկանք կամ անիրաւութիւն ըրած չես , ու բնաւ մարդո՛ւ ձեռքէ բան մը առած չես : 5 - Եւ անկա ըսաւ անոնց , Այսօր Տէրը ու անոր օծեալը ձեզի վկայ ըլլան , որ դուք իմ ձեռքիս մէջ բան մը չգտաք : Եւ անոնք ըսին , Վկայ ըլլան :

6 - Այն ատեն Սամուէլ ժողովուրդին ըսաւ , Մովսէսը ու Ահարոնը * ընտրողը , և ձեր հայրերը Եգիպտոսի երկրէն հանողը Տէրն է : 7 - Ու հիմա առաջ եկէք , և ձեզի հետ Տէրօջը առջև քննեմ այն բոլոր արդարութիւնները զորոնք Տէրը ձեզի ու ձեր հայրերուն ըրաւ : 8 - Երբ Յակօբ Եգիպտոս գնաց , հա՛ն ձեր հայրերը Տէրօջը աղաղակեցին . և Տէրը Մովսէսը ու Ահարոնը զրկեց , որոնք ձեր հայրերը Եգիպտոսէ դուրս հանեցին , ու զանոնք այս աեղ բնակեցուցին : 9 - Բայց անոնք իրենց Տէր Աստուածը մոռցան . անկա այ զանոնք Հասորի զօրագլուխը եղող Սիսարայի ձեռքը ու Փղշաացւոց ձեռքը և Մովարի թագաւորին ձեռքը մտանեց , ու անոնց հետ պատերազմ ըրին : 10 - Եւ Տէրօջը աղաղակելով ըսին , Մենք մեզք գործեցինք , քանզի Տէրը թողուցինք , և Բահաղիմի ու Աստարովթի ծառայութիւն ըրինք . և հիմա մեզ մեր թշնամիներուն ձեռքէն ազատէ , ու քեզի ծառայութիւն պիտի ընենք : 11 - Ուստի Տէրը Յերոբոամողը , Բեդանը , Յեփթայէն ու Սամուէլը զրկեց , և ձեր շրջակայ թշնամիներուն ձեռքէն ձեզ ազատեց , ու ապահովութեամբ բնակեցաք : 12 - Ու երբ տեսաք որ Ամմոնացւոց թագաւորը Նասա ձեր վրայ կու գայ , ինծի ըսիք , Ոչ , անպատճառ մեր վրայ թագաւոր մը ըլլայ . թէպէտև ձեր թագաւորը ձեր Տէր Աստուածն էր : 13 - Եւ հիմա ահա այն թագաւորը զոր ընտրեցիք և ուղեցիք . ահա Տէրը ձեր վրայ թագաւոր մը դրաւ : 14 - Եթէ Տէրօջմէ վախնաք , ու անոր ծառայութիւն ընէք , և անոր խօսքին հնազանդ ըլլաք , ու Տէրօջը պատուիրանքին դէմ չկենաք , այն ատեն թէ՛ դուք և թէ՛ ձեր թագաւորը որ ձեր վրայ կը թագաւորէ , ձեր Տէր Աստու-

ծոյն ետեւէն պիտի երթաք : 15 - Բայց եթէ Տէրօջը խօսքին հնազանդութիւն չընէք , ու Տէրօջը հրամանին դէմ կենաք , այն ատեն Տէրօջը ձեռքը ձեր վրայ ու ձեր հայրերուն վրայ պիտի ըլլայ : 16 - Եւ հիմա կայնեցէք ու տեսէք այն մեծ բանը՝ զոր Տէրը ձեր աչքերուն առջև պիտի ընէ : 17 - Այսօր ցորենի հունձքի ժամանակ չէ՞ , ես Տէրօջը պիտի աղաղակեմ , և անկա որոտում ու անձրև պիտի զրկէ , որպէս զի հասկնաք ու տեսնէք թէ՛ դուք Տէրօջը առջև մեծ չարութիւն ըրիք՝ ձեզի թագաւոր ուղեւով :

18 - Այն ատեն Սամուէլ Տէրօջը աղաղակեց , ու Տէրը նոյն օրը որոտում ու անձրև տուաւ . և բոլոր ժողովուրդը Տէրօջմէն ու Սամուէլէ խիտ վախցաւ :

19 - Ու բոլոր ժողովուրդը Սամուէլի ըսաւ , Քու Տէր Աստուծոյդ աղօթք ըրէ քու ծառաներուդ համար որպէս զի չմեռնինք . քանզի մեր ամէն մեղքերուն վրայ այս չարութիւնն ալ աւելցուցինք որ մեզի թագաւոր ուղեցինք : 20 - Եւ Սամուէլ ժողովուրդին ըսաւ , Մի վախնաք . դուք Բէե- այս բոլոր չարութիւնը ըրիք , սակայն Տէրօջմէ մի խտարիք , ու բոլոր սրտաձնիդ Տէրօջը ծառայութիւն ըրէք . 21 - Եւ անէ՛ մի խտարիք . քանզի ոչինչ բաներու ետեւէ հա՛ն ըլլա՛ , որոնք չեղէ օգուտ մը ընելու ու չե՛ղ ազատելու կարող չեն , վասն զի անոնք ոչինչ են : 22 - Քանզի Տէրը իր մեծ անուանը համար իր ժողովուրդը չթողուր . որովհետև Տէրը ուղեց ձեզ իրեն ժողովուրդ ընել : 23 - Բայց ես քա՛ւ լիցի որ Տէրօջը դէմ մեզք գործեմ , ձեզի համար աղօթք ընելէ ետ կենալով . հապա ես ձեզի աղէկ ու շիտակ ճամբան պիտի արվեցնեմ : 24 - Միայն թէ Տէրօջմէն վախցէք , և ճշմարտութեամբ ու բոլոր սրտաձնիդ անոր ծառայութիւն ըրէք . քանզի տեսաք որ անկա ձեզի համար ի՛նչ մեծ բաներ ըրաւ : 25 - Իսկ եթէ չարութիւն ընելը շարունակէք , թէ՛ դուք և թէ՛ ձեր թագաւորը պիտի կորսուիք :

ԳԼ . ԺԳ

Երբ այս բաները ելան , Սաւուղ մէկ տարուան թագաւոր էր . ու երբ իս-

* Եբր . ընտրը

բայելի վրայ երկու տարի թագաւորութիւն ըրաւ, 2 - Սաւուղ Իսրայէլէ երէք հազար մարդ ընարեց իրեն համար. երկու հազարը Սաւուղի հեա Մաքմաս ու Բեթէլի լեռն էին, և հազարն ալ Յովնաթանի հեա Բենիամինի Գաբաան էին. ու մնացած ժողովուրդը, ամէն մարդ, իր վրանը զրկեց:

3 - Եւ Յովնաթան Գաբայի մէջ եղող Փղշտացւոց պահապան զօրքերը զարկաւ, ու Փղշտացիք լսեցին: Այն ատեն Սաւուղ բոլոր երկրին մէջ փող հնչեցնել տուաւ՝ ըսելով, Եբրայեցիները թող լսեն: 4 - Եւ բոլոր Իսրայէլ լսեց որ Սաւուղ Փղշտացւոց պահապան զօրքերը զարկաւ, և Իսրայէլ Փղշտացւոց առջև ատելի եղաւ. ու ժողովուրդը Գաղգաղայի մէջ Սաւուղի քով ժողովուեցան:

5 - Եւ Փղշտացիք ալ ժողովուեցան, որպէս զի Իսրայէլի դէմ պատերազմ ընեն. և «անն» երեսուն հազար կառք ու վեց հազար ձիաւոր «նէն», և ժողովուրդը ծովուն եզերքը եղող աւազին չափ շատ էր. ու ելան և Բեթաւանի արեւելեան կողմը Մաքմասի մէջ բանակեցան:

6 - Ու Իսրայէլի մարդիկը զիրենք նեղութեան մէջ տեսան. և ժողովուրդը տագնապեալ ըլլալով՝ սյրերու, թուփերու, ժայռերու, աշտարակներու ու փոսերու մէջ պահուեցան: 7 - Ու Եբրայեցիք Յորդանանէ Գաբի ու Գաղաադի երկիրը անցան. բայց Սաւուղ դեռ Գաղգաղայի մէջ էր, ու բոլոր ժողովուրդը դողալով անոր ետեւէն կ'երթային:

8 - Ու անհկա Սամուէլի որոշած ժամանակին չափ եօթը օր սպասեց, բայց Սամուէլ Գաղգաղա չեկաւ, ու ժողովուրդը անոր քովէն ցրուեցաւ: 9 - Ու Սաւուղ ըսաւ, Ողջակէզը և խաղաղութեան զոհը ինծի մօտ բերէք. ու ինք ողջակէզը մատուց: 10 - Ու երբ անհկա ողջակէզը մատուցանելը լմնցուց, այն ատեն Սամուէլ եկաւ. և Սաւուղ ելաւ զանհկա դիմաւորելու ու բարեւելու: 11 - Ու Սամուէլ ըսաւ, Ի՞նչ բրիր: Եւ Սաւուղ ըսաւ, Տեսայ որ ժողովուրդը իմ քովէս կը ցրուի, ու դուն «» որոշած օրերուդ մէջ չեկար, ու Փղշտացիք Մաքմասի մէջ ժողովուած են, 12 - Ու ըսի, Փղշտացիք հիմա իմ վրաս Գաղգաղա պիտի իջնեն, ու ես Տէրոջը առջև աղօթք ըրած չեմ. ուս-

տի *համարձակութիւն ընելով՝ ողջակէզը մատուցի: 13 - Ու Սամուէլ ըսաւ Սաւուղի, Յիմարութիւն ըրիր, որ քու Տէր Աստուծոյդ քեզի պատուիրած պատուիրանքը չպահեցիր. քանզի հիմա Տէրը քու թագաւորութիւնդ Իսրայէլի վրայ մինչև յաւիտեան պիտի հաստատէր. 14 - Բայց հիմա քու թագաւորութիւնդ հաստատ պիտի չըլլայ: Տէրը իրեն համար իր սրտին համեմատ մարդ մը կը փնտռէ, զոր Տէրը իշխան պիտի կարգէ իր ժողովուրդին վրայ. քանզի դուն Տէրոջը քեզի պատուիրած հրամանը չպահեցիր:

15 - Ետքը Սամուէլ ելաւ, ու Գաղգաղայէ Բենիամինի Գաբաան գնաց: Եւ Սաւուղ իր քով գանուող ժողովուրդը համբեց, ու վեց հարիւրի չափ մարդ էին: 16 - Ու Սաւուղ և անոր որդին Յովնաթան ու անոնց հեա գրանուող մարդիկը Բենիամինի Գաբաան կը նստէին. ու Փղշտացւոց բանակը Մաքմասի մէջ էր:

17 - Եւ Փղշտացւոց բանակէն երէք գունդ աւարառու ելաւ. գունդին մէկը դէպ ի Եփրայի ճամբան, Սաւուղի երկիրը, դարձաւ. 18 - Եւ գունդին մէկը դէպ ի Բեթորոնի ճամբան դարձաւ. ու գունդին մէկն ալ դէպ ի անապատը դարձաւ. «Սերոյիմի հովիտը նայող սահմանին ճամբան բռնեց:

19 - Եւ Իսրայէլի բոլոր երկրին մէջ դարբին մը չէր գտնուեր, քանզի Փղշտացիք ըսեր էին թէ Չըլլայ որ Եբրայեցիք սուր կամ նիզակ չինեն: 20 - Ու բոլոր Իսրայէլացիք՝ ամէն մէկը իր բրիչը, խփը, տապարը ու բահը շտակելու համար Փղշտացւոց ետեւէ կ'իջնէին: 21 - Բայց բրիչներուն, խփերուն, եռաժանի գործիքներուն ու տապարներուն համար և խթանները սրելու համար խարտոցներ ունէին: 22 - Ուստի այնպէս եղաւ որ պատերազմին օրը՝ Սաւուղի ու Յովնաթանի հեա եղող բոլոր ժողովուրդին ձեռքը սուր կամ նիզակ չէր գտնուեր. միայն Սաւուղի ու անոր որդւոյն Յովնաթանի քով կը գտնուէր:

23 - Ու Փղշտացւոց պահապան զօրքը Մաքմասի կիրճը ելան:

*Եբր. ինքզինքս ստիպելով
†Կամ, Գաբաան. հմբ. 3:

ԳԼ. ԺԳ

Եւ եղև որ օր մը Սաւուղի որդին Յովնաթան իր զէնքերը կրող պատանիին ըսաւ, Եկուր, անդիի կողմը Փղըշտացւոց պաշապան զօրքին անցնինք. բայց իր չօրը չիմացուց: 2 - Ու Սաւուղ Գաբաայի ծայրը՝ Մագրոնի մէջ եղող նունենիին տակ կը նստէր. և անոր հետ եղող ժողովուրդը վեց հարիւր մարդու չափ էր: 3 - Ու Հեղիի որդւոյն Փենէհէսի որդւոյն Իքաբօզի եղբօրը Աքիսովբի որդին Աքիս Սելովի մէջ Տերոջը քահանան էր, որ եփուտ կը հագնէր. ու ժողովուրդը Յովնաթանի երթալը չէր գիտեր: 4 - Եւ այն կիրճերուն մէջ, ուրկէ Յովնաթան Փղըշտացւոց պաշապան զօրքին անցնիլ կ'ուզէր, մէկ կողմանէ քարաժայռ մը ու միւս կողմանէ քարաժայռ մը կար, որոնց մէկուն անունը Բազէս ու միւսին անունը Սենա էր: 5 - Այս քարաժայռներէն մէկը հիւսիսային կողմը Մաքմասի դիմաց ցցուած էր, ու միւսը հարաւային կողմը՝ *Գաբաայի դիմաց: 6 - Եւ Յովնաթան իր զէնքերը կրող պատանիին ըսաւ, Եկուր այս անթլփաաներուն պաշապան զօրքին անցնինք, կարելի է որ Տէրը մեզի համար բան մը ընէ. քանզի շատ մարդով կամ՝ քիչ մարդով ազատելու կողմէ արգելք մը չկայ Տէրոջը առջև: 7 - Ու իր զէնքերը կրողը անոր ըսաւ, Բոլոր քու սրտիդ մէջ եղածը ըրէ. յառաջ գնաս. քեզի հետ կ'ա՞նք: 8 - Եւ Յովնաթան ըսաւ, Հիմա մենք այն մարդոց անցնինք, ու անոնց երեւնանք: 9 - Եթէ մեզի այսպէս ըսեն, կայնեցէք, մինչև մենք ձեզի գանք, այն ատեն մեր տեղը կայնինք ու անոնց չելլենք: 10 - Բայց եթէ այսպէս ըսեն, Մեզի ելէք, այն ատեն ելլենք, Քանզի Տէրը զանոնք մեր ձեռքը տուած է. ու ասիկա մեզի նշան ըլլայ: 11 - Ու երբ երկուքը Փղըշտացւոց պաշապան զօրքին երեւցան, Փղըշտացիք ըսին, Ահա Երրայեցիք իրենց պահուրտած ծակերէն դուրս կ'ելլեն: 12 - Եւ պաշապան զօրքերը Յովնաթանի ու անոր զէնքերը կրողին պատասխան տաին ու ըսին, Մեզի ելէք,

*Կամ, Գաբաայի

ու ձեզի բան մը իմացնենք. և Յովնաթան իր զէնքերը կրողին ըսաւ, Իմ ետեւէս ելիր, քանզի Տէրը զանոնք Իսրայէլի ձեռքը կու տայ: 13 - Ու Յովնաթան ձեռքերովը ու սաքերովը վեր ելաւ, և անոր զէնքերը կրողն ալ անոր ետեւէն, ու Յովնաթանի առջև ինկան, անոր զէնքերը կրողն ալ անոր ետեւէն կը մեռցնէր: 14 - Եւ Յովնաթան ու անոր զէնքերը կրողը այս առաջին կոտորածին մէջ քսան մարդու չափ մեռցուցին կէս լծավարի չափ գետնի վրայ: 15 - Ու բանակին մէջ, դաշտին մէջ ու բոլոր ժողովուրդին մէջ խռովութիւն եղաւ. պաշապան զօրքերը ու աւարաւուներն ալ զարհուրեցան, ու երկիր դողաց, այնպէս որ անոնց վրայ Աստուծոյ կոշտէ վտիս մը ինկաւ:

16 - Եւ Բենիամինի Գաբաայէն Սաւուղի դէտերը տեսան որ ահա այն բազմութիւնը՝ *մեծ շիփութեան մէջ է՝ ու երթալով կը ցրուի: 17 - Եւ Սաւուղ իրեն հետ եղող ժողովուրդին ըսաւ, Աչքէ անցուցէք, ու նաշեցէք որ մեզմէ ո՛վ գացեր է. ուստի անոնք աչքէ անցուցին, և ահա Յովնաթան ու անոր զէնքերը կրողը չկար: 18 - Այն ատեն Սաւուղ Աքիսի ըսաւ, Աստուծոյ տապանակը մօտեցուր. քանզի այն ատեն Աստուծոյ տապանակը Իսրայէլի որդիներուն հետ էր: 19 - Ու երբ Սաւուղ քահանային հետ կը խօսէր, Փղըշտացւոց բանակին մէջի աղմուկը երթալով կը շատնար. և Սաւուղ ըսաւ քահանային, Ձեռքդ քաշէ: 20 - Ու Սաւուղ և իրեն հետ եղող բոլոր ժողովուրդը մէկտեղ ժողովուրդեցան, ու մինչև պատերազմին Գեղեզ գացին. և ահա ամէն մարդ իր սուրը իր ընկերին վրայ դրո՞ւցէր էր, ու շատ մեծ խռովութիւն մը կար: 21 - Եւ այն Երրայեցիները որոնք առաջ Փղըշտացւոց հետ էին, ու շրջակայ երկրէն բնանց հետ բանակը ելեր էին, անոնք ալ Սաւուղի ու Յովնաթանի հետ եղող Իսրայէլի հետ միացան: 22 - Ու Եփրեմի լեռան վրայ պահուրտած Իսրայէլի բոլոր մարդիկը Փղըշտացւոց փոխելիլը լսելով, անոնք ալ անոնց ետեւէն պատերազմին մէջ մտան: 23 - Եւ այն օրը Տէրը ազատեց Իսրայէլը.

*Եւր. կը հայի

ու պատերազմը Բեթաւան անցաւ :

24 - Եւ այն օրը Իսրայէլի մարդիկը տագնապեցան. քանզի Սաւուղ ժողովուրդին երգում՝ ընել տուեր էր՝ ըսելով, Այլ որ մինչև իրիկուն հաց ուտէ՝ անիծեալ ըլլայ, որպէս զի իմ թշնամիներէս վրէժ տունեմ՝ ու բոլոր ժողովուրդը բերանը հաց չգրաւ : 25 - Եւ բոլոր *ժողովուրդը անառա մը մտաւ, ու գեանի երեսին վրայ մեղը կար : 26 - Աւ երբ ժողովուրդը անառաւ մտաւ, տեսաւ որ մեղը կը վազեր. բայց ձեռքը բերնին մօտեցնող չկար, քանզի ժողովուրդը երգումէն վախցաւ : 27 - Եւ Յովնաթան չլսեց երբ իր հայրը ժողովուրդին երգում ընել տուաւ. ուստի իր ձեռքի գաւազանին ծայրը երկնցուց, ու զանիկա մեղրին խորխորին մէջ խոթեց. ու իր ձեռքը բերանը տանելով՝ աչքերը բացուեցան : 28 - Այն ատեն ժողովուրդէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Քու հայրդ ժողովուրդին մեծ երգում ընել տուաւ՝ ըսելով, Այսօր հաց ուտող մարդը անիծեալ ըլլայ : Եւ ժողովուրդը նուազած էր : 29 - Աւ Յովնաթան ըսաւ, Իմ հայրս ժողովուրդը նեղութեան մէջ ձգեց. նայեցէք, այս մեղրէն քիչ մը ուտելուս պէս աչքերս բացուեցան. 30 - Այլ ո՛րչափ աւելի՝ եթէ ժողովուրդը այսօր իր թշնամիներէն գտած աւարը կշտանալով ուտէր. քանզի հիմա Փղշտացուց մէջ Ժաւելի մեծ կոտորած կ'ըլլար :

31 - Եւ այն օրը անոնք՝ Փղշտացիները Մաքմաւէ մինչև Այեղոն զարկին. ու ժողովուրդը խիստ նուազեցաւ : 32 - Եւ ժողովուրդը աւարին վրայ ինկաւ. ու ոչխարները, արջաւները և որթերը առին, ու գեանի վրայ մտնեցին. ու ժողովուրդը արիւնովը կերաւ : 33 - Եւ Սաւուղի իմացուցին ու ըսին, Ահա ժողովուրդը Տէրօջը դէմ կը մեղանչէ, քանզի արիւնով կ'ուտէ : Եւ անիկա ըսաւ, Անորէնութիւն ըրիք. հիմա ինծի մեծ քար մը գլորեցէք : 34 - Աւ Սաւուղ ըսաւ, ժողովուրդին մէջ ցրուեցէք, և անոնց ըսէք, Ամէն մարդ իր արջաւը ու իր ոչխարը ինծի մօտեցնէ, ու հոս մտնեմ :

*Եբբ. երկիրը. տես բ Օր. թ. 28 :
Մատ. գ. 5 :
†Կա՛մ, շատ մեծ կոտորած չեղաւ :

և ուտէ, ու արիւնով ուտելով Տէրօջը դէմ մեղք չգործէ : Աւստի բոլոր ժողովուրդը, ամէն մարդ իր ձեռքովը, այն գիշերը իր արջաւը մօտեցուց, ու հոն մտնեց : 35 - Եւ Սաւուղ Տէրօջը սեղան շինեց. այս էր Տէրօջը համար Սաւուղի շինած աւազին սեղանը :

36 - Եւ Սաւուղ ըսաւ, Գիշերով Փղշտացուց ետեւէն իջնենք, ու մինչև որ առաւօտը ծագէ՝ զանոնք թալլենք, ու անոնցմէ մա՛րդ մը չլծողունք. և անոնք ըսին, Քու աչքերուդ ինչ որ հաճոյ է՝ զայն ըրէ : Աւ քահանան ըսաւ, Հոս Աստուծոյ մօտենանք : 37 - Եւ Սաւուղ Աստուծոյ հարցուց՝ ըսելով, Փղշտացուց ետեւէն իջնե՞մ. զանոնք Իսրայէլի ձեռքը պիտի տա՞ն : Բայց այն օրը պատասխան չտուաւ անոր : 38 - Այն ատեն Սաւուղ ըսաւ, Հոս մօտեցէք, ժողովուրդին բոլոր իշխանները, և հասկցէք ու տեսէք թէ այսօր այս մեղքը որս՞ւնն է : 39 - Քանզի Իսրայէլը ազատող Տէրը կենդանի է որ թէև իմ որդւոյս Յովնաթանին ալ ըլլայ, անպատճառ պիտի մեռնի. ու բոլոր ժողովուրդին մէջ անոր պատասխան տուող մը չկար : 40 - Այն ատեն անիկա բոլոր Իսրայէլի ըսաւ, Դուք մէկ կողմը կայնեցէք, ու ես և իմ որդիս Յովնաթան միւս կողմը կայնինք. ու ժողովուրդը Սաւուղի ըսաւ, Աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ : 41 - Եւ Սաւուղ Իսրայէլի Տէր Աստուծոյն ըսաւ, *Ճշմարտութիւնը յայտնէ՞. և Յովնաթան ու Սաւուղ լէ՛ռիւզ ըրանուեցան, ու ժողովուրդը ազատ մնաց : 42 - Եւ Սաւուղ ըսաւ, Իմ վրաս ու իմ որդւոյս Յովնաթանի վրայ վիճակ ձգեցէք. ու Յովնաթան բռնուեցաւ : 43 - Եւ Սաւուղ Յովնաթանի ըսաւ, Ինծի իմացուր թէ ի՞նչ ըրիր. ու Յովնաթան անոր իմացուց ու ըսաւ, Ձեռքիս գաւազանին ծայրովը քիչ մը մեղը կերեր եմ. * - ահա ես պիտի մեռնիմ : 44 - Եւ Սաւուղ ըսաւ, Աստուած ինչի՞ այսպէս ու սակէ աւելի ընէ որ անշուշտ պիտի մեռնիս, Յովնաթան : 45 - Բայց ժողովուրդը Սաւուղի ըսաւ, Յովնաթան պիտի մեռնի, ան որ այսօր Իսրայէլի մէջ այս մեծ փրկութիւնը ըրաւ. քա՛ւ լիցի. կենդանի է Տէր, որ անոր զլխուն մէկ մազը գետինը պի-

*Եբբ. կատարելութիւն տուր

տի չիյնայ . քանզի այսօր Աստուծով
յաղթ--ի--ն ըրաւ : Այսպէս ժողովուրդը Յովնաթանը աղատեց , ու անիկա չմեռաւ : 46 - Եւ Սաւուղ Փղըշտացիներէն ետ դարձաւ , ու Փղշտացիք իրենց տեղը գացին :

47 - Ուստի Սաւուղ սկսաւ Իսրայէլի վրայ թագաւորել . ու բոլոր շրջակայ թշնամիներուն հետ , այսինքն Մովաբի հետ , և Ամմոնի որդիներուն հետ , Եգիպտի հետ , Սուբայի թագաւորներուն հետ , ու Փղշտացուց հետ պատերազմ՝ ըրաւ . և ո՛ր կողմը որ դարձաւ՝ յաղթութիւն ըրաւ : 48 - Ու *քաջութիւն ընելով՝ Ամաղէկը զարկաւ , և աղատեց Իսրայէլը իր կողպատիչներուն ձեռքէն :

49 - Եւ Սաւուղի որդիները Յովնաթան , Յեսուի ու Մեղքիսաւէ էին . և անոր երկու աղջիկներուն անունները՝ առաջինին անունը Մերովբ , ու պղտիկին անունը Մեղքոզ էր : 50 - Եւ Սաւուղի կնոջ անունը Աքինոամ էր , Աքիմաստի աղջիկը , ու անոր զօրավարին անունը Աբեհներ էր , Սաւուղի հօրեղբօրը Ների որդին : 51 - Եւ Կիս , Սաւուղի հայրը , ու Աբեհների հայրը Ներ Աբիէլի որդիներն էին :

52 - Եւ Սաւուղի բոլոր օրերը Փղըշտացուց դէմ սաստիկ պատերազմ կար . ու Սաւուղ ամէն տեսած զօրաւոր մարդը և ամէն ուժի տէր եղողը իր քով կը ժողվէր :

ԳԼ. ԺԵ

Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղի, Տէրը
դիս իր Իսրայէլ ժողովուրդին վրայ
քեզ թագաւոր օժելու զրկեց . ու հիմա
Տէրոջը խօսքերուն ձայնը մտիկ
ըրէ : 2 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ ,
Միտքս բերի ինչ որ Ամաղէկ ըրաւ
Իսրայէլի , անոր Եգիպտոսէ ելած ա-
տենը՝ ճամբուն մէջ անոր դէմ գնե-
լով : 3 - Հիմա գնա ու Ամաղէկը զարկ ,
և անոր բոլոր ունեցածը նզովուածի
պէս բնաջինջ ըրէ , ու անոր չիւնայես .
և այր մարդէն մինչև կին մարդը ու
աղայէն մինչև կաթնկերը , արջա-
ռէն մինչև ոչխարը և ուղաէն մինչև
էշը մեռցնես :

4 - Ուստի Սաւուղ ժողովուրդը

կանչեց , ու Տեղայիմի մէջ զանոնք
համրեց , որոնք երկու հարիւր հազար
հետեւակ զօրք էին , ու Յուդայեանք
ալ տասը հազար : 5 - Եւ Սաւուղ մինչև
Ամաղէկացուց մէկ քաղաքը գնաց ,
ու հեղեղատին մէջ դարանակալ ե-
ղաւ : 6 - Եւ Սաւուղ Կենեցիներուն
ըսաւ , Գացէք , զատուեցէք ու Ամա-
ղէկացուց մէջէն իջէք , չլլայ որ ձեզ
անոնց հետ մէկտեղ զարնեմ . քանզի
գուք բոլոր Իսրայէլի որդիներուն ողոր-
մութիւն ըրիք՝ անոնց Եգիպտոսէ
ելած ատենը : Ուստի Կենեցիները Ա-
մաղէկացուց մէջէն զատուեցան : 7 -
Եւ Սաւուղ Եւիլայէ մինչև Եգիպ-
տոսի գիմոցի Սուրը Ամաղէկը զար-
կաւ . 8 - Ու Ամաղէկի թագաւորը Ա-
գագը ողջ բռնեց , ու բոլոր ժողովուրդը
սուրի բերնով ջարդեց : 9 -
Իայց Սաւուղ ժողովուրդին հետ Ա-
գագը , և ոչխարներուն ու արջառնե-
րուն աղէկները ու *գէրերը և գառ-
ները ու ամէն պատուական բաները
խնայեցին , և չուղեցին . զանոնք ջար-
դել , հապա բոլոր անարգ ու անպի-
տան անասունները ջարդեցին :

10 - Եւ Տէրոջը խօսքը Սամուէլի ե-
ղաւ՝ ըսելով , 11 - Սաւուղը թագա-
ւոր ընելուս զղջացի . քանզի ինծմէ
ետ դարձաւ , ու իմ խօսքերս չկատա-
րեց : Եւ Սամուէլ արամեցաւ , ու բո-
լոր գիշերը Տէրոջը աղաղակեց : 12 -
Ու Սամուէլ առաւօտուն կանուխ ե-
լաւ , որպէս զի երբայ Սաւուղը գիմա-
ւորէ . և Սամուէլի իմացուցին ու ըսին ,
Սաւուղ Կարմեղոս եկաւ , և ահա իրեն
համար + յաղթութեան նշան՝ կանգ-
նեց , ու անկէ դառնալով անցաւ , ու
Գաղգաղա իջաւ :

13 - Եւ Սամուէլ Սաւուղի քով
գնաց . ու Սաւուղ անոր ըսաւ , Գուն
Տէրոջմէն օրհնեալ ըլլաս . Տէրոջը
խօսքը կատարեցի : 14 - Եւ Սամուէլ
ըսաւ , Հապա այդ ոչխարներուն ձայնը
ի՞նչ պիտի ըլլայ՝ որ իմ ահանջիս կու
գայ , ու արջառններուն ձայնը՝ զոր ես
կը լսեմ : 15 - Եւ Սաւուղ ըսաւ , Զա-
նոնք Ամաղէկացիներէն բերին . քանզի
ժողովուրդը ամէնէն աղէկ ոչխարները
ու արջառնները ողջ թողուցին , որպէս
զի զանոնք քու Տէր Աստուծոյդ զո՛հ

*Կա՛մ, զօրք ժողովելով

*Կա՛մ, երկրորդականները
+ԵՔԷ. ձեռք

մատուցանեն . սակայն միւսները ջարդեցինք : 16 - Այն տանն Սամուէլ ըսաւ Սաւուղի , Կեցիր որ քեզի պատմեմ ինչ որ Տէրը այս գիշեր ինձի խօսեցաւ : Ան ալ անոր ըսաւ , Խօսէ , 17 - Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղի , Ահա դուն *որ քու աչքերուդ պզտիկ կ'երեւնայիր , Իսրայէլի որդւոցը ցեղերուն գլուխ եղար , ու Տէրը քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեց . 18 - Եւ Տէրը քեզ ճամբայ մը զրկեց՝ ըսելով , Գնա , ու այն մեղաւոր Ամաղեկացիները նզովուածի պէս ջարդէ , և անոնց դէմ պատերազմ ըրէ , մինչև որ զանոնք բնաջինջ ընես . 19 - Իսկ դուն ինչո՞ւ համար Տէրոջը ձայնին հնազանդութիւն չըրիր , ու աւարին վրայ խշաղով՝ Տէրոջը առջև չարութիւն ըրիր : 20 - Եւ Սաւուղ ըսաւ Սամուէլի , Ահա ես Տէրոջը ձայնին հնազանդութիւն ըրի , ու Տէրը զիս ո՛ր ճամբան որ զրկեց , այն ճամբան գացի , և Ամաղեկի թագաւորը Ագազը բերի , ու Ամաղեկը նզովուածի պէս բնաջինջ ըրի : 21 - Սակայն ժողովուրդը այն աւարէն ոչխարներ ու արջառներ առաւ , նզովուածներէն ամէնէն աղէկները՝ որպէս զի զանոնք Գաղգաղայի մէջ քու Տէր Աստուծոյդ զոհ ընեն : 22 - Եւ Սամուէլ ըսաւ , Միթէ Տէրոջը առջև ողջակէզները ու զոհերը Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճո՞յ են . ահա հնազանդութիւնը զոհէն , «- խօս՝ մտիկ ընելը խոյերուն ճարպէն աղէկ է . 23 - Քանզի ապստամբութիւնը կախարդութեան մեղքին պէս , ու կամակորութիւնը ՝ կռապաշտութեան պէս՝ է . որովհետև դուն Տէրոջը խօսքը մերժեցիր , անիկա ալ քեզ մերժեց՝ որպէս զի թագաւոր չըլլաւ :

24 - Եւ Սաւուղ ըսաւ Սամուէլի , Մեղք գործեցի՝ որ Տէրոջը հրամանը ու քու խօսքերդ զանց ըրի . քանզի ժողովուրդէն վախնալուս համար անոնց խօսքը մտիկ ըրի : 25 - Ու հիմա կ'աղաչեմ , իմ յանցանքս ներէ , և ինձի հետ դարձիր , որպէս զի Տէրոջը երկրպագութիւն ընեմ : 26 - Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղի , Ես քեզի հետ չեմ դառնար . քանզի դուն Տէրոջը խօսքը մերժեցիր , Տէրն ալ քեզ մերժեց՝ որ-

պէս զի Իսրայէլի վրայ թագաւոր չըլլաւ : 27 - Ու Սամուէլ գարձաւ որ Սաւուղի *պէն երթայ . բայց անիկա անոր վերարկուին ծայրէն բռնեց , որ պատուեցաւ : 28 - Այն տանն Սամուէլ անոր ըսաւ , Տէրը այսօր քու վրայէդ Իսրայէլի թագաւորութիւնը պատուեց , ու զանիկա քեզմէ աղէկ եղող ընկերիդ սուտաւ : 29 - Եւ Իսրայէլի Ապուէնը սուտ չզրուցեր ու չզղջար . քանզի անիկա մարդ չէ՝ որ զղջայ : 30 - Եւ Սաւուղ ըսաւ , Մեղք գործեցի . կ'աղաչեմ , հիմա իմ ժողովուրդիս ծերերուն առջև ու Իսրայէլի առջև զիս պատուէ , և ինձի հետ դարձիր , որպէս զի քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընեմ : 31 - Ու Սամուէլ Սաւուղի ետեւէն գարձաւ , և Սաւուղ Տէրոջը երկրպագութիւն ըրաւ :

32 - Ետքը Սամուէլ ըսաւ , Ամաղեկի թագաւորը Ագազը ինձի բերէք . ու Ագազ քնքշութեամբ անոր մօտեցաւ . և Ագազ ըսաւ , Անշուշա մասնուան դառնութիւնը անցած է : 33 - Բայց Սամուէլ ըսաւ , Ինչպէս քու սուրդ կիները անզաւակ թողուց , նոյնպէս քու մայրդ կիներուն մէջ անզաւակ մնայ : Ու Սամուէլ Գաղգաղայի մէջ Տէրոջը առջև կտոր կտոր ըրաւ Ագազը :

34 - Եւ Սամուէլ Ռամա գնաց , ու Սաւուղ իր տունը՝ Սաւուղի Գաբաան ելաւ : 35 - Եւ Սամուէլ մինչև իր մասնուան օրը մէյմըն ալ Սաւուղը չտեսաւ . բայց Սամուէլ Սաւուղի համար սուգ կ'ընէր . և Տէրը Սաւուղը Իսրայէլի վրայ թագաւոր ընելուն զղջաց :

ԳԼ. ԺԶ

Եւ Տէրը Սամուէլի ըսաւ , Մինչև ե՞րբ Սաւուղի համար սուգ կ'ընես . որովհետև ես զանիկա մերժեցի , որպէս զի Իսրայէլի վրայ չթագաւորէ . եղջիւրդ իւղով լեցուր . ու եկուր քեզ Բեթլէհեմացի Յեսաէի զրկեմ . քանզի անոր որդիներէն մէկը ինձի թագաւոր *ընտրեցի : 2 - Ու Սամուէլ ըսաւ , Ի՞նչպէս երթամ . եթէ Սաւուղ լսէ , զիս կը մեռցնէ . և Տէրը ըսաւ , Վերջի հետ երինջ մը առ , ու ըսէ թէ Տէրոջը

*Եբր. Թէև
 †Եբր. ունայնութիւն ու թերափիմ

*Եբր. տեսայ †Եբր. Ձեռքդ

զոհ ընելու եկայ . 3 - Եւ Յեսուէն զոհին հրաւիրէ . ու քու ընելու բանդ ես քեզի կը հասկցնեմ . և ինծի Բարբար օծես այն Բարբար զոր քեզի պիտի բռնեմ :

4 - Ու Սամուէլ Տէրօջը ըսածը ըրաւ , ու Բեթլէհէմ գնաց : Եւ քաղաքին ծերերը դողալով զանհկա գիմուարեցին , ու ըսին , Արդեօք խաղաղութեամբ մը եկար :

5 - Եւ անհկա ըսաւ , Խաղաղութեամբ . Տէրօջը զոհ ընելու եկայ . սրբուեցէք ու ինծի հետ զոհի եկէք . և Յեսուէն ու անոր որդիները սրբել տուաւ , և զանոնք զոհի հրաւիրեց :

6 - Ու երբ անոնք եկան , Եզիաբը տեսնելով ըսաւ , Իրաւ որ Տէրօջը օծեալը իր առջև է : 7 - Բայց Տէրը Սամուէլի ըսաւ , Անոր երեւութիւն ու հասակին երկայնութեանը մի նայիր , քանզի ես զանհկա անարգեցի . սրովհետեւ մարդուն նայիլը չըլլար . քանզի մարդը *երեւցածին կը նայի , բայց Տէրը սրտին կը նայի :

8 - Եւ Յեսուէ Աբինադաբը կանչեց , ու զանհկա Սամուէլի առջեւէն անցուց . և Սամուէլ ըսաւ , Տէրը ասիկա ալ չընարեց : 9 - Ու Յեսուէ Սամուէլի անցուց . և Սամուէլ ըսաւ , Տէրը ասիկա ալ չընարեց : 10 - Ու երբ Յեսուէ Սամուէլի առջեւէն իր եօթը որդիները անցուց , Սամուէլ Յեսուէի ըսաւ , Տէրը ասանցմէ Դիւ չընարեց :

11 - Եւ Սամուէլ Յեսուէի ըսաւ , աղաքներդ ա՛յդչափ են : Ու անհկա ըսաւ , Տակաւին ամէնէն պզտիկը մնաց , և ահա անհկա ոչխարները կ'արածէ : Ու Սամուէլ Յեսուէի ըսաւ , Մարդ զրկէ ու զանհկա բերել տուր . քանզի մինչև որ անհկա հոս չգայ , մենք *եղան պիտի չնստինք :

12 - Ու ասի Բարբար զըրկեց ու զանհկա բերել տուաւ . և անհկա կարմիր էր ու աղուոր աչքեր ունէր , ու դէմքն ալ գեղեցիկ էր : Այն տատեն Տէրը ըսաւ , Եյիր , ասիկա օծէ , քանզի ասիկա է :

13 - Եւ Սամուէլ իւզին եղջիւրը տուաւ , ու զանհկա իր եղբայրներուն մէջ օծեց . ու այն օրէն ետքը Տէրօջը Հոգին Իաւիթի վրայ եկաւ . ու Սամուէլ ելաւ Ռամա գնաց :

14 - Եւ Տէրօջը Հոգին Սաւուղէ հեռացաւ . ու Տէրօջը կողմանէ չար ոգի մը Ժանոր նեղութիւն կու տար : 15 - Եւ Սաւուղի ծառաները անոր ըսին ,

Ահա Աստուծոյ կողմանէ չար ոգի մը քեզի նեղութիւն կու տայ . 16 - Մեր ատրը իր առջև եղող ծառաներուն զրուցէ որ աղէկ քնարահար մը փրնաւեն , ու երբ Աստուծոյ կողմանէ այն չար ոգին քու վրայ գայ , անհկա իր ձեռքով Բարբար զարնէ , ու *գուն հանգրստանաս :

17 - Եւ Սաւուղ իր ծառաներուն ըսաւ , Հիմա ինծի աղէկ քնարահար մը գտէք , ու զանհկա ինծի բերէք :

18 - Եւ ծառաներէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ , Ահա Բեթլէհէմացի Յեսուէի մէկ աղան տեսայ , որ քնար զարնելը գիտէ , ու անհկա զօրաւոր , պատերազմող , ճարտասան , ու գեղեցիկ տեսքով կարիճ մըն է , և Տէրը անոր հետ է :

19 - Ու Սաւուղ Յեսուէի պատգամաւորներ զրկեց ու ըսաւ , Ոչխարներուն քով գանուող տղադ Իաւիթը ինծի զրկէ :

20 - Եւ Յեսուէ Ժանի հաց , աիկ մը գինի , ու այծերէն ուլ մը առնելով իշու վրայ բեռնարկեց , ու զանոնք իր տղուն Իաւիթի ձեռքով Սաւուղի զրկեց :

21 - Եւ Իաւիթ Սաւուղի եկաւ , ու անոր առջև կայնեցաւ : Եւ Սամուէլ զանհկա շատ սիրեց , ու Իաւիթ անոր կապարճակիրը եղաւ :

22 - Եւ Սաւուղ Յեսուէի Բարբար զրկեց՝ ըսելով , Իաւիթ թող իմ առջեւ կայնի , քանզի անհկա իմ առջեւ շնորհք գտաւ :

23 - Ու երբ Աստուծմէ շար ոգին Սաւուղի վրայ կու գար , Իաւիթ քնարը կ'առնէր , ու իր ձեռքով կը զարնէր . և Սաւուղ կը հանգստանար ու կը զուարճանար , և չար ոգին անոր վրայէն կ'երթար :

ԳԼ. ԺԷ

Եւ Փղշտացիք իրենց զօրքերը ժողովեցին պատերազմելու համար , և Յուդայի Սաքովին մէջ ժողովուեցան . և Սաքովի ու Ազեկայի մէջտեղ Ափեսգոմմին բանակեցան : 2 - Եւ Սաւուղ ու Իսրայէլի մարդիկը ժողովուեցան , ու Էլայի հովիտին մէջ բանակեցան . և Փղշտացուց դէմ պատերազմ ընելու համար կարգաւ շարուեցան : 3 - Ու Փղշտացիք մէկ կողմանէ լեռան մը վրայ կայներ էին , ու Իսրայէլացիք միւս կողմանէ լեռան մը վրայ կայներ էին . ու հովիտը անոնց մէջտեղ էր :

*Եբր. աչքերուն
†Կամ, զանհկա կը զարհուրեցներ

*Եբր. քեզի աղէկ ըլլայ

4 - Եւ Փղշտացւոց բանակէն Գողիաթ անունով, վեց կանգուն ու մէկ թիզ բարձրութեամբ, Գեթացի ախոյեան մը ելաւ . 5 - Անոր գլուխը պղնձէ սաղաւարտ կար, ու հիւսուած զրահ մը հագեր էր . ու անոր պղնձէ զրահին ծանրութիւնը հինգ հազար սիկղ էր : 6 - Եւ ոտքերուն վրայէն պղնձէ սունապաններ, և ուսերուն մէջտեղ պղնձէ *գեղարդ մը ունէր : 7 - Անոր նիզակին բունը սասայնանկներու գլանին պէս էր, ու նիզակին տէգը վեց հարիւր սիկղ երկաթէ էր . և անոր վահանը կտոր անոր առջեւէն կ'երթար : 8 - Անիկա էլ կայնեցաւ, ու Իսրայէլի գունդերուն կանչելով՝ անոնց ըսաւ, Ինչո՞ւ համար Դեպի Դեմ պատերազմ ընելու ելեր էք, ու գունդերով շարուեր էք . միթէ ես Փղշտացի չե՞մ, ու դուք Սաւուղի ծառաները չե՞ք . ձեր մէջէն մարդ մը ընարեցէք, որպէս զի իջնէ ինծի հետ Դեմաճարփի : 9 - Եթէ կարող ըլլայ ինծի հետ ծեծկուելու, ու զիս մեռցնէ, այն ատեն մենք ձեզի ծառայ ըլլանք . բայց եթէ ես յաղթեմ ու զանիկա մեռցնեմ, այն ատեն դուք մեզի ծառայ ըլլաք ու մեզի ծառայութիւն ընէք : 10 - Եւ այն Փղշտացին ըսաւ, Ես այսօր Իսրայէլի գունդերը նախատեցի . ինծի մարդ մը տուէք, որպէս զի իրարու հետ ծեծկուինք : 11 - Ու երբ Սաւուղ ու բոլոր Իսրայէլ Փղշտացիին այս խօսքերը լսեցին, զարհուրեցան ու խիստ վախցան : 12 - Եւ Գաւիթ Եփրատացի, այսինքն Յուդայի Բեթլէհեմացի, Յեսուէ անունով մարդու մը որդի էր . անիկա ութ որդի ունէր, ու անիկա Սաւուղի օրերը մարդոց մէջ ծեր մարդ կը սեպուէր : 13 - Եւ Յեսուէի երեք մեծ որդիները իր *վէն ելլելով, Սաւուղի ետեւէն պատերազմի գացեր էին . և պատերազմի գացող երեք որդիներուն անունները՝ անդրանկանը Եղիաբ, երկրորդինը Աբինադաբ, և երրորդինը Սամաս էր . 14 - Ու Գաւիթ անոր ամենէն պզտիկն էր . և երեք մեծերը Սաւուղի ետեւէն գացին . 15 - Բայց Գաւիթ Սաւուղի քովէն ելլելով Բեթլէհեմ դարձեր էր, որպէս զի իր հօրը ոչխարները արածէ : 16 - Եւ այն Փղշտացին քառասուն օր առտու ու իրի-

կուն կը մտանար, ու զանն՝ Դեմաճարփի Բեմ հրաժարելով կը կայնէր : 17 - Եւ Յեսուէ իր որդւոյն Գաւիթի ըսաւ, Քու եղբայրներուդ համար այս մէկ արդու բոհած ցորենը ու այս տասը հացը առ, բանակը վազէ եղբայրներուդ դէմ : 18 - Եւ այս տասը գլուխ պանիրը անոնց հազարապետին տար, ու նայէ թէ եղբայրներդ որջ առնողջ են, ու անոնցմէ նշան առ : 19 - Եւ Սաւուղ ու անոնք ու բոլոր Իսրայէլի մարդիկը Ելայի հովիտին մէջ Փղշտացւոց հետ պատերազմ կ'ընէին : 20 - Եւ Գաւիթ առաւօտուն կանուխ ելաւ, ոչխարները պահապան հովիտի թողուց, ու այն Բեմերը առաւ գնաց, ինչպէս Յեսուէ իրեն ապապեր էր . ու երբ կառքերուն տեղը հասաւ, զօրքերը կարգաւ կը շարուէին, ու պատերազմի համար բարձր ձայնով կ'աղաղակէին . 21 - Քանզի Իսրայէլ ու Փղշտացիք զօրք զօրքի դէմ գունդեր շարեր էին : 22 - Եւ Գաւիթ իր վրայէն ամանները վար արձուլլով ամաններու պահապանին ձեռքը յանձնեց, և դէպի գունդը վազեց, ու գնաց իր եղբայրներուն սղջութիւնը հարցուց : 23 - Ու երբ անիկա անոնց հետ կը խօսէր, ահա այն Փղշտացի ախոյեանը Գողիաթ անունով, որ Գեթ +աղա+էն էր, Փղշտացւոց գունդերէն ելաւ, և այն արձուցան խօսքերուն պէս զրուցեց . ու Գաւիթ լսեց : 24 - Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը երբ այն մարդը տեսան, անոր երեսէն փախան ու զարհուրեցան : 25 - Եւ Իսրայէլի մարդիկը ըսին, Այս ելլող մարդը տեսա՞ք, որ Իսրայէլը նախատելու կ'ելլէ . սվ որ զանիկա մեռցնէ, թագաւորը մեծ հարստութիւնով պիտի հարստացնէ զանիկա, ու իր աղջիկը անոր պիտի տայ, և անոր հօրը տունը Իսրայէլի մէջ ազատ պիտի ընէ : 26 - Ու Գաւիթ իր քով եղող մարդոցը հետ խօսեցաւ ու ըսաւ, Այս Փղշտացին մեռցնող և Իսրայէլէ նախատինքը վերցնող մարդուն ի՞նչ պիտի ըլլայ . քանզի այս անթլփատ Փղշտացին ո՞վ է՝ որ կենդանի Աստուծոյն զօրքերը նախատէ : 27 - Ու ժողովուրդը նոյն խօսքերը զրուցեց անոր ու ըսաւ, Չանիկա մեռցնող մարդուն այնպէս պիտի ըլլայ : 28 - Եւ անոր մեծ եղբայրը Եղիաբ երբ լսեց անոր խօսիլը այն մար-

*Կամ, սապար

դոց հետ, սաստիկ բարկութեամբ Դաւիթի սրդողեցաւ Եղիար, ու ըսաւ, Դուն ինչ^օւ հոս իջար, և այն քիչ ոչխարները անապատին մէջ որ^օւ ձգեցիր. ես քու հպարտութիւնդ ու սրտիդ չարութիւնը գիտեմ. անտարակոյս դուն պատերազմը տեսնելու իջեր ես: 29 - Եւ Դաւիթ ըսաւ, Հիմա ի^օնչ ըրի. այս *խօսք չէ^օ: 30 - Ու անոր քովէն ուրիշ մարդու մը դարձաւ, և նոյն խօսքերը զրուցեց, ու ժողովուրդն ալ առաջնուան խօսքերուն պէս պատասխան տուին անոր:

31 - Եւ Դաւիթի ըսած խօսքերը լսուեցան. ու երբ Սաւուղի առջև պատմեցին, Սաւուղ իր +ւ՛ բերել տուաւ զանհկա: 32 - Եւ Դաւիթ Սաւուղի ըսաւ, Ասոր պատճառաւ բնաւ մարդու մը սիրտ չկտարի. քու ծառայդ պիտի երթայ, ու այն Փղշտացիին հետ ծեծկուի: 33 - Եւ Սաւուղ Դաւիթի ըսաւ, Դուն չես կրնար այն Փղշտացիին վրայ երթալ, ու անոր հետ ծեծկուիլ, քանզի դուն մանուկ ես, ու անհկա իր մանկութենէն ի վեր պատերազմող մարդ մըն է: 34 - Եւ Դաւիթ ըսաւ Սաւուղի, Բու ծառայդ երբ իր հօրը ոչխարները կ'արածէր, ու առիւծ կամ արջ կու գար, և հօտերէն ոչխար կը տանէր, 35 - Ես անոր ետեւէն երթալով զանհկա կը զարնէի, ու անոր բերնէն կ'ազատէի. ու երբ անհկա իմ վրաս յարձակէր, զանհկա մօրուքէն կը բռնէի, կը զարնէի ու կը մեռցնէի: 36 - Բու ծառայդ առիւծ ալ մեռցուցած է՝ արջ ալ. ու այս անթլփատ Փղշտացիին ալ անոնցմէ մեկուն պէս պիտի ըլլայ. քանզի կենդանի Աստուծոյն զօրքերը նախատեց: 37 - Եւ Դաւիթ ըսաւ, Առիւծին ու արջին ձեռքէն զիս ազատող Տէրը այս Փղշտացիին ձեռքէն ալ պիտի ազատէ: Եւ Սաւուղ Դաւիթի ըսաւ, Գնա, ու Տէրը քեզի հետ ըլլայ: 38 - Եւ Սաւուղ իր հանդերձները Դաւիթի հագցուց, ու անոր գլուխը պղնձէ սաղաւարտ մը դրաւ, ու անոր զրահ ալ հագցուց: 39 - Եւ Դաւիթ հանդերձներուն վրայէն Սաւուղի սուրը մէջքը կապեց, ու սկսաւ քալել, քանզի սորված չէր. ու Դաւիթ Սաւուղի ըսաւ, Ասոնցմով չեմ կրնար քալել, քանզի

սորված չեմ. ուստի Դաւիթ զանոնք իր վրայէն հանեց: 40 - Եւ իր ցուպը ձեռքը առաւ, ու հեղեղատէն իրեն համար հինգ հատ գոյլախաղ քար ընտրեց, ու զանոնք իր հովուական ամանին, այսինքն մախաղին, մէջ դրաւ, ու պարսը ձեռքը բռնելով Փղշտացիին մօտեցաւ: 41 - Եւ Փղշտացիին ալ եկաւ ու Դաւիթի մօտեցաւ. և անոր վահանը վերցնող մարդը անոր առջև էր: 42 - Ու երբ Փղշտացիին նայեցաւ ու Դաւիթը տեսաւ, զանհկա արհամարհեց. քանզի անհկա կարմիր գունով ու գեղեցիկ դէմքով պատանի մըն էր: 43 - Եւ Փղշտացիին ըսաւ Դաւիթի, Միթէ ես շ^օւն եմ՝ որ իմ վրաս ցուպով կու գաս. ու Փղշտացիին իր աստուածներովը Դաւիթը նզովեց: 44 - Եւ Փղշտացիին ըսաւ Դաւիթի, Ինծի եկուր, ու քու մարմինդ երկինքի թռչուններուն ու դաշտի գազաններուն տամ: 45 - Եւ Դաւիթ ըսաւ Փղշտացիին, Դուն ինծի սրով, նիզակով ու գեղարդով կու գաս, բայց ես զօրութեանց Տէրօջը, քու նախատած Իսրայէլի զօրքերուն Աստուծոյն, անունովը քեզի կու գամ: 46 - Այսօր Տէրը քեզ *իմ ձեռքս պիտի մտանէ. ու ես քեզ պիտի մեռցնեմ, ու վրայէդ գլուխդ պիտի առնեմ: Եւ Փղշտացուց բանակին դիակները այսօր երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն պիտի տամ. որպէս զի բոլոր երկիր գիտնայ որ Իսրայէլի Դէջ Աստուած կայ. 47 - Եւ այս բոլոր ժողովքը գիտնան որ Տէրը սրով ու նիզակով չազատեր. քանզի պատերազմը Տէրօջն է, ու անհկա ձեզ մեր ձեռքը պիտի մտանէ: 48 - Ու երբ Փղշտացիին ելաւ ու եկաւ Դաւիթի մօտեցաւ, Դաւիթ ալ շուտով պատերազմի ասպարէզը վազեց Փղշտացիին դիմաւորելու: 49 - Եւ Դաւիթ իր ձեռքը իր մախաղին մէջ խօթեց, ու անկէ քար մը տուաւ, և զանոնք պարտով նետեց, ու Փղշտացիին ճակատը զարկաւ. և քարը անոր ճակատին մէջ մտաւ, ու անհկա երեսի վրայ գետինը ինկաւ: 50 - Այսպէս Դաւիթ պարտով ու քարով Փղշտացիին յաղթեց. և զարկաւ Փղշտացիին ու մեռցուց զանհկա. բայց Դաւիթի ձեռքը սուր

*կամ, իրաւունքով

*Եբր. իմ ձեռքիս մէջ պիտի գոցէ

չկար: 51 - Եւ Դաւիթ վազելով Փղըշտացիին վրայ կայնեցաւ. ու անոր սուրբ առաւ, պատեանէն հանեց, ու զանհկա մեռցնելէն ետքը գլուխը անով կարեց: Եւ Փղըշտացիք իրենց զօրաւոր մարդուն մեռնիլը տեսնելով՝ փախան:

52 - Այն ատեն Իսրայէլի ու Յուդայի մարդիկը ելան, և աղաղակներով մինչև հավիտար ու մինչև Ակկարոնի դռները Փղըշտացիները հալածեցին. և Փղըշտացուց մեռցուածները Սագարիմի ճամբուն վրայ, ու մինչև Գէթ ու Ակկարոն ինկան:

53 - Եւ Իսրայէլի սրդիները Փղըշտացիները հալածելէն ետ գարձան, ու անոնց բանակը կողոպտեցին:

54 - Եւ Դաւիթ Փղըշտացիին գլուխը առաւ, ու զանհկա Երուսաղէմ տարաւ. բայց անոր զէնքերը իր վրանին մէջ դրաւ:

55 - Աւ երբ Սաւուղ Դաւիթը տեսաւ, որ Փղըշտացիին դէմ էլեր է, էջ զօրավարին, Աբենների, ըսաւ, Ով Աբեններ, այս պատանին որո՞ւն տղան է: Աւ Աբեններ ըսաւ, կենդանի է քու անձդ, ով թագաւոր, որ չէմ գիտեր:

56 - Եւ թագաւորը ըսաւ, Հարցուր թէ այս պատանին որո՞ւն տղան է:

57 - Աւ երբ Դաւիթ Փղըշտացիին մեռցնելէն ետ գարձաւ, Աբեններ առաւ զանհկա ու Սաւուղի առջև տարաւ. ու Փղըշտացիին գլուխը անոր ձեռքն էր:

58 - Եւ Սաւուղ ըսաւ անոր, Արո՞ւն տղան ես դուն, պատանի: Աւ Դաւիթ ըսաւ, Քու ծառայիդ Բեթլէհեմացի Յեսաէի տղան եմ:

ԳԼ. ԺԸ

Աւ երբ Սաւուղի հետ խօսիլը լմընցուց, Յովնաթանի սիրտը Դաւիթի սրտին հետ կապուեցաւ, ու Յովնաթան իր անձին պէս սիրեց զանհկա: 2 - Եւ նոյն օրը Սաւուղ զանհկա առաւ, ու թող չտուաւ որ իր հօրը տունը դառնայ: 3 - Եւ Յովնաթան Դաւիթի հետ ուխտ ըրաւ, քանզի իր անձին պէս կը սիրէր զանհկա: 4 - Աւ Յովնաթան իր վրայի վերարկուն հանեց, և զանհկա ու իր հանդերձները, մինչև իր սուրը, իր աղեղը ու իր գօտին Դաւիթի տուաւ: 5 - Եւ Դաւիթ ամէն տեղ կ'երթար՝ ուր որ Սաւուղ զանհկա կը զրկէր, ու իմաստութեամբ կը վարուէր. և Սաւուղ զանհկա պա-

տերազմական մարդոց վրայ կեցուց, ու բոլոր ժողովուրդին ու Սաւուղի ծառայներուն ալ հաճոյ եղաւ:

6 - Աւ երբ Դաւիթ Փղըշտացիին մեռցնելէն կը դառնար, ու ղօր+եջ կու գային, Իսրայէլի բոլոր քաղաքներէն կիները երգելով ու պար բռնելով, թմբուկներով, ուրախութեամբ ու ծնծղաներով Սաւուղ թագաւորը դիմաւորելու ելան: 7 - Եւ պար բռնող կիները պատասխան տալով կ'երգէին ու կ'ըսէին,

Սաւուղ իր հազարաւորները վարկաւ, Աւ Դաւիթ իր բիւրաւորները:

8 - Եւ Սաւուղ խիտա բարկացաւ ու այս խօսքին համար դժուարեցաւ, ու ըսաւ, Բիւրաւորները Դաւիթի տուին, ու հազարաւորները ինծի տուին. ու հիմա թագաւորութենէ ուրիշ Խոջ պահաւ հոյ անոր: 9 - Եւ այն օրէն ի վեր Սաւուղ ծուռ աչքով կը նայէր Դաւիթի:

10 - Աւ հետեւեալ օրը Սաւուղի վրայ Ասատեմէ չար ոգի եկաւ, ու տանը մէջ մարգարէութիւն ըրաւ. և Դաւիթ ուրիշ անգամներու պէս իր ձեռքով Խոջ կը վարնէր. ու Սաւուղի ձեռքը նիզակ կար: 11 - Եւ Սաւուղ նիզակը նետեց՝ ըսելով, Դաւիթը պատանի վրայ պիտի գամեմ. բայց Դաւիթ անոր երեսէն երկու անգամ մէկդի քաշուեցաւ: 12 - Աւստի Սաւուղ Դաւիթի երեսէն կը վախնար, քանզի Տէրը անոր հետ էր. բայց Սաւուղէ հեռացեր էր: 13 - Եւ Սաւուղ զանհկա իր քովէն հեռացուց, ու զանհկա հազարապետ ըրաւ. ու անհկա ժողովուրդին առջև կ'ելլէր կը մտնէր: 14 - Եւ Դաւիթ իր ամէն ճամբաներուն մէջ իմաստութեամբ կը վարուէր. ու Տէրը անոր հետ էր: 15 - Եւ Սաւուղ անոր այնքան իմաստութեամբ վարուիլը տեսնելով՝ անոր երեսէն կը վախնար: 16 - Աւ բոլոր Իսրայէլ և Յուդա Դաւիթը կը սիրէին, քանզի անոնց առջև անհկա կ'ելլէր կը մտնէր:

17 - Եւ Սաւուղ Դաւիթի ըսաւ, Ահա իմ մեծ աղջիկա Մերովբը քեզի կին պիտի տամ. միայն թէ դուն ինծի զօրաւոր մէկը եղի, ու Տէրոջը պատերազմները պատերազմէ. քանզի Սաւուղ ըսաւ, Անոր վրայ իմ ձեռքս չըլլայ, այլ Փղըշտացուց ձեռքը անոր վրայ ըլլայ: 18 - Եւ Դաւիթ Սաւուղի

ըսաւ, Ես ո՞վ եմ, ու իմ կեանքս ի՞նչ
իմ հօրս սպգատո՞ւմը Իսրայէլի մէջ
ի՞նչ է՝ որ թագաւորին փեսայ ըլլամ:
19 - Եւ Սաւուղի աղջիկը Մերովբ Դաւ-
ւիթի արուելու առէն Մաւուլացի Եդ-
րիէլի տրուեցաւ:

20 - Աւ Սաւուղի Մեղքող աղջիկը
կը սիրէր Դաւիթը. ու երբ Սաւուղի
իմացուցին, այս բանը անոր աչքերուն
հաճոյ երեցաւ: 21 - Եւ Սաւուղ ը-
սաւ, Ես զանհկա անոր տամ՝ որպէս
զի անոր որոգոյթ ըլլայ, ու Փղշտաց-
ւոց ձեռքը անոր վրայ ըլլայ: Աւստի
Սաւուղ Դաւիթի ըսաւ, Ինձի այսօր
*երկրորդ փեսայ եղիր: 22 - Եւ Սա-
ւուղ իր ծառաներուն հրամայեց որ
Դաւիթի հետ ծածկաբար խօսին ու
ըսեն, Ահա թագաւորը քեզի հաւնե-
ր է, ու անոր բոլոր ծառաները քեզ կը
սիրեն. ուստի հիմա թագաւորին փե-
սայ եղիր: 23 - Եւ Սաւուղի ծառա-
ները այս խօսքերը Դաւիթի ականջնե-
րուն զրուցեցին. ու Դաւիթ ըսաւ,
Թագաւորի փեսայ ըլլալը ձեր աչքին
պզտի՞կ բան կ'երեւնայ. քանզի ես աղ-
քատ ու աննշան մարդ մըն եմ: 24 -
Եւ Սաւուղի ծառաները անոր իմացու-
ցին ու ըսին, Դաւիթ այսպէս խօսեցաւ:
25 - Եւ Սաւուղ ըսաւ, Դաւիթի այս-
պէս ըսէք, Թագաւորը «-բիշ օժիտ չու-
զեր, բայց միայն Փղշտացւոց հարիւր
անթլփատութիւնը, որպէս զի թագա-
ւորին թշնամիներէն վրէժ առնուի.
(ու Սաւուղ կը խորհէր Դաւիթը Փղըշ-
տացւոց †ձեռքը մատնել.) 26 - Աւ
երբ անոր ծառաները այս խօսքերը Դա-
ւիթի իմացուցին, այս բանը Դաւիթի
աչքերուն աղէկ երեցաւ որ թագա-
ւորին փեսայ ըլլայ: 27 - Աւստի օրե-
րուն լմնալէն առաջ՝ Դաւիթ ելաւ,
ու իր մարդոցմով գնաց, և Փղշտացի-
ներէն երկու հարիւր մարդ մեռցուց.
ու Դաւիթ անոնց անթլփատութիւն-
ները բերաւ, ու զանոնք լման թագա-
ւորին տուին, որպէս զի թագաւորին
փեսայ ըլլայ: Աւ Սաւուղ իր Մեղքող
աղջիկը կին տուաւ անոր: 28 - Եւ Սա-
ւուղ երբ տեսաւ ու հասկցաւ որ Տէրը
Դաւիթի հետ է, ու Սաւուղի Մեղքող
աղջիկը զանհկա կը սիրէ, 29 - Սաւուղ
ա՛յլ աւելի վախցաւ Դաւիթէ. և Սա-

ւուղ շարունակ Դաւիթի թշնամու-
թիւն կ'ընէր: 30 - Աւ Փղշտացւոց իշ-
խանները ելան, ու անոնց ելլելէն ետքը
Դաւիթ Սաւուղի ամէն ծառաներէն
աւելի իմաստութեամբ կը վարուէր. ու
անոր անուը շատ հռչակաւոր եղաւ:

ԳԼ. ԺԹ

Եւ Սաւուղ իր սրբւոյն Յովնաթանի
ու իր ամէն ծառաներուն ըսաւ որ Դա-
ւիթը մեռցնեն: 2 - Բայց Սաւուղի սր-
դին Յովնաթան Դաւիթը շատ կը սի-
րէր. ու Յովնաթան Դաւիթի իմացուց
ու ըսաւ, Իմ հայրս Սաւուղ քեզ մեռ-
ցնել կ'ուզէ. ուրեմն հիմա մինչև առ-
տու զգոյշ կենաս, ու ծածուկ տեղ մը
նստէ ու պահուէ. 3 - Աւ ես ելլեմ, և
քու նստած արտիգ մէջ հօրս քով
կայնիմ, ու քեզի համար իմ հօրս հետ
խօսիմ, և ինչ որ իմանամ՝ քեզի պատ-
մեմ: 4 - Աւ Յովնաթան Դաւիթի վրա-
յով աղէկ Խօ՞տե՞ր զրուցեց իր հօրը
Սաւուղի, և անոր ըսաւ, Ով թագա-
ւոր, քու ծառայիդ Դաւիթի դէմ
մեղք մի գործեր. քանզի անհկա քեզի
դէմ մեղք մը չըրաւ, ու անոր գոր-
ծերը քեզի շատ աղէկ են: 5 - Վասն
զի իր հոգին ձեռքին մէջ դրաւ, ու
Փղշտացին զարկաւ, և Տէրը բոլոր Իս-
րայէլի մեծ փրկութիւն մը շնորհեց.
դուն տեսար և ուրախացար. և ինչո՞ւ
համար Դաւիթը առանց պատճառի
մեռցնելով՝ անմեղ արեան մեղք պիտի
մտնես: 6 - Եւ Սաւուղ Յովնաթանի
խօսքը մտիկ ըրաւ, ու Սաւուղ երգում
ըրաւ՝ Ե՛ւրբ, Տէրը կենդանի է որ ա-
նհկա պիտի չմեռցուի: 7 - Եւ Յովնա-
թան Դաւիթը կանչեց, ու Յովնաթան
այս բոլոր խօսքերը անոր պատմեց. և
Յովնաթան Դաւիթը Սաւուղի տարաւ,
ու անհկա առաջուան պէս անոր առ-
ջև կը կայնէր:

8 - Եւ նորէն պատերազմ՝ եղաւ. ու
Դաւիթ ելաւ Փղշտացւոց հետ պատե-
րազմ ըրաւ, ու անոնց մէջ մեծ կոտո-
րած մը ըրաւ. և անոնք անոր առջեւէն
փախան: 9 - Աւ Սաւուղի վրայ Տէրոջմէ
չար ոգի եկաւ. և անհկա իր տունը կը
նստէր, ու նիզակը իր ձեռքն էր. Դա-
ւիթ ալ իր ձեռքով նուագարանը կը
զարնէր: 10 - Եւ Սաւուղ ուզեց որ
Դաւիթը նիզակով զարնէ ու պատին
վրայ Գ՞տ. բայց անհկա Սաւուղի երե-

*Կա՞մ, երկու աղջիկներուն մէկովը
†Կա՞մ, ձեռքովը կորսնցնել

սեն՝ մեկդի քաշուեցաւ, և Սաւուղը նի-
 զակը պատին զարկաւ. ու Դաւիթ փա-
 խաւ, և այն գիշերը ազատեցաւ: 11 -
 Բայց Սաւուղ Դաւիթի տունը մար-
 դիկ զրկեց, որպէս զի զանհկա պաշա-
 րեն ու առաւօտուն մեռցնեն: Սակայն
 Դաւիթի կինը Մեղքող անոր իմացուց
 ու ըսաւ, Եթէ այս գիշեր քու անձդ
 չտարեցնես, վաղը քեզ պիտի մեռցը-
 նեն: 12 - Ուստի Մեղքող Դաւիթը
 պատուհանէն վար իջեցուց, և անհկա
 գնաց, փախաւ ու ազատեցաւ: 13 -
 Ու Մեղքող արձան մը առաւ, և զա-
 նհկա անկողինին մէջ դրաւ, ու անոր
 գլխուն տակ այծի մտղէ բարձ մը դրաւ,
 և զանհկա ծածկոցով մը ծածկեց:
 14 - Ու երբ Սաւուղ մարդիկ զրկեց
 Դաւիթը բռնելու համար, անհկա ը-
 սաւ, Հիւանդ է: 15 - Եւ Սաւուղ Դաւիթ
 մարդիկ զրկեց Դաւիթը տեսնելու հա-
 մար, ու ըսաւ, Զանհկա անկողինովը
 ինծի բերէք, որպէս զի մեռցնեմ: 16 -
 Ուստի այն մարդիկը եկան. և ահա
 անկողինին մէջ արձան մը կար, ու
 գլխուն տակ այծի մտղէ բարձ մը:
 17 - Եւ Սաւուղ Մեղքողի ըսաւ, Զիս
 ինչո՞ւ համար այսպէս խաբեցիր, ու
 իմ թշնամիս թող տուիր ու ազատե-
 ցաւ: Ու Մեղքող Սաւուղի ըսաւ, Ա-
 նհկա ինծի ըսաւ, Թող տուր զիս որ-
 պէս զի երթամ: Ինչո՞ւ մեռցնեմ քեզ:
 18 - Այսպէս փախաւ Դաւիթ ու
 ազատեցաւ, և Ռամա գնաց Սամուէլի
 քով, ու անոր պատմեց այն ամէնը
 զոր Սաւուղ ըրեր էր իրեն: Ետքը ա-
 նհկա Սամուէլի հեռ գնաց, ու Նա-
 ւաթի մէջ բնակեցան: 19 - Եւ Սա-
 ւուղի իմացուցին ու ըսին, Ահա Դա-
 ւիթ Ռամայի Նաւաթին մէջ է: 20 -
 Այն ատեն Սաւուղ մարդիկ զրկեց
 որպէս զի Դաւիթը բռնեն, ու անոնք
 մարգարէութիւն ընող մարգարէնե-
 րուն ժողովքը և անոնց վրայ կեցող
 Սամուէլը երբ տեսան, Աստուծոյ Հո-
 գին Սաւուղի զրկած մարդոց վրայ ե-
 կաւ, ու անոնք ալ մարգարէութիւն
 ըրին: 21 - Ու երբ Սաւուղի իմացու-
 ցին, ուրիշ մարդիկ զրկեց, և անոնք
 ալ մարգարէութիւն ըրին: Ու Սաւուղ
 նորէն երրորդ անգամ մարդիկ զրկեց,
 և անոնք ալ մարգարէութիւն ըրին:
 22 - Այն ատեն ինք ալ Ռամա գնաց,

ու մինչև Սոկքովի մեծ ջրհորը գալով,
 հարցուց ու ըսաւ, Սամուէլ ու Դա-
 ւիթ ո՞ւր են: Եւ Դաւիթ ըսաւ, Ահա
 անոնք Ռամայի Նաւաթին են: 23 -
 Ուստի Ռամայի Նաւաթը գնաց. և
 անոր վրայ ալ Աստուծոյ Հոգին եկաւ,
 ու մինչև Ռամայի Նաւաթը հասնիրը
 ճամբան երթալով մարգարէութիւն
 կ'ընէր: 24 - Եւ անհկա ալ իր լաթերը
 հանեց, ու Սամուէլի առջև անհկա ալ
 մարգարէութիւն կ'ընէր, և այն բոլոր
 օրը ու բոլոր գիշերը մերկ ինկաւ քե-
 րէն. անոր համար կ'ըսեն թէ Սա-
 ւուղ ալ մարգարէներուն մէջ է:

ԳԼ. Ի

Եւ Դաւիթ Ռամայի Նաւաթէն
 փախաւ, ու գնաց Յոֆնաթանի առջև
 ըսաւ, Ես ի՞նչ ըրեր եմ, յանցանքս
 ի՞նչ է, ու ի՞նչ մեղք գործեր եմ քու
 հօրդ առջև, որ անհկա զիս մեռցնել
 կ'ուզէ: 2 - Եւ Յոֆնաթան ըսաւ անոր,
 Քա՛ն լիցի, դուն պիտի չմեռնիս. ահա
 իմ հայրս մեծ կամ պղտիկ բան մը
 չըներ առանց ինծի յայտնելու. ու իմ
 հայրս ինչո՞ւ համար այդ բանը ինծմէ
 պիտի պահէ. այդպիսի բան չկայ: 3 -
 Եւ Դաւիթ երգում ալ ըրաւ ու ըսաւ,
 Քու հայրդ աղէկ գիտէ որ ես քու առ-
 ջեւդ շնորհք գտեր եմ. անոր համար
 կ'ըսէ թէ Յոֆնաթան այս բանը չգիտ-
 նայ, չըլլայ որ վշտանայ. բայց կենդանի
 է Տէր ու կենդանի է քու անձդ, որ իմ
 ու մահուան մէջանող միայն մէկ քայլ
 մնացեր է: 4 - Եւ Յոֆնաթան ըսաւ
 Դաւիթի, †Սրտիդ ուզած բանը ինչէ
 ըսէ, ու՞ ես քեզի ընեմ: 5 - Եւ Դաւիթ
 ըսաւ Յոֆնաթանի, Ահա վաղը ամսա-
 գլուխ է, ու պէտք է որ ես թագաւո-
 րին հեռ կերակուր ուտելու համար *ե-
 շան նստիմ. սակայն զիս թող տուր, որ
 մինչև երրորդ օրուան իրիկունը դաշ-
 տին մէջ պահուիմ. 6 - Եթէ քու
 հայրդ զիս փնտրելու ըլլայ, ըսես որ
 Դաւիթ ինծի շատ աղաչեց որ արտոր-
 նօք իր քաղաքը Բեթլէհէմ երթայ.
 քանզի հոն էր բոլոր ազգատոհմին տա-
 րեկան զոհը կ'ըլլայ: 7 - Եթէ այսպէս
 ըսէ, Աղէկ, քու ծառայիդ խաղա-

*Եբբ. իմ ականջիս. համար 12: ԳԼ.
 Թ. 15:
 †Եբբ. ինչ որ քու անձդ ինծի ըսէ,

*Եբբ. թերափիմ

զուլթիւն է . բայց եթէ խիստ բարկանայ , գիտցիր որ անիկա որոշեր է ինչի չարութիւնը ընել : 8 - Եւ ծառայիդ ողորմութիւնը բռէ , քանզի դուն քու ծառայիդ հետ Տէրոջը անուշակութեամբ բռիր . ու եթէ իմ վրաս յանցանք մը կայ , դուն մեղքուր զիս . ինչո՞ւ համար զիս քու հօրդ տանիս : 9 - Եւ Յովնաթանը ըսաւ , Քա՛ւ լիցի որ ես ստոյգ գիտնալով թէ իմ հօրս կողմանէ քեզի համար չարիք որոշուած է , քեզի չիմացնեմ : 10 - Ու Դաւիթ ըսաւ Յովնաթանի , Հապա եթէ քու հայրդ քեզի խտուրթեամբ պատասխան տայ , ինձի ո՞վ պիտի իմացնէ : 11 - Եւ Յովնաթանը ըսաւ Դաւիթի , Եկուր , դաշար ելլենք . ու երկուքը դաշար ելան : 12 - Եւ Յովնաթանը ըսաւ Դաւիթի , Վհա՛յ է Խորայէլի Տէր Աստուածը . եթէ վաղը այս ատեն կամ միւս օր իմ հայրս քննելով տեսնեմ թէ Դաւիթի համար աղէկութիւն մը կայ , և նոյն ատեն մարդ չըրկեմ ու քեզի չյայտնեմ : 13 - Տէրը Յովնաթանի այսպէս ու ասկէ աւելի ընէ . բայց եթէ իմ հայրս քեզի չարութիւն մը ընել ուզէ , զանիկա ու քեզի պիտի յայտնեմ , ու քեզ պիտի արձակեմ , որպէս զի խաղաղութեամբ երթաս . ու Տէրը քեզի հետ ըլլայ , ինչպէս իմ հօրս հետ էր : 14 - Եւ ոչ միայն իմ կենդանութեանս ատեն դուն ինձի Տէրոջը ողորմութիւնը ընես՝ որպէս զի ես չմեռնիմ , 15 - Մանաւանդ քու ողորմութիւնդ իմ առնէս յաւիտեան չկտրես , ոչ ալ այն ատեն երբ Տէրը Դաւիթի բոլոր թշնամիները երկրի վրայէն վերցնէ : 16 - Եւ Յովնաթանը Դաւիթի տանը հետ դաշնակցութիւն ըրաւ , ու ըսաւ , Տէրը Դաւիթի թշնամիներէն վրէժ առնէ : 17 - Ու Յովնաթանը Դաւիթի նորէն երգում ընել տուաւ՝ զանիկա սիրելուն համար . քանզի զանիկա իր անձին պէս կը սիրէր : 18 - Եւ Յովնաթանը անոր ըսաւ , Վաղը ամառադուր է , ու դուն պիտի փնտռուիս , քանզի քու տեղդ պարապ պիտի մնայ : 19 - Ու երրորդ օրը շուտով իջնես , և գաս այն տեղ՝ ուր գործին օրը պահուեցար , ու Եզեյի քարին քով նստիս : 20 - Ու ես անոր քով նշանի մը նետելու պէս՝ երէք նետ պիտի նետեմ : 21 - Եւ ահա մանչը պիտի զրկեմ՝ ըսելով , Գնա , նետերը գտիր . ու եթէ մանչուն ըսեմ , Ահա նետերը

քեզմէ առդին են , զանոնք տու . այն ատեն գաս , քանզի քեզի խաղաղութիւն է , և Տէրը կենդանի է որ բան մը չկայ . 22 - Բայց եթէ մանչուն այսպէս ըսեմ , Ահա նետերը քեզմէ անդին են . այն ատեն երթաս , քանզի Տէրը քեզ կը զրկէ : 23 - Ու այս խօսքին համար զոր ես ու դուն խօսեցանք , ահա Տէրը իմ ու քու մէջտեղ յաւիտեան վհայ ըլլայ : 24 - Ուստի Դաւիթ դաշարին մէջ պահուեցաւ . և ամառադուրը հասնելով թագաւորը կերակուր ուտելու համար անուշակութեամբ : 25 - Եւ թագաւորը իր սովորութեանը պէս իր աթոռը , պատին կ'ընէր աթոռը , նրստաւ . ու Յովնաթանը ստիպուեցաւ , և Սաւուղի քով Աբեհնէր նստաւ , ու Դաւիթի տեղը պարապ մնաց : 26 - Եւ Սաւուղ այն օրը բան մը չխօսեցաւ , քանզի ըսաւ , Անոր բան մը պատահեր է . անիկա մաքուր չէ , անտարակոյս մաքուր պիտի չըլլայ : 27 - Ու հետեւեալ օրը , ամուսն երկրորդ օրն ալ , Դաւիթի տեղը պարապ էր . ուստի Սաւուղ իր որդւոյն Յովնաթանի ըսաւ , Յետէի որդին ինչո՞ւ համար երէկ ու այսօր սեղան չեկաւ : 28 - Եւ Յովնաթանը Սաւուղի պատասխան տուաւ , Դաւիթ ինձի շատ աղաչեց որ Բեթլէհէմ ելնայ , 29 - Ու ըսաւ , Շնորհք բռէ , զիս զրկէ , քանզի այն քաղաքին մէջ մեր ազգատոհմը զոհ կ'ընէ , ու իմ եղբայրս ինձի պատուիրած է . և եթէ քու աչքերուդ առջև շնորհք գտեր եմ , կ'աղաչեմ , զիս թող տուր որ երթամ ու եղբայրներս տեսնեմ . այս պատճառաւ թագաւորին սեղանը չեկաւ : 30 - Եւ Սաւուղի բարկութիւնը բորբոքեցաւ Յովնաթանի դէմ , ու անոր ըսաւ , Ով ապատամբ ու չար զաւակ , ես չե՞մ գիտեր որ դուն Յետէի որդին ընտրեցիր՝ քեզ ու մայրդ խոյտառակելու՞ համար : 31 - Քանզի քանի որ Յետէի որդին երկրի վրայ ողջ է , դուն պիտի չհաստատուիս , ոչ ալ քու թագաւորութիւնդ . ուստի հիմա մարդ զրկէ ու զանիկա ինձի բեր , քանզի անիկա մահու քարթանի է : 32 - Եւ Յովնաթանը իր հօրը Սաւուղի պա-

*Եբբ. քու ամօթիդ և մօրդ մերկութեանը ամօթին
 †Եբբ. որդի

տասխան տուաւ ու ըսաւ, Ինչո՞ւ համար պիտի մեռցուի, անիկա ի՞նչ ըրաւ: 33 - Եւ Սաւուղ նիզակը նետեց անոր, որպէս զի զանիկա զարնէ. այն ատեն Յովնաթան իմացաւ որ իր հայրը որոշեր է Դաւիթը մեռցնել: 34 - Ու Յովնաթան սաստիկ բարկութեամբ սեղանէն ելաւ, ու ամսուն երկրորդ օրը կերակուր չկերաւ. քանզի Դաւիթի համար սիրաբ կտարեցաւ, որովհետեւ իր հայրը զանիկա անարգեց:

35 - Եւ Յովնաթան առաւօտուն դաշար ելաւ, ինչպէս Դաւիթի հետ ժամանակ որոշեր էր, ու իրեն հետ պզտիկ մանչ մը կար: 36 - Եւ իր մանչուն ըսաւ, Վազէ ու այս իմ նետերու նետերս գտիր. ու մանչուն վազած ատենը անիկա նետը անկէ անդին նետեց: 37 - Ու երբ մանչը Յովնաթանի նետած նետին տեղը գնաց, Յովնաթան մանչուն ետեւէն կանչելով ըսաւ, Ահա նետը քեզմէ անդին է: 38 - Եւ Յովնաթան մանչուն ետեւէն կանչեց, Ծուռ բրէ, արտորցիր, մի կենար: Ու Յովնաթանի մանչը նետերը ժողվեց, իր տէրոջը եկաւ: 39 - Բայց մանչը բան մը չէր գիտեր. այս բանը միայն Յովնաթան ու Դաւիթ գիտէին: 40 - Եւ Յովնաթան իր գործիքները իր մանչուն տուաւ ու անոր ըսաւ, Գնա, քաղաքը տար: 41 - Եւ մանչուն գացածին պէս Դաւիթ հարաւային կողմէն ելաւ, ու երեսի վրայ գետինը ինկաւ ու երեք անգամ երկրպագութիւն ըրաւ. և մէկզմէկ համբուրեցին ու իրարու վրայ լացին, մինչև որ Դաւիթ չափէ դուրս լացաւ: 42 - Եւ Յովնաթան Դաւիթի ըսաւ, Գնա խողաղութեամբ, ինչպէս երկուքս ալ Տէրոջը անունովը երգում ըրինք ու ըսինք, Տէրը իմ ու քու մէջտեղ, և իմ սերունդիս ու քու սերունդիդ մէջտեղ Աստուծոյ մինչև յաւիտեան: 43 - Եւ Դաւիթ ելաւ գնաց. Յովնաթան ալ քաղաքը մտաւ:

ԳԼ. ԻՍ.

Ու Դաւիթ նոր գնաց Աքիմելէք քահանային. և Աքիմելէք զարհուրեց իր Դաւիթը դիմաւորեց, ու անոր ըսաւ, Ինչո՞ւ համար մինակ ես ու քեզի հետ մարդ չկայ: 2 - Եւ Դաւիթ Աքիմելէք քահանային ըսաւ, Թագաւորը ինձի բան մը հրամայեց ու ինձի ըսաւ,

Մա՛րդ մը չգիտնայ այն բանը որու համար քեզ կը շրկեմ, ու ինչ որ քեզի հրամայեցի. ու ես մանչերուն մէյմէկ տեղ որոշեր եմ: 3 - Հիմա ի՞նչ կայ ձեռքիդ տակ. ինձի հինգ հաց տուր, կամ ինչ որ կը գտնուի: 4 - Եւ քահանան Դաւիթի պատասխան տուաւ ու ըսաւ, Ձեռքիս տակ հասարակ հաց չկայ, միայն սուրբ հաց կայ. եթէ մանչերը գոնէ կիներէ զգուշացած են՝ Բա՛յ «-բէն: 5 - Եւ Դաւիթ քահանային պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Իրաւցընէ կիները մեզմէ հեռու են իմ ճամբայ ելած օրէս, այսինքն երէկուքնէ ու միւս օրուքնէ. և մանչերուն ամանները մութուր են. և այս ալ «հասարակ հաց կրնայ սեպուիլ», մանաւանդ որ այսօր ամաններուն մէջ «-բիշ հաց կը սրբագործուի: 6 - Ուստի քահանան սուրբ հաց տուաւ անոր. քանզի հոն ուրիշ հաց չկար, բայց միայն առաջաւորութեան հացը, որ Տէրոջը առջևէն կը վերցուէր, ու վերցուած օրը տաք հաց կը դրուէր: 7 - Եւ այն օրը Սաւուղի ծառաներէն մէկը հոն Տէրոջը առջև արգիլուած էր, ու անոր անունը Եդովմայեցի Դովեկ էր. անիկա Սաւուղի հովիւներուն գլուխն էր: 8 - Եւ Դաւիթ Աքիմելէքի ըսաւ, Այս տեղ քու ձեռքիդ տակ նիզակ մը կամ սուր մը չկայ. քանզի թագաւորին գործինս տիպաղական ըլլալուն համար իմ սուրս ու զէնքերս ինձի հետ չառի: 9 - Եւ քահանան ըսաւ, Ահա Փղշտացի Գողիաթի սուրը՝ զոր Ելայի հովիտին մէջ մեռցուցիր, անիկա եփուտին ետեւը լաթի մը մէջ փաթթուած կը կենայ. եթէ կ'ուզես զանիկա առնել՝ առ, քանզի հոս անկէ ուրիշ չկայ. ու Դաւիթ ըսաւ, Անոր նմանը չկայ. զանիկա ինձի տուր:

10 - Եւ այն օրը Դաւիթ ելաւ ու Սաւուղի երեսէն փախաւ, և Գէթի Անքուս թագաւորին գնաց: 11 - Ու Անքուսի ծառաները անոր ըսին, Երկրին թագաւորը Դաւիթ ասիկա չէ՞. ասոր համար չէ՞ր որ պար բռնողները պատասխան տալով կ'երգէին ու կ'ըսէին,

Սաւուղ իր հազարաւորները զարկաւ, Ու Դաւիթ իր բիւրաւորները:

12 - Եւ Դաւիթ այս խօսքերը իր սրտին

*Եբբ. կերպով մը հասարակ է

մէջ դրաւ, ու Գէթի թագաւորին Անքուսի երեսէն շատ վախցաւ : 13 - Եւ անոնց առջև իր դէմքը փոխելով՝ անոնց ձեռքին տակ զինք խենդ ձեւացուց . դռներու փեղկերուն վրայ նշաններ կը սծէր, ու լարձուկները մօրուքին վրայ կը վազցնէր : 14 - Եւ Անքուս իր ծառաներուն ըսաւ, Ահա այս մարդուն խենդ ըլլալը տեսաք, զանհկա ինչո՞ւ համար ինծի բերիք : 15 - Միթէ ես խենդերու կարօ՞ւ եմ, որ տաիկա իմ՝ առջեւս բերիք խենդութիւն ընելու համար . տաիկա իմ տունս մանէ :

ԳԼ. ԻԲ

Եւ Դաւիթ անկէ գնաց, ու ողջ աւուղջ Ոգոզմի քարայրը հասաւ . ու իր եղբայրները և իր հօրը բոլոր տունը լսեցին, ու հոն անոր իջան : 2 - Եւ բոլոր նեղութեան մէջ եղող, պարաք ունեցող ու *սիրար վերաւորուած՝ մարդիկը անոր քով ժողովուեցան, և անհկա անոնց վրայ զօրագլուխ եղաւ . ու անոր քով չորս հարիւրի չափ մարդ եղան :

3 - Եւ Դաւիթ անկէ Մովաբի Մասփան գնաց, ու Մովաբի թագաւորին ըսաւ, Կ'աղաչեմ, իմ հայրս ու մայրս ձեր քով +կենան . մինչև որ գիանամ թէ Աստուած ինծի ի՛նչ պիտի ընէ : 4 - Ու զանոնք Մովաբի թագաւորին առջև բերել տուաւ . և անոնք անոր քով բնակեցան որչափ ժամանակ որ Դաւիթ բերդին մէջ կեցաւ :

5 - Եւ Գադ մարգարէն Դաւիթի ըսաւ, Բերդին մէջ մի նստիր, ելիր Յուզայի երկիրը գնա : Ու Դաւիթ գնաց Հարեթի անտառը՝ մտաւ :

6 - Եւ Սաւուղ լսեց որ Դաւիթ ու անոր հետ եղող մարդիկը գանուեր են . ու Սաւուղ Գաբաայի մէջ Ռամայի †ծառին տակ նստեր էր, ու նիզակը իր ձեռքն էր, և իր ամէն ծառաներն ալ իր բոլորափքը կայներ էին : 7 - Ու Սաւուղ իր քով կայնող ծառաներուն ըսաւ, Ով որդիք Բենիամինի, մտիկ ըրէք . Միթէ Յեասէի որդին ամէնուդ այ արտեր ու այգիներ՝ պիտի ապ, ամէնդ ալ հազարապետներ ու հար-

իւրապետներ՝ պիտի ընէ, 8 - Որ ամէնդ ինծի դէմ՝ միաբաներ էք . ու Յեասէի որդւոյն իմ որդւոյս հետ ըրած գաշնակցութիւնը իմ ականջիս ըսող մը չկայ . և ձեր մէջ մարդ մը չկայ որ ինծի համար ցաւի, ու ինծի յայտնէ թէ իմ՝ որդիս իմ՝ ծառաս ինծի դէմ սաք հանեց, որպէս զի դարանամուտ ըլլայ, ինչպէս *սոսոր իջ *տնէ+ :

9 - Եւ Սաւուղի ծառաներուն վերակացուն, Եգովմայեցի Գովէկ, պատասխան տուաւ ու ըսաւ, Յեասէի որդին տեսայ, որ Նոբ եկաւ Աքիտովբի որդւոյն Աքիմելէքի . 10 - Ու անհկա անոր համար Տէրօջը հարցուց, ու անոր պաշար տուաւ, և անոր Փղշտացի Գողիթի սուրը տուաւ :

11 - Այն ատեն թագաւորը մարդ զրկեց, ու Աքիտովբի որդին Աքիմելէք քահանան ու անոր հօրը բոլոր տունը, Նորի մէջ եղող քահանաները, կանչեց . ու ամէնն ալ թագաւորին եկան :

12 - Եւ Սաւուղ ըսաւ, Ով որդի Աքիտովբայ, մտիկ ըրէ . ու անհկա ըսաւ, Ահա հոս եմ, տէր իմ : 13 - Եւ Սաւուղ անոր ըսաւ, Ինչո՞ւ համար դուն ու Յեասէի որդին ինծի դէմ միաբանեցաք, ու դուն անոր հաց ու սուր տուիր, և անոր համար Աստուծոյ հարցուցիր, որպէս զի անհկա ելլէ ինծի դարանամուտ ըլլայ, ինչպէս սոսոր ի՛երէ-նայ : 14 - Եւ Աքիմելէք պատասխան տուաւ թագաւորին ու ըսաւ, Քու բոլոր ծառաներուդ մէջ ո՞վ հաւատարիմ է Դաւիթի պէս, որ թագաւորի փեսայ, քու *ատեանիդ վերակացուն, ու քու տանդ մէջ պատուաւոր է : 15 - Միթէ այսօր սկսայ անոր համար հարցնելու . քու՛ւ լիցի . թագաւորը իր ծառային վրայ * - իմ հօրս բոլոր տանը վրայ *սոսոր բան մը չգնէ, քանզի քու ծառայդ այս բոլոր բաներէն պղտիկ կամ մեծ բան մը չէր գիտեր :

16 - Եւ թագաւորը ըսաւ, Ով Աքիմելէք, անպատճառ պիտի մեռնիս, թէ՛ դուն և թէ՛ քու հօրդ բոլոր տունը : 17 - Եւ թագաւորը իր քով կայնող սուրհանդակներուն ըսաւ, Դարձէք, Տէրօջը քահանաները մեռցուցէք, քանզի անոնց ձեռքն ալ Դաւիթի հետ է, և որովհետև անոր փախչիլը գիտ-

* Եբր. գաւնահոգի
+ Եբր. ելլեն
‡ Կ-մ, մոշային

* Կ-մ, ատեանդ մանող, և խ-մ, հրամաններովդ գացող

նալով՝ ինծի չյայանեցին . բայց թագաւորին ծառաները չուզեցին իրենց ձեռքը երկնցնել՝ Տէրոջը քահանաները զարնելու : 18 - Եւ թագաւորը Գովեկի ըսաւ , Գուն դարձիր ու քահանաները զարկ : Ու Եդովմայեցի Գովեկ դարձաւ և քահանաները զարկաւ , ու այն օրը անիկա ու թսուներհինգ մարդ մեռցուց , որոնք թթանէ եփուա կը հագնէին : 19 - Եւ քահանաներուն Նօբ քաղաքը սուրի բերնէ անցուց . այր մարդէն մինչև կին մարդը , տղայէն մինչև կաթնկեր մանուկը , ու մինչև արջաուր , էշը ու սշտարը սուրի բերնէ անցուց :

20 - Եւ Աբիտովբեան Աբիմեէլքի մէկ որդին , որուն անունը Աբիաթար էր , ազատեցաւ ու փախաւ Գաւիթի ետեւէն քնաց : 21 - Եւ Աբիաթար Գաւիթի պատմեց թէ Սաւուղ Տէրոջը քահանաները մեռցուց : 22 - Եւ Գաւիթ Աբիաթարի ըսաւ , Ես այն օրը գիտէի որ Եդովմայեցի Գովեկ հոն գտնուելով՝ անշուշտ Սաւուղի պիտի պատմէ . քու հօրդ տանը բոլոր մարդոց մահուանը ես պատճառ եղայ : 23 - Իմ քովս նստէ , մի վախնար . քանզի իմ հօգիս փնտուողը քու հօգիդ ալ կը փնտուէ , բայց դուն իմ քովս ապահով ես :

ԳԼ ԻԳ

Եւ Գաւիթի իմացուցին՝ ըսելով , Ահա Փղշտացիք Կէիլայի հետ պատերազմ կ'ընեն , ու կալերը կը կողոպտեն : 2 - Եւ Գաւիթ Տէրոջը հարցուց ու ըսաւ , Երթամ այս Փղշտացիները զարնե՞մ : Եւ Տէրը Գաւիթի ըսաւ , Գնա Փղշտացիները զարկ ու Կէիլան ազատէ : 3 - Եւ Գաւիթի մարդիկը անոր ըսին , Ահա մենք հոս Յուդայի մէջ կը վախնանք . ալ ո՛րչափ աւելի՛ եթէ Կէիլա երթանք Փղշտացուց գունդերուն դէմ : 4 - Ու Գաւիթ նորէն մէյմըն ալ Տէրոջը հարցուց . և Տէրը անոր պատասխան տուաւ ու ըսաւ , Ելի՛ր , Կէիլա իջի՛ր , քանզի ես Փղշտացիները քու ձեռքդ կու տամ : 5 - Եւ Գաւիթ իր մարդոցմով Կէիլա գնաց , ու Փղշտացուց հետ պատերազմ ըրաւ . ու անոնց անատուները առաւ , և զանոնք մեծ հարուածով մը զարկաւ . ու Գաւիթ Կէիլայի բնակիչները

ազատեց : 6 - Եւ Աբիմեէլքի որդին Աբիաթար Գաւիթի քով Կէիլա փախած ատեն եփուար ձեռքը բռնած իջաւ :

7 - Ու երբ Սաւուղի իմացուցին թէ Գաւիթ Կէիլա մտեր է , Սաւուղ ըսաւ , Աստուած իմ ձեռքս մտաներ է զանիկա , քանզի դռներ ու նիգեր ունեցող քաղաքի մը մէջ մտեր գոցուեր է : 8 - Եւ Սաւուղ բոլոր ժողովուրդը պատերազմի կանչեց , որպէս զի Կէիլա իջնէ , ու Գաւիթը և անոր մարդիկը պաշարէ : 9 - Իսկ Գաւիթ իմացաւ որ Սաւուղ իրեն համար գաղտուկ չարութիւն մը կը հնարէ , ու Աբիաթար քահանային ըսաւ , Եփուար մտեցուր :

10 - Եւ Գաւիթ ըսաւ , Ով Տէր Աստուած Իսրայէլի , քու ծառագ ստոյգ լսեց որ Սաւուղ Կէիլայի վրայ գալ կ'ուզէ , որպէս զի քաղաքը իմ պատճառաւս աւրէ : 11 - Արդեօք Կէիլայի բնակիչները զիս անոր ձեռքը պիտի մտանե՞ն , «- ծառայիդ լսածին պէս Սաւուղ հոս պիտի իջնէ՞ . ով Տէր Աստուած Իսրայէլի , կ'աղաչեմ , ծառայիդ յայանէ : Եւ Տէրը ըսաւ , Պիտի իջնէ :

12 - Ու Գաւիթ ըսաւ , Կէիլայի բնակիչները զիս ու իմ մարդիկս Սաւուղի ձեռքը պիտի մտանե՞ն : Եւ Տէրը ըսաւ , Պիտի մտանեն : 13 - Ու ատի Գաւիթ ու անոր մարդիկը , վեց հարիւր մարդու չափ , ելան Կէիլայէ գացին , և ուր որ կրնային երթալ՝ կ'երթային . ու երբ Գաւիթի Կէիլայէ ելլելը Սաւուղի իմացուցին , հոն երթալէն ետ կեցաւ :

14 - Ու Գաւիթ անապատին մէջ ամուր տեղեր կը նստէր . ու Զիփի անապատին մէջ լեռան մը վրայ նստաւ : Եւ Սաւուղ ամէն օր զանիկա կը փրնաւէր , բայց Աստուած անոր ձեռքը չմտանեց զանիկա : 15 - Ու Գաւիթ տեսաւ որ Սաւուղ իր անձը փնտուելու ելեր է . և Գաւիթ Զիփի անապատը անատուի մը մէջ էր :

16 - Ու Սաւուղի որդին Յովաթան ելաւ անտառը գնաց Գաւիթի , ու անոր ձեռքը Աստուծով զօրացուց : 17 - Եւ անոր ըսաւ , Մի վախնար , քանզի իմ հօրս Սաւուղի ձեռքը քեզ պիտի չգտնէ , ու դուն Իսրայէլի վրայ թագաւոր պիտի ըլլաս , ու ես քու երկրորդ պիտի ըլլամ . և այս բանը իմ հայրս Սաւուղ ալ գիտէ : 18 - Ու երկուքը Տէրոջը առջև ուխտ ըրին . և

19 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները ազատեց : 20 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 21 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 22 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 23 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 24 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 25 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 26 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 27 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 28 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 29 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ : 30 - Եւ Գաւիթ Կէիլայի բնակիչները զարկաւ :

Գաւիթ անտառին մէջ մնաց , բայց Յովնաթան իր տունը դարձաւ :

19 - Աւ Զիփացիք Գաբառ ելան Սաւուղի ու ըսին, Ահա Գաւիթ մեր քով ամուր տեղերը անտառին մէջ, Եբեղա բլուրին վրայ, Եսիմոնի հարաւային կողմը պահուած է: 20 - Հիմա, սվ թագաւոր, ինչպէս քու անձդ իջնելու կը փափաքի՝ իջիր, ու զանհկա թագաւորին ձեռքը մտանելը մեզի մնայ: 21 - Աւ Սաւուղ ըսաւ, Գուք Տէրոջմէն օրհնեալ ըլլաք, որ ինծի ցաւակից եղաք: 22 - Աւրեմն գացէք տաւի յաղէկ դիտեցէք և անոր սոքին կոխած տեղը դիտեցէք ու տեսէք, և ի՞նչ ո՛վ զանհկա հոն տեսեր է. քանզի ինծի ըսած են թէ անհկա շատ խորամանկ է: 23 - Աւտի նայեցէք ու անոր բոլոր պահուելու տեղերը իմացէք, և «յադ» ստուգելով ինծի դարձէք, և ձեզի հետ երթամ. ու եթէ անհկա այն երկրին մէջ է, զանհկա Յուզայի բոլոր հազարաւորներուն մէջ աղէկ մը պիտի փնտռեմ: 24 - Աւ անոնք ելան և Սաւուղի առջեւէն Զիփ գացին. ու Գաւիթ իր մարդոցմով Մաոնի անապատը դաշտին մէջ, Եսիմոնի հարաւային կողմը, նստիւ էր: 25 - Եւ Սաւուղ իր մարդոցմով զանհկա փնտռելու գնաց. ու երբ Գաւիթի իմացուցին՝ վէմը իջաւ և Մաոնի անապատին մէջ նստաւ. ու Սաւուղ լսեց, ու Գաւիթի ետեւէն Մաոնի անապատը վազեց: 26 - Եւ Սաւուղ լեռանը այս կողմէն կ'երթար, Գաւիթ ալ իր մարդոցմով լեռանը անդի կողմէն կ'երթար. ու Գաւիթ կը փութար որ Սաւուղի երեսէն փախչի, բայց Սաւուղ ու իր մարդիկը Գաւիթի ու անոր մարդոցը չորս կողմը պատեցին, որպէս զի զանոնք բռնեն: 27 - Եւ յրաբեր մը եկաւ Սաւուղի ու ըսաւ, Շուտով եկուր, քանզի Փղշապիք երկիրը կոխեցին: 28 - Աւտի Սաւուղ Գաւիթը հալածելէն դարձաւ գնաց, որպէս զի Փղշապուց գէմ դնէ. անոր համար այն տեղին անունը *Սելա-մահլէգօթ ըսուեցաւ:

ԳԼ ԻԲ

Եւ Գաւիթ անկէ ելաւ ու Ենգադգիի ամուր տեղերը նստաւ: 2 - Աւ երբ

Սաւուղ Փղշապիքներէն ետ դարձաւ, անոր իմացուցին ու ըսին, Ահա Գաւիթ Ենգադգիի անապատին մէջ է: 3 - Եւ Սաւուղ բոլոր Եորայէլէ երեք հազար ընարուած մարդիկ առաւ, ու գնաց որպէս զի Գաւիթը ու անոր մարդիկը փնտռէ այժեամբերու ժայռերուն վրայ: 4 - Եւ ճամբուն վրայ եղող ոչխարներուն փարախները եկաւ, ու հոն քարայր մը կար. ու Սաւուղ *հարկաւորութեան համար ներս մտաւ. և Գաւիթ իր մարդոցմով քարայրին ներսիցին նստեր էր: 5 - Աւ Գաւիթի մարդիկը անոր ըսին, Ահա Տէրոջը քեզի ըսած օրը տեսիկա է, թէ Գու թշնամիդ քու ձեռքդ պիտի մտանեմ, և քու աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ անոր: Աւ Գաւիթ ելաւ և Սաւուղի վերարկուին ծայրը գաղտուկ կարեց: 6-Բայց անկէ ետքը Գաւիթի սիրար խղճաց, Սաւուղի վերարկուին ծայրը կարելուն վրայ: 7 - Աւ իր մարդոցը ըսաւ, Աստուած չընէ որ Տէրոջը օծեալին, իմ տէրոջս, այս բանը ընեմ, ձեռքս անոր վրայ երկնցնելով. քանզի անհկա Տէրոջը օծեալն է: 8 - Եւ Գաւիթ այս խօսքերով իր մարդիկը զպեց, ու զանոնք չթողուց որ Սաւուղի վրայ յարձակին: Եւ Սաւուղ քարայրէն դուրս ելաւ ու իր ճամբան գնաց:

9 - Անկէ ետե Գաւիթ ալ քարայրէն դուրս ելաւ, ու Սաւուղի ետեւէն կանչելով ըսաւ, Ով տէր իմ թագաւոր: Աւ երբ Սաւուղ ետին նայեցաւ, Գաւիթ երեսը գետինը ծռելով երկրպագութիւն բրաւ: 10 - Եւ Գաւիթ ըսաւ Սաւուղի, Ինչո՞ւ համար մարդոց խօսքը մտիկ կ'ընես, որոնք թեզ կ'ըսեն թէ Ահա Գաւիթ քեզի չարութիւն ընելու կը ջանայ: 11 - Ահա այսօր քու աչքերդ կը տեսնեն, որ Տէրը այսօր քարայրին մէջ քեզ իմ ձեռքս մտանեց. ու ըսին որ քեզ մեացընեմ, բայց ես քեզի խնայեցի, ու ըսի, Ես իմ ձեռքս իմ տէրոջս չեմ երկնցներ, քանզի անհկա Տէրոջը օծեալն է: 12 - Աւ տես, հայր իմ, տես, քու վերարկուիդ ծայրը իմ ձեռքիս մէջ է. ու ես քու վերարկուիդ ծայրը կարելով քեզ չմեացուցի. «յի հասկրցիր ու տես, որ իմ ձեռքիս մէջ չարութիւն ու անօրէնութիւն չկայ, ու

*Այսինքն, վէմ ըստ անմանց

*Եբբ. սոքերը ծածկելու. Գաւ. գ. 24:

քեզի յանցանք մը չեմ՝ բայց դուն *զիս մեռցնելու կ'աշխատիս՝ 13 - Տէրը դատաստան ընէ իմ ու քու մէջտեղ, ու Տէրը իմ վրէժս քեզմէ առնէ . բայց իմ՝ ձեռքս քու վրայ չըլլայ : 14 - Ինչպէս հին առակը կ'ըսէ, Անօրէններէն անօրէնութիւն կ'ելլէ . բայց իմ՝ ձեռքս քու վրայ չըլլայ : 15 - Իսրայէլի թագաւորը որո՞ւն ետեւէն ելեր է, և դուն որո՞ւն ետեւէն ինչէր կը հալածես . մեռած շան մը ետեւէ, լուի մը ետեւէ ելա՞ր : 16 - Ուստի Տէրը դատաւոր ըլլայ, և իմ ու քու մէջտեղ դատաստան ընէ . և տեսնէ ու պաշտպանէ զիս, և քու ձեռքէդ ազատէ :

17 - Ու երբ Դաւիթ այս խօսքերը Սաւուղի խօսիլը լմնցուց, Սաւուղ ըսաւ, Արդեակ իմ Դաւիթ, ասիկա քո՞ւ ձայնդ է . և Սաւուղ իր ձայնը վերցուց ու լացաւ . 18 - Ու Դաւիթի ըսաւ, Դուն ինձմէ արդար ես . քանզի դուն ինձի բարիք հատուցիր, բայց ես քեզի չարիք հատուցի : 19 - Ու դուն այսօր քու ինձի բրած աղէկութիւնդ յայանեցիր, որովհետեւ Տէրը զիս քու ձեռքդ մատնեց, ու դուն զիս չմեռցուցիր : 20 - Վասն զի մարդ մը իր թշնամին գանելու ըլլայ, զանիկա թող կու տայ որ խաղաղութեամբ երթայ . ուստի այսօր քու ինձի բրածիդ փոխարէն Տէրը քեզի բարիք հատուցանէ : 21 - Եւ հիմա ահա գիտեմ որ դուն անշուշտ թագաւոր պիտի ըլլաս, ու Իսրայէլի թագաւորութիւնը քու ձեռքիդ մէջ պիտի հաստատուի : 22 - Եւ հիմա Տէրոջմով ինձի երգում՝ ըրէ՝ թէ ինձմէ ետքը իմ սերունդս պիտի չմեռցընես, ու իմ հօրս տունէն իմ անունս բնաջինջ պիտի չընես : 23 - Եւ Դաւիթ Սաւուղի երգում՝ ըրաւ : Ետքը Սաւուղ իր տունը գնաց, ու Դաւիթ իր մարդոցմով ամուր տեղը ելաւ :

ԳԼ. ԻԵ

Եւ Սամուէլ մեռաւ, ու բոլոր Իսրայէլ ժողովուեցան ու անոր համար սուգ ըրին, ու զանիկա Ռամայի մէջ իր տունը թողեցին : Եւ Դաւիթ ելաւ Փառանի անապատը իջաւ :

2 - Եւ Մաոնի մէջ մարդ մը կար, ու անոր *գործը Կարմեղոսի մէջ էր . և անիկա խիստ մեծ մարդ էր, ու երէք հազար ոչխար և հազար այծ ունէր . ու իր ոչխարները ասրակաւուր ընելու համար Կարմեղոսի մէջ կը գանուէր : 3 - Եւ այն մարդուն անունը Նաբաղ էր, ու անոր կնոջ անունը Աբիգեա . և կինը խոհեմամիտ ու գեղեցկադէմ էր, բայց այրը խստաբարոյ ու չարագործ էր, ու անիկա †Քաղեբեան էր :

4 - Եւ Դաւիթ անապատին մէջ լսեց որ Նաբաղ իր ոչխարները ասրակաւուր կ'ընէ : 5 - Ու Դաւիթ ասօր մանչ զրկեց, և Դաւիթ մանչերուն ըսաւ, Կարմեղոս ելէք ու Նաբաղի գացէք, և իմ անունովս անոր ողջութիւնը հարցուցէք . 6 - Ու անոք այսպէս ըսէք, Ողջ կեցիր . քեզի և քու տանդ ու քու բոլոր ստացուածքիդ խաղաղութիւն ըլլայ : 7 - Եւ հիմա լսեցի որ ոչխարներդ ասրակաւուր կ'ընես . քու հովիւներդ մեզի հետ էին . անոնց փասս մը չտուինք, ու անոնք Կարմեղոսի մէջ որչափ աւտեն որ կեցան, անոնց մէկ բանը չկորուեցաւ : 8 - Քու մանչերուդ հարցուր, ու քեզի թող ըսեն . ուստի այս մանչերը քու աչքերուդ առջև շնորհք թող գանեն, քանզի բարի օր եկանք - շնորհք ըրէ, քու ծառաներուդ ու քու որդւոյդ Դաւիթի ձեռքէդ եկածը տուր : 9 - Եւ Դաւիթի մանչերը գացին, ու այս բոլոր խօսքերուն համեմատ Դաւիթի անունովը Նաբաղի զուցեցին ու կայնեցան : 10 - Եւ Նաբաղ Դաւիթի ծառաներուն պատասխան տուաւ ու ըսաւ, Դաւիթ ո՞վ է, ու Յեսսէի որդին ո՞վ է . այս օրերս իրենց տէրերուն երեսէն փախչող ծառաները շատցեր են : 11 - Ես իմ հացս, ջուրս ու ասրակաւուր ընողներուս համար մորթած անասուններս առնեմ՝ ու *յեպէտե՞՞ մարդոց տամ, որոնց ուրկէ ըլլալը չեմ՝ գիտեր : 12 - Եւ Դաւիթի մանչերը իրենց ճամբան դարձան, ու գացին այս բոլոր խօսքերը անոր պատմեցին : 13 - Եւ Դաւիթ իր մարդոցը ըսաւ, Ամէն մարդ իր սուրը մէջքը կապէ . ու ամէն մարդ իր սուրը մէջքը կապէ, և Դաւիթ ալ իր սուրը մէջքը կապէ . ու Դաւիթի ետեւէն չորս հար-

*Եբբ. իմ անձս կ'որստս զանիկա առնելու . ԳԼ. ԻԳ. 20 :

*Կա՛, ստացուածքը . †Կա՛, շնաբարոյ

իւրի չափ մարդ ելաւ, ու երկու հարիւր մարդ հաւ կարասիներուն քով մնացին:

14 - Եւ ծառաներէն մէկը Նաբաղի կնոջ Աբիգեայի իմացուց ու ըսաւ, Ահա Գաւիթ անապատէն մարդիկ զրկեց մեր տէրը օրհնելու համար. իսկ անիկա *խօսիւ խօսեցաւ անոնց հետ*:

15 - Բայց այն մարդիկը մեզի հետ շատ ազէկ էին, ու մեզի փնտս մը չտուին. և դաշտի մէջ որչափ ատեն որ անոնց հետ պտրտեցանք, մեզմէ բա՛ն մը չկորսուեցաւ:

16 - Անոնք մեզի պարիսպ էին, [Թէ՛ գիշերը և [Թէ՛ ցորեկը, որչափ ատեն որ անոնց քով ոչխարները կ'արածէինք:

17 - Ու հիմա գիացիր ու տես [Թէ ի՛նչ պիտի ընես, քանզի մեր տէրոջը վրայ և անոր բոլոր տանը վրայ չարիքը հասած է. որովհետեւ անիկա այնպիսի չար մարդ մըն է, որ անոր հետ մարդ չկրնար խօսիլ:

18 - Եւ Աբիգեա շուտով երկու հարիւր հաց, ու երկու տիկ գինի, և հինգ թեփած ոչխար, ու հինգ գրիւ բոհրած ցորեն, հարիւր ողկոյզ չամիչ, ու երկու հարիւր շարոց [Թուզ առաւ ու զանոնք էշերու վրայ դրաւ:

19 - Եւ իր ծառաներուն ըսաւ, Առջեւ անցէք, ահա ես ձեր ետեւէն կու գամ. բայց իր երկանը Նաբաղի չիմացուց:

20 - Ու երբ կինը իշու վրայ հեծած՝ լեռանը գոց տեղէն կ'իջնէր, ահա Գաւիթ ու անոր մարդիկը անոր առջև կ'իջնէին. ու անիկա անոնց հանդիպեցաւ:

21 - Եւ Գաւիթ ըսէր էր, Ուրեմն անապատին մէջ այս մարդուն բոլոր ունեցած բաները պարապ տեղը պահէր եմ, ու անոր բոլոր ունեցածէն բա՛ն մը չկորսուեցաւ. և անիկա ինծի աղէկութեան փոխարէն գէշութիւն քրաւ:

22 - Աստուած Գաւիթի [Թշնամիներուն այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ մինչև վաղը առտու անոր մարդոցմէն թայր մարդ՝ մը ողջ [Թողում:

23 - Ու Աբիգեա Գաւիթը տեսածին պէս շուտով իշուն վրայէն իջաւ, և Գաւիթի առջև երեսի վրայ իյնալով մինչև գետինը երկրպագութիւն քրաւ:

24 - Ու անոր ոտքը ինկաւ ու ըսաւ, Ով տէր իմ, յանցանքը իմ վրաս ըլ-

լայ. բայց հրաման տուր՝ որ քու աղախինդ քու առջեւդ խօսի, և քու աղախինիդ խօսքերը մտիկ ըրէ:

25 - Կ'աղաչեմ, որ իմ տէրս այս չար մարդուն Նաբաղի համար իր սրտին մէջ քա՛ն ճշ չդնէ. քանզի իր անուանին պէս ինք ալ այնպէս է. անոր անունը *Նաբաղ է, ու անզգամութիւնը իրեն հետ է. բայց ես, քու աղախինդ, իմ տէրոջս զրկած մանչերը չտեսայ:

26 - Եւ հիմա, ով տէր իմ, Տէրը կենդանի է ու քու հոգիդ ալ կենդանի է, որ Տէրը քեզ չ[Թողուց որ արիւն մանես, ու քու վրէժդ քու ձեռքովդ առնես. և հիմա քու [Թշնամիներդ ու իմ տէրոջս գէշութիւն ուղղները Նաբաղի պէս ըլլան:

27 - Ու հիմա այս ընծան զոր քու աղախինդ իմ տէրոջս բերաւ, [Թող իմ տէրոջս ետեւէն եկող մանչերուն արուի:

28 - Կ'աղաչեմ, քու աղախինիդ յանցանքը ներէ. քանզի Տէրը իմ տէրոջս անպատճառ հաստատաւ տուն պիտի շինէ, որովհետեւ իմ տէրս Տէրոջը պատերազմները պատերազմեցաւ, ու քու օրերուդ մէջ քու վրայ չարութիւն մը չգտնուեցաւ:

29 - Բայց [Թէ և քեզ հալածելու ու քու հոգիդ փնտուելու համար մարդ մը ոտք ելած է, իմ տէրոջս հոգին քու Տէր Աստուծոյդ առջև՝ կենաց ծրարին մէջ ծրարուած պիտի ըլլայ. բայց Անիկա քու [Թշնամիներուդ հոգիները պարսատիկի մէջէ ելա՛ծ + աբի պե՛ս պիտի նետէ:

30 - Ու երբ Տէրը բոլոր քեզի համար քսած աղէկութիւնները իմ տէրոջս ընէ, ու քեզ Իսրայէլի վրայ [Թագաւոր դնէ, 31 - Ասիկա քեզի գայթակղութիւն մը ու իմ տէրոջս սրտին ինք մը չըլլայ, [Թէ առանց պատճառի արիւն [Թափեցիր, կամ [Թէ իմ տէրս իր վրէժը ինք առաւ. ու երբ Տէրը իմ տէրոջս բարութիւն ընէ, քու աղախինդ միաքոք բերես:

32 - Եւ Գաւիթ ըսաւ Աբիգեայի, Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այսօր քեզ զրկեց զիս դիմաւորելու.

33 - Ու քու խոհեմութիւնդ օրհնեալ ըլլայ, և դուն ալ օրհնեալ ըլլաս, որ այսօր զիս արգիլեցիր որ արիւն չմանեմ, ու իմ վրէժս ձեռքովս չառնեմ:

34 - Բայց Իսրայէլի Տէր Աստուածը՝ որ զիս արգիլեց

*Եբբ. անոնց վրայ յարձակեցաւ
 †Եբբ. եղած
 ‡Եբբ. պատի վրայ միզող. դ Թագ. Ժգ. 10: իս. 21: դ Թագ. [Թ. 8:

*Այսինքն, անզգամ

քեզի չարութիւն ընելէ, կենդանի է, եթէ գուն շուտով չգայիր ու առջեւ չելլէիր, մինչև վազը առտու Նաբազի մէկ այր մարդը չէր մնար: 35 - Եւ Դաւիթ անոր բերած ընչաները ձեռքէն առաւ. ու անոր ըսաւ, Խաղաղութեամբ տունդ գնա. ահա խօսքդ մտիկ բրի ու քու *խնդիրքդ ընդունեցի:

36 - Եւ Աբիգեա Նաբազի գնաց, ու ահա անիկա իր տանը մէջ թագաւորական կոչուների պէս կոչուներ կ'ընէր. և Նաբազի սիրտը զուարթացեր էր, ու անիկա շատ գինովցեր էր. ուստի կինը մինչև առաւօտեան լոյսը պզտիկ կամ մեծ բան մը չպատմեց անոր: 37 - Եւ առաւօտուն երբ Նաբազ գինիէն զգաստացաւ, այն պէն անոր կէն այս բաները անոր պատմեց. ու անոր սիրտը իր ներսիդին մեռաւ, ու քարի պէս եղաւ: 38 - Եւ ասոր օրի չափ անցնելէն ետեւ Տէրը զարկաւ Նաբազը, որ մեռաւ:

39 - Ու Դաւիթ Նաբազի մեռնիլը լսելով ըսաւ, Օրհնեալ է Տէրը, որ Նաբազի ձեռքէն բռնած նախատանքիս գատաստանը ինք դատեց, ու իր ծառան չարութենէ ետ պահեց. և Տէրը Նաբազի չարութիւնը անոր գլուխը դարձուց: Ու Դաւիթ հարգեց և Աբիգեայի խօսեցաւ, որ զանիկա իրեն կին առնէ: 40 - Ու Դաւիթի ծառաները Կարմեղոս գացին Աբիգեայի, ու անոր հետ խօսեցան ու ըսին, Դաւիթ մեզ քեզի զրկեց, որպէս զի քեզ իրեն կին առնէ: 41 - Եւ անիկա ելաւ ու երեսի վրայ մինչև գետինը երկրպագութիւն ըրաւ, ու ըսաւ, Ահա քու աղախինդ իմ տէրոջս ծառաներուն սոքերը լուարու համար ստրկութիւն թող ընէ: 42 - Եւ Աբիգեա շուտով սոք ելաւ, ու իրեն սպասաւորութիւն ընող հինգ աղջիկներու հետ էջը հեծաւ, ու Դաւիթի պատգամաւորներուն ետեւէն գնաց, և անոր կինը եղաւ:

43 - Ու Դաւիթ Յեզրայէլէ ալ Աբիսամը առաւ. ու ասոնց երկուքն ալ անոր կիները եղան: 44 - Բայց Սաւուղ իր Մեղքող աղջիկը, որ Դաւիթի կինն էր, Դազղիմացի Լայիսի որդւոյն Փաղաիէլի առաւ:

Եւ Զիփացիք Գարաա գացին Սաւուղի, ու ըսին, Ահա Դաւիթ Եսիմնի դիմաց Եքեղայի բլուրին վրայ պահուեր է: 2 - Ու Սաւուղ ելաւ Զիփի անապատը իջաւ Իսրայէլի երեք հարար ընտրուած մարդոցմով, որպէս զի Զիփի անապատին մէջ Դաւիթը փրնտուէ: 3 - Եւ Սաւուղ Եսիմնի դիմաց Եքեղայի բլուրը՝ ճամբուն վրայ բանակեցաւ: Դաւիթ ալ անապատին մէջ նստեր էր. ու երբ տեսաւ որ Սաւուղ իր ետեւէն անապատը կու գայ, 4 - Դաւիթ լրտեսներ զրկեց, ու Սաւուղի ստայգ գայր իմացաւ:

5 - Ու Դաւիթ հարգեալ ելաւ և Սաւուղի բանակ դրած տեղը եկաւ. ու Դաւիթ Սաւուղի ու անոր զօրավարին, Ներեան Աբեհների, պառկած տեղը տեսաւ. բայց Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր էր, ու ժողովուրդը անոր բոլորտիքը բանակեր էին: 6 - Եւ Դաւիթ պատասխան առաւ ու Քեաացի Աբիմէլէքի ու Յովաբի եղբորը Շարուհեան Աբեսայի ըսաւ, Ո՞վ ինծի հետ Սաւուղի քով բանակը կ'իջնէ: Ու Աբեսա ըսաւ, Ես քեզի հետ կ'իջնեմ: 7 - Եւ Դաւիթ Աբեսայի հետ գիշերով ժողովուրդին մէջ մտաւ. և ահա Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր կը քնանար. անոր նիզակը գլխուն քով գետինը ցցուած էր, և Աբեհներ ու ժողովուրդը անոր բոլորտիքը պառկեր էին: 8 - Եւ Աբեսա Դաւիթի ըսաւ, Աստուած այսօր քու թշնամիդ քու ձեռքդ մտանեց. ու հիմա թող տուր որ նիզակով մէկ անգամին գետինը *ցցեմ զանիկա, ու չկրկնեմ հարգանք: 9 - Բայց Դաւիթ Աբեսայի ըսաւ, Զանիկա մի մեռցրներ. քանզի Տէրոջը օճեային ո՞վ կրնայ ձեռք երկնցնել ու անմեղ ըլլալ: 10 - Եւ Դաւիթ ըսաւ, Տէրը կենդանի է որ զանիկա Տէրը պիտի զարնէ, կամ անոր ատենը պիտի գայ ու մեռնի, կամ թէ պատերազմի մէջ պիտի մանէ ու մեռնի: 11 - Աստուած չընէ որ Տէրոջը օճեային դէմ ձեռքս երկնցնեմ. միայն թէ հիմա անոր գլխուն քովի նիզակը ու ջուրին կուծր առ ու երթանք: 12 - Եւ Դաւիթ Սաւուղի գլու-

*Եբր. երեսդ

*Եբր. զարնեմ

խուն քովէն նիզակը ու ջուրին կուժը առաւ ու գացին . և աեանող չկար , իմացող չկար ու արթնցող չկար . որովհետեւ ամէնքը կը քնանային , քանզի Տէրոջը կողմանէ անոնց վրայ խորունկ քուն մը ինկեր էր :

13 - Եւ Գաւիթ անդիի կողմը անցաւ , ու լեռանը գլխուն վրայ հեռուանց կայնեցաւ , «- անոնց մէջտեղ մեծ միջոց կար : 14 - Եւ Գաւիթ ժողովուրդին ու Ներեան Աբեհների կանչելով ըսաւ , Ով Աբեհներ , պատասխան չե՞ս տար . ու Աբեհներ պատասխան տուաւ ու ըսաւ , Գուն ո՞վ ես որ թագաւորին կը կանչես : 15 - Եւ Գաւիթ Աբեհների ըսաւ , Գուն այր մարդ չե՞ս , ու Իսրայէլի մէջ քեզի պէս ո՞վ կայ . և ինչո՞ւ համար քու տէրոջդ , թագաւորին , պահպանութիւն չըրիր . քանզի ժողովուրդէն մէկը քու տէրդ , թագաւորը , մեռցնելու եկաւ : 16 - Այդ քու ըրած բանդ աղէկ չէ . կենդանի է Տէրը , որ դուք մեռնելու արժանի էք , քանզի Տէրոջը օժեպին , ձեր տէրոջը , պահպանութիւն չըրիք . ու հիմա նայէ , թագաւորին նիզակը ու անոր գլխուն քովի ջուրին կուժը ո՞ւր է : 17 - Այն ատեն Սաւուղ Գաւիթի ձայնը ճանչցաւ ու ըսաւ , Որդեակ իմ Գաւիթ , առիկա քո՞ւ ձայնդ է . ու Գաւիթ ըսաւ , Ով տէր իմ թագաւոր , իմ ձայնս է . 18 - Ու ըսաւ , Իմ տէրս՝ ինչո՞ւ համար այդպէս իր ծառային ետեւէն ինկեր է . քանզի ի՞նչ ըրի , ու ձեռքիս մէջ ի՞նչ չարութիւն կայ : 19 - Եւ հիմա իմ տէրս , թագաւորը , իր ծառային խօսքերը թող մտիկ ընէ . եթէ Տէրը քեզ իմ վրաս սաք հանեց , թող զո՞հ մը *ընդունի . բայց եթէ մարդոց որդիները «*+ հանցին» , անոնք Տէրոջը առջև անիծեալ ըլլան , քանզի զիս այսօր վաճակեցին՝ որպէս զի Տէրոջը ժառանգութեանը հետ չմիանամ , ու ինչի ըսին , Գնա օտար աստուածներու ծառայութիւն ըրէ : 20 - Եւ հիմա Տէրոջը առջև իմ արիւնս գետինը չիյնայ . քանզի Իսրայէլի թագաւորը լու մը փնտռելու ելաւ , ինչպէս մարդ մը լեռներու վրայ կաքաւի մը ետեւէ կ'իյնայ :

21 - Ու Սաւուղ ըսաւ , Մեզք գոր-

*Եբբ. հոտուրտայ. Ծն. ը. 21 : Ղ. և. իդ. 31 :

ծեցի . դարձիր , որդեակ իմ Գաւիթ . իմ հոգիս այսօր քու աչքերուդ պատուական երեւնալուն համար՝ քեզի մէյմըն ալ չարութիւն պիտի չընեմ . ահա յիմարութիւն ըրի ու մեծապէս սխալեցայ : 22 - Եւ Գաւիթ պատասխան տուաւ ու ըսաւ , Ահա թագաւորին նիզակը . մանչերէն մէկը թող գայ ու զանիկա առնէ : 23 - Եւ Տէրը ամէն մարդու իր արդարութեանը ու իր հաւատարմութեանը փոխարէնը հատուցանէ . որովհետեւ Տէրը քեզ այսօր ի՞մ ձեռքս տուաւ , բայց ես Տէրոջը օժեպին ձեռքս երկնցնել չուզեցի : 24 - Եւ ահա ինչպէս քու հոգիդ այսօր իմ աչքերուս պատուական երեւցաւ , իմ հոգիս ալ Տէրոջը առջև այնպէս պատուական երեւնայ , ու զիս ամէն նեղութենէ ազատէ : 25 - Եւ Սաւուղ Գաւիթի ըսաւ , Որդեակ իմ Գաւիթ , օրհնեալ ըլլաս . *քու գործերուդ մէջ յաջողութիւն պիտի գտնես» , ու նաև յաղթող պիտի ըլլաս : Եւ Գաւիթ իր ճամբան գնաց , ու Սաւուղ իր տեղը դարձաւ :

ԳԼ. ԻԷ

Եւ Գաւիթ իր սրտին մէջ ըսաւ , Վերջապէս օր մը Սաւուղի ձեռքով պիտի կորսուիմ . ինձի Փղշտացուց երկիրը փախչելէն աղէկը չկայ , որպէս զի Սաւուղ ինձմէ յոյսը կտրէ , ու զիս մէյմըն ալ Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ չփնտռէ . այսպէս անոր ձեռքէն կ'ազատիմ : 2 - Ու Գաւիթ իրեն հետ եղող վեց հարիւր մարդով ելաւ , ու Գէթիթագաւորին Մամփքիորգւոյն Անքուսի քով գնաց : 3 - Եւ Գաւիթ ինք ու իր մարդիկը , իւրաքանչիւր մարդ իր անովը , Գաւիթ ալ իր երկու կիներովը , Յեզրայելացի Աքինոամի հետ ու Կարմելացի Նաբալի կնոջ Աբիգեայի հետ , Անքուսի քով Գէթի մէջ բնակեցան : 4 - Ու երբ Սաւուղի իմացուցին թէ Գաւիթ Գէթ փախեր է , մէյմըն ալ զանիկա չփնտռեց :

5 - Եւ Գաւիթ Անքուսի ըսաւ , Կ'ազաչեմ , եթէ քու 'առջեւդ շնորհք գտայ , զիւղաքաղաքներէն մէկուն մէջ ինձի տեղ արուի՝ որպէս զի հոն նստիմ . քանզի քու ծառագ ինչո՞ւ համար քեզի

*Եբբ. ընելով պիտի բնու

Հեա թագաւորանիստ քաղաքին մէջ նստի : 6 - Եւ այն օրը Անքուս Սիկե- լակը տուաւ անոր : այս պատճառաւ Սիկեւակ մինչև այսօր Յուդայի թա- գաւորներուն եղաւ : 7 - Ու Փղշտացւոց երկրին մէջ Դաւիթի նստած օրերուն թիւը մէկ տարի ու չորս ամիս եղաւ :

8 - Եւ Դաւիթ ու անոր մարդիկը ելան, և Գեսուրացւոց, *Գազերացւոց ու Ամադեկացւոց վրայ յարձակեցան. քանզի անոնք շատոնցմէ ի վեր այն երկրին մէջ կը բնակէին, Սուրէ մինչև Եգիպտոսի երկիրը : 9 - Եւ Դաւիթ այն երկիրը զարկաւ, ու ամենեւին այր մարդ մը կամ կին մարդ մը ողջ չլծու- ղուց . և ոչխարները ու արջառները ու էշերը և ուղտերը ու հանդերձները ա- ռաւ, և դարձաւ Անքուսի եկաւ : 10 - Ու Անքուս ըսաւ, Այսօր ո՞ր կողմը յարձակեցաք : Եւ Դաւիթ ըսաւ, Յու- դայի հարաւային կողմը, Յերամեւլաց- լոց հարաւային կողմը, ու Կենեցւոց հարաւային կողմը : 11 - Եւ Դաւիթ մէկ այր կամ կին մարդ ողջ չլծողուց, որ Գէթ Ե-ր բերէ . քանզի ըսաւ, Չըլլայ որ մեզի համար պատմեն ու ը- սեն թէ Դաւիթ †այսպէս ըրաւ : Ու անոր սովորութիւնը այսպէս էր, քանի որ Փղշտացւոց երկրին մէջ կը նստէր : 12 - Եւ Անքուս Դաւիթի հաւատա- լով ըսաւ, Այ՛ս Դաւիթ իր ժողովուր- գին, Իսրայէլի, քով ինքզինք խիստ †ատելի ընելուն համար, ինծի յաւիտ- եան ծառայ պիտի ըլլայ :

ԳԼ. ԻԸ

Ու այն օրերը Փղշտացիք իրենց զօր- քերը ժողվեցին, որպէս զի ելլեն Իսրա- յէլի հեա պատերազմին . և Անքուս Դաւիթի ըսաւ, Գիացած ըլլաս որ դուն քու մարդոցմովք ինծի հեա բանակը պիտի ելլես : 2 - Ու Դաւիթ Անքուսի ըսաւ, Ուրեմն ծառայիդ ընելու գործը պիտի տեսնես . և Անքուս Դաւիթի ըսաւ, Անոր համար քեզ միշտ ինծի անձնապահ պիտի ընեմ :

*Կա՛մ, Գարեզացւոց

†Կա՛մ, այսպէս ըրաւ, ու անոր սովո- րութիւնը այսպէս պիտի ըլլայ՝ քանի որ Փղշտացւոց երկրին մէջ կը նստի †Ե՛բ : գարշահոս

3 - Իսկ Սամուէլ մեռած էր . և բո- լոր Իսրայէլ անոր համար սուգ ըրեր էին, ու զանիկա իր քաղաքին, Ռա- մայի, մէջ թաղեր էին : Սաւուղ ալ վհուկները ու նշանագէտները երկրէն վերցուցեր էր : 4 - Եւ Փղշտացիք ժող- վուեցան ու եկան Սաւուի մէջ բա- նակեցան . Սաւուղ ալ բոլոր Իսրա- յէլը ժողվեց, ու Գեղբուէի մէջ բա- նակեցան : 5 - Եւ Սաւուղ Փղշտացւոց բանակը տեսնելով վախցաւ, ու սիրտը շատ դողաց : 6 - Եւ Սաւուղ Տէրոջը հարցուց. բայց Տէրը թէ՛ երազներով, թէ՛ Ուրիմով և թէ՛ մարգարէներով անոր պատասխան չտուաւ : 7 - Այն ատեն Սաւուղ իր ծառաներուն ըսաւ, Ինծի վհուկ կին մը փնտռեցէք՝ որպէս զի երթամ անոր հարցնեմ : Եւ ծա- ռաները անոր ըսին, Ահա Ենգովրի մէջ վհուկ կին մը կայ :

8 - Ու Սաւուղ իր հանդերձները փո- խելով ուրիշ հանդերձներ հագաւ, և իրեն հեա եղող երկու մարդով գնաց, ու գիշերով այն կնոջ քով հասան : Եւ Սաւուղ ըսաւ, Ենորհք ըրէ, ինծի վհուկի ոգևով գիւթութիւն ըրէ, ու քեզի ըսելու Դաւիթ ինծի վեր հանէ : 9 - Եւ կինը անոր ըսաւ, Ահա դուն Սաւուղի ըրած բանը գիտես, թէ ի՞նչ պէս անիկա վհուկները ու նշանագէտ- ները երկրէն բնաջինջ ըրաւ . ուրեմն ինչո՞ւ զիս մեռցնելու համար իմ ան- ձիս որդայթ կը պատրաստես : 10 - Եւ Սաւուղ Տէրոջմով երգում ըրաւ ա- նոր ու ըսաւ, Տէրը կենդանի է որ այս բանէն քեզի փնտս մը պիտի չպատահի : 11 - Այն ատեն կինը ըսաւ, Քեզի ո՞վ վեր հանեմ. ու անիկա ըսաւ, Սա- մուէլը հանէ ինծի :

12 - Եւ կինը Սամուէլը տեսնելով մեծ ձայնով մը պոռաց . ու կինը Սա- վուղի խօսեցաւ ու ըսաւ, Ինչո՞ւ զիս խաբեցիր . քանզի դուն Սաւուղն ես : 13 - Եւ թագաւորը անոր ըսաւ, Մի վախնար . բայց ի՞նչ տեսար : Ու կինը Սաւուղի ըսաւ, Գեսանէն ելլող աստ- ուածներ տեսայ : 14 - Եւ Սաւուղ ա- նոր ըսաւ, Անոր կերպարանքը ի՞նչպէս է : Ու կինը ըսաւ, Ահա՛ ծեր մարդ մը կ'ելլէ, ու վերարկու մը հագած է : Եւ Սաւուղ հասկցաւ որ անիկա Սամուէլն է . ու երեսը գետինը ծռելով՝ անոր երկրպագութիւն ըրաւ : 15 - Եւ Սա- մուէլ ըսաւ Սաւուղի, Ինչո՞ւ համար

ինծի նեղութիւն տուիր ու զիս վեր հանեցիր : Եւ Սաւուղ ըսաւ , Ես մեծ նեղութեան մէջ եմ , որովհետեւ Փղըշտացիք ինծի հետ պատերազմ կ'ընեն , ու Աստուած ինծմէ հեռացաւ , և ինծի թէ՛ մարգարէներու միջոցով և թէ՛ երազներով պատասխան չտար . անոր համար քեզ կանչեցի , որ ինծի խնայեալ թէ ի՛նչ ընեմ : 16 - Եւ Սամուէլ ըսաւ , Ինչո՞ւ համար ինծի կը հարցնես , հիմա որ Տէրը քեզմէ հեռացաւ ու քեզի թշնամի եղաւ . 17 - Եւ Տէրը իմ *բերնովս գրուցածին պէս †բրաւ , ու Տէրը քու ձեռքէդ թագաւորութիւնը պատուեց , և զանհկա քու ընկերիդ Գաւթի տուաւ : 18 - Գանգի գուն Տէրոջը խօսքը մտիկ չըրիր , ու Սամուէլի վրայ անոր սաստիկ բարկութիւնը ի գործ չգրիր , անոր համար այսօր Տէրը քեզի այս բանը բրաւ : 19 - Եւ Տէրը քեզի հետ Իսրայէլն ալ Փղըշտացոց ձեռքը պիտի մտանէ . ու վաղը գուն ու քու որդիներդ իմ քովս պիտի ըլլաք . և Տէրը Իսրայէլի բանակն ալ Փղըշտացոց ձեռքը պիտի մտանէ :

20 - Այն ատեն Սաւուղ շուտով ինկաւ ու գեանի վրայ փռուեցաւ , և Սամուէլի խօսքերէն շատ վախցաւ , ու աճիւն-ին վրան ոյժ չմնաց . քանզի բոլոր օրը ու բոլոր գիշերը հաց կերած չէր : 21 - Եւ կինը Սաւուղի քով գնաց , ու անոր չափազանց սոսկումը տեսնելով անոր ըսաւ , Ահա քու աղախինդ քու խօսքդ մտիկ բրաւ . և իմ հոգիս ձեռքիս մէջ դնելով ինծի ըսած խօսքերուդ հնազանդութիւն ըրի : 22 - Եւ հիմա , կ'աղաչեմ , գուն ալ քու աղախինիդ խօսքը մտիկ ըրէ , ու քու առջեւ պատառ մը հաց դնեմ , ու կեր որպէս զի ոյժ առնես , քանզի ճամբայ պիտի երթաս : 23 - Բայց անհկա չուզեց , ու Չեմ ուտեր՝ ըսաւ . սակայն երբ իր ծառաները ու կինն ալ զանհկա բռնադատեցին , անոնց խօսքը մտիկ բրաւ , ու գեանէն ելլելով անկողինին վրայ նստաւ : 24 - Եւ կինը էջ ամանը մէջ անուցած որթ մը ունէր . շուտով զանհկա մորթեց , ու այիւր առաւ շաղեց , և անով բաղարջ հացեր եփեց . 25 - Ու Սաւուղի առջև և անոր ծա-

*Եբր. ձեռքովս
†Եբր. իրեն համար բրաւ

ռաներուն առջև դրաւ , ու կերան , ու ելան նոյն գիշերը գացին :

ԳԼ ԻԹ

Եւ Փղըշտացիք իրենց բոլոր բանակները Ափէկի մէջ ժողովեցին . ու Իսրայէլացիք Յեղրայէլի մէջ եղող աղբիւրին քով բանակեցան : 2 - Եւ Փղըշտացոց նախարարները իրենց հարեւուորներովը ու հազարաւորներովը կ'անցնէին . և Գաւթի ու իր մարդիկը անոնց ետեւէն Անքուսի հետ կ'անցնէին : 3 - Ու Փղըշտացոց իշխանները ըսին , Այս Եբրայեցիները ի՞նչ պիտի ըլլան : Եւ Անքուս Փղըշտացոց իշխաններուն ըսաւ , Ասիկա Իսրայէլի թագաւորին Սաւուղի ծառան Գաւթը չէ՞ , որ այսչափ օրերէ՛ կամ մանաւանդ այսչափ ատրիներէ ի վեր իմ քովս է , ու ինչէ՛ ինկած օրէն մինչև այսօր անոր վրայ ամենեւին յանցանք մը չգտայ : 4 - Եւ Փղըշտացոց իշխանները անոր սրդողեցան , ու Փղըշտացոց իշխանները անոր ըսին , Այդ մարդը ետ զրկէ , ու երթայ իդ տեղը , ուր զանհկա դրիր . ու մեզի հետ պատերազմի մէջ չմտնէ , չըլլայ որ պատերազմին մէջ մեզի թշնամութիւն ընէ . քանզի անհկա ինչո՞վ պիտի հաշտուի իր տէրոջը հետ , չէ՞ որ այս մարդոց գլուխներովը : 5 - Ասիկա այն Գաւթը չէ՞ , որու համար կիները պար բռնելով ու պատասխան տալով կ'ըսէին ,

Սաւուղ իր հազարաւորները զարկաւ ,
Ու Գաւթի իր բերաւորները :

6 - Եւ Անքուս Գաւթը կանչեց , ու անոր ըսաւ , Տէրը կենդանի է որ գուն շիտակ մարդ մըն էս , և ինծի հետ բանակին մէջ մտնելդ ու ելլելդ իմ աչքիս աղէկ կ'երեւնայ . քանզի ինծի եկած օրէդ մինչև այսօր քու վրագ չարութիւն մը չգտայ . բայց գուն նախարարներուն աչքին աղէկ չես երեւնար . 7 - Ուստի հիմա դարձիր և խաղաղութեամբ գնա , ու Փղըշտացոց նախարարներուն աչքին գէշ երեւցածը մի բնէր : 8 - Եւ Գաւթը Անքուսի ըսաւ , Բայց ես ի՞նչ ըրի , ու քու առջեւ կայնած օրէս մինչև այսօր ծառայիդ վրայ ի՞նչ գտար , որ ես չերթամ ու իմ տէրոջս , թագաւորին , թշնամիներուն հետ պատերազմ չընեմ : 9 - Եւ Անքուս պատասխան տուաւ ու Գա-

ւիթի ըստ , Գիտեմ որ դուն իմ աչքերուս Աստուծոյ հրեշտակին պէս ազէկ կ'երեւնաս . բայց Փղշտացւոց իշխանները ըսին թէ Անիկա մեզի հետ պատերազմի չելլէ : 10 - Ուստի առաւօտուն կանուխ ելիր դուն ու քու ատրոջ ծառաները որոնք քեզի հետ եկան , առաւօտուն կանուխ ելէք ու լուսցածին պէս գացէք : 11 - Եւ Դաւիթ ինք ու իր մարդիկը առաւօտուն կանուխ ելան որպէս զի երթան , ու Փղշտացւոց երկիրը դառնան . իսկ Փղշտացիք Յեզրայէլ ելան :

ԳԼ Լ

Ու երբ Դաւիթ ու իր մարդիկը երջորդ օրը Սիկեւակ մտան , *ա՜հա Ամաղեկացիք հարաւային երկրին ու Սիկեւակի վրայ յարձակեր էին . և Սիկեւակը զարնելով զանիկա կրակով այրեր էին . 2 - Ու հոն եղած կիները գերի առեր էին . պզտիկէն մինչև մեծը մարդ մը չէին մեռցուցեր , հապա զանանք իրենց հետ տանելով ճամբանին գացեր էին : 3 - Ու երբ Դաւիթ ու իր մարդիկը քաղաքը հասան , ա՜հա անիկա կրակով այրուած էր . ու իրենց կիները , աղաքները ու աղջիկները գերի առնուած էին : 4 - Ուստի Դաւիթ ու իրեն հետ եղող ժողովուրդը ձայներնին վերցուցին ու լացին , մինչև որ անոնց վրայ այժ չմնաց լալու : 5 - Եւ Դաւիթի երկու կիները , Յեզրայէլացի Աքինտամ ու Կարմելացի Նաբազի կինը Աբիգեա ալ գերի առնուած էին : 6 - Եւ Դաւիթ մեծ տագնապի մէջ էր , քանզի ժողովուրդը զանիկա քարկոծել կ'ուզէր . որովհետև բոլոր ժողովուրդէն ամէն մէկուն սիրտը կը կսկծար իր աղոցը ու աղջիկներուն համար . բայց Դաւիթ իր Տէր Աստուծովը զօրացաւ : 7 - Եւ Դաւիթ Աքիմելէքի որդւոյն , Աբիաթար քահանային , ըստ , Եփուար մօտեցուր ինծի . ու Աբիաթար եփուար Դաւիթի մօտեցուց : 8 - Եւ Դաւիթ Տերոջը հարցուց ու ըստ , Այս գունդին ետեւէն իյնա՞մ . անոնց կը հասնի՞մ . ու Տէրը ըստ անոր , Ետեւէն ինկիր , քանզի անշուշտ պիտի հասնիս ու ամէն բանը պիտի ազատես : 9 - Եւ Դաւիթ ինք ու իրեն հետ

*Եբր . և

եղող վեց հարիւր մարդիկը գացին , ու մինչև Բոսոր հեղեղաւոր եկան . ու ետ մնացողները հա՛ն կայնեցան : 10 - Եւ Դաւիթ չորս հարիւր մարդով Եշնաֆե հալածեց . (տակայն երկու հարիւր մարդիկը շատ յոգնած ըլլալուն համար՝ Բոսոր հեղեղատին սագի ի կողմը մնացին , ու չկրցան անցնիլ :) 11 - Արդաշտին մէջ Եգիպտացի մարդ մը գտան , և զանիկա Դաւիթի բերին . ու անոր հաց տուին , ու կերաւ , ու անոր ջուր խմցուցին . 12 - Եւ անոր քիչ մը չոր թուզ ու երկու ողկոյղ չամիչ տուին , որ կերաւ ու ոգին վրան եկաւ . քանզի երեք օր ու երեք գիշեր հաց չէր կերած ու ջուր չէր խմած : 13 - Եւ Դաւիթ անոր ըստ , Դուն որ՞ւն մարդն ես , և ուրկէ՞ ես : Եւ անիկա ըստ , Ես Եգիպտացի պատանի մըն եմ , * - Ամաղեկացի մարդու մը ծառայ . ու հիմա երեք օր է որ հիւանդ ըլլալուս համար իմ ատէրս զիս հա՛ն թողուց : 14 - Մենք Քերեթի հարաւային կողմը՝ Յուգայի կողմերը ու Քաղէբի հարաւային կողմերը յարձակեցանք , ու Սիկեւակը կրակով այրեցինք : 15 - Եւ Դաւիթ անոր ըստ , Զիս այն գունդին կրնա՞ս իջեցնել : Ու անիկա ըստ , Դուն ինծի Աստուծով երգում՞ րբէ որ զիս պիտի չմեռցնես , ու զիս իմ ատէրոջս ձեռքը պիտի չտաս , ես ալ քեզ այն գունդին կ'իջեցնեմ :

16 - Եւ զանիկա հա՛ն իջեցուց , ու ա՜հա անոնք բոլոր գեանին երեսին վրայ ցրուած էին . կ'ուտէին ու կը խմէին , և Փղշտացւոց երկրէն ու Յուգայի երկրէն առած այն բոլոր մեծ աւարին համար ուրախութիւն կ'ընէին : 17 - Եւ Դաւիթ *արշալոյսէն մինչև հետեւեալ օրուան իրիկունը՝ զանոնք զարկաւ , ու անոնցմէ մարդ չազատեցաւ , բայց միայն չորս հարիւր երիտասարդներ , որոնք ուզտերու վրայ հեծան ու փախան : 18 - Եւ Դաւիթ Ամաղեկացւոց առած բոլոր բաները ազատեց . ու Դաւիթ իր երկու կիներն ալ ազատեց : 19 - Եւ իրենց մէկ բանը պակաս չէր պրկտիկէն մինչև մեծը , թէ՛ աղայ , թէ՛ աղջիկ և թէ՛ աւար , ինչ որ անոնք առեր տարեր էին . Դաւիթ ամէնն ալ ետ բերաւ : 20 - Ու Դաւիթ բոլոր ոչ-

*Կա՛մ , հետեւեալ օրուան արշալոյսէն մինչև իրիկունը

խարները ու արջառնները առաւ, և զանոնք իրենց հօտերուն առջեւէն կը տանէին, ու կ'ըսէին, 'Իաւիթի աւարը տախկա է :

21 - Եւ Իաւիթ այն երկու հարիւր մարդոցը եկաւ, որոնք շատ յոգնած ըլլալնուն համար չէին կրցեր Իաւիթի ետեւէն երթալ. ու զանոնք Բոտր հեղեղաւոր նստեցուցեր էր. և անոնք ելան Իաւիթը ու անոր հետ եղող ժողովուրդը դիմաւորելու. ու Իաւիթ երբ ժողովուրդին մօտեցաւ, անոնց ողջութիւնը հարցուց: 22 - Եւ Իաւիթի հետ գացող մարդոցմէն բոլոր չար ու անզգամ մարդիկը պատասխան տուին ու ըսին, Ասոնց մեզի հետ չգալուն համար՝ մենք ալ անոնց մեր ազատած աւարէն չենք տար. ամէն մարդ միայն իր կինը ու աղաքները առնէ ու երթայ: 23 - Բայց Իաւիթ անոնց ըսաւ, Այդպէս մի ընէք, եղբայրներս, որովհետեւ Տէրը մեզի տուաւ տախկա, և ինք մեզ պահէց ու մեր վրայ եկող գունդը մեր ձեռքը մտանէց: 24 - Եւ այս բանին մէջ ո՞վ ձեզի մտիկ կ'ընէ. քանզի կարասիներուն քով նստողներուն բաժինը պատերազմի գացողներուն բաժինին հետ հաւասար պիտի ըլլայ. հաւասարապէս պիտի բաժնեն: 25 - Եւ այն օրէն ի վեր տախկա Իսրայէլի մէջ կանոն ու օրէնք դրաւ, որ իշխանաց մինչև այսօր:

26 - Եւ Իաւիթ Սիկելակ եկաւ, ու այն աւարէն Յուդայի ծերերուն, իր բարեկամներուն, զրկեց՝ ըսելով, Ահա ձեզի Տէրոջը թշնամիներուն աւարէն *ընծայ իշխան: 27 - Այսինքն Բեթէլի մէջ եղողներուն, հարաւային Ռամովթի մէջ եղողներուն, Յաթիրի մէջ եղողներուն, 28 - Արտէրի մէջ եղողներուն, Սեփամովթի մէջ եղողներուն, Եսթեմովի մէջ եղողներուն, 29 - Բաքայի մէջ եղողներուն, Յերամելացոց քաղաքներուն մէջ եղողներուն, Կենցուց քաղաքներուն մէջ եղողներուն, 30 - Հօրմայի մէջ եղողներուն, Քովրասանի մէջ եղողներուն, Աթաքի մէջ եղողներուն, 31 - Քերրոնի մէջ եղողներուն, և այն ամէն տեղերը ուր Իաւիթ իր մարդոցմով պարտեր էր:

*Եբր. օրհնութիւն. Մն. 19. 11: Գլ. 16. 27:

ՓԼ. ԼԱ

Ու Փղշտացիք Իսրայէլի հետ պատերազմ կ'ընէին. և Իսրայէլի մարդիկը Փղշտացոց առջեւէն փախան, ու Գեղբուէ լեռանը վրայ սպաննուած ինկան: 2 - Ու Փղշտացիք Սաւուղի ու անոր որդիներուն ետեւէն հասան, ու Փղշտացիք Սաւուղի որդիները, Յովնաթանը, Սքինագաբը ու Մեղքիսաւէն, զարկին: 3 - Եւ պատերազմը Սաւուղի վրայ ստատկացաւ, ու աղեղնաւորները զանկա գտան. ու աղեղնաւորներէն *ստտիկ վիրաւորուեցաւ: 4 - Եւ Սաւուղ իր կապարճակիրին ըսաւ, Սուրբ քաշէ ու անով զիս խոցէ. չըլլայ որ սյս անթլփասները գան ու զիս խոցեն, և զիս ծաղր ընեն. բայց կապարճակիրը չուզեց, քանզի շատ վախցաւ: Եւ Սաւուղ սուրը առաւ ու անոր վրայ ինկաւ: 5 - Եւ անոր կապարճակիրը Սաւուղի մեռնիլը տեսնելով՝ ան ալ իր սուրին վրայ ինկաւ ու անոր հետ մեռաւ: 6 - Եւ Սաւուղ ու անոր երեք որդիները, ու կապարճակիրը և անոր բոլոր մարդիկը նոյն օրը մէկտեղ մեռան:

7 - Ու հովիտին անդիի կողմը և Յորդանանու անդիի կողմը եղող Իսրայէլի մարդիկը Իսրայելացոց փախչիլը ու Սաւուղի և անոր որդիներուն մեռնիլը տեսնելով՝ քաղաքները թողուցին ու փախան. և Փղշտացիք եկան ու անոնց մէջ բնակեցան:

8 - Եւ հետեւեալ օրը Փղշտացիք եկան որ մեռելները մերկացնեն. ու Սաւուղը և անոր երեք որդիները Գեղբուէ լեռան վրայ ինկած գտան: 9 - Այն ատեն անոր գլուխը կարեցին, ու անոր ձեռքի զէնքերը հանեցին. և Փղշտացոց երկրին չորս կողմը իրենց կռատուններուն ու ժողովուրդին՝ *բաներուն աւետիսը տալու համար ճարդ զրկեցին: 10 - Եւ անոր զէնքերը Աստարովթի տունը դրին, ու անոր մարմինը Բեթսանի պարիսպէն կախեցին:

11 - Եւ Գաղատագու Յարիսի բնակիչները երբ լսեցին ինչ որ Փղշտացիք Սաւուղի բրած էին, 12 - Բոլոր ոյժի տէր մարդիկը ոտք ելան, ու բոլոր զիշերը գացին, ու Բեթսանի պարիսպէն

*Կա՛մ, խիստ վախցաւ

Սաւուղի մարմինը ու անոր որդինը-
բուն մարմինները առին, և Յաբիս
եկան ու հոն զանանք այրեցին: 13 -

Եւ անոնց սկիւրները առին, ու Յա-
բիսի մէջ *ծառին տակ թաղեցին, ու
եօթը օր ծով պահեցին:

†ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱԻՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Սաւուղի մեռնելէն ետքը, երբ
Դաւիթ Ամաղեկացիները զարնելէն
դարձեր էր, ու երկու օր Սիկելակի
մէջ նստեր էր, 2 - Երրորդ օրը ահա
բանակէն, Սաւուղի քովէն, մէկը ե-
կաւ, որուն հանդերձները պատուում
էին ու գլխուն վրայ հող կար. և անի-
կա Դաւիթի քով գալով՝ գեռինը ին-
կաւ ու երկրպագութիւն ըրաւ: 3 - Եւ
Դաւիթ ըսաւ անոր, Աւրկէ՞ կու գաս:
Ու անիկա ըսաւ անոր, Ես Իսրայէլի
բանակէն փախայ: 4 - Եւ Դաւիթ ը-
սաւ անոր, Բանը Ի՞նչպէս եղաւ,
պատմէ ինձի: Ու անիկա ըսաւ, Փո-
ղովքերը պատերազմէն փախաւ, ու
ժողովուրդէն շատ մարդիկ ինկան մե-
ռան. նաև Սաւուղ ու անոր որդին
Յովնաթան մեռան: 5 - Եւ Դաւիթ
իրեն լուր բերող պատանիին ըսաւ,
Սաւուղի ու անոր որդւոյն Յովնաթանի
մեռնիլը ուրի՞շ գիտես: 6 - Ու անոր
լուր բերող պատանիին ըսաւ, Գիպուա-
ծով Գեղբուէ լեռան վրայ գտնուեցայ,
և ահա Սաւուղ իր նիզակին վրայ
կաթներ էր, ու կառքերը և ձիաւոր-
ները անոր վրայ կը հասնէին: 7 - Այն
ատեն ետեւը դառնալով զիս տեսաւ,
ու զիս կանչեց. ես ալ ըսի, Ահա հո-
ւմ: 8 - Եւ անիկա ինձի ըսաւ, Դուն
ո՞վ ես: Ես ալ անոր ըսի թէ Ամաղե-
կացի եմ: 9 - Ու անիկա ինձի ըսաւ,
Կ'աղաչեմ, իմ վրաս ելիր ու զիս մեռ-
ցուր. քանզի վրաս թմրութիւն մը ե-
կաւ, բայց տակաւին հոգիս վրաս է:
10 - Այն ատեն անոր վրայ ելայ ու զա-

նիկա մեռցուցի. քանզի ես հասկցայ
որ անիկա իյնալէն ետքը պիտի չտարի.
ու անոր գլխուն վրայի թագը և անոր
թեւին վրայ եղած քապարանջանը առի,
ու զանանք հոս իմ տէրջոյ բերի: 11 -
Այն ատեն Դաւիթ իր հանդերձները
բռնեց պատուեց, նոյնպէս ալ անոր
հետ եղող բոլոր մարդիկը: 12 - Եւ
անոնք Սաւուղի համար, ու անոր որդ-
ւոյն Յովնաթանի համար, և Տէրջը
ժողովուրդին համար, ու Իսրայէլի
տանը համար աւագ բռնեցին ու լացին,
ու մինչև իրիկուն ծով բռնեցին անոնց
սրով իյնալուն համար:

13 - Եւ Դաւիթ իրեն լուր բերող
պատանիին ըսաւ, Դուն ո՞ր տեղացի
եմ: Ու անիկա ըսաւ, Ես պանդուխտ
Ամաղեկացիի մը զաւակ եմ: 14 - Եւ
Դաւիթ անոր ըսաւ, Ի՞նչպէս չվախ-
ցար ձեռքդ երկնցնելու և Տէրջը օժ-
եալը մեռցնելու: 15 - Եւ Դաւիթ միան-
չերէն մէկը կանչեց ու ըսաւ, Մօտե-
ցիր, ստիկա մեռցուր. և զանիկա զար-
կաւ, որ մեռաւ: 16 - Ու Դաւիթ ա-
նոր ըսաւ, Քու արիւնդ քու գլուխդ
ըլլայ, քանզի քու բերանդ քեզի հա-
մար վկայութիւն տուաւ՝ ըսելով, Տէ-
րջը օժեալը ես մեռցուցի:

17 - Եւ Դաւիթ Սաւուղի վրայ ու
անոր որդւոյն Յովնաթանի վրայ այս
ողբը ըսաւ. 18 - Ու պատուիրեց որ Ա-
ղեղը Յուդայի որդիներուն սորվեցնեն.
ահա անիկա Աղիղին գիրքին մէջ
գրուած է:

19 - Ով Իսրայէլի փառքը,
Քու բարձր տեղերուդ վրայ վերաւոր-
ուած ինչոր.

*Կա՞մ, մոշային
†Կա՞մ, ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻ

‡Կա՞մ, շղթան
|| Երգիս անունն է

- Զօրաւորները ի՛նչպէս ինկան:
- 20 - Գէթի մէջ մի պատմէք,
Ասկաղոնի ճամբաներուն մէջ աւետիս
մի տաք:
- 20 ըլլայ որ Փղշտացուց աղջիկները ու-
րախանան,
- 20 ըլլայ որ անթլփասներուն աղջիկները
ցնծութիւն ընեն:
- 21 - Ով Գեղբուէի լեռներ,
Ձեր վրայ ոչ ցօղ քոյ և ոչ անձրև,
Ու երբեք ընծաներու անդաստան-
ներ չգործի:
- Քանզի զօրաւորներուն վահանը հոն
ձգուեցաւ:
- Սաւուղի վահանը կործանի իւր իւրով
չէր օծուած:
- 22 - Վիրաւորուածներուն արիւնէն ու
զօրաւորներուն ճարպէն՝
Յոփնաթանի աղեղը ետ չքաշուեցաւ,
Ու Սաւուղի սուրը պարսպ չդարձաւ:
- 23 - Սաւուղ ու Յոփնաթան
Իրենց կենդանութեան տառնը շատ
սիրելի ու հաճելի ըլլալով,
Իրենց մահուան ժամանակ ալ իրարմէ
չզատուեցան:
- Արծիւներէն աւելի թեթեւաշարժ՝
Ու առիւծներէն աւելի զօրաւոր էին:
- 24 - Ով Իսրայէլի աղջիկներ, լացէք
Սաւուղի համար,
Որ ձեզի վայելուչ կարմիրներ կը հագ-
ցընէր,
Ու ձեր հանդերձներուն վրայ սակիէ
զարդեր կը դնէր:
- 25 - Պատերազմին մէջ զօրաւորները
ի՛նչպէս ինկան:
- Ով Յոփնաթան, քու բարձր տեղերուդ
վրայ մեռցուեցար:
- 26 - Քեզի համար շատ կը ցաւիմ՝
Ով եղբայր իմ Յոփնաթան,
Դուն ինծի խիստ սիրելի էիր,
Քու սէրդ ինծի զարմանալի էր,
Կանանց սէրէն աւելի էր:
- 27 - Զօրաւորները ի՛նչպէս ինկան,
Ու պատերազմի վէճերը կորսուեցան:

ԳԼ Բ

Եւ սակէ ետև Դաւիթ Տէրոջը հար-
ցուց ու բաւ, Յուդայի քաղաքներէն
մէկը ելլե՞մ: Եւ Տէրը անոր ըսաւ, Ե-
լիբ: Ու Դաւիթ ըսաւ, Ո՞ւր ելլեմ: Եւ
Տէրը ըսաւ, Քերթն: 2 - Եւ Դաւիթ իր
երկու կիները, այսինքն Յեզրայէլացի
Աքինոամը ու Կարմէլացի Նարադի

կիներ Աբեգեան, իրեն հետ ունեւել հոն
ելաւ: 3 - Եւ Դաւիթ իրեն հետ եղող
մարդիկն ալ՝ ամէն մէկը իր ընտանի-
քովը տարաւ: ու Քերթնի քաղաքնե-
րուն մէջ բնակեցան: 4 - Եւ Յուդայի
մարդիկը եկան, ու հոն Դաւիթը Յու-
դայի տանը վրայ թագաւոր օծեցին:
Եւ Դաւիթի պատմեցին ու ըսին թէ
Գաղաադու Յաբիսի բնակիչները Սա-
ւուղը թաղեցին: 5 - Եւ Դաւիթ Գա-
ղաադու Յաբիսի բնակիչներուն պատ-
գամաւորներ զրկեց ու անոնց ըսաւ,
Դուք Տէրոջմէն օրհնեալ ըլլաք, որ
ձեր աէրոջը Սաւուղի այս ողորմու-
թիւնն ըրիք, ու զանիկա թաղեցիք:
6 - Եւ հիմա Տէրը ձեզի ողորմութիւն
ու ճշմարտութիւն ընէ. ու այս բանը
ընելնուդ համար՝ ես ալ ձեզի այս ա-
ղէկութեան քեզի պիտի հատու-
ցանեմ: 7 - Եւ հիմա ձեր ձեռքը ու-
ժոփնայ ու զօրաւոր կարիճներ եղէք.
քանզի ձեր աէրը Սաւուղ մեռաւ, և
Յուդայի սուրը զիս իրենց վրայ թա-
գաւոր օծեցին:

8 - Իսկ Սաւուղի զօրավարը, Ներ-
եան Աբեներ, Սաւուղի որդին Յերուս-
թէն սուաւ, ու զանիկա Մանայիմ՝
անցուց, 9 - Եւ զանիկա Գաղաադու
վրայ, Ասուրիի վրայ, Յեզրայէլի վրայ,
Եփրեմի վրայ, Բենիամինի վրայ, ու
բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր ըրաւ:
10 - Երբ Սաւուղի որդին Յերուսթէ
Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ, քա-
ւասուն տարեկան էր, ու երկու տարի
թագաւորութիւն ըրաւ. միայն Յու-
դայի սուրը Դաւիթի *հպատակ եղաւ:
11 - Եւ Յուդայի տանը վրայ Քերթնի
մէջ Դաւիթի թագաւորութիւն ըրած
ժամանակը եօթը տարի ու վեց ամիս էր:
12 - Ու Ներեան Աբեներ և Սա-
ւուղի որդւոյն Յերուսթէի ծառաները
Մանայիմէ Գաբաւուն ելան: 13 - Եւ
Շարուհեայի որդին Յովաբ ու Դաւիթի
ծառաները Քեբեռնէ ելան, ու Գաբա-
ւանի աւագանին քով անոնց հանդի-
պեցան. և ասոնք աւագանին մէկ կող-
մը՝ ու անոնք աւագանին միւս կողմը
նստան: 14 - Եւ Աբեներ Յովաբի ը-
սաւ, Թող կարիճները ելլեն ու մեր
առջև խաղան: Եւ Յովաբ ըսաւ, Թող
ելլեն: 15 - Ուստի անոնք թիւով ե-
լան, ու Բենիամինէ ու Սաւուղի որդ-

*Եբբ. ետեւէն

ւոյն Յեբուսթէի կողմէն տասուերկու մարդ, և Գաւիթի ծառաներէն տասուերկու մարդ անցան. 16 - Աւ ամէն մէկը իր ընկերին գլխէն բռնեց, և իր սուրբ իր ընկերին կողը Խօթց, ու մէկտեղ ինկան. ու այն տեղին անունը *Քեղկաթ-ասուրիմ ըսուեցաւ, որ Գաւառնի մէջ է:

17 - Եւ այն օրը խիստ սաստիկ պատերազմ եղաւ. ու Աբեններ Իսրայէլի մարդոց չեա Գաւիթի ծառաներուն առջև յաղթուեցաւ: 18 - Եւ Շարուհեայի երեք որդիները, Յովաբ, Աբեսաա ու Ասայէլ, չան էին. ու Ասայէլ դաշտի այծեամի պէս սաքով թեթեւ էր:

19 - Եւ Ասայէլ Աբենների ետեւէն ինկաւ, ու Աբենների ետեւէն աջ կամ ձախ կողմը չխտորեցաւ: 20 - Եւ Աբեններ ետեւը դարձաւ ու ըսաւ, Ասայէլ, դո՞ւն ես: Աւ անիկա ըսաւ, Ես եմ: 21 - Եւ Աբեններ անոր ըսաւ, Քու աջ կամ ձախ կողմը խտորէ, ու կտրիճներէն մէկը բռնէ, ու անոր զէնքերը քեզի առ. բայց Ասայէլ անոր ետեւէն դառնալ չուզեց:

22 - Եւ Աբեններ նորէն մէյմըն ալ Ասայէլի ըսաւ, Ետեւէս դարձիր. քեզ ինչո՞ւ համար գետինը զարնեմ. այն ատեն ի՞նչպէս երեսս վերցնեմ քու եղբորդ Յովաբի նայիմ: 23 - Բայց անիկա անոր ետեւէն դառնալ չուզեց: Աւ Աբեններ նիզակին ետեւի ծայրովը †սնակուշտէն զարկաւ զանիկա, ու նիզակը անոր կռնակէն ելաւ. և հոն ինկաւ ու նոյն տեղը մեռաւ. և ով որ Ասայէլի ինկած ու մեռած տեղը կու գար՝ կանգ կ'առնէր: 24 - Եւ Յովաբ ու Աբեսաա Աբենների ետեւէն ինկած կը հալածէին զանիկան. ու երբ անոնք Գիայի գիմաց Գաբաւոնի անապատին ճամբան եղող Ամմայի բլուրը եկան, արեւը մտաւ:

25 - Եւ Բենիամինի որդիները Աբենների ետեւէն ժողովուեցան, գունդ մը եղան. ու բլուրի մը գլուխը կայնեցան: 26 - Եւ Աբեններ Յովաբի պառաւով ըսաւ, Միթէ սուրը անդադար պիտի ուտէ. չե՞ս գիտեր որ սատր վերջը դառն կ'ըլլայ. մինչև ե՞րբ ժողովուրդին պիտի չհրամայես որ իրենց եղբայրները հալածելէն ետ դառնան: 27 - Աւ Յովաբ ըսաւ, Կենդանի է Աստուած, եթէ դուն

զրուցած չըլլայիր, ժողովուրդին ամէն մէկը առտուընէ ի վեր իր եղբայրները հալածելէն ետ պիտի դառնար:

28 - Այն ատեն Յովաբ փող հնչեցուց. ու բոլոր ժողովուրդը կանգ առաւ, ու ալ Իսրայէլի ետեւէն չինկան, ու մէյմըն ալ պատերազմ չըրին: 29 - Եւ Աբեններ ու անոր մարդիկը այն բոլոր գիշերը դաշտին մէջէն երթալով Յորդանանէ անցան, ու բոլոր Բեթրոնը քալելով Մանայիմ եկան: 30 - Եւ Յովաբ Աբեններէ դարձաւ, ու բոլոր ժողովուրդը ժողվեց. և Գաւիթի ծառաներէն տասներինը մարդ ու Ասայէլ կը պակսէին. 31 - Բայց Գաւիթի ծառաները Բենիամինէ ու Աբենների մարդոցմէն երեք հարիւր վաթսուն մարդ զարկին, որոնք մեռան: 32 - Եւ Ասայէլը վերցուցին, ու զանիկա Բեթլէհէմի մէջ իր հօրը գերեզմանը թաղեցին: Աւ Յովաբ և անոր մարդիկը բոլոր գիշերը քալեցին, ու արշալոյսին Քեբրոն հասան:

ԳԼ. Գ

Եւ Սաւուղի տանը ու Գաւիթի տանը մէջտեղ երկայն պատերազմ եղաւ. ու Գաւիթ երթալով կը զօրանար, բայց Սաւուղի տունը երթալով կը տկարանար:

2 - Եւ Քեբրոնի մէջ Գաւիթի որդիներ ծնան. ու անոր անդրանիկը Յեզրայելացի Աբինոամէ քան Ամնոն էր:

3 - Եւ անոր երկրորդը Կարմելացի Նաբադի կնոջմէն Աբիգեայէ քան Քիլաբն էր, ու երրորդը Գեսուրի թագաւորին թոյլի աղջկան Մաաքայի որդին Աբիսողոմ էր, 4 - Եւ չորրորդը Ագգիթի որդին Ադոնիա էր, ու հինգերորդը Աբիսալի որդին Սափատիա էր, 5 - Աւ վեցերորդը Գաւիթի կնոջմէն Եգզայէ քան Յեթրամ էր. Քեբրոնի մէջ Գաւիթի ասոնք ծնան:

6 - Եւ Սաւուղի տանը ու Գաւիթի տանը մէջտեղ քանի որ պատերազմ կար, Աբեններ Սաւուղի տանը թիկունքն էր: 7 - Եւ Սաւուղ հարձ մը ունէր՝ որուն անունը Ռեսփա էր, ու Այիայի աղջիկն էր: Աւ Յեբուսթէ Աբենների ըսաւ, Իմ հօրս հարձին ինչո՞ւ մտտեցար: 8 - Եւ Աբեններ Յեբուսթէի խօսքերուն համար խիստ բարկացաւ, ու ըսաւ, Միթէ ես շան գլուխ

*Այսինքն, սուրերուն արտը †Կամ, փորէն

եմ որ Յուդայի դէմ՝ քու հօրդ Սաւուղի տանը, անոր եղբայրներուն ու բարեկամներուն այսօր ողորմութիւն բրի, ու քեզ Դաւիթի ձեռքը չմատնեցի, և դուն այսօր այս կնոջ համար զիս կը մեղադրես: 9 - Աստուած Աբեհնների այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ Դաւիթի չընեմ ինչ որ Տէրը անոր երգում բրաւ: 10 - Այսինքն թագաւորութիւնը Սաւուղի տունէն վերցընեմ, ու Դաւիթի աթոռը Իսրայէլի վրայ և Յուդայի վրայ հաստատեմ՝ Դանէ մինչև Բերսաբէէ: 11 - Աւ Յեբրէ մէյմըն ալ չկրցաւ Աբեհնների պատասխան տալ՝ անկէ վախնալուն համար:

12 - Եւ Աբեհններ իր կողմանէ Դաւիթի պատգամաւորներ զրկեց՝ ըսելով, Այս երկիրը որո՞ւնն է. ու ըսաւ, Ինծի հետ դաշնակցութիւն բրէ, և ահա իմ ձեռքս քեզի հետ պիտի ըլլայ՝ բոլոր Իսրայէլը քեզի դարձնելու համար:

13 - Աւ անկիա ըսաւ, Աղէկ, ես քեզի հետ դաշնակցութիւն կ'ընեմ. բայց քեզմէ բան մը կը պահանջեմ, որ իմ երեսս տեսնելու եկած ատենդ՝ եթէ Սաւուղի աղջիկը Մեղքողը ինծի չբերես, իմ երեսս չտեսնես: 14 - Եւ Դաւիթ Սաւուղի որդւոյն, Յերուսթէի դեսպաններ զրկեց՝ ըսելով, Իմ կինս Մեղքողը ինծի տուր, զոր Փղշտացւոց հարիւր անթլփատութիւններովը առի:

15 - Աւ Յերուսթէ Գաբա զրկեց, ու զանկիա անոր այրէն, Լայիսեան Փաղափէյէ, առաւ: 16 - Եւ անոր այրը լալով մինչև Բաւուրիմ՝ անոր ետեւէն գնաց: Աւ Աբեհններ անոր ըսաւ, Գնա դարձիր. ու անկիա դարձաւ:

17 - Եւ Աբեհններ Իսրայէլի ծերերուն հետ խօսեցաւ ու ըսաւ, Երէկ ու միւս օր կ'ուզէիք որ Դաւիթ ձեր վրայ թագաւոր ըլլայ: 18 - Աւրեմն հիմա բրէք. քանզի Տէրը Դաւիթի համար խօսեցաւ՝ ըսելով, Իմ ժողովուրդս Իսրայէլը Փղշտացւոց ձեռքէն ու անոր բոլոր թշնամիներուն ձեռքէն՝ իմ ծառայիս Դաւիթի ձեռքով պիտի ազատեմ: 19 - Եւ Աբեհններ նոյն խօսեցը Բենիամինի ալ զրուցեց. անկէ ետքը Աբեհններ Քերրոն գնաց, որպէս զի Իսրայէլի ու Բենիամինի բոլոր տանը հաճոյ երեւցածը Դաւիթի ալ պատմէ:

20 - Աւ Աբեհններ Քերրոն եկաւ Դաւիթի, իրեն հետ քսան մարդ «անեւուլ»: Եւ Դաւիթ Աբեհնների ու անոր հետ

եղող մարդոց խնջոյք ըրաւ: 21 - Աւ Աբեհններ Դաւիթի ըսաւ, Ելլեմ երթամ, և բոլոր Իսրայէլը իմ տէրօջս, թագաւորին, քով ժողովեմ, որպէս զի քեզի հետ դաշնակցութիւն ընեն. ու դուն սրտիդ ամէն ուզածին պէս թագաւորութիւն ընես: Եւ Դաւիթ Աբեհնները զրկեց, որ խաղաղութեամբ գնաց:

22 - Եւ ահա Դաւիթի ծառաները ու Յովաբ *ասպատակութենէ ետ դարձան, ու իրենց հետ խիստ շատ աւար բերին. իսկ Աբեհններ Դաւիթի քով Քերրոնի մէջ չէր. քանզի Դաւիթ զանկիա զրկեւ էր. ու անկիա խաղաղութեամբ գացեր էր: 23 - Աւ երբ Յովաբ և անոր հետ եղող բոլոր զօրքը եկան, Յովաբի պատմեցին ու ըսին, Ներեան Աբեհններ թագաւորին եկաւ. ան ալ զանկիա զրկեց, ու խաղաղութեամբ գնաց: 24 - Այն ատեն Յովաբ թագաւորին գնաց ու ըսաւ, Ի՞նչ բրիր. ահա Աբեհններ քեզի եկեր է. ինչո՞ւ համար զանկիա թող տուեր ես, ու ան ալ գացեր է: 25 - Դուն շէն գիտեր՝ որ Ներեան Աբեհններ քեզ խաբելու, քու ելլելու ու մանելու Գաբա հասկընալու, ու քու ամէն գործդ իմանալու համար եկաւ: 26 - Եւ Յովաբ Դաւիթի քովէն ելաւ, ու Աբեհնների ետեւէն պատգամաւորներ զրկեց, ու զանկիա Սիրայի ջրհորէն ետ դարձուցին. և Դաւիթ չէր գիտեր: 27 - Աւ երբ Աբեհններ Քերրոն դարձաւ, Յովաբ զանկիա դրանը ներսիդին քաշեց, անոր հետ ծածուկ խօսակցութիւն ընելու համար, ու զանկիա հոն, իր եղբորը Ասայէլի արեանը համար, սնակուշտէն զարկաւ, ու անկիա մեռաւ:

28 - Եւ անկէ ետե Դաւիթ լսեց, ու ըսաւ, Ես ու իմ թագաւորութիւնս Ներեան Աբեհնների արիւնէն յաւիտեան անպարտ ենք Տէրօջը առջև: 29 - Յովաբի գլխուն վրայ, ու անոր հօրը բոլոր տանը վրայ հասնի. ու Յովաբի տունէն սերմնակաթ, բորսա, ցուպի կաթնոզ, սրով իյնոզ ու հացի կարօս պակաս չըլլայ: 30 - Այսպէս Յովաբ ու անոր եղբայրը Աբեսաա Աբեհնները մեռցուցին, քանզի անկիա անանց եղբայրը Ասայէլը պատերազմի ժամանակ Գաբաւոնի մէջ մեռցուցեր էր:

*Կամ, ասպատակներու վրայ յարձակելէն ՚Եբր. գիտես

31 - Եւ Դաւիթ Յովարի ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդին ըսաւ , Հանդերձնիդ պատուեցէք ու քուրձեր հագէք , և Աբեհնների առջեւէն լացէք : Աւ Դաւիթ թագաւորը դագաղին ետեւէն գնաց : 32 - Եւ Աբեհները Քերրոնի մէջ թաղեցին . ու թագաւորը ձայնը վերցուց ու Աբեհների գերեզմանին վրայ լացաւ , բոլոր ժողովուրդն ալ լացաւ :

33 - Եւ թագաւորը Աբեհների համար ողբաց ու ըսաւ ,

Մի՛թէ Աբեհներ այնպէ՞ս մեռաւ , Ինչպէս անզգամ մարդ մը կը մեռնի :

34 - Քու ձեռքերդ կապուած չէին , Աւ սաքերդ կապանքի մէջ դրուած չէին .

Անորէններուն առջև ինկողի մը պէս ինկար :

Աւ բոլոր ժողովուրդը նորէն անոր վրայ լացաւ : 35 - Եւ քանի որ ցորեկ էր ,

բոլոր ժողովուրդը եկաւ որ Դաւիթի հաց կերցնեն . բայց Դաւիթ երդում ըրաւ ու ըսաւ , Աստուած ինձի այսպէս

ու սակէ աւելի ընէ , եթէ արեւին մանեւ լէն առաջ հաց կամ ուրիշ բան մը ճաշակեմ :

36 - Եւ բոլոր ժողովուրդը ուշադրութիւն ըրաւ , ու այս քանը իրենց աչքին հաճոյ երեցաւ , ինչպէս թագաւորին ամէն ըրածը բոլոր ժողովուրդին աչքերուն հաճոյ կ'երեւնար :

37 - Եւ այն օրը բոլոր ժողովուրդը ու բոլոր Իսրայէլ հասկցաւ որ Ներեան Աբեհների մեռցուիլը թագաւորէն չէր :

38 - Եւ թագաւորը իր ծառաներուն ըսաւ , Չէ՞ք գիտեր որ այսօր Իսրայէլի մէջ մեծ զօրավար մը ինկաւ . 39 - Աւ ես այսօր տկար եմ , թէպէտև թագաւոր օծուեցայ . ու այս մարդիկը , Շարուհեայի որդիները , ինձի համար խիստ են . Տէրը հատուցանէ չարութիւն ընողին անոր չարութեանը համեմատ :

ԳԼ. Դ

Եւ Սաւուղի որդին Յեբե-...-ի երբ Աբեհների Քերրոնի մէջ մեռնիլը լսեց , ձեռքերը թուլցան , ու բոլոր Իսրայէլ տազնապեցաւ : 2 - Եւ Սաւուղի որդին երկու գնդապետ ունէր , մէկուն անունը Բաանա , ու միւսին անունը Ռեքաբ էր . ասոնք Բենիամինի ցեղէն Բերովթացի Ռեմօնի որդիներն էին . (քանզի Բերովթ ալ Բենիամինեանց

+աչառը կը սեպուէր . 3 - Աւ Բերովթացիները Կեթթայիմ փախան , և հոն մինչև այսօր պանդուխտի պէս բնակեկեցան : 4 - Աւ Սաւուղի որդին Յովնաթան սաքերը կաղ տղայ մը ունէր , որ երբ Սաւուղի ու Յովնաթանի մահ-...-ը լուրը Յեպրայէլէ եկաւ , անիկա հինգ տարեկան էր . և անոր դայեակը զանիկա առաւ ու փախաւ . ու երբ փախչելու կը փութար , աչառ ինկաւ կաղ եղաւ . և անոր անունը Մեմփիբոսթէ էր : 5 - Աւ Բերովթացի Ռեմօնի որդիները , Ռեքաբ ու Բաանա , գացին , ու ցորեկուան տաք ատենը Յեբուսթէի տունը մտան , և անիկա կէսօրուան ատեն պառկեր կը քնանար . 6 - Աւ անոնք մինչև տանը մէջտեղը մտան , է՛ք թէ ցորեն պիտի առնէին , և զանիկա սնակուշտէն զարկին , ու Ռեքաբ և անոր եղբայրը Բաանա աչի փախան : 7 - Այս կերպով տունը մտան . ու երբ անիկա ներքին սենեակը իր անկողինին մէջ կը քնանար , զանիկա զարկին մեռցուցին , և անոր գլուխը կտրեցին , ու գլուխը առնելով՝ բոլոր գիշերը դաշտին ճամբովը գացին . 8 - Եւ Յեբուսթէի գլուխը Քերրոն տարին Դաւիթի , ու թագաւորին բոն , Ահաբու թշնամիիդ , քու կեանքդ փրնաւող Սաւուղի , որդւոյն Յեբուսթէի գլուխը . և Տէրը Սաւուղէ ու անոր սերունդէն այսօր վրէժինդրութիւն տուաւ մեր թագաւոր տէրոջը : 9 - Եւ Դաւիթ Բերովթացի Ռեմօնի որդիներուն , Ռեքաբի ու անոր եղբօրը Բաանայի , պատասխան տուաւ ու անոնց ըսաւ , Իմ հոգիս ամէն նեղութենէ ազատող Տէրը կենդանի է , 10 - Որ ան որ ինձի պատմեց ու ըսաւ թէ Սաւուղ մեռաւ , կարծելով թէ աւետիս տուող մը պիտի երեւնայ ինձի , զանիկա բռնեցի ու Սիկելակի մէջ զանիկա մեռցուցի , և անոր տուած աւետիսին վարձքը այս եղաւ . 11 - Որչափ աւելի նոյն վարձքը եւ վայել այն չար մարդոց , որոնք արդար մարդ մը իր տանը մէջ իր անկողինին վրայ մեռցուցին . և հիմա անոր արիւնը անշուշտ ձեր ձեռքէն պիտի պահանջեմ , ու ձեզ երկրիս վրայէն պիտի վերցնեմ : 12 - Այն ատեն Դաւիթ իր մանչերուն հրամայեց , ու զանոնք մեռցուցին , և անոնց ձեռքերը ու սաքերը կտրեցին , ու Քերրոնի աւազանին վրայ կախեցին : Իսկ Յե-

բուսթէի գլուխը առին, ու ֆեբրոնի մէջ Աբենների գերեզմանը թաղեցին:

ԳԼ. Ե

Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը ֆեբրոն եկան Դաւիթի, ու ա՛նք ըսին, Ահա մենք քու սուկորդ ու քու մարմինդ ենք: 2 - Եւ *ասկէ առաջ՝ ալ երբ Սաուղ մեր վրայ թագաւոր էր, Իսրայէլը դուրս հանողը ու ներս բերողը դուն էիր. և Տէրը քեզի ըսաւ, Իմ ժողովուրդս Իսրայէլը դուն հովուես. ու Իսրայէլի վրայ իշխան ըլլաս: 3 - Եւ Իսրայէլի բոլոր ծերերը ֆեբրոն եկան թագաւորին. ու Դաւիթ թագաւորը ֆեբրոնի մէջ Տէրոջը առջև անոնց հետ դաշնակցութիւն ըրաւ. ու ա՛նոնք Դաւիթը Իսրայէլի վրայ թագաւոր օժեցին:

4 - Եւ Դաւիթ երեսուն տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու քառասուն տարի թագաւորութիւն ըրաւ: 5 - Ֆեբրոնի մէջ Յուդայի վրայ եօթը տարի ու վեց ամիս թագաւորութիւն ըրաւ, ու Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի ու Յուդայի վրայ երեսունութ քէք տարի թագաւորութիւն ըրաւ:

6 - Եւ թագաւորը իր մարդոցմով Երուսաղէմ գնաց, այն երկիրը բնակող Յեբրուսացիներուն վրայ. ու Դաւիթի խօսեցան՝ ըսելով, Եթէ կոյրերը ու կաղերը չվերցնես, հոս պիտի չմընես. կարծելով թէ Դաւիթ չկրնար հոն մտնել: 7 - Բայց Դաւիթ առաւ Սիօնի բերդը, (որ Դաւիթի քաղաքը էր ի՛նչ-ի՛նչ): 8 - Եւ Դաւիթ այն օրը ըսաւ, Ով որ Յեբրուսացիները զարնէ, ու ջրանցքը հասնելով Դաւիթի ատելի եղող կաղերը ու կոյրերը վերցնէ, ա՛նիկս զօրոգիւ պիտի ըլլայ. անոր համար կ'ըսեն, Կոյրը ու կաղը տունը չմտնէ: 9 - Եւ Դաւիթ այն բերդին մէջ նստաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքը անուանեց. և Դաւիթ անոր չորս կողմը Մեղօնէ դէպի ներս շէնքեր շինեց: 10 - Աւ Դաւիթ երթալով կը մեծնար, ու զօրաց Տէր Աստուածը անոր հետ էր:

11 - Եւ Տիւրոսի թագաւորը Քիրամ Դաւիթի դեսպաններ զրկեց, նաև եղեւնափայտեր ու հիւսեր ու սրմնա-

դիրներ, որոնք Դաւիթի տուն շինեցին: 12 - Այն ատեն Դաւիթ իմացաւ որ Տէրը զինք Իսրայէլի վրայ թագաւոր հաստատեց, ու իր ժողովուրդին Իսրայէլի համար իր թագաւորութիւնը բարձրացուց: 13 - Եւ Դաւիթ ֆեբրոնէ գալէն ետքը՝ Երուսաղէմէ ուրիշ հարձեր ու կիներ ալ առաւ. ու Դաւիթի ուրիշ աղաքներ ու աղջիկներ ալ ծնան: 14 - Աւ Երուսաղէմի մէջ անոր ծնած տղոցը անունները ասոնք են. Սամա, Սովբաբ, Նաթան, Սոզոմոն, 15 - Յեբաար, Եղիսուա, Նափեկ, Յափիէ, 16 - Եղիսամա, Եղիադա ու Եղիփաղէա:

17 - Եւ Փղշտացիք Դաւիթի Իսրայէլի վրայ թագաւոր օժուելը լսելով, բոլոր Փղշտացիք ոտք ելան որպէս զի Դաւիթը փնտռեն. երբ Դաւիթ այս բանը լսեց, բերդը իջաւ: 18 - Աւ Փղշտացիք եկան և Ռափայիներուն հովիտին մէջ տարածուեցան: 19 - Աւ Դաւիթ Տէրոջը հարցուց ու ըսաւ, Փղշտացուց դէմ ելլե՞մ, զանոնք իմ ձեռքս պիտի մտանե՞ս: Եւ Տէրը Դաւիթի ըսաւ, Ելիր, քանզի Փղշտացիները անշուշտ քու ձեռքդ պիտի մտանեմ: 20 - Այն ատեն Դաւիթ Բաազփարասին գնաց. ու Դաւիթ զանոնք հոն զարկաւ, ու ըսաւ, Տէրը իմ թշնամիներս իմ ձեռքովս պատառեց, ինչպէս ջուրերը Բա՛ճֆէբը կը պատառեն. անոր համար այն տեղին անունը *Բաազփարասին ըսուեցաւ: 21 - Եւ Փղշտացիք հոն թողուցին իրենց կուսքերը, ու Դաւիթ և իր մարդիկը զանոնք առին:

22 - Աւ Փղշտացիք նորէն մէյմըն ալ ելան, և Ռափայիներուն հովիտին մէջ տարածուեցան: 23 - Աւ երբ Դաւիթ Տէրոջը հարցուց, ա՛նք ըսաւ, Չելլես. հապա գէպի անոնց ետեւի կողմը դառնալով՝ թթենիներուն կողմէն անոնց վրայ երթաս. 24 - Աւ երբ թթենիներուն գլուխը քալուածքի մը ձայն լսես, այն ատեն շարժիս. քանզի այն ատեն Տէրը քու առջեւէդ պիտի ելլէ Փղշտացուց բանակը զարնելու համար: 25 - Եւ Դաւիթ այնպէս ըրաւ, ինչպէս Տէրը իրեն հրամայեց. ու Գաբայէ մինչև Գազեր Փղշտացիները զարկաւ:

*Եբր. երեկ ու միւս օր

*Այնինչ, տէր իմ տեղ խրամասներու + Եբր. պէքեաներուն

ԳԼ. 2

Եւ Դաւիթ նորէն Իսրայէլի բոլոր ընտրուած մարդիկը ժողովեց, որոնք երեսուն հազար հոգի էին: 2-Ու Դաւիթ իրեն հետ եղող բոլոր ժողովուրդով ելաւ, և Յուզայի Բաազը գնաց, որպէս զի անկէ Աստուծոյ տապանակը վեր հանէ, որուն վրայ քերովբէներուն վրայ նստող զօրութեանց Տէրոջը տունը կոչուած է: 3 - Եւ Աստուծոյ տապանակը նոր սայլի մը վրայ դրին, ու զանհկա Բյրացի Աբինադաբի տունէն վերցուցին. ու Աբինադաբի որդիները, Ոզա ու Ա.քիով, այն նոր սայլը կը վարէին: 4 - Եւ զանհկա Աստուծոյ տապանակին հետ Բյրացի Աբինադաբի տունէն հանեցին. ու Ա.քիով տապանակին առջեւէն կ'երթար: 5 - Եւ Դաւիթ ու Իսրայէլի բոլոր տունը մայր փայտէ շինարարութեամբ, քանդակներով, թմբուկներով, դափերով ու ծնծղաներով Տէրոջը առջև կը խաղային:

6 - Ու երբ Նաբոնի կալը եկան, Ոզա եւ Յեռու Աստուծոյ տապանակին երկընցուց, ու զանհկա բունեց, քանզի եզները զանիւ ծռեր էին: 7 - Եւ Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Ոզայի դէմ, ու Աստուած զանհկա հոն այս յանցանքին համար զարկաւ. և նոյն տեղը Աստուծոյ տապանակին քով մեռաւ: 8 - Ու Դաւիթ արամեցաւ, քանզի Տէրը հարուածով Ոզան զարկաւ. ու այն տեղին անունը մինչև այսօր *Փարէս-ոզա ըսուեցաւ: 9 - Եւ Դաւիթ այն օրը Տէրոջմէ վախցաւ, ու ըսաւ, Տէրոջը տապանակը ի՛նչպէս իմ քովս մտնէ: 10 - Եւ Դաւիթ Տէրոջը տապանակը իր քով, Դաւիթի քաղաքը, չուզեց տանիլ. ու Դաւիթ զանհկա Գեթացի Աբդեգոմի տունը խտորացուց: 11 - Եւ Տէրոջը տապանակը Գեթացի Աբդեգոմի տունը երեք ամիս մնաց. ու Տէրը Աբդեգոմը ու անոր բոլոր տունը օրհնեց:

12 - Եւ Դաւիթ Թագաւորին պատմեցին ու ըսին, Աստուծոյ տապանակին համար Տէրը Աբդեգոմի տունը ու անոր ամէն ունեցածը օրհնեց: Եւ Դաւիթ գնաց, ու Աստուծոյ տապանակը

Աբդեգոմի տունէն ուրախութեամբ Դաւիթի քաղաքը հանեց: 13 - Ու երբ Տէրոջը տապանակը վերցնողները վեց քայլ առաջ գացին, արջառներ ու պարարտ զոհեր զօհեց: 14 - Եւ Դաւիթ Տէրոջը առջև բոլոր ուժովը կը խաղար, ու Դաւիթ քթանէ եփուտ հագեր էր: 15 - Եւ Դաւիթ ու Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը տապանակը ուրախութեամբ ու փողերու ձայներով կը տանէին: 16 - Ու երբ Տէրոջը տապանակը Դաւիթի քաղաքը եկաւ, Սաւուղի աղջիկը Մեղքող պատուհանէն նայելով՝ տեսաւ որ Դաւիթ Թագաւորը Տէրոջը առջև ցաթկտելով կը խաղայ, ու զանհկա իր սրտին մէջ անարգեց: 17 - Եւ Տէրոջը տապանակը բերին, ու զանհկա իր տեղը դրին այն վրանին մէջ զոր Դաւիթ տնոր համար կանգներ էր. և Դաւիթ Տէրոջը առջև ողջակէզներ ու խաղաղութեան զօհեր մատուց: 18 - Ու Դաւիթ երբ ողջակէզները ու խաղաղութեան զօհերը մատուցանելը լմնցուց, զօրաց Տէրոջը անունովը ժողովուրդը օրհնեց: 19 - Եւ Իսրայէլի բոլոր բազմութեանը, այր մարդէն մինչև կին մարդը, բոլոր ժողովուրդին ամէն մէկուն մէկ նկանակ, կտոր մը միս ու կարկանդակ մը բաշխեց. ու բոլոր ժողովուրդը ամէն մէկը իր տունը գնաց:

20 - Եւ Դաւիթ անկէ դարձաւ իր տունը օրհնելու համար, ու Սաւուղի աղջիկը Մեղքող Դաւիթը դիմաւորելու ելաւ, ու ըսաւ, Իսրայէլի Թագաւորը այսօր ի՛նչ փառաւոր էր, որ այսօր իր ծառաներուն ազատիներուն առջև ինքզինք մերկացուց, ինչպէս արկաներէն մէկը ինքզինք կը մերկացրնէ: 21 - Եւ Դաւիթ Մեղքողի ըսաւ, Ես այն Տէրոջը առջև Խաղայի, որ զիս քու հօրմէդ ու անոր բոլոր տունէն աւելի ընտրեց, ու զիս Տէրոջը ժողովուրդին Իսրայէլի վրայ իշխան դրաւ, այո, ես այն Տէրոջը առջև կը խաղամ: 22 - Նաև զիս ասկէ ալ աւելի անարգ երեւցնելով իմ աչքերուս առջև նուստ պիտի ըլլամ. իսկ այն քու ըսած ազատիներուդ առջև պիտի փառաւորուիմ: 23 - Եւ Սաւուղի աղջիկը Մեղքող մինչև իր մահուան օրը զաւակ չծնաւ:

*Այսինքն, Ոզայի հարուածը, իսկ, Ոզայի խրամատութիւնը

ԳԼ. Է

Ու երբ թագաւորը իր տունը նըստաւ, ու Տէրը գոնիկա իր բոլորտիքը եղող ամէն թշնամիներէն աշտիւ՛ւմ հանգստացուց, 2 - Թագաւորը Նաթան մարգարէին ըսաւ, Ահա ես եղևնափայտէ շինեալ տան մը մէջ կը բնակիմ, ու Աստուծոյ տապանակը վրանի մէջ կեցեր է: 3 - Եւ Նաթան ըսաւ թագաւորին, Գնա, բոլոր սրտիդ մէջ եղածը ըրէ, քանզի Տէրը քեզի հետ է:

4 - Ու նոյն գիշերը Տէրոջը խօսքը Նաթանի եղաւ՝ ըսելով, 5 - Գնա, իմ ծառայիս Դաւիթի ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Դո՛ւն ինծի բնակելու համար տուն պիտի շինես. 6 - Որովհետեւ Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանած օրէս մինչև այսօր տան մէջ չբնակեցայ, այլ վրաններով ու խորաններով պտրտեցայ: 7 - Իսրայէլի բոլոր որդիներուն հետ որչափ տեղ որ պտրտեցայ, միթէ բան մը խօսեցա՞յ Իսրայէլի *ցեղերէն մէկուն հետ, որոնց իմ ժողովուրդս Իսրայէլը հովուելու հրաման տուեր էի, ու ըսի՞ թէ Ինչո՞ւ համար ինծի եղևնափայտէ տուն մը չշինեցիք: 8 - Եւ հիմա իմ ծառայիս Դաւիթի այսպէս ըսես, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ես քեզ փարախէն, ոչխարներուն ետեւէն, աւի, որպէս զի իմ Իսրայէլ ժողովուրդիս վրայ առաջնորդ ըլլաս. 9 - Եւ ուր որ կ'երթայիր՝ քեզի հետ էի. և քու առջեւէդ բոլոր թշնամիներդ կտորեցի, ու երկրի վրայ եղող մեծերուն անուանը պէս քու անունդ մեծցուցի: 10 - Եւ իմ ժողովուրդիս Իսրայէլի ալ տեղ մը պիտի որոշեմ, ու զանիկա պիտի անկեմ. ու իր տեղը պիտի բնակի, ալ պիտի չշարժի. և անիրաւութեան որդիները առաջուան պէս մէյմըն ալ պիտի չնեղեն զանիկա, 11 - Ինչպէս իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ դատաւորներ դրած օրէս ի վեր եղաւ. ու քեզ քու ամէն թշնամիներէդ պիտի հանգստացընեմ: Եւ Տէրը քեզի կ'իմացնէ որ Տէրը քեզի տուն պիտի շինէ: 12 - Երբ քու օրերդ լեցուին, ու դուն քու հոյրերուդ հետ քնանաս, քեզմէ ետքը

քու երանքէդ ելլող զաւակդ պիտի բարձրացնեմ, ու անոր թագաւորութիւնը պիտի հաստատեմ: 13 - Անիկա իմ անուանս տուն պիտի շինէ, ու անոր թագաւորութեան ամթուր յաւիտեան պիտի կանգնեմ. 14 - Ես անոր հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ. եթէ անիկա անիրաւութիւն ընէ, ես զանիկա մարդոց գաւազանովը ու մարդոց որդիներուն հարուածներովը պիտի պատժեմ. 15 - Իսկ իմ ողորմութիւնս անկէ պիտի *չվերցնեմ, ինչպէս Սաւուղէ վերցուցի, ու զանիկա քու առջեւէդ վաճակեցի: 16 - Եւ քու տունդ ու քու թագաւորութիւնդ քու առջեւէդ յաւիտեան ապահով պիտի ըլլան, քու ամթուր յաւիտեան հաստատ պիտի մնայ: 17 - Եւ Նաթան այս բոլոր խօսքերը ու այս բոլոր տեսիլքը մի ըստ միջէ Դաւիթի գրուցեց:

18 - Եւ Դաւիթ թագաւորը գնաց, Տէրոջը առջև նստաւ, ու ըսաւ, Ով Տէր Եհովա, ես ո՞վ եմ, ու իմ տունս ի՞նչ է, որ զիս մինչև հոս բերիր. 19 - Սակայն ստիկա ալ քու աչքերուդ պզտիկ երեւցաւ, ով Տէր Եհովա, ու քու ծառայիդ տանը վրայով հեռաւոր ժամանակի համար ալ խօսեցար. մարդոց սովորութիւնը ստիկա՞ է արդեօք, ով Տէր Եհովա: 20 - Եւ Դաւիթ նորէն մէյմըն ալ քեզի ի՞նչ գրուցէ. քանզի դուն, ով Տէր Եհովա, քու ծառայդ կը ճանչնաս: 21 - Այս բոլոր մեծ բաները քու խօսքիդ համար ու քու սրտիդ պէս ըրիր, որպէս զի ծառայիդ գիտցնես: 22 - Ասոր համար մեծ երեւցար, ով Տէր Աստուած. քանզի քեզի պէս *չէ՛լ մէկը չկայ, ու քեզմէ զատ Աստուած չկայ՝ մեր սկանջներովը բոլոր լաւածներնուս համեմատ: 23 - Եւ ո՞ր ազգը երկրի վրայ քու ժողովուրդիդ Իսրայէլի պէս է, որու համար նոյն ինքն Աստուած եկաւ զանիկա փրկելու, իրեն ժողովուրդ ընելու, ու իրեն ձե՞ անուն վասակելու, †և քու երկրիդ մէջ այս մեծ ու ստեղծութիւնները ընելու, քեզի համար Եգիպտոսէ ազատած ժողովուրդիդ առջեւէն ազգերը ու անոնց աստուածները վաճեցա՛ւ: 24 - Եւ քու ժողո-

*կ-մ, դատաւորներէն. տես ա Մն. ժէ. 6:

*Եբբ. չվերնայ
†Եբբ. և ձեզի համար

վուրդդ Իսրայէլը յաւիտեան քեզի ժողովուրդ հաստատեցիր, ու դուն, ով Տէր, անոնց Աստուած եղար: 25 - Եւ հիմա, ով Տէր Աստուած, քու ծառայիդ համար ու անոր տանը համար բաժնի խօսքդ յաւիտեան հաստատէ, ու բաժնիդ պէս ըրէ: 26 - Եւ քու անունդ յաւիտեան մեծ ճանչցուի, ու ըսեն թէ Զօրութեանց Տէրը Իսրայէլի վրայ Աստուած է. ու քու ծառայիդ Իսաիթի տունը քու առջեւդ հաստատ մնայ: 27 - Քանզի դուն, ով Տէր զօրութեանց, Աստուած Իսրայէլի, քու ծառայիդ յայանեցիր ու ըսիր, Քեզի տուն պիտի շինեմ. ասոր համար քու ծառայդ իր սրտին մէջ համարձակութիւն գտաւ այս աղօթքը քեզի ընելու: 28 - Եւ հիմա, ով Տէր Եհովա, այն Աստուածը դուն ես, ու քու խօսքերդ ճշմարիտ են, և քու ծառայիդ այս աղէկութիւնը խոստացար: 29 - Ուստի հիմա «կամք ըրէ» քու ծառայիդ տունը օրհնելու, որպէս զի յաւիտեան քու առջեւդ ըլլայ. քանզի, ով Տէր Եհովա, դուն զրուցեցիր, ու քու օրհնութիւնովդ ծառայիդ տունը յաւիտեան օրհնեալ ըլլայ:

ԳԼ. Ը

Անկէ ետեւ Իսաիթ Փղշտացիները զարկաւ, ու զանոնք նուաճեց. և Իսաիթ Փղշտացուց ձեռքէն Մեթեկամման առաւ. 2 - Նաև Մովաբը զարկաւ, ու գետինը պառկեցնելով զանոնք լարով չափեց. երկու լարով մեացրնելու չափեց, ու հէ՛ սամբոզ լարով ապրեցնելու. ու Մովաբացիք Իսաիթի հարկատու ծառաներ եղան: 3 - Եւ Իսաիթ Սուբայի թագաւորը, Ռուբի որդին Ադրազարը, զարկաւ, երբ Եփրատ գետին վրայ իր իշխանութիւնը հաստատելու կ'երթար: 4 - Ու Իսաիթ անկէ հազար եօթը հարիւր ձիաւոր ու քսան հազար հեռեակ զօրք բռնեց. և Իսաիթ բոլոր լիառքի ձիերուն ջիղերը կարեց, ու անոնցմէ միայն հարիւր ձի երէն համար պահեց: 5 - Եւ Իամասկոսի Ասորիները Սուբայի թա-

գաւորին Ադրազարի օգնութիւն ընելու եկան. ու Իսաիթ Ասորիներէն քանուերկու հազար մարդ զարկաւ: 6 - Եւ Իսաիթ Իամասկոսի Ասորուց մէջ բերդապահ զօրքեր դրաւ. ու Ասորիները Իսաիթի հարկատու ծառայ եղան. ու Իսաիթ ուր որ կ'երթար՝ Տէրը անոր յաջողութիւն կու տար: 7 - Եւ Իսաիթ Ադրազարի ծառաներուն սակիէ վահանները առաւ, ու զանոնք Երուսաղէմ բերաւ: 8 - Եւ Ադրազարի քաղաքներէն, Բեթաշէ ու Բերթայէ, Իսաիթ թագաւորը խիստ շատ պղինձ առաւ:

9 - Ու Եմաթի թագաւորը Թովու երբ լսեց որ Իսաիթ Ադրազարի բոլոր զօրքերը ջարդեր է, 10 - Թովու իր որդին Յովրամը Իսաիթ թագաւորին զրկեց, որպէս զի անոր բարե ընէ ու զանհկա օրհնէ, Ադրազարի դէմ պատերազմ ընելուն ու զանհկա զարնելուն համար. (քանզի Ադրազար Թովուի հետ պատերազմներ կ'ընէր:) Ու Յովրամը ձեռքը արծաթէ անօթներ, սակիէ անօթներ ու պղինձէ անօթներ կային: 11 - Իսաիթ թագաւորը զանոնք ալ Տէրոջը նուիրեց, ինչ նուիրած արծաթին ու սակին հետ, զորոնք բոլոր իր յաղթած ազգերէն առեւ եր, 12 - Ասորիներէն, Մովաբէ, Ամոնի որդիներէն, Փղշտացիներէն, Ամաղէկէ, և Սուբայի թագաւորին, Ռուբի որդւոյն Ադրազարի, աւարէն: 13 - Ու Իսաիթ երբ Ադի ձորին մէջ տասնըութ հազար խորհրդերը կուարեց ու ետ դարձաւ, ինչ անուն վասակեցաւ: 14 - Ու Եգովմի մէջ բերդապահ զօրքեր դրաւ. բոլոր Եգովմի երէն մէջ բերդապահ զօրքեր դրաւ, և բոլոր Եգովմացիք Իսաիթի ծառայ եղան. ու Իսաիթ ուր որ կ'երթար, Տէրը անոր յաջողութիւն կու տար:

15 - Եւ Իսաիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ. ու Իսաիթ իր բոլոր ժողովուրդին իրաւունք ու արդարութիւն կ'ընէր: 16 - Եւ Շարուհայի որդին Յովաբ զօրքերուն վրայ էր. ու Աքիզուգի որդին Յովասափատ յիշատակաց դպիր էր: 17 - Եւ Աքիսովբի որդին Սադակ ու Աքիս-

*Կամ, սկսէ
 †Եբր. ձեռքը դարձնելու
 ‡Կամ, կառքերը քակեց, ու անոնցմէ միայն հարիւր կառք պահեց

*Կամ, Ադորամը. տես ա Մն. Ժր. 10:
 †Կամ, Եգովմացիները. տես ա Մն. Ժր. 12:

Թարի որդին Աքիմելէք քահանաներ էին . ու *Սարայիա առեճագար էր . 18 - Եւ Յովիտայի որդին Բանեա Քերեթիներուն ու Փելեթիներուն զհայ էր . ու Դաւիթի որդիները նախարարներ էին :

ԳԼ Թ

Եւ Դաւիթ ըսաւ, Արդեօք Սաւուղի տունէն մնացած մարդ մը կա՞յ, որ Յովնաթանի սիրոյն համար անոր բարերարութիւն ընեմ: 2 - Ու Սաւուղի տունէն Սիբա անունով ծառայ մը կար, ու զանկա Դաւիթի կանչեցին. և թագաւորը անոր ըսաւ, Սիբա զո՞ւն ես . ու անկա ըսաւ, Ծառագ եմ: 3 - Ու թագաւորը ըսաւ, Սաւուղի տունէն մնացած մարդ մը չկա՞յ, որպէս զի անոր Աստուծոյ ողորմութիւնը ընեմ: Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Յովնաթանէ ոտքերը կազ որդի մը մնաց: 4 - Ու թագաւորը անոր ըսաւ, Անկա ո՞ւր է: Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Ահա անկա Լագաբարի մէջ Ամիելի որդւոյն Մաքիբի տունն է: 5 - Եւ Դաւիթ թագաւորը ճարտ դրկեց, ու զանկա Լագաբարէ Ամիելի որդւոյն Մաքիբի տունէն առաւ: 6 - Եւ Սաւուղի որդւոյն Յովնաթանի որդին Մեմփիբոսթէ երբ Դաւիթի եկաւ, երեսի վրայ ինկաւ ու խոնարհութիւն ըրաւ: Եւ Դաւիթ ըսաւ, Ով Մեմփիբոսթէ . ու անկա ըսաւ, Ահա քու ծառագ: 7 - Եւ Դաւիթ անոր ըսաւ, Մի վախնար, քանզի քու հօրդ Յովնաթանի սիրոյն համար քեզի անշուշտ բարերարութիւն պիտի ընեմ, ու քու հօրդ Սաւուղի բոլոր արտերը քու վրագ պիտի դարձնեմ. ու դուն միշտ իմ սեղանս հաց պիտի ուտես: 8 - Եւ անկա խոնարհութիւն ըրաւ ու ըսաւ, Բու ծառագ ո՞վ է, որ ինծի պէս մեռած շան մը վրայ նայեցար: 9 - Իսկ թագաւորը Սաւուղի ծառան Սիբան կանչեց, ու անոր ըսաւ, Սաւուղի ու անոր տանը բոլոր ստացուածքը քու տէրոջդ որդւոյն տուի: 10 - Եւ դուն ու քու որդիներդ ու ծառաներդ անոր համար երկիրը գործէք, ու անոր պարտքը իրեն բերես, որպէս զի քու տէրոջդ որդին ուտելու հաց ունենայ. և քու տէրոջդ որդին

Մեմփիբոսթէ միշտ իմ սեղանս հաց պիտի ուտէ: Ու Սիբա տանը հինգ որդի ու քսան ծառայ ունէր: 11 - Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Իմ թագաւոր տէրս քու ծառայիդ ինչ որ հրամայեց, քու ծառագ այնպէս պիտի ընէ: Բայց Մեմփիբոսթէ (ըստ Դաւիթի) թագաւորին որդիներէն մէկուն պէս՝ իմ սեղանս հաց պիտի ուտէ: 12 - Ու Մեմփիբոսթէ պզտիկ տղայ մը ունէր, ու անոր անունը Միբա էր. և Սիբայի տունը բոլոր բնակողները Մեմփիբոսթէի ծառաներն էին: 13 - Ու Մեմփիբոսթէ Երուսաղէմի մէջ բնակեցաւ, քանզի միշտ թագաւորին սեղանը հաց կ'ուտէր. ու անկա իր երկու ոտքերովը կազ էր:

ԳԼ Ժ

Եւ անկէ ետեւ Ամմոնի որդիներուն թագաւորը մեռաւ. ու անոր որդին Անոն անոր տեղ թագաւոր եղաւ: 2 - Եւ Դաւիթ ըսաւ, Նստաի որդւոյն Անոնի մարդասիրութիւն ընեմ, ինչպէս անոր հայրը ինծի մարդասիրութիւն ըրաւ. ու Դաւիթ իր ծառաները անոր դրկեց, որպէս զի զանկա իր հօրը վրայով միթարէն. ու Դաւիթի ծառաները Ամմոնի որդիներուն երկիրը գացին: 3 - Եւ Ամմոնի որդիներուն իշխանները իրենց տէրոջը Անոնի ըսին, Միթէ Դաւիթ քու հայրդ քու առջեւ պատուելու համար քեզի միթարիչներ դրկեց. չէ՞ որ Դաւիթ իր ծառաները քեզի դրկեց, որպէս զի քաղաքը աչքէ անցնեն ու լրտեսեն, որպէս զի երբեք զանկա կործանէ: 4 - Եւ Անոն Դաւիթի ծառաները առաւ, ու անոնց մօրուքին կէտր ամիել տուաւ, ու անոնց հանդերձներուն ալ կէտր մինչև նստոյ տեղը կարել տուաւ, և այնպէս դրկեց զանոնք: 5 - Ու երբ այս բանը Դաւիթի պատմուեցաւ, զանոնք դիմաւորելու ճարտ դրկեց, քանզի այն մարդիկը շատ անարգուեր էին. ու թագաւորը ըսաւ, Երիբովի մէջ նստէք մինչև որ մօրուքնիդ աճի, ու երբեք դարձէք:

6 - Եւ Ամմոնի որդիները տեսնելով որ Դաւիթի հետ աւրուեցան, Ամմոնի որդիները ճարտ դրկեցին, ու Բեթրուբի Ասորիներէն և Սուբայի Ասորիներէն քսան հազար հեռեակ, ու Մաաքայի

*Կա՞մ, Սուսա . տես տ ՄՆ. Ժը. 18 :

Թագաւորէն հազար մարդ, և *Իսաավբէ տասուերկու հազար մարդ վարձքով բռնեցին: 7 - Աւ երբ Դաւիթ զայս լսեց, Յովաբը ու բոլոր զօրաւոր զօրքերը զրկեց: 8 - Եւ Ամմոնի որդիները ելան, ու [†]ապէս զի գրանը առջև կարգաւ պատերազմի շարուեցան. բայց Սուբայի և Բոսթի Ասորիները, ու †Իսաավբ ու Մաաբա՝ դաշտի մէջ զատ կայներ էին: 9 - Եւ Յովաբ երբ տեսաւ որ պատերազմը առջեւէն ու ետեւէն իր վրայ կը հասնի, Իսրայէլի բոլոր ընտրուած մարդոցմէն ընտրեց, ու Ասորւոց դէմ պատերազմի շարեց. 10 - Եւ մնացած զօրքը իր եղբօրը Աբեսայի յանձնեց, որպէս զի Ամմոնի որդիներուն դիմաց շարէ. 11 - Աւ ըսաւ, Եթէ Ասորիները զիս յաղթելու ըլլան, ինծի օգնութեան հասնիս. և եթէ Ամմոնի որդիները քեզ յաղթելու ըլլան, ես քեզի օգնութեան պիտի հասնիմ. 12 - Քաջասիրտ եղիբ, ու մեր ժողովուրդին համար և մեր Աստուծոյն քաղաքներուն համար ու ժով պատերազմինք, ու Տէրը իր աչքին հաճոյ երեւցածը թող ընէ: 13 - Եւ Յովաբ իրեն հետ եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ, որպէս զի անոնց դէմ պատերազմ ընէ. ու անոնք անոր առջեւէն փախան: 14 - Եւ Ամմոնի որդիները Ասորիներուն փախչիլը տեսնելով, անոնք ալ Աբեսայի առջեւէն փախան ու քաղաքը մտան: Եւ Յովաբ Ամմոնի որդիներէն դարձաւ, ու Երուսաղէմ եկաւ: 15 - Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջև կտարուեցան, մէկտեղ ժողովուեցան: 16 - Աւ Ադրազար [†]Տարք զրկեց, և Գեաին անդի կողմը եղող Ասորիները սոք հանեց, ու Էլամ եկան. և անոնց առջեւէն Ադրազարի զօրագլուխը Սովբակ [†]Եբեթ: 17 - Աւ երբ Դաւիթի պատմեցին, անիկա բոլոր Իսրայէլը ժողովելով Յորդանանէ անցաւ ու Էլամ հասաւ. և Ասորիները Դաւիթի դիմաց գունդերով շարուեցան, ու անոր հետ պատերազմ ըրին: 18 - Եւ Ասորիները Իսրայէլի առջեւէն փախան. ու Դաւիթ Ասորիներէն եօթը հարիւր կամք ու քառասուն հազար ձիաւոր կտարեց, ու անոնց

զօրագլուխը Սովբակը զարկաւ, որ հոն մեաւ: 19 - Եւ Ադրազարի հպատակ եղող բոլոր թագաւորները երբ տեսան որ Իսրայէլի առջև յաղթուեցան, Իսրայէլի հետ հաշտութիւն ըրին, ու անոր ծառայ եղան. և Ասորիները անկէ ետքը Ամմոնի որդիներուն օգնելու կը վախնային:

ԳԼ. ԺԱ

Աւ հետեւեալ տարին, թագաւորներուն պարտաւոր իլլելու ատենը, Դաւիթ Յովաբը ու անոր հետ իր ծառաները ու բոլոր Իսրայէլը զրկեց, որոնք Ամմոնացիները կտարեցին, ու Ռաբբան պաշարեցին. բայց Դաւիթ Երուսաղէմ կը նստէր: 2 - Աւ օր իջ իրիկուան դէմ Դաւիթ իր անկողինէն իլլելով պալատին տանիքին վրայ կը պարտէր, և տանիքին վրայէն կին մը տեսաւ որ կը լուացուէր, ու այն կինը տեսքով խիստ գեղեցիկ էր: 3 - Եւ Դաւիթ [†]Տարք զրկեց, ու այն կնոջ համար հարցուց. ու Գեւ ըսաւ, Ասիկա Քեաացի Ուրիայի կինը, *Էլիամի աղջիկը, †Բեթսաբէ է: 4 - Եւ Դաւիթ պատգամաւորներ զրկեց, ու զանիկա առաւ, ու երբ կինը անոր եկաւ, Դաւիթ անոր հետ պառկեցաւ. ու անիկա իր անմաքրութենէն դուրս մաքրուած էր. ետքը կինը իր տունը գնաց. 5 - Եւ կինը յղացաւ, ու Դաւիթի լուր զրկեց՝ ըսելով, Ես յղի եմ: 6 - Եւ Դաւիթ Յովաբի հրաման զրկեց, ու Քեաացի Ուրիան ինծի զրկէ: Յովաբ ալ Ուրիան Դաւիթի զրկեց: 7 - Աւ երբ Ուրիա անոր եկաւ, Դաւիթ Յովաբի սղջութիւնը ու զօրքին սղջութիւնը ու պատերազմին վիճակը հարցուց: 8 - Եւ Դաւիթ Ուրիայի ըսաւ, Տունդ իջիր ու սոքերդ լուս: Եւ Ուրիա թագաւորին պալատէն ելածին պէս, անոր ետեւէն թագաւորէն քաղաքէ գնաց: 9 - Բայց Ուրիա իր տէրօջր բոլոր ծառաներուն հետ պալատին դուռը պառկեցաւ, ու իր տունը չիջաւ: 10 - Եւ Դաւիթի պատմեցին ու ըսին թէ Ուրիա իր տունը չիջաւ: Եւ Դաւիթ Ուրիայի ըսաւ, Իուն ճամբայէ

*Կա՛մ, Տովբի մարդոցմէն. տես Դատ. Ժա. 3, 5:
†Կա՛մ, Տովբի ու Մաաբայի մարդիկը

*Կա՛մ, Ամիէլի. ա Մն. գ. 5:
†Եբթ. Բեթսաբէ
‡Կա՛մ, կերակուրի բաժին

Թարի որդին Աքիմէէք քահանաներ էին . ու *Սարայիա առեճագպիր էր . 18 - Եւ Յովիադայի որդին Բանեա Քերեթիներուն ու Փելեթիներուն զհայ էր . ու Դաւիթի որդիները նախարարներ էին :

ԳԼ Թ

Եւ Դաւիթ ըսաւ, Արդեօք Սաւուղի տունէն մնացած մարդ մը կսոյ, որ Յովնաթանի սիրոյն համար անոր բարերարութիւն ընեմ: 2 - Ու Սաւուղի տունէն Սիբա անունով ծառայ մը կար, ու զանհկա Դաւիթի կանչեցին. և թագաւորը անոր ըսաւ, Սիբան դո՞ւն ես . ու անհկա ըսաւ, Ծառայ եմ: 3 - Ու թագաւորը ըսաւ, Սաւուղի տունէն մնացած մարդ մը չկայ, որպէս զի անոր Աստուծոյ ողորմութիւնը ընեմ: Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Յովնաթանէ ոտքերը կազ որդի մը մնաց: 4 - Ու թագաւորը անոր ըսաւ, Անհկա ո՞ւր է: Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Ահա անհկա Լադաբարի մէջ Ամիէլի որդւոյն Մաքիբի տունն է: 5 - Եւ Դաւիթ թագաւորը մարդ զրկեց, ու զանհկա Լադաբարէ Ամիէլի որդւոյն Մաքիբի տունէն առաւ: 6 - Եւ Սաւուղի որդւոյն Յովնաթանի որդին Մեմփիբոսթէ երբ Դաւիթի եկաւ, երեսի վրայ ինկաւ ու խոնարհութիւն ըրաւ: Եւ Դաւիթ ըսաւ, Ով Մեմփիբոսթէ . ու անհկա ըսաւ, Ահա քու ծառայ: 7 - Եւ Դաւիթ անոր ըսաւ, Մի վախնար, քանզի քու հօրդ Յովնաթանի սիրոյն համար քեզի անշուշտ բարերարութիւն պիտի ընեմ, ու քու հօրդ Սաւուղի բոլոր արտերը քու վրայ պիտի դարձնեմ. ու դուն միշտ իմ սեղանս հաց պիտի ուտես: 8 - Եւ անհկա խոնարհութիւն ըրաւ ու ըսաւ, Բու ծառայ ո՞վ է, որ ինծի պէս մեռած շան մը վրայ նայեցար: 9 - Իսկ թագաւորը Սաւուղի ծառան Սիբան կանչեց, ու անոր ըսաւ, Սաւուղի ու անոր տանը բոլոր ստացուածքը քու տէրոջդ որդւոյն տուի: 10 - Եւ դուն ու քու որդիներդ ու ծառաներդ անոր համար երկիրը գործէք, ու անոր պարտքը իրեն բերես, որպէս զի քու տէրոջդ որդին ուտելու հաց ունենայ. և քու տէրոջդ որդին

Մեմփիբոսթէ միշտ իմ սեղանս հաց պիտի ուտէ: Ու Սիբա տանը հինգ որդի ու քսան ծառայ ունէր: 11 - Եւ Սիբա ըսաւ թագաւորին, Իմ թագաւոր տէրս քու ծառայիդ ինչ որ հրամայեց, քու ծառայ պնպէս պիտի ընէ: Բայց Մեմփիբոսթէ (ըստ Դաւիթի) թագաւորին որդիներէն մէկուն պէս՝ իմ սեղանս հաց պիտի ուտէ: 12 - Ու Մեմփիբոսթէ պզտիկ տղայ մը ունէր, ու անոր անունը Սիբա էր. և Սիբայի տունը բոլոր բնակողները Մեմփիբոսթէի ծառաներն էին: 13 - Ու Մեմփիբոսթէ Երուսաղէմի մէջ բնակեցաւ, քանզի միշտ թագաւորին սեղանը հաց կ'ուտէր. ու անհկա իր երկու ոտքերովը կազ էր:

ԳԼ Ժ

Եւ անկէ ետեւ Ամմոնի որդիներուն թագաւորը մեռաւ. ու անոր որդին Անոն անոր տեղ թագաւոր եղաւ: 2 - Եւ Դաւիթ ըսաւ, Նստաի որդւոյն Անոնի մարդասիրութիւն ընեմ, ինչպէս անոր հայրը ինծի մարդասիրութիւն ըրաւ. ու Դաւիթ իր ծառաները անոր զրկեց, որպէս զի զանհկա իր հօրը վրայով միտթարէն. ու Դաւիթի ծառաները Ամմոնի որդիներուն երկիրը գացին: 3 - Եւ Ամմոնի որդիներուն իշխանները իրենց տէրոջը Անոնի ըսին, Միթէ Դաւիթ քու հայրդ քու առջեւ պատուելու համար քեզի միտթարիչներ զրկեց. չէ՞ որ Դաւիթ իր ծառաները քեզի զրկեց, որպէս զի քաղաքը աչքէ անցնեն ու լրտեսեն, որպէս զի երբեք զանհկա կործանէ: 4 - Եւ Անոն Դաւիթի ծառաները առաւ, ու անոնց մօրուքին կէտր ամիլել տուաւ, ու անոնց հանդերձներուն ալ կէտր մինչև նստոյ տեղը կարել տուաւ, և այնպէս զրկեց զանոնք: 5 - Ու երբ այս բանը Դաւիթի պատմուեցաւ, զանոնք դիմաւորելու մարդ զրկեց, քանզի այն մարդիկը շատ անարգուէր էին. ու թագաւորը ըսաւ, Երիքովի մէջ նստէք մինչև որ մօրուքնիդ աճի, ու երբեք դարձէք:

6 - Եւ Ամմոնի որդիները տեսնելով որ Դաւիթի հետ աւրուեցան, Ամմոնի որդիները մարդ զրկեցին, ու Բեթրուբի Ասորիներէն և Սուբայի Ասորիներէն քսան հազար հեռուակ, ու Մաաքայի

*Կա՛մ, Սուսա . տես Ե Մ. Ժը. 18 :

Թագաւորէն հազար մարդ, և *Իսաովբէ տասուերկու հազար մարդ վարձքով բռնեցին: 7 - Աւ երբ Դաւիթ զայս լսեց, Յովաբը ու բոլոր զօրաւոր զօրքերը զրկեց: 8 - Եւ Ամմոնի որդիները ելան, ու +աղ+էն դրանը առջև կարգաւ պատերազմի շարուեցան. բայց Սուբայի և Բաբի Ասորիները, ու †Իսաովբ ու Մաաքա՝ դաշտի մէջ զատ կայներ էին: 9 - Եւ Յովաբ երբ տեսաւ որ պատերազմը առջեւէն ու ետեւէն իր վրայ կը հասնի, Իսրայէլի բոլոր ընտրուած մարդոցմէն ընտրեց, ու Ասորւոց դէմ պատերազմի շարեց. 10 - Եւ մնացած զօրքը իր եղբօրը Աբեսայի յանձնեց, որպէս զի Ամմոնի որդիներուն դիմաց շարէ. 11 - Աւ ըսաւ, Եթէ Ասորիները զիս յաղթելու ըլլան, ինծի օգնութեան հասնիս. և եթէ Ամմոնի որդիները քեզ յաղթելու ըլլան, ես քեզի օգնութեան պիտի հասնիմ. 12 - Քաջասիրտ եղիր, ու մեր ժողովուրդին համար և մեր Աստուծոյն քաղաքներուն համար ու ժով պատերազմինք, ու Տէրը իր աչքին հաճոյ երեւցածը թող ընէ: 13 - Եւ Յովաբ իրեն հետ եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ, որպէս զի անոնց դէմ պատերազմ ընէ. ու անոնք անոր առջեւէն փախան: 14 - Եւ Ամմոնի որդիները Ասորիներուն փախչիլը տեսնելով, անոնք ալ Աբեսայի առջեւէն փախան ու քաղաքը մտան: Եւ Յովաբ Ամմոնի որդիներէն դարձաւ, ու Երուսաղէմ եկաւ: 15 - Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջև կտարուեցան, մէկտեղ ժողովուեցան: 16 - Աւ Ադրազար Ժաբը զրկեց, և Գեաին անդիի կողմը եղող Ասորիները սոք հանեց, ու Էլամ եկան. և անոնց առջեւէն Ադրազարի զօրագլուխը Սովբակ Կեբեթ: 17 - Աւ երբ Դաւիթի պատմեցին, անիկա բոլոր Իսրայէլը ժողովելով Յորդանանէ անցաւ ու Էլամ հասաւ. և Ասորիները Դաւիթի դիմաց գունդերով շարուեցան, ու անոր հետ պատերազմ ըրին: 18 - Եւ Ասորիները Իսրայէլի առջեւէն փախան. ու Դաւիթ Ասորիներէն եօթը հարիւր կամք ու քառասուն հազար ձիաւոր կտարեց, ու անոնց

զօրագլուխը Սովբակը զարկաւ, որ հոն մեաւ: 19 - Եւ Ադրազարի հպատակ եղող բոլոր թագաւորները երբ տեսան որ Իսրայէլի առջև յաղթուեցան, Իսրայէլի հետ հաշտութիւն ըրին, ու անոր ծառայ եղան. և Ասորիները անկէ ետքը Ամմոնի որդիներուն օգնելու կը վախնային:

ԳԼ. ԺԱ

Աւ հետեւեալ տարին, թագաւորներուն պարտերով ելլելու ատենը, Դաւիթ Յովաբը ու անոր հետ իր ծառաները ու բոլոր Իսրայէլը զրկեց, որոնք Ամմոնացիները կտարեցին, ու Ռաբբան պաշարեցին. բայց Դաւիթ Երուսաղէմ կը նստէր: 2 - Աւ օր Ը իրիկուան դէմ Դաւիթ իր անկողինէն ելլելով պալատին տանիքին վրայ կը պտրտէր, և տանիքին վրայէն կին մը տեսաւ որ կը լուացուէր, ու այն կինը տեսնելով խիստ գեղեցիկ էր: 3 - Եւ Դաւիթ Ժաբը զրկեց, ու այն կնոջ համար հարցուց. ու Բէլ ըսաւ, Ասիկա Քեաացի Ուրիայի կինը, *Էլիամի աղջիկը, †Բեթսաբէ է: 4 - Եւ Դաւիթ պատգամաւորներ զրկեց, ու զանիկա առաւ, ու երբ կինը անոր եկաւ, Դաւիթ անոր հետ պառկեցաւ. ու անիկա իր անմաքրութենէն դէպք մաքրուած էր. ետքը կինը իր տունը գնաց. 5 - Եւ կինը յղացաւ, ու Դաւիթի լուր զրկեց՝ ըսելով, Ես յղի եմ: 6 - Եւ Դաւիթ Յովաբի հրաման զրկեց, ու Բեթսաբէ Ուրիան ինծի զրկէ: Յովաբ ալ Ուրիան Դաւիթի զրկեց: 7 - Աւ երբ Ուրիա անոր եկաւ, Դաւիթ Յովաբի սղջութիւնը ու զօրքին սղջութիւնը ու պատերազմին վիճակը հարցուց: 8 - Եւ Դաւիթ Ուրիայի ըսաւ, Տունդ իջիր ու սոքերդ լուս: Եւ Ուրիա թագաւորին պալատէն ելածին պէս, անոր ետեւէն թագաւորէն քաղաքէ գնաց: 9 - Բայց Ուրիա իր տէրօջր բոլոր ծառաներուն հետ պալատին դուռը պառկեցաւ, ու իր տունը չիջաւ: 10 - Եւ Դաւիթի պատմեցին ու ըսին թէ Ուրիա իր տունը չիջաւ: Եւ Դաւիթ Ուրիայի ըսաւ, Իուն ճամբայէ

*Կա՛մ, Տովբի մարդոցմէն. տես Դատ. Ժա. 3, 5:
†Կա՛մ, Տովբի ու Մաաքայի մարդիկը

*Կա՛մ, Ամիէլի. ա Մն. գ. 5:
†Եբբ. Բեթսաբէ
‡Կա՛մ, կերակուրի բաժին

չէ՞ս եկեր, ինչո՞ւ համար քու առնդ չես իջներ: 11 - Եւ Ուրիա ըսաւ Դաւիթի, Տապանակը ու Իսրայէլ ու Յուդա վրաններու մէջ կը նստին, և իմ տէրս Յովաբ ու իմ տէրոջս ծառաները բաց դաշտի մէջ կը բանակին, ու ես ուսելու ու խմելու և կնոջս հետ պառկելու համար իմ տո՞ւնս երթամ: դուն կենդանի ես, ու քու հոգիդ կենդանի է՝ որ ես այդ բանը չեմ՝ ըներ: 12 - Եւ Դաւիթ Ուրիայի ըսաւ, Այսօր ալ հոս մնացիր, ու վաղը քեզ զրկեմ: Եւ Ուրիա այն օրը ու հետեւեալ օրը Երուսաղէմի մէջ մնաց: 13 - Եւ Դաւիթ հրաւիրեց զանիկա, որ անոր առջև կերաւ խմեց. ու Դաւիթ զանիկա գինովցուց. իսկ Ուրիայ իրիկունը ելաւ՝ ու իր տէրոջը ծառաներուն քով իր անկողինին մէջ պառկեցաւ. բայց իր առնը չիջաւ: 14 - Եւ առաւօտուն Դաւիթ նամակ մը գրեց Յովաբի, և Ուրիայի ձեռքով զրկեց: 15 - Ու նամակին մէջ գրեց ու ըսաւ, Ուրիան խիտ սաստիկ պատերազմին դիմաց դրէք, ու դուք ետ քաշուեցէք, որպէս զի զարնուի ու մեռնի: 16 - Ու երբ Յովաբ քաղաքը պաշարեց, Ուրիան այնպիսի տեղ մը դրաւ՝ ուր զօրաւոր մարդոց գանուկը գիտէր: 17 - Եւ քաղաքին մարդիկը ելան ու Յովաբի հետ պատերազմ ըրին. և զօրքէն, Դաւիթի ծառաներէն, ինկան, ու Քեաացի Ուրիա ալ մեռաւ: 18 - Եւ Յովաբ պարտաւոր դրեց, ու պատերազմին բոլոր պարագաները Դաւիթի իմացուց: 19 - Եւ պատգամաւորին պատուիրելով ըսաւ, Պատերազմին բոլոր դիպուածները թագաւորին պատմելէդ ետքը, 20 - Եթէ թագաւորին բարկութիւնը ելլէ, ու քեզի ըսէ թէ Ինչո՞ւ պատերազմելու համար քաղաքին մօտեցաք. չէի՞ք գիտեր որ պարսպէն նեւ կը նետեն. 21 - *Յերոբոամի որդին Աբիմէլէքը ո՞վ մեռցուց. չէ՞ որ կին մը պարսպին վրայէն երկանաքարի կտոր մը նետեց անոր վրայ, որ անիկա թերէտի մէջ մեռաւ. պարսպին ինչո՞ւ մօտեցաք. այն ատեն դուն ըսես, Քու ծառագ Քեաացի Ուրիա ալ մեռաւ: 22 - Եւ պատգամաւորը գնաց, ու Յովաբի բոլոր իրեն պատուիրածը Դաւիթի պատմեց: 23 - Եւ պատգամաւորը Դաւիթի ըսաւ, Այն մարդիկը մեր վրայ ուժովցան, ու մեզի դէմ դաշտը ելան. բայց մենք մինչև քաղաքին դուռը *հալածեցինք զանոնք՝. 24 - Եւ աղեղնաւորները պարսպին վրայէն քու ծառաներուդ նետեր նետեցին, ու թագաւորին ծառաներէն մէկ քանիները մեռան, և քու ծառագ Քեաացի Ուրիա ալ մեռաւ: 25 - Այն ատեն Դաւիթ պատգամաւորին ըսաւ, Յովաբի այսպէս ըսես, Այս բանը քու աչքերուդ գէշ չերեւնայ. քանզի սուրը երբեմն ասիկա կ'ուտէ ու երբեմն անիկա. քաղաքին վրայ պատերազմը սատակացուր, և զանիկա փլցուր. ու դուն ալ քաջալերէ զանիկա: 26 - Եւ Ուրիայի կինը իր երկանը Ուրիայի մեռնիլը լսելով՝ իր երկանը համար սուգ ըրաւ: 27 - Ու երբ սուգը անցաւ, Դաւիթ Գաբ գրկեց, ու զանիկա իր տունը առաւ. և անիկա անոր կինը եղաւ, ու անոր որդի մը ծնաւ: Բայց Դաւիթի այս ըրած բանը Տէրոջը աչքերուն գէշ երեւցաւ:

ԳԼ. ԺԲ

Եւ Տէրը Նաթանը Դաւիթի զրկեց. ու անոր եկաւ և անոր ըսաւ, Քաղաքի մը մէջ երկու մարդ կար, մէկը հարուստ ու միւսը աղքատ: 2 - Հարուստը խիտ շատ հօտեր ու արջառներ ունէր, 3 - Բայց աղքատը ուրիշ բան մը չունէր, միայն թէ էգ գառնուկ մը, զոր ծախու առեր էր ու կը անուցանէր. և Գառնուկն անոր հետ ու անոր աղոցը հետ մէկտեղ մեծցաւ. անոր պատանէն կ'ուտէր ու անոր գաւաթէն կը խմէր, և անոր ծոցը կը պառկէր, ու անոր՝ աղջկան մը պէս էր: 4 - Եւ ճամբորդ մը եկաւ այն հարուստ մարդուն. ան ալ խնայելով իր հօտերէն ու արջառներէն առնելու, ու իրեն եկող ճամբորդին Խաւի՞ւր պատրաստելու, Գառնուկն այն աղքատ մարդուն էգ գառնուկը առաւ, ու զանիկա իրեն եկող մարդուն համար պատրաստեց:

5 - Այն ատեն Դաւիթի բարկութիւնը այն մարդուն դէմ սաստիկ բարբոքեցաւ, ու Նաթանի ըսաւ, Տէրը

*Եբր. Յերոբոսեթ, որ ըսել է՝ Ամօթայից բանը թող ջատագովութիւն ընէ. ատե Դաւ. զ. 32:

*Եբր. անոնց վրայ էինք

կենդանի է որ այդ բանը ընող մարդը մեռնելու արժանի է: 6 - Եւ այն գառնուկը չորեքսուրսի պիտի հասուցանէ, քանզի այս բանը ըրաւ ու գութ չունեցաւ: 7 - Այն ատեն Նաթան Գաւթի ըսաւ, Այն մարդը դուն ես. Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Քեզ Իսրայէլի վրայ ես թագաւոր օծեցի, ու քեզ Սաւուղի՝ ձեռքէն ես ազատեցի: 8 - Եւ տէրօջ գունը քեզի՝ ու տէրօջ կիները քու ծոցդ տուի, և Իսրայէլի ու Յուդայի տունը քեզի տուի. ու եթէ քիչ կ'երեւար, քեզի *ասոնցմէ աւելի բաներ կու տայի: 9 - Ինչո՞ւ համար Տէրօջը խօսքը անարգեցիր՝ անոր ասքերուն առջև չարութիւն ընելով. Քեառացի Ուրիան սրով մեռցուցիր, ու անոր կինը քեզի կին աւիր, ու զանկա Ամինի որդիներուն սրովը սպաննեցիր: 10 - Եւ հիմա զիս անարգելուդ համար, ու Քեառացի Ուրիայի կինը քեզի կին առնելուդ համար, քու տունէդ տուրը յաւիտեան պակաս պիտի չըլլայ: 11 - Ե՛՛՛՛ Տէրը այսպէս կ'ըսէ, Ահա ես քու տունէդ քեզի դէմ չարիք մը պիտի հանեմ. ու քու ասքերուդ առջև քու կիներդ պիտի առնեմ, և զանաք քու դրացիիդ պիտի տամ. ու անկա այս արեգակին առջև քու կիներուդ հետ պիտի պառկի: 12 - Քանզի դուն ծածկաբար ըրիր, Բայց ես այս բանը բոլոր Իսրայէլի առջև ու արեգակին առջև պիտի ընեմ: 13 - Եւ Գաւթ Նաթանի ըսաւ, Տէրօջը դէմ մեզք գործեցի. ու Նաթան Գաւթի ըսաւ, Տէրն ալ քու մեզքք Գաւթեց, պիտի չմեռնիս: 14 - Բայց սրով հետե այս բանով Տէրօջը թշնամիներուն հայհոյութիւն ընելու առիթ տուիր, անոր համար այս քեզի ծնած տղան անշուշտ պիտի մեռնի:

15 - Ու Նաթան իր տունը գնաց: Եւ Տէրը զարկաւ այն մանուկը զոր Ուրիայի կինը Գաւթի ծներ էր, ու սաստիկ հիւանդացաւ: 16 - Եւ Գաւթ մանուկին համար Աստուծոյ ազաչեց. ու Գաւթ ծոմ պահեց ու գնաց բոլոր գիշերը գետնի վրայ պառկեցաւ: 17 - Եւ անոր տանը ծերերը անոր †քով գացին, որպէս զի զանկա

գետնէն վերցնեն. բայց անկա չուղեց, ու անոնց հետ հաց չկերաւ: 18 - Ու եօթներորդ օրը մանուկը մեռաւ. և Գաւթի ծառաները մանուկին մեռնիլը անոր իմացնելու վախցան, քանզի ըսին, Ահա քանի որ մանուկը ողջ էր՝ անոր պրուցեցինք, ու անկա մեր խօսքը մտիկ չըրաւ. և ի՞նչպէս անոր ըսեց թէ Մանուկը մեռաւ, որ գէշ բան մը ընէ: 19 - Բայց Գաւթ իր ծառաներուն շշունջը ատենելով՝ իմացաւ որ մանուկը մեռեր է. ու Գաւթ իր ծառաներուն ըսաւ, Մանուկը մեռա՞ւ, ու անոնք ըսին, Մեռաւ: 20 - Այն ատեն Գաւթ գետնէն ելաւ, լուացուեցաւ, օծուեցաւ, հանդերձները փոխեց, ու Տէրօջը տունը մտնելով՝ երկրպագութիւն ըրաւ. ետքը իր տունը դարձաւ, և ուզեց ու անոր առջև հաց գրին ու կերաւ: 21 - Եւ ծառաները անոր ըսին, Այս ըրած բանդ ի՞նչ պիտի ըլլայ. քանի որ մանուկը ողջ էր, անք համար ծոմ պահեցիր ու լացիր. իսկ մանուկը մեռածին պէս ելար հաց կերար: 22 - Եւ Գաւթ ըսաւ, Քանի որ մանուկը ողջ էր, ծոմ պահեցի ու լացի. քանզի ըսի, Ո՞վ գիտէ, թերեւս Աստուած ինձի ողորմի, ու մանուկը առողջանայ: 23 - Բայց հիմա անկա մեռած է, ինչո՞ւ համար ծոմ պահեմ. միթէ ես կրնամ զանկա ես դարձնել. ես անոր պիտի երթամ, բայց անկա ինձի պիտի չդառնայ:

24 - Եւ Գաւթ իր կինը Բերսաբէն միւթարեց, ու անոր քով մտաւ, և անոր հետ պառկեցաւ. ու անկա որդի մը ծնաւ, ու անոր անունը Սողոմոն դրաւ. և Տէրը զանկա սիրեց: 25 - Ու Նաթան մարգարէին ձեռքով պատգամ զրկեց. և անոր անունը Տէրօջ համար *Յեզիգիա կոչեց:

26 - Ու Յովաբ Ամինի որդիներուն Ռաբբային դէմ պատերազմ ըրաւ, ու թագաւորանիստ քաղաքը առաւ: 27 - Եւ Յովաբ Գաւթի պատգամաւորներ զրկեց, ու ըսաւ, Ռաբբայի դէմ պատերազմ ըրի ու ջուրերուն քաղաքը առի: 28 - Եւ հիմա մնացած ժողովուրդը ժողովէ. ու քաղաքին դիմաց բանակ դիր և զանկա առ. չըլլայ որ քաղաքը ես առնեմ, ու անոր

*Եբբ. այսինչ ու այնինչ բաները կ'աւելցնէի
†Եբբ. անցուց †Եբբ վրայ ելան

*Այսինքն, Տէրօջը սիրելին

վրայ իմ անունս գրուի : 29 - Ուստի Դաւիթ բոլոր ժողովուրդը ժողվեց ու Ռաբբա գնաց , և անոր դէմ պատերազմելով՝ զանհկա առաւ . 30 - Ու անոնց թագաւորին գլխէն թագը առաւ , որ տաղանգ մը սակիի ծանրութիւն ունէր՝ պատուական քարերով զարդարուած . և անհկա Դաւիթի գլուխը գրուեցաւ . ու Դաւիթ քաղաքէն խիստ շատ աւար առաւ : 31 - Եւ անոր մէջ եղած ժողովուրդը հանեց , ու զանոնք սղոցներու ու երկաթէ կամնասայլներու ու երկաթէ տապարներու տակ դրաւ , և զանոնք աղիւսի փուռէ անցուց . ու Ամնոնի որդիներուն բոլոր քաղաքներուն այսպէս բրաւ . ու Դաւիթ բոլոր ժողովուրդով Երուսաղէմ գարձաւ :

ԳԼ. ԺԳ

Ու անկէ ետքը՝ Դաւիթի որդւոյն Աբիսողոմի մէկ գեղեցիկ քոյրը կար , որուն անունը Թամար էր . ու զանհկա Դաւիթի որդին Ամնոն սիրեց : 2 - Եւ Ամնոն իր քրոջ Թամարի «Իրայ» համար հիւանդանալու չափ նեղացաւ . քանզի անհկա կոյս աղջիկ ըլլալուն համար՝ անոր բան մը ընել Ամնոնի աչքերուն դժուար կ'երեւնար : 3 - Եւ Ամնոն Յովնադաբ անունով բարեկամ մը ունէր , որ Դաւիթի եղբօրը Սամուայի որդին էր . ու Յովնադաբ խիստ խորագէտ մարդ մըն էր : 4 - Եւ անոր ըսաւ , Ով թագաւորի աղայ , դուն ինչո՞ւ համար այդպէս օրէ օր կը հալիս . պարտաւոր ինծի չէ՞ս յայտներ : Ու Ամնոն անոր ըսաւ , Ես իմ եղբօրս Աբիսողոմի քրոջ Թամարի սիրահարած եմ : 5 - Եւ Յովնադաբ անոր ըսաւ , Անկողինիդ մէջ պառկէ ու քեզ հիւանդ ձեւացուր . ու երբ քու հայրդ քեզ տեսնելու գայ , անոր բռէ , կ'աղաչեմ որ իմ քոյրս Թամար ինծի գայ , ու ինծի հաց կերցնէ , ու իմ աչքերուս առջև կերակուր շինէ , որպէս զի տեսնեմ ու անոր ձեռքէն ուտեմ : 6 - Եւ Ամնոն պառկեցաւ ու զինք հիւանդ ձեւացուց . ու երբ թագաւորը զանհկա տեսնելու եկաւ , Ամնոն թագաւորին ըսաւ , կ'աղաչեմ , իմ քոյրս Թամար թող գայ , ու իմ աչքերուս առջև երկու բլիթ շինէ , ու անոր ձեռքէն ուտեմ : 7 - Եւ Դաւիթ Թամարի մարդ զրկեց

առնը՝ ըսելով , Ամնոն եղբօրդ առնը գնա ու անոր կերակուր շինէ : 8 - Եւ Թամար իր եղբօրը Ամնոնի առնը գնաց . ու անհկա պառկած էր . և աղջիկը խմորը առաւ շաղեց , ու անոր աչքերուն առջև բլիթներ շինեց ու եփեց . 9 - Եւ տապակը առաւ ու անոր առջև պարպեց . բայց անհկա ուտել չուզեց . ու Ամնոն ըսաւ , Քովէս ամէն մարդը դուրս հանեցէք . ու ամէն մարդ անոր քովէն դուրս ելան : 10 - Եւ Ամնոն Թամարի ըսաւ , կերակուրը սենեակը ներս բեր , որպէս զի ձեռքէդ ուտեմ : Ու Թամար շինած բլիթները առաւ , ու իր եղբօրը Ամնոնի՝ սենեակը տարաւ . և անոր մօտեցուց որպէս զի ուտէ : 11 - Իսկ Ամնոն զանհկա բռնեց ու անոր ըսաւ , Եկուր , քոյրս , ինծի հետ պառկէ : 12 - Եւ անհկա ըսաւ անոր , Ոչ , եղբայրս , զիս մի բռնադատեր . քանզի Իսրայէլի մէջ այդպիսի բան չըլլար . այդ անզգամութիւնը մի ըներ : 13 - Ու ես իմ նախատինքս ո՞ւր տանիմ . դուն ալ Իսրայէլի մէջ անզգամներէն մէկուն պէս պիտի ըլլաս . և հիմա կ'աղաչեմ , թագաւորին զրուցէ , ու անհկա զիս քեզմէ չարգիլեր : 14 - Բայց Ամնոն անոր խօսքը մտիկ ընել չուզեց . հապա անկէ վօրաւոր ըլլալով՝ զանհկա բռնադատեց ու անոր հետ պառկեցաւ : 15 - Ու ետէ Ամնոն զանհկա խիստ շատ ատեց , այնպէս որ ունեցած ատելութիւնը առաջուան ունեցած սէրէն աւելի մեծ էր . և Ամնոն անոր ըսաւ , Ել գնա : 16 - Ու անհկա անոր ըսաւ , «Պատճառ չկայ» . զիս վռնտելու չարութիւնը միւս ինծի բրածէդ աւելի մեծ է . բայց Ամնոն անոր մտիկ ընել չուզեց : 17 - Եւ իրեն ծառայութիւն ընող մանչը կանչեց ու ըսաւ , Ասիկա քովէս դուրս է հանէ , ու ետեւէն դուռը կղպէ : 18 - (Եւ աղջկան վրայ բազմագոյն պատմութեան մը կար . քանզի թագաւորին կոյս աղջիկները այսպիսի պատմութեան կը հագնէին :) Ու անոր ծառան զանհկա դուրս հանեց , ու ետեւէն դուռը կղպեց : 19 - Եւ Թամար մոխիր առաւ «- իր զխուն վրայ ցանկէ , ու իր վրայի բազմագոյն պատմութեանը պատուեց , և ձեռքը իր զխուն վրայ դրաւ ու լալով գնաց :

*Կամ, Մի ընէր այդ բանը +Եբբ. հանեցէք

20 - Եւ անոր եղբայրը Աբիսողոմ անոր ըսաւ, Միթէ եղբայրդ Ամնոն քեզի հէ՞տ եղաւ . ու հիմա, քոյրս, լուռ կեցիր, անհկա քու եղբայրդ է, ասիկա սիրադ մի դներ . և Թամար իր եղբօրը Աբիսողոմի տունը անմխիթար կը նըստէր: 21 - Ու Դաւիթ թագաւորը այս ամէն բաները լսելով՝ խիստ *բարկացաւ: 22 - Եւ Աբիսողոմ Ամնոնի հետ աղէկ կամ գէշ խօսք մը չխօսեցաւ, քանզի Աբիսողոմ Ամնոնը կ'ատէր՝ իր քոյրը Թամարը լիկելուն համար:

23 - Ու երկու տարի անցնելէն ետքը, երբ Աբիսողոմի ուրիշները Եփրեմի մօտ եղած Բաղասասորին մէջ ասրակառուր կ'ընէին, Աբիսողոմ թագաւորին բոլոր որդիները հրաւիրեց: 24 - Եւ Աբիսողոմ թագաւորին գնաց ու անոր ըսաւ, Ահա քու ծառայիդ ուրիշները ասրակառուր կ'ընեն . շնորհք ըրէ, թագաւորը ու անոր ծառաները քու ծառայիդ հետ երթան: 25 - Եւ թագաւորը Աբիսողոմի ըսաւ, Ոչ, որդիս, ամէնս չերթանք, որպէս զի քու վրագ ծանրութիւն չըլլանք . ու զանհկա ստիպեց. բայց Դաւիթ երթալ չուզեց, ու զանհկա օրհնեց: 26 - Եւ Աբիսողոմ ըսաւ, Եթէ ոչ գոնէ իմ եղբայրս Ամնոն մեզի հետ գայ . ու թագաւորը անոր ըսաւ, Անհկա ինչո՞ւ քեզի հետ երթայ: 27 - Բայց Աբիսողոմ զանհկա ստիպելուն համար՝ Ամնոնը ու թագաւորին բոլոր որդիները անոր հետ զրկեց: 28 - Եւ Աբիսողոմ իր մանչերուն պատուիրեց ու ըսաւ, Նայեցէք, երբ Ամնոնի սիրտը գինիէն զուարթանայ, ու ես ձեզի Ամնոնը զարկէք՝ ըսեմ, զանհկա մեռցուցէք: մի վախնաք. չէ՞ որ ես ձեզի հրամայեցի . քաջասիրտ ու զօրաւոր կարիճներ եղէք: 29 - Եւ Աբիսողոմի մանչերը Աբիսողոմի պատուիրածին պէս ըրին Ամնոնի . ու թագաւորին բոլոր որդիները ոտք ելան, և ամէն մէկը իր ջորին հեծնելով՝ փախան: 30 - Ու անոնք դեռ ճամբան ըլլալով, Դաւիթի լուր բերին ու ըսին, Աբիսողոմ թագաւորին բոլոր որդիները մեռցուց, ու ամենցմէ մէկը չմնաց: 31 - Եւ թագաւորը օտք ելաւ, իր հանդերձները պատուեց, ու գեաինը պառկեցաւ . ու անոր բոլոր ծառաները հանդերձնին պատուած անոր քուրսիէն կը

կայնէին: 32 - Ու Դաւիթի եղբօր Սամայի որդին Յովադաբ պատասխան տուաւ ու ըսաւ, Իմ տէրս չկարծէ որ բոլոր երեսասարդները, թագաւորին որդիները, մեռցուցին, քանզի միայն Ամնոն մեռած է . վասն զի այս բանը Աբիսողոմի բերնովը սրտշուած էր՝ անոր քոյրը Թամարը լիկած օրէն ի վեր: 33 - Ու հիմա իմ թագաւոր տէրս իր սրտին մէջ այս բանը չդնէ, կարծելով թէ թագաւորին բոլոր որդիները մեռան, քանզի միայն Ամնոն մեռած է: 34 - Եւ Աբիսողոմ փախաւ: Ու երբ Դաւիթի պատանին, դէսը, աչքերը վերցուց նայեցաւ, տեսաւ որ իր ետեւէն լեռանը քովէն խիստ շատ ժողովուրդ կու գար: 35 - Այն ատեն Յովադաբ թագաւորին ըսաւ, Ահա թագաւորին որդիները կու գան. ծառայիդ խօսքը ելաւ: 36 - Եւ անհկա իր խօսքը լմնցուցածին պէս՝ ահա թագաւորին որդիները եկան, ու ձայներնին վերցուցին ու լացին . և թագաւորն ալ ու անոր բոլոր ծառաները խիստ մեծ լացով մը լացին:

37 - Իսկ Աբիսողոմ փախաւ, ու Գետուրի թագաւորին, Ամիուդի որդւոյն Թուլմիի, գնաց . բայց Դաւիթ ամէն օր իր որդւոյն համար սուգ կ'ընէր: 38 - Եւ Աբիսողոմ փախաւ, ու Գետուր գնաց, ու հոն երէք տարի մնաց: Եւ Դաւիթ թագաւորը Աբիսողոմի ելլելու կը փափաքէր, քանզի մեռնող Ամնոնի վրայով մխիթարուեր էր:

ԳԼ. ԺԴ

Եւ Շարուհեայի որդին Յովաբ իմացաւ որ թագաւորին սիրտը Աբիսողոմի վրայ է: 2 - Ու Յովաբ Թեկուէ Դաբ զրկեց, և անկէ խելացի կին մը բերել տուաւ, ու անոր ըսաւ, Կ'աղաչեմ, քեզ սգաւոր ձեւացուր, ու սուգի հանդերձներ հագիր, իւղով մի օծուիր, ու մեռելի մը համար շատանցմէ սուգ բռնող կնոջ մը պէս եղիր: 3 - Եւ թագաւորին մտիր, ու անոր այս կերպով խօսէ . և Յովաբ անոր բերանը խօսքեր գրաւ: 4 - Ու այն Թեկուացի կինը թագաւորին *մտաւ խօսելու համար՝ . ու երեսի վրայ գեաինը իյնալով անոր խոնարհութիւն ըրաւ, ու

*Կամ, տրամեցաւ

*Եբբ. խօսեցաւ

ըսաւ, Ով թագաւոր, օգնէ ինչի: 5 - Եւ թագաւորը անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ: Ու կինը ըսաւ, Ո՛հ, ես որբեւորի կին մըն եմ՝ ու իմ այրս մեռած է: 6 - Եւ քու աղախինդ երկու որդի ունէր, ու երկուքը դաշտի մէջ իրարու հետ ծեծկուեցան. և անոնց մէջ հաշտեցնող մը չըլլալուն համար մէկը միւսը վարկաւ ու զանկաւ մեռցուց: 7 - Եւ ահա բոլոր ազգատոհմը քու աղախինիդ դէմ ոտք ելան ու ըսին, Իր եղբայրը մեռցնողը սուր, որպէս զի զանկաւ մեռցնենք իր մեռցուցած եղբորը կեանքին համար, ու ժառանգն ալ կորսնցնենք. և ինծի մնացած կայծը պիտի մարեն, երկրի վրայ երկանս անուներ ու մնացորդը չպահելով: 8 - Եւ թագաւորը կնոջը ըսաւ, Տունդ գնա, ու ես քեզի համար կը պատուիրեմ: 9 - Ու Թեկուացի կինը թագաւորին ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, մեղքը իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ, բայց թագաւորը ու անոր աթոռը անպարտ ըլլայ: 10 - Եւ թագաւորը ըսաւ, Եթէ՞ քեզի բան մը ըսող ըլլայ, զանկաւ ինծի բեր, ու մէյմըն ալ քեզի չդպչիր: 11 - Եւ անկաւ ըսաւ, Թագաւորը շնորհք ընէ, իր Տէր Աստուածը յիշէ, ու չթողու որ արեան վրէժխնդիրները շտանան ապականելու, որ իմ որդիս մեռցնեն: Եւ անկաւ ըսաւ, Տէրը կենդանի է որ քու որդւոյդ հիւն մնալ մը գետինը պիտի չիյնայ: 12 - Այն ատեն կինը ըսաւ, Թող քու աղախինդ իմ տէրոջս, թագաւորին, խօսք մը գրուցէ. ու անկաւ Զրուցէ ըսաւ: 13 - Եւ կինը ըսաւ, Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին վրայ ինչո՞ւ համար այդպիսի բան կը մտածես. որովհետեւ թագաւորը քանի որ իր աքսորածը ետ չդարձնէ, այս խօսքերը խօսելով յանցաւորի պէս կ'ըլլայ: 14 - Քանզի մենք ի հարկէ պիտի մեռնինք, ու գետինը թափուած ջուրին կը նմանինք, որ հեշտն ալ մէկտեղ չժողովուիր. և Աստուած հարգած հոգին չառներ, հապա միջոցներ կը հնարէ, որպէս զի աքսորուածը իրմէ աքսորուած չմնայ: 15 - Ու հիմա ես անոր համար իմ թագաւոր տէրոջս այս խօսքը ըսելու եկայ, քանզի ժողովուրդը զիս վախցուց. ու քու աղախինդ ըսաւ, Հիմա թագաւորին հետ խօսիմ, թերեւս թագաւորը իր աղա-

խինին խօսքը կատարէ: 16 - Որովհետեւ թագաւորը մտիկ ընելով՝ իր աղախինը պիտի ազատէ այն մարդուն ձեռքէն, որ զիս ու իմ որդիս մէկտեղ Աստուծոյ ժառանգութենէն ջնջել է: 17 - Եւ քու աղախինդ ըսաւ, Իմ թագաւոր տէրոջս խօսքը մխիթարութիւն պիտի ըլլայ. քանզի իմ թագաւոր տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս է, որ բարին ու չարը կը հասկնայ. և քու Տէր Աստուածդ քեզի հետ ըլլայ: 18 - Ու թագաւորը պատասխան տուաւ ու կնոջը ըսաւ, Քեզի հարցնելու բանս ինծմէ մի պահէր: Ու կինը ըսաւ, Իմ թագաւոր տէրս թող գրուցէ: 19 - Եւ թագաւորը ըսաւ, Արդեօք այս ամէն բանին մէջ Յովաբի ձեռքը քեզի հետ է. ու կինը պատասխան տուաւ ու ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, քու անձդ կենդանի է որ իմ թագաւոր տէրոջս ըսած բոլոր խօսքերէն բնաւ մէկը աջ դին կամ ձախ դին չկրնար խտարել. քանզի քու ծառայ Յովաբ է ինծի պատուիրողը, ու այս բոլոր խօսքերը քու աղախինիդ բերանը դնողը անկաւ է: 20 - Այս խօսքին ձեւը դարձնելու համար՝ քու ծառայ Յովաբ այս բանը ըրաւ. ու իմ տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս իմաստուն է՝ բոլոր երկրի վրայ եղած բաները գիտնալու: 21 - Եւ թագաւորը Յովաբի ըսաւ, Ահա հիմա այս բանը ըրի. գնա Աբիսողով՝ պատանին ետ դարձուր: 22 - Այն ատեն Յովաբ երեսի վրայ գետինը ինկաւ և անոր խոնարհութիւն ըրաւ ու օրհնեց թագաւորը. և Յովաբ ըսաւ, Քու ծառայ այսօր գիտցաւ որ քու աչքերուդ առջև շնորհք գտայ, ով տէր իմ թագաւոր, քանզի թագաւորը իր ծառային խօսքը կատարեց: 23 - Ու Յովաբ ելաւ Գետուր գնաց, ու Աբիսողովը Երուսաղէմ՝ բերաւ: 24 - Եւ թագաւորը ըսաւ, Թող իր տունը գառնայ, ու իմ երես չտեսնէ: Եւ Աբիսողով իր տունը դարձաւ, ու թագաւորին երեսը չտեսաւ: 25 - Եւ բոլոր Իսրայէլի մէջ Աբիսողովի պէս գեղեցիկ ու գովելի մարդ մը չկար. անկաւ ոտքին թաթէն մինչև գլխուն գագաթը արատ մը չուներ: 26 - Ու երբ իր մտքերը կը կարէր, (որովհետեւ տարին անգամ մը մտքերը

*կամ, պիտի ըլլայ

կը կարէր , քանզի իր վրայ ծանրու-
թիւն կ'ըլլային ,) իր գլխուն մտգերը
կը կշռէր , « - Թագաւորական կշիւ-
քով երկու հարիւր սիկզ իս - քայն :
27 - Եւ Արիստղոմի երեք տղայ ու թա-
մար անունով աղջիկ մը ծնաւ . անի-
կա տեսքով գեղեցիկ կին մըն էր :

28 - Եւ Աբիսողոմ Երուսաղէմի մէջ
լման երկու տարի նստաւ , ու թագա-
ւորին երեսը չտեսաւ : 29 - Եւ Աբի-
սողոմ Յովաբի հարք զրկեց , որպէս զի
զանհկա թագաւորին զրկէ . բայց ա-
նհկա չուզեց անոր երթալ . ու նորէն
երկրորդ անգամ հարք զրկեց . ու ա-
նհկա երթալ չուզեց : 30 - Այն ատեն
Աբիսողոմ իր ծառաներուն ըսաւ , Տե-
սէք Յովաբի արտը որ իմ հարք մօտ է ,
ու անհկա հոն գարի ունի . գացէք զա-
նհկա կրակով այրեցէք : Եւ Աբիսո-
ղոմի ծառաները այն արտը կրակով
այրեցին : 31 - Ու Յովաբ ելաւ Աբի-
սողոմի տունը գնաց , և անոր ըսաւ ,
Ինչո՞ւ համար քու ծառաներդ իմ
արտս կրակով այրեցին : 32 - Ու Աբի-
սողոմ Յովաբի ըսաւ , Ահա քեզի հարք
զրկեցի ու ըսի , Հոս եկուր , քեզ թա-
գաւորին զրկեմ , որպէս զի ըսես թէ
Գեսուրէ ինչո՞ւ եկայ . իմ հոն ըլլալս
ինծի աւելի աղէկ էր . և հիմա թագա-
ւորին երեսը տեսնեմ , ու եթէ իմ
վրաս չարութիւն մը կայ , թող զիս
մեռցնէ : 33 - Եւ Յովաբ թագաւորին
գնաց ու այս բանը անոր իմացուց . և
անհկա Աբիսողոմը կանչեց . ու թա-
գաւորին քով գնաց , և թագաւորին
առջև երեսի վրայ ինչ « - « - մինչև գե-
տինը խոնարհութիւն ըրաւ . ու թա-
գաւորը Աբիսողոմը համբուրեց :

ԳԼ. ԺԵ

Եւ անկէ ետքը Աբիսողոմ իրեն
համար կառքեր , ձիեր ու իր առջեւէն
լապաղ յիսուն սուրհանգակ մարդ
պատրաստեց : 2 - Եւ Աբիսողոմ կա-
նուխ կ'ելլէր ու գրանը ճամբուն մէկ
կողմը կը կայնէր . և Աբիսողոմ ամէն
գաա ունեցող ու գատաստանի հա-
մար թագաւորին եկող մարդը կը կան-
չէր ու կ'ըսէր , Դուն ո՞ր քաղաքէն
ես . ու երբ անհկա , Ծառագ Իսրա-
յէլի ցեղերէն մէկէն եմ , կ'ըսէր , 3 -
Աբիսողոմ անոր կ'ըսէր , Նայէ , քու

գաադ *բանաւոր և ուղիղ է , բայց
թագաւորին կողմանէ քեզի մտիկ ընող
չկայ : 4 - Եւ Աբիսողոմ կ'ըսէր , Երա-
նի՛ թէ զիս այս երկրին վրայ գատա-
ւոր գնէին . ու ամէն վէճ կամ գատ
ունեցող մարդը ինծի գար , և անոր
իրաւունք ընէի : 5 - Ու երբ մարդ մը
մօտենար անոր խոնարհութիւն ընե-
լաւ , անհկա ձեռքը կ'երկնցնէր , զա-
նհկա կը բռնէր ու կը համբուրէր : 6 -
Եւ Աբիսողոմ գատաստանի համար
թագաւորին եկող բոլոր Իսրայէլի այս-
պէս ընելով , Իսրայէլի մարդոց սիրտը
†իրեն գարծուց :

7 - Ու քառասուն տարուան լմնա-
լէն ետքը Աբիսողոմ ըսաւ թագաւո-
րին , Շնորհք ըրէ , երթամ ու Տէրոջը
ըրած ուխտս Քեբրոնի մէջ կատարեմ :
8 - Քանզի ծառագ երբ Ասորոց Գե-
սուրը կը բնակէի , ուխտ ըրի ու ըսի ,
Եթէ Տէրը զիս Երուսաղէմ գարծնէ ,
Տէրոջը ծառայութիւն ընեմ : 9 - Եւ
թագաւորը անոր ըսաւ , Գնա խաղա-
ղութեամբ : Ու անհկա ելաւ Քեբրոն
գնաց : 10 - Եւ Աբիսողոմ Իսրայէլի
բոլոր ցեղերուն լրատներ զրկեց , ու
ըսաւ , Փողին ձայնը լսելնուդ պէս ,
Աբիսողոմ Քեբրոնի մէջ թագաւոր
եղաւ , ըսէք : 11 - Ու Աբիսողոմի հետ
Երուսաղէմէ երկու հարիւր մարդ գնաց
հրաւիրուած . անոնք միամտութեամբ
գացին , ու ամենեւին բան մը չէին
գիտեր : 12 - Եւ Աբիսողոմ զսհերն ը-
րած ատենը Դաւիթի խորհրդակիցը ,
Քեղոնացի Աբիսոփէլը , իր Գեղոն քա-
ղաքէն կանչել տուաւ . և դաւաճա-
նութիւնը զօրացաւ , ու ժողովուրդը
երթալով կը շատնար Աբիսողոմի քով :

13 - Եւ Դաւիթի լրաբեր մը եկաւ
ու ըսաւ , Իսրայէլի մարդոց սիրտը Ա-
բիսողոմի « հետ մէկ » եղաւ : 14 - Այն
ատեն Դաւիթ Երուսաղէմի մէջ իրեն
հետ եղող բոլոր ծառաներուն ըսաւ ,
Ելէք փոխչինք , քանզի Աբիսողոմի
երեսէն մեզի ազատում չկայ . շուտ
ըրէք գացէք , չըլլայ որ անհկա շուտով
մեզի հասնի , ու մեր վրայ չարիք հաս-
ցնէ , ու քաղաքը սուրի բերնէ ան-
ցնէ : 15 - Եւ թագաւորին ծառաները
թագաւորին ըսին , Մեր տէր թագա-
ւորը ինչ որ արժան համարի , ահա

*Եբբ. բարի †Եբբ. գողցաւ
‡Լ. ք. ամանց , չորս ||Եբբ. ետեւէն

և Աբիսողոմ՝ բոլոր Խորայէլի աչքերուն առջև իր հօրը հարձերուն մտաւ : 23 - Ու այն օրերը Աբիսողոմի տուած խորհուրդը այնպէս էր , ինչպէս մէկը Աստուծոյ խօսքը հարցնէր . Աբիսողոմի տմէն խորհուրդը : Թէ՛ Գաւիթի քով և Թէ՛ Աբիսողոմի քով այնպէս էր :

ԳԼ ԺԷ

Եւ Աբիսողոմի ըսաւ Աբիսողոմի , Հիմա տատուերկու հազար մարդ ընտրեմ ու ելլեմ , և այս գիշեր Գաւիթի ետեւէն իյնամ : 2 - Ու անհկա քանի որ յոգնած ու ձեռքերը թուլցած է , անոր վրայ հասնիմ ու վախցնեմ զանհկա , որպէս զի անոր հետ եղող ժողովուրդը փախչի . ու միայն թագաւորը զարնեմ : 3 - Այսպէս բոլոր ժողովուրդը քեզի պիտի դարձնեմ . քանզի քու փնաւած մարդդ յեռառ անցնելով աւմէնը ձեռքդ անցած կը սեպուի , ու բոլոր ժողովուրդը խաղաղութեան մէջ կ'ըլլայ : 4 - Եւ այս խօսքը Աբիսողոմի աչքին ու Խորայէլի բոլոր ծերերուն աչքին * հաճոյ երեւցաւ :

5 - Եւ Աբիսողոմ ըսաւ , Հիմա Արաքացի Քուսին ալ կանչեցէք , ի որպէս զի անոր խորհուրդն ալ լսենք : 6 - Ու երբ Քուսի Աբիսողոմի քով եկաւ , Աբիսողոմ անոր հետ խօսեցաւ ու ըսաւ , Աբիսողոմի այսպիսի բան մը ըսաւ . արդեօք անոր խօսքը իրենք թէ ոչ , դուն խօսէ : 7 - Եւ Քուսի Աբիսողոմի ըսաւ , Աբիսողոմի տուած խորհուրդը այս անգամ աղէկ չէ : 8 - Եւ Քուսի ըսաւ , Դուն գիտես որ քու հայրդ ու անոր մարդիկը զօրաւոր են , ու սրտերնին այրած է՝ դաշտի մէջ ձագերը կորսնցուցած արջու պէս . և քու հայրդ պատերազմող մարդ մըն է , ու գիշերը ժողովուրդին հետ չկենար : 9 - Եւ հիմա անհկա կա՛մ փոսի մը մէջ կա՛մ ուրիշ տեղ մը պահուած է . ու եթէ առաջին անգամ ասանցմէ իյնալու ըլլան , ամէն լսողը պիտի ըսէ թէ Աբիսողոմի ետեւէն գացող ժողովուրդը կորուեր է : 10 - Այն ատեն առիւծի պէս սիրտ ունեցող զօրաւոր մարդը անգամ բոլորովին պիտի թուլնայ .

քանզի բոլոր Խորայէլ գիտէ որ քու հայրդ զօրաւոր է , ու անոր հետ եղողները ուժի տէր մարդիկ են : 11 - Այս պատճառաւ ես քեզի խորհուրդ կուտամ , որ բոլոր Խորայէլ , Գաւիթի մինչև Բերասբէէ , ծովեզերքը եղող աւազին պէս ըզգամութեամբ քու քովդ ժողովուրին . դուն ալ անձամբ անոնց մէջ պարտերապի երթաս : 12 - Ու այսպէս անոր վրայ երթանք , անհկա ուր տեղ որ գտնուի , ու անոր վրայ հասնինք , ինչպէս ցօղը գետնի վրայ կ'իջնէ , և անկէ ու անոր հետ եղող բոլոր մարդոցմէն մէկը ոչ չմնայ : 13 - Եւ եթէ քաղաքի մը մէջ գոցուի , այն քաղաքը բոլոր Խորայէլ շուաններ տանի , ու զանհկա մինչև հեղեղատը քաշենք , այնպէս որ հոն պզտիկ քար մը անգամ չմնայ : 14 - Եւ Աբիսողոմ ու բոլոր Խորայէլի մարդիկը ըսին , Արաքացի Քուսիի խորհուրդը Աբիսողոմի խորհուրդէն աղէկ է : Քանզի Տէրը Աբիսողոմի աղէկ խորհուրդը ցրուելու հրաման տուեր էր , որպէս զի Տէրը Աբիսողոմի վրայ չարիք հասցնէ :

15 - Եւ Քուսի Սաղովկ ու Աբիսողոմ քահանաներուն ըսաւ , Աբիսողոմի Աբիսողոմի ու Խորայէլի ծերերուն այս ինչ խորհուրդը տուաւ , ես ալ այս ինչ խորհուրդը տուի . 16 - Հիմա շուտով մարդ զրկեցէք ու Գաւիթի իմացուցէք ու ըսէք , Գիշերը անապատին դաշտերուն մէջ մի կենար , հապաշուտով անցիր . չըլլայ որ թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը * յանկարծ զարնուին : 17 - Եւ Յովսափան ու Աբիմատա Ռովգելի աղբիւրին քով կայներ էին , քանզի չէին կրնար քաղաքը մտնել ու երեւնալ . և աղախինը գնաց ու անոնց պատմեց , և անոնք գացին ու Գաւիթ թագաւորին իմացուցին : 18 - Եւ պատանի մը տեսաւ զանոնք ու Աբիսողոմի պատմեց . բայց անոնք երկուքը մէկտեղ շուտով գացին ու Բաւուրիմ մարդու մը տուն մտան . և անհկա իր գաւիթին մէջ ջրհոր մը ունէր , ու անոնք հոն իջան : 19 - Եւ կինը ծածկոց մը առաւ , ջրհորին բերնին վրայ փռեց , ու անոր վրայ ձաւար տարածեց , ու բանը չհասկցուեցաւ : 20 - Եւ Աբիսողոմի ծառաները այն կնոջ տունը մտան .

* Եբբ . ուզիդ . ա . Թագ . Ժբ . 20 :
† Եբբ . ու ինչ որ կայ անոր բերանը
‡ Կա՛մ , ընենք . Թէ ոչ՝ դուն ալ խօսէ

* Եբբ . կլուին

ու ըսին, Աքիմատս ու Յովնաթան ո՞ւր են: Եւ կինը անոնց ըսաւ, *Չուրին անդի կողմը անցան: Ու անոնք փրճառեցին ու չգտան, ու Երուսաղէմ դարձան: 21 - Եւ անոնց երթալէն ետքը ջրհորէն ելան, ու գացին Գաւիթ թագաւորին իմացուցին, և Գաւիթ ըսին, Ելէք ու շուտով ջուրէն անցէք, քանզի Աքիսափէլ ձեզի համար այսպիսի խորհուրդ մը ըրաւ: 22 - Եւ Գաւիթ ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը ելան ու Յորդանանէ անցան. ու մինչև առաւօտեան լոյսը Յորդանանէ չանցած մարդ չմնաց:

23 - Եւ Աքիսափէլ երբ տեսաւ որ իր խորհուրդը չկատարուեցաւ, իր իշուն համեար դրաւ ու ելաւ իր քաղաքը ու իր տունը գնաց. և իր տանը համար պատուէր տուաւ, ու ինքզինք խեղդեց ու մեռաւ, և իր հօրը գերեզմանը թաղուեցաւ:

24 - Եւ Գաւիթ Մանայիմ՝ հասաւ, Աքիսաղոմ ալ բոլոր Իսրայէլի մարդոցը հետ Յորդանանէ անցաւ: 25 - Եւ Աքիսաղոմ Յովաբի տեղ Ամեաային դրաւ զօրքին վրայ. ու Ամեաայի Յեթեր անունով Իսրայէլացիի մը որդի էր. անկա Յովաբի մօրը Նարուհեայի քոյրը, Նասաի աղջիկը Աքիսաղոմի, առեր էր: 26 - Եւ Իսրայէլ Աքիսաղոմի հետ Գաղաադու երկիրը բանակեցաւ:

27 - Ու երբ Գաւիթ Մանայիմ եկաւ, Ամմոնի որդիներուն Ռաբբայէն Նասաի որդին Սաբի, ու Լադաբարէ Ամիէլի որդին Մաքիր, և Ռովգելիմէ Գաղաադացի Բերզելի 28 - Անկողիններ, կոնքեր, հողէ ամաններ, ցորեն, գարի, ալիւր ու բոճրած ցորեն ու բակլայ և սպ ու բոճրած «իւտ», 29 - Ու մեղր և կոզի ու ոչխարներ և կովու պանիր՝ Գաւիթի ու անոր հետ եղող ժողովուրդին բերին որպէս զի ուտեն. քանզի ըսին, Ժողովուրդը անապատին մէջ անօթի, յոգնած ու ծարւած է:

ԳԼ. ԺԸ

Եւ Գաւիթ իրեն հետ եղող զօրքը համրեց, ու անոնց վրայ հազարապետներ ու հարիւրապետներ դրաւ: 2 - Եւ

*Եբբ. Չուրի առաւին
†Կաթ, Իմացեղացիի. տես ա Մն. բ. 17:

Գաւիթ զօրքին երրորդ մասը Յովաբի ձեռքը, ու երրորդ մասը Յովաբի եղբօրը Նարուհեան Աքեսայի ձեռքը, ու երրորդ մասը Գեթացի Եթթիի՝ *ձեռքը յանձնեց. և թագաւորը ժողովուրդին ըսաւ, Անպատճառ ես ալ ձեզի հետ պիտի ելլեմ: 3 - Բայց ժողովուրդը ըսաւ, Մի ելլեր, քանզի եթէ մենք փախչելու ըլլանք, անոնք մեզի համար հոգ չեն ըներ. ու թէև մեր կէսը մեռնի, անոնք զանկա բանի մը տեղ չեն դներ. բայց դուն մեր տասը հազարին չափ ես. ու հիմա աղէկը այն է որ դուն մեզի քաղաքէն օգնութիւն ընես: 4 - Եւ թագաւորը անոնց ըսաւ, Ձեր աչքերուն հաճոյ երեւցածը պիտի ընեմ. ու թագաւորը դրանք քով կայնեցաւ, և բոլոր զօրքը հարիւրներով ու հազարներով կ'ելլէին: 5 - Ու թագաւորը Յովաբի և Աքեսայի ու Եթթիի պատուիրելով ըսաւ, Ինծի համար Աքիսաղոմ պատանիին խնայեցէք: Ու երբ թագաւորը Աքիսաղոմի համար բոլոր զօրավարներուն պատուիրեց, բոլոր զօրքերը լսեցին:

6 - Եւ զօրքը դաշտը ելաւ Իսրայէլի դէմ գնելու համար, ու պատերազմը Եփրեմի անտառին մէջ եղաւ: 7 - Եւ հոն Իսրայէլի զօրքերը Գաւիթի ծառաներուն առջև յաղթուեցան. ու հոն այն օրը մեծ կատրած եղաւ «քսան հազար մարդ ինչ»: 8 - Եւ հոն պատերազմը բոլոր երկրին վրայ տարածուեցաւ, ու այն օրը անտառը սուրին ջարդածէն աւելի ժողովուրդ ջարդեց: 9 - Եւ Աքիսաղոմ Գաւիթի ծառաներուն հանդիպեցաւ. ու Աքիսաղոմ ջորիի վրայ հեծեր էր, և ջորին մեծ բեւեկնիի մը թաւ ստերուն տակ մտաւ, ու անոր զլուխը բեւեկնիէն բռնուեցաւ ու երկինքի ու երկրի մէջ կախուած մնաց. և ջորին տակէն անցաւ քնաց: 10 - Ու մարդ մը զանիւ տեսնելով՝ Յովաբի պատմեց ու ըսաւ, Ահա Աքիսաղոմը բեւեկնիէ մը կախուած տեսայ: 11 - Եւ Յովաբ իրեն լուր բերող մարդուն ըսաւ, Որովհետև զանիւ տեսար, ինչո՞ւ համար զանկա հոն գետինը չզարկիր. այն ատեն քեզի տասը «իչ արծաթ ու գօտի մը կու տայի: 12 - Եւ այն մարդը Յովաբի

*Եբբ. ձեռքովը զրկեց
22

ըսաւ, Եթէ իմ ափս չազար «իդէ կշիռ-
 քով ալ արծաթ գրուէր, թագաւորին
 որդւոյն ձեռքս չէի երկնցներ. քանզի
 մենք լսեցինք՝ երբ թագաւորը քեզի
 ու Աբեստայի ու Եթթիի պատուիրեց՝
 ըսելով, «Ամէն մէկդ՝ Աբիսողոմ՝ պա-
 տանիին չոգ տարէք. 13 - Եթէ ոչ
 †պարապ տեղը իմ կեանքս վտանգի
 մէջ պիտի գնէի՝. քանզի բնաւ բան
 մը թագաւորէն գաղտուկ չմնար. ու
 դուն ալ ինչի դէմ պիտի կենայիր :
 14 - Եւ Յովաբ ըսաւ, Ես քու առ-
 ջեւդ այսպէս ժամանակ չեմ անցներ.
 ու իր ձեռքը երեք գեղարդ առաւ, ու
 անոնցմով Աբիսողոմի սիրար խոցեց,
 երբ անիկա տակաւին բեւեկնիին վրայ
 ողջ էր : 15 - Եւ Յովաբի գինակիր-
 ները, տասը պատանիներ, չորս կողմը
 պաշարելով Աբիսողոմը զարկին ու զա-
 նիկա մեռցուցին : 16 - Եւ Յովաբ փող
 ճնչեցուց, ու զօրքը Իսրայէլը չալա-
 ծելէն ետ դարձաւ, քանզի Յովաբ
 զօրքը զօպեց : 17 - Ու Աբիսողոմը ա-
 ռին և զանիկա անտառին մէջ մեծ
 փոսի մը մէջ նետեցին, ու անոր վրայ
 խիտ մեծ քարակոյտ մը դիզեցին. և
 ըստը Իսրայէլ փախաւ, ամէն մէկը
 իր վրանը :

18 - Եւ Աբիսողոմ իր կենդանու-
 թեան ատեն արձան մը առեր էր, ու
 զանիկա իրեն չամար թագաւորի չո-
 վիտին մէջ կանգներ էր, ըսելով թէ
 Որդի չունիմ որ իմ անուանս յիշա-
 տակը պահէ. ու այն արձանը իր ա-
 նունովը կոչեր էր, և անիկա մինչև
 այսօր Աբիսողոմի քարձանը կ'ըսուի :

19 - Եւ Սագովկի որդին Աքիմասա
 ըսաւ, Հիմա վազեմ ու թագաւորին
 աւետիս տանիմ, որ Տէրը անոր իրա-
 ւունք ըրաւ, «- զանիւ- իր թշնամիներ-
 քուն ձեռքէն ազատեց : 20 - Ու Յովաբ
 անոր ըսաւ, Դուն այսօր աւետիս քո-
 նելու մարդ չես, դուն ուրիշ օր մը
 աւետիս տար, բայց այսօր աւետիս մի
 տանիր, քանզի թագաւորին որդին
 մեռաւ : 21 - Եւ Յովաբ Քուսի ըսաւ,
 Գնա տեսածդ թագաւորին պատմէ.
 ու Քուսի Յովաբի խոնարհութիւնը
 ըրաւ, և վազելով գնաց : 22 - Եւ Սա-

գովկի որդին Աքիմասա նորէն Յովաբի
 ըսաւ, Ինչեւիցէ չրաման տուր որ ես
 ալ Քուսի ետեւէն վազեմ : Ու Յո-
 վաբ ըսաւ, Ինչո՞ւ վազես, սրգիս,
 որովհետեւ տւետիս մը չունիս տանե-
 լու : 23 - Եւ «- զանիւ- ըրաւ, Ինչեւիցէ
 վազեմ. ու անոր ըսաւ, Վազէ : Եւ Ա-
 քիմասա դաշտին ճամբովը վազեց, ու
 Քուսիէ անցաւ : 24 - Եւ Գուսիթ եր-
 կու դռներուն մէջ կը նստէր, ու դէտը
 դրանը տանիքին վրայ դէպի պարիսպը
 գնաց, և աչքերը վերցնելով տեսաւ որ
 ահա մարդ մը մինակ կը վազէր : 25 -
 Այն ատեն դէտը բարձր ձայնով թա-
 գաւորին իմացուց. ու թագաւորը ը-
 սաւ, Եթէ մինակ է, անոր բերանը
 աւետիս կայ : Ու անիկա կու գար ու
 կը մօտենար : 26 - Եւ դէտը ուրիշ
 վազող մարդ մը տեսաւ. ու դէտը
 դռնապանին բարձր ձայնով ըսաւ,
 Ահա «- զիշ մարդ մըն ալ մինակ կը
 վազէ : Եւ թագաւորը ըսաւ, Ան ալ
 աւետաւոր է : 27 - Ու դէտը ըսաւ,
 Առաջինին ընթացքը Սագովկի որդւոյն
 Աքիմասայի ընթացքին պէս կ'երեւ-
 նայ ինծի : Եւ թագաւորը ըսաւ, Անի-
 կա բարի մարդ է, ու բարի աւետիսով
 կու գայ : 28 - Եւ Աքիմասա պառտով
 ըսաւ թագաւորին, Ողջոյն. ու երեսի
 վրայ գետինը էյնալ խոնարհութիւն
 ըրաւ թագաւորին, ու ըսաւ, Օրհնեալ
 ըլլայ քու Տէր Աստուածդ, որ իմ
 տէրոջս, թագաւորին, դէմ՝ ձեռք
 վերցնողները «- զի- «- դմանեց : 29 -
 Եւ թագաւորը ըսաւ, Աբիսողոմ՝ պա-
 տանին ո՞ղջ է : Ու Աքիմասա ըսաւ,
 Երբ Յովաբ՝ թագաւորին ծառան ու
 զե՞ս, քու ծառադ, զրկեց, մեծ խուճի
 մը տեսայ, բայց ինչ ըլլալը չիմացայ :
 30 - Եւ թագաւորը ըսաւ, Գարձիր ու
 չոս կայնէ : Ու անիկա դարձաւ ու
 կայնեցաւ : 31 - Եւ ահա Քուսի եկաւ,
 ու Քուսի ըսաւ, Իմ տէրոջս, թագա-
 ւորին, աւետիս ի՞նչ քո՞մ, որ բոլոր քու
 վրագ ելլողներուն ձեռքէն Տէրը այսօր
 †եւ ազատեց, «- քեզի իրաւունք ըրաւ :
 32 - Եւ թագաւորը Քուսի ըսաւ,
 Աբիսողոմ՝ պատանին ո՞ղջ է : Այն ա-
 տեն Քուսի ըսաւ, Իմ տէրոջս, թա-
 գաւորին, թշնամիները ու չարութեան
 չամար բոլոր քու վրագ ելլողները այն
 պատանիին պէս ըլլան : 33 - Եւ թա-
 գաւորը խոսովեցաւ, ու դրան վերնա-
 տունը ելաւ ու լացաւ. և քաղելով

*կ-ժ, ինծի չամար
 †Եբբ. իմ կեանքիս դէմ ունայնու-
 թիւն ըրած պիտի ըլլայի
 ‡Եբբ. ձեռքը

այսպէս կ'ըսէր . որդեակ իմ Աբիսաղում, որդեակ իմ, որդեակ իմ Աբիսաղում, երանի՛ թէ քու տեղդ ես մեռնէի . Աբիսաղում որդեակ իմ, որդեակ իմ :

ԳԼ. ԺԹ

Եւ Յովաբի պատմութեամբ թէ Ահա թագաւորը Աբիսաղումի համար կուլայ ու սուգ կ'ընէ : 2 - Եւ այն օրը յաղթութիւնը սուգի դարձաւ բոլոր զօրքին առջև , քանզի զօրքը լսեց որ թագաւորը իր որդւոյն համար կը ցաւի : 3 - Ու այն օրը զօրքը գողի պէս քաղաքը կը մտնէր , պատերազմէն փախած ու ամէցած զօրքի պէս : 4 - Եւ թագաւորը իր երեսը ծածկեց , ու թագաւորը մեծ ձայնով մը կը կանչէր . որդեակ իմ Աբիսաղում, Աբիսաղում որդեակ իմ, որդեակ իմ :

5 - Եւ Յովաբ ներս մտաւ թագաւորին քով ու ըսաւ , Այսօր քու կեանքդ , ու քու տղաքներուդ ու աղջիկներուդ կեանքը , և քու կիներուդ ու հարձերուդ կեանքը ազատող ամէն ծառաներուդ երեսը այսօր ամօթով ըրիր . 6 - Քանզի քեզ ատողները կը սիրես , ու քեզ սիրողները կ'ատես . վասն զի այսօր յայտնեցիր որ «- իշխաններդ ու ծառաներդ բանի մը տեղ չես դներ . և այսօր «չէ՛ հասկցայ որ եթէ այսօր Աբիսաղում ողջ մնար , ու մենք ամէնս մեռնէինք , այն ատեն քու աչքերուդ հաճոյ պիտի երեւնար : 7 - Եւ հիմա սոք էլիր ու դուրս եկուր , ու քու ծառաներուդ *հետ քաղցրութեամբ՝ խօսէ . քանզի Տէրոջմով երդում կ'ընեմ որ , եթէ դուն դուրս չելլես , այս գիշեր քովդ մտնող մը պիտի չմնայ . ու ասիկա քեզի՛ քու տղայութենէդ մինչև հիմա գլուխդ եկած ամէն ձախարհութիւններէն աւելի գէշ կ'ըլլայ : 8 - Եւ թագաւորը ելաւ ու դուռը նստաւ . այն ատեն բոլոր զօրքին պատմեցին ու ըսին , Ահա թագաւորը դուռը նստեր է . ու բոլոր զօրքը թագաւորին առջև եկան , բայց Իսրայէլի մարդիկը իրենց վրանները փախեր էին :

9 - Եւ Իսրայէլի ամէն ցեղերուն մէջ բոլոր ժողովուրդը կը վիճէին ու կ'ըսէին , Մեր թշնամիներուն ձեռքէն մեզ փրկողը թագաւորն է , ու Փղըշ-

տացւոց ձեռքէն մեզ ազատողը անկա է . և հիմա Աբիսաղումի պատճառաւ այս երկրէն փախաւ . 10 - Ու Աբիսաղում , զոր մեր վրայ Բաբելոնի օժեցինք , պատերազմի մէջ մեռաւ . և հիմա դուք թագաւորը ետ դարձնելու վրայով ինչո՞ւ բան մը չէք խօսիր :

11 - Ու Իսաիթ թագաւորը Սաղոմի ու Աբիսաղումի քահանաներուն հետ զրկեց՝ ըսելով , Յուդայի ծերերուն հետ խօսեցէք ու ըսէք , Թագաւորը իր տունը դարձնելու ինչո՞ւ *ետ կը մնաք՝ . քանզի բոլոր Իսրայէլի խօսքը թագաւորին հասաւ մինչև անոր տունը . 12 - Իսաիթ իմ եղբայրներս , ուկորս ու մարմինս էք . ու թագաւորը էր «-նը դարձնելու ինչո՞ւ ետ կը մնաք : 13 - Եւ Ամեսայի ըսէք , Իսաիթ իմ ուկորս ու մարմինս չէ՞ս . Աստուած ինձի այսպէս ու ասկէ աւելի ընէ , եթէ Յովաբի տեղ միշտ իմ առջևս զօրագլուխ չըլլաս : 14 - Եւ Յուդայի բոլոր մարդոց սիրտը մէկ մարդու «բո՛ւ պէս էրեն դարձուց . ու թագաւորին «բաբելոնի զրկեցին՝ ըսելով , Իսաիթ թէ՛ դուն և թէ՛ քու ամէն ծառաներդ : 15 - Այն ատեն թագաւորը դարձաւ ու մինչև Յորդանան եկաւ . Յուդա ալ մինչև Գողգազա եկաւ , որպէս զի թագաւորը դիմաւորէ ու թագաւորը Յորդանանէ անցընէ :

16 - Ու Գերայի որդին Բաբելոնի մարդիկէն Բենիամինեան Սեմէի արտորալով՝ Յուդայի մարդոցը հետ Իսաիթ թագաւորը դիմաւորելու իջաւ , 17 - Եւ անոր հետ Բենիամինէ հազար մարդ կար . ու Սաւուղի տանը ծառան Սիբա իր տանը հինգ որդիներովը և քսան ծառաներովը ելաւ , ու թագաւորին առջև *Յորդանան հասան : 18 - Եւ թագաւորին տունը անցընելու համար ու անոր աչքերուն հաճոյ երեւցածը ընելու համար նաւակ մը անցաւ . ու երբ թագաւորը Յորդանանէ անցաւ , Գերայի որդին Սեմէի թագաւորին առջև ինկաւ , 19 - Եւ թագաւորին ըսաւ , Իմ տէրս ինձի յանցանք չսեպէ , ու իմ թագաւոր տէրոջս Երուսաղէմէ ելած օրը ծառայիդ ըրած անօրէնութիւնը չյիշէ , ու թագաւորը զանկա իր սրտին մէջ չդնէ . 20 - Քանզի քու

*Եբբ. վերջինները կ'ըլլաք +Կա՛մ, Յորդանանէ անցան

*Եբբ. սրտին. Ծն. 14. 3 :

Ժառագ գիտցայ որ մեղք գործեցի . և ահա այսօր Յովսէփի բոլոր տունէն առաջ ես եկայ , որպէս զի իմ թագաւոր տէրս զիմաւորելու իջնեմ : 21 - Ու Նարուհէայի որդին Աբեսաա պատասխան տուաւ ու ըսաւ , Միթէ Սեմէի ասոր համար պիտի չմեռնի՞ , որ Տէրոջը օծեալը անիծեց : 22 - Բայց Գաւթի ըսաւ , Գուք ինծի հետ ի՞նչ բան ունիք , ով Նարուհէայի որդիներ , որ այսօր , ինծի թշնամութիւն կ'ընէք . միթէ այսօր Խորայէլէ մարդ մը պիտի մեռնի՞ . որովհետեւ գիտեմ որ ես այսօր Խորայէլի վրայ թագաւոր եմ : 23 - Եւ թագաւորը Սեմէի ըսաւ , Պիտի չմեռնիս . ու թագաւորը անոր երգում ըրաւ :

24 - Եւ Սաւուղի որդին Մեմփիբոսթէ թագաւորը զիմաւորելու իջաւ . ու անիկա թագաւորին գացած օրէն մինչև անոր խաղաղութեամբ եկած օրը՝ սաբերը չէր դարմաներ , ու մօրուքը չէր շիակեր , և լաթերը չէր լուացեր : 25 - Ու երբ թագաւորը զիմաւորելու համար Երուսաղէմ եկաւ , թագաւորը անոր ըսաւ , Ով Մեմփիբոսթէ , ինչո՞ւ ինծի հետ չգացիր : 26 - Եւ անիկա ըսաւ , Ով տէր իմ թագաւոր , իմ ծառաս զիս խաբեց . քանզի քու ծառագ ըսաւ , Էջը պատրաստեմ , որպէս զի վրան հեծնեմ՝ ու թագաւորին հետ երթամ . վասն զի ծառագ կաղ է : 27 - Եւ անիկա քու ծառագ իմ թագաւոր տէրոջս առջև բամբասեց . բայց իմ թագաւոր տէրս Ասասուծոյ հրեշտակի մը պէս է . ուստի քու աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ : 28 - Քանզի թէպէտեւ իմ հօրս բոլոր տունը իմ թագաւոր տէրոջս առջև միայն մեռնելու մարդիկ էին , բայց դուն քու ծառագ քու սեղանդ կերակուր ուտողներուն կարգը դրիր . ուստի ալ սակէ ետեւ ի՞նչ իրաւունք ունիմ թագաւորին բողոքելու : 29 - Եւ թագաւորը անոր ըսաւ , Այ ինչո՞ւ քու բաներուդ վրայ կը խօսիս . ես ըսի որ դուն ու Սիրա արտերը ձեր մէջ բաժնէք : 30 - Ու Մեմփիբոսթէ ըսաւ թագաւորին , Թող անիկա ամէնն ալ առնէ , որովհետեւ իմ թագաւոր տէրս խաղաղութեամբ իր տունը եկաւ :

31 - Եւ Քաղաաղացի Բերզելի Ռովգելիմէ իջաւ , ու թագաւորին հետ Յորդանանէ անցաւ , որպէս զի զանիկա

Յորդանանէ յուղարկէ : 32 - Ու Բերզելի խիստ ծեր էր , ու թատն տարեկան մարդ ըլլալով . և որչափ ժամանակ որ թագաւորը Մանայիմի մէջ կեցաւ , զանիկա ինք կերակրեց , քանզի խիստ մեծ մարդ մըն էր : 33 - Ու թագաւորը Բերզելիի ըսաւ , Ինծի հետ անցիր , և քեզ իմ քովս Երուսաղէմի մէջ կերակրեմ : 34 - Ու Բերզելի թագաւորին ըսաւ , Իմ կեանքիս տարիներուն օրերը ո՞րչափ պիտի ըլլան՝ որ թագաւորին հետ Երուսաղէմ ելլեմ . 35 - Ես այսօր ու թատն տարեկան եմ . միթէ աղէկը ու գէշը կրնամ որոշել . միթէ ծառագ իր կերածին ու խմածին համը կրնայ առնել . և սակէ ետքը խաղ կանչող մարդերուն կամ կիներուն ձայնը կրնամ լսել . ու քու ծառագ իմ թագաւոր տէրոջս ալ ինչո՞ւ համար բեռ ըլլայ : 36 - Քու ծառագ թագաւորին հետ քիչ մը Յորդանանէ պիտի անցնի . ու թագաւորը ինչո՞ւ ինծի այսպէս փոխարէն մը հատուցանէ : 37 - Թող ծառագ դառնամ , ու իմ քաղաքիս մէջ իմ հօրս ու մօրս գերեզմանին քով մեռնիմ . ահա քու ծառագ Քամուամ իմ տէրոջս , թագաւորին , հետ անցնի . ու քու աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ անոր : 38 - Եւ թագաւորը ըսաւ , Թող Քամուամ ինծի հետ անցնի , ու ես քու աչքերուդ հաճոյ երեւցածը պիտի ընեմ անոր . և ինծմէ ինչ որ խնդրես՝ քեզի պիտի ընեմ : 39 - Ու բոլոր ժողովուրդը Յորդանանէ անցաւ . թագաւորն ալ անցաւ : Եւ թագաւորը Բերզելին համբուրեց ու զանիկա օրհնեց . ան ալ իր տեղը դարձաւ : 40 - Եւ թագաւորը Քաղաաղա անցաւ , ու Քամուամ անոր հետ անցաւ . այսպէս Յուդայի բոլոր ժողովուրդը ու Խորայէլի ալ կէս ժողովուրդը թագաւորը անցուցին :

41 - Եւ ահա բոլոր Խորայէլի մարդիկը թագաւորին եկան , ու թագաւորին ըսին , Ինչո՞ւ համար մեր եղբայրները , Յուդայի մարդիկը , քեզ գողցան , ու թագաւորը և անոր տունը ու անոր հետ Գաւթի բոլոր մարդիկը Յորդանանէ անցուցին : 42 - Եւ Յուդայի բոլոր մարդիկը Խորայէլի մարդոցը պատասխան տուին -- Ը՛հ , Քանզի թագաւորը մեզի մօտ ապական է , ու այս բանին համար ինչո՞ւ այսպէս կը նեղանաք . միթէ թագա-

ւորէն բան մը կերտօնք, կամ թէ անհկա մեզի պարգև մը տուա՞ւ: 43 - Եւ Իսրայէլի մարդիկը Յուդայի մարդոցը պատասխան տուին ու ըսին, Մենք թագաւորին քով տասը բաժին ունինք, ու նաև Դաւիթի վրայ ձեզմէ աւելի երբեք ունինք. և ինչո՞ւ համար մեզ անարգեցիք, ու մեր թագաւորը ետ դարձնելու համար առաջ *մեզմէ խորհուրդ չհարցուցիք՝. բայց Յուդայի մարդոց խօսքը Իսրայէլի մարդոց խօսքէն աւելի խիստ էր:

ԳԼ Ի

Եւ հոն Բենիամինի ցեղէն Բաքորեան Սաբէէ անուանով անօրէն մարդ մը գանուեցաւ. և անհկա փող հնչեցուց ու ըսաւ, Մենք Դաւիթի քով բաժին՝ ու Յեսաէի սրղւոյն քով ժառանգութիւն չունինք. ով Իսրայէլ, ամէն մարդ իր վրանը գործո՞յ: 2 - Ուստի Իսրայէլի բոլոր մարդիկը Դաւիթէ զատուեցան, ու Բաքորեան Սաբէէի ետեւէն գացին. բայց Յուդայի մարդիկը Յորդանանէ մինչև Երուսաղէմ իրենց թագաւորին յարեցան:

3 - Եւ Դաւիթ Երուսաղէմ իր տունը եկաւ. ու թագաւորը իր տանը պահպանութեանը համար թողուցած տասը հարձերը առաւ, ու զանոնք տան մը մէջ պահել տուաւ և զանոնք կը կերակրէր, բայց անոնց չմտեցաւ. և անոնք մինչև իրենց մեռնելու օրը պահուած մնացին, ու որբեւորի պէս ապրեցան:

4 - Եւ թագաւորը Ամեսայիի ըսաւ, Մինչև երեք օր Յուդայի մարդիկը ինձի կանչէ, ու դուն ալ հոս ներկայ եղիր: 5 - Ուստի Ամեսայի Յուդան կանչելու գնաց, ու Իսրայէլի դրած առտենէն աւելի ուշացաւ: 6 - Այն ատեն Դաւիթ Աբեսայի ըսաւ, Հիմա Բաքորեան Սաբէէ Աբեսայի մէջ աւելի չարութիւն պիտի ընէ մեզի. «-բէ՛ն դուն քու տէրոջ ծառաները +եզի հե՛ր առ ու անոր ետեւէն ինկիր, չըլլայ որ իրեն պարսպաւոր քաղաքներ գտնէ ու մեր աչքէն անյայտ ըլլայ: 7 - Այսպէս Յովաբի մարդիկը ու Քերեթիները ու Փելեթիները և բոլոր զօրաւորները անոր ետեւէն ելան, ու Բաքորեան Սաբէէն

հալածելու համար Երուսաղէմէ ելան:

8 - Երբ անոնք Գաբաւոնի մէջ եղող մեծ քարին քով էին, Ամեսայի անոնց դիմաց ելաւ. և Յովաբ իր հագած հանդերձը գօտեւորած էր, ու անոր վրայէն «-բէ՛ն գօտիով՝ մէջքը սուր մը կապած էր պատեանովը մէկտեղ. ու երբ անհկա կ'երթար՝ «-բէ՛ն պարտէն ինկաւ: 9 - Եւ Յովաբ Ամեսայիի ըսաւ, Եղբայրս, ողջ առն՞ղջ ես. ու Յովաբ Ամեսային համբուրելու համար աջ ձեռքովը անոր մօրուքէն բռնեց: 10 - Եւ Ամեսայի Յովաբի ձեռքը եղած սուրէն չզգուշացաւ. ու անով Յովաբ անակուշտէն զարկաւ զանհկա և անոր աղիքները գետինը թափեց, ու անոր երկու անգամ չզարկաւ. ու անհկա մեռաւ: Եւ Յովաբ ու անոր եղբայրը Աբեսա Բաքորեան Սաբէէի ետեւէն ինկան: 11 - Այն ատեն Յովաբի պատանիներէն մէկը անոր քով կայնեցաւ ու ըսաւ, Ով որ Յովաբը կը սիրէ, ու ով որ Դաւիթի կողմէն է, Յովաբի ետեւէն երթո՞յ: 12 - Եւ Ամեսայի ճամբուն վրայ եր արիւնին մէջ կը թաւալէր: Ու այն մարդը երբ տեսաւ որ բոլոր զօրքը կայնեցաւ մնաց, Ամեսային ճամբուն վրայէն վերցուց «- արտի մը մէջ ձգեց, և անոր վրայ լաթ մը ծածկեց. քանզի տեսաւ որ ամէն անոր քով եկողը կանգ կ'առնէ: 13 - Ու զանհկա ճամբուն վրայէն վերցուցածին պէս՝ ամէն մարդ Յովաբի ետեւէն գնաց Բաքորեան Սաբէէն հալածելու համար: 14 - (Բայց անհկա Իսրայէլի բոլոր ցեղերէն մինչև Աբէլ ու Բեթմաաքա անցեր էր բոլոր Բերացիներուն հետ, որոնք անոր քով ժողովուելով՝ անոր ետեւէն գացեր էին): 15 - Եւ անոնք եկան, ու Բեթմաաքայի Աբէլի մէջ զանհկա պաշարեցին. ու քաղաքին առջև հողաբլուր մը շինեցին, որ պարսպին մօտ կանգնուեցաւ. և Յովաբի հետ եղող բոլոր զօրքը պարիսպը փցնելու *կ'աշխատէին:

16 - Ու իմաստուն կին մը քաղաքէն կանչեց, Լսեցէք, Լսեցէք. շնորհք ըրէք, Յովաբի ըսէք, Հոս մտացիր, որ պէս զի քեզի հետ խօսիմ: 17 - Եւ Յովաբ անոր մտեցաւ. ու կինը ըսաւ, Յովաբը դո՞ւն ես: Եւ անհկա ըսաւ, Ես եմ: Ու կինը անոր ըսաւ, Քու ա-

*Եբբ. մեր խօսքը չեղաւ

*Եբբ. կ'աւրէին

զախիննիդ խօսքերը մտիկ ըրէ . ու անիկա ըսաւ, Ահա մտիկ կ'ընեմ: 18 - Եւ կինը խօսեցաւ ու ըսաւ, Հին տառեր սովորաբար կ'ըսէին, Թող Աբէլի *երթման հարցնեն, ու այնպէս լմնցնեն: 19 - Ես Իսրայէլի մէջ խաղարարար ու հաւատարիմ +ազ+ մըն եմ. ու դուն կը ջանաս աւրել +յոյ-ի-ի քաղաք մը՝ որ Իսրայէլի մէջ մայրաքաղաք մըն է. Տէրօջը ժառանգութիւնը ինչո՞ւ բնօջինջ կ'ընես: 20 - Եւ Յովաբ պատասխան տուաւ ու ըսաւ, Քա՛ւ լիցի, քա՛ւ լիցի, որ ես բնօջինջ ընեմ կամ աւրեմ: 21 - Բանը այդպէս չէ. հապա Եփրեմի լեռնէն Բոքորեան Սաբէէ անունով մարդ մը իր ձեռքը Գաւթի թագաւորին դէմ վերցուց. միայն զանիկա տուէք ու այս քաղաքէն երթամ: Եւ կինը Յովաբի ըսաւ, Ահա անոր գլուխը պարսպին վրայէն քեզի պիտի նետուի: 22 - Ու կինը բոլոր ժողովուրդին գնաց, իր իմաստութեամբ խօսեցաւ. և Բոքորեան Սաբէէի գլուխը կարեցին ու Յովաբի նետեցին: Այն տառն անիկա փող հնչեցուց, ու ամէն մարդ այն քաղաքէն իր վրանք քաշուեցաւ. Յովաբ ալ Երուսաղէմ թագաւորին դարձաւ: 23 - Եւ Յովաբ Իսրայէլի բոլոր զօրքերուն վրայ էր. ու Յովաբայի որդին Բանեա Քերեթիներուն ու Փելեթիներուն վրայ էր. 24 - Եւ Ադորամ հարկերուն վրայ. ու Աբիզուգի որդին Յովաբայի յիշատակաց դպիր էր. 25 - Եւ Սուսա տառնադպիր էր. ու Սադովկ ու Աբիթար քահանաներ էին: 26 - Եւ Յայիրացի Իրասալ Գաւթի նախարարն էր:

ԳԼ. ԻԱ

Եւ Գաւթի օրերը իրարու ետեւէ երէք տարի սով եղաւ. ու Գաւթի Տէրօջը †հարցուց: Եւ Տէրը ըսաւ, Ասիկա Սաւուղի ու անոր արիւնհասէղ տանը համար է, քանզի անիկա Գաբաւունացիները մեռցուց: 2 - Ու թագաւորը Գաբաւունացիները կանչեց ու անոնց խօսեցաւ. (և Գաբաւունացիք Իսրայէլի որդիներէն չէին, այլ Ամօրհացուց մնացորդէն էին. ու Իսրայէլի որդիները ա-

նոնց երգում ըրեր էին. բայց Սաւուղ Իսրայէլի ու Յուդայի որդիներուն համար նախանձաւորութիւն ընելով՝ զանոնք զարնել ուղեր էր:) 3 - Եւ Գաւթի Փաբաւունացիներուն ըսաւ, Ձեզի ի՞նչ ընեմ, ու ինչո՞ւ քաւութիւն ընեմ, որպէս զի Տէրօջը ժառանգութիւնը օրհնէք: 4 - Եւ Գաբաւունացիք անոր ըսին, Սաւուղէ ու անոր տունէն արծաթ կամ ոսկի չէնք ուղեր, ու Իսրայէլէ մարդ մը մեռցնել չէնք ուղեր: Եւ անիկա ըսաւ, Իսուք ինչ որ ըսէք՝ ձեզի պիտի ընեմ: 5 - Ու անոնք թագաւորին ըսին, Այն մարդը որ մեզ ջարդեց, ու մեզ այնպէս կորսնցնել ուղեց, որպէս զի ամենեւին Իսրայէլի սահմաններուն մէջ չգտնուինք, 6 - Անոր որդիներէն մեզի եօթը մարդ արուի, ու զանոնք Տէրօջը ընտրեալ Սաւուղի Գաբաւային մէջ Տէրօջը համար կախենք: Եւ թագաւորը կաւ տամ, ըսաւ:

7 - Բայց թագաւորը Սաւուղեան Յովաթմանի որդւոյն Մեմփիբոսթէի խնայեց: Սաւուղի որդւոյն Յովաթմանի ու Գաւթի մէջտեղ եղած Տէրօջը երգումին համար: 8 - Բայց թագաւորը Այիայի աղջկան Ռեափայի երկու որդիները զորոնք Սաւուղի ծներ էր, այսինքն Արմանին ու Մեմփիբոսթէն, և Սաւուղի աղջկան *Մեղքողի հինգ որդիները, զորոնք Մաւուլացի Բերզելի որդւոյն Եգրիէլի ծներ էր, առաւ, 9 - Ու զանոնք Գաբաւունացուց ձեռքը տուաւ. ու զանոնք Տէրօջը առջև յեռանք վրայ կախեցին, և եօթն ալ մեկտեղ մեռան. և անոնք հնձոց առաջին օրերը, գարիի հնձոց սկիզբը, մեռցուեցան:

10 - Ու Այիայի աղջիկը Ռեափա քուրճ մը առաւ, ու զանիկա իրեն համար սպառաժի մը վրայ փռեց, հնձոց սկիզբէն մինչև անոնց վրայ երկինքէն անձրև գալը. ու ցորեկը երկինքի թռչունները, ու զիշերը անպատին գաղանները չէր թողուր որ անոնց դպչին: 11 - Եւ Սաւուղի հարձին, Այիայի աղջկան Ռեափայի, բրածը Գաւթի պատմեցին: 12 - Ու Գաւթի գնաց, և Սաւուղի ու անոր որդւոյն Յովաթմանի ոսկորները առաւ Գաղատաու Յաբիսի բնակիչներէն, որոնք Բեթսանի հրապարակէն զանոնք

*Եբբ. հարցնելով հարցնեն
 †Եբբ. քաղաք և մայր Իսրայէլի մէջ
 ‡Եբբ. երեսը փնտռեց

*Մերովրի. տես ա թագ. ժը. 19:

ԳԼ. ԻԲ

գողցեր էին . վասն զի Փղշտացիք զանոնք հոն կախեր էին այն օրը որ Փղշտացիք Գեղբուէի վրայ Սաւուղը մեացուցեր էին . 13 - Եւ Սաւուղի սկորները ու անոր որդւոյն Յովնաթանի սկորները անկէ վերցուց . ու կախուածներուն սկորներն ալ ժողվեցին : 14 - Եւ Սաւուղի ու անոր որդւոյն Յովնաթանի սկորները Բենիամինի երկիրը՝ Սելայի մէջ անոր հօրը Կիսի գերեզմանը թաղեցին , ու թագաւորին բոլոր պատուիրածը ըրին . ու անկէ ետքը Ասաուած երկրին համար եղած աղօթքը ընդունեց :

15 - Եւ Փղշտացիք նորէն Իսրայէլի հետ պատերազմ ըրին . և Գաւիթ ու իր ծառաները իրեն հետ իջան ու Փղշտացուց հետ պատերազմ ըրին ու Գաւիթ ուժէ կարեցաւ : 16 - Եւ Յեսիբէնուր , որ Ռափայի որդիներէն էր , ու երեք հարիւր «իլի ծանրութեամբ պղնձէ նիզակ մը ունէր , ու մէջքը նոր «-ը իջ կապեր էր , ու զեց որ Գաւիթը զարնէ : 17 - Բայց Շարուհայի որդին Աբեսա անոր օգնութեան հասաւ , ու Փղշտացին զարկաւ ու զանհկա մեացուց : Այն ատեն Գաւիթի մարդիկը անոր երգում ըրին ու ըսին , Ասկէ ետքը դուն մեզի հետ պատերազմի չելլես , որպէս զի Իսրայէլի ճրագը չմարես :

18 - Եւ ասկէ ետքը նորէն Փղշտացուց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ . այն ատեն Ովսացի Սովբաք Ռափայի որդիներէն եղող Սեփիան մեացուց :

19 - Եւ նորէն Փղշտացուց հետ պատերազմ եղաւ Գովբի մէջ . ու Բեթլէհեմացի Արիովրզիմի որդին Ելէանան Գեթացի Գողիաթի եղբայրը զարկաւ , որուն նիզակին բունը սասայնանկներու գլանին պէս էր :

20 - Եւ նորէն Գեթի մէջ պատերազմ եղաւ . ու երկայնահասակ մարդ մը կար , որուն ձեռքերուն մատերը ու սաքերուն մատերը վեց վեց հաս ըլլալով քսանըչորս ճառ ունէր . անհկա ալ Ռափայի որդիներէն էր : 21 - Եւ անհկա Իսրայէլը նախատեց . բայց Գաւիթի եղբօրը Սամուայի որդին Յովնաթան զանհկա զարկաւ : 22 - Այս չորսը Գեթի մէջ Ռափայէ ծներ էին , և Գաւիթի ձեռքով ու անոր ծառաներուն ձեռքով ինկան :

Եւ Գաւիթ , այն օրը որ Տէրը զանհկա իր բոլոր թշնամիներուն ձեռքէն ու Սաւուղի ձեռքէն ազատեց , այս երգին խօսքերը Տէրոջը խօսեցաւ , 2 - Ու ըսաւ ,

Տէրը իմ վէմն , ամբուլթիւնս ու փրկիչս է .
3 - Ի՞նչ Ասաուածս իմ *պարիսպս է , ես անոր կը յուսամ .

Անհկա իմ վահանս ու իմ փրկութեանս եղջիւրը ,
Իմ աշտարակս , իմ ապաւէնս ու ազատիչս է :

Ձիս անիրաւութենէ դուն կ'ազատես :
4 - Օրհնեալ Տէրը կը կանչեմ ,
Ու իմ թշնամիներէս կ'ազատիմ :

5 - Քանզի մահուան ալիքները իմ բուրախքս աւին ,
Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին :

6 - Փերեզմանին լարերը զիս պաշարեցին ,
Ու մահուան որոգայթները իմ առջեւս աւին :

7 - Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի ,
Ու իմ Ասաուծոյս աղաղակեցի .
Որ իր սաճարէն իմ ձայնս լսեց ,
Ու իմ աղաղակս անոր ահանջներուն հոն :

8 - Այն ատեն երկիր սասանեցաւ ու գողաց .
Երկինքի հիմերը շարժեցան ու սասանեցան ,

Քանզի անհկա բարկացաւ :
9 - Անոր քիթէն ծուխ ելաւ ,
Ու բերնէն մաշող կրակ .
Անկէ կայծակներ բռնկեցան :

10 - Եւ անհկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ ,
Եւ անոր սաքերուն տակ մառախուղ կար .

11 - Ու քերովբէի վրայ ելաւ ու թռաւ .
Եւ հովին թեւերուն վրայ երեւցաւ :

12 - Ու խաւարը ու թանձր ջուրերը
Ու երկինքի ամպերը իր բոլորախքը վարագոյր քաշեց :

13 - Անոր առջև եղող ճառագայթէն կրակի կայծակներ բռնկեցան :

14 - Տէրը երկինքէն որոտաց ,
 Ու Բարձրեալը իր ձայնը լսել տուաւ :
 15 - Եւ նետեր զրկեց ու զանոնք ցրուեց ,
 Կայծակներ զրկեց ու զանոնք խռովեցուց :
 16 - Եւ Տէրոջը յանդիմանութիւնովը
 Ու անոր բարկութեան հովին փչելովը
 Ծովուն յատակները երեւցան ,
 Ու աշխարհիս հիմերը յայտնուեցան :
 17 - Բարձրէն զրկեց «- զիս բռնեց ,
 Եւ շատ ջուրերէն զիս հանեց :
 18 - Իմ զօրեղ թշնամիէս «- զիս ատողներէն ազատեց զիս ,
 Վասն զի ինծմէ զօրաւոր էին :
 19 - Իմ նեղութեանս օրը իմ առջեւս առին ,
 Բայց Տէրը ինծի հափփայտեան գաւազան եղաւ .
 20 - Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց ,
 Ու զիս ազատեց , վասն զի ինծի հաւնեցաւ :
 21 - Տէրը իմ արգարութեանս պէս ինծի փոխարէն կու տայ .
 Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ հատուցում կ'ընէ ինծի .
 22 - Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի ,
 Ու իմ Աստուծոյս դէմ ամբարշտութիւն չբրի :
 23 - Քանզի անոր ամէն դատաստանները իմ առջեւս էին ,
 Ու անոր օրէնքներէն չհեռացայ :
 24 - Եւ անոր առջև կատարեալ եղայ ,
 Ու իմ անօրէնութենէս զգուշացայ :
 25 - Ու Տէրը ինծի հատուցում բրաւ իմ արգարութեանս համեմատ ,
 Իմ չեփերս մաքրութեանը համեմատ , որ անոր աչքերուն առջև է :
 26 - Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս .
 Կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս .
 27 - Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս ,
 Ու ծուռին հետ կը ծուրիս :
 28 - Եւ վշտացած ժողովուրդը դուն կ'ազատես .
 Ու քու աչքերդ ամբարտաւաններուն վրայ են «բոլոր» զի զանոնք ցածրն են :
 29 - Քանզի իմ ճրագս դուն ես , ով Տէր ,
 Ու իմ խաւարս Տէրը կը լուսաւորէ :

30 - Վասն զի քեզմով գունդի մը վրայ կը վազեմ ,
 Ու իմ Աստուծովս պարիսպէ կ'անցնիմ :
 31 - Աստուծոյ ճամբան կատարեալ է .
 Տէրոջը խօսքերը փորձուած են .
 Անիկա ամէն իրեն յուսացողներուն ասպար է :
 32 - Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած ,
 Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ :
 33 - Իմ զօրաւոր բերդս Աստուած է ,
 Ու իմ ճամբաս կատարեալ կ'ընէ :
 34 - Իմ նաքերս եղջերուի «բոլոր»-ն պէս կ'ընէ ,
 Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցնէ :
 35 - Ձեռքերս պատերազմի կը վարժէ ,
 Ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն :
 36 - Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր ,
 Ու քու քաղցրութիւնդ զիս մեռցուց :
 37 - Իմ քալելու ճամբաս ներքեւս լայնցուցիր ,
 Ու իմ ոտքիս յօդուածները չստանեցան :
 38 - Իմ թշնամիներս հալածեցի ու զանոնք ջարդեցի ,
 Ու ետ չդարձայ մինչև զանոնք հատցուցի :
 39 - Եւ զանոնք հատցուցի , գետինը զարկի , որպէս զի չկանգնին .
 Անոնք իմ ոտքերուս տակ ինկան :
 40 - Ու պատերազմի համար ինծի զօրութիւն հազցուցիր .
 Եւ իմ վրաս ելլողները տակա ձգեցիր :
 41 - Ու իմ թշնամիներուս † կռնակը ինծի քարջնէլ տուիր ,
 Որպէս զի զիս ատողները ջարդեմ ,
 42 - † Աղաղակեցին , բայց ազատող չկար .
 Տէրոջը «առաջնեքն» , բայց անոնց պատասխան չտուաւ :
 43 - Այն ատեն զանոնք երկրի փոշին պէս մանրեցի .
 Չանոնք փողոցներուն ցեխին պէս կոխեցի «- ճմլեցի :

*Կամ, բազուկներովս պղնձէ աղեղ մը կը կտարուի
 †Կամ, վիզը ինծի տուիր. Ծն. խթ. 8: Ել. իգ. 27: Յես. Ժ. 24 :
 †Կամ, նայեցան

- 44 - Եւ իմ՝ ժողովուրդիս կռիւներէն զիս ազատեցիր ,
- Ո - զիս պահեցիր , որպէս զի ազգերու գլուխ ըլլամ .
- Ո - իմ՝ չգիտցած ժողովուրդս ինծի ծառայեց :
- 45 - Օտարները ինծի *խոնարհութիւն բրին .
- Իրենց տկանջներովը լսածնուն պէս՝ ինծի չնազանդեցան :
- 46 - Օտարները տկարացան ,
- Ու իրենց պահուրտած տեղերէն դուրացին :
- 47 - Տէրը կենդանի է , ու իմ Վէմն օրհնեալ ըլլայ .
- Եւ իմ՝ փրկութեանս վէմը Աստուած բարձր ըլլայ :
- 48 - Աստուած է որ իմ վրէժս կը ինդրէ ,
- Ու ժողովուրդները ինծի կը չնազանդեցնէ :
- 49 - Իմ՝ թշնամիներէս զիս հանելով Զիս իմ՝ վրաս ելլողներէն աւելի բարձրացուցիր ,
- Ո - բռնաւոր մարդէն ազատեցիր :
- 50 - Ասոր համար , ով Տէր , ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ ,
- Ու քու անուանդ սողմնս պիտի երգեմ :
- 51 - Իր թագաւորին փրկութիւնները մեծցնողը ,
- Ու իր օժեպին , Դաւիթի , ու անոր սերունդին
- Յաւիտեան ողորմութիւն ընողը Ան է :

ԳԼ ԻԳ

- Եւ Դաւիթի վերջին խօսքերը ասոնք են :
- Յեսսէի որդին Դաւիթ կ'ըսէ ,
- Այն մարդը որ բարձրացաւ ,
- Յակոբայ Աստուծոյն օժեպը ,
- Ու Իսրայէլի վայելուչ երգերը շարադրողը կ'ըսէ ,
- 2 - Տէրոջը Հոգին ինձմով խօսեցաւ ,
- Ու անոր խօսքը իմ լեզուիս վրայ էր :
- 3 - Իսրայէլի Աստուածը ըսաւ ,
- Ո - Իսրայէլի Վէմը ինծի խօսեցաւ ,
- Ը՛հե՛լ՛ , Մարդոց վրայ իշխողը արդար ըլլայ ,
- Ու Աստուծոյ վախովը իշխէ ,
- 4 - Այն ատեն անիկա առաւուտեան լոյսին կը նմանի ,

*Եբբ. ստեցին

- Որ արեւուն ծագած ատենը ՚Էբբ-նայ ,
- Այնպիսի առաւուտի մը՝ որ առանց ամպի է ,
- Ու արեւ- ճառագայթին՝
- Որ անձրեւէն ետքը գեանէն կանանչ խտար կը բուսցնէ :
- 5 - Թէեւ իմ՝ տունս Աստուծոյ քով այսպէս չէ ,
- Սակայն ինծի հետ յաւիտենական ուխտ մը ըրաւ ,
- Որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է .
- Քանզի իմ բոլոր փրկութիւնս ու իմ բոլոր բաղձանքս այս է .
- *Ու պիտի չծաղկեցնէ՞ զայն :
- 6 - Բայց բոլոր անօրէնները Դուրս նե՛տուած փուշերու պէս պիտի ըլլան .
- Քանզի անոնք ձեռքով չեն բռնուիր :
- 7 - Եւ անոնց դպչելու մարդը Երկաթը ու նիզակին բունը ՚Իրեն զէնք պիտի ընէ՞ .
- Ու իրենց եղած տեղը Բոլորովին կրակի մէջ պիտի այրին :
- 8 - Դաւիթի զօրաւոր մարդոցը անունները ասոնք են . †Յօսէբ-բասերեթ Թա՛հքեմնացին , որ զօրավարներուն գլխաւորն էր . անիկա է Սո՛մացի Ագինօն , որ անհամ ճշ ութ հարիւր մարդը մէկէն մեռցուց՞ :
- 9 - Եւ անկէ ետքը Աքուքացի Դովգայի որդին Եղիազար , որ Դաւիթի հետ եղող երէք զօրաւորներէն մէկն էր , երբ անոնք պատերազմելու համար հոն ժողովուած Փղշտացիները նախատեցին , ու Իսրայէլի մարդիկը փախան .
- 10 - Ասիկա ելաւ ու Փղշտացիները զարկաւ , մինչև որ ձեռքը յոգնեցաւ , ու ձեռքը իր սուրին վրայ փակաւ , և Տէրը այն օրը մեծ փրկութիւն ըրաւ . ու ժողովուրդը անոր ետեւէն գարձաւ՝ միայն կողոպուտը առնելու համար :
- 11 - Եւ անկէ ետքը Արարացի Ագէի որդին Սամմուէր . ու Փղշտացիք Տգունդ մը կազմեցին՝ . ու հոն սպով լեցուն ազարակ մը կար . և ժողովուրդը Փղըշ-

- *Կա՛մ , Թէեւ չծաղկեցնէ
- †Եբբ. պիտի լեցուի
- ‡Կա՛մ , աթուր նստող
- ||Կա՛մ , իր նիզակը վերցուց ութ հարիւր մարդոց վրայ , ու զանոնք մէկէն մեռցուց
- §Կա՛մ , Քայայի մէջ ժողովուեցան

տացւոց առջեւէն փախաւ . 12 - Բայց անհկա ագարակին մէջտեղը կայնեցաւ, զանհկա պաշտպանեց ու Փղշտացիները զարկաւ . և Տէրը մեծ փրկութիւն ըրաւ :

13 - Ու երեսուն *գորավարներուն երեքը իջան, և հունձքի տառն Ոգոզովի քարայրը Դաւիթի եկան . ու Փղշտացւոց մէկ գունդը Ռափայիններուն հովիտին մէջ բանակեր էր : 14 - Եւ այն տառն Դաւիթ բերդին մէջ էր . ու այն տառն Փղշտացիք Բեթլէհէմի մէջ բերդապահ զօրք ունէին : 15 - Եւ Դաւիթ փափաքելով՝ ըսաւ , Բեթլէհէմի դուռը եղող ջրհորէն ո՞վ ինծի ջուր կը խմցնէ : 16 - Այն տառն այս երեք զօրաւորները Փղշտացւոց բանակը ճեղքեցին անցան , ու Բեթլէհէմի դուռը եղող ջրհորէն ջուր քաշեցին , ու առին Դաւիթի տարին . բայց անհկա չուզեց անկէ խմել , հապա զանհկա թափելով՝ Տէրոջը նահեց . 17 - Ու ըսաւ , Ով Տէր , քա՛ւ լիցի որ ես այս բանը ընեմ . իրենց կեանքը վտանգի մէջ դնելով գացող մարդոց արի՞ւնը իմէ՛մ . ու անկէ խմել չուզեց : Ատնք են այն երեք զօրաւոր մարդոց ըրածները :

18 - Եւ Շարուհեան Յովարի եղբայրը Աբեսաա այն երեք մարդոց գլխաւորն էր . ու անհկա իր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցնելով սպաննեց զանոնք . ու անհկա երեքին մէջ անուանի էր : 19 - Եւ անհկա երեքէն աւելի համարում ունենալուն համար, անոնց գլուխ եղաւ . բայց առջին երեքին առի՛ճանին չհասաւ :

20 - Ու մեծ գործեր գործող կարեւակելացի զօրաւոր մարդու մը որդւոյն Յովիադայի որդին Բանեա Մովարի երկու զօրաւոր մարդիկը մեռցուց . նաև ձիւնի ժամանակ իջաւ ու գուբին մէջ առիւծը մեռցուց : 21 - Ասիկա տեսքով երեւելի Եգիպտացի մարդ մըն ալ մեռցուց . ու Եգիպտացիին ձեռքը նիզակ մը կար , բայց Բանեա ցուպով մը անոր վրայ իջաւ , ու Եգիպտացիին ձեռքէն նիզակը յափշտակեց , և գանհկա անոր նիզակովը մեռցուց : 22 - Յովիադայի որդին Բանեա այս բաները ըրաւ , ու երեք զօրաւորներուն մէջ անուանի եղաւ . 23 - Երեսունէն աւելի պատիւ ունէր , բայց առջին երեքին առի՛ճանին չհասաւ . ու Դաւիթ գանհ-

կա իր տառանին վերակացու դրաւ :

24 - Յովարի եղբայրը Ասայէլ երեսունէն էր . նաև Բեթլէհէմացի Դովգայի որդին Ելէանան, 25 - Հարօդացի Սամմա , Հարօդացի Եղիկա , 26 - *Փելլատացի Քեղզէս , Թեկուացի Եկգեսի որդին Իրաս , 27 - Անաթովթացի Աբիեգեր , Ովսացի Մեբունայ , 28 - Աքուքացի Սելմօն , Նեաոփաթացի Մասարայ , 29 - Նեաոփաթացի Բանայի որդին Ալար , Բենիամինի որդիներուն Գաբաայէն՝ Ռիփայի որդին Եթթի , 30 - Փարաթոնացի Բանեա , Գաասի ձորերէն Ադդայի , 31 - Արաբաթացի Աբիելթոն , Բարուժացի Ազամօթ , 32 - Սաղաբինացի Եղիաբա , Յասենի որդիներէն՝ Յովաթան , 33 - Արարացի Սամմա , Արարացի Սարարի որդին Աքիամ , 34 - Մաբաթի որդւոյն Ահաբայի որդին Եղիփաղէտ , Գեղոնացի Աքիաոփէլի որդին Եղիամ , 35 - Կարմելացի Ասարէ , Արբացի Փասարայ , 36 - Սուբացի Նաթանի որդին Իգաղ , Գադացի Բանի , 37 - Ամիննացի Սելեկ , Շարուհեան Յովարի կապարճակիրը Բերովթացի Նասարա , 38 - Յեթերացի Իրաս , Յեթերացի Գարեբ , 39 - Քեաացի Ուրիա . ամէնք երեսունըթէն էին :

ԳԼ ԻԳ

Եւ Տէրոջը բարկութիւնը նորէն Իսրայէլի վրայ բորբոքեցաւ . ու Դաւիթը անոնց դէմ գրգռեց , ըսելով , Գնա , Իսրայէլը ու Յուդան համբէ : 2 - Եւ թագաւորը իր քով եղող Յովար զօրապետին ըսաւ , Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջ , Դանէ մինչև Բերսաբէէ , պարտէ , ու ժողովուրդը համբեցէք , որպէս զի ժողովուրդին թիւը գիանամ : 3 - Եւ Յովար ըսաւ թագաւորին , Քու Տէր Աստուածդ , ժողովուրդը որչափ որ է , հարիւրապատիկ աւելցնէ , ու իմ թագաւոր տէրոջս աչքերը տեսնեն . բայց իմ թագաւոր տէրս ինչո՞ւ համար այս բանին կը ցանկայ : 4 - Ու երբ թագաւորին խօսքը Յովարի ու զօրավարներուն վրայ սասակացաւ , Յովար զօրավարներուն հետ թագաւորին առջեւէն ելաւ , որպէս զի Իսրայէլի ժողովուրդը համբէ : 5 - Եւ Յորդանանէ

*Կամ, գլխաւորներուն

*Կամ, Փելոնացի . տես ա Մն . Ժա . 27 :

անցան, ու Գաղի ձորին մէջ եղող քաղաքին աջ կողմը՝ Արտեր բանակեցան. ետքը Յաղեր, 6 - Եւ Գաղաադ ու Թաքթիմադասի երկիրը եկան. անկէ *Գանեամն, ու Սիդանի շրջակաները եկան: 7 - Եւ անի Տիւրոսի ամրոցը ու Խեւացւոց ու Քանանացւոց ամէն քաղաքները գացին. և Յուդայի հարաւային կողմը Բերսաբէէ ելան: 8 - Ու բոլոր երկիրը պարտեցան. և ինը ամիսէն ու քսան օրէն ետքը Երուսաղէմ դարձան: 9 - Եւ Յովաբ ժողովուրդին համրանքին ցուցակը թագաւորին տուաւ: Ու Իսրայէլի մէջ ութ հարիւր հազար սուր քաշող պատերազմական մարդ կար. և Յուդայեանք չինգ հարիւր հազար մարդ էին:

10 - Եւ Գաղի ժողովուրդը համբռնէն ետքը՝ իր խղճմտանքը զինք դրդեց. ու Գաղի Տէրոջը ըսաւ, Զայ՝ ընելով մեծ մեղք գործեցի. ով Տէր, հիմա քու ծառայիդ այս մեղքը ներէ. քանզի մեծ յիմարութիւն ըրի: 11 - Ու երբ Գաղի թագաւորն ելաւ, Տէրոջը խօսքը Գաղի թագաւորին, Գաղ մարգարէին, եղաւ՝ ըսելով, 12 - Գնա՛ ու Գաղի ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ես քեզի երեք բան կ'առաջարկեմ. անոնցմէ մէկը ընարէ որ քեզի ընեմ: 13 - Եւ Գաղ Գաղի զայով անոր պատմեց, ու անոր ըսաւ, Եօթը տարի քու երկրիդ վրայ սո՛վ ըլլայ, կամ երեք ամիս քու թշնամիներուդ երեսէն փախչի՞ս, ու անոնք քեզ հաշտեն, կամ թէ երեք օր քու երկրիդ վրայ ժանտա՞խտ ըլլայ. հիմա մտածէ ու տես թէ ի՞նչ պատասխան տանիմ զիս զրկողին: 14 - Եւ Գաղի Տէրոջը ըսաւ, Խիստ մեծ նեղութեան մէջ եմ. հիմա Տէրոջը ձեռքը իյնանք, քանզի անոր գթութիւնը շատ է, ու մարդու ձեռք չիյնամ:

15 - Եւ Տէրը այն առաւօտէն մինչև ուշուած ժամանակը Իսրայէլի վրայ ժանտախտ զրկեց. ու Գանէ մինչև Բերսաբէէ ժողովուրդէն եօթամասուն հազար մարդ մեռաւ: 16 - Եւ Ասայի Տէրոջը ձեռքը Երուսաղէմի վրայ

երկնցուց որպէս զի զանկա ջնջէ. ու այս չարիքին վրայ Տէրոջը սիրաբ իջաւ, ու ժողովուրդը ջնջող հրեշտակին ըսաւ, Հերիք է, այլ ձեռքդ քաշէ. ու Տէրոջը հրեշտակը Յերուսացի Ունայի կային քով էր: 17 - Եւ Գաղի ժողովուրդը զարնող հրեշտակը տեսնելով՝ Տէրոջը ըսաւ, Ահա ե՛ս մեղանչեցի ու ե՛ս անօրէնութիւն ըրի, բայց այս ոչխարները ի՞նչ ըրին. կ'աղաչեմ, քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ:

18 - Եւ նոյն օրը Գաղ Գաղի թագաւորն, ու անոր ըսաւ, Ելի՛ր, Յերուսացի Ունայի կային մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ: 19 - Եւ Գաղի Տէրոջը ըսաւ, Ինչպէս Տէրը պատուիրէր էր: 20 - Ու Ունա նայեցաւ, ու երբ տեսաւ որ թագաւորը և անոր ծառաները իրեն կու գան, Ունա ելաւ ու երեսը մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ թագաւորին: 21 - Եւ Ունա ըսաւ, Արդեօք ի՞նչ պատճառաւ իմ թագաւոր տէրս իր ծառային եկաւ: Ու Գաղի ըսաւ, Այ՛ կայր քեզմէ ծախու առնելու, ու Տէրոջը սեղան մը շինելու համար, որպէս զի ժողովուրդին վրայէն հարուածը վերնայ: 22 - Եւ Ունա ըսաւ Գաղի, Իմ թագաւոր տէրս զանի՞ս առնէ, ու իր աչքերուն հաճոյ երեւցածին պէս զո՛հ ընէ. ահա եզները ողջակէզի համար, կամնասայլները ու եզներուն գործիքները փայտի համար ըլլան: 23 - Ասոնց ամէնը *Ունա թագաւորի մը պէս՝ թագաւորին տուաւ. ու Ունա՝ թագաւորին ըսաւ, Քու Տէր Աստուածդ քեզ ընդունի: 24 - Բայց թագաւորը Ունայի ըսաւ, Այ. հապա ես զանի՞ս քեզմէ անշուշտ ստակով ծախու պիտի առնեմ, ու ձրի *ասի՞ս իմ Տէր Աստուծոյս ողջակէզ պիտի չմատուցանեմ: Եւ Գաղի կայր ու եզները յիսուն սիկղ արծաթի ծախու առաւ: 25 - Ու Գաղի հոն Տէրոջը սեղան շինեց, ու անոր վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց. և Տէրը լսեց անոր աղօթքը երկրին համար, ու Իսրայէլի վրայէն հարուածը վերցաւ:

*Կամ, Գանի անասուր. տես Յես. ԺԺ. 47: Գատ. Ժբ. 29:

*Եբբ. Ունա թագաւորը

* ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱԽՈՐԱՑ *



ԳԼՈՒԽ Ա

Եւ Դաւիթ թագաւորը ծերացած ու տարիքը առած ըլլալով, զանհկա հանդերձներով կը ծածկէին, բայց չէր տաքնար: 2 - Եւ ծառաները անոր ըսին, Մեր թագաւոր տէրոջը համար կոյս աղջիկ մը փնտռեն՝ որ թագաւորին առջև կայնի, զանհկա դարմանէ ու անոր ծոցը պառկի, որպէս զի մեր թագաւոր տէրը տաքնայ: 3 - Ու Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ գեղեցիկ աղջիկ մը փնտռեցին. և Սուճամացի Աբիսակը գտան, ու զանհկա թագաւորին բերին: 4 - Եւ այն աղջիկը խիստ գեղեցիկ էր. ու անհկա թագաւորը կը դարմանէր ու անոր սպասուորութիւն կ'ընէր. բայց թագաւորը զանհկա չգիտցաւ:

5 - Այն ատեն Ազգիթի որդին Ադոնիա հպարտացաւ ու ըսաւ, Ես թագաւոր ըլլամ. և իրեն համար կառքեր ու ձիաւորներ պատրաստեց, և յիսուն մարդ՝ որպէս զի իր առջեւէն վազեն: 6 - Եւ անոր հայրը անոր կեանքին մէջ ամենեւին յանդիմանած չէր զանհկա, ըսելով թէ Ինչո՞ւ այսպէս բրիր. և անհկա տեսքով խիստ գեղեցիկ էր, ու անոր հայրը զանհկա Աբիսաղովէ ետքը ծներ էր: 7 - Եւ անհկա խօսք մէկ ըրաւ Շարուհեայի որդւոյն Յովաբի հետ ու Աբիսաթար քահանային հետ, որոնք Ադոնիայի հետեւելով՝ անոր օգնութիւն կ'ընէին: 8 - Բայց Սադովկ քահանան ու Յովիագայի որդին Բանեա և Նաթան մարգարէն ու Սեմէի և Ռէի ու Դաւիթի զօրաւոր մարդիկը Ադոնիայի հետ չէին: 9 - Եւ Ադոնիա Ռովգեյի աղբիւրին մօտ եզոզ Չողեթի քարին քով՝ ոչխարներ, արջառներ ու գէր անասուններ մտնէր. և իր ամէն եղբայրները, թագաւորին որդիները, ու Յուդայի բոլոր մարդիկը, թագաւորին ծառաները, հրաւիրեց: 10 - Բայց Նաթան մարգարէն ու Բանեան և զօրաւորները ու իր Սողոմոն եղբայրը չհրաւիրեց:

11 - Եւ Նաթան Սողոմոնի մօրը Բերսաբէի հետ խօսեցաւ ու ըսաւ, Չլսեցի՞ր որ Ազգիթի որդին Ադոնիա թագաւոր եղաւ, ու մեր տէրը Դաւիթ չիմացաւ: 12 - Ուրեմն հիմա եկուր քեզի խրատ մը տամ, որպէս զի քու կեանքդ ու քու որդւոյդ Սողոմոնի կեանքը ազատես: 13 - Ելիր, Դաւիթ թագաւորին քով գնա, ու անոր ըսէ, Ով տէր իմ թագաւոր, դուն քու աղախինիդ երդում՝ չըրի՞ր ու չըսի՞ր որ Ինձմէ ետքը քու որդիդ Սողոմոն թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս անհկա պիտի նստի. ու Ինչո՞ւ համար Ադոնիա թագաւոր եղաւ: 14 - Ահա դուն այն տեղը թագաւորին հետ խօսած ատենդ՝ ես ալ ետեւէդ կու գամ, ու քու խօսքերդ կը լրացնեմ:

15 - Եւ Բերսաբէ ներքին սենեակը մտաւ թագաւորին քով. և թագաւորը շատ ծերացած էր, ու Սուճամացի Աբիսակ թագաւորին սպասաւորութիւն կ'ընէր: 16 - Եւ Բերսաբէ գլուխը ծռեց ու թագաւորին խոնարհութիւն ըրաւ: Ու թագաւորը ըսաւ, Ի՞նչ կ'ուզես: 17 - Եւ անհկա ըսաւ անոր, Ով տէր իմ, դուն քու աղախինիդ քու Տէր Աստուծոյդ անուենովը երգում բրիր՝ ը՛տէ՛ւ, Ինձմէ ետքը քու որդիդ Սողոմոն թագաւոր պիտի ըլլայ, ու իմ աթոռս ան պիտի նստի: 18 - Եւ ահա հիմա Ադոնիա թագաւոր եղած է, ու դուն չիմացար, ով տէր իմ թագաւոր: 19 - Եւ անհկա շատ արջառներ ու գէր անասուններ ու ոչխարներ մտնէր, և թագաւորին բոլոր որդիները ու Աբիսաթար քահանան և Յովաբ զօրապետը հրաւիրեց, բայց քու ծառագ Սողոմոնը չհրաւիրեց: 20 - Հիմա, ով տէր իմ թագաւոր, բոլոր Իսրայէլի աչքերը քու վրադ են, որպէս զի անոնց իմացնես թէ իմ թագաւոր տէրոջս աթոռը իրմէ ետքը ո՞վ պիտի նստի: 21 - Եթէ ոչ՝ երբ իմ թագաւոր տէրս իր հայրերուն հետ քնանայ, ես ու իմ որդիս Սողոմոն յանցաւոր պիտի սեպուինք:

Հետ կը խօսէր, Նաթան մարգարէն եկաւ: 23 - Եւ թագաւորին իմացուցին ու ըսին թէ Ահա Նաթան մարգարէն էլ: ու անհկա ներս մտաւ թագաւորին առջև, ու երեսը մինչև գետինը շտէլով թագաւորին խոնարհութիւն ըրաւ: 24 - Եւ Նաթան ըսաւ, Ով տէր իմ թագաւոր դո՞ւն ըսիր որ ինձմէ ետքը Ադոնիա թագաւոր պիտի ըլլայ, ու իմ աթոռս անհկա պիտի նստի: 25 - Քանզի անհկա այսօր իջաւ, և շատ արջառներ ու գէր անասուններ ու ոչխարներ մորթեց. և թագաւորին բոլոր որդիները, զօրավարները ու Աբիաթար քահանան հրաւիրեց. և ահա անոնք անոր առջև կ'ուտէն, կը խմեն ու կ'ըսեն, Կեցցէ արքայ Ադոնիա: 26 - Բայց զիս քու ծառայ. ու Սադովկ քահանան և Յովիադայի որդին Բանեան ու քու ծառայ Սողոմոնը չկանչեց: 27 - Այս բանը արդեօք իմ թագաւոր տէրոջս ձեռքով եղաւ, ու քու ծառայիդ չգիտցուցիր թէ քեզմէ ետքը իմ թագաւոր տէրոջս աթոռը ո՞վ պիտի նստի:

28 - Եւ Դաւիթ թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Բերասէն ինձի կանչեցէք: Եւ անհկա թագաւորին առջև եկաւ ու թագաւորին առջև կայնեցաւ: 29 - Եւ թագաւորը երգում ըրաւ ու ըսաւ, Իմ անձս ամէն նեղութենէ ազատող Տէրը կենդանի է որ, 30 - Ինչպէս քեզի Իսրայէլի Տէր Աստուծովը երգում ըրի, ու ըսի թէ ինձմէ ետքը քու որդիդ Սողոմոն թագաւոր պիտի ըլլայ, ու իմ տեղս իմ աթոռս վրայ անհկա պիտի նստի, Ահա այսօր այնպէս պիտի ընեմ: 31 - Այն ատեն Բերասէ երեսը մինչև գետինը ծռելով թագաւորին խոնարհութիւն ըրաւ ու ըսաւ, Իմ տէրս Դաւիթ թագաւորը յաւիտեանս զ կենայ:

32 - Եւ Դաւիթ թագաւորը ըսաւ, Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն և Յովիադայի որդին Բանեան ինձի կանչեցէք: Ու անոնք թագաւորին առջև եկան: 33 - Եւ թագաւորը անոնց ըսաւ, Ձեր տէրոջը ծառաները ձեզի հետ առէք, ու իմ որդիս Սողոմոնը իմ ջորիս վրայ հեծցուցէք, ու զանհկա Գեհան իջեցուցէք: 34 - Եւ Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն հոն զանհկա Իսրայէլի վրայ թագաւոր օժեն. ու փող հնչեցուցէք

ու ըսէք, Կեցցէ արքայ Սողոմոն: 35 - Եւ անոր ետեւէն ելէք, ու անհկա թող գոյ ու իմ աթոռս նստի, և իմ տեղս անհկա թագաւոր ըլլայ. քանզի ես հրաման տուի որ անհկա Իսրայէլի վրայ ու Յուդայի վրայ իշխան ըլլայ: 36 - Այն ատեն Յովիադայի որդին Բանեա թագաւորին պատասխան տուաւ ու ըսաւ, Ամէն. իմ թագաւոր տէրոջս Տէր Աստուծոն ալ այդպէս ըսէ: 37 - Ինչպէս Տէրը իմ թագաւոր տէրոջս հետ էր, Սողոմոնի հետ ալ այնպէս ըլլայ, ու անոր աթոռը իմ տէրոջս Դաւիթ թագաւորին աթոռէն մեծ ընէ: 38 - Այն ատեն Սադովկ քահանան, Նաթան մարգարէն ու Յովիադայի որդին Բանեա, և Քերեթիները ու Փելեթիները իջան, ու Սողոմոնը Դաւիթ թագաւորին ջորիս վրայ հեծցուցին, ու զանհկա Գեհան տարին: 39 - Եւ Սադովկ քահանան խորանէն իւզին եղջիւրը առաւ ու Սողոմոնը օժեց. և փողը հնչեցուցին, ու բոլոր ժողովուրդը կ'ըսէր, Կեցցէ արքայ Սողոմոն: 40 - Եւ բոլոր ժողովուրդը անոր ետեւէն կ'ելլէին. ու ժողովուրդը որինգներ հնչեցնելով մեծ ուրախութեամբ մը կ'ուրախանային, այնպէս որ անոնց ձայնէն գետինը *կը դողդէր:

41 - Եւ Ադոնիա ու անոր բոլոր բազմականները լսեցին. ու անոնք կերակուրէն ելեր էին. և Յովաբ փողին ձայնը լսելով ըսաւ, Ի՞նչ պիտի ըլլայ այս դողդաման ձայնը որ քաղաքէն կ'ելլէ: 42 - Երբ անհկա տակաւին կը խօսէր, ահա Աբիաթար քահանային որդին Յովիաթան եկաւ. ու Ադոնիա ըսաւ, Եկուր, քանզի դուն քաջ մարդ մըն ես, ու բարի աւետիս պիտի տաս: 43 - Եւ Յովիաթան պատասխան տուաւ ու Ադոնիայի ըսաւ, Շիտակը այս է որ մեր տէրը, Դաւիթ թագաւորը, Սողոմոնը թագաւոր ըրաւ: 44 - Ու թագաւորը Սադովկ քահանան և Նաթան մարգարէն ու Յովիադայի որդին Բանեան, և Քերեթիները ու Փելեթիները անոր հետ զրկեց. ու զանհկա թագաւորին ջորիս վրայ հեծցուցին: 45 - Եւ Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն զանհկա Գեհան մէջ թագաւոր օժեցին, ու անկէ ուրախութեամբ ելան, ու քաղաքը դողդեցաւ. և ձեր

*Եբր. կը ճեղքուէր

լաած ձայնը այս է: 46 - Նաև Սողոմոնն թագաւորը թագաւորութեան ամօռին վրայ նստաւ. 47 - Եւ թագաւորին ծառաներն ալ մեր տէրը, Դաւիթ թագաւորը, օրհնելու եկան, ու ըսին, Քու Աստուածդ Սողոմոնի անունը քու անունէդ աւելի մեծցնէ, ու անոր ամօռը քու ամօռէդ աւելի բարձրացնէ: Եւ թագաւորը իր անկողինին վրայ երկրպագութիւն ըրաւ: 48 - Նաև թագաւորը այսպէս ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ, որ այսօր իմ ամօռիս վրայ նստող մը տուաւ, ու իմ աչքերս տեսան: 49 - Եւ Ադոնիայի բոլոր կոչնականները զարհուրեցան, ու ելան և ամէն մէկը իրենց ճամբան գացին:

50 - Եւ Ադոնիա Սողոմոնի երեսէն վախցաւ, ու ելաւ գնաց ու սեղանին եղջիւրները բռնեց: 51 - Եւ Սողոմոնի պատմեցին ու ըսին, Ահա Ադոնիա Սողոմոն թագաւորէն վախցաւ, և ահա անիկա սեղանին եղջիւրները բռնեց, ու ըսաւ, Սողոմոն թագաւորը այսօր ինծի երգում ընէ որ իր ծառան սրով պիտի չմեռցնէ: 52 - Աւ Սողոմոն ըսաւ, Եթէ անիկա առաքինի ըլլայ, անոր մէկ մտղը գեաինը պիտի չիյնայ. բայց եթէ անոր վրայ չարութիւն գանուի, այն ատեն պիտի մեռնի: 53 - Եւ Սողոմոն թագաւորը Բաբելոն գրկեց, ու զանիկա սեղանէն վար իջեցուցին: Եւ անիկա եկաւ ու Սողոմոն թագաւորին խոնարհութիւն ըրաւ. ու Սողոմոն անոր ըսաւ, Տունդ գնա:

ԳԼ. Բ

Աւ երբ Դաւիթի մեռնելու օրերը մօտեցան, իր սրբւոյն Սողոմոնի պատուէր տուաւ՝ ըսելով, 2 - Ահա ես ամէն երկրին ճամբան կ'երթամ, իսկ դուն ուժովցիր ու քաջասիրտ եղիր: 3 - Եւ քու Տէր Աստուծոյդ պահպանութիւնը պահէ, որպէս զի անոր ճամբաներուն մէջ քալես, ու անոր կանոնները, պատուիրանքները, դատատանները ու վկայութիւնները պահես, ինչպէս Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած է. որպէս զի ինչ որ ընես, և ուր որ երեսդ դարձնես, յաջողութիւն գտնես. 4 - Որպէս զի Տէրը իր խօսքը

*Եբբ. այր

հաստատէ, զոր ինծի համար խօսեցաւ՝ ըսելով, Եթէ քու սրգիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն, ու իմ առջեւ բոլոր սրտով, բոլոր հոգւով ու ճշմարտութեամբ քալեն, Իսրայէլի ամօռին վրայէն քեզմէ մարդ պակաս պիտի չըլլայ: 5 - Եւ դուն գիտես ինչ որ Շարուհայի սրգին Յովաբ ինծի ըրաւ, «- ինչ որ Իսրայէլի երկու զօրավարներուն, Ներեան Աբեհնների ու Յեթերեան Ամեայիի, ըրաւ. քանզի զանոնք մեռցուց, ու խաղաղութեան ատեն պատերազմի արիւն թափեց, և իր մէջքի գօտին ու սաքի կօշիկներուն վրայ պատերազմի արիւն սրսկեց: 6 - Աւրեմն դուն քու իմաստութիւնդ ի գործ դնես, ու անոր ճերմակ մագերը խաղաղութեամբ գերեզմանը չիջեցնես: 7 - Բայց Գազաադացի Բերզելիի սրգիններուն ողորմութիւն ընես, ու քու սեղանէդ ուսողներուն հետ ըլլան. քանզի երբ քու եղբորդ Աբիսողոմի երեսէն փախայ, ինծի այնպէս մօտեցան: 8 - Եւ ահա Բաւուրիմացի Բենիամինեան Գերայի սրգին Սեմէի քու քովդ է. ու անիկա Մանայիմ գացած օրս ինծի ծանր անէ՞ք տուաւ. բայց երբ անիկա զիս զիմաւորելու համար Յորդանան իջաւ, Տէրոջմով երգում ըրի անոր՝ ու ըսի, Քեզ սրով չեմ մեռցներ: 9 - Եւ հիմա զանիկա անմեղ չսեպես, քանզի դուն խելացի մարդ ես ու անոր ինչ ընելիքդ գիտես. և անոր ճերմակ մագերը արիւնով գերեզմանը իջեցնես:

10 - Աւ Դաւիթ իր հայրերուն հետ քնացաւ, ու Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ: 11 - Եւ Դաւիթի Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի էին. եօթը տարի Քերթոնի մէջ թագաւորութիւն ըրաւ, ու երեսունուհրեք տարի Երուսաղէմի մէջ թագաւորութիւն ըրաւ:

12 - Եւ Սողոմոն իր հօրը Դաւիթի ամօռը նստաւ, ու անոր թագաւորութիւնը շատ հաստատ եղաւ:

13 - Եւ Ազգիթի սրգին Ադոնիա Սողոմոնի մօրը Բերասրէի գնաց. ու Բերասրէ անոր ըսաւ, Արդեօք խաղաղութեամբ եկար. ու անիկա ըսաւ, Խաղաղութեամբ. 14 - Եւ ըսաւ, Քեզի խօսք մը ունիմ. ու անիկա ըսաւ, Խօսէ. 15 - Եւ անիկա ըսաւ, Դուն աղէկ գիտես որ թագաւորութիւնը իմն էր, ու

բազմ Իսրայէլի երեսը իմ վրաս էր որ : պէս զի թագաւոր ըլլամ . բայց թագաւորութիւնը դարձաւ ու իմ եղբօրս եղաւ , քանզի անոր Տէրոջմէ եղաւ : 16 - Եւ Հիմա ես քեզմէ խնդիրք մը կը խնդրեմ , *ինծի Ոչ չըսես : Ու Բեբե-
* քէ անոր ըսաւ , Խօսէ : 17 - Եւ անիկա ըսաւ , Կ'աղաչեմ , Սողոմոն թագաւորին ըսէ , (քանզի անիկա քեզի Ոչ չըսեր ,) որ Սոււնամացի Աբիսակը ինծի կին տայ : 18 - Ու Բերասբէ ըսաւ , Սղէկ , ես քեզի համար թագաւորին կը խօսիմ :

19 - Եւ Բերասբէ Սողոմոն թագաւորին գնաց , որպէս զի Ադոնիայի համար անոր հետ խօսի . ու թագաւորը զանիկա դիմաւորելու համար սաք ելաւ ու անոր խոնարհութիւն ըրաւ . ու երբ իր աթոռը նստաւ , թագաւորին մօրը համար ալ աթոռ դնել տուաւ , և անիկա անոր աջ կողմը նստաւ . 20 - Ու ըսաւ , Ես քեզմէ պզտիկ խընդիրք մը կը խնդրեմ , ինծի Ոչ չըսես : Եւ թագաւորը անոր ըսաւ , Խնդրէ , մայր իմ , քանզի քեզի Ոչ պիտի չըսեմ : 21 - Ու անիկա ըսաւ , Սոււնամացի Աբիսակը եղբօրդ Ադոնիայի կին տրուի : 22 - Եւ Սողոմոն թագաւորը պատասխան տուաւ ու իր մօրը ըսաւ , Իսկ ինչո՞ւ Ադոնիայի համար Սոււնամացի Աբիսակը կը խնդրես . անոր համար թագաւորութիւնն ալ խնդրէ , (քանզի անիկա իմ մեծ եղբայրս է ,) անոր ու Աբիսակը քահանային և Շարուհեան Յովաբի համար : 23 - Ու Սողոմոն թագաւորը Տէրոջմով երգում ըրաւ , ու ըսաւ , Աստուած ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ , որ Ադոնիա այդ խօսքը իր կեանքին դէմ խօսեր է : 24 - Եւ Հիմա զիս հաստատողը , ու զիս իմ հօրս Իսակիթի աթոռը նստեցնողը , և իր ըսածին պէս ինծի տուն շինող Տէրը կենդանի է որ Ադոնիա այսօր պիտի մեռցուի : 25 - Ու Սողոմոն թագաւորը Յովիադայի որդին Բանեան զրկեց . ու զարկաւ զանիկա , որ մեռաւ :

26 - Եւ թագաւորը Աբիսակը քահանային ըսաւ , Անաթովթ , քու ազարակդ , գնա , քանզի դուն մեռնելու արժանի ես , բայց այսօր քեզ չեմ

մեռցնէր . որովհետեւ իմ հօրս Իսակիթի առջև Տէր Եհովայի տապանակը վերցուցիր . ու իմ հօրս ամէն քաջած նեղութիւններուն մասնակից եղար : 27 - Ու Սողոմոն Աբիսակը Տէրոջը քահանայութենէն հանեց , որպէս զի Աեւրովի մէջ Հեզիի տանը համար Տէրոջը ըսած խօսքը կատարէ :

28 - Եւ այս լուրը մինչև Յովաբի հասաւ . (քանզի Յովաբ թէպէտև Աբիսակի հետեւող չէր , բայց Ադոնիայի հետեւող եղաւ .) ու այն ատեն Յովաբ Տէրոջը խորանը փախաւ , ու սեղանին եղջիւրները բռնեց : 29 - Եւ Սողոմոն թագաւորին իմացուցին թէ Յովաբ Տէրոջը խորանը փախաւ , և ահա անիկա սեղանին քով է . ու Սողոմոն Յովիադայի որդին Բանեան զրկեց ու ըսաւ , Գնա զանիկա զարկ : 30 - Եւ Բանեա Տէրոջը խորանը Յովաբի գնաց , ու անոր ըսաւ , Թագաւորը այսպէս կ'ըսէ , Իսկու ելիր . ու անիկա ըսաւ , Ոչ , ես հոս պիտի մեռնիմ . ու Բանեա թագաւորին պատմեց ու ըսաւ , Յովաբ այսպէս ըսաւ , ու ինծի այսպէս պատասխան տուաւ : 31 - Եւ թագաւորը անոր ըսաւ , Անոր ըսածին պէս ըրէ , ու զանիկա մեռցուր և զանիկա թաղէ , որպէս զի իմ վրայէս ու իմ հօրս տանը վրայէն Յովաբի թափած անմեղ արիւնը վերցնես : 32 - Եւ Տէրը անոր Բեբեք արիւնը անոր գլուխը գործընէ . որովհետև անիկա տուանց իմ հօրս Իսակիթի գիտութեանը երկու իրմէ արդար ու աղէկ մարդոց , Իսրայէլի սպարապետին Ներեան Աբենների , ու Յուզայի սպարապետին , Յեթերեան Ամեայիի , վրայ յարձակեցաւ , ու զանոնք որով մեռցուց : 33 - Ու ատի անոնց արիւնը Յովաբի գլուխը ու անոր սերունդին գլուխը դառնայ յաւիտեան . բայց Իսակիթի ու անոր սերունդին և անոր տանը ու անոր աթոռին՝ Տէրոջը կողմանէ յաւիտեան խաղաղութիւն ըլլայ : 34 - Եւ Յովիադայի որդին Բանեա ելաւ ու անոր վրայ յարձակեցաւ , ու զանիկա մեռցուց . և անիկա անապատին մէջ իր տունը թաղուեցաւ : 35 - Ու թագաւորը անոր տեղ զօրքերուն վրայ Յովիադայի որդին Բանեան դրաւ . ու թագաւորը Սադովկ քահանան Աբիսակի տեղ դրաւ :

36 - Եւ թագաւորը Դաբ գրկեց , Աեմէին կանչեց ու անոր ըսաւ , Քեզի

* Եբե . իմ երես մի դարձներ . Սաղ . ճլբ . 10 :

Երուսաղէմի մէջ տուն մը շինէ ու հոն նստէ, ու անկէ առդին կամ անդին չելլես . 37 - Քանզի աղէկ գիտնաս որ էթէ ելլես ու կեդրոն հեղեղաար անցնիս, նոյն օրը անպատճառ պիտի մեռնիս . * - քու արիւնդ քու գլուխդ պիտի ըլլայ : 38 - Եւ Սեմէի թագաւորին ըսաւ , Այս խօսքդ բարի է . իմ թագաւոր տէրս ինչպէս ըսաւ՝ քու ծառագ այնպէս պիտի ընէ : Ուստի Սեմէի շատ օրեր Երուսաղէմի մէջ նստաւ :

39 - Ու երեք տարիէն ետքը Սեմէիի երկու ծառաները Գէթի թագաւորին Մաաբայի որդւոյն Անքուսի քով փախան . ու Սեմէիի իմացուցին՝ ըսելով , Ահա քու ծառաներդ Գէթի մէջ են : 40 - Եւ Սեմէի ելաւ ու իր իշուն համեար դրաւ , ու իր ծառաները փնտռելու համար Գէթ գնաց Անքուսի քով . և Սեմէի գնաց ու իր ծառաները Գէթէ բերաւ : 41 - Ու երբ Սեմէիի Երուսաղէմէ Գէթ երթալը ու դառնալը Սողոմոնի պատմեցին , 42 - Այն ատեն թագաւորը Բարդ զրկեց , ու Սեմէին կանչեց ու անոր ըսաւ , Զէ՞ որ քեզի Տէրոջմով երդում՝ ընել տուի , և քեզի վկայութիւն ըրի ու ըսի թէ Աղէկ գիտնաս որ Երուսաղէմ ելած ու առդին կամ անդին գացած օրդ անպատճառ պիտի մեռնիս . ու դուն ինծի՝ Լսած խօսքս բարի է , ըսիր . 43 - Ուրեմն ինչո՞ւ համար Տէրոջը երդումին ու քեզի տուած պատուէրիս հնազանդութիւն չըրիր : 44 - Եւ թագաւորը Սեմէիի ըսաւ , Գուն իմ հօրս Գաւթի դէմ՝ քու ըրած բոլոր չարութիւնդ գիտես , * որու քու սիրտդ ալ կը վկայէ . ուստի Տէրը քու չարութիւնդ քու գլուխդ պիտի դարձնէ . 45 - Բայց Սողոմոն թագաւորը օրհնեալ , ու Գաւթի աթուր Տէրոջը առջև յաւիտեան հաստատա պիտի ըլլայ : 46 - Եւ թագաւորը Յովիադայի որդւոյն Բանեայի հրաման տուաւ , ու անիկա ելաւ ու զարկաւ զանիկա , որ մեռաւ : Եւ թագաւորութիւնը Սողոմոնի ձեռքին մէջ հաստատուեցաւ :

ԳԼ. Գ

Եւ Սողոմոն կգիպտոսի Փարաւոն թագաւորին հետ խնամութիւն ըրաւ ,

*ԵՔԵ. զոր քու սիրտդ գիտէ

ու Փարաւոնի աղջիկը առաւ , ու զանիկա Գաւթի քաղաքը բերաւ , մինչև որ իր տունը ու Տէրոջը տունը ու Երուսաղէմի շրջակայ պարիսպը շինեց լմնցուց : 2-Սակայն ժողովուրդը բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէր , քանզի մինչև այն օրերը Տէրոջը անուանը տուն շինուած չէր :

3 - Եւ Սողոմոն Տէրը կը սիրէր , ու իր հօրը Գաւթի կանոններովը կը քալէր . միայն թէ բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր :

4 - Եւ թագաւորը Գաբաւոն գնաց , որպէս զի հոն զոհ մատուցանէ , քանզի մեծ բարձր տեղը անիկա էր . Սողոմոն այն սեղանին վրայ հազար սղջակէզ զոհեց : 5 - Ու Գաբաւոնի մէջ Տէրը Սողոմոնի երեւցաւ գիշերուան երազով .

և Աստուած ըսաւ , Բան մը խնդրէ որ քեզի տամ : 6 - Ու Սողոմոն ըսաւ , Գուն քու ծառայիդ , իմ հօրս Գաւթի , մեծ ողորմութիւն ըրիր , ինչպէս անիկա քու առջևդ ճշմարտութեամբ ,

արդարութեամբ , և ուղիղ սրտով քեզի հետ քալեց , ու անոր՝ այս մեծ ողորմութիւնը պահեցիր , ու իր աթուր նստող սրդի մը տուիր անոր , ինչպէս այսօր կ'երէնայ : 7 - Եւ հիմա , ով Տէր Աստուած իմ , դուն քու ծառագ իմ հօրս Գաւթի տեղ թագաւոր ըրիր .

բայց ես պզտիկ աղայ մըն եմ , ելլել ու մտնել չեմ գիտեր . 8 - Ու քու ծառագ քու ընտրած ժողովուրդիդ մէջ է , որ շատուոր , անթիւ ու անհամար ժողովուրդ մըն է : 9 - Ուստի քու ծառայիդ * իմաստուն սիրտ տուր , որպէս զի քու ժողովուրդդ դատէ , ու բարին ու չարը որոշէ . քանզի այս քու մեծ ժողովուրդդ ո՞վ կրնայ դատել :

10 - Եւ այս խօսքը , այսինքն Սողոմոնի այս բանը խնդրելը , Տէրոջը աչքերուն հաճոյ երեւցաւ : 11 - Ու Աստուած անոր ըսաւ , Որովհետև այս բանը խնդրեցիր , ու քեզի շատ օրեր չխնդրեցիր , ու քեզի հարստութիւն չխնդրեցիր , ու քու թշնամիներուդ հոգին չխնդրեցիր , հապա իրաւունքը † իմանալու իմաստութիւն խնդրեցիր . 12 - Ահա քու խօսքիդ պէս ըրի . ահա քեզի իմաստուն ու հանճարեղ սիրտ տուի , այնպէս որ քեզմէ առաջ քեզի պէս մէկը եղած չէ , ու քեզմէ ետքն ալ քու նմանդ

*ԵՔԵ. լսող

†ԵՔԵ. լսելու

պիտի չէլլէ: 13 - Նաև քու չինդրած դալ քեզի տուի, թէ՛ հարստութիւն և թէ՛ փառք, այնպէս որ քու կեանքի քոյոր օրերուն մէջ թագաւորներուն մէջ քեզի պէս մէկը չգտնուի: 14 - Եւ եթէ իմ ճամբաներուս մէջ քալես՝ իմ հրամաններս ու պատուիրանքներս պահելով, ինչպէս քու հայրդ Իսաիթ քալեց, այն ատեն քու օրերդ պիտի շատցնեմ: 15 - Ու Սողոմոն արթնացաւ և ահա երազ էր. ու երուսողէմ գնաց, ու Տերոջը ուխտին տապանակին առջև կայնեցաւ, և ողջակէզներ մատուց ու խաղաղութեան զրհեր ըրաւ, ու իր բոլոր ծառաներուն կոչուեց ըրաւ:

16 - Այն ատեն երկու պունիկ կիներ թագաւորին եկան, ու անոր առջև կայնեցան: 17 - Եւ կիներէն մէկը ըսաւ, Ով աէր իմ, ոչ ոք ինձի. ես ու այս կինը մէկ տան մէջ կը բնակինք, ու նայ տանը մէջ ասոր քով ոչ ոք չէ ծնայ: 18 - Եւ իմ ծնանելուս երրորդ օրը այս կինն ալ ոչ ոք չէ ծնաւ. ու մենք մէկտեղ էինք. տանը մէջ մեզի հետ օտար մարդ չկար, հապա տանը մէջ մենք երկուքս միմեկինք: 19 - Եւ այս կնոջ տղան գիշերով մեռաւ, քանզի ասիկա անոր վրայ պառկեցաւ: 20 - Ու կէսգիշերուն ելաւ, և քու աղախինիդ քնացած ատենը՝ իմ տղաս քովէս առաւ ու զանիկա իր ծոցը պառկեցուց, ու իր մեռած տղան իմ ծոցս պառկեցուց: 21 - Ու երբ առաւօտուն ելայ որպէս զի տղուս ծիծ տամ, ահա անիկա մեռած էր. ու առաւօտուն մտադրութեամբ անոր նայեցայ, և ահա անիկա իմ ծնած տղաս չէր: 22 - Իսկ միւս կինը ըսաւ, Ոչ, հապա ողջ եղողը իմ տղաս է, ու մեռածը քու տղադ է: Եւ ասիկա ըսաւ, Ոչ, հապա մեռածը քու տղադ է, ու ողջ եղողը իմ տղաս է. ու թագաւորին առջև ոչ ոք կը խօսէին: 23 - Այն ատեն թագաւորը ըսաւ, Ասիկա կ'ըսէ, իմ տղաս այս ողջ եղողն է, ու մեռածը քու տղադ է. ու անիկա կ'ըսէ, Ոչ, հապա մեռածը քու տղադ է, ու ողջ եղողը իմ տղաս է: 24 - Եւ թագաւորը ըսաւ, Ինձի սուր մը բերէք. ու թագաւորին առջև սուր մը բերին: 25 - Եւ թագաւորը ըսաւ, Ողջ եղող տղան կարեցէք, երկու կտոր շէտ, ու հէտը մէկուն ու կէսն ալ միւսին տուէք:

26 - Այն ատեն ողջ տղուն մայրը եղող կինը թագաւորին պատասխան տուաւ, ու իր տղուն վրայ աղիքը գալարելուն համար՝ այսպէս ըսաւ, Ով աէր իմ, ոչ ոք ինձի. ողջ տղան անոր տուէք, ու զանիկա մի մեռցնէք: Բայց միւսը ըսաւ, Ոչ ինձի ըլլայ, ոչ քեզի. զանիկա՝ ճեղքեցէք: 27 - Եւ թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Ողջ տղան այս կնոջ տուէք, ու չըլլայ որ զանիկա մեռցնէք, ոչ ոք անոր մայրը ասիկա է: 28 - Եւ բոլոր Իսրայէլ թագաւորին կտրած դատաստանը լսելով՝ թագաւորէն վախցան. քանզի տեսան որ անոր վրայ Աստուծոյ իմաստութիւնը կայ դատաստան ընելու համար:

ԳԼ. Դ

Եւ Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր էր: 2 - Ու անոր իշխանները ասոնք էին. Սաղովկի որդին Ազարիա քահանայ էր. 3 - *Սիսայի որդիները Ելիքորէփ ու Աքիա ատենագպիրներ էին. և Աքիզուդի որդին Յովսափատ յիշատակաց դպիր էր. 4 - Ու Յովիադայի որդին Բանեա զօրքերուն վրայ էր. և Սաղովկ ու Աքիաթար քահանաներ էին. 5 - Ու Նաթանի որդին Ազարիա ու շաբաթ գործակալներուն վրայ էր. ու Նաթանի որդին Չաբուդ նախարար ու թագաւորին բարեկամն էր. 6 - Ու Աքիսար ասոնք հրամանատարն էր. ու Աբդայի որդին Ագոնիրամ հարկերուն վրայ էր: 7 - Եւ Սողոմոն բոլոր Իսրայէլի վրայ տասուերկու գործակալներ ունէր, ու անոնք թագաւորը ու անոր տունը կը կերակրէին. ու կերակրելը ամէն մէկուն տարին մէկ ամիս կ'իյնար: 8 - Եւ անոնց անունները ասոնք են. Եփրեմի լեւան մէջ՝ Բեկեմովր. 9 - Մաքասի, Սաղաբինի, Բեթամմիւսի ու Ելոն-բեթանանի մէջ՝ Բեկեմովր. 10 - Արաբովթի մէջ՝ Բեկեմովր, որու իւր Էբեթեթե Սոքով ու բոլոր Ոփերի երկիրը. 11 - Բոլոր Դովրի գաւառին մէջ՝ Տեկնաբինադար. Սողո-

*Կա՛մ, Սուսայի. տես ա Մն. Ժը. 16 :
 †Ա.յ.Ին.Ին, Ովրի որդին
 ‡Ա.յ.Ին.Ին, Դակարի որդին
 §Ա.յ.Ին.Ին, Հեսեգի որդին
 §Ա.յ.Ին.Ին, Արինադարի որդին

մոնի աղջիկը Տափաթ ասոր կինն էր .
 12 - Թանաքի ու Մակեդոնի մէջ , ու
 Յեզրայէլի տակ՝ Սարթանի քով եղող
 բոլոր Բեթթանի մէջ , -- Բեթթանէ
 մինչև Աբէլմուլա , -- մինչև Յեկ-
 մամի անդի կողմը՝ Աքիլուդի որդին
 Բասնա . 13 - Ռամովթ-գաղապի մէջ՝
 *Բենգաբեր . Գաղապի մէջ եղող
 Մանասեան Յայիրի գիւղաքաղաքները ,
 ու Բասանի մէջ եղող Արգովբի նա-
 չանգը՝ վաթսուն մեծ պարսպաւոր ու
 պղնձանիգ քաղաքներ անոր ին վեր-
 բերէին : 14 - Մանայիմի մէջ՝ Ադգովի
 որդին Աքինագար . 15 - Նեփթաղիմի
 մէջ՝ Աքիմաս . տակաւ ալ Սողոմոնի
 աղջիկը Բասեմաթը կին առաւ . 16 -
 Ասերի ու Բաալօթի մէջ՝ Քուսիի որ-
 դին Բասնա . 17 - Իսաբարի մէջ՝ Փա-
 րուայի որդին Յովսափատ . 18 - Բենիա-
 մինի մէջ՝ Էլայի որդին Սեմէի . 19 -
 Գաղապի երկիրը ու Ամօրչացոց Սե-
 չոն թագաւորին ու Բասանի Ովգ թա-
 գաւորին երկիրը՝ Ուրբի որդին Գաբեր .
 ու այն երկրին մէջ Գոյն մէկ գործա-
 կալ կար :

20 - Յուգա ու Իսրայէլ շատուորու-
 թեան կողմանէ ծովուն եզերքը եղող
 աւազին չափ շատ էին . կ'ուտէին , կը
 խմէին և ուրախութիւն կ'ընէին : 21 -
 Եւ Սողոմոն Եփրատ գետէն մինչև Փղըշ-
 տացոց երկիրը ու մինչև Եգիպտոսի
 սահմանը՝ բոլոր թագաւորութիւննե-
 րուն վրայ կ'իշխէր . և անոր ընծա-
 ներ կը բերէին , ու Սողոմոնի ծառա-
 յութիւն կ'ընէին՝ անոր կեանքին բո-
 լոր օրերուն մէջ :

22 - Եւ Սողոմոնի մէկ օրուան ու-
 ճիկը այս էր . երեսուն քոս նաշիչ ու
 վաթսուն քոս ալիւր , 23 - Տասը գէր
 արջառ ու քսան արօտական արջառ
 ու չարիւր ոչխար , բաց ի եղջերունե-
 րէն , այծեամներէն , Վիթերէն ու գիր-
 ցուած թռչուններէն : 24 - Քանզի ա-
 նիկա Գեաին բոլոր ասղի կողմի՝ Թափ-
 սայէ մինչև Գազա՝ Գեաին ասղի
 կողմը եղող բոլոր թագաւորներուն
 վրայ կ'իշխէր . ու իր բոլորափքը եղող-
 ներուն չեա խաղաղութիւն ունէր :
 25 - Եւ Սողոմոնի բոլոր օրերուն մէջ՝
 Յուգա ու Իսրայէլ , Դանէ մինչև Բեր-
 սարէէ , իւրաքանչիւր մարդ իր որթին

տակ ու իր թղենիին տակ ապահովու-
 թեամբ կը նստէր :

26 - Եւ Սողոմոն իր կառքի ձիերուն
 համար քառասուն հազար ախոռ ու-
 նէր , ու տասուերկու հազար ձիաւոր :

27 - Եւ այն գործակալները , ամէն
 մէկը իր ամուն մէջ , Սողոմոն թագա-
 ւորը ու Սողոմոն թագաւորին սեղանը
 բոլոր մօտեցողները կը կերակրէին՝ բան
 մը պակաս չընելով . 28 - Նաև ձիե-
 րուն ու երկվարներուն համար , անոնց
 եղած տեղը , ամէն մէկը իր վրայ
 դրուած հարկին չափովը գարի ու յարդ
 կը բերէին :

29 - Եւ Աստուած Սողոմոնի իմաս-
 տութիւն ու խիստ շատ հանճար և
 սրտի լայնութիւն տուաւ ծովուն ե-
 ղերքը եղող աւազին չափ : 30 - Ու Սո-
 ղոմոնի իմաստութիւնը բոլոր արեւել-
 ցիներուն իմաստութենէն ու Եգիպ-
 տացոց բոլոր իմաստութենէն աւելի
 էր : 31 - Եւ անիկա ամէն մարդոցմէ
 իմաստուն էր . Եզրահացի Եթանէ , ու
 Մաւուլի որդւոցմէն , Եմանէ , Քալ-
 քօլէ ու Իսրապայէ , Իմաստուն էր . ու
 բոլոր շրջակայ ազգերուն մէջ անուանի
 եղաւ :

32 - Եւ անիկա երեք հազար
 առակ խօսեցաւ , ու անոր շարքեր
 երգերը հազար ու հինգ էին : 33 - Եւ
 անիկա ծառերուն վրայ խօսեցաւ , Լի-
 բանանի եղեւինէն մինչև պատի վրայ
 բունանդ զոպան . ու նաև անասուննե-
 րու վրայ , թռչուններու վրայ , սողուն-
 ներու վրայ ու ձուկերու վրայ խօսե-
 ցաւ : 34 - Եւ ամէն ժողովուրդներէն ,
 -- անոր իմաստութեան համբաւը լսող
 երկրի բոլոր թագաւորներէն՝ Սողո-
 մոնի իմաստութիւնը մտիկ ընելու կու
 գային :

ԳԼ. Ե

Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը իր
 ծառաները Սողոմոնի զրկեց , քանզի
 լսեց էր որ անոր հօրը տեղ զանիկա
 թագաւոր օժէր են . վասն զի Քիրամ
 միշտ Դաւիթը կը սիրէր : 2 - Սողոմոն
 ալ Քիրամի հօրը զրկեց ու ըսաւ , 3 -
 Դուն զիտես որ իմ հայրս Դաւիթ
 չկրցաւ իր Տէր Աստուծոյն անուանը
 տուն շինել , այն պատերազմներուն
 պատճառաւ՝ որոնք անոր բոլորափքը
 պատեր էին , մինչև որ Տէրը զանոնք
 անոր ոտքերուն թափէրուն տակ դրաւ :

*Այսինքն , Գաբերի որդին
 Կաթ , գոմէ շներէն

4 - Բայց հիմա իմ Տէր Աստուածս ամէն կողմանէ ինծի հանգստութիւն տուաւ . թշնամի չկայ , ու ձախարդ պատահար մը չկայ : 5 - Եւ ահա ես կ'ըսեմ որ իմ Տէր Աստուծոյս անուանը տուն մը շինեմ , ինչպէս Տէրը իմ հօրս 'Իաւիթի հետ խօսեցաւ' ըսելով , Քու որդիդ զոր քու տեղդ քու ամթաւիդ վրայ պիտի նստեցնեմ , անիկա իմ անուանս տուն պիտի շինէ : 6 - Ու հիմա հրաման ըրէ որ ինծի համար Լիբանանէ եղեւիններ կտրեն . ու իմ ծառաներս քու ծառաներուդ հետ ըլլան . և քու ծառաներուդ վարձքը քու ամէն ըսածիդ պէս քեզի կու տամ : քանզի դուն գիտես որ մեր մէջ Սիդոնացւոց պէս փայտ կտրող վարպետ մարդ չկայ :

7 - Ու երբ Քիրամ Սողոմոնի խօսքերը լսեց՝ շատ ուրախացաւ , ու ըսաւ , Այս մեծ ժողովուրդին վրայ Իաւիթի իմաստուն որդի տուող Տէրը այսօր օրհնեալ ըլլայ : 8 - Եւ Քիրամ Սողոմոնի հարգ զրկեց՝ ըսելով , Ինծի զրկած իօ֊֊ք լսեցի . ես եղեւնափայտի ու մայր փայտի համար քու ամէն կամքդ պիտի կատարեմ : 9 - Իմ ծառաներս Լիբանանէ ծովը իջեցնեն . ու ես զանոնք լաստեր շինելու մինչև ինծի ցուցուցած տեղդ ծովէն տանիմ , և հոն զանոնք քակեմ , ու դուն վերցնես . դուն ալ իմ տանս պաշար տալով՝ իմ կամքս կատարես : 10 - Եւ Քիրամ Սողոմոնի ուզածին չափ եղեւնափայտ ու մայր փայտ կու տար : 11 - Ու Սողոմոն Քիրամի տանը համար քսան հազար քու ցորեն , ու *երկու հարիւր մար մաքուր իւղ՝ պաշար կու տար : Սողոմոն Քիրամի տարուէ տարի այսպէս կու տար : 12 - Եւ Տէրը Սողոմոնի իմաստութիւն տուաւ , ինչպէս անոր խոստացեր էր . ու Քիրամի ու Սողոմոնի մէջտեղ խաղաղութիւն կար , ու երկուքը դաշնակցութիւն ըրին :

13 - Եւ Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլէ շմարդ ժողովեց , ու ժողովածը երեսուն հազար մարդ եղաւ : 14 - Եւ զանոնք յաջորդաբար՝ ամիսը տասնական հազար հոգի Լիբանան կը զրկէր , որոնք մէկ ամիս Լիբանան կը կենային , ու երկու ամիս իրենց տունը . ու Ադոն

նիրամ այս մարդահարկին վրայ էր : 15 - Եւ Սողոմոն եօթանասուն հազար բեռնակիր , ու լեռը ութսուն հազար փայտ կտրող ունէր , 16 - Բայ ի Սողոմոնի երեք հազար երեք հարիւր գլխաւոր գործակալներէն՝ որոնք գործը բանող ժողովուրդին վրայ կ'իշխէին : 17 - Եւ թագաւորը հրամայեց որ մեծ ու պատուական քարեր կտրեն , որպէս զի տանը հիմը տաշուած քարերով դնեն : 18 - Ու Սողոմոնի վարպետները ու Քիրամի վարպետները և Գերազացիք փայտերը ու քարերը տաշեցին ու պատրաստեցին՝ տանը շինութեանը համար :

ԳԼ . 2

Եւ Իսրայէլի որդիներուն Եզրպատտի երկրէն ելլելուն չորս հարիւր ութսուններորդ տարին , Սողոմոնի Իսրայէլի վրայ թագաւորելուն չորրորդ տարին , Զիւս ամսուն , այսինքն երկրորդ ամսուն , մէջ Տէրօջը տունը *շինել սկսաւ :

2 - Եւ Սողոմոն թագաւորին՝ Տէրօջը համար շինած տանը երկայնութիւնը վաթսուն կանգուն , լայնութիւնը քսան ու բարձրութիւնը երեսուն կանգուն էր : 3 - Եւ տանը տաճարին առջեւի սրահը քսան կանգուն երկայնութիւն ունէր , որ տանը լայնութեանը չափ էր , ու անոր լայնութիւնը տանը առջեւէն տասը կանգուն էր : 4 - Եւ տանը փլանդակապատ պատուհաններ շինեց : 5 - Ու տանը պատին բոլորափքը տանը պատին կցուած դատիկոններ շինեց , թէ՛ տաճարին և թէ՛ դարբերին բոլորափքը , և այդ * շուրջանակի սենեակներ շինեց : 6 - Վարի կարգին լայնութիւնը հինգ կանգուն , ու միջին խորի լայնութիւնը վեց կանգուն , ու երրորդին լայնութիւնը եօթը կանգուն էր . քանզի դուրսէն տանը բոլորափքը միջոցներ ձգեց քերանները հեծցելահամբ , որպէս զի տանը պատին մէջ շմանէն : 7 - Ու երբ տունը կը շինուէր , քարահանքին մէջ պատրաստուած քարերով կը շինուէր , այնպէս որ անոր շինուած տանը մուրճի կամ տապարի

*Եբբ . քսան քու ծեծուած իւղ + կամ , մարդահարկ

*Եբբ . կը շինէր + կամ , ներսէն լայն դուրսէն նեղ . տես Եզեկ . իս . 16 : իսա . 16 :

և իմ ուրիշ երկաթէ գործիքի մը չափ չլսուեցաւ տանը մէջ: 8-Միջին կարգին դուռը տանը *աջ կողմն էր, ու շրջանակաւոր սանդուղներով միջին կարգը, ու միջին կարգէն երրորդ կարգը կ'երկէին: 9 - Եւ տունը շինեց ու զանիկա լմնցուց, ու տանը ձեղունը եղեւնափայտի տախտակներով դուռագազարդ շինեց: 10 - Եւ բոլոր տանը վրայ †«Ենե-ն»-երան կարգը՝ ճինգ կանգուն բարձրութեամբ շինեց, ու եղեւնափայտերով տանը կցուած էր:

11 - Եւ Տէրոջը խօսքը Սողոմոնի եղաւ՝ ըսելով, 12 - Հիմա որ դուն այս տունը կը շինես, եթէ իմ՝ կանոններովս քալես, ու իմ՝ դատաստաններս ի գործ դնես, ու իմ՝ բոլոր պատուիրանքներս պահես՝ անոնց մէջ քալելով, այն ատեն քու վրագ պիտի հաստատեմ՝ այն խօսքը զոր քու հօրդ Դաւիթի խօսեր եմ: 13 - Ու Իսրայէլի որդիներուն մէջ պիտի բնակիմ, ու իմ ժողովուրդս Իսրայէլը պիտի շթողում:

14 - Եւ Սողոմոն տունը շինեց ու զանիկա լմնցուց: 15 - Ու տանը պատերը անոր ներսիցիէն, յատակէն մինչև պատերուն վերի ծայրը, եղեւնափայտի տախտակներով շինեց. «յապէ» ներսիցին փայտով ծածկեց. ու տանը յատակը մայր փայտի տախտակներով պատեց: 16 - Եւ տանը ետեւի կողմին քսան կանգունը, յատակէն մինչև պատին շաքը, եղեւնափայտի տախտակներով շինեց. ու այն ներսի միջոցը դարբիրին, այսինքն սրբութեանց սրբութիւնին, համար շինեց: 17 - Բայց տունը, այսինքն առջեւի տաճարը, քառասուն կանգուն էր: 18 - Եւ տանը մէջ եղող եղեւնափայտերուն վրայ գնդակներ ու բացուած ծաղիկներ փորագրուած էին. ու ամէնը եղեւնափայտէ ըլլալով՝ ամենեւին քար մը չէր երեւնար: 19 - Եւ դարբիրը ներքին տանը մէջ պատրաստեց, որպէս զի հոն Տէրոջը ուխտին տապանակը դնէ: 20 - Ու Դարբիրին երեսը քսան կանգուն երկայն էր, և անոր լայնութիւնը քսան կանգուն՝ ու բարձրութիւնը քսան կանգուն էր. և զանիկա մաքուր սակիով պատեց. եղեւնափայտէ սեղանն ալ պատեց: 21 - Ուստի Սողո-

մոն տանը ներսի կողմը մաքուր սակիով պատեց. ու դարբիրին առջև սակի շղթատներով Վաբաբայը իջ անցուց, և զանիկա սակիով պատեց: 22 - Ու բոլոր տունը սակիով պատեց առանց ատեղ մը ձգելու, և դարբիրին քովի բոլոր սեղանն ալ սակիով պատեց:

23 - Եւ դարբիրին մէջ *Իւղայի փայտէ՝ երկու քերովբէներ շինեց, «- անոնց երկայնութիւնը տասը կանգուն էր:

24 - Եւ քերովբէին մէկ թեւը ճինգ կանգուն, ու քերովբէին միւս թեւը ճինգ կանգուն էր. մէկ թեւին ծայրէն մինչև միւս թեւին ծայրը տասը կանգուն էր: 25 - Ու միւս քերովբէինն ալ տասը կանգուն էր, երկու քերովբէներուն չափը ու ձեւը մէկ էր: 26 - Մէկ քերովբէին բարձրութիւնը տասը կանգուն էր, ու միւս քերովբէինն ալ նոյնչափ էր: 27 - Ու քերովբէները ներքին տանը մէջ դրաւ. ու քերովբէները իրենց թեւերը կ'երկնցնէին. մէկուն թեւը մէկ պատին կը դպչէր, ու միւս քերովբէին թեւը միւս պատին կը դպչէր. և անոնց Բ- թեւերը տանը մէջտեղը թեւ թեւի կը դպչէին: 28 - Ու քերովբէները սակիով պատեց:

29 - Եւ տանը բոլոր պատերուն վրայ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած ծաղիկներ քանդակաձև փորագրեց, թէ՛ ներսի կողմը և թէ՛ դուրսի կողմը: 30 - Ու տանը ներսի ու դուրսի յատակը սակիով պատեց:

31 - Եւ դարբիրին դրանը իւղայի փայտէ փեղկեր շինեց, որոնք դրանդիքներով մէկտեղ պարէն ճինգերորդ մասն էին: 32 - Եւ իւղայի փայտէ շինուած երկու փեղկերուն վրայ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած ծաղիկներ փորագրեց, և Վաբաբայ սակիով պատեց, քերովբէներուն ու արմաւենիներուն վրայ ալ սակին տաքածելով:

33 - Նոյնպէս ալ տաճարին դրանը ըրաւ, իւղայի փայտէ դրանդիքներ շինեց, որոնք պարէն չորրորդ մասն էին: 34 - Ու դրանը երկու փեղկերը մայր փայտէ էին. մէկ փեղկը երկու կտորէ ըլլալով կը ծալուէր, ու միւս փեղկը երկու կտորէ ըլլալով կը ծալուէր: 35 - Եւ անոնց վրայ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած ծաղիկներ

*Սյափնան, հարաւային
†Կամ, շրջանակը

*Կամ, փայրենի ձիթ ենիէ, և իմ, նոճիէ

փորագրեց, և դրուագներուն վրայ յարմարցուած սովորով պատեց :

36 - Առ ներքին գաւիթը երեք կարգ տաշուած քարերով ու մէկ կարգ եղեւնափայտի *Տեծաններով շինեց :

37 - Տերոջը տանը հիմը չորրորդ տարին Ջիւս ամառն մէջ դրուեցաւ . 38 -

Առ մետասաներորդ տարին Բուլ ամառն, այսինքն ութերորդ ամառն, մէջ տունը իրեն վերաբերեալ ամէն բաներովը լմնցաւ : Այսպէս եօթը տարուան մէջ շինեց զանիկա :

ԳԼ Է

Եւ Սողոմոն իր տունը տասուերեք տարուան մէջ շինեց, ու այսպէս լմնցուց իր բոլոր տունը :

2 - Եւ Լիբանանի անտառին տունն ալ շինեց . երկայնութիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը յիսուն կանգուն, ու բարձրութիւնը երեսուն կանգուն . չորս կարգ եղեւնափայտ սիւներու վրայ շինեց, ու սիւներուն վրայ եղեւնափայտ Տեծաններ դրաւ .

3 - Առ նաև եղեւնափայտ յարկ մը շինեց այն գերաններուն վրայ, որոնք քառասունըհինգ սիւներու վրայ էին . ու անոնց կարգը տասներհինգ էր : 4 -

Եւ երեք կարգ իրարու դիմացէ դիմաց շարուած վանդակաւոր պատուհաններ կային : 5 - Առ բոլոր դռները ու դրանդիքները քառակուսի էին, և վանդակաւոր պատուհանները իրարու դիմացէ դիմաց երեք կարգ էին :

6 - Եւ սիւներուն սրահը շինեց, երկայնութիւնը յիսուն կանգուն ու լայնութիւնը երեսուն կանգուն . ու անոնց առջև սրահ մը, ու անոնց առջև սիւներ ու քանդուի մը կային : 7 - Նաև ամթուին սրահը շինեց, ուր դատատան կ'ընէր, ու անիկա աստանի սրահ էր, ու անիկա յատակէն մինչև ձեղունը եղեւնափայտով ծածկուած էր :

8 - Եւ իր նստած տանը առջև այս գործին պէս ուրիշ գաւիթ մը կար տանը ու սրահին մէջտեղը . ու Փարուսի աղջկան համար, զոր Սողոմոն իրեն կէս առեր էր, այս սրահին պէս

*Կա՛մ, տաշուած կոճղերով
+Կա՛մ, վայրագաւիթ
‡Եբբ. յատակը

տուն մը շինեց : 9 - Ասոնց ամէնը ներսէն ու դուրսէն, և հիմէն մինչև առաստաղը, ու դուրսի կողմէն մինչև մեծ գաւիթը տաշուած քարերու շափով սղոցած ալնիւ քարերով շինեց : 10 - Հիմն ալ թանկագին քարերէ էր, մեծ քարերէ, տասը կանգուն քարերէ և ութ կանգուն քարերէ էր : 11 - Առ վերը տաշուած քարերուն շափովը ալնիւ քար ու եղեւնափայտ էր : 12 - Եւ մեծ գաւիթին չորս կողմը ու Տերոջը տանը ներքին գաւիթը և տանը սրահը երեք կարգ տաշուած քարերով ու մէկ կարգ եղեւնափայտի Տեծաններով շինեց : 13 - Եւ Սողոմոն թագաւորը Բաբելոնը կռկեց, ու Տիւրսոէ Քիրամը բերել տուաւ : 14 - Անիկա Նեփթաղիմի ցեղէն որբեւարի կնոջ մը որդի էր, ու անոր հայրը Տիւրացի պղնձագործ մըն էր . և այս Բաբելոն պղնձէ ամէն տեսակ գործերը գործելու մեծ հմուտութիւն, իմաստութիւն ու գիտութիւն ունէր . և Սողոմոն թագաւորին եկաւ, ու անոր ամէն գործը կատարեց : 15 - Եւ ասիկա պղնձէ երկու սիւն ձուլեց . մէկ սիւնին երկայնութիւնը տասներութ կանգուն ու շրջապատը տասուերկու կանգուն էր . այսպէս էր երկրորդ սիւնինն ալ : 16 - Եւ սիւներուն գլուխը դնելու համար պղնձէ երկու խոյակ ձուլեց . մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն ու միւս խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր : 17 - Եւ սիւներուն գլուխը եղող խոյակներուն համար՝ մէկ խոյակին համար եօթը՝ ու միւս խոյակին համար եօթը ցանցակերպ « շղթայագործ հիւսուած զարդեր շինեց : 18 - Այսպէս սիւները շինեց, ու մէկ ցանցակերպ զարդին վրայ շուրջանակի երկու կարգ շաքերէ, որպէս զի « անին գլուխը եղած խոյակը նուսերով ծածկուի . միւս խոյակին ալ այնպէս բրաւ : 19 - Եւ սրահին մէջի սիւներուն գլուխը եղող խոյակները չորս կանգուն էին շուրջանաձև շինուածքով : 20 - Առ երկու սիւներուն վրայի խոյակներուն՝ ու ցանցակերպ զարդին մօտ եղող փորին վրայէն ալ շաքերէ կային . ու « երկու խոյակներուն՝ վրայ կարգով շարուած երկու հարիւր նուս կար : 21 - Եւ սիւները

*Կա՛մ, երկրորդ խոյակին

տաճարին սրահին մէջ կանգնեց . ու աջ կողմի սիւնը կանգնելով՝ անոր անունը *Յաքին կոչեց , ու ձախ կողմի սիւնը կանգնելով՝ անոր անունը †Բոող կոչեց : 22 - Եւ սիւներուն գլխուն վրայ շուշանաձև գործ կար . այսպէս սիւներուն գործը լմնցաւ :

23 - Եւ ծովը ձուլածոյ շինեց , ու մէկ շրթունքէն մինչև միւս շրթունքը տասը կանգուն էր , ու բոլորաձև էր . և անոր բարձրութիւնը հինգ կանգուն՝ ու անոր շրջապատը երեսուն կանգուն էր : 24 - Ու անոր շրթունքին տակ շուրջանակի ամէն կողմէն գնդակներ շարուած էին . ծովուն բոլորափքը մէկ կանգունի մէջ տասնական քնարներ կային , ու գնդակները երկու կարգ էին , որոնք քնարն ձուլուած ատենը ձուլուէր էին :

25 - Անիկա տասուերկու եզներու վրայ կը կենար , որոնք երեքը դէպ ի հիւսիս , երեքը դէպ ի արեւմուտք , երեքը դէպ ի հարաւ ու երեքը դէպ ի արեւելք կը նայէին , ու ծովը անոնց վրայ էր , և ամէնուն ետեւի կողմը դէպ ի ներս քարն էր :

26 - Ու անոր թանձրութիւնը չորս մասնաչափ էր , և շրթունքը գաւաթի շրթունքի պէս էր , ու վրան շուշանի ծաղիկներ շինուած էին . երկու հազար մար կ'առնէր :

27 - Եւ պղնձէ տասը մեքենովթ շինեց , ամէն մէկ մեքենովթին երկայնութիւնը չորս կանգուն , ու լայնութիւնը չորս կանգուն , և բարձրութիւնը երեք կանգուն էր : 28 - Ու մեքենովթները այսպէս շինուած էին . անոնք սպառուածներուն էին , և սպառուածները եզերքներուն մէջտեղն էին :

29 - Ու եզերքներուն մէջտեղը եղող սպառուածներուն վրայ առիւծներ , եզներ ու քերովբէներ կային . ու եզերքներուն վրայ վերի կողմը խարիսխն էր . ու առիւծներուն ու եզներուն տակ կախուած զարդեր կային :

30 - Եւ ամէն մէկ մեքենովթ պղնձէ չորս անիւ ու պղնձէ առանցքներ ունէր , ու չորս ոտքերը ուսեր էին անոնց . ու ամէն կախուած զարդին քով աւազանին տակ ձուլածոյ ուսեր կային :

*Այսինքն , պիտի հաստատէ
†Այսինքն , անոր մէջ գորութիւն
‡Այսինքն , խարիսխ , կամ , խարսխաձև պատուանդան
||Կամ , նոյնպէս

31 - Եւ անոր բերանը խոյակին մէջէն դէպ ի վեր մէկ կանգուն էր , ու անոր բերանը խարիսխի գործի պէս բոլորաձև էր , ու մէկուկէս կանգուն էր . և բերանին վրայ ալ քանդակներ ու սպառուածներ կային՝ քառակուսի և ոչ բոլորաձև :

32 - Ու սպառուածներուն տակ չորս անիւ կար , և անիւներուն առանցքները մեքենովթին վրայ հարսնէր , ու ամէն մէկ անիւին բարձրութիւնը մէկուկէս կանգուն էր :

33 - Եւ անիւներուն շինուածքը կառքի անիւներուն շինուածքին պէս էր , ու անոնց առանցքները , շրջանակները , շառուիղները ու գունատեր բոլորը ձուլածոյ էին :

34 - Եւ ամէն մէկ մեքենովթին չորս անիւներուն վրայ չորս ուս կար , և ուսերը նոյն ինչ մեքենովթէն էին :

35 - Ու մեքենովթին գլուխը կէս կանգուն բարձրութեամբ բոլորակ մը կար , ու մեքենովթին գլխուն վրայ եղող եզերքը ու սպառուածները իրմէ էին :

36 - Ու եզերքներուն տախտակներուն վրայ ու սպառուածներուն վրայ քերովբէներ , առիւծներ ու արմաւենիներ քանդակուած էին , ամէն մէկ տեղին յարմարութեամբ համեմատ , ու անոնք բոլորափքը կախուած զարդեր կային :

37 - Տասը մեքենովթներն ալ այսպէս ըրաւ . ամէնուն ձուլուածքը , չափը ու ձեւը մէկ էր :

38 - Եւ տասը հաս պղնձէ աւազան շինեց , ամէն մէկ աւազան քառասուն մարով կը լեցուէր , ու ամէն մէկ աւազան չորս կանգուն էր , ու տասը մեքենովթներուն վրայ մէյմէկ աւազան կար :

39 - Եւ հինգ մեքենովթը տանը աջ կողմը՝ ու հինգ մեքենովթը տանը ձախ կողմը դրաւ , ու ծովը տանը աջ կողմը հարաւի դէմ՝ դէպ ի արեւելք դրաւ :

40 - Եւ Քիրամ՝ աւազանները , թիակները ու կանքերը շինեց . ու Քիրամ կատարեց այն բոլոր գործերը՝ զորոնք Տէրոջը տանը համար Սաղմոնն թագաւորին կը շինէր .

41 - Այսինքն երկու սիւները , ու սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու գունատերը , և սիւններուն գլուխը եղող խոյակներուն երկու գունատերը ծածկելու համար երկու ցանցակերպ զարդերը , 42 - Ու երկու ցանցակերպ զարդերուն չորս հարիւր նուսերը , այսինքն սիւներուն վրայի

խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար՝ ամէն մէկ ցանցակերպ զարդին վրայ երկու կարգ նուռեր: 43 - Եւ տասը մեքենովթները ու մեքենովթներուն վրայի տասը աւազանները, 44 - Ու մէկ ծովը ու ծովին տակի տասուերկու եղները, 45 - Եւ կաթասները ու թիակները ու կոնքերը . և այս բոլոր կարասիները զորոնք Քիրամ՝ Սողոմոն թագաւորին շինեց Տէրոջը տանը համար, փայլուն պղնձէ էին: 46 - Թագաւորը զանոնք Յորդանանու դաշտին մէջ թանձր հողի մը վրայ ձուլել տուաւ Սոկքովթի ու Սարթանի մէջտեղ: 47 - Եւ Սողոմոն այս կարասիները «անց կէտէ» ձգեց, վասն զի խիստ շատ էին, «յնչէ» որ պղնձին կշիռքը համրանքի չէր գար:

48 - Եւ Սողոմոն Տէրոջը տանը բոլոր կարասիները շինեց . խառնակի սեղանը ու վրան առաջաւորութեան հաց քրտէլ սակի սեղանը, 49 - Եւ դաբիրին առջեւի զուտ սակիէ աշտանակները, որոնց հինգը աջ կողմն էին ու հինգը ձախ կողմը, և սակիէ ծաղիկները ու ճրագները և ունեյիները, 50 - Եւ զուտ սակիէ գաւաթները, բազմակալները, կոնքերը, խնկամանները և բուրվառները, ու ներքին տանը, այսինքն սրբութեանց սրբութիւնին, դռներուն «տանը, այսինքն տաճարին, դռներուն սակի ծղիխները:

51 - Այսպէս Տէրոջը տաճարին համար Սողոմոն թագաւորին բոլոր շինած գործերը լինցան . ու Սողոմոն իր հօրը Գաւթի Նուիրած բաները, արծաթը ու ոսկին ու անօթները, տարաւ, Տէրոջը տանը գանձերուն մէջ դրաւ:

ԳԼ Ը

Այն ատեն Սողոմոն Իսրայէլի ծերերը ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդիներուն նահապետները, Սողոմոն թագաւորին քով Երուսաղէմ ժողովեց, որպէս զի Տէրոջը ուխտին տապանակը Գաւթի քաղաքէն, այսինքն Սիօնէ, հանեն: 2 - Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը եօթներորդ ամսուն, Անթանի ամսուն մէջ, տօնին ատենը Սողոմոն թագաւորին քով ժողովուեցան: 3 - Ու Իսրայէլի բոլոր ծերերը եկան, ու քահանաները տապանակը վերցուցին: 4 - Եւ Տէրոջը տապանակը

ու ժողովքի խորանը և խորանին մէջ եղած բոլոր սուրբ անօթները հանեցին. ու զանոնք քահանաները ու Աւետացիները հանեցին: 5 - Եւ Սողոմոն թագաւորը ու անոր քով ժողովուած Իսրայէլի բոլոր ժողովքը անոր հետ տապանակին առջև ըլլալով՝ ոչխարներ ու արջառներ կը զոհէին, այնչափ շատ՝ որ անթիւ ու անհամար էին: 6 - Եւ քահանաները Տէրոջը ուխտին տապանակը ներս տարին իր տեղը տանը դաբիրը, սրբութիւն սրբութեանցը, «քերովբէներուն թեւերուն տակ քրտին»: 7 - Քանզի քերովբէները տապանակին տեղւոյն վրայ իբեշ թեւերը կը տարածէին, ու քերովբէները վերէն կը ծածկէին տապանակը ու անոր ձողերը: 8 - Եւ ձողերը երկնցուցին, այնպէս որ ձողերուն ծայրերը սրբութեանէն կ'երեւնային դաբիրին առջև, բայց դուրսէն չէին երեւնար. ու մինչև այսօր հոն են: 9 - Տապանակին մէջ ուրիշ բան չկար, բայց միայն այն երկու քարէ տախտակները՝ զորոնք Մովսէս Քորեբի մէջ հոն դրաւ, որոնցմով Տէրը Իսրայէլի որդիներուն հետ, անոնց Եգիպտոսի երկրէն ելած ատենը, ուխտ ըրաւ: 10 - Ու երբ քահանաները սրբութիւնէն ելան, ամպը լեցուց Տէրոջը տունը. 11 - Եւ ամպին պատճառաւ քահանաները չէին կրնար հոն կենալ՝ որ իբեշ պաշտօնը կատարեն, վասն զի Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցեր էր:

12 - Այն ատեն Սողոմոն ըսաւ, Տէրը ըսաւ որ ինք մառախուղի մէջ կը բնակի: 13 - Ահա քեզի բնակութեան համար տուն, «յաւիտեան քու նստելուդ համար տեղ շինեցի: 14 - Եւ թագաւորը իր երեսը դարձուց, ու Իսրայէլի բոլոր ժողովքը օրհնեց. ու Իսրայէլի բոլոր ժողովքը «քտէ լեայ կայներ էին»: 15 - Եւ անիկա ըսաւ, Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ իր բերնով իմ հօրս Գաւթի խօսք տուաւ, ու իր ձեռքով կատարեց քանզի ըսաւ, 16 - Իմ ժողովուրդս Իսրայէլը Եգիպտոսէ հանած օրէս ի վեր, Իսրայէլի բոլոր ցեղերէն բնաւ քաղաք մը չընտրեցի տուն շինելու համար, որպէս զի իմ անունս հոն ըլլայ. բայց Գաւթի ընտրեցի, որպէս զի իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ Բաբելոնի ըլլայ: 17 - Եւ իմ հայրս Գաւթի միտք ունէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն

անուանը տուն մը շինէ . 18 - Բայց Տէրը իմ՝ հօրս Գաւիթի բառ , Որովհետեւ դուն միաքդ գրիր որ իմ անուանա տուն շինես , աղէկ ըրիր որ այս բանը միաքդ գրիր . 19 - Սակայն տունը դուն պիտի շինես , հապա քու որդիդ՝ որ քու երանքէդ պիտի ելլէ , անիկա իմ անուանս՝ տունը պիտի շինէ : 20 - Եւ հիմա՝ Տէրը իր բաժնի խօսքը կատարեց , ու ես իմ՝ հօրս Գաւիթի տեղ յաջորդեցի , ու Տէրոջը բաժնին պէս Իսրայէլի աթոռը նստայ , ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անուանը այս տունը շինեցի . 21 - Եւ հոն տեղ մը պատրաստեցի տապանակին համար , որուն մէջ Կեցած է Տէրոջը ուխտը , զոր մեր հայրերուն հետ ըրաւ , երբ զանոնք Եգիպտոսի երկրէն դուրս հանեց :

22 - Եւ Սողոմոն Տէրոջը սեղանին առջև Իսրայէլի բոլոր ժողովքին դիմաց կայնելով՝ ձեռքերը դէպ ի երկինք տարածեց , 23 - Ու ըսաւ , Ով Տէր Աստուծո՞ւմ Իսրայէլի , վերը երկինքը ու վարը երկրի վրայ քեզի պէս Աստուծո՞ւմ չկայ , որ քու առջեւդ իրենց բոլոր սրտովը քաղող ծառաներուդ հետ ուխտ ու սղորմութիւն կը պահես .

24 - Իսկ քու ծառայիդ , իմ հօրս Գաւիթի , ըրած խոստմունքդ պահեցիր , ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր , ինչպէս այսօր Կեցեալս :

25 - Եւ հիմա , ով Տէր Աստուծո՞ւմ Իսրայէլի , պահէ այն խոստմունքդ , զոր քու ծառայիդ , իմ հօրս Գաւիթի , ըրիր ու ըսիր , իմ առջեւ Իսրայէլի աթոռին վրայ նստող մարդ քեզմէ պակաս պիտի չըլլայ . միայն թէ քու որդիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն ու իմ առջեւ քալեն , ինչպէս դուն իմ առջեւ քալեցիր :

26 - Եւ հիմա , ով Աստուծո՞ւմ Իսրայէլի , թող քու ծառայիդ , իմ հօրս Գաւիթի , ըսած խօսքդ հաստատուի :

27 - Բայց միթէ Աստուծո՞ւմ իրաւքնէ երկրի վրայ պիտի բնակի՞ . ահա երկինք ու երկնից երկինքը քեզ չեն կրնար պարունակել . ո՞ւր կը մնայ այս իմ շինած տունս : 28 - Սակայն , ով Տէր Աստուծո՞ւմ իմ , քու ծառայիդ աղօթքին ու խնդրուածքին նայէ , որպէս զի քու ծառայիդ այսօր քու առջեւդ ըրած պաղատանքը ու աղօթքը լսես .

29 - Որպէս զի այս տանը վրայ գիշեր ցորեկ քու աչքերդ բաց ըլլան , այն

տեղին վրայ՝ որու համար ըսիր թէ իմ՝ անունս հոն պիտի ըլլայ . այնպէս որ այս տեղ քու ծառայիդ ըրած աղօթքը լսես : 30 - Ուրեմն քու ծառայիդ և քու ժողովուրդիդ Իսրայէլի այս տեղ ըրած աղօթքները լսես . այո , քու բնակութեանդ տեղէն , երկինքէն , լսես , ու լսած տանդ ներես :

31 - Եթէ մէկը իր ընկերին դէմ մեղանչէ , ու ան ալ երգում ընել տալու համար՝ անոր երգում առաջարկէ , ու երգումը այս տունը քու սեղանիդ առջև գայ , 32 - Այն ատեն դուն երկինքէն լսես ու կատարես , ու քու ծառաներդ դատես , և յանցաւորը դատապարտես ու անոր * ըրածը անոր գլուխը բերես , և արդարը արդարացընես ու անոր արդարութեանը չափովը անոր հատուցում ընես :

33 - Եւ եթէ քու ժողովուրդդ Իսրայէլ քեզի դէմ մեղանչելուն համար իրենց թշնամիներուն առջև յաղթուին , ու քեզի դառնան և քու անուանդ փառք տան , ու այս տան մէջ քեզի աղօթք ու աղաչանք ընեն , 34 - Այն ատեն դուն երկինքէն լսես , և քու ժողովուրդիդ Իսրայէլի մեղքը ներես , ու անոնց հայրերուն տուած երկիրդ զանոնք դարձնես :

35 - Եթէ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար երկինք գոցուի ու անձրև չգայ , ու անոնք այս տեղ քեզի աղօթք ընեն , և քու անուանդ փառք տան , ու զանոնք նեղելուդ համար իրենց մեղքերէն դառնան , 36 - Այն ատեն դուն երկինքէն լսես , և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ Իսրայէլի մեղքը ներես , որպէս զի անոնց սորվեցնես այն աղէկ ճամբան՝ որուն մէջ պիտի քալեն , ու քու ժողովուրդիդ ժառանգութիւն տուած երկրիդ վրայ անձրև տաս :

37 - Եթէ երկրի վրայ սով , կամ ժանտախտ , կամ խորշակահարութիւն , կամ արժաբէսց դալուկ , կամ մարախ , կամ թրթուր ըլլայ , կամ անոնց թշնամիները զանոնք իրենց † բնակած երկրին մէջ նեղեն , կամ որեւիցէ հարուած կամ հիւանդութիւն ըլլայ , 38 - Քու բոլոր ժողովուրդէդ Իսրայէլէ որեւիցէ մարդ աղօթք մը ու

* Եբբ. ճամբան
† Եբբ. դռներուն

խնդրուածք մը ընելու ըլլայ, և իւրաքանչիւր մարդ իր սրտին ախար ճանչնալով՝ ձեռքերը դէպ ի այս տունը երկնցնէ, 39 - Այն ատեն դուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, լսես ու ներես, և ընես. և ամէն մարդու իր բոլոր ճամբաներուն համեմատ հատուցում ընես, անոր սիրար գիտնալուդ համար. վասն զի բոլոր մարդոց սրդիներուն սիրար միայն դուն գիտես. 40 - Որպէս զի քեզմէ վախնան իբէնց բոլոր օրերուն մէջ, որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկրիդ վրայ պիտի ապրին:

41 - Ու քու ժողովուրդէդ Իսրայէլէ չեղող և հեռաւոր երկրէ մը քու անուանդ համար եկող օտարականն ալ, 42 - (Վասն զի քու մեծ անունդ ու զօրաւոր ձեռքդ ու երկնցած բազուկդ պիտի լսեն,) եթէ գայ ու այս տանը մէջ աղօթք ընէ, 43 - Իուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, լսես, և օտարականին քեզի ըրած ամէն խնդրուածքը կատարես, որպէս զի երկրի ամէն ժողովուրդները քու անունդ ճանչնան, ու քու ժողովուրդիդ Իսրայէլի պէս քեզմէ վախնան, և գիտնան թէ այս իմ շինած տանս վրայ քու անունդ կոչուած է:

44 - Երբ քու ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի երթայ այն ճամբով որ դուն պիտի զրկես զանոնք, եթէ անոնք այս քու ընտրած քաղաքիդ, ու քու անուանդ համար այս իմ շինած տանս կողմը նայելով Տէրոջը աղօթք ընեն, 45 - Երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես, և անոնց իրաւունք ընես:

46 - Երբ քեզի դէմ մեղք գործեն, (քանզի մեղք չգործող մարդ չկայ,) ու անոնց բարկանալով զանոնք թշնամիին ձեռքը մտանես, ու անոնց գերեվարները թշնամիին հետ ու կամ մօտ երկիրը գերի տանին զանոնք, 47 - Եթէ այն իրենց գերութեան երկրին մէջ զեղջի գան ու դառնան, և իրենց գերեվարներուն երկրին մէջ քեզի աղաչեն ու բռնեն, Մեղք գործեցինք, անօրէնութիւն ու անիրաւութիւն բրինք. 48 - Եւ եթէ զանոնք գերի տանող թշնամիներուն երկրին մէջ իրենց բոլոր սրտովր ու իրենց բոլոր հոգւովր քեզի դառնան, ու իրենց երկրին, զոր իրենց հայրերուն տուիր, և քու ընտ-

րած քաղաքիդ, ու քու անուանդ համար իմ շինած տանս կողմը նայելով քեզի աղօթք ընեն, 49 - Իուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես, ու անոնց իրաւունք ընես, 50 - Եւ քու ժողովուրդիդ քեզի դէմ ըրած մեղքը ու բոլոր յանցանքը ներես, ու այնպէս ընես որ անոնց գերեվարները անոնց վրայ գթան, և անոնց սղորմութիւն ընեն. 51 - Քանզի անոնք քու ժողովուրդդ ու քու ժառանգութիւնդ են, զորոնք Եգիպտոսէ, երկաթի հնացին մէջէն, հանեցիր: 52 - Եւ քու ծառայիդ խնդրուածքին ու քու ժողովուրդիդ Իսրայէլի խնդրուածքին քու աչքդ ու նայող բաց ըլլայ, որպէս զի անոնց քեզի ըրած ամէն աղաղակը լսես: 53 - Քանզի երկրի ամէն ժողովուրդներէն դուն զառեցիր զանոնք, որպէս զի քու ժառանգութիւնդ ըլլան, ինչպէս քու ծառայիդ Մովսէսի ձեռքով խօսեցար երբ մեր հայրերը Եգիպտոսէ հանեցիր, սվ Տէր Եհովա:

54 - Երբ Սողոմոն այս բոլոր աղօթքը ու խնդրուածքը Տէրոջը ըրաւ լմնցուց, Տէրոջը սեղանին առջեւէն ելաւ, ուր ձեռքերը դէպ ի երկինք տարածուած ծունկ կրկներ էր, 55 - Ու սաքի վրայ կայնելով Իսրայէլի բոլոր ժողովքը բարձր ձայնով օրհնեց ու ըսաւ, 56 - Օրհնեալ ըլլայ Տէրը, որ իր բոլոր ըսածին համեմատ իր Իսրայէլ ժողովուրդին հանգստութիւն տուաւ, ու իր ծառային Մովսէսի ձեռքով խօսած ամէն բարի խօսքերէն բնաւ խօսք մը գետինը չինկաւ: 57 - Մեր Տէր Աստուածը մեզի հետ ըլլայ, ինչպէս մեր հայրերուն հետ էր. ու մեզ չթողու ու մեզ երեսէ չձգէ, 58 - Եւ մեր սիրար իրեն դարձրնէ, որպէս զի իր բոլոր ճամբաներուն մէջ քալենք, ու պահենք իր պատուիրանքները, կանոնները ու իրաւունքները զորոնք մեր հայրերուն պատուիրեց: 59 - Եւ Տէրոջը առջև մտաուցած այս պաղատանքի խօսքերս ցորեկ ու գիշեր մեր Տէր Աստուծոյն մօտեան, որպէս զի օրէ օր պատահած գործերուն մէջ իր ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին իրաւունք ընէ. 60 - Որպէս զի երկրի ամէն ժողովուրդները գիտնան թէ Եհովա ինքն է Աստուած, և ուրիշ մը չկայ: 61 - Ու ձեր սիրար մեր Տէր Աստուծոյն առջև ուղիղ ըլ-

լայ, որպէս զի այս օրուան պէս անոր կանոններուն մէջ քաղէք, ու անոր պատուիրանքները պահէք :

62 - Եւ թագաւորը ու բոլոր Իսրայէլ անոր հետ Տէրոջը առջև զոհեր մատուցին : 63 - Եւ Սողոմոն Տէրոջը մատուցած խաղաղութեան զոհին համար՝ քանուերկու հազար արջաու ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ . և թագաւորը ու բոլոր Իսրայէլի որդիները Տէրոջը տանը նաւակատիքը ըրին : 64 - Այն օրը թագաւորը Տէրոջը տանը առջև եղող գաւիթին մէջատեղը սրբեց . քանզի էր ողջակէզները, հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց, վասն զի Տէրոջը առջևի պղնձէ սեղանը պղտիկ կու գար այս ողջակէզները, հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը ընդունելու :

65 - Եւ այն ատեն Սողոմոն ու անոր հետ բոլոր Իսրայէլ, մեծ ժողով մը, Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը մեր Տէր Աստուծոյն առջև եօթը օր ու եօթը օր եւս, այսինքն տասնըչորս օր, ասն ըրին : 66 - Եւ Սողոմոն ու թերորդ օրը ժողովուրդը արձակեց, որոնք թագաւորը օրհնեցին, ու իրենց վրանները գացին, զուարթ արտով մը ուրախանալով այն բոլոր բարիքներուն համար, զորոնք Տէրը իր Գաւիթ ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին ըրաւ :

ԳԼ. Թ

Երբ Սողոմոն Տէրոջը տունը ու թագաւորական տունը և իր սրահն բոլոր ուզած բաները շինեց լմնցուց, 2 - Տէրը Սողոմոնի նորէն երեւցաւ՝ ինչպէս Գաբաւոնի մէջ երեւցեր էր : 3 - Եւ Տէրը անոր ըսաւ, Իմ առջև ըրած աղօթքդ ու պաղատանքդ լսեցի . և այս շինած տունդ սրբեցի, որպէս զի իմ անունս յաւիտեան հոն դնեմ, ու իմ աչքերս ու սիրտս միշտ հոն պիտի ըլլան : 4 - Եւ եթէ դուն իմ առջև քու հօրդ Գաւիթի քաղածին պէս՝ կատարեալ սրբաով և ողորթեամբ քաղես, ու բոլոր քեզի պատուիրածներս ընես ու իմ կանոններս ու դատաստաններս պահես, 5 - Այն ատեն քու թագաւորութեանդ աթոռը Իսրայէլի վրայ յաւիտեան պիտի հաստատեմ, ինչպէս

քու հօրդ Գաւիթի խօսեցայ՝ ըսելով, Իսրայէլի աթոռին վրայ քեզմէ մարդ պակաս պիտի չըլլայ : 6 - Եթէ դուք կամ ձեր որդիները ինծմէ խտարիք, ու ձեր առջև դրած պատուիրանքներս՝ կանոններս չպահէք, ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք և անոնց երկրպագութիւն ընէք, 7 - Այն ատեն Իսրայէլը պիտի ջնջեմ՝ այն երկրին վրայէն զոր իրենց առի, ու իմ անունս համար այս սրբած տունս երեսէս պիտի ձգեմ . և Իսրայէլ բոլոր ազգերուն մէջ աւուակ ու կատակ պիտի ըլլայ : 8 - Եւ այս բարձր տանը համար ամէն քովէն՝ անցնողը պիտի զարմանայ, ու սուլելով պիտի ըսէ, Տէրը ինչու համար այս երկրին ու այս տանը այսպէս ըրաւ : 9 - Եւ պիտի ըսեն, Վասն զի անոնք իրենց Տէր Աստուածը թողուցին, որ անոնց հայրերը Եգիպտոսի երկրէն հաներ էր, և ուրիշ աստուածներու յարեցան և անոնց երկրպագութիւն ու ծառայութիւն ըրին . այս պատճառաւ Տէրը անոնց վրայ այս բոլոր չարիքները բերաւ :

10 - Եւ Սողոմոն երկու տունը, Տէրոջը տունը ու թագաւորական տունը, քսան տարուան մէջ շինելէն ետքը, 11 - Տիրոսի թագաւորը Քիրամ՝ եղենափայտերով, մայր փայտերով ու ոսկիով անոր ամէն ուղածին համեմատ Սողոմոնի օգնութիւն ընելուն համար, Սողոմոն թագաւորն ալ այն ատեն Քիրամի քսան քաղաք տուաւ Գալիլեայի երկրին մէջ : 12 - Ու Քիրամ՝ Տիրոսէ ելաւ՝ որպէս զի Սողոմոնի իրեն տուած քաղաքները տեսնէ, և իր աչքերուն հաճոյ չերեւցան . 13 - Ու ըսաւ, Եզբայր, այս ինչ քաղաքներ են զորոնք ինծի տուիր . ու անոնց անունը՝ Քարօզի երկիր կոչեց մինչև այսօր . 14 - Եւ Քիրամ՝ թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի զրկեց :

15 - Ու Սողոմոն թագաւորին գրած հարկին պատճառը այս էր՝ որ Տէրոջը տունը, իր տունը ու Մելօնը ու Երուսաղէմի պարիսպը, Հասորը, Մակեդոնը ու Գաղերը շինէ : 16 - (Քանզի Եգիպտոսի Փարաւոն թագաւորը ելլելով՝ Գաղերը տուեր, ու զանիկա կրակով սյրեր էր, և այն քաղաքին մէջ բնակող Քանանացիները մեռցնելով,

*Այսինքն, անհաճոյ, կամ, կապեալ

ԳԼ. Ժ

զանհկա իր աղջկան, Սողոմոնի կնոջ, օժիտ տուեր էր: 17 - Ու Սողոմոն Գազերը ու վարի Բեթորոնը շինեց, 18 - Նաև Բաազեթը ու Թագամորը երկրին անապատին մէջ, 19 - Եւ Սողոմոնի բոլոր շտեմարանի քաղաքները, ու կառքերուն քաղաքները, ու ձիաւորներուն քաղաքները, և այն բոլոր շէնքերը, զորոնք Սողոմոն ուզեց շինել Երուսաղէմի մէջ, Լիբանանի մէջ ու իր տէրութեան բոլոր երկրին մէջ:

20 - Այն բոլոր ժողովուրդները, որոնք Ամօրհասցիներէն, Քեռացիներէն, Փերեզացիներէն, Խեւացիներէն ու Յեբուսացիներէն մնացեր էին, և Իսրայէլի որդիներէն չէին, 21 - Այսինքն անոնց զաւակները, որոնք անոնցմէ ետքը այն երկրին մէջ մնացեր էին, ու Իսրայէլի որդիները չէին կրցեր զանոնք բնաջինջ ընել, Սողոմոն զանոնք հարկատու ծառայ ըրաւ մինչև այսօր: 22 - Բայց Սողոմոն Իսրայէլի որդիներէն իրեն ծառայ չըրաւ. հապա անոնք իր պատերազմական մարդիկը, իր *պալատականները, իշխանները, զօրավարները, ու իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն էին: 23 - Սողոմոնի գործին վրայ հինգ հարիւր յիսուն գլխաւոր իշխաններ կային, որոնք բանուոր ժողովուրդին վրայ կ'իշխէին:

24 - Իսկ Փարաւոնի աղջիկը Իսաիթի քաղաքէն ելաւ, «- Գնաց իր տունը զոր Սողոմոն անոր համար շինեց էր. այն ատեն Մելօնը շինեց:

25 - Եւ Սողոմոն տարին երեք անգամ Տէրոջը համար շինած սեղանին վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր կը մատուցանէր, և Տէրոջը առջեւի «եղանին» վրայ խունկ կը ծխէր:

26 - Ու երբ տունը լմնցուց, Սողոմոն Թագաւորը Եզովմի երկրին մէջ կարմիր ծովուն եզերքը՝ Ելաթի քով եղող Գասիոնգաբերի մէջ նաւեր շինեց:

27 - Եւ Քիրամ՝ Սողոմոնի ծառաներուն հետ, ծովու համբարդութեան հմուտ եղող իր նաւավար ծառաները այն նաւերով զրկեց:

28 - Ու անոնք Ոփիր գացին, և անկէ չորս հարիւր քսան տաղանդ ոսկի աւելին, ու Սողոմոն Թագաւորին բերին:

Եւ Սաբայի Թագուհին Սողոմոնի համբաւը ու Տէրոջը անունը լսեց, ու եկաւ որպէս զի խրթին հարցումներով զանհկա փորձէ: 2 - Եւ անհկա Երուսաղէմ՝ եկաւ խիստ շատ հանդէսով, խունկեր ու խիստ շատ ոսկի ու պատուական քարեր բեռցած ուղտերով, և Սողոմոնի քով գնաց, ու բոլոր իր սրտին մէջ եղածը անոր զրուցեց: 3 - Եւ Սողոմոն անոր բոլոր հարցումները բացատրեց, ու բնաւ այնպիսի խօսք մը չկար, զոր Թագաւորը չհասկնայ ու չբացատրէ անոր: 4 - Եւ Սաբայի Թագուհին Սողոմոնի բոլոր իմաստութիւնը, ու անոր շինած տունը, 5 - Եւ անոր սեղանին կերակուրները, ու անոր ծառաներուն *բնակարանները, և սպասաւորներուն կայնուածքը, ու անոնց հագուստները, և անոր մատուուակները, ու Տէրոջը տունը ելլելու սանդուխը՝ տեսնելով՝ խելքը գլխէն գնաց: 6 - Եւ Թագաւորին ըսաւ, Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր: 7 - Բայց ես այն խօսքերուն չհաւատացի, մինչև որ անչափ եկայ ու իմ աչքերովս տեսայ, և ահա ինծի «*» կէսը չպատմեցին. քու իմաստութիւնդ ու երջանկութիւնդ իմ լսած համբաւէս աւելի է: 8 - Երանի՛քու մարդոցդ, երանի՛ այս քու ծառաներուդ՝ որոնք միշտ քու առջեւդ կայնելով քու իմաստութիւնդ կը լսեն: 9 - Քու Եհովա Աստուածդ օրհնեալ ըլլայ, որ քեզի հաւնեցաւ ու քեզ Իսրայէլի աթոռին վրայ դրաւ. Եհովա Իսրայէլը յաւիտեան սիրելուն համար՝ քեզ Թագաւոր ըրաւ, որպէս զի իրաւունք ու արդարութիւն ընեա: 10 - Եւ Թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի ու խիստ շատ խունկեր ու պատուական քարեր տուաւ: Այլ անկէ ետև այնչափ շատ խունկ չէկաւ, որչափ Սաբայի Թագուհին Սողոմոն Թագաւորին տուաւ:

11 - Եւ Քիրամի նաւերը, որոնք Ոփիրէ ոսկի կը բերէին, Ոփիրէ խիստ շատ ալմուկ փայտեր ու պատուական

*Եբր. ծառաները

*Կամ, ժողովը
 †Կամ, Տէրոջը տանը մէջ ըրած ողջակէզները

քարեր ալ բերին: 12 - Եւ թագաւորը ալմուկ փայտէն յենարաններ շինեց՝ Տէրօջը տանը ու թագաւորական տանը համար, և քնարներ ու տաւիղներ՝ երգեցողներուն համար. այսպիսի ալմուկ փայտ բնաւ չեկաւ ու չերեւցաւ մինչև այսօր:

13 - Ու Սողոմոն թագաւորը Սաբայի թագաւորին բոլոր ուզած ու խնդրած բաները տուաւ, Սողոմոն թագաւորին իր *առատաձեռնութեամբ անոր տուածէն զատ: Եւ անիկա իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց:

14 - Ու մէկ տարուան մէջ Սողոմոնի եկած ոսկին կչիւքը վեց հարիւր վաթսուներկեց տաղանդ ոսկի էր. 15 - Առուտուր ընողներէն ու վաճառականներէն և Սրաբացւոց բոլոր թագաւորներէն ու երկրին նախարարներէն առաջին զատ:

16 - Եւ Սողոմոն թագաւորը կռածոյ ոսկիէ երկու հարիւր վաճան շինեց, առաջին մէկ վաճանին համար վեց հարիւր *իւլ ոսկի գնաց: 17 - Կռածոյ ոսկիէ երեք հարիւր ասպար ալ շինեց, առաջին մէկ ասպարին երեք մնաս ոսկի գնաց. ու թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք:

18 - Եւ թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը շինեց, ու զուտ ոսկիով պատեց զանիկա: 19 - Այս աթոռը վեց աստիճան ունէր. ու աթոռին վերի ծայրը ետեւէն բոլորչի էր, և նստելու տեղը մէկ կողմէն ու միւս կողմէն յենարաններ ունէր, ու յենարաններուն քով երկու առիւծներ կը կայնէին: 20 - Եւ հոն վեց աստիճաններուն վրայ մէկ կողմէն ու միւս կողմէն տասուերկու առիւծներ կը կայնէին. բոլոր թագաւորութիւններուն մէջ այսպիսի քան չէ շինուած չէր:

21 - Ու Սողոմոն թագաւորին բոլոր խմելիքի ամանները ոսկի էին, և Լիբանանի անտառին տանը բոլոր ամանները զուտ ոսկի էին, արծաթէ չկար. *առաջին անիկա Սողոմոնի օրերը բանի մը տեղ չէր սեպուեր: 22 - Վասն զի թագաւորը ծովու վրայ Քիրամի նաւերուն հետ թարսացի նաւեր ունէր. թարսացի նաւերը երեք տարին անգամ մը ոսկիով, արծաթով, փղոսկրով և կա-

պիկներով ու սիրամարգներով բեռնաւորուած կու գային:

23 - Եւ Սողոմոն թագաւորը հարստութեան ու իմաստութեան կողմանէ երկրի բոլոր թագաւորներէն մեծ եղաւ:

24 - Ու բոլոր երկիր կը փափաքէր Սողոմոնի երեսը *իւնէլ - և անոր իմաստութիւնը լսելու, զոր Աստուած անոր սրտին մէջ դրեր էր: 25 - Ու անոնց ամէնը տարուէ տարի իրենց ընծաները կը բերէին, այսինքն արծաթէ ամաններ, ոսկիէ ամաններ, հանդերձներ, զէնքեր, խունկեր, ձիեր ու ջորիներ:

26 - Եւ Սողոմոն կառքեր ու ձիաւորներ ժողովեց, ու անիկա հազար չորս հարիւր կառք ու տասուերկու հազար ձիաւոր ունեցաւ. ու զանոնք կառքերու քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի մէջ թագաւորին քով տեղաւորեց: 27 - Եւ թագաւորը Երուսաղէմի մէջ արծաթը քարերու պէս հասարակ քան չէրրաւ, ու եղեւնափայլը շատութեան՝ դաշտի մէջ եղող մուրթով գետներուն պէս բրաւ: 28 - Եւ Սողոմոնի ձիերը Եգիպտոսէ կու գային, ու թագաւորին վաճառականներուն կարուանը որոշուած գնով մը չէր երամուկներ ծախու կ'առնէին: 29 - Ու Եգիպտոսէ կառք մը դուրս ելլելուն վեց հարիւր արծաթով վեր կու գար, ու մէկ ձին՝ հարիւր յիսուն *բէթով. ու Քեաացւոց բոլոր թագաւորներուն համար և Ասորոց թագաւորներուն համար ալ անոնց ձեռքով այնպէս կը հանէին:

ԳԼ ԺԱ

Եւ Սողոմոն թագաւորը Փարաւոնի աղջիկէն զատ շատ օտարազգի կիներ, այսինքն Մովաբացի, Ամոնացի, Եգովմացի, Սիդոնացի - Քեաացի կիներ սիրեց. 2 - Այն ազգերէն՝ որոնց համար Տէրը Իսրայէլի սրգիններուն ըսեր էր, Անոնց քով մի մտնէք, ու անոնք ալ ձեր քով չմտնեն, որպէս զի ձեր սիրտերը իրենց աստուածներուն չդարձնեն. Սողոմոն սիրով անոնց յարեցաւ: 3 - Եւ անիկա եօթը հարիւր իշխանազուն կին ու երեք հարիւր հարձ ունէր. ու անոր կիները անոր սիրտը խտարցուցին: 4 - Եւ Սողոմոնի ծերութեան ժամանակը անոր կիները անոր սիրտը օտար աստուածներու դարձու-

*Եբբ. ձեռքին համեմատ
†Կառ, խաւն ժողովուրդներուն

ցին, ու անոր սիրաբ իր Տէր Աստուծոյն հետ իր հօրը Դաւիթի սրտին պէս կատարեալ չէր: 5 - Եւ Սողոմոն Սիդոնացւոց աստուծոյն Աստարովթի ետեւէն ու Ամմոնացւոց գարշելի Մեղքումին ետեւէն զնաց: 6 - Եւ Սողոմոն Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու Տէրոջը ետեւէն իր հօրը Դաւիթի պէս կատարեալ «բռն» չզնաց: 7 - Այն ատեն Սողոմոն Երուսաղէմի դիմաց եղող լեռանը վրայ Մովաբացւոց գարշելի Քամովսին համար բարձր տեղ մը շինեց, ու Ամմոնացւոց գարշելի Մուղաբին համար ալ: 8 - Եւ իր բոլոր օտարազգի կիներուն համար ալ այնպէս ըրաւ, որոնք իրենց աստուածներուն խունկ կը ծխէին ու զո՛հ կը մատուցանէին:

9 - Եւ Տէրը Սողոմոնի բարկացաւ, վասն զի անիկա իր սիրաբ խտորացուց Իսրայէլի Տէր Աստուծո՛մէն, որ երկու անգամ իրեն երեւցաւ, 10 - Ու այս բանին համար պատուիրեց որ ուրիշ աստուածներու ետեւէ չերթայ. բայց անիկա Տէրոջը պատուէրը չպահեց: 11 - Եւ Տէրը Սողոմոնի ըսաւ, Արովհետեւ «դուն այսպէս ըրիր», և իմ ուխտս ու քեզի պատուիրած կանոններս չպահեցիր, «-» թագաւորութիւնդ անշուշտ քեզմէ պիտի պատուեմ, ու զանիկա քու ծառայիդ պիտի տամ: 12 - Միայն թէ այս բանը քու օրերուդ մէջ չեմ ըներ՝ քու հօրդ Դաւիթի համար, քոյց զանիկա քու որդւոյդ ձեռքէն պիտի պատուեմ: 13 - Սակայն բոլոր թագաւորութիւնը պիտի չպատուեմ, հապա իմ ծառայիս Դաւիթի համար ու իմ ընտրած Երուսաղէմիս համար քու որդւոյդ ցեղ մը պիտի տամ:

14 - Եւ Տէրը Սողոմոնի դէմ թշնամի մը հանեց, այսինքն Եդովմի թագաւորին սերունդէն Եդովմայեցի Ադադը. 15 - Վասն զի Դաւիթ Եդովմի մէջ եղած ատենը, երբ Յովաբ զօրագլուխը մեռցուածները թաղելու համար ելաւ, ու Եդովմի մէջ բոլոր արունները մեռցուց, 16 - (Արովհետեւ Յովաբ բոլոր Իսրայէլի հետ հոն վեց ամիս նստաւ, մինչև որ Եդովմայեցւոց բոլոր արունները մեռցուց,) 17 - Այն ատեն Ադադ իր հօրը քանի մը Եդով-

մայեցի ծառաներուն հետ փախաւ որպէս զի Եգիպտոս երթայ. ու Ադադ շեռ պզտիկ աղայ էր: 18 - Եւ անոնք Մադիամէ ելան ու Փառան եկան, և Փառանէ իրենց հետ մարդիկ առին, ու Եգիպտոս եկան Եգիպտոսի Փարաւոն թագաւորին, որ անոր տուն տուաւ, ու անոր սոճիկ կապեց, ու անոր երկիր տուաւ: 19 - Եւ Ադադ Փարաւոնի առջև շատ շնորհք գտաւ. ու Փարաւոն իր կնոջ քոյրը, Թաճփենէս թագուհին քոյրը, անոր կին տուաւ: 20 - Եւ Թաճփենէսի քոյրը Ադադի որդի մը ծնաւ, որ Գանեբաթ իւրեցաւ. ու Թաճփենէս զանիկա Փարաւոնի տանը մէջ մեծցուց. ու Գանեբաթ Փարաւոնի տանը Փարաւոնի որդիներուն մէջ էր: 21 - Ու երբ Ադադ Եգիպտոսի մէջ լսեց թէ Դաւիթ իր հայրերուն հետ քնացեր է, ու Յովաբ զօրապետը մեռեր է, Ադադ Փարաւոնի ըսաւ, Արձակէ զիս, որպէս զի իմ երկիրս երթամ: 22 - Եւ Փարաւոն անոր ըսաւ, Իմ քովս քու ի՞նչդ պակաս է, որ քու երկիրդ երթալ կ'ուզես: Ու անիկա ըսաւ, Ոչ, քանի թէ իւրեցաւ իմ հայրերս, բայց անպատճառ արձակէ զիս:

23 - Եւ Աստուած անոր դէմ «-» թշնամի մը հանեց, այսինքն Եդիադայի որդին Ռազոնը, որ իր տէրոջը, Սուբայի Ադրազար թագաւորին, քովէն փախեր էր: 24 - Ու անիկա իր քով մարդիկ ժողովեց և զնգապետ եղաւ. ու երբ Դաւիթ զանոնք կոտորեց, Դամասկոս գացին ու հոն բնակեցան, ու Դամասկոսի մէջ թագաւորութիւն ըրին: 25 - Ուստի Ռազոն Սողոմոնի բոլոր օրերուն մէջ Իսրայէլի թշնամի եղաւ, Ադադի շեռ չարութենէն զատ. ու Իսրայէլի նեղութիւն կու տար, և Ասորւոց վրայ կը թագաւորէր:

26 - Եւ Սողոմոնի ծառան, Սարեգայէ Եփրաթացի Նաբատի որդին Յերթովամ ալ, որուն մայրը սրբեւարի կին մըն էր Սարուա անունով, թագաւորին դէմ ձեռք վերցուց: 27 - Ու թագաւորին դէմ ձեռք վերցնելուն պատճառը այս էր. երբ Սողոմոն Մելոնը շինեց, և իր հօրը Դաւիթի քաղաքին փլած տեղը գոցեց, 28 - Յերթովամ խիստ ուժեղ մարդ մը ըլլալով, ու Սողոմոն տեսնելով որ անիկա գործունեայ կարիճ մըն է, զանիկա Յովաբի տանը բոլոր բեռներուն վրայ դրաւ:

*Եբր. ասիկա քու քովդ եղաւ

29 - Եւ եղաւ որ այն ժամանակ Յերոբոամ Երուսաղէմէ դուրս ելաւ . ու ճամբուն մէջ Սիլօնացի Աքիա մարգարէն անոր հանդիպեցաւ , և անիկա նոր վերարկու մը հագեր էր , ու դաշտին մէջ երկուքը մինակ էին : 30 - Եւ Աքիա անոր վրայի նոր վերարկուն բռնեց , ու զանիկա տատուերկու կտոր պատռեց : 31 - Եւ Յերոբոամի ըսաւ , Տասր կտորը քեզի առ . քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ , Ահա Սողոմոնի ձեռքէն թագաւորութիւնը պիտի պատռեմ , ու տասը ցեղը քեզի պիտի տամ : 32 - Եւ իմ ծառայիս Դաւիթի համար , ու Իսրայէլի բոլոր ցեղերէն ընտրած Երուսաղէմ քաղաքիս համար , ցեղ մը անոր ըլլայ : 33 - Որովհետեւ զիս թողուցին , ու Սիդոնացւոց աստուծոյն Աստարովթի և Մովաբացւոց աստուծոյն Քամովսի ու Ամմոնի որդիներուն աստուծոյն Մեղքոմի երկրպագութիւն ըրին , և իմ ճամբաներուս մէջ չքալեցին , որ իր հօրը Դաւիթի պէս իմ առջեւս ուղիղ եղածը ու իմ կանոններս ու դատաստաններս ի գործ դնեն : 34 - Սակայն անոր ձեռքէն բոլոր թագաւորութիւնը պիտի չառնեմ , ու զանիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ իշխան պիտի թողում իմ պատուիրանքներս ու կանոններս պահող իմ ընտրած ծառայիս Դաւիթի համար : 35 - Բայց անոր որդւոյն ձեռքէն թագաւորութիւնը պիտի առնեմ , ու տասը ցեղը քեզի պիտի տամ : 36 - Եւ անոր որդւոյն ցեղ մը պիտի տամ , որպէս զի իմ ծառայս Դաւիթ իմ առջեւս միշտ ճրագ մը ունենայ Երուսաղէմ քաղաքին մէջ՝ զոր ընտրեցի իմ անունս հան դնելու համար : 37 - Ու քեզ պիտի առնեմ , և սրտիդ բոլոր ուզածին պէս թագաւորութիւն պիտի ընես , ու Իսրայէլի վրայ թագաւոր պիտի ըլլաս : 38 - Եւ եթէ իմ բոլոր քեզի պատուիրածներուս հնազանդութիւն ընես , ու իմ ճամբաներուս մէջ քալես , և իմ ծառայիս Դաւիթի բրածին պէս իմ կանոններս ու պատուիրանքներս պահելով իմ առջեւս ուղիղ եղածը ընես , այն ատեն ես քեզի հետ պիտի ըլլամ , ու քեզի մնայուն տուն պիտի շինեմ , ինչպէս Դաւիթի շինեցի , ու Իսրայէլը քեզի պիտի տամ : 39 - Եւ ասոր համար Դաւիթի սերունդը պիտի չարչարեմ , բայց

ոչ թէ միշտ : 40 - Ու Սողոմոն Յերոբոամը մեռցնել ուզեց , բայց Յերոբոամ ելաւ Եգիպտոս փախաւ , ու Եգիպտոսի Սիսակ թագաւորին քով գնաց , ու մինչև Սողոմոնի մահը Եգիպտոս մնաց :

41 - Եւ Սողոմոնի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածները ու անոր իմաստութիւնը՝ ահա Սողոմոնի պատմութեան գիրքին մէջ գրուած են : 42 - Եւ Սողոմոնի Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղան : 43 - Ու Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ , և իր հօրը Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ . ու անոր որդին Ռոբովամ անոր տեղը թագաւոր եղաւ :

ԳԼ ԺԲ

Եւ Ռոբովամ Սիւքէմ գնաց , վասն զի բոլոր Իսրայէլ զանիկա թագաւոր ընելու համար Սիւքէմ գացեր էր : 2 - Ու Նաբատեան Յերոբոամ , որ Սողոմոն թագաւորին երեսէն փախած՝ Եգիպտոս կը բնակէր , դեռ Եգիպտոսի մէջ էր երբ այս Բանը լսեց : 3 - Եւ Բաբղղկելով զանիկա կանչեցին , ու Յերոբոամ և Իսրայէլի բոլոր ժողովքը եկան , ու Ռոբովամի հետ խօսեցան ու ըսին , 4 - Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ . դուն հիմա քու հօրդ խիստ ծառայութիւնը ու մեր վրայ դրած ծանր լուծը թեթեւցուր , ու քեզի ծառայութիւն ընենք : 5 - Եւ անիկա ըսաւ անոնց , Քացէք , ու երեք օրէն ետքը ինծի դարձէք . ու ժողովուրդը գնաց :

6 - Եւ Ռոբովամ թագաւորը խորհուրդ հարցուց այն ձերերուն որոնք իր հօրը Սողոմոնի առջև կը կայնէին երբ անիկա սղջ էր , ու ըսաւ , Իսուք Ինչի Ինչ խորհուրդ կու տաք , որ այս ժողովուրդին պատասխան տամ : 7 - Եւ անոր խօսեցան ու ըսին , Եթէ դուն այսօր այս ժողովուրդին ծառայ ըլլաս ու անոնց ծառայութիւն ընես , և անոնց բարի խօսքեր ըսելով պատասխան տաս , այն ատեն անոնք քեզի միշտ ծառայ կ'ըլլան : 8 - Բայց անիկա ձերերուն իրեն տուած խորհուրդը մերժեց , ու իր առջև կայնող ու իրեն հետ մեծցած երիտասարդներուն խորհուրդ

Հարցուց . 9 - Եւ անոնց ըսաւ , Ի ու չ
 Ի՞նչ խորհուրդ կու տաք , որ այս ժո-
 ղովուրդին պատասխան տանք . քանզի
 անոնք ինծի խօսեցան ու ըսին , Քու
 Տօրդ մեր վրայ դրած լուծը թեթեւ-
 ցուր : 10 - Ու անոր հետ մեծցած երի-
 տասարդները անոր խօսեցան ու ըսին ,
 Քու հայրդ մեր լուծը ծանրացուց , ու
 դուն մեր վրայէն թեթեւցուր՝ ըսող
 ժողովուրդին այսպէս խօսիս , ու անոնց
 այսպէս ըսես , Իմ՝ պզտիկ մատս իմ՝
 Տօրս մէջքէն հաստ է . 11 - Իմ հայրս
 ձեր վրայ ծանր լուծ դրեր է , բայց
 ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացը-
 նեմ . իմ հայրս ձեզ խարազաններով
 խրատեր է , բայց ես ձեզ կարիճներով
 պիտի խրատեմ :

12 - Եւ Յերոբովամ ու բոլոր ժողո-
 վուրդը երբորդ օրը Ռոբովամի եկան ,
 ինչպէս թագաւորը ըսեր էր թէ՛ Եր-
 րորդ օրը ինծի եկէք : 13 - Ու թագա-
 ւորը ժողովուրդին խատութեամբ պա-
 տասխան տուաւ , և ծերերուն իրեն
 տուած խրատը մերժելով , 14 - Երի-
 տասարդներուն խորհուրդին պէս ա-
 նոնց հետ խօսեցաւ ու ըսաւ , Իմ հայրս
 ձեր լուծը ծանրացուցեր է , բայց ես
 ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ .
 իմ հայրս ձեզ խարազաններով խրա-
 տեր է , բայց ես ձեզ կարիճներով
 պիտի խրատեմ : 15 - Եւ թագաւորը
 ժողովուրդին խօսեց մտիկ չըրաւ , վասն
 զի այս բանը Տէրոջմէն եղաւ , որպէս զի
 Տէրը Սիլօնացի Աքիայի ձեռքով Նա-
 բատեան Յերոբովամի ըսած խօսքը
 հաստատէ : 16 - Ու երբ բոլոր Իսրայէլ
 տեսաւ որ թագաւորը իրենց մտիկ չը-
 րաւ , ժողովուրդն ալ թագաւորին
 պատասխան տուին ու ըսին , Մեկք Դա-
 ւիթի քով ի՞նչ բաժին ունինք , ու
 Յեսսէի որդւոյն քով ժառանգութիւն
 չունինք . ով Իսրայէլ , ձեր վրանները
 քորձէ՛ք . ով Դաւիթ , հիմա դուն քու
 տունդ հագա . ու Իսրայէլ իրենց վրան-
 ները գացին : 17 - Բայց Յուդայի քա-
 ղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որ-
 դիներուն վրայ Ռոբովամ թագաւոր
 եղաւ : 18 - Եւ Ռոբովամ թագաւորը
 երբ հարկերուն վրայ եղող Ադորամը
 զրկեց , բոլոր Իսրայէլ զանհկա քարե-
 րով քարկոծեցին , ու մեռաւ : Եւ Ռո-
 բովամ թագաւորը արտորալով կառ-
 քը հեծաւ , որպէս զի Երուսաղէմ
 փախչի : 19 - Այսպէս Իսրայէլ Դաւիթի

տունէն ապտամբեցաւ մինչև այսօր :
 20 - Եւ բոլոր Իսրայէլ Յերոբովամի
 դառնալը լսելով՝ Դաւիթ զրկեցին ու զա-
 նհկա ժողովքին մէջ կանչեցին , և զա-
 նհկա բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր
 դրին , ու Յուդայի ցեղէն զատ Դա-
 ւիթի տանը ուրիշ հեռեւող մը չկար :
 21 - Եւ Ռոբովամ Երուսաղէմ մտաւ ,
 ու բոլոր Յուդայի տունէն ու Բենիա-
 մինի ցեղէն հարիւր ութսուն հազար
 ընտիր պատերազմողներ ժողովեց , որ
 Իսրայէլի տանը հետ պատերազմին , ու
 թագաւորութիւնը Սողոմոնի որդւոյն
 Ռոբովամի դարձնեն :

22 - Եւ Աստուծոյ մարդուն Սեմա-
 յիայի Աստուծոյ խօսքը եղաւ՝ ըսելով ,
 23 - Սողոմոնի որդւոյն Յուդայի Ռոբո-
 վամ թագաւորին ու բոլոր Յուդայի
 տանը ու Բենիամինի և մնացորդ ժողո-
 վուրդին խօսիս , ու ըսես , 24 - Տէրը
 այսպէս կ'ըսէ , Մի ելլէք , ու Իսրայէլի
 սրդիներուն , ձեր եղբայրներուն , հետ
 մի պատերազմիք . ամէն մարդ թող իր
 տունը դառնայ . վասն զի այս բանը
 ինծմէ եղաւ : Եւ Տէրոջը խօսքը մտիկ
 ըրին , ու Տէրոջը ըսածին պէս *եռ
 դարձան :

25 - Ու Յերոբովամ Եփրեմի լեռանը
 վրայ Սիւքեմը շինեց ու հոն բնակե-
 ցաւ . և անկէ ելաւ , Փանուէլը շինեց :
 26 - Ու Յերոբովամ իր սրտին մէջ ը-
 սաւ , Հիմա թագաւորութիւնը Դա-
 ւիթի տանը պիտի դառնայ : 27 - Եթէ
 այս ժողովուրդը Երուսաղէմ Տէրոջը
 տունը ելլէ զո՛հ ընելու համար , այն ա-
 տեն այս ժողովուրդին սիրար իրենց
 աէրոջը , Յուդայի Ռոբովամ թագա-
 ւորին , պիտի դառնայ , և զիս պիտի
 մեռցնեն , ու Յուդայի Ռոբովամ թա-
 գաւորին պիտի դառնան : 28 - Եւ թա-
 գաւորը խորհուրդ ըրաւ , ու երկու
 հասակիէ որթ շինեց . ու անոնց ըսաւ ,
 Իսրայէլ ետե ձեզի Երուսաղէմ ելլել
 պէտք չէ՝ . ով Իսրայէլ , ա՛հա քու աստ-
 ուածներդ՝ որոնք քեզ Եգիպտոսի երկ-
 րէն հանեցին : 29 - Ու մէկը Բեթէլի
 մէջ դրաւ , ու միւսն ալ Դանի մէջ
 դրաւ : 30 - Եւ այս բանը մեղքի պատ-
 ճառ եղաւ . վասն զի ժողովուրդը մին-
 չև Դան կ'երթար այս *բեթէլ մէկուն

*Կա՛մ , երթալէն
 Իսրայէլ , Ալ հերիք է ձեր Երուսաղէմ
 ելլելը

առջև երկրագին-ի-ն ընել- համար : 31 - Ու բարձր տեղերու վրայ կուստուններ շինեց , ու ժողովուրդին ցած մարդոցմէն քուրմեր ըրաւ , որոնք Ղեւիի որդիներէն չէին :

32 - Ու Յերոբովամ . ութերորդ ամսուն մէջ , ամսուն տասնըհինգերորդ օրը , Յուդայի մէջ պահուած տօնին պէս տօն սահմանեց , ու սեղանին վրայ *զոհեր մատուց : Բեթէլի մէջ այսպէս ըրաւ , ու իր շինած որթերուն զոհեր մատուց . և բարձր տեղերուն համար ըրած քուրմերը Բեթէլի մէջ դրաւ :

33 - Ու իր մտքէն հնարած ամսուն մէջ , այսինքն ութերորդ ամսուն տասնըհինգերորդ օրը , Բեթէլի մէջ իր շինած սեղանին վրայ զոհեր մատուց , ու Իսրայէլի որդիներուն տօն սահմանեց , ու սեղանին վրայ †զոհեր մատուցանելով խունկ ծխեց :

ԳԼ ԺԳ

Ու երբ Յերոբովամ խունկ ծխելու համար սեղանին քով կը կայնէր , ահա Աստուծոյ մարդ մը Տերօջը խօսքովը Յուդայէ Բեթէլ եկաւ : 2 - Եւ Տերօջը խօսքովը սեղանին կանչեց ու ըսաւ , Ով սեղան , ով սեղան , Տէրը այսպէս կ'ըսէ , Ահա Դաւիթի տանը որդի մը պիտի ծնանի Յովսիա անունով , և քու վրագ խունկ ծխող բարձր տեղերուն քուրմերը քու վրագ պիտի զոհէ , ու քու վրագ մարդոց ոսկորներ պիտի այրեն : 3 - Եւ նոյն օրը նշան մը տալով ըսաւ , Տերօջը խօսելուն նշանը այս է . Ահա սեղանը պիտի պատուի , ու վրայի մոխիրը պիտի թափի :

4 - Ու երբ թագաւորը Աստուծոյ մարդուն Բեթէլի մէջ սեղանին համար կանչած խօսքը լսեց , Յերոբովամ սեղանին վրայէն ձեռքը երկնցուց , ու ըսաւ , Այս մարդը բռնեցէք . և անոր վրայ երկնցուցած ձեռքը չորցաւ , ու զանհետ իրեն դարձնելու կարող չեղաւ : 5 - Եւ Աստուծոյ մարդուն Տերօջը խօսքովը տուած նշանին պէս սեղանը պատուեցաւ ու մոխիրը սեղանէն թափեցաւ : 6 - Եւ թագաւորը Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ , Քու Տէր Աստուծոյդ առջև աղաչէ ու

ինծի համար աղօթք ըրէ , որ ձեռքս ինծի դառնայ : Այն ատեն Աստուծոյ մարդը Տերօջը առջև աղաչեց , և թագաւորին ձեռքը իրեն դարձաւ ու առաջուան պէս եղաւ : 7 - Եւ թագաւորը Աստուծոյ մարդուն ըսաւ , Ինծի հետ տուն եկուր , և քիչ մը կերակուր կեր , ու քեզի պարգև տամ : 8 - Եւ Աստուծոյ մարդը թագաւորին ըսաւ , Եթէ ինծի քու տանդ կէսն ալ տաս , քեզի հետ պիտի չերթամ , ու այս տեղ հաց պիտի չուտեմ , ոչ ալ ջուր խմեմ . 9 - Վասն զի Տէրը իր խօսքովը ինծի այսպէս պատուիրեց ու ըսաւ , Հաց չուտես ու ջուր չխմես , ու գացած ճամբայէդ չդառնաս : 10 - Ուստի անհկա ուրիշ ճամբով գնաց ու Բեթէլ գացած ճամբովը չդարձաւ :

11 - Եւ Բեթէլի մէջ ծեր մարգարէ մը կը բնակէր . ու անոր որդիները եկան , ու Աստուծոյ մարդուն նոյն օրը Բեթէլի մէջ բոլոր ըրած գործերը անոր պատմեցին , և անհկա թագաւորին ինչ խօսքեր որ զրուցեր էր՝ զանոնք ալ իրենց հօրը պատմեցին : 12 - Ու անոնց հայրը անոնց ըսաւ , Ո՞ր ճամբայէն գնաց : Եւ անոր որդիները Յուդայէ եկող Աստուծոյ մարդուն գացած ճամբան †տեսեր էին : 13 - Ու իր որդիներուն ըսաւ , Էջը պատրաստեցէք ինծի . և անոնք անոր համար էջը պատրաստեցին , ու անհկա վրան հեծաւ . 14 - Եւ Աստուծոյ մարդուն ետեւէն գնաց ու զանհետ բեւեկնիի մը տակ նստած գտաւ , ու անոր ըսաւ , Յուդայէ եկող Աստուծոյ մարդը դո՞ւն ես . և անհկա ըսաւ , Ես եմ : 15 - Ու անոր ըսաւ , Ինծի հետ տուն եկուր ու հաց կեր : 16 - Եւ անհկա ըսաւ , Քեզի հետ չեմ կրնար դառնալ ու քու պահուած մանեկ . ոչ ալ այս տեղ քեզի հետ հաց պիտի ուտեմ , ու ոչ ջուր խմեմ . 17 - Վասն զի Տերօջը խօսքովը ինծի ըսուեցաւ , Հոն հաց չուտես , ջուր ալ չխմես , ու գացած ճամբայէդ չդառնաս : 18 - Բայց անհկա ըսաւ անոր , Ես ալ քեզի պէս մարգարէ եմ , ու հրեշտակ մը ինծի հետ Տերօջը խօսքովը խօսեցաւ ու ըսաւ , Չանհկա քեզի հետ քու տունդ դարձուր , որպէս զի հաց ուտէ ու ջուր խմէ . *ախշ սուտ զրուցեց անոր :

*կամ, ելաւ
+կամ, խունկ ծխելու ելաւ

*Եբբ. «երօջ զօրացուր
+կամ, ցուցուցին

19 - Այն ատեն անոր հետ դարձաւ, և անոր տունը հաց կերաւ ու ջուր խմեց: 20 - Ու երբ անոնք սեղան նստեր էին, Տէրոջը խօսքը զանհկա դարձնող մարգարէին եղաւ. 21 - Ու անհկա Յուդայէ եկող Աստուծոյ մարդուն կանչելով՝ ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ, Որովհետեւ դուն Տէրոջը խօսքին անհնազանդութիւն ըրիր, ու քու Տէր Աստուծոյդ քեզի պատուիրած պատուէրը չպահեցիր, 22 - Եւ դարձար, ու հաց կերար ու ջուր խմեցիր այն տեղը որու համար քեզի ըսած էր որ հաց չուտես ու ջուր չխմես, քու մեռելդ քու հայրերուդ գերեզմանը պիտի չմանէ:

23 - Եւ հաց ուտելէն ու ջուր խմելէն ետքը անհկա իր ետ դարձուցած մարգարէին էջը պատրաստեց. 24 - Ան ալ գնաց, ու ճամբուն մէջ առիւծ մը գտաւ զանհկա ու մեռցուց. և անոր մեռելը ճամբուն վրայ փռուած մնաց, ու էջը անոր քով կայներ էր, առիւծն ալ մեռելին քով կայներ էր: 25 - Եւ ահա անկէ քանի մը մարդիկ անցնելով՝ ճամբուն վրայ փռուած մեռելը ու մեռելին քով կայնող առիւծը տեսան. ու գացին այն ծեր մարգարէին բնակած քաղաքին մէջ պատմեցին: 26 - Եւ զանհկա ճամբայէն դարձնող մարգարէն երբ լսեց՝ ըսաւ, Անհկա Տէրոջը խօսքին անհնազանդութիւն ընող Աստուծոյ մարդն է. ու Տէրը զանհկա առիւծին տուեր է, որ զանհկա պատառելով մեռցուցեր է՝ Տէրոջը անոր ըսած խօսքին համեմատ: 27 - Եւ իր որդիներուն խօսեցաւ ու ըսաւ, Ինձի համար էջը պատրաստեցէք, ու անոնք պատրաստեցին: 28 - Եւ գնաց անոր մեռելը գտաւ, որ ճամբուն վրայ փռուած էր. ու էջը և առիւծը մեռելին քով կայներ էին. առիւծը մեռելը կերած չէր, ոչ ալ էջը պատառեր էր: 29 - Եւ այն մարգարէն Աստուծոյ մարդուն մեռելը վերցուց ու զանհկա իշուն վրայ դրաւ ու զանհկա դարձուց. և ծեր մարգարէն քաղաքը մտաւ, որպէս զի ողբ ընէ ու զանհկա թաղէ. 30 - Եւ անոր մեռելը իր գերեզմանին մէջ դրաւ, ու Վայ եղբայր, ըտե՛լ, անոր վրայ ողբ ըրին: 31 - Ու զանհկա թաղելէն ետքը իր որդիներուն խօսեցաւ ու ըսաւ, Երբ ես մեռնիմ, զիս Աստուծոյ մարդուն

թաղուած գերեզմանին մէջ թաղէք, իմ սկորներս անոր սկորներուն քով դնէք. 32 - Վասն զի Բեթէլի մէջ եղող սեղանին համար, ու Սամարիայի քաղաքներուն մէջ եղող ամէն բարձր տեղերու կռատուններուն համար, անոր Տէրոջը խօսքովը կանչած խօսքը անպատճառ պիտի կատարուի:

33 - Այս բանէն ետքը Յերոբովամ իր չար ճամբայէն չդարձաւ. մանաւանդ նորէն ժողովուրդին ցած մարդոցմէն բարձր տեղերուն քուրմեր կ'ընէր, ամէն ուզողը կ'օրհնէր, ու անհկա բարձր տեղերուն քուրմ կ'ըլլար: 34 - Եւ այս բանը Յերոբովամի տանը մեղքի պատճառ եղաւ, նաև անոր երկրի երեսէն կորուելուն ու բնաջինջ ըլլալուն:

ԳԼ ԺԳ

Այն ատեն Յերոբովամի որդին Աբիա հիւանդացաւ: 2 - Ու Յերոբովամ իր կնոջ ըսաւ, Ելիր, կերպարանքդ փոխէ, այնպէս որ Յերոբովամի կինը ըլլալդ չգիտցուի, ու Սելով գնա. ահա Աբիա մարգարէն հոն է. անհկա էր որ ինձի համար ըսաւ թէ այս ժողովուրդին վրայ թագաւոր պիտի ըլլամ. 3 - Ու ձեռքդ տասը հաց և բլիթներ ու մէկ սափոր մեղր առ, ու անոր գնա. անհկա քեզի պիտի պատմէ ինչ որ տղուն պիտի պատահի: 4 - Եւ Յերոբովամի կինը այնպէս ըրաւ, ու ելաւ Սելով գնաց, և Աբիայի տունը մտաւ. բայց Աբիայի աչքերը ծերութենէն սկարացեր էին, ու չէր կրնար տեսնել:

5 - Եւ Տէրը Աբիայի ըսաւ, Ահա Յերոբովամի կինը իր տղուն համար քեզի բան հարցնելու կու գայ, վասն զի անհկա հիւանդ է. անոր այսպէս ու այսպէս խօսիս. ու անհկա գալու ատենը անձանօթ կերպարանքով պիտի գայ: 6 - Ու երբ անհկա դունէն ներս կը մտնէր, Աբիա անոր ստքերուն ձայնը լսածին պէս ըսաւ, Ով Յերոբովամի կինը, եկուր. դուն ինչո՞ւ այդպիսի անձանօթ կերպարանք մտեր ես. բայց ես քեզի խիստ լուրջ պատճառով զրկուեցայ: 7 - Գնա, Յերոբովամի ըսէ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Որովհետեւ քեզ ժողովուրդին մէջէն բարձրացուցի, ու քեզ իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան ըրի, 8 - Եւ

Թագաւորութիւնը Կառիթի տունէն պատուեցի, ու զանկա քեզի առի. ու դուն իմ պատուիրանքներս պահող ու իմ առջեւ ուղղութիւն ընելու համար իր բոլոր սրտովը *ինծի հնազանդ եղող՝ իմ Կառիթ ծառայիս պէս չեղար. 9 - Մանաւանդ բոլոր քեզմէ առաջ եղողներէն աւելի չարութիւն բերի, ու զիս բարկացնելու համար գացիր քեզի ուրիշ աստուածներ ու ձուլածոյ կուռքեր շինեցիր, ու զիս ետիգնեցիր. 10 - Ասոր համար ահա Յերոբովամի տանը վրայ չարիք պիտի բերեմ, ու Յերոբովամի ամէն այր մարդիկը, «- Կառիթ Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կտորեմ, և Յերոբովամի տունը պիտի աւլեմ՝ ինչպէս ազբը կ'աւլեն, մինչեւ որ հասնի: 11 - Յերոբովամէ քաղաքի մէջ մեռնողը շուները պիտի ուտեն, ու դաշտի մէջ մեռնողը երկինքի թռչունները պիտի ուտեն, քանզի Տէրը խօսեցաւ: 12 - Եւ դուն ելիր, քու տունդ գնա. ու քու սաքերուդ քաղաքին մէջ մտածատենը տղան պիտի մեռնի. 13 - Ու բոլոր Իսրայէլ ողբալով զանկա պիտի թաղեն, վասն զի Յերոբովամէ միայն անկա գերեզման պիտի մանէ. որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուծոյն առջև Յերոբովամի տանը մէջ բարի բան մը չ'ուրեցան որ վրայ գանուեցաւ: 14 - Եւ Տէրը իրեն համար Իսրայէլի վրայ թագաւոր մը պիտի հանէ, որ Կանայն օրը՝ Յերոբովամի տունը պիտի կտորէ. ու ալ ի՞նչ հոգ, գրեթէ հիմա պիտի կտորուի այս բանը: 15 - Եւ Տէրը ջուրերու մէջ եղող շարժուն եղէզի պէս Իսրայէլը պիտի զարնէ, ու Իսրայէլը պիտի խլէ այս բարի երկրին երեսէն, զոր անոնց հայրերուն աւեր էր, ու զանոնք Գեաին անդի կողմը պիտի ցրուէ, որովհետեւ Տէրը բարկացնելով իրենց «Աստարովթի կուռքեր» շինեցին. 16 - Եւ Իսրայէլը երեւի պիտի ձգէ, Յերոբովամի ըրած մեղքերուն համար ու Իսրայէլի ալ մեղանչել տալուն համար: 17 - Այն տան Յերոբովամի կինը ելաւ զնաց ու Թերաս մտաւ, ու անկա տանը դռնէն ներս մտածին պէս՝ տղան մեռաւ: 18 - Եւ զանկա թա-

ղեցին, ու բոլոր Իսրայէլ անոր վրայ ողբացին Տէրոջը խօսքին համեմատ՝ զոր իր ծառային Ա. քիա մարգարէին ձեռքով խօսեր էր:

19 - Ու Յերոբովամի մնացորդ պատմութիւնը՝ թէ ի՞նչպէս պատերազմ ըրաւ, և թէ ի՞նչպէս թագաւորեց, ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է: 20 - Եւ Յերոբովամի թագաւորութիւն ըրած օրերը քսանուերկու տարի եղան, ու իր հայրերուն հետ քնացաւ. ու անոր տեղ անոր որդին Նադաբ թագաւոր եղաւ:

21 - Եւ Սողոմոնի որդին Ռոբովամ Յուդայի մէջ թագաւորեց. Ռոբովամ քառասունըմէկ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, և տասներօթը տարի թագաւորութիւն ըրաւ Երուսաղէմի մէջ, այսինքն այն քաղաքին մէջ՝ զոր Տէրը Իսրայէլի ամէն ցեղերէն ընտրեց իր անունը հոն դնելու համար. ու անոր մայրը Ամմոնացի էր Նաամա անունով: 22 - Եւ Յուդայեանք ալ Տէրոջը առջև շարութիւն բերին, ու իրենց ըրած մեղքերովը իրենց հայրերուն բոլոր ըրածէն աւելի զանկա բարկացուցին: 23 - Եւ անոնք ալ ամէն բարձր բլուրներուն վրայ, ու ամէն կանանչ ծառերուն տակ բարձր տեղեր ու արձաններ և Աստարովթի կուռքեր շինեցին: 24 - Ու երկրին մէջ Սողոմոնական մեղք ալ գործողներ կային, ու Տէրոջը Իսրայէլի որդիներուն առջեւ վռնած ազգերուն բոլոր գարշելի բաներուն նման կ'ընէին:

25 - Եւ Ռոբովամ թագաւորին հինգերորդ տարին Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղէմի վրայ ելաւ. 26 - Ու Տէրոջը տանը գանձերը ու թագաւորին տանը գանձերը առաւ. ամէնն ալ առաւ. Սողոմոնի շինած բոլոր սուկիէ սապարներն ալ առաւ: 27 - Եւ Ռոբովամ թագաւորը անոնց տեղ պղնձէ սապարներ շինեց, ու զանոնք թագաւորական տանը դուռը պահպանութիւն բնող սուրհանդակաց ստիկաններուն ձեռքը յանձնեց: 28 - Ու երբ թագաւորը Տէրոջը տունը կ'երթար՝ սուրհանդակները զանոնք կը կրէին, ու երբ զանոնք սուրհանդակներուն խուցը կը դարձնէին:

29 - Եւ Ռոբովամի մնացորդ պատմութիւնը ու անոր ամէն ըրածը ահա

* Եբր. իմ ետեւէս եկող
 † Կա՛մ, այսօր
 ‡ Կա՛մ, անտառներ

Յուզայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է : 30 - Ու Ռոբովամի և Յերոբովամի մէջտեղ միշտ պատերազմ կար : 31 - Եւ Ռոբովամ իր հայրերուն հետ քնացաւ , ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ . և անոր մայրը Ամիննացի էր Նաամա անունով . ու անոր տեղ անոր որդին *Աբիա թագաւոր եղաւ :

ԳԼ ԺԵ

Եւ Նաբատեան Յերոբովամի թագաւորութեան տասներութերորդ տարին՝ Աբիա Յուզայի վրայ թագաւորեց : 2 - Անիկա Երուսաղէմի մէջ երեք տարի թագաւորութիւն ըրաւ . ու անոր մօրը անունը Մաաքա էր , ու Աբիսողոմի աղջիկն էր : 3 - Եւ անիկա իրմէ առաջ իր հօրը ըրած բոլոր մեղքերուն հետեւեցաւ . ու անոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ կատարեալ չէր՝ իր հօրը Դաւիթի սրտին պէս : 4 - Բայց Դաւիթի սիրոյն համար անոր Տէր Աստուածը Երուսաղէմի մէջ անոր ճրագ մը տուաւ , անկէ ետքը անոր որդին նստեցնելով ու Երուսաղէմը հաստատելով . 5 - Որովհետեւ Դաւիթ Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ , ու իր կեանքին բոլոր օրերուն մէջ բնաւ անոր պատուիրանքներէն չխտորեցաւ՝ Քետացի Ուրիայի բանէն զատ : 6 - Եւ Ռոբովամի ու Յերոբովամի մէջտեղ պատերազմ կար՝ անոր կեանքին բոլոր օրերուն մէջ :

7 - Ու Աբիայի մնացորդ պատանւութիւնը և անոր բոլոր ըրածը ահա Յուզայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է . ու Աբիայի ու Յերոբովամի մէջտեղ պատերազմ կար : 8 - Եւ Աբիա իր հայրերուն հետ քնացաւ , ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին , և անոր տեղ անոր որդին Ասա թագաւոր եղաւ :

9 - Իսրայէլի Յերոբովամ թագաւորին քսաներորդ տարին Ասա Յուզայի վրայ թագաւոր եղաւ . 10 - Ու Երուսաղէմի մէջ քառասունըմէկ տարի թագաւորութիւն ըրաւ , և անոր մօրը անունը Մաաքա էր ու Աբիսողոմի աղջիկն էր : 11 - Եւ Ասա իր հօրը Դաւիթի պէս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ : 12 - Ու Սափանի մեղք գործողները երկրէն վերցուց , և իր հայրերուն շինած բոլոր կուռքերը բնաջինջ ըրաւ : 13 - Ու իր մայրը Մաաքան տիկնութենէ հանեց , քանզի անիկա Աստարովթի կուռք մը շիներ էր . և Ասա անոր կուռքը կտորտեց ու կեդրոն հեղեղատին մէջ սյրեց : 14 - Բայց բարձր տեղերը չվերցան , սակայն Ասայի սիրտը իր կեանքին բոլոր օրերուն մէջ Տէրոջը հետ կատարեալ էր : 15 - Եւ իր հօրը նուիրած բաները ու իր նուիրած բաները , արծաթը ու ոսկին ու անօթները , Տէրոջը տունը տարաւ :

16 - Եւ Ասայի ու Իսրայէլի Բաասա թագաւորին մէջտեղ , անոնց բոլոր օրերուն մէջ , պատերազմ կար : 17 - Ու Իսրայէլի թագաւորը Բաասա Յուզայի դէմ ելաւ , և Ռաման շինեց , որպէս զի Յուզայի Ասա թագաւորին ելլող մանող ճարճ չէ չթողու : 18 - Ուտի Ասա Տէրոջը տանը գանձերուն մէջ ու թագաւորական տանը գանձերուն մէջ մնացած բոլոր արծաթը ու ոսկին առաւ , և իր ծառաներուն ձեռքը տուաւ , ու Ասա թագաւորը Դամասկոս բնակող Ասորոց թագաւորին , Էզրոնի որդւոյն Տաբթմոնի որդւոյն Բենադադի , զրկեց զանոնք , ու ըսաւ , 19 - Իմ ու քու մէջտեղ , և իմ հօրս ու քու հօրդ մէջտեղ դաշնակցութիւն կայ . ահա քեզի արծաթ ու ոսկի ընծայ զրկեցի . աղէ , Իսրայէլի Բաասա թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ աւրէ , որպէս զի անիկա իմ վրայէս ետ քաշուի : 20 - Ու Բենադադ Ասա թագաւորին խօսք մտիկ ըրաւ , և իր զօրքերուն իշխանները Իսրայէլի քաղաքներուն վրայ զրկեց . ու Եյօնը , Դանը , Աբէլ-բեթ-մոաքան ու բոլոր Գեներեթը ու բոլոր Նեփթաղիմի երկիրը զարկաւ : 21 - Եւ Բաասա այս բանը լսելով՝ Ռաման շինելէն ետ կեցաւ ու Թերսայի մէջ նստաւ : 22 - Այն տակն Ասա թագաւորը բոլոր Յուզայի մարդիկը կանչեց առանց մէկը ձգելու , որոնք Բաասայի շինած Ռամային քարերը ու փայտերը վերցուցին , և Ասա թագաւորը անոնցմով Բենիամինի Գաբան ու Մաափան շինեց :

23 - Եւ Ասայի բոլոր մնացորդ պատանւութիւնը , ու անոր բոլոր զօրութիւնը ու բոլոր ըրածը , և անոր շինած քա-

*Եբր. Աբիամ

†Այսինքն , մեծ մօրը . տես հմր. 2 :

ղաքները ահա Յուդայի թագաւորնե-
րուն յիշատակաց գիրքին մէջ գրուած
են . բայց անիկա իր ծերութեան ա-
տենը սաքերու ցաւ ունէր : 24 - Ու
Ասա իր հայրերուն հետ քնացաւ , և
իր հայրերուն հետ իր հօրը Գաւթի
քաղաքին մէջ թաղուեցաւ . ու անոր
տեղ անոր որդին Յովսափաա թագա-
ւոր եղաւ :

25 - Եւ Յուդայի Ասա թագաւորին
երկրորդ տարին Յերոբովամի որդին
Նադաբ Իսրայէլի վրայ թագաւոր ե-
ղաւ , ու անիկա Իսրայէլի վրայ երկու
տարի թագաւորութիւն ըրաւ : 26 -
Եւ Տէրօջը առջև չարութիւն ըրաւ ,
ու իր հօրը ճամբուն մէջ քալեց , ու
անոր ըրած մեղքին մէջ որով Իսրա-
յէլի մեղանչել տուաւ : 27 - Եւ Իսա-
քարի տունէն Աքիայի որդին Բաասա
անոր դէմ գլուխ վերցուց . ու Բաասա
զանիկա Փղշտացուց Գաբաթանին քով
զարկաւ , երբ Նադաբ բոլոր Իսրայէլի
հետ Գաբաթանը պաշարեր էր : 28 -
Եւ Յուդայի Ասա թագաւորին երրորդ
տարին Բաասա մեռցուց զանիկա , ու
անոր տեղ թագաւոր եղաւ : 29 - Եւ
ինք թագաւոր եղածին պէս Յերոբո-
վամի բոլոր տունը զարկաւ . ու Տէրօջը
խօսքին համեմատ , զոր իր ծառային
Աիլօնացի Աքիա մարգարէին ձեռքով
խօսեր էր , Յերոբովամէ բնաւ շնչաւոր
մը չլծողուց , ու զանիկա բնաջինջ
ըրաւ , 30 - Յերոբովամի մեղքերուն
համար՝ որոնցմով մեղանչեր էր , ու
Իսրայէլի մեղանչել տուեր էր՝ Իսրա-
յէլի Տէր Աստուածը բարկացնելով :

31 - Եւ Նադաբի մնացորդ պատ-
մութիւնը ու անոր բոլոր ըրածը՝ ահա
Իսրայէլի թագաւորներուն յիշատա-
կաց գիրքին մէջ գրուած են : 32 - Եւ
Ասայի ու Իսրայէլի Բաասա թագա-
ւորին մէջտեղ , անոնց բոլոր օրերուն
մէջ , պատերազմ կար :

33 - Յուդայի Ասա թագաւորին եր-
րորդ տարին Աքիայի որդին Բաասա
Թերսայի մէջ բոլոր Իսրայէլի վրայ թա-
գաւոր եղաւ , ու քսանչորս տարի Բա-
սա-Քի-Ն ըրաւ : 34 - Եւ անիկա
Տէրօջը առջև չարութիւն ըրաւ , ու
Յերոբովամի ճամբուն մէջ քալեց , և
անոր մեղքին մէջ՝ որով անիկա Իսրա-
յէլի մեղանչել տուեր էր :

Եւ Բաասայի համար Տէրօջը խօսքը
Անանիի որդւոյն Յեուի եղաւ՝ ըսելով ,
2 - Որովհետեւ քեզ փոշիէն բարձրա-
ցուցի , ու քեզ իմ ժողովուրդիս Իսրա-
յէլի վրայ իշխան դրի , և դուն Յերոբո-
վամի ճամբան գացիր , ու իմ ժող-
ովուրդիս Իսրայէլի մեղանչել տուիր ,
ու անոնց մեղքերովը զիս բարկացուցիր ,
3 - Ահա ես *Բաասան ու անոր տունը՝
բնաջինջ պիտի ընեմ , և քու տունդ
Նաբատեան Յերոբովամի տանը պէս
պիտի ընեմ : 4 - Բաասայէ քաղաքի
մէջ մեռնողը շուները պիտի ուտեն ,
ու դաշտի մէջ մեռնողը երկինքի
թռչունները պիտի ուտեն :

5 - Եւ Բաասայի մնացորդ պատմու-
թիւնը ու անոր ըրածը ու պօրութիւնը՝
ահա Իսրայէլի թագաւորներուն յի-
շատակաց գիրքին մէջ գրուած են : 6 -
Եւ Բաասա իր հայրերուն հետ քնա-
ցաւ ու Թերսայի մէջ թաղուեցաւ , և
անոր տեղ անոր որդին Էլա թագաւոր
եղաւ : 7 - Նաև Անանիի որդւոյն Յեու-
մարգարէին ձեռքով Տէրօջը խօսքը
եղաւ Բաասայի ու անոր տանը վրայ
այն ամէն չարքներուն համար , զո-
րոնք ինք Տէրօջը առջև ըրած էր ,
զանիկա իր ձեռքերուն գործովը բար-
կացնելով * - Յերոբովամի տանը պէս
ըլլալով , նաև զանիկա մեռցնելուն
համար :

8 - Յուդայի Ասա թագաւորին քսա-
նըվեցերորդ տարին Բաասայի որդին
Էլա Թերսայի մէջ Իսրայէլի վրայ թա-
գաւոր եղաւ , * - երկու տարի Բա-
սա-Քի-Ն ըրաւ : 9 - Անիկա երբ Թեր-
սայի մէջ Թերսայի տանը հազարապե-
տին Արսայի տունը խմեր ու զինովցեր
էր , անոր ծառան Զամբրի , որ ան-
կաւքերուն կէտին վրայ իշխան էր , ա-
նոր դէմ գլուխ վերցուց . 10 - Եւ
Զամբրի ներս մտնելով՝ զանիկա զար-
կաւ մեռցուց , և անոր տեղ ինք թա-
գաւոր եղաւ՝ Յուդայի Ասա թագաւո-
րին քսանըեօթներորդ տարին : 11 - Ու
երբ թագաւոր եղաւ ու իր օթուր
նստաւ , իսկայն Բաասայի բոլոր տունը,
թէ՛ անոր սպակաւանները և թէ՛ բա-
րեկամները , մեռցուց , ու անոր մէ՛կ այր

*Նէբ. Բաասայի ետեւէն ու անոր
տանը ետեւէն

մարդը ողջ չլծողուց: 12 - Եւ Զամբրի Բասասայի բոլոր տունը բնաջինջ ըրաւ, Բասասայի վրայով Յեւ մարգարէին ձեռքով Տէրոջը ըսած խօսքին համեմատ, 13 - Բասասայի բոլոր մեղքերուն համար ու անոր սրգւոյն Ելայի մեղքերուն համար, որոնցմով իրենք մեղանչեցին և Իսրայէլի մեղանչել տուին, ու իրենց սնապաշտութիւններովը Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուցին:

14 - Ու Ելայի մնացորդ պատմութիւնը և անոր բոլոր ըրածը՝ ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են:

15 - Յուդայի Ասա թագաւորին քսանըեթներորդ տարին Զամբրի Թերսայի մէջ եօթը օր թագաւորութիւն ըրաւ. բայց ժողովուրդը Փղշաացւոց Գաբաթոնին դէմ՝ բանակեր էր: 16 - Եւ բանակին մէջ եղող ժողովուրդը ըսելով որ Զամբրի գլուխ վերցուցեր է, ու նաև թագաւորը մեռցուցեր է, նայն օրը բոլոր Իսրայէլ բանակին մէջ Ամրի զօրավարը Իսրայէլի վրայ թագաւոր դրին: 17 - Եւ Ամրի ու անոր հետ բոլոր Իսրայէլ Գաբաթոնէ ելան ու Թերսան պաշարեցին: 18 - Ու երբ Զամբրի քաղաքին տանուիլը տեսաւ, թագաւորական տանը *ներսի կողմը՝ մտաւ, և իր վրայ թագաւորական տունը կրակով այրեց ու մեռաւ, 19 - Իր գործած մեղքերուն համար, որոնցմով Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու քաղեց Յերոբոամի ճամբուն մէջ ու անոր ըրած մեղքին մէջ, որով անիկա Իսրայէլի մեղանչել տուեր էր:

20 - Եւ Զամբրիի մնացորդ պատմութիւնը ու անոր ըրած գաւաճանութիւնը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է:

21 - Այն ատեն Իսրայէլի ժողովուրդը երկուքի բաժնուեցաւ. ժողովուրդին կէսը Գինաթի սրգւոյն Թաբնիի ետեւէն գնաց, որպէս զի զանիկա թագաւոր դնեն. ու կէսն ալ Ամրիի ետեւէն գնաց: 22 - Եւ Ամրիի ետեւէն գացող ժողովուրդը՝ Գինաթեան Թաբնիի ետեւէն գացող ժողովուրդէն զօրաւոր գտնուեցաւ. ու Թաբնի մեռաւ, և Ամրի թագաւոր եղաւ: 23 - Յուդայի Ասա թագաւորին երեսունը մէկերորդ տարին Ամրի Իսրայէլի վրայ

թագաւոր եղաւ, ու աստուերկու տարի Խաթաւոսի ըրաւ. վեց տարի Թերսայի մէջ թագաւորութիւն ըրաւ.

24 - Ու Սամերէ երկու տաղանդ արծաթով Սամարիայի լեռը ծախու աւաւ, ու լեռանը վրայ *առաջ շինեց, և շինած քաղաքին անունը այն լեռանը տէրոջը Սամերի անունով Սամարիա կոչեց:

25 - Ու Ամրի Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, և բոլոր իրմէ առաջ եղողներէն աւելի չար եղաւ. 26 - Քանզի անիկա Նաբատեան Յերոբոամի բոլոր ճամբուն մէջ քաղեց, ու անոր մեղքին մէջ՝ որով Իսրայէլի մեղանչել տուաւ. այնպէս որ իրենց սնապաշտութիւններովը Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուցին:

27 - Եւ Ամրիի ըրած գործերուն մնացորդ պատմութիւնը ու անոր ըրած զօրութիւնը՝ ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են: 28 - Եւ Ամրի իր հայրերուն հետ քնացաւ ու Սամարիայի մէջ թաղուեցաւ. ու անոր տեղ անոր որդին Աքաաբ թագաւոր եղաւ:

29 - Եւ Ամրիի որդին Աքաաբ Յուդայի Ասա թագաւորին երեսունըթերորդ տարին Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ. ու Ամրիի որդին Աքաաբ Իսրայէլի վրայ Սամարիայի մէջ քսանուերկու տարի թագաւորութիւն ըրաւ: 30 - Եւ Ամրիի որդին Աքաաբ բոլոր իրմէ առաջ եղողներէն աւելի Տէրոջը առջև չարութիւն ըրաւ: 31 - Ու Նաբատեան Յերոբոամի մեղքերուն մէջ քաղելը անոր առջև ոչինչ բան մը սեպուելով, Սիդոնացւոց Եթբաազ թագաւորին աղջիկը Յեզաբէլը կին առաւ, և գնաց Բաճազի ծառայութիւն ըրաւ ու անոր երկրպագութիւն ըրաւ: 32 - Եւ Սամարիայի մէջ իր շինած Բաճազի տանը մէջ Բաճազի սեղան մը կանգնեց: 33 - Ու Աքաաբ Աստարովթի կուռք մը շինեց. և Աքաաբ իր ըրած գործերովը իրմէ առաջ եղող Իսրայէլի բոլոր թագաւորներէն աւելի Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուց:

34 - Անոր օրերը Բեթելացի Յիէլ Երիքովը շինեց. ու իր անդրանիկ աղովը Աբիրոնով անոր հիմը դրաւ, և իր պզտիկ աղովը Սեգուրով անոր դռները կանգնեց՝ Նաւեան Յեսուի ձեռքով Տէրոջը ըսած խօսքին համեմատ:

*Կա՛, պալատը

ԳԼ. ԺԵ

Եւ Գաղաադու բնակիչներէն Թեղբացի Եղիա Աքաաբի ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը, որուն առջև կը կայնիմ, կենդանի է որ այս տարիներուն մէջ ցող ու անձրև պիտի չըլլայ, բայց եթէ իմ խօսքովս :

2 - Ու Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, 3 - Ասկէ գնա, ու դէպ ի արեւելք դառնալով՝ Յորդանանու գիմաց եղող Քերիթ չեղեղաաին քով պահուէ. 4 - Դուն այն չեղեղաատէն ջուր պիտի խմես. ու ագուաւներուն Տրամայեր եմ որ հոն քեզ կերակրեն : 5 - Եւ անիկա գնաց ու Տէրոջը ըսածին պէս ըրաւ. ու գնաց Յորդանանու գիմաց եղող Քերիթ չեղեղաաին քով նստաւ : 6 - Եւ ագուաւները ատուանց անոր հաց ու միս՝ ու իրիկուան ալ՝ հաց ու միս կը բերէին, ու անիկա չեղեղաատէն ջուր կը խմէր : 7 - Եւ Ժամանակէ մը ետքը չեղեղաատը ցամքեցաւ, վասն զի երկրին վրայ անձրև չեկաւ :

8 - Ու Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, 9 - Ելի՛ր, Սիդոնացաց Սարեփթան գնա, ու հոն նստէ. ահա հոն որբեւորի կնոջ մը Տրամայեր եմ որ քեզ կերակրէ : 10 - Եւ անիկա ելաւ Սարեփթա գնաց. ու քաղաքին դուռը հասնելով՝ ատաւ որ որբեւորի կին մը փայտ կը ժողվէր. ու զանիկա կանչեց ու ըսաւ, Կ'աղաչեմ, ինծի ամանով քիչ մը ջուր բեր որպէս զի խմեմ : 11 - Ու երբ անիկա բերելու գնաց, Եգիս անոր ետեւէն կանչեց ու ըսաւ, Ձեռքդ պատառ մըն ալ հաց ա՛ռ ինծի բեր : 12 - Եւ կինը ըսաւ, Քու Տէր Աստուածդ կենդանի է որ նկանակ չունիմ, բայց միայն կարասին մէջ մէկ բուռի չափ ալիւր կայ, ու կուժին մէջ ալ քիչ մը իւղ կայ. և ահա երկու կտոր փայտ կը ժողվեմ, որպէս զի երթամ զանիկա ինծի ու իմ աղուս համար եփեմ, և ուտենք, ու երբեք մեռնինք : 13 - Ու Եղիա անոր ըսաւ, Մի փախնար, գնա ըսածիդ պէս րրէ. բայց անկէ նախ ինծի համար պղտիկ շօթ մը շինէ ու ինծի բեր, և քեզի ու քու աղուդ համար ետքը շինէ. 14 - Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Կարասէն ալիւրը պիտի չհասնի, ու կուժէն իւղը պիտի չպակ-

տի՛ մինչև այն օրը որ Տէրը երկրի վրայ անձրև տայ : 15 - Եւ կինը գնաց ու Եղիայի ըսածին պէս ըրաւ. ու անիկա և ինք ու իր ընտանիքը շատ մը տաէն կերան : 16 - Կարասէն ալիւրը չհասաւ, ու կուժէն իւղը չպակսեցաւ, Տէրոջը՝ Եղիայի ձեռքով զուցած խօսքին համեմատ :

17 - Եւ եղաւ որ այս բաներէն ետքը տանը տիկնոջ աղան հիւանդացաւ, ու անոր հիւանդութիւնը շատ ծանր էր՝ այնպէս որ անոր վրայ շունչ չմնաց : 18 - Եւ կինը Եղիայի ըսաւ, Մարդ Աստուծոյ, ինծի հետ ի՞նչ ունիս, միթէ իմ մեղքս յիշեցնելու ու իմ աղաս մեռցնելու համար ինծի եկար : 19 - Ու անիկա անոր ըսաւ, Տղադ ինծի սուրբ. ու զանիկա անոր ծոցէն առաւ, և իր բնակած վերնատունը հանեց, ու զանիկա իր անկողինին մէջ պառկեցուց, 20 - Եւ Տէրոջը աղաղակելով՝ ըսաւ, Ով Տէր Աստուած իմ, իրաւցընէ այս որբեւորի կինն ալ, որուն քով ես պանդխտութեամբ կը բնակիմ, չարչարեցի՞ր՝ անոր աղան մեռցընելով : 21 - Ու աղուն վրայ երեք անգամ երկննալով ու Տէրոջը աղաղակելով՝ ըսաւ, Ով Տէր Աստուած իմ, կ'աղաչեմ որ այս աղուն հոգին իր մարմինին դառնայ : 22 - Եւ Տէրը Եղիայի ձայնը լսեց, ու աղուն հոգին իր մարմինին դարձաւ, և անիկա կենդանացաւ : 23 - Ու Եղիա աղան առաւ, ու զանիկա վերնատունէն տունը իջեցուց, և անոր մօրը տուաւ. ու Եղիա ըսաւ, Կայէ, աղադ կենդանի է : 24 - Եւ կինը Եղիայի ըսաւ, Հիմա ստով գիտցայ որ դուն Աստուծոյ մարդն ես, ու քու բերնիդ մէջ Տէրոջը խօսքը ճշմարիտ է :

ԳԼ. ԺԸ

Եւ շատ տաէն անցնելէն ետքը Տէրոջը խօսքը երրորդ տարին Եղիայի եղաւ՝ ըսելով, Գնա, Աքաաբի երեւցիր, ու երկրի վրայ անձրև պիտի տամ : 2 - Ու Եղիա Աքաաբի երեւնալու գնաց. և Սամարիայի մէջ սաստիկ սով կար :

3 - Ու Աքաաբ իր տանը անտեսը Արդիան կանչեց. (ու Արդիա Տէրոջմէ շատ կը վախնար. 4 - Ու երբ Յեզբէլ Տէրոջը մարգարէները ջարդեց, Արդիա հարիւր մարգարէ առաւ, ու

զանոնք, յիսուն յիսուն, քարայրներու մէջ պահեց, ու զանոնք հացով ու ջրով կերակրեց: 5 - Եւ Ա.քաաբ ըսաւ Աբդիայի, Եկուր, այս երկրին մէջ եղած բոլոր ջուրի աղբիւրներուն ու բոլոր շեղեղատներուն քովերը դռնքիս: Կարելի է խոտ գտնենք, և ձիերը ու ջորիները ապրեցնենք ու բոլոր անասունները չկորսնցնենք: 6 - Եւ անոնք երկիրը իրենց մէջ բաժնեցին պարտելու համար. Ա.քաաբ մէկ ճամբայէ մինակ գնաց, ու Աբդիա մէկ ուրիշ ճամբայէ մինակ գնաց:

7 - Ու երբ Աբդիա ճամբուն մէջ էր, ահա Եղիա անոր դիմաց ելաւ. ու Աբդիա զանկա ճանչցածին պէս իր երեսին վրայ ինկաւ ու ըսաւ, Արդեօք իմ տէրս Եղիա դո՞ւն ես: 8 - Ու Եղիա անոր ըսաւ, Ես եմ. գնա քու տէրոջդ գրուցէ, թէ Ահա Եղիա ի՞նչ քոյ: 9 - Եւ անկա ըսաւ, Ես ի՞նչ մեղք գործեր եմ, որ դուն քու ծառայ Ա.քաաբի ձեռքը կը մատնես, որպէս զի զիս մեռցնէ: 10 - Քու Տէր Աստուածդ կենդանի է որ ազգ մը կամ թագաւորութիւն մը չմնաց, ուր իմ տէրս քեզ փնտռելու համար մարդ զրկած չըլլայ. ու երբ Զկայ ըսին, այն թագաւորութեան կամ այն ազգին երգում ընել տուաւ՝ որ քեզ գտած չեն. 11 - Եւ հիմա դուն կ'ըսես, Քնա քու տէրոջդ ըսէ թէ Ահա Եղիա ի՞նչ քոյ. 12 - Ու կրնայ ըլլալ որ իմ քու քովէդ երթալէս ետքը՝ Տէրոջը Հոգին քեզ իմ չգիտցած տեղս փոխազրէ, ու ես գացած Ա.քաաբի պատմած ըլլալով, երբ քեզ չգտնէ, զիս պիտի մեռցնէ. ու ես քու ծառայ աղայութենէս ի վեր Տէրոջմէ կը վախնամ: 13 - Իմ ըրածս իմ տէրոջս չպատմուեցա՞ւ, թէ երբ Յեզարէլ Տէրոջը մարգարէները սպաննեց, ես Տէրոջը մարգարէներէն հարիւր մարդ, յիսուն յիսուն, քարայրներու մէջ պահեցի, ու զանոնք հացով ու ջրով կերակրեցի: 14 - Եւ հիմա դուն կ'ըսես, Քնա ու տէրոջդ ըսէ, թէ Ահա Եղիա ի՞նչ քոյ. ու անկա զիս պիտի մեռցնէ: 15 - Ու Եղիա ըսաւ, Զօրութեանց Տէրը, որուն առջև կը կայնիմ, կենդանի է որ այսօր անոր պիտի երեւնամ:

16 - Եւ Աբդիա Ա.քաաբի առջև ելաւ ու անոր պատմեց. ու Ա.քաաբ Եղիան դիմաւորելու գնաց: 17 - Եւ Ա.քաաբ Եղիան տեսածին պէս՝ Ա.քաաբ

անոր ըսաւ, Իսրայէլը նեղութեան մէջ ձգողը դո՞ւն ես: 18 - Ու անկա ըսաւ, Իսրայէլը ես չնեղեցի, հապա դուն ու քու հօրդ տունը. քանզի Տէրոջը պատուիրանքները թողուցիք, ու Բահաղիմի ետեւէն գացիք: 19 - Եւ հիմա մարդ զրկէ, ու բոլոր Իսրայէլը և Բահաղի չորս հարիւր յիսուն մարգարէները, ու Յեզարէլի սեղանէն ուտող Աստուծով չորս հարիւր մարգարէները Կարմեղոս լեւան վրայ իմ քովս ժողովէ: 20 - Եւ Ա.քաաբ բոլոր Իսրայէլի որդիներուն մարդ զրկեց, ու մարգարէները Կարմեղոս լեւուր ժողովեց:

21 - Ու Եղիա բոլոր ժողովուրդին մօտեցաւ, ու ըսաւ, Գուք մինչև երբ երկու մաքի վրայ կը կաղաք. եթէ Եհովա Աստուած է՝ անոր ետեւէն գացէք, իսկ եթէ Բահաղ Աստուած է՝ անոր ետեւէն գացէք. և ժողովուրդը բնաւ պատասխան մը չտուաւ անոր: 22 - Ու Եղիա ժողովուրդին ըսաւ, Տէրոջը մարգարէն ես միայն մնացի, և Բահաղի մարգարէները չորս հարիւր յիսուն մարդիկ են: 23 - Ուրեմն մեզի երկու զուարակ արուի. ու զուարակին մէկը անոնք իրենց համար ընտրեն, ու կտոր կտոր ընեն, և զանկա փայտերու վրայ դնեն, բայց կրակ չդնեն. ու միւս զուարակը ես պատրաստեմ, ու զանկա փայտերու վրայ դնեմ, բայց կրակ չդնեմ: 24 - Եւ դուք ձեր աստուծոյն անունը կանչեցէք, ես ալ Եհովայի անունը կանչեմ. ու կրակով պատասխան տուող աստուածը՝ Աստուած անկա է. և բոլոր ժողովուրդը պատասխան տուին ու ըսին, Այս իստքը բարի է:

25 - Ու Եղիա Բահաղի մարգարէներուն ըսաւ, Զեզի զուարակներէն մէկը ընտրեցէք, ու առաջ դուք ըրէք, վասն զի դուք շատուոր էք. ու ձեր աստուծոյն անունը կանչեցէք, բայց կրակ մի դնէք: 26 - Եւ անոնք իրենց արուած զուարակը առին ու պատրաստեցին. և առաւօտէն մինչև կէսօր Բահաղի անունը կանչեցին ու ըսին, Ով Բահաղ, մեզի պատասխան տուր. բայց ձայն չկար ու պատասխան տուող չկար. և անոնք իրենց շինած սեղանին *քով կը ցառկատէին: 27 - Ու երբ կէսօր եղաւ, Եղիա զանոնք ծաղր ընե-

*Կամ, վրայ

լով ըստ, Բարձր ձայնով կանչեցէք, քանզի անիկա աստուած է. Թերեւս *խօսակցութիւն մը ունի, կամ զբաղած է, կամ ճամբորդութիւն կ'ընէ, կամ Թերեւս քնացած է՝ ու պէտք է որ արթննայ: 28 - Եւ անոնք բարձր ձայնով կը պուսային, ու իրենց սովորութեանը պէս դանակներով ու գեղարդներով իրենց մարմինները կը կտրէին, մինչև որ իրենց վրայէն արիւն կը վազէր: 29 - Ու երբ կէտօրը անցաւ, մինչև երէկոսն զրհին աստենը մարգարէութիւն ըրին. ու ձայն չկար ու պատասխան ատուող չկար, ու մտիկ ընող չկար:

30 - Այն ատեն Եղիա բոլոր ժողովուրդին ըստ, Ինձի մօտեցէք. ու բոլոր ժողովուրդը անոր մօտեցաւ. և անիկա Տէրօջը փրած սեղանը նորոգեց:

31 - Ու Եղիա աստուերկու քար տուաւ Յակօբի սրբուց ցեղերուն թիւովը, որու Տէրօջը խօսքը եղաւ՝ բսելով, Գու անունդ Իսրայէլ ըլլայ: 32 - Եւ այն քարերով Տէրօջը անուանը սեղան շինեց, ու սեղանին բոլորափքը փոս մը բրաւ, որ երկու գրիւի չատ հունա կ'առնէր:

33 - Եւ փայտերը շարեց, ու զուարակը կտոր կտոր բրաւ և փայտերուն վրայ դրաւ: 34 - Ու ըստ, Չորս սափոր լեցուն ջուր բերէք, և սղջակէզին վրայ ու փայտերուն վրայ թափեցէք. ու ըստ, Երկրորդ անգամ այնպէս ըրէք, ու երկրորդ անգամ այնպէս ըրին. ու ըստ, Երրորդ անգամ այնպէս ըրէք, ու երրորդ անգամ այնպէս ըրին: 35 - Եւ ջուրը սեղանին բոլորափքը քալեց, ու փոսն ալ ջրով լեցուեցաւ:

36 - Եւ երէկոսն զրհին մատուցուելու ատենը Եղիա մարգարէն մօտեցաւ ու ըստ, Ով Եհովա Աստուած Աբրահամու, Իսահակայ և Իսրայէլի, այսօր գիացուի սր Իսրայէլի մէջ Աստուած դուն ես, ու ես քու ծառայեմ, և այս բոլոր բաները քու խօսքովդ ըրի: 37 - Ինձի պատասխան տուր, ով Տէր, Ինձի պատասխան տուր, ու այս ժողովուրդը զիտնայ թէ դուն ես Աստուած, ով Տէր, և թէ անոնց սիրտը ետ դարձնողը դուն ես: 38 - Այն ատեն Տէրօջմէ կրակ իջաւ, և սղջակէզը ու փայտերը և քարերը ու հողը այրեց, ու փոսին մէջի ջուրն ալ լափեց:

39 - Եւ բոլոր ժողովուրդը «յ» Բանը տեսնելով՝ երեսի վրայ ինկան, ու ըսին, Եհովա է Աստուած, Եհովա է Աստուած:

40 - Ու Եղիա անոնց ըստ, Բահայի մարգարէները բռնեցէք, «- անոնցմէ մարդ մը չազատի. և զանոնք բռնեցին, ու Եղիա զանոնք կիտն հեղեղատը իջեցուց, և հոն զանոնք մեռցուց:

41 - Ու Եղիա Աքատաբի ըստ, Վեր ելիր, կեր ու խմէ, վասն զի *անձրեւի սանսձայն՝ կայ: 42 - Եւ Աքատաբ ուտելու ու խմելու ելաւ, ու Եղիա կարմեղսս լեռն գլուխը ելաւ, ու գետինը ծռեցաւ, ու երեսը ծռնկերուն մէջ դրաւ: 43 - Եւ իր մանչուն ըստ, Հիմա ել, «- դէպի ծովակողմը նայէ. և անիկա ելաւ նայեցաւ, ու ըստ, Բան մը չկայ. ու Եղիա եօթը անգամ՝ Նորէն գնա, ըստ: 44 - Ու եօթներորդ անգամին ըստ, Ահա ծովէն մարդու թաթի չափ պղտիկ ամպ մը կ'ելլէ. ու անիկա ըստ, Ելիր, Աքատաբի բսէ, կառքդ լծէ ու իջիր, որպէս զի անձրեւի չբռնուիս: 45 - Ու մինչև ասդին անգին Գառնուլը երկինքը ամպերով մթնեցաւ և հով կար, ու մեծ անձրեւ եղաւ: Ու Աքատաբ հեծաւ, Յեզրայէլ գնաց: 46 - Եւ Տէրօջը ձեռքը Եղիայի հետ եղաւ. ու անիկա իր մէջքը պնդեց, ու մինչև Յեզրայէլի մուտքը Աքատաբի առջեւէն վազեց:

ԳԼ ԺԹ

Եւ Աքատաբ Եղիայի բոլոր ըրածը, ու անոր՝ բոլոր մարգարէները սրով մեռցնելը Յեզրայէլի պատմեց: 2 - Ու Յեզրայէլ պատգամաւոր մը զրկեց Եղիայի՝ բսելով, Աստուածները այսպէս ու սակէ աւելի ընեն ինչի, եթէ վաղը այս ատեն քու անձդ անոնց մէկուն անձին տեղ չդնեմ:

3 - Ու Եղիա «յ» Բանը տեսնելով՝ ելաւ իր անձին ապարիտանը համար գնաց, և Յուզայի Բերտաբէէն մտաւ, ու իր մանչը հոն ձգեց: 4 - Եւ ինք անապատին մէջ մէկ օրուան ճամբայ գնաց, ու զիհի մը տակ նստաւ. և սրտանց մեռնիլ ուզեց, ու ըստ, Այ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս:

5 - Ու Եղիա «յ» Բանը տեսնելով՝ ելաւ իր անձին ապարիտանը համար գնաց, և Յուզայի Բերտաբէէն մտաւ, ու իր մանչը հոն ձգեց: 6 - Եւ ինք անապատին մէջ մէկ օրուան ճամբայ գնաց, ու զիհի մը տակ նստաւ. և սրտանց մեռնիլ ուզեց, ու ըստ, Այ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս:

7 - Ու Եղիա «յ» Բանը տեսնելով՝ ելաւ իր անձին ապարիտանը համար գնաց, և Յուզայի Բերտաբէէն մտաւ, ու իր մանչը հոն ձգեց: 8 - Եւ ինք անապատին մէջ մէկ օրուան ճամբայ գնաց, ու զիհի մը տակ նստաւ. և սրտանց մեռնիլ ուզեց, ու ըստ, Այ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս:

9 - Ու Եղիա «յ» Բանը տեսնելով՝ ելաւ իր անձին ապարիտանը համար գնաց, և Յուզայի Բերտաբէէն մտաւ, ու իր մանչը հոն ձգեց: 10 - Եւ ինք անապատին մէջ մէկ օրուան ճամբայ գնաց, ու զիհի մը տակ նստաւ. և սրտանց մեռնիլ ուզեց, ու ըստ, Այ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս:

*Աճ, մտած մունք

*Աճ, շատ անձրեւի ձայն
*Աճ, վախնալով

քանզի ես իմ հայրերէս լաւ չեմ: 5 - Աւ գիհի մը տակ պառկեցաւ քնացաւ . և ահա հրեշտակ մը անոր դպաւ ու անոր ըսաւ , Ելիր կեր : 6 - Աւ Եղի նայեցաւ , և ահա գլխուն քով *միսիբի տակ եփուած շօթ* մը ու մէկ կուժ ջուր կար . ու կերաւ խմեց , ու նորէն պառկեցաւ : 7 - Եւ Տէրոջը հրեշտակը դարձաւ երկրորդ անգամ՝ անոր դպաւ ու անոր ըսաւ , Ելիր կեր , քանզի †քու երբեք ճամբադ՝ շատ է : 8 - Եւ անիկա ելաւ , կերաւ ու խմեց . և այն կերակուրին ուժովը քառասուն օր ու քառասուն գիշեր գնաց , * - մինչև Քորեբ , Աստուծոյ լեռը , հա՛ : :

9 - Եւ հոն քարայրը մտաւ ու գիշերը հոն մնաց . և ահա Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով , Ով Եղիա , հոս ի՞նչ բան ունիս : 10 - Աւ անիկա ըսաւ , Զօրաց Տէր Աստուծոյն համար մեծ նախանձաւորութիւն ունեցայ , քանզի Իսրայէլի որդիները քու ուխտդ թողուցին , քու սեղաններդ փլցուցին ու քու մարգարէներդ սրով մեռցուցին . ու միայն ես մնացեր եմ , և իմ անձս ալ կը փնտռեն՝ որպէս զի զանիկա վերցընեն : 11 - Աւ հա՛ ըսաւ , Ելիր ու լեռը Տէրոջը առջև կայնէ : Եւ ահա Տէրը կ'անցներ . ու Տէրոջը առջեւէն լեռները քակող ու ապառաժները կտորող մեծ ու սաստիկ հով եղաւ , Բայ Տէրը այն հովին մէջ չէր . և հովին ետեւէն գեանաշարժ եղաւ , Բայ Տէրը գեանաշարժին մէջ չէր . 12 - Աւ գեանաշարժին ետեւէն կրակ եղաւ , Բայ Տէրը կրակին մէջ չէր . և կրակին ետեւէն մեղմ * - բարակ ձայն մը իջաւ : 13 - Աւ Եղիա զանիկա լաստին պէս՝ իր վերարկուովը երեսը ծածկեց , ու ելաւ քարայրին բերանը կայնեցաւ . ու ահա անոր ձայն մը ելաւ ու ըսաւ , Ով Եղիա , հոս ի՞նչ բան ունիս : 14 - Աւ անիկա ըսաւ , Զօրաց Տէր Աստուծոյն համար մեծ նախանձաւորութիւն ունեցայ , քանզի Իսրայէլի որդիները քու ուխտդ թողուցին , քու սեղաններդ փլցուցին ու քու մարգարէներդ սրով մեռցուցին . ու միայն ես մնացեր եմ , և իմ անձս ալ կը փնտռեն՝ որպէս զի զանիկա վերցնեն : 15 - Աւ Տէրը անոր ը-

սաւ , Գնա , քու ճամբադ դարձիր , և Դամասկոսի անապատին ճամբայէն երթալով Ազաբէլը Ասորոց վրայ թագաւոր օժեւ . 16 - Եւ նամեասի որդին Յեուկ Իսրայէլի վրայ թագաւոր օժեւ . ու Աբելմաուլայէ եղող Սափաթի որդին Եղիսէն քու տեղդ մարգարէ օժեւ : 17 - Եւ պիտի ըլլայ թէ ով որ Ազաբէլի սուրէն ազատի , Յեուկ պիտի մեռցնէ զանիկա . ու ով որ Յեուկի սուրէն ազատի , Եղիսէ պիտի մեռցնէ զանիկա . 18 - Բայց ես Իսրայէլէ եօթը հազար մարդ *պահեցի , այսինքն բոլոր անոնք որ Բահազի առջև ծուկ կրկնած չեն , ու զանիկա բերնով պագած չեն :

19 - Եւ անկէ գնաց ու Սափաթի որդին Եղիսէն գտաւ , որ արա կը վարէր՝ իր առջև տասուերկու զոյգ եղջեր * - նիւնալ , ու ինք երկուսասաներորդին հետ էր . ու Եղիա անոր քովէն անցնելով՝ իր վերարկուէն անոր վրայ ձգեց : 20 - Այն առեւ Եղիսէ եղները թողուց ու Եղիայի ետեւէն վազեց , ու ըսաւ , Հրաման տուր՝ որ երբեք հայրս ու մայրս համբուրեմ , ու քու ետեւէդ գամ . ու Եղիսէ անոր ըսաւ , Գնա , ետ դարձիր , քանզի ես քեզի ի՞նչ ըրի : 21 - Եւ անոր քովէն դարձաւ , ու եզներուն մէկ զոյգը բռնեց մորթեց , ու եզներուն գործիքներովը անոնց միսը եփեց , և ժողովուրդին տուաւ , ու կերան . և ինք ելաւ Եղիայի ետեւէն գնաց ու անոր ծառայութիւն կ'ըներ :

ԳԼ. Ի

Աւ Ասորոց Բենադագ թագաւորը իր բոլոր զօրքերը ժողովեց , և իրեն հետ երեսուներկու թագաւոր կար . ու ձիերով ու կառքերով ելաւ Սամարիան պաշարեց , և անոր հետ պատերազմ ըրաւ : 2 - Աւ Իսրայէլի Աքատը թագաւորին դեսպաններ ղրկեց քաղաքին մէջ , 3 - Եւ անոր ըսաւ , Բենադագ այսպէս կ'ըսէ . Քու արծաթդ ու սկիզ իմն է , ու քու կիներդ ու գեղեցիկ որդիներդ իմն են : 4 - Եւ Իսրայէլի թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ , Ով աէր իմ թագաւոր , քու ըսածիդ պէս ես ալ քուկդ եմ ու իմ ամէն ունեցածս ալ : 5 - Աւ դեսպանները նորէն եկան

*Եբբ. կայծերու շօթ
†Եբբ. ճամբան քեզմէ

*Կա՛մ, պիտի պահեմ

ըսին, Բենագագ այսպէս կ'ըսէ. Ես քեզի մարտ զրկեցի ու ըսի որ քու արծաթդ, քու ոսկիդ, քու կիներդ ու քու որդիներդ ինծի տաս. 6 - Բայց վաղը այս ատեն իմ ծառաներս քեզի պիտի զրկեմ. և քու տունդ ու քու ծառաներուդ տուները աղէկ մը աչքէ պիտի անցնեն. և քու աչքերուդ առջև պատուական սեպուած բոլոր բաները * ձեռքովին պիտի առնեն: 7 - Այն ատեն Իսրայէլի թագաւորը երկրին բոլոր ծերերը կանչեց ու ըսաւ, Հիմա գիտցէք ու տեսէք, որ ասիկա չարութիւն կ'ուզէ շեւ. վասն զի իմ կիներուս ու որդիներուս ու արծաթիս և ոսկիիս համար ինծի մարտ զրկեց, ու ես անոր Ոչ չըսի: 8 - Եւ բոլոր ծերերը ու բոլոր ժողովուրդը անոր ըսին, Ականջ մի դներ ու յանձնառու մի ըլլար: 9 - Անիկա ալ Բենագագի գետպաններուն ըսաւ, Իմ թագաւոր տէրոջս ըսէք, Առաջին անգամին քու ծառայիդ ինչ հրաման որ զրկեցիր՝ զանիկա պիտի ընեմ, բայց այս բանը չեմ կրնար ընել. ու դետպանները գացին և այս պատասխանը տարին անոր:

10 - Ու Բենագագ մարտ զրկեց անոր ու ըսաւ, Աստուածները ինծի այսպէս ու ասկէ աւելի ընեն, եթէ Սամարիայի հողը իմ ետեւէս եկող բոլոր զօրքերուս օփերուն օգտէ: 11 - Եւ Իսրայէլի թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Անոր այսպէս ըսէք. Իր դէմք մէջքը կապողը զանիկա մէջքէն հանողի պէս չպարծի: 12 - Ու անիկա իրեն հետ եկող թագաւորներուն հետ վրաններու մէջ կը խմէր. ու այս խօսքը լսածին պէս իր ծառաներուն ըսաւ, Պարտաւոր շարուեցէք, ու քաղաքին դիմաց պարտաւոր շարուեցան:

13 - Եւ ահա մարգարէ մը Իսրայէլի Աքաաթ թագաւորին մօտեցաւ ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Բոլոր այս մեծ բազմութիւնը տեսա՞ր. ահա ես այսօր զանիկա քու ձեռքդ պիտի տամ, որպէս զի գիտնաս թէ Տէրը ես եմ: 14 - Եւ Աքաաթ ըսաւ, Որո՞ւն ձեռքով ու անիկա ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Գաւառաց իշխաններուն մանչերուն ձեռքով: Եւ ըսաւ, պատերազմը ո՞վ սկսի. ու անիկա ըսաւ, Ի՞նչ: 15 - Եւ գաւառաց իշխաններուն մանչերը

համրեց, ու երկու հարիւր երեսուն ու երկու հոգի էին. և անոնցմէ ետքը բոլոր ժողովուրդը, բոլոր Իսրայէլի որդիները, համրեց, ու եօթը հազար հոգի էին: 16 - Եւ ատենք կէսօրին ելան. բայց Բենագագ ինք ու անոր օգնական թագաւորները, այն երեսուն ու երկու թագաւորները, վրաններու մէջ խմելով կը գինովնային: 17 - Եւ առաջ գաւառաց իշխաններուն մանչերը ելան. ու Բենագագ մարտ զրկեց. որոնք անոր պատմեցին թէ Սամարիայէ մարդիկ ելան: 18 - Ու անիկա ըսաւ, Եթէ անոնք խաղաղութեան համար ելան՝ զանոնք ողջ բռնեցէք, ու եթէ պատերազմելու ելան՝ զանոնք ողջ բռնեցէք: 19 - Եւ այս գաւառաց իշխաններուն մանչերը ու անոնց ետեւէն գացող զօրքը քաղաքէն դուրս ելան. 20 - Եւ ամէն մարդ իր * դիմաց ելլողը՝ զարկաւ, ու Ասորիները փախան. և Իսրայէլ զանոնք հալածեց, ու Ասորաց Բենագագ թագաւորը ձիու վրայ հեծած՝ անի մը ձիաւորներով ազատեցաւ: 21 - Եւ Իսրայէլի թագաւորը ելաւ ու ձիերը ու կառքերը զարկաւ, ու Ասորիները մեծ կոտորածով մը զարկաւ:

22 - Եւ մարգարէն Իսրայէլի թագաւորին մօտեցաւ, ու անոր ըսաւ, Գնա, ու ժողովիր, ու գիտցիր ու տես թէ ի՞նչ պիտի ընես, վասն զի եկող տարի Ասորաց թագաւորը քու վրայ պիտի ելլէ:

23 - Եւ Ասորաց թագաւորին ծառաները անոր ըսին, Անոնց աստուածները լեռներու աստուածներ են, անոր համար մեզի յաղթեցին. բայց եթէ անոնց հետ դաշտի մէջ պատերազմինք, անասրակոյս անոնց կը յաղթենք: 24 - Ուրեմն այս բանը ըրէ. թագաւորներուն ամէն մէկը իր տեղէն հանէ, ու անոնց տեղ նախարարներ դիր. 25 - Եւ դուն քեզմէ կորսուած զօրքին չափ զօրք, ու ձիերուն չափ ձիեր, ու կառքերուն չափ կառքեր Գաւառաց քեզի, և անոնց հետ դաշտի մէջ պատերազմինք. անասրակոյս անոնց կը յաղթենք. ու անիկա անոնց խօսքը մտիկ ընելով՝ այնպէս ըրաւ: 26 - Ու հետեւեալ տարին Բենագագ Ասորիները համրեց, ու Ափէկ ելաւ Իսրայէլի հետ պատերազմելու

* Եթէ. ձեռքերնուն մէջ գնելով

* Եթէ. մարդը + Եթէ. համրէ

Համար : 27 - Իսրայէլի՝ որդիներն ալ Համբուեցան ու *պատրաստուեցան, ու գաննք դիմաւորելու գացին . և Իսրայէլի որդիները անոնց դիմաց այծերու երկու երամակներու պէս բանակ կազմեցին , բայց Ասորիները երկիրը լեցուցին :

28 - Եւ Աստուծոյ մարդը եկաւ , ու Իսրայէլի թագաւորին հետ խօսեցաւ ու ըսաւ , Տէրը այսպէս կ'ըսէ . Որովհետեւ Ասորիները ըսին թէ Եհոնի լեռներու Աստուած է , ու հովիտներու Աստուած չէ , ասոր Համար բոլոր այս մեծ բազմութիւնը քու ձեռքդ պիտի մտանեմ , որպէս զի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը :

29 - Եւ իրարու դէմ՝ եօթը օր բանակեցան . ու եօթներորդ օրը պատերազմ եղաւ , և Իսրայէլի որդիները մէկ օրուան մէջ Ասորիներէն հարիւր հազար հետեւակ զօրք վարկին . 30 - Ու մնացածները Ափէկ քաղաքը փախան . և այն մնացած քանրեօթը հազար մարդոցը վրայ պարիսպը ինկաւ : Ու Բենադագ փախաւ ու քաղաքին մէջ սենեակէ սենեակ մտաւ :

31 - Եւ անոր ծառաները անոր ըսին , Ահա մենք լսեր ենք որ Իսրայէլի տանը թագաւորները ողորմած թագաւորներ են . հիմա մէջքերնիս քուրձեր ու գլուխնիս չուաններ դնենք , և Իսրայէլի թագաւորին առջև ելլենք , թերեւս քու անձդ սպրեցնէ : 32 - Ու մէջքերնին քուրձեր՝ ու գլուխնին չուաններ կապեցին , և Իսրայէլի թագաւորին գացին ու ըսին , Քու ծառադ Բենագագ կ'ըսէ , Կաղաչեմ , թող անձս սպրի : Ու անիկա ըսաւ , Տակաւին ո՞ղջ է . անիկա իմ եղբայրս է :

33 - Եւ այն մարդիկը ասիկա յաջողութիւն սեպելով , անոր բերնէն այս խօսքը աւաճնուն պէս՝ շուտով պատասխան տուին , Քու եղբայրդ Բենագագ հո՞ է : Ու անիկա ըսաւ , Գացէք զանիկա բերէք : Ու երբ Բենագագ անոր եկաւ , զանիկա իր կառքին մէջ աւաւ : 34 - Ան ալ անոր ըսաւ , Իմ հօրս քու հօրմէդ աւաճ քաղաքները ետ տամ , ու դուն Գամասկոսի մէջ քեզի համար հրապարակներ ունենաս , ինչպէս իմ հայրս Սամարիայի մէջ ունեցաւ : Ու անիկա ըսաւ , Ես ալ այս դաշինքով քեզ կ'արձակեմ . ուստի

անոր հետ դաշնակցութիւն ըրաւ ու զանիկա արձակեց :

35 - Եւ մարգարէներուն որդիներէն մէկը Տէրոջը խօսքովը իր ընկերին ըսաւ , Շնորհք ըրէ , զիս զարկ . ու այն մարդը զանիկա վարնել շուղեց : 36 - Եւ անիկա ըսաւ անոր , Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընելուդ համար՝ ահա իմ քովէս գացածիդ պէս՝ քեզ առիւծ մը պիտի մեռցնէ : Ու անիկա անոր քովէն գնաց , ու առիւծ մը զանիկա գտաւ ու մեռցուց : 37 - Ետքը անիկա ուրիշ մարդ մը գտաւ , ու անոր ըսաւ , Շնորհք ըրէ , զիս զարկ . ու այն մարդը զանիկա վարկաւ , ու վարնելով վերաւորեց :

38 - Եւ այն մարգարէն գնաց ճամբուն վրայ թագաւորին սպասեց , ու չճանչցուելու համար աչքերուն վրայ *ծածկոց մը՝ դրաւ : 39 - Ու երբ թագաւորը անի կ'անցնէր , թագաւորին աղաղակելով ըսաւ , Քու ծառադ պատերազմին մէջ գնաց , և ահա մարդ մը պարտուեցա՞նք դուրս ելլելով՝ ինձի մարդ մը բերաւ , ու ըսաւ , Այս մարդը պահէ . եթէ ասիկա կերպով մը կորսուելու ըլլայ , քու անձդ անոր անձին տեղ պիտի ըլլայ , կամ աաղանդ մը արծաթ պիտի ՚վճարես :

40 - Ու երբ ծառադ ասդին անդին գործով զբաղեր էի , անիկա կորսուեցաւ : Եւ Իսրայէլի թագաւորը անոր ըսաւ , Քու դատաստանդ այդպէս է , ինչպէ՞ս դուն +- Բերնիդ վճուեցիր : 41 - Ու անիկա շուտով մը ծածկոցը աչքերուն վրայէն հանեց , ու Իսրայէլի թագաւորը իմացաւ որ անիկա մարգարէներէն մէկն է :

42 - Եւ անիկա ըսաւ անոր , Տէրը այսպէս կ'ըսէ . Որովհետեւ դուն իմ նշոված մարդս +- ձեռքէդ ազատ արձակեցիր , անոր համար քու անձդ անոր անձին տեղ , ու քու ժողովուրդդ անոր ժողովուրդին տեղ պիտի ըլլայ :

43 - Եւ Իսրայէլի թագաւորը սիրաբ կոտրած ու նեղացած՝ իր տունը դարձաւ , ու Սամարիա եկաւ :

ԳԼ ԻԱ

Եւ այս բաներէն ետքը Յեզրայէլացի Նաբովթ Սամարիայի Աքաաբ թագաւորին պալատին քով Յեզրայէլի մէջ այգի մը ունէր : 2 - Ու Աքաաբ

*Կա՛մ, պաշար տուին

*Կա՛մ, մոխիր

†Եբբ. կշուես

Նաբովթի հետ խօսեցաւ ու ըսաւ, Քու այգիդ ինծի տուր, որպէս զի ինծի բանջարի պարտեզ ըլլայ, քանզի իմ տանս մօտ է. և անոր տեղ անկէ աղէկ այգի մը տամ քեզի. Կա՛ եթէ կ'ուզես՝ անոր գինը ստակով վճարեմ՝ քեզի: 3 - Ու Նաբովթ Աքաաբի ըսաւ, Տէրը ինծի չցուցնէ որ իմ հայրերուս ժառանգութիւնը քեզի տամ:

4 - Եւ Աքաաբ Յեզրայելացի Նաբովթի ըսած խօսքին համար, որ ըսաւ թէ իմ հայրերուս ժառանգութիւնը քեզի չեմ տար, սիրտը կտարած ու նեղացած իր տունը գնաց, և իր անկողինին վրայ պառկեցաւ ու երեսը դարձուց ու հաց չկերաւ: 5 - Եւ անոր կինը Յեզաբէլ անոր քով գնաց ու ըսաւ, Ինչո՞ւ համար սիրտդ այդպէս նեղացած է ու հաց չես ուտեր: 6 - Եւ անհկա ըսաւ անոր, Վասն զի Յեզրայելացի Նաբովթի հետ խօսեցայ ու անոր ըսի, Քու այգիդ ինծի ստակով տուր, կամ եթէ կը հաճիս, անոր տեղ քեզի «-բէշ այգի մը տամ. բայց անհկա՛ իմ այգիս քեզի չեմ տար ըսաւ, 7 - Այն ատեն անոր կինը Յեզաբէլ անոր ըսաւ, Գուն հիմա Իսրայէլի վրայ «յոդ» թագաւորութիւն պիտի ընես. ելիր հաց կեր, ու սիրտդ թող զուարճանայ. Յեզրայելացի Նաբովթի այգին էս քեզի տամ:

8 - Եւ անհկա Աքաաբի անունովը նամակներ գրեց, ու զանա՛ն անոր կնիքովը կնքեց, և այն նամակները Նաբովթի քաղաքակից ծերերուն ու ազնուականներուն զրկեց: 9 - Ու նամակներուն մէջ այսպէս գրեր էր. Ծանապահուցութիւն քարոզեցէք, ու Նաբովթը ժողովուրդին գլուխը նստեցուցէք. 10 - Եւ անոր գիմաց երկու անօրէն մարդիկ նստեցուցէք, որոնք անոր համար վկայութիւն տան ու ըսեն թէ Գուն Աստուծոյ ու թագաւորին դէմ հայհոյութիւն րբիր. ու զանհկա հանեցէք ու քարկոծեցէք որպէս զի մեռնի:

11 - Եւ անոր քաղաքակիցները, անոր քաղաքին մէջ բնակող ծերերը ու ազնուականները, Յեզաբէլի իրենց ապստամբին պէս րբին, ինչպէս անոր զրկած նամակներուն մէջ գրուած էր: 12 - Անոնք ծանապահուցութիւն քարոզեցին, և Նաբովթը ժողովուրդին գլուխը նստեցուցին: 13 - Ու երկու անօրէն մարդիկ զային անոր գիմաց

նստան. և այն անօրէն մարդիկը ժողովուրդին առջև Նաբովթի համար վկայութիւն տուին ու ըսին թէ Նաբովթ Աստուծոյ ու թագաւորին դէմ հայհոյութիւն ըրաւ. ուստի զանհկա քաղաքէն դուրս հանեցին և քարերով քարկոծեցին, ու մեռաւ: 14 - Ու Յեզաբէլի լուր զրկեցին՝ ըսելով, Նաբովթ քարկոծուեցաւ ու մեռաւ:

15 - Ու երբ Յեզաբէլ Նաբովթի քարկոծուելը ու մեռնելը լսեց, Յեզաբէլ Աքաաբի ըսաւ, Ելիր ժառանգէ Յեզրայելացի Նաբովթի այգին զոր ինք քեզի ստակով տալ չուզեց. քանզի Նաբովթ սղջ չէ, հապա մեռաւ: 16 - Ու երբ Աքաաբ Նաբովթի մեռնելը լսեց, Աքաաբ ոտք ելաւ որ Յեզրայելացի Նաբովթի այգին իջնէ, ու զանհկա ժառանգէ:

17 - Եւ Տէրոջը խօսքը Թեզբացի Եղիայի եղաւ՝ ըսելով, 18 - Ելիր, Սամարիա բնակող Իսրայէլի Աքաաբ թագաւորը գիմաւորելու իջիր. ահա անհկա Նաբովթի այգին մէջ է, ուր իջեր է զանհկա ժառանգելու համար. 19 - Ու անոր խօսիս ու ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Մեռցուցիր ու կը ժառանգե՞ս ալ. նաև անոր խօսելով՝ ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Այն տեղը ուր շուները Նաբովթի արիւնը լափեցին, հա՛ն շուները քու արիւնդ ալ պիտի լափեն: 20 - Եւ Աքաաբ Եղիայի ըսաւ, Ով իմ թշնամիս, զիս գտա՞ր. ու անհկա ըսաւ, Գտայ. որովհետև դուն քեզ ծախեցիր Տէրոջը առջև չարութիւն ընելու համար. 21 - Ահա էս քու վրագ չարիք պիտի բերեմ, ու *քեզ հալածելով՝ պիտի ջնջեմ, և Աքաաբի Բաբելոն այր մարդիկը ու Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կորսնցնեմ: 22 - Եւ քու տունդ Նաբատի որդւոյն Յերոբոամի տանը պէս՝ ու Արիայի որդւոյն Բաասայի տանը պէս պիտի ընեմ. որովհետև զեքարկացուցիր, ու Իսրայէլի մեզք գործել տուիր: 23 - Եւ Տէրը Յեզաբէլի համար ալ խօսեցաւ ու ըսաւ, Յեզաբէլը Յեզրայէլի պարսպին քով շուները պիտի ուտեն: 24 - Աքաաբէ՛ քաղաքի մէջ մեռնողը շուները պիտի ուտեն, ու գաշաի մէջ մեռնողը երկինքի թռչունները պիտի ուտեն:

*Կա՛մ, քու սերունդդ. Եբբ. քու ետևէդ

25 - Բայց Ա.քաաբի պէս բնաւ Բա-
 Գաւր ճշ եղած չէր, որ զինք ծախէ
 Տէրոջը առջև չարութիւն ընելու հա-
 մար, զոր անոր կինը Յեզբարէլ գլխէ
 հանեց: 26 - Ու անիկա կուռքերուն
 ետեւէն երթալով շատ գարշելի եղաւ,
 «- բոլոր Ամօրհացուց ըրածները ըր-
 զորնք Տէրը. Իսրայէլի որդիներուն առ-
 ջեւէն վաճակեց:

27 - Եւ Ա.քաաբ այս խօսքերը լա-
 ծին պէս՝ իր հանդերձները պատուեց,
 ու մարմնին վրայէն քուրձ հագաւ, ու
 ծով պահեց. և քուրձով կը պտուկէր,
 ու կամոց կը քալէր: 28 - Եւ Տէրոջը
 խօսքը Թեզբարցի Եղիայի եղաւ՝ ըսե-
 լով, 29 - Կը տեսնե՞ս որ Ա.քաաբ իմ
 առջեւ խոնարհութիւն կ'ընէ. անոր
 իմ առջեւ խոնարհութիւն ընելուն
 համար, անոր օրերուն մէջ այն չա-
 րիքը պիտի չբերեմ. անոր որդւոյն
 օրերը այն չարիքը անոր տանը վրայ
 պիտի բերեմ:

ԳԼ ԻԲ

Եւ երեք տարի անցաւ՝ և Ասորի-
 ներուն ու Իսրայէլի մէջտեղ պատե-
 րազմ չեղաւ: 2 - Ու երրորդ տարին
 Յուդայի Յովսափատ թագաւորը Իս-
 րայէլի թագաւորին իջաւ: 3 - Եւ Իս-
 րայէլի թագաւորը իր ծառաներուն
 ըսաւ, *Գիաէք որ Ռամսովթ-գաղաադ
 մերն է, ու մենք զանիկա Ասորուց թա-
 գաւորին ձեռքէն առնելու հոգ չենք
 տանիր: 4 - Եւ Յովսափատի ըսաւ,
 Ինձի հետ Ռամսովթ-գաղաադ պատե-
 րազմելու կ'երթա՞մ: Ու Յովսափատ
 Իսրայէլի թագաւորին ըսաւ, Ես քեզի
 պէս եմ, իմ ժողովուրդս՝ քու ժողո-
 վուրդիդ պէս, «- իմ ձիերս քու ձիե-
 րուդ պէս են:

5 - Եւ Յովսափատ Իսրայէլի թագա-
 ւորին ըսաւ, Հիմա Տէրոջը խօսքը
 փնտռէ: 6 - Ու Իսրայէլի թագաւորը
 մարգարէները ժողովեց, որոնք չորս հար-
 իւրի չափ մարդիկ էին, ու անոնց ը-
 սաւ, Ռամսովթ-գաղաադի վրայ պա-
 տերազմելու երթա՞մ, թէ ետ կենամ:
 ու անոնք ըսին, Քնա, վասն զի Տէրը
 զանիկա թագաւորին ձեռքը պիտի տայ:
 7 - Եւ Յովսափատ ըսաւ, Այս տեղ
 Տէրոջը ուրիշ մարգարէ՞ մըն ալ չկո՞ւյ՞

*Եբր: Գիաէք

որ անոր հարցնենք: 8 - Ու Իսրայէլի
 թագաւորը Յովսափատի ըսաւ, Կայ
 ուրիշ մարդ մըն ալ, որուն միջոցով
 չընանք Տէրոջը հարցնել, բայց ես զա-
 նիկա կ'ատեմ. քանզի ինձի համար
 աղէկ մարգարէութիւն չըներ, հապա
 գէշ. անիկա Յեմլայի որդին Միքիա է:
 Եւ Յովսափատ ըսաւ, Թագաւորը այդ-
 պէս չգրուցէ:

9 - Ու Իսրայէլի թագաւորը ներքինի
 մը կանչեց ու ըսաւ, Յեմլայի որդին
 Միքիան շուտով հոս բեր: 10 - Եւ Իս-
 րայէլի թագաւորը ու Յուդայի Յով-
 սափատ թագաւորը Սամարիայի դրանը
 առջեւի հրապարակին մէջ ամէն մէկը
 Գաւր զգեստներ հագած, իր աթո-
 ւին վրայ նստեր էր. ու բոլոր մարգա-
 րէները անոնց առջև մարգարէութիւն
 կ'ընէին: 11 - Եւ Քանանայի որդին
 Սեդեկիա իրեն երկաթէ եղջիւրներ շի-
 նեց, ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ.
 Ասորիները ասոնցմով պիտի զարնե՞ս՝
 մինչև որ զանոնք բնաջինջ ընես: 12 -
 Բոլոր մարգարէներն ալ այնպէս կը
 մարգարէանային ու կ'ըսէին, Ռա-
 մսովթ-գաղաադ ելիր, ու յաջողու-
 թիւն պիտի ունենաս, և Տէրը զանիկա
 թագաւորին ձեռքը պիտի տայ:

13 - Ու Միքիան կանչելու գացող
 մարդը խօսեցաւ անոր՝ ըսելով, Ահա
 «Գ» մարգարէները մէկ բերնով թա-
 գաւորին համար բարութիւն խօսեցան.
 Թող քու խօսքդ ալ անոնց մէկուն
 խօսքին պէս ըլլայ, ու բարութիւն խօ-
 սէ: 14 - Իսկ Միքիա ըսաւ, Տէրը կեն-
 դանի է որ Տէրը ինձի ինչ որ ըսէ՝ զայն
 պիտի խօսիմ:

15 - Ու երբ անիկա թագաւորին ե-
 կաւ, թագաւորը անոր ըսաւ, Ով Մի-
 քիա, Ռամսովթ-գաղաադ պատերազ-
 մելու երթա՞նք, թէ ետ կենանք: Եւ
 անիկա անոր ըսաւ, Ելիր ու յաջողու-
 թիւն պիտի ունենաս, ու Տէրը զանիկա
 թագաւորին ձեռքը պիտի տայ: 16 -
 Եւ թագաւորը անոր ըսաւ, Մինչև
 քանի՞ անգամ երգ մնցնեմ քեզ, որպէս
 զի Տէրոջը անունովը ճշմարիտը միայն
 խօսիս ինձի: 17 - Ու անիկա ըսաւ,
 Բոլոր Իսրայէլը հովիւ չունեցող ոչ-
 խարներու պէս լեռներու վրայ ցրուած
 տեսայ. և Տէրը ըսաւ, Ասոնք տէր չու-
 նին, ամէն մարդ խաղաղութեամբ
 թող իր տունը դառնայ: 18 - Եւ Իս-
 րայէլի թագաւորը Յովսափատի ըսաւ,

Քեզի չըսի՞ որ անհկա ինծի համար աղէկ մարգարէութիւն չընէր՝ հապա գէշ: 19 - Ու Մէլէ- ըսաւ, Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ ըրէ. Տէրը իր աթուռին վրայ նստած տեսայ, ու երկինքի բոլոր զօրքերը անոր բոլորափքը, աջ կողմը ու ձախ կողմը՝ կայներ էին. 20 - Եւ Տէրը ըսաւ, Աքաաբը ո՞վ կրնայ խաբել, որ Ռամովթ-գաղաադ ելլէ ու կորսուի. ու մէկը այսպէս ու միւսը այնպէս ըսաւ: 21 - Ու ոգի մը ելաւ և Տէրոջը առջև կայնեցաւ, ու ըսաւ, Չանհկա ես կը խաբեմ: 22 - Ու Տէրը անոր ըսաւ, Ի՞նչ միջոցով: Եւ անհկա ըսաւ, Ելլեմ՝ ու անոր բոլոր մարգարէներուն բերանը սոււա ոգի ըլլամ. ու Տէրը անոր ըսաւ, Դուն պիտի խաբես ու պիտի յաջողես. ելիր ու այնպէս ըրէ: 23 - Եւ հիմա ահա Տէրը այսքաւ բոլոր մարգարէներուդ բերանը սոււա ոգի դրեր է, բայց Տէրը քեզի համար չարիք խօսեցաւ:

24 - Այն ատեն Քանանայի որդին Սեդեկիա մօտեցաւ, ու Միքիայի ծնօտին զարկաւ ու ըսաւ, Տէրոջը Հոգին ի՞նչպէս իմ քովէս ելաւ՝ քեզի հետ խօսելու համար: 25 - Եւ Միքիա ըսաւ, Դուն ալ պիտի տեսնես այն օրը որ պահուելու համար սենեակէ սենեակ մտնես:

26 - Ու Իսրայէլի թագաւորը ըսաւ, Միքիան առ, ու զանհկա Ամոն քաղաքապետին և թագաւորի որդւոյն Յովասի ետ տար, 27 - Ու ըսէ, Թագաւորը այսպէս կ'ըսէ. Ասիկա բանադ գրէք, ու մինչև որ ես խաղաղութեամբ դառնամ, զանհկա նեղութեան հացով ու նեղութեան ջրով կերակրեցէք: 28 - Եւ Միքիա ըսաւ, Եթէ բնաւ խաղաղութեամբ դառնաս, Տէրը ինծմով խօսած չըլլայ. ու ըսաւ, Ով ժողովուրդներ, ամէնդ լսեցէք:

29 - Եւ Իսրայէլի թագաւորը ու Յուդայի Յովսափատ թագաւորը Ռամովթ-գաղաադ ելան: 30 - Ու Իսրայէլի թագաւորը Յովսափատի ըսաւ, Կերպարանքս պիտի փոխեմ, ու այնպէս պատերազմի պիտի մտնեմ, բայց դուն քու հագուստդ հազիր. և Իսրայէլի թագաւորը իր կերպարանքը փոխեց, ու պատերազմին մէջ մտաւ: 31 - Եւ Ասորոնց թագաւորը իր երեսունուերկու կառապետներուն պատուիրեց ու ըսաւ, Պղտիկի կամ մեծի հետ մի պա-

տերազմիք, բայց միայն Իսրայէլի թագաւորին հետ: 32 - Ու երբ կառապետները Յովսափատը տեսան, Իսրայէլի թագաւորը անշուշտ ասիկա է՝ ըսելով, անոր վրայ պատերազմելու գացին. և Յովսափատ աղաղակեց: 33 - Ու երբ կառապետները տեսան որ անհկա Իսրայէլի թագաւորը չէ, անկէ ետ դարձան: 34 - Եւ մարդ մը *առանց գիտելու՝ իր աղեղը քաշեց, ու Իսրայէլի թագաւորը †գրահին օղակներուն մէջէն՝ զարկաւ. այն ատեն անհկա իր կառավարին ըսաւ, Ձեռքդ դարձուր ու զիս բանակէն հանէ, քանզի վիրաւորուեցայ: 35 - Եւ այն օրը պատերազմը սաստկացաւ, ու թագաւորը Ասորոնց դիմաց իր կառքին մէջ կեցաւ, և իրիկուան դէմ մեռաւ. ու վէրքին արիւնը կառքին մէջ վազեց: 36 - Ու երբ արեւը կը մտնէր, բանակին մէջ մոռնեափկ պտրտեցաւ ու ըսաւ, Ամէն մարդ իր քաղաքը ու ամէն մարդ իր երկիրը դառնայ: 37 - Եւ թագաւորը մեռաւ, ու Սամարիա բերուեցաւ, ու թագաւորը Սամարիայի մէջ թաղեցին: 38 - Եւ կառքը Սամարիայի աւազանին քով լուացին, ու շուները անոր արիւնը լափեցին. ‡անոր զէնքերն ալ հոն լուացին՝ Տէրոջը ըսած խօսքին համեմատ:

39 - Եւ Աքաաբի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը, և փղոսկրով շինած տունը ու բոլոր շինած քաղաքները ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են: 40 - Եւ Աքաաբ իր հայրերուն հետ քնացաւ, ու անոր տեղ անոր որդին Ոքոզիա թագաւոր եղաւ:

41 - Եւ Իսրայէլի Աքաաբ թագաւորին չորրորդ տարին Յուդայի վրայ Ասայի որդին Յովսափատ թագաւոր եղաւ: 42 - Յովսափատ երեսունըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու երեսուցէմի մէջ քսանըհինգ տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ազուբա էր ու Սաղիի աղջիկն էր: 43 - Ու անհկա իր հօրը Ասայի բոլոր ճամբուն մէջ քալեց, անկէ չխտորեցաւ, ու Տէրոջը առջև ուզող-

*Կամ, ուժով մը
 †Եբբ. յողուածներուն ու զրահին մէջտեղէն
 ‡Կամ, բողերն ալ հոն լուացուեցան

Թիւն ըրաւ : 44 - Բայց բարձր տեղերը չվերցան . ժողովուրդը աակաւին բարձր տեղերու վրայ զոհեր կը մատուցանէր ու խունկ կը ծխէր : 45 - Եւ Յովսափատ Իսրայէլի Թագաւորին հետ խաղաղութիւն ըրաւ :

46 - Եւ Յովսափատի մնացորդ պատմութիւնը և անոր ըրած քաջութիւնը ու պատերազմները՝ ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 47 - Եւ անկիւս իր հօրը Ասայի ժամանակէն մնացած Սոդոմական մեղք գործողները երկրէն բնաջինջ ըրաւ :

48 - Այն ատեն Եդովմի մէջ Թագաւոր չկար, փոխարքայ մը կար :

49 - Ու Յովսափատ Թարսիսի նաւեր շինեց, որպէս զի Ռփիր *երթան ոսկիի համար, բայց չգացին՝, քանզի նաւերը Գասիոն-գաբերի մէջ կտոր կտոր եղան :

50 - Այն ատեն Աքաաբի որդին Ոքոզիա Յովսափատի ըրաւ, Իմ ծառա-

ներս քու ծառաներուդ հետ նաւերով երթան . բայց Յովսափատ չհաճեցաւ : 51 - Եւ Յովսափատ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ իր հօրը Իոււիթի քաղաքին մէջ Թաղուեցաւ . և անոր տեղ անոր որդին Յովրամ Թագաւոր եղաւ :

52 - Յուդայի Յովսափատ Թագաւորին տասնըօթներորդ տարին Իսրայէլի վրայ Աքաաբի որդին Ոքոզիա Թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, ու Իսրայէլի վրայ երկու տարի Թագաւորութիւն ըրաւ : 53 - Եւ Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու իր հօրը ճամբան և իր մօրը ճամբան ու Իսրայէլի մեղանչել տուող Նաբաաեան Յերոբոփամի ճամբան բռնեց . 54 - Ու Բահաղի ծառայութիւն ըրաւ ու անոր երկրպագութիւն ըրաւ . և իր հօրը բոլոր ըրածին պէս ընելով Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուց :

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱԻՈՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Աքաաբի մեռնելէն ետքը Մովաբ Իսրայէլի դէմ ապստամբեցաւ :

2 - Ու Ոքոզիա Սամարիայի մէջ իր վերնատան վանդակապատէն վար ինկաւ ու հիւանդացաւ . ու պատգամաւորներ զրկեց՝ անոնց ըսելով, Գացէք Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստուծոյն հարցուցէք, թէ արդեօք այս հիւանդութենէն պիտի աւողջանամ :

3 - Եւ Տէրոջը հրեշտակը Թեգբացի Եղիայի ըսաւ, Ելի՛ր, Սամարիայի Թագաւորին պատգամաւորները դիմաւորելու գնա, ու անոր ըսէ, Միթէ Իսրայէլի մէջ Աստուած չկայ, որ գուք Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստուծոյն հարցնելու կ'երթաք . 4 - Անոր համար

Տէրը այսպէս կ'ըսէ, Քու ելած անկողինէդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնիս . ու Եղիա գնաց :

5 - Եւ պատգամաւորները անոր դարձան . ու Ոքոզիա անոնց ըսաւ, Ինչո՞ւ համար ետ դարձաք : 6 - Եւ անոր ըսին, Մեր դիմաց մարդ մը ելաւ ու մեզի ըսաւ, Գացէք ձեզ զրկող Թագաւորին դարձէք ու անոր ըսէք, Տէրը այսպէս կ'ըսէ . Միթէ Իսրայէլի մէջ Աստուած չկայ, որ Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստուծոյն հարցնելու կը զրկես . անոր համար քու ելած անկողինէդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնիս :

7 - Եւ անկիւս ըսաւ անոնց, Չեղ դիմաւորող ու այս խօսքերը ձեզի զրուցող մարդը ի՞նչպէս մարդ էր : 8 - Ու անոր ըսին, Անկիւս մազոտ մարդ մըն էր, ու մէջքը մաշկեղէն գօտի մը կապեր էր : Եւ Բահաղ ըսաւ, Անկիւս Թեգբացի Եղիան է :

*Կա՛մ, երթայ ոսկիի համար, բայց չգնաց
†Կա՛մ, ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱԻՈՐԱՅ

9 - Ու անոր՝ յիսուն մարդով յիսնապետ մը զրկեց, և անիկա Եղիայի քով ելաւ, ու Եղիայ լեւան գլուխը նստած էր. և յիսնապետը անոր ըսաւ, Մարդ Աստուծոյ, թագաւորը կ'ըսէ որ վար իջնես: 10 - Ու Եղիա պատասխան տուաւ ու յիսնապետին ըսաւ, Եթէ ես Աստուծոյ մարդն եմ, երկինքէն կրակ թող իջնէ, և քեզ ու քու յիսուն մարդդ ուտէ: Ու երկինքէն կրակ իջաւ, և զանիկա ու անոր յիսուն մարդը կերաւ:

11 - Եւ անոր նորէն յիսուն մարդով ուրիշ յիսնապետ մը զրկեց. ու անիկա խօսեցաւ ու անոր ըսաւ, Մարդ Աստուծոյ, թագաւորը այսպէս կ'ըսէ, Շուտով վար իջիր: 12 - Ու Եղիա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Եթէ ես Աստուծոյ մարդն եմ, երկինքէն կրակ թող իջնէ, և քեզ ու քու յիսուն մարդդ ուտէ: Ու երկինքէն Աստուծոյ կրակը իջաւ, և զանիկա ու անոր յիսուն մարդը կերաւ:

13 - Ու նորէն յիսուն մարդով երրորդ յիսնապետ մը զրկեց, ու այն երրորդ յիսնապետը վեր ելաւ, ու գնաց Եղիայի առջև ծունկ կրկնեց, և անոր աղաչեց ու ըսաւ, Մարդ Աստուծոյ, թող իմ հոգիս ու այս յիսուն ծառաներուդ հոգիները քու աչքերուդ առջև պատուական սեպուին: 14 - Ահա երկինքէն կրակ իջաւ, ու այն առաջուան երկու յիսնապետները և անոնց յիսուն մարդիկը կերաւ. բայց հիմա իմ հոգիս քու աչքիդ առջև թող պատուական սեպուի:

15 - Ու Տէրօջը հրեշտակը Եղիայի ըսաւ, Անոր հետ իջիր, անոր երեսէն մի վախնար. ու Եղիայ ելաւ անոր հետ թագաւորին իջաւ: 16 - Եւ անոր ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Որովհետև Ակկարոնի Բահաղ-ճանճիկ աստուծակէն հարցնելու համար պատգամաւորներ զրկեցիր, իբր թէ Խորայէլի մէջ Աստուած չկար որ անոր բան հարցնէիր, անոր համար այդ քու ելած անկողինէդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնիս:

17 - Եւ անիկա մեւաւ Տէրօջը խօսքին համեմատ զոր Եղիա խօսեր էր. և որովհետև անիկա որդի չունէր, անոր տեղը Յովթամ թագաւոր եղաւ. Յուդայի Յովսափատեան Յովթամ թագաւորին երկրորդ տարին: 18 - Եւ Ու

քովայի ըրած գործերուն մնացորդ պատմութիւնը ահա Խորայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է:

ԳԼ. Բ

Ու երբ Տէրը Եղիան մրրկով երկինք պիտի վերցնէր, Եղիա ու Եղիսէ Գաղգազայէ գացին: 2 - Ու Եղիա ըսաւ Եղիսէի, Իսկ հոս նստէ, քանզի Տէրը զիս Բեթէլ զրկեց: Ու Եղիսէ ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ թողուր. ու Բեթէլ իջան: 3 - Եւ Բեթէլի մէջ գտնուող մարգարէից որդիները Եղիսէի ելան, ու անոր ըսին, Գիտե՞ս որ այսօր Տէրը քու տէրդ քու գլխէդ պիտի առնէ: Եւ անիկա ըսաւ, Ես ալ գիտեմ, լուս կեցէք: 4 - Ու Եղիա անոր ըսաւ, Ով Եղիսէ, դուն հոս նստէ, քանզի Տէրը զիս Երիքով զրկեց: Եւ անիկա ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ թողուր. ու Երիքով գացին: 5 - Ու Երիքովի մէջ գտնուող մարգարէից որդիները Եղիսէի մօտեցան, ու անոր ըսին, Գիտե՞ս որ այսօր Տէրը քու տէրդ քու գլխէդ պիտի առնէ: Եւ անիկա ըսաւ, Ես ալ գիտեմ, լուս կեցէք: 6 - Ու Եղիա անոր ըսաւ, Իսկ հոս նստէ, քանզի Տէրը զիս Յորդանան զրկեց: Եւ անիկա ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ թողուր. ու երկուքը գացին: 7 - Եւ մարգարէից որդիներէն յիսուն մարդ գացին դիմացը՝ հեռուանց կայնեցան. ու անոնք երկուքը Յորդանանու քով կայնեցան: 8 - Ու Եղիա իր վերարկուն առաւ ծալեց և ջուրերուն զարկաւ, ու մէկ կողմը ու միւս կողմը բաժնուեցան, ու երկուքը ցամաքով անցան:

9 - Ու երբ անոնք անցան, Եղիա ըսաւ Եղիսէի, Խնդրէ, ի՞նչ ընեմ քեզի՝ քանի որ քեզմէ վերցուած չեմ: Ու Եղիսէ ըսաւ, Քու սգիիդ կրկնապատիկը ունենամ: 10 - Եւ անիկա ըսաւ, Ի՞ժուար բան խնդրեցիր. Բայց եթէ քեզմէ վերցուելու տառնա զիս տեսնես՝ քեզի այնպէս ըլլայ, ապա թէ ոչ չըլլայ:

11 - Ու երբ անոնք խօսելով կ'երթային, ահա հրեղէն կառք մը և հրե-

զէն ձիեր երէ-ցան, ու զանոնք իրարմէ զտակեցին: ու Եղիա մըրիկով երկինք ելաւ: 12 - Ու Եղիսէ կը տեսնէր, ու աղաղակեց, Հայր իմ, Հայր իմ, Իսրայէլի կառքը ու անոր ձիաւորները. ու ալ չտեսաւ զանիկա. և իր հանգերձները բռնեց ու զանոնք երկու կտորի պատուեց: 13 - Ու Եղիայի վրայէն ինկած վերարկուն վերցուց, և դարձաւ Յորդանանու եզերքը կայնեցաւ: 14 - Ու Եղիայի վրայէն ինկած վերարկուն առաւ, ջուրերուն զարկաւ և ըսաւ, Եղիայի Տէր Աստուածը ո՞ւր է հիմա. ու երբ ջուրերուն զարկաւ, մէկ կողմը ու միւս կողմը բաժնուեցան, ու Եղիսէ անցաւ:

15 - Ու Երիքովի մարգարէից որդիները զանիկա դիմացէն տեսնելով՝ ըսին, Եղիայի ոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ. և զանիկա դիմաւորեալու գացին ու գեանէն անոր խոնարհութիւն ըրին:

16 - Եւ անոր ըսին, Ահա քու ծառաներուդ հեա յիսուն զօրաւոր մարդիկ կան. թող երթան ու քու տէրդ փնտռեն. կարելի է Տէրոջը Հոգին զանիկա վերցուց, ու լեռան մը վրայ կամ ձորի մը մէջ ձգեց. ու անիկա ըսաւ, Մի զրկէք: 17 - Բայց անոնք բռնադատեցին զանիկա մինչև որ ամչցաւ, ու ըսաւ, Արկեցէք: Եւ յիսուն մարդ զրկեցին, որոնք երեք օր փնտռեցին, բայց զանիկա չգտան: 18 - Ու անոր դարձան, և անիկա Երիքով կը նստէր, ու անոնց ըսաւ, Ես ձեզի չըսի՞ որ Մի երթաք:

19 - Եւ քաղաքին մարդիկը Եղիսէի ըսին, Ահա քաղաքիս բնակութիւնը աղէկ է, ինչպէս մեր տէրը կը տեսնէ, բայց ջուրերը գէշ ու երկիրը անպատու է: 20 - Եւ անիկա ըսաւ, Ինձի նոր *կուժ մը բերէք, ու մէջը աղ զրէք. ու անոր բերին: 21 - Եւ անիկա ջուրերուն աղբիւրը ելաւ ու հոն աղ նետեց, ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Այս ջուրերը բժշկեցի, մէյմըն ալ ասկէ մահ ու անպաղուծիւն չըլլայ: 22 - Եւ այն ջուրերը բժշկուեցան մինչև այսօր՝ Եղիսէի ըսած խօսքին համեմատ:

23 - Ու անկէ Բեթէլ ելաւ. ու երբ ճամբայէն վեր կ'ելլէր, քաղաքէն պզտիկ աղաքներ ելան, և զանիկա ծաղր կ'ընէին ու կ'ըսէին, Ելիր կնտակ,

Ելիր կնտակ: 24 - Ու ետին գարձաւ ու զանոնք տեսաւ, և Տէրոջը անունովը զանոնք անիծեց: Ու անտառէն երկու մատակ արջ ելան, ու անոնցմէ քառասունուերկու աղայ պատառեցին: 25 - Եւ անկէ Կարմեղոս լեռը գնաց, ու անկէ Սամարիա դարձաւ:

ԳԼ. Գ.

Եւ Աքաաբի որդին Յովրամ Յուդայի Յովսափատ թագաւորին տասնըութերորդ տարին՝ Սամարիայի մէջ Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ, ու տասուերկու տարի թագաւորութիւն ըրաւ: 2 - Եւ անիկա Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, բայց ոչ իր հօրը ու իր մօրը պէս, քանզի անիկա իր հօրը շինած Բաշաղի կուռքը վերցուց: 3 - Բայց Իսրայէլի մեղանչել տուող Նաբատան Յերոբոամի մեղքերուն յարեցաւ, անոնցմէ չզատուեցաւ:

4 - Եւ Մովաբի Մեաա թագաւորը հօտերու տէր ըլլալով՝ Իսրայէլի թագաւորին հարիւր հազար գառ ու հարիւր հազար գեղձնաւոր խոյ կու տար:

5 - Բայց Աքաաբի մեռնելէն ետքը Մովաբի թագաւորը Իսրայէլի թագաւորին դէմ ապստամբեցաւ:

6 - Եւ այն օրը Յովրամ թագաւորը Սամարիայէ ելաւ ու բոլոր Իսրայէլը համրեց,

7 - Ու գնաց, և Յուդայի Յովսափատ թագաւորին հարգ զրկեց՝ ըսելով, Մովաբի թագաւորը ինձի դէմ ապստամբեցաւ.

ինձի հեա Մովաբի վրայ պատերազմելու կ'երթա՞ս: Ու անիկա ըսաւ, Կ'երթամ. ես քեզի պէս եմ, իմ ժողովուրդս քու ժողովուրդիդ պէս՝ «- ձիերս քու ձիերուդ պէս են:

8 - Եւ անիկա ըսաւ, Ո՞ր ճամբայէն երթանք: Ան ալ ըսաւ, Եզովմի անապատին ճամբայէն:

9 - Եւ Իսրայէլի թագաւորը, Յուդայի թագաւորը ու Եզովմի թագաւորը գացին, ու եօթը օրուան ճամբայ պտրտեցան.

և անոնց հեա եղող բանակին ու անտառններուն համար ջուր չկար:

10 - Այն ատեն Իսրայէլի թագաւորը ըսաւ, Ափսո՛ս, Տէրը այս երեք թագաւորները Մովաբի ձեռքը տալու կանչեք է: 11 - Եւ Յովսափատ ըսաւ, Այս անգ Տէրոջը մարգարէ մը չկայ, որպէս զի անոր միջոցով Տէրոջը հարցընէք: Ու Իսրայէլի թագաւորին ծա-

*Կա՞մ, բաժակ

ուսներէն մէկը պատասխան տուաւ
 ու ըսաւ, Եղիայի ձեռքերուն ջուր
 լեցնող Սափաաեան Եղիսէ հաս է :
 12 - Եւ Յովսափաա ըսաւ, Անոր քով
 Տէրոջը խօսքը կայ . ու Խորայէլի թա-
 գաւորը և Յովսափաա ու Եղովմի թա-
 գաւորը անոր իջան : 13 - Ու Եղիսէ
 Խորայէլի թագաւորին ըսաւ, Գուն
 ինծի հետ ի՞նչ բան ունիս . դուն քու
 հօրդ մարգարէներուն ու քու մօրդ
 մարգարէներուն դնա : Եւ Խորայէլի
 թագաւորը անոր ըսաւ, Ոչ, վասն զի
 Տէրը այս երեք թագաւորը Մովաբի
 ձեռքը մտանելու կանչեր է : 14 - Ու
 Եղիսէ ըսաւ, Զօրաց Տէրը, որուն առ-
 ջև կը կայնիմ, կենդանի է որ, եթէ
 Յուդայի Յովսափաա թագաւորին վրայ
 համարում չունենայի, բնաւ քու
 երեւոյ պիտի չնայէի, ու քեզ պիտի
 չտեսնէի : 15 - Եւ հիմա ինծի նուա-
 գածու մը բերէք . ու երբ նուագածուն
 նուագարանը կը զարնէր, անոր վրայ
 Տէրոջը ձեռքը եղաւ . 16 - Ու ըսաւ,
 Տէրը այսպէս կ'ըսէ . Այս հեղեղաւոր
 փոս փոս ըրէք . 17 - Քանզի Տէրը
 այսպէս կ'ըսէ . Հով պիտի չտեսնէք
 ու անծրև պիտի չտեսնէք . բայց այս
 հեղեղաւոր ջրով պիտի լեցուի, և պիտի
 խմէք դուք ու ձեր հօտերը ու ձեր ա-
 նասունները : 18 - Սակայն ասիկա Տէ-
 րոջը առջև պզտիկ բան մը ըլլալով,
 Մովաբն ալ ձեր ձեռքը պիտի մտա-
 նէ . 19 - Եւ ամէն պարսպաւոր քա-
 ղաքր ու ամէն ընտիր քաղաքը պիտի
 զարնէք, և ամէն ազնիւ ծառերը կտա-
 րէք, ու ամէն ջուրի աղբիւրները գո-
 ցէք, ու ամէն ընտիր արտերը քարե-
 րով աւրէք . 20 - Եւ առաւօտուն զոհին
 մատուցուած ստեղծողի՝ ահա Եղովմի
 ճամբայէն ջուրեր կու գային, ու եր-
 կիրը ջրով լեցուեցաւ :
 21 - Ու երբ բոլոր Մովաբացիք լսե-
 ցին որ թագաւորները ելեր են իրենց
 հետ պատերազմելու, ամէն գօտի կա-
 պելու կարողութիւն ունեցողները ժող-
 վուեցան, ու սահմանագլուխը կայնե-
 ցան : 22 - Եւ առաւօտուն կանուխ ե-
 լան, ու արեւուն ճառագայթները
 ջուրերուն վրայ զարկած ըլլալով՝ Մո-
 վաբացիք դիմացէն այն ջուրերը ա-
 րիւնի պէս կարմիր տեսան, 23 - Ու
 բոսին, Ասիկա արիւն է . անասրակոյս
 թագաւորները իրարու հետ կուտե-
 րեն, ու մէկգլուխ զարկին են . հիմա,

ով Մովաբացիք, աւարը չափէն :
 24 - Այսպէս անոնք Խորայէլի բանակը
 գացին, ու Խորայէլացիք ելան Մովա-
 բացիները զարկին, որոնք անոնց երե-
 սէն փախան . ու Խորայէլացիք Մովաբա-
 ցիները զարնելով՝ անոնց երկերը մտան .
 25 - Եւ քաղաքները կործանեցին, ու
 ամէն ընտիր արտերու մէջ ամէն մարդ-
 իր քարը նետեց, ու զանոնք լեցու-
 ցին, և ամէն ջուրի աղբիւրները գո-
 ցեցին, ու ամէն ազնիւ ծառերը կտա-
 րեցին, այնպէս որ միայն կիրհարէսէթի
 քարերը թողուցին . ու պարսաւոր-
 ները զանիկա պաշարեցին ու զարկին :
 26 - Եւ Մովաբի թագաւորը երբ տե-
 տու որ պատերազմը իր վրայ սասա-
 կացաւ, իրեն հետ եօթը հարիւր սուսե-
 րամերկ զօրք առաւ, որպէս զի մինչև
 Եղովմի թագաւորը ձեղքեն անցնին,
 բայց չկրցան : 27 - Ուստի առաւ իր
 անդրանիկ որդին որ իր տեղ պիտի
 թագաւորէր, ու զանիկա պարսպին
 վրայ սղջակէզ ըրաւ . և Խորայէլաց-
 ւոց դէմ մեծ բարկութիւն եղաւ .
 ու անոր վրայէն ետ քաշուեցան, ու
 երեւոյ երկիրը դարձան :

ԳԼ Գ

Ու մարգարէից որդիներուն կինե-
 րէն կին մը Եղիսէի ազգադակելով՝ ըսաւ,
 Քու ծառայոց այրս մեռաւ . ու դուն
 քու ծառայիդ աստուածավախ ըլլալը
 գիտես . և պարտատերը եկաւ որպէս
 զի իմ երկու որդիներս իրեն ծառայ
 առնէ : 2 - Ու Եղիսէ անոր ըսաւ, Քեզի
 ի՞նչ ընեմ . ըսէ ինծի, առնը ի՞նչ ու-
 նիս : Եւ անիկա ըսաւ, Քու ազգախնդ-
 տանը մէջ *աման մը՝ իւղէն զառուրիչ
 բան մը չունի : 3 - Ու Եղիսէ անոր ըսաւ,
 Քնա, դուրսէն քու բոլոր գրացիներէդ
 քեզի պարագ ածաններ ուզէ, ու քիչ
 մի ուզեր . 4 - Եւ քանզի մտիր, ու վրա-
 յէդ ու քու որդիներուդ վրայէն դուռը
 գոցէ, և քանզի այն բոլոր ամաննե-
 րուն մէջ պարպէ, ու լեցուածը վեր-
 ցուր : 5 - Եւ անիկա անոր քովէն զնաց,
 ու իր վրայէն ու իր որդիներուն վրայէն
 դուռը գոցեց . անոնք անոր կը մտա-
 ցընէին, ու անիկա կը լեցնէր : 6 - Ու
 երբ այն ամանները լեցուեցան, իր որդ-
 ւոյն ըսաւ, Ինծի ուրիշ աման մտա-

*կա՛մ, օծուելու մը չափ

ցուր . ու անհկա ըսաւ անոր , Աւրիշ աման չկայ . այն առէն իւզը կայնեցաւ : 7 - Եւ կինը գնաց Աստուծոյ մարդուն պատմեց . ու անհկա ըսաւ , Գնա իւզը ծախէ ու պարաքդ վճարէ , և աւելցածովը դուն ու քու որդիներդ ապրեցէք :

8 - Աւ օր մը երբ Եղիսէ Սունամէ կ'անցնէր , հոն երեւելի կին մը կար , որ զանհկա հաց ուտելու ստիպեց , ու ետք քանի որ առիտ կ'անցնէր , հաց ուտելու համար հոն կ'իջնէր : 9 - Եւ այն կինը իր երկանը ըսաւ , Ահա գիտեմ որ ասիկա Աստուծոյ մէկ սուրբ մարդն է , որ միշտ մեր քովէն կ'անցնի . 10 - Հիմա պզտիկ վերնատուն մը շինենք պատին վրայ , ու հոն անոր համար անկողին , սեղան , աթոռ ու աշտանակ դնենք , որպէս զի երբ մեզի գայ , հոն իջնէ : 11 - Եւ եղաւ որ օր մը անհկա հոն եկաւ , ու վերնատունը մտաւ ու հոն պառկեցաւ . 12 - Եւ իր ծառային Գէեզի ըսաւ , Սունամացի կինը կանչէ . ու զանհկա կանչեց . և անոր առջև կայնեցաւ : 13 - Աւ անհկա իր ծառային ըսաւ , Անոր ըսէ , Ահա դուն մեզի համար այս բոլոր աշխատանքը քաշեցիր . քեզի ի՞նչ ընեմ . թագաւորին կամ՝ զօրագլուխին ըսելիք մը ունի՞ս . և անհկա ըսաւ , Ես իմ ժողովուրդիս մէջ կը բնակիմ : 14 - Աւ Եղիսէ ըսաւ , Անոր ի՞նչ կ'ընես . ու Գէեզի ըսաւ , Իրաւցընէ անհկա գաւակ չունի , ու անոր այրը ծերացեր է : 15 - Աւ Եղիսէ ըսաւ , Չանհկա կանչէ : և զանհկա կանչեց . ու զբանը մէջ կայնեցաւ : 16 - Աւ Եղիսէ աւար ըսաւ , *Գալ աարի՞ այս առէն զիրկդ որդի մը պիտի ունենաս : Եւ անհկա ըսաւ , Այ , ով տէր իմ , մարդ Աստուծոյ , քու աղախինիդ սուտ մի գրուցեր : 17 - Աւ կինը յղացաւ ու հետեւեալ տարին նոյն առէնը որդի մը ծնաւ , ինչպէս Եղիսէ անոր ըսեր էր :

18 - Եւ աղան մեծցաւ , ու օր մը իր հօրը գնաց հնձողներուն քով : 19 - Եւ իր հօրը ըսաւ , Գլուխս , գլուխս . ան ալ մանչուն ըսաւ , Ասիկա իր մօրը տար : 20 - Աւ զանհկա վերցուց , ու անոր մօրը տարաւ . և անհկա մինչև կէսօր անոր ծունկերուն վրայ նստաւ ,

ու մեռաւ : 21 - Եւ կինը վեր ելաւ , ու զանհկա Աստուծոյ մարդուն անկողինին մէջ պառկեցուց , ու դուրս վրայէն գոցեց ու ելաւ . 22 - Եւ իր այրը կանչեց ու ըսաւ , Կ'աղաչեմ , ինծի մանչերէն մէկուն հետ էշ մը զրկէ , որպէս զի շուտով մինչև Աստուծոյ մարդուն քով երթամ՝ ու ետ դառնամ : 23 - Եւ անհկա ըսաւ , Ի՞նչ կայ որ դուն այսօր անոր պիտի երթաս . ամապլուխ չէ , շարաթ չէ : Աւ անհկա ըսաւ , Ողջութիւն : 24 - Աւ էշը պատրաստել տուաւ , և մանչուն ըսաւ , Քչէ գնա , ու մինչև որ քեզի չըսեմ , քշելէն ետ մի կենար ինծի համար : 25 - Եւ Կարմեղոս լեւը երթալով , Աստուծոյ մարդուն քով գնաց : Աւ երբ Աստուծոյ մարդը դիմացէն զանհկա տեսաւ , իր մանչուն Գէեզիին ըսաւ , Ահա Սունամացի կինը կու գայ : 26 - Հիմա վազէ , դիմաւորէ զանհկա , ու անոր ըսէ , Ողջ աւու՞ղջ ես , այրդ ողջ աւու՞ղջ է , աղան ողջ աւու՞ղջ է : Եւ անհկա ըսաւ , Ողջ աւուղջ եմք : 27 - Աւ կինը լեւը Աստուծոյ մարդուն եկաւ , և անոր սաքերուն փաթթուեցաւ . ու Գէեզի մօտեցաւ որպէս զի զանհկա ետ քաշէ , Բայց Աստուծոյ մարդը ըսաւ , Թող սուր զանհկա , քանզի անոր սիրտը ցաւած է . ու Տէրը ինձմէ պահեց ու ինծի չյայտանեց : 28 - Եւ կինը ըսաւ , Ես իմ տէրջմէս որդի խնդրեցի՞ . ես չըսի՞ որ Չիս մի խաբեր : 29 - Աւ անհկա Գէեզիին ըսաւ , Մէջքդ գօտի կապէ , և իմ գաւազանս ձեռքդ առ ու գնա . և եթէ մարդու մը հանդիպիս՝ անոր բարե մի տար , ու եթէ մարդ մը քեզի բարե տայ՝ պատասխան մի տար , և իմ գաւազանս աղուն երեսին վրայ դիր : 30 - Իսկ աղուն մայրը ըսաւ , Տէրը կենդանի է , ու քու անձդ կենդանի է , որ քեզ պիտի չթողում : Աւ Եղիսէ ելաւ անոր ետեւէն գնաց : 31 - Բայց Գէեզի անոնց առջև անցաւ , ու գաւազանը աղուն երեսին վրայ դրաւ , սակայն ոչ ձայն կար և ոչ զգացում . ուստի զանհկա դիմաւորելու դարձաւ , և անոր պատմեց ու ըսաւ , Տղան չարթնցաւ : 32 - Աւ երբ Եղիսէ տունը մտաւ , ահա աղան մեռած ու իր անկողինին վրայ պառկած էր : 33 - Աւ ներս մանկելով՝ երկուքնուն վրայէն դուռը գոցեց , և Տէրոջը աղօթք ըրաւ . 34 - Աւ ելաւ աղուն

*Եբբ . կենաց ժամանակին . Ծն . Ժբ . 40 , 14 :

վրայ պառկեցաւ . և իր բերանը անոր բերնին վրայ՝ ու իր աչքերը անոր աչքերուն վրայ՝ ու իր թաթերը անոր թաթերուն վրայ դրաւ , և անոր վրայ կծկեցաւ , ու տղուն մարմինը տաքցաւ : 35 - Եւ դարձաւ տանը մէջ մէյմը այս կողմը ու մէյմը այն կողմը պարտեցաւ , ու ելաւ անոր վրայ կծկեցաւ . և տղան եօթը անգամ՝ փռնգաց , ու տղան աչքերը բացաւ : 36 - Այն ատեն Գէեգին կանչեց ու ըսաւ , Սոււնամացի կինը կանչէ . ու զանիկա կանչեց . և անոր եկաւ . ու Եղիսէ անոր ըսաւ , Տղադ առ : 37 - Եւ կինը ներս մտնելով՝ անոր ոտքերը ինկաւ , ու գեանէն խոնարհութիւն ըրաւ , և իր տղան առնելով դուրս ելաւ :

38 - Ու Եղիսէ Գաղգաղա դարձաւ . և այն երկրին մէջ սով կար , ու մարգարէից որդիները անոր առջև կը նրստէին . ու անիկա իր ծառային ըսաւ , Մեծ կաթտան կ'աւելնէ՞ր , և մարգարէից որդիներուն ապուր եփէ : 39 - Ու մէկը դաշար ելաւ որպէս զի խոտեր ժողվէ , ու վայրենի բոյս մը գտաւ , և անկէ հանդերձը լեցուն վայրենի վարունգ ժողվեց , ու եկաւ զանոնք ապուրին կաթտային մէջ մանրեց , քանզի չէին ճանչնար : 40 - Եւ այն մարդոց առջև դրին որպէս զի ուտեն . ու երբ այն ապուրէն կերան՝ պռուտով ըսին , Կաթտային մէջ մահ կայ , ով մարդ Աստուծոյ . ու չկրցան ուտել : 41 - Եւ անիկա ըսաւ , Այիւր բերէք . ու զանիկա կաթտային մէջ նետեց , ու ըսաւ , Փողովուրդին առջև դիր , որպէս զի ուտեն . այն ատեն կաթտային մէջ վստահար բան մը չկար :

42 - Եւ Բաճաղասաղիսայէ մարդ մը եկաւ , ու Աստուծոյ մարդուն երախայրիներէ շնորհ չացեր , քան չատգարեղէն հաց , ու թարմ հասկեր բերաւ իր պարկովը : Եւ անիկա ըսաւ , Փողովուրդին տուր որպէս զի ուտեն : 43 - Եւ անոր ծառան ըսաւ , Այս ի՞նչ է որ հարիւր մարդոց առջև դնեմ . բայց անիկա ըսաւ , Փողովուրդին տուր որպէս զի ուտեն , քանզի Տէրը այսպէս կ'ըսէ . Պիտի ուտեն ու պիտի աւելնայ : 44 - Եւ անոնց առջև դրաւ , ու կերան , և Տէրօջը ըսածին պէս աւելցաւ :

Եւ Ասորոց թագաւորին զօրագլուխը Նէեման իր տէրօջը առջև մեծ ու յարգելի մարդ մըն էր , քանզի Տէրը անոր ձեռքով Ասորոց փրկութիւն տուեր էր . ու այս մարդը զօրաւոր կտրիճ մըն էր , բայց բորոտ էր : 2 - Եւ Ասորոց գունդերը ելլելով՝ Իսրայէլի երկրէն պղտիկ աղջիկ մը գերբի աւերէին , ու անիկա Նէեմանի կնոջ քով էր : 3 - Եւ անիկա իր տիկնոջ ըսաւ , Երանի՛ թէ իմ տէրս Սամարիա եղող մարգարէին առջև ըլլար , այն ատեն զանիկա իր բորոտութենէն կը բժշկէր : 4 - Ու Նէեման գնաց իր տէրօջը պատմեց , ու ըսաւ , Իսրայէլի երկրէն եղող աղջիկը այսպէս ու այսպէս խօսեցաւ : 5 - Եւ Ասորոց թագաւորը ըսաւ , Գնա ուրեմն , ես Իսրայէլի թագաւորին նամակ կը ղրկեմ : Ու անիկա գնաց , և իր ձեռքը տասը տաղանգ արծաթ ու վեց հազար ոսկի ու տասը ձեռք փոխելու հանդերձ առաւ : 6 - Եւ Իսրայէլի թագաւորին բերաւ նամակը , *որ այսպէս գրուած էր՝ . Արդ երբ այս նամակը քեզի հասնի , †գիտցած ըլլաս որ՝ իմ ծառաս Նէեմանը քեզի կը ղրկեմ , որպէս զի զանիկա իր բորոտութենէն բժշկես : 7 - Ու երբ Իսրայէլի թագաւորը նամակը կարդաց՝ իր հանդերձները պատուեց , ու ըսաւ , Միթէ ես մեռցնելու ու ապրեցնելու կարողութիւն ունեցող Աստուծո՞ւմ եմ , որ ասիկա ինծի մարդ մը ղրկեր է՝ իր բորոտութենէն բժշկելու համար . ուստի աղէկ գիտցէք ու տեսէք , որ ասիկա ինձմէ պատճառ մը կը փնտուէ :

8 - Ու երբ Աստուծոյ մարդը Եղիսէ լսեց՝ որ Իսրայէլի թագաւորը իր հանդերձները պատուեր է , թագաւորին ճարտը ղրկեց ու ըսաւ , Ինչո՞ւ հանդերձներդ պատուեցիր . թող անիկա ինձի գայ , ու զիտնայ թէ Իսրայէլի մէջ մարգարէ կայ : 9 - Եւ Նէեման իր ձիերովը ու կառքովը գնաց , ու Եղիսէի տանը դուռը կայնեցաւ : 10 - Ու Եղիսէ մարդ մը ղրկեց անոր՝ ըսելով , Գնա Յորդանանու մէջ եօթը անգամ՝ լուացուէ , և մարմինդ քեզի կը դառնայ , ու կը մաքրուիս : 11 - Ու Նէեման բարկացաւ ու գնաց՝ ըսե-

*ԵՔԵ. ըսելով †ԵՔԵ. ահա

լով, Ահա ես կ'ըսէի որ անհկա անտա-
 րակոյս իմ՝ քովս պիտի գայ ու կայնի,
 և իր Եհովա Աստուծոյն անունը պիտի
 կանչէ, ու ձեռքը այն տեղին վրայ պի-
 տի երերցնէ, ու բորոտութիւնը բժշկէ:
 12 - Գամասկոսի Աբանա ու Փարփար
 գետերը Իսրայէլի բոլոր ջուրերէն աղէկ
 չէն. միթէ չե՞մ կրնար անոնց մէջ
 լուացուիլ ու մաքրուիլ. և դարձաւ
 բարկութիւնով գնաց: 13 - Իսկ անոր
 ծառաները մօտեցան, ու անոր խօսե-
 ցան՝ ըսելով, Ով հայր, եթէ մարգա-
 րէն քեզի մեծ բան մը ըսէր՝ պիտի չը-
 նէի՞ր. ո՞ւր մնաց որ անհկա քեզի,
 Լուացուէ ու պիտի մաքրուիս, ըսաւ:
 14 - Այն ատեն անհկա իջաւ, ու Աս-
 տուծոյ մարդուն խօսքին համեմատ
 եօթը անգամ օրհանանու մէջ լուաց-
 ուեցաւ. ու անոր մարմինը պղտիկ
 տղու մը մարմինին պէս եղաւ, ու
 մաքրուեցաւ:

15 - Եւ անհկա իր բոլոր բանակովը
 Աստուծոյ մարդուն դարձաւ, ու գնաց
 անոր առջև կայնեցաւ, ու ըսաւ, Ահա
 հիմա գիտցայ որ բոլոր երկրի վրայ
 Աստուած չկայ, բայց միայն Իսրայէլի
 մէջ. ուստի հիմա, կ'աղաչեմ, քու
 ծառայէդ *ընծայ մը ընդունէ: 16 -
 Բայց անհկա ըսաւ, Տէրը, որուն առջև
 կը կայնիմ, կենդանի է որ պիտի չընդու-
 նիմ. ու զանհկա ստիպեց որ ընդունի,
 բայց անհկա չհաճեցաւ: 17 - Ու Նէե-
 ման ըսաւ, Ուրեմն քու ծառայիդ «յ»
 երէի՞ն հողէն երկու ջրիի բեռ չարուի՞
 քանզի քու ծառայ մէյմըն ալ ուրիշ
 աստուածներու ողջակէզ կամ՝ զոհ պի-
 տի չընէ, բայց միայն Եհովայի: 18 -
 Տէրը այս բանին համար քու ծառա-
 յիդ թողութիւն տայ, այսինքն երբ
 իմ աէրս Ռեմօնի տունը մտնէ հոն
 երկրպագութիւն ընելու համար, և
 անոր իմ՝ ձեռքիս վրայ կռթնելովը,
 ես ալ Ռեմօնի տանը մէջ ծռիմ, այս
 բանին, այսինքն Ռեմօնի տանը մէջ
 իմ ծռելուս համար Տէրը քու ծա-
 ռայիդ թողութիւն տայ: 19 - Ու Ե-
 դիէ՛ն անոր ըսաւ, Գնա խաղաղու-
 թեամբ. և անհկա անոր քովէն գնաց,
 «- քիչ մը ճամբայ «-»:

20 - Եւ Աստուծոյ մարդուն Եդիսէի
 ծառան Քէեզի ըսաւ, Ահա իմ աէրս
 այս Ասորի Նէեմանի խնայեց, ու անոր

ձեռքէն անոր բերածը չառաւ. Տէրը
 կենդանի է որ ես անոր ետեւէն կը վա-
 րեմ, և անկէ բան մը կ'առնեմ: 21 -
 Ու Քէեզի Նէեմանի ետեւէն վազեց.
 ու Նէեման երբ տեսաւ որ անհկա իր
 ետեւէն կը վազէ, իր կառքէն իջաւ
 զանհկա դիմաւորելու, ու ըսաւ, Ողջու-
 թիւն է: 22 - Եւ անհկա ըսաւ, Ողջու-
 թիւն է. իմ աէրս զիս զրկեց ու կ'ըսէ,
 Ահա հիմա Եփրեմի լեռնէն մարգարէից
 որդիներէն երկու պատանի եկան ինձի.
 շնորհք ըրէ, անոնց համար տաղանդ
 մը արծաթ ու երկու ձեռք փոխելու
 հանդերձ տուր: 23 - Ու Նէեման ը-
 սաւ, Շնորհք ըրէ, երկու տաղանդ առ.
 և զանհկա բռնադատեց, ու երկու
 պարկի մէջ երկու տաղանդ արծաթ
 դրաւ, ու երկու ձեռք ալ փոխելու
 հանդերձ ծրարեց, և իր ծառաներէն
 երկուքին տուաւ, որոնք անոր առջե-
 ւէն տարին: 24 - Ու երբ *բլուրը եկաւ՝
 անոնց ձեռքէն առաւ ու տանը մէջ
 պահեց, և այն մարդիկը ճամբեց, ու
 գացին. 25 - Եւ ինք ներս գնաց իր
 աէրոջը առջև կայնեցաւ. ու Եդիսէ
 անոր ըսաւ, Ով Քէեզի, ուրկէ՞ «-
 դ» . և անհկա ըսաւ, Ծառայ տե՛ղ
 մը չգնաց: 26 - Ու Եդիսէ ըսաւ անոր,
 Երբ այն մարդը իր կառքէն քեզ դի-
 մաւորելու դարձաւ, միթէ իմ հոգիս
 հոն չգնա՞ց. «- հի՛մ» արծաթ առնե-
 լու, և հանդերձներ ու ձիթեղներ և
 այգիներ ու ոչխարներ և արջառներ
 ու ծառաներ և աղախիներ առնելու
 ատե՞նն է: 27 - Ուրեմն Նէեմանի բո-
 րոտութիւնը քեզի ու քու սերունդիդ
 փակչի յաւիտեան: Եւ անհկա անոր
 առջեւէն ձիւնի պէս բորոտեալ ելաւ:

ԳԼ. 2

Եւ մարգարէից որդիները Եդիսէի
 ըսին, Ահա այս տեղը, ուր մենք քու
 առջեւ կը նստինք, մեզի նեղ է: 2 -
 Երթանք ուրեմն մինչև օրհանան, ու
 այն տեղէն ամէն մէկս մէյմէկ գերան
 առնենք, ու հոն մեզի բնակելու տեղ
 շինենք: Եւ անհկա ըսաւ, Գացէք: 3 -
 Ու անոնց մէկը ըսաւ, Շնորհք ըրէ,
 քու ծառաներուդ հետ եկուր. և անհ-
 կա՝ Կու գամ ըսաւ. 4 - Ու անոնց հետ
 գնաց. և օրհանան հասնելով ծառեր

*Եփր. օրհանութիւն

*Կամ, առանձին տեղը

կտրեցին: 5 - Ու երբ մէկը գերան մը կը կտրէր, ապա երկաթը ջուրին մէջ ինկաւ. ուստի անիկա պառալով՝ ըսաւ, Ո՛հ, տէր իմ, այն ալ փոխ առնուած էր: 6 - Եւ Աստուծոյ մարդը ըսաւ, Ո՛ւր ինկաւ. ու անիկա այն տեղը ցուցուց անոր: Ու Եղիէ փայտ մը կտրեց ու հոն նեւեց, ու երկաթը ջուրին երեսը ելաւ: 7 - Եւ ապա ըսաւ, Զանազան վերցուր, ան ալ ձեռքը երկնցուց ու զանիկա առաւ:

8 - Եւ Ասորուց թագաւորը Իսրայէլի դէմ պատերազմ կ'ընէր, ու իր ծառաներուն հետ խորհուրդ բրաւ ու ըսաւ, Այս ինչ կամ այն ինչ տեղը բանակ դնեմ: 9 - Եւ Աստուծոյ մարդը Իսրայէլի թագաւորին մօտ զրկեց՝ ըսելով, Զգուշացիր որ այն տեղէն չանցնիս, վասն զի Ասորիները հոն իջած են: 10 - Ու Իսրայէլի թագաւորը Աստուծոյ մարդուն ըսած տեղը մօտ զրկելով տեղեկացաւ, ու անկէ զգուշացաւ՝ շատ անգամ: 11 - Եւ այս բանին համար Ասորուց թագաւորին սիրտը նեղանալով՝ իր ծառաները կանչեց ու անոնց ըսաւ, Զէ՞ք յայտներ ինծի, թէ մերիններէն ո՞վ կայ ու Իսրայէլի թագաւորին լուր էջ դրէ: 12 - Ու ծառաներէն մէկը ըսաւ, Զկայ աշուրի Վեյլ, ով տէր իմ թագաւոր. հապա Իսրայէլի մէջ եղող Եղիսէ մարգարէն՝ քու պառկելու սենեակիդ մէջ խօսած խօսքերդ Իսրայէլի թագաւորին կը յայտնէ: 13 - Եւ անիկա ըսաւ, Քոյնք ու անոր ուր ըլլալը տեսք, որպէս զի զանիկա բռնել տամ: Եւ անոր պատմեցին ու ըսին, Ահա անիկա Իօթայիմի մէջ է:

14 - Ուստի անիկա ձիեր ու կառքեր և բազմաթիւ զօրքեր զրկեց հոն, որոնք դիշերով գացին և քաղաքը պաշարեցին: 15 - Եւ Աստուծոյ մարդուն ծառան առաւօտուն կանուխ ելաւ ու դուրս գնաց. և ահա զօրքեր, ձիեր ու կառքեր քաղաքը պաշարեր էին. ու ծառան անոր ըսաւ, Ո՛հ, տէր իմ, ի՞նչ ընենք: 16 - Ու Եղիէ ըսաւ, Մի վախճար, քանզի մեզի հետ եղողները անոնց հետ եղողներէն շատուոր են: 17 - Ու Եղիսէ աղօթք բրաւ ու ըսաւ, Ով Տէր, ասոր աչքերը բաց որպէս զի տեսնէ: Եւ Տէրը ծառային աչքերը

բացաւ. ու տեսաւ որ ահա լեւու Եղիսէի շորս կողմը հրեղէն ձիերով ու կառքերով լեցուն էր: 18 - Ու երբ անոնք Եղիէի քով իջան, Եղիսէ Տէրոջը աղօթք բրաւ ու ըսաւ, Կ'աղաչեմ, այս ազգը՝ *կուրուժեամբ զարկ. և Տէրը զանոնք կուրուժեամբ զարկաւ Եղիսէի խօսքին համեմատ: 19 - Այն ատեն Եղիսէ անոնց ըսաւ, Ճամբան այս չէ ու քաղաքը ասիկա չէ, ետեւէս եկէք որպէս զի ձեզ ձեր փնտուած մարդուն տանիմ. և զանոնք Սամարիա տարաւ: 20 - Ու երբ Սամարիա եկան, Եղիսէ ըսաւ, Ով Տէր, ասոնց աչքերը բաց որպէս զի տեսնեն: Եւ Տէրը անոնց աչքերը բացաւ, ու տեսան, և ահա Սամարիայի մէջ էին:

21 - Եւ Իսրայէլի թագաւորը զանոնք տեսնելով՝ Եղիսէի ըսաւ, Ով հայր իմ, զարնե՞մ, զարնե՞մ: 22 - Եւ անիկա ըսաւ, Մի զարներ. միթէ քու սրովդ ու աղեղովդ գերի բռնածներդ կը զարնե՞ս. անոնց առջև հաց ու ջուր դիր, որպէս զի ուտեն, խմեն ու իրենց տէրոջը երթան: 23 - Եւ անոնց մեծ կոչունք մը բրաւ, ու կերան խմեցին, ու զանոնք ետ զրկեց, ու իրենց տէրոջը գացին. և Ասորուց գունդերը մէյմըն ալ Իսրայէլի երկիրը չեկան:

24 - Եւ անկէ ետքը Ասորուց Բենագադ թագաւորը իր բոլոր բանակը ժողովեց, ու ելաւ Սամարիան պաշարեց: 25 - Եւ Սամարիայի մէջ մեծ սով եղաւ, քանզի զանիկա պաշարեր էին, այնպէս որ մէկ իշու գլուխը ութ տուն «իւր արծաթի», ու մէկ կապիճին չորրորդ մասը՝ խալանի աղբը՝ հինգ «իւր արծաթի» ծախուեցաւ: 26 - Ու երբ Իսրայէլի թագաւորը պարսպին վրայէն կ'անցնէր, կին մը անոր աղաղակեց ու ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, օգնէ քեզի: 27 - Եւ անիկա ըսաւ, Եթէ Տէրը քեզի ջօզնէ, ես քեզի ուրկէ՞ օգնեմ, կալէ՞ն թէ հնձանէն: 28 - Ու թագաւորը անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ: Եւ անիկա ըսաւ, Այս կինը ինծի ըսաւ որ Քու աղաղ տուր, ու այսօր զանիկա ուտենք, և իմ աղաս վայր ուտենք: 29 - Ուստի իմ աղաս եփեցինք և զանիկա կերանք. ու երկրորդ օրը

*Կա՛մ, շացու՛թեամբ

+Կը կարծուի թէ տեսակ մը ընդեղէն է

*Եբբ. ոչ մէկ ու ոչ երկու

անոր ըսի, Տղադ տուր որպէս զի ուտենք, բայց անիկա իր աղան պահէց: 30 - Եւ թագաւորը այն կնոջ խօսքը լսածին պէս իր հանդերձները պատուեց, ու պարսպին վրայէն անցած տաւենը ժողովուրդը տեսաւ որ ահա ներսէն անոր մարմինն վրայ քուրձ կար: 31 - Եւ անիկա ըսաւ, Աստուած ինձի այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ այսօր Ասփատեան Եղիսէի գլուխը իր վրայ մնայ: 32 - Ու Եղիսէ իր տունը կը նստէր, ու ծերերը անոր հետ կը նստէին. և Բաբելոն իր առջեւէն մարդ մը զրկեց անոր. ու պատգամաւորը դեռ չեկած՝ Եգիպտոս ծերերուն ըսաւ, Կը տեսնէ՞ք որ այս մարգտապանի որդին գլուխս առնելու Բաբելոն զրկեց. նայեցէք, այն մարդը եկածին պէս դուռը գոցեցէք, ու զանիկա գրանը քով բռնեցէք. միթէ անոր տէրոջը ստրկերուն ձայնը անոր ետեւէն չէ՞: 33 - Ու երբ անոնց հետ կը խօսէր, ահա այն պատգամաւորը անոր քով իջաւ. ու ըսաւ, Ահա այս չարիքը Տէրոջմէն է. ալ ասկէ ետեւ Տէրոջմէն ի՞նչ պիտի յուսամ:

ԳԼ. Ե

Ու Եղիսէ ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ բրէք. Տէրը այսպէս կ'ըսէ. Վազը այս տաւեն Սամարիայի գրանը մէջ մէկ գրիւ բարակ ալիւրը մէկ սիկղ արծաթի, ու երկու գրիւ գարին մէկ սիկղի պիտի թափուի: 2 - Եւ այն զօրապետը՝ որուն ձեռքին վրայ թագաւորը կը կռթնէր, Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ, Եթէ Տէրը երկինքը պատուհաններ ալ շինէ, միթէ ասիկա ըլլալով բան է: Եւ անիկա ըսաւ, Իսկ քու աչքերովդ պիտի տեսնես, բայց անկէ պիտի չուտես:

3 - Ու գրանը առջև չորս բորոտ մարդիկ կային, և անոնք իրարու ըսին, Ինչո՞ւ հոս նստինք մինչև որ մեռնինք. 4 - Եթէ ըսենք թէ քաղաքը մտնենք, քաղաքին մէջ սով կայ, ու հոն պիտի մեռնինք. և եթէ հոս մնանք, նոյնպէս պիտի մեռնինք. ուրեմն եկէք Ասորուց բանակը դիմենք. եթէ մեզ սղջ թողուն՝ կ'սպրինք, ու եթէ մեզ մեռցնեն՝ կը մեռնինք: 5 - Եւ մութ տաւեն ե-

լան որպէս զի Ասորուց բանակը երթան. ու մինչև Ասորուց բանակին ծայրը գացին, և ահա հոն մարդ մը չկար. 6 - Քանզի Տէրը Ասորուց բանակին մէջ կառքերու ձայն ու ձիերու ձայն, մեծ զօրքի մը ձայն լսել տուաւ, և իրարու ըսին, Ահա Իսրայէլի թագաւորը Քետացուց թագաւորները ու Էզրիպացուց թագաւորները վարձքով բռնեց որպէս զի մեր վրայ գան: 7 - Ու ելան մութուն փախան, և իրենց վրանները ու ձիերը ու էշերը և բանակը եղածին պէս թողուցին, ու իրենց անձր արեցնելու համար փախան: 8 - Եւ այս բորոտները մինչև բանակին ծայրը գացին, ու վրան մը մանելով կերան ու խմեցին. և անկէ արծաթ ու ոսկի ու հանդերձներ վերցուցին ու գացին պահեցին. ու ետ դառնալով ուրիշ վրան մը մտան, և անկէ ալ վերցուցին ու գացին պահեցին: 9 - Ետքը իրարու ըսին, Աղէկ չէ մեր բրածը. այսօր աւետեաց օր է, ու մենք լուռ կեցեր ենք. եթէ մինչև առաւօտեան լոյսը սպասենք, *Եր անօրէնութեանը պատիժը պիտի կրենք՝. ուստի հիմա եկէք երթանք ու թագաւորին տունը պատմենք: 10 - Եւ գացին քաղաքին դռնապանին պոռացին, ու անոնց պատմեցին ու ըսին, Մենք Ասորուց բանակը մտանք, և ահա հոն մարդ կամ մարդու ձայն չկայ, բայց միայն ձիերը կապուած ու էշերը կապուած, ու վրաններն ալ այնպէս կեցեր են: 11 - Եւ դռնապանները պոռացին, ու թագաւորին տանը ներսը իմացուցին:

12 - Ու թագաւորը գիշերով ելաւ և իր ծառաներուն ըսաւ, Ասորիներուն մեզի ըրած բանը ես ձեզի պատմեմ. Անոնք մեր անօթի ըլլալը գիտնալով՝ բանակէն ելած են, ու գաշտին մէջ պահուած են՝ ըսելով, Երբ անոնք քաղաքէն դուրս ելլեն, զանոնք սղջ բռնենք ու քաղաքը մանենք: 13 - Եւ անոր ծառաներէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Թող մնացած ձիերէն հինգը առնեն՝ որոնք հոս մնացած են. ահա անոնք բոլոր Իսրայէլի բազմութեանը պէս եղան, [որոնք հոս մնացած են. ահա անոնք բոլոր Իսրայէլի բազմութեանը պէս եղան,] որ հասնելու վրայ է. և հոն զրկենք ու տեսնենք:

* Հասնելու համար՝ թագաւորը ըսաւ

* Եբբ. անօրէնութիւնը մեզ պիտի գտնէ

14 - Ու երկու կառք առին իրենց ձիերովը՝, և թագաւորը Ասորւոց բանակին ետեւէն զրկեց ու ըսաւ, Գացէք նայեցէք: 15 - Ու անոնք մինչև Յորդանան անոնց ետեւէն գացին, և ահա բոլոր ճամբան լեցուն էր հանդերձներով ու ամաններով՝ զորոնք Ասորիները արտորայով փախած ասեհնին ձգեր էին: Եւ պատգամաւորները ետ դարձան ու թագաւորին պատմեցին:

16 - Այն ատեն ժողովուրդը ելաւ ու Ասորւոց բանակը կողոպտեց. ու Տէրոջը խօսքին համեմատ մէկ գրիւ բարակ պիւրը մէկ սիկղ արծաթի, ու երկու գրիւ գարին մէկ սիկղի թախուեցաւ: 17 - Եւ թագաւորը դրանք վերակացու դրաւ այն զօրապետը՝ որուն ձեռքին վրայ ինք կը կաթնէր. ու ժողովուրդը դրանք մէջ զանհկա կոխկուտեցին, ու մեռաւ, Աստուծոյ մարդուն խօսքին համեմատ որ խօսեր էր՝ թագաւորին անոր քով իջած ատենը: 18 - Ու եղաւ՝ ինչպէս Աստուծոյ մարդը թագաւորին խօսեր էր՝ ըսելով, Վաղը այս ատեն Սամարիայի դրանք մէջ երկու գրիւ գարին մէկ սիկղ արծաթի, ու մէկ գրիւ բարակ ալիւրը մէկ սիկղի պիտի ծախուի: 19 - Եւ այն զօրապետը Աստուծոյ մարդուն պատասխան տուեր ու ըսեր էր, Եթէ Տէրը երկինքը պատուհաններ ալ չինէ, միթէ աստիկա ըլլալով բան է. ու Աստուծոյ մարդը ըսեր էր, Ահա դուն քու աչքերովդ պիտի տեսնես, բայց անկէ պիտի չուտես: 20 - Այսպէս եղաւ անոր, քանզի ժողովուրդը զանհկա դրանք մէջ կոխկուտեցին, ու մեռաւ:

ԳԼ Ը

Ու Եղիսէ խօսեցաւ այն կնոջ որուն տղան ողջնցուցեր էր, ու ըսաւ, Եթէր դուն քու ընտանիքովդ գնա, և ուր որ կրնաս՝ հաւ պանդխտութիւն բրէ, վասն զի Տէրը սովը կանչեց. և ահա կու գայ եօթը տարի այս երկրին վրայ հաւը: 2 - Ու այն կինը ելաւ ու Աստուծոյ մարդուն ըսածին պէս ըրաւ. և ինք իր ընտանիքովը գնաց ու Փղըշ-

տացւոց երկրին մէջ եօթը տարի պանդխտութիւն ըրաւ:

3 - Եւ եօթը տարուան լմնայէն ետքը այն կինը Փղշտացւոց երկրէն դարձաւ, և իր տանը համար ու իր արտին համար թագաւորին բողոքելու գնաց:

4 - Ու թագաւորը Աստուծոյ մարդուն ծառային Գէեգիի հետ խօսեցաւ ու ըսաւ, Եղիսէի ըրած բոլոր մեծ գործերը ինծի պատմէ: 5 - Ու երբ անհկա թագաւորին կը պատմէր, թէ ի՛նչպէս անհկա մեռած արջն ողջնցուց, ահա այն կինը՝ որուն տղան ողջնցուցեր էր, իր տանը համար և իր արտին համար թագաւորին կը բողոքէր. ու Գէեգի ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, այս է այն կինը, ու այս է անոր տղան զոր Եղիսէ ողջնցուց: 6 - Եւ թագաւորը կնոջ հարցուց, ու անհկա անոր պատմեց: Ու թագաւորը ներքինի մը տուաւ անոր ու ըսաւ, Ասոր ամէն ստացուածքը, նաև երկիրը թողած օրէն մինչև հիմա էր արտին բոլոր արդիւնքը իրեն դարձուր:

7 - Ու Եղիսէ Գամասկոս գնաց: Եւ Ասորւոց Բենադագ թագաւորը հիւանդացեր էր. ու անոր պատմեցին ու ըսին թէ Աստուծոյ մարդը հաս եկաւ:

8 - Եւ թագաւորը Ազայէլի ըսաւ, Ձեռքդ ընծայ առ ու գնա Աստուծոյ մարդը դիմաւորէ, ու անոր միջոցով Տէրոջը հարցուր թէ արդեօք այս հիւանդութենէն պիտի առողջանամ:

9 - Եւ Ազայէլ զանհկա դիմաւորելու գնաց. ու ձեռքը ընծայ առաւ, այսինքն Գամասկոսի բոլոր բարիքներէն քառասուն ուղտ բեռնաւորուած, ու գնաց և անոր առջև կայնեցաւ ու ըսաւ, Քու որդիդ Ասորւոց Բենադագ թագաւորը զիս քեզի զրկեց՝ ըսելով, Արդեօք այս հիւանդութենէն պիտի առողջանամ: 10 - Ու Եղիսէ անոր ըսաւ, Գնա անոր ըսէ, Անշուշտ պիտի առողջանաս. բայց Տէրը ինծի ցուցուց, որ անհկա անշուշտ պիտի մեռնի:

11 - Եւ աչքերը անթարթափ կերպով անկեց՝ մինչև որ անհկա ամչցաւ. ու Աստուծոյ մարդը լացաւ: 12 - Եւ Ազայէլ ըսաւ, Իմ տէրս ինչով կու լայ: Ու անհկա ըսաւ, Անոր համար որ Խորայէլի որդիներուն ընելու չարութիւնդ գիտեմ. անոնց ամբոցները կրակով պիտի այրես, ու անոնց կարիճ-

*Կամ, երկու զոյգ ձիեր առին
†Եբր. եղաւ

ները սրով պիտի մեռցնես, և անոնց պզտիկ աղաքը գեաինը պիտի զարնես, ու յղի կինները պիտի ճեղքես: 13 - Եւ Ազայէլ ըսաւ, Գու ծառագի՞նչ շուն է՝ որ այդ մեծ բաները ընէ: Ու Եղիսէ ըսաւ, Տէրը ինձի ցուցուց՝ որ դուն Ասորոց վրայ թագաւոր պիտի ըլլաս: 14 - Եւ անիկա Եղիսէի քովէն ելաւ ու իր տէրոջը գնաց. ու անիկա անոր ըսաւ, Եղիսէ քեզի ի՞նչ ըսաւ. և անիկա ըսաւ, Ինձի ըսաւ որ անշուշտ պիտի առողջանաս: 15 - Ու հեռեւեալ օրը անիկա՝ *հասա լաթ՝ մը առաւ, ջուրը թաթիկեց ու անոր երեսին վրայ փռեց. և անիկա մեռաւ, ու Ազայէլ անոր տեղ թագաւոր եղաւ:

16 - Եւ Իսրայէլի թագաւորին Աքաաբեան Յովրամի հինգերորդ տարին երբ Յովսափաա՝ Գուգայի վրայ կը թագաւորէր, Յուգայի Յովսափաա թագաւորին որդին Յովրամ թագաւոր եղաւ: 17 - Անիկա երեսունուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ ութ տարի թագաւորութիւն ըրաւ: 18 - Եւ ասիկա Աքաաբի տանը ըրածին պէս՝ Իսրայէլի թագաւորներուն ճամբան բռնեց. քանզի Աքաաբի աղջիկը ասոր կին եղաւ. ու ասիկա Տէրոջը առջև չարութիւն ըրաւ: 19 - Սակայն Տէրը Յուգան կորսնցնել չուզեց՝ իր Գաւիթ ծառային սիրոյն համար, ինչպէս անոր խօսք առեր էր, որ Իէ՛ անոր և Իէ՛ անոր որդիներուն միշտ ճրագ մը տայ:

20 - Ասոր օրերը Եդովմայեցիք Յուգայի ձեռքին տակէն ապստամբեցան ու իրենց վրայ թագաւոր մը դրին: 21 - Ու Յովրամ՝ էջ բոլոր կառքերը իրեն հետ առաւ ու Սայիր անցաւ. և գիշերով ելաւ, ու իր չորս կողմը առնող Եդովմայեցիները ու կառքերու իշխանները զարկաւ. և ժողովուրդը իրենց վրանները փախան: 22 - Բայց Եդովմայեցիք Յուգայի ձեռքին տակէն ապստամբեցան մինչև այսօր: Այն տառն Լեբնա ալ ապստամբեցու:

23 - Եւ Յովրամի մնացորդ պատմութիւնը ու բոլոր ըրածները ահա Յուգայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են: 24 - Ու Յովրամ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ Գաւիթի քա-

ղաքին մէջ թաղուեցաւ. և անոր որդին՝ *Ոքոզիա անոր տեղը թագաւոր եղաւ:

25 - Իսրայէլի Աքաաբեան Յովրամ թագաւորին երկուսուսուներորդ տարին Յուգայի Յովրամ թագաւորին որդին Ոքոզիա թագաւոր եղաւ: 26 - Ոքոզիա քսանուերկու տարեկան էր՝ երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ մէկ տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Գոթողիա էր, որ Իսրայէլի Ամրի թագաւորին աղջիկն էր: 27 - Եւ անիկա Աքաաբի տանը ճամբուն մէջ քալեց, ու Աքաաբի տանը պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, քանզի Աքաաբի տանը փեսան էր: 28 - Եւ անիկա Աքաաբեան Յովրամի հետ Ասորոց Ազայէլ թագաւորին վրայ Ռամովթ-գաղաղագ գնաց պատերազմելու համար, և Ասորիք Յովրամը վիրաւորեցին: 29 - Եւ Յովրամ թագաւորը դարձաւ որպէս զի Յեզրայէլի մէջ բժշկուի այն վէրքերէն զորոնք Ասորիները անոր տուեր էին՝ Գոթողիա մէջ՝ Ասորոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմ ըրած պատենը. ու Յուգայի թագաւորը Յովրամի որդին Ոքոզիա Յեզրայէլ իջաւ, Աքաաբի որդին Յովրամը տեսնելու համար. քանզի անիկա հիւանդ էր:

Գ.Լ. Թ

Ու Եղիսէ մարգարէն մարգարէից որդիներէն մէկը կանչեց, ու անոր ըսաւ, Գօտիդ մէջքդ կապէ, ու այս իւղին շիշը ձեռքդ առ, և Ռամովթ-գաղաղագ գնա: 2 - Ու երբ հոն երթաս Նամեսսեան Յովսափաաի որդին Յեուն խափր, ու մտնելով՝ զանիկա իր եղբայրներուն մէջէն վերցուր, և զանիկա ներքին սենեակ մը տար: 3 - Ու իւղին շիշը առ և անոր գլուխը թափէ, ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օժեցի. ու դուռը բանաս ու փախչելու չուշանաս: 4 - Եւ այն պատանին, նորահասակ մարգարէն, Ռամովթ-գաղաղագ գնաց:

5 - Ու երբ հոն հասաւ, ահա զօրաց

*բ Մն. իբ. 6 իշխանի Ազարիա, և բ Մն. իա. 17, և իե. 23 իշխանի Յովաքազ:

†Եբբ. Ռամայի †Եբբ. տես

*Կաթ, վերմակ

իշխանները նստեր էին . և անհկա
րասւ , Ով իշխան , քեզի խօսք մը ու-
նիմ . ու Յէու ըսաւ , Մեր ամէնէն
որսւ . ու անհկա ըսաւ , Քեզի , ով
իշխան : 6 - Եւ Յէու ելաւ , ներս
մտաւ . ու անհկա իւզը անոր գլուխը
թափեց , ու անոր ըսաւ , Իսրայէլի
Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Քեզ
Տէրոջը ժողովուրդին , Իսրայէլի , վրայ
թագաւոր օծեցի . 7 - Եւ քու տէրոջդ
Աքաարի տունը զարնես , սրպէս զի
իմ ծառաներուն , մարգարէներուն ,
արիւնին համար ու Տէրոջը բոլոր ծա-
ռաներուն արիւնին համար Յեզարէլի
ձեռքէն վրէժ տունեմ : 8 - Ու Աքա-
արի բոլոր տունը բնաջինջ պիտի ըլ-
լայ . և Աքաարի Բուր այր մարդիկը ,
ու Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուա-
ծը պիտի կորսնցնեմ . 9 - Եւ Աքաարի
տունը Նաբատի որդւոյն Յերոբոամի
տանը պէս , ու Աքիայի որդւոյն Բաա-
այի տանը պէս պիտի ընեմ . 10 - Ու
Յեզարէլը Յեզրայէլի ագարակին մէջ
շուները պիտի ուտեն , ու զանիկա թա-
ղող պիտի չըլլայ : Ետքը դուռը բա-
ցաւ ու փախաւ :

11 - Եւ Յէու իր տէրոջը ծառանե-
րուն ելաւ , ու անոր ըսին , Ողջութի՞ւն
է . այս անմիտը ինչու քեզի եկաւ :
Եւ անհկա անոնց ըսաւ , Դուք այն
մարդը ու անոր խօսքերը գիտէք : 12 -
Եւ անոնք ըսին , Սուտ է . պատմէ մեզի
հիմա . ան ալ ըսաւ , Անհկա ինծի այս-
պէս ու այսպէս խօսեցաւ՝ ըսելով ,
Տէրը այսպէս կ'ըսէ . Քեզ Իսրայէլի
վրայ թագաւոր օծեցի : 13 - Այն ա-
տեն շուտով ամէն մարդ իր հանգերծը
տաւաւ , ու տանգուխին գլխուն վրայ
անոր տակ գրին , ու փող հնչեցնելով
ըսին , Յէու թագաւոր եղաւ : 14 -
Այսպէս Նաաթանի Յովսափատի որ-
դին Յէու Յովրամի գէմ գլուխ վեր-
ցուց : (Իսկ Յովրամ՝ բոլոր Իսրայէլի
հետ Ասորուց Ազայէլ թագաւորին ե-
րեսէն Ռամովթ-գաղաազը կը պահ-
պանէր . 15 - Ասկայն Յովրամ թա-
գաւորը Ասորուց Ազայէլ թագաւորին
հետ պատերազմ՝ բրած տանը Ասորի-
ներուն տուած վէրքերէն տուողջանա-
յաւ համար Յեզրայէլ գարձեր էր :) Եւ
Յէու ըսաւ , Եթէ կը հաճիք , փախտա-
կան մը այս քաղաքէն դուրս չեյլէ , որ
երթայ այս Բուր Յեզրայէլի մէջ պատմէ :

16 - Եւ Յէու հեծաւ ու Յեզրայէլ

գնաց , քանզի Յովրամ հոն պառկած
էր . և Յուդայի Ռքոզիա թագաւորը
Յովրամը տեսնելու իջեր էր : 17 - Ու
Յեզրայէլի մէջ աշտարակին վրայ դէտ
մը կայներ էր , որ Յէուի գունդին գայը
տեսնելով՝ ըսաւ , Ես գունդ մը կը տես-
նեմ . և Յովրամ ըսաւ , Զիտաւոր մը առ-
ու անոնց դիմաց զրկէ , ու թող ըսէ ,
Խաղաղութի՞ւնն է : 18 - Եւ ձիաւորը
զանհկա դիմաւորելու գնաց ու ըսաւ ,
Թագաւորը այսպէս կ'ըսէ . Խաղաղու-
թի՞ւնն է . ու Յէու ըսաւ , Դուն խա-
ղաղութիւնը ի՞նչ պիտի ընես . ետիս
անցիր : Եւ դէտը պատմեց ու ըսաւ ,
Պատգամաւորը մինչև անոնց քով
գնաց , բայց չգարձաւ : 19 - Եւ ու-
րիշ ձիաւոր մը զրկեց . անհկա ալ ա-
նոնց գնաց ու ըսաւ , Թագաւորը այս-
պէս կ'ըսէ . Խաղաղութիւնն է . և Յէու
ըսաւ , Դուն խաղաղութիւնը ի՞նչ
պիտի ընես . ետիս անցիր : 20 - Ու
դէտը պատմեց ու ըսաւ , Մինչև ա-
նոնց քով գնաց , բայց չգարձաւ . և
այս ընթացքը Նաաթանի Յէուի ըն-
թացքին կը նմանի , քանզի կատա-
ղարար կը քչէ :

21 - Այնտե՛ն Յովրամ ըսաւ , Կա-
ռէ պատրաստէ . ու անոր կառքը պատ-
րաստեցին , և Իսրայէլի թագաւորը
Յովրամ , ու Յուդայի թագաւորը Ռ-
քոզիա , ամէն մէկը իր կառքով Յէուն
դիմաւորելու ելան , ու զանհկա Յեզ-
րայէլացի Նաբովթի ագարակին մէջ
գտան : 22 - Եւ Յովրամ Յէուն տես-
նելուն պէս ըսաւ , Ով Յէու , խաղա-
ղութի՞ւնն է . ու անհկա ըսաւ , Ի՞նչ
պէս խաղաղութիւն կ'ըլլայ , քանի որ
քու մօրդ Յեզարէլի պունկութիւն-
ները ու կախարղութիւնները կը շատ-
նան : 23 - Եւ Յովրամ ձեռքերը դար-
ձուց ու փախաւ , ու Ռքոզիայի ըսաւ ,
Ով Ռքոզիա , դաւաճանութիւն կայ :
24 - Եւ Յէու *Էր աղեղը ուժով քա-
չեց , ու Յովրամը ուսերուն մէջտեղէն
զարկաւ , ու նետը անոր սրտէն ելաւ ,
և անհկա իր կառքին մէջ կծկեցաւ :
25 - Ու Յէու իր գորագլուխին Բադե-
կարի ըսաւ , Ասիկա վերցուր , Յեզրա-
յէլացի Նաբովթի կայուածքի ագա-
րակին մէջ նետէ . քանզի միաքոյ բեր
որ երբ ես ու գուն անոր հօրը Աքաարի
ետեւէն յիւրս չեմ օճ՝ քովէ քով

*Եբր . աղեղով իր ձեռքը լեցուց

կ'երթայինք, Տէրը անոր դէմ այս ո՞վ ճիւղը տուաւ. 26 - Տէրը կ'ըսէ որ Իրաւցընէ երէկ Նաբովթի արիւնը ու անոր որդիներուն արիւնը տեսայ, ու քեզի այս ազարակին մէջ պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը: Անոր համար հիմա վերցուր զանհկա, այս ազարակին մէջ նետէ, Տէրոջը ըսածին համեմատ:

27 - Եւ Յուզայի Աքոզիա թագաւորը այս բանը տեսնելով՝ պարտէզի տանը ծամբայէն փախաւ. ու Յէու անոր ետեւէն իյնալով՝ ըսաւ, Ասիկա ալ կառքին վրայ զարկէք. այս եղաւ Յերզասամի քով եղող Գուր բլուրին վրայ. ու Ուրբի Մակեդոնով փախաւ, ու հոն մեռաւ: 28 - Եւ անոր ծառաները զանհկա կառքով Երուսաղէմ տարին, ու զանհկա Դաւիթի քաղաքը իր գերեզմանին մէջ իր հայրերուն հետ թաղեցին:

29 - Եւ Աքոզիա Աքաաբի որդւոյն Յովրամի մետաւաներորդ տարին Յուզայի վրայ թագաւոր եղեր էր:

30 - Եւ Յէու Յեզրայէլ եկաւ. ու որք Յեզրայէլ լսեց՝ իր աչքերուն ծարպը դրաւ և իր գլուխը զարդարեց, ու պատուհանէն կը նայէր: 31 - Աւերք Յէու գռնէն ներս կը մտնէր, անհկա ըսաւ, Միթէ իր տէրը մեռցնող Զամբրի յաջողութիւն գրեց: 32 - Եւ Յէու իր երեսը դէպ ի պատուհանը վերցուց, ու ըսաւ, Ինծի հետ ո՞վ կայ, ո՞վ. ու երկու երեք ներքինիներ անոր նայեցան: 33 - Այն ատեն ըսաւ, Զանհկա վար նետեցէք. ու զանհկա վար նետեցին, և անոր արիւնէն պատին ու ձիերուն վրայ ցաթկեց. ու կոխկռտեց զանհկա: 34 - Եւ ինք ներս մտաւ ու կերաւ խմեց, ու ըսաւ, Հիմա այս անիծուած կնոջ հոգ տարէք ու զանհկա թաղեցէք, քանզի թագաւորի աղջիկ է: 35 - Եւ զանհկա թաղելու գացին. բայց անոր գազաթէն ու սաքերէն ու ձեռքերուն թաթերէն զատ ուրիշ բան մը չգտան: 36 - Եւ գարձան անոր պատմեցին. ու անհկա ըսաւ, Այս է Տէրոջը խօսքը՝ զոր իր ծառային Թեզբացի Եղիայի ձեռքով խօսեցաւ՝ ըսելով, Յեզրայէլի մարմինը Յեզրայէլի ազարակին մէջ շուները պիտի ուտեն. 37 - Աւ Յեզրայէլի դիակը Յեզրայէլի ազարակին մէջ՝ արտի երեսի վրայ

եղող աղբի պէս պիտի բլլայ, այնպէս որ չըսուի թէ Ասիկա Յեզրայէլն է:

ԳԼ. Ժ

Եւ Աքաաբ Սամարիայի մէջ եօթանասուն որդի ունէր. ու Յէու նամակ մը գրեց, և Սամարիա զրկեց Յեզրայէլի իշխաններուն ու ծերերուն և Աքաաբի որդիներուն հոգաբարձուներուն՝ ու ըսաւ, 2 - Երբ այս նամակը ձեզի հասնի, ահա ձեր տէրոջ որդիները ձեր քով են, ու կառքեր ու ձիեր և պարսպաւոր քաղաք ու զէնքեր ալ ունիք. 3 - Աւրեմն ձեր տէրոջ որդիներէն ո՞րը որ աղէկ ու յարմար կը դատէք՝ զանից իր հօրը աթոռին վրայ նստեցուցէք, ու ձեր տէրոջ տանը համար պատերազմ՝ ըրէք: 4 - Աւ անոնք խիստ շատ վախցան, ու ըսին, Ահա երկու թագաւորներ չկրցան անոր առջև կայնիլ, ու մենք ի՞նչպէս պիտի կայնինք: 5 - Եւ պալատին հապարապետը ու քաղաքապետը ու ծերերը և հոգաբարձուները Յէուի հօրք զրկեցին ու ըսին, Մենք քու ծառաներդ ենք, ու մեզի ինչ որ հրամայես՝ պիտի ընենք. բնաւ մէկը թագաւոր պիտի չդնենք. քու աչքերուդ աղէկ երեւցածը ըրէ:

6 - Եւ անոնց նորէն նամակ մը գրեց՝ ըսելով, Եթէ դուք ինծի հետ եք ու իմ խօսքս մտիկ կ'ընէք, ձեր տէրոջ որդիներուն գլուխները առէք, ու վաղը այս ատեն ինծի Յեզրայէլ եկէք. ու թագաւորին որդիները եօթանասուն հոգի էին, ու զանոնք մեծցնող քաղաքի մեծերուն քով էին: 7 - Եւ նամակը անոնց հասածին պէս՝ թագաւորին որդիները բռնեցին, ու եօթանասուն հոգի մորթեցին, և անոնց գլուխները կողովներու մէջ դրին, և անոր զրկեցին Յեզրայէլ: 8 - Եւ լրաբեր մը եկաւ, ու անոր պատմեց՝ ըսելով, Թագաւորին որդիներուն գլուխները բերին: Եւ անհկա ըսաւ, Զանոնք մինչև առտու դրանք քով դրէք երկու դէզ ընելով: 9 - Աւ առտուանց դուրս ելաւ կայնեցաւ, և բոլոր ժողովուրդին ըսաւ, Դուք արդար էք. ահա ես իմ տէրոջս դէմ գլուխ վերցուցի ու զանհկա մեռցուցի, բայց ասոնք ամէնը ո՞վ մեռցուց: 10 - Հիմա գիտցէք որ Տէրոջը խօսքէն բնաւ բան չէ գետինը

*Եբր. բեռը

պիտի չիյնայ, զոր Տէրը Ա. քաարի տանը
 համար խօսեցաւ . ու Տէրը իր ծառա-
 յին Եզրայի ձեռքով ըսածը ըրաւ :
 11 - Եւ Յէու Յեզրայէլի մէջ Ա. քաարի
 տունէն բոլոր մնացածները, ու անոր
 բոլոր մեծ նախարարները և մտերիմ
 բարեկամները, ու քուրմերը մեռցուց,
 այնպէս որ անոր մնացորդ մը չիթողուց:

12 - Անկէ ետքը ելաւ Սամարիա
 գնաց, «- ճամբուն վրայ հովիւներու
 *Բեթակաղին հասնելով, 13- Յէու Յու-
 դայի Ա. քոզիա թագաւորին եղբայրները
 գտաւ, ու անոնց ըսաւ, Գուք ո՞վ էք:
 Եւ անոնք ըսին, Ա. քոզիայի եղբայրներն
 ենք, ու թագաւորին որդիները ու թա-
 գուհին որդիները ողջունելու իջանք:

14 - Այն ատեն անիկա ըսաւ, Ասանք
 ողջ բռնեցէք. ու զանոնք ողջ բռնե-
 ցին, և Բեթակաղի ջրհորին քով մեռ-
 ցուցին զանոնք, որ քառասունուերկու
 հոգի էին. ու անոնց մէկը ողջ չիթողուց:

15 - Եւ անկէ գնաց. ու իր դիմաց ել-
 լող Ռեքաբի որդին Յովնադաբը գտաւ,
 ու անոր բարե տուաւ ու ըսաւ, Ինչ-
 պէս իմ սիրտս քու սրտիդ հետ «-դիզէ,
 այդեօք քու սիրտդ ալ «յնպէ» ուզի՞ր
 է. և Յովնադաբ ըսաւ, Այո: Ուրեմն
 ձեռքդ տուր. ու անիկա ձեռքը
 տուաւ, ու զանիկա կառքին մէջ իր
 քով առաւ, 16 - Եւ ըսաւ, Ինծի հետ
 եկուր, ու Տէրոջը համար ունեցած
 նախանձաւորութիւնս տես. այսպէս
 անոր կառքը հեծցուցին զանիկա:

17 - Եւ Սամարիա գնաց, ու Սամա-
 րիայի մէջ Ա. քաարէ բոլոր մնացած-
 ները զարկաւ, մինչև որ զանիկա բնա-
 ջինջ ըրաւ՝ այն խօսքին համեմատ զոր
 Տէրը Եզրայի խօսք էր:

18 - Եւ Յէու բոլոր ժողովուրդը
 ժողովեց, ու անոնց ըսաւ, Ա. քաար Բա-
 հաղի քիչ ծառայութիւն ըրաւ, Յէու
 անոր շատ ծառայութիւն պիտի ընէ:

19 - Եւ հիմա Բահաղի բոլոր մարգա-
 րէները, բոլոր ծառաները ու բոլոր
 քուրմերը ինծի կանչեցէք, «- մա՛րդ
 մը պակաս չըլլայ, քանզի Բահաղի մեծ
 զոհ՝ պիտի ընեմ՝. ամեն հոն չգտնուողը
 պիտի չապրի. «-էկ» Յէու խարէու-
 թեամբ ըրաւ, որպէս զի Բահաղի ծա-
 ռայութիւն ընողները բնաջինջ ընէ:

20 - Եւ Յէու ըսաւ, Բահաղի համար

տօնախմբութիւն մը *սահմանեցէք. ու
 ծանուցում ըրին: 21 - Եւ Յէու բոլոր
 Խորայէլի պարտաւորները զրկեց, ու
 Բահաղի բոլոր ծառայութիւն ընող-
 ները եկան, ու չեկող մարդ չմնաց.
 և Բահաղի տունը եկան, ու Բահաղի
 տունը ծայրէ ծայր լեցուեցաւ: 22 -

Եւ հանդերձապետին ըսաւ, Բահաղի
 բոլոր ծառայութիւն ընողներուն պատ-
 մու ճաններ հանէ. ու պատմու ճանները
 հանեց անոնց: 23 - Եւ Յէու Ռեքաբի
 որդւոյն Յովնադաբի հետ Բահաղի
 տունը մտաւ, ու Բահաղի ծառայու-
 թիւն ընողներուն ըսաւ, Փնտուեցէք

նայեցէք, չըլլայ որ հասնեղի հետ Ե-
 հովայի ծառաներէն մարդ գտնուի,
 բայց միայն Բահաղի ծառայութիւն
 ընողները: 24 - Եւ զոհեր ու ողջակէզ-
 ներ ընելու մտան. ու Յէու իրեն հա-
 մար դուրսը ութսուն մարդ կայնե-
 ցուց, ու անոնց ըսաւ, Ով որ ձեր ձեռ-

քը տուած մարդոցմէս Բիշ ազատէ,
 իր անձը անոր անձին տեղ պիտի ըլ-
 լայ: 25 - Ու երբ ողջակէզը ըրաւ լմըն-
 ցուց, Յէու սուրհանդակներուն ու զօ-
 րապետներուն ըսաւ, Գացէք, ասանք
 մեռցուցէք. մա՛րդ մը գուրս չելլէ: Ու

զանոնք սուրէ անցուցին, և սուրհան-
 դակները ու զօրապետները զանա՛ն նե-
 տեցին. ու ետքը Բահաղի տանը քա-
 ղաբը մտան. 26 - Եւ Բահաղի տանը
 արձանները հանեցին, ու զանոնք կրա-
 կով այրեցին: 27 - Եւ Բահաղի ար-
 ձանը կործանեցին, ու Բահաղի տունը
 փցուցին ու զանիկա արտաքնաց ըրին

մինչև այսօր: 28 - Այսպէս Յէու Խա-
 րայէլէ բնաջինջ ըրաւ Բահաղը: 29 -
 Սակայն Յէու Խորայէլի մեղանչել
 սուտը Նաբատեան Յերոբոամի մեղ-
 քերէն, այսինքն Բեթէլի ու Գանի մէջ
 եղող ոսկիէ որթերէն, ետ չկեցաւ:

30 - Եւ Տէրը Յէուի ըսաւ, Որով-
 հետև գուն իմ աչքերուս առջև ու-
 զիդ եղածը ի գործ գնելով աղէկ ըրիր,
 «- Ա. քաարի տանը բոլոր իմ սրտիս մէջ
 եղածին համեմատ ըրիր, քու որդիներդ
 մինչև չարբորդ ազգը Խորայէլի աթո-
 ոին վրայ պիտի նստին: 31 - Բայց Յէու
 Խորայէլի Տէր Աստուծոյն օրէնքին մէջ
 բոլոր սրտով քայելու գղուշութիւն
 չըրաւ, «- Խորայէլի մեղանչել սուտը
 Յերոբոամի մեղքերէն ետ չկեցաւ:

*Կ-ճ, ասորակառու ընելու տունը
 †Եբր. ունիմ

*Եբր. սրբեցէք

32 - Այն օրերը Տէրը սկսաւ Իսրայէլը *կոտորել . և Ագայէլ Իսրայելացւոց բոլոր սահմաններուն մէջ զանոնք զարկաւ , 33 - Յորգանանէ դէպի արեւելք բոլոր Գաղատագու երկիրը , այսինքն Գաղեանները , Ռուբենեանները ու Մանասեանները՝ Առնոն ձորին վրայ եղող Արտէրէն մինչև Գաղատա ու Բասան :

34 - Եւ Յեուի մնացորդ պատմութիւնը ու ամէն ըրածը ու բոլոր զօրութիւնը , ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 35 - Եւ Յեու իր հայրերուն հետ քնացաւ , ու զանհկա Սամարիայի մէջ թաղեցին . և անոր որդին Յովաքազ անոր տեղ թագաւոր եղաւ : 36 - Եւ Յեուի Իսրայէլի վրայ Սամարիայի մէջ թագաւորութիւն ըրած օրերը քսանըութ առի էին :

ԳԼ. ԺԱ.

Եւ Ոքոզիայի մայրը Գոթողիա իր որդւոյն մեռնիլը տեսնելով , ելաւ բոլոր թագաւորական սերունդը բնաջինջ ըրաւ : 2 - Բայց Յովրամ թագաւորին աղջիկը , Ոքոզիայի քոյրը Յոաբէէ , Ոքոզիայի որդին Յովաքազ առաւ , ու թագաւորին սպաննուած որդիներուն մէջէն գողցաւ զանհկա ու անոր դայեակը . և Գոթողիայի երեսէն անկողիններու սենեակին մէջ պահեցին զանհկա , ու չմեռցուեցաւ : 3 - Եւ անհկա անոր հետ վեց տարի Տէրոջը տանը մէջ պահուեցաւ . ու երկրին վրայ Գոթողիա թագաւորութիւն կ'ընէր :

4 - Ու եօթներորդ տարին Յովիագա Ժաբը զրկեց , և հարիւրապետները , թիկնապահները ու սուրհանգակները կանչեց , և զանոնք իր քով Տէրոջը տունը բերաւ , ու անոնց հետ ուխտ ըրաւ , ու Տէրոջը տանը մէջ անոնց երգում ընել տուաւ , ու թագաւորին որդին անոնց ցուցուց : 5 - Եւ անոնց պատուիրելով ըսաւ , Ձեր ընելու բանը այս է . ձեր երրորդ մասը՝ որ շաբաթ յըջ պիտի մտնեն , թագաւորին տանը դահպանութիւն ընեն . 6 - Ու երրորդ մասը՝ Սուրի դուռը , ու երրորդ մասն ալ սուրհանգակներու ետեւի դուռը յոյն . և այսպէս տանը պահպանու-

թիւնը ընէք որպէս զի մարդ չմտնէ : 7 - Ու ձեզմէ երկու գունդը , այսինքն այն ամէնը որ շաբաթ յըջ պիտի ելլեն , թագաւորին բոլորաիքը Տէրոջը տանը պահպանութիւնը ընեն : 8 - Եւ ամէն մարդ իր զէնքերը ձեռքը՝ թագաւորին չորս կողմը առնէք . ու կարգերէն ներս մտնողը սպաննուի . ու թագաւորին հետ ըլլաք անոր ելած ու մտած ասունը :

9 - Եւ հարիւրապետները Յովիագա քահանային բոլոր պատուիրածները ըրին . ու ամէն մէկը իր մարդիկը առաւ , թէ՛ շաբաթ յըջ մտնողները և թէ՛ շաբաթ յըջ ելլողները , ու Յովիագա քահանային քով եկան : 10 - Եւ քահանան Տէրոջը տունը եղած Գաւթ թագաւորին նիզակները ու վահանները հարիւրապետներուն տուաւ : 11 - Ու սուրհանգակները ամէն մարդ իր զէնքը ձեռքը՝ տանը աջ կողմէն մինչև ձախ կողմը՝ սեղանին ու տանը քով թագաւորին բոլորաիքը կայնեցան : 12 - Եւ թագաւորին որդին հանեց , ու անոր վրայ թագը ու վկայութիւնը դրաւ . և զանհկա թագաւոր ըրին ու օծեցին , ու ծափ զարնելով ըսին , Կեցցէ արքայ :

13 - Եւ Գոթողիա երբ *վազող ժողովուրդին ձայնը լսեց , Տէրոջը տունը ժողովուրդին եկաւ . 14 - Ու տեսաւ որ ահա թագաւորը ըստ սովորութեան սիւնին քով կայներ էր , և զօրապետները ու փողերը թագաւորին քով էին , ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախանալով փողեր կը հնչեցնէին . այն ատեն Գոթողիա իր հանդերձները պատուեց ու պուաց , Գաւաճանութիւն է , դաւաճանութիւն : 15 - Եւ Յովիագա քահանան զօրքերուն վրայ եղող հարիւրապետներուն հրամայեց , ու անոնց ըսաւ , Ասիկա կարգերուն մէջէն հանեցէք , ու ասոր ետեւէն գացողը սրով մեռցուցէք , (քանզի քահանան ըսեր էր որ Տէրոջը տանը մէջ չմեռցուի :)

16 - Եւ անոր վրայ ձեռքերնին երկնցուցին . ու երբ անհկա թագաւորական տունը մտնող ձիերուն ճամբայէն կ'երթար , հոն մեռցուեցաւ :

17 - Եւ Յովիագա Տէրոջը ու թագաւորին ու ժողովուրդին մէջտեղ ուխտ ըրաւ , որպէս զի Տէրոջը ժողովուրդը ըլլան . նաև թագաւորին ու

*Եբր. ծայրատել

*Կաճ, սուրհանգակներուն ~

ժողովուրդին մէջտեղ : 18 - Ու երկրին բոլոր ժողովուրդը Բաճաղի տունը մտան , և զանհկա կործանեցին , և անոր սեղանները ու կուռքերը կտոր կտոր ըրին , և Բաճաղի քուրմը Մաաթանը սեղաններուն առջև սպաննեցին . ու քաճանան Տէրոջը տանը մէջ պաշտօնեաներ դրաւ : 19 - Եւ հարիւրապետները , թիկնապաճները ու սուրհանգակները , ու երկրին բոլոր ժողովուրդը աւաւ , և թագաւորը Տէրոջը տունէն իջեցուցին , ու սուրհանգակներուն դրանը ճամբայէն թագաւորին տունը մտան . և անհկա թագաւորներուն աթոռին վրայ նստաւ : 20 - Ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախացաւ , ու քաղաքը հանդարտութեան մէջ էր . իսկ Գոթողիան թագաւորական տանը +ալ սրով մեռցուցին : 21 - Յովաս եօթը տարեկան էր երբ թագաւոր եղաւ :

ԳԼ. ԺԲ

Յէուի եօթներորդ տարին Յովաս թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ քառասուն տարի թագաւորութիւն ըրաւ . ու անոր մօրը անունը Սաբիա էր՝ Բերսաբէէ +աղա+էն : 2 - Եւ Յովաս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ այն բոլոր օրերուն մէջ՝ որ Յովիազա քաճանան անոր կը սորվեցնէր : 3 - Բայց բարձր տեղերը չվերցան . ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոճ կը մատուցանէին ու խունկ կը ծխէին :

4 - Եւ Յովաս քաճանաներուն ըսաւ , Տէրոջը տունը բերուած սուրբ բաներուն բոլոր ստակը , համբուած մարգոց ստակը , գինը կտրուած անձերուն ստակը , և այն բոլոր ստակը՝ զոր մարդ մը Տէրոջը տունը բերելու կամք կ'ընէ , 5 - Քաճանաները՝ ամէն մարդ իրենց ճանչուորներէն առնեն , ու տանը փլած տեղերը իրենք նորոգեն , ուր որ փլած տեղ մը գտնուի :

6 - Ասկայն Յովաս թագաւորին քանու իրեքերորդ տարին՝ քաճանաները տանը փլած տեղերը չնորոգեցին :

7 - Եւ Յովաս թագաւորը երէն կանչեց Յովիազա քաճանան ու Բաճաղի քաճանաները , և անոնց ըսաւ , Տանը փլած տեղերը ինչո՞ւ չէք նորոգեր . ու հիմա ձեր ճանչուորներէն Բայճը՝ ու ստակ մի առնէք , հապա զանհկա տանը փլած տեղե-

րուն համար տուէք : 8 - Եւ քաճանաները հաւանութիւն տուին , որ իրենք ստակ չառնեն ժողովուրդէն , * ոչ ալ տանը փլած տեղերը նորոգեն : 9 - Եւ Յովիազա քաճանան սնտուկ մը աւաւ , ու անոր վրայ ծակ մը ծակեց , ու զանհկա սեղանին քով՝ Տէրոջը տունը մտնողներուն աջ կողմը դրաւ . և զուռ սպասող քաճանաները Տէրոջը տունը բերուած բոլոր ստակը հոն կը դնէին : 10 - Ու երբ կը տեսնէին որ սնտուկին մէջ ստակը շաղցեր է , թագաւորին գրագիրը ու մեծ քաճանան կ'ելլէին , ու Տէրոջը տունը գտնուած ստակը համբելով կը ծրարէին . 11 - Եւ պատրաստուած ստակը Տէրոջը տանը Գործէ՞ վրայ դրուած բանուորներուն ձեռքը կու տային , որպէս զի անոնք Տէրոջը տանը մէջ գործող հիւսերուն ու շինողներուն 12 - Եւ որմնագիրներուն ու քարահասաններուն վճարեն . նաև Տէրոջը տանը փլած տեղերը նորոգելու համար փայտեր ու տաշուած քարեր ծախու առնեն , և տանը նորոգութեանը համար բոլոր պէտք եղած բաներուն ծախք ընեն : 13 - Բայց Տէրոջը տունը բերուած ստակէն՝ Տէրոջը տանը համար արծաթէ գաւաթներ , բազմակալներ , կոնքեր , փողեր ու ոսկիէ ամաններ կամ արծաթէ ամաններ ամենեւին չչինուեցան . 14 - Քանզի բանուորներուն կու տային զանհկա , որպէս զի անով Տէրոջը տունը նորոգեն : 15 - Եւ որոնց ձեռքը որ կը յանձնէին այն ստակը՝ բանուորներուն տալու համար , անոնցմէ հաշիւ չէին առներ . քանզի անոնք հաւատարմութեամբ կ'աշխատէին : 16 - Յանցանքի ստակը ու մեղքի ստակը Տէրոջը տունը չէր մաներ , անհկա քաճանաներուն կ'ըլլար :

17 - Այն տան Ատրեոց Ազայէլ թագաւորը ելաւ Գէթի դէմ պատերազմ՝ ըրաւ , ու զանհկա աւաւ . ետքը Ազայէլ իր երեսը դարձուց , որպէս զի Երուսաղէմի վրայ ելլէ : 18 - Եւ Յուդայի թագաւորը Յովաս՝ իր հայրերուն , Յուդայի թագաւորներուն , Յովասփաաի ու Յովրամի և Ոքոզիայի , նուիրած բոլոր սուրբ բաները , ու իր նուիրածը , և Տէրոջը տանը ու թագաւորական

* կա՛մ , առանց նորոգելու տանը փլած տեղերը

տանը գանձերուն մէջ գանուած բո-
յոր սակին առաւ, ու Ատարւոց Ազայէլ
Թագաւորին զրկեց, այսպէս անհկա
Երուսողէմի վրայէն *եա քաշուեցաւ* :

19 - Եւ Յովասի մնացորդ պատմու-
թիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յու-
դայի Թագաւորներուն յիշատակաց
գիրքին մէջ գրուած են: 20 - Եւ անոր
ծառաները ոտք ելան, ու անոր դէմ
գաւաճանութիւն ըրին. ու Յովասը
զարկին Մելօնի տանը մէջ, որ Սելլայի
զառ ի վայրին վրայ է: 21 - Եւ անոր
ծառաները, Սամելի որդին Յովա-
քար ու Սովմերի որդին Յովաքազ,
զանհկա զարկին, ու մեռաւ. և զանհ-
կա իր հայրերուն հետ Գաւիթի քա-
ղաքին մէջ Թաղեցին. ու անոր տեղ
անոր որդին Ամուսիա Թագաւոր եղաւ:

ԳԼ. ԺԳ

Յուդայի Թագաւորին, Աքոզիայի
որդւոյն Յովասի, քանուիրեքերորդ
տարին Իսրայէլի վրայ Յէոււի որդին
Յովաքազ Թագաւոր եղաւ Սամու-
րիայի մէջ, * - տասնըօթը տարի Բա-
բելոնի մէջ: 2 - Եւ Տէրօջը առջև չարու-
թիւն ըրաւ, ու Իսրայէլի մեղանչել
առող Նաբատեան Յերոբոամի մեղ-
քերուն հետեւող եղաւ, անոնցմէ եա
չկեցաւ: 3 - Եւ Տէրօջը բարկութիւնը
Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զա-
նոնք շարունակ Ատարւոց Ազայէլ Թա-
գաւորին ձեռքը, ու Ազայէլի որդւոյն
Քենադագի ձեռքը մտանեց:

4 - Եւ Յովաքազ Տէրօջը աղօթք ը-
րաւ, ու Տէրը անոր մտիկ ըրաւ. քան-
զի տեսաւ Իսրայէլի նեղութիւնը, որով
Ատարւոց Թագաւորը զանոնք նեղեց:
5 - Եւ Տէրը Իսրայէլի փրկիչ մը տուաւ,
ու Ատարւոց ձեռքին տակէն ելան. և
Իսրայէլի որդիները երէկուան ու միւս
օրուան պէս իրենց վրաններուն մէջ կը
նստէին: 6 - Բայց Իսրայէլի մեղանչել
առող Յերոբոամի տանը մեղքերէն
եա չկեցան, հապա անոնց մէջ քալե-
ցին. ու Ասատրովթի կուռքն ալ Սա-
մարիայի մէջ կը կենար: 7 - Իսկ Յովա-
քազի * - ռէլ զօրք չթողուց, բայց միայն
յիսուն ձիաւոր, տասը կառք ու տասը
հազար հետեւակ զօրք. վասն զի Ատար-
ւոց Թագաւորը զանոնք բնաջինջ ըրեր

էր, ու զանոնք կոխուած հողի պէս
ըրեր էր:

8 - Եւ Յովաքազի մնացորդ պատ-
մութիւնը ու անոր բոլոր ըրածը ու զօ-
րութիւնը ահա Իսրայէլի Թագաւորնե-
րուն յիշատակաց գիրքին մէջ գրուած
են: 9 - Եւ Յովաքազ իր հայրերուն
հետ քնացաւ, ու զանհկա Սամարիայի
մէջ Թաղեցին. և անոր տեղ անոր որ-
դին Յովաս Թագաւոր եղաւ:

10 - Յուդայի Յովաս Թագաւորին
երեսունըօթներորդ տարին՝ Իսրայէլի
վրայ Յովաքազի որդին Յովաս Թագա-
ւոր եղաւ Սամարիայի մէջ, * - տասնը-
վեց տարի Բաբելոնի մէջ: 11 - Եւ Տէրօջը
առջև չարութիւն ըրաւ, * - Իսրայէլի
մեղանչել առող Նաբատեան Յերո-
բոամի բոլոր մեղքերէն եա չկեցաւ,
հապա անոնց մէջ քալեց:

12 - Եւ Յովասի մնացորդ պատմու-
թիւնը ու անոր բոլոր ըրածը, և Յու-
դայի Ամուսիա Թագաւորին հետ պա-
տերազմ ըրած առեւ իր քաջութիւնը
ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշա-
տակաց գիրքին մէջ գրուած են: 13 -
Ու Յովաս իր հայրերուն հետ քնացաւ,
և անոր ամուսը Յերոբոամ՝ նստաւ.
ու Յովաս Իսրայէլի Թագաւորներուն
հետ Սամարիայի մէջ Թաղուեցաւ:

14 - Ու Եզիսէ իր մեռնելու հիւան-
դութիւնովը հիւանդացաւ, և Իսրա-
յէլի Թագաւորը Յովաս անոր իջաւ,
ու անոր երեսին վրայ լացաւ ու ըսաւ,
Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայէլի կառքը
ու անոր ձիաւորները: 15 - Ու Եզիսէ
անոր ըսաւ, Աղեղ մը ու նետեր առ.
և անհկա աղեղ մը ու նետեր առաւ:
16 - Ու Իսրայէլի Թագաւորին ըսաւ,
Ձեռքդ աղեղին վրայ հեծցուր, և ա-
նհկա ձեռքը հեծցուց. ու Եզիսէ իր
ձեռքերը Թագաւորին ձեռքերուն վրայ
գրաւ, 17 - Ու ըսաւ, Արեւելեան կողմի
պատուհանը բաց. ան ալ բացաւ. ու
Եզիսէ ըսաւ, Նետէ. ան ալ նետեց:
Այն * - ռէն Եզիսէ ըսաւ, Տէրօջը փրկու-
թեան նետը, ու Ատարւոց դէմ փրկու-
թեան նետը. քանզի Ատարիները Ափէկի
մէջ պիտի զարնես մինչև որ հասցնես:
18 - Նաև ըսաւ, Նետերը առ. ու ա-
նհկա առաւ. և Իսրայէլի Թագաւորին
ըսաւ, Գետինը զարկ. ու անհկա երեք
անգամ գետինը զարկաւ ու կեցաւ:
19 - Եւ Ասատուծոյ մարդը անոր բար-
կանալով ըսաւ, Եթէ հինգ կամ վեց

*Եբր. ելաւ

անգամ զարնէիր, այն ատեն Ասորի- ները պիտի զարնէիր ու պիտի հատցը- նէիր. բայց հիմա Ասորիները փոյն երեք անգամ պիտի զարնես:

20 - Ու Եղիսէ մեռաւ, և զանիկա թաղեցին: Ու հետեւեալ տարին Մա- վաբացոց գունդերը երկրին վրայ ե- կան: 21 - Ու երբ մարդ մը կը թա- ղէին, ահա գունդ մը տեսան, ու մար- դը Եղիսէի գերեզմանը նետեցին. և այն մարդը Եղիսէի ոսկորներուն դպա- ծին պէս կենդանացաւ ու իր ստքերուն վրայ կայնեցաւ:

22 - Եւ Ասորոց Ազայէլ թագա- ւորը Յովաբազի բոլոր օրերուն մէջ Իս- րայէլը նեղեց: 23 - Բայց Տէրը Աբրա- համի, Իսահակի ու Յակոբի հետ իր բրած ուխտին համար անոնց սղորմե- ցաւ ու գթութիւն ըրաւ, և անոնց նա- յեցաւ. զանոնք կորսնցնել չուզեց, ու զանոնք դեռ իր երեսէն չձգեց:

24 - Եւ Ասորոց Ազայէլ թագա- ւորը մեռաւ, ու անոր տեղ անոր որ- դին Բենադադ թագաւոր եղաւ: 25 - Եւ Յովաբազի որդին Յովա Ազայէլի որդւոյն Բենադադի ձեռքէն ետ ա- ռաւ այն քաղաքները, զորոնք Ազայէլ անոր հօրը Յովաբազի ձեռքէն պատե- րազմով առեր էր. Յովա զանիկա երեք անգամ զարկաւ, ու Իսրայէլի քաղաքները ետ առաւ:

ԳԼ. ԺԴ

Իսրայէլի թագաւորին, Յովաբազ- եան Յովասի, երկրորդ տարին Յուդայի թագաւորին Յովասի որդին Ամասիա թագաւոր եղաւ: 2 - Անիկա քսանը- հինգ տարեկան էր երբ թագաւոր ե- ղաւ, ու Երուսաղէմի մէջ քսանըինը տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Յովագան էր ու Երուսա- ղեմացի էր: 3 - Ու Տէրոջը առջև ուղ- ղութիւն ըրաւ, բայց ոչ իր հօրը Իս- ակիթի պէս. իր հօրը Յովասի բոլոր բրածներուն համեմատ ըրաւ: 4 - Սա- կայն բարձր տեղերը չվերցան. Ժողո- վուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին ու խունկ կը ծխէին: 5 - Ու երբ թագաւորութիւնը անոր ձեռքին մէջ հաստատուեցաւ՝ իր ծառաները մեռցուց, որոնք իր հայ- րը, թագաւորը, սպաններ էին: 6 - Բայց սպաննողներուն որդիները չմեռ-

ցուց, ինչպէս Մովսէսի օրինաց գիր- քին մէջ գրուած է, որ Տէրը պատ- ուիրեց ըսելով, Տղոց յանցանքին համար հայրերը չմեռցուին, ու հայրերուն յանցանքին համար աղաքը չմեռցուին, հապա ամէն մարդ իր յանցանքին հա- մար պիտի մեռցուի: 7 - Ասիկա Ազի ձորին մէջ տասը հազար Եդովմոյեցի զարկաւ, ու Վէմը պատերազմով ա- ռաւ, և անոր անունը Յեկթավէլ կո- չեց մինչև այսօր:

8 - Այն ատեն Ամասիա Իսրայէլի թագաւորին, Յեուի որդւոյն Յովա- քազի որդւոյն Յովասի, դեսպաններ զրկեց՝ ըսելով, Եկուր, երես երեսի տեսնուինք: 9 - Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը Յուդայի Ամասիա թագա- ւորին հարց զրկեց ու ըսաւ, Լիբանանի փուշը Լիբանանի եղեւնափայտին պար- փով զրկեց՝ ըսելով, Քու ազջիկդ իմ տղուս կին տուր. բայց Լիբանանի մէջ եղող դաշտի գազանը անցաւ, ու փուշը կոխկռտեց: 10 - Իրաւ, Եդով- մոյեցիները զարկիր, ու քու սիրտդ քեզ հպարտացուց. *քու փառքովդ գոհ եղիր*, ու տունդ նստէ. քանզի ին- չո՞ւ համար չարութեան խառնուիս, որ իյնաս դուն ու քեզի հետ Յուդա- սալ: 11 - Բայց Ամասիա մտիկ չըրաւ: Ուստի Իսրայէլի Յովաս թագաւորը ելաւ, և ինք ու Յուդայի Ամասիա թա- գաւորը Յուդայի Բեթսամիւսին մէջ երես երեսի տեսնուեցան: 12 - Եւ Յու- դա Իսրայէլի առջև յաղթուեցաւ, ու ամէն մարդ իր վրանը փախաւ: 13 - Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը՝ Ոքոզիայի որդւոյն Յովասի որդին Ամասիան, Յու- դայի թագաւորը, Բեթսամիւսի մէջ բռնեց, ու Երուսաղէմ եկաւ, ու Եփ- րեմի դռնէն մինչև Անկեան դուռը Երուսաղէմի պարսպին չորս հարիւր կանգունը փլցուց: 14 - Եւ բոլոր ոս- կին ու արծաթը՝ ու Տէրոջը տանը մէջ ու թագաւորին տանը գանձերուն մէջ գանուած բոլոր ամանները առաւ, և պատանդներ ալ առաւ, ու Ամասիա զարձաւ:

15 - Եւ Յովասի գործերուն մնացորդ պատմութիւնը ու անոր զօրութիւնը և Յուդայի Ամասիա թագաւորին հետ բրած պատերազմը ահա Իսրայէլի թա- գաւորներուն յիշատակաց գիրքին մէջ

*Եբբ. փառաւորութէ

գրուած են : 16 - Ու Յովաո իր հայրերուն հետ քնացաւ, և Իսրայէլի թագաւորներուն հետ Սամարիայի մէջ թաղուեցաւ : ու անոր տեղ անոր որդին Յերոբոամ թագաւոր եղաւ :

17 - Եւ Յուդայի թագաւորը, Յովասի որդին Ամասիա, Իսրայէլի թագաւորին, Յովաքազի որդւոյն Յովասի, մեռնելէն ետքը տասնըհինգ տարի տպրեցաւ :

18 - Ու Ամասիայի մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է :

19 - Անոր դէմ Երուսաղէմի մէջ դաւաճանութիւն ըրին, և անիկա Լաքիս փոխաւ : բայց անոր ետեւէն Լաքիս Ժորդ գրկեցին, ու զանիկա հոն մեռցուցին :

20 - Եւ զանիկա ձերբով վերցուցին, ու Երուսաղէմ իր հայրերուն հետ Գալիթի քաղաքին մէջ թաղուեցաւ :

21 - Եւ բոլոր Յուդայի ժողովուրդը Ազարիան աւին, որ տասնըվեց տարեկան էր, ու զանիկա իր հօրը Ամասիայի տեղ թագաւոր դրին :

22 - Ասիկա Ելիթը շինեց, ու թագաւորին իր հայրերուն հետ քնանալէն ետքը զանիկա Յուդայի ետ դարձուց :

23 - Յուդայի թագաւորին, Յովասի որդւոյն Ամասիայի, տասնըհինգերորդ տարին Իսրայէլի Յովաո թագաւորին որդին Յերոբոամ Սամարիայի մէջ թագաւոր եղաւ, ու քառասունըմէկ տարի թագաւորաց :

24 - Եւ Տերոջը առջև չարութիւն ըրաւ, ու Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբոամի բոլոր մեղքերէն ետ չկեցաւ :

25 - Ասիկա Իսրայէլի սահմանը Եմաթի մուտքէն մինչև դաշտի ծովը ետ դարձուց : Իսրայէլի Տէր Աստուծոյն խօսքին համեմատ, որ իր ծառային Գեթքոփերացի Ամաթեան Յովան մարգարէին ձեռքով խօսեր էր :

26 - Քանզի Տէրը տեսաւ Իսրայէլի խիստ սաստիկ տառապանքը, որ ոչ գոցուած ու ոչ ձգուած կար, ու Իսրայէլ օգնական ալ չունէր :

27 - Եւ Տէրը չբարոր Իսրայէլի անունը երկինքին տակէն բնաջինջ ընէ : ուստի Յովասեան Յերոբոամի ձեռքով զանանք ազատեց :

28 - Ու Յերոբոամի մնացորդ պատմութիւնը, և անոր բոլոր ըրածը, ու

պատերազմական քաջութիւնը, և Գալիթի քաջութիւնը ու Եմաթը Յուդայի ետ դարձնելը Իսրայէլի մէջ, ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են :

29 - Ու Յերոբոամ իր հայրերուն, Իսրայէլի թագաւորներուն, հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին Չաքարիա թագաւոր եղաւ :

ԳԼ ՓԵ

Իսրայէլի Յերոբոամ թագաւորին քսանըօթներորդ տարին Յուդայի Ամասիա թագաւորին որդին Ազարիա թագաւոր եղաւ :

2 - Անիկա տասնըվեց տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ յիսունութերկու տարի թագաւորութիւն ըրաւ : և անոր մօրը անունը Յեքէլիա էր, ու Երուսաղէմացի էր :

3 - Եւ անիկա Տերոջը առջև ուղղութիւն ըրաւ իր հօրը Ամասիայի բոլոր ըրածին պէս :

4 - Բայց բարձր տեղերը չվերցան : ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ գոհ կը մտտուցանէին ու խունկ կը ծխէին :

5 - Եւ Տէրը թագաւորը զարկաւ, ու մինչև իր մահուան օրը բորոտած էր, և զատ տան մը մէջ կը բնակէր : ու պալատին վրայ իշխող թագաւորին որդին Յովաթամ էր, ու անիկա կը դատէր երկրին ժողովուրդը :

6 - Եւ Ազարիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են :

7 - Ու Ազարիա իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա իր հայրերուն հետ Գալիթի քաղաքին մէջ թաղուեցին : և անոր տեղ անոր որդին Յովաթամ թագաւոր եղաւ :

8 - Յուդայի Ազարիա թագաւորին երեսունըթերորդ տարին Իսրայէլի վրայ Յերոբոամի որդին Չաքարիա թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, ու վեց ամիս թագաւորաց :

9 - Եւ անիկա իր հայրերուն ըրածին պէս Տերոջը առջև չարութիւն ըրաւ, ու Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբոամի մեղքերէն ետ չկեցաւ :

10 - Ու Յաբիսի որդին Սեղզում անոր դէմ

*Կճ, Ոգիան, տես գլ. փե. 13: ք ՄՆ. իզ. 1 :

*Կճ, Յուդայի Եմաթը Իսրայէլի ետ դարձնելը

գլուխ վերցուց , և զանհկա ժողովուրդին առջև զարկաւ մեռցուց , ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ :

11 - Եւ Զաբարիայի մնացորդ պատմութիւնը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է : 12 - Ասիկա Տէրօջը խօսքն է զոր Յէուի խօսեր էր՝ ըսելով , Իսրայէլի աթոռին վրայ քու որդիներդ մինչև չորրորդ ազգը պիտի նստին . ու այնպէս եղաւ :

13 - Յարիսի որդին Աեղզում՝ Յուգայի Ազիա թագաւորին երեսունըննեորոր տարին թագաւոր եղաւ , ու Սամարիայի մէջ մէկ ամիս թագաւորութիւն ըրաւ : 14 - Եւ Գազգիի որդին Մանայեմ թերապէ ելաւ , ու Սամարիա եկաւ . և Սամարիայի մէջ Յարիսի որդին Աեղզումը զարկաւ մեռցուց , ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ :

15 - Աւ Աեղզումի մնացորդ պատմութիւնը ու բրած դաւաճանութիւնը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 16 - Այն ատեն Մանայեմ թափսան ու բոլոր անոր մէջ եղողները , ու անոր ասմանը զարկաւ *մինչև թերաւ* , և չբանալնուն համար զարկաւ *— հոն եղող բոլոր յղի կիները ճեղքեց :

17 - Յուգայի Ազարիա թագաւորին երեսունըննեորոր տարին Իսրայէլի վրայ Գազգիի որդին Մանայեմ թագաւոր եղաւ , *— Սամարիայի մէջ տասը տարի Բաբելոնացի* : 18 - Եւ անհկա Տէրօջը առջև չարութիւն ըրաւ , *— իր բոլոր օրերուն մէջ Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբոամի մեղքերէն ետ չկեցաւ :

19 - Եւ Ասորեստանի Փուղ թագաւորը երկրին վրայ եկաւ . ու Մանայեմ հազար տաղանդ արծաթ տուաւ Փուղի , որպէս զի Կանիկա իրեն օգնական ըլլայ , թագաւորութիւնը իր ձեռքին մէջ հաստատելու համար : 20 - Աւ Մանայեմ այս արծաթը Ասորեստանի թագաւորին տալու համար Իսրայէլի բոլոր հարուստներուն վրայ հարկ գրաւ , *— ամէն մէկէն յիսունական սիկղ արծաթ *—* . և Ասորեստանի թագաւորը ետ դարձաւ ու այն երկրին մէջ չկեցաւ :

*Եբբ. Թերապէ
†Եբբ. անոր ձեռքը իրեն հետ ըլլայ

21 - Աւ Մանայեմի մնացորդ պատմութիւնը և անոր ամէն բրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 22 - Աւ Մանայեմ իր հայրերուն հետ քնացաւ , և անոր տեղ անոր օրդին Փակէիա թագաւոր եղաւ :

23 - Յուգայի Ազարիա թագաւորին յիսունեորոր տարին Իսրայէլի վրայ Մանայեմի օրդին Փակէիա թագաւոր եղաւ Սամարիայի մէջ , *— երկու տարի Բաբելոնացի* : 24 - Եւ Տէրօջը առջև չարութիւն ըրաւ , *— Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբոամի մեղքերէն ետ չկեցաւ : 25 - Եւ անոր զօրապետը Ռովմեյայի օրդին Փակէէ անոր դէմ գլուխ վերցուց , ու իրեն հետ Արգովըր ու Արիէն , ու Գաազացիներէն յիսուն մարդ *—* , և Սամարիայի մէջ թագաւորին տանը *ներսի կողմը* զանհկա զարկաւ մեռցուց , ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ :

26 - Եւ Փակէիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր բրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են :

27 - Յուգայի Ազարիա թագաւորին յիսունուերկուեորոր տարին Իսրայէլի վրայ Ռովմեյայի օրդին Փակէէ թագաւոր եղաւ Սամարիայի մէջ , *— քսան տարի Բաբելոնացի* : 28 - Եւ Տէրօջը առջև չարութիւն ըրաւ , *— Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբոամի մեղքերէն ետ չկեցաւ : 29 - Իսրայէլի Փակէէ թագաւորին օրերը Ասորեստանի թագաւոր Փազուսար թագաւորը եկաւ , ու իյօնը և Արէլ-բեթմաաքան ու Յանովէն և Կադէսը ու Յատարը և Գազուադը ու Գալիլեան և Նեփթաղիմի բոլոր երկիրը աւաւ , ու անոնց բնակիչները Ասորեստան գերի տարաւ : 30 - Աւ Էլյայի օրդին Ռովմեյայի օրդւոյն Փակէէի դէմ դաւաճանութիւն ըրաւ , և զանհկա զարկաւ մեռցուց , ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ Ազիայի օրդւոյն Յովաթամի քսանեորոր տարին :

31 - Աւ Փակէէի մնացորդ պատմութիւնը և անոր բոլոր բրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են :

32 - Իսրայէլի թագաւորին , Ռով-

*Կաթ, պալատը

մեղայի որդւոյն Փակէէի, երկրորդ տարին Յուդայի թագաւորին Ոգիայի որդին Յովաթամ թագաւոր եղաւ : 33 - Անիկա քսանըֆինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ տասնըվեց տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անուը Յերուսա էր , որ Սադովկի աղջիկն էր : 34 - Եւ անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ . իր հօրը Ոգիայի բոլոր ըրածին պէս ըրաւ : 35 - Բայց բարձր տեղերը չվերցան . ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զո՛հ կը մատուցանէին ու խունկ կը ծխէին : Ասիկա Տէրոջը տանը ամէնէն բարձր դուռը շինեց :

36 - Եւ Յովաթամի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 37 - Այն օրերը Տէրը Ասորւոց Ռասին թագաւորը ու Ռովմելայի որդին Փակէէն Յուդայի վրայ զրկել սկսաւ : 38 - Եւ Յովաթամ իր հայրերուն հետ քնացաւ , ու իր հայրերուն հետ իր հօրը Իաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ . ու անոր տեղ անոր որդին Աքազ թագաւոր եղաւ :

ԳԼ. ԺԶ

Ռովմելայի որդւոյն Փակէէի տասնըթներորդ տարին Յուդայի թագաւորին Յովաթամի որդին Աքազ թագաւոր եղաւ : 2 - Աքազ քսան տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ տասնըվեց տարի թագաւորութիւն ըրաւ . և իր հօրը Իաւիթի պէս իր Տէր Աստուծոյն առջև ուղղութիւն չըրաւ , 3 - Հապա Իսրայէլի թագաւորներուն ճամբուն մէջ քալեց . ու իր որդին ալ կրակէ անցուց , այն ազգերուն գարշելի սովորութիւններուն համեմատ , զորոնք Տէրը Իսրայէլի որդիներուն առջեւէն վաճառեց : 4 - Եւ բարձր տեղերը ու բլուրներու վրայ և ամէն կանանչ ծառերու տակ զո՛հ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր :

5 - Այն ատեն Ասորւոց Ռասին թագաւորը ու Իսրայէլի թագաւորը, Ռովմելայի որդին Փակէէ , Երուսաղէմի վրայ պատերազմելու ելան , ու Աքազը պաշարեցին , բայց պատերազմը շարունակելու կարող չեղան : 6 - Այն ատեն

Ասորւոց Ռասին թագաւորը Ելաթը Ասորիներուն դարձուց , և Յուդայեանները Ելաթէ վաճառեց , ու *Ասորիք Ելաթ եկան ու հոն բնակեցան մինչև այսօր : 7 - Եւ Աքազ Ասորեստանի Թագազաթ-փաղասար թագաւորին դեսպաններ զրկեց ու ըսաւ , Ես քու ծառադ ու որդիդ եմ : Ելիր ու զիս ազատէ Ասորւոց թագաւորին ձեռքէն ու Իսրայէլի թագաւորին ձեռքէն , որոնք իմ վրաս ելեր են : 8 - Եւ Աքազ Տէրոջը տանը մէջ ու թագաւորին տանը գանձերուն մէջ գանձուած արծաթը ու ոսկին առաւ , և Ասորեստանի թագաւորին ընծայ զրկեց : 9 - Ու Ասորեստանի թագաւորը անոր մտիկ ըրաւ , և Ասորեստանի թագաւորը Իամասկոսի վրայ գնաց , ու զանիկա առաւ , և անոր բնակիչները կիր գերի տարաւ , ու Ռասինը մեռցուց :

10 - Ու Աքազ թագաւորը Ասորեստանի Թագազաթ-փաղասար թագաւորը գիմաւորելու համար Իամասկոս գնաց , ու Իամասկոսի մէջ եղած սեղանը տեսաւ . և Աքազ թագաւորը այն սեղանին օրինակը ու ձեւը՝ անոր բոլոր շինուածքին համեմատ Ուրիա քահանային զրկեց : 11 - Եւ Ուրիա քահանան Աքազ թագաւորին Իամասկոսէ զրկած Ժօրինակին նման սեղան մը շինեց . մինչև Աքազ թագաւորին Իամասկոսէ գալը Ուրիա քահանան այնպէս ըրաւ : 12 - Ու երբ թագաւորը Իամասկոսէ եկաւ , թագաւորը սեղանը տեսաւ , և թագաւորը սեղանին մօտեցաւ , ու անոր վրայ ողջակէզ մատուց . 13 - Եւ իր ողջակէզը ու հացի ընծան այրեց ու նուէրը թափեց , և իր խաղաղութեան զոհին արիւնը այն սեղանին վրայ սրկեց : 14 - Ու Տէրոջը առջև եղող պղնձէ սեղանը տանը առջեւէն , այսինքն նա սեղանին ու Տէրոջը տանը մէջ տեղէն , քաշեց , ու զանիկա նա սեղանին քով դրաւ դէպի հիւսիս : 15 - Եւ Աքազ թագաւորը Ուրիա քահանային հրամայեց՝ ըսելով , Մեծ սեղանին վրայ առտուան ողջակէզը ու իրիկուան հացի ընծան , և թագաւորին ողջակէզը ու անոր հացի ընծան , ու երկրին բոլոր ժողովուրդին ողջակէզը և անոնց հացի ընծան ու անոնց նուէր-

*կա՛մ, Եդովմայեցիք
†Եբբ. ամէնուն

ները մատուցանես. ու ողջակեզներուն բոլոր արիւնը, և զոհերուն բոլոր արիւնը անոր վրայ սրսկես, ու պղնձէ սեղանը իմն ըլլայ՝ հա հարցներու համար: 16 - Եւ Աւրիա քահանան Աքազ թագաւորին բոլոր հրամայածին պէս ըրաւ: 17 - Աւ Աքազ թագաւորը մեքենովթներուն սպառուածները կտրեց, ու աւազանները անոնց վրայէն վերցուց, ծոփն ալ իր տակ եզող պղնձէ եզներուն վրայէն իջեցուց, ու զանկիա քարայտակի մը վրայ դրաւ: 18 - Եւ Տէրջե տանը մէջ շինուած շաբաթին ծածկոցը ու թագաւորին դուրսի ճամբան Ասորեստանի թագաւորին պատճառաւ Տէրջը *տունը դարձուց:

19 - Եւ Աքազի գործերուն մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է: 20 - Եւ Աքազ իր հայրերուն հետ Բաբելոն քաղաքին մէջ թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Եզեկիա թագաւոր եղաւ:

ԳԼ. ԺԵ

Յուդայի Աքազ թագաւորին երկուստասներորդ տարին Իսրայէլի վրայ Էլայի որդին Ովսէէ թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, ու ինը տարի Բաբելոնէն: 2 - Եւ Տէրջը առջև չարութիւն ըրաւ, բայց ոչ իրմէ առաջ եզող Իսրայէլի թագաւորներուն պէս: 3 - Ասոր դէմ ելաւ Ասորեստանի Սաղմոնասար թագաւորը, և Ովսէէ անոր ծառայ եղաւ ու անոր հարկ կու տար: 4 - Եւ Ասորեստանի թագաւորը Ովսէէի վրայ նենգութիւն գտաւ, որովհետև անկիա Եգիպտոսի Սոփա թագաւորին դեսպաններ զրկեր էր, ու Ասորեստանի թագաւորին ամէն տարուան պէս հարկ վճարած չէր. անոր համար Ասորեստանի թագաւորը զանկիա բռնեց ու բանտի մէջ կապեց: 5 - Եւ Ասորեստանի թագաւորը բոլոր երկրին վրայ ելաւ. Սամարիայի վրայ ալ ելաւ, ու զանկիա երեք տարի պաշարեց:

6 - Ովսէէի իններորդ տարին Ասորեստանի թագաւորը Սամարիան առաւ, ու Իսրայէլը Ասորեստան փոխադրեց, և զանոնք Գովգան գետին քով Քա-

ղայի ու Քարովրի մէջ՝ ու Մարաց քաղաքներուն մէջ բնակեցուց: 7 - Քանզի Իսրայէլի որդիները զիրենք Եգիպտոսի երկրէն, Եգիպտոսի Փարաւոն թագաւորին ձեռքին տակէն, հանող իրենց Տէր Աստուծոյն դէմ՝ մեղք գործեցին, և ուրիշ աստուածներէն վախցան. 8 - Աւ Տէրջը Իսրայէլի որդիներուն առջեւէն վռնած ազգերուն կանոններուն համեմատ՝ և Իսրայէլի թագաւորներուն ըրած կանոններուն համեմատ քաղեցին: 9 - Աւ Իսրայէլի որդիները իրենց Տէր Աստուծոյն առջև ուղիղ չեղած բաները գաղտուկ ըրին, և իրենց ամէն քաղաքներուն մէջ, պահապանաց աշտարակէն մինչև պարսպաւոր քաղաքը, իրենց բարձր տեղեր շինեցին: 10 - Աւ անոնք ամէն բարձր բլուրներու վրայ և ամէն կանանչ ծառերու տակ իրենց արձաններ ու *Աստարովթի կուռքեր՝ կանգնեցին. 11 - Եւ հոն ամէն բարձր տեղերու վրայ խուսկ ծխեցին՝ Տէրջը անոնց առջեւէն վռնած ազգերուն պէս, ու չար գործեր ըրին ու Տէրը բարկացուցին. 12 - Եւ կուռքերու ծառայութիւն ըրին, որոնց համար Տէրը անոնց ըտեր էր թէ Այդ բանը մի ընէք:

13 - Աւ Տէրը բոլոր մարգարէներուն ու բոլոր տեսանողներուն ձեռքով Իսրայէլի ու Յուդայի վկայութիւն ընելով՝ ըտեր էր, Չեր չար ճամբաներէն դարձէք, և իմ պատուիրանքներս ու կանոններս պահեցէք, այն ամէն օրէնքին համեմատ՝ զոր ձեր հայրերուն պատուիրեցի, ու իմ ծառաներուս, մարգարէներուն, ձեռքով ձեզի զրկեցի: 14 - Բայց անոնք մտիկ չըրին, հապա իրենց պարանոցը իրենց Տէր Աստուծոյն չհաւատացող իրենց հայրերուն պարանոցին պէս խտացուցին. 15 - Եւ անոր կանոնները ու իրենց հայրերուն հետ անոր ըրած ուխտը և անոր տուած վկայութիւնները մեկզի ձգեցին, ու սնապաշտութեան ետեւէ գացին ու սնապաշտ եղան, և իրենց չորս կողմը գանուած ազգերուն հետեւող եղան, որոնց համար Տէրը իրենց պատուիրեք էր որ անոնց պէս չընեն: 16 - Բայց իրենց Տէր Աստուծոյն բոլոր պատուիրանքները թողուցին, և իրենց երկու հաս ձուլածոյ որթ շինեցին, ու

*Կա՛մ, տունէն

*Կա՛մ, անասուներ

Աստարովթի կուռք շինեցին, ու երկինքի բոլոր զորութիւններուն երկրպագութիւն ըրին, և Բահայի ծառայեցին: 17 - Աւ իրենց աղաքները ու աղջիկները կրակէ անցուցին, և կախարչութիւն ու հմայութիւն ըրին, և զիրենք ծախեցին Տէրօջը առջև չարութիւն ընելու * - զանկա բարկացնելու: 18 - Աւստի Տէրը Իսրայէլի խիստ բարկացաւ, ու զանոնք իր երեսէն ձգեց. «յնպէ» ոչ «բէշ շմաց, բայց միայն Յուդայի ցեղը:

19 - Յուդա ալ իր Տէր Աստուծոյն պատուիրանքները չպահեց, հապա Իսրայէլի ըրած կանոններովը քալեց: 20 - Եւ Տէրը Իսրայէլի բոլոր սերունդը մերժեց, ու զանոնք չարչարեց, և զանոնք յափշտակողներուն ձեռքը մատնեց, մինչև որ զանոնք Բաբելոն իր երեսէն ձգեց: 21 - Քանզի Իսրայէլը Դաւիթի տունէն պատուեց. անոնք ալ Նաբատեան Յերոբովամը թագաւոր դրին, ու Յերոբովամ Իսրայէլը Տէրօջը հեռուէն արգիլեց, ու անոնց մեծ մեղք գործել տուաւ: 22 - Եւ Իսրայէլի որդիները Յերոբովամի բոլոր ըրած մեղքերուն մէջ քալեցին, անոնցմէ ետ չկեցան, 23 - Մինչև որ Տէրը Իսրայէլը իր առջևէն վերցուց, ինչպէս իր բոլոր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով խօսեր էր: Այսպէս Իսրայէլ իր երկրէն Ասորեստան փոխադրուեցաւ մինչև այսօր:

24 - Աւ Ասորեստանի թագաւորը Բաբելոնէ, Քութայէ, Աւայէ, Եմսթէ ու Սեփարուիմէ Բաբելոն բերաւ, ու Սամարիայի քաղաքներուն մէջ Իսրայէլի որդիներուն տեղը բնակեցուց. և անոնք Սամարիան ժառանգեցին, ու անոր քաղաքներուն մէջ բնակեցան: 25 - Աւ երբ անոնք սկսան հոն բնակիլ, Տէրօջմէ չէին վախնար. ու Տէրը անոնց մէջ առիւծներ զրկեց, որ զանոնք կը մեռցընէին: 26 - Եւ Ասորեստանի թագաւորին խօսեցան ու ըսին, Այն ազգերը զորոնք դուն փոխադրեցիր ու Սամարիայի քաղաքներուն մէջ բնակեցուցիր, այն երկրին Աստուծոյն կրօնքը չեն գիտեր. ու անկա անոնց մէջ առիւծներ զրկէր է, և ահա զանոնք կը մեռցընեն՝ այն երկրին Աստուծոյն կրօնքը չգիտնալուն համար: 27 -

Այն տան Ասորեստանի թագաւորը հրաման ըրաւ՝ ըսելով, Ձեր անկէ գերի առած քահանաներէն մէկը հոն տարէք, ու երթան հոն բնակին, ու անկա այն երկրին Աստուծոյն կրօնքը թող անոնց արվեցնէ: 28 - Եւ Սամարիայէ գերի առնուած քահանաներէն մէկը գնաց Բեթէլի մէջ բնակեցաւ, ու անոնց կը արվեցնէր թէ ի՛նչպէս Տէրօջմէ վախնալու էին: 29 - Եւ ամէն մէկ ազգ իր աստուածները կը շինէր, ու Սամարացուց շինած բարձր տեղերուն տուները կը դնէր ամէն մէկ ազգ իր բնակած քաղաքին մէջ: 30 - Եւ Բաբելոնցիք Սաքբովթ-բանովթը շինեցին, ու Քութայցիք Ներգաղը շինեցին, ու Եմսթացիք Ասիմսթը շինեցին, 31 - Եւ Աւայցիք Նեփաար ու Թարթակը շինեցին, ու Սեփարուիմացիք իրենց աղաքը Սեփարուիմացուց աստուածներուն, Ադրամէլէի ու Անամէլէի, համար կրակով կ'ոյրէին: 32 - Աւստի Տէրօջմէ կը վախնային, ու իրենց՝ ամէնէն ցած մարգոցմէն բարձր տեղերուն բուրմեր կ'ընէին, որոնք անոնց համար բարձր տեղերու տուները զո՛ւ կ'ընէին: 33 - Անոնք Տէրօջմէ կը վախնային, ու նաև իրենց աստուածներուն ծառայութիւն կ'ընէին այն ազգերուն արարողութիւններով՝ որոնց մէջէն փոխադրուած էին:

34 - Անոնք մինչև այսօր առաջուան սովորութիւններուն պէս կ'ընեն. ոչ Տէրօջմէ կը վախնան, և ոչ իրենց կանոնները ու դատաստանները կը կատարեն, ոչ ալ այն օրէնքը ու պատուիրանքը, զոր Տէրը Յակոբի որդիներուն տուաւ, որուն անունը Իսրայէլ դրեր էր: 35 - Եւ Տէրը անոնց հետ ուխտ ըրեր էր, ու անոնց պատուիրեր էր՝ ըսելով, Ուրիշ աստուածներէն չվախնաք, ու անոնց երկրպագութիւն չընէք, և անոնց ծառայութիւն չընէք, ու անոնց զո՛հ չմատուցանէք: 36 - Հապա ձեզ Եգիպտոսի երկրէն մեծ զօրութիւնով ու բարձր բազուկով հանող Տէրօջմէն վախնաք, և անոր երկրպագութիւն ընէք, ու անոր զո՛հ մատուցանէք: 37 - Եւ ձեզի համար գրած կանոնները, դատաստանները, օրէնքը ու պատուիրանքը միշտ զգուշութեամբ ի գործ դնէք, և ուրիշ աստուածներէն չվախնաք: 38 - Աւ ձեզի հետ ըրած ուխտս չմոռնաք,

*Եբբ. դատաստանը

և ուրիշ աստուածներէն չվախնաք .
 39 - Հապա ձեր Տէր Աստուծակն վախ-
 նաք , ու անիկա ձեր ամէն թշնամի-
 ներուն ձեռքէն ձեզ պիտի ազատէ :
 40 - Բայց անոնք հնազանդութիւն չը-
 րին , հապա իրենց աւաջուան սովոր-
 ութիւններուն պէս կ'ընէին : 41 -
 Այս ազգերն ալ Բեդեք Տէրոջմէ կը
 վախնային , քոյ իրենց կուռքերուն ալ
 ծառայութիւն կ'ընէին . նաև անոնց
 որդիները ու անոնց որդիներուն որդի-
 ները մինչև այսօր իրենց հայրերուն
 ըրածին պէս կ'ընեն :

ԳԼ ԺԸ

Եւ Իսրայէլի թագաւորին , Էլայի
 որդւոյն Ովսէէի , երկրորդ տարին Յու-
 դայի Աքազ թագաւորին որդին Եզե-
 կիա թագաւոր եղաւ : 2 - Քսանըհինգ
 տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու
 Երուսաղէմի մէջ քսանըինը տարի
 թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը
 անունը Աբիա էր , ու Զաքարիայի ազ-
 ջիկն էր : 3 - Եւ իր հօրը Իսաիթի բո-
 ւոր ըրածին պէս Տէրոջը առջև ուղղու-
 թիւն ըրաւ : 4 - Ասիկա բարձր տեղերը
 վերցուց , ու արձանները կտորտեց ,
 և Աստարովթի կուռքերը կտրեց , ու
 Մովսէսի շինած պղնձէ օձը կտոր կտոր
 ըրաւ , (քանզի մինչև այն օրերը Իսրա-
 յէլի որդիները անոր խունկ կը ծխէին ,)
 ու զանիկա *Նէեթիւթան կոչեց : 5 - Ա-
 նիկա Իսրայէլի Տէր Աստուծոյն ապա-
 ւինեցաւ . և անկէ ետքը Յուդայի բո-
 ւոր թագաւորներուն մէջ անոր նմանը
 չեղաւ , ոչ ալ անկէ աւաջ եղողնե-
 րուն մէջ . 6 - Ու Տէրոջը յարեցաւ և
 անոր ետեւէն ջնտորեցաւ , ու Տէրոջը
 Մովսէսի պատուիրած պատուիրանք-
 ները պահեց : 7 - Եւ Տէրը անոր հետ
 էր , և ուր որ կ'երթար յաջողութիւն
 կը գտնէր : Եւ Ասորեստանի թագաւո-
 րէն ապստամբեցաւ ու անոր ծառա-
 յութիւն չըրաւ : 8 - Անիկա Փղշա-
 ցիները զարկաւ մինչև Գազա ու անոր
 սահմանները՝ պահապանաց աշտարա-
 կէն մինչև պարսպաւոր քաղաքը :

9 - Եւ եղաւ որ Եզեկիա թագաւորին
 չորրորդ տարին , որ Իսրայէլի թագա-
 ւորին , Էլայի որդւոյն Ովսէէի , եօթնե-
 րորդ տարին էր , Ասորեստանի Սաղմա-

նասար թագաւորը Սամարիայի վրայ
 ելաւ , ու զանիկա պաշարեց . 10 - Եւ
 երեք տարիէն ետքը զանիկա առաւ .
 Սամարիա Եզեկիայի վեցերորդ տարին
 (այսինքն Իսրայէլի թագաւորին Ովսէէի
 իններորդ տարին) առնուեցաւ : 11 -
 Ու Ասորեստանի թագաւորը Իսրայէլը
 Ասորեստան փոխադրեց , և զանոնք
 Քովզան գետին քով , Քաղայի ու Քա-
 բովրի մէջ , ու Մարաց քաղաքներուն
 մէջ դրաւ . 12 - Վասն զի անոնք իրենց
 Տէր Աստուծոյն ձայնին ակամջ չգրին ,
 ու անոր ուխտը չպահեցին , և Տէրոջը
 ծառային Մովսէսի ամէն պատուիրած-
 ները մտիկ չըրին ու ի գործ չգրին :

13 - Ու Եզեկիա թագաւորին չորեք-
 տասաներորդ տարին Ասորեստանի Սե-
 նեքերիմ թագաւորը Յուդայի բոլոր
 պարսպաւոր քաղաքներուն վրայ ելաւ ,
 ու զանոնք առաւ : 14 - Եւ Յուդայի
 Եզեկիա թագաւորը Լաքիս քաղաքը
 Ասորեստանի թագաւորին՝ ըսելով ,
 Մեղայ , վրայէս ետ դարձիր . ինչ որ
 իմ վրաս գնես՝ կը հատուցանեմ : Ու
 Ասորեստանի թագաւորը Յուդայի Ե-
 զեկիա թագաւորին վրայ երեք հարիւր
 տաղանդ արծաթ ու երեսուն տաղանդ
 ոսկի հարկ դրաւ : 15 - Ու Եզեկիա Տէ-
 րոջը տանը մէջ և թագաւորին տանը
 գանձերուն մէջ գանուած բոլոր ար-
 ծաթը տուաւ : 16 - Այն ատեն Եզե-
 կիա Տէրոջը տաճարին դռներուն ու
 դրանդիքներուն վրայ «իկն» քակեց , որ
 էն+ Յուդայի Եզեկիա թագաւորը զա-
 նոնք պատեր էր , ու Ասորեստանի թա-
 գաւորին տուաւ :

17 - Եւ Ասորեստանի թագաւորը
 Տարաթանը , Ռաբսարիսը ու Ռափսակը
 շատ զօրքով Լաքիսէ Երուսաղէմ
 զրկեց Եզեկիա թագաւորին . անոնք
 ալ ելան Երուսաղէմ եկան , ու հին
 հասնելով՝ Թափիչի ագարակին ճամ-
 բան եղող վերի աւազանին ջրմուղին
 վրայ կայնեցան , 18 - Ու թագաւորը
 կանչեցին . և Քեղկիայի որդին Եզիա-
 կիմ , պալատին հազարապետը , ու Սեբ-
 նա ատենագրապիրը ու յիշատակաց դպիր
 Ասափի որդին Յովաք անունը ելան :

19 - Եւ Ռափսակ անունը ըսաւ , Եզե-
 կիայի բռէք , Մեծ թագաւորը , Ասո-
 րեստանի թագաւորը , այսպէս կ'ըսէ .
 Ի՞նչ է այդ յոյսը՝ որու դուն կ'ապա-
 ւինիս : 20 - Իսն ըսիր , Պատերազմի
 համար խորհուրդ ու զօրութիւն «նէմ» .

*Այսինքն , պղնձի կտոր

քայց շրթունքի խօսքեր են. Հիմա որո՞ւ ապաւինեցով ինձ մէ ապաստամբեցար : 21 - Ահա դուն այն ջախջախուած եղէգէ ցուպին , Եգիպտոսի, ապաւինեցար , որու եթէ մարդ մը կռթնի , ձեռքը պիտի մանէ ու զանհկա պիտի ծակէ . Եգիպտոսի Փարաւոն թագաւորը բոլոր իրեն ապաւինողներուն այնպէս է : 22 - Բայց եթէ ինձի ըսէք թէ Մենք մեր Եհովա Աստուծոյն կ'ապաւինինք , ասիկա ան չէ՞ , որուն բարձր տեղերը ու սեղանները Եգիպտոս վերցուց , և Յուդայի ու Երուսաղէմի ըսաւ , Միշտ այս սեղանին առջև Երուսաղէմի մէջ երկրպագութիւն ըրէք : 23 - Ու Հիմա իմ տէրոջս , Ասորեստանի թագաւորին , *Տեա չաշառէ՞ , ու քեզի երկու հազար ձի տամ , եթէ դուն քու կողմանէդ անոնց վրայ հեծնողներ դնելու կարող ես : 24 - Եւ իմ տէրոջս ամէնէն պզտիկ ծառաներէն մէկ կուսակալին ի՞նչպէս կրնաս դէմ դնել , որ դուն կառքերու ու ձիերու համար Եգիպտոսի կ'ապաւինիս : 25 - Հիմա այս երկրին վրայ արդեօք առանց Եհովայի հրամանի՞ն էլեր եմ՞ զանհկա աւրելու համար . ինձի Եհովա ըսաւ , Այն երկրին վրայ ելիր ու զանհկա աւրէ :

26 - Ու Քեղկիսայի որդին Եղիակիմ՝ և Սեբնա ու Յովաք Ռափասակի ըսին , Ծնոր՞ք ըրէ , քու ծառաներուդ Տեա + Ասորերէն խօսէ , քանզի մենք կը հասկրնանք , ու մեզի - Տեա Եբրայեցերէն մի խօսիր , որ պարսպին վրայ եղող ժողովուրդը լսէ : 27 - Բայց Ռափասակ անոնց ըսաւ , Միթէ այս խօսքերը խօսելու համար իմ տէրս զիս քու տէրոջդ ու քեզի՞ ֆիշն զրկեց . չէ՞ որ այս մարդոց ալ՝ որոնք պարսպին վրայ կը նըստին , ձեզի Տեա իրենց ազբը ուտելու ու իրենց մէզը խմելու :

28 - Եւ Ռափասակ ոտք ելաւ , ու մեծ ձայնով մը Եբրայեցերէն ազաղակեց , ու խօսեցաւ՝ ըսելով , Մեծ թագաւորին , Ասորեստանի թագաւորին , խօսքը մտիկ ըրէք . 29 - Թագաւորը այսպէս կ'ըսէ . Եգեկիա ձեզ չխաբէ , քանզի անհկա չկրնար ձեզ քանոր ձեռքէն՞ ազատել . 30 - Ու Եգեկիա ձեզ Եհովայի չյուսացնէ՞ ըսելով , Եհովա ձեզ

անշուշտ պիտի ազատէ , ու այս քաղաքը Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չարուի : 31 - Եգեկիսայի մտիկ մի ընէք , քանզի Ասորեստանի թագաւորը այսպէս կ'ըսէ . Ինձի Տեա հաշտութիւն ըրէք , ու ինձի ելէք . և ամէն մարդ իր որթէն՞ ու ամէն մարդ իր թղենիէն ուտէ , և ամէն մարդ իր ջրհորին ջուրէն խմէ , 32 - Մինչև որ ես գամ , ու ձեզ ձեր երկրին պէս երկիր մը , ցորենի ու դինիի երկիր մը , հացի ու այգիներու երկիր մը , իւղ տուող ձիթենիներու ու մեղրի երկիր մը տանիմ , որպէս զի ապրիք ու չմեռնիք . ու Եգեկիսայի մտիկ մի ընէք , քանզի ձեզ զլիսէ կը հանէ՞ ըսելով , Եհովա ձեզ պիտի ազատէ : 33 - Միթէ ազգաց աստուածները Ասորեստանի թագաւորին ձեռքէն՞ ամէն մէկը իր երկիրը կրցա՞ւ ազատել : 34 - Եւ միթի ու Արփաթի աստուածները ո՞ւր են . Սեփարուիմի , Անայի ու Աւայի աստուածները ո՞ւր են . միթէ անոնք Ամորիան իմ՞ ձեռքէս ազատեցին : 35 - Երկիրներուն ամէն աստուածներէն ո՞րը իր երկիրը իմ՞ ձեռքէս ազատեց , որ Եհովա Երուսաղէմը իմ՞ ձեռքէս ազատէ :

36 - Բայց ժողովուրդը լուռ կեցաւ և անոր պատասխան մը չտուաւ , քանզի թագաւորը հրաման ըրեր էր՝ ըսելով , Անոր պատասխան մի տաք :

37 - Ու Քեղկիսայի որդին Եղիակիմ , պալատին հազարապետը , և Սեբնա ատենադպիրը ու յիշատակաց դպիր Ասափի որդին Յովաք հանդերձնին պատուած՝ Եգեկիսայի գացին , ու Ռափասակի խօսքերը անոր պատմեցին :

ԳԼ. ԺԹ

Ու երբ Եգեկիա թագաւորը լսեց , իր հանդերձները պատուեց ու քուրձ հագաւ , և Տէրոջը տունը մտաւ . 2 - Ու Եղիակիմ , պալատին հազարապետը , և Սեբնա ատենադպիրը ու քահանաներուն ձերերը քուրձեր հագած՝ Ամովսի որդւոյն Եսայի մարգարէին զրկեց : 3 - Եւ անոր ըսին , Եգեկիա այսպէս կ'ըսէ , Այսօր նեղութեան , կշտամբանաց ու նախատանաց օր է . քանզի ազաքը մինչև ծնանելու վայրկեանը հասան , բայց ծնանելու դժ չկայ : 4 - Կարելի է որ քու Տէր Աստուածդ Ռափասակի բոլոր խօսքերը լսէ , զոր իր տէրը , Աս-

*Կա՛մ , պատանդ տուր
 †Կա՛մ , Քաղզէարէն
 ‡Կա՛մ , իմ ձեռքէս

րեստանի թագաւորը, զրկեց կենդանի Աստուածը նախատելու համար, ու քու Տէր Աստուածդ այն իր լսած խօսքերուն համար յանդիմանութիւն տայ. ուրեմն դուն գանուող մնացորդին համար աղօթք բրէ : 5 - Ու Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի գացին : 6 - Ու Եսայի անոնց ըսաւ, Ձեր տերոջը սյուպէս ըսէք, Տէրը սյուպէս կ'ըսէ. Մի վախնար այն լսած խօսքերէդ, որոնցմով Ասորեստանի թագաւորին ծառաները զիս հայհոյեցին : 7 - Ահա ես անոր վրայ ոգի մը կը զրկեմ, ու լուր մը լսելով իր երկիրը պիտի դառնայ, ու զանհկա իր երկիրն մէջ սրով պիտի կործանեմ :

8 - Եւ Ռափսակ դարձաւ, ու Ասորեստանի թագաւորը գտաւ՝ որ Լէւնայի հետ կը պատերազմէր, վասն զի լսած էր որ Լաքիսէ չուեր է : 9 - Ու Սէնէտբէթ՝ Եթէովպացոց թարակա թագաւորին համար լսեց, որ կ'ըսէին, Ահա անհկա քեզի հետ պատերազմելու ելեր է. ու նորէն Եզեկիայի գեսպաններ զրկեց՝ ըսելով, 10 - Յուդայի Եզեկիա թագաւորին սյուպէս խօսիք ու ըսէք, Այն քու Աստուածդ, որու դուն ապաւինեիր ես, թող քեզ չխաբէ՝ ըսելով, Երուսաղէմ՝ Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չտրուի :

11 - Ահա դուն լսեցիր ինչ որ Ասորեստանի թագաւորները բոլոր երկիրներուն բրին, ու ի'նչպէս զանոնք բոլորովին կործանեցին, ու հիմա դո՞ւն պիտի ազատիս : 12 - Միթէ իմ հայրերուս կործանած ազգերուն, այսինքն Գովզանի, Իաւանի, Ռեսեփի ու Թելլասարի մէջ եղող Եզեմի որդիներուն աստուածները զանոնք ազատեցի՞ն : 13 - Ո՞ւր է Եմաթի թագաւորը ու Արփաթի թագաւորը, ու Սեփարուիմ՝ քաղաքին՝ Անայի և Աւայի թագաւորը :

14 - Ու Եզեկիա նամակը գեսպաններուն ձեռքէն առաւ ու զանհկա կարգաց, և Տէրոջը տունը ելաւ, ու Եզեկիա Տէրոջը առջև *բացաւ զանհկա :

15 - Ու Եզեկիա Տէրոջը առջև աղօթք ըրաւ ու ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրայէլի, որ քերովրէներուն լքայ կը նստիս, երկրի ամէն թագաւորութիւններուն վրայ Աստուած միայն դուն ես. երկինքը ու երկիրը դուն ստեղծեցիր :

16 - Ով Տէր, ահանջդ խոնարհեցուր ու լսէ. ով Տէր, աչքերդ բաց ու նայէ, և լսէ Սենէքերիսի խօսքերը, որ զրկեց կենդանի Աստուածը նախատելու համար : 17 - Ով Տէր, իրաւցընէ Ասորեստանի թագաւորները ազգերը ու անոնց երկիրը աւերեցին, 18 - Եւ անոնց աստուածները կրակի տուին, վասն զի անոնք Աստուած չէին, հապա մարդու ձեռագործ, փայտ ու քար, էին. անոր համար զանոնք կորսնցուցին : 19 - Եւ հիմա դուն, ով Տէր Աստուած մեր, ազատէ մեզ անոր ձեռքէն, որպէս զի երկրի բոլոր թագաւորութիւնները գիտնան, որ Տէր Աստուած միայն դուն էս :

20 - Ու Ամովսի որդին Եսայի Եզեկիայի հօրդ զրկեց՝ ըսելով, Իսրայէլի Տէր Աստուածը սյուպէս կ'ըսէ. Ասորեստանի Սենէքերիմ թագաւորին համար ինձի ըրած աղօթքդ լսեցի. 21 - Անոր վրայով Տէրոջը ըսած խօսքը սյու է.

Սիօնի կոյս աղջիկը քեզ անարգեց, քեզ ծաղր ըրաւ. Երուսաղէմի աղջիկը քու ետեւէդ գլուխ շարժեց :

22 - Դուն գո՞վ նախատեցիր ու հայհոյեցիր, Ու որո՞ւ վրայ ձայնդ վերցուցիր. Եւ աչքերդ Իսրայէլի Սուրբին դէմ վեր վերցուցիր :

23 - Քու գեսպաններուդ ձեռքով Տէրը նախատելով՝ ըսիր, Իմ կառքերուս շատութիւնովը լեռներուն բարձրութիւնը,

Լիբանանու քովերը, էլայ, Ու անոր բարձր եղեւիները Եւ ընտիր մայրերը *պիտի կարեմ. Ու անոր վերջին բնակութիւնը Անոր †կարմեղանին անասաւր ‡պիտի մտնեմ :

24 - Ես փորեցի ու օտար ջուրերը խմեցի, Ու յաշարուած տեղերուն՝ բոլոր գետերը

Ոտքերուս թաթերովը ցամքեցուցի :

25 - Միթէ լսած չե՞ս որ սահկա շատոնցմէ ես կազմեցի, Ու առաջուան օրերէն ի վեր ձեւակերպեցի .

*Կա՛մ, տարածեց

*Կա՛մ, կարեցի
 †Կա՛մ, պաղաքեր ազարակին. Ես. Ժ. 18
 ‡Կա՛մ, մտայ || Կա՛մ, Եզիպատսի

Հիմա հասուցի ,
Որպէս զի դուն պարսպաւոր քաղաք-
ները ուերակի հողակոյտներու
դարձնես :

26 - Ուստի անոնց բնակիչներուն ձեռ-
քը կարճ ըլլալուն համար
Ձարհուրեցան ու ամչցան .

Անոնք դաշտի խտտի պէս
Եւ կանանչ բանջարի պէս ,
Տանիքի խտտի պէս
Եւ դեռ չհասած ու խորշակէն զար-
նուած հունձքի պէս եղան :

27 - Բայց ես քու բնակութիւնդ , ել-
լելդ ու մտնելդ ,
Եւ ինձի ունեցած սրամտութիւնդ գի-
տեմ :

28 - Որովհետեւ ինձի ունեցած սրամը-
տութիւնդ

Ու քու ամբարտաւանութիւնդ իմ ա-
կանջներուս ելաւ ,
Ես ալ իմ կարթս քու քիթդ՝
Եւ իմ սանձս քու բերանդ պիտի դնեմ ,
Ու քու եկած ճամբայէդ քեզ ետ պի-
տի դարձնեմ :

29 - Եւ տակա քեզի նշան ըլլայ .
Այս տարի ինքիրմէ բուսածը ,
Ու երկրորդ տարին ինկած հատերէն
բուսածը պիտի ուտէք .

Ու երրորդ տարին ցանեցէք ու հնձե-
ցէք ,
Եւ այգիներ անկեցէք ու անոնց պտուղը
կերէք :

30 - Եւ Յուդայի տանը ազատուած
մնացորդը
Վարէն արմատ պիտի արձակէ ,
Ու վերէն պտուղ պիտի տայ ,

31 - Քանզի Երուսաղէմէ մնացորդ՝
Ու Սիօն լեռնէն ազատուած պիտի
ելլէ .

Ասիկա զօրաց Տէրօջը նախանձը պիտի
ընէ :

32 - Ասոր համար Ասորեստանի թա-
գաւորին վրայով Տէրը այսպէս կ'ըսէ .

Անիկա այս քաղաքը պիտի չմտնէ ,
Ու անոր նետ պիտի չնետէ ,
Եւ անոր առջև վահանով պիտի չգայ ,
Ու անոր դէմ պատնէշ պիտի չկանգնէ .

33 - Իր եկած ճամբայէն ետ պիտի
դառնայ ,
Ու այս քաղաքը պիտի չմտնէ , կ'ըսէ
Տէրը :

34 - Եւ այս քաղաքը պիտի պաշտպա-
պանեմ ,
Ու զանիկա ազատեմ ինձի համար

Ու իմ ծառայիս Գաւիթի համար :

35 - Ու եղաւ որ այն գիշերը Տէրօջը
հրեշտակը ելաւ , և Ասորեստանի բա-
նակին մէջ հարիւր ութսունը հինգ հա-
զար մարդ զարկաւ . ու երբ առաւօ-
տուն կանուխ ելան , ահա անոնց ամէնը
մեռած մարմիններ էին :

36 - Եւ Ասոր-
եստանի Սենեքերիմ թագաւորը չուեց
գնաց , ու դարձաւ Նինուէի մէջ նրո-
տաւ :

37 - Ու երբ անիկա իր առտու-
ծոյն Նեարաքի տանը մէջ երկրպագու-
թիւն կ'ընէր , անոր սրդիները Ադրա-
մելէք ու Սարասար զանիկա սրով զար-
կին , ու Սրարազի երկիրը փախան . և
անոր տեղ անոր սրդին Ասորգան թա-
գաւոր եղաւ :

ԳԼ Ի

Այն օրերը Եզեկիա մահուան առ-
ախճան հիւանդացաւ : Ու Ամուսի որ-
դին Եսայի մարգարէն անոր եկաւ , ու
անոր ըսաւ , Տէրը այսպէս կ'ըսէ . Տանդ
համար պատուէր աւար , քանզի դուն
մեռնելու ես ու պիտի չապրիս : 2 - Եւ
անիկա իր երեսը պատին դարձուց , ու
Տէրօջը աղօթք ըրաւ՝ ըսելով , 3 - Ով
Տէր , կ'աղաչեմ , քու առջեւդ ճշմար-
տութեամբ ու կատարեալ սրտով քա-
լելիս , և քու աչքիդ առջև բարի եղա-
ծը ընելիս յիշէ . ու Եզեկիա մեծ լացով
մը լացաւ :

4 - Ու Եսայի տակաւին միջին գա-
ւիթէն չեկած՝ Տէրօջը խօսքը անոր ե-
ղաւ՝ ըսելով , 5 - Գարձիր , ու իմ ժո-
ղովուրդիս իշխանին Եզեկիայի ըսէ ,
Քու հօրդ Գաւիթի Տէր Աստուածը
այսպէս կ'ըսէ . Քու աղօթքդ լսեցի ,
քու աչքիդ արցունքը տեսայ . ահա քեզ
պիտի բժշկեմ , ու երրորդ օրը Տէրօջը
տունը պիտի ելլես . 6 - Եւ քու օրե-
րուդ վրայ տանըհինգ տարի պիտի ա-
ւելցնեմ , ու քեզ ու այս քաղաքը Ա-
սորեստանի թագաւորին ձեռքէն պի-
տի ազատեմ , և այս քաղաքին պաշտ-
պանութիւն պիտի ընեմ՝ ինձի համար
ու իմ ծառայիս Գաւիթի համար :

7 - Ու Եսայի ըսաւ , Քանի մը չոր թուղ
առէք . ու առին և վերքին վրայ դրին ,
ու ողջացաւ :

8 - Ու Եզեկիա Եսայիի ըսաւ , Տէ-
րօջը զիս բժշկելուն ու երրորդ օրը Տէ-
րօջը տունը ելլելուս նշանը ի՞նչ ըլլայ :

9 - Ու Եսայի ըսաւ , Ասիկա քեզի Տէ-

րոջմէ նշան ըլլայ՝ թէ Տէրը իր բաժնի խօսքը պիտի կատարէ . Ստուերը կա՛մ՝ տասր աստիճան առաջ երթայ, կա՛մ՝ տասր աստիճան ետ դառնայ: 10 - Ու Եզեկիա ըսաւ, Ստուերին տասր աստիճան առաջ երթալը դիւրին է . ո՛չ, հապա ստուերը տասր աստիճան ետ դառնայ: 11 - Ու Եսայի մարգարէն Տէրոջը աղաղակեց . ու տասր աստիճան ետ դարձուց ստուերը այն աստիճաններէն որ Ա. քաղի արեւու ժամացուցին վրայ իջած էր:

12 - Այն ատեն Բաբելոնի թագաւորը, Բաղադանի որդին՝ *Մարովդաբբաղադան, նամակներ ու ընծաներ զրկեց Եզեկիայի, քանզի Եզեկիայի հիւանդ ըլլալը լսեր էր: 13 - Ու Եզեկիա խոսեց մտիկ ըրաւ, և թանկագին բաներուն բոլոր տունը, արծաթը ու ոսկին ու խունկերը և պատուական իւղը, ու իր զէնքերուն բոլոր տունը և իր գանձերուն մէջ բոլոր գանուածը ցուցուց . իր տանը մէջ և իր բոլոր տէրութեանը մէջ բան մը չմնաց, զոր Եզեկիա անոնց չցուցնէ:

14 - Ու Եսայի մարգարէն Եզեկիա թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Այս մարդիկը ի՞նչ ըսին, և ուրկէ՞ եկան քեզի . ու Եզեկիա ըսաւ, Հեռու տեղէ, Բաբելոնէ, եկան: 15 - Եւ անիկա ըսաւ, Քու տանդ մէջ ի՞նչ տեսան . ու Եզեկիա ըսաւ, Տանս մէջ ինչ որ կար՝ տեսան, «- գանձերուս մէջ անոնց չցուցուցած բանս չմնաց: 16 - Այն ատեն Եսայի Եզեկիայի ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ . 17 - Ահա օրեր կու գան, որ քու տանդ մէջ ինչ որ կայ՝ ու քու հայրերդ մինչև այսօր ինչ որ ժողովեցին՝ Բաբելոն պիտի տարուին . բան մը պիտի չմնայ, կ'ըսէ Տէրը. 18 - Ու քեզմէ ելլելու՝ քու ծնաներու որդիներէդ պիտի առնեն, և անոնք Բաբելոնի թագաւորին պապատին մէջ ներքինիներ պիտի ըլլան: 19 - Ու Եզեկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը խօսքը զոր դուն ըսիր, քարի է . նաև ըսաւ, Բաբելոն, որովհետեւ իմ օրերուս մէջ խաղաղութիւն ու ապահովութիւն պիտի ըլլայ:

20 - Ու Եզեկիայի մնացորդ պատ-

*ԵՔԷ. Բարովդաբբաղադան
 †Կա՛մ, անոնց վրայ ուրախացաւ . տես Ես. լթ. 2:

մութիւնը, և անոր բոլոր զօրութիւնը, ու շինած աւազանը ու ջրմուկը, և քաղաքը բերած ջուրը՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են: 21 - Ու Եզեկիա իր հայրերուն հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին Մանասէ թագաւոր եղաւ:

ԳԼ. ԻԱ

Մանասէ տառուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ յիսուներհինգ տարի թագաւորութիւն ըրաւ, ու անոր մօրը անուներ Էփսիփա էր: 2 - Եւ անիկա Տէրոջը Խորայէի որդիներուն առջեւէն վռնաած ազգերուն գարշելի գործերուն պէս՝ Տէրոջը առջև չարութիւն ըրաւ: 3 - Ու անիկա իր հօրը Եզեկիայի կործանած բարձր տեղերը նորէն շինեց, ու Բաշաղի սեղաններ կանգնեց, և Աստարովթի կուռք մը շինեց Խորայէի Աքաար թագաւորին ըրածին պէս . ու երկինքի բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն ըրաւ և անոնց ծառայութիւն ըրաւ: 4 - Ու սեղաններ շինեց Տէրոջը տանը մէջ, որու համար Տէրը ըսած էր թէ իմ անունս Երուսաղէմի մէջ պիտի դնեմ: 5 - Եւ Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ երկինքի բոլոր զօրութիւններուն սեղաններ շինեց: 6 - Ու իր տղան կրակէ անցուց, և գուշակութիւն ու հմայութիւն կ'ընէր, և վհուկներ ու նշանագէտներ *ուներ. և Տէրոջը առջև շատ չարութիւն ըրաւ ու զանիկա բարկացուց: 7 - Եւ իր շինած Աստարովթի կուռքը այն տանը մէջ դրաւ, որու համար Տէրը Գաւիթի ու անոր որդւոյն Սաղմոնի ըսեր էր, իմ անունս այս տանը մէջ, ու Խորայէի բոլոր ցեղերէն իմ ընտրած Երուսաղէմիս մէջ պիտի դնեմ յաւիտեան: 8 - Եւ Խորայէի ոտքը մէյմըն ալ պիտի չչարժեմ՝ այդ երկրէն, զոր անոնց հայրերուն տաւի . միայն թէ անոնք իմ ամէն պատուիրանքներս ու իմ Մովսէս ծառայիս անոնց պատուիրած բոլոր օրէնքը զգուշութեամբ ի գործ դնեն: 9 - Բայց անոնք մտիկ չըրին, ու Մանասէ պիտի պէս մոլորեցուց զանոնք, որ Տէրոջը Խորայէի որդիներուն առջեւէն

*ԵՔԷ. կ'ընէր

կորսնցուցած ազգերէն աւելի չարութիւն ըրին :

10 - Եւ Տէրը իր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով խօսեցաւ՝ ըսելով : 11 - Արովճեաւե Յուդայի Մանասէ թագաւորը այս գարշութիւնները ընելով՝ իրմէ առաջ եղող Ամօրհասցւոց բոլոր բրածներէն աւելի չարութիւն ըրաւ, ու իր կուռքերովը Յուդայի ալ մեղք գործել տուաւ :

12 - Անոր համար Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Ահա ես Երուսաղէմի վրայ ու Յուդայի վրայ «յնպիսի չարիք մը պիտի զրկեմ», որ ամէն լսողին երկու ախանջը պիտի խօսի : 13 - Ու Երուսաղէմի վրայ Սամարիայի լարը և Աքաաբի տանը գնդակը պիտի երկընցնեմ, ու Երուսաղէմը պիտի սրբեմ, ինչպէս մէկը աման մը կը սրբէ, ու սրբելէն ետեւ երեսն ի վար կը դարձնէ :

14 - Եւ իմ՝ ժառանգութեանս մնացորդը պիտի մերժեմ, ու զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը պիտի տամ, ու անոնք իրենց բոլոր թշնամիներուն աւար ու յափշտակութիւն պիտի բլլան :

15 - Արովճեաւե իմ՝ առջեւ չարութիւն ըրին, ու իրենց հայրերուն Եգիպտոսէ ելած օրէն մինչև այսօր զիս բարկացուցին : 16 - Ետեւ Մանասէ խիստ շատ անմեղ արիւն թափեց, այնպէս որ Երուսաղէմը ծայրէ ծայր լեցուց . բաց ի այն իր մեղքէն՝ որով Տէրոջը առջև Յուդայի մեղանչելուն ու չարութիւն ընելուն պատճառ եղաւ :

17 - Եւ Մանասէի մնացորդ պատմութիւնը ու ամէն բրածը և անոր գործած մեղքը՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 18 - Ու Մանասէ իր հայրերուն չեա քնացաւ, և իր տանը պարտէզին մէջ, Ողայի պարտէզին մէջ, թաղուեցաւ . ու անոր տեղ անոր որդին Ամոն թագաւոր եղաւ :

19 - Ամոն քսանուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երկու տարի թագաւորութիւն ըրաւ, ու անոր մօրը անունը Մետաղամիթ էր, ու Եաբեացի Աբուսի աղջիկն էր : 20 - Եւ անիկա իր հօրը Մանասէի բրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ : 21 - Ու իր հօրը քալած բոլոր ճամբուն մէջ քալեց, և իր հօրը պաշտած կուռքերը պաշտեց ու անոնց երկրպագութիւն ըրաւ : 22 -

Եւ իր հայրերուն Տէր Աստուածը թողուց ու Տէրոջը ճամբուն մէջ չքալեց :

23 - Եւ Ամոնի ծառաները անոր դէմ դաւաճանութիւն ըրին, ու թագաւորը իր տանը մէջ մեռցուցին : 24 - Ու երկրին ժողովուրդը Ամոն թագաւորին դէմ դաւաճանութիւն ընողներուն ամէնը մեռցուցին . ու երկրին ժողովուրդը անոր որդին Յովսիան անոր տեղ թագաւոր դրին :

25 - Եւ Ամոնի բրած գործերուն մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է : 26 - Ու զանիկա Ողայի պարտէզը՝ իր գերեզմանին մէջ թաղեցին . և անոր տեղ անոր որդին Յովսիա թագաւոր եղաւ :

ԳԼ ԻԲ

Յովսիա ութ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երեսունըմէկ տարի թագաւորութիւն ըրաւ, և անոր մօրը անունը Յեզիգա էր, ու Բազկաթացի Ադայիայի աղջիկն էր : 2 - Եւ անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ, ու իր հօրը Իսաիթի բոլոր ճամբուն մէջ քալեց, ու աջ կամ ձախ չխտարեցաւ :

3 - Եւ Յովսիա թագաւորին տասնըութերորդ տարին թագաւորը Մեսուզամի որդւոյն Եսելիայի որդին Սափան գպիրը Տէրոջը տունը զրկեց՝ ըսելով .

4 - Քեզկիս քահանայապետին գնա, ու անիկա Տէրոջը տունը բերուած ստակը թող համրէ, զոր դրան պահապանները ժողովուրդէն ժողվեցին .

5 - Ու զանիկա Տէրոջը տանը գործէ վրայ դրուած բանուորներուն տան, ու տանը փլած տեղերը շինելու համար Տէրոջը տանը մէջի գործը բանողներուն տան զանիկա,

6 - Հիւսերուն, շինողներուն ու սրմնագիրներուն . նաև փայտ ու տաշուած քարեր ծախու առնեն տունը նորոգելու համար : 7 - Բայց անոնց ձեռքը տրուած ստակին հաշիւը չէին հարցրներ, քանզի անոնք հաւատարմութեամբ կը գործէին :

8 - Եւ Քեզկիս քահանայապետը Սափան գպիրին ըսաւ, Տէրոջը տանը մէջ օրինաց գիրք մը գտայ . ու Քեզկիս այն գիրքը Սափանի տուաւ, ու զանիկա կարգաց :

9 - Եւ Սափան գպիրը թագաւորին եկաւ, ու թագաւորին պատասխան

բերաւ ու ըսաւ, Քու ծառաներդ տանը մէջ գտնուած ստակը հանեցին, ու Տէրոջը տանը գործէն վրայ դրուած բանուորներուն ձեռքը տուին: 10 - Եւ Սափան դպիրը թագաւորին պատմեց ու ըսաւ, Քեզ կիա քահանան ինծի գիրք մը տուաւ. և Սափան զանկիա թագաւորին առջև կարդաց: 11 - Ու թագաւորը օրինաց գիրքին խօսքերը լսածէն պէս իր հանդերձները պատուեց: 12 - Եւ թագաւորը Քեզ կիա քահանային ու Սափանի որդւոյն Աքիկամի ու Միքիայի որդւոյն Աքորորի և Սափան դպիրին ու թագաւորի ծառային Ասայիայի պատուիրեց ու ըսաւ, 13 - Գացէք, ինծի համար ու ժողովուրդին համար ու բոլոր Յուդայի համար՝ այս գտնուած գիրքին խօսքերուն վրայով Տէրոջը հարցուցէք. քանզի մեր վրայ Տէրոջը մեծ բարկութիւնը բորբոքեր է, որովհետև մեր հայրերը այս գիրքին խօսքերուն հնազանդութիւն չրին, ու մեզի համար ամէն գրուած բաները ի գործ չգրին:

14 - Ու Քեզ կիա քահանան և Աքիկամ ու Աքորոր և Սափան ու Ասայիա Արասի որդւոյն Թեկուայի որդւոյն Սեզզում հանդերձապետին կնոջ Ողբա մարգարէին գացին, ու անկիա Երուսաղէմ՝ *Մասենայի մէջ կը բնակէր, ու անոր հետ խօսեցան: 15 - Ու անկիա ըսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Զեզ ինծի զրկող մարդուն այսպէս ըսէք, 16 - Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այս տեղին ու անոր բնակիչներուն վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն Յուդայի թագաւորին կարգացած գիրքին ամէն խօսքերը. 17 - Որովհետև զիս թողուցին և ուրիշ աստուածներու խունկ ծխեցին, որպէս զի իրենց ձեռքերուն բոլոր գործերովը զիս բարկացնեն. ուստի այս տեղին վրայ իմ բարկութիւնս պիտի բորբոքի ու պիտի չմարի: 18 - Բայց Տէրոջը հարցնելու համար ձեզ զրկող Յուդայի թագաւորին այսպէս ըսէք. Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. 19 - Լսած խօսքերուդ համար, որովհետև քու սիրտդ կակղացաւ, ու Տէրոջը առջև խոնարհեցար երբ լսեցիր իմ խօսքս, թէ այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ աւերում ու

անէծք պիտի ըլլայ, և քու հանդերձներդ պատուեցիր ու իմ առջև լացիր, ես ալ լսեցի, կ'ըսէ Տէրը: 20 - Անոր համար ահա ես քեզ քու հայրերուդ պիտի խառնեմ, ու խաղաղութեամբ քու գերեզմանիդ մէջ պիտի ամփոփուիս. և այս տեղին վրայ իմ բերելու բոլոր շարիքներս քու աչքերդ պիտի չտեսնեն: Ու անոնք թագաւորին պատասխան բերին:

ԳԼ ԻԳ

Եւ թագաւորը ճորտ զրկեց. ու Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ծերերը անոր քով ժողովուրդեցան: 2 - Եւ թագաւորը ու անոր հետ Յուդայի բոլոր մարգիկը ու Երուսաղէմի բոլոր բնակիչները, ու քահանաները և մարգարէները, ու պզտիկէն մինչև մեծը բոլոր ժողովուրդը՝ Տէրոջը տունը ելան. և Տէրոջը տանը մէջ գտնուած ուխտի գիրքին բոլոր խօսքերը անոնց առջև կարդաց: 3 - Եւ թագաւորը սիւնին քով կայնեցաւ ու Տէրոջը առջև ուխտ ըրաւ, որ այն գիրքին մէջ գրուած ուխտին խօսքերը հաստատելու համար Տէրոջը ետեւէն երթայ, և անոր պատուիրանքները ու վկայութիւնները ու կանոնները բոլոր սրտով ու բոլոր հոգւով պահէ. և բոլոր ժողովուրդը ուխտին հաւանութիւն տուաւ: 4 - Ու թագաւորը Քեզ կիա քահանայապետին ու երկրորդ աստիճանի քահանաներուն և դրան պահապաններուն հրամայեց, որ Բահազի համար ու Աստարովթի համար ու երկինքի բոլոր զօրութիւններուն համար շինուած գործիքներուն ամէնը Տէրոջը տաճարէն դուրս հանեն. ու զանոնք Երուսաղէմէ դուրս Կեդրոնի դաշտավայրին մէջ այրեց, ու անոնց մոխիրը Բեթէլ տարաւ: 5 - Եւ Յուդայի թագաւորներուն՝ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի բոլորափքը բարձր տեղերու վրայ դրած խունկ ծխող քուրմերը, և Բահազի «-արեգակին ու յուսնին և «-«-երէ»- կենդանակերպներուն ու երկինքի բոլոր զօրութիւններուն խունկ ծխողները վերցուց: 6 - Եւ Աստարովթի կուռքը Տէրոջը տունէն Երուսաղէմի դուրսը Կեդրոն հեղեղատը հա-

*Այսինքն, երկրորդ մասին

*Եբբ. ականջներուն

նեց, ու զանհկա կեդրոն հեղեղաաին մէջ այրեց, ու ծեծեց փոշի բրաւ, ու փոշին ժողովուրդին որդւոցը գերեզմաններուն վրայ ցանեց. 7 - Եւ Տէրոջը տանը մէջ գանուող Սոգոմական մեղքը գործողներուն տուները փլցուց, ուր կիները Աստարովթի *վարագոյրներ կը գործէին: 8 - Աւ Յուդայի քաղաքներէն բոլոր քահանաները Երուսաղէմ բերաւ, ու Քարայէ մինչև Բերսաբէէ պղծեց այն բարձր տեղերը, որոնց մէջ քահանաները խուսկ կը ծխէին. և քաղաքի իշխանին Յեսուի դրանը բերանը՝ քաղաքին դրանը ձախ կողմը եղող դռներուն բարձր տեղերը փլցուց: 9 - Բայց բարձր տեղերուն քահանաները Երուսաղէմ եղող Տէրոջը սեղանը չէին ելլեր, հապա իրենց եղբայրներուն մէջ բազարջ կ'ուտէին: 10 - Աւ Ենովմի որդւոյն ձորին մէջ եղող Տօփեթը պղծեց, որպէս զի մարդ մը իր աղան կամ աղջիկը Մողաքի համար կրակէ չանցնէ: 11 - Աւ նաև վերցուց Տէրոջը տանը դրանը առջեւէն այն ձիերը զորոնք Յուդայի թագաւորները արեգակին նուիրեր էին, և անոնք Փարուրիմ եղող Նաթանմելէք ներքինին սենեակին քով էին. ու արեգական կառքերը կրակով այրեց: 12 - Եւ Աքազի վերնատանը տանիքին վրայ Յուդայի թագաւորներուն շինած սեղանները, ու Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ Մանասէի շինած սեղանները թագաւորը փլցուց, ու անկէ բնաջինջ բրաւ, և անոնց հողը կեդրոն հեղեղաար նետեց: 13 - Աւ Երուսաղէմի դիմաց, Ապականութեան լեռան աջ կողմը, Իսրայէլի Սողոմոն թագաւորին Սիդոնացուց գարշելիին, Աստարովթի, համար ու Մովաբացուց գարշելիին, Քամովսի, համար ու Ամմոնի որդւոց գարշելիին, Մեղքոմի, համար շինած բարձր տեղերը թագաւորը պղծեց. 14 - Եւ արձանները խորտակեց ու Աստարովթի կառքերը կորտաց, ու անոնց տեղը մարդու ոսկորներով լեցուց:

15 - Աւ Բեթէլի սեղանն ալ, և Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբովամի շինած բարձր տեղը (այն սեղանը ու բարձր տեղն ալ) փլցուց, և բարձր տեղը այրեց ու փոշի դար-

ձուց, ու Աստարովթի կառքը այրեց: 16 - Եւ Յովսիա գարձաւ ու հոն լեռանը վրայի գերեզմանները տեսաւ, և Բարք զրկեց, գերեզմաններուն մէջի ոսկորները առաւ, ու սեղանին վրայ այրելով զանհկա պղծեց, Տէրոջը խօսքին համեմատ, զոր այս բաները խօսող Աստուծոյ մարդը բարձր ձայնով խօսեր էր: 17 - Եւ Բեթ-բեռլ բրաւ, Ինչ պիտի ըլլայ այս կոթողը զոր ես կը տեսնեմ. ու քաղաքին մարդիկը անոր ըսին, Անհկա Աստուծոյ մարդուն գերեզմանն է, որ Յուդայէ եկաւ, ու Բեթէլի սեղանին վրայ այս քու ըրած բաներդ խօսեցաւ: 18 - Եւ Բեթ-բեռլ բրաւ, Չանհկա թողուցէք, անոր ոսկորները մարդ մը տեղէն չչարժէ. ուստի անոր ոսկորները Սամարիայէ եկող մարգարէին ոսկորներուն հետ թող տուին: 19 - Աւ Յովսիա Սամարիայի քաղաքներուն մէջի բոլոր բարձր տեղերուն տուներն ալ վերցուց, զորոնք Իսրայէլի թագաւորները շինելով՝ Տերը բարկացուցեր էին. ու Բեթէլի մէջ բոլոր բրածին պէս անոնց ալ բրաւ: 20 - Եւ հոն գանուած բարձր տեղերուն բոլոր քուրմերը սեղաններուն վրայ մութեց, ու անոնց վրայ մարդու ոսկորներ այրեց. ետքը Երուսաղէմ՝ դարձաւ:

21 - Եւ թագաւորը բոլոր ժողովուրդին պատուիրեց՝ ըսելով, Չեր Տէր Աստուծոյն զատիկ բրէք, ինչպէս այս ուխտի գիրքին մէջ գրուած է: 22 - Քանզի Իսրայէլը դատող դատաւորներուն օրերէն ի վեր, և Իսրայէլի թագաւորներուն ու Յուդայի թագաւորներուն բոլոր օրերն ալ այս զատիկն պէս եղած չէր. 23 - Բայց Յովսիա թագաւորին տանը թերորդ տարին այս զատիկը Տէրոջը եղաւ Երուսաղէմի մէջ:

24 - Աւ նաև Յովսիա վհուկները, նշանագէտները ու թերափիմները ու կառքերը, և Յուդայի երկրին մէջ ու Երուսաղէմի մէջ երեւցած բոլոր գարշութիւնները վերցուց, որպէս զի Քեղկիա քահանային՝ Տէրոջը տունը գտած գիրքին մէջ գրուած օրէնքին խօսքերը հաստատէ: 25 - Եւ անկէ առաջ անոր նման թագաւոր մը չեղաւ, որ իր բոլոր սրտովը ու բոլոր հոգովը ու բոլոր զօրութիւնովը Տէրոջը դառնայ՝ Մով-

*Եբբ. տուններ

*Եբբ. կանչեց

սէտի բոլոր օրէնքին համեմատ . ոչ ալ անկէ ետքը անոր նմանը ելաւ : 26 - Բայց Տէրը Յուդայի վրայ բարբառած իր մեծ ու սաստիկ բարկութենէն ետ չդարձաւ՝ այն բոլոր *չար գործերուն՝ համար , որոնցմով Մանասէ զանհկա բարկացուցեր էր : 27 - Եւ Տէրը ըստ , Յուդան ալ իմ՝ երեսէս պիտի ձգեմ՝ , ինչպէս Իսրայէլը ձգեցի . ու պիտի մերժեմ այս քաղաքը , իմ՝ ընտրած Երուսաղէմն , ու այս տունը՝ որու համար ըսի թէ իմ՝ անունս հոն ըլլայ :

28 - Եւ Յովսիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 29 - Անոր օրերը Եգիպտոսի թագաւորը , Փարաւոն Նեքթանով , Ասորեստանի թագաւորին վրայ Եփրատ գետը ելաւ . ու Յովսիա թագաւորը անոր դէմ ելլելու գնաց , ու անհկա Յուդան տեսածին պէս՝ զանհկա մեռցուց Մակեդոնովի մէջ : 30 - Եւ անոր ծառաները անոր մարմինը Մակեդոնովէ կաւքով Երուսաղէմ՝ բերին , ու զանհկա իր գերեզմանին մէջ թաղեցին . ու երկրին ժողովուրդը Յովսիայի որդին Յովաքալը տուն ու օժեցին , և զանհկա իր հօրը տեղ թագաւոր դրին :

31 - Յովաքալ քսանուիրէք տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ երեք ամիս թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Ամիտաղ էր , ու Լերնացի Երեմիայի աղջիկն էր : 32 - Եւ անհկա իր հայրերուն բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ : 33 - Աւ Փարաւոն Նեքթանով զանհկա Եմօթի երկիրը՝ Ռեբեղայի մէջ բանաարկեց , որպէս զի Երուսաղէմի մէջ թագաւորութիւն չընէ . ու երկրին վրայ հարիւր տաղանդ արծաթ ու տաղանդ մը սակի հարկ գրաւ : 34 - Եւ Փարաւոն Նեքթանով Յովսիայի որդին Եզիակիմը անոր հօրը Յովսիայի տեղ թագաւոր դրաւ , ու անոր անունը փոխեց՝ Յովակիմ՝ իւրեց . բայց Յովաքալը առաւ Եգիպտոս տարաւ . ու անհկա հոն մեռաւ : 35 - Եւ Յովակիմ այն արծաթը ու սակին Փարաւոնի տուաւ , բայց երկրին վրայ հարկ գրաւ՝ այն արծաթը Փարաւոնի պատուիրածին պէս տալու

համար . ու երկրին ժողովուրդէն , աւէն մարդուն վրայ գրուած հարկին համեմատ , արծաթը ու սակին տուաւ , որպէս զի Փարաւոն Նեքթանովի սայ :

36 - Երբ Յովակիմ թագաւոր եղաւ՝ քսանըհինգ տարեկան էր , ու Երուսաղէմի մէջ տասնըմէկ տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Զաբեդա էր , ու Ռոււմացի Փադայիայի աղջիկն էր : 37 - Եւ անհկա իր հայրերուն բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ :

ԳԼ ԻԳ

Անոր օրերը Բաբելոնի Նաբուգոդոնոսար թագաւորը ելաւ . ու Յովակիմ երեք տարի անոր ծառայ եղաւ , ու ետքը դարձաւ անոր դէմ ապստամբեցաւ : 2 - Եւ Տէրը անոր վրայ Քաղզէացուց գունդերը ու Ասորուց գունդերը և Մովաբացուց գունդերը ու Ամիոնի որդիներուն գունդերը զրկեց . զանոնք Յուդայի վրայ զրկեց , որպէս զի զանհկա կործանէ Տէրոջը խօսքին համեմատ՝ զոր իր ծառաներուն , մարգարէներուն , ձեռքով խօսեր էր : 3 - Իրուցընէ ասիկա Տէրոջը հրամանովը եղաւ Յուդայի , որպէս զի զանհկա իր առջևէն մերժէ՝ Մանասէի ըրած բոլոր մեղքերուն համար , 4 - Աւ նաև անոր թափած անմեղ արեանը համար , քանզի Երուսաղէմը անմեղ արիւնով լեցուց . ու Տէրը չուզեց որ ներէ :

5 - Եւ Յովակիմի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են : 6 - Աւ Յովակիմ իր հայրերուն հետ քնացաւ , և անոր տեղ անոր որդին *Յովաքին թագաւոր եղաւ :

7 - Աւ Եգիպտոսի թագաւորը անկէ ետքը մէյմըն ալ իր երկրէն չեկաւ , քանզի Բաբելոնի թագաւորը Եգիպտոսի հեղեղատէն մինչև Եփրատ գետը՝ Եգիպտոսի թագաւորին ամէն ունեցածը առեր էր :

8 - Յովաքին տասնութ տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ երեք ամիս թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Նեհուսթա էր , ու Երուսաղէմացի Եղնաթանի աղ-

*Եբր. զայրացութիւններուն

*ա Մն. գ. 16 Վճ. - Ի Յեքոնիա

ջիկն էր: 9 - Եւ անիկա իր հօրը բուրբ բրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ:

10 - Այն ատեն Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ծառաները Երուսաղէմ ելան, ու քաղաքը պաշարուեցաւ, 11 - Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը քաղաքին վրայ եկաւ, երբ անոր ծառաները զանիկա պաշարեր էին: 12 - Աւ Յուդայի թագաւորը Յովաքին իր մօրը ու իր ծառաներուն և իշխաններուն ու ներքինիներուն հետ Բաբելոնի թագաւորին ելաւ. ու Բաբելոնի թագաւորը իր թագաւորութեանը ու թերորդ տարին զանիկա բռնեց: 13 - Եւ անկէ Տէրոջը տանը բոլոր գանձերը ու թագաւորին տանը գանձերը հանեց. ու կտարտեց այն ամէն սոկեղէն անօթները, գորտնք Իսրայէլի Սոլոմոն թագաւորը Տէրոջը տաճարին համար շիներ էր Տէրոջը բրածին համեմատ: 14 - Եւ բուրբ Երուսաղէմը, ու ամէն իշխանները և ամէն զօրաւոր մարդիկը, տասը հազար գերի, ու ամէն հիւսերը ու դարբինները քչեց տարաւ. երկրին ժողովուրդներուն աղքատներէն զատ մարդ մը չմնաց: 15 - Եւ Յովաքինը Բաբելոն փոխադրեց, ու թագաւորին մայրը ու թագաւորին կիները և անոր ներքինիները ու երկրին զօրաւորները Երուսաղէմէ Բաբելոն գերի տարաւ: 16 - Եւ բոլոր զօրաւոր մարդիկը եօթը հազար մարդ, ու հազար հիւս ու դարբին, որոնց ամէնն ալ պատերազմող կտրիճներ էին, Բաբելոնի թագաւորը զանոնք Բաբելոն գերի տարաւ: 17 - Եւ Բաբելոնի թագաւորը անոր տեղ անոր հօրեղբայրը Մաթանիան թագաւոր դրաւ, ու անոր անունը Սեդեկիայի փոխեց:

18 - Սեդեկիա քսանըմէկ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասներմէկ տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիտաղ էր, ու Լեբնացի Երեմիայի աղջիկն էր: 19 - Եւ անիկա Յովակիմի բոլոր բրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ: 20 - Քանզի Տէրոջը բարկութիւնը Երուսաղէմի ու Յուդայի վրայ էր, մինչև որ զանոնք իր երեսէն ձգէ. անոր համար Սեդեկիա Բաբելոնի թագաւորէն ապստամբեցաւ:

ԳԼ ԻԵ

Աւ եղաւ որ անոր թագաւորութեանը իններորդ տարին տասներորդ ամիսը ամսուն տասներորդ օրը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմի վրայ եկաւ, ու անոր դիմաց բանակեցաւ. և անոր դէմ շուրջանակի պատնէշներ շինեցին: 2 - Աւ մինչև Սեդեկիա թագաւորին մետատաներորդ տարին քաղաքը պաշարման մէջ էր: 3 - Եւ ամսուն իննին քաղաքին մէջ սաստիկ սով կար, ու երկրին ժողովուրդը հաց չունէր: 4 - Եւ քաղաքին պարիսպները ճեղքուեցաւ, ու բոլոր պատերազմողները գիշերով թագաւորի պարտէզին քով եղող երկու պարսպին մէջի դրանը ճամբայէն փախան. ու Քաղդէացիք քաղաքին բուրտիքը կեցեր էին. ու Քաղդէացիք դաշտին ճամբայէն գնաց: 5 - Եւ Քաղդէացուց զօրքը թագաւորին ետեւէն ինկան, ու Երեքովի դաշտերուն մէջ անոր հասան. և անոր բոլոր զօրքը անոր քովէն ցրուեցաւ: 6 - Աւ թագաւորը բռնեցին ու զանիկա Ռեբղա տարին Բաբելոնի թագաւորին, և անոր դատաստանը տեսան: 7 - Աւ Սեդեկիայի աղաքը իր աչքերուն առջև մութեցին, ու Սեդեկիայի աչքերը կուրացուցին, և զինքը շղթաներով կապեցին ու Բաբելոն տարին:

8 - Եւ Բաբելոնի թագաւորին, Նաբուգոդոնոսոր թագաւորին, տասներորդ տարին հինգերորդ ամիսը, ամսուն եօթներորդ օրը Բաբելոնի թագաւորի ծառան Նաբուգարդան դահճապետը Երուսաղէմ եկաւ, 9 - Աւ Տէրոջը տունը և թագաւորին տունը այրեց, ու Երուսաղէմի բոլոր տուները ու ամէն մեծ տուները կրակով այրեց: 10 - Եւ դահճապետին հետ եղող Քաղդէացուց բոլոր զօրքերը Երուսաղէմի շրջակայ պարիսպները փլցուցին: 11 - Աւ քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը, ու Բաբելոնի թագաւորին իշխող փախտատկանները ու մնացած բազմութիւնը Նաբուգարդան դահճապետը գերի տարաւ: 12 - Եւ դահճապետը երկրին աղքատներէն թողուց այգեգործներ ու երկրագործներ ըլլալու համար:

13 - Եւ Քաղդէացիք Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ սիւները ու մեքե-

նովթները, ու Տէրոջը ասանը մէջ եղող պղնձէ ծովը կտոր կտոր ըրին, ու անոնց պղինձը Բաբելոն տարին: 14 - Եւ թագաւորները ու թիակները և բազմակայները ու խնկամանները ու պաշտօնի համար գործածուած՝ բոլոր պղնձէ անօթները առին: 15 - Եւ դաճճապետը *սակիէ ու արծաթէ բուրվառները ու կոնքերը առաւ: 16 - Նաև Սողոմոնի՝ Տէրոջը տանը համար շինած երկու սիւները, մէկ ծովը ու մեքենովթները. բոլոր այս գործիքներուն պղինձը կշիւքի շէր գար: 17 - Մէկ սիւնին բարձրութիւնը տասնութ կանգուն էր, և անոր վրայ պղնձէ խոյակ կար, ու խոյակին բարձրութիւնը երեք կանգուն էր. և խոյակին վրայ շւրջանակի ցանցակերպ զարդ ու նուռեր կային, ամէնն ալ պղնձէ էին. ու միւս սիւնն ալ ցանցակերպ զարդով այնպէս էր:

18 - Եւ դաճճապետը առաջին քահանան Սարայիան ու երկրորդ քահանան Սոփոնիան ու երեք դռնապանները առաւ. 19 - Եւ քաղաքէն ներքինի մը առաւ, որ պատերազմող մարդոց զօրադուլին էր. ու թագաւորին խաղէ կայնողներէն՝ քաղաքին մէջ գանուած հինգ մարդ, ու երկրին ժողովուրդը զինուորութեան գրող՝ զօրքին մեծ գրագիրը, և քաղաքին մէջ գանուած երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ: 20 - Ու Նաբուզարդան դաճճապետը զանոնք առաւ, ու Բաբելոնի թագաւորին՝ Ռեբզա տարաւ: 21 - Եւ Բաբելոնի թագաւորը զանոնք զարկաւ, ու Եմաթի երկրին Ռեբզային մէջ գանոնք մեռցուց: Այսպէս Յուդա իր երկրէն գերի տարուեցաւ: 22 - Բայց Յուդայի երկրին մէջ մնացած ժողովուրդը՝ զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը հաճութուցեց էր, անոնց վրայ Սափանեան Աքիկամի որդին Գոգոդիան կուսակալ դրաւ:

*Կաճ, բուրվառները ու կոնքերը առաւ, ինչ որ սակիէ էր Էբրեւ սակի, ու ինչ որ արծաթէ էր Էբրեւ արծաթ Իբրեւ. երեսը տեսնողներէն. Եսթ. ա. 14:

23 - Եւ զօրաց բոլոր իշխանները իրենց մարդոցմով էրբ լսեցին որ Բաբելոնի թագաւորը Գոգոդիան կուսակալ ըրեր է, Գոգոդիայի՝ Մասփա եկան, այսինքն Նաթանիայի որդին Իամայէլ, Կարէի որդին Յօհանան, ու Թանհու-մեթի որդին Նեաոփաթացի Սարայիա, ու Մաքաթիի որդին Յեզունիա, թէ՛ իրենք և թէ՛ իրենց մարդիկը: 24 - Ու Գոգոդիա անոնց ու անոնց մարդոցը երգում ըրաւ, ու անոնց ըսաւ, Քաղ-դէացիներուն *ծառայութիւն ընելէն՝ մի վախնաք. այս երկրին մէջ բնակեցէք, և Բաբելոնի թագաւորին ծառայութիւն ըրէք, ու ձեզի աղէկ պիտի ըլլայ:

25 - Եւ եղաւ որ եօթներորդ ամիսը թագաւորներուն սերունդէն եղող Եղիսամայի որդւոյն Նաթանիայի որդին Իամայէլ տասը մարդով եկաւ. ու Գոգոդիան զարկին ու մեռաւ, նոյնպէս ալ անոր հետ Մասփա եղող Հրեաները ու Քաղդէացիները: 26 - Եւ բոլոր ժողովուրդը, պզտիկէն մինչև մեծը, ու զօրքերուն իշխանները ելան Եգիպտոս գացին, քանզի Քաղդէացիներէն վախցան:

27 - Ու եղաւ որ Յուդայի Յովաքին թագաւորին գերութեանը երեսունը-եօթներորդ տարին երկոտասաներորդ ամիսը, ամսուն քսանըեօթներորդ օրը, Բաբելոնի Եղմարովդաք թագաւորը, իր թագաւոր եղած տարին, Յուդայի Յովաքին թագաւորին գլուխը բարձրացուց * զանիկա բանաէն հանեց. 28 - Եւ անոր հետ քաղցրութեամբ խօսեցաւ, ու անոր ամուսը Բաբելոնի մէջ իրեն հետ եղող թագաւորներուն ամուսնէն վեր դրաւ. 29 - Եւ անոր բանախ լաթերը փոխեց, ու անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ միշտ անոր առջև հաց կ'ուտէր: 30 - Եւ անոր սոճիկը մշտապէս սոճիկ ըլլալով, անոր կեանքին բոլոր օրերուն մէջ թագաւորին կողմէն օրէ օր անոր կը արուէր:

*Կաճ, ծառաներէն



ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ



ԳԼՈՒԽ Ա

Ադամ, Աեթ, Ենովս, 2 - Կայնան, Մաղաղիէլ, Յարեդ, 3 - Ենովք, Մաթուսաղա, Ղամէք, 4 - Նոյ, Աէմ, Բամ ու Յարեթ :

5 - Յարեթի որդիները Գոմեր, Մագոգ, Մագայ, Յաւան, Թորէլ, Մոսք ու Թիրաս էին : 6 - Եւ Գոմերի որդիները Աւքանազ, *Իրիաթ ու Թորգոմա էին : 7 - Եւ Յաւանի որդիները Եղիսա, Թարսիս, Կիտացիք ու †Իոգաջիք էին :

8 - Բամի որդիները Բուշ, Մեսարեմ, Փուգ ու Քանան էին : 9 - Եւ Քուշի որդիները Սաբա, Եւիլա, Սաքաթա, Ռեգմա ու Սերեթաքա էին : Եւ Ռեգմայի որդիները Սաբա ու Դեգան էին : 10 - Եւ Քուշ ծնաւ Ներրովթը . ասիկա սկսաւ երկրի վրայ զօրաւոր ըլլալ : 11 - Եւ Մեսարեմ ծնաւ Ղուգացիները, Անամացիները, Ղաքացիները, Նեփթուքացիները, 12 - Պաթուրեասացիները ու Քասուքացիները, (ուրկէ Փղշտացիք ելան,) ու Կափթորացիներն ալ : 13 - Եւ Քանան ծնաւ իր անդրանիկը Սիդոնը, նաև Քեարը, 14 - Յերուսացին, Ամօրհացին, Գերգեսացին, 15 - Իսկացին, Արուկեցին, Ասենացին, 16 - Արուադացին, Սամարացին ու Ամաթացին :

17 - Աէմի որդիները Եղամ, Ասուր, Արփաքսագ, Ղուգ, Արամ, Հուս, Հուլ, Գաթեր ու Մոսք էին : 18 - Եւ Արփաքսագ ծնաւ Սաղան, և Սաղա ծնաւ Եբերը . 19 - Ու Եբերի երկու որդի ծնան . մէկուն անունը †Փաղէկ էր, քանզի երկիրը անոր օրերը բաժնուեցաւ . և անոր եղբօրը անունը Յեկտան էր : 20 - Ու Յեկտան ծնաւ Եղմովդազը, Սաղափը, Ասարմօթը, Յարաքը, 21 - Ադորամը, Ուզայը, Գեկղան, 22 - Գերազը, Աբիմէլը, Սաքան, 23 - Ոփիրը, Եւիլան ու Յոբաքը .

ամէն ասոնք Յեկտանի որդիներն էին :

24 - Աէմ, Արփաքսագ, Սաղա, 25 - Եբեր, Փաղէկ, Ռագաւ, 26 - Սերուգ, Նաքովր, Թարա, 27 - Աբրամ, այսինքն Աբրահամ :

28 - Աբրահամի որդիները Իսահակ ու Իսմայէլ էին : 29 - Անոնց ծնունդները ասոնք են . Իսմայէլի անդրանիկը՝ Նաբէթ, ետքը Կեզար, Ադբէլ, Մաբսամ, 30 - Մամա, Դումա, Մասսէ, Բոգագ, 31 - Թեմա, Յետուր, Նափէս ու Կեզմա : Իսմայէլի որդիները ասոնք էին :

32 - Եւ Աբրահամի հարձին Քետուրայի որդիները . անիկա ծնաւ Զեմրանը, Յեկտանը, Մագանը, Մագիանը, Յետրոկը ու Սովէն : Ու Յեկտանի որդիները Սաբա ու Դեգան էին : 33 - Եւ Մագիանի որդիները Գեփա, Ափէր, Ենովք, Աբիգա ու Ելգագա էին . ասոնք ամէնը Քետուրայի որդիներն էին :

34 - Եւ Աբրահամ ծնաւ Իսահակը : Իսահակի որդիները Եսաւ ու Իսրայէլ էին : 35 - Եսաւի որդիները Եղիփազ, Ռագուէլ, Յեուս, Յեզոմ ու Կորիս էին : 36 - Եղիփազի որդիները Թեման, Օմար, Սեփոյ, Գոթամ, Կենէզ, Թամնա ու Ամաղէկ էին : 37 - Ռագուէլի որդիները Նահաթ, Զարա, Սամմա ու Մէզա էին : 38 - Ու Սէրի որդիները Ղոտան, Սոբազ, Սերեգօն, Անա, Դիսօն, Եսեր ու Դիսան էին : 39 - Եւ Ղոտանի որդիները Քուռի ու Հեմամ էին . և Թամմա Ղոտանի քոյրն էր : 40 - Սոբազի որդիները Գաղուան, Մանաքաթ, Գերազ, Սեփոյ ու Օնամ էին : Ու Սերեգօնի որդիները Այիա ու Անա էին : 41 - Անայի որդին Դիսօն, ու Դիսօնի որդիները Ամրան, Եսբան, Յեթրան ու Քաուան էին : 42 - Եսերի որդիները Բաղզան, Զաաւան ու Յաական էին : Դիսանի որդիները Հուս ու Աւան էին :

43 - Եւ ասոնք են այն թագաւորները որոնք Եգիպտոսի երկրին մէջ թագաւորեցին՝ Իսրայէլի որդիներուն վրայ թագաւորի մը թագաւորելէն առաջ . Բէսովրի որդին Բաղա, ու անոր քաղա-

*Կամ, Դիփաթ

†Կամ, Ռոգացիք

‡Այսինքն, բաժանում. Ծն. Ժ. 25:

քին անունը Դեննարա էր : 44 - Եւ Բաղա մեռաւ , ու անոր տեղ Բօւրացի Զարայի որդին Յօբաբ թագաւորեց : 45 - Եւ Յօբաբ մեռաւ , ու անոր տեղ Թեմանացւոց երկրէն Հուսամ թագաւորեց : 46 - Եւ Հուսամ մեռաւ , ու անոր տեղ Բազադի որդին Ազադ թագաւորեց , որ Մովաբի դաշտին մէջ Մագիանացիները կատորեց . և անոր քաղաքին անունը Աւիթ էր : 47 - Եւ Ազադ մեռաւ , ու անոր տեղ Մարեկացի Սամաղա թագաւորեց : 48 - Եւ Սամաղա մեռաւ , և անոր տեղ Գեաին քով Ռորովթէ եղող Սաւուզը թագաւորեց : 49 - Եւ Սաւուզ մեռաւ , ու անոր տեղ Աքորի որդին Բաաղանան թագաւորեց : 50 - Եւ Բաաղանան մեռաւ , ու անոր տեղ Ազադ թագաւորեց . և անոր քաղաքին անունը Փոքով էր , ու անոր կնոջ անունը Մեաաբէէլ էր , որ Մէզաարի աղջկան Մատրեթի աղջիկն էր :

51 - Եւ Ազադի մեռնելէն ետքը Եզովմի իշխանները եղան , Թամնա իշխան , Գաղուա իշխան , Յեթաթ իշխան , 52 - Աղիբամն իշխան , Էլա իշխան , Փինօն իշխան , 53 - Կենէղ իշխան , Թեման իշխան , Մաբղար իշխան , 54 - Մագեդիէլ իշխան , Իրամ իշխան . Եզովմի իշխանները ասոնք էին :

ԴԼ. Բ

Իսրայէլի որդիները ասոնք են . Ռուբէն , Շմաւոն , Լևի , Յուդա , Իսաքար , Զաբուղոն , 2 - Իան , Յովսէփ , Բենիամին , Նեփթաղիմ , Գադ ու Ասեր :

3 - Յուդայի որդիները էր , Օնան ու Սեյօմ էին . այս երեքը Քանանացի Շաւայի աղջիկէն ծնան անոր . ու Յուդայի անդրանիկը էր Տերոջը առջև չար ըլլալուն համար՝ Տէրջ զանիկա մեռցուց : 4 - Եւ անոր հարօր թամար՝ Փարէսը ու Զարան ծնաւ անոր : Յուդայի բոլոր որդիները հինգ էին :

5 - Եւ Փարէսի որդիները Եսրոն ու Համուլ էին : 6 - Եւ Զարայի որդիները Զամբրի , Եթան , Եման , Քալբօյ ու *Իարա . ասէնը հինգ էին : 7 - Եւ Քարմիի որդին Աքար էր , որ Նզովուածով մեղք գործեց , ու Իսրայէլը նեղու-

թեան մէջ ձգեց : 8 - Ու Եթանի որդին Ազարիա էր : 9 - Ու Եսրոնի որդիները՝ որոնք անոր ծնան , Յերամէլ , *Սրամ ու Գեղուբայ էին :

10 - Եւ Արամ ծնաւ Ամինադաբը , ու Ամինադաբ ծնաւ Յուդայի որդիներուն իշխանը Նասասոնը , 11 - Եւ Նասասոն ծնաւ Սաղմոնը , ու Սաղմոն ծնաւ Բոսոր , 12 - Եւ Բոսո ծնաւ Ովբէդը , ու Ովբէդ ծնաւ Յեաակն , 13 - Եւ Յեաակ ծնաւ իր անդրանիկը Եղիաբը , ու երկրորդը Աբինադաբը , ու երրորդը Սամսան , 14 - Զորրորդը Նաթանայէլը , հինգերորդը Հուդային , 15 - Վեցերորդը Ասամը - եօթներորդը Իաւիթը : 16 - Եւ անոնց քոյրերը Շարուհեա ու Աբիգեա էին : Ու Շարուհեայի որդիները երեք էին . Աբեսա , Յովաբ ու Ասայէլ : 17 - Եւ Աբիգեա ծնաւ Ամեսային , ու Ամեսայիի հայրը Իամայէլացի Յեթեր էր :

18 - Ու Եսրոնի որդին Քաղէբ կնոջմէն Աղուբայէ ու Յերիօթէ որդիներ ծնաւ . և ասոր որդիները ասոնք են . Յասեր , Սովբաբ ու Արգօն : 19 - Ու երբ Աղուբա մեռաւ , Քաղէբ իրեն կնուաւ Եփրաթը , որ անոր ծնաւ Ովրը : 20 - Եւ Ովր ծնաւ Ուրին , և Ուրի ծնաւ Բեսելիէլը :

21 - Եւ անիէ ետքը Եսրոն Գաղաատը ու Տօրը Մաքիբի աղջկան մտաւ ու զանիկա առաւ , և ինք վաթսուն տարեկան էր . ու անիկա Սեգուրը ծնաւ անոր : 22 - Ու Սեգուր ծնաւ Յայիրը . ու ասիկա Գաղաատու երկրին մէջ քանուիրէք քաղաք ունէր : 23 - Ու †Գեսուրը և Արամը՝ Յայիրի գիւղաքաղաքները , Կանաթը ու անոր գեղերը , վաթսուն քաղաք , առաւ անոնցմէ . ասոնց ամէնը Գաղաատու Տօրը Մաքիբի որդիներուն էին : 24 - Ու Եսրոն Քաղէբ-Եփրաթայի մէջ մեռնելէն ետքը , Եսրոնի կինը Աբիա՝ անոր ծնաւ Թեկուէի հայրը Աքուրը :

25 - Ու Եսրոնի անդրանկան Յերամէլի որդիները ասոնք էին . անդրանիկը Հուամ , Բունա , Օրէն , Ասամ - Աքիա :

*Եբր. Բամ
 †Կամ, Քաղէբ . տես հմր. 18, 42 :
 ‡Կամ, Գեսուրացւոց ու Ասորւոց երկրէն
 Խաւս , Լսրոնի մեռնելէն ետքը՝ Քաղէբ Եփրաթա եկաւ , ու անոր հետ Եսրոնի կինը Աբիան , որ

*Կամ, Իարգա

26 - Եւ Յերամէլ ուրիշ կին մը ունէր, ու անոր անունը Ասարա էր . անկա՛ս Օնոմի մայրը եղաւ : 27 - Ու Յերամէլի անդրանկան Հուամի որդիները ասոնք էին . Մասա , Յամին ու Ակոր : 28 - Եւ Անամի որդիները Սամայի ու Յուգա էին : Եւ Սամայիի որդիները Նադաբ ու Աբիսուր էին : 29 - Եւ Աբիսուրի կնոջ անունը Աբիհայիլ էր , որ անոր ծնաւ Աբբանը ու Մովզիգը : 30 - Եւ Նադաբի որդիները Սաղադ ու Ափփեմ էին . ու Սաղադ անորդի մեռաւ : 31 - Եւ Ափփեմի որդին Յեսաի , ու Յեսաիի որդին Սեսան , ու Սեսանի որդին Աղայի էր : 32 - Եւ Սամայիի եղբօրը Յադայի որդիները Յեթեր ու Յոֆնաթան էին . ու Յեթեր անորդի մեռաւ : 33 - Եւ Յոֆնաթանի որդիները Փաղէթ ու Զազա էին : Յերամէլի որդիները ասոնք էին :

34 - Եւ Սեսան աղաքներ չունեցաւ , բայց միայն աղջիկներ : Ու Սեսան Յարթա անունով Եգիպտացի ծառայ մը ունէր . 35 - Ու Սեսան իր աղջիկը իր Յարթա ծառային կին տուաւ . որ անոր Եթթին ծնաւ : 36 - Ու Եթթի ծնաւ Նաթանը , և Նաթան ծնաւ Զաբաթը , 37 - Ու Զաբաթ ծնաւ Ոփղազը , և Ոփղազ ծնաւ Ովբէզը , 38 - Ու Ովբէզ ծնաւ Յէուեն , և Յէուեն ծնաւ Ազարիան , 39 - Ու Ազարիա ծնաւ Քեղզէսը , և Քեղզէս ծնաւ Եդեասան , 40 - Ու Եդեասա ծնաւ Սոսամէն , և Սոսամէ ծնաւ Սեղզումը , 41 - Ու Սեղզում ծնաւ Յեկամիան , և Յեկամիա ծնաւ Եդիսաման :

42 - Ու Յերամէլի եղբօրը Քաղէբի որդիները . անոր անդրանիկը Մեսա՛ Զիփի հայրն էր , ու Քեբրոնի հայրը Մարեոայի որդին էր : 43 - Եւ Քեբրոնի որդիները Կորիս ու Թափուա և Բոկամ ու Սեմա էին : 44 - Ու Սեմա ծնաւ Հուսամը՝ Յարկասամի հայրը , ու Ռուկամ ծնաւ Սամային : 45 - Եւ Սամայիի որդին Մասն էր . ու Մասն Բեթսուրի հայրն էր : 46 - Եւ Քաղէբի հարճը Գեփա ծնաւ Առանը , Մոսան ու Գազէզը . և Առան ծնաւ Գազէզը : 47 - Ու Յադայիի որդիները Հուագեմ , Յովաթամ , Գեսան , Փաղէտ , Գեփա ու Սագափ էին : 48 - Եւ Քաղէբի հարճը Մասթա ծնաւ Սեբերը ու Թարանան . 49 - Եւ ծնաւ Մաթմաննայի հայրը Սագափը , ու Մաթաեհնայի հայրը ու

Գաբաայի հայրը Շաւան . և Քաղէբի աղջիկը Աքսա էր :

50 - Եփրաթի անդրանկան Ովրի որդւոյն Քաղէբի որդիները ասոնք էին . Կարիաթարիմի հայրը Սուբաղ , 51 - Բեթլէհէմի հայրը Սաղմոն , Բեթզագերի հայրը Հարեփ : 52 - Եւ Կարիաթարիմի հօրը Սուբաղի որդիները Հարօտ -- Մանաքաթացւոց կէսն էին : 53 - Եւ Կարիաթարիմի տոհմերը Յեթերացիք , Փուլթացիք , Սամաթացիք ու Մասարացիք էին . Սարացիք ու Եսթաւուղացիք ասոնցմէ ելան : 54 - Սաղմոնի որդիները Բեթլէհէմ , Նեաոփաթացիք , Ատարովթ , Յովարի տունը ու Մանաքաթացւոց կէսը -- Սարացիք էին : 55 - Եւ Գաբէսի մէջ բնակող զպիւրներուն տոհմերը Թարգաթացիք , Սամաթացիք , Սովկաթացիք . ասոնք Ռեքաբի ասանը հօրմէն Եմաթէ ելլող Կենեցիք էին :

ԳԼ. Գ

Եւ Դաւիթի Քեբրոնի մէջ ծնած որդիները ասոնք էին . անդրանիկը Ամնոն՝ Յեզրայելացի Աբինոսամէ , երկրորդը Դանիէլ՝ Կարմէլացի Աբիգեայէ , 2 - Երրորդը Աբիսողամ՝ Գեսուրի թագաւորին Թոլմի աղջկանը Մասթայի որդին , չորրորդը Ադանիա՝ Ազգիթի որդին , 3 - Հինգերորդը Սափաաիա՝ Աբիաայէ , վեցերորդը Յեթրամ՝ իր կնոջմէն Եզղայէ : 4 - Այս վեցը անոր ծնան Քեբրոնի մէջ . և հոն եօթը տարի ու վեց ամիս թագաւորութիւն ըրաւ , ու Երուսաղէմի մէջ երեսունուիրեք տարի թագաւորութիւն ըրաւ :

5 - Ու Երուսաղէմի մէջ ասոնք ծնան անոր . Սամուա , Սովբաբ , Նաթան ու Սողամոն . այս չորսը Ամիէլի աղջիկէն , Բերաբէէ , քնած էին . 6 - Եւ Յեբաար ու *Եդիսամա ու Եդիփաղէտ , 7 - Եւ Նոքա ու Նափեկ և Յափիէ , 8 - Ու Եդիսամա ու Եդիազա ու Եդիփաղէտ . ասոնք ինն էին : 9 - Ամէնն ալ Դաւիթի որդիներն էին , հարճերուն որդիներէն ու անոնց քրոջմէն , Թամարէ , զատ :

10 - Եւ Սողամոնի որդին Ռաբովամ էր . անոր որդին Աբիա , անոր որդին Ասա , անոր որդին Յովաափաա , 11 - Անոր որդին Յովրամ , անոր որդին

Կամ , Եդիսուա . բ թագ . ե . 15 :

Ոքոզիա, անոր որդին Յովաս, 12 - Անոր որդին Ամասիա, անոր որդին Ազարիա, անոր որդին Յովաթամ, 13 - Անոր որդին Աքազ, անոր որդին Եզեկիա, անոր որդին Մանասէ, 14 - Անոր որդին Ամոն, անոր որդին Յովսիա : 15 - Եւ Յովսիայի որդիները՝ անդրանկը Յոհանան, երկրորդը Յովակիմ, երրորդը Սեդեկիա, չորրորդը Սեղզում էր : 16 - Աւ Յովակիմի որդիները՝ անոր որդին Յեքոնիա, անոր որդին Սեդեկիա էր : 17 - Աւ Յեքոնիայի որդիները՝ Ասիր, անոր որդին Սաղաթիէլ : 18 - Նաև Մեղքիրամ, Փադայիա, Սանէտար, Յեկամիա, Ովսամա ու Նադաբիա էին : 19 - Եւ Փադայիայի որդիները Չորաբաբէլ ու Սեմէի էին : ու Չորաբաբէլի որդիները՝ Մեսուղամ ու Անանիա . ու անոնց քոյրը Սաղոմիթ էր : 20 - Նաև Ասուբա ու Ոսղ և Բարաքիա ու Ասադիա և Յովաբեսեզ՝ Տինգ էին : 21 - Եւ Անանիայի որդիները Փաղատիա ու Եսայի էին . *Հուսիայի որդիները, Ունայի որդիները, Աբդիայի որդիները, Սեքենիայի որդիները : 22 - Աւ Սեքենիայի որդին Սեմայիա էր . ու Սեմայիայի որդիները Քեստուս և Իգաղ ու Բերիա և Նասարիա ու Սափաա՝ վեց էին : 23 - Եւ Նասարիայի որդիները Եղիովէնայի ու Եզեկիա ու Եզրիկամ՝ երեք էին : 24 - Աւ Եղիովէնայի որդիները Ովգուրա ու Եղիասիբ և Փաղայիա ու Ակկուբ և Յոհանան ու Դաղայի և Անանի՛ եօթն էին :

ԳԼ. Գ

Յուդայի որդիները Փարէս, Եսրոն ու Քարմի և Ովր ու Սորազ էին : 2 - Եւ Սորազի որդին Ռէայիա Յեթը ծնաւ . ու Յեթ Աքիմային ու Ղաազը ծնաւ . Սարսուցուց տոհմերը ասոնք են : 3 - Աւ Եսամի + Տորմէն ասոնք եղան . Յեզրայէլ ու Յեամա ու Յեզրաս . և անոնց քրոջը անունը Եսեղեփօն էր : 4 - Աւ Գեդովրի Տայրը Փանուէլ, և Ովսայի Տայրը Եզեր էր . ասոնք ԲեթլէՏէմի Տորը, Եփրաթի, անդրանկան Ովրի որդիներն էին :

*Կա՛մ, անոր որդին Հուսիայիա, անոր որդին Ունա, անոր որդին Աբդիա, անոր որդին Սեքենիա
+Կա՛մ, որդիները

5 - Աւ Թեկուէի Տայրը Ապուր երկու կին ունէր, Եղասա ու Նասարա . 6 - Եւ Նասարա անոր ծնաւ Ոքոզամը, Ոփերը, Թեմանը ու Սհասթարին . Նասարայի որդիները ասոնք էին : 7 - Աւ Եղասայի որդիները Սարեթ, Սահառ ու Եթնան էին : 8 - Եւ Կովս ծնաւ Ենովբը, Սօբեբան, ու Հարուսի որդւոյն ԱհարՏէլի տոհմերը :

9 - Եւ Գաբէս իր եղբայրներէն փառաւոր էր . ու անոր մայրը անոր անունը *Գաբէս գրաւ՝ ըսելով, Չանկիա տրրամութեամբ ծնայ : 10 - Եւ Գաբէս Իսրայէլի Աստուծոյն ազազակեց ու ըսաւ, Երանի՛ թէ ամէն կողմանէ զիս օրհնես ու իմ տահմանս մեծցնես, և քու ձեռքդ ինձի Տեա ըլլայ, ու զիս չարէն ազատես, որպէս զի ինձի տրամութիւն չըլլայ : Եւ Աստուած անոր խնդրքը կատարեց :

11 - Աւ Սուհայի եղբայրը Քեղուբ Մաքիրը ծնաւ, որ Եսթօնի Տայրն էր : 12 - Եւ Եսթօն ծնաւ Բեթուափան ու Փասէն և Իրնասաի Տայրը Թանան . ասոնք Հուբայի մարդիկն էին : 13 - Աւ Կենէզի որդիները Գոթոնիէլ ու Սարայիա էին, և Գոթոնիէլի որդին Աթաթ էր : 14 - Աւ Մանասթայի ծնաւ Եփրան . և Սարայիա ծնաւ Յովաբը, +Գեքարասիմի Տայրը . (քանզի անոնք արհեստաւորներ էին) : 15 - Աւ Յեփոնեան Քաղէբի որդիները Իրու, Էլա ու Նասամ էին . ու Էլայի որդին Կենէզ էր : 16 - Եւ Յալէլէլի որդիները Չիփ, Չիբա, Թիրիա ու Ասարէլ : 17 - Աւ Եզրայի որդիները Յեթեր, Մօրազ, Ափեր ու Յազօն էին : ու ասոր կինը ծնաւ Մարիամը և Սամային ու Եսթեմովի Տայրը Յեբան . 18 - Եւ անոր կինը Յուզիա ծնաւ Գեդովրի Տայրը Յարեզը, Սոքովի Տայրը Քաբերը ու Չանովի Տայրը Յեթթիէլը . և Մօրազի առած Փարաւոնի ազջկան, Բեթիայի, որդիները ասոնք էին : 19 - Աւ ասոր կնոջ Նայեմի քրոջ, Ովդիայի, որդիները Կէիլայի Տայրը Գարմի, ու Մաքաթացի Եսթեմով էր : 20 - Եւ Սիմոնի որդիները Ամոն, Հուրնա, Բեհանան ու Թիզօն էին . ու Յեսսիի որդիները ՉօՏէթ ու ԲենգօՏէթ էին :

21 - Եւ Յուդայի որդւոյն Սեւովի

*Այսինքն՝ տրամութիւն
+Այսինքն՝ արհեստաւորաց ձորին

որդինները՝ Ղեքայի հայրը էր, ու Մարեայի հայրը Ղաադա, և Ասքեայի տանը, բեհեզագործներուն տանը, տոհմերն էին: 22 - Նաև Յովակիմ և Քուզեքայի մարդիկը ու Յովաա և Սարափ, որոնք Մովսէի մէջ ստացուածք ունեցան, ու Յատուբի-լէհէմ: *Իսկ ասանք չին բաներ են: 23 - Ասոնք բրուտներ էին և Նէթայիմի ու Գադերայի մէջ կը բնակէին: Թագաւորին քով անոր գործին համար հոն կը բնակէին:

24 - Շմաւոնի որդիները Նամուէլ, Յամին, Յարիբ, Զարա - Սաւուզ: 25 - Անոր որդին Սեղզոււմ, անոր որդին Մաբսամ, անոր որդին Մամմա: 26 - Ու Մամմայի որդիները, անոր որդին Ամուէլ, անոր որդին Զաքուր, անոր որդին Սեմէի: 27 - Եւ Սեմէի տասնըվեց տղայ ու վեց աղջիկ ունէր, բայց անոր եղբայրները շատ աղաքներ չունէին. ու անոնց բոլոր տոհմերը Յուդայի որդիներուն չափ չշատցան: 28 - Եւ անոնք Բերսաբէէի ու Մոլադայի ու Ասեր-սուադի, 29 - Եւ Բաղայի ու Ասեմի և Թուղաթի, 30 - Ու Բաթուլի ու Զորմայի և Սիկելակի, 31 - Ու Բեթմարքաբովթի և Ասեր-սուսիմի ու Բեթբարէի և Սագարիմի մէջ բնակեցան. մինչև Գաւիթի Թագաւոր եղած ատենը ասանք էին անոնց քաղաքները, 32 - Ու անոնց գեղերը: Նաև Եթամ, Ային, Ռեմօն, Թոքան ու Ատան, հինգ քաղաք: 33 - Եւ այս քաղաքներուն բոլորտիքը եղած բոլոր գեղերը մինչև Բաազ, անոնց բնակութիւնները ու Գիճակները ասանք էին: 34 - Ու Մոսթաբ և Յամլէք ու Ամասիայի որդին Յոաա, 35 - Եւ Յովէլ ու Ասիէլի որդւոյն Սարայիայի որդւոյն Յոաբիայի որդին Յէու, 36 - Ու Եղիովէնայի ու Յեկեբա և Յատուխա ու Ասայիա և Ադիէլ ու Յեսիմիէլ ու Բանեա, 37 - Եւ Սեմայիայի որդւոյն Սամարիի որդւոյն Յեգայիայի որդւոյն Աղօնի որդւոյն Սեփէիի որդին Զիգա: 38 - Այս անուններով յիշուածները իրենց տոհմերուն մէջ իշխաններ էին, ու անոնց ազգատոհմները խիստ շատցան: 39 - Եւ իրենց անասուններուն համար արօտ փնտուելով՝ Գեգովրի մուտքը գացին մինչև ձորին արեւելեան

կողմը. 40 - Եւ առատ ու աղէկ արօտ գտան. ու այն երկիրը ընդարձակ էր, և խաղաղութեան ու հանգարտութեան մէջ էր. քանզի առաջ Քամէ եղողները հոն կը բնակէին: 41 - Եւ այս անուններով գրուածները Յուդայի Եղեկիա Թագաւորին օրերը գացին, ու անոնց վրանները և հոն գրաւուած բնակարանները զարկին, ու զանոնք բնաջինջ ըրին մինչև այսօր, և անոնց տեղը բնակեցան. վասն զի հոն իրենց հօտերուն համար արօտ կար: 42 - Ու անոնցմէ, այսինքն Շմաւոնի որդիներէն, հինգ հարիւր մարդ Սէիր լեռը գացին, իրենց վրայ Յեսաիի որդիները Փաղատիան, Նաարիան, Հուփայիան ու Ողիէլը իշխան «-նէն»-ով: 43 - Եւ Ամադէկի փախստական մնացորդները զարկին, ու մինչև այսօր հոն բնակեցան:

ԳԼ Ե

Եւ Իսրայէլի անդրանկան Ռուբէնի որդիները. (քանզի անդրանիկը անիկա էր. բայց իր հօրը անկողինը պղծելուն համար՝ իր անդրանկութեան իրաւունքը Իսրայէլի որդւոյն Յովսէփի որդիներուն արուեցաւ. ու ազգահամարին մէջ անդրանիկի պէս չգրուեցաւ: 2 - Իսկ Յուդա իր եղբայրներէն զօրաւոր եղաւ, ու անկէ իշխաններ էլան, բայց անդրանկութեան իրաւունքը Յովսէփին էր: 3 - Իսրայէլի անդրանկան Ռուբէնի որդիները Ենովք, Փաղզուս, Եսրոն ու Քարմի էին: 4 - Յովէլի որդիները. անոր որդին Սեմայիա, անոր որդին Փոգ, անոր որդին Սեմէի, 5 - Անոր որդին Միքա, անոր որդին Ռեա-յիա, անոր որդին Բաազ, 6 - Անոր որդին Բէերա, զոր Աստրեստանի Թագաթ-փաղասար Թագաւորը գերի տարաւ. անիկա Ռուբէնեանց իշխանն էր: 7 - Եւ անոր եղբայրները իրենց տոհմերովը երբ ազգահամարին մէջ գրուեցան, անոնց գլխաւորը Յէիէլ էր, ետքը Զաքարիա, 8 - Եւ Յովէլի որդւոյն Սեմայի որդւոյն Ազազի որդին Բազա. սահկա Արտերի մէջ, ու անիւ մինչև Նաբաւ ու Բէէլմօն բնակեցաւ. 9 - Եւ արեւելեան կողմը՝ Եփրատ գետէն մինչև անապատը բնակեցաւ, քանզի անոնց անասունները Գաղասագու երկրին մէջ շատցեր էին: 10 - Ու Սա-

*Կ-մ, ու Ադգէբարիմ.աթթիկիմ
†Կ-մ, ազգարանութիւնները

ւուղի օրերը անոնք պատերազմ՝ ըրին
Հագարացւոց չեա, որոնք իրենց ձեռ-
քը ինկան. ու Գաղատադու բոլոր արե-
ւելեան կողմերը՝ անոնց վրաններուն
մէջ բնակեցան :

11 - Եւ Գաղի որդիները ասոնց դի-
մաց Բասանու երկրին մէջ բնակեցան
մինչև Սելքա . 12 - Գլխաւորը Յովէլ ,
ու երկրորդը Սափամ՝, ետքը Յանայի ,
ու Սափամ՝ Բասանի մէջ : 13 - Եւ աս-
նոնց եղբայրները իրենց ազգատոհմե-
րուն համեմատ՝ Միքայէլ , Մեսու-
ղամ՝, Սաբէէ, Յովրէ, Յաքան, Չիա ու
Եբեր՝ եօթն էին :

14 - Ասոնք Բուզի որդւոյն Յակոպի որդւոյն Յեսիսայի
որդւոյն Միքայէլի որդւոյն Գաղատադի
որդւոյն Յարսայի որդւոյն Հուրիի որդ-
ւոյն Աբիքէլի որդիներն էին : 15 - Ա-
նոնց ազգատոհմերուն իշխանը Գունիի
որդւոյն Աբգիէլի որդին Ա.քի էր :

16 - Եւ անոնք Գաղատադու մէջ, Բասանի
ու անոր գիւղաքաղաքներուն մէջ, ու
Սարօնի բոլոր արուարձաններուն մէջ՝
մինչև անոնց սահմանները բնակեցան :

17 - Ամէն ասոնք Յուդայի Յովաթամ՝
Թագաւորին օրերը, ու Իսրայէլի Յե-
րոբոմ՝ Թագաւորին օրերը ազգահա-
մարին մէջ գրուեցան :

18 - Ռուբէնի որդիները ու Գաղ-
եանք ու Մանասէի կէս ցեղը՝ քառա-
սունը չորսուոր, վահան ու սուր կրող,
և աղեղ քաշող, պատերազմ սարժած,
ու պատերազմի ելլող մարդիկ էին :

19 - Եւ անոնք Հագարացւոց, Յետու-
րացւոց, Նափեսացւոց ու Նոդաբաց-
ւոց չեա պատերազմ՝ ըրին, 20 - Եւ
անոնց յաղթեցին. ու Հագարացիք և
բոլոր անոնց չեա եղողները անոնց
ձեռքը տրուեցան. քանզի անոնք պա-
տերազմի մէջ Աստուծոյ աղաղակե-
ցին, ու անոնց լսեց, վասն զի անոր ա-
պաւինեցան : 21 - Եւ անոնց անասուն-
ները, յիսուն հազար ուղա, ու երկու
հարիւր յիսուն հազար սչխար, ու եր-
կու հազար էջ, և հարիւր հազար մարդ-
գերի ըրին .

22 - (Քանզի շատերը մե-
ռած ինկան. վասն զի այս պատերազմը
Աստուծոյ մէջ էր.) ու մինչև գերութիւնը
անոնց տեղը բնակեցան :

23 - Եւ Մանասէի որդիներուն կէս
ցեղը այն երկրին մէջ բնակեցան, Բա-
սանէ մինչև ԲաաղՏերմոն, Սանիր ու
Հերմոն լեռը, ասոնք բազմութիւն էին :

24 - Եւ անոնց ազգատոհմերուն իշ-
խանները ասոնք էին . Ափէր, Յեսսի,
Եղիէլ, Եզրիէլ, Երեմիա, Ովգուհա ու
Յաքգիէլ, որոնք զօրաւոր, քաջ ու ան-
ուանի մարդիկ էին, ու իրենց ազգա-
տոհմերուն իշխաններն էին :

25 - Եւ իրենց հայրերուն Աստու-
ծոյն դէմ ապստամբեցան, ու այն երկ-
րին ազգերուն աստուածներուն ետե-
ւէն երբեք չպաւնակեցան, զորոնք Աստ-
ուած անոնց առջևէն բնաջինջ բրած
էր : 26 - Եւ Իսրայէլի Աստուածը Ա-

սորեստանի Փուղ Թագաւորին հոգին
ու Ասորեստանի Թագաւթ-փաղասար
Թագաւորին հոգին գրգռեց, ու Ռու-
բենեանները, Գաղեանները ու Մա-
նասէի կէս ցեղը գերի ըրաւ, և զանոնք
Քաղա ու Քաբովր ու Հարա ու Գով-
զան գետը տարաւ մինչև այսօր :

ԳԼ. Զ

Ղևի որդիները Գերսոն, Կահաթ
ու Մերարի էին : 2 - Եւ Կահաթի որ-
դիները Ամրամ, Իսահառ, Քեբրոն ու
Ողիէլ էին : 3 - Եւ Ամրամի որդիները
Ահարոն, Մովսէս ու Մարիամ էին :
Ու Ահարոնի որդիները Նազար, Ա-
բիուդ, Եղիազար ու Խթամար էին :
4 - Եղիազար ծնաւ ՓենէՏէսը, ու
ՓենէՏէս ծնաւ Աբիսուան, 5 - Եւ Աբի-
սուա ծնաւ Բոկկին, ու Բոկկի ծնաւ
Ողին, 6 - Եւ Ողի ծնաւ Չարիան, ու
Չարիա ծնաւ Մարիօթը, 7 - Ու Մա-
րիօթ ծնաւ Ամարիան, և Ամարիա
ծնաւ Աբիտովը, 8 - Ու Աբիտովը
ծնաւ Սագովկը, ու Սագովկ ծնաւ Ա-
բիմասար, 9 - Եւ Աբիմասա ծնաւ
Ազարիան, ու Ազարիա ծնաւ Յօհա-
նանը, 10 - Եւ Յօհանան ծնաւ Ազա-
րիան. (ասիկա էր որ Սոգամոնի Երու-
սաղէմ շինած *տաճարին մէջ քահա-
նայութիւն ըրաւ.) 11 - Ու Ազարիա
ծնաւ Ամարիան, և Ամարիա ծնաւ Ա-
բիտովը, 12 - Ու Աբիտովը ծնաւ
Սագովկը, ու Սագովկ ծնաւ Սեղ-
զու մը, 13 - Եւ Սեղզու մ՝ ծնաւ Քեղ-
կիան, ու Քեղկիա ծնաւ Ազարիան,
14 - Եւ Ազարիա ծնաւ Սարայիան, ու
Սարայիա ծնաւ Յովսեփէկը : 15 - Եւ
Յովսեփէկ շերտ գնաց, երբ Տէրը Յու-

*Եբր. տանը

դան ու Երուսաղէմը Նաբուգոդոնոսորի ձեռքով փոխադրեց :

16 - Ղեւիի որդիները Գերսոն , Կահաթ ու Մերարի էին : 17 - Ու Գերսոնի որդիներուն անունները սասնք էին . Ղորենի ու Սեմէի : 18 - Եւ Կահաթի որդիները Ամրամ , Իսահառ , Քեբրոն ու Ողիէլ էին : 19 - Մերարիի որդիները Մոողի ու Մուսի էին . և ասանք են Ղևտացոց տոհմերը իրենց հայրերուն համեմատ :

20 - Գերսոնի «բէն»երը . անոր որդին Ղորենի , անոր որդին Յեթ , անոր որդին Չամմա , 21 - Անոր որդին Յովաբ , անոր որդին Ադգով , անոր որդին Չարա , անոր որդին Յաթրի էր :

22 - Կահաթի որդիները . անոր որդին Ամինազար , անոր որդին Կորի , անոր որդին Ասիր , 23 - Անոր որդին Եղկանա , անոր որդին Աբիսաափ , անոր որդին Ասիր , 24 - Անոր որդին Թաաթ , անոր որդին Ուրիէլ , անոր որդին Ողիա ու անոր որդին Սաուղ էր : 25 - Ու Եղկանայի որդիները Ամեայի , Աբիմոթ 26 - Ու Եղկանա էին . Եղկանայի որդիները . անոր որդին Սուփի , ու անոր որդին Նահաթ , 27 - Անոր որդին Եղիաբ , անոր որդին Յերոամ , անոր որդին Եղկանա էր : 28 - Ու Սամուէլի որդիները . անոր անդրանիկը Յովէլ , ու երկրորդը Աբիա էր :

29 - Մերարիի որդիները Մոողի , անոր որդին Ղորենի , անոր որդին Սեմէի , անոր որդին Ողա , 30 - Անոր որդին Սամաա , անոր որդին Անգիա , անոր որդին Ասայիա էր :

31 - Եւ ասոնք են զորոնք Դաւիթ երգեցողութեան պաշտօնին վրայ դրուեցին Սերուբա տանը մէջ տապանակին հանգրատանալէն ետքը . 32 - Ու անոնց պաշտօնը ժողովքի խորանին առջև օրհնութիւն երգել էր , մինչև որ Սողոմոն Երուսաղէմի մէջ Տերօջր տունը շինեց . ու իրենց կարգին համեմատ իրենց պաշտօնին վրայ կը կենային : 33 - Եւ իրենց որդիներով կեցողները սասնք են . Կահաթեանց որդիներէն երգեցող Եմանը , Յովէլի որդին , որ Սամուէլի որդին , 34 - Որ Եղկանայի որդին , որ Յերոամի որդին , որ Եղիէլի որդին , որ Թովայի որդին , 35 - Որ Սուփիի որդին , որ Եղկանայի որդին , որ Մաաթի որդին , որ Ամեայիի որդին , 36 - Որ Եղկանայի որդին , որ Յովէլի

որդին , որ Ազարիայի որդին , որ Սոփոնիայի որդին , 37 - Որ Թաաթի որդին , որ Ասիրի որդին , որ Աբիսաափի որդին , որ Կորիի որդին , 38 - Որ Իսահառի որդին , որ Կահաթի որդին , որ Ղեւիի որդին , որ Իսրայէլի որդին էր : 39 - Եւ անոր աջ կողմը կայնողը իր եղբայրը Ասափ էր , - Ասափ՝ Բարաբիայի որդին , որ Սամուայի որդին , 40 - Որ Միքայէլի որդին , որ Բաասիայի որդին , որ Մեղքիայի որդին , 41 - Որ Աթանիի որդին , որ Չարայի որդին , որ Ադայիայի որդին , 42 - Որ Եթանի որդին , որ Չամմայի որդին , որ Սեմէիի որդին , 43 - Որ Յեթի որդին , որ Գերսոնի որդին , որ Ղեւիի որդին էր : 44 - Ու անոնց եղբայրները , Մերարիի որդիները , ձախ կողմը իջ կայնէին . Եթան՝ Կիսեայի որդին , որ Աբգիի որդին , որ Մալուքի որդին , 45 - Որ Ասաբիայի որդին , որ Սամաիայի որդին , որ Քեղկիայի որդին , 46 - Որ Ամասիի որդին , որ Բանիի որդին , որ Սամերի որդին , 47 - Որ Մաողիի որդին , որ Մուսիի որդին , որ Մերարիի որդին , որ Ղեւիի որդին էր : 48 - Ու անոնց եղբայրները , Ղևտացիք , Աստուծոյ տանը խորանին ամէն ծառայութեանը նուիրուած էին :

49 - Բայց Ահարոն ու անոր որդիները ողջակէզի սեղանին վրայ ողջակէզ , ու խունկի սեղանին վրայ խունկ կը մատուցանէին , սրբութեանց սրբութիւնին ամէն գործը կատարելով , ու Իսրայէլի համար քառութիւն ընելով , այն ամէնուն համեմատ զոր Աստուծոյ ծառան Մովսէս պատուիրէր էր : 50 - Եւ Ահարոնի որդիները սասնք էին . Անոր որդին Եղիազար , անոր որդին Փենէհէս , անոր որդին Աբիսուա , 51 - Անոր որդին Բակկի , անոր որդին Ողի , անոր որդին Չարիա , 52 - Անոր որդին Մարիօթ , անոր որդին Ամարիա , անոր որդին Աբիտովը , 53 - Անոր որդին Սագովկ , անոր որդին Աբիմասա :

54 - Եւ Կահաթի տոհմին , Ահարոնի որդիներուն , բնակութիւնները սասնք էին իրենց գեղերովը ու իրենց սահմաններովը , քանզի այն վիճակը անոնց եղաւ : 55 - Եւ Յուդայի երկրին մէջ Քեբրոնը ու անոր շրջակայ արուարձանները անոնց տուին . 56 - Բայց այն քաղաքին արտերը ու անոր գեղերը Յեփոնեան Քաղէրի տուին : 57 - Եւ Յուդայի քաղաքներէն Ահարոնի որդի-

ներուն Գերրոնը տուին (որ ապաստանի
 +ալ+ էր), ու Լեբնան իր արուարձան-
 ներովը, և Յաթիրը ու Եսթեմովը իր
 արուարձաններովը, 58 - Եւ Քիլէնը
 իր արուարձաններովը, ու Գարիրը իր
 արուարձաններովը, 59 - Եւ Ասանը
 իր արուարձաններովը, ու Բեթսա-
 միւսը իր արուարձաններովը, 60 - Եւ
 Բենիամինի ցեղէն Փաբան իր արուար-
 ձաններովը, ու Գաղեմէթը իր արուար-
 ձաններովը, և Անաթովթը իր արուար-
 ձաններովը. անոնց տոհմերուն ամէն
 քաղաքները տասուիրէք քաղաք էին:

61 - Աւ այս ցեղին տոհմերէն մնա-
 ցած Կահաթի որդիներուն՝ Մանասէի
 կէս ցեղէն վիճակով տասը քաղաք
 Գրուէցաւ:

62 - Աւ Գերսոնի որդիներուն՝ իրենց
 տոհմերուն համեմատ Իսաքարի ցեղէն,
 Ասերի ցեղէն ու Նեփթաղիմի ցեղէն
 ու Բասանի մէջ Բնաիւ Մանասէի ցե-
 ղէն տասուիրէք քաղաք Գրուէցաւ:

63 - Մերարիի որդիներուն՝ իրենց
 տոհմերուն համեմատ Ռուբէնի ցեղէն
 ու Գադի ցեղէն և Զաբուղոնի ցեղէն
 վիճակով տասուերկու քաղաք Գր-
 ւուէցաւ:

64 - Աւ Իսրայէլի որդիները այս քա-
 ղաքները իրենց արուարձաններովը
 Ղևաացիներուն տուին:

65 - Եւ Յու-
 զայի որդիներուն ցեղէն ու Շմուոնի
 որդիներուն ցեղէն ու Բենիամինի որ-
 դիներուն ցեղէն վիճակով՝ այս անու-
 նով յիշուած քաղաքները տուին:

66 - Եւ Կահաթի որդիներուն հապ-
 տոհմերուն *կալուածքի քաղաքները
 Եփրեմի ցեղէն էին:

67 - Աւ անոնց
 Եփրեմի լեռանը վրայ Սիւքէմը տուին,
 (որ ապաստանի քաղաքներէն էր,) ու
 անոր արուարձանները, և Գաղերը իր
 արուարձաններովը, 68 - Աւ Յեկմամը
 իր արուարձաններովը, և Բեթորոնը
 իր արուարձաններովը, 69 - Աւ Այե-
 ղոնը իր արուարձաններովը, և Գեթ-
 րեմոնը իր արուարձաններովը, 70 -
 Աւ Մանասէի կէս ցեղէն Անէրը իր ար-
 ուարձաններովը, և Յերղասամը իր ար-
 ուարձաններովը Կահաթի որդիներուն
 մնացած տոհմին Գրուէին:

71 - Գերսոնի որդիներուն Մանասէի
 կէս ցեղին տոհմէն Բասանի մէջ Գով-
 ղանը իր արուարձաններովը, ու Աս-

տարովթը իր արուարձաններովը. 72 -
 Եւ Իսաքարի ցեղէն Կադէսը իր ար-
 ուարձաններովը, Գարարաթը իր ար-
 ուարձաններովը, 73 - Աւ Ռամովթը
 իր արուարձաններովը, և Անամը իր
 արուարձաններովը, 74 - Աւ Ասերի ցե-
 ղէն Մասաղը իր արուարձաններովը,
 և Աբդոնը իր արուարձաններովը, 75 -
 Աւ Հուկոկը իր արուարձաններովը, և
 Ըսորը իր արուարձաններովը, 76 - Աւ
 Նեփթաղիմի ցեղէն Գալիլէայի մէջ
 Կադէսը իր արուարձաններովը, և Համ-
 մոնը իր արուարձաններովը, ու Կարիա-
 թեմը իր արուարձաններովը Գրուէին:

77 - Եւ մնացածներուն, այսինքն
 Մերարիի որդիներուն, Զաբուղոնի
 ցեղէն Ռեմոնը իր արուարձաններովը,
 Թաբորը իր արուարձաններովը. 78 -
 Աւ Երիքովի Յորդանանու անդի կող-
 մը, Յորդանանու արևելեան կողմը,
 Ռուբէնի ցեղէն անապատի մէջ Բասորը
 իր արուարձաններովը, ու Յասան իր
 արուարձաններովը, 79 - Եւ Կադէ-
 մովթը իր արուարձաններովը, ու Մե-
 փայթը իր արուարձաններովը. 80 -
 Եւ Գադի ցեղէն Գաղասաղի մէջ Ռա-
 մովթը իր արուարձաններովը, ու Մա-
 նայիմը իր արուարձաններովը, 81 - Աւ
 Եսերոնը իր արուարձաններովը, և Յա-
 զերը իր արուարձաններովը Գրուէին:

ԳԼ Է

Եւ Իսաքարի որդիները, Թովղա ու
 Փուա և Յասուբ ու Սամբոն, չորս էին:
 2 - Եւ Թովղայի որդիները, Ոզի ու
 Հուփայիա և Յերիէլ ու Յեմայի և Յեր-
 սամ ու Սամուէլ, իրենց Տորը Թով-
 զայի տանը իշխանները Գրուէին իրենց ազ-
 գին մէջ զօրաւոր կարիճներ էին. Գա-
 լիթի օրերը անոնց թիւը քանուերկու
 հազար վեց հարիւր էր: 3 - Եւ Ոզի որ-
 դիները, Յեղերիա ու Յեղերիայի որդի-
 ները Միքայէլ և Աբդիա ու Յովէլ Գր-
 Յեփա, հինգ էին, և ամէնն ալ իշխան-
 ներ էին. 4 - Աւ անոնց հետ անոնց ցե-
 ղին ու ազգատոհմին մէջ պատերազմի
 շարունոց երեսուերկու հազար զօրք
 կար. քանզի անոնց կիները ու որդիները
 շատուօր էին: 5 - Եւ անոնց եզրայր-
 ները Իսաքարի բոլոր տոհմերուն մէջ
 զօրաւոր կարիճներ ըլլալով՝ իրենց ազ-
 գահամարին համեմատ ամէնը ութսու-
 նրեօթը հազար էին:

*Եբր. տոհմանին

6 - Բենիամինի որդիները, Բազա, Բաբոր ու Յեզիել, երեք էին: 7 - Եւ Բաղայի որդիները, Եսթօն, Ազի, Ազիել, Յերիմովթ ու Իրի, իրենց ազգատոհմին իշխանները ու զօրաւոր կորիճները, չինգ էին. և անոնց ազգահամարին մէջ գրուածները քանուերկու հազար երեսուներչորս հոգի էին: 8 - Ու Բոքորի որդիները Զամիրա, Յովաս, Եղիազար, Եղիովէնայի, Ամրի, Յերիմովթ, Աբիա, Անաթովթ ու Գազեմէթ էին. ասոնք ամէնը Բոքորի որդիներն էին: 9 - Եւ անոնց ազգահամարին մէջ իրենց ազգատոհմերուն իշխանները «- զօրաւոր կորիճներ ըլլալով, քան հազար երկու հարիւր հոգի կար: 10 - Եւ Յեզիելի որդին Բազզան, ու Բազզանի որդիները Յեուս, Բենիամին, Աւովզ, Քանանա, Զեթան, Թարսիս ու Աքիսար էին: 11 - Ասոնք ամէնը, Յեզիելի որդիները, իրենց տոհմերուն իշխանները ու զօրաւոր կորիճներ էին. «- ասանրեօթը հազար երկու հարիւր պատերազմի ելող մարդիկ էին: 12 - Եւ Սուփիմ ու Ոփիմ Իրիի որդիներն էին, Հուսիմ ալ Աքերի որդին էր:

13 - Նեփթաղիմի որդիները՝ Յապիել, Գունի, Յասեր ու Սեզզում՝ Բազզայի որդիներն էին:

14 - Մանասէի որդիները. Ասրիել, զոր էր կնիք ծնաւ. «- անոր Ասորի հարճը Գազաազի հայրը Մաքիրը ծնաւ: 15 - Եւ Մաքիր իրեն կին առաւ Ոփիմի ու Սուփիմի քոյրը, որուն անունը Մաաքա էր, ու երկրորդին անունը Սալպատազ էր. և Սալպատազի աղջիկներ ծնան: 16 - Ու Մաքիրի կինը Մաաքա որդի մը ծնաւ, և անոր անունը Փարէս կոչեց. ու անոր եղբօրը անունը Սարէս էր, և անոր որդիները Ուղամ ու Բոկոմ էին: 17 - Եւ Ուղամի որդին Բեգան էր. Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գազաազի որդիները ասոնք էին: 18 - Ու անոր քոյրը Մաղեքէթ ծնաւ Եսուդը, Աբեկները ու Մաալան: 19 - Եւ Աեմիգայի որդիները Աքիան, Սիւքէմ, Ղակէի ու Անիամ՝ էին:

20 - Ու Եփրեմի որդիները Սուտազա, (և անոր որդին Բարազ, ու անոր որդին Թաաթ, ու անոր որդին Եղիազա, և անոր որդին Թաաթ, 21 - Ու անոր որդին Զաբազ, և անոր որդին Սուտազա,) նաև Եզեր ու Եղիազ էին:

ու զանոնք այն երկրին մէջ ծնած Գեթաղիք մեացուցին, քանզի անոնց անասունները առնելու իջան: 22 - Եւ անոնց հայրը Եփրեմ շատ օրեր սուգ բռնեց, ու անոր եղբայրները զանիկա մխիթարելու գացին: 23 - Եւ անիկա իր կնոջ մտաւ, ու անիկա յղանալով որդի մը ծնաւ. և անոր անունը *Բարիս կոչեց, վասն զի իր ասանը վրայ չարիք եկած էր: 24 - Ու անոր աղջիկը Սէէրա էր. ասիկա վարի ու վերի Բեթորսնը ու Ազան-սէէրան շինեց: 25 - Եւ անոր որդին Հուսփէ ու Հուասփ, ու անոր որդին Թաղէ, և անոր որդին Թաան, 26 - Անոր որդին Ղաազան, անոր որդին Սմիուզ, անոր որդին Եղիսամա, 27 - Անոր որդին Նաւէ «- անոր որդին Յեսու էր: 28 - Եւ անոնց կալուածքները ու բնակութիւնները ասոնք էին. Բեթէլ ու անոր գեղերը, ու արևելեան կողմէն Նաարան, և արևմտեան կողմէն Գազեր ու անոր գեղերը, և Սիւքէմ ու անոր գեղերը, մինչև Գազա ու անոր գեղերը, 29 - Եւ Մանասէի որդիներուն սահմաններուն քով Բեթաան ու անոր գեղերը, Թաանաք ու անոր գեղերը, Մակեդգով ու անոր գեղերը, Գովը ու անոր գեղերը. Իսրայէլի որդւոյն Յովսէփի որդիները ասոնց մէջ կը բնակէին:

30 - Ասերի որդիները Յեմնա, Յեսուս, Յեսուի ու Բարիս, և անոնց քոյրը Սարա էր: 31 - Ու Բարիսի որդիները Քաբեր ու Մեղքիէլ էին. ասիկա Բարսայիթի հայրն էր. 32 - Ու Քաբեր ծնաւ Յափաղէթը, Սովմերը և Քովթամը, ու անոնց քոյրը Սովլան: 33 - Ու Յափաղէթի որդիները Փասաք, Բամայէլ ու Ասուաթ էին. Յափաղէթի որդիները ասոնք էին: 34 - Եւ Սովմերի որդիները Աքի, Հուտոգա, Ոբա ու Արամ էին: 35 - Ու անոր եղբօրը Հելեմի որդիները Սովփա, Յամանա, Սելէս և Ամաղ էին: 36 - Սովփայի որդիները Սուս, Աւնափար, Սուաղ, Բարի, Յեմրա, Բասար, 37 - Ովզ, Սամմա, Սաղիսա, Յեթրան, և Բէէրա: 38 - Ու Յեթերի որդիները Յեփանէ, Փասփա և Արա էին: 39 - Ու Ովզայի որդիները Արաս, Անիէլ ու Հուսիս էին: 40 - Ասոնք ամէնը Ասերի որդիներն էին, ու իրենց ազգատոհմերուն

*Այսինքն, չարիքի մէջ

իշխաններն էին, ընտիր ու զօրաւոր կարիճներ և զլիաւոր իշխաններ էին. ու անոնց ազգաշամարին մէջ պատերազմական զօրաց թիւը քսանըվեց չազար մարդ էր:

ԳԼ. Ը

Ու Բենիամին ծնաւ իր անդրանիկը Բազան, երկրորդը Ասբէլը, երրորդը Աարան, 2 - Չորրորդը Նովան, ու չինգերորդը Ռափան: 3 - Եւ Բազայի որդիները *Ազար, Գերա, Աբուադ, 4 - Աբիսաւա, Նէեման, Աքուբ, 5 - Գերա, Սուփան և Քիրամ էին: 6 - Ու Աքուբի որդիները ասոնք էին, և Գաբայի բնակիչներուն իշխանները ասոնք էին, ու զանոնք Մանուքաթ փոխադրեցին: 7 - Եւ Նէեման ու Աքիա ու զանոնք փոխադրողը Գերա. ասիկա Ոզան ու Աքիուդը ծնաւ: 8 - Եւ Սաարիմ զանոնք զրկելէն ետքը Մովարի երկրին մէջ զաւանդեց ծնաւ. ու անոր կիները Հուսիմ ու Բաարա էին: 9 - Եւ իր կնոջմէն, Գոգեսէ, Յոբաբը, Սաբիան, Մեսան, Մեղքամը, 10 - Յեուսը, Սեքիան ու Մարման ծնաւ. ասոնք անոր որդիները ու ասոնք իշխաններ էին: 11 - Եւ Հուսիմէ Աբիսաուիւրը ու Եզփաազը ծնաւ: 12 - Ու Եզփաազի որդիները Եբեր, Մեսաամ ու †Սամեր, (ասիկա Ոջնովը, Ղովդը ու անոր գեղերը շինեց,) 13 - Եւ Բարիա ու Սեմա էին. ասոնք Այեղան բնակող ասոնքուն իշխաններն էին, ու ասոնք վանացիին Գէթի բնակիչները: 14 - Եւ †Աքիով, Սովսեկ, Յերիմովթ, 15 - Չաբադիա, Արադ, Եգեր, 16 - Միքայէլ, Յեսփա ու Յովքա Բարիայի որդիներն էին: 17 - Եւ Չաբադիա, Մեսուղամ, Ագակի, Քարեր, 18 - Յեսամարի, Յեզգիա և Յոբաբ Եզփաազի որդիներն էին: 19 - Եւ Յակիմ, Չեքրի, Չաբգի, 20 - Եզիէնայի, Սազթի, Եզիէլ, 21 - Ագայիա, Բարեա և Սամարաթ Աեմէիի որդիներն էին: 22 - Ու Յեսփան, Եբեր, Եզիէլ, 23 - Արգօն, Չեքրի, Անան, 24 - Անանիա, Եզամ, Անովթովթիա, 25 - Յեփադիա ու Փանուէլ Սովսեկի որդիներն էին: 26 - Եւ Սամ

*Կա՛մ, Արեգ. Ծն. թ. 21:
†Կա՛մ, Սամեգ
‡Կա՛մ, անոր եղբայրները

ամրի, Սաարիա, Գոթուդիա, 27 - Յորասիա, Եզիա և Չեքրի Յերոամի որդիներն էին: 28 - Ասոնք իրենց ասոնքուն չամեմա նաչապեաներ ու իշխաններ էին, ու Երուսաղէմի մէջ կը բնակէին:

29 - Եւ Գաբաւօնի մէջ Գաբաւօնի չայրը կը բնակէր. ու անոր կնոջ անունը Մաաքա էր: 30 - Եւ անոր անդրանիկ որդին Աբգօն էր. ետքը՝ Սուր, Կիս, Բասաղ, Նադաբ, 31 - Գեդովր, Աքիով ու Չաքար էին: 32 - Եւ Մակեղօթ ծնաւ Սամուան. ու ասոնք ալ իրենց եղբայրներուն դիմաց Երուսաղէմի մէջ իրենց եղբայրներուն չեա բնակեցան:

33 - Եւ Ներ ծնաւ Կիսը, ու Կիս ծնաւ Սաուզը, և Սաուզ ծնաւ Յովնաթանը, Մեղքիսաւէն, Աբինադաբը ու Եսբաազը: 34 - Եւ Յովնաթանի որդին Մերիբաաղ էր. ու Մերիբաաղ ծնաւ Միքան: 35 - Եւ Միքայի որդիները Փիթօն, Մելէք, Թարէ ու Աքազ էին: 36 - Եւ Աքազ ծնաւ Յովադան, ու Յովադա ծնաւ Գաղեմէթը, Ազամօթը ու Չամբրին. և Չամբրի ծնաւ Մոսան, 37 - Ու Մոսա ծնաւ Բանասան. անոր որդին Ռափա, անոր որդին Եզեսասա ու անոր որդին Եսէլ էր: 38 - Ու Եսէլ վեց որդի ունէր, և անոնց անունները ասոնք են. Եզրիկամ, Բոքերու, Իամայէլ, Սաարիա, Աբգիա ու Անան. ասոնք ամէնը Եսէլի որդիներն էին: 39 - Եւ անոր եղբորը Եսեկի որդիները՝ անդրանիկը Ուղամ, երկրորդը Յեսուս, երրորդը Եզիփաղէա էր: 40 - Եւ Ուղամի որդիները զօրաւոր կարիճներ ու ազեղնաւորներ էին, և անոնք շատ որդիներ ու թոռներ ունէին չարիւր յիսուսի շա՛ք. ասոնք ամէնը Բենիամինի որդիներն էին:

ԳԼ. Թ

Այսպէս բոլոր Իսրայելացիք արձանագրուած էին, և ա՛հա Իսրայելի ու Յուդայի թագաւորաց զիրքին մէջ գրուած էին. և իրենց անօրէնութեանը չամար Բարեթոն գերի տարուեցան:

2 - Եւ անոնց կայուածքներուն մէջ անոնց քաղաքներուն մէջ առաջ բնակողները՝ Իսրայելացիներէն, քահանաներէն, Ղևտացիներէն և Նաթանաւիմներէն ասոնք էին: 3 - Ու Երուսա

ղէմի մէջ Յուդայի որդիներէն, Բենիամինի որդիներէն, Եփրեմի ու Մանասէի որդիներէն բնակեցան. 4 - Յուդայի որդւոյն Փարէսի որդիներէն՝ Բանիի որդւոյն Իմրիի որդւոյն Ամրիի որդւոյն Ամիուզի որդին Ութայի : 5 - Եւ *Սելոմեաններէն՝ անոր անդրանիկը Ասայիա ու անոր որդիները : 6 - Եւ Զարայի որդիներէն՝ Յէիէլ ու անոնց եղբայրները՝ վեց հարիւր իննսուն մարդ : 7 - Ու Բենիամինի որդիներէն՝ Ասանուայի որդւոյն Ովգոււիայի որդւոյն Մեսուղամի որդին Սալու : 8 - Եւ Յերոամի որդին Յերնիա, ու Մաբրիի որդւոյն Ոզիի որդին Էլա, ու Յերնիայի որդւոյն Ռազուէլի որդւոյն Սափատիայի որդին Մեսուղամ, 9 - Եւ անոնց եղբայրները իրենց ցեղերուն համեմատ՝ ինը հարիւր յիսունըվեց մարդ. այս բոլոր մարդիկը իրենց տոհմերուն նահապետներն էին :

10 - Ու քահանաներէն՝ Յեզայիա, Յովարիբ ու Յաքին, 11 - Եւ Աստուծոյ տանը վերակացու՝ Աքիտովբի որդւոյն Մարիթի որդւոյն Սադովկի որդւոյն Մեսուղամի որդւոյն Քեղկիայի որդին Ազարիա, 12 - Ու Մեղքիայի որդւոյն Փասուրի որդւոյն Յերոամի որդին Ադայիա, ու Եմմերի որդւոյն Մեսեղամի որդւոյն Եզիրայի որդւոյն Ադիէլի որդին Մատէ, 13 - Եւ անոնց եղբայրները, իրենց տոհմերուն իշխանները, հազար եօթը հարիւր վաթսուն զօրաւոր կարիճներ, Աստուծոյ տանը գործին ծառայութեանը մէջ էին :

14 - Ու Ղևտացիներէն, Մերարիի որդիներէն, Ասաբիայի որդւոյն Եզրիկամի որդւոյն Ասուբի որդին Սեմայիա, 15 - Եւ Բակբակար «- Արէս և Գաղաղ, ու Ասափի որդւոյն Զեբրիի որդւոյն Միքայի որդին Մաթանիա, 16 - Եւ Իզիթունի որդւոյն Գաղազի որդւոյն Սեմայիայի որդին Աբդիա, ու Եղկանայի որդւոյն Ասայի որդին Բարաբիա, որ Նետոփաթացոց գեղերուն մէջ կը բնակէր : 17 - Ու դռնապանները, Սեղզում, Ակկուբ, Տեղմոն և Աքիման ու անոնց եղբայրները. «անոնց վերակացուն Սեղզում էր : 18 - Մինչև † հոս թագաւորին դուռը ինչպէս էին,

որ արեւելեան կողմն է. ասոնք Ղևտիի որդիներուն բանակներուն դռնապաններն էին : 19 - Եւ Կորիի որդւոյն Աբիասափի որդւոյն Կովրէի որդին Սեղզում, ու անոր եղբայրները, անոր հօրը տունէն եղող Կորիացիները, ծառայութեան գործին վրայ էին, ու խորանին սեմերուն պահպանութիւնը կ'ընէին. և անոնց հայրերը Տերոջը բանակին մէջ դրան պահպանութիւնը կ'ընէին : 20 - Ու Եղիազարի որդին Փենէհէս առաջ անոնց վրայ իշխան էր, ու Տէրը անոր հետ էր : 21 - Մասեղամիայի որդին Զաքարիա ժողովքի խորանին դրանը պահապանն էր : 22 - Իռներուն մէջ պահպանութիւնը ընէլու համար բոլոր դռնապան ընտրուածները երկու հարիւր տասուերկու հոգի էին. ասոնք իրենց գեղերուն մէջ ազգահամարի մէջ գրուեցան. Իսաիթ ու Սամուէլ տեսանողը զանոնք իրենց պաշտօնին վրայ դրին : 23 - Եւ անոնք ու անոնց որդիները Տերոջը տանը, այսինքն խորանի տանը, դռներուն քով փոխանակաւ պահպանութիւնը կ'ընէին : 24 - Իռնապանները չորս կողմերը կը կայնէին, արեւելեան, արեւմտեան, հիւսիսային ու հարաւային կողմերը : 25 - Եւ գեղերու մէջ եղող անոնց եղբայրները ատեն ատեն կու գային, «- եօթնական օր անոնց հետ ինչպէս էին : 26 - Քանզի այն Ղևտացիները, այն չորս գլխաւոր դռնապանները, միշտ իրենց պաշտօնին մէջ սենեակներուն վրայ ու Աստուծոյ տանը գանձերուն վրայ էին. 27 - Ու գիշերը Աստուծոյ տանը բոլորաիբր կը կենային, քանզի պահպանութիւնը անոնց վրայ էր. և ամէն առտու զանիկա անոնք պիտի բանային : 28 - Ու պաշտօնի անօթներուն վերակացուները անոնցմէ էին, քանզի զանոնք համրանքով ներս կը բերէին, ու համրանքով դուրս կը հանէին : 29 - Եւ «-բիշ ամաններուն ու սրբարանին բոլոր գործիքներուն, և նաշիհին ու գինիին ու իւղին և կնդրուկին ու համեմներուն վերակացուները անոնցմէ էին : 30 - Եւ համեմներուն բաղադրութիւնովը իւրը շինողները քահանաներուն որդիներէն էին : 31 - Ու Ղևտացիներէն՝ Կորիացի Սեղզումի անդրանիկը Մասաթիա տապակի գործին վերակացուն էր : 32 - Եւ առաջաւորութեան հացին վերակացուները

*Կա՛մ, Սելոնացիներէն
†Կա՛մ, հիմա

անոնց եղբայրներէն , Կաճաթացւոց որդիներէն , էին , որպէս զի զանիկա շաբաթէ շաբաթ պատրաստեն : 33 - Ու ասոնք , այսինքն Ղևտացւոց տոհմերուն իշխանները , երգեցողներ էին . և սենեակներուն մէջ էլ նստէին . և ուրիշ գործ մը չունէին , քանզի ցորեկ ու գիշեր այս պաշտօնով զբաղած էին : 34 - Այս Ղևտացւոց տոհմերուն իշխանները իրենց ցեղերուն համեմատ իշխաններ էին . անոնք Երուսաղէմի մէջ կը բնակէին :

35 - Եւ Գաբաւոնի մէջ Գաբաւոնի հայրը Յէիէլ կը բնակէր . ու անոր կնոջ անունը Մաաքա էր . 36 - Եւ անոր անդրանիկ որդին Աբդօն էր . ետքը Սուր , Կիս , Բաազ , Ներ , Նազար , 37 - Գեղովր , Աքիով , Զաքարիա և Մակեղօթ էին : 38 - Ու Մակեղօթ ծնաւ Սամուամը . ու ասոնք ալ իրենց եղբայրներուն դիմաց՝ Երուսաղէմի մէջ իրենց եղբայրներուն հետ բնակեցան :

39 - Եւ Ներ ծնաւ Կիսը , ու Կիս ծնաւ Սաւուղը , և Սաւուղ ծնաւ Յովնաթանը , Մեղքիսաւէն , Աբինադարը ու Եսրաաղը : 40 - Եւ Յովնաթանի որդին Մերիբաաղ էր . ու Մերիբաաղ ծնաւ Միքան : 41 - Եւ Միքայի որդիները Փիթօն , Մելէք , Թարէ -- Ասազ էին : 42 - Եւ Աքազ ծնաւ Յովադան , ու Յովադա ծնաւ Գաղեմէթը , Ազամօթը ու Զամբրին . և Զամբրի ծնաւ Մոսան . 43 - Ու Մոսա ծնաւ Բանաան . անոր որդին Ռափայիա , անոր որդին Եղեսաս , -- անոր որդին Եսէլ էր : 44 - Ու Եսէլ վեց որդի ունէր , և անոնց անունները ասոնք են . Եզրիկամ , Բոքերու , Իամայէլ , Սաարիա , Աբդիա ու Անան . Եսէլի որդիները ասոնք էին :

ԳԼ . Ժ

Եւ Փղշտացիք Իսրայէլի հետ պատերազմ ըրին , ու Իսրայէլի մարդիկը Փղշտացւոց առջևէն փախան . ու Գեղբուէ լեռանը վրայ սպաննուած ինկան : 2 - Եւ Փղշտացիք Սաւուղի ու անոր որդիներուն ետևէն հասան . ու Փղշտացիք Սաւուղի որդիները , Յովնաթանը , Աբինադարը ու Մեղքիսաւէն զարկին : 3 - Եւ պատերազմը Սաւուղի վրայ սաստկացաւ . ու աղեղնաւորները զանիկա գտան , ու աղեղնաւորներէն վի-

րաւորուեցաւ : 4 - Եւ Սաւուղ իր կապարճակիրին ըսաւ , Սուրդ քաշէ ու անով զիս խոցէ , չըլլայ որ այս անթլիփաանները դան ու զիս ծաղր ընեն . բայց կապարճակիրը չուզեց , քանզի շատ վախցաւ : Եւ Սաւուղ սուրը առաւ ու անոր վրայ ինկաւ : 5 - Եւ անոր կապարճակիրը Սաւուղի մեռնիլը տեսնելով՝ ան ալ իր սուրին վրայ ինկաւ ու մեռաւ : 6 - Այսպէս մեռան Սաւուղ ու անոր երեք որդիները . անոր բոլոր տունն ալ մէկտեղ մեռան :

7 - Ու հսկիաին մէջ եղող բոլոր Իսրայէլի մարդիկը անոնց փախչիլը , և Սաւուղի ու անոր որդիներուն մեռնիլը տեսնելով՝ իրենց քաղաքները թողուցին փախան . և Փղշտացիք եկան ու անոնց մէջ բնակեցան :

8 - Եւ հետևեալ օրը Փղշտացիք եկան որպէսզի մեռելները մերկացնեն , ու Սաւուղը և անոր որդիները Գեղբուէի լեռան վրայ ինկած գտան . 9 - Ու զանիկա մերկացուցին , և անոր գլուխը ու զէնքերը առին . ու Փղշտացւոց երկրին չորս կողմը իրենց կուռքերուն ու ժողովուրդին այս բաներն աւետարտալու համար մարդ զրկեցին : 10 - Եւ անոր զէնքերը իրենց աստուծոյն տունը դրին , ու անոր գլուխը Գազանի տանը մէջ գամեցին :

11 - Եւ Գաղաադու Յաբիսի բոլոր բնիկները երբ լսեցին այն ամէնը զոր Փղշտացիք Սաւուղի ըրած են , 12 - Բոլոր զօրաւոր մարդիկը սաք ելան , և Սաւուղի մարմինը ու անոր որդիներուն մարմինները վերցուցին , և զանոնք Յաբիս բերին . և անոնց սակորները Յաբիսի մէջ բեկեկնիին տակ թաղեցին , ու եօթը օր ծով պահեցին :

13 - Այսպէս մեռաւ Սաւուղ Տերօջը դէմ ըրած ապստամբութեան մեղքին համար . որովհետև Տերօջը խօսքը չպահեց , ու նաև վհուկ փրնաւեց ըան հարցնելու համար , 14 - Ու Տերօջը չհարցուց . ուստի Տերջը զանիկա մեռցուց , ու թագաւորութիւնը Յեսաէի որդւոյն Գաւիթի դարձուց :

ԳԼ . ԺԱ

Եւ բոլոր Իսրայէլ Գաւիթի քով Քերրոնի մէջ ժողովուեցան , ու ըսին , Ահա մենք քու սակորդ ու քու մարմինդ

ենք : 2 - Եւ ասկէ առաջ ալ երբ Սաւուղ թագաւոր էր , Իսրայէլը դուրս հանողը ու ներս բերողը դուն էիր . ու քու Տէր Աստուածդ քեզի ըսաւ , Իմ ժողովուրդս Իսրայէլը դուն պիտի հովուես , ու իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ դուն իշխան պիտի ըլլաս : 3 - Եւ Իսրայէլի բոլոր ծերերը Քեբբոն եկան թագաւորին , ու Իսաիթ Քեբբոնի մէջ Տէրոջը առջև անոնց հետ դաշնակցութիւն ըրաւ . ու անոնք Իսաիթը Իսրայէլի վրայ թագաւոր օժեցին , ինչպէս Տէրը Սամուէլի ձեռքով խօսեր էր :

4 - Եւ Իսաիթ բոլոր Իսրայէլի հետ Երուսաղէմ , այսինքն Յեբուս , գնաց . ու հոն այն երկրին բնակիչները , Յեբուսացիք , ինչպէս : 5 - Եւ Յեբուսի բնակիչները Իսաիթի ըսին , Հոս պիտի չմտնես . բայց Իսաիթ առաւ Սիօնի բերդը , (որ Իսաիթի քաղաքը ինչպէս էր :) 6 - Ու Իսաիթ ըսաւ , Ով որ Յեբուսացիները առաջ զարնէ , անիկա իշխան ու զօրավար պիտի ըլլայ . և առաջ Նարուհէայի որդին Յովաբ ելաւ , ու անիկա զօրավար եղաւ : 7 - Եւ Իսաիթ այն բերդին մէջ բնակեցաւ . անոր համար անիկա Իսաիթի քաղաքը կոչուեցաւ : 8 - Ու Իսաիթ քաղաքը շինեց շուրջանակի , այսինքն Մելօնը ու անոր շրջակայ տեղերը . ու Յովաբ քաղաքին մնացորդը նորոգեց : 9 - Եւ Իսաիթ ելթալով կը մեծնար , ու զօրաց Տէրը անոր հետ էր :

10 - Եւ ասոնք են Իսաիթի գլխաւոր զօրաւորները , որոնք անոր թագաւորութեանը համար անոր օգնութիւն ըրին բոլոր Իսրայէլի հետ , որպէս զի զանիկա թագաւոր հաստատեն՝ Տէրոջը Իսրայէլի վրայով ըստ խօսքին համեմատ : 11 - Եւ Իսաիթի զօրաւոր մարդոց թիւը ասիկա է . Հաքեմոնի որդին Յեսբամ՝ զօրավարներուն գլուխը , որ իր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցուց , ու մէկէն զանոնք մեռցուց :

12 - Եւ անկէ ետքը Աբուբացի Իովդայի որդին Եղիազար՝ որ երեք զօրաւորներէն էր . 13 - Ասիկա երբ Ափեսդոմիսի մէջ Իսաիթի հետ էր , Փղշտացիք հոն ժողովուեցան պատերազմելու համար , և արտի մը մէկ մասը գարիով լեցուն էր , ու ժողովուրդը Փղշտացուց երեսէն փախաւ : 14 - Իսկ ասոնք արտին մէջտեղը կայնեցան , և

զանիկա ապատեցին ու Փղշտացիները զարկին . և Տէրը մեծ փրկութիւն ըրաւ :

15 - Ու երեսուն զօրավարներէն երեքը Ոդոպոմի քաղաքը՝ Իսաիթի քով վէմը իջան . և Փղշտացուց բանակը Խափայիններուն հովիտին մէջ բանակեր էր : 16 - Եւ այն ատեն Իսաիթ բերդին մէջ էր . ու այն ատեն Փղշտացիք Բեթլէհէմի մէջ բերդապահ զօրք ունէին : 17 - Եւ Իսաիթ փափաքելով , ըսաւ , Բեթլէհէմի դուռը եղող ջրհորէն ո՞վ ինծի ջուր կը խմցնէ : 18 - Այն ատեն այս երեք մարդիկը Փղշտացուց բանակը ճեղքեցին անցան , ու Բեթլէհէմի դուռը եղող ջրհորէն ջուր քաշեցին և աւին Իսաիթի տարին . բայց Իսաիթ զանիկա խմել չուզեց , հապա զանիկա թափելով Տէրոջը նօթից , 19 - Ու ըսաւ , Իմ Աստուածս չցուցնէ ինծի՝ որ ես այս բանը ընեմ . միթէ ես այն մարդոց արիւնը իրենց կեանքովը պիտի խմեմ . վասն զի իրենց կեանքին լրանումը այս ջուրը բերին . ու անկէ խմել չուզեց : Ասոնք են այն երեք զօրաւոր մարդոց ըրածները :

20 - Եւ Յովաբի եղբայրը Աբեսա այն երեք մարդոց գլխաւորն էր . ու անիկա իր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցնելով՝ սպաննեց զանոնք , ու անիկա երեքին մէջ անուանի էր . 21 - Եւ երեքին երկուքէն աւելի համարում ունենալուն համար անոնց գլուխ եղաւ , բայց զանոնք երեքին աստիճանէն չհասաւ :

22 - Ու մեծ գործեր գործող Կարեւեկացի զօրաւոր մարդու մը որդւոյն Յովիադայի որդին Բանեա Մովաբի երկու զօրաւոր մարդիկը մեռցուց . նաև ձիւնի ժամանակ իջաւ ու գուբին մէջ առիւծը մեռցուց : 23 - Ասիկա Եգիպտացի մարդը , այն հինգ կանգուն բարձր մարդը , մեռցուց . ու Եգիպտացիին ձեռքը ոտայնանկներու գլանին պէս նիզակ մը կար . բայց Բանեացուպով մը անոր վրայ իջաւ , ու Եգիպտացիին ձեռքէն նիզակը յափշտակեց , և զանիկա անոր նիզակովը մեռցուց : 24 - Յովիադայի որդին Բանեա այս բաները ըրաւ , ու երեք զօրաւորներուն մէջ անուանի եղաւ : 25 - Անիկա ահա երեսունէն աւելի պատիւ ունէր , բայց զանոնք երեքին աստիճանէն չհասաւ , ու Իսաիթ զանիկա իր ատեանին վերակացու դրաւ :

26 - Եւ իր զօրքերուն զօրաւորները
 ... էին. Յովարի եղբայրը Ասայէլ,
 Բեթլէհեմացի Իովդայի որդին Էլէա-
 նան, 27 - Արովրացի Մամօթ, Փելօ-
 նացի Քեղզէս, 28 - Թեկուացի Եղ-
 դեսի որդին Իրաս, Անաթովթացի Ա-
 բիեզէր, 29 - Ովսացի Սովբուք, Աքու-
 քացի Եզի, 30 - Նեաոփաթացի Մաա-
 րայ, Նեաոփաթացի Բաանայի որդին
 Ալադ, 31 - Բենիամինի որդւոց Գա-
 բաայէն Ռիբայի որդին Էթթի, Փարա-
 թոնացի Բանեա, 32 - Գաաաի ձորերէն
 Հուրայ, Արաբաթացի Արիէլ, 33 -
 Բարուճացի Ազամօթ, Սաղաբինացի
 Եղիաբա, 34 - Գեզոնացի Համեսի որ-
 դիներէն՝ Արարացի Սագէի որդին Յով-
 նաթան, 35 - Արարացի Սաքաբի որ-
 դին Աքիամ, Ովրի որդին Եղիփաղ,
 36 - Մեքուրաթացի Ոփեր, Փեղօնացի
 Աքիա, 37 - Կարմեղացի Ասարէ, Ազ-
 բիայի որդին Նաարայ, 38 - Նաթանի
 եղբայրը Յովէլ, Ագարայի որդին Մա-
 բար, 39 - Ամմոնացի Սելէկ, Շարուհ-
 եան Յովարի կապարճակիրը Բերով-
 թացի Նաարա, 40 - Յեթերացի Իրաս,
 Յեթերացի Քարեբ, 41 - Քեսացի Ու-
 բիա, Ազայի որդին Զարադ, 42 -
 Ռուբենեանց գլուխը, Ռուբենեան Ար-
 զայի որդին Ադինա, ու անոր հետ ե-
 րեսուն մարդ կար. 43 - Մաաքայի որ-
 դին Անան, Մաթանացի Յովսափաա,
 44 - Ասաարովթացի Ոզիա, Արօէրացի
 Քովթամի որդիները, Մամա ու Յեիէլ,
 45 - Սամարիի որդին Յեզիէլ ու անոր
 եղբայրը Թիսացի Յովքա, 46 - Մահա-
 ւացի Եզիէլ, Եղնաամի որդիները,
 Յարիբայի և Յօաուրի, Մովաբացի Յե-
 թեմա, 47 - Եզիէլ, Ովբէզ ու Մեսօ-
 բացի Յեսիէլ:

ԳԼ. ԺԲ

Եւ ասոնք են որ Սիկեղակ եկան
 Դաւիթի քով՝ երբ անիկա դեռ Կիս-
 եան Սաուղի երեսէն պահուած էր,
 ու ասոնք զօրաւորներէն ըլլալով՝ պա-
 տերազմի մէջ օգնութիւն կ'ընէին:
 2 - Քանգի աղեղնաւորներ էին, ու պար-
 թաւ քարերը ու աղեղով նետերը նե-
 րէլ՝ թէ՛ աջ և թէ՛ ձախ ձեռքեր-
 նին կը գործածէին. ասոնք Սաուղի եղ-
 բայրներէն, Բենիամինեաններէն, էին:
 3 - Անոնց գլուխը Աքիեզէր էր, ետքը
 Յովաա, Գարաացի Սամաայի որդի-

ները. և Յեզիէլ ու Փաղէա, Ագա-
 մօթի որդիները, և Բարաբա ու Անա-
 թովթացի Յեու, 4 - Ու երեսունին
 մէջ զօրաւոր՝ ու երեսունին վերակա-
 ցուն Գաբուանացի Իսայիա, ու Երե-
 միա ու Յազիէլ և Յօհանան ու Գազե-
 րացի Յովաբադ, 5 - Եղիոզայ ու Յե-
 րիմովթ և Բաադիա ու Սամարիա և
 Յարուփացի Սափաաիա, 6 - Եղկանա,
 Յեսիա, Ազարիէլ, Յովեզէր ու Յես-
 բաամ՝ Կարխացիք, 7 - Ու Գեզովրացի,
 Յերոամի որդիները, Յովէլա ու Զա-
 բադիա:

8 - Եւ Գադեաններէն ալ Դաւիթի
 քով անապատին մէջ բերդը քաշուե-
 ցան զօրաւոր, քաջ, պատերազմական,
 վահան ու նիզակ գործածող մարդիկ.
 անոնց դէմքը առիւծի դէմքի կը նմ-
 նէր, ու լեռներու վրայի այծեամներուն
 պէս թեթեալաշարժ էին: 9 - Առաջինը
 Եզեր, երկրորդը Աբգիա, երրորդը Ե-
 զիաբ, 10 - Չորրորդը Մամմանա, հին-
 գերորդը Երեմիա, 11 - Վեցերորդը
 Էթթի, եօթներորդը Եզիէլ, 12 -
 Ութերորդը Յօհանան, իններորդը Եղ-
 վաբաթ, 13 - Տասներորդը Երեմիա,
 մետասաներորդը Մաքաբանայ էր:
 14 - Ասոնք Գադի որդիներէն զօրքին
 իշխաններն էին. պզտիկներէն մէկը
 Հարիւրի վրայ, ու մեծերէն մէկը Հա-
 զարի վրայ էր: 15 - Ասոնք են որ առա-
 ջին ամսուն մէջ Յորդանանէ անցան՝
 երբ ջուրը իր բոլոր եղերքները կոխե-
 ր, և դէպ ի արեւելք ու արեւ-
 մուտք բոլոր հովիտի բնակիչները
 փախցուցին:

16 - Ու բերդը Դաւիթի քով Բե-
 նիամինի ու Յուգայի որդիներէն ալ
 եկան: 17 - Եւ Դաւիթ անոնց առ ջե-
 ելաւ ու պատասխան տուաւ անոնց՝
 ըսելով, Եթէ խաղաղութեամբ ինձի
 օգնութիւն ընելու եկեր էք, իմ սիրտս
 ձեզի հետ պիտի ըլլայ. բայց եթէ խա-
 բէութեամբ դիս իմ թշնամիներուս
 ձեռքը մտանելու համար էիք եւ, (որ
 իմ ձեռքերուս մէջ անօրէնութիւն
 մը չկայ,) մեր հայրերուն Աստուածը
 տեսնէ ու յանդիմանէ: 18 - Եւ իշ-
 խաններուն գլուխը Ամեսայի Հոգուով
 լեցուեցաւ, ու ըսաւ,

Մենք քուկդ ենք, ով Դաւիթ,
 Ու քեզի հետ պիտի ըլլանք, ով Յես-
 սէի որդի.
 Խաղաղութիւն, խաղաղութիւն քեզի,

Ու քու օգնականներուդ խաղաղութիւն ըլլայ ,
 Քանզի քու Աստուածդ քեզի օգնական է :
 Այն ատեն Դաւիթ զանոնք ընդունեց ,
 ու զանոնք էր գունդին իշխաններուն մէջ գրաւ :
 19 - Մանասէէ ալ Դաւիթի անցան ,
 երբ անիկա Փղշտացուց Տեա Սաւուզի վրայ պատերազմելու գնաց , բայց անոնց օգնութիւն չըրին , քանզի Փղշտացուց նախարարները խորհրդով գանիկա ետ զրկեցին՝ ըսելով , Ասիկա մեր գլուխներուն քաւովը , իր տէրսը , Սաւուզի , պիտի անցնի : 20 - Երբ անիկա Սիկելակ կ'երթար , Մանասէէ Մանասէի հազարապետները , Եզնա , Յովզաբազ , Յեդիէլ , Միքայէլ , Յովզաբազ , Եղիսուս ու Սաղթի անոր անցան . 21 - Եւ ատոնք Դաւիթի օգնութիւն ըրին Կառապետներուն գունդին վրայ յարձակելով . քանզի ամէնն ալ զօրաւոր կարիճներ էին , ու զօրաց իշխաններ եղան . 22 - Վասն զի այն ատեն օրէ օր Դաւիթի կու գային անոր օգնութիւն ընելու համար , մինչև որ Աստուծոյ բանակին պէս մեծ բանակ մը եղաւ :
 23 - Եւ ատոնք են այն սպառազինեալ խորքերուն համրանքները՝ որոնք Քեբրոն եկան Դաւիթի , որպէս զի Տէրսը խօսքին համեմատ անոր դարձնեն Սաւուզի թագաւորութիւնը . 24 - Յուզայի որդիներէն վահան ու նիզակ կրող վեց հազար ութ հարիւր սպառազինեալ զօրք . 25 - Շմաւոնի որդիներէն եօթը հազար հարիւր պատերազմական զօրաւոր կարիճներ . 26 - Ղեկի որդիներէն չորս հազար վեց հարիւր . 27 - Եւ Ահարոնեաններուն առաջնորդը Յովիազա , ու անոր հետ երեք հազար եօթը հարիւր մարդիկ . 28 - Եւ զօրաւոր կարիճ Սաղովկ երիտասարդը , ու անոր հօրը տունէն քսանուերկու իշխան . 29 - Եւ Սաւուզի եղբայրներէն , Բենիամինի որդիներէն , երեք հազար մարդիկ . քանզի մինչև այն ատեն անոնց շատը Սաւուզի տանը պահպանութիւնը կ'ընէին . 30 - Ու

Եփրեմի որդիներէն անոնց ազգատոհմներուն անուանի մարդիկը քսան հազար ութ հարիւր զօրաւոր կարիճներ . 31 - Եւ Մանասէի կէս ցեղէն տասնութ հազար մարդիկ , որոնք էրէնց անուաներովը սրոշուեցան երթալու՝ ու Դաւիթը թագաւոր դնելու . 32 - Եւ Խաքարի որդիներէն երկու հարիւր իմաստուն իշխաններ , որոնք ժամանակներուն համեմատ գիտէին թէ Խորայէլ ի՛նչ ընելու է , ու անոնց բոլոր եղբայրները անոնց բերանը կը նայէին . 33 - Զաբուղոնէ պատերազմի ելող և ամէն տեսակ պատերազմական գործիքներով պատերազմող յիսուն հազար մարդիկ , որոնք *մէկ սրտով՝ կարգաւ կը շարուէին . 34 - Ու Նեփթաղիմէ հազար իշխան , և անոնց հետ երեսունըօթը հազար վահանաւոր ու նիզակաւոր մարդիկ . 35 - Ու Դանեաններէն քսանութ հազար վեց հարիւր պատերազմական մարդիկ . 36 - Եւ Ասերէ քառասուն հազար պատերազմի գացող զօրք . 37 - Ու Յորդանանու անգիի կողմէն , Ռուբենեաններէն ու Գադեաններէն և Մանասէի կէս ցեղէն , ամէն տեսակ պատերազմական գործիքներով պատերազմող հարիւր քսան հազար մարդիկ : 38 - Բոլոր այս գունդով շարուող պատերազմական մարդիկը անկեղծ սրտով Քեբրոն եկան՝ Դաւիթը բոլոր Խորայէլի վրայ թագաւոր դնելու համար . ու Խորայէլի բոլոր մնացորդն ալ մէկ սրտով էր՝ Դաւիթը թագաւոր ընելու : 39 - Եւ հոն Դաւիթի հետ ուտելով ու խմելով երեք օր կեցան . քանզի անոնց եղբայրները անոնց համար պատրաստութիւն տեսեր էին : 40 - Եւ անոնց մօտ եղողներն ալ , մինչև անգամ Խաքար , Զաբուղոն ու Նեփթաղիմ , Էշերով , ուղտերով , ջորիներով ու եզներով հաց բերին . նաև ուտելիքի համար շատ ալիւր , չոր թուզ , չամիչ , գինի , իւղ , արջառներ ու ոչխարներ . քանզի Խորայէլի մէջ ուրախութիւն կար :

ԳԼ. ԺԳ

Եւ Դաւիթ հազարապետներուն ու հարիւրապետներուն և բոլոր իշխաններուն

*Կա՛մ, չըրաւ
 †Կա՛մ, անոր գունդին վրայ դրո՛ւելով
 ‡Կա՛մ, զօրաց իշխաններուն . Եբբ. զօրաց գլուխներուն

*Եբբ. ոչ սրտով ու սրտով . Սաղ. ժբ. 2:

բուն հետ խորհուրդ բրաւ: 2 - Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի ժողովքին բրաւ, Եթէ ձեզի հաճոյ կ'երեւնայ, ու այս բանը մեր Տէր Աստուծմէն է, Իսրայէլի բոլոր երկիրներուն մէջ մնացած մեր եղբայրներուն, ու անոնց հետ քահանաներուն ու Ղևաացիներուն, իրենց քաղաքները ու արուարձանները, *Խորհրդրկենք*, որպէս զի մեր քով ժողովուին:

3 - Եւ մեր Աստուծոյն տապանակը մեր քով փոխադրենք. քանզի Սաւուղի օրերը զանկա չխնդրեցինք: 4 - Ու բոլոր ժողովքը այսպէս ընելու հաճութիւն տուաւ. քանզի այս խօսքը բոլոր ժողովուրդին աչքերուն ուղիղ երեցաւ: 5 - Եւ Դաւիթ Եգիպտոսի Սիփրէն մինչև Եմաթի մուտքը բոլոր Իսրայէլը ժողվեց, Աստուծոյ տապանակը Կարիաթարիմէ բերելու համար:

6 - Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի հետ Բաալ, այսինքն Յուզայի Կարիաթարիմը, Էլաւ, որպէս զի անկէ՝ քերովբէից չբաց նստող Եհովա կոչուած Աստուծոյն տապանակը վեր հանէ: 7 - Եւ Աստուծոյ տապանակը Աբինադարի տունէն վերջնելով նոր սայլի մը վրայ գրին. ու Ոզա ու Աքիով այն սայլը կը վարէին: 8 - Եւ Դաւիթ ու բոլոր Իսրայէլ բոլոր ուժով Աստուծոյ առջև կը խաղային օրհնութիւններով, քնարներով, աուիղներով, թմբուկներով, ծնծղաներով ու փողերով:

9 - Ու մինչև Քիզանի կայր եկան. և Ոզա իր ձեռքը երկնցուց որպէս զի տապանակը բունէ. քանզի եզները շաւիւր ծռեր էին: 10 - Ու Տէրոջը բարկութիւնը Ոզայի դէմ բորբոքեցաւ և ձեռքը տապանակին երկնցնելուն համար զանկա գարկաւ. ու անկա հան Աստուծոյ առջև մեռաւ: 11 - Եւ Դաւիթ տրամեցաւ, քանզի Տէրը հարուածով Ոզան զարկաւ. ու այն տեղին անունը մինչև այսօր Գարէսուղա բուեցաւ: 12 - Եւ Դաւիթ այն օրը Աստուծմէ վախցաւ, ու բրաւ, Աստուծոյ տապանակը ինչպէս քովս բերեմ:

13 - Ու Դաւիթ տապանակը իր քով, Դաւիթի քաղաքը, չբերաւ. հապա զանկա Գեթացի Արգեգօմի տունը խտորաց: 14 - Եւ Աստուծոյ տապանակը Արգեգօմի քով անոր տանը

մէջ երեք ամիս մնաց. ու Տէրը Արգեգօմի տունը ու անոր բոլոր ատոցուածքը օրհնեց:

ԳԼ. ԺԴ

Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը Դաւիթի դեսպաններ զրկեց, ու եղևնափայտեր, որմնագիրներ ու հիւսեր, որպէս զի անոր տունը շինեն: 2 - Այն տան Դաւիթ իմացաւ որ Տէրը զինք Իսրայէլի վրայ թագաւոր հաստատեց, վասն զի իր ժողովուրդին Իսրայէլի համար անոր թագաւորութիւնը բարձրացաւ:

3 - Եւ Դաւիթ Երուսաղէմի մէջ ուրիշ կիներ ալ առաւ, ու Դաւիթ ուրիշ աղաքներ ու աղջիկներ ալ ծնաւ: 4 - Ու Երուսաղէմի մէջ անոր ծնած աղոցը անունները ասոնք են. Սամուա, Սովբաբ, Նաթան, 5 - Սողոմոն, Յերաար, Եղիսուա, 6 - Եղիփաղէտ, Նաբա, Նափեկ, 7 - Յափիէ, Եղիսամոն, Բաղիադա ու Եղիփաղէտ:

8 - Եւ Փղշտացիք երբ լսեցին Դաւիթի բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր օծուելը, բոլոր Փղշտացիք ոտք ելան որպէս զի Դաւիթը փնտռեն. երբ Դաւիթ այս բանը լսեց՝ անոնց դիմաց ելաւ:

9 - Ու Փղշտացիք եկան և Ռափայիններուն հովիտին մէջ տարածուեցան:

10 - Ու Դաւիթ Աստուծոյ հարցուցութեամբ, Փղշտացուց դէմ ելլեմ, ու զանոնք իմ ձեռքս պիտի մտանեմ: Եւ Տէրը անոր բրաւ, Ելիբ, ու զանոնք քու ձեռքդ պիտի մտանեմ: 11 - Եւ անոնք Բաաղփարասին ելան, ու Դաւիթ զանոնք հան զարկաւ. ու Դաւիթ բրաւ, Աստուած իմ թշնամիներս իմ ձեռքովս պատառեց, ինչպէս ջուրերը Բաճփեբը կը պատառեն. անոր համար այն տեղին անունը Բաաղփարասին կոչեցին: 12 - Եւ Փղշտացիք հան թողուցին իրենց աստուածները. ու Դաւիթ հրամայեց, ու զանոնք կրակով այրեցին:

13 - Եւ Փղշտացիք նորէն մէյմրն ալ հովիտին մէջ տարածուեցան: 14 - Ու Դաւիթ նորէն Աստուծոյ հարցուց. և Աստուած անոր բրաւ, Անոնց ետեւէն չելլես, հապ անոնց բոլորափքը պարտելով՝ թթենիներուն կողմէն անոնց վրայ երթաւ: 15 - Ու երբ թթենիներուն զլուխը քալուածքի մը ձայն լսես, այն տան պատերազմելու ելլես, քան-

*Եբր. տարածենք «- զրկենք
†Այսինքն, Ոզայի խրամատու թիւնը

զի Աստուած քու առջեզ պիտի ելլէ Փղշտացւոց բանակը զարնելու համար: 16 - Եւ Գաւիթ այնպէս ըրաւ՝ ինչպէս Աստուած իրեն հրամայեց, ու Գաբաւոնէ մինչև Գազեր Փղշտացւոց բանակը զարկին: 17 - Եւ Գաւիթի աւուներ ամէն երկիրներու մէջ տարածուեցաւ, և Տէրը ամէն ազգերուն վրայ անոր վախը ձգեց:

ԳԼ. ԺԵ

Եւ անիկա իրեն համար Գաւիթի քաղաքին մէջ տուներ շինեց, ու Աստուծոյ տապանակին համար տեղ մը պատրաստեց, և անոր համար վրան մը կանգնեց: 2 - Այն ատեն Գաւիթ ըսաւ, Աստուծոյ տապանակը վերցնել որիչ Գիւն օրինաւոր չէ, բայց միայն Ղևտացիներուն. քանզի Տէրը զանոնք ընտրեց որ Աստուծոյ տապանակը վերցրնեն, ու յաւիտեան անոր ծառայութիւն ընեն:

3 - Եւ Գաւիթ բոլոր Իսրայէլը Երուսաղէմի մէջ ժողովեց, որպէս զի Տէրոջը տապանակը անոր համար պատրաստուած տեղը հանէ: 4 - Ու Գաւիթ Ահարոնի որդիները ու Ղևտացիները ժողովեց. 5 - Կահաթի որդիներէն Ուրիէլ իշխանը ու անոր եղբայրները հարիւր քսան հոգի. 6 - Մերարիի որդիներէն Ասայիա իշխանը ու անոր եղբայրները երկու հարիւր քսան հոգի. 7 - Գերսոնի որդիներէն Յովէլ իշխանը ու անոր եղբայրները հարիւր երեսուն հոգի. 8 - Եղիսափանի որդիներէն Սեմայիա իշխանը ու անոր եղբայրները երկու հարիւր հոգի. 9 - Քեբրոնի որդիներէն Եղիէլ իշխանը ու անոր եղբայրները ութսուն հոգի. 10 - Ողիէլի որդիներէն Ամինադաբ իշխանը ու անոր եղբայրները հարիւր տասուերկու հոգի:

11 - Եւ Գաւիթ Սաղովկ ու Աբիաթար քահանաները, ու Ղևտացիներէն Ուրիէլը, Ասայիան, Յովէլը, Սեմայիան, Եղիէլը ու Ամինադաբը կանչեց, 12 - Եւ անոնց ըսաւ, Գուք Ղևտացւոց տոհմերուն իշխաններն էք. որքա՞նք ու ձեր եղբայրները սրբուեցէք, որպէս զի Իսրայէլի Տէր Աստուծոյն տապանակը հանէք այն տեղը՝ զոր ես անոր համար պատրաստեի եմ: 13 - Վասն զի դուք առաջին անգամին հին չգտնուելնուդ համար, մեր Տէր Աստուածը մեր

մէջ հարուած ըրաւ, քանզի զանիկա կանանաւոր կերպով շինդրեցինք: 14 - Եւ Իսրայէլի Տէր Աստուծոյն տապանակը հանելու համար քահանաները ու Ղևտացիները սրբուեցան: 15 - Ու Ղևտացւոց որդիները Աստուծոյ տապանակը ձողերովը իրենց ուսերուն վրայ վերցուցին, ինչպէս Մովսէս Տէրոջը խօսքովը պատուիրեր էր:

16 - Եւ Գաւիթ Ղևտացւոց իշխաններուն պատուիրեց որ իրենց եղբայրներէն՝ նուագարաններով, տաւիղներով, քնարներով ու ծնծղաներով երգեցողները կայնեցնեն, որպէս զի ուրախութեան ձայներ վերցնելով հնչեցրնեն: 17 - Ուստի Ղևտացիները Յովէլի որդին Եմանը, և անոր եղբայրներէն Բարաքիայի որդին Ասափը, ու անոնց եղբայրներէն Մերարիի որդիներէն Կիսեայի որդին Եթանը կայնեցուցին. 18 - Եւ անոնց հետ երկրորդ դասէն, անոնց եղբայրները, դռնապանները, Չաբարիան, Բենը, Յազիէլը, Սեմիրամովթը, Յեքիէլը, Ուննի, Եղիաբը, Բանեան, Մասափան, Մատաթիան, Եղիփաղէն, Մակենիան, Աբդեգօմը ու Յէիէլը: 19 - Արդ Եման, Ասափ ու Եթան երգեցողները պղնձէ ծնծղաներ կը զարնէին: 20 - Եւ Չաբարիա, Ազիէլ, Սեմիրամովթ, Յեքիէլ, Ուննի, Եղիաբ, Մասափա ու Բանեա տաւիղներով Այամօթի եղանակին վրայ էին: 21 - Եւ Մատաթիա, Եղիփաղէ, Մակենիա, Աբդեգօմ, Յէիէլ ու Ազազիա քնարներով Շեմինիթի եղանակով կ'առաջնորդէին: 22 - Եւ Քոնանիա Ղևտացիներուն երգեցողութեան առաջնորդը ըլլալով՝ զանազան երգելու կը վարժէր, որովհետև հանձարեղ էր: 23 - Ու Բարաքիա ու Եղիանա տապանակին դռնապաններն էին: 24 - Եւ Սաբանիա ու Յովսափատ և Նաթանայէլ ու Սմեայի և Չաբարիա ու Բանեա ու Եղիազար, քահանաները, Աստուծոյ տապանակին առջև փողեր կը հնչեցնէին. և Աբդեգօմ ու Յէիա տապանակին դռնապաններն էին:

25 - Այսպէս Գաւիթ և Իսրայէլի ծերերը ու հազարապետները Տէրոջը ուխտին տապանակը Աբդեգօմի տունէն ուրախութեամբ հանելու գացին: 26 - Ու երբ Աստուած Տէրոջը ուխտին տապանակը վերցնող Ղևտացիներուն օգնութիւն ըրաւ, եօթը զուարակ ու

եօթը խոյ զո՛հ ըրին : 27 - Եւ 'Գաւիթ
բէ՛հեղէ պատմու՛ծան հագեր էր . նոյն-
պէս ալ տապանակը վերցնող բոլոր
'Աւտացիները ու երգեցողները ու եր-
գեցողներուն երգոց իշխանը Քաննիա .
և 'Գաւիթի վրայ քթանէ եփուտ կար :
28 - Ու բոլոր Իսրայէլ Տէրոջը ուխտին
տապանակը ուրախութեան աղաղա-
կով , շեփորի ձայնով , փողերով ու
ծնծղաներով , տաւիղներ ու քնարներ
գարնելով վեր կը հանէին : 29 - Ու
երբ Տէրոջը ուխտին տապանակը մինչև
'Գաւիթի քաղաքը եկաւ , Սաւուզի
աղջիկը Մեղքող պատուհանէն նայե-
ցաւ , ու 'Գաւիթ թագաւորին կաքա-
ւելը ու խաղալը տեսնելով՝ զանիկա իր
սրտին մէջ անարգեց :

ԳԼ. ԺԶ

Եւ Սատուծոյ տապանակը տարին ,
ու զանիկա այն վրանին մէջ դրին , զոր
'Գաւիթ անոր համար կանգներ էր . և
Սատուծոյ առջև ողջակէզներ ու խա-
զաղութեան զո՛հեր մատուցին : 2 - Եւ
'Գաւիթ երբ ողջակէզները ու խաղա-
ղութեան զո՛հերը մատուցանելը լմն-
ցուց , Տէրոջը անունով ժողովուրդը
օրհնեց : 3 - Ու Իսրայէլի բոլոր մարդոց՝
այր մարդէն մինչև կին մարդ՝ ամէն
մէկուն մէկ նկանակ հաց , կտոր մը միս
ու կարկանդակ մը բաշխեց :

4 - Եւ Տէրոջը տապանակին առջև
'Աւտացիներէն պաշտօնեաներ դրաւ՝
Իսրայէլի Տէր Սատուածը յիշելու , օրհ-
նելու ու փառաւորելու համար . 5 -
Գլխաւորը Ասափ էր , ու անոր երկրորդը
Չաքարիա , Նաւ Յէիէլ , Սեմիրամովթ ,
Յեքիէլ , Մատաթիա , Եղիար , Բանեա ,
Արդեդօմ՝ ու Յէիէլ տաւիղներու ու
քնարներու նուագարաններ էր զարնէին .
բայց Ասափ ծնծղաներ կը զարնէր : 6 -
Եւ Բանեա ու Յազիէլ քահանաները
Սատուծոյ ուխտի տապանակին առջև
միշտ փողեր կը հնչեցնէին :

7 - Եւ այն նոյն օրը 'Գաւիթ առա-
ջին անգամ այս յեփփայ սաղմուսը տուաւ
Ասափի ու անոր եղբայրներուն ձեռքը ,
որպէս զի Տէրոջը գոհութիւն տան :

8 - Գոհացէք Տէրոջմէն , անոր ա-
նունը կանչեցէք ,

Անոր գործերը ժողովուրդներուն մէջ
պատմեցէք :

9 - Երգեցէք անոր , առղմուսը անոր ,

Պատմեցէք անոր բոլոր հրաշքները :
10 - Անոր սուրբ անունովը պարծենցէք :
Տէրը խնդրողներուն սիրտը թող ու-
րախ ըլլայ :
11 - Տէրը ու անոր զօրութիւնը խնդրե-
ցէք ,
Ամէն ժամանակ անոր երեսը փնտա-
ցէք :
12 - Յիշեցէք անոր բրած հրաշքները ,
Անոր նշանները ու բերնին դատաւան-
ները .
13 - Ով անոր ծառային Իսրայէլի սե-
րունդը ,
Ով Յակորի սրգիները , անոր ընտրեալ-
ները .
14 - Ե՛հօվա ինք է մեր Սատուածը ,
Անոր դատաւանները բոլոր երկրի
մէջ են :
15 - Անոր ուխտը յաւիտեան յիշեցէք ,
Անոր պատուիրած խօսքը մինչև հա-
զար ազգ .
16 - Այն -- Խոջ զոր Արրահամի հետ
բրաւ ,
Ու իր երգումը զա՛ր Խահակի ըբ--
17 - Յակորի ալ հաստատեց զանիկա՝
օրէնք մը ըլլալու ,
Ու Իսրայէլի՝ Էբրե՛յաւիտեանական ուխտ
մը ,
18 - Ըսելով , Քեզի պիտի տամ 'Քա-
նանու երկիրը ,
Ձեր ժառանգութեան վիճակը .
19 - Երբ դուք սակաւաթիւ էիք ,
Եւ քիչուոր ու պանդուխտ՝ անոր մէջ ,
20 - Եւ անոնք մէկ ազգէ ուրիշ ազգի
գացին ,
Ու մէկ թագաւորութենէ ուրիշ ժո-
ղովուրդի .
21 - Անիկա մէկս'ուն թող չտուաւ որ
զանոնք նեղէ .
Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց
համար ,
22 - Ըսելով , Իմ օժեպոյններուս մի
դպչիք ,
Ու իմ մարգարէներուս չարութիւն մի
րնէք :
23 - Երգեցէք Տէրոջը , ով բոլոր եր-
կիր ,
Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք :
24 - Անոր փառքը ազգերու մէջ պատ-
մեցէք ,
Ու անոր հրաշքները՝ ամէն ժողովուրդ-
ներու մէջ .
25 - Քանզի Տէրը մեծ է ու խիստ գո-
վելի ,

- Անիկա ամէն աստուածներուն վրայ
աճաւոր է :
- 26 - Վասն զի ազգերուն ամէն աստ-
ուածները *կուռքեր են ,
Բայց Եհովա երկինքը ստեղծեց :
- 27 - Փառք ու վայելչութիւն կայ ա-
նոր առջև ,
Զօրութիւն և ուրախութիւն՝ անոր
բնակութեանը մէջ .
- 28 - Տէրօջը տուէք , ով ժողովրդոց
տոհմերը ,
Տէրօջը տուէք փառք ու զօրութիւն :
- 29 - Տէրօջը տուէք իր անուանը փառ-
քը .
Ընծայ տուէք ու անոր առջև եկէք .
Սուրբ հանդէսով Տէրօջը երկրպագու-
թիւն բրէք :
- 30 - Ով բոլոր երկիր , անոր՝ երեսէն
վախցէք .
Աշխարհս ալ պիտի հաստատուի
Ու պիտի չսասանի :
- 31 - Երկինք թող ուրախանայ , ու եր-
կիր ցնծայ ,
Եւ ազգերուն մէջ ըսեն թէ Տէրը կը
թագաւորէ :
- 32 - Ծովը իր լիութեամբ թող գոռայ ,
Իաշար ու բոլոր անոր մէջ եզոզները
թող ուրախանան :
- 33 - Այն ատեն անատին ծառերը
Տէրօջը առջև ցնծան ,
Քանզի երկրին դատատան ընելու կու-
գայ :
- 34 - Գոհացէք Տէրօջմէն , վասն զի
բարի է ,
Վասն զի անոր սղորմութիւնը յաւիտե-
ական է :
- 35 - Նաև ըսէք , Ով մեր փրկու-
թեան Աստուածը , մեզ փրկէ ,
Ու մեզ ժողովէ և մեզ ազգերէն ա-
զատէ ,
Որպէս զի քու սուրբ անուանդ գոհու-
թիւն մատուցանենք ,
Ու քու օրհնութիւնովդ պարծենանք :
- 36 - Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր
Աստուածը ,
Յաւիտեանս յաւիտենից :
Ու բոլոր ժողովուրդը Ամէն ըսելով՝
Տէրը օրհնեցին :
- 37 - Եւ հոն Տէրօջը ուխտի տապա-
նակին առջև Ասափը ու անոր եղբայր-
ները թողուց , որպէս զի շարունակ ա-
մէն օրուան պաշտօնը կատարեն տա-

պանակին առջև : 38 - Եւ Աբգեղօմը
ու անոր վաթսուներութ եղբայրները և
Իգիթունի որդին Աբգեղօմը և Ուսան
դանապաններ քրտա : 39 - Եւ Սադովկ
քահանան ու անոր քահանայ եղբայր-
ները Գաբաւոնի բարձր տեղին վրայ
Տէրօջը խորանին առջև Բողոց , 40 -
Որպէս զի միշտ աւտու ու իրիկուն ող-
ջակէզի սեղանին վրայ Տէրօջը սղջա-
կէզներ մատուցանեն , ու Տէրօջը Իսրա-
յէլի պատուիրած օրէնքին մէջի ամէն
գրուածը է գործ դնեն : 41 - Եւ անոնց
հետ քրտա Եմանը ու Իգիթունը և ու-
րիշ ընտրուածները՝ որոնք անունով
յիշուեցան , որպէս զի Տէրօջը գոհու-
թիւն մատուցանեն , քանզի անոր սղոր-
մութիւնը յաւիտեան է . 42 - Եւ ա-
նոնց , այսինքն Եմանի ու Իգիթունի ,
հետ եզոզ նուագածուններուն փողեր
ու ծնծղաններ քրտա , նաև Աստուծոյ
երգերուն նուագարանները . ու Իգի-
թունի որդիները գրանը պահպանու-
նին : 43 - Եւ բոլոր ժողովուր-
դը գնաց՝ ամէն մէկը իր տունը . Իա-
ւիթ ալ իր տունը օրհնելու դարձաւ :

ԳԼ ԺԷ

Ու երբ Իաւիթ իր տանը մէջ բնա-
կեցաւ , Իաւիթ Նաթան մարգարէին
ըսաւ , Ահա ես եղևնափայտէ շնորհ-
տան մէջ կը բնակիմ , բայց Տէրօջը
ուխտին տապանակը վրանի տակ է .
2 - Եւ Նաթան Իաւիթի ըսաւ , Բոլոր
սրտիդ մէջ եղածը ըրէ , քանզի Աստ-
ուած քեզի հետ է : 3 - Ու նոյն գիշերը
Աստուծոյ խօսքը Նաթանի եղաւ՝ ըսե-
լով , 4 - Գնա իմ ծառայիս Իաւիթի
ըսէ , Տէրը այսպէս կ'ըսէ . Իմ բնակելու
տունս դուն պիտի չչինես . 5 - Քանզի
Իսրայէլը Եգիպտոսէ հանած օրէս մին-
չև այսօր տան մէջ չբնակեցայ , հապա-
վրանէ վրան ու խորանէ խորան պար-
տեցայ : 6 - Բոլոր Իսրայէլի հետ սրչափ
տեղ որ պարտեցայ , միթէ բան մը խօ-
սեցամ՝ Իսրայէլի դատաւորներէն մե-
կուն հետ՝ որոնց իմ ժողովուրդս հով-
ուելու հրաման տուեր էի , ու ըսի՞ թէ
ինչո՞ւ համար ինձի եղևնափայտէ տուն
մը չչինեցիք : 7 - Եւ հիմա իմ ծառա-
յիս Իաւիթի այսպէս ըսես , Զօրաց
Տէրը այսպէս կ'ըսէ . Ես քեզ փարախէն ,
ոչխարներուն հակէն , առի , որպէս զի
իմ Իսրայէլ ժողովուրդիս առաջնորդ

*կա՛մ, ունայնութիւններ

եկան . ու Գաւիթ Ատորիններէն քսան-
 ուերկու հազար մարդ զարկաւ : 6 - Եւ
 Գաւիթ Գամուսկասի Ատորւոց մէջ
 բերրապահ զբռնէր դրաւ , ու Ատորինները
 Գաւիթի հարկատու ծառայ եղան . ու
 Գաւիթ ուր որ կ'երթար՝ Տէրը անոր
 յաջողութիւն կու տար : 7 - Եւ Գա-
 վիթ Ագրազարի ծառաներուն վրայ
 եղող սփիւն վահանները առաւ , ու
 զանոնք Երուսաղէմ՝ բերաւ : 8 - Եւ
 Ագրազարի քաղաքներէն , Տեբաթե ու
 Քունէ , Գաւիթ խիստ շատ պղինձ ա-
 ռաւ . անկէ շինեց Սողամն պղնձէ ծովը
 ու սիւները ու պղնձէ գործիքները :

9 - Աւ Եմաթի թագաւորը Թովու-
 երը լսեց որ Գաւիթ Սուբայի Ագրա-
 զար թագաւորին բոլոր զօրքերը ջար-
 դեր է , 10 - Իր որդին Ագորամը Գա-
 վիթ թագաւորին զրկեց , որպէս զի ա-
 նոր բարեւ ընէ ու *զանհկա օրհնէ* ,
 Ագրազարի դէմ պատերազմ՝ ընելուն
 ու զանհկա զարնելուն համար . (քանզի
 Ագրազար Թովուի հետ պատերազմներ
 կ'ընէր .) ու անոր ամէն րեւոյն սփիւն ,
 արծաթէ ու պղնձէ անօթներ զրկեց :
 11 - Գաւիթ թագաւորը զանոնք ալ
 Տէրօջը նուիրեց՝ այն արծաթով ու ոս-
 կիով մէկտեղ , զոր ամէն ազգերէն ,
 Եդովմէ , Մովաբէ , Ամմոնի որդիներէն ,
 Փղշտացիներէն ու Ամաղէկէ աւեր էր :
 12 - Եւ Շարուհեայի որդին Աբեսա
 Աղի ձորին մէջ տասնութ հազար Ե-
 գովմայեցի զարկաւ :

13 - Աւ Եդովմի մէջ բերդապահ
 զօրքեր դրաւ , ու բոլոր Եգովմայեցիք
 Գաւիթի ծառայ եղան . ու Գաւիթ
 ուր որ կ'երթար , Տէրը անոր յաջողու-
 թիւն կու տար :

14 - Եւ Գաւիթ բոլոր Իսրայէլի վրայ
 թագաւորութիւն ըրաւ , ու իր բոլոր
 ժողովուրդին իրաւունք ու արգարու-
 թիւն կ'ընէր : 15 - Եւ Շարուհեայի
 որդին Յովաբ զօրքերուն վրայ էր . ու
 Աքիզուզի որդին Յովասափատ յիշա-
 տակաց դպիր էր . 16 - Եւ Աքիսափի
 որդին Սագովկ ու Աքիսաթարի որդին
 Աքիմէլէք քահանաներ էին . և Սուսա
 սատենադպիր էր . 17 - Աւ Յովիադայի
 որդին Բանեա Քերթթիներուն ու Փե-
 լեթիներուն վրայ էր . և Գաւիթի որ-
 դիները թագաւորին քով նախարար-
 ներ էին :

*Կա՛մ , շնորհաւորութիւն ընէ անոր

Եւ անկէ ետքը Ամմոնի որդւոց թա-
 գաւորը Նասա մեռաւ , ու անոր տեղ
 անոր որդին թագաւոր եղաւ : 2 - Եւ
 Գաւիթ ըսաւ , Նասաի որդւոյն Անանի
 մարդասիրութիւն ընեմ՝ , քանզի անոր
 հայրը ինձի մարդասիրութիւն ըրաւ .
 ու Գաւիթ դեպքաններ զրկեց , որպէս
 զի զանհկա իր հօրը վրայով միսիթա-
 րէն . ու Գաւիթի ծառաները Ամմոնի
 որդիներուն երկիրը Անանի գացին , զա-
 նհկա միսիթարելու համար : 3 - Եւ Ամ-
 մոնի որդիներուն իշխանները Անանի ը-
 սին , Միթէ Գաւիթ քու հայրդ քու
 առջև պատուելու՞ համար քեզի միս-
 թարիչներ զրկեց . միթէ անոր ծառա-
 ները այս երկիրը քննելու , տակնուվրայ
 ընելու ու լրտեսելու համար չեկա՞ն
 քեզի : 4 - Եւ Անան Գաւիթի ծառաները
 բռնեց , ու զանոնք ածիլեց , և անոնց
 հանդերձներուն ալ կէսը մինչև նստոյ
 տեղը կտրել տուաւ , և *յնպէ՞* զրկեց
 զանոնք : 5 - Աւ գացին այն մարդոց
 Էլ-Էլ Էլ-Յը Գաւիթի պատմեցին . ան
 ալ զանոնք դիմաւորելու հար գրկեց ,
 քանզի այն մարդիկը շատ անարգուեր
 էին . ու թագաւորը ըսաւ , Երիբովի
 մէջ նստէք մինչև որ մօրուքնիդ ա՛ճի,
 ու երբ դարձէք :

6 - Եւ Ամմոնի որդիները տեսնելով
 որ Գաւիթի հետ աւերուեցան , Անան
 ու Ամմոնի որդիները հազար տաղանդ
 արծաթ զրկեցին , որպէս զի Միջագե-
 տաց Ատորիններէն ու Մաաբայի Ատորի-
 ներէն ու Սուբայէ վարձքով կառքեր
 ու ձիաւորներ բռնեն : 7 - Եւ անոնք
 իրենց վարձքով բռնեցին երեսուն-
 ուերկու հազար կառք , ու Մաաբայի
 թագաւորը և անոր զօրքը , որոնք գա-
 ցին Մեդաբայի առջև բանակեցան .
 Ամմոնի որդիներն ալ իրենց քաղաք-
 ներէն ժողվուեցան , ու պատերազմե-
 լու գացին :

8 - Աւ երբ Գաւիթ զայն լսեց , Յո-
 վարը ու բոլոր զօրաւոր զօրքերը զրկեց :
 9 - Եւ Ամմոնի որդիները ելան ու քա-
 ղաքին դրանը առջև կարգաւ պատե-
 րազմի շարուեցան , ու օգնութեան եկող
 թագաւորները դաշտի մէջ զատ կայ-
 ներ էին : 10 - Եւ Յովաբ երբ տեսաւ
 որ պատերազմը առջևէն ու ետևէն իբ
 վրայ կը հասնի , Իսրայէլի բոլոր ընա-
 րուած մարդոցմէ ընտրեց , ու Ատորւոց

դէմ պատերազմի շարեց . 11 - Եւ մնացած զօրքը իր եղբօրը Աբեասայի յանձնեց . ու անոնք Ամմոնի որդիներուն զիմաց շարուեցան . 12 - Եւ ըսաւ , Եթէ Ասորիները զիս յազթելու ըլլան , ինծի օգնութեան հասնիս . ու եթէ Ամմոնի որդիները քեզ յազթելու ըլլան , ես քեզի օգնութեան պիտի հասնիմ . 13 - Քաջասիրտ եղիր , ու մեր ժողովուրդին համար և մեր Աստուծոյն քաղաքներուն համար *ուժով պատերազմիք* . և Տէրը իր աչքին հաճոյ երևցածը թող ընէ : 14 - Աւ Յովաբ իրեն հեա եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ , որպէս զի անոնց դէմ պատերազմ ընէ . ու անոնք անոր առջեւն փախան : 15 - Եւ Ամմոնի որդիները Ասորաց փախչիլը տեսնելով , իրենք ալ անոր եղբօրը Աբեասայի առջեւն փախան , ու քաղաքը մտան : Եւ Յովաբ Երուսաղէմ եկաւ :

16 - Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջև կտարուեցան , դեսպաններ զրկեցին , ու Գեաին անգիր կողմը եղող Ասորիները սաք հանեցին . և անոնց առջևէն Ագրազարի զօրազուխը Սովբակի Կեթար : 17 - Աւ երբ Գաւթի պատմեցին , անիկա բոլոր Իսրայէլը ժողովելով Յորդանանէ անցաւ , ու անոնց վրայ գնաց , և անոնց դէմ գունդեր շարեց . ու երբ Գաւթի Ասորիները պատերազմով զիմաւորելու համար գունդեր շարեց , անոնք անոր հեա պատերազմ ըրին : 18 - Եւ Ասորիները Իսրայէլի առջևէն փախան . ու Գաւթի Ասորիներէն եօթը հազար կառքի զօր , ու քառասուն հազար հեաւակ զօրք կտարեց , ու Սովբակ զօրազուխն ալ մեռցուց : 19 - Եւ Ագրազարի ծառաները երբ տեսան որ Իսրայէլի առջև յազթուեցան , Գաւթի հեա հաշտութիւն ըրին , ու անոր ծառայ եղան . և Ասորիները անկէ ետքը Ամմոնի որդիներուն օգնել չուզեցին :

ԳԼ Ի

Աւ հեաւեայ տարին , թագաւորներուն պարտերով ելլելու ատենը , Յովաբ զօրքերուն քաջը զգունդերը հանեց , և Ամմոնի որդիներուն երկիրը

*Եբբ . քաջութիւն ընենք
†Եբբ . զօրութիւնը

աւրեց , ու գնաց Ռաբբան պաշարեց , բայց Գաւթի Երուսաղէմ կը նստէր . ու Յովաբ Ռաբբան զարկաւ ու զանիկա կործանեց : 2 - Եւ Գաւթի անոնց թագաւորին թագը անոր զխոււն վրայէն առաւ , ու զանիկա գատաւ *չ տաղանդ մը սակի ծանրութիւն *ուէր , և անոր վրայ պատուական քարեր կային . ու Գաւթի զլուխը դրուեցաւ . և Գաւթի քաղաքէն խիսա շատ աւար առաւ : 3 - Աւ անոր մէջ եղած ժողովուրդը հանեց , ու զանոնք սղոցներով , երկաթէ կամնասայլներով ու տապարներով կտարեց . և Գաւթի Ամմոնի որդիներուն բոլոր քաղաքներուն այսպէս ըրաւ . ու Գաւթի բոլոր ժողովուրդով Երուսաղէմ դարձաւ :

4 - Եւ ասկէ ետքը Գաւթի մէջ Փղշտացուց հեա պատերազմ եղաւ . այն ատեն Ովսացի Սովբաք Ռափայի որդիներէն եղող Սեփիան մեռցուց , ու անոնք նուաճեցան :

5 - Եւ նորէն Փղշտացուց հեա պատերազմ եղաւ . ու Յայրի որդին Ելէանան Գեթացի Գողիաթի եղբայրը Ղէեմին զարկաւ , որուն նիզակին բունը սասայնանկներու գլանին պէս էր :

6 - Եւ նորէն Գեթի մէջ պատերազմ եղաւ . ու երկայնահասակ մարդ մը կար , որուն մատները վեց վեց ըլլալով քսանըջարս մաք ունէր . անիկա ալ Ռափայի որդիներէն էր : 7 - Եւ անիկա Իսրայէլը նախատեց . բայց Գաւթի եղբօրը Սամուայի որդին Յովաթիան զանիկա զարկաւ : 8 - Ասոնք Գեթի մէջ Ռափայէ ծներ էին , և Գաւթի ձեռքով ու անոր ծառաներուն ձեռքով ինկան :

ԳԼ ԻԱ

Եւ Սասանայ Իսրայէլի դէմ եղաւ , ու Գաւթի զրգեց որ Իսրայէլը համրէ : 2 - Եւ Գաւթի Յովաբի ու ժողովուրդին իշխաններուն ըսաւ , Գացէք , Իսրայէլը համրեցէք Բերսաբէէէ մինչև Գան , ու հաշիւը ինծի բերէք որպէս զի զիտնամ : 3 - Եւ Յովաբ ըսաւ , Տէրը իր ժողովուրդը որչափ որ է , հարկաւորապատիկ աւելցնէ . ով տէր իմ թագաւոր , միթէ անոնց ամէնը իմ տէրոջս ծառաները չե՞ն . իմ տէրս ինչո՞ւ այս բանը կը փնտսէ . ինչո՞ւ համար այս բանը Իսրայէլի յանցանքի պարտաւոր

ըլլայ: 4 - Բայց երբ թագաւորին խօսքը Յովարի վրայ սասակացաւ, Յովար ելաւ ու բոլոր Իսրայէլի մէջ պարտեցաւ, ու Երուսաղէմ՝ եկաւ: 5 - Եւ Յովար ժողովուրդին համբանքին ցուցակը Դաւիթի տուաւ. ու Իսրայէլի ամէնը հազար անգամ՝ հազար ու հարիւր հազար սուր քաշող մարդ էր, և Յուզա չորս հարիւր եօթանասուն հազար սուր քաշող մարդ էր: 6 - Սակայն Աւետացիները ու Բենիամինեանները անոնց մէջ չհամրեց, քանզի թագաւորին այս հրամանը Յովարի զգուելի էր:

7 - Եւ այս բանին Աստուծոյ առջև գէշ երևնալուն համար Իսրայէլը զարկաւ: 8 - Ու Դաւիթ Աստուծոյ ըսաւ, Այս բանը ընելովս մեծ մեղք գործեցի. ու չիմա, կ'աղաչեմ, քու ծառայիդ մեղքը ներէ, քանզի մեծ յիմարութիւն ըրի:

9 - Եւ Տէրը Դաւիթի տեսանողին Գադի խօսեցաւ ու ըսաւ, 10 - Գնա ու Դաւիթի խօսէ՝ ըսելով, Տէրը այսպէս կ'ըսէ. Ես քեզի երեք բան կ'առաջարկեմ. անոնցմէ մէկը ընարէ որպէս զի քեզի ընեմ: 11 - Եւ Գադ Դաւիթի եկաւ ու անոր ըսաւ, 12 - Տէրը այսպէս կ'ըսէ. Ընարէ քեզի՝ կա՛մ՝ երեք տարուան սով, կա՛մ՝ երեք ամիս քու թշնամիներուդ երեսէն փախչիս, ու քու թշնամիներուդ սուրը +եղձ հասնի, և կա՛մ՝ երեք օր Տէրոջը սուրը, այսինքն ժանտախտ, ըլլայ երկրիս մէջ, ու Տէրոջը հրեշտակը Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ կատարած ընէ. և չիմա տես, զիս զրկողին ի՞նչ պատասխան տանիմ: 13 - Ու Դաւիթ ըսաւ Գադի, Խիստ մեծ նեղութեան մէջ եմ. չիմա Տէրոջը ձեռքը իյնամ, քանզի անոր գթութիւնը խիստ շատ է, ու մարդու ձեռք չիյնամ: 14 - Եւ Տէրը Իսրայէլի վրայ ժանտախտ զրկեց, ու Իսրայէլէ եօթանասուն հազար մարդ ինկաւ: 15 - Եւ Աստուած հրեշտակ մը զրկեց Երուսաղէմ, որպէս զի գանձիկա կորսնցնէ. ու երբ կը կորսնցնէր, Տէրը նայեցաւ ու այս շարիքին վրայ սիրար իջաւ, և կատարած ընող հրեշտակին ըսաւ, Հերիք է, ալ ձեռքդ քաշէ. ու Տէրոջը հրեշտակը Յեբուսացի Ունայի կալին քով կայներ էր: 16 - Եւ Դաւիթ իր աչքերը վերցուց ու Տէրոջը հրեշտակը տեսաւ, որ երկրի ու երկինքի մէջտեղ կայներ էր, ու

ձեռքը մերկ սուր մը կար, զոր Երուսաղէմի վրայ երկնցուցեր էր. այն ատեն Դաւիթ ու ծերերը քուրձեր հագած՝ երեսնուն վրայ ինկան: 17 - Եւ Դաւիթ Աստուծոյ ըսաւ, Ահա ե՛ս պատուիրեցի որ ժողովուրդը համրեն, ու ե՛ս եմ որ մեղանչեցի ու մեծ չարութիւն ըրի. բայց այս ոչխարները ի՞նչ ըրին. ով Տէր Աստուած իմ, քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ. բայց քու ժողովուրդիդ վրայ ըլլայ՝ *գանձիկա բնաջինջ ընելու համար*:

18 - Եւ Տէրոջը հրեշտակը Գադի ըսաւ, Դաւիթի ըսես որ ելլէ, ու Յեբուսացի Ունայի կալին մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ: 19 - Եւ Դաւիթ վեր ելաւ՝ Գադի Տէրոջը անունովը ըսած խօսքին համեմատ: 20 - Ու Ունա դարձաւ ու հրեշտակը տեսաւ, և իր չորս որդիները իրեն չեա պահուեցան. (քանզի Ունա ցորեն կը ծեծէր): 21 - Ու Դաւիթ Ունայի եկաւ. և Ունա նայեցաւ, ու Դաւիթը տեսնելով՝ կալէն ելաւ, ու երեսը մինչև գետինը Դաւիթի խոնարհութիւն ըրաւ: 22 - Այն ատեն Դաւիթ Ունայի ըսաւ, Այս կալին տեղը ինձի տուր, որպէս զի հոն Տէրոջը սեղան մը շինեմ, (գանձիկա լեցուն գնով տուր ինձի,) ու ժողովուրդին վրայէն հարուածը վերնայ: 23 - Եւ Ունա Դաւիթի ըսաւ, Չգանձիկա քեզի առ, ու իմ տէրս թագաւորը իր աչքին աղէկ երեցածը թող ընէ. ահա եզները ողջակէզի համար, ու կամնասայլները փայտի համար, ու ցորենը հացի ընծայի համար կու տամ, ամէնն ալ կու տամ: 24 - Եւ Դաւիթ թագաւորը Ունայի ըսաւ, Ոչ, հապա զանձս անշուշտ լեցուն գնով ծախու պիտի առնեմ. քանզի քուկդ եղածը Տէրոջը համար պիտի շառնեմ, ոչ ալ ձրի «~~...~~» ողջակէզ մատուցանեմ: 25 - Ու Դաւիթ այն տեղին համար կշիւքով վեց հարիւր սիկղ սկի տուաւ Ունայի: 26 - Եւ Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց, ու անոր վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց, և Տէրոջը աղաղակեց. ու երկինքէն կրակով ողջակէզի սեղանին վրայ անոր պատասխան տուաւ: 27 - Եւ Տէրը հրեշտակին խօ-

*Եբր. հարուածի համար

սեցաւ , ու անիկա սուրբ իր պատեանը դարձուց :

28 - Այն ատեն Գաւիթ տեսնելով որ Տէրը Յեբուսացի Ունայի կային մէջ իրեն պատասխան տուաւ , այն տեղը գոհեր մատուց : 29 - Իսկ Մովսէսի՝ անապատին մէջ շինած Տէրոջը խորանը ու սղջակէզի սեղանը այն ատեն Գաւուսնի բարձր տեղն էր . 30 - Բայց Գաւիթ Ասատուծոյ հարցնելու համար չկրցաւ անոր առջև երթալ , քանզի Տէրոջը հրեշտակին սուրին երեսէն վախցաւ :

ԳԼ. ԻԲ

Եւ Գաւիթ ըսաւ , Ասիկա է Տէր Ասատուծոյն տունը , ու ասիկա է Իսրայէլի սղջակէզին սեղանը : 2 - Եւ Գաւիթ հրամայեց որ Իսրայէլի երկրին մէջ գտնուող օտարազգիները ժողովեն . ու Ասատուծոյ տունը շինելու համար քարահատներ դրաւ , որպէս զի տաշուած քարեր պատրաստեն : 3 - Եւ Գաւիթ զբան փեղկերուն բեւեռներուն համար ու շրջանակներուն համար խիստ շատ երկաթ պատրաստեց , և այնչափ շատ պղինձ՝ որ կշիւքի չէր գար . 4 - Ու պարտադրեց եղենափայտին համբանքը չկար , քանզի Սիգոնացիք և Տիւրացիք Գաւիթի շատ եղենափայտեր կը բերէին :

5 - Եւ Գաւիթ ըսաւ , Իմ որդիս Սողոմոնն փափուկ տղայ մըն է , ու Տէրոջը շինուելու տունը մեծ , բարձր , ու ամէն երկիրներու մէջ անուանի ու փառաւոր պիտի ըլլայ , հիմա անոր համար պատրաստութիւն տեսնեմ . և Գաւիթ իր մեռնելէն առաջ խիստ շատ պատրաստութիւն տեսաւ : 6 - Ետքը իր որդին Սողոմոնը կանչեց , ու անոր պատուիրեց որ Իսրայէլի Տէր Ասատուծոյն տուն շինէ :

7 - Ու Գաւիթ Սողոմոնի ըսաւ , Որդեակ իմ , սրտիս մէջ ունեցայ որ իմ Տէր Ասատուծոյս անուանը տուն շինեմ : 8 - Բայց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով , Ի՞նչ շատ արիւն թափեցիր ու մեծ պատերազմներ բրիր . դուն իմ անուանս տուն պիտի չշինես , քանզի իմ առջևս գեանի վրայ շատ արիւն թափեցիր . 9 - Ահա քեզի որդի մը պիտի ծնանի , անիկա հանդատութեան մարդ պիտի ըլլայ . և գանիկա իր ամէն շրջակայ թշնամիներէն պիտի հանգչեցնեմ :

քանզի անոր անունը *Սողոմոնն պիտի ըլլայ , ու անոր օրերուն մէջ Իսրայէլի խաղաղութիւն ու հանդարտութիւն պիտի տամ : 10 - Անիկա իմ անուանս տուն պիտի շինէ . ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ , ու ես անոր հայր պիտի ըլլամ . և անոր թագաւորութեան ամիսը Իսրայէլի մէջ յաւիտեան պիտի հաստատեմ : 11 - Ուրեմն , որդեակ իմ , Տէրը քեզի հետ ըլլայ , ու յաջողութիւն գտնես և քու Տէր Ասատուծոյդ տուն շինես , ինչպէս քեզի համար խօսեցաւ : 12 - Միայն թէ Տէրը քեզի իմաստութիւն ու հանճար տայ , և քեզ Իսրայէլի վրայ հաստատէ , որպէս զի քու Տէր Ասատուծոյդ օրէնքը պահես : 13 - Այն ատեն յաջողութիւն կը գտնես , երբ զգուշութեամբ ի գործ դնես այն կանոնները ու դատաստանները , զորոնք Տէրը Մովսէսի պատուիրեց Իսրայէլի համար . զօրացիր ու քաջասիրտ եղիր , մի վախնար ու մի վարհուրիս : 14 - Եւ ահա ես իմ Ինեղութիւններու մէջ՝ Տէրոջը տանը համար՝ հարիւր հազար տաղանդ ոսկի ու հազար անգամ հազար տաղանդ արծաթ պատրաստեցի . իսկ պղինձը ու երկաթը շատութեանը համար կշիւքի չգար . փայտեր ու քարեր ալ պատրաստեցի , ու անոնց վրայ դուն ալ աւելցնես : 15 - Եւ դուն քու քովդ խիստ շատ արուեստաւորներ , քարահատներ , որմնագիրներ , հիւսեր ու ամէն գործի համար ամէն բանով վարպետ մարդիկ ունիս : 16 - Ոսկիին , արծաթին , պղինձին ու երկաթին համարանքը չկայ . ելիր ու քոյս գործին ձեռք զարկ՝ , ու Տէրը քեզի հետ ըլլայ :

17 - Եւ Գաւիթ Իսրայէլի բոլոր իշխաններուն պատուիրեց , որ իր որդւոյն Սողոմոնի ձեռնառու ըլլան . 18 - Ու ըսաւ , Ահա ձեր Տէր Ասատուծը ձեզի հետ է , և անիկա ձեզ ամէն կողմանէ հանգրստացուց . որովհետեւ այս երկրին բնակիչները իմ ձեռքս տուաւ , ու երկիրը Տէրոջը առջև ու անոր ժողովուրդին առջև նուաճեցաւ : 19 - Եւ հիմա ձեր սիրտը ու ձեր հոգին ձեր Տէր Ասատուծը խնդրելու տուէք , ու ելէք Տէր Ասատուծոյն սրբարանը շինեցէք , որպէս

*Այսինքն , խաղաղարար Կամ , աղքատութեամբս Եբր. ըրէ

զի Տէրօջը ուխտին տապանակը ու Աստուծոյ սուրբ անօթները Տէրօջը անուանը համար շինուած տունը տանիք:

ԳԼ ԻԳ -

Եւ Գաւիթ ծերացած ու օրերը լեցուած ըլլալով, իր որդին Սողոմոնը Իսրայէլի վրայ թագաւոր դրաւ: 2 - Եւ Իսրայէլի բոլոր իշխանները նաև քահանաները ու Ղևտացիները ժողովեց: 3 - Ու Ղևտացիները, այսինքն երեսուն տարեկանէն վեր եղող այր մարդիկը, մէկիկ մէկիկ համրուելով, անոնց թիւը երեսունըութ հազար էր: 4 - Եւ Գաւիթ, Ասոնցմէ քսանըչորս հազարը՝ Տէրօջը տանը գործին վրայ, ու վեց հազարը ոստիկաններ ու դաւաւորներ ըլլան, 5 - Ու չորս հազարը դռնապաններ, ու չորս հազարը օրհնելու համար շինած նուագարաններովս Տէրօջը օրհնիչներ ըլլան: 6 - Եւ Գաւիթ զանոնք բաժնեց, Ղևի որդիներուն, Փերսոնի, Կահաթի ու Մերարիի դասակարգութիւնները որպէսով:

7 - Փերսոնեաններէն Ղադան ու Սեմէի էին: 8 - Ղադանի որդիները, առաջինը Յեքիէլ, ետքը Զեթամ ու Յովէլ, երեք էին: 9 - Սեմէի որդիները, Սաղոմօթ, Ազիէլ ու Արան, երեք էին: ասոնք Ղադանի տոհմերուն իշխաններն էին: 10 - Եւ Սեմէի որդիները Յեթ, Զիզա, Յեուս ու Բարիա էին: ասոնք, Սեմէի որդիները, չորս հոգի էին: 11 - Եւ առաջինը Յեթ, ու երկրորդը Զիզա էր: բայց Յեուս ու Բարիա շատ որդիներ չունենալուն համար մէկ ազգատոհմ համրուեցան:

12 - Կահաթի որդիները, Ամրամ, Իսահաւ, Փերսոն ու Ոզիէլ, չորս էին: 13 - Ամրամի որդիները Ահարոն ու Մովսէս էին: և Ահարոն ինք ու իր որդիները յաւիտեան որոշուեցան՝ ամենատարբերուն նուիրումը կատարելու, Տէրօջը առջև խունկ ծխելու, անոր ծառայութիւն ընելու ու անոր անունովը յաւիտեան օրհնելու համար: 14 - Եւ Աստուծոյ մարդուն Մովսէսի որդիները Ղևի ցեղին հետ՝ համրուեցան: 15 - Մովսէսի որդիները Փերսամ ու Եղիազար էին: 16 - Փերսամի որդիները, առաջինը Սուբայէլ էր: 17 -

Ու Եղիազարի որդիները, առաջինը Հաբիա էր: ու Եղիազար ուրիշ որդիներ չունէր: բայց Հաբիայի որդիները խիստ շատցան: 18 - Իսահաւի որդիները, առաջինը Սաղոմօթ էր: 19 - Փերսոնի որդիները, առաջինը Յերիա, երկրորդը Ամարիա, երրորդը Յազիէլ, չորրորդը Յեկամամ էր: 20 - Ոզիէլի որդիները, առաջինը Միքա, երկրորդը Յեսիա էր:

21 - Մերարիի որդիները Մոզի ու Մուսի էին: Մոզիի որդիները Եղիազար ու Կիս էին: 22 - Ու Եղիազար մեռաւ: անիկա որդիներ չունէր, հապա միայն աղջիկներ ունէր: ու զանոնք իրենց եղբայրները, Կիսի որդիները, առին: 23 - Մուսիի որդիները, Մոզի, Եզեր ու Յերիմովթ, երեք էին:

24 - Ասոնք Ղևի որդիներն էին իրենց ազգատոհմերուն համեմատ, ու անունով մէկիկ մէկիկ համրուած քսան տարեկանէն վեր՝ Տէրօջը տանը սպասուորութիւնը կատարողներուն տոհմապետներն էին: 25 - Քանզի Գաւիթ ըսեր էր, Իսրայէլի Տէր Աստուածը իր ժողովուրդը հանգստացուց, ու յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի բնակի: 26 - Ու Ղևտացիք ալ խորանը ու անոր պաշտօնին ամէն անօթները՝ ալ այսուհետև պիտի չկրեն: 27 - Քանզի Գաւիթի վերջին խօսքերովը՝ Ղևի որդիներէն քսան տարեկանէն վեր եղողները համրուեցան: 28 - Որովհետև անոնց պաշտօնը՝ Տէրօջը տանը ծառայութեանը մէջ Ահարոնի որդիներուն օգնութիւն ընել, գաւիթներու ու սենեակներու վերակացու ըլլալ, բոլոր սուրբ բաները մտքրել, ու Աստուծոյ տանը ծառայութիւնը կատարել էր: 29 - Նաև առաջաւորութեան հացին, ու հացի ընծայի նաշիհին, և անխմոր լաւաշներուն, ու տապակի մէջ եփուած և տապկուած բաներուն, ու բոլոր չափերուն վերակացութիւնը ընել, 30 - Եւ ամէն առտու ու իրիկուն Տէրը օրհնելու ու գովելու համար ոտքի վրայ կայնիլ, 31 - Ու շաբաթ օրերը և ամսագլուխները ու մեծ տօներու մէջ Տէրօջը բոլոր սղջակէզները, իրենց թիւովը ու իրենց օրէնքովը, միշտ Տէրօջը առջև մատուցանել, 32 - Ու Տէրօջը տանը ծառայութեանը համար ժողովքի խորանին պահպանութիւնը, և սրբարանին պահ-

*Եբբ. կոչուեցան

դանութիւնը, ու իրենց եղբայրներուն, Ահարոնի որդիներուն, պահպանութիւնը ընել էր:

ԳԼ. ԻԳ

Եւ Ահարոնի որդիներուն դասակարգութիւնները ասոնք են. Ահարոնի որդիները, Նազաբ, Աբիուդ, Եղիազար ու Իթամար էին: 2 - Եւ Նազաբ ու Աբիուդ իրենց հօրը առջև մեռան, ու անոնք որդիներ չունէին. ու Եղիազար ու Իթամար քահանայ եղան: 3 - Եւ Գալիթ ու Եղիազարի որդիներէն Սադովկ ու Իթամարի որդիներէն Աբիմէլէք զանոնք բաժնեցին անոնց համարները անոնց պաշտօնին համար: 4 - Ու Եղիազարի որդիներուն մէջ գրանուած իշխանները Իթամարի որդիներուն մէջ հոնս - ջնէրէն շատ էին. ու զանոնք «չոպէ» բաժնեցին. Եղիազարի որդիներուն համար տասներկէց իշխան՝ իրենց ազգատոհմերուն համեմատ, ու Իթամարի որդիներուն համար ութ իշխան՝ իրենց ազգատոհմերուն համեմատ: 5 - Եւ ասոնք ու անոնք վիճակով բաժնուեցան, քանզի սրբարանին իշխանները ու Աստուծոյ հոնք իշխանները Եղիազարի որդիներէն ու Իթամարի որդիներէն էին: 6 - Ու Ղևաացիներէն, Նաթանայէի որդին Սեմույիս դպիրը, Թագաւորին ու իշխաններուն և Սադովկ քահանային ու Աբիաթարի որդւոյն Աբիմէլէքի և քահանաներուն ու Ղևաացոց նահապետներուն առջև մէկ ազգատոհմ՝ Եղիազարէ առնելով ու «չոպէ» մը Իթամարէ առնելով զանոնք գրեց:

7 - Եւ առաջին վիճակը Յովարիբի ելաւ, երկրորդը Յեզայիայի, 8 - Երրորդը Հարիմի, չորրորդը Աեուրինի, 9 - Հինգերորդը Մեղքիայի, վեցերորդը Միամինի, 10 - Եօթներորդը Ակկուսի, ութերորդը Աբիայի, 11 - Իններորդը Յեսուի, տասներորդը Աեքենիայի, 12 - Մեասասներորդը Եղիաաբի, երկասասներորդը Յակիմի, 13 - Երեքասասներորդը Ուփայի, չորեքասասներորդը Յեսուարի, 14 - Հնգասասներորդը Բեդգայի, վեշասասներորդը Եմմերի, 15 - Եօթնասասներորդը Եգիբի, ութասասներորդը Ափեսեսի, 16 - Իննասասներորդը Փեթայիայի, քսաներորդը Եգեկիէի, 17 - Քսանրմէկերորդը

Յաբինի, քսանուերկուերորդը Գամուլի, 18 - Քսանուիրեքերորդը Գաղայիայի, քսանըչորսերորդը Մասդիայի: 19 - Այս է անոնց կարգադրութիւնը իրենց պաշտամունքին համար. - Տերոջը տունը մանելու համար՝ իրենց հօրը Ահարոնի ձեռքով իրենց որդիներէն համեմատ, ինչպէս Իսրայէլի Տէր Աստուածը անոր պատուիրէր էր:

20 - Ու Ղևիի որդիներուն մնացորդները ասոնք էին. Ամրամի որդիներէն՝ Սուբայէլ. Սուբայէլի որդիներէն՝ Յագայիս. 21 - Հուբիայի, այսինքն Հուբիայի որդիներէն, առաջինը Յեսիա. 22 - Իսահաուի որդիներէն Սաղօմօթ. Սաղօմօթի որդիներէն Յեթ. 23 - Ու Բեբբանի որդիներէն «չոպէ» Յերիա, երկրորդը Ամարիա, երրորդը Յագիէլ, չորրորդը Յեկամամ. 24 - Ողիէի որդիներէն, Միքա. Միքայի որդիներէն, Սամիր. 25 - Միքիայի եղբայրը Յեսիա. Յեսիայի որդիներէն Չաքարիա: 26 - Մերարիի որդիները Մոդի ու Մուսի էին. Յագիայի որդին Բենուլ. 27 - Մերարիի որդիները Յագիայէ Բենուլ, Սոհամ, Չաքուր ու Եբի էին: 28 - Մոդիէ Եղիազար ջնս, ու անիկա որդիներ չունէր: 29 - Կիսէ, այսինքն Կիսի որդիներէն, Յերամէլ էր: 30 - Մուսիի որդիները Մոդի, Եգեր ու Յերիմովթ էին: Ղևաացոց որդիները իրենց տոհմերուն համեմատ ասոնք էին: 31 - Եւ ասոնց համար ալ, իրենց եղբայրներուն Ահարոնի որդիներուն պէս, Գալիթ Թագաւորին ու Սադովկի ու Աբիմէլէքի և քահանաներուն ու Ղևաացոց տոհմապետներուն առջև վիճակ ձգեցին, թէ՛ տոհմապետներուն և թէ՛ անոնց պատկ եղբայրներուն համար:

ԳԼ. ԻԵ

Եւ Գալիթ ու զօրքին իշխանները Ասափի, Եմանի ու Իգիթուսի որդիներէն՝ քնարներով, տաւիղներով ու ծնծղաներով մարգարէութիւն ընողները սրոշեցին այս պաշտօնին համար. ու իրենց պաշտօնին համեմատ՝ այս ծառայութիւնը ընող մարդոց համարները ասիկա էր. 2 - Ասափի որդիներէն Թագաւորին քով մարգարէութիւն ընող Ասափի ձեռքին տակ Ասափի որ-

դիները Զաքուր, Յովսէփ, Նաթանիա և Ասարէլա էին: 3 - Իզիթունէ Իզիթունի որդիները, Գոգոզիա, Եզրի, Եսայի, Սեֆէ, Ասաբիա ու Մատաթիա, վեց էին. ու ասոնք իրենց հօրը Իզիթունի ձեռքին տակ էին, որ քնարով Տէրօջը գոհութիւն ու օրհնութիւն երգելով մարգարէութիւն կ'ընէր: 4 - Եմանէ Եմանի որդիները Բոկփիա, Մաթանիա, *Ոզիէլ, Սուբայէլ, Յերիմովթ, Անանիա, Անանի, Եզիաթա, Գեթողովի, Ռօմամթիեզեր, Յեսաակասա, Մեղեթի, Յօգիր -- Մազիովթ էին: 5 - Ասոնց ամէնը Եմանի որդիներն էին, որ թագաւորին տեսանայն էր՝ Աստուծոյ խօսքերուն մէջ եղջիւրը վերցնելու: ու Աստուած Եմանի տասնըչորս տղայ ու երեք աղջիկ տուեր էր: 6 - Ասոնք ամէնը Աստուծոյ տանը պաշտօնին համար ծնծղաներով, ասուիղներով ու քնարներով՝ իրենց հօրը ձեռքին տակ Տէրօջը տանը երգերը կ'երգէին. իսկ Ասափ, Իզիթուն ու Եման թագաւորին ձեռքին տակ էին: 7 - Եւ անոնց թիւը՝ Տէրօջը երգերը սորված իրենց եղբայրներուն հետ, այսինքն բոլոր հանձարեղներուն Խեղ երկու հարիւր ութսունըութ էր:

8 - Եւ իրենց յաջորդական պաշտօնին համար՝ պզտիկը ու մեծը, վարպետը ու աշակերտը մէկտեղ վիճակ ձգեցին: 9 - Եւ առաջին վիճակը Ասափի որդւոյն Յովսէփի ելաւ. երկրորդը Գոգոզիայի. ինք ու իր եղբայրները ու որդիները տասուերկու մարդ էին: 10 - Երրորդը Զաքուրի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 11 - Զորրորդը Եզրիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 12 - Հինգերորդը Նաթանիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 13 - Վեցերորդը Բոկփիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 14 - Եօթներորդը Յեսաբելայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 15 - Ութերորդը Եսայիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 16 - Իններորդը Մաթանիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 17 -

Տասներորդը Սեմէիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 18 - Մեասասներորդը Ազարիէլի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 19 - Երկուսասներորդը Ասաբիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 20 - Երեքասաններորդը Սուբայէլի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 21 - Զորեքասաններորդը Մատաթիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 22 - Հնգեասաններորդը Յերիմովթի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 23 - Վեշասաններորդը Անանիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 24 - Եօթնուսասներորդը Յեսաակասայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 25 - Ութուսաններորդը Անանիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 26 - Իննուսաններորդը Մեղեթիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 27 - Քսաներորդը Եզիաթայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 28 - Քսանըմէկերորդը Յօթիրի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 29 - Քսանուերկուերորդը Գեթողովիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 30 - Քսանուերկուերորդը Մազիովթի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր: 31 - Քսանըչորսերորդը Ռօմամթիեզերի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասուերկու մարդ էր:

ԳԼ ԻԶ

Բանապաններուն գասակարգութիւնները. Կորխեաններէն, Ասափի որդիներէն, Կովրէի որդին Մասեղամիա էր: 2 - Ու Մասեղամիայի որդիները, անդրանիկը Զաքարիա, երկրորդը Յեզիէլ, երրորդը Զաբազիա, չորրորդը Յաթնիէլ, 3 - Հինգերորդը Եղամ, վեցերորդը Յօհանան, եօթներորդը Եզիովէնայի էին: 4 - Եւ Աբդեղօսի որդիները, անդրանիկը Աեմայիա, երկրորդը Յովզարագ, երրորդը Յովաք, չորրորդը Սաքար, հիգերորդը Նաթանա-

*Կա՛մ, Ազարիէլ. տես հմբ. 18:

յէլ, 5 - Վեցերորդը Ամիէլ, եօթնե-
րորդը Իսաքար, ութերորդը Փեղաթի-
քանգի Աստուած *զանկա օրհներ էր:
6 - Ու անոր որդւոյն Սեմույիայի որդի-
ներ ծնան, որոնք իրենց հօրը ասնը
իշխաններ եղան, քանգի անոնք զօրա-
ւոր կտրիճներ էին: 7 - Սեմույիայի որ-
դիները Աթնի, Ռափայէլ, Ովբէդ, Եղ-
զարադ, †Աքիով, Բենհայիլ, Եղիսու
ու Սամաքիա էին: 8 - Ասոնք ամէնը
Աբդեգօմի որդիներէն էին, «- իրենք
ու իրենց որդիները և իրենց եղբայր-
ները, ծառայութեան համար զօրա-
ւոր ու կտրիճ մարդիկ Աբդեգօմէ
վաթառնուեցիւ էին: 9 - Եւ Մասե-
ղափա ասանըութ զօրաւոր որդիներ
ու եղբայրներ ունէր: 10 - Ու Մերա-
րիի որդիներէն Ուսա որդիներ ունէր.
գլխաւորը Սամարի էր. քանգի թէ-
պէտե անկա անդրանիկ չէր, բայց
անոր հայրը զանկա գլուխ ըրաւ.
11 - Երկրորդը Քեղկիա, երրորդը Տա-
քաղիա, չորրորդը Զաքարիա էր. Ու-
սայի բոլոր որդիները ու եղբայրները
տասուիրէք էին: 12 - Գոնապաննե-
րուն դասակարգութիւնները ասոնց
*բնական իբրև գլխաւոր մարդոց, որ-
պէս զի իրենց եղբայրներուն հետ պահ-
պանութիւն ընելով՝ Տերօջը ասնը մէջ
ծառայէն: 13 - Եւ պղտիկը ու մեծը
հաւասարապէս վիճակ ձգեցին իրենց
ազգատոհմերուն համեմատ՝ ամէն մէկ
դրան համար: 14 - Եւ արևելեան կող-
մին վիճակը Սեղեմիայի ելաւ. ետքը
անոր որդւոյն, խելացի ու խորհրդա-
կան Զաքարիայի, համար վիճակ ձգե-
ցին, ու անոր վիճակը հիւսիսային
կողմը ելաւ: 15 - Աբդեգօմի՝ հարա-
ւային կողմը, ու անոր որդիներուն՝
Բեթատուփիմ: 16 - Սուփիմի և Ու-
սայի՝ արևմտեան կողմը ելաւ՝ Սալե-
թիթի դրանը քով վեր ելլող ճամ-
բուն վրայ. ու մէկ պահպանութիւնը
միւս պահպանութեանը գիմաց էր:
17 - Արևելեան կողմը վեց՝ Աւաացի,
հիւսիսային կողմը օրը չորս, հարաւա-
յին կողմը օրը չորս, ու Ասուփիմի
կողմը երկերկու էին: 18 - Փարպարի
կողմը գէպի արևմուտք վեր ելլող
ճամբան՝ չորս, «- Փարպար երկու

բնական կար: 19 - Կորխեանց որդի-
ներէն ու Մերարիի որդիներէն եղող
գոնապաններուն դասակարգութիւն-
ները ասոնք էին:

20 - Ու Աւաացիներէն՝ Աստուծոյ
ասնը գանձերուն ու նուիրական գան-
ձերուն վրայ Աքիա էր: 21 - Գերսո-
նացի Աադանի ազգատոհմերուն իշ-
խաններէն, Գերսոնացի Աադանի որ-
դիներէն, Յեքիէլ էր: 22 - Յեքիէլի որ-
դիները Զեթամ ու անոր եղբայրը Յո-
վէլ Տերօջը ասնը գանձերուն վրայ
էին: 23 - Ու Ամրամեաններէն, Իսա-
հառեաններէն, Քերրոնեաններէն «-
Ողբելեաններէն ասոնք էին. 24 - Մով-
սէսի որդւոյն Գերսամի որդին Սուբա-
յէլ գանձերուն վերակացուն էր: 25 -
Եւ անոր եղբայրները Եղիազարի «բի-
նբը. անոր որդին Հռափիա, անոր որ-
դին Եսայի, անոր որդին Յովրամ, ա-
նոր որդին Զեքրի, ու անոր որդին Սա-
ղօմօթ էր: 26 - Այս Սաղօմօթը ու ա-
նոր եղբայրները Իսաիթ թագաւորին
ու տոհմերու իշխաններուն ու հազա-
րապետներուն և հարիւրապետներուն
ու զօրաց իշխաններուն նուիրած՝ ամէն
սուրբ գանձերուն վրայ էին, 27 - Որոնք
պատերազմներէն ու տւարէն Տերօջը
*ասնը շինութեանը՝ համար նուիրեր
էին. 28 - Նաև Սամուէլ տեսանողին
ու կիսեան Սաւուդի ու Ներեան Ա-
բենների ու Շարուհեան Յովարի նուի-
րած բոլոր նուէրները Սաղօմօթի ու ա-
նոր եղբայրներուն ձեռքին տակ էին:

29 - Իսահառեաններէն՝ Քոնոնիա ու
անոր որդիները արտաքին գործերու
համար, Իսրայէլի վրայ տարիականներ ու
գատաւորներ էին: 30 - Քերրոնեան-
ներէն՝ Ասաբիա ու անոր եղբայրները,
հազար եօթը հարիւր զօրաւոր մար-
դիկ, Յորդանանու աագիի կողմը գէպի
արևմուտք, Տերօջը ամէն գործին հա-
մար ու թագաւորին ծառայութեանը
համար Իսրայէլի վրայ վերակացու էին:
31 - Քերրոնեաններէն՝ Քերրոնեաննե-
րուն †ազգատոհմին իշխանը Յերիա
էր. Իսաիթի թագաւորութեանը քա-
ւաններորդ տարին անոնք համրուե-
ցան, ու Գաղատագու Յագերի մէջ ա-
նոնցմէ զօրաւոր կտրիճներ գանուե-
ցան: 32 - Եւ անոր եղբայրները երկու

*Այսինքն, Աբդեգօմի. տես գլ. Ժգ. 14:
†Այս, անոր եղբայրները զօրաւոր
մարդիկ

*Եբր. տունը հաստատելու
†Եբր. սերունդովը հայրերուն

Հազար եօթը հարիւր զօրաւոր մարդիկ
— տոհմերու իշխաններ էին . և Դաւ-
ւիթ թագաւորը զանոնք Ռուբենեանց,
Գադեանց ու Մանասեանց կէս ցեղին
վրայ դրաւ՝ Աստուծոյ և թագաւորին
ամէն գործին համար :

ԳԼ. ԻԷ

Եւ Իսրայէլի որդիներէն իրենց համ-
բանքովը ազգատոհմի նահապետներէն
ու հազարապետներէն և հարիւրա-
պետներէն ու անոնց սատիկաններէն,
դասակարգութեանց ամէն գործին մէջ
թագաւորին ծառայութիւն ընողնե-
րուն, և տարւոյն ամէն ամիսներուն
մէջ ամսէ ամիս մանողներուն ու ել-
լողներուն ամէն մէկ դասը քսանըչորս
հազար մարդ էր : 2 - Առաջին ամսուն
համար առաջին դասին վրայ Զաբդիէլի
որդին Յեսթաամ էր, ու անոր դասը
քսանըչորս հազար մարդ էր : 3 - Առա-
ջին ամսուն ամէն զօրավարներուն իշ-
խանը Փարէսի որդիներէն էր : 4 - Աւ-
երկրորդ ամսուն դասին վրայ Աքու-
քացի Իովդա էր . ու Մակեղօթ անոր
դասին իշխանն էր, ասոր դասն ալ
քսանըչորս հազար մարդ էր : 5 - Եր-
րորդ ամսուն համար երրորդ զօրապետը
Յովիադա քահանային որդին Բանեա
գլխաւորն էր, ու անոր դասը քսանը-
չորս հազար մարդ էր : 6 - Այս Բան-
եան երեսունէն զօրաւոր էր ու երե-
սունին վրայ էր, և անոր որդին Ամի-
շաբադ անոր դասին մէջ էր : 7 - Չոր-
րորդ ամսուն համար չորրորդ զօրապետը
Յովաբի եղբայրը Ասայէլ, ու անկէ
ետքը անոր որդին Զաբադիա էր, և ան-
որ դասը քսանըչորս հազար մարդ էր :
8 - Հինգերորդ ամսուն համար հինգե-
րորդ զօրապետը Յեզրացի Սամուովթ
էր, ու անոր դասը քսանըչորս հազար
մարդ էր : 9 - Վեցերորդ ամսուն հա-
մար վեցերորդ զօրապետը Թեկուացի
Եկգեսի որդին Իրաա էր, ու անոր դասը
քսանըչորս հազար մարդ էր : 10 -
Եօթներորդ ամսուն համար եօթներորդ
զօրապետը Եփրեմի որդիներէն Փելօնացի
Քեղդէս էր, ու անոր դասը քսանըչորս
հազար մարդ էր : 11 - Ութերորդ ամ-
սուն համար ութերորդ զօրապետը Զա-
րայեանց Ովսացի Սովբաքն էր, ու ան-
որ դասը քսանըչորս հազար մարդ էր :
12 - Իններորդ ամսուն համար իննե-

րորդ զօրապետը Բենիամինեաններէն Ա-
նաթովթացի Աբիեզեր էր, և անոր
դասը քսանըչորս հազար մարդ էր :
13 - Տասներորդ ամսուն համար տաս-
ներորդ զօրապետը Զարայեանց Նեա-
տովթացի Մաարա էր, ու անոր դասը
քսանըչորս հազար մարդ էր : 14 - Մե-
տասներորդ ամսուն համար մետասա-
ներորդ զօրապետը Եփրեմի որդիներէն
Փարաթոնացի Բանեա էր, և անոր
դասը քսանըչորս հազար մարդ էր :
15 - Երկուսասաներորդ ամսուն համար
երկուսասաներորդ զօրապետը Գոթոնի-
էլի «Երանդէն» Նեատովթացի Ալադ
էր, ու անոր դասը քսանըչորս հազար
մարդ էր :

16 - Եւ Իսրայէլի ցեղերուն վրայ
ասոնք էին . Ռուբենի ցեղին՝ Իշխան Զեք-
րիի որդին Եղիազար, Շմուոնի ցեղին՝
Մաաբայի որդին Սափաաիա, 17 -
Ղևիի ցեղին՝ Կամուէլի որդին Ասարիա,
Ահարոնի որդիներէն՝ Սադովկ, 18 -
Յուդայի ցեղին՝ Դաւիթի եղբայրնե-
րէն, *Եղիուս, Իսաբարի ցեղին՝ Մի-
քայէլի որդին Ամրի, 19 - Զաբուղոնի
ցեղին՝ Աբդիայի որդին Իամայիա, Նեփ-
թաղիմի ցեղին՝ Եզրիէլի որդին Յերի-
մովթ, 20 - Եփրեմի որդիներուն՝ Ա-
լազիայի որդին Ովսէէ, Մանասէի կէս
ցեղին՝ Փադայիայի որդին Յովէլ, 21 -
Գադաադ եզոզ Մանասէի կէս ցեղին՝
Զաբարիայի որդին Յեզգով, Բենիա-
մինի ցեղին՝ Աբենների որդին Յեսիէլ,
22 - Դանի ցեղին՝ Յերոամի որդին Ազա-
րիէլ . Իսրայէլի ցեղերուն իշխանները
ասոնք էին :

23 - Եւ Դաւիթ քսան տարեկանէն
վար եղողները չհամրեց, վասն զի Տէրը
ըտեր էր որ Իսրայէլը երկինքի ասաղե-
րուն չափ պիտի շատցնէ : 24 - Շարուհ-
եայի որդին Յովաբ սկսաւ համրել,
բայց չլմնցուց . ու անոր համար Իսրա-
յէլի վրայ բարկութիւն եկաւ . և այն
համրանքը Դաւիթ թագաւորին յի-
շատակաց գիրքին մէջ չմտաւ :

25 - Աւ թագաւորին գանձերուն
վրայ Ադիէլի որդին Ազամօթ էր . և
դաշտը — քաղաքները և գեղերը ու
աշտարակները եզոզ շահամարաններուն
վրայ Ոզիայի որդին Յովսաթան էր .
26 - Եւ արար ըանող երկրագործնե-
րուն վրայ Քեղուրի որդին Եզրի էր .

*Կամ, Եղիար . ա թագ . Ժգ . 6 :

27 - Աւ սյգիներուն վրայ Արիմաթացի Սեմէի էր . ու սյգիներուն *բերքերուն -- դինիի շտեմարաններուն վրայ Սեփամացի Զարգի էր . 28 - Եւ դաշար եղող ձիթենիներուն ու մուլթղենիներուն վրայ Գաղերացի Բաաղանան էր . ու իւզի շտեմարաններուն վրայ Յովաս էր . 29 - Աւ Սարօնի մէջ եղող արօտական արջառներուն վրայ Սարօնացի Սեարա էր . ու հովիաներու մէջ եղող արջառներուն վրայ Ադղիի որդին Սափաա էր : 30 - Եւ ուղտերուն վրայ Իամայելացի Որիլ էր . ու էշերուն վրայ Մերանթացի Յադայիա էր . 31 - Եւ չօտերուն վրայ Հագարացի Յագիզ էր . ասոնք ամէնը Գաւիթ թագաւորին ստացուածքներուն վերակացուներն էին :

32 - Աւ Գաւիթի հօրեղբայրը Յովնաթան խորհրդական էր . անիկա խելացի ու Գիսուն մարդ էր . և Հաքեմոնի որդին Յեքիէլ թագաւորին որդիներուն չեա էր . 33 - Աւ Աքիտոփէլ թագաւորին խորհրդականը , և Արաքացի Գուսի թագաւորին բարեկամն էր . 34 - Աւ Աքիտոփէլէ ետքը Բանեայի որդին Յովիագա ու Աքիտթար էին . ու թագաւորին զօրագլուխը Յովաբ էր :

ԳԼ ԻԲ

Եւ Գաւիթ Իսրայէլի բոլոր իշխանները , ցեղերուն իշխանները ու թագաւորին ծառայութիւն ընող գատերուն իշխանները , և հագարապեաները ու հարիւրապեաները , և թագաւորին ու անոր որդիներուն բոլոր ստացուածքներուն ու ինչքերուն վերակացուները , ներքինիները , զօրաւորները ու զօրքին բոլոր կարիճները Երուսաղէմի մէջ ժողովեց : 2 - Եւ Գաւիթ թագաւորը սաքի վրայ կայնեցաւ , ու ըսաւ , Ով իմ եղբայրներս ու իմ ժողովուրդս , ինձի մտիկ ըրէք . իմ սրտիս մէջ ունեցայ որ Տէրօջը ու խաի տապանակին , ու մեր Աստուծոյն սաքերուն պատուանգանի համար հանգստեան տուն մը շինեմ , ու շինելու պատրաստութիւն տեսայ . 3 - Բայց Աստուած ինձի ըսաւ , Գուն իմ անուանս տուն պիտի

չշինես , քանզի դուն պատերազմի մարդ ես ու *չաա արիւն՝ թափեցիր : 4 - Եւ Իսրայէլի Տէր Աստուածը իմ հօրս բոլոր տունէն զիս ընարեց , որպէս զի յաւիտեան Իսրայէլի վրայ թագաւոր ըլլամ . քանզի առաջնորդը Յուդայէ , ու Յուդայի տունէն իմ հօրս տունը ընարեց . ու իմ հօրս որդիներուն մէջէն ինձի հաւնեցաւ , որպէս զի զի* բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր ընէ : 5 - Եւ իմ բոլոր որդիներէս , (որովհետեւ Տէրը ինձի շաա որդիներ տուաւ ,) իմ որդիս Սողոմոնը ընարեց , որպէս զի Իսրայէլի վրայ Տէրօջը թագաւորութեան ակթուը նստի . 6 - Աւ ինձի ըսաւ , Քու որդիդ Սողոմոն՝ ինք պիտի շինէ իմ տունս ու իմ սրահներս , քանզի զանիկա ինձի որդի ընարեցի , ու ես անոր հայր պիտի ըլլամ . 7 - Եւ անոր թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ , եթէ այսօրուան պէս իմ հրամաններս ու դատաստաններս ի գործ դնելու մէջ յարստեէ : 8 - Աւ հիմա բոլոր Իսրայէլի՝ Տէրօջը ժողովքին առջև ու մեր Աստուծոյն լսելովը Յեզեկի* , Զեր Տէր Աստուծոյն բոլոր պատուիրանքները պահեցէք ու զգուշութեամբ սորվեցէք , որպէս զի այս բարի երկիրը ժառանգէք , ու ձեզմէ ետքը ձեր որդիներուն ժառանգութիւն թողուք յաւիտեան :

9 - Եւ դուն , որդեակ իմ Սողոմոն , քու հօրդ Աստուածը ճանչցիր , ու անոր կատարեալ սրտով ու յօժար կամքով ծառայութիւն ըրէ . քանզի Տէրը ամէն սիրտերը կը քննէ , ու ամէն մտաց խորհուրդները կը ճանչնայ . եթէ զանիկա փնտռես՝ Գիտի գանես , և եթէ զանիկա թողուս՝ ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ : 10 - Հիմա նայէ որ Տէրը քեզ ընարեց էք սրբարանին համար տուն մը շինելու . զօրացիր ու այ* Գորջը կատարէ :

11 - Եւ Գաւիթ իր որդւոյն Սողոմոնի՝ սրահին , ու անոր սենեակներուն , և անոր զանձարաններուն , ու անոր վերնատուններուն , և անոր ներքին շտեմարաններուն ու քաւութիւնին տանը գաղափարը տուաւ . 12 - Եւ Հողիին ազդեցութիւնովը իրեն յայտ-

*Եբբ. մէջի բաներուն
 †Եբբ. գպիր

*Եբբ. արիւններ
 †Եբբ. պիտի գանուի քեզի
 ‡Կ-ճ, իր մտքին մէջ ունեցած

ԳԼ. ԻԹ

«...» բոլոր բաներուն՝ Տէրոջը տանը
 գաւիթներուն, ու բոլորափքը եղող ա-
 մէն սենեակներուն, և Աստուծոյ տանը
 շտամարաններուն, ու նուիրուած բա-
 ներուն գանձարաններուն գաղափարը
 «...» 13 - Նաև քահանաներուն ու
 Ղևտացւոց դասակարգութիւններուն
 համար, ու Տէրոջը տանը պաշտօնին
 ամէն գործին համար, և Տէրոջը տանը
 ծառայութեանը ամէն անօթներուն
 համար «...» էր «...» 14 - Ու ամէն
 պաշտօններուն ամէն ոսկի անօթներուն
 կշիռքը, «...» ամէն արծաթէ անօթնե-
 րուն ու ամէն պաշտօնի անօթներուն
 ալ կշիռքը, 15 - Եւ ամէն ոսկիէ աշ-
 տանակներուն ու անոնց ամէն ոսկիէ
 ճրագներուն կշիռքը, և ամէն արծա-
 թէ աշտանակին ու անոր ճրագներուն,
 ամէն մէկ աշտանակին գործածու-
 թեանը համեմատ կշիռքը «...» 16 -
 Եւ առաջաւորութեան սեղաննե-
 րուն ամէն մէկ սեղանին համար ոսկիին
 կշիռքը, ու արծաթէ սեղաններուն
 համար արծաթին կշիռքը, 17 - Եւ մա-
 քուր ոսկիէ մասհաններուն ու կոնքե-
 րուն և բաժակներուն ու ոսկիէ տաշ-
 տերուն համար՝ ամէն մէկ տաշտին
 կշիռքը, և արծաթէ տաշտերուն հա-
 մար ամէն մէկ տաշտին կշիռքը «...»
 չեց 18 - Ու խունկի սեղանին համար
 կշիռքով մաքուր ոսկի, և իրենց Բեւեբը
 տարածող ու Տէրոջը ուխտին տապա-
 նակը ծածկող քերովբէներուն կառ-
 քին գաղափարին համար ոսկի «...» չեց :
 19 - Այս բոլոր բաները, այս գաղա-
 փարին բոլոր գործերը, Տէրը իր ձեռ-
 քին գրովը ինձի յայտնեց՝ ըստ :
 20 - Եւ Իսաիթ իր որդւոյն Սոզ-
 մանի ըսաւ, Չորացիք ու քաջասիրտ ե-
 ղիք, ու այս գործը կատարէ. մի վախ-
 նար ու մի վարհուրիր, քանզի Տէր Աստ-
 ուած, իմ Աստուածս, քեզի հետ է .
 անիկա քեզ պիտի չթողու ու քեզ
 երեսէ պիտի չձգէ, մինչև որ Տէրոջը
 տանը ծառայութեանը բոլոր գործերը
 լինցնես : 21 - Եւ ահա քահանաներուն
 ու Ղևտացւոց դասերը Աստուծոյ տանը
 բոլոր ծառայութեանը համար են . ու
 ամէն ծառայութեան համար՝ ամէն
 գործի մէջ ամէն յօժարակամ՝ իմաս-
 տունները քեզի հետ են . և իշխանները
 ու բոլոր ժողովուրդը քու ամէն հրա-
 մանիդ չը նային :

Եւ Իսաիթ թագաւորը բոլոր ժո-
 ղովքին ըսաւ, Իմ որդիս Սոզման, զոր
 միայն ընարեց Աստուած, փափուկ
 տղայ մըն է, ու գործը մեծ է. քանզի
 այս պաշտար մարգու համար չէ, հա-
 պա Տէր Աստուծոյ համար է : 2 - Ու ու-
 տի ես իմ՝ բոլոր կարողութիւնովս իմ
 Աստուծոյս տանը համար՝ ոսկիէ ըլ-
 լալու բաներուն համար ոսկի, ու ար-
 ծաթէղէններուն համար արծաթ, և
 պղնձէղէններուն համար պղինձ, «...»
 երկաթէղէններուն համար երկաթ, և
 փայտէղէններուն համար փայտ, «...»
 եղնգնաքարեր, գամելու քարեր, ու
 վարդի համար գոյնզգոյն քարեր, և
 ամէն տեսակ պատուական քարեր ու
 մարմարիան քարեր առատօրէն պատ-
 րաստեցի : 3 - Ու նաև իմ Աստուծոյս
 տանը վրայ մեծ սէր ունենալուս հա-
 մար՝ սրբարանին տանը համար ամէն
 պատրաստած բաներէս զսա՝ իմ յա-
 տուկ գանձիս մէջ եղած ոսկին ու ար-
 ծաթն ալ իմ Աստուծոյս տանը համար
 տուի, 4 - Ու փրի ոսկիէն երեք հազար
 տաղանդ ոսկի, ու եօթը հազար տա-
 ղանդ մաքուր արծաթ՝ որպէս զի ա-
 նոնցմով տուններուն որմերը պատեն .
 5 - Ոսկիէ ըլլալու բաներուն համար ոս-
 կի, ու արծաթէղէններուն համար ար-
 ծաթ, ու արուեստաւորներուն ձեռքով
 ըլլալու ամէն տեսակ գործին համար
 հարկաւոր եղածը «...» է. և այսօր չեզե իր
 կամքովը Տէրոջը՝ ընծայ տուող՝ ո՞վ կայ :
 6 - Այն ատեն տոհմերուն իշխան-
 ները, ու Իսրայէլի ցեղերուն իշխան-
 ները, և հազարապետները ու հարիւ-
 րապետները, և թագաւորին գործին
 վերակացուները յօժար կամքով ըն-
 ծայ բերին : 7 - Ու Աստուծոյ տանը
 գործին համար հինգ հազար տաղանդ
 և տասը հազար գրամ ոսկի, ու տասը
 հազար տաղանդ արծաթ, և տասնը-
 ութ հազար տաղանդ պղինձ, ու հաւ-
 իւր հազար տաղանդ երկաթ տուին :
 8 - Եւ որուն քով որ քարեր գանուե-
 ցան, Փերանացի Յէքիէլի ձեռքով
 Տէրոջը տանը գանձին ընծայեցին : 9 -
 Ու ժողովուրդը անոնց կամաւոր ըն-
 ծաներ մատուցանելուն համար ու-
 րախացան, քանզի կամաւոր ընծան .

*Եբբ. իր ձեռքը լեցնող

բոլոր սրտով մատուցին Տէրոջը . ու Դաւիթ թագաւորն ալ խիստ շատ ուրախացաւ :

10 - Եւ Դաւիթ բոլոր ժողովքին աչքին առջև Տէրը օրհնեց . ու Դաւիթ բաւաւ , Ով Տէր , մեր հօրը Իսրայէլի Աստուածը , յաւիտենից մինչև յաւիտեանս օրհնեալ ես : 11 - Ով Տէր , մեծութիւնը , զօրութիւնը , փառքը , պայծառութիւնը ու վայելչութիւնը քուկդ է . քանզի բոլոր երկինքի ու երկրի վրայ եղածը +իդ է . ով Տէր , թագաւորութիւնը քուկդ է , ու դուն իբրև գլուխ ամէնէն բարձրացեալ ես : 12 - Եւ հարստութիւնը ու փառքը քեզմէ է , ու ամէնուն իշխանը դուն ես . և զօրութիւնը ու կարողութիւնը քու ձեռքիդ մէջ է , և ամէնը մեծցրնելը և ուժովցնելը քու ձեռքդ է : 13 - Եւ հիմա , ով մեր Աստուածը , քեզի գոհութիւն կու տանք , ու քու փառաւորեալ անունդ կ'օրհնենք : 14 - Բայց ես ո՞վ եմ , ու իմ ժողովուրդս ո՞վ է , որ այսպէս կամուսր ընծայ տալու կարող ըլլանք . քանզի ամէն բան քեզմէ է , ու *քուկիններէդ քեզի տակնք : 15 - Վասն զի մենք քու առջևդ մեր բոլոր հայրերուն պէս օտարականներ ու պանդուխտներ ենք . երկրի վրայ մեր օրերը շուքի պէս են , ու +մնայուն բան՝ մը չկայ : 16 - Ով Տէր Աստուած մեր , քեզի՝ քու սուրբ անուանդ շինուելու տանը համար այս մեր պատրաստած բաներուն բոլոր առատութիւնը քու ձեռքէդ է , ու ամէնն ալ քուկդ են . 17 - Եւ գիտեմ , ով Աստուած իմ , որ դուն սիրտերը կը փորձես , և ուզողութիւնը կը սիրես . տասնց ամէնը ես ուզիդ սրտով ու յօժար կամքով ընծայ րբի . ու հիմա հոս գանուած ժողովուրդդ ուրախութեամբ տեսայ , որ քեզի կամուսր ընծայ կը մատուցանեն : 18 - Ով մեր հայրերուն , Աբրահամի , Իսահակի ու Իսրայէլի Տէր Աստուածը , ասիկա յաւիտեան քու ժողովուրդիդ սրտին խորհուրդներուն մէջ պահէ , ու անոնց սիրտը քեզի +ուզէ : 19 - Եւ իմ որդւոյս Սողոմոնի կատարեալ սիրտուր , որպէս զի քու պատուիրանքներդ , վկայութիւններդ ու կանոններդ պահէ և ամէնը ի գործ դնէ , ու շինէ

այն պալատը որու համար պատրաստութիւն տեսեր եմ :

20 - Եւ Դաւիթ բոլոր ժողովքին ըսաւ , Հիմա ձեր Տէր Աստուածը օրհնեցէք . ու բոլոր ժողովքը իրենց հայրերուն Տէր Աստուածը օրհնեցին , և ծռելով՝ Տէրոջը ու թագաւորին երկրպագութիւն ըրին : 21 - Ու հեռեկալ օրը զրհեր ու ողջակէզներ մատուցին Տէրոջը , հազար զուարակ , հազար խոյ , հազար գառ՝ անոնց թափելու՝ նուէրներովը , ու բոլոր Իսրայէլի համար շատ զրհեր մարտնչին : 22 - Եւ այն օրը Տէրոջը առջև մեծ ուրախութիւնով կերան խմեցին , ու Դաւիթի որդին Սողոմոնը նորէն թագաւոր ըրին . զանիւ՝ Տէրոջը համար թագաւոր՝ ու Սագովկը քահանայ օժեցին : 23 - Եւ Սողոմոն իր հօրը Դաւիթի տեղ Տէրոջը աթոռին վրայ թագաւոր նստաւ , ու յաջողութիւն գտաւ . և բոլոր Իսրայէլ անոր հնազանդեցաւ : 24 - Ու ամէն իշխանները ու զօրաւորները , և Դաւիթ թագաւորին բոլոր որդիներն ալ Սողոմոն թագաւորին *հնազանդեցան : 25 - Ու Տէրը բոլոր Իսրայէլի առջև Սողոմոնը խիստ մեծցուց , և անոր այնպէս թագաւորութեան փառք տուաւ , որ անկէ առաջ Իսրայէլի վրայ թագաւոր եղողի մը ամենեւին եղած չէր :

26 - Այսպէս Յեսսէի որդին Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ . 27 - Եւ անոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղան . Քեբբոնի մէջ եօթը տարի թագաւորութիւն ըրաւ , ու Երուսաղէմի մէջ երեսունուիրէք տարի թագաւորութիւն ըրաւ : 28 - Եւ բարի ծերութեամբ մեռաւ , կեանքէն , մեծութենէն ու փառքէն իր բաղձանքը առած . և անոր տեղ անոր որդին Սողոմոն թագաւոր եղաւ : 29 - Ու Դաւիթ թագաւորին առաջին ու վերջին գործերը ահա Սամուէլ տեսանողին զիրքին մէջ , ու Նաթան մարգարէին զիրքին մէջ , և Գագ տեսանողին զիրքին մէջ գրուած են , 30 - Նաև անոր բոլոր թագաւորութիւնը ու քաջութիւնը ու թէ՛ անոր թէ՛ Իսրայէլի և թէ՛ +իւ երկիրներուն ամէն թագաւորութիւններուն պատահած գիպուածները :

*Եբբ . քու ձեռքէդ +Եբբ . սպառնալիցութիւն +Կմ , հաստատել

*Եբբ ձեռք տակին . տես Ծն . իդ . 2 : խէ . 29 : ր Մն . 1 . 8 : Եղեկ . 3 է . 18 :

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ



ԳԼՈՒԽ Ա.

Եւ Դաւիթի որդին Սողոմոնն իր թագաւորութեանը մէջ զօրացաւ . ու անոր Տէր Աստուածը անոր հետ էր , ու զանհկա խիստ մեծցուց : 2 - Եւ Սողոմոնն բոլոր Իսրայէլի, այսինքն հազարապետներուն, հարիւրապետներուն, գաւառաւորներուն ու բոլոր Իսրայէլի աւէն տոհմապետներուն, խօսեցաւ : 3 - Եւ Սողոմոնն ու բոլոր ժողովքը անոր հետ Գաբաւոնի բարձր տեղը գացին . քանզի Տէրօջր ծառային , Մովսէսի , անապատին մէջ շինած՝ Աստուծոյ ժողովքի խորանը հոն էր . 4 - Միայն թէ Դաւիթ Աստուծոյ տապանակը Կարիաթարիմէ իր պատրաստած տեղը հաներ էր . քանզի Երուսաղէմի մէջ անոր վրան մը կանգներ էր . 5 - Սակայն Ովրեան Ուրիի որդւոյն Բեսելիէլի շինած պղնձէ սեղանը հոն Տէրօջր խորանին առջև էր . և Սողոմոնն ու ժողովքը զանհկա փնտռեցին : 6 - Եւ Սողոմոնն հոն Տէրօջր առջև ժողովքի խորանին պղնձէ սեղանին *քով ելաւ , ու անոր վրայ հազար ողջակէզ մատուց :

7 - Այն գիշերը Աստուած Սողոմոնի երեցաւ , ու անոր ըսաւ , Խնդրէ , քեզի ք'նչ տամ : 8 - Եւ Սողոմոնն Աստուծոյ ըսաւ , Դուն իմ հօրս Դաւիթի մեծ ոգորմութիւն ըրիր , ու զիս անոր տեղ թագաւոր ըրիր . 9 - Հիմա , ով Տէր Աստուած , իմ հօրս Դաւիթի ըրած խոտմունքդ հաստատ մնայ . քանզի դուն զիս երկրի հողին չափ շատ ժողովուրդի վրայ թագաւոր ըրիր : 10 - Հիմա ինձի իմաստութիւն ու գիտութիւն տուր , որպէս զի այս ժողովուրդին առջև ելլեմ ու մտնեմ . վասն զի այս քու մեծ ժողովուրդդ ո՞վ կրնայ դատել : 11 - Եւ Աստուած Սողոմոնի ըսաւ , Որովհետև քու սրտիդ մէջ ասիկա եղաւ , ու հարստութիւն , ստացուած , փառք և քու թշնամիներուդ հողին շինդրեցիր , ու երկար կեանք ալ շինդրեցիր , հապա քեզի իմաստութիւն

ու գիտութիւն խնդրեցիր , որպէս զի դատես իմ ժողովուրդս՝ որուն վրայ քեզ թագաւոր ըրի , 12 - Ուրի՞նք իմաստութիւն ու գիտութիւն արուի քեզի , և հարստութիւն , ստացուածք ու փառք ալ պիտի տամ քեզի . այնպէս որ քեզմէ առաջ եղող թագաւորներուն այնպէս եղած չէ , ու քեզմէ ետքը էլ ոչէր ու այնպէս պիտի չըլլայ : 13 - Եւ Սողոմոնն Գաբաւոնի բարձր տեղէն՝ ժողովքի խորանին առջևէն Երուսաղէմ դարձաւ , ու Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ :

14 - Եւ Սողոմոնն կառքեր ու ձիաւորներ ժողովեց . ու անհկա հազար չորս հարիւր կառք ու տասուերկու հազար ձիաւոր ունեցաւ , և զանոնք կառքի քաղաքներուն մէջ ու թագաւորին քով Երուսաղէմի մէջ տեղաւորեց : 15 - Եւ թագաւորը Երուսաղէմի մէջ արծաթի ու ոսկին քարերու պէս ըրաւ , ու եղևնափայտը շատութենէն՝ գաշտի մէջ եղող մոլթգէնիներուն պէս ըրաւ , 16 - Եւ Սողոմոնի ձիերը Եգիպտոսէ կու գային . ու թագաւորին վաճառականներուն կարաւանը որոշուած գնով մը յէրոսոօ երամակներ ծախու կ'առնէին . 17 - Ու Եգիպտոսէ կառք մը դուրս ելլելուն՝ վեց հարիւր արծաթով վեր կը հանէին , ու մէկ ձին հարիւր յիսուն արծաթով . ու Քեսացուց բոլոր թագաւորներուն համար , և Ասորուց բոլոր թագաւորներուն համար ալ՝ անոնց ձեռքով այնպէս կը հանէին :

ԳԼ . Բ

Եւ Սողոմոնն *միտքը դրաւ՝ որ Տէրօջր անուանը տուն՝ ու իր թագաւորութեանը տուն շինէ : 2 - Ու Սողոմոնն եօթանասուն հազար բեռնակիր , ու լեռը քայքայ կարող ութսուն հազար մարդ շինարեց , և անոնց վրայ երեք հազար վեց հարիւր վերակացու դրաւ :

3 - Ու Սողոմոնն Տիւրոսի թագաւորին

*Կա՞մ, վրայ մատուց

*Եթէր. ըսաւ

†Եթէր. համրեց

Քիրամի Բարդ զրկեց, ու ըսաւ, Ինչպէս իմ՝ Տօրս Գաւիթի բրեր, ու անոր եղևնափայտեր զրկեցիր որպէս զի իրեն բնակելու համար տուն շինէ, 4 - Ահա ես իմ՝ Տէր Աստուծոյս անուան տուն կը շինեմ, որպէս զի անոր նուիրուի, անոր առջև անուշահոտ խունկ ծխուի, ու միշտ առաջաւորութեան հացը բրուի, և առտու ու իրիկուն, շաբաթները և ամսագլուխները ու մեր Տէր Աստուծոյն տօներուն օրերը սղջակէզներ Բարդոյն. սահկա Խորայելի յաւառնական պարտաւորութիւնն է: 5 - Եւ այս տունը զոր ես կը շինեմ, մեծ ըլլալու է. քանզի մեր Աստուածը ամէն աստուածներէն մեծ է. 6 - Ու անոր տուն շինելու ո՞վ կարող է. քանզի երկինք ու երկնից երկինք չեն կրնար պարունակել զանկա. ուրեմն ես ո՞վ եմ, որ անոր տուն շինեմ. միայն թէ անոր առջև խունկ ծխելու համար Գիւրգի Գարդոյն: 7 - Եւ հիմա ինծի իմաստուն մարդ մը զրկէ, որ սակին, արծաթը, պղինձը, երկաթը, ծիրանեգոյնը, կարմիրը և կապուտակը բանիլ գիւնայ, ու քանդակագործութիւն ալ գիտնայ, որպէս զի իմ՝ քովս Յուդայի ու Երուսաղէմի մէջ եղող իմ՝ Տօրս Գաւիթի պատրաստած իմաստուններուն հետ ըլլայ: 8 - Եւ ինծի Լիբանանէ եղևնափայտեր, մայր փայտեր ու ալմուկ փայտեր զրկէ. քանզի ես գիտեմ որ քու ծառաներդ Լիբանանէ փայտ կտրելը գիտեն. և ահա իմ՝ ծառաներս քու ծառաներուդ հետ ըլլան, 9 - Ու ինծի խիստ շատ փայտեր պատրաստեն. քանզի իմ՝ շինելու տունս մեծ ու փառաւոր ըլլալու է: 10 - Եւ ահա ես քու ծառաներուդ, փայտ կտրող բանուորներուն, քան հազար քու ծեծուած ցորեն, ու քան հազար քու գարի, ու քան հազար մար գինի ու քան հազար մար իւղ կու տամ:

11 - Եւ Տիւրասի Քիրամ թագաւորը Սողոմոնի նամակ զրկեց ու ըսաւ, Տէրը իր ժողովուրդը սիրելուն համար քեզ անննց վրայ թագաւոր դրաւ: 12 - Եւ Քիրամ ըսաւ, Երկինքը ու երկիրը ստեղծող Խորայելի Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ, որ Գաւիթ թագաւորին խոհեմութիւն ու գիտութիւն ունեցող իմաստուն որդի մը տուաւ, որ Տէրոջը տուն, ու իր թագաւորութեանը տուն պիտի շինէ: 13 - Եւ հիմա իմ

*վարպետս Քիրամը կը զրկեմ, որ հանձարեղ ու իմաստուն մարդ մըն է: 14 - Անկա Գանի աղջիկներէն եղող կնոջ մը որդի է, ու անոր հայրը Տիւրացի է. անկա սակի, արծաթ, պղինձ, երկաթ, քարեր ու փայտեր, նաև ծիրանեգոյնի, կապուտակի, բեհեզի և կարմիրի վրայ բանելու կողմանէ, ու ամէն տեսակ քանդակը քանդակելու կողմանէ յաջողակ է. և քու իմաստուններուդ հետ, ու քու հօրդ Գաւիթի, իմ տերոջս, իմաստուններուն հետ իրեն ամէն առաջարկուած բանին հնարքը կը գտնէ: 15 - Եւ հիմա իմ տէրս իր ըսած ցորենը ու գարին, իւղը ու գինին իր ծառաներուն թող զրկէ. 16 - Ու մենք Լիբանանէ քեզի հարկաւոր եղածին չափ փայտեր կը կտրենք, և զաննք ծովէն լաստեր լնելով Յուդայէ կը բերենք քեզի, ու դուն զաննք Երուսաղէմ հանէ:

17 - Ու Սողոմոն Խորայելի երկրին մէջ եղող բոլոր օտարազգի մարդիկը իր հօրը Գաւիթի համբէլէն ետքը համբեց. և աննք հարիւր յիսունուիրեք հազար վեց հարիւր մարդ գտնուեցան. 18 - Ու աննցմէ եօթանասուն հազար բեռնակիր, ու լեռը քար կտրող ու թտուն հազար, ու զաննք բանեցնելու համար երեք հազար վեց հարիւր վերակացու ըրաւ:

ԳԼ Գ

Եւ Սողոմոն սկսաւ Տէրոջը տունը շինել Երուսաղէմի մէջ, Մօրիա լեռանը վրայ, ուր Տէրը անոր հօրը Գաւիթի երեցեր էր, այն տեղը զոր Գաւիթ Յերուսացի Ռոնայի կալին մէջ պատրաստէր էր: 2 - Եւ իր թագաւորութեանը չորրորդ տարին, երկրորդ ամսուն երկրորդ օրը սկսաւ կանխել: 3 - Ու Աստուծոյ տունը շինելու համար Սողոմոնի դրած հիմը սահկա էր. առաջուան չափով վաթսուն կանգուն երկայն, ու քան կանգուն լայն էր: 4 - Եւ գիմնոցը եղող սրահին երկայնութիւնը՝ ամեն լայնութիւնովը քան կանգուն, ու բարձրութիւնը հարիւր քան խնդրէր. ու զանկա ներսէն մաքուր սկիւով պատեց: 5 - Եւ մեծ տունը մայր փայտով ծածկեց,

*Եր. հայրս

ԳԼ. Դ

ու զանհկա մաքուր ոսկիով պատեց ,
ու անոր վրայ արմուէնիններ ու շղթա-
ներ * փորագրեց : 6 - Եւ շքեղութեան
համար տունը պատուական քարերով
զարդարեց . ու ոսկին Փարուիմի ոսկի
էր : 7 - Եւ տանը գերանները , սեմերը ,
պնտերը ու դռները ոսկիով պատեց .
ու պատերուն վրայ քերովբէներ քան-
դակեց :

8 - Եւ սրբութեանց սրբութիւնին
տունը շինեց . անոր երկայնութիւնը
տանը լայնութեանը պէս՝ քսան կան-
գուն , ու լայնութիւնը քսան կանգուն
էր . և զանհկա վեց հարիւր տաղանդի
չափ մաքուր ոսկիով պատեց : 9 - Ու
բեւեռներուն կշիռքը յիսունական
սիկղ ոսկի էր . ու վերնատունները ոս-
կիով պատեց : 10 - Եւ սրբութեանց
սրբութիւնին տանը մէջ երկու քան-
դակագործ քերովբէներ շինեց , ու զա-
նանք ոսկիով պատեց . 11 - Եւ քերով-
բէներուն թևերը քսան կանգուն եր-
կայնութիւն ունէին . մէկ թևը հինգ
կանգուն էր ու տանը պատին կը դրու-
չէր , և միւս թևը հինգ կանգուն էր
ու միւս քերովբէին թևին կը դպչէր .

12 - Մի՝ քերովբէին ալ մէկ թևը
հինգ կանգուն էր ու տանը պատին կը
դպչէր , ու միւս թևը հինգ կանգուն
էր ու միւս քերովբէին թևին կցուած
էր : 13 - Այս քերովբէներուն տարած-
ուած թևերուն երկայնքն քսան
կանգուն էր . ու անոնք իրենց սաքե-
րուն վրայ կայնած էին , ու անոնց
երեսը դէպ ի փտունը կը նայէր :

14 - Եւ վարագոյրը կապուտակէ ,
ծիրանիէ , կարմիրէ ու բեհեզէ շինեց ,
ու անոր վրայ քերովբէներ գործեց :

15 - Եւ տանը առջև երեսունըհինգ
կանգուն երկայնութեամբ երկու սիւն
շինեց , ու ամէն մէկուն վրայ ի խոյակը
հինգ կանգուն էր : 16 - Եւ գաբիրին
մէջի շղթաներուն պէ՝ շղթաներ շինեց ,
ու սիւններուն վրայ դրու . և հարիւր
նուա շինեց ու շղթաներուն անցուց :

17 - Եւ սիւները տաճարին առջև
կանգնեց , մէկը աջ կողմէն ու միւսը
ձախ կողմէն . և աջ կողմը եղողին ա-
նունը Յաբին , ու ձախ կողմը եղողին
անունը Բուզ կոչեց :

Ու պղնձէ սեղան մը շինեց , երկայ-
նութիւնը քսան կանգուն , և լայնու-
թիւնը քսան կանգուն ու բարձրու-
թիւնը տասը կանգուն :

2 - Եւ ձուլածոյ ծովը շինեց . «- մէկ
շղթանքէն մինչև միւս շղթանքը տասը
կանգուն էր , ու բոլորածէ էր , և անոր
բարձրութիւնը հինգ կանգուն էր , ու
անոր շրջապատը երեսուն կանգուն էր .

3 - Եւ անոր տակ շուրջանակի ամէն
կողմէն եզներու նմանութիւններ կա-
յին . ծովուն բոլորափքը մէկ կանգունի
մէջ տասնական եպէր խոյն . «- եզները
երկու կարգ էին , որոնք շուրջ ձուլած
ատեննին ձուլեր էին : 4 - Անիկ տաս-
ուերկու եզներու վրայ կը կենար , որոնց
երեքը դէպ ի հիւսիս , երեքը դէպ ի
արեւմուտք , երեքը դէպ ի հարաւ , ու
երեքը դէպ ի արեւելք կը նայէին , ու
ծովը անոնց վրայ էր , և ամէնուն ե-
տակի կողմը դէպ ի ներս դարձած էր :

5 - Ու անոր թանձրութիւնը չորս մտա-
նաչափ էր , և շղթանքը գաւաթի
շղթանքի պէս էր , ու ձրան շուրջանի
ծաղիկներ շինուած էին , ու երեք հա-
զար մար կ'առնէր :

6 - Եւ տասը աւազան շինեց , ու
հինգը աջ կողմը ու հինգն ալ ձախ
կողմը դրու լուացման համար . ողջա-
կէզները անոնց մէջ կը լուային . բայց
ծովը քահանաներուն համար էր , որ-
պէս զի հոն լուացուին :

7 - Եւ տասը ոսկեղէն աշտանակները
շինեց իրենց օրինակին համեմատ , ու
զանոնք տաճարին մէջ դրու , հինգը
աջ կողմը ու հինգը ձախ կողմը :

8 - Եւ տասը սեղան շինեց , ու զա-
նանք տաճարին մէջ դրու , հինգը աջ
կողմը ու հինգը ձախ կողմը . ու հար-
իւր ոսկեղէն կոնքեր շինեց :

9 - Եւ քահանաներուն գաւաթը ու
մեծ գաւաթը և գաւաթին դռները շի-
նեց , ու անոնց փեղկերը պղնձով պա-
տեց : 10 - Եւ ծովը աջ կողմը հարաւի
դէմ դէպ ի արեւելք դրու :

11 - Ու Քիրամ կաթսաները , թիակ-
ները ու կոնքերը շինեց . և Քիրամ կա-
տարեց այն բոլոր գործերը զորոնք Աս-
տուծոյ տանը համար Սողամն թագա-
ւորին կը շինէր . 12 - Այսինքն երկու

*Եբբ. հանեց

+կաժ, ներս

*Եբբ. ողջակէզի գործը

սիւները ու գունատերը ու երկու սիւնե-
 բուն գլուխը եղող խոյակները, և սիւ-
 ներուն գլուխը եղող խոյակներուն եր-
 կու գունատերը ծածկելու համար երկու
 ցանցակերպ զարդերը, 13 - Ու երկու
 ցանցակերպ զարդերուն չորս հարիւր
 նուռերը, այսինքն սիւներուն վրայի
 խոյակներուն երկու գունատերը ծածկե-
 լու համար՝ ամէն մէկ ցանցակերպ
 զարդին վրայ երկու կարգ նուռեր :
 14 - Եւ մեքենովթները շինեց, ու մե-
 քենովթներուն վրայի աւազանները
 շինեց . 15 - Մէկ ծովը ու անոր ասկի
 տասուերկու եզները : 16 - Եւ կաթ-
 տաները ու թիակները ու մասհանները
 և անոնց բոլոր գործիքները՝ Տէրոջը
 տանը համար Սողոմոն թագաւորին՝
 փայլուն պղնձէ շինեց անոր վարպետը
 Քիրամ : 17 - Թագաւորը զանանք Յոր-
 դանանու դաշտին մէջ թամնար հողի
 մը վրայ ձուլել տուաւ Սոկքովթի ու
 *Սարեգայի մէջտեղ : 18 - Եւ Սողոմոն
 ոչս բոլոր կարասիները խիստ շատ շի-
 նեց, քանզի պղինձը կշիւքի չէր
 դար : 19 - Ու Սողոմոն Աստուծոյ տանը
 բոլոր կարասիները շինեց. նաև Խոփն
 ոսկի սեղանը, ու այն սեղանները՝
 որոնց վրայ առաջաւորութեան հացը
 իւր Կրօնէի, 20 - Եւ մաքուր ոսկիէ աշ-
 տանակները ու անոնց ճրագները, դա-
 բիրին առջև վաւելու համար ըստ ս-
 վորութեան, 21 - Եւ զուտ ոսկիէ ծա-
 դիկները ու ճրագները և ունելիները,
 22 - Ու մաքուր ոսկիէ բազմակալները,
 տաշտերը, խնկամանները ու բուրվաւ-
 ները, և տանը դռները, այսինքն
 սրբութեանց սրբութիւնին ներսի դրա-
 նը փեղկերը, և տանը, այսինքն տա-
 ճարին, դրանը փեղկերը ոսկիէ շինեց :

ԳԼ Ե

Եւ Սողոմոնի Տէրոջը տանը համար
 շինած բոլոր գործը լմնցաւ. ու Սողոմոն
 իր հօրը Գուիթի նուիրած բաները, և
 արծաթը ու ոսկին ու բոլոր անօթները
 տարաւ, և Աստուծոյ տանը զանձերուն
 մէջ դրաւ :

2 - Այն աստեւ Սողոմոն Իսրայէլի ծե-
 բերը, ու ղեղերուն բոլոր իշխանները,
 Իսրայէլի որդիներուն նահապեաները,
 Երուսաղէմի մէջ ժողովեց, որպէս զի

*Կա՛, Սարթանի. գ թագ. է. 46 :

Տէրոջը ուխտին տապանակը Գուիթի
 քաղաքէն, այսինքն Սիօնէ, հանեն : 3 -
 Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը եօթնե-
 րորդ ամսուն տօնին աստեւը թագաւո-
 րին քով ժողովուեցան : 4 - Ու Իսրա-
 յէլի բոլոր ծերերը եկան. ու Ղևտա-
 ցիները տապանակը վերցուցին : 5 -
 Եւ տապանակը ու ժողովքի խորանը
 և խորանին մէջ եղած բոլոր սուրբ
 անօթները հանեցին, զանոնք քահա-
 նաները «- Ղևտացիները հանեցին :
 6 - Եւ Սողոմոն թագաւորը ու անոր
 քով ժողովուած Իսրայէլի բոլոր ժո-
 ղովքը տապանակին առջև ըլլալով՝
 սխառներ ու արջաւներ կը զոհէին,
 այնչափ շատ՝ որ անթիւ ու անհամար
 էին : 7 - Եւ քահանաները Տէրոջը ուխ-
 տին տապանակը ներս տարին իր աեղը,
 տանը դաբիրը, սրբութիւն սրբու-
 թեանցը, «- քերովբէներուն թեւերուն
 տակ Կրօն : 8 - Ու քերովբէները ա-
 պանակին տեղին վրայ իբե՛ն թեւերը կը
 տարածէին, և քերովբէները տապա-
 նակը ու անոր ձողերը վերէն կը ծած-
 կէին : 9 - Եւ ձողերը երկնցուցին, և
 ձողերուն ծայրերը տապանակէն դա-
 բիրին առջև կ'երևնային, բայց գուր-
 սէն չէին երևնար. ու մինչև այսօր հոն
 է : 10 - Տապանակին մէջ ուրիշ բան
 չկար, բայց միայն երկու տախտակ-
 ները, զորոնք Մովսէս Քորեբի մէջ հոն
 դրաւ, որոնցմով Տէրը Իսրայէլի որդի-
 ներուն հետ «-Իր ըրաւ՝ անոնց Եգիպ-
 տոսէ ելած աստեւը :

11 - Ու երբ քահանաները սուրբ տե-
 ղէն եկան, (վասն զի բոլոր հոն գանուող
 քահանաները սրբուեր էին, ոչ թէ
 իրենց յաջորդական կարգը պահելով :

12 - Ու երգեցող Ղևտացիներուն բո-
 լորը՝ Ասափի, Եմանի «- Իգիթունի և
 անոնց որդիներուն ու եղբայրներուն
 հետ բեհեզներ հագած, ծնծղաներով,
 տաւիղներով ու քնարներով սեղանին
 արևելեան կողմը կայնեցան. և անոնց
 հետ հարիւր քսան քահանայ փող կը
 հնչեցնէին.) 13 - Ու երբ փող հնչեցը-
 նողները ու երգեցողները միաբերան
 մէկ ձայնով Տէրը կ'օրհնէին ու կը գո-
 վէին, և փողերով, ծնծղաներով ու
 երգոց նուագարաններով ձայներնին
 վերցնելով Տէրը կ'օրհնէին, ըսելով,
 Գահացե՛ք Տէր-Չէ՛ն, վասն զի բարի է,
 վասն զի անոր սղորմութիւնը յա-
 ւիտեան է, այն աստեւ Տէրոջը տանը

ամպով լեցուեցաւ : 14 - Եւ ամպին պատճառաւ քահանաները չէին կրնար հան կենալ , որ էրեւոյ պաշտօնը կատարեն . քանզի Տէրօջը փառքը Աստուծոյ տունը լեցուցեր էր :

ԳԼ . 2

Այն ատեն Սողոմոն ըսաւ , Տէրը ըսաւ որ ինք մառախուղի մէջ կը բնակի : 2 - Բայց ես քեզի բնակութեան համար տուն , ու յաւիտեան քու նստելուդ համար տեղ շինեցի : 3 - Եւ թագաւորը իր երեսը դարձուց , ու Խորայէլի բոլոր ժողովքը օրհնեց . ու Խորայէլի բոլոր ժողովքը տաքի վրայ կայներ էին : 4 - Եւ անհկա ըսաւ , Օրհնեալ ըլլայ Խորայէլի Տէր Աստուածը , որ իր բերնով իմ հօրս Դաւիթի խօսք տուաւ , ու իր ձեռքով կատարեց . քանզի ըսաւ , 5 - Իմ ժողովուրդս Եգիպտոսի երկրէն հանած օրէս ի վեր՝ Խորայէլի բոլոր ցեղերէն բնաւ քաղաք մը չընտրեցի տուն շինելու համար , որպէս զի իմ անունս հոն ըլլայ , ու մարդ մը չընտրեցի , որպէս զի իմ ժողովուրդիս Խորայէլի վրայ իշխան ըլլայ . 6 - Հապա Երուսաղէմը ընտրեցի , որպէս զի իմ անունս հոն ըլլայ . ու Դաւիթը ընտրեցի , որպէս զի իմ ժողովուրդիս Խորայէլի վրայ իշխան ըլլայ : 7 - Եւ իմ հայրս Դաւիթ միտք ունէր որ Խորայէլի Տէր Աստուծոյն անուանը տուն մը շինէ . 8 - Բայց Տէրը իմ հօրս Դաւիթի ըսաւ , Արովհեակ դուն միտքդ դրիր որ իմ անունս տուն շինես , աղէկ ըրիր որ այս բանը միտքդ դրիր . 9 - Սակայն տունը դուն պիտի չշինես . հապա քու որդիդ որ քու երանքէդ պիտի ելլէ , անհկա իմ անունս՝ տունը պիտի շինէ : 10 - Եւ հիմա Տէրը իր ըսած խօսքը կատարեց , ու ես իմ հօրս Դաւիթի տեղ յաջորդեցի , ու Տէրօջը ըսածին պէս Խորայէլի աթոռը նստայ , ու Խորայէլի Տէր Աստուծոյն անուանը՝ այս տունը շինեցի : 11 - Եւ հոն գրի տապանակը , որուն մէջ է Տէրօջը ուխտը զոր Խորայէլի որդիներուն հետ բրաւ :

12 - Ու Տէրօջը սեղանին առջև՝ Խորայէլի բոլոր ժողովքին դիմաց կայնելով , ձեռքերը տարածեց . 13 - (Քանզի Սողոմոն պղնձէ *խարխիս մը

շինելով՝ զանհկա գաւթի մէջտեղը դրեր էր . անոր երկայնութիւնը հինգ կանգուն , ու լայնութիւնը հինգ կանգուն , ու բարձրութիւնը երեք կանգուն էր . և ինք անոր վրայ կայնեցաւ , ու Խորայէլի բոլոր ժողովքին առջև ծունկ կրկնեց , և ձեռքերը դէպ ի երկինք տարածեց .)

14 - Եւ ըսաւ , Ով Տէր Աստուած Խորայէլի , երկինքի մէջ ու երկրի վրայ քեզի պէս Աստուած չկայ , որ քու առջևդ իրենց բոլոր սրտովը քաղող ծառաներուդ հետ ուխտ ու սղորմութիւն կը պահես . 15 - Դուն քու ծառայիդ , իմ հօրս Դաւիթի , ըրած խոստմունքդ պահեցիր , ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր , ինչպէս այսօր է՝ քանայ : 16 - Եւ հիմա , ով Տէր Աստուած Խորայէլի , պահէ այն խոստմունքդ զոր քու ծառայիդ իմ հօրս Դաւիթի ըրիր , ու ըսիր , իմ առջևս Խորայէլի աթոռին վրայ նստող մարդ քեզմէ պակաս պիտի չըլլայ . միայն թէ քու որդիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն , ու իմ օրէնքիս մէջ քայլեն , ինչպէս դուն իմ առջևս քայլեցիր : 17 - Եւ հիմա , ով Տէր Աստուած Խորայէլի , թող քու ծառայիդ Դաւիթի ըսած խօսքդ հաստատուի :

18 - Բայց միթէ Աստուած իրաւցընէ երկրի վրայ մարդոց հետ պիտի բնակի . ահա երկինք ու երկնից երկինք քեզ չեն կրնար պարունակել . ո՞ր կը մնայ այս իմ շինած տունս : 19 - Սակայն , ով Տէր Աստուած իմ , քու ծառայիդ աղօթքին ու խնդրուածքին նայէ , որպէս զի քու ծառայիդ այսօր քու առջևդ ըրած պաղատանքը ու աղօթքը լսես . 20 - Որպէս զի այս տանը վրայ ցորեկ ու գիշեր քու աչքերդ բաց ըլլան , այն տեղին վրայ՝ որու համար ըսիր թէ քու անունդ հոն պիտի դնես . այնպէս որ այս տեղ քու ծառայիդ ըրած աղօթքը լսես : 21 - Ուրեմն քու ծառայիդ և քու ժողովուրդիդ Խորայէլի այս տեղ ըրած աղօթքները լսես . այս , քու բնակութեանդ տեղէն , երկինքէն , լսես , ու լսած ատենդ ներես :

22 - Եթէ մէկը իր ընկերին դէմ մեղանչէ , ու ան ալ երդում ընել տալու համար անոր երդում առաջարկէ , ու երդումը այս տունը քու սեղանիդ առջև գայ , 23 - Այն ատեն դուն երկինքէն լսես ու կատարես , ու քու ծա-

*կամ, բեմ

ուաներդ դատես , և յանցաւորը դատապարտես , ու անոր ըրածը անոր գլուխը բերես . և արդարը արդարացընես , ու անոր արդարութեանը չափովը անոր հատուցում՝ ընես :

24 - Եւ եթէ քու՝ ժողովուրդդ Խորայէլ , քեզի դէմ մեղանշելուն համար , իրենց թշնամիներուն առջև յաղթուին , ու խեղճ դառնան և քու անուանդ փառք տան , ու այս տան մէջ քու առջևդ աղօթք ու աղաչանք ընեն , 25 - Այն ատեն դուն երկինքէն լսես , և քու ժողովուրդիդ Խորայէլի մեղքը ներես . ու անոնց և անոնց հայրերուն տուած երկիրդ դարձնես զանոնք :

26 - Եթէ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար երկինք գոցուի ու անձրև չգայ , ու անոնք այս տեղ քեզի աղօթք ընեն և քու անուանդ փառք տան , ու զանոնք նեղելուդ համար իրենց մեղքերէն դառնան , 27 - Այն ատեն դուն երկինքէն լսես , և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ Խորայէլի մեղքը ներես , որպէս զի անոնց սորվեցնես այն աղէկ ճամբան՝ որուն մէջ պիտի քալեն . ու քու ժողովուրդիդ ժառանգութիւն տուած երկիրդ վրայ անձրև տաս :

28 - Եթէ երկրի վրայ սով , կամ ժանտախտ , կամ խորշակահարութիւն , կամ արհեստի դալուկ , կամ մարտի , կամ թրթուր ըլլայ , կամ անոնց թշնամիները զանոնք իրենց *բնակած երկրին մէջ նեղեն , կամ որևիցէ հարուած կամ հիւանդութիւն ըլլայ , 29 - Քու բոլոր ժողովուրդէդ Խորայէլէ որևիցէ մարդ աղօթք մը ու խնդրուածք մը ընելու ըլլայ , ու իւրաքանչիւր մարդ իր ախար ու ցաւը ճանչնալով՝ ձեռքերը դէպի այս տունը երկնցնէ , 30 - Այն ատեն դուն երկինքէն , քու բնակութեանդ տեղէն , լսես ու ներես . և ամէն մարդու իր բոլոր ճամբաներուն համեմատ հատուցում ընես , անոր սիրտը գիտնալուդ համար . վասն զի մարդոց որդիներուն սիրտը միայն դուն գիտես . 31 - Որպէս զի քեզմէ վախնան ու քու ճամբաներուդ մէջ քալեն բոլոր երեսն օրերուն մէջ , որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկիրդ վրայ պիտի ապրին :

32 - Ու քու ժողովուրդէդ Խորայէլէ

*Եբր. դռներուն

չեղող , և հեռաւոր երկրէ մը քու մեծ անուանդ համար և զօրաւոր ձեռքիդ համար ու բարձր բազուկիդ համար եկող օտարականն ալ եթէ գայ , ու այս տանը մէջ աղօթք ընէ , 33 - Իսկ երկինքէն , քու բնակութեանդ տեղէն , լսես , և օտարականին քեզի ըրած ամէն խնդրուածքը կատարես , որպէս զի երկրի ամէն ժողովուրդները քու անուանդ ճանչնան , ու քու ժողովուրդիդ Խորայէլի պէս քեզմէ վախնան , և գիտնան թէ այս իմ՝ շինած տանս վրայ քու անուանդ կոչուած է :

34 - Երբ քու ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի երթայ այն ճամբով որ դուն պիտի զրկես զանոնք , եթէ անոնք այս քու ընտրած քաղաքիդ , ու քու անուանդ համար այս իմ՝ շինած տանս կողմը նայելով քեզի աղօթք ընեն , 35 - Երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , և անոնց իրաւունք ընես :

36 - Երբ քեզի դէմ մեղք գործեն , (քանզի մեղք չգործող մարդ չկայ ,) ու անոնց բարկանալով զանոնք թշնամիին ձեռքը մտանես , ու անոնց գերեվարները հեռու կամ մօտ երկիր մը գերի տանին զանոնք , 37 - Եթէ այն իրենց գերութեան երկրին մէջ զեղջի գան ու դառնան , և իրենց գերութեան երկրին մէջ քեզի աղաչեն ու լսեն , Մեղք գործեցինք , անօրէնութիւն ու անիրաւութիւն ըրինք . 38 - Եւ եթէ անոնք իրենց գերութեան երկրին մէջ , ուր գերի տարուած են , իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգւովը քեզի դառնան , ու իրենց երկրին , զոր իրենց հայրերուն տուիր , և քու ընտրած քաղաքիդ , ու քու անուանդ համար իմ՝ շինած տանս կողմը նայելով աղօթք ընեն , 39 - Իսկ երկինքէն , քու բնակութեանդ տեղէն , անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , ու անոնց իրաւունք ընես , և քու ժողովուրդիդ քեզի դէմ ըրած մեղքը ներես : 40 - Հիմա , սով Աստուած իմ , այս տեղ Ժողովուրդիդ աղօթքին թող քու աչքերդ բաց ըլլան , ու քու օկանջներդ մտիկ ընեն : 41 - Եւ հիմա , սով Տէր Աստուած , քու հանգստութեանդ տեղը ելիր , դուն ու քու զօրութեանդ տապանակը . սով Տէր Աստուած , քու քահանաներդ փրկութիւն հազնին , և քու սուրբերդ բարութիւնով ու բախանան : 42 - Ով Տէր

տակ պիտի ընեմ: 21 - Եւ այս բարձր տանը համար անոր քովէն անցնողը պիտի զարմանայ ու պիտի ըսէ, Տէրը ինչո՞ւ համար այս երկրին ու այս տանը այսպէս ըրաւ: 22 - Եւ պիտի ըսեն, Վասն զի իրենց հայրերուն Տէր Աստուածը թողուցին, որ զանոնք Եգիպտոսի երկրէն հաներ էր, և ուրիշ աստուածներու յարեցան, և անոնց երկրպագութիւնն ու ծառայութիւնն ըրին. այս պատճառաւ անոնց վրայ այս բոլոր շարիքները բերաւ:

ԳԼ Ը

Եւ Սողոմոն Տէրոջը տունը ու իր տունը քան տարւան մէջ շինելէն ետքը, 2 - Սողոմոն այն քաղաքներն ալ շինեց, զորոնք Քիրամ՝ Սողոմոնի տուեր էր, ու հոն Իսրայէլի որդիները բնակեցուց: 3 - Եւ Սողոմոն Սուբայի Եմաթը գնաց, ու անոր տիրեց: 4 - Եւ անապատին մէջ Թադմօրը շինեց, ու այն բոլոր շտեմարանի քաղաքները՝ զորոնք Եմաթի եւէրէն մէջ շինեց. 5 - Ու վերի Բեթորոնը և վարի Բեթորոնը պարիսպներով, դռներով ու նիգերով ամրացած քաղաքներ շինեց. 6 - Նաև Բաաղէթը, ու Սողոմոնի բոլոր շտեմարանի քաղաքները, ու կառքերուն բոլոր քաղաքները, ու ձիաւորներուն քաղաքները, և այն բոլոր *շէնքերը՝ զորոնք Սողոմոն ուղեց շինել Երուսաղէմի մէջ, Լիբանանի մէջ ու իր տէրութեանը բոլոր երկրին մէջ:

7 - Այն բոլոր ժողովուրդները որոնք Քեաացիներէն, Ամօրհացիներէն, Փերեզացիներէն, Խեացիներէն ու Յեբուսացիներէն մնացեր էին, և Իսրայէլի «բէրէնք» չէին, 8 - Այսինքն անոնց զաւակները որոնք անոնցմէ ետքը այն երկրին մէջ մնացեր էին, ու Իսրայէլի որդիները զանոնք բոլորովին կորսնցուցած չէին, Սողոմոն զանոնք հարկատու ըրաւ մինչև այսօր: 9 - Եւ Սողոմոն իր գործին համար Իսրայէլի որդիներէն ծառաներ չըրաւ. հապա անոնք պատերազմական մարդիկ, ու իր զօրավարներուն իշխանները, և իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն էին: 10 - Եւ Սողոմոն թագաւորին գլխաւոր իշխանները երկու հարիւր

յիսուն մարդիկ էին, որոնք ժողովուրդին վրայ կ'իշխէին:

11 - Ու Սողոմոն Փարաւոնի աղջիկը Գաւիթի քաղաքէն անոր համար շինած տունը հանեց. վասն զի ըրաւ, Իմ կինս Իսրայէլի թագաւորին, Գաւիթի, տունը չնստի, վասն զի Տէրոջը տապանակին մտած տեղերը սուրբ են: *

12 - Այն ատեն Սողոմոն սրահին առջև շինած Տէրոջը սեղանին՝ վրայ ողջակէզներ մտաուց Տէրոջը: 13 - Եւ Սովսէսի պատուիրածին համեմատ ամէն օրուան որոշուածը՝ շաբաթներու, ամսագլուխներու ու հանգիստւոր տոներուն մէջ, տարին երեք անգամ, այսինքն քաղաքջակերաց ատնին, շաբաթներու ատնին ու տաղաւարահարաց ատնին կը մտաուցանէր: 14 - Եւ իր հօրը Գաւիթի կանոնովը քահանաներուն դասերը իրենց պաշտօններուն վրայ, ու Ղևտացիները իրենց պահպանութիւններուն վրայ, ամէն օրուան որոշուածին պէս, քահանաներուն առջև օրհնելու ու սպասաւորութիւն ընելու համար, և դռնապաններն ալ իրենց դասերուն կարգովը ամէն մէկ դուռը դրաւ. քանզի այսպէս էր Աստուծոյ մարդուն Գաւիթի հրամանը:

15 - Ու քահանաներուն ու Ղևտացիներուն համար, և գանձարաններուն համար, ամէն բանի մէջ թագաւորին հրամանէն դուրս չէլան: 16 - Ու Սողոմոնի ամէն գործը, Տէրոջը տանը հիմը դրուած օրէն մինչև անոր լմրնայրը, *պատրաստուած էր: Այսպէս, կառարուեցաւ Տէրոջը տունը:

17 - Այն ատեն Սողոմոն Եգովմի երկրին մէջ՝ ծովեզերքը եղող Գասիոնգարերը ու Ելաթը գնաց: 18 - Եւ Քիրամ իր ծառաներուն ձեռքով նսււեր ու ծովու «մէք»-ը-նէ-ան հմուտ եղող ծառաներ զրկեց անոր. ու Սողոմոնի ծառաներուն հետ Ոփիր գացին, և անկէ չորս հարիւր յիսուն տաղանդ սակի աւին, ու Սողոմոն թագաւորին բերին:

ԳԼ Թ

Եւ Սարայի թագուհին Սողոմոնի համբաւը լսեց, ու Սողոմոնը խթին հարցումներով փորձելու համար Երու-

*Եբր. փափաքը

*Կամ, կարգաւորուած

սաղէմ եկաւ խիստ շատ հանգէտով, և խուճկեր ու շատ սակի և պատուական քարեր բեռցած ուղտերով. և Սողոմոնի քով գնաց, ու բոլոր իր սրահն մէջ եղածին վրայով անոր հետ խօսեցաւ: 2 - Եւ Սողոմոն անոր բոլոր հարցումները բացատրեց. ու բնաւ այնպիսի խօսք մը չկար զոր Սողոմոն չհասկնայ ու չբացատրէ անոր: 3 - Եւ Սաբայի թագուհին Սողոմոնի իմաստութիւնը, ու անոր շինած տունը, 4 - Եւ անոր սեղանին կերակուրները, ու անոր ծառաներուն* բնակարանները, և սպասաւորներուն կայնուածքը, ու անոնց հագուստները, և անոր մատուակները, ու անոնց հագուստները, ու Տէրոջը տունը ելլելու սանդուխը տեսնելով խելքը գլխէն գնաց: 5 - Եւ թագաւորին բաւ, Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր: 6 - Բայց ես այն խօսքերուն չհաւատացի, մինչև «նշմօք եկայ ու իմ աչքերովս տեսայ. և ահա քու իմաստութեանդ շատութեանը կէսը ինծի չպատմուեցաւ. դուն գերազանց ես +» - համբաւէդ զոր ես լսեցի: 7 - Երանի՛ քու մարդոցդ, ու երանի՛ այս քու ծառաներուդ որոնք միշտ քու առջև կայնելով քու իմաստութիւնդ կը լսեն: 8 - Քու Եհովա Աստուածդ օրհնեալ ըլլայ, որ քեզի հաւնեցաւ, ու քեզ իր աթոռին վրայ դրաւ, որպէս զի քու Տէր Աստուծոյդ համար թագաւոր ըլլաս. քու Աստուածդ Իսրայէլը սիրելուն համար ու զանկիկա յաւիտեան հաստատելու համար, քեզ անոնց վրայ թագաւոր դրաւ, որպէս զի իրաւունք ու արդարութիւն բնես: 9 - Եւ թագաւորին հարիւր քսան տաղանդ սակի ու խիստ շատ խուճկեր և պատուական քարեր տուաւ. ու Սաբայի թագուհին՝ Սողոմոն թագաւորին տուած խուճկերուն պէս չկար:

10 - Եւ Քիրամի ծառաները ու Սողոմոնի ծառաները, որոնք Ուփրէ սակի կը բերէին, ալմուկ փայտեր ու պատուական քարեր ալ բերին: 11 - Եւ թագաւորը ալմուկ փայտէն՝ Տէրոջը տանը ու թագաւորական տանը աստիճաններ, ու երգեցողներուն համար քնարներ ու տաւիղներ շինեց. և անոնց

պէս անկէ առաջ Յուդայի երկրին մէջ չէր երևցած:

12 - Ու Սողոմոն թագաւորը Սաբայի թագուհին բոլոր ուզած ու խնդրած բաները տուաւ, այն բաներէն զատ՝ զորոնք անկիւ թագաւորին բերաւ. և անկիւ իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց:

13 - Ու մէկ տարուան մէջ Սողոմոնի եկած սակիին կշիռքը վեց հարիւր վաթսուերկէց տաղանդ սակի էր, 14 - Առուտուր ընողներուն, ու վաճառականներուն, և Արաբացուց բոլոր թագաւորներուն, ու երկրին նախարարներուն՝ Սողոմոնի բերած սակիէն ու արծաթէն գատ:

15 - Եւ Սողոմոն թագաւորը կուծոյ սակիէ երկու հարիւր վահան շինեց. «- ամէն մէկ վահանին համար վեց հարիւր «իզ կուծոյ սակի գնաց: 16 - Կուծոյ սակիէ երեք հարիւր ասպարալ շինեց, «- ամէն մէկ ասպարին երեք հարիւր «իզ սակի գնաց. ու թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք:

17 - Եւ թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը շինեց, ու զանկիկա մաքուր սակիով պատեց: 18 - Եւ աթոռը վեց աստիճան ու սակիէ պատուանդան մը ունէր, որոնք աթոռին կից էին. և նստելու տեղը մէկ կողմէն ու միւս կողմէն յենարաններ ունէր, ու յենարաններուն քով երկու առիւծներ կը կայնէին, 19 - Եւ հոն վեց աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն ու միւս կողմէն տասուերկու առիւծներ կը կայնէին. բնաւ մէկ թագաւորութեան մէջ այսպիսի բան մը չինուած չէր:

20 - Ու Սողոմոն թագաւորին բոլոր խմելիքի ամանները սակի էին. և Լիբանանի անտառին տանը բոլոր ամանները զուտ սակի էին, արծաթէ չկար. Լաւն զի անկիւ Սողոմոնի օրերը բանի մը տեղ չէր սեպուեր: 21 - Քանզի թագաւորին նաւերը Քիրամի ծառաներուն հետ Թարսիս կ'երթային. Թարսիսի նաւերը երեք տարին անգամ մը սակիով, արծաթով, փղոսկրով, կապիկներով ու սիրամարգններով բեռնաւորուած կու գային:

22 - Եւ Սողոմոն թագաւորը հարստութեան ու իմաստութեան կողմանէ՝ երկրի բոլոր թագաւորներէն մեծ եղաւ: 23 - Ու երկրի բոլոր թագաւորները

*Կամ, ժողովը

կը փափաքէին Սողոմոնի երեսը Կէ-
նէլ- , և անոր իմաստութիւնը լսելու ,
զոր Աստուած անոր սրտին մէջ դրեր
էր : 24 - Ու անոնց ամէնը տարուէ
տարի իրենց ընծաները կը բերէին ,
այսինքն արծաթէ ամաններ , սակիէ ա-
մաններ , չանդերձներ , զէնքեր , խուն-
կեր , ձիեր ու ջարիներ :

25 - Եւ Սողոմոն ձիերու ու կառ-
քերու համար չորս հազար ախոռ ու-
նէր , ու տասուերկու հազար ձիաւոր ,
ու զանոնք կառքերու քաղաքներուն
մէջ ու Երուսաղէմի մէջ թագաւորին
քով տեղաւորեց : 26 - Ու Եփրայ գե-
տէն մինչև Փղշտացաց երկիրը ու մին-
չև Եգիպտոսի սահմանը՝ բոլոր թագա-
ւորներուն վրայ կ'իշխէր : 27 - Եւ թա-
գաւորը Երուսաղէմի մէջ արծաթը
քարերու պէս հաւարակ բան իջ բրաւ ,
ու եղևնափայտը շատութենէն դաշտի
մէջ եղող մոլորթզենիներուն պէս ը-
րաւ : 28 - Եւ Սողոմոնի համար Եգիպ-
տոսէ ու ամէն երկիրներէ ձիեր կը
հասնէին :

29 - Եւ Սողոմոնի աւաջին ու վեր-
ջին պատմութեանը մնացորդը՝ Նա-
թան մարգարէի գիրքին մէջ ու Սիւ-
նացի Աքիայի մարգարէութեանը մէջ ,
և Ադգով տեսանողին՝ Նաբատան
Յերոբովամի վրայով Գրա՛ տեսիլքնե-
ներուն մէջ գրուած են : 30 - Ու Սո-
ղոմոն բոլոր Իսրայէլի վրայ Երուսա-
ղէմի մէջ քաւատուն տարի թագա-
ւորութիւն բրաւ : 31 - Եւ Սողոմոն իր
հայրերուն հետ քնացաւ , ու զանհկա
իր հօրը Գաւթի թաղաքին մէջ թա-
ղեցին . և անոր տեղ անոր որդին Ռո-
բովամ թագաւոր եղաւ :

ԳԼ. Ժ

Եւ Ռոբովամ Սիւքէմ գնաց . վասն
զի բոլոր Իսրայէլ զանհկա թագաւոր
ընելու համար Սիւքէմ դացեր էր :
2 - Ու Նաբատան Յերոբովամ որ ,
Սողոմոն թագաւորին երեսէն փախած ,
Եգիպտոս կը բնակէր , այս բանը լսելով
Եգիպտոսէ դարձաւ : 3 - Եւ Բաբ-
ղոնիւսով զանհկա կանչեցին . ու Յերո-
բովամ և բոլոր Իսրայէլ եկան , ու Ռո-
բովամի հետ խօսեցան ու ըսին , 4 -
Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը
դրաւ . ու հիմա քու հօրդ խիստ ծա-

ւայութիւնը ու մեր վրայ դրած ծանր
լուծը թեթեւցուր , ու քեզի ծառայու-
թիւն ընենք : 5 - Եւ անհկա ըսաւ ա-
նոնց , Երեք օրէն ետքը ինծի դարձէք ,
ու ժողովուրդը գնաց :

6 - Եւ Ռոբովամ թագաւորը խոր ,
հուրդ հարցուց այն ծերերուն , որոնք
իր հօրը Սողոմոնի առջև կը կայնէին
երբ անհկա ողջ էր , ու ըսաւ , Քուք
ինծի ի՞նչ խորհուրդ կու տաք , որ այս
ժողովուրդին պատասխան տամ : 7 -

Եւ անոր խօսեցան ու ըսին , Եթէ այս
ժողովուրդին հետ քաղցրութեամբ
վարուիս , ու անոնց հաճելի ըլլաս , ու
անոնց բարի խօսքեր զրուցես , այն ա-
տեն անոնք միշտ քեզի ծառայ կ'ըլ-
լան : 8 - Բայց անհկա ծերերուն իրեն
տուած խորհուրդը մերժեց , ու իր առ-
ջև կայնող Կուրի ճեւ մեծցած երի-
տասարդներուն խորհուրդ հարցուց .

9 - Եւ անոնց ըսաւ , Քուք ի՞նչ խոր-
հուրդ կու տաք , որ այս ժողովուրդին
պատասխան տամ . քանզի անոնք ինծի
խօսեցան ու ըսին , Քու հօրդ մեր վրայ
դրած լուծը թեթեւցուր : 10 - Ու անոր
հետ մեծցած երիտասարդները անոր
խօսեցան ու ըսին , Քու հայրդ մեր

լուծը ծանրացուց , ու դուն մեր վրա-
յէն թեթեւցուր՝ ըսող ժողովուրդին
այսպէս խօսիս , ու անոնց այսպէս ը-
սես . Իմ պզտիկ մատս իմ հօրս մէջ-
քէն հաստ է . 11 - Եւ հիմա իմ հայրս
ձեր վրայ ծանր լուծ դրեր է , բայց ես
ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ .
իմ հայրս ձեզ խարազաններով խրա-
տեր է , բայց ես չե՛զ կարիճներով պի-
տի իբրաբի՛մ :

12 - Եւ Յերոբովամ ու բոլոր ժողո-
վուրդը երրորդ օրը Ռոբովամի եկան ,
ինչպէս թագաւորը ըսեր էր թէ Եր-
բորդ օրը ինծի դարձէք : 13 - Ու թա-
գաւորը անոնց խտուրթեամբ պատաս-
խան տուաւ , և Ռոբովամ թագաւորը
ծերերուն խորհուրդը մերժելով , 14 -

Երիտասարդներուն խորհուրդին պէս
անոնց հետ խօսեցաւ ու ըսաւ , Իմ
հայրս ձեր լուծը ծանրացուցեր է ,
բայց ես զանհկա աւելի պիտի ծանրա-
ցընեմ . իմ հայրս ձեզ խարազաննե-
րով խրատեր է , բայց ես չե՛զ կարիճ-

ներով պիտի իբրաբի՛մ : 15 - Եւ թագա-
ւորը ժողովուրդին Խուրե՛ մտիկ չըրաւ .
վասն զի այս բանը Աստուծմէ եղաւ ,
որպէս զի Տէրը Սիւնացի Աքիայի ձեռ-

քով Նաբատեան Յերոբովամի ըսած խօսքը հաստատէ :

16 - Ու երբ բոլոր Իսրայէլ տեսաւ որ թագաւորը իրենց մտիկ չըրաւ, ժողովուրդն ալ թագաւորին պատասխան տուին ու ըսին, Մենք Դաւիթի քով ի՞նչ բաժին ունինք. ու Յեսաէի որդւոյն քով ժառանգութիւն չունինք. ով Իսրայէլ, թող ամէն մարդ իր վրանը դառնայ. ով Դաւիթ, չիմացուն քու տունդ հոգա. ու բոլոր Իսրայէլ իրենց վրանները գացին : 17 - Բայց Յուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որդիներուն վրայ Ռոբովամ թագաւոր եղաւ : 18 - Եւ Ռոբովամ թագաւորը երբ հարկերուն վրայ եղող Ագորամը ղրկեց, Իսրայէլի որդիները զանկա քարերով քարկոծեցին, ու մեռաւ : Եւ Ռոբովամ թագաւորը արտորայով կառքը հեծաւ, որպէս զի Երուսաղէմ փախչի : 19 - Այսպէս Իսրայէլ Դաւիթի տունէն ապրատամբեցաւ մինչև այսօր :

ԳԼ. ԺԱ

Եւ Ռոբովամ Երուսաղէմ եկաւ, ու Յուդայի և Բենիամինի տունէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ ժողվեց, որպէս զի Իսրայէլի հետ պատերազմ ընեն, ու թագաւորութիւնը Ռոբովամի գործնեն : 2 - Բայց Ասաուծոյ մարդուն Սեմայիայի Տէրօջը խօսքը եղաւ՝ ըսելով, 3 - Սողոմոնի որդւոյն, Յուդայի Ռոբովամ թագաւորին, ու Յուդայի ու Բենիամինի մէջ եղող բոլոր Իսրայէլացիներուն խօսիս ու ըսես, 4 - Տէրը այսպէս կ'ըսէ. Մի ելլէք ու ձեր եղբայրներուն հետ մի պատերազմիք. ամէն մարդ թող իր տունը դառնայ, վասն զի այս բանը ինձմէ եղաւ : Եւ Տէրօջը խօսքը մտիկ ըրին, ու Յերոբովամի վրայ երթալէն ետ կեցան :

5 - Եւ Ռոբովամ Երուսաղէմ բնակեցաւ, ու Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ շինեց : 6 - Բեթլէհէմը, Ետամը, Թեկուէն, 7 - Բեթսուրը, Սաքովը, Ոգոզմը, 8 - Գէթը, Մարեսան, Զիփը, 9 - Ադորայիմը, Լաքիսը, Ազեկան, 10 - Սարսան, Այեղոնը ու Քերոնը շինեց, որոնք Յուդայի ու Բենիամինի մէջ պարսպաւոր քաղաքներ էին : 11 - Եւ պարիսպները ամրա-

ցուց, ու անոնց մէջ զօրապետներ, և կերակուրի ու իւզի և զինի շտեմարաններ, 12 - Ու ամէն մէկ քաղաքին մէջ վահաններ ու նիզակներ դրաւ. և զանոնք խիստ շատ ամրացուց, ու Յուդա և Բենիամին անոր հպարտ էին :

13 - Եւ բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաները ու Աւետացիները իրենց բոլոր սահմաններէն անոր քով ժողովուրեցան. 14 - (Քանզի Աւետացիք իրենց արուարձանները ու կալուածքները թողուցին, և Յուդայի երկեւ ու Երուսաղէմ գացին. վասն զի Յերոբովամ ու անոր որդիները զանոնք Տէրօջը քահանայութենէն մերժեցին.)

15 - Եւ անկա բարձր տեղերուն համար ու դեկերու համար ու իր շինած որթերուն համար իրեն քուրմեր դրաւ :

16 - Եւ անոնց ետեւէն՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն Իսրայէլի Տէր Ասաուծը *սրտանց փնտռողները՝ իրենց հայրերուն Տէր Ասաուծոյն զսճ ընելու համար Երուսաղէմ կ'երթային : 17 - Ու Յուդայի թագաւորութիւնը զօրացուցին, և Սողոմոնի որդին Ռոբովամը երեք տարուան մէջ ուժովցուցին. քանզի երեք տարի Դաւիթի ու Սողոմոնի ճամբովը քալեցին :

18 - Եւ Ռոբովամ Դաւիթի որդւոյն Յերիմովթի աղջիկը, Մայէլէթը, իրեն կին առաւ. նաև Յեսաէի որդւոյն Եղիաբի աղջիկը Աբիբէլը. 19 - Ու անկա որդիներ ծնաւ անոր, Յուսուր, Սամարիսան ու Զաամը : 20 - Եւ անկէ ետքը Աբիսողոմի աղջիկը Մաաքան առաւ, որ անոր ծնաւ Աբիան, Եթթին, Զիլան ու Սաղոմիթը : 21 - Եւ Ռոբովամ Աբիսողոմի աղջիկը Մաաքան իր բոլոր կիներէն ու հարձերէն աւելի կը սիրէր. (վասն զի անկա տասնըութ կին ու վաթսուն հարձ առեր էր. և քսանըութ տղայ ու վաթսուն աղջիկ ծնաւ.) 22 - Եւ Ռոբովամ Մաաքայի որդին Աբիան գլուխ դրաւ, այսինքն իր եղբայրներուն վրայ իշխան. քանզի զանկա թագաւոր ընելու հպարտ էր : 23 - Ու խելացութիւն ընելով, իր բոլոր աղաքները բոլոր Յուդայի ու Բենիամինի գաւառներուն մէջ, բոլոր պարսպաւոր քաղաքներուն մէջ Ժաղաւորեց, և անոնց առատ

*Եբբ. փնտռելու համար իրենց սիրտը տուողները +Եբբ. ցրուեց

ապրուստ կու տար . ու շատ կիներ
փնտուեց :

ԳԼ. ԺԲ

Ու երբ Ռորովամի թագաւորու-
թիւնը հաստատուեցաւ , ու ինք զօ-
րացաւ , Տէրոջը օրէնքը թողուց , ու
անոր հետ բոլոր Խորայէլ ալ :

2 - Եւ Ռորովամ թագաւորին հին-
գերորդ տարին Եգիպտոսի Սիսակ թա-
գաւորը Երուսաղէմի վրայ ելաւ . (քան-
զի Տէրոջը գէմ՝ ապստամբութիւն բրեր
էին .) 3 - Անիկ հազար երկու հարիւր
կառքով ու վաթսուն հազար ձիաւո-
րով ելաւ . ու անոր հետ Եգիպտոսէ
եկած ժողովուրդը անթիւ էր , այսինքն
Ղիբեացիք , *Սովկիացիք ու Եթէովպա-
ցիք . 4 - Եւ Յուդայի պարսպաւոր քա-
ղաքները առաւ , ու մինչև Երուսա-
ղէմ՝ եկաւ : 5 - Եւ Սեմայիա մարգարէն
եկաւ Ռորովամի ու Յուդայի իշխան-
ներուն , որոնք Սիսակի երեսէն Երու-
սաղէմ՝ ժողովուրդ էին , ու անոնց ըսաւ ,
Տէրը այսպէս կ'ըսէ . Գուք զիս թողու-
ցիք , ու ես ալ ձեզ Սիսակի ձեռքը կը
թողում :

6 - Եւ Խորայէլի իշխանները
ու թագաւորը խոնարհեցան ու ըսին ,
Տէրը արդար է : 7 - Ու երբ Տէրը անոնց
խոնարհիլը տեսաւ , Տէրոջը խօսքը Սե-
մայիայի եղաւ՝ ըսելով , Անոնք խո-
նարհեցան . պիտի չկորսնցնեմ զանոնք ,
հապա անոնց քիչ մը ազատութիւն
պիտի տամ , ու իմ բարկութիւնս Սի-
սակի ձեռքով Երուսաղէմի վրայ պի-
տի չթափի : 8 - Սակայն անոր ծառա-
ներ պիտի ըլլան , որպէս զի իմ ծառա-
յութեանս ու երկրի թագաւորներուն
ծառայութեանը *բէր-բէր-նէ-նէ գիտ-
նան : 9 - Ու Եգիպտոսի Սիսակ թագա-
ւորը Երուսաղէմի վրայ ելաւ , և Տէրոջը
տանը գանձերը ու թագաւորին տանը
գանձերը առաւ , ամէնն ալ առաւ .
Սողոմոնի շինած սակիէ սապարներն ալ
առաւ : 10 - Եւ Ռորովամ թագաւորը
անոնց տեղ պղնձէ սապարներ շինեց ,
ու զանոնք թագաւորական տանը դու-
ռը պահպանութիւն ընող սուրհանգա-
կաց սատիկաններուն ձեռքը յանձնեց :

11 - Ու երբ թագաւորը Տէրոջը տունը
կ'երթար , սուրհանգակները կու գա-
լին , զանոնք կը կրէին , ու երբ զա-

*Կ-ժ, Տրագղոզացիք

նոնք սուրհանգակներուն խօսքը կը
գարձնէին : 12 - Ուստի անոր խոնար-
հելուն համար Տէրոջը բարկութիւնը
անկէ դարձաւ , ու զանիկ բողբոջին
չկորսնցուց , նաև Յուդայի մէջ աղէկ
բաներ կային :

13 - Եւ Ռորովամ թագաւորը Երու-
սաղէմի մէջ զօրացաւ , ու թագաւորու-
թիւն ըրաւ . ու երբ Ռորովամ թագա-
ւորեց , քառասունըմէկ տարեկան էր ,
ու տասնըեօթը տարի թագաւորու-
թիւն ըրաւ Երուսաղէմի մէջ , այսինքն
այն քաղաքին մէջ՝ զոր Տէրը Խորայէլի
ամէն ցեղերէն ընարեց՝ իր անունը հոն
դնելու համար . ու անոր մայրը Ամին-
նացի էր Նաամա անուամբ : 14 - Եւ
անիկա չարութիւն ըրաւ , քանզի իր
սիրտը չուզէր որ Տէրը փնտուէ : 15 - Ու
Ռորովամի առաջին ու վերջին գործերը
ահա Սեմայիա մարգարէին գիրքին մէջ
ու Ադգով տեսանողին ազգաբանու-
թեանը մէջ գրուած են : Եւ Ռորու-
վամի ու Յերոբովամի մէջտեղ միշտ
պատերազմ՝ կար : 16 - Ու Ռորովամ
իր հայրերուն հետ քնացաւ , և Գա-
ւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ .
ու անոր տեղ անոր որդին Աբիա թա-
գաւոր եղաւ :

ԳԼ. ԺԳ

Յերոբովամ թագաւորին տասնըու-
թերորդ տարին Յուդայի վրայ Աբիա
թագաւորեց : 2 - Անիկա Երուսաղէմի
մէջ երեք տարի թագաւորութիւն ը-
րաւ . և անոր մօրը անունը Միքայիա
էր , * Գաբաացի Ուրիէլի աղջիկն էր .
և Աբիայի ու Յերոբովամի մէջտեղ պա-
տերազմ՝ կար : 3 - Եւ Աբիա զօրաւոր
ու պատերազմող զօրքերով՝ չորս հար-
իւր հազար ընտիր մարդոցմով պատե-
րազմելու պատրաստուեցաւ . Յերոբու-
վամ ալ անոր գիմաց *ելաւ ու թ-
հարիւր հազար ընտիր , զօրաւոր ու
պատերազմող մարդոցմով :

4 - Եւ Աբիա Եփրեմի յեռնակողմը
Սեմարիմ յեռան վրայ կայնեցաւ ու
ըսաւ , Ով Յերոբովամ ու բոլոր Խորա-
յէլ , ինձի մտիկ բրէք . 5 - Գուք զիս
նալու չէ՞ք որ Խորայէլի Տէր Աստուածը
Խորայէլի վրայ թագաւորելը՝ յաւիտե-
կան Գաւիթի ու անոր որդիներուն

*Եբր. պատերազմը շարեց

ատուած է աղի ուխտով: 6 - Եւ Դաւիթի որդւոյն Սողոմոնի ծառան Նարատեան Յերթովամ՝ ոտք ելաւ, ու իր աէրօձէն ապրտամբեցաւ: 7 - Եւ անոր քով դատարկակեաց ու անօձէն մարդիկ ժողովուեցան, ու Սողոմոնի որդւոյն Ռորովամի դէմ՝ կեցան. քանզի Ռորովամ՝ մանկահասակ ու փափկասիրտ ըլլալով՝ անոնց դէմ՝ չգրաւ: 8 - Եւ Տիմա գուք շատուոր ըլլալնուդ համար, ու Յերթովամի ձեզի շինած աստուածներուն, այն սակիէ որթերուն, ձեր քով ըլլալուն համար, Դաւիթի որդիներուն ձեռքը եղող Տէրոջը թագաւորութեանը դէմ՝ կենալ կը մտածէք: 9 - Միթէ գուք Տէրոջը քահանաները, Ահարոնի որդիները, ու Ղևտացիները գուրս չըրիք, և ուրիշ երկիրներուն ժողովուրդներուն պէս ձեզի քուրմեր չըրիք՝ այն բոլոր մարդիկը, որոնք մէկ զուարակով ու եօթը խոյերով կու գային զիրենք նուիրելու, որպէս զի շատուածներու քուրմ՝ ըլլան: 10 - Բայց մեր Աստուածը Եհովա է, ու մենք զանկա չթողուցինք. և Տէրոջը ծառայութիւն ընող քահանաները Ահարոնի որդիներն են. ու Ղևտացիները իբե՞ն պաշտօնին վրայ են: 11 - Եւ ամէն առտու ու ամէն իրիկուն Տէրոջը ողջակէզներ իջ արտաշտանէն, ու անուշահոտ խունկ կը ծխեն, ու մաքուր սեղանին վրայ առաջաւորութեան հացերը իջ շաբէն, և ամէն իրիկուն վառելու համար սակիէ աշտանակը ու անոր ճրագները իջ արտաշտանէն. քանզի մենք մեր Տէր Աստուծոյն պահպանութիւնը կը պահենք, բայց գուք զանկա մերժեցիք: 12 - Եւ ասա Աստուած ինք մեզի հետ է՝ Տէր իշխանը ըլլալու. նաև անոր քահանաները ազգարարութեան փողերով, որպէս զի ձեզի դէմ՝ հնչեցնեն. «Ի՞նչ, ով Իսրայէլի որդիներ, ձեր հայրերուն Տէր Աստուծոյն հետ մի պատերազմիք. քանզի գուք յաջողութիւն պիտի չգանէք:

13 - Բայց Յերթովամ՝ դարանակալները դարձուց որպէս զի անոնց եակէն գան. ու Իսրայէլացի՝ Յուդայեանց առջև էին, ու դարանակալները անոնց եակէն էին: 14 - Եւ Յուդայեանք դարձան նայեցան որ պատերազմը իրենց առջևէն ու եակէն էր, ու Տէրոջը աղաղակեցին, և քահանաները փողերը

հնչեցուցին: 15 - Ու Յուդայի մարդիկը աղաղակ վերցուցին. ու երբ Յուդայի մարդիկը աղաղակեցին, Աստուած Յերթովամը ու բոլոր Իսրայէլը Արիայի ու Յուդայի առջև զարկաւ: 16 - Եւ Իսրայէլի որդիները Յուդայի առջևէն փախան. ու Աստուած անոնց ձեռքը մատնեց զանոնք: 17 - Եւ Աբիա ու իր զօրքը մեծ կոտորած ըրին անոնց մէջ, ու Իսրայէլէ հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ սպաննուած ինկան: 18 - Այն ատեն Իսրայէլի որդիները նուաճեցան, ու Յուդայի որդիները իրենց հայրերուն Տէր Աստուծոյն ապուրիւնելուն համար պիտ գտան: 19 - Եւ Աբիա Յերթովամը հալածեց, ու անկէ քաղաքներ առաւ, այսինքն Բեթէլը ու անոր գեղերը, և Յեսանան ու անոր գեղերը, և Եփրոնը ու անոր գեղերը: 20 - Եւ Յերթովամ Արիայի օրերուն մէջ մէյմըն ալ չկրցաւ պիտ գանել. ու Տէրը զանկա զարկաւ, ու մեռաւ:

21 - Եւ Աբիա ուժովցաւ, ու իրեն տասնըչորս կին առաւ, և քսանուերկու աղայ ու տասնըվեց աղջիկ ծնաւ: 22 - Ու Աբիայի մնացորդ պատմութիւնը, և անոր գործերը ու խօսքերը Ագգոյ մարգարէին յիշատակարանին մէջ գրուած են:

ԳԼ. ԺԴ

Եւ Աբիա իր հայրերուն հետ քնացաւ, ու զանկա Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին. և անոր տեղ անոր որդին Ասա թագաւոր եղաւ. ասոր օրերը երկիրը տասը տարի հանգստութիւն գտաւ: 2 - Ու Ասա իր Տէր Աստուծոյն առջև բարի և ուղիղ եղածը ըրաւ: 3 - Ու օտար արտաշտանները ու բարձր տեղերը վերցուց, և արձանները կոտորեց, ու Ասաարովթի կուսքերը կտոր կտոր ըրաւ: 4 - Եւ Յուդայի հրամայեց որ իրենց հայրերուն Տէր Աստուածը փնաւեն, ու օրէնքը ու պատուիրանքները կատարեն: 5 - Եւ Յուդայի ամէն քաղաքներէն բարձր տեղերը, ու արեգական կուսքերը վերցուց. ու իր առջև թագաւորութիւնը հանգիստ էր: 6 - Եւ անկա Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ շինեց. քանզի այն տարիներուն մէջ երկիրը հանգստութիւն կը վայելէր, ու անոր

Հետ պատերազմ՝ ընդ չկար, վասն զի Տէրը անոր հանգստութիւն տուաւ : 7 - Եւ Աստուծոյ Յուդայի ըսաւ, Այս երկիրը քանի որ մեր *իշխանութեան տակ է, այս քաղաքները շինենք, ու զանոնք պարիսպներով, աշտարակներով, դռներով ու նիգերով շրջապատենք. քանզի մենք մեր Տէր Աստուածը փնառեցինք, ու փնառելնուս համար ամէն կողմանէ մեզի հանգստութիւն տուաւ : Եւ զանոնք շինեցին ու յաջողութիւն գտան : 8 - Եւ Աստուծոյ Յուդայէ՛ վահան ու նիզակ կրող երեք հարիւր հազար զօրք, ու Բենիամինէ՛ ասպար կրող ու աղեղ քաշող երկու հարիւր ութսուն հազար զօրք ունէր. ասոնք ամէնը զօրուոր կորիճներ էին :

9 - Ու Եթէովպացի Զարա հազար անգամ հազար զօրքով և երեք հարիւր կառքով անոնց վրայ ելաւ, ու մինչև Մարեսա եկաւ : 10 - Եւ Աստուծոյ զիմաց ելաւ. ու Մարեսայի Սեփաթա ձորին մէջ պատերազմի շարուեցաւ : 11 - Եւ Աստուծոյն ազազակեց, ու ըսաւ, Ով Տէր, քու առջևդ տարբերութիւն մը չկայ թէ՛ շատով և թէ՛ քիչով օգնութիւն ընելու մէջ. մեզի օգնութիւն ըրէ, ով Տէր Աստուած մեր, որովհետեւ քեզի ապաւինեցանք, ու այս բազմութեան վրայ քու անունովդ եկանք. ով Տէր, մեր Աստուածը դուն ես. մի թողուր որ մարդը քեզի դէմ զօրանայ : 12 - Եւ Տէրը Եթէովպացիները Ասայի ու Յուդայի առջև զարկաւ. ու Եթէովպացիք փախան : 13 - Եւ Աստուծոյն անոր հետ եղող ժողովուրդը զանոնք մինչև Գերարա հալածեցին. ու Եթէովպացիք ինկան, և անոնց վրայ կենդանութիւն չմնաց. քանզի Տէրոջը առջև ու անոր բանակին առջև խորատկեցան. ու խիստ շատ աւար տուին : 14 - Եւ Գերարայի բոլորաբեր եղող ամէն քաղաքները զարկին. քանզի անոնց վրայ Տէրոջը վախը ինկաւ. ու ամէն քաղաքները կողոպտեցին, վասն զի անոնց մէջ շատ աւար կար : 15 - Եւ թիւերուն վրաններն ալ զարկին, ու խիստ շատ ոչխար և ուղա տուին, ու Երուսաղէմ՝ դարձան :

*Եբր. առջև է
†Եբր. տկարով
‡Այսինքն, հովիւներուն

Ու Ովգեդի որդւոյն Սաղարայի վրայ Աստուծոյ Հոգին եկաւ. 2 - Եւ Ասայի առջև ելլելով՝ ըսաւ անոր, Ով Աստուծոյն բոլոր Յուդա ու Բենիամին, ինձի մօտիկ ըրէք. Տէրը ձեզի հետ կ'ըլլայ, քանի որ դուք անոր հետ էք. ու եթէ զանկա փնառէք, զանկա կը գանէք. բայց եթէ զանկա թողուք, անկա ալ ձեզ պիտի թողու : 3 - Եւ Խորայէլ երկար ժամանակ առանց ճշմարիտ Աստուծոյ, առանց սորվեցընող քահանայի, ու առանց օրէնքի մնացեր էր. 4 - Բայց իրենց նեղութեանը մէջ Խորայէլի Տէր Աստուծոյն դարձան, ու զանկա փնառելով գտան : 5 - Եւ այն ատենները ելլողին ու մանողին ապահովութիւն չկար. քանզի երկիրներուն բոլոր բնակիչներուն մէջ շատ խռովութիւններ կային. 6 - Եւ ազգ ազգի հետ ու քաղաք քաղաքի հետ կը զարնուէր. վասն զի Աստուած ամէն նեղութիւններով զարհուրեցուց զանոնք : 7 - Եւ Հիմա դուք զօրացէք, ու ձեռքերնիդ չթուլնայ. վասն զի ձեր գործին վարձքը կայ : 8 - Եւ Աստուծոյն այս խօսքերը ու *Ովգեդ մարգարէին մարգարէութիւնը լսելով՝ զօրացաւ, և Յուդայի ու Բենիամինի բոլոր երկրէն, ու Եփրեմի լեռնէն իր առած քաղաքներէն պղծութիւնները վերցուց, ու Տէրոջը *Յուդայի սրահին առջև եղող Տէրոջը սեղանը նորոգեց. 9 - Եւ բոլոր Յուդան ու Բենիամինը, ու Եփրեմէ և Մանասէէ ու Շամուոնէ անոնց քով գանուած պանդուխտները ժողովեց. քանզի Խորայէլէ շատ մարդիկ անոր կողմը անցան, տեսնելով որ անոր Տէր Աստուածը անոր հետ է : 10 - Եւ անոնք Ասայի թագաւորութեանը տասնհինգերորդ տարւոյն երրորդ ամիսը Երուսաղէմի մէջ ժողովուրդեցան. 11 - Ու այն օրը իրենց բերած աւարէն Տէրոջը զոհ ըրին, եթէր հարիւր արջաւ ու եթէր հազար ոչխար. 12 - Եւ ուխտ ըրին որ իրենց հայրերուն Տէր Աստուածը բոլոր սրտով ու բոլոր հոգիով խնդրեն. 13 - Եւ ով որ Խորայէլի Տէր Աստուածը չփնառէ, թէ՛ պղտիկ և թէ՛ մեծ, թէ՛ սյր մարդ

*Ըստ Լւս. և Աստ. Բարգ. Ովգեդի որդւոյն Սաղարի

և թէ՛ կին ըլլայ՝ մեռցուի : 14 - Աւեծ ձայնով և ցնծութեան աղաղակով : ու փողերով ու շեփորներով Տէրոջը երգում՝ բրին : 15 - Եւ բոլոր Յուգա այն երգումին վրայ ուրախացաւ . քանզի իրենց բոլոր սրտովը երգում բրին , ու իրենց բոլոր կամքովը խնդրելով՝ գտան զանիկա . ու Տէրը ամէն կողմանէ հանգստացուց զանոնք :

16 - Եւ Աստ թագաւորը իր *մայրը Մաաքան ալ տիկնութենէ հանեց , վասն զի անիկա Աստարովթի կուռք շիներ էր . իսկ Աստ անոր կուռքը կտարեց ու փշրեց , ու կեդրոն հեղեղատին մէջ սյրեց : 17 - Բայց բարձր տեղերը Իսրայէլէ չվերցան . սակայն Ասայի սիրտը իր կեանքին բոլոր օրերուն մէջ ուղիղ էր : 18 - Եւ իր հօրը նուիրած ու իր նուիրած բաները , արծաթը ու ոսկին ու անօթները , Աստուծոյ տունը տարաւ : 19 - Աւ մինչև Ասայի թագաւորութեան երեսունը շինգերորդ տաբին պատերազմ՝ չեղաւ :

ԳԼ. ԺԶ

Ասայի թագաւորութեան երեսունը վեցերորդ տարին Իսրայէլի Բաասա թագաւորը Յուգայի դէմ ելաւ , ու Ռաման շինեց , որպէս զի Յուգայի Աստ թագաւորին ելլող մտնող ճարդ մը չթողու : 2 - Եւ Աստ Տէրոջը տանը ու թագաւորին տանը գանձերէն արծաթ ու ոսկի հանեց , ու Գամասկոս բնակող Ասորաց թագաւորին , Բենադադի , զրկեց՝ ըսելով , 3 - Իմ ու քու մէջ տեղ , և իմ հօրս ու քու հօրդ մէջ տեղ դաշնակցութիւն կայ . ահա քեզի արծաթ ու ոսկի կը զրկեմ . եկուք , Իսրայէլի Բաասա թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ աւրէ , որպէս զի անիկա իմ վրայէս ետ քաշուի : 4 - Աւ Բենադադ Աստ թագաւորին խօսքը մտիկ ըրաւ . և իր զօրագլուխները Իսրայէլի քաղաքներուն վրայ զրկեց . ու Իյօնը , Գանը , Աբէլ-մայիմը ու Նեփթաղիմի բոլոր շտեմարանի քաղաքները զարկին : 5 - Եւ Բաասա այս Բանը լսելով՝ Ռաման շինելէն ետ կեցաւ , ու գործը դադարեցուց : 6 - Աւստի Աստ թագաւորը բոլոր Յուգան

աւաւ , ու Բաասայի շինած Ռամայի քարերը ու փայտերը վերցուցին . ու անտեցմով Գարան ու Մաափան շինեց :

7 - Եւ այն ատեն Անանի տեսանողը Յուգայի Աստ թագաւորին եկաւ , ու անոր ըսաւ , Որովհետեւ դուն Ասորաց թագաւորին ապաւինեցար , ու քու Տէր Աստուծոյդ չապաւինեցար , անոր համար Ասորաց թագաւորին զօրքը քու ձեռքէդ ազատեցաւ : 8 - Միթէ Եթէտովպացիք ու Լիբեացիք խիստ շատ կառքերով ու ձիաւորներով բազմութիւն զօրք չէին . բայց որովհետեւ դուն Տէրոջը ապաւինեցար , զանոնք քու ձեռքդ մտանեց . 9 - Քանզի Տէրոջը աչքերը բոլոր երկիրը *կը դիտեն , որպէս զի իրեն ուղիղ սրտով յարողները ուժովցնէ . դուն այս բանին մէջ անմտութիւն բրիր . ապէ ետքը պատերազմներ պիտի ունենաս : 10 - Եւ Աստ այն տեսանողին սրբողեցաւ , ու զանիկա բանալը դրաւ . վասն զի այս բանին համար խիստ բարկացաւ անոր . ու այն ատեն Աստ ժողովուրդին մէկ քանիները հարստահարեց :

11 - Եւ Ասայի առաջին ու վերջին պատմութիւնը ահա Յուգայի ու Իսրայէլի թագաւորներուն զիրքին մէջ գրուած է : 12 - Եւ Աստ իր թագաւորութեանը երեսունը շիներորդ տարին ոտքի շուռ չիւանդացաւ . ու անոր չիւանդութիւնը ծանրացաւ . և իր չիւանդութեանը մէջ ալ Տէրը չփնտուեց , հապա բժիշկները փութեց : 13 - Եւ Աստ իր հայրերուն հետ քնացաւ , ու անիկա իր թագաւորութեան քառասունը մէկերորդ տարին մեռաւ : 14 - Աւ զանիկա Գաւթի քաղաքին մէջ իրեն համար փորած գերեզմանը թաղեցին . և զանիկա խունկերով ու իւղագործի սրուեստին զանազան բազազրութիւններովը լեցուն անկողինի մը մէջ պառկեցուցին , ու անոր վրայ խիստ շատ խօսիչ ծխեցին :

ԳԼ. ԺԷ

Եւ անոր տեղ անոր որդին Յովսափատ թագաւոր եղաւ , ու Իսրայէլի դէմ զօրացաւ : 2 - Եւ Յուգայի ամէն պարսպաւոր քաղաքներուն մէջ զօրքեր դրաւ . ու Յուգայի երկրին մէջ

*Այսինքն , մեծ մայրը . տես գ թագ . ԺԵ . 2 , 10 :

*Եբե . կը պարտին

ու անոր հօրը Ասայի առած Եփրեմի քաղաքներուն մէջ բերդապահ զօրքեր դրաւ : 3 - Եւ Տէրը Յովսափատի հետ էր . քանզի անիկա իր հօրը Դաւիթի առաջուան ճամբաներուն մէջ քալեց, ու Բաշայիմը չփնտռեց, 4 - Հապա իր հօրը Աստուածը փնտռեց, անոր պատուիրանքներուն մէջ քալելով, և ոչ թէ Խորայէլի բրածին պէս ընելով : 5 - Եւ Տէրը թագաւորութիւնը անոր ձեռքին մէջ հաստատեց . ու բոլոր Յուդա Յովսափատի ընծաներ կուտար, և անոր հարստութիւնը ու փառքը շատցաւ . 6 - Ու անոր սիրտը Տէրոջը ճամբաներուն մէջ բարձրացաւ . և անիկա բարձր տեղերը ու Աստարովթի կուռքերն ալ Յուդայէ վերցուց :

7 - Եւ իր թագաւորութեան երրորդ տարին իր իշխանները, Բենհայիլը, Աբդիան, Չաբարիան, Նաթանայէլը ու Միքիան, զրկեց, որպէս զի Յուդայի քաղաքներուն մէջ սորվեցնեն . 8 - Եւ անոնց հետ էին Սեմայիա, Նաթանիա, Չաբադիա, Ասայէլ, Սեմիրամովթ, Յովնաթան, Աբանիա, Տուբիա ու Տուբադանիա Ղևտացիները . նաև անոնց հետ՝ Եղիսամա ու Յովրամ՝ քահանաները : 9 - Ու Յուդայի մէջ կը սորվեցընէին, ու Տէրոջը օրինաց զիրքը անոնց հետ էր, և Յուդայի ամէն քաղաքները կը պաշտէին ու ժողովուրդին կը սորվեցնէին :

10 - Եւ Յուդայի բոլորտիքը եղող երկիրներուն բոլոր թագաւորութիւններուն վրայ Տէրոջը վախը ինկաւ, ու Յովսափատի հետ պատերազմ չըրին :

11 - Եւ Փղշտացիներէն ալ Յովսափատի ընծաներ ու հարկի ստակ կը բերէին . և Արաբացիներն ալ հօտերէն եօթը հազար եօթը հարիւր խոյ, ու եօթը հազար եօթը հարիւր նոխազ կը բերէին անոր : 12 - Եւ Յովսափատ երթալով խիստ մեծցաւ, ու Յուդայի մէջ բերդեր ու շտեմարանի քաղաքներ շինեց : 13 - Եւ անիկա Յուդայի քաղաքներուն մէջ շատ գործեր ունէր, ու Երուսաղէմի մէջ զօրաւոր կարիճներ ու պատերազմոց մարդիկ ունէր : 14 - Եւ այս էր անոնց թիւը իրենց ազգատոհմերուն համեմատ . Յուդայի հազարապետները՝ Եղնա իշխան, ու անոր հետ երեք հարիւր հազար զօրաւոր կարիճներ . 15 - Եւ անկէ

ետքը Յօջանան իշխան, ու անոր հետ երկու հարիւր ութսուն հազար մարդիկ . 16 - Եւ անկէ ետքը Զեքրիի որդին Ամասիա, որ Տէրոջը *ուխաւորն էր, ու անոր հետ երկու հարիւր հազար զօրաւոր կարիճներ . 17 - Ու Բենիամինէ՝ զօրաւոր կարիճ Եղիադա, և անոր հետ երկու հարիւր հազար աղեղնաւոր ու ասպարաւոր մարդիկ . 18 - Եւ անկէ ետքը Յովզաբապ, ու անոր հետ հարիւր ութսուն հազար սպառազինեալ մարդիկ : 19 - Ասոնք էին թագաւորին ծառայութիւն ընողները, բաց ի այն մարդոցմէն՝ զորսնք թագաւորը բոլոր Յուդայի պարսպաւոր քաղաքներուն մէջ դրաւ :

ԳԼ ԺԸ

Եւ Յովսափատ խիստ շատ հարստութիւն ու փառք ունեցաւ . և Աքաաբի հետ խմանութիւն բրաւ : 2 - Ու մէկ քանի տարիէն ետքը Աամարիա իջաւ Աքաաբի . և Աքաաբ անոր ու անոր հետ եղող ժողովուրդին խիստ շատ սխարներ ու արջաւներ մորթեց, ու զանիկա համոզեց որ Ռամովթ-գաղաղադ ելլէ : 3 - Եւ Խորայէլի Աքաաբ թագաւորը Յուդայի Յովսափատ թագաւորին ըսաւ, Ինձի հետ Ռամովթ-գաղաղադ կ'երթամ . ու անիկա անոր ըսաւ, Ես քեզի պէս եմ, ու իմ ժողովուրդս քու ժողովուրդիդ պէս է . ու քեզի հետ պատերազմի կ'երթանք :

4 - Եւ Յովսափատ Խորայէլի թագաւորին ըսաւ, Հիմա Տէրոջը խօսքը փնտռէ : 5 - Ու Խորայէլի թագաւորը մարգարէները ժողովեց, որոնք չորս հարիւր հոգի էին, ու անոնց ըսաւ, Ռամովթ-գաղաղադի վրայ պատերազմելու երթանք, թէ ետ կենամք . ու անոնք ըսին, Գնա . վասն զի Աստուած չափիւ թագաւորին ձեռքը պիտի տայ : 6 - Եւ Յովսափատ ըսաւ, Այս տեղ Տէրոջը ուրիշ մարգարէ մըն ալ չկա՞յ, որպէս զի անոր հարցնենք : 7 - Ու Խորայէլի թագաւորը Յովսափատի ըսաւ, Կայ ուրիշ մարգ մըն ալ, որուն միջոցով կ'ընանք Տէրոջը հարցնել, բայց ես զանիկա կ'ատեմ, քանզի ինձի համար աղէկ մարգարէութիւն չըներ, հապա միշտ գէշ . անիկա Յեմայի որ-

*Այսինքն, կամովին նու իրուածն

գին Միքիա է : Եւ Յովսափաա ըսաւ ,
Թագաւորը այդպէս չգրուցէ :

8 - Ու Իսրայէլի Թագաւորը ներքինի
մը կանչեց , ու ըսաւ , Յեմլայի որդին
Միքիան շուտով հոս բեր : 9 - Եւ Իս-
րայէլի Թագաւորը ու Յուդայի Յովսա-
փաա Թագաւորը , Սամարիայի դրանը
առջևի հրապարակին մէջ , ամէն մէկը
փոփոխող զգեստներ հագած , իր աթո-
ռին վրայ նստեր էր . ու բոլոր մարգա-
րէները անոնց առջև մարգարէութիւն
կ'ընէին : 10 - Եւ Քանանայի որդին
Սեգեկիա իրեն երկաթէ եղջիւրներ
չինեց , ու ըսաւ , Տէրը այսպէս կ'ըսէ .
Ասորիները ասոնցմով պիտի զարնես ,
մինչև որ զանոնք բնաջինջ ընես : 11 -
Բոլոր մարգարէներն ալ այնպէս կը
մարգարէանային ու կ'ըսէին , Ռա-
մովթ-գաղաադ ելիր , ու յաջողու-
թիւն պիտի ունենաս , և Տէրը զանիս
Թագաւորին ձեռքը պիտի տայ :

12 - Ու Միքիան կանչելու գացող
մարդը խօսեցաւ անոր՝ ըսելով , Ահա
այն մարգարէները մէկ բերնով Թա-
գաւորին համար բարութիւն խօսեցան .
Թող քու խօսքդ ալ անոնց մէկուն
խօսի պէս ըլլայ , ու բարութիւն խօսէ :

13 - Իսկ Միքիա ըսաւ , Տէրը կենդանի
է որ իմ Աստուածս ինձի ինչ որ ըսէ ,
զայն պիտի խօսիմ :

14 - Ու երբ անիկա Թագաւորին ե-
կաւ , Թագաւորը անոր ըսաւ , Ով Մի-
քիա , Ռամովթ-գաղաադ պատերազ-
մելու երթա՞նք , թէ ետ կենամ : Եւ
անիկա ըսաւ , Ելէք , ու յաջողութիւն
պիտի ունենաք . ու ձեր ձեռքը պիտի
արուին : 15 - Եւ Թագաւորը անոր ը-
սաւ , Մինչև քանի՞ անգամ երդմնը-
նեմք քեզ , որպէս զի Տէրոջը անունովը
ճշմարտար միայն խօսիս ինձի : 16 - Ու
անիկա ըսաւ , Բոլոր Իսրայէլը հովիւ-
չունեցող ոչխարներու պէս լեռներու
վրայ ցրուած աեսայ . և Տէրը ըսաւ ,
Ասոնք տէր չունին . ամէն մարդ խա-
ղաղութեամբ թող իր տունը դառ-
նայ : 17 - Եւ Իսրայէլի Թագաւորը
Յովսափաաի ըսաւ , Քեզի չըսի՞ որ ա-
նիկա ինձի համար աղէկ մարգարէու-
թիւն չըներ , հապա գէշ : 18 - Ու Մի-
քիա ըսաւ , Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ
ըրէք . Տէրը իր աթոռին վրայ նստած
աեսայ , ու երկինքի բոլոր զօրքերը ա-
նոր աջ կողմը ու ձախ կողմը կայներ
էին . 19 - Եւ Տէրը ըսաւ , Իսրայէլի

Ա.քաաբ Թագաւորը սով կրնայ խա-
բել , որպէս զի Ռամովթ-գաղաադ
ելլէ , ու կորսուի . և մէկը այսպէս՝ ու
միւսը այնպէս ըսաւ : 20 - Ու ոգի մը
ելաւ և Տէրոջը առջև կայնեցաւ , ու
ըսաւ , Զանիկա ես կը խաբեմ : Եւ
Տէրը անոր ըսաւ , Ի՞նչ միջոցով :
21 - Ու անիկա ըսաւ , Ելլեմ , ու անոր
բոլոր մարգարէներուն բերանը սուս
ոգի ըլլամ . և Տէրը անոր ըսաւ , Դուն
պիտի խաբես ու պիտի յաջողիս . ելիր
ու այնպէս ըրէ : 22 - Եւ հիմա ահա
Տէրը այս քու մարգարէներուդ բե-
րանը սուս ոգի դրեր է . բայց Տէրը
քեզի համար չարիք խօսեցաւ :

23 - Այն ատեն Քանանայի որդին
Սեգեկիա մօտեցաւ , ու Միքիայի ծնօ-
տին զարկաւ , ու ըսաւ , Տէրոջը Հոգին
ի՞նչպէս իմ քովէս ելաւ՝ քեզի հետ
խօսելու համար : 24 - Եւ Միքիա ը-
սաւ , Դուն ալ պիտի տեսնես այն օրը
որ պահուելու համար սենեակէ սենեակ
մտնես :

25 - Ու Իսրայէլի Թագաւորը ըսաւ ,
Միքիան առէք , ու զանիկա Ամն քա-
ղաքապետին և Թագաւորի որդւոյն
Յովսափաաի ասրէք , 26 - Ու ըսէք , Թա-
գաւորը այսպէս կ'ըսէ . Ասիկա բանար
դրէք . ու մինչև որ ես խաղաղու-
թեամբ դառնամ , զանիկա նեղու-
թեան հացով ու նեղութեան ջրով
կերակրեցէք : 27 - Եւ Միքիա ըսաւ ,
Եթէ երբեք խաղաղութեամբ դառ-
նաս , Տէրը ինձմով խօսած չըլլայ .
ու ըսաւ , Ով ժողովուրդներ , ամէնզ
ալ լսեցէք :

28 - Եւ Իսրայէլի Թագաւորը ու
Յուդայի Յովսափաա Թագաւորը Ռա-
մովթ-գաղաադ ելան : 29 - Ու Իսրա-
յէլի Թագաւորը Յովսափաաի ըսաւ ,
Կերպարանքս պիտի փոխեմ , ու այնպէս
պատերազմի պիտի մտնեմ . բայց դուն
քու հագուստդ հագիր , և Իսրայէլի
Թագաւորը իր կերպարանքը փոխեց ,
ու պատերազմին մէջ մտան : 30 - Եւ
Ասորաց Թագաւորը իր կառապետնե-
րուն պատուիրեց ու ըսաւ , Պզտիկի
կամ՝ մեծի հետ մի պատերազմիք ,
բայց միայն Իսրայէլի Թագաւորին հետ :
31 - Ու երբ կառապետները Յովսա-
փաաի տեսան , Իսրայէլի Թագաւորը
ասիկա է՝ ըսելով , անոր վրայ պատե-
րազմելու գացին . և Յովսափաա աղա-
ղակեց . ու Տէրը անոր օգնութիւն

ըրաւ, և Աստուած զանոնք անկէ դարձուց: 32 - Աւ երբ կառուպեաները տեսան որ անկիա Խորայէլի թագաւորը չէ, անկէ ետ դարձան: 33 - Եւ մարգմբ *առանց գիտելու՝ իր աղեղը քաշեց, ու Խորայէլի թագաւորը †գրահին օղակներուն մէջէն՝ զարկաւ. այն ատեն անկիա իր կառավարին ըսաւ, Չեւքդ դարձուր ու զիս բանակէն հանէ, քանզի վիրաւորուեցայ: 34 - Եւ այն օրը պատերազմը ստատկացաւ. ու Խորայէլի թագաւորը մինչև իրիկուն Ասորուց գիմոց իր կառքին մէջ կեցաւ, ու արևուն մտած ատենը մեռաւ:

ԳԼ. ԺԹ

Եւ Յուդայի Յովսափատ թագաւորը խաղաղութեամբ Երուսաղէմ՝ իր տունը դարձաւ: 2 - Աւ Անանիի որդին Յեու տեսանողը անոր գիմոց ելաւ, ու Յովսափատ թագաւորին ըսաւ, Պէ՞տք էր որ մեղաւորին օգնէիր, ու Տէրը ատողները սիրէիր. ահա ասոր համար Տէրոջը երեսէն քու վրագ բարկութիւն կայ: 3 - Բայց քու վրագ բարի բաներ գտնուեցան. քանզի Աստորովթի կուռքերը երկրէն բնաջինջ ըրիր, ու քու սիրտդ զԱստուած խնդրելու պատրաստեցիր:

4 - Եւ Յովսափատ Երուսաղէմի մէջ կը բնակէր. ու նորէն ելաւ ժողովուրդին մէջ պարտեցաւ, Բերտաբէէէ մինչև Եփրեմի լեւը, ու զանոնք իրենց հայրերուն Տէր Աստուծոյն դարձուց: 5 - Աւ երկրին մէջ քաղաք քաղաք դատաւորներ դրաւ, Յուդայի ամէն պարագաւոր քաղաքներուն մէջ: 6 - Եւ դատաւորներուն ըսաւ, Նայեցէք ի՛նչ կ'ընէք. քանզի ձեր տեսնելու դատաստանը մարդու չվերաբերիր, հապա Տէրոջը՝ որ դատաստանի մէջ ձեզի հետ է. 7 - Աւրեմն Տէրոջը վախը ձեր վրայ ըլլայ. զգուշութեամբ բան տեսէք. քանզի մեր Տէր Աստուծոյն քով անիրաւութիւն, աչառութիւն ու կաշառք տանել չկայ:

8 - Եւ Յովսափատ Երուսաղէմի մէջ այլ Ղևտացիներէն ու քահանաներէն ու Խորայէլի նահապեաներէն դրաւ՝

*Կ-ժ, ուժով մը
 †Եբբ. յօդուածներուն ու գրահին մէջտեղէն

Տէրոջը իրաւունքին համար *ու դատաւորու համար. ու Երուսաղէմ՝ դարձան: 9 - Եւ անոնց պատուէր տուաւ ու ըսաւ, Այսպէս ընէք Տէրոջը վախովը, հաւատարմութեամբ և ուղիղ սրտով: 10 - Աւ երբ իրենց քաղաքներուն մէջ բնակող ձեր եղբայրներէն դատ մը գայ ձեր առջև՝ Բէ՛ արեան և արեան մէջտեղ, Բէ՛ օրէնքի ու պատուիրանքի մէջտեղ, և Բէ՛ կանոններու ու դատաստաններու մէջտեղ, անոնց խրատ տուէք, որ Տէրոջը դէմ՝ յանցանք չգործեն: որպէս զի ձեր վրայ ու ձեր եղբայրներուն վրայ բարկութիւն չգայ. այսպէս ըրէք որպէս զի յանցաւոր չըլլաք: 11 - Եւ ահա Տէրոջը ամէն գործին համար Ամարիա մեծ քահանան ձեր վրայ առաջարկէ, ու թագաւորին ամէն գործին համար Յուդայի տանը իշխանը Իսմայէլի որդին Չաբադիա, ու ձեր առջևէն Ղևտացիները ստահկաններ են. զօրացէք ու պարտէք ըրէք, և Տէրը բարիին հետ ըլլայ:

ԳԼ. Ի

Եւ ասկէ ետքը Մովաբի որդիները ու Ամմոնի որդիները, ու անոնց հետ †Ամմոնացիներէն ալ Յովսափատի վրայ պատերազմելու եկան: 2 - Աւտի գացին, ու Յովսափատի պատմեցին ու ըսին, Քու վրագ ծովուն անդիի կողմէն Ասորուց մէջէն մեծ բազմութիւն կու գայ. և ահա անոնք Ասասանի թամարի (այսինքն Ենգադդիի) մէջ են: 3 - Աւ Յովսափատ վախցաւ, ու Տէրը փնտուելու †ետեկ եղաւ. և բոլոր Յուդայի մէջ ծոմապահութիւն քարոզեց: 4 - Աւ Յուդայեանք ժողովուեցան որպէս զի Տէրոջմէ օգնութիւն խնդրեն. ու Յուդայի բոլոր քաղաքներէն ալ Տէրը խնդրելու եկան: 5 - Եւ Յովսափատ, Տէրոջը տանը մէջ նոր գաւթիին առջև, Յուդայի ու Երուսաղէմի ժողովքին մէջ կայնեցաւ, 6 - Աւ ըսաւ, Ով մեր հայրերուն Տէր Աստուածը, դուն այն Աստուածը չէ՞ս որ երկինքը կը բնակիս, ու բոլոր ազգաց թագաւոր-

*Ըստ մանց Բարբ. Երուսաղէմի բնակիչները դատելու համար
 †Կ-ժ, Մամոնացիներէն. տես հմբ. 10, և Գլ. իգ. 7:
 ‡Եբբ. երեսը դրաւ

բուժիւններուն վրայ կը տիրես, և քու ձեռքիդ մէջ այնպիսի զօրութիւն և սյծ մը կայ, որ բնաւ մէկը չկրնար քեզի դէմ դնել: 7 - Չէ՞ որ դուն, ով մեր Աստուածը, այս երկրին բնակիչները քու Խորայէլ ժողովուրդիդ առջևէն վաճառեցիր, ու զանհկա յաւիտեան քու սիրելիիդ, Աբրահամի, սերունդին տուիր: 8 - Եւ անոնք հոն բնակեցան, ու հոն քու անուանդ համար քեզի սրբարան մը շինեցին, ու ըսին, 9 - Եթէ մեր վրայ չարիք, սուր, դատաստան, ժանտախա, կամ սով գայ, մենք այս տանը առջև ու քու առջևդ կայնինք, (վասն զի այս տանը մէջ քու անունդ կայ,) ու մեր նեղութեան ատենը քեզի աղաղակենք, այն ատեն լսես ու Դժ արձատես: 10 - Եւ հիմա ահա Ամմոնի ու Մովաբի որդիները, ու Սէիր լեռանը քնախնայները, որոնց մէջ մտնելու հրաման չտուիր Խորայէլի «բարեբան» իրենց Եզրիպոսէ ելած ատենը, հապա անոնցմէ խոտորեցան, ու զանոնք չկորսնցուցին, 11 - Ահա անոնք մեզի հատուցումը բնելու համար՝ կու գան մեզ վաճառելու քու ժառանգութենէդ զոր մեզի տուիր: 12 - Ով մեր Աստուածը, անոնց դատաստան չէ՞ս ըներ. քանզի մեր վրայ եկող այս մեծ բազմութեանը դէմ գնելու զօրութիւն չունինք, ու չենք գիտեր ի՞նչ ընելու ենք. հապա մեր աչքերը քու վրագ են: 13 - Եւ բոլոր Յուդայեանք իրենց ընտանիքներովը, կիներովը ու աղաքներովը Տէրօջը առջև կայներ էին:

14 - Այն ատեն Ասափի որդիներէն Ղեւաացի Մաթանիայի որդւոյն Յէիէլի որդւոյն Բանեայի որդւոյն Զաքարիայի որդւոյն Յազիէլի վրայ Տէրօջը Հոգին եկաւ ժողովքին մէջ. 15 - Ու անհկա ըսաւ, Ով բոլոր Յուդա ու Երուսաղէմի բնակիչներ, ու դուն, Յովսափաա Թագաւոր, մտիկ ըրէք. Տէրը ձեզի այսպէս կ'ըսէ, Դուք մի վախնաք, ու այս մեծ բազմութեանը երեսէն մի զարհուրիք. քանզի պատերազմը ձերը չէ, հապա Աստուծոյ է: 16 - Վաղը անոնց վրայ իջէք. ահա անոնք Ասիսի զառ ի վերը պիտի ելլեն. ու զանոնք հեղեղատին ծայրը, Յերուէլի անապատին առջև, պիտի գտնէք: 17 - Այս պատերազմին մէջ դուք պիտի չպատերազմիք. դուք երեցէք ու կայնեցէք, որպէս զի Տէրօջը

ձեզի բրած փրկութիւնը տեսնէք, ով Յուդա ու Երուսաղէմ. մի վախնաք ու մի զարհուրիք. վաղը անոնց դիմաց ելէք, ու Տէրը ձեզի հեա պիտի ըլլայ: 18 - Այն ատեն Յովսափաա երեսը գետինը ծռեց. ու բոլոր Յուդա ու Երուսաղէմի բնակիչները Տէրօջը առջև երեսի վրայ ինկան, ու Տէրօջը երկրպագութիւն ըրին: 19 - Եւ կահաթեանց որդիներէն ու կորիսեանց որդիներէն եղող Ղեւաացիները Խորայէլի Տէր Աստուածը խիստ բարձր ձայնով օրհնելու ելան:

20 - Եւ առաւօտուն կանուխ ելան, ու Թեկուէի անապատը գացին. ու անոնց երթալու ատենը Յովսափաա կայնեցաւ, ու ըսաւ, Ով Յուդա ու Երուսաղէմի բնակիչներ, ինձի մտիկ ըրէք. Ձեր Տէր Աստուծոյն հաւատացէք, ու ապահով պիտի ըլլաք. անոր մարգարէներուն հաւատացէք, ու յաջողութիւն պիտի ունենաք: 21 - Եւ ժողովուրդին հեա խորհուրդ ըրաւ, ու Տէրօջը երգեցողներ սրոշեց, որպէս զի զօրքին առջևէն ելլեն, ու Տէրօջը սուրբ փառքը օրհնեն ու ըսեն, Գոհացէք Տէրօջմէն, վասն զի անոր սղորմութիւնը յաւիտեան է:

22 - Ու երբ անոնք ցնծութեան երգը ու օրհնութիւնը սկսան, Յուդայի վրայ եկող Ամմոնի «Մովաբի որդիներուն ու Սէիր լեռանը քնախնայներ» դէմ Տէրը դարանակալներ հանեց. և անոնք կորուսեցան: 23 - Քանզի Ամմոնի ու Մովաբի որդիները Սէիր լեռանը բնակիչներուն վրայ ելան, որպէս զի զանոնք ջարդեն ու բնաջինջ ընեն. ու երբ Սէիրի բնակիչները հառցուցին, մէկզմէկ կորուսելու ելան: 24 - Եւ Յուդայեանք անապատին մէջ եղող դիտանոցը հասնելով, այն բազմութեանը նայեցան, և ահա անոնց դիերը գետնի վրայ փռուած էին, ու ազատուած մը չկար: 25 - Այն ատեն Յովսափաա ու անոր ժողովուրդը անոնց աւարը ժողվելու գացին. ու դիերուն մէջ շատ ապրանք ու պատուական ամաններ գտան, ու իրենց համար կողոպտեցին, մինչև որ ալ չէին կրնար տանիլ. ու աւարը երեք օր ժողվեցին, վասն զի ինք շատ էր:

26 - Եւ չորրորդ օրը Սրհնութեան հովիտը ժողվուեցան, քանզի հոն Տէրը օրհնեցին. անոր համար այն տեղին ա-

նունը Օրհնութեան հովիտ կոչեցին մինչև այսօր : 27 - Եւ բոլոր Յուդայի ու Երուսաղէմի մտրդիկը ու անոնց առաջնորդը Յովսափատ ուրախութեամբ Երուսաղէմ գարձան. քանզի Տէրը զանոնք իրենց թշնամիներէն ազատելով ուրախացուցեր էր. 28 - Եւ տաւիղներով, քնարներով ու փողերով Երուսաղէմ Տէրոջը տունը գացին : 29 - Ու ամէն երկիրներուն թագաւորութիւններուն վրայ Աստուծոյ վախը ինկաւ, երբ լսեցին որ Տէրը Իսրայէլի թշնամիներուն հետ պատերազմեցաւ : 30 - Եւ Յովսափատի թագաւորութիւնը խաղաղ էր. ու անոր Աստուածը զանկաւ ամէն կողմանէ հանգստացուց :

31 - Եւ Յովսափատ Յուդայի վրայ թագաւորութիւն ըրաւ. երեսունը հինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու քսանը հինգ տարի Երուսաղէմի մէջ թագաւորեց. և անոր մօրը անունը Ազուբա էր, ու Սաղիի աղջիկն էր : 32 - Եւ անկա իր հօրը Ասայի ճամբուն մէջ քալեց, ու անկէ շտատրեցաւ՝ Տէրոջը առջև ուղղութիւն ընելով : 33 - Բայց բարձր տեղերը չվերցան. ու ժողովուրդը տակաւին սիրտերնին չէին շիտկած իրենց հայրերուն Աստուծոյն : 34 - Եւ Յովսափատի մնացորդ պատմութիւնը, առաջինը ու վերջինը, ահա Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ յիշուած Անանիի որդւոյն Յեուի պատմութեանը մէջ գրուած է :

35 - Եւ տակէ ետքը Յուդայի Յովսափատ թագաւորը՝ չարութիւն ընող Իսրայէլի Ոքոզիա թագաւորին հետ միաբանեցաւ, 36 - Ու անոր հետ ընկերութիւն ըրաւ, որպէս զի Թարսիս երթալու նաւեր շինեն. ու Գասիոն գարերի մէջ նաւեր շինեցին : 37 - Եւ Մարեսացի Դոգիայի որդին Եզիազար Յովսափատի վրայ մարգարէութիւն ըրաւ, ու ըսաւ, Արովհեան գուն Ոքոզիայի հետ ընկերացար, Տէրը քու գործդ աւրեց : Ու նաւերը խորտակեցան, ու չկրցան Թարսիս երթալ :

ԳԼ ԻԱ

Եւ Յովսափատ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Յովրամ թագաւոր եղաւ : 2 - Ու անոր եղբայրնե-

րը, Յովսափատի որդիները, Ազարիա, Յեքիէլ, Չաքարիա, Ազարիու, Միքայէլ ու Սափատիա էին. ասոնք ամէնը Իսրայէլի թագաւորին Յովսափատի որդիներն էին : 3 - Եւ անոնց հայրը արծաթ ու ոսկի ու թանկագին բաներ, շատ պարգևներ, տուաւ անոնց, նաև Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ, բայց թագաւորութիւնը Յովրամի տուաւ, քանզի անդրանիկը ան էր : 4 - Ու երբ Յովրամ իր հօրը թագաւորութեան աթոռը նստաւ ու զօրացաւ, իր բոլոր եղբայրները ու Իսրայէլի իշխաններէն մէկ քանիները սրով մեռցուց :

5 - Յովրամ՝ երեսունուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ ութ տարի թագաւորութիւն ըրաւ : 6 - Եւ անկա Աքաաբի տանը ըրածին պէս Իսրայէլի թագաւորներուն ճամբուն մէջ քալեց, (քանզի Աքաաբի աղջիկը անոր կինն էր,) ու Տէրոջը առջև չարութիւն ըրաւ : 7 - Բայց Տէրը, Դաւիթի հետ ըրած ուխտին համար, և անոր ու անոր որդիներուն միշտ ճրագ մը տալու խտտմունքին համար, Դաւիթի տունը կորսնցրնել չուզեց :

8 - Ասոր օրերը Եզովմայեցիք Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան, ու իրենց վրայ թագաւոր մը դրին : 9 - Եւ Յովրամ իր իշխաններովը ու բոլոր կառքերովը գնաց, ու գիշերով ելաւ, և իր չորս կողմը առնող Եզովմայեցիները ու կառքերու իշխանները վարկաւ : 10 - Բայց Եզովմայեցիք Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան մինչև այսօր. այն ատեն Լեբնա ալ անոր ձեռքին տակէն ապստամբեցաւ, քանզի անկա իր հայրերուն Տէր Աստուածը թողուցեր էր : 11 - Անկա Յուդայի լեւներուն վրայ բարձր տեղեր ալ շինեց. ու Երուսաղէմի բնակիչներուն պոռնկութիւն ընել տուաւ, և Յուդան գլխէ հանեց :

12 - Ու Եզիա մտրգարէէն անոր թուղթ եկաւ, որ կ'ըսէր, Քու հօրդ Դաւիթի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Արովհեան քու հօրդ Յովսափատի ճամբաները, ու Յուդայի Ասա թագաւորին ճամբաները չբռնեցիր, 13 - Հապա Իսրայէլի թագաւորներուն ճամբաները բռնեցիր, և Յուդայի ու Երուսաղէմի բնակիչներուն՝ Աքաաբի ասոնք

պունկուլթիւններուն պէս պունկուլթիւն ընել տաւիր, ու նաև քեզմէ ազէկ եղող եղբայրներդ, քու հօրդ *որդիները, մեռցուցիր, 14 - Ահա Տէրը քու ժողովուրդդ, քու որդիներդ ու կիներդ, և քու բոլոր ստացուածքդ մեծ հարուածով պիտի զարնէ. 15 - Ու դուն չարաչար պիտի հիւանդանաս փորի հիւանդութիւնով, մինչև որ փորտախքդ դուրս պիտի թափի այն հիւանդութեան պատճառաւ, ոչ օրէ օր պիտի «սարխանայ»:

16 - Եւ Տէրը Յովրամի դէմ գրգռեց Փղշտացիները, ու Եթէովպացոց մօտերը բնակող Արաբացիները. 17 - Եւ անոնք Յուդայի վրայ ելան ու զանկա +կողպատեցին. և թագաւորին տանը մէջ գտնուած բոլոր ստացուածքը, ու անոր որդիները ու կիներն ալ քշեցին տարին. ու անոր որդիներէն միայն անոր պզտիկ որդին Յովաբազ մնաց:

18 - Եւ այս բոլոր բաներէն ետքը՝ Տէրը զանկա այնպիսի փորտախքի հիւանդութեամբ մը զարկաւ, որ անբժշկելի էր: 19 - Ու շատ մը օրերէն ետքը, այսինքն երկու տարիի չափ ժամանակ անցնելէն ետքը, իր հիւանդութենէն փորտախքը դուրս թափեցաւ, ու չարաչար հիւանդութիւնով մեռաւ: Եւ ժողովուրդը անոր վրայ երկնէր չծխեցին, ինչպէս անոր հայրերուն վրայ ծխեր էին: 20 - Անկա թագաւոր եղած առեւեր երեսունուերկու տարեկան էր. և ութ տարի Երուսաղէմի մէջ թագաւորութիւն ըրաւ. և անկա †մեռաւ՝ առանց մէկու մը անոր վրայ ցաւելուն. ու զանկա Գաւթի թագաւորին մէջ թաղեցին, բայց ոչ թէ թագաւորաց գերեզմաններուն մէջ:

ԳԼ ԻԲ

Ու Երուսաղէմի բնակիչները անոր տեղ անոր պզտիկ որդին Ոքոզիան թագաւոր ըրին. քանզի Արաբացոց հետ բանակը եկող գունդերը բոլոր մեծերը մեռցուցեր էին. այսպէս Յուդայի Յովրամ թագաւորին որդին Ոքոզիա թագաւորեց: 2 - Ոքոզիա

*քառասունուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ մէկ տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Գոթողիա էր, ու Ամրիի աղջիկն էր: 3 - Անկա ալ Աքաաբի տանը ճամբաներուն մէջ քայեց. քանզի անոր մայրը չարութիւն ընելու խորհուրդ կու տար անոր: 4 - Ու անկա Տէրոջը առջև չարութիւն ըրաւ Աքաաբի տանը պէս. վասն զի իր հօրը մեռնելէն ետքը անոնք էին իր խորհրդականները՝ իր կործանման համար: 5 - Եւ անկա անոնց խորհրդովը գնաց, ու Աքաաբեան Յովրամի, Իսրայէլի թագաւորին, հետ Ատորոց Ազայէլ թագաւորին վրայ Ռամովթագաւոր պատերազմելու գնաց. ու Ատորիները Յովրամը զարկին: 6 - Եւ անկա դարձաւ որպէս զի Յեզրայէլի մէջ բժշկուի այն վէրքերէն զորոնք Ասորիները անոր տուեր էին. †Ռամովթի մէջ, Ատորոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմ ըրած առեւեր. ու Յուդայի թագաւորը Յովրամի որդին †Ազարիա Յեզրայէլ իջաւ՝ Աքաաբի որդին Յովրամը տեսնելու, վասն զի անկա հիւանդ էր: 7 - Եւ Ոքոզիայի կործանումը Աստուծմէ եղաւ՝ Յովրամի քով երթալովը. վասն զի երբ անկա հաս գնաց, Յովրամի հետ Նամեստեան Յէուեն դիմաւորելու ելաւ, զոր Տէրը օծեր էր Աքաաբի տունը բնաջինջ ընելու համար: 8 - Ու երբ Յէու Աքաաբի տանը վրայ Ասորիները վճիւր ի գործ կը դնէր, Յուդայի իշխանները և Ոքոզիայի ծառայութիւն ընող Ոքոզիայի եղբորորդիները գտաւ, ու զանոնք մեռցուց. 9 - Եւ Ոքոզիան ալ փնտռեց, որ Սամարիայի մէջ պահուած էր. ու զանկա բռնեցին և Յէուի բերելով մեռցուցին, ու զանկա թաղեցին, քանզի ըսին, Ասիկա Տէրը բոլոր սրտով խնդրող Յովաափաաի որդին է: Ու Ոքոզիայի տունէն Ռէչէկար՝ որ թագաւորութիւնը պահելու կարող ըլլար:

10 - Իսկ Ոքոզիայի մայրը Գոթողիա իր որդւոյն մեռնիլը տեսնելով՝ ելաւ, ու Յուդայի տանը բոլոր թագաւորա-

*Եբբ. տունը
†Եբբ. ճեղքեցին
‡Եբբ. առանց փափաքի գնաց

*Ըստ Ասոր. և Արաբ. Բարդ. քառասունուերկու տես նաև դ թագ. ը. 26:
†Եբբ. Ռամայի
‡Կամ, Ոքոզիա. հմբ. 1. և Կամ, Յովաաբազ. Գլ. իա. 17:

կան սերունդը բնաջինջ ըրաւ : 11 - Բայց թագաւորին ազջիկը Յօսաբէէ Աքողիայի որդին Յովատը սուաւ, ու թագաւորին սպաննուած որդիներուն մէջէն գողցաւ զանիկա, և անոր դայեակին հետ անկողիններու սենեակին մէջ դրաւ զանիկա . ու այսպէս Յովրամ թագաւորին ազջիկը, Յովիագա քահանային կինը Յօսաբէէ, Աքողիայի քոյրը ըլլալով՝ Գոթողիայի երեսէն պահէց, որ զանիկա չմեռցուց : 12 - Եւ Յովրամ անոնց հետ վեց տարի Աստուծոյ տանը մէջ պահուեցաւ . ու երկրին վրայ Գոթողիա թագաւորութիւն կ'ընէր :

ԳԼ. ԻԳ.

Ու եօթներորդ տարին Յովիագա ուժովցաւ, դաշնադրութեամբ իրեն հետ առնելով Տարիւրապեաները, Յերոսամի որդին Ազարիան, և Յօհանանի որդին Իսմայէլը, ու Ավբէզի որդին Ազարիան, և Ադայիայի որդին Մասսիան, ու Ջեբրիի որդին Եղիսափաար : 2 - Եւ անոնք Յուդայի մէջ պարտեցան, ու Յուդայի ամէն քաղաքներէն Աւտացիները ու Իսրայէլի յոսմերուն իշխանները ժողովեցին, ու Երուսաղէմ եկան : 3 - Եւ բոլոր ժողովքը Աստուծոյ տանը մէջ թագաւորին հետ դաշնակցութիւն ըրին. ու Յովրամ անոնց ըսաւ, Ահա թագաւորին որդին թագաւոր պիտի ըլլայ, ինչպէս Տէրը Իսաիթի որդիներուն համար ըսաւ : 4 - Ձեր ընելու բանը այս է . ձեր երրորդ մասը, թէ՛ քահանաներէն և թէ՛ Աւտացիներէն, շաբաթ օրը մանողները, դռներուն պահպանութիւնը ընեն . 5 - Առ Յէր երրորդ մասը թագաւորին տունը, ու երրորդ մասը հիման դուռը ըլլան . բայց բոլոր ժողովուրդը Տէրօջը տանը գաւթիթներուն մէջ կայնի . 6 - Իսկ Տէրօջը տունը՝ քահանաներէն ու ծառայութիւն ընող՝ Աւտացիներէն զատ յորձ մարդ չմանէ. անոնք թող մանեն, քանզի անոնք սուրբ են . և բոլոր ժողովուրդը Տէրօջը պահպանութիւնը պահեն . 7 - Առ Աւտացիք ամէն մարդ իր զէնքը ձեռքը բռնած՝ թագաւորին բարտախքը կայնին, ու տունը մանողը մեռցուի . և թագաւորին հետ ըլլաք անոր մտած ու երած տակեր : 8 - Առ Աւտացիք ու բոլոր Յուդա Յովիագա

քահանային բոլոր պատուիրածին պէս ըրին . և ամէն մէկը իր մարդիկը առաւ, թէ՛ շաբաթ օրը մանողները և թէ՛ շաբաթ օրը ելլողները . քանզի Յովիագա քահանան գասակարգութիւնները շարձակեց : 9 - Եւ Յովիագա քահանան Իսաիթ թագաւորին նիզակները, ասպարները ու վահանները, որոնք Աստուծոյ տանը մէջ էին, հարիւրապեաներուն տուաւ . 10 - Եւ բոլոր ժողովուրդը, ամէն մարդ իր զէնքը ձեռքը, տանը աջ կողմէն մինչև ձախ կողմը, սեղանին ու տանը քով թագաւորին բոլորախքը կայնեցուց : 11 - Եւ թագաւորին որդին հանեցին, ու անոր վրայ դրին թագը ու վկայութիւնը, ու զանիկա թագաւոր ըրին . և Յովիագա ու անոր որդիները զանիկա օծեցին, ու ըսին, Կեցցէ արքայ : 12 - Իսկ Գոթողիա, լսելով ժողովուրդին ձայնը որոնք կը վազէին ու թագաւորը կ'օրհնէին, Տէրօջը տունը ժողովուրդին եկաւ . 13 - Առ տեսաւ որ ահա թագաւորը իր սիւնին քով «հաշի» մուտքը կայներ էր, և զօրապետները ու փողերը թագաւորին քով էին, ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախանալով փողեր կը հնչեցնէին ու երգեցողները երգի նուագարաններով ու *երած շապեաները օրհնութիւններ կ'երգէին . այն ատեն Գոթողիա իր հանդերձները պատուեց, ու ըսաւ, Իսաիթանութիւն է, դաւաճաւութիւն : 14 - Եւ Յովիագա քահանան զօրքին վրայ եղող Տարիւրապեաները հանեց, ու անոնց ըսաւ, Ասիկա կարգերուն մէջէն հանեցէք, ու տար ետեւէն գացողը սրով մեռցուի . (քանզի քահանան ըսեր էր, Չանիկա Տէրօջը տանը մէջ մի մեռցնէք :) 15 - Եւ անոր վրայ ձեռքերնին երկնցուցին ու երբ անիկա թագաւորական տանը ձիւրու դռնէն ներս կը մանէր, զանիկահան մեռցուցին : 16 - Եւ Յովիագա իրեն ու բոլոր ժողովուրդին ու թագաւորին մէջտեղ դաշնակցութիւն ըրաւ, որպէս զի Տէրօջը ժողովուրդը ըլլան : 17 - Եւ բոլոր ժողովուրդը Բահայի տունը մտան, ու զանիկա կործանեցին, և անոր սեղանները ու կուռքերը կտոր կտոր ըրին, ու Բահայի քուրմը, Մասթանը, սեղան-

*ԵՔԷ. ուսուցիչները

ներուն առջև սպաննեցին: 18 - Եւ Յովիազա Ղևտացի քահանաներուն ձեռքով Գաւթի Տէրոջը տանը վրայ սրուշած Տէրոջը տանը պաշտօնեաները գրաւ, որպէս զի Մովսէսի օրէնքին մէջ գրուածին պէս՝ Տէրոջը ողջակէզներ մատուցանեն ուրախութեամբ ու երգով, ինչպէս Գաւթի սահմաններ էր: 19 - Եւ դռնապանները Տէրոջը տանը դռները կայնեցուց, որպէս զի ինչեիցէ կերպով անմաքուր եղող հարս մը չմտնէ: 20 - Ու անիկա հարիւրապետները ու ազնուականները և ժողովուրդին իշխանները ու երկրին բոլոր ժողովուրդը առաւ, ու թագաւորը Տէրոջը տունէն իջեցուց. և բարձր դռնէն թագաւորին տունը մտան, ու թագաւորը նստեցուցին թագաւորութեան աթոռին վրայ: 21 - Ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախացաւ, և քաղաքը հանգստութեան մէջ էր. ու Գոթոգիան սրով մեռցուցին:

ԳԼ ԻԴ

Յովաս եօթը տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ քառասուն տարի թագաւորութիւն ըրաւ. ու անոր մօրը անունը Սաբիա էր՝ Բերսաբէէ հարսուհի: 2 - Եւ Յովաս՝ Յովիազա քահանային բոլոր օրերուն մէջ Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ: 3 - Ու Յովիազա անոր երկու կին առնել տուաւ. ու աղաքներ ու աղջիկներ ծնաւ:

4 - Եւ ասկէ ետքը Յովաս ուզեց որ Տէրոջը տունը նորոգէ: 5 - Ու քահանաները ու Ղևտացիները ժողովեց, և անոնց ըսաւ, Յուդայի քաղաքները ելէք, ու ձեր Աստուծոյն տունը նորոգելու համար բոլոր Իսրայէլէ տարուէ տարի ստակ ժողովեցէք, ու այս գործը շուտով ըրէք. բայց Ղևտացիք շուտով չըրին: 6 - Եւ թագաւորը Յովիազա իշխանը կանչեց, ու անոր ըսաւ, Տէրոջը ծառային, Մովսէսի, ու Իսրայէլի ժողովքին վկայութեան խորանին համար հարսուհիներէն չպահանջեցիր, որ Յուդայէ ու Երուսաղէմէ բերեն: 7 - (Քանզի անօրէն Գոթոգիա հարս անոր որդիները Աստուծոյ տունը աւերէին, ու Տէրոջը տանը բոլոր սուրբ բաները Բահաղիմի նուիրէր էին): 8 - Եւ թագաւորը հրա-

մայեց. ու սնտուկ մը շինեցին, ու զանիկա Տէրոջը տանը դրանը դուրսի կողմը դրին: 9 - Եւ Յուդայի մէջ ու Երուսաղէմի մէջ մուկեօրիկ կանչել տուին, որ Աստուծոյ ծառային, Մովսէսի, անապատին մէջ Իսրայէլի հարսուհիներէն տուրքը Տէրոջը բերեն: 10 - Եւ բոլոր իշխանները ու բոլոր ժողովուրդը ուրախացան, ու բերին սնտուկին մէջ ձգեցին, մինչև որ անիկա լեցուեցաւ: 11 - Ու երբ սնտուկը Ղևտացուց ձեռքով թագաւորին վերակացուներուն կը տարուէր, և անոնք կը տեսնէին որ ստակը շացեր է, թագաւորին գրագիրը ու մեծ քահանային վերակացուն կու գար, և սնտուկը կը պարպէին, ու զանիկա վերցնելով իր տեղը կը դարձնէին. օրէ օր այսպէս կ'ընէին, ու շատ ստակ ժողովեցին: 12 - Եւ թագաւորը ու Յովիազա զանիկա Տէրոջը տանը ծառայութեան գործը ընողներուն կու ապին. ու անոնք Տէրոջը տունը նորոգելու համար՝ վարձքով քարահատներ ու հիւսեր կը բռնէին. ու Տէրոջը տունը ամրացնելու համար՝ երկաթագործներուն ու պղնձագործներուն ալ հարսուհիներ: 13 - Եւ բանուորները կ'աշխատէին. ու նորոգութեան գործը անոնց ձեռքով կատարուեցաւ. ու Աստուծոյ տունը իր ձեւին բերելով՝ զանիկա ամրացուցին: 14 - Ու երբ հարսուհիները լմացուցին, Տեսցած ստակը թագաւորին ու Յովիազայի առջև բերին. ու անով Տէրոջը տանը համար անօթներ, պաշտօնին ու ողջակէզներուն համար ամաններ ու ինկամաններ, և հարսուհիներ ու արծաթէ ամաններ շինեցին. ու Յովիազայի բոլոր օրերը Տէրոջը տանը մէջ միշտ ողջակէզներ կը մատուցանէին:

15 - Եւ Յովիազա ծերացած ու օրերը լեցուած ըլլալով մեռաւ. ու մեռած ատենը հարիւր երեսուն տարեկան էր: 16 - Եւ զանիկա Գաւթի քաղաքին մէջ թագաւորներուն հետ թաղեցին. քանզի անիկա Իսրայէլի մէջ Աստուծոյ ու անոր տանը համար աղէկութիւն ըրէր էր:

17 - Եւ Յովիազայի մեռնելէն ետքը Յուդայի իշխանները եկան, ու թագաւորին խնարհութիւն ըրին. այն ատեն թագաւորը անոնց մտիկ ըրաւ. 18 - Ու Կրենց հայրերուն Տէր Աստուծոյն տունը թողուցին, և Աստուրով թի

կուռքերուն ու չափաւածներուն ծառայութիւն ըրին . և Յուդայի ու Երուսաղէմի վրայ բարկութիւն եկաւ իրենց այս յանցանքին համար : 19 - Վասն զի անոնց մարգարէներ զրկեց, որպէս զի զանոնք Տէրոջը դարձնեն . ու անոնց վկայութիւն ըրին , բայց անոնք մտիկ չըրին :

20 - Եւ Յովիադա քահանային որդւոյն Զաբարիայի վրայ Աստուծոյ Հոգին եկաւ , ու անիկա ժողովուրդին մէջ բարձր տեղ մը կայնեցաւ , ու անոնց ըսաւ , Աստուած այսպէս կ'ըսէ , Ինքինչ՞ու համար Տէրոջը պատուիրանքներէն կը խոտորիք . դուք բնաւ յաջողութիւն պիտի չգանէք , քանզի դուք Տէրը մերժեցիք , ան ալ ձեզ պիտի մերժէ : 21 - Եւ անոնք անոր դէմ միաբանեցան , ու զանիկա թագաւորին հրամանովը Տէրոջը տանը գաւթիւն մէջ քարերով քարկոծեցին : 22 - Եւ Յովաթա թագաւորը անոր հօրը Յովիադայի իրեն ըրած բարերարութիւնը չխիշելով՝ անոր որդին մեռցուց . ու անիկա մեռած ատենը ըսաւ , Տէրը ատենէ ու *գատէ :

23 - Եւ հետեւեալ տարին Ասորոց զօրքը անոր դէմ ելլելով Յուդայի ու Երուսաղէմի վրայ եկան , ու ժողովուրդին բոլոր իշխանները մեռցուցին , ու անոնց բոլոր աւարը Իսմայիլոսի թագաւորին զրկեցին : 24 - Ասորոց զօրքը քիչ մարդոցմով եկաւ , բայց Տէրը խիստ շատուոր եղող զօրքը անոնց ձեռքը մտանեց . քանզի անոնք իրենց հայրերուն Տէր Աստուածը թողուցեր էին : Այսպէս Ասորիները Ասորոց դատաստանը ի գործ դրին Յովաթի վրայ : 25 - Ու երբ անոնք գացին անկէ , մեծ հիւանդութիւններու մէջ ձգելով զանիկա , անոր ծառաները անոր դէմ դաւաճանութիւն ըրին Յովիադա քահանային որդիներուն արեանը համար , ու զանիկա իր անկողինին մէջ սպաննեցին , ու մեռաւ . ու զանիկա Իսաիթի քաղաքին մէջ թաղեցին . բայց թագաւորաց գերեզմաններուն մէջ չթաղեցին : 26 - Եւ անոր դէմ դաւաճանութիւն բնողները ասոնք էին . Ամիննացի կնոջ Աամեթի որդին Զարագ , ու Մովարացի կնոջ Աամարիթի որդին Յովզարագ : 27 - Եւ

անոր որդիներուն համար , ու իր քով շարժած տուրքին շատութեանը համար , ու Աստուծոյ ասանը *նորոգութեանը համար՝ ասա թագաւորաց զիրքին յիշատակարանին մէջ գրուած է : Ու անոր տեղ անոր որդին Ամասիա թագաւոր եղաւ :

ԳԼ ԻԵ

Ամասիա քանըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ քանըհինգ տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Յովադան էր , ու Երուսաղէմացի էր : 2 - Եւ Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ , բայց ոչ կատարեալ սրտով :

3 - Ու երբ թագաւորութիւնը անոր վրայ հաստատուեցաւ՝ իր ծառաները մեռցուց , որոնք իր հայրը թագաւորը սպաններ էին . 4 - Բայց անոնց որդիները չմեռցուց , ինչպէս Մովսէսի օրինաց զիրքին մէջ գրուած է . ու Տէրը պատուիրեց՝ ըսելով , Տղոց յանցանքին համար հայրերը չմեռցուին , ու հայրերուն յանցանքին համար տղաքը չմեռցուին , հապա ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի :

5 - Եւ Ամասիա Յուդան ժողվեց , ու անոնց տոհմերուն վրայ հազարապետներ ու հարիւրապետներ դրաւ բոլոր Յուդայի ու Բենիամինի մէջ , և զանոնք քան տարեկանէն վեր համրեց , ու պատերազմի ելլող և նիզակ ու վահան կրող երեք հարիւր հազար ընտիր զօր գատաւ : 6 - Ու անիկա հարիւր տաղանդար ծառայող Իսրայէլէ հարիւր հազար զօրաւոր կտրիճ վարձքով բռնեց : 7 - Եւ Աստուծոյ մարդ մը եկաւ անոր ու ըսաւ , Ով թագաւոր , Իսրայէլի զօրքը քեզի հետ չերթայ . քանզի Տէրը Իսրայէլի հետ , այսինքն բոլոր Եփրեմի որդիներուն հետ , չէ . 8 - Բայց եթէ դուն երթալ կ'ուզես , այնպէս ըրէ , որ պատերազմի համար ուժովցիր , Բայց Աստուած թշնամիին առջև պիտի կործանէ քեզ . քանզի օգնելու ու կործանելու զօրութիւնը Աստուծոյ ձեռքն է : 9 - Եւ Ամասիա Աստուծոյ մարդուն ըսաւ , Հապա ի՞նչպէս ընելու է այն հարիւր տաղանդը զոր ես Իսրայէլի զօրքին տուի . ու Աստուծոյ մարդը

*Եբբ. խնդրէ

†Եբբ. հիմանը

բառ , Տէրը քեզի անկէ աւելին կրնայ տալ : 10 - Եւ Ամասիա Եփրեմէ իրեն եկող գունդերը զատեց , որպէս զի իրենց տեղը երթան . ու անոնք Յուդայի վրայ խիստ սրգողեցան , ու սաստիկ բարկութեամբ իրենց տեղը դարձան :

11 - Եւ Ամասիա ուժովցաւ ու իր զօրքը հանեց , ու Ազի ձորը գնաց , և Սէիրի որդիներէն տասը հազարը զարկաւ , 12 - Ու տասը հազարն ալ Յուդայի որդիները ողջ գերի առին , և քարաժայռին գլուխը տարին , ու զանոնք քարաժայռին գլխէն վար ձգեցին , ու ամէնն ալ կտոր կտոր եղան :

13 - Եւ այն զօրքերը՝ զորոնք Ամասիա ետ զրկեց , որպէս զի իրեն հետ պատերազմի չերթան , Յուդայի քաղաքներուն վրայ յարձակեցան՝ Սամարիայէ մինչև Բեթսորն , ու անոնցմէ երեք հազար մարդ մեռցուցին , և շատ աւար առին :

14 - Ու երբ Ամասիա Եդովմայեցիները ջարդելէն դարձաւ , Սէիրի որդիներուն աստուածները բերաւ . ու զանոնք կանգնեց , որպէս զի իրեն աստուածներ ըլլան . և անոնց առջև երկրբազուցութիւն կ'ընէր , ու անոնց խունկ կը ծխէր :

15 - Ու Տէրոջը բարկութիւնը Ամասիայի վրայ բորբոքեցաւ , և անոր մարգարէ մը զրկեց՝ ըսելով , Գուն ինչո՞ւ փնտռեցիր այն ժողովուրդին աստուածները՝ որոնք չկրցան իրենց ժողովուրդը քու ձեռքէդ ազատել : 16 - Ու երբ անոր հետ կը խօսէր , Գուն ըսաւ անոր , Միթէ քեզ թագաւորի խորհրդակա՞ն գրին . լուռ կեցիր , *չըլլայ որ՝ քեզ զարնեն : Եւ մարգարէն լռեց . ու ըսաւ , Աչէ՛ գիտեմ՝ որ Աստուած որոշեր է քեզ կորսնցնել , որովհետև իմ խրատս մտիկ չընելով՝ այդ բանը ըրիր :

17 - Եւ Յուդայի Ամասիա թագաւորը խորհուրդ ըրաւ , ու Իսրայէլի թագաւորին , Յեուի որդւոյն Յովաքազի որդւոյն Յովասի , Ժաբթ զրկեց՝ ըսելով , Եկուր , երես երեսի տեսնուինք : 18 - Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը Յուդայի Ամասիա թագաւորին Ժաբթ զրկեց ու ըսաւ , Լիբանանի փուշը Լիբանանի եղևնափայտին պէ՞տէմ զրկեց՝ ըսելով , Քու ազջիկդ իմ

աղուս կին տուր . բայց Լիբանանի մէջ եղող դաշտի գազանը անցաւ , ու փուշը կոխկռտեց : 19 - Գուն , Ահա Եդովմը զարկի , ըսիր , ու քու սիրտդ քեզ բարձրացնելով հպարտացուց . հիմա քու տունդ նստէ . քանզի ինչո՞ւ համար չարութեան խառնուիս , որ իյնաս դուն ու քեզի հետ Յուդա ալ : 20 - Բայց Ամասիա մտիկ չըրաւ . քանզի տախտակ Աստուծմէ եղաւ , որպէս զի զանոնք իրենց Բշաֆնէրն ձեռքը մտանէ , Եդովմայեցուց աստուածները փնտռելուն համար : 21 - Ուստի Իսրայէլի Յովաս թագաւորը եղաւ . և ինք ու Յուդայի Ամասիա թագաւորը Յուդայի Բեթսամիւսին մէջ երես երեսի տեսնուեցան : 22 - Եւ Յուդա Իսրայէլի առջև յայլթուեցաւ , ու ամէն մարդ իր վրանը փախաւ : 23 - Եւ Իսրայէլի Յովաս թագաւորը՝ Յովաքազի որդւոյն Յովասի որդին Ամասիան , Յուդայի թագաւորը , Բեթսամիւսի մէջ բռնեց , ու զանկիա Երուսաղէմ տարաւ . ու Եփրեմի դռնէն մինչև Անկեան դուռը՝ Երուսաղէմի պարսպին չորս հարիւր կանգունը փրկցուց : 24 - Եւ բոլոր ոսկին ու արծաթը , և Աստուծոյ տանը մէջ գանուած՝ Աբդեգոմի քովի բոլոր ամանները , ու թագաւորին տանը գանձերը , և պատանդներ ալ * * * , ու Սամարիա դարձաւ :

25 - Եւ Յուդայի թագաւորը , Յովասի որդին Ամասիա , Իսրայէլի թագաւորին Յովաքազի որդւոյն Յովասի մեռնելէն ետքը տասնըհինգ տարի տպրեցաւ : 26 - Ու Ամասիայի մնացորդ պատմութիւնը , առաջինը ու վերջինը , ահա Յուդայի ու Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ գրուած է : 27 - Եւ Ամասիա երբ Տէրոջը հետեւելէն խոտորեցաւ , անոր դէմ Երուսաղէմի մէջ դաւաճանութիւն ըրին . ու անկիա Լաքիս փախաւ . բայց անոր ետեւէն Լաքիս Ժաբթ զրկեցին , և զանկիա հոն մեռցուցին : 28 - Ու ձիերով վերցուցին , ու զանկիա իր հայրերուն հետ *Յուդայի քաղաքին մէջ թաղեցին :

*Կա՛մ , ինչո՞ւ

*Կա՛մ , Գաւիթի . դ թագ . ժ գ . 20 :

ԳԼ. ԻԶ

Եւ բոլոր Յուդայի ժողովուրդը Ազիան առին, որ տասնըվեց տարեկան էր, ու զանիկա իր հօրը Ամասիայի տեղ թագաւոր դրին: 2 - Ասիկա Ելաթը շինեց, ու թագաւորին իր հայրերուն հետ քնանալէն ետքը՝ զանիկա Յուդայի ետ դարձուց: 3 - Ազիա տասնըվեց տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ յիսունուերկու տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Յեքէլիա էր, ու Երուսաղէմոցի էր: 4 - Եւ անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ, իր հօրը Ամասիայի բոլոր ըրածին պէս: 5 - Աւատուծոյ տեսիլքներուն հմուտ եղող Զաքարիայի օրերը զԱստուած կը խընդրէր. և Տէրը խնդրած օրերը Աստուած անոր յաջողութիւն կու տար: 6 - Աւելաւ Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ. և Գէթի պարիսպը, Յաբնէի պարիսպը ու Ազովտոսի պարիսպը փրկուցուց. և Ազովտոսի քաղաքին մէջ ու Փղշտացւոց քաղաքներ շինեց: 7 - Եւ Աստուած անոր օգնութիւն ըրաւ Փղշտացւոց դէմ, ու Գուր-բաճաղ բնակող Արաբացւոց դէմ ու Մատնացւոց դէմ: 8 - Եւ Ամանացիք Ազիայի բնիկներ կու տային. ու անոր անունը մինչև Եգիպտոսի մուտքը տարածուեցաւ, քանզի անիկա խիստ ուժովցաւ: 9 - Եւ Ազիա Երուսաղէմի մէջ՝ Անկեան դրանը վրայ, ու Զորի դրանը վրայ և դարձին դարձուածքին վրայ աշտարակներ շինեց, ու զանանք ամրացուց: 10 - Եւ անապատին մէջ աշտարակներ շինեց, ու շատ ջրհորներ փորեց. քանզի անիկա դաշտի մէջ ու հովիտի մէջ շատ անատուներ, յաւանակողմը նաև կարձեղոս լիւր երկրագործներ ու այգեգործներ ունէր. քանզի երկրագործութիւնը կը սիրէր: 11 - Եւ Ազիա՝ Յէիէլ դպրապետին ու Մատտիա ոստիկանին ձեռքով համբուած թիւին համեմատ, թագաւորին իշխաններէն Անանիայի ձեռքին տակ՝ գունդով պատերազմի ելլող զօրքեր ունէր: 12 - Բոլոր զօրաւոր կտրիճներուն տոհմապետներուն թիւը երկու հազար վեց հարիւր էր: 13 - Եւ անոնց ձեռքին տակ երեք հարիւր եօթը հազար հինգ հարիւր պատերազմող մարդ կար, որոնք մեծ

ուժով կը պատերազմէին, ու թշնամիին դէմ՝ թագաւորին օգնութիւն կ'ընէին: 14 - Եւ Ազիա այն բոլոր զօրքին համար վահաններ, նիզակներ, սաղաւարտներ, գրահներ, աղեղներ ու քարերու համար պարսեր պատրաստեց: 15 - Աւ անիկա Երուսաղէմի մէջ սրուեստաւորներուն ճարտարութիւնովը մեքենաներ շինեց, որպէս զի նետեր ու մեծ քարեր նետելու համար՝ աշտարակներուն վրայ և անկիւններուն վրայ կենան. ու անոր անունը հեռու տեղեր տարածուեցաւ, վասն զի անիկա զարմանալի օգնութիւններ գտաւ, մինչև որ ուժովցաւ: 16 - Բայց երբ ուժովցաւ, անոր սիրտը հպարտանալով՝ չարութիւն ըրաւ, և իր Տէր Աստուծոյն դէմ յանցանք գործեց. ու Տէրոջը տաճարը մտաւ, որպէս զի խունկի սեղանին վրայ խունկ ծխէ: 17 - Եւ անոր ետեւէն Ազարիա քահանան մտաւ, ու անոր հետ Տէրոջը ութտուն քահանաները՝ որոնք զօրաւոր մարդիկ էին: 18 - Եւ անոնք Ազիա թագաւորին դէմ կեցան, ու անոր ըսին, Ավ. Ազիա, քեզի շինար որ Տէրոջը խունկ ծխես, հապա Ահարոնեան քահանաներուն՝ որոնք խունկ ծխելու համար սրբուած են. սրբարանէն դուրս ելիր, քանզի յանցանք գործեցիր. ու այս բանին համար Տէր Աստուծոմէ պատիւ պիտի չառնես: 19 - Եւ Ազիա բարկացաւ, ու անոր ձեռքը խունկ ծխելու համար բուրվառ կար. ու երբ քահանաներուն բարկացաւ, քահանաներուն առջև, Տէրոջը տանը մէջ խունկի սեղանին քով, անոր ճակատին վրայ բորոտութիւն երեցաւ: 20 - Եւ Ազարիա քահանայապետը ու բոլոր քահանաները անոր նայեցան, և ահա անոր ճակատին վրայ բորոտութիւն կար, ու զանիկա շուտով անկէ հանեցին. ու անիկա այլ ելլելու տրտորաց, քանզի Տէրը զանիկա զարկեր էր: 21 - Եւ Ազիա թագաւորը մինչև իր մահուան օրը բորոտած էր, ու զատ տան մը մէջ բորոտած կը նստէր, վասն զի Տէրոջը տունէն արգիլուեցաւ, ու անոր սրգին Յովաթամ, թագաւորին տանը վրայ ըլլալով, երկրին ժողովուրդը կը դատէր: 22 - Եւ Ազիայի մնացորդ պաշտմու-

*ԵՔԵ. սպականութիւն

Թիւնը , առաջինը ու վերջինը , Ամսվտի որդին Եսայի մարգարէն գրեց : 23 - Եւ Ողիտ իր հայրերուն հետ քնացաւ . ու զանհկա իր հայրերուն հետ Թագաւորաց գերեզմաններուն դաշտին մէջ Թաղեցին . վտան զի ըսին , Անհկա բորտո է : Եւ անոր որդին Յովաթամ անոր տեղ Թագաւորեց :

ԳԼ. ԻԵ

Յովաթամ քսանըջինգ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ տասներկէց տարի Թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Յերուսա էր , ու Սագովկի աղջիկն էր : 2 - Եւ իր հօրը Ողիտի բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ . բայց Տէրոջը սաճարը չմտաւ . ու ժողովուրդը տակաւին ապականած էր : 3 - Ասիկա Տէրոջը տանը ամէնէն բարձր դուռը շինեց , ու Ոփաղի պարսպին վրայ շատ բաներ շինեց : 4 - Եւ Յուդայի լեռնակողմը քաղաքներ , ու անտառներու մէջ բերդեր ու աշտարակներ շինեց : 5 - Եւ անհկա Ամմոնի որդիներուն Թագաւորին հետ պատերազմ ըրաւ , ու զանոնք յաղթեց . և նոյն տարին Ամմոնի որդիները հարիւր տաղանդարծաթ , ու տասը հազար քոս ցորեն , և տասը հազար քոս գարի տուին անոր . սոյպէս երկրորդ ու երրորդ տարին ալ Ամմոնի որդիները բերին անոր : 6 - Եւ Յովաթամ զօրացաւ , վտան զի իր ճամբաները իր Տէր Աստուծոյն առջև շիտկեց :

7 - Ու Յովաթամի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր պատերազմները ու ճամբաները ահա Իսրայէլի ու Յուդայի Թագաւորաց գիրքին մէջ գրուած են : 8 - Անհկա Թագաւոր եղած ատենը քսանըջինգ տարեկան էր , ու տասներկէց տարի Երուսաղէմի մէջ Թագաւորութիւն ըրաւ : 9 - Եւ Յովաթամ իր հայրերուն հետ քնացաւ , ու զանհկա Իսրայէլի քաղաքին մէջ Թաղեցին և անոր որդին Աքազ անոր տեղ Թագաւորեց :

ԳԼ. ԻԸ

Աքազ քսան տարեկան էր երբ Թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ տասներկէց տարի Թագաւորութիւն

ըրաւ . և իր հօրը Իսրայէլի պէս Տէրոջը առջև ուղղութիւն չըրաւ . 2 - Հապա Իսրայէլի Թագաւորաց ճամբաներուն մէջ քաղեց , ու Բահաղիմի ձուլածոյ կուռքեր շինեց : 3 - Եւ անհկա Ենովմի որդւոյն ձորին մէջ խունկ կը ծխէր , ու իր որդիները կրակով այրեց՝ այն ազգերուն գարշելի սովորութիւններուն համեմատ , զորոնք Տէրը Իսրայէլի որդիներուն առջևէն վանեց : 4 - Եւ բարձր տեղերը , ու բլուրներու վրայ , և ամէն կանանչ ծառերու տակ զո՛հ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր :

5 - Եւ անոր Տէր Աստուածը զանհկա Ասարոնց Թագաւորին ձեռքը մատնեց . ու զանհկա զարկին , և անկէ խիստ շատ գերիներ առին , ու Իսամասկոս տարին . նաև Իսրայէլի Թագաւորին ձեռքը մատնուեցաւ , որ զանհկա մեծ հարուածով զարկաւ : 6 - Եւ Ռովմելայի որդին Փակէէ մէկ օրուան մէջ Յուդայէ հարիւր քսան հազար քոս մեռցուց , որոնց ամէնն ալ զօրաւոր կարիճներ էին . քանզի իրենց հայրերուն Տէր Աստուածը Թողուցեր էին : 7 - Ու Եփրեմէ Զեբբի անունով զօրաւոր մարդ մը Թագաւորին որդին Մասսիան և պալատին հազարապետը Եզրիկամը ու Թագաւորին փոխանորդը Եղկանան մեռցուց : 8 - Եւ Իսրայէլի որդիները իրենց եղբայրներէն , կիներ ու աղաքներ ու աղջիկներ , երկու հարիւր հազար գերի առին . և անոնցմէ շատ աւարներ առին , ու աւարը Սամարիա տարին :

9 - Եւ հոն Տէրոջը մէկ մարգարէն կար Ովգեդ անունով , որ Սամարիա եկող զօրքին դիմաց ելաւ ու անոնց ըսաւ , Ահա ձեր հայրերուն Տէր Աստուածը Յուդայի վրայ բարկանալուն համար՝ զանոնք ձեր ձեռքը մատնեց . ու մեռցուցիք զանոնք «յօպի» բարկութեամբ «բ մինչև երկինք հասաւ : 10 - Եւ հիմա կը մտածէք որ Յուդայի ու Երուսաղէմի որդիները ձեզի ծառաներ ու աղախիններ ընէք . չէ՞ որ ձեր Տէր Աստուծոյն առջև միայն դուք յանցաւոր կ'ըլլաք : 11 - Ու հիմա ինձի մտիկ ըրէք , ու ետ դարձուցէք այն գերիները զորոնք ձեր եղբայրներէն առիք . քանզի Տէրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ է : 12 - Ու Եփրեմի որդիներուն իշխաններէն Յօհանանի

որդին Ազարիա , Մեսեղամծի որդին Բարաքիա , Սեղզումի որդին Եզեկիա ու Ադդիայի որդին Ամեսայի պատերազմէն եկողներուն դէմ կեցան , 13 - Եւ անոնց ըսին , Գերիները հոս մի բերէք . քանզի մենք Տէրոջը առջև յանցաւոր ըլլալով՝ դուք կ'ուզէք «...ի» ու մեր մեղքերուն ու մեր յանցանքներուն վրայ աւելցնել . վասն զի մեր յանցանքը շատ է , ու Իսրայէլի վրայ աստիկ բարկութիւն կայ : 14 - Այն ատեն պատերազմականները իշխաններուն ու բոլոր ժողովքին առջև թողուցին գերիները ու աւարը : 15 - Եւ իրենց անուններովը յիշուած մարդիկը ելան , ու գերիները առին , ու բոլոր մերկ եղողները աւարէն հագցուցին . անոնց հանգերձներ ու կօշիկներ հագցուցին , զանոնք կերցուցին խմցուցին ու իւզով օծեցին . և բոլոր տկարները էշերու վրայ հեծցնելով՝ Արմաւէնեաց քաղաքը Երիքով տարին անոնց եղբայրներուն քով , ու իրենք Սամարիա դարձան :

16 - Այն ատեն Աքազ թագաւորը Ատրեստանի թագաւորներուն պարտազրկեց , որպէս զի իրեն օգնութիւն ընեն . 17 - Վասն զի Եդովմոյեցիք նորէն եկեր էին , ու Յուդան զարնելով գերիներ տարեր էին : 18 - Փղշաոցիք ալ , դաշտի մէջ ու Յուդայի հարաւային կողմը եղող քաղաքներուն վրայ յարձակելով , Բեթսամիւսը , Այեղանը , Գադերօթը , Սոքովը ու անոր գեղերը , և Թամանն ու անոր գեղերը , և Գամզովը ու անոր գեղերը առեր ու հոն բնակեր էին : 19 - Վասն զի Տէրը Իսրայէլի թագաւորին Աքազի պատճառաւ Յուդան նկուն ըրաւ . որովհետեւ անիկա Յուդան «գլխէ հանեց» , ու Տէրոջմէ ապստամբեցաւ : 20 - Ու Ատրեստանի թագաւոր-փաղատար թագաւորը անոր եկաւ , ու զանիկա նեղեց . բայց անոր օգնութիւն չըրաւ : 21 - Քանզի թէպէտև Աքազ Տէրոջը տունէն ու թագաւորին և իշխաններուն տուներէն իրաժիներ առաւ , ու Ատրեստանի թագաւորին տուաւ , բայց անիկա օգնութիւն չըրաւ անոր : 22 - Եւ իր նեղութեանը մէջ՝ ա՛յ

աւելի Տէրոջը դէմ՝ մեղք կը գործէր . այսպիսի մարդ չէր Աքազ թագաւորը . 23 - Ու անիկա զոհեր կը մատուցանէր Գամասկոսի աստուածներուն որոնք զինք զարկեր էին . քանզի ըսաւ , Ատրուց թագաւորներուն աստուածներուն անոնց օգնութիւն ընելուն համար՝ անոնց զոհ մատուցանեմ , որպէս զի ինձի օգնութիւն ընեն . բայց անոնք իրեն ու բոլոր Իսրայէլի աւերումին պատճառ եղան : 24 - Եւ Աքազ Աստուծոյ տանը անօթները ժողովեց , ու զանոնք կտարտեց , և Տէրոջը տանը դռները գոցեց , ու Երուսաղէմի ամէն անկիւնները իրեն սեղաններ շինեց : 25 - Եւ Յուդայի ամէն քաղաքներուն մէջ բարձր տեղեր շինեց , որպէս զի ուրիշ աստուածներու խունկ ծխէ , ու իր հայրերուն Տէր Աստուածը սրդողցուց :

26 - Եւ անոր մնացորդ պատմութիւնը ու բոլոր վարմունքը , առաջինը ու վերջինը , ահա Յուդայի ու Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ գրուած են : 27 - Եւ Աքազ իր հայրերուն հետ քնացաւ . ու զանիկա Երուսաղէմ քաղաքին մէջ թաղեցին , բայց Իսրայէլի թագաւորներուն գերեզմաննոցը չտարին . և անոր որդին Եզեկիա անոր տեղ թագաւոր եղաւ :

ԳԼ ԻԹ

Եզեկիա քանըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ քսանինը տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Աբիա էր , ու Զաքարիայի աղջիկն էր : 2 - Եւ անիկա իր հօրը Գաւթի բուրբ ըրածին պէս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ :

3 - Անիկա իր թագաւորութեան առաջին տարւոյն առաջին ամիսը Տէրոջը տանը դռները բացաւ , ու զանոնք նորոգեց : 4 - Եւ քահանաները ու Ղևտացիները բերել տուաւ , ու զանոնք արեւելեան հրապարակին մէջ ժողովեց , 5 - Եւ անոնց ըսաւ , Ինձի մտիկ ըրէք , ով Ղևտացիներ , հիմա սրբուեցէք , ու ձեր հայրերուն Տէր Աստուծոյն տունը սրբեցէք , և պղծութիւնը սրբարանէն դուրս հանեցէք . 6 - Քանզի մեր հայրերը ապստամբեցան , ու մեր Տէր Աստուծոյն առջև չարութիւն

*Կամ , թող տուաւ անասակութիւն ընելու . Եյ . լր . 25 :
 †Կամ , ինչ որ կոր

ըրին, ու զանկա թողուցին. և իրենց երեսը Տէրոջը խորանէն դարձուցին, ու *արհամարհեցին զանիւ* . 7 - Արահին դռներն ալ գոցեցին, ճրագները մարեցին, խունկ չծխեցին ու սուրբ տեղը Խորայէլի Աստուծոյն սղջակէզ չմատուցին : 8 - Անոր համար Յուդայի ու Երուսաղէմի վրայ Տէրոջը բարկութիւնը եկաւ, ու զանոնք խռովութեան, աւերման ու խոյտառակութեան մէջ ձգեց, ինչպէս հիմա ձեր աչքերովը կը տեսնէք : 9 - Եւ այս պատճառաւ ահա մեր հայրերը սրով ինկան, ու մեր տղաքները և սղջիկները ու կիները գերութեան մէջ են : 10 - Հիմա իմ՝ սրտիս մէջ +*+*+ ունիմ, որ Խորայէլի Տէր Աստուծոյն հետ ուխտ ընեմ, որպէս զի իր սաստիկ բարկութիւնը մեզմէ գառնայ : 11 - Արդ, որդեակք իմ, անհոգութիւն մի ընէք . վասն զի Տէրը ձեզ ընտրեց, որպէս զի իրեն ծառայութիւն ընելու համար իր առջև կայնիք, իրեն սպասաւորներ ըլլաք ու խունկ ծխէք :

12 - Այն ատեն սաք ելան Ղևտացիները, սյսինքն կահաթի որդիներէն Ամեայիի որդին Մաաթ, ու Ազարիայի որդին Յովէլ . և Մերարիի որդիներէն՝ Աբգիի որդին կիս, ու Յալէլէլի որդին Ազարիա . ու Գերսանեաններէն՝ Չամմայի որդին Յովաք, և Յովաքի որդին Եգէն . 13 - Ու Եղիսափանի որդիներէն՝ Սամարի ու Յէիէլ . և Ասափի որդիներէն՝ Չաքարիա ու Մաթանիա . 14 - Ու Եմանի որդիներէն՝ Յեքիէլ ու Սեմէի . և Իգիթունի որդիներէն՝ Սեմայիա ու Ազիէլ : 15 - Եւ իրենց եղբայրները ժողվեցին ու սրբուեցան . և թագաւորին հրամանովը ու Տէրոջը խօսքովը Տէրոջը տունը մտքրելու գացին : 16 - Եւ քահանաները, մտքրելու համար, Տէրոջը տանը ներսի կողմը մտան, ու Տէրոջը տաճարին մէջ գրանուած բոլոր սղատեղութիւնը Տէրոջը տանը գաւիթը հանեցին, ու Ղևտացիները զանկա վերցուցին, որպէս զի դուրսը կեդրոն հեղեղաւր տանին : 17 - Եւ առաջին ամսուն առաջին օրը սկսան սրբել . ու ամսուն ութերորդ օրը Տէրոջը սրահը եկան, ու Տէրոջը տունը ութ օրուան մէջ սրբեցին . և առաջին ամսուն տասներկեցերորդ օրը

լմնցուցին : 18 - Ու Եզեկիա թագաւորին քով գացին ու ըսին, Տէրոջը բոլոր տունը, ու սղջակէզի սեղանը ու անոր բոլոր գործիքները, և առաջաւորութեան հացին սեղանը ու անոր բոլոր գործիքները մտքրեցինք . 19 - Ու նաև պատրաստեցինք ու սրբեցինք այն բոլոր ամանները, զորոնք Աքազ թագաւորը իր թագաւորութեանը ու իր անօրէնութեանը ատեն պղծեց . և ահա անոնք Տէրոջը սեղանին առջեւ են :

20 - Ու Եզեկիա թագաւորը կանուխ ելաւ, ու քաղաքին իշխանները ժողվելով Տէրոջը տունը գնաց . 21 - Եւ էջ թագաւորութեանը ու սրբարանին ու Յուդայի համար եօթը զուարակ, եօթը խոյ ու եօթը գառ, ու մեղքի պատարագ ըլլալու համար եօթը նոխազ բերին . և անկա Ահարոնի որդիներուն, քահանաներուն, հրամայեց որ զանոնք Տէրոջը սեղանին վրայ մատուցանեն : 22 - Ու զուարակները մտքրեցին, և քահանաները արիւնը առին ու սեղանին վրայ սրակեցին . և խոյերն ալ մտքրեցին, ու արիւնը սեղանին վրայ սրակեցին . և գառներն ալ մտքրեցին, ու արիւնը սեղանին վրայ սրակեցին : 23 - Ու մեղքի պատարագի նոխազները թագաւորին ու ժողովքին առջև բերին . և անոնք ձեռքերնին անոնց վրայ դրին : 24 - Ու քահանաները զանոնք մտքրեցին, և անոնց արիւնը սեղանին վրայ *սրակեցին բոլոր Խորայէլի քաւութիւն ընելու համար . վասն զի թագաւորը ըսեր էր որ սղջակէզը ու մեղքի պատարագը բոլոր Խորայէլի համար *արսուցանեն : 25 - Ու Ղևտացիները ծնծղաներով, տաւիղներով ու քնարներով Տէրոջը տանը մէջ կայնեցուց, ինչպէս Իաւիթ ու Իսիթ թագաւորին տեսանողը Գադ և Նաթան մարգարէն պատուիրեր էին . վասն զի Տէրը իր մարգարէներուն ձեռքով *արտեց* հրամայեր էր : 26 - Ու Ղևտացիները Իաւիթի նուագարաններովը և քահանաները փողերով կայնեցան : 27 - Ու Եզեկիա հրամայեց որ սղջակէզը սեղանին վրայ մատուցանեն . ու սղջակէզին սկսած ատենը Տէրոջը օրհնութիւնն ալ փողերով ու Խորայէլի թագաւորին

*Եբբ. կանակ դարձուցին

*Եբբ. մեղքի պատարագի պէս մատուցին

Կաւիթի նուագարաններովը սկսաւ : 28 - Ու մինչև ողջակէզին լմնալը բոլոր ժողովքը երկրպագութիւն կ'ընէր, երբեք չէր որհնակութիւն կ'երգէին, և բանասերը փողերը կը հնչէցնէին : 29 - Ու երբ ողջակէզ մատուցանելը լմնուցին, թագաւորը և բոլոր քովը գանուողները ծռելով երկրպագութիւն ըրին : 30 - Ու Եզեկիա թագաւորը ու իշխանները Ղևտացոց ըսին որ Տէրոջը օրհնութիւն երգեն Կաւիթի ու Ասափ անտանողին խօսքերովը . անոնք ալ ուրախութեամբ երգեցին, ու խոնարհելով երկրպագութիւն ըրին :

31 - Ու Եզեկիա պատասխան տուաւ ու ըսաւ, Հիմա ինքզինքնիդ Տէրոջը նուիրեցիք . մօտեցէք ու Տէրոջը տունը զոհէր ու օրհնութեան ընծաներ բերէք : Եւ ժողովքը զոհէր ու օրհնութեան ընծաներ բերաւ . և ամէն յօժարութիւն ունեցողը ողջակէզներ բերաւ : 32 - Ու ժողովքին բերած ողջակէզներուն թիւը այս էր . եօթանասուն արջառ, հարիւր խոյ -- երկու հարիւր դառ . ասոնց ամէնը Տէրոջը ողջակէզ ըլլալու համար էին : 33 - Եւ նուիրուածները վեց հարիւր արջառ ու երեք հազար ոչխար էին : 34 - Բայց քահանաները քիչուոր ըլլալնուն համար՝ բոլոր ողջակէզներուն մորթերը հանելու կարող չէղան, ու մինչև այս գործին լմնալը, ու մինչև Գ -- քահանաներուն սրբուիլը, իրենց Ղևտացի եղբայրները իրենց օգնութիւն ըրին . քանզի Ղևտացիք քահանաներէն աւելի յօժարութեամբ սրբուեցան . 35 - Ու նաև ողջակէզները խաղաղութեան զոհերուն ճարպովը և ողջակէզներուն թափելու նուէրներովը մէկտեղ շատ էին : Այսպէս Տէրոջը տանը պաշտօնը կարգի գրուեցաւ : 36 - Ու Եզեկիա և բոլոր ժողովուրդը ուրախացան որ Աստուած ժողովուրդը «յոգե» պատրաստեց . քանզի այս բանը յանկարծ եղաւ :

ԳԼ Լ

Ու Եզեկիա բոլոր Իսրայէլի և Յուդայի մարդերը, ու Եփրեմի ու Մանասէի ալ նամակներ գրեց, որպէս զի Երուսաղէմ Տէրոջը տունը գան, ու Իսրայէլի Տէր Աստուծոյն զատիկ ընեն : 2 - Եւ թագաւորը ու անոր իշխանները

ու բոլոր ժողովքը Երուսաղէմի մէջ խորհուրդ ըրին, որ զատիկը երկրորդ ամսուն մէջ ընեն . 3 - Վասն զի այն տառն կարող չէին զանկալ ընելու, քանզի բաւական քահանաներ սրբուած չէին, ու ժողովուրդը Երուսաղէմ ժողովուած չէր : 4 - Եւ այս բանը թագաւորին առջև ու բոլոր ժողովքին առջև հաճոյ երեցաւ . 5 - Ու այնպէս որոշեցին, որ բոլոր Իսրայէլի մէջ Բերսաբէէ մինչև Իսրայէլի լուր զրկեն, որպէս զի գան ու Երուսաղէմի մէջ Իսրայէլի Տէր Աստուծոյն զատիկ ընեն . քանզի շատ տառնէ ի վեր գրուածին պէս ըրած չէին :

6 - Եւ սուրհանգակները թագաւորին ու իշխաններուն նամակներովը բոլոր Իսրայէլի ու Յուդայի գացին, ու թագաւորին հրամանին համեմատ ըսին, Ով Իսրայէլի սրգիներ, Աբրահամի, Իսահակի ու Իսրայէլի Տէր Աստուծոյն դարձէք, ու ան ալ պիտի դառնայ ձեզի, որ Աստուծոյն թագաւորներուն ձեռքէն ազատելով ձեռքէ կեկեց մնացեր էք : 7 - Եւ ձեր հայրերուն պէս ու ձեր եղբայրներուն պէս մի ըլլաք, որոնք իրենց հայրերուն Տէր Աստուծէն ապաստմբեցան . ան ալ զանոնք կործանման մասնեց, ինչպէս դուք կը տեսնէք : 8 - Ուրեմն ձեր հայրերուն պէս ձեր պարանոցը մի խտացնէք . *Նազանդեցէք Տէրոջը, ու եկէք անոր սրբարանը զոր ինք յաւիտեան սրբած է . ու ձեր Տէր Աստուծոյն ծառայութիւն ըրէք, որպէս զի անոր սաստիկ բարկութիւնը ձեզմէ դառնայ : 9 - Քանզի եթէ դուք Տէրոջը դառնաք, ձեր եղբայրները ու ձեր սրգիները զիրենք գերի տանողներուն երեսէն գթութիւն պիտի գանեն, և այս երկիրը պիտի դառնան . վասն զի ձեր Տէր Աստուածը ողորմած ու գթած է . ու եթէ անոր դառնաք, ձեզմէ երես պիտի չգարձնէ :

10 - Եւ սուրհանգակները Եփրեմի ու Մանասէի երկիրը քաղաքէ քաղաք պարտելով, մինչև Զաբուղան գացին . բայց զանոնք ծաղր կ'ընէին ու կ'արհամարհէին : 11 - Սակայն Ասերէ ու Մանասէէ ու Զաբուղանէ անոնք խոնարհեցան ու Երուսաղէմ գացին : 12 - Յուդայի վրայ ալ Աստուծոյ ձեռքը

*Եփր. ձեռք տուէք

կար, որ անոնց մէկ սիրտ տայ, որպէս զի թագաւորին ու իշխաններուն՝ Տէրոջը խօսքին համեմատ պատուիրածը կատարեն :

13 - Աւ Երուսաղէմի մէջ բազմաթիւ ժողովուրդներ հաւաքուեցան երկրորդ ամսուն մէջ բազարջակերաց ասօնը կատարելու համար, ու խիստ մեծ ժողովք մը եղաւ : 14 - Եւ ելան Երուսաղէմի մէջ եղող զոհի սեղանները ու բոլոր խունկի սեղանները վերցուցին, ու կեդրոն հեղեղաւար նեաեցին : 15 - Աւ երկրորդ ամսուն չորեքաասաներորդ օրը զատիկը մնրթեցին . և քահանաները ու Աւետացիները ամացան ու սրբուեցան, ու Տէրոջը տունը ողջակէզներ բերին : 16 - Եւ Աստուծոյ մարդուն Մովսէսի օրէնքին համեմատ, իրենց սովորութեանը պէս, իրենց տեղը կայնեցան . քահանաները Աւետացուց ձեռքէն արիւնը Կարմիրի - կը սրսկէին : 17 - Քանզի ժողովքին մէջ չորսուածները շատ էին . ու բոլոր մաքուր չեղողներուն համար զատիկ գառը Աւետացիները կը մնրթէին, որպէս զի Կարմիր Տէրոջը սրբեն : 18 - Վասն զի ժողովուրդէն շատերը, այսինքն Եփրեմէ, Մանասէէ, Իսաքարէ ու Զարուղանէ Կարմիրէն շատերը, մաքուր չէին . այսու ամենայնիւ զատիկը կերան՝ Բայ ոչ թէ գրուածին համեմատ . իսկ Եգեկիա անոնց համար ազօթք բրաւ ու բաւ, Բարերար Տէրը քաւութիւն ընէ այն բոլոր մարդոց՝ 19 - Արոնք սիրաերնին ուղղեցին Տէր Աստուածը, իրենց հայրերուն Աստուածը, փնտուելու, թէ և անոնք սրբարանին մաքրութեանը համեմատ Կարմիր չըլլան : 20 - Եւ Տէրը Եգեկիայի ազօթք լսեց, ու *ժողովուրդին թողութիւն տուաւ :

21 - Աւ Երուսաղէմի մէջ գանուող Իսրայէլի որդիները մեծ ուրախութեամբ եօթը օր բազարջակերաց ասօնը կատարեցին . ու Աւետացիները և քահանաները ամէն օր բարձրաձայն նուագարանները Տէրոջը հնչեցնելով Տէրը կ'օրհնէին : 22 - Աւ Եգեկիա քաղցրութեամբ խօսեցաւ Տէրոջը բարի հանձարը իմացող բոլոր Աւետացիներուն .

և ասինն եօթը օրը խաղաղութեան զօհեր մատուցանելով ու իրենց հայրերուն Տէր Աստուծոյն գոհութիւն տալով կ'օրհնէին :

23 - Եւ բոլոր ժողովքը խորհուրդ ըրին որ ուրիշ եօթը օր ալ Կարմիր, ու եօթը օր ալ մեծ ուրախութիւն ըրին : 24 - Քանզի Յուդայի Եգեկիա թագաւորը ժողովքին հազար զուարակ ու եօթը հազար ոչխար պարգեւեց . իշխաններն ալ ժողովքին հազար զուարակ ու տասը հազար ոչխար պարգեւեցին . ու շատ քահանաներ սրբուեցան : 25 - Եւ բոլոր Յուդայի ժողովքը, ու քահանաները, ու Աւետացիները, և Իսրայէլէ եկողներուն բոլոր ժողովքը, ու Իսրայէլի երկրէն եղող և Յուդայի մէջ բնակող պանդուխտները ուրախացան : 26 - Աւ Երուսաղէմի մէջ մեծ ուրախութիւն եղաւ . քանզի Իսրայէլի թագաւորին, Իսրայէլի որդւոյն Սողոմոնի, օրերէն ի վեր Երուսաղէմի մէջ այսպիսի Կարմիր չէ եղած չէր :

27 - Անկէ ետքը Աւետացի քահանաները ելան ու ժողովուրդը օրհնեցին . և անոնց ձայնը լսուեցաւ, ու անոնց ազօթքը Աստուծոյ տուրբ բնակարանը, երկինք, հասաւ :

ԳԼ. ԼԱ

Աւ երբ այս ամէնը լմեցաւ, հանգանուող բոլոր Իսրայէլացիք Յուդայի քաղաքները ելան, և բոլոր Յուդայի, Բենիամինի, Եփրեմի ու Մանասէի մէջ եղող արձանները կտոր կտոր ըրին, Աստարովթի կուռքերը կտարաեցին, և բարձր տեղերը ու սեղանները փլցուցին, այնպէս որ բան մը չթողուցին . ետքը Իսրայէլի որդիները, ամէն մարդ իր ժառանգութիւնը, իրենց քաղաքները, գարձան :

2 - Աւ Եգեկիա քահանաներուն ու Աւետացիներուն գատերը հաստատեց իրենց կարգերուն համեմատ, թէ՛ քահանաներուն և թէ՛ Աւետացիներուն, ամէն մէկուն գործին նայելով, ողջակէզներու ու խաղաղութեան զօհերու համար, ու Տէրոջը սրահներուն դռներուն մէջ պաշտելու, գովելու ու օրհնութիւն երգելու համար : 3 - Նաև իր

*Եբբ. ժողովուրդը բժշկեց
†Կա՛, սորվեցնող . բ 0ր . 1գ . 10 : Գլ .
Ժէ . 9 : Լե . 3 :

*Եբբ. բանակին

ստացուածքէն ողջակէզներուն համար, այսինքն, Տէրոջը օրինաց գիրքին մէջ գրուածին պէս, առաւօտեան ու երեկոյեան ողջակէզներուն համար, և շաբաթներուն ու ամսագլուխներուն ու հանդիսաւոր տօներուն ողջակէզներուն համար, թագաւորին բաժինը «բռնէ» : 4 - Ու Երուսաղէմի մէջ բնակող ժողովուրդին հրամայեց որ քահանաներուն ու Ղևտացիներուն բաժինը տան, որպէս զի անոնք Տէրոջը օրէնքը կարծէլ - մէջ զօրանան : 5 - Ու երբ «յ» հրամանը հրատարակուեցաւ, Իսրայէլի որդիները ցորենին, գինիին, իւղին, մեղրին և բոլոր անդատանաց բերքերուն երախայրիները առատութեամբ բերին, ու ամէն բանին տասանորդը առատապէս բերին : 6 - Եւ Յուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի ու Յուդայի որդիները՝ անոնք ալ արջառներուն ու ոչխարներուն տասանորդները, և իրենց Տէր Աստուծոյն նախած սուրբ բաներուն տասանորդները բերին ու դիզեցին : 7 - Անոնք երրորդ ամսուն մէջ սկսան դիզել, և եօթներորդ ամսուն մէջ լմնցուցին : 8 - Ու Եզեկիա ու իշխանները եկան, ու երբ այն դէզերը տեսան՝ Տէրը ու անոր Իսրայէլ ժողովուրդը օրհնեցին : 9 - Ու Եզեկիա այն դէզերուն համար քահանաներուն ու Ղևտացիներուն հարցուց : 10 - Եւ Սադովկի տունէն եղող մեծ քահանան Ազարիա անոր պատասխան տուաւ ու ըսաւ, Քանի որ ընծաները Տէրոջը տունը բերելու սկսան՝ կերանք, կշտացանք ու խիստ շատ աւելցաւ, վասն զի Տէրը իր ժողովուրդը օրհնեց. ու աւելցածը այս առատութիւնն է : 11 - Ու Եզեկիա հրամայեց որ Տէրոջը տանը մէջ շաբաթներուն պատրաստեն, ու պատրաստեցին : 12 - Եւ ընծաները ու տասանորդները ու սուրբ բաները հաւատարմութեամբ ներս տարին. և անոնց վերակացուն Ղևտացի Քոնանիա էր, ու անոր եղբայրը Սեմէի «ն» փոխանորդն էր : 13 - Եւ Յեքիէլ, Ազապիա, Նահաթ, Ասայէլ, Յերիմովթ, Յովզաբադ, Եղիէլ, Յեամաքիա, Մաաթ ու Բանեա՝ Քոնանիայի ու անոր եղբորը Սեմէիի ձեռքին տակ՝ Եզեկիա թագաւորին ու Տէրոջը տանը առաջնորդին, Ազարիայի, հրամանով վերակացուներ էին : 14 - Եւ արեւելեան կողմին դռնա-

պանը, Ղևտացի Յեմայի որդին Կովբէ, Տէրոջը բարձրացնելու ընծաները ու ամենասուրբ բաները բաժնելու համար՝ Աստուծոյ կամաւոր ընծաներուն վրայ էր : 15 - Եւ անոր հրամանին տակ քահանայից քաղաքներուն մէջ՝ Եգեանի, Մինիամինի, Յետուի, Սեմայի, Ամարիայի ու Սեքենիայի յանձնուած էր, իրենց եղբայրներուն, մեծին ու պզտիկին, դասակարգութեանը նայելով ընծաներ բաժնելը : 16 - Նաև ազգահամարին մէջ գրուած երեք տարուրէն վեր եղող բոլոր արուններուն, որոնք օրէ օր Տէրոջը տունը կը մանէին իրենց պահպանութիւններուն մէջ, իրենց դասակարգութիւններուն համար իրենց ծառայութիւնը կարծէլ - համար : 17 - Ու նաև ազգահամարին մէջ գրուած քահանաներուն, իրենց ազգատոհմներուն համեմատ, ու քան տարեկանէն վեր եղող Ղևտացիներուն, իրենց պահպանութիւններուն «- իրենց դասակարգութիւններուն մէջ : 18 - Նաև ազգահամարին մէջ գրուած անոնց ամէն ընտանիքներուն, կիներուն, աղաքներուն ու աղջիկներուն, այսինքն «ն» բոլոր ժողովքին. քանզի հաւատարմութեամբ կը սրբուէին : 19 - Եւ անոնց քաղաքներուն արուարձանաց արտերուն մէջ եղող Ահարոնի որդիներուն, քահանաներուն, համար՝ ամէն քաղաքի մէջ իրենց անուններովը յիշուած մարդիկ կային, որոնք քահանաներուն բոլոր արուններուն ու Ղևտացոց ազգահամարին մէջ բոլոր գրուածներուն բաժիններ կու տային : 20 - Ու Եզեկիա բոլոր Յուդայի մէջ այսպէս ըրաւ, և իր Տէր Աստուծոյն առջև բարի, ուղիղ ու ճշմարիտ եղածը ըրաւ : 21 - Եւ իր ամէն ձեռք զարկած գործը, թէ՛ Աստուծոյ տանը ծառայութեանը համար և թէ՛ օրէնքին ու պատուիրանքին համար, իր բոլոր սրտովը իր Աստուծոյ փնտաւելով ըրաւ ու յաջողեցաւ :

ԳԼ. ԼԲ

Ա.յս *բաներէն ու այս ճշմարտութենէն՝ ետքը Ասորեստանի Սենեքերիմ

*կա՛մ, հաւատարմութեամբ ըրած գործերէն

Թագաւորը եկաւ, ու Յուդայի եւէբը մտնելով պարսպաւոր քաղաքներուն դէմ բանակեցաւ, ու միտքը գրած էր որ զանոնք բռնութեամբ իրեն առնէ: 2 - Աւ Եզեկիա տեսնելով որ Սենեքերիմ եկեր է, ու Երուսաղէմի դէմ պատերազմիլ կ'ուզէ, 3 - Իր իշխաններուն ու զօրաւորներուն հետ խորհուրդ ըրաւ, որ քաղաքէն գուրս ելող աղբիւրներուն ջուրերը գոցէ. և անոնք անոր օգնութիւն ըրին: 4 - Աւ շատ ժողովուրդ ժողվուեցաւ, ու բոլոր աղբիւրները ու երկրին մէջէն անցնող հեղեղաւոր գոցեցին՝ ըսելով, Ինչո՞ւ համար Ասորեստանի Թագաւորները գան, ու առատ ջուր գանեն: 5 - Աւ Եզեկիա զինք ու ժողցուց, և ամէն փլած պարիսպները շինեց, ու աշտարակները բարձրացուց, ու դուրսէն ուրիշ պարիսպ մըն ալ շինեց. և Դաւիթի քաղաքին մէջ եղող Մելծնը նորոգեց, ու շատ նիզակներ ու սապարներ շինեց: 6 - Եւ ժողովուրդին վրայ պատերազմի զօրապետներ դրաւ, ու զանոնք քաղաքին դրանը հրապարակին մէջ իր քով ժողվեց, և անոնց հետ քաղցրութեամբ խօսեցաւ՝ ըսելով, 7 - Զօրացէք ու քաջասիրա եղէք. Ասորեստանի Թագաւորին երեսէն, ու անոր հետ եղող բոլոր բազմութեանը երեսէն մի վախնաք ու մի զարհուրիք. վասն զի մեզի հետ եղողները անոր հետ եղողներէն շատաւոր են: 8 - Անոր հետ մարմնեղէն բազուկ կայ, բայց մեզի հետ եղողը մեր Տէր Աստուածն է, որ պիտի օգնէ մեզի, ու մեր Գաւառազմներուն մէջ առաջնորդութիւն պիտի ընէ: Եւ ժողովուրդը Յուդայի Եզեկիա Թագաւորին խօսքերէն սիրա առաւ:

9 - Ասկէ ետեւ Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորը, երբ ինք ու իր բոլոր իշխանները Լաքիսի վրայ էին, իր ծառաները Երուսաղէմ զրկեց Յուդայի Եզեկիա Թագաւորին ու Երուսաղէմ եղող բոլոր Յուդայի՝ ըսելով, 10 - Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորը այսպէս կ'ըսէ. Գուք որո՞ւ ապաւինե-

նով Երուսաղէմ՝ պաշարման մէջ կը նստիք. 11 - Զէ՞ որ Եզեկիա ձեզ զլխէ կը հանէ, որպէս զի ձեզ անօթութեամբ ու ծարաւով մեռնելու մատնէ, ըսելով թէ Մեր Տէր Աստուածը մեզ Ասորեստանի Թագաւորին ձեռքէն պիտի ազատէ: 12 - Ասիկա նոյն Եզեկիան չէ՞, որ անոր բարձր տեղերը ու սեղանները վերցուց, և Յուդայի ու Երուսաղէմի բնակիչներն ըսաւ, Միայն մէկ սեղանի տուջե երկրպագութիւն ըրէք, ու անոր վրայ խունկ ծիսեցէք: 13 - Զէ՞ք զիտեր թէ երկիրներուն ամէն ժողովուրդներուն ինչ ըրի ես ու իմ հայրերս. միթէ այն երկիրներուն ազգաց աստուածները իրենց երկիրները կրցան իմ ձեռքէս ազատել: 14 - Իմ հայրերուս բնաջինջ ըրած ազգերուն բոլոր աստուածներուն ո՞րը իր ժողովուրդը իմ ձեռքէս ազատելու կարող եղաւ, որ ձեր Աստուածը ձեզ իմ ձեռքէս ազատելու կարող ըլլայ: 15 - Եւ հիմա Եզեկիա ձեզ չխաբէ, ու ձեզ այդպէս զլխէ չհանէ, անոր մի հաւատաք. վասն զի ազգի մը կամ Թագաւորութեան մը բնաւ մէկ աստուածը իր ժողովուրդը իմ ձեռքէս ու իմ հայրերուս ձեռքէն չկրցաւ ազատել. ո՛ւր մնաց որ ձեր Աստուածը ձեզ իմ ձեռքէս ազատէ: 16 - Եւ անոր ծառաները Տէր Աստուծոյ դէմ ու անոր ծառային Եզեկիայի դէմ աւելի խօսքեր ալ ըսին: 17 - Եւ Սենեքերիմ Իսրայէլի Տէր Աստուածը հայհայելով ու անոր դէմ խօսելով նամակ գրեց ու ըսաւ, Ինչպէս երկիրներուն ազգաց աստուածները իրենց ժողովուրդները իմ ձեռքէս չկրցան ազատել, այնպէս Եզեկիայի Աստուածը իր ժողովուրդը իմ ձեռքէս պիտի չազատէ: 18 - Եւ պարսպին վրայ եղող Երուսաղէմի ժողովուրդին՝ բարձր ձայնով Եբրայեցերէն պոռացին, զանոնք վախցնելու ու շփոթութեան մէջ ձգելու համար, որպէս զի քաղաքը առնեն: 19 - Աւ Երուսաղէմի Աստուծոյն դէմ խօսեցան՝ իբրև երկրի ժողովրդոց աստուածներու դէմ, որոնք մարդու ձեռագործ են:

20 - Աւ Եզեկիա Թագաւորը և Ամովսի որդին Եսայի մարգարէն այս բանին համար դէպի երկինք աղաղակելով

*Կա՛մ, ամբողջին

*Կա՛մ, սուրեր
 †Եբբ. պատերազմները պիտի պատերազմի
 ‡Եբբ. խօսքերուն կաթնեցաւ
 §Կա՛մ, զօրքը

աղօթք բրին : 21 - Եւ Տէրը հրեշտակ մը զրկեց, ու Ասորեստանի թագաւորին բանակին մէջ ամէն զօրաւոր կարիճը ու իշխանը ու զօրագլուխը զարկաւ . և անիկա ամօթով իր երկիրը գարձաւ . ու իր աստուծոյն տունը մտաւ , և իր երանքէն ելած «բէնեբը զանիկա հոն սրով մեռցուցին : 22 - Այսպէս Տէրը Եգեկիան ու Երուսաղէմի բնակիչները Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին ձեռքէն և ամէնուն ձեռքէն ազատեց , ու զանոնք ամէն կողմանէ պաշտպանեց : 23 - Եւ շատերը Տէրոջը բնծաներ կը բերէին Երուսաղէմ , ու Յուդայի Եգեկիա թագաւորին ալ պատուական բաներ . ու անկէ ետքը անիկա բոլոր ազգերուն առջև բարձրացաւ :

24 - Այն օրերը Եգեկիա մահուան աստիճան հիւանդացաւ , ու Տէրոջը աղօթք բրաւ . և Տէրը խօսեցաւ անոր , ու «հրաշք մը բրաւ» անոր : 25 - Ու Եգեկիա իր ընդունած բարիքին փոխարէն շնորհակալութիւն չմտաւ , վասն զի անոր սիրար հպարտացաւ . ուստի անոր վրայ և Յուդայի ու Երուսաղէմի վրայ բարկութիւն եկաւ : 26 - Բայց Եգեկիա իր սրտին հպարտութեանը համար խոնարհեցաւ , թէ՛ ինք և թէ՛ Երուսաղէմի բնակիչները . անոր համար Տէրոջը բարկութիւնը Եգեկիայի օրերը անոնց վրայ չեկաւ :

27 - Ու Եգեկիա խիստ շատ հարստութիւն ու փառք ունեցաւ . և անիկա իրեն արծաթի , ոսկիի , պատուական քարերու , խունկերու , ասպարներու ու ամէն տեսակ ցանկալի անօթներու համար գանձարաններ շինեց . 28 - Եւ ցորենի ու գինիի ու իւզի բերքերուն համար շտեմարաններ , և ամէն տեսակ անասուններու համար ախոռներ , ու հօտերու համար փարախներ շինեց : 29 - Եւ քաղաքներ շինեց իրեն , ու շատ սջխարներ ու արջաւներ ստացաւ . վասն զի Աստուած խիստ շատ ստացուածք տուաւ անոր : 30 - Ու այս Եգեկիան Գեհոնի վերի ջրանցքը գոցեց , ու զանիկա գէպ ի վար Գաւթի քաղաքին արեւմտեան կողմը ուղղեց . ու Եգեկիա իր բոլոր գործերուն մէջ յաջողութիւն գտաւ :

31 - Բայց երբ Բաբելոնի իշխաններ

րուն դեսպանները անոր զրկուեցան՝ երկրին մէջ եղած հրաշքը հարցնելու համար , Աստուած զանիկա թողուց որպէս զի փորձէ , ու բոլոր անոր սրտին մէջ եղածը գիտնայ :

32 - Ու Եգեկիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բարեպաշտութիւնը՝ ահա Ամուսի որդւոյն Եսայի մարգարէին մարգարէութեանը մէջ՝ և Յուդայի ու Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ գրուած են : 33 - Ու Եգեկիա իր հայրերուն հետ քնացաւ . ու զանիկա Գաւթի որդիներուն ամէնէն բարձր գերեզմաններուն մէջ թաղեցին . և բոլոր Յուդա ու Երուսաղէմի բնակիչները պատիւ բրին անոր իր մահուան ատենը . ու անոր տեղ անոր որդին Մանասէ թագաւոր եղաւ :

ԳԼ ԼԳ

Մանասէ տասուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ յիսունըհինգ տարի թագաւորութիւն բրաւ : 2 - Եւ անիկա Տէրոջը Իսրայէլի որդիներուն առջևէն վաճառած ազգերուն գարշելի գործերուն պէս Տէրոջը առջև չարութիւն բրաւ : 3 - Ու անիկա իր հօրը Եգեկիայի կործանած բարձր տեղերը նորէն շինեց , ու Բաշաղիմի սեղաններ կանգնեց , և Աստարովթի կուռքեր շինեց . ու երկինքի բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն բրաւ , և անոնց ծառայութիւն բրաւ . 4 - Ու սեղաններ շինեց Տէրոջը տանը մէջ , որու համար Տէրը բաժ էր թէ Իմ անունս յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի բլլայ : 5 - Ու Տէրոջը տանը երկու գաւթներուն մէջ երկինքի բոլոր զօրութիւններուն սեղաններ շինեց . 6 - Եւ անիկա Ենովթի որդւոյն ձորին մէջ իր որդիները կրակէ անցուց , ու գուշակութիւն , հմայութիւն և դիւթութիւն կ'ընէր , և վհուկներ ու նշանագէտներ ունէր . և Տէրոջը առջև շատ չարութիւն բրաւ , ու զանիկա բարկացուց : 7 - Եւ իր շինած քանդակեալ կուռքը Աստուծոյ տունը դրաւ , որու համար Աստուած Գաւթի ու անոր որդւոյն Սոզանի ըսեր էր , Իմ անունս այս տանը մէջ ու Իսրայէլի բոլոր ցեղերէն իմ բնորած Երուսաղէմիս մէջ պիտի գնեմ յաւիտեան . 8 - Եւ Իսրայէլի ստքը մէյմըն ալ

*Կա՛մ, հրաշայի նշան մը տուաւ

պիտի չչարժեմ՝ այդ երկրէն որուն մէջ ձեր հայրերը հաստատեցի . միայն թէ անոնք զգուշութեամբ ի գործ դնեն այն բոլոր օրէնքը , կանոնները ու դատաստանները զորոնք Մովսէսի ձեռքով անոնց պատուիրեցի : 9 - Բայց Մանասէ Յուդան ու Երուսաղէմի բնակիչները այնպէս մոլորացուց, որ Տէրոջը Իսրայէլի որդիներուն առջևէն կորսնցուցած ազգերէն աւելի չարութիւն ըրին : 10 - Եւ Տէրը Մանասէի ու անոր ժողովուրդին խօսեցաւ , բայց անոնք մտիկ չըրին :

11 - Եւ Տէրը անոնց վրայ Ասորեստանի թագաւորին զօրագլուխները բերաւ . ու Մանասէն կարթերով բռնեցին , և զանիկա ոանակապերով կապեցին ու Բաբելոն տարին : 12 - Ու անիկա իր նեղութեան տաեմը իր Տէր Աստուծոյն երեսը խնդրեց , և իր հայրերուն Աստուծոյն առջև մեծապէս խոնարհեցաւ , 13 - Ու անոր աղօթք ըրաւ . և Տէրը անոր աղօթքը ընդունեց ու աղաչանքը լսեց , ու զանիկա Երուսաղէմ իր թագաւորութեանը դարձուց : Այն տաեմն Մանասէ իմացաւ որ Եհօվա է Աստուած : 14 - Եւ տակէ ետքը Իաւիթի քաղաքին դուրսը , Գեհանի արեւմտեան կողմը հեղեղատան մէջ , ու մինչև Զկանց գրանը քերանը պարիսպ մը շինեց , Ուփաղն ալ մէջը աւնելով , ու զանիկա շաա բարձրացուց , և Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքներուն մէջ զօրքի իշխաններ գրաւ : 15 - Ու օտար աստուածները ու կուռքը Տէրոջը տունէն վերցուց , ու Տէրոջը տանը լեռանը վրայ ու Երուսաղէմի մէջ իր շինած բոլոր սեղանները վերցուց և քաղաքէն դուրս նետեց : 16 - Ու Տէրոջը սեղանը շինեց . և անոր վրայ խաղաղութեան ու շնորհակալութեան զոհեր մատուց . և Յուդայի պատուիրեց որ Իսրայէլի Տէր Աստուծոյն ծառայութիւն ընեն : 17 - Սակայն ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին , Բայց միայն իրենց Տէր Աստուծոյն :

18 - Եւ Մանասէի մնացորդ պատմութիւնը , ու իր Աստուծոյն ըրած աղօթքը , ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունովը անոր խօսող տեսանողներուն խօսքերը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջ գրուած են : 19 - Ու անոր աղօթքը և ընդուն-

ուելը ու անոր բոլոր մեղքը ու յանցանքը , և այն տեղերը՝ ուր իր դարձի գալէն առաջ բարձր տեղեր շինեցու Աստարովթի կուռքեր ու քանդակուած կուռքեր կանգնեց , ահա՝ Հոզայի ժամանակագրութեան մէջ գրուած են : 20 - Եւ Մանասէ իր հայրերուն հետ քնացաւ . ու զանիկա իր տանը մէջ թաղեցին . և անոր տեղ անոր որդին Ամնն թագաւոր եղաւ :

21 - Ամնն քանուերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ երկու տարի թագաւորութիւն ըրաւ : 22 - Ու Տէրոջը առջև չարութիւն ըրաւ իր հօրը Մանասէի ըրածին պէս . և իր հօրը Մանասէի շինած բոլոր կուռքերուն Ամնն զոհ մատուց , ու անոնց ծառայութիւն ըրաւ : 23 - Բայց Տէրոջը առջև չխոնարհեցաւ , ինչպէս իր հայրը Մանասէ խոնարհէր էր . մանաւանդ այս Ամննը աւելի յանցանք գործեց : 24 - Եւ իր ծառաները դաւաճանութիւն ըրին իրեն դէմ , ու զանիկա իր տանը մէջ մեռցուցին : 25 - Ու երկրին ժողովուրդը Ամնն թագաւորին դէմ դաւաճանութիւն ընողներուն առէնը մեռցուցին . ու երկրին ժողովուրդը անոր որդին Յովսիան անոր տեղ թագաւոր դրին :

ԳԼ . ԼԴ

Յովսիա ութ տարեկան էր երբ թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ երեսունըմէկ տարի թագաւորեց : 2 - Եւ անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ , ու իր հօրը Իաւիթի ճամբաներուն մէջ քալեց , ու աջ կամ ձախ կողմը չխտարեցաւ :

3 - Եւ իր թագաւորութեանը ութերորդ տարին երբ դեռ ինք պատանի էր , իր հօրը Իաւիթի Աստուածը խնդրել սկսաւ . ու երկոտասաներորդ տարին՝ Յուդան ու Երուսաղէմը բարձր տեղերէն , Աստարովթի կուռքերէն և քանդակուած ու ձուլածոյ կուռքերէն մնաքել սկսաւ : 4 - Եւ Բահադիմի սեղանները անոր առջև կործանեցին . ու անոնց վրայի արեգական կուռքերը կտարտեց , և Աստարովթի կուռքերը ու քանդակուած և ձուլածոյ կուռ-

*Կա՛մ , տեսանողներուն

քերը մանրեց ու փշրեց, ու անոնց զո՛հ մատուցանողներուն գերեզմաններուն վրայ ցանեց : 5 - Եւ քուրմերուն պարսերը անոնց սեղաններուն վրայ այրեց, ու Յուդան ու Երուսաղէմը մաքրեց : 6 - Եւ Մանասէի ու Եփրեմի ու Շմուոնի քաղաքներուն մէջ մինչև Նեփթաղիմ*, և անոնց բոլորաբար եղած աւերակ տեղերը նոյնպէ՛ս ըրաւ : 7 - Ու սեղանները և Աստարովթի կուռքերը կործանեց, ու քանդակուած կուռքերը մանրեց ու փշրեց, և Խորայէլի բոլոր երկրին մէջ եղող բոլոր արեգական կուռքերը կտարտեց, ու Երուսաղէմ դարձաւ :

8 - Եւ իր Թագաւորութեանը տասնըութերորդ տարին երբ երկիրը ու երեսունը մաքրեց, Եսէլիայի որդին Սափանը ու քաղաքին իշխանը Մատաիան ու Յովաքազի որդին Յովաքը, յիշատակաց դպիրը, զրկեց, որպէս զի իր Տէր Աստուծոյն տունը նորոգեն : 9 - Եւ անոնք Քեղկիա քահանայապետին եկան . ու Աստուծոյ տունը բերուած ստակը Ժառին, զոր Աւտացիները, գրան պահապանները, Մանասէի ու Եփրեմի ձեռքէն և Խորայէլի բոլոր մնացորդէն ու բոլոր Յուդայէ ու Բենիամինէ ու Երուսաղէմի բնակիչներէն ժողովեր էին . 10 - Եւ Տէրոջը տանը Գործին վրայ գրուած բանուորներուն ձեռքը տուին . անոնք ալ Տէրոջը տանը մէջ գործող բանուորներուն տուին զանկիա՝ տունը նորոգելու ու շինելու համար , 11 - Այսինքն հիւսերուն ու շինողներուն տուին, որպէս զի Յուդայի Թագաւորներուն աւրած տուները շինելու համար առջուած քարեր, ու գերաններու համար փայտեր ծախուանէն : 12 - Եւ այն մարդիկը գործը հաւատարմութեամբ կը բանէին . ու Գործը յառաջ աանելու համար անոնց վրայ կեցողները Մերարիի որդիներէն՝ Աւտացի Յեթ ու Աբդիա, և Կահաթեանց որդիներէն Զաքարիա ու Մետուղամ էին . նաև Աւտացիները, երգոց նուագարաններուն աղէկ տեղեակ եղողներուն ամէնը . 13 - Նաև բեռնակիրներուն ու ամէն տեսակ գործը բանողներուն վերակացուներն էին, և

դպիրները, ստիկանները ու դռնպանները Աւտացիներէն էին :

14 - Ու երբ Տէրոջը տունը բերուած ստակը կը հանէին, Քեղկիա քահանան Մովսէսի ձեռքով Գործը Տէրոջը օրինաց գիրքը գտաւ . 15 - Ու Քեղկիա պատասխան տուաւ ու Սափան դպիրն ըսաւ, Տէրոջը տանը մէջ օրինաց գիրք մը գտայ . ու Քեղկիա այն գիրքը Սափանի տուաւ : 16 - Եւ Սափան գիրքը Թագաւորին տարաւ, ու Թագաւորին պատասխան բերաւ՝ ըսելով, Քու ծառաներդ իրենց յանձնուած բոլոր Գործը կը կատարեն . 17 - Եւ Տէրոջը տանը մէջ գտնուած ստակը հանեցին, ու զանկիա վերակացուներուն ձեռքը ու գործը բանողներուն ձեռքը տուին : 18 - Եւ Սափան դպիրը Թագաւորին պատմեց ու ըսաւ, Քեղկիա քահանան ինծի գիրք մը տուաւ . ու Սափան անոր մէջէն Թագաւորին առջև կարգաց : 19 - Ու Թագաւորը օրինաց խօսքերը լսածին պէս իր հանդերձները պատուեց : 20 - Եւ Թագաւորը Քեղկիայի, ու Սափանի որդւոյն Աբիկամի, ու Միքայի որդւոյն Աբգոնի, և Սափան դպիրին, ու Թագաւորի ծառային Ասայիայի պատուիրեց ու ըսաւ, 21 - Քացէք ինծի համար, և Խորայէլի ու Յուդայի մնացորդներուն համար այս գտնուած գիրքին խօսքերուն վրայով Տէրոջը հարցուցէք . վասն զի մեր հայրերուն Տէրոջը խօսքը չպահելուն համար, և այս գիրքին մէջ բոլոր գրուածները չկատարելուն համար մեր վրայ Թափուած Տէրոջը բարկութիւնը մեծ է : 22 - Ու Քեղկիա և Թագաւորին մարդիկը Ասայի որդւոյն Թեկուայի որդւոյն Սեղզում հանդերձապետին կնոջ, Ողբա մարգարէուհիին, գացին . և անկիա Երուսաղէմ Մատենայի մէջ կը բնակէր . ու անոր հետ այնպէս խօսեցան :

23 - Եւ անկիա ըսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Զեղ ինծի զրկող մարդուն ըսէք, Տէրը այսպէս կ'ըսէ . 24 - Ահա ես այս անգին ու անոր բնակիչներուն վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն այն բոլոր անէծքները, որոնք Յուդայի Թագաւորին առջև կարգացուած գիրքին մէջ գրուած են . 25 - Որովհետեւ զիս Թողուցին և ուրիշ աստուածներու խունկ ծխեցին, որպէս զի իրենց ձեռքերուն

*Կ-ժ, շուրջանակի անոնց տուները փնտռեց + Եբբ. տուին

բոլոր գործերովը զիս բարկացնեն . ուստի այս տեղին վրայ իմ՝ բարկութիւնս պիտի թափի ու պիտի չմտնի : 26 - Բայց Տէրոջը հարցնելու համար ձեզ զրկող Յուդայի թագաւորին այսպէս ըսէք , Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ լսած խօսքերուդ համար . 27 - Արովհետեւ քու սիրտդ կակղացաւ , ու Աստուծոյ առջև խոնարհեցար , երբ այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ անոր շնորհ խօսքերը լսեցիր , և իմ առջևս խոնարհեցար , ու հանդերձներդ պատուեցիր ու իմ՝ առջևս լացիր , ես ալ լսեցի , կ'ըսէ Տէրը : 28 - Ահա ես քեզ քու հայրերուդ պիտի խառնեմ , ու խաղաղութեամբ քու գերեզմանիդ մէջ պիտի ամփոփուիս . և այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ իմ՝ բերելու բոլոր չարիքներս քու աչքերդ պիտի չտեսնեն : Աւանդ թագաւորին պատասխան բերին :

29 - Եւ թագաւորը Բաբելոն գրկեց , ու Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ծերերը ժողվեց : 30 - Եւ թագաւորը ու Յուդայի բոլոր մարդիկը ու Երուսաղէմի բնակիչները և քահանաները ու Աւտացիները ու բոլոր ժողովուրդը , մեծէն մինչև պզտիկը , Տէրոջը տունը ելան . և Տէրոջը տանը մէջ գտնուած ուխտի գիրքին բոլոր խօսքերը անոնց *առջև կարդաց : 31 - Ու թագաւորը իր տեղը ոտքի վրայ կայնեցաւ , ու Տէրոջը առջև ուխտ րրաւ , որպէս զի այն գիրքին մէջ գրուած ուխտին խօսքերը կատարելու համար Տէրոջը ետեէն երթայ , և անոր պատուիրանները ու վկայութիւնները ու կանոնները բոլոր սրտով ու բոլոր հոգիով պահէ : 32 - Ու Երուսաղէմի ու Բեներամինի մէջ բոլոր գտնուողները կայնեցուց . ու Երուսաղէմի բնակիչները Աստուծոյ , իրենց հայրերուն Աստուծոյն , ուխտին պէս բրին : 33 - Եւ Յովսիա Իսրայէլի որդիներուն ամէն երկիրներէն բոլոր գարշութիւնները վերցուց , ու բոլոր Իսրայէլի մէջ գտնուողներուն իրենց Տէր Աստուծոյն ծառայութիւն ընել տուաւ . անոր Իսրայէլի բոլոր օրերուն մէջ իրենց հայրերուն Տէր Աստուծոյն շնորհակցան :

ԳԼ . ԼԵ

Եւ Յովսիա Երուսաղէմի մէջ Տէրոջը զատիկ րրաւ . ու զատիկը առաջին ամսուն չորեքասաներորդ օրը մորթեցին : 2 - Եւ քահանաները իրենց պահպանութեանը վրայ կայնեցուց , ու զանոնք Տէրոջը տանը ծառայութիւնը ընելու քաջալերեց : 3 - Եւ բոլոր Իսրայէլի սովորեցնող * - Տէրոջը նաւերուած Աւտացիներուն ըսաւ , Սուրբ տապանակը Իսրայէլի թագաւորին , Գաւիթի որդւոյն Սողոմոնի , շինած տունը դրէք , ձեր ուսերուն վրայ բեռ չըլլայ . * - Տէրոջը Տէր Աստուծոյն ու անոր ժողովուրդին Իսրայէլի ծառայութիւնը րրէք . 4 - Եւ ձեր ազգաստորներովը ու ձեր դասերովը՝ Իսրայէլի թագաւորին Գաւիթի գրածին պէս ու անոր որդւոյն Սողոմոնի գրածին պէս պատրաստ եղէք : 5 - Եւ ձեր եղբայրներուն , ժողովուրդին որդւոցը ստորներուն , սրտմունքներուն համեմատ ու Աւտացուց ազգաստորներուն բաժանմունքներուն համեմատ սրբարանին մէջ կայնեցէք . 6 - Եւ զատիկը մորթեցէք ու սրբուեցէք , ու զանոնք՝ ձեր եղբայրներուն համար պատրաստեցէք , որպէս զի անոնք Տէրոջը Մովսէսի ձեռքով ըսած խօսքին պէս ընեն : 7 - Եւ Յովսիա բոլոր հոն գտնուող ժողովուրդին որդիներուն՝ հօտերէն երեսուն հազար գառ ու այծի ձագ պարգևեց , ամէնն ալ զատիկ համար , նաև երեք հազար արջառ . ասոնք թագաւորին ստացուածքէն էին : 8 - Իր իշխաններն ալ ժողովուրդին , քահանաներուն ու Աւտացիներուն յօժարութեամբ պարգև տուին . Աստուծոյ տանը իշխանները , Քեղկիա , Զաքարիա ու Յեքիէլ , զատիկ համար երկու հազար վեց հարիւր քառասուն երեք հարիւր արջառ քահանաներուն տուին : 9 - Եւ Քոնոնիա ու անոր եղբայրները , Սեմայիա ու Նաթանայէլ , ու Աւտացուց իշխանները , Ասաբիա , Յէկիէլ և Յովզաբադ , զատիկ համար Աւտացիներուն հինգ հազար քառասուն հինգ հազար արջառ պարգևեցին :

10 - Եւ պաշտօնը պատրաստուեցաւ . ու թագաւորին հրամայածին պէս , քահանաները իրենց կարգին համեմատ ու Աւտացիները իրենց դասերուն համեմատ կայնեցան . 11 - Եւ զատիկը կը մորթէին , ու քահանաները

*Եբր. ականջներուն

անոնց ձեռքէն արեւնը արեւել կը սրսկէին . իսկ Ղևտացիները մորթը կը հանէին , 12 - Եւ ողջակէզ ըլլալու փառքը կը զատէին , ու զանոնք ժողովուրդին որդիներուն , ազգատոհմներուն համեմատ , կը բաժնէին , որպէս զի Տէրոջը մատուցանեն Մովսէսի գիրքին մէջ գրուածին պէս . արջառններուն ալ այսպէս էր ընէին : 13 - Եւ զատիկը ըստ սովորութեան կրակով խորովեցին . բայց նուիրուած բաները կաթսաներով , սաներով ու տապակներով եփեցին , ու շուտով բաժնեցին զանոնք բոլոր ժողովուրդին որդիներուն : 14 - Եւ իրենց ու քահանաներուն համար ետքը պատրաստեցին . քանզի Ահարոնի որդիները , քահանաները , մինչև գիշեր ողջակէզները ու ճարպերը մատուցանելու զբաղուէին . ուստի Ղևտացիները իրենց համար և Ահարոնի որդիներուն , քահանաներուն , համար պատրաստեցին : 15 - Իսկ Ասափի որդիները , երգեցողները , Իսաիթի ու Ասափի ու Եմանի և Թագաւորական տեսանող Իգիթունի պատուիրածին համեմատ իրենց տեղը՝ ու գունապանները ամէն մէկ գուռը կայնէր էին . պէտք չեղաւ որ իրենց պաշտօնէն զատուին . վասն զի անոնց համար անոնց եղբայրները , Ղևտացիները , կը պատրաստէին : 16 - Եւ Յովսիա Թագաւորին հրամայածին պէս՝ այն օրը Տէրոջը ամէն պաշտօնը կարգի դրուեցաւ , զատիկը ընելու ու ողջակէզները Տէրոջը սեղանին վրայ մատուցանելու համար : 17 - Եւ այն ատեն հա գտնուող Խարայէլի որդիները զատիկը ու բաղարջակերաց տօնը եօթը օր ըրին : 18 - Եւ Սամուէլ մարգարէին օրերէն ի վեր Խարայէլի մէջ ասոր պէս զատիկ մը չեղաւ . ու Յովսիայի ու քահանաներուն ու Ղևտացիներուն և բոլոր հա գտնուող Յուդայի ու Խարայէլի ու Երուսաղէմի բնակիչներուն բրած զատիկն պէս Խարայէլի բոլոր Թագաւորները բրած չէին : 19 - Այս զատիկը Յովսիայի Թագաւորութեան տասնութերորդ տարին եղաւ :

20 - Այս ամէն բաներէն ետքը , ու Յովսիայի տաճարին կարգադրութեան հաստատելէն ետքը , Եգիպտոսի Նեքաւով Թագաւորը Եփրատի քով Քարքամիս քաղաքին գէմ պատերազմելու ելաւ . ու Յովսիա զանկա գի-

մաւորելու գնաց : 21 - Իսկ անկա գեպաններ զրկեց անոր ու ըսաւ , Ով Յուդայի Թագաւոր , դուն ինծի հետ ի՞նչ գործ ունիս . ես այսօր քեզի գէմ ելա՞յ չեմ , հապա ինծի հետ պատերազմ ընող տանը գէմ . ու Աստուած ինծի հրամայեց որ շուտով ընեմ : Ինծի հետ եղող Աստուծմէն ետ կեցիր , որպէս զի քեզ չկորսնցնէ : 22 - Բայց Յովսիա իր երեսը անկէ չգարձուց , հապա անոր հետ պատերազմելու * համար իր հագուստը փոխեց , ու մտիկ չըրաւ Նեքաւովի խօսքը , որ Աստուծոյ բերնէն էր , ու Մակեդոնի հովիտը պատերազմելու գնաց : 23 - Եւ աղեղնաւորները Յովսիա Թագաւորը նետով զարկին , ու Թագաւորը իր ծառաներուն ըսաւ , Զիս վերցուցէք արեւ , վասն զի սաստիկ վիրաւորուեցայ : 24 - Եւ իր ծառաները զանկա կառքէն հանեցին , ու իր երկրորդ կառքը հեծցնելով Երուսաղէմ տարին . և անկա մեաւ , ու իր հայրերուն գերեզմաններուն մէջ Թաղուեցաւ . և բոլոր Յուդա ու Երուսաղէմ Յովսիայի վրայ սուգ ըրին : 25 - Ու Երեմիա Յովսիայի վրայ սգը ըսաւ . ու բոլոր երգեցողները , այրեր և կիներ , մինչև այսօր իրենց սղբերուն մէջ Յովսիան կը յիշեն , ու զանոնք երգելու սովորութիւնը Խարայէլի մէջ մտցուցին . և ահա ողբերուն մէջ գրուած են :

26 - Եւ Յովսիայի մնացորդ պատմութիւնը , ու անոր՝ Տէրոջը օրէնքին մէջ գրուածին համեմատ ըբա՞ բարեգործութիւնը , 27 - Եւ անոր առաջին ու վերջին պատմութիւնը ահա Խարայէլի ու Յուդայի Թագաւորներուն գիրքին մէջ գրուած են :

ԳԼ ԼԶ

Ու երկրին ժողովուրդը Յովսիայի որդին Յովաքազը տաին , ու զանկա իր հօրը տեղ Երուսաղէմի մէջ Թագաւոր դրին : 2 - Յովաքազ քսանուիրէք տարեկան էր երբ Թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ երէք ամիս Թագաւորութիւն ըրաւ : 3 - Ու Եգիպտոսի Թագաւորը զանկա Երուսաղէմի մէջ արեւն վար առաւ , ու երկրին վրայ հարիւր տաղանդ արծաթ ու մէկ տաղանդ ոսկի հարկ դրաւ : 4 - Ու Եգիպ-

*Կա՛մ, փնտուեց

տոսի թագաւորը անոր եղբայրը Եղիա-
կիմը Յուդայի ու Երուսաղէմի վրայ
թագաւոր դրաւ, և անոր անունը Յո-
վակիմի փոխեց. ու Նեքաւով անոր
եղբայրը Յովաքազը առաւ ու Եգիպ-
տոս տարաւ :

5 - Յովակիմ՝ քսանըֆինգ տարեկան
էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսա-
ղէմի մէջ տասներմէկ տարի թագաւո-
րութիւն ըրաւ. և անիկա իր Տէր Աս-
տուծոյն առջև չարութիւն ըրաւ: 6 -
Անոր վրայ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
թագաւորը ելաւ, ու զանիկա Բաբելոն
տանելու համար սանակապերով կա-
պեց: 7 - Եւ Նաբուգոդոնոսոր Տէրոջը
տանը անօթներէն առաւ, ու Բաբելոն
տարաւ, ու զանոնք Բաբելոն իր տա-
ճարին մէջ դրաւ: 8 - Եւ Յովակիմի
մնացորդ պատմութիւնը, ու անոր
ըրած գարշութիւնները, և անոր վրայ
գտնուածը ահա Խորայէի ու Յուդայի
թագաւորներուն գիրքին մէջ գրուած
են. ու անոր տեղ անոր սրգին Յովա-
քին թագաւոր եղաւ:

9 - Յովաքին քսանըֆ տարեկան էր
երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի
մէջ երեք ամիս ու տասը օր թագաւո-
րեց. և անիկա Տէրոջը առջև չարու-
թիւն ըրաւ: 10 - Ու հեռեկալ տա-
րին Նաբուգոդոնոսոր թագաւորը զբո-
ղակեց, ու զանիկա Տէրոջը տաճարին
պատուական սպաներովը Բաբելոն բե-
րել տուաւ. և Յուդայի ու Երուսա-
ղէմի վրայ անոր հօրը եղբայրը Սեդե-
կիան թագաւոր դրաւ:

11 - Սեդեկիա քսանըմէկ տարեկան
էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսա-
ղէմի մէջ տասներմէկ տարի թագաւո-
րութիւն ըրաւ: 12 - Եւ անիկա իր Տէր
Աստուծոյն առջև չարութիւն ըրաւ.
- Տէրոջը բերնէն Խօսող Երեմիա մար-
գարէին առջև չիտնարհեցաւ. 13 - Ու
նաև ապստամբեցաւ Նաբուգոդոնոսոր
թագաւորէն, որ անոր երգում՝ ընել
տուեր էր Աստուծոյ անունովը, ու իր
պարանոցը խտացուց ու իր սիրտը
կարծրացուց՝ որպէս զի Խորայէի Տէր
Աստուծոյն չգտնայ: 14 - Քահանա-
ներուն բոլոր իշխանները ու ժողովուրդն
այ ազգերուն բոլոր գարշութիւններուն
հեռեկալով՝ խիստ շատ անօրէնութիւն-
ներ ըրին, ու Տէրոջը Երուսաղէմի մէջ
սրբած տունը պղծեցին: 15 - Եւ անոնց
հայրերուն Տէր Աստուածը՝ իր ժողո-

վուրդին ու իր բնակարանին խնայե-
լուն համար, իր պատգամաւորներուն
ձեռքով *մեծ փութով՝ «դարար»-
Բե-նե-ե կը զրկէր. 16 - Բայց անոնք
Աստուծոյ դիմ զպատգամաւորները
կ'անարգէին, անոր խօսքերը կ'ար-
համարհէին ու անոր մարգարէները
ծաղր կ'ընէին. մինչև որ Տէրոջը բար-
կութիւնը իր ժողովուրդին վրայ բոր-
բոքեցաւ, այնպէս որ ա'լ բժշկութիւն
չմնաց: 17 - Եւ անոնց վրայ Քաղզէաց-
ւոց թագաւորը հանեց. անիկա ալ ա-
նոնց երիտասարդները անոնց սրբարա-
նին մէջ սրով մեռցուց. ու երիտասար-
դին ու կոյսին, ծերին ու ալեւորին
չխնայեց. ամէնն ալ Տէրը անոր ձեռքը
մատնեց: 18 - Եւ Աստուծոյ տանը բո-
լոր մեծ ու պզտիկ անօթները, ու Տէ-
րոջը տանը գանձերը, և թագաւորին
ու անոր իշխաններուն գանձերը՝ ամէնն
ալ Բաբելոն տարաւ: 19 - Եւ Աստուծոյ
տունը այրեցին, ու Երուսաղէմի պա-
րիսպը փրցուցին, ու անոր ամէն պա-
լատները կրակով այրեցին, ու բոլոր
գեղեցիկ բաները աւրեցին: 20 - Եւ
սուրէն փախած մնացորդները Բաբելոն
գերի տարաւ. ու մինչև Պարսից թա-
գաւորութեանը հաստատուիլը, անոր
և անոր սրգիններուն ծառաներ եղան,
21 - Որպէս զի Երեմիայի բերնով ըս-
տաց Տէրոջը խօսքը կատարուի, մինչև
երկիրը իր շաբաթները վայելէ: Իր ա-
ւերման բոլոր օրերը շաբաթ պահեց՝
մինչև եօթանասուն տարին լմնալը:

22 - Եւ Պարսից Կիւրոս թագաւորին
առաջին տարին, Երեմիայի բերնով ըս-
տաց Տէրոջը խօսքին «կատարուելուն
համար», Տէրը Պարսից Կիւրոս թագա-
ւորին հոգին արթնցուց. ու անիկա իր
բոլոր թագաւորութեանը մէջ հրա-
տարակել տուաւ, ու նաև հրովարտե-
ցրեց՝ ըսելով.

23 - Այսպէս կ'ըսէ Կիւրոս, Պարսից
թագաւորը. Երկինքի Եհովա Աստ-
ուածը երկրի բոլոր թագաւորութիւն-
ները ինձի տուաւ. ու անիկա ինձի
պատուիրեց որ Յուդայի Երուսաղէմի
մէջ անոր տուն մը շինեմ: Ձեր մէջ
ով որ անոր բոլոր ժողովուրդէն է, իր
Եհովա Աստուածը իրեն հետ ըլլայ,
ու թող ելլէ:

*Եբր. կանուխ ելլելով ու զրկելով
†Կամ, կատարուելուն պէս

ԳԻՐԳ ԵԶՐԱՍԱՅ



ԳԼՈՒԽ Ա.

Եւ Պարսից կիւրոս թագաւորին աւաջին տարին, Երեմիայի բերնով ըստ Տէրոջը խօսքին՝ *կատարուելուն համար՝, Տէրը Պարսից կիւրոս թագաւորին հոգին արթնցուց. ու անկիա իր բոլոր թագաւորութեանը մէջ հրատարակել տուաւ, ու նաև հրովարտեց՝ գրեց՝ ըսելով.

2 - Այսպէս կ'ըսէ կիւրոս, Պարսից թագաւորը. Երկինքի Եհովա Աստուածը երկրի բոլոր թագաւորութիւնները ինծի տուաւ. ու անկիա ինծի պատուիրեց որ Յուդայի Երուսաղէմի մէջ անոր տուն մը շինեմ՝:

3 - Չեր մէջով որ անոր բոլոր ժողովուրդէն է, իր Աստուածը իրեն հետ ըլլայ, ու Յուդայի Երուսաղէմը ելլէ, և Իսրայէլի Եհովա Աստուծոյն, այն Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյն, տունը շինէ:

4 - Ու անոր քաղաքացիները, այսինքն բոլոր մնացողները, իրենց պանդխտութեանը ակեղէն արծաթով, ոսկիով, ստացուածքով ու անասուններով անոր օգնութիւն ընեն, Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյն տանը համար արհեստի կամաւոր ընծաներէն զատ:

5 - Այն ատեն Յուդայի ու Բեռիտի միջին տոհմերուն իշխանները, և քահանաները ու Աւագիները ոտք ելան այն բոլոր արհեստի հետ որոնց հոգին Աստուած արթնցուցեր էր, որպէս զի ելլեն ու Երուսաղէմ՝ եղող Տէրոջը տունը շինեն:

6 - Եւ անոնց բոլորաբար եղողներուն ամէնը բոլոր կամաւոր ընծաներէն զատ արծաթէ ամաններով, ոսկիով, ստացուածքով ու անասուններով և պատուական պարգևներով անոնց օգնութիւն ըրին՝:

7 - Ու կիւրոս թագաւորը Տէրոջը տանը անօթները հանեց, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէ հանելով իր աստուծոյն տունը գրեր էր. 8 - Պարսից կիւրոս թագաւորը զանոնք

Միթրիդատ զանձապետին ձեռքով հանել տուաւ, ու զանոնք համրանքով Յուդայի Սաբաթաար նախարարին յանձնեց: 9 - Եւ այսէր անոնց թիւը. երեսուն ոսկեղէն կոնք, հազար արծաթեղէն կոնք, քսանընը դանակ, 10 - Երեսուն ոսկեղէն տաշա, չորս հարիւր տասը արծաթէ տաշա՝ երկրորդ կարգէն, և հազարաւոր ուրիշ անօթներ: 11 - Բոլոր ոսկիէ ու արծաթէ ամանները հինգ հազար չորս հարիւր էին: Ասոնց ամէնը Սաբաթաար Բաբելոնի գերութենէն Երուսաղէմ՝ ելլողներուն հետ հանեց:

ԳԼ. Բ.

Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին Բաբելոն տարած գերիններէն ելլող գաւառի բնակիչները ասոնք էին, որոնք Երուսաղէմ ու Յուդա դարձան, ամէն մէկը իր քաղաքը. 2 - Ու Չորաբաբելի, Յեթուի, Նեեմիայի, Սարայիայի, Հաէէզիայի, Մուրթաթի, Բաղասանի, Մասփարի, Բագուէի, Հաէուսի և Բաանայի հետ եկան: Եւ այսէր Իսրայէլի ժողովուրդին մարդոցը թիւը. 3 - Փարոսի որդիները երկու հազար հարիւր եօթանասունուերկու. 4 - Սափաաիայի որդիները երեք հարիւր եօթանասունուերկու. 5 - Արաշի որդիները եօթը հարիւր եօթանասունը հինգ. 6 - Փասթ-մովարի որդիները, Յեթուի և Յովարի որդիներէն, երկու հազար ութ հարիւր տասուերկու. 7 - Եղամի որդիները հազար երկու հարիւր յիսունը չորս. 8 - Չաթուի որդիները ինը հարիւր քառասունը հինգ. 9 - Չաքքայի որդիները եօթը հարիւր վաթսուն. 10 - Բանիի որդիները վեց հարիւր քառասունուերկու. 11 - Բերայի որդիները վեց հարիւր քսանուերեք. 12 - Ազգադի որդիները հազար երկու հարիւր քսանուերկու. 13 - Ազանիկամի որդիները վեց հարիւր վաթսունը վեց. 14 - Բագուէի որդիները երկու հազար յիսունը վեց. 15 - Ազիների որդիները չորս հարիւր յիսունը չորս.

*Կ.Տ. կատարուելուն պէս
+Ե.Ք. ձեռքերը ուժովցուցին

16-Ատերի որդիները Եղեկիայէ իննսու-
նըութ. 17 - Բեսէի որդիները երեք
հարիւր քսանուիրեք. 18 - Յօրայի որ-
դիները հարիւր տասուերկու. 19 - Հա-
տուսի որդիները երկու հարիւր քսան-
ուիրեք. 20 - Գարեբի որդիները իննը-
սունըհինգ. 21 - Բեթլէհէմի որդիները
հարիւր քսանուիրեք. 22 - Նեափայի
մարդիկը յիսունըվեց. 23 - Անաթով-
թի մարդիկը հարիւր քսանըութ. 24 -
Ազամօթի որդիները քառասունուեր-
կու. 25-Կարիաթարիմի, Կեփիրայի ու
Բերավթի որդիները եօթը հարիւր քա-
ռասունուիրեք. 26 - Ռամայի ու Գա-
բայի որդիները վեց հարիւր քսանըմէկ.
27 - Մաքմասի մարդիկը հարիւր քսան-
ուերկու. 28 - Բեթէլի ու Գայի մար-
դիկը երկու հարիւր քսանուիրեք. 29 -
Նաբուսի որդիները յիսունուերկու.
30 - Մակեբիսի որդիները հարիւր յի-
սունըվեց. 31 - Միւս Եղամի որդիները
հազար երկու հարիւր յիսունըչորս.
32 - Հարիմի որդիները երեք հարիւր
քսան. 33 - Ղովդի, Ադիդի ու Ոգնովի
որդիները եօթը հարիւր քսանըհինգ.
34 - Երիքովի որդիները երեք հարիւր
քառասունըհինգ. 35 - Սենայի որ-
դիները երեք հազար վեց հարիւր երե-
սուն:

36 - Քահանաները, Յեսուի տունէն
Յեզայիայի որդիները ինը հարիւր եօ-
թանասունուիրեք. 37 - Եմմերի որդի-
ները հազար յիսունուերկու. 38 - Փա-
սուրի որդիները հազար երկու հարիւր
քառասունըեօթը. 39 - Հարիմի որդի-
ները հազար տասնըեօթն էին:

40 - Ղևտացիները, Ովդուիայի որ-
դիներէն, Յեսուի ու Կարմիէլի որդի-
ները եօթանասունըչորս էին:

41 - Երգեցողները, Ասափի որդի-
ները, հարիւր քսանըութ էին:

42 - Իռնապաններուն որդիները,
Սեղուսի որդիները, Ատերի որդիները,
Տեղմնի որդիները, Ակկուբի որդիները,
Ատիտայի որդիները, Սուբայի որդի-
ները՝ ամէնը հարիւր երեսունըինն էին:

43 - Նաթանայիմները «...» էին.
Միայի որդիները, Ասուփայի որդիները,
Տաբատլդի որդիները, 44 - Կերոսի որ-
դիները, Միայի որդիները, Փաղօնի որ-
դիները, 45 - Ղաբանայի որդիները,
Ագաբայի որդիները, Ակկուբի որդի-
ները, 46 - Ագաբի որդիները, Սաղամէի
որդիները, Անանի որդիները, 47 - Գեդ-

դէլի որդիները, Գաաբի որդիները, Ռե-
սլիայի որդիները, 48 - Ռասինի որդի-
ները, Նեկոզայի որդիները, Գազամի
որդիները, 49 - Ողայի որդիները, Փա-
սէի որդիները, Բասիի որդիները, 50 -
Ասենայի որդիները, Մովանիմի որդի-
ները, Նեփուսիմի որդիները, 51 -
Բակբուկի որդիները, Ակուփայի որդի-
ները, Արուրի որդիները, 52 - Բասա-
ղօթի որդիները, Մէրգայի որդիները,
Արսայի որդիները, 53 - Բարկոսի որ-
դիները, Սիտարայի որդիները, Թամայի
որդիները, 54 - Նեսիայի որդիները,
Ատեփայի որդիները, 55 - Սողոմոնի
ծառաներուն որդիները, Սոաէի որդի-
ները, Սոփերաթի որդիները, 56 - Փա-
րեզայի որդիները, Յեզայի որդիները,
Դերկոնի որդիները, 57 - Գեդգէլի որ-
դիները, Սափաաիայի որդիները, Ատ-
աիլի որդիները, Փաքարաթ-ասեփայիմի
որդիները, Ամիի որդիները. 58 - Բուր
Նաթանայիմները ու Սողոմոնի ծառա-
ներուն որդիները երեք հարիւր իննսուն-
ուերկու էին:

59 - Ու Թեղմեղայէ, Թեղարսայէ,
Քերուբէ, Ադգանէ «- Եմմերէ ելլող-
ները ասոնք էին, և իրենց հայրերուն
տունը ու իրենց սերունդը, այսինքն
Իսրայէլէ ըլլալին, ցուցնելու կարող
չեղան: 60 - Իաղայիայի որդիները,
Տուբիայի որդիները «- Նեկոզայի որ-
դիները վեց հարիւր յիսունուերկու
մարդ: 61 - Եւ քահանաներուն որդե-
ներէն՝ Աբաիայի որդիները, Ակկուսի
որդիները, Բերգելիի որդիները, որ
Գաղաադացի Բերգելիի աղջիկներէն
կին առնելով՝ անոնց անունովը կոչ-
ուեցաւ: 62 - Ասոնք իրենց ազգաբա-
նութեան գիրքը փնտռեցին, բայց
չկրցան գտնել. ու անմաքուր սեպուե-
լով՝ քահանայութենէ արգիլուեցան: 63 - Եւ *Աթարսաթա անոնց ըսաւ,
Մինչև որ Ուրիմով ու Թուրիմով քա-
հանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ
բաներէն չուտեն:

64 - Բուր ժողովքը մէկտեղ քա-
ռասունուերկու հազար երեք հարիւր
վաթասուն հոգի էր. 65 - Բաց ի անոնց
ծառաներէն ու աղախիններէն, որոնք
եօթը հազար երեք հարիւր երեսունը-
եօթն էին. ու անոնց մէջ երկու հար-
իւր այր և կին երգեցողներ կային:

*Կա՛մ, կառավարիչը

66 - Անոնց ձիերը եօթը հարիւր երեսունըվեց, ջորիները երկու հարիւր քառասունըհինգ, 67 - Աւղաերը չորս հարիւր երեսունըհինգ - էշերը վեց հազար եօթը հարիւր քսան էին :

68 - Եւ տոհմերու իշխաններէն *աւն+ երբ Երուսաղէմ՝ եղող Տէրոջը տունը գացին, Ասատուծոյ տանը կամուտը ընծաներ տունին, որպէս զի զանհկա իր *տեղը հաստատեն: 69 - Անոնք իրենց կարողութեանը չափ վաթսուներմէկ հազար գրամ՝ ոսկի, ու հինգ հազար մնաս արծաթ, ու հարիւր քահանայական պատմուծան տունին գործաւորութեան գանձին: 70 - Եւ քահանաները ու Ղևտացիները ու ժողովուրդէն եղողները, երգեցողները, դւնապանները և Նաթանայիմները իրենց քաղաքներուն մէջ, ու բոլոր Իսրայէլ իրենց քաղաքներուն մէջ բնակեցան :

ԳԼ. Գ

Աւ երբ եօթներորդ ամիսը հասաւ, Իսրայէլի որդիները երեւոյ քաղաքներուն մէջ էին. ու ժողովուրդը մէկ մարդու պէս Երուսաղէմի մէջ ժողովուրդեցան : 2 - Եւ Յովսեփեկեան Յեսու ու անոր քահանայ եղբայրները, և Սաղաթիէլեան Զօրաբաբէլ ու անոր եղբայրները ելան, ու Իսրայէլի Ասատուծոյն սեղանը շինեցին, որպէս զի անոր վրայ ողջակէզներ մատուցանեն, ինչպէս Ասատուծոյ մարդուն Մովսէսի օրինաց բերեալ մէջ գրուած է : 3 - Աւ սեղանը իր *տեղը շինեցին. վասն զի այն երկիրներուն ժողովուրդներէն կը վախնային . և անոր վրայ Տէրոջը ողջակէզներ մատուցին, առաւօտեան ու երեկոյեան ողջակէզները : 4 - Եւ տաղաւարահարաց տօնը գրուածին պէս կատարեցին . ու ամէն օրուան ողջակէզները երեւոյ թիւովը օրէ օր հրամայուածին պէս մարտնչին : 5 - Եւ անկէ ետքը մշանջենաւոր ողջակէզը, ու ամսագլուխներու ու Տէրոջը ամէն սուրբ տօներուն *ղափեզները մարտնչին. նաև այն կամուտը ընծաները՝ զորոնք ամէն մարդ յօժար սրտով Տէրոջը կը մատուցանէր: 6 - Եօթներորդ ամսուն առաջին օրէն Տէրոջը ողջակէզներ մատուցանելու սկսան. բայց Տէրոջը

տաճարին հիմը *աւն-ին դրուած չէր : 7 - Եւ քարահասաներուն ու հիւսերուն սաակ, ու Սիդոնացաց և Տիւրացաց ուտելիք ու խմելիք ու իւղ տունին, որպէս զի Լիբանանէ ծովով եղևնափայտեր Յոպպէ բերեն, ինչպէս Պարսից կիւրոս թագաւորը անոնց արտօնութիւն տուեր էր :

8 - Եւ անոնց Երուսաղէմ՝ Ասատուծոյ տունը գալուն երկրորդ տարին երկրորդ ամսուն մէջ, Սաղաթիէլեան Զօրաբաբէլ, ու Յովսեփեկեան Յեսու, և անոնց միւս եղբայրները, քահանաները ու Ղևտացիները, ու գերութենէ բոլոր Երուսաղէմ՝ գործողները *աւն-ը շինեց- սկսան, և քսան տարեկանէ վեր եղող Ղևտացիները Տէրոջը տանը գործին վրայ վերակացու գրին: 9 - Աւ Յեսու և անոր որդիները ու եղբայրները, և Կադմիէլ ու անոր որդիները, *Յուգայի որդիները, * - Ենադադի որդիները * - անոնց որդիները ու եղբայրները, Ղևտացիները, գործաւորներուն վրայ վերակացութիւն ընելու ելան մէկ մարդու պէս :

10 - Աւ երբ ճարտարապետները Տէրոջը տաճարին հիմը դրին, քահանաները իրենց զգեստները հագած՝ փողերով, ու Ղևտացիները, Ասափի որդիները, ծնծղաներով, Տէրը օրհնելու համար կայնեցուցին՝ Իսրայէլի Դաւիթ թագաւորին կարգադրութեանը համեմատ. 11 - Եւ փոփոխակի կ'երգէին՝ Տէրոջմէ գոհանալով ու *աւն-ը շնորհակալութիւն մատուցանելով, վասն զի բարի է, վասն զի անոր ողորմութիւնը Իսրայէլի վրայ յաւիտեան է. ու բոլոր ժողովուրդը մեծաձայն աղաղակելով Տէրը օրհնեցին Տէրոջը տանը հիմին դրուելուն համար :

12 - Եւ քահանաներէն ու Ղևտացիներէն ու տոհմերու իշխաններէն շատերը, որոնք ծեր ըլլալով Տէր-Չ առաջուան տունը տեսած էին, երբ իրենց աչքին առջև այս տանը հիմը դրուեցաւ, մեծ ձայնով լացին, ու շատերը երեւոյ ուրախութենէն ձայներնին վերցնելով աղաղակեցին . 13 - Աւ ժողովուրդը ուրախութեան աղաղակին ձայնը ու բաղմութեան լալուն ձայնը իրարմէ չէր կրնար սրոշել . վասն զի բաղմութիւնը մեծ ցնծութեան ձայնով, կ'ա-

*կ-մ, *աւն-ը-աւն կացութեանը մէջ

*կ-մ, Ովդուխայի. տես զԼ. Բ. 10:

ղազակեր, ու ձայներնին մինչև հեռու
տեղեր կը լսուէր :

ԳԼ. Գ

Եւ Յուզայի ու Բենիամինի թշնա-
միները երբ լսեցին որ *գերութենէ ել-
լողները՝ Խորայէլի Տէր Աստուծոյն տա-
ճարը կը շինեն, 2 - Զօրաբարէլի ու
նահապետներուն մօտեցան, ու անոնց
ըսին, Մենք ալ ձեզի հետ շինենք. քան-
զի մենք ալ ձեզի պէս ձեր Աստուածը
կը խնդրենք, ու մեզ հոս բերող Աստ-
րեստանի Ասորդան թագաւորին օրերէն
ի վեր անոր զոհ կը մատուցանենք: 3 -
Բայց Զօրաբարէլ ու Յեսու և Խորա-
յէլի միւս նահապետները անոնց ըսին,
2 վայլեր ձեզի ու մեզի որ զիտեղ մեր
Աստուծոյն տուն շինենք. հապա Խո-
րայէլի Տէր Աստուծոյն տունը մինակ
մենք պիտի շինենք, ինչպէս Պարսից
թագաւորը, Կիւրոս թագաւորը, մեզի
հրամայեց: 4 - Եւ այն երկրին ժողո-
վուրդը Յուզայի ժողովուրդին ձեռ-
քերը կը թուլցնէին, ու զանոնք շինե-
լէն կը խափանէին: 5 - Եւ անոնց խոր-
հուրդը խափանելու համար՝ վարձքով
անոնց դէմ խորհրդականներ բռնեցին
Պարսից Կիւրոս թագաւորին բոլոր օրե-
րը, ու մինչև Պարսից Իսթեհ թագա-
ւորին թագաւորութեանը ժամանակը:
6 - Եւ Ասուերոսի թագաւորութեան
ատենը, անոր թագաւորութեան սկիզ-
բը, Յուզայի ու Երուսաղէմի բնակիչ-
ներուն դէմ ամբաստանութեան գիր
գրեցին:

7 - Եւ Արտաշէսի օրերը Բեսեղամ,
Միթրիգատ, Տաբէէլ ու ասոնց ուրիշ
ընկերները Պարսից Արտաշէս թագա-
ւորին գրեցին. ու նամակին գիրը †Աս-
րերէն գրուած էր, ու մեկնութիւնը
†Ասորերէն էր: 8 - Հռէուժ հրամանա-
տարը ու Սամայ դպիրը Երուսաղէմի
դէմ այս կերպով նամակ մը գրեցին
Արտաշէս թագաւորին:

9 - Այն ատեն Հռէուժ հրամանա-
տարը ու Սամայ դպիրը և անոնց ու-
րիշ ընկերները, Իննացիք, Ափարսա-
թաքացիք, Տարփաղեցիք, Ափերսացիք,
Աբբուեցիք, Բաբելոնացիք, Շուշանա-
ցիք, Իաւեցիք, Եղամացիք 10 - Եւ

մնացած ազգերը զորոնք մեծ ու պատ-
ուական Ասենափարը փոխադրեց ու
Սամարիայի քաղաքներուն մէջ բնակե-
ցուց, ու միւսները որոնք Գեաին առդիի
կողմը կը գտնուին, և այլն: 11 - Այս
է այն նամակին օրինակը՝ զոր Արտա-
շէս թագաւորին զրկեցին.

Գեաին առդիի կողմը բնակող քու-
ծաւաններդ, և այլն: 12 - Թագաւորիդ
յայտնի ըլլայ որ ձեր կողմանէ մեզի
վեր եկող Հրեաները Երուսաղէմ եկան
ու պարիսպներ կանգնելով ու հիմեր
ձգելով՝ այն ապստամբ ու անիրաւ քա-
ղաքը կը շինեն: 13 - Հիմա թագաւո-
րիդ յայտնի ըլլայ, որ եթէ այս քաղա-
քը նորէն շինուի, ու անոր պարիսպները
կանգնուին, անոնք հարկ, տուրք ու
մտքս պիտի չտան. և այս պատճառաւ
թագաւորներուն փաստաւ պիտի
ըլլաս: 14 - Ու մեր *ռոճիկին պալատէն
ըլլալուն համար՝ մեզի չվայլեր որ թա-
գաւորին փաստ տեսնենք. անոր համար
այս նման զրկեցինք, ու թագաւորիդ
իմացուցինք. 15 - Որպէս զի քու հայրե-
րուդ յիշատակաց գիրքին մէջ փրճա-
ռուի, որպէս զի այն յիշատակաց գիր-
քին մէջ գտնես ու իմանաս թէ այն
քաղաքը ապստամբ, և թագաւորնե-
րուն և գաւառներուն փաստակար քա-
ղաք մը եղած է, և թէ հին ատենը ա-
նոր մէջ դաւաճանութիւն ըրած են,
ու անոր համար այս քաղաքը կործան-
ուեր է: 16 - Մենք թագաւորիդ կ'ի-
մացնենք որ եթէ այս քաղաքը շինուի
ու անոր պարիսպները հաստատուին,
այս պատճառաւ Գեաին առդիի կողմը
բաժին պիտի չունենաս:

17 - Իսկ թագաւորը Հռէուժ հրա-
մանատարին և Սամայ դպիրին ու Սա-
մարիայի մէջ բնակող անոնց մնացած
ընկերներուն, ու Գեաին անդիի կողմը
եղող մնացածներուն հրովարտակ զր-
կեց այս խօստերով.

18 - Ողջոյն, և այլն: Մեզի զրկած նա-
մակնիդ իմ առջև յայտնապէս կար-
գացուեցաւ. 19 - Ու ես հրաման ըրի,
ու փնտռեցին և գտան որ այն քաղաքը
հին ատենէն ի վեր թագաւորներու
դէմ դրեր է, ու անոր մէջ ապստամ-
բութիւն ու դաւաճանութիւն եղեր է:
20 - Ու Երուսաղէմի մէջ զօրաւոր թա-
գաւորներ եղած են, որոնք բոլոր Գե-

*Եբբ. գերութեան օրգիները
†Կաժ, Բաղդէսարէն

*Քաղդ. աղին

տին անգիի կողմը եղողներուն վրայ կը տիրէին. ու անոնց հարկ, տուրք ու մաքս կը տրուէր: 21 - Հիմա պատուէր տուէք որ այն մարդիկը արգիլեն. ու քաղաքը չշինուի, մինչև իմ կողմանէս հրովարտակ մը տրուի: 22 - Եւ զգոյշ եղէք որ այս բանին անհոգութիւն չընէք. ըլլայ որ շարութիւնը շատնայ, ու թագաւորներուն փաստան:

23 - Ու երբ Արաաշէս թագաւորին նամակին օրինակը Հուէումի ու Սամսայ գոյրին և անոնց ընկերներուն առջև կարգացուեցաւ, արտորնօք Երուսաղէմ՝ գացին Հրեաներուն, և զանոնք բռնութեամբ չնէնէն արգիլեցին: 24 - Այն ատեն Երուսաղէմ՝ եղող Աստուծոյ տանը գործը արգիլուեցաւ. ու մինչև Պարսից Իարեհ թագաւորին թագաւորութեանը երկրորդ տարին արգիլուած մնաց:

ԳԼ Ե

Եւ Անգէ մարգարէն ու Ադգովի որդին Զաքարիա մարգարէն Իսրայէլի Աստուծոյն անունովը մարգարէութիւն ըրին Յուդայի ու Երուսաղէմի մէջ եղող Հրեաներուն: 2 - Այն ատեն Սաղաթիէլեան Զօրաբարէլ ու Յովսեփէկեան Յեսու ելան, ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը շինելու սկսան. և Աստուծոյ մարգարէները անոնց հետ ըլլալով՝ անոնց օգնութիւն կ'ընէին:

3 - Այն ատեն Եֆթա գեաին ասդիի կողմի իշխանը Թաթանայի ու Սաթրաբուզան իրենց ընկերներովը անոնց եկան, և այսպէս ըսին. Ո՞վ ձեզի հրաման տուաւ որ այս տունը շինէք, ու այս պարիսպները կանգնէք: 4 - Այն ատեն անոնց ըսինք թէ այս շէնքը շինող մարդոց անունները ի՛նչ էին: 5 - Բայց Հրէից ծերերուն վրայ իրենց Աստուծոյն աչքը ըլլալով՝ զանոնք շարգիլեցին, մինչև բունը Իարեհի հասնի, ու անկէ այս բանին համար հրովարտակ ըրելու տան:

6 - Այս է այն նամակին օրինակը զոր Գեաին ասդիի կողմի իշխանը Թաթանայի ու Սաթրաբուզան, ու Գեաին ասդիի կողմը եղող անոնց ընկերները Ափսարաքացիք Իարեհ թագաւորին զրկեցին: 7 - Եւ իրենց անոր զրկած նամակին մէջ այսպէս գրուած էր.

8 - Իարեհ թագաւորին շատ բարեւ թագաւորիդ յայտնի ըլլայ որ Հրէաստանի գաւառը, մեծ Աստուծոյն տունը գացինք. ու անիկա մեծ քարերով կը շինուի, և անոր պատերուն մէջ փայտեր կը դրուին, ու գործը շուտով կը բանուի, ու անոնց ձեռքով կը յաջողուի: 9 - Եւ այն ծերերուն հարցուցինք, ու անոնց այսպէս ըսինք. Ո՞վ ձեզի հրաման տուաւ որ այս տունը շինէք, ու այս պարիսպները կանգնէք: 10 - Ու քեզի իմացնելու համար անոնց անուններն ալ հարցուցինք, որպէս զի անոնց աւաջնորդ եղող մարդոց անունները +եղէ գրենք: 11 - Եւ անոնք մեզի այսպէս պատասխան տուին ու ըսին, Մենք երկինքի ու երկրի Աստուծոյն ծառաներն ենք. ու շատ տարիներէ առաջ շինուած տունը կը շինենք, զոր Իսրայէլի մէկ մեծ թագաւորը շինեց ու լինցուց: 12 - Բայց մեր հայրերուն երկինքի Աստուածը բարկացնելուն համար, զանոնք Բաբելոնի թագաւորին, Բաղդէացի Նաբուգոդոնոսորի, ձեռքը մատնեց. ան ալ այս տունը աւրեց, ու ժողովուրդը Բաբելոն գերի տարաւ: 13 - Բայց Բաբելոնի կիւրոս թագաւորին աւաջին տարին կիւրոս թագաւորը այս Աստուծոյ տունը շինելու հրաման տուաւ: 14 - Եւ Աստուծոյ տանը սկեղէն ու արծաթեղէն անօթներն ալ, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմի տաճարէն հանելով՝ Բաբելոնի տաճարը տարեր էր, կիւրոս թագաւորը Բաբելոնի տաճարէն հանեց, ու Սասբասար անունով մէկուն յանձնեց, զոր նախարար բրաւ: 15 - Ու անոր բրաւ, Այս անօթները առ, գնա զանոնք Երուսաղէմ՝ եղող տաճարը տար, ու Աստուծոյ տունը իր տեղը շինուի: 16 - Այն ատեն Սասբասար եկաւ, ու Երուսաղէմ՝ եղող Աստուծոյ տանը հիմը ձգեց. և այն ատենէն մինչև հիմա կը շինուի, բայց չէ լինցած: 17 - Ու հիմա եթէ թագաւորը կը հաճի, հոն Բաբելոն եղող թագաւորին գանձատանը մէջ փրնաւուի, թէ արդեօք կիւրոս թագաւորը հրաման տուէ՞ր է որ Երուսաղէմի մէջ այս Աստուծոյ տունը շինուի. ու թագաւորը այս բանին վրայով իր կամքը մեզի * հասկցնէ:

* Բաղդ. զրկէ

ԳԼ. 2

Այն ատեն Գարեհի թագաւորը հրաման ըրաւ, ու հոն Բաբելոնի դիւանին մէջ փնտուեցին, ուր գանձերը կը պահուէին: 2 - Եւ Մարաց գաւառին մէջ եղող *Եկբատանայի պալատին մէջ տամ մը գանուեցաւ, որուն մէջ այս կերպով գրուած յիշատակարան մը կար:

3 - Կիւրոս թագաւորին աւաջին տարին, Կիւրոս թագաւորը Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տանը համար հրաման տուաւ, որ այն տունը շինուի, ուր զոհ կը մատուցանեն. և անոր հիմերը ամուր ըլլան. անոր բարձրութիւնը վաթսուն կանգուն ու լայնութիւնը վաթսուն կանգուն, 4 - Երեք կարգ մեծ քարերէ ու մէկ կարգ նոր փայտէ ըլլայ. ու անոր ծախքը թագաւորին տունէն արուի. 5 - Եւ Նաբուգոդոնոսորի Երուսաղէմի տաճարէն հանած ու Բաբելոն բերած՝ Աստուծոյ տանը ոսկեղէն ու արծաթեղէն անօթներն ալ ետ արուին, ու Երուսաղէմ՝ եղող տաճարը, իրենց տեղը, տարուին, ու Աստուծոյ տունը գրուին:

6 - Եւ հիմա, Գեաին անգրի կողմի իշխանը Թաթանայի, Սաթրաբուզան, ու Գեաին անգրի կողմը եղող անոնց ընկերները, Ափարսաքացիք, անկէ ետ քաշուեցէք. 7 - Այս Աստուծոյ տանը գործը թող տուէք. Հրէից նախարարը ու Հրէից ծերերը այս Աստուծոյ տունը թող իր տեղը շինեն: 8 - Եւ այս հրամանը կու տամ, որպէս զի Գեաին անգրի կողմէն ինչ պիտի ընէք այս Աստուծոյ տանը շինութեանը համար, այսինքն արքունի գանձէն, Գեաին անգրի կողմէն խոյս հարկէն, այն մարդոցը ծախքը շուտով արուի, որպէս զի արգելք մը չունենան: 9 - Եւ անոնց ինչ որ պէտք ըլլայ, թէ՛ զուարակներ, թէ՛ խոյեր և թէ՛ գաւններ՝ երկինքի Աստուծոյն ողջակէզներու համար, նաև ցորեն, աղ, գինի ու իւղ ամէն օր անոնց արուի անպակաս՝ Երուսաղէմի մէջ եղող քահանաներուն խօսքովը, 10 - Որպէս զի երկինքի Աստուծոյն անուշահամ զոհեր մատուցանեն, և թագաւորին ու անոր որդիներուն կեանքին համար աղօթք ընեն:

11 - Ու ետ կը հրամայեմ որ ով որ այս խօսքին դէմ կենայ, անոր տունէն փայտ մը քակելով անկեն, ու այն մարդը անոր վրայ գամեն. ու այս բանին համար անոր տունը աղբանոց ըլլայ: 12 - Եւ այն Աստուածը՝ որ իր անունը հոն դրեր է, թող կործանէ ամէն թագաւորը ու ժողովուրդը, որ ձեռք կ'երկնցնէ այս հրամանին դէմ կենայու, ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը աւերելու: Ես Գարեհի այս հրամանը ըրի. թող շուտով ի գործ գրուի:

13 - Այն ատեն Գեաին առգրի կողմի իշխանը Թաթանայի, Սաթրաբուզան և անոնց ընկերները Գարեհի թագաւորին զրկած հրամանը շուտով կատարեցին:

14 - Եւ Հրէից ծերերը կը շինէին ու կը յաջողէին՝ Անգէ մարգարէին ու Ագգովի որդւոյն Զաքարիայի մարգարէութիւնովը. ու անոնք Իսրայէլի Աստուծոյն հրամանովը և Պարսից Կիւրոս ու Գարեհի և Արտաշէս թագաւորներուն հրամանովը շինեցին լմնացին: 15 - Եւ այս տունը Ագար ամուսն երկրորդ օրը, Գարեհի թագաւորին թագաւորութեան վեցերորդ տարին լմնցաւ:

16 - Ու Իսրայէլի որդիները, քահանաները ու Ղևտացիները ու միւս գերութենէ ելլողները, ուրախութեամբ Աստուծոյ տանը նաւակատիքը ըրին:

17 - Եւ Աստուծոյ տանը նաւակատիքին համար՝ հարիւր զուարակ, երկու հարիւր խոյ, չորս հարիւր գառ, ու բոլոր Իսրայէլի մեղքի պատարագ ըլլալու համար՝ Իսրայէլի ցեղերուն թիւովը այժերէն տատուերկու նոխաղ մատուցին: 18 - Ու Երուսաղէմի մէջ Աստուծոյ սպասաւորութեանը վրայ՝ քահանաները իրենց կարգերուն մէջ ու Ղևտացիները իրենց դասերուն մէջ կայնեցուցին, ինչպէս Մովսէսի գիրքին մէջ գրուած է:

19 - Ու գերութենէ ելլողները աւաջին ամուսն չորեքտասաներորդ օրը զատիկը ըրին. 20 - Քանզի քահանաները ու Ղևտացիները մէկտեղ սրբուեցան, ու ամէնն ալ մաքուր եղան. ու բոլոր գերութենէ ելլողներուն համար, և իրենց եղբայրներուն, քահանաներուն, համար, ու իրենց համար զատիկը մորթեցին. 21 - Ու գերութենէ դարձող Իսրայէլի որդիները, ու Իսրայէլի Տէր Աստուածը փնտուելու համար անոնց

*Ք. Գ. Ա. իմէթայի

Ել֊ն֊էրբ , որոնք այն երկրին ազգերուն պղծութենէն զատուեր էին՝ ամէնն ալ կերան : 22 - Եւ եօթը օր բազար֊ ջակերաց տօնը կատարեցին ուրախութեամբ . վասն զի Տէրը զանոնք ուրախացուց , ու Ասորեստանի թագաւորին սիրար անոնց դարձուց , որպէս զի Աստուծոյ , Իսրայէլի Աստուծոյն , տանը գործին մէջ անոնց ձեռքը ուժովցնէ :

ԳԼ Ե

Եւ այս բաներէն ետքը , Պարսից թագաւորին Արտաշէսի թագաւորութեան ատենը , Եզրաս , Սարայիայի որդին , որ Ազարիայի որդին , որ Քեղկիսայի որդին , 2 - Որ Սեղզումի որդին , որ Սագովկի որդին , որ Աքիտավբի որդին , 3 - Որ Ամարիայի որդին , որ Ազարիայի որդին , որ Մարիօթի որդին , 4 - Որ Զարիայի որդին , որ Ոզիի որդին , որ Բակկիի որդին , 5 - Որ Աբիսուայի որդին , որ ՓենէՏէսի որդին , որ Եզիազարի որդին , որ մեծ քահանային Աճարոնի որդին էր , 6 - Այս Եզրասը Բաբելոնէ ելաւ . ու անկա իսրայէլի Տէր Աստուծոյն տուած Մովսէսի օրէնքին արագագիր դպիրն էր , ու իր Տէր Աստուծոյն ձեռքը իր վրայ ըլլալուն համար՝ ամէն խնդրածը թագաւորը անոր կու տար : 7 - Եւ Արտաշէս թագաւորին եօթներորդ տարին՝ Իսրայէլի որդիներէն , քահանաներէն ու Ղևտացիներէն ու երգեցողներէն և դանապաններէն ու Նաթանայիմներէն * ան+ Երուսաղէմ ելան : 8 - Եւ անկա հինգերորդ ամսուն մէջ՝ թագաւորին եօթներորդ տարին Երուսաղէմ եկաւ . 9 - Քանզի առաջին ամսուն առաջին օրը Բաբելոնէ ելլելու սկսաւ . ու Աստուծոյ բարի ձեռքը անոր վրայ ըլլալով՝ հինգերորդ ամսուն առաջին օրը Երուսաղէմ եկաւ : 10 - Վասն զի Եզրաս իր սիրար պատրաստեց՝ որպէս զի Տէրօջը օրէնքը փնտռէ ու կատարէ , ու Իսրայէլի մէջ օրէնք ու դատաստան սորվեցնէ :

11 - Եւ ասիկա է այն նամակին օրինակը զոր Արտաշէս թագաւորը տուաւ Եզրաս քահանային ու դպիրին , որ Տէրօջը Իսրայէլի * ան+ պատուիրանքներուն և օրինաց խօսքերուն գրիչն էր .

12 - Թագաւորաց թագաւորը Արտաշէս , Եզրաս քահանային , երկինքի

Աստուծոյն օրէնքին կատարեալ գրչին , և այլն : 13 - Հրաման կու տամ որ իմ թագաւորութեանս մէջ եզոզ Իսրայէլի ժողովուրդէն ու անոր քահանաներէն ու Ղևտացիներէն ամէն իրենց կամքովը Երուսաղէմ ելլել ու զոզները քեզի հեռ ելլեն . 14 - Վասն զի դուն թագաւորին ու անոր եօթը խորհրդականներուն կողմանէ կը դրկուիս , որպէս զի քու ձեռքդ եզոզ քու Աստուծոյդ օրէնքովը Յուգան ու Երուսաղէմը քննես , 15 - Եւ տանիս այն արծաթը ու ոսկին , զոր թագաւորը ու անոր խորհրդականները իրենց կամքովը ընծայ տալին Իսրայէլի Աստուծոյն , որուն բնակութիւնը Երուսաղէմի մէջ է . 16 - Նաև Բաբելոնի բոլոր դաւաւին մէջ գտած բոլոր արծաթի ու ոսկիդ , զոր ժողովուրդը ու քահանաները Երուսաղէմի մէջ եզոզ իրենց Աստուծոյն տանը համար կամաւոր ընծայի պէս պիտի մատուցանեն , 17 - Որպէս զի այն ստակով անյապաղ զուարակներ , խոյեր , գառներ , ու անոնց հացի ընծաները ու թափելու նուէրները ծախու առնես , ու զանոնք Երուսաղէմ եզոզ ձեր Աստուծոյն տանը սեղանին վրայ մատուցանես . 18 - Եւ մնացած արծաթով ու ոսկիով՝ քեզի ու քու եղբայրներուդ ինչ որ պաաշաճ կ'երենայ ընել , ձեր Աստուծոյն կամքին համեմատ ընէք : 19 - Եւ այն անօթները , որոնք քու Աստուծոյդ տանը պաշտօնին համար քեզի տրուեցան , զան+ Երուսաղէմի Աստուծոյն առջև * ար յանձնէ : 20 - Եւ ուրիշ ինչ որ քու Աստուծոյդ տանը համար պէտք ըլլայ , զոր քեզի կը վայլէ աալ , զանկա թագաւորին գանձատունէն տաս : 21 - Ու ես Արտաշէս թագաւորս յեզի , Քեանն անդիի կողմը եզոզ բոլոր գանձապեաներուդ , հրաման կու տամ , որ Եզրաս քահանան , երկինքի Աստուծոյն օրէնքին դպիրը , ինչ որ ձեզմէ ուզէ , անմիջապէս * տրուի . 22 - Մինչև հարիւր տաղանդ արծաթ , մինչև հարիւր քու ցորեն , ու մինչև հարիւր մարգինի ու հարիւր մարիւղ , ու ազ անոնց † չափը որոշելու : 23 - Երկինքի Աստուածը ինչ որ կը հրամայէ , շուտով ի գործ դրուի երկինքի Աստու-

* Բար . կատարուի
† Բար . գրելու

ծոյն տանը համար , որպէս զի ըլլայ թէ թագաւորին ու անոր որդիներուն թագաւորութեանը վրայ բարկութիւն գոյ : 24 - Եւ ձեզի յայտնի ըլլայ որ բոլոր քահանաներէն , Ղեւտացիներէն , երգեցողներէն , դռնապաններէն , Նաթանայիմներէն , և այս Աստուծոյ տանը սպասաւորներէն հարկ , աւարք ու մաքս առնելու հրաման չկայ : 25 - Եւ դուն , ով Եզրաս , քու Աստուծոյդ իմաստութիւնովը զոր դուն ունիս , դատաւորներ ու իշխաններ դիր , որոնք Գեաին անդիի կողմը եզոզ բոլոր ժողովուրդը , այսինքն քու Աստուծոյդ օրէնքը ամէն գիտցողները , դատեն . ու չգիտցողներուն արվեցուցէք : 26 - Եւ ով որ քու Աստուծոյդ օրէնքին համեմատ ու թագաւորին օրէնքին համեմատ չընէ , անյապաղ անոր դատատանը ի գործ դրուի՝ կա՛մ մահուամբ , կա՛մ աքսորով , կա՛մ տուգանքով և կա՛մ բանտարկութեամբ :

27 - Մեր հայրերուն Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ , որ Երուսաղէմի մէջ եզոզ Տէրոջը տունը փառաւորելու համար՝ այս բանը թագաւորին սրահն մէջ գրաւ , 28 - Եւ թագաւորին ու անոր խորհրդականներուն ու թագաւորին բոլոր զօրաւոր իշխաններուն առջև ինծի շնորհք գտնել տուաւ . և իմ Տէր Աստուծոյս ձեռքին իմ՝ վրաս ըլլալուն համար զօրացայ , ու Իսրայէլէ իշխաններ ժողվեցի , որպէս զի ինծի հետ ելլեն :

ԳԼ Ը

Եւ Արտաշէս թագաւորին թագաւորութեան տաեանը՝ ինծի հետ Բաբելոնէ ելողներուն ասո՜սմապեաները ու համբանքը ասոնք են . 2 - Փենէհէսի որդիներէն Գերսան , Իթամարի որդիներէն Դանիէլ , Դաւիթի որդիներէն Քատուս , Սեքենիայի որդիներէն՝ 3 - Փարոսի որդիներէն Չաքարիա , ու անոր հետ հարիւր յիսուն այր մարդ համբուեցան . 4 - Փատթամվարի որդիներէն Չարիայի որդին Եղիովէնայի , ու անոր հետ երկու հարիւր այր մարդ . 5 - Սեքենիայի որդիներէն Յազիէլի որդին , ու անոր հետ երեք հարիւր այր մարդ . 6 - Եւ Ադինի որդիներէն Յովնաթանի որդին Աբեդ , ու անոր հետ յիսուն այր մարդ . 7 - Ու Եզամի որ-

դիներէն Գոթոգիայի որդին Եսայի , ու անոր հետ եօթանասուն այր մարդ . 8 - Եւ Սափաարիայի որդիներէն Միքայէլի որդին Չաբադիա , ու անոր հետ ութսուն այր մարդ . 9 - Յովարի որդիներէն՝ Յեքիէլի որդին Աբգիա , ու անոր հետ երկու հարիւր ասանրութ այր մարդ . 10 - Եւ Սաղոմիգի որդիներէն Յօսեփիայի որդին , ու անոր հետ հարիւր վաթսուն այր մարդ . 11 - Եւ Բեբայիի որդիներէն Բեբայիի որդին Չաքարիա ու անոր հետ քսանրութ այր մարդ . 12 - Եւ Ազգադի որդիներէն Ակատանի որդին Յօհանան , ու անոր հետ հարիւր ասար այր մարդ . 13 - Եւ Ադոնիկամի որդիներէն վերջինները՝ որոնց անունները ասոնք էին . Եղիփաղէա , Յէիէլ ու Սեմայիա , և անոնց հետ վաթսուն այր մարդ . 14 - Եւ Բագուէի որդիներէն Ութայի ու Չաբուդ , ու անոնց հետ եօթանասուն այր մարդ :

15 - Եւ ասոնք Ահաբա վազող գեաին եզերքը ժողվեցի , ու հոն երեք օր իջեան ըրինք . և ժողովուրդը ու քահանաները աչքէ անցուցի , ու հոն Ղեւտացոց որդիներէն Ժա՛ւր Զ չգտայ :

16 - Այն ասե՛ն Եղիազար , Արիէլ , Սեմայիա , Եղնաթան , Հարիպ , Եղնաթան , Նաթան , Չաքարիա ու Մեսուզամ՝ իշխանները , ու Յովարի ու Եղնաթան իմաստունները կանչել տուի .

17 - Եւ զանոնք Քասիփիա ըստ անոր եզոզ Ադգով իշխանին պատուէրներով զրկեցի , ու Քասիփիա ըստ անոր եզոզ Ադգովի , ու անոր եղբայրներուն , Նաթանայիմներուն , զրուցուելու խօսքերը անոնց բերանը դրի , որպէս զի մեր Աստուծոյն տանը համար մեզի պաշտօնեաներ բերեն :

18 - Ու մեր Աստուծոյն բարի ձեռքին մեր վրայ ըլլալուն համար՝ Իսրայէլեան Ղեիի որդւոյն Մոողիի որդիներէն հանճարեղ մարդ մը , այսինքն Սարաբիան , ու անոր որդիները ու եղբայրները , ասանրութ մարդ , բերին մեզի .

19 - Նաև Ասաբիան , ու անոր հետ Մերարիի որդիներէն Եսային ու անոր եղբայրները , ու անոնց որդիները , քսան մարդ . 20 - Ու Նաթանայիմներէն , զորոնք Դաւիթ ու իր իշխանները Ղեւտացոց ծառայութեանը տուեր էին , ամէնը իրենց անուններովը յիշուած , երկու հարիւր քսան Նաթանայիմներ :

21 - Եւ հոն Ահաբայի գեաին քով

ծամուպահութիւն քարոյլեցի, որպէս զի խոնարհինք մեր Տէր Աստուծոյն առջև, ու անկէ յաջող ճամբորդութիւն խնդրենք մեզի ու մեր ընտանիքներուն և մեր բոլոր ստացուածքին համար . 22 - Վասն զի ճամբուն մէջ մեզ թշնամիներէն պաշտպանելու համար թագաւորէն զօրք ու ձիաւորներ ուղելու ամչցայ . որովհետև թագաւորին ըսեր էինք թէ մեր Աստուծոյն ձեռքը բոլոր զանկա փնտուղներուն վրայ է բարութեամբ, ու անոր զօրութիւնը ու բարկութիւնը ամէն անոնց վրայ՝ որոնք զանկա կը թողուն : 23 - Ուստի ծով բռնեցինք, ու այս բանին համար մեր Աստուծմէն օգնութիւն խնդրեցինք . ու անկա մեր խնդրուածքը ընդունեց :

24 - Եւ քահանաներուն իշխաններէն տասուերկու մարդ զատեցի, այսինքն Սարաբիան «- Ասաբիան ու անոնց հետ իրենց եղբայրներէն տասը մարդ , 25 - Եւ արծաթը ու ոսկին ու անօթները, նաև թագաւորին ու անոր խորհրդականներուն ու իշխաններուն , և հոն գտնուող բոլոր Խորայէլի մեր Աստուծոյն տանը համար տուած ընծաները կշիւքով անոնց յանձնեցի :

26 - Ու վեց հարիւր յիսուն տաղանդ արծաթ, և հարիւր տաղանդ արծաթէ ամաններ «- հարիւր տաղանդ ոսկի ,

27 - Եւ քսան ոսկի տաշտ հազարական դրամէ, ու մութուր ու փոյլուն և ոսկիի պէս պատուական պղնձէ երկու աման՝ կշիւքով անոնց յանձնեցի ,

28 - Ու անոնց ըսի , Դուք Տէրոջը նուիրուած էք , այս անօթներն ալ նուիրուած են , և արծաթը ու ոսկին ձեր հայրերուն Տէր Աստուծոյն կամաւոր ընծայ մըն է . 29 - Արթուն կեցէք ու պահեցէք , մինչև որ պահանջ երուսաղէմ Տէրոջը տանը սենեակներուն մէջ՝ քահանաներուն ու Ղևտացւոց իշխաններուն ու Խորայէլի տոհմապետներուն առջև կշուէք : 30 - Եւ քահանաները ու Ղևտացիները արծաթը ու ոսկին ու ամանները կշիւքով առին, որպէս զի Երուսաղէմ մեր Աստուծոյն տունը տանին :

31 - Եւ առաջին ամսուն երկուսասաներորդ օրը Ահաբայի գետէն չուեցինք Երուսաղէմ երթալու համար, ու մեր Աստուծոյն ձեռքը մեր վրայ էր, ու մեզ ճամբան թշնամիին ու դարանա-

կալին ձեռքէն ազատեց . 32 - Ու Երուսաղէմ եկանք և հոն երեք օր նստանք :

33 - Ու չորրորդ օրը արծաթը ու ոսկին ու անօթները , մեր Աստուծոյն տանը մէջ , Ուրիա քահանային որդւոյն Մերամօթի ձեռքով կշուեցան , որու հետ էր Փենէհէսի որդին Եղիազար . ու անոնց հետ Յեսուի որդին Յովգաբադ ու Բանուիի որդին Նովադիա Ղևտացիները կային : 34 - Ամէնը թուով ու կշիւքով յանձնեցաւ , ու ոյն տան բոլոր կշիւքը գրուեցաւ :

35 - Գերութեան որդիները , որոնք գերութենէ դարձած էին, Խորայէլի Աստուծոյն ողջակէզներ մատուցին . բոլոր Խորայէլի համար տասուերկու զուարակ, ինսուներվեց խոյ, եօթանասուներեօթը գառ , «- մեղքի պատարագի համար տասուերկու նոխազ . անոնց ամէնը Տէրոջը ողջակէզ հարստեցին : 36 - Եւ անոնք թագաւորին հրովարտակը Գետին ասդի կողմը եղող թագաւորին փոխանորդներուն ու իշխաններուն տուին . անոնք ալ ժողովուրդին ու Աստուծոյ տանը ձեռնաուեղան :

ԳԼ Թ

Ու երբ այս բաները կատարուեցան, իշխանները ինծի մօտեցան ու ըսին , Խորայէլի ժողովուրդը ու քահանաները ու Ղևտացիները «յ» երկիրներուն ժողովուրդներէն չզատուեցան , հապա՞ Բանանացւոց, Քետացւոց, Փերեգացւոց, Յեբուսացւոց, Ամմոնացւոց, Մովաբացւոց, Եգիպտացւոց ու Ամօրհացւոց պղծութիւններուն պէս չ'ընէն . 2 - Վասն զի իրենց համար ու իրենց որդիներուն համար անոնց աղջիկներէն կենէր առին . և սուրբ սերունդը «յ» երկիրներուն ժողովուրդներուն հետ խառնուեցաւ . ու իշխանները ու ստիկանները այս մեղքը գործելու մէջ առաջիկները եղան : 3 - Եւ այս բանը լսածիս պէս հանդերձս ու վերարկուս պատուեցի , և գլխուս ու մօրուքիս մագերը փետտեցի, ու ապշած նստայ : 4 - Այն տան գերութենէ դարձողներուն յանցանքին պատճառաւ Խորայէլի Աստուծոյն խօսքերէն բոլոր վախցողները իմ քովս ժողովուեցան . ու ես մինչև իրիկուան զոհին «տէնչ» ապշած նստայ : 5 - Եւ իրիկուան զոհին «տէնչ»

տառապանքէս ելայ, ու պատուած հանդերձներովս ու վերարկուովս ծունկի վրայ եկայ, ու ձեռքերս իմ՝ Տէր Աստուծոյս առջև տարածեցի, 6 - Աւրի, Ավ Աստուած իմ, կ'ամչնամ, ու իմ՝ երեսօքեցի վերցնելու չեմ համարձակիր, ով Աստուած իմ. վասն զի մեր անօրէնութիւնները մեր գլխէն վեր բարձրացան, ու մեր յանցանքը մինչև երկինք ելաւ: 7 - Մեր հայրերուն օրերէն ի վեր մենք մեծ յանցանքի մէջ ենք մինչև այսօր. ու մեր անօրէնութիւններուն համար մենք, մեր թագաւորները և մեր քահանաները երկիրներու թագաւորներուն ձեռքը՝ սուրի, գերութեան, յափշտակութեան ու երեսի սեւութեան արուեստներ, ինչպէս այսօր կ'երևանայ: 8 - Եւ հիմա քիչ մը ստեն մեր Տէր Աստուծմէն ողորմութիւն եղաւ, որպէս զի մեզի փրկութիւն շնորհէ, ու իր սրբութեանը տեղին մէջ՝ *մեզ հաստատէ, որպէս զի մեր Աստուածը մեր աչքերը լուսաւորէ, ու մեր ծառայութեանը մէջ մեզի քիչ մը հանգստութիւն տայ: 9 - Վասն զի մենք ծառայ էինք, բայց մեր Աստուածը մեզ երեսէ չձգեց մեր ծառայութեանը մէջ. հապա մեզի հանգրստութիւն տալու, ու մեր Աստուծոյն տունը կանգնելու, և անոր սուերակները նորոգելու, ու մեզի Յուդայի մէջ ու Երուսաղէմի մէջ պարսպապատ տեղ մը տալու համար՝ Պարսից թագաւորներուն առջև մեզի շնորհք գանել տուաւ: 10 - Եւ հիմա, ով Աստուած մեր, սակէ ետքը ի՞նչ ըսենք, քանզի քու պատուիրաններդ թողուցինք, 11 - Զորոնք քու ծառաներուդ, մարգարէներուն, ձեռքով պատուիրեցիր՝ ըսելով, Այն երկիրը ուր պիտի մանէք զանիկա ժառանգելու համար, գարշելի երկիր մըն է, երկիրներու ազգերուն գարշելի պղծութիւններովը լեցուն. որովհետև զանիկա ծայրէ ծայր իրենց անմաքութիւնովը լեցուցեր են: 12 - Աւրեմն ձեր աղջիկները անոնց որդիներուն չտաք, ու անոնց աղջիկները ձեր որդիներուն համար չառնէք, և յաւիտեան անոնց խաղաղութիւնը ու երջանկութիւնը չփնտռէք, որպէս զի ուժովսօք ու այն երկրին բարիքը ուտէք, ու զանիկա՝ ձեր որդիներուն յա-

ւիտեանկան ժառանգութիւն թողուք: 13 - Աւ մեր չար գործերուն համար ու մեր մեծ յանցանքին համար այս բոլոր բաներուն մեր վրայ գալէն ետքը, (թէպէտև դուն, ով Աստուած մեր, Զգալատեցիր մեր մեղքերուն չափ, հապա մեզի այսպէս փրկութիւն տուիր,) 14 - Պէ՞տք էր որ նորէն քու պատուիրաններդ զանց ընէինք, և այս գարշելի ազգերուն հետ ինամութիւն ընէինք. միթէ դուն մեզի պիտի չարդողէի՞ր, ու մեզ պիտի չսպառէի՞ր, մինչև որ Զգալ մնացորդ ու ազատուած մը չմնար: 15 - Ավ Տէր Աստուած Իսրայէլի, դուն արդար ես, վասն զի մենք մինչև այսօր ազատուած մնացինք. ահա մենք մեր յանցանքովը քու առջև գեց, թէպէտև այս պատճառաւ քու առջև չենք կրնար կայնիլ:

ԳԼ. Ժ

Աւ երբ Եզրաս լալով, ու Աստուծոյ տանը առջև գետինը ինկած այս աղօթքը ու խոստովանութիւնը կ'ընէր, Իսրայէլէ խիստ շատ բազմութիւն, այր և կին մարդիկ ու տղաքներ, անոր քով ժողովուեցան. և ժողովուրդը խիստ շատ լացաւ: 2 - Աւ Եզրամի որդիներէն Յեքիէլի որդին Աեքենիա Եզրասի պատասխան տուաւ ու ըսաւ, Մենք մեր Աստուծոյն դէմ մեղք գործեցինք, ու երկրին ժողովուրդներէն օտար կիներ տաինք. բայց հիմա այս բանին մէջ ալ Իսրայէլի համար յոյս կայ: 3 - Եւ հիմա մեր Աստուծոյն առջև ուխտ ընենք, որ բոլոր կիները ու անոնցմէ ծնածները իմ տէրօջս ու մեր Աստուծոյն հրամանէն վախցողներուն խրատովը հանենք, և այս Գործ օրէնքին համեմատ թող ըլլայ: 4 - Ելիր, վասն զի այս գործը քեզի կ'իյնայ. մենք ալ քեզի հետ կ'ըլլանք. զօրացիր ու ըրէ:

5 - Աւ եզրաս ելաւ, և քահանայից իշխաններուն, Աւետացիներուն ու բոլոր Իսրայէլի երգում ընել տուաւ որ այս խօսքին պէս ընեն. և անոնք երգում ըրին: 6 - Աւ Եզրաս Աստուծոյ տանը առջևէն ելաւ, ու Եզրասիբի որդւոյն Յօհանանի սենեակը գնաց. և հոն մանկելով հաց չկերաւ ու ջուր չխմեց, վասն զի գերութեանէ ելածնէ-

*Եբբ. մեզի բեւեւ մը տայ. Ես. իբ. 23:

բուն, յանցանքին համար սուգ կը բռնէր: 7 - Եւ Յուդայի ու Երուսաղէմի մէջ մունետիկ կանչել տուին, որ բոլոր գերութենէ ելածները Երուսաղէմ ժողովուին: 8 - Ու մինչև երեք օր ով որ չգար՝ իշխաններուն ու ծերերուն հրամանին համեմատ, անոր բոլոր ստացուածքը *նորվուած պիտի ըլլար, ու ինք գերութենէ դաքձողներուն ժողովքէն պիտի զատուէր: 9 - Եւ Յուդայի ու Բենիամինի բոլոր մարդիկը այն երեք օրուան մէջ, այսինքն իններորդ ամսուն քաներորդ օրը, Երուսաղէմի մէջ ժողովուեցան. և բոլոր ժողովուրդը այս գործին համար, ու ստատիկ անձրևներուն համար, գողալով նստան Աստուծոյ տանը հրապարակին մէջ: 10 - Ու Եզրաս քահանան ելաւ ու անոնց ըսաւ, Իսկ մեզք գործեցիք, և օտար կիներ տանելով՝ Իսրայէլի յանցանքը աւելցուցիք: 11 - Ու հիմա ձեր հայրերուն Տէր Աստուծոյն -- Զէ Գրգռ խոստովանեցէք, և անոր հաճոյ եղածը ըրէք, ու երկրիս ժողովուրդներէն ու օտար կիներէն զատուեցէք:

12 - Այն ատեն բոլոր ժողովքը պատասխան տուին ու բարձր ձայնով ըսին, Մեր Կարտքն է որ այնպէս քու ըսածիդ պէս ընենք: 13 - Բայց ժողովուրդը շատուոր ու ժամանակը անձրևատէ, ու դուրս տեղ չենք կրնար կայնիլ. և տիկա մէկ օրուան կամ երկու օրուան գործ չէ, քանզի շատերնիս այս բանին մէջ յանցաւոր ենք: 14 - Հիմա մեր իշխանները բոլոր ժողովքին համար կայնին, ու մեր քաղաքներուն մէջ բոլոր օտար կին առնողները որոշուած ժամանակներու մէջ գան. և ամէն մէկ քաղաքին ծերերը ու դատաւորները անոնց հետ ըլլան, մինչև որ այս բանին համար մեր Աստուծոյն ստատիկ բարկութիւնը մեզմէ դառնայ:

15 - Էստի Ասայէլի որդին Յովթան, ու Թեկուայի որդին Յազիա այս գործին վրայ կայնեցան, ու Մեսուղամ ու Գևաացի Սարթիթա անոնց օգնութիւն ըրին: 16 - Եւ գերութենէ ելածները այնպէս ըրին. ու Եզրաս քահանան, ու քանի մը սոհմապետներ իրենց սոհմերուն համեմատ (ամէն

ալ իրենց անուններով) ընարուեցան. ու տասներորդ ամսուն առաջին օրը այս գործը քննելու նստան. 17 - Եւ բոլոր օտար կին առնող մարդոց Գրգռ առաջին ամսուն առաջին օրը լմնցուցին:

18 - Ու քահանաներուն որդիներէն օտար կին առնողներ տասնք գտնուեցան. Յովսեդեկեան Յեսուէ որդիներէն ու եզրայրներէն Մասաիա, Եղիազար, Յարիբ ու Գոդողիա. 19 - Եւ իրենց կիները արձակելու *խօսք տուին. ու յանցաւոր ըլլալով իրենց յանցանքին համար հօտերէն մէկ մէկ խոյ գոհն: 20 - Ու Եմթերի որդիներէն Անանի ու Զաբադիա. 21 - Ու Հարիմի որդիներէն Մասաիա, Եղիա, Սեմայիա, Յեքիէլ ու Ոզիա. 22 - Եւ Փասուրի որդիներէն Եղիովէնայի, Մասաիա, Իսմայէլ, Նաթանայէլ, Յովզաբադ ու Եղեասա. 23 - Ու Գևաացիներէն Յովզաբադ, Սեմէի, Կովզիա, այսինքն Կովզիտա, Փեթայիա, Յուգա ու Եղիազար. 24 - Ու երգեցողներէն Եղիասիբ. ու դռնապաններէն Սեզզում, Տէլէմ և Ուրի. 25 - Ու Իսրայէլէ, Փարտի որդիներէն, Ռամիա, Յեզիա, Մեղքիա, Միամին, Եղիազար, Մեղքիա ու Բանեա. 26 - Ու Եղամի որդիներէն Մաթանիա, Զաբարիա, Յեքիէլ, Աբդի, Յերիմովթ ու Եղիա. 27 - Եւ Զաթուի որդիներէն Եղիովէնայի, Եղիասիբ, Մաթանիա, Յերիմովթ, Զաբադ ու Ազիգա. 28 - Եւ Բեբայիի որդիներէն Յօհանան, Սնանիա, Զաբբայ -- Աթադի. 29 - Եւ Բանիի որդիներէն Մեսուղամ, Սալուք, Ագայիա, Յասուք, Սաազ ու Ռամովթ. 30 - Եւ Փաթմովարի որդիներէն Եդնա, Քաղէլ, Բանեա, Մասաիա, Մաթանիա, Բեսիլիէլ, Բանուէ ու Մանասէ. 31 - Ու Նարիմի որդիներէն Եղիազար, Յեսիա, Մեղքիա. 32 - Սեմայիա, Շմուան, Բենիամին, Մալուք -- Սամարիա. 33 - Հասոււմի որդիներէն Մաթանայ, Մասաթա, Զաբադ, Եղիփաղէա, Յերեմի, Մանասէ -- Սեմէի. 34 - Բանիի որդիներէն Մասադայ, Ամրամ, 35 - Ուէլ, Բանեա, Բազայիա, Քեղուհայ, 36 - Ուանիա, Մերամովթ, Եղիասիբ, 37 - Մաթանիա, Մաթանայ, Յասուու, 38 - Բանի, Բանուէ, Սեմէի,

*Կ-ժ, գրաւեալ
 †Կ-ժ, Միայն

†Եբբ. վրայ

*Եբբ. ձեռքերին

- 39 - Սեղեմիա , Նաթան , Ադայիա ,
- 40 - Մաքնադբայ , Սասայ , Սարայ ,
- 41 - Ազարիէլ , Սեղեմիա , Սամարիա ,
- 42 - Սեղզուժ , Սամարիա * - Յովսէփ .
- 43 - Նաբաւի որդիներէն Յէիէլ , Մա-

տաթիա , Չաբադ , Չերինա , Յագայի ,
 Յովէլ * - Բանեա : 44 - Ասոնք ամէնը
 օտար կիներ առեր էին . ու անոնցմէ
 ոմանք զաւակ ծնած կիներ ունէին :

ԳԻՐԻՆ ԵՒ ԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Աքաղիայի որդւոյն Նեեմիայի խօսքերը :

Ու եղաւ որ Քասղե ամուռն մէջ , Արտաշէս Բագաստին քսաներորդ տարին , երբ ես Շուշան մայրաքաղաքն էի , 2 - Անանի անունով եղբայրներէս մէկը , ու քանի մը Յուդայի մարդիկ ինչի եկան . և անոնց՝ գերութենէ ազատուած ու մնացած Հրեաներուն վրայով ու Երուսաղէմի վրայով հարցուցի : 3 - Եւ ինծի ըսին , Գերութենէ ազատուած մնացածները հոն գաւառին մէջ մեծ նեղութեան ու անարգութեան մէջ են , ու Երուսաղէմի պարիսպը փլած և անոր դռները կրակով այրուած են :

4 - Ու երբ ես այս խօսքերը լսեցի , նստայ լացի . ու քանի մը օր սուգ բռնեցի , և ծամ պահելով երկինքի Աստուծոյն առջև աղօթք ըրի , 5 - Ու ըսի , Ոհ , Տէր Աստուած երկնից , որ մեծ ու ասէղ Աստուած ես , ու քեզ սիրողներուն և քու պատուիրանքներդ պահողներուն ուխտ ու սղորմութիւն կը պահես . 6 - Կ'աղաչեմ , քու ականջներդ թող մտիկ ընեն , ու աչքերդ բաց ըլլան , որպէս զի լսես քու ծառայիդ աղօթքը զոր քու ծառաներուդ , Իսրայէլի որդիներուն , համար , հիմա ցրեկ ու զիշեր քեզի կը մատուցանեմ , խոտովանելով Իսրայէլի որդիներուն մեղքը , որով քեզի դէմ մեղանշեցինք . քանզի թէ՛ ես և թէ՛ իմ հօրս տունը մեղք գործեցինք : 7 - Արդարեւ մենք քու առջևդ անօրէնութիւններ ըրինք , ու քու ծառայիդ Մովսէսի տուած պատ-

ուիրանքներդ , կանոններդ ու դատաստաններդ չպահեցինք : 8 - Սախյն , կ'աղաչեմ , յիշէ այն խօսքը , զոր քու ծառայիդ Մովսէսի պատուիրանքիդ ըսելով , Եթէ յանցանք ընէք , ես ձեզ ազգերու մէջ պիտի ցրուեմ . 9 - Իսկ եթէ ինծի դառնաք , ու իմ պատուիրանքներս պահէք ու զանոնք կատարէք , ձեզմէ ցրուածները թէև *երկրի ծայրը ըլլան , զանոնք անկէ պիտի ժողովեմ , ու այն տեղը պիտի տանիմ՝ զոր ընտրեցի իմ անունս հոն դնելու համար : 10 - Եւ հիմա անոնք քու մեծ ուժովդ ու զօրաւոր ձեռքովդ ազատած ծառաներդ ու ժողովուրդդ են : 11 - Ոհ , Տէր , հիմա քու ծառայիդ աղօթքը , ու քու անունէդ վախնալու փափաք ունեցող ծառաներուդ աղօթքը քու ականջդ թող լսէ . և այսօր քու ծառայիդ յաջողութիւն տուր , ու այս մարդուն առջև ինծի շնորհք գտնել տուր : Վասն զի ես թագաւորին մատուակն էի :

ԳԼ . Բ

Ու եղաւ որ Նիսան ամուռն մէջ , Արտաշէս թագաւորին քսաներորդ տարին , անոր առջև գինի կար , և գինին առի ու թագաւորին տուի . ու անոր առջև քնարաւճի չէի երեցած : 2 - Եւ թագաւորը ինծի ըսաւ , Ինչո՞ւ երեսդ արատւմ է , որովհետև հիւանդ չես . տաիկա ուրիշ բան չէ , բայց եթէ սրտի արտամութիւն . ու ես խիստ շատ վախցայ : 3 - Այն ատեն

*Եբր. երկինքի

Թագաւորին ըսի, Թագաւորը յաւիտեան ողջ կենայ. Ինչպէս իմ երեստարաւմ չըլլայ, որ իմ հայրերու գերեզմաններուն տեղը եղող քաղաքը աւերակ՝ ու անոր դռները կրակով այրուած են: 4 - Եւ Թագաւորը ինծի ըսաւ, Գուն Ինչպէս ինչ կը ինգրես այս քանին վրայով: Այն ատեն երկինքի Աստուծոյն աղօթք ըրի. 5 - Ու Թագաւորին ըսի, Եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ, ու եթէ քու ծառայքու առջև շնորհք գտաւ, զիս Հրէաստան զրկես իմ հայրերու գերեզմաններուն քաղաքը, որպէս զի զանկա շինեմ: 6 - Եւ Թագաւորը ինծի ըսաւ, (ու Թագուհին անոր քով նստեր էր,) Քու ճամբորդութիւնդ ս'ըջափ ատեն պիտի քչէ, ու ե՞րբ պիտի դառնաս. և Թագաւորին հաճոյ երեցաւ որ զիս զրկէ. ես ալ անոր ժամանակ որոշեցի, 7 - Ու Թագաւորին ըսի, Եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ, ինծի նամակներ տրուին Գեաին միւս կողմը եղող Իշխաններուն, որպէս զի զիս անցնեն, մինչև որ Հրէաստան երթամ, 8 - Ու նամակ մը Ասափի՝ որ Թագաւորական անտառին պահապանն է, որպէս զի ինծի փայտ տայ, Ասորի տանը աշտարակին դռները և քաղաքին պարիսպը ու մտնելու տունս շինելու համար: Եւ Թագաւորը զանոնք ինծի տուաւ, վասն զի իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս էր:

9 - Ու Գեաին միւս կողմը եղող Իշխաններուն գացի, ու Թագաւորին նամակները անոնց տուի. և Թագաւորը ինծի հետ գորապետներ ու ձիաւորներ զրկեց: 10 - Ու երբ Սանաբաղատ Արոնացի ու Ամմոնացի ծառան Տուբիա լսեցին, շատ նեղացան, որ Իսրայէլի որդիներուն աղէկութիւնը փնտռելու համար մարդ մը եկաւ. 11 - Ու Երուսաղէմ եկայ, և հոն երեք օր մնացի:

12 - Ու ես քանի մը մարդոց հետ գիշերով ելայ. ու ինչ որ իմ Աստուծոս արտի մէջ դրեր էր Երուսաղէմի համար ընելու, զանկա մարդո՛ւ չզրուցեցի. և ինծի հետ իմ հեծած անասունէս զատ ուրիշ անասուն մը չկար: 13 - Եւ գիշերով Չորի դռնէն, Վիշապի աղբիւրին առջևէն, Աղբից դուռը ելայ, ու Երուսաղէմի փլած պարիսպները ու կրակէն այրուած դռները զննեցի: 14 - Եւ Աղբիւրի դուռը ու

Թագաւորին աւազանը անցայ. ու տակս եղող անասունին անցնելու տեղ չկար: 15 - Եւ գիշերով հեղեղատէն վեր ելայ ու պարիսպը զննեցի. ու դարձայ, Չորի դռնէն մտայ, ու այսպէս նորէն իմ տեղ եկայ: 16 - Եւ սասիկանները իմ ուր երթալու ու ինչ ընելու չիմացան. ու Հրէաներուն կամ քահանաներուն կամ սասիկաններուն և կամ ներիշններուն, որոնք գործը կ'ընէին, մինչև հիմա չզրուցեցի:

17 - Ետքը անոնց ըսի, Գուք կը տեսնէք այս Թշուաութիւնը որուն մէջ կը գտնուինք, և թէ ինչպէս Երուսաղէմ աւերակ՝ ու անոր դռները կրակով այրուած են. եկէք Երուսաղէմի պարիսպը շինենք, որպէս զի այսուհետև նախատինք չըլլանք: 18 - Եւ իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս ըլլալը, ու Թագաւորին ինծի ըսած խօսքերն ալ անոնց պատմեցի. ու անոնք ըսին, Ելլենք շինենք. և իրենց ձեռքերը ու ժողջուցին այս բարի գործին համար:

19 - Իսոյց Արոնացի Սանաբաղատ ու Ամմոնացի ծառան Տուբիա և Արաբացի Գեոամ լսելով՝ մեզ ծաղր ըրին, ու մեզ քամահրելով ըսին, Այս ձեր բաժ գործը ինչ պիտի ըլլայ. միթէ դուք Թագաւորէն ապստամբի՞լ կուզէք: 20 - Եւ անոնց պատասխան տուի ու ըսի, Երկինքի Աստուծոյն ինք մեզի յաջողութիւն պիտի տայ, ու մենք, որ անոր ծառաներն ենք, պիտի ելլենք ու շինենք, բայց դուք Երուսաղէմի մէջ բաժին, իրաւունք ու յիշատակ չունիք:

ԳԼ. Գ.

Ու մեծ քահանան Եղիատիբ և անոր քահանայ եղբայրները ելան ու Ոչխարաց դուռը շինեցին. անոնք զանկա նուիրեցին և անոր փեղկերը կանգնեցին. ու զանկա մինչև Մէայի աշտարակը, մինչև Անանայէլի աշտարակը նուիրեցին: 2 - Եւ անոր քով Երեքովի մարդիկը շինեցին, ու անոնց քով Իսրիի որդին Չաբուր շինեց: 3 - Եւ Չրկանց դուռը Աննայի որդիները շինեցին. անոնք զանկա շինեցին, ու անոր փեղկերը, փականքը ու նիզերը անցուցին: 4 - Եւ անոնց քով Ակկուսի որդւոյն Ուրիայի որդին Մերամօթ նորագեց, ու անոնց քով Մասիշեբէլի որդ-

ւոյն Բարաքիայի որդին Մեսուզամ նորագեց . և անոնց քով Բասանայի որդին Սագովկ նորագեց : 5 - Աւ անոնց քով Թեկուացիք նորագեցին . բայց անոնց մեծերը իրենց Տերոջը գործին իրենց վիզը չծռեցին : 6 - Եւ Հին դուռը Փասէի որդին Յովիադա ու Բասադիայի որդին Մեսուզամ նորագեցին . անոնք զանկա շինեցին , ու անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուցին : 7 - Եւ անոնց քով Գաբաւունացի Մելաթա ու Մերանթացի Յագան և Գաբաւունի ու Մափայի մարդիկը շինեցին՝ մինչև Գեաին այս կողմը եղող իշխանին ամուր : 8 - Անոր քով սակերիչներէն Հարձայիայի որդին Աղիէլ նորագեց . ու անոր քով դեղագործներուն որդին Անանիա նորագեց . ու Երուսաղէմը մինչև լայն պարիսպը թողուցին : 9 - Եւ անոնց քով Երուսաղէմի կէս մասին իշխանը , Ավրի որդին Հաափայիա , նորագեց : 10 - Եւ անոնց քով ու իր տանը դիմացը Հարուամփի որդին Յեգայիա նորագեց . ու անոր քով Ասաբանիայի որդին Քեսաուս նորագեց : 11 - Միւս բաժինը ու Փուռերու աշտարակը Հարիմի որդին Մեղքիա ու Փաթմամարի որդին Աուբ նորագեցին : 12 - Եւ անոր քով Երուսաղէմի կէս մասին իշխանը , Ալօտի որդին Սեղզում , ինք ու իր աղջիկները նորագեցին . 13 - Չորի դուռը Անան ու Չանովի բնակիչները նորագեցին . անոնք զանկա շինեցին , ու անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուցին . ու պարիսպէն հազար կանգուն շինեցին մինչև Աղբից դուռը : 14 - Եւ Աղբից դուռը Բեթաբարամայի կողմերու իշխանը , Ռեքաբի որդին Մեղքիա , նորագեց . զանկա ան շինեց , ու անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուց : 15 - Եւ Աղբիւրի դուռը Մափայի կողմերու իշխանը Բոլոզէի որդին Սեղզում նորագեց . զանկա ան շինեց ու ծածկեց , անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուց . ու Թագաւորի պարտեզին մօտ եղող Սիլովայի աւազանին պարիսպը մինչև Իաւիթի քաղաքէն իջնող ստիճանները շինեց : 16 - Անկէ ետքը Բեթաուրի կէս մասին իշխանը , Ազբուքի որդին Նէեմիա , նորագեց մինչև Իաւիթի գերե լմաններուն դիմաց , ու մինչև շինծու աւազանը , ու մինչև Բեթագաբարին : 17 - Անկէ ետքը Ղևտա-

ցիք նորագեցին . Բանիի որդին Հուում . անոր քով Կէիլայի կէս մասին իշխանը Ասաբիա իր տեղերը նորագեց : 18 - Անկէ ետքը անոնց եղբայրները , Կէիլայի կէս մասին իշխանը , Ենադագի որդին Բաւայի , նորագեց : 19 - Եւ անոր քով Մափայի իշխանը , Յեսուի որդին Եզեր , միւս բաժինը նորագեց , այսինքն պարսպի գարձուածքը , որ զինարանը ելլելու ճամբան դիմաց է : 20 - Անկէ ետքը միւս բաժինը , պարսպի գարձուածքէն մինչև մեծ քահանային Եզիասիբի տանը դուռը , Չաբբայի որդին Բարուբ փութով նորագեց : 21 - Անկէ ետքը միւս բաժինը , Եզիասիբի տանը դուռէն մինչև Եզիասիբի տանը ծայրը , Ակկուսի որդւոյն Ուրիայի որդին Մերամթ նորագեց : 22 - Եւ անկէ ետքը քահանաները , դաշտի բնակիչները , նորագեցին : 23 - Աւ անկէ ետքը Բենիամին ու Ասուբ իրենց տուներուն առջև նորագեցին . անկէ ետքը Անանիայի որդւոյն Մաափայի որդին Ազարիա իր տանը դիմաց նորագեց : 24 - Անկէ ետքը միւս բաժինը , Ազարիայի տունէն մինչև պարսպի գարձուածքը , մինչև անկիւնը , Ենադագի որդին Բանուի նորագեց : 25 - Եւ Ազայի որդին Փաղաղ պարսպի գարձուածքին դիմաց ու բանաի գաւիթին քով եղող Թագաւորին վերի պալատին դուրսի աշտարակը շինեց . ու անոր ետեէն Փարոսի որդին Փագայիա շինեց : 26 - Եւ Նաթանայիմները , որոնք Ուփաղ կը բնակէին , մինչև արեւելեան կողմը եղող Չուրի դրանը դիմաց ու դուրսի աշտարակը նորագեցին : 27 - Անկէ ետքը միւս բաժինը , դուրսի մեծ աշտարակին դիմացէն մինչև Ուփաղի պարիսպը , Թեկուացիք նորագեցին : 28 - Չիերու դուռէն վեր քահանաները նորագեցին , ամէն մարդ իր տանը դիմաց : 29 - Անկէ ետքը Եմմերի որդին Սագովկ իր տանը դիմաց նորագեց . ու անկէ ետքը արեւելեան դրանը պահապանը , Սեքենիայի որդին Սեմայիա , նորագեց : 30 - Անկէ ետքը միւս բաժինը Սեղեմիայի որդին Անանիա ու Սեղեփի վեցերորդ որդին Անան նորագեցին . անկէ ետքը Բարաքիայի որդին Մեսուզամ իր սենեակին դիմաց նորագեց : 31 - Անկէ ետքը *Սարեփի

*Կա՛մ, ոսկերչի

որդին Մեղքիս, մինչև Նաթանայիմ-
ներուն ու վաճառականաց առնը
Մափկաթի գրանը դիմոց ու մինչև
անկիւնը ելլելու տեղը, նորոգեց :
32 - Եւ անկիւնը ելլելու տեղէն մինչև
Ոչխարաց դուռը սոկերիչները ու վա-
ճառականները նորոգեցին :

ԳԼ. Գ

Ու երբ Սանարաղատ լսեց որ մենք
պարիսպը կը շինենք, սիրաբը նեղացաւ,
ու շատ սրդողելով Հրեաները ծաղր
բրաւ : 2 - Եւ իր եղբայրներուն ու Սա-
մարիայի զօրքին առջև խօսեցաւ ու
ըսաւ , Այս տկար Հրեաները ի՞նչ կը
շինեն . միթէ թողլառու թիւն կ'ըլլա՞յ
անոնց . միթէ զո՞չ պիտի զո՞չեն , ու
այսօ՞ր լմնցնեն . միթէ այրուած քա-
րերը փոշիի դեղերէն պիտի կենդանա-
ցընե՞ն : 3 - Եւ Ամմոնացի Տուբիա ա-
նոր քով էր , ու ըսաւ , Եթէ աղուէս
մըն ալ ելլէ անոնց շինածին վրայ ,
անոնց քարէ պարիսպը պիտի փլցնէ :

4 - Ով մեր Աստուածը , լսէ , վասն
զի նախատուեցանք . ու անոնց նախա-
տինքը իրենց գլուխը դարձուր , ու
զանոնք գերութեան երկրի մէջ աւար
ըլլալու մասնէ : 5 - Եւ անոնց անօրէ-
նութիւնը մի ծածկեր , ու քու առջե-
ւէդ անոնց մեղքը չջնջուի . քանզի շի-
նողներուն առջև թե՛ր բարկացուցին :

6 - Եւ պարիսպը շինեցինք , ու բոլոր
պարիսպը մինչև կէսը † հասաւ . վասն
զի ժողովուրդը գործելու սիրա ունէր :

7 - Ու երբ Սանարաղատ ու Տուբիա
և Արաբացիք ու Ամմոնացիք ու Ազով-
տացիք լսեցին , որ Երուսաղէմի պա-
րիսպներուն նորոգութիւնը յառաջ
կ'երթայ , ու փլած տեղերը սկսեր են
շինուիլ , շատ սրդողեցան : 8 - Եւ ա-
մէնը մէկտեղ խօսք ըրին , որ գան
Երուսաղէմի դէմ պատերազմ՝ ընեն ,
ու անոր փնաս տան : 9 - Բայց մենք մեր
Աստուծոյն ազօթք ըրինք , ու թե՛ր
անոնցմէ պաշարանելու համար՝ ցորեկ
ու գիշեր անոնց դէմ պահապաններ
գրինք : 10 - Եւ Յուդա ըսաւ , Բեռնա-
կիրներուն դժբ հասաւ , ու հոգը շատ
է . մենք պիտի չկրնանք պարիսպը շի-

նել : 11 - Ու մեր թշնամիները կ'ըսէին ,
Զգիտանան ու չտեսնեն , մինչև մենք ա-
նոնց մէջ մտնենք ու զանոնք մեռցը-
նենք , և անոնց գործը խափանենք : 12 -
Ու եղաւ որ անոնց քով բնակող Հրեա-
ները մեզի եկան , և տասը անգամ
մեզի ըսին թէ Ամէն կողմանէ ուր որ
դառնաք , մեր վրայ պիտի յարձակին :

13 - Ուստի ցած տեղերը՝ պարսպին
ետեը , * - բարձր տեղերը՝ ժողովուրդը
իրենց ազգատոհմներուն համեմատ
բաժնելով կայնեցուցի , ու իրենց սու-
րբովը , նիզակներովը ու աղեղներովը
կայնեցուցի : 14 - Եւ նայեցայ ու ելայ ,
և իշխաններուն ու ստաիկաններուն
ու մնացած ժողովուրդին ըսի , Անոնց
երեսէն մի վախնաք . յիշեցէք Տէրը որ
մեժ ու ահեղ է , և ձեր եղբայրնե-
րուն , աղաքներուն , աղջիկներուն , կի-
ներուն ու տուններուն համար պատե-
րազմ՝ ըրէք :

15 - Ու երբ մեր թշնամիները լսեցին
որ մենք իմացեր ենք , և Աստուած ա-
նոնց խորհուրդը ցրուեց , մենք ամէնս
պարիսպը շինեցինք՝ դարձանք , ամէն մէկը
իր գործին : 16 - Եւ այն օրէն ի վեր
իմ՝ մարդոցս կէսը կ'աշխատէին , ու
կէսն ալ նիզակներ , սապարներ , աղեղ-
ներ ու զրահներ կը բռնէին . ու իշ-
խանները Յուդայի բոլոր † ազգատոհմ-
ներուն ետեը իջ խոյնէին : 17 - Պարիս-
պը շինողները ու բեռնակիրները ու
բեռցնողները , անոնց իր մէկ ձեռ-
քովը կը բռնէր , ու միւս ձեռքովը զէն-
քը կը բռնէր : 18 - Եւ շինողներուն ա-
մէն մէկը իր սուրը մէջքը կապած՝ կը
գործէր . ու փողաչարը իմ՝ քովս էր :

19 - Եւ ազնուականներուն ու ստաի-
կաններուն ու մնացած ժողովուրդին
ըսի , Այս գործը մեժ ու ընդարձակ է ,
ու մենք պարսպին վրայ ցրուած ենք ,
և իրարմէ հեռու ենք . 20 - Ուստի փո-
ղին ձայնը ուր տեղ որ լսէք , հոն մեր
քով ժողովուրդք . մեզի համար մեր Աստ-
ուածը պատերազմ՝ պիտի ընէ : 21 - Ու
մենք այսպէս մեր գործը կ'ընէինք . և
խաղաղութիւն կէսը , արշաղայսին ծագած
ատենէն մինչև աստղերուն երեցած
ատենը , նիզակներ բռնած կը կենային :

22 - Եւ այն տան ժողովուրդին ըսի ,
Ամէն մարդ իր ծառային հետ գիշեր-

*Կա՛մ , անկեան վերնատունը
†Եբբ . կապուեցաւ
‡Եբբ . անոնց երեսէն

*Կա՛մ , չոր տեղեր , և ի՛մ , յարկերու
տակ †Եբբ . տանը

ները Երուսաղէմի մէջ մնայ, որպէս զի գիշերը մեզի համար պահպանութիւն ընէ ու ցորեկը գործէ: 23 - Աւ ես ու իմ՝ եղբայրներս և իմ՝ ծառաներս ու իմ՝ ետեւս եկող պահպան մարդիկը՝ ամենեւին մեր հանդերձները չէինք հաներ՝ *լուացուելու ատենէն զատ:

ԳԼ. Ե

Եւ ժողովուրդը ու անոնց կիները իրենց եղբայրներուն, Հրեաներուն, գէմ՝ մեծ գանգաւ ըրին: 2 - Եւ ոմանք կ'ըսէին, Մենք մեր աղաքներովը ու աղջիկներովը շատուոր ենք. և ուտելիք ծախու առնենք, որպէս զի ուտենք ու ապրինք: 3 - Ոմանք ալ կ'ըսէին, Մենք մեր արտերը, այգիները ու տուները գրաւի կը դնենք, որպէս զի սովի համար ուտելիք ծախու առնենք: 4 - Եւ ոմանք կ'ըսէին, Թագաւորին հարկ պաշտօնը՝ համար մեր արտերուն ու այգիներուն վրայ ստակ փոխ առինք: 5 - Աւ հիմա մեր մարմինը մեր եղբայրներուն մարմինին պէս է, ու մեր որդիները՝ անոնց որդիներուն պէս. և ահա մենք մեր աղաքները ու աղջիկները ծառայութեան †կը ծախենք. և արդէն մեր աղջիկներէն աղախին ըլլալու ‡ծախուածներ կան, ու մեր ձեռքը կարողութիւն չկայ. որովհետեւ մեր արտերը ու այգիները ուրիշներուն չե՛նք հն:

6 - Աւ երբ ես անոնց աղաղակը ու այս խօսքերը լսեցի, խիստ դժուարեցայ: 7 - Եւ մտքիս մէջ խորհելէ ետեւ՝ ազնուականները ու սասիկանները յանգիմանեցի, ու անոնց ըսի, Ինչքա՞մէնք ալ ձեր եղբայրներէն վաշխ կ'առնէք. ու անոնց գէմ՝ մեծ ժողովք ըրի: 8 - Այն ատեն անոնց ըսի, Մենք հեթանոսներու ծախուած մեր Հրեայ եղբայրները մեր կարողութեանը չափ ծախու առինք, ու հիմա դուք ձեր եղբայրները կը ծախէ՞ք, կամ անոնք մեզի ծախուի՞ն. և անոնք լսեցին ու չկրցան պատասխան տալ: 9 - Աւ ըսի, Այդ ձեր բրածը աղէկ բան չէ՞ պէտք չէ՞ որ մեր Աստուծոյն վախովը քալէք, որպէս զի մեզի թշնամի եղող ազգե-

*Եբբ. ամէն մէկը ջուրը կը զրկէր
†Եբբ. կը հպատակեցնենք
‡Եբբ. հպատակածներ

րուն նախաահինք չըլլանք: 10 - Ես ալ «- իմ՝ եղբայրներս ու ծառաներս ալ ստակ ու ցորեն փոխ առած ենք անոնց, քայց հիմա այս պարտքը անոնց շնորհէնք: 11 - Ե- ձեզի կ'աղաչեմ, որ այսօր անոնց եւ գարձնէք անոնց արտերը, այգիները, ձիթենիները ու տուները. նաև ստակին, ցորենին, զինիին ու իւղին՝ հարիւրէն մէկը զոր անոնցմէ կը պահանջէք: 12 - Եւ անոնք ըսին, Ես պիտի գարձնենք, ու անոնցմէ քան ճշ պիտի չպահանջենք. ինչպէս ըսիր՝ այնպէս պիտի ընենք: Այն ատեն քահանաները կանչեցի, ու անոնց երգում ընել տուի որ այսպէս ընեն: 13 - Նաև *հանդերձս թօթվեցի ու ըսի, Ով որ այս բանը չկատարէ, իր տունէն ու իր վաստակէն Աստուած այսպէս թօթվէ, ու այսպէս թօթվուած ու դատարկ ըլլայ: Եւ բոլոր ժողովքը Ամէն ըսին, ու Տէրը օրհնեցին. ու ժողովուրդը այս բանը կատարեց:

14 - Եւ Յուդայի երկրին մէջ անոնց իշխանը եղած օրէս՝ Արաաշէս թագաւորին քսաներորդ տարիէն մինչև երեսունուերկուերորդ տարին, տասուերկու տարի. թէ՛ ես և թէ՛ իմ՝ եղբայրներս †իշխանութեան ռոճիկը չառինք:

15 - Բայց ինձմէ առաջ եղող նախորդ իշխանները ժողովուրդին բեռ կ'ըլլային, ու անոնցմէ հաց ու զինի կ'առնէին՝ քառասուն սիկղարձաթէն զատ. անոնց ծառաներն ալ ժողովուրդին բռնութիւն կ'ընէին. բայց ես Աստուծոմէ վախնալով՝ այնպէս չըրի: 16 - Աւ նաև այս պարսպին գործին մէջ աշխատեցայ, ու մենք արա ծախու չառինք. և իմ՝ բոլոր ծառաներս հոն ժողովուած էին այն գործին համար: 17 - Աւ Հրեաներէն ու սասիկաններէն հարիւր յիսուն մարդ, ու շրջակայ ազգերէն մեզի եկողները իմ սեղանէս կ'առնէին: 18 - Եւ ամէն օրուան ծախքս այս էր. արջառ մը ու վեց ընտիր ոչխար, և ինձի համար թռչուններ ալ կը պատարասուէին, ու տասը օրը անգամ մը առատութեամբ ամէն տեսակ զինիէն կ'եւէր. այսու ամենայնիւ իշխանութեան ռոճիկը չպահանջեցի, վասն զի այս ժողովուրդին վրայ եղած ծառայութիւնը ծանր էր: 19 - Ով Աստուած

*Եբբ. ծոցս
†Եբբ. իշխանի հացը չկերանք

իմ, այս ժողովուրդին բոլոր ըրածնե-
րուս համեմատ զիս ի բարին յիշէ:

ԳԼ. 9

Ու երբ Սանաբաղատ, Տուբիա ու Արարացի Գեամուս մեր միւս թշնամի-
ները լսեցին որ ես պարիսպը շինեցի,
ու հոն փլած տեղ մը չմնաց, (Թէպէտե
մինչև այն ատեն դռներուն փեղկերը
գրած չէի,) 2 - Սանաբաղատ ու Գե-
ամուս ինծի մարտ գրկեցին ու ըսին, Ե-
կուր, Ոգնովի դաշտին փեղերուն մէջ
իրարու հետ տեսնուինք. բայց անոնք
ինծի չարութիւն ընել կը խորհէին: 3 -
Եւ անոնց պատգամաւորներ գրկեցի
ու ըսի, Ես մեծ գործով մը զբաղած
եմ, ու չեմ կրնար իջնել. ինչո՞ւ համար
գործը դադրի, երբ զանիկա թողում
ու ձեզի իջնեմ: 4 - Եւ անոնք ինծի
չորս անգամ այսպիսի խօսքեր գրկեցին,
ես ալ անոնց նոյն պատասխանը տուի:
5 - Աւ հինգերորդ անգամին Սանաբա-
ղատ նոյն խօսքերով իր մանչը ինծի
գրկեց՝ ձեռքը բաց թուղթով մը, 6 -
Արուն մէջ այսպէս գրուած էր. Ազգաց
մէջ լսուեցաւ, ու Գեամուս կ'ըսէ որ
դուն ու Հրեաները ապրտամբիլ կը
խորհիք. դուն անոր համար կը շինես
պարիսպը, որ անոնց թագաւոր ըլլաս,
ինչպէս կ'ըսուի: 7 - Աւ նաև Երու-
սաղէմի մէջ մարգարէներ հաստատե-
ցիր, որպէս զի քարոզէն ու քեզի հա-
մար ըսեն, Թէ Անիկա Հրէաստանի
թագաւոր է. ու հիմա այս խօսքերը
թագաւորին ականջը պիտի հասնին.
ուրեմն եկուր որ մէկտեղ խորհուրդ
ընենք: 8 - Բայց ես անոր մարտ գրկեցի
ու ըսի, Իմը քու ըսած խօսքերուդ
պէս չէ, հապա ատոնք դուն քու որտեղ
հնարեցիր: 9 - (Վասն զի անոնց ամէնը
մեզ կը վախցնէին՝ ըսելով, Թող ա-
նոնց ձեռքը այն գործէն թուլնայ,
որպէս զի չկատարուի: Աւ հիմա, «Վ
Տէր, իմ ձեռքերս ու ժողովուրդս»)

10 - Աւ ես Մետաբէէլի որդւոյն
Գաղայիայի որդւոյն Սեմայիայի տունը
մտայ. և անիկա բանք զի գոցուած էր,
ու ըսաւ, Ինչո՞ւ մէկտեղ Աստուծոյ
տունը, տաճարին մէջ, երթանք, ու
տաճարին դռները գոցենք, վասն զի
քեզ մեռցնելու կու գան. ու անոնք

* Եբր. այս խօսքերուն համեմատ

գիշերով պիտի գան քեզ մեռցնելու:
11 - Աւ ես ըսի, Միթէ ինծի պէս մար-
դը կը փախչի. և ո՞վ կայ ինծի պէս՝ որ
տաճարը մանկ տարելու համար. չեմ
մտնէր: 12 - Աւ աղէկ հասկցայ որ
զանիկա Աստուած զրկած չէր, հապա
իմ վրաս այս մարգարէութիւնը ինչո՞ւ
խօսեցաւ. վասն զի Տուբիա ու Սանա-
բաղատ զանիկա վարձքով բռներ էին:
13 - Եւ ասոր համար վարձքով բռներ
էին զանիկա, որպէս զի ես վախնամ,
ու այսպէս ընելով մեղանչեմ, որպէս
զի զիս բամբասելու ու իմ անունս աւ-
րելու պատճառ մը ունենան: 14 - Ով
Աստուած իմ, Տուբիան ու Սանաբա-
ղատը այս իրենց գործերուն համեմատ,
ու Նովագիա մարգարէութիւն, ու զիս
վախցնող միւս մարգարէները յիշէ:

15 - Եւ պարիսպը իլուլ անու-
քանը հինգերորդ օրը յիսուսուերկու
օրուան մէջ լմնցաւ: 16 - Աւ երբ մեր
ամէն թշնամիները լսեցին, մեր բոլոր-
տիքը եղող ամէն ազգերը վախցան ու
շատ ամօցան, ու իմացան որ այս գոր-
ծը մեր Աստուծոյն օգնականութիւնով
կատարուեցաւ:

17 - Եւ այն օրերը Յուդայի ազնուա-
կաններէն Տուբիայի շատ նամակներ
կ'երթային, Տուբիայէ ալ անոնց կու
գային. 18 - Վասն զի Յուդայի շատ
մարդիկը անոր հետ երդումով միաբա-
ներ էին. քանզի անիկա Արահեան Սե-
քենիայի փեսան էր, ու անոր որդին
Յոհանան Բարաքիայի որդւոյն Մեսու-
զամի աղջիկը աւեր էր: 19 - Նաև իմ
առջև անոր աղէկութիւնները կը
զրուցէին, ու իմ խօսքերս անոր կը հաս-
ցընէին. և Տուբիա ինչի նամակներ կը
գրկէր զիս վախցնելու համար:

ԳԼ. 10

Ու երբ պարիսպը լմնցաւ, և դռնե-
րուն փեղկերը անցուցի, ու դռնապան-
ներ, երգեցողներ ու Վեռացիներ գրը-
ուեցան, 2 - Իմ եղբայրս Անանին, ու
աշտարակին իշխանը Անանիան (որ հա-
ւատարիմ ու շատերէն աւելի Աստուծ-
մէ վախցող մարդ մըն էր) Երուսաղէմի
վրայ գրի, 3 - Աւ անոնց ըսի, Մինչև
որ արևը չտաքնայ, Երուսաղէմի դռնե-
րը չբացուին. և իրենց ներկայու-
թիւնովը դռները գոցեն ու նիգերը
դնեն, ու Երուսաղէմի բնակիչներէն

պահապաններ կարգեն, ամէն մէկը իր պահպանութեանը մէջ, ու ամէն մէկը իր տանը գիմոց:

4 - Քաղաքը ընդարձակ ու մեծ էր, բայց մէջի ժողովուրդը քիչ էր, ու տուներ շինուած չէին: 5 - Եւ իմ Աստուածս իմ սրտիս մէջ դրաւ, որ ազնուականները, ստիկանները ու ժողովուրդը ժողովեմ որպէս զի արձանագրուին. ու առաջին անգամ գեր-նէն ելլողներուն մէկ ազգաբանութեան գիրքը գտայ, ու անոր մէջ «յո-դէ» գրուած գտայ:

6 - Բարեկանի Նաբուգոդոնոսոր թագաւորին տարած գերիներէն ելլող գաւառի բնակիչները ասոնք էին, որոնք Երուսաղէմ ու Յուդա դարձան, ամէն մէկը իր քաղաքը: 7 - Ու Զորաբաբելի, Յետուի, Նէեմիայի, Ազարիայի, Ռասափայի, Նաեմանի, Մուրթքէի, Բաղասանի, Մաափարաթի, Բագուէի, Նաւուսի «- Բաանայի հետ եկան: Եւ «յո» էր Իսրայէլի ժողովուրդին մարդոցը թիւը: 8 - Փարսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու: 9 - Մափատիայի որդիները՝ երեք հարիւր եօթանասուներկու: 10 - Արասի որդիները՝ վեց հարիւր յիսուներկու: 11 - Փաթմովաբի որդիները՝ Յետուի ու Յովաբի որդիներէն՝ երկու հազար ութ հարիւր տասնութ: 12 - Եղուփի որդիները՝ հազար երկու հարիւր յիսուներջորս: 13 - Զաթուի որդիները՝ ութ հարիւր քառասունըհինգ: 14 - Զաքքայի որդիները՝ եօթը հարիւր վաթսուն: 15 - Բանուի որդիները՝ վեց հարիւր քառասունըութ: 16 - Բեբալայի որդիները՝ վեց հարիւր քսանըութ: 17 - Ազգադի որդիները՝ երկու հազար երեք հարիւր քսանուերկու: 18 - Ագոնիկամի որդիները՝ վեց հարիւր վաթսուներեօթը: 19 - Բագուէի որդիները՝ երկու հազար վաթսուներեօթը: 20 - Ագինի որդիները՝ վեց հարիւր յիսուներհինգ: 21 - Ատերի որդիները Եզեկիայէ՝ իննասունըութ: 22 - Հասուսի որդիները՝ երեք հարիւր քսանըութ: 23 - Բեսէի որդիները՝ երեք հարիւր քսանըջորս: 24 - Արիփի որդիները՝ հարիւր տասուերկու: 25 - Գաբաւոնի որդիները՝ իննասունըհինգ: 26 - Բեթլէհէմի ու Նեափայի մարդիկը՝ հարիւր ութսուներութ: 27 - Անաթովթի մարդիկը՝ հարիւր քսանըութ: 28 - Ազամովթի

տանը մարդիկը՝ քառասուներկու: 29 - Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բերովթի մարդիկը՝ եօթը հարիւր քառասուներեք: 30 - Ռամոյի ու Գաբայի մարդիկը՝ վեց հարիւր քսանըմէկ: 31 - Մաքմասի մարդիկը՝ հարիւր քսանուերկու: 32 - Բեթէլի ու Գայիի մարդիկը՝ հարիւր քսանուերեք: 33 - Միւս Նարաւի մարդիկը՝ յիսուներկու: 34 - Միւս Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսուներջորս: 35 - Հարիմի որդիները՝ երեք հարիւր քսան: 36 - Երեքովի որդիները՝ երեք հարիւր քառասունըհինգ: 37 - Ղովդի, Ագիդի ու Ոֆնովի որդիները՝ եօթը հարիւր քսանըմէկ: 38 - Սենայի որդիները՝ երեք հազար ինը հարիւր երեսուն: 39 - Քահանաները՝ Յետուի տունէն Յեգայիայի որդիները՝ ինը հարիւր եօթանասուներեք: 40 - Եմների որդիները՝ հազար յիսուներկու: 41 - Փատուրի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունըեօթը: 42 - Հարիմի որդիները՝ հազար տասնըեօթն էին: 43 - Ղևտացիները՝ Ովգուիայի որդիներէն Յետուի «- Կադմիէլի որդիները եօթանասունըջորս էին: 44 - Երգեցողները, Ասափի որդիները, հարիւր քառասունըութ էին: 45 - Դանապանները, Սեզուսի որդիները, Ատերի որդիները, Տեգմոնի որդիները, Ակկուրի որդիները, Աափայի որդիները, Մուրայի որդիները հարիւր երեսունըութ էին: 46 - Նաթանայիմները ասոնք էին. Սիայի որդիները, Ասափայի որդիները, Տաբատովթի որդիները, 47 - Կերոսի որդիները, Սիայի որդիները, Փագոնի որդիները, 48 - Ղաբանայի որդիները, Ագաբայի որդիները, Մաղամէի որդիները, 49 - Անանի որդիները, Գեդգէլի որդիները, Գաարի որդիները, 50 - Ռէայիայի որդիները, Ռասինի որդիները, Նեկոպայի որդիները, 51 - Գազամի որդիները, Ողայի որդիները, Փասէի որդիները, 52 - Բասիի որդիները, Մովանիմի որդիները, Նեփուսիմի որդիները, 53 - Բակըսի որդիները, Ակուփայի որդիները, Արուրի որդիները, 54 - Բասաղովթի որդիները, Մէիգայի որդիները, Արայի որդիները, 55 - Բարկոսի որդիները, Սիաարայի որդիները, Թամոյի որդիները, 56 - Նեսիպի որդիները, Ատեփայի որդիները:

57 - Սողոմոնի ծառաներուն որդիները, Սոտէի որդիները, Սոփերաթի որդիները, Փարեգայի որդիները, 58 - Յեզայի որդիները, Իերկոնի որդիները, Գեդգէլի որդիները, 59 - Սափատրայի որդիները, Ատաիլի որդիները, Փաքարաթ-ասեբայիմի որդիները, Ամանի որդիները. 60 - Բոլոր Նաթանայիմները ու Սողոմոնի ծառաներուն որդիները երեք հարիւր իննսուսուերկու էին:

61 - Ու Թեղմեղայէ, Թեղարայէ, Քերուբէ, Ագգօնէ ու Եմմերէ ելլողները ասոնք էին, և իրենց հայրերուն տունը ու իրենց սերունդը, այսինքն Խորայէլէ ըլլալինն ցուցնելու կարող չեղան. 62 - Գաղայիայի որդիները, Տուբիայի որդիները, Նեկոգայի որդիները՝ վեց հարիւր քառասուսուերկու մարդ: 63 - Եւ քահանաներէն՝ Աբաիայի որդիները, Ակիուսի որդիները, Բերգելիի որդիները, որ Գաղաադացի Բերգելիի աղջիկներէն կին առնելով անոնց անունովը կոչուեցաւ: 64 - Ասոնք իրենց ազգաբանութեան գիրքը փնտռեցին, բայց չկրցան գտնել. ու անմտքուր սեպուելով՝ քահանայութենէ արգիլուեցան: 65 - Եւ *Աթարտաթան անոնց ըսաւ, Մինչև որ Ուրիմով ու Թուրիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն չուտեն:

66 - Բոլոր ժողովքը մէկտեղ քառասուսուերկու հազար երեք հարիւր վաթսուսն հոգի էր, 67 - Բաց ի անոնց ծառաներէն ու աղայիիններէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսուերկու եօթն էին. ու անոնց մէջ երկու հարիւր քառասուսուերկու հոգի էր, 68 - Բաց ի անոնց ծառաներէն ու աղայիիններէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսուերկու եօթն էին. ու անոնց մէջ երկու հարիւր քառասուսուերկու հոգի էր, 69 - Ուղտերը չորս հարիւր երեսուերկու հոգի էր, 70 - Եւ իրենց հազար եօթը հարիւր քառասուն էին:

70 - Ու ասոնք որոնք իշխաններէն ամանք գործին համար ընչոյ տուին. Աթարտաթան հազար գրամ ոսկի, յիսուսն սկաւառակ * - հինգ հարիւր երեսուսն քահանայական պատմուճան տուաւ գանձին: 71 - Եւ ասոնք որոնք իշխաններէն * - գործաւորութեան գանձին քառասուն հազար գրամ ոսկի, ու

երկու հազար երկու հարիւր մնաս արծաթ տուին: 72 - Եւ մնացած ժողովուրդին տուածները քառասուն հազար գրամ ոսկի, ու երկու հազար մնաս արծաթ, ու վաթսուսուերկու քահանայական պատմուճան էին: 73 - Եւ քահանաները ու Ղեւտացիները և դաւնապանները ու երգեցողները և ժողովուրդէն եղողները, ու Նաթանայիմները և բոլոր Խորայէլ իրենց քաղաքներուն մէջ բնակեցան. ու երբ եօթներորդ ամիսը հասաւ, Խորայէլի որդիները իրենց քաղաքներուն մէջ էին:

ԳԼ Ը

Եւ բոլոր ժողովուրդը մէկ մարդու պէս՝ Զուրի գրանը առջև եղող հրապարակին մէջ ժողովուրդեցան, ու Եզրաս դպիրին ըսին, որ Մովսէսի օրինաց գիրքը բերէ, զոր Տէրը Խորայէլի պատուիրած էր: 2 - Ու եօթներորդ ամիսն առաջին օրը Եզրաս քահանան օրինաց էրէւ ժողովքին առջև բերաւ, * - որ այր ու կին մարդոցմէ, ու ամէն լսելու ու հասկնալու կարողութիւն ունեցողներէ բացառու էր. 3 - Եւ զանհկա Չուրի գրանը առջև եղող հրապարակին մէջ առատուրնէ մինչև կէսօր այր ու կին մարդոց ու հասկցողներուն առջև կարգաց. և բոլոր ժողովուրդը իրենց սկանձները օրինաց գիրքին * - էր էին: 4 - Ու Եզրաս դպիրը յատուկ ասոր համար շինուած փայտեղէն բեմին վրայ կայնեցաւ. ու անոր քով աջ կողմը Մատաթիա, Սեմա, Անանիա, Ուրիա, Քեղկիա ու Մատաթիա, և ձախ կողմը Փագայիա, Միսայէլ, Մեղքիա, Հատուա, Ասբադանա, Զաքարիա * - Մետուղամ՝ կայնեցան: 5 - Ու Եզրաս գիրքը բացաւ բոլոր ժողովուրդին աչքերուն առջև. վասն զի ինք բոլոր ժողովուրդէն բարձր էր. ու զանհկա բացածին պէս բոլոր ժողովուրդը ոտքի վրայ ելաւ: 6 - Այն ատեն Եզրաս Եհովա մեծ Աստուածը օրհնեց. ու բոլոր ժողովուրդը ձեռքերնին վերցուցին, ու Ամէն, Ամէն՝ ըսին. և իրենց երեսին վրայ գետինը ձուլելով Տէրոջը երկրպագութիւն ըրին: 7 - Ու Յեսու, Բանի, Սարաբիա, Յամին, Ակիուր, Աարեթա, Ովգիա, Մատաթիա, Կովգիա, Ազարիա, Յովգարադ, Անան, Փագայիա ու Ղեւտացիք օրէնքը ժողովուրդին կը հաս-

* Այսինքն, կառավարիչը. տես գլ. Ը. 9: Ժր. 26:

կրցնէին. և ժողովուրդը իրենց կարգովը կայներ էին : 8 - Անոնք Աստուծոյ օրինաց գիրքը յօտակ կերպով կարդացին, ու մեկնութիւնը տալով կարդացածնին հասկցուցին :

9 - Աւ Նէեմիա Աթարտաթան ու Եզրաս քահանան - գպիրը և ժողովուրդին հասկցնող Ղևտացիները բոլոր ժողովուրդին ըսին , Այս օրը ձեր Տէր Աստուծոյն սուրբ օր է՞ն է . սուգ մի ընէք ու մի լաք . վասն զի բոլոր ժողովուրդը կու լային երբ օրէնքին խօսքերը կը լսէին : 10 - Եւ անոնց ըսաւ , Քացէք պարարտ բաներ կերէք ու անոյշ բաներ խմեցէք, ու պատրաստութիւն չունեցողներուն բաժիններ զրկեցէք, քանզի այս օրը մեր Տէրոջը սուրբ օր է՞ն է, ու մի տրամիք . վասն զի Տէրոջը ուրախութիւնը ձեր զօրութիւնն է : 11 - Այն ատեն Ղևտացիք բոլոր ժողովուրդը լռեցուցին ըսելով , Լուռ կեցէք , քանզի տախտակ սուրբ օր է , ու մի տրամիք : 12 - Եւ բոլոր ժողովուրդը ուտելու ու խմելու , ու բաժիններ զրկելու և մեծ ուրախութիւն ընելու գացին . վասն զի իրենց բացատրուած խօսքերը հասկցան :

13 - Աւ երկրորդ օրը՝ բոլոր ժողովուրդին տոհմապետները , քահանաները ու Ղևտացիները Եզրաս գպիրին քով ժողովուեցան, որպէս զի օրէնքին խօսքերը հասկնան : 14 - Եւ օրինաց գիրքէն մէջ գրուած գտան որ Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեր է , որ եօթներորդ ամսուն օտնին ատենը Իսրայէլի որդիները տաղաւարներու մէջ բնակին , 15 - Նաև իրենց ամէն քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի մէջ հրատարակեն ու քարոզեն՝ ըսելով , Լեռը ելէք , ու ձիթենիի ոտեր , իւզի ծառի ոտեր ու մրտենիի ոտեր և արմաւենիի ոտեր ու տերևախիտ ծառերու ոտեր բերէք , որպէս զի տաղաւարներ շինէք , ինչպէս գրուած է :

16 - Եւ ժողովուրդը ելաւ ու բերաւ . ու ամէն մարդ իր ամսիքին վրայ ու իր գաւիթին մէջ և Աստուծոյ տանը գաւիթներուն մէջ ու Չուրի դրանը հրապարակին մէջ ու Եփրեմի դրանը հրապարակին մէջ՝ իրենց տաղաւարներ շինեցին : 17 - Աւ գերութենէ գարձողներուն բոլոր ժողովքը տաղաւարներ շինեցին, ու տաղաւարներու մէջ նստան . վասն զի Իսրայէլի որդի-

ները՝ Նաւեան Յեսուի օրերէն մինչև այն օրը՝ այնպէս ըրած չէին . ու խիստ մեծ ուրախութիւն եղաւ : 18 - Եւ առաջին օրէն մինչև վերջին օրը ամէն օր Աստուծոյ օրինաց գիրքը կարդացուեցաւ . ու եօթը օր տօն ըրին, և եօթերորդ օրը հանգիստուր ժողով եղաւ, ինչպէս հրամայուած էր :

ԳԼ Թ

Եւ այս ամսուն քանըչորսերորդ օրը Իսրայէլի որդիները ծովով , քուրձերով ու վրանին հող ջանա՞ մէկտեղ ժողովուեցան : 2 - Եւ Իսրայէլի որդիները բոլոր օտարազգիներէն զատուեցան, ու Աստուծոյ արջի կայնելով՝ իրենց մեղքերը ու իրենց հայրերուն անօրէնութիւնները խոստովանեցան : 3 - Եւ իրենց տեղը կայնելով՝ օրուան չորրորդ մասը իրենց Տէր Աստուծոյն օրինաց գիրքէն կարդացին, ու չորրորդ մասը իրենց Տէր Աստուծոյն խոստովանութիւն ու երկրպագութիւն ըրին :

4 - Աւ Յեսու, Բանի, Կադմիէլ, Սաբանիա, Բունի, Սարաբիա, Բանի - Քենանի Ղևտացիները *բեմին վրայ ելան, ու իրենց Տէր Աստուծոյն բարձր ձայնով աղաղակեցին : 5 - Եւ Յեսու, Կադմիէլ, Բանի, Սաբանիա, Սարաբիա, Ովդիա, Սաբանիա - Փեթայիա Ղևտացիները ըսին , Ելէք , ձեր Տէր Աստուածը յաւիտեանս յաւիտենից օրհնեցէք :

Օրհնեալ ըլլայ քու փառաւորեալ անունդ . ու ամէն օրհնութենէ ու գոհութենէ բարձր ըլլայ : 6 - Գուն, միայն դուն Տէր ես . երկինքը , երկնից երկինքը և անոր բոլոր զօրքերը , երկիրը ու բոլոր անոր վրայ եղածը , ծովերը ու բոլոր անանց մէջ եղածը , դուն սակեցեցիր , և ամէնուն դուն կենդանութիւն կու տաս . ու երկինքի զօրքերը քեզի երկրպագութիւն կ'ընեն : 7 - Գուն ես այն Տէր Աստուածը՝ որ Աբրամը ընտրեցիր , և զանիկա Քաղդէացուց Ուր +ազա+էն հանեցիր , ու անոր անունը Աբրահամ դրիր . 8 - Եւ անոր սիրտը քու առջևդ հաւատարիմ գտար , ու անոր հետ ուխտ ըրիր որ Քանանացուց , Քեացուց , Ամօրհացուց , Փերեզացուց , Յերուսացուց ու

*Կա՞մ, աստիճաններուն

Գերգեհացոց երկիրը անոր սերունդին տաս . ու քու խօսքդ հաստատեցիր , վասն զի արգար ես :

9 - Աւ Լեզիպտոսի մէջ մեր հայրերուն նիգուլթեանը նայեցիր , ու Կարմիր ծովուն վրայ աննց աղաղակը լսեցիր . 10 - Եւ Փարաւոնի ու անոր բոլոր ծառաներուն , ու անոր երկրին բոլոր ժողովուրդին նշաններ ու հրաշքներ ցուցուցիր , վասն զի զիացար որ աննց վրայ հպարտացան . ու այսօրուն պէս քեզի անուն վատակեցար . 11 - Եւ ծովը աննց տաջե պատուեցիր , այնպէս որ ծովուն մէջէն ցամաքով անցան , և զանոնք հալածողները խորունկ ջուրերու մէջ նետարար : 12 - Եւ ցորեկը ամպի սիւնով , ու գիշերը աննց գացած ճամբուն լուսաւորելու համար՝ կրակի սիւնով առաջնորդեցիր աննց :

13 - Եւսե Այնա լեռանը վրայ իջար , ու աննց հետ երկինքէն խօսեցար . և աննց ուղիղ դատաստաններ , ճշմարիտ օրէնքներ -- բարի կանոններ ու պատուիրանքներ տուիր . 14 - Եւ քու սուրբ շարածիգ աննց գիտցուցիր , ու քու ճառայից Մովսէսի ձեռքով աննց պատուիրանքներ , կանոններ ու օրէնքներ հրամայեցիր . 15 - Աւ երբ անօթեցան աննց երկինքէն հաց տուիր , ու երբ ծարւեցան աննց ապտառածէն ջուր ծանեցիր . և աննց բոլոր որ մտնէն ու ժառանգէն այն երկիրը զոր աննց ստուլու համար * ձեռքդ վերցուցիր :

16 - Բայց աննք , այսինքն մեր հայրերը , հպարտօք ան , ու իրենց պարանոցը խտացուցին . և քու պատուիրանքներուդ հնազանդութիւն չըրին , 17 - Աւ շուղեցին մտիկ ընել , և աննց մէջը բրած հրաշքներդ չլիշեցին . հապաիրենց պարանոցը խտացուցին , ու իրենց պատամբութիւնովք իրենց ծառայութեանը դառնարու Իգլուխ դրին . բայց դուն ներող , սղորմամ , զթամ , երկայնամիտ ու բազումըտրով Աստուած րոյտովդ՝ զանոնք երեսէ ձգեցիր . 18 - Մանասնից երբ աննք իրենց ձուլածոյ օրթ շինեցին , ու Քեդ , Լեզիպտոսէ հանող Աստուածդ , տսիկս է՝ ըսելով՝ Ի՞նչ մեծապէս անարգեցին ,

19 - Դուն քու մեծ ողորմութիւնովդ զանոնք անապատին մէջ երեսէ ձգեցիր . ճամբան աննց առաջնորդութիւն ընելու համար՝ ցորեկը ամպի սիւնը , ու գիշերը աննց պացած ճամբան լուսաւորելու համար կրակի սիւնը աննց վրայէն չվերցուցիր : 20 - Եւսե զանոնք իմաստուն ընելու համար քու բարի հօգիգ տուիր , ու աննց բերնէն քու մանանագ չպակեցուցիր , ու աննց ծարւած տանելը աննց ջուր տուիր : 21 - Եւ զանոնք քառասուն տարի անապատին մէջ կերակրեցիր . աննց բան մը չպակեցու , աննց հանգերձները չմտնեցան ու աննց սաքերը չուռեցան : 22 - Եւ աննց թագաւորութիւններ սո ժողովուրդներ տուիր , ու աննց սահմաններ որոշեցիր . ու Ահհոնի երկիրը , այսինքն Եփրատի թագաւորին երկիրը , ու Բասանի Ավգ թագաւորին երկիրը ժառանգեցին : 23 - Եւ աննց զաղիները երկինքի ստաղերուն չափ ստացուցիր . ու տարի զանոնք այն երկիրը զոր աննց հայրերուն խտացրէր , թէ անոնք հապախ մտնէն ու ժառանգէն : 24 - Եւ աննց որդիները մտան ու այն երկիրը ժառանգեցին . և այն երկրին մէջ բնակող Բանանացիները աննց տաջե նուաճեցուցիր , ու զանոնք ու աննց թագաւորները ու երկրին ժողովուրդը աննց ձեռքը տուիր , որպէս զի ուզածնուն պէս վարուին աննց հետ : 25 - Եւ պարսպաւոր քաղաքներ ու պարտաւոր երկիր մը տուին . ու ամէն բարիքով լեցուն տուններ , փորուած ջրհորներ , այգիներ , ձիթենիներ ու պողպարեւ ձեռքեր անաւորէն ժառանգեցին . և կերան , կշտացան ու զիրցան , և քու մեծամեծ բարիքներովդ զուարճագան :

26 - Ասիկայն քեզի անհնազանդութիւն ու սպառնալու թիւն ըրին , և քու օրէնքդ իրենց ամե ձգեցին , ու քու մարգարէներդ այ մեռցուցին , որ զանոնք քեզի դարձնելու համար * աննց վիսյութիւն կու տային . և Ի՞նչ մեծապէս անարգեցին : 27 - Եւ զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը մասնեցիր որ զանոնք նեղեցին . ու երբ իրենց նեղութեան տանելը քեզի աղաղակեցին , դուն երկինքէն լսեցիր , և քու ստատ ողորմութեանդ համեմատ աննց ապա-

* Այսինքն , երգում բրբի . թու . Ժ գ . 30 :
† Այսինքն , իշխան կարգեցին

* Այսինքն , զանոնք կր յանդիմանէին

տրչներ տուիր, ու ազատեցին զանանք իրենց թշնամիներուն ձեռքէն: 28 - Բայց երբ հանգստութիւն գտան, նուրէն քու առջևդ չարութիւն ըրին, ու զանանք իրենց թշնամիներուն ձեռքը թողուցիր, որոնք անոնց վրայ տիրեցին. ու երբ նորէն քեզի ազազակեցին, դուն երկիրքէն լսեցիր, և քու ողորմութեանդ համեմատ շատ անգամ զանանք ազատեցիր. 29 - Ու քու օրէնքիդ դարձնելու համար անոնց վկայութիւն ըրիր. բայց անանք հպարտացան, ու քու հրամաններուդ հնազանդութիւն չբրին, և քու պատուիրանքներուդ դէմ մեղք գործեցին, (զորոնք պահող մարդը անոնցմով կ'ապրի,) ու իրենց ուսերը շտնարհեցուցին, հապա իրենց պարանոցը խոտացուցին ու հնազանդութիւն չբրին: 30 - Եւ շատ տարիներ անոնց երկայնմտութիւն ըրիր, ու քու Հոգիովդ, քու մարգարէներուդ ձեռք ձեռքով անոնց վկայութիւն ըրիր. բայց անանք մտիկ չբրին. ուստի զանանք երկիրներուն ժողովուրդներուն ձեռքը մտանեցեր: 31 - Սակայն քու ստառ ողորմութիւնովդ զանանք բուրովին չկորսնցուցիր ու չմերժեցիր, վասն զի դուն ողորմած ու գթած Աստուած ես:

32 - Եւ հիմա, ով Աստուած մեր, որ ուխտ ու ողորմութիւն պահող, մեծ, զօրաւոր ու ահեղ Աստուած ես, Աստուծանի թագաւորներուն օրերէն մինչև այսօր մեզի, մեր թագաւորներուն, մեր իշխաններուն, մեր քահանաներուն, մեր մարգարէներուն, մեր հայրերուն և քու բոլոր ժողովուրդիդ ամէն պատահած նեղութիւնները քու առջևդ քիչ չերևնան: 33 - Սակայն բուր մեզի պատահած բաներուն մէջ դուն որդար ես. քանզի դուն ճշմարտութեամբ ըրիր. բայց մենք անօրէնութիւն ըրինք: 34 - Ու մեր թագաւորները, իշխանները, քահանաները ու հայրերը քու օրէնքը չպահեցին, ու քու պատուիրանքնրդ ու անոնց բրած վկայութիւններդ մտիկ չբրին: 35 - Եւ անանք իրենց թագաւորութեանատենը, ու անոնց շատ բարեքներ տուած տանեք, և այն ընդարձակ ու պարտա երկիրն մէջ զոր անոնց տուիր քեզի ծառայութիւն չբրին, ու իրենց չար գործերէն չդարձան: 36 - Ահա մենք այսօր ծառայ ենք. մանաւանդ այն

երկիրն մէջ զոր մեր հայրերուն տուիր, որպէս զի անոր պատուները ու բարեքները ուսեն, ահա մենք հոն ծառայ ենք: 37 - Եւ այն էրէբը շատ պառզ կու ապ այն թագաւորներուն զորոնք մեր մեղքերուն համար մեր վրայ դրիր, ու անանք մեր մարմինն վրայ ու մեր անասուններուն վրայ իրենց ուզածին պէս կր տիրեն. ու մենք մեծ նեղութեան մէջ ենք: 38 - Եւ այս ամէնուն համար մենք հաստատ առա մը կ'ընենք ու կը գրենք, ու մեր իշխանները, մեր Ղևտացիները ու մեր քահանաները զանիկա կը կնքեն:

ԳԼ Ժ

Եւ կնքողները ասոնք էին. Աբազիայի որդին Նէեմիա, Աթարաթան, Աեդեկիա, 2 - Սարայիա, Ագարիա, Երեմիա, 3 - Փառուր, Ամարիա, Մեղքիա, 4 - Քեստուս, Սարանիա, Մալուք, 5 - Հարիմ, Մերամթ, Աբգիա, 6 - Կանիէլ, Կանաթոն, Բարուք, 7 - Մեսուղամ, Աբիա, Միամին, 8 - Մաազիա, Բեդա ու Սեմայիա. ասոնք քահանաներն էին: 9 - Ու Ղևտացիները, Ազանիայի որդին Յեսու, Բանուի ու Ենազազի որդիներէն Կազմիէլ, 10 - Եւ անոնց եղբայրները՝ Սարանիա, Ովգիա, Կովդիտա, Փաղայիա, 11 - Անան, Միքա, Բուր, Ասարիա, 12 - Չաբուր, Սարարիա, Սարանիա, 13 - Ովգիա, Բանի ու Բանիմու: 14 - Ժողովուրդին իշխանները. Փարսո, Փաթթանովաք, Եղամ, 15 - Չաթու, Բանի, Բունի, Աղապ, 16 - Բերայի, Ազանիա, Բազուէ, Ադին, 17 - Ատեր, Եդեկիա, Ազուր, 18 - Ովգիա, Հասուամ, Բեսէի, 19 - Աբիփ, Անաթովթ, Նովույ, 20 - Մազփիտա, Մեսուղամ, Եղիբ, 21 - Մասիդիէլ, Մազովի, Յազուա, 22 - Փաղափա, Անան, Անանիա, 23 - Ովսէ, Անանիա, Ասուր, 24 - Ալօէս Պիլա, Սօրէկ, 25 - Հուէուամ, Ասարանա, Մաստիա, 26 - Աբիա, Անան, Օնան, 27 - Մալուր, Հարիմ ու Բանան: 28 - Եւ մնացած ժողովուրդը, քահանաները, Ղևտացիները, գանապանները, երգեցողները, Նաթանայիմները, ու երկիրներու ժողովուրդներէն Աստուծոյ օրէնքին հետեւը՝ համար բոլոր զատուողները, իրենց կիները, տղաքները ու աղջիկները, այսինքն ամէն ա-

նոնք որ կրնային հասկնալ, 29 - Իրենց երևելի եզրայրներուն հետ միաբանեցան, ու անէժքով երգում ըրին, որ Աստուծոյ ծառային Մովսէսի ձեռքով տրուած Աստուծոյ օրէնքին մէջ քաւեն, ու մեր Եհովա Տէրոջը բոլոր պատուիրանքները ու դատաստանները և կանոնները պահեն ու կատարեն: 30 - Եւ իօ՞՞ քո՞նք մեր ազջիկները երկրին ժողովուրդներուն չտանք, և անոնց ազջիկները մեր աղոցը չառնենք: 31 - Աւերկրին ժողովուրդներուն շարաթօրը ծախելու համար բերած ապրանքները՝ և ամէն տեսակ ուտելիքը՝ շարաթօրը կամ սուրբ օրերը՝ անոնցմէ չառնենք, ու եօթներորդ տարին, ու ամէն պարտքի պահանջմունքը թողունք: 32 - Ու մեզի կանոն դրինք, որ մեր Աստուծոյն տանը ծառայութեանը համար ամէն տարի մէկ սիկզին երրորդ մասը տանք, 33 - Առաջաւորութեան հացին համար, մշանջեանաւոր հացի ընծային համար, մշանջեանաւոր ողջակէզին համար, շարաթներուն համար, ամսագլուխներուն համար, տօներու համար, սուրբ բաներու համար, ու Իսրայէլի քառութիւն ըլլալու մեզքի պատարագներուն համար, ու մեր Աստուծոյն տանը ամէն գործին համար, 34 - (Եւ փայտի ընծային համար՝ քահանաներուն, Ղեաացիներուն ու ժողովուրդին վիճակ ձգեցինք, որ զանիս մեր Տէր Աստուծոյն սեղանին վրայ վառելու համար, տարուէ տարի՝ որոշուած տակները ըստ սզգատոհմից մեր Աստուծոյն տանը բերենք, ինչպէս օրէնքին մէջ գրուած է.) 35 - Ու մեր երկրին առաջին պտուղները, և ամէն ծառին ամէն առաջին պտուղները տարուէ տարի Տէրոջը տանը տանինք. 36 - Ու մեր օրգիններուն ու մեր անասուններուն առջինեկները՝ ինչպէս օրէնքին մէջ գրուած է, ու մեր արջառներուն ու սլխարներուն առջինեկները մեր Աստուծոյն տանը տանինք՝ մեր Աստուծոյն տանը մէջ պաշտօն կատարող քահանաներուն. 37 - Ու մեր խմորներուն երախայրները և մեր ընծաները, այսինքն ամէն ծառի պտուղը, գինի ու իւղ տանինք քահանաներուն, մեր Աստուծոյն տանը սենեակները, ու մեր երկրին տասանորդը Ղեաացիներուն քահ, ու Ղեաացիները մեր բոլոր երկրագործութեան քաղաքներուն մէջ տասանորդները առնեն:

38 - Ու Ահարոնի օրգին, քահանան, Ղեաացուց տասանորդին մէջ Ղեաացուց մասնակից ըլլայ, ու Ղեաացիք տասանորդին տասանորդը մեր Աստուծոյն տանը, գանձատանը սենեակները, տանին. 39 - Վասն զի Իսրայէլի օրգինները ու Ղեիի օրգինները ցորենին ու գինիին ու իւղին ընծան այն սենեակները պիտի տանին, ուր սրբարանին անօթները ու պաշտօն կատարող քահանաները ու դռնապանները ու երգեցողները կը կենան. ու մեր Աստուծոյն տանը վրայով անհագ պիտի չըլլանք:

ԳԼ. ԺԱ.

Եւ ժողովուրդին իշխանները Երուսաղէմի մէջ բնակեցան. ու մնացած ժողովուրդը վիճակ ձգեցին, որպէս զի տանէն մէկը բերեն Երուսաղէմ սուրբ քաղաքը բնակելու, ու միւս ինը բաժինը «-բէլքաղաքներու մէջ բնակին»: 2 - Եւ ժողովուրդը օրհնեց այն ամէն մարդիկը՝ որոնք յօժար կամքով իրենց անձը ընծայեցին Երուսաղէմի մէջ բնակելու: 3 - Ու Երուսաղէմի մէջ բնակող գաւառին իշխանները ասոնք էին. (սակայն Յուդայի քաղաքներուն մէջ՝ Իսրայէլ, քահանաները, Ղեաացիները, Նաթանայիմները ու Սողոմոնի ծառաներուն օրգինները, ամէն մարդ իրենց կալուածքին մէջ, իրենց քաղաքներուն մէջ բնակեցան): 4 - Ու Երուսաղէմի մէջ Յուդայի օրգիններէն ու Բենիամինի օրգիններէն բնակեցան:

Յուդայի օրգիններէն՝ Մաղաղիէլի օրգւոյն Սափատայի օրգւոյն Ամարիայի օրգւոյն Զաբարիայի օրգւոյն Ողիայի օրգին Աթայիա, որ Փարէսի օրգիններէն էր. 5 - Եւ Սիլօնի օրգւոյն Զաբարիայի օրգւոյն Յովարիբի օրգւոյն Ադայիսի օրգւոյն Ազայիսի օրգւոյն Քայսլէի օրգւոյն Բարուբի օրգին Մատաիա: 6 - Երուսաղէմի մէջ բնակող Փարէսի օրգիններուն ամէնը չորս հարիւր վաթսուներութ զօրաւոր մարդիկ էին:

7 - Ու Բենիամինի օրգինները ասոնք էին. Ասայիի օրգւոյն Աթիէլի օրգւոյն Մատաիայի օրգւոյն Կովիսայի օրգւոյն Փագայիայի օրգւոյն Յովադի օրգւոյն Մեսուղամի օրգին Սալու: 8 - Եւ անկէ ետքը Գերէի, Սելէի, և այլն, ինը

Հարիւր քսանըութ հոգի. 9 - Ու անոնց վրայ իշխան՝ Զեբբի որդին Յովէլ էր. ու Սենուայի որդին Յուգա քաղաքին վրայ տեղակալ էր :

10 - Փահանաներէն՝ Յովարիբի որդին Յեգայիա, Յաքին, 11 - Ասաուծոյ տանը վերակացուն, Աքիաովի որդւոյն Մարիօթի որդւոյն Սագովկի որդւոյն Մեսուղամի որդւոյն Քեղկիայի որդին Սարայիա, 12 - Եւ անոնց եղբայրները, որոնք Ասաուծոյ տանը գործը կը բանէին, ութ հարիւր քսանուերկու էին, ու Մեղքիայի որդւոյն Փասուրի որդւոյն Զաքարիայի որդւոյն Ամասիի որդւոյն Փաղաղիայի որդւոյն Յերոամի որդին Ագայիա, 13 - Ու անոր եղբայրները, տահմապեաները, երկու հարիւր քառասունուերկու էին. ու Եմմերի որդւոյն Մեսեղամօթի որդւոյն Ահզայի որդւոյն Ազարիէլի որդին Ամեսայի, 14 - Եւ անոնց եղբայրները հարիւր քսանըութ զօրաւոր կարիճներ էին. ու անոնց վրայ իշխան Ագեգողիմի որդին Զարգիէլ էր :

15 - Ու Ղևտացիներէն՝ Բունիի որդւոյն Ասաբիայի որդւոյն Եզրիկամի որդւոյն Ասուբի որդին Սեմույիա, 16 - Նաև Սաբեգա ու Յովգաբագ, որոնք Ղևտացոց իշխաններէն էին, Ասաուծոյ տանը արտաքին գործին վրայ էին: 17 - Եւ Ասափի որդւոյն Զարգիի որդւոյն Միքայի որդին Մաթանիա եւ Բեգուի որդին Սալուայի որդին Աբգա էր: 18 - Սուրբ քաղաքին մէջ բնակող բոլոր Ղևտացիները երկու հարիւր ութսունըջորս էին:

19 - Եւ դռնապանները՝ Ակկուբ ու Տեղմոն, ու անոնց եղբայրները, դռներուն պահապանները, հարիւր եօթանասունուերկու էին:

20 - Եւ Իսրայէլի, քահանաներուն ու Ղևտացիներուն մնացորդը, Յուգայի բոլոր քաղաքներուն մէջ, ամէն մարդ իր ժառանգութեանը մէջ էր: 21 - Բայց Նաթանայիմները Ոփաղի մէջ կը բնակէին. և Սիա ու Գիսփա Նաթանայիմներուն վրայ էին: 22 - Ու Երուսաղէմի մէջ Ղևտացոց վերակացուն՝ Միքայի որդւոյն Մաթանիայի որդւոյն

Ասաբիայի որդւոյն, Բանիի որդին Ոզի էր, Ասափի որդիներէն, Երգեցողներէն, որոնք Ասաուծոյ տանը գործին վրայ էին. 23 - Վասն զի անոնց համար թագաւորը հրաման տուեր էր, որ երգեցողներուն օրէ օր ուճիկ արուի: 24 - Եւ Յուգայեան Զարայի որդիներէն Մասիգեբէլի որդին Փեթայիա ժողովուրդին ամէն գործին մէջ թագաւորին գործակալն էր:

25 - Ու Յուգայի որդիներէն գեղերու ու արտերու մէջ բնակեցան, այսինքն Կարիաթ-արբայի ու անոր գեղերուն մէջ, Գեբօնի ու անոր գեղերուն մէջ, Կաբեսէլի ու անոր գեղերուն մէջ, 26 - Ու Յեսուայի ու Մօլազայի ու Բեթփաղէթի, 27 - Եւ Ասեր-սուաղի ու Բերսաբէէի ու անոր գեղերուն մէջ, 28 - Եւ Սիկելակի, ու Մեքոնայի և անոր գեղերուն մէջ, 29 - Ու Ենուեմօնի, Սարայի, Յերիմօթի, 30 - Զանովի, Ոգողամի ու անոնց գեղերուն մէջ, Լաբիսի ու անոր արտերուն մէջ, Ագեկայի ու անոր գեղերուն մէջ, ու Բերսաբէէէ մինչև Ենովմի ձորը բնակեցան:

31 - Ու Բենիամինի որդիները՝ Գաբայէ մինչև Մաքմաս, Այիա, ու Բեթէլ ու անոր գեղերուն մէջ, 32 - Անաթովթ, Նոբ, Անանիա, 33 - Հասոր, Ռամա, Գեթթայիմ, 34 - Հագիգ, Սեբոյիմ, Նեբաղագ, 35 - Ղովգ, Ովնով ու Գեքարասիմ բնակեցան:

36 - Ու Ղևտացիներէն ու Յուգայի ու Բենիամինի մէջ բաժնուած էին:

ԳԼ ԺԲ

Եւ Սաղաթիէեան Զօրաբաբէլի ու Յեսուի հետ ելլող քահանաները ու Ղևտացիները ասոնք են. Սարայիա, Երեմիա, Եզրաս, 2 - Ամարիա, Մալուբ, Քեստուս, 3 - Սեքենիա, Հուեուս, Մերամօթ, 4 - Ագգով, Կանաթօն, Աբիա, 5 - Միամին, Մովագիա, Բեղգա, 6 - Սեմույիա, Յովարիբ, Յեգայիա, 7 - Սալլու, Ամնի, Քեղկիա, Յեգայիա: Յեսուի օրերը ասոնք էին. քահանաներուն իշխանները իրենց եղբայրներովը:

8 - Ու Ղևտացիք, Յեսու, Բանուի, Կագմիէլ, Սարարիա, Յուգա ու Մաթանիա. սափկա իր եղբայրներուն հետ

օրհնութիւններուն վրայ էր. 9 - Եւ անոնց եղբայրները, Բակբոկիա և Ուննի, անոնց դիմաց իրենց կարգին մէջ կը կայնէին :

10 - Ու Յեսու ծնաւ Յովակիմը, և Յովակիմ ծնաւ Եղիասիբը, ու Եղիասիբ ծնաւ Յովիադան, 11 - Եւ Յովիադա ծնաւ Յովնաթանը, ու Յովնաթան ծնաւ Յագուուան :

12 - Եւ Յովակիմի օրերը տոհմապետ քահանաները տանք էին . Սարայիայէ Մարայիա, Երեմիայէ Անանիա, 13 - Եզրասէ Մեսուղամ, Ամարիայէ Յօհանան, 14 - Մալուքէ Յովնաթան, Սաբանիայէ Յովսէփ, 15 - Հարիմէ Եգնա, Մարիօթէ Քեղկայ, 16 - Ադգոփէ Զաքարիա, Կանաթօնէ Մեսուղամ, 17 - Աբիայէ Զեքրի, Մինիամինէ, Մովադիայէ Փաղաի, 18 - Բեղգայէ Սամուա, Սեմոյիայէ Յովնաթան, 19 - Յովարիբէ Մաթանայ, Յեդայիայէ Ոգի, 20 - Սալլուէ Կալլայ, Ամնկէ Եբեր, 21 - Քեղկիայէ Ասաբիա, Յեդայիայէ Նաթանայէլ :

22 - Եղիասիբի, Յովիադայի, Յօհանանի ու Յագուուայի օրերը Ղևտացիք, այսինքն անոնց տոհմապետները, գրուեցան . նաև քահանաները՝ մինչև Պաւսից Գարեհի թագաւորութիւնը : 23 - Ղևիի որդիներուն տոհմապետները մինչև Եղիասիբեան Յօհանանի օրերը ժամանակագրութեան գիրքին մէջ գրուեցան : 24 - Ու Ղևտացաց իշխանները Ասաբիա, Սարաբիա, ու Կադմիէլի որդին Յեսու էին . և անոնց եղբայրները անոնց առջև էլ իւրեքին դաս դասի դէմ, որպէս զի Աստուծոյ մարդուն Գաւթի Տրամոյածին պէս օրհնութիւն ու գոհութիւն մատուցանէին : 25 - Մաթանիա, Բակբոկիա, Աբգիա, Մեսուղամ, Տեղման «- Ակկուբ դրան շտեմարաններուն մէջ պահպանութիւն ընող դռնապաններն էին : 26 - Յովսէփեկեան Յեսուի որդւոյն Յովակիմի օրերը, ու Նեեմիա կառավարչին ու Եզրաս քահանային «- դպիրին օրերը տանք էին :

27 - Ու Երուսաղէմի պարսպին նաւակատեաց տանը Ղևտացիները փնտուեցին իրենց բոլոր աեղերէն, որպէս զի զանաք Երուսաղէմ բերեն, ու նաւակատիբը ուրախութեամբ, գոհութեամբ, օրհնութիւններով, ծնծղաներով, տաւիղներով ու քնարներով

կատարեն : 28 - Ու երգեցողներուն որդիները Երուսաղէմի շրջակայ աեղերէն, ու Նեափաթացաց գեղերէն,

29 - Եւ *Փաղգաղայի տունէն՝ ու Փաբայի ու Ազամօթի դաշտերէն ժողովուեցան . վասն զի երգեցողները Երուսաղէմի բոլորաբը իրենց գեղեր շինեք էին : 30 - Եւ քահանաները ու Ղևտացիները սրբուեցան, և ժողովուրդը ու դռները և պարիսպը սրբեցին :

31 - Եւ Յուդայի իշխանները պարսպին վրայ հանեցի, ու գոհութիւն երգող երկու մեծ դաս կարգեցի . Զէւ պարսպին վրայ աջ կողմը դէպ ի Աղբից դուռը՝ Իբթաբ . 32 - Եւ անոր ետեւէն Ովսէիա ու Յուդայի իշխաններուն կէտր գացին . 33 - Նաև Ազարիա, Եզրաս, Մեսուղամ, Յուդա, 34 - Բենիամին, Սեմոյիա ու Երեմիա . 35 - Եւ փողերով, քահանաներուն որդիներէն, Ասափի որդւոյն Զաքուրի որդւոյն Միքիայի որդւոյն Մաթանիայի որդւոյն Սեմոյիայի որդւոյն Յովնաթանի որդին Զաքարիա . 36 - Ու անոր եղբայրները՝ Սեմոյիա, Ազարիէլ, Միլալայ, Գիլալայ, Մաայ, Նաթանայէլ, Յուդա «- Անանի Աստուծոյ մարդուն Գաւթի երգաց նուագարաններովը Իբթաբին, ու անոնց առջևէն Եզրաս դպիրը . 37 - Եւ իրենց առջև եղող Աղբիւրի դուռը էլ «- ու Գաւթի քաղաքին տափճաններէն պարսպին տափճանը ելան, Գաւթի տանը վրայէն դէպ ի արեւելք մինչև Զուրի դուռը :

38 - Եւ գոհութիւն խրատներուն միւս դասը դիմացէն կ'երթային . ու ես՝ ժողովուրդին կէտին հետ պարսպին վրայ՝ Փուռերուն աշտարակէն մինչև լայն պարիսպը, 39 - Ու Եփրեմի դրանը վրայէն, և Հին դրանը վրայ, ու Զկանց դրանը, և Անանայէլի աշտարակին ու Մէայի աշտարակին վրայ, մինչև Ոչխարաց դուռը անոնց ետևէն Իբթաբի . ու Բանաի դուռը կայնեցան . 40 - Եւ գոհութիւն երգողներուն երկու դասը Աստուծոյ տանը մէջ կայնեցան . Կայնայէ՝ ոչ ես ու տափկաններուն կէտը՝ սրոնք ինծի հետ էին . 41 - Նաև քահանաները, Եղիակիմ, Մասսիա, Մինիամին, Միքիա Եղիովէնայի,

*Կա՛մ, Բեթգաղգաղայէ

Չարարիա - Անանիա՝ փողերով . 42 - Եւ Մատաիա, Սեմայիա, Եզիազար, Ոզի, Յօհանան, Մեղքիա, Եղամ՝ ու Եզեր: Այն ատեն երգեցողները իրենց վերահացունին Յեզերիայի հետ ձայներնին վերցուցին: 43 - Եւ այն օրը մեծ զոհեր մատուցին և ուրախութիւն ըրին, վասն զի Աստուած մեծ ուրախութիւնով ուրախացուց զանոնք. ու կիները և աղաքներն ալ ուրախութիւն ըրին, ու Երուսաղէմի ուրախութիւնը մինչև հեռու տեղեր լսուեցաւ:

44 - Եւ այն օրը սենեակներուն վրայ գանձերուն համար, ընծաներուն համար, երախայրի պատուներուն համար ու տասանորդներուն համար մարդիկ որոշուեցան, որպէս զի քաղաքներուն ագարակներէն քահանաներուն ու Ղևտացւոց օրինաւոր բաժինները հոն ժողովեն. քանզի Յուդա կայնող քահանաներուն ու Ղևտացւոց վրայ ուրախացաւ. 45 - Վասն զի անոնք իրենց Աստուծոյն հրամանը ու սրբուելուն հրամանը կը պահէին, նոյնպէս ալ երգեցողները և դռնապանները՝ Իաւիթի - անոր որդւոյն Սողոմոնի պատուրածին համեմատ: 46 - Վասն զի առաջ Իաւիթի ու Ասափի օրերը երգեցողներու գլխաւորներ կային, և զԱստուած օրհնելու ու գովելու երգեր: 47 - Ու բոլոր Իսրայէլ Չորաբաբէլի օրերը և Նէեմիայի օրերը երգեցողներուն ու դռնապաններուն օրէ օր սոսիկ կուտային. և սուրբ բաները Ղևտացւոց կուտային, Ղևտացիք ալ Ահարոնի որդիներուն կուտային:

ԳԼ. ԺԳ

Այն օրը Մովսէսի զիրքէն *կարգացուեցաւ ու ժողովուրդը լսեց՝, ու հոն գրուած գանուեցաւ որ Սմիննացիք ու Մովաբացիք Աստուծոյ ժողովքին մէջ յաւիտեան չմանեն. 2 - Որովհետև անոնք Իսրայէլի որդիները հացով ու ջրով չբիւնարեցին, հապա Բաղասամը անոնց դէմ վարձքով բռնեցին, որպէս զի զանոնք անիծէ. բայց մեր Աստուածը անէծքը օրհնութեան դարձուց: 3-Ու երբ օրինաց Խօտեբը լսեցին, բոլոր խառնուած մարդիկը Իսրայէլէ զատեցին:

*Եբբ. ժողովուրդին ականջներուն կարգացուեցաւ

4 - Բայց տակէ առաջ մեր Աստուծոյն տանը սենեակներուն վերակացուն, Եզիասիբ քահանան, Տուբիայի հետ ազգական եղեր էր, 5 - Ու անոր մեծ սենեակ մը շիներ էր այն տեղ՝ ուր առաջ հացի ընծաները, կնդրուկը ու անօթները, ու Ղևտացիներուն, երգեցողներուն և դռնապաններուն համար որոշուած ցորենին, գինիին ու իւղին տասանորդները, ու քահանաներուն Կրօնք ընծաները կը դնէին: 6 - Եւ այս ամէն բաներուն ատենը էս Երուսաղէմի մէջ չէի, վասն զի Բաբելոնի Արտաշէս թագաւորին երեսունուերկուերորդ ասորին թագաւորին գացի: Ու ժամանակէ մը ետքը թագաւորէն հրաման աւել, 7 - Ու Երուսաղէմ՝ գալով Եզիասիբի բրած չարութիւնը իմացայ, որ Աստուծոյ տանը գաւիթին մէջ Տուբիայի համար սենեակ մը շիներ էր: 8 - Եւ շատ դժուարեցայ, ու Տուբիայի բոլոր կարասիները սենեակէն դուրս նետեցի. 9 - Եւ հրաման ըրի, ու սենեակները մաքրեցին, և Աստուծոյ տանը անօթները ու հացի ընծան և կրնդրուկը նորէն հոն տարի: 10-Ու նաև իմացայ որ Ղևտացւոց բաժինները արուած չէին, վասն զի սպասուարութիւն ընող Ղևտացիները ու երգեցողները ամէնն ալ իրենց ագարակները փոխեր էին: 11 - Անոր համար ոստիկաններուն հետ վիճեցայ ու ըսի, Աստուծոյ տունը ի՞նչ պատճառաւ այսպէս թողուած է. և Ղևտացիները ժողովեցի, ու զանոնք իրենց պաշտօններուն մէջ հաստատեցի: 12 - Եւ բոլոր Յուդա ցորենին, գինիին ու իւղին տասանորդները գանձարանները տարին, 13-Եւ գանձարաններուն վրայ Սեղեմիա քահանան ու Սագովկ դպիրը ու Ղևտացիներէն Փադայիան գանձապետ կարգեցի. ու անոնց քով Մաթանիայի որդւոյն Չաքուրի որդին Անան էր. վասն զի անոնք հաւատարիմ կը սեպուէին, ու անոնց գործը իրենց եղբայրներուն բաժին տալ էր: 14 - Ով Աստուած իմ, ասոր համար զիս յիշէ, ու իմ Աստուծոյս տանը մէջ և անոր ծառայութեանը մէջ իմ բրած բարեգործութիւններս մի ջնջեր:

15 - Այն օրերը Հրէաստանի մէջ տեսայ որ շաբաթ օրը խաղող կը կոխէին. ու ցորենի որաներ կը բերէին, ու էշերու վրայ բեռ կը բեռցնէին, նաև գինի, խաղող, թուզ ու ամէն տեսակ բեռ

Գրանք շաբաթ օրը Երուսաղէմ կը բերէին. ու ես ուսելիք ծախած օրերնին՝ *գնանք յանգիմանեցի* : 16 - Եւ հոն բնակող Տիւրացիք ձուկ ու ամէն Գրանք կը տանէին, և շաբաթ օրը Յուդայի որդիներուն ու Երուսաղէմի Բնակիչներուն կը ծախէին : 17 - Եւ Յուդայի ազնուականներուն հետ վիճեցայ, ու անոնց ըսի, Այս Ի՞նչ գէշ բան է զոր դուք կ'ընէք, ու շաբաթ օրը կը պղծէք : 18 - Ահա ձեր հայրերն ալ այսպէս ըրին, ու մեր Աստուածը մեր վրայ ու այս քաղաքին վրայ այս բոլոր չարիքները բերաւ. և դուք շաբաթը պղծելով՝ Իսրայէլի վրայ բարկութիւն կ'աւելցնէք : 19 - Ուստի շաբաթէն առաջ Երուսաղէմի Դռներէն արևը քաշուածին պէս՝, հրամայեցի որ դռները գոցուին. նաև հրամայեցի որ շաբաթը չանցած չբացուին. ու դռները իմ մանչերէս կայնեցուցի, որպէս զի շաբաթ օրը ներսը բեռ չմանէ : 20 - Եւ վաճառականները ու ամէն Գրանք ծախողները մէկ երկու անգամ Երուսաղէմի դուրսը անցուցին գիշերը : 21 - Ու ես զանոնք յանգիմանեցի՝ ըսելով, Դուք ինչո՞ւ համար պարսպին քով գիշերը կ'անցնէք. եթէ մէյմըն ալ այդպէս ընէք, ձեռքս ձեր վրայ կը դնեմ : Այն ատենէն ի վեր մէյմըն ալ շաբաթ օրը չեկան : 22 - Ու Ղևտացիներուն ըսի որ զիրենք սրբեն, ու շաբաթ օրը սրբելու համար երթան դռները պահպանութիւն ընեն : Ով Աստուած իմ, ասոր համար ալ զիս յիշէ, ու քու մեծ ուղորմութեանդ համեմատ ինծի սղորմէ :

*ԵՔԲ. անոնց Գրանք վկայութիւն ըրի
 †ԵՔԲ. դռներուն վրայ շուք եղածին պէս

23 - Եւ այն օրերը Հրեաներ տեսայ, որոնք Ազովտացի, Ամիննացի ու Մովաբացի կիներ առեր էին. 24 - Ու անոնց աղաքը Հրեարէն խօսիլը աղէկ չգիտնալով՝ կէս մը Ազովտացուց լեզուն կը խօսէին, նմանապէս ուրիշ ազգերուն լեզուները : 25 - Այս պատճառաւ անոնց հետ վէճ ըրի ու զանոնք նզովեցի, և անոնցմէ մէկ քանին ծեծեցի ու մտղերնին փետեցի. և Աստուծոյ անունով զանոնք երդմեացուցի, ըսելով, Ձեր աղջիկները անոնց աղոցը չտաք, ու անոնց աղջիկներէն ձեր աղոցը կամ՝ ձեզի կէն չառնէք : 26 - Ասոնց պատճառաւ չէ՞ր, որ Իսրայէլի Սողոմոն թագաւորը մեղանչեց. ու թէպէտև շատ ազգերու մէջ անոր պէս թագաւոր չկար, և իր Աստուծոյն սիրելի էր, ու Աստուած զանրկա բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր դրաւ, *այնչ* օտարազգի կիները անոր ալ մեղանչել տուին : 27 - Եւ հիմա՝ ձեզ թողո՞ւնք որ այս բոլոր մեծ շարութիւնը ընէք, ու օտարազգի կիներ առնելով՝ մեր Աստուծոյն գէմ մեղք գործէք : 28 - Եւ մեծ քահանային Եղիսաբեի որդւոյն Յովիադայի որդիներէն Գիւ Որոնացի Սանաբաղասի փեսան էր. անոր համար զանրկա քովէս վռնեցի : 29 - Ով Աստուած իմ, զանոնք յիշէ՝ քահանայութիւնը և քահանաներուն ու Ղևտացիներուն ուխտը պղծելուն համար : 30 - Այսպէս զանոնք բոլոր օտարազգիներէն մաքրեցի, ու քահանաներուն ու Ղևտացիներուն դասերը հաստատեցի, անոնց ամէն մէկը իր պաշտօնին վրայ Գնելով. 31 - Նաև որոշուած ժամանակներուն Բերեւել փայտի ընծային համար՝ ու երախայրի պատուհներուն համար հոգ Գրեի : Ով Աստուած իմ, զիս ի բարին յիշէ :



ԳԻՐՔ ԵՍԹԵՐԱՅ



ԳԼՈՒԽ Ա.

Աւելաւ որ Ասուերոսի օրերը, (այսինքն այն Ասուերոսի, որ Հնդկաստանէ մինչև Եթովպիա հարիւր քսանըեօթը գաւառի վրայ թագաւորութիւն կ'ընէր,) 2 - Այն օրերը երբ Ասուերոս թագաւորը Շուշան մայրաքաղաքին մէջ իր թագաւորութեան աթոռին վրայ կը նստէր, 3 - Իր թագաւորութեան երրորդ տարին իր բոլոր իշխաններուն ու ծառաններուն կոչուելք ըրաւ . և Պարսից ու Մարաց * մեծերը, նախարարները ու գաւառաց իշխանները անոր առջև էին : 4 - Այն ատեն շատ օրեր, այսինքն հարիւր ութսուն օր, իր թագաւորութեան փառաւոր հարըստութիւնը ու իր մեծութեան պատուական շքեղութիւնը ցուցուց :

5 - Աւելաւ որ այն օրերը լմնցան, թագաւորը Շուշան մայրաքաղաքին մէջ գանուող բոլոր ժողովուրդին, մեծէն մինչև պղտիկին, թագաւորական պալատին պարտէզին գաւիթին մէջ եօթը օր կոչուելք ըրաւ : 6 - Ճերմակ բէհեզէ, կերպասէ ու կապուտակէ վարձուքներ բարակ քթանէ և ծիրանեգոյնէ չուաններով ու արծաթէ օղակներով, մարմարին սիւներէ վար կախուած էին, և պորփիւրէ, ճերմակ մարմարինէ, աղաբասարէ ու սև մարմարինէ յատակի վրայ սկիւէ ու արծաթէ նստարաններ շարձուցէին : 7 - Եւ խմելքները սկիւէ ամաններով ու տեսակ տեսակ ամաններով կու տային, ու թագաւորական գինին առատ էր, ինչպէս թագաւորին կը վայլէր : 8 - Աւելաւ իր կանոնաւոր էր, բունագասող չկար . վասն զի թագաւորը այսպէս հրամայէր էր իր տանը բոլոր վերակացուներուն, որ ամէն մէկուն ուղածին պէս ընեն : 9 - Եւ Վաշթի թագուհին ալ Ասուերոս թագաւորին պալատին մէջ կիներուն կոչուելք ըրաւ :

10 - Եօթներորդ օրը, երբ թագա-

ւորին սիրար գինիէն զուարթացեր էր, * իր առջև ծառայութիւն ընող եօթը ներքիններուն, Մէհուամնի, Բիզթայի, Արբոնայի, Բիզթայի, Աբագթայի, Զեթարի ու Քարքասի ըսաւ, 11 - Ար Վաշթի թագուհին էր արքայական թագովը թագաւորին առջև բերեն, որպէս զի ժողովուրդները ու իշխանները անոր գեղեցկութիւնը տեսնեն . վասն զի անկիւ տեսքով գեղեցիկ էր : 12 - Բայց Վաշթի թագուհին ներքիններուն ձեռքով եղած թագաւորին հրամանին համեմատ երթալ չուզէց, ու թագաւորը խիստ սրդողեցաւ ու իր բարկութիւնը բորբոքեցաւ :

13 - Այն ատեն թագաւորը ժամանակները գիացող իմաստուններուն ըսաւ, (վասն զի թագաւորը ամէն օրէնք ու իրաւունք գիացողներուն այսպէս խորհուրդ կը հարցնէր . 14 - Եւ Պարսից ու Մարաց եօթը իշխանները, Կարսենա, Սեթար, Ագմիթա, Թարսիս, Մերէս, Մարսենա - Մեմուքան, որոնք անոր մօտ էին, ու թագաւորին երեսը կը տեսնէին, թագաւորութեան առաջին խորհրդականներն էին.) 15 - Օրէնքին համեմատ ինչ պէտք է ընել Վաշթի թագուհին . որովհետև Ասուերոս թագաւորին ներքիններուն ձեռքով զբոծ հրամանը չկատարեց :

16 - Այն ատեն Մեմուքան թագաւորին ու իշխաններուն առջև ըսաւ, Վաշթի թագուհին ոչ միայն թագաւորին դէմ, հապա բոլոր իշխաններուն դէմ, ու Ասուերոս թագաւորին բոլոր գաւառներուն մէջ եղող բոլոր ժողովուրդներուն դէմ յանցանք ըրաւ .

17 - Վասն զի թագուհին բրածը բոլոր կիներուն մէջ ատրածուելով, անոնք իրենց այրերը պիտի անարգեն, ըսելով թէ Ասուերոս թագաւորը հրամայեց որ Վաշթի թագուհին իր առջև բերեն, բայց անկիւ չեկաւ : 18 - Եւ այսօր թագուհին ըրածը լսող

* Եբբ. զօրութիւնը
† Եբբ. թագաւորին ձեռքին համեմատ

* Եբբ. Ասուերոս թագաւորին
† Եբբ. նստողներն

Պարսից ու Մարաց տիկիները թագաւորին բոլոր իշխաններուն «չափ» պիտի խօսին . ու խիստ շատ անարգանք ու հակառակութիւն պիտի ըլլայ : 19 - Արդ եթէ թագաւորին հաճոյ կ'երեւնայ , իր կողմանէ հրովարտակ տարածուի , և Պարսից ու Մարաց օրէնքներուն մէջ գրուի՝ որպէս զի ետ չգտանայ , որ Վաշթի ճշմէն և Ասուերոս թագաւորին առջև չգայ , ու թագաւորը անոր տիկնութիւնը անկէ աղէկ եղող ուրիշ կնոջ մը տայ : 20 - Ու երբ թագաւորին բրած հրամանը լսուի իր բոլոր թագաւորութեան մէջ , որ շարքով արձակ է , բոլոր կիները , մեծէն մինչև պզտիկը իրենց սյրերը պիտի պատուեն :

21 - Եւ այս խօսքը թագաւորին ու իշխաններուն հաճոյ երեցաւ , ու թագաւորը Մեմուքանի բրածին պէս բրաւ : 22 - Եւ թագաւորին բոլոր գաւառներուն , ամէն մէկ գաւառին իր գրովը , ու ամէն մէկ ժողովուրդին իր լեզուովը նամակներ զրկեց , որ ամէն մարդ իր տանը մէջ աէր ըլլայ , ու իր ժողովուրդին լեզուովը խօսի :

ԳԼ Բ

Այս բաներէն ետքը , երբ Ասուերոս թագաւորին բարկութիւնը իջաւ , Վաշթին ու անոր բրածը ու անոր դէմ եղած վճիռը յիշեց : 2 - Եւ թագաւորին ծառայութիւն ընող սպասաւորները ըսին , թագաւորին համար գեղեցիկ կոյս աղջիկներ փնտռեն . 3 - Ու թագաւորը իր թագաւորութեանը բոլոր գաւառներուն մէջ վերակացուներ դնէ , որպէս զի ամէն գեղեցիկ կոյս աղջիկը ըստին , « - Շուշան մայրաքաղաքը , կանանց տունը , թագաւորին ներքինին , կիներու պահապան եղող Հեգէի , ձեռքին տակ ժողվեն , ու անոնց մաքրութեանը համար պէտք եղած բաները տրուին : 4 - Եւ թագաւորին աչքին հաճոյ երեցած աղջիկը Վաշթիի տեղ թագուհի ըլլայ : Ու այս խօսքը թագաւորին առջև հաճելի եղաւ , ու այնպէս բրաւ :

5 - Շուշան մայրաքաղաքին մէջ Հրեայ մարդ մը կար , որուն անունը Մուրթքէ էր , ու Բենիամինեան կիսի որդւոյն Աեմէիի որդւոյն Յայիրի որդին էր : 6 - Ասիկա Երուսաղէմէ գերի տար-

ուած էր այն գերիներուն հետ որոնք Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին գերի տարած Յուդայի Յեքանիա թագաւորին հետ տարուեցան : 7 - Եւ անիկա իր հօրեղբօրը աղջիկը Ադաստան , այսինքն Եսթերը , կը մնուցանէր , վասն զի անիկա հայր ու մայր չունէր . ու այս աղջիկը գեղեցիկ դէմք ու վայելուչ կերպարանք մը ունէր , և անոր հօրը ու մօրը մեռնելէն ետքը՝ Մուրթքէ զանիկա իրբև աղջիկ առեր էր իրեն :

8 - Ու երբ թագաւորին հրամանը ու հրովարտակը լսուեցաւ , և Շուշան մայրաքաղաքին մէջ Հեգէի ձեռքին տակ շատ աղջիկներ ժողվուեցան , Եսթերալ թագաւորին պալատը , կիներու պահապան եղող Հեգէի պահպանութեանը , յանձնուեցաւ : 9 - Եւ աղջիկը անոր հաճելի եղաւ ու անոր առջև շնորհք գաւաւ , և շուտով անոր մաքրութեան համար պէտք եղած բաները ու անոր սնունդը , ու թագաւորին պալատէն անոր տրուելու համար պատրաստուած եօթը աղախիները տուաւ անոր , և զանիկա իր աղախիներուն հետ կանանց տանը «Բնէն» աղէկ տեղը փոխադրեց : 10 - Եսթեր իր ազգը ու ծնունդը չյայտնեց . վասն զի Մուրթքէ անոր պատուիրէր էր որ չյայտնէ : 11 - Եւ Մուրթքէ ամէն օր կանանց տանը գաւիթին առջև կը պտրաէր , որպէս զի Եսթերի սուղջութիւնը ու անոր ինչ ըլլալիքը իմանայ :

12 - Ու երբ ամէն մէկ աղջկան կարգը կու գար Ասուերոս թագաւորին քով երթալու՝ կանանց սովորութեանը պէտատուերկու ամիսը լմննալէն ետքը , (որովհետև անոնց մաքրութեան օրերը այս կերպով , այսինքն վեց ամիս զմուռսի իւղով , ու վեց ամիս անուշաճատ խունկերով , ու կիներու մաքրութեանը վերաբերեալ բաներովը կը լմննար ,)

13 - Այն ատեն աղջիկը թագաւորին քով այսպէս կու գար . անիկա ինչ որ ուզէր՝ անոր կը տրուէր , որպէս զի իրեն հետ կանանց տունէն թագաւորին պալատը երթայ : 14 - Անիկա իրիկունը կ'երթար , ու առաւօտուն կանանց միւս տունը , հարձերուն պահապանը եղող թագաւորին ներքինին Սասագաղի ձեռքին տակ կը դառնար . անիկա մէյմին ալ թագաւորին քով չէր երթար , բայց միայն՝ եթէ թագաւորը

անոր հաւանք, ու անհիկա անուանով կանչուեր:

15 - Եւ թագաւորին քով երթալու կարգը Մուրթքէի հօրեղբօրը Աբեքէլի աղջկանը Եսթերի գալով, (զոր Մուրթքէի իրեն աղջիկ ըրեր էր,) անհիկա կիներու պահապանը եղող թագաւորին Հեգէ ներքինին ըսածէն զտա ուրիշ բան չիւնդրեց. ու Եսթեր բոլոր զինք տեսնողներուն առջև շնորհք գտաւ. 16 - Ու Եսթեր Ասուերոս թագաւորին քով անոր թագաւորական պալատը առնուեցաւ տասներորդ ամիսը, այսինքն թէքէթ ամսուն մէջ, անոր թագաւորութեանը եօթներորդ տարին: 17 - Եւ թագաւորը Եսթերը ամէն կիներէն աւելի սիրեց, ու անհիկա անոր առջև ամէն աղջիկներէն աւելի սէր ու շնորհք գտաւ. և թագաւորական թագը անոր գլուխը դրաւ, ու զանհիկա Վաշթիի տեղ թագուհի ըրաւ: 18 - Եւ թագաւորը իր բոլոր իշխաններուն ու ծառաներուն մեծ կոչունք ըրաւ, այսինքն Եսթերի կոչունք. ու գաւառներուն հանգրստութիւն շնորհեց, և թագաւորի վայելուչ պարգևներ տուաւ:

19 - Ու երբ երկրորդ անգամ աղջիկներ ժողովեցին, Մուրթքէ թագաւորին դուռը կը նստէր: 20 - Եսթեր իր ծնունդը ու իր ազգը յայտնած չէր, ինչպէս Մուրթքէ անոր պատուիրեք էր. վասն զի Եսթեր Մուրթքէի ըսածը կ'ընէր՝ անոր քով մեծցած առեւին պէս:

21 - Այն օրերը երբ Մուրթքէ թագաւորին դուռը կը նստէր, դրան պահապաններէն Բիգթան ու Թարէս, թագաւորին երկու ներքինիները, սրգողելով, Ասուերոս թագաւորին վրայ ձեռք երկնցնել խորհեցան: 22 - Եւ Մուրթքէ այս բանը իմանալով՝ Եսթեր թագուհիին յայտնեց. ու Եսթեր Մուրթքէի անուանով թագաւորին պատմեց: 23 - Եւ այս բանը քննուելով ճշմարիտ գանուեցաւ. ու անոնց երկուքն ալ ծառի վրայ կախուեցան. ու թագաւորին առջև ժամանակագրութեան գիրքին մէջ գրուեցաւ:

Գ. Գ

Եւ այս բաներէն ետքը Ասուերոս թագաւորը Ազադացի Ամագասթայի

որդին Համանը մեծցուց ու զանհիկա բարձրացուց, ու անոր աթոռը իրեն հետ եղող բոլոր իշխաններուն վերի կողմը դրաւ: 2 - Եւ թագաւորին դուռը եղող թագաւորին բոլոր ծառաները ծնրագրութեամբ երկրպագութիւն կ'ընէին Համանի. վասն զի թագաւորը անոր համար այսպէս հրամայեք էր. բայց Մուրթքէ ծնրագրութիւն ու երկրպագութիւն չըրաւ: 3 - Եւ թագաւորին դուռը եղող թագաւորին ծառաները Մուրթքէի ըսին, ինչո՞ւ համար դուն թագաւորին հրամանէն դուրս կ'ելլես: 4 - Ու անոնք ամէն օր անոր կը զրուցէին. ու երբ անոնց մտիկ չըրաւ, այն ատեն Համանի իմացուցին, որպէս զի տեսնեն թէ՛ Մուրթքէի բանը ո՛ւր պիտի կայանայ. վասն զի անհիկա իր Հրեայ ըլլալը անոնց զրուցեք էր: 5 - Ու երբ Համան տեսաւ որ Մուրթքէ իրեն ծնրագրութիւն ու երկրպագութիւն չըներ, Համան խիստ բարկացաւ: 6 - Ու միայն Մուրթքէի ձեռք զարնելը անոր աչքին ցած բան մը երեցաւ. և որովհետև Մուրթքէի ազգը անոր իմացուցեք էին, Համան Մուրթքէի ազգը, այսինքն Ասուերոսի բոլոր թագաւորութեանը մէջ եղող բոլոր Հրեաները կորսնցնել խորհեցաւ:

7 - Առաջին ամսուն, այսինքն Նիսան ամսուն, մէջ Ասուերոս թագաւորին երկոտասաներորդ տարին մինչև երկոտասաներորդ տարի, այսինքն Ազար ամիսը, օրէ օր ու ամսէ ամիս Համանի առջև Փուր, այսինքն վիճակ, ձգեցին:

8 - Եւ Համան Ասուերոս թագաւորին ըսաւ, Քու թագաւորութեանդ բոլոր գաւառներուն մէջ ժողովուրդներուն մէջ ցրուած ու տարածուած ազգ մը կայ. ու անոնց օրէնքները ամէն ժողովուրդներուն օրէնքներէն տարբեր են, ու թագաւորին օրէնքները չեն կատարեր. ուստի չվայլեր որ թագաւորը անոնց թոյլտուութիւն ընէ: 9 - Եթէ թագաւորին հաճոյ կ'երևնայ, +հրաման արուի՝ որ զանոնք կորսնցնեն, ու ես պաշտօնատարներուն ձեռքը, թագաւորին գանձը բերելու համար, տասը հազար տաղանդ արծաթ կը կշռեմ

*Կ-ժ, արդեօք Մուրթքէ իր խօսքերուն վրայ հաստատ պիտի կենայ +եք: գրուի

*Եք: փնտուեցին

10 - Այն ստեղծութիւնը թագաւորը իր ձեռքէն իր մատանին հանեց, ու զանկա շրէից թշնամիին, Ագագացի Ամագաթայի որդւոյն Համանի, տրւաւ: 11 - Եւ թագաւորը Համանի բաւ, Այն արծաթը քեզի կու տամ, ու այն ազգն ալ, որպէս զի քու աչքերուդ հաճոյ երեցածը ընես անոնց:

12 - Եւ առաջին ամուսն երեքտասներորդ օրը թագաւորին գրագիրները կանչուեցան, ու թագաւորին նախարարներուն, ու ամէն գաւառներուն վրայ եղող կուսակալներուն, և ամէն գաւառին ամէն մէկ ժողովուրդին իշխաններուն իրենց գրովը, ու ամէն ժողովուրդին իր լեզուովը Համանի բոլոր հրամայածին պէս գրուեցաւ. Ասուերոս թագաւորին անունովը գրուեցաւ, ու թագաւորին մատանիովը կնքուեցաւ: 13 - Եւ սուրհանգակներու ձեռքով թագաւորին ամէն գաւառները հրովարտակներ զրկուեցան, որ մէկ օրուան մէջ, երկուտասներորդ ամուսն, այսինքն Ագար ամուսն, երեքտասներորդ օրը, բոլոր Հրեաները, երիտասարդներէն մինչև ծերերը, նաև տղաքները ու կիները կոտորեն, մեռցնեն ու կորսնցնեն. և անոնց «նեցածը էքրաւար յափշտակեն: 14 - Ու հրովարտակին խառնուեցրը այս էր՝ որ հրամանը ամէն մէկ գաւառին մէջ հրատարակուի, ու ամէն ժողովուրդներուն բացատրուի, որպէս զի այն օրուան համար պատրաստ գանուին: 15 - Սուրհանգակները թագաւորին հրամանէն ստիպուելով ճամբայ ելան, ու հրովարտակը Շուշան մայրաքաղաքին մէջ ալ հրատարակուեցաւ. և թագաւորը ու Համան խմելու նոտան, սակայն Շուշան քաղաքը շփոթութեան մէջ էր:

ԳԼ Գ

Ու երբ Մուրթբէ բոլոր եղածները իմացաւ, Մուրթբէ իր հանգերձները պատուեց և քուրձ հագաւ, ու զքան մոխիր ցանեց, ու քաղաքին հրատարակը ելլելով մեծ ու յողբայի ձայնով ազազակեց. 2 - Ու մինչև թագաւորին դրանը առջև եկաւ խառնուեցաւ. վասն զի

* Եքր. կը արուի † Եքր. օրինակը
 † Եքր. արուեցաւ † Եքր. գաւան

քուրձ հագած Բարդ Տը չէր կրնար թագաւորին դռնէն ներս մտնել: 3 - Եւ ամէն գաւառներուն մէջ, ուր որ թագաւորին հրամանը ու հրովարտակը կը հասնէր, Հրեաները մեծ սուգ կ'ուսնէնային, ծով կը կենային, կու լային ու կ'ողբային. և շատերը քուրձի ու մոխրի վրայ կը պառկէին:

4 - Ու Եսթերի ազգայինները ու ներքինները եկան անոր պատմեցին. և թագաւորին մեծ ապէս խառնուեցաւ, ու հանգերձներ զրկեց որ Մուրթբէի հագցրնեն, ու անոր վրայէն քուրձը հանեն. բայց անկա չընդունեց: 5 - Ու Եսթեր Հաթաք կանչեց, որ թագաւորին ներքիններէն մէկն էր, (զոր Ռաբ-բը անոր սպասաւոր տուեր էր,) ու անոր հրամայեց որ Մուրթբէէ հասկընայ թէ այս ինչ պիտի ըլլայ ու ինչո՛ւ համար է: 6 - Եւ Հաթաք Մուրթբէի գնաց, որ թագաւորին դրանը առջև եղող քաղաքի հրատարակին մէջ էր: 7 - Ու Մուրթբէ բոլոր իրեն պատահած բաները անոր յայտնեց, նաև Համանի սակարկութիւնը՝ որով թագաւորին գանձին արծաթ ալ խոտացեր էր Հրեաներուն համար, որպէս զի զանոնք կորսնցնէ: 8 - Եւ զանոնք կորսնցնելու համար Շուշանի մէջ հրատարակուած հրովարտակին օրինակը անոր տուաւ, որպէս զի Եսթերի ցուցնէ ու հասկընէ, և անոր պատուիրէ որ թագաւորին քով երթայ, և անոր ազաչէ, ու անոր առջև իր ազգին համար աղաթ խնդրէ: 9 - Եւ Հաթաք գնաց ու Մուրթբէի խօսքերը Եսթերի պատմեց:

10 - Ու Եսթեր Հաթաքի հետ խօսեցաւ, ու հրամայեց «Եւ Մուրթբէի այսպէս աղաթիւն քանի. 11 - Թագաւորին բոլոր ծառաները, ու թագաւորին գաւառներուն ժողովուրդները աչի գիտեն, որ այր կամ կին մարդ մը եթէ չկանչուած՝ թագաւորին ներքին գաւառի մտնէ, զանկա մեռցնելու համար օրէնք մը կայ. ու անկա միայն կ'ապրի, որու որ թագաւորը էքսակի գաւազանը կ'երկնցնէ. և հիմա երեսուն օր է որ ես թագաւորին քով մտնելու կանչուած չեմ: 12 - Ու Եսթերի խօսքերը Մուրթբէի պատմեցին: 13 - Եւ Մուրթբէ բաւ որ Եսթերի այսպէս պատասխան տանին. Գուն մի կարծեր որ թագաւորին տունը ըլլալով՝ բոլոր Հրեաներէն դուն միայն

պիտի ազատիս: 14 - Վասն զի այս ժամանակին մէջ եթէ դուն լսես, Հրեաներուն ուրիշ տեղէ մը օգնութիւն ու ազատում կու գայ, բայց դուն ու քու հօրդ տունը կը կորսուիք. և ո՞վ գիտէ, թերևս դուն այսպիսի տանի մը համար թագուհի եղար:

15 - Աւ Եսթեր ըսաւ որ Մուրթքէի «յապէ» պատասխան տանին. 16 - Գնա դուն Շուշանի մէջ եղող բոլոր Հրեաները ժողովէ, ու ինծի համար ծով պահեցէք, զիչէր ցորեկ երեք օր մի ուտէք ու մի խմէք. նոյնպէս ալ ես իմ՝ ազախիններովս ծով կը պահեմ, ու այնպէս թագաւորին առջև կ'ելլեմ, թէպէտև օրէնքի դէմ է. ու եթէ մեռնիմ՝ թող մեռնիմ: 17 - Այն ատեն Մուրթքէ գնաց, ու ըրաւ այն ամէնուն. համեմատ՝ զոր Եսթեր իրեն պատուիրեր էր:

ԳԼ. Ե

Աւ եղաւ որ երրորդ օրը Եսթեր իր թագաւորական զգեստները հագաւ, ու թագաւորին ասնը ներքին գաւիթին մէջ՝ թագաւորին ասնը դիմաց կայնեցաւ. և թագաւորը թագաւորական պալատին մէջ՝ պալատին դրանը դիմաց իր թագաւորական աթոռին վրայ նստաւ էր: 2 - Աւ երբ թագաւորը Եսթեր թագուհին տեսաւ որ գաւիթին մէջ կը կայնէր, Եսթեր շնորհք գտաւ անոր առջև, և թագաւորը իր ձեռքը եղած ոսկի գաւազանը Եսթերի երկնցուց. ու Եսթեր մօտեցաւ ու գաւազանին ծայրին դպաւ: 3 - Եւ թագաւորը անոր ըսաւ, Ով Եսթեր թագուհի, քեզի ի՞նչ եղաւ, և ուզածդ ի՞նչ է, մինչև թագաւորութեանը կէսը քեզի տրուի: 4 - Աւ Եսթեր ըսաւ, Եթէ թագաւորը կը հաճի, այսօր թագաւորը Համանի հետ իրեն ըրած կոչունքիս գայ: 5 - Եւ թագաւորը ըսաւ, Շուտով Համանը կանչեցէք, որպէս զի Եսթերի ըսածը կատարէ. ու թագաւորը Համանի հետ Եսթերի ըրած կոչունքին գնաց:

6 - Աւ երբ գինի կը խմէին, թագաւորը Եսթերի ըսաւ, Ի՞նչ է քու խրնդիրքդ. որո՞շէ, ու քեզի պիտի տրուի, և ի՞նչ է քու աղաչանքդ. մինչև թագաւորութեանը կէսը պիտի կատարուի: 7 - Աւ Եսթեր պատասխան տուաւ ու ըսաւ, Իմ՝ աղաչանքս ու ինդիրքս այս է: 8 - Եթէ թագաւորին առջև

շնորհք գտայ, ու եթէ թագաւորը կը հաճի իմ՝ ինդիրքս տալու ու իմ՝ աղաչանքս կատարելու, թող թագաւորը ու Համան «բէ» իրենց համար ընելու կոչունքիս գան, ու վաղը թագաւորին խօսքին պէս կ'ընեմ:

9 - Եւ Համան այն օրը զուարթ և ուրախ սրտով դուրս ելաւ. բայց երբ Համան թագաւորին դրանը մէջ Մուրթքէն տեսաւ, որ իրեն սաք չէր ելլեր ու իր տեղէն չէր շարժեր, Համանի սիրար շատ նեղացաւ Մուրթքէի վրայ: 10 - Բայց Համան ինքզինք զրուակելով իր տունը գնաց. ու «բէ» զրկեց իր բարեկամները ու կինը Չերէսը կանչել տուաւ: 11 - Եւ Համան պատմեց անոնց իր հարստութեանը փառքը ու իր որդիներուն շատութիւնը, և այն ամէն բաները՝ որոնցմով թագաւորը զինք մեծցուցեր էր, և թէ ի՞նչպէս իշխաններէն ու թագաւորին ծառաներէն աւելի բարձրացուցեր էր: 12 - Աւ Համան ըսաւ, Նաև Եսթեր թագուհին թագաւորին հետ ինծմէ՝ գատ մէ՛կը՝ *չհրաւիրեց իր ըրած կոչունքին. ու վաղուան համար ալ զիս թագաւորին հետ հրաւիրեց: 13 - Բայց այս ամէնէն բնաւ գոհ չեմ, քանի որ Հրեայ Մուրթքէն թագաւորին դուռը նստած կը տեսնեմ: 14 - Եւ անոր կինը Չերէս ու անոր բոլոր բարեկամները անոր ըսին, Յիսուս կանգուն բարձրութեամբ փայտ մը թող շինուի, ու վաղ առտու թագաւորին ըսէ, որ Մուրթքէ անոր վրայ կախուի. և դուն թագաւորին հետ ուրախ «բէ»՛՛ կոչունքը գնա: Աւ այս խօսքը Համանի հաճոյ երեցաւ, ու փայտը պատրաստեց:

ԳԼ. Զ

Այն զիչէրը թագաւորին քունը փախաւ, ու հրամայեց որ դիպուածները պատմող յիշատակաց գիրքը բերեն. ու թագաւորին առջև կարգացուեցաւ: 2 - Աւ զրուած գտնուեցաւ որ Մուրթքէ՝ դրանը պահպանութիւն ընող՝ թագաւորին երկու ներքինիներուն, Բիզթանի ու Թարէսի, համար իմացուցեր էր, թէ անոնք Ասուերոս թագաւորին վրայ ձեռք երկնցնել ուզեր էին: 3 - Եւ թագաւորը ըսաւ,

*Եթէ. չմացուց

Ասոր փոխարէն ի՞նչ պատիւ կամ մեծութիւն արուեցաւ Մուրթքէի . ու թագաւորին ծառայութիւն ընող պատանինները ըսին, Անոր բան մը չեղաւ : 4 - Եւ թագաւորը ըսաւ , Գաւիթը ո՞վ կայ . (ու Համան թագաւորին պալատին գուբաի գաւիթը եկեր էր թագաւորին խօսելու , որ Մուրթքէն կտիւէ այն փայտին վրայ զոր ինք անոր համար պատրաստեր էր .) 5 - Եւ թագաւորին պատանինները անոր ըսին , Ահա Համան գաւիթը կը սպասէ . ու թագաւորը ըսաւ , Թող ներս գայ :

6 - Աւ երբ Համան ներս մտաւ , թագաւորը անոր ըսաւ , Ի՞նչ ընել պէտք է այն մարդուն , որու թագաւորը պատիւ ընել կ'ուզէ : Եւ Համան իր սրտին մէջ ըսաւ , Թագաւորը ինծի մերիչ որո՞ւ պատիւ ընել պիտի ուզէ :

7 - Աւ Համան ըսաւ թագաւորին , Այն մարդուն համար՝ որու թագաւորը պատիւ ընել կ'ուզէ , 8 - Թագաւորին հագած թագաւորական զգեստը , ու թագաւորին հեծած ձին , ու անոր գլուխը դրուած թագաւորական թագը բերեն . 9 - Եւ զգեստը ու ձին թագաւորին խիտ պատուաւոր իշխաններէն մէկուն ձեռքը արուի . ու հագցնեն այն մարդուն՝ որու թագաւորը պատիւ ընել կ'ուզէ . ու ձիուն վրայ հեծցնեն և քաղաքին փողոցին մէջէն անցնեն , ու առջևէն կանչեն «- ըսէն , Այսպէս պիտի ըլլայ այն մարդուն , որու թագաւորը պատիւ տալ կ'ուզէ : 10 - Այն ատեն թագաւորը Համանի ըսաւ , Շուտով ըսածիդ պէս զգեստը ու ձին առ , ու թագաւորին դուռը նստող Հրեայ Մուրթքէի այնպէս ըրէ . քու ըսածէդ բնաւ բան մը պակաս չըլլայ :

11 - Եւ Համան զգեստը ու ձին առաւ , ու գգեաբ Մուրթքէի հագցնելով՝ զանհկա չեալ ձեռք հեծցուց , և քաղաքին փողոցէն անցնաց , ու առջևէն *կը կանչէր , Այսպէս պիտի ըլլայ այն մարդուն , որու թագաւորը պատիւ տալ կ'ուզէ : 12 - Եւ Մուրթքէ թագաւորին դուռը դարձաւ . բայց Համան արտում ու գլուխը ծածկած՝ շուտով իր տունը քաշուեցաւ : 13 - Եւ Համան իր կնոջ Ձերէսի ու բոլոր բարեկամներուն պատմեց ամէն ինչ որ իր գլուխը եկած էր . և անոր իմաստունները ու անոր կինը Ձերէս անոր ըսին , Եթէ Մուրթքէ (որուն առջև դուն իյնալու սկսար) Հրէից ազգէն է , դուն անոր պիտի չյաղթես , հապա անոր առջև անշուշտ պիտի իյնաս : 14 - Երբ անոք տակաւին անոր հետ կը խօսէին , թագաւորին ներքինները հասան , սրպէս զի Համանը շուտով Եսթերի պատրաստած կոչուեցին տանին :

տունները ու անոր կինը Ձերէս անոր ըսին , Եթէ Մուրթքէ (որուն առջև դուն իյնալու սկսար) Հրէից ազգէն է , դուն անոր պիտի չյաղթես , հապա անոր առջև անշուշտ պիտի իյնաս : 14 - Երբ անոք տակաւին անոր հետ կը խօսէին , թագաւորին ներքինները հասան , սրպէս զի Համանը շուտով Եսթերի պատրաստած կոչուեցին տանին :

ԳԼ Ե

Եւ թագաւորը Համանի հետ Եսթեր թագուհիին քով *կոչուեցի գնաց : 2 - Աւ թագաւորը երկրորդ օրն ալ գինի խմելու ատեն Եսթերի ըսաւ , Ով Եսթեր թագուհի , ի՞նչ է քու խնդիրքդ . զո՞ւչէ , ու քեզի պիտի արուի . և ի՞նչ է քու ազաչանքդ . մինչև թագաւորութեանը կէսը պիտի կատարուի :

3 - Աւ Եսթեր թագուհին պատասխան տուաւ ու ըսաւ , Եթէ քու առջևդ շնորհք գտայ , ով թագաւոր , ու եթէ թագաւորին հաճոյ կ'երևնայ , խնդիրքովս իմ հագիս՝ ու աղաչանքովս իմ ազգս ինծի արուի . 4 - Վասն զի թէ՛ ես և թէ՛ իմ ազգս կտարուելու , մեռնելու ու բնաջինջ ըլլալու ծախուեցանք . ու եթէ ծառայ ու աղախին ըլլալու ծախուեցինք , բան մը չէի խօսեր . թէպէտև թշնամին թագաւորին +աշտ փնար չէր կրնար հասուցանել :

5 - Եւ Ասուերոս թագաւորը խօսեցաւ , ու Եսթեր թագուհիին ըսաւ , Ո՞վ է անհկա , և ո՞ւր է անհկա , որ այս բանը ընելու համար ձեռքդ ու թշնամին այս շար Համանն է . ու Համան թագաւորին ու թագուհիին երեսէն խիտ վախցաւ :

7 - Եւ թագաւորը գինի խմելէն բարկութեամբ ելաւ , պալատին պարտէզը քնաց . բայց Համան հաճ մնաց , որպէս զի իր անձին համար Եսթեր թագուհիին աղաչէ . վասն զի ատեալ որ իր վրայ չարիքը հասած է թագաւորէն :

8 - Աւ թագաւորը երբ պալատին պարտէզէն կոչուեցին սենեակը դարձաւ , Համան Եսթերի եղած բազմոցին վրայ ինկած էր . ու թագաւորը ըսաւ ,

*կա՛մ, մէկը կը կանչէր

*Եբբ. խմելու

Միթէ իմ տանս մէջ իմ քովս թագուհին ալ պիտի բռնագատէ . այս խօսքը թագաւորին բերնէն ելածին պէս Համանի երեսը ծածկեցին : 9 - Այն ատեն Արբանա , ներքինիներէն մէկը , թագաւորին առջև ըսաւ , Ահա այն յիսուն կանգուն բարձր փայտը , զոր Համան թագաւորին բարերարութիւն *ընող Մուրթքէի համար պատրաստեց , Համանի տանը մէջ կը կենայ : Ու թագաւորը ըսաւ , Զանկա տնոր վրայ կախեցէք : 10 - Եւ Համանը Մուրթքէի համար պատրաստած փայտին վրայ կախեցին : Այն ատեն թագաւորին բարկութիւնը իջաւ :

ԳԼ Ը

Այն օրը Ասուերոս թագաւորը Հրէից թշնամիին Համանի տունը Եսթեր թագուհին պարգեւեց . ու Մուրթքէ թագաւորին առջև եկաւ , վասն զի Եսթեր Բ-դ-արին յայտներ էր թէ անկա իրեն ի՛նչ պիտի տայ : 2 - Եւ թագաւորը առաւ իր մատանին , զոր Համանէ հաներ էր , ու զանկա Մուրթքէի տուաւ , ու Եսթեր Համանի տանը վրայ դրաւ Մուրթքէն :

3 - Ու Եսթեր նորէն թագաւորին առջև խօսեցաւ , ու անոր սաքերը ինկաւ , և լալով անոր աղաչեց որ Ագագացի Համանի չարութիւնը՝ ու Հրէից դէմ անոր հնարած հնարքը խափանէ : 4 - Եւ թագաւորը ոսկի գաւազանը Եսթերի երկնցուց . ու Եսթեր ելաւ ու թագաւորին առջև կայնեցաւ , 5 - Ու ըսաւ , Եթէ թագաւորին հաճոյ կ'երևնայ , ու ես քու առջև շնորհք գտայ , ու եթէ այս բանը թագաւորին առջև ուղիղ կ'երևնայ , ու ես քու աչքերուդ հաճոյ եմ , թող գրուի որ Ագագացի Ամագաթայի որդւոյն Համանի հնարքը , այսինքն թագաւորին բոլոր գաւառներուն մէջ եղող Հրեաները կորսնցնելու համար անոր գրած հրովարտակաները , խափանուին : 6 - Վասն զի իմ ժողովուրդիս վրայ գալու չարիքը ի՛նչպէս կրնամ տեսնել . իմ ազգականներուս կորուստը ի՛նչպէս կրնամ տեսնել :

7 - Եւ Ասուերոս թագաւորը Եսթեր թագուհին ու Հրեայ Մուրթքէի ը-

տաւ , Ահա Համանի տունը Եսթերի պարգեւեցի . ու զանկա փայտի վրայ կախեցին՝ Հրէից վրայ ձեռք երկնցնելուն համար : 8 - Եւ դուք Հրէից համար ձեզի հաճոյ երեցածը թագաւորին անուանովը գրեցէք , ու թագաւորին մատանիովը կնքեցէք . վասն զի թագաւորին անուանովը գրուած ու թագաւորին մատանիովը կնքուած հրովարտակը չխափանուիր :

9 - Եւ այն ատեն երրորդ ամսուն , այսինքն Սիվան ամսուն , քսանուիրեքերորդ օրը թագաւորին գրագիրները կանչուեցան , ու Հրեաներուն , ու Հնդկատանէ մինչև Եթէովպիա եղող գաւառներուն , հարիւր քսանութը գաւառներուն , նախարարներուն և կուսակալներուն ու իշխաններուն , ամէն գաւառին իր գրովը , ու ամէն ազգին իր լեզուովը , ու Հրեաներուն իրենց գրովը ու լեզուովը գրուեցաւ՝ Մուրթքէի բոլոր հրամայածին պէս : 10 - Եւ Ասուերոս թագաւորին անուանովը գրեց ու թագաւորին մատանիովը կնքեց , և ձրերու , նժոյգներու , ու մատակ ձրերու քուռակ ջորիներու վրայ հեծած սուրհանդակներով հրովարտականեր զրկեց , 11 - Որոնցմով թագաւորը ամէն քաղաքներու Հրեաներուն հրաման տուաւ որ ժողովուին , ու իրենց կեանքը պաշտպանեն , և իրենց վրայ յարձակող ազգին ու գաւառին բոլոր մարդիկը , աղաքները ու կիները կտորեն , մեռցնեն ու կորսնցնեն , և անոնց ունեցածը յափշտակեն : 12 - Մէկ օրուան մէջ՝ Ասուերոս թագաւորին բոլոր գաւառներուն մէջ , երկոտասաներորդ ամսուն , այսինքն Ագար ամսուն , երեքտասաներորդ օրը : 13 - Հրովարտակին պատուէրը այս էր՝ որ հրամանը ամէն մէկ գաւառին մէջ հրատարակուի , ու ամէն ժողովուրդներուն բացատրուի , որպէս զի Հրեաները նոյն օրը իրենց թշնամիներէն վրէժ առնելու պատրաստ ըլլան : 14 - Սուրհանդակները նժոյգներու «- ջորիներու վրայ հեծան , ու թագաւորին հրամանէն ստիպուելով՝ արտորացին ճամբայ ելլելու . ու հրովարտակը Շուշան մայրաքաղաքին մէջ հրատարակուեցաւ :

15 - Եւ Մուրթքէ ելաւ թագաւորին առջևէն՝ կապուտակէ ու ճերմակ բեհեզէ թագաւորական զգեստով և ոսկիէ մեծ թագով , ու բեհեզեղէն ու

*Ե՛բե. խօսող

ծիրանի պատմութեամբ . և Շուշան քաղաքը ուրախացաւ ու ցնծութիւն բրաւ : 16 - Հրեաները լոյս, ուրախութիւն, ցնծութիւն ու պատիւ ունեցան : 17 - Եւ ամէն գաւառներու մէջ ու ամէն քաղաքներու մէջ՝ ուր թագաւորին հրամանը ու հրովարտակր կը հասնէր, Հրեաները ուրախութիւն ու ցնծութիւն ունեցան , և կոչուենքի ու տօնախմբութեան օր ըլին . ու երկրին ժողովուրդներէն շատերը Հրեայ եղան, վասն զի անոնց վրայ Հրեաներուն վախը ինկաւ :

Գ.Լ. Թ

Ու երկուտասաներորդ ամսուն, այսինքն Ագար ամսուն, երեքտասաներորդ օրը թագաւորին խօսքին ու հրամանին կատարուելու ժամանակը հասնելով այն օրը որ Հրէից թշնամիները կը յուսային անոնց վրայ տիրել , ներհակը պատահեցաւ . վասն զի Հրեաները իրենց թշնամիներուն վրայ տիրեցին : 2 - Ասուերոս թագաւորին բոլոր գաւառներուն մէջ Հրեաները իրենց քաղաքներուն մէջ ժողովուեցան, որպէս զի իրենց չարիք ու զոհներուն վրայ ձեռք երկնցընեն . ու ամենեւին մէկը չկրցաւ անոնց դէմ կենալ , վասն զի անոնց վախը ամէն ժողովուրդներուն վրայ ինկեր էր : 3 - Եւ գաւառներուն բոլոր իշխանները ու նախարարները և կուսակալները ու թագաւորին գործակալները Հրեաներուն ձեռնտու էին . վասն զի անոնց վրայ Մուրթքէի վախը ինկեր էր : 4 - Քանզի Մուրթքէ թագաւորին պալատին մէջ մեծ էր, ու անոր համբաւը բոլոր գաւառները տարածուեր էր . վասն զի Մուրթքէ երթալով կը մեծնար : 5 - Եւ Հրեաները իրենց բոլոր թշնամիները սրով մեռցուցին, ու խիստ մեծ կոտորած բրին, ու զիրենք ատողներուն իրենց ուղածին պէս բրին : 6 - Եւ Հրեաները Շուշան մայրաքաղաքին մէջ հինգ հարիւր մարդ մեռցնելով կորսնցուցին . 7 - Կաև Փարսանդաթան , Կազփանը , Ասփաթան , 8 - Փորաթան , Ագայիան , Արիգաթան , 9 - Փարմաթան , Արիսային , Արիգային ու Վայեղաթան , 10 - Հրէից թշնամիին , Ամագաթայի սրղւղին Համանի , տասը աղաքները , մեռցուցին . բայց աւարին ձեռք չերկնցուցին :

11 - Այն օրը Շուշան մայրաքաղաքին մէջ մեռցուածներուն հաշիւը թագաւորին առջև եկաւ : 12 - Եւ թագաւորը Եթեր թագուհին ըսաւ , Հրեաները Շուշան մայրաքաղաքին մէջ հինգ հարիւր մարդ, ու Համանի տասը աղաքը մեռցնելով կորսնցուցին . թագաւորին միւս գաւառներուն մէջ ինչէ՛ր բրած պիտի ըլլան . հիմա ի՞նչ է ինդիրքդ . պիտի արուիքեզի . ալ ի՞նչ աղաչանք ունիս . պիտի կատարուի : 13 - Ու Եթեր ըսաւ , Եթէ թագաւորը կը հաճի , Շուշանի մէջ եղող Հրեաներուն հրաժան արուի, որ վաղն ալ այս օրուան հրովարտակին համեմատ ընեն, ու Համանի տասը աղաքը փայտի վրայ կախուին : 14 - Եւ թագաւորը ըսաւ որ այնպէս ըլլայ . ու Շուշանի մէջ հրամանը հրատարակուեցաւ , ու Համանի տասը աղաքը կախուեցան : 15 - Եւ Շուշանի մէջ եղող Հրեաները Ագար ամսուն չարեքտասաներորդ օրն ալ ժողովուեցան, ու Շուշանի մէջ երեք հարիւր մարդ մեռցուցին . բայց աւարին ձեռք չերկնցուցին : 16 - Եւ թագաւորին գաւառներուն մէջ եղող միւս Հրեաները ժողովուեցան, ու իրենց կեանքը պաշտպանեցին, և իրենց թշնամիներէն հանգրատացան , ու զիրենք ատողներէն եթանաւորներ հինգ հազար մարդ մեռցուցին . բայց աւարին ձեռք չերկնցուցին : 17 - Ասիկա Ագար ամսուն երեքտասաներորդ օրը էր , և անոր չարեքտասաներորդ օրը հանգստացան , ու զանկիա կոչուենքի և ուրախութեան օր բրին : 18 - Իսկ Շուշանի մէջ եղող Հրեաները այն ամսուն երեքտասաներորդ օրը ու չարեքտասաներորդ օրը ժողովուեցան . ու անոր տասնհինգերորդ օրը հանգստացան, և զանկիա կոչուենքի և ուրախութեան օր բրին : 19 - Այս պատճառաւ գեղացի Հրեաները , անպարիսպ գիւղաքաղաքներու մէջ բնակողները , Ագար ամսուն չարեքտասաներորդ օրը ուրախութեան , կոչուենքի ու տօնախմբութեան օր կ'ընեն, ու այն օրը ամէն մարդ իր բարեկամին բնծաներ կը զրկէ : 20 - Եւ Մուրթքէ այս բաները գրեց, ու Ասուերոս թագաւորին ամէն գաւառներուն մէջ մօտ ու հեռու եղող բոլոր Հրեաներուն թուղթեր զըրկեց , 21 - Պատու իրելով անոնց՝ որ

ամէն տարի Ադար ամսուն չորեքտասաներորդ օրը ու անոր հնգետասաներորդ օրը *ծն կատարեն, 22 - (Այն օրերուն համեմատ որ Հրեաները իրենց թշնամիներէն հանգստացան, և այն ամսուն համեմատ որ անոնց արամութիւնը ուրախութեան՝ ու անոնց սուգը բարի օրուան դարձաւ,) զանոնք կոչուելի և ուրախութեան օրեր ընեն, որոնց մէջ ամէն մարդ իր բարեկամին ընծաներ, ու ազբասներուն պարգևներ զրկեն: 23 - Եւ Հրեաները խօսք տուին որ իրենց սկսածին պէս՝ ու Մուրթքէի իրենց գրածին պէս ընեն: 24 - Վասն զի բոլոր Հրեաներուն թըշնամին Ազագացի Ամագաթայի որդին Համան Հրեաները կորսնցնել խորհեցաւ, ու զանոնք բնաջինջ ընելու և կորսնցնելու համար Փուր, այսինքն վիճակ, ձգեց: 25 - Բայց երբ Եֆեթ թագաւորին առջև գնաց, Բեբեբեբե հրովարտակով հրամայեց՝ որ Հրեից դէմ Համանի բրած չար հնարքը անոր գլուխը դառնայ, և զանիկա ու անոր տղաքը փայտի վրայ կտիտեն: 26 - Ասոր համար այս օրերը *Փուր անուենէն Փուրիմ՝ ըսուեցան. և այս պատճառաւ այս թուղթին խօսքերուն համար, ու պնոնց տեսած ու անոնց պատահած բաներուն համար, 27 - Հրեաները որոշեցին, ու իրենց և իրենց սերունդին ու բոլոր իրենց հետ միացողներուն կանոն դրին, որ ամէն տարի այն երկուօրը, իրենց գրուածին ու տեսնին համեմատ, անպատճառ *ծն պահեն. 28 - Եւ այս օրերը ամէն դարերու մէջ, ամէն ազգատոհմի մէջ, ամէն գաւառի մէջ ու ամէն քաղաքի մէջ յիշուին ու պահուին. և այս Փուրիմի օրերը Հրեից մէջէն պակաս չըլլան, ու անոնց

*Այսինքն, վիճակ

յիշատակը իրենց սերունդէն չվերնայ: 29 - Եւ Աբիբէի աղջիկը Եսթեր թագուհին ու Հրեայ Մուրթքէ Փուրիմը հաստատելու համար այս երկրորդ նամակը կատարեալ իշխանութեամբ գրեցին. 30 - Եւ Ասուերոսի թագաւորութեան հարիւր քսանըօթը գաւառներուն մէջ եղող բոլոր Հրեաներուն՝ խաղաղութեան ու հաւատարմութեան խօսքերով թուղթեր զրկեցին, 31 - Որ այս Փուրիմի օրերը իրենց որոշ ժամանակին մէջ հաստատեն, ինչպէս Մուրթքէ Հրեան ու Եսթեր թագուհին անոնց պատուիրեցին, ու ինչպէս Հրեաները իրենց համար ու իրենց սերունդին համար ծամապահութեան ու իրենց աղաղակին վերաբերեալ բաները հաստատեցին: 32 - Այսպէս Եսթերի հրամանը այս Փուրիմին *պահպանութիւնը հաստատեց, ու գիրքի մէջ գրուեցաւ:

ԳԼ. Ժ

Եւ Ասուերոս թագաւորը ցամաք երկիրներու վրայ ու ծովու կղզիներուն վրայ հարկ ձգեց: 2 - Եւ անոր քաջութեանը բոլոր գործերը ու զօրութիւնը, և Մուրթքէի մեծութեանը՝ փառքը, որով թագաւորը զանիկա մեծցուց, ահա Մարաց ու Պարսից թագաւորներուն ժամանակագրութեան գիրքին մէջ գրուած են: 3 - Վասն զի Մուրթքէ Հրեան Ասուերոս թագաւորին երկրորդն էր, ու Հրեաներուն մէջ մեծ՝ ու իր եղբայրներուն բազմութեանը հաճոյ էր. իր ազգին աղէկութիւնը կը փնտռէր, և իր բոլոր սերունդին խաղաղութեանը վերաբերեալ բաները կը խօսէր:

*Եբեբեբեբե բաները



ԳԻՐՔ ՅՈՒԱՅ



ԳԼՈՒԽ Ա

* Հուս երկրին մէջ Յոբ անուևով մարդ մը կար. ու այն մարդը կատարեալ ու արդար և աստուածավախ էր, ու չարութենէ ետ կը քաշուէր: 2 - Եւ անոր եօթը աղայ ու երեք աղջիկ ծնան: 3 - Ու անոր ասացուածքը եօթը հազար ոչխար, ու երեք հազար ուղտ, և հինգ հարիւր զոյգ եզ, ու հինգ հարիւր մատակ էշ էր, ու խիստ շատ ծառաներ ունէր. և այն մարդը բոլոր արեւելցիներէն մեծ էր:

4 - Ու անոր աղաքը կ'երթային, ու ամէն մէկը իր օրը տուներնին հացկերոյթ կ'ընէին, և մարդ զրկելով երեք քոյրերնին կը հրաւիրէին, որպէս զի իրենց հետ ուտեն ու խմեն: 5 - Ու երբ հացկերոյթին օրերը կը լմնային, Յոբ լիանչել կու տար՝ զանոնք ու կը սրբէր. և առտուանց կ'եղէր՝ անոնց ամէնուն թիւովը սղջակէզներ կը մատուցանէր. որովհետեւ կ'ըսէր Յոբ, Կարելի է որ աղաքս մեղք գործեցին, ու սիրտերնուն մէջ Աստուծոյ հայհոյեցին. միշտ այսպէս կ'ընէր Յոբ:

6 - Արդ օր մը Աստուծոյ որդիները գացին Տերօջը առջև կայնելու, ու Սատանայ ալ գնաց անոնց մէջ: 7 - Եւ Տէրը ըսաւ Սատանայի. Ուրկէ՞ կու գաս. ու Սատանայ պատասխան տուաւ Տերօջը ու ըսաւ, Երկրի վրայ շրջելէն ու անոր մէջ պտրտելէն: 8 - Եւ Տէրը ըսաւ Սատանայի, Իմ՝ Յոբ ծառայիս աղէկ ու շարութիւն ըրի՞ր, որ երկրի վրայ անոր պէս կատարեալ և արդար, աստուածավախ ու չարութենէ ետ քաշուող մարդ չկայ: 9 - Ու Սատանայ պատասխան տուաւ Տերօջը ու ըսաւ, Միթէ Յոբ չ'արի՞ կը պաշտէ զԱստուած՞: 10 - 2^է օր գուն անոր ու անոր տանը և անոր ամէն ունեցածներուն բոլորաբար ցանկով պատեցիր, անոր ձեռքերուն գործերը օրհնեցիր,

ու անոր ասացուածքը երկրի վրայ շատցաւ: 11 - Բայց հիմա ձեռքդ երկնցուր, ու անոր ամէն ունեցածին դպչէ, «- ոչ ոքի ոչ ոքի» թէ ի՞նչպէս քեզի դէմ պիտի հայհոյէ: 12 - Եւ Տէրը ըսաւ Սատանայի, Ահա անոր ամէն ունեցածը քու ձեռքդ է՝ ու ոչ ոքի միայն թէ իրեն վրայ ձեռք չ'երկնցնես: Այն ժամանակ Սատանայ Տերօջը առջևէն ելաւ:

13 - Ու եղաւ որ օր մը անոր աղաքը ու աղջիկները իրենց մեծ եղբօրը տանը մէջ կ'ուտէին ու գինի կը խմէին: 14 - Ու պատգամաբեր մը եկաւ Յոբի ու ըսաւ, Երբ եզները կը հերկէին ու մատակ էշերը անոնց քով կ'արածուէին, 15 - Սարայեցիք յարձակեցան ու զանոնք առին, ու ծառաները սուրի բերնէ անցուցին. և միայն ես ազատեցայ «- էի՞ս որպէս զի քեզի պատմեմ: 16 - Երբ անիկա տակաւին կը խօսէր, «-բէշ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Երկինքէն Աստուծոյ կրակը իջաւ, ու հօտերը ու ծառաները պրեց ու զանոնք սպառեց. և միայն ես ազատեցայ «- էի՞ս որպէս զի քեզի պատմեմ: 17 - Երբ անիկա տակաւին կը խօսէր, «-բէշ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Քաղդէացիք երեք գունդի բաժնուած՝ ուղտերուն վրայ յարձակեցան և զանոնք առին, ու ծառաները սուրի բերնէ անցուցին. և միայն ես ազատեցայ «- էի՞ս որպէս զի քեզի պատմեմ: 18 - Երբ անիկա տակաւին կը խօսէր, «-բէշ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Որ ստեն աղաքդ ու աղջիկներդ իրենց մեծ եղբօրը տանը մէջ կ'ուտէին ու գինի կը խմէին, 19 - Ահա անապատին անդիի կողմէն մեծ հով մը եկաւ, ու տանը չորս կողմը «չնդէ» զարկաւ, որ աղցը վրայ փլաւ, ու անոնք մեռան. և միայն ես ազատեցայ «- էի՞ս որպէս զի քեզի պատմեմ:

20 - Այն ստեն Յոբ ելաւ, իր պատմութեանը պատուեց և գլխուն մնողերը կտրեց, ու գետինը իյնալով երկրպագութիւն ըրաւ, 21 - Ու ըսաւ, Մօրս արգանդէն մերկ ելայ, ու հոն մերկ պիտի դառնամ: Տէրը տուաւ ու Տէրը

*Տես Ծն. իր. 20, 24:

†Եբբ. կը զրկէր

‡Եբբ. արի՞ կը վախնայ Աստուծմէ

առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անուանը: 22 - Այս ամէնուն մէջ Յօր չմեղանչեց, ու Աստուծոյ անզգամութիւն չտուաւ:

ԳԼ. Բ

Եւ որքէն օր մը Աստուծոյ որդիները գացին Տէրոջը առջև կայնելու, ու Սատանայ ալ գնաց անոնց մէջ Տէրոջը առջև կայնելու: 2 - Եւ Տէրը ըսաւ Սատանայի, Աւրկէ՞ կուգաս. ու Սատանայ պատասխան տուաւ Տէրոջը ու ըսաւ, Երկրի վրայ շրջելէն ու անոր մէջ պտրտելէն: 3 - Եւ Տէրը Սատանայի ըսաւ, Իմ Յօր ծառայիս ազէկ ուշագրութիւն ըրի՞ր, որ երկրի վրայ անոր պէս կատարեալ և արդար, աստուածավախ ու չարութենէ ետ քաշուող մարդ չկայ, ու անիկա տակաւին իր կատարելութեանը մէջ հաստատ է, թէ և դուն ուզեցիր զիս համոզել որ զանիկա զուր տեղը կորսնցնեմ: 4 - Եւ Սատանայ պատասխան տուաւ ու Տէրոջը ըսաւ, Մորթի տեղ մորթ՝ նաև մարդս իր բոլոր ստացուածքը իր կեանքին տեղ կու ապ: 5 - Բայց հիմա ձեռքդ երկնցուր, ու անոր սկիւրին ու մարմինին դպչէ, «- դիմի դիմի» թէ ի՞նչպէս քեզի դեմ պիտի հայհոյէ: 6 - Եւ Տէրը ըսաւ Սատանայի, Ահա զանիկա քու ձեռքդ կ'առնի. միայն թէ անոր կեանքը պահէ:

7 - Ու Սատանայ ելաւ Տէրոջը առջևէն, ու Յօրը սաքին թաթէն մինչև գագաթը գէշ պալարներով զարկաւ:

8 - Եւ անիկա խեցիի մը կտոր առաւ, որպէս զի անով քերուի. ու մոխրի մէջ նստաւ:

9 - Եւ անոր կինը ըսաւ անոր, Դուն տակաւին քու կատարելութեանդ մէջ հաստատ կը կենաս. Աստուծոյ դեմ հայհոյէ ու մեռիր: 10 - Եւ Յօր ըսաւ անոր, Դուն անզգամ կնոջ մը պէս կը խօսիս. Աստուծոյ ձեռքէն միայն բարեքը ընդունինք, ու չարքը չընդունինք: Այս ամէնուն մէջ Յօր իր շրթութունքներովը չմեղանչեց:

11 - Եւ Յօրի երեք բարեկամները, Եղիփազ Թեմանացի, Բաղդաս *Սօքեցի ու Սոփար Նաամացի, երբ լսեցին անոր գլուխը եկած այս բոլոր փորձութիւնները, ամէն մէկը իր տե-

ղէն ելլելով եկան ու մէկտեղ ժողովուեցան, որպէս զի երթան ցաւակից ըլլան անոր ու զանիկա մխիթարեն: 12 - Ու հեռուէն աչքերնին վերցնելով Գեհան, Բայ չճանչցան զանիկա. և ձայներնին վերցուցին ու լացին, ու ամէն մէկը իր պատմութեանը պատուելով՝ դէպ ի երկինք գլուխնին հող ցանեցին: 13 - Եւ անոր հետ եօթը օր ու եօթը գիշեր գեանի վրայ նստան. ու մէկը անոր խօսք մը չզրուցեց, քանզի տեսան որ անոր ցաւը խիստ սաստիկ էր:

ԳԼ. Գ

Անկէ ետև Յօր իր բերանը բացաւ ու իր օրը անիծեց: 2 - Եւ Յօր *խօսեցաւ ու ըսաւ,

3 - Կորսուի այն օրը որուն մէջ ետ ծնայ,

Ու այն գիշերը որուն մէջ ըսին թէ Արու զաւակ մը լծնաւ:

4 - Այն օրը խաւար ըլլայ, Ու Աստուած չփնտռէ զանիկա վերէն, Ու երբէք լոյս չծագի անոր վրայ:

5 - Խաւարը ու մահուան շուքը †երենց սեպհականէն՝ զանիկա.

Ամպը ծածկէ զանիկա. Օրուան մթութիւնը վախցնէ զանիկա:

6 - Այն գիշերը մառախուղը պաշարէ. Անիկա տարուան օրերուն || հետ չմիաւորուի՞,

Ու ամիսներուն մէջ չհամարուի:

7 - Ահա այն գիշերը թող ամայի մնայ, Ու անոր մէջ ուրախութեան ձայն չմտնէ:

8 - Թող անիծեն զանիկա օրը անիծողները,

Որոնք պատրաստ են Տղիշապը արթընցընելու:

9 - Անոր գիշերուան ասողերը աղօտանան:

Լոյսին սպասէ ու չունենայ. Ու արշալոյսին **ճառագայթները չտեսնէ.

10 - Վասն զի իմ Եօր՝ արգանդին դունները չգոցեց,

*Եբբ. պատասխան տուաւ
†Եբբ. արգանդի մէջ գոյացաւ
‡Կա՛մ, պղծեն
||Կա՛մ, մէջ չուրախանայ
§Եբբ. Լեխաթանը
**Եբբ. թարթիչները

*Կա՛մ, Սովեցի. տես Ծն. իե. 2:

- Ու տառապանքը աչքերէս չծածկեց:
- 11 - Ինչո՞ւ համար Տօր՝ արգանդէն չմեռայ,
- Ու որովայնէն ելած իս պէս չկորուեցայ:
- 12 - Ինչո՞ւ ծունկերը բնգունեցին զիս,
- Ու ինչո՞ւ ստիկք Գ՞ր՝ Ինչի՞ որ ես ծծեմ:
- 13 - Վասն զի հիմա պառկած կը հանդ-
չէի ու կը քնանայի.
- Այն ժամանակ հանգստացած կ'ըլլայի՝
- 14 - Իրենց համար աւերակներ շինող
Երկրի թագաւորներուն ու խորհրդա-
կաններուն հետ,
- 15 - Կամ ոսկի ունեցող իշխաններուն
հետ,
- Որոնք տուներնին արծաթով կը լեցը-
նեն.
- 16 - Կամ թէ գաղտուկ վիժածի մը
պէս կ'ոչնչանայի,
- Այն երախաներուն պէս՝ որոնք երբէք
լոյս չտեսան:
- 17 - Հոն չարերը Ժօրք տանջելէն կը
դադարին,
- Եւ հոն ուժէ ինկածները կը հանգըս-
տանան:
- 18 - Նմանապէս բանտարկեալները հոն
կը հանգչին,
- Ու ուշէն լսեր հարկապահանջին ձայ-
նը:
- 19 - Պզտիկը ու մեծը հոն են .
- Մառան ալ իր տէրոջմէն ազատ է:
- 20 - Ինչո՞ւ համար թշուառութեան
մէջ եղողին լոյս՝
- Ու դառնահոգիներուն կեանք տրուի,
- 21 - Որոնք մահուան կը սպասեն, ու
անիկա չգար,
- Ու պահուած գանձերէն աւելի զանի-
կա կը փնտռեն.
- 22 - Գերեզմանը գաած ժամանակնին
Խիտա ուրտիս կ'ըլլան ու կը ցնծան:
- 23 - Ինչո՞ւ Իեան՝ իջ Գր՝-ի այնպիսի
մարդու մը՝ որուն ճամբան գոց-
ուած է:
- Ու Աստուած արգիլեր է զանիկա ամէն
կողմէն:
- 24 - Որովհետեւ կերակուր ուտելէս ա-
ռաջ իմ հեծութիւնս կու գայ,
- Ու իմ աղաղակներս ջուրերու պէս կը
հոսին:
- 25 - Վասն զի ի՛նչ բանէ որ շտա կը
վախնայի, այն ինծի հանդիպե-
ցաւ,
- Եւ ի՛նչ բանէ որ երկիւղ ունէի, այն
ինծի հասաւ:

- 26 - Ոչ խաղաղութիւն ունիմ, ոչ հան-
գըտութիւն
- Եւ ոչ հանդարտութիւն. բայց թշուա-
ռութիւնը ի՞մ Գր՝-ի կու գայ:

ԳԼ. Գ

- Այն ատեն Եղիփազ Թեմանացի
պատասխան տուաւ ու ըսաւ,
- 2 - Պիտի դժուարի՞՞ս արդեօք՝ եթէ սկը-
սինք քեզի խօսիլ .
- Բայց ս՞՞վ կրնայ զինք զսպել որ չխօսի:
- 3 - Ահա դուն շատերուն խրատ տուիր,
Ու տկար ձեռքերը զօրացուցիր:
- 4 - Քու խօսքերդ սահելու վրայ եղողը
հաստատեցին,
- Ու դուն տկարացած ծունկերը կազ-
դուրեցիր.
- 5 - Բայց հիմա այ՞ Գր՝-ը քեզի պա-
տահեցաւ ու դժուարեցար.
- Քեզի գպաւ ու բոլորովին շփոթեցար:
- 6 - Մի՞թէ *աստուած պաշտութիւնդ
քու յոյսդ չէ՞՞,
- Ու ճամբաներուդ ուղղութիւնը՝ քու
ականկալութիւնդ:
- 7 - Աղէ, միտքդ բեր, ս՞՞ր անմեղը կոր-
սուեցաւ,
- Եւ ս՞՞ր տեղ արդարները բնաջինջ ե-
զան:
- 8 - Ինչպէս տեսայ, անօրէնութիւն հեր-
կողները
- Եւ անիրաւութիւն ցանաղները նոյնը
կը հնձեն.
- 9 - Աստուծոյ շունչէն կը կորսուին,
Ու անոր ընգունքին հովէն բնաջինջ
կ'ըլլան:
- 10 - Անիկա իջ Գր՝-ի առիւծին մուրն-
չիւնը և մունչող առիւծին ձայ-
նը
- Ու կորիւններուն ակռաները կը կո-
տրուուին:
- 11 - Առիւծը առանց որսի կը կորսուի,
Ու մտաակ առիւծին կորիւնները կը
ցրուին:
- 12 - Եւ ինծի գաղտուկ կերպով խօսք
մը ըսուեցաւ,
- Ու անոր շշուենջը ականջս հասաւ:
- 13 - Գիշերուան տեսիլքներուն պէս
խորհուրդներուն ատենը՝
Երբ խորունկ քուն մը մարդոց վրայ
կ'իջնէ,

*Եբբ. երկիւղդ. տես գլ. ա. 1:

- 14 - Վրաս աշխարհի վախ մը ու դող մը եկաւ,
Որ բոլոր սակորներս ցնցեց:
- 15 - Առջևէս ոգի մը անցաւ,
Ու մարմնիս մազերը փուշ փուշ եղան.
- 16 - Անիկա կայնեցաւ, բայց ես չկրցայ զանազանել անոր կերպարանքը .
Աչքերուս առջև երևոյթ մը կար.
Լուսթիւն եղաւ, ու ձայն մը լսեցի,
որ կ'ըսէր,
- 17 - Միթէ մարդը Աստուծոյ արդար կ'ըլլայ .
Մարդը իր Արարիչէն մաքուր կ'ըլլայ.
- 18 - Ահա անիկա իր ծառաներուն չհաւատար,
Ու իր հրեշտակներուն վրայ ալ պակասութիւն կը գտնէ .
- 19 - Ալ ո՞ւր կը մնան անոնք՝ որ կաւեղէն տուներու մէջ կը բնակին,
Որոնց հիմը փոշիին մէջ է, և որոնք ցեցէն առաջ կը ճզմուին:
- 20 - Անոնք առատուրնէ մինչև իրիկուն կը ճնշուին,
Ու առանց մէկուն իմանալուն կը կորսուին յաւիտեան:
- 21 - Ահա անոնց վրայ եղած փառաւորութիւնը կը վերցուի.
Անոնք կը մեռնին առանց իմաստուն ըլլալու:

ԳԼ. Ե

- Հիմա աղաղակէ. քեզի պատասխան տուող մը կայ արդեօք,
Ու սուրբերէն որո՞ւ պիտի դարձնես քու երեսօք:
- 2 - Ստոյգ է որ բարկութիւնը յիմարը կը ազաննէ,
Ու նախանձը անմիտը կը մեռցնէ:
- 3 - Ես յիմարին արմատանալը տեսայ,
Բայց շուտ մը անոր բնակութիւնը անիծեցի:
- 4 - Անոր որդիները ապահովութենէ հեռու են.
Անոնք դրանը մէջ կը կոխկուտուին,
Էւ ազատող մը չգտնուիր:
- 5 - Անօթի եղողը կ'ուստէ անոր հունձքը,
Ու զանիկա փուշերու ցանկին մէջէն կը յափշտակէ .
Ու անոնց ստացուածքը *աւարառուն կը կլլէ:

- 6 - Որովհետև չարիքը հողէն չելլեր,
Ու թշուառութիւնը գեանէն չբուսնիր .
- 7 - Թէպէտ մարդը թշուառութեան համար կը ծնանի,
Ինչպէս *կրակի կայծերը՝ վեր կը թռչին:
- 8 - Իսկ ես Աստուծոյ պիտի դիմէի,
Ու իմ՝ գործս Աստուծոյ պիտի յանձնէի,
- 9 - Որ աշխարհի մեծ բաներ կ'ընէ, որ հարգ չկրնար քննել,
Ու աշխարհի սքանչելիքներ կ'ընէ, զորոնք հնար չէ համբել:
- 10 - Անիկա երկրի վրայ անձրև կուտայ,
Ու դաշտերուն վրայ ջուրեր կը դրկէ .
- 11 - Նաև ցածերը կը բարձրացնէ,
Ու սգաւորները ապահովութեան կ'ելլեն:
- 12 - Անիկա խորամանկներուն խորհուրդները կը ցրուէ,
Որպէս զի ձեռքերնին կարող չըլլայ իրենց գործերը գլուխ տանիլ .
- 13 - Իմաստունները իրենց խորամանկութեանը մէջ կը բռնէ,
Ու նենգաւորներուն խորհուրդը շուտով կը խափանուի:
- 14 - Տորեկը մութի կը բռնուին,
Ու կէսօրին գիշերուան պէս խարխափելով կը +աւելն:
- 15 - Բայց աղքատը սուրէն, անոնց բերնէն
Ու հզօրին ձեռքէն կ'ազատէ:
- 16 - Այսպէս աղքատը յոյս կ'ունենայ,
Իսկ անօրէնութիւնը իր բերանը կը գոցէ:
- 17 - Ահա երանելի է այն մարդը զոր Աստուած կը խրատէ .
Ուրեմն Ամենակարողին յանդիմանութիւնը մի անարգեր .
- 18 - Վասն զի ինք կը վերաւորէ ու կը փաթթէ .
Կը զարնէ ու իր ձեռքերը կը բժշկէն:
- 19 - Վեց նեղութիւններէ քեզ պիտի ազատէ,
Ու եօթներորդին՝ քեզի չարիք պիտի չդպչի:
- 20 - Սովի ժամանակ քեզ մահուանէ պիտի ազատէ,

*կա՛մ, արծիւները: Ե՞բ. կայծի որդիները

*կա՛մ, ծարաւը

- Ու պատերազմին մէջ սուրին ձեռքէն:
- 21 - Լեզուի խարազանէ ապահով պիտի ըլլաս ,
- Ու կործանումին գալու տառնը անկէ պիտի չվախնաս .
- 22 - Կործանումի ու սովի վրայ պիտի ծիծաղես ,
- Ու երկրի գազաններէն պիտի չվախնաս .
- 23 - Քանզի դաշտի քարերուն հետ դաշինք պիտի ունենաս ,
- Ու դաշտի գազանները քեզի հետ խաղաղութեամբ պիտի վարուին :
- 24 - Ու պիտի գիտնաս որ վրանիդ մէջ յաջողութիւն կայ .
- Եւ քու բնակարանիդ սյցելութիւն պիտի ընես ու *բա՛ն մը պակաս պիտի չգտնես :
- 25 - Եւ պիտի գիտնաս որ քու զաւակներդ շատուոր ,
- Ու քու սերունդդ երկրի խոտերուն պէս պիտի ըլլան :
- 26 - Աղէկ մը ծերացած՝ գերեզմանը պիտի մտնես ,
- Յորենի խուրձերուն դէզին պէս՝ որ իր ժամանակին կը գիզուի :
- 27 - Ահա մենք այս բանը քննեցինք , այսպէս է .
- Մտիկ ըրէ անոր ու քու օգո՛րհ համար գիտցիր զանիկա :

ԳԼ. 2

- Եւ Յոր պատասխան տուաւ ու բոսաւ ,
- 2 - Երանի՛ թէ իմ տրամուլթիւնս աղէկ կը ռուտէր ,
- Ու իմ թշուառութիւնս մէկտեղ կը շիւքի մէջ դրուէր :
- 3 - Քանզի հիմա անիկա ծովուն աւազէն ծանր կ'ըլլար .
- Անոր համար իմ խօսքերս †կը հասնին :
- 4 - Որովհետեւ Ամենակարողին նետերը իմ ներսիդիս են ,
- Որոնց թոյնը իմ հոգիս կը ծծէ .
- Աստուծոյ արհաւիրքները ինծի դէմ՝ գոտիբազմելու՝ շարուած են :
- 5 - Միթէ վայրենի է շը խոտին քով կը զանչէ՞ .
- Կամ եզը իր մուրին քով կը բառաչէ՞ .

- 6 - Անհամ՝ բանը առանց աղի կ'ուտուի՞ .
- Հաւկիթի ճերմկուցին մէջ համ կա՞յ արդեօք :
- 7 - Այն բաները՝ որոնց սիրաս չէր ուզեր դպչիլ ,
- Իմ զազրալի կերակուրս եղան :
- 8 - Երանի՛ թէ ուզածս կատարուէր ,
- Ու տար Աստուած այն բանը՝ որու կը սպասեմ ,
- 9 - Այսինքն թէ Աստուած զիս ճնշելու հաւանէր ,
- Ու ձեռքը երկնցնելով զիս կործանէր :
- 10 - Բայց տակաւին այս միխթարութիւնը պիտի ունենամ ,
- Եւ անողորմ՝ ցաւին մէջ պիտի ուրախանամ ,
- Որ ես Սուրբին խօսքերը չուրացայ :
- 11 - Ոյժս ի՞նչ է՝ որ դիմանամ ,
- Ու վախճանս ի՞նչ է՝ որ կեանքս երկընցնեմ :
- 12 - Միթէ իմ ոյժս քարերո՞ւ ոյժ է ,
- Կամ թէ մարմինս պղնձեղէ՞ն է .
- 13 - Չէ՞ որ օգնութենէ զուրկ եմ ,
- Ու ձեռնտուութիւնը հեռացած է ինծմէ :
- 14 - Թշուառութեան մէջ եղողին իր բարեկամին կարեկցութիւնը պէ՛տ է .
- Բայց անիկա Ամենակարողին վախը մէկդի թողուց :
- 15 - Իմ եղբայրներս հեղեղներու պէս խաբէութիւն ըրին ինձի ,
- Չարերու հեղեղաաներու պէս՝ որոնք կ'անցնին .
- 16 - Որոնք սառէն պղտորած են ,
- Երբ *անոնց մէջ ձիւնը կը ծածկուի՞ .
- 17 - Տաքը տեսածնուն պէս կը ցամքին ,
- Խիստ տաք տառն իրենց տեղէն աներկոյթ կ'ըլլան :
- 18 - Կարաւանները իրենց ճամբան կը դարձնեն ,
- Բայց †գատարկ ելլելով՝ կը կորսուին .
- 19 - Թեմայի կարաւանները նայեցան ,
- Սաբայի ճամբորդները անոնց յուսացան .
- 20 - Յուսալնուն համար ամէցան ,
- Իրենց հոն գացած տառնը կարմրեցան :
- 21 - Արդարեւ ինձի անօգուտ եղաք ,
- Թշուառութիւն տեսաք ու սոսկացիք :

*Կամ, պիտի չսխալիս
 †Կամ, յանդգնութեամբ են

*Կամ, անոնց վրայ ձիւնը կը դիզուի
 †Կամ, անապատը

- 22 - Ես ձեզի ըսի՞ որ ինծի բերէք,
Ու ձեր ստացուածքէն ընծայ տուէք
ինծի .
- 23 - Կամ թէ զիս թշնամիին ձեռքէն
տղատեցէք,
Ու բռնաւորներուն ձեռքէն զիս փրկե-
ցէք :
- 24 - Սորվեցուցէք ինծի՛ ու լուռ պիտի
կենամ .
- Ու հասկեցուցէք ինծի՛ թէ ի՞նչ բանի
մէջ սխալեի եմ :
- 25 - Ուղիղ խօսքերը ս՛րջափ զօրաւոր
են .
- Բայց ձեր յանդիմանութիւնը ի՞նչ կը
նշանակէ :
- 26 - Արդեօք խօսքե՞ր յանդիմանել կը
մտածէք .
- Յուսահատին խօսքերը հոյ՛ կեն :
- 27 - Մանաւանդ որքին համար «բոգոյ»
կը լարէք,
Ու ձեր բարեկամին համար հոգ կը փո-
րէք :
- 28 - Հիմա հաճեցէք ինծի նայիլ .
Եթէ սուտ կը խօսիմ, յայտնի է ձեզի :
- 29 - Գարձէք, կ'աղաչեմ, ու անիրա-
ւութիւն չըլլայ .
- Այո, գարձէք . քանզի ստով իմ ար-
դարութիւնս կը յայտնուի :
- 30 - Միթէ իմ լեզուիս վրայ անիրա-
ւութիւն կայ .
- Միթէ իմ քիմքս չար բաները չը՞ կըր-
նար զանազանել :

ՔԼ. Է

- Մ**իթէ մարդս երկրի վրայ պատե-
րազմի ասպարէզ մը չունի՞ .
- Եւ անոր օրերը վարձկանի մը օրերուն
պէս չե՞ն :
- 2 - Ինչպէս ծառան երէկոսն շուքին
կը փափաքի,
Ու վարձկանը իր վարձքին կը սպասէ ,
- 3 - Այնպէս ունայնութեան ամիսներ
ինծի բաժին տրուած են,
Ու թշուառութեան գիշերներ ինծի
համար որոշուած են :
- 4 - Պառկած տտենս կ'ըսեմ, Ե՞րբ պի-
տի ելլեմ,
Ու գիշերը ե՞րբ պիտի անցնի .
- Ու մինչև արշալոյս անհանգստու-
թեամբ լցուած եմ :
- 5 - Մարմինս որդերով ու հողի կոշտե-
րով ծածկուած է .
- Մորթս կը ճեղքուի ու կը հալի :

- 6 - Օրերս ոստայնանկին կկոցէն արագ
կ'անցնին ,
- Ու կը սպառին առանց յոյս մը ճաշուի .
- 7 - Յիշէ որ կեանքս հովի պէ՞ է .
- Աչքս այսուհետեւ բարիք պիտի չտեսնէ :
- 8 - Ձիս տեսնողին աչքերը նոցէ՞ն զիս
պիտի չտեսնեն .
- Քու աչքերդ իմ վրաս կը նային, ու ես
բնաջինջ կ'ըլլամ :
- 9 - Ինչպէ՞ ամպը կը ցրուի կ'երթայ ,
Այնպէս գերեզմանը իջնողը պիտի
չելլէ .
- 10 - Ալ անիկա իր տունը պիտի չդառ-
նայ ,
- Ու իր բնակարանը ա՛լ զանիկա պիտի
չճանչնայ :
- 11 - Ուստի ես իմ բերանս պիտի չզրու-
պեմ .
- Հողիս նեղութիւնովը պիտի խօսիմ,
Սրտիս դառնութիւնովը պիտի գան-
գաաիմ :
- 12 - Միթէ ես ծո՞վ եմ, կամ կէտ,
Որ իմ վրաս պահապաններ կը դնես :
- 13 - Երբ ես կ'ըսեմ թէ անկողինս զիս
պիտի մխիթարէ,
Մահի՞ծս իմ գանգատներս պիտի պակ-
սեցնէ ,
- 14 - Ձիս երազներով կը վախցնես,
Ու ցնորքներով կը զարհուրեցնես :
- 15 - Վասն որոյ աւելի կ'ընարեմ խեղ-
դուիլ ու մեռնիլ ,
- Քան թէ իմ ոսկորներուս պահպանուիլը :
- 16 - Ես ձանձրացած եմ, ու չեմ ու-
զեր որ յաւիտեան ապրիմ .
- Ինծմէ ետ կեցիր , վասն զի իմ օրերս
ունայնութիւն են :
- 17 - Մարդը ո՞վ է՝ որ դուն զանիկա
մեծ բան մը համարիս,
Ու անոր համար հոգ տանիս,
- 18 - Եւ ամէն առտու զանիկա դիտես,
Ու ամէն վայրկեանի մէջ փորձես :
- 19 - Մինչև ե՞րբ ինծմէ ետ չես կենար .
Թուքս կլլելո՞ւ չափ ալ թող չես
ստար :
- 20 - Մեղանչեցի . քեզի ի՞նչ ընեմ,
ով մարդիկը Քննող .
- Ինչո՞ւ համար զիս քեզի նշան առիր ,
ու ես ինծի բեռ եղայ :
- 21 - Եւ ինչո՞ւ իմ մեղքս չես ներեր ,
Ու իմ անօրէնութիւնս չես վերցներ .
Որովհետև հիմա հողին մէջ պիտի
պառկիմ ,
- Ու առաւօտուն եթէ զիս փնտռես,
պիտի չգտնուիմ :

ԳԼ Ը

- Այն տառն Բաղդատ Սօքեցի պատասխան տուաւ ու ըսաւ,
- 2 - Մինչև ե՞րբ այգպէս պիտի խօսիս, Ու բերնիդ խօսքերը սաստիկ հովի պէս պիտի ըլլան:
- 3 - Միթէ Աստուած դատաստանը կը խափանէ՞,
- Կամ Ամենակարողը իրաւունքը կը խափանէ՞:
- 4 - Եթէ քու աղաքդ անոր դէմ մեղանչեր են,
- Եւ ան ալ իրենց յանցանքին մատնած է զանոնք,
- 5 - Եթէ դուն առատունքը կանուխ զԱստուած փնտռես,
- Ու Ամենակարողէն շնորհք խնդրես,
- 6 - Եթէ դուն մտքուր ու շիտակ ըլլաս,
- Հիմա անշուշտ անիկա քեզի համար պիտի արթննայ,
- Ու քու արդարութեանդ բնակարանին յաջողութիւն պիտի տայ:
- 7 - Թէև քու սկիզբդ փոքր ըլլայ,
- Բայց քու վերջդ խիստ պիտի մեծնայ:
- 8 - Հիմա հարցուր առաջուան աղգերուն,
- Ու անոնց հայրերը քննելու ուշադրութիւն բրէ:
- 9 - (Վասն զի մենք երէկուաններն ենք, ու քան իչ չենք գիտեր:
- Քանզի մեր կեանքը երկրի վրայ ստուեր մըն է.)
- 10 - Ահա անոնք քեզի պիտի արվեցընեն, քեզի պիտի խօսին,
- Ու իրենց սրտէն խօսքեր պիտի հանեն:
- 11 - Միթէ պրտուն առանց տիղմի կը բուսնի՞:
- Կնիւնը առանց ջուրի կ'աճի՞:
- 12 - Անիկա դեռ իր գալարութեանը մէջ «- չկարուած»
- Ամէն խոտէն առաջ կը չորնայ:
- 13 - Այսպէս պիտի ըլլայ ամէն անոնց ճամբաները՝ որոնք զԱստուած կը մոռնան:
- Ու *կեղծաւորին յոյսը պիտի կորսուի:
- 14 - Վասն զի անոր յոյսը պիտի կըտրուի:
- Ու անոր վատահոլութիւնը արդի Իսայիային պէս պիտի ըլլայ:

*Կա՛մ, ամբարշտին
†ԵՔԵ. տանը

- 15 - Անիկա իր տանը պիտի կռթնի, Բայց ան հաստատութիւն պիտի չունենայ:
- Իբր չե՛րպէս զանիկա պիտի բռնէ, Բայց ան կանգնած պիտի չմնայ:
- 16 - *Արևը չծագած՝ դալար է,
- Ու անոր ճիւղերը իր եղած պարտեզէն վեր կ'ելլեն:
- 17 - Անոր արմատները քարակոյտին կը փաթթուին,
- Ու քարերուն տեղը կը տեսնէ:
- 18 - Եթէ մէկը զանիկա իր տեղէն խլէ,
- Տեղը պիտի ուրանայ զանիկա՝ ըսելով թէ ես քեզ չտեսայ:
- 19 - Ահա անոր ճամբուն ուրախութիւնը այս է,
- Ու հողէն ուրիշներ պիտի ելլեն:
- 20 - Ահա Աստուած արդար մարդը չմերժեր,
- Ոչ ալ չարերուն ձեռնառ կ'ըլլայ,
- 21 - Մինչև որ քու բերանդ ծիծաղով լեցնէ,
- Ու շրթունքներդ ուրախութեան ձայնով:
- 22 - Քեզ ատողները ամօթով պիտի ըլլան:
- Ու ամբարիշտներուն վրանը բնաջինջ պիտի ըլլայ:

ԳԼ Թ

- Եւ Յոր պատասխան տուաւ ու ըսաւ,
- 2 - Իրաւցընէ այնպէս ըլլալը գիտեմ:
- Ու մարդը ի՞նչպէս պիտի արդարանայ Աստուծոյ առջև:
- 3 - Եթէ անոր հետ վիճարանիլ ուզէ, Հազարէն մէկուն չկրնար անոր պատասխան առլ:
- 4 - Անիկա սրտով իմաստուն՝ և ուժով կարող է:
- Ո՞վ անոր գէմ՝ երբեք խստացուցեր՝ ու յաջողութիւն գտեր է:
- 5 - Անիկա լեռները կը տեղափոխէ, ու անոնք չեն գիտեր:
- Իր բարկութիւնովը զանոնք կը տապալէ:
- 6 - Երկիրը իր տեղէն կը շարժէ, Ու անոր սիւնները կը գողան:
- 7 - Արևին հրաման կ'ընէ, ու անիկա չծագիր:
- Ու ատողերը կը կնքէ:

*ԵՔԵ. Արևէն առաջ

- 8 - Ինք միայն երկինքը կը տարածէ, Ու ծովուն *ալիքներուն վրայ կը քալէ:
- 9 - Անիկա ըրաւ Արջը, Հայկը ու Բազմաստեղը
Ու հարաւին շեմարանները:
- 10 - Անիկա անքննելի մեծագործութիւններ
Ու անթիւ պրանչելիքներ կ'ընէ:
- 11 - Ահա անիկա քովէս կ'անցնի, ու ես չեմ տեսներ.
- Առաջ կ'անցնի, ու չեմ իմանար:
- 12 - Եթէ յափշտակէ, ո՞վ կրնայ զանիկա արգիլել .
- Ո՞վ կարող է ըսել անոր թէ Ի՞նչ կ'ընես:
- 13 - Աստուած իր բարկութիւնը ետ չգարձներ.
- Ու հպարտ օգնականները անոր ասկ կը խոնարհին:
- 14 - Ո՞ր մնաց որ ես անոր պատասխան տամ,
- Ու անոր դէմ վեճելու համար խօսքերս ընարեմ:
- 15 - Որովհետեւ արդար ալ ըլլամ, պատասխան պիտի չտամ.
- Իմ Գառաւորէս շնորհք պիտի խնդրեմ:
- 16 - Եթէ ես զանիկա կանչէի, ու ինծի պատասխան ալ տար,
- Պիտի չհաւատայի թէ անիկա իմ ձայնս լսած է:
- 17 - Որովհետեւ փոթորիկով զիս ճնշեց,
Ու առանց պատճառի իմ վէրքերս աւելցուց:
- 18 - Զիս չթողուր որ շունչ առնեմ, Հապա դառնութեամբ զիս կը լեցնէ:
- 19 - Եթէ զօրութիւն քնքո՞ւտի, ահա անիկա զօրաւոր է,
Իսկ եթէ դատաստան՝ ի՞նչ զիս տեսանը պիտի կանչէ:
- 20 - Եթէ անձս արդարացեմ, իմ բերանս զիս կը դատապարտէ.
Եթէ զիս կատարեալ երեցնեմ, զիս յանցաւոր կը հանէ:
- 21 - Եթէ զիս կատարեալ երեցնեմ, իմ անձս չեմ ճանչնար,
Իմ կեանքս կ'արհամարհեմ:
- 22 - Ահնջ մէկ է. անոր համար ըսի թէ Անիկա արդարը ու ամբարիշտը Գեղեղ բնաջինջ կ'ընէ:
- 23 - Եթէ հարուածը յանկարծ մեռցնէ,

*Եբր. բարձրերուն
†Կամ, ինծի համար ո՞վ վկայութիւն պիտի տայ

- Անիկա անմեղին պարտաւոր փորձութեանը վրայ կը ծրծաղի:
- 24 - Երկիր ամբարշտին ձեռքը արուեստաւ.
- Ապարտ անոր դատաւորներուն երեսը կը ծածկէ.
- Եթէ ոչ ո՞վ է անիկա:
- 25 - Արդ իմ օրերս սուրհանդակէն արագ են,
Փախան ու բարութիւն չտեսան:
- 26 - *Արագագնաց նաւերու պէս՝
Որսի վրայ յարձակող արծիւի պէս կ'անցնին:
- 27 - Եթէ ըսեմ, Գանգատս մոռնամ,
Տրտմութիւնս ձգեմ ու զուարթ ըլլամ,
- 28 - Բոլոր թշուառութիւններէս կը վախնամ.
- Գիտեմ որ զիս անմեղ պիտի չհամարին:
- 29 - Ամբարիշտ պիտի սեպուիմ,
Ինչո՞ւ համար զուր տեղը աշխատիմ:
- 30 - Եթէ ձիւնի ջրով լուացուիմ,
Ու ձեռքերս խմբութիւնով սրբեմ,
- 31 - Այն ժամանակ զիս փոսը կ'ընկրղմես,
Ու հանդերձս պիտի զզուի ինծմէ:
- 32 - Վասն զի ինծի պէս մարդ չէ՝ որ անոր պատասխան տամ,
- Ու մէկտեղ դատաստանի երթանք:
- 33 - Միջնորդ դատաւոր մը չկայ մեր մէջ,
Որ կարենայ իր ձեռքը մեր երկուքին վրայ դնել:
- 34 - Թող իր գաւազանը վրայէս վերցընէ,
Ու անոր երկիւղը ա՛լ զիս չզարհուրեցնէ,
- 35 - Այն քե՛ն պիտի խօսիմ, ու անկէ պիտի չվախնամ.
- Բայց եղած վիճակիս մէջ ես իմ անձիս քե՛րք չեմ:

ԳԼ. Ժ

Հոգիս կեանքէս ձանձրացաւ.
Համարձակ պիտի գտնգատիմ,
Հոգիս դառնութիւնովը պիտի խօսիմ:
2 - Պիտի ըսեմ Աստուծոյ, Մի դատապարտեր զիս,
Յայանէ ինծի թէ ի՞նչ բանի համար ինծի հետ կը վիճիս.

*Կամ, Յանկալի, և չամ, Ապատակի
†Կամ, օճառով

- 3 - Քեզի ազէ՞կ կ'երեւնայ որ զե՞ հարստահարես,
Ու քու ձեռքերուդ գործը արհամարհես,
Եւ ամբարիշտներուն խորհուրդին լոյս տաս:
- 4 - Միթէ դուն մարմնաւո՞ր աչքեր ունիս.
Մարդուն տեսածի՞ն պէս կը տեսնես:
- 5 - Միթէ քու օրերդ մարդո՞ւն օրերուն պէս են,
Քու տարիներիդ մարդո՞ւն օրերուն պէս են,
6 - Որ դուն իմ յանցանքս փնտռես,
Ու մեղքս քննես:
- 7 - Գիտես որ յանցաւոր չեմ,
Բայց չկայ մէկը որ քու ձեռքէդ ազատէ զի՞:
- 8 - Քու ձեռքերդ զիս ստեղծեցին,
Ու ՚իմ բոլոր անդամներս՝ կազմեցին,
Ու զիս բնաջի՞նջ կ'ընես:
- 9 - Կ'աղաչեմ, յիշէ որ զիս կաւի պէս շինեցիր,
Ու զիս հո՞ղ պիտի դարձնես:
- 10 - Չէ՞ որ զիս կաթի պէս թափեցիր,
Ու պանիրի պէս թանձրացուցիր:
- 11 - Զիս մորթով ու մսով հագուեցուցիր,
Ու զիս սակարներով ու ջիղերով հինեցիր:
- 12- Ինծի կեանք և ողորմութիւն շնորհեցիր,
Եւ քու խնամքդ իմ հոգիս պահեց:
- 13 - Ու ասոնք սրտիդ մէջ պահեցիր.
Գիտեմ որ ասոնք †միտքդ են:
- 14 - Եթէ մեղք գործեմ, դուն զիս կը դիտես,
Ու իմ անօրէնութենէս անմեղ չես համարիր զիս:
- 15 - Եթէ ամբարշտութիւն ընեմ, վա՞յ է ինծի,
Ու արդար ալ ըլլամ, գլուխս չեմ կրնար վերցնել.
- Անարգանքով լցուած եմ.
Հիմա իմ թշուառութեանս նայէ,
- 16 - †Որ աւելնալու վրայ է՞.
Աւելծի պէս զիս կ'որոտաս,
Եւ դարձեալ իմ վրաս յաղթող կ'ըլլաս.

*ԵՔԵ. զիս շուրջանակի
†ԵՔԵ. քովդ
‡Կ-ժ, Իսկ եթէ գլուխս վերցնեմ
||ԵՔԵ. զարմանալի

- 17 - Ինծի գէմ՝ վկաներդ կը նորոգես,
Ու քու սրամտութիւնդ իմ վրաս կը շատցնես.
Փոփոխութիւններ ու պատերազմ ունիմ:
- 18 - Արդ ինչո՞ւ համար զիս արգանդէն հանեցիր.
Երանի՞ թէ հո՞ մեռնէի, ու աչք չտեսնէր զիս,
- 19 - Որ չեղածի պէս ըլլայի,
Ու յօրս՝ արգանդէն գերեզմանը տարուէի:
- 20 - Իմ օրերս ասկաւաթիւ չե՞ն.
Եւ կեցիր ինծմէ, ու թող տուր որ քիչ մը հանգչիմ՝
- 21 - Այն Կեղեցի երթալէս առաջ, ուրկէ ես պիտի չգառնամ,
Մութ երկիրը ու մահուան շուքը,
- 22 - Այն ՚խիստ մութ երկիրը, մահուան շուքին խաւարը,
Ուր տեղ կարգ չկայ, ու լոյսը խաւարի պէս է:

ԳԼ. ԺԱ

- Այն աստէն Սոփար Նաամացի պատասխան տուաւ ու ըսաւ,
- 2 - Շատ խօսքերուն պատասխան պիտի չարուի՞,
Ու լեզուանի մարգը կրնա՞յ իօրտալ արդարանալ:
- 3 - Քու պարսպ խօսքերդ մարդիկը պիտի լռեցնեն՞,
Ու երբ դուն ծաղր կ'ընես, պիտի չըլլա՞յ մէկը որ Կեղ ամչցնէ:
- 4 - Վասն զի դուն ըսիր թէ Իմ խօսքս մաքուր է.
Ու քու աչքիդ առջև անարատ եմ:
5-Սակայն երանի՞ թէ Աստուած խօսէր,
Ու քեզի գէմ՝ իր շրթունքը բանար,
6 - Ու քեզի յայտնէր իմաստութեան գաղանիքը,
Որ Դարձիս իմացածին կրկինն է:
Հիմա գիտցիր որ Աստուած Քու անօրէնութեանդ մէկ Դարձ †անտես կ'ընէ՞:
- 7-Աստուծոյ գաղանիքը կրնա՞ս գտնել.
Ամենակարողը կատարելապէս կրնա՞ս իմանալ:
- 8-Անիկա երկինքին պէս բարձր է. ի՞նչ կրնաս ընել.

*ԵՔԵ. մտախառնողի նման
†ԵՔԵ. քեզի կը մոռցնէ

- Դժոխքէն խորունկ է . ի՞նչ կրնաս
գիտնալ :
- 9 - Անոր չափը երկրէ երկայն՝
Ու ծովէն լայն է :
- 10 - Եթէ անիկա յարձակի ու գոցէ
կամ ժողվէ ,
Ո՞վ անոր արգելք պիտի ըլլայ .
- 11 - Քանզի ինք ունայն մարդիկը կը
ճանչնայ .
Ու անօրէնութիւնը տեսնելով՝ ուշադ-
րութիւն պիտի չընէ՞ :
- 12 - Բայց անմիտ մարդը կը հպարտա-
նայ ,
Ու մարդը վայրենի իշու ձագի պէ՞ կը
ծնանի :
- 13 - Եթէ դուն սիրտդ պատրաստես ,
Ու ձեռքերդ անոր երկնցնես .
- 14 - Եթէ քու ձեռքդ անօրէնութիւն
կայ , զանիկա +եզէ հեռացուր ,
Ու մի թողուր որ վրաններուդ մէջ
անղգամութիւն բնակի :
- 15 - Այն ատեն անշուշտ կրնաս պարզե-
րես մնալ .
Հաստատ կ'ըլլաս ու քանի ճշ չես վախ-
նար :
- 16 - Քո՞ւ թշուառութիւնդ պիտի մոռ-
նաս .
Անցած ջուրերու պէս պիտի յիշես
զանիկա :
- 17 - Ու կեանքդ *կէտորուան լոյսէն
պայծառ պիտի ըլլայ՝ .
Թէև խաւարի մէջ ես , առտուան պէս
պիտի ըլլաս .
- 18 - Եւ ապահով պիտի ըլլաս , վասն
զի յոյս կայ +եզէ .
Պիտի փորես ու ապահովութեամբ
բնանաս :
- 19 - Եւ պիտի պառկիս , ու վախցնող
պիտի չըլլայ .
Ու շատերը քու երեսդ պիտի փնտռեն :
- 20 - Բայց ամբարիշտներուն աչքերը
պիտի նուազին ,
Ու անոնց ապատանարան պիտի +չգրա-
նուի ,
Ու յոյսերնին հոգեվարութիւն պիտի
ըլլայ :

ԳԼ. ԺԲ

Եւ Յոր պատասխան տուաւ ու
բառ ,

- 2 - Արդարեւ ժողովուրդը դուք էք ,
Ու իմաստութիւնը ձեզի հետ պիտի
մեռնի :
- 3 - Ես ալ ձեզի պէս խելք ունիմ , ես
ձեզմէ նուաաս չեմ .
Ու այսպիսի բաներ *ո՞վ չգիտեր՝ :
- 4 - Իր բարեկամէն ծաղր եղող մարդ
ճշե՞ եմ ես .
Բայց ով որ Աստուծոյ աղաղակէ ,
Աստուծոյ պատասխան կու տայ անոր .
Արդար ու կատարեալ մարդը ծաղր
կ'ըլլայ :
- 5 - Ոտքը սահելու վրայ եղողը , հան-
գիստ ի՞նչ + շարժին կարծիքին
համեմատ ,
Անպիտան ջահ մըն է :
- 6 - Գողերուն վրանները յաջողութեան
մէջ են ,
Ու զԱստուած բարկացնողները ապա-
հով են ,
Որոնց ձեռքը Աստուած ուրիշ
+կը լեցնէ :
- 7 - Բայց , աղէ , անասուններուն հար-
ցուր՝ որպէս զի քեզի սորվեցնեն ,
Ու երկինքի թռչուններուն՝ որպէս զի
քեզի իմացնեն ,
- 8 - Կամ թէ երկրի զրուցէ , ու անիկա
քեզի պիտի սորվեցնէ .
Ծովուն ձուկերը անգամ քեզի պիտի
պատմեն .
- 9 - Այս ամէն բաներով ո՞վ չգիտեր
Թէ ստիկա բնողը Տէրոջը ձեռքն է .
- 10 - Որ ամէն ապրողին անձը
Ու բոլոր մարդկային մարմնի հոգին
անոր ձեռքն է :
- 11 - Միթէ ականջը խօսքերը չ'որոշեր ,
Ինչպէս քիմքը կերակուրին համբ
կ'առնէ :
- 12 - Իմաստութիւնը ձերերուն քով է ,
Ու հանճարը՝ օրերուն շատութեանը
մէջ :
- 13 - Անոր քով է իմաստութիւնը ու
զօրութիւնը .
Հանճարը ու իմաստութիւնը Անորն
են :
- 14 - Ահա Ան կը փլցնէ , ու ալ չչինուիր .
Երբ մէկուն վրայ գոցէ , ալ չբացուիր :
- 15 - Ահա Անիկա ջուրերը կ'արգելէ ,
ու կը չորնան ,
Ու զանոնք թող կու տայ , ու երկիրը
տակնուվրայ կ'ընեն :

*Եբբ. որո՞ւն քով չկայ
+Եբբ. կը բերէ

- 16 - Զօրութիւնը ու հանճարը անոր հետ են .
- Խաբուողը ու խաբողը անորն են :
- 17 - Խորհրդականները կողոպտուած կը պարացնէ ,
- Ու դատաւորները կը յիմարեցնէ :
- 18 - Թագաւորներուն իշխանութիւնը կը քակէ ,
- Ու մէջքերնին չուան կը կապէ :
- 19 - *Նախարարները կողոպտուած կը պարացնէ ,
- Ու զօրաւորները կը կործանէ :
- 20 - Հաւատարիմներուն շրթունքը կը պապանձեցնէ ,
- Ու ծերերուն խելքը կ'առնէ :
- 21 - Ազնուականներուն վրայ անարգութիւն կը թափէ ,
- Ու հզօրներուն գօտին կը թուլցնէ :
- 22 - Խորունկ բաները խաւարէն հանելու կը յայտնէ ,
- Ու մահուան ստուերը ի լոյս կը հանէ :
- 23 - Ազգերը կը շառացնէ , ու զանոնք կը կորսնցնէ .
- Ազգերը «*բին ա՛նբին կը տարածէ , ու զանոնք ետ կը դարձնէ :
- 24 - Երկրի ժողովուրդներուն առաջնորդներուն խելքը կ'առնէ ,
- Ու ճամբայ չունեցող անապասներու մէջ կը մնորեցնէ զանոնք :
- 25 - Անոնք առանց լոյսի մութին մէջ խարխափելով կ'երթան .
- Ու գինոփներու պէս կը մնորեցնէ զանոնք :

ԳԼ ԺԳ

- Ահա այս ամէնը իմ աչքս տեսաւ .
- Ահանջս լսեց զանհկա ու իմացաւ :
- 2 - Ձեր գիտցածը ես ալ գիտեմ .
- Ես ձեզմէ նուաստ չեմ :
- 3 - Բայց ես Ամենակարողին խօսելու՝
- Ու իմ իրաւունքներս Աստուծոյ ներկայացնելու կը փափաքիմ .
- 4 - Սակայն դուք սուտ եօօիբ կը հնարէք .
- Ամէնդ ալ ունայնութեան բժիշկներ էք :
- 5 - Երանի՛ թէ բոլորովին լուռ կենայիք .
- Եւ այ՛ քանզի ձեզի իմաստութիւն պիտի սեպուէր :
- 6 - Հիմա իմ վիճարանութիւնս մտիկ բրէք ,

*Կա՛մ, Քահանաները

- Ու շրթունքներուս փաստերուն ականջ դրէք :
- 7 - Աստուծոյ համար անիրաւութի՞ւն կը զրուցէք ,
- Ու անոր համար նենգութի՞ւն կը խօսիք :
- 8 - Մի՛թէ աչառութի՞ւն կ'ընէք անոր ,
- Կամ՝ Աստուծոյ փաստը կը պաշտպանէք :
- 9 - Աղէ՞կ է որ անհկա ձեզ քննէ .
- Պիտի խաբէ՞ք զանհկա մարդ խաբելու պէս :
- 10 - Եթէ ծածուկ աչառութիւն ալ ընէք ,
- Անշուշտ անհկա պիտի յանդիմանէ ձեզ :
- 11 - Մի՛թէ անոր փառքը ձեզ չը՞ վախցընէր ,
- Ու անոր ա՛հը ձեր վրայ չի՞յնար :
- 12 - Ձեր յիշատակութիւնները մոխիրի առակներ են ,
- Ձեր *պատնէշները կառէ պատնէշներու՝ պէս են :
- 13 - Լռեցէք իմ՝ առջևս , ու ես խօսիմ .
- Եւ ինչ որ ըլլայ՝ թող պատահի ինծի :
- 14 - Ինչո՞ւ համար մարմինս ակռաներուս մէջ կ'առնեմ ,
- Ու հոգիս ափիս մէջ կը դնեմ :
- 15 - Թէեւ անհկա զիս սպաննէ , ես անոր պիտի յուսամ .
- Մանաւանդ իմ՝ ճամբաներս անոր առջև պիտի պաշտպանեմ :
- 16 - Նաև իմ՝ փրկութիւնս անհկա է .
- Բայց կեղծաւորը բնաւ անոր առջև պիտի չգայ :
- 17 - Աղէկ մտիկ բրէք իմ՝ խօսքս ,
- Ու իմ՝ բակիքս ձեր ականջներուն հասնի :
- 18 - Ահա հիմա ի՛մ դատս կարգի դրած եմ ,
- Գիտեմ որ պիտի արդարանամ :
- 19 - Ո՞վ ինծի հետ պիտի վիճի .
- Քանզի եթէ հիմա լռելու ըլլամ, պիտի մեռնիմ :
- 20 - Միայն թէ այս երկու բանը մի ընէր ինծի ,
- Ու այն ատեն քու երեսէդ պիտի չպահուրաիմ :
- 21 - Ձեռքդ վրայէս վերցուր ,
- Ու քու երկիւզդ զիս չզարհուրեցնէ :
- 22 - Ետքը դուն կանչէ , ու ես պատասխան տամ .

*Կա՛մ, մարմինները կառէ մարմիններու

- Կամ թէ ես խօսիմ, ու զուն ինծի պատասխան տուր:
- 23 - Ո՞րչափ են իմ անօրէնութիւններս ու մեղքերս .
- Իմ յանցանքս ու մեղքս ինծի իմացուր :
- 24 - Ինչո՞ւ համար երեսդ կը պահես , ու զիս քեզի թշնամի կը սեպես :
- 25 - Հո՞վէն քշուած աերևի՞ մը դէմ ահա հաւոր պիտի ըլլաս , Կամ թէ չոր մղէ՞ղ մը պիտի հայլածես .
- 26 - Որովհետեւ *գառնութեան վճիռ կու տաս՝ ինծի , ու իմ երիտասարդութեանս անօրէնութիւնները ինծի կը ժառանգեցնես .
- 27 - Ոտքերս կոճղի մէջ կը դնես , ու բոլոր ճամբաներս կը զննես , Ե- իմ ոտքերուս շաւիղներուն նշան կը դնես :
- 28 - Ու այս մարդն՝ փառած բանի պէս ու ցեցէն կերուած լաթի պէս կը մնա :

ԳԼ ԺԳ

Կնոջմէ ծնած մարդը կարճ կեանք ունի .

- Ու թշուառութիւնով լեցուն է .
- 2 - Ծաղիկի պէս կ'ելլէ ու կը կարուի , ու շուքի պէս կը փախչի ու չկենար :
- 3 - Բայց անո՞ր վրայ ալ աչքերդ կը բանաս , ու զիս քեզի հետ դատաստանի՞ կը բերես :
- 4 - Անմաքուրէն ո՞վ կրնայ մաքուր հանել .
- Բնաւ մէկը չի՞նք :
- 5 - Որովհետեւ անոր օրերը որոշուած են .
- Անոր ամիսներուն թիւը քու քովդ է . Դուն անոր սահման դրիր , ու անիկա չկրնար անդին անցնիլ :
- 6 - Երեսդ մէկդի դարձուր անկէ , որ պէս զի անիկա հանգչի , Մինչև որ վարձկանի պէս իր օրը լմնցնէ :
- 7 - Վասն զի եթէ ծառը կարուի , դեռ յոյս կայ
- Որ վերստին ծլի ու շառաւիղը պակաս չըլլայ :

*Եբբ. գառնութիւններ կը զրես

- 8 - Թէև անոր արմատը երկրին մէջ ծերացած ըլլայ , ու անոր բունը հողին մէջ մեռած ,
- 9 - Անիկա ջուրին հոտէն կը ծաղկի , ու նոր անկուած շաբէ պէս ճիւղեր կ'արձակէ :
- 10 - Բայց մարդը կը մեռնի ու *կ'երթայ .
- Մարդը իր հողին կ'աւանդէ , ու երբեք ո՞ր տեղ է :
- 11 - Ինչպէ՞ ջուրերը ծովէն կը պակսին , ու գետը կը չորնայ ու կը ցամքի ,
- 12 - Մյայտէս ալ մարդը գեղեցիկ կը պառկի ու չելլեր .
- Մինչև որ ալ երկինք չըլլայ՝ պիտի չելլեն , ու իրենց քունէն պիտի չարթնան :
- 13 - Երանի՛ թէ մինչև քու բարկութեանդ անցնիլը՝
- Գերեզմանին մէջ ծածկէիր ու պահէիր զիս .
- Ինծի ժամանակ մը որոշէիր , ու երբեք զիս միտքդ բերէիր :
- 14 - Եթէ մարդը մեռնի , պիտի կենդանանա՞յ արդեօք .
- Պատերազմիս բոլոր օրերը պիտի սպասեմ ,
- Մինչև որ իմ փոխուելու կարգէս գայ :
- 15 - Պիտի կանչես , ու ես քեզի պատասխան պիտի տամ .
- Քու ձեռքերուդ գործին պիտի փափաքիս :
- 16 - Որովհետեւ հիմա քայլերս կը համբուրես ,
- Մեղքս չե՞ս զններ :
- 17 - Իմ յանցանքս քսակի մէջ կընքուած է , ու իմ անօրէնութեանս վրայ † կարեցիր :
- 18 - Իրաւ որ լեռը իյնալով կը կործանի , ու տարաւածը իր տեղէն կը փոխադրուի :
- 19 - Չուրերը կը մուշեցնեն քարերը . Իրենց յորդած ժամանակը գետնին հողերը կը քշեն կը տանին .
- Դուն ալ մարդուն յոյսը «յոյէ» կը կորսնցնես :
- 20 - Դուն բոլորովին յաղթող կ'ըլլաս անոր վրայ , ու անիկա կ'երթայ .

*Կա՛մ, ապականութիւն կը տեսնէ
†Կա՛մ, աւելցուցիր

- Անոր դէմքը փոխելով՝ զանհկա կը վճռատես :
- 21 - Անոր տղաքը պատիւ կ ունենան, ու ինք չգիտնար.
- Անոնք անարգ կ'ըլլան, ու ինք անոնց վէճակը չիմանար :
- 22 - Միայն թէ իր վրայի մարմինը ցաւ պիտի կրէ,
- Ու իր հոգին պիտի արամի իր ներսի-դին :

ԳԼ. ԺԵ

Այն ատեն Եղիփազ Թեմանացի պատասխան տուաւ ու ըսաւ,

- 2 - Միթէ իմաստուն մարդը հովի պէ՞ս խօսքերով պատասխան պիտի տայ,
- Ու իր փորը արևելեան հովով պիտի լեցնէ՞.
- 3 - Պարապ խօսքերով պիտի վիճաբանի՞,
- Ու այնպիսի վրայներով՝ որոնք օգուտ մը չունին :
- 4 - Մանաւանդ դուն երկիւղը կը խափանես ,
- Ու Աստուծոյ մատուցուելու աղօթքը կ'արգիլես :
- 5 - Որովհետեւ բերանդ քու անօրէնութիւնդ կը ցուցնէ,
- Ու նենգաւորներուն լեզուն ընտրեցիր :
- 6 - Քու բերանդ քեզ պիտի դատապարտէ, ու ոչ թէ ես ,
- Եւ քու շրթունքներդ քեզի դէմ պիտի վկայեն :
- 7 - Առաջին ծնած մարդը դո՞ւն ես. կամ բլուրներէն սուս՞ջ ստեղծուեցար :
- 8 - Աստուծոյ գաղանիքներուն ունկնդիր եղա՞ր .
- Եւ իմաստութիւնը Գայն քեզի՞ պահեցիր :
- 9 - Ի՞նչ դիտես դուն , զոր մենք չենք գիտեր .
- Ի՞նչ բանի տեղեկութիւն ունիս , զոր մենք չունինք :
- 10 - Մեր մէջ ճերմակ մտքերով Ու խիտ ծեր մարդիկ այ կան, Որոնք տարիքով քու հօրմէդ աւելի մեծ են :
- 11 - Միթէ քի՞չ կը թուին քեզի Աստուծոյ մխիթարութիւները ,

- *Ու քեզի շատ մեղմ խօսքերը :
- 12 - Քու սիրտդ ո՞ւր կը տանի քեզ , Ու աչքերդ ի՞նչ բանի կ'ակնարկեն ,
- 13 - Որ հոգիդ Աստուծոյ դէմ դարձընելով՝
- Բերնէդ աշտի խօսքեր կը հասնես :
- 14 - Մարդը ի՞նչ է՝ որ մտքուր ըլլայ, Ու կնոջմէ ծնածը՝ որ արդարանայ :
- 15 - Ահա Աստուծոյ իր սուրբերուն չհաւատար ,
- Ու երկինք անոր աչքերուն առջև մտքուր չէ .
- 16 - Ո՞ւր կը մնայ գարշելի ու պիղծ մարդը,
- Որ անօրէնութիւնը ջուրի պէս կը խմէ :
- 17 - Քեզի իմացնեմ, մտիկ ըրէ ինծի, Ու տեսածս պատմեմ՝ ի՞նչ .
- 18 - Ինչ որ իմաստունները յայտնեցին, Ու բնաւ չծածկեցին իրենց հայրերէն աշտին :
- 19 - (Երկիր անոնց միայն տրուեցաւ , Ու անոնց մէջէն օտարական մը չանցաւ :)
- 20 - Չարը իր բոլոր օրերուն մէջ տանջանք կը կրէ ,
- Ու բռնաւորին քիչ տարիներ պահուած են .
- 21 - Վախերու ձայնը անոր ականջն է. Խաղաղութեան մէջ անոր վրայ կործանիչը պիտի գայ .
- 22 - Չհաւատար որ մութէն պիտի ելլէ ,
- Ու անհկա սուրի պահուած է :
- 23 - Հացը ո՞ւր է ըսելով թափառական կը պտըտի .
- Գիտէ որ մութ օրը պատրաստ է և իր ձեռքն է :
- 24 - Նեղութիւնը ու տառապանքը զանհկա կը վախցնեն ,
- Ու պատերազմի պատրաստուած թագաւորի պէս անոր վրայ յաղթող կ'ըլլան :
- 25 - Վասն զի Աստուծոյ դէմ ձեռք վերցուց ,
- Ու Ամենակարողին դէմ հպարտացաւ :
- 26 - Անոր վրայ կը յարձակի խոնարհութեամբ ,
- Ու իր ասպարներուն թանձր գմբեթներովը ,
- 27 - Որովհետեւ իր երեսը ճարպով ծածկեց ,

*ԵՔԷ. գիտութիւնով

*Կամ, Ծածուկ բան մը ունի՞ս արդեօք ի՞նչ պարանոցով

- Ու երիկամուկները պարարտութիւնով գոցեց :
- 28 - Եւ անիկա աւերակ քաղաքներու մէջ բնակեցաւ ,
- Ու կործանելու մտտեցած անշէն տուներու մէջ :
- 29 - Անիկա պիտի չհարստանայ , Անոր ստացուածքները հաստատա պիտի չըլլան ,
- Ու անանց շատութիւնը երկրի վրայ պիտի չտարածուի :
- 30 - Մութէն պիտի չգտունայ . Բոցը պիտի չորցնէ անոր ճիւղերը ,
- Ու Աստուծոյ բերնին շունչովը պիտի ոչնչանայ :
- 31 - Խաբուելով ունայնութեան չվրատահի ,
- Վասն զի անոր փոխարէնը ունայնութիւն պիտի ըլլայ :
- 32 - Օրերը չմնցած պիտի կարուի ,
- Ու ճիւղերը նորէն պիտի չկանանչին .
- 33 - Որթի պէս իր ազոխը պիտի թափէ ,
- Ու ձիթէնի պէս իր ծաղիկները պիտի թօթափէ :
- 34 - Վասն զի կեղծաւորներուն ժողովը ամոյշի պիտի ըլլայ ,
- Ու կաշառք առնողներուն վրանները կրակը պիտի այրէ :
- 35 - Անոնք թշուառութիւն կը յղանան , անօրէնութիւն կը ծնանին ,
- Ու սիրտերնին խաբէութիւն կը պատարաստէ :

ԳԼ ԺԶ

- Եւ Յոր պատասխան տուաւ ուրաւ ,
- 2 - Ես ասոնց պէս շատ բաներ լսած եմ . Ամէնդ ալ ձանձրութիւն տուող միութարիչներ էք :
- 3 - Դատարկ խօսքերը ծայր ունի՞ն . Եթէ ոչ՝ ի՞նչ բանէ դրդուած պատասխան կու տաս :
- 4 - Ես ալ ձեզի պէս կրնայի խօսիլ . Եթէ ձեր անձը իմ անձիս տեղը ըլլար , կրնայի ձեզի դէմ խօսքեր դիզել ,
- Ու ձեզի դէմ գլուխս երերցնել :
- 5 - Սա՛յն իմ բերնովս ձեզ կը զօրացրնէի ,
- Ու շրթուկներուս շարժումը յերբերանքներու կը փարատէր :
- 6 - Եթէ խօսիմ՝ արամուկութիւնս չփարատիր ,
- Եւ եթէ լռեմ՝ ի՞նչ կը պակսի ինձմէ :

- 7 - Բայց հիմա զիս յոգնեցուց . Բոլոր *տունս ամոյշի ըրիւր .
- 8 - Նաև զիս †բռնեցիր , ու ասիւն ինչի դէմ վկայութիւն մըն է .
- Ու իմ նիհարութիւնս ինձի դէմ ելլելով՝ երեսիս վրայ վկայութիւն կ'ընէ :
- 9 - Անոր բարկութիւնը զե՞ պատուեց , ու ինձի թշնամի եղաւ ,
- Ակռաները իմ վրաս կ'ըծաւեց . Թշնամիս սուր աչքերով ինձի նայեցաւ :
- 10 - Բերաննին վրաս բացին ,
- Ու զե՞ նախատելու համար ծնօաներուս ապտակ զարկին .
- Մէկտեղ վրաս ժողովուեցան :
- 11 - Աստուած զիս ամբարշտին յանձնեց ,
- Ու անօրէններուն ձեռքը ձգեց :
- 12 - Հանգիստ էի , ու զիս ճնշեց ,
- Ու վիզէս բռնելով՝ զիս ջախջախեց ,
- Ու զիս իրեն նշան դրաւ :
- 13 - Անոր աղեղնաւորները իմ բոլոր ախքս առին .
- Երիկամուկներս կը խոցէ , ու ինձի չխնայեր .
- Լեղիս գետինը կը թափէ :
- 14 - Կոտորածի վրայ կոտորած ընելով զիս կտորեց ,
- Իմ վրաս զօրաւորի մը պէս յարձակեցաւ :
- 15 - Մորթիս վրայ քուրձ կտրեցի ,
- Ու եղջիւրս †հողով աղատակեցի :
- 16 - Երեսս լալէն լուռեցաւ ,
- Ու աչքիս թարթիչներուն վրայ մահուան շուք կայ .
- 17 - Թէեւ ձեռքերուս մէջ անօրէնութիւն չկայ ,
- Ու աղօթքս մտքուր է :
- 18 - Ով երկիր , իմ արիւնս մի ծածկեր ,
- Ու աղաղակիս տեղ չըլլայ :
- 19 - Հիմա ալ ահա իմ վկաս երկինքին մէջ է ,
- Ու փաստաբանս բարձր տեղերն է :
- 20 - Զիս ծաղր ընողները իմ բարեկամներս են .
- Աչքերս Աստուծոյ առջև արցունք կը թափեն :

*Եբբ . ժողովս
 †Կաճ , խորշումութիւններով ծածկեցիր
 ‡Կաճ , հողի մէջ
 ॥Կաճ , կարմրեցաւ

- 21 - Երանի՛ թէ մարդ կարենար Աստուծոյ հետ վիճաբանիլ ,
Ինչպէս մարդ իր ընկերին հետ :
- 22 - Վասն զի քիչ տարիներ անցնելէն ետքը՝
Այնպիսի ճամբոյ մը պիտի երթամ ,
ուրկէ ա՛լ պիտի չդառնամ :

ԳԼ. ԺԵ

Շունչս կը նուազի , օրերս կը մարին ,

- Գերեզմանը ինծի ինչպէս :
- 2-Ձե՞ որ ծաղր ընողներ կան իմ քովս ,
Ու աչքս անոնց վիճմունքովը գիշերը կ'անցնէ :
- 3 - Աղէ , քու քովդ ինծի երաշխաւոր մը գիր .
Ո՞վ կայ որ իմ ձեռքս բռնէ :
- 4 - Վասն զի դուն իմաստութիւնը անոնց սրտէն ծածկեցիր ,
Անոր համար պիտի չբարձրացնես զանոնք :
- 5 - Ով որ էր *բարեկամները կողոպտուելու կը մտանէ ,
Անոր տղոցը աչքերը պիտի նուազին :
- 6 - Ձիս ժողովուրդներուն առակ ըրաւ .
Անոնց առջև զգուելի եղայ :
- 7 - Նաև աչքերս արամութենէն շրջան ,
Ու *արհաւիրք քոյր անդամները շուքի պէս եղան :
- 8 - Ուղիղները այս բանին վրայ պիտի դարմանան ,
Ու անմեղները պիտի արթննան կեղծաւորին դէմ :
- 9 - Ու արդարը հաստատ պիտի կենայ իր ճամբուն մէջ ,
Եւ մտքուր ձեռք ունեցողը երթալով պիտի զօրանայ :
- 10 - Բայց դուք ամէնդ ալ դարձէք ու եկէք ,
Վասն զի ձեր մէջ իմաստուն չեմ գտներ :
- 11 - Իմ օրերս անցան ,
Իմ գիտաւորութիւններս * - սրտիս խորհուրդները խափանեցան :
- 12 - Գիշերը ցարկի փոխուեցաւ ,
Ու լոյսը †խաւարին մօտեցաւ :

*Վա՛՛, բարեկամներուն շողքորթութիւն կ'ընէ
†Վա՛՛, խաւարին առջևէն կարճ եղաւ

- 13 - Միայն գերեզմանին կը սպասեմ ,
որ իմ տունս պիտի ըլլայ .
Անկողինս մթութեան մէջ փուցի :
- 14 - Ապականութեան ազաղակեցի՛ ըտե՛լ ,
Ի՞նչ իմ հոյրս է ,
Եւ որդերուն՝ Ի՞նչ իմ մոյրս ու քոյրս է :
- 15 - Եւ հիմա ո՞ւր է իմ յոյս .
Իմ յոյս ո՞վ պիտի տեսնէ :
- 16 - Գերեզմանին առանձնութեանը մէջ պիտի իջնէ ,
Երբ մեկտեղ հողին մէջ հանգստանայ :

ԳԼ. ԺԸ

Այն ատեն Բաղդասա Սօքեցի պատասխան տուաւ ու ըսաւ ,

- 2 - Ե՞րբ այդ խօսքերը պիտի հասցնէք .
Հասկցէք , ու անկէ ետքը խօսինք :
- 3 - Ինչո՞ւ համար անասուններու պէս համարուինք ,
Ու աչքերնուդ առջև անմտքուր սեպուինք :
- 4 - (Իր բարկութիւնովը զինք կը պատառէ .)
Միթէ երկիր քեզի համար երեսի վրայ պիտի ձգուի՞ ,
Ու ապառաժը իր տեղէն պիտի փոխադրուի՞ :
- 5 - Անշուշտ ամբարշտին լոյսը պիտի մարի ,
Ու անոր կրակին բոցը լոյս պիտի չտայ .
- 6 - Անոր վրանին մէջ լոյսը պիտի խաւարի ,
Ու անոր ճրագը անոր վրայ պիտի մարի :
- 7 - Անոր զօրութեանը քայլերը նեղութիւն պիտի կրեն ,
Ու անոր խորհուրդը զանիկա գետինը պիտի զարնէ :
- 8 - Վասն զի իր ստքերովը ուռկանի մէջ պիտի բռնուի ,
Ու ցանցի վրայ պիտի քալէ :
- 9 - Վարմը անոր գարշապարը պիտի բռնէ ,
Ու աւարտուն անոր պիտի յաղթէ :
- 10 - Անոր համար գեանին մէջ թաւկարգ սրահաւած է ,
Ու անոր ճամբուն վրայ սրագոյլթ :
- 11 - Արհաւիրքը զանիկա ամէն կողմէն պիտի պաշարէ ,
Ու զանիկա իր ստքերովը ասդին անդին պիտի վազցնէ :

- 12 - Անոր զօրութիւնը պիտի անօթե-
նայ ,
- Ու կորուստը անոր քով պատրաստ է ,
- 13 - Որ անոր մտքին ոյժը պիտի ուտէ .
Մահուան տաջինեկը պիտի ուտէ անոր
ոյժը :
- 14 - Անոր վստահութիւնը իր վրանէն
պիտի կտրուի .
- Ու անիկա դէպ ի զարհուրանաց թա-
գաւորը պիտի քշուի :
- 15 - Անոր վրանին մէջ զարհուրանք պի-
տի բնակի , որ այն-հետեւ իրը
պիտի չըլլայ .
- Ու անոր բնակարանին վրայ ծծումբ
պիտի ցանուի :
- 16 - Անոր արմատները տակէն պիտի
չորնան ,
- Ու վերէն ճիւղերը պիտի կտրուին :
- 17 - Անոր յիշատակը երկրէ պիտի կոր-
սուի ,
- Ու անոր անունը հրապարակներուն մէջ
պիտի չգրուցուի :
- 18 - Անիկա լոյսէն խաւարը պիտի
քշուի ,
- Ու անիկա աշխարհէ պիտի վաճառուի :
- 19 - Իր ժողովուրդին մէջ ոչ զաւակ
պիտի ունենայ և ոչ թոռ ,
- Ու անոր բնակութիւններուն մէջ մէ'կը
պիտի չմնայ :
- 20 - *Յեռինները անոր օրուանը վրայ
պիտի զարմանան ,
- Ու Գառաջինները պիտի ստահան :
- 21 - Արդարեւ ամբարշտին բնակարան-
ները այսպէս պիտի ըլլան ,
- Ու զԱստուած չճանչցողին տեղը այս-
պէս է :

ԳԼ. ԺԹ

- Եւ Յոր պատասխան տուաւ ու
րասաւ ,
- 2 - Մինչև ե՞րբ հոգիս պիտի վշտացնէք ,
Ու զիս խօսքերով պիտի ճնշէք :
- 3 - Արդէն տասը անգամ է որ զիս կը
մեղադրէք .
- Չէք ամչնար որ զիս կ'ապշեցնէք :
- 4 - Եւ եթէ արդարեւ ես սխալեմ եմ ,
Իմ սխալմունքս իմ քովս կը մնայ :
- 5 - Եթէ անպատճառ ամբարտաւա-
նութեամբ խօսիլ կ'ուզէք ինծի
դէմ ,

*Կա՛մ, Արեմուաք բնակիւղները
†Կա՛մ, արեւելք բնակիւղները

- Ու ամօթս երես զարնել ,
- 6 - Գիտցէք ուրեմն որ զիս Աստուած
կործանեց ,
- Ու իր ցանցը իմ՝ վրաս դարձուց :
- 7 - Ահա ինչի եզր՝ անիրաւութեանը
համար կ'աղաղակեմ , ու պա-
տասխան տուող չկայ .
- Կը բողբեմ , բայց դատաստան չկայ :
- 8 - Անիկա իմ՝ ճամբաս գոցեց , այնպէս
որ չեմ կրնար անցնիլ .
- Իմ շաւիղներուս վրայ խաւար դրաւ :
- 9 - Ձիս իմ փառքէս մերկացուց ,
Ու գլխէս թագը վերցուց :
- 10 - Ձիս ամէն կողմէ աւրեց , ու ես
գացի ,
- Ու իմ՝ յոյս ծառի մը պէս արմատէն
խլեց :
- 11 - Անոր բարկութիւնը իմ՝ վրաս բոր-
բոքեցաւ ,
- Ու զիս իր թշնամիներուն կարգը դրաւ :
- 12 - Անոր գունդերը մէկտեղ եկան ,
Ու ճամբանին ինծի դէմ պատրաստե-
ցին ,
- Ու վրանիս բոլորտիքը բանակեցան :
- 13 - Անիկա իմ՝ եղբայրներս ինծմէ հե-
ռացուց ,
- Ու արդարեւ ծանօթներս օտարացան
ինծմէ :
- 14 - Ազգականներս զե՛ս թողուցին ,
Ու իմ՝ ճանչուորներս զիս մոռցան :
- 15 - Իմ տունս բնակիւղները ու աղա-
խիններս զիս անծանօթ մէկը
սեպեցին ,
- Ու անոնց աչքին տաջե օտարական ե-
ղայ :
- 16 - Ծառաս կանչեցի , ու անիկա պա-
տասխան չտուաւ ,
- Թէեւ բերնովս անոր ազաչեցի :
- 17 - Իմ շունչս *տակի եղաւ կնոջս ,
Ու իմ՝ աղաչանքներս՝ իմ՝ հօր՝ որովայ-
նին սրգիններուն :
- 18 - Փոքր աղաքն ալ զիս կ'անար-
գեն ,
- Ու երբ կ'ելլեմ , ինծի դէմ կը խօսին :
- 19 - Բոլոր մտերիմ՝ բարեկամներս ինծ-
մէ զրուեցան ,
- Ու իմ՝ սիրականներս ինծի դէմ դար-
ձան :
- 20 - Ոսկորներս մտքիս ու մտքիս
փական .
- Միայն սկաւաներուս կաշիովը ազատե-
ցայ :

*Եբբ. օտար

- 21 - Ով իմ բարեկամներս, դուք ողորմեցէք ինձի,
- Ողորմեցէք ինձի, քանզի Աստուծոյ ձեռքը ինձի դպաւ:
- 22 - Ինչո՞ւ Աստուծոյ պէս զիս կը հաւլածէք,
- Ու մարմինէս չէք կշտանար:
- 23 - Երանի՛ թէ հիմա խօսքերս գրուէին.
- Երանի՛ թէ գիրքի մը մէջ քանդակուէին:
- 24 - Երկաթէ գրիչով կապարի վրայ Ու քարի վրայ յաւիտեան փորագրուէին:
- 25 - Վասն զի գիտեմ որ իմ *Փրկիչս ողջ է,
- Ու անիկա վերջին ժամանակը պիտի ելլէ †երկրի վրայ:
- 26 - Ու թէև մտթէս ետքը այս ալ փճանայ,
- Բայց իմ մարմնովս զԱստուած պիտի տեսնեմ,
- 27 - Զոր ես ինձի համար պիտի տեսնեմ,
- Ու իմ աչքերս պիտի դիտեն զանիկա, և ոչ թէ ուրիշը.
- Երկամուկներս իմ ներսիցիս կը հալին:
- 28 - Պէտք էր ըսէիք, Ինչո՞ւ կը հաւածենք զանիկա.
- Որովհետև բանին արմատը իմ վրաս գտնուեցաւ:
- 29 - Սուրէն վախցէք. վասն զի բարկութեան պատիժը սուրն է,
- Որպէս զի գիտնաք թէ դատատան կայ:

ԳԼ. Ի

- Այն ատեն Սոփար Նաամացի պատասխան տուաւ ու ըսաւ,
- 2 - Ասոր համար իմ խորհուրդներս ինձի պատասխանել կու տան,
- Ու ասոր համար կ'արտորամ:
- 3 - Զիս խոյտառակող յանդիմանութիւնը լսեցի,
- Բայց է՛ հոգիս «նեցա՞ իմնատու թէնէս պատասխան տալ կը ստիպէ զիս:
- 4 - 'Իսն ասիկա դիտե՞ս' որ ի յաւիտենից

*Կա՛մ, Վրէժխնդիրս
 †Եբբ. հոգի

- Մարդուս երկրի վրայ դրուելէն ի վեր,
- 5 - Անզգամին յաղթանակը քիչ ժամանակ կը տևէ,
- Ու կեղծաւորին ուրախութիւնը մէկ վայրկեանի համար է:
- 6 - Թէև անոր փառաւորութիւնը մինչև երկինք ելլէ,
- Ու գլուխը ամպերուն հասնի,
- 7 - Իր աղբին պէս յաւիտեան պիտի ոչնչանայ.
- Ու զինք տեսնողները պիտի ըսեն, Ո՞ւր է անիկա:
- 8 - Երազի պէս պիտի թռչի ու պիտի չգտնուի.
- Ու գիշերուան ցնորքի պէս պիտի փախչի:
- 9 - Զանիկա տեսնող աչքը ա՛լ պիտի չտեսնէ.
- Ու անոր բնա՛ծ տեղը ա՛լ պիտի չնայի անոր:
- 10 - Անոր զաւակները *աղքատներէն շնորհք պիտի խնդրեն,
- Ու անոր ձեռքերը իր †յափշտակածը ետ պիտի տան.
- 11 - Անոր սակորները իր ‡երիտասարդութեան մեղեքսն պատիժը լեցուն են.
- Ու անոր հետ հողին մէջ պիտի պառկին:
- 12 - Եթէ անզգամութիւնը անոր բերնին մէջ քաղցր է,
- Եւ եթէ իր լեզուին տակ կը պահէ զանիկա,
- 13 - Եթէ զանիկա խնայէ ու չձգէ,
- Ու իր քիմքին մէջ պահէ զանիկա,
- 14 - Կերակուրը անոր աղիքներուն մէջ պիտի փոխուի,
- Անոր ներսիցին քարքի լեղի պիտի ըլլայ:
- 15 - Անիկա հարստութիւններ կու տուաւ, բայց պիտի փոխէ զանոնք.
- Ու Աստուած անոր փորէն դուրս պիտի հանէ զանոնք:
- 16 - Անիկա քարքին թոյնը պիտի ծծէ,
- Ու զանիկա իժի լեզուն պիտի մեռցնէ:
- 17 - Անիկա պիտի չտեսնէ վտակները, Մեղրի ու կողի հեղեղներուն գետերը:
- 18 - Իր աշխատանքով վատակածը ետ պիտի տայ ու պիտի չկլլէ,

*Եբբ. աղքատները պիտի հաճեցնեն
 †Կա՛մ, հարստութիւնը
 ‡Կա՛մ, ծածուկ

- Ու եւն տուածը էր հարստութեանը չափ
պիտի ըլլայ,
- Ու անոր վրայ պիտի չուրախանայ:
- 19 - Որովհետեւ ուղքաաները ճնշեց ու
երեսի վրայ թողուց,
- Ու իր չչինած աւելը յափշտակեց.
- 20 - Անշուշտ իր ներսիդին խաղաղու-
թիւն պիտի չզգայ:
- Ու ցանկացածը պիտի չկրնայ ազա-
տել:
- 21 - Անոր ուտելու բան մը պիտի չմնայ,
Անոր համար անոր յաջողութիւնը
հաստատ պիտի չըլլայ:
- 22 - Առատութեամբ լեցուն եղած
ժամանակն ալ նեղութեան մէջ
պիտի ըլլայ:
- Թշուառութեան մէջ եղողներուն ա-
մէն *հարուածը անոր վրայ պի-
տի գայ:
- 23 - Երբ փորը կշտացնելու վրայ կ'ըլ-
լայ,
Ասորո՞ւ իր սաստիկ բարկութիւնը ա-
նոր վրայ պիտի զրկէ,
Ու անձրևի պէս անոր վրայ պիտի թա-
փէ՝ կերակուր ուտելու տատենը:
- 24 - Երկաթէ գէնքին առջևէն փախած
տատենը
Պղնձէ աղեղը զանհկա պիտի խոցէ:
- 25 - Անոր դէմ արձակուածը մարմինը
պիտի թափանցէ,
Ու փայլուն տէգը անոր մաղձէն պիտի
եւէ:
- Անոր վրայ արհաւիրք պիտի գայ:
- 26 - Բոլոր խաւարը անոր գաղտուկ
տեղերը պիտի պահուի:
- Զփշուած կրակը զանհկա պիտի լափէ:
Անոր վրայ մնացողը †ապերջանիկ պի-
տի ըլլայ:
- 27 - Երկինք անոր յանցանքը պիտի
յայտնէ,
Երկիր ալ անոր դէմ պիտի ելլէ:
- 28 - Անոր տանը եկամուտը պիտի
յափշտակուի,
Ահն Բան պիտի անցնի Ասորո՞ւյ բար-
կութեան օրը:
- 29 - Ասիկա է ամբարիշտ մարդուն բա-
ժինը զոր Աստուծ մէ պիտի աւնէ,
Եւ ասիկա է այն ժառանգութիւնը զոր
Աստուած անոր համար սահմա-
նէր է:

ԳԼ. ԻԱ

- Եւ Յոբ պատասխան տուաւ ու
բասւ,
- 2 - Խօսքս աղէկ մտիկ ըրէք,
Ու այս ըլլայ ձեր մխիթարութիւնը:
- 3 - Ինձի համբերեցէք ու ես խօսիմ՝,
Ու խօսելէս ետքը ծաղր ըրէք:
- 4 - Միթէ ես մարդ՞ու հետ կը վիճիմ:
Եւ ինչ՞ու համար հոգիս չարամի:
- 5 - Ինձի նայեցէք ու ապշեցէք,
Ու բերաննուդ վրայ ձեռք դրէք:
- 6 - Այ՞ Բաները մտածելով կը զար-
հուրիմ,
Ու մարմինս կը սկսի դողալ:
- 7 - Ամբարիշտները ինչ՞ու կ'ապրին.
Կը ծերանան ու իրստ կ'ուժոփան:
- 8 - Անոնց սերունդը իրենց հետ կը
հաստատուի իրենց առջև,
Եւ անոնց զաւակները աչքերնուն առ-
ջև:
- 9 - Տուներնին խաղաղութեան մէջ է
« վախէ ալա »,
Եւ Աստուծոյ գաւազանը անոնց վրայ
չէ:
- 10 - Անոնց ցուլը կը զուգաւորուի ու
դատարկը չէլլեր.
Կովը էր որք է կը ծնանի ու չվիժեր:
- 11 - Իրենց պզտիկները սչխարի հօտի
պէս կը հանեն.
Ու անոնց աղաքը «բախ-բեմբ» կը
ցաթկատեն.
- 12 - Թմբուկով ու քնարով շայն կը
վերցնեն,
Ու սրինգին ձայնովը ուրախ կ'ըլլան:
- 13 - Անոնք օրերնին զուարճութիւնով
կ'անցնեն,
Ու մէկ վայրկեանի մէջ գերեզմանը
կ'իջնեն:
- 14 - Եւ Աստուծոյ կ'ըսեն,
Քաշուէ մեզմէ,
Վասն զի քու ճամբաներդ գիտնալ
չենք ուզեր:
- 15 - Ամենակարողը ս՞ով է, որ անոր
ծառայենք.
Ու եթէ անոր աղօթք ընենք, ի՞նչ
օգուտ պիտի ունենանք:
- 16 - Ահա անոնց բարիքը ձեռքերնին
չէ.
Ամբարշտին խորհուրդը ինձմէ հեռու
ըլլայ:
- 17 - Ամբարիշտներուն ճրագը քանի՞
անգամ կը մարի,
Ու տառապանքը անոնց վրայ կու գայ:

* Եբր. ձեռքը . տես գլ. իգ. 2 :
† Կամ, պիտի սպառէ

- Առաջին իր բարկութիւնովը անոց
ցաւեր կը բաժնէ:
- 18 - Հովին առջև եղած յարդին պէս
Ու մըրիկին յափշտակած շիւղին պէս
կ'ըլլան:
- 19 - Աստուած անոր անիրաւութիւնը
անոր սրդիններուն կը պահէ:
- Անոր փոխարէն պիտի հասուցանէ, ու
ան ալ պիտի գիտնայ:
- 20 - Անոր աչքերը իր կորուստը պիտի
տեսնեն,
Ու Ամենակարողին բարկութենէն պի-
տի խմէ:
- 21 - Անիկա ի՞նչ զուարճութիւն պի-
տի ունենայ իրմէ ետքը մնացած
առնէն,
Որովհետեւ իր ամիսներուն թիւը կիս-
ուած է:
- 22 - Միթէ Աստուծոյ գիտութիւն
սորվեցնել հնա՞ր է,
Անոր՝ որ բարձրերը կը գատէ:
- 23 - Մէկը կը մեռնի իր առուգու-
թեանը մէջ
Բոյսրովին հանգարտ և հանգիտ:
- 24 - Անոր *քովերը ճարպով՝ լեցուն են,
Ու սակորներուն ծուծը թարմ՝ է:
- 25 - Ու մէկ ուրիշը կը մեռնի հոգիի
ցաւով
Ու առանց բարիքով կշտանալու:
- 26 - Առաջին երկու մէկտեղ հոգին մէջ
կը պառկին,
Ու սրդերը կը ծածկեն զանոնք:
- 27 - Ահա գիտեմ՝ ձեր խորհուրդ-
ները,
Ու ինձի գէժ՝ հնարած անիրաւութիւն-
ները:
- 28 - Վասն զի կ'ըսէք, Ո՞ւր է նախա-
բարին առնել,
Եւ ո՞ւր է ամբարիշտներուն բնակած
փրանը:
- 29 - Ճամբորդներուն չհարցուցի՞ք,
Ու անոնց նշանները չէ՞ք հասկնար:
- 30 - Վասն զի չարը կորստեան օրուան
կը պահուի,
Ու բարկութեան օրուան կը տարուի:
- 31 - Անոր երեսին գէժ՝ ո՞վ պիտի յան-
գիմանէ անոր ճամբան:
Եւ անոր ըրածին փոխարէնը ո՞վ անոր
պիտի հասուցանէ:
- 32 - Բայց ան ալ գերեզմանը պիտի
տարուի,
Ու տապանին մէջ պիտի մնայ:

*կա՛մ, անօթները կաթով

- 33 - Չորին հոգի կուշտերը անոր անոյշ
պիտի գան,
Ու ամէն մարդ անոր ետեւէն պիտի եր-
թայ:
- Իսկ անոր առջևէն Գոգոնէրուն հաշիւը
չկայ:
- 34 - Ուրեմն ի՞նչպէս փուճ միթիթարու-
թիւններ կու տաք ինձի:
- Որովհետեւ ձեր պատասխաններուն մէջ
ստութիւն կայ:

ԳԼ. ԻԲ

- Ա**յն տատեն Եղիփազ Թեմանացի
պատասխան տալով ըսաւ,
2 - Միթէ մարդը կրնա՞յ Աստուծոյ
օգտակար ըլլալ:
Խելացի մարդը միայն իրեն օգուտ
կ'ընէ:
- 3 - Ամենակարողին հաճութիւն մը
կ'ըլլա՞յ եթէ արդար ըլլաս,
Կամ շահ մը՝ եթէ քու ճամբաներդ
շիտկես:
- 4 - Միթէ քեզմէ վախնալով քեզի հետ
փճարանութիւն կ'ընէ՞:
- Քեզի հետ գառատանի կը մտնէ՞:
- 5 - Զէ՞ որ քու անդամութիւնդ մեծ է,
Ու անօրէնութիւններդ անհամար են:
- 6 - Որովհետեւ եզրայրներէդ առանց
պատճառի գրաւ առիր,
Ու մերկերուն հանդերձները յափշտա-
կեցիր:
- 7 - Ծարւածին ջուր չխմցուցիր
Ու հացը անօթիէն խնայեցիր:
- 8 - Բայց երկիր զօրաւորինն էր,
Ու անոր մէջ պատուաւորը կը բնակէր:
- 9 - Որբեարի կիները գառարկ զրկե-
ցիր,
Ու որբերուն թեւերը կտրեցան:
- 10 - Անոր համար քու բոլորախքդ սր-
գայթներ լա՞րսն են,
Ու յանկարծաստ վախը քեզ կը վար-
հուրեցնէ:
- 11 - Կամ՝ այդքէի խաւար մը չեղա-
րէր է՝ որ չես կրնար տեսնել:
Ու ջուրերուն շատութիւնը քեզ կը
ծածկէ:
- 12 - Աստուած երկինքին խիտարարձր
տեղը չէ՞:
- Հիմա աստղերուն *բարձրութեանը
նայէ, ս'ըջափ բարձր են:
- 13 - Ու դուն ըսիր,

*ԵՔԵ. զլիսուն

Ի՞նչ գիտէ Աստուած ,

Մտախոսողին մէջէն դատաստան
պիտի ընէ .

14 - Ամպերը անոր առջև ծածկոյթ
են, ու չտեսներ .

Եւ անիկա երկինքի կամարին վրայ
կը պարտի :

15 - *Ուշագրութիւն ըրի՞ր՝ այն †Տին
ճամբային՝ ,

Որ անօրէն մարդիկը պաշտեցան .

16 - Որոնք յանկարծակի յափշտակ-
ուեցան ,

Որոնց հիմերը հեղեղը ընկղմեց :

17 - Անոնք կ'ըսէին Աստուծոյ, Հեռա-
ցիր մեզմէ .

Ու Ամենակարողը †մեզի ի՞նչ պիտի
ընէ .

18 - Թէև անոնց տունը բարութիւնով
լեցուցեր էր .

Անդգամներուն խորհուրդը ինծմէ հե-
ռու ըլլայ :

19 - Արդարները պիտի տեսնեն և ու-
րախ ըլլան ,

Եւ անմեղները զանոնք ծաղր պիտի
ընեն՝ ըսելով ,

20 - Մեր թշնամիները կորսուած
չե՞ն ,

Ու անոնց մնացորդը կրակը չկեր՞ու :

21 - Աղէ, Անոր հետ բարեկամ՝ եղիր ,
ու խաղաղութիւն ունեցիր .

Ու ասկէ քեզի օգուտ կ'ըլլայ :

22 - Անոր բերնէն օրէնքը ընդունէ ,
Ու անոր խօսքերը սիրագ դիր :

23 - Եթէ Ամենակարողին դառնաս ,
դուն պիտի ՝ Տաստատուիս .

Անօրէնութիւնը քու վրաններէդ հե-
ռացուր .

24 - Ու սակին հողին Տիրոյ պիտի դնես ,
Ու Ոսկրի սակին՝ հեղեղատներու քա-
րերուն Տիրոյ .

25 - Եւ Ամենակարողը քու սակիդ ըլ-
լալով՝

Քու զօրութեանդ արծաթը պիտի ըլ-
լայ :

26 - Վասն զի այն ատեն Ամենակա-
րողէն ուրախութիւն պիտի ու-
նենաս

Ու երեսդ դէպ ի Աստուած պիտի վեր-
ցընես .

27 - Անոր պիտի աղաչես, ու քեզի պի-
տի լսէ .

Եւ քու ուխտերդ պիտի կատարես :

28 - Եթէ դիտաւորութիւն մը ունե-
նաս՝ քեզի պիտի յաջողի ;

Ու ճամբաներուդ վրայ լոյս պիտի ճա-
ռագայթէ :

29 - Երբ Բէլ ջածնայ, ու դուն ըսես
*Թող բարձրանայ՝ ,

Այն ատեն պիտի ազատէ զանիկա՝ որ
աչքերով խոնարհած էր :

30 - Անմեղ չեղողն ալ պիտի ազատէ,
Ու քու ձեռքերուդ մաքրութիւնովը
պիտի ազատուի :

ԳԼ. ԻԳ.

Եւ Յօք պատասխան տուաւ ու
ըսաւ ,

2 - Այսօր ալ իմ գանգատս դառն է,
†Հարուածս հառաչանքէս ծանր է :

3 - Երանի՛ թէ կարող ըլլայի գանել
զանիկա ,

Մինչև անոր ակտուր կ'երթայի .

4 - Ի՞՞ դատս անոր առջև կը տարա-
ծէի ,

Ու բերանս փաստերով կը լեցնէի :

5 - Կը գիտնայի թէ ինծի ի՞նչ պա-
տասխան կու տար ,

Ու կը լսէի ինչ որ ինծի կ'ըսէր :

6 - Միթէ ուժին շատութիւնովը ինծի
հետ պիտի վիճէ՞ր . ոչ .

Հապա ինք զիս պիտի զօրացնէր :

7 - Ուղիղ մտրդը հոն կրնայ վիճարա-
նիլ անոր հետ .

Ու ես յաւիտեան իմ Գատաւորէս
կ'աղատուէի :

8 - Բայց ահա դէպ ի արեւելք կ'եր-
թամ՝, ու անիկա չերեւար ,

Եւ դէպ ի արեւմուտք՝ ու զանիկա չեմ
նշմարեր .

9 - Դէպ ի հիւսիս կ'երթամ, ուր ինք կը
գործէ ,

Բայց զանիկա չեմ կրնար դիտել .
Հարաւային կողմը կը պահուի ,

Ու չեմ կրնար տեսնել զանիկա :

10 - Իսկ անիկա գիտէ իմ՝ ճամբաս .
Երբ զիս փորձէ , սակի պէս պիտի ել-
լեմ :

11 - Ուրբա անոր քայլերուն վրայ հաս-
տատուեցաւ ,

*Կամ, Պիտի հետեւիս
†Կամ, հին աշխարհին ճամբային
‡Եբր. անոնց
§Եբր. շինուիս §Կամ, պէս

*Եբր. Բարձրութիւն
†Եբր. Ձեռքս

- Անոր ճամբան պահելով՝ չմոլորեցայ :
- 12 - Անոր շրթունքներուն պատուիրանքներէն չզատուեցայ .
- Անոր բերնին խօսքերը իմ՝ պիտոյքէս աւելի պահեցի :
- 13 - Բայց անիկա մէկ փոքրիկ վրայ է, եւ ո՞վ կրնայ զանիկա դարձնել .
- Ու սրտին ուղածը կ'ընէ :
- 14 - Ուրեմն ինձի համար սահմանուածը պիտի կատարէ .
- Ու ասոր պէս շատ բաներ կան անոր քով :
- 15 - Անոր համար անոր ներկայութենէն կը շփոթիմ ,
- Ու երբ կը մտածեմ , անկէ կը վախնամ :
- 16 - Վասն զի Աստուած սիրտս կը կակուղցնէ ,
- Ու Ամենակարողը զիս կը շփոթէ ,
- 17 - Որովհետեւ ես Բարեպաշտի խաւարէն առաջ չմեռայ ,
- Ու մոլոր առջևէս չծածկեց :

Գ.Լ. ԻԳ

Քանի որ Ամենակարողէն պահուած չեն ժամանակները ,

- Ի՞նչպէս զանիկա ճանչցողները անոր օրերը չեն տեսներ :
- 2 - Զարե՛րը սահմաններ կը փոխեն , Հօտեր կը յափշտակեն ու զանազան կ'աւրածեն .
- 3 - Որբերուն էշերը կ'աւանդեն կը տանին , Որբեարիին եզր գրաւ կ'առնեն .
- 4 - Աղքատները ճամբայէն կը մոլորեցնեն ,
- Ու երկրի տնտեսները մէկտեղ կը պահուին :
- 5 - Ահա անոնք անսպասարկ վայրենի էշերուն պէ՛ս իրենց գործին կ'ելլեն ,
- Կանուխ որս փնտռելու կ'երթան .
- Անսպասարկ անոնց աղքատը հաց կ'առայ :
- 6 - Իրենցը չեղած արար կը հնձեն , Ու անիրաւութեամբ այգի կ'աւրեն :
- 7 - Գիշերը առանց հանգերծի կը պառկեցնեն մերկը ,
- Ու ցուրտ ժամանակին առանց ծածկոցի կը Բարեպաշտ :
- 8 - Անոնք լեռներուն սաստիկ անձրևներէն կը թրջուին ,
- Ու ապաստանարան մը չունենալուն համար ժայռերը կը գրկեն :
- 9 - Որբը ծիծէն կը փրցնեն ,

- Ու աղքատէն գրաւ կ'առնեն :
- 10 - Մերկերը առանց հանգերծի կը պարտցնեն ,
- Ու անօթիները անոնց ցորենի խուրձերը կը կրեն :
- 11 - Իրենց պատերուն մէջ իւղ հանողները
- Ու հնձաններուն մէջ գինի կոխողները ծարաւ կը մնան :
- 12 - Քաղաքին մէջէն մարդիկ կը հեծեն ,
- Ու վիրաւորուածներուն հոգին կ'աղաղակէ .
- Բայց Աստուած անոնց ըրածը անպատեհութիւն չհամարիր :
- 13 - Անոնք լոյսին դէմ կեցողներէն են , Անոր ճամբաները չեն գիտեր ,
- Ու անոր շաւիղներուն մէջ չեն կենար :
- 14 - Մարգասպանը լուսնալուսն պէս կ'ելլէ ,
- Աղքատը ու անանկը կը սպաննէ ,
- Ու գիշերը գողի պէս կ'ըլլայ :
- 15 - Շնացողին աչքն ալ իրիկուան փոքրիկ կը սպասէ՝ ըսելով ,
- Զիս աչք չտեսնէ . ու երեսին ծածկոց կը դնէ :
- 16 - Մութ տան կը ծակեն այն տաները՝
- Որոնց վրայ ցորեկուրնէ նշան գրած են . Անոնք լոյսը չեն ճանչնար .
- 17 - Վասն զի առատուան լոյսը մահուան շուքի պէս է անոնց ,
- Որովհետեւ մահուան շուքին երկիւղներուն սորված են :
- 18 - Անիկա ջուրին երեսին վրայ թեթեւ է .
- Անոնց բաժինը երկրի վրայ անիծեալ է ,
- Ու այգիներուն ճամբան չգտանար :
- 19 - Զորութիւնը ու տաքութիւնը ձիւնին ջուրը կը հատցնեն ,
- Ու գերեզմանը՝ մեղք գործողները :
- 20 - Որովայնը զանիկա պիտի մտնայ . Որդերը պիտի ուտեն զանիկա անոյշ բանի պէս .
- Այլ անիկա պիտի չյիշուի .
- Ամբարշտութիւնը ծառի մը պէս պիտի կտորուի :
- 21 - Անիկա զուակ չծնանող ամուլը կը չարչարէ ,
- Ու որբեարիին աղէկութիւն չընէր :
- 22 - Անիկա իր ուժովը զօրաւորներն ալ լաւ կը քաշէ .
- Ինչ երբ ելլէ , մէկո՞ւն կեանքը ապաւ հով չէ :

23 - Աստուծոյ անոր ապահովութիւն կու տայ, որպէս զի անոր վրաստասի,

Բայց իր աչքերը անոնց ճամբաներուն վրայ են:

24 - Քիչ մը բարձրացան ու ոչինչ եղան,

Ամենուն պէս կորսուելով ընկղմեցան, Աւ հասկի գլխու պէս կարուեցան:

25 - Եթէ այսպէս չէ, ո՞վ զիս սուս կը հանէ,

Եւ իմ խօսքս ոչինչ ըլլալ կը ցուցնէ:

ԳԼ ԻԵ

Եւ Բաղդատ Սօքեցի պատասխան տուաւ ու ըսաւ,

2 - Իշխանութիւնը ու վախը Անոր քով են,

Իր բարձր տեղերուն մէջ խաղաղութիւն կ'ընէ:

3 - Անոր գունդերուն համրանքը կա՞յ արդեօք,

Աւ անոր լոյսը որո՞ւ վրայ չծագիր:

4 - Աւրեմն մարդը ի՞նչպէս պիտի արգարանայ Աստուծոյ առջև,

Աւ կնոջմէ ծնածը ի՞նչպէս կրնայ մարքուր ըլլալ:

5 - Ահա լուսինն ալ լոյս չտար,

Աւ Անոր աչքերուն առջև աստղերն ալ մութուր չեն.

6 - Ալ ո՞ւր կը մնայ մարդը՝ որ որդ մըն է,

Աւ մարդու որդին՝ որ ճճի մըն է:

ԳԼ ԻԶ

Այն ատեն Յոր պատասխան տուաւ ու ըսաւ,

2 - Տկարին ի՞նչ շատ օգնութիւն ըրիր, Ե- ոյժ չունեցող բազուկը ի՞նչպէ՞ս զօրացուցիր:

3 - Անխելքին ի՞նչ խրատ տուիր, Աւ ի՞նչ շատ իմաստութիւն ցուցուցիր:

4 - Դուն որո՞ւ ըսիր «յ» խօսքերը, Աւ որո՞ւն շունչը ելաւ քեզմէ:

5 - Ագիները վարէն կը դողան, Նաե ջուրերը ու անոնց բնակիչները:

6 - Իժսիքը բաց է Անոր առջև, Աւ կորուստը անձածկոյթ է:

7 - Անիկա հիւսիսը պարսպ տեղին վրայ կը տարածէ,

Աւ երկիրը ոչնչին վրայ կը կախէ:

8 - Զուրերը իր մութ ամպերուն մէջ կը ծրարէ.

Աւ անոնց տակէն ամպը չպատուիր:

9 - Իր աթոռին երեսը կը պահէ,

Անոր վրայ իր ամպը կը տարածէ:

10 - Զուրերուն երեսին վրայ ամէն կողմէն ասհմաններ գրաւ

Մինչև լոյսին ու խաւարին ծայրը:

11 - Երկինքի սիւները կը տարին,

Աւ անոր յանդիմանութենէն կ'ապշին:

12 - Իր զօրութիւնովը ծովը *կը խաղաղեցնէ,

Աւ իր գիտութիւնովը հպարտութիւնը կը զարնէ:

13 - Իր Հոգիովը երկինքը զարդարեց. Անոր ձեռքը փախչող Վիշապը ստեղծեց:

14 - Ահա ատնք են անոր ճամբաներուն ծայրերը,

Բայց անոր վրայով լսածնիս ո՞րչափ քիչ է.

Եւ ո՞վ կրնայ իմանալ անոր զօրութեանը որտու՞մը:

ԳԼ ԻԷ

Եւ Յոր դարձեալ իր առակը սկսելով ըսաւ,

2 - Իմ իրաւունքս մէկդի դնող Աստուածը

Աւ հոգիս դատնութեամբ լեցնող Ամենակարողը կենդանի է.

3 - Քանի որ շունչս վրաս է,

Աւ ռնգունքներուս մէջ Աստուծոյ հոգին կայ,

4 - Շրթունքներս անիրաւ բան մը պիտի չզրուցեն,

Աւ լեզուս նենգութիւն պիտի չխօսի:

5 - Քա՛ւ լիցի ինձ՝ որ ձեզ արգարացրնեմ.

Մինչև մեռնիլս իմ ուղղութիւնս ձեռքէ պիտի չձգեմ:

6 - Իմ արգարութիւնս հաստատ բռներեմ, ու զանիկա պիտի չթողում,

Ա- կեանքիս †մէջ սիրտս բնաւ պիտի չյանդիմանէ դե՛ս:

7 - Իմ թշնամիս ամբարշտի պէս ըլլայ, Աւ ինձի դէմ՝ ելողը անպատի պէս:

8 - Քանզի կեղծաւորին յոյսը ի՞նչ է, (Թէև հարստութիւն ալ դիզած ըլլայ),

*Կա՞մ, կը յանդիմանէ

†Կա՞մ, համար †Կա՞մ, երբ մեռնի

- Երբ Աստուած անոր հոգին տանէ:
- 9 - Միթէ Աստուած անոր աղաղակը պիտի լսէ՞,
- Երբ անոր վրայ փորձանք գայ:
- 10 - Անհկա Ամենակարողին վրայ պիտի ուրախանա՞յ.
- Ամէն ժամանակ Աստուծոյ պիտի աղաղակէ՞:
- 11 - Աստուծոյ ձեռքին մէջ եղածը ձեզի պիտի սորվեցնեմ.
- Ամենակարողին քով եղածը պիտի չծածկեմ:
- 12 - Ահա դուք ամէնդ այ տեսաք, Ու ինչո՞ւ այդպէս բոլորովին ունայնացեր էք:
- 13 - Ասիկա է ամբարիշտ մարդուն բաժինը Աստուծոյ առջև, Ու բռնաւորներուն Ամենակարողէն տանելու ժառանգութիւնը.
- 14 - Եթէ անոր աղաքը շատնան, սուրի համար է.
- Ու անոր սերունդը հացով պիտի չկըշտանայ:
- 15 - Անոր մնացորդները մահուամբ պիտի թաղուին,
- Բայց անոր որբւարիները պիտի չլան:
- 16 - Թէև հողի պէս արծաթ դիզէ, Ու տիղմի պէս հանդերձներ պատրաստէ,
- 17 - Անհկա պիտի պատրաստէ, բայց արդարը պիտի հագնի,
- Ու անմեղը արծաթը պիտի բաժնէ.
- 18 - Իրեն տուն մը կը շինէ ցեցի պէս, Ու այգի պահապանին շինած խրճիթին պէս:
- 19 - Հարուստը կը պառկի ու չամփոփուիր.
- *Աչքերը կը բանայ ու՝ ոչինչ կ'ըլլայ:
- 20 - Արհաւիրքը ջուրերու պէս անոր պիտի հասնի.
- Գիշերով փոթորիկը պիտի յափշտակէ զանհկա:
- 21 - Արևելեան հովը պիտի քշէ զանհկա, ու ան պիտի երթայ.
- Ու փոթորիկի պէս զանհկա իր տեղէն պիտի վերցնէ:
- 22 - Ա՜ն՝ ահա ի՞նչ էր նեղերը անոր դէմ՝ պիտի նետէ, ու պիտի չխնայէ.
- Ան ալ անոր ձեռքէն փախչելու պիտի չանայ:
- 23 - Անոր համար ծափ պիտի զարնեն,

*Կա՛մ, Ակնթարթի մէջ

- Ու անոր եղած տեղէն անոր դէմ պիտի սուլեն:
- ԳԼ. ԻԸ
- Ա**րդարև արծաթը էր երակը ունի, Ու սկին էր զտուելու տեղը:
- 2 - Երկաթը հողէն կ'առնուի, Հանքը կը հալի ու պղինձ կ'ելլէ:
- 3 - Մարդը խաւարին վախճամ կը դնէ, Ու ամէն բան կատարելապէս կը քննէ, Շատ ծածուկ պահուած քարերը՝ որոնք մահուան ստուերին մէջ են:
- 4 - Ի՞ր բնակած տեղին քովէն փոս կը բանայ.
- Ոտք չկոխած կը կախուին,
- Ու մարդոցմէ հեռու կ'երերան:
- 5 - Երկրէ հաց կ'ելլէ, Ու անոր տակ կրակի նման բաներ կը գտնուին.
- 6 - Անոր քարերը շափիւղաներու տեղ են, Ու հոն սկիի աւազ կայ:
- 7 - Յափշտակող թռչունը անոր շաւիղը չճանչցաւ,
- Ու անգղին աչքը զանհկա չտեսաւ:
- 8 - *Վայրենի գազանները՝ հոն սաք կոխած չեն.
- Առիւծը անկէ անցած չէ:
- 9 - Մարդը իր ձեռքը կ'երկնցնէ ապառաժներուն,
- Ու լեռները հիմէն կը տապալէ:
- 10 - Ապառաժները ճեղքելով՝ անոնց ձիւն վտակներ կ'անցնէ.
- Ու ամէն թանկագին բաները անոր աչքը կը տեսնէ:
- 11 - Գետերը վազելէն կ'արգիլէ, Ու գաղտուկ եղածը երևան կը հանէ:
- 12 - Բայց իմաստութիւնը սօր կը գտնուի,
- Ու հանճարին տեղը սօր է:
- 13 - Մարդը անոր յարգը չգիտեր. Ու կենդանիներուն երկրին մէջ չգրտնուիր:
- 14 - Անդունդը կ'ըսէ, Անհկա իմ մէջս չէ.
- Ու ծովը կ'ըսէ, Իմ քովս չէ:
- 15 - Զուտ սկիով ծախու չառնուիր, Ու անոր արժէքին համար արծաթ չկըսուիր:
- 16 - Ոչ Ոփիրի սկիով կը փոխուի, Ու ալ պատուական եղնղնաքարով ու շափիւղայով:

*Եբբ. Հպարտութեան որդիները

- 17 - Ոսկին ու ակնվանին չեն կրնար անոր հաւատարիլ .
Ու զուտ ոսկիէ ամանները անոր փոխանակ չեն ըլլար :
- 18 - Բուստն ու բիւրեղը անոր + ու չեն յիշուիր ,
Ու իմաստութեան գինը * յակինթներու գինէն աւելի բարձր է :
- 19 - Եթէ սովորայի ապագիտին գինը անոր հաւատար չգար ,
Ու զուտ ոսկիով չփոխուիր :
- 20 - Ուրեմն իմաստութիւնը ուրկէ՞ կու գայ ,
Ու հանճարին տեղը ո՞ւր է .
- 21 - Որովհետեւ բոլոր ապրողներուն աչքերէն ծածկուած՝
Ու երկինքի թռչուններէն պահուած է :
- 22 - Կորուստը ու մահը կ'ըսեն ,
Մենք անոր համբաւը մեր ականջներով լսեր ենք :
- 23 - Անոր ճամբան Աստուած կը հասկընայ ,
Ու անոր տեղը ինք գիտէ :
- 24 - Քանզի մինչև երկրի ծայրերը կը նայի ,
Ու բոլոր երկինքի տակ եղածը կը տեսնէ :
- 25 - Երբ հովին կշիւ կը դներ
Ու ջուրերը չափով կը չափեր ,
- 26 - Երբ անձրևին օրէնք՝
Ու սրտաւմներուն փայլակին ճամբայ կ'որոշէր ,
- 27 - Այն ատեն տեսաւ զանիկա ու յայտնեց ,
Պատրաստեց զանիկա ու նսե քննեց .
- 28 - Ու մարդուն ըսաւ , Ահա Տէրոջը վախն է իմաստութիւնը ,
Ու չարութենէ ետ քաշուիլը հանճարն է :

Գ.Լ. ԻԹ

- Եւ Յոր նորէն իր առակը սկսելով ըսաւ ,
- 2 - Երանի՛ թէ առաջին ամիսներուն պէս ,
Աստուծոյ զիս պահած օրերուն պէս ,
ըլլայի .
- 3 - Երբ անոր ճրագը իմ գլխուս վրայ լըյս կու տար ,
Ու ես խաւարի մէջ անոր լուսովը կը քալէի .

*Կա՛մ, բուստերու

- 4 - Երիտասարդութեանս օրերը եղածիս պէս՝
Երբ Աստուծոյ մտերմութիւնը իմ վրանիս մէջ էր .
- 5 - Երբ Ամենակարողը տակաւին ինծի հեռ էր ,
Ու աղաքս իմ բոլորաիքս էին :
- 6 - Երբ իմ՝ ճամբաներս կողով կը թրջէի ,
Ու ապառաժէն ինծի համար ձէթի հեղեղներ կը վազէին :
- 7 - Երբ դունէն քաղաքը կ'ելլէի ,
Ու ամթուս հրապարակին մէջ կը դների .
- 8 - Երիտասարդները զիս տեսնելով կը պահուէին ,
Ու ծերերը սաք կ'ելլէին կը կայնէին .
- 9 - Իշխանները խօսելէն կը դադարէին ,
Ու ձեռքերնին իրենց բերնին վրայ կը դնէին .
- 10 - Ազնուականները ձայներնին կը կարէին ,
Անոնց լեզուն իրենց քիմքին կը փակչէր :
- 11 - Ինչի՞ մտիկ ընող ականջը Երանի՛ կ'ըսէր ինծի ,
Ու զե՞ տեսնող աչքը վկայութիւն կու տար ինծի .
- 12 - Վասն զի ես աղաղակող աղքատը Եւ որբը ու օգնութիւն չունեցողը կ'ազատէի :
- 13 - Կորուսելու վրայ եղողին օրհնութիւնը վրաս կու գար ,
Ու որբեւորին սիրտը կ'աւրախացնէի :
- 14 - Արդարութիւն կը հագնէի , անիկա էր իմ՝ հանգերձս .
Ու դատաստանը ինծի պատմու ճանի ու խոյրի պէս էր :
- 15 - Կոյրին աչքեր էի ,
Ու կողին սաքեր .
- 16 - Աղքատին հայր էի ,
Ու չգիտցած դատաստանս կը քննէի :
- 17 - Անիրաւին ժանիքը կը կտարէի ,
Ու անոր ականներէն որսը կը խլէի .
- 18 - Ու կ'ըսէի , Բոյնիս մէջ պիտի մեռնիմ ,
Եւ օրերս աւազի պէս պիտի շաացնեմ :
- 19 - Արմատս դէպ ի ջուրերը կը տարածուէր ,
Ու ցօղը բոլոր գիշերը սաքերուս վրայ էր :
- 20 - Փառքս իմ վրաս կը նորոգուէր ,
Ու աղեղս ձեռքիս մէջ կ'ուժափսար :
- 21 - Մարդիկ ինծի մտիկ կ'ընէին ու կը սպասէին ,

- Աւ երբ իմ խորհուրդս կ'ըսէի՝ լուռ կը կենային :
- 22 - Իմ գրուցելէս ետքը անոնք չէին կրկներ,
- Ու իմ խօսքս անոնց վրայ կը կաթէր :
- 23 - Անձրեի պէս ինծի կը սպասէին,
- Ու վերջին անձրեին քառուստէս պէս բերաննին կը բանային :
- 24 - Եթէ անոնց վրայ խնդայի՝ չէին հաւատար,
- Ու երեսիս լոյսը չէին կրնար արհամարհել :
- 25 - Անոնց ճամբաները ընտրելով՝ իշխան կը նստէի,
- Եւ եր զօրքին մէջ եղող թագաւորի մը պէս՝
- Ու սգաւորներուն մխիթարիչի մը պէս կը բնակէի :

ԳԼ Լ

Բայց հիմա տարիքով ինծմէ պզտիկ եղողները զիս ծաղր կ'ընեն,

- Որոնց հայրերը հօտերուս շուներուն հետ գնելու չէի հաճեր.
- 2 - Նստե անոնց ձեռքերուն ոյժը ինծի ի՞նչ օգուտ ունէր.
- Անոնց առուգութիւնը կորսուած էր :
- 3 - Զքաւորութենէ ու անօթութենէ նիհարացեր էին,
- Ու անապատը, մթին, աւերակ ու վայրի տեղերը, կը փոխչէին :
- 4 - Իրենց կերակուրին համար մացառներուն քովի *մուշները կը քաղէին,
- Ու գիհիի արմատ իւր քաղէին :
- 5 - Մարդոց մէջէն կը վաճառուէին.
- Ու անոնց ետէն գողի երեսէ պատու պէս կը պառային :
- 6 - Սակալի ձորերու մէջ կը բնակէին, Հողի ու ապառաժներու ծակտիքներուն մէջ :
- 7 - Մացառներուն մէջ կը կանչուըտէին,
- Եղինճներուն տակ կը ժողվուէին :
- 8 - Յիմար ու աննչան ճարդոց զաւակներ ըլլալով՝ երկրէն կը վաճառուէին :
- 9 - Ու հիմա ես անոնց խաղը՝ Նստե անոնց առակը եղեր եմ :

*Կամ, փրփրեմները

- 10 - Ինծմէ գարշելով կը հեռանան ինծմէ,
- Ու երեսէս թուքը չեն ինայեր :
- 11 - Որովհետեւ իմ կապս թուլցնելով՝ զիս նեղեց,
- Անոնք իմ առջևս երասանակը թող տուին :
- 12 - Աջ կողմէս լակտաներ կ'ելլեն, Անոնք սաքերս կը հրեն,
- Ու ինծի դէմ՝ իրենց կորստեան ճամբաները կը պատրաստեն :
- 13 - Անոնք շաւիղներս կ'աւրեն, վիշտս կ'աւելցնեն.
- *Ու անոնց դէմ՝ Ինչի օգնութիւն ընող մը չկայ :
- 14 - Լայն խրամուտէ մը քառուստէս պէս կը յարձակին,
- Աւերակներուն տակէն ձրս կը դիմեն :
- 15 - Արհաւիրքները իմ վրաս դարձան,
- Ու հովի պէս իմ պատիւս կը հալածեն.
- Ու ազատութիւնս ամպի պէս անցաւ :
- 16 - Եւ հիմա հոգիս իմ ներսիդիս կը հայի.
- Տրամութեան օրերը զիս պաշարեցին :
- 17 - Իմ ցառ՝ գիշերանց սկողներս ծակեց,
- Ու ջիղերս հանգստութիւն չունեցան :
- 18 - Իր մեծ զօրութիւնովը իմ հանդերձս փոխեց,
- Ու իմ պատմութեան ճանիս օձիքին պէս պատեց զիս :
- 19 - Զիս ցեխին մէջ նետեց,
- Ու ես հողի ու մխիթի նմանեցայ :
- 20 - Ես քեզի կ'ազաղակեմ, ու ինծի պատասխան չես տար. կը կայնիմ, ու դուն ինծի ուշադրութիւն չչես ըներ :
- 21 - Իսկ ինծի անգութ քեղար, Ձեռքիդ զօրութիւնովը թշնամիի պէս կը վարուիս ինծի հետ :
- 22 - Զիս վերցնելով հողին վրայ կը հեծցնես,
- Ու զիս բոլորովին կը հալեցնես :
- 23 - Սողոգ գիտեմ՝ որ զիս մահուան պիտի տանիս,
- Ու ամէն ապրողներուն համար սահմանուած տուեր :

*Կամ, Առանց մէկուն անոնց օգնելուն
 +Կամ, կ'ընե՞ս
 †Եբր. փոխուեցար

- 24 - *Բայց Անիկա աւերմունքին վրայ
ձեռք պիտի չերկնցնէ ,
Եթէ կորստեան աստն անոր աղաչեն :
- 25 - Դժբաղդութեան մէջ եղողին հա-
մար չէի՞ լար .
Աղքատին համար հոգիս չէ՞ր նեղա-
նար :
- 26 - Բայց երբ ես բարեք կը յաւաստի՞
չարեքը հասաւ .
Ու երբ լոյսին կը սպասէի՞ խաւարը
եկաւ :
- 27 - Փորոտիքս եւսաց ու չհանգարտե-
ցաւ .
Թշուառութեանս օրերը ինձի հասան :
- 28 - Սեցած պարտեցայ, բայց ոչ արե-
ւէն .
Ելայ -- Ժողովքին մէջ աղաղակեցի :
29 - Չազայներուն եղբայր՝
Ու ջայլամներուն ընկեր եղայ :
30 - Մորթս վրաս սեցաւ,
Ու սակրներս տաքութեանէն պրեցան :
31 - Վասն որոյ իմ քնարս սուգի փոխ-
ուեցաւ,
Ու իմ սրինգս՝ լայկաններու ձայնի :

ԳԼ ԼԱ

Աչքերուս հեա ուխտ ըրի .

- Ուրեմն ի՞նչպէս կոյսի վրայ մտածեմ :
- 2 - Քանզի վերէն , Աստուծմէ , ի՞նչ
բաժին կ'ըլլայ ինձի,
Ու բարձր տեղերէն , Ամենակարողէն ,
Ի՞նչ ժառանգութիւն :
- 3 - Կորուստը ամբարշտին համար *ահ-
մանս* չէ՞ ,
Ու ստկալի *արիժը անօրէնութիւն
գործողներուն համար :
- 4 - Միթէ Անիկա իմ ճամբաներս չը՞
տեսներ ,
Ու ամէն քայլերս չը՞ համրեր :
- 5 - Եթէ ստութեան մէջ քայլեցի,
Կամ իմ սաքս նենգութեան արտու-
րաց ,
6 - Թող կշռէ զիս արգարութեան
կշիւքով ,
Ու Աստուած իմ անմեղութիւնս գիտ-
նայ :
- 7 - Եթէ սաքս ճամբայէն խոտորեցաւ,
Ու սիրտս աչքերուս ետէն դնաց,
Ու ձեռքերուս արատ մը փակաւ ,

- 8 - Թող ես սերմանեմ, և ուրիշը ուտէ .
Ու բուսցուցածս արմատէն փրցուի :
- 9 - Եթէ սիրտս կնոջ մը ետէն մոլո-
րեցաւ ,
Կամ թէ դրացիիս դուռը դարանա-
մուտ եղայ ,
10 - Իմ կինս ուրիշի մը համար աղօ-
րեքի քար դարձնէ ,
Եւ ուրիշները անոր վրայ ծռին :
11 - Վասն զի այս պղծագործութիւն է,
Ու դատաւորներէն *արտէլ* անօրէ-
նութիւն .
12 - Որովհետեւ մինչև զի՞ կորսնցնելը
լափող կրակ մըն է ,
Ու բոլոր արգիւնքս արմատէն կը խլէ :
13 - Եթէ ծառայիս կամ աղախինիս
իրաւունք ընել չուզեցի,
Երբ ինձի հեա վէճ ունեցան .
14 - Ես ի՞նչ պիտի ընեմ, երբ Աստ-
ուած ելլէ .
Ու երբ քննէ, ի՞նչ պատասխան պիտի
տամ անոր :
15 - Չէ՞ որ զիս որովայնի մէջ ստեղ-
ծողը զանոնք ալ ստեղծեց .
Ու մեզ *աբն* ալ արգանդի մէջ ձեռ-
կերպողը մէկ չէ՞ :
16 - Եթէ աղքատին ցանկացածը չառի,
Ու որբեարիին աչքերը մարեցուցի .
17 - Եթէ պատառս մինակ կերայ,
Ու անկէ սրբն ալ չկերաւ .
18 - (Վասն զի երիտասարդութեանէս
ի վեր հօր պէս մեծցուցի *զա-
նիկա ,
Ու մօրս արգանդէն †անոր խնամք
տարի .)
19 - Եթէ հանդերձ չունեցող մը կոր-
սուելու վրայ ,
Կամ ծածկոց չունեցող չբաւոր մը
տեսայ ,
20 - Ու եթէ անոր երիկամունքը չօրհ-
նեցին զիս ,
Ու իմ ոչխարներուս բուրդէն չտաք-
ցաւ .
21 - Եթէ ձեռքս սրբին դեմ վերցուցի,
Երբ տեսայ որ դրանը մէջ ինձի օգնա-
կաններ կան .
22 - Թող իմ թեւս ուտէն իյնայ,
Ու բազուկս արմունկէն կորսուի :
23 - Վասն զի Աստուծոյ †գաւառատա-
նէն կը վախնայի ,

*Կամ, Արգարե աղաչանքը ոչինչ չ'օգ-
րէ, երբ Անիկա՝ ձեռքը երկնցնէ, ոչ ալ
անոնց աղաղակը՝ երբ Անիկա կորսնցնէ

*Այսինքն՝ որբը
†Այսինքն՝ որբեարիին
‡Եբբ. կորուստէն

- Ու անոր մեծափառութեանը առջև
չէի կրնար ինչու :
- 24 - Եթէ յոյս սփիւրջ վրայ դնելով ,
Զուտ սփիւրջ ըսի թէ իմ վատահա-
թիւնս քան ինչ :
- 25 - Եթէ ստացուածքս շատ ըլլալէն՝
Ու ձեռքս շատ գանելէն ուրախացայ .
- 26 - Եթէ արեւին նայեցայ՝ անոր խիտ
փայլուն եղած տանը ,
Կամ պայծառութեամբ քալող լուսի-
նին ,
- 27 - Ու սիրտս գաղանի խաբուելով
Բերանս ձեռքս պագաւ ,
- 28 - (Որ այս ալ գատուելու անօրէ-
նութիւն մըն է ,
Որովհետեւ վերը բնակող Աստուածը
ուրացած կ'ըլլայի .)
- 29 - Եթէ զիս ստողին թշուառու-
թեանը վրայ ուրախացայ ,
Կամ անոր փորձանքի հանդիպելուն
համար խնդացի .
- 30 - (*Լեզուիս ալ մեղք գործելու
թող չտուի ,
Անէծքով անոր մեռնիլը ուզելով .)
- 31 - Եթէ վրանիս մարդիկը չըսին ,
†Ե՞րբ անոր միտէն չէինք կշտանար .
- 32 - (Հիւրը երբէք զիշերը դուրսը չէր
մնար ,
Ճանապարհորդին դուռս կը բանայի .)
- 33 - Եթէ յանցանքներս †Ադամի պէս
ծածկեցի ,
Ու անօրէնութիւնս ծոցիս մէջ պա-
հեցի ,
- 34 - Շատ բազմութեան վախնալով ,
Ու ազգերուն անարգութիւնը զիս
վախցնելով ,
Ալ չխօսիմ ու դռնէն չելլեմ :
- 35 - Երանի՜ թէ ինձի ականջ դնող մը
ըլլար ,
(Ահա այս է իմ փափաքս՝ որ Ամենա-
կարողը ինձի պատասխան տայ .)
- Ու իմ գատասխազս գրուածք մը գրէր .
- 36 - Անշուշտ զանհկա իմ ուսիս վրայ
պիտի կրէի ,
Ու պատկի պէ՞ն ինձի պիտի կապէի .
- 37 - Քայլերուս համրանքը անոր պիտի
զրուցէի ,
Իշխանի պէս պիտի մօտենայի անոր :
- 38 - Եթէ իմ երկիրս ինձի դէմ կը բու-
զդէ ,

*Եբբ. Քրիմքիս
†Կա՛մ, Երանի՜ թէ անոր միտէն կշտա-
նար , մարդու [նայինք

- Ու անոր ակօսները կու լան ,
- 39 - Եթէ անոր արդիւնքը առանց
ստակի կերայ ,
Կամ անոր աէրերուն հագին հանեցի ,
- 40 - Յորենին տեղ փուշ՝
Ու գարիին տեղ որոմ բուսցնէ :
Յորի խօսքերը լմնցան :

ԳԼ. ԼԲ

- Այն ատեն այս երեք մարդիկը Յորի
պատասխան տալէն դարձարեցան , վասն
զի անհկա իր աչքերուն առջև արդար
ի՛նչ տեսար : 2 - Եւ *Արամի ազգատոհմէն
Բուզացի Բարաքիէլի որդւոյն Եղիուսի
բարկութիւնը բորբոքեցաւ . անոր բար-
կութիւնը Յորի դէմ բորբոքեցաւ ,
վասն զի Աստուծմէ աւելի ինքզինք
կ'արդարացնէր : 3 - Նաև իր բարկու-
թիւնը բորբոքեցաւ անոր երեք բարե-
կամներուն դէմ , որովհետեւ պատաս-
խան չգտան , ու քանի՞նչ Յորը յան-
ցաւոր հանեցին : 4 - Ու Եղիուս Յորի
խօսքերուն լմնալու սպասեր էր , որով-
հետեւ անոնք իրմէ ձեր էին : 5 - Բայց
երբ Եղիուս ատու որ այն երեք մար-
դոց բերանը ալ պատասխան չմնաց ,
իր բարկութիւնը բորբոքեցաւ : 6 -
Այն ատեն Բուզացի Բարաքիէլի որդին
Եղիուս պատասխան տալով ըսաւ ,
Ես տարիքով փոքր եմ , ու դուք շատ
ձեր էք ,
Անոր համար ես կեցայ , ու գիացածս
ձեզի յայտնելու վախցայ .
- 7 - Ըսի թէ †Երկար կեանքը՝ թող
խօսի ,
Ու տարիներուն շատութիւնը թող
իմաստութիւնը գիացնէ .
- 8 - Բայց մարդուն ներսիցին հոգի կայ ,
Ու Ամենակարողին շունչը անոնց հան-
ճար կու տայ :
- 9 - Եբբե՛ձ մեծերը իմաստուն չեն ,
Ու ձերերը գատաստան չեն հասկնար :
10 - Անոր համար ըսի , Ինձի մտիկ
ըրէ ,
Որպէս զի ես ալ իմ գիացածս զրու-
ցեմ :
- 11 - Ահա ես ձեր խօսքերուն սպասեցի ,
Զեր փատաբերուն ականջ դրի ,
Մինչև որ դուք խօսքերը քննեցիք :
12 - Ես ձեզի աղէկ ուշադրութիւն
ըրի ,

*Եբբ. Ռամի †Եբբ. Օրերը

Ու անոր չերեցած ոսկորները դուրս կ'ելլեն :

22 - Անոր անձը գերեզմանին կը մօտենայ ,

Ու անոր կեանքը՝ կորուստի :

23 - Եթէ անոր քով թարգման պատգամաւոր մը ըլլայ ,

Հազարէն մէկը ,

Որ անոր ուղղութիւնը մարդուն իմացրնէ ,

24 - Այն ատեն անոր ողորմելով պիտի ըսէ ,

Ազատէ զանիկա՝ որպէս զի գերեզմանը չիջնէ .

Ես քաւութիւն մը գտայ :

25 - Անոր մարմինը տղու մարմնէն աւելի փափուկ պիտի ըլլայ ,

Ու անիկա իր մանկութեան օրերուն պիտի դառնայ .

26 - Աստուծոյ պիտի աղաղակէ , ու Աստուծոյ զանիկա պիտի ընդունի ,

Ու անոր երեսը ուրախութեամբ պիտի տեսնէ .

Քանզի Անիկա պիտի հատուցանէ մարդուն՝ անոր արդարութեանը համեմատ :

27 - Անիկա մարդոց վրայ կը նայի .

Ու եթէ Բէլ ըսէ , Մեղք գործեցի ու իրաւունքը աւրեցի ,

Ու ասիկա ինծի օգտակար չեղաւ ,

28 - Այն ատեն անոր հոգին կ'ազատէ , որպէս զի գերեզմանը չիջնէ .

Ու անոր կեանքը լոյսը կը տեսնէ :

29 - Ահա Աստուած այս ամէն բաները

Երկու երեք անգամ մարդուն կ'ընէ ,

30 - Որպէս զի անոր հոգին գերեզմանէն դարձնէ ,

Որպէս զի ապրողներուն լուսովը լուսաւորուի :

31 - Ականջ դիր , ով Յոր , ինծի մտիկ ըրէ ,

Լուս կեցիր որպէս զի ես խօսիմ :

32 - Եթէ ըսելիք ունիս՝ ինծի պատասխան տուր .

Զրուցէ , վասն զի քեզ արդարացնելու կը փափաքիմ :

33 - Եթէ ոչ՝ ինծի մտիկ ըրէ ,

Լուս կեցիր , որպէս զի ես քեզի իմաստութիւն տրվեցնեմ :

Այն ատեն Եղիւս իր խօսքը շարունակելով ըսաւ ,

2 - Ով իմաստուններ , իմ խօսքերս մտիկ ըրէք ,

Եւ դուք , ով գիտուններ , ինծի ականջ դրէք :

3 - Քանզի ականջը խօսքերը կ'որոշէ ,

Ինչպէս քիմքը կերակուրին համը կ'առնէ :

4 - Իրաւունքը մեզի ընարեմք ,

Մեր մէջ գիտնանք թէ ո՞ր բանը աղէկ է :

5 - Որովհետեւ Յոր ըսաւ ,

Ես արդար եմ ,

Բայց Աստուած իմ իրաւունքս մէկգի ձգեց :

6 - Միթէ իմ իրաւունքս պիտի ստե՞մ .

Իմ *վէրքս մահաբեր է , թէև յանցանք չունիմ :

7 - Յորի պէս մարդ ո՞վ կայ ,

Որ հայհոյութիւնը ջուրի պէս կը խմէ .

8 - Որ անօրէնութիւն գործողներուն հետ ընկերութեամբ կը պարտի ,

Ու ամբարիշտ մարդոց հետ կը քալէ .

9 - Վասն զի ըսաւ ,

Աստուծոյ հաճոյ ըլլալէն մարդուս օգուտ մը չկայ :

10 - Ասոր համար ինծի մտիկ ըրէք ,

Ով իմաստուններ ,

Քա՛ւ լիցի որ Աստուծոյ քով չարութիւն ,

Ու Ամենակարողին քով անօրէնութիւն ըլլայ :

11 - Որովհետեւ Անիկա մարդուն ըրածին համեմատ կը հատուցանէ ,

Ու ամէն մարդուն իր ճամբուն համեմատ գտնել կու տայ :

12 - Արդարև Աստուած անօրէնութիւն չընէր ,

Ու Ամենակարողը դատաստան չծուեր :

13 - Երկիրը ո՞վ յանձնեց անոր ,

Ու բոլոր աշխարհը ո՞վ կարգի դրաւ :

14 - Եթէ իր սիրտը †այսպէս ուզելու ըլլայ ,

Մարդոց հոգին ու շունչը իրեն կը ժողվէ :

15 - Այն ատեն ամէն մարմին մէկէն կը մեռնի ,

*Եբբ. նեաս. Գլ. 4. 4: Ժգ. 13:
 †Եբբ. անոր վրայ դնէ

- Ու մարդը հող կը դառնայ :
- 16 - Հիմա եթէ ընտրողութիւնն «-նի» ստիկա մտիկ ըրէ .
Խօսքերուս ձայնին սկանջ գիր :
- 17 - Միթէ արդարութիւնը ասողը կրնա՞յ իշխել ,
Կամ արդար Հզօրը յանցաւոր կրնա՞ս հանել ,
- 18 - *Ան որ թագաւորին կ'ըսէ՝ թէ Եղեւնագործ ես,
Ու ազնուականներուն՝ թէ Չար Բարբի է+ .
- 19 - Ան որ իշխաններուն աշառութիւն չըներ ,
Ու հարուստը աղքատէն աւելի չխնամեր ,
Որովհետեւ անոնք ամէնն ալ իր ձեռքերուն գործն են :
- 20 - Մէկ վայրկեանի մէջ պիտի մեռնին ,
Ու կէսգիշերուան ատեն ժողովուրդը խռովութեան մէջ իյնալով՝ պիտի անցնին .
Ու զօրեղները պիտի վերցուին՝ առանց Գիւնն ձեռքը անոնց դաշտին :
- 21 - Վասն զի Անոր աչքերը մարդուն ճամբաներուն վրայ են ,
Ու անոր ամէն քայլերը կը տեսնեն :
- 22 - Ոչ խաւար կայ և ոչ մահուան շուք՝
Որ անօրէնութիւն գործողները հան պահուին :
- 23 - Վասն զի մարդուս վրայ †երկար քննութիւն չըներ՝,
Երբ անիկա Աստուծոյ առջև դատատանի կ'երթայ :
- 24 - †Անիմանալի իբրո՞վ՝ զօրաւորները կը կտորէ ,
Ու անոնց տեղը ուրիշներ կը հաստատէ :
- 25 - Քանզի անոնց գործերը գիտէ ,
Ու զանոնք գիշերով տակնուվրայ կ'ընէ , ու կը խորտակուին :
- 26 - Անոնց ամբարիշտ ըլլալուն համար՝
|| Ամէնուն առջև՝ զանոնք կը զարնէ :
- 27 - Որովհետեւ անոր հետեւէն մէկդի քաշուեցան ,
Ու անոր ճամբաները բնաւ չճանչցան .

*Կամ, կրնա՞յ մէկը թագաւորին ըսել
†Եբբ. այ չգներ
‡Կամ, Անթիւ
||Եբբ. Տեսնողներուն տեղը

- 28 - Այնպէս որ աղքատին աղաղակը անոր հասցուցին ,
Ու անիկա զրկեալներուն աղաղակը լսեց :
- 29 - Եթէ անիկա հանգստութիւն տայ ,
Ո՞վ կրնայ նեղութիւն տալ .
Ու եթէ անիկա երեսը պահէ ,
Ո՞վ կրնայ զանիկա տեսնել .
Ու «յոպէ» է թէ՛ ազգի մը և թէ՛ մարդու մը .
- 30 - Որպէս զի կեղծաւոր մարդը չթագաւորէ ,
Ու ժողովուրդին որոգայթ չըլլայ :
- 31 - Արդարեւ պէտք է Աստուծոյ ըսել ,
Պարտէ՛ կրեցի , ալ շարութիւն չեմ ըներ .
- 32 - Չտեսածս դուն ինծի արվեցուր ,
Եթէ ամբարշտութիւն գործեցի , ալ չեմ գործեր :
- 33 - Արդեօք *քու ուզածիդ պէս՝ պիտի հատուցանէ՞ , որ հակառակ կը կենաս .
Քանզի դուն ընտրելու ես , և ոչ թէ ես .
Ուրեմն ինչ որ գիտես , խօսէ :
- 34 - Իմաստունները պիտի ըսեն ինծի հետ ,
(Ու գիտուն մարդը որ ինծի մտիկ կ'ընէ ,)
- 35 - Յոբ խելացութիւնով չզրուցեց ,
Ու անոր խօսքերը իմաստութեամբ չեն :
- 36 - Իմ փափաքս այս է , որ Յոբ մինչև վերջը փորձուի .
Վասն զի ամբարիշտ մարդոց †պէս պատասխաններ տուաւ :
- 37 - Քանզի իր մեղքին վրայ ապստամբութիւն կ'աւելցնէ .
Մեր մէջ ծափ կը զարնէ ,
Ու Աստուծոյ դէմ իր խօսքերը կը շատցնէ :

ԳԼ. ԼԵ

Բարձեալ Եղիսուս իր խօսքերը շարունակելով՝ ըսաւ ,
2 - Արդեօք իրաւունք՞ով ըլլաւ կը կարծես ստիկա ,
Որ ըսիք թէ ես Աստուծմէ աւելի արդար եմ :

*Եբբ. քու քովէդ
†Կամ, կողմէն

- 3 - Քանզի դուն ըսիր, Քեզի ի՞նչ
օգուտ կ'ըլլայ:
- Մեղքէս աւելի ի՞նչ կը վատակիմ:
- 4 - Ա՛հ ես քեզի պատասխան կու
տամ,
- Նաև քեզի հետ քու բարեկամներուդ:
- 5 - Երկինք նայէ ու տես.
- Ամպերը գիտէ, որոնք քեզմէ աւելի
բարձր են:
- 6 - Եթէ դուն մեղք գործես, Անոր
դէմ ի՞նչ բրած կ'ըլլաս,
- Ու երբ քու անօրէնութիւններդ շատ-
նան, Անոր ի՞նչ կ'ընես:
- 7 - Եթէ արդար ես, Անոր ի՞նչ կու
տաս,
- Կամ անիկա քու ձեռքէդ ի՞նչ կ'առնէ:
- 8 - Քու ամբարշտութիւնդ քեզի պէս
մարդուն՝
- Ու արդարութիւնդ մարդու որդիին
չէ յօրէ:
- 9 - Անիրաւութիւններուն շատութե-
նէն կը բողոքեն,
- Բռնաւորներուն բազուկին համար կ'ա-
ղաղակեն:
- 10 - Բայց Ք'իչ չրտեր թէ Զիս ստեղծող
Աստուածը ս՞ր է,
- Ան որ գիշերուան մէջ երգեր կու տայ,
- 11 - Ան որ մեզ երկրի անասուններէն
աւելի գիտուն,
- Ու երկինքի թռչուններէն աւելի իմաս-
տուն կ'ընէ:
- 12 - *Հոն չարերուն հպարտութեանը
համար կ'աղաղակեն,
- Բայց Աստուած պատասխան չտար՝
- 13 - Արդարև Աստուած ունայնու-
թիւն մտիկ չընէր,
- Ու Ամենակարողը անոր չնայիր:
- 14 - Ու թէև կ'ըսես թէ Զանիկա չէս
տեսներ,
- Բայց դատաստան կայ անոր առջև, ու
անոր յուսա:
- 15 - Եւ հիմա իր բարկութեանը բրածը
բան մը չէ,
- Ու անօրէնութիւնը սաստիկ քննած չէ.
- 16 - Ուստի Յոբ իր բերանը զուր տեղը
բանալով՝
- Անգիտութեամբ խօսքեր կը շատցնէ:

*Կո՛մ, Հոն կ'աղաղակեն, բայց Աստու-
ած պատասխան չտար՝ չարերուն
հպարտութեանը համար

- Ու Եղիսու շարունակելով՝ ըսաւ,
- 2 - Քիչ մը համբերէ ինծի, ու ես քեզի
յայտնեմ,
- Որ Աստուծոյ համար ուրիշ խօսելիք
այ «նի՛»:
- 3 - Գիտութիւնս հեռուէն պիտի առ-
նեմ,
- Ու արդարութիւնը Ստեղծողիս ընծա-
յեմ:
- 4 - Իրաւցընէ իմ խօսքերս սուտ չեն.
- Գիտութեամբ կատարեալ մէկը քու
քովդ է:
- 5 - Ահա Աստուած հզօր է, բայց Ք'իչ
չարհամարհեր,
- Անիկա հզօր է եւ սրտին զօրութիւ-
նովը:
- 6 - Անիկա ամբարիշտը չապրեցներ,
Ու նեղեալներուն իրաւունք կ'ընէ.
- 7 - Արդարներուն վրայէն աչքերը չվեր-
ցըներ,
- Ու զանոնք թագաւորներուն հետ ա-
թուին վրայ չէ դէ.
- Զանոնք յաւիտեան կը նստեցնէ, ու
կը բարձրանան:
- 8 - Ու անոնք եթէ շղթաներով կապ-
ուած՝
- Թշուաւութեան կապերուն մէջ ըլլա-
նուին,
- 9 - Այն տաէն անոնց կը յայտնէ իրենց
գործերը,
- Ու իրենց յանցանքներուն շատնալը:
- 10 - Նաև անոնց ահանջը կը բանայ,
որպէս զի խրատ ընդունին,
- Եւ անոնց կը պատուիրէ որ անօրէնու-
թեանէ դառնան:
- 11 - Եթէ անոնք հնազանդելով՝ անոց
ծառայութիւն ընեն,
- Օրերնին բարութիւնով, ու տարիներ-
նին ուրախութիւնով կ'անցնեն:
- 12 - Բայց եթէ անոնք հնազանդու-
թիւն չընեն, սուրէ պիտի անց-
նին,
- Ու առանց գիտութեան պիտի մեռնին:
- 13 - Եւ անոնք որ սրտով կեղծաւոր
են, իրենց լո՛ւս բարկութիւն կը
գիղկեն.
- Երբ զանոնք կապէ, անոց չեն աղաղա-
կեր:
- 14 - Անոնց անձը երիտասարդութեան
մէջ պիտի մեռնի,
- Ու անոնց կեանքը պիղծերուն մէջ
պիտի վախճանի:

- 15 - Աղքատը կ'ազատէ իր թշուա-
ռութեան ատենը ,
Ու նեղութեան մէջ անոր ականջը կը
բանայ :
- 16 - Քեզ ալ նեղութենէ պիտի ազատէր ,
Ու այնպէս ընդարձակութեան բերէր ,
ուր նեղութիւն չկայ .
- Ու քու սեղանդ դրուածը պարարտու-
թեամբ լեցուն պիտի ըլլար :
- 17 - Բայց եթէ դուն չարին փաստը
*պաշտպանեցիր ,
Իրաւունքն ու դատաստանը +եղ պիտի
բռնեն :
- 18 - Որովհետեւ բարկութիւն կայ , չըլ-
լայ որ հարուածով մը քեզ
վերցնէ .
- Այն ատեն մեծ փրկանքը քեզ չկրնար
ազատել :
- 19 - Միթէ անիկա քու հարստու-
թիւնդ բանի մը տեղ կը դնէ՞ .
- Ոչ ոսկին ու ոչ մեծ գանձերը Բան ճը
լը համարէ :
- 20 - Մի փափաքիր այն գիշերին՝
Որուն մէջ ժողովուրդները իրենց տե-
ղէն փաներևոյթ կ'ըլլան :
- 21 - Զգուշացիր անօրէնութեան դառ-
նալէ .
- Վասն զի դուն տարիկա թշուառութե-
նէ աւելի ընտրեցիր :
- 22 - Ահա Աստուած իր զօրութիւ-
նովը քարձրացեալ է՝ .
- Ո՞վ կրնայ անոր պէս սորվեցնել :
- 23 - Անոր +աւելը- ճամբան ո՞վ որոշեց
անոր ,
Եւ ո՞վ ըստ անոր թէ Դուն անիրա-
ւութիւն գործեցիր :
- 24 - Միտքդ պահէ որ մեծարես անոր
գործերը՝
Զորոնք մարդիկ լկը՞ տեսնեն :
- 25 - Ամէն մարդ կը տեսնէ զանոնք ,
Իւրաքանչիւր ոք հեռուէն կը դիտէ :
- 26 - Ահա Աստուած մեծ է , ու մենք
չենք գիտեր .
- Եւ անոր տարիներուն համբանքը ան-
քննելի է :
- 27 - Վասն զի ջուրերուն կաթիլները
կը քաշէ .
- Անոնք իր գոլորշիէն անձրև կը թա-
փեն ,

- 28 - Զոր ամպերը վազցնելով
Մարդոց վրայ առատօրէն կը կաթե-
ցնեն :
- 29 - Բայց բնաւ մէկը ամպերուն տա-
րածուիլը
Ու անոր վրանին դրդումը կրնա՞յ հաս-
կրնալ :
- 30 - Ահա անոր վրայ իր լոյսը կը տա-
րածէ ,
Ու ծովուն խորութիւնը կը ծածկէ :
- 31 - Ժողովուրդները այս բաներով *կը
գատէ ,
Ու առատօրէն կերակուր կու տայ :
- 32 - Ափովը +կայծակը կը ծածկէ ,
Ու անոր հրաման կու տայ , թէ ո՛ւր
պիտի զարնէ :
- 33 - +Անոր կը ցուցնէ իր բարեկամը .
Անօրէնութեան դէմ բարկութիւն կը
գիզուի :

ԳԼ ԼԵ

- Ասոր համար ալ սիրտս կը դողայ ,
Ու իր տեղէն կ'երերայ :
- 2 - Անոր ձայնին որստումը
Ու անոր բերնէն ելած շառաչիւնը
մտիկ բրէք :
- 3 - Բոլոր երկինքի տակ կը զրկէ զա-
նիկա ,
Ու անոր լոյսը՝ մինչև երկրի ծայրերը :
- 4 - Անոր ետեւէն մեծ ձայն մը կ'ելլէ ,
Իր վեհափառութեան ձայնովը կ'որս-
տայ ,
Ու իր ձայնը լսուելէն ետեւ չուշացներ
զանոնք :
- 5 - Աստուած իր ձայնովը սքանչելի
կերպով կ'որոտայ ,
Ու այնպիսի մեծ բաներ կ'ընէ՝ զորոնք
մենք չենք կրնար հասկնալ :
- 6 - Վասն զի անիկա կ'ըսէ ձիւնին ,
Երկրի վրայ եղիր ,
Նստե սաստիկ անձրևին ու իր զօրու-
թեանը սաստիկ անձրևներուն :
- 7 - Անիկա ամէն մարդու ձեռքը կը
կնքէ ,
Որպէս զի իր ստեղծած բոլոր մարդիկը
հասկնան :
- 8 - Գազանները որջերնին կը մտնեն ,
Ու այրերնուն մէջ կը բնակին :

*Եբբ. կատարեցիր
+Եբբ. կը վերնան
+Կա՛, կը բարձրացնէ
||Կա՛, կ'երգեն

*Կա՛, կը խնամէ +Եբբ. լոյսը
+Կա՛, Անոր շառաչիւնը անոր համար
լուր կու տայ , խաշինքն ալ ելլող
ամպին համար

- 9 - Հարաւէն փոթորիկ կու գայ,
Ու հիւսիսէն ցուրտ :
- 10 - Աստուծոյ շունչէն սառնամանիք
կը արուի ,
Ու ջուրերուն լայնութիւնը կը նեղնայ :
- 11 - Նաև պարզութիւնը մէզը կը փա-
րատէ .
Անոր լոյսը ամպը կը ցրուէ :
- 12 - Անոր խորհրդովը տեղէ տեղ կը
փոխադրուին ,
Որպէս զի աշխարհի երեսը՝ երկրի
վրայ անոր բոլոր հրամանն բրա-
ծը կատարեն :
- 13 - Զանոնք կը բերէ՝ թէ՛ խրատի հա-
մար ,
Թէ՛ իր երկրին համար և թէ՛ շնորհքի
համար :
- 14 - Ով Յոր, այս շառ՝ մտիկ ըրէ .
Կայնէ ու Աստուծոյ սքանչելիքներուն
վրայով մտածէ :
- 15 - Գիտե՞ս թէ Աստուած ի՞նչպէս կը
կարգաւորէ զանոնք ,
Եւ իր ամպէն լոյս կը փայլեցնէ :
- 16 - Գիտե՞ս ամպերուն հաւասարա-
կշուութիւնը ,
Ու իմաստութեամբ կատարեալ եղո-
ղին սքանչելիքները :
- 17 - Երկիրը հարաւային հովէն հան-
գրատացուցած ժամանակը ,
Գիտե՞ս թէ ինչո՞ւ համար քու հան-
դերձներդ կը աաքնան :
- 18 - Անոր հեռ մէկտե՞ղ տարածեցիր
երկիրքը ,
Որ ամուր է թափծու հայելիի պէս :
- 19 - Սորվեցուր մեզի թէ ի՞նչ պիտի
ըսենք անոր .
Վասն զի մթութեան պատճառաւ չենք
կրնար թէ ի՞նչ կարգաւորել :
- 20 - Եթէ ես խօսելու ըլլամ՝, պիտի
պատմուի՞ Անոր ,
Եթէ մէկը գրուցէ , անշուշտ պիտի
կլուի :
- 21 - Ու հիմա ալ չեն կրնար նայիլ ,
երբ երկիրք կը փայլաաակէ .
Բայց հովը կ'անցնի , ու զանիկա կը
սրբէ :
- 22 - Ահա հիւսիսէն ոսկիի դե՞պէս կու
գայ .
Աստուծոյ քով ահաւոր փառաւորու-
թիւն կայ :
- 23 - Անիկա ամենակարող է , չենք
կրնար հասկնալ զանիկա .
Մեծ է զօրութեամբ , գառաատանով
ու շատ արդարութեամբ ,

Ու Դե՛ւն *զրկանք չըներ՝ :
24 - Անոր համար մարդիկ կը վախնան
անկէ .
Սրտով իմաստուններուն իբնաւ չնա-
յիր՝ :

ԳԼ. ԼԸ

Այն ատեն Եհովա փոթորիկին մե-
ջէն պատասխան տալով Յորի՝ ըսաւ ,
2 - Ո՞վ է ատիկա՝ որ անիմաստ խօս-
քերով
խորհուրդը կը նսեմացնէ :
3 - Հիմա կարիճի պէս մէջքդ պնդէ .
Քեզի հարցնեմ, և քու գիտցածդ ինձի
իմացնես :
4 - Ո՞ւր էիր դուն՝ երբ ես երկրի հի-
մերը կը դնէի .
Ըսէ ինձի՝ եթէ իմաստութեան տեղե-
կութիւն ունիս :
5 - Եթէ գիտես՝ ը՛հ, ո՞վ դրաւ անոր
չափերը ,
Կամ թէ անոր վրայ լարը ո՞վ քաշեց :
6 - Անոր հիմերը ինչի՞ վրայ հաստատ-
ուած են ,
Կամ թէ անոր անկիւնին քարը ո՞վ
դրաւ ,
7 - Երբ առաւօտեան աստղերը մէկ-
տեղ փառաբանութիւն կ'ը-
նէին ,
Ու երբ Աստուծոյ բոլոր սրգիները
ցնծութեամբ կ'աղաղակէին :
8 - Նաև ծովը սրովայնէն յարձակելով
ելած ժամանակը
Ո՞վ գոցեց զանիկա դռներով ,
9 - Երբ ամպը անոր հանդերձ դրի ,
Ու մէզը խանձարուր ,
10 - Եւ անոր վրայ իմ հրամաններս
հաստատելով՝
Անոր փականք ու դռներ դրի ,
11 - Ու ըսի ՝ Եհովա հոս գոս ու
անդին չանցնիս ,
Եւ քու աղիքներուդ հպարտութիւնը
հոս դադարի :
12 - Կեանքիդ մէջ երբէք առաւօտուն
հրաման ըրի՞ր ,
Արշալոյսին իր ծագելու տեղը ցուցու-
ցի՞ր ,
13 - Որպէս զի երկրի ծայրերը բռնէ ,
Ու չարագործները ա՛նկէ թօթվուին :

*Կա՛մ, պատասխան չտար
†Կա՛մ, մէկը բնաւ չկրնար տեսնել զ-
նի՛ս

14 - Երկէ նոր ձև մը կ'առնէ կնքուած
կաւի պէս,
Եւ «Դն բան *Տանդերձով զարդար-
ուածի» պէս կ'երևնայ :

15 - Սակայն ամբարիշտներէն կ'ար-
գիլուի իրենց լոյսը ,
Ու բարձր բազուկը կը խորտակի :

16 - Ծովուն ազբիւրները մտե՞ր ես,
Ու անգունդին ծածուկ տեղերը պտը-
տե՞ր ես :

17 - Մահուան դռները յայանուեցա՞ն
քեզի,
Ու մահուան շուքին դռները տեսա՞ր :

18 - Երկրի լայնութեանը խելքդ հա-
սա՞ւ :

Եթէ ամէնը գիտես՝ զրուցէ :
19 - Լոյսին իբնակարանը ո՞ւր է,
Ու խաւարին տեղը ո՞ւր է,
20 - Որ զանիկա առնես իր սահմանը
դանիս ,
Ու անոր տանը ճամբաները իմանաս :

21 - Իուն այն տտեն ծնած ըլլալուդ
համար ,
Ու քու օրերուդ համարանքին շատ ըլ-
լալուն համար գիտես :

22 - Զիւնին շտեմարանները մտե՞ր ես,
Ու կարկուտին գանձերը տեսե՞ր ես ,
23 - Զորոնք ես կը պահեմ՝ նեղութեան
ժամանակին ,
Ու կռիւի և պատերազմի օրուան հա-
մար :

24 - Ի՞նչ ճամբով լոյսը կը բաժնուի,
Ե- ի՞նչպէս արևելեան հովը երկրի
վրայ կը տարածուի :

25 - Հեղեղներուն համար անցք՝
Ու սրտուձներուն փայլակին համար
ճամբայ ո՞վ բացաւ ,
26 - Որպէս զի անձրև տայ այն երկրին
վրայ՝ ուր մարդ չկայ ,
Անապատին վրայ՝ ուր մէ՛կը չբնակիր ,
27 - Որպէս զի անապատները ու անշէն
տեղերը կշտացնէ ,
Ու կանանչ խոտին ընծիւզը բուսցնէ :

28 - Անձրևը հայր ունի՞ ,
Կամ թէ ցօղին կաթիլները ո՞վ ծնաւ :

29 - Սառը որո՞ւն արգանդէն կ'ելլէ,
Ու երկինքի եղեամբ ո՞վ ծնաւ :

30 - Զուրերը քարի պէս կ'ըլլան կը
պահուին ,
Ու անգունդին երեսը չկը սառի :

31 - Բազմատեղին *կապերը կրնա՞ս
կապել ,
Կամ թէ Հայկին կապերը կրնա՞ս քա-
կել :

32 - †Մազարթը ժամանակին կրնա՞ս
հանել ,
Ու Արջին և իր զաւակներուն առաջ-
նորդել :

33 - Երկինքի կանոնները գիտե՞ս ,
Անոր իշխանութիւնը երկրի վրայ կրնա՞ս
դնել :

34 - Զայնդ ամպերուն կրնա՞ս վերցը-
նել ,
Որպէս զի ջուրերուն շատութիւնը քեզ
ծածկէ :

35 - Կայծակները կրնա՞ս զրկել , որ-
պէս զի երթան ,
Ու քեզի՝ Ահա պատրաստ ենք՝ բսեն ,
36 - Երկամունքներուն մէջ ո՞վ ի-
մաստութիւն դրաւ ,
Կամ սրտին ո՞վ հանձար տուաւ :

37 - Ո՞վ կրնայ իմաստութիւնով ամ-
պերը համրել ,
Ու երկինքի տիկերը քառակեցնել :

38 - Երբ փոշին Բրջ-եւ-լ զանգուած
մը կ'ըլլայ ,
Ու հողին կոշտերը իրարու կը փակչին :

39 - Առիւծին համար որս կրնա՞ս
սրտալ ,
Ու կորիւններուն ախորժակը կրնա՞ս
կշտացնել ,
40 - Երբ անոնք իրենց այրերուն մէջ
կը կծկան ,
Ու դարանի համար որջերնուն մէջ կը
կենան :

41 - Ո՞վ կը պատրաստէ ագուաւին իր
որսը ,
Երբ անոր ձագերը Ասաուծոյ կ'աղա-
ղակեն ,
Ե- ուտելիք չունենալնուն համար կը
թափառին :

ԳԼ ԼԹ

Ժայռի այծեամներուն ծնանելու
ժամանակը գիտե՞ս .
Եղնիկներուն ծնանիլը գիտեցի՞ր :
2. Անոնց կատարելու ամիսները կրնա՞ս
համրել ,
Ու ծնանելու ժամանակին գիտե՞ս :

*Եբբ. հագուածի
†Եբբ. բնակած ճամբան
‡Եբբ. կը բռնուի

*Կա՛, զուարճութիւնները
†Կա՛, Տանդերձ- կենդանակերպները
‡Կա՛, թափել տալ

- 3 - Անոնք ծռելով ձագերնին կը ծնանին ,
- Ու ցաւերնին կ'անցնեն :
- 4 - Անոնց ձագերը կը զօրանան, գաշտի մէջ կը մեծնան,
- Կ'երթան ու նորէն անոնց չեն դառնար :
- 5 - Յիւր ո՞վ համարձակ թող տուաւ ,
- Ու վայրենի իշուն կապերը ո՞վ քակեց,
- 6 - Որու գաշտը տուի տունի համար ,
- Ու անապատը՝ անոր բնակութեանը համար :
- 7 - Անիկա քաղաքին աղաղակը ծաղր կ'ընէ ,
- Ու բանեցնողին պռուպը չլսեր :
- 8 - Անոր պարտած լեռները իր արօտն են ,
- Ու ամէն րեւոյ խոտերը կը փնտռէ :
- 9 - Միեղջերուն քեզի ծառայելու կը հաճի՞ ,
- Կամ քու մտերիդ քով գիշերը կը մնայ :
- 10 - *Արա վարելու համար՝ միեղջերուն կրնա՞ս չուանով կապել ,
- Կամ թէ քու ետեւէդ հովիտները կը տափանէ՞ :
- 11 - Անոր պիտի շատ ըլլալուն համար անոր կը վտատհի՞ս ,
- Ու գործդ անոր կը յանձնե՞ս :
- 12 - Կը հաւատաս՞ս անոր թէ քու արմտիքդ պիտի բերէ ,
- Եւ քու կալդ ժողովէ :
- 13 - Չայլամին թեւը ցնծութեամբ կը շարժի .
- Արդեօք արագիլին թեւերուն ու փետուրներուն ինչ նմանի՞ :
- 14 - Անիկա իր հաւկիթները գետինը կը ձգէ ,
- Ու զանոնք հողին վրայ կը տաքցնէ ,
- 15 - Ու միտքը չգար որ ճիշտն օտքը կը կտարէ զանոնք ,
- Կամ գաշտի գազանները ստնակոխ կ'ընեն :
- 16 - Անիկա անգութ է իր ձագերուն՝ իրենը չեղածներու պէս .
- Իր աշխատութեանը դատարկ ելլելուն վախ չունի :
- 17 - Վասն զի Աստուած իմաստութեանէ զուրկ ըրաւ զանիկա ,
- Ու հանձարէ անոր բաժին չառաւ :
- 18 - Անիկա բարձր ելած ժամանակը

- Չին ու անոր վրայ հեծնողը ծաղր կ'ընէ :
- 19 - Ձիուն դո՞ւն պիտի տուիր ,
- Անոր պարանոցին *բաշը դո՞ւն հագցուցիր :
- 20 - Չանիկա մարտի պէս կրնաս ցաթ կեցնել .
- Անոր վրնջելուն †փառաւոր ձայնը՝ ահաւոր է :
- 21 - Հովիտի մէջ գետինը կը փորէ , ու իր զօրութիւնովը կը զուարճանայ .
- Սպառազէնը դիմաւորելու կ'ելլէ .
- 22 - Երկիւղը ծաղր կ'ընէ , բռնէ իջլախնար ,
- Ու սուրին երեսէն ետ չդառնար :
- 23 - ‡Նետերը անոր վրայ կը սուլեն ,
- Նաեւ փայլուն նիզակը ու գեղարդը :
- 24 - Կատաղութեամբ ու բարկութեամբ գետինը կը կլլէ ,
- Ու փողին ձայնը լեւա՞ն՝ յիշար ինքզինք զսպել՞ :
- 25 - Քանի որ փողը կը հնչուի , Աղէ՛ կ'ըսէ .
- Հեռուէն կ'առնէ պատերազմին հօտը ,
- Չօրագլուխներուն որոտումը ու ազդարարութիւնը ինչ լէ :
- 26 - Բազէն քո՞ւ իմաստութիւնովդ կը թռչի ,
- Ու թեւերը դէպ ի հարաւ կը բանայ :
- 27 - Արծիւը քո՞ւ հրամանովդ կը բարձրանայ ,
- Ու բոյնը բարձր կը հաստատէ :
- 28 - Անիկա ժայռի վրայ , ժայռի գագաթներու վրայ ,
- Ու ապառաժներու մէջ բնակելով կը կենայ .
- 29 - Կերակուրը անկէ կը փնտռէ .
- Անոր աչքերը հեռուէն կը տեսնեն :
- 30 - Անոր ձագերն ալ արիւն կը ծծեն .
- Եւ ուր որ դիեր ըլլան , անիկա հոն է :

ԳԼ. Խ

Եւ Տէրը Յորի խօսելով՝ ըսաւ ,
 2 - Արդ Ամենակարողին հետ վիճողը բան մը պիտի սորվեցնէ՞ .
 Աստուծոյ հետ վիճաբանողը թող պատասխան տայ :

*Եբբ. Ա.կօսին մէջ

*Կամ, որոտումը
 †Եբբ. փառ.քը
 ‡Եբբ. Կապարճը անոր վրայ կը սուլէ
 Կամ, չհաւատար

- 3 - Այն առեւն Յոր Տէրոջը պատասխան տալով՝ ըսաւ,
- 4 - Ահա ես նուազ եմ. քեզի ի՞նչ պատասխան տամ.
- 2. Եւ քո բերնիս վրայ կը դնեմ:
- 5 - Մէկ անգամ՝ խօսեցայ, ալ պատասխան պիտի չտամ.
- Երկու անգամ՝ ալ, բայց պիտի չկրկնեմ:
- 6 - Այն ժամանակ Տէրը մըրիկէն Յորի պատասխան տալով՝ ըսաւ,
- 7 - Հիմա կարիճի պէս մէջքդ պնդէ, Քեզի հարցնեմ, ու դուն +-+ գիտցածդ ինձի իմացուր:
- 8 - Իմ դատաստանս պիտի խափանե՞ս, Քեզ արդարացնելու համար զիս յանցաւոր պիտի հանես:
- 9 - Աստուծոյ պէս բազուկ ունի՞ս, Եւ +-+ ձայնովդ կրնա՞ս անոր պէս որոտալ:
- 10 - Հիմա փառաւորութիւնով ու մեծութիւնով զարդարուէ, Եւ պատիւով ու փառքով հագուէ:
- 11 - Բարկութեանդ եռանդը տարածէ, Եւ ամէն հպարտին նայէ ու զանկախ խնարհեցուր:
- 12 - Ամէն հպարտին նայէ ու զանկախ նուաճէ,
- Ու անորէնները իրենց տեղը կոխկռտէ:
- 13 - Անոնց ամէնն ալ հողին մէջ աներեւոյթ ըրէ,
- Երեսնին գազտուկ տեղ պահէ:
- 14 - Այն առեւն ես ալ քեզի կը խոտովանիմ,
- Որ աջ ձեռքդ քեզ կրնայ ազատել:
- 15 - Ահա *Բեհեմովթը զոր քեզի հետ ստեղծեցի.
- Անկախ արջաւի պէս խոտ կ'ուտէ:
- 16 - Ահա հիմա անոր զօրութիւնը իր մէջքն է,
- Եւ ոյժը փորին լիցաններուն մէջ:
- 17 - Պոչը կ'երերցնէ եղևինի պէս.
- Ազգերուն ջիղերը հիւսուած են:
- 18 - Անոր ոսկորները քաղնձէ խողովակներ՝ են,
- Անոր ոսկորները երկաթէ նիգերու պէս են:
- 19 - Աստուծոյ ճարտար գործը անկախ է.

- 2. անկախ ստեղծողը *իր սուրը կրնայ անոր մօտեցնել:
- 20 - Արդարեւ անոր պաշար կը բերեն լեռները,
- Ուր դաշտի գազանները կը խաղան:
- 21 - Անկախ հովանաւոր ծառերուն տակ,
- Եղէգներուն շուքը ու ճահիճներուն մէջ կը պառկի:
- 22 - Հովանաւոր ծառերը իրենց շուքովը կը ծածկեն զանկախ, Հեղեղատներուն ուռիները անոր բուրսիքն են:
- 23 - Եթէ գետը առատանայ, անկախ չվախնար.
- Թէեւ Յորդանան անոր բերանին վրայ դիմելու ըլլայ, հանդարտ կը կենայ:
- 24 - Միթէ անկախ յայտնի կը բռնուի՞.
- +Որոգայթի մէջ անոր քիթը ո՞վ կրնայ ծակել:

Գ.Լ. ԽԱ.

- † Լեիթանը կարթով կրնա՞ս վերցընել,
- Ու անոր լեզուէն լարով կրնա՞ս քաշել:
- 2 - Անոր քիթին չուան անցընելով՝ Ծնօտը կրնա՞ս փուշով ծակել:
- 3 - Միթէ անկախ քեզի շատ աղաչանքներ կ'ընէ՞,
- Քեզի մեղմ խօսքեր կ'ըսէ՞:
- 4 - Անկախ քեզի հետ ուխտ կ'ընէ՞,
- 2. անկախ մշանջենաւոր ծառայի պէս կրնա՞ս առնել:
- 5 - Թռչունի հետ Խաչալու պէս՝ անոր հետ կրնա՞ս խաղալ,
- Կամ թէ քու աղախիներուդ համար՝ զանկախ կրնա՞ս կապել:
- 6 - Ընկերները անոր հաւել հացկերոյթ կրնա՞ն ընել.
- Անկախ վաճառականներուն մէջ կը բաժնուի՞:
- 7 - Անոր մորթը սլաքներով՝ Ու անոր գլուխը ձկնորսի տէգերով կրնա՞ս լեցնել:
- 8 - 2. անկախ անոր վրայ դիր, պատերազմը յիշէ.

*Կա՛մ, ձիագետինն, և կա՛մ փիղը
 †Կա՛մ, պորտին
 ‡Կա՛մ, պղնձի ամուր կտորուանք

*Կա՛մ, անոր սուրը երէն կու տայ
 †Կա՛մ, Քիթովը որոգայթները կը ծակէ
 ‡Կա՛մ, կակորդիլտոր

- Ո- նորէն պիտի չընես զանիս :
- 9 - Ահա անոր Բան-էլ-ն յոյսը պարտապէ .
- Զանիկա տեսնելով ալ՝ Բար չը՞ զարհուրիր :
- 10 - Չկայ քաջասիրտ մէկը որ զանիկա արթնցնէ .
- Հապա իմ առջևս ո՞վ կրնայ կայնիլ :
- 11 - Ո՞վ ինծի առաջուրնէ տուաւ, որ ես անոր հատուցանեմ .
- Բոլոր երկինքի տակ եղածը իմն է :
- 12 - Անոր անգամներուն ու զօրութեանը ,
- Նաև գեղեցիկ կարգաւորութեանը վրայով խօսելու պիտի չընեմ :
- 13 - Անոր հանդերձին երեսը ո՞վ կրնայ բանալ .
- Անոր երկու կզակներուն մէջ ո՞վ կրնայ մտնել .
- 14 - Անոր երեսին դռները ո՞վ կրնայ բանալ .
- Ահը անոր ահռաններուն բոլորտիքն է :
- 15 - Անոր ամուր վահանները եր հպարտութիւնն են ,
- Պինդ կնքուածի պէս Բար են .
- 16 - Այնպէս քովէքով շարուած են ,
- Որ անոնց մէջ քամի չկրնար մտնել .
- 17 - Իրարու կցուած են ,
- Մէկզմէկ կը բռնեն ու բնաւ չեն զատուիր :
- 18 - Անոր փռնգտալէն լոյս կը փայլի ,
- Ու աչքերը արշայոյսին արտեանունքներուն կը նմանին :
- 19 - Անոր բերնէն վառած ջահեր կ'ելլեն ,
- Ու կրակի կայծեր կը ցայտեն :
- 20 - Քիթին ծակերէն շոգի կ'ելլէ՝ Եւացող սանի կամ կաթսայի պէս :
- 21 - Անոր շունչէն կրակի կայծեր կը բորբոքին ,
- Ու բերնէն բոց կ'ելլէ :
- 22 - Անոր պարանոցին վրայ ոյժ կը բնակի ,
- Ու երկիւղը անոր առջևէն կը խաղայ :
- 23 - Անոր միտին ծալուածքները փակած են ,
- Անոր վրայ հաստատուելով չեն երբար :
- 24 - Անոր սիրտը քարի պէս պինդ է ,
- Ու ազօրիքին վարի քարին պէս ամուր է :
- 25 - Անոր ելած ժամանակը զօրաւորները կը վախնան ,
- Ու երկիւղէն կը շփոթին :

- 26 - Անոր վրայ յարձակողին սուրը չդիմանար ,
- Ու նիզակը , գեղարդը ու զրահը :
- 27 - Երկաթը յարդի պէս է անոր առջև ,
- Ու պղինձը փաած փայտի պէս :
- 28 - Աղեղին նետը զանիկա չփախցրներ ,
- Պարտաքարերը անոր դէմ մղեղի կը դառնան :
- 29 - Մահակները շիւղերու տեղ կը սեպէ ,
- Տէգին ճօճալը ծաղր կ'ընէ :
- 30 - Անոր տակ սրածայր խեցիի կտորուանք կան ,
- Յեխին վրայ սուր բաներ կը տարածէ :
- 31 - Անդունդը սանի մը պէս կ'եւացրնէ ,
- Ու ծովը սպեղանիի կաթսային նման կ'ընէ :
- 32 - Իր ետևէն ճամբան պայծառ կ'երեւցնէ ,
- Անդունդը ճերմկած մազերու կը նմանի :
- 33 - Երկրի վրայ անոր նմանը չկայ ,
- Որ «նշե» անվախ ստեղծուած ըլլայ :
- 34 - Ամէն բարձր բաներու վրայ կը նայի ,
- Բոլոր *հպարտութեան որդիներուն՝ թագաւորն է :

ԳԼ ԽԲ

- Այն ատեն Յոբ Տէրոջը պատասխան տալով ըսաւ ,
 - 2 - Գիտեմ որ ամէն բանի կարող ես ,
 - Ու քու դիտաւորութիւնդ բնաւ չարգելուիր :
 - 3 - Ո՞վ է ասիկա որ ագիտութեամբ խորհուրդը կը նսեմացնէ .
 - Արդարեւ կը զրուցէի, բայց չէի հասկընար .
 - + Ինծի սքանչելի բաներ ըլլալով՝ չէի իմանար :
 - 4 - Կ'ազաչեմ, մտիկ ըրէ որպէս զի ես զրուցեմ ,
 - Քեզի հարցնեմ ու ինծի տրվեցուր :
 - 5 - Ես քու վրայովդ ահանջի լրով լսեցէի ,
 - Բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ :
-
- * կամ, վայրենի գողաններուն
 + Եբր. Ինծմէ

6 - Անոր համար ի՞նչ կ'արհամարհեմ,

Հողի ու մոխրի վրայ կը զզջամ:

7 - Արդ Տէրը այս խօսքերը Յոբի գրուցելէն ետքը՝ Տէրը Եղիփազ Թեմանացիի ըսաւ, Քու վրադ ու երկու ընկերներուդ վրայ իմ բարկութիւնս բորբոքեցաւ, վասն զի ինծի համար իմ Յոբ ծառայիս պէս շիտակ չիօտեցար:

8 - Ուստի հիմա ձեզի եօթը զուարակ ու եօթը խոյ առէք, ու Յոբ ծառայիս երթալով՝ ձեզի համար սղջակէզ մատուցէք, և իմ Յոբ ծառաս ձեզի համար աղօթք ընէ, որպէս զի ես ալ անոր *աղօթքը ընդունելով՝ չե՛ր անմտութեանը պէ՛ չընեմ՝ ձեզի. վասն զի իմ առջև Յոբ ծառայիս պէս շիտակ չիօտեցար:

9 - Այն ատեն Եղիփազ Թեմանացի ու Բաղդասա Սօքեցի և Սոփար Նսամացի երթալով՝ Տէրոջը իրենց ըսածին պէս ըրին. և Տէրը Յոբի *աղօթքը ընդունեց:

10 - Եւ Տէրը գերութենէ ազատեց Յոբը՝ իր բարեկամներուն համար աղօթք ըրած ատենը. նաև Տէրը Յոբի բոլոր ստացուածքին կրկնապատիկը

առաւ: 11 - Եւ անոր բոլոր եղբայրները ու բոլոր քոյրերը և զանիկա առաջուրնէ՛ ճանչցողներուն բոլորն ալ անոր գալով՝ անոր ասնը մէջ հաց կերան անոր հետ, ու անոր համար ցաւելով՝ Տէրոջը անոր զրկած բոլոր փորձանքին համար անոր մխիթարութիւն տուին. և ամէն մէկը մէյմէկ կտոր ստակ ու մէյմէկ սակի օղ տուին անոր:

12 - Եւ Տէրը Յոբի վերջը առաջինէն աւելի օրհնեց. այնպէս որ տասնըչորս հազար սչխար, ու վեց հազար ուղտ, և հազար զոյգ եզ ու հազար մատակ էշ ունեցաւ: 13 - Եւ անոր եօթը աղայ ու երեք աղջիկ եղաւ: 14 - Ու մէկ աղջկան անունը †Եմիմա, ու երկրորդին անունը Կասիա, ու երրորդին անունը ‡Կերեն-հապուք դրաւ: 15 - Եւ բոլոր երկրին վրայ Յոբի աղջիկներուն պէս գեղեցիկ կիներ չէին գտնուեր. ու հայրերին անոնց ժառանգութիւն տուաւ իրենց եղբայրներուն մէջ:

16 - Եւ ասկէ ետքը Յոբ հարիւր քառասուն տարի ապրելով՝ տեսաւ իր որդիները ու իր որդւոց որդիները ֆրշչորրորդ ազգը: 17 - Ու Յոբ ծերացած ու օրերը լեցուած մեռաւ:

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

ՍԱՂՄՈՍ Ա

Երանելի է այն մարդը
Որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ
չքայլեր,
Ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկե-
նար,
Եւ ծաղր ընողներուն նստած տեղը
չնստիր.
2 - Հապա անոր հաճութիւնը Աստու-
ծոյ օրէնքին մէջ է,
Եւ ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ
կը մտածէ:

3 - Եւ անիկա ջուրի ճամբաները տըն-
կուած ծառի պէս պիտի ըլլայ,
Որ իր ժամանակին իր պտուղը կու տայ.
Ու անոր տերևը պիտի չթափի,
Եւ ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի:
4 - Այսպէս չեն ամբարիշտները,
Հապա մղեղի պէս՝ զոր հովը կը ցրուէ:
5 - Ասոր համար ամբարիշտները դա-
տաստանին մէջ պիտի չկրնան
կենալ,
Ոչ ալ մեղաւորները արդարներուն
ժողովքին մէջ:
6 - Վասն զի Տէրը կը ճանչնայ ար-
դարներուն ճամբան.

*Եբբ. երեսը. ա Թագ. իե. 35: Մաղ. ա. 8:
†Այսինքն, տիւ

‡Այսինքն, եղջիւր ծարրոյ
||Ղուկ. ի. 42: Գոր. ա. 20:

Քայց ամբարիշտներուն ճամբուն պիտի կորսուի :

ՍԱՂՄ. Բ

Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն կ'ընեն,

Ու ժողովուրդները պարսպ բան կը մտածեն ,

2 - Երկրի թագաւորները ինքզինքնին կը հաստատեն ,

Ու իշխանները մեկտեղ խորհուրդ կ'ընեն

Տէրոջը դէմ ու անոր Օժեպին դէմ ,

3 - Ը՛նէլ՛, Կորեկնք անոնց կապերը ,

Ու մեզմէ ձգենք անոնց *լուծը :

4 - Երկինքը բնակողը անոնց չբայ պիտի ծիծաղի ,

Տէրը ծաղր պիտի ընէ զանոնք :

5 - Ա՛յն աստի իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց ,

Եւ իր սրամտութիւնովը պիտի խռովեցնէ զանոնք, Ը՛նէլ՛ ,

6 - Ես օժեցի իմ թագաւորս

Իմ սուրբ լեռանս, Սիճնի, վրայ :

7 - Հրամանը պիտի պատմեմ՝

Տէրը ինձի բաւ ,

Դուն իմ Արդիս ես ,

Ես այսօր քեզ ծնայ .

8 - Ինդրէ ինձմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ ,

Ու երկրի ծայրերը՝ քեզի ստացուածք .

9 - Չանոնք երկաթէ գաւազանով պիտի խօսարեոս ,

Բրուտի ամանի պէս պիտի փշրես զանոնք :

10 - Ուստի հիմա, ով թագաւորներ, միաքերնիդ առէք ,

Երկրի դատաւորներ, խրատուեցէք :

11 - Երկիւղով Տէրոջը ծառայեցէք ,

Ու դողալով †անէ՛ վախցէք՝

12 - Արդին համբուրեցէք՝ որպէս զի չբարկանայ ,

Ու ճամբուն մէջ չկորսուիք ,

Երբ անոր բարկութիւնը քիչ մը բորբոքի :

Երանի՛ այն ամէնուն որոնք անոր կը յուսան :

*Եբբ. չուանները
†Կա՛մ, հովուես
‡Կա՛մ, ցնծացէք

ՍԱՂՄ. Գ

Սաղմոս Դաւթի, իր որդւոյն Աբիսողոմի երեսէն փախած ժամանակը :

Ով Տէր, իմ թշնամիներս ս'ըջափ շատցան .

Իմ վրաս ելլողները շատուոր են :

2 - Նստերը իմ անձիս համար կ'ըսեն թէ

Ասոր փրկութիւն չկայ Աստուծմէն : (*Սէլա :)

3 - Բայց, ով Տէր, դուն ես իմ ասպարս ,

Իմ փառքս ու իմ գլուխս բարձրացընողը :

4 - Իմ ձայնովս Տէրոջը կանչեցի ,

Ու իր սուրբ լեռնէն ինձի պատասխանեց : (Սէլա :)

5 - Ես պառկեցայ ու քնացայ .

Արթնցայ, վասն զի Տէրը զիս պաշտպանեց :

6 - Ես պիտի չվախնամ բիւրուոր ժողովուրդներէն՝

Որոնք իմ չորս կողմս պատեցին :

7 - Ելիք, ով Տէր, զիս փրկէ, ով իմ Աստուածս ,

Վասն զի դուն զարկիր իմ բոլոր թըշնամիներուս թուշը .

Ամբարիշտներուն ակռաները փշրեցիր :

8 - Փրկութիւնը Տէրոջն է .

*Բու օրհնութիւնդ քու ժողովուրդիդ վրայ †է : (Սէլա :)

ՍԱՂՄ. Գ

Գլխաւոր երաժշտին, †նկինօթի վրայ .
Սաղմոս Դաւթի :

Կանչելու ատենս ինձի պատասխան սուր, ով իմ արդարութեանս Աստուածը .

Նեղութեան մէջ զիս ընդարձակեցիր .
Ողորմէ ինձի ու լսէ իմ աղօթքս :

*Այս բարեին սպոյթ նշանակումն էր ինչ ինչ ցայտնի չէ, սակայն Եբբայական բնագրին մէջ գրանուելով՝ մեծ աւագնեցին և խորհմանն էր մեզ : Ա՛րեւի ինչ երգեցողները սակայն ինչ գարշածեին իրենց երգերուն մէջ՝ իա՛մ իրենց յայնչ խորելու համար եւ իա՛մ բարձրացնելու համար :

†Կա՛մ, ըլլայ

‡Աստի՛ս հասանական խորշոտ զարնելու նուագարաններուն անունն է :

- 2 - Մարդոց սրգիներ, մինչև ե՞րբ իմ փառքս ամօթի պիտի դարձնեմ, Ե- ունայնութիւն պիտի սիրէք սատուութիւն փնտռէք: (Սէլա)
- 3 - Բայց գիտցէք որ Տէրը իրեն նուիրուած Դարբէն սրոշեց.
- Տէրը պիտի լսէ իրեն կանչելու ատենս:
- 4 - Իողացէք ու մեղք մի գործէք. Խօսեցէք սիրտերնուդ հետ անկողիններնուդ վրայ ու լուեցէք: (Սէլա):
- 5 - Արդարութեան զոհեր մատուցէք, Ու Տէրոջը յուսացէք:
- 6 - Շատերը կ'ըսեն թէ Ո՞վ մեզի բարութիւն պիտի ցուցնէ, Ով Տէր, քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագէ:
- 7 - Իմ սրտիս ուրախութիւն տուիր՝ Անոնց ցորենին ու գինիին առատութեան ժամանակէն աւելի:
- 8 - Խաղաղութեամբ պիտի պատկիմ ու քնանամ,
- Վասն զի դուն միայն, ով Տէր, զիս ապահովութեամբ կը բնակեցընես:

ՍՍ.ՂՄ. Ե.

Գլխաւոր երաժշտին, խնամօթի վրայ. Սաղմոս Դաւթի:

- Ով Տէր ահանջ դիր իմ խօսքերուս, Միտքդ առ իմ աղաղակս:
- 2 - Իմ կանչելուս ձայնը մտիկ ըրէ, ով իմ թագաւորս ու Աստուածս, Վասն զի ես քեզի կ'աղաչեմ:
- 3 - Ով Տէր, առտուանց պիտի լսես իմ ձայնս.
- Առտուանց քայտրաստ պիտի ըլլամ՝ քեզի ու սպասեմ:
- 4 - Վասն զի դուն անօրէնութիւն ուզող Աստուած չես.
- Զորք քու քովդ պիտի չբնակի:
- 5 - Հպարտները քու աչքերուդ առջև պիտի չկենան.
- Բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես.
- 6 - Սուտ խօսողները կը կորսնցնես. Տէրը արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զզուի:

*Կամ, երևելի ըրաւ
†Ասիկա հասանալան խորթօք գլելու
նաւագարաններուն անունն է:
‡Կամ, աղօթի պիտի ներկայացնեմ

- 7 - Բայց ես քու ողորմութեանդ շատութիւնովը քու սուենդ պիտի մտնեմ.
- Քու վախովդ երկրպագութիւն պիտի ընեմ՝ քու սուրբ սաճարիդ մէջ:
- 8 - Ով Տէր, քու արդարութիւնովդ ինծի առաջնորդ եղիր թշնամիներուս համար.
- Քու ճամբադ շիպէ իմ առջև.
- 9 - Վասն զի անոնց բերնին մէջ ճըշմարտութիւն չկայ, Անոնց ներսիդին չարութիւն է. Անոնց կողորդը բաց գերեզման է. Իրենց լեզուովը նենգաւոր եղան:
- 10 - Ով Աստուած, յանցաւոր հանէ զանոնք. Իրենց խորհուրդներովը թող իյնան. Անոնց շատ ամբարշտութիւններուն համար հալածէ զանոնք.
- Վասն զի քեզի դէմ ապստամբեցան:
- 11 - Բայց ամէն քեզի յուսացողներ թող ուրախ ըլլան.
- Յաւիտեան թող ցնծան, վասն զի դուն զանոնք կը պաշտպանես.
- Եւ քու անունդ սիրողները թող քեզմով զուարճանան:
- 12 - Վասն զի դուն պիտի օրհնես արդարը, ով Տէր,
- Բարի կամեցողութիւնով անոր չորս կողմը պիտի պատես՝ որպէս թէ վահանով մը:

ՍՍ.ՂՄ. Զ

Գլխաւոր երաժշտին, նկինօթի վրայ, Շէմինիթի վրայ. Սաղմոս Դաւթի:

- Ով Տէր, քու սրտմտութիւնովդ զիս մի յանդիմաներ,
- Եւ քու բարկութիւնովդ զիս մի իրատեր:
- 2 - Ով Տէր, ողորմէ ինծի, վասն զի տկար եմ ես.
- Զիս բժշկէ, ով Տէր, վասն զի սակորներս կը սարսափին:
- 3 - Իմ անձս ալ խիստ սարսափեցաւ. Եւ դուն, ով Տէր, մինչև ե՞րբ:
- 4 - Դարձիր, ով Տէր, փրկէ իմ անձս, Քու ողորմութեանդ համար զիս ազատէ:
- 5 - Վասն զի մահուան մէջ քեզ յիշատակել չկայ.

*Այսինքն, ութերորդի

- Գերեզմանին մէջ ո՞վ քեզի շնորհակալութիւն պիտի բնէ :
- 6 - Հառաչանք բնելէ յոգնեցայ .
Ամէն գիշեր առատութեամբ կը լրւամ իմ անկողինս ,
Արցունքներովս կը թրջեմ իմ մահիճս :
- 7 - Իմ աչքս մաշեցաւ արամութենէ ,
Իմ ամէն թշնամիներուս համար հինցաւ :
- 8 - Ինծմէ ետ կեցէք ամէնդ ալ որ անօրէնութիւն կը գործէք .
Վասն զի Տէրը իմ լալուս ձայնը լսեց .
- 9 - Տէրը իմ աղօթքս լսեց .
Տէրը իմ խնդրուածքս պիտի բնդունի :
- 10 - Թող ամէնան ու խիստ զարհուրին իմ ամէն թշնամիներս ,
Ետ դառնան -- շուտով թող ամբշնան :

ՍԱՂՄ. Է

*Շիկկայօն Դաւթի, զոր երգեց Տէրոջը Բեհիամիսեան Բուշի խօսքերուն համար :

- Ով իմ Տէր Աստուածս, քեզի կը յուսամ ,
Փրկէ զիս իմ ամէն հալածիչներէս ու ազատէ զիս .
- 2 - Չըլլայ որ առիւծի պէս իմ անձս գիշատէ ,
Ու պատուէ և ազատող մը չըլլայ :
- 3 - Ով իմ Տէր Աստուածս , եթէ այս բանը ըրի ,
Կամ թէ իմ ձեռքերուս մէջ անօրէնութիւն կայ ,
- 4 - Եթէ բարեկամիս չարութիւն ըրի ,
Ու յափշտակեցի զանի՞ս որ առանց պատճառի իմ թշնամիս էր ,
- 5 - Թող թշնամին հալածէ իմ անձս ու հասնի անոր ,
Ու երկրի վրայ կոխկռտէ իմ կեանքս ,
Եւ իմ փառքս հողի վրայ բնակեցնէ :
(Սէլա :)
- 6 - Ելիր, ով Տէր, քու բարկութիւնովդ ,
Իմ թշնամիներուս կատաղութիւններուն դէմ բարձր եղիր ,
Եւ քու հրամայած դատաստանիդ ինծի համար արթնցիր :
- 7 - Եւ ժողովուրդներուն ժողովը քու չորս կողմի պիտի պատեն .

*Կ-Տ, Մեղեդի. տես Ամբ. գ. 4 :

- Անոնց վրայ դէպ ի բարձրը դարձիր :
- 8 - Տէրը պիտի դատէ ժողովուրդները .
Ով Տէր, իմ դատաստանս տես ,
Իմ ունեցած արդարութեանս ու անմեղութեանս նայելով :
- 9 - Ամբարիշտներուն չարութիւնը թող հասնի :
Բայց դուն արդարը հաստատէ .
Վասն զի դուն, ով արդար Աստուած, կը քննես սիրտերը ու երիկամունքները :
- 10 - Իմ պաշտպանութիւնս Աստուծմէ է .
Որ կ'ապրեցնէ սրտով ուղիղները :
- 11 - Աստուած արդար դատաւոր է ,
Ու Աստուած Բղաւորին ամէն օր բարկացած է .
- 12 - Եթէ անիկա չդառնայ, իր սուրը պիտի սրէ .
Աղէղը լարեր ու պատրաստեր է :
13 - Ու մահու գործիքները անոր համար պատրաստեր է ,
Իր նետերը *հալածիչներուն համար՝ շիներ է :
14 - Ահա անօրէնութեան երկունքը բռնեց զանիկա .
Չարութիւն յղացաւ ու ստութիւն ծնաւ :
15 - Հոր փորեց ու խորունկցուց ,
Բայց իր շինած փոսին մէջ ինք պիտի իյնայ .
- 16 - Անոր չարութիւնը իր գլուխը պիտի դառնայ ,
Ու անոր բռնութիւնը իր գագաթին վրայ պիտի իջնէ :
17 - Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէրոջը իր արդարութեանը համար ,
Ու սողմնս պիտի երգեմ Բարձրեալ Տէրոջը անուանը :

ՍԱՂՄ. Ը

Գլխաւոր երաժշտին, Կիթիթի վրայ . Սաղմոս Դաւթի :

- Ով Տէր, մեր Տէրը,
Ի՞նչ փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ ,
Որ քու փառքդ երկինքներէն վեր դրեր :

*Կ-Տ, կրակոտ
†Կը Իւրթու-ի Բէ Կե-տ-ի Ժը նս-ագ-արանի անս-ն է :

- 2 - Մանկանց ու կաթնկեր աղայոց բերնէն
- *Գովութիւն կատարեցիր՝ քու թշնամիներուդ համար ,
- Որպէս զի թշնամին ու վրէժխնդիրը լռեցնես :
- 3 - Երբ տեսնեմ՝ երկինքդ , քու մատերուդ գործը ,
- Լուսինը ու աստղերը , զորոնք դուն հաստատեցիր ,
- 4 - Մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշես ,
- Կամ մարդու որդին , որ անոր այցելութիւն կ'ընես :
- 5 - Քիչ մը վար բրիր զանիկա հրեշտակներէն ,
- Փառքով ու պատուով պսակեցիր զանիկա .
- 6 - Քու ձեռքերուդ գործերուն վրայ իշխան դրիր զանիկա .
- Ամէն բան անոր սաքին տակ դրիր .
- 7 - Բոլոր ոչխարները ու արջառները ,
- Նաև վայրենի անասունները ,
- 8 - Երկինքի թռչունները ու ծովուն ձուկերը ,
- Ե- ինչ որ ծովու ճամբաներուն մէջ կը պաշտի :
- 9 - Ով Տէր , մեր Տէրը ,
- Ի՞նչ փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ :

ՍՍ.Ղ.Մ. Թ

Գլխաւոր երաժշտին , Մութլապպէնի վրայ .
Սաղմոս Գաւթի :

- Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէրոջը իմ բոլոր սրտովս .
- *Քու ամէն սքանչելիքներդ պիտի պատմեմ :
- 2 - Քեզմով ուրախ պիտի ըլլամ ու ցնծամ .
- *Քու անուանդ սաղմոս պիտի երգեմ ,
ով Բարձրեալ :
- 3 - Թշնամիներս ետ դառնալու ատեննին
- Քու երեսէդ պիտի իյնան ու կորսուին .
- 4 - Վասն զի դատաստանս և իրաւունքս դուն տեսար .
- Աթուին վրայ նստար իՔբէ- արդարութեան դատաւոր :
- 5 - Հեթանոսները յանդիմանեցիր ,
- Ամբարիշտը կորսնցուցիր ,

*Կա՛մ , Զօրութիւն

- Անոնց անունները ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից :
- 6 - Թշնամիին աւերմունքները բոլորովին վերջացան .
- *Քաղաքները աւերեցիր .
- Անոնց յիշատակը իրենց հետ կորսուեցաւ :
- 7 - Բայց Տէրը յաւիտեան կը մնայ .
- Անիկա իր աթոռը պատրաստեց դատաստանի համար :
- 8 - Ինք պիտի դատէ աշխարհը արդարութիւնով ,
- Ժողովուրդներուն դատաստան պիտի ընէ ուղղութիւնով :
- 9 - Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէրը ,
- Ապաւէն՝ նեղութեան ժամանակները :
- 10 - Եւ անոնք որ քու անունդ զիտեն՝ քեզի պիտի յուսան .
- Վասն զի քեզ փնտռողները , ով Տէր , երեսէ չձգեցիր :
- 11 - Սաղմոս երգեցէք Տէրոջը որ Սիօն կը բնակի ,
- Ժողովուրդներուն մէջ պատմեցէք անոր բրածները :
- 12 - Վասն զի արեան վրէժխնդիրը յիշեց զանոնք ,
- Զմուռցաւ նեղեալներուն աղաղակը :
- 13 - Ով Տէր , ողորմէ ինձի ,
- Տես իմ թշնամիներէս կրօն նեղութիւնս ,
- Գուն որ զիս մահուան դռներէն կը վերցնես .
- 14 - Որպէս զի քու ամէն գովութիւններդ պատմեմ
- Սիօնի աղջկան դռներուն մէջ .
- Պիտի ցնծամ քու փրկութիւնովդ :
- 15 - Հեթանոսները իրենց շինած փոսին մէջ ընկղմեցան .
- Իրենց գաղտուկ լարած որոգայթին մէջ իրենց սաքը բռնուեցաւ :
- 16 - Տէրը ճանչցուած է , Վասն զի դատաստան ըրաւ .
- Ամբարիշտը իր ձեռքին գործերովը որոգայթը կ'իյնայ : (* Հիկկայօն . Սէլա :)
- 17 - Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան ,
- Ե- ամէն ազգերը՝ որոնք զԱստուած կը մոռնան :
- 18 - Քանզի ազբաար պիտի չմոռցուի մինչև վերջը .

*Այսինքն , մտածութիւն

- Տնանկներուն յոյսը յաւիտեան պիտի չկորուսի:
- 19 - Ելիր, ով Տէր, մարդը չզօրանայ . Թող չեթանոսները դատուին քու առջևդ .
- 20 - Ով Տէր, *զանոնք վախցուր՝ . Թող չեթանոսները ճանչնան թէ իրենք մարդ են: (Սէլա):

†ՍՍՂՄ. Ժ

- Ով Տէր, ինչո՞ւ չեռու կը կենաս . Նեղութեան ժամանակները անտես կ'ըլլաս:
- 2 - † Ամբարշտին ամբարտաւանութեանը պատճառաւ աղքատը կը տաչորի՝, Իրենց խորհած հնարքներուն մէջ թող բռնուին:
 - 3 - Վասն զի ամբարիշտը իր անձին ցանկութիւնովը կը պարծենայ, Եւ ագասը իր աչի՞ն երանի կու տայ, Տէրը կ'անարգէ:
 - 4 - Ամբարիշտը իր երեսին ամբարտաւանութեանը համար զԱստուծոյ չփնտուեր:
 - Բոլորովին անոր մտքին մէջ Աստուած չկայ:
 - 5 - Ամէն ժամանակ անոր ճամբաները պինդ են . Գու դատաստաններդ անոր առջևէն բարձր են . Անիկա իր բոլոր թշնամիներուն վրայ կը փչէ:
 - 6 - Իր սրտին մէջ ըսաւ թէ Պիտի չստասանիմ . Վասն զի ազգէ մինչև ազգ նեղութեան մէջ պիտի չըլլամ:
 - 7 - Անոր բերանը անէծքով ու նենգութիւններով ու հարստահարութիւններով լեցուն է .

*Կամ, անանց վրայ սորվեցնող դիր
 †Այս բաներորդ Սաղմոսը Եօթնամանից և Հայոց Գրաբար Բարգմանութեանց մէջ Իններորդին հետ միացուցած է, որով այս Բարգմանութեան մէջի մեբասաներորդը՝ անանց մէջ բասներորդ յիշուած է, ու այնպէս ինչ շարանանի մինչև հարիւր քառասունը եօթներորդը: Տես այն տեղի ծանօթութեանը:
 ‡Կամ, Ամբարիշտը իր ամբարտաւանութիւնովը ստատիկ կը հալածէ աղքատը

- Անիրաւութիւնը ու անօրէնութիւնը անոր լեզուին տակ են:
- 8-Գեղերուն դարանի տեղերը կը նստի, Գաղաուկ տեղերու մէջ անմեղը կը սպաննէ . Անոր աչքերը ծածկաբար տնանկներուն կը նային:
- 9-Գաղաուկ տեղեր դարանամուտ կ'ըլլայ, ինչպէս աւիւնը իր որջին մէջ . Գարանակալ կը նստի՝ աղքատը յափը շտակելու համար . Աղքատը կը յափշտակէ՝ իր որդայթը ձգելով զանիկա .
- 10 - Ու կծկտած կը պառկի, Եւ տնանկները անոր ճանկերուն տակ կ'իյնան:
- 11 - Իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած մոռցեր է, Ու իր երեսը ծածկեր է որպէս զի բնաչտեսնէ:
- 12 - Ելիր, ով Տէր . ով Աստուած, ձեռքդ վեր վերցուր, Մի մոռնար նեղեալները:
- 13 - Ինչո՞ւ համար ամբարիշտը կ'անարգէ զԱստուած . Իր սրտին մէջ ըսաւ թէ Պիտի չքննես:
- 14 - Դուն տեսար, վասն զի ցաւին ու նեղութեանը կը նայիս՝ Գու ձեռքովդ Գրաբարէն հասուցանելու համար: Աղքատը ինքզինք քեզի կը յանձնէ . Որբին օգնականը դուն ես:
- 15 - Ամբարշտին բազուկը կտարէ , Ու չարին անօրէնութիւնը փնտուէ Բնու որ ու չգտնես:
- 16 - Տէրը յաւիտեանս յաւիտենից Թագաւոր է: Հեթանոսները կորսուած են անոր երկրէն:
- 17 - Տնանկներուն ցանկութիւնը լսեցիր, ով Տէր . Անոնց սիրտերը պիտի հաստատես, ու քու ականջդ պիտի տաս
- 18 - Որբին ու տնանկին դատաստանը տեսնելու , Որպէս զի երկրի մարդը ա՛լ զանան՝ չվախցնէ:

ՍՍՂՄ. ԺԱ

Գլխաւոր երաժշտին . Սաղմոս Գաւթի
Տերջը անպաւինեցայ .
 Ի՞նչպէս իմ անձիս կ'ըսէք թէ

- Թուչունի պէ՞ գէպ ի ձեր լեռը թուչէ .
- 2 - Վասն զի ահա մեղաւորները աղեղ լարեցին ,
- Իրենց նետերը լարին վրայ պատրաստեցին ,
- Որպէս զի մութ ապէն սիրտը շիտակ եղողներուն նետեն :
- 3 - Եթէ հիմերը կործանին ,
- Արդարը ի՞նչ պիտի ընէ :
- 4 - Տէրը իր սուրբ ատճարին մէջ է .
- Տէրոջը աթուր երկինքն է .
- Անոր աչքերը կը տեսնեն ,
- Անոր թարթիչները կը քննեն մարդոց որդիները :
- 5 - Տէրը կը քննէ արդարը .
- Բայց անոր անձը կ'առէ ամբարիշտը ու բռնութիւն սիրողը :
- 6 - Ամբարիշտներուն վրայ պիտի տեղան *որոգայթներ ,
- Հուր և ձծուձք ու խորշակ .
- Այս պէ՞ ըլլայ անոնց բաժակին բաժինը :
- 7 - Քանզի արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ ,
- Անոր երեսը ուղիղին կը նայի :

ՍԱՂԱՄ. ԺԲ

Գլխաւոր երաժշտին, Շէմինիթի վրայ. Սաղմոս Գաւթի :

- Ով Տէր , փրկէ , վասն զի սուրբ չմնաց .
- Վասն զի հաւատարիմները մարդոց որդիներուն մէջէն պակսեցան :
- 2 - Ամէն մարդ սուտ կը խօսի իր ընկերին հետ .
- Շողոքորթող շրթունքներով * - կրկին սրտով կը խօսին :
- 3 - Տէրը պիտի կտրէ ամէն շողոքորթող շրթունքները
- Ու մեծախօս լեզուն ,
- 4 - Որոնք ըսին թէ Լեզուներովնիս պիտի յաղթենք ,
- Շրթունքներնիս մերն է . մեր վրայ տիրող ո՞վ պիտի ըլլայ :
- 5 - Աղքատներուն զրկանքին * - անանկներուն հեծութեանը համար
- Հիմա պիտի ելլեմ , կ'ըսէ Տէրը ,
- Ազատութեան մէջ պիտի դնեմ զանի - ին որ կը փչուի :

- 6 - Տէրոջը խօսքերը մաքուր խօսքեր են .
- Հողէ բովքի մէջ զատուած
- Ու եթէ անգամ՝ մաքրուած արծաթի պէ՞ են :
- 7 - Ով Տէր , դուն պիտի պահես զանոնք ,
- Ու պիտի պաշտպանես այս ազգէն մինչև յաւիտեան :
- 8 - Ամբարիշտները ամէն կողմ կը պարտին ,
- Երբ մարդոց որդիներուն մէջ անարգները բարձրանան :

ՍԱՂԱՄ. ԺԳ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Գաւթի :

- Ով Տէր , մինչև ե՞րբ բողբոլին զիս պիտի մտնաս ,
- Մինչև ե՞րբ քու երեսդ ինձ մէ պիտի ծածկես :
- 2 - Մինչև ե՞րբ մաքիս մէջ հոգեր պիտի դնեմ ,
- Ամէն օր սրտիս մէջ արամութիւն * - նեւալով .
- Մինչև ե՞րբ թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ :
- 3 - Նայէ , ով իմ Տէր Աստուածս , * - պատասխան տուր ինձի .
- Լուսաւորէ իմ աչքերս ,
- Որպէս զի մահուան * - նը չքնանամ :
- 4 - Չըլլայ որ թշնամիս ըսէ թէ Յաղթեցի անոր .
- Կա՞մ թէ ինձի գէմ կեցողները խնդան իմ աստաներու տակնս :
- 5 - Ես քու սղորմութեանդ յուսացայ , իմ սիրաս քու փրկութիւնովդ պիտի ցնծայ :
- 6 - Պիտի երգեմ Տէրոջը ,
- Վասն զի ինձի բարեբարութիւն ըրաւ :

ՍԱՂԱՄ. ԺԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Գաւթի :

- Անզգամը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ .
- Ապականեցան * - պիղծ գործեր ըրին .
- Մէկը չկայ որ աղէկութիւն ընէ :
- 2 - Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ ,
- Որպէս զի տեսնէ թէ կա՞յ արդեօք իմաստուն մէկը
- Որ զԱստուած փնտռէ :

*Կա՞մ, փայլակներ

- 3 - Ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան.
- Աղէկուածիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ:
- 4 - Միթէ չե՞ն ճանչնար ամէն անօրէնութիւն ընողները,
- Որոնք հաց ուտելու պէ՞ իմ ժողովուրդըս կ'ուտեն,
- Ո- Տէրոջը չեն կանչեր.
- 5 - Այն ատեն շատ վախցան.
- Քանզի Աստուած արգարներուն ազգին մէջ է:
- 6- Աղքատին խորհուրդը ամօթով ըրիք, *Սակայն անոր յոյսը Տէրն է:
- 7 - Երանի՛ թէ Սիօնէ գար Իսրայէլի փրկութիւնը.
- Տէրը իր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը՝
- Յակոբ պիտի ցնծայ, * - Իսրայէլ ուրախ պիտի ըլլայ:

ՍԱՂՄ. ԺԵ

Սաղմոս Դաւթի:

- Տէր**, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ,
- Ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ:
- 2 - Ան որ անմեղութեամբ կը քալէ, ու արգարութիւն կը գործէ,
- Եւ ճշմարտութիւն կը խօսի իր սրտին մէջ:
- 3 - Ան որ լեզուովը չգրպարտեր, Ընկերին չարութիւն չըներ, Եւ իր դրոցիին վրայ նախատինք չդներ.
- 4 - Որուն առջև անարգուած է շարագործը,
- Բայց աստուածավախները կը պատուէ. Երգում կ'ընէ իր թնասին՝ ու չդառնար.
- 5 - Իր արծաթը վարձքով չտար, Ու անմեղին դէմ կաշառք չառներ: Ով որ ատնք կ'ընէ, յաւիտեան պիտի չսասանի:

ՍԱՂՄ. ԺԶ

Երգ Դաւթի:

Ով Աստուած, զիս պահէ, Վասն զի քեզի յուսացայ:

*կա՛մ, Քանզի
†կա՛մ, դրոցիին

- 2 - Տէրոջը ըսի, Իմ Տէրս դուն ես, Առանց քեզի բարեք մը չունիմ:
- 3 - Երկրի մէջ եղող սուրբերուն ու պատուականներուն՝
- Անոնց վրայ է իմ բոլոր հաճութիւնս:
- 4 - Անոնց ցուերը պիտի շատնան, որոնք ուրիշի մը կ'արատրան.
- Անոնց արիւնի նուէրները պիտի չնուիրեմ,
- Ու անոնց անունները շրթունքներուս վրայ պիտի չառնեմ:
- 5 - Տէրն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը.
- Իմ վիճակս դուն պիտի պահես:
- 6 - Վիճակներ ելան ինծի զուարճալի *եղեր՝- մէջ.
- Իրաւ ի՞մ ժառանգութիւնս ինծի գեղեցիկ եղաւ:
- 7-Պիտի օրհնեմ Տէրը որ զիս խրատեց. Նաև իմ երկամունքներս գիշերուան մէջ ինծի կը սորվեցնեն:
- 8 - Ամէն ատեն Տէրը իմ առջևս դրի. Որովհետև իմ աջ կողմս է, պիտի չսասանիմ:
- 9 - Ասոր համար սիրտս ուրախ եղաւ ու *փառքս բերկրեցաւ,
- Ո- մարմինս ալ յուսով պիտի հանգըստանայ:
- 10 - Վասն զի իմ անձս †գերեզմանին մէջ պիտի չթողուս,
- Ու քու սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս:
- 11 - Կենաց ճամբան ինծի պիտի ցուցընես.
- Երեսիդ առջև լեցուն ուրախութիւն կայ,
- Քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան:

ՍԱՂՄ. ԺԷ

Աղթք Դաւթի:

- Ով** Տէր, լսէ արգարութիւնը, Մտիկ ըրէ իմ աղաղակս,
- Ականջ դիր աղօթքիս,
- Որ խաբեբայ շրթունքներով չէ:
- 2 - Իմ դատաստանս քու երեսէդ թող ելլէ.
- Քու աչքերդ ուղղութիւնը թող տեսնեն:

*Այսինքն, անձս, կա՛մ, լեզուս
†կա՛մ, դժոխքին

- 3 - Իմ սիրտս փորձեցիր, զիշեր տատեն քննեցիր:
- Զիս իր-ի-մ փորձեցիր ու բան մը չգտար:
- *Միտքս դրի որ բերանս պատուիրանազանց չըլլայ:
- 4 - Մարդոց գործերուն նայելով՝ Գու շրթունքներուդ խօսքերովը ես բանաւորին ճամբաներէն զգուշացայ:
- 5 - Իմ քայլերս քու ճամբաներուդ մէջ պահէ,
- Որպէս զի իմ գնացքներս չստանանին:
- 6 - Ես քեզի կանչեցի, վասն զի ինծի պատասխան պիտի տաս, ով Աստուած:
- Խնարհեցուր ինծի քու ականջդ, լսէ իմ խօսքս:
- 7 - Սքանչելի կերպով քու ողորմութիւններդ ցուցուր,
- Գուն որ թեզի յուսացողները աջ ձեռքովդ կ'ազատես
- Հակառակ կեցողներէն:
- 8 - Աչքի բերի պէս զիս պահէ, Թեւերուդ հովանաւորութեանը տակ զիս ծածկէ
- 9 - Ինծի տառապանք տուող ամբարիշտներուն երեսէն:
- Իմանձիս թշնամիները զիս պաշարեցին:
- 10 - Իրենց պարարտութիւնովը ծածկուեցան,
- Իրենց բերնովը ամբարտաւանութեամբ խօսեցան:
- 11 - Հիմա քայլերնուս չորս կողմը պատելով՝
- Աչքերնին Տբ իր-ս, անկեցին գետինը զարնելու համար,
- 12 - Առիւծի պէս ո՛ր կը փափաքի գիշատել,
- Առիւծի կորիւնի պէս որ դարանակալ կ'ըլլայ:
- 13 - Ելիք, ով Տէր, անոր առջև ինչի՞ օգնութեան հասիր,
- Զանկա գետինը պարկ:
- Քու սրովդ փրկէ իմ անձս ամբարիշտներէն,
- 14 - Քու ձեռքովդ մարդոցմէն, ով Տէր,
- Աշխարհի մարդոցմէն՝ որոնց բաժինը սյս կեանքին մէջ է,
- Ու անոնց փորերը շտեմարաններէդ կը լեցնես:

*Կ-մ, Բերանս իմ խորհուրդէս պիտի չհեռանայ

*Ան-ն-յ որդիներն ու՛ կը կշտանան, Ու իրենցմէ աւելցածը իրենց տղոցը կը թողուն:

15 - Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ:

Երբ արթննամ քու դէմքէդ պիտի կշտանամ:

ՍԱՂ Մ. ԺԸ

Գլխաւոր երաժշտին. Տէրոջը ծառային Գութի Մուշուր, որ ըսաւ Տէրոջը այս երգին խօսքերը այն օրը որ Տէրը ազատեց զանկա իր անէն թշնամիներուն ձեռքէն, եւ Սաւուղի ձեռքէն ու ըսաւ:

Ով Տէր, իմ զօրութիւնս, քեզ պիտի սիրեմ:

2 - Տէրը իմ վէմն, ամբութիւնս ու փրկիչս է:

Իմ Աստուածս իմ պարիսպս է, ես անոր կը յուսամ,

Անկա իմ վահանս ու իմ փրկութեանս եղջիւրը

Ո- իմ բարձր աշտարակս է:

3 - Օրհնեալ Տէրը կը կանչեմ, Ու իմ թշնամիներէս կ'ազատիմ:

4 - Մահուան լարերը իմ բոլորաբա տաին,

Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին:

5 - Գերեզմանին լարերը զիս պաշարեցին,

Ո- մահուան որոգայթները իմ առջև տաին:

6 - Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի,

Ու իմ Աստուծոյս աղաղակեցի:

Անկա իր տաճարէն իմ ձայնս լսեց, Ու իմ աղաղակս անոր առջև՝ անոր ականջը հասաւ:

7 - Այն տատեն երկիր սասանեցաւ ու դողաց,

Ու լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան,

Քանզի Անկա բարկացաւ:

8 - Անոր քիթէն ծուխ ելաւ,

Ու բերնէն մաշող կրակ:

Անկէ կայծակներ բռնկեցան:

9 - Եւ անկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ,

Եւ անոր ստքերուն տակ մառախուղ կար:

*Կ-մ, Անոնք որդիներով

10 - Ու քերովբէի մը վրայ ելաւ ու
 թռաւ,
 Ու հովին թեերուն վրայ պացաւ:
 11 - Խաւարը իրեն ծածկոյթ դրաւ,
 Ու իր բոլորտիքը իրեն բնակարան.
 Թանձր ջուրերը ու երկինքի ամպերը
 ըր--:
 12 - Անոր առջև եղող պայծառու-
 թենէն անոր ամպերը անցան
 կարկուտով ու կրակի կայծակներով:
 13 - Ու Տէրը երկինքին մէջ որտաց,
 Եւ Բարձրեալը իր ձայնը լսել տուաւ
 կարկուտով ու կրակի կայծակներով:
 14 - Եւ իր նետերը զրկեց ու զանոնք
 ցրուեց,
 Եւ շատ կայծակներ զրկեց ու զանոնք
 խռովեցուց:
 15 - Եւ քու յանդիմանութիւնովդ,
 ով Տէր,
 Քու բարկութեանդ հովին փչելովը
 Ջուրերուն յատակները երեցան,
 Ու աշխարհի հիմերը յայտնուեցան:
 16 - Բարձրէն զրկեց -- զիս բռնեց,
 Եւ շատ ջուրերէն զիս հանեց:
 17 - Իմ զօրեղ թշնամիէս ու զիս ա-
 տողներէն ազատեց զիս:
 Վասն զի ինձմէ զօրաւոր էին:
 18 - Իմ նեղութեանս օրը իմ առջևս
 առին,
 Բայց Տէրը ինձի հասարակութեան գա-
 ւազան եղաւ:
 19 - Եւ զիս լայնարձակ տեղ մը հա-
 նեց,
 Ու զիս ազատեց, վասն զի ինձի հաւ-
 նեցաւ:
 20 - Տէրը իմ արգարութեանս պէս
 ինձի փոխարէն կու տայ,
 Իմ ձեռքերուս մաքրութեանը համե-
 մատ հատուցում կ'ընէ ինձի:
 21 - Վասն զի Տէրօջը ճամբաները պա-
 հեցի,
 Ու իմ Աստուծոյս դէմ ամբարշտու-
 թիւն չըրի:
 22 - Քանզի անոր ամէն գոտաւատան-
 ները իմ առջևս էին,
 Ու անոր օրէնքները ինձմէ չհեռա-
 ցուցի:
 23 - Նաև անոր առջև կատարեալ
 եղայ,
 Ու իմ անօրէնութենէս զգուշացայ:
 24 - Եւ Տէրը ինձի հատուցում ըրաւ
 իմ արգարութեանս համեմատ,
 Իմ ձեռքերուս մաքրութեանը համե-
 մատ՝ որ անոր աչքերուն առջև է:

25 - Ողորմածին հետ ողորմած կ'ըլ-
 լաս,
 կատարեալ մարդուն հետ կատարեալ
 կ'ըլլաս:
 26 - Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս,
 Ու ծուռին հետ կը ծուխ:
 27 - Վասն զի դուն վշտացած ժողո-
 վուրդը կ'ազատես,
 Ու ամբարտաւան աչքերը կը ցած ցնեաւ:
 28 - Քանզի դուն իմ՝ ճրագս կը վա-
 աես:
 Իմ՝ Տէր Աստուածս իմ խաւարս կը
 լուսաւորէ:
 29 - Վասն զի քեզմով գունդի մը վրայ
 կը վազեմ,
 Ու իմ Աստուծովս պարիսպէ կ'անց-
 նիմ:
 30 - Աստուծոյ ճամբան կատարեալ է.
 Տէրօջը խօսքերը փորձուած են.
 Անիկա ամէն իրեն յուսացողներուն
 սուպար է:
 31 - Քանզի Տէրօջմէն զատ ո՞վ է Աստ-
 ուած,
 կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ:
 32 - Աստուած է որ ինձի զօրութիւն
 կը հազցնէ,
 Ու իմ ճամբաս կատարեալ կ'ընէ:
 33 - Իմ՝ սոսքերս եղջերուի *սպտիւն*
 պէս կ'ընէ,
 Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը
 կայնեցնէ:
 34 - Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
 Ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը
 լարեն*:
 35 - Ինձի նաև քու փրկութեանդ աս-
 պարը տուիր.
 Եւ քու աջ ձեռքդ զիս զօրացուց,
 Ու քու քաղցրութիւնդ զիս մեծցուց:
 36 - Իմ քաղելու ճամբաս ներքևս
 լայնցուցիր,
 Ու իմ սոսքիս յօդուածները շատանե-
 ցան:
 37 - Իմ թշնամիներս հալածեցի ու
 անոնց հասայ,
 Ու ետ չդարձայ՝ մինչև որ զանոնք
 հատցուցի:
 38 - Ձանոնք գեախնը զարկի, ու կանդ-
 նելու կարող չեղան.
 Անոնք իմ սոսքերուս տակ ինկան:
 39 - Ու պատերազմի համար ինձի զօ-
 րութիւն հազցուցիր:

*կամ, բազուկներովս պղնձէ աղեղ մը
 կը կատարուի

- Իմ վրաս ելլողները տակս ձգեցիր:
- 40 - Ու իմ թշնամիներուս *կանակը
ինծի Գարշնէլ տուիր*,
Որպէս զի զիս աստղները ջարդեմ:
- 41 - Աղաղակեցին, բայց ազատող
չկար.
- Տէրոջը աղաղակեցին, բայց անոնց պա-
տասխան չտուաւ:
- 42 - Ու զանոնք հովին առջեւէն հը-
փոշիի պէս մանրեցի,
Եւ փողոցներուն ցեխին պէս մէկգի
ձգեցի զանոնք:
- 43 - Ժողովուրդին կռիւներէն զիս ա-
զատեցիր,
Ու զիս ազգերու գլուխ ըրիր.
- Իմ չգիացած ժողովուրդս ինծի ծա-
ւայեց:
- 44 - Իրենց ականջներովը լսածնուն
պէս՝ ինծի հնազանդեցան.
Օտարները ինծի խոնարհութիւն ըրին:
- 45 - Օտարները ակարացան,
Եւ իրենց պահուած աեղերէն դա-
ղացին:
- 46 - Տէրը կենդանի է, ու իմ վէմն
օրհնեալ ըլլայ,
Եւ իմ փրկութեանս Աստուածը բարձր
ըլլայ:
- 47 - Աստուած է որ իմ վրէժս կը
խնդրէ,
Ու ժողովուրդները ինծի կը հնազան-
դեցնէ:
- 48 - Իմ թշնամիներէս զիս կը փրկէ.
Նաև զիս իմ վրաս ելլողներէն աւելի
բարձրացուցիր,
Ու բռնաւոր մարդէն զիս ազատեցիր:
- 49 - Անոր համար, ով Տէր, ազգերուն
մէջ քեզ պիտի գովեմ,
Եւ քու անուանդ սողմնս պիտի եր-
գեմ:
- 50 - Իր թագաւորին փրկութիւնները
մեծցնողը,
Ու իր օժեպին, Գաւթի, ու անոր սե-
րունդին
Յաւիտեան ողորմութիւն ընողը Ան է:

ՍԱՂՄ. ԺԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Գաւթի:

Երկինք Աստուծոյ փառքը կը պատ-
մէ,

- Ու երկնքի հաստատութիւնը անոր ձեռ-
քերուն գործերը կը ցուցնէ:
- 2 - Օրը օրին կը յայանէ խօսքը,
Ու գիշերը գիշերին կը ցուցնէ գիտու-
թիւնը:
- 3 - Չկայ զրոյց ու չկան խօսքեր.
Անոնց ձայնը չտուիր:
- 4 - Բայց ամէն երկիր ելաւ անոնց հըն-
չիւնը,
Ու մինչև աշխարհի ծայրը՝ անոնց
խօսքը:
Անոնց մէջ արեւին համար վրան մը
կանգնեց.
- 5 - Ու *անիկա իր առագաստէն ելած
փեսայի պէս է,
Հզօր մարդու պէս է՝ ճամբան վաղե-
լով կ'ուրախանայ:
- 6 - Անոր ելքը երկինքի ծայրէն է,
Ու անոր շրջանը մինչև անոնց ծայրերը,
Եւ անոր առքութենէն բան մը չծած-
կուիր:
- 7 - Տէրոջը օրէնքը կտաարեալ է,
հոգին կը նորոգէ.
Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է,
ազէտը իմաստուն կ'ընէ:
- 8 - Տէրոջը կանանները շիտակ են,
սիրար կ'ուրախացնեն.
Տէրոջը պատուիրանքները պայծառ
են, աչքերուն լոյս կու տան:
- 9 - Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան
կը մնայ.
Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու
բոլորովին արդար են:
- 10 - Յանկալի են անոնք սակիէն ու
շատ փորձուած սակիէն.
Մեզրէն անոյշ են, ու խորիսխէ կա-
թած մեզրէն:
- 11 - Նաև քու ծառադ անոնցմով կը
խրատուի,
Ու զանոնք պահելուն վարձքը շատ է:
- 12 - Ո՞վ կրնայ միտք առնել էջ
յանցանքները,
Ծածուկ ձգտեցէ՞ զիս մտքրէ.
- 13 - Ամբարաստան ձգտեցէ՞ ալ պահէ
քու ծառադ.
Թող անոնք ինծի չտիրեն.
Այն ատեն անմեղ կ'ըլլամ,
Ու կը մտքբուիմ մեծ անօրէնութենէ:
- 14 - Բերնիս խօսքերը ու սրախ խոր-
հուրդը
Քու առջեւ ընդունելի ըլլան,
Ով Տէր, իմ վէմն ու փրկիչս:

*Կ-Տ, պարանոցը ինծի տուիր
†Եբր. ստեցին

*Այ-Ե-Կ, արևը

ՍԱՂՄ. Ի

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի:

Նեղութեան օրը Տէրը պատասխանէ քեզի,

Յակորբի Աստուծոյն անունը քեզ պաշտպանէ.

2 - Օգնութիւն զրկէ քեզի սուրբ տեղէն,

Ու Սիօնէ զօրացնէ քեզ.

3 - Քու ամէն ընծաներդ յիշէ, Եւ քու ողջակէզներդ ընդունի. (Սէլա.)

4 - Քու սրտիդ համեմատ քեզի տայ, Եւ քու ամէն խորհուրդներդ կատարէ:

5 - Քու փրկութիւնովդ պիտի ուրախանանք,

Ու մեր Աստուծոյն անունովը դրօշակ վերցնենք:

Տէրը կատարէ քու ամէն խնդրուածքներդ:

6 - Հիմա գիտցայ որ Տէրը կը պահէ իր օձեալը,

Անոր պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն՝

Իր աջ ձեռքին փրկութեան ուժովը:

7 - Ոմանք կառքերու, և ոմանք ալ ձիերու հապարհին,

Բայց մենք մեր Տէր Աստուծոյն անունը պիտի յիշենք:

8 - Անոնք կորացան ու ինկան, Բայց մենք ելանք ու շիտակ կայնեցանք:

9 - *Ով Տէր, փրկէ թագաւորը, Պատասխան տուր մեզի մեր կանչելու օրը՝

ՍԱՂՄ. ԻԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի:

Ով Տէր, քու զօրութիւնովդ թագաւորը ուրախ պիտի ըլլայ,

Ու քու փրկութիւնովդ ս'ըջափ շատ պիտի ցնծայ:

2 - Անոր սրտին փափաքը իրեն տուիր, Ու ոմնոր շրթունքներուն խնդիրքը երձէ շարգիլեցիր: (Սէլա.)

3 - Վասն զի բարութեան օրհնութիւններով անոր հասար.

Անոր գլուխը մտքուր սակիէ պսակ դրիր:

*Կա՛մ, Ով Տէր, փրկէ. Թագաւորը մեզի պատասխան տայ մեր կանչելու օրը

4 - Քեզմէ կեանք խնդրեց, Ու անոր երկայն օրեր տուիր յաւիտեանս յաւիտենից:

5 - Անոր փառքը մեծ է քու փրկութիւնովդ.

Փառք ու վսեմելութիւն դրիր անոր վրայ:

6 - Վասն զի օրհնութիւնները անոր վրայ հասաատեցիր յաւիտեան.

Ուրախութեամբ ուրախ ըրիր զանիկա քու երեսիդ առջև:

7 - Վասն զի թագաւորը Տէրոջը կը յուսայ,

Ու Բարձրելոյն ողորմութիւնովը պիտի չսասանի:

8 - Քու ձեռքդ պիտի գտնէ քու ամէն թշնամիներդ.

Քու աջ ձեռքդ պիտի գտնէ քեզ ատողները:

9 - Զանոնք կրակի հնոցի պէս պիտի ընես քու բարկութեանդ ժամանակը.

Տէրը իր բարկութիւնովը *բոլորովին պիտի կորսնցնէ՝ զանոնք,

Ու կրակը պիտի ուտէ զանոնք:

10 - Անոնց պտուղը երկրէ պիտի կորսնցնես,

Ու անոնց սերունդը մարդոց սրդիներէն:

11 - Վասն զի քեզի դէմ շարութիւն պատրաստեցին.

Նենգութեան խորհուրդ ըրին, Բայց կարող չեղան հապարհել:

12 - Վասն զի դուն անոնց կանակը ետ պիտի դարձնես.

Քու ներքեդ անոնց երեսին դէմ՝ լարերուդ վրայ պիտի պատրաստես:

13 - Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.

Պիտի երգենք ու սողմես ըսենք քու զօրութեանդ:

ՍԱՂՄ. ԻԲ

Գլխաւոր երաժշտին, Այէլէդ Շահարի վրայ. Սաղմոս Դաւթի:

Աստուած իմ, Աստուած իմ, զիս ինչո՞ւ թողուցիր.

Զիս փրկելէն - պառալուս խօսքերէն հեռու եղար:

2 - Ով իմ Աստուածս, ցորեկը +եզի կը կանչեմ, ու շես պատասխաներ.

*Սէր. պիտի կլլէ

Եւ գիշերը իջ խնդրէ՛ ու չեմ գաղարիբ:
 3 - Բայց դուն սուրբ ես,
 Ով Խորայէլի գովաբանութեանց մէջ
 բնակող:
 4 - Մեր հայրերը քեզի յուսացան:
 Յուսացան, ու փրկեցիր զանոնք:
 5 - Քեզի ազաղակեցին ու ազատեցան.
 Քեզի յուսացան ու չամչցան:
 6 - Բայց ես որդ եմ՝ ու մարդ չեմ.
 Մարդոց մէջ քամահրուած, ու ժողո-
 վուրդներուն մէջ անարգուած:
 7 - Ամէն զիս տեսնողները զիս ծաղր
 կ'ընեն.
 Շրթունք կը բանան, գլուխ կ'երերցը-
 նեն,
 8 - Ը՛եւէլ, Տէրոջը յուսացաւ, «- [Ժող
 փրկէ զանիկա.
 Թող ազատէ զանիկա, վասն զի անոր
 հաւնեցաւ:
 9 - Բայց զիս Տօբ՝ արգանդէն հանողը
 դուն ես.
 Մօրս ծիծը եղած ատենս դուն ինծի
 յոյս տուիր:
 10 - Արգանդէն ես քեզի յանձնուե-
 ցայ.
 Իմ մօրս սրովայնէն դուն ես իմ Ատ-
 ուածս:
 11 - Մի հեռանար ինծմէ, վասն զի նե-
 ղութիւնը մօտ է,
 Վասն զի օգնող մը չկայ:
 12 - Շատ զուարակներ չորս կողմն ա-
 ուին,
 Բառանի ցուլերը զիս պաշարեցին.
 13 - Իրենց բերանը իմ վրաս բացին՝
 Յափշտակող ու մունչող առիւծի պէս:
 14 - Զուրի պէս [Թափուեցայ,
 Ու ամէն սակարներս քակուեցան.
 Սիրտս մտի պէս եղաւ,
 Հալեցաւ փորիս մէջ:
 15 - Զորացաւ իմ սթա հողէ ամանի մը
 պէս,
 Ու լեզուս քիմքիս փակաւ.
 Եւ զիս մահուան հողը դրիր:
 16 - Վասն զի շուները չորս կողմն
 առին,
 Զարերուն ժողովքը զիս պատեցին,
 Զեռքերս ու սաքերս ծակեցին:
 17 - Իմ ամէն սակարներս կրնամ համ-
 բերլ.
 Անոնք կը նային, կը տեսնեն զիս:
 18 - Իմ հանգերձներս իրենց մէջ կը
 բաժնեն,
 Աւ պատմու ճանիս վրայ վիճակ կը
 ձգեն:

19 - Բայց դուն, ով Տէր, մի հեռանար
 ինձի.
 Ով իմ զօրութիւնս, շուտով ինծի
 օգնութեան հասիր.
 20 - Իմ անձս սուրէն ազատէ,
 Ու *կեանքս՝ շանը ձեռքէն:
 21 - Փրկէ զիս առիւծին բերնէն,
 Ու ինծի պատասխան տուր †միեղջե-
 րուներուն եղջիւրներէն:
 22 - Քու անունդ եղբայրներուս պի-
 տի պատմեմ,
 Ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ:
 23 - Ով Տէրոջմէ վախցողներ, գովե-
 ցէք զանիկա.
 Ով Յակոբի բոլոր զաւակները, փա-
 ուուորեցէք զանիկա,
 Ու վախցէք անկէ, Խորայէլի բոլոր զա-
 ւակները:
 24 - Վասն զի չունարգեց ու չքա-
 մահրեց տառապեալին ‡տառա-
 պանքը,
 Ու երեսը անկէ չգարձուց.
 Հապա իրեն կանչած ատենը լսեց:
 25 - Քեզմով պիտի ըլլայ իմ գովու-
 թիւնս մեծ ժողովքին մէջ.
 Իմ ուխտերս անկէ վախցողներուն առ-
 ջև պիտի կատարեմ:
 26 - Տնանկները պիտի ուտեն ու
 կշտանան.
 Տէրը պիտի գովեն զանիկա փնտուղ-
 ները.
 Զեր սիրտը յաւիտեան պիտի ապրի:
 27 - Պիտի յիշեն ու Տէրոջը դառնան
 երկրի ամէն ծայրերը,
 Ու քու առջևդ երկրպագութիւն պիտի
 ընեն ազգերուն ամէն տոհմերը:
 28 - Վասն զի [Թագաւորութիւնը Տէ-
 րոջն է,
 Ու ան կը տիրէ ազգերուն վրայ:
 29 - Երկրի ամէն պարարտները պիտի
 ուտեն ու երկրպագութիւն պի-
 տի ընեն.
 Ամէն հողը իջնողները ծունկ պիտի
 կրկնեն անոր առջև,
 Ու ան աւ որ իր անձը չապրեցներ:
 30 - Զաւակը պիտի ծառայէ անոր.
 Ու Տէրոջը վրայով պիտի պատմուի
 †աւր- դարուն մէջ:
 31 - Պիտի գան ու անոր արգարու-
 թիւնը պիտի պատմեն

*Եբբ. միամօրս
 †Կա՛մ, վայրի ցուլերուն
 ‡Կա՛մ, ազաղակը

Այն ժողովուրդին, որ պիտի ծնանի.
Վասն զի այն քանն ան կատարեց:

ՍՍՂՄ. ԻԳ

Սաղմոս Դաւթի:

Տէրը իմ հովիւս է.

Ես քանի ճշ կարօտութիւն պիտի չունենամ:

2 - Զիս խտառէտ արօտներու մէջ կը պառկեցնէ.

Հանդարտ ջուրերուն քով ինծի կ'առաջնորդէ.

3 - Հոգիս կը նորոգէ.

Իր անուանը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ ինծի:

4 - Թէև մահուան շուքի ձորին մէջ ալ պտրտիմ,

Չարէն պիտի չվախնամ,

Վասն զի դուն ինծի հետ ես.

Քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք զիս պիտի մխիթարեն:

5 - Սեղան կը պատրաստես իմ առջևս իմ թշնամիներուս գիմաց.

Իմ գլուխս իւզով կ'օժես,

Իմ բաժակս խիստ լեցուն է:

6 - Յիրաւի բարերարութիւնը ու ողորմութիւնը ինծի հետ պիտի գան կեանքիս բոլոր օրերուն մէջ,

Ու շատ օրեր Տէրոջը տունը պիտի բնակիմ:

ՍՍՂՄ. ԻԴ

Սաղմոս Դաւթի:

Տէրոջն է երկիր ու անոր լիութիւնը,
Աշխարհ ու անոր բնակիչները:

2 - Վասն զի ինք անոր հիմերը ծովերուն վրայ ձգեց,

Ու զանիկա գետերուն վրայ հաստատեց:

3 - Ո՞վ պիտի ելլէ Տէրոջը լեռը,
Կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը:

4 - Զեռքերով սուրբը ու սրտով մաքուրը,

Որ ստութեան անձնատուր չեղաւ,

Ու նենգութեամբ երգում չբրաւ.

5 - Անիկա Տէրոջմէն օրհնութիւն պիտի ստանայ;

Ու իր փրկութեանը Աստուծմէն՝ արդարութիւն:

6 - Զանիկա փնտռողներուն ցեղը այս է.
Քու երեսդ ինդրողները *Յակօբն է:

(Սէլա:)

7 - Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք.

Ու վերցուցէք, ով յաւիտենական դռներ,

Որպէս զի փառաց Թագաւորը մանէ:

8 - Ո՞վ է այս փառաց Թագաւորը.

Կարող ու հզօր Տէրը,

Պատերազմի մէջ հզօր Տէրը:

9 - Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք.

Ու վերցուցէք, ով յաւիտենական դռներ,

Որպէս զի փառաց Թագաւորը մանէ:

10 - Ո՞վ է այս փառաց Թագաւորը.

Զօրքերուն Տէրը,

Ինքն է փառաց Թագաւորը: (Սէլա:)

ՍՍՂՄ. ԻԵ

Սաղմոս Դաւթի:

Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցի:

2 - Ով իմ Աստուածս, քեզի յաւաստացայ. թող չամչնամ,

Ու թշնամիներս իմ վրաս չցնծան:

3 - Նաև ամէն քեզի սպասողները թող չամչնան.

Ունայնութեամբ անօրէնութիւն ընողները թող ամչնան:

4 - Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծի,

Քու շաւիղներդ սարվեցուր ինծի:

5 - Քու ճշմարտութեանդ մէջ ինծի սուսնորդէ ու սարվեցուր ինծի,

Քանզի դուն ես իմ փրկութեանս Աստուածը.

Ես քեզի կը սպասեմ ամէն օր:

6 - Ով Տէր, քու գթութիւններդ ու ողորմութիւններդ յիշէ,

Վասն զի յաւիտենական են:

7 - Մանկութեան մեղքերս ու յանցանքներս մի յիշեր,

Հայր քու ողորմութիւնովդ զիս յիշէ՝
Քու բարութեանդ համար, ով Տէր:

8 - Տէրը բարի և ուղիղ է.

Անոր համար մեղաւորներուն կը սարվեցնէ ճամբան:

9 - Դաստատանի մէջ պիտի առաջնորդէ հեզերուն,

*Կամ, ով Յակօբ

- Ու իր ճամբան հեղերուն պիտի սորվեցնէ :
- 10 - Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն ու ճշմարտութիւն են իր ուխտը ու վկայութիւնները պահողներուն :
- 11 - Ով Տէր, քու անուանդ համար ներէ իմ անօրէնութիւնս, *վասն զի մեծ է :
- 12 - Ո՞վ է այն մարդը որ Տէրոջմէն կը վախնայ .
- Ահա անոր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան :
- 13 - Անոր անձը բարութեան մէջ պիտի բնակի,
- Ու անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ :
- 14 - Տէրոջը ընտանութիւնը իրմէ վախցողներուն հետ է,
- Ու իր ուխտը անոնց կը սորվեցնէ :
- 15 - Իմ աչքերս ամէն առեւ Տէրոջը իջեալն,
- Վասն զի իմ ոտքերս որդայթէն ան պիտի հանէ :
- 16 - Ինձի դարձիր ու ողորմէ ինձի, Վասն զի մինակ ու վշտացած եմ :
- 17 - Սրտիս նեղութիւնները շատցան. իմ վիշտերէս զիս հանէ :
- 18 - Իմ նեղութեանս ու սառւապանքիս նայէ ,
- Ու բոլոր մեղքերս ներէ :
- 19 - Տես իմ թշնամիներս , վասն զի շատցան ,
- Ու անիրաւ տաեւութիւնով զիս տաեցին :
- 20 - Պահէ իմ անձս ու փրկէ զիս. Թող չամչնամ, վասն զի քեզի յուսացայ :
- 21 - Կատարելութիւնը և ուղղութիւնը զիս թող պահեն ,
- Վասն զի քեզի սպասեցի :
- 22 - Ով Աստուած, փրկէ Իսրայէլը իր ամէն նեղութիւններէն :

ՍԱՂՄ. ԻԶ

Սաղմոս Գաւթի :

Ով Տէր, զիս դատէ ,
 Վասն զի իմ անարատութիւնովս քալեցի .
 Տէրոջը յուսացայ, պիտի չսասանիմ :

*Կա՛մ. թէ և

- 2 - Ով Տէր, զիս փորձէ ու քննէ, Փորձէ իմ երկամուկներս ու սիրտս :
- 3 - Վասն զի քու ողորմութիւնդ իմ աչքերուս առջև է ,
- Ու քու ճշմարտութեանդ մէջ քալեցի :
- 4 - Ունայն մարդոց հետ չնստայ, Ու կեղծաւորներուն հետ պիտի չխառնուիմ :
- 5 - Չարերուն ժողովքը ստեցի, Ու ամբարիշտներուն հետ պիտի չնրստիմ :
- 6 - Անմեղութիւնով ձեռքերս պիտի լուամ ,
- Եւ քու սեղանիդ չորս կողմը պիտի պարտիմ, ով Տէր :
- 7 - Որպէս զի շնորհակալութեան ձայնը լսել տամ ,
- Ու քու ամէն սքանչելիքներդ պատմեմ :
- 8 - Ով Տէր , սիրեցի քու տանդ բնակութիւնը ,
- Եւ քու փառքիդ կեցած տեղը :
- 9 - Մի կորսնցներ իմ անձս մեղաւորներուն հետ ,
- Ու իմ կեանքս՝ արիւնահեղ մարդոցը հետ ,
- 10 - Որոնց ձեռքերուն մէջ անօրէնութիւն կայ ,
- Ու անոնց աջ ձեռքը կաշառքով լեցուն է :
- 11 - Բայց ես իմ անարատութիւնովս պիտի քալեմ .
- Զիս փրկէ ու ինձի ողորմէ :
- 12 - Իմ ոտքս շիտակութեան մէջ կը կենայ .
- Ժողովքներուն մէջ Տէրը պիտի օրհնեմ :

ՍԱՂՄ. ԻԷ

Սաղմոս Գաւթի :

Տէրը իմ լոյսս ու փրկութիւնս է ,
 Ես որմէ՞ պիտի վախնամ .
 Տէրը իմ կեանքիս ապաւէնն է ,
 Ես որմէ՞ պիտի դողամ :
 2 - Չարերուն իմ մարմինս ուտելու համար ինձի մօտեցած տաեմը՝
 իմ նեղիչներս ու թշնամիներս սասեցան ու ինկան :
 3 - Եթէ վրաս զօրքի բանակ ելլէ ,
 Սիրտս պիտի չվախնայ .
 Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ ,

Անով ալ ես վրասո՛հ պիտի ըլլամ :

4 - Բան մը կը խնդրեմ՝ Տէրոջմէն,
 Ու ասիկա կ'աղաչեմ՝,
 Որ կեանքիս բոլոր օրերը
 Տէրոջը տանը մէջ բնակիմ՝
 Տէրոջը վայելչութիւնը տեսնելու,
 Ու անոր տաճարին մէջ զիս խնդրելու
 համար :

5 - Վասն զի չար օրուան մէջ՝
 Իր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,
 Իր վրանին ծածկութեամբ զիս պիտի
 ծածկէ .

Վէմի վրայ պիտի վերցնէ զիս :

6 - Ու հիմա իմ գլուխս պիտի բարձ-
 րանայ
 Իմ բոլորտիքս եղող թշնամիներուս
 վրայ .

Ու անոր վրանին մէջ ուրախութեան
 ձայնով զո՛հեր պիտի մատուցա-
 նեմ .

Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ
 Տէրոջը :

7 - Ով Տէր, ձայնս լսէ կանչելու ա-
 տենս ,

Ու ողորմէ և պատասխան տուր ինծի :

8 - Իմ՝ երեսօ փնտուեցէք՝ ո՞ր ընդ,
 Իմ սիրտս քեզի ըսու, Քու երեսօդ
 պիտի փնտուեմ, ով Տէր :

9 - Քու երեսօդ ինծմէ մի ծածկեր,
 Բարկութիւնով ծառայ մէկդի մի
 ձգեր .

Ինծի օգնական եղար, զիս մի մերժեր,
 Եւ զիս մի թողուր, ով իմ փրկու-
 թեանս Աստուածը :

10 - Թէև հայրս ու մայրս զիս թո-
 ղուն,
 Բայց Տէրը զիս պիտի ընդունի :

11 - Ով Տէր, քու ճամբադ ինծի սոր-
 վեցուր,
 Ու շիտակ ճամբուն մէջ ինծի առաջ-
 նորդէ թշնամիներուս համար :

12 - Ձիս իմ թշնամիներուս կամքին
 մի մտաներ,
 Վասն զի իմ վրաս տուտ վկաներ
 Ու անիրաւութիւն փշոզներ ելան :

13 - Հաւատացի Տէրոջը բարութիւնը
 տեսնելու
 Կենդանիներուն երկրին մէջ :

14 - Տէրոջը սպասէ .
 Զօրացիր ու սիրտդ թող զօրանայ .
 Ալ Տէրոջը սպասէ :

ՍՍՂՄ. ԻԸ

Սաղմոս Գաւթի :

Ով Տէր, քեզի կը կանչեմ .
 Ով իմ Վէմս, մի լուր ինծի .
 Զըլլայ որ ինծի լուրովդ
 *Գերեզմանը իջնողներուն նմանիմ :

2 - Լսէ իմ խնդրուածքիս ձայնը
 Երբ քեզի կ'աղաչեմ,
 Երբ իմ ձեռքերս կը վերցնեմ .
 Գէպ ի քու սուրբ դարբերդ :

3 - Ձիս մի շարունակներ ամբարիշտնե-
 րուն հետ,
 Ու անօրէնութիւն գործողներուն հետ,
 Արոնք իրենց ընկերներուն հետ խաղա-
 ղութիւն կը խօսին,
 Բայց սրտերնուն մէջ չարութիւն կայ :

4 - Տուր անոնց իրենց գործերուն պէս,
 Ու իրենց ըրածներուն չարութեանը
 պէս .
 Իրենց ձեռքերուն գործերուն պէս
 տուր անոնց,
 Հատուցում ըրէ անոնց :

5 - Արովհետև անոնք Տէրոջը ըրածնե-
 րուն
 Ու անոր ձեռքերուն գործերուն մտադ-
 րութիւն չեն ըներ,
 Պիտի կործանէ զանոնք, ու ալ պիտի
 չչինէ :

6 - Օրհնեալ ըլլայ Տէրը,
 Որ լսեց իմ աղօթքիս ձայնը :

7 - Տէրը իմ զօրութիւնս ու իմ սա-
 պարս է .
 Իմ սիրտս անոր յուսացաւ, ու ես օգ-
 նութիւն գտայ .

Ուստի սիրտս ուրախացաւ,
 Եւ ես իմ երգովս զանիկա պիտի գովեմ :

8 - Տէրը անոնց ոյժն է,
 Ու իր օժեպին փրկութեանը պա-
 րիսպն է :

9 - Փրկէ քու ժողովուրդդ,
 Ու օրհնէ քու ժառանգութիւնդ .
 Նսեալ հովուէ զանոնք ու յաւիտեան
 բարձրացուր :

ՍՍՂՄ. ԻԹ

Սաղմոս Գաւթի :

Տէրոջը տուէք, ով թշուարաց որ-
 դիներ,

*ԵՔԵ. Գուրը +ԵՔԵ. քաշեր
‡Կ-Ճ, Աստուծոյ

- Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն :
- 2 - Տէրոջը տուէք իր անուան փառքը,
- Տէրոջը երկրպագութիւն ըրէք սրբութեան զարդարանքով :
- 3 - Տէրոջը ձայնը ջուրերուն վրայ է. Փառաց Աստուածը կ'որոտայ,
- Տէրը շատ ջուրերուն վրայ է :
- 4 - Տէրոջը ձայնը ուժով է,
- Տէրոջը ձայնը վեհափառութիւնով է :
- 5 - Տէրոջը ձայնը եղեւինները կը կտարէ ,
- Ու Տէրը կը կտարտէ Լիբանանի եղևինները .
- 6 - Զաննիք կը ցաթկեցնէ որթու պէս, Լիբանանը ու Սարիօնը միեղջերուներու ձագին պէս .
- 7 - Տէրոջը ձայնը կրակին բոցերը կը ձեղքէ :
- 8 - Տէրոջը ձայնը կը դողացնէ անապատը ,
- Տէրը կառէսի անապատը կը դողացնէ :
- 9 - Տէրոջը ձայնը եղևիկները կը ծնեցընէ ,
- Ու անասունները կը մերկացնէ .
- Անոր տաճարին մէջ ամէնն ալ կը խօսին անոր փառքը :
- 10 - Տէրը ջրհեղեղին վրայ կը նստի, Տէրը յաւիտեան թագաւոր կը նստի :
- 11 - Տէրը իր ժողովուրդին զօրութիւն պիտի տայ,
- Տէրը իր ժողովուրդը խաղաղութիւնով պիտի օրհնէ :

ՍՍՂՄ. Լ

- Սաղմոս Դաւթի. տանը նաւակատեաց երգը :
- Ով Տէր , կը բարձրացնեմ քեզ , վասն զի զիս ազատեցիր ,
- Ու թշնամիներս իմ վրաս չուրախացուցիր :
- 2 - Ով իմ Տէր Աստուածս , քեզի կանչեցի ,
- Ու զիս բժշկեցիր :
- 3 - Ով Տէր , իմ անձս գերեզմանէն * հանեցիր ,
- Գուրը իջնողներուն մէջէն զիս ապրեցուցիր :
- 4 - Սաղմոս երգեցէք Տէրոջը , ով անոր սուրբերը ,
- Ու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք :

ԵՔԵ. վեր հանեցիր

- 5 - Վասն զի մէկ բազէ իր բարկութեանը մէջ է ,
- Բայց իր հաճութեանը մէջ է զէր Բաշը կեանքին տաենը .
- Իրիկունը լաց կայ ,
- Բայց առտուն ուրախութիւն :
- 6 - Ես իմ յաջողութեանս մէջ ըսի թէ Յաւիտեան պիտի չսասանիմ :
- 7 - Ով Տէր , քու հաճութիւնովդ իմ լեռս հաստատուն ըրիր .
- Լրեազ ծածկեցիր , «- ես խուսկեցայ :
- 8 - Ով Տէր , քեզի կը կանչեմ ,
- Ու Տէրոջը աղաչանք կ'ընեմ :
- 9 - Իմ արիւնէս ի՞նչ օգուտ կ'ըլլայ եթէ ես գուրը իջնեմ .
- Միթէ հոյր քեզ պիտի գովէ՞ ,
- Կա՞մ անիկա պիտի պատմէ՞ քու ճշմարտութիւնդ :
- 10 - Լսէ , ով Տէր , ու ողորմէ ինձի .
- Ով Տէր , ինձի օգնական եղիր :
- 11 - Իմ սուգս պարի փոխեցիր ,
- *Քուրձս ինձմէ հանեցիր ,
- Եւ ինձի ուրախութիւն հազցուցիր .
- 12 - Որպէս զի է՞ փառքս սաղմոս երգէ քեզի ու ալ չյուէ :
- Ով իմ Տէր Աստուածս , յաւիտեան քեզ պիտի գովեմ :

ՍՍՂՄ. ԼԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի :

- Ով Տէր , քեզի յուսացայ ,
- Յաւիտեան չամչնամ .
- *Քու արդարութիւնովդ զիս ազատէ .
- 2 - Քու ականջդ ինձի խնարհեցուր ,
- Շուտով զիս ազատէ ,
- Ինձի ամբութեան վէճ՝ մը եղիր ,
- Ե- զիս ապրեցնելու համար ապաստանի տուն մը :
- 3- Վասն զի իմ վէճն ու բերգս դուն ես ,
- Եւ քու անուանդ համար ինձի առաջնորդէ ու զիս կառավարէ :
- 4 - Որոգայթէն զիս հանէ , զոր ինձի համար գաղտուկ լարեր են ,
- Վասն զի իմ զօրութիւնս դուն ես :
- 5 - Իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ .
- Ով Եհովա Աստուած ճշմարտութեան , դուն զիս փրկեցիր :
- 6 - Մնտի ունայնութիւններ պահողները տոեցի .
- Բայց ես Տէրոջը յուսացայ :
- 7 - Քու ողորմութիւնովդ պիտի ցնծամ և ուրախ ըլլամ .

Վասն զի իմ թշուառութիւնս ատար ,
 11 - իմ անձս ատուապանքներու մէջ գիտցար .
 8 - Եւ զիս թշնամիին ձեռքը չմատնեցիր ,
 Հոգի իմ ոտքերս լայնարձակ տեղ մը կանգնեցուցիր :
 9 - Ով Տէր , ողորմէ ինձի , վասն զի նեղութեան մէջ եմ .
 Սրտնեղութենէ մտչեցաւ իմ աչքս , իմ անձս ու իմ փորս :
 10 - Վասն զի իմ կեանքս տրամուծեցէ՛ :
 Աւ տարիներս հառաչանք ընելէ սպառեցան .
 Իմ ոյժս թշուառութենէս տկարացաւ ,
 Ասկորներս ալ մաշեցան :
 11 - Իմ բոլոր թշնամիներուս , մանաւանդ գրացիներուս , առջև նախատինք եղայ ,
 Աւ իմ ծանօթներուս երկիւղ եղայ .
 Զիս դուրսը տեսնողները ինձմէ կը փախչէին :
 12 - Մեռածի պէս սրտէ մուցուած եղայ ,
 Կորսուած ամանի նմանեցայ :
 13 - Վասն զի շատերու բամբասանքը լսեցի .
 Զորս կողմն վախ կար .
 Երբ անոնք ինձի համար մէկտեղ ժողովուեցան ,
 Խորհուրդ կ'ընէին որ հոգիս առնեն :
 14 - Բայց ես քեզի յուսացայ , ով Տէր .
 Ըսի թէ Գուսն ես իմ Աստուածս .
 15 - Իմ ժամանակներս քու ձեռքդ են .
 Փրկէ զիս թշնամիներուս ձեռքէն ու զիս հալածողներէն :
 16 - Քու ծառայիդ վրայ երեսդ փայլեցուր ,
 Քու ողորմութիւնովդ զիս փրկէ :
 17 - Ով Տէր , չամչնամ ,
 Վասն զի քեզի կանչեցի .
 Ամբարիշտները թող ամչնան ,
 Ա - գերեզմանին մէջ թող լուռ կենան :
 18 - Թող պապանձին պտախօս շրթութունքները ,
 Արոնք հպարտութեամբ և նախատինքով
 Ամբարտաւանութիւն կը խօսին արդարին դէմ :

19 - Ո՛րչափ մեծ է քու բարութիւնդ՝
 Զոր քեզմէ վախցողներուն համար պահեցիր ,
 Ա - քեզի յուսացողներուն համար ըրիր Մարդոց սրդիներուն առջև :
 20 - Զանոնք քու երեսդ ծածկոյթովը պիտի ծածկես
 Մարդոց դաւաճանութիւններէն .
 Խորանի մէջ պիտի ծածկես զանոնք Լեզուներուն հակառակութենէն :
 21 - Օրհնեալ ըլլայ Տէրը ,
 Վասն զի իր ողորմութիւնը զարմանալի բրաւ ինձի
 Պարսպաւոր քաղաքի մէջ :
 22 - Իմ շիտթութեանս մէջ ըսի թէ Կտրուեցայ ես քու աչքերուդ առջևէն .
 Սակայն դուն իմ աղօթքիս ձայնը լսեցիր
 Երբ քեզի աղաղակեցի :
 23 - Տէրը սիրեցէք , ով անոր բոլոր սուրբերը ,
 Վասն զի Տէրը հաւատացեալները կը պահէ ,
 Աւ ամբարտաւանութիւն ընողներուն առատօրէն հատուցում կ'ընէ :
 24 - Կարիճ եղէք ու ձեր սիրտը թող զօրանայ ,
 Գուք ամէնդ որ Տէրոջը կը յուսաք :

ՍԱՂՄ. ԼԻԲ

Գաւթի Երգը :

Երանի՛ անոր՝ որուն յանցանքներուն թողութիւն եղաւ ,
 Ա - անոր մեղքերը ծածկուեցան :
 2 - Երանի՛ այն մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չսեպեր անոր ,
 Աւ անոր հոգիին մէջ նենգութիւն չկայ :
 3 - Երբ լուռ կեցայ , սակորներս մաշեցան
 Իմ ամէն օր աղաղակելովս .
 4 - Վասն զի ցորեկ ու գիշեր քու ձեռքդ իմ վրաս ծանրացաւ .
 Իմ թացութիւնս ամառուան չորութեան դարձաւ : (Աէլա :)
 5 - Իմ մեղքս քեզի յայանեցի ,
 Աւ իմ անօրէնութիւնս չծածկեցի .
 Ըսի թէ Տէրոջը պիտի խոստովանիմ յանցանքներս .

*Կա՛մ , իմաստութեան սողմնոր

- Ու դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը : (Սէլուստիոս)
- 6 - Ասոր համար ամէն աստուածապաշտ աղօթք պիտի ընէ քեզի Քու գանուելու ժամանակդ . Արդարեւ շատ ջուրերուն հեղեղներուն տանը
- Անոր պիտի չմօտենան :
- 7 - Իսկ ես իմ ապաստանարանս . Նեղութենէ զիս պիտի պահես . Իսկ զիս պիտի պատես ազատութեան երգերով : (Սէլուստիոս)
- 8 - Բեզի պիտի սորվեցնեմ՝, ու երթալու ճամբադ պիտի ցուցնեմ՝ քեզի . *Բեզ պիտի խրատեմ՝, իմ աչքս քու վրագ պիտի ըլլայ :
- 9 - Ձիու պէս * - ջորիի պէս մի ըլլաք , *բան* միաք չունին ,
- Ու իրենց սանձին ու պախուրցին զարդովը կապելու է , որպէս զի քեզի չմօտենան :
- 10 - Ամբարշտին տանջանքները շատ պիտի ըլլան ,
- Սակայն Տէրոջը յուսացողին չորս կողմը ողորմութիւնը պիտի պատէ :
- 11 - Ով արդարներ , Տէրոջմով ուրախ եղէք ու ցնծացէք ,
- Յնծութեամբ երգեցէք դուք ամէնդ՝ որ սրտով ու զիղ էք :

ԱՍՂՄ. ԼԳ

- Ով արդարներ , Տէրոջմով ցնծացէք .
- Ու զիղներուն կը վայլէ օրհնութիւն երգել :
- 2 - Գովեցէք Տէրը քնարով , Տասը լար ունեցող տաւիղով սողմոս երգեցէք անոր :
- 3 - Նոր երգ մը երգեցէք անոր , Վարպետութեամբ նստաբանները զարկէք ցնծութեան ձայնով :
- 4 - Վասն զի Տէրոջը խօսքը շիտակ է , Ու անոր բոլոր գործերը ճշմարտութեամբ են :
- 5 - Անկա արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ .
- Տէրոջը ողորմութիւնովը երկիր լեցուն է :
- 6 - Տէրոջը խօսքովը երկինք ստեղծուցաւ ,

*Կա՛, խորհուրդ պիտի ընեմ՝ +եզի համար

- Ու իր բերնին հոգիովը՝ անոր բոլոր զօրքը :
- 7 - Ծովուն ջուրերը *գեզի մը պէս՝ կը ժողվէ ,
- Անդունդները շտեմարաններուն մէջ կը դնէ :
- 8 - Բոլոր երկիր թող Տէրոջմէն վախնայ , Ու անկէ դողան աշխարհի բոլոր բնակիչները :
- 9 - Վասն զի անկա ըսաւ , ու եղաւ . Ինք հրամայեց , ու հաստատուեցաւ :
- 10 - Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խորհուրդները ,
- Փուճ կը հանէ ժողովուրդներուն դիտաւորութիւնները :
- 11 - Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը մնայ ,
- Ու անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչև ազգ :
- 12 - Երանի՛ այն ազգին՝ որուն Աստուածը Տէրն է ,
- Ու այն ժողովուրդին՝ զոր իրեն ժառանգութեան համար ընտրեց :
- 13 - Տէրը երկինքէն կը նայի ,
- Բոլոր մարդոց օրգիները կը տեսնէ :
- 14 - Իր բնակութեանը տեղէն
- Աշխարհի բոլոր բնակիչները կը դիտէ :
- 15 - Անոնց սիրտերը հաւասարապէս ինք ստեղծեց ,
- Անոնց բոլոր ըրածները կ'իմանայ :
- 16 - Թագաւոր մը զօրքի շատութիւնով չազատիր .
- Ոչ ալ զօրաւոր մարդ մը ուժի շատութիւնով կը փրկուի :
- 17 - Ձին ազատութեան համար պարտաբան է ,
- Ու իր ուժին շատութիւնովը չկրնար ազատել :
- 18 - Ահա Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն
- Ու իր ողորմութեանը յուսացողներուն վրայ է ,
- 19 - Անոնց անձը մահուանէ փրկելու Եւ սովի ժամանակ զանոնք ապրեցնելու համար :
- 20 - Մեր անձը Տէրոջը կ'սպասէ . Մեր օգնութիւնը ու մեր վահանը անկա է :
- 21 - Վասն զի մեր սիրտերը անով կ'ուրախանան ,
- *Կանգի անոր սուրբ անուանը յուսացանք :

*Կա՛, որպէս թէ տիկի մը մէջ

22 - Ով Տէր, քու ողորմութիւնդ մեր վրայ ըլլայ, Ինչպէս քեզի կը յուսանք :

ՍՍՂՄ. ԼԴ

Սուգոս Դաւթի, այն ատեն որ Սերմելէքի առջեւ յիմար ձեւացաւ, ան ալ դուրս ըրաւ զանիկա որ գնաց:

Ամէն ժամանակ Տէրը պիտի գովեմ: Անոր գովութիւնը միշտ իմ բերանս պիտի ըլլայ:

2 - Իմ անձս Տէրոջմով պիտի պարծի. Խոնարհները պիտի լսեն և ուրախ ըլլան:

3 - Ինծի հետ Տէրը մեծցուցէք, Աւեկատեղ բարձրացնենք անոր անունը:

4 - Տէրը ինգրեցի, ու ինծի պատասխան տուաւ,

Եւ իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց:

5 - Անոր նայեցան ու լոյս առին, Եւ անոնց երեսները չամչցան:

6 - Այս աղքատը աղաղակեց, ու Տէրը լսեց անոր,

Եւ զանիկա իր բոլոր նեղութիւններէն փրկեց:

7 - Տէրոջը հրեշտակը իր բանակը անկէ վախցողներուն չորս կողմը կը դնէ,

Աւ զանոնք կ'ազատէ:

8 - Ճաշակեցէք ու տեսէք որ Տէրը բարի է.

Երանի՛ այն մարդուն որ անոր կը յուսայ:

9 - Տէրոջմէ վախցէք, ով անոր սուրբերը,

Վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլար:

10 - Առիւծի կորիւնները չքաւորութիւն ու անօթութիւն կը կրեն,

Սակայն Տէրը փնտռողներուն բարութիւն մը պակաս պիտի չըլլայ:

11 - Եկէք, որդիք, մտիկ ըրէք ինծի, Տէրոջը վախը ձեզի սորվեցնեմ:

12 - Ով է այն մարդը որ ապրիլ կ'ուզէ,

Ու շոք օրեր կը սիրէ՝ բարութիւն տեսնելու համար:

13 - Քու լեզուդ չարութենէ պահէ,

Աւ շրթունքներդ՝ նենգութիւն խօսելէ: 14 - Զարութենէ հեւացիր ու բարութիւն ըրէ,

Խաղաղութիւն փնտռէ ու անոր ետեւէն գնա:

15 - Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են,

Աւ անոր ականջները՝ անոնց աղաղակին:

16 - Տէրոջը երեսը չարագործներուն դէմ է,

Անոնց յիշատակը երկրէ բնաջինջ ընելու համար:

17 - Արդարեւ կ'աղաղակեն, ու Տէրը կը լսէ,

Աւ իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք:

18 - Տէրը մտա է անոնց՝ որոնց սիրտը կտարած է,

Աւ հոգիով խոնարհածները կ'ապրեցընէ:

19 - Արդարին նեղութիւնները շատ են, Բայց Տէրը ամէնէն կը փրկէ զանիկա:

20 - Անոր բոլոր սոկորները կը պահէ, Անոնցմէ մէկը չկտարուիր:

21 - Զարութիւնը ամբարիշտը պիտի մեռցնէ,

Աւ արդարը տառոյները պիտի դատապարտուին:

22 - Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ,

Եւ իրեն յուսացողներէն բնաւ մէկը պիտի չդատապարտուի:

ՍՍՂՄ. ԼԵ

Սուգոս Դաւթի:

Ով Տէր, ինծի հետ հակառակողներուն հետ հակառակէ.

Ինծի հետ պատերազմողներուն հետ պատերազմէ:

2 - Ասպարը ու վահանը առ, Աւ ելիր ինծի օգնութիւն ընելու:

3 - Նաև նիզակը քաշէ, ու ճամբան գոցէ զիս հալածողներուն դէմ.

Ըսէ անձիս թէ Քու փրկութիւնդ ես եմ:

4 - Իմ անձս փնտռողները ամչնան ու խայտառակ ըլլան.

Եւ դառնան ու ամչնան Անոնք որ ինծի համար չարութիւն կը խորհին:

5 - Հովին առջև եղած մղեղին պէս ըլլան անոնք,

*Այսինքն, Անքուսի. տես ա թագ. իա. 40, 42. :

- Եւ Տէրոջը հրեշտակը փախցնէ զանոնք :
- 6 - Անոնց ճամբան խաւար ու սկրդեցընող ըլլայ,
- Եւ Տէրոջը հրեշտակը հալածէ զանոնք.
- 7 - Վասն զի զուր տեղը իրենց որոգայթը փոսի մէջ ինծի համար ծածկեցին,
- Ու զուր տեղը քան փորեցին անձիս համար :
- 8 - Թող անոր վրայ յանկարծ աւերում գայ,
- Եւ իր ծածկած որոգայթը զինք բռնէ. նայն աւերման մէջ իյնայ :
- 9 - Սակայն իմ անձս Տէրոջմով պիտի ցնծայ,
- Անոր փրկութիւնովը ուրախ պիտի ըլլայ :
- 10 - Իմ բոլոր սակորներս պիտի ըսեն, Տէր, ս՞ով քեզի նման է,
- Որ աղքատը կ'ազատես անկէ որ կը զօրանայ անոր վրայ,
- Ու աղքատը և անանկը՝ իր յափշտակողէն :
- 11 - Սուտ վկաներ ելան, Չգիտցածներս կը հարցնէին ինծի :
- 12 - Աղէկութեան փոխարէն ինծի գէշութիւն ըրին՝
- Կողոպտելով իմ անձս :
- 13 - Բայց ես անոնց հիւանդութեան տանք քուրձ կը հագնէի,
- Իմ անձս ծոմով կը չարչարէի,
- Ու իմ աղօթքս իմ ծոցս *պիտի դառնայ :
- 14 - Ինչպէս իմ ընկերիս կամ եղբորս հետ՝ այնպէս ալ անոնց հետ կը վարուէի,
- Իր մօրը համար սուգ ունեցողի մը պէս արամութեամբ կը ցածնայի :
- 15 - Բայց անանք իմ կողութեանս տանք խնդացին ու ժողովուեցան .
- Չարնողները իմ վրաս ժողովուեցան, ու ես քան իջ չէի գիտեր.
- Կը ճեղքէին զի՞ ու չէին դադարեր.
- 16 - Խնճոյքի կեղծաւոր խեղկատակներուն հետ
- Ակռաներնին իմ վրաս կը կրճատէին :
- 17 - Ով Տէր, մինչև ե՞րբ պիտի նստիս .
- Ազատէ իմ անձս անոնց աւերումներէն,
- Իմ †կեանքս՝ առիւծի կորիւններէն :

*Կամ, կը դառնար †Եբր. միամօրս

- 18 - Մեծ ժողովքի մէջ քեզ պիտի գովեմ,
- Շատ ժողովուրդի մէջ քեզ պիտի օրհնեմ :
- 19 - Չուր տեղը ինծի թշնամի եղողները թող իմ վրաս չինդան,
- Աւանց պատճառի զիս ատուները աչքով նշան թող չաան :
- 20 - Վասն զի խաղաղութիւն չեն խօսիր,
- Հապա երկրի մէջ հանդարաներուն դէմ նենգութիւն կը խորհին,
- 21 - Ու իրենց բերանը ինծի դէմ կը լայնցնեն՝ ըսելով,
- Վա՛ւ՛շ, վա՛ւ՛շ, մեր աչքերը տեսան :
- 22 - Ով Տէր, դուն տեսար, լուռ մի կենար.
- Ով Տէր, ինձմէ մի հեռանար :
- 23 - Արթնցիր, ով իմ Աստուածս ու Տէրս,
- Ու իմ դատաստանիս «- դատիս ելիր :
- 24 - Քու արդարութեանդ համեմատ իրաւունք ըրէ ինծի, ով իմ Տէր Աստուածս,
- Եւ իմ վրաս թող չինդան.
- 25 - Իրենց սրտին մէջ թող չըսեն թէ Ահա մեր կամքը եղաւ,
- Ու թող չըսեն թէ Կլեցինք զանիկա :
- 26 - Թող ամչնան ու մէկտեղ խայտառակ ըլլան
- Անոնք որ իմ չարիքիս վրայ կը խնդան. իմ վրաս հպարտացողները
- Ամօթ ու խայտառակութիւն հագնին :
- 27 - Թող ցնծան և ուրախանան
- Անոնք որ իմ արդարութիւնս կ'ուզեն,
- Ու միշտ թող ըսեն թէ Աստուած մեծանայ,
- Որ իր ծառային խաղաղութիւնը կ'ուզէ :
- 28 - Ու իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի,
- Ու ամէն օր քու գովութիւնդ :

ՍՍՂՄ. 19

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի, Տէրոջը ծառային :

Ամբարշտին չարութեանը վրայով սրտիս մէջի խօսքը այ՛ է .

- Աստուծոյ վախը չկայ անոր աչքերուն առջև :
- 2 - Վասն զի ինքզինք կը շողաբարթէ իր աչքերուն առջև՝

- Իր անօրէնութեանը գտնուելուն ու ատելի ըլլալուն վրայով :
- 3 - Անոր բերնին խօսքերը անօրէնութիւն ու նենգութիւն են .
- Բարին ընելու համար իմաստուն ըլլալը մէկգի ձգեց :
- 4 - Իր անկողինին մէջ անօրէնութիւն կը մտածէ ,
- Ու կը կենայ այնպիսի ճամբու մէջ որ աղէկ չէ ,
- Եւ չարէն չզգուի :
- 5 - Ով՛ Տէր , քու սղորմութիւնդ մինչև երկինք է՞ հասնի ,
- Ու քու ճշմարտութիւնդ՝ մինչև ամպերը :
- 6 - Քու արդարութիւնդ՝ հզօր լեռներու պէս է ,
- Քու իրաւունքդ մեծ անդունդ մըն է . Մարդիկը ու անասունները դուն կ'ապրեցնես , ով՛ Տէր :
- 7 - Ով՛ Աստուած , ի՞նչ գերազանց է քու գթութիւնդ ,
- Որ մարդոց որդիները քու թւերուդ հովանաւորութեանը կ'ապաւինին :
- 8 - Անոնք քու տանդ պարարտութենէն պիտի կշտանան ,
- Ու քու հաճութիւններուդ գետէն պիտի խմցնես անոնց :
- 9 - Վասն զի կեանքի աղբիւրը քու քովդ է .
- Քու լուսովդ լոյս պիտի տեսնենք :
- 10 - Քու գթութիւնդ քեզ ճանչցողներուն շարունակէ ,
- Ու քու արդարութիւնդ՝ որտով ուղիղներուն :
- 11 - Ամբարտաւանութեան ոտքը թող իմ՛ վրաս չգայ ,
- Ու չարերուն ձեռքը զիս չշարժէ :
- 12 - Հոն ինկան անօրէնութիւն գործողները .
- Գետինը զարնուեցան ու չկրցան վեր ելլել :

ՍԱՂՄ. ԼԷ

Սաղմոս Դաւթի :

- Չ**արերուն համար մի նեղանար ,
- Անօրէնութիւն գործողներուն մի նախանձիր .
- 2 - Վասն զի անոնք խտտի պէս շուտով պիտի կտրուին ,
- Ու կանանչ խտտի պէս պիտի չորնան :

- 3 - Տէրօջը յուսա ու բարութիւն ըրէ ,
- Երկրին վրայ բնակէ ու ճշմարտութեան մէջ արածուէ ,
- 4 - Ու Տէրօջմով ուրախացիր .
- Եւ անիկա կու տայ քեզի քու սրտիդ խնդրուածքները :
- 5 - Տէրօջը յանձնէ քու ճամբող ,
- Ու անոր՝ յուսա , և անիկա պիտի գտարէ ,
- 6 - Ու դուրս պիտի հանէ քու արգարութիւնդ լոյսի պէս ,
- Ու քու իրաւունքդ կէսօրուան պէս :
- 7 - Տէրօջը համբերէ ու անոր սպասէ ,
- Եւ մի նեղանար իր ճամբան յաջողութեամբ գացողին համար ,
- Ու խորէութիւն ընող մարդուն համար :
- 8 - Դագարէ բարկութենէ , ու սրդողիլը վերջ ըրէ .
- Մի նեղանար , որ չարութիւն ընես :
- 9 - Վասն զի չարագործները պիտի կտրուին ,
- Սակայն Տէրօջը համբերողները երկիրը պիտի ժառանգեն :
- 10 - Վասն զի քիչ ժամանակէ ետեւ ամբարիշտը պիտի չըլլայ ,
- Եւ անոր տեղը պիտի փնտուես , ու ինք պիտի չգանուի :
- 11 - Սակայն հեղերը պիտի ժառանգեն երկիրը ,
- Ու խաղաղութեան առատութիւնովը ուրախ պիտի ըլլան :
- 12 - Մեղաւորը արգարին գէմ՝ չար կը խորհի ,
- Ու անոր վրայ ակռաները կը կրճատէ :
- 13 - Տէրը ծաղր պիտի ընէ զանիկա ,
- Վասն զի անոր օրը հասնելու վրայ կը տեսնէ :
- 14 - Մեղաւորները թուր քաշեցին ,
- Ու աղէղնին լարեցին՝
- Աղքատը ու անանկը վար ձգելու համար ,
- *Շիտակ ճամբու մէջ քաղողները՝ սպաննելու համար :
- 15 - Անոնց թուրը երեսնց սիրտը պիտի մտնէ ,
- Ու անոնց աղեղները պիտի կտրտին :
- 16 - Արգարին քիչ բանը
- Շատ ամբարիշտներու առատ ստացուածքէն աղէկ է :
- 17 - Վասն զի ամբարիշտներուն բազուկները պիտի կտրուին ,
- *Եբբ. ճամբով շիտակ եղողները

- Բայց արգարներուն * ապաւէնը Տէրն է :
- 18 - Արգարներուն օրերը գիտէ Տէրը ,
Եւ անոնց ժառանգութիւնը յաւիտեանական պիտի ըլլայ .
- 19 - Փորձանքի ժամանակ պիտի չամրջնան ,
Ու սովի օրերը պիտի կշտանան :
- 20 - Բայց ամբարիշտները պիտի կորսուին ,
Ու Տէրոջը թշնամիները † գառնուկներու ճարպին՝ պէս պիտի սպաւին ,
Մուխի պէս պիտի սպաւին :
- 21 - Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարէր ,
Սակայն արգարը կ'ողորմի ու կու տայ :
- 22 - Վասն զի անոր օրհնածները պիտի ժառանգեն երկիրը ,
Բայց անկէ անիծուածները պիտի կորսուին :
- 23 - Բարէ մտաբանը քայլերը Տէրոջմէ կը հաստատուին ,
Ու Անիկա անոր ճամբուն կը հաւնի :
- 24 - Թէեւ իշնայ , պիտի չկործանի ,
Վասն զի Տէրը անոր ձեռքը կը բռնէ :
- 25 - Տղայ էի ու ծերացայ ,
Բայց արգարը անտես եղած չտեսայ ,
Կամ անոր զաւակը հոս մուրացող :
- 26 - Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ .
Եւ անոր սերունդը օրհնուած է :
- 27 - Չարութենէ ետ կեցիր ու բարութիւն ըրէ ,
Եւ յաւիտեան պիտի մնաս .
- 28 - Վասն զի Տէրը կը սիրէ իրաւունքը ,
Եւ իր սուրբերը երեսէ չձգեր .
Յաւիտեան կը պահուին անոնք .
Բայց ամբարիշտներուն սերունդը պիտի կորսուի :
- 29 - Արգարները պիտի ժառանգեն երկիրը ,
Ու յաւիտեան անոր վրայ պիտի բնակին :
- 30 - Արգարին բերանը իմաստութիւն կը խօսի ,
Ու անոր լեզուն իրաւունք կը զրուցէ :
- 31 - Իր Աստուծոյն օրէնքը իր սրտին մէջ է ,
Եւ անոր քայլերը պիտի չսահին :
- 32 - Մեղաւորը արգարը կը գիտէ ,
Եւ զանիկա մեռցնելու ետեւէ կ'իշնայ :

* Եբբ. նեցուկը
† Կա՛, պարարտ արօտի

- 33 - Տէրը անոր ձեռքը պիտի չձգէ զանիկա ,
Եւ անոր դատաստանը տեսնուած առան պիտի չդատապարտէ զանիկա :
- 34 - Տէրոջը համբերէ ու անոր ճամբան պահէ ,
Եւ անիկա քեզ կը բարձրացնէ որպէս զի երկիրը ժառանգես .
Ամբարիշտներուն սատակումը պիտի տեսնես :
- 35 - Ամբարիշտը զօրացած տեսայ ,
Ու իր տեղը կեցող կանանչ ծառի մը պէս տարածուած .
- 36 - Բայց ան անցաւ , ու ահա չկար .
Եւ զանիկա փնտռեցի , բայց չգտնուեցաւ :
- 37 - Արգարը նկատէ և ուղիղին նայէ .
Վասն զի խաղաղարար մարդը Բարէ վախճան պիտի ունենայ :
- 38 - Իսկ անօրէնները մէկտեղ պիտի կորսուին .
Ամբարիշտներուն վախճանը կորուստ պիտի ըլլայ :
- 39 - Բայց արգարներուն փրկութիւնը Տէրոջմէն է ,
Նեղութեան ժամանակ ինք անոնց ապաւէնն է :
- 40 - Ու Տէրը պիտի օգնէ անոնց և պիտի ազատէ զանոնք .
Ամբարիշտներէն պիտի ազատէ ,
Ու պիտի փրկէ զանոնք , վասն զի անոր կը յուսան :

ՍՍՂՄ. ԼԸ

Սաղմոս Դաւթի. յիշատակի համար :

- Ով Տէր , քու սրամտութիւնովդ զիս մի յանդիմաներ ,
Ու բարկութիւնովդ զիս մի խրատեր :
- 2 - Վասն զի քու նետերդ իմ ներսիդիս մխուեցան ,
Եւ քու ձեռքդ իմ վրաս կ'իջնէ :
- 3 - Իմ մտքս մէջ առողջութիւն չկայ քու բարկութեանդ համար ,
Ու ուկորներուս մէջ հանգստութիւն չկայ իմ մեղքիս համար :
- 4 - Վասն զի անօրէնութիւններս գլխէս վեր բարձրացան .
Ծանր բեռի պէս իմ վրաս ծանրացած են :

* Եբբ. ինծմէ

- 5 - Վէրքերս հոսեցան «- փտեցան
իմ յիմարութեանս պատճառաւ :
- 6 - Նուասասցայ «- խիստ ցածցայ .
Ամէն օր տրտում կը պարտիմ .
- 7 - Վասն զի աղիքներս ջերմութիւնով
լեցուեցան ,
Ու մարմնիս մէջ առողջութիւն չկայ :
- 8 - Տկարացայ ու խիստ ճնշուեցայ .
Սրտիս հեծութենէն մունչեցի :
- 9 - Ով Տէր , իմ ամէն բաղձանքս
քու առջևդ է ,
Ու իմ հեծութիւնս քեզմէ չծածկուե-
ցաւ :
- 10 - Սիրտս կը բաբախէ , ոյժս զիս թող
տուաւ ,
Ու իմ աչքերուս լոյսը՝ ան ալ ինծի
հեռ չէ :
- 11 - Սիրականներս ու բնկերներս իմ
չարչարանքէս հեռու կը կենան ,
Ազգականներս ալ հեռու կը կենան .
- 12 - Ու անձս փնտռողները ինչի որո-
գայթ կը լարեն ,
Ու ինծի չարիք ուզողները անօրէնու-
թիւն կը խօսին ,
Եւ ամէն օր նենգութիւն կը մտածեն :
- 13 - Սակայն ես խուլի պէս չեմ լսեր ,
Ու բերանը չբացող համրի մը պէս եմ :
- 14 - Եւ ես «Ինչի» մարդու մը պէս եմ՝
որ չլսեր ,
Ու հակառակ խօսք չկայ իր բերանը :
- 15 - Վասն զի , ով Տէր , ես քեզի կը
յուսամ .
Գուն պիտի պատասխանես , ով իմ
Տէր Աստուածս :
- 16 - Վասն զի ըսի , Թող չխնդան իմ
վրաս .
Ոտքիս սահած ժամանակը ինծի դէմ
դիբէն+ կը մեծցնեն :
- 17 - Վասն զի ես կող ըլլալու պատ-
րաստ եմ ,
Ու իմ ցաւս ամէն ստեն առջևս է :
- 18 - Վասն զի անօրէնութիւնս պիտի
պատմեմ ,
Ու մեղքիս համար հոգ պիտի ընեմ :
- 19 - Բայց թշնամիներս ողջ են , ու
ժողցան .
Զիս գուր տեղը ատողները շատցան .
- 20 - Ու աղէկութեան փոխարէն գե-
շութիւն ընողները
Ինծի դէմ կը կենան , վասն զի ես ա-
ղէկութեան ետեւ կ'երթամ :
- 21 - Զիս մի թողուր , ով Տէր ,
Ով իմ Աստուածս , ինծմէ մի հեռա-
նար :

- 22 - Ինծի օգնութիւն ընելու արտոր-
ցիր ,
Ով Տէր , իմ փրկութիւնս :

ՍԱՂԱՄ. ԼԹ

Գլխաւոր երաժշտին Իզիթուհի . Սաղմոս
Գաւթի :

- Ըսի թէ ճամբաներուս զգուշու-
թիւն ընեմ ,
Որպէս զի լեզուովս մեղք չգործեմ .
Բերանս սանձով պահեմ .
Ամբարիշտին իմ առջևս եղած ապենը :
- 2 - Մունջ եղայ լուսութիւնով ,
Աղէկութեան վրայով ալ լուեցի ,
Ու ցաւս շարժեցաւ :
- 3 - Սիրտս բորբոքեցաւ ներսիդիս ,
*Զերմութեանս մէջ կրակ վտռեցաւ .
Այն «Ինչ» լեզուովս խօսեցայ :
- 4 - Յուցուր ինծի , ով Տէր , իմ
վերջս ,
Եւ օրերուս չափը ո՛րչափ է ,
Որչե՞ս զի դիանամ թէ ի՞նչպէս անցա-
ւոր եմ :
- 5 - Ահա իմ օրերս թիզերու շտէ գրիր ,
Ու իմ կեանքս ոչնչի պէս է քու առ-
ջևդ .
Իրաւ ամէն մարդ թե՛ս հաստատուած
ըլլայ ,
Բայց բոլորովին ունայնութիւն է :
(Սէլաս) :
- 6 - Արդարեւ մարդը ստուերի մը պէս
կը պարտի .
Արդարեւ փուճ տեղը անհանգիստ կ'ըլ-
լայ .
Կը դիզէ բայց չգիտեր թէ ո՛վ պիտի
առնէ զանոնք :
- 7 - Ու հիմա ի՞նչ բանի սպասեմ ,
ով Տէր .
Իմ յոյսս քեզի է .
- 8 - Փրկէ զիս իմ բոլոր յանցանքներէս ,
Զիս յիմարներուն նախատինք ըլլալու
մի դներ :
- 9 - Մունջ եղայ ու բերանս չբացի ,
Վասն զի դուն ըրիր :
- 10 - Քու հարուածդ հեռացուր ինծմէ .
Զեռքիդ զարնելովը ես կորսուեցայ :
- 11 - Անօրէնութեան համար յանդի-
մանութիւններով կը խրատես
մարդը ,
Յեցի մը պէս կը հայեցնես անոր ցան-
կալի բաները .

*Կա՛մ, Մտածութեանս

Իրաւ ամէն մարդ ունայնութիւն է :
(Սէլա)
12 - Ով Տէր, լսէ իմ աղօթքս, ու ա-
կանջ գիր աղաղակիս .
Արցունքներուս մի լսէր .
Վասն զի քու առջևդ պանդուխտ մըն
եմ ես,
Հիւր մը՝ իմ բոլոր նախնիքներուս պէս :
13 - Թողտուութիւն ըրէ ինծի որ
զուարթանամ ,
Քանի որ չեմ գացեր «յն Դեղ» որ ալ
պիտի չգտնուիմ :

ՍՍՂՄ. Խ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի :

Սպատելով սպասեցի Տէրոջը ,
Ու ծնեցաւ ինծի ու լսեց իմ աղա-
ղակս .
2 - Եւ զիս կորստեան փոսէն, աղմուխ
կուէն, հանեց,
Ու սաքերս վէժի վրայ ամուրցուց «-
քալուածքս հաստատեց .
3 - Ու բերանս դրաւ նոր երգ մը ,
Մեր Աստուծոյն գովութիւնը :
Շատերը պիտի տեսնեն ու պիտի վախ-
նան ,
Ու Տէրոջը պիտի յուսան :
4 - Երանի՛ այն մարդուն՝ որ իր յոյսը
Տէրոջը վրայ կը դնէ ,
Ու չնայի՛ր հպարտներուն ու ստութեան
գարձողներուն :
5 - Շատ են սքանչելիքներդ զորոնք
դուն ըրեր ես,
Ով իմ Տէր Աստուածս,
Ու մեր վրայ ունեցած խորհուրդներդ
Մէ՛կը չկրնար կարգաւ պատմել քու
առջևդ .
Պիտի պատմէի ու խօսէի,
Բայց համբանքէն աւելի շատ են :
6 - Զոհի ու ընծայի չհաւնեցար,
Հապա իմ ախանջներս բացիր .
Ողջակէզ ու մեղքի պատարագ չպա-
հանջեցիր :
7 - Այն ժամանակ ըսի թէ Ահա կու
գամ ես .
Գիրքի տամի մէջ ինծի համար գըր-
ուած է ,
8 - Ով իմ Աստուածս, քու կամքդ
կատարելու փափաքեցայ,
Ու քու օրէնքդ իմ ներսիդիս է :
9 - Արդարութիւն քարոզեցի շատուոր
ժողովքի մէջ .

Ահա շրթ ունքներս չարգիլեցի .
Ով Տէր, դուն գիտես :
10 - Արտիս՝ մէջ գաղտուկ չպահեցի
քու արդարութիւնդ ,
Հաւատարմութիւնդ ու փրկութիւնդ
պատմեցի .
Քու ողորմութիւնդ ու ճշմարտու-
թիւնդ շատուոր ժողովքէն
չժած կեցի :
11 - Դուն, ով Տէր, քու գթութիւնդ
եւ մի պահեր ինծմէ .
Քու ողորմութիւնդ ու ճշմարտու-
թիւնդ ամէն ժամանակ պաշտ-
պանեն զիս :
12 - Վասն զի անթիւ չարիքներ զիս
պատեցին .
Անօրէնութիւններս ինծի հասան , ու
եւ չեմ կրնար տեսնել .
Գլխուս մազէն շատ են, ու սիրտս զիս
թողուց :
13 - Ով Տէր, զիս փրկելու կամք ըրէ .
Ով Տէր, ինծի օգնելու արտորցիր :
14 - Թող ամչնան ու մէկտեղ խայ-
տառակ ըլլան
Իմ անձս փնտռողները՝ զանիկա կոր-
սընցնելու համար .
Ետ դառնան ու ամօթով ըլլան
Ինծի չարութիւն ու զոռները :
15 - Թող *ամչնալով կործանին
Անոնք որ ինծի Վա՛շ վա՛շ կ'ըսեն :
16 - Ամէն քեզ փնտռողները
Քեզմով թող ցնծան և ուրախա-
նան .
Քու փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող ըսեն, Տէրը մե-
ծանայ :
17 - Բայց ես աղքատ ու տնտնկ եմ,
Սա՛յն Տէրը հոգ կը տանի ինծի .
Իմ օգնականս ու փրկիչս դուն ես,
Ով իմ Աստուածս, մի ուշանար :

ՍՍՂՄ. ԽԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի :

Երանի՛ անոր որ աղքատին հոգ կը
տանի .
Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զա-
նիկա :
2 - Տէրը պիտի պահէ ու ապրեցնէ զա-
նիկա ,
Երանելի պիտի ըլլայ երկրի վրայ .

*կա՛յ, իրենց ամօթին պատճառաւ

- Ու թ շնամիներուն կամքին պիտի չմատնես զանիկա,
- 3 - Տէրը անոր դժ պիտի տայ տկարութեան անկողինին մէջ .
- Անոր ամէն անկողինը պիտի դարձնես անոր չիւանդութեան տաճար :
- 4 - Ես ըսի, Ով Տէր, ողորմէ ինծի, Բժշկէ իմ անձս, վասն զի ես քեզի դէմ մեղանչեցի :
- 5 - Թ շնամիներս գէշ կը խօսին իմ վրայս :
- Ը՛հեւ թէ Ե՞րբ պիտի մեռնի ու անունը կորսուի :
- 6 - Եթէ Գեղ Ինչի գալու ըլլայ տեսներու համար, ունայնութիւն կը խօսի .
- Իր սիրտը անօրէնութիւն կը ժողվէ իրեն համար,
- Որպէ՞ս զի դուրս ելլելով զրուցէ :
- 7 - Ինծի դէմ մէկտեղ կը փոփսան ամէն զիս տառաջները,
- Իմ վրայս չարութիւն կը խորհին .
- 8 - Կ՛ըսէ թէ Չարութեան բան մը անոր վրայ թափեցաւ .
- Ու հի՛մ որ պառկած է, ալ պիտի չելլէ :
- 9 - Մինչև անգամ իմ բարեկամս որու ապաւինեք էի, իմ հացս ուտողը, ինծի դէմ կրունկ վերցուց :
- 10 - Սակայն, ով Տէր, դուն ողորմէ ինծի ու կանգնեցուր զիս,
- Ու ես փոխարէնը տամ անոնց :
- 11 - Ասկէ դիտեմ որ ինծի կը հաւնիս, Որ թ շնամիս իմ վրաս չպարծենար :
- 12 - Եւ զիս իմ անմեղութեանս մէջ կը պահես,
- Ու յաւիտեան զիս քու առջևդ կը կայնեցնես :
- 13 - Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը
- Յաւիտեանս յաւիտենից : Ամէն ու ամէն :

ԱՍԴՄ. ԽԲ

Գլխաւոր երաժշտին. կորիս որդիներուն երգը :

- Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փոփաքի,
- Այնպէս ալ իմ անձս քեզի կը փոփաքի, ով Աստուած :
- 2 - Հոգիս ծարաւի է Աստուծոյ, կենդանի Աստուծոյն .

- Ե՞րբ պիտի գամ ու երևնամ Աստուծոյ առջև :
- 3 - Յորեկ ու զիշեր արցունքներս ինծի հաց եղան .
- Որովհետեւ ամէն օր ինծի կ'ըսեն թէ Ո՞ւր է քու Աստուածդ :
- 4 - Այս բաները միաքս կը բերեմ, Ու հոգիս կը թափեմ իմ ներսիդիս, Փոփոքեւ իմ որ բազմութեան հետ երթամ,
- Անոնց հետ հանդէսով Աստուծոյ առևը մտնեմ
- Ուրախութեան ու օրհնութեան ձայնով,
- Տօնախմբող բազմութեան հետ :
- 5 - Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
- Եւ Ինչո՞ւ իմ ներսիդիս անհանգիստ ես. Աստուծոյ յուսա. վասն զի անգամ մըն ալ զանիկա պիտի գովեմ,
- Իր երեսին փրկութեանը համար :
- 6 - Ով իմ Աստուածս, հոգիս իմ ներսիդիս կը ցածնայ .
- Անոր համար քեզ կը յիշեմ Յարգանանու երկրէն
- Ու Հերմոններէն *Փոքր լեռնէն :
- 7 - Անդունդը անդունդին կը կանչէ քու յարձանքներուդ ձայնովը . Բու ամէն կոհակներդ ու աղիքներդ իմ վրայէս անցան :
- 8 - Յորեկը Տէրը պիտի պատուիրէ իր ողորմութեանը,
- Ու զիշերը իր երգը ինծի հետ պիտի ըլլայ :
- Ու աղօթքս իմ կեանքիս Աստուծոյն ըլլայ :
- 9 - Պիտի ըսեմ Աստուծոյ, իմ վէմիս, Ինչո՞ւ զիս մուցեր ես, Ինչո՞ւ արտում պտրաիմ
- Թ շնամիին հարստահարութենէն :
- 10 - Ոսկորներս կտարաւու չափ թ շնամիներս զիս կը նստաատեն
- Ամէն օր ինծի ըսելով թէ Ո՞ւր է քու Աստուածդ :
- 11 - Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս, Եւ Ինչո՞ւ իմ ներսիդիս անհանգիստ ես. Աստուծոյ յուսա, վասն զի անգամ մըն ալ զանիկա պիտի գովեմ .
- Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ Աստուածս :

*Եբր. Միտար

ՍՍՂՄ. ԽԳ.

Ինծի դատաստան ըրէ, ով Աստուած, ու իրաւունքս պաշտպանէ Սուրբ չեղող ազգէն.

Նենգաւոր ու անօրէն մարդէն զիս ազատէ :

2 - Քանզի դուն ես իմ ամբուլթեանս Աստուածը .

Ինչո՞ւ զիս կը մերժես, Ինչո՞ւ տրտում պարտիմ Թշնամիին հարստահարութենէն :

3 - Քու լոյսդ ու ճշմարտութիւնդ զրկէ .

Անոնք առաջնորդէն ինծի, ու զիս հանեն :

Քու սուրբ լեռդ ու քու բնակարաններդ :

4 - Ու Աստուծոյ սեղանին քով պիտի երթամ ,

Իմ ուրախութեանս ու ցնծութեանս Աստուծոյն առջև .

Ու քեզ քնարով պիտի գովեմ , Ով Աստուած, իմ Աստուածս :

5 - Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս ,

Եւ ինչո՞ւ իմ ներսիդիս անհանգիստ ես . Աստուծոյ յուսա, վասն զի անգամ մըն ալ զանկա պիտի գովեմ .

Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ Աստուածս :

ՍՍՂՄ. ԽԳ.

Գլխաւոր երաժշտին. Կորիսի որդիներուն երգը :

Ով Աստուած, մեր ականջներովը լսեցինք ,

Հայրերնիս մեզի պատմեցին Այն գործը զոր անոնց օրերը գործեցիր Առաջուան ժամանակը :

2 - Դուն քու ձեռքովդ հեթանոսները քշեցիր ,

Ու *զանոնք անկեցիր : Չարչարեցիր ժողովուրդները ,

Ու տարածեցիր զանոնք :

3 - Քանզի ոչ թէ իրենց սրովը ժառանգեցին երկիրը ,

Ու ոչ թէ իրենց բազուկը զիրենք փրկեց ,

Հապա քու աջ ձեռքդ ու քու բազուկդ և քու երեսիդ լոյսը .

Վասն զի անոնց հաճեցար : 4 - Դուն ինքդ ես իմ Թագաւորս, ով Աստուած .

Հրաման տուր Յակոբի փրկութիւններուն համար :

5 - Քեզմով թշնամիներնիս գետինը պիտի զարնենք .

Մեր վրայ ելլողները քու անունովդ սաքի տակ պիտի առնենք :

6 - Վասն զի աղեղիս չեմ յուսար, Ու թուրս զիս չկրնար ազատել .

7 - Հապա դուն մեզ կը փրկես մեր թշնամիներէն ,

Ու մեզ ատողները ամօթով կ'ընես :

8 - Ամէն օր Աստուծով կը պարծենանք ,

Ու յաւիտեան քու անունդ պիտի գովենք : (Սէլա) :

9 - Սակայն մեզ մերժեցիր ու խայտառակ ըրիր ,

Ու մեր զօրքերուն հետ չելար :

10 - Թշնամիէն մեզ ետ դարձուցիր, Ու մեզ ատողները Զու կողոպտեցին իրենց համար :

11 - Մեզ ոչխարի պէս ուտուելու տուիր ,

Ու հեթանոսներուն մէջ մեզ ցրուեցիր :

12 - Քու ժողովուրդդ ոչինչ գնով ծախեցիր ,

Ու չաւելցուցիր քու հարստութեան անոնց զինեցովը :

13 - Դրացիներնուս առջև մեզ խայտառակ ըրիր ,

Մեր բոլորաիքը եղողներուն ծաղր ու կատակ :

14 - Մեզ հեթանոսներուն մէջ առակ ըրիր ,

Ու ժողովուրդներուն մէջ գլուխ երերցրնելու պարծար :

15 - Ամէն օր իմ նախատինքս առջես է ,

Ու երեսիս ամօթը զիս կը ծածկէ :

16 - Նախատողին ու հայհոյողին ձայնէն ,

Թշնամիին ու վրէժխնդրին երեսէն :

17 - Այս ամէնը մեր վրայ եկաւ , Սակայն մենք քեզ չմոռցանք և քու ուխտիդ սուտ չելանք .

18 - Սիրտերնիս ետ չդարձան, Ու քալուածքնիս քու ճամբայէդ դուրս չելան .

19 - Թէպէտ չազալներուն եղած տեղը մեզ ճգմեցիր ,

Ու մահուան ստուերովը մեզ ծածկեցիր :

*Այսինքն, հայրերնիս

- 20 - Եթէ մեր Աստուծոյն անունը մոռցեր ենք , կամ օտար աստուծոյ ձեռքերնիս երկրնցուցեր ենք ,
- 21 - Միթէ Աստուած այս բանը պիտի չփնտռէ ?
Որովհետեւ ինք սրտին գաղտնիքները գիտէ :
- 22 - Բայց ամէն օր քեզի համար կը սպաննուինք ,
Մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք :
- 23 - Արթնցիր , ով Տէր , ինչո՞ւ կը քնանաս .
Ելիր , մի մերժեր Զէլ յաւիտեան :
- 24 - Ինչո՞ւ երեսդ կը ծածկես ,
Մեր տրամուկթիւնը ու ասուսպանքը կը մոռնաս :
- 25 - Վասն զի մեր անձը մինչև հոյը ծուեցաւ ,
Մեր փորը գեօտնը փակաւ :
- 26 - Ելիր մեր օգնութեանը ,
Ու ազատէ մեզ քու սղորմութեանդ համար :

ՍԱՂՄ. ԽԵ

Գլխաւոր երաժշտին , Շօշանիմի վրայ . կորիսի որդիներուն քերթուածը . երգ սիրոյ :

- Իմ սրտէս բարի խօսք կը բղխի .
Շարագրածս թագաւորին համար կը խօսիմ .
- Իմ լեզուս արագագիր դպիրին գրչին դէ՞ է :
- 2 - Իսկն մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ ես .
Քու շրթունքներուդ վրայ շնորհք թափուած է .
- Անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան :
- 3 - Ով Հօր , թուրդ մէջքդ կապէ Քու փառքովդ ու վայելչութիւնովդ :
- 4 - Ու քու վայելչութիւնովդ յաջողուէ .
Ճշմարտութեան ու հեզութեան և արդարութեան համար հեծիր .
Ու քու աջ ձեռքդ քեզի ահաւոր բաներ պիտի սարվեցնէ :
- 5 - Քու նետերդ սրուած են ,
Ու թագաւորին թշնամիներուն սրտին մէջ Բո՞ւս էն .
Ժողովուրդները քու տակդ պիտի իյնան :

- 6 - Ով Աստուած , քու աթուղ յաւիտեանս յաւիտենից է .
Քու թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան գաւազան է .
- 7 - Արդարութիւնը կը սիրես ու անօրէնութիւնը կ'ատես .
Անոր համար , ով Աստուած , քու Աստուածդ
Ուրախութեան իւզով քեզ օծեց քու ընկերներէդ աւելի :
- 8 - Քու բոլոր հանդերձներդ զմուռս ու հալուէ և կասիա իջ հոգին .
Փղոսկրէ պալատներէն *նստարաններու լարերը՝ քեզ ուրախացուցին :
- 9 - Թագաւորներուն աղջիկները քու պատուականներուդ մէջ են .
Թագուհին քու աջ կողմդ կը կանգնի Ոփրի սկիւով զարդարուած :
- 10 - Ով աղջիկ , լսէ ու տես , և քու սկանջդ ծուէ .
Մուցիր քու ժողովուրդդ ու քու հօրդ տունը :
- 11 - Այ՛ն տառն թագաւորը պիտի ցանկայ քու գեղեցկութեանդ ,
Վասն զի ան է քու աէրդ , ու անոր երկրպագութիւն ըրէ :
- 12 - Եւ Տիւրոսի աղջիկը ժողովուրդին հարուսաները
Ընծայով պիտի խնդրեն քու երեսդ :
- 13 - Թագաւորին աղջիկը բոլորովին փառաւոր է ներսը ,
Ոսկի թելով հիւսուած է իր հանդերձը :
- 14 - Նկարակերպած հանդերձով պիտի բերուի թագաւորին .
Անոր ետեէն եկող աղջիկ ընկերները քեզի պիտի բերուին :
- 15 - Յնծութիւնով և ուրախութիւնով պիտի բերուին ,
Թագաւորին պալատը պիտի մտնեն :
- 16 - Քու հայրերուդ տեղը որդիներդ պիտի բլլան .
Բոլոր երկրի մէջ իշխաններ պիտի ընես զանոնք :
- 17 - Քու անունդ հռչակել պիտի տամ ազգէ մինչև ազգ .
Անոր համար ժողովուրդները քեզ պիտի գովեն յաւիտեանս յաւիտենից :

*կամ , ուրկէ

ՍԱՂՄ. ԽԶ

Գլխաւոր երաժշտին. Կորիւի որդիներուն երգը Աւամօթի վրայ:

Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է .

Նեղութիւններու մէջ խիստ օգնական կը գանուի:

2 - Անոր համար պիտի չվախնանք, թէև երկիր փոխուի,

Ու լեռները ծովուն մէջտեղը ձգուին .

3 - Թէև անոր ջուրերը գոռան ազատրին,

Լեռները գողան անոր ուռեկնալովը: (Սէլա):

4 - Գետի վտակները պիտի ուրախացունեն Աստուծոյ քաղաքը,

Բարձրելոյն սուրբ բնակարանները:

5 - Աստուած անոր մէջ է, անիկա պիտի չսասանի .

Աստուած անոր պիտի օգնէ առատուանց կանուի:

6 - Հեթանոսները կը խռովին, թագաւորութիւնները կը շարժին.

Բարձրելու իր ձայնը կու տայ, երկիր կը հալի:

7 - Զօրաց Տէրը մեզի հետ է .

Յակորբի Աստուածը մեր ապաւէնն է: (Սէլա):

8 - Եկէք առտէք Տէրոջը գործերը, Որ աւերումներ ըրաւ երկրի մէջ:

9 - Պատերազմները կը դադարեցնէ մինչև երկրի ծայրը .

Աղէզը կը կտրտէ ու նիզակը կը ջարդէ, կառքերը կրակով կ'այրէ:

10 - Հանգարտ կեցէք ու ճանչցէք որ ես եմ Աստուած .

Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ պիտի բարձրանամ:

11 - Զօրաց Տէրը մեզի հետ է,

Յակորբի Աստուածը մեզի ապաւէնն է: (Սէլա):

ՍԱՂՄ. ԽԷ

Գլխաւոր երաժշտին. Կորիւի որդիներուն Սաղմոսը:

Օտի զարկէք, ամէն ժողովուրդներ,

Յնծութեան ձայնով Աստուծոյ աղաղակեցէք:

2 - Վասն զի Տէրը Բարձրելու Ահարկու է .

Բոլոր երկրի վրայ մեծ Թագաւոր է:

3 - Ժողովուրդները մեզի կը հնազանդեցնէ,

Ու ազգերը մեր ոտքերուն տակ:

4 - Ընարեց մեզի մեր ժառանգութիւնը,

Յակորբի փառասիրութիւնը՝ զոր ինք սիրեց: (Սէլա):

5 - Աստուած ցնծութիւնով վեր ելաւ, Տէրը՝ փողի ձայնով:

6 - Սաղմոս երգեցէք Աստուծոյ, սաղմոս երգեցէք .

Սաղմոս երգեցէք մեր Թագաւորին, սաղմոս երգեցէք .

7 - Վասն զի բոլոր երկրի վրայ Թագաւոր Աստուած է .

Երգ երգեցէք առ:

8 - Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ,

Աստուած կը նստի իր սուրբ, ամօթուն վրայ:

9 - Ժողովուրդներուն իշխանները ժողովուրդեցան

Աբրահամի Աստուծոյն ժողովուրդին հետ .

Վասն զի երկրի ասպարները Աստուծոյն են .

Ինք խիստ բարձրացած է:

ՍԱՂՄ. ԽԸ

Կորիւի որդիներուն երգը - Սաղմոսը:

Տէրը մեծ է ու խիստ օրհնեալ է Մեր Աստուծոյն քաղաքին մէջ,

Իր սուրբ լեռանը վրայ:

2 - Գեղեցիկ բարձրութիւնով, Բոլոր երկրի ուրախութիւնը

Հիւսիսային կողմերը եղող Սիօն լեռն է, Մեծ Թագաւորին քաղաքը:

3 - Աստուած անոր պալատներուն մէջ Ապաւէն գիտցուած է:

4 - Վասն զի ահա թագաւորները ժողովուրդեցան,

Ու մէկտեղ անցան:

5 - Անոնք տեսածնուն պէս զարմացան. Զարհուրեցան - շուտով փոխան:

6 - Հոն դողումը բունեց զանոնք,

Ու ցաւը՝ զաւակ ծնանողի շափ պէս:

7 - Արևելեան հովով

Թարսիսի նաւերը կը խորտակուի:

8 - Ինչպէս լտեցինք, այնպէս ալ տեսանք

Զօրութեանց Տէրոջը քաղաքին մէջ,
 Մեր Աստուծոյն քաղաքին մէջ.
 Աստուած զանկա պիտի հաստատէ
 յաւիտեան: (Սէլա:)

9 - Ով Աստուած, քու ողորմութեանդ
 վրայ կը մտածենք
 Քու տաճարիդ մէջ:
 10 - Քու գովութիւնդ, ով Աստուած,
 Քու անուանդ պէս մինչև երկրի ծայ-
 րերն է.
 Արդարութիւնով լեցուն է քու աջ
 ձեռքդ:
 11 - Սիօն լեռը թող ուրախանայ,
 Ո- Յուզայի աղջիկները թող ցնծան
 Քու դատաստաններուդ համար:
 12 - Սիօնի չորս կողմը պտրտեցէք,
 Ու անոր բոլորտիքը շարուեցէք
 Ո- աշտարակները համրեցէք.
 13 - Ուշադրութեամբ դիտեցէք անոր
 պարիսպները.
 Անոր պալատները զննեցէք,
 Արպէս զի գալու ազգին պատմէք:
 14 - Վասն զի այս Աստուածը մեր
 Աստուածն է յաւիտեանս յա-
 լիտենից.
 Անկա պիտի առաջնորդէ մեզ մինչև
 ի մահ:

ՍԱՂՄ. ԽԹ

Գլխաւոր երաժշտին. Կորիս որդիներուն
Սաղմոսը:

Լսեցէք ասիկա, ով բոլոր ազգեր,
 Ականջ դրէք, աշխարհի բոլոր բնակիչ-
 ներ,
 2 - Ռամիկներ ու ազնուականներ,
 Հարուստներ ու աղքատներ մէկտեղ:
 3 - Բերանս իմաստութիւն պիտի խօսի,
 Ու սրտիս խորհուրդները՝ հանճար:
 4 - Իմ ականջս առակի պիտի ծռեմ,
 Խրթնաբանութիւնս քնարով պիտի
 բանամ:
 5 - Ինչո՞ւ վախնամ չար օրերուն մէջ,
 Երբ *գարանակալներուն անօրէնու-
 թիւնը չորս կողմն կը պատէ:
 6 - Իրենց զօրութեանը յուսացողնե-
 րուն
 Ու իրենց հարստութեանը շատութիւ-
 նովը պարծողներուն
 7 - Մէկը բնաւ չկրնար փրկել իր եղ-
 բայրը,

*Կա՛մ, իմ գարշապարներուս

Ոչ ու անոր փրկանքը Աստուծոյ հա-
 տուցանել.
 8 - (Քանզի սուղ է անոնց անձին փրկ-
 կութեան գինը,
 Ու յաւիտեան պիտի դադարի.)
 9 - Արպէս զի ալ ապրի յաւիտեան,
 Ո- ապականութիւն չտեսնէ:
 10 - Վասն զի կը տեսնէ թէ իմաս-
 տունները կը մեռնին,
 Յիմարը ու անխելքը մէկտեղ կը կոր-
 սուին,
 Ու իրենց ստացուածքները ուրիշնե-
 րուն կը թողուն:
 11 - Անոնց խորհուրդը այ՛ է Բէ իրենց
 տունները յաւիտեան պիտի ճան,
 Ո- իրենց բնակարանները ազգէ մինչև
 ազգ.
 Երկիրները իրենց անուններովը կը կո-
 չեն:
 12 - Բայց մարդը պատուոյ մէջ չմնար,
 Անասուններուն նման է *բան+ կը կոր-
 սուին:
 13 - Անոնց այս ճամբան իրենց յիմա-
 րութիւն է,
 Սակայն անոնց ետեւէն եկողները անոնց
 խօսքին հաճութիւն պիտի տան:
 (Սէլա:)
 14 - Անոնք ոչխարներու պէս գե-
 րեզմանը կը դրուին.
 Մահը պիտի հովուէ զանոնք.
 Եւ ուղիղները անոնց վրայ պիտի տիրեն
 առտուանց.
 Ու անոնց դէմքը գերեզմանը պիտի
 մուշեցնէ իրենց բնակարանէն:
 15 - Սակայն Աստուած գերեզմանին
 ձեռքէն պիտի փրկէ իմ անձս,
 Վասն զի զիս պիտի ընդունի: (Սէլա:)
 16 - Մի վախնար երբ մարդ մը
 հարստանայ,
 Ու անոր տանը փառքը շատնայ.
 17 - Վասն զի մեռնելու տտեքամեկին
 բան մը իրեն հետ պիտի չտանէ,
 Ո- իր փառքը իր ետեւէն պիտի չիջնէ:
 18 - Թէպէտև իր անձը օրհնեց իր կեն-
 դանութեան տանը,
 (Ու քեզ կը գովեն երբ դուն քու ան-
 ձիդ աղէկութիւն կ'ընես,)
 19 - Սա՛յն իր նախնիքներուն ազգին
 պիտի երթայ.
 Մինչև յաւիտեան լոյս պիտի չտեսնեն:
 20 - Մարդը որ պատուոյ մէջ է ու
 իմաստութիւն չունի,
 Անասուններուն կը նմանի *բան+ կը
 կորսուին:

ՍԱՂՄ. Ծ

Սաղմոս Ասափայ:

Աստուածներուն Աստուածը, Տէրը,
խօսեցաւ,

Ու երկիրը կանչեց արևելքէն մինչև
արևմուտք:

2 - Սիօնէ, գեղեցկութեան կատարե-
լութենէն,

Աստուած փայլեցաւ:

3 - Մեր Աստուածը պիտի դայ ու պի-
տի չլուէ:

Անոր առջև մաշող կրակ,

Ու բոլորտիքը սաստիկ փոթորիկ պիտի
լլայ:

4 - Երկիրը պիտի կանչէ վերէն,

Ու երկիրը՝ իր ժողովուրդը դատելու
համար:

5 - Ինծի ժողովեցէք իմ սուրբերս,
Ու ինծի հետ զսփոլ ուխտ ընողները:

6 - Ու երկիրքները անոր արդարու-
թիւնը պիտի պատմեն,

Վասն զի Աստուած ինք դատաւոր է:
(Սէլա):

7 - Լսէ, ով իմ ժողովուրդս, ու խօ-
սիմ:

Ով Իսրայէլ, ու քեզի վկայութիւն
ընէմ,

Որ ես եմ Աստուած, քու Աստուածդ:

8 - Ոչ թէ քու զոհերուդ համար քեզ
կը յանդիմանեմ,

Ու քու ողջակէզներուդ համար՝ որոնք
միշտ իմ առջև են:

9 - Քու տունէդ զւարակ չեմ առներ,
Ոչ ու քու գոմերէդ նոխազներ:

10 - Վասն զի իմն են անտառին բոլոր
գազանները,

Հազարաւոր լեռներուն անտառները:

11 - Ես գիտեմ լեռներուն բոլոր թըր-
չունները,

Ու դաշտի *գազանները իմ քովս են:

12 - Եթէ անօթենամ՝ քեզի պիտի չը-
սեմ:

Վասն զի աշխարհ ու անոր լիութիւնը
իմն է:

13 - Միթէ ես ցուլերու միս կ'ուտե՞մ,
կամ նոխազներու արիւն կը խմե՞մ:

14 - Շնորհակալութիւն զոհէ Աստու-
ծոյ,

Ու քու ուխտերդ կատարէ Բարձրե-
լոյն:

15 - Ու նեղութեան օրը ինծի կանչէ .
Ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս
պիտի փառաւորես:

16 - Սակայն Աստուած ամբարշտին
կ'ըսէ,

Քեզի ի՞նչ՝ որ դուն իմ օրէնքներս կը
պատմես,

Ու իմ ուխտս բերանդ կ'առնես:

17 - Վասն զի դուն խրատը ատեցիր,
Ու իմ խօսքերս ետիդ ձգեցիր:

18 - Գողը տեսնելով՝ անոր հետ միա-
բանեցար,

Ու շնացողներուն հետ բաժին ունե-
ցար:

19 - Քու բերանդ չարութեան տուիր,
Ու քու լեզուդ նենգութիւն կը հնարէ:

20 - Կը նստիս եղբօրդ դէմ կը խօսիս,
Մօրդ որդւոյն դէմ չարախօսութիւն
կ'ընես:

21 - Այս բաները բրիր ու ես լուցի.
Կարծեցիր թէ ես բոլորովին քեզի կը
նմանիմ:

Բայ քեզ պիտի յանդիմանեմ,
Ու աչքերուդ առջև պիտի շարեմ՝ +

22 - Արդ իմացէք ասիկա, ով դուք
զԱստուած մոռցողներ,
Զրկայ որ չե՛զ պատուեմ, և ազատող
մին ալ չգանուի:

23 - Շնորհակալութիւն մտաուցա-
նողը զիս կը փառաւորէ:

Ու էր ճամբուն զգուշացողին
Պիտի ցուցնեմ Աստուծոյ փրկութիւնը:

ՍԱՂՄ. ԾԱ

Դիւաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի, անոր
Բերսաբէի քով մանեկէն ետքը, նախնի
մարգարէին անոր եկած ժամանակը:

Ողորմէ ինծի, ով Աստուած, քու
ողորմութեանդ համեմատ,

Քու առատ գթութեանդ համեմատ
ջնջէ իմ յանցանքներս:

2 - Իմ անօրէնութենէս բոլորովին զիս
լուս,

Ու իմ մեղքէս զիս սրբէ:

3 - Վասն զի ես կը ճանչնամ իմ յան-
ցանքներս,

Ու իմ մեղքս միշտ իմ առջևս է:

4 - Քեզի՝ միայն քեզի դէմ մեղան-
չեցի,

Եւ քու աչքերուդ առջև չարութիւն
բրի:

*Կա՛մ, առատութիւնը իմ քովս է

- Որպէս զի արդար ըլլաւ խօսքերուդ մէջ,
- Ու անարատ ըլլաւ դատաստանիդ մէջ :
- 5 - Ահա ես անօրէնութիւնով ծնայ,
- Ու իմ մայրս մեղքով յղացաւ զիս :
- 6 - Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երկամունքներու մէջ .
- Ու ծածուկ Կեղ իմաստութիւն պիտի գիտցնես ինծի :
- 7 - Զսպայի մշտկով մաքրէ զիս, ու մաքուր ըլլամ .
- Զիս լուս, ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ :
- 8 - Յնծութիւն և ուրախութիւն լսել տուր ինծի,
- Թող ցնծան այն ոսկորները զորսնք կտարեցիր :
- 9 - Իմ մեղքերէս երեսդ ծածկէ,
- Ու բոլոր անօրէնութիւններս ջնջէ :
- 10 - Ով Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ,
- Եւ իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ :
- 11 - Զիս երեսէդ մի ձգեր,
- Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի հաներ :
- 12 - Քու փրկութեանդ ցնծութիւնը ինծի ետ դարձուր,
- Ու *կամուտը հոգի մը թող հաստատէ զիս :
- 13 - Ամբարիշտներուն պիտի սորվեցրնեմ քու ճամբաներդ,
- Ու մեղաւորները քեզի պիտի դառնան :
- 14 - Ով Աստուած, իմ փրկութեանս Աստուածը,
- Փրկէ զիս արիւնհեղութենէ .
- Լեզուս ցնծութեամբ պիտի խօսի քու արդարութեանդ վրայով :
- 15 - Ով Տէր, իմ շրթունքներս բաց,
- Ու բերանս պիտի պատմէ քու գովութիւնդ :
- 16 - Վասն զի զոհի չես հաճիր որ շնորհի մատուցանէի .
- Դուն ողջակէզի ալ չես հաւնիր :
- 17 - Աստուծոյ զոհը կտարած հոգին է .
- Կտարած ու խնարհ սիրտը, ով Աստուած, դուն չես անարգեր :
- 18 - Քու բարետիրութիւնովդ Սիօնի բարիք ըրէ,
- Երուսաղէմի պարիսպները շինէ :
- 19 - Այն ատեն պիտի հաւնիս արդարութեան զոհերուն,

*կամ, աղնիւ

Ողջակէզներուն ու բոլորովին այրուած զոհերուն .

Այն ատեն քու սեղանիդ վրայ զուարակներ պիտի մատուցանեն :

ՍՍՂՄ. ԾԲ

Դիտաւոր երաժշտին. Դաւիթի երգը, երբ Դովեկ Եդովմայեցի եկաւ ու զուցեց Սաւուղի, ու անոր ըսաւ թէ Դաւիթ Աքիմելէփի տունը մտեր է :

Ինչո՞ւ անօրէնութիւնով կը պարծիս, ով բռնաւոր .

- Աստուծոյ գթութիւնը ամէն օր կայ .
- 2 - Լեզուդ չարութիւններ կը հնարէ,
- Սուր ածելիի պէս նենգութիւն կը գործէ .
- 3 - Զարութիւնը բարութենէն աւելի կը սիրես :
- Ու ստութիւնը արդարութիւն խօսելէն աւելի : (Սէլա)
- 4 - Ամէն կործանման խօսքերը Ու նենգաւոր լեզուն կը սիրես :
- 5 - Աստուած ալ յաւիտեան քեզ պիտի կործանէ,
- Քեզ պիտի բռնէ ու քեզ հանէ բնակարանէդ .
- Ու քեզ արմատէդ պիտի խլէ կենդանիներուն երկրէն : (Սէլա)
- 6 - Արդարները պիտի տեսնեն ու վախնան ,
- Ու անոր վրայ պիտի ծիծաղին՝ Ը՞հե՛լէ .
- 7 - Ահա այն մարդը, որ զԱստուած իրեն ամբութիւն չըրաւ,
- Հապա իր շատ հարստութեանը վատահացաւ,
- Ու իր անօրէնութիւնովը զօրացաւ :
- 8 - Սակայն ես Աստուծոյ տանը մէջ կանանչ ձիթենիի պէս եմ .
- Աստուծոյ ողորմութեանը կը յուսամ յաւիտեանս յաւիտենից :
- 9 - Քեզ պիտի գովեմ յաւիտեան, Որ այժմ Բանը կատարեցիր .
- Ու քու անուանդ պիտի յուսամ ,
- Վասն զի բարի է սուրբերուդ առջև :

ՍՍՂՄ. ԾԳ

Դիտաւոր երաժշտին. Մահալաթի վրայ. Դաւիթի երգը :

Անգգամը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ .

Ապականեցան ու պիղծ անօրէնութիւնը ըրին .

- Մէ'կը չկայ որ աղէկութիւն ընէ :
- 2 - Աստուած երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ ,
Որպէս զի տեսնէ թէ կա՞յ արդեօք իմաստուն մէկը
- Որ զԱստուած փնտռէ :
- 3 - Ամէնը խոտորեցան , մէկտեղ անպիտան եղան .
Աղէկութիւն ընող մը չկայ , մէկ ալ չկայ :
- 4 - Միթէ չէ՞ն ճանչնար անօրէնութիւն ընողները ,
Որոնք հաց ուտելու պէս իմ' ժողովուրդս կ'ուտեն ,
Ու Աստուծոյ չեն կանչեր :
- 5 - Անոնք այն տեղ շատ վախցան՝ ուր վախ չկար .
Վասն զի քեզ պաշարողներուն սակորները ցրուեց Աստուած .
Ամէցուցիր զանոնք , վասն զի Աստուած անարգեց զանոնք :
- 6 - Երանի' թէ Սիօնէ գար Իսրայէլի փրկութիւնը .
Աստուծոյ իր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը
Յակոր պիտի ցնծայ ու Իսրայէլ ուրախ պիտի ըլլայ :

ՍԱՂՄ: ԾԳ

Գլխաւոր երաժշտին, Նկինօթի վրայ, Դաւիթի երգը, այն ատեն որ Ձիփացիք եկան ու ըսին Սաւուղի, Ահա Դաւիթ մեր քով պահուած է :

- Ով Աստուած, քու անունովդ զիս ազատէ ,
Ու քու զօրութիւնովդ իրաւունք ըրէ ինձի :
- 2 - Ով Աստուած, լսէ իմ' աղօթքս ,
Բերնիս խօսքերուն ականջ դիր .
- 3 - Վասն զի օտարները իմ' վրաս ելան ,
Ու բռնաւորները կը փնտռեն իմ' անձս ,
Ու զԱստուած իրենց առջև չգրին : (Սէլա :)
- 4 - Ահա Աստուած ինձի օգնական է .
Տէրը իմ' հոգիիս պաշտպաններուն հետ է :
- 5 - Չարութիւնը թշնամիներուս վրայ պիտի դարձնէ .
Քու ճշմարտութիւնովդ կորսնցուր զանոնք :
- 6 - Ես իմ' կամքովս քեզի զս' պիտի մատուցանեմ .

- Ով Տէր, քու անունդ պիտի գովեմ ,
վասն զի բարի է :
- 7 - Վասն զի ամէն նեղութենէ զիս փրկեց ,
Ու իմ' աչքս թշնամիներուս նորայն տեսաւ :

ՍԱՂՄ: ԾԵ

Գլխաւոր երաժշտին, Նկինօթի վրայ, Դաւիթի երգը :

- Ով Աստուած, ականջ դիր իմ' աղօթքիս ,
Ու իմ' խնդրուածքէս քու երեւոյթ մի ծածկեր :
- 2 - Մտիկ ըրէ ու պատասխանէ ինձի .
Իմ' գանգատովս *կը մոլորիմ' ու կը խռովիմ' ,
- 3 - Թշնամիին ձայնէն ու ամբարշտին նեղութիւն տալէն .
Վասն զի իմ' վրաս անիրաւութիւն կը բերեն ,
Ու բարկութիւնով զիս կը հալածեն :
- 4 - Սիրաս դողաց իմ' ներսիդիս ,
Ու մահուան արհաւիրքները իմ' վրաս ինկան :
- 5 - Վախ ու դող եկաւ իմ' վրաս ,
Ու ստկումը զիս ծածկեց :
- 6 - Ու ըսի, Երանի' թէ աղանիի նման թւեր ունենայի ,
Որպէս զի թռչէի ու հանգիստ ըլլայի :
- 7 - Ահա հեռուն կը փախչէի ,
Անտպատին մէջ կը բնակէի (Սէլա :)
- 8 - Սաստիկ հովէն ու փոթորիկէն իմ' փախչիլս կ'արտորցնէի :
- 9 - Ով Տէր, կորսնցուր, անոնց լեզուները բաժնէ ,
Վասն զի քաղաքին մէջ բռնութիւն ու կռիւ տեսայ :
- 10 - Յարեկ ու զիշեր անոր չորս կողմը ,
անոր պարիսպներուն վրայ , կը պտըտին .
Անօրէնութիւն ու չարիք կայ անոր մէջ :
- 11 - Անոր մէջ եղեւնագործութիւն կայ .
Եւ բռնութիւնը ու նենգութիւնը անոր հրապարակներէն չեն զատուիր :
- 12 - Վասն զի թշնամին չէր զիս նախատողը , որ համբերէի .
Կա՞մ ատողը չէր իմ' վրաս հպարտացողը , որ անկէ պահուէի .

*Կա՞մ, կը արամիմ

- 13 - Հապա գուն , ով մարդ , իմ հա-
ւասարս ,
Իմ ընկերս ու ճանչուորս ,
- 14 - Ար իրարու հեա անոյշ խօսակցու-
թիւն կ'ընէինք ,
- Ո- բազմութեան հեա Աստուծոյ տունը
կ'երթայինք :
- 15 - Մաջը յանկարծ անոնց վրայ պի-
տի հասնի ,
- Ո- ողջ ողջ գերեզմանը պիտի իջնեն ,
Վասն զի իրենց բնակարաններուն --
իրենց մէջ չարութիւն կայ :
- 16 - Իսկ ես Աստուծոյ պիտի կանչեմ ,
Ու Տէրը զիս պիտի փրկէ :
- 17 - Իրիկունը , առտուն ու կէսօրը
պիտի բողբոջեմ ու հառաչեմ ,
Եւ անիկա պիտի լսէ իմ ձայնս :
- 18 - Խաղաղութիւնով կը փրկէ իմ
անձս ինծի դէմ եղած պատե-
րազմէն ,
Վասն զի շատերը կան իմ քովս :
- 19 - Աստուած պիտի լսէ ,
Ու յաւիտենականութեան մէջ բնա-
կոյր պիտի ցածցնէ զանոնք .
(Սէլա .)
- Որովհետեւ չեն փոխուիր անոնք ,
Ու Աստուծմէ չեն վախնար :
- 20 - Ձեռքը իրեն հեա հաշտուածնե-
րուն վրայ երկնցուց ,
Իր ուխար աւրեց :
- 21 - Անոր բերնին Խօսեցը կողիէն կա-
կուղ են ,
Բայց անոր սրտին մէջ պատերազմ
կայ .
Անոր խօսքերը ձէթէն կակուղ են ,
Բայց մերկ սուրեր են :
- 22 - Քու հոգի Տէրոջը վրայ ձգէ ,
Ու ան քեզ պիտի խնամէ .
Անիկա յաւիտեան սասանութիւն
չտար արդարին :
- 23 - Բայց գուն , ով Աստուած , զա-
նոնք ապականութեան գուբին
մէջ պիտի իջեցնես .
Արիւնահեղ ու նենգաւոր մարդիկ օ-
րերնուն կէսին պիտի չհասնին .
Սակայն ես քեզի պիտի յուսամ :

ՍԱՂՄ. ԾԶ

Գլխաւոր երաժշտին , Եմամթ-էլէմ-րէհօգիսի
վրայ . Գաւթի երգը , երբ Փղշտացիք
Գէթի մէջ բռնեցին զանիկա :

Ով Աստուած , ողորմէ ինծի , վասն
զի մարդը կ'ուզէ զիս կլլել .

- Ամէն օր պատերազմ ընելով զիս կը
նեղէ :
- 2 - Թշնամիներս ամէն օր կ'ուզեն զի-
կլլել ,
Վասն զի շատ մարդիկ *ամբարտաւա-
նութիւնով ինծի հեա կը մար-
տընչին :
- 3 - Վախցած օրս քեզի պիտի յու-
սամ :
- 4- Աստուծով պիտի գովեմ իր խօսքը .
Աստուծոյ կը յուսամ , պիտի չվախ-
նամ .
Մարմինը ինծի ի՞նչ կրնայ ընել :
- 5 - Ամէն օր իմ †բաներուս վստա կու-
տան ,
Իմ վրայովս անոնց բոլոր խորհուրդ-
ները չարիքի համար են :
- 6 - Կը ժողովուին ու կը պահուին ,
Իմ շաւիղներս կը դիտեն ,
Վասն զի իմ անձիս կը սպասեն :
- 7 - Միթէ անօրէնութիւնով անոնց
փրկութիւն կ'ըլլա՞յ .
Բարկութիւնով ժողովուրդները վար
ձգէ , ով Աստուած :
- 8 - Իմ թափառական պտրտիլս համ-
րեցիր .
Արցունքներս քու տիկիդ մէջ դիր .
Միթէ անձս քու գիրքիդ մէջ գրուած
չէ՞ն :
- 9 - Քեզի կանչած օրս ես պիտի դառ-
նան իմ թշնամիներս .
Ասիկա գիտեմ , վասն զի Աստուած
ինծի հեա է :
- 10- Աստուծով պիտի գովեմ եր խօսքը ,
Տէրջմով պիտի գովեմ եր խօսքը :
- 11 - Աստուծոյ կը յուսամ , պիտի
չվախնամ .
Մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել :
- 12 - Ով Աստուած , քու ուխտերդ
իմ վրաս են .
Քեզի շնորհակալութիւններ պիտի հա-
տուցանեմ :
- 13 - Որովհետեւ իմ անձս մահուանէ
ազատեցիր ,
Ոտքերս ալ գայթակղելէն չե՞ս ազա-
րեց ,
Որպէս զի Աստուծոյ առջև քալեմ
կենդանիներուն լոյսին մէջ :

*Կա՛մ , բարձրէն , Եւ կա՛մ , ով Բարձրեալ ,
†Կա՛մ , խօսքերս կը ծռեն

ՍԱՂՄ. ԾԷ

Գլխաւոր երաժշտին. *Աւթաշէթ, Դաւթի երգը, Սաուղի երեսէն դէպ ի քարայրը փախած ատենը:

- Ողորմէ ինծի, ով Աստուած, ողորմէ ինծի,
- Վասն զի իմ անձս քեզի կը յուսայ.
- Ու քու թեկերուդ հովանաւորութեանը պիտի ապաւինիմ*,
- Մինչև որ թշուառութիւնները անցնին:
- 2 - Բարձրեալ Աստուծոյն պիտի աղաղակեմ*,
- Ինծի համար գործող Աստուծոյն:
- 3 - Երկինքէն պիտի զրկէ ու փրկէ զիս, Թէև զիս կլլել ուզողը զի՝ նախատէ. (Սէլա.)
- Աստուած պիտի զրկէ իր ողորմութիւնը ու ճշմարտութիւնը:
- 4 - Իմ անձս առիւծներու մէջ է. Բոց փչող մարդոց որդիներուն հէջ կը պառկիմ*,
- Որոնց ահուաները նիզակներ ու նետեր են,
- Եւ անոնց լեզուները սրած թուրեր են:
- 5 - Ով Աստուած, երկինքի վրայ բարձրացիր.
- Քու փառքդ բարձր երկրի վրայ ըլլայ:
- 6 - Իմ քայլերուս որոգայթ պատրաստեցին,
- Անձս վար ծռեցաւ.
- Փոս փորեցին առջևս,
- Ու իրենք ինկան անոր մէջ: (Սէլա:)
- 7 - Միրտս պատրաստ է, ով Աստուած, սիրտս պատրաստ է.
- Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ.
- 8 - Արթնցիր, ով իմ փառքս. Արթնցիր, ով տաւիղ ու քնար. Ես կանուխ պիտի արթննամ:
- 9 - Ով Տէր, ժողովուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ.
- Սաղմոս պիտի երգեմ՝ քեզի ազգերուն մէջ.
- 10 - Վասն զի մեծ է քու ողորմութիւնդ մինչև երկինք,
- Ու քու ճշմարտութիւնդ մինչև ամպերը:
- 11 - Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած,
- Քու փառքդ բարձր երկրի վրայ ըլլայ:

*Այսինքն, մի կարանցներ

ՍԱՂՄ. ԾԸ

Գլխաւոր երաժշտին. Աւթաշէթ, Դաւթի երգը:

- Իրաւցընէ *անբարբառ արգարութիւն կը խօսիք,
- Ուղղութիւնով դատաստան կը տեսնէք, ով մարդոց որդիներ:
- 2 - Արգարեւ սրտով անօրէնութիւններ կը գործէք.
- Երկրի վրայ ձեռքերնուդ բռնութիւնը կը կշռէք:
- 3 - Ամբարիշտները երեսնոց արգանդէն խտորեցան.
- Որովայնէն կը մնորին սուտ խօսելով:
- 4 - Անոնց թոյնը օձի թոյնի պէս է, Խուլ իժի պէս՝ որ կը գոցէ իր ահանջները,
- 5 - Որ չլսեր թովիչներուն ձայնը, Թէև վարպետութեամբ կախարչութիւն կ'ընեն:
- 6 - Ով Աստուած, անոնց ահաւները իրենց բերաններուն մէջ փչրէ.
- Ով Տէր, առիւծի կորիւններուն ժանիքները կտարտէ:
- 7 - Թող անոնք հալին ջուրերու պէս՝ կը վազեն.
- Երբ իրենց աղեղները կը լարեն, թող կտարտին.
- 8 - Խխուռնջի պէս՝ ՚բ քալած ատենը կը հալի,
- Կնոջ մը վիժած զաւակին ՚դ՝ արևը չտեսնեն:
- 9-Ձեր կաթսաներուն՝ փուշերուն կ'ալը զգայէն առաջ,
- Թէ՛ թարմ և թէ՛ սյրուող խնկրէ փոթորիկով պիտի ցրուէ:
- 10 - Արգարը պիտի ուրախանայ, երբ վրէժխնդրութիւնը տեսնէ.
- Իր ստքերը ամբարշտին արիւնին մէջ պիտի լուսայ:
- 11 - Ու մարդը պիտի ըսէ թէ Իրաւցընէ արգարին համար վարձք կայ.
- Իրաւցընէ Աստուած կայ, որ երկրի վրայ դատաւոր է:

*Կա՛մ, արդեօք

ՍԱՂԱՄ. ԾԹ

Գլխաւոր երաժշտին. Աւթ աշէթ, Գաւթի երգը, այն ատեն որ Սատուղ հարբէլ զրկեց, ու տունը պաշարեցին որպէս զի մեռցնեն զանիրս:

Թ շնամիներէս զիս փրկէ, ով իմ Աստուածս:

Իմ վրաս ելլողներէն զիս վեր վերցուր:

2 - Անօրէնութիւն գործողներէն զիս ազատէ,

Ու արիւնասէղ մարդոցմէն զիս փրկէ:

3 - Վասն զի ահա իմ անձիս համար դարանը մտան:

Զօրաւոր մարդիկ իմ վրաս ժողվուեցան,

Ոչ թէ մեղքիս ու յանցանքիս համար, ով Տէր:

4 - Մեղք չունեցած ատենս վրաս վազեցին ու պատրաստուեցան:

Արթնցիր զիս դիմաւորելու և նայէ:

5 - Ով Տէր Աստուած զօրութեանց, Աստուած Իսրայէլի,

Արթնցիր բոլոր հեթանոսները քննելու:

Զար անօրէններուն բնաւ մի ողորմիր: (Սէլա:)

6 - Անոնք իրիկուան ետ կը դառնան, Շան պէս կ'ոռնան,

Ու քաղաքին չորս կողմը կը պտրտին:

7 - Ահա իրենց բերնէն շարժուի դուրս կը թափեն:

Անոնց շրթունքներուն վրայ սուրեր կան:

Վասն զի ի՞նչն ի՞նչ Ո՞վ պիտի լսէ:

8 - Բայց դուն, ով Տէր, անոնց վրայ պիտի ծիծաղիս:

Բոլոր հեթանոսները ծաղր պիտի ընես:

9 - Ով իմ զօրութիւնս, քեզի պիտի սպասեմ:

Վասն զի Աստուած է իմ ապաւենս:

10 - Ողորմութեանս Աստուածը ինձի պիտի հասնի:

Աստուած պիտի ցուցնէ ինձի թշնամիներուս խոստումը:

11 - Մի մեռցնէր զանոնք, որպէս զի ժողովուրդս չմոռնայ:

Զանոնք ցիրուցան ըրէ քու զօրութիւնովդ,

Ու վար ձգէ զանոնք, ով Տէր, մեր վահանը:

12 - Անոնք իրենց բերաններուն մեղքին

*Կա՛մ, անոր զօրութիւնը

քին -- շրթունքներուն խօսքին համար

Իրենց ամբարտաւանութեանը մէջ թող բռնուին,

Նստե անէ՛ծքին ու սուտին համար զոք կը խօսին:

13 - Կորսնցուր բարկութիւնով, կորսրնցուր զանոնք՝ որպէս զի ոչնչանան,

Ու գիտնան թէ Աստուած կը տիրէ Յակոբի վրայ

Մինչև երկրի ծայրերը: (Սէլա:)

14 - Անոնք իրիկուան ետ պիտի դառնան,

Շան պէս պիտի ոռնան, Ու քաղաքին չորս կողմը պտրտին:

15 - Ուտեղիքի համար պիտի թափառին, Եթէ չկշտանան՝ գիշերը այնպէ՛ս անցընեն:

16 - Բայց ես քու զօրութիւնդ պիտի երգեմ,

Ու առտուանց քու ողորմութիւնովդ պիտի ցնծամ:

Վասն զի դուն ինձի պահապան եղար, Ու ապաւեն՝ իմ նեղութեանս օրը:

17 - Ով իմ զօրութիւնս, քեզի սաղմնս պիտի երգեմ,

Վասն զի իմ պաշտպանս Աստուած է, Իմ ողորմութեանս Աստուածը:

ՍԱՂԱՄ. Կ

Գլխաւոր երաժշտին, Շուշան-էտութի վրայ. Գաւթի երգը՝ սորվեցնելու համար, այն ատեն որ պատերազմեցաւ Միջագետի Ասորոց ու Սուբայի Ասորոց հետ, ու Յովար ետ դառնալով՝ Եգիպտոսեցիներէն տատուերկու հազար հոգի զարկաւ Ադի ձորին մէջ:

Ով Աստուած, մեզ երեսէ ձգեցիր, Մեզ ցրուեցիր -- բարկացար. մեզի դարձիր:

2 - Երկիրը գողացուցիր, զանիկա պատուեցիր:

Անոր փլած տեղերը նորագէ, վասն զի կ'երերայ:

3 - Քու ժողովուրդիդ խտութիւն ցուցուցիր,

Մեզի թմրութեան գինի խմցուցիր:

4 - Քեզմէ վախցողներուն դրօշակ տուիր,

*Ճշմարտութեան համար վերցնելու. (Սէլա:)

*Կա՛մ, Որ փախչին աղեղին երեսէն

5 - Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝ Աջ ձեռքովդ տպրեցուր ու պատասխան տուր ինծի :

6 - Աստուած *իր սրբութիւնովը՝ խօսեցաւ, Ես պիտի ցնծամ, Սիւքէմը պիտի բաժնեմ,

Ու Սոկքովթի հովիտը պիտի չափեմ : 7 - Իմն է Գաղատագ ու իմն է Մանասէ, Եփրեմ գլխուս զօրութիւնն է .

Յուդա իմ օրէնսդիրս է . 8 - Մովսէս իմ լուսցուելու ամանս է . Եզովմի վրայ պիտի ձգեմ իմ մուճակս .

Ով Փղշտացիք, ինծի համար ձայնով ցնծացէք :

9 - Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր քաղաքը .

Ո՞վ պիտի առաջնորդէ ինծի մինչև Եդովմ :

10 - Չէ՞ որ դուն , ով Աստուած , որ երեսէ ձգեցիր մեզ ,

Ու մեր զօրքերուն հետ չելար , ով Աստուած :

11 - Նեղութեան մէջէն մեզի օգնութիւն տուր ,

Վասն զի փուճ է մարդուն փրկութիւնը :

12 - Աստուծով քաջութիւն պիտի ընենք .

Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները :

ՍՍ.ՂՄ. ԿԱ.

Գլխաւոր երաժշտին, Նկինթի վրայ. Սաղմոս Դաւթի :

Ով Աստուած, լսէ իմ աղաղակս, Ու մտիկ ըրէ իմ ազօթքս :

2 - Երկրի ծայրէն քեզի պիտի կանչեմ՝ սրախ մարելու ատենը : Ինծմէ բարձր եղած վէմին առաջնորդէ ինծի :

3 - Վասն զի դուն ինծի ապաւէն մը եղար ,

Ամուր աշտարակ մը՝ թշնամիին երեսէն :

4 - Քու խորանիդ մէջ պիտի բնակիմ ես յաւիտեան .

Քու թեկերուդ հովանաւորութեանը տակ պիտի ապաւինիմ : (Սէլա) :

5 - Վասն զի դուն, ով Աստուած, լսեցիր իմ ուխտերս .

Քու անունէդ վախցողներուն ժառանգութիւնը Ինչէ տուիր :

6 - Թագաւորին օրերուն վրայ օրեր պիտի աւելցնես .

Անոր տարիները իբրև ազգէ մինչև ազգ պիտի ըլլան :

7 - Անիկա յաւիտեան Աստուծոյ առջև պիտի նստի .

Ողորմութիւն ու ճշմարտութիւն պատրաստէ, որպէս զի զանիկա պահպանեն :

8 - Այսպէս սաղմոս պիտի երգեմ քու անուանդ յաւիտեան, Որպէս զի ամէն օր ուխտերս կատարեմ :

ՍՍ.ՂՄ. ԿԲ

Գլխաւոր երաժշտին, Իզիթուհի վրայ. Սաղմոս Դաւթի :

Յիրաւի իմ անձս լռիկ կը սպասէ Աստուծոյ .

Անկէ է իմ փրկութիւնս .

2 - Յիրաւի ան է իմ վէմն ու փրկութիւնս .

Իմ ապաւէնս է , շատ պիտի չստասանիմ :

3 - Մինչև ե՞րբ մարդու վրայ կը յարձակիք .

Դուք ամէնդ պիտի կտարտէք շանիւս , Ծռած պատի «-խախտած ցանկի պէս :

4 - Արգարե իր պատիւէն ձգելու խորհուրդ կ'ընեն .

Ստութիւն կը սիրեն . Իրենց բերնովը կ'օրհնեն ,

Բայց իրենց սրտովը կ'անիծեն : (Սէլա) :

5 - Ով իմ անձս, միայն Աստուծոյ սպասէ ,

Վասն զի անկէ է իմ յոյս : 6 - Յիրաւի ան է իմ վէմն ու փրկութիւնս .

Իմ ապաւէնս է , պիտի չստասանիմ :

7 - Աստուծմէ է իմ փրկութիւնս ու փառքս .

Իմ զօրութեանս վէմը «- իմ ապաւէնս Աստուած է :

8 - Ամէն ժամանակ անոր յուսացէք, ով ժողովուրդ .

Անոր առջև սիրաբերնիդ թափեցէք . Աստուած ապաւէն է մեզի : (Սէլա) :

9 - Արգարե ռամիկ մարդիկը փուճ են ,

Ազնուական մարդիկը սուտ են . Եթէ կշիռքի մէջ դրուելու ըլլան ,

*Կա՛մ, իր սրբարանին մէջ

Ամէնն ալ ունայնութենէն թէրեւ են :
 10 - Հարստահարութեան մի յուսար,
 Ու յափշտակութեան վրայ փուճ յոյ՛մ
 մի դնէք .

Հարստութիւնը եթէ շատնայ,
 Անոր վրայ սիրտ մի դնէք :

11 - Մէկ անգամ խօսեցաւ Աստուած .

Երկու անգամ լսեցի ասիկա,
 Թէ զօրութիւնը Աստուծոյ է :

12 - Ողորմութիւնն ալ քուկդ է, ով Տէր,

Վասն զի ամէն մէկուն իր գործին համեմատ հասուցում կ'ընես :

ՍԱՂՄ. ԿԳ

Սաղմոս Դաւթի, երբ ինք Յուդայի անապատին մէջ էր :

Ով Աստուած, դուն ես իմ Աստուածս,

Ես առտուանց քեզ կը փնտռեմ .

Հոգիս կը ծարաւի քեզի, ու մարմինս քեզի կը փափայրի

Չոր ու ծարաւ տեղը, ուր ջուր չկայ :

2 - Քու զօրութիւնդ ու փառքդ տեսնելու համար,

Ինչպէս քեզ տեսած եմ սրբարանին մէջ :

3 - Որովհետեւ քու ողորմութիւնդ կեանքէն աղէկ է,

Իմ շրթունքներս քեզ պիտի գովեն :

4 - Այսպէս պիտի օրհնեմ քեզ իմ կեանքիս մէջ .

Քու անուանօղ ձեռքերս՝ վեր պիտի վերցնեմ :

5 - Իբր թէ ճարպով ու պարարտութիւնով պիտի կշտանայ իմ անձս,

Ու ցնծութեան շրթունքներով պիտի գովէ +եզ իմ բերանս,

6 - Երբ անկողինիս վրայ քեզ կը յիշեմ,

Գիշերսն պահերուն մէջ քու վրայ յովդ կը մտածեմ .

7 - Վասն զի ինձի օգնական եղար .

Ու քու թևերուդ հովանաւորութեանը տակ պիտի ցնծամ :

8 - Իմ անձս քեզի հետևելով կը յարի .

Քու աջ ձեռքդ զիս կը պահէ :

9 - Բայց անոնք որ իմ անձս կը փրնուեն զանիկ կորսնցնելու համար,

Գեանին խորունկ տեղերը պիտի մըտնեն .

10 - Սուրի պիտի մտանուին,
 *Աղուէսներուն բաժին պիտի ըլլան :

11 - Բայց թագաւորը Աստուծով պիտի ուրախանայ,

Անով երդում ընողներուն բոլորը պիտի պարծին .

Իսկ ստախօսներուն բերանը պիտի պսպանծի :

ՍԱՂՄ. ԿԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի :

Ով Աստուած, լսէ իմ ձայնս իմ գանգատելու ատենս .

Թշնամիին վախէն իմ կեանքս պահպանէ :

2 - Ծածկէ զիս չարերուն ժողովքէն,
 Անօրէնութիւն գործողներուն բազմութենէն,

3 - Որոնք իրենց լեզուները թուրի պէս կը սրեն,
 Իրենց նետերը կը քաշեն, որոնք լեղի խօսքեր են,

4 - Գաղտուկ տեղէն անմեղին նետելու համար .

Յանկարծակի անոր կը նետեն ու չեն վախնար :

5 - Իրենց մէջ չար խօսքեր կը հաստատեն .

Գաղանի որդայթներ դնելու համար կը խօսին,

Կ'ըսեն թէ Չանոնք ո՞վ պիտի տեսնէ :

6 - Անօրէնութիւն կը փնտռեն,
 +Կ'ըսեն թէ Կատարեցինք Զէր խորհած խորհուրդը՝ .

Մարդուն ներսը և սիրտը խորունկ է :

7 - Բայց Աստուած զանոնք պիտի զարնէ նետով,

Անոնք յանկարծ պիտի վիրաւորին :

8 - Ու իրենց լեզուն իրենց վրայ պիտի հանգացնեն .

Ամէն զանոնք տեսողները պիտի փախչին :

9 - Եւ բոլոր մարդիկ պիտի վախնան,
 Ու Աստուծոյ գործը պատմեն,

Ու անոր բրածին ու շագրութեամբ պիտի նային :

*Կա՛մ, Չաղայներուն
 +Կա՛մ, Իրենց խորհած խորհուրդը կը ծածկեն

10 - Արդարը Տէրոջմով պիտի ուրախանայ, և անոր պիտի յուսայ. եւ ամէն ուզիզ պատով եղաղները պիտի պարծին :

ՍԱՂՄ. ԿԵ

Գլխաւոր երաժշտին. Գաւթի Սաղմոսը ~ երգը :

Քեզի *կը սպասէ օրհնութիւնը, ով Աստուած, Սիօնի մէջ,

Ու քեզի ուխտը պիտի կատարուի :

2 - Ով աղօթքի լսող,

Քեզի պիտի գոյ ամէն մարմին :

3 - †Անօրէնութիւնները իմ վրաս զօրացան .

Մեր մեղքերը դուն պիտի քուես :

4 - Երանի՛ անոր զոր կ'ընտրես ու +եղի կը մօտեցնես,

Որպէս զի բնակի քու սրահներուդ մէջ .

Պիտի լցուինք քու տանդ,

Քու սուրբ տաճարիդ, բարութենէն :

5 - Սքանչելի բաներով, արդարութիւնով, պիտի պատասխանես մեզի,

Ով մեր փրկութեանը Աստուածը,

Որ երկրի ամէն ծայրերուն ու ծովուն մէջ հեռուն եղաղներուն յոյսն էս .

6 - Որ քու զօրութիւնովդ լեռները հաստատեցիր,

Կարողութիւնով գօտի կապուեցար .

7 - Որ կը ցածցնես ծովուն ձայնը,

Անոր աղիքներուն ձայնը,

Ու ազգերուն խռովութիւնը :

8 - Ու երէի ծայրերը բնակողները պիտի վախնան քու նշաններէդ .

Աստուան ու իրիկուան ելքը դուն կ'ուրախացնես :

9 - Երկրի այցելութիւն կ'ընես ու զանհկա կը ջրես,

Շատ կը հարստացնես զանհկա .

Աստուծոյ գետը ջրով լեցուն է .

Անոնց ցոյէն կը պատրաստես,

Վասն զի այսպէս պատրաստեցիր զանհկա :

10 - Անոր ահօսները կը խմցնես,

Ու անոր փոսերը կը շիակես .

Անձրեւներով կը կակուղցնես զանհկա,

Կ'օրհնես անոր բոյսը :

11 - Կը պաակես տարին քու բարութիւնովդ,

Ու քու շաւիղներդ պարարտութիւն կը կաթեցնեն,

12 - Անապատի արօտներուն լէռ, կը կաթեցնեն .

Ու բլուրները ուրախութիւնով պատած են :

13 - Արօտները հօտերով հագուած են, Ու հովիտները ցորենով ծածկուած են. Զնծութեամբ կ'աղաղակեն ու կ'երգեն :

ՍԱՂՄ. ԿԶ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս ~ երգ :

Ով բոլոր երկիր, ցնծութիւնով Աստուծոյ աղաղակեցէք :

2 - Սաղմոս երգեցէք անոր անուանը փառքին,

Փառաւոր ըրէք անոր օրհնութիւնը :

3 - Աստուծոյ ըսէք թէ Ի՛նչպէս ահաւոր են քու գործերդ .

Քու մեծ զօրութեանդ համար Թշնամիներդ քեզի *խոնարհութիւն պիտի ընեն :

4 - Բոլոր երկիր երկրպագութիւն պիտի ընեն քեզի .

Սաղմոս պիտի երգեն քեզի,

Սաղմոս պիտի երգեն քու անուանդ : (Սէլա :)

5 - Եկէք ու տեսէք Աստուծոյ ըրածները .

Անհկա եւ գործովը մարդոց †սրգիններուն վրայ՝ ահաւոր է :

6 - Ծովը ցամաքի դարձուց,

Գետէն՝ սաքով անցան .

Այն տեղը իրմով ուրախացանք :

7 - Իր ուժովը յաւիտեան կը տիրէ .

Անոր աչքերը ազգերը կը դիտեն .

Ապստամբները թող չբարձրանան : (Սէլա :)

8 - Ով ժողովուրդներ, օրհնեցէք մեր Աստուածը ,

Ու լսել տուէք անոր գովութեան ձայնը :

9 - Անհկա մեր հոգին կենդանի կը պահէ ,

*Եբր. պիտի ստեն. Սաղմ. Ժբ. 44 : ձա. 15 :

†Կա՛մ, սրգիններէն աւելի

*Կա՛մ, լսիկ կը սպասէ. տես Սաղմ. կը. 4 : †Կա՛մ, Անօրէնութեան խօսքերը

Ու ստքերնուն սասանիլ չտար :
10 - Վասն զի դուն բնեցիր մեզ , ով Աստուած .

Փորձեցիր մեզ , ինչպէս արծաթը կը փորձուի :

11 - Մեզ սրագայթի մէջ մտցուցիր , Մանր բեռ դրիր մեր *կռնակին վրայ :

12 - Մեր գլուխներուն վրայ մարդիկ չեծցուցիր .

Կրակը ու ջուրը մտանք , Սակայն մեզ առատութեան Գեղը հանեցիր :

13 - Ողջակէզներով պիտի մանեմք ու տունդ ,

Քեզի պիտի հասուցանեմ իմ ուխտերս ,

14 - Զորոնք շրթունքներս խոստացան , Ու նեղութեանս մէջ բերանս խօսեցաւ :

15 - Պարարտ ողջակէզներ պիտի մատուցանեմ քեզի խոյերու խունկով .

Զուարակներ պիտի զօհեմ նոխազներու հետ : (Սէլա) :

16 - Եկէք լսեցէք դուք ամենդ որ Աստուածէ կը վախնաք ,

Ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ անձիս :

17 - Բերնովս անոր աղաղակեցի , Ու լեզուովս †գանձիկս բարձրացուցի :

18 - Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն տեսնէի ,

Տէրը պիտի չլսէր :

19 - Սակայն Աստուած լսեց , Իմ աղօթքիս ձայնը մտիկ ըրաւ :

20 - Օրհնեալ ըլլայ Աստուած , որ իմ աղօթքս շնորհեց ,

Ու իր սղորմութիւնը ինձմէ ետ չդարձուց :

ՍՍ.ՂՄ. ԿԷ

Գլխաւոր երաժշտին , Նիինօթի վրայ . Սաղմոս -- երգ :

Աստուած սղորմի մեզի ու օրհնէ մեզ ,

Երեսը փայլեցնէ մեր վրայ , (Սէլա) :

2 - Որպէս զի երկրի վրայ քու ճամբադ ճանչցուէ .

Ու ամէն ազգերուն մէջ քու փրկութիւնդ :

3 - Թող ժողովուրդները քեզ գովեն , ով Աստուած ,

*ԵՔԸ. երկամուկներուն
†ԵՔԸ. անձիկս բարձրացաւ

Բոլոր ժողովուրդները քեզ գովեն :
4 - Ազգերը թող ուրախանան ու ցընծան ,

Վասն զի ժողովուրդները ուղղութիւնով պիտի դառնան ,

Ու երկրի ազգերուն դուն պիտի առաջնորդես : (Սէլա) :

5 - Թող ժողովուրդները քեզ գովեն , ով Աստուած ,

Բոլոր ժողովուրդները քեզ գովեն :

6 - Երկիր իր պատուը պիտի սուս . Ու Աստուած , մեր Աստուածը , մեզ պիտի օրհնէ :

7 - Աստուած մեզ պիտի օրհնէ , Ու երկրի ամէն ծայրերը անկէ պիտի վախնան :

ՍՍ.ՂՄ. ԿԸ

Գլխաւոր երաժշտին . Դաւիթի Սաղմոս -- երգ :

Թող ելլէ Աստուած , անոր թշնամիները թող ցրուին ,

Ու զանկա աատղները իր երեսէն թող փախչին :

2 - Մուխին ցրուելուն պէս ցրուէ զանս :

Ինչպէս մամը կրակին առջև կը հալի , Այսպէս թող կորսուին ամբարիշտները Աստուծոյ երեսէն :

3 - Բայց արդարները թող ուրախանան ,

Աստուծոյ առջև թող ցնծան , Եւ ուրախութիւնով զուարճանան :

4 - Երգեցէք Աստուծոյ , սաղմոս երգեցէք անոր անուանը .

Ճամբայ պատրաստեցէք անապատներուն մէջէն հեծնողին ,

Որուն անունը *Եահէ , Ու ցնծացէք անոր առջև :

5 - Որբերուն հայրը ու որբեւարիներուն դատաւորը

Աստուած է իր սուրբ բնակարանին մէջ :

6 - Աստուած մինակ եղողները տան մէջ կը բնակեցնէ , Կապուածները յաջողութեան կը հանէ .

Բայց ապրտամբները չոր տեղ կը բնակին :

7 - Ով Աստուած , քու ժողովուրդիդ առջևէն գացած ապեղ ,

*Կահ , Եհովա , այսինքն , ՈՐ ԷՆ

Անապատէն անցած աստեղ, (Սէլա,) 8 - Երկիր շարժեցաւ, երկինք ալ շաղ կաթեցուց Աստուծոյ երեսէն .

Սինա ալ շարժեցաւ - Աստուծոյ, Իսրայէլի Աստուծոյն, առջևէն:

9 - Ով Աստուած, քու ժառանգութեանդ առատօրէն անձրև տալով,

Երբ յագնած էր, դուն հաստատեցիր զանիկա:

10 - Քու ժողովուրդդ անոր մէջ բնակեցաւ .

Քու քաղցրութիւնովդ աղքատին համար պատրաստեցիր, ով Աստուած:

11 - Տէրը պատգամ տուաւ. Աւետիս տառազները մեծ բազմութիւն են:

12 - Զօրքերուն թագաւորները կը փախչին.

Կը փախչին, ու տան մէջ բնակող Կեանքը կը բաժնէ:

13 - Թէև գոմերուն մէջտեղը պառկած ըլլաք,

Աղանիի թևերուն պէս պիտի ըլլաք արծաթով պատած,

Ու անոր փետուրները դեղին տակով:

14 - Ամենակարողին՝ այն երբեք զրոյ թագաւորները ցրուած աստեղ, Երկր Սելմոնի մէջի ձիւնին պէս ճերմակցաւ:

15 - Աստուծոյ լեռը Բաասն լեռն է, Բազմադադաթ լեռը Բաասն լեռն է:

16 - Ով բազմադադաթ լեռներ, ինչո՞ւ նախանձով կը նայիք.

Աստուծոյն այն լեռն է՝ որուն մէջ Աստուած հաճեցաւ բնակիլ.

Յիրաւի Տէրը հոն պիտի բնակի յաւիտեան:

17 - Աստուծոյ կառքերը երկու անգամ տասը հազար են, *հազար հազարաց:

Տէրը անոնց մէջ է, իր սուրբ տեղն է Երբեք Սինայի մէջ:

18 - Բարձր տեղը ելար, գերութիւնը գերի ըրիր,

Պարգևներ տալիս մարդոց համար, Ու ապաստաններուն համար ալ,

Որպէս զի Տէր Աստուած անոնց մէջ բնակի:

19 - Տէրը օրհնեալ ըլլայ *օրէ օր. Եթէ Գեւ բեռ մը դնէ մեր վրայ, Աստուած է մեր փրկիչը: (Սէլա):

20 - Աստուած մեզի փրկութեան Աստուած է,

Ու մահուանէ ազատուիր Տէր Եհովայէ է:

21 - Սակայն Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն գլուխը,

Նաև իր անօրէնութիւններուն մէջ պարտողին զիտաւոր գագաթը:

22 - Տէրը ըսաւ, Զանձ Բաասնէ ետ դարձնեմ.

Ծովուն անդունդներէն ետ դարձնեմ.

23 - Այնպէս որ սաքս արեան մէջ թաթխուի,

Նուներուդ լեզուն թշնամիներէն իր բաժինը առնէ:

24 - Քու քաղաւածքներդ տեսան, ով Աստուած,

Իմ Աստուծոյս, իմ Թագաւորիս, քաղաւածքները սուրբ տեղին մէջ:

25 - Առջևէն երգեցողները գացին, Ետևէն նուագածունները՝

Թմբուկ զարնող կոյտերուն մէջտեղը:

26 - Ժողովուրդներուն մէջ օրհնեցէք զԱստուած,

Տէրը, ով Իսրայէլի աղբիւրէն եղողներ:

27 - Այն տեղ է փոքր Բենիամինը, անոնց տիրապետողը,

Յուդոյի իշխանները իրենց բազմութիւնովը,

Զարուղանի իշխանները - Նեփթալիմի իշխանները:

28 - Քու Աստուածդ քու զօրութիւնդ հաստատեց.

Զօրացուր, ով Աստուած, այն բանը զոր մեզի համար ըրիր:

29 - Երուսաղէմ՝ եղող տաճարիդ համար

Թագաւորները քեզի ընծաներ պիտի բերեն:

30 - Եղեգներու մէջ Բնակող գազանները, ու ցուլերուն ժողովքը

Ժողովրդոց զուարակներուն հետ սատակէ,

Որպէս զի խոնարհին՝ արծաթի կտորներ բերելով.

Պատերազմ սիրող ժողովուրդները ցրուէ:

*Կամ, հազարաւոր հրեշտակներ

*Կամ, որ օրէ օր մեր վրայ Բարեբերութեան բեռ կը դնէ

- 31 - Եգիպտոսէ ազնուականներ պիտի գան .
- Եթէ ով պիտի իր ձեռքերը շուտով Աստուծոյ պիտի երկնցնէ :
- 32 - Ով երկրի թագաւորութիւններ , երգեցէք Աստուծոյ , Սողմնս ըսէք Տէրոջը , (Սէլա ,)
- 33 - Անոր՝ որ ի յաւիտենից երկինքներուն երկնից վրայ *կը նստի , Ահա անիկա իր ձայնովը զօրաւոր ձայն կու տայ :
- 34 - Զօրութիւն տուէք Աստուծոյ . Անոր մեծ վայելչութիւնը Խորայէլի վրայ է ,
- Ու անոր զօրութիւնը ամպերուն մէջ է :
- 35 - Ահաւոր ես , ով Աստուած , քու սուրբ տեղերուդ մէջ .
- Խորայէլի Աստուածը
- Ինք կու տայ իր ժողովուրդին ոյժ ու կարողութիւն .
- Աստուած օրհնեալ ըլլայ .

ՍԱՂՄ. ԿԹ

Գլխաւոր երաժշտին, Ծօղանիսի վրայ. Սաղմոս Գաւթի :

- Ա**պրեցուր զիս , ով Աստուած , Վասն զի ջուրերը իմ անձիս հասան :
- 2 - Խորունկ ցեխի մէջ կ'ընկղմիմ , Ուր կայնելու *եղ չկայ .
- Զուրերուն խորունկ տեղերը մտայ , Ու յորձանքները զիս ընկղմեցին :
- 3 - Յոգնեցայ ես կանչելէս , կոկորդոս ցամքեցաւ ,
- Աչքերս նուաղեցան իմ Աստուծոյս սպասելէն :
- 4 - Աւանց պատճառի զիս ատողները գլխուս մտղերէն շատ են .
- Զիս փուճ տեղ կորսնցնող թշնամիներս զօրացան .
- Այն բանը զոր չէի յափշտակեր , այն ատեն վճարեցի :
- 5 - Ով Աստուած , իմ յիմարութիւնս դուն գիտես ,
- Ու յանցանքներս քեզմէ ծածկուած չեն :
- 6 - Քեզի համբերողները իմ պատճառաւս չամչնան ,
- Ով Տէր , զօրաց Տէրը .
- *Քեզ փնտառողները իմ պատճառաւս ամօթով չըլլան ,

*Եբր. կը հեծնէ

- Ով Խորայէլի Աստուածը :
- 7 - Վասն զի քեզի համար նախատինքի համբերեցի ,
- Ամօթը ծածկեց իմ երեսս :
- 8 - Եղբայրներուս օտար՝
- Ու մօրս որդիներուն անձանօթ եղայ :
- 9 - Վասն զի քու տանդ նախանձը զիս կերաւ ,
- Ու քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս ինկան :
- 10 - Իմ անձիս ծով պահելովը լացի ,
- Ու այս ինծի նախատինք սեպուեցաւ :
- 11 - Եւ իմ հանդերձս քուրձ ըրի ,
- Ու անանց առակ եղայ :
- 12 - Իսուրը նատողները իմ վրայովս կը խօսին ,
- Ու արբեցողներուն խաղը եղայ :
- 13 - Բայց ես իմ աղօթքս կ'ընեմ քեզի ,
- Ով Տէր , ընդունելի ժամանակին .
- Ով Աստուած , քու մեծ ողորմութիւնսովդ ,
- Քու փրկութեանդ ճշմարտութիւնովը ինծի պատասխան տուր .
- 14 - Հանէ զիս ցեխէն , ու չընկղմիմ .
- Զիս ատողներէն ու խորունկ ջուրերէն ազատուիմ :
- 15 - Զուրերուն յորձանքը թող զիս չընկղմէ ,
- Ու անդունդը զիս չկլլէ ,
- Ու *Չըհորը իր բերանը վրաս չգոցէ :
- 16 - Պատասխան տուր ինծի , ով Տէր , Վասն զի քու ողորմութիւնդ քաղցր է .
- Քու առատ գթութեանդ համեմատ նայէ ինծի .
- 17 - Ու երեսդ մի ծածկեր քու ծառայէդ ,
- Վասն զի ես նեղութեան մէջ եմ .
- Շուտով պատասխան տուր ինծի :
- 18 - Իմ անձիս մօտեցիր * - զանիկա փրկէ .
- Իմ թշնամիներուս համար զիս ազատէ :
- 19 - Իսկն գիտես իմ նախատինքս
- Եւ իմ ամօթս ու իմ խայտառակութիւնս .
- Քու առջևդ են բոլոր զիս նեղողները :
- 20 - Նախատինքը սիրտս կտարեց ու հիւանդ եղայ .
- Վշտակից եղողի մը նայեցայ , բայց չկար ,
- Ու մխիթարութիւն տուողներուն՝ բայց չգտայ :

*Կա՛մ, գուրբը

- 21 - Հապա կերակուրի տեղ թոյն տուին ինծի,
Ու ծարւածատենս քացախ խմցուցին ինծի :
- 22 - Անոնց սեղանը իրենց առջև որդայթ,
Ու յաջողութեան տեղ վարմ' ըլլայ :
- 23 - Անոնց աչքերը մթանան որպէս զի չտեսնեն .
Ու անոնց մէջքերը միշտ դողացուր :
- 24 - Քու սրամտութիւնդ անոնց վրայ թափէ,
Ու սաստիկ բարկութիւնդ անոնց վրայ հասնի :
- 25 - Անոնց բնակարանը աւերակ ըլլայ,
Ու անոնց վրաններուն մէջ բնակող չգտնուի :
- 26 - Վասն զի զայն զոր դուն զարկիր,
անոնք կը հալածեն,
Եւ քու վիրաւորածիդ ցաւին վրայով կը խօսին :
- 27 - Անոնց անօրէնութեանը վրայ անօրէնութիւն գիր,
Եւ քու արդարութեանդ չհասնին :
- 28 - Կենաց գիրքէն թող ջնջուին,
Ու արդարներուն հետ չգրուին :
- 29 - Բայց ես աղքատ ու վշտացած եմ :
Ով Աստուած, քու փրկութիւնդ թող զիս պաշտպանէ :
- 30 - Աստուծոյ անունը պիտի գովեմ երգով,
Ու պիտի բարձրացնեմ զանիկա գոհութիւնով :
- 31 - Ու ասիկա եղջերաւոր «- կճղակաւոր եղէն «- զուարակէն Աւելի ընդունելի պիտի ըլլայ Տէրոջը :
- 32 - Հեղերը պիտի տեսնեն և ուրախանան .
Ով զԱստուած փնտռողներ, ձեր սիրան ալ պիտի ապրի :
- 33 - Վասն զի Տէրը անանկներուն կը լսէ,
Ու իր կոպուածները չանարգեր :
- 34 - Թող գովեն զանիկա երկինք ու երկիր,
Ծով ու բոլոր անոր մէջ շարժողները :
- 35 - Վասն զի Աստուած Սիօնը պիտի փրկէ,
Ու Յուդայի քաղաքները պիտի շինէ .
Եւ հոն պիտի բնակին ու ժառանգեն զանիկա,
- 36 - Եւ իր ծառաներուն սերունդը պիտի ժառանգէ զանիկա,
Ու իր անունը սիրողները անոր մէջ պիտի բնակին :

ՍԱՂՄ. Հ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Գաւթի, յիշատակի համար :

- Ով Աստուած, զիս փրկելու կամ՝ ւրէ,
- Ով Տէր, ինծի օգնելու արարցիր :
- 2 - Թող ամէնան ու խայտառակ ըլլան իմ անձս փնտռողները .
Ես դառնան ու ամօթով ըլլան ինծի չարիք ուղղողները :
- 3 - Թող ամէնալով ես դառնան Անոնք որ ինչէ վա՛շ վա՛շ կ'ըսեն :
- 4 - Ամէն քեզ փնտռողները փեղմով թող ցնծան և ուրախանան .
Եւ քու փրկութիւնդ սիրողները Ամէն ժամանակ թող ըսեն, Աստուած մեծանայ :
- 5 - Բայց ես աղքատ ու տնանկ եմ,
Ով Աստուած, շուտով հասիր ինծի .
Իմ օգնականս ու փրկիչս դուն ես,
Ով Տէր, միուշանար :

ՍԱՂՄ. ՀԱ

- Ով Տէր, քեզի յուսացայ, Չամէնամ յաւիտեան :
- 2 - Քու արդարութիւնովդ զիս ապրեցուր ու ազատէ զիս .
Ականջդ ծուէ ինծի ու փրկէ զիս :
- 3 - Ինծի ապաւինութեան վէ՛մ եղիր ,
Որպէս զի միշտ հոն երթամ .
Դուն հրաման տուիր զիս փրկելու,
Վասն զի իմ վէ՛մն ու բերգս դուն ես :
- 4 - Ով իմ Աստուածս, ամբարշտին ձեռքէն,
Անօրէնին ու բռնաւորին ձեռքէն, զիս փրկէ :
- 5 - Վասն զի իմ ակնկալութիւնս դուն ես, ով Տէր Եհովա .
Մանկութենէս ի վեր իմ յոյսս դուն է .
- 6 - Ես քեզի հաստատուեցայ արգանդէն,
Մօրս որովայնէն իմ պաշտպանս դուն ես .
Իմ գովութիւնս միշտ քու վրայ է :
- 7 - Չարմանայի բանի մը պէս եղայ շատերուն ,
Բայց իմ զօրաւոր ապաւէնս դուն ես :
- 8 - Իերանս քու գովաբանութիւնովդ լցուի,

*Կամ, իրենց ամօթին պատճառաւ

Ամէն օր քու փառաբանութիւնովդ :
 9 - Մերութեան ատենս զիս մի ձգեր .
 Ոյժիս պակասժ ատենը զիս մի թողուր :
 10 - Վասն զի թշնամիներս ինծի համար կը խօսին,
 Ու իմ անձս պաշարողները մէկտեղ խորհուրդ կ'ընեն,
 11 - Ըսելով, Աստուած թողուց զանիկա .
 Հալածեցէք ու բռնեցէք զանիկա,
 Վասն զի ազատող մը չկայ :
 12 - Ով Աստուած, ինձմէ մի հեռանար .
 Ով իմ Աստուածս, ինծի օգնելու արտորցիր :
 13 - Թող ամչնան «- կորսուին իմ անձիս հակառակորդները .
 Նախատինքով ու ամօթով թող ծածկուին ինծի չարութիւն ուզողները :
 14 - Բայց ես ամէն ատեն պիտի յուսամ,
 Եւ քու ամէն գովաբանութիւններուդ վրայ պիտի աւելցնեմ :
 15 - Բերանս պիտի պատմէ քու արգարութիւնդ,
 Ամէն օր քու փրկութիւնդ .
 Վասն զի ես «Եւ» համբանքը չեմ գիտեր :
 16 - Պիտի քայեմ Տէր Եհովայի զօրութիւնովը .
 Քու արգարութիւնդ, միայն քու կինդ, պիտի յիշեմ :
 17 - Ով Աստուած, մանկութենէս ի վեր սորվեցուցիր ինծի .
 Ու մինչև հիմա քու հրաշալի գործերդ պատմեցի :
 18 - Ու հիմա մինչև ծերութեան ու ալեւորութեան ատենս Ձիս մի ձգեր, ով Աստուած,
 Մինչև որ պատմեմ քու *կարողութիւնդ Գաւ- ազին,
 Ե- քու զօրութիւնդ այն ամէնուն որոնք պիտի գան :
 19 - Քու արգարութիւնդ ալ շատ բարձր է, ով Աստուած,
 Որ մեծամեծ բաներ բրիր .
 Քեզի պէս ո՞վ կայ, ով Աստուած :
 20 - Գուն որ շատ ու ծանր նեղութիւններ ցուցուցիր ինծի,
 Նորէն զիս պիտի կենդանացնես,
 Ու երկրի անգուճակներէն նորէն զիս պիտի հանես :

*Եբր. բազուկդ

21 - Իմ մեծութիւնս պիտի շատցնես,
 Ու դառնալով զիս պիտի միխթարես :
 22 - Ուստի ես ալ պիտի գովեմ քեզ տաւիղով
 Քու ճշմարտութեանդ համար, ով իմ Աստուածս .
 Սաղմոս պիտի երգեմ քեզի քնարով,
 Ով Խորայէլի Սուրբը :
 23 - Քեզի սաղմոս երգած ատենս իմ շրթունքներս պիտի ցնծան,
 Ու իմ հոգիս՝ զոր դուն փրկեցիր :
 24 - Իմ լեզուս ալ ամէն օր քու արգարութիւնդ պիտի խօսի,
 Վասն զի ինծի չարիք ուզողները ամբլջան ու խայտառակ եղան :

ՍԱՂՄ. ՀԲ

*Սողոմոնի համար :

Ով Աստուած, քու դատաստաններդ թագաւորին տուր,
 Ու արգարութիւնը՝ թագաւորին որդւոյն :
 2 - Անիկա արգարութիւնով պիտի դատէ քու ժողովուրդդ,
 Ու աղքատներդ՝ իրաւունքով :
 3 - Լեռները խաղաղութիւն պիտի բուսցնեն ժողովուրդին,
 Ու բլուրներն ալ՝ արգարութիւնով :
 4 - Ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ,
 Տնանկին զաւակները պիտի ազատէ,
 Ու բռնաւորը պիտի ջարդէ :
 5 - Քեզմէ պիտի վախնան քանի որ արեգակը ու լուսինը կը մնան,
 Ազգէ մինչև ազգ :
 6 - Հնձուած խօտի վրայ էջա՞ անձրևի պէս պիտի իջնէ,
 Տարափներու պէս՝ «Եւ» երկիրը կը թրջեն :
 7 - Անոր օրերուն մէջ արգարը պիտի ծաղկի .
 Ու շատ խաղաղութիւն պիտի ըլլայ,
 Մինչև որ ալ լուսին չըլլայ :
 8 - Ու ծովէն մինչև ծովը պիտի տիրէ անիկա,
 Ու Գեաէն մինչև երկրի ծայրերը :
 9 - Անոր սու ջև անապատին ընակիչները ծունկ պիտի կրկնեն :

*Կա՛մ, Սողոմոնի Սաղմոսը

Ու անոր թշնամիները փոշի պիտի լզեն :
10 - Թարսիսի ու կզզիներուն թագաւորները ընծայ պիտի մատուցանեն :

Շաբայի ու Սաբայի թագաւորները պարգև պիտի բերեն :

11 - Ու բոլոր թագաւորները անոր երկրպագութիւն պիտի ընեն :

Բոլոր ազգերը անոր պիտի ծառայեն :

12 - Վասն զի աղքատը պիտի փրկէ աղաղակելու տանը ,

Խեղճն ալ , ու զանիկա ալ որ օգնութիւն չունի :

13 - Պիտի խղճայ աղքատին ու անանկին ,

Եւ անանկներուն անձերը պիտի ազատէ :

14 - Հարստահարութենէ ու բռնութենէ պիտի փրկէ անոնց անձը ,

Եւ անոնց արիւնը պատուական պիտի ըլլայ անոր առջև :

15 - Ու պիտի ապրի , և Շաբայի սակիէն անոր պիտի արուի :

Ու ամէն տան աղօթք պիտի մատուցուի անոր համար :

Ամէն օր պիտի օրհնեն զանիկա :

16 - Յորենի առատութիւն պիտի ըլլայ երկրի մէջ՝

Լեռներուն գլուխը .
Անոր պտուղը Լիբանանի պէս պիտի շարժի :

Ու գետնի խոտին պէս պիտի ծաղկին քաղաքացիները :

17 - Անոր անունը յաւիտեան պիտի մնայ .

Քանի որ արեգակը չը հաւ , անոր անունն ալ պիտի մնայ :

Ու հարքի՜ անով պիտի օրհնուին .
Ամէն ազգերը երանութիւն պիտի տան անոր :

18 - Օրհնեալ ըլլայ Տէր Աստուած , Իսրայէլի Աստուածը .

Միայն ինքն է հրաշքներ ընողը :

19 - Ու օրհնեալ ըլլայ յաւիտեան անոր փառաւոր անունը ,

Ու բոլոր երկիր թող լցուի անոր փառքովը : Ամէն ու ամէն :

20 - Յետէի որդւոյն Իսրայէլի աղօթքները լմնցան :

ՍԱՂՄ. 29.

Սաղմոս Ասափայ :

Յիրաւի Աստուած բարի է Իսրայէլի ,

Այսինքն սրտով մաքուր եղողներուն :

2 - Բայց քիչ մնաց որ իմ՝ ոտքերս պիտի ծռէին ,

Ու մազ մնաց որ իմ՝ քայլերս գայթակղէին :

3 - Վասն զի նախանձեցայ հպարտներուն ,

Եւք ամբարիշտներուն յաջողութիւնը տեսայ .

4 - Քանզի իրենց մահուան ժամանակն ալ ցաւեր չունին .

Մարմիննին ալ պարարտ է :

5 - Անոնք մարդոց նեղութեանը մէջ չեն ,

Եւ որչի մարդոց հետ չեն տանջուիր :

6 - Անոր համար վզնոցի պէս ամբարտաւանութիւնը զանոնք կը շրջապատէ .

Բռնութիւնը հանդերձի պէս զանոնք կը ծածկէ :

7 - Անոնց աչքերը պարարտութենէն դուրս կ'ելլեն .

Անոնք սրտի խորհուրդներէն անդին կ'անցնին :

8 - Ծաղր կ'ընեն ու չարութիւնով կը խօսին բռնութեան համար ,

Հպարտութիւնով կը խօսին :

9 - Բերաննին երկինքի դէմ՝ կը դնեն ,

Ու իրենց լեզուն երկրի մէջ կը պտրտի :

10 - (Անոր համար իր ժողովուրդը հոս պիտի դառնայ ,

Ու առատութիւնով ջուր պիտի քամուի անոնց) :

11 - Ու կ'ըսեն , Աստուած ի՞նչպէս գիտէ .

Ու Բարձրելոյն քով գիտութիւն կա՞յ :

12 - Ահա անոնք են ամբարիշտները ,

Որ միշտ յաջողութիւն ունին , ու հարստութիւն կ'աւելցնեն :

13 - Յիրաւի զուր տեղը իմ՝ սիրտս մաքրեցի ,

Ու իմ՝ ձեռքերս անմեղութիւնով լուացի .

14 - Որովհետեւ ամէն օր կը տանջուիմ ,

Ու ամէն առտու կը խրատուիմ :

15 - Եթէ ըսէի թէ ես այսպէս խօսիմ ,

Ահա քու որդիներուդ ազգին նենդութիւն ըրած պիտի ըլլայի :

*Եբր. քաղաքէն

- 16 - Երբ խորհեցայ տաիկա իմանալու,
Դժուար եկաւ իմ աչքերուս:
- 17 - Մինչև որ Աստուծոյ սրբարանը
մտայ ,
- Ու անոնց վերջը իմացայ :
- 18 - Իրաւ որ դուն զանոնք սահելու
տեղերը դրեր ես :
- Կործանման մէջ իջեցուր զանոնք :
- 19 - Ինչպէս յանկարծակի աւերմունքի
մէջ ինկան :
- Հատան ու վախերով կորսուեցան :
- 20 - Ինչպէս երազ մը Բարդուէն ար-
թըննալէն ետքը ,
- Ով Տէր, * քաղաքին մէջ՝ անոնց պատ-
կերը « յիպե » պիտի անարգես :
- 21 - Բայց իմ սիրտս ցաւեցաւ ,
Ու իմ երիկամունքներէս խոցուեցայ :
- 22 - Ու ես յիմար էի ու չէի իմանար ,
Քու առջևդ անասուններու պէ՞ էի :
- 23 - Սակայն ես միշտ քեզի հեա եմ ,
Դուն իմ աջ ձեռքէս կը բռնես :
- 24 - Դուն պիտի առաջնորդես ինծի
քու խորհրդովդ ,
- Ու վերջը փառքով զիս պիտի ընդունիս :
- 25 - Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ .
Երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ու-
զեր :
- 26 - Իմ մարմինս ու սիրտս կը մտշին ,
Բայց Աստուած իմ սրտիս զօրութիւնը
ու իմ բաժինս է յաւիտեան :
- 27 - Վասն զի ահա անոնք որ քեզմէ
կը հեռանան , կը կորսուին .
Դուն կը ստակեցնես ամէնը որ շնու-
թիւն կ'ընեն՝ քեզմէ Բարդուէն :
- 28 - Բայց Աստուծոյ մօտենալս բարի է
ինծի .
- Յոյսս դրեր եմ Տէր Եհովայի վրայ ,
Որպէս զի քու բոլոր գործերդ պատ-
մեմ :

ՍԱՂՄ. ՀԳ

Երգ Ասափայ :

Ով Աստուած , ինչո՞ւ Բզ բոլորովին
մերժեցիր ,

- Ո - բարկութիւնդ կը միայ քու արօ-
տիդ ոչխարներուն վրայ :
- 2 - Յիշէ քու ժողովուրդդ զբ սկիզբէն
ստացեր ես ,
- Քու ժառանգութեանդ վիճակը զբ
փրկեր ես ,

*Կա՛մ, արթննալով . Սաղմ. հր. 65 :

- Ո - այս Սիօն լեւը ուր բնակեր ես :
- 3 - Բարձրացուր քու քայլերդ դէպ ի
բոլորովին աւրուածները ,
- Ո - սուրբ տեղին մէջ թշնամիին ըրած
բոլոր գէշ գործերը :
- 4 - Քու թշնամիներդ կը պռսան քու
ժողովքիդ մէջ .
Իրենց նշանները նշանի րեւ կը դնեն :
- 5 - Անիկա անտառի ծառերուն վրայ
Կացիններ վերցնողի մը պէս գիացուե-
ցաւ .
- 6 - Ու հիմա անոր քանդակագործ զար-
դերը ,
Ամէնը մէկէն , կացիններով ու մուր-
ճերով կը կտարտեն :
- 7 - Կրակով այրեցին քու սրբարանդ .
Մինչև գետինը կործանեցին քու ան-
ուանդ բնակարանը :
- 8 - Իրենց սրտերուն մէջ ըսին թէ Կոր-
սընցնենք ասոնք ամէնը մէկտեղ .
Երկրին մէջ Աստուծոյ բոլոր ժողովա-
րաները այրեցին :
- 9 - Մեր նշանները չենք տեսներ .
Այ մարգարէ չկայ .
Ու մեր քով մէկն ալ չկայ ,
Որ գիանայ թէ « ի՞նչ » մինչև ե՛րբ պիտի
րեւէ :
- 10 - Ով Աստուած , մինչև ե՞րբ նա-
խատինք պիտի ընէ նեղիշը .
Թշնամին մինչև յաւիտեան քու ա-
նունդ պիտի անարգէ՞ :
- 11 - Ինչո՞ւ ես կը քաշես քու ձեռքդ
ու աջ ձեռքդ .
Զանիկա ծոցեդ հանէ « - կորսնցուր զա-
նան » :
- 12 - Բայց սկիզբէն իմ թագաւորս
Աստուած է ,
Որ փրկութիւններ կ'ընէ երկրի մէջ :
- 13 - Դուն քու զօրութիւնովդ ծովը
պատաւեցիր ,
Վիշապներուն գլուխները ջուրերուն
մէջ փշրեցիր :
- 14 - Դուն ջարդեցիր Լևիթանի գլուխ-
ները .
Զանիկա կերակուր ըլլալու տուիր ա-
նապատին մէջի ժողովուրդին :
- 15 - Դուն ճեղքեցիր աղբիւրը ու
վտակը ,
Դուն չորցուցիր մշանջենաւոր գետերը :
- 16 - Քու կո է ցորեկը , և քու կո է գի-
շերը .
Լոյսը ու արևը դուն պատրաստեցիր :
- 17 - Դուն հաստատեցիր երկրի ամէն
սահմանները .

- Ամառը ու ձմեռը դուն ստեղծեցիր:
- 18 - Յիշէ տարկա՝ որ թշնամին նախատինք տուաւ Տէրոջը ,
Ու յիմար ժողովուրդը քու անունդ անարգեց :
- 19 - Մի մտաներ գազանին քու տատրակիդ անձը .
Մի մտանար յաւիտեան քու աղքատներուդ *կեանքը :
- 20 - Նայէ +* - ուխտիդ , վասն զի երկրի խաւար տեղերը
Բռնութեան բնակարաններով լցուած են :
- 21 - Թող խեղճը ետ չդառնայ ամօթով .
Թող աղքատը ու անանկը օրհնեն քու անունդ :
- 22 - Ելիր , ով Աստուած , քու դատդ պաշտպանէ .
Յիշէ այն նախատինքը՝ զոր անզգամբ ամէն օր քեզի կ'ընէ :
- 23 - Մի մտանար քու թշնամիներուդ ձայնը .
Քեզի դէմ՝ ոտք ելլողներուն խռովութիւնը ամէն ժամանակ կը բարձրանայ :

ՍՍՂՄ. ՀԵ

Գլխաւոր երաժշտին. Ալ-թաշէթ, Ասափի Սաղմուր -- երգը:

- Կը գովենք քեզ , ով Աստուած ,
Կը գովենք , և քու անունդ մօտ է .
Քու Տրաշքներդ կը պատմունին :
- 2 - Երբ սրոշեալ ժամանակ ունենամ՝
Ուզիզ դատաստան պիտի տեսնեմ :
- 3 - Երկիր ու անոր բոլոր բնակիչները մտչեցան .
Անոր սիւները ես կը հաստատեմ :
(Սէլա :
- 4 - Ըսի հպարտներուն թէ Հպարտութիւն մի բնէք .
Ու ամբարիշտներուն՝ թէ Եղջիւր մի վերցնէք :
- 5 - Ձեր եղջիւրները վեր մի վերցնէք .
Ամբարտաւան պարանոցով մի խօսիք :
- 6 - Վասն զի բարձրանալը ոչ արեւելքէն է
Եւ ոչ արեւմուտքէն , ոչ ալ անապատէն ,
7 - Հապա դատաւորը Աստուած է .

*Կա՛մ, ժողովր

- Մէկը կը ցածցնէ , ու միւսը կը բարձրացնէ :
- 8 - Վասն զի Տէրոջը ձեռքը բաժակ կայ , ու գինին կարմիր է .
Անիկա խառնուածքով լեցուն է , ու անկէ կը թափէ .
Եւ իրաւ երկրի բոլոր ամբարիշտները
Անոր մրուրները քամելով պիտի խմեն :
- 9 - Բայց ես յաւիտեան պիտի պատմեմ .
Յակօրի Աստուծոյն սաղմոս պիտի երգեմ :
- 10 - Ու ամբարիշտներուն բոլոր եղջիւրները պիտի փշրեմ ,
Արդարին եղջիւրները պիտի բարձրանան :

ՍՍՂՄ. ՀԶ

Գլխաւոր երաժշտին , Նկինօթի վրայ . Ասափի Սաղմուր -- երգը:

Աստուած Յուդայի մէջ ճանչցուած է .

Անոր անունը Իսրայէլի մէջ մեծ է :

2 - Ու անոր խորանը Սաղէմի մէջ է ,
Եւ անոր բնակարանը Սիօնի մէջ է :

3 - Այն տեղը ջարդեց աղեղին նետերը ,
Վահանը , սուրը ու պատերազմը :

(Սէլա :

4 - Դուն լուսափայլ ես ,
Յափշտակութեան լեռներէն աւելի գերազանց ես :

5 - Սրտով զօրաւորները յափշտակուեցան ,
Քուներնին քնացան .
Ու բոլոր զօրեղ մարդիկը ձեռքերնին չգտան :

6 - Ով Յակօրի Աստուածը , քու յանդիմանելէդ
Կառքը ու ձին անզգայ պառկեցան :

7 - Դուն , *Վ Տէր , դուն ահաւոր ես ,
Եւ ո՞վ կրնայ կայնիլ քու առջևդ՝
քու բարկութեանդ առեմը :

8 - Դուն երկինքէն լսել տուիր դատաստանը .
Երկիր վախցաւ ու լռեց ,
9 - Երբ Աստուած դատաստան ընելու ելաւ ,
Որպէս զի երկրի բոլոր *հեղերը փրկէ :
(Սէլա :

*Կա՛մ, խեղճերը

10 - Իրաւցընէ մարդուն բարկութիւնը քեզ պիտի գովէ .

Ո - մնացած բարկութիւնը դուն պիտի զսպես :

11 - Ուխտ ըրէք ու կատարեցէք ձեր Տէր Աստուծոյն .

Անոր բոլորտիքը եղողներուն ամէնը թող ընծաներ բերեն Ահաւորին :

12 - Ինք իշխաններուն հոգին պիտի կտրէ .

Ահաւոր է երկրի թագաւորներուն :

ՍԱՂՄ. ՀԵ

Գլխաւոր երաժշտին, Իգիթունի վրայ. Ասափի Սաղմոսը :

Իմ ձայնս Աստուծոյ է, ու ես կ'ազաղակեմ .

Իմ ձայնս Աստուծոյ է, ու ան ինծի պիտի լսէ :

2 - Իմ նեղութեանս օրը Տէրը փնտռեցի . Գիշերը տարածուած էր իմ ձեռքս ու չէր թուլնար .

Իմ անձս միթարուիլ չէր ուզեր :

3 - ԶԱստուած յիշեցի ու անհանգիստ եղայ .

Խորհեցայ ու իմ հոգիս մտրեցաւ : (Սէլա) :

4 - Իմ աչքերս արթուն պահեցիր .

Խռովեցայ ու չկրցայ խօսիլ :

5 - Միտքս բերի առաջուան օրերը , Հին ժամանակներուն տարիները :

6 - Գիշերուան մէջ կը յիշեմ իմ երգս . Իմ սրտիս հետ կը խօսիմ :

Ու իմ հոգիս ալ քննութիւն կ'ընէ :

7 - Արգեօք Տէրը յաւիտեան պիտի մերժէ՞ ,

Ու ալ բնաւ պիտի չհաճի՞ :

8 - Միթէ անոր սղորմութիւնը բոլորովին պակսեցա՞ւ ,

Ո - եր խոստմունքը վերջացա՞ւ ազգէ մինչև ազգ :

9 - Միթէ Աստուած գթութիւն ընելը մոռցա՞ւ ,

Միթէ բարկութիւնով արգիլե՞ց իր սղորմութիւնը : (Սէլա) :

10 - Ուստի բսի , Այս է իմ տկարութիւնս ,

*Բարձրելոյն աջ ձեռքին փոփոխութիւնը :

11 - Տէրոջը գործերը պիտի յիշեմ .

Յիրաւի քու առաջուան հրաշքներդ պիտի յիշեմ :

12 - Բոլոր գործերուդ վրայ պիտի խորհիմ ,

Ու քու ըրածներուդ վրայ պիտի մտածեմ :

13 - Ով Աստուած , քու ճամբադ սրբութեան մէջ է .

Աստուծոյ պէս մեծ Աստուած ո՞վ կայ :

14 - Հրաշքներ ընող Աստուածը դուն ես .

Քու զօրութիւնդ ժողովուրդներուն մէջ ցուցուցիր :

15 - Քու բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ :

Յակօբի ու Յովսէփի որդիները : (Սէլա) :

16 - Զուրերը քեզ տեսան , ով Աստուած ,

Զուրերը քեզ տեսան ու դողացին . Անդունդներն ալ սարսափեցան :

17 - Սմայերը ջուր թափեցին . Երկինքները ձայն հանեցին .

Նետերդ ալ գացին :

18 - Քու սրտամունքիդ ձայնը *երկինքն էր .

Փայլակները լոյս տուին աշխարհի . Երկիր սասանեցաւ ու դողաց :

19 - Քու ճանապարհդ ծովուն մէջ է , Իւ քու ճամբադ մեծ ջուրերուն մէջ է .

Ու քու շաւիղներդ չեն գիտցուիր :

20 - Հօտի պէս քու ժողովուրդիդ առաջնորդեցիր

Մովսէսի ու Ահարոնի ձեռքով :

ՍԱՂՄ. ՀԸ

Երգ Ասափայ :

Ով իմ ժողովուրդս , մտիկ ըրէք իմ Ժօրէնքս ,

Խոնարհեցուցէք ձեր տկանջը իմ բերնիս խօսքերուն :

2 - Առակով պիտի բանամ իմ բերանս ,

Ո - հին ժամանակի խրթնարանութիւնները պիտի խօսիմ .

3 - Զորսնք լսեցինք ու գիտցանք , Իւ մեր հայրերը մեզի պատմեցին :

4 - Մենք պիտի չարահանք անանց որդիներէն .

*Կամ, Ասափայ Բարձրելոյն աջ ձեռքին տարիները պէտէ յիշեմ

*Կամ, մըրիկի մէջ Կամ, վարժութիւնս

Ետքի եկող ազգին պիտի պատմենք
Տէրոջը գովութիւնները ու անոր զօ-
րութիւնը

Եւ անոր բրած հրաշքները :

5 - Վասն զի վկայութիւն հաստա-
տեց Յակոբի մէջ,

Ու օրէնք դրաւ Խորայէլի մէջ,
Զորոնք պատուիրեց մեր հայրերուն,
Որպէս զի սորվեցնեն իրենց որդիներուն .

6 - Որպէս զի գալու ազգը , ծնանելու
աղաքը . « ան » իմանան ,

Ու ելլեն իրենց որդիներուն պատմեն .

7 - Անոնք ալ իրենց յոյսը Աստուծոյ
վրայ դնելով

Զմուռնան Աստուծոյ գործերը ,
Հապա անոր պատուիրանքները պահեն .

8 - Ու իրենց հայրերուն պէս
Կամակոր ու ապատամբ ազգ մը չըլլան ,
Այնպէս ազգ մը՝ որ իրենց սիրտը չեն
շիտկած ,

Ու իրենց հոգին հաւատարիմ չէ Աս-
տուծոյ :

9 - Եփրեմի որդիները , « ան » սպա-
ռազինեալ աղեղնաւորներ էին ,
Պատերազմին օրը ետ դարձան .

10 - Աստուծոյ ուխտը չպահեցին ,
Ու անոր օրէնքին համեմատ չուզեցին
բալել .

11 - Ու մոռցան անոր գործերը ,
Եւ անոր հրաշքները զորոնք իրենց
ցուցուցեր էր :

12 - Անոնց հայրերուն առջև հրաշք-
ներ բրաւ ,
Եգիպտոսի երկրին , Տայանիսի դաշտին ,
մէջ :

13 - Ծովը պատուեց ու զանոնք ան-
ցուց ,
Եւ ջուրերն ալ դէզի պէս կանգնեցուց :

14 - Ու ցորեկը ամպով առաջնորդեց
անոնց ,
Եւ բոլոր դիշերը կրակի լուսով :

15 - Վէմերը պատուեց անապատին
մէջ ,
Ու խմցուց անոնց իբր թէ մեծ ան-
դունդէ մը :

16 - Եւ առուններ հանեց վէմէն ,
Ու ջուրերը գետերու պէս բոխեցուց :

17 - Բայց անոնք՝ նորէն մեղքերնին
աւելցուցին անոր դէմ ,
Ու բարկացուցին Բարձրեալը անապա-
տին մէջ .

18 - Եւ իրենց սիրտերուն մէջ զԱստ-
ուած փորձեցին ,

Կերակուր ուղելով իրենց անձերուն
համար .

19 - Եւ Աստուծոյ դէմ խօսեցան «-
բին ,
Միթէ կարող է Աստուած
Անապատին մէջ սեղան պատրաս-
տել .

20 - Ահա վէմին զարկաւ , ու ջու-
րերը դուրս բոխեցին ,
Ու առունները վազեցին .
Արդեօք հաց ալ կրնա՞յ տալ .
Արդեօք միս կը պատրաստէ՞ իր ժո-
ղովուրդին համար :

21 - Ուստի Տէրը լսեց ու բարկա-
ցաւ .
Եւ կրակ բորբոքեցաւ Յակոբի մէջ ,
Ու նաև բարկութիւն ելաւ Խորայէլի
վրայ .

22 - Վասն զի Աստուծոյ չհաւատա-
ցին ,
Ու յոյսերնին անոր փրկութեանը վրայ
չդրին .

23 - Թէպէտ ինք վերէն հրաման բեր-
էր ամպերուն ,
Ու երկինքի դռները բացեր էր ,
24 - Եւ կերակուրի համար անոնց վրայ
մանանայ տեղացեր էր ,
Ու երկինքի ցորենը տուեր էր անոնց ,

25 - *Մարդիկ հրեշտակներուն հացը
կերան՝ .
Կշտանալու չափ պաշար զրկեց անոնց :

26 - Երկինքի մէջ արևելեան հովը
հանեց ,
Եւ իր զօրութիւնովը հարաւային հովը
բերաւ .

27 - Եւ անոնց վրայ փոշիի պէս միս
տեղաց ,
Ու ծովու աւազին չափ թեւաւոր
թռչուններ ,

28 - Եւ անոնց բանակին մէջ ,
Անոնց վրաններուն չորս կողմը , իջե-
ցուց :

29 - Ու կերան և աղէկ կշտացան .
Ու իրենց ցանկութիւնը իրենց առաւ .

30 - Իրենց ցանկութեանէն զուրկ չմնա-
ցին .
Եւ քանի որ իրենց կերակուրը իրենց
բերանն էր ,

31 - Աստուծոյ բարկութիւնը անոնց
վրայ բորբոքեցաւ ,
Ու սպաննեց անոնց պարտարաներէն ,

*Կա՞մ , Անոնց ամէն մէկը ազնուական-
ներուն հացը կերան

Ու գետինը զարկաւ Իսրայէլի ընտիր-
ները :

32 - Այս բոլոր բաներուն վրայ նո-
րէն մեղանչեցին ,

Ու չհաւատացին անոր հրաշքներուն :

33 - Եւ ունայնութեան մէջ սպառեց
անոնց օրերը ,

Եւ ահի մէջ՝ անոնց տարիները :

34 - Երբ կը սպաննէր զանոնք, զինք կը
խնդրէին .

Ու ետ կը դառնային, և զԱստուած
կանուխ կը փնտռէին :

35 - Ու կը յիշէին որ Աստուած իրենց
Վէմն էր ,

Եւ Բարձրեայ Աստուածը իրենց Փր-
կիչն էր :

36 - Սակայն իրենց բերնովը կեղծա-
ւորութիւն կ'ընէին անոր ,

Ու իրենց լեզուովը սուտ կը խօսէին ա-
նոր .

37 - Եւ իրենց սիրտը ուղիղ չէր անոր
առջև ,

Ու հաւատարիմ՝ չէին անոր ուխտին
մէջ :

38 - Բայց ինք սղարմած ըլլալով՝ ա-
նոնց անօրէնութիւնը կը քաւէր ,

Ու չէր կորսնցներ զանոնք .

Եւ շատ անգամ կը դարձնէր իր բար-
կութիւնը ,

Ու չէր բորբոքեցնէր իր բոլոր սրտմը-
տութիւնը ,

39 - Վասն զի կը յիշէր թէ անոնք
մարմին են ,

Հովի մը պէ՞ որ կ'երթայ ու ետ չդառ-
նար :

40 - Քանի՜ անգամ զանհկա սրգող-
ցուցին անապատին մէջ ,

Ու բարկացուցին զանհկա անջուր տե-
ղին մէջ ,

41 - Եւ դարձան զԱստուած փորձե-
ցին ,

Ու Իսրայէլի Սուրբը նեղացուցին :

42 - Չյիշեցին անոր ձեռքը ,

Ու այն օրը՝ որ զիրենք թշնամիէն
փրկեց .

43 - Եւ թէ ի՞նչպէս իր նշանները
բրաւ Եգիպտոսի մէջ ,

Ու իր հրաշքները՝ Տայանիօի դաշտին
մէջ .

44 - Ու արիւն դարձուց անոնց գե-
տերը

Եւ անոնց առունները, որ չկրցան խմել .

45 - Շանաճանճներ զրկեց անոնց վրայ ,
որոնք կերան զանոնք ,

Ու գորտեր՝ որոնք սպականեցին զա-
նոնք .

46 - Ու անոնց բերքը գրուիճին տուաւ ,
Եւ անոնց վաստակը՝ մարտիին .

47 - Անոնց սրթերը փճացուց կարկու-
տով ,

Ու անոնց ժանտաթ զենիները՝ խոշոր
կարկուտով .

48 - Եւ անոնց անատունները կարկու-
տին մատնեց ,

Ու անոնց հօտերը՝ կայծակին :

49 - Իր սաստիկ բարկութիւնը զրկեց
անոնց վրայ ,

Արտմտութիւն ու բարկութիւն ու նե-
ղութիւն ,

*Չար հրեշտակները զրկելով :

50 - Իր բարկութեանը ճամբայ բա-
ցաւ .

Անոնց անձր մահուանէ չինայեց ,
Հապա անոնց չկեանքը ժանտախտի
մատնեց .

51 - Ու ամէն անգրանիկը սպաննեց
Եգիպտոսի մէջ ,

Եւ չառջինեկները՝ Քամի վրաններուն
մէջ .

52 - Ու իր ժողովուրդը սխարներու
պէս հանեց ,

Ու զանոնք հօտի պէս վարեց անապա-
տին մէջ .

53 - Եւ անոնց սպահովութեամբ ա-
ռաջնորդեց, ու չվախցան .

Իսկ անոնց թշնամիները ծովը ծածկեց .

54 - Ու զանոնք տարաւ իր սրբութեան
սահմանը ,

Այն լեռը՝ զոր իր աջ ձեռքը ստացեր
էր .

55 - Ու անոնց առջևէն սպգեր վառն-
տեց ,

Եւ չափով ժառանգութիւն բաժնեց
անոնց ,

Ու Իսրայէլի ցեղերը անոնց վրաննե-
րուն մէջ բնակեցուց :

56 - Բայց անոնք փորձեցին ու սրգող-
ցուցին Բարձրեայ Աստուածը

Ու չպահեցին անոր վկայութիւնները .

57 - Եւ իրենց հայրերուն պէս ետ դար-
ձան ու նենգութիւն ըրին .

Խաբեբայ աղեղի պէս խատրեցան :

58 - Վասն զի զանհկա սրգողցուցին
իրենց բարձր տեղերովը ,

*Կ-ժ, Չարիքներու
+Կ-ժ, անատունները . Եւ. թ. 3, 6:
‡Եբ. զօրութեան սկիզբը

Ու նախանձի շարժեցին զանհկա իրենց կուռքերովը :

59 - Ատառած լսեց ու բարկացաւ ,

Եւ շատ անարգեց Իսրայէլը .

60 - Ու Սելավի խորանը մերժեց , Այն վրանը՝ զոր մարդոց մէջ կանգնեցեր :

61 - Եւ իր զօրութիւնը գերութեան մասանեց ,

Ու իր փառքը՝ թշնամիներուն ձեռքը .

62 - Եւ իր ժողովուրդը սուրի մասանեց ,

Ու իր ժառանգութեանը վրայ բարկացաւ :

63 - Անոր երիտասարդները կրակը կերաւ .

Ու անոր խղիչիկները սուգ չըրին :

64 - Անոր քահանաները սրով ինկան , Ու անոր որբեարիները չլացին :

65 - Բայց Տէրը արթնցաւ որպէս թէ քունէ՝

Գինիէ սթափած զօրաւոր մարդու մը պէս ,

66 - Ու իր թշնամիները ետեւուն զարկաւ .

Յաւիտենական նախատինք տուաւ անոնց :

67 - Եւ Յովսէփի վրանը մերժեց ,

Ու Եփրեմի ցեղը չընարեց .

68 - Հապա Յուդայի ցեղը ընարեց ,

Ու Սիօն լեռը՝ զոր սիրեց .

69 - Եւ իր սրբարանը շինեց բարձր Բլաբեբեբան պէս ,

Երկրի պէս զոր յաւիտեան հաստատեց :

70 - Ու իր Դաւիթ ծառան ընարեց , Եւ զանհկա ոչխարի փարախներէն առաւ .

71 - Ծիծ տուող «Լաբեբեբան» ետեւէն բերաւ զանհկա ,

Որպէս զի իր Յակոբ ժողովուրդը Ու իր Իսրայէլ ժառանգութիւնը հովուէ :

72 - Անհկա ալ հովուեց զանոնք իր սրտին անմեղութիւնովը ,

Ու իր ձեռքերուն յաջողակութիւնովը առաջնորդեց անոնց :

Սաղմոս Ասափայ :

Ով Ատառած, հեթանոսները քու ժառանգութեանդ մէջ մտան, Քու սուրբ տաճարդ պղծեցին, Երուսաղէմը աւերակներու դարձուցին :

2 - Քու ժառանգերուդ դիերը Երկինքի թռչուններուն կերակուր տուին .

Քու սուրբերուդ մարմինը՝ երկրի գազաններուն :

3 - Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմի բոլորափքը ,

Ու մէկը չկար որ զանոնք թողէր :

4 - Մեր գրացիներուն նախատինք եղանք ,

Ծաղր ու կատակ՝ մեր բոլորափքը եղողներուն :

5 - Մինչև ե՞րբ, ով Տէր . միշտ պիտի բարկանա՞ս .

Քու նախանձդ կրակի պէս պիտի բորբոքի՞ :

6 - Թափէ քու բարկութիւնդ այն ազգերուն վրայ՝

Որոնք քեզ չեն ճանչնար ,

Ու այն թագաւորութիւններուն վրայ՝ Որոնք քու անունդ չեն կանչեր :

7 - Վասն զի Յակոբը կերան ,

Ու անոր բնակութիւնը աւերակ դարձուցին :

8 - Մի յիշեր մեզի դէմ առաջուան անօրէնութիւնները .

Թող շուտով հասնին մեզի քու ողորմութիւններդ ,

Վասն զի իրստ թշուառացանք :

9 - Քու անուանդ փառքին համար Օգնէ մեզի, ով մեր փրկութեան Ատառածը .

Եւ քու անուանդ համար փրկէ մեզ ,

Ու մեր մեղքերը քուէ :

10 - Ինչո՞ւ ըսեն հեթանոսները թէ Ո՞ւր է անոնց Ատառածը .

Թող յայանուի հեթանոսներուն մէջ մեր աչքերուն առջև

Քու ժառանգերուդ թափուած արիւնին վրէժը :

11 - Կապուածին հառաչանքը քու առջևդ թող ելլէ .

Քու զօրութեանդ մեծութիւնովը՝ Մահուան մտանուածները՝ ապրեցուր .

*Կա՛մ, անոր

†Կա՛մ, աղջիկներուն համար սուգ ընող չկար

- 12 - Ու եօթնպատիկ հատուցում ըրէ մեր գրացիներուն իրենց ծոցին մէջ
- Այն իրենց նախատինքին Գիւրգէն, որով քեզ անարգեցին, ով Տէր:
- 13 - Բայց մենք, քու ժողովուրդդ ու քու արօտիդ ոչխարները, Յաւիտեան քեզ պիտի գովենք, Ու քու փառքդ պիտի պատմենք ազգէ մինչև ազգ:

ՍՍ.ՂՄ. 2

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմ-էտուծի վրայ. Աստիկ Սաղմուր:

- Ա**հանջ գիր, ով Խորայէլի Հովիւը, Որ Յովսէփի՝ հօտի պէս կ'առաջնորդես. Դուն որ քերովբէից չեայ կը նստիս, պայծառացիր:
- 2 - Եփրեմի ու Բենիամինի և Մանասէի առջև
- Արթնցուր քու զօրութիւնդ, Ու եկուր մեզ փրկելու:
- 3 - Ով Աստուած, մեզ դարձուր, Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք:
- 4 - Ով Տէր, զօրաց Աստուած, Մինչև ե՞րբ կը բարկանաս քու ժողովուրդիդ աղօթքին դէմ:
- 5 - Արտասուքի հաց կը կերցնես անոնց, Ու մեծ չափով արատաւք կը խմցնես անոնց:
- 6 - Մեզ կռիւի պատճառ կ'ընես մեր գրացիներուն, Ու մեր թշնամիները Զեւ ծաղր կ'ընեն իրենց մէջ:
- 7 - Ով զօրաց Աստուած, մեզ դարձուր, Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք:
- 8 - Եգիպտոսէ որթ մը փոխադրեցիր, Հեթանոսները վաճակեցիր ու զանկառ տնկեցիր:
- 9 - Անոր առջևէն Գեղ պատրաստեցիր, Ու անոր արմատները հաստատեցիր. Եւ անիկա երկիրը լեցուց:
- 10 - Լեռները ծածկուեցան անոր հովանիովը, Ու անոր ճիւղերը Աստուծոյ եղևիններուն պէ՞ եղան:
- 11 - Իր ճիւղերը երկնցուց մինչև ծովը, Ու իր բողբոջները՝ մինչև Գետը:
- 12 - Ինչո՞ւ փյուցեցիր անոր ցանկերը,

- Որ ճամբայէն բոլոր անցնողները զանկառ փրցնեն:
- 13 - Անտառին խողը ապականեց զանկառ,
- Ու դաշտի գազանները կերան զանկառ:
- 14 - Ով զօրաց Աստուած, կ'աղաչեմ, դարձիր. Նայէ երկինքէն ու տես, Ու այցելու եղիր այս սրթին,
- 15 - Եւ այս տունկին՝ զոր քու աջ ձեռքովդ տնկեցիր, Ու որդիին՝ զոր քեզի համար հաստատեցիր:
- 16 - Կրակով այրուած ու կտրուած է. Քու երեսիդ սաստեղէն կը կորնչին:
- 17 - Թող քու ձեռքդ քու աջ ձեռքիդ մարդուն վրայ ըլլայ, Ու մարդու որդիին վրայ՝ զոր քեզի համար հաստատեցիր:
- 18 - Մենք ալ ետ պիտի չդառնանք քեզմէ.
- Կենդանացուր մեզ, ու քու անունդ պիտի կանչենք:
- 19 - Ով Տէր, զօրաց Աստուած, մեզ դարձուր, Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք:

ՍՍ.ՂՄ. 2Ա

Գլխաւոր երաժշտին, Կիթիթի վրայ. Աստիկ Սաղմուր:

- Յ**նձացէք Աստուծոյ առջև, որ մեր զօրութիւնն է,
- Ուրախութեամբ աղաղակեցէք Յակոբի Աստուծոյն:
- 2 - Սաղմոս առէք ու թմբուկը բերէք. Նաև անոյշ քնարը՝ տաւիղին հետ:
- 3 - Փող հնչեցուցէք ամսու գլխուն, *Նաև լուսնի լրման տատենը՝ մեր տօնին օրը.
- 4 - Վասն զի ստիկա Խորայէլի կանոն մըն է,
- Յակոբի Աստուծոյն հրամանն է:
- 5 - Ինք վկայութիւն դրաւ ստիկա Յովսէփի մէջ, Եգիպտոսի երկրին վրայ ելած տատենը. Ու լեզու մը լսեցի զոր չէի գիտեր:
- 6 - Անոր թիկունքը հեռացուցի բեռէն.
- Անոր ձեռքերը հանգչեցան կողովէն.

*Կա՛մ, Որոշուած ժամանակին.

- 7 - Նեղութեան մէջ կանչեցիր, ու քեզ փրկեցի.
- Պատասխան տուի քեզի որուման ծածկոցին մէջէն.
- Փորձեցի քեզ Մերիպայի ջուրին քով : (Սէլա):
- 8 - Լսէ, ով իմ ժողովուրդս, ու վկայեմ քեզի.
- Ով Իսրայէլ, եթէ ինծի մտիկ ընես,
- 9 - Օտար աստուած չըլլայ քու մէջդ, Ու օտար աստուծոյ երկրպագութիւն չընես :
- 10 - Ես եմ քու Տէր Աստուածդ, Որ հանեցի քեզ Եգիպտոսի երկրէն. Լայն բաց քու բերանդ, Ու զանկիս ես պիտի լեցնեմ :
- 11 - Բայց իմ ժողովուրդս մտիկ չըբաւ իմ ձայնս,
- Ու Իսրայէլ զիս չուզեց :
- 12 - Ուստի զանոնք իրենց սրտին կամակորութեանը թողուցի,
- Որոհե՞ զի իրենց խորհուրդներուն համեմատ քաշեն :
- 13 - Երանի՛ թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ ընէր,
- Ու Իսրայէլ իմ ճամբաներուս մէջ քաշէր.
- 14 - Շուտով պիտի խնարհեցնէի անոնց թշնամիները,
- Ու ձեռքս պիտի դարձնէի անոնց նեղիչներուն վրայ :
- 15 - Տէրը ատողները *խնարհութիւն պիտի ընէին՝ իրեն,
- Ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար :
- 16 - Ան պիտի կերակրէր զանոնք պարարտ ցորենով.
- Ու վէմէն լալա՞ծ մեղրով քեզ պիտի կշտացնէի :

ՍԱՂՄ. 2Բ

Սաղմոս Ասափայ:

- Աստուած կայնած է Աստուծոյ ժողովքին մէջ,
- † Աստուածներուն մէջ դատաստան կրտսնէ :
- 2 - Մինչև ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք,

- Ու ամբարիշտներուն աչառութիւն պիտի ընէք : (Սէլա):
- 3 - Իստաստան ըրէք աղքատին ու որբին.
- Խեղճին ու չքաւորին իրաւունք ըրէք :
- 4 - Փրկեցէք աղքատը ու անանկը, Ամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք զանոնք :
- 5 - Չէն իմանար ու միայ չէն տուներ, Խաւարի մէջ կը պարտին.
- Երկրի բոլոր սիւները շարժեցան :
- 6 - Ես ըսի թէ Գուք աստուածներ էք, Ու դուք ամէնդ Բարձրելոյն որդիներն էք.
- 7 - Բայց մարդոց պէս պիտի մեռնիք, Ու իշխաններէն մէկուն պէս պիտի իյնաք :
- 8 - Ելիր, ով Աստուած, դատէ երկիրը,
- Վասն զի բոլոր ազգերը դուն պիտի ժառանգես :

ՍԱՂՄ. 2Գ

Ասափի երգը -- Սաղմոս :

- Ով Աստուած, լուռ մի կենար. Անձայն մի ըլլար, ու հանդարտ մի կենար, ով Աստուած :
- 2 - Վասն զի ահա քու թշնամիներդ կը գոռան,
- Ու քեզ ատողները գլուխ կը վերցնեն.
- 3- Խորամանկութեան հնարք կը գտնեն քու ժողովուրդիդ դէմ,
- Ու խորհուրդ կ'ընեն քու պաշպանածներուդ դէմ :
- 4 - Կ'ըսեն թէ Եկէք, կորսնցնենք զանոնք որպէս զի ազգ չըլլան,
- Ու ալ չիշուի Իսրայէլի անունը
- 5 - Վասն զի միաբան սրտով խորհուրդ ըրին,
- Ու քեզի դէմ դաշնակցութիւն ըրին
- 6 - Եդովմի վրանները ու Իամայէլացիք, Մովաբ ու Հագարացիք,
- 7 - Գերաղ ու Ամինն և Ամաղէկ, Փղշտացիք՝ Տիւրոսի բնակիչներուն հետ :
- 8 - Նաև Ասուր անոնց հետ միաբանեցաւ.
- Ղովաի որդիներուն ձեռնառու եղան : (Սէլա):
- 9 - Ըրէ անոնց ինչպէս Մագիամի, Ինչպէս Սիսարայի ու Յաբինի զէե Կիսան հեղեղափն քով.

*ԵՔԸ. պիտի ստէին
 †Կ-ժ, Գատաւորներուն. Ել. իա. 6 :
 իբ. 28 :

- 10 - Անանք Ենդաղրի մէջ սատակեցան ,
- Աղբի պէ՝ եղան երկրի վրայ :
- 11 - Անանց իշխանները Սրէբի ու Չէբի պէս ,
- Ու անանց բոլոր երեւելիները Չէբէէի ու Սաղմանայի պէս ըրէ .
- 12 - Որոնք ըսին թէ Աստուծոյ բնակարանները
- Մենք ժառանգենք մեզի համար :
- 13 - Ով իմ Աստուածս, անանք *մղէղի պէս ,
- Հովի առջև եղող շիւղի պէս ըրէ :
- 14 - Ինչպէս կրակը անտառը կ'այրէ ,
- Ու բոցը լեռները կը բռնկցնէ ,
- 15 - Այնպէս հալածէ զանանք քու մրրիկովդ ,
- Ու խռովութեան մէջ ձգէ զանանք քու փոթորիկովդ :
- 16 - Լեցուր անոնց երեսները անարգանքով ,
- Որպէս զի քու անունդ խնդրեն , ով Տէր :
- 17 - Թող ամչնան ու խռովին յաւիտեան ,
- Եւ ամծթայից ըլլան ու կորսուին .
- 18 - Որպէս զի գիտնան թէ միայն դուն , որուն անունը Եհովա է ,
- Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ :

ՍԱՂՄ. 2Գ

Գլխաւոր երաժշտին, Կիթիթի վրայ, Կորիի որդիներուն Սաղմուր :

Ինչպէս սիրելի են քու բնակարաններդ ,

- Ով զօրաց Տէր :
- 2 - Իմ անձս կը փափաքի ու նաև կը մտրի
- Տէրոջը սրահներուն համար .
- Իմ սիրաս ու մարմինս ցնծութեամբ կ'ազազակեն
- Կենդանի Աստուծոյն :
- 3 - Ճնճղուկն ալ տուն գտաւ ,
- Ու ծիծեռնիկը իրեն բոյն՝ իր ձագերը դնելու համար ,
- *Քու սեղաններուդ քով , ով զօրաց Տէր ,
- Իմ թագաւորս ու Աստուածս :
- 4 - Երանի՛ անոնց որ քու տանդ մէջ կը բնակին .

*Կ-Տ, անիւի

- Անանք անդադար քեզ պիտի օրհնեն :
- (Սէլա :
- 5 - Երանի՛ այն մարդոց որոնց զօրութիւնը քեզմէ է ,
- Ու իրենց սրտին մէջ *անդ ճամբաները կան :
- 6 - Արտասուաց հովիտէն անցնելով աղբիւրի պէ՝ կ'ընեն զանիկա .
- Առաջին անձրեն ալ *օրհնութիւնով պիտի ծածկէ պանիւն :
- 7 - Անանք զօրութենէ զօրութիւն կ'երթան ,
- Մինչև *ը Սիօնի մէջ Աստուծոյ առջև երևնան :
- 8 - Ով Տէր, զօրաց Աստուած , լսէ իմ աղօթքս ,
- Ականջ դիր, ով Յակոբի Աստուածը :
- (Սէլա :
- 9 - Ով մեր վահանը Աստուած , տես ,
- Ու քու օժեպիդ երեսը նայէ :
- 10 - Վասն զի քու սրահներուդ մէջ Մէկ օրը հալարէն աղէկ է .
- Աւելի ընտրեցի իմ՝ Աստուծոյս տանը շէմին վրայ կենալ ,
- *Քան թէ ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլ :
- 11 - Քանզի Տէր Աստուած արև ու վահան է .

Տէրը շնորհք ու փառք պիտի տայ .
Բարութիւն մը պիտի չպակսեցնէ
Ուղղութեամբ քալողներէն :

- 12 - Ով զօրաց Տէր ,
- Երանելի է քեզի յուսացող մարդը :

ՍԱՂՄ. 2Ե

Գլխաւոր երաժշտին, Կորիի որդիներուն Սաղմուր :

- Ո**վ Տէր, դուն հաւնեցար քու երկրիդ ,
- Յակոբի գերութիւնը դարձուցիր .
- 2 - Քու ժողովուրդիդ անօրէնութիւնը ներեցիր ,
- Անանց բոլոր մեղքերը ծածկեցիր :
- (Սէլա :
- 3 - Հեռացուցիր քու բոլոր սրտմտութիւնդ ,
- Ետ դարձար քու սաստիկ բարկութենէդ :
- 4 - †Մեզ դարձուր՝, ով մեր փրկութեան Աստուածը ,

*Կ-Տ, աւազանները կը լեցնէ
†Կ-Տ, Մեզի դարձիր

- Եւ քու բարկութիւնդ որ մեր վրայ է դադարեցուր :
- 5 - Միթէ յաւիտեան պիտի բարկանաս մեզի :
- Քու բարկութիւնդ ազգէ մինչև ազգ պիտի երկնցնէ^օ :
- 6 - Միթէ ետ պիտի չգառնաս ու մեզ կենդանացնես,
- Որպէս զի քու ժողովուրդդ քեզմով սուրախ ըլլայ :
- 7 - Տուցուր մեզի, ով Տէր, քու ողորմութիւնդ,
- Եւ քու փրկութիւնդ մեզի սուր :
- 8 - Պիտի լսեմ քնչ որ կը խօսի Տէր Աստուած :
- Վասն զի խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովուրդին ու իր սուրբերուն :
- Ու յիմարութեան չգառնան անոնք :
- 9 - Արգարեւ իր փրկութիւնը մօտ է իրմէ վախճողներուն,
- Որպէս զի մեր երկրին մէջ փառք բնակի :
- 10 - Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատասէցան,
- Արգարութիւնը ու խաղաղութիւնը երբ համբուրեցին :
- 11 - Ճշմարտութիւնը երկրէ պիտի բուսնի,
- Ու արգարութիւնը երկինքէ վար պիտի նայի :
- 12 - Նաև Տէրը բարութիւն պիտի տայ,
- Ու մեր երկիրը իր պատուը պիտի տայ :
- 13 - Արգարութիւնը անոր առջևէն պիտի երթայ,
- Ու իր գնացքները ճամբու պիտի դնէ :

ՍՍՆԱԿ. 22

Աղօթք Դաւթի

- Ով Տէր, խնասէցուր քու ահանջդ, Պատասխան սուր ինծի, վասն զի աղքատ ու անանկ եմ :
- 2 - Պահէ իմ անձս, վասն զի ես սուրբ եմ :
- Ով իմ Աստուածս, քեզի յուսացող ծառագ դուն փրկէ :
- 3 - Ողորմէ ինծի, ով Տէր, Վասն զի քեզի կը կանչեմ ամէն օր :
- 4 - Ուրախացուր քու ծառայիդ անձը, Վասն զի դէպ ի քեզ կը վերցնեմ իմ անձս, ով Տէր :

- 5 - Վասն զի դուն, ով Տէր, բարի ու ներող ես :
- Եւ խիստ ողորմած՝ այն ամէնուն որոնք քեզի կը կանչեն :
- 6 - Ահանջ դիր իմ աղօթքիս, ով Տէր, Ու մտիկ ըրէ իմ աղաչանքներուս ձայնը :
- 7 - Նեղութեանս օրը քեզի կ'աղաղակեմ,
- Վասն զի դուն ինծի կը պատասխանես :
- 8 - Աստուածներուն մէջ քեզի նման մէկը չկայ, ով Տէր,
- Եւ քու գործերուդ պէս չկայ :
- 9 - Բոլոր ազգերը, զորոնք դուն ստեղծեցիր, պիտի գան
- Ու երկրպագութիւն բնեն քու առջևդ, ով Տէր,
- Եւ քու անուանդ փառք պիտի տան :
- 10 - Վասն զի դուն մեծ ու հրաշքներ գործող ես,
- Աստուած միայն դուն ես :
- 11 - Ով Տէր, սրվեցուր ինծի քու ճամբագ,
- Որպէս զի քու ճշմարտութեանդ մէջ քալեմ :
- *Միացուր իմ սիրտս, որպէս զի քու անունէդ վախնայ :
- 12 - Իմ բոլոր սրտովս քեզ պիտի գովեմ, ով Տէր, իմ Աստուածս,
- Ու յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ :
- 13 - Վասն զի քու ողորմութիւնդ մեծ եղաւ իմ վրաս :
- Ու դուն փրկեցիր իմ անձս խորունկ դժոխքէն :
- 14 - Ով Աստուած, ամբարտաւանները ինծի դէմ ելան,
- Ու բռնաւորներուն ժողովքը իմ անձս փնտրեցին,
- Եւ քեզ իրենց առջև չդրին :
- 15 - Բայց դուն, ով Տէր, գթած ու ողորմած Աստուած ես,
- Երկայնամիտ ու ողորմութիւնով և ճշմարտութիւնով առաա ես :
- 16 - Նայէ ինծի ու ողորմէ ինծի :
- Քու զօրութիւնդ սուր քու ծառայիդ, Ու քու աղախինիդ որդին փրկէ :
- 17 - Բարութեան նշան մը ըրէ ինծի, Որպէս զի զիս ատողները տեսնեն ու ամչնան :
- Վասն զի դուն, ով Տէր, ինծի օգնեցիր ու զիս մխիթարեցիր :

*Կա՛մ, Դէ իր քայլերուն ճամբուն մէջ

*Կա՛մ, իմ սիրտս պիտի սուրախանայ

ՍԱՂՄ. 25

Կորնի որդիներուն Սաղմուր — երգը:

Անոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են:

2 - Տէրը Սիօնի դռները
Յակոբի բոլոր բնակարաններէն աւելի կը սիրէ:

3 - Փառաւոր բաներ կը պատմուին քեզի համար,

Ով Աստուծոյ քաղաքը: (Սէլա:)

4 - *Ռահարը ու Բաբելոնը պիտի յիշեմ՝ զիս † ճանչցողներուն մէջ՝.

Ահա Փղշտացուց երկիրը ու Տիւրսս Քուշի հետ.

Ասոնք ուլ հոն ծնան:

5 - Ու Սիօնի համար պիտի ըսուի թէ Այս մարդը ու այն մարդը հոն ծնաւ. Եւ Բարձրեալը ինք պիտի հաստատէ զանիկա:

6 - Տէրը ազգերը գրած ժամանակը պիտի քսէ

Թէ Ասիկա հոն ծնաւ: (Սէլա:)

7 - Ու երգեցողները, նոյնպէս ու † սրնգահարները պիտի ըսեն,

Իմ բոլոր ազբիւրներս քեզմէ են:

ՍԱՂՄ. 26

Կորնի որդիներուն երգը — Սաղմուր. Գլխաւոր երաժշտին, Մահարաթ-լէանիօթի վրայ. Եման Եզրահացի երգը:

Ով Տէր, իմ փրկութեանս Աստուածը,

Յորեկը կ'աղաղակեմ — գիշերը քու առջևդ է՛մ:

2 - Իմ աղօթքս քու առջևդ թող ելլէ.

Խոնարհեցուր քու ականջդ իմ աղաղակիս:

3 - Վասն զի իմ անձս չարիքներով լեցուեցաւ,

Ու իմ կեանքս գերեզմանին մօտեցաւ:

4 - Գուրբ իջնողներուն հետ սեպուեցայ.

Ոյժ չունեցող մարդու մը պէս եզայ:

5 - Մեռելներուն մէջ ինկած է՛մ

Գերեզմանի մէջ պառկող մեռցուածներուն պէս,

*Այսինքն, Եզրահացուր
†Կ-ժ, ճանչցողներու պէս
‡Կ-ժ, պար բռնողները

Չորոնք ա՛լ չես յիշեր,
Ու քու ձեռքէդ մերժուած են:

6 - Ի՞նչն զիս ամէնէն խորունկ գուբին մէջ դրիր,

Խաւարային անդունդներուն մէջ:

7 - Քու սրամտութիւնդ ծանրացաւ իմ վրաս,

Եւ քու բոլոր այլիքներովդ զի՞ չարչարեցիր: (Սէլա:)

8 - Իմ՝ ճանչուորներս ինձմէ հեռացուցիր,

Ձիս գարշելի ըրիր ա՛նոնց առջև.

Գոցուեցայ ու դուրս չեմ ելլեր:

9 - Տառապանքէն աչքերս վտակեցան. Ամէն օր քեզի աղաղակեցի, ով Տէր,

Ձեռքերս քեզի երկնցուցի:

10 - Միթէ մեռելներո՞ւն հրաշք պիտի ընես.

Միթէ մեռածներ՞ը պիտի ելլեն ու քեզ գովեն: (Սէլա:)

11 - Միթէ կը պատմուի՞ քու ողորմութիւնդ գերեզմանին մէջ,

Ու քու ճշմարտութիւնդ՝ կորստեան մէջ:

12 - Միթէ կը ճանչցուի՞ քու հրաշքներդ խաւարին մէջ,

Ու քու արդարութիւնդ՝ մոռացման երկրին մէջ:

13 - Բայց ես, ով Տէր, քեզի աղաղակեցի,

Ու իմ աղօթքս առատանց քու առջևդ պիտի ելլէ:

14 - Ով Տէր, ինչո՞ւ իմ անձս կը մերժես,

Ու քու երեսդ կը ծածկես ինձմէ:

15 - Ես խեղճ եմ ու մանկութենէս ի վեր մեռնելու վրայ եմ.

Քու ահերիք քաշեցի — խռովեցայ:

16 - Քու սրամտութիւնդ իմ վրաս իջաւ,

Եւ քու զարհուրանքներդ զիս կորսնցուցին:

17 - Ամէն օր՝ ջուրի պէս զիս պատեցին, Մէկտեղ չորս կողմն առին:

18 - Հեռացուցիր ինձմէ սիրելին ու բարեկամը,

Իմ ճանչուորներս խաւարի մէջ են:

ՍԱՂՄ. 26

Եթան Եզրահացի երգը:

Տէրոջը ողորմութիւնները յաւիտեան պիտի երգեմ.

- Քու հաւատարմութիւնդ իմ բերնովս
ազգէ ազգ պիտի պատմեմ :
- 2 - Վասն զի ըսի թէ Ողորմութիւնը
յաւիտեան պիտի շինուի .
- Երկինքի մէջ պիտի հաստատես քու
հաւատարմութիւնդ :
- 3 - Ես իմ ընտրեալիս հետ ուխտ ըրի ,
Իմ Դաւիթ ծառայիս երգում ըրի ,
Ը՛հե՛ւ՛ :
- 4 - Քու սերունդդ յաւիտեան պիտի
հաստատեմ ,
- Եւ ազգէ ազգ պիտի շինեմ քու ա-
թուդ : (Սէլա :
- 5 - Երկինք ալ կը փառաւորէ քու
հրաշքներդ , ով Տէր ,
- Եւ քու հաւատարմութիւնդ՝ սուրբե-
րուն ժողովքին մէջ :
- 6 - Վասն զի ո՞վ կայ երկինքի մէջ
Տէրոջը հաւասար .
- Ո՛ր *հզօրաց որդիներուն մէջ ո՞վ կը
նմանի Տէրոջը :
- 7 - Աստուած խիստ զարհուրելի է
սուրբերուն ժողովքին մէջ ,
- Եւ ահաւոր է ամէն իր բոլորակքը
եղողներուն :
- 8 - Ով Տէր , զօրաց Աստուած , ո՞վ է
քեզի պէս հզօր Տէր .
- Եւ քու հաւատարմութիւնդ քու բո-
լորակքդ է :
- 9 - Դուն կը տիրես ծովուն հպարտու-
թեանը վրայ .
- Երբ անոր ալիքները կը բարձրանան ,
դուն կը հանդարտեցնես զա-
նոնք :
- 10 - Դուն ճնշեցիր Ռահաբը խոցուածի
պէս .
- Քու զօրութեանդ բազուկովը ցրուեցիր
քու թշնամիներդ :
- 11 - Քուկդ է երկինք ու քուկդ է երկիր .
Դուն հիմնեցիր աշխարհը ու անոր լիւ-
թիւնը :
- 12 - Հիւսիսը ու հարաւը դուն ստեղ-
ծեցիր .
- Թաբոր ու Հերմոն քու անունովդ կը
ցնծան :
- 13 - Դուն զօրաւոր բազուկ ունիս .
Քու ձեռքդ ուժով է , քու աջ ձեռքդ
բարձրացած է :
- 14 - Արդարութիւնը ու իրաւունքը
քու աթուրիդ հիմն են ,
Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը
քու երեսիդ առջևէն կ'երթան :

*Կա՛մ , աստուածոց

- 15 - Երանի՛ այն ժողովուրդին որ
գիտեն *ազգարարութեան քո-
ղերսն՝ ձայնը .
- Ով Տէր , անոնք քու երեսիդ լուսովը
պիտի քայլեն :
- 16 - Քու անունովդ ամէն օր պիտի
ցնծան ,
- Ու քու արդարութիւնովդ պիտի բարձ-
րանան :
- 17 - Վասն զի դուն ես անոնց զօրու-
թեանը փառքը ,
- Եւ քու հաճութիւնովդ պիտի բարձ-
րանայ մեր եղջիւրը :
- 18 - Վասն զի մեր վահանը Տէրոջն է ,
Ու մեր թագաւորը Իսրայէլի Սուր-
բինն է :
- 19 - Այն ժամանակ տեսիլքով խօ-
սեցար քու սուրբիդ հետ ,
Ու ըսիր , Օգնութիւն գրի զօրաւորին
վրայ ,
Ժողովուրդէն ընտրուածը բարձրա-
ցուցի :
- 20 - Իմ ծառաս Դաւիթը գտայ ,
Իմ սուրբ իւզովս օձեցի զանիկա .
- 21 - Որու հետ իմ ձեռքս պիտի հաս-
տատուի ,
- Ու իմ բազուկս պիտի զօրացնէ զա-
նիկա :
- 22 - Թշնամին պիտի չհարստահարէ
զանիկա ,
- Ու անօրէնութեան որդին պիտի չչար-
չարէ զանիկա :
- 23 - Եւ անոր թշնամիները իր առջևէն
պիտի կտարեմ ,
- Ու զանիկա ատողները պիտի զարնեմ :
- 24 - Եւ իմ հաւատարմութիւնս ու
ողորմութիւնս անոր հետ պիտի
ըլլայ .
- Ու անոր եղջիւրը իմ անունովս պիտի
բարձրանայ :
- 25 - Անոր ձեռքը ծովուն մէջ պիտի
դնեմ ,
- Ու անոր աջ ձեռքը գետերուն մէջ :
- 26 - Անիկա ինծի պիտի կանչէ թէ
Դուն ես իմ Հայրս ,
Իմ Աստուածս ու իմ փրկութեանս
Վէմը :
- 27 - Ու ես զանիկա անդրանիկ պիտի
ընեմ՝
- Երկրի թագաւորներէն աւելի բարձր :
- 28 - Իմ ողորմութիւնս յաւիտեան
պիտի պահեմ անոր համար ,

*Կա՛մ , ցնծութեան . Թու . իգ . 21 :

Ու իմ ուխտս անոր հետ հաւատարիմ պիտի ըլլայ :

29 - Եւ անոր սերունդը յաւիտեան , Ու անոր ակօղբը երկինքի օրերուն չափ պիտի ընեմ :

30 - Եթէ անոր սրգիները իմ օրէնքս թողուն ,
Ու իմ իրաւունքներովս չբաղեն ,
31 - Եթէ իմ կանոններս անարգեն ,
Ու իմ պատուիրանքներս չպահեն ,
32 - Ես ալ գաւազանով պիտի պատժեմ անոնց յանցանքը ,
Ու հարուածներով անոնց անօրէնութիւնը :

33 - Բայց իմ ողորմութիւնս պիտի չկարեմ անկէ ,
Ու իմ հաւատարմութիւնս սուտ պիտի չհանեմ :

34 - Իմ ուխտս պիտի չանարգեմ ,
Ու շրթունքներէս ելածը պիտի չփութեմ :

35 - Անգամ մը երգում ըրի իմ սրբութիւնովս ,
Որ սուտ պիտի չբսեմ Գաւիթի .

36 - Անոր սերունդը յաւիտեան պիտի մնայ ,
Ու անոր ակօղբը իմ առջև՝ արեգակին չափ .

37 - Լուսնին պէս յաւիտեան պիտի հաստատուի ,
Ու երկինքի մէջ հաւատարիմ վկայի պէս : (Սէլա) :

38 - Բայց դուն երեսէ ձգեցիր ու անարգեցիր ,
Քու օժեպիդ բարկացար ,
39 - Քու ծառայիդ ուխտը մերժեցիր ,
Անոր թագը գեանին հաւասար պղծեցիր ,

40 - Անոր բոլոր պարիսպները փլցուցիր ,
Անոր բերդերը աւերակ ըրիր :

41 - Բոլոր ճամբայէն անցնողները կողոպտեցին զանիկա .
Նախատինք եղաւ իր դրացիներուն :

42 - Անոր նեղիչներուն աջ ձեռքը բարձրացուցիր ,
Անոր բոլոր թշնամիները ուրախացուցիր :

43 - Անոր սուրին բերանն ալ դարձուցիր ,
Ու գինք պատերազմին մէջ չկայնեցուցիր :

44 - Անոր փռքը դադրեցուցիր ,
Ու անոր ակօղբը գետինը զարկիր :

45 - Անոր երիտասարդութեան օրերը կարճեցուցիր .
Զանիկա ամօթով ծածկեցիր : (Սէլա) :

46 - Մինչև ե՞րբ , ով Տէր . քու անձդ միշտ պիտի պահե՞ս .
Քու սրամտութիւնդ կրակի պէս պիտի բորբոքի՞ :

47 - Յիշէ իմ կեանքիս ինչ ըլլայր .
Ի՞նչ ունայնութեան համար ստեղծեցիր մարդոց բոլոր սրգիները :

48 - Ո՞վ է այն մարդը որ ապրի ու մահ չտեսնէ ,
Եւ իր անձը դժոխքին ձեռքէն փրկէ : (Սէլա) :

49 - Ով Տէր , ո՞ւր են քու առաջուան ողորմութիւններդ ,
Զորքերդ երգում ըրիր Գաւիթի քու հաւատարմութիւնովդ :

50 - Ով Տէր , յիշէ քու ծառաներուդ նախատինքը ,
Զոր իմ ծոցիս մէջ կը կրեմ բոլոր մեծ ազգերէն .

51 - Որով քու թշնամիներդ անարգեցին , ով Տէր ,
Որով քու օժեպիդ քայլերը անարգեցին :

52 - Օրհնեալ ըլլայ Տէրը յաւիտեան :
Ամէն ու ամէն :

ՍԱՂՄ. Դ

Աստուծոյ մարդուն Մովսէսի աղօթքը :

Ով Տէր , դուն մեզի ապաւեն եղար ազգէ մինչև ազգ :

2 - Լեռներուն ծնանելէն առաջ Ու երկրի և աշխարհի ստեղծուելէն առաջ՝
Յաւիտենից մինչև յաւիտեանս դուն ես Աստուած :

3 - Դուն մարդը փոշի կը դարձնես ,
Ու կ'ըսես , Ետ դարձէք , մարդոց սրգիներ :

4 - Վասն զի հազար տարին քու առջևդ երէկուան օրին պէս է որ անցաւ ,
Կամ գիշերուան պահու մը պէս :

5 - Կ'ընկղմես զանոնք , երազի պէ՞ կ'ըլլան .
Աստուանց կանանչացած խոտի պէս կ'ըլլան .

6 - Աստուանց կը ծաղկի ու կը կանանչանայ ,
Իրիկունը կը կարուի ու կը չորնայ :

7 - Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք ,

Եւ քու սրամտութենէդ կը խռովինք :

8 - Մեր անօրէնութիւնները քու առջևդ ,

Ու մեր ծածուկ ձգտելը քու երեսիդ լուսին մէջ դրիր :

9 - Վասն զի մեր բոլոր օրերը քու բարկութիւնովդ կ'անցնին .

Մեր տարիները ցնորքի մը պէս կ'անցընենք :

10 - Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են .

Ու եթէ զօրութիւնով ութսուն տարի ըլլան ,

Տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է .

Վասն զի անոնք շուտով կ'անցնին, ու մենք կը թռչինք :

11 - Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը ,

Եւ քու սրամտութիւնդ՝ քու վախիդ համեմատ :

12 - Այնպէս տրվեցուր մեզի մեր օրերը համընդ ,

Որ սրտի իմաստութիւն ստանանք :

13 - Իսրայիլ, ով Տէր, մինչև ե՞րբ .

Ու գթութիւն ըրէ քու ծառաներուդ :

14 - Կշտացուր մեզ կանուխ քու սղորմութիւնովդ ,

Որպէս զի ցնծանք և ուրախ ըլլանք մեր բոլոր օրերուն մէջ :

15 - Ուրախացուր մեզ այն օրերուն չափովը որ տրամեցուցիր .

Այն տարիներուն շաբաթներ չարիք տեսանք :

16 - Թող երևնայ քու գործդ քու ծառաներուդ ,

Եւ քու փառքդ անոնց որդիներուն :

17 - Ու մեր Տէր Աստուծոյն վայելչութիւնը մեր վրայ ըլլայ .

Եւ ձեռքերնուս գործը հաստատէ մեր վրայ .

Մեր ձեռքերուն գործը հաստատէ :

ՍԱՂՄ. ՂԱ.

Բարձրելոյն ծածկոցին տակ բնակողը

Ամենակարողին հովանաւորութեանը տակ պիտի հանգչի :

2 - Տէրօջը համար պիտի ըսեմ թէ Իմ ապաւենա ու Իմ ամրոցս է .

Իմ Աստուածս՝ որու կը յուսամ :

3 - Արդարեւ ան պիտի փրկէ քեզ որտարդին որոգայթէն ,

Ապականիչ ժանտամահէն :

4 - Քեզ իր փեսուներովը պիտի ծածկէ ,

Ու իր թեւերուն տակ պիտի ապաստանիս .

Անոր ճշմարտութիւնը վահան մը ու ապար մը պիտի ըլլայ +եզի :

5 - Պիտի չվախնաս գիշերուան զարհուրանքէն ,

Ու ցորեկը թռչող նետէն ,

6 - Ոչ ալ մնաթ ակողը պտրտող ժանտամահէն ,

Ու կէսօրուան տտեն սատակեցնող հարուածէն :

7 - Հազար հոգի քու քովէդ ,

Ու տասը հազար քու աջ կողմէդ պիտի իյնան ,

Բայ քեզի հարստ մը պիտի չմտենայ :

8 - Միայն քու աչքերովդ պիտի նայիս ,

Ու ամբարիշտներուն հատուցումը պիտի տեսնես :

9 - Որովհետեւ դուն Տէրը, Իմ Ապաւենա ,

Բարձրեալը , քեզի ապաստանարան ըրիր ,

10 - Քեզի չարիք պիտի չհասնի, Եւ քու բնակարանիդ հարուած մը պիտի չմտենայ :

11 - Վասն զի իր հրեշտակներուն պիտի ապարէ քեզի համար ,

Որ քու բոլոր ճամբաներուդ մէջ քեզ պահեն :

12 - Անոնք ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ ,

Որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես :

13 - Առիւծի ու խօի վրայ պիտի քալես .

Առիւծի կորիւնը ու վիշապը պիտի կոխուտես :

14 - Որովհետեւ ինծի կը ցանկայ, Անոր համար ես պիտի փրկեմ՝ զանիկա .

Անոր ամրութիւն պիտի ըլլամ , Վասն զի անիկա Իմ անունս գիտցու :

15 - Ինծի պիտի կանչէ , ու ես անոր պատասխան պիտի տամ .

Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ .

Պիտի ապրեցնեմ ու փառաւորեմ՝ զանիկա .

16 - Երկայն օրերով պիտի կշտացնեմ՝
 զանհկա,
 Ու իմ փրկութիւնս անոր պիտի ցու-
 ցընեմ՝:

ՍԱՂՄ. ԴԲ

Շաբաթ օրուան համար Սաղմոս ու երգ:

Բարի է գոհանալ Տէրոջմէն,
 Ու սաղմոս ըսել քու անուանդ, ով
 Բարձրեալ .

2 - Աւտուանց քու սղորմութիւնդ,
 Ու գիշերները քու հաւատարմութիւնդ
 պատմել՝

3 - Տասը լար ունեցող նուագարանով
 ու տաւիղով

Եւ քնարի ձայնով :

4 - Վասն զի դուն, ով Տէր, քու գոր-
 ծովդ զիս ուրախացուցիր .

Քու ձեռքերուդ գործերովը պիտի
 ցնծամ :

5 - Ով Տէր, ի՛նչ մեծ են քու գոր-
 ծերդ .

Շատ խորունկ են քու խորհուրդներդ :

6 - Անմիտ մարդը սահկա չիմանար,
 Ու յիմարը չհասկնար :

7 - Ամբարիշտներուն խտտի պէս բուս-
 նիլը

Ու բոլոր անօրէնութիւն գործողներուն
 ծաղկիլը

Իրենց յաւիտենական կորուստին իջ
 անի :

8 - Բայց դուն, ով Տէր, յաւիտեան
 բարձր ես :

9 - Վասն զի ահա քու թշնամիներդ,
 ով Տէր,

Վասն զի ահա քու թշնամիներդ պիտի
 կորուսին .

Բոլոր անօրէնութիւն գործողները պի-
 տի ցրուին :

10 - Բայց իմ եղջիւրս միեղջերուինին
 պէս պիտի բարձրացնես .

Ես նոր իւղով օծուեցայ .

11 - Եւ իմ աչքերս թշնամիներուս
 իբրև արք պիտի տեսնեն .

Իմ ականջներս ինծի դէմ ելլող չա-
 րագործներուն իբրև պարտիչ պի-
 տի լսեն :

12 - Արդարը արմուէնիի պէս պիտի
 ծաղկի,

Լիրանանի եղևինի պէս պիտի մեծնայ :

13 - Տէրոջը տանը մէջ անկուած-
 ները

Մեր Աստուծոյն սրահներուն մէջ պի-
 տի ծաղկին .

14 - Ծերութեան ատեն ալ պատու
 պիտի տան,

Պարարտ ու կանանչ պիտի մնան,

15 - Որպէս զի պատմեն թէ Տէրը ու-
 զիղ է .

Անհկա իմ վէմս է, ու անիրաւու-
 թիւն չկայ անոր քով :

ՍԱՂՄ. ԴԳ

Տէրը կը թագաւորէ, մեծափառու-
 թիւն հագած է .

Տէրը զօրութիւն հագած ու գօտեւո-
 րած է .

Աշխարհ ալ հաստատուած է որպէս զի
 շատանի :

2 - Քու ամբողջ հին ժամանակէն հա-
 տատ է .

Ի յաւիտենից ես դուն :

3 - Ով Տէր, գետերը բարձրացուցին,
 Քետերը բարձրացուցին իրենց ձայնը .
 Քետերը կը բարձրացնեն իրենց շառա-
 չիւնը :

4 - Շատ ջուրերուն ձայնէն ու ծովուն
 զօրաւոր ալիքներէն

Աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան
 մէջ :

5 - Քու վկայութիւններդ շատ հաւա-
 տարիմ են .

Ով Տէր, սրբութիւնը քու տանդ կը
 վայլէ * յաւիտեան :

ՍԱՂՄ. ԴԴ

Ով Տէր, վրէժխնդրութեանց Աստ-
 ուած,

Ով վրէժխնդրութեանց Աստուած,
 յայտնուէ :

2 - Ելիր, ով երկրի Գառաւորը,
 Ամբարտաւաններուն հատուցում ըրէ :

3 - Ով Տէր, մինչև ե՞րբ ամբարիշա-
 ները,

Մինչև ե՞րբ ամբարիշտները պարծե-
 նան .

4 - Գռուողութեամբ բարբառելով խօ-
 սին,

Ու բոլոր անօրէնութիւն գործողները
 պարծենան :

5 - Ով Տէր, անոնք քու ժողովուրդդ
 կը հարստահարեն ,

*ԵՔԵ. երկար օրեր

Ու քու ժառանգութիւնդ կը չարչարեն .

6 - Որբեարին ու պանդուխտը կը սպաննեն ,

Եւ որբերը կը մեռցնեն .

7 - Ու կ'ըսեն, Տէրը չտեսներ ,

Եւ Յակոբի Աստուածը չիմանար :

8 - Իմացէք, ով ժողովուրդին անմիաները ,

Ու դուք , ով յիմարներ , ե՞րբ միտք պիտի առնէք :

9 - Միթէ տկանջը տնկողը չը՞լտեր , կամ թէ աչքը ստեղծողը չը՞տեսներ :

10 - Միթէ ազգերը խրատողը չը՞յանդիմաներ .

Միթէ մարդու գիտութիւն արվեցնողը չը՞տեսներ :

11 - Տէրը մարդոց խորհուրդները գիտէ Որ ունայնութիւն են :

12 - Երանի՛ այն մարդուն զոր դուն կը խրատես , ով Տէր ,

Եւ քու օրէնքէդ անոր կը արվեցընես ,

13 - Որպէս զի չարութեան օրերուն մէջ զանհկա հանգչեցնես ,

Մինչև որ ամբարշտին համար հոր փորուի :

14 - Վասն զի Տէրը իր ժողովուրդը երեսէ պիտի չձգէ ,

Ու իր ժառանգութիւնը պիտի չմերժէ .

15 - Հոպա դատաստանը իրաւունքի պիտի դառնայ ,

Ու ամէն սրտով ուղիղները անոր ետեւէն պիտի երթան :

16 - Ո՞վ ինծի համար չարերուն դէմ պիտի ելլէ ,

Ո՞վ ինծի համար անօրէնութիւն գործողներուն դէմ պիտի կայնի :

17 - Եթէ Տէրը ինծի օգնական չըլլար ,

Քիչ պիտի մնար որ իմ անձս լուութեան Դեռ բնակէր :

18 - Երբ կ'ըսէի թէ իմ ոտքս կը սասանի ,

Ով Տէր , քու ողորմութիւնդ զիս կը հաստատէր :

19 - Իմ ներսիդիս հոգերուս շատցած ատենը՝

Քու միթարութիւններդ իմ անձս կ'ուրախացնէին :

20 - Միթէ քեզի հետ հաղորդակցութիւն ունի՞ անօրէնութեան ակթուր ,

Որ *օրէնքին դէմ՝ չարիք կը պատրաստէ :

21 - Արդարին անձին դէմ կը ժողվուին ,

Ու անմեղ արիւնը կը դատապարտեն :

22 - Բայց Տէրը իմ ամբութիւնս է ,

Ու իմ Աստուածս՝ իմ ապաւինութեանս վէմը .

23 - Եւ անոնց անօրէնութիւնը իրենց վրայ պիտի դարձնէ ,

Ու զանոնք իրենց չարութիւնովը պիտի ջնջէ .

Մեր Տէր Աստուածը պիտի ջնջէ զանոնք :

ՍԱՂՄ. ԴԵ

Եկէք ցնծութիւն ընենք Տէրոջը սուջև ,

Աղաղակենք մեր փրկութեան Վէմին :

2 - Գոհութիւնով անոր երեսին սուջև գանք ,

Սաղմունքով աղաղակենք անոր :

3 - Վասն զի Տէրը մեծ Աստուած է ,

Ու բոլոր աստուածներուն վրայ մեծ թագաւոր է :

4 - Անոր ձեռքին մէջ են երկրի խորունկ տեղերը ,

Ու լեռներուն շարձութիւնները անորն են :

5 - Իրն է ծովը , ու ինք շինեց զանհկա .

Եւ իր ձեռքերը ստեղծեցին ցամաքը :

6 - Եկէք երկրպագութիւն ընենք ու ծուխը .

Ծունկ կրկնենք մեզ ստեղծող Տէրոջը սուջև .

7 - Վասն զի ան է մեր Աստուածը ,

Ու մենք անոր արօտին ժողովուրդը և անոր ձեռքին սխարներն ենք .

Սյուր եթէ անոր ձայնին պիտի լսէք ,

8 - Ձեր սիրտերը մի խտացնէք ինչպէս Մերիպայի մէջ՝

Անապատին մէջ փորձութեան օրուանը պէս ,

9 - Ուր ձեր հայրերը զիս փորձեցին , Քննեցին զիս ու իմ գործերս տեսան :

10 - Քառասուն տարի զգուեցայ այն ազգէն ,

Ու ըսի , Անոնք սրտով մնարած ժողովուրդ մըն են ,

*Կամ, երբ անհաշտ օրէնքովը
†Կամ, զօրութիւնները

Իմ ճամբաներս չճանչցան :

11 - Ուստի իմ բարկութեանս մէջ երգում ըրի ,

Թէ անոնք իմ հանգիստս պիտի չմտնեն :

ՍԱՂՄ. ԴԶ

Սոր երգ երգեցէք Տէրոջը .

Ով բոլոր երկիր, երգեցէք Տէրոջը :

2 - Երգեցէք Տէրոջը , օրհնեցէք անոր անուկը .

Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք :

3 - Անոր փառքը ազգերուն մէջ պատմեցէք ,

Ու անոր հրաշքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ .

4 - Քանզի Տէրը մեծ է ու խիստ գովելի .

Անիկա բոլոր աստուածներուն վրայ ահաւոր է :

5 - Վասն զի ազգերուն բոլոր աստուածները *կուռքեր են .

Բայց Եհովա երկիրքը ստեղծեց :

6 - Փառք ու վայելչութիւն կայ անոր առջև ,

Զօրութիւն ու գեղեցկութիւն՝ անոր սրբարանին մէջ :

7 - Տէրոջը առէք , ով ժողովրդոց տոհմերը ,

Տէրոջը առէք փառք ու զօրութիւն :

8 - Տէրոջը առէք իր անուանը փառքը . Ընծայ առէք ու անոր սրահներուն մէջ մտէք .

9 - †Սուրբ հանդէսով՝ Տէրոջը երկրպագութիւն ըրէք .

Վախցէք անոր երեսէն , ով բոլոր երկիր :

10 - Հեթանոսներուն մէջ ըսէք թէ Տէրը կը թագաւորէ .

Աշխարհ ու հաստատուած է որպէս զի չսասանի .

Անիկա պիտի դատէ ժողովուրդները ուղղութիւնով :

11 - Երկինք թող ուրախանայ ու երկիր ցնծայ .

Ծովը իր լիութիւնովը թող գոռայ .

12 - Իրաշար ու բոլոր անոր մէջ եղողները թող ուրախանան .

Այն ատեն անտառին բոլոր ծառերը թող ցնծան

13 - Տէրոջը առջև , վասն զի կուգայ ,

Վասն զի կուգայ երկիրը դատելու .

Պիտի դատէ աշխարհը արդարութիւնով ,

Ու ժողովուրդները՝ իր ճշմարտութիւնովը :

ՍԱՂՄ. ԴԷ

Տէրը կը թագաւորէ , երկիր թող ցնծայ .

Շատ կղզիներ թող ուրախանան :

2 - Անոր բոլորաիքը ամպ ու մառախուղ կայ ,

Արդարութիւնը ու իրաւունքը անոր արթուն հիմերն են :

3 - Անոր առջևէն կրակ կ'երթայ , Ու անոր բոլորաիքը եղած թշնամիները կ'այրէ :

4 - Անոր փայլակները աշխարհը կը լուսաւորեն .

Երկիր կը տեսնէ ու կը դողայ :

5 - Լեռները մամի պէս կը հալին Եհովայի երեսէն ,

Բոլոր երկրի Տէրոջը երեսէն :

6 - Երկինք կը պատմէ անոր արդարութիւնը ,

Ու բոլոր ժողովուրդները կը տեսնեն անոր փառքը :

7 - Թող ամչնան այն ամէնը որոնք կուռքերուն կը ծառայեն ,

Որոնք ունայնութիւններով կը պարծենան .

Ով բոլոր աստուածներ, անոր երկրպագութիւն ըրէք :

8 - Սիօն լսեց և ուրախացաւ , Եւ Յուդայի աղջիկները ցնծացին Քու իրաւունքներուդ համար , ով Տէր :

9 - Վասն զի դուն , ով Տէր , Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ .

Շատ բարձրացար բոլոր աստուածներուն վրայ :

10 - Ով Տէրը սիրողներ , չարութիւնը ատեցէք .

Անիկա իր սուրբերուն անձերը կը պահէ ,

Ամբարիշտներուն ձեռքէն կը փրկէ զանոնք :

11 - Արդարին համար լոյս ցանուեցաւ ,

Եւ սրտով ուղիղներուն համար՝ ուրախութիւն :

*Կա՛մ , ունայնութիւններ
†Կա՛մ , Արբու թեան զարգարանքով

12 - Տէրոջմով ուրախացէք, ով արգարներ,
Ու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք:

ՍՍՂՄ. ԴԸ

Սաղմոս:

Սոր երգ երգեցէք Տէրոջը,
Վասն զի հրաշքներ ըրաւ.

Իր աջ ձեռքը ու իր սուրբ բազուկը
Իրեն *փրկութիւն տուաւ:

2 - Տէրը ցուցուց իր փրկութիւնը,
Ազգերուն առջև յայանեց իր արդարութիւնը:

3 - Յիշեց իր ողորմութիւնը ու իր հաւատարմութիւնը

Իորայէլի տանը համար.

Երկրի ամէն ծայրերը

Մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան:

4 - Յնծացէք Տէրոջը առջև, ով բոլոր երկիր.

Ուրախութեան ձայնով աղաղակեցէք
ու սաղմոս ըսէք:

5 - Սաղմոս երգեցէք Տէրոջը քնարով,
Քնարով ու սաղմոսի ձայնով.

6 - Փողերով ու շեփորի ձայնով
Աղաղակեցէք Տէր Թագաւորին առջև:

7-Թող գոռայ ծովը ու անոր լիութիւնը,

Աշխարհ ու անոր բնակիչները:

8 - Գետերը թող ծափ զարնեն,

Ու լեռները մէկտեղ թող ցնծան

9 - Տէրոջը առջև, վասն զի կու գայ
երկիրը դատելու.

Անիկա պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,

Ու ժողովուրդները՝ ուղղութիւնով:

ՍՍՂՄ. ԴԹ

Տէրը կը թագաւորէ, ժողովուրդները թող սարսափին.

Ինք քերովբէներուն վրայ կը նստի,
երկիր թող շարժի:

2 - Տէրը մեծ է Սիօնի մէջ,

Ու բարձրացած է բոլոր ժողովուրդներուն վրայ:

3 - Թող գովեն քու մեծ ու ահաւոր անունդ.

Անիկա սուրբ է:

*Կա՛մ, յաղթութիւն

4 - Եւ *Թագաւորին զօրութիւնը իրաւունք կը սիրէ՝.

Ուղղութիւն հաստատեցիր,
Իրաւունք ու արդարութիւն ըրիր Յուդայի մէջ:

5 - Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,

Ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքերուն պատուանդանին.

Անիկա սուրբ է:

6 - Մովսէս ու Ահարոն անոր քահանաներուն մէջ,

Եւ Սամուէլ անոր անունը կանչողներուն մէջ

Տէրոջը կ'աղաղակէին,

Ու անիկա պատասխան կու տար անոնց.

7 - Ամպի սիւնին մէջէն կը խօսէր անոնց հետ.

Անոնք կը պահէին անոնց վկայութիւնները,

Ու այն հրամանը չբռնեց տուաւ:

8 - Ով Տէր, մեր Աստուածը, դուն կը լսէիր անոնց.

Դուն անոնց ներող Աստուած էիր,

Թէպէտ վրէժխնդիր եղար անոնց գործերուն:

9 - Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,

Ու երկրպագութիւն ըրէք անոր սուրբ լեռանը վրայ.

Վասն զի Տէրը, մեր Աստուածը, սուրբ է:

ՍՍՂՄ. Ծ

Գոհութեան Սաղմոս:

Աղաղակեցէք Տէրոջը, ով բոլոր երկիր.

2 - Ծառայեցէք Տէրոջը ուրախութեամբ.

Անոր առջև եկէք ցնծութեամբ:

3 - Ճանչցէք որ Եհովա է Աստուած.

Անիկա ստեղծեց մեզ, ու իոչ թէ մենք՝.

Մենք անոր ժողովուրդը ու անոր արօտին ոչխարներն ենք:

4 - Մտէք անոր դռները գոհութեամբ,

Ու անոր սրահները՝ օրհնութեամբ.

*Կա՛մ, դուն, ով իրաւասէր զօրաւոր թագաւոր

†Կա՛մ, մենք անորն ենք

Գոհացէք անկէ — օրհնեցէք անոր անուէնը :

5 - Վասն զի Տէրը բարի է.
Անոր ողորմութիւնը յաւիտեան է,
Ու անոր հաւատարմութիւնը ազգէ մինչև ազգ :

ՍՍ.ՂՄ. ՃԱ

Սաղմոս Դաւթի :

Ողորմութիւն ու իրաւունք պիտի երգեմ .

Ով Տէր, քեզի սաղմոս պիտի ըսեմ :
2 - Իմաստութիւնով պիտի քալեմ կատարելութեան ճամբուն մէջ .
Ե՞րբ ինծի պիտի գաս .
Իմ տանս մէջ սրտիս կատարելութիւնովը պիտի վարուիմ :
3 - Աչքերուս առջև չար բան մը պիտի չդնեմ .

Մոլորածներուն գործը կ'ատեմ ,
Թող անիկա ինծի չփակչի :

4 - Ծուռ սիրտը թող զատուի ինծմէ .
Չարը պիտի չճանչնամ :

5 - Ան որ ծածուկ կը խօսի իր ընկերին դէմ ,
պիտի ջնջեմ .

Ան որ աչքերով բարձր է ու սրտով ամբարտաւան ,

Անոր պիտի չհամբերեմ :
6 - Իմ աչքերս երկրի հաւատարիմներուն վրայ պիտի ըլլան ,

Որպէս զի ինծի հետ բնակին .
Կատարելութեան ճամբուն մէջ քա-

լովը
Ինծի ծառայութիւն պիտի ընէ :

7 - Նենգաւորը պիտի չբնակի իմ տանս մէջ .

Սուտ խօսողը աչքերուս առջև պիտի չհաստատուի :

8 - Աւատուանց կանուխ պիտի ջնջեմ երկրին բոլոր ամբարիշտները ,

Որպէս զի Տէրոջը քաղաքէն բոլոր անօրէնութիւն գործողները կորսնցնեմ :

ՍՍ.ՂՄ. ՃԲ

Վշտալինն աղօթքը՝ երբ «Էրբէ կը մարի ու իր գանգատը Տէրոջը առջև կը թափէ :

Ով Տէր, լսէ իմ աղօթքս .

Ու իմ աղաղակս թող քեզի հասնի :
2 - Քու երեսդ մի ծածկեր ինծմէ իմ նեղութեանս օրը .

Խոնարհեցուր ինծի քու ականջդ .
Շուտով պատասխան տուր ինծի այն օրը որ «Էրբէ կանչեմ :

3 - Վասն զի իմ օրերս մուխի պէս փճացան ,

Եւ իմ սկոյրներս խուլի պէս այրեցան :

4 - Սիրտս զարնուեցաւ ու խոտի պէս չորցաւ ,

Այնպէս որ իմ հացս ուտելու մնացայ :
5 - Հաւաչանքիս ձայնէն

Սկոյրներս մարմինիս փական :
6 - Անապատին մէջի հաւալուսին նմանեցայ ,

Աւերակներուն բուին պէս եղայ :
7 - Անքուն մնացի , ու նման եղայ Տանիքին վրայ մինակ եղող ճնճղուկին :

8 - Ամէն օր իմ թշնամիներս զիս կը նախատեն ,

Իմ վրաս սատիկ բարկացողները ինծի դէմ երգում կ'ընեն :

9 - Վասն զի մոխիրը հացի պէս կերայ ,
Ու խմելիքս արցունքով խառնեցի :

10 - Քու բարկութեանդ ու սրամտութեանդ համար ,

Վասն զի զիս վեցուցիր ու նետեցիր :
11 - Իմ օրերս երկնցած ստուերի պէս եղան ,

Ու ես խոտի պէս չորցայ :
12 - Բայց դուն , ով Տէր, յաւիտեան կը կենաս ,

Եւ քու յիշատակդ ազգէ մինչև ազգ :
13 - Դուն պիտի ելլես — Սիօնի ողորմիս .

Վասն զի ժամանակ է անոր ողորմելու ,

Քանզի որոշուած ժամանակը հասաւ :
14 - Վասն զի քու ծառաներդ անօրքարերուն կը հաւնին ,

Ու անոր հոգին կը գթան :
15 - Եւ հեթանոսները պիտի վախնան Տէրոջը անունէն ,

Ու երկրի բոլոր թագաւորները՝ քու փառքէդ :

16 - Վասն զի Տէրը պիտի շինէ Սիօնը .
Իր փառքովը պիտի երևնայ :

17 - Տնանկներուն աղօթքը մտիկ պիտի ընէ ,

Ու անոնց աղօթքը պիտի չանարգէ :
18 - Այս պիտի գրուի գալու ազգին համար .

Ու ստեղծուելու ժողովուրդը Տէրոջը գոհութիւն պիտի տայ :

- 19 - Վասն զի իր սրբութեանը բարձրութենէն հայեցաւ .
- Տէրը երկինքէ երկրի վրայ նայեցաւ .
- 20 - Որպէս զի կապուածին հառաչանքը լսէ ,
- Ու մահու սրգինները արձակէ :
- 21 - Որպէս զի Սիօնի մէջ Տէրոջը անունը պատմեն ,
- Ու անոր գովութիւնը՝ Երուսաղէմի մէջ ,
- 22 - Երբ ծաղավուրդները մէկտեղ ժողովուին ,
- Ու թագաւորութիւնները՝ Տէրոջը ծառայելու համար :
- 23 - Անիկա զօրութիւնս տկարացուց ճամբուն մէջ ,
- Ու իմ օրերս կարճացուց :
- 24 - Ես ըսի, Ով իմ Աստուածս, իմ օրերուս կէսին մէջ զիս մի վերցընէր .
- Քու տարիներդ ազգէ մինչև ազգ են :
- 25 - Սկիզբէն երկրի հիմերը դրիր, Ու երկինք քու ձեռքերուդ գործն է :
- 26 - Անոնք պիտի կորսուին, բայց դուն պիտի կենաս .
- Ու անոնց ամէնը լաթի պէս պիտի մաշին .
- Հանդերձի պէս պիտի փոխես զանոնք , Ու պիտի փոխուին :
- 27 - Բայց դուն նոյն ինքն ես, Եւ քու տարիներդ պիտի չվերջանան :
- 28 - Քու ծառաներուդ սրգինները պիտի բնակին ,
- Ու անոնց սերունդը հաստատ պիտի մնայ քու առջևդ :

ՍԱՂՄ. ԶԳ

Մաղճա Գաւթի :

- Ով իմ անձս, օրհնէ Տէրը ,
- Ու այն ամէնը որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ անունը :
- 2 - Ով իմ անձս, օրհնէ Տէրը ,
- Եւ անոր բոլոր բարեբարութիւնները մի մտանար .
- 3 - Որ կը քառէ բոլոր անօրէնութիւններդ ,
- Ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ .
- 4 - Որ կը փրկէ քու կեանքդ ապականութենէ ,
- Եւ կը պահէ քեզ սղորմութիւնով ու գթութիւնով .

- 5 - Որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով ,
- Ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը նորագուի :
- 6 - Տէրը արգարութիւններ ու իրաւունքներ կ'ընէ
- Բոլոր զրկուածներուն .
- 7 - Անիկա իր ճամբաները Մովսէսի ճանչցուց ,
- Ու իր գործերը՝ Խորայելի սրգիններուն :
- 8 - Բարեգութ ու սղորմած է Տէրը ,
- Երկայնամիտ ու առատ՝ սղորմութիւնով :
- 9 - Անիկա մինչև վերջը չհակառակիր ,
- Եւ յաւիտեան ոխ չպահէր :
- 10 - Անիկա մեր մեղքերուն համեմատ չըրաւ մեզի ,
- Ու մեր անօրէնութիւններուն համեմատ հատուցում չըրաւ մեզի :
- 11 - Հապա որչափ որ երկինք երկրէ բարձր է ,
- Այնչափ իր սղորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ զօրաւոր է :
- 12 - Որչափ որ արևելքը արևմուտքէն հեռու է ,
- Այնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները :
- 13 - Ինչպէս հայր մը կը գթայ եւ սրգիններուն վրայ ,
- Այնպէս Տէրը կը գթայ իրմէ վախճողներուն վրայ :
- 14 - Վասն զի ան գիտէ մեր կազմուածքը ,
- Կը յիշէ որ մենք հող ենք :
- 15 - Մարդուն օրերը խոտի պէս են .
- Ինչպէս դաշտի ծաղիկը , այնպէս կը ծաղկի :
- 16 - Վասն զի հովը անոր վրայէն կ'անցնի ու ան կ'ոչնչանայ ,
- Եւ այլ անոր տեղը չճանչնար զանիկա :
- 17 - Բայց Տէրոջը սղորմութիւնը յաւիտեանս յաւիտենից իրմէ վախճողներուն վրայ է ,
- Ու անոր արգարութիւնը՝ սրգուց սրգիններու վրայ .
- 18 - Անոնց լեռայ է՝ սրանք կը պահեն անոր ուխտը ,
- Եւ կը յիշեն անոր պատուիրանքները ու կը կատարեն :
- 19 - Տէրը իր աթոռը երկինքի մէջ հաստատեց .
- Ու անոր թագաւորութիւնը ամէնուն վրայ կը տիրէ :

- 20 - Օրհնեցէք Տէրը , ով անոր հրեշտակները , որ ուժով զօրաւոր էք ,
- Որ անոր խօսքին ձայնը լսելով՝ իր հրամանը կը կատարէք :
- 21 - Օրհնեցէք Տէրը , ով անոր բոլոր զօրքերը ,
- Անոր կամօքը կատարող պաշտօնեաները :
- 22 - Օրհնեցէք Տէրը , ով անոր բոլոր գործերը ,
- Անոր տէրութեանը ամէն տեղերուն մէջ .
- Օրհնէ Տէրը , ով իմ անձս :

ՍԱՂԱՄ. ԶԴ

Օրհնէ Տէրը , ով իմ անձս .

Ով Տէր , իմ Աստուածս , դուն խիստ մեծ ես .

Փառք ու վայելչութիւն հագած ես .

2 - Լոյսը հանդերձի պէս կը հագնիս , երկինքը վարագոյրի պէս կը ասարածես :

3 - Անիկա իր վերնաստոււնները ջուրերուն վրայ կը շինէ ,

Ամպերը իրեն կառք կ'ընէ ,
Հովին թևերուն վրայ կը պտրտի :

4 - Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ ,

Ո՛ր իր պաշտօնեաները՝ կրակի բոց :

5 - Անիկա հաստատեց երկիրը իր հիմերուն վրայ ,

Որպէս զի յաւիտեանս յաւիտենից չխախտի :

6 - Զանիկա անդունդով ծածկեց իր թէ հանդերձով .

Զուրերը լեռներուն վրայ կայնեցան .

7 - Քու սաստեղէդ փախան .

Քու որոտմունքիդ ձայնէն արտօրաւորով փախան .

8 - Լեռներուն վրայ ելան «- հովիտներուն մէջ իջան ,

Այն տեղը զոր դուն հաստատեցիր անոնց համար :

9 - Սահման դրիր որպէս զի շանցնին ,
Ու նորէն երկիրը չծածկեն :

10 - Զորերուն մէջ աղբիւրներ կը զրկէ .

Զորերը լեռներուն մէջէն կ'երթան :

11 - Անոնք բոլոր գաշտի գաղաններուն կը խմցնեն .

Ո՛ր վայրի էշերը իրենց ծարաւութիւնը կ'անցնեն :

12 - Անոնց քով երկինքի թռչունները կը բնակին ,

Ոստերուն մէջէն ձայն կու տան :
13 - Անիկա իր վերնաստոււններէն լեռները կը ջրէ .

Քու գործերուդ պատուէն երկիր կը կշտանայ :

14 - Անիկա անասուններուն համար խոտ կը բուսցնէ ,

Ու մարդուն ծառայութեան համար՝ բոց ,

Որպէս զի կերակուր հանէ երկրէ ,

15 - Ու գինի՝ «- կ'ուրախացնէ մարդուն սիրտը ,

Ե- իւզ՝ որ անոր երեսը կը փայլեցընէ ,

Ու հաց՝ «- կը հաստատէ մարդուն սիրտը :

16 - Տէրոջը ծառերը կուշտ են ,
Լիբանանի եղևինները՝ զորոնք ինք տնկեց :

17 - Հոն թռչունները բոյներնին կը շինեն ,

Ո՛ր արագիլին բնակարանը մայրերուն վրայ է :

18 - Բարձր լեռները այծեամբերուն տպաւէն են ,

Ո՛ր վէժերը՝ ճագարներուն :

19 - Ժամանակներու համար լուսինը ստեղծեց .

Արեգակը իր մարը մանելը կը ճանչնայ :

20 - Խաւարը կը դնէս ու գիշեր կ'ըլլայ ,

Որուն մէջ անասունն բոլոր գաղանները կը պտրտին :

21 - Առիւծներուն կորիւնները կը մունչեն յափշտակութեան համար ,

Ու Աստուծոյ իրենց կերակուրը կը խնդրեն .

22 - Արեգակին ծագելուն պէս կը ժողվուին ,

Եւ իրենց որջերուն մէջ կը պառկին :

23 - Մարդ մինչև իրիկուն իր գործին Ու իր ծառայութեանը կ'երթայ :

24 - Ով Տէր , ս'ըջափ շատ են քու գործերդ .

Անոնց բոլորը իմաստութիւնով բրիր .
Երկիր լցուած է քու փառեղծածներովդ :

25 - Այս ծովը մեծ ու լայն է ,
Հոն անթիւ աղաքողներ ,

*ԵՔԷ. իւզէն, խմ, իւզէն «-ելի Կամ, սասցուածքներովդ

- Պզտիկ ու մեծ կենդանիներ, կան:
- 26 - Հոն նաւերը կը քաղեն,
- Ո- Լեիաթան՝ զոր անոնց մէջ խաղալու համար ստեղծեցիր:
- 27 - Ստոնց ամէնը քեզի կը սպասեն, Որպէս զի իրենց կերակուրը ժամանակին տաս:
- 28 - Դուն անոնց կու տաս «- անոնք կը ժողվեն.
- Ձեռքդ կը բռնաս «- բարութիւնով կը կշտանան:
- 29 - Եբք քու երեսդ կը ծածկես՝ կը խռովին.
- Եբք անոնց հոգին կ'առնես՝ կը մեռնին եւ իրենց հոգը կը դառնան:
- 30 - Հոգիդ կը զրկես «- անոնք կը ստեղծուին,
- Ու երկրի երեսը կը նորոգես:
- 31 - Տէրոջը փառքը յաւիտեան ըլլայ.
- Տէրը իր գործերուն վրայ ուրախանայ:
- 32 - Երկրի վրայ կը նայի ու այն կը դողայ.
- Լեռներուն կը դպչի և անոնք կը մխան:
- 33 - Տէրոջը պիտի երգեմ՝ իմ կեանքիս մէջ.
- Սաղմոս պիտի ըսեմ իմ՝ Սասուծոյս՝ քանի որ «ջ եմ:
- 34 - Անոր վրայով իմ մտածութիւնս քողցր պիտի ըլլայ.
- Ես Տէրոջմով պիտի ուրախանամ:
- 35 - Մեզաւորները աշխարհէ՛ թող պակօին,
- Ու ամբարիշտները ոչնչանան:
- Օրհնէ Տէրը, ով իմ անձս: *Ալէլուիա:

ՍՍ.ՂՄ. ՃԵ

- Գոհացէք Տէրոջմէն, անոր անուներ կանչեցէք,
- Անոր գործերը ժողովուրդներուն մէջ պատմեցէք:
- 2 - Երգեցէք անոր, սաղմոս ըսէք անոր, Պատմեցէք անոր բոլոր հրաշքները:
- 3 - Անոր սուրբ անունովը պարծենցէք. Տէրը խնդրողներուն սիրար թող ուրախ ըլլայ:
- 4 - Տէրը ու անոր զօրութիւնը խնդրեցէք,
- Ամէն ժամանակ անոր երեսը փնտռեցէք.
- 5 - Յիշեցէք անոր ըրած հրաշքները,

*Այսինքն, Տէրը օրհնեցէք

- Անոր նշանները ու բերնին դատաստանները,
- 6 - Ով անոր ծառային Աբրահամի սերունդը,
- Ով Յակոբի որդիներ, անոր ընտրեալները:
- 7 - Եհովա ինքն է մեր Աստուածը. Անոր դատաստանները բոլոր երկրի մէջ են:
- 8 - Անիկա իր ուխտը յաւիտեան կը յիշէ,
- Ո- իր պատուիրած խօսքը՝ մինչև հազար ազգ.
- 9 - Ս.Յն «-Էրբ զոր Աբրահամի հետ ըրաւ,
- Ու իր երգումը զբ Իսահակի ըբ «-.
- 10 - Յակոբի ալ հաստատեց զանիկա՝ օրէնք մը ըլլալու,
- Ո- Իսրայէլի՝ Էբք յաւիտեանական ուխտ մը,
- 11 - Ըսելով, Քեզի պիտի տամ Քանանու երկիրը,
- Ձեր ժառանգութեան վիճակը.
- 12 - Եբք անոնք սակաւաթիւ էին, Քիչուոր ու պանդուխտ՝ անոր մէջ,
- 13 - Ու մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
- Մէկ թագաւորութենէ ուրիշ ժողովուրդի,
- 14 - Անիկա մէկո՛ւն թող չտուաւ որ զանոնք նեղէ.
- Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց համար,
- 15 - Ըսելով, իմ օժեպներուս մի դպչիք,
- Ու իմ մարգարէներուս չարութիւն մի ընէք:
- 16 - Ու սով կանչեց երկրին վրայ. Հացին բոլոր զօրութիւնը կտարեց:
- 17 - Անոնց առջևէն մարդ զրկեց, Յովսէփը՝ «բ ծառայութեան ծախուեցաւ:
- 18 - Անոր սուքերը կապանքով նեղեցին.
- Անոր անձը երկաթի մէջ գրուեցաւ՝
- 19 - Մինչև այն ժամանակ որ անոր խօսքը եկաւ,
- Տէրոջը խօսքը փորձեց զանիկա:
- 20 - Թագաւորը զրկեց ս. արձակեց զանիկա:
- Ժողովուրդներուն իշխանը ազատեց զանիկա:
- 21 - Իր տանը վրայ տէր կեցուց զանիկա,

- Եւ իր բոլոր ունեցածին վրայ իշխող .
- 22 - Որպէս զի անոր իշխանները իր ունեցածին պէս կապէ ,
- Ու անոր ծերերը իմաստուն ընէ :
- 23 - Եւ Իսրայէլ Եգիպտոս եկաւ ,
- Ու Յակոբ պանդուխտ եղաւ Քամի երկրին մէջ :
- 24 - Եւ Տերը իր ժողովուրդը խիստ շատցուց ,
- Ու զանոնք իրենց թշնամիներէն աւելի զօրաւոր բրաւ :
- 25 - Անոնց սիրար * դարձուց , որպէս զի իր ժողովուրդը ատեն ,
- Ու իր ծառաներուն նենգութիւն ընեն :
- 26 - Իր ծառան Մովսէսը զրկեց ,
- Եւ իր ընտրած Ահարոնը .
- 27 - Որքան անոնց մէջ իր նշանները ըրին ,
- Ու հրաշքներ՝ Քամի երկրին մէջ :
- 28 - Խաւար զրկեց ու խաւարեցուց .
- Եւ անոր խօսքին դէմ՝ չկեցան :
- 29 - Անոնց ջուրերը արիւնի դարձուց ,
- Ու անոնց ձուկերը սպաննեց :
- 30 - Անոնց երկիրը առատօրէն գորտեր դուրս բերաւ՝
- Մինչև անոնց թագաւորներուն ներքին սենեակներուն մէջ :
- 31 - Ըսաւ , ու շանաճանճը և մուկները Անոնց բոլոր սահմաններուն մէջ եկան :
- 32 - Անձրևի տեղ կարկուտ տուաւ անոնց ,
- Ու կրակի բոցեր՝ անոնց երկրին մէջ :
- 33 - Անոնց որթերը ու թղթերները զարկաւ ,
- Եւ անոնց սահմաններուն ծառերը կտորացեց :
- 34 - Ըսաւ , ու եկաւ մարտիը ,
- Եւ ջորեակը՝ առանց համրանքի .
- 35 - Ու անոնց երկրին մէջի բոլոր խոտը կերան ,
- Եւ անոնց արտերուն պտուղը կերան :
- 36 - Անոնց երկրին մէջի բոլոր անդրանիկները
- Ու անոնց բոլոր զօրութեանը սկիզբը զարկաւ :
- 37 - Եւ զանոնք սակիով ու արծաթով հանեց .
- Ու անոնց ցեղերուն մէջ տկար մարդ չկար :
- 38 - Եգիպտոս ուրախացաւ անոնց դուրս ելլելուն ,

* կա՛մ , դարձաւ

- Վասն զի անոնց ահը իրենց վրայ հնկած էր :
- 39 - Յորեւ հովանի ըլլալու համար ամպը ,
- Ու գիշերը լոյս տալու համար կրակը տարածեց :
- 40 - Խնդրեցին , ու լորամարգիններ բերաւ ,
- Ու երկինքի հացով կշտացուց զանոնք :
- 41 - Վէ՛մը պատուեց , ու ջուրերը վազեցին .
- Գետի դէ՞ քալեցին չոր տեղերուն մէջ :
- 42 - Վասն զի իր սուրբ խօսքը յիշեց ,
- Զոր իր Աբրահամ ծառային հետ ըրէր էր :
- 43 - Ու ժողովուրդը ցնծութիւնով հանեց ,
- Եւ իր ընտրածները՝ ուրախութիւնով :
- 44 - Ու հեթանոսներուն երկիրները անոնց տուաւ .
- Եւ ժողովուրդներուն վաստակները ծառանգեցին անոնք .
- 45 - Որպէս զի անոր պատուիրանքները պահէն ,
- Ու անոր օրէնքները կատարեն : Ալէլուիա :

ՍՍՂՄ. ԶԶ

- Ալէլուիա : Գոհացէք Տէրօջմէն , վասն զի բարի է ,
- Վասն զի անոր սլորմութիւնը յաւիտեան է :
- 2 - Ո՞վ պիտի պատմէ Տէրօջը մեծ գործերը .
- Ո՞վ պիտի իմացնէ անոր ամէն գովութիւնը :
- 3 - Երանի՛ անոնց որ իրաւունքը կը պահեն ,
- Ու ամէն ժամանակ արդարութիւն կ'ընեն :
- 4 - Յիշէ՛ զիս , ով Տէր , քու ժողովուրդիդ ձեռքս անեցա՞մ հաճութեանդ համեմատ ,
- Ինձի սյցելութիւն ըրէ քու փրկութիւնովդ .
- 5 - Որպէս զի քու ընտրեալներուդ բարութիւնը տեսնեմ ,
- Քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ ,
- Քու ծառանգութիւնովդ պարծենամ :
- 6 - Մենք մեր հայրերուն հետ մեղանչեցինք .

Անօրէնութիւն ըրինք, ամբարշտութիւն գործեցինք :

7 - Մեր հայրերը Եգիպտոսի մէջ չիմացան քու հրաշքներդ,

2 յիշեցին քու սղորմութեանդ շատութիւնը.

Հապա ապստամբեցան ծովուն քով,
Կարմիր ծովուն քով :

8 - Բայց զանոնք իր անուանը համար փրկեց,

Որպէս զի իր մեծ զօրութիւնը ճանչցրնէ :

9 - Եւ կարմիր ծովուն սաստեց, ու ցամքեցաւ .

Ու անդունդներուն մէջէն քալել աւաւ անոնց, իբր թէ անապատին մէջէն :

10 - Եւ զանոնք փրկեց ատողին ձեռքէն,

Ու ազատեց զանոնք թշնամիին ձեռքէն :

11 - Եւ ջուրերը անոնց թշնամիները ժածկեցին .

Անոնցմէ մէկը չմնաց :

12 - Այն ատեն հաւատացին անոր խօսքին,

Եւ անոր օրհնութիւն երգեցին :

13 - Շուտով մնացան անոր գործերը,

Ու անոր խրատին չապատեցին :

14 - Եւ անապատին մէջ խիստ ցանկացան,

Ու զԱստուած փորձեցին անջուր տեղին մէջ :

15 - Եւ անոնց տուաւ իրենց ուղածը,

Թէպէտև վատութութիւն զրկեց անոնց անձերուն վրայ :

16 - Եւ Մովսէսի նախանձեցան բանակին մէջ,

Ու Տէրօջը սուրբին, Ահարոնի :

17 - Երկիր բացուեցաւ ու կլկեց Գաթանը,

Ու Աբիրոնի ժողովքը ժածկեց :

18 - Եւ կրակ բարրոբեցաւ անոնց ժողովքին մէջ,

Բոցը այրեց ամբարիշտները :

19 - Որթ շինեցին Գորեբի մէջ,

Ու երկրպագութիւն ըրին ձուլածոյ պատկերին :

20 - Եւ իրենց Փառքը Խօտակեր արջառի նմանութեանը փոխեցին :

21 - Մոռցան իրենց փրկիչ Աստուածը՝

Որ մեծամեծ գործեր ըրաւ Եգիպտոսի մէջ,

22 - Ու հրաշքներ՝ Գամի երկրին մէջ,
Եւ ասաւոր բաներ՝ Կարմիր ծովուն մէջ :

23 - Ուստի ըսաւ որ զանոնք կորսնցնէ,
Եթէ անոր ընտրեալը Մովսէս
*Մէջտեղը անոր առջև կայնած չըլլար,

Անոր բարկութիւնը ետ դարձնելու համար, որպէս զի չստակեցնէ :

24 - Նաև այն ցանկալի երկիրը անարգեցին,

Ու անոր խօսքին չհաւատացին :

25 - Եւ իրենց վրաններուն մէջ արարնջեցին,

Տէրօջը ձայնը չստեցին :

26 - Ուստի անոնց համար †երգում ըրաւ՝

Որ զանոնք անապատին մէջ ձգէ,

27 - Եւ անոնց սերունդը ազգերու մէջ ձգէ,

Ու զանոնք երկիրներու մէջ ցրուէ :

28 - Եւ անոնք Բելփեգովրի յարեցան,
Ու մեռածներուն զոհերը կերան .

29 - Եւ իրենց գործերովը Տէրւ բարկացուցին .

Ու անոնց վրայ ժանտամիս հասաւ :

30 - Ետքը Փենեհէս ելաւ ու դատաստան ըրաւ,
Եւ ժանտամիսը դադարեցաւ :

31 - Ու այս բանը անոր արդարութիւն սեպուեցաւ՝

Ազգէ մինչև ազգ յաւիտեան :

32 - Նաև բարկացուցին զԱնիկա Մերիպայի ջուրերուն վրայ,
Ու անոնց համար Մովսէսի գէշ եղաւ .

33 - Վասն զի դառնացուցին անոր հոգին,

Ան ալ անխորհրդաբար խօսեցաւ իր շրթունքներովը :

34 - 2 կորսնցուցին այն ազգերը
Որ Տէրը ըսեր էր անոնց .

35 - Հապա հեթանոսներուն հետ խառնուեցան,
Ու անոնց գործերը սարվեցան .

36 - Եւ անոնց կուռքերուն ծառայեցին,

Ու անոնք իրենց որոգայթ եղան :

*Եբր. Խրամատին մէջ. Եզեկ. Ժգ. 5 :
Իբ. 30 :
†Եբր. ձեռքը վերցուց. Եւ. զ. 8 :
Բ Օր. լբ. 40 :

37 - Եւ իրենց տղաքները ու աղջիկները Դեերուն զոհեցին .

38 - Ու անմեղ արիւն թափեցին, իրենց տղաքներուն ու աղջիկներուն արիւնը ,

Զորոնք զոհեցին Քանանու կուռքերուն .

Ու երկիրը պղծուեցաւ արիւնով :

39 - Եւ իրենց գործերովը պղծուեցան, Ու իրենց ըրածներովը պառնկութիւն ըրին :

40 - Ուստի Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովուրդին վրայ ,

Ու զզուեցաւ իր ժառանգութենէն .

41 - Եւ զանոնք հեթանոսներուն ձեռքը մատնեց ,

Ու զանոնք ատոյղները տիրեցին անոնց վրայ :

42 - Եւ անոնց թշնամիները նեղեցին զանոնք .

Ու անոնց ձեռքին տակ խոնարհեցան :

43 - Շատ անգամ փրկեց զանոնք .

Բայց անոնք իրենց խորհուրդներովը դառնացուցին շինիւն ,

Ու նուատացան իրենց անօրէնութիւններուն համար :

44 - Սակայն անիկա նայեցաւ անոնց նեղութեանը ,

Երբ անոնց աղաղակը լսեց .

45 - Ու անոնց համար իր ուխտը յիշեց, Եւ իր մեծ ողորմութեանը համեմատ զղջացաւ .

46 - Ու անոնց բոլոր գերեզմաններուն տուջև

Գթութիւն գանել տուաւ անոնց :

47 - Փրկէ մեզ, ով Տէր, մեր Աստուածը ,

Ու ժողովէ մեզ հեթանոսներուն մէջէն, Որպէս զի քու սուրբ անուանդ գոհութիւն մատուցանենք ,

Ու քու օրհնութիւնովդ պարծենանք :

48 - Օրհնեալ ըլլայ Տէրը, Իօրայէի Աստուածը ,

Յաւիտեանս յաւիտենից :

Ու բոլոր ժողովուրդը թող ըսէ, Ամէն : Ալէլուիա :

ՍԱՂՄ. ՃԷ

Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է ,

Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է :

2 - Թող այսպէս ըսեն Տէրոջը փրկածները ,

Զորոնք փրկեց թշնամիին ձեռքէն ,

3 - Ու ժողովեց զանոնք երկիրներէն, Արևելքէն ու արևմուտքէն, հիւսիսէն ու *ծովէն :

4 - Անոնք մոլորեցան անապատին մէջ, անջուր ճամբու մէջ .

Բնակելու քաղաք չգտան :

5 - Անօթի ու ծարաւ ըլլալով

Հոգինին իրենց ներսիցին կը մտար :

6 - Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ ,

Եւ անիկա փրկեց զանոնք իրենց տառապանքներէն .

7 - Ու անոնց ուղիղ ճամբու մէջ առաջնորդեց ,

Որպէս զի բնակելու քաղաք երթան :

8 - Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար ,

Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար .

9 - Վասն զի անիկա ծարաւ չհոգին կը յագեցնէ ,

Ու անօթեցածը բարութիւնով կը լեցնէ :

10 - Անոնք խաւարի ու մահուան շուքի մէջ կը նստէին ,

Տառապանքով ու երկաթով կապուած էին .

11 - Վասն զի Աստուծոյ խօսքերուն հակառակ կեցան ,

Ու Բարձրելոյն խորհուրդը անարգեցին :

12 - Ուստի անիկա ալ նեղութիւնով խոնարհեցուց անոնց սիրտը .

Ինկան ու օգնական մը չկար :

13 - Եւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ ,

Ու զանոնք փրկեց իրենց տառապանքներէն :

14 - Զանոնք խաւարէն ու մահուան շուքէն հանեց ,

Ու անոնց կապանքները կոտրեց :

15 - Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար ,

Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար .

16 - Վասն զի պղնձէ դռները փշրեց , Ու երկաթէ նիգերը կոտրեց :

17 - Յիմարները իրենց չար ճամբուն համար

*Կա՛մ, հարաւէն

Ու իրենց անօրէնութիւններուն համար նեղութիւն կը կրեն .

18 - Անոնց անձը ամէն կերակուրէ կը զզուի ,

Ու մինչև մահուան գռներուն կը մօտենան :

19 - Եւ Տէրօջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ ,

Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն :

20 - Իր խօսքը կը զրկէ ու կը բժշկէ զանոնք ,

Ու կ'աղաթէ զանոնք իրենց կործանումէն :

21 - Թող գոհանան Տէրօջմէն իր սղորմութեանը համար ,

Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար .

22 - Եւ գոհութեան պատարագներ մատուցանեն ,

Ու անոր գործերը ցնծութեամբ պատմեն :

23 - Նաւերով ծովը իջնողները Ու մեծ ջուրերու մէջ գործ գործողները ,

24 - Անոնք Տէրօջը գործերը Ու անոր հրաշքները կը տեսնեն անգունդին մէջ :

25 - Վասն զի ան կ'ըսէ ու մրկապից հովը կը հանէ ,

Որ անոր պիքները կը բարձրացնէ :

26 - Երկինք կ'ելլեն , -- անդունդը կ'իջնեն .

Անոնց անձերը նեղութենէ կը հպին .

27 - Քինով մարդու պէս կը դողդղան ու կ'երերան ,

Եւ անոնց բոլոր իմաստութիւնը կը հաւանի :

28 - Այն ատեն Տէրօջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ ,

Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն :

29 - Մրրիկը հանդարտութեան կը դարձնէ ,

Ու պիքները կը դադարին :

30 - Իրենք ալ կ'ուրախանան որ դադարեցան .

Եւ կ'առաջնորդէ անոնց իրենց ուզած նաւահանգիստը :

31 - Թող գոհանան Տէրօջմէն իր սղորմութեանը համար ,

Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար .

32 - Եւ թող բարձրացնեն զանիկա ժողովուրդին ժողովքին մէջ ,

Ու ծերերուն տատանին մէջ գովեն զանիկա :

33 - Գետերը անապատի կը դարձնէ ,

Ու ջուրերուն գնացքները՝ չոր երկրի ,

34 - Ու պաղաքեր երկիրը աղի երկրի՝ Անոր բնակիչներուն չարութեանը համար :

35 - Անապատը ջուրերու լիճի կը փոխէ ,

Ու չոր երկիրը՝ ջուրերու գնացքի .

36 - Եւ անօթիները հոն կը բնակեցնէ , Որպէս զի բնակելու քաղաք հաստատեն ,

37 - Ու արտեր ցանեն և այգիներ անկեն ,

Որպէս զի արմուխի պտուղ բերեն :

38 - Զանոնք կ'օրհնէ , և անոնք խիստ կը բազմանան ,

Ու անոնց անասունները չպակսեցնէր :

39 - Նորէն կը պակսին ու կը ցածնան Բռնութենէ , նեղութենէ ու արամութենէ :

40 - Անարգանք կը թափէ իշխաններուն վրայ ,

Ու զանոնք ճամբայ չունեցող անապատի մէջ կը մոլորեցնէ :

41 - Բայց աղքատը խեղճութենէ կը բարձրացնէ ,

Եւ անոր տոհմերը ոչխարներու հօտի պէս կ'ընէ :

42 - Ուղիղները պիտի տեսնեն և ուրախանան .

Ու ամէն անօրէնութիւն իր բերանը պիտի գոցէ :

43 - Ո՞վ է իմաստուն՝ որ այս բաները պահէ .

Անիկա Տէրօջը սղորմութիւնները պիտի հասկնայ :

ՍԱՂՄ. ԶԸ

Դաւիթի երգը -- Սաղմուրտ

Իմ սիրտս պատրաստ է , ով Աստուած .

Պիտի երգեմ՝ ու սաղմոս պիտի ըսեմ իմ փառքովս ալ :

2 - Արթնցիր , ով տաւիղ ու քնար . Ես կանուխ պիտի արթննամ :

3 - Ով Տէր , ժողովուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ ,

Ու սաղմոս պիտի երգեմ՝ քեզի ազգերուն մէջ :

- 4 - Վասն զի քու ողորմութիւնդ մեծ է -- երկինքէ վեր,
- Եւ քու ճշմարտութիւնդ մինչև ամպերը :
- 5 - Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած,
- Ու քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ :
- 6 - Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝ Աջ ձեռքովդ ապրեցուր ու պատասխան առը ինծի :
- 7 - Աստուած *իր սրբութիւնովը՝ խօսեցաւ,
- Ես պիտի ցնծամ, Սիւքէմը պիտի բաժնեմ,
- Ու Սոկրովթի հովիտը պիտի չափեմ :
- 8 - Իմն է Գաղատադ -- իմն է Մանասէ :
- Եւ Եփրեմ գլխուս զօրութիւնն է .
- Յուդա իմ՝ օրէնսդիրս է .
- 9 - Մովսէս իմ լուսցուելու ամանս է .
- Եդովմի վրայ պիտի ձգեմ իմ մուճակս .
- Փղշտացիներուն վրայ ձայնով պիտի ցնծամ :
- 10 - Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր քաղաքը .
- Ո՞վ պիտի առաջնորդէ ինծի մինչև Եդովմ :
- 11 - Չէ՞ որ դուն, ով Աստուած, -- երեսէ ձգեցիր մեզ,
- Ու մեր զօրքերուն հետ չելար, ով Աստուած :
- 12 - Նեղութեան մէջէն մեզի օգնութիւն տուր,
- Վասն զի փուճ է մարդուն փրկութիւնը :
- 13 - Աստուծով քաջութիւն պիտի ընենք .
- Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները :

ՍԱՂՄ. ՃԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Գաւթի :

- Ով իմ օրհնութեանս Աստուածը, լուռ մի կենար .
- 2 - Վասն զի ամբարշտին բերանը Ու նենգաւորին բերանը բացուեցաւ իմ վրաս .
- Ինծի գէմ՝ սուտ լեզուով խօսեցան :
- 3 - Ատելութեան խօսքերով զիս պատեցին,

*Կա՛մ, իր սրբարանին մէջ

- Եւ ինծի հետ անիրաւ տեղը կռուեցան :
- 4 - Իմ սիրոյս փոխարէն հակառակութիւն ըրին ինծի,
- Բայց ես աղօթք չ'ընէի :
- 5 - Նաև բարիին տեղ չար հատուցին,
- Ու իմ սիրոյս տեղ՝ ատելութիւն :
- 6 - Անոր վրայ ամբարիշտ մը վերակացու դիր,
- Եւ *Սատանայ թող կոյնի անոր աջ կողմը .
- 7 - Երբ դատուի՝ յանցաւոր ելլէ, Ու անոր աղօթքը մեղք ըլլայ :
- 8 - Անոր օրերը պակսին,
- Եւ անոր պաշտօնը ուրիշը առնէ :
- 9 - Անոր որդիները որբ ըլլան,
- Ու անոր կինը՝ որբեւորի :
- 10 - Եւ անոր որդիները թափառական ըլլան ու մուրան,
- Եւ իրենց աւերակներէն ելլելով հաց փնտռեն :
- 11 - Փոխ առողը առնէ անոր բոլոր ունեցածը,
- Ու օտարները յափշտակեն անոր վաստակածը :
- 12 - Բնաւ մէ'կը գթութիւն չընէ անոր,
- Ու մէ'կը չողորմի անոր որբերուն :
- 13 - Անոր զուակները կորուստի մատանուն,
- Անոնց անունը գալու աղգին մէջ ջնջուի :
- 14 - Անոր հայրերուն անօրէնութիւնք Տէրոջը առջև յիշուի,
- Եւ անոր մօրը մեղքը չջնջուի :
- 15 - Անոնք ամէն ժամանակ Տէրոջը առջև ըլլան,
- Որպէս զի անոնց յիշատակը երկրէ վերցնէ :
- 16 - Վասն զի անիկա ողորմութիւնք ընելը չյիշեց,
- Հապա խեղճը ու աղքատը հալածեց, Որպէս զի սիրտը կտարածը սպաննէ :
- 17 - Նաև անէճքը սիրեց, ու թող անոր վրայ գայ,
- Եւ օրհնութիւնը չուզեց, ու թող անկէ հեռու ըլլայ :
- 18 - Անէճքը իր հանդերձին պէս հազաւ,
- Եւ անիկա ջուրի պէս անոր փորին մէջ մտնէ,
- Ու ձէթի պէս՝ անոր սակորներուն մէջ :

*Կա՛մ, հակառակորդը

19 - Հագնելու հանդերձի պէս
Ու միշտ մէջքը կապելու գօտիի պէս
ըլլայ անոր :

20 - Ինծի հակառակ կեցողներուն
Ու իմ անձիս համար չար խօսողներուն
վարձքը այս ըլլայ Տէրոջմէն :

21 - Բայց դուն , ով Տէր Եհովա ,
օգնէ ինծի քու անուանդ հա-
մար :

Փրկէ զիս քու ողորմութեանդ բարի
ըլլալուն համար :

22 - Վասն զի ես խեղճ ու աղքատ եմ,
Ու իմ սիրտս ներսիդէս խոցուած է :

23 - Ես երկնցող սառեւրի պէս անցայ,
Մարտիի պէս թօթվուեցայ :

24 - Ծունկերս ծոմապահուած ենէ ակա-
րացան ,
Ու մարմինս էր պարարաութենէն մա-
շեցաւ :

25 - Ու ես անոնց նախաաինք եղայ .
Երբ զիս կը տեսնեն՝ գլուխնին կը շար-
ժեն :

26 - Օգնէ ինծի , ով Տէր , իմ Ասա-
ուածս .

Փրկէ զիս քու ողորմութեանդ համե-
մաս .

27 - Ու զիտնան թէ քու ձեռքդ այս է,
Ե- դուն ըրիր ասիկա , ով Տէր :

28 - Թող անոնք անիծեն , բայց դուն
օրհնէ .

Երբ ինչէր Դեմ ելլեն , թող ամչնան ,
Բայց քու ծառագ թող ուրախ ըլ-
լայ :

29 - Իմ թշնամիներս թող նախաաինք
հագնին ,
Ու իրենց ամօթը պատմու ճանի պէս
իրենց վրայ տանեն :

30 - Շատ պիտի գոհանամ Տէրոջմէն
իմ բերնովս ,
Ու շատերուն մէջ պիտի օրհնեմ զա-
նիկա :

31 - Վասն զի ինք աղքատին աջ
կողմը կը կայնի ,
Որպէս զի անոր անձը գառապարտող-
ներէն փրկէ :

ՍՍ.ՂՄ. ՃԺ

Սաղմոս Դաւթի :

Տէրը իմ Տէրոջս ըսաւ , Նստէ իմ
աջ կողմս ,

*Եբբ. ինծի հեա գործէ

Մինչև քու թշնամիներդ սաքերուդ
պատուանդան ընեմ :

2 - Տէրը քու զօրութեանդ գաւազանը
Սիօնէ պիտի զրկէ .

Քու թշնամիներուդ մէջտեղը դուն
սիրէ :

3 - Ժողովուրդդ քու զօրութեանդ օրը
Յօժարակամ՝ պիտի ըլլայ սրբութեան
զարդարանքներով .

Քու *երիտասարդներդ արշալուսին ար-
գանդի ցօղէն*
Ա. էլէ պիտի ըլլան քեզի :

4 - Տէրը երգում ըրաւ ու պիտի չզրդ-
ջայ ,

Դուն յաւիտեան Մելքիսեդեկի կար-
գին պէս քահանայ ես :

5 - Տէրը քու աջ կողմդ է ,
Անիկա իր բարկութեան օրը թագա-
ւորներ պիտի ջարդէ :

6 - Անիկա հեթանոսներուն մէջ դա-
տաստան պիտի ընէ ,
Մեռելներով պիտի լեցնէ ,
Շատ երկիրներու վրայ գլուխ եռնեալ
պիտի ջարդէ :

7 - Ճամբուն մէջ գետէն պիտի խմէ .
Անոր համար գլուխ պիտի վերցնէ :

ՍՍ.ՂՄ. ՃԺԱ

Ալէլուիա : Բոլոր սրտով Տէրը պի-
տի գովեմ
Ուղիղներուն ժողովքին ու ժողովուր-
դին մէջ :

2 - Տէրոջը գործերը մեծ են ,
Զանոնք սիրողներուն բոլորէն կը քրն-
նուին :

3 - Անոր գործը փառաւոր ու վայե-
լուչ է ,
Եւ անոր արդարութիւնը յաւիտեան
կը մնայ :

4 - Յիշել տուաւ իր հրաշքները .
Տէրը ողորմած ու գթած է :

5 - Կերակուր տուաւ իրմէ վախցողնե-
րուն .
Իր ուխար յաւիտեան կը յիշէ :

6 - Իր գործերուն զօրութիւնը ցուցուց
իր ժողովուրդին ,
Անոնց տալով ազգերուն ժառանգու-
թիւնը :

7 - Անոր ձեռքերուն գործերը ճշմար-
տութիւն ու իրաւունք են .

*Եբբ. երիտասարդութեանդ ցօղը ար-
շալուսին արգանդէն

- Անոր բոլոր պատուիրանքները հաւատարիմ են .
- 8 - Յաւիտեանս յաւիտենից հաստատուած են ,
- Ճշմարտութեամբ և ուղղութեամբ եղած են :
- 9 - Փրկութիւն զրկեց իր ժողովուրդին ,
- Իր ուխտը յաւիտեան պատուիրեց .
- Սուրբ ու ահաւոր է անոր անունը :
- 10 - Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է .
- Բարի խոհեմութիւն ունին այն ամէնը որոնք զանոնք կ'ընեն .
- Անոր օհնութիւնը յաւիտեան կը մնայ :

ՍԱՂՄ. ՃԺԳ

- Ա**ւելուիա: Երանի՛ այն մարդուն որ Տէրոջմէն կը վախնայ ,
- Ո- անոր պատուիրանքներուն շատ կը հաւնի :
- 2 - Անոր սերունդը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ .
- Ուղիղներուն ցեղը պիտի օրհնուի :
- 3 - Աւատութիւն ու հարստութիւն պիտի ըլլայ անոր ամեր մէջ ,
- Ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ :
- 4 - Խաւարի մէջ լցս կը ծագի ուղիղներուն .
- Ողորմած ու զթած և արդար է :
- 5 - Բարի մարդը կ'ողորմի ու փոխ կուտայ .
- Իր բաները իրուունքով կը կատարէ :
- 6 - Յիրաւի անիկա յաւիտեան պիտի շատանի .
- Արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ :
- 7 - Անիկա գէշ շուրէն չվախնար .
- Անոր սիրտը հաստատա է , -- Տէրոջը կը յուսայ :
- 8 - Անոր սիրտը հաստատուած է , չվախնար ,
- Մինչև իր թշնամիներուն կորուստէն :
- 9 - Տարածեց , աղքատներուն տուաւ .
- Անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ .
- Անոր եղջիւրը փառքով պիտի բարձրանայ :
- 10 - Ամբարիշտը պիտի տեսնէ ու բարկանայ ,

Իր ահաւաները պիտի կրճատե ու պիտի հալի .

Ամբարիշտներուն ցանկութիւնը պիտի կորսուի :

ՍԱՂՄ. ՃԺԿ

- Ա**ւելուիա: Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները ,
- Օրհնեցէք Տէրոջը անունը :
- 2 - Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը Ասկէ ետև մինչև յաւիտեան :
- 3 - Արեւելքէն մինչև արևմուտք Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը :
- 4 - Տէրը բարձր է բոլոր ազգերուն վրայ .
- Անոր փառքը երկինքէն վեր է :
- 5 - Մեր Տէր Աստուծոյն պէս ո՞վ կայ , Որ բարձրութեան մէջ կը բնակի .
- 6 - Որ երկինքի ու երկրի մէջ եղած բաները
- Տեսնելու համար կը խոնարհի .
- 7 - Որ աղքատը փոշիէն վեր կը վերցրնէ ,
- Ո- անանկը աղբանոցէն կը բարձրացրնէ ,
- 8 - Որպէս զի զանոնք նստեցնէ իշխաններուն հետ ,
- Իր ժողովուրդին իշխաններուն հետ .
- 9 - Որ ամուլ կրնը տունը կը բնակեցրնէ ,
- Ո- որդիներու ուրախ մայր կ'ընէ : Աւելուիա :

ՍԱՂՄ. ՃԺԴ

- Ե**րբ Խորայէլ Եգիպտոսէ դուրս ելաւ ,
- Ո- Յակոբի տունը՝ օտարալեզու ժողովուրդին մէջէն ,
- 2 - Յուգա անոր սրբարանը՝
- Ո- Խորայէլ անոր իշխանութիւնը ելաւ :
- 3 - Ծովը տեսաւ ու փախաւ .
- Յորդանան ետ դարձաւ :
- 4 - Լեռները խոյերու պէս ցաթկատեցին ,
- Ո- բլուրները՝ գառնուկներու պէս :
- 5 - Քեզի ի՞նչ եղաւ , ով ծով , որ փախար ,
- Ե- դուն , Յորդանան , որ ետ դարձար :
- 6 - Ով լեռներ , ինչո՞ւ խոյերու պէս ցաթկատեցիք ,

- Ո - գուք, բլուրներ, գառնուկներու պէս :
- 7 - Սարսափէ, ով երկիր, Տէրոջը երեսէն,
- Յակոբի Աստուծոյն երեսէն,
- 8 - Որ վէժը ջուրերու լիճի գարձուց,
- Ո - ապառաժը՝ ջուրերու աղբիւրի :

ՍԱՂԱՄ. ձժԵ

- Ոչ թէ մեզի, ով Տէր, ոչ թէ մեզի, Հապա քու անուանդ փառք տուր՝ Քու ողորմութեանդ «- ճշմարտութեանդ համար :
- 2 - Ինչու համար հեթանոսները ըսեն թէ
- Ո՞ւր է հիմա անոնց Աստուածը :
- 3 - Բայց մեր Աստուածը երկինքն է. Անիկա իր բոլոր ուզածը ըրաւ :
- 4 - Անոնց կուռքերը արծաթ ու ոսկի են,
- Մարդու ձեռքի գործեր են .
- 5 - Բերան ունին, բայց չեն խօսիր. Աչքեր ունին, բայց չեն տեսներ .
- 6 - Ականջներ ունին, բայց չեն լսեր . Քիթ ունին, բայց հոտ չեն սուներ .
- 7 - Ձեռքեր ունին, բայց չեն շօշափեր. Ոտքեր ունին, բայց չեն քաշեր,
- Ո - իրենց կոկորդավը ձայն չեն հաներ :
- 8 - Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները

- Ո - բոլոր անոնց յուսացողները :
- 9 - *Ով Իսրայէլ, Տէրոջը յուսա՞ .
- Ան է անոնց օգնութիւնը ու սուպարը :
- 10 - †Ով Ահարոնի տունը, Տէրոջը յուսացէք՞ .
- Ան է անոնց օգնութիւնը ու սուպարը :
- 11 - ‡Ով Տէրոջմէ վախցողներ, Տէրոջը յուսացէք՞ .
- Ան է անոնց օգնութիւնը ու սուպարը :
- 12 - Տէրը մեզ կը յիշէ «- պիտի օրհնէ,
- Իսրայէլի տունը պիտի օրհնէ,
- Ահարոնի տունը պիտի օրհնէ.
- 13 - Տէրոջմէ վախցողները պիտի օրհնէ,
- Պառիկները մեծերուն հետ :
- 14 - Տէրը ձեզի քաբէ՛ պիտի աւելցնէ,
- Ձեզի ու ձեր սրգիններուն :

- 15 - Օրհնեալ էք գուք Տէրոջմէն, Որ երկինքն ու երկիրը ստեղծեց :
- 16 - Երկնից երկինքը Տէրոջն է, Բայց երկիրը մարդոց սրգիններուն սուսաւ :
- 17 - Մեղեռները Տէրը չեն օրհներ, Ոչ ալ այն ամէնը որ *գերեզմանը կ'իջնեն :
- 18 - Բայց մենք Տէրը պիտի օրհնենք Ասկէ ետեւ մինչև յաւիտեան : Ալէլուիա :

ՍԱՂԱՄ. ձժԶ

- † Ուրախ եմ ես՝, վասն զի Տէրը իմ՝ ձայնս «- աղաչանքս լսեց.
- 2 - Վասն զի անիկա իր ահանջը ինծի խնայահեցուց,
- Ու իմ օրերուս մէջ «-» պիտի կանչեմ :
- 3 - Մահուան լարերը զիս պատեցին, Ու գերեզմանին վիշտերը զիս գտան . Նեղութիւն ու տրամու թիւն գտայ :
- 4 - Բայց ես Տէրոջը անունը կանչեցի, Կ'աղաչեմ՝, ով Տէր, փրկէ իմ անձս :
- 5 - Ողորմած ու արդար է Տէրը, Եւ մեր Աստուածը զթած է :
- 6 - Տէրը միամիտները կը պահէ . Ես խեղճ եղայ, ու անիկա զիս աղաւակց :
- 7 - Ով իմ անձս, գործիր քու հանգրստութեանդ,
- Քանզի Տէրը քեզի բարեք ըրաւ :
- 8 - Վասն զի գու՛ն իմ՝ անձս մտհոռանէ փրկեցիր,
- Իմ՝ աչքերս արցունքէն, «- իմ սուքերս գայթակղելէն :
- 9 - Տէրոջը առջև պիտի քալեմ կենդանիներուն երկրին մէջ :
- 10 - Հաւատացի, անոր համար խօսեցայ .
- Ես խիստ թշուառացայ :
- 11 - Իմ՝ շփոթութեանս մէջ ըսի թէ Ամէն մարդ սուս է :
- 12 - Ի՞նչ հասուցանեմ Տէրոջը՝ Անոր բոլոր ինծի ըբ՝ բարութեանը փոխարէն :
- 13 - Փրկութեան բաժակը պիտի տունեմ, Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ :
- 14 - Իմ՝ ուխտերս Տէրոջը պիտի հասուցանեմ՝

*Եբբ. լուսութիւնը
†Կա՛, Տէրը կը սիրեմ՝

*Կա՛, Իսրայէլ Տէրոջը կը յուսայ
†Կա՛, Ահարոնի տունը Տէրոջը կը յուսան
‡Կա՛, Տէրոջմէ վախցողները Տէրոջը կը յուսան

- Իր բոլոր ժողովուրդին առջև :
- 15 - Պատուական է Տէրոջը առջև
- Իր սուրբերուն մահը :
- 16 - Կ'աղաչեմ, ով Տէր, վասն զի ես քու ծառայեմ,
- Ես քու ծառայեմ, ու քու աղախինիդ որդին :
- Գուն իմ կապերս արձակեցիր :
- 17 - Գոհուլթեան պատարագ պիտի մատուցանեմ քեզի,
- Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ :
- 18 - Իմ ուխտերս Տէրոջը պիտի հատուցանեմ
- Իր բոլոր ժողովուրդին առջև,
- 19 - Տէրոջը տանը սրահներուն մէջ,
- Քու մէջդ, ով Երուսաղէմի Ալէլուիա :

ՍԱՂՄ. ձԺԷ

- Օ**րհնեցէք Տէրը, ով բոլոր ազգեր, Գովեցէք զանհկա, ով բոլոր ժողովուրդներ :
- 2 - Վասն զի անոր ողորմութիւնը մեր վրայ մեծ է,
- Ու Տէրոջը ճշմարտութիւնը յաւիտեան է : Ալէլուիա :

ՍԱՂՄ. ձԺԸ

- Գ**ոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է :
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է :
- 2 - Իսրայէլ թող ըսէ թէ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :
- 3 - Ահարոնի տունը թող ըսէ թէ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :
- 4 - Տէրոջմէ վախճողները թող ըսեն թէ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :
- 5 - Նեղութեան մէջ Տէրոջը կանչեցի,
- Եւ Տէրը պատասխան տուաւ ինձի, լայնարձակ տեղ մը հանելով :
- 6 - Տէրը ինձի հետ է, չեմ վախնար : Մարդը ինձի ի՞նչ կրնայ ընել :
- 7 - Տէրը իմ օգնականներուս հետ Գեղի ինձի հետ է,
- Ու ես իմ թշնամիներուս խորհուրդը պիտի տեսնեմ :
- 8 - Լաւ է Տէրոջը յուսող, Քան թէ մարդոց ապուինիլ :
- 9 - Լաւ է Տէրոջը յուսող, Քան թէ իշխաններուն ապուինիլ :

- 10 - Բոլոր ազգերը զիս պաշարեցին, Բայ Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք :
- 11 - Իմ բոլորտիքս առին, և զիս պաշարեցին :
- Բայ Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք :
- 12 - Մեղուներու պէս իմ բոլորտիքս առին,
- Փուշերու կրակի պէս մարեցան :
- Քանզի Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք :
- 13 - Սաստիկ հրեցիր զիս, որպէս զի վար իյնամ :
- Բայ Տէրը օգնեց ինձի :
- 14 - Տէրը իմ զօրութիւնս ու սողմնս է,
- Ու իմ փրկութիւնս եղաւ :
- 15 - Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծութեան ու փրկութեան ձայն կայ :
- Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ :
- 16 - Տէրոջը աջ ձեռքը բարձր է, Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ :
- 17 - Պիտի չմեռնիմ, հապա պիտի սպրիմ,
- Ու Տէրոջը գործերը պատմեմ :
- 18 - Տէրը զիս շատ խրատեց, Բայց մահուան չմտանեց զիս :
- 19 - Բացէք ինձի արդարութեան դռները :
- Անոնց մէջ պիտի մտնեմ, ու Տէրոջը գոհուլթիւն մատուցանեմ :
- 20 - Այս է Տէրոջը դուռը, Արդարները ասկէ պիտի մտնեն :
- 21 - Կը գոհանամ քեզմէ որ ինձի պատասխան տուիր,
- Ու ինձի փրկութիւն եղար :
- 22 - Այն քարը զոր շինողները անորդեցին,
- Անկիւնին գլուխը եղաւ :
- 23 - Ասիկա Տէրոջմէն եղաւ, Զարմանալի է ասիկա մեր աչքերուն :
- 24 - Այս այն օրն է զոր Տէրը ստեղծեց Յնձանք և սերտիս ըլլանք անոր մէջ :
- 25 - Հիմա կ'աղաչեմ, ով Տէր, փրկէ : Հիմա կ'աղաչեմ, ով Տէր, յաջողէ :
- 26 - Օրհնեալ ըլլայ ան որ Տէրոջը անունովը կու գայ :
- Օրհնեցինք ձեզ Տէրոջը տունէն :
- 27 - Տէրը Աստուած է, և ըյս կը ցուցրնէ մեզի :

- 20 - Տի անասնները չուաններով կապեցէք,
- Ու սեղանին եղջիւրներուն ճօղեցոյցէր :
- 28 - Գուն ես իմ Ասատուածս, ու քեզի գոհութիւն պիտի մատուցանեմ :
- Ով իմ Ասատուածս, քեզ պիտի բարձրացնեմ :
- 29 - Գոհացէք Տէրօջմէն, վասն զի բարի է,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է :

ՍՍ.ՂՄ. ՃԺԹ

Ա Լ Է Ֆ

- Երանի՛ ճամբով ամբիծներուն, որոնք Տէրօջը օրէնքին մէջ կը քալեն :
- 2 - Երանի անանց՝ որոնք անոր վկայութիւնները կը պահեն,
- Ու բոլոր սրտով զինք կը խնդրեն,
- 3 - Եւ անօրէնութիւն չեն ըներ, Հոգ անոր ճամբաներուն մէջ կը քալեն :
- 4 - Գուն պատուիրեցիր որ շատ զգուշութեամբ Քու հրամաններդ պահենք :
- 5 - Երանի՛ թէ իմ ճամբաներս յաջողին,
- Որպէս զի քու կանոններդ պահեմ :
- 6 - Այն ատեն պիտի չամչնամ Երբ քու բոլոր պատուիրանքներուդ զգուշութիւն ընեմ :
- 7 - Պիտի գովեմ քեզ ուղիղ սրտով, Երբ քու արդար դատաստաններդ տարիմ :
- 8 - Քու կանոններդ պիտի պահեմ :
- Զիս բոլորովին մի թողուր :

Պ Է Թ

- 9 - Երիտասարդը ինչով մտքրէ իր ճամբան :
- Քու խօսքիդ համեմատ անոր զգուշութիւն ըներով :
- 10 - Իմ բոլոր սրտովս խնդրեցի քեզ Մի թողուր զիս որ քու պատուիրանքներէդ մոյրիմ :
- 11 - Իմ սրտիս մէջ պահեցի քու խօսքերդ,
- Որպէս զի չմեղանչեմ քեզի դէմ :

- 12 - Օրհնեալ ես դուն, ով Տէր Սրվեցուր ինծի քու կանոններդ :
- 13 - Իմ շրթունքներովս պատմեցի Քու բերնիդ բոլոր դատաստանները :
- 14 - Քու վկայութիւններուդ ճամբովը ուրախացայ,
- Որպէս թէ ամէն կերպ հարստութիւնով :
- 15 - Քու հրամաններուդ վրայով պիտի մտածեմ,
- Եւ քու ճամբաներդ պիտի դիտեմ :
- 16 - Քու կանոններովդ պիտի ուրախանամ,
- Ու քու խօսքդ պիտի չմոռնամ :

Կ Ի Մ Է Լ

- 17 - Բարութիւն ըրէ քու ծառայիդ, Ուրդ՝ զի ապրիմ ու քու խօսքդ պահեմ :
- 18 - Բաց իմ աչքերս, Որպէս զի քու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ :
- 19 - Պանդուխտ եմ ես երկրի վրայ Մի ծածկեր ինծմէ քու պատուիրանքներդ :
- 20 - Իմ անձս կը նեղուի Ամէն ժամանակ քու դատաստաններուդ ցանկանալէն :
- 21 - Գուն սատեցիր անիծեալ ամբարտաւանները,
- Քու պատուիրանքներէդ մոլորողները :
- 22 - Նախատինքր ու անարգանքը վերցուր ինծմէ,
- Վասն զի քու վկայութիւններդ պահեցի :
- 23 - Իշխաններ ալ կը նստէին ու ինծի դէմ կը խօսէին,
- Բայց քու ծառայ քու կանոններուդ վրայով կը մտածէր :
- 24 - Քու վկայութիւններդ ալ իմ ուրախութիւնս
- Ու իմ խորհրդականներս են :

Տ Ա Լ Է Թ

- 25 - Իմ անձս հողին կը փակչի Կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ :
- 26 - Իմ ճամբաներս պատմեցի, ու դուն ինծի պատասխան տուիր Սրվեցուր ինծի քու կանոններդ :
- 27 - Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,

- Եւ քու սքանչելիքներուդ վրայով պիտի *մտածեմ:
- 28 - Իմ անձս արամութենէն կը հալի. Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ:
- 29 - Ստութեան ճամբան հեռացուր ինծմէ,
- Ու քու օրէնքդ շնորհէ ինծի,
- 30 - Ճշմարտութեան ճամբան բնարեցի,
- Եւ քու դատաստաններդ իմ աշակերտի:
- 31 - Քու վկայութիւններուդ յարեցայ:
- Ով Տէր, զիս մի ամչցներ:
- 32 - Քու պատուիրանքներուդ ճամբուն մէջ պիտի վազեմ,
- Վասն զի դուն իմ սիրաս պիտի լայնցրնես:

Հ Ե

- 33 - Ով Տէր, սարվեցուր ինծի քու կանոններուդ ճամբան,
- Ու մինչև վերջը պիտի պահեմ զանկիս:
- 34 - Իմաստուն բրէ զիս, որպէս զի քու օրէնքդ պահեմ,
- Ու բոլոր սրտով զանկիս ի գործ դնեմ:
- 35 - Աւաջնորդէ ինծի քու պատուիրանքներուդ շաւիղին մէջ,
- Վասն զի անոր հաւնեցայ:
- 36 - Իմ սիրաս քու վկայութիւններուդ յօծարեցուր,
- Ու ոչ թէ ազահութեան:
- 37 - Ետ դարձուր իմ աչքերս, որպէս զի սնտախ բան չտեսնեն.
- Եւ զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր:
- 38 - Հաստատէ քու խօսքդ Քեզմէ վախցող ծառայիդ վրայ:
- 39 - Ետ դարձուր ինծմէ իմ նախատինքս, որմէ կը վախնամ,
- Վասն զի քու դատաստաններդ բարի են:
- 40 - Ահա ցանկացայ քու հրամաններուդ.
- Քու արդարութեանդ մէջ կենդանացուր զիս:

Վ Ա Վ

- 41 - Ով Տէր, թող իմ վրաս գայ քու սղորմութիւնդ,

- Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ:
- 42 - Ու ես խօսքով պատասխան պիտի տամ՝ զիս նախատողին,
- Վասն զի քու խօսքիդ յուսացած եմ:
- 43 - Եւ ճշմարտութեան խօսքը բնամի հեռացներ իմ բերնէս,
- Վասն զի քու դատաստաններուդ յուսացած եմ:
- 44 - Ու քու օրէնքդ միշտ պիտի պահեմ:
- Յաւիտեանս յաւիտենից.
- 45 - Եւ լայնարձակ Գեղի մէջ պիտի քալեմ,
- Քանզի քու հրամաններդ խնդրեցի:
- 46 - Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջև պիտի խօսիմ, Եւ պիտի չամչնամ:
- 47 - Ու պիտի ուրախանամ քու պատուիրանքներովդ՝
- Զորոնք սիրեցի:
- 48 - Եւ ձեռքերս դէպ ի քու պատուիրանքներդ պիտի վերցնեմ՝ զորոնք սիրեցի,
- Ու քու կանոններուդ վրայով պիտի մտածեմ:

Զ Ա Յ Ի Ն

- 49 - Յիշէ քու ծառայիդ եղած խօսքը, Որուն վրայ ինծի յուսալ տուիր:
- 50 - Իմ նեղութեանս մէջ մխիթարութիւնս այս է,
- Վասն զի քու խօսքդ զիս կենդանացուց:
- 51 - Ամբարտաւանները խիստ շատ ծաղր բրին զիս,
- Բայ ես քու օրէնքէդ չխտարեցայ:
- 52 - Ով Տէր, քու առաջուան դատաստաններդ յիշեցի.
- Ու մխիթարուեցայ:
- 53 - Սոկումը զիս բռնեց այն ամբարիշտներուն համար՝
- Որոնք քու օրէնքդ կը թողուն:
- 54 - Քու կանոններդ ինծի երգեր եղան իմ պանդխտութեանս ամբար մէջ:
- 55 - Ով Տէր, զիշերը քու անունդ յիշեցի,
- Ու քու օրէնքդ պահեցի:
- 56 - Այս եղաւ ինծի,
- Վասն զի քու հրամաններդ կը պահեմ:

*Վա՛, խօսիմ. Սաղ. ճիւղ. 5, 6:

Խ Է Թ

Ե Օ Տ

- 57 - Դու իմ բաժինս էս, ով Տէր .
Ըսի որ քու խօսքերդ պահեմ :
- 58 - Բոլոր սրտով քու երեսդ խընդ-
րեցի .
Ողորմէ ինձի քու խօսքիդ համեմատ :
- 59 - Իմ ճամբաներուն վրայով մտա-
ծեցի ,
Եւ իմ սաքերս քու վկայութիւննե-
րուդ դարձուցի :
- 60 - Քու պատուիրանքներդ պահեալու
Արտարացի ու չուշացայ :
- 61 - Ամբարիշտներուն *խումբերը զիս
պատեցին ,
Բայց ես քու օրէնքդ չմոռցայ :
- 62 - Կէսգիշերին կ'ելլեմ քեզի գո-
հաւթիւն մատուցանել
Քու արդար դատաստաններուդ հա-
մար :
- 63 - Ես ընկեր եղայ այն ամէնուն
որոնք քեզմէ կը վախնան ,
Ու քու հրամաններդ կը պահեն :
- 64 - Ով Տէր , երկիր լեցուն է քու
ողորմութիւնովդ .
Սորվեցուր ինձի քու կանոններդ :

Դ Է Թ

- 65 - Բարութիւն ըրիր քու ծառայիդ ,
ով Տէր ,
Քու խօսքիդ համեմատ :
- 66 - Բարի իմաստութիւն ու գիտու-
թիւն սորվեցուր ինձի ,
Վասն զի քու պատուիրանքներուդ
հաւատացի :
- 67 - Քանի որ վշտացած չէի՝ կը սիտալէի ,
Բայց հիմա քու խօսքդ կը պահեմ :
- 68 - Բարի ես դուն ու բարերար .
Սորվեցուր ինձի քու կանոններդ :
- 69 - Ամբարտաւանները ստութիւն
հնարեցին ինձի դէմ ,
Բայց ես բոլոր սրտով քու հրաման-
ներդ պիտի պահեմ :
- 70 - Անոնց սիրտը ճարպի պէս պու-
րարացաւ ,
Բայց ես քու օրէնքովդ ուրախացայ :
- 71 - Աղէկ եղաւ ինձի որ վշտացայ ,
Որպէս զի քու կանոններդ սորվիմ :
- 72 - Ինձի հազարաւոր սփիւտ ու ար-
ծաթէ
Աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը :

*Կա՛մ, լարերը

- 73 - Ձիս քու ձեռքերդ ըրին ու սաեղ-
ծեցին .
Իմաստուն ըրէ զիս , որպէս զի քու
պատուիրանքներդ սորվիմ :
- 74 - Քեզմէ վախցողները զիս պիտի
տեսնեն և ուրախանան ,
Վասն զի քու խօսքիդ յուսացայ :
- 75 - Գիտեմ, ով Տէր, որ քու դատաս-
տաններդ արդարութիւնով են ,
Ու իրաւունքով զիս վշտացուցիր :
- 76 - Հիմա թող քու ողորմութիւնդ
ինձի միխթարութիւն ըլլայ՝
Քու ծառայիդ *բա՛ւ խօսքիդ համե-
մատ :
- 77 - Թող քու գթութիւններդ իմ
վրաս գան , որպէս զի ապրիմ ,
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախու-
թիւնս է :
- 78 - Ամբարտաւանները պիտի ամչնան ,
Վասն զի առանց պատճառի անիրա-
ւութիւն ըրին ինձի դէմ .
Բայց ես քու հրամաններուդ վրայ պի-
տի մտածեմ :
- 79 - Թող ինձի դառնան քեզմէ վախ-
ցողները
Եւ քու վկայութիւններդ ճանչցու-
ները :
- 80 - Թող իմ սիրտս կատարեալ ըլ-
լայ քու կանոններուդ մէջ ,
Այնպէս որ չամչնամ :

Ք Ա Յ

- 81 - Իմ անձս քու փրկութեանդ *կը
կարօտի ,
Ու ես քու խօսքիդ կը յուսամ :
- 82 - Իմ աչքերս քու խօսքիդ հա-
մար կը նուազին ,
Ըսելով թէ Ե՞րբ պիտի միխթարես զիս :
- 83 - Վասն զի ես ծուխի մէջ *բա՛ւ
տիկի պէս եղայ ,
Բայց քու կանոններդ չմոռցայ :
- 84 - Ո՞րչափ են քու ծառայիդ օրերը .
Ձիս հալածողներուն ե՞րբ դատաստան
պիտի ընես :
- 85 - Ամբարտաւանները փոտեր փորե-
ցին ինձի համար ,
Որ քու օրէնքիդ պէս չեն :
- 86 - Քու բոլոր պատուիրանքներդ
ճշմարիտ են .

*Եբէ. կը մուշի

- Զուր տեղ զիս կը հալածեն, օգնէ ինծի :
- 87 - Քիչ մնաց որ զիս կորսնցնելն երկրի մէջ,
- Բայց ես քու հրամաններդ չթողուցի :
- 88 - Քու սղորմութեանդ համեմատ կենդանացուր զիս,
- Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ :

Լ Ա Մ Է Տ

- 89 - Ով Տէր, քու խօսքդ Յաւիտեան հաստատ է երկինքի մէջ :
- 90 - Քու հաւատարմութիւնդ ազգէ մինչև ազգ կը մնայ .
- Դուն հաստատեցիր երկիրը ու կը կենայ :
- 91 - Քու հրամաններուդ պէս կը կենան ֆօշի սյուր,
- Վասն զի բոլորը քու ծառաներդ են :
- 92 - Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար,
- Այն ատեն կորսուած պիտի ըլլայի իմ արամութեանս մէջ :
- 93 - Յաւիտեան պիտի չմոռնամ քու հրամաններդ,
- Քանզի անոնցմով կենդանացուցիր զիս :
- 94 - Ես քուկդ եմ, փրկէ զիս .
- Վասն զի քու հրամաններդ փնտռեցի :
- 95 - Ամբարիշտները ինծի սպասեցին, որպէս զի զիս կորսնցնեն,
- Բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ :
- 96 - Ամէն կատարելութեան վերջը տեսայ .
- Քու պատուիրանքդ շատ ընդարձակ է :

Մ Է Մ

- 97 - Ո՛րչափ կը սիրեմ քու օրէնքդ . Այն է ամէն օր իմ մտածութիւնս :
- 98 - Քու պատուիրանքներդ զիս իմ թշնամիներէս իմաստուն ըրին ,
- Քանզի անոնք միշտ իմ քովս են :
- 99 - Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի հանճարեղ եղայ,
- Վասն զի քու վկայութիւններդ իմ մտածութիւնս են :
- 100 - Ծերերէն աւելի իմաստուն եղայ,
- Վասն զի քու հրամաններդ պահեցի :
- 101 - Ամէն գէշ ճամբայէ իմ ստքերս ետ քաշեցի :

- Որպէս զի քու խօսքդ պահեմ :
- 102 - Քու դատաստաններէդ չխտարեցայ,
- Վասն զի դուն սորվեցուցիր ինծի :
- 103 - Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ քիմքիս .
- Մեղրէն աւելի աւել է իմ բերնիս :
- 104 - Քու հրամաններովդ իմաստուն եղայ,
- Անոր համար ստութեան ամէն ճամբան տաեցի :

Ն Ո Ի Ն

- 105 - Քու խօսքդ իմ ստքերուս ճրագ է, Ու իմ շաւիղներուս լոյս :
- 106 - Երդում՝ ըրի ու պիտի կատարեմ ,
- Որպէս զի քու արդար դատաստաններդ պահեմ :
- 107 - Շատ նեղացայ .
- Ով Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ :
- 108 - Հիմա իմ բերնիս կամուսոր զօհերը ընդունէ, ով Տէր,
- Ու քու դատաստաններդ սորվեցուր ինծի :
- 109 - Իմ հոգիս ամէն ժամանակ սփիս մէջ է,
- Բայց քու օրէնքդ չեմ մոռնար :
- 110 - Ամբարիշտները որոգայթ լարեցին ինծի համար,
- Բայց ես քու հրամաններէդ չմոլորեցայ :
- 111 - Քու վկայութիւններդ յաւիտեան ինծի ժառանգութիւն տաի ,
- Վասն զի անոնք իմ սրտիս ցնծութիւնն են :
- 112 - Խնարհեցուցի իմ սիրտս, որպէս զի քու կանոններդ կատարեմ
- Յաւիտեան մինչև վերջը :

Ս Ա Մ Է Խ

- 113 - Երկմիտները տաեցի,
- Բայց քու օրէնքդ սիրեցի :
- 114 - Իմ սպաւէնս ու սապարս դուն ես .
- Քու խօսքիդ յուսացայ :
- 115 - Ետ քաշուեցէք ինծմէ, ով չարագործներ,
- Վասն զի ես իմ Աստուծոյս պատուիրանքները պիտի պահեմ :

- 116 - Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի ապրիմ՝
Եւ զիս իմ յոյսէս մի ամէջներ:
- 117 - Զօրացուր զիս որպէս զի ապրիմ՝,
Ու միշտ քու կանոններուդ ուշագրու-
թիւն ընեմ:
- 118 - Անարգեցիր այն ամէնը որոնք
քու կանոններէդ խտարեցան,
Քանզի անոնց նենգութիւնը սուտ է:
- 119 - Դուն ճշմարտե՞րս՝ *կղկղանք կը
համարիս՝ երկրի բոլոր ամբա-
րիշաները .
Անոր համար ես քու վկայութիւններդ
կը սիրեմ:
- 120 - Իմ մարմինս քու ահէդ դողաց,
Ու ես քու դատաստաններէդ վախ-
ցայ:

Ա Յ Ի Ն

- 121 - Իրաւունք ու արդարութիւն
ըրի .
Զիս իմ նեղիչներուս մի մտաներ:
- 122 - Քու ծառայիդ բարութեան հա-
մար երաշխաւոր եղիր .
Ամբարտաւանները չհարստահարեն
զիս:
- 123 - Իմ աչքերս նուաղեցան քու
փրկութեանդ համար
Ու քու արդարութեանդ խօսքին հա-
մար:
- 124 - Ըրէ քու ծառայիդ քու սղոր-
մութեանդ համեմատ,
Եւ քու կանոններդ սորվեցուր ինծի:
- 125 - Ես քու ծառայդ եմ, իմաստուն
ըրէ զիս,
Որպէս զի քու վկայութիւններդ ճանչ-
նամ:
- 126 - Տէրջը բան տեսնելու ժամա-
նակն է,
Վասն զի քու օրէնքդ խափանեցին:
- 127 - Անոր համար քու պատուիրանք-
ներդ
Ոսկիէն ու աղնիւ ոսկիէն աւելի սի-
րեցի:
- 128 - Ուստի ամէն բանի վրայս վառ-
ածքս բոլոր հրամաններդ
ուղիղ կը համարիմ,
Ու ստութեան ամէն ճամբան կ'ա-
տեմ:

Փ Է

- 129 - Քու վկայութիւններդ զարմա-
նալի են .
Անոր համար իմ անձս զանոնք կը
պահէ:
- 130 - Քու խօսքերուդ յայտնուիլը լոյս
կու տայ,
Ու միամիտները իմաստուն կ'ընէ:
- 131 - Իմ բերանս բացի ու հեացի,
Վասն զի քու պատուիրանքներուդ
ցանկացայ .
132 - Ինծի նայէ ու սղորմէ ինծի,
Ինչպէս սովորաբար է՝ ընէ՝ քու անունդ
սիրողներուն:
- 133 - Իմ գնացքներս հաստատէ քու
խօսքիդ մէջ,
Ու բնաւ անօրէնութիւն մը չտիրէ
ինծի:
- 134 - Փրկէ զիս մարդոց բռնութենէն,
Եւ քու հրամաններդ պիտի պահեմ:
- 135 - Երեսդ փայլեցուր քու ծառա-
յիդ վրայ,
Ու սորվեցուր ինծի քու կանոններդ:
- 136 - Զուրերու առուններ կ'իջնեն իմ
աչքերէս,
Վասն զի մարդիկ քու օրէնքդ չպա-
հեցին:

Յ Ա Տ Է

- 137 - Արդար ես դուն, ով Տէր,
Եւ քու դատաստաններդ ուղիղ են:
- 138 - Քու պատուիրած վկայութիւն-
ներդ
Արդար ու խիստ ճշմարիտ են:
- 139 - Իմ նախանձս զիս մաշեց,
Վասն զի իմ թշնամիներս քու խօս-
քերդ մոռցան:
- 140 - Քու խօսքդ խիստ մտքուր է,
Անոր համար քու ծառայդ զանիկա
կը սիրէ:
- 141 - Ես ցած ու անարդուած եմ,
Բայց քու հրամաններդ չմոռցայ:
- 142 - Քու արդարութիւնդ յաւիտե-
նական արդարութիւն է,
Ու քու օրէնքդ ճշմարտութիւն է:
- 143 - Նեղութիւն ու վիշտ զիս գտան,
Բայց քու պատուիրանքներդ իմ ու-
րախութիւնս են:
- 144 - Քու վկայութիւններուդ արդա-
րութիւնը յաւիտեան է .
Իմաստուն ըրէ զիս ու պիտի ապրիմ:

*Կամ, կղկղանքի պէս մերժեցիր

Գ Օ Ֆ

- 145 - Բոլոր սրտով աղաղակեցի:
Ով Տէր, պատասխան տուր ինձի, * -
քու կանոններիդ պիտի պահեմ:
- 146 - Քեզի աղաղակեցի, փրկէ զիս,
Եւ քու վկայութիւններիդ պիտի պահեմ:
- 147 - Կանուխ ելայ արշալոյսին ու աղաղակեցի.
Քու խօսքիդ յուսացայ:
- 148 - Գիշեր-ան պահերէն առաջ բացուեցան իմ աչքերս
Քու խօսքերուդ վրայ մտածելու համար:
- 149 - Իմ ձայնս լսէ քու սղորմութեանդ համեմատ.
- Ով Տէր, քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս:
- 150 - Անօրէնութեան հեռուղները մտտեցան.
Անոնք քու օրէնքէդ հեռացան:
151 - Ով Տէր, դուն մօտ ես,
Ու քու բոլոր պատուիրանքներիդ ճշմարտութիւն են:
- 152 - Առաջուրնէ իմացած եմ քու վկայութիւններիդ:
- Զորոնք յաւիտեան հաստատեցիր:

Բ Է Շ

- 153 - Տես իմ խղճութիւնս ու զիս փրկէ,
Վասն զի քու օրէնքդ չմոռցայ:
- 154 - Իմ իրաւունքս պաշտպանէ ու փրկէ զիս.
Քու խօսքիդ համեմատ կենդանացուր զիս:
- 155 - Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,
Վասն զի քու կանոններիդ չխնդրեցին:
- 156 - Ով Տէր, քու գթութիւններիդ շատ են.
Քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս:
- 157 - Շատ են իմ հալածիչներս ու թշնամիներս,
Բայց ես քու վկայութիւններիդ չստորեցայ:
- 158 - Անօրէնները տեսայ ու զգուեցայ,
Վասն զի անոնք քու խօսքդ չէին պահէր:
- 159 - Նայէ որ քու հրամաններիդ կը սիրեմ.

- Ով Տէր, քու սղորմութեանդ համեմատ կենդանացուր զիս:
- 160 - Քու խօսքիդ * սկիզբը ճշմարտութիւն է,
Ու քու բոլոր արդար դատաստաններիդ յաւիտեան են:

Շ Ի Ն

- 161 - Իշխանները զուր տեղ զիս հաւածեցին,
Բայց իմ սիրտս քու խօսքէդ վախցաւ:
- 162 - Ես կը ցնծամ քու խօսքերովդ,
Շատ աւար գանդի պէս:
- 163 - Ստութիւնը տաեցի ու անարգեցի,
Բայց քու օրէնքդ սիրեցի:
- 164 - Օրը եօթը անգամ կ'օրհնեմ քեզ,
Քու արդար դատաստաններուդ համար:
- 165 - Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ,
Ու անոնց գայթակղութիւն չըլլար:
- 166 - Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի,
Եւ քու պատուիրանքներիդ կատարեցի:
- 167 - Իմ անձս քու վկայութիւններիդ պահեց,
Ու ես զանոնք շատ կը սիրեմ:
- 168 - Քու հրամաններիդ և քու վկայութիւններիդ պահեցի,
Վասն զի իմ բոլոր ճամբաներս քու առջևդ են:

Թ Ա Վ

- 169 - Ով Տէր, թող իմ աղաղակս քու առջևդ մօտենայ.
Քու խօսքիդ համեմատ իմաստուն ըրէ զիս:
- 170 - Թող իմ աղաչանքս քու առջևդ ելլէ.
Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս:
- 171 Իմ շրթունքներս օրհնութիւն պիտի բղխեն,
Վասն զի քու կանոններիդ սարվեցուցիր ինձի:
- 172 - Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ,
Վասն զի քու բոլոր պատուիրանքներիդ արդար են:

*Կա՛մ, բովանդակութիւնը

- 173 - Թող քու ձեռքդ ինծի օգնական ըլլայ,
- Վասն զի քու հրամաններիդ ընտրեցի:
- 174 - Ով Տէր, քու փրկութեանդ ցանկացայ,
- Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնս է:
- 175 - Թող իմ անձս ապրի ու քեզ օրհնէ,
- Եւ քու դատաստաններիդ օգնեն ինծի:
- 176 - Կորսուած ոչխարի պէս մըլտեցայ.
- Փնտռէ քու ծառագ, վասն զի քու պատուիրանքներիդ չմոռցայ:

ՍԱՂՄ. ՃԻ

Աստիճաններուն երգը:

- Իմ նեղութեանս մէջ Տէրոջը աղաղակեցի,
- Ու անիկա ինծի պատասխան տուաւ:
- 2 - Ով Տէր, փրկէ իմ անձս սուտ շրթունքներէն
- Ու նենգաւոր լեզուէն:
- 3 - *Ով նենգաւոր լեզու, քեզի ի՞նչ արուի,
- Եւ քեզի ի՞նչ աւելցուի*.
- 4 - Չօրաւոր մարդուն սուր նետերը Ու գիհիին կայծերը:
- 5 - Վա՛յ ինծի, որ Մտաքի մէջ պանդուխտ եղայ,
- Եւ Կեղարի վրաններուն քովերը բնակեցայ:
- 6 - Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ
- Խաղաղութիւնը աստղներուն հետ:
- 7 - Ես խաղաղասէր էի.
- Քայց երբ կը խօսէի, անոնք կուրսէին:

ՍԱՂՄ. ՃԻԱ

Աստիճաններուն երգը:

- Աչքերս դէպ ի լեռները պիտի վերցրնեմ,
- Ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ:
- 2 - Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
- Որ երկինքը ու երկիրը ստեղծեց:
- 3 - Անիկա քու սաքդ չդողացնէ,
- Ու քու Պահապանդ չքնանայ:
- 4 - Ահա Իորայէլի Պահապանը

- Պիտի չմրափէ ու պիտի չքնանայ,
- 5 - Տէրը քու պահապանդ է.
- Տէրը քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է:
- 6 - Յորեկը արեգակը քեզ պիտի չզարնէ,
- Ոչ ալ զիշերը՝ լուսինը:
- 7 - Տէրը քեզ ամէն շարէն պիտի պահպանէ,
- *Քու անձդ պիտի պահպանէ:
- 8 - Տէրը քու ելլելդ ու մանելդ պիտի պահպանէ
- Ասկէ ետեւ մինչև յաւիտեան:

ՍԱՂՄ. ՃԻԲ

Դաւիթի աստիճաններուն երգը:

- Կ'ուրախանայի երբ ինծի կ'ըսէին,
- Տէրոջը տունը երթանք:
- 2 - Մեր սաքերը քու դռներուդ մէջ կայնեցան,
- Ով Երուսաղէմ:
- 3 - Երուսաղէմ այնպիսի քաղաքի մը պէս շինուած է,
- Որ ինքնիրեն միաւորուած է.
- 4 - Որ ցեղերը, Տէրոջը ցեղերը, հոն կ'ելլեն
- Իորայէլի պատուիրածին պէս,
- Տէրոջը անուանը գոհութիւն մատուցանելու համար:
- 5 - Վասն զի հոն դրուած են դատաստանի ակթունները,
- *Դաւիթի ասանը ակթունները:
- 6 - Երուսաղէմի խաղաղութիւնը խընդրեցէք.
- Թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն:
- 7 - Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջ,
- Ու յաջողութիւն՝ քու պալատներուդ մէջ:
- 8 - Իմ եղբայրներուս ու ընկերներուս համար
- Հիմա պիտի ըսեմ, Խաղաղութիւն ըլլայ քու մէջդ:
- 9 - Մեր Տէր Աստուծոյն տանը համար
- *Քեզի բարութիւն պիտի ուզեմ:

ՍԱՂՄ. ՃԻԳ

Աստիճաններուն երգը:

- Քեզի կը բարձրացնեմ իմ աչքերս,
- Ով երկինքի մէջ Բնակող:

*Կա՛մ, նենգաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տայ ու քեզի ի՞նչ կ'աւելցնէ

- 2 - Ահա ինչպէս ծառաներուն աչքերը իրենց տէրոջը ձեռքին էլ նային,
- Ո- ինչպէս աղախինին աչքերը իր աիկնոջ ձեռքին,
- Այնպէս մեր աչքերը Տէրոջը, մեր Աստուծոյն, պէտքէն նային,
- Մինչև մեզի ողորմի:
- 3 - Ողորմէ մեզի, ով Տէր, ողորմէ մեզի,
- Վասն զի խիստ լեցուեցանք անարգանքով:
- 4 - Խիստ լեցուած է մեր անձը հանգիստ վայելողներուն նախատինքովը
- Ո- ամբարտաւաններուն անարգանքովը:

ՍԱՂՄ. ՃԻԴ

Դաւիթի աստիճաններուն երգը:

- Եթէ Տէրը մեզի հեռ չլլար,
- Հիմա Խորայէլ թող ըսէ,
- 2 - Եթէ Տէրը մեզի հեռ չլլար,
- Երբ մարդիկ մեր վրայ ելան,
- 3 - Այն ատեն ողջ ողջ պիտի կլլէին մեզ,
- Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբոքած էր .
- 4 - Այն ատեն ջուրերը մեզ պիտի ընկրղմէին,
- Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր .
- 5 - Այն ատեն հպարտացած ջուրերը Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին .
- 6 - Օրհնեալ ըլլայ Տէրը,
- Որ մեզ անոնց տկուաներուն որս չտուաւ:
- 7 - Մեր անձերը ճնճղուկի պէս որսորդներուն որոգայթէն ազատեցան .
- Որոգայթը կտորեցաւ ու մենք ազատեցանք:
- 8 - Մեր օգնութիւնը Տէրոջը անունովն է,
- Որ երկինքն ու երկիրը ստեղծեց:

ՍԱՂՄ. ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

Տէրոջը յուսացողները Միօն լեռանը պէս են,

- Որ շատանիր, հապա յաւիտեան կը մնայ:
- 2 - Ինչպէ՞ Երուտողէմ լեռներով պատած է,
- Նայուէ՞ Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է
- Ասկէ ետև մինչև յաւիտեան:
- 3 - Վասն զի ամբարշտին գաւազանը արդարներուն վիճակին վրայ պիտի չմնայ,
- Որպէս զի արդարները ձեռքերնին անօրէնութեան չերկնցնեն:
- 4 - Ով Տէր, բարիք ըրէ բարիներուն Ու սրտով ուղիղներուն:
- 5 - Սակայն զանոնք որ իրենց ծուռ ճամբաներուն մէջ կը մուրրին, Տէրը պիտի *կորսնցնէ անօրէնութիւն գործողներուն հետ:
- Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ:

ՍԱՂՄ. ՃԻԶ

Աստիճաններուն երգը:

- Երբ Տէրը Միօնի գերութիւնը գարծուց,
- + Երազ տեսնողներու՝ պէս եղանք:
- 2 - Այն ժամանակ մեր բերանը խնդութիւնով լեցուեցաւ,
- Ու մեր լեզուն ցնծութիւնով .
- Այն ժամանակ հեթանոսներուն մէջ ըսին թէ
- Տէրը ասանց համար մեծ բաներ ըրաւ:
- 3 - Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ,
- Ու մենք ուրախացանք:
- 4 - Ով Տէր, գարծուր մեր գերութիւնք Հարաւի առուններուն պէս:
- 5 - Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութիւնով կը հնձեն:
- 6 - Ան որ լայով կ'երթայ, ցանելու սերմը ասնելով,
- Անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ,
- Իր ցորե՞ծ խուրձերը բերելով:

ՍԱՂՄ. ՃԻԷ

Սողոմոնի աստիճաններուն երգը:

Եթէ Տէրը չչինէ տունը,
 Զուր տեղ կ'աշխատին անոր շինողները:
 *Եբբ. ամփի + կաժ, Առողջացողներու

- Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը ,
 2 - Չուր տեղ կը հսկեն պահապանները :
 2 - Պարապ բան է ձեզի համար կանախ ելլելը և ուշ հանգչիլը
 Ո - ցաւով հաց ուտելը :
 Արդարեւ անհկա իր սիրելիին քուն կուտայ :
 3 - Ահա տղաքը Տէրոջը ժառանգութիւնն են .
 Որովայնի պտուղը անոր պարգևն է :
 4 - Ինչպէս են նետերը զօրաւորին ձեռքին մէջ ,
 Այնպէս են երիտասարդներուն տղաքը :
 5 - Երանի՛ սյն մարդուն ,
 Որ իր կապարճը անոնցմով լեցուց .
 Երբ դրանը մէջ թշնամիներուն հետ խօսելու ըլլան ,
 Պիտի չամչնան :

ՍՍՂՄ. ձԻԸ

Աստիճաններուն երգը :

- Երանի՛ սյն ամէնուն՝ որոնք Տէրոջմէ կը վախնան ,
 Ո - անոր ճամբաներուն մէջ կը քալեն :
 2 - Վասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես .
 Երանի՛ է քեզի , ու քեզի բարի պիտի ըլլայ :
 3 - Քու կինդ պաղաւթեր որթի մը պէս պիտի ըլլայ
 Քու տանդ ներսիդիերը ,
 Ո - քու որդիներդ ձիթենիի տունկերու պէս
 Քու սեղանիդ չորս կողմը :
 4 - Ահա Տէրոջմէն վախցող մարդը
 Այսպէս պիտի օրհնուի :
 5 - Տէրը քեզ Սիօնէ օրհնէ ,
 Ու Երուսաղէմի բարութիւնը տեսնես
 Քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ .
 6 - Եւ քու որդւոցդ որդիները տեսնես :
 Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ :

ՍՍՂՄ. ձԻԹ

Աստիճաններուն երգը :

Հիմա Իսրայէլ թող ըսէ ,
 Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ
 զիս նեղեցին .

*կա՛, վարձքն

- 2 - Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին ,
 Բայց ինձի չյաղթեցին :
 3 - Հերկողները իմ կունակիս վրայ հերկեցին ,
 Ո - իրենց սկօսները երկնցուցին :
 4 - Տէրը արդար է .
 Անհկա ամբարիշտներուն չուանները կտրակց :
 5 - Սիօնը սատողներուն ամէնը
 Պիտի ամչնան ու ետ դառնան .
 6 - Տանիքի վրայի խտին պէս պիտի ըլլան ,
 Որ դեռ չփրցուած կը չորնայ .
 7 - Որով հնձողը չկրնար իր ձեռքը լեցնել ,
 Ոչ ալ խուրձ կապողը իր գոգը .
 8 - Եւ անցնողները չեն ըսեր թէ
 Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ ,
 Ո - ձեզ Տէրոջը անունովը կ'օրհնենք :

ՍՍՂՄ. ձԼ

Աստիճաններուն երգը :

- Խորունկ տեղերէն քեզի կանչեցի ,
 ով Տէր :
 2 - Ով Տէր , իմ ձայնս լսէ :
 Քու ականջներդ թող մօտիկ ընեն իմ աղօթքիս ձայնը :
 3 - Ով Տէր , եթէ անօրէնութիւնները յիշելու ըլլաս ,
 Տէր , ո՞վ կրնայ կենալ :
 4 - Բայց քու քովդ է թողութիւնը ,
 Որպէս զի քեզմէ վախնան :
 5 - Ես Տէրոջը կը սպասեմ , իմ անձս կը սպասէ ,
 Ու անոր խօսքին կը յուսամ :
 6 - Առտուան սպասողներէն , առտուան սպասողներէն աւելի
 իմ անձս Տէրոջը կը սպասէ :
 7 - Իսրայէլ թող Տէրոջը յուսայ ,
 Վասն զի Տէրոջը քով ողորմութիւն կայ .
 Ու անոր քով շատ փրկութիւն կայ .
 8 - Եւ անհկա պիտի փրկէ Իսրայէլը
 իր բոլոր անօրէնութիւններէն :

ՍՍՂՄ. ձԼԱ

Դաւիթի աստիճաններուն երգը :

Ով Տէր , իմ սիրտս չգողազացաւ ,
 Եւ իմ աչքերս չբարձրացան .

- Ու ես մեծամեծ բաներու մէջ,
- Եւ ինձ մէ բարձր բաներու մէջ չքա-
լեցի :
- 2 - Արդարեւ իմ անձս հանդարտեցուցի
ու հանգստացուցի
- Իր մօրը կաթէն կտրուած աղու մը
պէս .
- Իմ անձս կաթէն կտրուած աղու մը
պէս է :
- 3 - Ինչպէ՞ թող Տէրօջը յուսոյ
Մտից տուն մինչև յաւիտեան :

ՍԱՂՄ. ՃԼԲ

Աստիճաններուն երգը :

- Դաւիթի համար յիշէ, սվ Տէր,
- Անոր բոլոր նեղութիւնը .
- 2 - Որ երգում ըրաւ Տէրօջը ,
- Ե- ուխտ դրաւ Յակոբի Զօրաւորին ,
- 3 - Ը-ե-լ-վ-թ-է իմ ատնս բնակարանը
չմտնեմ ,
- Ու իմ փռած անկողինիս վրայ չեղլեմ ,
- 4 - Թէ իմ աչքերուս քուն՝
Եւ արաւանունքներուս նիրհում
չտամ ,
- 5 - Մինչև Տէրօջը համար տեղ մը
գտնեմ ,
- Ո- Յակոբի Զօրաւորին համար բնա-
կարան :
- 6 - Ահա անոր վրայով լսեցինք Եփ-
րաթայի մէջ ,
- Ե- զանհկա գտանք անտառի գաշտե-
րուն մէջ :
- 7 - Մտնենք անոր բնակարանները ,
- Ո- երկրպագութիւն ընենք անոր պատ-
ուանդանին քով :
- 8 - Քու հանգստութեանդ Գեղե ելիր ,
սվ Տէր ,
- Դուն ու քու զօրութեանդ տապա-
նակը :
- 9 - Քահանաներդ թող արդարութիւն
հազնին ,
- Եւ քու սուրբերդ ցնծան :
- 10 - Քու Դաւիթ ծառայիդ համար
Անդին մի դարձներ քու օժեպիդ
երեսը :
- 11 - Տէրը երգում ըրաւ Դաւիթի
Ճշմարտութեամբ ,
- Ո- ետ չգտանար անկէ ,
Թէ Քու որովայնիդ պտուղէն
Քու աթառիդ վրայ պիտի նստեցնեմ :
- 12 - Եթէ քու որդիներդ պահեն իմ
ուխտս ու վկայութիւններս

- Զորանք անոնց պիտի սորվեցնեմ ,
- Այն Գեղե անոնց որդիներն ալ
Քու աթառիդ վրայ պիտի նստին յա-
ւիտեան :
- 13 - Վասն զի Տէրը Սիօնը ընտրեց ,
- Ե- զանհկա իրեն բնակութեան համար
ուզեց ,
- 14 - Ը-ե-լ-վ-թ-է Այս է յաւիտեան իմ
հանգիստս .
- Ասոր մէջ պիտի բնակիմ , վասն զի ա-
սիկա ուզեցի :
- 15 - Անոր պաշարը աւատաբար պիտի
օրհնեմ ,
- Ո- անոր աղքատները հացով պիտի
կշտացնեմ ,
- 16 - Եւ անոր քահանաներուն փրկու-
թիւն պիտի հազցնեմ .
- Ու անոր սուրբերը ուրախութեամբ
պիտի ցնծան :
- 17 - Այն տեղը Դաւիթի եղջիւր պիտի
բուսցնեմ ,
- Ո- ճրագ պիտի պատրաստեմ իմ օժ-
եպիս համար :
- 18 - Անոր թշնամիներուն ամօթ պիտի
հազցնեմ ,
- Բայց անոր վրայ իր թագը պիտի
ծաղկի :

ՍԱՂՄ. ՃԼԳ.

Դաւիթի աստիճաններուն երգը :

- Ահա ս'ըչափ բարի ու ս'ըչափ վա-
յելուչ է
- Որ եղբայրները երբեք հեղ միարանու-
թեամբ բնակին :
- 2 - Այն աղնիւ իւզին պէս է ,
- Որ գլխուն վրայէն մօրուքին վրայ ,
- Ահարոնի մօրուքին վրայ , վաղեց ,
- Ո- մինչև անոր զգեստներուն ծայրը
իջաւ :
- 3 - Սիօնի լեռներուն վրայ իջած
Հերմոնի շաղին պէս է .
- Վասն զի Տէրը հոն հաստատեց օրհ-
նութիւնը
- Ո- կեանքը մինչև յաւիտեան :

ՍԱՂՄ. ՃԼԴ.

Աստիճաններուն երգը :

- Աղէ, օրհնեցէք Տէրը , սվ Տէրօջը
բոլոր ծառաները ,
- Որ Տէրօջը տուեր կը կենաք զիշերները :

2-Սուրբ տեղը ձեռքերնիդ վերցուցէք,
 Ու օրհնեցէք Տէրը :
 3 - Երկինքը ու երկիրը ստեղծող Տէրը
 Թող օրհնէ քեզ Սիօնէ :

ՍՍՂՄ. ՃԼԵ

Ալէլուիա : Օրհնեցէք Տէրոջը ա-
 տուներ ,
 Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները ,
 2 - Որ Տէրոջը տուներ կը կենաք ,
 Մեր Աստուծոյն տանը սրահներուն
 մէջ :
 3 - Օրհնեցէք Տէրը , վասն զի Տէրը
 բարի է .
 Սաղմոս բռնք անոր անուանը , վասն զի
 քաղցր է :
 4 - Վասն զի Տէրը իրեն համար ընա-
 րեց Յակոբը ,
 Ու Իսրայէլը իրեն սեպհական խաչ-
 շարք ըլլալու :
 5 - Վասն զի ես իմացայ , որ Եհովա
 մեծ է ,
 Ու մեր Տէրը՝ բոլոր աստուածներէն :
 6 - Տէրը ամէն ինչ որ ուզեց՝ ըրաւ ,
 Երկինքի ու երկրի մէջ ,
 Մովերուն ու բոլոր անդունդներուն
 մէջ :
 7 - Երկրի ծայրերէն շոգիներ կը հանէ ,
 Անձրևի համար փայլակներ կը շինէ ,
 Ու հով կը հանէ իր շահմարաններէն :
 8 - Անիկա Եգիպտոսի առջինեկները
 զարկաւ
 Մարդէ մինչև անասուն .
 9 - Նշաններ ու հրաշքներ զրկեց քու
 մէջդ , ով Եգիպտոս ,
 Փարաւոնի ու անոր բոլոր ծառանե-
 րուն վրայ :
 10 - Շոտ ազգեր զարկաւ ,
 Ու զօրեղ թագաւորներ սպաննեց .
 11 - Ամօրհացուց Սեհն թագաւորը ,
 Բասանի Ովգ թագաւորը ,
 Եւ Քանանու բոլոր թագաւորութիւն-
 ները .
 12 - Ու անոնց երկիրը ժառանգութիւն
 տուաւ ,
 Իր Իսրայէլ ժողովուրդին ժառանգու-
 թիւն :
 13 - Ով Տէր , քու անունդ մինչև
 յաւիտեան էջ հաս .
 Ով Տէր , քու յիշատակդ ազգէ մինչև
 ազգ :
 14 - Վասն զի Տէրը իր ժողովուրդը
 կը դատէ ,

Եւ իր ծառաներուն կ'ողորմի :
 15 - Հեթանոսներուն կուռքերը ար-
 ծաթ ու սկի են ,
 Մարդու ձեռքի գործեր են .
 16 - Բերան ունին , բայց չեն խօսիր .
 Աչքեր ունին , բայց չեն տեսներ .
 17 - Ականջներ ունին , բայց չեն լսեր ,
 Ու շունչ չկայ անոնց բերնին մէջ :
 18 - Անոնց նման կ'ըլլան զանոնք շի-
 նողները
 Ու բոլոր անոնց յուսացողները :
 19 - Ով Իսրայէլի տուներ , օրհնեցէք
 Տէրը .
 Ով Ահարոնի տուներ , օրհնեցէք Տէրը .
 20 - Ով Ղևիի տուներ , օրհնեցէք Տէրը .
 Ով Տէրոջմէն վախցողներ , օրհնեցէք
 Տէրը :
 21 - Օրհնեալ ըլլայ Տէրը Սիօնէ ,
 Որ Երուսաղէմի մէջ կը բնակի : Ալէ-
 լուիա :

ՍՍՂՄ. ՃԼԶ

Քոհացէք Տէրոջմէն , վասն զի բա-
 րի է .
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 2 - Քոհացէք աստուածներուն Աս-
 տուծմէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 3 - Քոհացէք տէրերուն Տէրոջմէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 4 - Մինակ մեծ հրաշքներ ընողէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 5 - Երկինքը իմաստութեամբ ստեղծո-
 ղէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 6 - Երկիրը ջուրերուն վրայ տարածո-
 ղէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 7 - Մեծամեծ լուսաւորներ ստեղծո-
 ղէն ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 8 - Արեգակը՝ որպէս զի ցորեկին իշխէ ,
 Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտե-
 ական է .
 9 - Լուսինը ու աստղերը՝ որպէս զի
 գիշերին իշխեն ,

- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 10 - *Եգիպտացաց անդրանիկները՝ զարնողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 11 - Ու Իսրայէլը անոնց մէջէն հանողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 12 - Հըօր ձեռքով ու տարածուած բազուկով,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 13 - Կարմիր ծովը երկուքի բաժնողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 14 - Ու Իսրայէլը անոր մէջէն անցընողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 15 - Եւ Փարաւոնը ու անոր զօրքը կարմիր ծովուն մէջ թօթվողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 16 - Իր ժողովուրդը անապատին մէջ պտըացնողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 17 - Մեծ թագաւորներ զարնողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 18 - Ու զօրեղ թագաւորներ սպաննողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 19 - Ամօրհացաց Սեհոն թագաւորը,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 20 - Ու Բասանի Ովգ թագաւորը,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 21 - Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 22 - Իր Իսրայէլ ծառային ժառանգութիւն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 23 - Մեր խնարհութեանը մէջ մեզ յիշողէն,

*Եբբ. եգիպտացիները իրենց անդրանիկներուն մէջ

- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 24 - Ու մեր թշնամիներէն մեզ փրկողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
- 25 - Բոլոր մարմինի հաց տուողէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է:
- 26 - Գոհացէք երկինքի Աստուծմէն,
- Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է:

ՍԱՂՄ. ՃԼԷ

- Բարեւրնի գետերուն քով հոն կը նստէինք,**
 Ու Սիօնը միաքերնիս բերելով կու լաւիինք:
- 2 - Անոր մէջ ուռիներուն վրայ կախեցինք մեր քնարները.
 - 3 - Վասն զի մեզ գերի ընողները Հոն մեզմէ երգ մը ինդրեցին,
 - Ու մեր *կողպափչները ուրախութիւն, Լեւել, երգեցէք մեզի Սիօնի երգերէն:
 - 4 - Տէրջը երգը ի՛նչպէս երգենք Օտար երկրի մէջ:
 - 5 - Ով Երուսաղէմ, եթէ քեզ մոռնամ, Թող իմ աջ ձեռքս ի՛ր պաշտօն մոռնայ.
 - 6 - Թող իմ լեզուս իմ քիմքիս փակչի, եթէ քեզ չյիշեմ,
 - Եթէ Երուսաղէմը իմ գլխաւոր ուրախութենէս
 - Աւելի մեծ չհամարիմ:
 - 7 - Յիշէ, ով Տէր, Եգովմի սրգիները Երուսաղէմի օրուանը մէջ,
 - Որոնք կ'ըսէին, Փլցուցէք, փլցուցէք Մինչև անոր հիմը:
 - 8 - Ով Բարեւրնի †աւերող աղջիկը, Երանի՛ անոր՝ որ քեզի կը հասուցանէ Մեզի ըրած գործերուդ փոխարէնը.
 - 9 - Երանի՛ անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ
 - Ու քարի կը զարնէ:

ՍԱՂՄ. ՃԼԸ

Մաղնո Դաւթի :

Քեզի գոհութիւն պիտի մատուցանեմ իմ բոլոր սրտովս.

*Կա՛մ, գերեվարները
 †Կա՛մ, աւրուելու. Ես. Ժգ. 4, 6, ԼԼն. 2
 խէ. 4: Երեմ. իե. 42: Ժ. 2:

- *Աստուածներուն առջև քեզի սաղմոս պիտի երգեմ :
- 2-Երկրպագութիւն պիտի ընեմ դէպ ի քու սուրբ տաճարդ ,
- Եւ քու անուանդ գոհութիւն պիտի մատուցանեմ :
- *Քու սղորմութեանդ ու ճշմարտութեանդ համար .
- Վասն զի քու բոլոր անունէդ վեր մեծցուցիր քու խօսքդ :
- 3 - Կանչած օրս պատասխան սուեր ինծի ,
- Իմ անձիս մէջ զօրութիւնով զիս ուժովցուցիր :
- 4 - Ով Տէր , երկրի բոլոր թագաւորները քեզի գոհութիւն պիտի մատուցանեն ,
- Երբ քու բերնիդ խօսքերը լսեն .
- 5 - Ու Տէրջը ճամբաներուն մէջ պիտի երգեն .
- Վասն զի Տէրջը փառքը մեծ է :
- 6 - Թէպէտ Տէրը բարձր է , բայց խնարհը կը տեսնէ ,
- Ու բարձրամիտը հեռուէն կը ճանչնայ :
- 7 - Եթէ նեղութեան մէջ ալ քալեմ , Դուն զիս պիտի կենդանացնես .
- Իմ թշնամիներուս բարկութեանը դէմ *Քու ձեռքդ պիտի երկնցնես ,
- Եւ քու աջ ձեռքդ զիս պիտի փրկէ :
- 8 - Տէրը պիտի գործէ ինծի համար .
- Ով Տէր , քու սղորմութիւնդ յաւիտեան է .
- *Քու ձեռքիդ գործերը երեսէ մի ձգեր :

ՍՍՂՄ. ՃԼԹ

Քիտաւոր երաժշտին . Սաղմոս Դաւթի :

- Ով Տէր , զիս քննեցիր ու ճանչցար :
- 2 - Դուն գիտես իմ նստիլս ու ելլելս ,
- Իմ խորհուրդս հեռուանց կ'իմանաս :
- 3 - Իմ շաւիղս ու պառկիլս կը քննես ,
- Ու իմ բոլոր ճամբաներս գիտես :
- 4 - Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ ,
- Ահա , ով Տէր , դուն ամէնը գիտես :
- 5 - Իմ ետեւէս ու առջևէս զիս պաշարեցիր ,
- Եւ քու ձեռքդ իմ վրաս դրիր :
- 6 - Այս գիտութիւնը ինծի խիտա զարմանալի է ,

*Կամ, Հրեշտակներուն, Կամ, Գառաւորներուն, և Կամ, Աստուծոյ

- Բարձր է -- չեմ կրնար հասկնալ զանիկա :
- 7 - Ո՛ւր երթամ քու Հոգիէդ ,
- Եւ քու երեսէդ ո՛ւր փախչիմ :
- 8 - Եթէ երկինք ելլեմ , դուն հան ես .
- Եթէ դժոխքը անկողինս ընեմ , ահա դուն հան ես .
- 9 - Եթէ արշալոյսին թևերը սունեմ ,
- Եւ ծովուն վերջի ծայրերը բնակիմ ,
- 10 - Հան ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ ,
- Ու քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ :
- 11 - Եթէ լսեմ , Իրաւցընէ խաւարը զիս պիտի ծածկէ ,
- Այն արեւ գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ բոլորտիքս :
- 12 - Մութն ալ քեզի խաւար չէ .
- Հապա գիշերը ցորեկի պէս լուսաւոր կ'ըլլայ .
- Խաւարը և լոյսը միեւնոյն բան են -- արջևդ :
- 13 - Վասն զի դուն *ստեղծեցիր իմ երիկամունքներս ,
- Ու իմ մօրս սրովայնին մէջ դուն զիս ծածկեցիր :
- 14 - Կը գոհանամ քեզմէ ,
- Որ ահաւոր -- զարմանալի կերպով ստեղծուեցայ .
- *Քու գործերդ զարմանալի են ,
- Ու իմ անձս աղէկ գիտէ :
- 15 - Իմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ ,
- Երբ գաղտուկ տեղը շինուեցայ ,
- Երկրի խորութիւններուն մէջ + ճարտարութեամբ կազմուեցայ :
- 16 - Քու աչքերդ իմ անկառար կազմուածքս տեսան .
- Ու անբաժնէրս -- բոլորը քու գիրքիդ մէջ գրուած էին ,
- Որո՞ք + ժամանակին պիտի կազմուէին ,
- Երբ դեռ անոնցմէ մէ'կը չկար :
- 17 - Ո՛րչափ պատուական են ինծի քու խորհուրդներդ , ով Աստուած .
- Ո՛րչափ մեծ է անոնց թիւը :
- 18 - Եթէ համրեմ զանոնք՝ աւազէն շատ են .
- Երբ արթննամ՝ դեռ քեզի հետ եմ :
- 19 - Իրաւցընէ ամբարիշտը պիտի սպաննես , ով Աստուած .

*Կամ, ստացար + Եբբ. նկարակերպեցայ

Ուրեմն, ով արիւնասէղ մարդիկ, հե-
 աացէք ինձ մէ :
 20 - Անոնք քեզի դէմ նենգութեամբ
 կը խօսին,
 Ե- քու *թշնամիներդ +... ան...
 պարսպ տեղ կ'առնեն* :
 21 - Քեզ ատողները չե՞մ' ատեր, ով
 Տէր,
 Ու քեզի դէմ ելլողներէն չե՞մ' զզուիր :
 22 - Չանոնք կատարեալ ատելու-
 թեամբ կ'ատեմ',
 Ե- ինձի թշնամի կը համարիմ' :
 23 - Փորձէ զիս, ով Աստուած, ու
 գիտցիր իմ սիրտս .
 Չիս քննէ ու գիտցիր իմ մտածմունք-
 ներս,
 24 - Եւ նայէ թէ արդեօք չար ճամբու
 մէ'ջ եմ',
 Եւ զիս դէպի յաւիտենական ճամբան
 առաջնորդէ :

ՍԱՂՄ. ձԽ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի :

Ով Տէր, չար մարդէն զիս փրկէ,
 Ո- բռնաւոր մարդէն զիս պահէ,
 2 - Որոնք սրտերնուն մէջ չար բաներ
 կը մտածեն,
 Ո- ամէն օր կռիւներու համար կը
 ժողվուին :
 3 - Իրենց լեզուները օձի պէս սրեցին .
 Իժի թոյն կայ անոնց շրթունքներուն
 տակ : (Սէլա :)
 4 - Ով Տէր, զիս ամբարշտին ձեռքէն
 պահէ .
 Չիս բռնաւոր մարդէն պահպանէ,
 Որոնք իմ գնացքներս խափանելու
 խորհուրդ բրին :
 5 - Ամբարտաւանները ինձի համար
 գաղտնի սրագոյթ ու չուաններ
 լարեցին .
 Ուսկան փռեցին ի՞մ ճամբուս վրայ .
 Վարմեր դրին ինձի համար : (Սէլա :)
 6 - Ըսի Տէրօջը, Դուն ես իմ Աստ-
 ւածս .
 Ով Տէր, լսէ իմ աղաչանքիս ձայնը :
 7 - Ով Տէր Եհովա, իմ փրկութեանս
 զօրութիւնը,
 Դուն իմ գլխուս հովանի եղար պատե-
 րազմին օրը :

*կ... քաղաքներդ անիրաւութեամբ կ'առնեն

8 - Ով Տէր, ամբարշտին ցանկութիւն-
 ները մի տար .
 Անոր չար խորհուրդը մի յաջողեր,
 Որ չուայ ի՛նչ բարձրանան : (Սէլա :)
 9 - Չիս պաշարողներուն գլուխը
 Իրենց շրթունքներուն աշխատութիւնը
 պիտի ծածկէ :
 10 - Վառած ածուխներ պիտի իյնան
 անոնց վրայ .
 Կրակի մէջ պիտի ձգէ զանոնք,
 Ո- խորունկ ջուրերու մէջ, որպէս զի
 բնու վեր չելլեն :
 11 - Չարախօս մարդը երկրի վրայ պի-
 տի չհաստատուի .
 Թշուառութիւնը պիտի որսայ բռնա-
 ւոր մարդը,
 Որպէս զի զանի կործանէ :
 12 - Գիտեմ որ Տէրը դատաստան պի-
 տի ընէ խեղճին,
 Ո- իրաւունք՝ աղքատներուն :
 13 - Յիրաւի արդարները քու անունդ
 պիտի գովեն .
 Ուղիղները քու առջևդ պիտի բնակին :

ՍԱՂՄ. ձԽԱ

Սաղմոս Դաւթի :

Ով Տէր, քեզի կը կանչեմ, շուտով
 հասիր ինձի .
 Ականջ դիր իմ ձայնիս երբ քեզի կը
 կանչեմ :
 2 - Թող իմ աղօթքս խունկի պէ՞ք քեզի
 շիտկուի,
 Ե- իմ ձեռքերուս վեր վերցուիլը՝
 իրիկուան պատարագին պէ՞ք :
 3 - Ով Տէր, պահպան դիր իմ բեր-
 նիս,
 Ո- իմ շրթունքներուս դուռը պահ-
 պանէ :
 4 - Իմ սիրտս չար բանի ետեւ խտու-
 րելու մի թողուր,
 Որպէս զի անօրէնութիւն գործող մար-
 դոց հետ գէշ գործեր չընեմ',
 Ու անոնց համադամ կերակուրներէն
 չուտեմ' :
 5 - Արդարը թող զիս զարնէ, այն
 սղարմութիւն է .
 Եւ զիս յանդիմանէ, այն գլխու իւղ է .
 Իմ գլուխս չմերժէ զանի .
 Վասն զի անոնց նեղութիւններուն մէջ
 ալ պիտի աղօթեմ' :
 6 - Երբ անոնց դատաւորները ապա-
 ւածներու մէջ ձգուին,

- Այն տառն իմ խօսքերս պիտի լսեն , վասն զի քաղցր են :
- 7 - Ինչպէս *Տերկոյլը ու ճեղքոյլը իչ ցրուէ երկրի վրայ , Այնպէս մեր սակորները գերեզմանին բերանը ցիրուցան եղան .
- 8 - Սակայն , ով Տէր Եհովա , իմ աչքերս դէպ ի քեզ են .
- Քեզի յուսացայ , իմ հոգիս մի մերկացներ :
- 9 - Ինծի համար լարուած սրոգայթէն , Ու անօրէնութիւն գործողներուն վարմերէն զիս պահէ :
- 10 - Ամբարիշտները իրենց ցանցերուն մէջ պիտի իյնան , Երբ ես բռնորովին անցնիմ :

ՍՍՂՄ. ՃԻԲ

Դաւիթի երգը ու աղօթքը՝ երբ ինք այրին մէջ էր :

- Իմ ձայնովս Տէրօջը կ'աղաղակեմ . իմ ձայնովս Տէրօջը կ'աղաչեմ :
- 2 - Իմ գանգատս անոր առջև կը թափեմ .
- Իմ նեղութիւնս անոր առջև կը պատմեմ :
- 3 - Երբ հոգիս իմ մէջս կը մարէր , Դուն իմ շաւիղս գիտցար .
- Իմ քաղած ճամբուս մէջ Ինծի համար գաղտնի սրոգայթ լարեցին :
- 4 - Նայէ աջ կողմը ու տես , Որ բնաւ զիս ճանչցող մը չկայ .
- Ապաւէնը ինծմէ կորսուեցաւ . Բնաւ մէկը չկայ որ իմ անձիս համար հոգ ընէ :
- 5 - Ով Տէր , քեզի աղաղակեցի , Ու ըսի , Դուն ես իմ ապաւէնս , Եւ իմ վիճակս կենդանիներուն երկրին մէջ :
- 6 - Ականջ դիր իմ աղաղակիս , Վասն զի շատ նուաստացայ .
- Ազատէ զիս իմ հալածիչներէս , Վասն զի ինծմէ զօրաւոր են :
- 7 - Իմ անձս բանտէն հանէ , Որպէս զի քու անուանդ գոհութիւն մատուցանեմ ,
- Արդարները իմ չորս կողմն պիտի պատեն ,
- Երբ ինծի բարութիւն ընես :

ՍՍՂՄ. ՃԻԳ

Սաղմոս Դաւիթի

- Ով Տէր , լսէ իմ աղօթքս , Ականջ դիր իմ աղաչանքիս .
- Պատասխան տուր ինծի քու ճշմարտութիւնովդ :
- 1 - քու արդարութիւնովդ :
- 2 - Եւ քու ծառայիդ հետ դատաստանի մի մաներ ,
- Վասն զի բնաւ կենդանի մը պիտի չարգարանայ քու առջևդ :
- 3 - Վասն զի թշնամին իմ անձս հալածեց ,
- Իմ կեանքս գեաինը զարկաւ , Զիս շատանցուրնէ մեռածներուն պէս Մութը նստեցուց :
- 4 - Եւ իմ հոգիս ներսիդիս մարեցաւ , իմ սիրտս ներսիդիս խռովեցաւ :
- 5 - Առաջուան օրերը կը յիշեմ , Քու բռնոր գործերուդ վրայ կը մտածեմ .
- Քու ձեռքերուդ ըրածներուն վրայ կը խորհիմ :
- 6 - Ձեռքերս դէպ ի քեզ կ'երկնցնեմ .
- Իմ անձս չոր երկրի պէս քեզի իչ ծարուի : (Սէլա :
- 7 - Շուտով պատասխան տուր ինծի , ով Տէր .
- Իմ հոգիս մարեցաւ .
- Քու երեսդ մի ծածկեր ինծմէ , Որպէս զի գուբը իջնողներուն պէս չըլլամ :
- 8 - Առատանց քու ողորմութիւնդ ինծի լսել տուր ,
- Վասն զի քեզի յուսացայ .
- Իմ երթալու ճամբաս ինծի ցուցուր , Վասն զի իմ անձս դէպ ի քեզ վերցուցի :
- 9 - Ով Տէր , փրկէ զիս իմ թշնամիներէս , Վասն զի քեզ իմ ապաւէնս ըրի :
- 10 - Սորվեցուր ինծի որ քու կամքդ ընեմ , Քանզի դուն ես իմ Աստուածս .
- Թող քու բարի Հոգիդ զիս ուղիղ երկիրը առաջնորդէ :
- 11 - Ով Տէր , քու անուանդ համար կենդանացուր զիս .
- Քու արդարութեանդ համար իմ անձս նեղութենէ հանէ .
- 12 - Եւ քու ողորմութիւնովդ ստակեցուր իմ թշնամիներս ,
- Ու կորսնցուր բոլոր իմ անձս վշտացնողները ,
- Վասն զի ես քու ծառայդ եմ :

*կ-մ, Ժ-յ, կարողը

ՍԱՂՄ. ՃԽԳ

Սուգնու Գուլթի :

- Օրհնեալ ըլլայ Տէրը, իմ Վէմն,
 Որ իմ ձեռքերս մտրանչելու կը վար-
 ժէ,
 Ո- իմ մտտերս՝ պատերազմելու:
 2 - Անհկա է իմ ողորմութիւնս ու
 պարիսպս,
 Իմ ապուէնս ու իմ փրկիչս,
 Իմ վահանս, և ես անոր կը յուսամ,
 Որ իմ ժողովուրդս ինծի կը հնազան-
 դեցնէ:
 3 - Ով Տէր, մարդը ի՞նչ է որ զանհ-
 կա կը ճանչնաս,
 Ո- մարդու որդին՝ որ զանհկա կը յար-
 դես:
 4 - Մարդը ունայնութեան պէս է,
 Անոր օրերը անցնող շուքի պէս են:
 5 - Ով Տէր, խոնարհեցուր քու եր-
 կինքդ ու վար իջիր.
 Լեռներուն դպչէ ու պիտի մխան:
 6 - Փայլակը նեաէ ու ցրուէ զանոնք.
 Քու նետերդ զրկէ ու զանոնք խուսի-
 ցուր:
 7 - Քու ձեռքդ վերէն զրկէ և ազատէ
 զիս.
 Փրկէ զիս մեծ ջուրերէն «- օտարնե-
 րուն ձեռքէն,
 8 - Որոնց բերանը ունայնութիւն կը
 խօսի,
 Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ
 ձեռք է:
 9 - Ով Աստուած, քեզի նոր երգ
 պիտի երգեմ,
 Տասը լար ունեցող տաւիղով սաղմոս
 պիտի ըսեմ քեզի:
 10 - Թագաւորներուն փրկութիւն
 տուողը,
 Ո- իր Գուլթի ծառան չար սուրէն ա-
 զասողը ան է:
 11 - Զիս ազատէ ու օտարներուն ձեռ-
 քէն փրկէ,
 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի.
 Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ
 ձեռք է:
 12 - Որպէս զի մեր որդիները իրենց ե-
 րիտասարդութեանը մէջ տուն-
 կերու պէս մեծնան,
 Ո- մեր աղջիկները պալատի շէնքին
 համար փորագրուած անկիւնի
 քարերու պէս ըլլան.
 13-Որպէս զի մեր ամբարները լեցուին,

- Ե- ամէն տեսակ կերակուրէր բղխեն,
 Ո- մեր ոչխարները հազարաւոր և բիւ-
 րաւոր ծնանին մեր արտերուն
 մէջ.
 14 - Որպէս զի մեր արջառները *բազ-
 մածին ըլլան,
 Ու ամենեկին բռնութեամբ մտնել ու
 ելլել չըլլայ,
 Ոչ ալ աղաղակ՝ մեր հրապարակնե-
 րուն մէջ:
 15 - Երանի՛ այսպիսի վիճակի մէջ
 եղող ժողովուրդին.
 Երանի՛ այն ժողովուրդին՝ որուն Աս-
 տուածը Եհովա է:

ՍԱՂՄ. ՃԽԵ

Օրհնութիւն Գուլթի

- Քեզ պիտի բարձրացնեմ, ով իմ
 Աստուածս, որ Թագաւոր ես,
 Ու քու անունդ յաւիտեանս յաւիտե-
 նից պիտի օրհնեմ:
 2 - Ամէն օր քեզ պիտի օրհնեմ,
 Եւ քու անունդ յաւիտեանս յաւի-
 տենից պիտի գովեմ:
 3 - Մեծ ու խիստ գովելի է Տէրը,
 Ու անոր մեծութիւնը անքննելի է:
 4 - Ազգ ազգի պիտի գովէ քու գոր-
 ծերդ,
 Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ:
 5 - Քու փառքիդ մեծութեանը վա-
 յելչութիւնը
 Ու քու հրաշալի գործերդ պիտի զրու-
 ցեմ:
 6 - Եւ քու ահաւոր գործերդ պիտի
 խօսին,
 Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ:
 7 - Քու մեծ բարերարութեանդ յիշա-
 տակը պիտի հրատարակեն,
 Եւ քու արդարութիւնովդ պիտի ցըն-
 ծան:
 8 - Ողորմած ու գթած է Տէրը,
 Երկայնամիտ և բազումօղորմ է:
 9 - Տէրը ամէնուն բարի է,
 Ու անոր ողորմութիւնները իր բոլոր
 գործերուն վրայ են:
 10-Ով Տէր, քու բոլոր գործերդ քեզ
 պիտի գովեն,
 Եւ քու սուրբերդ քեզ պիտի օրհնեն:
 11 - Քու թագաւորութեանդ փառքը
 պիտի խօսին,

*կաժ, պարտրա

Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.
12 - Որպէս զի անոր զօրաւոր գործերը
ու անոր թագաւորական փա-
ռաւոր մեծութիւնը

Մարդոց որդիներուն գիացնեն:
13 - Քու թագաւորութիւնդ յաւի-
տենական թագաւորութիւն է,

Ու քու տէրութիւնդ՝ ազգէ մինչև
ազգ:

14 - Տէրը կը հաստատէ բոլոր իյնա-
լու վրայ եղողները,
Եւ բոլոր վար ծառայները կը կանգ-
նեցնէ:

15 - Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն,
Ու ժամանակին անոնց կերակուրը
դուն անոնց կու տաս:

16 - Քու ձեռքդ կը բանաս,
Ու ամէն կենդանիին փափաքը կը լե-
ցնես:

17 - Տէրը արդար է իր բոլոր ճամբա-
ներուն մէջ,

Ու ողորմած է իր բոլոր գործերուն
մէջ:

18 - Տէրը մօտ է այն ամէնուն որ զինք
կը կանչեն,

Այն ամէնուն՝ որ ճշմարտութեամբ
զինք կը կանչեն:

19 - Անիկա իրմէ վախցողներուն փա-
փաքը կը լեցնէ,

Եւ անոնց աղաղակը կը լսէ ու կը փրկէ
զանոնք:

20 - Տէրը բոլոր զինք սիրողները կը
պահէ,

Սակայն բոլոր ամբարիշտները կը կոր-
որնցնէ:

21 - Իմ բերանս Տէրոջը գովութիւնը
պիտի խօսի

Ու ամէն մարմին անոր սուրբ անունը
օրհնէ յաւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄ. ՃԽԶ

Աւելուիա : Օրհնէ Տէրը , ով իմ
անձս :

2 - Տէրը պիտի օրհնեմ իմ կեանքիս
մէջ,

Քանի որ «զէ եմ» իմ Աստուծոյս սաղ-
մոս պիտի ըսեմ :

3 - Մի յուսաք իշխաններուն,
Մարդու որդիին՝ որուն քով փրկու-
թիւն չկայ :

4 - Անոր հօգին կ'ելլէ, անիկա իր հողը
կը գառնայ :

Նայն օրը անոր խորհուրդները կը կոր-
սուին :

5 - Երանի՛ անոր՝ որուն օգնականը
Յակոբի Աստուածն է,

Ու անոր յոյսը իր Տէր Աստուծոյն
վրայ է :

6 - Որ երկինքը ու երկիրը,
Ծովը ու բոլոր անոնց մէջ եղածը
ստեղծեց,

Ճշմարտութիւն կը պահէ յաւիտեան,
7 - Իրաւունք կ'ընէ զրկուածներուն,

Ու հաց կու տայ անօթիներուն.
Տէրը կ'արձակէ կապուածները.

8 - Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը.
Տէրը կը կանգնեցնէ վար ծառայները.
Տէրը կը սիրէ արդարները.

9 - Տէրը կը պահէ պանդուխտները.
Կը հաստատէ օրբը ու որբեարին,
Բայց ամբարիշտներուն ճամբան կը
ծուէ :

10 - Տէրը պիտի թագաւորէ յաւիտե-
անս,

Քու Աստուածդ, ով Սիօն, ազգէ մին-
չև ազգ : Աւելուիա :

ՍԱՂՄ. ՃԽԷ

Գովեցէք Տէրը , վասն զի բարի է
մեր Աստուծոյն սաղմոս ըսել .
Վասն զի քաղցր «- վայելուչ է օրհ-
նութիւնը :

2 - Տէրը կը շինէ Երուսաղէմը,
Իսրայէլի ցրուածները կը ժողովէ.

3 - Սրտով կուարածները կը բժշկէ,
Ու անոնց խոցերը կը փաթթէ.

4 - Աստղերուն թիւը կը համրէ,
Անոնց ամէնն ալ երեւոյ անուններովը
կը կանչէ :

5 - Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւ-
նը շատ է .

Անոր իմաստութիւնը անհուն է :

6 - Տէրը կը հաստատէ խեղճերը,
Ու ամբարիշտները մինչև հողը կը խո-
նարհեցնէ :

7 - Երգեցէք Տէրոջը գոհութիւնով .
Մեր Աստուծոյն սաղմոս ըսէք քնարով .

8 - Որ երկինքը ամպերով կը ծածկէ,
Անձրև կը պատրաստէ երկրի համար,
Խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ .

9 - Որ անասուններուն իրենց կերա-
կուրը կու տայ,

Ու ազուաւին ձագերուն՝ որոնք կ'ա-
ղաղակեն :

- 10-Անիկա ձիուն զօրութեանը չհաճիր, Մարգուն սրունքներուն չհաւնիր:
- 11 - Տէրը կը հաւնի իրմէ վախցողներուն
- Ո- իր ողորմութեանը յուսացողներուն:
- 12 - *Ով Երուսաղէմ, գովէ Տէրը . Օրհնէ քու Աստուածդ, ով Սիօն:
- 13 - Վասն զի անիկա քու դռներուդ նիգերը ամուրցուց,
- Ե- քու որդիներդ քու մէջդ օրհնեց :
- 14 - Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
- Ո- պարարա ցորենով քեզ կը կշտացընէ:
- 15 - Անիկա իր խօսքը երկրին մէջ կը զրկէ.
- Իր խօսքը շուտով կը վազէ:
- 16 - Անիկա բուրդի պէս ձիւն կու տայ,
- Ո- եղեամբ մոխրի պէս կը ցանէ:
- 17 - Իր սաւը պատառներու պէս կը նեակէ.
- Անոր ցուրտին դէմ ո՞վ կրնայ կենալ :
- 18 - Անիկա իր խօսքը կը զրկէ ու կը հսկեցնէ զանոնք.
- Իր հովը փչել կու տայ, ու ջուրեր կը վազեն:
- 19 - Անիկա իր խօսքը կը պատմէ Յակոբի,
- Ե- իր կանոնները ու դատաստանները՝ Իսրայէլի:
- 20 - Բնու ազգի մը այսպէս չըրաւ. Ու անոնք առաջ դատաստանները չճանչցան: Ալէլուիա:

ՍԱՂՄ. ՃԻԸ

Ալէլուիա: Օրհնեցէք Տէրը երկինքէն.

- Օրհնեցէք զանիկա բարձր տեղերուն մէջ:
- 2 - Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր հրեշտակները.
- Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր զօրքերը:
- 3 - Օրհնեցէք զանիկա, ով արեգակ ու լուսին.

*Իօթանանից և Հայոց Գրաբար Բարձրագոյն-Տեղանց մէջ առիւ էլ պիտի ձիւն. Սաղմունք: Տե՛ս Սաղմունքի վերջի Ժանօթանիւնը:

- Օրհնեցէք զանիկա, ով բոլոր փայլուն սասուղեր:
- 4 - Օրհնեցէք զանիկա, ով երկնից երկինք
- Ու երկինքէ վեր եղող ջուրեր:
- 5 - Թող Տէրոջը անունը օրհնեն.
- Վասն զի ինք հրամայեց, ու անոնք ստեղծուեցան:
- 6 - Եւ զանոնք յաւիտեանս յաւիտենից հաստատեց.
- Կանոն դրաւ որ չխափանուիր:
- 7 - Օրհնեցէք Տէրը երկրէ,
- Ով վիշապներ ու բոլոր անդունդներ.
- 8 - Կրակ և կարկուտ, ձիւն ու շոգի,
- Ե- անոր խօսքը կատարող մրկապից հով,
- 9 - Լեռներ ու բոլոր բլուրներ, Պաղատու ծառեր ու եղևիններ,
- 10 - Պազաններ ու բոլոր անասուններ,
- Սողացողներ ու թևաւոր թռչուններ,
- 11 - Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր,
- Իշխաններ ու երկրի բոլոր դատաւորներ,
- 12 - Երիտասարդներ և կոյս ազջիկներ, Ծերեր ու աղաքներ.
- 13 - Թող Տէրոջը անունը օրհնեն, Վասն զի միայն անոր անունը բարձր է, Անոր փառքը երկրէ ու երկինքէ վեր է:
- 14 - Անիկա բարձրացուց իր ժողովուրդին եղջիւրը,
- Իր բոլոր սուրբերուն,
- Իրեն մօտ եղող ժողովուրդին,
- Իսրայէլի որդիներուն օրհնութիւնը : Ալէլուիա:

ՍԱՂՄ. ՃԻԹ

Ալէլուիա : Տէրոջը նոր երգ երգեցէք,

- Ո- անոր օրհնութիւնը՝ սուրբերուն ժողովքին մէջ:
- 2-Իսրայէլ թող սերտխանայ իր Ստեղծողին վրայ.
- Սիօնի որդիները թող ցնծան իրենց թագաւորին վրայ:
- 3 - Թող անոր անունը պարով օրհնեն,
- Թմբուկով ու քնարով սաղմոս թող ըսեն անոր:
- 4 - Վասն զի Տէրը իր ժողովուրդին կը հաւնի,

Խոնարհները փրկութիւնով պիտի փառաւորէ:

5 - Թող սուրբերը ուրախանան փառքով:

Ու իրենց անկողիններուն մէջ ցընծան:

6 - Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող ըլլան:

Ու երկու բերնով սուր՝ անոնց ձեռքին մէջ:

7 - Որպէս զի հեթանոսներէն վրէժ առնեն:

Ու ժողովուրդները պատժեն:

8 - Որպէս զի անոնց թագաւորները շղթաներով կապեն:

Ու անոնց ազնուականները՝ երկաթէ կապանքներով:

9 - Որպէս զի գրուած դատաստանը անոնց վրայ կատարեն:

Այս անոր բոլոր սուրբերուն փառքն է: Ալէլուիա:

ՍԱՂՄ. ՃԾ

Ալէլուիա: Օրհնեցէք զԱստուած իր սրբարանին մէջ:

Օրհնեցէք զանիկա իր զօրութեանը հաստատութեանը մէջ:

2 - Օրհնեցէք զանիկա իր զօրաւոր գործերուն համար:

Օրհնեցէք զանիկա իր մեծափառութեանը համեմատ:

3 - Օրհնեցէք զանիկա փողի ձայնով:

Օրհնեցէք զանիկա տաւիղով ու քնարով:

4 - Օրհնեցէք զանիկա թմբուկով ու պարով:

Օրհնեցէք զանիկա լար ունեցող նուագարաններով ու սրինգով:

5 - Օրհնեցէք զանիկա մեծաձայն ծնծղաներով:

Օրհնեցէք զանիկա ցնծութեան ծնծղաներով:

6 - Ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ: Ալէլուիա:

ԳԻՐԻ ԱՌԱԿԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

Իսրայէլի թագաւորին Գաւիթի որդւոյն Սողոմոնի առականները:

2 - Իմաստութիւնը ու խրատը գիտնալու համար:

Հանճարին խօսքերը հասկնալու համար:

3 - Իմաստութեան կրթութիւնը ընդունելու համար:

Այսինքն արգարութիւնը, դատաստանը և ուղղութիւնը:

4 - Միամիտներուն սրամտութիւն առաւելու համար:

Ու երիտասարդներուն գիտութիւն և հանճար:

5 - Իմաստունը թող լսէ ու էջ իմաստութիւնը աւելցնէ:

Ու հանճարեղ մարդը խոհեմութիւն ստանայ:

6 - Առակը ու նմանութիւնը հասկնալու համար:

Նաև իմաստուններուն խօսքերը ու անոնց խրթնաբանութիւնները:

7 - Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է:

Բայց յիմարները իմաստութիւնը ու կրթութիւնը կ'անարգեն:

8 - Որդեակ իմ, քու հօրդ խրատը մտիկ ըրէ:

Ու քու մօրդ խօսքերը մի մերժեր:

9 - Քանզի անոնք քու գլուխդ շնորհաց պատկ:

Եւ քու պարանոցդ մանեակներ պիտի ըլլան:

10 - Որդեակ իմ, եթէ մեղաւորները քեզ գլխէ հանել ուզեն:

*Կա՛մ, մեկնութիւնը
†Այսինքն, վարժութիւնը

Գու՛ն ա՛նձն, հաւանութիւն մի տար :

11 - Եթէ ըսեն, Մեզի հետ եկուր,
Արեան համար դարանամուա ըլ-
լանք ,
Անմեղ մարդուն համար առանց
պատճառի ծածուկ տեղ սպա-
սենք .

12 - Զանոնք գերեզմանի պէս ողջ
ողջ՝
Եւ գուրբ իջնողներուն պէս ամբողջ
կլլենք .

13 - Ամէն տեսակ պատուական
ստացուածք գտնենք ,
Ու մեր տուները աւարով լեցնենք .

14 - Քու վիճակդ մեր մէջ ձգէ,
Ամէնս մէկ քսակ ունենանք :

15 - Որդեակ իմ, անոնց հետ ճամբայ
մի երթար ,
Անոնց շաւիղէն քու սաքերդ ետ պահէ .

16 - Քանզի անոնց սաքերը չարութեան
կը վազեն ,
Եւ արիւն թափելու կ'արտարան :

17 - Արդարեւ ամէն թռչունին աչքե-
րուն առջև
Պարապ տեղ վարմեր կը լարուին .

18 - Բայց անոնք իրենց արեանը հա-
մար դարան կը գործեն ,
Ու իրենց կեանքին համար ծածուկ
տեղ կը սպասեն :

19 - Ամէն ազահին ճամբաները այս-
պէս են .

Ագահ-Յիւնը իրեն անձնատուր եղող-
ները կը մեռցնէ :

20 - Իմաստութիւնը գուրսը Բարձ-
րայն կ'աղաղակէ ,
Ու հրապարակներու մէջ իր ձայնը
կու տայ :

21 - Անիկա բազմութիւն եղած տեղե-
րուն գլուխը
Եւ դռներուն մուտքերուն մէջ կ'ա-
ղաղակէ ,
Ու քաղաքին մէջ իր խօսքերը կը խօսի
« - Կ'ը՛տ ,

22 - Ով անմիտներ , մինչև ե՞րբ ան-
միտութիւնը պիտի սիրէք ,
Մինչև ե՞րբ ծաղր ընողները ծաղր ընե-
լով պիտի զուարճանան ,
Ու յիմարները գիտութիւնը տատեն :

23 - Իմ յանդիմանութեանս դարձեք .
Ահա իմ հոգիս ձեր վրայ պիտի թա-
փեմ ,
Իմ խօսքերս ձեզի պիտի հասկցնեմ :

24 - Որովհետև ես կանչեցի, ու դուք
չուզեցիք լսել .

Զեռքս երկնցուցի, ու մտիկ ընող չե-
ղաւ .

25 - Հապա իմ՝ բոլոր խրատներս մեր-
ժեցիք ,
Եւ իմ յանդիմանութիւնս չուզեցիք .

26 - Ես ալ ձեր թշուառութեանը
վրայ պիտի ծիծաղիմ ,
Ու ձեր վախը հասնելուն՝ ծաղր պիտի
ընեմ .

27 - Երբ ձեր վախը հեղեղի պէս
հասնի ,
Զեր թշուառութիւնը մըրիկի պէս պա-
տասի ,
Եւ ձեր վրայ նեղութիւն ու տառա-
պանք գոյ ,

28 - Այն տատեն ինծի պիտի աղաղա-
կեն , ու պատասխան պիտի
չտամ .

Զիս պիտի փնտռեն ու պիտի չկրնան
գտնել .

29 - Որովհետև գիտութիւնը տաեցին ,
Ու Տէրօջը վախը չընտրեցին .

30 - Իմ խրատներս չուզեցին ,
Ու բոլոր յանդիմանութիւնս անար-
գեցին .

31 - Ուրեմն անոնք իրենց ճամբուն
պտուղէն պիտի ուտեն ,
Ու իրենց խորհուրդներէն պիտի կշտա-
նան :

32 - Վասն զի անմիտներուն խտարիլը
զիրենք պիտի մեռցնէ ,
Եւ յիմարներուն *անհոգութիւնը զի-
րենք պիտի կորսնցնէ :

33 - Բայց ինծի մտիկ ընողը ապահա-
վութեամբ պիտի բնակի ,
Ու չարիքներու վախէն հանդարտ պի-
տի ըլլայ :

ԳԼ. Բ

Որդեակ իմ, եթէ իմ խօսքերս ըն-
դունիս,
Ու իմ պատուիրանքներս քովդ պա-
հես ,
2 - Այնպէս որ ականջդ իմաստութեան
տաս ,
Ու սիրտդ հանճարին բանաս ,
3 - Եթէ դուն իմաստութիւնը +եզե
կանչես ,
Եւ քու ձայնդ հանճարին ուղղես ,
4 - Եթէ զանիկա արծաթի պէս փընտա-
ուես ,

*Կամ, յաջողութիւնը

- Ու ծածուկ գանձերու պէս խնդրես,
- 5 - Այն ատեն Տէրոջը վախը պիտի հասկնաս,
- Եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես .
- 6 - Վասն զի իմաստութիւնը Տէրը կուտայ .
- Գիտութիւնը ու հանճարը անոր բերնէն են :
- 7 - Անիկա ուղիղներուն համար *փրկութիւն կը պահէ .
- Անիկա ուղղութեամբ քաղաղներուն վահանն է,
- 8 - Որպէս զի արդարութեան ճամբաները պաշտպանէ ,
- Ու իր սուրբերուն ճամբան պահէ :
- 9 - Այն ատեն արդարութիւնը , դատաստանը և ուղղութիւնը ,
- Ամէն տղէկ ճամբան պիտի հասկնաս :
- 10 - Երբ իմաստութիւնը քու սրտիդ մէջ մտնէ ,
- Եւ գիտութիւնը քու հոգւոյդ ախորժելի բլլայ ,
- 11 - Խոհեմութիւնը քեզ պիտի պահէ ,
- Ու հանճարը քեզ պիտի պաշտպանէ .
- 12 - Որպէս զի քեզ չար ճարճան ճամբայէն ,
- Նենգութիւններ խօսող մարդէն ազատէ .
- 13 - Անոնց՝ որոնք ուղիղ ճամբան թողուցեր են ,
- Որպէս զի խաւար ճամբաներու մէջ քալեն .
- 14 - Չարութիւն ընելով կ'ուրախանան ,
- Եւ չարին նենգութիւններովը կը ցնծան .
- 15 - Որոնց ճամբաները ծուռ են ,
- Ու անոնց ընթացքը խոտորնակ է :
- 16 - Որպէս զի նա քեզ ազատէ օտար կնոջմէն ,
- Շողորթութիւն խօսող օտար կնոջմէն .
- 17 - Որ իր երիտասարդութեան բարեկամը կը թողու ,
- Եւ իր Աստուծոյն ուխտը կը մոռնայ .
- 18 - Քանզի անոր տունը մահուան կը տանի ,
- Ու անոր շաւիղները՝ մեռելներուն :
- 19 - Անոր գացողները բնաւ չեն դառնար ,
- Եւ կեանքի ճամբաներուն չեն հասնիր :

*Կա՛մ, իմաստութիւն

- 20 - Որպէս զի բարի ճարճան երթաս ,
- Ու արդարներուն շաւիղները պահես :
- 21 - Քանզի ուղիղները երկրի վրայ պիտի բնակին ,
- Եւ կատարեալները անոր մէջ պիտի մնան :
- 22 - Բայց ամբարիշտները երկրէ պիտի կորուին ,
- Ու անօրէնները անկէ պիտի փրցուին :

ԳԼ. Գ

- Որդեակ իմ, մի մոռնար իմ օրէնքս ,
- Հապա քու սիրտդ թող իմ պատուիրանքներս պահէ .
- 2 - Վասն զի քեզի երկայն օրեր ու կենդանութեան տարիներ
- Եւ յաջողութիւն պիտի աւելցնեն :
- 3 - Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քեզ չթողուն .
- Չանոնք քու պարանոցիդ վրայ կապէ ,
- Քու սրտիդ տախտակին վրայ գրէ զանոնք :
- 4 - Այսպէս Աստուծոյ և մարդոց առջև
- Շնորհք ու բարի համարում պիտի գտնես :
- 5 - Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ ,
- Եւ քու իմաստութեանդ մի վստահիր :
- 6 - Քու ամէն ճամբաներուդ մէջ զանիկա ճանչցիր ,
- Ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ :
- 7 - Դուն քու աչքիդ առջև իմաստուն մի բլլար .
- Տէրոջմէ վախցիր ու չարութենէ ետքաշուէ :
- 8 - Ասիկա քու *ջիղերուդ աւուղջութիւն ,
- Եւ քու սակարներուդ պարարտութիւն կ'ըլլայ :
- 9 - Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ
- Եւ քու բոլոր բերքերուդ երախայրիներէն .
- 10 - Եւ քու շտեմարաններդ աւատութիւնով պիտի լեցուին ,
- Ու հնձաններէդ նոր գինին դուրս պիտի թափի :

*Կա՛մ, պորտիդ

11 - Որդեակ իմ՝ Տէրոջը խրատը մի անարգեր,
 Ու անոր յանդիմանութենէն մի թուլ-
 նար .
 12 - Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ,
 Ինչպէս հոյր մը իր սիրական զուակին
 կ'ընէ :
 13 - Երանի՛ այն մարդուն որ իմաս-
 տութիւն կը գտնէ,
 Ու այն մարդուն՝ որ հանճար կը ստանայ .
 14 - Վասն զի անոր շահը արծաթի
 շահէն աղէկ է,
 Ու անոր արդիւնքը՝ մաքուր սակիէն :
 15 - Անիկա *գոհարներէն պատուա-
 կան է .
 Եւ քու բոլոր ցանկալի բաներդ չեն
 կրնար անոր հաւատարիլ :
 16 - Անոր աջ ձեռքին մէջ օրերու եր-
 կայնութիւն,
 Եւ ձախ ձեռքին մէջ հարստութիւն
 ու փառք կայ :
 17 - Անոր ճամբաները հաճոյական
 ճամբաներ են ,
 Եւ անոր բոլոր շաւիղները խաղաղու-
 թիւն են :
 18 - Անիկա իրեն յարողներուն կենաց
 ծառ է .
 Ու զինք բռնողները երջանիկ կ'ըլլան :
 19 - Տէրը իմաստութիւնով հիմնեց
 երկիրը ,
 Եւ հանճարով հաստատեց երկինքը :
 20 - Անոր գիտութիւնովը անդունդ-
 ները կը պատահին,
 Ու ամպերը ցօղ կը կաթեցնեն :
 21 - Որդեակ իմ՝, ստանք քու աչքե-
 րուդ առջեկէն չերթան .
 Իմաստութիւնը ու խոհեմութիւնը
 †-վր պահէ .
 22 - Եւ քու հոգւոյդ կեանք՝
 Ու քու պարանոցիդ †վարդ ըլլան :
 23 - Այն ատեն ճամբադ ապահովու-
 թեամբ պիտի քալես ,
 Եւ քու ոտքդ պիտի չսահի :
 24 - Եթէ պառկիս՝ պիտի չվախնաս ,
 Ու եթէ քնանաս՝ քունդ անոյշ պիտի
 ըլլայ :
 25 - Պիտի չվախնաս յանկարծաստ
 վախէն ,
 Ոչ ալ ամբարիշտներուն †կորուստէն՝
 երբ դայ .

*Կ-մ, բուստերէն †Եբբ. շնորհք
 †Կ-մ, արշաւանքէն

26 - Վասն զի քու յոյսդ Տէրը պիտի
 ըլլայ ,
 Եւ քու ոտքդ պիտի պահէ, որպէս զի
 չբռնուի :
 27 - Երբ ձեռքէդ աղէկութիւն ընել
 կու գայ ,
 *Կարօտ եղողէն՝ մի արգիլեր զանիկա :
 28 - Քու դրացիիդ բնաւ մի ըսեր, Գնա
 ու դարձեալ եկուր,
 Եւ վաղը կու տամ, երբ քու քովդ
 կայ :
 29 - Քու դրացիիդ դէմ չարութիւն
 մի մտածեր ,
 Քանի որ անիկա վստահութեամբ քեզի
 հետ կը բնակի :
 30 - Առանց պատճառի մարդու հետ
 մի վիճիր,
 Երբ անիկա քեզի չարութիւն մը ըրած
 չէ :
 31 - Բռնաւոր մարդուն մի նախան-
 ձիր ,
 Ու անոր ճամբաները բնաւ մի ընարէր .
 32 - Վասն զի ծուռ մարդը Տէրոջը
 առջև պիղծ է .
 Բայց Անոր ընտանութիւնը արդարնե-
 րուն հետ է :
 33 - Ամբարիշտ մարդուն տանը մէջ
 Տէրոջը անէծքը կայ .
 Բայց արդարներուն բնակարանը Անի-
 կա կ'օրհնէ :
 34 - Յիրաւի Անիկա ծաղր ընողները
 ծաղր կ'ընէ ,
 Բայց խոնարհներուն՝ շնորհք կու տայ :
 35 - Իմաստունները փառք պիտի ժա-
 ոանգեն ,
 Բայց յիմարներուն բարձրանալը ա-
 նարգանք պիտի ըլլայ :

ԳԼ. Գ

Որդիք, յէր հօրը խրատը լսեցէք,
 Ու մտիկ ըրէք որպէս զի իմաստու-
 թիւնը ճանչնաք :
 2 - Վասն զի ձեզի աղէկ կը թութիւն
 կու տամ .
 Իմ օրէնքս մի թողուք :
 3 - Քանզի ես իմ հօրս աղան էի,
 Փափուկ ու սիրելի՛ իմ մօրս առջև :
 4 - Անիկա ինծի կը սորվեցներ ու կ'ը-
 սեր ,
 Քու սիրտդ իմ խօսքերս թող բռնէ .
 Իմ պատուիրանքներս պահէ ու ապրէ .

*Եբբ. Անոր ակերբէն

- 5 - Իմաստութիւն ստացիր, խոհեմութիւն ստացիր.
- Մի մոռնար, ու իմ բերնիս խօսքերէն մի խտտորիր:
- 6-Չանհկա մի թողուր, ու անհկա քեզ պիտի պահէ.
- Չանհկա սիրէ, ու անհկա քեզ պիտի պաշտպանէ:
- 7 - Ահն Բահն գլուխը իմաստութիւնն է, իմաստութիւն ստացիր.
- Ու ամէն ստացած բաներուդ հեա խոհեմութիւն ստացիր:
- 8 - Չանհկա մեծարէ, ու անհկա քեզ պիտի բարձրացնէ.
- Եթէ զանհկա գրկես, քեզ պիտի պատուէ:
- 9 - Անհկա քու գլխուդ շնորհաց զարդ պիտի տայ.
- Քեզի փառաց պատկ պիտի պարգևէ:
- 10 - Մտիկ ըրէ, որդեակ իմ, ու իմ խօսքերս ընդունէ.
- Եւ քու կեանքիդ տարիները պիտի շատնան:
- 11 - Քեզի իմաստութեան ճամբուն մէջ առէլ տարվեցուցի.
- Քեզ ուղղութեան շաւիղներուն մէջ պարացուցի,
- 12 - Որդե՞ դե քալելու ատենդ ոտքիդ քայլերը չնեղնան,
- Ու վազելու ատենդ չսահիս:
- 13 - Ամուր բունէ խրատը - բնաւ մի թողուր.
- Չանհկա պահէ, վասն զի քու կեանքդ անհկա է:
- 14 - Ամբարիշտներուն ճամբան մի երթար,
- Ու չարերուն ճամբուն մէջ մի քալեր:
- 15 - Անկէ զգուշացիր, անոր քովէն մի անցնիր,
- Անկէ խտտորէ ու անցիր:
- 16 - Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն՝ չեն քնանար.
- Ու եթէ Զիչ չկործանեն՝ քուններնին կը փախչի:
- 17 - Քանզի անոնք ամբարշտութեան հացը կ'ուտեն,
- Ու անիրաւութեան գինին կը խմեն:
- 18 - Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսին պէս է,
- Որ երթալով կը լուսաւորուի, մինչև կատարեալ օր ըլլայ:
- 19- Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է,

- Ու չեն գիտեր թէ ի՞նչ բանով իրենց ոտքը պիտի սահի:
- 20 - Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ խօսքերս,
- Քու ականջներդ իմ խօսքերուս տուր:
- 21 - Անոնք քու աչքերուդ առջևէն չերթան,
- Չանոնք քու սրտիդ մէջ պահէ.
- 22 - Վասն զի զանոնք գանդներուն անոնք կեանք են,
- Եւ անոնց բոլոր մարմնին՝ բժշկութիւն:
- 23-Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ,
- Քանզի կեանքի *աղբիւրները անկէ են:
- 24 - Ծուռ բերանը քեզմէ մէկդի ըրէ,
- Ու անիրաւ շրթունքները քեզմէ հեռացուր:
- 25 - Քու աչքերդ ուղիղ նային,
- Ու արտեանունքներդ շիտակ դէպ ի առջևդ ըլլան:
- 26 - Ոտքերուդ շաւիղները շիակէ,
- Եւ քու բոլոր ճամբաներդ հաստատուին:
- 27 - Աջ կամ ձախ կողմը մի խտտորիր.
- Ոտքդ չարութենէ դարձուր:

ԳԼ. Ե

- Որդեակ իմ, մտիկ ըրէ իմաստութեանս,
- Ե- քու ականջդ իմ հանճարիս տուր,
- 2 - Որպէս զի խոհեմութիւն պահես,
- Ու քու շրթունքներդ գիտութիւն պահեն:
- 3 - Վասն զի օտար կնոջ շրթունքներէն խորիսիս մեղր կը կաթի,
- Ու անոր քիմքը իւղէն կակուղ է.
- 4 - Բայց անոր վախճանը օշինդրի պէս դառն՝
- Ու երկայրի սուրի պէս սրած է:
- 5 - Անոր ոտքերը մահուան կ'իջնեն,
- Ու անոր քայլերը դժոխք կը հասնին:
- 6 - Անոր ճամբաները փոխախական են,
- ու չես կրնար զանազ գիտնալ,
- Որ չըլլայ թէ կեանքի ճամբան մտածես:
- 7 - Եւ հիմա, ով որդիք, ինձի մտիկ ըրէք,
- Ու իմ բերնիս խօսքերէն մի խտտորիր.
- 8 - Այն կնոջմէն ճամբադ հեռացուր,
- Ու անոր տանը դրանը մի մտենար.
- 9 - Զըլլայ որ քու փաւքդ ուրիշներու՝
- Եւ տարիներդ անողորմ մարդու տաս:

*Եբբ. ելքը

- 10 - Չըլլայ որ օտարները քու զօրութենէդ կշտանան,
- Ու քու վաստակդ օտարներուն տունը մնայ.
- 11 - Եւ քու վերջին ատենդ չհառաչես,
- Երբ քու մարմինդ ու անդամներդ մաշին,
- 12 - Ու չըսես, Ես ի՛նչպէս խրատը ատեցի,
- Ու իմ սիրտս յանդիմանութիւնը անարգեց.
- 13 - Եւ իմ սուսուցիչներուս խօսքը մտիկ չըրի,
- Ու իմ ականջս զիս վարժողներուն չաուի.
- 14 - Ժողովքի ու ժողովուրդի մէջ Գրեթէ ամէն պէ՛տէ թշուառութեան հանդիպեցայ:
- 15 - Ի՞նչ քու ջրակոյտէդ ջուր խմէ,
- Եւ քու ջրհորիդ մէջ վազող ջուրէն:
- 16 - Քու աղբիւրներդ դուրսը տարածուին,
- Ինչպէ՛ս ջուրերու վտակները հրապարակներուն մէջ:
- 17 - Անոնք միայն քուկդ ըլլան,
- Ու ոչ թէ քուկդ և օտարներուն:
- 18 - Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ.
- Եւ քու երիտասարդութեանդ կնոջը չէտ ուրախ եղիր:
- 19 - Անիկա +եղի սիրելի եղնիկի պէ՛տ, Եւ շնորհալի այծեամի պէ՛տ ըլլայ.
- Ամէն ատեն անոր ստինքները քեզ կշտացնեն,
- Ու միշտ անոր սիրովը զմայլիս:
- 20 - Եւ ինչո՞ւ, որդեակ իմ, դուն օտար կնոջ մը +իւ՛ր զմայլիս,
- Ու օտար կնոջ ծոցը գրկես:
- 21 - Վասն զի մարդուն ճամբաները Տէրսըր աչքերուն առջև են,
- Ու անոր ամէն քայլերը ի՛նչ կը կշռէ:
- 22 - Չարագործը իր անօրէնութիւնները պիտի բռնեն.
- Ու անիկա իր մեղքին չուաններովը պիտի բռնուի:
- 23 - Անիկա առանց խրատի պիտի մեռնի,
- Ու իր մեծ յիմարութիւնովը պիտի մուրի:

ԳԼ. 2

Որդեակ իմ, եթէ քու բարեկամիդ համար երաշխաւոր եղար,

- Կամ օտար մարդու համար քու ձեռքդ տուիր,
- 2 - Քու բերնիդ խօսքերովը որոգայթը ինկար,
- Բերնիդ խօսքերովը բռնուեցար.
- 3 - Որդեակ իմ, շուտով այսպէս ըրէ որպէս զի ազատիս.
- Որովչեաւ դուն քու բարեկամիդ ձեռքը մտար,
- Գնա քու բարեկամիդ խոնարհէ
- Ու զանիկա թախանձէ.
- 4 - Աչքերուդ քուն՝
- Ու արաւանունքներուդ նիրհում մի տար.
- 5 - Քեզ ազատէ ինչպէս այծեամը որ +որդին ձեռքէն,
- Կամ թռչունը հաւորսին ձեռքէն կ'ազառի:
- 6 - Ով ծոյլ, մըջիւնին գնա,
- Անոր ճամբաները տես ու իմաստուն եղիր:
- 7 - Վասն զի անիկա Բէ՛ւ իշխան,
- Ոստիկան կամ տիրող չունի,
- 8 - Իր կերակուրը ամառուընէ կը պատարաստէ.
- Իր ուտելիքը հունձքի ատեն կը ժողվէ:
- 9 - Ով ծոյլ, մինչև ե՞րբ կը պառկիս,
- Քունէդ ե՞րբ պիտի արթննաս:
- 10 - Քիչ մը քնանաս, քիչ մը նիրհես,
- Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար.
- 11 - Այն ատեն քու ազբատութիւնդ ճամբորդի մը պէս պիտի գայ,
- Ու կարօտութիւնդ՝ սպառազինեալ մարդու պէս:
- 12 - Անօրէն ու չար մարդը Ծուռ բերնով կը շարժի.
- 13 - Անիկա իր աչքերովը ակնարկութիւն կ'ընէ,
- Ոտքերովը կը խօսի,
- Ու մտաբերովը բան կը սորվեցնէ.
- 14 - Անոր սրտին մէջ ծուսութիւն կայ,
- Միշտ չարութիւն կը հնարէ + կռիւներ կը հանէ:
- 15 - Ատոր համար անոր կորուստը յանկարծ պիտի գայ.
- Անիկա յանկարծ պիտի կորուսի, ու անոր դարման պիտի չգտնուի:
- 16 - Տէրը այս վեց բանէն կը զգուի,
- Ու անոր հոգւոյն առջև եօթը բան պիղծ է.
- 17 - Ամբարտաւան աչքեր, ստախօս լեզու

- Եւ անմեղ արիւն թափող ձեռքեր,
- 18 - Չար խորհուրդներ հնարող սիրտ,
- Չարութիւն ընելու համար շուտ վազող սաքեր,
- 19 - Ստութիւն խօսող անիրաւ վկայ,
- Ու եղբայրներու մէջ կռիւներ ցանող հարդ :
- 20 - Որդեակ իմ, քու հօրդ պատուիրանքը պահէ,
- Եւ քու մօրդ օրէնքը մի մերժեր :
- 21 - Չանոնք միշտ քու սրտիդ վրայ կապէ,
- Չանոնք քու պարանոցդ կախէ :
- 22 - Քալած ատենդ անոնք քեզի աւաջնորդութիւն ընեն,
- Քնացած ատենդ քեզ պահպանեն,
- Ու արթնցած ատենդ քեզի հետ խօսակցին :
- 23 - Քանզի պատուիրանքը ճրագ՝ ու օրէնքը լոյս է,
- Եւ խրատին յանդիմանութիւնները կեանքի ճամբայ են .
- 24 - Որպէս զի քեզ գէշ կնոջմէն,
- Օտար կնոջ շողքորթող լեզուէն պահէ :
- 25 - Սրտիդ մէջ անոր գեղեցկութեանը մի ցանկար .
- Եւ քեզ իր արտեանունքներովը չբռնէ :
- 26 - Վասն զի պռնիկ կնոջ պատճառաւ
- Մարդ մինչև պատառ մը հացի կորօր կ'ըլայ .
- Եւ շնորհ առնակինը պատուական հոգին կ'որոտայ :
- 27 - Հնա՞ր է որ մէկը իր ծոցը կրակ դնէ,
- Ու հանդերձները չսյրին .
- 28 - Հնա՞ր է որ մէկը կրակի կայծերու վրայ քայլէ,
- Ու անոր սաքերը չսյրին :
- 29 - Ատոր պէս է իր դրացիին կնոջը քով գացողն ալ .
- Ով որ անոր դպչի՝ անմեղ չըլլար :
- 30 - Գողը եթէ անօթութեան համար ու իր փորը կշտացնելու համար գողութիւն ընէ,
- Չեն քամահրեր զանկա :
- 31 - Սակայն եթէ գանուի, եօթնապատիկ կը հատուցանէ,
- Իր տանը բոլոր ինչքը կու տայ :
- 32 - Կնոջ հետ շնութիւն ընողին խելքը պակաս է .

- Այս բանը ընողը իր հոգին կը կորսնցնէ :
- 33 - Անիկա վէրք ու անարգանք կը գանէ,
- Եւ անոր նախատինքը անջնջելի է :
- 34 - Քանզի նախանձը էրկանը կատաղութիւնն է,
- Ու անիկա վրէժխնդրութեան օրը չինայեր .
- 35 - Անիկա բնաւ մէկ փրկանքի չնայիր,
- Կաշառք ալ շտոցնելու ըլլա՞նք անիկա չհաճիր :

ԳԼ Է

- Որդեակ իմ, պահէ իմ խօսքերս,
- Ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ :
- 2 - Իմ պատուիրանքներս պահէ որպէս զի ապրիս,
- Ու իմ օրէնքիս քու աչքերուդ բերին պէս նայէ :
- 3 - Չանոնք մատերուդ վրայ կապէ,
- Չանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ :
- 4 - Իմատուութեան ըսէ, Ի՞նչն իմ քոյրս ես .
- Ու խոհեմութեան՝ Ծանօթ կանչէ,
- 5 - Որպէս զի քեզ օտար կնոջմէն,
- Շողքորթութեամբ խօսող օտար կնոջմէն, պահեն :
- 6 - Վասն զի իմ տանս պատուհանէն, իմ վանդակէս, նայեցայ .
- 7 - Եւ անմիաներուն մէջ տեսայ,
- Երիտասարդներուն մէջ պակասամիտ պատանի մը գտայ,
- 8 - Որ փողոցին մէջ այն կնոջ քանակիւնին քովէն կ'անցնէր,
- Ու անոր տանը ճամբան բռնեց,
- 9 - Երբ իրիկուն եղաւ, օրը տարածամեցաւ
- Ու գիշերուան մութը տիրեց .
- 10 - Եւ ահա անոր առջև կին մը ելաւ,
- Անիկա պռնիկի կերպարանք ու նենգաւոր սիրտ մը ունէր .
- 11 - Անիկա աղաղակող ու անզգամ էր,
- Ու անոր սաքերը իր տանը մէջ չէին կենար .
- 12 - Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները,
- Եւ ամէն անկիւնի քով դարանամուտ կ'ըլլար .

- 13 - Զանկիա բռնեց համբուրեց,
Ու լիրբ երեսով անոր ըստ ,
- 14 - Իմ քովս խաղաղութեան զո-
հեր կան .
- Ես սյսօր իմ ուխտերս կատարեցի .
- 15 - Անոր համար ելայ քեզ գիմա-
ւորելու ,
- Քու երեսդ փնտռելու , ու քեզ
գտայ :
- 16 - Իմ անկողինս ծածկոցներով
զարդարեր եմ ,
- Եգիպտոսի ծաղկանկար բեհեզով .
- 17 - Անկողինիս վրայ զմուռս ,
Հալուէ ու կինամոն ցաներ եմ .
- 18 - Եկուր մինչև առտու սիրով
զուարճանանք ,
- Ու ցանկութիւններով զբօնունք .
- 19 - Վասն զի այրս տունը չէ ,
Անիկա հեռու ճամբայ գնաց .
- 20 - Ստակին քսակը իրեն հեա ա-
ռու ,
- Եւ *լուսնի լրման* օրը իր տունը պի-
տի դառնայ :
- 21 - Այո՛ղէ՛ք իր շատ խօսքերովը զա-
նիկա հրապուրեց ,
- Ու իր շրթունքներուն շողոքորթու-
թիւնովը զանիկա ստիպեց :
- 22 - Ան ալ շիտակ կնոջ ետևէն ,
Սպանդանոցը գացող արջաւի պէս ,
Պատժուելու քաջալ կապուած յիմարի
մը պէս կ'երթայ ,
- 23 - Մինչև որ նեար անոր լեարդը
ծակէ .
- Ինչպէս թռչուն մը արտորայով դէպ ի
ծուղակը կ'երթայ ,
- Ու չգիտեր որ անիկա իր հոգւոյն հա-
մար լարուած է :
- 24 - Եւ հիմա , ով որդիք , ինծի
մտիկ բրէք ,
- Ու իմ բերնիս խօսքերուն ականջ
դրէք :
- 25 - Քու սիրտդ անոր ճամբաներուն
չխտարի ,
- Եւ անոր շաւիղներուն մէջ չմնորիս .
- 26 - Վասն զի անիկա շատերը խոցո-
տեց ու կործանեց ,
- Ու անոր բոլոր մեռցուցած մարդիկը
զօրաւոր էին :
- 27 - Անոր տունը դժոխքին ճամբա-
ներն է ,
- Անոնք մահուան շաւմարանները կ'իջ-
նեն :

ԳԼ Ը

- Ահա իմաստութիւնը կը կանչէ ,
Ու խոհեմութիւնը իր ձայնը կու տայ :
- 2 - Անիկա բարձր տեղերու գլուխ ,
Ճամբու վրայ
- Եւ շաւիղներու մէջ կը կայնի :
- 3 - Անիկա դռներուն քով , քաղաք-
ներուն բերանը
- Ու դռներուն մուտքը ազազակելով
ի՛շտ ,
- 4 - Ով մարդիկ , ձեզի կը կանչեմ .
Եւ իմ ձայնս մարդոց որդիներուն է :
- 5 - Ով տգէտներ , իմաստութիւն սոր-
վեցէք .
- Ով անմիտներ , իմացող սիրա ունե-
ցէք :
- 6 - Լսեցէք , վասն զի ազնիւ բաներ
պիտի խօսիմ ,
- Ու իմ շրթունքներս պիտի բանամ
ուղիղ բաներ խօսելու համար :
- 7 - Քանզի իմ քիմքս ճշմարտութիւն
պիտի խօսի ,
- Բայց իմ շրթունքս ամբարշտութենէ
կը զզուի :
- 8 - Բերնիս բոլոր խօսքերը արդարու-
թեամբ են ,
- Եւ անոնց մէջ խտտրնակ ու ծուռ
բան չկայ :
- 9 - Ամէնն ալ հասկցողին ուղիղ են ,
Ու գիտութիւն գանողներուն շիտակ
են :
- 10 - Իմ խրատս առէք , և ոչ թէ ար-
ծաթ .
- Ու ընտիր սակիէն աւելի գիտութիւնը
երեցե՛ք :
- 11 - Վասն զի իմաստութիւնը գոհար-
ներէն աղէկ է .
- Եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար
անոր հաւատարիլ :
- 12 - Ես իմաստութիւնս սրամտու-
թեան հեա կը բնակիմ ,
- Եւ ճարտարութեանց գիտութիւնը կը
գանեմ :
- 13 - Տէրոջը վախը չարութիւնը ա-
տելն է .
- Ես հպարտութիւնը , ամբարտաւանու-
թիւնը , չար ճամբան
- Ու նենգաւոր բերանը կ'առեմ .
- 14 - Խորհուրդը և խոհականութիւնը
իմն են .
- Ես եմ հանճարր , ու զօրութիւնը իմն է :
- 15 - Թագաւորները ինծմով կը թա-
գաւորեն ,

*կ-ժ, ասնախմբութեան որոշուած

- Ու նախարարները ինչպէս արդարութեան կանոններ կը դնեն:
- 16 - Ինծմով կ'իշխեն իշխանները, Ազնուականները «- երկրի բոլոր դատարները:
- 17 - Ես կը սիրեմ՝ զիս սիրողները, Եւ զիս կանուխ փնտռողները զիս կը գանեն:
- 18 - Իմ քովս հարստութիւն ու փառք, Ընաիր ստացուածք և արդարութիւն կայ:
- 19 - Իմ՝ պտուղս սակիէն ու մաքուր սակիէն, Եւ իմ արդիւնքս ընաիր արծաթէն աղէկ է:
- 20 - Ես արդարութեան ճամբուն մէջ, Կրաւունքի շաւիղներուն մէջ, կը քուլեմ՝
- 21 - *Որպէս զի զիս սիրողներուն ստացուածք ժառանգեցնեմ՝
- Ու անոնց գանձերը պիտի լեցնեմ:
- 22 - Տէրը իր ճամբուն սկիզբը, Իր վաղեմի գործերէն առաջ, զիս ստացեր էր:
- 23 - Ես յառաջմանէ, Երկրի սկիզբէն առաջ, †օծուեցայ,
- 24 - Անդունդները չեղած, Առատ ջուրերուն աղբիւրները չեղած, Ես ծնած էի,
- 25 - Լեռները չաեղաւորուած, Բլուրներէն առաջ, Ես ծնած էի:
- 26 - Տակաւին երկիրը ու բաց տեղերը Եւ աշխարհիս հողերուն †առաջինը չստեղծած,
- 27 - Երբ երկինքները կը պատրաստէր,
- Ու անդունդներուն երեսին վրայ կամար կը ձգէր, Ես հոն էի:
- 28 - Երբ վերի ամպերը կ'ուժժովցնէր, Եւ անդունդներուն աղբիւրները կը հաստատէր,
- 29 - Երբ ծովուն կանոն կը դնէր, Որպէս զի ջուրերը իր հրամանէն դուրս չելլեն,
- Ու երբ երկրի հիմերը կը ձգէր,
- 30 - Այն ատեն Ես անոր քով ճարտարապետ էի,
- Եւ ամէն օր անոր զուարճութիւնն էի,
- Ու միշտ անոր առջև կ'ուրախանայի:

- 31 - Ես աշխարհի մէջ «- անոր երկրին վրայ կ'ուրախանայի,
- Ու իմ զուարճութիւնս մարդոց սրգիներուն հետ էր:
- 32 - Եւ հիմա, սլ սրգիք, ինծի մտիկ ըրէք:
- Վասն զի իմ ճամբաներս պահողները երջանիկ կ'ըլլան:
- 33 - Խրատ մտիկ ըրէք ու իմաստուն եղէք,
- Ու զանի «- մի մերժէք:
- 34 - Երանի՛ այն մարդուն որ ինծի մտիկ կ'ընէ,
- Ամէն օր իմ դռներուս քով կը հսկէ, Եւ իմ դրանդիքներս կը դիտէ:
- 35 - Վասն զի զիս գանողը կեանք կը գանէ,
- Ու Տէրոջմէ շնորհք կը ստանայ:
- 36 - Բայց ինծի դէմ մեղանչողը իր հոգւոյն անիրաւութիւն կ'ընէ:
- Բոլոր զիս ստողները մահը կը սիրեն:

ԳԼ Թ

- Ի**մաստութիւնը իր տունը շինեց,
- Ու իր եօթը սիւները *կանգնեց:
- 2 - Իր անասունները մարթեց, իր գինին †խառնեց
- Ու իր սեղանը պատրաստեց:
- 3 - Անիկա իր աղախինները զրկեց,
- Ու քաղաքին բարձր տեղերուն վրայ կը կանչէ:
- 4 - Ով որ պարզամիտ է, թող հոս գայ:
- Ու պակասամիտ եղողին կ'ըսէ,
- 5 - Եկէք իմ հացէս կերէք, Ու †խառնած գինիէս խմեցէք:
- 6 - Յիմարութիւնը թողուցէք, որպէս զի ապրիք,
- Ու խոհեմութեան ճամբուն մէջ քալեցէք:
- 7 - Ծաղր ընողը յանդիմանողը իրեն անարգանք,
- Ու ամբարիշտը խրատողը իրեն արատ կը վատակի:
- 8 - Ծաղր ընողը մի յանդիմաներ, որ չըլլայ թէ քեզի թշնամի ըլլայ:
- Իմաստունը յանդիմանէ, ու քեզ պիտի սիրէ:
- 9 - Իմաստունին իբր ատուր, և աւելի իմաստուն պիտի ըլլայ:

*Եբր. սաշեց †Կա՛մ, լեցուց
 †Կա՛մ, լեցուցած



- Արդար մարդուն սորվեցուր, ու էր իմաստութիւնը պիտի աւելցնէ:
- 10 - Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է,
- Ու *Ամենասուրբին գիտութիւնը հանձար է:
- 11 - Վասն զի քու օրերդ ինծմով պիտի շատնան,
- Եւ քեզի կեանքի տարիներ պիտի աւելնան:
- 12 - Եթէ իմաստուն ես, քեզի իմաստուն ես,
- Ու եթէ ծաղր ընող ես, աւարտ պիտի կրես:
- 13 - Անգգամ կինը աղաղակող կ'ըլլայ.
- Անհկա անմիտ է ու բան մը չգիտեր:
- 14 - Եւ քաղաքին բարձր տեղերը, Իր տանը դուռը ավթուի վրայ կը նստի,
- 15 - Որպէս զի իրենց ճամբան շիտակ գացող
- Անցաւորները կանչէ,
- 16 - Ով որ պարզամիտ է, թող հաս գայ.
- Ու պակասամիտ եղողին կ'ըսէ,
- 17 - Գողցուած ջուրերը անոյշ են, Եւ գաղաւկ հացը համով կ'ըլլայ:
- 18 - Բայց անհկա չգիտեր որ այն տեղը մեռելներ կան,
- Ու անոր հրաւիրած մարդիկը դժոխքին անգունդներուն մէջ են:

ԳԼ. Ժ

Սողոմոնի առակները:

- Ի**մաստուն աղան իր հայրը կ'ուրախացնէ.
- Բայց անմիտ աղան իր մօրը արտամութիւն է:
- 2 - Անօրէնութեան գանձերը օգուտ չեն ըներ.
- Բայց արգարութիւնը մահուանէ կ'ազատէ:
- 3 - Տէրը արգարին հոգին անօթի չթողուր.
- Բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը խափանէ:
- 4 - Ծոյլ ձեռքով բանողը ազքատ կ'ըլլայ.

*կամ, սուրբերուն

- Բայց ժիր մարդոց ձեռքը հարստատութիւն կը բերէ:
- 5 - Ան որ ամառը կը ժողվէ, խոհեմ աղայ է.
- Հունձ քիտան քնացողը ամօթի պատճառ եղող աղայ է:
- 6 - Արգարին գլխուն վրայ օրհնութիւններ կան.
- Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բերանը կը գոցէ:
- 7 - Արգարներուն յիշատակը օրհնեալ կ'ըլլայ.
- Բայց ամբարիշտներուն անունը կը փախի:
- 8 - Իմաստուն սիրտ ունեցողը պատուիրանքները կը բռնէ.
- Բայց յիմար շրթունք ունեցողը կը կործանի:
- 9 - Կատարելութեամբ քաղողը ապահովութեամբ կը քալէ.
- Բայց իր ճամբաները ծուղը պիտի ճանչցուի:
- 10 - Աչքով ակնարկութիւն ընողը նեղութիւն կու տայ.
- Ու յիմար շրթունք ունեցողը կը կործանի:
- 11 - Արգարին բերանը կեանքի աղբիւր է.
- Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բերանը կը գոցէ:
- 12 - Ատելութիւնը կռիւներ կը հանէ.
- Բայց սէրը ամէն յանցանքները կը ծածկէ:
- 13 - Իմաստունին շրթունքներուն վրայ իմաստութիւն կը գանուի.
- Բայց պակասամիտ եղողին կանակին համար գաւազան պէտք է:
- 14 - Իմաստունները գիտութիւն կը գանձեն.
- Բայց յիմարին բերանը կործանման մօտ է:
- 15 - Հարուստին ճոխութիւնը իր ամուր քաղաքն է.
- Բայց անանկներուն աղքատութիւնը իրենց կործանումն է:
- 16 - Արգարին գործը կեանքի համար է. Իսկ ամբարշտին արդիւնքը մեղքի համար է:
- 17 - Խրատ պահողը կեանքի ճամբուն մէջ է.
- Բայց յանգիմանութիւնը մերժողը կը մոյրի:
- 18 - Ատելութիւնը ծածկողը ստախոս շրթունքներ աւել,

Ու բամբասանք հանողը անմիտ է:

19 - Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ:

Բայց իր շրթունքները զսպողը խելացի է:

20 - Արդարին լեզուն ընտիր արծաթ է: Ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի:

21 - Արդարին շրթունքները շատերուն առաջնորդութիւն կ'ընեն:

Բայց յիմարները խելքի պակասութենէ կը մեռնին:

22 - Տէրոջը օրհնութիւնն է որ հարստութիւն կու տայ:

Ու անոր հետ արամութիւն չխառներ:

23 - Չարութիւն ընելը յիմարին զօսանքն է:

Բայց խոհեմ մարդուն՝ իմաստութիւնը:

24 - Չար մարդուն վախցած բանը իր վրայ կու գայ:

Բայց արդարներուն փափաքը կը լեցուի:

25 - Մըրիկը անցնելուն պէս ամբարիշտը բնաջինջ կ'ըլլայ:

Բայց արդարը յաւիտենական հիմունքն է:

26 - Ինչպէս քացախը աղւաններուն, և ծուխը աչքերուն,

Ծոյլն ալ զինք զրկողներուն այնպէս է:

27 - Տէրոջը վախը օրեր կ'աւելցնէ:

Բայց ամբարիշտներուն տարիները պիտի կարճնան:

28 - Արդարներուն յոյսը ուրախութիւն է:

Բայց ամբարիշտներուն ակնկալութիւնը պիտի կորսուի:

29 - Տէրոջը ճամբան արդարին զօրութիւն է:

Բայց անօրէնութիւն գործողներուն կործանում է:

30 - Արդարը պիտի չտասանի յաւիտեան:

Բայց ամբարիշտները երկրի վրայ պիտի չբնակին:

31 - Արդարին բերանը իմաստութիւն կը բղիւէ:

Բայց նենգաւոր լեզուն պիտի կարուի:

32 - Արդարին շրթունքները հաճոյ բանը գիտեն:

Բայց ամբարիշտներուն բերանը՝ Բայնենգութիւն:

ԳԼ. ԺԱ.

Նենգութեան կշիռքը Տէրոջը առջև պիղծ է:

Բայց ուղիղ կէտէ քարը անոր հաճոյ է:

2 - Երբ հպարտութիւնը գայ, անարգութիւնն ալ կու գայ:

Բայց իմաստութիւնը խոնարհներուն հետ է:

3 - Ուղիղներուն շիտակութիւնը անոնց առաջնորդութիւն կ'ընէ:

Բայց անօրէններուն ծառութիւնը զանոնք բնաջինջ կ'ընէ:

4 - Բարկութեան օրը հարստութիւնը օգուտ մը չընէր:

Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ:

5 - Կատարեալներուն արդարութիւնը անոնց ճամբան կը շիակէ:

Բայց անիրաւը իր անիրաւութիւնովը կ'ըյնայ:

6 - Ուղիղներուն արդարութիւնը զանոնք կ'ազատէ:

Բայց անօրէնները իրենց *չարութեանը մէջ կը բռնուին:

7 - Երբ չար մարդը մեռնի, անոր ակնկալութիւնը կը կորսուի:

Եւ անօրէններուն յոյսը կը կորսուի:

8 - Արդարը նեղութենէ կ'ազատի:

Ու անոր տեղ ամբարիշտը կ'երթայ:

9 - Կեղծաւորը բերնովը իր դրացին կը կորսնցնէ:

Բայց արդարները գիտութեամբ կ'ազատին:

10 - Արդարներուն յաջողութեանը վրայ քաղաքը կ'ուրախանայ:

Ու երբ չարերը կորսուին, ցնծութեան ձայն կը լսուի:

11 - Ուղիղներուն օրհնութիւնովը քաղաքը կը բարձրանայ:

Բայց ամբարիշտներուն բերնովը կը կործանի:

12 - Պակասամիտ եղողը իր դրացին կ'արհամարհէ:

Բայց խոհեմ մարդը կը լուէ:

13 - Բանասարկութեան պարտողը գաղտնիքը կը յայտնէ:

Բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ:

14 - Ժողովուրդը առանց +խոհակա-նութեան կը կործանի:

*Կա՛մ, ցանկութեանը

+Կա՛մ, առաջնորդութեան

Բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ :

15 - Օտարականին երաշխաւոր եղողը անշուշտ չարիքի կը հանդիպի .

Բայց երաշխաւորութիւնը ատողը ապահով է :

16 - Շնորհալի կիներ պատիւ կը ստանայ .

Եւ զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան :

17 - Ողորմած մարդը իր անձին աղէկութիւն կ'ընէ .

Բայց անողորմ մարդը իր մաքմնին նեղութիւն կու տայ :

18 - Չար մարդը սնտախ գործ կը գործէ . Բայց արդարութիւն ցանողը ապահով վարձք կ'ունենայ :

19 - Ինչպէս արդարութիւնը կեանքի կ'ապահովէ,

Նայնպէս չարութեան հեռւոյնը իր մահուանը կ'երթայ :

20 - Ծուռ սիրտ ունեցողները Տէրոջը առջև պիղծ են .

Բայց ուղիղ ճամբոյ քալողները անոր հաճոյ են :

21 - Անօրէնները իրենք ձեռք ձեռքի բախտ փոխանին, անպատիժ պիտի չմնան .

Բայց արդարներուն սերունդը պիտի ազատի :

22 - Գեղեցիկ կիներ՝ որ խոհեմութիւն չունի ,

Խողին քիթը դռնէն անկի օղակին կը նմանի :

23 - Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է .

Բայց անօրէններուն ակնկալութիւնը բարկութիւն պիտի ըլլայ :

24 - Մարդ կայ որ էր արարչի զօրով կ'աւելցնէ,

Ու մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հառնի :

25 - Բարերար անձը պիտի գիրնայ . Եւ ան որ կ'ոռոգէ՝ ինքն ալ պիտի սուսգուի :

26 - Յարենը պահողին՝ ժողովուրդը անէծք կու տայ .

Բայց զանկա ծախողին զխառն վրայ օրհնութիւն կ'ըլլայ :

27 - Աղէկութեան համար փոյթ ունեցողը շնորհք կը ստանայ .

Բայց ով որ գէշութիւն կը փնտռէ, անկա իրեն պիտի հանդիպի :

28 - Իր հարստութեանը վրայ յոյս դնողը պիտի իյնայ .

Բայց արդարները կանանչ աերևի պէս պիտի ծաղկին :

29 - Իր տանը նեղութիւն տուողը հով պիտի ժառանգէ .

Ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ :

30 - Արդարին պատուը կենաց ծառ է . Եւ հոգիներ վաստակողը իմաստուն է :

31 - Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կրէ .

Ո՞ր մնաց ամբարիշտը ու մեղաւորը :

Բայց ով որ գէշութիւն կը փնտռէ, անկա իրեն պիտի հանդիպի :

28 - Իր հարստութեանը վրայ յոյս դնողը պիտի իյնայ .

Բայց արդարները կանանչ աերևի պէս պիտի ծաղկին :

29 - Իր տանը նեղութիւն տուողը հով պիտի ժառանգէ .

Ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ :

30 - Արդարին պատուը կենաց ծառ է . Եւ հոգիներ վաստակողը իմաստուն է :

31 - Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կրէ .

Ո՞ր մնաց ամբարիշտը ու մեղաւորը :

ԳԼ ԺԲ

Խրատ սիրողը զիտութիւն կը սիրէ, Ու յանդիմանութիւն ատողը անմիտ է :

2 - Բարի մարդը Տէրոջմէ շնորհք կը ստանայ .

Բայց Աստուծոյ նենգաւոր մարդը պիտի դատապարտէ :

3 - Մարդը անիրաւութեամբ հաստատութիւն չունենար .

Բայց արդարներուն արմատը չշարժիր :

4 - Առաքինի կիներ իր էրկանը պատկէ . Բայց նախատինք բերողը անոր սակարներուն մէջի փառութեանը պէս է :

5 - Արդարներուն մտածութիւնները իրաւունք են .

Բայց ամբարիշտներուն խորհուրդները նենգութիւն են :

6 - Ամբարիշտներուն խօսքերը արիւնի համար դարան են .

Բայց ուղիղներուն բերանը զիրենք կ'ազատէ :

7 - Ամբարիշտները կը կործանին ու բնաջինջ կ'ըլլան .

Բայց արդարներուն տունը կը հաստատուի :

8 - Մարդը իր խոհեմութեանը չափ կը գովուի .

Բայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարգուի :

9 - Աննշան մարդը որ ծառայ ունի, Զինք մեծցնող ու հացի կարօտ եղողին աղէկ է :

10 - Արդարը իր անասուններուն կեանքին համար հոգ կը տանի .

*Կ-ժ, բռնաւոր
†Կ-ժ, աղգէ աղգ

- Բայց ամբարիշտներուն աղիքները ա- նազարմ են:
- 11 - Իր երկիրը գործողը հասցով կը կշտանայ.
- Բայց դատարկ մարդոց հեռուողը պա- կատամիտ է:
- 12 - Ամբարիշտը չարերուն աւարին կը փափաքի.
- Բայց արգարներուն արմատը պար- ակու ապ:
- 13 - Չարը եւ շրթունքներուն յանցան- քովը որոգայթը կ'իյնայ.
- Բայց արգարը նեղութենէ կ'ելլէ:
- 14 - Մարդը իր բերնին պտուղէն բա- րիքներով կը լեցուի.
- Ու մարդուն ձեռքերուն հատուցումը իրեն պիտի դառնայ:
- 15 - Յիմարին ճամբուն իր աչքերուն շիտակ է.
- Բայց խրատ մտիկ ընողը իմաստուն է:
- 16 - Յիմարը նոյն օրը կը յայտնէ իր բարկութիւնը.
- Բայց անարգանքը ծածկողը խելացի է:
- 17 - Ճշմարտութիւն խօսողը արգա- րութիւն կը յայտնէ,
- Իսկ սուտ վկան՝ նենգութիւն:
- 18 - Մարդիկ կան որոնք իրենց շատա- խօսութիւնովը սուրի պէս կը խոցոտեն.
- Բայց իմաստուններուն լեզուն բժշկու- թիւն է:
- 19 - Ճշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ.
- Բայց ստախօս լեզուն վայրկեանական է:
- 20 - Չարութիւն մտածողին սրտին մէջ նենգութիւն կ'ըլլայ.
- Բայց խաղաղութեան համար խորհուրդ ընողները ուրախութիւն կ'ու- նենան:
- 21 - Արգարին բնաւ չարիք չհասնիր.
- Բայց ամբարիշտները թշուառութիւն- ներով կը լեցուին:
- 22 - Սուտ շրթունքը Տէրոջը զգուե- լի է.
- Բայց հաւատարմութիւն ընողները ա- նոր հաճոյ են:
- 23 - Խոհեմ մարդը եւ գիտցածը կը ծածկէ.
- Բայց յիմարներուն սիրտը յիմարու- թիւն կը հրատարակէ:
- 24 - Ժիր մարդոց ձեռքը կ'իշխէ,
- Ու ծոյրը հարկատու կ'ըլլայ:
- 25 - Մարդուն սրտին մէջ եղող վիշ- արը զանհկա կը ճնշէ.

- Բայց աղէկ խօսքը կ'ուրախացնէ զա- նիկա:
- 26 - Արգարը *իր ընկերին ճամբայ կը ցուցնէ".
- Բայց ամբարիշտներուն ճամբան զի- րենք կը մուտեցնէ:
- 27 - Ծոյրը իր սրտը չեփեր.
- Բայց ժիր մարդուն ստացուածքը պատ- ուական է:
- 28 - Արգարութեան ճամբուն մէջ կեանք կայ.
- † Եւ անոր շաւիղներուն ճամբուն մէջ մահ չկայ:

ԳԼ ԺԳ

- Իմաստուն աղան իր հօրը խրատը հոգի կ'ընէ.
- Բայց ծաղր ընողը յանդիմանութիւնը մտիկ չընէ:
- 2 - Մարդը իր բերնին պտուղէն բա- րութիւն կ'ուտէ,
- Բայց անօրէններուն հոգին՝ բռնու- թիւն:
- 3 - Իր բերանը զպողը իր անձը կը պահէ.
- Բայց շրթունքները լայն բացողը պիտի կորսուի:
- 4 - Ծոյլին հոգին կը ցանկայ ու բան մը չունի.
- Բայց ժրաջան մարդոց հոգին կը գիր- նայ:
- 5 - Սուտ խօսքը արգարին տակի է.
- Բայց ամբարիշտը ամօթալից ու խոյ- տառակ վարք ունի:
- 6 - Արգարութիւնը կատարելութեամբ քաղողները կը պաշտպանէ.
- Բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ:
- 7 - Կան որ զիրենք հարուստ կը ցուցը- նեն ու բան մը չունին,
- Եւ կան որ զիրենք աղքատ կը ցուցնեն ու շատ հարստութիւն ունին:
- 8 - Մարդուն կեանքին փրկանքը իր հա- րստութիւնն է.
- Բայց աղքատը յանդիմանութիւն չլսեր:
- 9 - Արգարներուն լոյսը զուարթ պիտի ըլլայ.
- Բայց ամբարիշտներուն ճրագը պիտի մարի:

*Կամ, իր ընկերէն գերազանց է
 †Կամ, Բայց շարեւէն կոխած ճամ- քան մահուան չը դանի

- 10 - Յիրաւի հպարտութենէ կուի կը ծագի.
Բայց խրատ մտիկ ընողներուն քով իմաստութիւն կայ:
- 11 - *Անիրաւութեամբ խոզիմար հարստութիւնը պիտի պակսի.
Բայց էր աշխատութիւնով ժողովողը պիտի շաացնէ:
- 12 - Ուշացած յայտը սիրտը կը հիւանդացնէ.
Բայց փոփաքին հասնիլը կեանքի ծառ մըն է:
- 13 - Խօսքը արհամարհողը պիտի կորսուի.
Բայց պատուիրանքէն վախցողը վարձք պիտի առնէ:
- 14 - Իմաստունին օրէնքը կեանքի աղբիւր է՝
Մահուան սրագայթներէն ազատ մնալու համար:
- 15 - Բարի խոհեմութիւնը շնորհք կուտայ.
Բայց անօրէններուն ճամբան դժուարին է:
- 16 - Ամէն խելացի իմաստութեամբ կը գործէ.
Բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ:
- 17 - Չար պատգամաւորը թշուառութեան մէջ կ'իյնայ.
Բայց հաւատարիմ՝ դեռ պանը բժշկութիւն է:
- 18 - Խրատ անարգողը աղքատութիւն ու անարգութիւն է իրեն.
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը պատիւ կը գանէ:
- 19 - Փոփաքին կատարուիլը հոգիին անոյշ է.
Ու չարագործութենէ ետ կենալը յիմարներուն զղուելի է:
- 20 - Իմաստուններուն հետ քաղողը իմաստուն կ'ըլլայ.
Բայց անմիտներուն հետ ընկերացողը †չար կ'ըլլայ՝:
- 21 - Մեղաւորներուն ետեւն ձախորդութիւն կ'երթայ.
Բայց արդարներուն բարիք կը հատուցուի:
- 22 - Բարի մարդը իր սրգուց սրգիներուն ժառանգութիւն կը թողու.
Բայց մեղաւորին ստացուածքը արդարին համար կը պահուի:

*Եբբ. Ունայնութենէ
†Կա՛մ, չարիքի կը հանդիպի

- 23 - Աղքատներուն մշակած երկրին մէջ շատ ուտելիք կայ.
Բայց Բարի կայ որ անիրաւութենէ կը կորսուի:
- 24 - Գաւազանին խնայողը իր սրգին կ'առէ.
Բայց զանկա սիրողը կանուխ կը խրատէ:
- 25 - Արդարը մինչև իր անձին կշտանալը կ'ուտէ.
Բայց ամբարիշտներուն փորը կարօտութիւն պիտի քաշէ:

ԳԼ. ԺԳ

- Իմաստուն կիները իրենց տունը կը շինեն.
Բայց յիմար կինը զանկա իր ձեռքովը կը փլցնէ:
- 2 - Իր ուղղութեանը մէջ քաղողը Տերութեան կը վախնայ.
Բայց ծուռ ճամբայ ունեցողը զանկա կ'անարգէ:
- 3 - Յիմարին բերանը հպարտութեան գաւազան կայ.
Բայց իմաստուններուն շրթունքները զիրենք կը պահեն:
- 4 - Ուր արջառ չկայ, մուրը մութուր կը մնայ.
Իսկ արգիւնքին առատութիւնը եզին զօրութենէն առաջ կու գայ:
- 5 - Ճշմարտութեան վկան սուտ չխօսիր.
Բայց անիրաւ վկան ստութիւններ *կը թափէ Բեբէն:
- 6 - Մաղը ընողը իմաստութիւն կը փնտռէ ու †չգաներ.
Բայց իմաստուններուն համար գիտութիւնը դիւրին է:
- 7 - Յիմար մարդէն հեռացիր, երբ կ'իմանաս որ իմաստուն շրթունքներ չունի:
- 8 - Խելացի մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկնալն է.
Բայց յիմարներուն անմտութիւնը նենգութիւն է:
- 9 - Յիմարները յանցանքը ծաղր կ'ընեն.
Բայց ուղիղներուն մէջ ներողամտութիւն կայ:
- 10 - Մարդուն սիրտը իր հոգիին ցաւը կը ճանչնայ.

*Եբբ. կը փչէ †Եբբ. չկայ

Ու անոր ուրախութեանը ուրիշը մասնակից չըլլար :

11 - Ամբարիշտներուն սաւնը պիտի կործանի .

Բայց ուղիղներուն վրանը պիտի ծաղկի :

12 - Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երևնայ ,

Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է :

13 - Միծաղելու ատենն ալ մարդու սիրտը տրամութիւն կը զգայ ,

Եւ ուրախութեան վախճանը սուգ կ'ըլլայ :

14 - Ապականաժ սիրտը իր ճամբաներէն՝

Ու բարի մարդը ինքիրմէն պիտի կշտանայ :

15 - Միամիտ մարդը ամէն խօսքի կը հաւատայ .

Բայց խելացին իր քայլերը կը քննէ :

16 - Իմաստունը կը վախնայ ու չարութենէ կը փախչի .

Բայց անմիտը կը հպարտանայ ու յանձնապաստան կ'ըլլայ :

17 - Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ .

Ու նենգամիտ մարդը ատելի է :

18 - Անխոհեմները անմտութիւն կը ժառանգեն .

Բայց խելացիները գիտութեամբ կը պսակուին :

19 - Չարերը բարիներուն առջև կը խոնարհին ,

Եւ ամբարիշտները՝ արգարներուն դրանը քով :

20 - Աղքատը մինչև անգամ իր ընկերին ատելի է .

Բայց հարուստին բարեկամները շատ են :

21 - Իր ընկերը անարգողը մեղք կը գործէ .

Բայց աղքատին ողորմութիւն ընողը երանելի կ'ըլլայ :

22 - Ահա չարութիւն մտածողները կը մոյրին .

Բայց բարութիւն մտածողներուն ողորմութիւնն ու ճշմարտութիւնն կ'ըլլայ :

23 - Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ .

Բայց *դատարկարանութիւնը՝ միայն կարօտութեան իջ քանի մարդը :

24 - Իմաստուններուն հարստութիւնը իրենց պատկն է .

Բայց անմիտներուն *բարձրութիւնը յիմարութիւնն է :

25 - Հաւատարիմ՝ վկան հոգիներ կ'ազատէ .

Բայց խարդախը ստութիւններ դուրս կու տայ :

26 - Տէրոջը վախին մէջ հաստատ վստահութիւն կայ .

Ու անոր սրդիները ապաւէն պիտի ունենան :

27 - Տէրոջը վախը կեանքի աղբիւր է՝ Մահուան սրագայթներէն ազատ մնալու համար :

28 - Ժողովուրդին բազմութիւնը թագաւորին պատիւն է .

Բայց ժողովուրդին նուազութիւնը իշխանին կործանումն է :

29 - Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է .

Իսկ կարճամիտը շատ յիմարութիւն կ'ընէ :

30 - † Հանդարտ սիրտը մարմնին կեանք է .

Բայց նախանձը ոսկորներուն փտութիւնն է :

31 - Աղքատին գրկանք ընողը անոր Ստեղծիչը կ'անարգէ .

Բայց անանկին ողորմութիւն ընողը զԱնիկա կը պատուէ :

32 - Ամբարիշտը իր չարութեանը համար կը վռնտուի .

Բայց արգարը իր մահուան ատենը ապաւէն կ'ունենայ :

33 - Խելացի մարդուն սրտին մէջ իմաստութիւն կը հանգչի .

Իսկ յիմարներուն ներսը եղածը կը ճանչցուի :

34 - Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ .

Բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է :

35 - Խոհեմ՝ ծառային՝ թագաւորը կը հաճի .

Բայց նախատինք բերող ծառային կը բարկանայ :

ԳԼ. ԺԵ

Մեղմ պատասխանը սրամտութիւնը կ'իջեցնէ .

*Եբբ. չրթ ունքներուն խօսքը

*Կաժ, յիմարութիւնը †Կաժ, Ողջ

- Բայց խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ :
- 2 - Իմաստուններուն լեզուն գիտութիւնը հաճոյ կ'երևցնէ .
- Բայց անմիաներուն բերանը յիմարութիւն կը բղխէ :
- 3 - Տէրոջը աչքերը ամէն տեղ Չարերը ու բարիները կը գիտեն :
- 4 - *Խաղաղասէր լեզուն կենաց ծառ է .
- Բայց խռովարար լեզուն սիրտ կը կտորէ :
- 5 - Յիմարը իր հօրը խրատը կ'անարգէ .
- Բայց յանդիմանութեան հնազանդողը խելացի կ'ըլլայ :
- 6 - Արդարին տունը մեծ գանձ կայ .
- Բայց ամբարշտին եկամուտներուն մէջ խռովութիւն կայ :
- 7 - Իմաստուններուն շրթունքները գիտութիւն կը տարածեն .
- Բայց յիմարներուն սիրտը Գայնպէս չէ :
- 8 - Ամբարիշտներուն զոհը Տէրոջը առջև պիղծ է .
- Բայց ուղիղներուն աղօթքը անոր ընդունելի է :
- 9 - Տէրը ամբարշտին ճամբայէն կը զզուի .
- Բայց արդարութեան հեռուողը կը սիրէ :
- 10 - Ուղիւ ճամբան մերժողին՝ քգէշ պատիժ կ'ըլլայ .
- Ու յանդիմանութիւնը ատողը պիտի մեռնի :
- 11 - Դժոխքը ու կորուստը Տէրոջը առջև են .
- Ո՛րչափ աւելի մարդոց սրգիններուն սիրտերը :
- 12 - Ծաղը ընողը իր յանդիմանիչը չսիրեր ,
- Եւ իմաստուններուն քով չերթար :
- 13 - Ուրախ սիրտը երեսը կը զուարթացնէ .
- Բայց սրտին տրամուլթեկէն հոգին կը ճնշուի :
- 14 - Հանճարեղ սիրտը գիտութիւն կը փնտռէ .
- Բայց անմիաներուն բերանը յիմարութեամբ կը անանի :
- 15 - Վշտապից մարդուն ամէն օրերը գէշ են .

*Կ-Տ, Բժ շկութիւն տուող
 †Կ-Տ, հաստատ
 ‡Կ-Տ, խրատը գէշ է Բ-Ե

- Բայց ուրախ սիրտը մշտնջենաւոր կօչունքի մէջ է :
- 16 - Աւելի աղէկ է քիչ բանը Տէրոջը վախովը ,
- Քան թէ մեծ գանձը՝ խռովութիւնով :
- 17 - Աւելի աղէկ է սէր եղած տեղը խտտեղէն կերակուրը ,
- Քան թէ գէր զուարակը՝ ատելութիւնով :
- 18 - Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ .
- Բայց երկայնամիտը կուր կը դադրեցնէ :
- 19 - Ծոյլին ճամբան փշեղէն ցանկի պէս է .
- Բայց ուղիղներուն ճամբան բանուկ է :
- 20 - Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ .
- Բայց անմիտ մարդը իր մայրը կ'անարգէ :
- 21 - Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօսանք է .
- Բայց իմաստուն մարդը կ'ուղղէ եւ ընթացքը :
- 22 - Առանց խորհուրդի՝ դիտաւորութիւնները կը ցրուին .
- Բայց խորհրդականներուն շատութիւնովը կը հաստատուին :
- 23 - Մարդ իր բերնին պատասխանովը կ'ուրախանայ .
- Ու տաէնովը ըսուած խօսքը ո՛րչափ գեղեցիկ է :
- 24 - Կեանքի ճամբան խոհեմ՝ մարդը գէպ ի վեր է Բ-Նէ ,
- Որպէս զի վարի դժոխքէն հեռանայ :
- 25 - Տէրը հպարտներուն տունը կը կործանէ .
- Բայց սրբեարիին սահմանը կը հաստատէ :
- 26 - Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առջև պիղծ են .
- Բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են :
- 27 - Ազատութեան անձնատուր եղողը իր տունը խռովութեան մէջ կը ձգէ .
- Բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի :
- 28 - Արդարին սիրտը տալու պատասխանը կը մտածէ .
- Բայց ամբարիշտներուն բերանը չարիք կը բղխէ :
- 29 - Տէրը ամբարիշտներէն հեռու է .
- Բայց արդարներուն աղօթքը կը լսէ :

- 30-Աչքերու լոյսը սիրար կ'ուրախացնէ. Բարի լուրը սակորները կը գիրցնէ:
- 31 - Կեանքի յանդիմանութիւնը լսող ապանջը
Իմաստուններուն մէջ կը բնակի:
- 32 - Խրատ մերժողը իր հոգին կ'անարգէ.
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը խելք կը վաստակի:
- 33 - Տէրօջը վախը իմաստութեան խրատն է,
Ու փառքին առջևէն խոնարհութիւնը կ'երբայ:

ԳԼ ԺԶ

- Սրտին արամադրութիւնները մարդուն էլ վերաբերին.
Բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է:
- 2 - Մարդուն ամէն ճամբաները իրեն մտքուր կ'երեւնան.
Բայց Տէրը հոգիները կը կշռէ:
3 - Քու գործերդ Տէրոջը յանձնէ,
Եւ քու խորհուրդներդ պիտի հաստատուին:
- 4 - Տէրը ամէն բան *իր նպատակին* համար ստեղծեց,
Ու ամբարիշտն ալ՝ ձախորդ օրուան համար:
- 5 - Ամէն արտով հպարտները Տէրոջը առջև պիղծ են,
Ու †Եւ ձեռք ձեռքի Գալի Գալի* անպատիժ պիտի չմնան:
- 6-Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրէնութիւնը կը քառուի,
Ու Տէրոջը վախովը Գալի շարութենէ կը հեռանայ:
- 7 - Երբ Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի,
Մինչև անգամ՝ անոր թշնամիները կը հաշտեցնէ անոր հետ:
- 8-Աղէկ է քիչ բան արդարութեամբ, Բան թէ մեծ եկամուտներ՝ անիրաւութեամբ:
- 9 - Մարդուն սիրար իր ճամբան կը հնարէ.
Բայց անոր քայլերը Տէրը կ'ուղղէ:
- 10 - Թագաւորին շրթունքներուն վրայ տատաւածային ազդեցութիւն կայ.
Անոր բերանը դատաստանի մէջ շտաւիլի:

- 11 - Ուղիղ կշռորդը և կշիւքը Տէրօջն են.
Մախաղին ամէն կշիւք քարերը անոր գործն են:
- 12 - Չարագործութիւնը թագաւորներուն զզուելի է.
Վասն զի ակտուր արդարութեամբ կը հաստատուի:
- 13 - Արդար շրթունքները թագաւորներուն հաճելի են,
Ու շիտակ խօսողը կը սիրեն:
- 14 - Թագաւորին բարկութիւնը մահուան դեպքաններու պէ՞ է.
Բայց իմաստուն մարդը վանկիկա կ'իջեցնէ:
- 15-Թագաւորին երեսին լոյսը կեանք է,
Ու անոր հաճութիւնը վերջին անձրևին ամպին պէս է:
- 16 - Իմաստութիւն ստանալը սակիէն ս'ըջափ աղէկ է,
Եւ հանձար վաստակիլը արծաթէն աւելի ընտիր է:
- 17 - Ուղիղներուն մեծ ճամբան չարութենէ հրաժարիլն է.
Իր ճամբուն զգուշութիւն ընողը իր հոգին կը պահէ:
- 18 - Կատարածին առջևէն հպարտութիւն,
Ու կործանման առջևէն ամբարառանութեան սղին կ'երբայ:
- 19-Խոնարհներուն հեռ խոնարհ ըլլալը հպարտներուն հեռ աւար բաժնելէն աղէկ է:
- 20 - Գործի մէջ խելացութեամբ վարուողը բարիք կը գանէ.
Ու Տէրոջը ապաւինողը երանելի է:
- 21 - Իմաստուն սիրա ունեցողը խոհեմ կ'ըսուի.
Եւ շրթունքներուն քաղցրութիւնը գիտութիւն կ'աւելցնէ:
- 22 - Խոհեմութիւնը՝ ունեցողին կեանքի աղբիւր է.
Բայց յիմարներուն խրատը յիմարութիւն է:
- 23 - Իմաստունին սիրար իր բերնին իմաստութիւն կու ապ,
Ու իր շրթունքներուն գիտութիւն կ'աւելցնէ:
- 24 - Վայելուչ խօսքերը մեղրի խորիսին պէ՞ են,
Հոգիին քաղցր ու սակորներուն բժշկութիւն են:
- 25 - Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երեւայ,

*Կա՛մ, իրեն †Կա՛մ, ազգէ ազգ

- Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է:
- 26 - Աշխատող անձը իրեն համար կ'աշխատի.
- Քանզի իր բերանը կը պահանջէ իրմէ:
- 27 - Անօրէն մարդը չարութիւն կը փորէ,
Ու անոր շրթունքներուն վրայ իբր թէ պրտը կրակ մը կայ:
- 28 - Ծուռ մարդը կռիւ կը հանէ,
Եւ քսուն մտերիմ՝ բարեկամները կը զատէ:
- 29 - Անօրէն մարդը իր ընկերը կը խաբէ,
Ու զանհկա գէշ ճամբաներ կը տանի.
- 30 - Նենգութիւններ մտածելու համար աչքերը կը գոցէ,
Եւ շրթունքներ խածնելով չարութիւնը կը կատարէ:
- 31 - Մագի ճերմկութիւնը փառաց պատկ է,
Եթէ անհկա արդարութեան ճամբուն մէջ գտնուի:
- 32 - Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է,
Ու իր ոգին զսպողը՝ քաղաք առնողէն:
- 33 - Վիճակը ծոցը կը ձգուի,
Բայց անոր ամէն կարգադրութիւնը Տէրոջմէն է:

ԳԼ. ԺԷ

- Աղէկ է պատու մը չոր հոց խազաղութիւնով,
Քան թէ տուն մը լեցուն զրհեր՝ կռիւով:
- 2 - Խոհեմ ծառան նախատինք բերող որդիին կ'իշխէ,
Ու եղբայրներու մէջ ժառանգութեան բաժին կ'առնէ:
- 3 - Արծաթի համար հալոց՝ և սկիի համար քուրայ կայ.
Բայց սիրտերը փորձողը Տէրն է:
- 4 - Չար մարդը անիրաւին շրթունքներուն մտիկ կ'ընէ,
Ու ստախօսը փնտասկար լեզուին աւկանջ կը դնէ:
- 5 - Աղքատը ծաղր ընողը անոր Ստեղծիչը կ'անարգէ,
Եւ ձախարհութեան վրայ ուրախացողը անպատիժ պիտի չմնայ:
- 6 - Որդւոց որդիները ձերբերուն պատկն են,

- Եւ որդւոց պարծանքը իրենց հայրերն են:
- 7 - Ընտիր *խօսքը անզգամին չվայլէր.
- Ո՛րչափ աւելի ստախօս շրթունքը՝ աշնուականին:
- 8 - Պարզեւր՝ †գործածողին առջև պատուական գոհարի պէս է.
Ուր որ դառնայ՝ յաջողութիւն կը գտնէ:
- 9 - Յանցանքը ծածկողը բարեկամութիւն կը փնտռէ.
Բայց զանհկա պատմողը մտերիմ բարեկամները կը զատէ:
- 10 - Խոհեմ մարդուն աւելի կ'ազդէ Զէ յանդիմանութիւնը,
Քան թէ հարիւր Գառնի հարուած՝ յիմարին:
- 11 - Չար մարդը միշտ ապստամբութիւն կը փնտռէ,
Ու անոր խիստ պատգամաւոր կը զրկուի:
- 12 - Այլ աղէկ է ձագերը գողցուած արջուն առջև ելլել,
Քան թէ յիմարի մը՝ անոր յիմարութեան ատենը:
- 13 - Ով որ աղէկութեան փոխարէն չարիք կը հատուցանէ,
Չարիքը անոր տունէն պակաս պիտի չըլլայ:
- 14 - Կռիւին սկզբնաւորութիւնը ջուրին արձակմանը կը նմանի.
Ուրեմն վէճը չբռնկած՝ ետ քաշուէ:
- 15 - Ամբարիշտը արգարացնողը և արգարը ամբարիշտ հանողը՝
Երկուքն ալ Տէրոջը առջև պիղծ են:
- 16 - Իմաստութիւնը ծախու առնելու գինը ի՞նչ օգուտ ունի յիմարին ձեռքը,
Որովհետեւ †խելք չունի:
- 17 - Բարեկամը ամէն ատեն կը սիրէ,
Ու եղբայրը նեղութեան առէնէ համար ծնած է:
- 18 - Պակասամիտ մարդը ձեռքը կուտայ,
Ու իր բարեկամին ՝ համար երաշխաւոր կ'ըլլայ:
- 19 - Կռիւ սիրողը յանցանք կը սիրէ.
Իր դուռը բարձրացնողը էր կործանու մը կը փնտռէ:

*ԵՔԵ. շրթունքը
 †Կա՛, բնագունողին. ԵՔԵ. իր տէրոջը
 ‡Կա՛, փափաք || ԵՔԵ. առջև

- 20 - Մուռ սիրտ ունեցողը աղէկութիւն չգտներ,
- Ու նենգաւոր լեզուով մարդը չարիքի մէջ կ'իջնայ:
- 21 - Յիմարը ծնանողը արամութիւն կը կրէ,
- Եւ անգգամին հայրը չուրախանար:
- 22 - Ուրախ սիրտը գեղի պէս օգտակար է.
- Բայց կտորած սիրտը սակորները կը չարցնէ:
- 23 - Անօրէն մարդը «բէլէն» ծոցէն կաշառք կ'առնէ,
- Որպէս զի արդարութեան ճամբաները ծռէ:
- 24 - Իմաստութիւնը խոհեմ մարդուն առջև է.
- Բայց յիմարին աչքերը երկրի ծայրերն են:
- 25 - Յիմար տղան իր հօրը արամութիւն
- Ու զինք ծնանողին դառնութիւն կ'ըլլայ:
- 26 - Աղէկ չէ արդարէն սուգանք առնել:
- *Ու ալ իշխանները ծեծել՝ իրաւունք ընելն են համար՝
- 27 - Իր խօսքերը զսպողը իմաստուն է,
- Ու երկայնամիտ մարդը հանճարեղ է:
- 28 - Յիմարը անգամ եթէ լուռ կենայ,
- Ու իր շրթունքները գոցողը հանճարեղ կը սեպուի:

ԳԼ. ԺԸ

- † Ինքնաստուծայ մարդը եւ ցանկութիւնը կը փնտռէ
- Եւ քամէն խորհուրդի դէմ կը կենայ:
- 2 - Յիմարը խոհեմութենէ չախորժիր,
- Հապա իր սրտին մէջ եղած յայտնել կ'ուզէ:
- 3 - Երբ ամբարիշտը գայ, անարգութիւն ալ կու գայ,
- Ու նախատինքի հետ խայտառակութիւն:
- 4 - Մարդուն բերնին խօսքերը խորունկ ջուրեր են.

- Իմաստութեան աղբիւրը առատաբուղի գետ է:
- 5 - Գատատանի մէջ արդարը սուտ հանելու համար՝
- Ամբարշտին աշառութիւն ընելը աղէկ չէ:
- 6 - Անմիտ մարդուն շրթունքները կուրի մէջ կը մտնեն,
- Ու անոր բերանը ծեծը կը կանչէ:
- 7 - Անմիտ մարդուն բերանը իրեն կործանում է,
- Եւ անոր շրթունքները իր անձին որոգայթ են:
- 8 - Քսու մարդուն խօսքերը քաղցր պատասաներու պէս են,
- Ու անոնք մինչև փորին շտեմարանները կ'իջնեն:
- 9 - Ան որ իր գործին մէջ թոյլ է,
- Շուայլ մարդուն եղբայրն է:
- 10 - Տէրոջը անունը ամուր աշտարակ է,
- Արդարը անոր կը դիմէ, ու ապահով ապաստանարան կ'ունենայ:
- 11 - Հարուստին ստացուածքը իր ամուր քաղաքն է,
- Ու անոր երեակայութեանը մէջ բարձր բերդի պէս է:
- 12 - Կտորածէն առաջ մարդուն սիրտը կը հպարտանայ.
- Բայց փառքին առջևէն խոնարհութիւնը կ'երթայ:
- 13 - Ով որ բան չը չլսած պատասխան կու տայ,
- Յիմարութիւն ու նախատինք է անոր:
- 14 - Մարդուն հոգին իր հիւանդութեանը կը համբերէ.
- Բայց վիրաւորուած հոգին ո՞վ կրնայ *մխիթարել:
- 15 - Խոհեմին սիրտը գիտութիւն կը վասակի,
- Եւ իմաստուններուն ականջը գիտութիւն կը փնտռէ:
- 16 - Մարդուն ընծան անոր ճամբայ կը բանայ,
- Ու զանկա մեծերուն առջև կը տանի:
- 17 - Իր դատը առաջուրնէ սկսողը իրաւունք ունեցող չէ «Եզ»-ի:
- Բայց երբ իր փոսիքը գայ՝ զանկա կը քննէ:
- 18 - Վիճակը վէճերը կը դադարեցնէ,
- Ու զօրաւորներուն մէջտեղ որոշում կ'ընէ:

*Կամ, Ու ալ իշխանները պարտին մէջ ծեծել իրաւունքն առելի
 †Եբր. Զատուող
 ‡Կամ, ամէն բանի կը խառնուի

*Կամ, տանիլ. Եբր. վերցնել
 †Եբր. ընկերը

- 19 - Վշտացած եղբայր մը ամուր քաղաքէն անտէ՛կ է,
- Եւ անոր վէճերը բերդի մը նիգերուն կը նմանին :
- 20 - Մարդ մը իր բերնին պտուղէն իր փորը կը կշտացնէ,
- Ու իր շրթունքներուն արդիւնքէն կը կշտանայ :
- 21 - Մահը ու կեանքը լեզուին ձեռքն են,
- Եւ զանկա սիրողները անոր պտուղը կ'ուտեն :
- 22 - Առատի՛ն կին գանոզը բարիք կը գտնէ :
- Ու Տէրոջմէն շնորհք կը ստանայ :
- 23 - Աղքատը աղաչելով կը խօսի,
- Բայց հարուստը խիտ պատասխան կու տայ :
- 24 - Բարեկամներ ունեցող մարդը բարեկամութիւն ընելու է.
- Ու եղբօրմէ աւելի հաստատ բարեկամ կայ :

ԳԼ ԺԹ

Իր կատարելութեան մէջ քաղող աղքատը
 Նենգաւոր շրթունք ունեցող յիմարէն աղէկ է :

2 - Հոգիին ազիտութիւնը աղէկ չէ ,
 Ու սաքերովը արտարացողը կը սահի :

3 - Մարդուն յիմարութիւնը անոր ճամբան կ'աւրէ ,
 Եւ անոր սիրտը Տէրոջը դէմ արտունջ կ'ընէ :

4 - Հարստութիւնը շատ բարեկամներ կ'աւելցնէ .
 Բայց աղքատը իր բարեկամէն կը զատուի :

5 - Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,
 Ու ստութիւններ խօսողը պիտի չազատի :

6 - Շատերը *առատաձեռն մարդուն՝
 †հաճութիւնը կը փնտռեն ,
 Ու ամէն մէկը պարգևատու մարդուն բարեկամ կ'ըլլայ :

7 - Աղքատին բոլոր եղբայրները անկէ կը զգուին .
 Անոր բարեկամները ա՛լ աւելի անկէ կը հեռանան .

*կամ, իշխանին
 †եքր երեսը

Անկա *ոչինչ խօսքերու ետեւ կ'իյնայ :

8 - Խելք վաստկողը իր հոգին կը սիրէ .
 Իմաստութիւն պահողը բարիք պիտի գտնէ :

9 - Սուտ վկան անպարտ պիտի չմնայ ,
 Ու ստութիւններ խօսողը պիտի կորսուի :

10 - Յիմարին փափկութիւն չվայլեր .
 Ո՛րչափ աւելի ծառայի մը՝ իշխաններու վրայ իշխել :

11 - Մարդուն խոհեմութիւնը անոր բարկութիւնը կը զսպէ ,
 Եւ յանցանք ներելը անոր պարծանք է :

12 - Թագաւորին բարկութիւնը առոյգ առիւծի մունջիւնին կը նմանի ,
 Իսկ անոր հաճութիւնը խտի Պրայի ցօղին պէս է :

13 - Անմիտ աղան իր հօրը թշուառութիւնն է ,
 Ու կնոջ կռիւնները շարունակ կաթիլներու պէ՞ են :

14 - Տունը ու ստացուածքը հայրերէն հացած ժառանգութիւն են .
 Բայց խոհեմ կինը Տէրոջմէն է :

15 - Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ ,
 Եւ թոյլ մարդը անօթի կը մնայ :

16 - Պատուիրանքը պահողը իր հոգին կը պահէ .
 Իր ճամբաները անարգողը պիտի մեռնի :

17 - Աղքատին ողորմութիւն ընողը Տէրոջը փոխ կու տայ ,
 Ու Անկա անոր հատուցում պիտի ընէ :

18 - Քանի որ յոյս կայ՝ աղագ խրատէ .
 Եւ †անոր մահուանը կամակից մի ըլլար :

19 - Խիտ բարկացող մարդը փնտս կը կրէ .
 Վասն զի եթէ անգամ մը ազատես՝ նորէն ընելու ես :

20 - Խրատը լսէ և կրթութիւնը ընդունէ ,
 Որպէս զի քու վերջին տանգ իմաստուն ըլլաս :

21 - Մարդուն սրտին մէջ շատ դիտաւորութիւններ կան .

*կամ, աննչ ետեւն կ'իյնայ խօսքերով ,
 †կամ, անոր աղաղակին ականջ մի գնեք

- Բայց Տէրոջը խորհուրդը հաստատուն պիտի մնայ:
- 22 - Մարդուն սղորմածութիւնը իր փառքն է,
Ու աղքատը ստախոսէն աղէկ է:
- 23 - Տէրոջը երկիւղը կեանքի պարհառ է,
Եւ զանիկա «-նեցալը կուշտ կը պառկի,
«- ձախորդութեան չհանդիպիր:
- 24 - Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը խոթէ,
Ու զանիկա իր բերանը անգամ չդարձնէր:
- 25 - Ծաղը ընողը ծեծէ , ու միամիտը խելացի կ'ըլլայ,
Եւ եթէ իմաստունը յանդիմանես՝ հանձարը կը հասկնայ:
- 26 - Ի՞նչ հայրը կործանողը «- էր մայրը վաճառող
Ամօթ ու նախատինք բերող աղայ մըն է:
- 27 - Որդեակ իմ, ետ կեցիր այն խրատը մտիկ ընելէն,
Որ +եղ իմաստութեան խօսքերէն կը խոտորցնէ:
- 28 - Չար վկան արդարութիւնը ծաղր կ'ընէ,
Ու ամբարիշտներուն բերանը անիրաւութիւն կը կլլէ:
- 29 - Ծաղը ընողներուն համար դատաստաններ
Եւ անմիտներուն կռնակին համար ծեծեր պատրաստուած են:

ԳԼ Ի

- Գինին ծաղր ընող է, «- ցքին կռիւ հանող,
Եւ ով որ ասանց անձնատուր կ'ըլլայ, իմաստուն չըլլար:
- 2 - Թագաւորին ահը առոյգ առիւծի մանչիւնին պէս է,
Ու զանիկա բարկացնողը իր անձին վատ կ'ընէ:
- 3 - Կռիւէն ետ կենայը մարդուն փառք է.
Բայց ամէն յիմար կռուատէր է:
- 4 - Ծոյլը՝ Չմեռ է քեզ, գեղեցիկ չհերկեր.
Ուստի հունձքի ասեներ պիտի մուրայ , ու բան մը պիտի չունենայ:
- 5 - Մարդու մը սրտին մէջի խորհուրդը խորունկ ջուրերու պէ՞ է.

- Բայց խելացի մարդը զանիկա կը հանէ:
6 - Մարդոցմէ շատերը իրենց բարերարութիւնը կը հրատարակեն.
Բայց հաւատարիմ՝ մարդ մը ո՞վ կրնայ գանել:
- 7 - Իր անարատութեանը մէջ քաւողը արդար է.
Անոր սրդիները իր ետէն երջանիկ պիտի ըլլան:
- 8 - Դատաստանի աթուր նստող թագաւորը
Իր աչքերովը ամէն չարիքը կը ցրուէ:
9 - Ո՞վ կրնայ ըսել թէ իմ սիրտս սրբեցի,
Իմ մեղքէս մաքրուեցայ:
- 10 - Երկու տեսակ կշիռ+քար, երկու տեսակ չափ
Հաւատարապէս Տէրոջը առջև պիղծ են:
- 11 - Մինչև անգամ՝ աղու մը վարքին մաքրութիւնը և ուղղութիւնը
Անոր գործերէն կը հասկցուի:
- 12 - Լսող ականջը ու տեսնող աչքը, երկուքն ալ, Տէրը ստեղծեր է:
- 13 - Քունը մի սիրեր, սրպէս զի չըլլայ թէ աղքատանաս.
Աչքերդ բաց, սրպէս զի հացով կշտանաս:
- 14 - Ծախու առնողը Գէշ է, գէշ է, կ'ըսէ.
Բայց երբ երթայ, այն ասեմ կը պարծենայ:
- 15 - Ոսկի ու շատ գոհար կը գանուի.
Բայց գիտութեան շրթունքները մեծագին զարդեր են:
- 16 - Օտարականի մը երաշխաւոր եղողին զգեստը առ,
Եւ օտար կնոջ համար երաշխաւոր եղողին գրաւ առ:
- 17 - Ստութեան հացը մարդուն ախորժեղի է.
Բայց ետքը անոր բերանը խիճով պիտի լեցուի:
- 18 - Դիտաւորութիւնը խորհրդով կը հաստատուի.
Ուստի խոհեմութեամբ պատերազմ ըրէ:
- 19. Բանասրկութեան պտրտողը գաղանիքը կը յայտնէ.
Ուրեմն շրթունքներովը շղարքութիւն ընողին հետ հաղորդակցութիւն մի ընէր:

*ԵՔԵ. արդու

- 20-Ով որ իր հայրը ու մայրը կ'անիծէ, Անոր ճրագը մութ խաւարի մէջ պիտի մարի:
- 21 - Կայ ժառանգութիւն որ սկիզբը արտարնօք կ'առնուի.
- Բայց անոր վերջը պիտի չօրհնուի:
- 22-Չարութեան փոխարէնը հասուցանեմ՝ մի ըսեր.
- Տէրոջը սպասէ, ու անիկա քեզ պիտի ազատէ:
- 23 - Երկու տեսակ կ'ըսէ՝ +ի քարը Տէրոջը առջև պիղծ է,
- Ու նենգաւոր կ'ըսէ՝ քարը աղէկ չէ:
- 24 - Մարդուն քայլերը Տէրոջմէն են. Ուտի մարդը իր ճամբան ինչպէս հասկնայ,
- 25 - *Անխորհրդաբար բան մը նուիրելը՝ և ուխտ ընելէն ետքը քննութիւն ընելը
- Մարդուն որոգայթ մըն են:
- 26 - Իմաստուն թագաւորը ամբարիշտները կը ցրուէ,
- Ու անիւր անոնց վրայ կը դարձնէ:
- 27 - Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է, Արտին բոլոր շտեմարանները կը քննէ:
- 28-Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը թագաւորը կը պահեն,
- Անիկա ալ իր աթոռը ողորմութեամբ կը հաստատէ:
- 29 - Երիտասարդներուն զարգը անոնց ոյժն է,
- Եւ ծերերուն փառքը ալեւորութիւնն է:
- 30 - Վէրքի նշանները ու փորի շտեմարանները հասնող հարուածները
- +Չար մարդուն՝ մաքրողական դեղ են:

ԳԼ. ԻԱ.

- Թագաւորին սիրտը ջուրի վտակներու պէ՛տէ Տէրոջը ձեռքին մէջ.
- Չանիկա ո՛ր կողմը ուղէ կը դարձնէ:
- 2 - Մարդուն ամէն ճամբան իրեն ուղիղ կ'երևնայ.
- Բայց Տէրը սիրտերը կը կշռէ:
- 3 - Արդարութիւն և իրաւունք գործելը
- Չոհէն աւելի ընդունելի է Տէրոջը:
- 4 - Աչքերու ամբարտաւանութիւնը և սրտի հպարտութիւնը

*Կա՛մ, Սուրբ բան մը կլլելը
 +Կա՛մ, Չարութեան դէմ

- Ե- ամբարիշտներուն *լոյսը մեղք է:
- 5-Աշխատասէր մարդուն խորհուրդները միայն առատութիւն և բերէն.
- Բայց ամէն արտորացող՝ միայն կարօտութիւնը և բերէ:
- 6 - Սուտ լեզուով գանձեր վաստակելը Մահը փնտաղներուն հալածած ունայնութիւնն է:
- 7 - Ամբարիշտներուն բռնութիւնը զանոնք պիտի կորսնցնէ.
- Վասն զի իրաւունք ընել չեն ուզեր:
- 8 - Երբ մարդուն ճամբան ծուռ է, կը խտարի.
- Բայց մաքուր եղողին գործը ուղիղ է:
- 9-Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ՝ Գան թէ կուսասէր կնոջ հետ +մեծ տան մէջ:
- 10 - Ամբարիշտ մարդուն հոգին չարութեան կը ցանկայ,
- Ո- անոր ընկերը անոր առջև շնորհք չգտներ:
- 11 - Եթէ ծաղր ընողը տուգանքի հանդիպի, միամիտը իմաստուն կ'ըլլայ,
- Եւ եթէ իմաստունը խրատուի, գիտութիւն կը ստանայ:
- 12 - Արդարը խօհեմութեամբ ամբարըշտին տունը կը դիտէ,
- Երբ ամբարիշտները չարութեան համար կը կործանին:
- 13 - Ով որ աղքատին աղաղակը չլսելու համար իր ականջը կը գոցէ, Ինք ալ պիտի աղաղակէ, ու իրեն լսող պիտի չըլլայ:
- 14 - Գողանի պարգևը բարկութիւնը կ'իջեցնէ,
- Եւ ծոցը բռնած ընծան սաստիկ կատաղութիւնը և բռնութիւնն է:
- 15 - Իրաւունք ընելը արդարին ուրախութիւն է.
- Բայց անիրաւութիւն ընողներուն տանջանք է:
- 16 - Խօհեմութեան ճամբայէն մոլորող մարդը Մեռելներուն ժողովքին մէջ կ'իջնէ:
- 17 - Ուրախութիւն սիրողը կարօտութեան մէջ կ'իյնայ.
- Գինին ու իւզը սիրողը չհարստանար:
- 18 - Ամբարիշտը արդարին համար, Ու անօրէնը ուղիղներուն համար փրկանք կ'ըլլայ:

*Կա՛մ, մշակութիւնը
 +Երբ. ընկերութեան

19 - Աղէկ է անապատ տեղ բնակիլ՝
Քան թէ կուտասէր ու բարկացող
կնոջ հետ :

20 - Իմաստունին բնակարանին մէջ
ցանկալի գանձ ու իւղ կը
գանուի :

Բայց անմիա մարդը *իր ունեցածը՝ կը
կլլէ :

21 - Արդարութեան ու սղորմածու-
թեան հետեւողը
կեանք, արդարութիւն և փառք պի-
տի գանէ :

22 - Իմաստունը զօրաւորներուն քա-
ղաքը կ'ելլէ,
Եւ անոց տպաւինած ամբուլթիւնը կը
փլցնէ :

23 - Իր բերանը ու լեզուն պահողը
իր հոգին նեղութիւններէն կը պահէ :

24 - Հպարտութեամբ և բարկութեամբ
վարուող մարդուն անունը
Հպարտ և յանդուգն ծաղր ընող
կ'ըստի :

25 - Ծոյլին ցանկութիւնը զանհկա կը
մեռցնէ :

Վասն զի անոր ձեռքերը աշխատիլ
չեն ուզեր :

26 - Անհկա ամէն օր ստատիկ կը ցան-
կայ :

Իսկ արդարը կու տայ ու չինայեր:
27 - Ամբարիշտներուն զոհը պիղծ է,
Մանաւանդ երբ զանհկա չար դիտա-
ւորութեամբ կը մատուցանեն :

28 - Սուտ վկան պիտի կորուսի .
Բայց լսող մարդը †հաւատարմու-
թեամբ պիտի խօսի :

29 - Ամբարիշտ մարդը իր երեսը կը
պինդցնէ :

Բայց ուղիղը իր ճամբաները կը շիտկէ :

30 - Իմաստութիւն, հանճար կամ
խորհուրդ մը չկայ
Որ Տերօջը դէմ՝ կենայ :

31 - Պատերազմի օրուան համար ձին
կը պատրաստուի .
Բայց փրկութիւնը Տերօջմէն է :

ԳԼ ԻԲ

Բարի անունը շատ հարստութենէն
տուելի ընտիր է .

Ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն ա-
ղէկ է :

*Եբբ. զանհկա
†Կա՛մ, յաւիտեան

2 - Հարուստը ու աղքատը իրարու
կը հանդիպին .

Անոնց ամէնը ստեղծողը Տերն է :

3 - Խորագէտը չարիքը կը տեսնէ ու
կը զգուշանայ .
Բայց միամիտները յարազ կ'անցնին
ու քնաս կը կրեն :

4 - Խնարհութեան և Տերօջը երկիւ-
զին վախճանը
Հարստութիւն, փառք ու կեանք է :

5 - Ծուռ մարդուն ճամբուն մէջ փու-
շեր ու սրագայթներ կան .
Իր հոգին պահողը անոնցմէ հեռու
կ'ըլլայ :

6 - Կրթէ մանուկը *իր ճամբան սկսած
ատենը՝,
Որպէս զի իր ձերութեան ատենն ալ
անկէ չխտորի :

7 - Հարուստը աղքատներուն վրայ կը
աիրէ,
Ու փոխ առնողը փոխ սուտղին ծա-
ռայ կ'ըլլայ :

8 - Չարութիւն ցանողը ունայնութիւն
կը հնձէ,
Եւ անոր բարկութեանը գաւազանը
պիտի կորուսի :

9 - Աղէկ աչք ունեցողը օրհնեալ կ'ըլ-
լայ ,
Վասն զի իր հացէն աղքատին կու տայ :

10 - Ծողր ընողը եթէ վռնտես, կուրք
կ'անցնի,
Ու վէճը և անարգանքը կը դադարին :

11 - Սրտի մաքրութիւն սիրողին շք-
թունքներուն վրայ շնորհք կայ,
Ու թագաւորը անոր բարեկամ կ'ըլ-
լայ :

12 - Տերօջը աչքերը գիտութիւնը կը
պահպանեն,
Եւ ինք անօրէնին խօսքերը կ'աւրէ :

13 - Ծոյլը կ'ըսէ, Իսուրը առիւծ կայ,
Հրապարակին մէջ պիտի մեռցուիմ :

14 - Օտար կիներուն բերանը խորունկ
փոս է,
Տերօջը ատելի եղողը հան կ'իյնայ :

15 - Մանուկին սրտին մէջ յիմարու-
թիւնը կտպուած է .
Չանհկա խրատի գաւազանը կը հե-
ռացնէ անկէ :

16 - Իր արայածը շատցնելու հա-
մար աղքատին զրկանք ընողը
Ու հարուստին սուտղը անշուշտ կա-
րօտութեան կը հասնի :

*Կա՛մ, իր ճամբուն համեմատ

*Կա՛մ, իր ճամբուն համեմատ

- 17 - Ականջդ ծռէ ու իմաստուններուն խօսքերը մտիկ ըրէ,
Եւ քու սիրտդ իմ գիտութեանս տուր.
- 18 - Վասն զի եթէ անոնք քու սրտիդ մէջ պահես, հաճելի բան է.
Անոնք քու շրթունքներուդ վրայ ալ պիտի հաստատուին :
- 19 - Ահա քեզի այ՞ բաները այսօր իմացուցի,
Որպէս զի քու ապաւինութիւնդ Տէրոջը վրայ ըլլայ :
- 20 - Միթէ ես քեզի *չատ անգամ* խրատներով
Ու գիտութեամբ չգրեցի^օ,
21 - Որպէս զի քեզի ճշմարիտ խօսքերուն ստուգութիւնը սորվեցրնեմ,
Որպէս զի քեզի †հարցնողներուն ճշմարիտ խօսքերով պատասխան տաս :
- 22 - Աղքատը մի կողոպտեր իր աղքատութեանը համար,
Ու անանկը ‡դատաստանի մէջ մի կոխեր .
- 23 - Վասն զի Տէրը անոնց իրաւունքը պիտի պաշտպանէ,
Եւ զանոնք կողոպտողներուն հոգին պիտի կողոպտէ :
- 24 - Բարկացող մարդուն հետ ընկերութիւն մի ըներ,
Ու ցաւկատ մարդուն հետ մի երթար .
- 25 - Որպէս զի չլլայ թէ անոր ճամբաները սորվիս,
Եւ քու հոգւոյդ որոգայթ վասակիս :
- 26 - Ձեռք տուողներէն մի ըլլար,
Ու ալ պարտքի համար երաշխաւոր եղողներէն :
- 27 - Եթէ վճարելու կարողութիւն չունիս,
Ինչ^օ համար տակէդ քու անկողինդ տանեն :
- 28 - Ձրլայ որ տեղէն վերցնես այն վաղեմի սահմանին շշաշ,
Ձոր քու հայրերդ դրեր են :
- 29 - Իր գործին մէջ ժիր մարդ մը կը տեսնե^օ ,
Անիկա թագաւորներուն առջև պիտի կայնի .
Աննշան մարդոց առջև պիտի չկայնի :

*կա՛մ, ազնիւ բաներ. Գլ. Ը. 6 :
†ԵՔԸ. զրկողներուն
‡ԵՔԸ. զրան

- Երբ իշխանի հետ սեղան նստիս,
Առջևդ դրուածը աղէկ նայէ .
- 2 - Ու եթէ դուն ակորժակի տէր չարք ես,
Կակորդիդ վրայ դանակ դիր :
- 3 - Անոր ազնիւ կերակուրներուն մի ցանկար .
Վասն զի անոնք խաբէութեան հաց են :
- 4 - Հարուստ ըլլալու մի աշխատիր .
Քու *խորհուրդէդ ետ կեցիր :
- 5 - Աչք պիտի անկե^օ այն բանին որ ոչինչ է .
Անիկա անշուշտ իրեն թէր կը շինէ,
Ու արծիւի պէս օդը կը թռչի :
- 6 - Ձար աչք ունեցողին հացը մի ուտեր ,
Եւ անոր ազնիւ կերակուրներուն մի ցանկար .
- 7 - Վասն զի անիկա իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ, այնպէս է .
Կեր ու խմէ՝ կ'ըռէ քեզի,
Բայց անոր սիրտը քեզի հետ չէ :
- 8 - Կերած պատառդ պիտի փոխես,
Ու հաճելի խօսքերդ պիտի կորսնցնես :
- 9 - Յիմարին ականջներուն մի խօսիր ,
Քանզի քու խօսքերուդ իմաստութիւնը կ'անարգէ :
- 10 - Վաղեմի սահմանին շշաշ տեղէն մի վերցներ,
Ու որբերուն արտերը մի մտներ .
- 11 - Քանզի անոնց՝ Վրէժխնդիրը զօրաւոր է,
Եւ քեզի դէմ՝ անոնց իրաւունքը անիկա պիտի պաշտպանէ :
- 12 - Քու սիրտդ խրատի տուր ,
Ու ականջներդ՝ գիտութեան խօսքերուն :
- 13 - Տղայէն խրատը մի կարեր,
Վասն զի եթէ զանիկա գաւազանով ծեծես, չմեռնիր :
- 14 - Դուն անիկա գաւազանով կը ծեծես ,
Բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես :
- 15 - Որդեակ իմ, եթէ քու սիրտդ իմաստուն ըլլայ,
Իմ սիրտս ալ պիտի ուրախանայ :
- 16 - Ու երբ քու շրթունքներդ ուղիղ բաներ խօսին,
*կա՛մ, իմաստութեանէդ

*կա՛մ, իմաստութեանէդ

Իմ երկամուկներս պիտի ցնծան:

17 - Քու սիրտդ մեղաւորներուն չնախանձի,
Հապա ամէն օր Տէրոջը վախին մէջ եղիր:

18 - Վասն զի իրաւցընէ վախճան մը կայ,
Ու քու յոյսդ պիտի չկտրի:

19 - Որդեակ իմ, լսէ, ու իմաստուն եղիր,
Եւ քու սիրտդ «-դէշ ճամբուն մէջ շիտկէ:

20 - Մի ընկերանար գինեմոլներուն հետ,
Ու իրենց մարմինը մաշողներուն՝ հետ.

21 - Վասն զի գինեմոլը ու շուտը ազքատ կ'ըլլան.
Եւ լաք քունը պատուտած հանդերձներ կը հազցնէ:

22 - Հնազանդութիւն ըրէ հօրդ որ քեզ ծներ է,
Ու մի անարգեր քու մայրդ երբ կը պառւի:

23 - Ճշմարտութիւնը ծախու առ ու զանիկա մի ծախեր.
Նմանապէս իմաստութիւնը, խրատը ու հանճարը:

24 - Արգարին հայրը շատ պիտի ցընծայ,
Եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր վրայ պիտի ուրախանայ:

25 - Թող քու հայրդ ու մայրդ + - լաք ուրախանան,
Ու քեզ ծնանողը թող ցնծայ:

26 - Որդեակ իմ, քու սիրտդ ինծի առը,
Եւ քու աչքերդ թող իմ ճամբաներս գիտեն.

27 - Վասն զի պառնիկը խորունկ փոս է,
Ու օտար կինը նեղ ջրհոր է.

28 - Եւ անիկա գողի պէս դարանը կը մտնէ,
Ու մարդոց մէջ անհաւատարիմները կ'աւելցնէ:

29 - Որո՞ւն է վայր. որո՞ւն է սհր.
Որո՞ւն են կաւիւները. որո՞ւն են արբատունջները.
Որո՞ւն են առանց պատճառի վերքերը.
Որո՞ւն է աչքերու կարմրութիւնը:

30 - Գինիին քով մնացողներուն,
Խառնած գինին փնտռելու գացողներուն:

31 - Մի նայիր գինիին կարմրութեանը,
Գաւթին մէջ իր գոյնը ցուցնելուն
«- շիտակ վազելուն:

32 - Անիկա ետքը օձի պէս կը խածնէ
Ու քարքի պէս կը խայթէ:

33 - Անիկէ ետք քու աչքերդ օտար կներու պիտի նային,
Կէ քու սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի.

34 - Եւ ծովու *մէջ պառկողի պէս՝
Ու կայմի վրայ պառկողի պէս պիտի ըլլաս:

35 - Ե- պէտէ ըստ,
Ձիւ ծեծեցին, ու ես ցաւ մը չգացի,
Ինծի զարկին, ու ես բան մը չիմացայ.
Ե՞րբ պիտի արթննամ,
Որպէս զի զանիկա նորէն փնտռեմ:

ԳԼ ԻԳ

Չար մարդոց մի նախանձիր,
Ու անոնց հետ կենալու մի ցանկար .

2 - Վասն զի անոնց սիրտը բռնութիւն կը խորհի,
Եւ անոնց շրթունքները փնտաներու վրայով կը խօսին:

3 - Տունը իմաստութեամբ կը շինուի,
Ու հանճարով կը հաստատուի:

4 - Եւ շտեմարանները գիտութեամբ՝
Ամէն րէսալ պատուական ու վայելուց գանձերով կը լեցուին:

5 - Իմաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ,
Ու գիտութիւն ունեցողը սլոբ կ'աւելցնէ.

6 - Վասն զի պատերազմդ խոհեմութեամբ կ'ընես.
Եւ քաղաքութիւնը խորհրդականներու շատութիւնով կ'ըլլայ:

7 - Իմաստութիւնը յիմարին համար շատ բարձր է.
Անիկա դրանը մէջ իր բերանը չբանար:

8 - Ով որ չարութիւն ընել կը մտածէ,
Անիկա նենգամիտ պիտի ըսուի:

9 - Յիմարութեան խորհուրդը մեղք է,
Եւ ծաղր ընողը մարդոց զգուշի է:

10 - Եթէ նեղութեան օրը թուլնաս,
Ոյժդ քիչ է:

11 - Ազատէ զանոնք որ մեռցուելու կը սարուին,
Ու սպաննուելու վրայ եղողները «- րէսալ ետ մի կենար:

*Կա՛մ, գեղիւթեամբ միս ուտողներուն

*Եթէ սիրտը
†Կա՛մ, յաղթութիւնը

12. Եթէ ըսես թէ Մենք ասիկա չգիտանք,
 Ահա սիրտերը կը շարժուին ինք կը հասկընայ.
 Ու քու հոգիդ պաշտպանողը ինք գիտէ,
 Եւ ահա մարդուն իր գործին չափովը պիտի հաստուցանէ:
 13 - Որդեակ իմ՝, մեղք կեր, որ ազէկ է,
 Եւ մեղրախորիսի կեր, որ քիմքիդ քաղցր է:
 14 - Իմաստութեան ճանաչումն ալ քու հոգիիդ այնպէս տալիս է որպէս զի՛նք,
 Եթէ զանհիկա գտնես.
 Եւ վախճան մը կայ,
 Ու քու յոյսդ պիտի չկարի:
 15 - Ով չար, արդարին տանը դարանակալ մի բլար,
 Անոր *բնակարանը մի աւերեր:
 16 - Վասն զի արդարը թէեւ եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի.
 Բայց չարերը ձախորդութեան մէջ պիտի իյնան:
 17 - Երբ քու թշնամիդ իյնայ՝ մի ուրախանար,
 Ու երբ անոր ստքը սահի՝ քու սիրտդ թող չցնծայ:
 18 - Զբլլայ որ Տէրը տեսնէ ու իրեն անհաճոյ երեւնայ,
 Եւ իր բարկութիւնը անոր վրայէն դարձնէ:
 19 - Զարագործներուն համար մի սրամտիր,
 Ու ամբարիշտներուն մի նախանձիր.
 20 - Վասն զի չար մարդը քեզի վախճան չունենար.
 Ամբարիշտներուն ճրագը պիտի մարի:
 21 - Որդեակ իմ՝, Տէրս ջմէ ու թագաւորէն վախցիր,
 Եւ իսուպարար մարդոց հետ միխառնուիր.
 22 - Քանզի անոնց կործանումը յանկարծ կ'ըլլայ,
 Ու երկուքին ալ պատուհասը ո՞վ գիտէ:
 23 - Այս բաներն ալ իմաստուններուն յապտի են.
 Դատաստանի մէջ աչառութիւն ընելը աղէկ չէ:

*Կա՛մ, հանգստութեան աեղը
 †Եբբ. փոփոխական

24 - Ով որ ամբարշտին կ'ըսէ թէ Իսկն արդար ես,
 Ազգերը անոր անէծք պիտի տան,
 Ու ժողովուրդները զանհիկա պիտի անարգեն:
 25 - Բայց յանդիմանութիւն տուողներուն շնորհք կ'ըլլայ,
 Եւ անոնց վրայ բարի օրհնութիւն կուգայ:
 26 - Շիտակ պատասխան տուողը Շրթունքներ կը համբուրէ:
 27 - Իսկն գործդ կանանաւորէ,
 Եւ զանհիկա *քու արտիդ մէջ՝ կարգի դիր,
 Ու տունդ ետքը շինէ:
 28 - Քու դրացիիդ դէմ զուր տեղ վկայութիւն մի ըներ,
 Եւ քու շրթունքներովդ մի խաբեր:
 29 - Մի ըսեր թէ Անհիկա ինձի ինչպէս որ բաւ, ես ալ անոր այնպէս պիտի ընեմ,
 Այն մարդուն իր գործին համեմատ հաստուցում՝ պիտի ընեմ:
 30 - Ծոյլ մարդուն արտին քովէն՝
 Ու պակասամիտ մարդուն այգիին քովէն անցայ.
 31 - Եւ ահա ամէնուն մէջ փուշեր բուսեր էին,
 Ու անոնց երեսը եղինճներ ծածկեր էին,
 Եւ անոր քարէ պատը փլած էր.
 32 - Ու երբ զանիկա տեսայ՝ մտքիս մէջ պահեցի,
 Անոր նայեցայ ու անիկ խրատ առի:
 33 - Եթէ քիչ մը քնանաս, քիչ մը նիրհես,
 Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար,
 34 - Քու ազգատութիւնդ ճամբորդի պէս պիտի գայ,
 Եւ քու կարօտութիւնդ՝ սպառապինեալ մարդու պէս:

ԳԼ ԻԵ

Ատանք ալ Սողոմոնի առակներն են, զորոնք Յուդայի Եգեկիա թագաւորին մարդիկը օրինակեցին:
 2 - Բանը ծածկելը Աստուծոյ փառքն է.
 Բայց թագաւորներուն փառքը բանը ապի քննելն է:

*Եբբ. արտին մէջ քեզի համար

- 3 - Երկինքի բարձրութիւնը ու երկրի խորութիւնը
Եւ թագաւորներուն սիրար չեն քըն- նուիր :
- 4 - Վերցուր արծաթէն կղկղանքը ,
Ու սկերիչին համար մահու անօթ կ'ելլէ :
- 5 - Վերցուր թագաւորին առջևէն
ամբարիշտը ,
Ու անոր աթոռը արդարութեամբ կը հաստատուի :
- 6 - Թագաւորին առջև մի պարծիր ,
Եւ մեծերուն տեղը մի կենար .
- 7 - Վասն զի աղէկ է որ քեզի ըսեն թէ
Հոս ելիր ,
Քան թէ քու աչքերուդ տեսած իշխա- նին առջև վար իջեցնեն քեզ :
- 8 - *Կուրի համար շուտով դուրս մի
ելլեր .
Չըլլայ թէ երբ ընկերդ քեզ ամչցնէ ,
Դուն վերջը ինչ ընելիքդ չէի գիտի :
- 9 - Ընկերիդ հետ քու գաող վարէ ,
Բայց գաղանիքը ուրիշի մի յայտներ .
- 10 - Չըլլայ որ լսողը քեզ անարգէ ,
Ու գէշ անունդ անջնջելի մնայ :
- 11 - Յարմարութեամբ ըսուած խօսքը
Արծաթէ զարդերու մէջ դրուած սկիւե
խնձորներու ինչն է :
- 12 - Իմաստունին յանդիմանութիւնը՝
մտիկ ընող սկանջին
Ոսկիէ օղ ու մարտը սկիւե մանեակ է :
- 13 - Հաւատարիմ՝ դեսպանը զինք
զրկողներուն
Հունձքի տատենի ձիւնին զօրութեանը
պէս է ,
Եւ իր տերսըը հոգին կը զնարճացնէ :
- 14 - Սուտ Գառապաճեանութեան վրայ
պարծենցողը
Անանձրե ամպերու ու հովի պէս է :
- 15 - Համբերութեամբ իշխանին սիրտը
կը շինուի ,
Եւ անոյ լեզուն սկորներ կը կտարէ :
- 16 - Եթէ մեղր գտնես , քեզի բաւա-
կան եղածին չափ կեր ,
Չըլլայ որ անով կշտանաս ու զանկա
փսխես :
- 17 - Քու ստքդ դրացիիդ տունը յա-
ճախ չկոխէ ,
Չըլլայ որ քեզմէ ձանձրանայ ու քեզ
տատէ :
- 18 - Իր դրացիին համար սուտ վկա-
յութիւն ընողը

- Ուրի , սուրի և սրած նեաի պէս է :
- 19 - Նեղութեան օրը անհաւատարիմ
մարդու ապուինիլը
Փշուող սկառայի և դիւրագլոր ստքի
պարծենցող պէս է :
- 20 - Տրտում մարդուն առջև երգեր
երգողը
Յուրտ օրը էր զգեստը հանողին ,
Կամ բարակի վրայ Բաճաճ քացախին
իչ նմանի :
- 21 - Եթէ թշնամիդ անօթի է , անոր
հաց կերցուր ,
Ու եթէ ծարաւ է , անոր ջուր խրմ-
ցուր :
- 22 - Քանզի պարծեն ընելով անոր զխտուն
վրայ կրակի կայծեր կը դիզես ,
Եւ Տէրը քեզի հասուցում պիտի ընէ :
- 23 - Հիւսիսային հովը անձրևը *կը
ցրուէ ,
Ու խոժոռ դէմքը՝ չարախօս լեզուն :
24 - Աղէկ է ամանիքի մը անկիւնը բնա-
կիլ ,
Քան թէ կուռատէր կնոջ հետ մեծ
տան մէջ :
25 - Ինչպէս է պող ջուրը ծարւած
մարդուն ,
Այսպէս է հեռու երկրէ եկած բարի
լուրը :
26 - Չար մարդուն առջև իյնող ար-
դարը
Պշտորուած աղբիւրի ու աւրուած
ակի ինչն է :
27 - Շատ մեղր ուտելը՝ աղէկ չէ ,
Եւ մարդուն իր փառքը փնտռելը
փառք չէ :
28 - Իր սգին չզսող մարդը
Փլած ու անպարիսպ քաղաքի պէս է :

ԳԼ. ԻԶ

- Ինչպէս ամառուան մէջ ձիւն , և
հունձքի տատեն անձրև ,
Այնպէս յիմարին պատիւ չվայլեր :
- 2 - Ինչպէս ճնճղուկը կը պարտի , ու
ծիծեռնիկը կը թռչի ,
Այնպէս առանց պատճառի անէծքը
չգար :
- 3 - Չիուն խարազան , ու իշուն սանձ ,
Եւ յիմարներուն կոնակին գաւազան
պէս է :
- 4 - Յիմարին իր յիմարութեանը համե-
մատ պատասխան մի տար ,

*Կամ, Դատի †Եբր. պարգևի

*Կամ, կը յարուցանէ

- 2ըլլայ որ դուն ալ անոր նման ըլլաս :
- 5 - Յիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան տուր,
- 2ըլլայ որ անիկա զինք իմաստուն կարծէ :
- 6 - Յիմարին ձեռքով խօսք զրկողը
Ի՞նչ սաքերը կը կտրէ «- ֆրասս *կը քաշէ :
- 7 - Ինչպէ՞ կազին սաքերը կ'երերան,
Այնպէս յիմարին բերնին մէջ առակը :
- 8 - Յիմարին պատիւ տուողը
†Քարակոյտի մը մէջ պարտական քարերու ծրար դնողին՝ կը նմանի :
- 9 - Առակը յիմարին բերնին մէջ՝
Գինովին ձեռքը մանող փուշին պէս է :
- 10 - Մեծ է ամէն բան Ստեղծողը,
Որ յիմարին վարձք կու տայ, և յանցաւորներուն վարձք կու տայ :
- 11 - Ինչպէս շունը իր փոխածին կը դառնայ,
Այնպէ՞ յիմարը իր յիմարութեանը կը դառնայ :
- 12 - Զինք իմաստուն կարծող մարդ մը տեսա՞ր .
- Աւելի յոյս կայ յիմարէն քան թէ անկէ :
- 13 - Ծոյլը կ'ըսէ թէ ճամբուն մէջ առիւծ կայ,
Հրապարակներուն մէջ առիւծ :
- 14 - Ինչպէս դուռը իր ծղիւններուն վրայ կը դառնայ,
Այնպէս ծոյլը իր անկողինին վրայ :
- 15 - Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը խոթէ,
Որ բերանը անգամ տանելու դժուարութիւն կը զգայ :
- 16 - Ծոյլը իր աչքերուն՝
Խելացի պատասխան տուող եօթը մարդէն աւելի իմաստուն կ'երեւնայ :
- 17 - Իրենը չեղած դատին համար բարկացող անցաւորը
Շունը ականջներէն բանողին պէ՞ս է :
- 18 - Ինչպէս կատարած մարդը որ կրակի կայծեր, նետեր ու մահ կը ցանէ,
19 - Այնպէս է այն մարդը որ իր բարեկամին նենգութիւն կ'ընէ,
Ու ետք կ'ըսէ, Ահա կատակ ըրի :
- 20 - Առանց փայտի կրակը կը մարի,

*Եբբ. կը խմէ
†Կամ, Պարսաստիկի մէջ քար կապողին

- Եւ եթէ քու չըլլայ, կուրը կը դադարի :
- 21 - Ինչպէս ածուխը կայծերուն, ու փայտը կրակին,
Այնպէս է կռուատէր մարդը վէճ բանկցնելու :
- 22 - Քու մարդուն խօսքերը քողցր պատասխանելու պէս են,
Ու աննք մինչև փորին շտեմարանները կ'իջնեն :
- 23 - Եռանդուն շրթունքները և չար սիրտը
Արծաթի կղկղանքով ապիկած հողէ ամանի կը նմանին :
- 24 - Ատեցողը իր շրթունքներովը կը կեղծէ,
Ու սրտին մէջ նենգութիւն կը պահէ :
- 25 - Անոր գեղեցիկ խօսուածքին չհաւատաս .
Վասն զի անոր սրտին մէջ եօթը զըրեղի բան կայ :
- 26 - Ան որ էր ատելութիւնը նենգութեամբ կը ծածկէ,
Անոր չարութիւնը ժողովքի մէջ պիտի յայտնուի :
- 27 - Փոս փորողը ինք մէջը պիտի լայնայ,
Եւ ան որ քար կը գլորէ՝ իրեն պիտի դառնայ :
- 28 - Ստախօս լեզուն *իր ծեծածները՝ կ'ատէ,
Ու շողքորթող բերանը կորուստ կ'ընէ :

ԳԼ. ԻԷ

- Վաղըւան համար մի պարծիր,
Վասն զի չես գիտեր թէ օրը ի՞նչ պիտի ծնանի :
- 2 - Քեզ ուրիշը գովէ և ոչ թէ քու բերանդ,
Ստարը՝ և ոչ թէ քու շրթունքներդ :
- 3 - Քարը ծանրութիւն՝ ու աւազը բեռ «-նի .
Բայց յիմարին բարկութիւնը երկուքէն ալ ծանր է :
- 4 - Բարկութիւնը անողորմ է, ու սրամտութիւնը խիստ է .
Բայց նախանձին առջև ո՞վ կրնայ կենայ :
- 5 - Յայտնի յանդիմանութիւնը
Ծածուկ սէրէն աղէկ է :

*Կամ, զինք ծեծողները

- 6 - Բարեկամին աստարիմ են.
- Բայց թշնամիին համբոյրները առատ են:
- 7 - Կուշտ մարդը խորիսիւր կ'արհամարհէ.
- Բայց անթի մարդուն ամէն լեզի բան անոյշ կու գայ:
- 8 - Իր տեղէն թափառական եղող մարդը
Իր բոյնէն թափառական եղող թըռչունին պէս է:
- 9 - Իւզը ու խունկը սիրտը կը զրւարձացնեն.
- Նմանապէս բարեկամին քաղցրութիւնը՝ մտերիմ խորհրդով:
- 10 - Քու բարեկամդ ու քու հօրդ բարեկամը մի թողուր,
Եւ քու նեղութեանդ տատենը քու եղբորդ տունը մի երթար.
- Մօտ դրացին հեռու եղող եղբորմէ աղէկ է:
- 11 - Որդեակ իմ, իմաստուն եղիր ու սիրտս ուրախացուր,
Որպէս զի զիս անարգողին պատասխան տամ:
- 12 - Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը զգուշանայ.
- Բայց միամիտները առաջ կանցնին ու քնտ կը կրեն:
- 13 - Օտարականի մը երաշխաւոր եղողին զգեստը առ,
Եւ օտար կնոջ համար երաշխաւոր եղողին գրաւ առ:
- 14 - Եթէ մէկը առաւօտուն կանուխ ելլէ, ու իր դրացին բարձր ձայնով օրհնէ,
Ասիկա անոր անէծք կը սեպուի:
- 15 - Անձրեոտ օրուն շարունակ կաթիլը
Ու կուտատէր կինը իրարու կը նմանին:
- 16 - Չանիկա ծածուկ պահողը հովը կը պահէ,
Եւ աջ ձեռքին ձեռք պահողը իւզը զինք կը յայտնէ:
- 17 - Երկաթը երկաթով կը սրուի,
Ու մարդը իր բարեկամին երեսը կը սրէ:
- 18 - Թզենիին հոգ տանողը անոր պրտուղը կ'ուտէ,
Եւ իր տէրը պահպանողը պատիւ կը գանէ:
- 19 - Ինչպէս ջուրը երեսը երեսին, Նոյնպէս սիրտը մարդը մարդուն չէ ցոյցնէ:

- 20 - Դժոխքը ու կորուստը չեն կշտանար.
- Մարդուն աչքերն ալ չեն կշտանար:
- 21 - Ինչպէ՞ս հալոցը արծաթը՝ և քուրան սակին չէ փոքնէ,
Այնպէս ալ մարդը զինք գովող բերանը Բող փոքնէ:
- 22 - Յիմարը ցորենի հետ անկանի մէջ սանդիստուով ձեծեա ալ,
Անոր յիմարութիւնը անկէ չերթար:
- 23 - Քու ոչխարներուդ վիճակը աղէկ գիտցիր,
Եւ աս հօտերուդ աղէկ նայէ.
- 24 - Վասն զի հարստութիւնը միշտ չմնար,
Ու թագը դարէ դար չաւեր:
- 25 - Կանանչը կը բուսնի, խտար կ'երևնայ,
Եւ լեռներուն խտերը կը ժողվուին:
- 26 - Գառները քու հագուստիդ համար են,
Ու նոխազները դաշտերուն գինն են:
- 27 - Քու կերակուրիդ համար և քու տանդ կերակուրին համար
Ու քու աղախիններուդ ապրուստին համար
Բաւական այծի կաթ պէտք է անելնա:

ԳԼ ԻԸ

- Ամբարիշտը առանց մէկուն հաւածելուն կը փախչի.
- Բայց արդարները առոյգ առիւծի պէս քաջասիրտ կ'ըլլան:
- 2 - Երկրին յանցանքովը անոր իշխանները շտա կ'ըլլան.
- Բայց անոր վիճակը իմաստուն ու գիտուն մարդուն ձեռքով շարքէն կը դիմանայ:
- 3 - Աղքատները զրկող չքաւոր մարդը Հացի կարօտութիւն բերող յարգահոտ անձրեւի պէ՞ս է:
- 4 - Օրէնքը մերժողները ամբարիշտները կը գովեն.
- Բայց օրէնքը պահողները անանց դէմ կը կենան:
- 5 - Չար մարդիկ իրաւունքը չեն հասկընար.
Բայց Տէրը փնտռողները ամէն բան կը հասկնան:
- 6 - Իր կատարելութեանը մէջ քալող աղքատը՝
Ծուռ ճամբաներու մէջ քալող հարուստ մարդէն աղէկ է:

- 7-Օրէնքը պահողը իմաստուն տղայ է. Բայց շուայլներուն բարեկամ եղողը իր հայրը կ'ամօցնէ:
- 8 - Իր ստացուածքը տակասիքով և վաշխով աւելցնողը Զանկա ազքատին սղորմութիւն ընդին համար կը ժողվէ:
- 9 - Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձնէ իր ահանջը , Անոր աղօթքը անգամ պիղծ է:
- 10 - Ուղիղները չար ճամբու մէջ մնալուցնողը իր փոսին մէջ պիտի իյնայ .
- Սակայն արդարները բարիք պիտի ժառանգեն:
- 11 - Հարուստ մարդը իր աչքերուն իմաստուն կ'երեւնայ .
- Բայց հանճարեղ ազքատը զանկա կը քննէ:
- 12-Երբ արդարները ուրախանան, մեծ փառք կ'ըլլայ .
- Բայց երբ ամբարիշտները բարձրանան, մարդ *կը փնտուռի:
- 13 - Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտներ ,
- Բայց անիկա խոստովանողը ու մէկդի ձգողը սղորմութիւն կը գտնէ:
- 14-Միշտ վախցող մարդը երանելի է . Բայց իր սիրտը խոտացնողը չարիքի մէջ պիտի իյնայ:
- 15 - Ազքատ ժողովուրդի վրայ իշխող ամբարիշտը Մանչող առիւծի ու անյագ արջու նմանի:
- 16 - Խոհեմութիւն չունեցող իշխանը շատ զրկողութիւններ կ'ընէ .
- Բայց ազահութենէ զըւտողը եր կեանքը կ'աւելցնէ:
- 17 - †Արիւնապարտ մարդը մինչև գուբը կը փախչի .
- Թող մէ'կը չպաշտպանէ զանկա:
- 18 - Կատարելութեամբ քալողը փրկութիւն կը գտնէ .
- Բայց ծուռ մարդը *երկու ճամբով նշուի, անիկա մէկուն մէջ կ'իյնայ:
- 19 - Իր երկիրը գործողը հացով պիտի կշտանայ .
- Ու դատարկ մարդոց հեռուողը ազքատութեամբ պիտի լեցուի:
- 20 - Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւններ կ'աւելնէ .

*Կա՛մ, կը պահուրի
†Եբէ. Անձի մը արիւնսովը ճնշուած

- Բայց հարուստ ըլլալու արտարացողը պիտի չարգարանայ:
- 21 - Աչառութիւն ընել աղէկ չէ , Վասն զի պատու մը հացի համար մարդ յանցանք կը գործէ:
- 22 - Զար աչք ունեցող մարդը հարուստ ըլլալու կ'արտարայ .
- Ու չգիտեր որ իր վրայ ազքատութիւն պիտի գայ:
- 23 - Մարդ յանդիմանողը վերջապէս շնորհք կը գտնէ:
- Լեզուով շողքորթութիւն ընողէն աւելի:
- 24 - Ան որ իր հայրը կամ մայրը կը կողոպտէ, ըսելով թէ Յանցանք չէ, Անիկա ապականարար մարդուն ընկերն է:
- 25 - Հպարտ սիրտ ունեցող մարդը կուի կը հանէ .
- Բայց Տէրոջը ապաւինողը պիտի գիրնայ:
- 26 - Իր սրտին ապաւինողը անմիտ է . Բայց իմաստութեամբ քալողը պիտի ազատի:
- 27 - Ազքատին տուողը կարօտ չըլլար . Բայց անիկ երես դարձնողը շատ անէծքներ կ'աւելնէ:
- 28-Եթէ ամբարիշտները բարձրանան, մարդիկ կը պահուին .
- Բայց եթէ անանք կորուսին, արդարները կը շանան:

ԳԼ ԻԹ

- *Շատ անգամ յանդիմանուած մարդը որ իր պարանոցը կը խրտացնէ, Յանկարծ պիտի կտորուի ու բժշկութիւն պիտի չգտնէ:
- 2 - Եթէ արդարները զօրանան, ժողովուրդը կ'ուրախանայ .
- Բայց երբ ամբարիշտը իշխանութիւն կ'ունենայ, ժողովուրդը կը հեծէ:
- 3 - Իմաստութիւն սիրող մարդը իր հայրը կ'ուրախացնէ .
- Բայց պոռնիկներուն ընկեր եղողը ստացուածքը կը ցրուէ:
- 4 - Թագաւորը արդարութեամբ կը հաստատէ երկիրը .
- Բայց կաշառք առնողը զանկա կը կործանէ:

*Կա՛մ, Կուուտէր

- 5 - Իր ընկերին շողաբորթութիւն ընող մարդը
- Անոր քայլերուն որոգայթ կը լարէ:
- 6 - Չար մարդուն ամբարշտութեանը մէջ որոգայթ կայ .
- Բայց արդարը ցնծութեան և ուրախութեան մէջ պիտի ըլլայ:
- 7 - Արդարը աղքատներուն դատար գիտէ .
- Բայց չար մարդը տեղեակ չըլլար:
- 8 - Մազը ընող մարդիկ քաղաքը կը բռնկցնեն .
- Բայց իմաստունները բարկութիւնը կը դադրեցնեն:
- 9 - Իմաստուն մարդը երբ յիմարին հետ վիճաբանութիւն կ'ընէ, թէ՛ արդողի և թէ՛ ծիծաղի՝ հանգիստ չըլլար:
- 10 - Արիւնահեղ մարդիկ արդարը կ'ատեն .
- Բայց ուղիղները անոր որպիսութիւնը կը հարցնեն:
- 11 - Յիմարը իր միտքը բոլորովին կը յայտնէ .
- Բայց իմաստունը զանհկա ուրիշ ատենի կը պահէ:
- 12 - Սուա խօսքերու ականջ դնող իշխանին
- Բոլոր ծառաները չար կ'ըլլան:
- 13 - Աղքատը ու բռնաւորը իրարու հանդիպեցան .
- Երկուքին ալ աչքերուն լոյս տուողը Տէրն է:
- 14 - Աղքատները ճշմարտութեամբ դատող թագաւորին աթոռը
- Յաւիտեան հաստատ կ'ըլլայ:
- 15 - Գաւազանը ու յանդիմանութիւնը իմաստութիւն կու տան .
- Բայց երբ իսկէն ձգուած տղան իր մայրը կ'ամչցնէ:
- 16 - Երբ ամբարիշտները շատնան, յանցանքը կը շատնայ .
- Բայց արդարները անոնց ինչպիսի պիտի տեսնեն:
- 17 - Խրատէ քու որդիդ, որպէս զի քեզ հանգստացնէ, Եւ քու հոգիդ զուարճացնէ:
- 18 - Առանց մարդարեութեան ժողովուրդը կը խտարի .
- Բայց օրէնքը պահողը երջանիկ կ'ըլլայ:
- 19 - Հասկցող ու պատասխան չտուող ծառան
- Խօսքերով չխրատուիր:

- 20 - Իր խօսքերուն մէջ արտորացող մարդ մը տեսա՞ր .
- Աւելի յոյս կայ յիմարէն քան թէ անկէ:
- 21 - Եթէ մէկը իր ծառան տղայութենէն փափկութեամբ կը մեծցընէ,
- Վերջապէս անհկա իր տղան կ'ըլլայ:
- 22 - Բարկատիրա մարդը կռիւ կը հանէ, Եւ ցտակոտ մարդը շատ յանցանքներ էր գործէ:
- 23 - Մարդուն հպարտութիւնը զինք կը կործանէ .
- Բայց հեզահեզի մարդը փառք կը վաստկի:
- 24 - Գողին ընկեր եղողը իր հոգին կ'ատէ .
- Անհկա երգումը կը լսէ, ու երբեք քայտներ չյայտներ:
- 25 - Մարդու վախը որոգայթի մէջ կը ձգէ .
- Բայց Տէրոջը ապաւինողը ամուր պատանարան կ'ունենայ:
- 26 - Շատերը իշխանին երեսը կը փրճանան .
- Բայց մարդուն իրաւունքը Տէրոջմէն է:
- 27 - Անօրէն մարդը արդարներուն զգուելի է, Եւ ուղղութեամբ քալողը ամբարշտին զգուելի է:

ԳԼ Լ

Յակէեան Ագուրի խօսքերը,
 Այսինքն պատգամը, զոր անհկա իթիւէի խօսեցաւ,
 Իթիւէի և Ուքալի:
 2 - Արդարեւ ես ահա մարդէ թանձրամիտ եմ,
 Ու ես մարդկային խոհեմութիւն չունիմ .
 3 - Ես իմաստութիւն չտրվեցայ,
 Ու *Ամենատուրբին գիտութիւնը չեմ գիտեր:
 4 - Երկինք ո՞վ ելաւ ու իջաւ .
 Հովը իր ձեռքերուն մէջ ո՞վ ժողվեց .
 Զուրերը եր հանդերձին մէջ ո՞վ ամփոփեց .
 Երկրի բոլոր ծայրերը ո՞վ հաստատեց .
 Անոր անունը ի՞նչ է, ու անոր որդւոյն անունը ի՞նչ է .
 Եթէ գիտես՝ ըսէ:

*Կա՛մ, սուրբերուն

5. Աստուծոյ ամէն խօսքերը մտքուր են. Անիկա իրեն ապաւինողներուն սուպոր է :

6 - Դուռն անոր խօսքերուն վրայ Բան մի աւելցնէր,

Որպէս զի չըլլայ թէ քեզ յանդիմանէ, ու դուն ստախօս երեւնաս :

7 - Քեզմէ երկու բան կը խնդրեմ. Մեռնելէս առաջ զանաւ + ինծմէ մի արգիլեր .

8 - Աւնայնութիւնը և սուտ խօսքը ինծմէ հեռացուր .

Ինծի աղքատութիւն կամ հարստութիւն մի ստար .

Իմ սովորական հացովս զիս կերակրէ .

9 - Զըլլայ որ կըշտանամ և թեւ ուրանամ,

Ու, Տէրը ո՞վ է, ըսեմ .

Եւ չըլլայ որ աղքատանամ ու գողութիւն ընեմ,

Եւ իմ Աստուծոյս անունը պարտապակեղ բերանս առնեմ :

10 - Ծառայի մը համար իր տերսը ամբաստանութիւն մի ընէր,

Զըլլայ որ քեզի անէծք տայ, ու դուն յանցաւոր գտնուիս :

11 - Յեղ կայ որ իր հայրը կ'անիծէ, Եւ իր մայրը չօրհնէր :

12 - Յեղ կայ որ իր աչքին սուջն մաքուր է,

Սակայն իր աղտողութիւնէն լուացուած չէ :

13 - Յեղ կայ որուն աչքերը խիստ ամբարտաւան են,

Ու անոր արտեանունքները բարձրացած են :

14 - Յեղ կայ որուն ականները սուրերու պէ՛ս են,

Եւ անոր ժանիքները դանակներու պէ՛ս են,

Աղքատները երկրի վրայէն՝

Ու անանկները մորդոց մէջէն ուտելու համար :

15 - Տղրուկը երկու աղջիկ ունի. Տուր, սուր՝ կ'ըսէն :

Այս երեքը չեն կշտանար,

Ու չորս բան կայ որոնք Հերիք է՝ չեն բար .

16 - Գերեզմանը, ամուլ արգանդը, Երկիրը որ ջրով չկշտանար

Ու կրակը որ Հերիք է՝ չբար :

17. Այն աչքը որ իր հայրը ծաղր կ'ընէ, Եւ իր մօրը հնազանդ իր կ'անարգէ, Զորեղուն ազուանները պիտի փորեն,

Ու զանիկա արծիւներուն ձագերը պիտի ուտեն :

18 - Այս երեք բանը ինծի գարմանայի կ'երևնան,

Եւ չորս բան կայ գորսը չեմ գիտեր .

19 - Օղին մէջ արծիւին ճամբան, Ապառաժի վրայ օձին ճամբան, Ծովուն մէջ նաւուն ճամբան,

Ու աղջկան քով այր մորդուն ճամբան :

20 - Ծնացող կնոջ ճամբան ալ այնպէս է .

Կ'ուտէ ու բերանը կը սրէ, Եւ, Զարութիւն չըրի՛ կ'ըսէ :

21 - Երեք բանի համար երկիր կը գողայ ,

Ու չորս բան կայ , զորոնք չկրնար տանիլ .

22 - Ծառան երբ թագաւորէ, Յիմարը երբ հացով կշտանայ,

23 - Ատելի կինը երբ կարգուի, Եւ աղախինը երբ իր տիկնոջ ժառանգըլլայ :

24 - Երկրի վրայ չորս բան կայ որոնք պզտիկ են,

Բայց անոնք շատ խելացի են .

25 - Մըջիւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն ,

Բայց իրենց կերակուրը ամառուրնէ կը պատրաստեն .

26 - Ճագարները տկար ժողովուրդ մին են,

Բայց իրենց առները վէժերու մէջ կը շինեն .

27 - Մարտինները թագաւոր չունին, Սակայն ամէնը՝ գունդ գունդ գուրս կ'իլլեն .

28 - *Մողէսը էր ձեռքերովը պատերազմ կը փակչի,

Ու թագաւորոց պալատներուն մէջ կը գտնուի :

29 - Աղէկ քաղց երեք բան կայ . Եւ չորս բան կայ որոնք գեղեցիկ քաղուածք ունին .

30 - Ասիւծը՝ որ ամէն անասուններէն զօրաւոր է,

Ու բնաւ մէկուն երեսէն ետ չգտնար .

31 - ԻՄէջքը կապած չէ՛ ու նստողը, Եւ թագաւորը՝ որուն ժողովուրդը իրեն հեռ է .

*Կամ, Սարգր . Եբբ . սէմամիթ , որով ի՛նչանան + Եղբի՛ քոսր եւ որոնք չըլլեն քոսրի մը + Կամ, Որտական շունը

- 32 - Եթէ բարձրանալով յիմարու-
թիւն ըրիր,
կամ չարութիւն մը մտածեցիր,
Ձեռքդ բերնիդ վրայ քէր:
- 33 - Վասն զի եթէ կաթը ծեծես՝ կու-
գի կ'ելլէ,
Եթէ քիթը ճմլես՝ արիւն կ'ելլէ.
Նոյնպէս եթէ բարկութիւնը գրգռես՝
կուիւ կ'ելլէ:

ԳԼ. ԼԱ

- Լեմուէլ թագաւորին խօսքերը,
Այսինքն պատգամը, զոր անոր մայրը
անոր սորվեցուց:
- 2 - Ի՞նչ ըսէ՛, ով որդեակ իմ,
Ի՞նչ ըսէ՛, ով իմ որովայնիս որդին,
Ի՞նչ ըսէ՛, ով իմ ուխտերուս որդին:
- 3-Քու զօրութիւնդ կիներուն մի տար,
Ոչ ալ քու ճամբաներդ թագաւորներ
բնաջինջ ընողներուն:
- 4 - Ով Լեմուէլ, թագաւորներուն
չվայեր,
Գինի խմել թագաւորներուն չվայեր,
Եւ օղի խմել իշխաններուն չվայեր.
- 5 - Չըլլայ որ խմեն ու օրէնքը մոռնան,
Եւ տառապեալներէն մէկուն դատաս-
տանը ծռեն:
- 6 - Օղին կորուսելու վրայ եղողին,
Ու գինին դառնահոգիներուն տուէք.
- 7 - Որպէս զի անոնք խմեն ու իրենց
աղքատութիւնը մոռնան,
Եւ իրենց նեղութիւնը մէջմըն ալ չխի-
շեն:
- 8 - Բացքու բերանդ համը մտրուուն
համար,
Ու բոլոր սնինամ քնացածներուն դա-
տին համար:
- 9-Բացքու բերանդ, արդարութեամբ
դատէ,
Եւ աղքատին ու անանկին դատաս-
տանը տես:
- 10 - Առաքինի կինը ո՞վ կրնայ
գանեւլ.
Անոր գինը գոհարներէն շատ աւելի է:
- 11 - Անոր էրկանը սիրաբ անոր վրայ
վատահ է,
Ու աւարի կարօտ չըլլար:
- 12-Անիկաբի կեանքինբոլոր օրերունմէջ
Անոր բարիքը կը բերէ և ոչ թէ չարիք:
- 13 - Բարդ ու քթան կը փնտուէ,
Եւ *ուզածը ձեռքովը կը գործէ:

*կ-մ, յօժարութեամբ

- 14 - Անիկա վաճառականի նաւերուն
կը նմանի.
Իր հացը հեռու տեղէ կը բերէ:
- 15 - Եւ անիկա գիշերով կ'ելլէ, ու
տանը մարտոյ կերակուր
Եւ իր աղաթիներուն բաժին կու տայ:
- 16 - Արտի մը վրայ կը խորհի ու զա-
նիկա ծախու կ'առնէ,
Եւ իր ձեռքերուն պտուղէն այգի կը
անկէ:
- 17 - Իր մէջքը զօրութեամբ կը պնդէ,
Ու իր բազուկները կը զօրացնէ:
- 18 - Իր վաստակին աղէկ ըլլալը կը
հասկընայ.
Անոր ճրագը գիշերը չմտրիր:
- 19 - Իր ձեռքերը կիկին կ'երկնցնէ,
Ու ափովը բոքը կը բռնէ:
- 20 - Ձեռքը աղքատին կը բանայ,
Ու ձեռքերը կարօտներուն կ'երկնցնէ:
- 21 - Իր տանը մարտոյ համար ձեռնէն
չվտանար.
Քանզի բոլոր ընտանիքը կրկին հան-
դերձ հագած են:
- 22 - Իրեն ծածկոցներ կը շինէ.
Իր հանդերձը բեհեզ ու ծիրանի է:
- 23 - Անոր այրը կը ճանչցուի դռնե-
րուն մէջ,
Երբ երկրին ծերերուն հետ կը նստի:
- 24 - Կտաւ կը գործէ ու կը ծախէ,
Եւ վաճառականներուն գօտիներ կու
տայ:
- 25 - Ջօրութիւն ու փառք կը հագնի.
Ու վերջին օրերը պիտի ուրախանայ:
- 26 - Իր բերանը իմաստութեամբ կը
բանայ,
Եւ իր լեզուին վրայ * քաղցրութեան
օրէնք կայ:
- 27 - Իր տանը ճամբաները կը քննէ,
Եւ ծուլութեան հացը չուտեր:
- 28 - Անոր աղաքը կ'ելլեն ու զանիկա
երանելի կ'անուանեն.
Անոր այրն ալ զանիկա կը գովէ, ըսելով,
29-Շատ աղջիկներ առաքինի եղան,
Բայց դուն ամէնէն գերազանց եղար:
- 30 - Վայելչութիւնը տաւ է, ու գե-
ղեցկութիւնը ունայն է.
Սուրբ Տէրջմէ վախցող կինը պիտի
գովուի:
- 31 - Տուէք անոր իր ձեռքին պտուղէն.
Ու անոր գործերը դռներու մէջ գո-
վեն զանիկա:

*կ-մ, սղորմութեան

ԳԻՐՔ ԺՈՂՈՎՈՂԻ



ԳԼՈՒԽ Ա

Երուսաղէմի մէջ թագաւորող Դաւիթի որդւոյն ժողովողին խօսքերը:

- 2 - Ունայնութի՛ւն ունայնութեանց, ըսաւ ժողովողը, Ունայնութի՛ւն ունայնութեանց, ա՛մէն բան ունայնութիւն է:
- 3 - Ի՞նչ օգուտ կ'ունենայ մարդ Արևուն տակ քաշած բոլոր աշխատանքէն:
- 4 - Ազգ կ'երթայ և ազգ կու գայ, Բայց երկիր միշտ կը կենայ:
- 5 - Նաև արևը կը ծագի ու արևը կը մտնէ, Եւ իր ծագած տեղը արտարաւով կը դառնայ:
- 6 - Հովը դէպ ի հարաւ կ'երթայ, Ու դէպ ի հիւսիս կը պտրտի. Եւ հովը ասդին անդին պտրտելով կ'երթայ, իր շրջաններուն համեմատ կը դառնայ:
- 7 - Ամէն գետերը ծովը կ'երթան, Բայց ծովը չլեցուիր. Այն տեղը ուր գետերը կ'երթային, Նորէն հոն կ'երթան:
- 8 - Ամէն *խօսքերը կը հասնին*. Մարդս խօսելու կարող չէ. Աչքը տեսնելով չկշտանար, Ու ականջը լսելով չլեցուիր:
- 9 - Ինչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ. Ու ինչ որ գործուած է, նոյնը պիտի գործուի. Եւ արևուն տակ բնաւ նոր բան մը չկայ:
- 10 - Կա՞յ արդեօք այնպիսի բան մը՝ Որսէ համար կրնայ ըսուիլ, Ահա ա՛սիկա նոր է. Ահա մեզմէ առաջ եղած դարերուն մէջ Անիկա արդէն եղած էր:
- 11 - Առաջուան բաներուն յիշատակը չկայ, Ու ետքը ըլլալու բաներուն ալ՝ Ետքը եկողներուն մէջ յիշատակը պիտի չըլլայ:
- 12 - Ես ժողովող Երուսաղէմի մէջ

*Կա՞յ, բաները կը յոգնին

- Իսրայէլի վրայ թագաւոր եղայ:
- 13 - Եւ իմ սիրտս երկինքի տակ բոլոր եղածները իմաստութեամբ փնտռելու ու քննելու տուի. Աստուած այս չար զբաղմունքը մարդոց որդիներուն տուաւ, Որպէս զի անով զբաղին:
- 14 - Արևուն տակ բոլոր գործուած գործերը տեսայ, Եւ ահա ամէնն ալ ունայնութիւն ու *հոգիի տանջանք՝ են:
- 15 - Այն որ ծուռ է, չկրնար շիտուիլ, Ու այն որ պակաս է, չկրնար համբուիլ:
- 16 - Ես իմ սրտիս մէջ խօսեցայ ու ըսի, Ահա ես մեծցայ, ու իմաստութիւն ստացայ Երուսաղէմի մէջ ինծմէ առաջ եղողներուն ամէնէն աւելի. Եւ իմ սիրտս շատ իմաստութիւն ու գիտութիւն տեսաւ:
- 17 - Եւ իմ սիրտս իմաստութիւնը ճանչնալու, Ու խենդութիւնը և յիմարութիւնը գիտնալու տուի. Հասկցայ որ ասիկա ալ հոգիի տանջանք է:
- 18 - Վասն զի շատ իմաստութեան մէջ շատ արամուսութիւն կայ. Ու եր գիտութիւնը աւելցնողը եր վեշտը կ'աւելցնէ:

ԳԼ. Բ

- Ես իմ սրտիս մէջ ըսի, Եկուր հիմա ուրախութեան միջոցով քեզ փորձեմ. Ուստի բարիքներ վայելէ. Եւ ահա ասիկա ալ ունայնութիւն է:
- 2 - Ծիծաղին համար ըսի թէ Յիմար է, Եւ ուրախութեանը համար՝ թէ Ասոր ըրածը ի՞նչ է:
- 3 - Արտիս մէջ խորհեցայ որ մարմինս գինիով զուարթացնեմ, Եւ իմաստութեան առաջնորդութիւնովը անմտութիւնը ճանչնամ:

*Կա՞յ, հովի համար աշխատութիւն

Որպէս զի տեսնեմ թէ ի՛նչ է մարդոց
որդիներուն բարին,
Չոր կրնան ընել երկինքի տակ
Իրենց կեանքին բոլոր օրերուն մէջ :

4 - Մեծ գործեր ըրի .
Ինծի տուներ շինեցի, * - ինծի այգի-
ներ անկեցի .

5 - Ինծի պարտէզներ և դրախտներ շի-
նեցի,
Ու անոնց մէջ ամէն տեսակ պտուղ
բերող ծառեր անկեցի .

6 - Ինծի ջուրի աւազաններ շինեցի,
Որպէս զի անոնցմէ ծառ բուսցնող ան-
տառը ուռազուի .

7 - Ծառաներ ու աղախիններ ստացայ,
Եւ իմ՝ տանս մէջ ծնած ծառաներ ու-
նեցայ .

Ու շատ արջառներ և հօտեր ունեցայ
Ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ եղող-
ներուն ամէնէն աւելի :

8 - Նաև ինծի արծաթ ու ոսկի
Եւ թագաւորներու ու գաւառներու
գանձեր գիղեցի .
Ինծի այր և կին երգեցողներ ստացայ,
Ու մարդոց որդիներուն զուարճու-
թիւնները * և ամէն տեսակ շքե-
ղութիւն :

9 - Եւ ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ
եղողներուն
Ամէնէն մեծ եղայ ու բարգաւաճեցայ .
Իմաստութիւնս ալ իմ՝ քովս կը կենար :

10 - Եւ իմ՝ աչքերուն ամէն ցանկու-
թիւնը անոնցմէ չարգիլեցի,
Ու իմ՝ սիրտս ամէն քեան ուրախու-
թենէ զուրկ չթողուցի .
Հապա իմ՝ սիրտս իմ՝ բոլոր աշխատու-
թիւններէս ուրախացաւ .
Եւ իմ՝ բոլոր աշխատութիւններէս բա-
ժինս ասիկա էր :

11 - Ու ես իմ՝ ձեռքերուս ըրած ամէն
գործերուն ,
Ու ընելու համար իմ՝ քաշած ամէն
աշխատանքիս նայեցայ,
Եւ ահա ամէնը ունայնութիւն ու հո-
գիի տանջանք էին,
Ու արևուն տակ օգուտ չկար :

12 - Եւ ես դարձայ իմաստութիւնը
տեսնելու,
Նաև յիմարութիւնը ու անմտու-
թիւնը .
Վասն զի թագաւորին ետեւէն եկող
մարդը ի՞նչ էր * և ընէ .

Ինչ որ արդէն ըրած են :

13 - Ուստի տեսայ որ իմաստութիւնը
անմտութենէն օգտակար է,
Ինչպէս լոյսը խաւարէն օգտակար է :

14 - Իմաստունին աչքերը իր գլխուն
վրայ են,
Իսկ անմիտը խաւարի մէջ կը քայլէ .
Բայց ես հասկցայ որ
Անոնց ամէնուն պատահած դիպումը
մէկ է :

15 - Այն տաէն իմ՝ սրտիս մէջ ըսի,
Որովհետև անմիտին պատահածը ինծի
ալ պիտի պատահի,
Ուրեմն ես ինչո՞ւ համար աւելի իմաս-
տուն եղայ .
Այս պատճառաւ իմ՝ սրտիս մէջ ըսի
որ այս ալ ունայնութիւն է :

16 - Վասն զի ինչպէս անմիտին՝ նմա-
նապէս իմաստունին
Յաւիտեան յիշատակը չկայ .
Վասն զի հիմա եղած բաներուն ամէնը
Ապագայ ժամանակին մէջ պիտի մոռ-
ցուին .
Ու իմաստունը ի՞նչպէս կը մեռնի .
Անմիտին պէս :

17 - Անոր համար այս կեանքէն զզուե-
ցայ ,
Վասն զի արևուն տակ եղած գործերը
ինծի գէշ երեցան,
Քանզի ամէնը ունայնութիւն ու հոգիի
տանջանք են :

18 - Եւ ես արևուն տակ քաշած բոլոր
աշխատութենէս զզուեցայ,
Քանզի ինծմէ ետքը գալու մարդուն
պիտի թողում՝ զանհկա .

19 - Եւ ո՞վ գիտէ թէ անհկա իմաս-
տո՞ւն պիտի ըլլայ թէ անմիտ .
Բայց պիտի տիրէ իմ՝ բոլոր աշխատու-
թիւններուս վրայ,
Չորնք արևուն տակ աշխատեցայ,
Ու անոնց մէջ իմաստութիւն ցուցուցի :
Ասիկա ալ ունայնութիւն է :

20 - Եւ ես դարձայ, որպէս զի արե-
ւուն տակ քաշած բոլոր աշխա-
տանքիս վրայով
Իմ՝ սրտէս յոյս կարեմ :

21 - Վասն զի մարդ կայ որուն աշխա-
տութիւնը
Իմաստութեամբ, գիտութեամբ և յա-
ջողութեամբ կ'ըլլայ,
Բայց անոր մէջ չաշխատող մարդուն
էջքն բաժին կու տայ :
Ասիկա ալ ունայնութիւն ու մեծ չա-
րիք մըն է :

*Կամ, մեծ անաստութիւնով

- 22 - Վասն զի մարդ արևուն տակ քաշած իր բոլոր աշխատանքէն Ու սրահն տանջանքէն ի՞նչ օգուտ կ'ունենայ :
- 23 - Քանզի անոր բոլոր օրերը վիշտերով , Ու գործը արամուժեամբ լեցուն են . Անոր սիրտը գիշերը անգամ հանգրստութիւն չգտներ :
- Ասիկա ալ ունայնութիւն է :
- 24 - Մարդս ուտելէն ու խմելէն Եւ իր աշխատանքովը իր հոգին զուարճացնելէն զառ աղէկութիւն մը չունի :
- Ես ասիկա ալ տեսայ որ Աստուծոյ ձեռքով կ'ըլլայ :
- 25 - Վասն զի *ինծմէ զատ* ո՞վ կրնայ ուտել , Եւ ո՞վ կրնայ զուարճանալ :
- 26 - Քանզի Առաջին իր սուջե հաճելի եղող մարդուն Իմաստութիւն, գիտութիւն և ուրախութիւն կու տայ . Բայց մեղաւորին զբողմունք կու տայ , Որպէս զի անիկա առաջին ժողովէ ու դիզէ . Որպէս զի Աստուծոյ սուջե հաճելի եղողին տայ :
- Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է :

ԳԼ . Գ

- Ամէն բանին տաեմը կայ , Ու երկինքի տակ եղող ամէն †գործին ժամանակը .
- 2 - Ծնանելու ժամանակ և մեռնելու ժամանակ , Տնկելու ժամանակ ու անկուածը խլելու ժամանակ ,
- 3 - Մեռցնելու ժամանակ և բժշկելու ժամանակ , Փլցնելու ժամանակ ու շինելու ժամանակ ,
- 4 - Լալու ժամանակ և ծիծաղելու ժամանակ , Սուգ ընելու ժամանակ ու կաքաւելու ժամանակ ,
- 5 - Քարեր դուրս նետելու ժամանակ ու քարեր ժողովելու ժամանակ , Գրկելու ժամանակ ու գրկելէ հեռանալու ժամանակ ,

*Կա՛մ, տաանց Անոր
†Կա՛մ, դիտաւորութեան

- 6 - Փնտռելու ժամանակ և կորսնցրնելու ժամանակ , Պահելու ժամանակ ու դուրս ձգելու ժամանակ ,
- 7 - Պատուելու ժամանակ և կարելու ժամանակ , Լուելու ժամանակ ու խօսելու ժամանակ ,
- 8 - Սիրելու ժամանակ և ատելու ժամանակ , Պատերազմի ժամանակ ու խաղաղութեան ժամանակ :
- 9 - Աշխատողին , իր քաշած աշխատանքէն , Ի՞նչ օգուտ կ'ըլլայ :
- 10 - Տեսայ այն զբողմունքը զոր Աստուած մարդոց որդիներուն տուաւ , Որպէս զի անով զբողին :
- 11 - Անիկա ամէն բան իր ժամանակին վայելուչ ըրաւ , Եւ աշխարհս ալ անոնց սրտին մէջ դրաւ . Բայց Աստուծոյ ըրած գործը Մարդ չկրնար սկիզբէն մինչև վերջը գտնել :
- 12 - Զայ՛ գիտեմ՝ որ ուրախ ըլլալէ Ու կենդանութեան տաեմ աղէկութիւն ընելէ զատ՝ Ուրիշ աղէկ բան մը չկայ անոնց մէջ :
- 13 - Ու նաև ամէն մարդուն ուտելը ու խմելը , Եւ իր բոլոր աշխատութեանէն բարիք վայելելը Աստուծոյ պարգևն է :
- 14 - Գիտեմ որ Աստուծոյ ամէն ըրածը յաւիտեան պիտի մնայ . Անոր վրայ բան մը աւելցնել , կամ անկէ պակսեցնել կարելի չէ . Եւ Աստուած պանծիչ ըրաւ , որպէս զի իր երեսէն վախճան :
- 15 - Ինչ որ եղած է , հիմա ալ կայ . Ու ինչ որ պիտի ըլլայ , արդէն եղած է : Եւ Աստուած անցածը կը փնտռէ :
- 16 - Ու նաև արևուն տակ տեսայ որ դատաստանի տեղ ամբարշտութիւն , Եւ արգարութեան տեղ անօրէնութիւն կար :
- 17 - Ես իմ սրտիս մէջ ըսի թէ Աստուած պիտի դատէ արդարը ու ամբարիշտը . Վասն զի ամէն դիտաւորութիւն ու ամէն գործ ժամանակ ունի հոն :

- 18 - Ես իմ սրտիս մէջ ըսի
Մարդոց որդիներուն վիճակին վրայով,
Թէ Աստուած զանոնք պիտի փորձէ.
Ու պիտի տեսնեն որ իրենք անասուն-
ներ են :
- 19 - Վասն զի մարդոց որդիներուն
պատահածը
Եւ անասուններուն պատահածը մէկ է.
Մէկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այն-
պէս կը մեռնի .
Ու ամէնուն չունչը մէկ է.
Եւ մարդը անասունէն աւելի բան մը
չունի,
Վասն զի ամէնը ունայնութիւն է :
- 20 - Ամէնը մէկ տեղ կ'երթայ .
Ամէնը հողէն եղաւ, ու ամէնը հող կը
դառնայ :
- 21 - Ո՞վ գիտէ թէ մարդոց որդիներ-
ուն հոգիները վեր կ'ելլեն,
Եւ անասուններուն ոգիները վար գե-
տինը կ'իջնեն :
- 22 - Ու տեսայ որ մարդս իր գործե-
րովը ուրախ ըլլալէ զատ
Ուրիշ աղէկութիւն մը չունի,
Քանզի անոր բաժինը այն է.
Վասն զի ո՞վ պիտի տանի զանիկա որ
տեսնէ
Թէ իրմէ ետքը ի՞նչ պիտի ըլլայ :

ԳԼ. Դ

Եւ ես դարձայ ու տեսայ
Արևուն տակ եղած բոլոր զրկանքները.
Եւ ահա զրկուածներուն աչք արցունք
կար,
Բայց անոնք մխիթարող չունէին.
Ու անոնց զրկանք ընողներուն ձեռքը
ոյժ կար,
Բայց անոնց մխիթարութիւն տուող
չկար :

2 - Եւ ես մեռածները, արդէն մեռած-
ները,
Մինչև հիմա ապրողներէն աւելի գո-
վեցի :

3 - Բայց ան որ մինչև հիմա եղած չէ,
Երկուքէն ալ աղէկ է,
Վասն զի անիկա արևուն տակ եղած
չարութիւնը չտեսաւ :

4 - Ու ես ամէն աշխատութիւնը
Եւ ամէն յաջող գործը տեսայ,
Որ անոնց համար մարդ իր ընկերին կը
նախանձի :

Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի
տանջանք է :

- 5 - Անմիտը իր ձեռքերը կը ծալէ,
Ու իր միտը կ'ուտէ :
- 6 - Աւելի աղէկ է մէկ լեցուն ձեռքը
հանգստութեամբ,
Քան թէ երկու լեցուն ձեռքը՝ որ աշ-
խատանքով ու հոգիի տանջան-
քով է :
- 7 - Եւ ես դարձայ ու արևուն տակ
ունայնութիւն տեսայ :
- 8 - Մարդ մը կայ որ երկրորդ չունի,
Ոչ աղայ ունի և ոչ եղբայր.
Բայց անոր ամէն աշխատութիւնը
վախճան չունի,
Ու անոր աչքերը հարստութեամբ չեն
կշտանար,
Եւ չէր Բէ Ես որո՞ւ համար կ'աշ-
խատիմ՝
Ու իմ հոգիս բարիքէ կը զրկեմ :
Ասիկա ալ ունայնութիւն ու չար
ղբաղմունք է :
- 9 - Երկուքը մէկէն աղէկ է,
Վասն զի անոնց աշխատանքը աղէկ
վարձք ունի .
- 10 - Քանզի եթէ իյնան, մէկզմէկ կը
վերցնեն .
Բայց վա՛յ իյնող մէկուն՝
Որ զինք վերցնող երկրորդ մը չունի :
- 11 - Ու երկու մարդ Գէրեզ պատկելով
կը տաքնան.
Բայց մինակը ի՞նչպէս կրնայ տաք-
նալ :
- 12 - Եւ եթէ մէկը անոնց բռնութիւն
ընէ,
Երկուքը կրնան անոր դէմ դնել .
Ու երեքպատիկ դերձանը դիւրաւ
չկարուի :
- 13 - Աղէկ է աղքատ ու իմաստուն
տղան,
Քան թէ ծեր ու անմիտ թագաւորը՝
Որ ալ չգիտեր խրատուիլ :
- 14 - Քանզի Գէր բանաէն կ'ելլէ՝ որ-
պէս զի թագաւորէ,
Բայց «-բիշ յը որ թագաւոր ծնած է,
աղքատ կ'ըլլայ :
- 15 - Տեսայ արևուն տակ քաղաղ ամէն
կենդանիները
Այն տղուն հեռ՝ որ Բագա-որին երկ-
րորդն էր,
Ու անոր տեղը պիտի անցնէր .
- 16 - †Անոնց առջև կեցող՝ բոլոր ժողո-
վուրդը անթիւ էր .

*Կա՛մ, իր թագաւորութեանը մէջ
†Կա՛մ, Անոնցմէ առաջ եղող

Սակայն ետքը եկողները անկէ պիտի
չուրախանան :
Ասիկա ալ ունայնութիւնն ու հոգիի
տանջանք է :

ԳԼ. Ե

Երբ Աստուծոյ տունը կ'երթաս ,
տաքիզ զգուշութիւն ըրէ .
Եւ աւելի մտիկ ընելու մտեցիր ,
Քան թէ անմիտներու զո՛հ մատուցա-
նելու .

Վասն զի անոնք չեն գիտեր թէ շա-
րութիւն կ'ընեն :

2 - Բերնովդ մի աճապարեր ,
Եւ քու սիրտդ Աստուծոյ առջև խօսք
հանելու շարտարայ .

Քանզի Աստուած երկինքն է , ու դուն
երկրի վրայ ես ,

Անոր համար քու խօսքերդ քիչ ըլլան :

3 - Վասն զի երազը շատ զբաղմուն-
քէն յառաջ կու գայ ,

Ու յիմարին ձայնը՝ շատ խօսքերէն :

4 - Երբ Աստուծոյ ուխտ կ'ընես ,
Չանհկա կատարելը մի ուշացներ .
Քանզի Աստուծոյ անմիտներուն չհաճիր .
Ըրած ուխտդ կատարէ :

5 - Աղէկ է որ ուխտ չընես ,
Քան թէ ուխտ ընես ու չկատարես :

6 - Թող մի տար որ քու բերանդ
մարմնիդ մեղք գործել տայ ,
Եւ հրեշտակին առջև մի ըսեր թէ
Սիալանք եղաւ .

Ինչո՞ւ Աստուած քու խօսքիդ համար
բարկանայ ,

Ու ձեռքերուդ գործը աւրէ :

7 - Վասն զի երազներուն շատութեանը
մէջ
Եւ խօսքերուն շատութեանը մէջ
Ունայնութիւններ ալ կան .
Բայց դուն Աստուծոյ վախցիր :

8 - Եթէ գաւառի մէջ աղքատին եղած
զրկանքը
Ու իրաւունքի և արդարութեան
*ծռուիլը տեսնես ,

Այս բանին վրայ մի զարմանար .
Վասն զի բարձրերուն վրայ Բարձր
եղողը կը դիտէ .

Եւ ասոնցմէ Բարձրը կայ :

9 - Երկիր ամէնուն ալ օգտակար է .
Թագաւորին անգամ արտէն ծառայու-
թիւն կ'ըլլայ :

10 - Արծաթ սիրողը արծաթէն
չկշտանար ,
Ոչ ալ հարստութիւն սիրողը՝ երեւե
բերքէն :

Ասիկա ալ ունայնութիւնն է :
11 - Երբ բարիքը կը շատնայ ,
Ուտողներն ալ կը շատնան .
Ուրեմն զանհկա ունեցողներուն՝
Աչքով տեսնելէն զատ ի՞նչ օգուտ
կ'ըլլայ :

12 - Քաղցր է աշխատող մարդուն
քունը՝
Թէ՛ շատ և թէ՛ քիչ ուտէ .
Բայց հարուստին *կուշտ ըլլալը՝
Զթողուր որ անհկա հանգիստ քնանայ :

13 - Արևուն տակ տեսայ որ գէշ ցաւ
մը կայ ,
Այսինքն այն հարստութիւնը որ իր
տէրջը ձախորդութեանը հա-
մար պահուած է .

14 - Եւ այն հարստութիւնը ձախորդ
†դիպուածով մը կը կորուսի .
Ու ինք աղայ կը ծնանի , և անոր ձեռքը
բան մը չկայ :

15 - Ինչպէս իր մօրը սրովայնէն ելաւ ,
Այնպէ՛ս մերկ կը դառնայ .
Ինչպէս եկաւ , այնպէ՛ս կ'երթայ ,
Ու իր աշխատութենէն բան մը չառ-
ներ զոր իրեն հետ տանի :

16 - Այս ալ գէշ ցաւ մըն է ,
Որ ինչպէս եկաւ , ճիշդ այնպէս կ'եր-
թայ .
Եւ ի՞նչ օգուտ կ'ըլլայ անոր
Որ հովի համար կ'աշխատի :

17 - Անհկա իր բոլոր օրերը խաւարի
մէջ կ'ուտէ
Մեծ տրամութեամբ , հիւանդու-
թեամբ և սրամտութեամբ :
18 - Ահա այս աղէկութիւնը տեսայ ,
Որ վայելուչ է ուտել ու խմել ,
Եւ Աստուծոյ՝ մէկուն տուած կեան-
քին բոլոր օրերուն մէջ
Արևուն տակ իր քաշած բոլոր աշխա-
տանքին բարիքը վայելել ,
Վասն զի անոր բաժինը ստիկա է :
19 - Եւ ո՛ր մարդուն որ Աստուած
հարստութիւն ու ստացուածք
կու տայ ,
Ու անկէ ուտելու և բաժինը առնելու
Ու իր աշխատանքէն ուրախանալու իշ-
խանութիւն կու տայ ,

*Եբր. յափշտակուիլը

*կամ, առատութիւնը
†կամ, գործով

Ասիկա Աստուծոյ պարգևն է:
 20 - Քանզի անիկա իր կեանքին օրերը
 շատ չյիշէր.
 Վասն զի Աստուած անոր սրտին ու-
 րախուսութիւնովը անոր պատաս-
 խան կու տայ:

ԳԼ. 9

Արեւուն տակ տեսայ որ չարիք մը
 կայ,
 Ու անիկա մարդոց մէջ շատ է Էփեմ-ի.
 2 - Մարդ մը՝ որու Աստուած հարստու-
 թիւն ու ստացուածք եւ փառք
 կու տայ,
 Այնպէս որ իր հոգիին ցանկացած բա-
 ներէն պահուսութիւն մը չունե-
 նար.
 Բայց Աստուած անոր իշխանութիւն
 շտար անկէ ուտելու,
 Հապա զանիկա օտար մարդ կ'ուտէ:
 Այս ու ունայնութիւն ու գէշ ցաւ
 մըն է:
 3 - Եթէ մարդ հարիւր շառի ծնանի,
 Ու շատ տարիներ ապրի,
 Եւ անոր տարիներուն օրերը շատ ը-
 լան,
 Ու անոր հոգին բարութենէ չկշտանայ,
 Եւ անիկա թաղում ալ չունենայ,
 Կ'ըսեմ որ վիժածը անկէ աղէկ է.
 4 - Վասն զի ասիկա ունայնութեամբ
 կու գայ, ու խաւարով կ'եր-
 թայ,
 Եւ անունը խաւարի մէջ կը ծածկուի.
 5 - Արեւն ալ չտեսաւ ու քան իջ չգիտ-
 ցաւ.
 Ասիկա միւսէն աւելի հանգիստ է:
 6 - Իսկ անիկա թէեւ երկու հազար
 տարի ապրի,
 Ու աղէկութիւն չտեսնէ,
 Միթէ ամէնը մէկ տեղ չե՞ն երթար:
 7 - Մարդուն բոլոր աշխատութիւնը
 իր բերնին համար է,
 Սակայն անոր հոգին չկշտանար:
 8 - Քանզի իմաստունը անմիտէն աւելի
 ի՞նչ բան ունի.
 Կենդանիներուն մէջ քալել գիտցող
 աղքատը ի՞նչ օգուտ կ'ունենայ:
 9 - Աչքերով տեսնելը հոգիով *փա-
 փաքելէն աղէկ է:
 Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի
 տանջանք է:

*Եբր. քալելէն

10 - Ինչ որ եղաւ, արդէն անոր
 անուն դրուած է,
 Եւ յայտնի է թէ մարդն է.
 Ու անիկա իրմէ Զօրաւորին հետ վիճե-
 լու կարող չէ:
 11 - Որովհետեւ ունայնութիւն շա-
 ցընող շատ բաներ կան,
 Մարդուն ի՞նչ կը մնայ:
 12 - Քանզի ո՞վ գիտէ թէ ո՞ր բանը
 աղէկ է կենդանի մարդուն՝
 Ստուերի պէս անցուցած իր ունայն
 կեանքին բոլոր օրերուն մէջ.
 Վասն զի մարդուն ո՞վ պիտի յայտնէ,
 Թէ իրմէ ետքը արեւուն տակ ի՞նչ պի-
 տի ըլլայ:

ԳԼ. Է

Բարի անունը հոտուէտ իւղէն,
 Ու մահուան օրը ծննդեան օրէն ա-
 ղէկ է:
 2 - Սուգի տուն երթալը
 Կոչունքի տուն երթալէն աղէկ է.
 Վասն զի ամէն մարդուն վախճանը
 այն է,
 Ու կենդանի եղողը շառի իր սրտին
 մէջ կը դնէ:
 3 - *Տրամութիւնը ծիծաղելէն աղէկ է,
 Վասն զի երեսին տրամութիւնովը սիր-
 ար չկը զըւարճանայ:
 4 - Իմաստուններուն սիրար սուգի
 տունը,
 Իսկ յիմարներուն սիրար ուրախու-
 թեան տունը կ'ըլլայ:
 5 - Իմաստունին յանդիմանութիւնը
 լսելը
 Յիմարներուն երգը լսելէն աղէկ է:
 6 - Վասն զի ինչպէս է փուշերուն
 ձայնը կաթսային տակ,
 Յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է:
 Ասիկա ալ ունայնութիւն է:
 7 - Իրաւ որ բռնութիւնը իմաստունը
 յիմար կ'ընէ,
 Ու պարգևը Բարի-ն սիրար կ'ապա-
 կանէ:
 8 - Մէկ բանին վախճանը սկիզբէն
 աղէկ է.
 Ու երկայնամիտ ոգին հպարտ ոգիէն
 աղէկ է:
 9 - Մի արտորար հոգիովդ բարկա-
 նալու.

*Կա՛մ, Սրամութիւնը
 †Կա՛մ, բարի կ'ըլլայ

Քանզի բարկութիւնը յիմարներուն ծոցին մէջ կը հանգչի:

10 - Մի բտեր թէ Ինչո՞ւ համար առաջ-
ուան օրերը այս օրերէն աղէկ էին ,

Վասն զի այս բանին համար բրած հարցումը իմաստութեամբ չէ :

11 - Իմաստութիւնը ժառանգութեան պէս աղէկ է ,

Ու արեւը տեսնողներուն օգտակար է :

12 - Վասն զի իմաստութիւնը հովանաւորութիւն կ'ընէ ,

Եւ արծաթը հովանաւորութիւն կ'ընէ .
Բայց գիտութեան օգուտը այ՞ է

Որ իմաստութիւնը զինք ստացողները կ'ապրեցնէ :

13 - Աստուծոյ գործին նայէ .

Վասն զի անոր ծառածը ո՞վ կրնայ շիակել :

14 - Աղէկ օրը աղէկութեամբ անցուր ,
Ու գէշ օրը զգուշութիւն բրէ .
Եւ Աստուած իրարու գիմաց գրաւասանք ,

Որպէս զի մարդ իրմէ ետքը բան մը չգանէ :

15 - Իմ ունայնութեան օրերուս մէջ ամէնը տեսայ .

Արդար կայ որ իր արդարութեանը մէջ կը կորսուի ,

Եւ ամբարիշտ կայ որ իր ամբարշտութեանը մէջ էր կէտնէ կ'երկնցնէ :

16 - Խիստ շատ արդար մի ըլլար ,
Ու ինքզինքդ չափէ դուրս իմաստուն մի կարծեր .

Ինչո՞ւ համար քեզ կորսնցնես :

17 - Խիստ ամբարիշտ մի ըլլար ու յիմար մի ըլլար .

Ինչո՞ւ համար ատենդ չեկած մեռնիս :

18 - Աղէկ է որ մէկը բռնես , ու միւսէն ալ ձեռքդ չբաշես ,

Վասն զի Աստուծմէ վախցողը ամէնէն ապահով կ'ելլէ :

19 - Իմաստութիւնը աւելի դժ կուտայ իմաստունին ,

Քան թէ քաղաքի մը մէջ եղող տասը իշխանը՝ այն քաղաքին :

20 - Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ չկայ
Որ աղէկութիւն ընէ , ու մեղք չգործէ :

21 - Արդ քու սիրտդ ամէն խօսուած խօսքերուն մի տար ,
Որպէս զի քու ծառայիդ քեզի անէծք տալը չսես .

22 - Վասն զի քու սիրտդ գիտէ

Որ դուն ալ շատ անգամ ուրիշներուն անէծք տուած ես :

23 - Ասոնց ամէնը իմաստութեամբ փորձեցի .

Ըսի թէ Ես իմաստուն ըլլամ .
Բայց անիկա ինձմէ հեռու էր :

24 - Հեռուն ինչ ըլլալը ,
Ու խիտ խորունկ եղածը ո՞վ կը գտնէ :

25 - Ես իմ՝ սրտովս պարտեցայ՝ որպէս զի գիտնամ՝ և քննեմ
Ու փնտռեմ իմաստութիւնը ու հանճարը .

Եւ յիմարութեան չարութիւնը
Ու անմտութիւնը և խենթութիւնը գիտնամ .

26 - Ու ես մահուանէ դառն գտայ այն կիներ՝
Որուն սրտին մէջ ցանցեր և ուկաններ ,

Ու ձեռքերուն մէջ կապանքներ կան .
Աստուծոյ առջև հաճելի եղողը անկէ կ'ազատի ,
Բայց մեղաւորը անկէ կը բռնուի :

27 - Ահա ստիկա գտայ , կ'ըսէ ժողովողը ,
Մէկիկ մէկիկ հաճելով հաշիւը գտնելու համար .

28 - (Զոր հոգիս տակաւին կը փնտռէ ,
Բայց չեմ կրնար գտնել .)
Այր մարդ՝ հազարէն մէկ գտայ ,
Բայց բոլոր ասոնց մէջ մէկ կիւն չգտայ :

29 - Ահա միայն ստիկա գտայ՝
Որ Աստուած մարդը ուղիղ ստեղծեց ,
Բայց անոնք շատ հնարքներ փնտռեցին :

ԳԼ Ը

Իմաստունին պէս ո՞վ կայ .
Ու խօսքի մեկնութիւնը ո՞վ գիտէ .
Մարդուն իմաստութիւնը անոր երեսը կը փայլեցնէ ,
Ու երեսին պնդութիւնը կը փոխուի :

2 - Ես կ'ըսեմ որ Թագաւորին հրամանը պահէ .

Մանաւանդ Աստուծոյ երդումին պատճառաւ :

3 - Անոր առջևէն ելլելու մի արտորար .
Զոր գործի մէջ մի կենար ,
Վասն զի անիկա ինչ որ ուզէ՝ կ'ընէ :

4 - Ուր որ Թագաւորին խօսքը կայ ,
Հոն իշխանութիւն կայ .
Ու ո՞վ կրնայ անոր բտել թէ Ի՞նչ կ'ընես :

- 5 - Պատուիրանքը պահողը չարիքի չհանգիպիր.
- Եւ իմաստունին սիրտը ժամանակը ու յարմարութիւնը կը ճանչնայ:
- 6 - Վասն զի ամէն գիտաւորութիւն էր ժամանակը ու յարմարութիւնը ունի,
- Քանզի մարդուն վրայ շատ նեղութիւն կու գայ:
- 7 - Վասն զի անհկա ըլլալու բանը չգիտեր.
- Եւ ո՞վ պիտի յայտնէ անոր թէ ի՛նչ պէս պիտի ըլլայ:
- 8 - Հոգիին վրայ իշխող մարդ չկայ, որ հոգին արգիլէ,
- Ու մահուան օրուանը վրայ տիրող չկայ.
- Եւ այն պատերազմին մէջ *արձակում՝ չկայ.
- Ու ամբարշտութիւնը իրեն հետեողները չազատեր:
- 9 - Ասոնց ամէնը տեսայ,
- Ու արեւուն տակ եղող ամէն գործին իմ սիրտս տուի:
- Ատեն կայ որ մարդ մը ուրիշ մարդու վրայ կ'իշխէ
- Իրեն թշուառութեանը համար:
- 10 - Եւ ասոր հետ տեսայ ամբարիշտները
- Որոնք թաղուեցան գացին ու սուրբ տեղէն ելան,
- Եւ մնացուեցան այն քաղաքին մէջ՝ ուր այսպէս ըրին:
- Այս ալ ունայնութիւն է:
- 11 - Որովհետեւ գէշ գործին վրայ վճիւր շուտով չկատարուիր,
- Այս պատճառաւ մարդոց որդիներուն սիրտը
- Չարութիւն ընելու փոփոխ լեցուած է:
- 12 - Թէեւ մեղաւորը հարիւր անգամ չարութիւն ընէ,
- Ու անոր Խանութք երկնայ ալ,
- Այսու ամենայնիւ ստոյգ գիտեմ որ բարութիւնը
- Աստուծո՛վ վախցողներուն, անոր երեսէն վախցողներուն, պիտի ըլլայ:
- 13 - Բայց ամբարշտին բարութիւն պիտի չըլլայ.
- Ու անհկա էր օրերը պիտի չերկնցնէ,
- հապա ստուերի պէս պիտի ըլլայ:
- Վասն զի Աստուծոյ երեսէն չվախնար:

*Կա՛մ, զինադադարում

- 14 - Ունայնութիւն մը կայ, որ աշխարհիս վրայ կ'ըլլայ.
- Այսինքն արդարներ կան, որոնց ամբարիշտներուն գործին պէս կը պատահի,
- Ու ամբարիշտներ ալ կան, որոնց արդարներուն գործին պէս կը պատահի:
- Ըսի որ Այս ալ ունայնութիւն է:
- 15 - Ու ես ուրախութիւնը գովեցի,
- Վասն զի մարդ արեւուն տակ՝ Ուտելէ, խմելէ և ուրախութիւն ընելէ վատ
- Աղէկ բան մը չունի.
- Վասն զի արեւուն տակ Աստուծոյ անոր տուած կեանքին օրերուն մէջ Իր աշխատանքէն տակա կը մնայ անոր:
- 16 - Երբ ես իմ սիրտս տուի իմաստութիւնը գիտնալու,
- Ու երկրի վրայ եղած զբաղմունքը տեսնելու,
- (Վասն զի թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր Իր աչքը քուն չտեսնող մարդ կայ,)
- 17 - Այն ատեն Աստուծոյ բոլոր գործերէն հասկցայ,
- Որ մարդ չկրնար գտնել այն գործը՝ որ արեւուն տակ կ'ըլլայ.
- Վասն զի մարդ կ'աշխատի փնտաւուր, բայց չգտներ,
- Ու թէեւ իմաստունն ալ Գիտնամ ըսէ, գտնելու կարող չըլլար:

ԳԼ. Թ

- Վասն զի այս ամէնը իմ սրտիս մէջ գրի,
- Որ այս ամէնը քննեմ,
- Որ արդարները և իմաստունները ու անոնց գործերը
- Աստուծոյ ձեռքին մէջ են.
- Մարդ չգիտեր թէ՛ սերը և թէ՛ ատելութիւնը.
- Ամէն բան անոնց առջև է:
- 2 - Ամէն բան ամէնուն հաւատարմ պէս կը պատահի.
- Արդարին ու ամբարշտին,
- Բարի մարդուն, մաքուրին ու անմաքուրին,
- Ձո՛հ ընողին ու զո՛հ չընողին
- Պարտա՛հար գիպուածը մէկ է.
- Ինչպէս է բարի մարդը, մեղաւորն ալ այնպէս է.
- Երդում ընողը երդումէ վախցողին պէս է:

3 - Արևուն տակ եղած բոլոր գործերուն մէջ գէշ բանը այս է, որ ամէնուն պարտաւոր դիպուածը մէկ է.

Ու նաև մարդոց սրդիններուն սիրտը Չարութեամբ լեցուած ըլլալով՝ Իրենց կենդանութեան ատենը իրենց սրտին մէջ խենթութիւն կայ,

Ու ետքը մեռելներուն կ'ընեն :

4 - Քանզի բոլոր կենդանիներուն ընկերացած մարդէն յոյս կայ.

Վասն զի ողջ շունը մեռած առիւծէն աղէկ է:

5 - Որովհետև կենդանիները գիտեն որ պիտի մեռնին :

Բայց մեռելները բան մը չեն գիտեր , Ու ալ *վարձք մը չեն առներ.

Վասն անոնց յիշատակը մուսուրեցաւ :

6-Թէ՛ անոնց սէրը, թէ՛ ատելութիւնը Եւ թէ՛ նախանձը արդէն կորսուեցաւ,

Ու անոնք արևուն տակ եղող բաներուն մէջ՝

Ալ յաւիտեան բաժին մը չունին:

7 - Քնա հացդ ուրախութեամբ կեր, Ու գինիդ ուրախ սրտով խմէ, Վասն զի արդէն Աստուած քու գործերուդ հաւնեցաւ :

8 - Հանդերձներդ ամէն ատեն ճերմակ ըլլան,

Ու գլխուդ վրայէն իւզը պակաս չըլլայ :

9 - Քու սիրած կնոջդ հետ կեանք վայելէ

Քու ունայնութեան կեանքիդ բոլոր օրերուն մէջ ,

Զոր Աստուած քեզի տուաւ արևուն տակ

Քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ .

Վասն զի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է՝

Արևուն տակ քաշած աշխատանքէդ :

10 - Զեռքդ ինչ որ գտնէ ընելու, Բար ու ժովդ ըրէ.

Քանզի այն քու երթալու գերեզմանիդ մէջ

Գործ , խորհուրդ , գիտութիւն ու իմաստութիւն չկայ :

11-Քարձայ ու արևուն տակ տեսայ, Որ ճամբան վազողներուն չէ, Ու պատերազմը զօրաւորներուն չէ, Ու նաև հացը իմաստուններուն չէ,

Եւ հարստութիւնն ալ հանճարեղներուն չէ,

Ու նաև շնորհքը գիտուններուն չէ . Հապա ժամանակ ու դիպուած կը պատահի ամէնուն.

12 - Վասն զի մարդ իր ատենը անգամ չգիտեր .

Ինչպէս ձուկերը չար ուռկանով կը բռնուին,

Եւ թռչունները ծուղակի մէջ կը բռնուին,

Նայնպէս մարդոց սրդիններն ալ սրագայթի մէջ կ'իյնան,

Երբ չար ժամանակը յանկարծ անոնց վրայ կու գայ :

13 - Արևուն տակ այս իմաստութիւնն ալ տեսայ, Ու անիկա ինձի մեծ երեցաւ.

14 - Պզտիկ քաղաք մը՝ ու մէջն ալ քիչ մարդ կար ,

Եւ անոր վրայ մեծ թագաւոր մը եկաւ ու զանիկա պաշարեց, Եւ անոր դէմ՝ մեծ պատնէշներ շինեց.

15 - Ու անոր մէջ աղքատ իմաստուն մը գտնուեցաւ ,

Եւ անիկա իր իմաստութիւնովը քաղաքը ազատեց.

Բայց այս աղքատ մարդը բնաւ յիշող մը չեղաւ :

16 - Այն ատեն ըսի թէ Իմաստութիւնը ուժէն աղէկ է, Թէև աղքատին իմաստութիւնը կ'անարգեն,

Ու անոր խօսքերը մտիկ չեն ըներ :

17 - Իմաստուններուն մեղմ՝ խօսքերը

Յիմարներուն մէջ իշխան եղողին ազազակէն աղէկ կը լսուին :

18 - Իմաստութիւնը պատերազմական զէնքերէն աղէկ է.

Բայց մէկ մեղաւորը շատ բարութիւններու կորուստին պատճառ կ'ըլլայ :

ԳԼ Ժ

Մեռած ճանճերը իւզագործին իւզը գարշահոտ կ'ընեն .

Քիչ մը անմտութիւնն ալ *իմաստութեամբ և պատուով երևելի *եպարտ մարդը այնպէս կ'ընէ :

*կա՛մ, շահ

*կա՛մ, իմաստութեանն ու պատիւէն աւելի երևան կ'ելլէ

- 2 - Իմաստունին սիրտը իր աջ կողմն է,
Ու անմիտին սիրտը իր ձախ կողմն է :
- 3 - Եւ անմիտ մարդը ճամբան քաղե-
լու տտենն ալ,
Խելքը պակաս ըլլալուն համար, իր յի-
մար ըլլալը ամէնուն կը յայտնէ :
- 4 - Եթէ իշխանին բարկութիւնը քեզի
դէմ՝ ելլէ,
Քու տեղդ մի ձգեր .
Վասն զի քաղցրութիւնը մեծ յան-
ցանքները կը դադրեցնէ :
- 5 - Արեւուն տակ չարութիւն մըն ալ
տեսայ,
Որ իշխանին երեսէն ելած անխոհեմու-
թիւն մը ըլլալ կ'երևնայ :
- 6 - Անմտութիւնը խիստ բարձր տեղե-
րու վրայ կը դրուի,
Ու հարուստները ցած տեղ մը կը
նստին :
- 7 - Տեսայ ծառաներ «բան» ձիերու վրայ
հեծէր էին,
Եւ իշխաններ՝ որոնք երկրի վրայ ծա-
ռաներու պէս կը քայլին :
- 8 - Փոս փորոզը ինք անոր մէջ կ'իյնայ,
Ու ցանկ քակողը օձը կը խածնէ :
- 9 - Քարեր կարողը անանցմէ կը փաստուի,
Եւ փայտ ճեղքողը անկէ վասնզի մէջ
կ'ըլլայ :
- 10 - Եթէ երկաթը ըթացած է, ու
անոր բերանը չարէ,
Այն տառն ճարտը եր ոյժը *կրկնապատ-
կելու է .
Բայց իմաստութիւնը յաջողելու օգու-
տը «նի» :
- 11 - Եթէ օձը թովելէն աւաջ
խածնէ,
Այն տառն թովիչին օգուտ մը չմնար :
- 12 - Իմաստունին բերնին խօսքերը
շնորհք են .
Բայց անմիտին շրթունքները զինք կը
կլլեն :
- 13 - Անոր բերնին խօսքերուն սկզբնա-
ւորութիւնը անմտութիւն է,
Ու անոր խօսքին վերջը գէշ խենթու-
թիւն է :
- 14 - Եւ յիմարը իր խօսքերը կը շատ-
ցընէ .
Մարդս ինչ ըլլալիքը չգիտեր,
Ու անոր ո՞վ պիտի յայտնէ

- Թէ անկէ ետքը ի՞նչ պիտի ըլլայ :
- 15 - Յիմարներուն աշխատանքը զիրենք
կը ձանձրացնէ
Քաղաքը երթալը չգիտցողին պէս :
- 16 - Վաս' քեզի, երկիր, երբ քու
թագաւորդ աղայ է,
Ու իշխաններդ աւատուանց կերպի-
կ'ուտեն :
- 17 - Երանի՛ քեզի, երկիր, երբ քու
թագաւորդ ազնուագարմ՝ է,
Եւ քու իշխաններդ տառնով կ'ուտեն՝
Ու թի համար և ոչ թէ գինովութեան
համար :
- 18 - Շատ ծուլութիւնով շէնքը կը
փլչի,
Եւ ձեռքերու թուլութիւնով տունը
կը կաթի :
- 19 - Կոչունքը ծիծաղելու համար կ'ը-
նեն,
Ու գինին կեանքը կ'ուրախացնէ .
Իսկ արծաթը ամէն բանի բաւական
կ'ըլլայ :
- 20 - Մտքիդ մէջ անգամ թագաւո-
րին անէճք մի տար,
Եւ քու պառկելու սենեակներուդ մէջ
մեծերուն անէճք մի տար .
Վասն զի երկինքի թռչունը այն ձայնը
կը տանի,
Ու թեւաւորը խօսքը կը պատմէ :

ԳԼ. ԺԱ.

- Քու հացդ ջուրերու երեսին վրայ
ձգէ,
Վասն զի շատ օրերէն ետքը զանիկա
պիտի գանես :
- 2 - Եթէ ինն և ութին ալ բաժին տուր,
Վասն զի չես գիտեր թէ երկրի վրայ
ի՞նչ պատուհաս պիտի ըլլայ :
- 3 - Եթէ ամպերը լեցուն ըլլան,
Երկրի վրայ անձրև կը թափեն .
Ու երբ ծառ մը դէպ ի հարաւ կամ՝
դէպ ի հիւսիս իյնայ,
Այն ծառը ինկած տեղը կը մնայ :
- 4 - Հովը դիտողը չկրնար ցանել,
Եւ ամպերուն նայողը չկրնար հնձել :
- 5 - Ինչպէս դուն *հովին ճամբան ո՞րն
ըլլալը,
Ու յղին որովայնին մէջ սակարներուն
ի՞նչպէս կ'աճուիչ չես գիտեր,
Նոյնպէս ամենատեղծ Աստուծոյն
գործը չես գիտեր :

*Կա՛մ, հոգիին

*Եբր. գորացնելու
†Կա՛մ, Օձ մը՝ որ աւանց ձայն հանելու
կը խածնէ, բանասերու մարդը «նի»
տարբերութիւն մը չունի

- 6 - Առտուանց քու սերմից ցանէ,
Եւ իրիկունը քու ձեռքդ պարտապ մի
Թողուր .
- Վասն զի չես գիտեր թէ ո՛րը օգտա-
կար պիտի ըլլայ, ա՛յս թէ այն,
Կամ թէ երկուքը հաւասարապէս ա-
ղէկ պիտի ըլլան :
- 7 - Իրաւ որ ըստը քաղցր է,
Ու արեւը տեսնելը աչքերու ախոր-
ժելի է .
- 8 - Բայց թէև մարդ մը շատ տարի
ապրի,
Ու անոնց ամէնուն մէջ ուրախանայ,
Խաւարի օրերն ալ յիշելու է,
Վասն զի անոնք շատ պիտի ըլլան .
Բոյսր գալիքը ունայնութիւն է :
- 9 - Ով երիտասարդ, քու մանկու-
թեանդ մէջ ուրախ եղիր,
Ու երիտասարդութեանդ օրերուն մէջ
սիրտդ թող քեզ զուարճացնէ .
Եւ քու սրտիդ ճամբաներովը
Ու աչքերուդ նայուածքովը քալէ .
Բայց գիտցիր որ ատնց ամէնուն համար
Աստուած քեզ դատաստանի պիտի
բերէ :
- 10 - Եւ քու սրտէդ տրամուծիւնը
վերցուր,
Ու մարմինէդ չարութիւնը հեռացուր,
Վասն զի մանկութիւնը ու երիտասար-
դութիւնը ունայնութիւն են :

ԳԼ ԺԲ

- Եւ քու Ստեղծիչդ երիտասարդու-
թեանդ օրերուն մէջ յիշէ
Դեռ թշուառութեան օրերը չեկած,
Ու այն տարիները չհասած,
Որոնց մէջ պիտի ըսես թէ Անոնց չեմ
հաւնիր .
- 2 - Արեւը, լոյսը, լուսինը ու սասողերը
չխաւարած,
Ու անձրևին ետեէն ամպերը չդար-
ձած .
- 3 - Այն օրը որ ատնը պահապանները
պիտի դողան,
Ու զօրաւոր մարդիկը պիտի ծռին,
Եւ աղացողները քիչ մնալուն համար
պիտի դադարին,
Ու պատուհաններէն նայողները պիտի
մթննան .
- 4 - Ու երբ աղօրիքին ձայնը տկարանայ,
Փողոցներուն մէջ դռները պիտի գոց-
ուին,
Եւ թռչունի ձայնով պիտի ելլեն,

- Ու բոլոր երգեցող աղջիկները նկուն
պիտի ըլլան .
- 5 - Եւ բարձրէն պիտի վախնան,
Ու ճամբուն մէջ վախկոտ պիտի ըլլան .
Եւ նշենին պիտի ծաղկի,
Ու մարտիք ծանրութիւն պիտի սեպուի .
Եւ ասորժակը պիտի դադարի .
Վասն զի մարդ իր յաւիտենական
տունը կ'երթայ,
Ու լացողները փողոցներուն մէջ պիտի
չըջին .
- 6 - Դեռ արծաթէ թելը չփրթած,
Ու սակիէ բաժակը չկտարած,
Եւ սափորը աղբիւրին քով չփշրած,
Ու ջրհորին վրայի անիւը չկտարած :
- 7 - Այն ատեն հողը երկիր պիտի դառ-
նայ՝ առաջնան եղածին պէս .
Ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ՝
որ գանձիկա տուաւ :
- 8 - Ունայնութիւն ունայնութեանց,
ըսաւ Ժողովոյրը,
Ամէն բան ունայնութիւն է :
- 9 - Եւ որչափ որ Ժողովոյրը իմաստուն էր,
Այնչափ ալ Ժողովուրդին գիտութիւն
սորվեցուց .
Եւ խորհելով ու քննելով
Շատ առակներ շարագրեց :
- 10 - Ժողովոյրը փնտուեց որ ախորժելի
խօսքեր գտնէ .
Ու գրուածը ուղիղ և ճշմարիտ խօս-
քեր են :
- 11 - Իմաստուններուն խօսքերը
խթաններու պէս են,
Ու ժողովներու տէրերէն գամուած
բեւեռներու պէս՝ մէկ հովիւէ
արուած :
- 12 - Վերջապէս, որգեակ իմ, անոնցմէ
խրատ առ .
Շատ գիրք շինելը ծայր չունի,
Ու շատ կարգալը մարմինը կը յօգնե-
ցընէ :
- 13 - Այս բոլոր խօսքին վախճանը
լսենք .
Աստուծո՛վ վախցիր ու անոր պատուի-
րանքները պահէ,
Վասն զի մարդուս բոլոր պարտա-
ւանքի մասիկա է :
- 14 - Քանզի Աստուած ամէն դործը,
Ամէն ծածուկ բաներու հետ,
Թէ՛ բարին և թէ՛ չարը դատաստանի
պիտի բերէ :

*Կամ, կապարը ախորժակը գրգռելէն
†Կամ, կշռելով

ԵՐԳ ԵՐԳՈՑ



ԳԼՈՒԽ Ա

Երգ երգոց Սողոմոնի:

2 - Իր բերանին համբոյրներովը թող համբուրէ զիս.

Վասն զի քու սերդ գինիէն աղէկ է:

3 - Քու իւղերուդ հօտը ախորժելի է, Քու անունդ թափուած իւղի պէ՞ է,

Անոր համար օրհորդները քեզ կը սիրեն:

4 - Ձիս քաշէ, քու ետևէդ պիտի վազենք.

Թագաւորը իր ներքին սենեակները տարաւ զիս.

Քեզի հետ ցնծանք և ուրախանանք, Քու սերդ գինիէն աւելի յիշենք.

Քեզ *ուզողութեամբ կը սիրեն:

5 - Ով Երուսաղէմի աղջիկներ, Ես սե եմ, բայց գեղեցիկ,

Կեդարու վրաններուն պէս, Սողոմոնի վարագոյրներուն պէս:

6 - Իմ սևցած ըլլալուս մի նայիք, Վասն զի արևը զիս տեսաւ.

Իմ մօրս սրգիները ինծի սրգողեցան, Ձիս այգիներու պահապան ըրին.

Բայց իմ այգիիս պահպանութիւն չըրի:

7 - Պատմէ ինծի, ով հոգիիս սիրածը, Քո՞ւ հօգդ ո՞ւր կ'արածես.

Կէսօրին ո՞ւր կը պառկեցնես. Քանզի քու ընկերներուդ հօտերուն քով

Ինչո՞ւ +թափառականի պէս ըլլամ:

8 - Եթէ դուն չես գիտեր, ով կիներուն գեղեցիկը,

Հօտերուն շաւիղներէն գնա, Ու հովիւներուն վրաններուն քով քու ուլերդ արածէ:

9 - Փարաւանի կառքերուն լճո՞ւն ձիերուս

Նմանցուցի քեզ, ով իմ սիրուհիս.

10 - Քու այտերդ զարդերով գեղեցիկ են,

Եւ քու պարանոցդ՝ քառամանեակներով:

11 - Քեզի սակեղէն զարդեր պիտի շինենք Արծաթէ կիտուածներով:

12 - Երբ թագաւորը սեղանն էր, Իմ նարդոսս իր հօտը բուրեց,

13 - Իմ սիրականս ինծի ստաշխի ծրարին պէ՞ է,

Գիշերը իմ ստինքներուս մէջ պիտի հանգչի:

14 - Իմ սիրականս հինայի աղկոյգէն պէ՞ է ինծի

Ենգագդի այգիներուն մէջ:

15 - Ահա գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,

Ահա գեղեցիկ ես. քու աչքերդ աղաւնիներս՝ աչքերսն նման են:

16 - Ով իմ սիրականս, ահա գեղեցիկ ես ու վայելուչ.

Եւ մեր անկողինը կանանչ է:

17 - Մեր տուններուն գերանները եղևնափայտ են,

Ու մեր առիքները մայր փայտէ են:

ԳԼ. Բ

Ես Սարօնի ծաղիկն եմ,

Ու հովիաներուն շուշանը:

2 - Ինչպէս շուշանը փուշերուն մէջ՝ Այնպէս է իմ սիրուհիս աղջիկներուն մէջ:

3 - Ինչպէս խնձորենին անտառի ծառերուն մէջ՝

Այնպէս է իմ սիրականս երիտասարդներուն մէջ.

Անոր հովանիին տակ ախորժելով նրատայ,

Ու անոր պտուղը իմ քիմքիս քաղցր է:

4 - Ձիս *խնձոյքին տունը բերաւ,

Եւ անոր գրօշը իմ վրաս սեր էր:

5 - Ձիս կարկանդակներով զօրացուցէք, Ձիս խնձորներով ուժովցուցէք,

Վասն զի ես սիրով կը նուազիմ:

6 - Անոր ձախ ձեռքը իմ գլխուս տակ ըլլայ,

Ու աջ ձեռքը զիս գրկէ:

7 - Ով Երուսաղէմի աղջիկներ, Ձեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երգմնցնեմ,

Որ սիրուհին չվերցնէք ու չարթնցնէք, *ԵՔԵ. գինիին

Կամ, ուղիղները +Կամ, նուազածի

*ԵՔԵ. գինիին

Մինչև որ ինք չուզէ:

8 - Իմ սիրականիս ձայնն է.

Ահա անիկա լեռներուն վրայէն ցաթկերով,

Ու բլուրներուն վրայէն ցաթկրտելով կու գայ:

9 - Իմ սիրականս այծեամի կամ եղնիկի ձագի կը նմանի.

Ահա հիմա մեր պատին ետեւը կայներ է,

Պատուհաններէն կը նայի,

Վանդակներէն կ'երևնայ:

10 - Իմ սիրականս պատասխան տալով ինծի ըսաւ,

Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, ու եկուր.

11 - Քանզի ահա ձմեռը անցաւ,

Անձրևները անցան գացին.

12 - Գետնի վրայ ծաղիկներ կ'երևնան,

Յօտելու ժամանակը հասաւ,

Ու մեր երկրին վրայ տատրակին ձայնը կը լսուի:

13 - Ահա թղենին իր թուզերը կը հասցնէ,

Ու որթերը ծաղկեցան և երեսն հասար կու տան.

Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, ու եկուր:

14 - Ով իմ աղաւնիս, վէմին խոռոչներուն մէջ,

Ապառաժին հովանիին տակ եկուր.

Ինծի երեսոք ցուցուր, ձայնդ ինծի լսել տուր.

Քանզի ձայնդ քաղցր ու դեմքդ գեղեցիկ է:

15 - Բռնեցէք մեզի աղուէսները.

Այգիները աւրող պզտիկ աղուէսները.

Վասն զի մեր այգիները ծաղկեր են:

16 - Իմ սիրականս իմն է, ու ես անորն եմ.

Անիկա եր հօրը շուշաններու մէջ կ'արածէ:

17 - Օրուան հալը չփչած՝ ու ստուերները չհեռացած՝

Գարձիր, ով իմ սիրականս,

Ու Բեթերի լեռներուն վրայի այծեամին պէս՝

Կամ եղնիկներու ձագին պէս եղիր:

ԳԼ. Գ

Իմ հոգւոյս սիրածը
Գիշերը անկողինիս մէջ փնտռեցի,

Զանիկա փնտռեցի բայց չգտայ:

2 - Ելլեմ՝ հիմա պարտիմ քաղաքին մէջ,

Փողոցներուն ու հրապարակներուն մէջ,

Իմ հոգիիս սիրածը փնտռեմ.

Զանիկա փնտռեցի, բայց չգտայ:

3 - Քաղաքին մէջ պարտող պահպանները զիս գտան.

Արդեօք իմ հոգիիս սիրածը տեսա՞ք՝ ըսի:

4 - Անանցմէ քիչ մը առաջ անցնելով,

Իմ հոգիիս սիրածը գտայ.

Զանիկա բռնեցի ու չթողուցի,

Մինչև որ իմ մօրս տուեր,

Ու զիս ծնանողին սենեակը, տարի:

5 - Ով Երուսաղէմի աղջիկներ,

Զեզ այծեամներով կամ դաշտին եղնիկներովը կ'երգմնեմ,

Որ սիրուհին չվերցնէք ու չարթնցնէք՝

Մինչև որ ինք չուզէ:

6 - Ով է տիկա՝ որ զմուռսով և կնդրուկով

Ու փերեզականերուն ամէն պէս՝ փոշիովը խնկուած՝

Անապատէն կ'ելլէ ծուխի սիւներու պէս:

7 - Ահա Սողոմոնի *գահգաքը

Որուն բոլորափքը Իսրայէլի զօրաւորներէն

Վաթաւն զօրաւոր կայ.

8 - Ամէնն ալ սուսերաւոր են,

Ու պատերազմի վարժուած են.

Գիշերուան վախին համար՝

Ամէն մէկուն սուրը իր ազդրին վրայ է:

9 - Սողոմոն թագաւորը Լիբանանի ծառերէն

Գահաւորակ մը շինեց իրեն համար.

10 - Սիւները արծաթէ, յենարանները ոսկիէ,

Բազմոցը ծիրանիէ շինեց.

Ու մէջը Երուսաղէմի աղջիկներէն +Խիսա գեղեցիկ՝ նկարագործուած էր:

11 - Ով Սիօնի աղջիկներ, ելէք,

Եւ Սողոմոն թագաւորը տեսէք

Այն իւր պարզ, սրով իր մայրը անոր նկայութեան օրը

Ու սրտին ուրախութեան օրը պատկեց զանիկայ:

*Կա՛մ, անկողինը

+Ե՛բբ. Սիրով

ԳԼ. Գ

Ահա դուն գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Ահա դուն գեղեցիկ ես .
 Լաշակիդ մէջէն քու աչքերդ աղաւնիներս՝ ոչ էրան նման են .
 Քու մազերդ Գաղատայ՝ լեռը պառկող՝ այծերուն հօտին պէս են :
 2 - Ակռաներդ լուացարանէն ելլող խուզած հօտի պէս են,
 Արոնց ամէնը երկուսրեակ կը ծնանին,
 Աւանոնց մէջ ամուլ չկայ :
 3 - Քու շրթունքներդ կարմիր դերձանի պէս են,
 Աւ խօտուածքդ գեղեցիկ է .
 Այտերդ լաշակիդ մէջէն՝ Նուռի կտորներու կը նմանին :
 4 - Քու պարանոցդ զինարանի համար շինուած
 Գաւթի աշտարակին պէս է,
 Ար հոն հազար սապար կախուած են .
 Ամէնն ալ զօրաւորներուն վահաններն են :
 5 - Քու երկու ստինքդ նման են երկու ուլերու,
 Արան այծեամի մը երկուսրեակ քնած են,
 Եւ շուշաններու մէջ կ'արածուին :
 6 - Օրուան հալը չփչած, ու ստուերները չհեռացած,
 Ես զմուռս լեռը ու կնդրուկի բլուրը պիտի երթամ :
 7 - Բալարովին գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
 Եւ քու վրագ արատ չկայ :
 8 - Ով հարսն, ինծի հետ Լիբանանէ եկուր,
 Ինծի հետ Լիբանանէ եկուր .
 Ամանոյի գագաթէն, Սանիրի ու Հերմանի գագաթէն,
 Աւիւծներուն մարիներէն՝ ինձերուն լեռներէն նայէ :
 9 - Սիրաս առիր, ով իմ հարս քոյրս,
 Սիրաս առիր քու մէկ աչքովդ .
 Եւ պարանոցիդ մէկ քառամանեակովդ :
 10 - Քու սէրդ ինչ գեղեցիկ է, ով հարս քոյրս .
 Քու սէրդ զինիէն աղէկ է,
 Աւ քու իւղերուդ անուշահամութիւնը՝ Ամէն խուսկերէն :
 11 - Շրթունքներէդ խորիսի մեղր կը կաթի, ով հարսն,

*Աս, լեռէն երևցած

Լեզուիդ տակ մեղր ու կաթ կայ .
 Եւ քու զգեստներուդ անուշահամութիւնը
 Լիբանանի հօտին պէս է :
 12 - Իմ հարս քոյրս փակեալ պարտէզ մըն է,
 Փակեալ աղբիւր՝ կնքուած աղբերակ մըն է :
 13 - Քու սունկերդ քաղցրահամ պտուղներով,
 Հինաներով ու նարդաներով՝ նունեններու գրախտ են .
 14 - Նարդոս և քրքում, եղէգն և կինաման,
 Ամէն կնդրուկի ծառով, զմուռս ու հալուէով
 Եւ բոլոր գլխաւոր խուսկերով :
 15 - Պարտէզներու աղբիւր,
 Կենդանի ջուրի ջրհոր
 Աւ Լիբանանէ լալա՝ հեղեղներ :
 16 - Արթնցիր, ով հիւսիս, եկուր, ով հարաւ,
 Իմ պարտէզիս մէջ փչէ, որպէս զի անոր խուսկերը բուրեն .
 Իմ սիրականս թող իր պարտէզը գայ,
 Աւ իրեն ախորժիղի պտուղները ուտէ :

ԳԼ. Ե

Իմ պարտէզս եկայ, ով հարս քոյրս,
 Իմ զմուռս խուսկերուս հետ ժողովեցի,
 Իմ խորիսիս մեղրիս հետ կերայ,
 Իմ գինիս կաթովս խմեցի :
 Կերէք, ով բարեկամներ,
 Խմեցէք ու զինովցէք, ով սիրելիներս :
 2 - Ես կը քնանամ, բայց իմ սիրաս արթուն է .
 Ահա իմ սիրականիս ձայնն է, որ
 կը զարնէ՝ « Է՛լէ »,
 Ով իմ քոյրս, իմ սիրուհիս,
 Իմ աղաւնիս, իմ կատարեալս, բաց ինծի .
 Քանզի իմ գլուխս ցօղով լեցուցաւ,
 Աւ վարպերս՝ գիշերուան շողերով :
 3 - Իմ պաամուճանս հաներ եմ,
 Զանկա ինչպէս հագնիմ .
 Ոտքերս լուացեր եմ,
 Զանսնք ինչպէս աղտեղեմ :
 4 - Իմ սիրականս իր ձեռքը ձակէն երկնցուց,
 Աւ անոր համար իմ աղիքս գալարեցաւ :
 5 - Ես ելայ որ իմ սիրականիս բանամ,

Ու ձեռքերէս զմուռս՝ ու իմ մատերէս ընտիր զմուռս կաթեց
 Փակաղակին բունելու տեղին վրայ:
 6 - Ես իմ սիրականիս բացի,
 Բայց իմ սիրականս քաշուեր գացեր էր .
 Երբ անիկա կը խօսէր, իմ հոգիս նուազեցաւ .
 Զանիկա փնտուեցի, բայց չգտայ .
 Զանիկա կանչեցի, բայց ինծի պատասխան չտուաւ :
 7 - Քաղաքին մէջ պտրտող պահապանները զիս գտան,
 Զարկին վիրաւորեցին զիս .
 Պարսպին պահապանները քօղս վրայէս վերցուցին:
 8 - Ով Երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երգմնցնեմ,
 Եթէ իմ սիրականս գտնէք,
 Անոր պատմէք որ ես սիրով կը նուազիմ:
 9 - Ով կիներուն գեղեցիկը,
 Քու սիրականդ «-բիշ սիրականէ ի՞նչ տարբերութիւն ունի .
 Քու սիրականդ «-բիշ սիրականէ ի՞նչ տարբերութիւն ունի,
 Որ մեզ այդպէս կ'երգմնցնես:
 10 - Իմ սիրականս սպիտակ ու կարմիր է,
 Տասը հաղարի մէջ երևելի է:
 11 - Անոր գլուխը զուա սակի է,
 Վարսքերը ցրուած՝ «- ագուաւի պէս սև են :
 12 - Աչքերը՝ վազող ջուրերուն քով կաթով լուացուած աղաւնիներու «չ- +բիշ» կը նմանին,
 Գամուած գոհարներու պէս են:
 13 - Անոր այտերը ինկալից տունկերու ածուին .
 Ե- անուշահամ ծաղիկներու թաղարներուն պէս են .
 Շրթունքները ընտիր զմուռս կաթող շուշաններ են .
 14 - Ձեռքերը սակի մատնիներ են Թարսիսի քարերով լեցուած .
 Որովայնը բանուած փղոսկր է Շափիւղաներով ծածկուած :
 15 - Սրունքները մարմարիան սիւներ են Ընտիր սակի խարսիսներու վրայ հաստատուած .
 Կերպարանքը Լիբանանի պէս,
 Եղէիններուն պէս, ընտիր է:
 16 - Անոր քիմքը քաղցր,
 Ու ինք բլբլրովին ցանկալի է :

Ահա այսպէս է իմ սիրականս, այսպէս է իմ բարեկամս,
 Ով Երուսաղէմի աղջիկներ :

ԳԼ. 9

Քու սիրականդ ո՞ւր գնաց,
 Ով կիներուն գեղեցիկը .
 Քու սիրականդ ո՞ւր դարձաւ,
 Որ զանիկա քեզի հեռ փնտուէր :
 2 - Իմ սիրականս իր պարտէզը,
 Խնկալից տունկերուն ածուները, իջաւ,
 Որպէս զի պարտէզներու մէջ արածէ,
 Ու շուշաններ ժողվէ :
 3 - Ես իմ սիրականիսն եմ,
 Եւ իմ սիրականս իմն է .
 Անիկա շուշաններու մէջ կ'արածէ:
 4 - Թերսայի պէս գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս .
 Երուսաղէմի պէս հաճելի ես,
 Ո- դրօշակիր զօր+բիշ- պէս ահարկու ես :
 5 - Աչքերդ ինծմէ դարձուր,
 Վասն զի անոնք ինծի յաղթեցին .
 Մտպերդ *Քաղաադ պառկող՝ այծերուն հօտին պէս են:
 6 - Ակումներդ լուացարանէն ելած մաքիներուն հօտին կը նմանին,
 Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին,
 Ու անոնց մէջ ամուլ չկայ :
 7 - Այտերդ լաչակիդ մէջէն՝
 Նուաւի կտորներու կը նմանին :
 8 - Թագուհիները վաթսուն, ու հարճերը ութսուն,
 Եւ օրիորդները անթիւ են:
 9 - Իմ աղաւնիս, իմ կատարեալս, մէկ է,
 Իր մօրը մէկ հասիկը,
 Զինք ծնանողին ընտրեալն է
 Զանիկա աղջիկները տեսան,
 Ու անոր՝ Երանի՛ քսին .
 Թագուհիները ու հարճերն ալ,
 Եւ զանիկա գովեցին:
 10 - Ով է տսիկա, որ արշալոյսի պէս կը նայի,
 Որ լուսինի պէս գեղեցիկ, արևու պէս մաքուր,
 Ո- դրօշակիր զօր+բիշ- պէս ահարկու է:
 11 - Ընկոյզներու պարտէզը իջայ .
 Որպէս զի ձորին լիանանջութիւնը տեսնեմ,

*Կ-Տ, Քաղաադէ երեցած
 †Կ-Տ, պառկուները

Ե- նայիմ՝ թէ արդեօք որթը ծլեցա՞ւ,
 Ու նռնենիները ծաղկեցա՞ն:
 12- Ես չգիտցամ՝ իմ հոգին Ամինագա-
 բի կառքերուն պէս ըրաւ զիս:
 13 - Դարձիր, դարձիր, ով Սողո-
 մացիդ,
 Դարձիր, դարձիր, որպէս զի քեզ տես-
 նենք:
 Ի՞նչ պիտի տեսնէք Սողոմացիին վրայ:
 Իբրև երկու բանակներու գունդը:

ԳԼ. Է

Ի՞նչ գեղեցիկ են քու քայլերդ կօ-
 շիկներով,
 Ով իշխանի աղջիկ.
 Քու բարձրուդ կազմուածքը.
 Երևելի արուեստաւորի մը ձեռքով
 շինուած
 Մանեակներու կը նմանի:
 2 - Քու պարտդ ըմպելիքով լեցուն բու-
 լարակ թասի մը կը նմանի.
 Քու փորդ շուշանով պատած ցորենի
 շեղջին պէս է:
 3 - Քու երկու ստինքդ նման են երկու
 ուլերու,
 Որո՞ւ այծեամի մը երկուտրեակ թնա՞ծ են:
 4 - Պարանոցդ փղոսկրէ աշտարակի
 պէս է.
 Աչքերդ Եսերոն՝ Բաթրաբբիմի դրանը
 քով եղող աւազաններուն իջ
 նմանին.
 Ունչդ դէպ ի Գամասկոս նոյոյ լիբա-
 նանի աշտարակին պէս է:
 5- Գլուխդ քու վրագ կարմեղսի պէս,
 Եւ գլխուդ հիւսուածը ծիրանիի պէս է.
 Թագաւորը +-- խոպոպիքներուդ կապ-
 ուած է:
 6- Ո՛րչափ գեղեցիկ և ո՛րչափ քաղցր ես,
 Ի՞՞ փափկալից սիրուհիս:
 7 - Քու հասակդ արմուէնիի
 Ու ստինքներդ ողկոյզներու կը նմանին:
 8 - Ըսի, Արմուէնիին վրայ ելլեմ՝,
 Անոր սասերուն փակչիմ՝.
 Եւ քու ստինքներդ խաղողի ողկոյզնե-
 րու պէս,
 Ու ռնգունքներուդ հօտը խնձորներու
 հոտին պէս ըլլայ:
 9- Եւ քու քիմքդ ազնիւ գինիի պէս է,
 Որ շիտակ կը վազէ իմ սիրականիս,
 Ու քնացողներուն *չթուէքները կը
 խօսեցնէ՞:

*Կա՛մ, շրթունքներուն վրայ կը կաթի

10 - Ես իմ սիրականիսն եմ,
 Եւ անոր բաղձանքը ինձի է:
 11 - Եկուր, իմ սիրականս, դաշար ել-
 լենք,
 Գիշերը գեղերու մէջ անցնենք.
 12 - Առտուանց կանուխ սյգիները եր-
 թանք,
 Ու տեսնենք թէ որթը ծլե՞ր է, ծաղի-
 կը բացուե՞ր է,
 Եւ նռնենիները ծաղկե՞ր են.
 Հոն իմ սէրս քեզի տամ:
 13 - Մանրագորները երե՞նչ հօտը կու
 տան,
 Ու մեր դռներուն մէջ,
 Ամէն ընտիր պտուղներէն, թէ՛ նոր և
 թէ՛ հին,
 Քեզի համար պահեր եմ՝, ով իմ սի-
 րականս:

ԳԼ. Ը

Երանի՛ թէ իմ մօրս ստինքը ծծած
 եղբօրս պէս ըլլայիր.
 Երբ քեզ դուրսը գտնէի, պիտի համ-
 բուրէի,
 Եւ զիս պիտի չանարգէին:
 2- Քեզ առաջնորդելով իմ մօրս տու-
 նը կը ասանէի,
 Որպէս զի ինձի *տրվեցնես .
 Քեզի հասուէտ գինիէն, իմ նռնենիի
 օշարակէն, կը խմցնէի:
 3 - Չախ ձեռքը գլխուս տակ,
 Ու աջ ձեռքը զիս կը գրկէր:
 4 - Ով Երուսաղէմի աղջիկներ, ձեզ
 կ'երգմնցնեմ՝,
 Որ ի՞ սիրուհիս չարթնցնէք ու չվերցնէք:
 Մինչև որ ինք չուզէ:
 5 - Ով է տսիկա որ իր սիրականին
 կաթնած՝
 Անապատէն կ'ելլէ.
 Քեզ խնձորենիին տակ արթնցուցի.
 Քու մայրդ քեզ հոն ծնաւ,
 Քու ծնողդ քեզ հոն ծնաւ:
 6 - Չիս քու սրտիդ վրայ կնիքի պէս,
 Քու բազուկիդ վրայ կնիքի պէս, դիր.
 Վասն զի սէրը մահուան պէս զօրաւոր
 Ու նախանձը գերեզմանի պէս խիստ է.
 Անոր կայծերը սաստիկ բոցավառ կրա-
 կի կայծեր են:
 7- Շատ ջուրերը չեն կրնար սէրը մարել,
 Ու գետերը զանիկա չեն կրնար ըն-
 կրզմել.

*Կա՛մ, տրվեցնէր

Եթէ մարդ մը սիրոյ փոխարէն իր տանը բոլոր ստացուածքը սայ,
 2 - Անիկա բոլորովին կ'անարգեն:
 8 - Պղտիկ քոյր մը ունինք,
 Ու անիկա ստինք չունի.
 Մեր քրոջը ի՞նչ ընենք
 Անոր համար խօսուած օրը:
 9 - Եթէ անիկա պարիսպ է,
 Վրան արծաթէ աշտարակ մը շինենք.
 Եւ եթէ դուռ է,
 Զանիկա եղևնափայտի տախտակներով
 պատենք:
 10 - Ես պարիսպ եմ,
 Ու իմ ստինքներս աշտարակներու
 պէս են.
 Այս պատճառաւ անոր առջև
 Խաղաղութիւն գտածի պէս եղայ:

11 - Սողոմոն Բաազամոնի մէջ այգի ունէր.
 Անիկա այգին պահապաններու տուաւ,
 Ամէն մէկը անոր պտուղին համար հազար կտոր արծաթ կը բերէր:
 12 - Իմ այգիս իմ առջև է.
 Ով Սողոմոն, հազարը քուկդ ըլլայ,
 Ու երկու հարիւրը անոր պտուղը պահպանողներուն:
 13 - Ով պարտէզներու մէջ նստող,
 Ընկերները քու ձայնդ կը լսեն.
 Ինծի ալ լսել տուր:
 14 - Շուտ ըրէ, ով իմ սիրականս,
 Ու խնկաբեր լեւներուն վրայ
 Այծեամբ կամ եղնիկներու ձագի
 նման եղիր:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

ՓԼՈՒԽ Ա

Ամովտի սրբւոյն Եսայի տեսիլքը
 զոր Յուդայի ու Երուսաղէմի վրայ
 տեսաւ՝ Յուդայի թագաւորներուն Ոգիայի,
 Յովաթամի, Աքազի ու Եղեկիայի օրերը:
 2 - Լսէ, ով երկինք, և ականջ դիր,
 ով երկիր,
 Վասն զի Տէրը կը խօսի.
 Զուակներ մեծցուցի ու բարձրացուցի,
 Եւ անոնք ինծի դէմ ապստամբեցան:
 3 - Եզր իր տէրը կը ճանչնայ,
 Ու էջր իր տէրոջ մտերը,
 Բայ Իսրայէլ զի՞ չճանչնար,
 Իմ ժողովուրդս չիմանար:
 4 - Վա՛յ մեղաւոր ազգին,
 Անօրէնութիւնով ծանրացած ժողովուրդ,
 Զարագործներու սերունդ, ապականիչ
 զաւակներ.
 Անոնք Տէրը թողուցին,
 Իսրայէլի Սուրբը անարգեցին
 Ու ետ քաշուեցան:
 5 - Ո՞ր մարդիկ վրայ կրնաք զարնուիլ,
 Եւք ալ աւելի ապստամբիք:

Բոլոր գլուխը հիւանդ,
 Եւ բոլոր սիրտը մարած է:
 6 - Ոտքին թաթէն մինչև գլուխը
 Բնուանոր վրայ ողջ տեղ չմնաց.
 Հարուածներ, վէրքեր ու շարաւաղից
 խոցեր կան.
 Անոնք չգոցուեցան, չկապուեցան
 Ու իւզով ալ չկակղացան:
 7 - Զեր երկիրը աւերակ դարձեր է,
 Եւ ձեր քաղաքները կրակով այրուած են.
 Զեր արտերը աչքերնուդ առջև օտարները
 կ'ուտեն,
 Ու անոնք օտարներուն ըրած աւերակներուն
 պէս խոպանացած են:
 8 - Եւ Սիօնի ազջիկը այգիի մէջ եղած
 խրճիթի պէս,
 Վարունգի արտի մէջ եղած հիւղի
 պէս,
 Պաշարուած քաղաքի պէս թողուած
 հայեր է:
 9 - Եթէ զօրաց Տէրը մեզի քիչ մը մնացորդ
 թողուցած չլլար,
 Մենք Սողոմի պէս պիտի ըլլայինք,
 Ու Գամբի պիտի նմանէինք:
 10 - Լսեցէք Տէրոջը խօսքը, ով Սողոմի
 իշխաններ,

Ահանջ գրէք մեր Աստուծոյն օրէնքին, սվ Գամարի ժողովուրդ.

11 - Ի՞նչ պէտք է ինծի ձեր զոհերուն շատութիւնը, կ'ըսէ Տէրը.

Ձեր խոյերուն սղջակէզներէն
 Ու պարտառ անասուններուն ճարպէն կշտացած եմ,
 Եւ զուարակներուն ու գառներուն
 Եւ նոխազներուն արիւնները չեմ ախորժիր:

12 - Երբ կու գաք իմ առջև երևանլու,
 Ո՞վ պահանջեց ձեզմէ, որ այսպէս իմ որահներս կոխէք:

13-Ալ ինչի ունայն ընծաներ մի բերէք.
 Ձեր խունկը ինծի պիղծ է.
 Ամսագլուխներուն ու շաբաթներուն
 Ե- ժողովներու գումարուելուն չեմ կրնար տանիլ.

Ձեր տօնախմբութիւնը անգամ անօրէնութիւն է:

14 - Ձեր ամսագլուխներէն ու տօներէն կը զգուի իմ հոգիս.

Անոնք իմ վրաս քանի բեռ եղան,
 Վ երցնելէ յոգնեցայ:

15 - Ուտի երբ ձեռքերնիդ կը տարածէք,
 Աչքերս ձեզմէ պիտի ծածկեմ.
 Նսե երբ աղօթքնիդ կը շտացնէք,
 պիտի չլսեմ.

Վասն զի ձեռքերնիդ արիւնով լեցուն են:

16 - Լուսցուեցէք, մաքրուեցէք,
 Իմ աչքերուս առջևէն ձեր շար գործերը մէկդի բրէք,
 Չարութիւն գործելէ դադարեցէք.

17 - Բարութիւն ընել սորվեցէք,
 Իրաւունքը փնտռեցէք, զրկուածին ուղղութիւն բրէք,
 Որբին դատաստանը տեսէք ու որբւարիին դատը պաշտպանեցէք:

18 - Հիմա եկէք վիճարանինք, կ'ըսէ Տէրը.
 Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են,
 Չիւնի պէս պիտի ճերմկնան,
 Ե- եթէ որդան կարմիրի նման են,
 Ասրի պէս ճերմակ պիտի ըլլան:

19 - Եթէ դուք յօժարիք ու հնազանդիք,
 Երկրին բարիքը պիտի ուտէք.

20-Բայց եթէ զի՞ մերժելով ապստամբիք,
 Սուրբ պիտի ուտէ ձեզ,

Վասն զի -Տէրոջը բերանը խօսեցաւ
 ՝՝՝:

21 - Ի՞նչպէս պառնկեցաւ այդ հաւատարիմ քաղաքը.
 Անիկա իրաւունքով լեցուն էր,
 Ու անոր մէջ արդարութիւն կը բնակէր.
 Բայց հիմա մարդասպաններու քնակարան է:

22 - Քու արծաթդ կղկղանք դարձաւ,
 Գինիիդ մէջ ջուր խառնուած է:

23 - Քու իշխաններդ ապստամբ ու գողերու ընկեր եղան.
 Ամէնն ալ կաշառք սիրելով՝ պարգևներ կը փնտռեն.

Անոնք որբին դատաստանը չեն տեսներ,
 Եւ որբւարիին դատը անոնց առջև չգար:

24 - Անոր համար զօրաց Եհովա Տէրը,
 Իսրայէլի Հօրը, «յսպէ՞ս կ'ըսէ.
 Աւա՛ղ, իմ հակառակորդներուս հատուցում պիտի ընեմ»,
 Ու թշնամիներէս վրէժ պիտի առնեմ:

25 - Եւ իմ ձեռքս քու վրագ պիտի դարձնեմ,
 Եւ քու կղկղանքդ իբր թէ *բորակով պիտի մաքրեմ,
 Ու բոլոր անագդ մէկդի պիտի զատեմ:

26 - Եւ քու դատաւորներդ առաջուան պէս,
 Ու խորհրդականներդ սկիզբէն եղածին պէս նորէն պիտի հաստատեմ.
 Անկէ ետքը դուն պիտի կոչուիս
 Արդարութեան քաղաք եւ հաւատարիմ աւան:

27-Սիօնը դատաստանով պիտի փրկուի,
 Եւ հոն դարձողները՝ արդարութեամբ:

28 - Բայց անօրէնները ու մեղաւորները մէկտեղ պիտի ջարդուին,
 Եւ անոնք որ Տէրը կը թողուն, բնաջինջ պիտի ըլլան:

29 - Քանզի ձեր ցանկացած բեկկնիներէն պիտի ամչնան,
 Եւ այն ձեր ընարած պարտէզներուն համար ամօթով պիտի մնաք:

30 - Վասն զի տերեւները թուամած բեկկնիի պէս,
 Եւ ջուր չունեցող պարտէզի պէս պիտի ըլլաք:

31 - Ու զօրութիւն ունեցողը խժուծի պէս,

*Կա՛մ, մաքրութիւնով

Եւ անոր գործը կայծի նման պիտի
 ըլլայ,
 Ու երկուքն ալ մէկէն պիտի սյրին,
 Եւ մարտը պիտի չգանուի:

ԳԼ. Բ

Ամովսի որդւոյն Եսայիի՝ Յուդայի
 ու Երուսաղէմի վրայ տեսած տեսիլ-
 քին խօսքը:

2 - Վերջին օրերը պիտի ըլլայ որ Տէ-
 րոջը տանը լեռը
 Լեռներուն գլխուն վրայ պիտի հաս-
 տատուի,
 Եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
 Ու բոլոր հեթանոսները հեղեղի պէս
 պիտի դիմեն անոր:

3 - Եւ շատ ժողովուրդներ պիտի եր-
 թան ու ըսեն,
 Եկէք, Եհովայի լեռը,
 Յակոբի Աստուծոյն տունը, ելլենք,
 Որպէս զի մեզի իր ճամբաները սար-
 վեցնէ,

Ու անոր շաւիղներուն մէջ քալենք.
 Վասն զի օրէնքը Սիօնէ,
 Ու Տէրոջը խօսքը Երուսաղէմէ պիտի
 ելլէ:

4 - Եւ անիկա հեթանոսներուն մէջ
 դատաստան պիտի տեսնէ,
 Եւ շատ ժողովուրդներ պիտի յանդի-
 մանէ:

Ու անոնք իրենց սուրերը խփեր,
 Եւ իրենց նիզակները յօտոցներ պիտի
 շինեն:

Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ.
 Եւ ալ պատերազմ պիտի չսորվին:

5 - Ով Յակոբի տունը,
 Եկէք Տէրոջը լուսովը քալենք:

6 - Քանզի դուն քու ժողովուրդդ,
 Յակոբի տունը, թողուցիր,
 Վասն զի արևելքի կտրուկներովը լեց-
 ուեցան,

Եւ Փղշապցւոց պէս հմայութիւն կ'ը-
 նեն,

Ու օտարներու որդւոց հետ դաշնագիր
 եղան:

7 - Եւ անոնց երկիրը արծաթով ու
 ոսկիով լեցուեցաւ,

Ու անոնց գանձերը անթիւ եղան.
 Անոնց երկիրը ձիերով լեցուեցաւ,
 Եւ անոնց կառքերը անթիւ են:

8 - Կուռքերով ալ լեցուն է անոնց
 երկիրը:

Իրենց ձեռաց գործերուն երկրպագու-
 թիւն կ'ընեն,

Անոնց՝ զորոնք իրենց մատերը շինեցին:
 9 - Եւ ուամիկ մարդը ծռեցաւ,
 Ու ազնուականը խոնարհեցաւ,
 Եւ անոնց պիտի չներես:

10 - Տէրոջը վախին երեսէն
 Եւ անոր վեհափառութեանը մեծու-
 թեանէն

Վէմին մէջ մտիւր, ու հողին մէջ պահ-
 ուէ:

11 - Մարդուն ամբարտաւան աչքերը
 պիտի խոնարհին,

Եւ մարդոց հպարտութիւնը պիտի
 ցածնայ,

Ու այն օրը միայն Տէրը պիտի բարձրա-
 նայ:

12 - Վասն զի զօրաց Տէրոջը օրը
 Ամէն ամբարտաւաններուն ու բարձ-
 րամիտներուն վրայ

Եւ ամէն հպարտացածներուն վրայ
 պիտի ըլլայ,

Ու անոնք պիտի խոնարհին:

13 - Եւ Լիբանանու ամէն բարձրա-
 ցած ու վերացած եղևիններուն
 վրայ,

Ու Բասանի ամէն կաղնիներուն վրայ,

14 - Եւ ամէն բարձր լեռներուն վրայ,
 Ու ամէն բարձրացած բլուրներուն
 վրայ,

15 - Եւ ամէն բարձր աշտարակներուն
 վրայ,

Ու ամէն ամուր պարիսպներուն վրայ,

16 - Եւ Թարսիսի ամէն նաւերուն վրայ,
 Ու ամէն հաճելի երևցած բաններուն
 վրայ պիտի ըլլայ:

17 - Եւ մարդուն ամբարտաւանու-
 թիւնը պիտի ցածնայ,

Ու մարդոց հպարտութիւնը պիտի խո-
 նարհի,

Եւ այն օրը միայն Տէրը պիտի բարձ-
 րանայ:

18 - Ու կուռքերը բնաջինջ պիտի ըլ-
 լան:

19 - Եւ քարայրներու մէջ
 Ու երկրի խռոսչները պիտի մանեն
 Տէրոջը վախին երեսէն

Եւ անոր վեհափառութեանը մեծու-
 թեանէն,

Երբ ինք երկիրը սարսելու ելլէ:

20 - Այն օրը մարդ խլուրդներուն
 ու չղջիկներուն պիտի նետէ

Իր արծաթեղէն կուռքերը ու իր սու-
 կեղէն կուռքերը,

Չորոնք իրեն շիներ են երկրպագութիւն ընելու համար .
 21 - Որպէս զի Տէրոջը վախին երեսէն Ու անոր վեհափառութեանը մեծութենէն
 Ապառաժներուն ծակերը
 Ու վէմերուն ծերպերը մանէ,
 Երբ Անիկա երկիրը սարսելու ելլէ:
 22 - Ետ կեցէք մարդէն, որուն շունչը իր անգունքներուն մէջ է.
 Վասն զի ի՞նչ բանի մէջ հասարակ կը համարուի ան :

ԳԼ. Գ

Վասն զի ահա զօրաց Եհովա Տէրը Երուսաղէմէ և Յուդայէ պիտի վերցնէ գաւազանը և ցուպը,
 Հացին բոլոր զօրութիւնը ու ջուրին բոլոր զօրութիւնը,
 2 - Կորիճը ու պատերազմող մարդը,
 Դատաւորը ու մարգարէն, գուշակութիւն ընողը ու ծերը,
 3 - Յիսնապետը ու պատուաւոր մարդը,
 Խորհրդականը ու իմաստուն ճարտարագետը և հանճարեղ կախարդը:
 4 - Եւ անոնց վրայ մանուկները իշխաններ պիտի կարգեմ,
 Ու անոնց վրայ տղաք պիտի իշխեն:
 5 - Եւ ժողովուրդը իրարմէ,
 Ու ընկերը իր ընկերէն հարստահարութիւն պիտի կրեն.
 Մանուկները ծերերուն գուսպութիւն պիտի ընեն,
 Եւ անարգները՝ պատուականներուն:
 6 - Այն տան պիտի բռնէ մարդ իր հօրը տունէն եղող իր եղբայրը,
 ու ըսէ,
 Դուն հանդերձ ունիս,
 Մեր վրայ իշխան եղիր,
 Ու այս աւերակը քու ձեռքիդ տակ ըլլայ:
 7 - Այն օրը անիկա *պատասխան պիտի տայ՝ ու ըսէ,
 Ես Բաբելոնի զինուոր չեմ ըլլար,
 Վասն զի իմ տանս մէջ ոչ հաց կայ և ոչ հանդերձ.
 Չիս ժողովուրդին վրայ իշխան մի կարգէք :

8 - Քանզի Երուսաղէմ սասանեցաւ և Յուդա ինկաւ .
 Վասն զի անոնց լեզուները ու գործերը Տէրոջը դէմ են,
 Որպէս զի բարկացնեն անոր փառաւոր աչքերը:
 9 - Անոնց երեսներուն տեսքը իրենց դէմ կը վկայէ,
 Եւ իրենց մեղքերը Սոգոմի պէս կը յայտնեն, չեն ծածկեր.
 Վասն զի անոնց անձին, վասն զի իրենց վրայ չարիք բերին:
 10 - Արդարին ըսէք որ երէն աղէկ պիտի ըլլայ .
 Վասն զի անոնք իրենց գործերուն պատուը պիտի ուտեն:
 11 - Վասն զի անօրէնին, գէշ պիտի ըլլայ անոր,
 Վասն զի անոր ձեռքերուն գործերուն փոխարէնը իրեն պիտի արուի:
 12 - Բայ իմ ժողովուրդիս վրայ տղաք բռնաւորութիւն կ'ընեն,
 Ու անոր վրայ կիներ կը տիրեն:
 Ով իմ ժողովուրդս, քու աւաջնորդներդ +եզ գլխէ կը հանեն,
 Եւ քու շաւիղներուդ ճամբան կը խանգարեն:
 13 - Տէրը դատաստան տեսնելու ելեր է,
 Ու ժողովուրդները դատելու կայներ է:
 14 - Տէրը ինք դատաստան ընելու պիտի գայ
 Իր ժողովուրդին ծերերուն ու իշխաններուն հետ.
 Վասն զի դուք այդին այրեցիք,
 Ու աղքատէն յափշտակուածը ձեր տունն է:
 15 - Ձեզի ի՞նչ եղաւ որ իմ ժողովուրդս կը զրկէք,
 Ու աղքատներուն երեսը կը ճնշէք,
 Կ'ըսէ Եհովա, զօրաց Տէրը:
 16 - Եւ Տէրը այսպէս ըսաւ.
 Որովհետեւ Սիօնի ազնիւները հպարտացան,
 Եւ բարձրապարանոց կը քաղեն,
 Անհամեստ ակնարկութիւններ կ'ընեն,
 Մանրաքայլ կ'երթան
 Ու ստքերով շաչիւն կը հանեն,
 17 - Տէրն ալ Սիօնի ազնիւներուն գազաթը պիտի կնտացնէ,
 Եւ Տէրը անոնց ամօթոյքը պիտի մերկացնէ:
 18 - Եւ այն օրը Տէրը պիտի վերցնէ Անոնց ոտքի մեհեմաններուն փառքը

*Կամ, երգում պիտի ընէ, Եբբ. պիտի վերցնէ
 +Կամ, բժիշկ

- Ու ցանցակերպ ծամակալները և մահիկները ,
- 19 - Գինատերը , տպարանջանները ու շղաշատեւները ,
- 20 - Ապարոշները , սաքի շղթաները ու գօտիները ,
- Անշահոք ոգիներուն տուփերը, հմայեակները ,
- 21 - Մատանիները և քիթերնուն օղերը ,
- 22 - Պատմութեանները ; վերարկուները , Ծածկոցները ու քսակները ,
- 23 - Հայելիները ու բեհեզները , Խոյրերը ու քօղերը :
- 24 - Եւ պիտի ըլլայ որ անուշահասութեան տեղ փառութիւն ,
- Ու գօտիի տեղ չուան ,
- Եւ գանգուր մտղերու տեղ կնատութիւն ,
- Եւ Լանջագեղ կամարի տեղ խորգեղէն գօտի ,
- Ու գեղեցկութեան տեղ խարան պիտի ըլլայ :
- 25 - Քու մարդիկդ սրով պիտի իյնան , Ու կտրիճներդ ալ պատերազմի մէջ :
- 26 - Եւ անոր դռները պիտի սղբան ու սուգ բռնեն ,
- Եւ անիկա ամայի ըլլալով՝ գետինը պիտի նստի :

ԳԼ. Դ

- Եւ այն օրը եօթը կին մէկ այր մարդը պիտի բռնեն ու ըսեն ,
- Մեր հացը ուտենք ու մեր հանդերձը հագնինք ,
- Բայց միայն քու անուկդ կանչուի մեր վրայ՝
- Մեր նախատինքք վերցնելու համար :
- 2 - Այն օրը Տէրոջը շառաւիղը Փառաւոր ու պատուական պիտի ըլլայ ,
- Եւ Խորայէլի փրկուածներուն՝ Երկրին պտուղը պարծանաց և պատուոյ համար պիտի ըլլայ :
- 3 - Եւ պիտի ըլլայ որ Սիօնի մէջ մնացածը
- Ու Երուսաղէմի մնացորդը ,
- Այսինքն Երուսաղէմի մէջ բոլոր ողջ *կեցողները ,
- Սուրբ պիտի բսուին ,
- 4 - Երբ Տէրը Սիօնի աղջիկներուն աղաքը լուայ ,

*Եբբ. գրուածները . տես Փիլ. դ. 3 : Յայտ գ. 5 :

- Ու դատաստանի հոգիով և այրող հոգիով
- Երուսաղէմի արիւնները անոր մէջէն սրբէ :
- 5 - Եւ Տէրը Սիօն լեռանը ամէն տեղերուն վրայ
- Ու անոր ժողովքներուն վրայ
- Յորեկը ամպ և մէգ
- Ու գիշերը փայլուն կրակի բոց պիտի ստեղծէ ,
- Վասն զի բոլոր փառքին վրայ հովանի պիտի ըլլայ :
- 6 - Եւ ցորեկը վրան պիտի ըլլայ Տաքութեան համար հովանի՝ Եւ մրրիկի ու անձրևի համար Ապաստանարան ու ծածկոց ըլլալու :

ԳԼ. Ե

- Հիմա իմ սիրականիս երգը
- Իմ սիրելիիս երգեմ իր այգիին վրայով .
- Իմ սիրելիս այգի մը ունէր .
- Խիտտ պտղաբեր բլուրի մը վրայ .
- 2 - Զանկիս ցանկով պատեց , քարերը հանեց մէջէն ,
- Եւ ընտիր որթեր անկեց ,
- Ու անոր մէջտեղը աշտարակ շինեց ,
- Եւ հօն հնձան մըն ալ փորեց .
- Ու կը սպասէր որ խաղող տար ,
- Բայց անիկա ազօխ տուաւ :
- 3 - Ուստի հիմա դուք , ով Երուսաղէմի բնակիչներ ու Յուդայի մարդիկ ,
- Իմ ու այգիիս մէջտեղ դատաստան բրէք :
- 4 - Իմ այգիիս՝ ալ ի՞նչ պէտք էր ընել ,
- Զոր ես անոր չբրի .
- Ինչո՞ւ համար , երբ ես խաղող տալուն կը սպասէի ,
- Անիկա ազօխ տուաւ :
- 5 - Եւ հիմա ես ձեզի պատմեմ թէ ի՞նչ պիտի ընեմ իմ այգիիս .
- Անոր ցանկը պիտի քակեմ՝ , որպէս զի անուշահոտ ճարակ ըլլայ .
- Անոր պատերը պիտի փլցնեմ՝ , որպէս զի ոտնակոխ ըլլայ .
- 6 - Խոպանացած պիտի թողում .
- Անիկա պիտի չթառուի ու չբրուի ,
- Հապա ցախ ու փուշ պիտի բուսցնէ .
- Եւ ամպերուն պիտի պատուիրեմ՝
- Որ անոր վրայ անձրև չտեղան :
- 7 - Վասն զի զօրաց Տէրոջը այգին Խորայէլի տունն է ,

Ու Յուդայի մարդիկը՝ անոր ախորժեղի տունկը.

Եւ անիկա իրաւունքի կը սպասէր, և ահա արիւնասէղութիւն,

Արդարութեան՝ և ահա ազազակ:

8 - Վա՛յ անոնց՝ որոնք տունը ասան կը յարեն,

Ազարակ ազարակի վրայ կ'աւելցնեն. Մինչև որ տեղ մը չմնայ,

Ու դուք մինակ բնակիք երկրին մէջ:

9 - Զօրաց Տէրը իմ՝ ականջիս խօսեցա՛ւ՝

Յիրաւի շատ տուներ աւերակ պիտի ըլլան,

Մեծ ու գեղեցիկ բաներ, ու անոնց մէջ բնակող պիտի չգտնուի:

10 - Վասն զի աստը լծալար պագին մէկ մար պիտի տայ,

Ու մէկ քու սերմը՝ մէկ արդու պիտի տայ:

11 - Վա՛յ անոնց, որոնք առաւօտուն կանուխ կ'ելլեն,

Ու ցքի խօսք՝ ետևէ կ'ըլլան, Եւ իրիկունն ալ կ'ուշանան,

Մինչև որ գինին իրենց գլխի տաքցնէ:

12 - Եւ անոնց խնջոյքներուն մէջ քնար ու աստիղ,

Թմբուկ ու սրինգ և գինի կը գտնուի. Բայց Տէրօջը ըրածներուն ուշադրութիւն չեն բներ,

Եւ անոր ձեռաց գործերուն չեն նայիր:

13 - Անոր համար իմ՝ ժողովուրդս՝ *Տէրը չճանչնալով՝ գերի կ'ընայ,

Ու անոր մեծամեծ մարդիկը սով կը կրեն,

Եւ բազմութիւնը ծարաւէն կը ցամքին:

14 - Անոր համար դժոխք ինքզինք կը լայնցնէ,

Ու բերանը չափէ դուրս կը բանայ. Եւ անոր պարծանքը ու բազմութիւնը Եւ ազազակը ու զուարճութիւնը ահա՛ր Գէջ պիտի իջնէ:

15 - Եւ ռամիկ մարդը պիտի կ'ընայ, Ու ազնուականը պիտի խոնարհի,

Ամբարտաւաններուն աչքերն ալ պիտի խոնարհին:

16 - Եւ զօրաց Տէրը իրաւունքով պիտի բարձրանայ,

Ու Սուրբն Աստուած արդարութիւնով պիտի Դփառաւորի:

17 - Եւ գաւնուկները իրենց սովորութեանը պէս պիտի արածին,

Ու հարուստներուն աւերակները օտարները պիտի ուտեն:

18 - Վա՛յ անոնց, որոնք անօրէնութիւնը ունայնութեան չուաններով կը քաշեն,

Ու մեղքը՝ սոյլի փոկերով Կաշելու պէս.

19 - Որոնք կ'ըսեն, Թող արատրայ, Իր գործը շուտով կատարէ, որպէս զի զանի առանկէք.

Եւ Իսրայէլի Սուրբին խորհուրդը Թող մօտենայ՝ գոյ, որպէս զի զանի գիտնանք:

20 - Վա՛յ անոնց, որոնք չարին բարի կ'ըսեն, ու բարիին չար.

Որոնք խաւարը լոյսի տեղ, ու լոյսը խաւարի տեղ կը դնեն,

Որոնք դաւնը քաղցրի տեղ, ու քաղցրը դաւնի տեղ կը դնեն.

21 - Վա՛յ անոնց, որոնք իրենց աչքին իմաստուն

Եւ իրենց առջև խոհական են.

22 - Վա՛յ անոնց, որոնք գինի խմելու զօրաւոր

Ու ցքի խաւներու կարիճ են:

23 - Որոնք կաշառքի համար ամբարիշտը կ'արդարացնեն,

Եւ արդարը իր իրաւունքէն կը զրկեն:

24 - Անոր համար ինչպէս կրակին բոցը յարդը կ'ուտէ,

Ու չոր խոտը բոցին մէջ կը հատնի, Այնպէ՛ս անոնց արմատը փառութեան պէս պիտի ըլլայ,

Ու անոնց ծաղիկը փոշիի պէս վեր պիտի ելլէ.

Վասն զի զօրաց Տէրօջը օրէնքը մերժեցին,

Եւ Իսրայէլի Սուրբին խօսքը անարգեցին:

25 - Անոր համար Տէրօջը բարկութիւնը իր ժողովուրդին դէմ բորբոքեցաւ,

Ու անոնց վրայ ձեռքը երկնցուց ու զարկաւ զանոնք.

Այնպէս որ լեռները դողացին, Ու անոնց գիերը ճամբաներուն վրայ աղբի պէս մնացին.

Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը չիջաւ,

Հապա անոր ձեռքը տակաւին երկրնցած է:

26 - Եւ հեռաւոր ազգերու դրօշակ պիտի վերցնէ,

*Եբբ. առանց գիտութեան
†Եբբ. սրբուի

Ու զանոնք երկրի ծայրէն սուլելով
 պիտի կանչէ,
 Եւ ահա անոնք արտորալով արագու-
 թեամբ պիտի գան:
 27 - Անոնց մէջ մէկը յոգնած պիտի
 չըլլայ, ու մէկը պիտի չսաշի:
 Մէկը պիտի չմրափէ ու չքնանայ:
 Մէկո՛ւն մէջքի գօտին պիտի չքակուի,
 Ոչ ալ կօշիկին կապը պիտի կտրուի:
 28 - Անոնց նետերը սուր են,
 Ու բոլոր աղեղները՝ լարուած:
 Անոնց ձիերուն սմբակները գայլախապի
 կը նմանին,
 Եւ խոտերն անիւնները մրրկի պէս են:
 29 - Անոնց մունչիւնը սուր ծինին պէս է:
 Կորիւններուն պէս կը մունչեն,
 Կը գոչեն ու կողոպուտը կը յափշտա-
 կեն,
 Եւ զանիկ կը փախցնեն, ու ապաստող
 մը չկայ:
 30 - Եւ այն օրը անոնց վրայ պիտի գո-
 չեն ծովուն գոչելուն պէս:
 Ու երբ մէկը երկրին նայի, ահա խա-
 ւար և տազնապ պիտի գիտնէ:
 Եւ լոյսը անոր *ամպերուն մէջ պիտի
 խաւարի:

ԳԼ. 2

Ոգիտ թագաւորին մահուան տա-
 րին Տէրը տեսայ որ բարձր ու վերացած
 ակտի վրայ նստեր էր, ու անոր
 քղանցքը տաճարը կը լեցնէր: 2 - Վերի
 կողմը սերովբէները կը կայնէին անոր
 սուղև, որոնց ամէն մէկը վեց վեց թե-
 ւեր ունէին. երկուքով երեսնին կը
 ծածկէին, երկուքով ոտքերնին կը
 ծածկէին, ու երկուքով կը թռչէին:
 3 - Եւ փոփոխակի կ'աղաղակէին ու
 կ'ըսէին,
 Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրաց Տէրը.
 Բոլոր երկիր անոր փառքովը լե-
 ցուն է:
 4 - Եւ աղաղակողին ձայնէն սեմերուն
 չիմերը շարժեցան, ու տունը ծիտով
 լեցուեցաւ:
 5 - Եւ ըսի,
 Վա՛յ ինձի, ահա կը կորսուիմ.
 Վասն զի ես պիղծ շրթունք ունե-
 ցող մարդ մըն եմ,
 Ու պղծաշուրթն ժողովուրդի մէջ կը
 բնակիմ:

*կա՛մ, երկինքին

Եւ իմ աչքերս զօրաց Տէրը, Թագա-
 ւորը, տեսան:
 6 - Բայց սերովբէներէն մէկը դէպ յիս
 թռաւ, ու ձեռքը կրակի կայծ մը
 կար զոր սեղանէն ունելիքով առած էր:
 7 - Եւ բերնիս դպցնելով՝ ըսաւ,
 Ահա տիկա քու շրթունքներուդ
 դպաւ,
 Ու քու անօրէնութիւնդ վերցաւ,
 Եւ մեղքիդ քաւութիւն եղաւ:
 8 - Ետքը լսեցի Տէրոջը ձայնը, որ
 ըսաւ,
 Ո՞վ զրկեմ, և մեզի համար ո՞վ պիտի
 երթայ:
 Ու ես ըսի, Ահաւասիկ ես. զիս զրկէ:
 9 - Այն տառն ըսաւ, Գնա, ըսէ այս
 ժողովուրդին,
 Լսելով պիտի լսէք, բայց պիտի չի-
 մանաք,
 Ու տեսնելով պիտի տեսնէք, բայց
 պիտի չզիտանաք:
 10 - Այս ժողովուրդին սիրտը թանձ-
 րացուր,
 Եւ ականջները ծանրացուր, ու անոր
 աչքերը գոցէ,
 Որպէս զի չըլլայ թէ աչքերովը տեսնէ,
 ու ականջներովը լսէ,
 Եւ սրտովը իմանայ, և դարձի գոյ ու
 բժշկուի:
 11 - Եւ ես ըսի, Մինչև ե՞րբ, ով Տէր
 իմ. ու ըսաւ,
 Մինչև որ քաղաքները բնակիչ չունե-
 նալով՝
 Եւ տուները մարդ չգանուելով՝ ամայի
 մնան,
 Ու երկիրը բոլորովին աւերակ ըլլայ:
 12 - Ու մինչև որ Տէրը հեռացնէ մար-
 դիկը,
 Ու երկրին մէջտեղը մեծ ամայութիւն
 ըլլայ:
 13 - Բայց անոր մէջ դեռ տասներորդ
 մասը պիտի գանուի,
 Եւ այն ալ դարձեալ պիտի սպառի.
 Ինչպէս բևեկնին ու կապնին կարուե-
 յով՝ անոնց բունը կը մնայ,
 Այնպէ՛ս սուրբ սերունդը այն խոզու-
 րէն բունը պիտի ըլլայ:

ԳԼ. Է

Եւ եղաւ որ Յուդայի թագաւորին,
 Ոգիայի որդւոյն Յովակիմի որդւոյն
 Աքազի, օրերը, Ասորոց Ռասին թա-
 գաւորը ու Իսրայէլի թագաւորը Ռով-

մեղայի որդին Փակէէ Երուսաղէմի վրայ պատերազմելու ելան, բայց չկրցան անոր հետ պատերազմ ընել : 2 - Ուստի երբ Գաւթի տանը լուր արուեցաւ՝ թէ Ասորիք *Եփրեմի հետ միաբանեցան, անոր սիրար և անոր ժողովուրդին սիրար շարժեցաւ, ինչպէս անտառին ծառերը հովէն կը շարժին : 3 - Բայց Տէրը Եսայիի բառ, Հիմա դուն ու քու որդիդ †Սէար-յասաբ, թափիչի ազարակին ճամբուն վրայ, վերի աւազանին ջրմուղին եզերքը, ելիւր Ա.քաղը դիմուորելու : 4 - Եւ ըսէ անոր ,

Զգոյշ եղիւր որ հանգարա ըլլաս ,
Մի վախնար ու սիրագ չմարի
Այս ծուխ հանող երկու կիսայրեաց
փայտի ծայրերէն,
Այսինքն Ռասինի ու Ասորեաց
Եւ Ռովմեղայի որդւոյն սաստիկ բարկութենէն :

5 - Որովհետեւ Ասորիք , Եփրեմ ու Ռովմեղայի որդին
Քու վրայովդ չար խորհուրդ ըրին ու ըսին ,

6 - Յուդայի վրայ երթանք , ու զանիկա բռնադատենք
Եւ մեզի հնազանդեցնենք,
Ետքը անոր մէջ Տաբէէլի որդին թագաւոր դնենք .

7 - Եհովա Տէրը այսպէս կ'ըսէ .
Այս Բաբելոնացի պիտի չհաստատուի ու չկատարուի .

8 - Վասն զի Ասորեաց երեւէ՞ գլուխը Գամուկոս,
Եւ Գամուկոսի գլուխը Ռասին է .
Ու վաթսունը հինգ տարուան մէջ Եփրեմ ժողովուրդ ըլլալէ պիտի ջնջուի :

9 - Ու Եփրեմի գլուխը Սամարիա,
Եւ Սամարիայի գլուխը Ռովմեղայի որդին է .
Եթէ չհաւատարք, հաստատուն պիտի չըլլաք :

10 - Գարձեալ Տէրը խօսեցաւ Ա.քաղի ու ըսաւ ,
11 - Քու Տէր Աստուծոմէդ քեզի համար նշան խնդրէ ,
Խորութեան մէջ կամ բարձրութեան մէջ խնդրէ :

12 - Բայց Ա.քաղ ըսաւ, Չեմ խնդրեր և Տէրը չեմ փորձեր :

13 - Այն տան անիկա ըսաւ, Լսեցէք հիմա, ով Գաւթի առնը . Պզտի՞կ բան կ'երեւնայ ձեզի մարդիկ աշխատցնելնիդ ,

Որ իմ Աստուածս ալ պիտի աշխատցընէք :

14 - Անոր համար Տէրը ինք նշան պիտի տայ ձեզի .

Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի ,

Եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչէ :

15 - Անիկա կոզի ու մեղր պիտի ուտէ, Մինչև որ գիանայ չարը մերժել ու բարին ընտրել :

16 - Վասն զի աղան չարը մերժելը ու բարին ընտրելը գիանալէն առաջ

*Պիտի թողուի այն երկիրը
Որուն երկու թագաւորներէն դուն կը վախնաս :

17 - Տէրը քու վրագ, ու քու ժողովուրդիդ վրայ,

Եւ քու հօրդ տանը վրայ այնպէ՞ որեր պիտի բերէ ,

Որ Եփրեմի Յուդայէ զատուած օրէն ի վեր չեկան ,

Այսինքն Ասորեստանի թագաւորը :

18 - Եւ պիտի ըլլայ այն օրը, որ Տէրը պիտի սուլէ

Եգիպտոսի գետերուն ծայրը եղած ճանճերուն ,

Ու Ասորեստանի երկրին մէջ եղած մեղուներուն .

19 - Եւ ամէնը պիտի գան ու պիտի հանգչին

Սմայի ձորերուն մէջ ու վէմերուն խուռններուն մէջ ,

Եւ ամէն թուփերուն ու ամէն արօսներուն մէջ :

20 - Այն օրը Տէրը , վարձքով առնուած ամեղիով

Այսինքն Գեաին անդիի կողմը եղող Ասորեստանի թագաւորով ,

Գլուխը ու ոտքերուն մտղը պիտի ամիլէ Եւ մօրուքն ալ Բաբելոնի պիտի սափրէ .

21 - Ու պիտի ըլլայ այն օրը որ մարդ մը

*Կամ, Եփրեմի երեւէ՞ վրայ բանակեցան †Այսինքն, մնացորդը պիտի դառնայ : Տես Գլ. Ժ. 21 :

*Կամ, Քու զգրւած երկիրդ՝ իր երկու թագաւորներէն պիտի թողուի : Տես Գլ. Ժ. 30 : Ժ. 9 :

Մէկ երինջ ու երկու ոչխար պահելով ,
 22 - Անոնց տուած կաթին աւատու-
 թենէն կոզի պիտի ուտէ .
 Վասն զի երկրին մէջ բոլոր մնացող-
 ները
 Կոզի ու մեղր պիտի ուտեն :
 23 - Եւ պիտի ըլլայ այն օրը ,
 Ուր որ հազար որթ քնիւն է հազար
 «իկարծաթի արշիտով ,
 Յախերով ու փուշերով պիտի լեցուի :
 24 - Նեախերով ու աղեղներով հոն պի-
 տի գան ,
 Վասն զի բոլոր երկիրը ցախերով ու
 փուշերով պիտի լեցուի :
 25 - Եւ այն ամէն լեռները որոնք բր-
 շով կը փորուէին ,
 Յախի ու փուշի երկիւղին պատճառաւ
 հոն պիտի չերթաք .
 Արջառներուն արօտ ու խաշինքներուն
 կոխան պիտի ըլլան :

ԳԼ Ը

Եւ Տէրը ինծի ըսաւ , Գուն քեզի
 մեծ տամն մը առ , և անոր վրայ մար-
 դու գրիչով գրէ Մահեր-շալալ - հաշ-
 պագին վրայով : 2 - Եւ ինծի հաւա-
 տարիմ վկաներ բռնեցի Ուրիա քահա-
 նան ու Բարաքիայի որդին Զաքարիան :
 3 - Եւ մերձեցայ մարգարէութիւն , ու
 անիկա յղացաւ ու որդի մը ծնաւ . և
 Տէրը ինծի ըսաւ , Անոր անունը *Մա-
 հեր-շալալ - հաշ - պագ գիր . 4 - Վասն
 զի դեռ աղան Հայրս և Մայրս կանչելը
 չարված՝ Գամակոսի հարստութիւն-
 ները ու Սամարիայի աւարը Ասորեստա-
 նի թագաւորին առջև պիտի տարուին :
 5 - Եւ դարձեալ Տէրը ինծի խօսե-
 ցաւ ու ըսաւ , 6 - Որովհետեւ այս ժո-
 ղովուրդը Սիլովայի հանդարտ վազող
 ջուրերը կ'արհամարհէ , և Ռապինի ու
 Ռովմելայի որդւոյն կը հաւնի ,
 7 - Անոր համար ահա Տէրը անոնց
 վրայ Գեաին զօրաւոր ու առատ
 ջուրերը ,
 Այսինքն Ասորեստանի թագաւորը ու
 անոր բոլոր գորութիւնը , պիտի
 հանէ .
 Եւ անիկա իր ամէն յատակներէն վեր
 պիտի ելլէ ,

*Այսինքն , արտորայով ասպատակէ ու
 շուտով կողոպուտ ժողովէ
 †ԵՔԵ. փառքը

Ու իր բոլոր եղբայրներուն վրայէն պի-
 տի քալէ :
 8 - Եւ Յուդայի մէջ յորդելով պիտի
 անցնի երթայ ,
 Ու մինչև Ժառանգ պարանոցը պիտի
 հասնի ,
 Եւ անոր թեւերուն տարածութիւնը
 Քու երկրից լայնութիւնը պիտի լեցնէ ,
 ով Էմմանուէլ :
 9 - Ով ժողովուրդներ , *գաշնակից
 եղէք՝ , բայց պիտի խորատակուիք .
 Ով երկրին հեռաւոր տեղերը , ահանջ
 դրէք ,
 †Պատրաստուեցէք , բայց պիտի խոր-
 տակուիք .
 †Պատրաստուեցէք , բայց պիտի խոր-
 տակուիք .
 10 - Խորհուրդ ըրէք , բայց պիտի խա-
 փանուի .
 Խօսք խօսեցէք , բայց պիտի չհաս-
 տատուի .
 Քանզի Աստուած մեզի հետ է :
 11 - Քանզի Տէրը հզօր ձեռքով այս-
 պէս խօսեցաւ ինծի ,
 Ու խրատեց զիս՝ թէ պէտք չէ այս ժո-
 ղովուրդին ճամբուն մէջ քա-
 լել ըսելով ,
 12 - Դաշնակցութիւն մի ըսէք ,
 Ինչ բանի որ այս ժողովուրդը դաշ-
 նակցութիւն կ'ըսէ .
 Եւ անոր վախովը մի վախնաք ու մի
 զարհուրիք .
 13 - Մէյ՛ զօրաց Տէրը քիտաւաւորեցէք ,
 Անիկա ըլլայ ձեր վախը և ձեր զարհու-
 րանքը .
 14 - Եւ անիկա յեզի սրբարան պիտի
 ըլլայ ,
 Բայց Իսրայէլի երկու տուններուն՝
 Գայթակղութեան քար և գլորելու
 վէմ ,
 Ու Երուսաղէմի բնակիչներուն թա-
 կարդ ու սրագոյթ պիտի ըլլայ :
 15 - Եւ անոնցմէ շատերը պիտի գլորին ,
 Ու իյնալով պիտի խորատակուին ,
 Եւ որոգոյթի մէջ իյնալով պիտի
 բռնուին :
 16 - Վկայութիւնը կապէ ,
 Աշակերտներուս մէջ օրէնքը կնքէ :
 17 - Ուրեմն ես պիտի սպասեմ Տէ-
 րոջը ,

*Կա՛մ , ցնծութիւն զրէք
 †ԵՔԵ. Գօտի կապեցէք
 †ԵՔԵ. սրբեցէք

Որ Յակոբի տունէն իր երեսը ծածկեր է:

Ու անոր պիտի յուսամ:

18 - Ահաւասիկ ես ու այն զաւակները զորոնք Տէրը ինծի տուաւ, Նշաններ ու սքանչելիքներ ըլլալու Իսրայէլի մէջ:

Արօն լեռը բնակող զօրաց Տէրոջը կողմանէ:

19 - Ու երբ ձեզի բռն թէ Շնչող ու քրթմնջող վհուկներուն Եւ նշանագէտներուն հարցուցէք,

Այն աբիս ըստ Բէ Ժողովուրդը իր Աստուծոյն պիտի չհարցնէ:

Կենդանիներուն համար մեռածներուն պիտի հարցնէ:

20 - Օրէնքին ու վկայութեանը Բնա հարցնէն.

Եթէ այս խօսքին համեմատ չգրուցեն, Անոնք ամենեկին լոյս չունին:

21 - Եւ Ժողովուրդը վիշտ ու սով կրելով պիտի անցնի անկէ:

Ու երբ անօթենայ, պիտի բարկանայ, Ու իր թագաւորին և իր Աստուծոյն պիտի հայհոյէ, ու վեր նայի,

22 - Եւ դէպ ի երկիր պիտի նայի, Եւ ահա վիշտ ու խաւար, նեղութեան մէջ.

Ու դէպ ի մառախուղ պիտի քշուին:

ԳԼ. Թ

Բայց այսպէս խաւար պիտի չըլլայ, Ինչպէս նեղութեան ժամանակը, Երբ առաջուան ատենը անարգեց Չաբուղանի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը.

Հապա վերջին ատենը պիտի պատուէ ծովուն ճամբան,

Յորդանանու անդի ի կողմը, Հեթանոսաց Գալիլեան:

2- Խաւարի մէջ պարտող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ,

Մահուան ստուերին երկիրը բնակողներուն լոյս ծագեցաւ:

3 - Ազգը շատցուցիր, անոր ուրախութիւնը մեծցուցիր.

Անոնք քու առջև կ'ուրախանան՝ հունձքի ատենի ուրախութեան պէս

Ինչպէս կը ցնծան անոնք որ աւար կը բաժնեն:

4 - Վասն զի Մագիամի օրուանը պէս՝

Անոր ծանր լուծը ու կռնակին գաւազանը

Ե- անոր վրայ բռնութիւն ընողին ցուպը կտարեցիր:

5 - Քանզի շառաչելով պատերազմողներուն ամէն *զէնքերը Եւ արիւնաթաթախ հանդերձները Պիտի սյրին և հրոյ ճարակ ըլլան:

6 - Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ, Մեզի սրգի մը տրուեցաւ, Եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ,

Ու անոր անունը պիտի կոչուի Աքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,

Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան:

7 - Իսաիթի ամբարն վրայ ու անոր թագաւորութեանը վրայ Անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ, Որպէս զի հիմակուրնէ մինչև յաւիտեան

Իրաւունքով ու արդարութիւնով հաստատէ և զօրացնէ զանիկա:

Չօրաց Տէրոջը նախանձը պիտի ընէ ասիկա:

8 - Տէրը Յակոբի պատգամ զրկեց, Ու անիկա Իսրայէլի վրայ իջաւ:

9 - Եւ բոլոր ժողովուրդը պիտի իմանայ,

Այսինքն Եփրեմ ու Սամարիայի բնակիչները,

Որոնք ամբարտաւանութեամբ և սրտի հպարտութեամբ կ'ըսեն,

10 - Թէև աղիւսները ինկան, Բայց մենք տաշուած քարերով պիտի շինենք.

Մոլաթղենիները կարուեցան, Բայց մենք անոնց տեղ եղենափայտեր պիտի դնենք:

11 - Սակայն Տէրը անոր վրայ Ռասինի հակառակորդները պիտի յարուցանէ,

Ու անոր թշնամիները պիտի խորհուրէ:

12 - Ստորիները խորհելքէն, Փղշտացիները Պարեմուաքէն.

Ու անոնք լեցուն բերանով Իսրայէլը պիտի ուտեն:

*Կա՛մ, սանապանները
 †Կա՛մ, սպառազինէ
 ‡Եբբ. առջևէն
 ||Եբբ. ետևէն

Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը
չիջաւ,
Հապա անոր ձեռքը տակաւին երկըն-
ցած է:

13 - Քանզի ժողովուրդը զինք զար-
նոցին չգառնար,

Ու զօրաց Տէրը չփնտռեր:

14 - Եւ Տէրը Խորայէլէ գլուխը ու պոչը,
Արմաւենիին ստար ու կնիւնը
Մէկ օրուան մէջ պիտի կտրէ:

15 - (Մերը ու պատուաւոր մարդը
գլուխն է.

Եւ ստութիւն սորվեցնող մարգարէն
պոչն է:)

16 - Եւ այս ժողովուրդին առաջնորդ-
ները կը մնորեցնեն զանան+,
Եւ անոնցմէ առաջնորդուածները պի-
տի կլլուին:

17 - Այս պատճառաւ Տէրը անոր ե-
րիտասարդներուն պիտի չհաճի,
Եւ անոր որբերուն ու որբեւարիներուն
պիտի չողորմի.

Վասն զի ամէնն ալ կեղծաւոր ու չա-
րագործ եղան,
Եւ ամէն բերան անզգամութիւն կը
խօսի:

Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը
չիջաւ,

Հապա անոր ձեռքը տակաւին եր-
կընցած է:

18 - Քանզի անօրէնութիւնը կրակի
պէս կ'այրէ,

Յատկերը ու փուշերը կը սպառէ,
Անատաւին թանձրախիտ ծառերը կ'այ-
րէ,

Ու անոնք կը ցնդին վեր ելլող ծուխի
պէս:

19 - Զօրաց Տէրոջը բարկութենէն եր-
կիրը պիտի *այրի,

Ու ժողովուրդը հրոյ ճարակ եղածի
պէս պիտի ըլլայ.

Մարդ իր եղբօրը պիտի չխնայէ:

20 - Եւ աջ կողմը եղածը պիտի յա-
փըշտակէ ու անօթի պիտի մնայ,
Եւ ձախ կողմինն ալ պիտի սւտէ ու
չկշտանայ.

Ամէն մարդ իր բազրակներուն միտը
պիտի ուտէ:

21 - Մանասէ Եփրեմը պիտի *արէ, ու
Եփրեմ Մանասէն,

Եւ անոնք մէկտեղ Յուդայի վրայ պի-
տի յարձակին:

*կո՛ւ, խաւարի

Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը
չիջաւ,
Հապա անոր ձեռքը տակաւին երկըն-
ցած է:

Գ Լ Փ

Վաս'յ անոնց, որոնք անօրէնութեան
կանոններ կը սահմանեն,

Եւ այն դպիրներուն, որոնք անիրա-
ւութիւն կը դրեն,

2 - Որպէս զի աղքատներուն գատաս-
տանը խտարեն,

Ու իմ ժողովուրդիս անանկներուն ի-
րաւունքը յափշտակեն.

Որպէս զի որբեւարիները իրենց աւար
ըլլան,

Ու որբերը կոզապան:

3 - Ուրեմն ի՞նչ պիտի ընէք այցելու-
թեան օրը,

Եւ հեռուանց գալու կործանման ա-
տենը.

Օգնութեան համար որ՞ւ պիտի դիմէք,
Ու ձեր փառքը որ՞ւր պիտի թողուք:

4 - Աւանց ինձի գերիներուն *մէջ
պիտի ծռին,

Ու սպաննուածներուն *մէջ պիտի իյ-
նան:

Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը
չիջաւ,

Հապա անոր ձեռքը տակաւին երկըն-
ցած է:

5 - Վաս'յ Ասորեստանի Բաբա-
լոն, որ իմ բարկութեանս գաւա-
զանը եղաւ.

Որուն ձեռքի ցուպը իմ սրամտու-
թիւնս է:

6 - Զանիկա կեղծաւոր ազգի մը վրայ
պիտի դրկեմ,

Ու իմ սրգողած ժողովուրդիս դէմ
հրաման պիտի տամ անոր,

Որ աւար ժողվէ ու յափշտակութիւն
ընէ,

Եւ զանոնք փողոցներուն ցեխին պէս
կոխկուտէ:

7 - Բայց անիկա այնպէս չմտածեր,
Ու սրտովը այնպէս չխորհեր.

Հապա իր միտքը դրեր է որ կորսնցնէ,
Եւ շատ ազգեր բնաջինջ ընէ:

8 - Վասն զի կ'ըսէ,
Միթէ իմ իշխաններս ամէնն ալ
թագաւորներ չե՞ն.

*Եբր. տակ

9 - Քաղանէ Քարքամիսի պէս չէ՞
 Եմաթ Արփաթի պէս չէ՞
 Սամարիա Իամնակասի պէս չէ՞
 10 - Ինչպէս իմ՝ ձեռքս *տիրեց
 կապաշա թագաւորութիւն-
 ներուն՝,
 Արոնց կուռքերը Երուսաղէմի ու Սա-
 մարիայի կուռքերէն շատ էին :
 11 - Միթէ Սամարիայի ու անոր
 կուռքերուն ըրածին պէս,
 Երուսաղէմի ու անոր կուռքերուն
 ալ այնպէս պիտի չընե՞մ :
 12 - Ու երբ Տէրը Սիօն լեւանը վրայ
 Ու Երուսաղէմի մէջ իր ամէն գործը
 կատարէ,
 Ասորեստանի թագաւորին հպարտա-
 ցած սրտին պատզրը,
 Եւ անոր ամբարտաւան աչքերուն
 փառքը պիտի քննե՞մ :
 13 - Քանզի անիկա կ'ըսէ,
 Ես իմ՝ ձեռքս ուժովը
 Ու իմ իմաստութիւնովս ըրի *տէ՛լ,
 Արովհեաե ես խելացի եմ,
 Եւ ազգերուն սահմանները վեր-
 ցուցի,
 Ու անոնց գանձերը յափշտակեցի,
 Եւ զօրաւորի պէս բնակիչները նուա-
 ճեցի :
 14 - Ու իմ՝ ձեռքս ժողովուրդնե-
 րուն ստացուածքը բոյնի պէս
 գտաւ .
 Եւ բոլոր երկիրը ժողովեցի,
 Ինչպէս մէկը կը ժողվէ թողուած
 հաւկիթները .
 Ու թեւ շարժող կամ բերան բացող
 կամ ճիկ հանող մը չեղաւ :
 15 - Միթէ տապալը իրմով կտրող
 Բարքան դէմ՝ կը գողտզանայ .
 կամ սղոցը զինք գործածողին դէմ՝ կը
 հպարտանայ .
 Ա*ի*լ *այնպէ* է՝ որպէս թէ գաւազանը
 զինք վերցնողը շարժէր,
 Եւ ցուպը բարձրացնէր զայն՝ որ փայտ
 չէ :
 16 - Անոր համար Տէրը , զօրաց Տէրը ,
 Անոր գէր Բարքոյն նիհարութիւն պի-
 տի զրկէ,
 Ու անոր փառքին տակ հրդեհ մը պի-
 տի վառէ
 Բոցավառ հրդեհի պէս :
 17 - Եւ Իսրայէլի Լպյոը կրակ ,

Ու անոր Սուրբը բոց պիտի ըլլայ .
 Եւ մէկ օրուան մէջ՝ անոր փուշերը ու
 ցախերը
 Այրելով պիտի սպառէ .
 18 - Եւ անոր անտառին ու բարեբեր
 ագարակին փառքը ,
 Հոգին ու մարմինը , պիտի հառցնէ ,
 Եւ *մարող հիւանդի՝ պէս պիտի ըլլայ :
 19 - Ու անոր անտառին մէջ մնացած
 ծառերը քիչ պիտի ըլլան ,
 Այնպէս որ աղայ մը կարենայ զանոնք
 գրել :
 20 - Եւ պիտի ըլլայ այն օրը , որ
 Իսրայէլի մնացորդը ,
 Ու Յակոբի տանը ազատուածները ,
 Մէյմըն ալ պիտի չապաւինին զիրենք
 զարնողին .
 Հապա ճշմարտութեամբ Տէրոջը , Իս-
 րայէլի Սուրբին , պիտի ապաւի-
 նին :
 21 - Մնացորդը , Յակոբի մնացորդը ,
 Հզօր Աստուծոյն պիտի դառնայ :
 22 - Վասն զի քու ժողովուրդդ , ով
 Իսրայէլ , թէեւ ծովու աւազին
 չափ ըլլայ ,
 Անոնցմէ մնացորդ մը Գ*յ* պիտի դառ-
 նայ .
 Նախասահմանեալ աւերումը արդա-
 րութեամբ պիտի յարձակի :
 23 - Քանզի զօրաց Եհովա Տէրը բոլոր
 երկրին մէջ
 Նախասահմանեալ աւերումը ի գործ
 պիտի դնէ :
 24 - Անոր համար զօրաց Եհովա Տէրը
 այսպէս կ'ըսէ .
 Ով Սիօնի մէջ բնակող ժողովուրդս ,
 Ասորեստանցիէն մի վախնար .
 Անիկա քեզ գաւազանով պիտի զարնէ ,
 Եւ իր ցուպը քու վրայ պիտի վերցնէ
 + Եգիպտոսաց կերպովը :
 25 - Բայց շատ քիչ ժամանակի մէջ ե՞մ
 բարկութիւնս պիտի դադարի ,
 Ու իմ սրտմտութիւնս անոնց կորուս-
 տին պիտի դառնայ :
 26 - Եւ զօրաց Տէրը անոր վրայ խարա-
 զան մը պիտի վերցնէ ,
 Օրէբի վէմին քով Մադիամու հար-
 ուածին պէս .
 Ու իր գաւազանը ծովուն վրայ պիտի
 վերցնէ ,
 Ինչպէս ըբ* Եգիպտոսի մէջ :

*Եբբ. գտաւ կուսց թագաւորութիւն-
ները

*կամ, դրօշակիրի մարտուն
+ կամ, Եգիպտոսի ճամբուն մէջ

- 27 - Եւ պիտի ըլլայ այն օրը որ անոր բեռը քու կռնակէդ՝
- Ու անոր լուծը քու պարանոցէդ պիտի վերնայ .
- Եւ լուծը *գիրութեան պատճառաւ պիտի կտորի :
- 28 - Անգէ +աշ+ը եկաւ, Մագրոն անցաւ
- Ու իր կահ կարասիքը Մաքմասի մէջ տեղաւորեց:
- 29 - Անցքէն անցան, Գաբայի մէջ իջեան ըրին .
- Ռամա վախցաւ, Սաւուղի Գաբաան փախաւ :
- 30 - Ով Գաղղիմի տղջիկ, ձայնդ վերցուր,
- Լայիտի լսել տուր, †ով խեղճ Անաթովթ՝ :
- 31 - Մադմենա հեռացաւ, Գերեմի բնակիչները փախան .
- 32 - Տակաւին այսօր Նորի մէջ պիտի կենայ,
- Գէպ ի Սիօնի տղջկան լեռը, Երուսաղէմի բլուրը ,
- Չեռքը պիտի շարժէ :
- 33 - Ահա զօրաց Տէր Եհովա
- Ահաւոր զօրութեամբ գեղեցիկ սատերը պիտի կտրէ .
- Եւ բարձրահասակները պիտի կտրուին,
- Ու բարձրերը պիտի ցածնան :
- 34 - Եւ անիկա անասուն խիտ ծառերը երկաթով պիտի կտրէ .
- Ու Լիբանան չզօրին ձեռքով պիտի իյնայ .

ԳԼ. ԺԱ

Ու Յեսսէի բունէն շառաւիղ պիտի ելլէ,

Եւ անոր արմատէն ընծիւղ պիտի բուսնի .

2 - Ու անոր վրայ պիտի հանգչի Տէրօջը Հոգին,

Իմաստութեան ու հանճարի Հոգին, Խորհուրդի ու զօրութեան Հոգին, Գիտութեան և Աստուծոյ վախին Հոգին :

3 - Ու անիկա Տէրօջը վախովը պիտի չլեցուի .

*կ-ժ, օծման

†կ-ժ, պատասխան տուր, ով Անաթովթ

‡կ-ժ, ուրախանայ. Եբբ. հատ առնէ

Եւ իր աչքերուն տեսածին համեմատ պիտի չդատէ,

Ու իր ականջներուն լսածին համեմատ պիտի չյանդիմանէ .

4 - Հապա տղքատին դատը արգարու-թեամբ պիտի տեսնէ,

Ու երկրին զրկուածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ .

Եւ իր բերնին դաւազանովը խրկիրը պիտի զարնէ,

Ու իր շրթունքներուն հոգիովը ամբարիշտը պիտի մեռցնէ :

5-Եւ իր մէջքի գօտին արգարութիւն, Ու իր երիկամունքներուն գօտին հաւատարմութիւն պիտի ըլլայ :

6 - Եւ գայլը գառին հետ պիտի բնակի, Ու ինձը ուլին հետ պիտի պառկի,

Եւ որթը ու առոյգ առիւծը և պարտա զաւարիչ մէկտեղ պիտի աբաբին,

Ու զաննք պզտիկ տղայ մը պիտի քշէ :

7 - Եւ կովը արջին հետ պիտի ճարակի, Անոնց ձագերը մէկտեղ պիտի պառկին,

Եւ առիւծը արջառի պէս յարգ պիտի ուտէ ,

8 - Ու կաթնկեր տղան իժին ծակին վրայ պիտի խաղայ,

Եւ կաթէն կարուածը ձեռքը քարբին բոյնին վրայ պիտի դնէ :

9 - Աննք պիտի չվնասեն ու չապականեն իմ բոլոր սուրբ լեռանս վրայ .

Քանզի երկիր Տէրօջը գիտութիւնովը պիտի լեցուի,

Ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն :

10 - Եւ այն օրը Յեսսէի մէկ արմատը պիտի ըլլայ,

Որ պիտի կայնի ժողովուրդներուն դրօշակ ըլլալու համար .

Չանիկա ազգերը պիտի փնտռեն, Ու անոր հանդիսար փառաւոր պիտի ըլլայ :

11 - Եւ այն օրը պիտի ըլլայ որ Տէրը նորէն իր ձեռքը պիտի երկնցնէ,

Որպէս զի Ասորեստանէ, Եգիպտոսէ, Պաթուրէսէ, Եթէովպիայէ,

Եղամէ, Աէնասարէ, Եմաթէ

Ու ծովու կղզիներէն իրեն առնէ իր ժողովուրդին մնացած մնացորդը .

12 - Եւ ազգերուն դրօշակ պիտի վերցընէ,

Ու Իսրայէլի աքսորուածները պիտի ժողովէ .

Ու երկրի չորս անկիւններէն

Յուդայի ցրուածները պիտի ժողվէ:
13-Ու Եփրեմի նախանձը պիտի վերնայ,
Եւ Յուդայի Բէջ Էջը նեղիչները պիտի
կորսուին .

Եփրեմ պիտի չնախանձի Յուդայի,
Ու Յուդա պիտի չնեղէ Եփրեմը .

14 - Հապա անոնք դէպ ի արեւմուտք
Փղշտացոց *ուսերուն վրայ
պիտի թռչին,

Ու մէկտեղ արեւելքի բնակիչները պի-
տի կողոպտեն .

Եղովմի և Մովսէսի վրայ ձեռքերնին
պիտի երկնցնեն,

Ու Ամմոնի որդիները անոնց պիտի
հնազանդին:

15 - Եւ Տէրը Եգիպտոսի ծովին լեզուն
պիտի չկործանէ .

Եւ իր հովին սաստիկ զօրութիւնովը
ձեռքը գետին վրայ պիտի երեր-
ցնէ,

Ու զանհկա եօթը ձորի Բաբելոն վրայ
զարնէ,

Այնպէս որ անոր վրայ կօշիկներով
քալուի:

16 - Եւ իր ժողովուրդին մնացած մնա-
ցորդին համար

Քանակ ճամբայ մը պիտի ըլլայ Աստ-
րեասանէ,

Ինչպէս եղաւ Իսրայէլի

Այն օրը որ Եգիպտոսի երկրէն ելան:

ԳԼ. ԺԲ

Եւ այն օրը պիտի ըսես,
Ով Տէր, քեզ պիտի օրհնեմ,
Որ Բեւ ինձի բարկացած էիր,
Սակայն բարկութիւնդ Բեթէ գար-
ձաւ .

Եւ զիս մխիթարեցիր:

2 - Ահա իմ փրկութիւնս Աստ-
ուած է .

Ես պիտի յուսամ ու պիտի չվախ-
նամ,

Քանզի իմ զօրութիւնս ու օրհնու-
թիւնս Տէր Եհովա է .

Ու անհկա իմ փրկութիւնս եղաւ:

3 - Եւ ուրախութեամբ ջուր պիտի
քաշէք

Փրկութեան աղբիւրներէն:

4 - Ու այն օրը պիտի ըսէք,

Քոհացէք Տէրոջմէն, անոր անունը
կանչեցէք .

Անոր գործերը ազգերուն մէջ պատ-
մեցէք,

Յիշեցէք որ անոր անունը բարձր է:

5 - Տէրոջը սաղմոս ըսէք,

Վասն զի անհկա մեծամեծ բաներ
ըրաւ .

Ատիկա բոլոր երկրի մէջ գիտցուած է:

6 - Ով Սիօնի բնակիչներ, աղաղա-
կեցէք ու ցնծացէք,

Քանզի ձեր մէջ Իսրայէլի Սուրբը
մեծ է:

ԳԼ. ԺԳ

Բարեկանի պատգամը որ Ամովսի
որդայն Եսայիի յայտնուեցաւ:

2 - Մերկ լեռանը վրայ դրօշակ
տնկեցէք,

Անոնց ձայն վերցուցէք,

Ձեռքով նշան ըրէք, որպէս զի իշխան-
ներուն դռները գան:

3 - Իմ *որոշածներուս հրաման ըրի .

Իմ զօրաւորներս, իմ փառքիս համար
ուրախացողները,

Իմ բարկութիւնս է Գործ Գնէլ - կան-
չեցի:

4 - Լեռներուն վրայ բազմութեան
ձայն մը կայ,

Մեծ ժողովուրդի մը յայնն պէս,

Մէկտեղ ժողովուած ազգերուն թա-
գաւորութիւններուն աղմուկին
ձայնը կայ .

Չօրաց Տէրը պատերազմի համար եւ
զօրքերը աչքէ կ'անցնէ:

5 - Հեռաւոր երկրէ, երկինքի ծայրէն,
Տէրը ու անոր բարկութեանը գործիք-
ները

Բոլոր երկիրը աւերելու կու գան:

6 - Ողբացէք, վասն զի Տէրոջը օրը
մօտ է .

Անհկա Ամենակարողէն Եւթ աւերման
պէս կու գայ:

7 - Անոր համար ամէն ձեռքերը պիտի
թուլնան,

Ու ամէն մարդուն սիրտը պիտի հալի:

8 - Եւ անոնք պիտի ստկան .

Նեղութիւն ու անձկութիւն պիտի
տիրէ անոնց,

Ծննդական կնոջ պէս ցաւ պիտի քա-
շեն .

Ամէն մարդ իր ընկերին վրայ պիտի
նայի - ապշի .

*Կա՛մ, սահմաններուն չկա՛մ, չորցնէ

*Եբբ. սրբուածներուս

Անոնց երեսները բոցագոյն պիտի ըլլան:

9 - Ահա Տէրոջը օրը կու գայ
 Անգթութեամբ, սրամտութեամբ և
 սաստիկ բարկութեամբ,
 Որպէս զի երկիրը աւերակ դարձնէ,
 Ու անոր մեղաւորները անկէ բնաջինջ
 ընէ:

10 - Վասն զի երկինքի սասողերը ու
 անոնց համատեղութիւնները
 Իրենց լոյսը պիտի չաան .
 Արևը իր ելած տաէնը պիտի խաւարի,
 Եւ լուսինը իր լոյսը պիտի չաայ:

11 - Ու ես պիտի պատժեմ՝ աշխարհը
 էջ չարութեանը համար,
 Եւ ամբարիշտները՝ իրենց անօրէնու-
 թեանը համար .
 Ու հպարտներուն ամբարտաւանու-
 թիւնը պիտի դադրեցնեմ,
 Եւ բռնաւորներուն գոռոզութիւնը
 պիտի ցածցնեմ:

12 - Մարդը զուս ոսկիէն
 Ու Ոսկիի ոսկիէն պատուական պիտի
 ընեմ:

13 - Ուստի պիտի սարսեմ՝ երկինքը,
 Ու երկիր իր տեղէն պիտի ստանի
 Զօրաց Տէրոջը սրամտութիւնովը՝
 Անոր սաստիկ բարկութեանը օրը:

14 - Եւ Բաբելոնի բնակիչները հալած-
 ուած այժեամի պէս պիտի ըլ-
 լան,
 Ու հալած ոչխարներու պէս՝ որ զանազ
 ժողովող մը չկայ .
 Անոնց ամէն մէկը իր ժողովուրդին պի-
 տի դառնայ,
 Եւ ամէն մարդ իր երկիրը պիտի
 փախչի:

15 - Ով որ գանուի, պիտի խոցուի,
 Եւ ով որ բռնուի, սրով պիտի իյնայ:

16 - Եւ անոնց տղաքը աչքերնուն առ-
 ջև գեռինը պիտի զարնուին,
 Անոնց տուները պիտի կողոպտուին,
 Եւ անոնց կիները պիտի պղծուին:

17 - Ահա անոնց վրայ Մարաց ոգի
 պիտի յարուցանեմ,
 Որոնք արծաթը բանի տեղ չեն դներ,
 Ու ոսկիէն չեն ախարժիր:

18 - Անոնց աղեղները երիտասարդները
 պիտի խոցեն,
 Ու անոնք սրովայնի պտուղին գթու-
 թիւն պիտի չընեն,
 Եւ անոնց աչքը պիտի չխնայէ տղաք-
 ներուն:

19 - Ու թագաւորութիւններուն փառ-

Եւ Քաղզէացաց փառաւորութեանը
 պարծանքը եղող Բաբելոն
 Տախտի պիտի ըլլայ,
 Ինչպէս Աստուած Սոգամը ու Գոմորը
 կործանեց:

20 - Հոն յաւիտեան բնակութիւն պի-
 տի չըլլայ,
 Եւ ազգէ ազգ մարդ պիտի չբնակի .
 Ու հոն Արաբացիք վրան պիտի չկանգ-
 նեն,
 Եւ հովիւները իրենց հօրը հոն պիտի
 չպառկեցնեն:

21 - Հապա հոն *վայրենի կատուներ՝
 պիտի պառկին,
 Ու անոնց տուները ոռնացող անասուն-
 ներով պիտի լեցուին,
 Եւ հոն ջայլամներ պիտի բնակին,
 Ու հոն այժամարդներ պիտի կաքուեն:

22 - Եւ անոր պալատներուն մէջ բո-
 րենիներ,
 Ու զբօսանաց տուներուն մէջ ճագար-
 ներ պիտի կանչուրուտեն .
 Եւ անոր ժամանակը հասնելու վրայ է:
 Ու անոր օրերը ա՛լ պիտի չերկնան:

ԳԼ ԺԳ

Վասն զի Տէրը պիտի ողորմի Յա-
 կոբի,
 Եւ Իսրայէլը նորէն պիտի ընտրէ,
 Ու զանոնք իրենց երկրին վրայ պիտի
 հանգստացնէ .
 Եւ օտարազգիներ պիտի միանան անոնց,
 Ու Յակոբի տանը պիտի յարին:

2 - Եւ ժողովուրդները զանոնք պիտի
 առնեն ու իրենց տեղը պիտի
 տանին .
 Ու Իսրայէլի տունը պիտի ժառանգէ
 զանոնք Տէրոջը երկրին վրայ,
 Իբրև ծառաներ ու աղախիններ .
 Եւ անոնք իրենց գերեզմանները գերե-
 պիտի առնեն,
 Ու իրենց բռնութիւն ընողներուն վրայ
 պիտի տիրեն:

3 - Եւ պիտի ըլլայ որ երբ Տէրը քեզ
 հանգստացնէ քու աշխատանքէդ,
 տանջանքէդ ու քու վրագ դրուած
 ծանր ծառայութենէն, 4 - Բաբելոնի
 թագաւորին համար այս առակը զրու-
 ցես ու ըսես,
 Ինչպէս դադարեցաւ բռնութիւն
 ընողը:

*կա՛մ, անապատի դազաններ

Ի՛նչպէս գողարեցաւ հարկապահ-
 հանջ Կալուստի:

5 - Տէրը ամբարիշտներուն գաւա-
 զանը
 Ու իշխողներուն ցուպը կոտրեց:

6 - Սրամտութեամբ և անդադար
 հարուածով ազգերը զարնողը,
 Եւ բարկութեամբ ժողովուրդնե-
 րուն վրայ իշխողը

Հի՛մ կը հալածուի, ու արգիլող մը
 չկայ:

7 - Բոլոր երկիր հանգստացաւ ու
 հանդարտեցաւ,
 Եւ ցնծութեան ձայներ կը հանեն:

8 - Նաև մայրերը ու Լիբանանի ե-
 ղեհները
 Քեզի համար կ'ուրախանան ու կ'ըսեն,
 Քանի որ դուն պառկեր ես,
 Մեր վրայ Կալուստի կարող չեղաւ:

9 - Դժոխքը վարէն քեզի համար
 դղրդեցաւ,
 Որպէս զի քու գալուստդ դիմաւորէ.
 Քեզի համար արթնցուց մեռելները,
 Երկրի բոլոր իշխանները,
 Բոլոր ազգերուն թագաւորները
 Իրենց ամբողջութեամբ վերցուց:

10 - Անոնք ամէնը պատասխան կու
 տան ու քեզի կ'ըսեն,
 Միթէ դո՞ւն ալ մեզի պէս ակա-
 րացար
 Ու մեզի նմանեցար:

11 - Քու փառքդ և տաւիղներուդ
 ձայնը գերեզմանը իջան.

Քու տակդ զեռուններ տարածուե-
 ցան,

Ու որդերը քեզ կը ծածկեն:

12 - Ով առտուանց ծագող Արուս-
 եակ,
 Ի՛նչպէս երկինքէ ինկար
 Ու մինչև գետին կործանեցար,
 Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր:

13 - Դուն սրտիդ մէջ ըսած էիր
 Երկինք ելլեմ
 Ու իմ ամբողջ Աստուծոյ ստաղե-
 րէն վեր բարձրացնեմ.
 Եւ ժողովքի լեռը, հիւսիսի քո-
 վերը բնակիմ:

14 - Ամպերու բարձրութիւննե-
 րուն վրայ ելլեմ,
 Բարձրելոյն նմանիմ:

15 - Բայց ո՞չ ուր ժոխքը կ'իջնես, գու-
 բին խորունկ տեղերը.

16 - Քեզ տեսնողները քու վրագ
 պիտի զարմանան,

Ու քեզի նայելով պիտի ըսեն,
 Աս այն մարդն է որ երկիրը կը
 տարտէր,
 Թագաւորութիւնները կը դողա-
 ցընէր,

17 - Աշխարհս անապատ կը դար-
 ձընէր,
 Եւ անոր քաղաքները աւերակ
 կ'ընէր,
 Ու իր գերիները տուներնին չէր
 զրկեր:

18 - Ազգերուն բոլոր թագաւորները
 Ամէն մէկը պատուով իր տանը մէջ
 կը պառկի:

19 - Բայց դուն գարշելի ընծիւղի
 մը պէս,
 Գուբի քարերուն մէջ իջնող
 Սրով խոցուած մեռելներուն հան-
 գերձին պէս,
 Ու քի տակ կոխուած դիակի պէս
 Քու գերեզմանէդ դուրս նետուեցար:

20 - Դուն թաղումով անոնց հետ
 չես միանար,
 Քանզի քու երկիրդ աւրեցիր
 Ու ժողովուրդդ սպաննեցիր.
 Չարերուն սերունդը յաւիտեան պի-
 տի չյիշուի:

21 - Սպանութիւն պատրաստեցէք
 անոր տղոցը,
 Իրենց հայրերուն անօրէնութեանը
 համար,
 Որպէս զի չելլեն ու երկիրը չժա-
 ուանգեն,
 Եւ աշխարհի երեսը *թշնամիներով
 չլեցնեն:

22 - Քանզի զօրաց Տէրը կ'ըսէ որ
 Անոնց վրայ պիտի ելլեմ,
 Եւ Բաբելոնի անունը ու մնացորդը
 Եւ զաւակը ու սերունդը պիտի կարեմ,
 կ'ըսէ Տէրը.

23 - Եւ զանիկա սլնիներուն ժառան-
 գութիւն
 Ու ջուրի լճակներ պիտի ընեմ.
 Եւ կորստեան աւելով պիտի աւլեմ
 զանիկա,
 կ'ըսէ զօրաց Տէրը:

24 - Չօրաց Տէրը երգում ըրաւ ու
 ըսաւ,
 Ինչպէս խորհեցայ, անշուշտ այնպէս
 պիտի ըլլայ,
 Ու ինչ որ սրոշեցի, այն պիտի կատար-
 ուի.

*Կա՛մ, քաղաքներով

- 25 - Ար Ասորեստանցին իմ երկրիս մէջ
պիտի կտորեմ,
Աւ զանիկա լեռներուս վրայ պիտի
կոխկուտեմ.
Եւ անոր լուծը անոնց վրայէն պիտի
վերնայ,
Աւ անոր բեռը անոնց ուսէն պիտի
վերնայ:
- 26 - Բոլոր երկրի համար որոշուած նա-
խասահմանութիւնը ասիկա է.
Աւ ամէն ազգերուն վրայ երկնցած
ձեռքը ասիկա է:
- 27 - Վասն զի զօրաց Տէրը նախասահ-
մանեց,
Եւ ո՞վ կրնայ շնորհիւ խափանել.
Աւ անոր ձեռքը երկնցած է,
Եւ ո՞վ կրնայ զանիկա ետ դարձնել:
- 28 - Աքաղ թագաւորին մահուան
տարին այս պատգամը եղաւ.
29 - Ով բոլոր Փղշտացւոց երկիր,
Քեզ զարնողին գաւաղանը կտորելուն
համար մի ուրախանար.
Քանզի օձին արմատէն քարը պիտի
ելլէ,
Աւ անոր պտուղը կիզող թւաւոր օձ
պիտի ըլլայ:
- 30 - Եւ աղքատներուն անդրանիկները
պիտի կերակրուին,
Աւ չքաւորները ապահովութեամբ պի-
տի պառկին.
Եւ քու արմատդ սովով պիտի կորսն-
ցրնեմ,
Աւ անիկա քու մնացորդդ պիտի մեռ-
ցրնէ:
- 31 - Ողբա, սվ դուռ, աղաղակէ, սվ
քաղաք.
Դուն, սվ բոլոր Փղշտացւոց երկիր,
տակնուվրայ պիտի ըլլաս.
Քանզի հիւսիսէն ծուխ մը կու գայ,
Աւ անոր զօրքերէն աստանդական մը
պիտի չըլլայ:
- 32 - Եւ ազգաց դեպքաններուն ի՞նչ
պատասխան պիտի տրուի.
Թէ Տէրը Սիօնի հիմերը հաստատեց,
Աւ անոր ժողովուրդին աղքատները
հոն պիտի ապաստանին:

ԳԼ. ԺԵ

Մովաբի պատգամը:
Յիրաւի Մովաբի Ար +աղ+ը գիշերով
կոխուեցաւ - կործանեցաւ.
Յիրաւի Մովաբի Կիր +աղ+ը գիշերով
կոխուեցաւ - կործանեցաւ:

- 2 - Անիկա տաճարը ու Դեբոն
Ե- բարձր տեղերը ելաւ լալու համար.
Նաբաւի ու Մեդաբայի վրայ Մովաբ
պիտի ողբայ.
Անոր ամէն գլուխները կնտակ պիտի
ըլլան,
Ամէն մօրուք պիտի կտրուի:
- 3 - Անոր փողոցներուն մէջ քուրձ պի-
տի հագնին,
Անոր տանիքներուն վրայ ու հրապա-
րակներուն մէջ
Ամէնը պիտի ողբան ու *լան
- 4-Աւ Եսեբոն ու Եղէաղէ պիտի աղա-
ղակեն,
Անոնց ձայնը մինչև Յասա պիտի լսուի.
Անոր համար Մովաբի սպառազէնները
պիտի կանչուըւտեն,
Իրենց հոգիէն պիտի ձանձրանան:
- 5 - Իմ սիրտս Մովաբի համար պիտի
աղաղակէ,
Անոր փախտականները երեք տարե-
կան երինջի պէս մինչև Սեգովը
պիտի Գաբէն.
Քանզի Ղուիթի զառ ի վերը լալով
պիտի ելլեն,
Վասն զի Արոնայիմի ճամբան կոտորա-
ծի աղաղակ պիտի հանեն:
- 6 - Քանզի Նեմերիմի ջուրերը կ'աւ-
րուին.
Քանզի խտար կը չորնայ, կանանչ խո-
տը կը հասնի
Ու կանանչեղէն չմնար:
- 7 - Անոր համար իրենց ստացած հա-
րստութիւնը
Աւ բոլոր պահածնին ուռիներուն ձորը
պիտի տանին.
- 8 - Քանզի Մովաբի սահմանը աղաղակ
չըջապատեց.
Անոր ողբը մինչև Եգլայիմ,
Անոր ողբը մինչև Բերեիլիմ հասաւ:
- 9 - Քանզի Գեմոնի ջուրերը արիւնով
պիտի լեցուին.
Քանզի Գեմոնի վրայ աւելի չաբէ+ ,
Ու Մովաբէ ազատուածներուն վրայ
Աւ երկրին մնացորդին վրայ աւելածներ
պիտի զրկեմ:

ԳԼ. ԺԶ

Ղրկեցէք գառը երկրին տիրողին,
Վէմէն անպատի ճամբայով Սիօնի
աղջկան լեռը:
*Եբր. լացի մէջ իջնեն

- 2 - Ու Մովսէսի աղջիկները Աւնոնի անցքերուն քով
- Բոյնէն վաճառուած թափառական թռչունի պէս պիտի ըլլան:
- 3 - Խորհուրդ տուր, դատաստան ըրէ. քու հովանիդ կէսօրուան ատեն գիշերի պէս դիր,
- Աքարուածները պահէ «- փախտականները ձեռք մի տար:
- 4 - Իմ արարուածներս թող քու քովդ պանդուխտի պէս բնակին, ով Մովսէս.
- Դուն անոնց ծածկոյթ եղիր կործանողին երեսէն.
- Քանզի բռնաւոր չմնաց, աւրոզը պակսեցաւ,
- Ե- կոխողները երկրին վրայէն վերցան:
- 5 - Ու ակօռը ողորմութեամբ պիտի հաստատուի.
- Եւ անոր վրայ Դաւիթի խորանին մէջ Այնպէս դատաւոր մը պիտի նստի ճշմարտութեամբ,
- Որ իրաւունքը պիտի փնտուէ,
- Ու արգարութիւնը շուտով ի գործ պիտի դնէ:
- 6 - Մովսէսի ամբարտաւանութիւնը լսեցինք,
- Անիկա խիստ ամբարտաւան է.
- Անոր գոռոզութիւնը, ամբարտաւանութիւնը ու սրամտութիւնը լսեցինք,
- Անոր սնապարծ խօսքերը պարսպ են:
- 7 - Այս պատճառաւ Մովսէս Մովսէսի համար պիտի ողբայ,
- Ամէն մէկը պիտի ողբայ.
- Կիրհարէսէթի հիմերուն համար պիտի հեծէք.
- Անոնք յիրաւի *կործանուած են:
- 8 - Քանզի Եսեբոնի դաշտերը նուաղեցան.
- Ազգաց իշխանները Սեբամոյի որթին ամէնէն պատուական ճիւղերը կտորեցին,
- Որոնք մինչև Յազեր հասեր էին, անպատար շրջապատեր էին.
- Անոր շառաւիղները երկննալով՝ ծովէն անցեր էին:
- 9 - Ասոր համար Սեբամոյի որթին վրայ Յազերի լացովը պիտի լամ.
- Քեզ աչքիս արցունքովը պիտի ուռգեմ, ով Եսեբոն ու Եղէաղէ,

- Վասն զի ամառնային պտուղիդ և հունձքիդ համար եղած աղաղակը դադարեցաւ:
- 10 - Եւ պողպէր արտերէն ուրախութիւնը ու ցնծութիւնը պիտի վերնայ,
- Ու սյգիններու մէջ երգերու և ցնծութեան ձայն պիտի չլսուի.
- Հնձանի մէջ ա՛լ գինի պիտի չկոխեն. Անոնց աղաղակը վերջացուցի:
- 11 - Այս պատճառաւ իմ աղիքս Մովսէսի համար,
- Ու փորս կիրհարէսէթի համար քնարի պէս ձայն պիտի տայ,
- 12 - Այն ատեն պիտի երևնայ Թէ՛ ինչպէս Մովսէս իր բարձր տեղը երթալով պիտի յոգնի,
- Ու իր որբարանը պիտի մտնէ աղօթք ընելու համար,
- Բայց օգուտ մը պիտի չըլլայ:
- 13 - Այս է այն խօսքը զոր Տէրը *շատանցմէ Մովսէսի համար խօսեր է.
- 14 - Բայց հիմա Տէրը խօսեցաւ ու ըսաւ, Երէք տարուան մէջ, վարձկանի տարիներուն պէս, Մովսէսի փառքը պիտի անարգուի Այն բոլոր մեծ բազմութիւնովը, Եւ մնացորդը խիստ քիչուոր «- ակար պիտի ըլլայ:

ԳԼ ԺԵ

- Դամասկոսի պատգամը:
- Ահա Դամասկոս քաղաք ըլլալէ պիտի վերնայ,
- Ու աւերակի շեղջ մը պիտի ըլլայ,
- 2 - Արտերի քաղաքները պիտի թողուին, Հօտերու քարտէսը պիտի ըլլան,
- Որպէս զի անոնք պառկին, ու վախճանող չըլլայ:
- 3 - Ու Եփրեմէ պարիսպը պիտի վերնայ, Եւ Դամասկոսի ու Ասորուց մնացորդէն՝ թագաւորութիւնը.
- Անոնք Իսրայէլի որդիներուն փառքին պէս պիտի ըլլան,
- Կ'ըսէ զօրաց Տէրը:
- 4 - Եւ այն օրը Յակոբի փառքը պիտի պակսի,
- Ու անոր մարմինն գիրութիւնը պիտի նիհարանայ:
- 5 - Եւ այնպէս պիտի ըլլայ, ինչպէս հնձողը երբ ցորեն կը հնձէ,

*Կա՛մ, վշտացած

*Եբբ. այն ատենէն

Թեևն վրայ հասկերը կը ժողվէ.
 Աւ Ռափայիններուն հովիտը հասկեր
 քաղաղին պէս պիտի ըլլայ,
 6 - Աւ ինչպէս ձիթենին կը թոթվեն,
 Աւ բարձր ստանն ծայրը երկու երեք
 հաստ,
 Եւ խիստ պաղաքեր ստանն վրայ չորս
 հինգ հաստ կը մնայ,
 Անոր վրայ ալ Գառն ճիւղեր պիտի մնան,
 Կ'ըսէ Խարայէլի Տէր Աստուածը:
 7 - Այն օրը մարդ իր Ստեղծողին
 պիտի նայի,
 Աւ իր աչքերը Խարայէլի Սուրբը պիտի
 դիտեն:
 8 - Եւ իր ձեռքերուն գործը եղող սե-
 զմաններուն պիտի շնայի,
 Աւ իր մտաբերուն շինածը,
 Թէ՛ Աստարովթի կուռքերը
 Եւ թէ՛ արեգական կուռքերը, պիտի
 չդիտէ:
 9 - Այն օրը անոր ամուր քաղաքները,
 Խարայէլի որդիներուն երեսէն ձգուած
 Անպիտան թուփերու և բարձր ստա-
 բուն պիտի նմանին,
 Աւ աւերակ պիտի ըլլան:
 10 - Արովհէտե գուն քու փրկութեանդ
 Աստուածը մուգար,
 Եւ քու գորութեանդ Վէմը չյիշեցիր,
 Անոր համար հաճելի տունկեր պիտի
 անկես,
 Եւ օտար երէքե Բեր-՝-՝ տունկեր պի-
 տի անկես,
 11 - Տնկածդ ցորեկը պիտի աճեցնես,
 Աւ ցանածդ աւաւուտուն պիտի բուս-
 ցընես.
 Բայ բերքին օրը հունձքը պիտի պակսի,
 Եւ սաստիկ տրամուլթիւն պիտի ըլլայ:
 12 - Վա՛յ շատ ժողովուրդներու
 բազմութեանը,
 Արոնք ծովու ձայնին պէս կը գուտան,
 Աւ ժողովուրդներու ազմուկին՝
 Արոնք սաստիկ ջուրերու ձայնին պէս
 կը գոչեն:
 13 - Փողովուրդները շատ ջուրերու
 ձայնին պէս կը գոչեն.
 Բայց Ա-՛-՛ զանոնք պիտի յանդի-
 մանէ,
 Եւ հեռու պիտի փախչին.
 Աւ լեռներուն վրայի մղեղին պէս հո-
 վին երեսէն,
 Եւ մրրիկին առջևէն գլորուած Գառնին
 պէս պիտի հալածուին:
 14 - Աւ իրիկուան ստանն ահա խռովու-
 թիւն պիտի Գայ.

Եւ աւաւուտ չեղած բնաջինջ պիտի
 ըլլան.
 Մեր յափշտակիչներուն բաժինը
 Աւ մեր կողպարիչներուն վիճակը ա-
 սիկա է:

ԳԼ. ԺԸ

Ով Եթէովպացուց գեատերուն ան-
 դի կողմը եղող
 Թեւերով *հովանաւոր երկիր,
 2 - Ար ծովէն՝ արտուեղէն նաւակներով
 Ջուրի երեսին վրայէն դեպքաններ կը
 զրկէ,
 Ով արագընթաց դեպքաններ , գացէք
 + Երկայնահասակ ու լերկ՝ ազգին,
 Սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուր-
 դին,
 Խիստ զօրաւոր ու «Գն» կոխկոտող
 ազգին,
 Որուն երկիրը գեատերը կը կտրեն :
 3 - Ով աշխարհի բոլոր բնակիչները,
 Աւ երկրի վրայ բնակողներ,
 Երբ լեռները դրօշակ կանգնուի՝ նա-
 յեցէք,
 Աւ երբ փող հնչուի՝ լսեցէք:
 4 - Քանզի Տէրը ինձի այսպէս ըսաւ,
 Ես հանգիստ պիտի ըլլամ՝ ու իմ բնա-
 կարանէս պիտի նայիմ՝
 + Խոտի վրայի՝ պայծառ տաքութեանը
 պէս.
 Ա - հունձքերու տաքութեանը մէջ ցօ-
 ղագին ամպի պէս.
 5 - Քանզի հունձքի ժամանակէն ա-
 ուաջ,
 Երբ ընձիւղը կը մեծնայ
 Աւ ծաղիկը ազոխ ըլլալով հասնելու
 վրայ է,
 Անկիա ճիւղերը յօտոցով պիտի կարէ
 Եւ ուռերը պիտի փրցնէ նեաէ:
 6 - Անոնք մէկտեղ լեռներու թռչուն-
 ներուն
 Աւ երկրի գազաններուն պիտի թող-
 ուին.
 Եւ թռչունները ամառը անոնց վրայ
 պիտի անցնեն,
 Աւ երկրի ամէն գազանները ձմեռը ա-
 նոնց վրայ պիտի անցնեն:
 7 - Այն ժամանակ զօրաց Տէրօջը
 Երկայնահասակ ու լերկ ժողովուրդէն
 *Կա՛մ, շառաչիւն հանող
 +Կա՛մ, Տարածուած ու խիստ
 †Կա՛մ, կէսօրուան

Եւ սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուրդէն,
 Իրատ զօրաւոր ու ահեղ կոխկռտող ազգէն,
 Որուն երկիրը գետերը կը կտրեն,
 Զօրաց Տէրոջը անուանը տեղը,
 Սիօն լեռը, ընծայ պիտի բերուի:

ԳԼ. ԺԹ

Եգիպտոսի պատգամը:

Ահա Տէրը թեթեւընթաց ամպի վրայ հեծեր է,

Ու Եգիպտոս պիտի մտնէ.
 Եւ անոր երեսէն Եգիպտոսի կուռքերը պիտի շարժին,
 Ու Եգիպտոսի սիրտը իր ներսիդին պիտի հալի:

2-Եւ Եգիպտացիները պիտի *գրգռեմ Եգիպտացիներուն վրայ.

Ու ամէն մէկը իր եղբօրը հետ, և ամէն մէկը իր ընկերին հետ,

Քաղաք քաղաքի հետ * - թագաւորութիւն թագաւորութեան հետ,

Պատերազմ պիտի ընէ:

3 - Ու Եգիպտոսի սգին իր ներսիդին պիտի պակսի,

Եւ անոր խորհուրդը պիտի ցրուեմ.
 Ու անոնք կուռքերուն, կախարհներուն,

Վհուկներուն ու նշանագէտներուն պիտի հարցնեն:

4 - Ու Եգիպտացիները խտտափրա տէրոջ մը ձեռքը պիտի մատնեմ,

Եւ անոնց վրայ անգութ թագաւորութիւն մը պիտի տիրէ,

Կ'ըսէ զօրաց Եհովա Տէրը:

5 - Եւ ջուրերը ծովէն պիտի պակսին,
 Ու գետը պիտի ցամքի ու չորնայ:

6 - Եւ †գետերուն ջրերը պիտի քաշուին*,

Ու †պարսպաւոր †աղափներուն* գետերը պիտի պարպուին ու չորնան,

Եղէզը ու պրտուն պիտի թառամին:

7 - Գետին քով ու Գետին եզերքին վրայ եղող մարգագետինները

Եւ Գետին բոլոր վարուցանը Պիտի չորնան, ցիրուցան ըլլան ու կորսուին:

8 - Զկնորսներն ալ պիտի հեծեն,

Ու Գետին բոլոր կարթընկէցները պիտի ողբան,

Եւ ջուրին վրայ ցանց նետողները պիտի տրամին:

9 - Ու բարակ քիթան գործողները Ու ճերմակ կառու հինողները պիտի ամչնան:

10 - Անոր *սիւնները պիտի կոտրաին, Ու ամէն վարձք առնողներուն հոգին պիտի արամի:

11-Իրաւ որ Տայանիսի իշխանները յիմարներ են.

Փարաւոնի իմաստուն խորհրդականներուն խորհուրդը անասնական է.

Ինչպէս Փարաւոնի կրնաք ըսել,
 Թէ ես իմաստուններու որդի եմ,
 Ե՞հին թագաւորներու որդի եմ:

12 - Արդ ո՞ւր են քու իմաստուններդ,

Որ հիմա քեզի պատմեն ու †իմացնեն թէ զօրաց Տէրը ի՛նչ վճար է Եգիպտոսի համար:

13-Տայանիսի իշխանները յիմարեցան. Մեմփիսի իշխանները խաբուեցան.

Ու Եգիպտոսը իր ցեղերուն գլխաւորները մոլորեցուցին:

14 - Տէրը անոր մէջ մոլորութեան ոգի խառնեց

Ու անոնք Եգիպտոսը իր ամէն գործին մէջ մոլորեցուցին,

Ինչպէս փսիող գինովը կը մոլորի:

15 - Ու Եգիպտոսի մէջ գործ պիտի ըլլայ.

Որ գլուխ կամ պոչ եղող Արմաւեկնի ոտ կամ կնիւն գործէ:

16 - Այն օրը Եգիպտոս կիներու պէս պիտի ըլլայ,

Ու պիտի գողայ և վարհուրի Զօրաց Տէրոջը ձեռքին շարժմունքէն Զոր պիտի շարժէ անոր վրայ:

17 - Եւ Յուդայի երկիրը Եգիպտացուց արհաւիրք պիտի ըլլայ.

Ով որ զանհկա յիշէ՝ պիտի վախնայ Զօրաց Տէրոջը խորհուրդին պատճառաւ,

Զոր անոր դէմ սահմաններ է:

18 - Այն օրը Եգիպտոսի երկրին մէջ Քանանու լեզուն խօսող

Եւ զօրաց Տէրոջը անուանով երգում ընող

Հինգ քաղաք պիտի ըլլայ.

*Կա՛մ, սպառնալիներ

†Կա՛մ, գետերը պիտի հոտին

‡Կա՛մ, Եգիպտոսի

*Կա՛մ, վարպետները

†Կա՛մ, գիտնան

Մէկը *Արեգ քաղաք պիտի ըսուի:
 19 - Այն օրը Եգիպտոսի երկրին մէջ
 Տէրոջը համար սեղան,
 Ու անոր սահմանին քով Տէրոջը հա-
 մար կոթող մը պիտի ըլլայ.
 20 - Եւ անիկա Եգիպտոսցւոց երկրին
 մէջ
 Զօրաց Տէրոջը համար նշան ու վկայու-
 թիւն պիտի ըլլայ.
 Վասն զի բռնաւորներուն պատճա-
 րաւ
 Տէրոջը պիտի աղաղակեն.
 Ու անիկա ազատիչ մը ու մեծ Բարդ
 մը զրկելով անոնց՝ պիտի ազա-
 տէ զանոնք.
 21 - Եւ Տէրը Եգիպտոսի մէջ պիտի
 յայտնուի,
 Ու այն օրը Եգիպտոսցիք Տէրը պիտի
 ճանչնան,
 Եւ զօհեր ու պատարագներ պիտի մա-
 տուցանեն,
 Եւ Տէրոջը ուխտ պիտի ընեն ու կա-
 տարեն:
 22 - Եւ Տէրը Եգիպտոսցիները պիտի
 զարնէ.
 Պիտի զարնէ, ու պիտի բժշկէ.
 Եւ անոնք Տէրոջը պիտի դառնան,
 Ու անիկա պիտի ընդունի զանոնք ու
 պիտի բժշկէ:
 23 - Այն օրը Եգիպտոսէ գէպ ի Ասոր-
 րեստան բանուկ ճամբայ պիտի
 ըլլայ.
 Ու Ասորեստանցիք Եգիպտոս՝ ու Ե-
 գիպտոսցիք Ասորեստան պիտի
 երթան,
 Ու Եգիպտոսցիք †Ասորեստանցւոց հետ
 Ասորեստան պիտի ծառայեն:
 24 - Այն օրը Իսրայէլ երրորդ պիտի
 ըլլայ
 Եգիպտոսի ու Ասորեստանի հետ.
 Ու երկրի մէջ օրհնութիւն պիտի ըլ-
 լայ:
 25 - Քանզի զօրաց Տէրը զանիկա պի-
 տի օրհնէ,
 Ու պիտի ըսէ, Օրհնեալ ըլլայ իմ ժո-
 ղովուրդս Եգիպտոս,
 Ու իմ ձեռքերուս գործը Ասորես-
 տան,
 Կէ իմ ժառանգութիւնս Իսրայէլ:

*Կա՛մ, Կորստեան. Եֆր. Հերէս
 †Կա՛մ, Ասորեստանցւոց պիտի ծառա-
 յեն

ԳԼ. Ի

Այն տարին որ Տարաթան Ասորեստանի Սարգոն թագաւորէն զրկուե-
 լով Ազովտոս գնաց, ու Ազովտոսի հետ
 պատերազմ ըրաւ, ու զանիկա առաւ,
 2 - Այն ժամանակ Տէրը Ամովսի որդ-
 ւոյն Եսայիի ձեռքով խօսեցաւ՝ ըսե-
 լով, Գնա մէջքէդ քուրձդ հանէ, ու
 ստքէդ կօշիկներդ հանէ. ու անիկա
 այնպէս ըրաւ, և մերկ ու բոկոտն կը
 շրջէր: 3 - Եւ Տէրը ըսաւ, Ինչպէս իմ
 ծառայ Եսայի երեք տարի մերկ ու բոկ-
 օտն շրջեցաւ, որ Եգիպտոսի համար
 ու Եթէովպիայի համար նշան ու ցոյց
 մըն է, 4 - Այնպէս Ասորեստանի թա-
 գաւորը Եգիպտոսցիները գերի՝ ու Եթէ-
 օվպոսցիները աքսոր պիտի տանի, երի-
 տասարդները ու ծերերը՝ մերկ, բոկոտն
 և իրենց ամօթոյքը բաց, Եգիպտոսի
 նախատինք ըլլալու համար: 5 - Ու ա-
 նոնք պիտի ստկան՝ ու ամչնան Եթէ-
 օվպիայէ՝ որ իրենց ապաւենն էր, ու
 Եգիպտոսէ՝ որ իրենց փառքն էր: 6 -
 Եւ այն օրը այս ծովեզերեայ երկրին
 բնակիչները պիտի ըսեն, Ահա այսպէս
 եղաւ մեր ապաստանարանը՝ որ մենք
 Ասորեստանի թագաւորին երեսէն ա-
 զատելու համար, ու օգնութիւն գտնե-
 լու համար հոն փախանք. ուրեմն մենք
 ի՞նչպէս պիտի ազատինք:

ԳԼ. ԻԱ

Ծովու անապատին պատգամը:
 Հարաւէն յարձակող մըրիկներուն
 պէս
 Անիկա անապատէն, սոսկալի երկրէն
 կու գայ:
 2 - Ինծի վշտալի տեսիլք մը յայտնուե-
 ցաւ.
 Յափշտակողը կը յափշտակէ ու կոր-
 ծանողը կը կործանէ:
 Ով Եղամոցիք, վեր ելէք. ով Մարք,
 պաշարեցէք.
 Անոր պարճարա՞ծ բոլոր հառաչանքը
 դադարեցուցի:
 3 - Ասոր համար երիկամունքս ցաւով
 լեցուեցաւ,
 Ու ծննդական կնոջ ցաւերուն պէս
 ցաւեր բռնեցին զիս.

- * Այնպէս կձկուած եմ որ չեմ կրնար լսել,
- Այնպէս խռոված եմ որ չեմ կրնար տեսնել:
- 4 - Սիրաս շփոթեցաւ, արհաւիրքը զիս դողացուց:
- Իմ ուրախութեանս գիշերը ինձի սրտագորի գէշեր ըրաւ:
- 5 - Սեղանը կը պատրաստեն, դէտերը կը դնեն, կ'ուտեն կը խմեն. ելէք, ով իշխաններ, վահանները օժեցէք:
- 6 - Քանզի Տէրը ինձի այսպէս ըսաւ, Գնա դէտ մը դիր, որ տեսածը զրուցէ:
- 7 - Եւ անիկա հեծեալներ տեսաւ, երկու ձիաւոր,
- Ու էշերու վրայ հեծածներ և ուղտերու վրայ հեծածներ,
- Եւ ուշագրութեամբ, մեծ ուշագրութեամբ, մտիկ ըրաւ,
- 8 - Ու աղաղակեց առիւծի պէս, Ով Տէր, ես ցորեկը միշտ իմ գիտանոցիս մէջ կը կայնիմ, Ու բոլոր գիշերը իմ պահպանութեանս տեղը կը կենամ:
- 9 - Եւ ահա հեծնող մարդիկ, Երկու ձիաւոր, կու գան.
- Նաև պատասխան տուաւ ու ըսաւ, Ինկաւ Բաբելոն, ինկաւ, Ու անոր աստուածներուն բոլոր արձանները կտորտեցան «- գետինը նեպո-եցան:
- 10 - Ով իմ կոխուածներս ու իմ կալիս ցորեկը, Ես ձեզի պատմեցի ինչ որ լսած եմ Զօրաց Տէրոջմէն, Իսրայէլի Աստուծմէն:
- 11 - ԻՆՊՈՎԻ պատգամը: Սէրէ ձայն մը կու գայ ինձի, Ով պահպան, գիշերուան համար ի՞նչ,
- Ով պահպան, գիշերուան համար ի՞նչ լո՛ւր կայ:
- 12 - Պահպանը կ'ըսէ, Աւաւօտը կու գայ ու նաև գիշերը. Եթէ կ'ուզէք հարցնել, հարցուցէք. Իտրձէք ու եկէք:
- 13 - Արարիայի պատգամը: Արարիայի անտառին մէջ գիշերը պիտի անցնէք,

- Ով Իեզանացուց կարաւանները:
- 14 - Ով Թեմայի երկրի բնակիչները, Ծարաւին առջև ջրով ելէք, Փախտասկանին առջև հացով եկէք:
- 15 - Վասն զի անոնք կը փախչին սուրերուն առջևէն, Քաշուած սուրին առջևէն Ու լարուած աղեղին առջևէն Եւ սաստիկ պատերազմին առջևէն:
- 16 - Քանզի Տէրը ինձի այսպէս ըսաւ, Մէկ տարուան մէջ վարձկանի ստարներուն պէս կեդարի բոլոր փառքը պիտի վերջանայ,
- 17 - Ու աղեղնաւորներուն մնացած թիւը, կեդարի սրդուց զօրաւորները, պիտի քիչնան,
- Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը խօսեցաւ:

ԳԼ. ԻԲ

- Տեսիլքի ձորին պատգամը: Հիմա քեզի ի՞նչ եղաւ,
- Որ ամէնդ ասնիքներու վրայ ելաք:
- 2 - Ով խռովութեամբ լեցուած Աղմուկի քաղաք, զբոսասէր քաղաք, Քու սպաննուածներդ սրով սպաննուած չեն, Ու պատերազմի մէջ չմեռան:
- 3 - Բոլոր իշխաններդ մէկէն փախան, Աղեղնաւորներէն կապուեցան. Քու ժողովուրդդ հեռու փախչողներէն Բոլոր գանուածները մէկտեղ կապուեցան:
- 4 - Անոր համար ըսի, Թող տուէք զիս, «բ դառնապէս լամ. Իմ ժողովուրդիս աղջկան կործանումին համար
- Զիս մխիթարելու մի աշխատիք:
- 5 - Քանզի տեսիլքի ձորին մէջ զօրաց Եհովա Տէրոջմէն Խռովութեան, կոխման ու շփոթութեան օր է.
- Պարիսպը կը փլցնեն, և աղաղակը մինչև լեռը իջ հասնի:
- 6 - Ու Եղամ իջ ձիաւոր մարդոցմով կապարճը վերցուց, Եւ կիր վահանը բացաւ.
- 7 - Եւ քու ընտիր հովիտներդ կառքերով լեցուեցան, Ու ձիաւորները գունդ կազմեցին դուներուն քով:

*Կոմ, Լսելէն կձկուած եմ. տեսնելէն խռոված եմ
 ԻՆՊՈՎ. Իսրայի. ա Մն. ա. 30:

- 8 - Եւ Յուդայի ծած կոցը բացուեցաւ,
Ու այն օրը անտառի տանը զէնքերուն նայեցաք .
- 9 - Եւ Գաւթի քաղաքին փլած տեղերուն շատ ըլլալը տեսաք,
Ու վարի աւազանին ջուրերը ժողվեցիք .
- 10 - Ու Երուսաղէմի առնները համրեցիք,
Եւ պարիսպը ամրացնելու համար առնները փցուցիք .
- 11 - Ու հին աւազանին ջուր բուն համար
Երկու պարսպին մէջտեղ ջրակոյտ մը շինեցիք,
Բայց զանկա շինողին չնայեցաք,
Ու շատանցմէ զանկա կազմողին ուշադրութիւն չըրիք :
- 12 - Եւ այն օրը զօրաց Եհովա Տէրը յեւ կանչեց
Լալու ու սգալու,
Գլուխ կնատացնելու և քուրձ հագնելու .
- 13 - Եւ ահա ցնծութիւն և ուրախութիւն ըրի+ ,
Արջառներ կը սպաննէիք և ոչխարներ կը մորթէիք,
Միս կ'ուտէիք ու գինի կը խմէիք՝ ըփփփ ,
Ուտենք ու խմենք,
Քանզի վաղը պիտի մեռնինք :
- 14 - Բայց զօրաց Տէրոջը կողմանէ իմ ախանջներուս յայանուեցաւ որ Անշուշտ այս անօրէնութիւնը ձեզի պիտի չթողուի,
Մինչև որ դուք մեռնիք ,
Կ'ըսէ զօրաց Եհովա Տէրը :
- 15 - Զօրաց Եհովա Տէրը այսպէս ըսաւ ,
Գնա, ու պաղտաին հրամանատարին, Սեբնա *գանձապետին, քով մտիր «- ըփ ,
- 16 - Գուն հոս ի՞նչ ունիս և հոս ո՞վ ունիս,
Որ հոս քեզի գերեզման փորեցիր,
Ով գուն, որ քու գերեզմանդ բարձր տեղ կը փորես,
Ու քեզի վէմի մէջ բնակարան փկը շինես ,
- 17 - Ահա Տէրը քեզ պիտի նետէ զօրաւոր նետաւածքով մը ,
Եւ քեզ բոլորովին պիտի ծածկէ :
- 18 - Անշուշտ գնասակի պէս

- Լայնատարած երկիր մը պիտի գլորէ քեզ .
- Գուն հոն պիտի մեռնիս,
Եւ քու փառքիդ կառքերը հոն պիտի մնան ,
- *Ով քու տէրոջդ տանը անարգանքը :
- 19 - Ու քու պաշտօնէդ քեզ պիտի վռնտեմ ,
Եւ քու աստիճանէդ քեզ պիտի զրկեմ :
- 20 - Ու այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս ,
Քեզկիայի որդին Եղիակիմը ,
- 21 - Եւ քու պատմութեանդ անոր պիտի հագցնեմ ,
Ու քու գօտիովդ զանկա պիտի զօրացնեմ ,
Եւ քու իշխանութիւնդ անոր ձեռքը պիտի տամ .
- Ու անկա Երուսաղէմի բնակիչներուն Ու Յուդայի տանը հօր պէս պիտի ըլլայ :
- 22 - Եւ Գաւթի տանը բանալին Անոր ուսին վրայ պիտի դնեմ ,
Որպէս զի անկա բանայ և գոցող չըլլայ ,
Ու գոցէ և բացող չըլլայ :
- 23 - Ու զանկա հաստատ տեղ մը Բեեռի պէս պիտի գտնեմ .
Եւ անկա իր հօրը տանը Փառաւոր աթոռի պէս պիտի ըլլայ :
- 24 - Ու անոր հօրը տանը բոլոր փառքը անոր վրայ պիտի կախուի,
Անոր սերունդէն եղող պատուականները ու անարգները ,
Ս,մէն պզտիկ ամանները , տեսակ տեսակ թասերէն
Մինչև ամէն տեսակ փակերը :
- 25 - Այն օրը , կ'ըսէ զօրաց Տէրը ,
Այս հաստատ տեղը գամուած բեռը պիտի վերցուի,
Եւ պիտի կտարի ու իյնայ,
Ու անոր վրայ եղած բեռը պիտի կտարրաի,
Քանզի Տէրը խօսեցաւ :

ԳԼ ԻԳ

Տիւրոսի պատգամը :
Ողբացէք, ով Թարսիսի նաւեր,
Քանզի անկա բնաջինջ եղաւ , հոն տուն կամ քուռ չմնաց .

*Կա՛մ, առաջին պաշտօնատարին
†Եբբ. կը քանդակես

*Կա՛մ, իբբե
†Կա՛մ, սափորները , և կա՛մ, նուագա-
†Եբբ. մուտք [րանները

Անկա Կիսացաց երկրէն յայտնուեցաւ անոնց :

2 - Ով կղզիի բնակիչներ, լռեցէք Պովէ անցնող Սիդոնացաց վաճառականները լեցուցեր էին քեզ :

3 - Եւ շատ ջուրերու մէջ Գոգոգոգ *Սիովրի հունտերը,

Գեաին հունձքը, անոր եկամուտն էր, Ու անկա ազգերուն վաճառանոցն էր :

4 - Ով Սիդոն, ամէցիր, քանզի ծովը կը խօսի .

Ծովուն զօրութիւնը կը Խօսի ու կ'ըսէ, Ես ծննդականի ցաւ չեմ՝ քաշեր ու չեմ՝ ծնանիր .

Երիտասարդներ չեմ՝ անուցաներ և կոյս աղջիկներ չեմ՝ մեծցներ :

5 - Երբ ոչ Բաշ Եգիպտացաց ականջը հասնի,

Տիւրոսի լուրին համար պիտի տագնանային :

6 - Թարսիս անցէք,

Ով շոպէպերքի բնակիչներ, ողբացէք :

7 - Ձեր ուրախութեան Կալաբի ասիկա՞ է,

Որուն հնութիւնը շատանցմէ է .

Անոր սաքերը հեռու տեղ պանդուխտ ըլլալու պիտի տանին զանիկա :

8 - Ո՞վ այս խորհուրդը ըրաւ Տիւրոսի դէմ,

Որ եր Բնախնները կը պատկեր .

Անոր վաճառականները իշխաններ էին, Ու առուտուր ընողները՝ երկրի պատուաւոր Բարդիէ :

9 - Չօրաց Տէրը այս խորհուրդը ըրաւ, Որպէս զի ամէն փառքին ամբարտաւանութիւնը խայտառակէ,

Ու երկրի բոլոր պատուաւորները անարգէ :

10 - Ով Թարսիսի աղջիկ, Քու տեղէդ զեաի պէս անցիր,

Ասկէ ետքը քօսի չկայ :

11 - Իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, Թագաւորութիւնները սարսեց .

Տէրը Քանանացաց համար հրամայեց, Որ անոր բերդերը աւրեն .

12 - Ու ըսաւ, Իսուն մէյմըն ալ պիտի չուրախանաս ,

Ով Սիդոնի անարգուած կոյս աղջիկը . Ելիր, Կիտիմ անցիր,

Բայց հոն ալ հանգստութիւն պիտի չունենաս :

13 - Ահա Քաղզէացաց երկիրը, Որ արեւօժ ժողովուրդ չէր,

Չանկա Ատրեսաանցիք հիմնեցին անապատի բնակիչներուն հաւնար .

Անոր աշտարակները կանգնեցին, անոր պալատները շինեցին,

Բայց անկա հիմա աւերակ ըրաւ անկա :

14 - Ողբացէք, ով Թարսիսի նաւեր, Վասն զի ձեր զօրութիւնը կորսուեցաւ :

15 - Եւ այն օրը Տիւրոս մուցուած պիտի մնայ եօթանասուն տարի, Մէկ թագաւորի օրերուն չափ .

Իսկ եօթանասուն տարիէն ետքը Երէ՛ չը պիտի երգեն Տիւրոսի, պոռնիկի երգին պէս .

16 - Ով մուցուած պոռնիկ, քնարը առ

Ու քաղաքին մէջ պալատ . Աղէկ զարկ, շատ խաղ կանչէ,

Որպէս զի քեզ յիշեն :

17 - Ու եօթանասուն տարիէն ետքը Տէրը այցելութիւն պիտի ընէ Տիւրոսի, Եւ անկա իր շահին պիտի դառնայ,

Ու աշխարհի երեսը եղող բոլոր երկրի թագաւորութիւններուն հետ

Պոռնիկութիւն պիտի ընէ :

18 - Եւ անոր *վաճառականութեան շահը՝ Տէրոջը պիտի նուիրուի .

Անկա գանձատունը պիտի չգրուի, Կամ շտեմարանի մէջ պիտի չպահուի .

Հապա անոր վաճառականութեան շահը

Տէրոջը առջև բնակողներուն պիտի ըլլայ,

Որպէս զի մինչև կշտանալնին ուտեն, Ու պատուական զգեստներ հագնին :

ԳԼ ԻԳ

Ահա Տէրը երկիրը կը պարպէ ու զանիկա կը դատարկացնէ,

Եւ տակնուվրայ ընելով անոր բնակիչները կը ցրուէ :

2 - Ու ինչպէս է ժողովուրդը՝ քահանան ալ այնպէս,

Ինչպէս է ծառան՝ իր տէրն ալ այնպէս,

Ինչպէս է աղախինը՝ իր տիկինն ալ այնպէս,

Ինչպէս է ծախու առնողը՝ ծախողն ալ այնպէս,

*Կա՛մ, Նեղոսի
‡Կա՛մ, արգելք

†Կա՛մ, կղզիի

*Եթէ վաճառականութիւնը ու շահը

Ինչպէս է փոխ տուողը՝ փոխ առնողն
 ալ այնպէս,
 Ինչպէս է սակասիք առնողը՝ սակասիք
 տուողն ալ այնպէս պիտի ըլլայ:

3 - Երկիր բոլորովին պիտի պարպուի,
 Ու բոլորովին պիտի կողոպտուի,
 Քանզի այս խօսքը Տէրը խօսեցաւ:

4 - Երկիր սուգ կը բռնէ ու կը մարի,
 Աշխարհ կը նուաղի ու կը մարի,
 Երկրի ժողովուրդին մեծերը կը նուա-
 ղին:

5 - Ու երկիր իր բնակիչներուն տակ
 պղծուեցաւ,
 Քանզի անոնք օրէնքները զանց ըրին,
 Պատուիրանքը փոխեցին, յաւիտենա-
 կան ուխտը խափանեցին:

6 - Այս պատճառաւ նզովքը կերաւ
 երկիրը,
 Ու անոր մէջ բնակողները իրենց յան-
 ցանքին պատիժը կրեցին:

Այս պատճառաւ երկրի բնակիչները
 այրեցան,
 Ու քիչ մարդիկ մնացին:

7 - Նոր գինին սուգ կը բռնէ, որժը
 կը նուաղի,
 Եւ ամէն ուրախասիրտ եղողները կը
 հառաչեն:

8-Թմբուկներուն ցնծութիւնը կը դա-
 գարի,
 Ուրախութիւն ընողներուն աղաղակը
 կը կարի,
 Քնարին ցնծութիւնը կը դադարի:

9 - Երգով գինի պիտի չխմեն.
 Յիբն՝ խմողներուն դառն պիտի ըլլայ:

10 - Իտատարկ քաղաքը կործանեցաւ,
 Ամէն տուն գոցուեցաւ, որպէս զի Բաբելոն
 ըլլաւ:

11 - Փողոցներուն մէջ գինիի համար
 աղաղակ կայ,
 Ամէն ուրախութիւն մթնցաւ,
 Երկրին ցնծութիւնը վերցաւ:

12-Քաղաքին մէջ ամայութիւն մնաց.
 Ու գուռը զարնուեցաւ «- աւերակ
 եղաւ:

13 - Քանզի երկրին մէջ, ժողովուրդ-
 ներուն մէջ,
 Թօթվուած ձիթ ենի պէս,
 Ու այգեկութէն ետքը ճառքաղին պէս
 պիտի ըլլայ:

14 - Անոնք ձայներնին վերցնելով
 ցնծութեամբ պիտի երգեն,
 Ծովու կողմէն Տէրօջը փառքին հա-
 մար բարձրածայն պիտի աղա-
 զակեն:

15 - Անոր համար *արեւելեան կողմը՝
 փառաւորեցէք Տէրը,
 Ծովու կողմներուն մէջ Իսրայէլի Տէր
 Ատառածայն անունը:

16 - Երկրի ծայրերէն օրհնութիւններ
 լսեցինք,
 Արգարին փառք Բաբելոնի.
 Բայց ես ըսի, Նիհար եմ, Նիհար եմ,
 վա՛յ ինձ:
 Յափշտակողները կը յափշտակեն.
 Յափշտակողները բռնի կը յափշտա-
 կեն:

17 - Ով երկրի բնակիչ,
 Վախ, գուռ և որոգայթ պիտի ըլլայ
 քու վրադ:

18-Ու վախին ձայնէն փախչողը գուռը
 պիտի իյնայ,
 Եւ գուռին մէջէն ելողը որոգայթին
 մէջ պիտի բռնուի:
 Քանզի բարձրէն Կաթառ հասնները բաց
 են,
 Ու երկրի հիմերը կը շարժին:

19 - Երկիր բոլորովին կը ճնշուի.
 Երկիր բոլորովին կը պատուի.
 Երկիր բոլորովին կը սարսի:

20 - Երկիր գինովի պէս անդադար պի-
 տի երերայ,
 Ու հիւղի պէս պիտի շարժի.
 Եւ անոր մեղքը պիտի ծանրանայ անոր
 վրայ,
 Ու անիկա պիտի իյնայ ու մէյմըն ալ
 պիտի չելլէ:

21 - Եւ այն օրը Տէրը բարձրէն այցե-
 լութիւն պիտի ընէ հպարանե-
 րուն զօրքին,
 Ու երկրի վրայ՝ երկրի թագաւորնե-
 րուն:

22 - Եւ անոնք պիտի ժողովուն,
 Ինչպէս բանտարկեալները գուռին մէջ
 կը ժողովուն,
 Ու բանտարկ մէջ պիտի գոցուին.
 Եւ շատ առեկէ ետքը անոնց այցելու-
 թիւն պիտի ըլլայ:

23 - Եւ լուսինը պիտի ամչնայ, ու ա-
 րեւը պիտի պատկառի,
 Երբ զօրաց Տէրը Աիօն լեռանը վրայ
 Ու երուսաղէտի մէջ թագաւորէ,
 Ու իր ձերերուն առջև փառաւորուի:

*Եբր. լոյսերուն մէջ
 †Կամ, սահանները

ԳԼ. ԻԵ

Ով Տէր, իմ Աստուածս դուն ես. Բեզ պիտի բարձրացնեմ, քու անուանդ փառք պիտի տամ.

Քանզի սքանչելի բաներ ըրիր, Քու վաղեմի խորհուրդներդ հաւատարիմ և ճշմարիտ են:

2 - Քանզի քաղաքը հողակոյտ, Ու պարսպաւոր քաղաքը տւերակ դարձուցիր,

Որպէս զի «յոօ֊հե֊րե» քաղաք չըլլալով՝ Օտարականներուն պալլաւը յաւիտեան չչինուի:

3 - Անոր համար զօրաւոր ժողովուրդը քեզ պիտի պատուէ,

Եւ ահարկու ազգերուն քաղաքը քեզ մէ պիտի վախնայ:

4 - Վասն զի դուն ապաւէն եղար ազքատին,

Ապաւէն՝ չքաւորին իր նեղութեան տատենը,

Ապաստանարան՝ փոթորիկէն, հովանի՝ տաքութենէն,

Երբ անօրէն մարդոց կատաղութիւնը պատ Իցնոզ փոթորիկի պէս Ի֊֊֊:

5 - Օտարականներուն աղաղակը Չոր տեղին տաքութեանը պէս պիտի խոնարհեցնես,

Ինչպէս տաքութիւնը ամպի հովանիով Ի՛նչէ,

Այնպէ՛ս բռնաւորներուն ցնծութեան ձայնը պիտի ցածնայ:

6 - Եւ զօրաց Տէրը այս լեռան վրայ Բոլոր ազգերուն կոչուեք մը պիտի ընէ, Պարարտ բաներու և հին գինիներու, Ծուծով լեցուած պարարտ բաներու, Ու գտուած հին գինիներու կոչուեք:

7 - Եւ այս լեռան վրայ Ամէն ժողովուրդներուն վրայ տարածուած ծածկոցը

Ու ամէն ազգերուն վրայ փռուած վարագոյրը բնաջինջ պիտի ընէ:

8 - Մահը՝ յաւիտեան բնաջինջ պիտի ընէ,

Ու Տէր Եհովա ամէն Գառքէ արցունքը պիտի սրբէ,

Եւ բոլոր երկրի երեսէն իր ժողովուրդին նախաափնքը պիտի վերցնէ.

Վասն զի Տէրը խօսեցաւ:

9 - Ու այն օրը պիտի ըսեն, Ահա մեր Աստուածը ասիկա է. Անոր յուսացանք ու անիկա մեզ ազատեց.

Տէրը ասիկա է. անոր յուսացանք. Անոր փրկութիւնովը պիտի ցնծանք և սւրբախանանք:

10 - Քանզի Տէրոջը ձեռքը այս լեռան վրայ պիտի հանգչի,

Ու Մովսէս անոր տակ պիտի կոխուի, Ինչպէս յարդը կը կոխուի աղբանոցին մէջ:

11 - Եւ իր ձեռքերը պիտի տարածէ անոր մէջ,

Ինչպէս լողացողը կը տարածէ լողալու համար.

Ու անոր հպարտութիւնը անոր ձեռքերուն հնարքներուն հետ պիտի կործանէ:

12-Եւ քու բարձր պարիսպներուդ ամբուսութիւնը պիտի խոնարհեցնէ,

Ու գետնի հետ հաւասարելով փոչի՛ մէջ պիտի ձգէ:

ԳԼ. ԻԶ

Այն օրը Յուդայի երկրին մէջ այս երգը պիտի երգեն.

Մենք զօրաւոր քաղաք ունինք. Փրկութիւնը պարիսպներու ու պատնէշներու տեղ կը դրուի:

2 - Դռները բացէք, Որպէս զի ճշմարտութիւն պահող արդար ազգը ներս մտնէ:

3 - Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես,

Վասն զի քեզի կը յուսայ:

4 - Յաւիտեան Տէրոջը յուսացէք, Քանզի Տէր Եհովա յաւիտեանական վէճ է:

5 - Քանզի անիկա բարձր տեղեր բնակողները կը խոնարհեցնէ,

Բարձր քաղաքը կը ցածցնէ,

Մինչև գետինը կը ցածցնէ,

Չանիկա հողի հետ հաւասար կ'ընէ:

6 - Ոտքը զանիկա պիտի կոխէ, Ազքատին ստքը ու չքաւորներուն գարշապարը:

7 - Արդարին ճամբան շիտակ է.

Ով Ուղիղդ, արդարին ճամբան դուն կ'ուղղես:

8 - Եւ քու դատաստաններուդ ճամբուն մէջ քեզի կը սպասենք, ով Տէր.

*Կա՛մ, յաղթութեան մէջ
†Եբբ. երեսէ

Մէր հոգիին փափաքը քու անուանդ
 և քու յիշատակիդ վրայ է:
 9-Գիշերը փափաքեցայ քեզի հոգւովս,
 Ու առաւօտուն քեզ կը փնտռեմ՝ *բու-
 լար սրտովս՝
 Քանզի երբ քու դատաստաններդ երկ-
 րի վրայ ըլլան,
 Աշխարհի բնակիչները արդարութիւն
 պիտի սարվին:
 10 - Ամբարշտին ողորմութիւն ալ
 ըլլայ՝ արդարութիւն չսարվիր:
 Անիկա ուղղութեան երկրին մէջ անօ-
 րէնութիւն կը գործէ,
 Ու Տէրոջը մեծափառութիւնը չտես-
 ներ:
 11 - Ով Տէր, անձ+ քու ձեռքիդ
 բարձրանայը չեն տեսներ,
 Բայ ժողովուրդին վրայ + ունեցած
 նախանձդ պիտի տեսնեն ու
 ամչնան.
 Եւ քու թշնամիներդ կրակը պիտի
 սպառէ:
 12 - Ով Տէր, մեզի խաղաղութիւն
 պիտի տաս,
 Վասն զի մեր ամէն գործերն ալ դուն
 մեզի համար գործեցիր:
 13 - Ով Տէր Աստուած մեր, քեզմէ
 ուրիշ տէրեր մեր վրայ տիրեցին,
 Բայ քու անուանդ, մինակ քուկդ, կը
 յիշենք:
 14-Անոնք մեռած են, պիտի չողջնան.
 Ուրուականներ են, չեն կրնար ելլել.
 Վասն զի դուն այցելութիւն ընելով՝
 զանոնք բնաջինջ բրիր,
 Ու անոնց բոլոր յիշատակը կորսնցու-
 ցիր:
 15 - Դուն այս ազգը աւելցուցիր, ով
 Տէր,
 Այս ազգը աւելցնելով՝ փառաւորեցար,
 Երկրի ամէն ծայրերը ընդարձակեցիր:
 16 - Ով Տէր, նեղութեան մէջ քեզ
 փնտռեցին,
 Քու պատիժդ անոնց վրայ եղած ա-
 տեն Ժաղաչանք բրին՝:
 17 - Ինչպէս ծնանելու մօտ եղող յղի
 կինը
 Իր երկունքին մէջ ստանջուելով կ'ա-
 զաղակէ,
 Մենք ալ քու սոջևդ այնպէս եղանք,
 ով Տէր.
 18 - Յղացանք, ցուեր քաշեցինք,

Հով ծնանողի պէս եղանք,
 Ու երկիրը չկրցանք սպասել,
 Եւ աշխարհի բնակիչները չինկան:
 19 - Քու մեռելներդ պիտի ողջնան,
 Իմ՝ մեռելներուս մարմինները յարու-
 թիւն պիտի առնեն.
 Արթնցէք ու ցնծութեամբ երգեցէք,
 ով հոգի մէջ բնակողներ.
 Քանզի քու ցողդ խոտերու ցող է,
 Ու երկիր էր մեռելները *բո-բո պիտի
 նեատէ:
 20 - Գնա, ով իմ ժողովուրդս, քու
 սենեակներուդ մէջ մտիր,
 Ու քու վրայ դռներդ գոցէ.
 Պահուէ քիչ մը, վայրկեան մը,
 Մինչև բարկութիւնը անցնի:
 21-Քանզի ահա Տէրը իր տեղէն կ'ելլէ,
 Որպէս զի երկրի բնակիչներուն այցե-
 լութիւն ընէ իրենց անօրէնու-
 թեանը համար.
 Ու երկիր իր արիւնները պիտի յայտնէ,
 Եւ սպաննուածները ա'լ պիտի չծածկէ:

ԳԼ. ԻԷ

Այն օրը Տէրը իր ամբակուռ, մեծ
 ու զօրաւոր սրովը
 Պիտի պատժէ փախչող Լեւիթան օձը,
 Այսինքն այն ծամածուռ Լեւիթան
 օձը,
 Ու ծովուն մէջ եղող վիշապը պիտի
 մեռցնէ:
 2 - Այն օրը *գինիի այգիին վրայ երգե-
 ցէք,
 3 - Ես Տէրս կը պահեմ զանիկա,
 Ամէն վայրկեանի մէջ պիտի սուղեմ
 զանիկա,
 Գիշեր ու ցորեկ անոր պահպանու-
 թիւն պիտի ընեմ,
 Որպէս զի չըլլայ թէ անոր վրայ Ժաբ
 ճշ յարձակի:
 4 - Ես բարկութիւն չունիմ.
 Երանի՛ թէ ցախերը *փուշերը ինձի
 դէմ պատերազմէին.
 Ես անոնց վրայ պիտի քալէի,
 Ու զանոնք մէկէն պիտի այրէի:
 5 - Եթէ սչ՝ թող իմ՝ զօրութեանս
 ապաւինին,
 Թող ինձի հետ խաղաղութիւն ընեն.
 Ինձի հետ խաղաղութիւն ընեն:
 6 - Ապագայ ժամանակին մէջ Յու-
 կոր պիտի արմատանայ,

*Եբբ. իմ ներսիդիս եղած հոգիովս
 †Կա՛մ, հառաչանք թափեցին

*Կա՛մ, ցանկալի

Իսրայէլ պիտի ծաղկի ու պիտի ըն-
 ձիւղի ,
 Եւ պաղով աշխարհի երեսը պիտի լե-
 ցնեն :
 7 - Միթէ զանիկա զարնողին հարուա-
 ծի՞ն պէս զարկաւ զանիկա ,
 Կամ անկէ սպաննուածներուն սպան-
 մա՞նը պէս սպաննուեցաւ :
 8 - Չափաւորութեամբ վիճեցար անոր
 հետ ,
 Երբ զանիկա զրկեցիր ,
 Թէ՛ն արեւելեան հովին օրը սաստիկ
 հովով տարիր :
 9 - Ուստի Յակոբի անօրէնութեանը
 ասով քառութիւն պիտի ըլլայ .
 Եւ բոլոր *գիտաւորութիւնը այս է որ
 անոր մեղքը վերցնէ ,
 Երբ զսարարներուն բոլոր քարերը
 կիրիփշրուած քարերու պէս ընէ ,
 Աստարովթի կուռքերը ու արեգական
 արձանները ա՛լ պիտի չկանգնին :
 10 - Քանզի պարսպաւոր քաղաքը ա-
 մայի՛
 Ու շէն տեղը անապատի պէս թողուած
 ու մերժուած պիտի ըլլայ .
 Հոն զուարակ պիտի արածի և հոն պի-
 տի պառկի ,
 Ու անոր ճիւղերը պիտի հատցնէ :
 11 - Անոր ստերը չորնալով պիտի
 կոտորին ,
 Կիները պիտի գան ու զանոնք պիտի
 բռնկցնեն ,
 Քանզի անիկա իմաստուն ժողովուրդ
 չէ .
 Ուստի զանիկա ստեծողը անոր վրայ
 պիտի չգթայ ,
 Ու զանիկա կազմողը անոր պիտի չը-
 շորմի :
 12 - Եւ պիտի ըլլայ այն օրը ,
 Որ Տէրը Գետին յորձանքէն մինչև
 Եգիպտոսի հեղեղատը պիտի
 թօթվէ .
 Եւ դուք, ով Իսրայէլի որդիներ ,
 Մէկիկ մէկիկ պիտի ժողվուիք :
 13 - Ու այն օրը մեծ փողը պիտի հըն-
 չուի ,
 Եւ Ասորեստանի երկրին մէջ թափա-
 ռական եղողները
 Ու Եգիպտոսի երկրին մէջ աքտորուած-
 ները պիտի գան ,
 Ու Երուսաղէմ սուրբ լեռանը վրայ
 Տէրոջը երկրպագութիւն պիտի ընեն :

*Եբբ. պատուր

ԳԼ. ԻԸ

Վասն Եփրեմի գինովներուն հպար-
 տութեան պատկին ,
 Որուն փառաց զարգը թառամեալ
 ծաղիկ մըն է ,
 Որ գինիով թմրածներուն պարարտ
 հովիտին գլուխը չը կենայ :
 2 - Ահա Տէրոջը կողմանէ քաջ ու զօ-
 րաւոր Բշմաթի մը ,
 Կարկուտի փոթորիկի պէս , աւերիչ
 մըրիկի պէս
 Ու սաստիկ ջուրերուն յորդահոս հե-
 ղեղին պէս ,
 Չեռքովը գետինը պիտի զարնէ զանոնք :
 3 - Եփրեմի գինովներուն հպարտու-
 թեան պատկը
 Ոռքերով պիտի կոխուի :
 4 - Եւ պարարտ հովիտին գլուխը եղող
 անոր փառաց զարգը ,
 Որ թառամեալ ծաղիկ մըն է ,
 Հունձքէն առաջ վաղահասուկ թուղի
 պէս պիտի ըլլայ ,
 Չոր տեսնողը ձեռքը առածին պէս
 կը կլէ :
 5 - Այն օրը զօրաց Տէրը իր ժողովուր-
 դին մնացորդին
 Փառաց պատկ ու շքեղ թագ պիտի
 ըլլայ .
 6 - Եւ դատաստանի նստողին դատաս-
 տանի ոգի ,
 Ու պատերազմը դէպի դուռը դարձնո-
 զին զօրութիւն պիտի ըլլայ :
 7 - Բոյց սասնք ալ գինիով կը մուրրին ,
 Ու ցքիով կը դանդաջեն .
 Քահանան ու մարգարէն ցքիով կը մն-
 լորին .
 Անոնք գինիէն կ'ընկղմին , ցքիէն կը
 դանդաջեն ,
 Տեսիլքի մէջ կը մուրրին ա- գատաս-
 տանի մէջ կը սխալին .
 8 - Վասն զի անոնց ամէն սեղանները
 փոխուիքի պղծութիւնով լեց-
 ուած են ,
 Այնպէս որ հաստի տեղ մը չկայ :
 9 - Որո՞ւ գիտութիւն արվեցնէ ,
 Որո՞ւ կրթութիւն հասկցնէ .
 Կաթէ կարուածներո՞ւն ,
 Ստինքէ զատուածներո՞ւն :
 10 - Քանզի խրատ խրատի վրայ , խրատ
 խրատի վրայ ,
 Հրաման հրամանի վրայ , հրաման հրա-
 մանի վրայ ,
 Քիչ մը հոս , քիչ մը հոն :

11 - Յիրաւի այս ժողովուրդին հետ
*Չհասկցուելու շրթունքով և օտար
լեզուով պիտի խօսի :

12 - Քանզի անոնց ըստ,
Յոգնածը հանգստացնելու հանգիստ-
նիդ ասիկա է,

Ու միթիթարութիւնը ասիկա է.
Բայց անոնք մտիկ ընել չուզեցին:

13 - Ուտաի Տէրոջը խօսքը պիտի ըլլայ
անոնց՝

Խրատ խրատի վրայ, խրատ խրատի
վրայ,

Հրաման հրամանի վրայ, հրաման հրա-
մանի վրայ,

Քիչ մը հոս, քիչ մը հոն.
Որպէս զի երթան, կռնակի վրայ խնան
ու կտարաին,

Եւ սրտայթի մէջ խնալով բռնուին:

14 - Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ
ըրէք,

Ով ծաղր ընող մարդիկ,
Որ Երուսաղէմի մէջ քնակայս ժողո-
վուրդին վրայ կը տիրէք:

15 - Որովհետեւ ըսիք,
Մենք մահուան հետ ուխտ ըրինք,
Ու գերեզմանին հետ դաշնակից
եղանք,

Որ եթէ յորդահոս †հեղեղը առե
անցնի, մեր վրայ պիտի չգայ.

Վասն զի ստութիւնը մեզի պատըս-
պարան ըրինք,

Եւ ունայնութեան մէջ պահուե-
ցանք :

16 - Անոր համար Տէր Եհովա այսպէս
կ'ըսէ .

Ահա ես Սիօնի մէջ վէճ մը կը դնեմ
իբրև հիմ .

‡Ընտիր վէճ, պատուական անկիւն,
հաստատուն հիմ .

Ով որ հաւատայ առ, պիտի չարտո-
բայ փախչելու :

17 - Եւ դատաստանը լարին,
Ու արգարութիւնը կշիռին համեմատ
պիտի դնեմ .

Եւ ստութեան պատասպարանը կար-
կուտը պիտի տանի,

Ու պահուելու տեղը ջուրերը պիտի
կտին :

18 - Եւ մահուան հետ ըրած ուխտեր-
նիդ պիտի աւրուի,

Ու գերեզմանի հետ ըրած դաշնակցու-
թիւննիդ պիտի չհաստատուի .

Երբ յորդահոս հեղեղը առե անցնի,
Դուք անկէ պիտի կտուիք :

19 - Անցնելու տառն ձեզ պիտի առնէ,
Քանզի ամէն աւուտ, ցորեկ ու գիշեր
պիտի անցնի .

Ու առ լուրը առնելը անգամ սոս-
կալի պիտի ըլլայ :

20 - Քանզի անկողինը երկնալու հա-
մար կարճ է,

Ու ծածկոցը ծածկուելու համար նեղ է :

21 - Քանզի Տէրը պիտի ելլէ, ինչպէս
Փարաօն լեռանը վրայ ելաւ,

Ու պիտի բարկանայ, ինչպէս Գաբա-
ւոնի ձորին մէջ Բաբելոնի,

Որպէս զի իր գործը, իր օտար գործը,
գործէ,

Ու իր պաշտօնը, իր օտար պաշտօնը,
կատարէ :

22 - Եւ հիմա ծաղր ընողներ մի ըլլաք,
Որպէս զի ըլլայ թէ ձեր կապանքները
առեւ թոյնն .

Քանզի զօրաց Տէր Եհովայի կողմանէ
Բոլոր երկրի վրայ նախասահմանեալ
աւերում մը լսեցի :

23 - Ահանջ տուէք ու իմ ձայնս
լսեցէք .

Մտիկ ըրէք ու իմ խօսքս լսեցէք .

24 - Միթէ հերկողը ցանելու համար
միշտ կը հերկէ՞ .

Մէշ իր երկիրը կը բանայ ու անոր
կոշտերը կը տափանէ՞ .

25 - Անոր երեսը շիակելէն ետքը
Միթէ արջնդեղը ու չամանը չը ցաներ,
Եւ ցորենը կարգով ու գարին սրոշ-
ուած տեղը,

Եւ հաճարը իր սահմանին մէջ չը դներ :

26 - Վասն զի իր Աստուածը կրթու-
թիւն կու տայ անոր,

Ու կը սորվեցնէ թէ ի՞նչ պէտք է ընել :

27 - Քանզի արջնդեղը կամնասայլով
չծեծուիր .

Ու չամանին վրայ սայլին անիւը չդառ-
նար .

Հապա արջնդեղը գաւազանով
Ու չամանը ցուպով կը թօթվուի :

28 - Հացին ցորենը կը կտուի .
Բայց զանկա միշտ չծեծեր,
Ու սայլին անիւը զանկա չկտարտեր,
Եւ ձիերը զանկա չեն փշրեր :

29 - Ասիկա ալ զօրաց Տէրոջմէն կ'ելլէ,
Որուն խորհուրդը սքանչելի է,
Ու անոր իմաստութիւնը գերազանց է :

*Եբբ. Թոթովախօս
†Եբբ. խարազանը
‡Եբբ. Փորձած

Գ.Լ. ԻԹ

Վա՛յ *Արիելի,

Գաւթի ընակած Արիել քաղաքին.

Տարի տարիի վրայ աւելցուցէք.

Թող քարէիւն տօները գառնան:

2 - Բայց ես Արիելը նեղը պիտի ձգեմ,

Ու անիկա արտում ու տխուր պիտի ըլլայ:

Եւ ինծի †Արիելի պէս պիտի ըլլայ:

3 - Ու քեզի դէմ շուրջանակի բանակ պիտի դնեմ,

Եւ քեզ պատնէշներով պիտի պաշարեմ,

Ու քեզի դէմ հողաբլուրներ պիտի կանգնեմ:

4 - Եւ պիտի ցածնաս ու գեանէն խօսիս,

Եւ քու խօսքերդ հողին տակէն պիտի ելլեն,

Ու քու ձայնդ վհուկի յայնի պէս գեանէն պիտի ըլլայ,

Եւ քու խօսքդ հողէն պիտի փոփայ:

5 - Ու քու օտարականներուդ բազմութիւնը մանր փոշիի պէս,

Եւ քու բռնաւորներուդ բազմութիւնը անցնող մղեղի պէս պիտի ըլլայ:

Ու ասիկա յանկարծ մէկ վայրկեանի մէջ պիտի ըլլայ:

6 - Զօրաց Տէրոջը կողմանէ Որոտումով, գեանաշարժով, մեծ ձայնով,

Մըրիկով, փոթորիկով ու մաշող կրակի բոցով

Այցեկութիւն պիտի ըլլայ:

7 - Ու Արիելի վրայ պատերազմի եկող բոլոր ազգերուն բազմութիւնը,

Եւ այս աստիճանի վրայ ու անոր պարսպներուն վրայ բոլոր յարձակողները

Ու զանիկա պաշարողները

Գիշերը տեսնուած երազի պէս պիտի ըլլան:

8 - Եւ ինչպէս անօթի եղողը երազին մէջ կը տեսնէ թէ կերակուր կ'ուտէ,

Ու արթննալէն ետքը փորը անօթի կը մնայ,

Եւ ինչպէս ծարաւ մարդը երազին մէջ կը տեսնէ թէ ջուր կը խմէ,

Ու արթննալէն ետքը կը մտնի ու հագին կը պապակի,

Այնպէս պիտի ըլլայ բոլոր ազգերուն բազմութիւնը

Որ Սիօն լեռանը դէմ պատերազմի կու գան:

9 - Ապշեցէք ու զարմացէք, Նլացէք ու թմրեցէք:

Անոնք արբած են, բայց գինիէն չէ. Անոնք կը դանդաջեն, բայց ցքիէն չէ:

10 - Քանզի Տէրը ձեր վրայ թմրութեան սգի թափեց,

Ու ձեր աչքերը գոցեց. Մարգարէները ու ձեր գլխաւորները,

Որոնք տեսիլք կը տեսնէին, կուրցուց:

11 - Եւ ամէնուն տեսիլքները կնքուած գիրքի մը խօսքերուն պէս պիտի ըլլան ձեզի,

Զոր կարգալ գիացողին կու տան Ու կ'ըսեն, Կ'աղաչենք, ասիկա կարգա.

Ու անիկա կ'ըսէ, Չեմ կրնար, վասն զի կնքուած է:

12 - Եւ այն գիրքը կարգալ չգիացողին կու տան

Ու կ'ըսեն, Կ'աղաչենք, ասիկա կարգա. Ու անիկա կ'ըսէ, Կարգալ չեմ գիտեր:

13 - Անոր համար Տէրը կ'ըսէ, Որովհետեւ այս ժողովուրդը Ինչէ բերնովը կը մօտենայ,

Եւ զիս շրթունքներովը կը պատուէ, Բայց անոնց սիրտը ինծմէ հեռու է,

Ու ինծմէ ունեցած վախերնին Մարդոց տրվեցուցած պատուիրանք մըն է:

14 - Անոր համար ահա ես այս ժողովուրդին մէջ

Այսուհետեւ զարմանալի գործեր ու հրաշքներ պիտի ընեմ.

Եւ անոնց իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսուի,

Ու հանճարեղներուն հանճարը բնաջինջ պիտի ըլլայ:

15 - Վա՛յ անոնց որ խորունկ տեղ կը փնտռեն

Իրենց խորհուրդը Տէրոջմէ պահելու համար:

Ու իրենց գործը մութի մէջ կ'ընեն, Ու կ'ըսեն, Մեզ ո՞վ կը տեսնէ ու մեզ ո՞վ գիտէ:

16 - Վա՛յ ձեր կամակորութեանը. Միթէ բրուտը կաւին տեղ կը գրուի՞.

Քանզի կարելի է որ գործը զինք գործողին համար ըսէ

Թէ անիկա զիս չգործեց.

*Այնինչ, Աստուծոյ կրակարանին, Իմ, զսհանոցին †Կա՛մ, զսհանոցի

Ու ստեղծուածը՝ զինք ստեղծողին
 Համար,
 Թէ անիկա չհասկնար :
 17 - Ահա շատ քիչ ժամանակէն ետքը
 Լիբանան պողաբեր արտի պիտի դառ-
 նայ ,
 Ու պողաբեր արտը անտառ պիտի
 սեպուի :
 18 - Ու այն օրը խուլերը գիրքին խօս-
 քերը պիտի լսեն ,
 Եւ կոյրերուն աչքերը մեզէն ու խա-
 ւարէն ազգոսեւի՛ւմ պիտի տես-
 նեն :
 19 - Եւ խեղճերը Տէրոջմով իրենց ու-
 րախուժիւնը պիտի աւելցնեն ,
 Ու չքաւոր մարդիկ Խորայէլի Սուրբովը
 պիտի ցնծան ,
 20 - Վասն զի բռնաւորը պիտի վեր-
 նայ ,
 Եւ ծաղր ընողը պիտի չմնայ .
 Ու ամէն անոնք որ անօրէնութեան
 համար կը հսկեն՝ պիտի կոր-
 սուին .
 21 - Անոնք որ մարդը դատաստանի
 մէջ յանցաւոր կը հանեն ,
 Ու ասոնք զրանը մէջ *ջատագովու-
 թիւն ընողին համար սրագայթ
 կը լարեն ,
 Եւ արդարին իրաւունքը կը խափանեն :
 22 - Անոր համար Աբրահամը փրկող
 Տէրը
 Յակոբի տանը համար այսպէս կ'ըսէ .
 Յակոբ մէյմըն ալ պիտի չամչնայ ,
 Ու անոր երեսը մէյմըն ալ պիտի
 չգեղնի .
 23 - Վասն զի երբ Ժատանէ իր աղաքը
 իմ՝ ձեռքերուս գործը , իր մէջ ,
 Այն ատեն իմ՝ անունս պիտի քիտաւա-
 ւորեն ,
 Յակոբի Սուրբը պիտի քիտաւաւորեն ,
 Ու Խորայէլի Աստուծո՛ւն պիտի վախ-
 նան :
 24 - Եւ հոգիով մնլորածները խոհե-
 մութիւնը պիտի ճանչնան ,
 Ու արանջողները իմաստութիւն պիտի
 սորվին :

ԳԼ Լ

Վասն ապրտամբ աղաքներուն ,
 կ'ըսէ Տէրը ,

*Եբբ. յանդիմանութիւն
 †Կ-ձ, տեսնեն ‡Եբբ. սրբեն

Որոնք մեղք մեղքի վրայ աւելցնելու
 համար
 Խորհուրդ կ'ընեն , բայց ինծմով չէ .
 Ու դաշնագրութիւն կ'ընեն , բայց իմ՝
 Հոգւովս չէ .
 2 - Որոնք աւանց իմ՝ բերնիս հարցնելու
 կ'երթան Եգիպտոս կ'իջնեն ,
 Փարաւոնի պաշտպանութեանը տակ
 ամբանողու ,
 Ու Եգիպտոսի հովանիին ապաւինելու
 համար :
 3 - Բայց Փարաւոնի պաշտպանութիւնը
 ձեզի ամօթ ,
 Ու Եգիպտոսի հովանիին ապաւինիլը
 ձեզի նախատինք պիտի ըլլայ :
 4 - Քանզի անոր իշխանները Տայանիս
 գացին ,
 Ու դեսպանները Հանէս հասան :
 5 - Ամէնը ամէջսան այն ժողովուրդին
 պատճառաւ
 Որ իրենց օգուտ մը ընելու կարողու-
 թիւն չունի .
 Անիկա չկրնար օգնութիւն մը կամ
 օգուտ մը ընել ,
 Հապա երեւոյ ամօթ ու նախատինք պի-
 տի ըլլայ :
 6 - Ահա՛ բեռ կրող անասունները՝
 դէպ ի հարաւ ,
 Նեղութեան ու վիշտերու ,
 Մատակ առիւծի և առոյգ առիւծի ,
 Իծի ու կիզող թեւաւոր օծի երկիրը
 կ'երթան .
 Իրենց ստացուածքը էշերու կռնակին
 վրայ ,
 Ու իրենց գանձերը ուղտի սապատին
 վրայ կը տանին
 Այնպիսի ժողովուրդի մը՝ որ երեւոյ
 օգուտ չունի :
 7 - Վասն զի Եգիպտացիք պարտապ ու
 զուր տեղ օգնութիւն կ'ընեն .
 Անոր համար անոր Պարապ նասող պար-
 ծենկոտ կանչեցի :
 8 - Ուրեմն գնա , անոնց առջև ասիկա
 տախտակի վրայ գրէ ,
 Եւ գիրքի մէջ գրոջմէ ,
 Որպէս զի գալու ժամանակին մնայ
 Յաւիտենական վկայութեան համար :
 9 - Քանզի ասիկա ապրտամբ ժողու-
 վուրդ մըն է .
 Ստախոս աղաքներ են ,
 Ու այնպիսի աղաքներ են՝ որ Տէրոջը
 օրէնքը լսել չեն ուզեր .

*Եբբ. անասուններու բեռը

10 - Որոնք տեսնողներուն կ'ըսեն,
Մի տեսնէք,
Ու մարգարէներուն՝ Մեզի համար ու-
զիղ բաներ մի մարգարէանայք .
Մեզի շողքորթութիւններ խօսեցէք,
Խարէութիւններ մարգարէացէք,
11 - Ճամբայէն ետ քաշուեցէք,
Շաւիղէն խտարեցէք,
Իտրայէլի Սուրբը մեր առջևէն վեր-
ցուցէք:
12 - Ուստի Իտրայէլի Սուրբը այսպէս
կ'ըսէ .
Որովհետեւ դուք այս խօսքը անարգե-
ցիք,
Եւ բռնութեան ու ծռութեան ապա-
ւինեցաք,
Ու անոնց վրայ կռթնեցաք,
13 - Անոր համար այս անօրէնութիւնը
Բարձր պարիսպի մը իյնալու վրայ եղող
Ուռեցած ճեղքուած քին պէս պիտի
ըլլայ ձեզի,
Որուն կործանումը յանկարծակի մէկ
վայրկեանի մէջ կու գայ:
14 - Եւ զանկա քրուաներու սափորին
կտարուածքին պէս պիտի կտարէ .
Պիտի փշրէ ու չիմայէ .
Եւ անոր կտորուանքներուն մէջ
կրակարանէն կրակ աննելու
կամ փոսէն ջուր հանելու կտար մը
պիտի չգտնուի:
15 - Վասն զի Եհովա Տէրը , Իտրայէլի
Սուրբը , այսպէս կ'ըսէ .
Դուք դառնայով ու հանգստանալով
փրկութիւն կը գտնէք,
Ձեր զօրութիւնը հանդարտութեամբ
ու ապաւինութեամբ կ'ըլլայ .
Բայց դուք չուզեցիք,
16 - Հապա ըսիք , Ոչ , ձի հեծնենք
փախչինք .
Անոր համար պիտի փախչիք .
Արագընթաց չիե՞րս՝ վրայ հեծնենք
ըսէ ,
Անոր համար ձեզ հալածողներն աւ-
արագընթաց պիտի ըլլան:
17 - Մէկուն սպառնալիքովը հազար-
նիդ ,
Հինգին սպառնալիքովը «ձե՛ք պիտի
փախչիք .
Մինչև որ լեռան գլուխը սիւնի պէս,
Ու բլուրի վրայ դրօշակի պէս թողուիք:
18 - Բայց Տէրը պիտի սպասէ որպէս զի
ձեզի գթութիւն ընէ ,
Ու պիտի բարձրանայ որպէս զի ձեզի
ողորմի .

Քանզի Տէրը արդար Աստուած մըն է .
Երանի՛ այն ամէնուն որ անոր կը սպա-
սեն :
19 - Քանզի ժողովուրդը Սիօնի վրայ ,
Երուսաղէմի մէջ , պիտի բնակի .
Աւ բնաւ պիտի չլսա .
Քու աղաղակիդ ձայնը ելա՞նի պե-
շուտով քեզի պիտի սղորմի ,
Չանկա լտածին պէս քեզի պատաս-
խան պիտի տայ :
20 - Թէև Տէրը ձեզի նեղութեան հաց
ու սառուպանքի ջուր տայ ,
Քու ուսուցիչներդ մէյմըն ալ պիտի
չհեռանան ,
Հապա քու աչքերդ քու ուսուցիչներդ
պիտի տեսնեն :
21 - Ու երբ աջ կողմը կամ ձախ կողմը
խտարելու ըլլա ,
Քու ականջներդ ետեւէդ խօսք մը
պիտի լսեն , որ կ'ըսէ ,
Ասիկա է ճամբան , ստոր մէջ քա-
լեցէք :
22 - Այն ատեն քու քանդակած ար-
ծաթ կուռքերուդ ծածկոցները
Ու ձուլածո՛ւս կիւ կուռքերուդ վար-
դերը պիտի պղծես ,
Չանոնք դաշտանի լա՞նի պէս պիտի նե-
տես ,
Անոնց ամէն մէկուն պիտի ըսես , Դուրս
ելի՛ր :
23 - Եւ Տէրը քու սերմանած երկրիդ
հունտերուն վրայ անձրև ,
Ու երկրի արդիւնքէն հաց պիտի տայ ,
Եւ առատ ու պարարտ պիտի ըլլայ .
Այն օրը քու խաչինքդ ընդարձակ ա-
րօտի մէջ պիտի ճարակին :
24 - Ու երկիրը գործող եզները ու
էշերը
Թիով ու հեծանոցով հասած
Մաքուր *կերակուր պիտի ուտեն :
25 - Եւ մեծ կտորածին օրը
Ու աշտարակներուն կործանման ա-
տենը
Ամէն բարձր լեռան վրայ
Եւ ամէն բարձրացած բլուրի վրայ
Գետեր «- ջուրի առուններ պիտի ըլլան :
26 - Եւ այն օրը որ Տէրը իր ժողովուր-
դին վերքը պիտի պատէ ,
Ու անոնց հարուածքին խոցը պիտի
բժշկէ ,
Լուսնին լոյսը արևին լոյսին պէս ,
Ու արևին լոյսը եօթնպատիկ աւելի ,
Կա՛մ , շաղուածք

Ու եօթը օրուան լոյսին չափ պիտի
 բլլայ :
 27 - Ահա Տէրոջը անունը հեռուէն
 կու գայ,
 Անոր բարկութիւնը կը վառի ու բոցը
 սաստիկ է .
 Շրթունքները սրամտութեամբ լեց-
 ուած են,
 Ու լեզուն մաշող կրակի պէս է .
 28 - Եւ անոր հոգին յորդահոս գետի
 պէս
 Մինչև պարանոցը պիտի հասնի,
 Արպէս զի աղգերը ունայնութեան մա-
 զով մաղէ,
 Եւ ժողովուրդներուն կզակը սանձ
 դնելով՝ զանսն խտարեցնէ :
 29 - Դուք սուրբ ասոնի մը գիշերուան
 պէս երգ պիտի ունենաք,
 Աւ Իսրայէլի Վէմին, Տէրոջը, լեռը եր-
 թալու համար
 Արինգով գացողի պէս սրտի ուրա-
 խութիւն պիտի ունենա :
 30 - Եւ Տէրը իր փառաւոր ձայնը լսել
 պիտի տայ,
 Աւ էր սաստիկ բարկութիւնովը և մա-
 շող կրակին բոցովը,
 Հեղեղով, փոթորիկով ու կարկուտի
 քարերով
 Իր *երկնցած բազուկը՝ պիտի ցուցնէ :
 31 - Վասն զի գաւազանով զարնող
 Ասորեստանցին
 Տէրոջը ձայնէն պիտի ճնշուի :
 32 - Ու որոշուած գաւազանին ամէն
 † հարուածը,
 Չոր Տէրը անոր վրայ պիտի դնէ,
 Թմբուկներով ու քնարներով պիտի
 բլլայ .
 Եւ անոր հետ աղմկալից պատերազմ-
 ներով պիտի պատերազմի :
 33 - Քանզի Տօփեթ շատանցմէ պատ-
 րաստուած է,
 Անիկա ալ թագաւորին համար պատ-
 րաստուեցաւ,
 Չունիլ խորունկցուց ու լայնցուց,
 Անոր գէղը կրակ ու շատ փայտ է,
 Չանիկա Տէրոջը շունչը ծծումբի հե-
 ղեղի պէս պիտի բռնկցնէ :

ԳԼ. ԼԱ

Վայ անոնց որ օգնութեան հա-
 մար Եգիպտոս կ'իջնեն,

Ու ձիերու կը վատահին և կառքերու
 կ'ապաւինին, որովհետեւ շատ
 են,
 Ու ձիաւորներու՝ որովհետեւ խիստ * զօ-
 րաւոր են .
 Եւ Իսրայէլի Սուրբին չեն նայիր,
 Ու Տէրը չեն փնտաւեր :
 2 - Բայց անիկա ալ իմաստուն է, ու
 չարիք կը բերէ,
 Եւ իր խօսքերը ետ չգարձներ .
 Ու չարերուն տանը դէմ,
 Եւ անօրէնութիւն գործողներուն օգ-
 նութեանը դէմ՝ կ'ելլէ :
 3 - Արդ Եգիպտացիք մարդ են և ոչ
 թէ Աստուած .
 Ու անոնց ձիերը մարմին են և ոչ թէ
 հոգի .
 Ու երբ Տէրը իր ձեռքը երկնցնէ,
 Թէ՛ օգնութիւն ընողը պիտի սահի,
 Եւ թէ՛ օգնութիւն գանողը պիտի իյ-
 նայ .
 Ու ամէնը մէկտեղ պիտի կորսուին :
 4 - Քանզի Տէրը ինձի այսպէս ըսաւ .
 Չոր օրինակ սաւուծը կամ՝ կորիւնը իր
 որսին համար կը գոչէ,
 Ու երբ հովիւներուն գունդը անոր
 վրայ կը ժողովուին,
 Անոնց ձայնէն չվախնար,
 Ու անոնց աղաղակէն չվհասիր,
 Այնպէս զօրաց Տէրը Սիօն լեռանը հա-
 մար
 Ու անոր բլուրին համար պատերազ-
 մելու պիտի իջնէ :
 5 - Ինչպէս թռչունները երեսն յագեր
 կը ծածկեն,
 Այնպէս զօրաց Տէրը Երուսաղէմի
 պաշտպանութիւն պիտի ընէ .
 Պիտի պաշտպանէ ու փրկէ զանիլ,
 Պիտի քանցնի ու պիտի ազատէ :
 6 - Դուք այն Ասորեստանի դարձէք,
 Արմէ Իսրայէլի սրգիները չարաչար
 ապստամբեցան,
 7 - Քանզի այն օրը ամէն մարդ մէկդի
 պիտի նեատէ
 Իր արծաթէ կառքերը ու սակիէ կառ-
 քերը,
 Չորսնք ձեռքերնիդ շինեցին ձեզի
 մեղքի համար :
 8 - Եւ Ասորեստանցին սրով պիտի իյ-
 նայ, բայց ոչ թէ մարդու ուրիշ
 Հապա զանիկա այնպիսի սուր մը պիտի
 ուտէ, որ մարդու ուրիշ չէ .

* ԵՔԵ. բազուկին իջնելը † ԵՔԵ. անցքը

* Կճ, բազմութիւ † Կճ, խնայէ

Ու անհկա սուրին երեսէն պիտի փախչի.
 Եւ անոր երիտասարդները հարկատու
 պիտի ըլլան :
 9 - Ու անհկա էր վախին պատճառաւ
 իր *բերդը պիտի անցնի.
 Եւ անոր իշխանները դրօշակէն պիտի
 զարհուրին,
 Կ'ըսէ Տէրը, որուն կրակը Սիօնի մէջ է,
 Ու փուռը Երուսաղէմի մէջ :

ԳԼ. ԼԲ

Ահա թագաւոր մը արգարու-
 թեամբ պիտի թագաւորէ,
 Ու իշխանները իրաւունքով պիտի իշ-
 խեն :
 2 - Եւ †այս մարդը՝ հովի Դեմ Դնու
 պատասպարանի պէս
 Ու փոթորիկի Դեմ Դնու ծածկոցի պէս,
 Չոր տեղ եղող ջուրի վտակներու պէս
 Եւ ծարաւուտ երկրի մէջ
 Մեծ ապառաժի մը հովանիին պէս պի-
 տի ըլլայ :
 3 - Ու տեսնողներուն աչքերը պիտի
 չչանան,
 Եւ լսողներուն ականջները մտիկ պիտի
 ընեն :
 4 - Ու արտարացողներուն սիրտը զի-
 տութիւն պիտի հասկնայ,
 Եւ թոթովախօսներուն լեզուն
 Յտակ խօսելու պատրաստ պիտի ըլլայ :
 5 - Անզգամին մէյմըն ալ ազնուաբա-
 րայ պիտի չըսուի,
 Ու ազաճին մէյմըն ալ առատաձեռն
 պիտի չըսուի :
 6 - Վասն զի անզգամը անզգամութիւն
 կը խօսի,
 Ու անոր սիրտը անօրէնութիւն կը
 գործէ :
 Կեղծաւորութիւն կ'ընէ, ու Տէրօջը
 վրայով ամբարշտութիւն կը
 խօսի :
 Անօթիին հոգին կերպարէ կը զրկէ,
 Ու ծարաւածին խմելիքը կը հառցնէ :
 7 - Եւ ազաճին †հնարքները չար են.
 Անհկա սուտ խօսքերով աղքատները
 կորսնցնելու համար
 Կենդութիւններ կը խորհի,
 Թէեւ անանկը արգարութեամբ խօսի :
 8 - Բայց ազնուաբարոյ մարդը ազնիւ
 բաներ կը խորհի :

Ու ազնիւ բաներու վրայ հաստատ կը
 մնայ :
 9 - Ով հանգիստ կրներ, ելէք,
 Իմ ձայնս մտիկ ըրէք.
 Ով անհոգ աղջիկներ,
 Իմ խօսքիս ականջ տուէք :
 10 - Օրերով ու տարիներով խռովու-
 թեան մէջ պիտի ըլլաք,
 Ով անհոգ կրներ,
 Քանզի այգեկութը կորսուեցաւ,
 Հունձքի ժամանակ պիտի չգայ :
 11 - Ով հանգիստ կրներ, դողացէք :
 Ով անհոգ կրներ, խռովութեան մէջ
 ինկէք :
 Հանուեցէք ու մերկ եղէք,
 Ու մէջքերնիդ +-ւրջ կապեցէք :
 12 - Յանկայի արտերուն ու պտղաբեր
 օրթին համար
 *Կուրծքերնին պիտի ծեծեն :
 13 - Իմ ժողովուրդիս երկրին վրայ
 Փուշ ե ցախ պիտի բուսնի :
 Նաև ամէն ուրախութեան տուներուն
 վրայ՝
 Բերկրալի քաղաքին մէջ :
 14 - Քանզի պալատները երեսէ պիտի
 ձգուին,
 Աղմկայոյզ քաղաքը պիտի թողուի,
 Բերդերը ու պարիսպները յաւիտեան
 քարայրներ պիտի ըլլան,
 Յիռերու զուարճութեան համար ու
 խաշինքներու արօտ ըլլալու հա-
 մար :
 15 - Մինչև որ վերէն մեր վրայ Հոգի
 թափուի,
 Ու անապատը պտղաբեր արտի դառ-
 նայ ,
 Եւ պտղաբեր արտը անտառ համարուի :
 16 - Այն ատեն անապատին մէջ իրա-
 ւունք պիտի բնակի,
 Ու պտղաբեր արտին մէջ արգարու-
 թիւն պիտի հանգչի :
 17 - Եւ արգարութեան գործը խաղա-
 ղութիւն,
 Ու արգարութեան արգիւնքը հան-
 գիստ ու ապահովութիւն պիտի
 ըլլայ յաւիտեան :
 18 - Եւ իմ ժողովուրդս խաղաղաւէտ
 բնակութեան մէջ,
 Ու ապահով վրաններու մէջ,
 Եւ հանգարտ հանգստութեան մէջ
 պիտի բնակի :

*Կամ, բերդէն †Կամ, ամէն մէկը
 †Եբբ. գործիքները

*Եբբ. Ստինքներնուն վրայ պիտի ող-
 բան

- 19 - Բայց կարկուտ պիտի իջնէ անասունին վրայ,
- Ու քաղաքը բոլորովին պիտի խոնարհի:
- 20 - Երանի՛ր ձեզի, որ ամէն ջուրերու քով կը ցանէք,
- Ու եզան և իշուն սաքը հան *կոխել կու տաք*:

ԳԼ. ԼԳ

- Սա՛յ քեզի, ով կործանող, որ դուն չկործանուեցար.
- Ու զ՛յ +եզի, ով յափշտակող, որ քեզ չյափշտակեցին.
- Երբ դուն կործանելը լմնցնես, քեզ պիտի կործանեն.
- Երբ յափշտակելէն դադարիս, քեզ պիտի յափշտակեն:
- 2 - Ով Տէր, մեզի սղորմէ, քեզի կը յուսանք.
- Սմէն առտու անոնց զօրութիւն եղիր, Ու նեղութեան ժամանակ մեզի փրկութիւն եղի:
- 3 - Աղմուկին ձայնէն ժողովուրդները կը փախչին,
- Քու բարձրանալէդ ազգերը կը ցրուին:
- 4 - Եւ ձեր աւարը թրթուրին ժողովելուն պէս պիտի ժողվեն.
- Անոր վրայ՝ մարտիներուն ցաթկելուն պէս պիտի ցաթկեն:
- 5 - Տէրը բարձրացած է, վասն զի բարձրերը կը բնակի.
- Սիօնը իրաւունքով ու արդարութիւնով լեցուց:
- 6 - Եւ քու ժամանակներուդ հաստատութիւնը,
- Ու փրկութեանդ զօրութիւնը իմաստութիւն ու գիպութիւն պիտի ըլլայ:
- Տէրոջը վախը անոր գանձն է:
- 7 - Ահա անոնց զօրաւորները դուրսը կ'աղաղակեն.
- Խաղաղութեան դեռպանները դառնապէս կու լան:
- 8 - Բանուկ ճամբաները ամայի եղան, ճամբայէն անցնող չմնաց.
- Անիկա ուխտը աւրեց, քաղաքները կ'անարգէ,
- Մարդը բանի տեղ չտպեր.
- 9 - Երկիր սուգ կը բռնէ ու կը նուաղի, Լիբանան ամչցաւ * - թաւամեցաւ, Սարօն անապատի պէս եղաւ,

*ԵՔԵ. կը զրկէք

- Եւ Բասան ու կարմեղոս կը թօթ վուրնէ:
- 10 - Հիմա պիտի ելլեմ, կ'ըսէ Տէրը, Հիմա պիտի փառաւորուիմ, Հիմա պիտի բարձրանամ:
- 11 - Գուք յարգով պիտի յղանաք և մղեղ պիտի ծնանիք.
- Ու ձեր *շունչը կրակի պէ՛ս ձեզ պիտի ուտէ:
- 12 - Եւ ժողովուրդները կիրի այրուելուն պէ՛ս պիտի ըլլան.
- Անոնք կրակի մէջ՝ կարուած փուշերու պէ՛ս պիտի այրին:
- 13 - Ով հեռու եղողներ, իմ բրածո լսեցէք.
- Ու, մօտ եղողներ, իմ զօրութիւնս գիտցէք:
- 14 - Սիօնի մէջ մեղաւորները կը վախնան,
- Կեղծաւորները դողը կը բռնէ:
- Մեզմէ ո՞վ պիտի բնակի մաշող կրակին մէջ.
- Մեզմէ ո՞վ պիտի բնակի յաւիտենական բոցերուն մէջ:
- 15 - Արդարութեամբ քալողը և ուղղութիւն խօսողը,
- Անիրաւութեան շահը մերժողը, Կաշառք առնելէն ձեռքերը թօթ վողը, Արիւնահեղութեան խօտերը չլսելու համար ականջները գոցողը,
- Ու չարութիւնը չտեսնելու համար աչքերը գոցողը:
- 16 - Անիկա բարձրերը պիտի բնակի, Անոր բերդը ամուր վէմերու վրայ պիտի ըլլայ.
- Անոր հաց պիտի արուի,
- Ու անոր ջուրը անպակաս պիտի ըլլայ:
- 17 - Քու աչքերդ թագաւորը իր վաստիջութիւնովը պիտի տեսնեն,
- Անոնք հեռաւոր երկիր պիտի նային:
- 18 - Քու սիրտդ վախերը պիտի մտածէ. Ո՞ւր է դպիրը, ո՞ւր է կշռողը, Ո՞ւր է աշտարակները գրողը:
- 19 - Գուն պիտի չտեսնես այն խիտ ժողովուրդը,
- Գժուարիմաց ու անձանօթ լեզու ունեցող ժողովուրդը,
- Թոթովախօս ու անխմանայի լեզուով խոսողը:
- 20 - Մեր տօնախմբութիւններու քաղաքին, Սիօնի, նայէ.
- *Քու աչքերդ երուտողէմը պիտի տեսնեն,

*Կա՛մ, Բարձր-Ռեան սգին

Իբրև հանգիստ բնակարան մը — չխախտուելու վրան մը .

Որուն ցիցերը յաւիտեան պիտի չշարժին ,

Ու չուանները բնաւ պիտի չկարին :

21 - Հապա հոն փառաւորեալ Տէրը պիտի ըլլայ մեզի

Լայնատարած գետերու — վտակներու տեղ ,

Ուր թիաքարչ նաւ պիտի չմտնէ ,
Եւ անկէ մեծ նաւ պիտի չանցնի :

22 - Քանզի մեր դատաւորը Տէրն է ,

Մեր օրէնսդիրը Տէրն է ,

Մեր թագաւորը Տէրն է ,

Անիկա մեզ պիտի ազատէ :

23 - Քու չուաններդ թուլցան ,
Իրենց կայմին խարխիւր չկրցան հաստատ բռնել ,

Առաքատար չկրցան բանալ .

Այն ատեն մեծ աւար բաժնուեցաւ ,

Մինչև անգամ կողերը աւար առին :

24 - Ու հոն բնակողը պիտի չըսէ թէ
Հիւանդ եմ .

Հոն բնակող ժողովուրդին անօրէնու-
թիւնը պիտի թողուի :

ԳԼ. ԼԳ

Ով ազգեր, մտակցէք որպէս զիւրեք,
Ով ժողովուրդներ, ականջ առէք .

Երկիր ու անոր լիութիւնը ,

Աշխարհ ու անոր բոլոր *բնակիչները
Թող մտիկ ընեն :

2 - Վասն զի Տէրոջը բարկութիւնը
ամէն ազգերուն վրայ ,

Ու օրամտութիւնը անոնց բոլոր զօր-
քերուն վրայ է .

Անիկա զանոնք նզովեց , զանոնք
սպանման մտանեց :

3 - Եւ անոնց սպաննուածները պիտի
նեատուին ,

Ու անոնց դիակներէն գէշ հոտ պիտի
ելլէ ,

Եւ անոնց արիւնէն լեռները պիտի հա-
լին :

4 - Ու երկինքի բոլոր զօրքերը պիտի
հալին ,

Ու երկինք մագաղաթի պէս պիտի գա-
լարի ,

Եւ անոր բոլոր զօրքերը վար պիտի
թափին ,

Ինչպէս ատրեւը սրթէն կը թափի ,

Ու ինչպէս Բոզը թզենիէն կը թափի
5 - Քանզի իմ՝ սուր երկինքի մէջ սգո-
րեցած է .

Ահա անիկա Եդովմի վրայ ու իմ նզո-
ված ժողովուրդիս վրայ

Գառաստան ընելու պիտի իջնէ :

6 - Տէրոջը սուրը արիւնով լեցուած է
Ու ճարպով իւզտած է .

Գառներուն և նոխազներուն արիւնովը
Ու խոյերուն երիկամունքներուն ճար-
պովը .

Քանզի Տէրը Բօսորայի մէջ զսհ ունի ,
Ու Եդովմի երկրին մէջ՝ մեծ սպանդ :

7 - Եւ անոնց հեա պիտի իյնան *մի-
եղջերուները ,

Ու զուարակները՝ ցուլերուն հեա .

Եւ անոնց երկիրը արիւնով պիտի զի-
նովայ ,

Ու անոնց հոյը ճարպով պիտի պա-
րարտանայ .

8 - Քանզի Տէրոջը վրէժխնդրութեան
օրը

Ու Սիօնի վէճին համար հատուցման
տարին է :

9 - Եւ անոր գետերը ձիւթի ,

Ու հոյը ծծումբի պիտի դառնան .

Եւ անոր երկիրը վառած ձիւթ պիտի
ըլլայ :

10 - Գիշեր ու ցորեկ պիտի չմտնի .

Անոր ծուխը յաւիտեան պիտի ելլէ ,

Եւ դարէ դար աւերակ պիտի մնայ .

Յաւիտեանս յաւիտենից անկէ անցնող
պիտի չըլլայ :

11 - Հապա զանիկա հաւալուաները ու
ոպնիները պիտի ժառանգեն .

Եւ հոն քաջահաւը ու ազաւաւը պիտի
բնակի .

Ու անոր վրայ դատարկութեան լարը
Եւ ունայնութեան կշիռը պիտի քաշ-
ուի :

12 - Անոր արնուականները թագաւո-
րութեան պիտի կանչեն ,

Բայց հոն Զիւզ պիտի չգանուի .

Ու անոր բոլոր իշխանները պիտի ոչնչա-
նան :

13 - Եւ անոր պայտաներուն մէջ փուշեր ,
Ու անոր պարիսպներուն վրայ եղինճ
ու եկքան պիտի բուսնին .

Եւ չագաղներու բնակարան ,

Ու ջայլամներու գաւիթ պիտի ըլլայ :

14 - Եւ վայրենի կատուները բարենի-
ներուն պիտի հանգիպին ,

*Եբր. սերունդը

*Կամ, վայրենի ցուլերը

Ու այժմամարդները իրարու ձայն պիտի տան,
 Եւ յուշկապարիկները հոն պիտի հանգչին,
 Ու հոն իրենց հանգիստ տեղ պիտի գանեն:
 15 - Հոն նեա օձը իր բոյնը պիտի շինէ ու հոն պիտի ածէ,
 Եւ իր ձագերը պիտի հանէ ու իր հովանիին տակ առնելով պիտի խնամէ .
 Եւ ուրուրները հոն պիտի ժողվուին ,
 ամէն մէկը իր ընկերին հետ :
 16 - Տէրոջը գիրքին մէջ փնտռեցէք ու կարդացէք .
 Ասոնց մէկը պիտի չպակտի,
 Մէկո՛ւն ընկերը պակաս պիտի չըլլայ .
 Վասն զի իր բերանը հրամայեր է,
 Ու իր Հոգին պիտի ժողվէ զանոնք:
 17 - Եւ ինք անոնց համար վիճակ ձգեր է,
 Ու իր ձեռքը զանհկա լարով բաժներ է անոնց .
 Զանհկա յաւիտեան պիտի ժառանգեն ,
 Դարէ դար անոր մէջ պիտի բնակին :

ԳԼ. ԼԵ

Անապատը ու չոր երկիրը *պիտի ուրախանայ .
 Եւ անբնակ երկիրը պիտի ցնծայ, ու շուշանի պէս պիտի ծաղկի :
 2 - Անհկա բոլորովին պիտի ծաղկի,
 Եւ ցնծութեամբ ու երգերով պիտի ուրախանայ .
 Անոր պիտի արուի Լիբանանի փառքը,
 Կարմեղոսի ու Սարօնի վայելչութիւնը .
 Անոնք Տէրոջը փառքը ,
 Մեր Աստուծոյն վայելչութիւնը , պիտի տեսնեն :
 3-Թուլցած ձեռքերը ու ժողցուցէք,
 Ու գողգոջուն ծունկերը զօրացուցէք .
 4 - Թուլասիրտներուն ըսէք,
 Ու ժողցէք, մի վախնաք .
 Ահա ձեր Աստուածը վրէժխնդրութիւնով
 Ու Աստուծոյ հասուցումովը կու գայ .
 Անհկա պիտի գայ ու ձեզ ազատէ .
 5 - Այն ատեն կոյրերուն աչքերը պիտի բացուին,

*կա՛մ, անոնց համար պիտի

Ու խուլերուն ականջները պիտի բացուին
 6 - Այն ատեն կազը եղջերուի պէս պիտի ցաթկրակէ,
 Ու համբին լեզուն օրհնութիւն պիտի երգէ .
 Քանզի անապատի մէջ ջուրեր
 Ու անբնակ երկրի մէջ հեղեղներ պիտի բղխին :
 7 - Եւ խորշակահար երկիրը լիճի պիտի դառնայ,
 Ու ծարաւուա երկիրը ջուրի աղբիւրներ պիտի բղխէ .
 Եւ չափալներուն պառկած բնակարանը
 Եղէգի ու կնիւնի գաւիթ պիտի ըլլայ :
 8 - Եւ հոն պողոտայ ու ճամբայ պիտի ըլլայ,
 Ու անհկա սուրբ ճամբայ պիտի ըսուի .
 Անկէ պիղծ մէկը պիտի չանցնի,
 Հապա անհկա անոնց համար պիտի ըլլայ .
 Այն ճամբուն մէջ քալողը՝ ու յիմարները աճա՛մ պիտի չմտորին :
 9 - Հոն առիւծ պիտի չըլլայ,
 Ու անոր վրայ պատառող գազան պիտի չելլէ,
 Եւ հոն պիտի չգանուի,
 Հապա փրկուածները հոն պիտի քալեն :
 10-Ու Տէրոջը փրկածները պիտի դառնան ,
 Ու երգերով Սիօն պիտի գան,
 Եւ անոնց գլխուն վրայ յաւիտեանկան ուրախութիւն պիտի ըլլայ .
 Անոնք ցնծութիւն և ուրախութիւն պիտի ստանան,
 Եւ արամութիւնը ու հեծութիւնը աւանջո՛ւ պիտի հեռանայ :

ԳԼ. ԼԶ

Ու եղաւ որ Եզեկիա թագաւորին չորեքստասներորդ տարին , Ասորեստանի Սենեքերիմ՝ թագաւորը Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքներուն վրայ ելաւ , ու զանոնք առաւ : 2 - Եւ Ասորեստանի թագաւորը Ռափսակը շատ զօրքով Լաքիսէ Երուսաղէմ զրկեց Եզեկիա թագաւորին . ու անհկա թափիչի ազարակին ճամբան եղող վերեաւազանին ջրմուղին վրայ կայնեցաւ : 3 - Եւ Քեղկիսայի սրդին Եզիակիմ , պալատին հազարապետը , ու Սերնա

տաննադպիրը ու յիշատակներու դպիր Ասափի որդին Յովաք անոր ելան :

4 - Եւ Ռափսակ անոնց ըսաւ, Եզեկիայի ըսէք, Մեծ Թագաւորը, Ասորեստանի Թագաւորը, այսպէս կ'ըսէ. Ի՞նչ է այդ յոյժ՝ որու դուն կ'ապաւինիս : 5 - Դուն ըսիր, Պատերազմի համար խորհուրդ ու զօրութիւն ունիմ : բայց շրթունքի խօսքեր են. հիմա որո՞ւ ապաւինեցով ինձմէ ապստամբեցար : 6 - Ահա դուն այն ջախջախած եղէգէ ցուպին, Եգիպտոսի, ապաւինեցար, որ եթէ անոր մարդ մը կաթընի՝ ձեռքը պիտի մանէ ու զանկիա պիտի ծակէ. Եգիպտոսի Փարաւոն Թագաւորը բոլոր իրեն ապաւինողներուն այնպէս է : 7 - Բայց եթէ ինձի ըսես թէ Մենք մեր Եհովա Աստուծոյն կ'ապաւինինք, ասիկա ան չէ՞ որուն բարձր տեղերը ու սեղանները Եզեկիա վերցուց, և Յուդայի ու Երուսաղէմի ըսաւ, Միշտ այս սեղանին առջև երկրպագութիւն ըրէք : 8 - Աւ հիմա իմ տէրոջս, Ասորեստանի Թագաւորին, *հետ հաշտուէ՞, ու քեզի երկու հազար ձի տամ, եթէ դուն քու կողմանէդ անոնց վրայ հեծնողներ դնելու կարող ես : 9 - Եւ իմ տէրոջս ամէնէն պզտիկ ծառաներէն մէկ կուսակալին ի՞նչպէս կրնաս դէմ դնել, որ դուն կառքերու ու ձիերու համար Եգիպտոսի կ'ապաւինիս : 10 - Եւ հիմա այս երկրին վրայ արդեօք առանց Եհովայի հրահանգին ելեր եմ՝ զանկիա աւրելու համար. ինձի Եհովա ըսաւ, Այն երկրին վրայ ելիր ու զանկիա աւրէ :

11 - Աւ Եղիակիմ և Սերնա ու Յովաք Ռափսակի ըսին, Շնորհք ըրէ, քու ծառաներուդ հետ †Ասորերէն խօսէ, քանզի մենք կը հասկնանք, ու մեզի հետ Եբրայեցերէն մի խօսիր որ պարսպին վրայ եղող ժողովուրդը լսէ : 12 - Բայց Ռափսակ ըսաւ, Միթէ այս խօսքերը խօսելու համար իմ տէրս զիս քու տէրոջդ ու քեզի՞ Գաշ զրկեց. չէ՞ որ այս մարդոց ալ՝ որոնք պարսպին վրայ կը նստին ձեզի հետ իրենց աղբը ուտելու ու իրենց մէզը խմելու :

13 - Եւ Ռափսակ սաք ելաւ, ու մեծ ձայնով մը Եբրայեցերէն աղաղակեց ու ըսաւ, Մեծ Թագաւորին, Ասորես-

տանի Թագաւորին, խօսքերը մտիկ ըրէք : 14 - Թագաւորը այսպէս կ'ըսէ. Եզեկիա ձեզ չխօսէ, քանզի անկիա չկրնար ձեզ ազատել : 15 - Աւ Եզեկիա ձեզ Եհովայի չյուսացնէ՝ ըսելով, Եհովա մեզ անշուշտ պիտի ազատէ, — այս քաղաքը Ասորեստանի Թագաւորին ձեռքը պիտի չարուի : 16 - Եզեկիայի մտիկ մի ընէք, քանզի Ասորեստանի Թագաւորը այսպէս կ'ըսէ. Ինձի հետ հաշտութիւն ըրէք ու ինձի ելէք. և ամէն մարդ իր սրթէն, ու ամէն մարդ իր թղենիէն ուտէ, և ամէն մարդ իր ջրհորին ջուրէն խմէ, 17 - Մինչև ես գամ, ու ձեզ ձեր երկրին պէս երկիր մը, ցորենի ու գինիի երկիր մը, հացի ու այգիներու երկիր մը, տանիմ : 18 - Զըլլայ որ Եզեկիա ձեզ գլխէ հանէ՝ ըսելով, Եհովա մեզ պիտի ազատէ : Միթէ ազգերուն աստուածները Ասորեստանի Թագաւորին ձեռքէն՝ ամէն մէկը իր երկիրը ազատեց : 19 - Եմաթի ու Արփաթի աստուածները ո՞ւր են. Սեփարուիմի աստուածները ո՞ւր են. միթէ անոնք Սամարիան իմ ձեռքէս ազատեցին : 20 - Այս երկիրներուն ամէն աստուածներէն ո՞րը իր երկիրը իմ ձեռքէս ազատեց, որ Եհովա Երուսաղէմը իմ ձեռքէս ազատէ : 21 - Աւ անոնք լուռ կեցան և անոր ամենևին պատասխան մը չտուին. քանզի Թագաւորը հրամայեր էր՝ ըսելով, Անոր պատասխան մի տաք :

22 - Աւ Քեզկիայի որդին Եղիակիմ, պալատին հազարապետը, և Սերնա տաննադպիրը ու յիշատակներու դպիր Ասափի որդին Յովաք հանդերձնին պատուած՝ Եզեկիայի գացին, ու Ռափսակի խօսքերը անոր պատմեցին :

ԳԼ ԼԵ

Աւ երբ Եզեկիա Թագաւորը լսեց, իր հանդերձները պատուեց ու քուրձ հագաւ, և Տէրոջը տունը մտաւ. 2 - Աւ Եղիակիմ, պալատին հազարապետը, և Սերնա տաննադպիրը ու քահանաներուն ծերերը քուրձեր հագած՝ Ամսիսի որդւոյն Եսայի մարգարէին զրկեց : 3 - Եւ անոր ըսին, Եզեկիա այսպէս կ'ըսէ. Այսօր նեղութեան, կշտամբանքի ու նախատինքի օր է. քանզի աղաքը մինչև ծնանելու վայրկեանը հասան, բայց ծնանելու ոյժ չկայ : 4 - Կարելի է որ

*կամ, պատանդ տուր
†կամ, Քաղաքապետ

քու Տէր Աստուածդ Ռափաակի խօսքերը լսէ, զոր իր տէրը, Ասորեստանի թագաւորը, զրկեց կենդանի Աստուածը նախատելու համար, ու քու Տէր Աստուածդ այն իր լսած խօսքերուն համար յանդիմանութիւն ապ. ուրեմն դուն գտնուող մնացորդին համար աղօթք րբէ: 5 - Ու Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի գացին: 6 - Ու Եսայի անննց ըսաւ, Ձեր տէրոջը այսպէս ըսէք. Տէրը այսպէս կ'ըսէ. Մի վախնար այն լսած խօսքերէդ, որնցմով Ասորեստանի թագաւորին ծառաները զիս հայհոյեցին: 7 - Ահա ես անոր վրայ ոգի մը կը զրկեմ, ու լուր մը լսելով՝ իր երկիրը պիտի դառնայ, ու զանկա իր երկրին մէջ սրով պիտի կործանեմ:

8 - Եւ Ռափաակ դարձաւ, ու Ասորեստանի թագաւորը գտաւ որ Լերնայի հետ կը պատերազմէր, վասն զի լսած էր որ Լաքիսէ չուեր է: 9 - Ու Սենէփէբէ՛ Եթէովպացուց Թարակա թագաւորին համար լսեց որ կ'ըսէին, Ահա անկա քեզի հետ պատերազմելու ելեր է: Ու երբ «իկ» լսեց, Եզեկիայի դեսպաններ զրկեց՝ ըսելով, 10 - Յուդայի Եզեկիա թագաւորին այսպէս խօսիք ու ըսէք. Այն քու Աստուածդ, որու դուն ապաւիներ ես, թող քեզ չխաբէ՝ ըսելով, Երուսաղէմ՝ Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չարուի: 11 - Ահա դուն լսեցիր ինչ որ Ասորեստանի թագաւորները բոլոր երկիրներուն ըրին, ու ի՛նչպէս զաննք բոլորովին կործանեցին, ու հի՛մ դո՛ւն պիտի ազատիս: 12 - Միթէ իմ՝ հայրերուս կործանած աղգերուն, այսինքն Գովղանի, Խառանի, Ռեոսեփի ու Թելասարի մէջ եզող Եզեմի որդիներուն աստուածները զաննք ազատեցին: 13 - Ո՛ւր է Եմաթի թագաւորը ու Արփաթի թագաւորը, ու Սեփարուիմ՝ քաղաքին, Անայի, և Աւայի թագաւորը:

14 - Ու Եզեկիա նամակը դեսպաններուն ձեռքէն առաւ ու զանկա կարգաց, և Տէրոջը տունը ելաւ. ու Եզեկիա Տէրոջը առջև՝ բացաւ զանկա: 15 - Ու Եզեկիա Տէրոջը առջև աղօթք րբաւ, ու ըսաւ, 16 - Ով Տէր գորութեանց, Աստուած Իսրայէլի, որ քերովրէներու ձեռք կը նստիս, երկրի ամէն թագաւորութիւններուն վրայ

Աստուած միայն դուն ես. երկինքը ու երկիրը դուն ստեղծեցիր: 17 - Ով Տէր, ահանջդ խնարհեցուր ու լսէ. ով Տէր, աչքերդ բաց ու նայէ, և լսէ Սենէքերիմի բոլոր խօսքերը, զորնք զրկեց կենդանի Աստուածը նախատելու համար: 18 - Ով Տէր, իրաւցընէ Ասորեստանի թագաւորները բոլոր՝ ազգերը ու անննց երկիրը աւրեցին, 19 - Եւ անննց աստուածները կրակի տուին. վասն զի աննք Աստուած չէին, հապա մնորդու ձեռագործ, փայտ ու քար, էին. անոր համար զաննք կորսընցուցին: 20 - Եւ հիմա դուն, ով Տէր Աստուած մեր, ազատէ մեզ անոր ձեռքէն, որպէս զի երկրի բոլոր թագաւորութիւնները գիանան որ Տէրը միայն դուն ես:

21 - Ու Ամովսի որդին Եսայի Եզեկիայի «բար» զրկեց՝ ըսելով, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Ասորեստանի Սենէքերիմ՝ թագաւորին համար աղօթք րբիր ինձի, 22 - Անոր վրայով Տէրոջը ըսած խօսքը այս է.

Միօնի կոյս աղջիկը քեզ անարգեց, քեզ ծաղր ըրաւ, Երուսաղէմի աղջիկը քու ետեւէդ գլուխ շարժեց:

23 - Դուն ո՞վ նախատեցիր ու հայհոյեցիր, Ու որո՞ւ վրայ ձայնդ վերցուցիր, Եւ աչքերդ Իսրայէլի Սուրբին դէմ՝ վեր վերցուցիր:

24 - Քու ծառաներուդ ձեռքով Տէրը նախատելով՝ ըսիր, Իմ կառքերուս շատութիւնովը լեռներուն բարձրութիւնը, Լիբանանու քովերը, Երոյ, Ու անոր բարձր եղևիները Եւ ընտիր մայրերը †պիտի կարեմ՞. Ու անոր խիստ բարձր ծայրը, Անոր կարմեղսի անտառը, †պիտի մանեմ՞:

25 - Ես փորեցի ու ջուր խմեցի, Ու պաշարուած տեղերուն բոլոր գետերը

Ուրքերուս թաթաղը ցամքեցուցի: 26 - Միթէ լսած չե՞ս որ ասիկա շատնցմէ ես շինեցի,

Ու առաջուան օրերէն ի վեր ձեռակերպեցի.

*Կա՛մ, ասորածեց

*Եբբ. երկիրները †Կա՛մ, կարեցի †Կա՛մ, մտայ

Հիմա հասուցի,
Որպէս զի դուն պարտաւոր քաղաք-
ները աւերակի հողակցաներու
դարձնես :

27 - Ուստի անոնց բնակիչներուն ձեռքը
կարճ բլլալուն համար

Զարհուրեցան ու ամչցան :

Անոնք դաշտի խոտի և կանանչ բան-
ջարի ոչ»,

Ու տանիքի խոտի ոչ»,

Եւ դեռ չհասած ու խորշակէն զար-
նուած հունձքի ոչ» եղան :

28 - Բայց ես քու բնակութիւնդ, ել-
լելիդ ու մանկիդ,

Եւ ինծի ունեցած սրամուտութիւնդ գի-
տեմ :

29 - Որովհետեւ ինծի ունեցած սրամը-
տութիւնդ

Ու քու ամբարտաւանութիւնդ իմ ա-
կանջներուս ելաւ,

Ես ալ իմ կարթս քու քիթդ և իմ
տանձս քու բերանդ պիտի դնեմ,

Ու քու եկած ճամբայէդ քեզ ետ պի-
տի դարձնեմ :

30 - Եւ ասիկա քեզի նշան բլլայ.

Այս տարի ինքիրմէ բուսածը

Ու երկրորդ տարին ինկած հատերէն
բուսածը պիտի ուտէք.

Ու երրորդ տարին ցանեցէք ու հնձե-
ցէք,

Եւ այգիներ անկեցէք ու անոնց պտուղը
կերէք :

31 - Եւ Յուդայի տանը ազատուած
մնացորդը

Վարէն արմատ պիտի արձակէ,

Ու վերէն պտուղ պիտի տայ :

32 - Քանզի Երուսաղէմէ մնացորդ

Ու Սիօն լեռնէն ազատուած պիտի
ելլէ :

Ասիկա զօրաց Տէրոջը նախանձը պիտի
ընէ :

33 - Ասոր համար Ասորեստանի թա-
գաւորին վրայով Տէրը այսպէս
կ'ըսէ.

Անիկա այս քաղաքը պիտի չմանէ,
Ու անոր նետ պիտի չնետէ,

Եւ անոր առջև վահանով պիտի չգայ,
Ու անոր դէմ պտանէչ պիտի չկանգնէ.

34 - Իր եկած ճամբայէն ետ պիտի
դառնայ,

Ու այս քաղաքը պիտի չմանէ, կ'ըսէ
Տէրը :

35 - Եւ այս քաղաքը պիտի պաշտպա-
նեմ ու զանիկա ազատեմ,

Ինծի համար ու իմ ծառայիս Գաւթի
համար :

36 - Ու Տէրոջը հրեշտակը ելաւ, և
Ասորեստանի բանակին մէջ հարիւր
ութուներ հինգ հազար մարդ զարկաւ.

ու երբ առաւօտուն կանուխ ելան,
ահա անոնց ամէնը մեռած մարմիններ
էին :

37 - Եւ Ասորեստանի Սենեքերիմ
թագաւորը չուեց գնաց, ու դարձաւ
Նինուէի մէջ նստաւ :

38 - Ու երբ ա-
նիկա իր աստուծոյն Նեարաքի տանը
մէջ երկրպագութիւն կ'ընէր,

անոր սրգիները Ագրամէլէք ու Սարասար
զանիկա սրով զարկին, ու Արարադի
երկիրը փախան.

և անոր տեղ անոր սր-
գին Ասորդան թագաւոր եղաւ :

ԳԼ. ԼԸ

Այն օրերը Եզեկիա մահուան տա-
տիճան հիւանդացաւ :

Ու Ամուսի սր-
գին Եսայի մարգարէն անոր եկաւ, ու
անոր ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ.

Տանդ համար պատուէր տուր, քանզի դուն
մեռնելու ես ու պիտի չսպրիս :

2 - Ու Եզեկիա իր երեսը պատին դարձուց, ու
Տէրոջը աղօթք ըրաւ,

3 - Ու ըսաւ, Ով Տէր, կ'աղաչեմ, քու առջևդ
ճշմարտութեամբ ու կատարեալ սրտով
քալելիս, և քու աչքիդ առջև բարի
եղածը ընելիս յիշէ. ու Եզեկիա մեծ
լացով մը լացաւ :

4 - Ու Տէրոջը խօսքը եղաւ Եսայիի՝
ըսելով, 5 - Գնա Եզեկիայի ըսէ, Քու
հօրդ Գաւթի Տէր Աստուածը այսպէս
կ'ըսէ.

Քու աղօթքդ լսեցի, քու աչքիդ
արցունքը տեսայ. ահա ես քու օրե-
րուդ վրայ տանը հինգ տարի պիտի ա-
ւելցնեմ :

6 - Եւ քեզ ու այս քաղաքը
Ասորեստանի թագաւորին ձեռքէն պի-
տի ազատեմ, և այս քաղաքին պաշտ-
պանութիւն պիտի ընեմ :

7 - Եւ ասիկա
քեզի Տէրոջմէն նշան բլլայ, թէ Տէրը
այս իր ըսած խօսքը պիտի կատարէ :

8 - Ահա ստուերը Աքազի արևու ժա-
մացոյցին վրայ իջած աստիճաններէն
տասը աստիճան ետ պիտի դարձնեմ.

ու արևը իջած աստիճաններէն տասը
աստիճան ետ դարձաւ :

9 - Այս է Յուդայի Եզեկիա թա-
գաւորին գրածը, ոչ իր հիւանդանա-
լուն ու հիւանդութենէ ելլելուն ատենը
էրէն :

10 - Ես ըսի, իմ օրերուս *Նանգիսա ժամանակին՝ մէջ

Գերեզմանին դռները պիտի երթամ. Մնացած տարիներէս զրկուեցայ:

11 - Ըսի թէ Տէրը պիտի չտեսնեմ, Տէրը պիտի չտեսնեմ կենդանիներուն երկրին մէջ.

Եւ միւս աշխարհին բնակիչներուն հետ ըլլալով,

Այլ մարդու պիտի չնայիմ:

12 - Իմ †չրջանս կը չուէ,

Ու հովիւներուն տաղաւարին պէս ինձմէ կը փոխադրուի,

Իմ կեանքս կարեցի տապանանկի պէս. Առէչէն զիս կը կարէ.

Յորեկուրնէ մինչև գիշեր զիս պիտի լմնցնես:

13 - Մինչև առաւօտ սպասեցի.

Ասիւծի պէս բոլոր սակարներս կը կտարէ. Յորեկուրնէ մինչև գիշեր զիս պիտի լմնցնես:

14 - Կռունկի պէս *ձի ծիծեռնիկի պէս կը ճչի,

Աղաւնիի պէս կը մնչէի.

Վեր նայելէն աչքերս տկարացան.

Ով Տէր, տագնապի մէջ եմ, ինձի ձեռնառ եղիր:

15 - Ի՞նչ ըսեմ. ինք ինձի խօսեցաւ ու ինք կատարեց.

Իմ բոլոր տարիներուս մէջ Հոգւոյս այս ցուին համար կամոց պիտի քալեմ:

16 - Ով Տէր, *արդի տանցմով կ'ապրին,

Ու իմ հոգւոյս կեանքը տանց ամենէն է:

Եւ զիս բժշկեցիր ու ապրեցուցիր:

17 - Ահա խաղաղութեան տեղ մեծ դառնութիւն էի - ինձի.

Բայց դուն իմ հոգիս սիրեցիր, - ապականութեան գուբէն քրիչցի.

Վասն զի բոլոր մեղքերս կռնակիդ ետևը նետեցիր:

18 - Քանզի գերեզմանը քեզ չկրնար օրհնել,

Մահը քեզի փառք չկրնար տալ. Գուբը իջնողները քու ճշմարտութեանդ չեն կրնար յուսալ:

19 - Ապրողը, տալողը քեզ պիտի օրհնէ,

Ինչպէս ես այսօր է՛նէս.

Քու ճշմարտութիւնդ հայրը եւ որդիներուն պիտի գիտցնէ:

20 - Տէրը իմ փրկութիւնս եղաւ. Անոր համար մեր կեանքին բոլոր օրերուն մէջ,

Իմ օրհնութիւններս Տէրոջը ստանը մէջ Լար ունեցող նուագարաններով պիտի երգենք:

21 - Վասն զի Եսայի ըսեր էր, Զոր թուզեր առնեն, մանրեն ու վէրքին վրայ դնեն, և պիտի առողջանայ:

22 - Ու Եզեկիա ըսեր էր, Տէրոջը ստանը ելլելուս նշանը ի՞նչ ըլլայ:

ԳԼ. ԼԹ

Այն տատեն Բաբելոնի թագաւորը, Բաղադանի որդին Մարովաք-բաղադան, նամակներ ու ընծաներ զրկեց Եզեկիայի, քանզի անոր հիւանդանայր և առողջանայր լսեր էր: 2-Ու Եզեկիա անոնց վրայ ուրախացաւ, և իր թանկագին բաներուն տունը, արծաթը ու ոսկին, ու խունկերը և պատուական իւղը, ու իր զէնքերուն բոլոր տունը և իր գանձերուն մէջ բոլոր գանուածը ցուցուց. ու իր ստանը մէջ և իր բոլոր տէրութեանը մէջ բան մը չմնաց, զոր Եզեկիա անոնց չցուցնէ:

3 - Ու Եսայի մարգարէն Եզեկիա թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Այդ մարգիկը ի՞նչ ըսին, և ուրկէ՞ եկան քեզի. ու Եզեկիա ըսաւ, Ինձի հեռու տեղէ, Բաբելոնէ, եկան: 4 - Եւ անիկա ըսաւ, Քու տանդ մէջ ի՞նչ տեսան. ու Եզեկիա ըսաւ, Տանս մէջ ինչ որ կար՝ տեսան, ու գանձերուս մէջ անոնց չցուցուցած բանս չմնաց: 5 - Այն տատեն Եսայի Եզեկիայի ըսաւ, Զորաց Տէրոջը խօսքը մտիկ ըրէ. 6 - Ահա օրեր կու գան՝ որ քու տանդ մէջ ինչ որ կայ, ու քու հայրերդ մինչև այսօր ինչ որ ժողովեցին, Բաբելոն պիտի տարուին, բա՛ն մը պիտի չմնայ, կ'ըսէ Տէրը. 7 - Ու քեզմէ ելլելու՝ քու ձեռնեկու որդիներէդ պիտի առնեն, և անոնք Բաբելոնի թագաւորին պալատին մէջ ներքինիներ պիտի ըլլան: 8 - Ու Եզեկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը խօսքը զոր դուն ըսիր, բարի է. նաև ըսաւ, Որովհետեւ իմ օրերուս մէջ խաղաղութիւն ու ապահովութիւն պիտի ըլլայ:

*Կ-ձ, կէսին
†Կ-ձ, բնակարանս

ԳԼ. Խ

Միթարեցէք, միթարեցէք իմ ժողովուրդս, Կ'ըսէ ձեր Աստուածը .

2 - Երուսաղէմի քաղցրութեամբ խօսեցէք ,

Ու անոր կանչեցէք՝ որ անոր պատերազմելու ժամանակը լրացաւ, Եւ անոր անօրէնութիւնը թողուեցաւ . Քանզի իր բոլոր մեղքերուն համար Տէրօջը ձեռքէն կրկին հարստացած աւաւ :

3 - *Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրօջը՝ ճամբան պատրաստեցէք, Ու ամայութեան մէջ մեր Աստուծոյն համար շաւիղ շիակեցէք :

4 - Ամէն ձոր պիտի բարձրանայ, Եւ ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, Ու ծուռը պիտի շիակուի, Եւ խորտաբորտ տեղերը հաւասար պիտի ըլլան .

5 - Ու Տէրօջը փառքը պիտի յայանուի, Եւ ամէն մարմին մէկտեղ զանիկա պիտի տեսնէ .

Քանզի Տէրօջը բերանը խօսեցաւ :

6 - Ձայն մը ըսաւ, կանչէ .

Ու †անիկա ըսաւ, Ի՞նչ կանչեմ .

Ամէն մարմին խօսէ, Ու անոր բոլոր վայելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է :

7 - Խօտը կը չորնայ, ծաղիկը կը թաւաւի,

Երբ անոր վրայ Տէրօջը հովը կը փչէ . Իրաւքնէ ժողովուրդը խօսէ :

8 - Խօտը կը չորնայ, ծաղիկը կը թաւաւի,

Բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան պիտի մնայ :

9 - Ելիւ բարձր լեռան վրայ, Ով դուն, որ Միօնի աւետիս կը բերես .

Քու ձայնդ ուժով բարձրացուր, Ով դուն, որ Երուսաղէմի աւետիս կը բերես .

Բարձրացուր, մի վախնար .

Յուդայի քաղաքներուն ըսէ, Ահա ձեր Աստուածը :

10 - Ահա Տէր Եհովա զօրութեամբ պիտի գայ .

Ու անոր բազուկը իրեն համար պիտի իշխէ .

Ահա իր վարձքը իրեն հետ է, Ու գործերու հարստացմը իր առջև է . 11 - Անիկա հովուի պէս իր հօտը պիտի հովուէ .

Գառնուկները իր բազուկովը պիտի ժողովէ ,

Ու զանոնք իր գիրկին մէջ պիտի կրէ, Եւ ծիծ տուողները կամօց պիտի քչէ :

12 - Ո՞վ իր ափով ջուրերը չափեց, Ու թիզով երկինքը ծրագրեց,

Ու երկրի հողը չափի մէջ ամփոփեց, Եւ լեռները կշռորդով ,

Ու բլուրները կշիւքով կշռեց : 13 - Ո՞վ քննեց Տէրօջը Հոգին,

Ու անոր խորհրդակից ըլլալով՝ խելամուտ ըրաւ զանիկա :

14 - Անիկա որ՞ու խորհուրդ հարցուց, Եւ ո՞վ անոր իմաստութիւն տուաւ,

Ու դատաստանի ճամբան սորվեցուց, Ո՞վ անոր գիտութիւն սորվեցուց,

Ու իմաստութեան ճամբան գիացուց : 15 - Ահա ազգերը դոյլէն կաթիլ կաթիլի պէս են,

Ու կշիւքի մէջի մօնը փոշիին պէս կը սեպուին .

Ահա կղզիները *ցրուած փոշիի պէս են :

16 - Եւ Լիբանան կրակի համար բաւական չէ,

Ու անոր անասունները ողջակէզի համար բաւական չեն :

17 - Ամէն ազգերը անոր առջև ոչինչի պէս,

Ու ոչինչէն պակաս և ունայնութիւն կը սեպուին :

18 - Ուստի դուք զԱստուած որ՞ու կը նմանցնէք,

Ու զանիկա ի՞նչ նմանութեան հետ կը հաւասարցնէք :

19 - Արուեստաւորը կը ձուլէ կուռքը, Ու ոսկերիչը զանիկա ոսկիով կը պատէ,

Եւ անոր արծաթէ շղթաներ կը շինէ : 20 - Այն աղքատը որ չկրնար Թճաթա նուէրներ ընել ,

Անփուտ փայտ կ'ընտրէ,

Իրեն վարպետ արհեստաւոր մը կը փնտռէ,

Որպէս զի անշարժ կուռք մը շինէ : 21 - Միթէ չգիտցա՞ք, չլսեցի՞ք,

Ձեզի առաջուրնէ չզրուցուեցա՞ք, Երկրի հիմնադրութենէն չհասկցա՞ք :

22 - Ի՞նչ է երկրի շրջանին վրայ նստողը ,

*Կա՛մ, Ձայն մը կը կանչէ. Անապատին մէջ Տէրօջը †Կա՛մ, ես ըսի .

*Կա՛մ, կը վերցնէ փոշիի պէս

Ու անոր բնակիչները մարտիներու պէս են .
 12-ի է երկինքը վարագուրի պէս տարածողը ,
 Ու նստելու համար զանկա վրանի պէս կանգնողը :
 23 - 12-ի է իշխանները բնաջինջ բնողը ,
 Ու երկրի դատաւորները ոչնչացնողը :
 24 - Անոնք դեռ չանկուած , չցանուած , Եւ անոնց բունը հողի մէջ չարմատացած ,
 Անկա անոնց վրայ կը փչէ , ու անոնք կը չորնան .
 Եւ փոթորիկը զանոնք մղեղի պէս կը տանի :
 25 - Արդ որո՞ւ կը նմանցնէք զիս , Որ ես ա՞նք հաւատար ըլլամ , կ'ըսէ Սուրբը :
 26 - Աչքերնիդ վեր վերցուցէք ու նայեցէք , Ասոնք ո՞վ ստեղծեց . Անկա անոնց զօրքը համբանքով կը հանէ , Անոնց ամէնը երեւոյ անուենովը կը կանչէ .
 Ի՞նչ մեծ իշխանութիւնովը ու սաստիկ զօրութիւնովը Անոնց ընաւ մէկը ես չմտար :
 27 - Ով Յակոբ , ինչո՞ւ կ'ըսես , Ու , ով Իսրայէլ , Ինչո՞ւ - կը զրուցես թէ իմ ճամբաս Տէրջմէ ծածկուեցաւ , Եւ իմ իրաւունքս իմ Աստուծմէս զանց եղաւ :
 28 - Միթէ չգիացա՞ր կամ չըսեցի՞ր Որ յաւիտենական Աստուածը Եհովա , Երկրի ծայրերուն Ստեղծիչը , Չյոգնիր ու չթուլնար . Անոր իմաստութիւնը չքննուիր :
 29 - Անկա է յոգնածին ոյժ տաւողը , Ու կարողութիւն չունեցողին շատ զօրութիւն հասցնողը :
 30 - Երիտասարդները անգամ պիտի յոգնին ու թուլնան , Եւ ընտիր կարիճները բոլորովին պիտի իյնան .
 31 - Բայց Տէրջը ապաւինողներուն ոյժը պիտի նորագուի . Եւ անոնք արծիւներու պէս * թռկերով վեր պիտի ելլեն , Պիտի վազեն ու չթուլնան , Պիտի քաշեն ու չյոգնին :

* կա՛մ , նորափետուր պիտի զարգարուին

Ով կղզիներ , իմ առջև լուս կեցէք ,
 Ու ժողովուրդները երեւոյ ոյժը նորագեն ,
 Մօտենան - ոյն տան խօսին .
 Մէկտեղ դատաստանի մօտենանք :
 2 - Ո՞վ սաք հանեց արգարը արևելքէն ,
 Ու զանկա իր շաւիղներուն կանչեց , Ազգերը անոր առջև դրաւ ,
 Ու թագաւորներու վրայ ա՞նք արեւ տուաւ .
 Չանա՛ք փոշիի պէս դրաւ անոր սուրին առջև ,
 Ու հողմովար մղեղի պէս՝ անոր աղեղին առջև .
 3 - Չանոնք հալածեց և խողաղութեամբ անցաւ
 Այնպիսի ճամբայէ մը՝ ուր բնաւ իր սաքը կոխած չէր :
 4 - Ո՞վ է ա՞նք գործողը ու բնողը , Ու շրջանները սկիզբէն կանչողը . Ես Տէրս , ու առաջինն եմ , Ու վերջիններուն հետ եմ :
 5 - Կղզիները ատան ու վախցան , Երկրի ծայրերը դողացին , Անոնք մօտեցան ու եկան .
 6 - Անոնց ամէն մէկը իր ընկերին օգնութիւն ըրաւ ,
 Ու ա՞նք մարդ իր եղբօրը Չօրացիր՝ ըսաւ :
 7 - Եւ արուեստաւորը սակերիչին , Ուսով ծեծողը սալի վրայ զարնողին սիրա կու տայ ,
 Ու կ'ըսէ , Ասկա կպցնելու համար աղէկ է .
 Ու զանկա գամերով կը գամէ , որպէս զի չչարժի :
 8 - Բայց դուն , ով իմ ծառաս իսրայէլ ,
 Իմ ընտրեալս Յակոբ ,
 Իմ սիրելիս Աբրահամի սերունդը ,
 9 - Չոր երկրի ծայրերէն առի , Ու քեզ անոր եզերքներէն կանչեցի , Եւ քեզի ըսի , Դուն իմ ծառաս ես , Քեզ ընտրեցի ու քեզ չմերժեցի .
 10 - Մի վախնար , քանզի ես քեզի հետ եմ .
 Մի զարհուրիր , վասն զի ես քու Աստուածդ եմ .
 Քեզ պիտի զօրացնեմ և քեզի օգնութիւն պիտի ընեմ ,

Ու իմ արդարութեանս աջովը քեզ պիտի բռնեմ :

11 - Ահա քեզի գեմ մտէն բարկացողները

Պիտի ամչնան ու պիտի պատկառին .
Ու քեզի հետ վիճող մարդիկը
Չեղածի պէս պիտի ըլլան ու պիտի կարտուին :

12 - Քեզի հետ կուտող մարդիկը
Պիտի փնտուես ու պիտի չգանես .
Քեզի հետ պատերազմ ընող մարդիկը
Չեղածի պէս ու ոչինչի պէս պիտի ըլլան :

13 - Քանզի ես քու Տէր Աստուածդ եմ,
Որ քու աջ ձեռքէդ կը բռնեմ, «-
քեզի կ'ըսեմ»,

Մի վախնար, ես քեզի օգնութիւն կ'ընեմ :

14 - Ով Յակոբի որդը, մի վախնար,
Ով Իսրայէլի մահկանացուները,
Քեզի պիտի օգնեմ, կ'ըսէ Տէրը
Ու Իսրայէլի Սուրբը, քու Փրկիչդ :

15 - Ահա ես քեզ նոր, սուր և ատամնաւոր կամնասայլի պէս պիտի ընեմ .

Լեռները պիտի մանրես ու փշրես,
Եւ բլուրները մղեզի պիտի դարձնես .

16 - Չանոնք պիտի հասես, ու հովը զանոնք պիտի տանի,
Եւ փոթորիկը զանոնք պիտի ցրուէ .
Ու դուն Տէրոջմով պիտի ցնծաս,
Իսրայէլի Սուրբովը պիտի պարծենաս :

17 - Աղքատները ու անանկները ջուր կը փնտուեն, բայց չկայ .
Անոնց լեզուն ծարաւէն չարցեր է .
Ես Տէրս անոնց ինքրս-առէր պիտի լսեմ,

Ես, Իսրայէլի Աստուածը, զանոնք երեսէ պիտի չձգեմ :

18 - Բարձր տեղերու վրայ գետեր,
Ու հովիտներու մէջ աղբիւրներ պիտի բանամ .

Անապատը ջուրի լիճի՝
Ու չոր երկիրը ջուրի աղբիւրներու պիտի դարձնեմ :

19 - Անապատին մէջ եղևին,
Սատիմ, մրտենի և իւղի ծառ պիտի անկեմ,

Անջուր երկրին մէջ մայր,
Սօսի ու տօտախ մէկտեղ պիտի դնեմ .

20 - Որպէս զի տեսնեն ու գիտնան,
Ու մէկտեղ մտածեն ու հասկնան,
Որ ասիկա Տէրոջը ձեռքը ըրաւ,
Ու Իսրայէլի Սուրբը ստեղծեց :

21 - Չեր դատը յառաջ բերէք,
կ'ըսէ Տէրը .

Չեր զօրաւոր փաստերը մծտեցուցէք,
կ'ըսէ Յակոբի Թագաւորը :

22 - Թող մծտեցնեն ու ինչ ըլլալիքը մեզի պատմեն .

Առաջինները մեզի յայտնեն թէ անոնք ինչ էին,

Որպէս զի միաբերնիս պահենք ու անոնց վախճանը գիտնանք
կամ ապագայ բաները մեզի գիտցնեն :

23 - Ասկէ ետքը ըլլալիքները պատմեցէք,
Որպէս զի ձեր աստուած ըլլալը գիտնանք .

կամ աղէկ կամ գէշ բան մը ըրէք,
Որպէս զի զարմանանք ու մէկտեղ տեսնենք :

24 - Ահա դուք ոչինչ էք, ու ձեր գործն ալ ոչինչ է .

Չեզ ընտրողը պղծութիւն է :

25 - Հիւսիսի կողմէն Գիւլ արթնցուցի,
Եւ պիտի գայ «- արևելքէն իմ անունս պիտի կանչէ .

Եւ իշխանները տիղմի պէս պիտի կոխէ,
Ինչպէս բրուտը կաւը կը կոխէ :

26 - Ո՞վ պատմեց սկիզբէն՝ որ գիտնանք .

Ու առաջուան դարերէն՝ որ ճշմարիտ է՝ ըսենք .

Ոչ յայտնող մը կայ, ոչ գիտցնող մը
Եւ ոչ ձեր խօսքերը մտիկ ընող մը :

27 - Առաջ ես ըսի Սիօնի, Ահա, ահա անոնք .

Ու Երուսաղէմի աւետիս բերող տուի :

28 - Եւ նայեցայ ու մարդ մը չկար,
Եւ ասանցմէ բնաւ մէկ խորհրդական չկար,

Որու հարցնեմ ու պատասխան տայ :

29 - Ահա մտէնը սնտօսի են, գործերնին ոչինչ է .

Անոնց ձուլածոյ կուռքերը հով և ունայնութիւն են :

ԳԼ. ԽԲ

Ահա իմ ծառաս, որու ձեռնտու պիտի ըլլամ,

Ու իմ ընտրածս, որս իմ սիրտս հաւնեցաւ .

Իմ Հոգիս անոր վրայ դրի .

Անիկա ազգերուն իրաւունք պիտի հանէ :

2 - Անիկա պիտի չպօռայ ու պիտի չազաղակէ,

Եւ իր ձայնը՝ դուրսը լսել պիտի չտայ :
3 - Զախջախուած եղէգը պիտի չփշրէ,
Ու պլպլած պատրայգը պիտի չմարէ,
Իրաւունքը ճշմարտութեան պիտի
չանէ :

4 - Անհկա պիտի չտկարանայ ու պիտի
չթուլնայ ,

Մինչև իրաւունքը երկրի վրայ հաս-
տատէ .

Եւ կղզիները անոր օրէնքին պիտի
սպասեն :

5 - Երկինքը ստեղծող ու զանհկա
կազմող ,

Երկիրը ու անոր մէջ բուսածը տարա-
ծող ,

Անոր վրայ եղող ժողովուրդին շունչ՝
Եւ անոր մէջ քաղողներուն սգի սաւող
Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ .

6 - Ես Տէրս քեզ արդարութեամբ
կանչեցի ,

Եւ ձեռքէդ պիտի բռնեմ ու քեզ
պիտի պաշտպանեմ ,

Եւ քեզ ժողովուրդին ուխտ՝
Ու ազգերուն լոյս պիտի տամ .

7 - Որպէս զի կոյրերուն աչքերը բա-
նաս ,

Բանտարկեալները բանտէն հանես .
Ու խաւարի մէջ նստողները՝ կապանքի
սունէն :

8 - Ես Եհովա եմ : Իմ անունս այս է .
Ու իմ փառքս ուրիշի չեմ տար ,
Ոչ ալ իմ պատիւս կուռքերուն :

9 - Առաջուան բաները ահա եղան ,
Ու նորերը ես կը յայտնեմ .

Անոնք դեռ չեղած ձեզի կ'իմացնեմ :
10 - Նոր երգ երգեցէք Տէրոջը ,

Ու անոր գովութիւնը՝ երկրի ծայրերէն ,
Ով ծովը իջնողներ ու զանհկա լեցնող-
ներ ,

Կղզիներ և անոնց բնակիչները :

11 - Անապատը ու անոր քաղաքները ,
Կեդարու բնակած գեղերը ջան՝ վերցը-
նեն ,

*Վէմի բնակիչները յաղթանակի եր-
գով

Լեռներուն գլխէն ձայն տան .

12 - Տէրոջը փառք տան ,
Եւ անոր գովութիւնը կղզիներուն մէջ
պատմեն :

13 - Տէրը հզօրի պէս պիտի ելլէ ,
Պատերազմող մարդու պէս էր նա .
Խանձը պիտի արթնցնէ .

*Կ-ժ, Վ,էմերու

Պիտի աղաղակէ ու բարձրաձայն պիտի
գոչէ ,

Եւ իր թշնամիներուն վրայ * յաղթող
պիտի ըլլայ :

14 - Ես շատոնցմէ լուս կեցայ ,
Զայնս կարեցի ու զիս զսպեցի .
Հի՛ս ծնանող կնոջ պէս պիտի պո-
ւամ ,

+Պիտի տւրեմ՝ ու մէկէն պիտի կլլեմ .

15 - Լեռները ու բլուրները անապատ
պիտի ընեմ ,

Եւ անոնց բոլոր խտր պիտի չորցնեմ ,
Ու գետերը էցամաքի պիտի դարձնեմ ,
Եւ լիճերը պիտի ցամքեցնեմ :

16 - Ու կոյրերը իրենց չգիացած ճամ-
բուն մէջ պիտի պտրացնեմ ,

Զանոնք իրենց չգիացած շաւիղներուն
մէջ պիտի քալեցնեմ .

Անոնց առջև խաւարը լոյս, ու խորտու-
բորտ տեղերը հաւասար պիտի
ընեմ .

Անոնց այս բաները պիտի ընեմ , ու
զանոնք երեսէ պիտի չձգեմ :

17 - Փանդակած կուռքերու ապա-
ւինողները ,

Եւ ձուլածոյ կուռքերուն՝ Գուք մեր
աստուածներն էք՝ ըտողները

Ետ պիտի դառնան ու ամօթալից ըլլան :

18 - Ով խուլեր , լսեցէք ,
Եւ, ով կոյրեր , նայեցէք , որպէս զի
տեսնէք :

19 - Ո՞վ է կոյր բաց ի իմ ծառայէս ,
Կամ խուլ՝ իմ զրկած դեպանիս պէս .
Ո՞վ է կոյր՝ Աստուծոյ նուիրեալին պէս ,
Եւ կոյր՝ Տէրոջը ծառային պէս :

20 - Շատ բաներ կը տեսնես , բայց
զգուշութիւն չես ըներ .

Սկանջներդ բաց են , բայց չես լսեր :

21 - Տէրը իր արդարութեանը համար
անոր հաճեցաւ ,

Իր օրէնքը մեծցուց ու փառաւորեց .

22 - Բայց անհկա յափշտակուած և
կողոպտուած ժողովուրդ է .

Ամէնը քարայրներու մէջ որսգայթի
բռնուեցան ,

Ու բանտերու մէջ պահուեցան .

Անոնք յափշտակութեան մատնուե-
ցան , և ազատող մը չկայ .

Կողոպուտ եղան , ու մէկը չգտնուիր
որ Ես տուր՝ ըսէ :

*Կ-ժ, պիտի զօրանայ
+Կ-ժ, Շունչ առնելով պիտի փչեմ
‡Կ-ժ, կղզիներու

- 23 - Ձեր մէջ ո՞վ կայ որ սասոր ականջ գնէ ,
- Ե- մտիկ ընէ ու լսէ գալու ժամանակին համար :
- 24 - Ո՞վ մտանեց Յակոբը յափշտակութեան ,
- Ու Իսրայէլը՝ կողոպտիչներուն .
- 25^o որ Տէրը՝ որու դէմ մեղք գործեցինք .
- Վասն զի անոր ճամբաներուն մէջ քալել չուզեցին ,
- Եւ անոր օրէնքին հնազանդութիւն չըրին :
- 25 - Ուստի իր սաստիկ բարկութիւնը Ու պատերազմի ուժգնութիւնը անոր վրայ թափեց ,
- Եւ ամէն կողմէն զանհկա բռնկցուց , բայց անհկա չգիտցաւ .
- Զանհկա այրեց , բայց անհկա իր սրտին մէջ չգրաւ :

ԳԼ. ԽԳ

- Եւ հիմա, ով Յակոբ, քեզ ստեղծողը ,
- Ու, ով Իսրայէլ, քեզ ձեռակերպող Տէրը այսպէս կ'ըսէ .
- Մի վախնար, վասն զի ես քեզ փրկեցի, Բեշ քու անունովդ կանչեցի . դուն իմն ես :
- 2 - Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ ,
- Ու երբ գետերէն անցնիս, քեզ պիտի չկոխեն .
- Երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, Եւ բոցը քեզ պիտի չբռնկցնէ :
- 3 - Քանզի ես քու Տէր Աստուածդ, Իսրայէլի Սուրբը , քու Փրկիչդ եմ . Եգիպտոսը քեզի համար փրկանք , Եթէ ով պիտի ու Սաբան քեզի համար փոխարէն տուի :
- 4 - Որովհետեւ իմ առջև պատուական եղար ,
- Պատիւ գտար, ու ես քեզ սիրեցի . Անոր համար քու անիտ փոխարէն մարդ ,
- Ու քու հոգիիդ փոխարէն ժողովուրդներ պիտի տամ :
- 5 - Մի վախնար, քանզի ես քեզի հետ եմ .
- Քու սերունդդ արևելքէն պիտի բերեմ, Եւ քեզ արևմուտքէն պիտի ժողովեմ :
- 6 - Հիւսիսին պիտի բռնեմ թէ Տուր ,
- Ու հարաւին՝ թէ Մի արգիլեր .

- Իմ աղաքներս հեռուէն ,
- Ու աղջիկներս երկրի ծայրէն բեր ,
- 7 - Այսինքն բոլոր իմ անունովս կոչուածները .
- Վասն զի անոնք իմ փառքիս համար ստեղծեցի ,
- Զանոնք ձեռակերպեցի ու կազմեցի :
- 8 - Աչք ունեցող կայր ժողովուրդը ,
- Ու ականջ ունեցող խուլերը հանեցէք :
- 9 - Բոլոր ազգերը մէկտեղ ժողովուին , Եւ ժողովուրդները հաւաքուին .
- Անոնցմէ ո՞վ կրնայ տակա պատմել ,
- Ու առաջուան բաները մեզի գիտցնել . Իրենց վկաները թող բերեն որպէս զի արդարանան ,
- Եւ Դարձի լսեն ու ըսեն թէ Ասիկա ճշմարիտ է :
- 10 - Իմ վկաներս դուք էք , կ'ըսէ Տէրը ,
- Նաև իմ ընտրած ծառաս .
- Որպէս զի գիտնաք ու ինծի հաւատաք , Եւ հասկնաք որ ես եմ .
- Ինծմէ առաջ Աստուած չէրաւ ,
- Ու ինծմէ ետքն ալ պիտի չըլլայ :
- 11 - Տէրը ես եմ , ես եմ ,
- Եւ ինծմէ ուրիշ փրկիչ չկայ :
- 12 - Ես զրուցեցի ու փրկեցի և գիտցուցի ,
- Երբ ձեր մէջ օտար անհոգի չկար .
- Ու իմ վկաներս դուք էք , կ'ըսէ Տէրը , որ ես եմ Աստուած :
- 13 - ԻՍկիզբէն ի վեր ես նոյն եմ ,
- Ու չկայ մէկը որ իմ ձեռքէս ազատէ . Երբ ես բան մը կ'ընեմ , ո՞վ կրնայ զանհկա արգիլել :
- 14 - Այսպէս կ'ըսէ Տէրը ,
- Ձեր Փրկիչը , Իսրայէլի Սուրբը .
- Ձեր անիտ համար Բաբելոն կը զրկեմ , Էւ անոնց ամէն փոխատականները Ու նաւերու մէջ աղաղակող Քաղաքացիները կ'իջեցնեմ :
- 15 - Ես եմ Եհովա , ձեր Սուրբը , Իսրայէլի Ստեղծիչը , ձեր Թագաւորը :
- 16 - Այսպէս կ'ըսէ Տէրը , որ ծովու մէջ ճամբայ ,
- Ու զօրաւոր ջուրերու մէջ շաւիղ կը դնէ ,
- 17 - Որ կառքը ու ձին , զօրքը և զօրութիւնը կը հանէ .

*Եբբ. չստեղծուեցաւ ԻԵբբ. Օրէն ԷԿամ, Եւ անոնց ամէնը փոխատական կ'իջեցնեմ. ու Քաղաքացուց աղաղակը նաւերուն մէջ պիտի ըլլայ :

Անոնք մեկտեղ կը պառակին ու չեն ել-
լեր .

Անոնք պատրոյզի պէս կը մտորին և
կ'անցնին :

18 - Առաջուանները մի յիշէք,
Աւ հին բաները միաբերնիդ մի բերէք :

19 - Ահա ես նոր բան պիտի բնեմ, որ
հիմա պիտի յայտնուի .

Միթէ զանիկա պիտի չգիտնանք .
Ես անապատի մէջ ալ ճամբայ,
Ա- անջրգի երկրի մէջ գետեր պիտի
դնեմ :

20 - Ձիւ դաշտի գազանները ,
Չագալները ու ջայլամները պիտի փա-
ռաւորեն .

Վասն զի իմ ժողովուրդիս, իմ ընտ-
րեալներուս, խմցնելու համար,
Անապատի մէջ ջուրեր,
Ե- անջրգի երկրի մէջ գետեր պիտի
տամ :

21 - Այս ժողովուրդը ես ինծի համար
ստեղծեցի,
Անոնք իմ գովութիւնս պիտի պատ-
մեն :

22 - Բայց դուն ինծի չկանչեցիր, ով
Յակոբ .
Հապա ինծմէ ձանձրացար, ով Իսրա-
յէլ :

23 - Քու ողջակէզներուդ ոչխարները
ինծի չբերիր,
Եւ քու զոհերովդ զիս չփառաւորեցիր .
Ընծայի համար քեզ չաշխատացուցի,
Աւ կնդրուկի համար քեզ չյոգնե-
ցուցի :

24 - Ինծի համար ստակով խունկե-
ղէզն ծախու չառիր,
Եւ քու զոհերուդ ճարպովը զիս չկըչ-
տացուցիր .
Հապա քու մեղքերովդ զիս աշխատ-
ցուցիր,
Ա- քու անօրէնութիւններովդ զիս
յոգնեցուցիր :

25 - Ես եմ, ես եմ, որ քու յանցանք-
ներդ ինծի համար կը ջնջեմ,
Աւ քու մեղքերդ ալ պիտի չյիշեմ :

26 - Միտքս ձգէ, մեկտեղ դատի ելլենք .
Դուն զրոյցէ, որպէս զի արգարանաս :

27 - Քու նախահայրդ մեղք գործեց,
Եւ քու ուսուցիչներդ ինծմէ ապստամ-
բեցան :

28 - Աստի ես ալ սրբարանին իշխան-
ները պիղծ սեպեցի,
Եւ Յակոբը նզովքի,
Աւ Իսրայէլը նախաարինքի մտանեցի :

Եւ հիմա մտիկ քրէ, ով իմ ծա-
ռաս Յակոբ,
Աւ դուն, ով իմ ընտրած Իսրայէլու
2 - Քեզ ստեղծող և արգանգի մէջ
ձեռակերպող,
Ա- քեզի օգնութիւն ընող Տէրը այս-
պէս կ'ըսէ .
Ով իմ ծառաս Յակոբ,
Եւ դուն, ով իմ ընտրած Իսրայէլու,
մի վախնար .
3 - Քանզի ծարաւին վրայ ջուր պիտի
թափեմ,
Աւ անջուր երկրին վրայ հեղեղներ .
Քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի
թափեմ,
Եւ քու սրգիներուդ վրայ՝ իմ օրհնու-
թիւնս :
4 - Աւ անոնք էբբ Բէ խտտերու մէջ,
Չուրի վառակներու քով եղող ուռինե-
րու պէս պիտի բուսնին :
5 - Մէկը պիտի ըսէ թէ Ես Տէրոջն եմ .
Մէկն ալ Յակոբի անունովը պիտի
կանչուի ,
Եւ միւսն ալ իր ձեռքովը պիտի գրէ
Բէ Ես Տէրոջն էմ,
Աւ Իսրայէլի անունովը պիտի մտկան-
ուանի .
6 - Տէրը, Իսրայէլի Թագաւորը,
Եւ զօրաց Տէրը, անոր Փրկիչը, այսպէս
կ'ըսէ .
Ես եմ առաջինը ու ես եմ վերջինը,
Աւ ինծմէ ուրիշ Աստուած չկայ :
7 - Եւ հին ժողովուրդը հաստատեալ
ի վեր
Ո՞վ կրցաւ ինծի պէս ձայն տալ ու
պատմել ,
Եւ տաիկա ինծի համար կարգի դնել .
Թող զրուցեն գալու և ըլլալու բաները :
8 - Մի վախնաք ու մի վարհուրիք .
Միթէ ես ձեզի այն տանէն չգիտցու-
ցի՞ ու չզրուցեցի՞ .
Իմ վկաներս դուք էք .
Ինծմէ ուրիշ Աստուած կա՞յ .
Յիրաւի «-բէշ Վէմ՝ չկայ . «-բէշ Տէ չեմ՝
գիտեր :
9 - Կուռք շինողներուն ամէնն ալ ու-
նայնութիւն են,
Եւ անոնց ընտիր գործերը օգուտ մը
չեն ըներ,
Աւ իրենք իրենց դէմ վկաներ են .

* էբբ. Յետուրունս

Չեն տեսներ ու չեն իմանար որ ամբշ-
նան :

10 - Բայց ո՞վ է անիկա որ աստուած
կը շինէ,
Եւ կուռք կը ձուլէ, որ օգուտ մը չը-
նէր :

11 - Ահա անոր բոլոր ընկերները պիտի
ամչնան,
Վասն զի արուեստաւորները իրենք
մարդ են.
Թող անոնք ամէնը ժողովուն « կայ-
նին ,
Պիտի վախնան « մէկտեղ պիտի ամբշ-
նան :

12 - Երկաթագործը օծուխով կը շինէ
տապարը ,
Եւ կռաններով անոր ձե կու տայ,
Ու զանիկա իր զօրաւոր բազուկովը
կը շինէ.
Երբ անօթենայ, ուժէ կը կարի.
Երբ ջուր չիմէ, կը մարի:

13 - Հիւսը լար կը քաշէ և մտախտով
ի՛նչ կը գծագրէ,
Չանիկա քանդակագործի գրիչով կը
բանի ,
Ու անոր վրայ կարկինով կը գծէ,
Չանիկա մարդու կերպարանքով
Եւ մարդկային գեղեցկութիւնով կը
շինէ,
Որպէս զի տան մէջ դրուի:

14 - Անիկա իրեն եղևիները կը կտրէ,
Եւ թեղօշ ու կաղնի կ'առնէ,
Չորանք իրեն՝ անտառի ծառերէն
կ'ընարէ ,
Սոճի կը անկէ և զանի՛ն անձրևը կը
մեծցնէ :

15 - Ու անոնք մարդուն վառելիք կ'ըլ-
լան .
Եւ անոնցմէ կ'առնէ, որպէս զի իր
վառէ « տաքնայ .
Անոնց հի հասը կ'այրէ ու հաց կ'եփէ ,
Նստե աստուած մը կը շինէ և անոր
երկրպագութիւն կ'ընէ .
Չանիկա կուռք կը ձևացնէ ու կը
պաշտէ :

16 - Անոր կէտովը կրակ կը վառէ,
Կէտովը միս կ'ուտէ,
Խորոված կ'եփէ ու կը կշտանայ,
Եւ կը տաքնայ ու կ'ըսէ,
Ահա տաքցայ, կրակը տեսայ:
17 - Եւ անոր մնացածը աստուած ,
այսինքն կուռք, կը շինէ իրեն,
Չանիկա կը պաշտէ ու անոր երկրպա-
գութիւն կ'ընէ,

Եւ անոր աղօթք կ'ընէ ու կ'ըսէ,
Չիս ազատէ, քանզի իմ՝ աստուածս
գուն էս :

18 - Չեն գիտեր ու չեն հասկնար.
Քանզի անոնց աչքերը՝ տեսնելէն,
Եւ անոնց սիրտերը հասկնալէն ծեփ-
ուեցան :

19 - Ու մէ'կը միտքը չբերեր,
Եւ գիտութիւն ու հանճար չունի որ
ըսէ ,
Ատոր կէտովը կրակ վառեցի,
Եւ անոր կայծերուն վրայ հաց ալ
եփեցի,
Միս խորովեցի ու կերայ .
Եւ մնացածը պղծութիւն շինեմ .
Ծառի կ'օճղ պաշտեմ :

20 - Անիկա մոխիրով կը սնանի.
Անոր խարուած սիրտը զինք կը մոլորե-
ցնէ,
Եւ իր հոգին չկրնար փրկել , ու չըսեր
թէ
Իմ՝ աջ ձեռքիս մէջ աստութիւն չկայ:
21 - Ատանք միտքդ բեր, ով Յակօբ,
Եւ գուն, ով Իսրայէլ, քանզի իմ՝
ծառաս էս .
Ես ստեղծեցի քեզ , գուն իմ ծառաս
էս .
Ով Իսրայէլ, *ինձմէ պիտի չմոռ-
ցուիս :

22 - Քու յանցանքներդ մէզի պէս,
Ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի.
Ինձի գարձիր, քանզի քեզ փրկեցի:
23 - Ուրախ եղէք, ով երկինք,
քանզի Տէրը ըրաւ « Ի՛նչ » .
Ով երկրի վարի կողմերը, ցնծութեամբ
աղաղակեցէք .
Լեռներ, անտառ ու անոր մէջ եղող
բոլոր ծառեր,
Ուրախութեան ձայներ հանեցէք .
Քանզի Տէրը փրկեց Յակօբը ,
Եւ Իսրայէլի մէջ փառաւորուեցաւ:
24 - Այսպէս կ'ըսէ Տէրը, քու
Փրկիչդ,
Ու քեզ արգանդի մէջ Ստեղծողը .
Ես եմ՝ Տէրը որ ամէն բանէր ըրի .
Երկինքը միայն էս տարածեցի,
Ու երկիրը իմ կարողութիւնովս հաս-
տատեցի .
25 - Ստախօսներուն նշանները պա-
րապր կը հանեմ ,
Եւ գուշակողները կը յիմարացնեմ .
Իմաստունները ես կը դարձնեմ ,

*Կա՛մ, զիս մի մոռնար

Ու անոնց գիտութիւնը յիմարութեան
կը հանեմ՝
26 - Իմ ծառայիս խօսքը կը հաստա-
տեմ,
Եւ իմ դեպքաններուս խորհուրդը կը
կատարեմ՝
Եւ ե՛մ, որ Երուսողէմի համար կ'ըսեմ
Թէ Պիտի բնակուի,
Ու Յուդայի քաղաքներուն համար՝ Թէ
Պիտի շինուին.
Ու անոր աւերակները պիտի կանգնեմ՝
27 - Եւ անդունդին կ'ըսեմ Թէ Չորցիր,
Ու քու գետերդ պիտի ցամքեցնեմ՝
28 - Եւ կիւրտի համար կ'ըսեմ, Իմ
հօգիւս է,
Ու իմ ամէն կամքս պիտի կատարէ.
Ու Երուսողէմի կ'ըսեմ Թէ Պիտի շին-
ուիս,
Եւ տաճարին՝ Թէ Քու հիմերդ պիտի
ձգուին :

ԳԼ. ԽԵ

Այսպէս կ'ըսէ Տէրը իր օճեալ կիւ-
րտին,
Որուն աջ ձեռքը բռնեցի,
Որպէս զի ազգերը անոր առջև հնա-
զանդեցնեմ՝
Ու Թագաւորներուն մէջքը Թուլցնեմ,
Եւ անոր առջև դռներուն փեղկերը
բացուին,
Ու դռները բաց չգոցուին.
2 - Ես քու առջևէդ պիտի երթամ,
Եւ խորտաւորաւ տեղերը պիտի շիակեմ.
Պղնձէ դռները պիտի փշրեմ,
Ու երկաթէ նիզերը պիտի կտարտեմ.
3 - Եւ քեզի խաւարի զիջ ծածկուած
զանձերը,
Ու պահուած հարստութիւնները պի-
տի տամ,
Որպէս զի գիանաս Թէ ես եմ Տէրը,
Իորայէլի Աստուածը, որ +եւ քու ա-
նունովդ կը կանչեմ:
4 - Իմ Յակոբ ծառայիս համար
Եւ իմ ընտրած Իորայէլիս համար
Քեզ քու անունովդ կանչեցի,
Ու քեզի մտկանունն դրի՝ Թէ Է կիս
չէիր ճանչնար:
5 - Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ,
Ինձմէ զատ Աստուած չկայ.
Ես քեզի գօտի կապեցի, Թէ Է կիս
չէիր ճանչնար.
6 - Որպէս զի արևելքէն ու արևմուտ-
քէն գիանան

Որ ինձմէ զատ մէ'կը չկայ.
Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ :
7 - Լոյսը հաստատողը և խաւարը
ստեղծողը,
Խաղաղութիւնը ընողը ու չարիքը
ստեղծողը,
Այս ամէն բաները ընողը ես Տէրս եմ :
8 - Ով երկինքներ, վերէն ցօլ կա-
թեցուցէք,
Եւ ամպերը արդարութիւն տեղան .
Երկիր բացուի ու փրկութեան պատու
*այ,
Ու մէկտեղ արդարութիւն բուսնի.
Ասոնք ստեղծողը ես Տէրս եմ :
9 - Վա՛յ անոր որ իր Արարիչին հետ
կը վիճի,
+Ու Ի՞նչ երկրի խեցիներուն պէս խեցի
մըն է՝.
Մի՞թէ կաւը զինք ձեռացնողին կրնա՞յ
ըսել Թէ Ի՞նչ կը շինես,
Կամ քու գործդ ինչո՞ւ +եւ ըսել Թէ
Չեռք չունիս :
10 - Վա՛յ անոր որ իր հօրը կ'ըսէ,
Ի՞նչ կը ծնանիս,
Ու իր մօրը՝ Ի՞նչ զա՛ւս կը բերես :
11 - Այսպէս կ'ըսէ Տէրը,
Իորայէլի Սուրբը ու անոր Արարիչը .
Գալու բաներուն վրայով ինձի հար-
ցուցէք,
Իմ որդիներուս համար ու իմ ձեռ-
քերուս գործերուն համար
Ինձի պատուէր սուէք :
12 - Երկիրը ես շինեցի,
Ու անոր վրայ մարդը ստեղծեցի.
Երկինքը իմ ձեռքերս տարածեցին,
Եւ անոր բոլոր զօրքին ես պատուէր
տուի :
13 - Ես զանիկա արդարութեամբ ար-
թընցուցի,
Ու անոր ամէն ճամբաները պիտի շիա-
կեմ .
Անիկա իմ քաղաքս պիտի շինէ,
Եւ իմ աքսորուածներս ես պիտի
դարձնէ
Առանց գնոյ ու առանց կաշառքի,
Կ'ըսէ զօրաց Տէրը :
14 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Եգիպտոսի վաստակը,
Ու Եթովպացոց և երկայնահասակ
Սաբայեցոց վաճառականու-
թիւնը

*Եբբ. տան +կա՛մ, խեցին երկրի
խեցիներուն հետ Բա՛ղ չէ՛ն

Քեզի պիտի անցնի, ու քուկդ պիտի
ըլլայ:

Անոնք քու ետեկդ պիտի քալեն,
Եւ շղթաներով պիտի պառտին,
Ու քեզի երկրպագութիւն ընելով
Քեզի պիտի աղաչեն - ըսէն:

Միայն քու մէջդ Աստուած կայ,
Ու անի գառ ուրիշ Աստուած մը
չկայ:

15 - Յիրաւի դուն քեզ ծածկող
Աստուած մըն ես,

Ով Իսրայէլի փրկիչ Աստուածը:

16 - Անոնք ամէնը պիտի ամչնան ու
պատկառին:

Կուռք շինողները մէկտեղ ամօթով
պիտի երթան:

17 - Իսրայէլ յաւիտենական փրկու-
թիւնով Տէրջմէ պիտի փրկուի:

Գուք յաւիտեանս յաւիտենից պիտի
չամչնաք ու չպատկառիք:

18 - Քանզի այսպէս կ'ըսէ երկինքը
ստեղծող Տէրը,

Այն Աստուածը որ երկիրը կազմեց,
Զանկա շինեց և հաստատեց,

Զանկա պարսպ տեղ չստեղծեց,
Հող բնակութեան համար կազմեց:

Տէրը ես եմ, ու ինչպէս ուրիշը չկայ:

19 - Ես ծածկաբար երկրի մութ տեղը
չխօսեցայ:

Յակարի սերունդին չըսի թէ
Զուր տեղ զիս փնտռեցէք:

Ես Տէրս արգարութիւն կը խօսիմ
Եւ ճշմարիտ բաներ կը յայտնեմ:

20 - Ժողովուեցէք ու եկէք,
Մէկտեղ մօտեցէք դուք, ով ազգերէն
ազատուածներ:

Անոնք գիտութիւն չունին, որ իրենց
կուռքին փայտը կը կանգնեն,

Ու փրկելու կարողութիւն չունեցող
աստուծոյ աղօթք կ'ընեն:

21 - Քարոզեցէք ու զանազան մօտեցու-
ցէք,

Եւ անոնք մէկտեղ խորհուրդ ընեն:
Ասիկա ի սկզբանէ ո՞վ գիտցուց,

Այն ժամանակէն ի վեր ո՞վ պատմեց:
Զէ՞ որ ես Տէրս, և ինձմէ զառ ուրիշ
Աստուած չկայ,

Եւ ինձմէ ուրիշ ճշմարիտ Աստուած
ու Փրկիչ չկայ:

22 - Ով երկրի բոլոր ծայրերը, ինձի
նայեցէք որպէս զի փրկուիք:

Քանզի ես եմ Աստուած, և ինչպէս ու-
րիշ չկայ:

23 - Իմ անձիս վրայ երգում ըրի,

Իմ բերնէս արգարութեան խօսք ելաւ
ու ետ չգառնար,

Որ ամէն ծունկ ինձի պիտի կրկնուի,
Եւ ամէն լեզու երգում պիտի ընէ:

24 - Մէկը պիտի ըսէ,
Միայն Տէրջմով արգարութիւն ու զօ-
րութիւն ունիմ:

Այնպէս անոր պիտի գայ:
Եւ բոլոր անոր գէմ բարկացողները
պիտի ամչնան:

25 - Իսրայէլի բոլոր սերունդը
Տէրջմով պիտի արգարանայ ու պիտի
պարծենայ:

ԳԼ. ԽԶ

Բէլ խոնարհեցաւ, Նարայ ծուե-
ցաւ, Գեր

Անոնց կուռքերը կենդանիներու ու
անասուններու վրայ էին:

Զեր բեռցուած բեռները
Յոգնած անասունին ծանրութիւն եղան:

2 - Անոնք ծուեցան ու մէկտեղ խոնար-
հեցան,

Բեռը ազատելու կարող չեղան,
Եւ իրենք ալ գերութեան գացին:

3 - Ինձի մտիկ ըրէք, ով Յակարի
տունը,

Ու Իսրայէլի տանը բոլոր մնացորդը,
Որ ձեզ որովայնէ կը կրեմ և արգանդէ
կը վերցնեմ:

4 - Մինչև չե՞ր ծերութիւնը անգամ ես
նայն եմ,

Ու մինչև չե՞ր ալևորութիւնը ես չե՞ր
պիտի կրեմ:

Ես ստեղծեցի ու ես պիտի վերցնեմ,
Ես պիտի կրեմ ու պիտի ազատեմ:

5 - Զիս որ ո՞վ կը նմանցնէք և որ ո՞վ
հաւատարմ կը սեպէք,

Ինձի ինչպէս անգութիւն կը շինէք, որ
նման ըլլանք:

6 - Քուսկէն ուրիշ կը թափեն ու կշիռ-
քով արծաթ կը կշռեն,

Վարձքով սկերիչ կը բռնեն, որ ա-
նով աստուած կը շինէ:

Զանկա կը պաշտեցէք երկրպա-
գութիւն կ'ընեն:

7 - Զանկա ուսերու վրայ կը վերցնեն
կը տանին,

Իր տեղը կը հապտատեն ու կը կայնի,
Անիկա իր պեղէն չըրթիր:

Եւ եթէ մէկը անոր աղաղակէ, պա-
տարիս չստար ինչ, և չմտաւ:

Զանկա իր նեղութեան չազատեր:

- 8 - Ասիկա յիշեցէք ու մարդ եղէք, Միտքերնիդ բերէք, ով յանցաւորներ:
- 9 - Ի յաւիտենից եղած առաջուան բաները յիշեցէք. Բանդի ես եմ՝ Աստուած, և ինչո՞ւ ուրիշ չկայ. Ես է՞մ Աստուած, և ինձի պէս մէկը չկայ.
- 10 - Որ վերջինը սկիզբէն Ուրիշ չեղածը առաջուրէն պատմեցի. Ու կ'ըսեմ՝ թէ իմ խորհուրդս պիտի հաստատուի, Եւ իմ ամէն կամքս պիտի կատարեմ:
- 11 - Ես է՞մ որ արեւելքէն գիշատիչ թռչունը կը կանչեմ, Ու հեռու երկրէ՛ իմ խորհուրդս ի գործ գնելու մարդը.
- Ես ի՞նչեցայ ու ես պիտի կատարեմ, Ես ի՞նչեցայ ու ես ի գործ պիտի գնեմ:
- 12 - Ով արդարութենէ հեռացած խառատիրաներ, Ինձի մտիկ ըրէք.
- 13 - Իմ արդարութիւնս մտեցուցի, Անիկա պիտի չհեռանայ, Եւ իմ փրկութիւնս պիտի չուշանայ. Ու իմ փառքս եղող Եսրայէլի համար Արօնի մէջ փրկութիւն պիտի գնեմ:

ԳԼ. ԽԷ

Ով Բարեւունի կոյս աղջիկ, Իջիր ու հոգի վրայ նստէ. Ով Քաղզէացոց աղջիկ, Գեանի վրայ առանց ակնարկի նստէ, Բանդի մէջմըն ալ քնքուշ ու փափուկ պիտի չկոչուիս:

2-Աղօրիքին քարերը առ յայր քաղա. Լաշակդ հանէ, քղանցքդ վերցուր. Սրունքդ բաց, դեռեմքն անցիր:

3 - Թող քու մերկութիւնդ բացուի Եւ նախատինքդ ալ երևնայ. Բեռքէ վրէժ պիտի անենք:

Ու մարդու մը միջնորդութիւնը պիտի չընդունիմ:

4 - (Մեր Փրկչին անունը՝ Հոսովա Արարաւոր է. Անիկա Եսրայէլի Սուրբն է.)

5 - Լուսն նստէ, թաւարի մէջ մտիր, ով Քաղզէացոց աղջիկ. Բանդի մէջմըն ալ թագաւորութիւններու տիկին պիտի չկոչուիս:

*Այսինքն, Տէր զորութեանց

- 6 - Ես իմ ժողովուրդիս բարկացայ, Լի՛ իմ ժառանգութիւնս պղծեցի, Ու զանոնք քու ձեռքդ աուրի. Դուն անոնց գթութիւն չցուցուցիր, Ծերին վրայ քու լուծդ խիստ ծանրացուցիր.
- 7 - Եւ ըսիր, Ես յաւիտեան տիկին պիտի մնամ. Այնպէս որ տասիկա մտքիդ մէջ չդրեր, Ասոր վախճանը չյիշեցիր:
- 8 - Ու Հիմա մտիկ ըրէ, Ով անհոգութեամբ նստող հեշտասէր, Որ սրտիդ մէջ կ'ըսես, Ես եմ ու ինձմէ ուրիշ չկայ. Որբեասրի պիտի չնստիմ, Ու անզաւակութիւն պիտի չգիտնամ:
- 9 - Հիմա առանց երկուքն ալ, Թէ՛ անզաւակութիւնը և թէ՛ որբեասրութիւնը Զանկարծ մէկ օրուան մէջ քու վրագ պիտի գան. Քու դիւթութիւններուդ շատութեանը մէջ Եւ քու անթիւ կախարդութիւններուդ մէջ Անոնք ամբողջ քու վրագ պիտի գան:
- 10 - Ու դուն քու շարութեանդ ապաւինեցար, Ու ըսիր, Զիս տեսնող չկայ: Քեզ գլխէ հանողը քու իմաստութիւնդ ու գիտութիւնդ են. Եւ սրտիդ մէջ ըսիր, Ես եմ ու ինձմէ ուրիշ չկայ:
- 11 - Անոր համար քու վրագ ձախարդութիւն մը պիտի գայ, Որուն ուրկէ ծագելը պիտի չգիտնաս. Եւ քու վրագ թշուառութիւն մը պիտի իյնայ, Զոր ետ դարձնելու կարող պիտի չըլլաս. Ու քու վրագ յանկարծ աւերում մը պիտի գայ, Զոր դուն պիտի չգիտնաս:
- 12-Հիմա քու կախարդութիւններուդ և շատ դիւթութիւններուդ մէջ կեցիր, Որոնցմով քու մանկութենէդ ի վեր աշխատեցի ես, Թերևս օգուտ մը գտնելու կարող ըլլայիր, Եւ քու կախարդութիւնդ թերևս կարեւոր լինի:
- 13 - Խորհուրդներուդ շատութենէն ձանձրացար.

Հիմա երկինքը զննողները, աստեղագետները,

Նոր ամիսներով գուշակութիւն ընողները թող ելլեն,

Եւ քու վրագ գալու շարիւղէն քեզ ազատեն :

14-Ահա անոնք մղեղի պէս պիտի ըլլան, Ու զանոնք կրակը պիտի այրէ.

Իրենց հոգին բոցին զօրութենէն պիտի չկրնան ազատել .

Տաքնալու համար կայծ մը, կամ դիմացը նստելու համար կրակ մը պիտի չմնայ :

15 - Այսպէս պիտի ըլլան քեզի անոնք՝ որոնց հեռ աշխատեցար,

Ու մանկութենէդ ի վեր առուտուր ըրիր .

Ամէն մէկը իր ճամբան երթալով ցիրուցան պիտի ըլլան,

Ու քեզ ազատող մը պիտի չըլլայ :

ԳԼ ԽԸ

Լսեցէք ստիկա, ով Յակոբի տունը, Որ Իսրայէլի անունովը կանչուած էք,

Ու Յուդայի *աղբիւրէն ելեր էք,

Եւ Տէրոջը անունովը երգում կ'ընէք,

Ու Իսրայէլի Աստուածը կը յիշէք, Բայց ճշմարտութեամբ չէ, ու արդարութեամբ չէ :

2 - (Քանզի անոնք Սուրբ քաղաքին անունովը կը յիշուին,

Եւ Իսրայէլի Աստուծոյն կը կռթնին, Որուն անունը Եհովա Սաբաուովթ է :)

3 - Առաջուան բաները հին ժամանակէն ի վեր պատմեցի,

Ու անոնք իմ բերնէս ելան, և զանոնք իմացուցի .

Չանստ յանկարծ ըրի ու եղան :

4-Որովհետեւ գիտէի որ դուն խիստ ես, Եւ քու պարանոցդ երկաթէ ջիղեր ունի,

Ու պղնձէ ճակատ մը ունիս :

5 - Աւստի քեզի հին ժամանակէն ի վեր պատմեցի,

Ու դեռ չեղած քեզի իմացուցի, Որ չըլլայ թէ ըսես, Չանոնք իմ արձանս ըրաւ,

Եւ իմ քանդակած ու ձուլածոյ կուռքս հրամայեց :

6 - Իսկն զանստ լսեցիր, նայէ, անոնց ամէնը կարգու-եցաւ .

Ու դուք զանի պիտի չհրատարակէք. Ես քեզի ասկէ ետքը նոր ու ծածուկ բաներ պիտի գիտցնեմ,

Չորոնք դուն չգիտցար :

7 - Անոնք հիմա տեղծուեցան և ոչ թէ առաջուրնէ .

Ու այս օրէն առաջ զանոնք չլսեցիր, Որ չըլլայ թէ ըսես, Ահա զանոնք գիտցայ :

8 - Իսկն ոչ լսեցիր, ոչ ալ գիտցար, Եւ սկիզբէն քու ականջդ չբացուեցաւ .

Վասն զի գիտցայ որ դուն խիստ նենգաւոր ես,

Ու դուն որովայնէ ապստամբ կոչուեցար :

9 - Ես իմ անուանս համար բարկութիւնս պիտի ուշացնեմ

Եւ իմ փառքս համար համբերող պիտի ըլլամ քեզի,

Որպէս զի քեզ չկորսնցնեմ :

10 - Ահա քեզ մաքրեցի, բայց ոչ թէ *արծաթի պէս .

Եւ քեզ նեղութեան հալոցին մէջ փորձեցի :

11 - Անիկ ինծի համար, ինծի համար պիտի ընեմ .

Քանզի իմ անունս ինչո՞ւ պղծուի .

Ու ես իմ փառքս ուրիշի չեմ տար :

12 - Ով Յակոբ ու իմ կանչած Իսրայէլս, ինծի մտիկ ըրէ .

Ես նոյն եմ, առաջինը ես եմ, վերջինն ալ ես եմ :

13 - Նսե երկիրը իմ ձեռքս հիմնեց, Ու երկինքը իմ աջ ձեռքս տարածեց .

Երբ ես զանոնք կանչեմ, Անոնք մէկտեղ իմ առջև կը կայնին :

14-Ամէնդ ժողովուրդեք ու մտիկ ըրէք . Անոնցմէ ո՞վ պատմեց այս բաները .

Տէրոջը սիրածը Բաբելոնի մէջ անոր կամքը ի գործ պիտի դնէ .

Եւ իր բազուկը Քաղդէացուց վրայ պէտէ երկնցնէ :

15 - Ես, ես խօսեցայ ու զանիկա կանչեցի,

Չանիկա բերի, և անոր ճամբան յաջող պիտի ըլլայ :

16 - Ինծի մօտեցէք, ստիկա լսեցէք . Առաջուրնէ ծածուկ խօսեցայ,

Այս բաներուն եղած ժամանակէն ի վեր ես հոն եմ,

Ու հիմա զիս Տէր Եհովա ու անոր Հոգին զրկեց :

*Եբր. ջուրերէն

*Կամ, արծաթով

- 17 - Այսպէս կ'ըսէ Տէրը ,
Քու Փրկիչդ, Խորայէլի Սուրբը .
Ես եմ քու Տէր Աստուածդ ,
Որ քեզի օգտակար եղածը կը սորվեցրնեմ ,
Ու քաշելու ճամբուդ մէջ քեզ կ'առաջնորդեմ :
- 18 - Երանի՛ թէ իմ պատուիրանքս մտիկ ընէիր .
Այն ատեն քու խաղաղութիւնդ գետի պէս ,
Ու արգարութիւնդ ծովուն պիքներուն պէս պիտի ըլլար .
- 19 - Եւ քու սերունդդ աւագի չափ ,
Ու որովայնիդ ծնունդը անոր խիճին չափ պիտի ըլլար ,
Անոր անունը իմ առջևէս պիտի չկրտուէր ու չկորսուէր :
- 20 - Բարեկունէ ելէք , Քաղդէացիներէն փախէք .
Ասիկա յաղթութեան երգով պատմեցէք - Տրատարակեցէք .
Ասիկա մինչև երկրի ծայրը տարածեցէք ,
Ըսելով , Տէրը իր Յակոբ ծառան փրկեց :
21 - Ու երբ զանոնք անապատներու մէջ պարացուց , չծարուեցան .
Անոնց համար վէմէն ջուրեր վազցուց ,
Վէմը պատուեց ու անկէ ջուրեր բղխեցան :
- 22 - Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան , կ'ըսէ Տէրը :

ԳԼ ԽԹ

Ով կղզիներ, ինծի մտիկ ըրէք,
Ու, ով ժողովուրդներ, հեռուէն ահանջ տուէք .
Տէրը զիս արգանդէն կանչեց,
Իմ անունս մօրս որովայնէն յիշեց .
2 - Եւ իմ բերանս սրած թուրի պէս ըրաւ .
Զիս իր ձեռքին հովանիին տակ ծածկեց,
Եւ զիս փայլուն նեաի պէս ըրաւ .
Իր կապարճին մէջ պահեց զիս .
3 - Եւ ինծի ըսաւ, Դուն իմ ծառասես ,
Ով Խորայէլ, որով պիտի փառաւորուիմ :
4 - Ու ես ըսի, Պարապ տեղ աշխատեցայ ,
Եւ իմ զօրութիւնս ոչինչ ու դատարկ տեղ գործածեցի .

*կա՛մ, որովայնին շնորհին

Բայց իմ իրաւունքս Տէրոջը առջև է,
Եւ իմ գործս իմ Աստուծոյս քով է :
5 - Ու հիմա այսպէս կ'ըսէ Տէրը ,
Որ զիս որովայնէ իրեն ծառայ ըլլալու համար ստեղծեց ,
Որ Յակոբը անոր դարձնեմ ,
Եւ Խորայէլ անոր ժողովուրի ,
Որ Տէրոջը առջև փառաւորուիմ ,
Եւ իմ Աստուածս ինծի զօրութիւն ըլլայ .

6 - Այսպէս կ'ըսէ . Յակոբի ցեղերը նորէն հաստատելու համար ,
Եւ Խորայէլի ազատաւածները դարձնելու համար ,
Իմ ծառաս ըլլալդ քեզի քիչ է .
Ահա քեզ ազգերուն լոյս պիտի դնեմ ,
Որպէս զի մինչև երկրի ծայրը իմ փրկութիւնս ըլլաս :

7 - Այսպէս կ'ըսէ Տէրը , Խորայէլի Փրկիչը , անոր Սուրբը ,
Անարգուած անձին , ազգաց ատելի եղողին , իշխաններու ծառային .
Թագաւորները պիտի տեսնեն ու ոտք պիտի ելլեն .
Իշխաններն ալ երկրպագութիւն պիտի ընեն
Տէրոջը համար , որ հաւատարիմ է ,
Խորայէլի Սուրբին համար , որ քեզ ընտրեց է :

8 - Տէրը այսպէս կ'ըսէ .
Ընդունելի ժամանակի մը մէջ քեզի լսեցի ,
Եւ փրկութեան օրը քեզի օգնութիւն ըրի ,
Ու քեզ պահեցի և ժողովուրդին սխալ ըլլալու տուի ,
Որպէս զի երկիրը հաստատես ,
Ու աւրուած ժառանգութիւնները ժառանգեցնես .

9 - Եւ կապուածներուն ըսես , Ելէք ,
Ու խաւարի մէջ եղողներուն՝ Յայտնուեցէք :
Անոնք ճամբաներու վրայ պիտի արածին ,
Եւ անոնց արօտը ամէն բլուրներու վրայ պիտի ըլլայ :

10 - Անոնք պիտի չանօթ ենան ու չծարաւին ,
Եւ զանոնք խորշակը կամ արևը պիտի չզարնէ .
Քանզի անոնց սղորմութիւն ընողը պիտի առաջնորդէ անոնց ,
Ու ջուրի աղբերակներուն քով պիտի տանի զանոնք :

11 - Եւ ամէն լեռներս ճամբաներ պիտի ընեմ:

Ու իմ պողոտաներս պիտի բարձրանան:

12 - Ահա ամանք հեռուէն, Եւ ահա ամանք հիւսիսէն ու արեւմուտքէն,

Եւ ամանք Սինէացուց երկրէն պիտի գան:

13 - Ով երկինք, ուրախ եղէք, ու, ով երկիր, ցնծութիւն ըրէ,

Եւ, ով լեռներ, ուրախութեան ձայնով աղաղակեցէք:

Քանզի Տէրը իր ժողովուրդին միխթարութիւն տուաւ,

Ու իր անանկներուն ողորմեցաւ:

14 - Բայց Սիօն ըսաւ, Եհովա զիս թողուց,

Ու Տէրը զիս մուցաւ:

15 - Միթէ կինը իր կաթնկեր մանուկը կրնա՞յ մոռնալ,

Այնպէս որ իր սրովայնին ծննդեանը վրայ չգլթայ:

Թէեւ անոնք մոռնան, Բայց ես քեզ պիտի չմոռնամ:

16 - Ահա ես քեզ իմ ձեռքերուս մէջ նկարագրեցի,

Քու պարիսպներդ միշտ իմ առջևս են:

17 - Քու աղաքներդ պիտի արտարան, Ու քեզ փլցնողները և աւրողները քեզմէ պիտի ելլեն:

18 - Աչքերդ վերցուր ու բոլորաբեր նայէ:

Ամէնը կը ժողովուին «- քեզի կու գան. Տէրը կ'ըսէ որ Ես կենդանի եմ»,

Անշուշտ անոնց ամէնը զարդերու պէս պիտի հագնին,

Եւ անոնցմով հարսի պէս պիտի զարդարուիս:

19 - Քանզի քու աւերակներդ, ամայի տեղերդ,

Ու քու կործանմանդ երկիրը Հիմա էր բնակիչներուն նեղ պիտի գայ,

Եւ քեզ կլլողները պիտի հեռանան:

20 - Քու անզաւակութենէդ ետեւ ծնանելու որդիներդ

Քու ականջներուդ պիտի ըսեն, Այս տեղը ինձի նեղ է,

Տեղ տուր ինձի որ բնակիմ:

21 - Ու դուն քու սրտիդ մէջ պիտի ըսես,

Ասանք ինձի ո՞վ ծնաւ. Ես անզաւակ ու ամուլ էի, Ես գերի ու աքսորուած էի, Ասանք ո՞վ մեծցուց.

Ահա ես մինակ մնացեր էի, Ասանք ո՞ւր էին:

22 - Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա, Ահա իմ ձեռքս աղգերու վրայ պիտի վերցնեմ,

Ու իմ դրօշակս ժողովուրդներու մէջ պիտի կանգնեմ:

Եւ անոնք քու աղաքներդ էրէնց ծոցին մէջ պիտի բերեն,

Ու քու աղջիկներդ անոնց ուսերուն վրայ պիտի վերցուին:

23 - Եւ թագաւորները քու սնուցիչներդ պիտի ըլլան,

Ու անոնց թագուհիները քու գոյեակներդ:

Երեսնին գեաինը թե՛ քեզի երկրպագութիւն պիտի ընեն,

Ու սաքերուդ փոշին պիտի լլկեն, Եւ պիտի գիտնաս որ ես եմ Տէրը:

Վասն զի ինձի ապաւինողները պիտի չամշնան:

24 - Միթէ հզօրէն աւարը կ'առնուի՞, Կամ *ահարկու մարդուն գերի առածը կ'ապասի՞:

25 - Բայց Տէրը այսպէս կ'ըսէ. Հզօրին գերի առածը անգամ պիտի առնուի,

Ու բռնաւոր մարդուն աւարը պիտի ազատուի:

Ու քեզի հեռ վիճողներուն դէմ ես պիտի վիճիմ,

Եւ քու աղաքներդ ես պիտի ազատեմ:

26 - Ու քեզ հարստահարողներուն իրենց մարմինները պիտի կերցնեմ,

Եւ իրենց արիւնը նոր գինիի պէս խմելով պիտի գինոփան.

Եւ ամէն մարմին պիտի գիտնայ թէ ես եմ Տէրը, որ քեզ ազատեցի,

Ու քու Փրկիչդ, Յակոբի Հզօրը:

ԳԼ. Ծ

Տէրը այսպէս կ'ըսէ. Ո՞ւր է ձեր մօրը ապահարզանի թուղթը,

Որով ես զանիկա արձակեցի. Կամ ո՞վ է այն պարտատէրս,

Որու ես ձեզ ծախեցի. Ահա դուք ձեր անօրէնութիւններուն համար ծախուեցաք,

Ու ձեր մայրը ձեր յանցանքներուն համար արձակուեցաւ:

*Կամ, իրաւունք ունեցող

2 - Ինչո՞ւ համար իմ եկած ատենս մարդ մը չկար ,
 Ո- կանչած ատենս պատասխան տուող մը չկար .
 Միթէ իմ ձեռքս բնուե կարճըցած՝ որ փրկելու կարող չըլլամ ,
 Կամ թէ ազատելու զօրութիւն չունի՞մ .
 Ահա իմ սաստելովս ծովը կը ցամփեցընեմ ,
 Գետերը անապատի կը դարձնեմ .
 Անոնց ձուկերը ջուր չըլլալուն համար կը հոտին
 Ու ծարուէն կը մեռնին :
 3 - Երկինքներուն խաւար կը հագցնեմ ,
 Ու ծածկոցի համար անոնց վրայ քուրձ կը դնեմ :
 4 - Տէր Եհովա ինծի իմաստուններու լեզու տուաւ ,
 Արպէս զի յոգնածին խօսքով օգնել գիտնամ ,
 Ամէն առաւ զի՞ կ'արթնցնէ ,
 Անիկա իմ ահանջս կ'արթնցնէ ,
 Արպէս զի աշակերտներու պէս լսեմ :
 5 - Տէր Եհովա իմ ահանջս բացաւ ,
 Ու ես անհնազանդ չեղայ , ետ չդարձայ :
 6 - Իմ կռնակս՝ զարնողներուն ,
 Եւ այտերս՝ փետողներուն տուի .
 Իմ երեսս նախատինքէն ու թուքէն չծածկեցի :
 7 - Բայց Տէր Եհովա ինծի կ'օգնէ ,
 Անոր համար ամօթապարտ պիտի չըլլամ .
 Անոր համար իմ երեսս գայլախաղի պէս բրի ,
 Ու գիտեմ որ պիտի չամչնամ :
 8 - Զիս արդարացնողը մօտ է .
 Ո՞վ ինծի հետ պիտի վիճի . մէկտեղ դասուակարգի կայնինք .
 Իմ դատասխանս ո՞վ է . թող ինծի մօտենայ :
 9 - Ահա Տէր Եհովա ինծի պիտի օգնէ .
 Ո՞վ է անիկա որ զիս յանցաւոր պիտի հանէ .
 Ահա ամէնը հանդերձի պէս պիտի մուշին ,
 Յեցր պիտի ուտէ զանոնք :
 10 - Զեր մէջ Տէրոջմէ վախցող ,
 Անոր ծառային ձայնը մտիկ ընող ո՞վ կայ ,
 Ար մութի մէջ կը քայլէ ու բնու լոյս չունի .
 Թող անիկա Տէրոջը անուանը ապաւինի .

Ու իր Աստուծոյն կռթնի :
 11 - Ահա դուք ամէնդ , որ կրակ կը վառէք
 Ու կայծերով կը շքապատիք ,
 Զեր կրակին լուսովը
 Ու ձեր վառած կայծերուն մէջ քալեցէք .
 Ասիկա ձեզի իմ ձեռքէս պիտի ըլլայ ,
 Դուք տրամուլթեամբ պիտի պառկիք :

ԳԼ. ԾԱ

Ով դուք , արդարութեան հետևողներ
 Ո- Տէրը փնառողներ , ինծի մտիկ ըրէք .
 Դուք այն վէմին նայեցէք , ուրկէ կարուեցաք ,
 Եւ այն գուրին փոսին՝ ուրկէ փորուեցաք :
 2 - Զեր հօրը Աբրահամի
 Ու ձեզ ծնանող Սաուայի նայեցէք .
 Քանզի զանիկա կանչեցի , ոչ մէկ մարդ էր ,
 Եւ զանիկա օրհնեցի ու բազմացուցի :
 3 - Վասն զի Տէրը Սիօնը պիտի մխիթարէ ,
 Անոր բոլոր աւերակները պիտի մխիթարէ .
 Եւ անոր անապատը Եդեմի պէս ,
 Ու անոր ամոյութիւնը Տէրոջը դրախտին պէս պիտի ընէ .
 Անոր մէջ ցնծութիւն և ուրախութիւն ,
 Գովութեան և օրհնութեան ձայն պիտի գանուի :
 4 - Ով իմ ժողովուրդս , ինծի մտիկ ըրէ ,
 Ով իմ ազգս , ինծի ահանջ տուր .
 Քանզի ինծմէ օրէնք պիտի ելլէ ,
 Եւ իմ իրաւունքս ժողովուրդներուն լոյս ըլլալու համար պիտի հաստատեմ :
 5 - Իմ արդարութիւնս մօտ է , իմ փրկութիւնս ելած է ,
 Ու իմ բազուկներս ժողովուրդները պիտի դատեն .
 Կղզիները ինծի պիտի յուսան
 Եւ իմ բազուկիս պիտի ապաւինին :
 6 - Աչքերնիդ վեր վերցուցէք դէպ ի երկիր .
 Ու վար նայեցէք դէպ ի երկիր .
 Քանզի երկինք ծուխի պէս պիտի անցնի ,

Ու երկիր հանդերձի պէս պիտի մտնի,
*Նմանապէս անոր բնակիչներն ալ պի-
տի մեռնին .

Բայց եմ՝ փրկութիւնս յաւիտեանական
պիտի ըլլայ,

Ու իմ արդարութիւնս պիտի չպակսի:
7 - Ինծի մտիկ ըրէք, ով արդարու-
թիւն ճանչցողներ,

Եւ իմ օրէնքս ձեր սրտին մէջ պահու
ժողովուրդ .

Մարդոց նախատինքէն մի վախնաք,
Ու անոնց բամբասանքէն մի զարհուրիք:

8 - Վասն զի ցեցը պիտի ուտէ զանոնք
հանդերձի պէս,

Եւ մէցը պիտի ուտէ զանոնք բուրդի
պէս .

Բայց իմ՝ արդարութիւնս յաւիտեան,
Ու իմ՝ փրկութիւնս ամէն դարերու

մէջ պիտի ըլլայ:
9 - Արթնցիր, արթնցիր, ով Տէրոջը
բազուկը, զօրութիւն հագիր .

Արթնցիր առաջուան օրերուն պէս,
Նստանցմէ անցած դարերուն պէս .

Դուն անիկա չե՞մ՝ որ Ռահաբը ջար-
դեցիր

Ու վիշապը վիրաւորեցիր:
10 - Դուն անիկա չե՞մ՝ որ ծովը,
Մեծ անդունդին ջուրերը, ցամփեցու-
ցիր,

Եւ ծովուն խորունկ տեղերը ճամբայ
ըրիր,

Որպէս զի փրկուածները անկէ անցնին:
11 - Ու Տէրոջը փրկածները պիտի
դառնան,

Ու երգերով Սիօն պիտի գան,
Եւ անոնց գլխուն վրայ յաւիտեանական
ուրախութիւն պիտի ըլլայ .

Անոնք ցնծութիւն և ուրախութիւն
պիտի ստանան,

Տրամութիւնը ու հեծութիւնը անանցիկ
պիտի հեռանայ:

12 - Ես եմ, ես եմ որ ձեզ կը մխի-
թարեմ .

Դուն ո՞վ ես, որ մահկանացու մարդէն
Ու խոտի նմանելու մարդու զուակէն
կը վախնաս .

13 - Եւ քեզ ստեղծող, երկինքները
տարածող

Ու երկրի հիմերը դնող Տէրը կը մոռ-
նաս .

Ու բռնաւորին սրամտութենէն միշտ
ամէն օր կը վախնաս,

Ու քեզ ստեղծող, երկինքները
տարածող

Ու երկրի հիմերը դնող Տէրը կը մոռ-
նաս .

Ու բռնաւորին սրամտութենէն միշտ
ամէն օր կը վախնաս,

Ու քեզ ստեղծող, երկինքները
տարածող

Ու երկրի հիմերը դնող Տէրը կը մոռ-
նաս .

Իբր թէ թե՛ կորսնցնելու պատրաս-
տուած է .

Բայց հիմա ո՞ր է բռնաւորին սրամտու-
թիւնը:

14 - Կապուածը շուտով պիտի ար-
ձակուի,

Ու գուբին մէջ պիտի չմեռնի,
Եւ իր հացը պիտի չպակսի

15 - Քանզի քու Տէր Աստուածդ ես եմ,
Որ ծովը կը յանդիմանեմ՝ երբ անոր
պղքները կը գուռան .

Իմ անունս Եհովա Սաբաուովթ է:

16 - Ու իմ խօսքերս քու բերանդ դրի,
Եւ քեզ ձեռքիս հովանիովը ծածկեցի,
Որպէս զի երկինքը հաստատեմ՝ ու
երկրի հիմերը դնեմ,

Եւ Սիօնի ըսեմ, Դուն իմ ժողովուրդս
ես:

17 - Արթնցիր, արթնցիր - ելիր,
ով Երուսաղէմ,

Որ Տէրոջը ձեռքէն անոր բարկու-
թեանը բաժակը խմեցիր .

Թմրութեան բաժակին մրուրը քամե-
լով խմեցիր:

18 - Անոր բոլոր ծնած որդիներէն՝ իրեն
առաջնորդող չկայ,

Ու բոլոր մեծ ցուցած աղաքներէն՝ իրեն
ձեռնառու չկայ:

19 - Այս երկու բաները քեզի պատա-
հեցան .

Ո՞վ քեզի պիտի ցաւի .

Կործանում ու կոտորած, սով ու սուր .
Քեզ ինչո՞վ մխիթարեմ:

20 - Քու աղաքդ մարած՝
Ամէն փողոցներուն գլուխը կը պառկին,
Որոգայթի մէջ բռնուած յամոյրի պէս .

Անոնք Տէրոջը բարկութիւնովը,
Քու Աստուծոյդ յանդիմանութիւ-
նովը, լեցուած են:

21 - Ուրեմն տակա մտիկ ըրէ, ով
ողորմելի,

Որ արբած ես, բայց ոչ գինիէ:

22 - Այսպէս կ'ըսէ քու Եհովա Տէրդ,
Եւ քու Աստուածդ, «Ե իր ժողովուր-
դին դատը կը պաշտպանէ .

Ահա քու ձեռքէդ թմրութեան բա-
ժակը,

Իմ բարկութեանս բաժակին մրուրը,
աւի .

Զանիկա մէյմըն ալ պիտի չխմես .

23 - Եւ զանիկա քեզ հարստահարող-
ներուն ձեռքը պիտի դնեմ,

Որոնք քու անձիդ կ'ըսէին . Ծռէ որ-
պէս զի անցնինք .»

*Կա՛մ, Մ ժեղի պէս

Ու դուն կռնակդ, անցնողներուն համար,
Գեանի պէս ու փողոցի պէս գրիր:

ԳԼ. ԾԲ

Արթնցիր, արթնցիր, քու զօրութիւնդ հագիր, ով Սիօն.

Քու փառաւոր հանդերձներդ հագիր, ով Երուսաղէմ՝ սուրբ քաղաք. Քանզի մէյմըն ալ անթլփատ ու պիղծ մէկը քու մէջդ պիտի չմանէ:

2 - Փոշին քեզմէ թօթվէ, Ել նստէ, ով Երուսաղէմ.

Քու պարանոցիդ կապերը քակէ, Ով Սիօնի դերի աղջիկը:

3 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ. Զրի ծախուեցաք,

Եւ առանց սասկի պիտի փրկուիք:

4 - Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իմ ժողովուրդս առաջ Եգիպտոսիջաւ,

Որպէս զի հոն պանդխտութիւն ընէ. Ու Ատրեստանցիք առանց պատճառի անոր բռնութիւն ըրին:

5 - Եւ հիմա հոս ի՞նչ ունիմ, կ'ըսէ Տէրը,

Ար իմ ժողովուրդս պարսպ տեղ քշուեցաւ.

Անոր վրայ իշխողները զանիւ կը պռուացնեն, կ'ըսէ Տէրը,

Ու միշտ ամէն օր իմ անունս կը հայհոյուի:

6 - Ասոր համար իմ ժողովուրդս պիտի գիանայ իմ անունս.

Ասոր համար այն օրուան մէջ պիտի գիտնայ,

Թէ ես անեմ՝ որ կը խօսէի. ահա ես եմ:

7 - Ի՞նչ գեղեցիկ են լեռներուն վրայ անոր սաքերը՝

Որ աւետիս կը բերէ, խաղաղութիւն կը քարոզէ,

Բարութեան աւետիս կը բերէ, փրկութիւն կը քարոզէ,

Ու Սիօնի կ'ըսէ, Քու Աստուածդ կը թագաւորէ:

8 - Քու պահապաններդ ձայն պիտի վերցնեն.

Յնծութեան ձայնով միաբերան պիտի երգեն.

Քանզի երբ Տէրը Սիօնը ետ դարձնէ, Անոնք՝ յայտնապէս պիտի տեսնեն:

*Կամ, դէմ յանդիման երբ. Եբր. աչք աչքի

9 - Ով Երուսաղէմի աւերակներ, Յնծութեան ձայնով մէկտեղ աղաղակեցէք.

Քանզի Տէրը իր ժողովուրդը մխիթարեց, Ու Երուսաղէմը փրկեց:

10-Տէրը իր սուրբ բազուկը մերկացուց Բալոր ազգաց աչքերուն առջև,

Ու երկրի ամէն ծայրերը Մեր Աստուծոյն փրկութիւնը պիտի տեսնեն:

11 - Քաշուեցէք, քաշուեցէք, անկէ ելէք,

Պիղծ բանի մի դպչիք, Անոր մէջէն ելէք.

Մաքուր եղէք, ով Տէրոջը սպասները վերցնողներ:

12 - Քանզի ոչ թէ արտորալով պիտի ելլէք,

Եւ ոչ թէ փախչելով պիտի երթաք. Հապա Տէրը ձեր առջևէն պիտի երթայ,

Ու Իսրայէլի Աստուածը ձեզի թիկնապահ պիտի ըլլայ:

13 - Ահա իմ ծառաս յաջողութիւն պիտի գտնէ,

Եւ պիտի մեծնայ ու պիտի բարձրանայ ու խիստ պիտի փառաւորի:

14 - Ինչպէս շատերը՝ անոր վրայ՝ ապշեցան,

(Անոր երեսին մարդու երէտն, Ու կերպարանքին մարդու որդիներէն աւելի աւրուած ըլլալուն համար,)

15 - Այնպէս շատ ազգեր պիտի խորհարարեն,

Թագաւորները անոր առջև իրենց բերանը պիտի գոցեն.

Վասն զի իրենց չպատմուածը պիտի տեսնեն,

Եւ իրենց չլսածը պիտի իմանան:

ԳԼ. ԾԳ

Ով հաւատաց մեր աստուծոյ լուրին, Ու Տէրոջը բազուկը որո՞ւ յայտնուեցաւ:

2 - Քանզի անիկա անոր առջև մտադատունկի պէս,

Եւ ծարաւուտ երկրէ ելլող արմատի պէս բուսաւ.

Անիկա կերպարանք կամ վայելչութիւն չունէր՝ որ անոր նայէինք,

*Եբր. քու վրայդ †Կամ, սրսկէ

Ոչ ալ այնպիսի երեւոյթ մը՝ որ անկէ տխորժէինք :

3 - Անիկա մարդոցմէ անարգուեցաւ ու երեսէ ձգուեցաւ,
 Վիշաբերու աէր ու ցաւերու տեղեակ եղաւ.
 Եւ անկէ երես դարձնելու մարդու պէս եղաւ,
 Անարգուեցաւ ու զանիկա չյարգեցինք :

4-Իրաւցընէ անիկա մերցաւերը վերցուց Ու մեր վիշաբերը իր վրայ առաւ.
 Եւ մենք զանիկա վիրաւորուած, Աստուծոմէ զարնուած
 Ու չարիքի հանդիպած սեպեցինք:

5 - Բոլոց անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ,
 Ե- մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ.
 Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ,
 Եւ անոր վերքերովը մենք բժշկուեցանք :

6-Ամէն ոչխարներու պէս մըլրեցանք.
 Ամէն մէկս իր ճամբուն դարձաւ,
 Եւ Տէրը մեր ամէնուն անօրէնութիւնը անոր վրայ դրաւ:

7 - Անիկա անիրաւութիւն կրոց ու չարչարուեցաւ,
 Բոլոց իր բերանը չբացաւ.
 Մորթուելու տարուող ոչխարի պէս,
 Ու իր խաւքոյներուն առջև մունճ կեցող մաքիի պէս,
 Այնպէս իր բերանը չբացաւ:

8 - *Նեղութեամբ և դատապարտութեամբ՝ վերցաւ.
 Ու անոր ազգատոհմը ո՞վ պիտի պատմէ.
 Քանզի անիկա կենդանիներուն երկրէն կարուեցաւ,
 Անիկա իմ ժողովուրդիս յանցանքին համար զարնուեցաւ:

9 - Եւ անոր գերեզմանը ամբարիշտներու հետ դրուեցաւ.
 Բոլոց երբ մեռաւ, հարուստին հետ եղաւ.
 †Քանզի անիկա անօրէնութիւն մը չգործեց,
 Ու անոր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ:

10 - Բոլոց Տէրը հաճեցաւ որ զանիկա ծեծելով ցաւերու մասանէ.

*Կա՛մ, Նեղութենէ և դատաստանէ
 †Կա՛մ, Թէ և

Անոր անձը մեղքի համար զոհ *ընէլէդ ետքը՝
 Անիկա սերունդ պիտի տեսնէ, էջ օրերը պիտի երկնցնէ,
 Ու Տէրոջը կամբը անոր ձեռքով պիտի յաջողի:

11-Իր անձին աշխատութեանը պարտաւորութեամբ պիտի կշտանայ.
 Իմ արդար ծառայ իր գիտութիւնովը շատերը պիտի արդարացնէ,
 Քանզի անոնց անօրէնութիւնները ինք պիտի կրէ :

12 - Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ անոր,
 Եւ հզօրներուն հետ աւարէն բաժին պիտի աւնէ.
 Քանզի իր անձը մասուան †մատնեց,
 Ու յանցաւորներուն հետ սեպուեցաւ.
 Եւ շատերուն մեղքը վերցուց,
 Ու յանցաւորներուն համար միջնորդութիւն ըրաւ:

ԳԼ. ԾԴ

Ով չճաննող ամուլ, ցնծա.
 Ով ծննդական ցաւ չբաշտող, ցնծութեամբ գոչէ և աղապակէ.
 Քանզի երեսէ ձգուածին տղաքները Այր ունեցողին տղաքներէն շատ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը:

2 - Վրանիդ տեղը լայնցուր,
 Ու քու բնակարանիդ վարագոյրները տարածուին.
 Մի ինայեր, չուաններդ երկնցուր ու ցիցերդ ամուրցուր:

3 - Քանզի աջ ու ձախ կողմը պիտի տարածուիս.
 Եւ քու սերունդդ ազգեր պիտի ժառանգէ,
 Ու աւերած քաղաքները բնակիչներով պիտի լեցնէ:

4 - Մի վախնար, վասն զի պիտի չամրչնաս.
 Ու մի պատկառի, վասն զի պիտի չնախատուիս.
 Քանզի քու մանկութեանդ ամօթը պիտի մտնաս,
 Եւ քու որբարութեանդ նախատինքը մէյմըն ալ պիտի չիչես:

5-Քանզի քու այրդ քու Ստեղծիչդ է, Անոր անունը Եհովա Սաբաուովթ է.
 Ու քու Փրկիչդ Իսրայէլի Սուրբն է,

*Կա՛մ, ըլլալէն †Ե՛բբ. թափեց

Անհկա բոլոր երկրի Աստուածը պիտի
կոչուի :

6 - Քանզի Տէրը քեզ , երեսէ ձգուած
և հոգւով վշտացած կնոջ պէս ,
Ու մերժուած նորահասակ հարսի պէս
կանչեց , կ'ըսէ քու Աստուածդ :

7 - Փոքր վայրկեան մը քեզ թողուցի ,
Բայց մեծ ողորմութիւններով քեզ
պիտի ժողվեմ :

8 - *Քիչ մը՝ սրամուտեամբ , մէկ
վայրկեան երեսս քեզմէ ծած-
կեցի ,
Բայց յաւիտենական ողորմութիւնով
քեզի պիտի ողորմիմ ,
Կ'ըսէ քու Փրկիչդ Եհովա :

9 - Քանզի տախտակ ինծի Նոյի ջուրե-
րուն պէ՞ է .
Ինչպէս երգում՝ ըրի , թէ Նոյի ջուրերը
մէյմըն ալ երկրի վրայ չանցնին ,
Այնպէս երգում՝ ըրի որ քեզի չբար-
կանամ ու քեզ չյանդիմանեմ :

10 - Քանզի լեռները պիտի վերնան ,
Եւ բլուրները պիտի սասանին ,
Բայց իմ ողորմութիւնս քեզմէ պիտի
չվերնայ ,
Ու իմ խաղաղութեանս ուխտը պիտի
չսասանի ,
Կ'ըսէ Տէրը , որ քեզի կ'ողորմի :

11 - Ով փութորիկէ զարնուած անմի-
թար ողորմելի ,
Ահա ես քու քարերդ †գոյնդգոյն պի-
տի դնեմ ,
Ու քեզ շափիւղաներով պիտի հիմ-
նեմ .

12 - Եւ քու մարակոցներդ՝ †կարմիր
յակինթներով ,
Ու դռներդ՝ կարկէհաններով ,
Ու բոլոր պարիսպներդ թանկագին
քարերով պիտի շինեմ :

13 - Եւ քու բոլոր սրգիններդ Տէրջմէ
սորված պիտի ըլլան ,
Ու քու սրգիններուդ խաղաղութիւնը
չսա պիտի ըլլայ :

14 - Դուն արգարութեամբ պիտի հաս-
տատուիս .
Բռնութեանէ հեռու պիտի ըլլաս , որ-
պէս զի չվախնաս ,
Ու արհաւիրքէն՝ որպէս զի քեզի չմո-
տենայ :

*Կ-ժ, Յանկարծական
†Կ-ժ, ծարուրով
‡Կ-ժ, յասպիս քարերով
||Եբ. սահմաններդ

15 - Ահա անշուշտ *ժողով պիտի ընեն ,
Բայ ինձմէ չէ .
Ով որ քու վրագ ժողվուի՝ , քու կողմդ
պիտի դառնայ :

16- Ահա կրակի մէջ ամուխները փչող
Եւ իր գործին համար գործիք շինող
գարբինը ես ստեղծեցի ,
Ու աւերելու համար՝ կործանողը ես
ստեղծեցի :

17 - Քեզի դէմ՝ շինուած գործիքը
ամենեւին պիտի չյաջողի ,
Եւ քու վրագ դատաստանի ելլող ամէն
լեզու պիտի դատապարտուի .
Տէրջը ծառաներուն ժառանգութիւնը
տախտակ է ,
Ու անոնց արգարութիւնը ինձմէ է ,
Կ'ըսէ Տէրը :

ԳԼ. ԾԵ

Ով բոլոր ծարուածներ , ջուրերուն
եկէք .
Եւ ստակ չունեցողներ , եկէք , ծախու-
աւէք ու կերէք .
Եկէք , առանց ստակի և առանց գնոյ
Վինի ու կաթ՝ ծախու աւէք :

2 - Ինչո՞ւ ձեր ստակը կը վաանէք՝ ոչ
թէ հացի համար ,
Եւ ձեր վատաակը՝ այնպիսի բանի հա-
մար որ չկշտացներ .
Ու շողորութեամբ ինծի մտիկ ըրէք ,
որպէս զի բարիքներ ուտէք ,
Ու ձեր հոգին պարարտութեամբ զուար-
ճանայ :

3 - Ձեր տկանջը խոնարհեցուցէք ու
ինծի եկէք .
Մտիկ ըրէք , ու ձեր հոգին պիտի
տալի .
Եւ ձեզի հետ յաւիտենական ուխտ մը
պիտի ընեմ ,
Դաւիթի մնայուն ողորմութիւնները
ձեզի բաւու :

4 - Ահա զանիկա ժողովուրդներուն
վկայ ,
Ազգերուն առաջնորդ ու հրամանատար
դրի :
5- Ահա չգիտցած ազգդ պիտի կանչես ,
Եւ քեզ չճանչցող ազգերը քեզի պիտի
դիմեն
Քու Տէր Աստուծոյդ համար

*Կ-ժ, ինձմէ չեղող պանդուխտներ
պիտի գան . ով որ քու քովդ պան-
դրխտութիւն կ'ընէ

Ու Իսրայէլի Սուրբին համար,
 Քանզի անիկա քեզ փառաւորեց:
 6 - Տէրը փնտռեցէք, քանի որ անիկա
 կը գտնուի .
 Չանիկա կանչեցէք, քանի որ անիկա
 մօտ է :
 7 - Թող ամբարիշտը իր ճամբայէն,
 Ու անորէն մարդը իր խորհուրդներէն
 հրաժարի,
 Եւ Տէրոջը դառնայ, ու անիկա պիտի
 ողորմի անոր,
 Ու մեր Աստուծոյն, վասն զի անիկա
 առատապէս կը ներէ :
 8 - Քանզի իմ խորհուրդներս ձեր խոր-
 հուրդները չեն,
 Ու ձեր ճամբաները իմ ճամբաներս
 չեն, կ'ըսէ Տէրը .
 9 - Հապա որչափ երկինք երկրէ բարձր է,
 Այնչափ իմ ճամբաներս ձեր ճամբա-
 ներէն բարձր են,
 Եւ իմ խորհուրդներս ձեր խորհուրդ-
 ներէն :
 10 - Վասն զի ինչպէս անձրևը ու
 ձիւնը երկինքէն կ'իջնէ և հոն
 չգառնար,
 Հապա երկիրը կ'ուռոգէ ու զանիկա
 պողաբեր և արգասաւոր կ'ընէ,
 Ու ցանոտին հունա և ուտողին հոյ
 կու տայ,
 11 - Իմ բերնէս ելած խօսքն ալ այն-
 պէս պիտի ըլլայ,
 Ինծի պարապ պիտի չգառնայ .
 Հապա իմ կամքս պիտի կատարէ,
 Ու յաջողութեամբ ի գործ դնէ այն
 Բանը՝ որու համար զանիկա
 զրկեցի :
 12 - Քանզի ուրախութեամբ պիտի ել-
 լէք,
 Ու խաղաղութեամբ պիտի առաջնոր-
 դուիք .
 Աեւները ու բլուրները ձեր առջևէն
 ցնծութեամբ պիտի աղաղա-
 կեն ,
 Եւ դաշտերուն բոլոր ծառերը ծափ
 պիտի զարնեն :
 13 - Թուփին տեղ մայր,
 Ու գժնիկին տեղ մրտենի պիտի
 բուսնի .
 Եւ ասիկա Տէրոջը անուանը քառ-
 համար
 Անջինջ ու յաւիտենական նշան մը
 պիտի ըլլայ :

ԳԼ. ԾԶ

Տէրը այսպէս կ'ըսէ .
 Իրաւունքը պահեցէք ու արգարու-
 թիւն ըրէք,
 Քանզի իմ փրկութիւնս գալու
 Եւ արգարութիւնս յայանուելու մօտ է :
 2 - Երանի՛ այն մարդուն՝ որ ասիկա
 կ'ընէ,
 Ու մարդու որդիին՝ որ ասիկա ամուր
 կը բռնէ,
 Այսինքն շաբաթը կը պահէ ու զանիկա
 չպղծեր ,
 Եւ ամէն անիրաւութիւն ընելէ իր
 ձեռքը ետ կը պահէ :
 3 - Ու Տէրոջը յարող օտարականի
 որդին թող չզրուցէ՛ ըսելով ,
 Տէրը զիս իր ժողովուրդէն բոլորովին
 զատեց .
 Ու ներքինին ալ թող չըսէ,
 Ահա ես չոր ծառ մըն եմ :
 4 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ այն
 ներքիններուն ,
 Որոնք իմ շաբաթներս կը պահեն,
 Եւ ինծի հաճոյ եղածը կ'ընարեն,
 Ու իմ ուխտիս մէջ հաստատ կը կենան .
 5 - Անոնց՝ իմ ամեն մէջ և պարիսպ-
 ներուս մէջ
 Տղաքներէ ու աղջիկներէ աւելի աղէկ
 տեղ ու անուն պիտի տամ .
 Անոնց յաւիտենական անուն պիտի
 տամ ,
 Որ պիտի չպակսի :
 6 - Եւ այն օտարականի որդիները
 որոնք Տէրոջը յարեր են՝
 Անոր ծառայութիւն ընելու ,
 Տէրոջը անունը սիրելու
 Ու անոր ծառաներ ըլլալու համար,
 Այսինքն ամէն անոնք որ շաբաթը կը
 պահեն ու չեն պղծեր,
 Եւ իմ ուխտիս մէջ հաստատ կը կե-
 նան ,
 7 - Չանոնք ալ իմ սուրբ լեռս պիտի
 բերեմ ,
 Եւ իմ աղօթքի տանս մէջ զանոնք
 պիտի ուրախացնեմ .
 Անոնց սղջակէզները ու զոհերը իմ սե-
 ղանիս վրայ ընդունելի պիտի
 ըլլան ,
 Քանզի իմ տունս բոլոր ազգերուն հա-
 մարաղօթքի տուն պիտի կոչուի :
 8 - Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա ,
 Որ Իսրայէլի աքարաւածները կը
 ժողովէ .

Անոր ժողվուածներուն վրայ «-բիշէր ալ պիտի ժողվեմ՝ անոր :

9 - Ալ դաշտի բոլոր գաղաններ, Ալ տնտառի բոլոր գաղաններ, ուտելու եկէք :

10 - Անոր բոլոր պահապանները կոյր են, քան ի չէն զիտեր, Ամէնն ալ համը շուներ են, հաջելու կարող չեն.

Անոնք *կը ցնորին, կը պառկին, քունը կը սիրեն.

11 - Այո, շատակեր ու անյագ շուներ են,

Ու անոնք իմացողութենէ զուրկ հովիւներ են.

Ամէնը իրենց ճամբաներուն դարձան, Ամէն մէկը իր կողմէն իր անիրաւ վատասկը քնքեւել՝, «- ընն,

12 - Եկէք, գինի բերեմ՝,

Ու ցքիով արբենանք.

Վաղն ալ այսօրուան պէս

Ու ալ աւելի առատ պիտի ըլլայ :

ԳԼ. ԾԷ

Արդարը կը կորսուի, և ուշագրութիւն ընող մարդ չկայ.

Ու բարի մարդիկը աշխարհէ կը վերցուին, Առանց մէկուն իմանալուն թէ արդարը չարիքին երեսէն կը վերցուի :

2 - Անիկա խաղաղութեան մէջ կը մտնէ.

Ուղղութեամբ քալողները Իրենց անկողիններուն վրայ հանգրտութիւն կը գանեն :

3 - Բայց դուք, ով վհուկի սրգիներ, Շնացողի ու պռունկի սերունդ, հաս մօտեցէք .

4 - Դուք ո՞վ ծաղր կ'ընէք,

Ձեր բերանը որո՞ւ վրայ կը լայնցնէք,

Ու լեզունիդ կ'երկնցնէք.

Ձե՞ որ դուք անօրէնութեան զաւակներ «- ստութեան սերունդ էք :

5 - Դուք ամէն կանանչ ծառերու տակ +Իէպ ի կուռքերը՝ ցանկութեամբ կը տաքնաք .

Տղաքները ձորերու մէջ,

Վէմերու խոռոչներուն մէջ կը մտնէք :

6 - Քու բաժինդ ձորին տախտակ +աբերան մէջ է.

*Քու վիճակդ անոնք են, անոնք.

*Կամ, կը նիրհեն
+Կամ, Բեկինիներուն մէջ . Գլ. ա. 29:

Անոնց անգամ՝ նուէր թափեցիր, ընծայ մատուցիր.

Միթէ ես ատնց կրնամ՝ համբերել : 7 - Քուն քու անկողինդ բարձր ու վերացած լեռան վրայ դրիր.

Հոն ալ զո՞րք ընելու ելար :

8 - Եւ դռներուն ու դրանգլքներուն ետեւ քու յիշատակդ դրիր.

*Քանզի ինձ մէ «-բիշէն քու անձդ մերկացուցիր,

Ու վեր ելլելով՝ անկողինդ լայնցուցիր. Եւ անոնց հետ գաշնագրութիւն ըրիր,

Անոնց անկողինը սիրեցիր, «- անոք համար անդ պատրաստեցիր :

9 - Եւ թագաւորին քով հարստացիր,

Ու անուշահամութիւններդ շատցուցիր,

Եւ դեսպաններդ հեռաւոր անդեր զրկեցիր,

Ու ինքզինքդ մինչև դժոխք իջեցուցիր :

10 - Քու ճամբուդ երկայնութենէն յոգնեցար,

Բայց Յոյս չկայ՝ չըսիր.

Քու ձեռքիդ կեանքը գտար,

Անոր համար չթուլցար :

11 - Եւ դուն որմէ՞ զարհուրեցար ու վախցար, որ սասխօս ելար,

Եւ զիս չյիշեցիր ու սիրտդ չդրիր.

Ձե՞ որ իմ՝ շատանցմէ լուռ կենալուս համար է

Որ ինձ մէ չես վախնար :

12 - Ես քու արգարութիւնդ ու գործերդ պիտի հրատարակեմ՝,

Որոնք քեզի օգուտ պիտի չընեն :

13 - Երբ դուն աղաղակես, թող քու ժողվածներդ քեզ փրկեն .

Բայց ամէնը հովը պիտի տանի,

Շունչ մը զանախ պիտի տանէ.

Սակայն ինձի յուսացողները երկիրը իբրև կալուածք պիտի ստանան,

Ու իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն .

14 - Եւ պիտի ըսեն,

Բարձրացուցէք, բարձրացուցէք.

Ճամբայ պատրաստեցէք,

Խոչը իմ՝ ժողովուրդիս ճամբայէն վերցուցէք :

15 - Քանզի այսպէս կ'ըսէ Բարձր ու Բարձրեալը,

Որ յաւիտենականութեան մէջ կը բնակի ու անոր անունը Սուրբ է.

Ես բարձր ու սուրբ Գեղց կը բնակիմ, Բայց կտարած ու խոնարհ հօգի ունեցողին հետ եմ,

Որպէս զի խոնարհներուն հոգին կենդանացնեմ՝

Եւ կտորած սիրտերը ապրեցնեմ:

16 - Քանզի յաւիտեան պիտի չվիճիմ,

Ու միշտ պիտի չբարկանամ:

Վասն զի իմ առջև հոգիները պիտի մտնեն:

Եւ այն կեանքերը՝ զորոնք ես ստեղծեցի:

17 - Անոր ազահաւթեանը անօրէնութեանը համար բարկացայ

Ու զանհկա զարկի, ի՞նչ երէտ ծածկեցի ու սրդողեցայ:

Եւ ապառամբը իր կամքին ճամբուն հետեցաւ:

18 - Անոր ճամբաները տեսայ, ու զանհկա պիտի բժշկեմ,

Եւ անոր առաջնորդութիւն պիտի ընեմ,

Ու զանհկա ու անոր սգաւորները պիտի մխիթարեմ:

19 - Շրթունքներուն պտուղը ես կը ստեղծեմ:

Խաղաղութիւն, խաղաղութիւն ըլլայ հեռուն եղողին

Եւ մօտը եղողին, կ'ըսէ Տէրը,

Ու ես զանհկա պիտի բժշկեմ:

20 - Բայց ամբարիշտները ալէ՞ծուփ ծովու պէս են, որ չկրնար հանդարտիլ,

Որուն ջուրերը տիղմ ու ցեխ դուրս կը նետեն:

21 - Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ իմ Աստուածս:

ԳԼ. ԾԸ

Բարձրաձայն կանչէ եւ մի խնայեր, Ձայնդ փողի պէս բարձրացուր:

Եւ իմ ժողովուրդիս՝ իրենց յանցանքը, Ու Յակոբի տանը իրենց մեղքերը պատմէ:

2 - Բայց անոնք ամէն օր զիս կը փրճառեն:

Եւ իմ ճամբաներս գիտնալու կը փափաքին,

Այնպիսի ազգի մը պէս՝ որ արդարութիւն կ'ընէ,

Ու իր Աստուծոյն իրաւունքը զանց չըներ:

Ինձի արդարութեան կանոնները կը հարցնեն:

Աստուծոյ մօտենալու կը փափաքին:

3 - Ու չ'ընէ, Մենք ինչո՞ւ ծոմ պահեցինք, և դուն չտեսար,

Մեր անձերը չարչարեցինք, ու դուն չգիտցար:

Ահա ձեր ծոմապահութեան օրը ձեր բաղձանքը կը կատարէք,

Եւ ձեր ամէն *պահանջութիւնները խառնութեամբ կը պահանջէք:

4 - Ահա կռիւի ու վէճի համար Եւ չարութեան բռունցով զարնելու համար ծոմ կը պահէք:

Այս օրուան պէս ծոմ մի պահէք, Որ ձեր ձայնը բարձրերը լսել տաք:

5 - Իմ ընտրած ծոմապահութիւնս Ու մարդու մը իր անձը խոնարհեցնելու օրը այսպէ՞ս կ'ըլլայ:

Իր գլուխը կնիւնի պէս ծռելով,

Եւ իր քով քուրձ ու մոխիր ստրածելով՝ չ'ըլլայ:

Ասիկա ծոմապահութիւն ու Տէրոջը ընդունելի՞ օր պիտի անուանես:

6 - Ահա այս է իմ ընտրած ծոմապահութիւնս,

Որ անիրաւութեան կապերը քակես,

Եւ լուծին կապերը թուլցնես,

Ու հարստահարութիւն կրողները ազատ թողուս,

Եւ ամէն լուծը կտորես,

7 - Քու հացդ անօթիին բաժնես,

Եւ թափառական անանկները տունդ ընդունիս,

Երբ մերկ մը տեսնես՝ զանհկա հագուեցնես,

Ու քու մարմինէդ քեզ չպահես:

8 - Այն տաէն քու լոյսդ առաւօտի պէս պիտի ծագի,

Ու բժշկութիւնդ շուտով պիտի խոյստնուի,

Եւ քու արդարութիւնդ քու առջևէդ պիտի երթայ,

Ու Տէրոջը փառքը քու ետևէդ քեզ պիտի պաշտպանէ:

9 - Այն տաէն պիտի կանչես, և Տէրը պատասխան պիտի տայ:

Պիտի աղաղակես, ու անհկա պիտի ըսէ, Ահա ես:

Եթէ քու մէջէդ լուծը, Մտտով ցուցնելը ու չար խօսքերը վերցնես,

*Եբբ. Կոկորդով

*Կա՛մ, ծառաները կը հարստահարէք խեբբ. բունի

10 - Եթէ *անօթին յօժարութեամբ կերակրես*,
 Եւ կարօտին հոգին կշտացնես,
 Այն ատեն քու լոյսդ խաւարի մէջ պիտի ծագի,
 Աւ քու խաւարդ կէսօրուան պէս պիտի ըլլայ .

11 - Եւ Տէրը միշտ քեզի առաջնորդութիւն պիտի ընէ,
 Աւ քու հոգիդ †երաշտութեան ատեն* պիտի կշտացնէ,
 Եւ սկորներդ պիտի զօրացնէ .
 Աւ դուն ջրարբի պարտէզի պէս
 Եւ ջուրը չպակտող աղբերակի պէս պիտի ըլլաս :

12 - Աւ քեզմէ քնքնեքը հին աւերակները պիտի շինեն .
 Աւ քու գարերուն հիմերը պիտի վերականգնես,
 Եւ դուն Փլածներ նորագող
 Աւ բնակութեան համար ճամբաներ շիտկող պիտի կոչուիս :

13 - Եթէ շաբաթը, իմ* սուրբ օրս,
 Քու ցանկութիւնդ կատարելէ սաքդ դարձնես,
 Աւ շաբաթը †-ը զուարճութիւնդ
 Եւ Տէրոջը նաւիրուած օրը պատուական անուանես,
 Աւ զանկիւ պատուես* քու ճամբաներուդ չհեռեկլով,
 *Քու ցանկութիւնդ չկատարելով ու պարտի խօսք չխօսելով ,

14 - Այն ատեն Տէրոջմով պիտի ուրախանաս .
 Եւ քեզ երկրի բարձր տեղերը պիտի հանեմ*,
 Աւ քու հօրդ Յակոբի ժառանգութիւնը քեզի պիտի կերցնեմ* .
 *Քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ :

ԳԼ ԾԹ

Ահա Տէրոջը ձեռքը փրկելէն չկարծրցաւ ,

Աւ անոր տկանջը լսելէն չձանրացաւ :
 2 - Հապա ձեր ու ձեր Աստուծոյն մէջ տեղ բաժանում՝ ձգողը
 Ձեր անօրէնութիւնները եզան,
 Եւ ձեր մեղքերը անօր երեսը ձեզմէ ձած կեցին, որ չլսէ :
 3 - Քանզի ձեր ձեռքերը արիւնով ,

*Եթէ. քու հոգիդ անօթին ընծայես †Կ-ժ, անջուր տեղերու մէջ

Աւ ձեր մտաերը անօրէնութիւնով պղծուեցան .
 Ձեր շրթունքը սաւա խօսեցան,
 Եւ ձեր լեզուները անիրաւութիւն արտաբերեցին :
 4 - Չկայ մէկը որ արդարութեան համար բողբէ,
 Աւ չկայ մէկը որ ճշմարտութեամբ դատ վարէ .
 Անոնք սնտաի բաներու կը յուսան և ունայնութիւն կը խօսին .
 Թշուառութիւն կը յղանան ու անօրէնութիւն կը ծնանին .
 5 - Քարբի հաւկիթներ կը տաքցնեն,
 Աւ սարգի ստապն կը գործեն .
 Անոնց հաւկիթները ուտողը կը մեռնի,
 Աւ բացուածէն իժ կ'ելլէ :
 6 - Անոնց ստապններէն հանդերձ չըլլար,
 Եւ իրենց գործերովը չեն կրնար զիրենք ձած կել .
 Անոնց գործերը անօրէնութեան գործեր են,
 Աւ անոնց ձեռքերուն մէջ բռնութեան գործ կայ :
 7 - Անոնց սաքերը չարութեան կը վազեն ,
 Աւ անմեղ արիւն թափելու կ'արտարան .
 Անոնց խորհուրդները անօրէնութեան խորհուրդներ են,
 Անոնց ճամբաներուն մէջ կործանում ու կոտորած կայ :
 8 - Խաղաղութեան ճամբան չեն գիտեր,
 Եւ անոնց ընթացքին մէջ արդարութիւն չկայ .
 Իրենց շաւիղները խտարցուցին .
 Անոնց մէջ քաղցներուն ամէնը խաղաղութիւն չեն գիտեր :
 9 - Անոր համար իրաւունքը մեզմէ հեռացաւ .
 Աւ արդարութիւնը մեզի չհասնիր .
 Լոյսի կը սպասենք , և ահա խաւար կայ .
 Պայծառութեան իջ սպասենք, և ահա մտաւխուզի մէջ կը շրջինք :
 10 - Կոյրերու պէս պատերը կը շօշափենք ,
 Աւ աչք չունեցողներու պէս կը խարխափենք .
 Կէսօրին գիշերուան պէս կը գլորինք .
 Պաղարեր արքեր մէջ՝ մեռելներու պէս ենք :

*Կ-ժ, Պարարաներուն մէջ, և կ-ժ, Թանձր խաւարին մէջ

11 - Ամէնս արջերու պէս կը մննչենք,
Ու աղաւնիներու պէս անդադար կը
մնչենք .

Գոտատատանի կը սպասենք, բայց չկայ .
Փրկութեան համար կը նայինք, Բայց ա-
նիկա մեզմէ հեռացած է :

12 - Քանզի մեր յանցանքները քու
առջևդ շատցան,

Ու մեր մեղքերը մեզի դէմ՝ վկայու-
թիւն կու տան .

Վասն զի մեր յանցանքները մեր քով
են ,

Ու մեր անօրէնութիւնները գիտենք :

13 - Յանցանք ըրինք, Տէրը ուրացանք
Եւ մեր Աստուծոյն հեռեկէն խոտա-
րեցանք .

Անիրաւութիւն ու սպասամբութիւն
խօսեցանք ,

Մէր սրտին մէջ սուտ խօսքեր մտածե-
ցինք ու զրուցեցինք :

14 - Եւ գոտատատանը ետ դարձաւ,
Ու արդարութիւնը հեռուն կայնեցաւ .

Քանզի ճշմարտութիւնը հրապարակին
մէջ ինկաւ ,

Եւ ուղղութիւնը չկրնար ներս մտնել :

15 - Ու ճշմարտութիւնը կը պակտի,
Եւ չարութենէ զգուշացողը կը կողոպ-
տուի .

Ու Տէրը տեսաւ, և տակաւ անոր առջև
գէշ երեցաւ ,

Քանզի իրաւունք չմնաց :

16 - Ու տեսաւ որ մտրդ մը չկար,
Եւ զարմնացաւ որ միջնորդ մը չէր
գտնուեր .

Ուստի իր բազուկը իրեն օգնեց,
Ու իր արդարութիւնը իրեն ձեռնտու
եղաւ :

17 - Եւ արդարութիւնը զրահի պէս,
Ու փրկութիւնը իր գլուխը սաղաւար-
տի պէ՝ հագաւ ,

Եւ վրէժխնդրութեան զգեստը պատ-
մուծանի պէ՝ հագաւ ,

Ու նախանձը վերարկուի պէս իր վրայ
աւաւ :

18 - Իբե՛նջ վարմունքին համեմատ հա-
տուցում պիտի ընէ ,

Բարկութիւն՝ իր հակառակորդներուն,
Հատուցում՝ իր թշնամիներուն .

*Վղղիներուն հատուցում պիտի ընէ :

19 - Ու արեմուտքը Տէրոջը անունէն,
Եւ արեւըքը անոր փառքէն պիտի
վախնան .

Երբ թշնամին գետի պէս գոյ,
Տէրոջը Հոգին *անոր դէմ՝ դրօշակ պի-
տի կանգնէ՞ :

20 - Ու Փրկիչ պիտի գոյ Արօնի,
Ու Յակոբի մէջ չարութենէ դարձող-
ներուն, կ'ըսէ Տէրը :

21 - Եւ անոնց հետ ընելու խոտա-
տակա է, կ'ըսէ Տէրը .

Իմ՝ Հոգիս սր քու վրայդ է,
Ու իմ՝ խօսքերս զորոնք քու բերանդ
դրած եմ ,

*Քու բերնէդ ու քու զաւակներուդ
բերնէն

Եւ քու զաւակացդ զաւակներուն բեր-
նէն

Հիմակուրնէ մինչև յաւիտեան պիտի
չպակտին, կ'ըսէ Տէրը :

ԳԼ . Կ

Ելիր, լուսաւորուէ . քանզի քու
լոյսդ եկաւ ,

Ու Տէրոջը փառքը քու վրայդ ծագե-
ցաւ :

2 - Վասն զի ահա երկիրը խաւար
Ու սղգերը մտուախուղ պիտի ծածկէ,
Բայց քու վրայդ Տէրը պիտի ծագի,
Եւ անոր փառքը քու վրայդ պիտի
երևնայ :

3 - Ու քու լոյսիդ սղգեր պիտի գան,
Եւ քու վրայդ ծագած պոյժառու-
թեանը՝ թագաւորներ :

4 - Աչքերդ վերցուր ու բոլորախփ
նայէ .

Ամէնը կը ժողվուին «- քեզի կու գան .
Քու աղաքներդ հեռուէն պիտի գան ,
Եւ քու աղջիկներդ գիրկի մէջ պիտի
վերցուին :

5 - Այն ատեն պիտի տեսնես և ուրա-
խանաս ,

Ու սիրող պիտի շարժի ու բացուի .
Քանզի ծովուն առատութիւնը քեզի
պիտի գառնայ ,

Ազգերուն հարստութիւնը քեզի պիտի
գոյ :

6 - Քեզ ուղտերուն երամակը ,
Մադիամու ու Գեփայի տաճիկ ուղ-
տերը , պիտի ծածկեն .

Ամէնը Սարայէ պիտի գան,
Ոսկի ու կնդրուկ պիտի բերեն,
Եւ Տէրոջը գովութիւնները պիտի
ուետան :

*Կ-Տ, Հեռաւոր երկիրներուն

*Կ-Տ, զանկա պիտի հալածէ

7 - Կեդարի բոլոր հօտերը քու քովդ
 պիտի ժողվուին,
 Ու Նարեթօթի խոյերը քեզի պիտի ծա-
 ուայեն .
 Անոնք իմ սեղանիս վրայ պիտի ելլեն՝
 ընդունելի չ՛հ ըլլաւ - ,
 Եւ իմ փառքիս տունը պիտի փառա-
 ւորեմ :
 8 - Ո՞վ են ասոնք՝ որ կը թռչին ամպի
 պէս,
 Ու դէպ ի իրենց վանդակը Բ-չ-չ ա-
 ղաւնիններու պէս :
 9 - Քանզի կղզիները ու նախ Թարսիսի
 նաւերը
 Ինծի համար պատրաստ պիտի ըլլան,
 Արպէս զի հեռուէն քու աղաքներդ,
 Եւ անոնց հետ անոնց արծաթը ու
 ոսկին բերեն,
 Քու Տէր Աստուծոյդ անուանը համար,
 Ու Խորայէլի Սուրբին համար, քանզի
 անիկա քեզ կը փառաւորէ :
 10 - Եւ օտարներուն որդիները քու
 պարիսպներդ պիտի շինեն,
 Ու անոնց թագաւորները քեզի ծա-
 ուայութիւն պիտի ընեն .
 Քանզի իմ բարկութիւնովս քեզ
 զարկի ,
 Բայց բարեհաճութիւնովս քեզի պիտի
 սղորմիմ :
 11 - Եւ քու դռներդ միշտ բաց պիտի
 ըլլան,
 Յորեկ ու գիշեր պիտի չգոցուին,
 Արպէս զի քեզի ազգերուն ստաց-
 ուածքը կրեն,
 Եւ անոնց թագաւորները *բերուին :
 12 - Քանզի քեզի ծառայութիւն չընող
 ազգը ու թագաւորութիւնը պի-
 տի կորսուի,
 Ու ազգերը բոլորովին պիտի կործանին :
 13 - Լիրանանի փառքը քեզի պիտի
 դայ ,
 Մայրը , սօսին ու աօտախը մէկտեղ՝
 Իմ որբարանիս տեղը զարգարելու հա-
 մար ,
 Եւ իմ սաքերուս տեղը պիտի փառա-
 ւորեմ :
 14 - Ու քեզի նեղութիւն տաւողներուն
 աղաքները
 Ծռելով քեզի պիտի գան,
 Ու քեզ անարգողներուն ամէնը
 Քու սաքերուդ գարշապարներուն
 երկրպագութիւն պիտի ընեն .

*Կ-ժ, հանդէսով գան

Ու քեզ Տէրոջը քաղաքը ,
 Խորայէլի Սուրբին Սիօնը , պիտի ան-
 ուանեն :
 15 - Դուն որ երեսէ ձգուած ու ատելի
 եղար,
 Եւ +ե-է անցնող չեղաւ,
 Քեզ յաւիտենական փառք,
 Ու ազգէ ազգ Գ-չ-չ ուրախութիւն պի-
 տի ընեմ :
 16 - Եւ ազգերուն կաթը պիտի ծծես,
 Ու թագաւորներուն սահնակը պիտի
 ծծես .
 Եւ պիտի գիտնաս որ ես Տէրս եմ քու
 Ազատիչդ,
 Ու քու Փրկիչդ, Յակոբի Հօօրը :
 17 - Պղինձի տեղ ոսկի պիտի բերեմ,
 Ու երկաթի տեղ՝ արծաթ,
 Եւ փայտերու տեղ՝ պղինձ,
 Ու քարերու տեղ երկաթ պիտի բե-
 րեմ ,
 Եւ քու վերակացուներդ խաղաղու-
 թիւն Գ-չ-չ ,
 Ու քու իշխաններդ արդարութիւն
 Գ-չ-չ պիտի ընեմ :
 18 - Մէյմըն ալ քու երկրիդ մէջ
 բռնութիւն ,
 Եւ քու սահմաններուդ մէջ յափշտա-
 կութիւն ու կստորած պիտի
 չլսուի .
 Հապա քու պարիսպներդ Փրկութիւն,
 Ու դռներդ Գովութիւն պիտի ան-
 ուանես :
 19 - Մէյմըն ալ ցորեկը քու լոյսդ
 արեւը պիտի չըլլայ,
 Ու Գիշերը լուսինը իր պայծառութիւ-
 նովը քեզի լոյս պիտի չտայ .
 Հապա Եհովա քեզի յաւիտենական
 լոյս ,
 Եւ քու Աստուածդ քու փառքդ պիտի
 ըլլայ :
 20 - Քու արեւդ մէյմըն ալ պիտի
 չմանէ ,
 Ու քու լուսինդ պիտի չնուագի
 Հապա Եհովա քեզի յաւիտենական
 լոյս պիտի ըլլայ,
 Եւ սուգի օրերդ պիտի վերջանան :
 21 - Ու քու ժողովուրդիդ ամէնը ար-
 դար պիտի ըլլան,
 Ու երկիրը յաւիտեան պիտի ժառան-
 գեն .
 Իմ անկած տունկս , իմ ձեռքերուս
 գործը ,
 Ի՞՞ փառքիս համար պիտի ըլլայ :
 22 - Պղտիկը հազարաւոր՝

Ու քիչուորը մեծ ազգ պիտի ըլլայ.
Ես Տէրս շուտով պիտի կատարեմ
ասիկա իր ժամանակին:

ԳԼ ԿԱ

Տէր Եհովայի Հոգին իմ՝ վրաս է.
Վասն զի Տէրը զիս օծեց,
Ու զիս զրկեց ազգաւորուէն աւեախս
տալու,
Կտարած սիրտ ունեցողները բժշկելու,
Իերիններուն ազատութիւն,
Եւ բանտարկեալներուն՝ բանտին բաց-
ուիլը հրատարակելու.

2 - Տէրոջը ընդունելի տարին
Ու մեր Աստուծոյն վրէժխնդրութեան
օրը հրատարակելու,
Սէն սգաւորները մխիթարելու,
3 - Սիօնի սգաւորներուն որոշելու,
Ու անոնց մոխրի աեղ փառք,
Եւ աեղ ուրախութեան իւզ,
Կտարած հոգիի աեղ գովութեան պատ-
մուծան տալու .

3 Եւ պիտի անուանեն զանոնք Արդա-
րութեան բեկնիներ,
Զորոնք Տէրը անկեր է իր փառքին հա-
մար:

4 - Եւ հին աւերակները պիտի շինեն,
Ու առաջուան կործանուածները պի-
տի կանգնեն,
3 Եւ աւրուած քաղաքները
Ու շատ դարերէ ի վեր աւերակ մնա-
ցածները պիտի նորոգեն:

5 - Եւ օտարականները պիտի ելլեն ու
ձեր հօտերը պիտի հովուեն,
Ու օտարներուն որդիները ձեր երկ-
րագործները և այգեգործները
պիտի ըլլան:

6 - Բայց դուք Տէրոջը քահանաները
պիտի կոչուիք,
Եւ Սաստուծոյն պաշտօնեաները պիտի
ըսուիք
Կզգերուն հարստութիւնը պիտի ու-
տէք,
Ու անոնց փառքովը պիտի փառաւոր-
ուիք:

7 - Ձեր ամօթին աեղ՝ կրկին «-բաբա-
բէն»,
3 Եւ անարգանքին աեղ իրենց ժառան-
գութեանը մէջ պիտի ցնծան .
Ուստի իրենց երկրին մէջ կրկին ժա-
ռանգութիւն պիտի առնեն .

Կանք յաւիտենական ուրախութիւն
պիտի ունենան:

8 - Քանզի ես Տէրս արդարութիւնը
կը սիրեմ.
Անիրաւութիւնը յափշտակութիւնը
կ'ատեմ.
Իրաւքնէ անոնց գործերուն վարձքը
պիտի տամ,
Ու անոնց հետ յաւիտենական ուրախ
պիտի ընեմ:

9 - Եւ անոնց սերունդը ազգերուն մէջ
Ու անոնց տղաքները ժողովուրդնե-
րուն մէջ պիտի գիացուն.
Զանոնք ամէն տեսնողները պիտի ճանչ-
նան
Թէ անոնք Տէրոջը օրհնած սերունդն
են:

10 - Ես Տէրոջմով մեծապէս պիտի
ցնծամ,
Ու իմ հոգիս իմ Աստուծովս պիտի
ուրախանայ .
Քանզի ինձի փրկութեան հանդերձներ
հազցուց,
Զիս արդարութեան պատմուծանով
ծածկեց,
Փետայի պէս՝ որ իրեն փառաւոր խոյր
կը դնէ,
Ու հարսի պէս՝ որ իր զարգերովը կը
զարգարուի:

11 - Քանզի ինչպէս երկիր իր տունկը
կ'աճեցնէ,
Ու պարտէզը իր մէջ ցանուածները կը
բուսցնէ,
Այնպէս Տէր Եհովա բոլոր ազգերուն
առջև
Արդարութիւն ու գովութիւն պիտի
բուսցնէ:

ԳԼ ԿԲ

Սիօնի սիրոյն համար պիտի չլուեմ,
Ու Երուսաղէմի սիրոյն համար պիտի
չհանդարտիմ,
Մինչև որ անոր արդարութիւնը լոյսի
պէս,
Եւ անոր փրկութիւնը բացաւառ ջահի
պէս *ճառագայթէ:

2 - Ու ազգերը քու արդարութիւնդ,
Ու բոլոր թագաւորները քու փառքդ
պիտի տեսնեն .
Ու դուն նոր անունով պիտի կոչուիս,
Զոր Տէրոջը բերանը պիտի անուանէ:

3 - Եւ Տէրոջը ձեռքին մէջ վայելչու-
թեան պտակ,

*Եբր. ելլէ

Ու քու Աստուծոյդ ձեռքին մէջ ար-
քայական թագ պիտի ըլլաս :

4 - Դուն մէյմըն ալ Թողուած պիտի
չկոչուիս ,

Ու քու երկիրդ մէյմըն ալ Աւերակ
պիտի չըսուի .

Հապա դուն՝ *Իմ հաւնածս՝ ,

Ու քու երկիրդ Ամուսնացեալ պիտի
ըսուի .

Քանզի Տէրը քեզի պիտի հաւնի ,

Ու քու երկիրդ պիտի ամուսնանայ :

5 - Վասն զի Ինչէ՞ երիտասարդ մը
կոյսի հեա կ'ամուսնանայ ,

Այնչէ՞ քու աղաքներդ քեզի հեա պի-
տի ամուսնանան .

Եւ Ինչէ՞ փեսան հարսին վրայ կ'ու-
րախանայ ,

Այնչէ՞ քու Աստուածդ քու վրագ
պիտի ուրախանայ :

6 - Քու պարիսպներուդ վրայ , ով
Երուսաղէմ , պահապաններ դրի .

Անոնք բոլոր օրը ու բոլոր զիշերը բնաւ
պիտի չընեն .

Դուք , ով Տէրը յիշողներ , լուս մի
կենաք ,

7 - Ու անոր հանգստութիւն մի տաք ,
Մինչև անիկա հաստատէ ,

Ու մինչև երկրի վրայ Երուսաղէմը դո-
վելի ընէ :

8 - Տէրը իր աջ ձեռքին վրայ ու իր
զօրաւոր բազուկին վրայ այնչէ՞
երդում ըրաւ ,

Թէ քու ցորենդ մէյմըն ալ քու թըշ-
նամիներուդ կերակուր պիտի
չտամ .

Եւ օտարներու սրդիները պիտի չխմեն
քու գինիդ ,

Որու համար դուն աշխատեցար .

9 - Հապա զանիկա հնձողները պիտի
ուտեն ,

Ու Տէրոջը փառք պիտի տան .

Եւ զանիկա քաղաղները իմ սուրբ
սրահներուս մէջ պիտի խմեն :

10 - Անցէք , անցէք դռներէն ,
Փողովուրդին ճամբայ պատրաստեցէք .
Շիակեցէք , շիակեցէք շաւիղները ,
Քարերը աչի՞ ժողվեցէք .

Փողովուրդներուն դրօշակ վերցուցէք :

11 - Ահա Տէրը մինչև երկրի ծայրը
լսել տուաւ .

Սիօնի աղջկանը ըսէք ,

*Եբր. Էփ-իֆա, այնինչ, իմ հաւանու-
թիւնս անոր մէջ

Ահա քու Փրկիչդ կու գայ .
Ահա անոր վարձքը իրեն հեա է ,
Ու գործերու հասուցումը իր աւ-
ջն է :

12 - Եւ անոնք Սուրբ ժողովուրդ , Տէ-
րոջը փրկածները , պիտի ըսուին .
Ու դուն Փնաուուած * - Զթողուած
քաղաք պիտի կոչուիս :

ԳԼ. ԿԳ.

Ո՞վ է ասիկա որ կու գայ Եդովմէ ,
Կարմրագոյն զգեստով՝ Բօսրայէ ,
Որ փառաւոր հանդերձով զարդար-
ուած է ,

Եւ իր շատ զօրութիւնովը պանծալով
կը քայլէ :

Ես եմ՝ որ արդարութիւն կը խօսիմ ,
Ու փրկելու կարողութիւն ունիմ :

2 - Ինչո՞ւ համար քու հանդերձդ
կարմիր է ,

Ու քու զգեստներդ հնձանի մէջ կո-
խողին պէս են :

3 - Հնձանի մէջ միայն ես կոխեցի ,
Եւ ժողովուրդներէն ինծի հեա մա՛րդ
մը չկար .

Ու զանոնք իմ բարկութիւնովս կո-
խեցի ,

Եւ իմ սրամտութիւնովս զանոնք ճըմ-
լեցի .

Ու անոնց արիւնը իմ զգեստներուս
վրայ ցաթ կեց ,

Եւ բոլոր հանդերձներս ներկեցի .

4 - Քանզի իմ սրտիս մէջ վրէժխնդրու-
թեան օր կար .

Ու իմ փրկածներուս տարին հասած էր .

5 - Եւ նայեցայ , բայց օգնող չկար ,
Եւ զարմացայ որ ձեռնաու եղող մը
չկար .

Ուստի իմ բազուկս ինծի համար փրկու-
թիւն ըրաւ ,

Ու իմ՝ բարկութիւնս ինծի ձեռնաու
եղաւ :

6 - Եւ իմ բարկութիւնովս ժողովուրդ-
ներ կոխեցի ,

Ու զանոնք իմ սրամտութիւնովս * զի-
նովցուցի ,

Եւ անոնց արիւնը գետինը իջեցուցի :

7 - Տէրոջը սրամտութիւնները , Տէրոջը
գովութիւնները պիտի յիշեմ՝
Տէրոջը բոլոր մեզի ըրածներուն համե-
մաս

*Կա՛մ , ջախջախեցի

Եւ այն շատ բարիքներուն համեմատ,
Զորոնք իր գթութիւնովը և առատ
ողորմութիւնովը

Իտրայէլի տանը բրած է:

8 - Քանզի բտաւ, Իրաւցընէ անոնք իմ
ժողովուրդս են,

Սուտ չէլլելու որդիներ են.

Ու անիկա անոնց փրկիչ եղաւ.

9 - Անոնց ամէն նեղութիւններուն
ատենը նեղութիւն քաշեց,

Եւ իր երեսին հրեշտակը զանոնք ազա-
տեց .

Իր սիրովը ու գթութիւնովը զանոնք
փրկեց,

Եւ զանոնք վերցուց ու հին ժամանա-
կին բոլոր օրերուն մէջ զանոնք
կրեց:

10 - Բայց անոնք ապստամբեցան ու ա-
նոր Սուրբ Հոգին բարկացուցին.

Անիկա ալ դարձաւ անոնց թշնամի
եղաւ,

Ու ինք անոնց հետ պատերազմ՝ բրաւ:

11 - Այն ատեն առաջուան օրերը *
Մովսէսը և անոր ժողովուրդը
* յիշեցին .

Ո՞ւր է անիկա՝ որ իր հօտին հովիւովը
զանոնք ծովէն հանեց .

Ո՞ւր է անիկա՝ որ անոնց մէջ իր
Սուրբ Հոգին դրաւ .

12 - Իր փառաւոր բազուկը Մովսէսի
աջ ձեռքին հետ պտրտացուց.

Իրեն յաւիտենական անունն Վաստա-
րկելու համար

Անոնց առջևէն ջուրերը պատուեց .

13 - Ու զանոնք անդունդներէն ա-
ռանց սահելու անցուց,

Ինչպէս ձի մը անապատէն է՝ անցնի:

14 - Տերօջը Հոգին զանիկա հանգրս-
տացուց,

Հովիտի մէջ իջնող անասուններու
պէս .

Գուն քու ժողովուրդիդ այնպէս
առաջնորդութիւն բրիր,

Որպէս զի քեզի փառաւոր անուն
վաստակիս:

15 - Երկինքէն նայէ,

Եւ քու սուրբ ու փառաւոր բնակու-
թենէդ տես .

Ո՞ւր է քու նախանձդ ու զօրութիւնդ .
Քու ազիքներուդ գալարիլը և ինծի
բաժնողորմութիւններդ արգիլ-
ուեցա՞ն:

16 - Քանզի մեր Հայրը դուն ես,
Թէև Աբրահամ մեզ չգիտեր,
Ու Իսրայէլ մեզ չճանչնար.

Գուն, ով Տէր, մեր Հայրն ես,
Ու քու անունդ սկիզբէն մեր Փրկիչն է:

17 - Ով Տէր, ինչո՞ւ համար մեզ քու
ճամբաներէդ կը մուտքեցնես .

Ինչո՞ւ մեր սիրտը կը խտտացնես, որ
քեզմէ չվախնանք .

Քու ծառաներուդ համար,
Քու ժառանգութեանդ ցեղերուն հա-
մար դարձիր:

18 - Քու սուրբ ժողովուրդդ իրենց
ժառանգութիւնը քիչ ատեն
վայելեցին .

Մեր թշնամիները քու սրբարանդ ու-
նակոխ բրին:

19 - *Մենք սկիզբէն *ուր էնք .
Գուն անոնց վրայ չտիրեցիր,

Ու քու անունդ անոնց վրայ չկան-
չուեցաւ:

ԳԼ. ԿԻ

Երանի՛ թէ երկինքը ճեղքելով
վար իջնէիր,

Քու ներկայութենէդ լեռները † հալէին

2 - Խուիւները բռնկցնող կրակի պէս,
Զուրերը եռացնող կրակի պէս,
Որ քու անունդ թշնամիներուդ յայտ-
նէիր,

Ու ազգերը քու երեսէդ դողային:

3 - Երբ այն սոսկալի բաները բրիր,
որոնց չէինք յուսար,

Իջար, քու երեսէդ լեռները † հալեցան:

4 - Քանզի սկիզբէն ի վեր չլսուեցաւ
ու ահանջ չլսեց,

Եւ աչք չտեսաւ քեզմէ ուրիշ Աստ-
ուած մը,

Որ իրեն յուսացողներուն այսպէս բա-
նէր ընէ:

5 - Ուրախ եղողին ու արդարութիւն
գործողին

Եւ քու ճամբաներուդ մէջ քեզ յի-
շողներուն հասար .

Ահա բարկացար, վասն զի մեզք գոր-
ծեցինք .

Անոնց մէջ աւսողութիւն կայ, ու պի-
տի փրկուինք:

*Կա՛մ, Մենք այսպէ՛ս եղանք, որպէ՛ս թէ
դուն մեր վրայ բնաւ չէիր տիրեր, և
քու անունդ մեր վրայ չէր կանչուեր
†Կա՛մ, սասանէին †Կա՛մ, սասանեցան

6-Բայց ամէնս պիղծ բանի պէս եղանք,
Ու մեր բոլոր արգարուածիւնները դաշ-
տանի լաթին պէս են .

Եւ ամէնս տերեւի պէս կը թառամինք,
Ու մեր անօրէնութիւնները հովի պէս
մեզ կը վերցնեն:

7 - Եւ քու անունդ կանչող չկայ,
Որ արթննայ ու քեզմով ոյժ գանէ.
Քանզի քու երեսդ մեզմէ ծածկեցիր,
Ու մեր անօրէնութիւններուն պատ-
ճառու մեզ մոշեցիր:

8 - Բայց հիմա, ով Տէր, դուն մեր
Հայրն ես .

Մենք կաւ ենք, ու դուն մեր Բրուան
ես .

Եւ ամէնս քու ձեռքիդ գործն ենք:

9 - Շատ մի բարկանար, ով Տէր,
Ու Բէր անօրէնութիւնը յաւիտեան մի
յիշեր .

Ահա նայէ, կ'աղաչենք, ամէնս քու
ժողովուրդդ ենք:

10 - Սուրբ քաղաքներդ անապատ
եղան .

Սիօն անապատ եղաւ .

Երուսաղէմ աւերակ եղաւ:

11 - Մեր սուրբ ու փառաւոր տունը,
Որուն մէջ մեր հայրերը քեզ կ'օրհ-
նէին,

Հրոյ ճարակ եղաւ,

Եւ մեր ամէն ցանկալի տէրէրէ ամայի
եղան:

12 - Ասոնց վրայ ինքզինքդ պիտի
զսպե՞ս, ով Տէր,

Տէր-ին պիտի լռե՞ս ու մեզ խիստ
շատ պիտի նեղե՞ս:

ԳԼ. ԿԵ

Ձե՛ս չհարցնողներէն փնտռուեցայ,
Ձիս չխնդրողներէն գանուեցայ .
Իմ *անունն չկանչող՝ ազգին

Ահա ես, ահա ես՝ քո:

2 - Ամէն օր իմ ձեռքերս երկնցուցի
ուպատամբ ժողովուրդի մը՝

Որոնք այնպիսի ճամբու մէջ կը քայլեն
որ աղէկ չէ,

Եւ իրենց խորհուրդներուն կը հեռան.

3 - Այնպիսի ժողովուրդի մը՝ որ միշտ
երեսիս դէմ զիս կը սրդողցնեն.

Պարտեզներու մէջ կը զսհեն,

Ու աղիւսներու վրայ խունկ կը ծխեն.

4 - Գերեզմաններու մէջ կը նստին,
Եւ գիշերը առանձին տեղեր կ'անցնեն.
Խոյի միս կ'ուտեն,

Ու իրենց ամաններուն մէջ գարշելի
բաներու արգանակ կայ .

5 - Որոնք կ'ըսեն,

Մէկգի կեցիր, ինծի մի դաչիր,

Քանզի էս քեզմէ սուրբ եմ:

Ասոնք իմ՝ անգունքներու մէջ ծուխ են,
Ու ամէն օր բորբոքած կրակ են:

6 - Ահա իմ՝ առջևս գրուած է.

Պիտի չլռեմ, հապա պիտի հասուցա-
նեմ .

Այո, անոնց ծոցին մէջ պիտի հասու-
ցանեմ՝

7 - Ձեր անօրէնութիւնները՝ ձեր հայ-
րերուն անօրէնութիւններուն
հետ մէկտեղ,

Որոնք լեռներուն վրայ խունկ ծխեցին,
Ու բլուրներուն վրայ զիս անարգեցին,
կ'ըսէ Տէրը,

Ուստի անոնց առաջուան գործերը
իրենց ծոցերուն մէջ պիտի լե-
ցնեմ:

8 - Տէրը այսպէս կ'ըսէ.

Ձոր օրինակ երբ սղկոյղի մը վրայ քաղ-
ցու գանուի, կ'ըսեն թէ

Ատիկա մի կորսնցներ,
Քանզի ատար վրայ օրհնութիւն կայ.

Ես ալ իմ՝ ծառաներու համար այն-
պէս պիտի ընեմ,

Որպէս զի ամէնը չկորսնցնեմ:

9 - Ու Յակոբէ սերունդ՝

Եւ Յուդայէ իմ՝ լեռներու ժառան-
գորդ մը պիտի հանեմ .

Ու իմ՝ ընտրեալներս այն երէրէ պիտի
ժառանգեն,

Եւ իմ՝ ծառաներս հոն պիտի բնակին:

10 - Ու զիս փնտռող ժողովուրդիս
համար Սարօն հօտերու փարախ՝

Եւ Աքովրի ձորը արջաւներու մտկա-
ղատեղ պիտի ըլլայ:

11 - Բայց դուք Տէրը թողուցիք
Ու իմ՝ սուրբ լեռս մոռցուք .

*Քաղ չստեղծեմ սեղան պատարասեցիք,
Ու Վիտիի թափելու նուէր՝ լեցու-
ցիք:

12 - Ես ալ ձեզ սուրի պիտի մատնեմ,
Եւ ամէնդ պիտի ծուխ մտնեմ
համար .

*Կա՛մ, անունովս չկանչուած . Գլ.
Կգ. 19 .

*Կա՛մ, Բաղդին +Կա՛մ, Ճակատագրին
+Եք. խառնուածք
|| Եք. ճակատագրեմ

Քանզի կանչեցի ու պատասխան չառւիք,
 Խօսեցայ ու մտիկ չըրիք .
 Հապա իմ առջև չարութիւն ըրիք ,
 Եւ ինծի հաճելի չեղածը ընտրեցիք :
 13 - Անոր համար Տէր Եհովա այսպէս
 կ'ըսէ .
 Ահա իմ ծառաներս պիտի ուտեն,
 Բայց դուք անօթի պիտի մնաք .
 Ահա իմ ծառաներս պիտի խմեն,
 Բայց դուք ծարաւ պիտի մնաք .
 Ահա իմ ծառաներս պիտի ուրախանան,
 Բայց դուք ամօթալից պիտի ըլլաք .
 14 - Ահա իմ ծառաներս սրտի ուրա-
 խութեամբ պիտի ցնծան,
 Բայց դուք սրտի ցաւէ պիտի աղա-
 զակէք ,
 Եւ հոգիի ճնշումէ պիտի սունաք :
 15 - Ու ձեր անունը իմ ընտրածներուս
 անէծքի համար պիտի թողուք .
 Եւ Տէր Եհովա քեզ պիտի մեռցնէ,
 Ու իր ծառաները ուրիշ անունով պի-
 տի կանչէ .
 16 - Որպէս զի երկրի վրայ օրհնուողը
 ճշմարիտ Աստուծով օրհնուի,
 Ու երկրի վրայ երդում ընողը
 ճշմարիտ Աստուծով երդում ընէ .
 Քանզի առաջուան նեղութիւնները
 մոռցուեցան,
 Ու անոնք իմ աչքերէս ծածկուեցան :
 17 - Քանզի ահա ես նոր երկինք ու նոր
 երկիր կը ստեղծեմ .
 Եւ առաջինները պիտի չյիշուին, ու
 մարդոց միտքը պիտի չգան :
 18 - Բայց դուք իմ ստեղծագործու-
 թիւնովս
 Յաւիտեանս յաւիտենից ուրախացէք
 և ցնծացէք .
 Վասն զի ահա ես Երուսաղէմը ցնծու-
 թեան համար,
 Ու անոր ժողովուրդը ուրախութեան
 համար կը ստեղծեմ :
 19 - Ու Երուսաղէմի վրայ պիտի
 ցնծամ,
 Եւ իմ ժողովուրդիս վրայ պիտի ուրա-
 խանամ .
 Ու հոն մէյմըն ալ լացի ձայն ու ողբի
 ձայն պիտի չլսուի :
 20 - Հոն մէյմըն ալ քիչ օր ապրող
 տղայ ,
 Կամ օրերը չլեցուած ծեր պիտի չըլլայ .
 Քանզի երիտասարդը հարիւր տարեկան
 պիտի մեռնի,
 Եւ հարիւր տարեկան մեղաւորը ա-
 նէծքի պիտի հանդիպի :

21 - Ու տուներ պիտի շինեն ու պիտի
 բնակին,
 Եւ այգիներ պիտի տնկեն ու անոնց
 պտուղը պիտի ուտեն :
 22 - Անոնք պիտի չշինեն՝ որ ուրիշները
 բնակին,
 Անոնք պիտի չանկեն՝ որ ուրիշները
 ուտեն .
 Վասն զի իմ ժողովուրդիս օրերը ծա-
 ւի օրերու չափ պիտի ըլլան,
 Եւ իմ ընտրածներս իրենց ձեռքերուն
 գործերը պիտի հինցնեն :
 23 - Անոնք պարապ տեղ պիտի չաշ-
 խատին,
 Ու դժբաղդութեան համար ոչ ոք
 պիտի չծնանին .
 Քանզի անոնք Տէրոջը օրհնածներուն
 սերունդն են ,
 Ու անոնց հետ անոնց զաւակներն ալ :
 24 - Եւ պիտի ըլլայ որ անոնք դեռ
 չկանչած՝ պատասխան պիտի
 տամ ,
 Ու քանի որ դեռ կը խօսին՝ պիտի լսեմ :
 25 - Գայլը ու գառը մէկտեղ պիտի
 արածին,
 Եւ առիւծը արջառի պէս յարդ պիտի
 ուտէ .
 Ու օձին կերակուրը հող պիտի ըլլայ .
 Անոնք իմ բոլոր սուրբ լեռանս մէջ
 վնաս պիտի չտան
 Ու պիտի չսպառկանեն, կ'ըսէ Տէրը :

ԳԼ. ԿԶ

Տէրը այսպէս կ'ըսէ.
 Երկինք իմ ամթուռ է,
 Ու երկիր իմ ստեղծուած պատուան-
 դանն է .
 Այս ի՞նչ տուն է որ ինծի համար կը
 շինէք ,
 Եւ այս ի՞նչ տեղ է իմ հանգստու-
 թեանս համար .
 2 - Քանզի ասոնց ամէնը իմ ձեռքս
 շինեց,
 Ու ասոնց ամէնը եղան, կ'ըսէ Տէրը .
 Բայց ես ասար պիտի նայիմ ,
 Այսինքն խնարհին և կտորած հոգի
 ունեցողին
 Ու իմ խօսքէս դողացողին :
 3 - Արջառ մորթողը մարդ մեռցնողի
 պէս է,
 Քառնուկ զոհողը շուն մորթողի պէս,
 Նուէր մատուցանողը խալի արիւն մա-
 րոցանողի պէս .

Կնդրուկ ծխողը *կուռք պաշտողի՝ ոչ* .
 Իրաւքընէ անոնք իրենց ճամբաները
 քնարեցին ,
 Ու անոնց հոգիները իրենց գարշելիներ-
 րէն կ'ախորժին :
 4 - Ես ալ անոնց թշուառութիւնները
 պիտի քնարեմ ,
 Եւ իրենց վախցած բաները իրենց վրայ
 պիտի բերեմ .
 Վասն զի կանչեցի ու պատասխան
 տուող չեղաւ ,
 Խօսեցայ ու մտիկ չըրին .
 Հապա իմ՝ առջև չարութիւն ըրին ,
 Եւ իմ՝ չհաւնածս քնարեցին :
 5 - Տէրոջը խօսքը մտիկ ըրէք ,
 Ով անոր խօսքէն գողացողներ .
 Իմ՝ անուանս համար ձեզ ատող ,
 Ու ձեզ անարգող ձեր եղբայրները
 ըսին ,
 Թող Տէրը փառաւորուի ,
 Ու ձեր ուրախութիւնը տեսնենք ,
 Բայց անոնք պիտի ամչնան :
 6 - Քաղաքէն աղաղակի ձայն , տա-
 ճարէն ձայն մը կ' - գայ ,
 Տէրոջը ձայնը՝ որ իր թշնամիներուն
 պատիժ կը հատուցանէ :
 7 - Յաւ չքաշած ծնաւ ,
 Յաւը չհասած արու զաւակ ծնաւ :
 8 - Այսպիսի բան մը ո՞վ լսեց , այս-
 պիտի բաներ ո՞վ տեսաւ .
 Միթէ երկիր մէկ օրուան մէջ կը
 ծնանի ,
 Կամ՝ ազգ մը մէկ անդամին՝ ծնաւ .
 Քանզի Սիօն ցաւ քաշածին պէս իր
 աղաքները ծնաւ :
 9 - Ես որ ծնանելու վայրկեանը կը բերեմ ,
 Ծնանիլ պիտի չտամ՝ , կ'ըսէ Տէրը .
 Ես որ ծնանիլ կու տամ ,
 Արդե՞տք պիտի գոցե՞մ , կ'ըսէ քու
 Աստուածդ :
 10 - Երուսաղէմի հետ ուրախացէք ու
 անոր հետ ցնծացէք
 Դուք ամէնդ որ զանհիկա կը սիրէք .
 Մեծապէս ուրախացէք անոր հետ
 Դուք ամէնդ որ անոր համար սուգ կը
 բռնէք .
 11 - Վասն զի անոր մխիթարութեան
 ստիճաններէն
 Պիտի ծծէք ու կշտանաք .
 Վասն զի դուք պիտի գիէք ,
 Եւ անոր փառքին սաւատութիւնովը
 զուարճանաք :

12 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ .
 Ահա ես անոր վրայ խաղաղութիւնը
 գետի պէս
 Ու ազգերուն փառքը յորդահաս հե-
 ղեղի պէս պիտի տարածեմ .
 Եւ պիտի գիէք , գերկի վրայ պիտի
 վերցուիք ,
 Ու ծունկերու վրայ պիտի գգուիք :
 13 - Ինչպէս մայր մը *իր ազան՝ կը
 մխիթարէ ,
 Այնպէս ալ ես ձեզ պիտի մխիթա-
 րեմ .
 Ու Երուսաղէմէ մխիթարութիւն պիտի
 գանէք :
 14 - Եւ պիտի տեսնէք ու սիրատրնիդ
 պիտի ուրախանայ ,
 Եւ ձեր սակորները կանանչ խտտի պէս
 պիտի ծաղկին .
 Ու Տէրոջը ձեռքը իր ծառաներուն
 վրայ ,
 Եւ անոր բարկութիւնը թշնամիներուն
 վրայ պիտի յայտնուի :
 15 - Քանզի ահա Տէրը կրակով կու
 գայ ,
 Ու անոր կառքերը մըրկի պէս են ,
 Որպէս զի իր բարկութիւնը սրամտու-
 թիւնով ,
 Եւ իր սպառնալիքը կրակի բոցով
 ի գործ գնէ :
 16 - Քանզի Տէրը կրակով ու իր սրովը
 պիտի դատէ ամէն մարմինը .
 Ու Տէրոջմէ սպաննուածները շատ պի-
 տի ըլլան :
 17 - Ձիրենք սրբողները , և պարակե-
 ներու մէջաեղը իրարմէ ետև
 մտքրուողները ,
 Եւ խոզի միս ու պիղծ բաներ և մնկ
 ուտողները
 Մէկտեղ բնաջինջ պիտի ըլլան , կ'ըսէ
 Տէրը :
 18 - Բայց ես անոնց գործերը ու խոր-
 հուրդները գիտեմ .
 Եւ պիտի ըլլայ որ բոլոր ազգերը ու
 լեզուները պիտի ժողվեմ ,
 Եւ անոնք պիտի գան ու իմ՝ փառքս
 տեսնեն :
 19 - Եւ անոնց մէջ նշան պիտի գնեմ ,
 Ու անոնցմէ ազատուածները ազգե-
 րուն պիտի զրկեմ ,
 Այսինքն դէպ ի Թարսիս , դէպ ի Փուղ
 և 'Լուգ' (աղեղնաւորները ,)
 Դէպ ի Թորէլ ու Յաւան ,

*Եբբ. անայնս թիւն օրհնողի

*Եբբ. մէկը

Այն հեռու կզգիները որոնք իմ համբուս չստեցին
 Եւ իմ փառքս չտեսան .
 Ու իմ փառքս ազգերու մէջ պիտի պատմեն :
 20 - Եւ անոնք ձիերով ու կառքերով ,
 Գահաւորակներով , ջորիներով ու տաճիկ ուղտերով՝
 Ձեր բոլոր եզրայրները ամէն ազգերէն իմ սուրբ լեռս Երուսաղէմ՝
 Տերոջը ընծայ պիտի բերեն , կ'ըսէ Տէրը ,
 Ինչպէս Իսրայէլի որդիները
 Մաքուր ամանով Տէրոջը տունը ընծայ կը բերեն :
 21 - Եւ անոնցմէ ալ պիտի առնեմ՝
 Քահանաներ «- Ղևտացիներ ըլլալու համար , կ'ըսէ Տէրը :

22 - Քանզի ինչպէս իմ ստեղծելու նոր երկինքս :
 Ու նոր երկիրս իմ առջևս պիտի կենան , կ'ըսէ Տէրը ,
 Այնպէս ձեր սերունդը ու ձեր անունը պիտի կենան :
 23 - Եւ պիտի ըլլայ որ նոր ամիսէ նոր ամիս
 Ու շաբաթէ շաբաթ
 Ամէն մարմին իմ առջևս երկրպագութիւն ընելու պիտի գայ , կ'ըսէ Տէրը :
 24 - Եւ անոնք պիտի ելլեն
 Ու ինծի ապստամբ եղող մարդոց դիերը պիտի տեսնեն .
 Քանզի անոնց որդը պիտի չմեռնի ,
 Եւ անոնց կրակը պիտի չմարի ,
 Ու անոնք ամէն մարմնի զգուանք պիտի ըլլան :

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Բենիամինի երկիրը , Անաթովթի մէջ եղող քահանաներէն Քեզկիայի որդւոյն Երեմիայի խօսքերը . 2 - Որու Տէրոջը խօսքը եղաւ , Յուդայի թագաւորին Ամանի որդւոյն Յովսիայի օրերը , անոր թագաւորութեան տասուիրեքերորդ տարին : 3 - Նաև Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի օրերը , մինչև Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Աեզեկիայի մետասաներորդ տարւոյն վերջը , մինչև Երուսաղէմի գերութիւնը , որ հինգերորդ ամսուն մէջ եղաւ :
 4 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով ,
 5 - Քեզ որովայնի մէջ չստեղծած քեզ գիտցայ ,
 Ու դուն «- Տօբդ արգանդէն չելած քեզ սրբեցի .
 Քեզ ազգերուն մարգարէ ըրի :
 6 - Այն առեմ ես ըսի ,
 Ոհ , Տէր Եհովա , ահա ես խօսիլ չեմ գիտեր ,

Վասն զի ես մանուկ եմ :
 7 - Բայց Տէրը ինծի ըսաւ ,
 Մի ըսեք թէ ես մանուկ եմ .
 Վասն զի ուր որ քեզ զրկեմ՝ պիտի երթաս ,
 Ու ինչ որ քեզի պատուիրեմ՝ պիտի խօսիս :
 8 - Անոնց երեսէն մի վախնար .
 Քանզի ես քեզի հետ եմ՝
 Քեզ ազատելու համար , կ'ըսէ Տէրը :
 9 - Եւ Տէրը իր ձեռքը երկնցուց ու իմ բերնիս դպաւ .
 Եւ Տէրը ինծի ըսաւ ,
 Ահա իմ խօսքերս քու բերանդ դրի :
 10 - Նայէ , ես այսօր քեզ ազգերուն վրայ ,
 Եւ թագաւորութիւններուն վրայ կայնեցուցի ,
 Որպէս զի խլես ու փլցնես և կորսնցնես ու աւրես ,
 Նաև շինես ու անկես :
 11 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով ,
 Ով Երեմիա , ի՞նչ կը տեսնես :
 Ու ես ըսի , Նշենիի գաւազան մը կը տեսնեմ :

12 - Այն ատեն Տէրը ինծի ըսաւ, Աղէկ տեսար .

Վասն զի ես իմ խօսքիս համար զանիկա կատարելու *պիտի արտորամ* :

13 - Եւ երկրորդ անգամ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, Ի՞նչ կը տեսնես :

Ու ես ըսի, Եւացող կաթսայ մը կը տեսնեմ ,

Եւ անոր երեսը դէպ ի հիւսիս է :

14 - Եւ Տէրը ինծի ըսաւ,

Չարիքը հիւսիսէն պիտի բարբոքի երկրին բոլոր բնակիչներուն վրայ :

15 - Քանզի ահա ես հիւսիսի թագաւորութիւններուն

Բոլոր ազգատոհմները պիտի կանչեմ, կ'ըսէ Տէրը ,

Ու պիտի գան , և ամէն մէկը իր աթոռը

Երուսաղէմի դռներուն առջև ,

Եւ անոր շրջակայ պարիսպներուն վրայ

Ու Յուդայի բոլոր քաղաքներուն վրայ պիտի դնեն :

16 - Եւ պիտի խօսիմ անոնց իմ դատաստաններս ,

Անոնց բոլոր չարութիւններուն համար . Վասն զի անոնք զիս թողուցին ,

Եւ ուրիշ աստուածներու խունկ ծխեցին ,

Ու իրենց ձեռքերուն գործերուն երկրպագութիւն ըրին :

17 - Ուրեմն դուն քու մէջքդ պնդէ ու ելիր ,

Եւ քեզի բոլոր հրամայածս անոնց ըսէ ,

Անոնց երեսէն մի վախնար ,

Չըլլայ որ քեզ անոնց առջև ամօթով ընեմ :

18 - Եւ ես ահա այսօր քեզ բոլոր երկրին դէմ ,

Այսինքն Յուդայի թագաւորներուն , անոր իշխաններուն ,

Անոր քահանաներուն և երկրին ժողովուրդին

Ամուր քաղաքի պէս ու երկաթէ սիւնի պէս

Ու պղնձէ պարիսպներու պէս դրի .

19 - Եւ անոնք քեզի հետ պիտի պատերազմին ,

Բայց պիտի չկրնան քեզ յաղթել .

Վասն զի ես քեզի հետ եմ

*Քեզ ազատելու համար , կ'ըսէ Տէրը :

*ԵՔԵ. կը հսկեմ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով ,

2 - Գնա ու Երուսաղէմի ականջներուն կանչէ ու ըսէ ,

Տէրը այսպէս կ'ըսէ .

Անապատին մէջ այն չցանուած երկիրը իմ ետևէս եկած ատենդ՝

*Քու մանկութեանդ քաղցրութիւնը , Քու հարսնութեանդ սէրը քեզի համար յիշեցի :

3 - Իսրայէլ Տէրոջը սուրբ էր ,

Անոր արմախքներուն երախայրին էր .

Ամէն անոնք որ զանիկա կ'ուտէին՝ յանցաւոր կ'ըլլային .

Անոնց վրայ չարիք կը հասնէր , կ'ըսէ Տէրը :

4 - Տէրոջը խօսքը մտիկ ըրէք , ով Յակոբի տունը ,

Ու Իսրայէլի տանը բոլոր ազգատոհմները .

5 - Տէրը այսպէս կ'ըսէ .

Ձեր հայրերը ի՞նչ անիրաւութիւն գտան իմ վրաս ,

Որ ինծմէ հեռացան ,

Եւ ունայնութեան ետևէ երթալով ունայն եղան .

6 - Ու չըսին թէ Ո՞ւր է Տէրը

Որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց .

Որ մեզ անապատէն պալաացուց ,

Ամուսնութեան և փոսերու երկրէն ,

Չորութեան և մահուան ասուերի երկրէն ,

Այնպիսի երկրէ մը՝ ուրկէ մարդ չէր անցներ ,

Ու հոն մարդ չէր բնակեր :

7 - Եւ ձեզ բարեբեր երկիր մը բերի , Որպէս զի անոր պտուղը ու բարիքը ուտէք .

Եւ դուք մտաք ու իմ երկիրս անձաքուր ըրէք ,

Եւ իմ ժառանգութիւնս պղծեցիք :

8 - Քահանաները չըսին թէ Տէրը ո՞ւր է , Ու օրինաց վարդապետները զիս չճանչցան ,

Եւ հովիւները ինծմէ տպատամբեցան , Ու մարգարէները Բահաղով մարգարութիւն ըրին ,

Եւ անօգուտ բաներու ետևէ գացին :

9 - Ասոր համար ձեզի հետ տակաւին պիտի վիճիմ , կ'ըսէ Տէրը ,

Ու ձեր սրգուց սրգիներուն հետ պիտի վիճիմ :

10 - Վասն զի կիտացւոց կղզիները
անցէք ու նայեցէք ,

Եւ կեդար Բարդ զրկեցէք ու աղէկ
հասկցէք ,

Եւ տեսէք թէ այսպիսի բան մը եղէ՞ր է .

11 - Միթէ ազգ մը էր աստուածները
փոխե՞ց ,

Թէև անոնք Աստուած չեն .

Բայց իմ ժողովուրդս իր Փառքը

Անօգուտ բանի հետ փոխեց :

12 - Ով երկինք , ասոր վրայ զարմա-
ցէք .

Ապշեցէք ու խիստ սոսկացէք , կ'ըսէ
Տէրը .

13 - Վասն զի իմ ժողովուրդս երկու
չարութիւն գործեց ,

Զիս , կենաց ջուրին աղբիւրը , թողու-
ցին ,

Եւ իրենց գուբեր փորեցին ,

Ծակոտ գուբեր՝ որոնք չեն կրնար ջուր
պահել :

14 - Միթէ Խորայէլ ծառա՞յ է ,

կամ *ծառայի՞ զաւակ՝ է .

Անիկա ինչո՞ւ համար յափշտակու-
թեան մատնուեցաւ .

15 - Անոր վրայ առիւծի կորիւնները
գոչեցին

Ու ձայներնին հանեցին ,

Եւ անոր երկիրը աւերակ ըրին .

Անոր քաղաքները սյրեցան , անբնակ
եղան :

16 - Մեմփացւոց ու Տափնացւոց տղաք-
ները անգամ՝

Քու գլխուդ գազաթը կտարեցին :

17 - Զէ՞ որ ասիկա դուն քու վրադ
բերիր

Քու Տէր Աստուածդ ձգելով ,
Երբ անիկա ճամբուն մէջ քեզի առաջ-
նորդութիւն կ'ընէր :

18 - Եւ հիմա դուն Եգիպտացւոց ճամ-
բան ի՞նչ բան ունիս ,

Որ Սիւրբի ջուրը խմելու կ'երթա՞ .

կամ Ասորեստանի ճամբան ի՞նչ բան
ունիս ,

Որ Գեաին ջուրը խմելու կ'երթա՞ :

19 - Քու չարութիւնդ քեզ պիտի
խրատէ ,

Ու քու անհաւատարմութիւններդ
քեզ պիտի յանդիմանեն .

Արդ գիտցիր ու տես թէ գէշ ու դառն
բան մըն է ,

Որ քու Տէր Աստուածդ կը թողուս

Եւ քու վրադ իմ վախս չկայ ,
կ'ըսէ զօրաց Եհովա Տէրը :

20 - Վասն զի քու լուծդ շատանցմէ
*կտարեցի ,

Քու կապանքներդ փրցուցի ,

Ու դուն ըսիր , Օրինազանց չեմ՝ ըլլար .
Սակայն՝ ամէն բարձր բլուրի վրայ

Եւ ամէն կանանչ ծառի տակ

Ծռեցար՝ պունկուլթիւն ըրիր :

21 - Ու ես քեզ ընտիր որթ՝

Ու բոլորովին հարազատ սերմ՝ անկեր
էի ,

Եւ դուն ի՞նչպէս վայրենի որթի անպի-
տան ճիւղերու պէս եղար ինծի :

22 - Եթէ բորակով լուացուիս

Ու շատ օճառ ալ գործածես ,

Քու անօրէնութիւնդ առջևս բիծի պէս
կը մնայ ,

կ'ըսէ Տէր Եհովա :

23 - Ի՞նչպէս կրնաս ըսել ,

Ես չպղծուեցայ ,

Բահաղի ետեւէն չգացի .

Հովիտին մէջ քու ճամբադ նայէ ,

Ինչ ըրածդ գիտցիր ,

Ով խտորնակ ճամբաներ պարտող
արագընթաց տաճիկ ուղտ :

24 - Անապատը սովորած վայրենի էջը ,
Որ իր հոգւոյն ցանկութիւնովը օդը կը
ծծէ ,

Իր ցանկութենէն ո՞վ կրնայ ետ դար-
ձընել .

Զանիկա ամէն փնտուղները չեն յոգ-
նիր ,

Զանիկա իր ամուսն մէջ կը գանեն :

25 - Ոտքդ մերկութենէ ու կոկորդդ
ծարաւէ ետ պահէ .

Բայց դուն ըսիր , †Անկարելի է՝ չըլ-
լար .

Վասն զի օտարները սիրեր եմ ,

Ու անոնց ետեւէն պիտի երթամ :

26 - Ինչպէս գողը բռնուած տատեն
կ'ամչնայ ,

Այսպէս պիտի ամչնան Խորայէլի տունը ,
Իրենք , իրենց թագաւորները -- իշ-
խանները

Եւ քահանաները ու մարգարէները .

27 - Որոնք փայտին կ'ըսեն , Դուն իմ
հայրս ես ,

Ու քարին՝ Դուն զիս ծնար .

*կամ , կտարեցիր , քու կապերդ փրցու-
ցիր , ու ըսիր , Ծառայութիւն չեմ
ըներ . այնպէս որ

†Եբբ. Յոյս չկայ

*Եբբ. ընդոծ ին

Քանզի ինծի կռնակ դարձուցին և ոչ թէ երես .

Բայց իրենց ձախորդութեան ժամանակը կ'ըսեն ,

Ելիր ու մեզ ազատէ' :

28 - Եւ ո՛ւր են քու աստուածներդ , զորոնք քեզի շինեցիր .

Եթէ քու ձախորդութեանդ ժամանակը քեզ կրնան ազատել , թող ելլեն .

Վասն զի քու աստուածներդ , ով Յուդա ,

Քու քաղաքներուդ թիւին չափ եղան :

29 - Ինչո՞ւ համար ինծի հեռ կը վիճիք .

Դուք ամէնդ ինծմէ ապտամբեցաք , կ'ըսէ Տէրը :

30 - Պարապ տեղ ձեր աղաքը ձեռեցի . Անոնք խրատ չառին .

Ձեր սուրը ապականարար առիւծի պէս

Ձեր մարգարէները կերաւ :

31 - Ով ազգ , Տէրոջը խօսքին նայեցէք .

Միթէ ես անապատ եղայ Իսրայէլի , կամ մնւթ երկի՞ր մը .

Իմ ժողովուրդս ինչո՞ւ կ'ըսեն ,

Մենք ինքնագլուխ կը պտրաինք ,

Մէյմըն ալ քեզի չենք գար :

32 - Միթէ կոյսը իր վարդերը , կամ հարսը իր գօտին կը մոռնայ .

Բայց իմ ժողովուրդս անթիւ օրեր զիս մոռցաւ :

33 - Աէր փնտռելու համար՝ ինչո՞ւ քու ճամբող աղէկ կը ցուցնես , Այնպէս որ քու ճամբաներդ չար կիներուն ալ սորվեցուցիր :

34 - Նաև քու քղանցքներուդ վրայ Անմեղ աղքատներուն հոգիներուն արիւնները գտնուեցան .

Ձանոնք գողտուկ տեղեր չգտայ , Հապա այս ամէն բաներուն վրայ :

35 - Բայց դուն կ'ըսես թէ Անմեղ ըլլալուս համար

Անոր բարկութիւնը անշուշտ ինծմէ պիտի դառնայ :

Ահա ես քեզի հեռ դաս պիտի վարեմ՝ Ես մեղք չգործեցի՝ ըսելուդ համար :

36 - Ինչո՞ւ ճամբող փոխելով այսչափ կը թափառես .

Դուն եգիպտոսէ ալ պիտի ամչնաս , Ինչպէս Ասորեստանէ ամչցար :

37 - Դուն ասկէ ալ պիտի ելլես

Ձեռքերդ զիտուդ վրայ դր՝ .

Քանզի Տէրը քու յայտերդ մերժեց ,

Ու անոնցմով յաջողութիւն պիտի չունենաս :

ԳԼ. Գ

Կ'ըսեն թէ Մարդ մը եթէ իր կինը արձակէ ,

Եւ անիկա անոր քովէն երթայ և ուրիշ այր մը առնէ ,

Անիկա մէյմըն ալ այն կնոջ կը՛ դառնայ .

Այն երկիրը բոլորովին չը՛ պղծուիր .

Բայց դուն , Իէն շատ համանիներու հեռ շնութիւն ըրիր ,

Նորէն ինծի դարձիր , կ'ըսէ Տէրը :

2 - Աչքերդ բլուրներուն վերցուր ու նայէ ,

Ո՞ւր պռնկութիւն չըրիր .

Դուն անոնց համար ճամբաներուն վրայ նստար

Անապատի Արաբացիին պէս ,

Եւ քու պռնկութիւններովդ ու չարութիւններովդ երկիրը պղծեցիր :

3 - Ուստի անձրևները խափանեցան ,

Ու վերջին անձրևը չեղաւ ,

Սակայն քու ճակատդ պռնկի հալածութիւն պէս եղաւ ,

Ամօթը մէկդի ձգեցիր :

4 - Միթէ ասկէ ետքը ինծի պիտի չազաղակե՞ս՝ ըսելու ,

Ով Հայր իմ , դուն ես իմ մանկութեանս առաջնորդը :

5 - Միթէ յաւիտեան պիտի բարկանայ ,

Կամ երբեք չի միշտ պիտի պահէ՞ .

Ահա դուն այսպէս խօսեցար ,

Եւ քու կարողութեանդ չափ չարութիւն գործեցիր :

6 - Ու Յովսիա թագաւորին օրերը Տէրը ինծի ըսաւ ,

Ապտամբ Իսրայէլի ըրածը տեսա՞ր .

Անիկա ամէն բարձր լեռան վրայ

Ու ամէն կանանչ ծառի տակ գնաց ,

Եւ հոն շնութիւն ըրաւ :

7 - Ու անիկա այս ամէն բաները ընելէն ետքը

Ըսի , Ինծի դարձիր , բայց անիկա չգործաւ .

Եւ անոր ուխտագրուժ քոյրը Յուդա առիւն տեսաւ :

8 - Ու երբ ապտամբ Իսրայէլի շնութիւն ընելուն պատճառաւ՝

Զանկա արձակեցի և արձակման
 թուղթը անոր տուի,
 Տեսայ որ անոր ուխտագրուժ քոյրը
 Յուգա չվախցաւ,
 Հապա գնաց ինք ալ շնութիւն ըրաւ:
 9 - Ու եղաւ որ անկա իր շնութեան
 լրբութիւնովը երկիրը պղծեց,
 Քանզի քարի ու փայտի հեա շնու-
 թիւն ըրաւ:
 10 - Այսաւ ամենայնիւ անոր ուխ-
 տագրուժ քոյրը Յուգա ալ
 Բոլոր սրտովը ինծի չգարձաւ,
 Հապա ստութեամբ քարձո՞ւ, կ'ըսէ
 Տէրը:
 11 - Եւ Տէրը ինծի ըսաւ,
 Ապատամբ Իսրայէլը ուխտագրուժ Յու-
 գայէ աւելի զինք արգարացուց:
 12 - Գնա այս խօսքերը գէպ ի հիւսիս
 կանչելով ըսէ,
 Դարձիր, ով ապատամբ Իսրայէլ, կ'ըսէ
 Տէրը,
 Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թա-
 փեր:
 Քանզի ես սղորմած եմ, կ'ըսէ Տէրը,
 Յաւիտեան սխ չեմ պահեր:
 13 - Միայն թէ քու անօրէնութիւնդ
 ճանչցիր,
 Որ քու Տէր Աստուծմէդ ապատամբե-
 ցար,
 Եւ ամէն կանանչ ծառի տակ
 Քու ճամբաներդ օտարներուն տարա-
 ծեցիր:
 Ու իմ խօսքիս հնազանդութիւն չը-
 րիք, կ'ըսէ Տէրը:
 14 - Դարձէք, ով ապատամբ որդիք,
 կ'ըսէ Տէրը,
 Քանզի *Բէւ ձեզ մերժեցի,
 Բայց՝ ձեզ պիտի առնեմ, մէկ քա-
 ղաքէ մէկ հոգի,
 Ու մէկ ազգատոհմէ երկու հոգի,
 Ու ձեզ Սիօն պիտի բերեմ:
 15 - Եւ ձեզի իմ սրտիս յարմար հո-
 վիւներ պիտի տամ,
 Ու ձեզ գիտութեամբ և հանճարով
 պիտի հովուեն:
 16 - Ու երբ դուք այն օրերը երկրի
 վրայ շատնաք ու աճիք, կ'ըսէ
 Տէրը,
 Մէյմըն ալ Տէրոջը ուխտին տապա-
 նակը՝ պիտի չըսեն:
 Եւ անկա Գիւն միտքը պիտի չգայ,
 Ու զանկա պիտի չյիշեն,

Եւ անոր այցելութիւն պիտի չընեն.
 Ու այս Բաները մէյմըն ալ պիտի չը-
 լան:
 17 - Այն ատեն Երուսաղէմը Տէրոջը
 աթուր պիտի անուանեն,
 Եւ ամէն ազգերը հոն՝ Տէրոջը ան-
 ուանը համար Երուսաղէմ պի-
 տի ժողվուին:
 Եւ մէյմըն ալ իրենց չար սրտին կա-
 մակորութեանը ետեէն պիտի
 չերթան:
 18 - Այն օրերը Յուգայի տունը
 Իսրայէլի տանը հեա պիտի երթայ,
 Ու երբեք մէկտեղ հիւսիսի երկրէն
 Անոնց հայրերուն ժառանգութիւն
 տուած երկիրս պիտի գան:
 19 - Բայց ես ըսի, Քեզ ի՞նչպէս որդի-
 ներուն մէջ գնեմ,
 Եւ քեզի այն ցանկալի երկիրը,
 Ազգերուն խիտ գեղեցիկ ժառանգու-
 թիւնը, տամ:
 Ու ըսի, Ինծի Հայր իմ՝ պիտի աղա-
 ղակես,
 Եւ ինծի հեաւելէն ետ պիտի չդառ-
 նաս:
 20 - Իրաւցընէ, ով Իսրայէլի տունը,
 Ինչպէս կին մը իր երկանը անհաւա-
 տարիմ կ'ըլլայ,
 Այնպէս ալ դուք ինծի անհաւատա-
 րիմ եղաք, կ'ըսէ Տէրը:
 21 - Բլուրներուն վրայ ձայն մը
 լսուեցաւ,
 Իսրայէլի որդիներուն աղաչանքի ու-
 լացի ձայնը:
 Վասն զի անոնք իրենց ճամբան խո-
 տարցուցին,
 Իրենց Տէր Աստուծը մոռցան:
 22 - Ով ապատամբ որդիներ, դար-
 ձէք,
 Ես ձեր ապատամբութիւնները կը
 բժշկեմ:
 Ահա մենք քեզի կու գանք,
 Քանզի դուն մեր Տէր Աստուծն ես:
 23 - Յիրաւի բլուրներուն
 Եւ լեռներու բազմութեանը յաւա-
 պարապ բան է:
 Հապա Իսրայէլի փրկութիւնը մեր
 Տէր Աստուծմէն է:
 24 - Վասն զի մեր մանկութենէն
 ի վեր մեր հայրերուն վաստակը,
 Անոնց հօտերը և արջաւները,
 Անոնց աղաքները ու աղջիկները ա-
 մօթը կերաւ:
 25 - Մեր ամօթովը կը պառկինք,

*Կա՞մ, ձեր վրայ տիրողը ես եմ, և

Ու մեր անարգանքը մեզ կը ծածկէ.
 Վասն զի մեր մանկութենէն մինչև
 այսօր
 Թէ՛ մենք և թէ՛ մեր հայրերը
 Մեր Տէր Աստուծոյն դէմ՝ մեղք գործեցինք,
 Ու մեր Տէր Աստուծոյն ձայնին հնազանդութիւն չըրինք :

ԳԼ. Գ

Եթէ դառնաս, ով Իսրայէլ, կ'ըսէ Տէրը,

Ինձի պիտի դառնաս.
 Ու եթէ քու պղծութիւններդ իմ առջևէս վերցնես,

Այլ թափառական պիտի չըլլաս:
 2 - Եւ ճշմարտութեամբ, իրաւամբ ու արդարութեամբ

Երգում պիտի ընես թէ Տէրը կենդանի է.

Եւ ազգերը անով պիտի օրհնուին,
 Ու անով պիտի պարծին :

3 - Վասն զի Տէրը Յուդայի ու Երուսաղէմի մարդոց այսպէս կ'ըսէ.

Չմշակուած երկիրներ հերկեցէք ձեզի,
 Ու փուշերու մէջ մի ցանէք:

4 - Ով Յուդայի մարդիկ ու Երուսաղէմի բնակիչներ,

Տէրոջը թլփատուեցէք,
 Եւ ձեր սրտին անթլփատութիւնը վերցուցէք,

Որ չըլլայ թէ իմ բարկութիւնս ձեր չար գործերուն համար

Կրակի պէս *բորբոքի ու այրէ, և մարող մը չըլլայ :

5 - Յուդայի մէջ պատմեցէք,
 Ու Երուսաղէմի մէջ քարոզեցէք ու ըսէք,

Երկրի վրայ փող հնչեցուցէք,
 Բարձրաձայն աղաղակեցէք ու ըսէք,
 Ժողովուեցէք ու պարսպաւոր քաղաքները մտնենք :

6 - Դէպ ի Սիօն դրօշ վերցուցէք,
 Քաշուեցէք, մի կայնիք .

Վասն զի ես չարիք ու մեծ կատարած պիտի բերեմ՝ հիւսիսէն:

7 - Ասիւծը իր Գորջէն ելաւ,
 Եւ ազգերը ջարդօղը իր անդէն ելաւ,
 Ճամբայ ինկաւ,

Որպէս զի քու երկիրդ աւերակ ընէ.
 Քաղաքներդ պիտի փլչին,

Ու անոց մէջ բնակիչ պիտի չգտնուի :
 8 - Ասոր համար քուրձեր հագէք

Եւ սուգ ընելով ողբացէք,
 Վասն զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը մեզմէ չգարձաւ:

9 - Ու պիտի ըլլայ այն օրը, կ'ըսէ Տէրը,

Որ թագաւորին սիրտը ու իշխաններուն սիրտը պիտի հառնի .

Եւ քահանաները պիտի ապշին,
 Ու մարգարէները պիտի հիանան:

10 - Այն ատեն ըսի,
 Աւա՛ղ, ով Տէր Եհովա,

Արդարեւ դուն այս ժողովուրդը ու Երուսաղէմը խաբելով խաբեցիր՝ ըսելով,

Ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ.
 Եւ «հ» սուրը մինչև անոց հոգին հասաւ :

11 - Այն ատեն այս ժողովուրդին ու Երուսաղէմի պիտի ըսուի,

Այրող հով մը անապատին ըլլուրներէն և չէ

Իմ ժողովուրդիս աղջկան ճամբուն մէջ,

Ոչ թէ հասելու համար, ոչ ալ մտքերը համար :

12 - Ասկէ սաստիկ հով մը պիտի գայ ինձի .

Հիմա ես ալ անոց հետ դատաստաններով պիտի խօսիմ :

13 - Ահա անիկա ամպերու պէս պիտի ելլէ,

Եւ անոր կառքերը մըրիկի պէս .
 Անոր ձիերը արծիւներէն արագընթաց են .

Վա՛յ մեզի՝ որ կ'աւրուինք:

14 - Ով Երուսաղէմ, սիրտդ չարութենէ լուս,

Որպէս զի փրկութիւն գտնես .
 Իսկ չար խորհուրդներդ մինչև ե՞րբ սրտիդ մէջ պիտի մնան :

15 - Վասն զի ձայն մը Գանէ լուր կը բերէ,

Ու Եփրեմի լեռնէն թշուառութիւն լսել կու տայ :

16 - Ա՛խ՛ ազգերուն յիշեցէք,
 Ահա Երուսաղէմի վրայով պատմեցէք,

Որ հեռաւոր երկրէ պաշարողներ կու գան,

Եւ Յուդայի քաղաքներուն վրայ իրենց ձայնը կ'արձակեն:

17 - Անոր չար կողմը ագարակի պահապաններու պէս պիտի պաշարեն,

*ԵՔԵ. ելլէ †ԵՔԵ. մացառէն

Վասն զի անիկա ինծմէ ապստամբեցաւ, կ'ըսէ Տէրը :

18 - Այս բաները քու ճամբաներդ ու գործերդ բերին քու վրագ :

Ասիկա քու չարութիւնդ է, վասն զի դառն է :

Որովհետեւ մինչև քու սիրտդ հասաւ :

19 - Փո՛րս, փո՛րս . մինչև սրտիս *շտեմարանները ցաւ կը զգամ :

Սիրաս իմ ներսիդիս կը խուսկի, չեմ կրնար լռել :

Քանզի դուն, ով իմ անձս, փողին ձայնը ,

Պատերազմին ազազակը , լսեցիր :

20 - Կատրած կատրածի վրայ կը կանչուի ,

Վասն զի բոլոր երկիրը կործանեցաւ .

Վրաններս յանկարծակի՝

Ու խորաններս մէկէն կործանեցան :

21 - Մինչև ե՞րբ դրօշը պիտի տեսնեմ, եւ փողին ձայնը պիտի լսեմ :

22 - Քանզի իմ ժողովուրդս յիմար է , զիս չճանչցան :

Անոնք անմիտ զաւակներ են ,

Ու անոնց քով հանճար չկայ :

Անոնք չարութիւն ընելու իմաստուն են :

Բայց աղէկութիւն ընել չեն գիտեր :

23 - Երկրի վրայ նայեցայ, և ահա անձեւ ու պարսպ էր :

Երկինք նայեցայ, ու լոյս չուներ :

24 - Լեռներուն նայեցայ, և ահա կը գողային ,

Ու ամէն բլուրները կը սարսէին :

25 - Նայեցայ, և ահա մարդ մը չկար, Ու երկինքի բոլոր թռչունները փախած էին :

26 - Նայեցայ, և ահա պտղաբեր երկիրը անապատ եղած էր ,

Ու ամէն քաղաքները Տէրոջը երեսէն, Անոր ստատիկ բարկութեանը երեսէն , փլած էին :

27 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ .

Բոլոր երկիրը պիտի աւրուի, Բայց բոլորովին «-եբա՛կ պիտի չընեմ :

28 - Ասոր վրայ երկիր սուգ պիտի բուսէ, Ու վերէն երկինք պիտի խաւարի .

Վասն զի խօսեցայ, սրոշեցի, Եւ պիտի չզղջամ ու անկէ ետ պիտի չդառնամ :

29 - Ձիաւորներուն և աղեղնաւորներուն ձայնէն

Բոլոր քաղաքը պիտի փախչի .

Անոնք թանձրախիտ անտառներու մէջ պիտի մօնեն ,

Ու ապառաժներու վրայ պիտի ելլեն .

Ամէն քաղաքները պիտի թողուին, Եւ անոնց մէջ մարդ պիտի չբնակի :

30 - Ու դուն, ով աւրուած, ի՞նչ պիտի ընես .

Թէև կարմիրներ հագնիս, Քեզ սակի զարդերով զարդարես, Ու *աչքերուդ վրայ շատ ծարոյր աղ դնես ,

Պարսպ տեղ կը զարդարուիս .

Քո՛ւ հոմանիւներդ քեզ մերժեցին եւ քու հոգիդ կը փնտռեն :

31 - Քանզի ձայն մը լսեցի ծննդական կնոջ նային պէս՝

Ու իր անդրանիկը ծնանողին երկունքին պէս .

Սիօնի աղջկան ձայնը՝ որ կը հառաչէ, ու ձեռքերը բանալով՝ կ'ըսէ,

Հիմա վա՛յ ինծի, Քանզի սպաննողներուն պատճառաւ հոգիս մարեցաւ :

ԳԼ Ե

Երուսողէմի փողոցներուն մէջ պարտեցէք ,

Ու հիմա նայեցէք ու գիացէք ,

Ու անոր հրապարակներուն մէջ փրնաւեցէք .

Եթէ մարդ մը կրնաք գտնել ,

Եթէ իրաւունք ընող, ճշմարտութիւն փնտռող մը կայ,

Ես այն «աղա՛խ» թողութիւն ընեմ :

2 - Ու թէև Տէրը կենդանի է՝ կ'ըսեն, Բայց ստութեամբ երդում կ'ընեն :

3 - Ով Տէր, միթէ քու աչքերդ ճշմարտութեան չե՞ն նայի :

Ձանոնք ծեծեցիր, բայց ցաւ մը չզգացին .

Ձանոնք հատցուցիր , քոյս խրատ ընդունիլ չուզեցին .

Իրենց երեսը ապառաժէն աւելի կարծրացուցին ,

Եւ դառնալ չուզեցին :

4 - Ու ես ըսի , Իրաւցընէ անոնք աղքատ են ,

Անոնք անմիտ են, քանզի Տէրոջը ճամբան ,

*Եբբ. պատերը

*Եբբ. աչքերդ ծարուրով պատուես

Իրենց Աստուծոյն դատատանը , չեն
 գիտեր :

5 - Ես մեծերուն երթամ
 Եւ անոնց հետ խօսիմ ,
 Վասն զի անոնք Տէրոջը ճամբան ,
 Իրենց Աստուծոյն դատատանը , գի-
 տեն .

Բայց «հ» անոնք ալ լուծը կտարեցին ,
 Կապերը փրցուցին :

6 - Անոր համար զանոնք անտառին
 առիւծը պիտի մեռցնէ ,
 Զանոնք *անապատներուն գայլը՝ պիտի
 սասկեցնէ ,
 Անոնց քաղաքներուն վրայ ինձը պիտի
 հսկէ ,
 Անոնցմէ ամէն դուրս ելլողը պիտի
 գիշատուի .

Վասն զի անոնց յանցանքները շատ-
 ցան ,
 Ու անոնց ապստամբութիւնները բազ-
 մացան :

7 - Այս բանին համար քեզի ի՞նչպէս
 ներեմ .

Քու որդիներդ զիս թողուցին
 Եւ չաստուածներով երգում ըրին .
 Ու երբ զանոնք կշտացուցի , անոնք
 շնութիւն ըրին ,
 Եւ բազմութեամբ բողոնոցը գացին :

8 - Առտուանց գիրցած ձիերու պէ՞ են ,
 Ամէն մարդ իր գրացիին կնօջ կը
 վրնջէ :

9 - Միթէ այս բաներուն համար այցե-
 լութիւն պիտի չընե՞մ , կ'ըսէ
 Տէրը ,
 Կամ այսպիսի ազգէ մը իմ հոգիս վրէժ
 պիտի չառնե՞մ :

10 - Անոր պարիսպներուն վրայ ելէք
 ու կործանեցէք ,
 Բայց ոչ թէ բոլորովին .
 Անոր մարտկոցները վերցուցէք ,
 Վասն զի անոնք Տէրոջը չեն :

11 - Քանզի Իսրայէլի տունը և Յու-
 դայի տունը
 Ինծի խիտ անհաւատարիմ եղան ,
 կ'ըսէ Տէրը .

12 - Անոնք Տէրը ուրացան ու ըսին ,
 Անիկա չէ ,
 Ու մեր վրայ չարիք պիտի չգայ ,
 Եւ սուր ու սով պիտի չտեսնենք .

13 - Եւ մարգարէները հովի պէս են ,
 Ու անոնց քերական Տէրու խօսքը չկայ .

Անոնց այնպէս ըլլայ :

14 - Անոր համար զօրաց Տէր Աստ-
 ուածը այսպէս կ'ըսէ .
 Դուք այս խօսքը խօսելուդ համար ,
 Ահա ես իմ խօսքերս քու բերնիդ մէջ
 կրակ՝
 Եւ այս ժողովուրդը փայտ պիտի ընեմ ,
 Ու զանոնք պիտի սպառէ :

15 - Ահա ես ձեր վրայ հեռուէն ազգ-
 մը կը բերեմ ,
 Ով Իսրայէլի տունը , կ'ըսէ Տէրը .
 Անիկա զօրաւոր ազգ է ,
 Անիկա հին ազգ է ,
 Եւ այնպիսի ազգ մըն է՝ որ դուն անոր
 լեզուն չես գիտեր
 Ու խօսածը չես հասկնար .

16 - Անոնց կապարճները բաց գերեզ-
 մանի պէս են .
 Ամէնն ալ զօրաւոր մարդիկ էն :

17 - Եւ անիկա պիտի ուտէ քու
 հունձքդ ,
 Ու քու տղաքներուդ ու աղջիկներուդ
 ուտելու հացը .
 Քու հօտերդ և արջառներդ պիտի ու-
 տէ ,
 Քու այգիներդ ու թզենիներդ պիտի
 ուտէ ,
 Քու ապաւինած պարսպաւոր քաղաք-
 ներդ

Սրով պիտի աւրէ :

18 - Բայց այն օրերն ալ , կ'ըսէ Տէրը ,
 Ձեզ պիտի չհատցնեմ :

19 - Եւ եթէ ըսէք ,
 Ի՞նչ պատճառաւ մեր Տէր Աստուածը
 այս ամէնը մեզի բրաւ .
 Դուն անոնց ըսես ,
 Ինչպէս դուք զիս թողուցիք ,
 Ու ձեր երկրին մէջ օտար աստուած-
 ներու ծառայութիւն ըրիք ,
 Այնպէս դուք ձերը չեղած երկրին
 մէջ
 Օտարներու ծառայութիւն պիտի ընէք :

20 - Ասիկա Յակոբի տանը մէջ
 պատմեցէք ,
 Ու Յուդայի մէջ հրատարակելով՝ ըսէք ,
 21 - Հիմա մտիկ ըրէք ասիկա ,
 Ով յիմար ու անմիա ժողովուրդ ,
 Որ աչքեր ունիք , բայց չէք տեսներ .
 Ականջներ ունիք , բայց չէք լսեր :

22 - Ինձմէ պիտի չվախնա՞ք , կ'ըսէ
 Տէրը ,
 Իմ երեսէս պիտի չգողա՞ք ,
 Որ յաւիտենական հրամանով մը ա-
 լազը ծովուն սահման դրի .

*Կ-մ, երեկոյեան գայլը . Սաղ. ճդ. 20 : Ամբ. ա. 8 : Սոփ. գ. 3 :

Եւ անկէ չանցնիր .
 Թէեւ անոր աղիքները կը ծփին, բայց
 չեն կրնար յաղթել,
 Թէեւ անոնք կը գոչեն, բայց անկէ չեն
 կրնար անցնիլ :
 23 - Սակայն այս ժողովուրդը անհնա-
 զանդ ու ապստամբ սիրտ մը
 ունի .
 Անոնք երթալով իրենց ճամբան ծռե-
 ցին ,
 24 - Եւ իրենց սրտին մէջ չբռին ,
 Մեր Տէր Աստուծո՞ւմէն վախնանք ,
 Ան որ անձրևը , առաջին ու վերջին
 անձրևը , իր տառնին կու տայ ,
 Ե- հունձքի համար որոշուած շա-
 բաթները մեզի կը պահէ :
 25 - Զէր անօրէնութիւնները ասոնք
 հեռացուցին .
 Զերմեղքերը բարկեքը ձեզմէ արգիլեցին :
 26 - Վասն զի իմ ժողովուրդիս մէջ
 ամբարիշտներ գտնուեցան .
 Անոնք որսորդներուն կձկաեղուն պէս
 դարանամուս կ'ըլլան ,
 Որոգայթ կը լարեն, մարդիկ կը բռնեն :
 27 - Ինչպէս վանդակը թռչուններով
 լեցուն է ,
 Այնպէս անոնց սուները նենգութեամբ
 լեցուն են .
 Անոր համար անոնք մեծցան ու հա-
 րրատացան .
 28 - Գիրցան, *պարարտացան,
 Եւ չարերուն գործերէն ալ գերազան-
 ցեցին .
 Անոնք շիտակ դատաստան չեն ըներ,
 Որբին իրաւունքը չեն պաշտպաներ ,
 (Այսու ամենայնիւ յաջողութիւն կը
 գտնեն ,)
 Եւ աղքատին դատը չեն տեսներ :
 29 - Միթէ այս բաներուն համար այ-
 ցելութիւն պիտի չընե՞մ, կ'ըսէ
 Տէրը ,
 Պո՞ւմ այսպիսի ազգէ մը իմ հոգիս վրէժ
 պիտի չառնե՞մ :
 30-Երկրին վրայ զարմանալի ու սու-
 կայի գործ կ'ըլլայ .
 31 - Մարգարէները ստութեամբ մար-
 գարէութիւն կ'ընեն ,
 Եւ քահանաները անոնց ձեռքով կ'իշ-
 խեն ,
 Ու իմ ժողովուրդս այսպէս կ'ախորժի .
 Բայց ի՞նչ պիտի ընէք , եբէ ասոնց
 վախճանը հասնի :

*Եբբ. փայլուն եղան

Ով Բենիամինի որդիներ, Երուսա-
 ղէմի մէջէն քաշուեցէք,
 Ու Թեկուէի մէջ փող հնչեցուցէք ,
 Եւ Բեթաբարմայի վրայ նշան վերցու-
 ցէք .
 Վասն զի հիւսիսէն չարիք ու մեծ կո-
 տորած կ'երևնայ :
 2 - Սիօնի աղջիկը գեղեցիկ ու փափուկ
 կնոջ մը նմանցուցի :
 3 - Հովիւները և անոնց հօտերը անոր
 պիտի երթան ,
 Անոր դէմ շուրջանակի վրաններ պիտի
 կանգնեն ,
 Ամէն մէկը իր սահմանին մէջ պիտի
 հովուէ :
 4 - Անոր վրայ պատերազմ՝ պատ-
 րաստեցէք .
 Ելէք , ու կէսօրին ելլէք .
 Վա՛յ մեզի, վասն զի օրը կ'անցնի,
 Եւ իրիկուան ստուերները կ'երկննան :
 5 - Ելէք, ու գիշերով ելլէք
 Եւ անոր *բերդերը կործանենք :
 6 - Վասն զի զօրաց Տէրը այսպէս
 կ'ըսէ .
 Ծառեր կտրեցէք ու Երուսաղէմի դէմ
 պատնէշ կանգնեցէք .
 Ասիկա այցելութիւն ընելու քաղաք
 մըն է ,
 Բոլորովին հարստահարութեամբ լեց-
 ուած է :
 7-Ինչպէս ջրհորը իր ջուրերը կը բղխէ,
 Անիկա ալ իր չարութիւնը այնպէս կը
 բղխէ .
 Անոր մէջ զրկանք ու յափշտակութիւն
 կը լսուի ,
 Իմ՝ առջևս միշտ ցուեր ու հարուած-
 ներ կան :
 8 - Ով Երուսաղէմ՝ խրատուէ,
 Զըլլայ որ իմ հոգիս քեզմէ զատուի .
 Զըլլայ որ քեզ աւերակ և անբնակ
 երկրի մը դարձնեմ :
 9 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ .
 Իսրայէլի մնացորդները այգիի պէս
 Բոլորովին ճւղաքաղ պիտի ընեն .
 Քու ձեռքդ՝ կ'իթողի պէս կողմնեցու
 դարձուր :
 10 - Որո՞ւ խօսիմ՝ ու վկայութիւն
 ընեմ՝ որ լսին .
 Ահա անոնց ականջները անթլփաստ են,
 Եւ չեն կրնար մտիկ ընել .

*Կա՛մ, պալատները

Ահա Տէրոջը խօսքը անոնց առջև անար-
գանք եղաւ,
Անկէ չեն ատորժիր :
11 - Սակայն ես Տէրոջը բարկութիւ-
նովը լեցուած եմ,
Ինքզինքս զսպելէն յողնեցայ .
Ձեռքիս դուրսը պիտի թափեմ տղաք-
ներուն վրայ,
Ու նաև երիտասարդներուն ժողովին
վրայ .
Քանզի այր ու կին մարդը ,
Ծերը ու տարիքը առածը պիտի բռ-
նուին :
12 - Եւ անոնց տուները , ագարակները
ու կիները մէկտեղ
Օտարներուն ձեռքը պիտի անցնին .
Վասն զի երկրին բնակիչներուն վրայ
իմ ձեռքս պիտի երկնցնեմ , կ'ըսէ
Տէրը :
13 - Վասն զի անոնց պզտիկէն մինչև
մեծը
Ամէնը ագահութեան ետէ եղան,
Ու մարգարէէն մինչև քահանան
Ամէնը ստութեամբ կը վարուին :
14 - Եւ իմ ժողովուրդիս աղջկան
վերքը հարևանցի բժշկելով՝
Խաղաղութիւն , խաղաղութիւն է՝
կ'ըսեն ,
Երբ խաղութիւն չկայ :
15 - Միթէ իրենց պղծութիւն ըրած
ատենը կ'ամչնա՞ն .
Բնաւ չեն ամչնար ,
Ու պատկառիլ չեն գիտեր .
Անոր համար իյնողներուն մէջ պիտի
իյնան ,
Անոնց այցելութիւն ըրած ատենս պի-
տի գլորին , կ'ըսէ Տէրը :
16 - Տէրը այսպէս կ'ըսէ .
Ճամբաներու վրայ կայնեցէք ու նա-
յեցէք ,
Եւ հին շաւիղներուն համար հարցու-
ցէք ,
Թէ ո՞րն է բարի ճամբան .
Ու անոր մէջ քալեցէք ,
Որպէս զի ձեր հոգիներուն հանգիստ
գանէք .
Բայց անոնք ըսին , Անոր մէջ չենք քա-
լեր :
17 - Եւ ձեր վրայ դէտեր դրի , Ը՛եւ լ՛՛ ,
Փողին ձայնը մտիկ բրէք .
Բայց անոնք ըսին , Մտիկ չենք ըներ :
18 - Ուրեմն , ով ազգեր , լսեցէք .
Ով ժողովք , անոնց մէջ եղած բանը
գիտցիր :

19 - Լսէ , ով երկիր ,
Ահա ես այս ժողովուրդին վրայ չարիք ,
Անոնց խորհուրդներուն պտուղը , պի-
տի բերեմ .
Վասն զի իմ խօսքերս մտիկ չըրին ,
Եւ իմ օրէնքս ալ մերժեցին :
20 - Ինչո՞ւ ինձի այսպէս Սաբայէ
կնդրուկ գայ ,
Ու հեռաւոր երկրէ՝ անուշահոտ խուն-
կեղէգն .
Ձեր ողջակէզները ընդունելի չեն ,
Եւ ձեր զոհերը ինձի հաճելի չեն :
21 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ .
Ահա ես այս ժողովուրդին առջև խո-
չեր կը դնեմ ,
Ու հայրերը որդիներուն հետ մէկտեղ
անոնց զարնուելով պիտի գլորին .
Դրացին ու բարեկամը պիտի կորսուին :
22 - Տէրը այսպէս կ'ըսէ .
Ահա հիւսիսի երկրէն ժողովուրդ մը
կու գայ ,
Ու երկրի ծայրերէն մեծ ազգ մը կ'ելլէ .
23 - Անոնք աղեղ և նիզակ կը կրեն ,
Անոնք անգութ ու անողորմ են .
Անոնց ձայնը ծովու պէս կը գուռայ ,
Եւ անոնք ձիերու վրայ կը հեծնեն ,
Ու պատերազմող մարդու պէս
Քեզի դէմ կը շարուին , ով դուստր
Սիօնի :
24 - Անոր լուրը լսեցինք .
Ձեռքերնիս թուլցան ,
Եւ ցաւերը մեզ պաշարեցին
Ծննդական կնոջ երկունքին պէս :
25 - Արտերը մի ելլէք ու ճամբաները
մի պարտիք .
Վասն զի չորս կողմը թշնամիին սուրը
«- վախ կայ :
26 - Ով իմ ժողովուրդիս աղջիկը ,
քուրճ հագիր
Եւ մոխրի մէջ թաւալէ ,
Ու խիստ գառն ողբով լաց ,
Ինչպէս մէկհատիկ տղու վրայ կու լան .
Վասն զի կործանողը յանկարծ մեր
վրայ պիտի գայ :
27 - Քեզ իմ ժողովրդիս մէջ փոր-
ձիչ «- բերդ դրի ,
Որպէս զի անոնց ճամբան գիանաս և
փորձես :
28 - Ամէնը կամակոր ապստամբներ են ,
Բանասարկութեան կը պարտին , պղինձ
ու երկաթ են .
Ամէնը ապականագործ են :
29 - Փուքը այրեցաւ ,
Կապարը կրակէն հասաւ .

Արծաթագործը պարապ տեղ կ'աշխատի,
 Վասն զի չարերը չորոշուեցան :
 30 - Անոնց Անպիտան արծաթ՝ պիտի կանչեն,
 Վասն զի Տէրը զանոնք մերժեց :

ԳԼ. Է

Տէրոջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է, որ ըսաւ,
 2 - Տէրոջը տանը դուռը կայնէ,
 Ու հոն այս խօսքը կանչէ ու ըսէ,
 Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով բոլոր Յուդա,
 Որ այս դռներէն կը մտնէք՝
 Տէրոջը երկրպագութիւն ընելու համար :
 3 - Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը,
 այսպէս կ'ըսէ .
 Ձեր ճամբաները ու գործերը ուղղեցէք,
 Եւ ձեզ պիտի թողում որ այս տեղ բնակիք :
 4 - Դուք մի ապաւինիք սուտ խօսքերուն՝ որ կ'ըսեն,
 Տէրոջը տաճարը, Տէրոջը տաճարը,
 Տէրոջը տաճարը ասոնք են :
 5 - Քանզի եթէ ձեր ճամբաները ու գործերը բոլորովին ուղղէք,
 Եւ եթէ մարդուն ու անոր ընկերին մէջտեղ
 Իրաւունքը զգուշութեամբ ի գործ դնէք,
 6 - Պանդուխտին, որբին ու որբեւորին զրկանք չընէք,
 Ու այս տեղ անմեղ արիւն չթափէք,
 Եւ օտար աստուածներու ետեւէ չերթաք,
 Որ ձեզի չարիքի պատճառ կ'ըլլայ,
 7 - Այն ատեն այս տեղ ձեր հայրերուն տուած երկրիս մէջ
 Պիտի բնակեցնեմ ձեզ յաւիտեանս յաւիտենից :
 8 - Ահա դուք սուտ խօսքերու կ'ապաւինիք,
 Որոնք չեն կրնար օգուտ մը ընել :
 9 - Արդեօք գողութիւն, մարդապանութիւն և շնութիւն ընելով,
 Ու սուտ երգում ընելով, և Բահազի խունկ ծխելով,
 Ու ձեր չզիտցած օտար աստուածներուն ետեւէն երթալով
 10 - Կրնա՞ք գալ ու իմ առջևս կայնիլ այս տանը մէջ՝

Որուն վրայ իմ անունս կոչուած է,
 Եւ ըսել թէ Ազատուեցանք որպէս զի այս ամէն պղծութիւնները ընենք :
 11 - Այս տունը, որուն վրայ իմ անունս կոչուած է,
 Միթէ ձեր աչքերուն առջև աւազակներու քարայր եղաւ .
 Ահա ես ալ տեսայ, կ'ըսէ Տէրը :
 12 - Բայց հիմա դուք Սելավի մէջ եղող իմ տեղս գացէք,
 Ուր առաջ իմ անունս հաստատեցի, Եւ տեսէք ինչ որ անոր բերեւ եմ՝
 Իմ ժողովուրդիս Իսրայէլի չարութեանը համար :
 13 - Ու հիմա որովհետեւ այս բոլոր գործերը ըրիք, կ'ըսէ Տէրը,
 Ու թէպէտ ձեզի խօսեցայ կանուխ ելլելով ու խօսելով, բայց դուք մտիկ չըրիք,
 Ձեզ կանչեցի, բայց դուք պատասխան չտուիք .
 14 - Ես ալ այս ձեր ապաւինած տանը, Որուն վրայ իմ անունս կոչուած է,
 Եւ ձեզի ու ձեր հայրերուն տուած տեղիս
 Սելավի ըրածիս պէս պիտի ընեմ :
 15 - Եւ ինչպէս ձեր բոլոր եղբայրները,
 Եփրեմի բոլոր սերունդը, վաճառեցի, Այնպէս ձեզ իմ առջևէս պիտի վաճառեմ :
 16 - Ուստի դուն այս ժողովուրդին համար աղօթք մի ըներ,
 Եւ անոնց համար աղաղակ ու աղաչանք մի մատուցաներ,
 Ու ինծի բարեխօսութիւն մի ըներ, Քանզի քեզի մտիկ չեմ ըներ :
 17 - Դուն չե՞ս տեսներ թէ անոնք ի՞նչ կը գործեն
 Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ :
 18 - Տղաքները փայտ կը ժողվեն, Եւ հայրերը կրակ կը վառեն,
 Ու կիները խմոր կը շաղեն՝ Երկինքի թագուհիին բլիթներ շինելու համար,
 Եւ օտար աստուածներու թափելու նուէրներ կը մատուցանեն,
 Որպէս զի զիս բարկացնեն :
 19 - Միթէ անոնք զի՞նչ կը բարկացնեն, կ'ըսէ Տէրը,
 Չե՞ որ իրենց անձը ինչպէս իրենց երեսին ամօթին համար :

20 - Անոր համար այսպէս կ'ըսէ Տէր
Եհովա .

Ահա իմ բարկութիւնս ու սրամտու-
թիւնս

Այս տեղին վրայ պիտի թափի՝
Մարդու վրայ և անասունի վրայ

Ու գաշտի ծառերուն վրայ
Ու երկրի պտուղներուն վրայ,

Եւ պիտի բռնկի ու պիտի չմարի :

21 - Զօրաց Տէրը , Խորայէլի Ասա-
ուածը , այսպէս կ'ըսէ .

Զեր սղջակէզները ձեր զոհերուն վրայ
ուելցուցէք և միս կերէք :

22 - Վասն զի ձեր հայրերը Եգիպտոսի
երկրէն հանած օրս՝

Անոնց քան զչասուցայ սղջակէզի ու
զոհի վրայով ,

Ոչ ալ անոնց հրամայեցի .

23 - Հապա անոնց այս բանը հրամա-
յեցի ու ըսի ,

Իմ ձայնս մտիկ ըրէք ,
Եւ ես ձեզի Աստուած ըլլամ՝ ,

Ու դուք ինծի ժողովուրդ ըլլաք .

Եւ ձեզի ամէն հրամայած ճամբանե-
րուս մէջ քալեցէք ,

Որպէս զի ձեզի աղէկ ըլլայ :

24 - Բայց անոնք մտիկ չըրին ու ա-
կանջնին չծռեցին ,

Հապա իրենց չար սրտին կամակորու-
թիւնովը

Իրենց խորհուրդներուն հեռեեցան ,

Ու ետ գացին և ոչ թէ առաջ :

25 - Զեր հայրերուն Եգիպտոսի երկրէն
ելած օրէն մինչև այսօր

Իմ բոլոր ծառաներս , մարգարէները ,
ձեզի զրկեցի .

Ամէն օր կանուխ ելլելով կը զրկէի .

26 - Ու ինծի մտիկ չըրին և ականջնին
չծռեցին ,

Հապա իրենց պարանոցը խտացուցին ,
Իրենց հայրերէն աւելի չար եղան :

27 - Եւ դուն այս բոլոր խօսքերը
անոնց պիտի զրուցես ,

Բայց քեզի մտիկ պիտի չընեն .

Զանոնք պիտի կանչես ,

Բայց քեզի պատասխան պիտի չտան :

28 - Այն ատեն անոնց ըսես ,

Իր Տէր Աստուծոյն ձայնը մտիկ չընող

Ու խրատ չընդունող ազգը ասիկա է .

Ճշմարտութիւնը կորսուեցաւ ու անոնց
բերնէն կարեցաւ :

29 - Մտղերդ կարէ ու նետէ , ու
Երուսաղէմ ,

Եւ ըլլուրներուն վրայ սղրա .

Քանզի Տէրը մերժեց ու երեսէ ձգեց
այն ազգը

Որու դէմ շատ սրդողեր էր :

30 - Վասն զի Յուդայի որդիները իմ
առջև չարութիւն գործեցին ,
կ'ըսէ Տէրը ,

Իրենց գարշելի բաները իմ անունովս
կոչուած տանը մէջ զրին ,

Որպէս զի զանհկա պղծեն :

31 - Ու Ենովմի որդւոյն ձորին մէջ
եղող Տօփեթի բարձր տեղերը
չինեցին՝

Իրենց աղաքը ու աղջիկները կրակով
այրելու համար .

Զոր անոնց չհրամայեցի ու միաքէս ալ
անցած չէր :

32 - Ուստի ահա օրեր կու գան , կ'ըսէ
Տէրը ,

Որ ալ Տօփեթ կամ Ենովմի որդւոյն
ձորը պիտի չըսուի ,

Հապա Ապանութեան ձոր .

Եւ Տօփեթի մէջ Բեթ-Էլ-Էր պիտի թա-
ղեն *մինչև որ ալ տեղ չմնայ :

33 - Ու այս ժողովուրդին զիերը
Երկինքի թռչուններուն ու երկրի գա-
զաններուն կերակուր պիտի ըլ-
լան ,

Եւ անոնք վաճառող մը պիտի չըլլայ :

34 - Ու Յուդայի քաղաքներէն ու
Երուսաղէմի փողոցներէն

Յնծութեան ձայնը և ուրախութեան
ձայնը ,

Փեսային ձայնը ու հարսին ձայնը պիտի
գադրեցնեմ ,

Վասն զի երկիրը ամայի պիտի ըլլայ :

ԳԼ Ը

Այն ժամանակ , կ'ըսէ Տէրը ,

Յուդայի թագաւորներուն սկոյրները ,
Ու անոր իշխաններուն սկոյրները ,

Եւ քահանաներուն սկոյրները ,

Ու մարգարէներուն սկոյրները ,

Ու Երուսաղէմի բնակիչներուն սկոյր-
ները

Իրենց գերեզմաններէն պիտի հանեն ,
2 - Եւ պիտի տարածեն զանոնք արևուն
առջև ու լուսնին առջև ,

Եւ երկինքի բոլոր զօրքին առջև ,

Զորոնք սիրեցին , ու անոնց ծառայե-
ցին ,

Եւ անոնց ետեւէն գացին ,

*Կամ, Բեթ-Էլ-Էր տեղ չըլլալուն համար

Ու զանոնք փնտռեցին, և անոնց երկրպագութիւնն ըրին .
 Անոնք պիտի չժողովուին ու պիտի չթաղուին ,
 Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան :
 3 - Եւ մահճը կեանքէն աւելի ցանկալի պիտի ըլլայ
 Այս չար ազգին բոլոր մնացորդներուն ,
 Որոնք մնացեր են այն ամէն տեղերը
 Ուր զանոնք վաճառեալ եմ , կ'ըսէ զօրաց Տէրը :
 4 - Ու անոնց ըսես , Տէրը այսպէս կ'ըսէ .
 Միթէ անոնք պիտի իյնան ու պիտի չելլեն :
 Կամ Գիւ ճամբայէն կը խոտորի ու ետ չը դառնար .
 5 - Ինչո՞ւ այս Երուսաղէմի ժողովուրդը մշտապէս խոտորումով մը խոտորեցաւ .
 Անոնք նենդութեան յարեցան , դառնալ չուզեցին :
 6 - Ականջ դրի ու մտիկ ըրի , Անոնք շիտակ չեն խօսիր .
 Մարդ մը չկայ որ իր չարութենէն զղջայ ,
 Ու ըսէ թէ Ի՞նչ գործեցի .
 Ամէնը իրենց ընթացքին դարձան՝ Պատերազմի վազող ձիու պէս :
 7 - Արագիւր անգամ օգին մէջ իր սրոշ ժամանակը կը դիտէ ,
 Ու տատրակը և կռուակը ու ծիծեռնիկը
 Իրենց գալուստին ժամանակը կը դիտեն ,
 Բայց իմ ժողովուրդս Տէրոջը դատաստանը չգիտեր :
 8 - Ի՞նչպէս կ'ըսէք թէ Մենք իմաստուն ենք ,
 Ու Տէրոջը օրէնքը մեր քով է .
 Իրաւքընէ ահա դպիրներուն սուտ գրիչը ստութիւն կը գործէ :
 9 - Իմաստունները ամչցան , Անոնք զարհուրեցան ու բռնուեցան ,
 Ահա Տէրոջը խօսքը անարգեցին , Ալ անոնց քով Ի՞նչ իմաստութիւն կը մնայ :
 10 - Ուստի անոնց կիները օտարներուն ,
 Անոնց ագարակները անոնց տիրողներուն պիտի տամ ,
 Վասն զի պզտիկէն մինչև մեծը , ամէնը ապագութեան ետեւէ եղան .

Մարգարէէն մինչև քահանան , ամէնը ստութեամբ կը վարուին :
 11 - Եւ իմ ժողովուրդիս աղջկան վերքը հարեանցի բժշկելով՝ Խաղաղութիւն , խաղաղութիւն է՝ կ'ըսեն ,
 Երբ խաղաղութիւն չկայ :
 12 - Միթէ իրենց պղծութիւնն ըրած տաեմը կ'ամչնա՞ն .
 Բնաւ չեն ամչնար ,
 Ու պատկառիլ չեն դիտեր .
 Անոր համար իյնողներուն մէջ պիտի իյնան ,
 Անոնց այցելութիւն եղած տաեմը պիտի գլորին , կ'ըսէ Տէրը :
 13 - Զանոնք բոլորովին բնաջինջ պիտի ընեմ , կ'ըսէ Տէրը .
 Որթին վրայ խաղող պիտի չըլլայ ,
 Եւ թղենիին վրայ թուղ պիտի չըլլայ .
 Անոնց տերեւն ալ պիտի թառամի ,
 Ու անոնց սուածս անոնցմէ պիտի անցնի :
 14 - Մենք ինչո՞ւ կը նստինք .
 Ժողովուեցէք , ու պարսպաւոր քաղաքներու մէջ մտնենք
 Եւ հոն լուռ կենանք .
 Վասն զի մեր Տէր Աստուածը մեզ լուեցուց ,
 Ու մեզի դառնութեան ջուր խմցուց ,
 Քանզի Տէրոջը դէմ մեզք գործեցինք :
 15 - Խաղաղութեան սպասեցինք ,
 Բայց բարութիւն չկար .
 Բժշկութեան ժամանակին « Կարճեցինք ,
 Բայց ահա խռովութիւն եկաւ :
 16 - Անոր ձիերուն փունջիւնը Դանէ լուեցաւ .
 Անոր երիվարներուն խինջիւնին ձայնէն
 Բոլոր երկիրը շարժեցաւ .
 Վասն զի պիտի գան , ու երկիրը և անոր լիութիւնը ,
 Քաղաքը ու անոր բնակիչները պիտի ուտեն :
 17 - Քանզի ահա ես ձեր մէջ օձեր ,
 Քարբեր կը զրկեմ , որոնց թովչութիւն չազդեր ,
 Եւ ձեզ պիտի խածնեն , կ'ըսէ Տէրը :
 18 - Իմ զուարթութիւնս արամուծութեան քիւնեցաւ ,
 Իմ սիրտս ներսիդիս կը մտնի :
 19 - Ահա հեռաւոր երկրէ եկողներուն պատճառաւ՝

Իմ ժողովուրդիս աղջկան ողբերուն ձայնը .

Միթէ Տէրը Սիօնի մէջ չէ՞ ,

Անոր Թագաւորը հոն չէ՞ :

Ինչո՞ւ իրենց քանդակած կուռքերովը Ո՛-տարներուն ունայնութիւններովը զիս բարկացուցին :

20 - Հունձքի տառնը անցաւ , ամառը վերջացաւ ,

Բայց մենք չփրկուեցանք :

21 - Իմ ժողովուրդիս աղջկան վերքին համար վիրաւորուեցայ ,

Խաւարեցայ «- ապշութիւնը զիս պատեց :

22 - Միթէ Գաղատադու մէջ բալասան չկա՞յ ,

Հոն բժիշկ չկա՞յ .

Հապա ինչո՞ւ համար իմ ժողովուրդիս աղջիկը բժշկութիւն չգտաւ :

Գ.Լ. Թ

Երանի՛ թէ գլուխս ջուր ,

Ու աչքերս արցունքի աղբիւր բլլային ,

Որպէս զի ցորեկ ու գիշեր լայի Իմ ժողովուրդիս աղջկան սպաննուածներուն համար :

2 - Երանի՛ թէ անապատի մէջ ճամբորդներու իջևան մը ունենայի ,

Որպէս զի իմ ժողովուրդս թողուի ու անանցմէ երթայի .

Վասն զի ամէնը շնացողներ են , Ո՛- նենգաւորներու ժողով են .

3 - Եւ իրենց լեզուները իրենց աղեղներուն պէ՛- կը լարեն ստութեան համար ,

Բայց ճշմարտութեան համար երկրի վրայ քաջութիւն չունին .

Վասն զի չարութենէ չարութիւն կ'երթան ,

Ու զիս չեն ճանչնար , կ'ըսէ Տէրը :

4 - Ամէն մարդ թող իր ընկերէն զգուշանայ ,

Ու բնաւ եղբօր մը մի ապաւինիք .

Վասն զի ամէն եղբայր խարէութիւն կը հնարէ ,

Եւ ամէն ընկեր բանասարկութեան կը պարտի .

5 - Ու ամէն մարդ իր ընկերը կը խարէ ,

Եւ ճշմարտութիւն չեն խօսիր .

Անոնք իրենց լեզուները սուտ խօսելու սորվեցուցած են ,

Անօրէնութիւն ընելով կը յոգնին :

6 - Քու բնակարանդ նենգութեան մէջ է .

Նենգութեան պատճառաւ զիս ճանչնալ չեն ուզեր , կ'ըսէ Տէրը :

7 - Անոր համար զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ .

Ահա զանոնք պիտի հալեցնեմ ու պիտի փորձեմ ,

Վասն զի իմ ժողովուրդիս աղջկան համար ի՞նչպէս ընեմ :

8 - Անոնց լեզուն մահաբեր նեա է ,

Նենգութիւն կը խօսի .

Բերնովը իր ընկերին հետ խաղաղութիւն կը խօսի ,

Բայց սրտովը անոր դարան կը պատրաստէ :

9 - Միթէ այս բաներուն համար անոնց այցելութիւն պիտի չընե՞մ , կ'ըսէ Տէրը ,

Կամ այսպիսի ազգէ մը իմ հոգիս վրէժ պիտի չառնե՞մ :

10 - Լեռներուն համար լաց ու ողբ , Եւ անապատի արօտներուն համար կոծ պիտի ընեմ .

Վասն զի այրեցան , անէ մարդ չանցնիր ,

Ու խաշինքներու ձայն չլսուիր .

Օդին թռչուններէն մինչև անասունները փախան , գացին :

11 - Ու Երուսաղէմը «-երպնէր» դեզեր

Ե- չազայներու բնակարան պիտի ընեմ ,

Ու Յուդայի քաղաքները անբնակ ամայութեան պիտի դարձնեմ :

12 - Ո՞վ է այն իմաստուն մարդը , որ ասիկա հասկնայ .

Եւ անոր՝ Աստուծոյ բերանը խօսած բլլայ , որ ասիկա պատմէ ,

Թէ երկիրը ինչո՞ւ համար աւրուեցաւ Ու այրած անապատի պէս եղաւ ,

Ուրկէ մարդ չանցնիր :

13 - Եւ Տէրը ըսաւ ,

Վասն զի անոնք իմ օրէնքս ձգեցին ,

Զոր իրենց առջև դրեր էի ,

Ու իմ ձայնիս մտիկ չընելով՝ անոր համեմատ չքալեցին ,

14 - Հապա իրենց սրտին կամակորութեանը

Եւ հայրերնուն իրենց սորվեցուցած Բահադիմին ետևէն գացին :

15 - Անոր համար զօրաց Տէրը , Իսրայէլի Աստուածը , այսպէս կ'ըսէ .

Ահա ես այս ժողովուրդին օշինդր պիտի կերցնեմ՝
 Առ անոնց դառնութեան ջուր պիտի խմցնեմ։
 16 - Եւ զանոնք պիտի ցրուեմ այն ազգերուն մէջ,
 Զորոնք ոչ իրենք գիտցան, ոչ ալ իրենց հայրերը,
 Առ անոնց վրայ սուր պիտի զրկեմ,
 Մինչև որ զանոնք հասցնեմ։
 17 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
 Մտածեցէք, ու լալկան կիներ կանչեցէք՝ որ գան,
 Եւ հանձարեղ կիներուն լուր զրկեցէք՝ որ գան,
 18 - Առ մեզի համար շուտով ողբի նշան վերցնեն,
 Որպէս զի մեր աչքերը արցունքներ իջեցընեն,
 Եւ մեր արտեանունքները ջուրեր վազցընեն.
 19 - Քանզի Սիօնէ ողբի ձայն լսուեցաւ,
 Ի՛նչպէս կործանեցանք, խիստ ամբըցանք,
 Վասն զի երկիրը թողուցինք,
 Վասն զի Բն֊Քնեցը հիմնայատակ ըրին մեր բնակարանները։
 20 - Աւրեմն, ով կիներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք,
 Եւ ձեր ականջները անոր բերնին խօսքը թող ընդունին.
 Առ ձեր ազջիկներուն ողբ արվեցուցէք,
 Եւ ամէն կին իր գրացիին եղբերգութիւնն արվեցնէ։
 21 - Վասն զի մահը մինչև մեր պատուհանները ելաւ,
 Մեր պալատները մտաւ,
 Որպէս զի փողոցներէն աղաքները՝
 Ա՛հ հրապարակներէն երիտասարդները բնաջինջ ընէ։
 22 - Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.
 Մարդոց գիտկները պիտի իյնան՝
 Արտերու երեսին վրայ եղող աղբին պէս,
 Կամ հնձողներուն ետեւը հաւաքած խուրձի պէս.
 Եւ պիտի չըլլայ մէկը որ զանոնք ժողովէ։
 23 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Իմաստունը իր իմաստութիւնովը չպարծի,
 Առ զօրաւորը իր զօրութիւնովը չպարծի,
 Հարուստը իր հարստութիւնովը չպարծի.

24 - Հապա ան որ կը պարծի՝ թող տատլ պարծի,
 Որ կը հասկնայ ու զիս կը ճանչնայ,
 Եւ՝ գիտէ թէ ես եմ՝ Տէրը՝
 Որ երկրի վրայ ողորմութիւն, իրաւունք ու արդարութիւն կ'ընեմ։
 Քանզի ես ասոնց կը հաճիմ, կ'ըսէ Տէրը։
 25 - Ահա օրեր պիտի գան, կ'ըսէ Տէրը,
 Որ ամէն թլփատուածներուն ու անթլփատներուն,
 26 - Եգիպտոսի և Յուդայի ու Եդովմի եւ Ամմոնի որդիներուն ու Մովաբի ու Իբեւնի օրոքները կարող անապատի բոլոր բնակիչներուն Այցելութիւն պիտի ընեմ.
 Վասն զի ամէն ազգերը անթլփատ են,
 Առ բոլոր Իսրայէլի սուներ սրտով անթլփատ է։

ԳԼ. Ժ

Ով Իսրայէլի սուներ,
 Տէրոջը ձեզի համար ըսած խօսքը մտիկ ըրէք։
 2 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Ազգերուն ճամբաները մի սորվիք,
 Առ երկինքի նշաններէն մի զարհուրիք,
 Վասն զի անոնցմէ հեթանոսները կը զարհուրին։
 3 - Քանզի ժողովուրդներուն սովորութիւնները ունայնութիւն են.
 Քանզի անտառէն փայտ կը կտրեն,
 Անիկա արուեստագէտին ձեռքերուն գործն է՝ տապարով գործած։
 4 - Զանիկա արծաթով և ոսկիով կը զարգարեն,
 Առ գամերով և ուռերով կը գամեն զանիկա ու չշարժիր։
 5 - Անոնք արմուէնիի պէս շիտակ են,
 Բայց չեն խօսիր.
 Անոնք ի հարկէ պիտի վերցուին, վասն զի չեն կրնար քալել.
 Անոնցմէ մի վախնաք, վասն զի չարիք մը չեն կրնար հասցնել,
 Ոչ ալ բարիք ընելու կարող են։
 6 - Ով Տէր, քեզի նման մէկը չկայ.
 Գուն մեծ ես, ու քու անունդ զօրութեամբ մեծ է։
 7 - Քեզմէ ո՞վ պիտի չվախնայ, ով ազգաց թագաւոր,
 Քանզի քեզի կը վայլէ։

*Կա՛մ, երբեք ծայրերը եղող

Վասն զի ազգաց բոլոր իմաստուններուն մէջ
 Եւ անոնց բոլոր թագաւորութիւններուն մէջ
 Քեզի նման մէկը չկայ :
 8 - Բայց անոնք բոլորովին անբան ու անմիտ են .
 Անոնք իրօնք ունայնութեանց վարդապետութիւն է , փայտ է :
 9 - Թարսիսէ ծեծուած արծաթ
 Եւ Ոփազէ սակի կը բերուի ,
 Անոնք վարպետի ու սոկերիչի ձեռքերուն գործն են .
 Անոնց զգեստը կապուտակ ու ծիրանի է .
 Ամէնը հանճարեղներու գործեր են :
 10 - Սակայն Եհովա է ճշմարիտ Աստուած ,
 Անիկա է կենդանի Աստուած և յաւիտենական Թագաւոր .
 Անոր բարկութեանէն երկիր կը դողայ ,
 Ու ազգերը անոր սրամտութեանը չեն դիմանար :
 11 - [*Անոնց այսպէս ըսէք .
 Այն աստուածները , որոնք երկինքը ու երկիրը չշինեցին ,
 Երկրէ ու այս երկինքներուն տակէն պիտի կորսուին :]
 12 - Երկիրը իր զօրութիւնովը շինեց ,
 Աշխարհը իր իմաստութիւնովը հաստատեց ,
 Ու երկինքը իր խորհրդովը տարածեց :
 13 - Երբ իր ձայնը կու տայ , երկինքի մէջ ջուրերու բազմութիւն կ'ըլլայ ,
 Եւ երկրի ծայրերէն շագիներ կը հանէ .
 Անձրևի համար փայլակներ կը շինէ ,
 Ու հով կը հանէ իր շտեմարաններէն :
 14 - Ամէն մարդ գիտութեանէ զբնութեանն անասուն դարձաւ .
 Ամէն սոկերիչ եր քանդակած կուռքին պատճառաւ ամօթով եղաւ .
 Վասն զի ձուլած կուռքը ստութիւն է ,
 Ու անոնք հոգի չունին :
 15 - Անոնք ունայնութեան և խաբէութեան գործեր են ,
 Անոնց այցելութիւն եղած տան անոնք պիտի կորսուին :
 16 - Յակորի Բաթինը ասոնց պէս չէ ,
 Վասն զի անիկա ամէն բան Ստեղծողն է ,

Ու Իսրայէլ անոր ժառանգութեանը վիճակն է .
 Եւ անոր անունը Եհովա Սաբաւովթ է :
 17 - Ով բերդի մէջ բնակող ,
 Քու վաճառներդ երկրէն ժողովէ :
 18 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ .
 Ահա ես այս անգամ՝ երկրին բնակիչները *գուրս պիտի նետեմ ,
 Ու զանոնք նեղութեան մէջ պիտի ձգեմ , որպէս զի երեւոյ շարեւէ գտնեն :
 19 - Վա՛յ ինձի իմ՝ հարուածքիս համար ,
 Իմ վէրքս անգարմանելի է .
 Բայց ես ըսի , Իրաւցընէ ասիկա ցաւ է ,
 Ու զանիկա կրելու եմ :
 20 - Իմ վրանս կործանեցաւ և ամէն շուններս փրթան .
 Տղաքներս ինձմէ ելան ու չկան .
 Սակէ ետեւ վրանս կանգնող
 Ու վարագոյրներս գնող չկայ :
 21 - Վասն զի հովիւները անասուն դարձան ,
 Եւ Տէրը չխնդրեցին .
 Անոր համար յաջողութիւն չգտան ,
 Ու անոնց բոլոր հօտը ցրուեցաւ :
 22 - Ահա հիւսիսի երկրէն դուժի ձայն
 Եւ մեծ խռովութիւն կու գայ ,
 Որպէս զի Յուդայի քաղաքները աւերակ
 Ու չափայնելու բնակարան ընէ :
 23 - Գիտեմ , ով Տէր , որ մարդուն ճամբան իր ձեռքը չէ ,
 Քալող մարդը իր քաղաւածքը շիտկելու կարող չէ :
 24 - Ով Տէր , զիս խրատէ , բայց չափաւորութեամբ ,
 Եւ ոչ թէ քու բարկութիւնովդ , չըլլայ որ զիս սպառես :
 25 - Քու սրամտութիւնդ քեզ չճանչցող ազգերուն վրայ
 Եւ քու անունդ չկանչող ազգաստեմներուն վրայ թափէ .
 Վասն զի Յակորը կերան ,
 Զանիկա կերան ու հասցուցին ,
 Եւ անոր բնակութիւնը աւերակ դարձուցին :

ԳԼ. ԺԱ

Այն խօսքը որ Տէրոջը կողմանէ Երեմիայի եղաւ՝ ըսելով , 2 - Այս ուխ-

*Այս համարը Քաղաքէն լեզուով գեր-
 անէ է

*Եբբ. պարսաստիկով . ա թագ . իե . 29 :

տին խօսքերը մտիկ ըրէք, և Յուդայի մարգոցը ու Երուսաղէմի բնակիչներուն խօսեցէք. 3 - Եւ դուն անոնց ըսես, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Անիժեալ ըլլայ այն մարգը՝ որ մտիկ չընէր այս ուխտին խօսքերը, 4 - Զորոնք ես ձեր հայրերուն պատուիրեցի Եգիպտոսի երկրէն, այն երկաթի հնօցէն, զանոնք հանած օրս՝ ու ըսի, Իմ ձայնս մտիկ ըրէք, ու ձեզի բոլոր հրամայածիս համեմատ ի գործ դրէք, որպէս զի դուք իմ ժողովուրդս ըլլաք, ու ես ձեր Աստուածը ըլլամ. 5 - Որպէս զի հաստատեմ՝ այն երգումը զոր ձեր հայրերուն ըրի, այնպիսի երկիր մը տալու անոնց՝ որ կաթ ու մեղր կը բղխէ, ինչպէս այսօր Իսրայէլի: Եւ ես պատասխան տուի ու ըսի, Ամէն, ով Տէր:

6 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Այս բոլոր խօսքերը Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ կանչելով ըսէ, Այս ուխտին խօսքերը մտիկ ըրէք, ու զանոնք ի գործ դրէք. 7 - Ասան զի ձեր հայրերը փութով խրատեցի, զանոնք Եգիպտոսի երկրէն հանած օրէս մինչև այսօր, կանուխ ելլելով ու խրատելով ըսի, Իմ ձայնս մտիկ ըրէք: 8 - Բայց անոնք մտիկ չըրին ու իրենց տկանջը չխոնարհեցուցին, հապատակ մարդ իր չար սրտին կամակորութեանը համեմատ քալեց. ուստի ես անոնց վրայ կը բերեմ այս ուխտին բոլոր խօսքերը, զորոնք ես անոնց պատուիրեցի որ ընեն, ու անոնք չըրին: 9 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Յուդայի մարգոցը մէջ ու Երուսաղէմի բնակիչներուն մէջ դաւաճանութիւն գանուեցաւ. 10 - Անոնք իմ խօսքերս մտիկ ընել չուզող իրենց նախահայրերուն անօրէնութիւններուն գարձան, և օտար աստուածներու ետեւէ գացին, որպէս զի անոնց ծառայութիւն ընեն. Իսրայէլի տունը ու Յուդայի տունը իրենց հայրերուն հետ ըրած ուխտս աւերեցին:

11 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այնպիսի չարիք կը բերեմ անոնց վրայ, որոնք անկէ ելլելու կարող պիտի չըլլան. Եւ ինծի պիտի աղաղակեն, ու անոնց մտիկ պիտի չընեն:

12 - Եւ Յուդայի քաղաքները ու Երուսաղէմի բնակիչները պիտի երթան,

Ու պիտի աղաղակեն այն աստուածներուն, որոնց խունկ ծիւր էին. Բայց անոնց ձախարհութեան ժամանակը

Բնաւ պիտի չազատեն զանոնք: 13 - Քանզի քու աստուածներդ, ով Յուդա, Քու քաղաքներուդ թիւին չափ եղան.

Ու Երուսաղէմի փողոցներուն թիւին չափ՝ Ամօթալից Կապալա-Բեան համար սեղաններ, Բահաղի խունկ ծիւրու համար սեղաններ, կանգնեցիք:

14 - Ուստի դուն այս ժողովուրդին համար աղօթք մի ընէր, Ու անոնց համար խնդրուածքով ու պաղատանքով մի աղաչէր.

Քանզի երբ իրենց Կապալա-Բեան համար ինծի աղաղակեն, Անոնց մտիկ պիտի չընեն:

15 - Իմ սիրելիս ինչ Բաթլեմ ունի իմ տանս մէջ, Որովհետեւ շատերուն հետ անօրէնութիւն գործեր է.

Սուրբ միսն ալ քեզմէ անցաւ, Քանզի բուն քու չարութիւնովդ կ'ուրախանաս:

16 - Տէրը քու անունդ կանանչ, գեղեցիկ - բարեպառուղ ձիթենի կոչեց,

Բայց անոր վրայ մեծ աղմուկի ձայնով կրակ բռնկեցուց,

Եւ անոր ոտերը կոտրեցան: 17 - Ու քեզ անկող զօրաց Տէրը Քու վրայովդ չարիք խօսեցաւ, Իսրայէլի տանը ու Յուդայի տանը չարութեանը համար՝

Զոր անոնք գործեցին, Եւ Բահաղի խունկ ծիւրով զիս բարկացուցին:

18 - Եւ Տէրը ինծի գիտցուց, ու զանիւ գիտեմ.

Այն տանն ինծի անոնց գործերը ցուցուցիր:

19 - Բայց ես մորթուելու տարուող ընտանեցած գառի մը պէս էի, Ու չէի գիտեր որ անոնք ինծի համար

*Կամ, շատ անօրէնութիւններ

նենգութիւններ կը հնարէին՝
ը՛հե՛լ՛,

Ծառը իր պտուղովը կործանենք,
Եւ զանիկա կենդանիներուն երկրէն
բնաջինջ ընենք,

Որ անոր անունը մէյմըն ալ չյիշուի:

20 - Սակայն, ով Տէր զօրութեանց,
արդար Դատաւոր,

Որ երկամունքը ու սիրար կը բննես,
Անոնցմէ «-ը՛հե՛լ» վրէժդ տեսնեմ՝

Քանզի իմ դատա քեզի յայտնեցի:

21 - Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ Անա-
թովթի մարդոցը համար՝

Որոնք քու հոգիդ կը փնա են ու կ'ը-
սեն,

Տէրոջը անունովը մարդ արեութիւն
մի ըներ,

Որպէս զի մեր ձեռքերովը չմեռնիս:

22 - Անոր համար զօրաց Տէրը այսպէս
կ'ըսէ.

Ահա ես անոնց այցելութիւն պիտի
ընեմ՝

Կարիճները սրով պիտի մեռնին,
Անոնց տղաքները ու աղջիկները սո-
վամուհ պիտի ըլլան.

23 - Եւ անոնք մնացորդ պիտի չունե-
նան.

Վասն զի ես Անաթովթի մարդոցը
վրայ,

Անոնց այցելութեան տարին, չարիք
պիտի բերեմ:

ԳԼ. ԺԲ

Ով Տէր, երբ քեզի հետ վիճիմ,
դուն արդար պիտի գրնս-իս.

Սակայն քեզի իրաւունքի վրայով պի-
տի խօսիմ՝

Ինչո՞ւ ամբարիշտներուն ճամբան յա-
ջող է,

Ու բոլոր նենգութիւն ընողները հան-
գըստութիւն կը վայելեն:

2 - Դուն զանոնք անկեցիր, և անոնք
արմատացան:

Անոնք կ'աճին ու պտուղ կու տան.
Դուն անոնց բերնին մօտ ես,

Բայց անոնց երկամունքէն հեռու ես:

3 - Եւ դուն, ով Տէր, զիս գիտես,
Չիս տեսար ու իմ սիրտս քու սուղեդ
քննեցիր.

Չատէ զանոնք մարթութեւր ոչխարնե-
րու պէս,

Եւ սպանման օրուան համար *պատ-
րաստէ:

4 - Մինչև ե՞րբ երկիրը սուգ պիտի
բռնէ,

Իր բնակիչներուն չարութեանը հա-
մար,

Ու բոլոր դաշտին խտոր պիտի չօրնայ.
Անատունները ու թռչունները կոր-
սուեցան,

Վասն զի ըսին, Անիկա մեր վախճանը
պիտի չտեսնէ:

5 - Եթէ դուն հետեակներուն հետ
վազեցիր, ու քեզ յոգնեցուցին,

Հապա ձիաւորներուն հետ ի՞նչպէս
ասպարէզը պիտի մտնես.

Եւ դուն որ խաղաղութեան երկրին
մէջ ապահով ես,

Ի՞նչ պիտի ընես՝ երբ Յարդանան գեղը
բարձրանայ:

6 - Քանզի քու եղբայրներդ ու քու
հօրդ տունն ալ,

Անոնք անգամ քեզի դէմ նենգու-
թիւն ըրին,

Եւ քու ետեւէդ բարձրաձայն աղաղա-
կեցին.

Թէև անոնք քեզի աղէկ բաներ ալ խօ-
սին,

Դուն անոնց մի հաւատար:

7 - Իմ տունս թողուցի, իմ ժա-
ռանգութիւնս ձգեցի,

Հոգիիս սիրածը իր թշնամիներուն
ձեռքը տուի:

8 - Իմ ժառանգութիւնս անտառի
առիւծին պէս եղաւ ինծի,

Անիկա իր ձայնովը իմ վրաս պուռաց.
Այս պատճառաւ զանիկա տաեցի:

9 - Իմ ժառանգութիւնս †գոյնզգոյն
թռչունի մը պէ՛ս եղաւ ինծի,

Թռչունները անոր չորս կողմն են.
Եկէք, անապատին բոլոր գազան-
ները ժողվեցէք,

Բերէք որ ուտեն:

10 - Շատ հովիւներ իմ այգիս աւրեցին,
Իմ բաժինս սանակոխ ըրին,

Եւ իմ ցանկալի վիճակս անապատի
ամայութեան դարձուցին:

11 - Չանիկա ամայութեան դարձու-
ցին,

Ու ամայի ըլլալով իմ առջև սուգ
բռնեց.

Բոլոր երկիրը ամայութեան դարձաւ,

*Կ-ժ, †- գատատատաններուդ

*ԵՔբ. սրբէ, կ-ժ, նուիրէ
†Կ-ժ, գիշատիչ

Քանզի մարդ մը չկայ որ այժմ Բաները մտածէ:

12 - Անապատին ամէն բլուրներուն վրայ աւառարուներ եկան .

Վասն զի երկրին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը

Տէրոջը սուրը կ'աւակ,

Եւ ամէն մարմնի խաղաղութիւն չկայ:

13 - Յորեն ցանեցին, բայց փուշեր պիտի հնձեն.

Աշխատանք քաշեցին, Բայց օգուտ պիտի չտեսնեն.

Ու Տէրոջը սաստիկ բարկութեանը համար

Ձեր արդիւնքներէն պիտի ամչնաք:

14 - Այսպէս կ'ըսէ Տէրը իմ չար գրացիներուն համար,

Որոնք իմ ժողովուրդիս Իսրայէլի տուած ժառանգութեանս կը դպչին.

Ահա ես զանոնք իրենց երկրին երեսէն պիտի խլեմ,

Յուդայի տունն ալ անոնց մէջէն պիտի խլեմ:

15 - Ու պիտի ըլլայ որ զանոնք խլելէս ետքը

Պիտի դառնամ անոնց ողորմիմ, Եւ ամէն մէկը իր ժառանգութեանը՝

Ու ամէն մէկը իր երկիրը պիտի դարձնեմ.

16 - Եւ եթէ անոնք իմ ժողովուրդիս ճամբաները սորվին,

Ու իմ անունովս երգում ընեն՝ Ը՛հա՛, կենդանի է Տէր,

(Ինչպէս անոնք իմ ժողովուրդիս՝ Բաշաղի անունովը երգում ընել սորվեցուցին,)

Այն ատեն իմ ժողովուրդիս մէջ պիտի *հաստատուին:

17 - Բայց եթէ մտիկ չընեն,

Այն ատեն այն ազգը արմատաքի պիտի խլեմ

Ու պիտի կորսնցնեմ, կ'ըսէ Տէրը:

ԳԼ. ԺԳ

Տէրը ինծի այսպէս ըսաւ. Գնա, քեզի թմանէ գօտի մը ծախու առ, և զանիկա մէջքդ կտայէ, ու զանիկա ջուրը մի խոթեր: 2 - Ուստի Տէրոջը խօսքին համեմատ գօտին ծախու առի ու մէջքս կտայեցի: 3 - Եւ երկրորդ անգամ Տէ-

*Եբր. շինուին

րոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 4 - Այն ծախու առած գօտիդ, որ քու մէջքիդ վրայ է, առ ու ելիր Եփրատ գնա, և հոն վէճին ծակին մէջ պահէ զանիկա: 5 - Ու ես գացի և զանիկա Եփրատի եզերքը պահեցի, ինչպէս Տէրը ինծի պատուիրեց: 6 - Եւ շատ օրերէն ետքը Տէրը ինծի ըսաւ, Ելիր, Եփրատ գնա, ու անկէ առ այն գօտին, զոր քեզի հրամայեցի որ հոն պահես: 7 - Ես ալ Եփրատ գացի, ու փորելով գօտին այն պահած տեղէս առի. և ահա գօտին փաեր էր, ու բնաւ բանի մը չէր գար:

8 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,

9 - Տէրը այսպէս կ'ըսէ.

Յուդայի հպարտութիւնը

Ու Երուսաղէմի մեծ հպարտութիւնը այդպէս պիտի աւրեմ:

10 - Այս չար ժողովուրդը,

Որ իմ խօսքերս լսել չեն ուզեր,

Ու իրենց սրտին կամակորութիւնովը կը քալեն,

Եւ օտար աստուածներու ետեւէ կ'երթան՝

Անոնց ծառայութիւն ընելու և անոնց երկրպագութիւն ընելու համար,

Այդ անպիտան գօտիին պէս պիտի ըլլան.

11 - Վասն զի ինչպէս գօտին մարդուն մէջքը կը փակչի,

Բոլոր Իսրայէլի տունը ու բոլոր Յուդայի տունը

Ինծի այնպէս փակցուցեր էի, կ'ըսէ Տէրը,

Որ ինծի ժողովուրդ ըլլան,

Նաև անուն և փառք ու պարծանք.

Բայց անոնք մտիկ չըրին:

12 - Նաև այս խօսքը ըսես անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ.

Ամէն տիկ գինիով պիտի լեցուի.

Բայց անոնք քեզի պիտի ըսեն,

Միթէ մենք չե՞նք գիտեր որ ամէն տիկ գինիով պիտի լեցուի.

13 - Իսկ դուն անոնց ըսես,

Տէրը այսպէս կ'ըսէ.

Ահա ես այս երկրին բոլոր բնակիչները, Ու Գաւաթի թափուին վրայ նստող թագաւորները,

Եւ քահանաները ու մարգարէները,

Ու Երուսաղէմի բոլոր բնակիչները արբեցուցեմ պիտի լեցնեմ.

14 - Եւ զանոնք իրարու շարժելով պիտի կտարտեմ՝
 Հայրերը աղոցը հեա մէկտեղ , կ'ըսէ Տէրը,
 Եւ անոնց պիտի չգլթամ ու պիտի չխնայեմ՝
 Եւ առանց սղորմելու զանոնք բնաջինջ պիտի ընեմ՝
 15 - Մտիկ ըրէք , ականջ տուէք , մի հպարտանաք ,
 Վասն զի Տէրը խօսեցաւ :
 16-Ձեր Տէր Աստուծոյն փառք տուէք , Գեռ խաւարը յէր ձրայ չհասած ,
 Ու ձեր սոսքերը մութ լեռներու վրայ չտահած ,
 Եւ ձեր լոյսի սպասած տատենը Աստուծոյ զանկա մահաւան ստուերի չփոխած ,
 Ու զանկա թանձր մէգի չգարծուցած :
 17 - Բայց եթէ մտիկ չընէք ,
 Ձեր հպարտութեանը համար իմ հոգիս ծածուկ տեղեր պիտի լայ ,
 Եւ իմ աչքս խիստ շատ լայլով արցունք պիտի թափէ ,
 Վասն զի Տէրոջը հօտը գերի առնուեցաւ :
 18-Թագաւորին ու թագուհիին ըսէ ,
 Ձեր անձը խոնարհեցուցէք -- Գեռ ձրայ նստեցէք ,
 Վասն զի ձեր գլխէն ձեր փառաց թագը ինկաւ :
 19 - Հարուային քաղաքները գոցուեցան ,
 Ու բացող մը չկայ .
 Բարը Յուդա գերութեան գնաց .
 Ամէնը գերութեան գացին :
 20 - Աչքերնիդ վերցուցէք և հիւսիսի կողմէն եկողներուն նայեցէք .
 Քեզի արուած հօտը , քու փառացդ խաչինքը , ո՞ր էն :
 21 - Ի՞նչ պիտի ըսես , երբ քեզի այցելութիւն ընէ .
 Վասն զի դուն անոնց սարվեցուցիր որ քու վրագ իշխան և գլուխ ըլլան .
 Միթէ քեզ ծննդական կնոջ պէս ցուէր պիտի չբռնե՞ն :
 22 - Ու եթէ սրտիդ մէջ ըսես ,
 Այս բաները ինչո՞ւ հանդիպեցան ինձի .
 Քու անօրէնութեանդ շատութենէն քու քղանցքներդ բացուեցան ,
 Եւ դարչապարներդ բռնութեամբ մերկացան :

23 - Միթէ կարելի՞ է որ եթէովպացին իր մերթը՝
 կամ ինձը իր խայտաւեցները փոխէ ,
 Որ դուք ալ , չարութիւն ընելու սորված ըլլալով ,
 կարենաք աղէկութիւն ընել :
 24-Ուստի անապատի հովէն վերցուած մշեղի պէս
 Պիտի ցրուեմ զանոնք :
 25-Այս է քու վիճակդ և քու բաժինդ՝
 Զոր ես քեզի որոշեցի , կ'ըսէ Տէրը ,
 Քանզի զիս մոռցար ու ստութեան ապաւնեցար :
 26 - Ուստի ես ալ քու քղանցքներդ քու երեսիդ վրայ վերցուցի ,
 Ու քու անարգանքդ երեւցաւ ,
 27 - Ես քու շնութիւններդ , ու վրէնջիւններդ ,
 Եւ քու լիրբ պառնկութիւնդ ,
 Ու բլուրներու վրայ և դաշտի վրայ քու ըրած պղծութիւններդ տեսայ .
 Վասն զի քեզի , ով Երուսաղէմ .
 Պիտի չմոքրուի՞ս . ալ մինչև ե՞րբ :

ԳԼ. ԺԴ

Տէրոջը խօսքը որ Երեմիայի եղաւ երաշտութեան վրայով :
 2 - Յուդա սուգ կը բռնէ ,
 Եւ անոր դռները կը նուաղին .
 Անոնք գեանի վրայ արտում կը նստին ,
 Ու Երուսաղէմի աղաղակը վեր ելաւ :
 3 - Եւ անոնց ազնուականները իրենց մանուկները ջուրի կը զրկեն .
 Աւազանները գացին , ջուր չգտան ,
 Եւ դարձան իրենց ամանները պարապ քերելով .
 Ամէջան ու պատկառեցան և գլուխին ծածկեցին :
 4 - Երկրին վրայ անձրեւ չըլլալուն պատճառաւ
 Գետինը ճաթելուն համար՝
 Երկրագործները ամէջան և գլուխին ծածկեցին :
 5 - Քանզի նաև եղնիկը դաշտի մէջ ծնաւ ,
 Ու խոտ չըլլալուն համար եր ջագէ թողուց :
 6 - Ու վայրենի էշերը բլուրներու վրայ կայնեցան ,
 Եւ չազալներու պէս օդը ծծեցին ,
 Ու աչքերնին ակարացաւ , վասն զի խոտ չկար :

7 - Թէև մեր անօրէնութիւնները
մեզի դէմ՝ *ելեր են,
Այն, ով Տէր, քու անուանդ համար
ըրէ,
Քանզի մեր յանցանքները շատ են.
Քեզի դէմ՝ մեղք գործեցինք:
8 - Ով Իսրայէլի Յոյսը,
Նեղութեան ատեն անոր Փրկիչը,
Ինչո՞ւ համար երկրի վրայ հիւրի պէս,
Ու գիշերը իջևան ընելու գործող ճամօ
բորդի պէս ըլլաս .
9 - Ինչո՞ւ համար ազշած մարգու պէս,
Կամ ազատելու կարողութիւն չունե-
ցող հզօրի մը պէս ըլլաս .
Եւ դուն, ով Տէր, մեր մէջ ես,
Ու քու անուանդ մեր վրայ կոչուած է .
Մեզ մի թողուր :
10 - Այսպէս կ'ըսէ Տէրը այս ժողո-
վուրդին համար .
Անոնք աստանդական շրջիւր այսպէս
սիրեցին
Եւ իրենց սաքերը չզուպեցին,
Ուստի Տէրը անոնց չհաւնեցաւ .
Հիմա անոնց անօրէնութիւնը պիտի
յիշէ ,
Ու անոնց մեղքերուն այցելութիւն
պիտի ընէ :
11 - Եւ Տէրը ինծի ըսաւ,
Այս ժողովուրդին բարիք ըլլալու հա-
մար աղօթք մի ըներ :
12 - Եթէ անոնք ծով պահեն,
Անոնց աղաղակը մտիկ պիտի չընեմ .
Ու եթէ ողջակէզ կամ՝ զոհ մատուցա-
նեն ,
Չանոնք պիտի չընդունիմ .
Հապա սրով , սովով և ժանտախտով
Պիտի սպառեմ՝ զանոնք :
13 - Ու ես ըսի, Աւա՛ղ, ով Տէր Եհո-
վա ,
Ահա մարգարէները անոնց կ'ըսեն,
Սուր պիտի չտեսնէք
Ու ձեր մէջ սով պիտի չըլլայ,
Հապա ձեզի այս տեղ ճշմարիտ խա-
ղաղութիւն պիտի տամ :
14 - Այն ատեն Տէրը ինծի ըսաւ,
Մարգարէները իմ անուանովս սուտ
մարգարէութիւն կ'ընեն .
Չանոնք ես չզրկեցի և անոնց չհրամա-
յեցի
Ու անոնց չխօսեցայ .
Անոնք ձեզի սուտ տեսիլքներ, սնտաի
գուշակութիւններ

Եւ իրենց սրտին խաբէութիւնները կը
մարգարէանան :
15 - Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ .
Այն մարգարէներուն համար, որոնք
իմ՝ անուանովս մարգարէութիւն
կ'ընեն,
(Թէպէտև զանոնք ես չզրկեցի,)
Ու կ'ըսեն թէ Այս երկրին մէջ սուր ու
սով պիտի չըլլայ,
Այն մարգարէները սրով ու սովով պի-
տի կորսուին .
16 - Եւ այն ժողովուրդը, որոնց անոնք
մարգարէութիւն կ'ընեն,
Սուրին ու սովին պատճառաւ
Երուսաղէմի փողոցները պիտի ձգուին .
Եւ զանոնք , անոնց կիները , աղաք-
ները ու աղջիկները
Թաղող պիտի չգանուի .
Ու անոնց վրայ իրենց չարութիւնը պի-
տի թափեմ :
17 - Ուստի անոնց՝ այս խօսքը զրու-
ցես .
Գիշեր ու ցօրեկ աչքերս արցունք պի-
տի թափեն
Ու բնաւ պիտի չդադարին,
Վասն զի իմ՝ ժողովուրդիս կոյս աղ-
ջիկը մեծ կոտորածով ,
Իրա սաստիկ հարուածով , կտրեցաւ :
18 - Եթէ դաշտը ելլեմ՝
Ահա սրով մեռցուածներ,
Եւ եթէ քաղաքը մանեմ՝
Ահա սովով տկարացածներ կան .
Վասն զի թէ՛ մարգարէն և թէ՛ քա-
հանան
Իրենց չգիտցած երկիրը կը պարտին :
19 - Միթէ Յուդան բոլորովին մեր-
ժեցի՞ր .
Քու հոգիդ Սիօնէ զզուեցա՞ւ .
Մեզի ինչո՞ւ այնպէս զարկիր որ մեզի
բժշկութիւն չկայ .
Մենք խաղաղութեան սպասեցինք ,
բայց բարութիւն չկար .
Բժշկութեան ժամանակին ոչ ոնեցինք ,
բայց ահա խռովութիւն եկաւ :
20 - Մենք, ով Տէր, մեր ամբարշտու-
թիւնը
Ու մեր հայրերուն անօրէնութիւնը գի-
տենք ,
Վասն զի քեզի դէմ՝ մեղք գործեցինք :
21 - Քու անուանդ համար Բեզէ մի
զզուիր .
Քու փառքիդ ամթուր մի անարգեր .
Մեզի հետ ըրած ուխտդ յիշէ և զանի-
կա մի սուրեր :

*Եբբ. պատասխան տուեր

22 - Միթէ հեթանոսաց ունայնու-
թիւններուն մէջ անձրև տուող
մը կա՞յ,
կամ թէ անձրևը երկինքնէ՞րը կու-
տան .
2է՞ որ --ի-- շ--դը դուն էս , ով մեր
Տէր Աստուածը .
Ուստի քեզի կը յուսանք ,
վասն զի ասոնց ամէնը դուն ըրիր :

ԳԼ. ԺԵ

Եւ Տէրը ինծի ըսաւ ,
Թէ և Մովսէս ու Սամուէլ իմ առջև
կայնէլու ըլլային ,
Այս ժողովուրդին վրայ հաճութիւն
պիտի չունենայի .
Ձաննք առջևէս վաճակ , ու թող ել-
լին :

2 - Եւ եթէ քեզի՝ Ո՞ւր ելլենք ըսեն ,
Այն ատեն անոնց ըսես , Տէրը այսպէս
կ'ըսէ .

Մահուան համար որչ--անչէ՞րը՝ մահ-
ուան ,

Ու սուրի համար որչ--անչէ՞րը՝ սուրի ,
Եւ սոյի համար որչ--անչէ՞րը՝ սոյի ,
Ու գերութեան համար որչ--անչէ՞րը
գերութեան ելլէ :

3 - Եւ անոնց վրայ չորս ատակ պարէ՛ծ
պիտի զրկեմ՝ կ'ըսէ Տէրը .

Մեռցնելու համար՝ սուրը ,
Ու պատուելու համար՝ շուները ,
Եւ ուտելու ու սպականելու համար՝
երկինքի թռչունները ու երկրի գա-
զանները :

4 - Եւ զաննք , նեղութիւն կրելու
համար ,

Երկրի բոլոր թագաւորութիւններուն
ձեռքը պիտի մասնեմ ,

Յուդայի թագաւորին կեզկիսոյի որդ-
ւոյն Մանստէի պատճառաւ ,

Անոր Երուսաղէմի մէջ ըրած բաներուն
համար :

5 - Վասն զի ո՞վ քեզի պիտի խնայէ ,
ով Երուսաղէմ ,

Ու ո՞վ քեզի ցաւակից պիտի ըլլայ ,
Եւ քու որպիսութիւնդ հարցնելու
համար ո՞վ պիտի դառնայ :

6 - Դուն զիս թողուցիր , կ'ըսէ Տէրը ,
-- ես դացիր .

Ես ալ իմ ձեռքս քու վրայ պիտի
երկնցնեմ և քեզ պիտի կոր-
արնցնեմ .

Գթու թիւն ընելէն ձանձրացայ :

7 - Ու զաննք երկրին դռներուն մէջ
պիտի հասեմ իբր թէ հեծանու-
ցով .

Իմ ժողովուրդս անգաւակ պիտի թո-
ղու՞մ -- պիտի կորսնցնեմ ,

Վասն զի աննք իրենց ճամբաներէն
չդարձան :

8 - Անոնց որբւարիները ծովուն աւա-
ղէն աւելի շատցան իմ առջև .

* Անոնց վրայ -- երիտասարդին՝ մօրը
վրայ

կէսորուն ատեն աւտրառու բերի .
Անոր վրայ յանկարծ արհաւիրք ու
ստկում՝ ձգեցի :

9 - Եթէ՞ր զ--ի ծնանողը նուաղեցաւ ,
Իր հոգին աւանդեց ,
Յորեկուան ատեն անոր արևը մտաւ .
Անիկա ամէցաւ ու պատկասեցաւ ,
Եւ անոնց մնացորդը իրենց թշնամի-
ներուն առջև

Սուրի պիտի մասնեմ , կ'ըսէ Տէրը :

10 - Վա՞յ ինծի , ով մայրս ,

Որ զիս բոլոր երկրի համար

կախի մարդ ու վէճի մարդ ծնար .

Ոչ էս չհճով ստակ առի ,

Ոչ ալ ինծի շահով ստակ տուին ,

Սալան ամէնը ինծի անէծք կու տան :

11 - Տէրը կ'ըսէ որ Անշուշտ քեզ
պիտի ազատեմ ,

Ու երջանիկ պիտի ըլլաս .

Եւ անշուշտ նեղութեան ու ստուա-
պանքի ժամանակ

Թշնամիիդ քեզի աղաչել պիտի տամ :

12 - Միթէ երկաթը հիւսիսի երկաթը
ու պղինձը կը կտարէ՞ :

13 - Քու բոլոր մեղքերուդ համար՝
բոլոր սա՛մաններուդ մէջ

* Իւս ստացուածքդ ու զանձերդ ձրիա-
պէս յափշտակութեան պիտի
մասնեմ .

14 - Եւ † Իւլ քու թշնամիներուդ հետ
քու չգիտցած երկիրդ պիտի փո-
խադրեմ .

Վասն զի իմ բարկութենէս կրակ վա-
ռեցաւ ,

Ու ձեր վրայ պիտի բորբոքի :

15 - Ով Տէր , դուն ի՞նչ Ի--գի-
տես .

Ձիս յիշէ և ինծի սյցելու թիւն ըրէ ,
Ու իմ հարած իշներէս իմ վրէժս առ .

* Կ--ի, Անոնց երիտասարդներուն
† Կ--ի, քու թշնամիներդ քու չգիտցած
երկրէդ պիտի բերեմ

Քու երկայնմտութեանդ համար զիս մի վերցնէր .

Գիտցիր որ քեզի համար նախատինք կրեցի :

16 - Ես քու խօսքերդ *գտածիս պէս՝ զաննք կերպի .

Եւ քու խօսքդ իմ՝ սրտիս ցնծութիւնն եւ ուրախութիւնն եղաւ .

Վասն զի քու անուանդ իմ վրաս կոչուած է ,

Ով զօրաց Տէր Աստուած :

17 - Ծաղր ընողներուն ժողովքին մէջ չնտայ ու չզուարճացայ .

Քու ձեռքիդ պատճառաւ սուսնձին նտայ ,

Վասն զի *ու բարկութիւնովդ զիս լեցուցիր :

18 - Ինչո՞ւ իմ ցաւս մշանջեհնաւոր՝ Եւ իմ վէրքս անդարմանելի է .

Անկէա բժշկուիլ չուզէր .

Իսկ ինձի բուրբովին սուտ

Ո - անհաւատարիմ ջուրերու պէ՞ս պիտի ըլլաս :

19 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ . Եթէ դառնաս՝ ես քեզ ետ պիտի բերեմ ,

Ո - իմ սուջևս պիտի կայնիս .

Եւ եթէ պատուականը անարգէն որոջես ,

Իմ բերնիս պէս պիտի ըլլաս .

Աննք քեզի դառնան ,

Բայց դուն անոնց մի դառնար :

20 - Ու քեզ այս ժողովուրդին՝ պղնձէ ամուր պարիսպի պէս պիտի ընեմ .

Եւ քեզի հետ պիտի պատերազմին , Բայց պիտի չկրնան քեզ յողթել .

Վասն զի ես քեզի հետ եմ՝

Քեզ փրկելու ու ազատելու համար , կ'ըսէ Տէրը :

21 - Եւ քեզ չարերուն ձեռքէն պիտի ազատեմ ,

Ու բռնաւորներուն ձեռքէն պիտի փրկեմ :

ԳԼ ԺԶ

Եւ Տէրջը խօսքը ինձի եղաւ՝ ըսելով ,

2 - Քեզի կին մի առնէր , Ու այս տեղ աղաքներ ու աղջիկներ չուեննաս .

*ԵՔր . գտնուելուն

3 - Քանզի այս տեղ ծնած աղաքներուն ու աղջիկներուն համար ,

Եւ այս երկրին մէջ զաննք ծնանող մայրերուն համար ,

Ու զաննք ծնանող հայրերուն համար Տէրը այսպէս կ'ըսէ .

4 - Աննք մտհոռիթ հիւանդութիւններով պիտի մեռնին .

Անոնց համար սուգ պիտի չըսուի , ու աննք պիտի չթաղուին .

Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան ,

Եւ սրով ու սովով պիտի հասնին . Եւ անոնց զիերը երկինքի թռչուններուն

Ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան :

5 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ . Սուգի տուն մի մտներ ու լալու մի երթար ,

Եւ անոնց համար մի ողբար ,

Վասն զի իմ խաղաղութիւնս այս ժողովուրդէն վերցուցի , կ'ըսէ Տէրը .

Ողորմութիւնը ու գթութիւնը վերցուցի :

6 - Ու այս երկրին մէջ մեծերը ու պզտիկները

Պիտի մեռնին եւ պիտի չթաղուին .

Ու անոնց համար սուգ պիտի չընեն , Եւ իրենց մարմիններուն վրայ կորածներ պիտի չընեն ,

Ու անոնց համար իրենց մողերը պիտի չփետեն :

7 - Եւ մեռելի մը վրայով միթարութիւն տալու համար

Սուգի հոչ պիտի չըսեն ,

Ու անոնց հայրերուն ու մայրերուն համար

Միթարութեան բաժակը անոնց պիտի չխմցնեն :

8 - Նաև կոչունքի տուն մի մտներ , Որ անոնց հետ նախ ուտելու եւ խմելու համար .

9 - Վասն զի Զօրաց Տէրը , Իսրայէլի Աստուածը , այսպէս կ'ըսէ .

Ահա ես այս տեղէն , ձեր աչքին առջևէն ու ձեր օրերուն մէջ

Յնծութեան ձայնը եւ ուրախութեան ձայնը ,

Փեսային ձայնը ու հարսին ձայնը պիտի գազարեցնեմ :

10 - Ու երբ այս բոլոր խօսքերը այս

Ժողովուրդին զբուցես, և անոնք
քեզի ըսեն,
Ինչո՞ւ համար Տէրը բոլոր այս մեծ չա-
րիքը մեր վրայ խօսեցաւ,
Ու ի՞նչ է մեր անօրէնութիւնը ու մեր
մեղքը
Զոր մեր Տէր Աստուծոյն դէմ՝ գործեր
ենք,
11 - Այն ասէն անոնց ըսես,
Վասն զի ձեր հայրերը զիս թողուցին,
կ'ըսէ Տէրը,
Եւ ուրիշ աստուածներու ետեւէ գա-
ցին,
Ու անոնց ծառայութիւն ըրին և անոնց
երկրպագութիւն ըրին.
Զիս թողուցին ու իմ օրէնքս չպահեցին:
12 - Եւ դուք ձեր հայրերէն աւելի
չարութիւն ըրիք.
Եւ ահա ինծի մօտիկ չընելով
Ձեզմէ ամէն մէկը իր չար սրտին կա-
մակորութեանը ետեւէն գնաց.
13 - Ես ալ այս երկրին երեսէն ձեզ
պիտի նետեմ՝
Այնպիսի երկիր մը, զոր չէք ճանչնար
Ոչ դուք՝ ոչ ալ ձեր հայրերը.
Ու հոն ցորեկ ու գիշեր օտար աստ-
ուածներու ծառայութիւն պի-
տի ընէք,
Վասն զի ձեզի ողորմութիւն պիտի չը-
նեմ:
14 - Անոր համար ահա օրեր կու
գան, կ'ըսէ Տէրը,
Որ ա՛լ պիտի չըսուի թէ Կենդանի է
Տէրը՝
Որ Իսրայէլի սրգիները Եզիպտոսի երկ-
րէն հանեց.
15 - Հապա՛ Կենդանի է Տէրը՝
Որ Իսրայէլի սրգիները հանեց հիւսիսի
երկրէն
Եւ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք
քշեր էր.
Ու զանոնք պիտի դարձնեմ իրենց եր-
կիրը՝
Զոր իրենց հայրերուն տուի:
16 - Ահա ես շատ ձկնորսներ բերել
պիտի տամ՝, կ'ըսէ Տէրը,
Ու զանոնք պիտի սրտան,
Եւ անկէ ետքը շատ սրտորդներ բերել
պիտի տամ՝,
Ու զանոնք ամէն լեռան վրայէն
Եւ ամէն բլուրի վրայէն
Ու վէմերուն ծակերէն պիտի սրտան:
17 - Վասն զի իմ աչքերս անոնց ամէն
ճամբաներուն վրայ են.

Իմ երեսէս ծածկուած չեն,
Ու անոնց անօրէնութիւնը իմ աչքե-
րուս առջևէն պահուած չէ:
18 - Եւ նախ անոնց անօրէնութեանը
ու մեղքին
Կրկնապատիկ հատուցում պիտի ընեմ,
Որովհետեւ իմ երկիրս պղծեցին,
Եւ իրենց գարշութիւններուն ու պղծ-
ութիւններուն գիբրովը
Իմ ժառանգութիւնս լեցուցին:
19 - Ով Տէր, իմ զօրութիւնս և իմ
բերդս
Ու իմ՝ ապաստանարանս նեղութեան
օրը,
Երկրի ծայրերէն ազգերը քեզի պիտի
գան
Ու պիտի ըսեն,
Իրաւցընէ մեր հայրերը ստութիւն,
Ունայնութիւն ու անօգուտ բաներ
ժառանգեցին:
20 - Միթէ մարդ իրեն աստուած-
նե՞ր պիտի ընէ.
Ու անոնք աստուածներ չեն:
21 - Անոր համար ահա ես անոնց այս
անգամ՝ պիտի գիացնեմ,
Իմ ձեռքս ու իմ զօրութիւնս պիտի
գիացնեմ՝ անոնց.
Եւ պիտի գիանան որ իմ անունս Եհո-
վա է:

ԳԼ. ԺԷ

Յուգայի մեղքը երկաթի գրիչով
Ու ագամանգի ծայրով գրուած է.
Անոնց սրտին առիտակին վրայ
Եւ անոնց սեղաններուն եղջիւրներուն
վրայ փորուած է.
2 - Որպէս զի անոնց աղաքը միտքերնին
բերեն
Անոնց սեղանները ու անոնց Աստա-
րովթի կուռքերը,
Որո՞ւ կանանչ ծառերուն քով բարձր
բլուրներուն վրայ շինուած էին:
3 - Ով իմ լեռս՝ *ը գաշտի մէջ ես,
Քու ստացուածքդ, քու բոլոր գան-
ձերդ,
Ու բոլոր սահմաններուդ մէջ մեղքի
համար շինուած բարձր տեղերդ
Յափշտակութեան պիտի մտանեմ:
4 - Եւ դուն ալ պիտի զրկուիս քու ժա-
ռանգութենէդ զոր քեզի տուի.
Եւ քու չգիացած երկրիդ մէջ

*Կամ, լեռնաօրնակ

Քու թշնամիներու գ ծառայ պիտի ընեմ՝ քեզ .

Վասն զի իմ բարկութեանս մէջ կրակ վառեցիք ,

Որ յաւիտեան պիտի բորբոքի :

5 - Տէրը այսպէս կ'ըսէ .

Անիծեալ ըլլայ այն մարդը՝ որ մարգուց կ'ապաւինի ,

Ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ ,

Եւ իր սիրտը Տէրոջմէ կը խոտորի :

6 - Անիկա անապատի մէջ մնշայի պէս պիտի ըլլայ .

Ու երբ աղէկութիւն գայ պիտի չտեսնէ ,

Եւ անապատին այրուած տեղերը՝

Աղի ու անբնակ երկրի մէջ պիտի բնակի :

7 - Օրհնեալ ըլլայ այն մարդը՝ որ Տէրոջը կ'ապաւինի ,

Ու անոր յոյսը Տէրն է :

8 - Անիկա ջուրերու քով անկուած ծառի պէս պիտի ըլլայ ,

Որ իր արմատները գետի քով երկնցընելով ,

Տաքութեան գայը չտեսներ .

Հապա անոր տերևը կանանչ կ'ըլլայ ,

Ու երաշտութեան տարին նեղութիւն չբաշեր ,

Ու պտուղ տալէն ետ չմնար :

9 - Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է ,

Չանիկա ո՞վ կրնայ գիտնալ :

10 - Ես Տէրս սիրտը կը քննեմ ,

Երիկամունքները կը փորձեմ ,

Որպէս զի մարգուց՝ իր ճամբաներուն համեմատ

Ու իր գործերուն պտուղին համեմատ հասուցում ընեմ :

11 - Անիրաւութեամբ հարստութիւն գիզողը՝

Իր չածած հաւիթներով թուխի նրստող կաքաւի պէ՞ս է .

Չանիկա իր օրերուն կէսին պիտի թողու ,

Ու վերջը անմիտ պիտի ըլլայ :

12 - Մեր սրբարանին տեղը

Ի սկզբանէ փառաւոր — բարձր աթոռ է :

13 - Ով Տէր, Իսրայէլի յոյսը ,

Ամէն անոնք որ քեզ կը թողուն՝ պիտի ամչնան ,

*Քեզմէ հեռացողները երկրի հողին վրայ պիտի գրուին ,

Վասն զի Տէրը, կենաց ջուրին աղբւրը , թողուցին :

14 - Ով Տէր, զիս բժշկէ ու պիտի բժշկուիմ ,

Չիս փրկէ ու պիտի փրկուիմ .

Վասն զի իմ պարծանքս դուն ես :

15 - Ահա անոնք ինծի կ'ըսեն ,

Տէրոջը խօսքը ո՞ւր է . հիմա թող գայ :

16 - Բայց ես քու ետեւէ՞մ՝ հավիւ ըլլալէն չփախայ ,

Ու չարիքի օրուան չցանկացայ , Ինչպէ՞ս դուն գիտես .

Իմ շրթունքներէս ելածը քու առջևէք :

17 - Ինծի արհաւիրք մի ըլլար .

Նեղութեան օրը իմ ապաւէնս դուն ես :

18 - Չիս հալածողները թող ամչնան , ու ես չամչնամ .

Թող անոնք զարհուրին , ու ես չզարհուրիմ .

Անոնց վրայ թշուառութեան օրը բեր , եւ զանոնք կրկին կոտորածով կոտորէ :

19 - Տէրը այսպէս ըսաւ ինծի . Գնա ,

ու ժողովուրդին որդիներուն դուռը , ուրկէ Յուդայի թագաւորները կը մըռնեն ու կ'ելլեն , ու Երուսաղէմի ամէն դռները կայնէ .

20 - Եւ անոնց ըսէ , Ով Յուդայի թագաւորներ , ու բոլոր Յուդա , ու Երուսաղէմի բոլոր բնակիչներ

որ այս դռներէն կը մտնէք , Տէրոջը խօսքը մտիկ ըրէք .

21 - Տէրը այսպէս կ'ըսէ . Չեր անձերուն զգուշութիւն ըրէք ,

և շաբաթ օրը բեռ մի վերցնէք , ու Երուսաղէմի դռներէն ներս մի բերէք .

22 - Եւ շաբաթ օրը ձեր սուներէն դուրս բեռ մի հանէք , ու բնաւ գործ մը չընէք .

Հապա շաբաթ օրը սուրբ պահեցէք , ինչպէս ձեր հայրերուն պատուիրեցի .

23 - Բայց անոնք մտիկ չըրին ու ականջնին չձուեցին , հապա իրենց պարանոցը խստացուցին որպէս զի մտիկ չընեն ու խրատ չընդունին :

24 - Իսկ եթէ ուշադրութեամբ ինծի մտիկ ընէք , կ'ըսէ Տէրը , որ շաբաթ օրը այս քաղաքին դռներէն ներս բեռ չբերէք ,

ու շաբաթ օրը սուրբ պահէք՝ բնաւ անոր մէջ գործ մը չընելով ,

25 - Այն ատեն Գաւթի ամթառին վրայ նստող թագաւորներ ու իշխաններ , կառքերու ու ձիերու վրայ հեծած , այս քաղաքին դռներէն պիտի մտնեն ,

իրենք և իրենց իշխանները , Յուդայի մարգիկը ու Երուսաղէմի բնակիչները . ու այս

*Կա՛մ, ինծ մէ

քաղաքը յաւիտեան պիտի մնայ: 26 - Եւ Յուդայի քաղաքներէն ու Երուսաղէմի շրջակայ տեղերէն, ու Բենիամինի երկրէն և դաշտերէն ու լեռներէն ու հարաւէն պիտի գան՝, և ողջակէզ ու զոհ և հացի ընծայ ու կնդրուկ պիտի բերեն, և Տէրոջը տունը շնորհակալութեան ընծաներ պիտի բերեն: 27-Բայց եթէ ինծի մտիկ չընէք, որ շաբաթ օրը սուրբ պահէք ու շաբաթ օրը բեռ չվերցնէք ու Երուսաղէմի դռներէն ներս չմտնէք, ես ալ անոր դռներուն մէջ կրակ պիտի բռնկեցնեմ. ու Երուսաղէմի պալատները պիտի սւտէ, ու պիտի չմարի:

Գ.Լ. ԺԸ

Տէրոջը կողմանէ Երեմիայի խօսքն է զոր ըսաւ, 2-Ելիր ու բրուտին տունը իջիր, և հոն քեզի իմ խօսքերս լսել տամ: 3 - Ու ես բրուտին տունը իջայ, և ահա անիկա ճախարակով կը գործէր: 4 - Ու կաւէ շինած ամանը բրուտին ձեռքին մէջ աւրուեցաւ. և զանիկա նորէն ուրիշ աման մը շինեց՝ ինչպէս բրուտին հաճոյ եղաւ որ ընէ: 5 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,

6 - Միթէ ձեզի՝ այս բրուտին քեզի պէս ընելու կարող չե՞մ,

Ով Իսրայէլի տունը, կ'ըսէ Տէրը. Ահա ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ,

Դուք իմ ձեռքիս մէջ այնպէս էք, ով Իսրայէլի տունը:

7 - Երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ թէ պիտի քակեմ, պիտի փլցնեմ ու պիտի կորսնցնեմ.

8 - Եթէ այն ազգը, որուն վրայով խօսեցայ, իր շարութենէն դառնայ,

Ես ալ պիտի զղջամ այն չարիքին համար՝ զոր անոր ընել մտածեր էի:

9 - Իսկ երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ

Թէ պիտի շինեմ ու պիտի անկեմ,

10 - Եթէ անիկա իմ խօսքս մտիկ չընելով իմ աւջեւ շարութիւն ընէ,

Ես ալ պիտի զղջամ այն լարիքին հա-

մար՝ զոր ըսեր էի թէ անոր պիտի ընեմ:

11 - Եւ հիմա Յուդայի մարդիկներուն

Ու Երուսաղէմի բնակիչներուն խօսէ ու ըսէ,

Տէրը այսպէս կ'ըսէ.

Ահա ես ձեզի համար չարիք կը պատրասեմ,

Ու ձեզի համար խորհուրդ մը կը խորհիմ.

Հիմա ամէն մէկդ ձեր չար ճամբաներէն դարձէք,

Եւ ձեր ճամբաները ու ձեր գործերը ուղղեցէք:

12 - Բայց անոնք կ'ըսեն, Յոյս չկայ.

Վասն զի մենք մեր խորհուրդներուն ետեւէն պիտի երթանք,

Ու ամէն մէկս մեր չար սրտին կամ մակորութեանը պէս պիտի ընենք:

13-Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.

Հիմա ազգերուն մէջ հարցուցէք,

Այսպիսի բան մը ո՞վ լսեր է:

Իսրայէլի կոյսը խիստ ստակալի բան ըրաւ:

14 - Միթէ Լիբանանի ձիւնը *արտին վէմէն՝ կը պակսի՞,

Կամ հեռուէն վազող ցուրտ ջուրերը կը ցամքի՞ն:

15-Բայց իմ ժողովուրդս զիս մոռցաւ.

Ունայնութիւններու խունկ ծխեցին.

Ու զանոնք իրենց քալած հին ճամբաներուն մէջ սահեցուցին,

Որպէս զի «-բէշ շաւիղներու մէջ, չշիակուած ճամբայի մէջ, քալէն,

16 - Որպէս զի իրենց երկիրը աւերակ,

Ու յաւիտեան սուլելու եմբակայ ընեն.

Անկէ ամէն անցնողը պիտի հիանայ

Ու գլուխը պիտի շարժէ:

17 - Զանոնք թշնամիին առջև պիտի ցրուեմ

Իբր թէ արևելեան հովով.

Անոնց թշուառութեան օրը

Անոնց կռնակ պիտի ցուցնեմ և ոչ

թէ երես:

18 - Ու ըսին,

Եկէք, Երեմիայի դէմ հնարքներ

խորհինք.

Վասն զի քահանայէն օրէնք

Ու իմաստունէն խորհուրդ

*Կա՛մ, Սուրսագայէ

Եւ մարգարէէն խօսք պիտի չկորսուի .
Եկէք , զանիկա լեզուով զարնենք ,
Ու անոր ամէն խօսքերուն ականջ
չտանք :

19 - Ով Տէր , ինծի ականջ տուր ,
Ու ինծի հետ վէճ ընողներուն ձայնը
լսէ :

20 - Միթէ աղէկութեան փոխարէն
չարիք կը հասուցուի՞ .

Վասն զի անոնք իմ անձիս համար փոս
փորեցին .

Յիշէ որ քու առջև կայնեցայ ,
Որպէս զի անոնց համար բարեխօսու-
թիւն ընեմ ,

Ու քու բարկութիւնդ անոնցմէ դար-
ձընեմ :

21 - Անոր համար անոնց աղաքները
սովի մատնէ ,

Ու զանոնք սուրին ձեռքը յանձնէ .

Անոնց կիները անզաւակ ու որբեարի
ըլան ,

Եւ այրերը մահով կտարուին ,

Ու երիտասարդները պատերազմի մէջ
սրով զարնուին :

22 - Երբ անոնց վրայ յանկարծակի
սպառնալու գունդեր բերես ,

Անոնց տուներէն աղաղակ լսուի .

Վասն զի զիս բռնելու համար փոս փո-
րեցին ,

Եւ իմ ստքերուս համար ծածուկ որո-
գայթներ լարեցին :

23 - Ու դուն , ով Տէր , գիտես անոնց
բոլոր խորհուրդը
ինծի դէմ , զի՞ մեռցնելու համար .

Անոնց անօրէնութիւնը մի քաւեր ,

Եւ անոնց մեղքը քու առջևէդ մի
ջնջեր .

Հապա անոնք քու առջև կործանին .

Քու բարկութեանդ ատենը անոնց աչ-
քելը-թիւն ըրէ :

ԳԼ . ԺԹ

Տէրը այսպէս ըսաւ . Գնա , բրուտի
չնայ հողէ կուժ մը ծախու առ , ու ժո-
ղովուրդին ձերերէն և քահանաներուն
ձերերէն խելի հեռու . 2-Եւ Խեցիներու
դրանը դիմաց եղող՝ Ենովմի սրբւոյն
ձորը ելի , ու հոն քարոյէ այն խօս-
քերը զորոնք քեզի պիտի գրուցեմ . 3 -
Ու ըսէ , ով Յուդայի թագաւորներ ու
Երուսաղէմի բնակիչներ , Տէրոջը խօսքը
մտիկ ըրէք . Զօրաց Տէրը , Իսրայէլի
Աստուածը , այսպէս կ'ըսէ . Ահա ես

այս տեղին վրայ այնպիսի չարիք պի-
տի բերեմ , որ զանիկա ամէն լաղին
ականջները պիտի խօսին . 4 - Վասն զի
անոնք զիս թողուցին , ու այս տեղը
ինծմէ օտարացուցին , և հոս խունկ
ծխեցին ուրիշ աստուածներու՝ զորոնք
ոչ իրենք և ոչ իրենց հայրերը , ոչ ալ
Յուդայի թագաւորները ճանչցեր էին .
ու այս տեղը անմեղ արիւնով լեցու-
ցին . 5 - Եւ Բահաղի բարձր տեղերը
չինեցին , որպէս զի իրենց աղաքները
կրակով այրեն , Բահաղի սղջակէզ
ընեն , զոր ես չհրամայեցի , չխօսեցայ
ու միաքէս ալ չանցաւ : 6 - Ուստի ահա
օրեր կու գան , կ'ըսէ Տէրը , որ մէյմըն
ալ այս տեղը Տօփեթ ու Ենովմի սրբ-
ւոյն ձորը պիտի չըսուի , հապա Սպա-
նութեան ձոր : 7-Եւ այս տեղ Յուդայի
ու Երուսաղէմի խորհուրդը պիտի խա-
փանեմ . ու զանոնք իրենց թշնամիներ-
ուն առջև սրով և իրենց հոգին փրնա-
ւողներուն ձեռքով պիտի կործանեմ .
ու անոնց դիերը երկինքի թռչուննե-
րուն ու երկրի գազաններուն կերա-
կուր պիտի սամ . 8 - Եւ այս քաղաքը
աւերակ ու նախատինք պիտի ընեմ .
անկէ ամէն անցնողը անոր բոլոր հար-
ուածներուն պատճառաւ պիտի հիա-
նայ ու պիտի սուլէ : 9 - Եւ պաշարման
ատենը այն նեղութեանը մէջ՝ սրով
անոնց թշնամիները և անոնց հոգին
փնտուղները զանոնք պիտի նեղեն ,
իրենց աղոցը միտը ու իրենց աղջիկնե-
րուն միտը պիտի կերցնեմ՝ անոնց . ու
իրարու միտը պիտի ուտեն :

10 - Ետքը այն կուժը քեզի հետ
եկող մարգոց աչքին առջև կտարէ .

11 - Ու անոնց ըսէ , Զօրաց Տէրը այս-
պէս կ'ըսէ . Այս ժողովուրդը ու այս
քաղաքը այնպէս պիտի կտարեմ , ինչ-

պէս մէկը բրուտի ամանը կը կտարէ , որ
ա՛լ չկրնար նորոգուիլ . ու զանոնք Տօ-

փեթի մէջ պիտի թաղեն՝ *մինչև ա՛լ
թաղելու տեղ չմնայ՝ :

12 - Այս տե-
ղին ու անոր բնակիչներուն այսպէս
պիտի ընեմ , կ'ըսէ Տէրը , և այս քա-

ղաքը Տօփեթի պէս պիտի ընեմ . 13 -

Ու Երուսաղէմի տուները և Յուդայի
թագաւորներուն տուները Տօփեթի
տեղին պէս պիղծ պիտի ըլլան , †այն

*կամ , սուրիլ թաղելու տեղ չըլլալուն
համար
†կամ , այսինքն այն բոլոր տուները

բոլոր տուներուն պատճառաւ՝ որոնց տանիքներուն վրայ երկինքի բոլոր զօրքերուն խունկ ծխեցին, և օտար աստուածներուն թափելու նուէրներ մատուցին :

14 - Ու Երեմիա Տօփեթէ եկաւ, ուր Տէրը զանիկա զրկեր էր մարգարէութիւն ընելու համար . և Տէրոջը տանը գաւիթը կայնեցաւ ու բոլոր ժողովուրդին ըսաւ, 15 - Զօրաց Տէրը, Խորայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ . Ահա այս քաղաքին վրայ ու անոր բոլոր զիւղաքաղաքներուն վրայ պիտի բերեմ՝ այն բոլոր չարիքները զորոնք անոր դէմ խօսեցայ . վասն զի իրենց պարանոցը խտացուցին, որպէս զի իմ խօսքերս մտիկ չընեն :

ԳԼ Ի

Եւ Տէրոջը տանը գլխաւոր վերակացուն Եմմերի որդին Փասուր քահանան լսեց այս խօսքերը զորոնք Երեմիա կը մարգարէանար : 2 - Ու Փասուր Երեմիա մարգարէին զարկաւ, և զանիկա Տէրոջը տանը մէջ եղող՝ Բենիամինի վերի դրանը կոծող դրաւ : 3 - Ու հեռեալ օրը Փասուր Երեմիան կոծողէն հանեց : Ու Երեմիա անոր ըսաւ, Տէրը քու անունդ Փասուր չկոչեց, հապա՞ Մակորմիսապիւզ : 4 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզ արհաւիրք պիտի ընեմ՝ քու անձիդ ու քու բոլոր բարեկամներուդ . և անոնք իրենց թշնամիներուն սրովը պիտի իյնան, ու քու աչքերդ պիտի տեսնեն . և բոլոր Յուդան Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ . ու զանոնք Բաբելոն դերի պիտի տանի, ու զանոնք սրով պիտի զարնէ : 5 - Եւ այս քաղաքին բոլոր հարստութիւնը ու անոր բոլոր վաստակը ու անոր բոլոր պատուական բաները պիտի տամ . և Յուդայի թագաւորներուն բոլոր գանձերը իրենց թշնամիներուն ձեռքը պիտի տամ . և զանոնք պիտի յափշտակեն ու առնեն և Բաբելոն տանին : 6 - Եւ դուն, ով Փասուր, ու քու տանդ բոլոր բնակիչները, դերութեան պիտի երթաք . և Բաբելոնի պիտի երթաս, ու հոն պիտի

մեռնիս, և հոն պիտի թաղուիս թէ՛ դուն և թէ՛ քու բոլոր բարեկամներդ, որոնց սուտ մարգարէութիւն ըրիր :

7 - Զիս համոզեցիր, ով Տէր, ու ես համոզուեցայ .

Դուն ինձմէ զօրաւոր ես ու յաղթեցիր .

Ամէն օր խաղք եղայ, Ամէնը զիս ծաղր կ'ընեն :

8 - Քանզի քանի որ կը խօսիմ՝ կ'աղաղակեմ՝

Եւ ընտելեման ու զրկանքի համար կը բողբեմ .

Վասն զի Տէրոջը խօսքը ամէն օր նախատինք ու անարգանք եղաւ ինձի :

9 - Ու ես ըսի, Զանիկա չյիշեմ, Եւ մէյմըն ալ անոր անունովը չխօսիմ : Բայց որտիս մէջ վառած կրակի պէս եղաւ՝ սոկորներուս մէջ գոցուած .

Եւ յողմեցայ զանիկա կրելէն ու ալ չեմ կրնար :

10 - Վասն զի շատերէն չարախօսութիւն լսեցի,

Ամէն կողմանէ վախ եղաւ : Բամբաստեցէք, ու բամբաստեք՝ ըսին .

Իմ՝ բոլոր բարեկամներս իմ սխաղիլու կը դիտէին՝ ըսելով՝,

Թերեւս անիկա խաբուի, ու անոր յաղթենք :

Եւ անկէ մեր վրէժը առնենք :

11 - Բայց Տէրը ինձի հետ է զօրաւոր ախոյեանի պէս .

Անոր համար զիս հալածողները պիտի գլրին ու պիտի չյաղթեն .

Անոնք խիստ պիտի ամօնան, քանզի անխելքութեամբ կը վարուին ,

Անոնց չբեւոյն՝ անարգանքը յաւիտեան պիտի չմտցուի :

12 - Բայց դուն, ով զօրաց Տէր, որ արգարը կը փորձես,

Երկամունքը ու սիրար կը տեսնես, Անոնց վրայ քու վրէժ խնդրութիւնդ տեսնեմ .

Քանզի իմ դատս քեզի յայանեցի :

13 - Տէրոջը երգեցէք, Տէրը գովեցէք : Քանզի անանկին հոգին չարագործներուն ձեռքէն ազատեց :

14 - Անիծեալ ըլլայ այն օրը երբ ես ծնայ .

*Այսինքն, ամէն կողմանէ վախ . Սաղ. յա. 13: Հմբ. 10: Գլ. 4. 25: Խղ. 5: Խթ. 29 :

Իմ մօրս զիս ծնած օրը օրհնեալ ըլլայ : *Կամ, ինձի յարողները չ'ընեն

- 15 - Անիծեալ ըլլայ այն մարդը որ իմ հօրս աւետիս բերաւ,
Ու զանկիս խիտ շատ ուրախացուց՝
ըսելով,
Քեզի արու զաւակ մը ծնաւ:
- 16 - Եւ այն մարդը այն քաղաքներուն պէս ըլլայ՝
Զորոնք Տէրը կործանեց ու չխնայեց,
Անկիս առաւօտուն ողբ լսէ,
Ու կէսօրուան տտէն աղաղակ:
- 17 - Վասն զի Տօբ* արգանդէն զիս չմեռցուց,
Որ մայրս ինծի գերեզման ըլլար,
Եւ անոր արգանդը յաւիտեան յղի մնար:
- 18 - Ինչո՞ւ այսպէս Տօբ* արգանդէն ելայ
Որ աշխատանք ու ցաւ տեսնեմ,
Եւ իմ օրերս ամօթով սպառին:

ԳԼ. ԻԱ

Տէրոջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է, երբ Սեդեկիա թագաւորը Մեղքիայի որդին Փառուրը ու Մաափայի որդին Սոփոնիա քահանան անոր զրկեց՝ ըսելով, 2 - Շնորհք ըրէ, մեզի համար Տէրոջը հարցուր, վասն զի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը մեզի հետ պատերազմ կ'ընէ. թերեւ Տէրը մեզի համար իր բոլոր սքանչելիքներուն համեմատ ընէ. և անկիս *մեզմէ դառնայ՝:

3 - Եւ Երեմիա անոնց ըսաւ, Սեդեկիայի այսպէս ըսէք. 4 - Ինչո՞ւ Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր ձեռքերուն մէջ եղող պատերազմական զէնքերը պիտի դարձնեմ, որոնցմով դուք պարսպին դուրսէն ձեզ պաշարող Բաբելոնի թագաւորին ու Քաղզէացիներուն հետ կը պատերազմիք. և զանոնք այս քաղաքին մէջ պիտի ժողվեմ: 5 - Ու ես ալ երկնցած ձեռքով և զօրաւոր բազուկով, սրամտութեամբ, բարկութեամբ ու մեծ ցատումով ձեզի հետ պիտի պատերազմիմ: 6 - Եւ այս քաղաքին բնակիչները, թէ՛ մարդ և թէ՛ անասուն պիտի զարնեմ. անոնք մեծ ժանտախտով պիտի մեռնին: 7 - Ու անկէ ետքը, կ'ըսէ Տէրը, Յուդայի թագաւորը Սեդեկիան, և անոր ծառաները ու ժողովուրդը, և

այս քաղաքին մէջ ժանտախտէն, սուրէն ու սովէն մնացածները, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը, և անոնց թշնամիներուն ձեռքը, ու անոնց հոգիները փնտառողներուն ձեռքը պիտի մաանեմ. և զանոնք սուրի բերնէ պիտի անցընէ, անոնց պիտի չխնայէ, պիտի չզթայ ու ողորմութիւն պիտի չընէ:

8 - Եւ այս ժողովուրդին ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր առջև կը դնեմ կեանքի ճամբան ու մահուան ճամբան: 9 - Այս քաղաքին մէջ կեցողը սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի. իսկ ելողը ու ձեզ պաշարող Քաղզէացիներուն իյնողը ողջ պիտի մնայ, ու անոր կեանքը իրեն աւարի մը պէս պիտի ըլլայ: 10 - Քանզի իմ երեսայս քաղաքին վրայ հաստատեցի չարիք ընելու՝ համար և ոչ թէ բարիք, կ'ըսէ Տէրը. անկիս Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի արուի, ու զանկիս կրակով պիտի այրէ:

11 - Եւ Յուդայի թագաւորին տանը ըսէ՝, Տէրոջը խօսքը լսեցէք. 12 - Ով Գաւթի տունը, Տէրը այսպէս կ'ըսէ. Առաւօտանց իրաւունքով դատաստան տեսէք, ու զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք. չըլլայ որ ձեր չար գործերուն համար իմ բարկութիւնս կրակի պէս ելլելով բռնկի, ու մարտը մը չըլլայ: 13 - Ահա ես ձեզի դէմ եմ, ով հովիտին, դաշտական վէմին, բնակիչները, որ կ'ըսէք թէ Մեզի դէմ ս'ով պիտի իջնէ, կամ մեր բնակարաններուն մէջ ս'ով պիտի մտնէ. 14 - Բայց ես ձեզի ձեր գործերուն պատուղին համեմատ այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը, ու անոր անտառին մէջ կրակ պիտի բռնկեցնեմ, որ անոր ամէն բոլորաիքը եղածը պիտի ուտէ:

ԳԼ. ԻԲ

Տէրը այսպէս կ'ըսէ. Յուդայի թագաւորին տունը իջիւր, 2 - Ու հոն այս խօսքը խօսէ, ու ըսէ, Ով Գաւթի տաճարին վրայ նստող Յուդայի թագաւոր, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ, թէ՛ դուն և թէ՛ քու ծառաներդ ու ժողովուրդդ, Որ այս դռներէն կը մտնէք: 3 - Տէրը այսպէս կ'ըսէ.

*Եբբ. մեր վրայէն ելլէ

Իրաւունք ու արդարութիւն ըրէք,
Ու զրկուածը հարստահարողին ձեռ-
քէն ազատեցէք,

Եւ օտարականին, որբին ու որբեարիին
Անիրաւութիւնն ու բռնութիւնն մի
ընէք,

Եւ այս տեղ անմեղ արիւն մի թա-
փէք :

4 - Վասն զի եթէ ամէն կերպով այս
խօսքը ի գործ դնէք,

Այն ատեն Գաւիթի օթուին վրայ
նստող թագաւորներ

Կառքերու ու ձիերու վրայ հեծած՝
Այս ամանը դռներէն պիտի մտնեն,
Իրենք և իրենց ծառաները ու ժողո-
վուրդը :

5 - Բայց եթէ այս խօսքերը մտիկ չընէք,
Իմ անձիս վրայ երգում կ'ընեմ, կ'ըսէ
Տէրը :

Որ այս տունը աւերակ պիտի ըլլայ :

6 - Քանզի Յուդայի թագաւորին ամանը
վրայով

Տէրը այսպէս կ'ըսէ.

Դուն թե՛ ինծի Գաղաադու պե՛ս

Ու Լիբանանու գագաթին պե՛ս ես,

Սալայն անշուշտ քեզ անապատի պե՛ս

Ու անբնակ քաղաքներու պե՛ս պիտի
ընեմ :

7 - Եւ քու վրադ կործանողներ պիտի
*հանեմ :

Ամէն մէկը իր զէնքովը պիտի գայ,

Ու քու բնտիր եղևիններդ պիտի կարեն
Եւ կրակը ձգեն :

8 - Ու այս քաղաքէն շատ ազգեր պիտի
անցնին,

Եւ իրարու պիտի ըսեն,

Ինչո՞ւ համար Տէրը այս մեծ քաղաքին
այսպէս ըրաւ :

9 - Եւ պիտի ըսեն, Վասն զի իրենց Տէր
Աստուծոյն ուխտը թողուցին,

Եւ ուրիշ աստուածներու երկրպագու-
թիւն ըրին ու անոնց ծառայե-
ցին :

10 - Մեռնողին համար մի լաք,

Ու անոր համար մի սղբաք :

Հոգի գացողին համար դառնապէս լա-
ցէք :

Որովհետեւ մէյմըն ալ պիտի չդառնայ,

Ու իր հայրենիքը պիտի չտեսնէ :

11 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.

Յուդայի թագաւորին Յովսիայի որդ-
ւոյն Աեղզումի համար,

Որ իր հօրը Յովսիայի տեղ թագաւոր
նստաւ,

Ու այս տեղէն ելաւ :

Անիկա մէյմըն ալ հոս պիտի չդառ-
նայ :

12 - Հապա անիկա իր գերի քշուած
տեղը պիտի մեռնի,

Ու մէյմըն ալ այս երկիրը պիտի չտեսնէ :

13 - Վա՛յ անոր, որ իր տունը զրկան-
քով

Ու իր վերնատունները անիրաւու-
թեամբ կը շինէ :

Իր դրացին ձրի կը բանեցնէ,

Եւ անոր աշխատութեանը վարձքը
չվճարեր :

14 - Ինծի ընդարձակ տուն

Ու հովատուն վերնատուններ շինեմ՝
ըսելով,

Իրեն պատուհաններ կը բանայ,

Ու պանիս եղևնափայտով կը պատէ,

Ու նօթով կը ներկէ :

15 - Միթէ դուն *շատ եղևնափայտեր
ժողվելովդ՝

Թագաւոր պիտի ըլլաս :

2է՞ որ քու հայրդ կերաւ ու խմեց,

Նաև իրաւունք ու արդարութիւն
ըրաւ,

Այն ատեն անոր աղէկ եղաւ :

16 - Աղքատին ու անանկին դատը տե-
սաւ,

Այն ատեն անոր աղէկ եղաւ :

Միթէ զիս գիտնալը ասիկա չէ՞, կ'ըսէ
Տէրը :

17 - Սակայն քու աչքերդ ու սիրտդ
ուրիշ բանի վրայ չէ,

Բայց միայն քու ազահութեանդ

Եւ անմեղ արիւն թափելու

Եւ անիրաւութեան ու բռնաւորու-
թեան վրայ է, որ պանծւ ընես :

18 - Անոր համար Յուդայի թագա-
ւորին,

Յովսիայի որդւոյն Յովակիմի, վրայով
Տէրը այսպէս կ'ըսէ :

Անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով,

Վա՛յ, եղբայրս, կամ Վա՛յ, քոյրս :

Անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով,

Վա՛յ, տէր իմ, կամ Վա՛յ անոր փառ-
քին :

19 - Անիկա իշու թաղումով պիտի
թաղուի,

Ու քաշելով պիտի տարուի,

*Եբր. եղևնափայտի համար նախան-
ձելովդ

*Եբր. որբեմ

Ու Երուսաղէմի գուներէն գուրս պիտի նեաուի:

20 - Լիբանան ելիր ու ազազակէ, Եւ Բատանի վրայ ձայնդ ձգէ:

Ու Աբարիմէ ազազակէ.

Վասն զի քու բոլոր համանիներդ կտարուեցան:

21 - Երբ գուն յաջողութեան մէջ էիր, քեզի գրուեցեցի,

Ու գուն ըսիր, Մտիկ չեմ՝ ըներ.

Քու մանկութենէդ ի վեր ճամբադ այս է՝

Որ իմ խօսքս մտիկ չընես:

22 - Քու բոլոր հովիւներդ հովը պիտի կործանէ,

Ու համանիներդ գերութեան պիտի երթան.

Յիրաւի այն ատեն բոլոր չարութեանդ համար

Պիտի ամչնաս ու պիտի պատկառիս:

23 - Ով Լիբանանի մէջ բնակող,

Ու եղևիններու մէջ բոյն ունեցող,

Երբ քեզի ծննդական կնոջ երկունքին պէս ցուեր գան,

Ո՛րչափ ողորմելի պիտի ըլլաս:

24 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը,

Ով Յուդայի թագաւոր, Յովակիմի որդի *Յեքոնիա,

Թէև իմ աջ ձեռքիս վրայ կնիք ալ ըլլաս,

Անկէ ալ քեզ պիտի փրցնեմ.

25 - Եւ քեզ քու հօգիտ փնտառողներուն ձեռքը

Ու այն մարդոց ձեռքը, որոնց երեսէն գուն կը վախնաս,

Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսար թագաւորին ձեռքը

Ու Քաղգէացուց ձեռքը պիտի մտանեմ.

26 - Եւ քեզ ու քու մայրդ որ քեզ ծնաւ,

Օտար երկիր պիտի նեաեմ՝

Ուր ծնած չէք,

Եւ հոն պիտի մեռնիք:

27 - Ու պիտի չգառնան այն երկիրը, Ուր գառնալու †կը յուսան:

28 - Միթէ այս Յեքոնիա ըսած մարդը անարգուած ու կտարուած սափո՞ր մըն է,

Կամ թէ այնպիտի ամա՞ն մըն է՝ որու մէ'կը չհաճիր.

Ինչո՞ւ համար ինք ու իր սերունդը նեաուեցան,

Ու իրենց չգիտցած երկիրը քշուեցան:

29 - Ով երկիր, երկիր, երկիր,

Տէրոջը խօսքը մտիկ ըրէ.

30 - Տէրը այսպէս կ'ըսէ.

Այս մարդը անզաւակ գրեցէք,

Այս մարդը իր օրերուն մէջ յաջողութիւն պիտի չգանէ.

Քանզի անոր սերունդէն ընտա մէկը յաջողութիւն պիտի չգանէ,

Որ Գաւթիթի ամթուին վրայ նստի,

Եւ այսուհետեւ Յուդայի վրայ թագաւորութիւն ընէ:

ԳԼ. ԻԳ

1 - Վայ այն հովիւներուն,

Որոնք իմ արօտիս ոչխարները կը կորսընցնեն ու կը ցրուեն, կ'ըսէ Տէրը:

2 - Անոր համար այսպէս կ'ըսէ Իսրայէլի Տէր Աստուածը

Այն հովիւներուն վրայով որ իմ ժողովուրդս կը հովուեն.

Քուք իմ ոչխարներս ցրուեցիք ու զանոնք վաճակեցիք,

Եւ անոնց այցելութիւն չըրիք,

Ահա ես ձեր գործերուն չարութեանը համար

Ձեզի այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը.

3 - Ու ես իմ ոչխարներուս մնացորդը պիտի ժողվեմ՝

Այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք քշեր եմ,

Եւ զանոնք իրենց *փարախները պիտի դարձնեմ,

Եւ պիտի աճին ու շատնան:

4 - Ու անոնց վրայ հովիւներ պիտի դնեմ որ զանոնք հովուեն.

Եւ անոնք մէյմըն ալ պիտի չվախնան ու պիտի չզարհուրին

Ու պիտի չպակտին, կ'ըսէ Տէրը:

5 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, Որ Գաւթիթէ արդարութեան Շաւաւիղ մը պիտի հանեմ,

Որ թագաւորի պէ՞ թագաւորութիւն պիտի ընէ,

Իմաստութեամբ պիտի վարուի,

Ու երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ:

*Եբր. Քոնիա

†Եբր. իրենց անձը կը վերցնեն

*Կամ, արօտները

6 - Անոր օրերը Յուդա պիտի ազատի ,
Եւ Իսրայէլ ապահովութեամբ պիտի
բնակի .

Ու այս է անոր անունը՝ որով պիտի
կոչուի ,

ՏԷՐԸ ՄԵՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ :

7 - Անոր համար ահա օրեր կու գան ,
կ'ըսէ Տէրը ,

Որ ալ պիտի չըսուի թէ Կենդանի է
Տէրը ,

Որ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկ-
րէն հանեց :

8 - Հապա՛ Կենդանի է Տէրը

Որ Իսրայէլի ամեն սերունդը հանեց ու
բերաւ հիւսիսի երկրէն ,

Եւ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք
քշեր էի .

Ու անոնք իրենց երկրին մէջ պիտի
բնակին :

9 - Մարգարէներուն համար սիրա-
ներսդիս կը կտարի .

Բոլոր սահորներս կը դողան .

Տէրոջը երեսէն ու անոր սուրբ խօսքե-
րուն երեսէն

Գինով մարդու պէս

Եւ գինին գլուխը զարկած մարդու պէս
եղայ :

10 - Քանզի երկիրը շնացողներով լեց-
ուած է .

Քանզի անէծքի պատճառաւ երկիրը
սուգ կը բռնէ .

Անապատին արօտները չորցան ,

Որովհետեւ անոնց ճամբան չար եղաւ ,
Եւ անոնց ոյժը ուղղութեան համար չէ :

11 - Վասն զի թէ՛ մարգարէն և թէ՛
քահանան պղծուեցան ,

Անոնց չարութիւնը իմ ամեն մէջ ալ
գտայ , կ'ըսէ Տէրը :

12 - Անոր համար անոնց ճամբաները
Խաւարի մէջ սահեցնող աեղերու պէս
պիտի ըլլան անոնց ,

Անոնք պիտի մղուին ու հոն պիտի կո-
չան .

Վասն զի ես անոնց այցելութեան ատ-
րին

Անոնց վրայ չարիք պիտի բերեմ , կ'ը-
սէ Տէրը :

13 - Եւ Սամարիայի մարգարէնե-
րուն մէջ

Անզգամութիւն տեսայ .

Բահայի անունով մարգարէութիւն կ'ը-
նեն ,

Եւ իմ ժողովուրդս Իսրայէլը կը մոլո-
րեցնեն :

14 - Ու Երուսաղէմի մարգարէներուն
մէջ տակադի բան տեսայ .

Անոնք շնութիւն կ'ընեն , ու սառ-
թեան մէջ կը քալեն ,

Եւ չարագործներուն ձեռքերը կ'ու-
ժովցնեն ,

Որպէս զի չգառնան ամէն մէկը իր չա-
րութենէն .

Անոնց ամէնը ինծի Սողոմի պէս ,
Ու անոր բնակիչները Գոմորի պէս եղան :

15 - Ասոր համար զօրաց Տէրը մարգա-
րէներուն վրայով այսպէս կ'ըսէ .

Ահա ես անոնց օշինդր պիտի կերցնեմ ,
Եւ անոնց գառնութեան ջուր պիտի
խմցնեմ .

Վասն զի Երուսաղէմի մարգարէներէն
ամբարշտութիւն ելաւ

Ու բոլոր երկրին մէջ արարեցաւ :
16 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ .

Ձեզի մարգարէութիւն ընող մարգա-
րէնեզուն խօսքերուն մտիկ մի
լնէք .

Անոնք ունայնութեան կը տանին ձեզ ,
Իրենց սրտին աեսիլքը կը խօսին ,

Ու ոչ թէ Տէրոջը բերնէն :

17 - Անոնք զիս անարգողներուն կը
խօսին ու կ'ըսեն ,

Տէրը ըսաւ , Ձեզի խաղաղութիւն պի-
տի ըլլայ .

Եւ իրենց սրտին կամակորութեանը
մէջ բոլոր քաղաղներուն կ'ըսեն ,

Ձեր վրայ չարիք պիտի չգայ :

18 - Վասն զի Տէրոջը խորհուրդին մէջ
ո՞վ կայնեցաւ .

Ո՞վ աեսաւ ու անոր խօսքը լսեց .

Անոր խօսքին ո՞վ ահանջ առաւ ու
մտիկ բրաւ :

19 - Ահա Տէրոջը մըրիկը սրամառ-
թեամբ ելաւ .

Անիկա ստափիկ մըրիկ է ,
Սմբարիչաներուն զլխուն վրայ պիտի
յարձակի :

20 - Տէրոջը բարկութիւնը ետ պիտի
չգառնայ

Մինչև իր սրտին խորհուրդները չկա-
տարէ ու չհաստատէ .

Վերջին օրերը ասիկա աղէկ պիտի հաս-
կընաք :

21 - Այս մարգարէները ես չզրկեցի ,
բայց անոնք կը վաղեն .

Ես անոնց չխօսեցայ , բայց անոնք կը
մարգարէանան :

22 - Իսկ եթէ անոնք իմ խորհուրդիս
մէջ կեցած ըլլային ,

Այն ատեն իմ խօսքս իմ ժողովուրդիս լսել պիտի տային :

Եւ զանոնք իրենց չար ճամբաներէն Ու իրենց չար գործերէն պիտի դարձրնէին :

23 - Միթէ ես մտաէ՞ն Աստուած եմ; Ու հեռուէն Աստուած չե՞մ, կ'ըսէ Տէրը :

24 - Կամ թէ մէկը ծածուկ տեղեր կրնայ պահուիլ,

Որ ես զանիկա չտեսնեմ, կ'ըսէ Տէրը . Միթէ երկինքը ու երկիրը լեցնողը ես չե՞մ, կ'ըսէ Տէրը :

25 - Իմ անունովս սուտ մարգարէութիւն ընող մարգարէներուն ըսածները լսեցի,

Որ կ'ըսեն, Երազ տեսայ, երազ տեսայ :

26 - Մինչև ե՞րբ ասիկա սուտ մարգարէութիւն ընող մարգարէներուն սրտին մէջ պիտի ըլլայ,

Որոնք իրենց սրտին նենգութիւնները կը մարգարէանան :

27 - Անոնք իրենց երազներովը, զորոնք իրարու կը պատմեն,

Իմ անունս իմ ժողովուրդիս մտցնել կը խորհին .

Ինչպէս անոնց հայրերը Բաճաղի պատճառաւ իմ անունս մտցան :

28 - Երազ ունեցող մարգարէն թող երազ պատմէ,

Իսկ իմ խօսքս ունեցողը ճշմարտութեամբ թող իմ խօսքս խօսի .

Յարգը ցորենին քով ի՞նչ է, կ'ըսէ Տէրը :

29 - Միթէ իմ խօսքս կրակի պէս չէ, կ'ըսէ Տէրը,

Ու ապառաժը կտարտող մուրճի պէս չէ :

30 - Անոր համար ահա ես այն մարգարէներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,

Որոնք ամէն մէկը իր ընկերէն իմ խօսքերս կը գողնան :

31 - Ահա ես այն մարգարէներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,

Որոնք իրենց լեզուները կը գործածեն ու կ'ըսեն, Անիկա ըսաւ :

32 - Ահա ես այն սուտ երազներ մարգարէացողներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,

Որ զանոնք պատմելով իմ ժողովուրդս կը մոլորեցնեն

Իրենց ստութիւններովը ու անապարձութիւնովը .

Ու ես զանոնք չղրկեցի և անոնց չպատուիրեցի .

Ու անոնք այս ժողովուրդին ամենեւին օգուտ մը պիտի չընեն, կ'ըսէ Տէրը :

33 - Ուստի երբ այս ժողովուրդը կամ մարգարէ մը կամ քահանայ մը Բեզի հարցնէ ու ըսէ թէ Տէրոջը բեռը ի՞նչ է,

Այն ատեն անոնց ըսես, Ի՞նչպէս բեռ . Ես ձեզ անշուշտ պիտի թողում, կ'ըսէ Տէրը :

34 - Եւ այն մարգարէն կամ քահանան կամ ժողովուրդը

Որ Տէրոջը բեռը կ'ըսէ,

Այն մարգուէն ու անոր տանը այցելութիւն պիտի ընեմ :

35 - Ամէն մարգ իր ընկերին՝ Ու ամէն մարգ իր եղբորը այսպէս ըսէք .

Տէրը ի՞նչ պատասխան տուաւ, Եւ Տէրը ի՞նչ խօսեցաւ :

36 - Ու մէյմըն ալ Տէրոջը բեռը չյիշէք .

Վասն զի ամէն մարգուէն բեռը իր խօսքը պիտի ըլլայ .

Բայց դուք կենդանի Աստուծոյն, Չօրաց Տէրոջը, մեր Աստուծոյն, խօսքը փոխեցիք :

37 - Մարգարէին այսպէս ըսես .

Տէրը քեզի ի՞նչ պատասխան տուաւ, Եւ Տէրը ի՞նչ խօսեցաւ :

38 - Բայց որովհետեւ Տէրոջը բեռը կ'ըսէք,

Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ .

Որովհետեւ այս խօսքը, այսինքն Տէրոջը բեռը, կ'ըսէք,

Թէ եւ ես ձեզի լսեցի զրկեցի, ու Տէրոջը բեռը մի ըսէք՝ ըսի,

39 - Անոր համար ահա ես ձեզ բողբոջի պիտի մտնամ,

Ու երեսէս պիտի ձգեմ ձեզ

Եւ այն քաղաքը զոր ձեզի ու ձեր հայրերուն տուի .

40 - Եւ ձեր վրայ յաւիտենական նախատինք

Ու յաւիտենական անարգանք պիտի դնեմ,

Որ պիտի չմոռցուի :

* Այսինքն, պատգամը

Բարեւանի Նարուգոգոնոսար թագաւորին Յուգայի թագաւորը Յովակիմի որդին Յեքոնիան և Յուգայի իշխանները և Տիւսերը ու դարբինները Երուսաղէմէ գերի առնելէն ու Բարեւան տանելէն ետքը, Տէրը ինծի «Ի՛նչ ցուցուց. և ահա Տէրոջը ասածսն առջև դրուած երկու կողով թուգ կար: 2 - Մէկ կողովին մէջ խիստ աղէկ թուգեր կային՝ կանխաստ թուգերու պէս, ու միւս կողովին մէջ խիստ գէշ թուգեր կային, այնպէս որ գէշութենէն անոնց ուտուիլը անկարելի էր: 3 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Ով Երեմիա, ֆ^ոնչ կը տեսնես. ու ես ըսի, Թուգեր. աղէկ թուգերը խիստ աղէկ են, ու գէշերը շատ գէշ են, այնպէս որ գէշութենէն անոնց ուտուիլը անկարելի է:

4 - Այն ատեն Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 5 - Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Այս աղէկ թուգերուն պէս պիտի բռնեմ Յուգայէ գերի քշուածները, զորոնք այս տեղէն Քաղզէացուց երկիրը զրկեցի երէնց աղէկ ըլլալու համար. 6 - Եւ իմ աչքերս անոնց վրայ պիտի հաստատեմ բարութեան համար, ու զանոնք այս երկիրը պիտի դարձնեմ, և զանոնք պիտի շինեմ ու պիտի չիլցնեմ, և զանոնք պիտի անկեմ ու պիտի չխլեմ: 7 - Եւ անոնց «յնպիսի սիրտ մը պիտի տամ, որ զիս ճանչնան թէ ես եմ Տէրը. ու անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան, ու ես անոնց Աստուածը պիտի ըլլամ. վասն զի իրենց բոլոր սրտովը ինծի պիտի դառնան: 8 - Եւ ինչպէս են այս գէշ թուգերը որ գէշութենէն չեն ուտուիր, Տէրը այսպէս կ'ըսէ. Յուգայի թագաւորը Սեդեկիան ու անոր իշխանները ու Երուսաղէմի մնացորդը, որոնք այս երկրին մէջ մնացեր են, նաև Եգիպտոսի երկրին մէջ բնակողները այնպէս պիտի ընեմ: 9 - Եւ զանոնք երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ նեղութեան ու թշուառութեան պիտի մատնեմ, որպէս զի անոնք նախատինք, առակ, անարգանք ու անէձք ըլլան այն բոլոր տեղերը ուր զանոնք պիտի քշեմ: 10 - Եւ անոնց վրայ սուրը, սովը ու ժանտախարը պիտի զրկեմ, մինչև հասնին այն երկրին վրայէն՝ զոր իրենց ու իրենց հայրերուն տուի:

Յուգայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին, որ Բարեւանի Նարուգոգոնոսար թագաւորին առաջին տարին էր, բոլոր Յուգայի ժողովուրդին վրայով Երեմիայի եղած խօսքն է, 2 - Զոր Երեմիա մարգարէն բոլոր Յուգայի ժողովուրդին ու բոլոր Երուսաղէմի բնակիչներուն խօսեցաւ ու ըսաւ, 3 - Յուգայի թագաւորին Ամանի որդւոյն Յովսիայի աստուիբեքեւորդ տարիէն մինչև այսօր, որ քսանուիբեք տարի է, Տէրոջը խօսքը ինծի եղաւ, ու ես ձեզի խօսեցայ կանուխ ելլելով ու խօսելով, բայց մտիկ չըրիք: 4 - Եւ Տէրը ձեզի զրկեց իր բոլոր ծառաները, մարգարէները, կանուխ ելլելով ու զրկելով, բայց մտիկ չըրիք, ու մտիկ ընելու համար ականջնիդ չծռեցիք, 5 - Որոնք կ'ըսէին, Ամեն մէկգէտը չար ճամբայէն ու ձեր չար գործերէն դարձէք, որպէս զի բնակիք յաւիտեանս յաւիտենից այն երկրին մէջ զոր Տէրը ձեզի ու ձեր հայրերուն տուաւ. 6 - Եւ օտար աստուածներուն ետեւէն մի երթաք, անոնց ծառայելու ու երկրպագութիւն ընելու համար. և զիս ձեր ձեռքերուն գործերովը մի բարկացնէք, որպէս զի ձեզի չարիք չընեմ: 7 - Բայց դուք ինծի մտիկ չըրիք, կ'ըսէ Տէրը, որպէս զի զիս ձեր ձեռքերուն գործերովը բարկացնէք, ու ձեզի գէշ ըլլայ:

8 - Ասոր համար զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. 9 - Որովհետեւ իմ խօսքերս մտիկ չըրիք, Ահա ես պիտի զրկեմ, ու բոլոր հիւսիսի ազգատոհմները և իմ ծառաս Բարեւանի Նարուգոգոնոսար թագաւորը պիտի առնեմ, կ'ըսէ Տէրը, ու զանոնք այս երկրին վրայ և անոր բնակիչներուն վրայ ու բոլոր այս շրջակայ ազգերուն վրայ պիտի բերեմ, ու զանոնք նղովուածի պէս բնաջինջ պիտի ընեմ, և զանոնք զարմանքի ու տուէլու ենթաց պիտի ընեմ, ու յաւիտեանական աւերակի պիտի դարձնեմ, 10 - Եւ անոնցմէ ցնծութեան ձայնը և ուրախութեան ձայնը, փեսային ձայնը ու հարսին ձայնը, աղօրիքին ձայնը ու ճրագին լոյսը պիտի կորսնցնեմ: 11 - Եւ այս բոլոր երկիրը անապատ «- ամայութիւն պիտի ըլլայ. և այս ազգերը եօթանասուն

տարի Բաբելոնի թագաւորին պիտի ծառայեն :

12-Ու եօթանասուն տարիին լմնալէն ետքը Բաբելոնի թագաւորին ու այն ազգին այցելութիւն պիտի ընեմ՝ իրենց անօրէնութեանը համար . նաև Քաղզէացաց երկրին «յեղ-Քե-Պե-Պե» կ'ըսէ Տէրը, և զանհկա յաւիտենական ամայութեան պիտի դարձնեմ :

13 - Ու այն երկրին վրայ պիտի բերեմ այն բոլոր խօսքերը զորոնք ես անոր դէմ խօսեցայ, այսինքն Երեմիայի բոլոր ազգերուն վրայով ըրած մարգարէութեան այս գիրքին մէջ գրուած բոլոր բաները : 14 - Քանզի զանոնք ալ շատ ազգեր ու մեծ թագաւորներ իրենց ծառայ պիտի ընեն . ու ես անոնց հատուցում պիտի ընեմ իրենց ըրածներուն ու իրենց ձեռքերուն գործերուն համեմատ :

15-Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը ինծի այսպէս ըսաւ . Այս բարկութեան գինիին գաւաթը ձեռքէս առ, ու զանհկա խժցուր այն բոլոր ազգերուն՝ որոնց ես քեզ կը զրկեմ : 16 - Եւ խմեն ու խռովին ու անոնց մէջ զրկած սուրիս երեսէն յիմարին : 17 - Ուստի Տէրոջը ձեռքէն գաւաթը առի ու խժցուցի այն բոլոր ազգերուն , որոնց Տէրը զիս զրկեց . 18 - Երուսաղէմի ու Յուդայի քաղաքներուն և անոր թագաւորներուն «- անոր իշխաններուն, որպէս զի զանոնք անապատ , ամայութիւն, անարգանք ու անէճք ընէ, ինչպէս այսօր կ'երևոյ . 19 - Եգիպտոսի Փարաւոն թագաւորին , և անոր ծառաններուն ու իշխաններուն , ու անոր բոլոր ժողովուրդին . 20 - Եւ բոլոր խառնիճաղանճ ժողովուրդներուն, ու Հուս երկրին բոլոր թագաւորներուն , ու Փղշացաց երկրին բոլոր թագաւորներուն , այսինքն՝ Ասկաղոնի , Գազայի, ու Ակկարոնի, և Ազավտոսի մնացորդին . 21 - Եգիպտոսի, ու Մովաբի, ու Ամոնի սրգիներուն . 22 - Եւ Տիւրոսի բոլոր թագաւորներուն, ու Սիգոնի բոլոր թագաւորներուն, և ծովուն անդիս կողմը եզոյ՝ *կղզիներու թագաւորներուն . 23 - Դեգանի, ու Թեմայի , և Բուզի , ու ամէն իբեց մօրուքին ծայրերը կարողներուն . 24 - Եւ Արաբացաց բոլոր թագաւորներուն , ու անա-

պատը բնակող խառնիճաղանճ ժողովուրդին բոլոր թագաւորներուն . 25 - Եւ *Չամբրիի բոլոր թագաւորներուն , ու Եզամի բոլոր թագաւորներուն , ու Մարաց բոլոր թագաւորներուն . 26 - Եւ իրարու մօտ կամ հեռու եզոյ հիսիսի բոլոր թագաւորներուն, ու երկրի երեսին վրայ եզոյ երկրի բոլոր թագաւորութիւններուն իճյոցի . և անոնցմէ ետքը Սիսակի թագաւորը պիտի խմէ : 27 - Ու անոնց ըսես, Չորաց Տէրը, Իսրայէլի Աստուածը , այսպէս կ'ըսէ . Խմեցէք, ու գինովցէք ու փսխեցէք, և ձեր մէջ զրկելու սուրիս երեսէն ինկէք ու մի ելլէք : 28 - Ու եթէ գաւաթը քու ձեռքէդ առնել չուզեն խմելու համար, այն ատեն անոնց ըսես . Չորաց Տէրը այսպէս կ'ըսէ : Անշուշա պիտի խմէք . 29 - Քանզի ահա ես իմ անունովս կոչուած քաղաքին վրայ չարիք բերելու սկսայ . միթէ դուք անպատիժ պիտի մնաք, անպատիժ պիտի չմնաք, քանզի երկրի բոլոր բնակիչներուն վրայ սուր պիտի կանչեմ , կ'ըսէ Չորաց Տէրը :

30 - Ուստի դուն այս բոլոր խօսքերը անոնց մարգարէանալով՝ անոնց ըսես, Տէրը բարձրէն պիտի գուայ, Ու իր սուրբ բնակութենէն իր ձայնը պիտի տայ .

Իր բնակարանին վրայ ահարկու ձայնով պիտի գուայ, Խաղաղ կոխողներու աղաղակին պէս Երկրի բոլոր բնակիչներուն պատասխան պիտի տայ :

31 - Ահա բարձր ձայնը մինչև երկրի ծայրերը պիտի հասնի, Վասն զի Տէրը ազգերուն հետ դատաստան ունի .

Անհկա ամէն մարմնի հետ դատ պիտի վարէ, Ու ամբարիշտները սուրի պիտի տայ , կ'ըսէ Տէրը :

32 - Չորաց Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա չարիք պիտի ելլէ, մէկ ազգէ ուրիշ ազգի դէմ «նշի», Ու երկրի ծայրերէն մեծ մրրիկ պիտի ելլէ :

33 - Եւ այն օրը Տէրոջմէ սպաննուածները Երկրի մէկ ծայրէն մինչև երկրի միւս ծայրը պիտի ըլլան .

*Կա՛մ, ծովեզերեայ երկիրներու

*Կա՛մ, Չեմրանացաց

Անոնց համար սուգ պիտի չբռնուի,
Անոնք պիտի չժողվուին ու պիտի
չթաղուին,
Երկրի երեսին վրայ ազբի պէս պիտի
ըլլան:

34 - Ազբացէք, ով հովիւներ, ու ա-
ղաղակեցէք,

Եւ Ժոնի ճիւղ թաւալեցէք, ով հօտին
ընտիրները.

Վասն զի ձեր մարթուելու և ցիրուցան
ըլլալու օրերը լրացած են,

Ու պատուական ամանի պէս պիտի խ-
նաք:

35. Եւ հովիւներուն փոխչելու ճամբան
Ու հօտին ընտիրներուն ազատուելու
միջոցը պիտի կորսուի:

36 - Հովիւներուն աղաղակին ձայնը
Եւ հօտին ընտիրներուն սունալուն շոյ-
նը կայ,

Վասն զի Տէրը անոնց արօտները կոր-
սընցուց.

37 - Ու Տէրօջր սաստիկ բարկութեանը
երեսէն

Խաղաղութեան բնակարանները ամա-
յութեան դարձան:

38 - Աւոյգ առիւծի պէս իր բնակա-
րանը թողուց,

Քանզի բռնաւորին բարկութեանը ե-
րեսէն

Ու անոր սաստիկ սրամտութեանը երե-
սէն

Անոնց երկիրը ամայի եղաւ:

ԳԼ ԻԶ

Յուդայի թագաւորին, Յովսիայի
որդւոյն Յովակիմի, թագաւորու-
թեանը սկիզբը Տէրօջր կողմանէ այս
խօսքը եղաւ՝ ըսելով, 2 - Տէրը այսպէս
կ'ըսէ. Տէրօջր տանը գաւթին մէջ
կայնէ, ու Տէրօջր տանը երկրպագու-
թիւն ընելու եկող Յուդայի բոլոր քա-
ղաքներուն խօսէ այն ամէն խօսքերը
զորոնք քեզի պատուիրեցի անոնց խօ-
սելու համար. խօսք մը եւ մի ձգեր.
3 - Թերևս մտիկ ընեն, ու ամէն մարդ
իր չար ճամբայէն դառնայ. ես ալ
զղջամ' այն չարիքին համար զոր անոնց
չար գործերուն պատճառաւ իրենց
վրայ բերել կը խորհիմ': 4 - Եւ անոնց
ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ ինծի
մտիկ չընելով, ձեր առջև դրած օրէն-

քիս մէջ չքալէք, 5 - Ու ձեզի զրկած
ծառաններուն, մարգարէներուն, խօս-
քերը մտիկ չընէք, զորոնք կանուխ ել-
լելով կը զրկէի, ու դուք մտիկ չըրէք.
6 - Այն տան այս տունը Սելովի պէս
պիտի ընեմ, և այս քաղաքը երկրի
բոլոր ազգերուն անէծք պիտի ընեմ:

7 - Ու քահանաները և մարգարէները
ու բոլոր ժողովուրդը լսեցին, երբ Ե-
րեմիա Տէրօջր տանը մէջ այս խօսքերը
կը խօսէր: 8 - Ու երբ Երեմիա լմնցուց
այն բոլոր Իօտերը զրուցելը՝ զորոնք
Տէրը հրամայեր էր բոլոր ժողովուրդին
խօսիլ, քահանաները ու մարգարէ-
ները ու բոլոր ժողովուրդը զանիկա
բռնեցին ու ըսին, Իսկ անպատճառ
պիտի մեռնիս. 9 - Ինչո՞ւ համար Տէ-
րօջր անունովը մարգարէութիւն ըրիր՝
ըսելով, Այս տունը Սելովի պէս պիտի
ըլլայ, ու այս քաղաքը աւերակ պիտի
ըլլայ և հոն բնակիչ պիտի չըլլայ. ու
բոլոր ժողովուրդը Տէրօջր տանը մէջ
Երեմիայի վրայ ժողվուեցաւ:

10 - Ու երբ Յուդայի իշխանները այս
բաները լսեցին, թագաւորին տունէն
Տէրօջր տունը ելան, և Տէրօջր Գանը
նոր դրանը մուտքը նստան: 11 - Ու
քահանաները և մարգարէները իշխան-
ներուն ու բոլոր ժողովուրդին խօսե-
ցան ու ըսին, Այս մարդը մեռնելու
արժանի է, քանզի այս քաղաքին գէմ'
մարգարէութիւն ըրաւ, ինչպէս դուք
ձեր ականջներով լսեցիք:

12 - Ու Երեմիա բոլոր իշխաններուն
ու բոլոր ժողովուրդին խօսեցաւ ու ը-
սաւ, Տէրը զիս զրկեց որ այս տանը ու
այս քաղաքին վրայով ձեր լսած բոլոր
խօսքերը զԻսրայէլ մարգարէութիւն
ընեմ': 13 - Եւ հիմա ձեր ճամբաները
ու գործերը ուղղեցէք, ու ձեր Տէր
Աստուծոյն ձայնը մտիկ ըրէք, և Տէրը
ձեր վրայով ըսած չարիքին համար պի-
տի զղջայ: 14 - Բայց ես ահա ձեր
ձեռքն եմ. ձեր աչքին աղէկ ու շի-
տակ երեցածը ըրէք ինծի. 15 - Ասկայն
աղէկ գիացէք որ եթէ դուք զիս մեռ-
ցընէք, ձեր վրայ ու այս քաղաքին
վրայ և անոր բնակիչներուն վրայ ան-
շուշտ անմեղ արեան պարիշտ պիտի
բերէք. վասն զի ճշմարտապէս Տէրը
զիս ձեզի զրկեց, որպէս զի այս բոլոր
խօսքերը ձեր ականջներուն զրուցեմ':

16 - Այն տան իշխանները ու բո-
լոր ժողովուրդը քահանաներուն ու

Կ-ժ, բռնաւոր Իսրայէլ

մարգարէներուն ըսին, Այս մարգար մեռնելու արժանի չէ, վասն զի մեր Տէր Աստուծոյն անունովը մեզի խօսեր է: 17 - Ու երկրին ծերերէն քանի մը մարգիկ ելան, և ժողովուրդին բոլոր ժողովքին խօսեցան՝ ըսելով, 18 - Յուգայի Եզեկիա թագաւորին օրերը Մօրատացի Միքիա մարգարէութիւն ըրաւ. և բոլոր Յուգայի ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօն ագարակի պէ՞ պիտի հերկուի, ու Երուսաղէմ՝ աւերակներու գէղեր, ու Տէր՝ չէ տանը լեռը տնտատի բարձր տեղերու պէ՞ պիտի ըլլայ: 19 - Միթէ Յուգայի Եզեկիա թագաւորը ու բոլոր Յուգա զանկիա մեռցուցին. չէ՞ որ անկիա Տէրջմէ վախնալով՝ Տէրջը առջև աղօթք ըրաւ, և Տէրը անոնց վրայով ըսած չարիքին համար զղջաց. ուրեմն մենք մեծ չարիք մը ըրած կ'ըլլանք մեր անձերուն:

20 - Ու նաև Կարիաթարիմէ Սեմույիայի որդի Ուրիա անունով մարգարէութիւն կ'ընէր. և անկիա այս քաղաքին վրայ ու այս երկրին վրայ Երեմիայի բոլոր խօսքերուն պէս մարգարէացաւ: 21 - Ու երբ Յովակիմ թագաւորը ու անոր բոլոր զօրաւոր մարգիկը ու բոլոր իշխանները անոր խօսքերը լսեցին, թագաւորը ուզեց որ զանկիա մեռցնէ. բայց Ուրիա այս բանը լսելով՝ վախցաւ ու փախաւ Եգիպտոս գնաց: 22 - Եւ Յովակիմ թագաւորը մարգիկ զրկեց Եգիպտոս. Աքբորի որդին Եղնաթանը ու անոր հետ քանի մը մարգիկ զրկեց Եգիպտոս. 23 - Եւ անոնք Ուրիան Եգիպտոսէ հանեցին, ու զանկիա Յովակիմ թագաւորին բերին. ան ալ զանկիա սրով զարկաւ, ու անոր մարմինը ժողովուրդին որդիներուն գերեզմանները նետեց: 24 - Բայց Սափանի որդւոյն Աքիկամի ձեռքը Երեմիայի հետ էր, որ չըլլայ թէ անկիա ժողովուրդին ձեռքը մատնուելով՝ մեռցուի:

ԳԼ ԻԷ

Յուգայի թագաւորին Յովսիայի որդւոյն *Սեդեկիայի թագաւորու-

*Եբրայական օրինակներուն մէջ մասը այս րեզ Յովակիմի անունն. Բայց րե՞ հմը. 3, 12, 19, 20: ԳԼ ԻԷ 4:

թեան սկիզբը Տէրջը կողմանէ Երեմիայի այս խօսքը եղաւ՝ ըսելով, Տէրը ինձի այսպէս ըսաւ. 2 - Քեզի կապեր ու լուծեր չինէ, ու զանոնք պարանոցիդ վրայ դիր. 3 - Եւ զանոնք Երուսաղէմ Յուգայի Սեդեկիա թագաւորին եկող գեապաններուն ձեռքով Եզովմի թագաւորին, ու Մովաբի թագաւորին, ու Ամոնի որդիներուն թագաւորին, և Տիւրոսի թագաւորին ու Սիդոնի թագաւորին զրկէ. 4 - Եւ անոնց պատուէր տաս իրենց տէրերուն համար ու ըսես, Չօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ձեր տէրերուն այսպէս ըսէք, 5 - Ես իմ մեծ զօրութիւնովս ու երկնցած բազուկովս երկիրը, մարգը ու երկրի երեսին վրայ եղող անասունները ստեղծեցի, և զանկիա կու տամ որու որ իմ աչքիս առջև հաճոյ կ'երևնայ րաւ: 6 - Եւ հիմա այս բոլոր երկիրները ես իմ ծառայիս, Բաբելոնի Նաբուգոդոնոսար թագաւորին, ձեռքը կու տամ, ու դաշտի գազաններն ալ անոր կու տամ, որպէս զի անոր ծառայութիւն ընեն: 7 - Եւ բոլոր ազգերը ծառայութիւն պիտի ընեն անոր ու անոր որդւոյն ու անոր որդիին որդւոյն, մինչև անոր երկրին ժամանակն ալ հասնի, ու զանկիա ալ շատ ազգեր ու մեծ թագաւորներ իրենց ծառայ ընեն: 8 - Եւ այն ազգը կամ թագաւորութիւնը որ Բաբելոնի Նաբուգոդոնոսար թագաւորին ծառայութիւն չընէր, ու իր պարանոցը Բաբելոնի թագաւորին լուծին տակ չզնէր, այն ազգին սրով, սովով ու ժանապատով այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը, մինչև զանոնք անոր ձեռքով հատցնեմ:

9 - Եւ դուք մտիկ մի ընէք ձեր մարգարէներուն, բազդ նայողներուն, երազատեսներուն, գուշակողներուն ու կախարդներուն, որոնք ձեզի կը խօսին՝ ըսելով, Բաբելոնի թագաւորին ծառայ պիտի չըլլաք. 10 - Քանզի անոնք ձեզի սուտ մարգարէութիւն կ'ընեն, որպէս զի ձեր երկրին վրայէն ձեզ հեռացնեն, ու ես ձեզ վռնտեմ ու կորսուիք: 11 - Բայց իր պարանոցը Բաբելոնի թագաւորին լուծին տակ դնող և անոր ծառայութիւն ընող ազգը անշուշտ իր երկրին վրայ հանգիստ պիտի թողում, կ'ըսէ Տէրը, ու պիտի մշակէ զանկիա, ու անոր մէջ պիտի բնակի:

12 - Յուգայի Սեդեկիա թագաւորին

ալ այս բոլոր խօսքերուն համեմատ
 գրուցեցի ու ըսի, Ձեր պարանոցը Բա-
 բելոնի թագաւորին լուծին տակ դրէք,
 և անոր ու անոր ժողովուրդին ծառայ-
 յու թիւն ըրէք, որպէս զի ապրիք: 13 -
 Ինչո՞ւ համար դուն ու քու ժողո-
 վուրդդ սրով, սովով ու ժանտախ-
 տով մեռնիք, ինչպէս Տէրը Բաբե-
 լոնի թագաւորին ծառայութիւն չընող
 ազգին համար խօսեցաւ: 14 - Եւ դուք
 մտիկ մի ընէք այն մարգարէներուն
 խօսքերը, որոնք ձեզի կը խօսին՝ ըսե-
 լով, Բաբելոնի թագաւորին ծառայ
 պիտի չըլլաք, վասն զի անոնք ձեզի
 սոււա մարգարէութիւն կ'ընեն: 15 -
 Քանզի ես զանոնք չըրկեցի, կ'ըսէ Տէրը,
 հապա անոնք իմ անունովս սոււա մար-
 գարէութիւն կ'ընեն, որպէս զի ես
 ձեզ վաճակեմ, և դուք ու ձեզի մար-
 գարէութիւն ընող մարգարէները կոր-
 սուկք:

16 - Ու ես քահանաներուն և այս
 բոլոր ժողովուրդին գրուցեցի ու ըսի,
 Տէրը այսպէս կ'ըսէ. Ձեր մարգարէնե-
 րուն խօսքերը մտիկ մի ընէք, որոնք
 ձեզի մարգարէութիւն կ'ընեն՝ ըսելով,
 Ահա Տէրոջը տանը անօթները մօտերս
 Բաբելոնէ ետ պիտի բերուին. քանզի
 անոնք սոււա մարգարէութիւն կ'ընեն
 ձեզի: 17 - Անոնց մտիկ մի ընէք. Բա-
 բելոնի թագաւորին ծառայեցէք, որ-
 պէս զի ապրիք. ինչո՞ւ այս քաղաքը
 աւերակ ըլլայ: 18 - Բայց եթէ անոնք
 մարգարէներ են ու եթէ անոնց քով
 Տէրոջը խօսքը կայ, թող հիմա զօրաց
 Տէրոջը աղօթք ընեն, որպէս զի Տէրոջը
 տանը մէջ և Յուդայի թագաւորին
 տանը մէջ ու Երուսաղէմի մէջ մնա-
 ցած անօթները Բաբելոն չերթան:
 19 - Վասն զի զօրաց Տէրը այսպէս
 կ'ըսէ. սիւներուն ու ծովին և մեքե-
 նովթներուն ու այս քաղաքին մէջ
 մնացած անօթներուն վրայով, 20 -
 Չորոնք Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
 թագաւորը շառաւ, երբ Յուդայի թա-
 գաւորը Յովակիմի որդին Յեքոնիան,
 և Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ազ-
 նուականները Երուսաղէմէ Բաբելոն
 գերի տարաւ. 21 - Յիրաւի զօրաց Տէրը,
 Խորայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ Տէ-
 րոջը տանը մէջ և Յուդայի թագաւո-
 րին տանը մէջ ու Երուսաղէմի մէջ
 մնացած անօթներուն համար. 22 -
 Անոնք Բաբելոն պիտի տարուին, և հոն

պիտի մնան մինչև այն օրը՝ որ անոնց
 այցելու թիւն ընեմ, կ'ըսէ Տէրը. ետքը
 զանոնք պիտի հանեմ ու այս տեղ պի-
 տի դարձնեմ:

ԳԼ. ԻԸ

Ու եղաւ որ նոյն տարին Յուդայի
 թագաւորին Սեդեկիայի թագաւորու-
 թեան սկիզբը, չորրորդ տարւոյն հին-
 գերորդ ամիսը, Քարաւանէ եղող Ա-
 զուրի որդին Անանիա մարգարէն Տէ-
 րոջը տանը մէջ քահանաներուն ու բո-
 լոր ժողովուրդին առջև ինծի խօսեցաւ
 ու ըսաւ, 2 - Չօրաց Տէրը, Խորայէլի
 Աստուածը, այսպէս կը խօսի ու կ'ըսէ,
 Բաբելոնի թագաւորին լուծը կտարեցի.
 3 - Մինչև երկու տարի, Բաբելոնի Նա-
 բուգոդոնոսոր թագաւորին այս տեղէն
 առած ու Բաբելոն տարած Տէրոջը
 տանը բոլոր անօթները այս տեղ պիտի
 դարձնեմ: 4 - Եւ Յուդայի թագաւորը
 Յովակիմի որդին Յեքոնիան, ու Բաբե-
 լոն գացած բոլոր գերիները այս տեղ
 պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը, վասն զի
 Բաբելոնի թագաւորին լուծը պիտի
 կտարեմ:

5 - Ու Երեմիա մարգարէն, Տէրոջը
 տանը մէջ կայնող քահանաներուն ու
 բոլոր ժողովուրդին աչքին առջև Անա-
 նիա մարգարէին խօսեցաւ. 6 - Ու Երե-
 միա մարգարէն ըսաւ, Ամէն. Տէրը այն-
 պէս ընէ. Տէրը քու մարգարէացած
 խօսքերդ հաստատէ, ու Տէրոջը տանը
 անօթները ու բոլոր գերիները Բաբե-
 լոնէ այս տեղ դարձնէ: 7 - Բայց հի-
 մա քու սկանջներուդ և բոլոր ժողո-
 վուրդին սկանջներուն այս իմ՝ ըսելու
 խօսքս մտիկ ըրէ. 8 - Ինծմէ առաջ ու
 քեզմէ առաջ, սկիզբէն ի վեր եղող
 մարգարէները շատ երկիրներու դէմ
 ու մեծ թագաւորութիւններու դէմ՝
 պատերազմի, չարիքի ու ժանտախտի
 վրայով մարգարէացան: 9 - Երբ մար-
 գարէ մը խաղաղութիւն կը մարգա-
 րէանայ, ու այն մարգարէին խօսքը կը
 կատարուի, այն ատեն կը հասկցուի որ
 անիկա ճշմարտապէս Տէրոջմէ զրկուած
 մարգարէ մըն է:

10 - Այն ատեն Անանիա մարգարէն
 Երեմիա մարգարէին պարանոցէն լուծը
 առաւ, ու զանիկա կտարեց: 11 - Եւ
 Անանիա բոլոր ժողովուրդին աչքին
 առջև խօսեցաւ ու ըսաւ, Տէրը այսպէս

կ'ըսէ. Մինչև երկու տարի, Բարեւոյնի Նաբուգոդոնոսոր թագաւորին լուծը ամէն ազգերուն պարանոցին վրայէն այսպէս պիտի կտարեմ. ու Երեմիա մարգարէն իր ճամբան գնաց:

12 - Եւ Անանիա մարգարէին՝ Երեմիա մարգարէին պարանոցին վրայէն լուծը կտարեւէն ետքը, Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 13 - Գնա Անանիայի խօսէ ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Իսկ փայտէ լուծերը կտարեցիր, սակայն անոնց տեղ երկաթէ լուծեր պիտի շինես: 14 - Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Այս բոլոր ազգերուն պարանոցին վրայ երկաթէ լուծ դրի, որպէս զի Բարեւոյնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ծառայութիւն ընեն, և անոր պիտի ծառայեն. դաշտի գազաններն ալ անոր տուի:

15 - Ու Երեմիա մարգարէն Անանիա մարգարէին ըսաւ, Հիմա ըսէ, ով Անանիա, Տէրը քեզ զրկած չէ, ու դուն այս ժողովուրդը ստութեան յուսացուցիր: 16 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզ երկրի երեսին վրայէն պիտի վաճառեմ. դուն այս տարի պիտի մեռնիս, վասն զի Տէրոջը դէմ ապստամբութիւն խօսեցար: 17 - Եւ Անանիա մարգարէն այն տարւոյն եօթներորդ ամսուն մէջ մեռաւ:

ԳԼ. ԽԹ

Ասոնք են այն նամակին խօսքերը, զորոնք Երեմիա մարգարէն Երուսաղէմէ զրկեց գերիներէն մնացած ծերերուն, քահանաներուն և մարգարէներուն ու բոլոր ժողովուրդին, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէ Բարեւոյն քշեր էր, 2 - Յեքոնիա թագաւորին և թագուհիին ու պալատականներուն, Յուդայի ու Երուսաղէմի իշխաններուն ու հիւսերուն և դարբիններուն Երուսաղէմէ ելլելէն ետքը, 3 - Սափանի որդւոյն Եղեատայի ու Քեղկիայի որդւոյն Գամարիայի ձեռքով, (զորոնք Յուդայի թագաւորը Սեդեկիա Բարեւոյնի Նաբուգոդոնոսոր թագաւորին Բարեւոյն զրկեր էր,) ըսելով,

4 - Այսպէս կ'ըսէ զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, բոլոր գերիներուդ, որոնք Երուսաղէմէ Բարեւոյն քշել տուեր եմ: 5 - Տուներ շինեցէք ու բնա-

կեցէք, պարտեղներ անկեցէք ու անոնց պատշաճ կերէք, 6 - Կիներ տուէք և աղաքներ ու աղջիկներ ունեցէք, ու ձեր աղոցը կիներ տուէք, և ձեր աղջիկները այրերու տուէք, որպէս զի աղաքներ ու աղջիկներ ծնանին, և հոգ բազմացէք ու չքիչնաք: 7 - Ու այն քաղաքին խաղաղութիւնը փնտռեցէք, ուր ձեզ քշել տուեր եմ, և անոր համար Տէրոջը աղօթք ըրէք, վասն զի անոր խաղաղութիւնովը ձեզի խաղաղութիւն կ'ըլլայ: 8 - Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ձեր մէջ եղող ձեր մարգարէները ու ձեր բազմ նայողները ձեզ չխաբեն, և ձեր տեսնել տուած երազներուն մտիկ մի ընէք: 9 - Վասն զի անոնք իմ անունովս սուտ մարգարէութիւններ կ'ընեն ձեզի. գանոնք ես չզրկեցի, կ'ըսէ Տէրը: 10 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ. Երբ Բարեւոյնի եօթամստուն տարին լմնայ, ձեզի այցելութիւն պիտի ընեմ, և ձեզ այս տեղ դարձնելով՝ իմ բարի խոստմունքս ձեր վրայ պիտի կատարեմ: 11 - Քանզի ես ձեր վրայով խորհած խորհուրդներս գիտեմ, կ'ըսէ Տէրը, անոնք *Յէր յուսացած վախճանը՝ ձեզի տալու համար՝ խաղաղութեան խորհուրդներ են և ոչ թէ չարիքի: 12 - Ու դուք ինծի պիտի կանչէք, և պիտի երթաք ու ինծի աղօթք պիտի ընէք, և ձեզի պիտի լսեմ: 13 - Ու զիս պիտի փնտռէք և պիտի գտնէք, վասն զի ձեր բոլոր սրտովը պիտի խնդրէք զիս: 14 - Ու ես ձեզի պիտի գտնուիմ, կ'ըսէ Տէրը, և ձեր գերութիւնը ես պիտի դարձնեմ. ու ձեզ պիտի ժողվեմ բոլոր ազգերէն ու այն բոլոր տեղերէն՝ ուր ձեզ քշեր էի, կ'ըսէ Տէրը, և ձեզ պիտի դարձնեմ այն տեղը՝ ուրկէ ձեզ գերութեան քշել տուի: 15 - (Վասն զի դուք ըսիք թէ Տէրը ձեզի Բարեւոյնի մէջ մարգարէներ հանեց:)

16 - Քանզի Իաւիթի ամուսին վրայ նստող թագաւորին համար, ու այս քաղաքին մէջ բնակող բոլոր ժողովուրդին համար, ձեզի հեռ գերութեան չգացող եղբայրներուդ համար, Տէրը այսպէս կ'ըսէ. 17 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես անոնց մէջ պիտի զրկեմ սուրը, սովը ու ժամատախար, և զանոնք խիստ դէշ թուզերուն պէս

*Եբր. վախճան և յոյս

պիտի ընեմ, որոնք գէշութենէն չեն ուտուիր. 18 - Ու զանոնք սրով, սովով ու ժանտախտով պիտի հալածեմ, և զանոնք նեղութիւն կրելու պիտի մատնեմ երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ. «- զանոնք, զարմանքի, սուլելու ու նախատինքի եւ թախի պիտի ընեմ այն բոլոր ազգերուն մէջ ուր զանոնք պիտի քշեմ. 19 - Որովհետեւ իմ խօսքերս մտիկ չըրին, կ'ըսէ Տէրը, երբ իմ ծառաներս մարգարէները անոնց զրկեցի, կանուխ ելլելով ու զրկելով. ու դուք մտիկ չըրէք, կ'ըսէ Տէրը: 20 - Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, սվ դուք բոլոր գերիներդ, զորոնք երուսաղէմէ Բաբելոն զրկեցի: 21 - Իմ անունովս ձեզի սուտ մարգարէութիւն ընող Կովղիայի որդւոյն Աքաաբի վրայով. ու Մատաիայի որդւոյն Սեգեկիայի վրայով զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես զանոնք Բաբելոնի Նաբուզոդոնոսոր թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանոնք ձեր աչքերուն առջև պիտի զարնէ. 22 - Եւ Բաբելոն եղող Յուդայի բոլոր գերիներուն մէջ անոնց պարտաւորութիւն անէ՞ք պիտի առնուի՝ ըսելով, Տէրը քեզ Բաբելոնի թագաւորին կրակի մէջ խորոված Սեգեկիայի ու Աքաաբի պէս ընէ: 23 - Վասն զի Իսրայէլի մէջ անգգամութիւն գործեցին, և իրենց ընկերներուն կիներուն հետ շնութիւն ըրին, ու իմ անունովս սուտ խօսքեր խօսեցան, զորոնք ես անոնց չհրամայեցի. բայց ես գիտեմ ու վկայ եմ, կ'ըսէ Տէրը:

24 - Ու Նեհեմիայի Սեմայիայի խօսիս ու ըսես, 25-Չօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կը խօսի ու կ'ըսէ. Որովհետեւ դուն երուսաղէմ եղող բոլոր ժողովուրդին, և Մատաիայի որդւոյն Սոփոնիա քահանային ու բոլոր քահանաներուն քու անունովդ թուղթեր զրկեցիր՝ ըսելով, 26 - Տէրը քեզ Յովիտա քահանային տեղ քահանայ դրաւ, որպէս զի Տէրոջը տանը վերահացու ըլլաս, ու ամէն խելացնոր մարդ, որ զինք մարգարէ կը ձեռացնէ, կոճիկ ու երկաթը դնես: 27 - Եւ հիմա ինչո՞ւ համար ձեզի *մարգարէութիւն ընող՝ Անաթովթացի Երեմիան չյանդիմանեցիր. 28 - Վասն զի անիկա մեզի

*Կամ, զինք մարգարէ ձեռացնող

այսպէս նախ զրկեց Բաբելոն ու ըսաւ, Այս գերութիւնը պիտի երկնայ: Եւ աներ շինեցէք ու բնակեցէք, պարտեզներ անկեցէք և անոնց պատուղը կերէք: 29 - Ու Սոփոնիա քահանան այս թուղթը Երեմիա մարգարէին ականջներուն կարգաց: 30 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 31 - Բոլոր գերիներուն ըսէ զրկէ ու ըսէ, Նեհեմիայի Սեմայիայի համար Տէրը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Սեմայիա ձեզի մարգարէութիւն ըրաւ, թէ պէտեւ զանիկա ես չզրկեցի, ու ձեզ ստութեան յուսացուց, 32-Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես Նեհեմիայի Սեմայիայի ու անոր սերունդին այցելութիւն պիտի ընեմ. այս ժողովուրդին մէջ բնակող անոր մէկ մարդը պիտի չմնայ, և իմ ժողովուրդիս ընելու բարիքս անիկա պիտի չտեսնէ, կ'ըսէ Տէրը, վասն զի Տէրոջը գէմ՝ ապստամբութիւն խօսեցաւ:

ԳԼ. Լ

Տէրոջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է՝ զոր ըսաւ, 2 - Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կը խօսի ու կ'ըսէ, Բոլոր քեզի ըսած խօսքերս գիրքի մը մէջ գրէ. 3 - Քանզի ահա օրեր կուգան, կ'ըսէ Տէրը, որ իմ ժողովուրդիս Իսրայէլի և Յուդայի գերութիւնը պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը, ու զանոնք իրենց հայրերուն սուտ երկիրս պիտի դարձնեմ, ու զանիկա պիտի ժառանգեն:

4 - Եւ Իսրայէլի համար ու Յուդայի համար Տէրոջը ըսած խօսքերը ասոնք են.

5 - Տէրը այսպէս կ'ըսէ. Սոսկայի ձայն լսեցինք,

Վախ կայ ու խաղաղութիւն չկայ.

6 - Հիմա հարցուցէք ու տեսէք, Թէ արդեօք այր մարդը զաւակ կը ծնանի՞.

Ինչո՞ւ համար ամէն կարիճը Ծննդական կնոջ պէս ձեռքերը մէջքը դրած,

Ու բոլոր երեսները դեղնած կը տեսնեմ:

7 - Վախ, քանզի անիկա մեծ օր է, անոր պէս չկայ.

Ու անիկա Յակոբի նեղութեան ժամանակ պիտի ըլլայ, Բայց անկէ պիտի ազատի.

8 - Վասն զի այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Անոր լուծը քու պարանոցէդ պիտի կտորեմ՝
Եւ քու կապերդ պիտի փրցնեմ,
Ու զանկիս մէյմըն ալ օտարները պիտի չծառայեցնեն.

9 - Հապա անոնք իրենց Տէր Աստուծոյն Ու իրենց Իսաիթ թագաւորին ծառայութիւն պիտի ընեն,
Զոր ես պիտի հանեմ անոնց:

10 - Բայց դուն, ով իմ ծառայ Յակոբ, մի վախնար, կ'ըսէ Տէրը,
Ու, ով Իսրայէլ, մի զարհուրիր.
Քանզի ահա ես քեզ հեռուէն,
Եւ քու սերունդդ իրենց գերութեանը երկրէն պիտի ազատեմ.
Ու Յակոբ պիտի դառնայ և հանդարտ և հանգիստ պիտի ըլլայ,
Եւ զանկիս վախցնող պիտի չըլլայ:

11 - Վասն զի ես քեզ ազատելու համար քեզի հեռեմ, կ'ըսէ Տէրը.
Քանզի պիտի սպառեմ այն բոլոր ազգերը
Որոնց մէջ քեզ ցրուեցի.
Բայց քեզ պիտի չսպառեմ,
Հապա քեզ շափաւորութեամբ պիտի խրատեմ,
Ու քեզ բոլորովին անմեղ պիտի չհանեմ.

12 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Քու հարուածքդ անբժշկելի է ու վէրքդ անդարմանելի է.

13 - Զանկիս պատելու համար քու դատաստանդ տեսնող մը չկայ.
Քեզի համար դեղ ու սպեղանի չկայ:

14 - Քու բոլոր համանիներդ քեզ մոռցան.
Քեզ չեն փնտռեր.
Վասն զի քեզ թշնամիի հարուածքով,
Անգութ մէկուն պատիժովը, զարկի Քու անօրէնութիւններուդ շատութեանը համար,
Քանզի քու մեղքերդ շատցան:

15 - Քու բեկմանդ համար ինչո՞ւ կ'ազաղակես.
Քու ցաւդ անբժշկելի է.
Այս բաները քու անօրէնութիւններուդ շատութեանը համար քեզի ըրի,
Քանզի քու մեղքերդ շատցան:

16 - Անոր համար ամէն անոնք որ քեզ կը կլլեն, պիտի կլլուին,

Եւ քու բոլոր թշնամիներդ գերութեան պիտի երթան,
Ու քեզ յափշտակողները պիտի յափշտակուին.
Ու քեզ կողոպտողներուն ամէնը կողոպտուելու պիտի մտանեմ.

17 - Վասն զի քու վեհար պիտի պատեմ,
Եւ քեզ քու վէրքերէդ պիտի բժշկեմ, կ'ըսէ Տէրը,
Քանզի քեզի Աքարուած կանչեցին, Այս այն Սիօնն է, զոր փնտաող չկայ ըսին:

18 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես Յակոբի վրաններուն գերութիւնը պիտի դարձնեմ,
Եւ անոր բնակարաններուն սղորմութիւն պիտի ընեմ.
Ու քաղաքը իր աւերակներուն վրայ պիտի շինուի,
Եւ պալատը *առաջուան պէս՝ պիտի կանգնուի:

19 - Ու անոնցմէ պիտի ելլէ գովութիւն
Եւ ուրախութիւն ընողներու ձայն.
Ու զանոնք պիտի շատցնեմ ու պիտի չքիչնան,
Եւ զանոնք պիտի փառաւորեմ, ու պզտիկ պիտի չիչնան:

20 - Եւ անոնց տղաքները առաջուան պէս պիտի ըլլան,
Անոնց ժողովքը իմ առջեւ պիտի հաստատուի,
Ու բոլոր անոնց նեղութիւն տուողներուն այցելութիւն պիտի ընեմ:

21 - Եւ անոնց իշխանը իրենցմէ պիտի ըլլայ,
Ու անոնց վրայ տիրողը իրենց մէջէն պիտի ելլէ,
Եւ զանկիս պիտի մօտեցնեմ, ու ինծի մօտ պիտի ըլլայ.
Վասն զի ո՞վ է անկիս որ իր սիրաք պատրաստեց ինծի մօտենալու, կ'ըսէ Տէրը.

22 - Եւ դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք,
Ես ալ ձեզի Աստուած պիտի ըլլամ:

23 - Ահա Տէրոջը մըրիկը սրամտութեամբ ելաւ.
Անկիս աւլող մըրիկ է,
Ամբարիշտներուն գլխուն վրայ պիտի յարձակի:

*Եբր. իր սովորութեանը պէս

24 - Տէրոջը սաստիկ բարկութիւնը ետ
 պիտի չգառնայ,
 Մինչև որ իր սրտին խորհուրդները
 չկատարէ ու ի գործ չդնէ.
 Վերջին օրերը ասիկա պիտի հասկնաք:

Գ.Լ. ԼԱ.

Այն ատեն, կ'ըսէ Տէրը,
 Իսրայէլի բոլոր ազգասոսններուն Ասա-
 ուած պիտի ըլլամ,
 Ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլ-
 լան:

2 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Սուրէն փախած ժողովուրդը անապա-
 տին մէջ շնորհք գառ,
 Երբ *կ'երթար Իսրայէլ հանգստու-
 թիւն գտնելու:

3 - Տէրը շատոնցմէ ինծի երևցաւ՝ ըս-
 ել:

Քեզ յաւիտենական սիրով սիրեցի.
 Անոր համար խորամուծեամբ քեզ
 քաշեցի:

4 - Քեզ նորէն պիտի շինեմ, ու պիտի
 շինուիս, ով Իսրայէլի կոյսը,
 Նորէն քու թմբուկներովդ պիտի զար-
 դարուիս,
 Եւ ցնծութեամբ պար բռնողներուն
 խումբին հետ պիտի ելլես:

5 - Նորէն Սամարիայի լեռներուն վրայ
 այգիներ պիտի տնկես.
 Տնկողները պիտի տնկեն ու անոնց
 պտուղը պիտի ուտեն:

6 - Վասն զի օր պիտի գայ որ
 Եփրեմի լեռանը վրայ պահապանները
 պիտի կանչեն,
 Ելէք, ու մեր Տէր Ասաուծոյն դէպ ի
 Սիօն ելլենք:

7 - Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
 Յակոբի համար ուրախութեամբ եր-
 գեցէք,
 Եւ ազգերուն գլուխին չհամար ցնծա-
 ցէք:

Ձայն տուէք, օրհնեցէք ու ըսէք,
 Ով Տէր, քու ժողովուրդդ,
 Իսրայէլի մնացորդը, փրկէ:

8 - Ահա ես զանոնք հիւսիսի երկրէն
 պիտի բերեմ.

Ու զանոնք երկրի ծայրերէն՝

*Կ-ժ, կ'երթայի Իսրայէլի հանգստու-
 թիւն տալու
 †Կ-ժ, քեզի ողորմութիւն երկնցուցի
 ‡Կ-ժ, մէջ

Ու անոնց հետ կոյրը ու կազը,
 Յզին ու ծնած կինը մէկտեղ պիտի
 ժողվեմ.

Մեծ ժողովք մը հոս պիտի դառնայ:
 9 - Լալով պիտի գան, ու աղաչանք-
 ներով զանոնք պիտի բերեմ.

Ձանոնք ջուրերու վտակներուն քովէն
 պիտի պարտցնեմ,
 Շիտակ ճամբայէն՝ որուն մէջ չգայ-
 թակղին:

Վասն զի Իսրայէլի հայր եղայ,
 Ու Եփրեմ իմ անդրանիկս է:

10 - Ով ազգեր, Տէրոջը խօսքը մտիկ
 ըրէք,
 Ու հեռաւոր կղզիներուն պատմեցէք
 ու ըսէք,

Իսրայէլը ցրուողը զանիկա պիտի
 ժողվէ,

Եւ զանիկա պիտի պահպանէ, լնչ-
 պէս հովիւը իր հօտը իւր պահ-
 պանէ:

11 - Քանզի Տէրը փրկեց Յակոբը,
 Ու զանիկա անկէ զօրաւորին ձեռքէն
 ազատեց:

12 - Եւ պիտի գան, ու Սիօնի բարձ-
 րութեանը վրայ ուրախութեան
 ձայն պիտի վերցնեն,
 Եւ պիտի դիմեն Տէրոջը բարիքներուն,
 Այսինքն ցորենին ու գինիին ու իւզին
 Եւ հօտերուն ու արջառներուն,
 Եւ անոնց անձերը ջրուած պարտէզի
 պէս պիտի ըլլան,

Ու մէյմըն ալ պիտի ջնուաղին:

13 - Այն ատեն կոյսը պար բռնելով
 պիտի ուրախանայ,
 Նաև երիտասարդները և ծերերը մէկ-
 տեղ:

Վասն զի անոնց սուգը ուրախութեան
 պիտի դարձնեմ,

Եւ անոնց տրամուծեմէն զանոնք մի-
 թարելով՝ պիտի ուրախացնեմ:

14 - Ու քահանաներուն հոգիները պա-
 րարտութիւնով պիտի լեցնեմ,
 Եւ իմ ժողովուրդս իմ բարիքներովս
 պիտի կշտանայ, կ'ըսէ Տէրը:

15 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Ռամայի մէջ ձայն մը լուսեցաւ,
 Ողբի ու դառնազին լացի ձայն.
 Ռաբէլ իր տղոցը համար կու լար,
 Եւ իր տղոցը համար միթարուիլ չէք
 ուզեր,

Վասն զի անոնք չկային:

16 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Քու ձայնդ լալէն

Եւ աչքերդ արցունքէն դադրեցուր,
Վասն զի քու գործիդ համար վարձք
կայ, կ'ըսէ Տէրը,

Ու թշնամիին երկրէն պիտի դառնան:
17 - Եւ քու տպագայ ժամանակիդ
համար յոյս կայ, կ'ըսէ Տէրը,

Որ +* արջաքներդ իրենց սահմանը
դառնան:

18 - Յիրաւի Եփրեմի այգէ* ողբա-
լը լսեցի.

Զիս խրատեցիր ու խրատուեցայ
Լ* - թէ չսորված զուարակի պէս.

Զիս դարձուր, որպէս զի դառնամ,
Վասն զի իմ Տէր Աստուածս դուն ես:

19 - Իրաւցընէ դառնալէս ետքը
զղջացի,

Ու կրթուելէս ետքը իմ ազգրիս
զարկի.

Ամչցայ ու պատկառեցայ,
Վասն զի իմ մանկութեանս անար-
գանքը կրեցի:

20 - Միթէ Եփրեմ իմ պատուական
որդի՞ս է,

Կամ սիրական զաւս՞կ մըն է.
Վասն զի քանի որ ես անոր վրայս լ կը
խօսիմ,

Շարունակ զանկէս կը յիշեմ .
Այս պատճառաւ իմ աղիքս կը գա-
լարի անոր համար,

Անշուշտ անոր սղարմութիւն պիտի ք-
նեմ, կ'ըսէ Տէրը:

21 - Քեզի կ'օթողներ կանգնէ, քեզի
սիւներ անկէ,

Սիրող մեծ ճամբուն, քու գացած շա-
ւիղիդ, դիր.

Գարձիր, օվ Իսրայէլի կոյսը,
Այս քու քաղաքներդ գարձիր:

22 - Ով ապաստամբ աղջիկ,
Մինչև ե՞րբ աստանդական պիտի շրջիս:
Քանզի Տէրը երկրի վրայ նոր բան
ստեղծեց,

Կինմարդը պիտի շրջապատէ այրմարդը:
23 - Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուա-
ծը, այսպէս կ'ըսէ.

Այսուհետև Յուդայի երկրին մէջ
Ու անոր քաղաքներուն մէջ այս խօս-
քը պիտի լսեն՝

Երբ անոնց գերութիւնը դարձնեմ .
Տէրը քեզ օրհնէ,

Ով արդարութեան բնակարան,
սուրբ լեռ:

24 - Եւ հոն, Յուդայի մէջ ու միան-
գամայն անոր բոլոր քաղաքնե-
րուն մէջ

Երկրագործներ ու հօտերու հետ շուղ-
ներ պիտի բնակին:

25 - Քանզի յոգնած հոգին պիտի զը-
վացնեմ,

Ու ամէն մարած հոգին պիտի կշտա-
ցընեմ:

26 - Ասոր վրայ արթնցայ ու նայեցայ,
Եւ իմ քունս ինծի անոյշ էր:

27 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Իսրայէլի տունը և Յուդայի տունը
Մարդու սերմ ու անասունի սերմ պի-
տի ցանեմ:

28 - Ինչպէս խլելու, փլցնելու ու աւ-
րելու,

Եւ կորսնցնելու ու չարիք հասցնելու
համար

Անոնց վրայ հսկեցի,
Նոյնպէս աւ շինելու ու անկելու համար
Անոնց վրայ պիտի հսկեմ, կ'ըսէ Տէրը:

29 - Այն օրերը մէյմըն ալ պիտի
չըսեն,

Հայրերը ազոխ կերան,
Ու որդիներուն աղաւները տաին.

30 - Հապա ամէն մարդ իր անօրէնու-
թեանը համար պիտի մեռնի.

Ամէն մարդ որ ազոխ կ'ուտէ,
Անոր աղաւները պիտի տանեն:

31 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Իսրայէլի տանը հետ ու Յուդայի
տանը հետ

Նոր ուխտ պիտի ընեմ,
32 - Ոչ թէ այն ուխտին պէս, զոր ա-
նոնց հայրերուն հետ ըրի

Այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝
Զանոնք Եգիպտոսի երկրէն հանելու
համար.

Քանզի անոնք իմ ուխտս զանց ըրին,
* Ես ալ զանոնք մերժեցի՝, կ'ըսէ Տէրը.

33 - Հապա այն օրերէն ետքը
Իսրայէլի տանը հետ ընելու ուխտս ա-
սիկա է, կ'ըսէ Տէրը.

Իմ օրէնքս անոնց ներսիդին պիտի
դնեմ,

Ու զանկէս անոնց օրտին վրայ պիտի
զրեմ,

Ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ,
Եւ անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլ-
լան:

34 - Ու անկէ ետքը մարդ մը իր ըն-
կերին

Ու մարդ մը իր եղբօրը պիտի չսորվե-
ցընէ՝

*Կա՞մ, Թէ և անոնց վրայ տիրողը ես էի

Ըսելով թէ Տէրը ճանչցիր.
 Հապա անոնց պղտիկէն մինչև մեծը
 Ամէնը զիս պիտի ճանչնան, կ'ըսէ Տէ-
 րը.
 Վասն զի անոնց անօրէնութիւնը պիտի
 ներկս՝
 Աւ անոնց մեղքը մէյմըն ալ պիտի
 չյիշեմ՝
 35 - Այսպէս կ'ըսէ Տէրը,
 Ար արևը հաստատեց օրուան լոյսին
 համար,
 Եւ գիշերուան լոյսին համար լուսինին
 ու ստաղերուն կանոններ դրաւ,
 Ար ծովը կը յանդիմանէ, երբ անոր ա-
 լիքները կը գոռան.
 Անոր անունը Եհովա Սարաւովթ է.
 36 - Եթէ այս կանոնները իմ առջևէս
 դադարին, կ'ըսէ Տէրը,
 Իսրայէլի սերունդն ալ իմ առջևս
 միշտ ազգ ըլլալէն պիտի դա-
 դարի:
 37 - Տէրը այսպէս կ'ըսէ.
 Եթէ երկինքները կրնան վերէն չափ-
 ուիլ,
 Աւ երկրի հիմերը վարէն քննուիլ,
 Ես ալ բոլոր Իսրայէլի սերունդը,
 Իրենց բոլոր բրածներուն համար, պի-
 տի մերժեմ, կ'ըսէ Տէրը:
 38 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէ-
 րը,
 Ար Անանայէլի աշտարակէն մինչև
 Անկեան դուռը
 Քաղաքը Տէրօջը համար պիտի շինուի.
 39 - Եւ անոր գիմացէն չափին լարը
 Մինչև Գարեբի բլուրը պիտի ելլէ,
 Աւ դէպ ի Գոսթ պիտի դառնայ,
 40 - Եւ դիերուն ու մսխոց բոլոր ձորը
 Աւ բոլոր արտերը մինչև Կեդրոն հեղե-
 դասը,
 Մինչև Զիերուն դրանը անկիւնը դէպ
 ի արևելք,
 Սուրը պիտի ըլլայ Տէրօջը.
 Մէյմըն ալ պիտի չքակուի ու չփլչի
 յաւիտեան:

ԳԼ. ԼԲ

Յուգայի Սեդեկիա թագաւորին
 տառներորդ տարին, այսինքն Նարու-
 գոգանտարի տառնութեան տարին,
 Տէրօջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն
 է: 2 - Եւ այն ատեն Բաբելոնի թագա-
 ւորին զօրքը Երուսաղէմը կը պաշարէր,
 ու Երեմիա մարգարէն Յուգայի թա.

գաւորին տունը եղող բանաին գաւի-
 թին մէջ արգիլուած էր: 3 - Վասն զի
 Յուգայի Սեդեկիա թագաւորը զանհկա
 արգիլեց՝ ըսելով, Գուն ինչո՞ւ համար
 մարգարէութիւն ըրիր ու ըսիր թէ
 Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այս քա-
 ղաքը Բաբելոնի թագաւորին ձեռքը
 պիտի տամ, ու զանհկա պիտի առնէ.
 4 - Եւ Յուգայի Սեդեկիա թագաւորը
 Քաղդէացոց ձեռքէն պիտի չազատի.
 Հապա անշուշտ Բաբելոնի թագաւորին
 ձեռքը պիտի արուի, ու անոր հետ բե-
 րան առ բերան պիտի խօսի, և անոր
 հետ աչք աչքի պիտի տեսնուի: 5 - Աւ
 անհկա Սեդեկիան Բաբելոն պիտի տա-
 նի. ու անհկա հոն պիտի մնայ մինչև
 ես անոր այցելութիւն ընեմ, կ'ըսէ
 Տէրը. Եթէ Քաղդէացոց հետ պատե-
 րազմ ընեք, յաջողութիւն պիտի
 չգանէք:

6-Այն ատեն Երեմիա ըսաւ, Տէրօջը
 խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 7-Ահա քու
 հօրեղբորդ Սեղուամի որդին Անամայէլ
 քեզի պիտի գայ ու պիտի ըսէ, Անա-
 թովթի մէջ եղող ազարակս քեզի
 ծախու առ, վասն զի ազգականութեան
 իրաւունքով քեզի կ'ընայ որ ծախու
 առնես: 8-Եւ Տէրօջը խօսքին համեմատ
 իմ հօրեղբորս որդին Անամայէլ ինծի
 բանաին գաւիթը եկաւ, ու ինծի
 ըսաւ, Շնորհք ըրէ, Բենիամինի երկիրը
 Անաթովթի մէջ ունեցած ազարակս
 ծախու առ, վասն զի ժառանգութեան
 իրաւունքը քու կդէ ու քեզի կ'ընայ
 որ փրկես, քեզի ծախու առ. այն ատեն
 զիացայ որ ասիկա Տէրօջը խօսքն էր:
 9 - Եւ հօրեղբորս որդիէն, Անամայէլէ,
 Անաթովթի մէջ եղող ազարակը ծա-
 խու առի, ու ստակը տասնբոթը սիկղ
 արծաթ կշուեցի անոր: 10 - Եւ մուր-
 հակ մը զրեցի ու կնքեցի ու վկաներ
 բռնեցի և արծաթը կշիւքով կշուեցի:
 11 - Աւ ստացուածքի մուրհակը, թէ՛
 հրամանին ու կանոններուն համեմատ
 կնքուածը, և թէ՛ բաց եղած ըսաւի: 12-
 Աւ ստացուածքի մուրհակը, հօրեղբորս
 «դ»-ը Անամայէլի աչքերուն առջև ու
 ստացուածքի մուրհակին մէջ գրուող
 վկաներուն աչքերուն առջև, բանաի
 գաւիթին մէջ նստող բոլոր Հրէից աչ-
 քերուն առջև, Մասաիայի որդւոյն
 Ներիայի որդւոյն Բարուքի տուի: 13 -
 Եւ անոնց աչքերուն առջև Բարուքի
 պատուիրեցի ու ըսի, 14-Զօրաց Տէրը,

Իսրայելի Աստուածը, այսպէս կ'ըսէ . Այս մուրհակները, այս կնքուած ստացուածքի մուրհակը ու այս բաց մուրհակը, առ, և զանանք հողէ ամանի մը մէջ դիր, որպէս զի շատ օրեր մնան : 15 - Քանզի զօրաց Տէրը, Իսրայելի Աստուածը, այսպէս կ'ըսէ . Այս երկրին մէջ նորէն տուներ ու ագարակներ և այգիներ ծախու պիտի առնուին :

16 - Ու ստացուածքի մուրհակը Ներիայի որդւոյն Բարուքի տալէս ետքը, Տէրոջը աղօթք ըրի ու ըսի, 17 - Ո՛հ, Տէր Եհովա, ահա դուն քու մեծ զօրութիւնովդ ու երկնցած բազուկովդ երկիրքը ու երկիրը ստեղծեցիր . բնուած բան մը քեզի դժուարին չէ : 18 - Իսկն հազարներուն սղորմութիւն կ'ընես, ու հայրերուն անօրէնութեան պատիժը անոնցմէ ետքը անոնց որդիներուն ծոցը կու տաս . դուն մեծ ու հզօր Աստուած ես, և քու անունդ Զօրաց Տէր է : 19 - Իսկն խորհրդով մեծ ու գործով զօրուոր ես, այնպէս որ ամէն մէկուն իր ճամբաներուն համեմատ ու անոր գործերուն պատշգին համեմատ հատուցում՝ ընելու համար՝ քու աչքերդ մարդոց որդիներուն բոլոր ճամբաներուն վրայ բաց են : 20 - Իսկն որ մինչև այսօր Եգիպտոսի երկրին մէջ ու Իսրայելի մէջ և Բաբելոն մարդոց մէջ նշաններ ու հրաշքներ ընելով՝ քեզի անուն վաստակեցար, ինչպէս այսօր կ'երևայ . 21 - Եւ քու ժողովուրդդ Իսրայելը, նշաններով ու հրաշքներով և զօրուոր ձեռքով ու երկնցած բազուկով և մեծ ահարկութիւնով Եգիպտոսի երկրէն հանեցիր, 22 - Ու անոնց տուիր այս երկիրը զոր իրենց հայրերուն երգում ըրեր էիր իրենց տալու, այնպէ՛ երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ . 23 - Ու մտան զանկիա ժառանգեցին, բայց քու ձայնիդ տկանջ չտուին և քու օրէնքիդ համեմատ չքալեցին . անոնք չըրին ինչ որ անոնց պատուիրեցիր որ ընեն . ուստի այս բոլոր չարիքը անոնց վրայ բերիր : 24 - Ահա քաղաքին դէմ պատմէչներ կանգնուեցան, որպէս զի զանկիա առնեն . և քաղաքը սուրին, սովին ու ժանտախտին պատճառաւ, անոր դէմ պատերազմ ընող Քաղդէացուց ձեռքը սրուեցաւ . և քու ըսածդ կատարուեցաւ, ու ահա կը տեսնես : 25 - Բայց դուն, ով Տէր Եհովա, ինծի ըսիր որ Ագարակը ստակով քեզի ծախու առ

ու վկաներ բռնէ . և ահա քաղաքը Քաղդէացուց ձեռքը կը մտանուի : 26 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 27 - Ահա ես եմ՝ Եհովա, ամէն մարմնի Աստուածը . միթէ ինծի դժուարին բան մը կայ : 28 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա ես այս քաղաքը Քաղդէացուց ձեռքը ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանկիա պիտի առնէ . 29 - Եւ այս քաղաքին դէմ պատերազմ ընող Քաղդէացիները պիտի գան, ու այս քաղաքը կրակի պիտի տան ու այրեն . նաև պէ՛տէ՛ այն տուները՝ որոնց տանիքներուն վրայ Բահայի խունկ կը ծխէին, և օտար աստուածներուն թափելու նուէրներ կը մատուցանէին՝ զիս բարկացնելու համար : 30 - Քանզի Իսրայելի որդիները ու Յուդայի որդիները իրենց մանկութենէն ի վեր իմ՝ առջևս միայն չարութիւն կը գործեն . որովհետեւ Իսրայելի որդիները իրենց ձեռքերուն գործերովը անդադար զիս կը բարկացնեն, կ'ըսէ Տէրը : 31 - Քանզի այս քաղաքը իր շինութեան օրէն մինչև այսօր իմ՝ բարկութեանս ու սրամտութեանս համար եղաւ, որպէս զի զանկիա երեսիս առջևէն վերցնեմ, 32 - Իսրայելի որդիներուն ու Յուդայի որդիներուն, թէ՛ իրենց և թէ՛ իրենց թագաւորներուն, իշխաններուն, քահանաներուն ու մարգարէներուն և Յուդայի մարգոցը ու Երուսաղէմի բնակիչներուն բոլոր չարութեանը պատճառաւ, զոր ըրին զիս բարկացնելու համար : 33 - Եւ ինծի կանակ դարձուցին և ոչ թէ երես . ու թէև անոնց սարվեցուցի, կանուխ ելլելով ու սորվեցնելով, բայց անոնք մտիկ չըրին, որ խրատ ընդունին . 34 - Հապա իմ՝ անունովս կոչուած ասանք մէջ իրենց պղծութիւնները գրին, զանկիա պղծելու համար : 35 - Ու Ենովթի որդւոյն ձորին մէջ եղող Բահայի բարձր տեղերը շինեցին, իրենց աղաքները ու աղջիկները Մողաքի համար կրակէ անցրնելու, զոր ես անոնց հրամայած չէի ու միտքէս ալ անցած չէր, որ անոնք այս պղծութիւնը ընեն՝ Յուդայի մեղանչել տալու համար : 36 - Ուստի հիմա Իսրայելի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ այս քաղաքին համար՝ որ դուք կ'ըսէք թէ սրով,

տովով ու ժանտախտով Բարեկանի
 թագաւորին ձեռքը կը մտնուի. 37 -
 Ահա ես զանոնք պիտի ժողովեմ՝ այն
 բոլոր երկիրներէն ուր զանոնք իմ՝ բար-
 կութիւնովս, սրամտութիւնովս ու
 մեծ ցատումովս վաճակեցի, և զանոնք
 այս տեղ պիտի դարձնեմ՝ ու ապա հո-
 վութեամբ պիտի բնակեցնեմ: 38 -
 Եւ անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլ-
 լան, ես ալ անոնց Աստուած պիտի
 ըլլամ: 39 - Ու անոնց մէկ սիրտ ու
 մէկ ճամբայ պիտի տամ, որպէս զի
 միշտ ինծմէ վախնան, և իրենց ու
 իրենցմէ ետքը իրենց զաւակներուն ա-
 ղէկ ըլլայ: 40 - Եւ անոնց հետ յաւի-
 տենական ուխտ մը պիտի ընեմ, որ
 անոնց բարիք ընելէն անոնցմէ ետ
 չքաշուիմ. ու իմ վախս անոնց սրտին
 մէջ պիտի դնեմ, որպէս զի ինծմէ չխո-
 տորին: 41 - Եւ անոնց բարիք ընելով
 անոնց վրայ պիտի ուրախանամ, ու
 զանոնք բոլոր սրտովս ու բոլոր հոգիովս՝
 ճշմարտութեամբ այս երկրին մէջ պի-
 տի անկեմ: 42 - Քանզի Տէրը այսպէս
 կ'ըսէ. Ինչպէս այս ժողովուրդին վրայ
 այս բոլոր մեծ չարիքը բերի, նոյնպէս
 անոնց վրայ պիտի բերեմ՝ այն բոլոր
 բարիքը՝ զոր անոնց համար խօսեցայ:
 43 - Ու նորէն ագարակներ ծախու
 պիտի առնուին այդ երկրին մէջ, որու
 համար դուք կ'ըսէք թէ Ամոյացած
 է, ու մարդէ և անասունէ զուրկ է,
 * - Քաղղէացոց ձեռքը տրուած է:
 44 - Բենիամինի երկրին մէջ, ու Երու-
 սաղէմի շրջակայ տեղերը, և Յուդայի
 քաղաքներուն մէջ, ու Լեռնային քա-
 ղաքներուն մէջ, և դաշտային քա-
 ղաքներուն մէջ ստակով ագարակներ
 ծախու պիտի առնեն, և մուրհակներ
 պիտի գրեն ու պիտի կնքեն ու վկա-
 ներ պիտի բռնեն, վասն զի անոնց գե-
 րութիւնը ետ պիտի դարձնեմ, կ'ըսէ
 Տէրը:

ԳԼ. ԼԳ

Եւ Տէրոջը խօսքը երկրորդ անգամ
 Երեմիայի եղաւ երբ անիկա տակաւին
 բանաին դաւիթին մէջ արգիլուած էր՝
 Եր. Եր. 2 - Այսպէս կ'ըսէ Տէրը որ այս
 * - Քաղղէացոց շինեց, Տէրը, որ զանիկա հաս-
 տատելու համար զանիկա ստեղծեց,
 որուն անունը Լեհոփա է. 3 - Ինծի կանչէ,

ու քեզի պատասխան տամ, և քեզի
 մեծ ու խորին բաներ պատմեմ, զորոնք
 դուն չես գիտեր: 4 - Վասն զի այս
 քաղաքին տուներուն համար, ու Յու-
 դայի թագաւորներուն տուներուն հա-
 մար, որոնք պատնէշներէն ու սուրէն
 փլած են, Իսրայէլի Տէր Աստուածը
 այսպէս կ'ըսէ. 5 - *Քաղղէացոց դէմ՝
 պատերազմ ընելու կու գան, և այն
 * - Քաղղէացոց մեռած մարդոց դիերովը պիտի
 լեցուին, զորոնք իմ՝ բարկութիւնովս ու
 սրամտութիւնովս պիտի զարնեմ: Վասն
 զի ես այս քաղաքէն իմ՝ երեսո ծած-
 կեցի՝ անոնց բոլոր չարութեանը հա-
 մար: 6 - Ահա անոր առողջութիւն ու
 բժշկութիւն պիտի բերեմ՝ ու զանոնք
 պիտի բժշկեմ, և խաղաղութեան ու
 ճշմարտութեան առատութիւնը անոնց
 պիտի յայտնեմ: 7 - Եւ Յուդայի գերու-
 թիւնը ու Իսրայէլի գերութիւնը պիտի
 դարձնեմ, ու զանոնք առաջուան պէս
 պիտի խառնուին: 8 - Եւ անոնց ինծի
 դէմ գործած բոլոր անօրէնութենէն
 զանոնք պիտի սրբեմ, ու անոնց ինծի
 դէմ ըրած բոլոր անօրէնութիւնները
 ու յանցանքները պիտի ներեմ: 9 - Եւ
 ասիկա ինծի ուրախութեան անուն,
 փառք ու պարծանք պիտի ըլլայ երկրի
 բոլոր ազգերուն մէջ, որոնք պիտի լսեն
 այն ամէն բարիքը՝ զոր ես անոնց պի-
 տի ընեմ. և պիտի վախնան ու դողան
 այն ամէն բարիքին ու ամէն յաջողու-
 թեանը համար՝ զոր ես այս * - Քաղղէացոց
 պիտի ընեմ:

10 - Տէրը այսպէս կ'ըսէ. Այս տեղին
 մէջ, որու համար դուք կ'ըսէք թէ
 Մարդէ ու անասունէ զուրկ ըլլալով
 անապատ դարձած է, և Յուդայի քա-
 ղաքներուն մէջ ու Երուսաղէմի փո-
 ղոցներուն մէջ, որոնք անմարդ ու ան-
 բնակ ու անասունէ զուրկ ըլլալով
 ամոյացած են, նորէն պիտի լսուի 11 -
 Յնձութեան ձայն, և ուրախութեան
 ձայն, փեսայի ձայն, ու հարսի ձայն,
 նաև անոնց ձայնը՝ որոնք Տէրոջը տունը
 գոհութեան ընծաներ բերելով կ'ըսեն,
 Գոհացեք զօրոց Տէրոջմէն, վասն զի
 Տէրը բարի է, վասն զի անոր սղորմու-
 թիւնը յաւիտեան է. քանզի այս երկ-
 րին գերիները երէն առաջուան վիճա-
 կին պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը:

*Կամ, Քաղղէացիք
 +Եբբ. շինեմ

12 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ . Այս տեղին մէջ, որ մարդէ ու անասունէ զուրկ ըլլալով՝ անապատ դարձած է, և անոր ամէն քաղաքներուն մէջ, նորէն հօտեր պառկեցնող հովիւներու բնակարաններ պիտի ըլլան. 13 - Լեւնային քաղաքներուն մէջ, գաշտային քաղաքներուն մէջ ու հարաւային քաղաքներուն մէջ և Բենիամինի երկրին մէջ, ու Երուսաղէմի շրջակայ տեղերը և Յուդայի քաղաքներուն մէջ հօտերը դարձեալ զերէն+ համրոյին ձեռքէն պիտի անցնին, կ'ըսէ Տէրը:

14 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ Իսրայէլի տանը համար և Յուդայի տանը համար ըսած բարի խօսքս պիտի կատարեմ: 15 - Այն օրը ու այն ժամանակը Իսաիթի արդարութեան շառաւիղ մը պիտի բուսցնեմ. և անիկա երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ: 16 - Այն օրերը Յուդա պիտի ազատի, ու Երուսաղէմ՝ ապահովութեամբ պիտի բնակի, և այս է անոր անունը որով պիտի կոչուի, Տէրը մեր արդարութիւնը: 17 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ. Իսաիթէ Իսրայէլի տանը ակտուին վրայ նստող մարդ պակաս պիտի չըլլայ. 18 - Ու Ղևտացի քահանաներէն ողջակէզ, հացի ընծայ ու զոհ մատուցանող մարդ յաւիտեան պակաս պիտի չըլլայ իմ առջևէս:

19 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, Տէրը այսպէս կ'ըսէ. 20 - Եթէ ցորեկուան ուխտս ու գիշերուան ուխտս կրնաք աւրել, որ ցորեկը ու գիշերը իրենց ժամանակովը չըլլան, 21 - Իմ ծառայիս Իսաիթի հետ ունեցած ուխտս ալ պիտի աւրուի, որ իր ակտուին վրայ թագաւորութիւն ընելու որդի չունենայ. այնպէս ալ ինծի ծառայութիւն ընող Ղևտացի քահանաներուն հետ «անեցած» «իդ» : 22 - Ինչպէս երկինքի զօրքերը չեն համբուրուի ու ծովուն աւազը չչափուի, իմ ծառայիս Իսաիթի սերունդը և ինծի ծառայութիւն ընող Ղևտացիները այնպէս պիտի շառցնեմ:

23 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 24 - Զե՞ս տեսներ որ այս ժողովուրդը ի՛նչ կը խօսի ու կ'ըսէ, Տէրը իր ընտրած երկու ազգասահմաները երեսէ ձգեց. ու անոնք իմ ժողովուրդս կ'անտրգեն, մինչև զանիկա

իրենց առջև ազգ չսեպելով: 25 - Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ ցորեկուան ու գիշերուան համար ուխտս ըրած չեմ, և երկինքներուն ու երկրի կանոններ դրած չեմ, 26 - Յակոբի ու իմ ծառայիս Իսաիթի սերունդն ալ երեսէ պիտի ձգեմ, որպէս զի մէյմըն ալ անոր սերունդէն Աբրահամի, Իսահակի ու Յակոբի սերունդին վրայ իշխաններ չգնեմ. վասն զի անոնց գերութիւնը պիտի դարձնեմ՝ ու անոնց պիտի սղորմիմ:

ԳԼ. ԼԴ

Երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը, ու իր իշխանութեան տակ եղող երկրին բոլոր թագաւորութիւններովը, և բոլոր ժողովուրդներով Երուսաղէմի վրայ ու անոր բոլոր քաղաքներուն վրայ պատերազմ կ'ընէր, Տէրոջը կողմանէ Երեմիայի այս խօսքը եղաւ՝ ըսելով,

2 - Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Գնա, Յուդայի Սեդեկիա թագաւորին խօսէ ու անոր ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա այս քաղաքը Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանիկա կրակով պիտի այրէ: 3 - Եւ դուն անոր ձեռքէն պիտի չազատիս, հապա անշուշտ պիտի բռնուիս ու անոր ձեռքը պիտի տրուիս. և քու աչքերդ Բաբելոնի թագաւորին աչքերը պիտի տեսնեն, ու անոր բերանը քու բերնիդ հետ պիտի խօսակցի, ու Բաբելոն պիտի երթաս: 4 - Բայց Տէրոջը խօսքը մտիկ ըրէ, ով Սեդեկիա, Յուդայի թագաւոր, Տէրը քեզի համար այսպէս կ'ըսէ. Դուն որով պիտի չմեռնիս, 5 - Դուն խաղաղութեամբ պիտի մեռնիս. և ինչպէս քեզմէ առաջ եղող քու հայրերուդ, առաջուան թագաւորներուն, համար խնայեցի ձեռքիցի, նոյնպէս քեզի համար պիտի ծխեն, ու Վա՛յ, տէր է՛մ, ըսելով՝ քու վրագ պիտի սղբան, վասն զի այս խօսքը ես խօսեցայ, կ'ըսէ Տէրը:

6 - Ու Երեմիա մարգարէն այս բոլոր խօսքերը Յուդայի Սեդեկիա թագաւորին խօսեցաւ Երուսաղէմի մէջ: 7 - Եւ Բաբելոնի թագաւորին զօրքը Երուսաղէմի դէմ ու Յուդայի մնացած բոլոր քաղաքներուն դէմ, Լաբիսի ու Ազեկայի դէմ, պատերազմ կ'ընէր,

վան զի Յուդայի քաղաքներէն պարբու պաւսր քաղաքներ տանք մնացեր էին:

8-Տէրօջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է, երբ Սեգեկիա թագաւորը Երուսաղէմի մէջ՝ եղող բոլոր ժողովուրդին հետ ուխտ ըրաւ որ ազատութիւն քարոզեն, 9 - Որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր աղախինը, Երրոյեցի մարդը ու Երրոյեցի կինը, ազատ արձակէ, ու մէյմըն ալ մարդ մը իր Հրեայ եղբայրը չծառայեցնէ:

10-Ու հնազանդեցան բոլոր իշխանները ու բոլոր ժողովուրդը, որոնք այն ուխտին մէջ մտան, որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր աղախինը ազատ արձակէ, և ա՛լ զանոնք չծառայեցնէ. հնազանդեցան և զանոնք արձակեցին:

11 - Բայց անկէ ետքը դարձան, ու իրենց ազատ թող տուած ծառաները ու աղախինները ետ դարձուցին, և զանոնք բռնադատեցին որ ծառաներ ու աղախիններ ըլլան:

12 - Ու Տէրօջը խօսքը Երեմիայի եղաւ Տէրօջմէն՝ ըսելով, 13 - Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ես ձեր հայրերուն հետ ուխտ ըրի զանոնք Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանած օրս, ու ըսի, 14 - Եօթը տարիէն ետքը ձեզմէ ամէն մէկը ազատ պիտի արձակէ իր Երրոյեցի եղբայրը որ քեզի ծախուած է, ու վեց տարի քեզի ծառայեր է, զանկապ քովէդ ազատ արձակես. բայց ձեր հայրերը ինծի մտիկ չըրին ու ականջին չձռեցին: 15 - Եւ դուք այսօր դարձաք, ու ամէն մարդ իր ընկերին ազատութիւն քարոզելով իմ առջև ուղիղ եղածը ըրիք, և իմ առջև ուխտ ըրիք այն ատենը մէջ որուն վրայ իմ անունս կոչուած է: 16 - Բայց երբ դառնալով իմ անունս պղծեցիք, ու ամէնդ ալ ձեր ազատ արձակած «իրենց կամքին ըսող բան» ծառաները ու աղախինները ետ դարձուցիք, ու զանոնք բռնադատեցիք որ ձեզի ծառաներ ու աղախիններ ըլլան:

17 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Դուք ինծի մտիկ չըրիք, որ յեզէ ամէն մէկը իր եղբորը համար ու ամէն մէկը իր ընկերին համար ազատութիւն քարոզէ. ահա ես ձեզի համար, կ'ըսէ Տէրը, սուրին, ժանտախտին ու սովին ազատութիւն կը քարոզեմ՝ ու ձեզ երկրի բոլոր թագաւորութիւններուն

մէջ նեղութեան պիտի մտանեմ: 18 - Եւ զուարակը երկուքի կտրելով ու անոր կտորներուն մէջտեղէն անցնելով իմ առջև ըրած ուխտերնուն խօսքերը չկատարող, և իմ ուխտս զանց ընող մարդիկը պիտի մտանեմ, 19 - Այսինքն Յուդայի իշխանները ու Երուսաղէմի իշխանները, պալատականները և քահանաները ու երկրին բոլոր ժողովուրդը, որոնք զուարակին կտորներուն մէջտեղէն անցան, 20 - Չանոնք իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը պիտի մտանեմ, և անոնց դիւրը երկինքի թըռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան: 21 - Եւ Յուդայի Սեգեկիա թագաւորը ու անոր իշխանները իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը և ձեզմէ դարձող Բաբելոնի թագաւորին զօրքերուն ձեռքը պիտի մտանեմ: 22 - Ահա ես հրամայեցի, կ'ըսէ Տէրը, ու զանոնք այս քաղաքը ետ պիտի բերեմ, և անոր դէմ պատերազմ պիտի ընեն ու զանկապ պիտի առնեն ու կրակով այրեն. և Յուդայի քաղաքները անբնակ ամայութեան պիտի դարձնեմ:

ԳԼ. ԼԵ

Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի օրերը Տէրօջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է, որ ըսաւ, 2 - Ռեքաբեանց տունը գնա ու անոնց հետ խօսէ, և զանոնք Տէրօջը տունը սենեակ մը տար, ու անոնց գինի խմցուր: 3 - Եւ Քաբասինիայի որդւոյն Երեմիայի որդին Յեզունիա ու անոր եղբայրները և բոլոր որդիները ու Ռեքաբեանց բոլոր տունը առի: 4 - Եւ զանոնք Տէրօջը տունը տարի Սեղզումի որդւոյն Մատսիա դռնապանին սենեակին վրայ եղող իշխաններուն սենեակին քովի՝ Աստուծոյ մարդուն Յեգդոհիայի որդւոյն Անանի որդիներուն սենեակը: 5 - Ու Ռեքաբեանց տանը որդիներուն առջև գինիով լեցուն ամաններ ու զաւաթներ դրի, և անոնց ըսի, Գինի խմեցէք: 6 - Ու անոնք ըսին, Գինի չենք խմեր. քանզի մեր հայրը, Ռեքաբի որդին Յովսադաթ, մեզի պատուիրեց ու ըսաւ, Դուք ու ձեր որդիները յաւիտեան գինի չխմէք: 7 - Եւ

տուն չչինէք ու սերմ՝ չցանէք և այգի չանկէք ու չտանաք, չապա ձեր բուրբ օրերը վրաններու մէջ բնակիք. որպէս զի ձեր պանդուխտ եղած երկրին վրայ շատ օրեր ապրիք: 8 - Ու մեր հօրը Ռեքարի որդւոյն Յովնադարի բուրբ մեզի հրամայածին պէս անոր խօսքը մտիկ ընելով՝ մեր բոլոր օրերուն մէջ մենք, մեր կիները, մեր աղաքները ու մեր աղջիկները գինի չենք խմեր. 9 - Եւ բնակելու համար տուներ չենք շիներ, ու այգի և ագարակ ու սերմ՝ չենք ստանար. 10 - Հապա վրաններու մէջ կը բնակինք, ու հնազանդութիւն ընելով՝ մեր հօրը Յովնադարի բոլոր մեզի հրամայածը ի գործ կը դնենք: 11 - Բայց երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը այս երկիրը ելաւ, բսինք, Եկէք, Քաղզէացոց զօրքին երեսէն ու Ասորոց զօրքին երեսէն Երուսաղէմ՝ երթանք. այսպէս Երուսաղէմի մէջ կը բնակինք:

12 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 13 - Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Գնա, Յուդայի մարդոց ու Երուսաղէմի բնակիչներուն ըսէ, իմ խօսքերս մտիկ ընելու համար խրատ չէ՞ք ընդունիր, կ'ըսէ Տէրը: 14 - Ռեքարի որդւոյն Յովնադարի իր որդիներուն գինի չխմելու համար պատուիրած խօսքերը հաստատ պահուեցան. վասն զի իրենց հօրը հրամանին հնազանդութիւն ընելով՝ մինչև այսօր չեն խմեր. բայց թէև ես ձեզի խօսեցայ, կանուխ ելլելով ու խօսելով, սակայն ինձի մտիկ չըրիք: 15 - Եւ իմ բոլոր ծառաներս մարգարէները ձեզի զրկեցի՝ կանուխ ելլելով ու զրկելով, ու ըսի, Ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ, և բարի գործեր ըրէք, ու օտար աստուածներու ետեւ մի երթաք, որ անոնց ծառայութիւն ընէք, որպէս զի ձեզի ու ձեր հայրերուն տուած երկրիս մէջ բնակիք. բայց ձեր սկանջը չծռեցիք ու ինձի մտիկ չըրիք: 16 - Եւ Ռեքարի որդւոյն Յովնադարի որդիները իրենց հօրը պատուիրած հրամանը հաստատ պահեցին, բայց այս ժողովուրդը ինձի մտիկ չըրաւ: 17 - Անոր համար զօրաց Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես Յուդայի ու Երուսաղէմի բոլոր բնակիչներուն վրայ պիտի բերեմ՝ այն բոլոր չարիքը զոր անոնց համար խօսե-

րի. վասն զի անոնց խօսեցայ, բայց մտիկ չըրին, ու անոնց կանչեցի, բայց պատասխան չտուին:

18 - Ու Երեմիա Ռեքարեանց տանը ըսաւ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Որովհետև ձեր հօրը Յովնադարի պատուէրը մտիկ ըրիք, ու անոր բոլոր հրամանները պահեցիք, և ձեզի ամէն պատուիրածին պէս ըրիք, 19 - Անոր համար զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ռեքարեան Յովնադարէ միշտ իմ առջև կայնող մարդ պակաս պիտի չըլլայ:

ԳԼ. ԼԶ

Ու եղաւ որ Յուդայի թագաւորին, Յովսիայի որդւոյն Յովակիմի, չորրորդ տարին Տէրոջը կողմանէ այս խօսքը եղաւ Երեմիայի՝ ըսելով, 2 - Քեզի գիրքի տամ մը աւ, ու անոր վրայ գրէ այն բոլոր խօսքերը զորոնք քեզի հետ խօսելու «իս» օրէս Յովսիայի օրերէն մինչև այսօր Իսրայէլի վրայով ու Յուդայի վրայով և բոլոր ազգերուն վրայով խօսեցայ: 3 - Կարելի է որ Յուդայի տունը լսէ այն բոլոր չարիքը զոր ես կը մտածեմ՝ անոնց ընել, որպէս զի ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ, և ես անոնց անօրէնութիւնը ու մեղքը ներեմ:

4 - Ու Երեմիա Ներիայի որդին Բարուքը կանչեց. և Բարուք Երեմիայի բերնէն Տէրոջը անոր ըսած բոլոր խօսքերը այն գիրքի տամին վրայ գրեց: 5 - Ու Երեմիա Բարուքի պատուիրեց ու ըսաւ, Ես այս գիրքը արգիլուած եմ, Տէրոջը տունը երթալու կարող չեմ. 6 - Ուստի դուն երթաս, ու ծովնապահութեան օրը Տէրոջը տանը մէջ ժողովուրդին սկանջներուն իմ բերնէս գրած տամէդ Տէրոջը խօսքերը կարդաս, ու նաև իրենց քաղաքներէն եկող բոլոր Յուդայի սկանջներուն զանոնք կարդաս: 7 - Թերևս *Տէրոջը առջև իյնալով աղօթք ընեն, և ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ. քանզի մեծ է այն բարկութիւնը ու սրամտութիւնը զոր Տէրը այս ժողովուրդին համար խօսեցաւ: 8 - Ու Նե-

*ԵՔբ. անոնց աղօթքը Տէրոջը առջև իյնայ

րիայի որդին Բարուք Երեմիա մարգարէին բոլոր իրեն հրամայածին պէս բրաւ, և ան գիրքէն Տէրոջը խօսքերը կարգաց Տէրոջը տանը մէջ:

9 - Ու եղաւ որ Յուդայի թագաւորին, Յովսիայի որդւոյն Յովակիմի, հինգերորդ տարին, իններորդ ամիսը, բոլոր Երուսաղէմի ժողովուրդին, ու Յուդայի քաղաքներէն Երուսաղէմ՝ եկող բոլոր ժողովուրդին, Տէրոջը առջև ծամապահութիւն քարոզեցին: 10 - Եւ Բարուք Սափան դպիրին որդւոյն Գամարիայի սենեակը, Տէրոջը տանը նոր դրանը մուտքը, վերի գաւթի մէջ բոլոր ժողովուրդին ականջներուն այն գիրքէն Երեմիայի խօսքերը կարգաց:

11 - Եւ Սափանի որդւոյն Գամարիայի որդին Մեքիա երբ գիրքէն Տէրոջը բոլոր խօսքերը լսեց, 12 - Թագաւորին առնը դպիրին սենեակը իջաւ. և ահա բոլոր իշխանները, Եղիսամիա դպիրը, ու Սեմույիայի որդին Գաղաշիա, ու Աբորի որդին Եղնաթան, և Սափանի որդին Գամարիա, ու Անանիայի որդին Սեղեկիա, և բոլոր իշխանները հոն նստեր էին: 13 - Ու Միքիա անոնց պատմեց այն բոլոր խօսքերը զորոնք լսեր էր՝ երբ Բարուք ժողովուրդին ականջներուն այն գիրքէն կը կարգար: 14 - Եւ բոլոր իշխանները Բուսի որդւոյն Սեղեմիայի որդւոյն Նաթանիայի որդին Յուդին Բարուքի զրկեցին՝ ըսելով, ժողովուրդին ականջներուն կարգացած ամուգ ձեռքդ առ ու հոս եկուր. ուստի Ներիայի որդին Բարուք տամը ձեռքը առաւ ու անոնց գնաց: 15 - Եւ անոնք ըսին անոր, Կ'աղաչենք, նստէ ու մեր ականջներուն ալ կարգաց զանիկա: Եւ Բարուք անոնց ականջներուն կարգաց: 16 - Ու երբ այն բոլոր խօսքերը լսեցին, վախով իրարու կը նայէին. ու Բարուքի ըսին, Անշուշա այդ բոլոր խօսքերը թագաւորին պիտի պատմենք: 17 - Եւ Բարուքի հարցուցին ու ըսին, Շնորհք ըրէ, պատմէ մեզի թէ ի՞նչ պէս գրեցիր այդ խօսքերը անոր բերնէն: 18 - Եւ Բարուք անոնց ըսաւ, Այս խօսքերուն ամէնը անիկա ինծի բերնով արտասանեց, ու ես զանոնք մեղանով այս գիրքին մէջ գրեցի: 19 - Այն ատեն իշխանները Բարուքի ըսին, Գնա պահուրէս թէ՛ գուն և թէ՛ Երեմիա, և ուր ըլլայնիդ մարդ չգիտնայ:

20 - Ու անոնք սրահը թագաւորին մտան, բայց տամը Եղիսամիա դպիրին սենեակին մէջ պահեր էին, և այս բոլոր խօսքերը թագաւորին ականջներուն պատմեցին: 21 - Եւ թագաւորը զրկեց Յուդին որ այն տամը առնէ, ու զանիկա Եղիսամիա դպիրին սենեակէն առաւ. և Յուդի զանիկա թագաւորին ականջներուն ու թագաւորին քով կայնող բոլոր իշխաններուն ականջներուն կարգաց: 22 - Եւ իններորդ ամիսը ըլլալով թագաւորը ձմերտանը մէջ նստած էր, ու առջևը վառած կրակարան կար: 23 - Ու երբ Յուդի երեք կամ չորս երես կարգաց, զանիկա գմէլինով կարեց ու կրակարանի կրակին մէջ նետեց, մինչև որ բոլոր տամը կրակարանի կրակին մէջ հատաւ: 24 - Եւ թագաւորը ու անոր բոլոր ծառաները, որոնք այս բոլոր խօսքերը կը լսէին, չվախցան, ոչ ալ հանդերձին պատուեցին: 25 - Թէպէտև Եղնաթան, Գաղաշիա ու Գամարիա թագաւորին աղաչեցին որ տամը չայրէ, բայց անոնց մտիկ չբրաւ: 26 - Եւ թագաւորը թագաւորի որդւոյն Յերամէլի ու Եղրիէլի որդւոյն Սարայիայի ու Աբդիէլի որդւոյն Սեղեմիայի հրամայեց, որ Բարուք դպիրը ու Երեմիա մարգարէն բռնեն. բայց Տէրը զանոնք պահեց:

27 - Եւ թագաւորը այն տամը ու Երեմիայի բերնէն Բարուքի գրած խօսքերը այրելէն ետքը՝ Տէրոջը խօսքը եղաւ Երեմիայի՝ ըսելով, 28 - Նորէն գնա, քեզի ուրիշ տամ մը առ, ու անոր վրայ գրէ այն բոլոր առաջուան խօսքերը՝ որոնք Յուդայի Յովակիմ թագաւորին այրած առաջուան ամսին մէջ կային: 29 - Եւ Յուդայի Յովակիմ թագաւորին ըսեա, Տէրը այսպէս կ'ըսէ. Գուն այդ տամը այրեցիր, ըսելով թէ Ինչո՞ւ համար անոր վրայ գրեցիր թէ Բարեխանի թագաւորը անպատճառ պիտի գայ ու այս երկիրը պիտի աւրէ, և անկէ մարդը ու անասունը պիտի վերցնէ:

30 - Անոր համար Տէրը Յուդայի Յովակիմ թագաւորին վրայով այսպէս կ'ըսէ. Անիկա Գաւթի ավտուին վրայ նստող մարդ պիտի չունենայ. և անոր մեռելը ցորեկը տաքի մէջ ու գիշերը ցուրտի մէջ պիտի ձգուի: 31 - Ու անոր և անոր սերունդին ու անոր ծառաներուն այցելութիւն պիտի ընեմ իրենց:

անօրէնութեանը համար . և անոնց վրայ ու Երուսաղէմի բնակիչներուն վրայ ու Յուդայի մարգոցը վրայ պիտի բերեմ՝ այն ամէն չարիքը զոր *անոնց խօսեցայ, և անոնք մտիկ չըրին:

32 - Աւ Երեմիա ուրիշ ասմն մը առաւ , ու զանիկա Ներիայի որդւոյն Բարուք դպիրին առաւ . և անիկա անոր վրայ Երեմիայի բերնէն՝ Յուդայի Յովակիմ թագաւորին կրակով այրած գիրքին բոլոր խօսքերը գրեց . ու անոնց վրայ անոնց պէս ուրիշ շատ խօսքեր աւելցան :

ԳԼ ԼԵ

Եւ Յովսիայի որդին Սեղեկիա թագաւորը Յովակիմի որդւոյն Յեքոնիայի տեղ թագաւորեց, զոր Բարեղնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Յուդայի վրայ թագաւոր դրաւ . 2-Բայց անիկա ու անոր ծառաները ու երկրին ժողովուրդը Տէրոջը Երեմիա մարգարէին ձեռքով խօսած խօսքերը մտիկ չըրին:

3 - Աւ Սեղեկիա թագաւորը Սեղեմիայի որդին Յուքադը ու Մասսիայի որդին Սափոնիա քահանան Երեմիա մարգարէին զրկեց՝ ըսելով , Շնորհք ըրէ , ձեզի համար մեր Տէր Աստուծոյն աղօթք ըրէ : 4 - Այն ժամանակ Երեմիա ժողովուրդին մէջ կը մտնէր կ'ելլէր , ու զանիկա *Կ-Է-ն բանալը դրած չէին : 5 - Աւ Եգիպտոսէ Փարաւոնի զօրքը ելաւ . ու Երուսաղէմը պաշարող Քաղդէացիները երբ անոնց լուրը լսեցին , Երուսաղէմի վրայէն քաշուեցան :

6 - Եւ Տէրոջը խօսքը Երեմիա մարգարէին եղաւ՝ ըսելով , Խորայելի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . 7 - Ինծի հարցնելու համար ձեզ ինծի զրկող Յուդայի թագաւորին այսպէս ըսէք . Ահա ձեզի օգնութեան համար ելլող Փարաւոնի զօրքը իր երկիրը Եգիպտոս պիտի դառնայ . 8 - Աւ Քաղդէացիք պիտի դառնան և այս քաղաքին դէմ պատերազմ՝ պիտի ընեն , ու զանիկա պիտի առնեն և զանիկա կրակով այրեն : 9 - Տէրը այսպէս կ'ըսէ . Մի խաբէք ձեր անձերը՝ ըսելով թէ Քաղդէացիք անշուշտ մեզմէ պիտի երթան , վասն զի պիտի չերթան . 10 - Քանզի թէ և ձեզի հեա պատերազմ՝ ընող

Քաղդէացւոց բոլոր զօրքը զարնէք , ու անոնցմէ Գ-Յ մէկ քանի վիրաւորուած մարդիկ մնան , անոնց ամէն մէկը իր վրանէն ելլելով՝ այս քաղաքը կրակով պիտի այրեն :

11 - Աւ երբ Քաղդէացւոց զօրքը Փարաւոնի զօրքին պատճառաւ Երուսաղէմի վրայէն քաշուեցան , 12 - Երեմիա Երուսաղէմէ ելաւ որ Բենիամինի երկիրը երթայ , ու անկէ ժողովուրդին մէջ էր բաժինը առնէ : 13 - Աւ երբ անիկա Բենիամինի դուռն էր , հոն Անանիայի որդւոյն Սեղեմիայի որդին , Յերիա անուանով սասիկան մը , կար . և անիկա Երեմիա մարգարէն բռնեց ու ըսաւ , Իսկ Քաղդէացւոց կողմը կ'անցնիս : 14 - Աւ Երեմիա ըսաւ , Սուսէ , ես Քաղդէացւոց կողմը չեմ անցնիր . բայց անիկա անոր մտիկ չըրաւ . ու Յերիա բռնեց Երեմիան ու զանիկա իշխաններուն տարաւ : 15 - Եւ իշխանները Երեմիայի արգոյեցան ու զանիկա ձեծեցին և բանաարկեցին Յովակիմի գպիրին տանը մէջ . վասն զի այն *Կ-Է-ն բանալը ըրեր էին :

16 - Երբ Երեմիա բանալը ու խուցերուն մէջ մտաւ , ու հոն շատ ատեն նստաւ , 17 - Սեղեկիա թագաւորը Ժառ զրկեց , զանիկա առաւ , և թագաւորը իր ամեր մէջ գաղտուկ անոր հարցուց ու ըսաւ , Արդեօք Տէրոջմէ խօսք մը կ'սո՞ւս : Աւ Երեմիա ըսաւ , Կայ . նաև ըսաւ , Իսկ Բարեղնի թագաւորին ձեռքը պիտի օրուիս : 18 - Աւ Երեմիա ըսաւ Սեղեկիա թագաւորին , Քեզի կամ ծառաներուդ կամ այս ժողովուրդին դէմ ի՞նչ մեղք գործեցի որ զիս բանալը դրիք : 19 - Եւ ո՞ւր են ձեր մարգարէները որոնք ձեզի մարգարէութիւն ըրին ու ըսին . Բարեղնի թագաւորը ձեր վրայ ու այս երկրին վրայ պիտի չգայ : 20 - Եւ հիմա կ'աղաչեմ , ով տէր իմ թագաւոր , մտիկ ըրէ , թող իմ աղաչանքս քու առջև ընդունելի ըլլայ . ու զիս Յովակիմի գպիրին տունը ետ մի զրկեր , որ հոն չմեռնիմ : 21 - Եւ Սեղեկիա թագաւորը հրամայեց , ու Երեմիան բանալին գաւիթը դրին , ու ամէն օր հացագործներուն փողոցէն մէյմէկ նկանակ հաց կու տային անոր , մինչև քաղաքին հացը բոլորովին հատաւ . ու Երեմիա բանալին գաւիթին մէջ կը նստէր :

*Կ-Է, անոնց համար

ԳԼ. ԼԸ

Եւ Մատթանի որդին Սափատիա
 ու Փատուրի որդին Գոգոպիա և Սեղե-
 միայի որդին Յուքազ ու Մեղքիայի
 որդին Փատուր Երեմիայի բոլոր ժողո-
 վուրդին հետ խօսած խօսքերը լսեցին ,
 որ ըսաւ , Տէրը այսպէս կ'ըսէ . 2 - Այս
 քաղաքին մէջ կեցողը սրով , սովով ու
 ժանտախտով պիտի մեռնի . իսկ Քաղ-
 զէացւոց ելլողը ողջ պիտի մնայ , և ա-
 նոր կեանքը իրեն աւարի մը պէս պի-
 տի ըլլայ ու պիտի տարի : 3 - Տէրը այս-
 պէս կ'ըսէ . Այս քաղաքը անպատճառ
 Բաբելոնի թագաւորին զօրքին ձեռքը
 պիտի արոււի , ու զանիկա պիտի առնէ .
 4 - Եւ իշխանները թագաւորին ըսին ,
 Կ'աղաչենք , թող այս մարդը մեռցուի ,
 վասն զի այս քաղաքին մէջ մնացած
 պատերազմական մարդոց ձեռքերը ու
 բոլոր ժողովուրդին ձեռքերը կը թուլ-
 ցնէ՝ անոնց այսպիսի խօսքեր խօսելով .
 վասն զի այս մարդը այս ժողովուրդին
 խաղաղութիւնը չփնտռեր , հապա ա-
 նոր չարիքը : 5 - Եւ Սեղեկիա թագա-
 ւորը ըսաւ , Ահա անիկա ձեր ձեռքն
 է . սրով հետեւ թագաւորը ձեր քով կա-
 բողութիւն մը չունի : 6 - Ու Երեմիան
 առին և զանիկա թագաւորի որդւոյն
 Մեղքիայի գուրը նետեցին , որ բանաին
 գաւիթին մէջ էր , ու Երեմիան չուան-
 ներով իջեցուցին . և այն գուրին մէջ
 ջուր չկար , հապա միայն աղմ . ու
 Երեմիա աղմին մէջ կ'ընկղմէր :

7 - Եւ թագաւորին առնը եղող Ե-
 թէովպացի ներքինին Աբդեմեղէք լսեց
 որ Երեմիան գուրը ձգեցին . ու թագա-
 ւորը Բենիամինի գուռը կը նստէր . 8 -
 Եւ Աբդեմեղէք թագաւորին առնէն
 ելաւ , ու թագաւորին խօսեցաւ ու ը-
 սաւ , 9 - Ով տէր իմ թագաւոր , այս
 մարդիկը գէշ բրին ամէն ինչ որ Երե-
 միա մարգարէին ըրին՝ զանիկա գուրը
 նետելով . քանզի քաղաքին մէջ ա՛լ
 հաց չգտնուելուն համար՝ անիկա իր
 տեղը անօթութենէն *պիտի մեռնի՝ :
 10 - Եւ թագաւորը Եթէովպացի Աբ-
 դեմեղէքի հրամայեց ու ըսաւ , Ասկէ
 քեզի հետ երեսուն մարդ առ , ու Երե-
 միա մարգարէն գուրէն հանէ՝ քանի
 որ մեռած չէ : 11 - Եւ Աբդեմեղէք ի-
 բրեն հետ առաւ մարդիկը , ու թագա-

ւորին առնը շահմարանին տակ գնաց ,
 և անկէ պատուած լաթեր ու հին լա-
 թեր առաւ , և զանոնք չուաններով
 գուրը Երեմիայի իջեցուց : 12 - Ու Ե-
 թէովպացի Աբդեմեղէք Երեմիայի ը-
 սաւ , Այս պատուած ու հին լաթերը
 թեքուող տակ չուաններուն տակէն
 գիր . ու Երեմիա այնպէս ըրաւ : 13 -
 Ու Երեմիան չուաններով քաշեցին ,
 և զանիկա գուրէն դուրս հանեցին .
 ու Երեմիա բանաին գաւիթին մէջ
 նստաւ :

14 - Եւ Սեղեկիա թագաւորը Ժադ
 զրկեց , ու Երեմիա մարգարէն իր քով
 առաւ Տէրոջը առնը եղող երրորդ
 մուտքը . և թագաւորը Երեմիայի ը-
 սաւ , Քեզի բան մը պիտի հարցնեմ ,
 ինձմէ բան մի պահէր : 15 - Ու Երե-
 միա ըսաւ Սեղեկիայի , Եթէ քեզի
 պատմեմ , չէ՞ որ զիս անշուշտ պիտի
 մեռցնես . և եթէ քեզի խրատ տամ ,
 ինձի մտիկ պիտի չընես . 16 - Բայց
 Սեղեկիա թագաւորը Երեմիայի գաղ-
 տակ երգում ըրաւ ու ըսաւ , Մեզի
 այս հոգին ստեղծող Տէրը կենդանի է՝
 որ քեզ պիտի չմեռցնեմ , և քեզ պի-
 տի չմտանեմ այս մարդոց ձեռքը՝ ո-
 բնոք քու հոգիդ կը փնտռեն : 17 - Այն
 ատեն Երեմիա Սեղեկիայի ըսաւ , Զօ-
 րաց Տէր Աստուածը , Իսրայէլի Աստ-
 ուածը , այսպէս կ'ըսէ . Եթէ Բաբելոնի
 թագաւորին իշխաններուն ելլես , քու
 հոգիդ ողջ պիտի մնայ , և այս քաղա-
 քը կրակով պիտի չայրի . հապա դուն
 ու քու տունդ ողջ պիտի մնաք . 18 -
 Բայց եթէ Բաբելոնի թագաւորին իշ-
 խաններուն չելլես , այն ատեն այս քա-
 ղաքը Քաղզէացւոց ձեռքը պիտի
 արոււի , ու զանիկա կրակով պիտի այ-
 րեն . և դուն անոնց ձեռքէն պիտի չա-
 վատի : 19 - Ու Սեղեկիա թագաւորը
 Երեմիայի ըսաւ , Քաղզէացւոց կողմը
 անցած Հրեաներէն կը վախնամ . չըլլայ
 որ զիս անոնց ձեռքը տան ու ինձի
 հետ անարգանքով վարուին : 20 - Ու
 Երեմիա ըսաւ , Պիտի չտան . կ'աղաչեմ ,
 Տէրոջը խօսքը մտիկ բրէ որ քեզի պիտի
 ըսեմ , որպէս զի քեզի աղէկ ըլլայ ու
 քու անձդ ապրի : 21 - Բայց եթէ ել-
 լել չուզես , Տէրոջը ինձի ցուցուցած
 բանը այս է . 22 - Ահա Յուդայի թա-
 գաւորին առնը մնացած բոլոր կիները
 Բաբելոնի թագաւորին իշխաններուն
 պիտի տարուին . ու այն կիները պիտի

*կամ, որդին կը մեռնի

բսեն, Բու բարեկամներդ քեզ հրապու-
րեցին ու քեզ յաղթեցին. սաքերուդ
տիղմի մէջ ընկղմելուն պէս՝ անոնք ետ
քաշուեցան: 23 - Եւ քու բոլոր կիներդ
ու աղաքներդ Քաղդէացիներուն պի-
տի հանեն. դուն ալ անոնց ձեռքէն
պիտի չազատիս, հապա Բաբելոնի թա-
գաւորին ձեռքով պիտի բռնուիս. և
դուն *պատճառ պիտի ըլլաս որ այս
քաղաքը կրակով այրի: 24 - Ու Սե-
դեկիա ըսաւ Երեմիայի, Այս խօսքերը
մարդ մը չիմանայ, ու դուն պիտի չմեռ-
նիս: 25 - Եւ եթէ իշխանները քեզի
հետ խօսիլս լսեն ու քեզի գան ու քեզի
բսեն, Հիմա թագաւորին հետ ի՞նչ խօ-
սեցար, մեզի պատմէ. մեզմէ մի պա-
հեր, ու քեզ չենք մեռցնէր. և թա-
գաւորը քեզի հետ ի՞նչ խօսեցաւ: 26 -
Այն տան անոնց ըսես, Ես թագաւո-
րին առջև աղաչանք ըրի, որ զիս Յով-
նաթանի տունը ետ չըրկէ որ հոն մեռ-
նիմ: 27 - Եւ բոլոր իշխանները Երե-
միայի եկան ու անոր հարցուցին. և
անոնց պատմեց այս ամէն խօսքերուն
համեմատ՝ զորոնք թագաւորը պատ-
ուիրէր էր. ու անոր խօսելէն գաղտնե-
ցան. վասն զի բանը չյայտնուեցաւ:
28 - Ու Երեմիա բանաին գաւիթին
մէջ կը նստէր՝ մինչև Երուսաղէմի առ-
նուած օրը. ու երբ Երուսաղէմ՝ առ-
նուեցաւ անիկա հոն էր:

ԳԼ ԼԹ

Յուդայի Սեդեկիա թագաւորին ին-
ներորդ տարին տասներորդ ամիսը, Բա-
բելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը
իր բոլոր զօրքովը Երուսաղէմ՝ եկաւ,
ու զանիկա պաշարեցին: 2-Սեդեկիայի
մետատաներորդ տարին չորրորդ ամիսը,
ամսուն իննին քաղաքին պարիսպը ճեղ-
քուեցաւ: 3 - Եւ Բաբելոնի թագաւո-
րին բոլոր իշխանները, այսինքն Ներ-
գեղասարասար, Սամեգարնարաւ, †Սար-
սեքիմ՝ ներքինապետը, Ներգեղասարա-
սար մոգպետը, ու Բաբելոնի թագա-
ւորին բոլոր մնացած իշխանները եկան
միջին դուռը նստան:

4 - Ու երբ Յուդայի Սեդեկիա թա-

գաւորը ու բոլոր պատերազմական մար-
դիկը զանոնք տեսան, փախան ու քա-
ղաքէն գիշերով թագաւորի պարտե-
զին ճամբայովը երկու պարսպին մէջի
դռնէն ելան. ու ինք գաշտի ճամբան
ելաւ: 5-Եւ Քաղդէացուց զօրքը անոնց
ետեէն ինկան, ու Երեքովի գաշա-
րուն մէջ Սեդեկիայի հասան և զանի-
կա բռնեցին, ու Եմաթի երկիրը, Ռեր-
զայի մէջ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
թագաւորին առջև հանեցին, որ անոր
դատաստանը տեսաւ: 6 - Եւ Բաբելո-
նի թագաւորը Ռերզայի մէջ Սեդեկի-
այի աղաքը անոր աչքերուն առջև
մորթեց. ու Բաբելոնի թագաւորը Յու-
դայի բոլոր ազնուականները մորթեց:
7 - Եւ Սեդեկիայի աչքերը կուրացուց,
ու զանիկա շղթաներով կապեց որ-
պէս զի Բաբելոն տանի: 8 - Եւ Քաղ-
դէացիք կրակով այրեցին թագաւորին
տունը ու ժողովուրդին տուները, ու
Երուսաղէմի պարիսպները փլցուցին:
9 - Եւ Նաբուգոդոնոսոր գահճապետը
քաղաքին մէջ մնացած ժողովուրդին
մնացորդը, ու իրեն ինկած փախա-
կանները, և ժողովուրդին ուրիշ մնա-
ցորդները Բաբելոն գերի տարաւ: 10 -
Ու Նաբուգոդոնոսոր գահճապետը Յու-
դայի երկրին մէջ թողուց ժողովուր-
դին աղքատներէն՝ որոնք բան մը չու-
նէին, և նոյն օրը անոնց այգիներ ու
արտեր տուաւ:

11 - Ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
թագաւորը Երեմիայի համար Նաբու-
գոդոնոսոր գահճապետին պատուիրեց ու
ըսաւ, 12 - Զանիկա առ և աչքդ անոր
վրայ ըլլայ, ու անոր ամենեւին չարիք
մի հասցնէր, հապա ինչ որ քեզի ըսէ՝
անոր այնպէս ըրէ: 13 - Եւ Նաբուգոդո-
նոսոր գահճապետը ու Նաբուսազարան
ներքինապետը ու Ներգեղասարասար
մոգպետը և Բաբելոնի թագաւորին բո-
լոր նախարարները Բաբելոն զրկեցին, 14 -
Ու Երեմիան բանաին գաւիթէն առին,
ու զանիկա Սափանի որդւոյն Աքիկամֆ
որդւոյն Գոգոդիայի տունին, որպէս զի
զանիկա տունը տանի. ու անիկա ժող-
ովուրդին մէջ ընտելեցաւ:

15 - Եւ Տէրօջը խօսքը եղաւ Երե-
միայի, երբ անիկա բանաին գաւիթին
մէջ արգիլուած էր, բսելով, 16 -
Գնա Եթէովպացի Աբդեմեկէքի խօսէ
ու րսէ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Ասա-
ուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես այս

* Եէր. այս քաղաքը կրակով պիտի այ-
րես
† Կ-մ, Սարսեքիմ, Ռաբասարիս, Ներ-
գեղասարասար, Ռարմազ

քաղաքին վրայով ըստ խօսքերս ի գործ պիտի դնեմ՝ չարիքի և ոչ թէ բարիքի համար. ու այն օրը քու աչքերս առջև պիտի կատարուին : 17 - Եւ այն օրը քեզ պիտի ազատեմ, կ'ըսէ Տէրը, ու պիտի չարուիս այն մարդոց ձեռքը՝ որոնց երեսէն դուն կը վախնաս : 18 - Վասն զի քեզ անշուշտ պիտի ազատեմ, ու սրով պիտի չիյնաս. և քու կեանքդ քեզի աւարի մը պէս պիտի ըլլայ, քանզի ինծի ապաւինեցար, կ'ըսէ Տէրը :

ԳԼ Խ

Այն խօսքը որ Տէրոջը կողմանէ Երեմիայի եղաւ, Նաբուզարդան դաճճապետին զանկիա Ռամայէ արձակելէն ետքը. (երբ Բաբելոնն ասորուոյ Երուսաղէմի ու Յուդայի բոլոր գերիներուն մէջ զանկիա աւշղթաներով կապած աւեր էր) :

2 - Եւ դաճճապետը Երեմիան առնելով անոր ըսաւ, Քու Տէր Աստուածդ այս անգին վրայ այս չարիքը խօսած է :

3 - Ու Տէրը զանկիա բերաւ ու իր ըսածին պէս ըրաւ, քանզի Տէրոջը գէմ մեզք գործեցիք և անոր ձայնին մտիկ չըրիք. ու այս բանը ձեզի եղաւ : 4 -

Եւ չիմա ահա այսօր քու ձեռքերուդ շղթաները քակեցի եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քու աչքիդ առջև աղէկ է եկաւ, ու իմ աչքս քու վրայ պիտի ըլլայ. բայց եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քու աչքիդ գէշ կ'երևնայ՝ զանց ըրէ, ահա բոլոր երկիրը քու առջևդ է, ուր որ քեզի աղէկ ու հաճոյ կ'երևնայ երթալու՝ հոն գնա :

5 - Ուստի կամ Բաբելոնի թագաւորին Յուդայի քաղաքներուն վրայ դրած Մափանի որդւոյն Աքիկամի որդին Գոգոդիա գեռ ետ չգարձած՝ անոր գնա ու անոր հետ ժողովուրդին մէջ բնակէ, և կամ ուր որ քեզի աղէկ կ'երևնայ երթալ՝ հոն գնա. ու դաճճապետը անոր պաշարներ ու պարզե առաւ և զանկիա արձակեց : 6 - Ու Երեմիա Մափա գնաց Աքիկամի որդւոյն Գոգոդիայի, և անոր հետ երկրին մէջ մնացած ժողովուրդին մէջտեղ բնակեցաւ :

7 - Ու դաշար եղող բոլոր զօրավարները, իրենք ու իրենց մարդիկը, երբ լսեցին թէ Բաբելոնի թագաւորը Աքիկամի որդին Գոգոդիան երկրին վրայ

գրաւ, և Բաբելոն չքշուած մարդիկը ու կիները և աղաքները ու երկրին աղաքաւորները անոր յանձնեց, 8 - Մափանի կան Գոգոդիայի. այսինքն Նաթանիայի որդին Իամայէլ, ու Կարէի որդիները, Յոհանան ու Յոֆնաթան, և Թանհուէթի որդին Սարայիա, ու Նետափաթացի Եփայի որդիները ու Մաքաթի որդին Յեզանիա՝ թէ՛ իրենք և թէ՛ իրենց մարդիկը : 9 - Եւ Մափանի որդւոյն Աքիկամի որդին Գոգոդիա առնաց ու անոնց մարդոցը երգում ըրաւ ու ըսաւ, Քաղաքացոց ծառայութիւն ընելէն մի վախճաք. այս երկրին մէջ բնակեցէք և Բաբելոնի թագաւորին ծառայութիւն ըրէք, ու ձեզի աղէկ պիտի ըլլայ : 10 - Եւ ետ ահա Մափայի մէջ կը բնակիմ, որպէս զի մեզի եկող Քաղաքացիներուն առջև կենամ. ու դուք գինի և ամառնային պտուղ ու իւղ ժողովեցէք, ու ձեր ամաններուն մէջ դրէք, և ձեռքերնուդ ստակ եղած քաղաքներուն մէջ բնակեցէք : 11 - Ու Մովսէսի մէջ և Ամմոնի որդիներուն մէջ ու Եգիպտոսի մէջ և ամէն երկիրներու մէջ եղող բոլոր Հրեաներն ալ երբ լսեցին, որ Բաբելոնի թագաւորը Հրեաստանի մէջ մնացորդ թողուցեր է, ու անոնց վրայ Մափանի որդւոյն Աքիկամի որդին Գոգոդիան գրեց է, 12 - Բոլոր Հրեաները ամէն իրենց ցրուած անկիւնէն դարձան, ու Յուդայի երկիրը Մափա Գոգոդիայի եկան, և խիստ շատ գինի ու ամառնային պտուղներ ժողովեցին :

13 - Եւ Կարէի որդին Յոհանան ու դաշար եղող բոլոր զօրավարները Մափա եկան Գոգոդիայի, 14 - Ու անոր ըսին, Գիտե՞ս որ Ամմոնի որդիներուն թագաւորը Բաալիա՝ Նաթանիայի որդին Իամայէլը զրկեց քեզ մեռցնելու համար. բայց Աքիկամի որդին Գոգոդիա անոնց չհաւատաց : 15 - Եւ Կարէի որդին Յոհանան Մափայի մէջ Գոգոդիայի հետ գաղտուկ խօսեցաւ ու ըսաւ, Հիմա երթամ ու Նաթանիայի որդին Իամայէլը զարնեմ, ու մարդ չիմանայ. ինչո՞ւ անկիա քեզ մեռցնէ, ու քովդ ժողովուած բոլոր Հրեաները ցրուին, և Յուդայի մնացորդը կորսուի : 16 - Ու Աքիկամի որդին Գոգոդիա Կարէի որդւոյն Յոհանանի ըսաւ, Այդ բանը մի ըներ, վասն զի դուն Իամայէլի վրայով աւաղը խօսիս :

ԳԼ. ԽԱ

Ու եղաւ որ եօթներորդ ամսուն էջ թագաւորական սերունդէն եղող եղիտամայի որդւոյն Նաթանիայի որդին Իամայէլ, թագաւորին նախարարներովր ու իրեն հետ աասը մարդով Մաափա եկաւ Աքիկամի որդւոյն Գոգողիայի, ու հոն մէկտեղ հաց կերան Մաափայի մէջ : 2 - Եւ Նաթանիայի որդին Իամայէլ ու իրեն հետ եղող աասը մարդը ելան, և Սափանի որդւոյն Աքիկամի որդին Գոգողիան սրով զարկին ու մեռցուցին զանիկա՝ զոր Բարեկանի թագաւորը երկրին վրայ դրեր էր : 3 - Նաև Գոգողիայի հետ Մաափայի մէջ եղող բոլոր Հրեաները, և հոն գանուած Բաղդէացի պատերազմականները Իամայէլ կտարեց :

4 - Ու եղաւ որ Գոգողիան մեռցնելէն ետքը, հեռեկալ օրը դեռ մարդ չիմացած, 5 - Աիւքեմէ . Սելովէ ու Սամարիայէ՝ մօրուքնին ածիլած, և հանդերձնին պատուած ու իրենց մարդիկ վրայ կտրածներ բրած ութսուն մարդ եկան, և անոնց ձեռքը ընծաներ ու կնդրուկ կային՝ Տէրօջը տունը տանելու համար : 6 - Եւ Նաթանիայի որդին Իամայէլ Մաափայէ ելաւ զանոնք դիմաւորելու . անիկա գացած ատենը լալով կ'երթար . ու երբ անոնց հասաւ՝ անոնց ըսաւ, Աքիկամի որդւոյն Գոգողիայի եկէք : 7 - Ու եղաւ որ երբ անոնք քաղաքին մէջտեղը եկան, Նաթանիայի որդին Իամայէլ ինք իրեն հետ եղող մարդոցմով զանոնք մեռցուց . 8 - Բաւ իսկ մէջ նեփեց : 8 - Եւ անոնց մէջ աասը մարդ գանուեցաւ որ Իամայէլի ըսին, Մեղ մի մեռցներ, վասն զի մենք գաշար ցորենի, գարբի, իւղի ու մեղրի ծածուկ շտեմարաններ ունինք . ուստի անիկա զանց բրաւ, և զանոնք իրենց եղբայրներուն մէջ չմեռցուց :

9 - Ու այն փար՝ որուն մէջ Իամայէլ Գոգողիայի պատճառաւ բոլոր մեռցուցած մարդոցը գիերը նեաեց, նոյնն էր զոր Ասա թագաւորը շիներ էր՝ Իորայէլի Բաասա թագաւորին երեսէն շինուած համար . Նաթանիայի որդին Իամայէլ զանիկա մեռելներով լեցուց :

10 - Եւ Իամայէլ Մաափայի մէջ ե-

*կամ, հետ

7 - Ժողովուրդին բոլոր մնացորդը դերի բրաւ, թագաւորին աղջիկները ու Մաափայի մէջ մնացած բոլոր ժողովուրդը, որոնց վրայ Նաբուզարդան դահճապետը Աքիկամի որդին Գոգողիան վերակացու դրեր էր . և Նաթանիայի որդին Իամայէլ զանոնք գերի առնելով՝ գնաց Ամմոնի որդիներուն անցնելու :

11 - Եւ Կարէի որդին Յօհանան ու անոր հետ եղող բոլոր զօրավարները երբ Նաթանիայի որդւոյն Իամայէլի բրած բոլոր չարութիւնը լսեցին, 12 - Իբե՛ն բոլոր մարդիկը առին, ու Նաթանիայի որդւոյն Իամայէլի հետ պատերազմելու գացին, և զանիկա Գաբաւանի շատ ջուրերուն քով գտան : 13 - Ու Իամայէլի հետ եղող բոլոր ժողովուրդը երբ Կարէի որդին Յօհանանը ու անոր հետ եղող բոլոր զօրավարները տեսան, ուրախացան : 14 - Եւ Իամայէլի Մաափայէ գերի բշած բոլոր ժողովուրդը երեսնին դարձուցին, ու ետ դառնալով՝ Կարէի որդւոյն Յօհանանի գացին : 15 - Բայց Նաթանիայի որդին Իամայէլ ութ մարդով Յօհանանի երեսէն փախաւ, ու Ամմոնի որդիներուն գնաց :

16 - Եւ Կարէի որդին Յօհանան ու անոր հետ եղող բոլոր զօրավարները Նաթանիայի որդին Իամայէլէ ետ բերած ժողովուրդին բոլոր մնացորդը Մաափայէ առին՝ Աքիկամի որդւոյն Գոգողիայի մեռցուելէն ետքը, այսինքն Գարաւոնէ ետ բերած պատերազմող կարիճները ու կիները և աղաքները ու ներքինները, 17 - Ու գացին Բեթլէհէմի քով եղող Քամաւի պանդոսկին մէջ նստան, որպէս զի երթան Եգիպտոս մանեն : 18 - Քաղդէացւոց երեսէն, վասն զի անոնցմէ վախցան . քանզի Նաթանիայի որդին Իամայէլ Բարեկանի թագաւորին՝ երկրին վրայ դրած Աքիկամի որդին Գոգողիան մեռցուցեր էր :

ԳԼ. ԽԲ

Եւ բոլոր զօրավարները, ու Կարէի որդին Յօհանան, և Ովսիայի որդին Յեզանիա ու բոլոր ժողովուրդը, պզտիկէն մինչև մեծը, մօտեցան : 2 - Ու Երեսիա մարդարէին ըսին, Մեր խնդիրքը քու առջևդ ընդունելի ըլլայ, ու

մեզի համար, այսինքն այս բոլոր մնացորդներուն համար, քու Տէր Աստուծոյդ աղօթք ըրէ. վասն զի շատէն քիչ մնացինք, ինչպէս աչքերդ մեզ կը տեսնեն. 3 - Եւ քու Տէր Աստուածդ մեր երթալու ճամբան ու մեր ընելու բանը մեզի իմացնէ: 4 - Ու Երեմիա մարգարէն անոնց ըսաւ, Լսեցի. տէր Տէր Աստուծոյն աղօթք կ'ընեմ՝ ձեր խօսքերուն համեմատ, և Տէրը ձեզի համար ինչ պատասխան որ սալու ըլլայ, ձեզի կ'իմացնեմ. ձեզմէ բա՛ն մը չեմ պահեր: 5 - Ու անոնք Երեմիայի ըսին, Տէրը մեր մէջ ճշմարիտ ու հաւատարիմ վկայ ըլլայ, եթէ չընենք այն ամէն բաներուն համեմատ, որոնց համար քու Տէր Աստուածդ քեզ մեզի պիտի զրկէ: 6 - Թէ՛ բարի և թէ՛ չար, մեր Տէր Աստուծոյն ձայնին պիտի հնազանդինք, որու քեզ կը զրկենք, որպէս զի մեր Տէր Աստուծոյն ձայնին հնազանդելով՝ մեզի աղէկ ըլլայ:

7 - Եւ տասը օրէն ետքը Տէրոջը խօսքը եղաւ Երեմիայի. 8 - Ու Կարէի որդին Յօհանան և անոր հետ եղող բոլոր զօրավարները ու պզտիկէն մինչև մեծը, բոլոր ժողովուրդը, կանչեց, 9 - Ու անոնց ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը, որու դուք զիս զրկեցիք ձեր աղաչանքը մատուցանելու համար, այսպէս կ'ըսէ. 10 - Եթէ շարունակէք այս երկրին մէջ բնակիլ, ես ալ ձեզ պիտի շինեմ ու պիտի չփլցնեմ, և ձեզ պիտի անկեմ ու պիտի չխլեմ. վասն զի ձեզի բրած չարիքիս վրայով զղջացի: 11 - Մի վախնաք Բաբելոնի թագաւորին երեսէն, որմէ կը վախնաք. անկէ մի վախնաք, կ'ըսէ Տէրը, վասն զի ձեզ անոր ձեռքէն ազատելու համար ու ձեզ ապրեցնելու համար ես ձեզի հետ եմ. 12 - Եւ ձեզի սղորմութիւններ բարեւ պիտի տամ, և անիկա ձեզի պիտի սղորմի, ու ձեզ ձեր երկիրը դարձնէ: 13 - Բայց եթէ ըսէք, Այս երկրին մէջ չենք բնակիր. ու ձեր Տէր Աստուծոյն խօսքը մտիկ չընելով՝ 14 - Ըսէք, Ոչ, հապա Եգիպտոսի երկիրը մտնենք, ուր պատերազմ պիտի չտեսնենք ու փողի ձայն պիտի չստենք, և հացի համար անօթի պիտի չմնանք, ու հոն պիտի բնակինք. 15 - Ուրեմն հիմա Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Յուդայի մնացորդը. Զօրաց Տէրը,

Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Եթէ դուք ձեր երեսները շիակէք Եգիպտոս մտնելու, ու հոն պանդխտանալու երթաք, 16 - Այն ատեն այն սուրը, որմէ կը վախնաք, հոն Եգիպտացուց երկրին մէջ ձեր վրայ պիտի գայ, և այն սովը, որմէ դուք կը զարհուրիք, հոն Եգիպտացուց երկրին մէջ ձեր ետեէն պիտի պաշարէ, ու հոն պիտի մեռնիք: 17 - Եւ այն ամէն մարդիկը՝ որոնք իրենց երեսները կը շիակեն Եգիպտոս երթալու, հոն պանդխտանալու համար, որով, սովով ու ժանտախտով պիտի մեռնին. ու իմ անոնց վրայ բերելու չարիքիս երեսէն անոնցմէ մնացորդ ու ազատուած պիտի չմնայ:

18 - Վասն զի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ինչպէս իմ բարկութիւնս ու սրամտութիւնս Երուսաղէմի բնակիչներուն վրայ թափեցաւ, այնպէս ձեր վրայ պիտի թափի իմ սրամտութիւնս, երբ Եգիպտոս մտնէք. և անէծքի, զարմանքի, նզովքի ու նախատինքի է՛նչպէ՛ս պիտի ըլլաք, ու մէյմըն ալ այս տեղը պիտի չտեսնէք: 19 - Ով Յուդայի մնացորդներ, Տէրը ձեզի համար՝ Եգիպտոս մի մտնէք՝ ըսաւ. «...» աղէկ գիացէք որ այսօր ձեզի վկայութիւն կ'ընեմ: 20 - Վասն զի դուք ձեր հոգիին դէմ նենգութիւն ըրիք, երբ զիս ձեր Տէր Աստուծոյն զրկեցիք՝ ըսելով, Մեզի համար մեր Տէր Աստուծոյն աղօթք ըրէ, ու մեր Տէր Աստուծոյն ամէն բրած խօսքը մեզի պատմէ, ու պիտի ընենք: 21 - Եւ ես այսօր ձեզի պատմեցի, ու դուք մտիկ չըրիք ձեր Տէր Աստուծոյն ձայնը, ու այն ամէն խօսքը՝ որոնց համար զիս ձեզի զրկեց: 22 - Եւ հիմա աղէկ գիացէք որ դուք սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնիք այն տեղը՝ ուր կ'ուղէք երթալ հոն պանդխտանալու համար:

ԳԼ. ԽԳ.

Երբ Երեմիա բոլոր ժողովուրդին՝ անոնց Տէր Աստուծոյն բոլոր խօսքերը խօսիր լմնցուց, որոնց համար անոնց Տէր Աստուածը զանիկա անոնց զրկեք էր, այսինքն այս բոլոր խօսքերը, 2 - Այն ատեն Ովսէիայի որդին Ալարիա ու Կարէի որդին Յօհանան և բոլոր ամ-

բարտառան մարդիկը Երեմիայի խօսե-
ցան ու ըսին, Գու՛ն սուա կը խօսիս .
մեր Տէր Աստուածը քեզ չզրկեց որ
Քոյի ըսես թէ Եգիպտոս մի մանէք հոն
պանդխտանալու համար. 3 - Հապա Նե-
րիայի որդին Բարուք քեզ մեզի դէմ
սոք կը հանէ, որպէս զի մեզ Քաղզե-
ացոց ձեռքը տայ, որ մեզ մեռցնեն
ու մեզ Բաբելոն գերի տանին: 4 - Եւ
Կարէի որդին Յօհանան ու բոլոր զօրա-
վարները և բոլոր ժողովուրդը Տէրոջը
ձայնը մօտիկ չըրին, որ Յուդայի երկ-
րին մէջ բնակին. 5 - Հապա Կարէի որ-
դին Յօհանան ու բոլոր զօրավարները
Յուդայի բոլոր մնացորդները տաին,
որոնք Յուդայի երկրին մէջ բնակելու
համար ետ դարձեր էին այն բոլոր ազ-
գերէն՝ ուր ցրուած էին. 6 - Այսինքն
այր մարդիկ ու կիները, և աղաքները,
ու թագաւորին ազջիկները, և Նաբու-
զորդան դահճապետին՝ Սափանի որդ-
ւոյն Աքիկամի որդւոյն Գոդոզիայի քով
թողուցած բոլոր մարդիկը, ու Երեմիա
մարգարէն, և Ներիայի որդին Բա-
րուքը. 7 - Աւ Եգիպտոսի երկիրը գա-
ցին. վասն զի Տէրոջը ձայնը մօտիկ չը-
րին, ու մինչև Տափնաս եկան:

8 - Եւ Տափնասի մէջ Տէրոջը խօսքը
եղաւ Երեմիայի՝ ըսելով, 9 - Ձեռքդ
մեծ քարեր առ, ու զանոնք Յուդայի
մարգոցը աչքերուն առջև Տափնաս
եղող՝ Փարաւանի տանը դրանը առջևի
աղիւսատունը կաւին մէջ թաղէ, 10 -
Եւ անոնց ըսէ, Չորաց Տէրը, Իսրայէլի
Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես
պիտի զրկեմ, ու իմ ծառաս Բաբելոնի
Նաբուզորդանոսը թագաւորը պիտի
տանեմ, և անոր ակնքը այս իմ թա-
ղած քարերուն վրայ պիտի դնեմ. ու
անիկա իր արքայական խորանը անոնց
վրայ պիտի տարածէ. 11 - Եւ պիտի
գայ Եգիպտոսի երկիրը պիտի գարնէ.
մահուան համար եղողները մահուան,
գերութեան համար եղողները գերու-
թեան, և սուրի համար եղողները սուրի
պիտի ծառնէ: 12 - Աւ Եգիպտոսի աստ-
ուածներուն տուններուն մէջ կրակ պի-
տի բռնկցնեմ. և անիկա զանոնք պի-
տի այրէ ու զանոնք գերի պիտի տա-
նի. և անիկա Եգիպտոսի երկիրը պիտի
հազնի, ինչպէս հովիւը իր հանդերձը
կը հազնի. ու անկէ խաղաղութեամբ
պիտի ելլէ: 13 - Աւ Եգիպտոսի երկրին
մէջ եղող արևու տանը արձանները

պիտի կտարաւ, ու Եգիպտոսի աստ-
ուածներուն տուները կրակով պիտի
այրէ:

ԳԼ ԽԻ

Եգիպտոսի երկրին մէջ բնակող բո-
լոր Հրեաներուն համար, այսինքն Մագ-
դոզ, Տափնաս, Մեմփիս ու Պաթու-
րեաի երկրին մէջ բնակողներուն հա-
մար Երեմիայի եղած խօսքն է, որ
ըսաւ,

2 - Չորաց Տէրը, Իսրայէլի Աստ-
ուածը, այսպէս կ'ըսէ. Գուք տեսաք
այն ամէն չարիքը զոր Երուսաղէմի վրայ
ու բոլոր Յուդայի քաղաքներուն վրայ
բերի. և ահա անոնք այսօր աւերակ
են, ու անոնց մէջ բնակող չկայ, 3 -
Չիս բարկացնելու համար ըրած չարու-
թիւններնուն պատճառաւ, որ գացին,
խունկ ծխեցին ու ծառայութիւն ըրին
ուրիշ աստուածներու, զորոնք ոչ
իրենք ճանչցեր էին, ոչ դուք, ոչ ալ
ձեր հայրերը: 4 - Եւ ես ձեզի զրկեցի
իմ բոլոր ծառաներս մարգարէները,
կանաւիս ելլելով ու զրկելով, և ըսի,
Այդ պիղծ գործը մի ընէք, զոր ես կ'ա-
տեմ: 5 - Բայց մօտիկ չըրին ու ականջ-
նին չձուեցին՝ որ իրենց չարութիւններէն
դառնան և ուրիշ աստուածներու
խունկ չծխեն: 6 - Աւտի իմ սրամտու-
թիւնս ու բարկութիւնս թափեցաւ,
և Յուդայի քաղաքներուն մէջ ու Ե-
րուսաղէմի փողոցներուն մէջ բորբո-
քեցաւ. ու անոնք այսօրուան եղածին
պէս անապատ ու ամառի եղան: 7 - Եւ
հիմա չորաց Տէր Աստուածը, Իսրայէլի
Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ինչո՞ւ հա-
մար դուք ձեր հոգիին դէմ այս մեծ
չարութիւնը կը գործէք, որ Յուդայի
մէջէն այր մարդը ու կինը, աղան ու
կաթնիկեր մանուկը կորսնցնէք, այնպէս
որ ձեզի մնացորդ մը չմնայ. 8 - Ձեր
ձեռքերուն գործերովը զիս սրգողցնե-
լով, և ուրիշ աստուածներու խունկ
ծխելով Եգիպտոսի երկրին մէջ, ուր
դուք մտաք հոն պանդխտանալու հա-
մար, որպէս զի ձեր անձը կորսնցնէք,
ու երկրի բոլոր ազգերուն մէջ ա-
նէճք ու նախատինք ըլլաք: 9 - Միթէ
Յուդայի երկրին մէջ ու Երուսաղէմի
փողոցներուն մէջ ձեր հայրերուն ըրած
չարութիւնները և Յուդայի թագա-
ւորներուն չարութիւնները, ու անոնց

կիներուն չարութիւնները , և ձեր չարութիւնները ու ձեր կիներուն չարութիւնները մոռցա՞ք : 10 - Անոնք մինչև այսօր իրենց անձերը չխոնարհեցուցին ու չվախցան , և ձեր առջև ու ձեր հայրերուն առջև դրած օրէնքիս ու պատուիրանքներուն մէջ չքայլեցին : 11 - Անոր համար զօրաց Տէրը , Իսրայէլի Աստուածը , այսպէս կ'ըսէ . Ահա ես ձեր վրայ կը հաստատեմ իմ՝ երես չարիքի համար , ու բոլոր Յուդան կորսընցներու համար . 12 - Եւ պիտի առնեմ Յուդայի մնացորդը , որոնք երեսնին հաստատեցին Եգիպտոսի երկիրը մանկու , հոն պանդխտանալու համար . ու ամէնը Եգիպտոսի երկրին մէջ պիտի հատնին . սրով , սովով պիտի իյնան «- հատնին . պատիկէն մինչև մեծը սրով ու սովով պիտի մեռնին , և անէծքի , գարմանքի , նզովքի ու նախատինքի էնթախայ պիտի ըլլան : 13 - Ու Եգիպտոսի երկիրը բնակողներուն այցելուութիւն պիտի ընեմ , ինչպէս Երուսաղէմի՝ սրով , սովով ու ժանտախտով այցելուութիւն ըրի : 14 - Եւ Յուդայի մնացորդէն , այսինքն Եգիպտոսի երկիրը պանդխտանալու դացողներէն , մնացորդ ու ազատուած պիտի չմնայ , որ Յուդայի երկիրը դառնան , ուր անոնք կը յուսան դառնալ և հոն բնակիլ . վասն զի Եգիպտոսի փախչողները միայն պիտի դատնան :

15 - Եւ այն բոլոր մարդիկը , որոնք գիտէին թէ իրենց կիները օտար աստուածներու խունկ կը ծխէին , և բոլոր ներկայ եզոզ կիները , մեծ ժողով մը , ու Եգիպտոսի երկիրը , Պաթուրէսի մէջ , բնակող բոլոր ժողովուրդը Երեմիայի պատասխան տուին՝ ըսելով , 16 - Տէրօջր անուրով մեզի խօսած խօսքիդ վրայով մենք բեզի մօտիկ չենք ըներ . 17 - Հապա անշուշտ մեր բերնէն ելած ամէն խօսքը պիտի բնենք , երկինքի թագուհին խունկ ծխելով և անոր թափելու նուէրներ մատուցանելով , ինչպէս ըրինք մենք ու մեր հայրերը , մեր թագաւորները ու մեր իշխանները՝ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ , ուր հացով կշտացանք և հանգիստ էինք ու չարիք մը չաեսանք : 18 - Ասկայն այն ասեմէն ի վեր որ երկինքի թագուհին խունկ ծխելէն ու անոր թափելու նուէրներ մատուցա-

նելէն ետ կեցանք , ամէն բանի կարօտ եղանք , և սրով ու սովով հառանք : 19 - Ու երբ երկինքի թագուհին խունկ կը ծխէինք և անոր թափելու նուէրներ կը մատուցանէինք , միթէ առանց մեր այրերուն հրամանին զանկա պաշտելու համար ըլի՞ծներ չինցինք , ու անոր թափելու նուէրներ մատուցինք :

20 - Ու Երեմիա բոլոր ժողովուրդին , այրերուն և կիներուն , ու իրեն այս պատասխանը տուող բոլոր ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ , 21 - Միթէ այն խունկը , զոր Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ կը ծխէիք , դուք ու ձեր հայրերը , ձեր թագաւորները ու ձեր իշխանները ու երկրին ժողովուրդը , Տէրը չյիշե՞ց ու անոր մտքը չինկա՞ւ : 22 - Եւ Տէրը ձեր չար գործերուն «- ձեր ըրած գործութիւններուն ա՛լ չկրցաւ համբերել . ուստի ձեր երկիրը անապատ , ամայի ու նզովուած և անբնակ եղաւ , ինչպէս այսօր Ի՛երեւան : 23 - Որովհետեւ դուք խունկ ծխեցիք , ու Տէրօջր դէմ՝ մեզք գործեցիք , և Տէրօջր ձայնին հնազանդութիւն չըրիք , ու անոր օրէնքին , պատուիրանքներուն ու վկայութիւններուն մէջ չքայլեցիք , անոր համար այս չարիքը ձեզի եկաւ , ինչպէս այսօր Ի՛երեւան :

24 - Ու Երեմիա բոլոր ժողովուրդին ու բոլոր կիներուն ըսաւ , Տէրօջր խօսքը մօտիկ ըրէք , սվ Եգիպտոսի երկրին մէջ եզոզ բոլոր Յուդա . 25 - Զօրաց Տէրը , Իսրայէլի Աստուածը , այսպէս կը խօսի ու կ'ըսէ , Դուք ու ձեր կիները ձեր բերնովը խօսեցաք , ու ձեր ձեռքովը ի գործ դրիք , ու ըսիք , Անշուշտ ըրած ուխտերնիս պիտի կատարենք , այսինքն երկինքի թագուհին խունկ պիտի ծխենք , ու անոր թափելու նուէրներ պիտի մատուցանենք . այո , դուք ձեր ուխտերուն վրայ հաստատ պիտի կենաք , և ձեր ուխտերը պիտի կատարէք : 26 - Անոր համար Տէրօջր խօսքը մօտիկ ըրէք , սվ բոլոր Յուդա , որ Եգիպտոսի երկրին մէջ կը բնակիք . Ահա ես իմ՝ մեծ անուրովս երգում՝ ըրի , կ'ըսէ Տէրը , որ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մէյմին այ ընաւ Յուդայի մարգու մը բերնէն իմ՝ անունս պիտի չհանչուի՝ ըսելով , Եհօվա Տէրը կենդանի է . 27 - Ահա ես անոնց վրայ կը հօկեմ չարիքի

Համար և ոչ թէ բարիքի համար . ու Եգրպատսի երկրին մէջ եղող Յուդայի բոլոր մարգիկը սրով ու սովով պիտի կտարուին մինչև հասնին: 28-Եւ խիտաքիչ մարգիկ պիտի ըլլան որ սուրէն ազատուելով՝ Եգրպատսի երկրէն Յուդայի երկիրը պիտի դառնան , ու Եգրպատսի երկիրը պանդխտանալու գացող Յուդայի բոլոր մնացորդները պիտի գիտնան թէ որո՛ւն խօսքը պիտի հաստատուի, ի՞մն թէ իրենցը: 29-Եւ տսիկա ձեզի նշան ըլլայ , կ'ըսէ Տէրը , որ այս տեղ ձեզի այցելութիւն պիտի ընեմ՝ որպէս զի գիտնաք որ իմ խօսքս ձեր վրայ անշուշտ պիտի հաստատուի չարիքի համար: 30-Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգրպատսի Փարաւոն Վափաւ թագաւորը իր թշնամիներուն ձեռքը ու իր հոգին փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ . ինչպէս Յուդայի Սեդեկիա թագաւորը իր թշնամիին ու իր հոգին փնտռող Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը մատնեցի :

ԳԼ. ԽԵ

Երեմիա մարգարէին խօսքը , զոր Ներիայի որդւոյն Բարուքի խօսեցաւ , երբ անիկա այս խօսքերը Երեմիայի բերնէն գիրքի մէջ գրեց, Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին. ու ըսաւ, 2 - Ով Բարուք, Իսրայէլի Տէր Աստուածը քեզի համար այսպէս կ'ըսէ. 3 - Դուն ըսիր , Հիմա վա՛յ ինձի , վասն զի Տէրը իմ ցաւիս վրայ տրամութիւն աւելցուց . իմ հեծութենէս յոգնեցայ ու հանգրտութիւն չեմ գտներ: 4 - Անոր այսպէս ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա ես իմ շինածս պիտի փլցնեմ , ու իմ անկածս պիտի խլեմ , այսինքն այս բոլոր երկիրը: 5 - Եւ դուն քեզի մեծ քանե՞ր կը փնտռես. մի փնտռեր, քանզի ահա ես ամէն մարմնի վրայ չարիք պիտի բերեմ , կ'ըսէ Տէրը , բայց քու կեանքդ քեզի աւարի մը պէս պիտի ստամ՝ քու ամէն երթալու տեղերդ :

ԳԼ. ԽԶ

Տերոջը խօսքը որ եղաւ Երեմիա մարգարէին, ապաբուն վրայով :
2 - Եգրպատսի համար , Եգրպատաց-

ւոց թագաւորին, Փարաւոն Նեքաւովի, Բարքամիսի մէջ Եփրատ գետին քով եղող զօրքին վրայ, զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զարկաւ՝ Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին:

- 3 - Ասպար ու վահան պատրաստեցէք
Եւ պատերազմի մօտեցէք.
- 4 - Զիրերը լծեցէք, ու դուք, ով ձիաւորներ, հեծէք.
Սաղաւարաներով կայնեցէք,
Նիզակները փայլեցուցէք , զրահները հագէք:
- 5 - Զանոնք ինչո՞ւ համար զարհուրած
«- ետ դարձած կը տեսնեմ .
Անոնց զօրաւորները անգամ զարնուեցան,
Ու արտօրնօք փախչելով իրենց ետեւը չնայեցան.
Ամէն կողմէ վախ կայ, կ'ըսէ Տէրը :
- 6 - Շուտ վազողը թող չփախչի,
Ու զօրաւորը չազատի.
Անոնք հիւսիսային կողմը, Եփրատ գետին քով,
Գլորելով պիտի իյնան:
- 7 - Ո՞վ է տսիկա որ գետի պէս վեր կ'ելլէ,
Որուն ջուրերը գետերուն պէս կը ծփին:
- 8 - Եգրպատս գետի պէս վեր կ'ելլէ,
Եւ անոր ջուրերը գետերուն պէս կը ծփին.
Ու կ'ըսէ, Վեր ելլեմ, երկիրը ծածկեմ,
Քաղաքը ու անոր բնակիչները բնաջինջ ընեմ:
- 9 - Ով ձիեր, ելէք , և ով կառքեր , կատղեցէք.
Եւ զօրաւորները թող ելլեն,
Վահան բունոջ եթէ սովապցիք ու Փուգացիք,
Ու աղեղ բունոջ «- լարող Աուգացիք:
- 10 - Վասն զի այսօր զօրաց Տէր Եհոփայի վրէժխնդրութեան օրն է.
Որ իր թշնամիներէն վրէժ տռնէ .
Եւ սուրը պիտի սուէ ու կշտանայ ,
Եւ անոնց արիւնովը պիտի գինովնայ ,
Վասն զի հիւսիսի երկրին մէջ , Եփրատ գետին քով ,
Զօրաց Տէր Եհովա զո՛հ ունի:
- 11 - Գաղաթաղ ելիր ու բալտասան առ ,
Ով Եգրպատսի կոյս աղջիկը.
Իեղերը պարապ տեղ կը շատցնես ,
Քեզի բժշկութիւն չկայ.
- 12 - Ազգերը քու անարգանքդ լսեցին,

Ու քու աղաղակդ երկիրը լեցուց.
 Վասն զի զօրաւորը զօրաւորին վրայ
 գլորեցաւ,
 Երկուքը մէկտեղ ինկան:
 13 - Ասի՛ւ եւ այն խօսքը զոր Տէրը
 Երեմիա մարգարէին խօսեցաւ Բաբելոնի
 Նաբուգոդոնոսոր թագաւորին
 գալուէն - Եգիպտոսի երկիրը զարնե-
 րուն վրայով:
 14 - Եգիպտոսի մէջ պատմեցէք,
 Մագդոզի մէջ չրատարակեցէք,
 Եւ Մեմփիսի ու Տափնոսի մէջ չրա-
 տարակեցէք,
 Ու ըսէք, Կայնէ ու պատրաստ եղիր,
 Վասն զի քու բոլորակքդ սուրը պիտի
 ուտէ:
 15 - Քու զօրաւորներդ ինչո՞ւ կործա-
 նեցան.
 Անոնք չկրցան կենալ, վասն զի Տէրը
 զանոնք վար ձգեց:
 16 - Գլորուածները շատցուց, ու ի-
 րարու վրայ ինկան.
 Ու ըսին, Ելիր, ու բռնաւոր սուրին ե-
 րեսէն
 Մեր ժողովուրդին ու մեր ծննդեան եր-
 կիրը դառնանք:
 17 - Հոն կը կանչէին,
 Եգիպտոսի Փարաւոն թագաւորը
 պարտաւ աղաղակ է.
 Անիկա էր որոշուած ժամանակը ան-
 ցուց:
 18 - Ես կենդանի եմ, կ'ըսէ այն թա-
 գաւորը
 Որուն անունը Զօրաց Տէր է,
 Ինչպէս թաքոր լեռներու մէջ է,
 Ու ինչպէս կարմեղաս մինչև ծովը իւ-
 հասնի,
 Այնպէս անիկա պիտի գայ:
 19 - Ով Եգիպտոս բնակող աղջիկ,
 Գերութեան կարասիներ պատրաստե-
 քեզի.
 Վասն զի Մեմփիս ամայի պիտի ըլլայ,
 Ու աւերակ՝ առանց բնակիչի:
 20 - Եգիպտոս խիստ գեղեցիկ երինջ
 մըն է,
 Բայց կտորած կու գայ, Տիւսիսէն կու
 գայ:
 21 - Եւ անոր մէջ վարձքով բռնուած
 ջրեւերը զիրցած զուարակներու
 պէս են.
 Քանզի անոնք ալ դարձան, մէկտեղ
 փախան, չկայնեցան.
 Վասն զի անոնց վրայ՝ անոնց կորրսա-
 եան օրը

Ու անոնց այցելութեան ժամանակը
 հասաւ:
 22 - Անոր ձայնը օձի ջայնի պէս պի-
 տի ըլլայ,
 Վասն զի զօրքով պիտի հասնին,
 Եւ անոր վրայ փայտահարներու պէս
 տապարներով պիտի գան.
 23 - Անոր անտառը պիտի կտրեն, կ'ը-
 սէ Տէրը,
 Թէպէտև անոր ջրեւերը անթիւ են.
 Քանզի անոնք մարտիէն շատ են,
 Այնպէս որ չեն համբուիր:
 24 - Եգիպտոսի աղջիկը ամօթով պիտի
 ըլլայ,
 Հիւսիսային ժողովուրդին ձեռքը պիտի
 մտանուի:
 25 - Զօրաց Տէրը, Խորայէլի Աստ-
 ուածը, կ'ըսէ,
 Ահա ես՝ Նովացի Ամնի՛ կ'Փարաւոնի
 Ու Եգիպտոսի և անոր աստուածնե-
 րուն ու թագաւորներուն,
 Այսինքն Փարաւոնի ու անոր տպաւի-
 նողներուն, այցելութիւն պրտը
 ընեմ:
 26 - Եւ զանոնք՝ անոնց հոգին փրնա-
 ուողներուն ձեռքը,
 Ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թա-
 գաւորին ձեռքը,
 Ու անոր ծառաներուն ձեռքը պրտը
 մտանեմ.
 Եւ անկէ ետքը աստուծուն օրծրուն
 պէս պիտի բնակուի՝ կ'ըսէ Տէրը:
 27-Բայց դուն, ով իմ ծառա՛ Յա-
 կոբ, մի վախնար,
 Եւ, ով Խորայէլ, մի զարհուրիր.
 Քանզի ահա ես քեզ հեռուէն
 Եւ քու սերունդդ իրենց գերութեան
 երկրէն պիտի ազատեմ.
 Ու Յակոբ պիտի գառնայ, և հանդարտ
 ու հանգիստ պիտի ըլլայ,
 Եւ զանիկա վախցնող պիտի չըլլայ:
 28 - Իուն մի վախնար, ով իմ ծառա՛ս
 Յակոբ, կ'ըսէ Տէրը,
 Վասն զի ես քեզի հեռ եմ.
 Քանզի պիտի սպառեմ՝ այն բոլոր աչ-
 գերը՝
 Որոնց մէջ քեզ ցրուեցի,
 Բայց քեզ պիտի չսպառեմ,
 Հապա քեզ չափաւորութեամբ պիտի
 խրատեմ,
 Ու քեզ բոլորովին անմեղ պիտի չհա-
 նեմ:

*Կ-ժ, Նովէն էիզ բազմա թեանք

ԳԼ. ԽԵ

Տէրոջը խօսքը, որ երեմիա մարգարէին եղաւ Փղշտացոց վրայով՝ դեռ Փարաւոն Գազան չզարկած:

2 - Տէրը այսպէս կ'ըսէ.

Ահա չիւսիսէն ջուրեր կ'ելլեն, Արոնք յորդած չեղեղի պէս պիտի ըլլան, Աւ երկիրը և անոր լիութիւնը, Քաղաքը ու անոր բնակիչները պիտի կոխեն.

Եւ մարգիկ պիտի աղաղակեն, Աւ երկրին բոլոր բնակիչները պիտի ուռնան:

3 - Անոր երիվարներուն սմբակներուն ձայնէն,

Անոր կառքերուն շաչիւնէն Աւ անիւներուն շառաչիւնէն՝

Հայրերը երէնց տղոցը պիտի ջնային Իրէնց ձեռքերուն թուլնալուն համար,

4 - Բոլոր Փղշտացիները կորսնցնելու, Եւ Տիւրոսի ու Սիզոնի

Բոլոր մնացած օգնականները կտարելու եկող օրուանը պատճառաւ.

Քանզի Տէրը Փղշտացիները, Կափթոր կղզիին մնացորդները, պիտի կորսնցնէ:

5 - Գազայի վրայ կնտութիւն եկաւ, Ասկաղոն իր հովտին մնացորդովը աւերակ եղաւ.

Մինչև ե՞րբ քու մարմնիդ վրայ կրտարածներ պիտի ընես:

6 - Ով Տէրոջը սուրը, Մինչև ե՞րբ հանդարտ չես կենար.

Քու պատեանդ դարձիր, Հանգչէ ու լռէ:

7 - Ի՞նչպէս կրնայ հանդարտ կենալ. Վասն զի Տէրը անոր հրաման տուեր է Ասկաղոնի ու ծովեղբրքի դէմ,

Հոն զրկեր է զանիկա:

ԳԼ. ԽԸ

Մովաբի վրայով զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ.

Վա՛յ Նաբաւի, վասն զի աւերուեցաւ. Կարիսթեմ՝ ամչցաւ ու առնուեցաւ.

Մասգար ամչցաւ ու զարհուրեցաւ:

2 - Մովաբ մէյմըն ալ պիտի չպարծի Եսեբոնի մէջ.

Անոր վրայ չարիք խորհեցան՝ ռեւով, Եկէք ու զանիկա ազգ ըլլալէն կտրենք:

Դուն ալ, ով Մագմէն, պիտի կրտուրիս.

Քու ետեւէդ սուր կու գայ:

3 - Արոնայիմէ աղաղակի ձայն կու գայ. Աւերում ու մեծ կոտորած կայ:

4 - Մովաբ կտարեցաւ. Անոր պզտիկ աղաքները աղաղակ վերցուցին:

5 - Քանզի 'Աուիթի զաւ ի վերին վրայ Մեծ լացով պիտի ելլեն.

Քանզի Արոնայիմի զաւ ի վայրին վրայ Թշնամիները կոտորածի աղաղակ լսեցին:

6 - Փախէք, ձեր անձը ազատեցէք, Եւ անապատին մէջի մոշային պէսեղէք:

7 - Քանզի քու գործերուդ ու գանձերուդ ապաւինելուդ համար՝

Դուն ալ պիտի առնուիս.

Եւ Քամովս գերութեան պիտի երթայ Իր քուրմերով ու իր իշխաններով մէկտեղ:

8 - Եւ ամէն քաղաքի վրայ կործանողը պիտի գայ,

Աւ քաղաք մը պիտի չազատի. Հովիտը պիտի կորսուի ու դաշտը պիտի աւրուի,

Ինչպէս Տէրը ըսաւ:

9 - Մովաբի թևեր տուէք որպէս զի թռչելով փախչի.

Աւ անոր քաղաքները ամայի պիտի ըլլան՝ բնակիչ չունենալով:

10 - Տէրոջը գործը *նեղութեամբ կատարողը անիծեալ ըլլայ,

Աւ իր սուրը արիւնէն խնայողը անիծեալ ըլլայ:

11 - Մովաբ իր աղայութենէն ի վեր հանգստութեան մէջ էր,

Աւ գինիի պէ՞ իր մրուրին վրայ կը նստէր,

Եւ ամանէ աման չթափուեցաւ, Աւ գերութեան չգնաց.

Անոր համար իր համը իր մէջ մնաց Աւ հոտը չփոխուեցաւ:

12 - Աւստի ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,

Որ անոր փոխադրողներ պիտի զրկեմ, Աւ զանիկա պիտի փոխադրեն,

Եւ անոր ամանները պիտի պարպեն, Աւ տիկերը կտոր կտոր պիտի ընեն:

13 - Եւ Մովաբ Քամովսէ պիտի ամչնայ, Ինչպէս Իսրայէլի տունը իր ապաւինած Բեթէլէն ամչցաւ:

14 - Ի՞նչպէս կ'ըսէք թէ Մենք կտրի՞նք ենք,

*Կա՛մ, թուլութեամբ

Ու պատերազմի համար զօրաւոր մար-
դիկ ենք :

15 - Մովսէս աւրուեցաւ և անոր քա-
ղաքները *այրեցան,
Ու անոր բնաիր երիտասարդները մոր-
թուելու իջան,
Կ'ըսէ այն Թագաւորը՝ որուն անունը
Զօրաց Տէր է :

16 - Մովսէսի կորուսար գալու մօտ է,
Եւ անոր պատուհասը խիստ կ'արատ-
րայ :

17 - Ով անոր բոլորաիքը եղողներ ,
ամէնդ զանկիա ողբացէք,
Ու ըսէք դուք ամէնդ որ անոր անունը
գիտէք,
Զօրութեան գաւազանը, պարծանաց
ցուպը ,
Ի՜նչպէս կոտորեցաւ :

18 - Ով Դեբոնի մէջ բնակող աղջիկ,
Փառքէն իջիր ու ծարաւութեան մէջ
նստէ .
Վասն զի Մովսէսը կործանողը քու
վրագ պիտի ելլէ,
Ե- քու պարիսպներդ պիտի աւրէ :
19 - Ճամբու վրայ կայնէ ու գիտէ,
Ով Արտէրի բնակիչ,
Փախչողին ու ազատողին հարցուր
Ո- ըսէ թէ Ի՞նչ եղաւ :

20 - Մովսէս ամչցաւ, վասն զի կոտ-
րեցաւ .
Հեծէ ու ազազակէ .
Մովսէսի աւրուիլը Առնոնի մէջ պատ-
մեցէք :

21 - Եւ դաշտային երկրին վրայ՝
Քօղօնի, Յասայի ու Մեփայթի վրայ
դատաստան եկաւ ,
22- Նաև Դեբոնի վրայ, Նաբաւի վրայ,
Բեթգէբլաթեմի վրայ,
23 - Ու Կարիթեմի վրայ, և Բեթգա-
մովղի վրայ, ու Բեթմաւոնի
վրայ,
24 - Եւ Կարիթի վրայ, ու Բօսրայի
վրայ,
Ու Մովսէսի երկրին բոլոր քաղաքնե-
րուն վրայ,
Թէ՛ հեռաւոր և թէ՛ մօտաւոր :

25 - Մովսէսի եղջիւրը կտրուեցաւ,
Ու բազուկը կոտորեցաւ՝ կ'ըսէ Տէրը :
26 - Զանկիա գինովցուցէք,
Վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ,
Ու Մովսէս թող իր փսիսունքին մէջ
թաւալի,

*Եբր. վեր ելան

Եւ ինք ալ ծաղր ըլլայ :

27 - Միթէ Իսրայէլ քեզի ծաղր չե-
ղա՞ւ .
Անկիա գողերո՞ւ մէջ գանուեցաւ,
Որ դուն քանի որ անոր վրայով կը
խօսէիր՝ գլուխ կը շարժէիր :

28 - Ով Մովսէսի բնակիչներ,
Քաղաքները թողուցէք, վէմերու մէջ
բնակեցէք,
Ու փոսի բերնին քովերը իր ըոյնը շի-
նող աղաւնիին պէս եղէք :

29- Մովսէսի ամբարտաւանութիւնը
լսեցինք .
Անկիա խիստ ամբարտաւան է .
Անոր հպարտութիւնը, ամբարտաւա-
նութիւնը, գոռոզութիւնը
Ու սրտին բարձրութիւնը լսեցինք :
30 - Ես անոր սրամտութիւնը գիտեմ՝
կ'ըսէ Տէրը ,
Բայց պարապ է .
Անոր սնապարծ խօսքերը պարապ պի-
տի ելլեն :

31 - Ուստի Մովսէսի համար պիտի ող-
բամ ,
Ու բոլոր Մովսէսի համար պիտի աղա-
ղակեմ .
Կիրհարէսի մարդոցը համար սուգ պի-
տի բռնուի :
32 - Ով Սերամայի որթ, քու վրագ
Յազերի լացովը պիտի լամ .
Քու շուաւիղներդ ծովէն անցնե-
լով՝
Մինչև Յազերի ծովը հասեր էին .
Քու ամառնային պտուղիդ վրայ և այ-
գեկութիդ վրայ աւարաւու ին-
կաւ :
33 - Ու պաղարեր արտերէն և Մովսէսի
երկրէն
Ու բախութիւնը ու ցնծութիւնը պիտի
վերնայ .
Ու հնձաններէն զիննին դադրեցուցի .
Յնծութեամբ Խաղա պիտի չկոխուի,
Ո- ցնծութեան ձայն պիտի չլսուի :
34 - Եսեբոնի աղազակէն մինչև Ե-
ղէաղէ ,
Մինչև Յասաս իրենց ձայնը աուին,
Երեք տարեկան երինջի պէս, Սեփովրէ
մինչև Արոնայիմ .
Քանզի Նեմերիմի ջուրերը անգամ
կ'աւրուին :
35 - Եւ Մովսէս բարձր տեղը ողջա-
կէզ մատուցանողը,
Ու իր աստուածներուն խունկ ծխողը
Պիտի վերցնեմ՝ կ'ըսէ Տէրը :

36 - Այս պատճառաւ իմ սիրաս
Մովարի համար սրինգներու
պէս պիտի հնչէ,
Ու կիրհարէսի մարդոցը համար իմ
սիրաս սրինգներու պէս պիտի
հնչէ.
Վասն զի անոնց ստացած հարստու-
թիւնը կորսուեցաւ:
37 - Քանզի ամէն գլուխ կնատակ պիտի
ըլլայ,
Եւ ամէն մօրուք պիտի կարուի .
Ու ամէն ձեռքերու վրայ կարածներ
պիտի ըլլան,
Եւ ասէ՛ն մէջքերու վրայ քուրձ պիտի
ըլլայ.
38 - Մովարի բոլոր տանիքներուն վրայ
Ու անոր փողոցներուն մէջ բոլորովին
կոծ պիտի ըլլայ,
Վասն զի Մովարը կտորեցի այնպիսի
ամանի մը պէս
Որու մէ՛կը չհաճիր, կ'ըսէ Տէրը:
39 - Ի՛նչպէս կտորեցաւ Մովար,
Ու ի՛նչպէս ամօթով կռնակ դարձուց՝
ըսէ՛՜՜ պիտի ողբան.
Ու Մովար ամէն իր բոլորաիքը եղող-
ներուն՝
Խայտառակութեան ու սոսկումի պար-
էս պիտի ըլլայ:
40 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ .
Ահա ի՛նչպէ՛ս արծիւի պէս պիտի թռու-
չի,
Ու իր թևերը Մովարի վրայ պիտի տա-
րածէ:
41 - *Քաղաքները կ'առնուին՝
Եւ բերդերը կը նուաճին,
Ու այն օրը Մովարի զօրաւորներուն
սիրաը
Իր երկունքին մէջ եղող կնոջ սրտին
պէս պիտի ըլլայ:
42 - Եւ Մովար ժողովուրդ ըլլալէն
պիտի կորսուի,
Վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ:
43 - Ով Մովարի բնակիչ,
Քու վրագ վախ, գուր ու որոգայթ
պիտի ըլլայ՝ կ'ըսէ Տէրը:
44 - Վախէն փախչողը գուրը պիտի
կնայ,
Եւ գուրէն ելողը որոգայթի մէջ պի-
տի բռնուի.
Քանզի անոր վրայ, Մովարի վրայ,
Անոնց այցելութեան տարին պիտի բե-
րեմ, կ'ըսէ Տէրը:

45 - *Ուժէն փախչողները՝ Եսեբոնի
հովանիին տակ կայնեցան.
Բայց Եսեբոնէ կրակ՝
Ու Սեհոնի մէջէն բոց ելաւ,
Եւ Մովարի ծայրը
Ու աղաղակողներուն գագաթը կե-
րաւ:
46 - Վա՛յ քեզ, Մովար,
Քամովսի ժողովուրդը կորսուեցաւ .
Քանզի քու աղաքներդ գերի առնուե-
ցան
Ու աղջիկներդ գերութեան գայէն:
47 - Բայց վերջին օրերը
Մովարի գերութիւնը պիտի դարձնեմ,
կ'ըսէ Տէրը:
Մովարի դատաստանը մինչև հոս է:

ԳԼ ԽԹ

Ամեննի որդիներուն վրայով Տէրը
այսպէս կ'ըսէ.
Միթէ Իսրայէլ աղաքներ չունի՞.
Միթէ անիկա ժառանգ չունի՞.
Ինչո՞ւ Մեղքոմ՝ Գագի ժառանգ ե-
ղաւ,
Ու իր ժողովուրդը անոր քաղաքներուն
մէջ բնակեցաւ:
2 - Ասոր համար ահա օրեր կու գան,
կ'ըսէ Տէրը,
Որ Ամեննի որդիներուն Ռարբային մէջ
Պատերազմի աղաղակ լսել պիտի
տամ.
Ու անիկա աւերակներու դէզ պիտի
ըլլայ,
Եւ անոր խեղերը կրակով պիտի այ-
րին.
Ու Իսրայէլ իրեն տիրողներուն վրայ
պիտի տիրէ, կ'ըսէ Տէրը:
3 - Ողբա, ով Եսեբոն, վասն զի Գա-
յի կորսուեցաւ.
Աղաղակեցէք, ով Ռարբայի աղջիկ-
ներ,
Քուրձեր հագէք, լացէք
Ու ցանգէ ցանգ վազեցէք:
Վասն զի Մեղքոմ գերութեան կ'եր-
թայ
Իր քուրմերովը ու իշխաններովը մէկ-
տեղ:
4-Ինչո՞ւ պարտաւոր կը պարծիս.
Քու հովիտդ աւրեցաւ, ով ապստամբ
աղջիկ,

*Կա՛մ, Փախչողները ուժէ ինկած՝
†Եբոն աղջիկները

*Կա՛մ, Կարիօթը կ'առնուի. Հմբ. 24 :

Որ քու գանձերուդ ապաւիներ էիր,
 Ո- Կ'ըտէր Բէ Իմ՝ վրաս ո՞վ կրնայ
 գալ:
 5 - Ահա ես, կ'ըսէ զօրաց Տէր Եհովան,
 Քու վրագ վախ պիտի բերեմ՝
 Ամէն բոլորախաբ եղողներէն,
 Եւ ամէն մէկը իր առջևի ճամբան եր-
 Բաւ՝ պիտի ցրուիք,
 Ու փախստականները ժողովող պիտի
 չըլլայ:
 6 - Եւ անկէ ետքը Ամմոնի որդիներուն
 գերութիւնը
 Պիտի դարձնեմ՝ կ'ըսէ Տէրը:
 7 - Եզովմի վրայով զօրաց Տէրը
 այսպէս կ'ըսէ.
 Արդեօք Թեմանի մէջ ա՛լ իմաստու-
 տութիւն չկա՞յ.
 Ո- Հանճարեղներէն խորհուրդը կոր-
 սուեցա՞ւ.
 Անոնց իմաստութիւնը հատա՞ւ:
 8 - Փախէք, գարձէք, խորունկ տեղեր
 բնակեցէք,
 Ով Իեզանի բնակիչներ,
 Վասն զի Եսաւի կորուստը
 Անոր այցելութիւն ըրած ժամանակս
 անոր վրայ կր բերեմ:
 9 - Եթէ քեզի կ'թողներ գային,
 Միթէ ճիւղեր պիտի չ'թողուի՞ն.
 Եթէ գիշերով գողեր գային,
 Իրենց բաւական եղածին չափ պիտի
 յափշտակէին:
 10 - Բայց ես Եսաւը մերկացուցի,
 Անոր ծածուկ տեղերը բացի,
 Ու անիկա պահուրտելու կարող չէ.
 Անոր զաւակները, անոր եղբայրները
 ու անոր դրացիները կորսուե-
 ցան,
 Եւ ինք չկայ:
 11 - Որբերդ թող տուր, ես զանոնք
 ողջ կը պահեմ.
 Ու քու որբեարիներդ թող ինծի ապա-
 ւինին.
 12 - Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
 Ահա անոնք որ բաժակը խմելու պար-
 տաւոր չէին, անշուշտ պիտի
 խմեն.
 Իսկ դուն բոլորովին անպատի՞ժ պիտի
 մնաս.
 Անպատիժ պիտի չմնաս,
 Հապա անպատճառ պիտի խմես:
 13 - Վասն զի իմ՝ անձիս վրայ երգում
 կ'ընեմ, կ'ըսէ Տէրը,
 Որ Բօսրա ամայութիւն, նախատինք,
 աւերակ ու անէձք պիտի ըլլայ,

Եւ անոր ամէն քաղաքները յաւիտե-
 նական աւերակներ պիտի ըլլան:
 14 - Տէրոջը կողմանէ լուր լսեցի,
 Ու ազգերուն գեապան զրկուած է՝ ոչ
 կ'ըտէ,
 Ժողովուեցէք և անոր վրայ գացէք
 Ու պատերազմի ելէք,
 15 - Քանզի ահա քեզ ազգերու մէջ
 պղտիկ
 Ո- մարդոց մէջ անարգ ըրի:
 16 - Քու ահաւորութիւնդ, քու սրաիդ
 հպարտութիւնը քեզ խաբեցին,
 Ով վէժին խոռոչներուն մէջ բնակող
 Ու բարձր բլուրներուն փակչող.
 Թէև քու բոցնդ արծիւի պէս բարձրե-
 րը շինես,
 Քեզ անկէ պիտի իջեցնեմ, կ'ըսէ Տէրը:
 17 - Ու Եզովմ՝ ամայի պիտի ըլլայ.
 Անկէ ամէն անցնողը պիտի հիանայ,
 Եւ անոր բոլոր հարուածներուն համար
 պիտի սուլէ:
 18 - Սողոմի ու Գոմորի և անոր շրջա-
 կայ քաղաքներուն կործանումին
 պէս, կ'ըսէ Տէրը,
 Հոն ա՛լ մարդ մը պիտի չնստի,
 Ու անոր մէջ մարդու զաւակ պիտի
 չբնակի:
 19 - Ահա անիկա առիւծի պէս ամուր
 բնակարանին վրայ պիտի ելլէ
 Յորգանանու ջուրերուն յորդելէն.
 Բայց անոր վրայէն շուտով պիտի
 փախցնեմ զանիկա.
 Եւ ո՞վ է այն ընտրեալը՝ զոր անոր
 վրայ դնեմ.
 Վասն զի ինծի նման ո՞վ կայ.
 Ու *ինծի հետ ո՞վ պիտի վիճաբանի՞.
 Եւ ո՞վ է այն հովիւը որ իմ՝ առջևս
 պիտի կենայ.
 20 - Անոր համար Եզովմի վրայով
 Տէրոջը խորհած խորհուրդը
 Ու Թեմանի բնակիչներուն վրայով
 մտածած մտածմունքը մտիկ ը-
 րէք.
 Հօտին ամէնէն պղտիկը անպատճառ
 պիտի քչէ զանոնք,
 Անշուշտ անոնց բնակարանները անոնց
 հետ պիտի աւրէ:
 21 - Անոնց իյնալուն ձայնէն երկիր
 կը շարժի.
 Անոնց աղաղակին ձայնը մինչև Կարմիր
 ծով կը լսուի:

*Կա՞մ, ո՞վ ինծի ժամանակ պիտի ուրջէ

22 - Ահա Բշնաֆն արծիւի պէս բարձրանալով պիտի թռչի, Աւ իր թևերը Բօսրայի վրայ պիտի տարածէ.

Եւ այն օրը Եգիպտի զօրաւորներուն սիրտը Իր երկունքին մէջ եղող կնոջ սրտին պէս պիտի ըլլայ :

23 - Իամնակոսի վրայով : Եմաթ ու Արփաթ ամէջան, Քանդի գէշ լուր լսեցին - մարտեցան . Ծովուն մէջ տառապանք կայ Աւ անիկա չկրնար հանգարալի :

24 - Իամնակոս տկարացաւ, Փախչելու դարձաւ, Արհաւիրքը անոր վրայ հասաւ. Զանիկա ծննդական կնոջ պէս նեղութիւն ու ցաւեր բռնեցին :

25 - Ինչպէս չթողուեցաւ երևելի քաղաքը, Իմ ուրախութեան քաղաքը :

26 - Աւտի անոր կարիճները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան ,

Եւ բոլոր պատերազմական մարդիկը Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը :

27 - Աւ Իամնակոսի պարսպին մէջ կրակ պիտի բռնկցնեմ, Աւ Բենագադի պալատները պիտի ուտէ :

28 - Կեդարու վրայով ու Հասորի թագաւորութիւններուն վրայով, զօրանք Բարեւոնի Նարուգոգոնոսոր թագաւորը զարկաւ, Տէրը այսպէս կ'ըսէ.

Ելէք, Կեդարու վրայ գացէք, Եւ արևելքի բնակիչները ջարդեցէք.

29 - Անոնց վրանները ու հօտերը պիտի տունեն,

Անոնց վարագոյրները ու բոլոր կարասիները

Եւ ուղտերը իրենց համար պիտի տանին .

Աւ անոնց ձայն պիտի արուի թէ Ամէն կողմանէ վախ կայ :

30 - Փախէք, շուտով հեռացէք, Խորունկ տեղեր բնակեցէք,

Այլ Հասորի բնակիչներ, կ'ըսէ Տէրը,

Վասն զի Բարեւոնի Նարուգոգոնոսոր թագաւորը

Զեզի դէմ խորհուրդ մը խորհեցաւ, Աւ ձեզի դէմ գիտաւորութիւն մը մտածեց :

31 - Ելէք ու հանգստութեան եւ ա-

պաշտութեան մէջ բնակող սպիտակ գացէք, կ'ըսէ Տէրը, Ար դռներ ու նիգեր չունի ու աւանձին կը բնակի :

32 - Եւ անոնց ուղտերը աւար պիտի ըլլան,

Աւ անոնց խաշինքներուն բազմութիւնը պիտի յափշտակուի.

Եւ Էրեւնց մօրուքին ծայրը կարողները ամէն հովի պիտի ցրուեմ,

Աւ անոնց կործանումը ամէն կողմէն պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը.

33 - Եւ Հասոր չափալներու բնակարան, Յաւիտենական ամայութիւն, պիտի ըլլայ .

Հոն մարդ պիտի չնստի, Աւ հոն մարդու վաւակ պիտի չբնակի :

34 - Յուգայի թագաւորին Սեգեկիայի թագաւորութեան սկիզբը Եղամի վրայով Երեմիա մարգարէին եղած Տէրոջը խօսքն է, որ ըսաւ,

35 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես Եղամի աղեղը,

Անոնց գլխաւոր զօրութիւնը, պիտի կտարեմ :

36 - Աւ Եղամի վրայ երկինքի չորս կողմէն չորս հովերը պիտի բերեմ,

Եւ զանոնք այս բոլոր հովերուն պիտի ցրուեմ.

Աւ պիտի չըլլայ սպգ մը, որու Եղամի փախատականները չերթան :

37 - Աւ Եղամացիք իրենց թշնամիներուն առջև

Եւ իրենց հոգին փնտռողներուն առջև պիտի վախցնեմ,

Աւ անոնց վրայ պատուհաս պիտի բերեմ,

Այսինքն իմ սաստիկ բարկութիւնս, կ'ըսէ Տէրը,

Եւ անոնց ետեւէն սուր պիտի զրկեմ, Մինչև զանոնք հաացնեմ :

38 - Աւ իմ ամթուս Եղամի մէջ պիտի դնեմ,

Եւ անկէ թագաւոր ու իշխաններ պիտի կորսնցնեմ, կ'ըսէ Տէրը :

39 - Բայց վերջին օրերը Եղամի գերութիւնը պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը :

ԳԼ. Ծ

Բարեւոնի վրայով, Քաղզէացոց երկրին վրայով, Երեմիա մարգարէին ձեռքով Տէրոջը խօսած խօսքը :

2 - Ազգերուն մէջ պատմեցէք .
 Հրատարակեցէք ու դրօշ վերցուցէք .
 Հրատարակեցէք -- մի ծածկէք, --
 ըսէք ,
 Բաբելոն առնուեցաւ, Բէլ ամօցաւ,
 Մարովդաք կոտորեցաւ,
 Անոր արձանները ամօցան,
 Անոր կուռքերը կոտորեցան .

3 - Վասն զի անոր վրայ հիւսիսէն ազգ
 մը ելաւ,
 Անիկա անոր երկիրը աւերակ պիտի
 ընէ,
 Ու հոն բնակիչ պիտի չմնայ .
 Մարդէ մինչև անասուն պիտի փախ-
 չին երթան :

4 - Այն օրերը ու այն ժամանակը ,
 կ'ըսէ Տէրը ,
 Իսրայէլի որդիները, իրենք ու Յուդայի
 որդիները , մէկտեղ պիտի գան,
 Քաղերով ու լալով պիտի երթան,
 Եւ իրենց Տէր Աստուածը պիտի փրճա-
 տեն :

5 - Սիօնի համար պիտի հարցնեն՝
 Իրենց երեսը դէպ ի հոն գործեւ՛լ .
 Եկէք ու Տէրոջը յարինք
 Յաւիտենական ու անմուտց ուխտով
 մը :

6 - Իմ ժողովուրդս կորսուած ոչ-
 խարներու պէ՞ եղաւ,
 Չանոնք իրենց հովիւները մոլորեցու-
 ցին ,
 Չանոնք լեռներու վրայ պտրտացուցին .
 Անոնք ու լեռնէ լեռ -- Բլուրէ բլուր
 գացին ,
 Ու իրենց մակադաստեղը մոռցան :

7 - Ամէն գանդները զանոնք կերան .
 Ու անոնց թշնամիները ըսին,
 Մենք յանցանք չունինք,
 Վասն զի անոնք արդարութեան բնա-
 կարան եղող Տէրոջը դէմ ,
 Ու իրենց հայրերուն յոյսը եղող Տէ-
 րոջը դէմ՝ մեզք գործեցին :

8 - Բաբելոնի մէջէն փախէք,
 Ու Քաղդէացոց երկրէն ելէք,
 Եւ հօտերուն առջեւէն քաջազ նոխազ-
 ներուն պէս եղէք :

9 - Քանզի ահա ես Բաբելոնի վրայ
 Հիւսիսի երկրէն մեծ ազգերու ժողովք
 Պիտի արթնցնեմ՝ ու հանեմ ,
 Ու անոր առջև գունդերով պիտի շար-
 տին ,
 Անկէ պիտի առնուի .
 Անոնց նեաերը , յաջողակ պատերազ-
 մոզի նեաերուն պէս ,

Պարագ պիտի չդառնան :
 10 - Եւ Քաղդէացոց երկիրը աւար
 պիտի լլայ ,
 Ու զանիկա բոլոր թալլողները պիտի
 կշտանան, կ'ըսէ Տէրը :

11 - Որովհետեւ դուք ուրախացաք
 ու խնդացիք,
 Ով իմ ժառանգութեանս կողրպտիչ-
 ները ,
 *Վանանչ խոտերու մէջ արածուող
 երինջի պէս ցաթ կեցէք ,
 Ու երիվարներու պէս վրնջեցէք :
 12 - Ձեր մայրը խիստ ամօցաւ .
 Ձեզ ծնանողը ամօթով եղաւ .
 Ահա անիկա ազգերուն յեաինը ,
 Անապատ, անջուր ու ամայի պիտի ըլ-
 լայ :

13 - Տէրոջը բարկութեանը պատճա-
 ւաւ հոն մարդ պիտի չբնակի,
 Հապա բոլորովին ամայի պիտի ըլլայ .
 Բաբելոնէ ամէն անցնողը
 Անոր բոլոր հարուածներուն վրայ
 Պիտի հիանայ ու պիտի սուլէ :

14 - Բաբելոնի դէմ՝ շուրջանակի շար-
 տեցէք,
 Ով բոլոր աղեղ լարողներ,
 Անոր նեաեցէք, նեաին մի խնայէք,
 Քանզի անիկա Տէրոջը դէմ՝ մեզք գոր-
 ծեց :

15 - Անոր դէմ՝ շուրջանակի աղաղակ
 վերցուցէք .
 Անիկա իր ձեռքը տուաւ .
 Անոր հիմերը կործանեցան,
 Անոր պարիսպները աւրեցան,
 Վասն զի ասիկա Տէրոջը վրէժխնդրու-
 թիւնն է .
 Անկէ վրէժ առէք,
 Անոր իր բրածին համեմատ բրէք :
 16 - Բաբելոնէ սերմանողը ու հունձքի
 ժամանակ մանգաղ բռնողը
 կոտորեցէք .
 Բռնաւոր սուրին երեսէն
 Ամէն մարդ իր ժողովուրդին պիտի
 դառնայ ,
 Ու ամէն մարդ իր երկիրը պիտի փախչի :
 17 - Իսրայէլ մոլորեալ ոչխար մըն է,
 Առիւծները զանիկա հալածեցին .
 Չանիկա նախ Ասորեստանի թագաւորը
 կերաւ ,
 Ու ետքը այս Բաբելոնի Նաբուգոդո-
 նոսոր թագաւորը անոր ոսկոր-
 ները կրծեց :

*Կամ, Յորեն ձեռող

18 - Ասոր համար զօրաց Տէրը, Խորայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես Բաբելոնի թագաւորին ու անոր երկրին այցելու թիւն պիտի ընեմ՝,

Ինչպէս Ասորեստանի թագաւորին այցելու թիւն ըրի:

19 - Եւ Խորայէլը իր բնակարանը պիտի դարձնեմ՝,

Ու կարմեղոսի և Բասանի մէջ պիտի արածի,

Ու անոր հոգին Եփրեմի լեռանը վրայ Ու Գաղատա գու վրայ պիտի կշտանայ:

20 - Այն օրերը ու այն ժամանակը, կ'ըսէ Տէրը,

Խորայէլի անօրէնութիւնը պիտի փրկուուի,

Բայց անիկա անօրէնութիւնն պիտի չունենայ.

Եւ Յուդայի մեղքերը պիտի քննուին, Բայց պիտի չգանուին.

Վասն զի իմ պահած մնացորդներուս Բոլոր պիտի ներեմ:

21 - *Մերաթայիմի երկրին վրայ Եւ †Փակուդի բնակիչներուն վրայ ելի:

Անոնց ետեէն աւրէ,

Ու նզովուածի պէս բնաջինջ ըրէ, կ'ըսէ Տէրը,

Եւ քեզի ամէն պատուիրածիս պէս ըրէ:

22 - Երկրին մէջ պատերազմի ձայն Ու մեծ կոտորած կայ:

23 - Բոլոր երկրի մուրճը ի'նչպէս կոտրեցաւ ու մանրեցաւ,

Բաբելոն սողգերուն մէջ ի'նչպէս աւերակ եղաւ.

24 - Քեզի որոգայթ լարեցի ու բռնուեցար, ով Բաբելոն,

Բայց դուն չգիտցար. Գանուեցար ու ձեռք անցար,

Վասն զի Տէրոջը դէմ հակառակեցար:

25 - Տէրը իր զինարանը բացաւ Ու իր բարկութեան զէնքերը հանեց,

Քանզի Քաղգէացոց երկրին մէջ Զօրաց Տէր Եհովան գործ ունի:

26 - Եհիէ ժայրէն անոր վրայ եկէք, Անոր շահմարանները բացէք,

Զանիկա շեղջերու պէս դիզեցէք, Ու նզովուածի պէս զանիկա բնաջինջ ըրէք.

Անոր մնացորդ մը չմնայ:

27 - Անոր բոլոր զուարակները կորսնցուցէք,

Թող անոնք սպանդանոցը իջնեն.

Վայ անոնց, քանզի անոնց օրը, Անոնց այցելութեան ժամանակը, հասած է:

28 - Բաբելոնի երկրէն փախչողներուն ու ազատուածներուն ձայնը չուի,

Որպէս զի մեր Տէր Աստուծոյն վրէժխնդրութիւնը,

Անոր ատճարին վրէժխնդրութիւնը, Սիօնի մէջ պատմէ:

29 - Բաբելոնի վրայ *աղեղնաւորները կանչեցէք.

Ով բոլոր աղեղ լարողներ, Անոր բոլորաիքը անոր դէմ բանակեցէք.

Զըլլայ որ մարդ մը ազատի, Անոր իր գործերուն համեմատ հատուցում ըրէք,

Անոր իր ամէն ըրածին համեմատ ըրէք.

Վասն զի անիկա Տէրոջը դէմ, Խորայէլի Սուրբին դէմ, հպարտութիւն ըրաւ:

30 - Ուստի անոր կտրիճները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան, Եւ անոր բոլոր պատերազմական մարդիկը

Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը:

31 - Ահա ես քեզի դէմ եմ, ով հպարտ, կ'ըսէ զօրաց Տէր Եհովան.

Քանզի քու օրդ, քեզի այցելութիւն ընելու ժամանակս, հասած է:

32 - Եւ հպարտը գլորելով պիտի իյնայ, Ու մէ'կը պիտի չըլլայ որ զանիկա վերցրնէ.

Եւ անոր քաղաքներուն մէջ կրակ պիտի բռնկցնեմ,

Որ անոր բոլոր շրջակայ տեղերը պիտի ուտէ:

33 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Խորայէլի որդիները ու Յուդայի որդիները մէկտեղ զրկանք կրեցին.

Ու անոնց բոլոր գերեվարները զանոնք բռնեցին,

Ու չեն ուզեր զանոնք արձակել:

34 - Անոնց Փրկիչը զօրաւոր է, Անոր անունը Զօրաց Տէր է.

Անիկա անշուշտ անոնց դատին ջատագով պիտի ըլլայ,

*Կա՛մ, շատերը

*Այսինքն, սպասամբութեան

†Այսինքն, այցելութեան

*Կա՛մ, շատերը

Որպէս զի երկրին հանգստութիւն տայ,
 Ու Բաբելոնի բնակիչները խռովեցնէ :
 35 - Տէրը կ'ըսէ որ Քաղզէացոց վրայ
 Ու Բաբելոնի բնակիչներուն վրայ
 Եւ անոր իշխաններուն ու իմաստուն-
 ներուն վրայ սուր խոհարար :
 36 - Ստախոսներուն վրայ սուր խոհարար,
 ու պիտի խենթենան.
 Անոր կարիճներուն վրայ սուր խոհարար,
 ու պիտի զարհուրին.
 37 - Անոր ձիերուն ու կառքերուն վրայ
 Եւ անոր մէջ եղող բոլոր խառնիճա-
 ղանձ բազմութեանը վրայ սուր
 խոհարար,
 Ու կրնէրու պէս պիտի բլլան.
 Անոր գանձերուն վրայ սուր խոհարար,
 ու պիտի յափշտակուին.
 38 - Անոր ջուրերուն վրայ չորութիւն
 խոհարար, ու պիտի ցամքին.
 Քանզի անիկա դրօշեայներու երկիր է,
 Ու իրենց կուռքերովը կը յիմարին :
 39 - Անոր համար հան վայրենի կատու-
 ներ ու բորենիներ պիտի բնա-
 կին,
 Ու հոն ջայլամներ պիտի բնակին.
 Եւ անիկա մէյմըն ալ մարգարնակ
 պիտի չրլլայ,
 Ու ազգէ ազգ հոն բնակիչ պիտի չը-
 լայ :
 40 - Աստուծոյ կործանած Սոգոմին ու
 Գոմորին
 Եւ անոր շրջակայ քաղաքներուն պէս,
 կ'ըսէ Տէրը,
 Հոն ալ մարդ մը պիտի չնստի,
 Եւ անոր մէջ մարդու զաւակ պիտի
 չբնակի :
 41 - Ահա հիւսիսէն ժողովուրդ կու
 գայ,
 Ու մեծ ազգ և շատ թագաւորներ
 երկրի ծայրերէն պիտի արթնան :
 42 - Անոնք աղեղ ու նիզակ կը կրեն,
 Անոնք անգութ ու անողորմ են.
 Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ,
 Եւ անոնք ձիերու վրայ կը հեծնեն,
 Ու պատերազմող մարդու պէս
 Քեզի դէմ կը շարունին, ով Բաբելոնի
 ազջիկ :
 43 - Երբ Բաբելոնի թագաւորը անոնց
 լուրը լսեց,
 Անոր ձեռքերը թուլցան.
 Նեղութիւնը շրջապատեց զանիկա
 Ծննդական կնոջ երկունքին պէս :
 44 - Ահա անիկա աւիւծի պէս ամուր
 բնակարանին վրայ պիտի ելլէ

Յորդանանու ջուրերուն յորդեղէն.
 Բայց անոր վրայէն շուտով պիտի
 փախցնեմ զանոնք.
 Եւ ո՞վ է այն բնարեալը՝ զոր անոր վրայ
 դնեմ :
 Վասն զի ինծի նման ո՞վ կայ,
 Ու ինծի հեռ ո՞վ պիտի վիճարանի.
 Եւ ո՞վ է այն հովիւը որ իմ առջև
 պիտի կենայ :
 45 - Անոր համար Բաբելոնի վրայով
 Տէրոջը խորհած խորհուրդը
 Ու Քաղզէացոց երկրին վրայ մտածած
 մտած մունքը մտիկ բրէք :
 Հօտին ամէնէն պզտիկը անպատճառ
 պիտի քշէ զանոնք.
 Անշուշա անոնց բնակարանները անոնց
 հեռ պիտի աւրէ :
 46 - Բաբելոնի առնուելու ձայնէն եր-
 կիր կը շարժի,
 Ու ազգերուն մէջ աղաղակ կը լսուի :

ԳԼ. ԾԱ

Տէրը այսպէս կ'ըսէ.
 Ահա ես Բաբելոնի վրայ
 Ու իմ թշնամիներուս մէջտեղ բնա-
 կողներուն վրայ
 Ապականիչ հով մը պիտի հանեմ :
 2 - Եւ Բաբելոնի վրայ հասողներ պիտի
 զրկեմ :
 Ու զանիկա պիտի հասն և անոր եր-
 կիրը պիտի պարպեն.
 Վասն զի պատուհասին օրը անոր վրայ
 ամէն կողմէն պիտի գան :
 3 - Աղեղնաւորը պիտի լարէ իր աղեղը
 աղեղնաւորին դէմ :
 Ու իր պրահովը հպարտացողին դէմ.
 Եւ անոր երիտասարդներուն մի խնա-
 յէք :
 Անոր բոլոր զօրքը նզովուածի պէս
 բնաջինջ բրէք :
 4 - Ու Քաղզէացոց երկրին մէջ սպան-
 նուածներ
 Եւ անոր հրապարակներուն մէջ խո-
 ցոտուածներ պիտի իյնան :
 5 - Քանզի Խարայէլ ու Յուդա իր Աս-
 տուծ մէն,
 Զօրաց Տէրոջմէն, չմերժուեցաւ,
 Թէպէտև անոնց երկիրը Խարայէլի Սուր-
 բին դէմ :
 Յանցանքով լեցուեցաւ :
 6 - Բաբելոնի մէջէն փախէք,
 Ու ամէն մարդ թող իր անձը ազա-
 տէ,

Որպէս զի անոր անօրէնութիւնովը
չկործանիք .
Քանզի ասիկա Տէրոջը վրէժխնդրու-
թեան ժամանակն է,
Ինք անոր հատուցում պիտի ընէ :
7 - Բաբելոն Տէրոջը ձեռքին մէջ
Բոլոր երկիրը գինովցնող սակի գաւաթ
եղաւ .
Անոր գինիէն սագերը խմեցին,
Անոր համար սագերը յիմարեցան :
8 - Բաբելոն յանկարծ ինկաւ կտարե-
ցաւ ,
Անոր վրայ սղբացէք .
Անոր վէրքին համար բաղասան առէք,
Թերեւս բժշկութիւն գանէ :
9 - Բաբելոնի դեղ ըրինք , բայց
բժշկութիւն չգտաւ .
Չանհկա թողէք, ու մեզմէ ամէն մէկը
իր երկիրը երթայ .
Վասն զի անոր դատաստանը մինչև
երկինք հասաւ ,
Ու մինչև ամպերը ելաւ :
10 - Տէրը մեր արդարութիւնը երեւան
հանեց .
Եկէք, ու Սիօնի մէջ
Մեր Տէր Աստուծոյն գործը պատմենք :
11 - Նեաեքը փայլեցուցէք, վահան-
ները առէք .
Տէրը Մարաց թագաւորներուն հոգին
արթնցուց,
Քանզի Բաբելոնի վրայով խորհեցաւ
որ զանհկա բնաջինջ ընէ .
Վասն զի ասիկա Տէրոջը վրէժխնդրու-
թիւնը ,
Իր տաճարին վրէժխնդրութիւնն, է :
12 - Բաբելոնի պարիսպներուն դէմ
դրօշ վերցուցէք,
Պահապան զօրքը ու ժողովուցէք,
Դէտեր կարգեցէք, դարաններ պատ-
րաստեցէք,
Քանզի Տէրը որոշեց,
Եւ Բաբելոնի բնակիչներուն վրայով
ըսած խօսքը ի գործ դրաւ :
13 - Ով շատ ջուրերու քով բնակող
«- շատ գանձեր ունեցող ,
Քու վախճանդ «- քու ազահութեանդ
չափը եկաւ .
14 - Զօրաց Տէրը իր անձին վրայ եր-
գում ըրաւ՝ Ը՛հե՛լ ,
Անշուշտ քեզ մարտիի քաղաքի մէջ
չափ մարդոցմով պիտի լեցնեմ .
Ու քու վրագ բարձր ձայնով պիտի
պառան :

Աշխարհը իր իմաստութիւնովը հաս-
տատեց,
Ու երկինքը իր խորհրդովը տարածեց :
16 - Երբ իր ձայնը կու տայ, երկինքի
մէջ ջուրերու բազմութիւն կ'ըլ-
լայ ,
Եւ երկրի ծայրերէն շոգիներ կը հանէ .
Անձրևի համար փայլակներ կը շինէ,
Ու հով կը հանէ իր շտեմարաններէն :
17 - Ամէն մարդ գիտութենէ զբոսած՝
անասուն դարձաւ,
Ամէն սկերիչ էր քանդակած կուռ-
քին պատճառաւ ամօթով ե-
ղաւ .
Վասն զի իր ձուլածոյ կուռքը ստու-
թիւն է,
Ու անոնք հոգի չունին :
18 - Անոնք ունայնութեան և խաբէու-
թեան գործեր են .
Անոնց պայտըթիւն եղած տառն ա-
նոնք պիտի կորուսին :
19 - Յակարի Բաթինը տանց պէս չէ,
Վասն զի անհկա ամէն բանը Ստեղ-
ծողն է,
Ու Իւրայեւ անոր ժառանգութեան վի-
ճակն է .
Եւ անոր անունը Եհովա Սաբաւովթ է :
20 - Իուն իմ կռանս, պատերազ-
մական գործիքս, ես .
Եւ քեզմով սագեր պիտի կտարեմ,
Ու քեզմով թագաւորութիւններ պիտի
աւրեմ ,
21 - Եւ ձին ու անոր հեծեալը քեզմով
պիտի կտարեմ ,
Ու կառքը և անոր վրայ հեծնողը քեզ-
մով պիտի կտարեմ ,
22 - Ու քեզմով մարդը ու կինը պիտի
կտարեմ ,
Եւ քեզմով ծերը ու երիտասարդը պի-
տի կտարեմ ,
Ու կարիճը և կոյսը քեզմով պիտի
կտարեմ ,
23 - Ու հովիւը և անոր հօտը քեզմով
պիտի կտարեմ ,
Երկրագործը ու անոր եղբորն զոյգը
քեզմով պիտի կտարեմ ,
Եւ կուսակալները ու նախարարները
քեզմով պիտի կտարեմ :
24 - Եւ Բաբելոնի ու Քաղդէացաց
երկրին բոլոր բնակիչներուն
Պիտի հատուցանեմ իրենց բոլոր շա-
րութիւնը ,
Զոր ձեր աչքերուն առջև Սիօնի ըրին,
կ'ըսէ Տէրը :

25 - Ով բոլոր երկիրը աւրոզ ապակա-
նիչ լեռ,
Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ Տէրը,
Եւ իմ ձեռքս քու վրադ պիտի եր-
կընցնեմ,
Ու քեզ վէժերէն վար պիտի գլորեմ,
Եւ քեզ այրած լեռ պիտի ընեմ:
26 - Ու քեզմէ անկեան քար և հիման
քար պիտի չառնեն,
Քանզի յաւիտենական աւերակ պիտի
ըլլաս, կ'ըսէ Տէրը:
27 - Երկրին մէջ դրօշ վերցուցէք,
Ազգերուն մէջ փող հնչեցուցէք,
Անոր դէմ ազգեր պատրաստեցէք,
Անոր վրայ Արարողի, Միննի ու Աս-
քանազի թագաւորութիւնները
կանչեցէք,
Անոր վրայ զօրապետներ դրէք,
Մազա մարտիներուն պէս ձիեր հա-
նեցէք:
28 - Անոր վրայ ազգեր, Մարաց թա-
գաւորները,
Անոնց կուտակալները ու բոլոր նախա-
րարները
Եւ անոնց իշխանութեանը բոլոր եր-
կիրը պատրաստեցէք:
29 - Ու երկիրը պիտի դողայ ու նեղու-
թիւն կրէ,
Վասն զի Բաբելոնի վրայով Տէրոջը
ունեցած խորհուրդները պիտի
հաստատուին,
Բաբելոնի երկիրը անբնակ ամայութիւն
ընելու համար:
30 - Բաբելոնի զօրաւոր մարդիկը պա-
տերազմելէն դադարեցան,
Բերդերու մէջ բնակեցան,
Ու ժերնին կտրեցաւ, կիներու պէս
եղան:
Անոր բնակարանները այրեցին, անոր
նիգերը կտրեցան:
31 - Սուրհանդակը սուրհանդակի հան-
դիպելու,
Ու լրաբերը լրաբերի հանդիպելու պի-
տի վազէ,
Բաբելոնի թագաւորին պատմելու հա-
մար
Թէ անոր քաղաքը մէկ ծայրէն առ-
նուեցաւ,
32 - Եւ թէ անցքերը բռնուեցան,
Ու եղէգները կրակով այրեցան,
Եւ պատերազմական մարդիկը զարհու-
րեցան:
33 - Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի
Ասաուածը, այսպէս կ'ըսէ:

Բաբելոնի աղջիկը կալի պէս է.
Անոր ծեծուելու ատենն է.
Քիչ ատենէն ետքը անոր հունձքին
ժամանակը պիտի գայ:
34 - Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թա-
գաւորը
Չիս կերաւ, զիս բնաջինջ ըրաւ:
Չիս պարսպ ամանի պէս ըրաւ,
Վիշապի պէս զիս կլլեց,
Իմ փափկութիւններէս իր փորը կըշ-
տացուց,
Չիս դուրս նետեց:
35 - Սիօնի բնակիչը պիտի ըսէ,
Ինձի ու իմ մարմնիս եղած զրկանքը
Բաբելոնի վրայ ըլլայ:
Ու Երուսաղէմ պիտի ըսէ,
Իմ արիւնս Քաղդէացուց երկրին բնա-
կիչներուն վրայ ըլլայ:
36 - Անոր համար Տէրը այսպէս
կ'ըսէ:
Ահա ես քու դատիդ պաշտպան պիտի
կայնիմ,
Ու քեզի համար վրէժխնդիր պիտի ըլ-
լամ,
Եւ անոր ծովը ցամաք պիտի ընեմ,
Ու անոր աղբիւրը պիտի չորցնեմ:
37 - Եւ Բաբելոն - երէտի դէպեր,
Չագալներու բնակարան,
Ու զարմանքի և սուլելու Էնթալայ պի-
տի ըլլայ,
Ու հոն մարդ պիտի չբնակի:
38 - Անոնք աւոյգ առիւծներու պէս
մէկտեղ պիտի մանչեն,
Եւ կորիւններու պէս պիտի կանչուը-
տեն:
39 - Երբ անոնք գիւնի տաքնան, ա-
նոնց կոչուէք պիտի ընեմ,
Ու զանոնք պիտի գինովցնեմ, որպէս
զի զուարթանան,
Եւ յաւիտենական քունով քնանան
Ու չարթնան, կ'ըսէ Տէրը:
40 - Չանոնք սպանդանոցը պիտի իջե-
ցնեմ գառնուկներու պէս
կամ խոյերու պէս՝ նոխազներու հետ:
41 - Ի՛նչպէս առնուեցաւ Սիսակ,
Ու բոլոր երկրի պարծանքը բռնուե-
ցաւ:
Բաբելոն ի՛նչպէս աւերակ եղաւ ազ-
գերուն մէջ:
42 - Ծովը Բաբելոնի վրայ ելաւ,
Անոր այլքներուն շատութենէն ծած-
կուեցաւ:
43 - Անոր քաղաքները աւերակ,
Անջուր երկիր ու անապատ եղան:

Եւ այնպիսի երկիր մը եղան ուր մարդ չբնակիր,

Ու անկէ մարդու զաւակ չանցնիր:

44 - Եւ Բաբելոնի մէջ Բէլի այցելութիւն պիտի ընեմ,

Ու անոր բերնէն՝ անոր կլլածը պիտի հանեմ:

Ու մէյմըն ալ ազգերը անոր պիտի չգիմեն,

Բաբելոնի պարիսպն ալ պիտի փլչի:

45 - Անոր մէջէն ելէք, ով իմ ժողովուրդս,

Եւ ամէն մարդ թող իր անձը ազատէ Տէրոջը սատակ բարկութենէն:

46 - Ու չըլլայ որ երկրին մէջ լուսելու լուրէն

Ձեր սիրար թուլնայ ու վտխոսք,

Երբ մէկ տարուան մէջ լուր մը,

Եւ հեռեեալ տարուան մէջ ուրիշ լուր մը գայ,

Ու երկրին մէջ բռնութիւն ըլլայ,

Եւ իշխան իշխանի դէմ արտէս:

47 - Անոր համար ահա օրեր կու գան Որ Բաբելոնի կուռքերուն այցելութիւն պիտի ընեմ:

Ու անոր բոլոր երկիրը ամօթով պիտի ըլլայ,

Եւ անոր բոլոր սպաննուածները անոր մէջ պիտի իյնան:

48 - Եւ երկինք ու երկիր և բոլոր անոնց մէջ եղածը

Բաբելոնի վրայ պիտի ցնծան, Վասն զի աւրողները հիւսիսէն պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը:

49 - Ինչպէս Բաբելոն Իսրայէլի սպաննուածները վար ձգեց,

Այնպէս Բաբելոնի մէջ բոլոր երկրին սպաննուածները պիտի իյնան:

50 - Ով սուրէ ազատուածներ, գացէք, մի կայինք,

Հեռուէն Տէրը յիշեցէք,

Ու երուսաղէմ՝ ձեր միտքը թող գայ:

51 - Նախաաինք լսելուս համար ամչցանք:

Ամօթը մեր երեսը ծածկեց,

Քանզի Տէրոջը տանը սրբարաններուն մէջ օտարազգիներ մտան:

52 - Անոր համար ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,

Որ անոր կուռքերուն այցելութիւն պիտի ընեմ,

Եւ անոր բոլոր երկրին մէջ վիրաւորներ պիտի հեծեն:

53 - Թէև Բաբելոն մինչև երկինք ելլէ,

Ու իր *զօրութիւնը բարձրութեան մէջ հաստատէ,

Իմ կողմանէս աւրողներ պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը:

54 - Բաբելոնէ աղաղակի ձայն, Ու Քաղդէացաց երկրէն մեծ կատորածի ջան կու գայ:

55 - Քանզի Տէրը Բաբելոնը կ'աւրէ, Ու անոր մէջէն մեծ ձայնը կը խափանէ:

Որովհետև անոնց այլեքները շատ ջուրերու պէս կը գոչեն,

Եւ անոնց ձայնը աղմկալից կ'ելլէ:

56 - Քանզի անոր վրայ, Բաբելոնի վրայ, աւրող մը եկաւ,

Ու անոր զօրաւորները առնուեցան, Անոնց աղեղները կտարեցան,

Քանզի Տէրը հասուցիչ Աստուած է, Անշուշտ հասուցում պիտի ընէ:

57 - Եւ անոր իշխանները ու իմաստունները,

Կուսակառնները ու նախարարները Եւ զօրաւոր մարդիկը պիտի գինովցնեմ,

Ու անոնք յաւիտենական քունով պիտի քնանան,

Ու պիտի չարթնան, կ'ըսէ այն Թագաւորը

Որուն անունը Չօրաց Տէր է:

58 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Բաբելոնի լայն պարիսպները բոլորովին պիտի փլչին:

Ու անոր բարձր դռները կրակով պիտի այրին:

Եւ ժողովուրդները պարապ տեղ, Ու ազգերը կրակի համար պիտի աշխատին ու յոգնին:

59 - Այս խօսքն է զոր Երեմիա մարգարէն պատուիրեց Մասսիայի որդւոյն Ներիայի որդւոյն Սարայիայի, երբ անիկա Յուդայի Սեդեկիա թագաւորին

†կողմանէ, անոր թագաւորութեանը չորրորդ տարին, Բաբելոն գնաց. ու Սարայիա գլխաւոր սենեկապան էր:

60 - Վասն զի Երեմիա Բաբելոնի վրայ գալու ամէն չարիքները գիբքի մը մէջ գրեց, այսինքն այս բոլոր խօսքերը որ Բաբելոնի դէմ գրուած են:

61 - Ու Երեմիա Սարայիայի ըսաւ, Երբ Բաբելոն երթաս, քնայէ որ կարգաս՝ այս բոլոր խօսքերը,

62 - Ու ըսես, Ով Տէր,

*Եթէ զօրութեանը բարձրութիւնը ամրացնէ

†Կա՛մ, հեա

†Կա՛մ, տես և կարգա

դուն այս տեղին համար ըսիր որ զանկա պիտի տարես, ու մարդէ մինչև անասուն անոր մէջ բնակիչ պիտի չըլլայ, հապա յաւիտենական ամայութիւն պիտի ըլլայ: 63 - Ու երբ այս գիրքը կարդալը լմնցնես, անոր վրայ քար մը կապես ու զանկա եփրատի մէջ նետես, 64 - Ու ըսես, Այսպէս պիտի ընկղմի Բաբելոն, ու Դայ՛ն ու պիտի չկանգնի՝ իմ անոր վրայ բերելու չարիքներուս պատճառաւ, և անոնք պիտի յոգնին:

Երեմիայի խօսքերը մինչև հաս են:

ԳԼ ԾԲ

Սեդեկիա քսանըմէկ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասներմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիաաղ էր: 2 - Եւ անկա Յովակիմի բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ. 3 - Քանզի Տէրոջը բարկութիւնը Երուսաղէմի ու Յուդայի վրայ էր, մինչև զանոնք իր երեսէն ձգէ. անոր համար Սեդեկիա Բաբելոնի Թագաւորէն ապստամբեցաւ:

4 - Ու եղաւ որ անոր Թագաւորութեանը իններորդ տարին տասներորդ ամիսը, ամսուն տասներորդ օրը, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմի վրայ եկաւ, ու անոր դիմաց բանակեցաւ, և անոր դէմ շուրջանակի պատնէշներ շինեցին: 5 - Ու մինչև Սեդեկիա Թագաւորին մետատաներորդ տարին քաղաքը պաշարման մէջ էր: 6 - Եւ չորրորդ ամսուն մէջ, ամսուն իննին, քաղաքին մէջ ստատիկ սով կար, ու երկրին ժողովուրդը հաց չունէր: 7 - Եւ քաղաքին պարիսպը ճեղքուեցաւ, ու բոլոր պատերազմողները փախան, և գիշերով Թագաւորի պարտեզին քով եղող երկու պարսպին մէջի դրանը ճամբայով քաղաքէն ելան. ու Քաղդէացիք քաղաքին բոլորաիքը կեցեր էին. ու անոնք դաշտի ճամբայէն գացին: 8 - Եւ Քաղդէացուց զօրքը Թագաւորին ետեւէն ինկան ու Երիքովի դաշտերուն մէջ Սեդեկիայի հասան, և անոր բոլոր զօրքը անոր քովէն ցրուեցաւ: 9 - Ու Թագաւորը բռնեցին, ու զանկա Բաբելոնի Թագաւորին Ռեբղա տարին Եմաթի երկրին մէջ, և անոր դատաստանը տեսաւ: 10 - Ու Բաբելոնի Թագաւորը Սեդեկիայի աղաքները անոր աչքերուն առջև մորթեց. Յուդայի բոլոր իշխաններն ալ Ռեբղայի մէջ մորթեց: 11 - Եւ Սեդեկիայի աչքերը կուրացուց ու զանկա շղթաներով կապեց, և Բաբելոնի Թագաւորը զանկա Բաբելոն տարաւ, ու զանկա մինչև իր մահուն օրը բանալի մէջ պահեց:

12 - Եւ Բաբելոնի Թագաւորին, Նաբուգոդոնոսոր Թագաւորին, տասներէններորդ տարին հինգերորդ ամիսը, ամսուն տասնին, Բաբելոնի Թագաւորին առջև կայնող Նաբուգարզան դահճապետը Երուսաղէմի մէջ մտաւ: 13 - Ու Տէրոջը տունը և Թագաւորին տունը այրեց, ու Երուսաղէմի բոլոր տուները ու ամէն մեծ տուները կրակով այրեց: 14 - Եւ դահճապետին հետ եղող Քաղդէացուց բոլոր զօրքերը Երուսաղէմի բոլոր շրջակայ պարիսպները փլցուցին: 15 - Ու Ժողովուրդին աղքատներէն, և քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը, ու Բաբելոնի Թագաւորին կյնող փախատականները, ու մնացած բազմութիւնը Նաբուգարզան դահճապետը գերի տարաւ: 16 - Եւ Նաբուգարզան դահճապետը երկրին աղքատներէն Թողուց այգեգործներ ու երկրագործներ ըլլալու համար:

17 - Եւ Քաղդէացիք Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ սիւները ու մեքենովթները, ու Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ ծովը կտոր կտոր ըրին, ու անոնց բոլոր պղնձը Բաբելոն տարին: 18 - Եւ Թաղարները ու թիակները և բազմակալները ու կոնքերը և խնկամանները ու պաշտօնի համար գործածուած բոլոր պղնձէ անօթները առին: 19 - Եւ գաւաթները ու բուրվաւները և կոնքերը ու Թաղարները և աշտանակները ու խնկամանները և բաժակները առաւ դահճապետը, ինչ որ սակիէ էր՝ էֆրե սակի, ու ինչ որ արծաթ է էր՝ էֆրե արծաթ: 20 - Նաեւ Սողոմոն Թագաւորին՝ Տէրոջը տանը համար շինած երկու սիւները, մէկ ծովը ու մեքենովթներուն տեղ եղած տասուերկու պղնձէ եզները՝ բոլոր այս գործիքները

*Կամ, «նոր տակ եղած տասուերկու եզները» - մեքենովթները

քուն՝ պղինձը կշիռքի չէր գար : 21 - Եւ սիւներէն մէկուն բարձրութիւնը տասնութ կանգուն էր, ու անոր շրջապատը տասուերկու կանգուն էր, և անոր թանձրութիւնը չորս մասնաչափ էր - մէջը պարսպ էր : 22 - Եւ անոր վրայ պղնձէ խոյակ կար : ու մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր, և խոյակին վրայ շուրջանակի ցանցակերպ զարդ ու նուռեր կային, ամէնն ալ պղնձէ էին : միւս սիւնն ալ նուաբով պղնպէս էր : 23 - Ու նուաբը «Բն կողմէն իննսունը վեց էին, ու ցանցակերպ զարդին վրայ շուրջանակի բոլոր նուաբը հարիւր էին :

24 - Եւ դաճճապետը առաջին քահանան Սարայիան ու երկրորդ քահանան Սոփանիան ու զբան երեք պահապանները առաւ : 25 - Եւ քաղաքէն ներքինի մը առաւ, որ պատերազմող մարդոց զօրագլուխն էր : ու քաղաքին մէջ գտնուած թագաւորին *առջև կայնաղներէն՝ եօթը մարդ, ու երկրին ժողովուրդը զինուորութեան գրող զօրքին մեծ գրագիրը, և քաղաքին մէջ գտնուած երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ - - - : 26 - Ու Նաբուզարդան դաճճապետը զանոնք առաւ ու Բաբելոնի թագաւորին՝ Ռերզա տարաւ : 27 - Եւ Բաբելոնի թագաւորը զանոնք վարկաւ, ու Եմաթի երկրին Ռերզային մէջ զանոնք մեռ-

ցուց : Այսպէս Յուդա իր երկրէն գերի տարուեցաւ :

28 - Նաբուզարդանոտարի գերի քշած ժողովուրդը տախտէ : եօթներորդ տարին երեք հազար քսանուիրեք Հրեայ :

29 - Նաբուզարդանոտարի տասնութերորդ տարին՝ Երուսաղէմէ ութ հարիւր երեսունուերկու հոգի : 30 - Նաբուզարդանոտարի քսանուիրեքերորդ տարին Նաբուզարդան դաճճապետը Հրեաներէն եօթը հարիւր քսանուերհինգ հոգի գերի քշեց : ամէնը չորս հազար վեց հարիւր հոգի էր :

31 - Ու եղաւ որ Յուդայի Յովաքին թագաւորին գերութեանը երեսունը եօթներորդ տարին երկուտասաներորդ ամիսը, ամսուն քսանըհինգերորդ օրը, Բաբելոնի Եղմարովդաք թագաւորը իր թագաւոր եղած տարին, Յուդայի Յովաքին թագաւորին գլուխը բարձրացուց, ու զանիկա բանտէն հանեց : 32 -

Եւ անոր հեա քաղցրութեամբ խօսեցաւ, ու անոր աթոռը Բաբելոնի մէջ իրեն հեա եղող թագաւորներուն աթոռէն վեր գրաւ : 33 - Եւ անոր բանտի լաթերը փոխեց : ու անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ միշտ անոր առջև հաց կ'ուտէր : 34 - Եւ անոր ռոճիկը մշտապէս ռոճիկ ըլլալով, անոր կեանքին բոլոր օրերուն մէջ մինչև անոր մահուան օրը Բաբելոնի թագաւորին կողմէն օրէ օր անոր կը տրուէր :

ՈՂԻՔ ԵՐԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Ինչպէս առանձին կը նստի բազմամարդ քաղաքը .
Ազգերուն մէջ մեծ եղողը որբեարիի պէս եղաւ,
Գաւառներուն մէջ իշխանուհի եղողը հարկատու եղաւ :

2 - Գիշերը անդադար կու լայ, ու իր արցունքները իր այտերուն վրայ են .

Անոր բոլոր սիրելիներէն անոր մխիթարութիւն տուող չկայ .

Անոր բոլոր բարեկամները անոր նենգութիւն ըրին, անոր թշնամի եղան :

3 - Յուդա տառապանքի և խիստ ծաւայութեան համար գերի քրչուեցաւ .

* Եբր. երեսը տեսնողներէն

Հեթանոսներուն մէջ կը բնակի, հան-
գրատութիւն չգտներ.

Անոր բոլոր հալածիչները առ-
թիւններուն մէջ անոր վրայ
հասան :

4 - Միօնի ճամբաները սուգ կը բռնեն՝
հանդիսաւոր տօներուն եկողներ
չլլալուն համար.

Անոր բոլոր դռները ամայացած են,
անոր քահանաները կը հեծեն.

Անոր կոյսերը կը արամին, ու ինք գառ-
նութեան մէջ է :

5 - Անոր նեղիչները իշխան եղան, ա-
նոր թշնամիները յաջողութիւն
գտան,

Վասն զի Տէրը զանիկա արամութեան
մտանեց անոր շատ յանցանք-
ներուն համար.

Անոր պզտիկ տղաքը թշնամիին առ-
ջեէն գերի գացին :

6 - Եւ Միօնի աղջիկէն իր բոլոր վայել-
չութիւնը գնաց.

Անոր իշխանները ճարակ չգտնող եղ-
ջերուներու պէս եղան,

Ու հալածողին առջեէն առանց ուժի
կ'երթան :

7 - Երուսաղէմ իր տառապանքի ու
թշուառութեան օրերը՝
իր առաջուան ունեցած բոլոր ցան-
կայի բաները յիշեց,
Երբ իր ժողովուրդը թշնամիին ձեռքը
ինկաւ, ու իրեն օգնութիւն
ընող չեղաւ.

Թշնամիները զանիկա տեսան «- անոր
կործանումին վրայ խնդացին :

8 - Երուսաղէմ ծանր մեղք գործեց,
անոր համար *պիղծ սեպուե-
ցաւ :

Չանիկա ամէն պատուողները զանիկա
անարգեցին, վասն զի անոր մեր-
կութիւնը տեսան

Անիկա ալ հառաչեց ու ետ դարձաւ :

9 - Անոր պղծութիւնը իր քղանցքնե-
րուն վրայ է, անիկա իր վախ-
ճանը չյիշեց,

Ու զարմանալի կերպով մը նուաճա-
ցաւ. անիկա միխթարիչ չունի :

Ով Տէր, իմ տառապանքիս նայէ,
վասն զի թշնամին հպարտա-
ցաւ.

10 - Անոր բոլոր ցանկայի բաներուն՝
թշնամին ձեռք երկնցուց.

Քանզի հեթանոսները տեսաւ որ իր
սրբարանին մէջ մտան,
Որոնց համար դուն պատուիրեր էիր՝
որ անոնք քու ժողովքիդ մէջ
չմանեն :

11 - Անոր բոլոր ժողովուրդը հաց
փնտռելէն հառաչեց.
Իրենց հոգին ու ժողցնելու համար՝ իրենց
ցանկայի բաները կերակուրի
փոխարէն տուին.

Տես, ով Տէր, ու նայէ, վասն զի ա-
նարգուեցայ :

12 - Արդեօք հոգ չէ՞ք ըներ, ով բոլոր
ճամբայէ անցնողներ,
Նայեցէք ու տեսէք, թէ արդեօք իմ
ցաւիս պէս ցաւ կա՞յ՝ որ իմ
վրաս եկաւ.

Վասն զի Տէրը զիս նեղեց իր սասաիկ
բարկութեան օրը.

13 - Բարձրէն իմ սակորներուս կրակ
ղրկեց՝ որ անոնց օրեց.
Ու քերուս ցանց տարածեց ու զիս ետ
դարձուց.

Չիս ամայի բնաւ «- բոլոր օրը զի՞ մա-
րած Բողոց :

14 - Իմ յանցանքներուս լուծը անոր
ձեռքով կապուեցաւ.
Անոնք *միացան ու իմ պարանոցիս
վրայ ելան. իմ ոյժս կարեց.
Տէրը զիս այնպիսի ձեռքերու մտանեց՝
որ առնչո՞ւ չեմ կրնար քաղա-
սիլ :

15 - Տէրը իմ մէջս իմ բոլոր զօրաւոր-
ներս անարգեց.

Իմ երիտասարդներս կտարելու համար
իմ վրաս ժողովք կանչեց.
Տէրը Յուդայի կոյս աղջիկը հնձանի
մէջ կոխեց.

16 - Անոր համար կու լամ, աչքերս,
աչքերս քարցունք կ'իջեցնեն.
Վասն զի ինձմէ հեռացաւ միխթա-
րիչը, որ իմ հոգիս պիտի նորո-
գէր.

Իմ տղաքս նուաղեցան, վասն զի թշնա-
մին զօրացաւ :

17 - Միօն իր ձեռքերը տարածեց, անոր
միխթարութիւն տուող չկայ.
Տէրը Յակորի համար հրամայեց՝ որ
անոր թշնամիները զանիկա
չըջապատեն.

*կա՛մ, թափառական եղաւ

*Եբբ. հիւսուեցան
†Եբբ. սոք ելլել
‡Եբբ. ջուր

Երուսաղէմ անոնց մէջ դաշտանաւոր
կնոջ պէս եղաւ :

18 - Տէրը արգար է , վասն զի անոր
հրամանին ապաստամբ եղայ .
Հիմա , ով բոլոր ժողովուրդներ , մտիկ
ըրէք ու իմ ցաւս տեսէք .
Իմ կոյսերս ու երիտասարդներս գե-
րութեան գացին :

19 - Իմ սիրականներս կանչեց , անոնք
զիս խաբեցին .
Իմ քահանաներս ու ծերերս քաղա-
քին մէջ հոգինին աւանդեցին ,
Երբ իրենց համար կերակուր կը փրնա-
ռէին՝ իրենց հոգին ու ժովցնե-
լու համար :

20 - Ով Տէր , նայէ , վասն զի նեղուե-
ցայ , աղիքներս խռովեցան .
Սիրաս ներսիդիս տակնուվրայ է , վասն
զի խիտ շատ ապրտամբեցայ .
Դուրսէն սուրը զե՞ կը զրկէ «- ներսը
մահ կայ :

21 - Իմ հառաչանքս լսեցին , քայ ինծի
մխիթարութիւն տուող չկայ .
Իմ բոլոր թշնամիներս իմ թշուառու-
թիւնս լսելով ուրախացան ,
վասն զի դուն ըրիր «-ի՛ն» .
Կանչած օրդ պիտի բերես , ու անոնք
ինծի պէս պիտի ըլլան :

22 - Անոնց բոլոր չարութիւնը թող
քու առջևդ հասնի .
Եւ անոնց այնպէս ըրէ , ինչպէս ինծի
ըրիր իմ բոլոր յանցանքներուս
համար .
Վասն զի իմ հեծութիւններս շատ են
ու իմ սիրաս նուազած է :

Գ Լ Բ

Ինչպէս Տէրը իր բարկութիւնովը
խաւարով ծածկեց Սիօնի աղ-
ջիկը .
Իսրայէլի փառքը երկինքէն վար նե-
տեց ,
Ու իր բարկութեան օրը իր ստքերուն
պատուանդանը չյիշեց :

2 - Տէրը աւանց խնայելու Յակոբի բո-
լոր բնակարանները կլլեց ,
Յուդայի աղջկան ամրոցները իր բար-
կութիւնովը փլցուց «- հիմնա-
յատակ ըրաւ ,
Թագաւորութիւնը ու անոր իշխաննե-
րը պղծեց :

3 - Սաստիկ բարկութեամբ Իսրայէլի
բոլոր եղջիւրը փշրեց .

Անոր աջ ձեռքը թշնամիին երեսէն
• ետ դարձուց ,
Եւ Յակոբի մէջ կրակի բոցի պէս
բռնկեցաւ , «- նաբ բոլորաիքը
կերաւ :

4 - Իր աղեղը թշնամիի պէս լարեց , իր
աջ ձեռքովը հակառակորդի
պէս կեցաւ ,
Եւ բոլոր աչքի հաճոյ եղողները մեռ-
ցուց ,
Իր բարկութիւնը կրակի պէս թափեց
Սիօնի աղջկան խորանին մէջ :

5 - Տէրը թշնամիի պէս եղաւ , Իսրա-
յէլը կլլեց ,
Անոր բոլոր պալատները կլլեց . անոր
ամրոցները կործանեց ,
Եւ Յուդայի աղջկան մէջ սղբը ու կո-
ծը շատցուց :

6 - Անոր *Տիւղը պարտէզի հէ-դէ պէս՝
բռնութեամբ կործանեց , անոր
ժողովատեղին աւրեց .
Տէրը Սիօնի մէջ հանդիսաւոր տօնը ու
շաբաթը մոռցուց ,
Եւ իր սաստիկ բարկութիւնովը թա-
գաւորը ու քահանան անարգեց :

7 - Տէրը իր սեղանը մերժեց «- իր
սրբարանէն զլուեցաւ ,
Անոր պալատներուն պարիսպները
թշնամիին ձեռքը մտանեց .
Անոնք Տէրոջը տանը մէջ հանդիսաւոր
տօնի օրուան պէս ձայն տուին :

8 - Տէրը խորհեցաւ Սիօնի աղջկան պա-
րիսպը աւրել .
Լարը քաշեց , իր ձեռքը կործանելէն
ետ չդարձուց .
Պատնէշին ու պարսպին սուգ բռնել
տուաւ , անոնք մէկտեղ արրտ-
մութեան մէջ են :

9 - Անոր դռները գետինը անցան , ա-
նոր նիգերը աւրեց ու կոտ-
րեց .
Անոր թագաւորը ու իշխանները աղ-
գերուն մէջ են . օրէնք չկայ .
Անոր մարգարէներն ալ Տէրոջմէ տե-
սիլք չեն գտներ :

10 - Սիօնի աղջկան ծերերը գետնի
վրայ նստած՝ լուռ կը կենան .
Իրենց գլխուն վրայ հող գրին , քուր-
ծեր հագան ,
Երուսաղէմի կոյսերը գլուխին գետի-
նը իջեցուցին :

11 - Իմ ժողովուրդիս աղջկան բեկմա-

*Կ-ձ, ցանգը պարտէզի ցանդի պէս

նր համար աչքերս արցունք Բ-
 ֆեխն աւրեցան,
 Աղիքներս խռովեցան, լեարդս գետի-
 նը թափեցաւ,
 Վասն զի աղաքները ու կաթնկերները
 քաղաքին հրապարակներուն
 մէջ կը մտնին:
 12 - Անոնք իրենց մոյրերուն կ'ըսեն,
 Ո՞ւր է ցորեն ու գինի.
 Երբ վերաւորուածներու պէս կը մտնին
 քաղաքին հրապարակներուն
 մէջ,
 Ու երբ իրենց հագին կ'աւանդեն իրենց
 մոյրերուն գիրկերուն մէջ:
 13 - Քեզի ի՞նչ բան վկայութիւն բե-
 րեմ'. քեզի ի՞նչ օրինակ բերեմ',
 ով երուսաղէմի աղջիկ.
 Քեզ մխիթարելու համար քեզի ի՞նչ
 նմանութիւն բերեմ', ով Սիօնի
 կոյս աղջիկ.
 Քանզի քու խրամատութիւնդ ծովու
 չափ մեծ է. ո՞վ կրնայ քեզ
 բժշկել:
 14 - Քու մարգարէներդ քեզի համար
 սնտախ ու յիմարական տեսիլք-
 ներ տեսան,
 Եւ քու անօրէնութիւնդ +եզի չյայտ-
 նեցին, որ քու գերութիւնդ ետ
 դարձնեն,
 Հապա քեզի համար սնտախ *տեսիլքներ
 ու մոյրութիւններ տեսան:
 15 - Բոյսր ճամբայէ անցնողները քեզի
 համար ծափ զարկին,
 Եւ սուլելով գլուխնին շարժեցին Ե-
 րուսաղէմի աղջկան համար,
 Ու շփոթեցին, Ա՛յո է այն քաղաքը որ Գե-
 ղեցկութեան կատարելութիւն
 * - Բոլոր երկրին ու բախութիւնը
 կ'ըսուէր:
 16 - Քու բոլոր թշնամիներդ իրենց բե-
 րանը քու վրագ բացին .
 Եւ սուլելով ահուայ կրճտեցին ու ը-
 սին, Չանի՛ս կլլեցինք.
 Ահա այս է մեր սպասած օրը, գտանք,
 տեսանք զանի՛ս:
 17 - Տէրը իր խորհածը կատարեց, ա-
 ռաջին օրերէն պատուիրած խոս-
 քը ի դարձ դրաւ.
 Փլցուց ու չինայեց, և թշնամին քու
 վրագ ու բախացուց,
 Քու թշնամիներուդ եղջիւրը բարձրա-
 ցուց:

* Եբ. պատգամներ

18 - Անոնց սիրտը Տէրոջը աղաղակեց.
 Ով Սիօնի աղջկան պարխապը, ցորեկ ու
 գիշեր հեղեղի պէս արցունք
 թափէ.
 Քեզի հանգիստ մի տար, աչքիդ բերը
 չդագարի:
 19 - Ելիր, գիշերով աղաղակէ ֆեխե-
 * -ան պահերուն սկիզբը.
 Քու սիրտդ ջուրի պէս թափէ Տէրոջը
 երեսին առջև.
 Ձեռքերդ անոր վերցուր քու աղոցդ
 հոգիներուն համար,
 Արոնք ամէն փողոցներուն գլուխը ա-
 նօթութենէ կը մտնին:
 20 - Տես, ով Տէր, ու նայէ, որո՞ւ պյս-
 պէս բրիր.
 Միթէ կիները իրենց պտուղը, երեւոյ
 գրկած աղաքները, ուտե՞ն.
 Քահանան ու մարգարէն Տէրոջը սրբա-
 րանին մէջ սպաննուի՞ն:
 21 - Տղան ու ծերը փողոցներու մէջ
 գեանի վրայ պառկեցան,
 Իմ կոյսերս ու երիտասարդներս սու-
 րէն ինկան.
 Քու բարկութեանդ օրը զան՛ս+ մեռ-
 ցուցիր, մորթեցիր ու չինայե-
 ցիր:
 22 - Ամէն կողմէ իմ վախերս հանդի-
 * -ս ատնի օրուան պէս կան-
 չեցիր,
 Ու Տէրոջը բարկութեան օրը մնացորդ
 կամ ազատուած չմնաց.
 Իմ գրկածներս ու մեծցուցածներս իմ
 թշնամիս հառցուց:

ԳԼ. Գ

Ես այն մարդն եմ, որ տառապանք
 տեսայ անոր բարկութեան գա-
 ւազանովը.
 2 - Ձիս տարաւ խաւարի մէջ պարտ-
 ցուց, և ոչ թէ լոյսի մէջ:
 3 - Ա՛յո, ինձի դէմ դարձաւ, ամէն օր
 իր ձեռքը ի՛մ վրա՞ դարձուց:
 4 - Իմ մարմինս ու մորթս մաշեց, ու-
 կորներս կտարտեց:
 5 - Ինձի դէմ պարտեւ չինեց, և զիս
 դառնութեամբ ու նեղութեամբ
 շրջապատեց:
 6 - Ձիս մութ տեղեր նստեցուց շա-
 տանցով մեռածներուն պէս:
 7 - Իմ բոլորտիքս ցանգ քաշեց, ու
 չեմ կրնար դուրս ելլել. իմ
 շղթաներս ծանրացուց:

- 8 - Մինչև անգամ՝ աղաղակած ու կանչած ատենս՝ անիկա իմ աղօթքս *մերժեց:
- 9 - Իմ ճամբաներս աաշուած քարերով շրջապատեց, իմ շաւիղներս ծռեց:
- 10 - Անիկա ինձի գարանակալ արջուպէս, «- ծածուկ տեղեր պահ- «- շարժ առիւծի պէս՝ եղաւ:
- 11 - Իմ ճամբաներս խոտորցուց և զիս պատառեց, զիս ամոյշի բրաւ:
- 12 - Իր աղեղը լարեց ու զիս նեախ նպատակի պէս կայնեցուց:
- 13 - Իր նեաերը երկկամուկներուս մէջ խոթեց:
- 14 - Իմ բոլոր ժողովուրդիս ծաղրեղայ, ու բոլոր օրը անոնց երգը:
- 15 - Զիս դառնութիւններով կշտացուց, զիս օշինդրով գինովցուց:
- 16 - Նաև աղւաններս խիճերով կտարրտեց, զիս մնիւրով ծածկեց:
- 17 - Այսպէս իմ հոգիս խաղաղութենէ հեռացուցիր, բարիքը մոռցայ:
- 18 - Ու բոխ, կորուսեցաւ իմ զօրութիւնս և իմ ակնկալութիւնս Տէրոջմէ:
- 19 - Յիշէ իմ ատուապանքս ու թշուառութիւնս, օշինդրը ու դառնութիւնը:
- 20 - Իմ հոգիս միշտ կը յիշէ պանծ ու իմ ներսիդիս կը նուաասանայ:
- 21 - Ասիկա միաքս կը բերեմ, անոր համար յոյս կ'ունենամ:
- 22 - Տէրոջը սղորմութիւններէն է որ չհատանք, վասն զի անոր գթութիւնը չպակսեցաւ:
- 23 - Անոնք ամէն առտու կը նորոգուին. քու ճշմարտութիւնդ մեծ է:
- 24 - Իմ հոգիս ըսաւ, Տէրը իմ բաժինս է, այս պատճառաւ անոր պիտի յուսամ,
- 25 - Տէրը բարի է իրեն ապաւինողներուն «- զինք փնտռող հոգիին:
- 26 - Տէրոջը փրկութեանը ապաստելը ու լռութեամբ յուսալը աղէկ է:
- 27 - Աղէկ է մարդուս որ իր երիտասարդութեանատենը լուծըկրէ:
- 28 - Առանձին կը նստի ու լռու կը կենայ, քանզի ը-ճը անոր վրայ դրուեցաւ:

- 29 - Իր բերանը հողին կու սայ, ը-Եւ-Լ Բէ Թերեւս յոյս կայ:
- 30 - Իր ծնօտը զանիկա զարնաղին կու սայ, «- նախատինքով կը կշտանայ:
- 31 - Բայց Տէրը յաւիտեան չմերժեր:
- 32 - Վասն զի թէև ցաւ կու սայ, իր սղորմութեան շատութիւնովը գթութիւն ալ կ'ընէ:
- 33 - Քանզի իր կամքովը նեղութիւն չտար, ու մարդու սրգիները չարամեցներ:
- 34 - Երկրի բոլոր բանաարկեալները սարի տակ ճգմելը,
- 35 - Բարձրեալին առջև մարդու մը իրաւունքը ծռելը,
- 36 - Մարդու մը իր դատին մէջ անիրաւութիւն ընելը Տէրոջը հաճելի չէ:
- 37 - Ո՞վ է անիկա որ կը խօսի ու անոր իօտը կը կատարուի, Կանի որ Տէրը հրամայած չէ:
- 38 - Մինչ բարիքը ու չարիքը Բարձրեալին բերնէն չե՞լլեր:
- 39 - Ապրող մարդը ինչո՞ւ արտունջ ընէ, մարդը *իր մեղքերուն պատիժին համար:
- 40 - Մեր ճամբաները քննենք ու փորձենք և Տէրոջը դառնանք:
- 41 - Մեր սիրտերը Ֆեր ձեռքերուն հետ երկինքը եղող Աստուծոյն վերցրնենք:
- 42 - Մենք յանցանք ըրինք ու ապրտամբեցանք, դուն թողութիւն չտուիր:
- 43 - Բարկութեամբ ծածկեցիր Կանիք ու մեզ հալածեցիր, մեռցուցիր «- չխնայեցիր:
- 44 - Քեզ ամպով ծածկեցիր, սրպէս զի Ֆեր աղօթքը չանցնի:
- 45 - Մեզ ժողովուրդներուն մէջաեղը խոտան ու անարգ ըրիր:
- 46 - Մեր բոլոր թշնամիները մեզի գէմ բերաննին բացեր են:
- 47 - Մեր վրայ վախ ու գուբ, աւերում ու կոտորած եկաւ:
- 48 - Իմ ժողովուրդիս աղջկան բեկմանը համար աչքէս ջուրի հեղեղներ կ'իջնեն:
- 49 - Իմ աչքս անգագար «բոյս» կը թափէ, ու բնաւ հանգստութիւն պիտի չունենայ:

*Եբ. գուրը արգելեց

*Կոմ, իր մեղքերուն վրայ Բոլոր Կոմ

- 50 - Մինչև Տէրը երկինքէն նայի ու տեսնէ :
- 51 - Իմ քաղաքիս բոլոր աղջիկներուն համար աչքս հոգւոյս նեղութիւն կու տայ :
- 52 - Իմ թշնամիներս զուր տեղ անդադար զիս ճնճղուկի պէս կ'որսան :
- 53 - Իմ կեանքս դուրի մէջ կարեցին, վրաս քար նեաեցին :
- 54 - Չուրերը գլխէս վեր բարձրացան . ըսի թէ Ես կարուեցայ .
- 55 - Խորունկ գուբէն քու անունդ կանչեցի, ով Տէր :
- 56 - Իմ ձայնս լսեցիր. իմ հառաչանքիս «- աղաղակիս քու ականջդ մի դոցեր :
- 57 - Քեզի կանչած օրս մօտեցար, ըսիր թէ Մի վախնար :
- 58 - Իմ հոգւոյս դասը վարեցիր, ով Տէր, իմ կեանքս ազատեցիր :
- 59 - Ով Տէր, ինձի եղած զրկանքը տեսար . իմ իրաւունքս պաշտպանէ :
- 60 - Անոնց բոլոր վրէժխնդրութիւնը, անոնց ինձի դէմ «-նեցա՞ծ բոլոր դիտաւորութիւնները տեսար :
- 61 - Անոնց նախատինքը լսեցիր, ով Տէր, անոնց ինձի դէմ «-նեցա՞ծ բոլոր դիտաւորութիւնները ,
- 62 - Իմ վրաս ելլողներուն շրթունքները ու ամէն օր ինձի դէմ անոնց խորհա՞ծ հնարքները :
- 63 - Անոնց նստելուն ու ելլելուն նայէ . ես անոնց երգն եմ :
- 64 - Ով Տէր, անոնց հատուցում պիտի ընես՝ իրենց ձեռաց գործերուն համեմատ :
- 65 - Անոնց սրտի՝ *թմրութիւն պիտի տաս, քու անէծքդ պիտի որսանանց :
- 66 - Բարկութեամբ պիտի հայածես զանոնք, ու Տէրոջը երկինքներուն տակէն բնաջինջ պիտի ընես :

ԳԼ Դ

Ոսկին ի՛նչպէս իր գոյնը կորսնցուց, «- մաքուր ոսկին փոխուեցաւ .
 Երբարանին քարերը ամէն փողոցներուն գլուխը թափուեցան :

*Եբր. ծածկոց

- 2 - Սիօնի պատուական աղաքները, որոնք ընտիր ոսկիի հաւատարէին ,
 Ի՛նչպէս բուռի ձեռքով շինուած խեցեղէն ամաններու պէս սեպուեցան :
- 3 - *Վիշապները անգամ ծիծերնին կը հանեն «- իրենց լակոաներուն կաթ կու տան .
 Իմ ժողովուրդիս աղջիկը անապատի ջայլեամբներուն պէս անգութեղաւ :
- 4 - Կաթնիկերին լեզուն ծարաւութեանէն իր քիմքին փակաւ .
 Տղաքները հաց ուզեցին, բայց անոնց ջարդող չկար :
- 5 - Ազնիւ կերակուրներ ուտողները փողոցներուն մէջ յուսակաուր մնացին .
 Կարմիր հագնուողներով մեծցողները աղբանոցներ գրկեցին :
- 6 - Եւ իմ ժողովուրդիս աղջկան անօրէնութիւնը Սոգոմի մեղքէն մեծ եղաւ .
 Որ մէկ վայրկեանի մէջ տակնուվրայ եղաւ՝ առանց զի «-ն ձեռքերուն անոր դպչելուն :
- 7 - Անոր ազնուականները ձիւնէն մաքուր, կաթէն ճերմակ էին .
 Անոնց մարմինը խալիկնիթներէն կարմիր էր, անոնց կերպարանքը շափիւղայի իջ նմանէր :
- 8 - Անոնց դէմքը ածուխէն աւելի սև եղաւ, ու փողոցներուն մէջ չէն ճանչցուիր .
 Անոնց մորթը իրենց սկորներուն փակաւ, չորցաւ «- փայտի պէս եղաւ :
- 9 - Սուրէ՛ մեռածները անօթութենէ՛ մեռածներէն երջանիկ էին,
 Վասն զի ասոնք ազարակի արդիւնքներուն պակասութենէն մաշեցան ու մեռան :
- 10-Ողորմած կիներուն ձեռքերը իրենց աղաքը եփեցին,
 Իմ ժողովուրդիս աղջկան կոտորածին ատենը անոնց կերակուր եղան :
- 11 - Տէրը իր սրամտութիւնը կատարեց, իր սաստիկ բարկութիւնը թափեց .
 Եւ Սիօնի մէջ կրակ բռնկցուց, որ անոր հիմերը կերաւ :

*Կաթ, Չաղալները Կաթ, բուստերէն

12 - Երկրի թագաւորները ու աշխարհի բոլոր բնակիչները չհաւատացին թէ հակառակորդը ու թշնամին Երուսաղէմի դռներէն պիտի մանէ :

13 - Անոր մարգարէներուն մեղքերէն, անոր քահանաներուն անօրէնութիւններէն,

Որոնք անոր մէջտեղը արդարներուն արիւնը թափեցին,

14 - Փողոցներուն մէջ կոյրերու պէ՞տատանդական պարտեցան, արիւնով պղծուեցան.

Այնպէս որ մարդ մը կարող չէր անոնց զգեստներուն դպչիլ :

15 - *Անոնց կը կանչէին, Ետ քաշուեցէք, ով պիղծեր,՝ ետ քաշուեցէք, ետ քաշուեցէք, մի դպչիք.

Անոնք փախան ու ասդին անդին պարտեցան . ազգերուն մէջ ըսուեցաւ, Անոնք մէյմըն ալ հո՞չքնակին :

16 - Տէրոջը բարկութիւնը ցրուեց զանոնք, անոնց մէյմըն ալ չնայիր,

Քահանաներուն երեսին պատիւ չըրին, ծերերուն գթութիւն չըրին:

17 - Մեզի ըլլալու օգնութեանը համար պարապ տեղ մինչև հիմա աչքերնիս մաշեցան .

Դիտելով սպասեցինք «յիսիս» ազգի մը՝ ոչ չէր կրնար ձեզ ազատել :

18 - Մեր քայլերը կ'որսան, որպէս զի մեր փողոցներուն մէջ չպարտինք .

Մեր վախճանը մօտեցաւ, մեր օրերը լեցուեցան, յիրաւի մեր վախճանը հասաւ :

19 - Մեզ հալածողները երկինքի արծիւներէն արագընթաց եղան .

Մեզ լեռներու վրայ ստատիկ հալածեցին, անապատի մէջ մեզի համար դարանամուտ եղան :

20 - Մեր սնունդներուն շունչը, Տէրոջը օձեալը, անոնց որոգայթներուն մէջ բռնուեցաւ,

Որու համար մենք կ'ըսէինք, Ազգերուն մէջ անոր հովանիին տակ պիտի ապրինք :

21 - Յնձա և ուրախ եղիր, ով Եդոմի աղջիկ, որ Հուս երկրին մէջ կը բնակիր .

Քեզի ալ պիտի անցնի բաժակը. պիտի

գինովնաս ու ինքզինքդ պիտի մերկացնես :

22 - Քու անօրէնութիւնդ վերջացաւ, ով Սիօնի աղջիկ, քեզ մէյմըն ալ գերի պիտի չքչէ .

Քու անօրէնութեանդ այցելութիւն պիտի ընէ, ով Եդոմի աղջիկ. քու մեղքերդ պիտի յայտնէ :

ԳԼ. Ե

Մեզի եղածը յիշէ, ով Տէր, Նայէ ու մեր նախատինքը տես :

2 - Մեր ժառանգութիւնը օտարներուն անցաւ,

Մեր տունները՝ օտարազգիներուն :

3 - Հայր շունեցող որբեր եղանք, Մեր մայրերը որբւարիներու պէս են :

4 - Մեր ջուրը ստակով խմեցինք, Մեր փայտը գնով կու գայ :

5 - Լ՝-Յը մեր պարանոցին վրայ ըլլալով հալածուեցանք,

Կ'աշխատինք ու հանգստութիւն չունինք :

6 - Հացով կշտանալու համար Իե՞դ է Եգիպտոս «- Ասորեստան ձեռք *երկնացիներ :

7 - Մեր հայրերը մեզք գործեցին և չկան,

Ու անոնց անօրէնութիւններուն պատճառով մենք կը կրենք :

8 - Ծառաներ տիրեցին մեր վրայ, Անոնց ձեռքէն ձեզ ազատող չկայ :

9 - Անապատի սուրին երեսէն

Մեր հացը մեր կեանքին վտանգովը ձեռք բերինք .

10 - Սովին ստակութեանը պատճառաւ

Մեր մորթը փուռի պէս սեցաւ .

11 - Կիները Սիօնի մէջ խայտառակեցին,

Ու կոյսերը՝ Յուդայի քաղաքներուն մէջ :

12 - Իշխանները †անոնց ձեռքով՝ կախուեցան .

Ծերերուն երեսին պատիւ չըրին :

13 - Երիտասարդները երկանաքարեր վերցուցին,

Ու աղաքը փայտի տակ ինկան :

14 - Ծերերը դադարեցան դուռընստի .

*Կա՞մ, Անոնց համար կը կանչէին, Ետ քաշուեցէք, պիղծ են.

*Եբբ. տու ինք †Կա՞մ, իրենց ձեռքէն

- Ո- երիտասարդները իրենց երա-
ժըշտութենէն:
- 15 - Մեր սրտին ուրախութիւնը դա-
դարեցաւ,
Մեր կտքաւելը սուգի փոխուեցաւ :
- 16 - Մեր գլխուն թագը ինկաւ .
Հիմա վա՛յ մեզի, վասն զի մեզք
գործեցինք :
- 17 - Ասոր համար մեր սիրտը նուա-
ղած է,
Ասոնց պատճառաւ աչքերնիս խա-
ւարեցան .
- 18 - Սիօն լեռանը պատճառաւ՝ որ
ամայի եղաւ .

- Անոր վրայ աղուէսներ կը պարտին :
- 19 - Դուն, ով Տէր, յաւիտեան կը
մնաս .
Քու աթոռդ դարէ դար կը գնէ:
- 20 - Ինչո՞ւ համար յաւիտեան մեզ
կը մոռնաս .
Ո- երկար ժամանակ մեզ կը թո-
ղուս:
- 21 - Քեզի դարձուր մեզ, ով Տէր, ու
դառնանք .
Մեր օրերը աւաջուան պէս նորոգէ :
- 22 - Սակայն դուն բոլորովին մեզ մեր-
ժեցիր,
Մեր վրայ խիտա շատ բարկացար:



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԵԼԻ



ԳԼՈՒԽ Ա.

Ու եղաւ որ երեսներորդ տարին չոր-
րորդ «ֆ»-ը, ամառն հինգին երբ ես գե-
րիներուն մէջ Քորար գետին քով էի,
երկինքը բացուեցաւ, ու Աստուծոյ
տեսիլքները տեսայ : 2 - Ամսուն հին-
գերորդ օրը, այսինքն Յովաքին թա-
գաւորին գերութեանը հինգերորդ տա-
րին, Քաղզեացուց երկրին մէջ, 3-Քո-
բար գետին քով, Բուզիի որդւոյն Եզե-
կիէլ քահանային յայանապէս Տէրօջը
խօսքը եղաւ, և հոն անոր վրայ Տէրօջը
ձեռքը եղաւ :

4 - Ու տեսայ որ ահա հիւսիսային
կողմէն մրրկայից հով, մեծ ամպ ու
բունկած կրակ կու գար, որուն բոլոր-
տիքը պայծառութիւն կար, ու մէջտե-
ղէն, կրակին մէջէն, սկիւզղինձի նմա-
նութիւն մը կ'երևար: 5-Եւ անոր մէջ
չորս կենդանիի կերպարանք կար, ու
անոնց երեւոյթը այս էր. անոնք մար-
դու կերպարանք ունէին: 6 - Եւ ամէն
մէկը չորս երես ունէր, ու անոնց ամէն
մէկը չորս թև ունէր: 7 - Եւ անոնց
ոտքերը շիտակ ոտքեր էին, ու անոնց
ոտքերուն թաթը զուարակի ոտքին

թաթին պէս էր, ու փայլուն պղնձի
պէս կը փայլէին: 8 - Եւ անոնց չորս
կողմերը անոնց թևերուն տակ մարդու
ձեռքեր կային, ու չորսն ալ երեսներ
ու թևեր ունէին: 9 - Անոնց թևերը
իրարու կցուած էին. անոնք երթալու
ատեննին չէին դառնար, ամէն մէկը
շիտակ յառաջ կ'երթար: 10 - Եւ
անոնց երեսներուն ձեռք «յոպ» եր-
չորսն ալ մարդու երես ունէին, ու աջ
կողմէն առիւծի երես. նաև չորսն ալ
ձախ կողմէն եզի երես, ու չորսն ալ
արծիւի երես ունէին: 11 - Ու անոնց
երեսները «յոպ» էին և անոնց թևերը
վերէն կը տարածուէին, երկուքը իրա-
րու կցուած էին, ու երկուքը անոնց
մարմինը կը ծածկէին: 12 - Եւ ամէն
մէկը շիտակ յառաջ կ'երթար. «-
ոզին ուր որ երթալու ըլլար՝ անոնք
հոն կ'երթային, գացած ատեննին չէ-
ին դառնար: 13 - Եւ կենդանիներուն
կերպարանքը, անոնց երեւոյթը, կրակի
վառած կայծերու պէս՝ ջահերու երե-
ւութիւն պէս էր, որ կենդանիներուն
մէջտեղը կը պարտէր. ու այն կրակը
լուսափայլ էր, ու կրակէն փայլակներ
կ'ելլէին: 14 - Եւ կենդանիները փայ-

լակի երևութին պէս կը վազէին ու կը դառնային:

15 - Ու կենդանիներուն նայեցայ ,
 և ահա գեանի վրայ , կենդանիներուն
 «Քն Քն»-ն քով շորս երեսով անիւ մը
 կար: 16 - Անիւներուն երևոյթը ու ա-
 նոնց շինուածքը սակեքարի կը նմանե-
 ին , և չորսին ձևը մէկ էր . ու անոնց
 երևոյթը ու շինուածքը «Յնդէ» էր , որ-
 պէս թէ անիւ անիւի մէջ եղած բլլար:
 17 - Գացած ատեննին իրենց շորս կող-
 մերուն վրայ կ'երթային . գացած ատ-
 եննին իրենց «Ջ Կա՛ Յա՛ Կա՛» շէին
 դառնար: 18 - Եւ անոնց շրջանակները
 բարձր ու ահեղ էին , և չորսին ալ
 շրջանակները ամէն կողմէն աչքերով
 լեցուն էին: 19 - Ու երբ կենդանիները
 կ'երթային , անիւներն ալ անոնց քո-
 վէն կ'երթային . ու երբ կենդանիները
 երկրի երեսէն կը վերանային , անիւ-
 ներն ալ կը վերանային: 20 - Ագին ուր
 որ երթալու բլլար , անոնք հոն , ոգիին
 գացած աեղը , կ'երթային . անիւներն
 ալ անոնց հետ մէկտեղ կը վերանա-
 յին . քանզի անիւներուն մէջ կենդա-
 նիներուն ոգին կար : 21 - Երբ անոնք
 կ'երթային , «ճն» ալ կ'երթային , ու
 երբ անոնք կը կայնէին , «ճն» ալ կը
 կայնէին . ու երբ անոնք երկրի երեսէն
 կը վերանային , անիւները անոնց հետ
 կը վերանային . քանզի անիւներուն
 մէջ կենդանիներուն ոգին կար : 22 -
 Եւ կենդանիներուն գլխուն վրայ՝
 երկնի հաստատութեանը նմանու-
 թիւնը վերէն անոնց գլուխներուն վրայ
 տարածուած էր *լուսափայլ ակնվա-
 նիի նման: 23 - Եւ այն հաստատու-
 թեանը տակ՝ անոնց թևերը իրարու կը
 շիտկուէին . ամէն մէկը մէկ կողմէն էր
 «Քն» ծածկող երկու թև ունէր , և
 ամէն մէկը միւս կողմէն իր մարմինը
 ծածկող երկու թև ունէր: 24 - Ու երբ
 կ'երթային , անոնց թևերուն ձայնը
 լսեցի շատ ջուրերու ձայնին պէս , Ա-
 մենակարողին ձայնին պէս , աղմուկի
 ձայնի «- բանակի ձայնի պէս . երբ կը
 կայնէին , իրենց թևերը կ'իջեցնէին :
 25 - Ու երբ անոնք կը կայնէին «-
 թևերնին կ'իջեցնէին , անոնց գլխուն
 վրայ եղող հաստատութենէն ձայն
 մը կ'ելլէր :

26 - Եւ անոնց գլխուն վրայ եղող

հաստատութենէն վեր , շափուղայ քա-
 րի երևութով ամուսի նմանութիւն
 մը կար , ու այն ամուսի նմանութեանը
 վրայ մարդու կերպարանքով նմանու-
 թիւն մը կար վերէն: 27 - Եւ անոր ե-
 րկամունքին երևութէն վեր սակեպղին-
 ձի նման՝ բոլորաբը «- ներսը կրակի
 նմանութեան պէս տեսայ . ու երկա-
 մունքին երևութէն վար կրակի նմա-
 նութեան պէս տեսայ . ու պայծառու-
 թեամբ շրջապատուած էր : 28 - Ինչ-
 պէս է անձրևի օրը ամպի մէջ եղող
 ծիածանի երևոյթը , այնպէս էր այն
 շրջապատուած պայծառութեանը ե-
 րևոյթը: Ասիկա Տէրսը փառքին նմա-
 նութեանը երևոյթն էր . ու երբ տեսայ ,
 երեսիս վրայ ինկայ , ու խօսողի մը
 ձայնը լսեցի:

ԳԼ Բ

Եւ ինծի ըսաւ , Արդի մարդոյ , ու-
 քերուդ վրայ կայնէ ու քեզի հետ խօ-
 սիմ: 2 - Ու ինծի հետ խօսածին պէս
 Հոգին իմ՝ վրաս եկաւ , և զիս սաքե-
 րուս վրայ վերցուց . ու ինծի հետ խօ-
 սողին շաշու լսեցի: 3 - Եւ ինծի ըսաւ ,
 Արդի մարդոյ , ես քեզ Իսրայէլի որդի-
 ներուն , ինծի դէմ՝ ապստամբող ապր-
 տամբներու ազգին , կը զրկեմ՝ , որոնք
 թէ՛ իրենք և թէ՛ իրենց հայրերը մին-
 չև այսօր ինծի դէմ՝ յանցաւոր գըա-
 նուեցան: 4 - Ու անոնք պինդերես և
 խստասիրտ որդիներ են . ես քեզ անոնց
 կը զրկեմ՝ , ու անոնց ըսես , Տէր Եհովա
 այսպէս կ'ըսէ: 5 - Եւ անոնք թէ՛ լսեն
 և թէ՛ զանց ընեն , (քանզի անոնք
 ապստամբներու տուն են ,) սակայն
 պիտի գիտնան թէ իրենց մէջ մարդա-
 րէ կայ :

6 - Ու դուն , որդի մարդոյ , անոնցմէ
 մի վախնար , և անոնց խօսքերէն մի
 վախնար: Թէ և քու քովդ *կամակոր ու
 ծուռ մարդիկ՝ կան , և կարիճներու
 քով կը բնակիս . անոնց խօսքերէն մի
 վախնար և անոնց երեսէն մի զարհու-
 րիք , թէ և անոնք ապստամբներու տուն
 են: 7 - Ու անոնց իմ՝ խօսքերս խօսիս ,
 թէ՛ լսեն և թէ՛ զանց ընեն . քանզի
 անոնք ապստամբ են:

8 - Ու դուն , որդի մարդոյ , քեզի
 ըսածս մտիկ ըրէ , այն ապստամբ տա-

*Եբր. ահաւոր

*Կա՛, փուշեր ու տատակներ

նը պէս ապատամբ մի ըլլար . բերանդ բաց ու քեզի տուածս կեր : 9 - Ու նայեցայ, և ահա ինծի երկնցած ձեռք մը, և ահա անոր մէջ զիրքի տոմս մը կար. 10 - Ու զանհկա իմ՝ առջևս բացաւ . և անհկա ներսէն ու դուրսէն գրուած էր. ու անոր վրայ սղբեր, հաւաստանք ու վայ գրուած կային :

ԳԼ. Գ

Եւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, այդ գտածդ կեր. այդ տամը կեր ու գնա Իսրայէլի տանը խօսէ : 2 - Եւ իմ՝ բերանս բացի, ու այն տամը ինծի կերցուց. 3 - Եւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, այս իմ՝ քեզի տուած տամս փորիդ կերցուր ու աղիքներդ լեցուր . ու ես զանհկա կերայ, ու բերնիս մէջ մեղրի պէս անոյշ եղաւ : 4 - Այն ատեն ինծի ըսաւ, Արդի մարդոյ, աղէ, Իսրայէլի տանը գնա ու իմ՝ խօսքերովս անոնց խօսէ : 5 - Այսան զի դուն դժուարիմաց խօսք և ծանր լեզու ունեցող ազգի մը չղրկուեցար, հապա Իսրայէլի տանը. 6 - Դժուարիմաց խօսք ու ծանր լեզու ունեցող շատ ազգերուն չէ, որոնց խօսքերը դուն չես հասկնար. յիրաւի եթէ քեզ անոնց զրկէի, անոնք քեզի մտիկ պիտի ընէին : 7 - Բայց Իսրայէլի տունը քեզի մտիկ ընել պիտի չուզեն, վասն զի չեն ուզեր ինծի մտիկ ընել . որովհետեւ բոլոր Իսրայէլի տունը պինդերես ու խտտասիրտ է : 8 - Ահա անոնց երեսին դէմ՝ քու երեսդ պինդ, ու անոնց ճակատին դէմ՝ քու ճակատդ պինդ ըրի : 9 - Քու ճակատդ վէճէն ամուր՝ ագամանդի պէս ըրի. անոնցմէ չվախնաս ու անոնց երեսէն չզարհուրիս, թէ և անոնք ապատամբներու տուն են :

10 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Արդի մարդոյ, իմ բոլոր խօսքերս գործնք քեզի պիտի խօսիմ, սրտիդ մէջ ընդունէ ու ականջներովդ լսէ. 11 - Եւ գնա գերիներուն մէջ մտիւր, քու ժողովուրդիդ որդիներուն մէջ, ու անոնց խօսէ և անոնց լսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. թէ՛ մտիկ ընեն և թէ՛ զանց ընեն :

12 - Այն ատեն Հոգին զիս վերցուց, ու ետևէս մեծ շարժումի ձայն մը լսեցի ու Էբեթ, Տէրոջը փառքը օրհնեալ ըլլայ իր տեղէն : 13 - Եւ կենդանիներուն թեւերուն իրարու դարմելուն ձայնը, ու անոնց քովի անհաներուն ձայնը, ու

մեծ շարժումի ձայն լսեցի : 14 - Եւ Հոգին զիս վերցուց տարաւ, ու ես իմ՝ հոգիս տաքութենէն դառնալով ետամբ գացի . ու Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ զօրութեամբ : 15 - Եւ Քոբար գետին քով բնակող Թելապիպի գերիներուն եկայ, ու անոնց նստած տեղը նստայ, և հոն եօթը օր անոնց մէջ ապշած նստայ :

16 - Ու եօթը օրէն ետքը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 17 - Արդի մարդոյ, քեզ Իսրայէլի տանը դէտ գրի . ու իմ՝ բերնէս խօսք լսես, և իմ՝ կողմանէս զանոնք զգուշացնես : 18 - Երբ ամբարշտին ըսեմ՝ թէ Անշուշտ պիտի մեռնիս, ու դուն զանհկա չզգուշացնես, և չզրուցես որ ամբարիշտը ապրեցնելու համար՝ իր չար ճամբայէն զգուշանայ, այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ : 19 - Իսկ եթէ դուն ամբարիշտը զգուշացնես, ու անհկա իր ամբարշտութենէն և չար ճամբայէն չդառնայ, անհկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց դուն քու հոգիդ ազատած կ'ըլլաս : 20 - Ու երբ արդարը իր արդարութենէն դառնայ և չարութիւն ընէ, ու ես անոր առջև գայթակղութիւն գնեմ՝ որ անհկա մեռնի, զանհկա չզգուշացնելուդ համար անհկա իր մեղքին մէջ պիտի մեռնի, և անոր ըրած արդարութիւնը պիտի չյիշուի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ : 21 - Իսկ եթէ դուն այն արդարը զգուշացնես՝ որ արդարը մեղք չգործէ, ու եթէ անհկա մեղք չգործէ, անհկա անշուշտ պիտի ապրի խրատ մտիկ ընելուն համար, ու դուն քու հոգիդ ազատած պիտի ըլլաս :

22 - Եւ հոն Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, ու ինծի ըսաւ, Ել, դաշտը գնա, ու հոն քեզի հետ պիտի խօսիմ : 23 - Եւ ես ելայ, դաշտը գացի. և ահա հոն կայներ էր Տէրոջը փառքը՝ Քոբար գետին քով տեսած փառքիս պէս. ու երեսիս վրայ ինկայ : 24 - Եւ Հոգին իմ վրաս եկաւ, ու զիս ստքի վրայ կայնեցուց. և ինծի հետ խօսեցաւ ու ինծի ըսաւ, Գնա տանդ մէջ պահուրտէ : 25 - Ու դուն, որդի մարդոյ, ահա քու վրագ կապանքներ պիտի դնեն, և անոնցմով քեզ պիտի կապեն, ու անոնց

մէջ պիտի չելլես: 26 - Եւ քու լեզուդ քու քիմքիդ պիտի փակցնեմ*, ու համը պիտի ըլլաս. և անոնց մէջ յանդիմանող մարդու պէս պիտի չըլլաս, վասն զի անոնք ապատամբներու տուն են: 27 - Բայց երբ ես քեզի հեռ խօսիմ*, քու բերանդ պիտի բանամ*. ու անոնց պիտի բռնու, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Լսողը թող լսէ, ու զանց ընողը թող զանց ընէ. վասն զի անոնք ապատամբներու տուն են:

ԳԼ. Դ

Եւ դուն, որդի մարդոյ, քեզի աղիւս մը առ ու զաննիկա առջևդ դիր, և անոր վրայ քաղաք մը, այսինքն Երուսաղէմը, գծագրէ: 2 - Եւ անոր բոլոր տիքը պաշարում* դիր, և անոր դէմ մարտկոց շինէ, ու անոր դէմ պատնէշ կանգնէ, և անոր դէմ բանակ կազմէ, ու անոր բոլորտիքը *պատերազմական մէքենաներ* դիր: 3 - Եւ դուն քեզի երկաթէ տապակ մը առ, ու զաննիկա քուկին ու քաղաքին մէջտեղ երկաթէ պարիսպի պէ* դիր, ու քու երեսդ անոր դէմ շիտկէ որ աննիկա պաշարուի, ու զաննիկա պաշարէ. ասիկա Խորայէլի տանը նշան ըլլայ:

4 - Եւ դուն քու ձախ կողմիդ վրայ պառկէ, ու անոր վրայ դիր Խորայէլի տանը անօրէնութիւնը. անոր վրայ պառկած օրերուդ թիւովը անոնց անօրէնութիւնը կրես: 5 - Քանզի ես անոնց անօրէնութեանը տարիները օրերու թիւով քու վրայդ դրի, երեք հարիւր իննսուն օր, որպէս զի Խորայէլի տանը անօրէնութիւնը կրես: 6 - Ու երբ այն օրերը լմնցնես, նորէն պառկիս քու աջ կողմիդ վրայ, ու քառասուն օր Յուդայի տանը անօրէնութիւնը կրես. քեզի ամէն մէկ տարիին տեղ մէյմէկ օր տուի:

* 7 - Եւ քու երեսդ դէպ ի Երուսաղէմի պաշարումը շիտկես, ու քու բազուկդ մերկացնես, ու անոր վրայ մարգարէութիւն ընես: 8 - Եւ ես ահա քու վրայ կապանքներ պիտի դնեմ, որպէս զի մէկ կողմէդ միւս կողմիդ չդառնաս, մինչև քու պաշարման օրերդ լմնցնես:

9 - Ու դուն քեզի ցորեն, գարի,

բակլոյ, սոպ, կորեակ ու հաճար առ, և զանոնք ամանի մը մէջ դիր, ու անոնցմէ քեզի հաց շինէ. զաննիկա, քու ջախ կողմիդ վրայ պառկած օրերուդ համընթացովը, երեք հարիւր իննսուն օր ուտես: 10 - Եւ ուտելու կերակուրդ կշիւքով ըլլայ, օրը քսան սիկղ. զաննիկա ժամանակէ ժամանակ ուտես: 11 - Եւ ջուրը չափով, հիմենի մը վեցերորդ մասը, խմես. զաննիկա ժամանակէ ժամանակ խմես: 12 - Եւ այն + - Իերախորդ գարեղէն շօթերու պէ* շինելով ուտես. ու զաննիկա անոնց աչքին առջև մարդու ազրի վրայ եփես: 13 - Եւ Տէրը ըսաւ, Խորայէլի որդիները այսպէս պղծութեամբ պիտի ուտեն իրենց հացը այն ազգերուն մէջ, ուր զանոնք պիտի քշեմ: 14 - Ու ես ըսի, Ոհ, Տէր Եհովա, ահա իմ անձս չպղծուեցաւ, և իմ աղայութենէս մինչև հիմա մեռելոտի կամ գաղանաբեկ չկերայ, ու իմ բերանս պիղծ միս չմտաւ: 15 - Եւ ինծի ըսաւ, Նայէ, քեզի մարդու ազրին տեղ կովի քակոր տուի, ու քու հացդ անոր վրայ եփես:

16 - Նաև ինծի ըսաւ, Որդի մարդոյ, ահա ես Երուսաղէմի մէջ հացին ցուպը պիտի կտորեմ, ու հացը կշիւքով և անձկութեամբ պիտի ուտեն, ու ջուրը չափով և ապշութեամբ պիտի խմեն: 17 - Վասն զի հացի ու ջուրի կարօտութիւն պիտի քաշեն, ու իրարու նայելով պիտի ապշին, և իրենց անօրէնութիւնովը պիտի հալին:

ԳԼ. Ե

Եւ դուն, որդի մարդոյ, քեզի սուր դանակ մը առ, քեզի սափրիչի ամէլի մը առ, և զաննիկա գլխուդ վրայէն ու մծրուքիդ վրայէն անցուր. և քեզի կշիւք մը առ, ու Բաբելոն բաժին բաժին բրէ: 2 - Երրորդ մասը քաղաքին մէջ կրակով այրես, երբ պաշարման օրերը լմնան. ու երրորդ մասը առնես և դանակով զարնես անոր բոլորտիքը. ու երրորդ մասը հովին ցրուես, ու ես անոնց ետևէն սուր պիտի քաշեմ: 3 - Եւ անոնցմէ քիչ թիւով առնես, ու զանոնք քղանցքներուդ մէջ ծրարես: 4 - Եւ գարձեալ անոնցմէ առնես ու զանոնք կրակը նետես և զանոնք կրակով այրես. անկէ բոլոր Խորայէլի տանը կրակ պիտի ելլէ:

*Եբբ. Խոյեր

5 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ասի-
կա Երուսաղէմն է. զանկիս ազգերուն
մէջ ու իր բոլորաիքը եղող երկիրնե-
րուն մէջ գրի: 6 - Եւ անկիս իմ՝ * գա-
տատատաններս՝ ազգերէն, ու իմ կանան-
ներս՝ իր բոլորաիքը եղող երկիրներէն
աւելի ամբարշտութեան փոխեց՝. վասն
զի իմ՝ գատատատաններս մերժեցին և
իմ՝ կանաններովս չքալեցին: 7 - Անոր
համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ա-
բովշեալե ձեր բոլորաիքը եղող ազգե-
րէն աւելի † ապատամբ եղաք, իմ՝ կա-
նաններովս չքալեցիք և իմ՝ գատատա-
տաններս ի գործ չդրիք. ոչ ալ ձեր
բոլորաիքը եղող հեթանոսներուն տ.
գորութիւններուն համեմատ ըրիք: 8 -
Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ը-
սէ. Ահա ես քեզի դէմ եմ, ու ազգաց
աչքերուն առջև քու մէջդ գատատա-
տաններ ի գործ պիտի դնեմ: 9 - Եւ
քու բոլոր պղծութիւններուդ համար
այնպիսի բան մը պիտի ընեմ՝ քու մէջդ,
որուն նմանը ոչ բրած եմ՝ ոչ ալ պի-
տի ընեմ: 10 - Անոր համար քու մէջդ
հայրերը եւե՛ն ազաքը պիտի ուտեն, ու
ազաքը իրենց հայրերը պիտի ուտեն.
Եւ քու մէջդ գատատատաններ ի գործ
պիտի դնեմ, ու քու բոլոր մնացորդ
ամէն հովի պիտի ցրուեմ: 11 - Ատոր
համար ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր
Եհովա, որովհետեւ դուն քու բոլոր
գարշտութիւններովդ ու բոլոր պղծու-
թիւններովդ իմ սրբարանս պղծեցիր,
եւ ալ անշուշտ † եւ պիտի կոտորեմ, և
իմ՝ աչքս պիտի չինայէ ու պիտի չո-
ղորմիմ: 12 - Քու երրորդ մտադ ժան-
տախտով պիտի մեռնին, և քու մէջդ
սովով պիտի սպառին. և քու երրորդ
մտադ չորս կողմդ սրով պիտի իյնան.
ու երրորդ մտադ ամէն հովի պիտի
ցրուեմ, ու անոնց՝ ետեէն սուր պիտի
քաշեմ: 13 - Այսպէս իմ բարկու-
թիւնս պիտի կատարուի, և իմ սրամը-
տութիւնս անոնց վրայ պիտի իջեցնեմ
ու վրէժ պիտի առնեմ. ու երբ իմ
սրամտութիւնս անոնց վրայ կատարեմ,
պիտի գիանան թէ ես Տէրս իմ նա-
խանձովս խօսեցայ: 14 - Եւ ամէն անց-

նողին աչքերուն առջև, քու բոլորաիքդ
եղող ազգերուն մէջ աւերման ու ա-
նարգութեան պիտի մտանեմ՝ քեզ:
15 - Աւ երբ բարկութեամբ և սրամտու-
թեամբ ու սրամտութեան պատիժնե-
րով քու վրայ գատատատաններ ի գործ
դնեմ, այ՛ քանչ քու բոլորաիքդ եղող
ազգերուն մէջ անարգանք, նախա-
տինք, առակ ու զարմացում պիտի ըլ-
լայ. եւ Տէրս խօսեցայ: 16 - Երբ անոնց
վրայ սովուն չար ու սպականիչ նե-
տերը զրկեմ, որոնք ձեզ ապականելու
համար պիտի զրկեմ, սովը ձեր վրայ
պիտի աւելցնեմ, ու ձեզի համար հա-
ցին ցուպը պիտի կոտրեմ: 17 - Այս-
պէս ձեր վրայ սով ու չար գազաններ
պիտի զրկեմ, ու քեզ անզուակ պի-
տի թողուն. և քու մէջէդ ժանտախտ
ու արիւն պիտի անցնի, ու քու վրայ
սուր պիտի բերեմ. եւ Տէրս խօսեցայ:

ԳԼ. 2

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
լով, 2 - Որդի մարդոյ, երեսդ Իսրա-
յէլի լեռներուն գարձուր, ու անոնց
մարգարէութիւն ըրէ, 3 - Ու ըսէ, Ով
Իսրայէլի լեռներ, Տէր Եհովայի խօսքը
մտիկ ըրէք. Այսպէս կ'ըսէ Եհովա Տէ-
րը լեռներուն, բլուրներուն, ձորերուն
ու հովիտներուն. Ահա ես ձեր վրայ
սուր պիտի բերեմ, ու ձեր բարձր տե-
ղերը պիտի կործանեմ: 4 - Եւ ձեր սե-
ղանները աւերակ պիտի մնան, ու ձեր ա-
րեգական կուռքերը պիտի կոտորին. և
ձեր մէջէն սպաննուածները ձեր կուռ-
քերուն առջև ինկած պիտի ձգեմ: 5 - Ու
Իսրայէլի որդիներուն գիակաները
իրենց կուռքերուն առջև պիտի դնեմ,
և ձեր սեղանները ձեր սեղաններուն բո-
լորաիքը պիտի ցրուեմ: 6 - Ձեր ամէն
բնակած տեղերուն մէջ քաղաքները
աւերակ պիտի ըլլան, ու բարձր տե-
ղերը ամայի պիտի ըլլան. որպէս զի
ձեր սեղանները աւերակ ու ամայի ըլ-
լան, և ձեր կուռքերը կոտորին ու
խափանուին, և ձեր արեգական կուռ-
քերը կործանին, ու ձեր գործերը
ջնջուին: 7 - Ու ձեր մէջ սպաննուած-
ները պիտի իյնան, և պիտի գիանայ
թէ ես եմ Տէրը:

8 - Բայց երբ դուք երկիրներու մէջ
ցրուիք, ձեզմէ սուրէն ազատուածները
ազգերուն մէջ մնացորդ պիտի թողու մի

* Կ-Մ, գատատատաններուն՝ ազգերէն,
ու իմ՝ կանաններուն՝ իր բոլորաիքը
եղող երկիրներէն աւելի ամբարշ-
տութեամբ դէմ կեցաւ
† Կ-Մ, խռովայրոյց

9 - Եւ ձեր ազատուածները զիս պիտի յիշեն այն ազգերուն մէջ ուր գերի պիտի բռնուին , * վասն զի իրենց շնացող ու ինծմէ խտտորած սիրովը ու իրենց կուռքերուն ետեւէն պառնկութիւն ընող աչքերովը տանջուեցայ . և անոնք իրենց բոլոր պղծութիւններուն համեմատաբար չարութիւններնուն պատճառաւ իրենց անձերէն պիտի զզուին :

10 - Ու պիտի գիտնան թէ ես Տէրս պարսպ տեղ չիտեսցայ թէ այս չարիքը անոնց պիտի ընեմ : 11 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Չեռքերդ իրարու զարկ ու ոտքդ գետինը զարկ , ու ըսէ , Ափսո՛ս Խորայէլի տանը բոլոր չար պղծութիւններուն , վասն զի սրով , սովով ու ժանտախտով պիտի իյնան :

12 - Հեռուն եղողը ժանտախտով պիտի մեռնի , ու մօտ եղողը սրով պիտի իյնայ , և քնացածը ու քայտաբերը մէջ եղողը՝ սովով պիտի մեռնի . այսպէս իմ՝ սրամբտութիւնս անոնց վրայ պիտի կատարեմ :

13 - Ու երբ անոնց սպաննուածները իրենց կուռքերուն մէջտեղ , իրենց սեղաններուն բոլորտիքը , ամէն բարձր բլուրի վրայ , ամէն լեռներու գլուխ ու ամէն կանանչ ծառի տակ , և ամէն տերեւախիտ բլեկնիտի տակ գոռոռ ըլլան , ուր անոնք իրենց բոլոր կուռքերուն անոյշ հաս կը մատուցանէին , պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը :

14 - Այսպէս իմ՝ ձեռքս անոնց վրայ պիտի երկնցնեմ . ու երկիրը , այսինքն անոնց բոլոր բնակած տեղերը , Գեբղայի կողմը եղող անապատէն աւելի ամայի ու աւերակ պիտի ընեմ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը :

ԳԼ Ե

Եւ Տէրսը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով .

2 - Ու դուն , որդի մարգոյ , Տէր Եհովա Խորայէլի երկրին այսպէս կ'ըսէ .

Վախճան , երկրին չորս կողմին վրայ վախճանը հասեր է :

3 - Հիմա քու վրագ վախճանը կոչայ ,

Կա՛մ , երբ կտարեմ իրենց շնացող ու ինծմէ խտտորած սիրով , ու իրենց կուռքերուն ետեւէն պառնկութիւն ընող աչքերը
+ Կա՛մ , պահուրածը

Ու իմ բարկութիւնս քու վրագ պիտի զրկեմ .

Եւ քու ճամբաներուդ համեմատաբար զատաստան պիտի ընեմ ,

Եւ քու բոլոր պղծութիւններդ քու վրագ պիտի բերեմ :

4 - Եւ իմ աչքս քեզի պիտի չխնայէ , ու պիտի չսղարմիմ .

Հապա քու ճամբաներդ քու վրագ պիտի դնեմ ,

Եւ քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան ,

Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը :

5 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ .

Չարիք մը , ահա չարիք մը կու գայ :

6 - Վախճանը կու գայ , վախճանը կու գայ .

Քու վրագ արթնցաւ , ահա կու գայ :

7 - Ով երկրին բնակիչը , կարգը քեզի կու գայ ,

Ժամանակը կու գայ , խռովութեան օրը մօտեցաւ ,

Եւ ոչ թէ լեռներուն ցնծութիւնը :

8 - Հիմա մօտերս իմ՝ սրամտութիւնս քու վրագ պիտի թափեմ ,

Ու իմ բարկութիւնս քու վրագ պիտի կատարեմ ,

Ու քու ճամբաներուդ համեմատաբար զատաստան պիտի ընեմ ,

Եւ քու բոլոր պղծութիւններդ քու վրագ պիտի բերեմ :

9 - Ու իմ աչքս պիտի չխնայէ , ու պիտի չսղարմիմ .

Քու ճամբաներուդ համեմատաբար զատաստան պիտի ընեմ ,

Եւ քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան ,

Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը՝ որ կը զարնեմ ,

10 - Ահա օրը , ահա կու գայ . կարգը քեզի հասաւ ,

Գաւազանը՝ ծաղկեցաւ , ամբարտաւանութիւնը ընծիւղեցաւ :

11 - Բռնաւորութիւնը ելաւ , ամբարտաւորութեան գաւազան եղաւ . Անոնցմէ մարդ պիտի չմնայ .

Ու անոնց բազմութեանէն ու ստացուածքէն բան մը պիտի չմնայ ,

Եւ անոնց մէջ * վայելչութիւն պիտի չըլլայ :

12 - Ժամանակը եկաւ , օրը մօտեցաւ . Գնողը չուրախանայ ու ծախողը չսղարայ ,

* Կա՛մ , սուգ

Քանցի անոր բոլոր բազմութեանը վրայ բարկութիւնն է՝ 40 :

13 - Վասն զի ծախողը ծախուածին պիտի չդառնայ, Թէեւ ողջ ըլլան .

Վասն զի անոր բոլոր բազմութեանը համար եղած տեսիլքը ետ պիտի չդառնայ,

Ու մարդ մը իր կեանքին անօրէնութիւնովը պիտի չուժովնայ :

14 - Փողը չ'նչեցուցին , ամէն բան պատրաստեցին ,

Բայց պատերազմի դացող չկայ .

Վասն զի իմ' բարկութիւնս անոր բոլոր բազմութեանը վրայ է :

15 - Դուրսէն սուր , ու ներսէն ժանտախտ ու սով պիտի ըլլայ .

Դաշտը եղողը սրով պիտի մեռնի ,

Ու քաղաքին մէջ եղողը սովը ու ժանտախտը պիտի ուտէ :

16 - Եւ անոնց ազատուածները որոնք պիտի ազատին ,

Լեռներուն վրայ ձորերու ազաւնիններուն պէս պիտի ըլլան .

Ամէնը պիտի հեծեն , ամէն մէկը իր անօրէնութեանը համար :

17 - Ամէն ձեռքերը պիտի թուլնան ,

Ու ամէն ծունկերը ջուրի պէս պիտի հալին :

18 - Եւ անոնք քուրձեր պիտի հագնին ,

Ու զանոնք սոսկումը պիտի ծածկէ .

Ու ամէն երեսի վրայ ամօթ ,

Եւ անոնց ամէն գլխուն վրայ կնատութիւն պիտի ըլլայ :

19 - Իրենց արծաթը փողոցներուն մէջ պիտի նետեն ,

Ու անոնց ոսկին անարգ բան մը պիտի սեպուի .

Անոնց արծաթը ու ոսկին Տէրոջը բարկութեան օրը

Կարող պիտի չըլլայ զանոնք ազատել .

Անով պիտի չկրնան իրենց անձը կշտացընել ,

Ոչ ալ իրենց փորը լեցնել .

Վասն զի անիկա իրենց անօրէնութեանը գայթակղութիւնը եղաւ :

20 - Իրենց դարգերուն փառքը հպարտութեան դարձուցին ,

Եւ անով իրենց գարշութիւնները , իրենց պղծութիւններուն պատկերները , շինեցին .

Այս պատճառաւ անոնց առջև անարգ բան մը կ'ընեմ զանիկա :

21 - Եւ զանիկա օտարներուն ձեռքը պիտի տամ , որպէս զի յափըջտակեն ,

Ու երկրի ամբարիշտներուն՝ որպէս զի զանիկա կողոպտեն ,

Ու զանիկա պիտի պղծեն :

22 - Եւ իմ' երեսս անոնցմէ պիտի դարձրնեմ ,

Ու իմ' գաղանի տեղս պիտի պղծեն .

Եւ հոն բռնաւորներ պիտի մտնեն ,

Ու զանիկա պիտի պղծեն :

23 - Շղթայ մը շինէ ,

Վասն զի երկիրը արեան դատաստանով լեցուեցաւ ,

Ու քաղաքը բռնութիւնով լեցուեցաւ :

24 - Եւ ազգերուն խիստ չարերը պիտի բերեմ ,

Ու անոնց տուները պիտի ժաւանգեն .

Եւ բռնաւորներուն ամբարտաւանութիւնը պիտի դադրեցնեմ ,

Ու անոնց սուրբ տեղերը պիտի պրղծուին :

25 - Կործանումը կու գայ .

Ու խաղաղութիւն պիտի փնտռեն , բայց պիտի չգանուի :

26 - Պատուհասի վրայ պատուհաս պիտի գայ ,

Եւ գուժի վրայ գոյժ պիտի ըլլայ .

Ու մարգարէէն տեսիլք պիտի ուզեն ,

Եւ քահանայէն օրէնքը ու ծերերէն խորհուրդը պիտի կորսուի :

27 - Թագաւորը սուգ պիտի բռնէ ,

Ու իշխանը սոսկում պիտի հագնի ,

Ու երկրին ժողովուրդին ձեռքերը վախով պիտի թուլնան .

Անոնց ճամբաներուն համեմատ անոնց հատուցում պիտի ընեմ ,

Եւ անոնց դատաստաններուն համեմատ զանոնք պիտի դատեմ ,

Ու պիտի գիտնան թէ ես եմ' Տէրը :

ԳԼ Ը

Ու եղաւ որ վեցերորդ տարին , վեցերորդ ամսուն հինգերորդ օրը , ես իմ' ասանս մէջ կը նստէի , և Յուդայի ծերերը իմ' առջևս կը նստէին , ու հոն Տէր Եհովայի ձեռքը իմ' վրաս ինկաւ . 2 - Եւ նայեցայ , ու ահա մարգարէ կերպարանք մը կար կրակի երևութով . անոր երիկամունքներուն երևութէն վար կրակ էր , ու անոր երիկամունքներէն վեր ոսկեպղինձի նման փայլուն երևուցի մը կար : 3 - Եւ անիկա ձեռքի

Նմանութիւն մը երկնցուց, ու իմ գլխուս վարաքէն բռնեց . ու Հոգին զիս երկրի ու երկիրնքի մէջտեղ վերցուց, և զիս Աստուծոյ տեսիլքով Երուսաղէմ, դէպ ի հիւսիս նայող ներքին դրանը մուտքը, բերաւ, ուր նախանձ գրգռող Նախանձու կուռքը կը կենար: 4 - Եւ ահա հոն, դաշտի մէջ տեսած տեսիլքիս պէս Իսրայէլի Աստուծոյն փառքը կար:

5 - Աւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, հիմա քու աչքերդ դէպ ի հիւսիս վերցուր . ու երբ աչքերս դէպ ի հիւսիս վերցուցի, ահա սեղանին դրանը մուտքին հիւսիսային կողմը այս Նախանձու կուռքը կար: 6 - Այն ատեն ինծի ըսաւ, Արդի մարդոյ, կը տեսնե՞ս ասոնց ըրածը, այն մեծ պղծութիւնները զորոնք Իսրայէլի սուռը հոս կ'ընէ, որպէս զի ես իմ սրբարանէս հեռանամ:

Բայց նորէն դարձիր, ու «-էլ մեծ պղծութիւններ պիտի տեսնես: 7 - Եւ զիս գաւիթին դուռը տարաւ, ու տեսայ, և ահա պատին վրայ ծակ մը կար: 8 - Աւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, հիմա այս պատը փորէ. ու երբ պատը փորեցի, ահա դուռ մը կար: 9 - Եւ ինծի ըսաւ, Մտիր ու տես այն շար պղծութիւնները զորոնք անոնք հոս կ'ընեն: 10 - Աւ ես մտայ ու տեսայ, և ահա ամէն տեսակ սողուններու ու գարշելի անասուններու պատկերներ, և Իսրայէլի տանը բոլոր կուռքերը պատին վրայ շուրջանակի փորուած էին: 11 - Աւ անոնց առջև կայնած էին Իսրայէլի տանը ծերերէն եօթանասուն մարդ, և Սափանի որդին Յեզոնիա «-ւ անոնց մէջ կայնած էր . ամէն մէկը ձեռքը բուրվառ ունէր, ու խունկին ծուխը ամպի դէպ վեր կ'ելէր: 12 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Արդի մարդոյ, կը տեսնե՞ս թէ ինչե՞ր կ'ընեն Իսրայէլի տանը ծերերը մութ տեղը, ամէն մարդ իր ծածուկ պատկերատանը մէջ . վասն զի անոնք կ'ըսեն թէ Տէրը մեզ չտեսներ, Տէրը երկիրը թողուց: 13 - Աւ ինծի ըսաւ, Նորէն դարձիր, և անոնց ըրած «-էլ մեծ պղծութիւնները պիտի տեսնես:

14 - Աւ զիս Տէրոջը տանը դէպ ի հիւսիս եզող դրանը մուտքը բերաւ. և ահա հոն Թամուզի համար լացող կիները կը նստէին: 15 - Աւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, կը տեսնե՞ս . նորէն դարձիր, «- ասոնցմէ աւելի

մեծ պղծութիւններ պիտի տեսնես:

16 - Եւ զիս Տէրոջը տանը ներքին գաւիթը բերաւ. և ահա Տէրոջը տաճարին դուռը, սրահին ու սեղանին մէջտեղ, քսանըհինգ մարդու չափ կային . անոնք կուսակներ Տէրոջը տաճարին դարձուցեր էին, ու երեսներն արեւելքին, ու դէպ ի արեւելք արեւուն երկրպագութիւն կ'ընէին: 17 - Եւ ինծի ըսաւ, Արդի մարդոյ, տեսա՞ր . միթէ Յուդայի տանը պզտիկ բան կ'երևնայ իրենց հոս ըրած պղծութիւնները ընելը, որ երկիրն «-ւ բռնութիւնով լեցուցին, ու զիս բարկացնելու դարձան. և ահա ճիւղը իրենց քիթին կ'երկնցնեն: 18 - Աւ ես ալ սրամտութեամբ պիտի վարուիմ «-անց հեռ. աչքս պիտի չխնայէ, ու պիտի չողորմիմ: և անոնք իմ ականջներուս մեծ ձայնով պիտի կանչեն, սակայն անոնց մտիկ պիտի չընեմ:

ԳԼ. Թ

Եւ մեծ ձայնով կանչեց իմ ականջներուս ու ըսաւ, Քաղաքին վրայ որոշուածները մօտեցուցէք, ու ամէն մէկը իր սպականիչ գործիքը իր ձեռքը «-նէնայ: 2 - Եւ ահա դէպ ի հիւսիս նայող վերի դրանը ճամբայէն վեց մարդ կու գար, ու ամէն մէկուն կոտորիչ գործիքը իր ձեռքն էր. և անոնց մէջ կառէ զգեստ հագած մարդ մը կար, ու մէջքը գրագիրի կաղամար ունէր. և անոնք գացին պղնձէ սեղանին քով կայնեցան: 3 - Աւ Իսրայէլի Աստուծոյն փառքը, որ քերովբէներուն վրայ էր, անոնց վրայէն տանը սեմը ելաւ:

Եւ այն կառէ զգեստ հագած ու մէջքը գրագիրի կաղամար ունեցող մարդը կանչեց. 4 - Եւ Տէրը անոր ըսաւ, Քաղաքին մէջէն, Երուսաղէմի մէջէն, անցիր, ու անոր մէջ եղած բոլոր պղծութիւններուն համար հառաչող ու ողբացող մարդոցը ճակատներուն վրայ նշան դիր: 5 - Եւ քանի որ ես կը լսէի, միւսներուն ըսաւ, Անոր ետեւէն քաղաքէն անցէք ու զարկէք. աչքերնիդ չխնայէ ու մի ողորմիք. 6 - Ծերը, երիտասարդը ու կոյսը, պզտիկ աղաքը ու կիները սպաննեցէք ու կորսնցուցէք, բայց վրան նշան ունեցող մարդու մը ամենեւին մի մօտենաք. ու իմ սրբարանէս սկսեցէք: Աւստի տանք

առջև եղող ծեր մարդոցմէն սկսան : 7 - Եւ անոնց ըսաւ, Տունը պղծեցէք, ու գաւիթները մեռելներով լեցուցէք - ելէք : Եւ անոնք ելան ու քաղաքին մէջ զարկին :

8 - Ու երբ զանոնք զարկին , ու ես մնացի, այն ատեն երեսիս վրայ ինկայ և աղաղակելով ըսի, Ո՛հ, Տէր Եհովա, դուն Երուսաղէմի վրայ քու բարկութիւնդ թափելով՝ Խորայէլի բոլոր մնացորդը բնաջինջ պիտի ընես : 9 - Ու ինծի ըսաւ, Խորայէլի և Յուզայի ասանք անօրէնութիւնը խիստ շատ մեծ է, ու երկիրը արիւնով լեցուեցաւ և քաղաքը անիրաւութիւնով լեցուեցաւ . վասն զի ըսին, Տէրը երկիրը թողուց , ու Տէրը չտեսներ : 10 - Եւ հիմա իմ աչքս ալ պիտի չինայէ ու պիտի չողորմիմ . իրենց ճամբաները իրենց գլուխը պիտի բերեմ :

11 - Եւ ահա կտաւէ զգեստ հագած ու մէջքը կաղամար ունեցող մարդը լուր բերաւ՝ ու ըսաւ, Ինծի հրամայածիդ պէս ըրի :

ԳԼ Ժ

Եւ տեսայ որ ահա քերովբէներուն գլխուն վրայի հաստատութեանը մէջ շափիւզայ քարի պէս ամթուռի ձևով նմանութիւն մը կ'երևնար անոնց վրայ : 2 - Ու կտաւէ զգեստ հագած մարդուն խօսեցաւ ու ըսաւ , Քերովբէներուն տակ եղող անիւներուն մէջտեղ մտիր, և ձեռքերդ քերովբէներուն մէջտեղ եղող կրակի կայծերէն լեցուր, ու քաղաքին վրայ ցանէ . և անիկա իմ աչքերուս առջև՝ մտաւ : 3 - Ու երբ այն մարդը մտաւ , քերովբէները տանը աջ կողմը կայներ էին , և ամպը ներքին գաւիթը լեցուցեր էր : 4 - Ու Տէրոջը փառքը քերովբէներուն վրայէն տանը սեմը վերացաւ , և տունը ամպով լեցուեցաւ, ու գաւիթը Տէրոջը փառքին պայծառութիւնովը լեցուեցաւ : 5 - Եւ քերովբէներուն թևերուն ձայնը մինչև արտաքին գաւիթը կը լսուէր , Ամենակարող Աստուծոյ ձայնին պէս , երբ կը խօսի : 6 - Ու երբ կտաւէ զգեստ հագած մարդուն հրամայեց , ու ըսաւ թէ Քերովբէներուն մէջտեղ եղող անիւներուն մէջէն կրակ աւ , անիկա գնաց անիւներուն քով կայնեցաւ : 7 - Ու քերովբէներուն մէջէն քե-

րովբէին մէկը իր ձեռքը քերովբէներուն մէջտեղ եղող կրակին երկնցուց ու առաւ, և կտաւէ զգեստ հագնողին ձեռքը տուաւ . անիկա ալ առաւ ու ելաւ : 8 - (Ու քերովբէներուն թևերուն տակ մարդու ձեռքի նմանութիւն կ'երևնար) :

9 - Եւ տեսայ որ ահա քերովբէներուն քով չորս անիւ կար , ամէն մէկ քերովբէին քով մէյմէկ անիւ . ու անիւներուն երեզլթը ոսկեքարի կը նմանէր : 10 - Եւ անոնց երեզլթը՝ չորսին ալ ձևը մէկ էր , որպէս թէ անիւ անիւի մէջ եղած ըլլար : 11 - Գացած ատեննին իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային . գացած ատեննին իրենց աջ ձախ խոջը չէին դառնար , վասն զի ո՛ր կողմը որ գլուխը կը նայէր , անոր ետեէն կ'երթային , գացած ատեննին չէին դառնար : 12 - Եւ անոնց բոլոր մարմինը, կռնակները ու ձեռքերը ու թևերը, և անիւները , այսինքն այն չորսին անիւները, ամէն կողմէն աչքերով լեցուն էին : 13 - Անիւներուն համար լտեցի որ անոնց անուն գրուեցաւ *Մրրիկ : 14 - Ու ահա մէկը չորս երես ունէր . առաջին երեսը քերովբէի երես էր, երկրորդ երեսը մարդու երես էր , ու երրորդը առիւծի երես էր , և չորրորդը արծիւի երես էր : 15 - Ու քերովբէները վերացան : Քորար գետին քով տեսած կենդանիներս ասոնք էին . 16 - Ու երբ քերովբէները կ'երթային, անիւներն ալ անոնց քովէն կ'երթային, ու երբ քերովբէները երկրէ բարձրանալու համար թևերնին կը վերցնէին , այս անիւներն ալ անոնց քովէն չէին զատուեր : 17 - Երբ անոնք կայնէին , առաջ ալ կը կայնէին, երբ անոնք վերանային, առաջ ալ կը վերանային անոնց հետ . վասն զի անոնց մէջ կենդանիներուն ոգին կար :

18 - Եւ Տէրոջը փառքը տանը սեմին վրայէն ելաւ, ու քերովբէներուն վրայ կայնեցաւ : 19 - Եւ իմ աչքերուս առջև քերովբէները ելլելով՝ թևերնին վերցուցին ու երկրէ բարձրացան . անիւներն ալ անոնց հետ էին , ու Տէրոջը տանը արևելեան դրանը մուտքը կայնեցան , ու Խորայէլի Աստուծոյն փառքը վերէն անոնց վրայ էր : 20 - Քորար գետին քով Խորայէլի Աստու-

*Կ-Տ, Գիւրաթ աւալ . Եբբ . Գաղգաղ

ձոյն տակ տեսած կենդանիներս ասոնք էին, ու գիացայ որ անոնք քերովբէներ էն: 21 - Ամէն մէկը չորս երես, ու աֆն մէկը չորս թև ունէր, և անոնց թևերուն տակ մարդու ձեռքերու նմանութիւն կար: 22 - Ու անոնց երեսներուն երկայթը նոյն երեսներուն չէ նմանէր՝ զորոնք Քոբար գետին քով տեսայ, թէ՛ անոնց կերպարանքը և թէ՛ իրենք. ամէն մէկը շիտակ յաւաջ կ'երթար:

ԳԼ. ԺԱ.

Եւ Հոգին զիս վերցուց, ու Տէրոջը տանը դէպ ի արևելք նայող արևելեան դուռը բերաւ. և ահա դրանը մուտքը քսանըջինգ մարդ կար, ու անոնց մէջ ժողովուրդին իշխանները, Ազուրի որդին Յեզոնիան ու Բանեայի որդին Փաղատիան, տեսայ:

2 - Եւ անիկա ինծի ըսաւ, Որդի մարդոյ,

Ասոնք են այն մարդիկը որ անօրէնութիւն կը մտածեն,

Ու չար խորհուրդ կու տան այս քաղաքին մէջ,

3 - Ու կ'ըսեն, Մօա չէ խաճախէ, տուներ շինենք.

Այս առաւել կաթսայ է, ու մենք միս ենք:

4 - Ուստի մարգարէացիր անոնց վրայ, Մարգարէացիր, որդի մարդոյ:

5 - Այն ատեն Տէրոջը Հոգին իմ վրաս ինկաւ.

Ու ինծի ըսաւ, Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.

Ի՞նչ այսպէս ըսիք, ով Իսրայէլի տունը,

Բայց ես ձեր միտքէն անցածը գիտեմ:

6 - Ի՞նչ այս քաղաքին մէջ ձեր սպաննուածները շատցուցիք,

Ու անոր փողոցները սպաննուածներով լեցուցիք:

7 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Ձեր սպաննուածները զորոնք անոր մէջ գրիք,

Անոնք միսն են, ու անիկա կաթսան է. Բայց ձեզ անոր մէջէն պիտի հանեմ:

8 - Ի՞նչ սուրէն վախցաք, Ու ես սուրը ձեր վրայ պիտի բերեմ, կ'ըսէ Տէր Եհովա:

9 - Ու ձեզ անոր մէջէն պիտի հանեմ,

Եւ ձեզ օտարներուն ձեռքը պիտի մտանեմ,

Ու ձեր մէջ դատաստաններ ի գործ պիտի դնեմ:

10 - Ի՞նչ սրով պիտի կշնաք, Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ,

Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը:

11 - Այս առաւել ձեզի համար կաթսայ պիտի չըլլայ,

Որ դուք անոր մէջ միս ըլլաք. Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ,

12 - Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը. Վասն զի իմ օրէնքներովս չքաղցիք,

Ու իմ իրաւունքներս ի գործ չգրիք, Հապա ձեր բոլորտիքը եղող ազգերուն սովորութիւններուն համեմատ վարուեցաք:

13 - Ու եղաւ որ իմ մարգարէութիւն ըրած ատենս Բանեայի որդին Փաղատիա մեռաւ. այն ատեն երեսիս վրայ ինկայ, բարձր ձայնով ազաղակեցի ու ըսի, Ո՛հ, Տէր Եհովա, միթէ Իսրայէլի մնացորդը բոլորովին պիտի սպառե՞ս:

14 - Այն ատեն Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 15 - Որդի մարդոյ, քու եղբայրներդ, քու եղբայրներդ, քու ազգականներդ ու բոլոր Իսրայէլի տունը, ամէնը այն մարդիկն են՝ որոնց Երուսաղէմի բնակիչները ըսին, Տէրոջը քովէն հեռացէք. այս երկիրը մեզի ժառանգութիւն արուած է:

16 - Անոր համար ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Թէպէտև զանոնք ազգերուն մէջ հեռացուցի,

Ու զանոնք երկիրներուն մէջ ցրուցի, Բայց անոնց մտած երկիրներուն մէջ Գիշ մը առէն անոնց սրբարան պիտի ըլլամ:

17 - Անոր համար ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Ձեզ ժողովուրդներէն պիտի հաւաքեմ,

Եւ ձեզ պիտի ժողովեմ այն երկիրներէն:

Ուր դուք ցրուուած էք,

Ու ձեզի պիտի տամ Իսրայէլի երկիրը:

18 - Եւ հոն պիտի մտնեն,

Ու անոր բոլոր դարչութիւնները Ու բոլոր պղծութիւնները անկէ պիտի վերցնեն:

19 - Եւ անոնց մէկ սիրա պիտի տամ,

Ու անոնց ներսիդին նոր հոգի պիտի զնեմ՝
 Եւ անոնց մարմինէն քարեղէն սիրար պիտի հանեմ՝
 Ու անոնց մարմնեղէն սիրա պիտի տամ՝
 20 - Որպէս զի իմ՝ օրէնքներուս մէջ քայլեն,
 Ու իմ՝ իրաւունքներս պահեն ու զանոնք ի գործ զնեն.
 Եւ անոնք ինծի ժողովուրդ ըլլան,
 Ես ալ անոնց Աստուած ըլլամ՝
 21 - Բայց անոնց՝ որոնց սիրար իրենց կամքին գարշաթիւններուն
 Ու պղծութիւններուն ետէն կ'երթայ,
 Անոնց ճամբան իրենց գլուխը պիտի բերեմ՝
 Կ'ըսէ Տէր Եհովա :
 22 - Ու քերովբէները իրենց թեւերը պերցուցին, ու անիւնները անոնց քով էին, և Իսրայէլի Աստուծոյն փառքը վերէն անոնց վրայ էր : 23 - Ու Տէրոջը փառքը քաղաքին մէջտեղին վրայէն ելաւ, և քաղաքին արեւելեան կողմը եղող լեռանը վրայ կայնեցաւ :
 24 - Ու Հոգին զիս վերցուց ու Քաղդէացուց երկիրը եղող գերիներուն քով բերաւ, և ասիւ՝ Եղա՝ Աստուծոյ Հոգւովը անսիլքի մէջ. ու այն տեսած անսիլքս իմ՝ վրայէս ելաւ : 25 - Ու ես գերիներուն խօսեցայ Տէրոջը բոլոր խօսքերը զորոնք ինծի յայտներ էր :

ԳԼ. ԺԲ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2-Որդի մարգոյ, դուն ապստամբներու տանը մէջ բնակած ես, որոնք տեսնելու աչքեր ունին ու չեն տեսներ, և լսելու ականջներ ունին ու չեն լսեր. վասն զի անոնք ապստամբներու տուն են : 3 - Ու դուն, որդի մարգոյ, քեզի չուելու կարասիներ պատրաստէ, ու անոնց աչքերուն առջև ցորեկով չուէ, և անոնց աչքերուն առջև քու եղած տեղէդ ուրիշ տեղ մը չուէ, թերևս *ուշագրութիւն ընեն, թէ և անոնք՝ ապստամբներու տուն են : 4 - Եւ անոնց աչքերուն առջև քու կարասիներդ ցորեկով հանես, չուելու կարասիներու պէս . բայց դուն անոնց աչքերուն առջև իրիկունը ելլես, գերութեան դա-

ցողներու պէս : 5 - Անոնց աչքերուն առջև պատր ծակես ու անկէ հանես . 6 - Անոնց աչքերուն առջև զանոնք ու սիդ վրայ վերցնես, և մթնցած ատեն հանես. երեսդ ծածկէ որպէս զի երկիրը չտեսնես . վասն զի քեզ Իսրայէլի տանը նշան տուի :
 7 - Եւ այնպէս ըրի ինչպէս ինծի հրամայուեցաւ . իմ՝ կարասիներս՝ չուելու կարասիներու պէս ցորեկով հանեցի, ու իրիկունը ձեռքովս պատր ծակեցի, և մթնցած ատեն հանեցի. անոնց աչքերուն առջև ուսիս վրայ վերցուցի :
 8 - Եւ առասուանց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 9 - Որդի մարգոյ, Իսրայէլի տունը, այն ապստամբներու տունը, քեզի չըսին թէ Այդ ի՞նչ կ'ընես : 10 - Անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այս պատգամը Երուսաղէմի մէջ եղող իշխանին, ու հանքնալի Իսրայէլի բոլոր տանը համար է :
 11 - Ըսէ, Ես ձեզի համար նշան եմ . Ես ինչպէս ըրի, անոնց այնպէս պիտի ըլլայ .
 Անոնք պիտի չուեն և գերութեան երթան :
 12 - Եւ անոնց մէջ եղող իշխանը Իսրայէլի վրայ քեզ պիտի վերցնէ, Ու մթնցած ատեն պիտի ելլէ . Պատը պիտի ծակեն որպէս զի անկէ հանեն .
 Անիկա իր երեսը պիտի ծածկէ, Որպէս զի երկիրը աչքով չտեսնէ :
 13 - Եւ անոր վրայ իմ՝ ցանցս պիտի տարածեմ,
 Ու անիկա իմ՝ որոգայթիս մէջ պիտի բռնուի .
 Եւ զանիկա Բարեբան, Քաղդէացուց երկիրը, պիտի տանիմ, Ու անիկա այն քեզ պիտի չտեսնէ, թէ և հան պիտի մեռնի :
 14 - Եւ անոր բոլորախօսքը եղող բոլոր օգնականները
 Ու անոր բոլոր գունդերը Ամէն հովերու պիտի ցրուեմ,
 Եւ անոնց ետէն սուր պիտի քաշեմ :
 15 - Ու երբ զանոնք ազգերու մէջ ցրուեմ,
 Ու զանոնք երկիրներու մէջ ցանեմ, Պիտի դիտնան թէ ես եմ՝ Տէրը :
 16 - Եւ անոնցմէ սուրէն, սովէն ու ժանտախտէն
 Քիչ մարդ մնացորդ պիտի թողում,

*Կամ, տեսնեն թէ իրենք

Որպէս զի իրենց բոլոր պղծութիւնները պատմեն
 Այն աղգերուն մէջ ուր պիտի մտնեն.
 Ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը :
 17 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
 ըսելով ,
 18 - Որդի մարդոյ , քու հացդ դողա-
 լով ուտես ,
 Ու ջուրդ տազնապով և անձկութեամբ խմես .
 19 - Ու երկրին ժողովուրդին ըսես ,
 Խորայէլի երկրին մէջ եղող Երուսա-
 զէմի բնակիչներուն վրայով
 Տէր Եհովա այսպէս կ'ըսէ .
 Անոնք իրենց հացը անձկութեամբ պի-
 տի ուտեն ,
 Ու իրենց ջուրը ապշութեամբ պիտի
 խմեն ,
 Որպէս զի իրենց երկիրը *բոլորովին
 ամայի մնայ
 Իր բոլոր բնակիչներուն անիրաւու-
 թեանը պատճառաւ :
 20 - Եւ մարգարեանկ քաղաքները պի-
 տի աւրուին ,
 Ու երկիրը ամայի պիտի ըլլայ .
 Ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը :
 21 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
 ըսելով ,
 22 - Որդի մարդոյ , ի՞նչ պիտի ըլլայ
 ձեզի այն առակը
 Զոր Գառնի Խորայէլի երկրին մէջ իւր
 թագաւոր ,
 Ու կ'ըսէք , Օրերը կ'երկննան ,
 Ու ամէն տեսիլք պարսպ կ'ելլէ :
 23 - Անոր համար անոնց ըսէ ,
 Տէր Եհովա այսպէս կ'ըսէ .
 Այս առակը պիտի խափանեմ ,
 Եւ այս առակը մէյմըն ալ Խորայէլի
 մէջ պիտի չզրուցեն .
 Քայց անոնց ըսէ , Օրերը մօտեցան ,
 Նաև ամէն տեսիլքին կատարումը :
 24 - Վասն զի Խորայէլի տանը մէջ
 մէյմըն ալ ունայն տեսիլք
 Եւ շողքորթութեան գուշակութիւն
 պիտի չըլլայ :
 25 - Քանզի իսկ Տէրս կը խօսիմ՝ ,
 Ու խօսած խօսքս ի գործ պիտի դրուի ,
 Այլ պիտի չուշանայ .
 Վասն զի ձեր օրերուն մէջ , ով ապրու-
 տամբներու տուն ,
 Խօսք պիտի խօսիմ ու պիտի կատարեմ ,

կ'ըսէ Տէր Եհովա :
 26 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
 ըսելով ,
 27 - Որդի մարդոյ , Ահա Խորայէլի տունը
 կ'ըսեն թէ
 Ասոր տեսած տեսիլքը շատ օրերու հա-
 մար է ,
 Ու տակաւ հեռաւոր ժամանակներու
 համար մարգարէութիւն կ'ընէ :
 28 - Անոր համար անոնց ըսէ ,
 Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա .
 Այսուհետեւ բնաւ մէկ խօսքս պիտի
 չուշանայ ,
 Հապա իմ խօսած խօսքս պիտի կա-
 տարուի ,
 կ'ըսէ Տէր Եհովա :

ԳԼ. ԺԳ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
 լով ,
 2 - Որդի մարդոյ , մարգարէութիւն
 ընող
 Խորայէլի մարգարէներուն դէմ մար-
 գարէացի ,
 Ու իրենց սրտէն մարգարէութիւն ը-
 նողներուն ըսէ ,
 Տէրոջը խօսքը մտիկ ըրէք .
 3 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ .
 Վասն զի անգգամ մարգարէներուն ,
 Որոնք իրենց հօգիին ետեւէն կ'երթան ,
 Ու բան մը տեսած չեն :
 4 - Քու մարգարէներդ , ով Խորայէլ ,
 Աւերակներու մէջ եղող աղուէսներու
 պէս եղան :
 5 - Խրամատութեան տեղերը չելաք ,
 Ու Տէրոջը օրը պատերազմի մէջ հա-
 ճախ կայնելու համար
 Խորայէլի տունը պարսպով չպատեցիք :
 6 - Անոնք ունայն տեսիլք և սուտ գու-
 շակութիւն կը տեսնեն ,
 Եւ կ'ըսեն թէ Տէրը ըսաւ ,
 Թէև Տէրը զանոնք զրկած չէ .
 Եւ յոյս կու տան թէ իրենց խօսքը
 պիտի կատարուի :
 7 - Միթէ դուք ունայն տեսիլքներ
 չտեսա՞ք ,
 Եւ սուտ գուշակութիւններ չխօսե-
 ցա՞ք ,
 Ու չըսի՞ք թէ Տէրը խօսեցաւ ,
 Երբ ես խօսած չէի :
 8 - Անոր համար Տէր Եհովա այսպէս
 կ'ըսէ .
 Զեր խօսքին ունայն

*Եբբ. իր լիութեանէն
 +կա՛մ, ես եմ՝ Տէրը , որ կը խօսիմ՝

Ու ձեր տեսիլքին սուտ ըլլալուն համար՝
 Ահա ես ձեզի գէմ եմ,
 Կ'ըսէ Տէր Եհովա .
 9-Եւ իմ՝ ձեռքս ունայն տեսիլք տեսնող
 Եւ սուտ գուշակութիւն ընող մար-
 գարէներուն գէմ՝ պիտի ըլլայ .
 Անոնք իմ՝ ժողովուրդիս խորհուրդին
 մէջ պիտի չըլլան,
 Ու Իսրայէլի տանը գիրքին մէջ պիտի
 չգրուին,
 Եւ Իսրայէլի երկիրը պիտի չմանեն .
 Ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէր Ե-
 հովա :
 10 - Որովհետեւ անոնք իմ՝ ժողովուրդս
 կը մոլորեցնեն,
 Եւ Խաղաղութիւն է՝ կ'ըսեն, երբ խա-
 ղաղութիւն չկայ :
 Ու անիկա պատ կը շինէ,
 Եւ անոնք կիրով կը ծեփեն զանիկա :
 11 - Այն կիրով ծեփողներուն ըսէ որ
 Անիկա պիտի փլչի .
 Յորդասոս անձրև պիտի ըլլայ,
 Եւ դուք, ով կարկուտի քարեր, պի-
 տի իյնաք .
 Ու զանիկա մըրկալից հովը պիտի ճեղքէ :
 12 - Եւ ահա եբէ պատը փլչի,
 Ձեզի պիտի չըսե՞ն թէ
 Խէր է այն ծեփը զոր դուք ծեփեցիք :
 13 - Անոր համար Տէր Եհովա այսպէս
 կ'ըսէ .
 Իմ՝ սրամտութիւնովս մըրկալից հով
 պիտի հանեմ ,
 Եւ իմ՝ բարկութիւնովս յորդասոս
 անձրև ,
 Ու սրամտութիւնովս կարկուտի քա-
 րեր պիտի ըլլան ,
 Որպէս զի զանիկա բնաջինջ ընեն :
 14 - Ու կիրով ծեփած պատերնիդ պի-
 տի փլցնեմ ,
 Եւ զանիկա գեանին հետ հաւասար
 պիտի ընեմ .
 Ու անոր հիմը պիտի երևնայ , և անի-
 կա պիտի իյնայ ,
 Ու դուք անոր մէջ բնաջինջ պիտի ըլ-
 լաք .
 Ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը :
 15 - Եւ ես իմ՝ սրամտութիւնս պա-
 տին վրայ
 Ու զանիկա կիրով ծեփողներուն վրայ
 պիտի կատարեմ ,
 Ու ձեզի պիտի ըսեմ ,
 Պատը ու զանիկա ծեփողները ոչինչ
 եղան ,
 16 - Այսինքն Իսրայէլի մարգարէները՝

Որոնք Երուսաղէմի վրայ մարգարէու-
 թիւն կ'ընեն ,
 Եւ անոր վրայով խաղաղութեան տե-
 սիլքներ կը տեսնեն ,
 Քանի որ խաղաղութիւն չկայ , կ'ըսէ
 Տէր Եհովա :
 17 - Եւ դուն, որդի մարգոյ, երեսդ
 շիակէ քու ժողովուրդիդ ազջիկներուն
 գէմ, որոնք իրենց սրտէն մարգարէու-
 թիւն կ'ընեն, ու անոնց վրայ մարգա-
 րէացիր, 18 - Ու ըսէ, Տէր Եհովա այս-
 պէս կ'ըսէ. Աս'յ այն կիներուն, որոնք
 սովէն թեքուտ սակ բարձ կը կարեն ,
 և սովէն հասակի մարգոյ գլուխներուն
 չլաջակներ կը շինեն, որպէս զի հոգի-
 ներ որսան. միթէ դուք իմ՝ ժողովուր-
 դիս հոգիները որսալով ձեր հոգիները
 պիտի ապրեցնե՞ք : 19-Եւ ասիք լեցուն
 դարիի համար ու հացի պատառներու
 համար իմ՝ ժողովուրդիս սուջև զիս
 պիտի անարգե՞ք, որպէս զի ստութեան
 սկանջ դնող ժողովուրդիս ստութիւն
 զրուցելով չմեռնելու հոգիները մեռ-
 ցընէք, ու չապրելու հոգիները ապրե-
 ցընէք : 20 - Անոր համար Տէր Եհովա
 այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր բարձերուն
 գէմ եմ, որոնցմով դուք հոգիները
 կ'որսաք †թուշուններու պէս՝, և զա-
 նոնք ձեր թեքէն պիտի պատուեմ, ու
 այն հոգիները պիտի արձակեմ, այսինքն
 այն հոգիները զորոնք դուք կ'որսաք
 †թուշուններու պէս : 21 - Եւ ձեր լա-
 ջակները պիտի պատուեմ, ու իմ ժողո-
 վուրդս ձեր ձեռքէն պիտի ազատեմ,
 ու մէյմըն ալ ձեր ձեռքին մէջ որս
 պիտի չըլլան. ու պիտի գիտնաք թէ ես
 եմ՝ Տէրը : 22 - Վասն զի դուք արդա-
 րին սիրտը ձեր ստութիւններովը արբա-
 մեցուցիք, զոր ես չէի արամեցուցած .
 ու ամբարշտին ձեռքը ու ժովցուցիք,
 որպէս զի իր չար ճամբայէն չգառնայ
 ու ապրի : 23 - Անոր համար մէյմըն
 ալ ունայն տեսիլք պիտի չտեսնէք, և
 գուշակութիւն պիտի չընէք . ու իմ՝
 ժողովուրդս ձեր ձեռքէն պիտի ազա-
 տեմ. և պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը :

ԳԼ. ԺԳ

Ու Իսրայէլի ձերերէն քանի մը մար-
 գրիկ ինծի եկան, ու իմ՝ սուջևս նստանէ :
 *կա՛մ, երեսի բարձեր
 †կա՛մ, որպէս զի թուշին

2 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 3 - Որդի մարգդ, այդ մարգդիկը իրենց կուռքերը իրենց սիրտերուն մէջ կանգնեցին, ու իրենց անօրէնութեանը գայթակղութիւնը իրենց երեսներուն առջև դրին. միթէ բնաւ *անոնց պատասխան պիտի տամ՞: 4 - Ուստի անոնց հետ խօսէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իսրայէլի տունէն ով որ իր կուռքերը իր սրտին մէջ կանգնէ, ու իր անօրէնութեանը գայթակղութիւնը իր երեսին առջև դնէ, ու մարգարէին գայ, այն եկողին՝ ես Տէրս անոր կուռքերուն շատութեանը համեմատ պատասխան պիտի տամ. 5 - Որպէս զի Իսրայէլի տունը իրենց սիրտերէն բռնեմ, վասն զի անոնց ամէնը իրենց կուռքերով ինծմէ օտարացան:

6 - Անոր համար Իսրայէլի տանը ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իսրաէլք, ու ձեր կուռքերէն յեղ դարձուցէք, և ձեր ամէն պղծութիւններէն երեսնիդ դարձուցէք: 7 - Քանզի Իսրայէլի տունէն կամ Իսրայէլի մէջ պանդուխտ եղող օտարականներէն ով որ ինծմէ գատուի, և իր կուռքերը իր սրտին մէջ կանգնէ, ու իր անօրէնութեանը գայթակղութիւնը իր երեսին առջև դնէ, և մարգարէին գայ՝ անոր միջոցով ինծի հարցնելու համար, ես Տէրս ինծմէ պատաստան պիտի տամ անոր. 8 - Ու իմ երես այն մարդուն վրայ պիտի հաստատեմ, և զանիկա նշան ու առակ պիտի ընեմ, ու զանիկա իմ ժողովուրդիս մէջէն բնաջինջ պիտի ընեմ, ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը:

9 - Եւ եթէ մարգարէ մը սխալելով բան մը խօսի, այն մարգարէն ես Տէրս սխալեցուցի. ու իմ ձեռքս անոր վրայ պիտի երկնցնեմ, և իմ ժողովուրդիս Իսրայէլի մէջէն զանիկա պիտի կորսնցընեմ: 10 - Ու անոնք իրենց պատիժը պիտի կրեն. Բա՛ն հարցնողին պատիժը ու մարգարէին պատիժը մէկ պիտի ըլլայ. 11 - Որպէս զի Իսրայէլի տունը մէյմըն ալ ինծմէ չխոտորի, ու մէյմըն ալ իրենց բոլոր յանցանքներով չպղծուին, հապա անոնք ինծի ժողովուրդ ըլլան, ես ալ անոնց Աստուած ըլլամ, կ'ըսէ Տէր Եհովա:

12 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 13 - Որդի մարգդ, եթէ եր-

կիր մը անհաւատարմութիւն ընելով ինծի դէմ մեղանչէ, ու ես անոր վրայ իմ ձեռքս երկնցնեմ, ու անոր հացին ցուպը կտարեմ և անոր վրայ սով զրկեմ, ու մարդը և անասունը անկէ կտրեմ.

14 - Ու եթէ այս երեք մարդը, Նոյ, Իսահել և Յոբ, անոր մէջ ըլլան, անոնք իրենց արդարութիւնովը՝ Բայն իրենց հոգին պիտի ազատեն, կ'ըսէ Տէր Եհովա:

15 - Եթէ երկրին վրայ չար գազաններ բերեմ, որոնք զանիկա անզաւակ թողուն, ու ամայի ըլլայ, այնպէս որ գազաններուն պատճառաւ անկէ անցնող չըլլայ. 16 - Եթէ այն երեք մարգդիկը անոր մէջ ըլլան, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ երեւոյ աղաքները ու աղջիկները պիտի չկարենան ազատել. միայն իրենք պիտի ազատին, ու երկիրը ամայի պիտի ըլլայ:

17 - Կամ եթէ այն երկրին վրայ սուր *բերեմ, և ըսեմ թէ, Ով սուր, երկրին մէջէն անցիր. ու անկէ մարդը ու անասունը կտրեմ. 18 - Եւ եթէ այն երեք մարգդիկը անոր մէջ ըլլան, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ երեւոյ աղաքները ու աղջիկները պիտի չկարենան ազատել, բայց միայն իրենք պիտի ազատին:

19 - Կամ եթէ այն երկրին վրայ ժանտախտ զրկեմ, ու արիւնով իմ բարկութիւնս անոր վրայ թափեմ, այնպէս որ մարդը ու անասունը անկէ կտրեմ. 20 - Եւ Նոյ, Իսահել և Յոբ անոր մէջ ըլլան, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ երեւոյ մէկ աղան կամ աղջիկը պիտի չկարենան ազատել. անոնք իրենց արդարութիւնովը՝ Բայն իրենց անձը պիտի ազատեն: 21 - Սակայն Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որչափ աւելի՝ երբ ես իմ չորս ստափիկ պատիժներս, սուրը, սովը, չար գազանները ու ժանտախտը, Երուսաղէմի վրայ զրկեմ՝ մարդը ու անասունը անկէ կտրելու համար: 22 - Բայց ահա հոն ազատուած մնացորդ մը պիտի ըլլայ, այսինքն աղաքներու ու աղջիկներու՝ որոնք պիտի ելլեն. ահա անոնք ձեզի պիտի ելլեն, և անոնց ճամբան ու անոնց գործերը պիտի տեսնէք, ու Երուսաղէմի վրայ բերած չարիքիս վրայով, անոր վրայ բերած բոլոր շա-

*Եբբ. անոնցմէ պիտի հարցուի՞մ

*Եբբ. անցնեմ

չէի՝ վրայով, պիտի միթարուիք :
 23 - Ու երբ անոնց ճամբան ու գործերը տեսնէք, անոնք ձեզ պիտի միթարեն. և պիտի գիտնաք թէ ինչ որ ըրի անոր մէջ՝ աւանց պատճառի չըրի, կ'ըսէ Տէր Եհովա :

ԳԼ. ԺԵ

Ե - Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,

2 - Որդի մարդոյ, որթին փայտը ինչ աւելի աւելի ունի ամէն աւելի փայտերէն,

Այսինքն այնպիսի շառուիղ մը որ անտառի ծառերուն մէջ է :

3 - Միթէ անկէ փայտ կ'առնուի՞, բանի մը գործածելու համար :

Կամ թէ անկէ ցից մը կ'առնուի՞, անկէ աման մը կ'ախելու համար :

4 - Ահա կրակի մէջ կը նետուի, անոր կերակուր ըլլալու համար :

Կրակը անոր երկու ծայրերը կ'ուտէ, Ու մէջը կ'այրի :

Միթէ անիկա բանի մը օգտակար է :

5 - Ահա անիկա ամբողջ եղած ատենը բանի մը չգար :

Ո՞ր մնաց որ անիկա բանի մը օգտակար ըլլայ :

Կրակին զանիկա ուտելէն ու այրելէն ետքը :

6 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Անտառի փայտերուն մէջ ինչպէս է որթին փայտը,

Ջոր կրակին տուի կերակուրի համար, Այնպէս ալ Երուսաղէմի բնակիչները տուի :

7 - Եւ իմ երես անոնց վրայ պիտի հաստատեմ :

Անոնք մէկ կրակէ պիտի ելին, Եւ ուրիշ կրակ մը զանոնք պիտի ուտէ.

Ու երբ իմ երես անոնց վրայ հաստատեմ,

Պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը :

8 - Եւ իրենց անհաւատարմութիւն ընելուն համար

Երկիրը ամոյնի պիտի ընեմ, Կ'ըսէ Տէր Եհովա :

ԳԼ. ԺԶ

Բարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,

2 - Որդի մարդոյ, Երուսաղէմի իր պղծութիւնները գիտցուր :

3 - Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ Երուսաղէմի.

Քու սկիզբդ ու ծնունդդ Քանանացւոց երկրէն էր,

Քու հայրդ Ամօր հացի՝ ու մայրդ Քեւտացի էր :

4 - Եւ քու ծնունդդ աչառիկ էր. Քու ծնած օրդ պարտդ չկարուեցաւ,

Ու մաքրուելու համար ջրով չլուացուեցար,

Եւ աղով չաղուեցար ու խանձարուրով չփաթթուեցար :

5 - Աչք մը քեզի չխնայեց, որ քեզի ուղարմի,

Ու այս բաներուն մէկը քեզի ընէ. Բայց ծննդեան օրդ

Քու անձիդ գարշութիւնովը դաշտի երեսին վրայ նետուեցար.

6 - Ու ես քու քովէդ անցայ, Եւ քեզ արիւնիդ մէջ կ'ախուած տեսայ.

Ու երբ արիւնիդ մէջ եիւ, քեզի Ապրէ ըսի :

Այո, երբ արիւնիդ մէջ եիւ, քեզի Ապրէ ըսի :

7 - Քեզ դաշտի բոյսերուն պէս բերուար ըրի,

Եւ շաացար ու մեծցար, Եւ կատարեալ գեղեցկութեան հասար.

Ստինքներդ գոյացան ու մուկերդ աճեցան.

Բայց դուն մերկ ու անծածկոյթ էիր :

8 - Եւ քու քովէդ անցայ ու քեզի նայեցայ,

Եւ ահա քու ժամանակդ սիրոյ ժամանակ էր,

Ու ես իմ քղանցքս քու վրայ տարածեցի,

Եւ քու մերկութիւնդ ծածկեցի.

Ու քեզի երգում ընելով՝ Քեզի հետ ուխտ ըրի, կ'ըսէ Տէր Եհովա,

Ու դուն իմն եղար :

9 - Եւ քեզ ջրով լուացի, Ու քու վրայէդ քու արիւնդ աղէկ մաքրեցի,

Ու քեզ իւղով օծեցի.

10 - Եւ քեզի նկարագործ հանդերձ հագցուցի,

Ու քեզի թէհաշի հարթ շորով մուծակներ հագցուցի,

Եւ քու մէջքդ բեհեղէ գօտի կապեցի,
 Ու քեզ մետաքաներով ծածկեցի.
 11 - Եւ քեզ զարդերով զարդարեցի,
 Ու ձեռքերուդ վրայ ապարանջաններ
 դրի,
 Ու պարանոցիդ վրայ մանեակ դրի,
 12 - Եւ քու քիթդ օղակ,
 Ու ականջներդ գինտեր,
 Ու գլուխդ պարծանքի պսակ դրի:
 13 - Եւ դուն սակիով ու արծաթով
 զարդարուեցար,
 Ու քու հանդերձներդ բեհեղ, մետաքս
 ու նկարագործ եղան.
 Նաչիհ ու մեզր ու իւզ կերար,
 Եւ խիստ շատ գեղեցկացար,
 Ու թագաւորութեան հասար:
 14 - Եւ քու գեղեցկութեանդ համար
 քու անուկ ազգերուն մէջ
 տարածուեցաւ,
 Վասն զի անիկա կատարեալ եղաւ այն
 վայելչութեանը պատճառաւ.
 Զոր քու վրագ դրի, կ'ըսէ Տէր Եհովա:
 15 - Բայց դուն քու անուանդ պատ-
 ճառաւ,
 Քու գեղեցկութեանդ ապաւինելով
 շնութիւն ըրիր,
 Եւ քու պոռնկութիւնդ ամէն անցնո-
 ղին առջև թափեցիր. անորը
 կ'ըլլար:
 16 - Ու քու հանդերձներէդ աւիր,
 Եւ քեզի գոյնզգոյն զարդերով բարձր
 տեղեր շինեցիր,
 Ու անոնց վրայ շնութիւն ըրիր.
 Անոնց նման չեղաւ, ոչ ալ պիտի ըլլայ:
 17 - Եւ իմ քեզի տուած սակիէս ու
 արծաթէս
 Քու պարծանքիդ զարդերը աւիր,
 Ու քեզի արուական պատկերներ շինե-
 ցիր
 Եւ անոնցմով պոռնկեցար:
 18 - Ու քու նկարագործ հանդերձներդ
 առնելով
 Զանանք ծածկեցիր,
 Ու իմ իւզս ու խունկս անոնց առջև
 դրի:
 19 - Ու քեզի տուած հացս,
 Քեզի կերցուցած նաչիհս, իւզս ու
 մեզրս ալ
 Անոնց առջև դրիր անոյշ հոտի համար.
 Ու տսիկա եղաւ, կ'ըսէ Տէր Եհովա:
 20 - Եւ ինձի համար ծնած տղաքներդ
 ու աղջիկներդ աւիր,
 Ու զանանք կերակուրի համար զսճ
 ըրիր անոնց,

21 - Այս քու պոռնկութիւնդ քի՞չ
 բան է,
 Որ իմ տղաքներս մորթեցիր,
 Ու զանանք անոնց տաւիր՝ չե՞լէ անցը-
 նելով:
 22 - Եւ քու բոլոր պղծութիւններուդ
 ու պոռնկութիւններուդ մէջ
 Քու մանկութեանդ օրերը չյիշեցիր,
 Երբ մերկ ու անծած կայթ
 Եւ քու արեանդ մէջ կոխուած էիր:
 23 - Ու եղաւ որ բոլոր շարութիւննե-
 րէդ ետքը,
 (Վասյ, վա՛յ քեզի, կ'ըսէ Տէր Եհովա.)
 24 - Ի՞նչ քեզի բողանոց ալ շինեցիր,
 Ու քեզի ամէն հրապարակի մէջ բարձր
 տեղ ըրիր:
 25 - Ամէն ճամբու գլուխ քու բարձր
 տեղերդ շինեցիր,
 Ու քու գեղեցկութիւնդ զգուելի ըրիր,
 Եւ ամէն անցնողին քու ոտքերդ բա-
 ցիր,
 Ու քու պոռնկութիւններդ շատցու-
 ցիր:
 26 - Եւ քու մեծանդամ սահմանա-
 կիցներուդ,
 Եզիպտոսի որդիներուն, հետ պոռնը-
 կութիւն ըրիր,
 Ու զիս որդոցնելու համար քու պոռ-
 նկութիւններդ շատցուցիր:
 27 - Եւ ահա իմ ձեռքս քու վրագ եր-
 կընցուցի,
 Ու քու ռոճիկդ պակսեցուցի,
 Ու քեզ քու թշնամիներուդ, Փղշտաց-
 ւոց աղջիկներուն, կամքին
 յանձնեցի,
 Որոնք քու անհամեստ վարմունքէդ
 կ'ամչնան:
 28 - Եւ չկշտանալով՝ Ասորեստանի
 որդիներուն հետ պոռնկութիւն
 ըրիր,
 Եւ թէպէտ անոնց հետ պոռնկութիւն
 ըրիր, սակայն չկշտացար:
 29 - Ու Քանանացւոց երկրէն մինչև
 Քաղդէսացւոց երկիրը
 Քու պոռնկութիւններդ շատցուցիր,
 Բայց ասով ալ չկշտացար:
 30 - Քու սիրտդ ս'ըջափ ակար է, կ'ը-
 սէ Տէր Եհովա,
 Որ այս ամէն բաները ըրիր,
 Անամօթ պոռնիկ կնոջ մը գործը:
 31 - Ամէն ճամբու գլուխ քու բողա-
 նոցներդ շինեցիր,
 Եւ քեզի ամէն հրապարակի մէջ բարձր
 տեղ ըրիր,

Ու վարձքը անարգելով՝ պուռնիկ կնոջ
 պէս չեղար,
 32 - Հոգս այն շնութիւն ընող կնոջ
 դէս եղար,
 Որ իր էրկանը տեղ օտարներ կ'առնէ:
 33 - Ամէն բողբոսն վարձք կու տան,
 Բայց դուն ամէն համանիներուդ քու
 վարձքերդ կու տաս:
 Այո, կաշառք կու տաս անոնց, որպէս
 զի ամէն կողմէն քեզի դան՝
 Քեզի հետ պուռնկութիւն ընելու հա-
 մար:
 34 - Եւ քու պուռնկութիւններուդ մէջ՝
 կրներուն եղածին ներհակը կ'ըլ-
 լայ քեզի,
 Վասն զի պուռնկութեան համար քու
 ետեւէդ եկող մարդ չկայ:
 Ու քու վարձք տալովդ և ուրիշէն
 վարձք չառնելովդ՝
 Գուն «-բիշեր»-ն ներհակը եղար:
 35 - Ասոր համար, ով պուռնիկ, Տէ-
 րաջը խօսքը մտիկ բրէ,
 36 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
 Որովհետեւ քու պղինձդ տարածուե-
 ցաւ,
 Եւ քու պուռնկութիւններովդ մերկու-
 թիւնդ
 Քու համանիներուդ ու ամէն գարշելի
 կուռքերուդ յայանուեցաւ,
 Եւ անոնց նուիրած աղօցդ արիւնը
 Բախեցաւ,
 37 - Անոր համար ահա ես պիտի ժող-
 վեմ՝ քու բոլոր համանիներդ,
 Որոնց դուն հաճոյ եղար,
 Եւ ամէն անոնք որ սիրեցիր, ու ամէն
 անոնք որ տաեցիր.
 Եւ զանոնք ամէն կողմէն քու վրագ
 պիտի ժողվեմ,
 Ու քու մերկութիւնդ անոնց պիտի
 բանամ,
 Եւ անոնք քու բոլոր մերկութիւնդ
 պիտի տեսնեն:
 38 - Ու քեզ պիտի դատեմ
 Շնութիւն ընող և արիւն թափող կի-
 ներուն դատաստանովը,
 Ու քեզի բարկութեամբ ու նախանձով
 արեան վճի պիտի տամ:
 39 - Եւ քեզ անոնց ձեռքք պիտի տամ,
 Ու քու բողբոնոցդ պիտի փլցնեն,
 Ու քու բարձր տեղերդ պիտի աւրեն.
 Եւ քու հանդերձներէդ քեզ պիտի
 մերկացնեն,
 Ու քու պարծանքիդ զարդերը պիտի
 առնեն,

Եւ քեզ մերկ ու անծածկոյթ պիտի
 թողուն.
 40 - Ու քու վրագ ժողովք մը տաք
 պիտի հանեն,
 Եւ քեզ քարերով պիտի քարկոծեն,
 Ու իրենց սուրերովը քեզ պիտի խո-
 ցոտեն,
 41 - Եւ քու առններդ կրակով պիտի
 այրեն,
 Ու շատ կրներու սուջև քու վրագ դա-
 տաստաններ ի գործ պիտի դնեն.
 Եւ քեզ պուռնկութիւն ընելէ պիտի
 դադրեցնեմ,
 Ու մէյմըն ալ պարզեւ պիտի չտաս:
 42 - Այսպէս պիտի դադրեցնեմ իմ
 բարկութիւնս որ քեզի դէմ է.
 Ու իմ նախանձս քեզմէ պիտի վերնայ.
 Ու պիտի հանդարտիմ՝ ու ա'լ պիտի
 չբարկանամ:
 43 - Որովհետեւ դուն քու մանկու-
 թեանդ օրերը չյիշեցիր,
 Հապա այս ամէն բաներով պիտի սրդող-
 ցուցիր,
 Անոր համար ահա ես ալ քու ճամբագ
 «- գլուխդ պիտի բերեմ»,
 Կ'ըսէ Տէր Եհովա,
 Ու դուն քու բոլոր պղծութիւններուդ
 վրայ
 Այս եղեւնագործութիւնը պիտի չը-
 նես:
 44 - Ահա ամէն առակ խօսողը
 Քու վրագ առակ պիտի խօսի՝ ըսելով,
 Ինչպէս է մայրը, աղջիկն ալ «յնդէ» է:
 45 - Գուն քու մօրդ աղջիկն էս,
 Որ իր այրէն ու աղաքներէն զզուեցաւ.
 Եւ քու քոյրերուդ քոյրն էս,
 Որոնք իրենց այրերէն ու աղաքներէն
 զզուեցան.
 Ձեր մայրը Քետացի, ու ձեր հայրը
 Ամօրհացի է:
 46 - Ու քու մեծ քոյրդ Սամարիա է,
 Որ իր աղջիկներովը քու ձախ կողմդ
 կը բնակի.
 Եւ քեզմէ պզտիկ քոյրդ Սոգոմ է,
 Որ իր աղջիկներովը քու աջ կողմդ կը
 բնակի:
 47 - Ու դուն անոնց ճամբաներուն մէջ
 չբալեցիր,
 Եւ անոնց պղծութիւններուն պէս չը-
 բիր.
 Հոգս որպէս թէ անոնց շրջը պզտիկ
 «- չնչին էր»,
 Գուն քու բոլոր ճամբաներուդ մէջ
 անանցմէ աւելի տպականեցար:

48 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Ե-
 Տովա,
 Որ քու քոյրդ Սոդոմ, ինք ու իր աղ-
 ջիկները, «յնդէ» չըրին,
 Ինչպէս դուն ու քու աղջիկներդ ըրիք:
 49 - Ահա քու քրոջդ Սոդոմի անօրէ-
 նութիւնը այս էր.
 Անիկա իր աղջիկներովը
 Հպարտութիւն, հացի կուշտութիւն ու
 անհոգ հանգստութիւն ունե-
 ցաւ,
 Եւ աղքատին ու անանկին ձեռքը չու-
 ժովցուց:
 50 - Ու հպարտացան և իմ առջև
 պղծութիւն ըրին.
 Ու զանոնք տեսածիս պէս վերցուցի:
 51 - Եւ Սամարիա քու մեղքերուդ
 կէտին չափ մեղք չգործեց.
 Ու դուն քու պղծութիւններդ անոնց-
 մէ աւելի շատցուցիր,
 Եւ քու ըրած բոլոր պղծութիւններովդ
 Քու քոյրերդ արդարացուցիր:
 52 - Ու դուն որ քու քոյրերդ դատա-
 պարտեցիր,
 Քու անարգանքդ կրէ քու մեղքերուդ
 համար,
 Որ դուն անոնցմէ աւելի պղծութիւն
 ըրիր.
 Անոնք քեզմէ արգար են.
 Իսկ դուն քոյրերդ արգարացնելուդ
 համար
 Ամչցիր ու քու անարգանքդ կրէ:
 53 - Ու ես պիտի դարձնեմ անոնց գե-
 րութիւնը,
 Սոդոմի ու անոր աղջիկներուն գերու-
 թիւնը,
 Եւ Սամարիայի ու անոր աղջիկներուն
 գերութիւնը.
 Անոնց մէջ քու գերութիւնդ ալ եր-
 դեթի դարձնեմ,
 54 - Որպէս զի քու անարգանքդ կրես
 Ու ամէն ըրածէդ ամչնաս
 Անոնց միտարութիւն ըլլալուդ հա-
 մար:
 55 - Եւ քու քոյրերդ Սոդոմ ու անոր
 աղջիկները,
 Իրենց առաջուան վիճակին պիտի դառ-
 նան,
 Եւ Սամարիա ու անոր աղջիկներն ալ
 Իրենց առաջուան վիճակին պիտի դառ-
 նան,
 Ու դուն և քու աղջիկներդ ալ
 Ձեր առաջուան վիճակին պիտի դառ-
 նաք:

56 - Վասն զի քու հպարտութեանդ
 օրը
 Քու քոյրդ Սոդոմ քու բերնէդ չլուե-
 ցաւ,
 57 - Քանի որ դեռ քու շարութիւնդ
 յայտնուած չէր,
 Ինչպէս հիմա «յայնս-եցա»՝ երբ Ասոր-
 ւոց աղջիկներուն առջև,
 Ու անոնց բոլորաբը եղող բոլոր
 Փղշաացւոց աղջիկներուն առջև
 ամծթով եղար,
 Որոնք ամէն կողմէ քեզ նախատեցին:
 58 - Քու եղեռնագործութիւնդ և քու
 պղծութիւններդ
 Դուն կրեցիր, կ'ըսէ Տէրը:
 59 - Վասն զի Տէր ԵՏովա այսպէս
 կ'ըսէ.
 Քու ըրածիդ համեմատ պիտի ընեմ
 քեզի,
 Որ երդումը անարգեցիր և ուխտը աւ-
 րեցիր:
 60 - Բայց ես քու մանկութեանդ օրերը
 քեզի հետ ըրած ուխտս պիտի
 յիշեմ,
 Ու քեզի հետ յաւիտենական ուխտ
 պիտի հաստատեմ.
 61 - Եւ դուն քու ճամբաներդ պիտի
 յիշես,
 Ու պիտի ամչնաս՝ երբ ընդունիս քեզմէ
 մեծ և քեզմէ պզտիկ քոյրերդ,
 Ու երբ զանոնք քեզի աղջիկներու աեղ
 տամ,
 Բայց ոչ թէ քու ուխտովդ.
 62 - Հապա ես քեզի հետ իմ ուխտս
 պիտի հաստատեմ,
 Եւ պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը.
 63 - Որպէս զի յիշես ու ամչնաս,
 Եւ ամչնալուդ պատճառաւ մէյմըն ալ
 բերանդ չբանաս,
 Եւ քու ըրած բոլոր գործերուդ համար
 Քեզի քաւութիւն ընեմ, կ'ըսէ Տէր
 ԵՏովա:

ԳԼ. ԺԷ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
 լով, 2 - Որդի մարդոյ, Խորայելի առ-
 նը հանելուկ պատմէ ու առակ խօսէ,
 3 - Ու ըսէ, Տէր ԵՏովա այսպէս կ'ըսէ.
 Մեծ արծիւ մը, մեծ թևերով, եր-
 կայն փետուրներով ու գոյնգոյն բա-
 րակ փետուրներով լեցուն՝ Լիբանան
 եկաւ, ու եղևինին ամենաբարձր ճիւղը
 առաւ. 4 - Անոր ընծիւղներուն ծայրը

փրցուց, և զանհկա վաճառականի երկիրը տարաւ, «- զանհկա վաճառականներու քաղաքը դրաւ: 5 - Եւ այն երկրին հունաէն առաւ, ու զանհկա բարեբեր արտի մէջ դրաւ. զանհկա շատ ջուրերու քով տարաւ, ու ըրի պէ՞ դրաւ. 6 - (Եւ անհկա բուսաւ, ու տարածուած՝ կարճահասակ որթ մը եղաւ.) այնպէս որ անոր ստերը իրեն նային, ու արմատները իրեն տակ ըլլան. և անհկա որթ ըլլալով՝ ստեր բուսցուց ու ընծիւղներ արձակեց:

7 - Եւ ըրիչ մեծաթև ու բազմափետուր մեծ արծիւ մըն ալ կար. և ահա այս որթը իր արմատները դէպ ի այն ծռեց, ու իր ստերը դէպ ի այն երկրնցուց, որպէս զի իր անկուած ածուներովը զինք առգէ: 8 - Անհկա բարեբեր արտի մէջ շատ ջուրերու քով անկուեցաւ, որպէս զի ստեր արձակէ և պտուղ բերէ ու ազնիւ որթ ըլլայ: 9 - Ըսէ որ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Արդեօք անհկա պիտի յաջողի՞. միթէ այն «-ալսան» արժիւղ անոր արմատները պիտի չիլէ՞, ու անոր պտուղը պիտի չփրցնէ՞, որպէս զի չորնայ: Անոր ամէն բուսած տերեւները պիտի չորնան. և առանց մեծ բազուկի ու շատ ժողովուրդի զանհկա արմատէն պիտի խլէ:

10 - Եւ ահա անկուեցաւ, միթէ պիտի յաջողի՞. չէ՞ որ արևելեան հովը անոր դպածին պէս բոլորովին պիտի չորնայ. անհկա իր բուսած ածուներուն վրայ պիտի չորնայ:

11 - Գարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 12 - Հիմա ապրտամբներու տանը ըսէ, Ասոնց ինչ ըլլայը չէ՞ք գիտեր. ըսէ որ Ահա Բաբելոնի թագաւորը Երուսաղէմ՝ եկաւ, և անոր թագաւորը ու իշխանները առաւ, ու զանանք իր քով Բաբելոն տարաւ: 13 - Եւ թագաւորին սերունդէն Բելշ առնելով՝ անոր հետ ուխտ ըրաւ, ու անոր երգում՝ ընել տուաւ. նաև երկրին զօրաւորները առաւ. 14 - Որպէս զի թագաւորութիւնը ցած ըլլայ, ու չկրնայ զինք բարձրացնել. և իր ուխտը պահելով՝ անոր վրայ հաստատ կենայ: 15 - Բայց անհկա անկէ ապրտամբեցաւ, ու Եգիպտոս գեսպաններ զրկեց, որպէս զի իրեն ձիեր ու շատ զօրքեր տան. միթէ անհկա յաջողութիւն պիտի գտնէ՞. այս բաները ընողը պիտի ազատի՞, կամ թէ ուխտը աւրելով՝ պիտի ազատի՞:

16 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ անհկա անշուշտ այն թագաւորին քահանայ տեղը, որ զինք թագաւոր ըրեր էր, որուն երգումը անարգեր էր, ու անոր ուխտը աւրեր էր, անոր քով Բաբելոնի մէջ պիտի մեռնի: 17 - Եւ Փարաւոն մեծ զօրքով ու շատ բազմութիւնով պատերազմի մէջ անոր համար բան մը պիտի չընէ. երբ պտանէ շներ կանգնուին ու մարտկոցներ շինուին շատ հոգիներ կտարելու համար:

18 - Վասն զի անհկա երգումը անարգեց և ուխտը աւրեց, և ահա անհկա իր ձեռքը տալէն ետքը՝ այս ամէն բաները ընելուն համար պիտի չազատի: 19 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես կենդանի եմ, որ անշուշտ անոր գլուխը պիտի դարձնեմ իմ՝ երգումս զոր անհկա անարգեց, ու իմ ուխտս զոր աւրեց. 20 - Եւ անոր վրայ իմ ցանցս պիտի տարածեմ, ու անհկա իմ որոգայթիս մէջ պիտի բռնուի, և զանհկա Բաբելոն պիտի տանիմ, ու հոն անոր հետ դատ պիտի վարեմ, անոր ինծի դէմ՝ ըրած յանցանքին համար: 21 - Ու անոր բոլոր փախտականները և անոր բոլոր զօրքերը որով պիտի իյնան, ու անոր մնացորդները ամէն հովերու պիտի ցրուին. ու պիտի գիտնաք թէ ես Տէրս խօսեցայ:

22 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես ալ բարձր եղևինին ամենաբարձր ճիւղէն պիտի առնեմ, ու պիտի անկեմ. ես անոր ընծիւղներուն ծայրէն մտադաշը պիտի փրցնեմ, ու բարձր ու վերացած լեռան մը վրայ պիտի անկեմ: 23 - Չանհկա Խորայելի բարձր լեռանը վրայ պիտի անկեմ. և անհկա ստեր պիտի արձակէ ու պտուղ պիտի տայ, ու ազնիւ եղևին պիտի ըլլայ. և անոր տակ ամէն տեսակ թև ունեցող բոլոր թռչունները պիտի նստին, անոր ստերուն հովանիին տակ պիտի բնակին: 24 - Եւ դաշտի բոլոր ծառերը պիտի գիտնան՝ թէ ես Տէրս բարձր ծառը ցածցուցի, «- ցած ծառը բարձրացուցի, կանանչ ծառը չորցուցի, ու չոր ծառը կանանչցուցի. ես Տէրս խօսեցայ ու պիտի կատարեմ:

ԳԼ. ԺԸ

Գարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Ի՞նչ պիտի ըլլայ ձե-

գի այն առակը զոր դուք Խորայէլի երկրին մէջ կը խօսիք՝ ըսելով, Հայրերը ազոխ կերան ու սրգիններուն աղւանները աւին: 3 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ Խորայէլի մէջ այս առակը մէյմըն ալ պիտի չգրուցէք: 4 - Ահա բոլոր հոգիները իմն են. ինչպէս հօրը հոգին՝ նոյնպէս սրգւոյն հոգին իմն է. այն անձը որ մեզք կը գործէ, անիկա պիտի մեռնի: 5 - Իսկ եթէ մարդ մը արգար ըլլայ, և իրաւունք ու արդարութիւն ընէ, 6 - Լեռներու վրայ չուտէ, ու աչքերը դէպ ի Խորայէլի տանը կուռքերը չվերցնէ, ու իր դրացիին կինը չպղծէ, և իր դաշտանին մէջ եղազ կնոջ մը չմօտենայ, 7 - Ու մարդու մը զրկանք չընէ, «- պարտականին՝ գրաւը ետ առայ, բռնութեամբ բան մը չյափշտակէ, և իր հացը անօթիին տայ, ու մերկը հանդերձով ծածկէ, 8 - Սրախ վաշխով չառայ ու տոկոսիք չառնէ, իր ձեռքը անօրէնութենէ ետ պահէ, երկու մարդու մէջ ուղիղ դատաստան տեսնէ, 9 - Ճշմարտութիւն ընելով՝ իմ օրէնքներու մէջ քայլէ, ու իմ իրաւունքներս պահէ. անիկա արգար է, անշուշտ պիտի ապրի, կ'ըսէ Տէր Եհովա:

10 - Բայց եթէ անիկա անիրաւ «- արիւնահեղ սրգի մը ծնանի, որ ասոնց պէս բան մը ընէ: 11 - Այսինքն՝ եթէ անիկա այն ամէն «- ղէ՛ բաները չընէ, հապա միայն լեռներու վրայ ուտէ, ու իր դրացիին կինը պղծէ, 12 - Աղքատին ու տնանկին զրկանք ընէ, բռնութեամբ բան մը յափշտակէ, գրաւը ետ չառայ, ու իր աչքերը կուռքերուն վերցնելով՝ պղծութիւն գործէ, 13 - Վաշխով «- ղէ՛ առայ ու տոկոսիք առնէ. անիկա պիտի ապրի՞. պիտի չապրի. անիկա այս բոլոր գարշութիւնները ընելուն համար՝ անշուշտ պիտի մեռնի. անոր արիւնը իր վրայ պիտի ըլլայ:

14 - Եւ եթէ անիկա սրգի ծնանի, ու անիկա իր հօրը ըրած բոլոր մեղքերը տեսնելով՝ վախնայ ու անոնց համեմատ չընէ: 15 - Լեռներու վրայ չուտէ, ու իր աչքերը դէպ ի Խորայէլի տանը կուռքերը չվերցնէ, իր դրացիին կինը չպղծէ, 16 - Եւ մարդու մը զրկանք չընէ, գրաւը չպահէ, ու բռնութեամբ բան մը չյափշտակէ, իր հացը անօթիին տայ, ու մերկը հանդեր-

ձով ծածկէ, 17 - Աղքատին անիրաւ «- ղէ՛ ընէ իր ձեռքը ետ քաշէ, վաշխ ու տոկոսիք չառնէ, իմ դատաստաններս ի գործ դնէ, «- իմ օրէնքներու մէջ քայլէ. անիկա իր հօրը անօրէնութեանը համար պիտի չմեռնի, անիկա անշուշտ պիտի ապրի: 18 - Եւ անոր հայրը, որովհետեւ զրկանք ըրաւ, «- իր եղբորմէն բռնութեամբ բան յափշտակեց, և աղէկ չեղածը ըրաւ իր ժողովուրդին մէջ, ահա անիկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի:

19 - Եւ դուք կ'ըսէք թէ Ինչո՞ւ համար սրգին եր հօրը անօրէնութիւնը չկրէր: Որովհետեւ սրգին իրաւունք ու արդարութիւն ըրաւ, և իմ բոլոր օրէնքներս պահեց ու զանոնք ի գործ դրաւ, անշուշտ պիտի ապրի: 20 - Այն անձը որ մեզք կը գործէ, անիկա պիտի մեռնի. սրգին հօրը անօրէնութիւնը պիտի չկրէ, ու հայրը սրգւոյն անօրէնութիւնը պիտի չկրէ. արգարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ, ու ամբարշտին ամբարշտութիւնը իր վրայ պիտի ըլլայ: 21 - Եւ եթէ ամբարիշտը իր գործած բոլոր մեղքերէն դառնայ, ու իմ բոլոր օրէնքներս պահէ, և իրաւունք ու արդարութիւն ընէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի: 22 - Անոր ըրած բոլոր յանցանքները իրեն դէմ պիտի չյիշուին, հապա անիկա իր ըրած արդարութիւնովը պիտի ապրի: 23 - Միթէ ես բնաւ ամբարշտին մեռնիլը կ'ուզե՞մ, կ'ըսէ Տէր Եհովա. չէ՞ որ ե՞ս «- ղէ՛ որ անիկա իր ճամբայէն դառնայ ու ապրի: 24 - Բայց եթէ արգարը իր արդարութենէն դառնայ, ու ամբարշտին ըրած բոլոր գարշութիւններուն պէս անօրէնութիւն ընէ, պիտի ապրի՞. անոր ըրած բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի. անիկա իր ըրած յանցանքովը ու գործած մեղքովը, անոնցմով պիտի մեռնի:

25 - Եւ դուք կ'ըսէք թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. հիմա մտիկ ըրէք, ով Խորայէլի տունը, միթէ ի՞մ ճամբատա ուղիղ չէ. չէ՞ որ ձեր ճամբան ուղիղ չէ: 26 - Երբ արգարը իր արդարութենէն դառնայ ու անօրէնութիւն ընէ, և անոր մէջ մեռնի, անիկա իր ըրած անօրէնութեանը համար կը մեռնի: 27 - Ու երբ ամբարիշտը իր ըրած ամբարշտութենէն դառնայ և իրաւունք ու արդարու-

Թիւն ընէ, անհկա իր անձը պիտի ապրեցնէ: 28 - Որովհետեւ անհկա ուշադրութիւն բրտա ու իր բրտած բոլոր յանցանքներէն ետ դարձաւ, անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի:

29 - Իսայց Իսրայէլի տունը կ'ըսէ թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. սլ Իսրայէլի տունը, միթէ ի՞մ ճամբաներս ուղիղ չեն. չէ՞ որ ձեր ճամբաները ուղիղ չեն: 30 - Անոր համար, սլ Իսրայէլի տունը, ձեզմէ ամէն մէկը իր ճամբաներուն համեմատ պիտի դատեմ, կ'ըսէ Տէր Եհովա. դարձի եկէք ու ձեր բոլոր յանցանքներէն ետ դարձէք, որպէս զի անորէնութիւնը *ձեր կորուստին պատճառ՝ չըլլայ: 31 - Ձեր բրտած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէք, և ձեզի նոր սիրտ ու նոր հոգի փստացէք. քանզի ինչո՞ւ մեռնիք, սլ Իսրայէլի տունը: 32 - Վասն զի մեռնողին մեռնիլը չեմ ուզեր, կ'ըսէ Տէր Եհովա. ուստի դարձէք ու ապրեցէք:

ԳԼ. ԺԹ

Եւ դուն Իսրայէլի իշխաններուն վրայ ողբ քրէ, 2 - Ու ըսէ,

Քու մայրդ ի՞նչ է. մտաակ առիւծ մըն է,

Որ առիւծներու մէջ կը պտակի, Ու իր կորիւնները առոյգ առիւծներու մէջ կը մեծցնէ:

3 - Եւ անհկա իր կորիւններէն մէկը մեծցուց,

Ու անհկա առոյգ առիւծ եղաւ, Եւ յափշտակութիւն ընել սարվեցաւ -- մարդ կ'ուտէր:

4 - Եւ անոր վրայով ազգերը լսեցին. Անհկա անոնց փոսին մէջ բռնուեցաւ. Ու զանհկա կարթերով Եզրպատտի երկիրը տարին:

5 - Ու երբ անհկա տեսաւ որ պարտադէր կը սպասէ, յոյսը կտրեցաւ,

Եւ իր կորիւններէն մէկ ուրիշը առաւ, Ու զանհկա առոյգ առիւծ բրտա:

6 - Եւ անհկա առիւծներու մէջ պարտադէր առոյգ առիւծ եղաւ, Ու յափշտակութիւն ընել սարվեցաւ -- մարդ կ'ուտէր:

*Եբբ. ձեզի խոչընդոտան
†Եբբ. ըրէք ‡Եբբ. վերցուր

7 - Եւ անոնց *պաշտաները գիացաւ, Ու անոնց քաղաքները կործանեց.

Եւ անոր մեռնչելուն ձայնէն Երկիրը իր լիութեամբը սարսափեցաւ:

8-Ու շրջակայ գաւառներէն անոր վրայ ազգեր ելան,

Եւ անոր դէմ՝ իրենց ցանցը տարածեցին.

Ու անոնց փոսին մէջ բռնուեցաւ:

9 - Եւ զանհկա կարթերով վանդակի մէջ գրին,

Ու զանհկա Բարեկտնի թագաւորին տարին,

Ու զանհկա բերդը գրին, Որպէս զի անոր ձայնը մէյմըն ալ Իսրայէլի լեռներուն վրայ չլսուի:

10 - Քու մայրդ քու փմանութիւնովդ՝ ջուրերու քով անկուած որթի պէս է,

Որ շատ ջուրերուն պատճառաւ՝ պաղատաւ ստտերով լեցուն եղաւ:

11 - Եւ անհկա զօրաւոր շառաւիղներ ունեցաւ՝ իշխանաց գաւազաններու համար,

Ու իր հասակը իրա ճիւղերուն մէջէն բարձրացաւ,

Եւ իր բարձրութիւնովը ու բարունակներուն շատութիւնովը երեցաւ:

12-Իսայց անհկա բարկութեամբ իլուեցաւ ու գետինը ձգուեցաւ,

Եւ արեւելեան հովը անոր պտուղը չորցուց.

Անոր զօրաւոր շառաւիղները կտրեցան ու չորցան,

Եւ զանոնք կրակը կերաւ:

13 - Ու հիմա անապատի մէջ Չոր ու անջուր տեղ մը անկուեցաւ:

14 - Եւ անոր ստտերուն մէկ շառաւիղէն կրակ ելաւ

Ու անոր պտուղը կերաւ,

Եւ անոր վրայ իշխանի գաւազանի համար զօրաւոր շառաւիղ մը չմնաց:

Ասիկա ողբ է ու ողբի տեղ պիտի ըլլայ:

ԳԼ. Ի

Ու եղաւ որ եօթներորդ տարին, հինգերորդ ամսուն տասներորդ օրը, Տէրոջը հարցնելու համար Իսրայէլի

*Կա՛, որբւարիները
†Կա՛, արիւնհիզ մէջ

ձերերէն մարդիկ եկան, և իմ առջև նստան :

2 - Ու Տէրօջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 3 - Որդի մարգոյ, Խորայէլի ձերերուն հետ խօսէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Մի՛թէ դուք ինծի հարցնելը եկաք. ես կենդանի եմ, որ *ձեզի պատասխան պիտի չտամ", կ'ըսէ Տէր Եհովա : 4 - Մի՛թէ անոնց դատաստան պիտի ընե՞ս, դատաստան պիտի ընե՞ս, որդի մարգոյ. անոնց հայրերուն պղծութիւնները անոնց գիացուր, 5 - Ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը որ Խորայէլը ընտրեցի, և Յակոբի տանը սերունդին ՚իմ ձեռքս վերցուցի", ու Եգիպտոսի երկրին մէջ անոնց յայտնուեցայ, և իմ ձեռքս անոնց վերցնելով՝ ըսի թէ Ձեր Տէր Աստուածը ես եմ. 6 - Այն օրը իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք Եգիպտոսի երկրէն, այն կաթ ու մեղր բղխող ու ամէն երկիրներուն պարծանքը եղող երկիրը հանեմ, զոր անոնց համար քաղաքատներ էի". 7 - Ու անոնց ըսի, Ամէն մարդ իր աչքերուն գարշաւթիւնները թող մէկգի ձգէ, ու Եգիպտոսի կուռքերովը մի պղծուիք. ես եմ ձեր Տէր Աստուածը :

8 - Բայց անոնք ինծմէ ապատարեցան, և չուզեցին ինծի մօտիկ ընել, *մէկգի չձգեցին ամէն մէկը իր աչքերուն գարշաւթիւնները, ու Եգիպտոսի կուռքերը չթողուցին. այն տառն ըսի որ իմ սրամտութիւնս անոնց վրայ թափեմ, ու Եգիպտոսի երկրին մէջ իմ բարկութիւնս անոնց վրայ կատարեմ : 9 - Բայց ես ըրի իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջև՝ որոնց մէջ անոնք կը գտնուէին, և որոնց առջև ես անոնց յայտնուեցայ, երբ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեցի :

10 - Եւ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեցի, ու զանոնք անապատը բերի. 11 - Եւ իմ օրէնքներս անոնց սուրի, ու իմ դատաստաններս անոնց գիացուցի, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարէ : 12 - Եւ իմ շաբաթներս ալ անոնց սուրի, որպէս զի իմ ու անոնց մէջտեղ նշան ըլլան, որպէս զի գիանան

թէ ես եմ Տէրը՝ որ զանոնք կը սրբեմ :

13 - Բայց Խորայէլի սուրը անապատին մէջ ինծմէ ապատամբեցաւ. իմ օրէնքներովս չքաղեցին, ու իմ դատաստաններս մերժեցին, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարէ, և իմ շաբաթներս մեծապէս պղծեցին. անոր համար ըսի որ իմ սրամտութիւնս անոնց վրայ թափեմ՝ անապատին մէջ, ու զանոնք սպառեմ : 14 - Բայց ես ըրի իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջև՝ որոնց առջև զանոնք հանեցի : 15 - Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք չտանիմ՝ այն կաթ ու մեղր բղխող ու ամէն երկիրներուն պարծանքը եղող երկիրը, զոր անոնց առէր էի : 16 - Քանզի իմ դատաստաններս մերժեցին, ու իմ օրէնքներովս չքաղեցին, և իմ շաբաթներս պղծեցին. վասն զի անոնց սիրտը իրենց կուռքերուն ետեւէն կ'երթար : 17 - Բայց իմ աչքս անոնց խնայեց, որ զանոնք չկորսնցնեմ. ուստի անապատին մէջ զանոնք չսպառեցի :

18 - Եւ անապատին մէջ անոնց որդիներուն ըսի, Ձեր հայրերուն կանոններովը մի քաղէք, ու անոնց սովորութիւնները մի պահէք, և անոնց կուռքերովը մի պղծուիք. 19 - Ես եմ Տէրը ձեր Աստուածը. իմ օրէնքներովս քաղեցէք, ու իմ դատաստաններս պահեցէք, ու զանոնք ի գործ դրէք. 20 - Եւ իմ շաբաթներս սուրը պահեցէք, ու անոնք իմ ու ձեր մէջտեղ նշան ըլլան. որպէս զի գիանաք թէ ես եմ Տէրը, ձեր Աստուածը :

21 - Բայց անոնց որդիներն ալ ինծմէ ապատամբեցան. իմ օրէնքներովս չքաղեցին ու իմ դատաստաններս կատարելու ու շաղարութիւն չըրին, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարէ, և իմ շաբաթներս պղծեցին. ուստի ըսի որ իմ սրամտութիւնս անոնց վրայ թափեմ, ու անապատին մէջ իմ բարկութիւնս անոնց վրայ կատարեմ : 22 - Սակայն իմ ձեռքս քաղեցի ու ըրի իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջև՝ որոնց առջև զանոնք հանեցի :

23 - Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք ազգերու մէջ ցրուեմ, ու զանոնք երկիրներու մէջ ցիրուցան ընեմ : 24 -

*Եբր. ձեզմէ պիտի չհարցուիմ + Այնինքն, երգում ըրի. տես Ել. 2. 8 : †Կամ, հոգացեր էի

Վասն զի իմ գառատատաններս ի գործ չդրին, ու իմ օրէնքներս մերժեցին, և իմ շարաթներս պղծեցին. ու անոնց աչքերը իրենց հայրերուն կուռքերուն ետեւէն եղան: 25 - Ուստի ես ալ այնպիսի օրէնքներ տուի անոնց՝ որ բարի չէին, ու այնպիսի գառատատաններ՝ որոնցմով չէին կրնար ապրիլ: 26 - Եւ զանոնք իրենց ընծաներովը պղծեցի, զանոնք իսկ որ ամէն արգանգ բացողը կրնէ անցնեն, որպէս զի զանոնք կորսնցնեմ, որպէս զի գիտնան թէ ես եմ՝ Տէրը:

27 - Անոր համար, որդի մարդոյ, Իսրայէլի տանը խօսէ ու անոնց բռնէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ: Ձեր հայրերը ասով ալ ինծի դէմ յանցանք ընելով զիս նախատեցին: 28 - Վասն զի երբ զանոնք տարի այն երկիրը, զոր անոնց տալու համար ձեռքս վերցուցեր էի, ամէն բարձր բլուրը ու ամէն տերեւախիտ ծառը տեսնելով՝ հոն իրենց զոհերը մատուցին, և իրենց բարկութիւն գրգռող ընծաները հոն տարին, ու իրենց անուշահոտ խաւովները հոն ծխեցին, և իրենց թափելու նուէրները հոն մատուցին: 29 - Ու անոնց բռնէ, Ի՞նչ է այդ բարձր տեղը՝ ուր դուք կ'երթաք. և անոր անունը մինչև այսօր Բարձր տեղ կ'ըսուի:

30 - Անոր համար Իսրայէլի տանը ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուք որ ձեր հայրերուն ճամբուն մէջ կը պղծուիք, և անոնց գարշաւթիւններուն հետեւելով պոռնկութիւն կ'ընէք, 31 - Եւ ձեր ընծաները մատուցանելով ու ձեր աղաքը կրակէ անցընելով, ձեր բոլոր կուռքերով կը պղծուիք մինչև այսօր. միթէ ես ձեզի պատասխան պիտի տամ, ով Իսրայէլի տունը. ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ ձեզի պատասխան պիտի չտամ: 32 - Եւ ձեր սրտին խորհուրդը ամենին պիտի չկատարուի, որ կ'ըսէք թէ Մենք փայտ ու քար պաշտելով, հեթանոսներուն պէս, երկիրներուն ազգատոհմներուն պէս, պիտի ըլլանք: 33 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ անշուշտ ձեր վրայ զօրաւոր ձեռքով ու երկնցած բազուկով ու թափուած բարկութիւնով թագաւորութիւն պիտի ընեմ: 34 - Եւ զօրաւոր ձեռքով ու երկնցած բազուկով և թափուած բարկութիւնով ձեզ ժողովուրդներէն

պիտի հանեմ, ու ձեզ պիտի ժողովեմ այն երկիրներէն՝ ուր դուք ցրուեցաք: 35 - Եւ ձեզ ժողովուրդներուն անապատը պիտի տանիմ, ու հոն ձեզի հետ երես երեսի դատ պիտի վարեմ: 36 - Ինչպէս Եգիպտոսի երկիրն անապատին մէջ ձեր հայրերուն հետ դատ վարեցի, այնպէս ալ ձեզի հետ դատ պիտի վարեմ, կ'ըսէ Տէր Եհովա: 37 - Եւ ձեզ գաւազանին տակէն պիտի անցնեմ, ու ձեզ ուխտին կապին տակ պիտի մտնեմ: 38 - Եւ ապստամբները ու ինծի դէմ յանցաւոր եղողները ձեզմէ պիտի զատեմ. զանոնք իրենց պանդխտութեան երկրէն պիտի հանեմ, ու անոնք Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն. ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը:

39 - Եւ դուք, ով Իսրայէլի տունը, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Գոցեք, այսուհետեւ ամէն մէկդ ձեր կուռքերուն ծառայութիւն բռնէք, քանի որ դուք ինծի մտիկ չէք ընէր. բայց իմ սուրբ անունս ձեր ընծաներովը ու ձեր կուռքերովը մի պղծէք: 40 - Վասն զի իմ սուրբ լեռանս վրայ, Իսրայէլի բարձր լեռանը վրայ, կ'ըսէ Տէր Եհովա, բոլոր Իսրայէլի տունը՝ ամէնք էլ երկիրն մէջ ըլլալով՝ հոն ինծի ծառայութիւն պիտի ընեն. հոն անոնց պիտի հաճիմ, և ձեր պատարագները ու ձեր ընծաներուն երախայրիները ձեր բոլոր սուրբ բաներովը՝ հոն պիտի փրնտուեմ: 41 - Երբ ձեզ ազգերէն հանեմ ու ձեզ ժողովեմ՝ այն երկիրներէն ուր դուք ցրուած էք, անուշահոտ խաւով ձեզի պիտի հաճիմ, և ձեր մէջ ազգաց աչքերուն առջև սուրբ պիտի ըլլամ: 42 - Ու երբ ձեզ Իսրայէլի երկիրը տանիմ, այսինքն այն երկիրը զոր ձեր հայրերուն տալու համար ձեռքս վերցուցի, պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը: 43 - Եւ հոն պիտի յիշէք ձեր ճամբաները ու ձեր բոլոր գործերը՝ որոնցմով պղծուեցաք. և ձեր ըրած բոլոր չարութիւններուն համար դուք ձեզմէ պիտի զզուիք: 44 - Ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը, երբ ձեզի այսպէս ընեմ իմ անուանս համար և ոչ թէ ձեր չար ճամբաներուն. ու ձեր ապականուած վարմունքին համեմատ, ով Իսրայէլի տունը, կ'ըսէ Տէր Եհովա:

45 - Եւ Տէրը իսկ ինծի եղաւ՝ ըսելով, 46 - Որդի մարդոյ, երեսդ դէպ ի հարաւ շիակէ ու դէպ ի հարաւ խօսէ,

ու հարաւային դաշտին անտառին վրայ մարգարէութիւն ըրէ. 47 - Եւ հարաւային անտառին ըսէ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ. Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քու մէջդ կրակ պիտի բռնկցունեմ, և քու մէջդ եղած ամէն կանանչ ծառը ու ամէն չոր ծառը պիտի ուտէ. բռնկած բոցը պիտի չմարի, ու անով հարաւէն մինչև հիւսիս ամէն *կողմերը պիտի այրին: 48 - Եւ ամէն մարմին պիտի տեսնէ թէ ես Տէրս զանհկա բռնկցուցի. * - անհկա պիտի չմարի: 49 - Այն ատեն ես ըսի, Ոհ, Տէր Եհովա, անոնք ինծի համար կ'ըսեն, Չէ՞ որ տաիկա առակներ կը խօսի:

ԳԼ. ԻԱ.

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, երեսդ դէպ ի Երուսաղէմ՝ շիտկէ, ու սուրբ տեղերուն խօսէ, ու Իսրայէլի երկրին մարգարէութիւն ըրէ, 3 - Եւ Իսրայէլի երկրին ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ու իմ սուրս իր պատեանէն պիտի հանեմ, և արդարը ու ամբարիշտը քեզմէ պիտի կտրեմ: 4 - Որովհետև արդարը ու ամբարիշտը քեզմէ պիտի կտրեմ, անոր համար հարաւէն մինչև հիւսիս ամէն մարմին դէմ իմ սուրս իր պատեանէն պիտի քաշուի: 5 - Եւ ամէն մարմին պիտի գիտնայ՝ թէ ես Տէրս իմ սուրս իր պատեանէն հաներ եմ. անհկա մէյմըն ալ ետ պիտի չդառնայ: 6 - Ու դուն, որդի մարդոյ, հեծէ. մէջքը կտարածի պէս դառնութեամբ անոնց աչքերուն առջև հեծէ: 7 - Ու երբ քեզի ըսեն թէ Ինչո՞ւ կը հեծես, այն ատեն ըսես, Գուժին համար, վասն զի կու գայ. և ամէն սիրտ պիտի հայի, և ամէն ձեռք պիտի թուլնայ, ու ամէն հոգի պիտի մարի, և ամէն ծունկ ջուրի պէս պիտի ըլլայ. ահա կու գայ ու պիտի կտարուի, կ'ըսէ Տէր Եհովա:

8 - Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 9 - Որդի մարդոյ, մարգարէացիք ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ըսէ որ Սուրբ, սուրբ սրուեցաւ ու նաև սրբուեցաւ: 10 - Մեծ կտարած ընելու համար սրուեցաւ, փայլելու համար սրբուեցաւ. հիմա մենք ուրախանա՞նք.

իմ որդւոյս գաւազանը ամէն փայտը կ'անարգէ: 11 - Բայց Ինք սրբուելու տուաւ զանհկա, որպէս զի ձեռքով բռնուի. այս սուրբ սրուած է ու սրբուած է, որպէս զի զանհկա սպաննողին ձեռքը սոյ: 12 - Աղաղակէ ու ողբա, որդի մարդոյ, քանզի անհկա իմ ժողովուրդիս վրայ, Իսրայէլի բոլոր իշխաններուն վրայ, պիտի ըլլայ. իմ ժողովուրդիս վրայ սուրի պատճառաւ վախեր պիտի ըլլան. անոր համար * - աղդրիդ զարկ: 13 - Վասն զի փորձը եղաւ. ու Ի՞նչ դէպ ըլլայ, եթէ այն անարգող գաւազանը. ա՛լ չըլլայ, կ'ըսէ Տէր Եհովա: 14 - Եւ դուն, որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ, ու ձեռքերդ իրարու զարկ. և սուրբ, սպաննուածներուն սուրբ, երեք անգամ պիտի կրկնուի. մեծամեծաց վիրաւորներուն սուրբ տաիկա է, որ *անոնց բոլորաիքը պաշարեց՝: 15 - Սիրտերուն նուաղելուն համար ու խօչերուն շատնալուն համար՝ անոնց բոլոր դռներուն վրայ սուրին վախը դրի. աւա՛ղ, անհկա փայլելու համար շինուեցաւ, մտրթելու համար սրուեցաւ: 16 - Ինքզինքդ ժողովէ. քու աջ կամ ձախ կողմդ, ուր որ երեսդ դարձած է, զարկ: 17 - Ու ես ալ ձեռքերս իրարու պիտի զարնեմ, և իմ սրամուտթիւնս պիտի հասցնեմ, ես Տէրս խօսեցայ:

18 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 19 - Որդի մարդոյ, դուն քեզի երկու ճամբայ պատրաստէ, որպէս զի Բաբելոնի թագաւորին սուրբ գայ. անոնց երկուքն ալ մէկ երկրէ պիտի ելլեն. ու տեղ մը ընարէ, քաղաքին ճամբուն գլուխը ընարէ: 20 - Ճամբայ պատրաստէ, որպէս զի Ամմոնի որդւոց Ռաբբային վրայ և Յուդայի մէջ եղող պարսպաւոր Երուսաղէմին վրայ սուր գայ:

21 - Վասն զի Բաբելոնի թագաւորը ճամբուն բաժանումին վրայ՝ երկու ճամբուն գլուխը կայնեցաւ, որպէս զի հմայութիւն ընէ. անհկա իր նետերը երերցուց, թերափիմներուն հարցուց, լերդին նայեցաւ: 22 - Անոր աջ ձեռքին մէջ հմայութիւն կար Երուսաղէմի համար, որպէս զի մեքենաներ դնեն, պատերազմի մէջ բերաննին բանան ու աղաղակով ձայն վերցնեն, դռներու

*Եթէ. երեսները

*Կա՛մ, զանոնք խոցեց

դէմ մեքենաներ դնեն, հողարլուր կանգնեն — մարտկոց շինեն: 23 - Բայց տարկա անոնց աչքերուն առջև սնտար հմայութեան մը պէս պիտի ըլլայ, +անչէ անոնց երգումներ ըրեր էին. բայց անիկա էրէնց անօրէնութիւնը պիտի յիշեցնէ, որպէս զի բռնուին:

24 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ դուք ձեր անօրէնութիւնը յիշեցուցիք, երբ ձեր յանցանքները յայտնուեցան, ու բոլոր գործերնուդ մէջ ձեր մեղքերը երևցան, և անոնք յիշեցնելուդ համար ձեռքով պիտի բռնուիք: 25 - Եւ դուն, ով պիղծ — ամբարիշտ իշխան Խորայէլի, որուն օրը հասեր է, + — անօրէնութեանդ ժամանակին վախճանը, 26 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Խոյրը վերցուր ու թագը հանէ. տարկա այսպէս չըլլար. ցածը բարձրացուր ու բարձր ցածցուր: 27 - Զանկա տակնուվրայ, տակնուվրայ, տակնուվրայ պիտի ընեմ. ու ալ պիտի չըլլայ, մինչև գոյ անիկա՝ որուն իրաւունքն է, ու անոր պիտի տամ:

28 - Եւ դուն, որդի մարդոյ, մարգարէացիր ու ըսէ, Ամմոնի որդիներուն համար ու անոնց նախատինքին համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. ու ըսես, Սուրբ, սուրբ քաշուած է, — մերթելու համար սրբուած է, *որպէս զի իր փայլումովը հասցնէ: 29 - Երբ քեզի համար ունայն տեսիլքներ կը տեսնեն, և սուտ հմայութիւններ կ'ընեն, որպէս զի քեզ սպաննուելու ամբարիշտներուն պարանոցին վրայ բերեն, որոնց օրը հասեր է, անոնց անօրէնութեանը ժամանակին վախճանը. 30 - Զանկա իր պատեանը դարձնեմ. քեզ քու ստեղծման տեղդ ու քու ծննդեանդ երկրին մէջ պիտի դառնամ. 31 - Եւ քու վրագ իմ բարկութիւնս պիտի թափեմ, քու վրագ իմ սրամտութեանս կրակովը պիտի փչեմ, ու քեզ բարբարոս մարդոց, ապականելու վարպետ եղողներուն, ձեռքը պիտի տամ: 32 - Հրոյ ճարակ պիտի ըլլաս, քու արիւնդ երկրին մէջ տեղը պիտի ըլլայ, դուն պիտի չյիշուիս. վասն զի ես Տէրս խօսեցայ:

*Կամ, խիստ շատ որքան է՝ որպէս զի փայլի

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Ու դուն, որդի մարդոյ, այս արիւնահեղ քաղաքին դատաստան պիտի ընե՞ս, դատաստան պիտի ընե՞ս. ուրեմն անոր բոլոր պղծութիւնները իրեն գիացուր, 3 - Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ով քաղաք, որ քու մէջդ արիւն կը թափես, որպէս զի քու ժամանակդ գոյ, և քու անձդ պղծելու համար քեզի դէմ կուռքեր կը շինես, 4 - Իսկ քու թափած արիւնովդ յանցաւոր եղար, ու շինած կուռքերովդ պղծուեցար, և քու օրերդ մտեցուցիր ու քու սարիներուդ հասար. անոր համար քեզ ազգերուն նախատինք, ու ամէն երկիրներու ծաղր ըլլալու տուի: 5 - Քեզի մօտ եղողները ու քեզմէ հեռու եղողները քեզ ծաղր պիտի ընեն, և վատահամբաւ աղմուկից +ուր:

6 - Ահա քու մէջդ Խորայէլի իշխանները, ամէն մէկը իր բազուկովը արիւն թափելու համար կայներ են: 7 - Քու մէջդ հայրը ու մայրը անարգեցին, քու մէջդ օտարականին բռնութիւն ըրին, քու մէջդ որբին ու որբեարիին զրկանք ըրին: 8 - Իմ սուրբ բաներս արհամարհեցիր, և իմ շաբաթներս պղծեցիր: 9 - Քու մէջդ բանասրկու մարդիկ եղան արիւն թափելու համար, ու քու մէջդ լեռներու վրայ կերան, և քու մէջդ եղեռնագործութիւն ըրին: 10 - Քու մէջդ որքան էր հօրը մերկութիւնը յայտնեց, քու մէջդ դաշտանի պատճառու անմաքուր եղող կինը բռնագատեցին: 11 - Նաև մէկը իր դրացիին կնոջ հետ պղծութիւն ըրաւ, ու մէկը եղեռնագործութիւն ըրաւ՝ իր հարսը պղծելով, և քու մէջդ ուրիշ մըն ալ իր քոյրը, իր հօրը աղջիկը, բռնագատեց: 12 - Քու մէջդ արիւն թափելու համար կաշառք առին, վաշխ ու տակափք առին, և բռնութիւն ընելով քու դրացիներէդ բան վատակեցար ազահութեամբ, ու զիս մուցար, կ'ըսէ Տէր Եհովա: 13 - Ուստի ահա քու ըրած ազահութեանդ ու քու մէջդ եղած արիւնահեղութեան համար ձեռքերս իրարու զարկի: 14 - Միթէ քու սիրագ կրնամ, դիմանալ, կամ թէ ձեռքերդ կրնան ուժովեալ այն օրերը՝ երբ ես քեզի հարուցեմ պիտի ընեմ. ես Տէրս:

խօսեցայ ու պիտի կատարեմ: 15 - Եւ քեզ ազգերու մէջ պիտի ցրուեմ, ու քեզ երկիրներու մէջ ցիրուցան պիտի ընեմ, և քու պղծութիւնդ քեզմէ պիտի հասցնեմ: 16 - Ու դուն քեզմէ պիտի պղծուիս ազգաց աչքերուն առջև, ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը:

17 - Եւ Տէրօջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 18 - Արդի մարգոյ, Իսրայէլի տունը ինծի կղկղանքի պէս եղաւ. ամէնը հալոցի մէջ՝ պղինձի, անագի, երկաթի ու կապարի պէ՝ արծաթի կղկղանք եղան: 19 - Անոր համար Տէր Եհովա պատգամ կ'ըսէ. Արովհետեւ ամէնդ կղկղանքի պէս եղաք, անոր համար ահա ես ձեզ Երուսաղէմի մէջ պիտի ժողովեմ: 20 - Ինչպէս արծաթը ու պղինձը ու երկաթը և կապարը ու անագը հալոցի մէջ կը ժողովեն, ու անոր վրայ կրակը կը փչեն՝ զանիկ հալեցնելու համար, այնպէս ձեզ իմ բարկութիւնովս ու սրամտութիւնովս պիտի ժողովեմ, և պիտի թողում ու պիտի հալեցնեմ: 21 - Եւ ձեզ մէկտեղ բերելով՝ ձեր վրայ իմ բարկութեանս կրակով պիտի փչեմ, և դուք անոր մէջ պիտի հալիք: 22 - Ինչպէս արծաթը հալոցին մէջ կը հալի, դուք ալ անոր մէջ այնպէս պիտի հալիք, ու պիտի գիտնաք որ ես Տէրս իմ սրամտութիւնս թափեցի ձեր վրայ:

23 - Եւ Տէրօջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 24 - Արդի մարգոյ, անոր բռն, Դուն այնպիսի երկիր մըն ես, որ ոչ մտքբուսած է, ոչ ալ բարկութեան օրը անձրևով թրջուած: 25 - Անոր մէջ իր մարգարէներուն դաւաճանութիւն կայ, որոնք աւար յափշտակող ու մուշտող առիւծի պէս հոգիներ կ'ուտեն. անոնք գանձ ու պատուական բաներ տուին, ու անոր մէջ անոր սրբաւորները շատցուցին: 26 - Անոր քահանաները իմ օրէնքս աւերեցին, ու իմ սուրբ բաներս պղծեցին. սուրբը պիղծէն չորսչեցին, և անմտքուրին ու մտքուրին տարբերութիւնը չգիտցուցին, և իրենց աչքերը իմ շարաթներէս ծածկեցին, ու ես անոնց մէջ պիղծ սեպուեցայ: 27 - Անոր իշխանները անոր մէջ յափշտակող գայլերու պէս՝ արիւն թափելու «- հոգի կորսնցնելու ետեւէ եղան, որպէս զի ազատութեամբ բան վատակին: 28 - Եւ անոր մարգարէները ու նայն տեսիլքներ տեսնելով՝ ու անոնց

աւառ գուշակութիւն ընելով՝ զանոնք կիրով ծեփեցին, ու ըսին, Տէր Եհովա պատգամ կ'ըսէ, թէ եւ Տէրը խօսած չէր: 29 - Երկրին ժողովուրդը մեծ զրկանք ըրին ու մեծ յափշտակութիւն ըրին, և աղքատը ու անանկը բռնադատեցին, ու օտարականին անիրաւութեամբ զրկանք ըրին: 30 - Եւ անոնցմէ մարդ մը փնտուեցի, որ պարիսպ շինէ, ու խրամատին մէջ իմ առջև կայնի երկրին համար, որպէս զի զանկա չաւրեմ. բայց չգտայ: 31 - Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի, զանոնք իմ սրամտութեանս կրակովը սպառեցի. անոնց ճամբաները իրենց գլուխը տուի, կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ ԻԳ

Բարձեալ Տէրօջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Արդի մարգոյ, երկու կիներ կային մէկ մօր աղջիկներ. 3 - Ու անոնք Եգիպտոսի մէջ պառնկութիւն ըրին, իրենց մանկութեան ատենը պառնկութիւն ըրին. անոնց ծիծերը հոն ճնշուեցան, ու անոնց կուտութեան սահմանները հոն շոշափուեցան: 4 - Եւ անոնց անունները՝ մեծինը Ողա, ու անոր քրօջը՝ Ողիբա էր. ու անոնք իմն եղան, և աղաքներ ու աղջիկներ ծնան. (ու անոնց անունները՝ Ողա Սամարիա է, ու Ողիբա Երուսաղէմ է:)

5 - Եւ Ողա քանի որ իմն էր, պառնկութիւն ըրաւ ու իր համանիներուն սիրահարեցաւ, այսինքն Ասորեստանցի գրացիներուն, 6 - Կապուտակ հագնող կուտակալներուն ու նախարարներուն, ձի հեծնող ձիաւորներուն՝ որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին: 7 - Եւ անկա պառնկութիւն ըրաւ անոնց հետ, այսինքն Ասորեստանի ամէն ընտիր որդիներուն հետ, նաև այն ամէնուն հետ՝ որոնց սիրահարեցաւ «- անոնց ամէն կուռքերովը պղծուեցաւ: 8 - Ու Եգիպտոսէ քէրձ պառնկութիւնները չթողուց. վասն զի անոր մանկութեան ատեն անոր հետ պառկեր էին, և անոր կուտութեան սահմանները շոշափեր էին, ու իրենց պառնկութիւնը անոր վրայ թափեր էին: 9 - Անոր համար զանկա իր համանիներուն ձեռքը տուի, Ասորեստանի որդիներուն ձեռքը, որոնց սիրահարած էր: 10 - Անոնք անոր մերկութիւնը յայտնեցին. անոր

աղաքները ու աղջիկները աւին , ու զանհկա սրով մեռցուցին . այսպէս անհկա կիներուն մէջ անուանի եղաւ . և անոր վրայ դատաստաններ ի գործ դրին :

11 - Աւ երբ անոր քոյրը Ողիբա տեսաւ , իր սիրահարեւրը անկէ աւելի սպաւականեցաւ . և իր պոռնկութիւնները իր քրոջը պոռնկութիւններէն աւելի շարժեց . 12 - Աւ իր դրացիներուն սիրահարեցաւ , այսինքն Ստրեստանի սրգիներուն , շքեղութեամբ հագուած կուսակալներուն ու նախարարներուն , ձի հեծնող ձիաւորներուն . որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին : 13 - Եւ տեսայ որ պղծուեցաւ , « - երկուքին ալ ճամբան մէկ եղաւ : 14 - Եւ իր պոռնկութիւնները աւելցուց , քանզի երբ պատի վրայ նկարուած մարդիկ , նօթով նկարուած Քաղդէացուց պատկերները , տեսաւ , 15 - Որոնք մէջքերնին գօտի կապած էին , և իրենց գլուխներուն վրայ *ներկուած խոյրեր* ունէին , ու ամէնը իշխաններու կերպարանքով էին , իրենց ծննդեան երկրին Բաբելոնի սրգիներուն , Քաղդէացուց , նմանութեամբ պէս , 16 - Զանա՜ իր աչքերովը տեսածին պէս անոնց սիրահարեցաւ , և անոնց Քաղդէացուց երկիրը դեսպաններ զրկեց : 17 - Աւ Բաբելոնի սրգիները անոր հետ սիրոյ անկողինը մտան , և զանհկա իրենց պոռնկութիւններով պղծեցին , ու անհկա անոնց հետ պղծուեցաւ , ու երբ անոր հոգին անոնցմէ զատուեցաւ : 18 - Եւ իր պոռնկութիւնները յայտնեց ու իր մերկութիւնը բացաւ . ուստի իմ հոգիս անկէ զատուեցաւ , ինչպէս անոր քրոջմէն զատուեք էր : 19 - Այսպէս անհկա իր պոռնկութիւնները շաացուց , յիշելով իր մանկութեան օրերը՝ Եգիպտոսի երկրին մէջ շնութիւն բրած ժամանակը . 20 - Աւ սիրահարեցաւ անոնց տարփածուներուն , որոնց մարմինը էշերու մարմին է , ու անոնց զօրութիւնը ձիերու զօրութիւն է : 21 - Եւ դուն նորէն քու մանկութեանդ պղծագործութիւնը ձեռք առիր , որ քու մանկութեանդ ծիծերուն ճշտեւէ՛ սահնակներդ Եգիպտացիներէն շօշափուեցան :

22 - Անոր համար , ով Ողիբա , Տէր

*կա՛մ , մեծ սպարօշներ

Եհովա այսպէս կ'ըսէ . Ահա ես քու վրագ պիտի արթնցնեմ՝ քու համանիներդ , որոնցմէ քու հոգիդ զատուեցաւ , ու զանոնք ամէն կողմէն քու վրագ պիտի բերեմ , 23 - Բարեւոյնի սրգիները ու բոլոր Քաղդէացիները , *Փակուղը , Սուէն ու Կուէն* և անոնց հետ Ստրեստանի բոլոր սրգիները , ամէնը շնորհալի երիտասարդներ , կուսակալներ ու նախարարներ , ամէնը ձի հեծնող զօրագլուխներ ու անուանի մարդիկ . 24 - Եւ անոնք զէնքերով , կառքերով ու անիւներով ու ժողովուրդներու բազմութիւնով քու վրագ պիտի գան , և ամէն կողմէն քեզի դէմ վահան , սուպար ու սաղաւարտ պիտի դնեն . և դատաստանը անոնց ձեռքը պիտի տամ , ու քեզ իրենց դատաստաններովը պիտի դատեն : 25 - Եւ իմ նախանձս քեզի դէմ պիտի դնեմ . ու քեզի հետ բարկութեամբ պիտի վարուին , քու քիթդ ու ականջներդ պիտի կտրեն , և քու մնացորդդ սրով պիտի իյնայ . անոնք քու աղաքներդ ու աղջիկներդ պիտի տանեն , ու քու մնացորդդ կրակով պիտի այրի : 26 - Եւ քու հանդերձներէդ քեզ պիտի մերկացնեն , ու քու պարծանքիդ զարդերը պիտի տանեն : 27 - Աւ քեզմէ պիտի դադրեցնեմ՝ քու պղծագործութիւնդ ու քու պոռնկութիւններդ , զորոնք Եգիպտոսի երկրէն Բեբէր . ու աչքերդ անոնց պիտի չվերցնես ու մէյմըն ալ Եգիպտոսը պիտի չյիշես :

28 - Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզ պիտի մտանեմ՝ անոնց ձեռքը զորոնք դուն տաեցիր , և անոնց ձեռքը որոնցմէ քու հոգիդ զատուեցաւ : 29 - Եւ անոնք քեզի հետ աւելութեամբ պիտի վարուին , ու քու բոլոր վաստակդ պիտի տանեն , և քեզ մերկ ու անծածկոյթ պիտի թողուն . ու քու պոռնկութիւններուդ մերկութիւնը , քու պղծագործութիւնդ ու պոռնկութիւնդ պիտի յայտնուին : 30 - Ազգերուն հետեւելով պոռնկութիւն ընելուդ համար և անոնց կուռքերովը պղծուելուդ համար՝ այս բաները քեզի պիտի ընեմ : 31 - Իսկ քու քրոջդ ճամբան գացիր . ես ալ անոր բաժակը քու ձեռքդ պիտի տամ : 32 - Տէր Եհովա

*կա՛մ , իշխանները , հարուստները ու աղնուականները

վա այսպէս կ'ըսէ . Իսն քու քրոջդ խորունկ ու լայն բաժակը պիտի խմես, խաղբ ու խայտառակ պիտի ըլլաս, այն քառիչ շատ բան կ'առնէ : 33 - Իսն արբեցութեամբ ու տրամու- թեամբ պիտի լցուիս, ապշութեան ու զարմացման բաժակ մըն է քու քրոջդ Սամարիայի բաժակը . 34 - Ու դուն զանհկա պիտի խմես ու պիտի քամես, և անոր կատրները պիտի լլկես, ու ստինքներդ պիտի պատուտես, քանզի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա : 35 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ը- սէ. Զիս մոռնալուդ ու կռնակիդ ե- տակը նետելուդ համար, դուն ալ քու պղծագործութիւնդ ու պոռնկութիւն- ներդ կրէ :

36 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Որդի մար- դոյ, Ողբայի ու Ողիբայի դատաստանը պիտի տեսնե՞ս. ուրեմն անոնց պղծու- թիւնները իրենց պատմէ : 37 - Վասն զի շնութիւն ըրին. ու ձեռքերնուն մէջ արիւն կայ. և իրենց կուռքերովը շնութիւն ըրին, ու իրենց ինծի ծնած տղաքն ալ կրօն անցուցին, որպէս զի անոնց կերակուր ըլլան : 38 - Զայս ալ ըրին ինծի. նոյն օրը իմ սրբարանս ան- մաքուր ըրին ու իմ շաբաթներս պղծե- ցին : 39 - Վասն զի երբ իրենց տղաքը իրենց կուռքերուն զսէցին, նոյն օրը իմ սրբարանս մտան, որպէս զի զանհկա պղծեն. և ահա իմ աման մէջ այսպէս ըրին : 40 - Ու նաև հեռուէն գալու մարդոց լաւ զրկեցիք, որոնց պատգա- մաւորներ զրկուելուն պէս՝ ահա ա- նոնք եկան . և դուն անոնց համար լուացուեցար ու աչքերուդ վրայ ծա- րոյր դրիր ու զարդերով զարդարուե- ցար. 41 - Եւ պատուական բազմոցի վրայ նստար, որուն առջև պատրասա- ուած սեղան կար, և իմ խունկս ու իւզս անոր վրայ դրիր : 42 - Ու հոն ուրախութիւն ընող բազմութեան ձայն կը լսուէր ու այն բազմութիւ մարդոցմէն զատ անապատէն գինեմոլ մարդիկ բերուեցան, որոնք անոնց ձեռ- քերը ապարանջաններ, ու անոնց գլուխները պարծանքի թագեր կը դնէին :

43 - Եւ շնութեան մէջ պառւածին վրայով ըսի, Հիմա ալ ասոր հետ պու- նրկութիւն պիտի ընես : 44 - Ու անոր

քով կը մտնէին. ինչպէս պոռնիկ կնոջ քով կը մտնեն, այնպէս ալ Ողբայի ու Ողիբայի, այն պղծագործ կիներուն, քով կը մտնէին . 45 - Բայց արդար մարդիկ շնացող կիներուն դատաստա- նովը ու արիւն թափող կիներուն դա- տաստանովը պիտի դատեն զանոնք . վասն զի անոնք շնացող կիներ են, ու անոնց ձեռքերուն մէջ արիւն կայ :

46 - Բանզի Տէր Եհովա այսպէս կ'ը- սէ. Անոնց դէմ ժողովք պիտի հանեմ, և զանոնք նեղութեան ու յափշտա- կութեան պիտի մտանեմ : 47 - Ու ժո- ղովքը զանոնք քարերով պիտի քար- կոծեն, և զանոնք իրենց սուրերովը պի- տիկտրեն. անոնց տղաքները ու աղ- ջիկները պիտի մեռցնեն, ու անոնց տուները կրակով պիտի այրեն : 48 - Ու երկրէն պղծագործութիւնը պիտի վերցնեմ, որպէս զի ամէն կիները խրատուին ու ձեր պղծագործութեանը պէս չընեն. 49 - Եւ ձեր պղծագոր- ծութիւնը ձեր վրայ պիտի դնեն, ու դուք ձեր կուռքերուն մեղքերը պիտի կրէք . ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէր Եհովա :

ԳԼ ԻԳ

Եւ իններորդ տարին տասներորդ ամիսը, ամսուն տասներորդ օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, դուն քեզի այս օրուն ան- նունը՝ բուն այս օրը գրէ . Բաբելոնի թագաւորը բուն այս օրը Երուսաղէմի մօտեցաւ. 3 - Եւ այն ապտամբներուն տանը առակ խօսիս, ու անոնց ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Կաթսան գիր, զանից գիր ու մէջն ալ ջուր լե- ցուր : 4 - Անոր կատրները, ամէն աղէկ կատրները, ազգըր և ուրը, անոր մէջ ժողովէ, « զանից » ընտիր սակորներով լեցուր : 5 - Ոչխարներուն ընտիրները առ ու սակորներն ալ տակը դիզէ, զա- նհկա խիտ շաւ եռացուր, այնպէս որ մէջի սակորներն ալ եփին :

6 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Վայ արիւնահեղ քաղաքին, այն կաթսային, որուն ժանգը իր մէջ է, ու ժանգը մէջէն ելած չէ. զանհկա իր Գլի կատրներովը հանէ, անոր վրայ վիճակ չձգուի. 7 - Վասն զի անոր ա- րիւնը իր մէջ է. զանհկա չոր ապառա- ժի վրայ դրաւ, զանհկա գետնի վրայ

*Կա՛մ, կրծես

չթափեց որ զանկա հողով ծածկէ :
 8 - Ի՛մ սրամառութիւնս հանելու - վրէժ
 առնելու համար՝ անոր արիւնը չոր ա-
 պառածի վրայ դրի որպէս զի չծած-
 կուի : 9 - Անոր համար Տէր Եհովա այս-
 պէս կ'ըսէ . Վա՛յ արիւնահեղ քաղա-
 քին, ես ալ կրակին դէպը պիտի մեծ-
 ցընեմ : 10 - Փայտերը շատցուր, կրակը
 բռնկցուր՝ որպէս զի միտը հալի, հա-
 մեֆներ ալ դիր, ու սակորները այրին :
 11 - Ետքը պարապ խառն կայծերուն
 վրայ դիր, որպէս զի պղինձը տաքնայ
 ու այրի, ու մէջի պղծութիւնը հալի
 - ժանգը հատնի : 12 - Անկա աշ-
 խատութիւնով զի՞ յոգնեցուց, ու
 անոր շատ ժանգը իրմէ չելաւ, անոր
 ժանգը կրակով շեղու : 13 - Քու ան-
 մաքրութեանդ մէջ պղծագործու-
 թիւն կայ . որովհետեւ քեզ *մաք-
 րելու աշխատեցայ՝, ու դուն չմաք-
 րուեցար, այսուհետեւ քու անմաքրու-
 թեանդ պիտի չմաքրուիս, մինչև որ
 իմ բարկութիւնս քու վրայ չիջեցնեմ :
 14 - Ես Տէրս խօսեցայ, ի՛մ խօսքս՝ պի-
 տի գայ, ու զանիկա պիտի կատարեմ,
 †պիտի չներեմ՝ ու պիտի չխնայեմ և
 պիտի չզղջամ . քու ճամբաներուդ ու
 քու գործերուդ համեմատ պիտի դատ-
 ուիս, կ'ըսէ Տէր Եհովա :

15 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
 ըսելով, 16 - Արդի մարդոյ, ահա ես
 հարուածով մը քու աչքերուդ ցան-
 կութիւնը քեզմէ պիտի առնեմ . ու
 դուն չողբաս ու չլաս և քու աչքերդ
 արցունք չգայ : 17 - Լուութեամբ ըլլայ
 քու հեծութիւնդ, մեռելի սուգ մի
 բռներ . քու ապարօշդ գլուխդ փաթ-
 թէ, կօշիկներդ սաքերդ հագիր ու
 շրթունքդ մի ծածկեր և մարդոց հացը
 մի ուտեր :

18 - Եւ առաւօտուն ժողովուրդին
 խօսեցայ, ու իրիկունը կինս մեռաւ, ու
 հեռեւեալ առաւօտուն ինծի հրամայ-
 ուածը բրի : 19 - Եւ ժողովուրդը ինծի
 ըսաւ, Մեզի չե՞ս պատմեր թէ այս
 քու ըրածներէդ ի՞նչ պիտի ի՛մանանք
 մենք :

20 - Ու ես անոնց բրի, Տէրոջը խօսքը
 ինծի եղաւ՝ ըսելով, 21 - Խորայէլի տանը
 բռէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ահա

ես իմ՝ սրբարանս, ձեր զօրութեանը
 պարծանքը, ձեր աչքերուն ցանկու-
 թիւնը ու ձեր հոգւոյն խնայածը, պի-
 տի պղծեմ . և ձեր թողուցած աղաք-
 ներնիդ ու աղջիկներնիդ սրով պիտի
 խնան : 22 - Եւ դուք իմ՝ ըրածիս պէս
 պիտի ընէք . Յէ՛ր շրթունքները պիտի
 չծածկէք, ու մարդոց հացը պիտի չու-
 տէք : 23 - Ու ձեր ապարօշները գլուխ-
 ներնիդ, և ձեր կօշիկները սաքերնիդ
 պիտի ըլլան . պիտի չողբաք ու պիտի
 չլաք, հապա ձեր անօրէնութիւններովը
 պիտի մաշիք, և իրարու հետ պիտի հե-
 ծէք : 24 - Ու Եզեկիէլ ձեզի նշան մըն
 է . դուք անոր բոլոր ըրածին պէս պիտի
 ընէք . ու երբ տիկա ըլլայ, պիտի
 գիտնաք թէ ես եմ՝ Տէր Եհովա :

25 - Եւ դուն, սրդի մարդոյ, երբ ես
 անոնցմէ առնեմ անոնց զօրութիւնը,
 անոնց պարծանքի ցնծութիւնը, անոնց
 աչքերուն ցանկութիւնը ու անոնց
 հոգւոյն սիրած աղաքները ու աղջիկ-
 ները, 26 - Ահա այն օրը ազատուածը
 քեզի պիտի գայ, և †ուկանջներուդ
 պիտի պատմէ : 27 - Այն օրը քու բե-
 րանդ պիտի բացուի ազատուածին, ու
 պիտի խօսիս և ալ համը չըլլաս . ու
 դուն անոնց նշան պիտի ըլլաս, ու պի-
 տի գիտնան թէ ես եմ՝ Տէրը :

ԳԼ ԻԵ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
 ըսելով, 2 - Արդի մարդոյ, երեսդ Ամ-
 մոնի սրդիներուն դարձուր, ու անոնց
 վրայ մարգարէութիւն ըրէ : 3 - Եւ Ամ-
 մոնի սրդիներուն բռէ, Տէր Եհովայի
 խօսքը մտիկ ըրէք . Տէր Եհովա այսպէս
 կ'ըսէ . Արովհետեւ դուն Վա՛յ ըսիր իմ՝
 սրբարանիս վրայով՝ երբ պղծուեցաւ, ու
 Խորայէլի երկրին վրայով՝ երբ աւերակ
 եղաւ, և Յուդայի տանը վրայով՝ երբ
 գերութեան գնաց : 4 - Անոր համար
 ահա ես քեզ արեւելքի բնակիչներուն
 ժառանգութիւն կու տամ . ու քու
 մէջդ իրենց գեղերը պիտի հաստատեն,
 ու քու մէջդ իրենց վրանները պիտի
 դնեն . քու պատուներդ պիտի ուտեն և
 քու կաթիդ պիտի խմեն : 5 - Ու Ռաբ-
 բան ուղտերու փարսիս և Ամմոնի սր-
 դիներուն երկրը հօտերու մակաղաթեղ
 պիտի ընեմ, ու պիտի գիտնաք թէ ես
 եմ՝ Տէրը : 6 - Վասն զի Տէր Եհովա
 այսպէս կ'ըսէ . Արովհետեւ դուն ծափ

* Եբբ. մաքրեցի
 † Կ-մ, պիտի չձգեմ ի՛մ ԳԻՄԱՍՐԱՍ
 ԲԻՆՍ

զարկիր, ու ոտքդ գետինը զարկիր, ու Խորայէլի երկրին վրայ քու հոգւոյդ բոլոր արհամարհանքովը ուրախացար, 7 - Անոր համար ահա ես իմ ձեռքս քու վրայդ պիտի երկնցնեմ, ու քեզ ազգերուն յափշտակութիւն ըլլալու պիտի տամ, և քեզ ժողովուրդներէն պիտի կտրեմ, ու քեզ երկիրներուն մէջէն պիտի կորսնցնեմ: քեզ բնաջինջ պիտի ընեմ, ու պիտի գիտնաս թէ ես եմ՝ Տէրը:

8 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Արովհեակե Մովաբ ու Սէիր ըսին թէ Ահա Յուդայի տունը ամէն ազգերուն պէս է, 9 - Անոր համար ահա ես Մովաբի սասմանը եր քաղաքներէն, իր ծայրը եղող քաղաքներէն, երկրին պարծանքը եղող Բեթեհեմութի, Բէէլմենի ու Կարիաթեմի կողմէն պիտի բանամ: 10 - Արեւելքի բնակիչներուն, «բոգ» զի Ամմոնի որդիներուն վրայ գան. ու այն երկիրը անոնց ժառանգութիւն պիտի տամ, որպէս զի Ամմոնի որդիները ազգերուն մէջ չյիշուին: 11 - Մովաբի մէջ ալ դատաստաններ ի գործ պիտի դնեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը:

12 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Արովհեակե Եգովմ Յուդայի տանը դէմ գնելով՝ վրէժ առաւ, և անկէ վրէժ առնելով՝ մեծ յանցանք բրաւ, 13 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Եգովմի վրայ անշուշտ ձեռքս պիտի երկնցնեմ, և մարդը ու անասունը անկէ պիտի կտրեմ, և զանկա անապատ պիտի ընեմ Թեմանէ, ու մինչև Դեզան սրով պիտի իյնան: 14 - Եւ իմ ժողովուրդիս Խորայէլի ձեռքով իմ վրէժխնդրութիւնս Եգովմի վրայ պիտի կատարեմ. ու անոնք իմ սրամբտութեանս ու բարկութեանս համեմատ պիտի ընեն Եգովմի մէջ. և իմ վրէժխնդրութիւնս պիտի գիտնան, կ'ըսէ Տէր Եհովա:

15 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Արովհեակե Փղշաացիք վրէժխնդրութեամբ վարուեցան, ու հոգիի արհամարհանքով վրէժ առին՝ հինաւուրց պատելութեամբ աւրելով, 16 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես իմ ձեռքս Փղշաացւոց վրայ պիտի երկնցընեմ, և Բերեթիները պիտի կտրեմ, ու ծովեզերքը եղողներուն մնացորդը բնաջինջ պիտի ընեմ. 17 - Եւ անոնց վրայ իմ սրամտութեանս յանդիմանու-

թիւններովը մեծ վրէժխնդրութիւններ պիտի կատարեմ. ու երբ իմ վրէժս անոնցմէ առնեմ, պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը:

ԳԼ. ԻԶ

Աւելաւ որ մետասաներորդ տարին, ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Արգի մարդոյ, որովհեակե Տիւրոս Երուսաղէմի վրայով ըսաւ, Վա՛՛շ, ժողովուրդներուն դրոները կտրեցան, անոնք անոնք ինծի փոխադրուեցաւ, անոր անապատ դառնալովը ես պիտի լեցուիմ. 3 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ու Տիւրոս, ու քու վրայդ շատ ազգեր պիտի յարուցանեմ, ինչպէս ծովը իր ալիքները կը յարուցանէ. 4 - Եւ անոնք Տիւրոսի պարիսպները պիտի աւրեն, ու անոր աշտարակները պիտի փլցնեն, ու ես անոր հողը անկէ պիտի աւլեմ, և զանիկա չոր ապառաժի պիտի դարձնեմ: 5 - Անիկա ծովուն մէջ ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլայ, վտան զի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա, ու անիկա ազգերուն աւար պիտի ըլլայ: 6 - Եւ անոր աղջիկները որոնք դաշտի մէջ են, սրով պիտի սպաննուին, և Ժաբթի պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը:

7 - Վտան զի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես հիւսիսէն Տիւրոսի վրայ պիտի բերեմ թագաւորաց թագաւորը, Բաբելոնի Նաբուգոդոնոսար թագաւորը, ձիերով, կառքերով, ձիաւորներով, բազմութիւնով ու շատ ժողովուրդով: 8 - Անիկա քու աղջիկներդ դաշտի մէջ սրով պիտի մեռցնէ, և քեզի դէմ մարտկոց պիտի շինէ, ու քեզի դէմ հողաբլուր պիտի կանգնէ, ու քեզի դէմ վահան պիտի վերցնէ. 9 - Եւ քու պարիսպներուդ դէմ իր պատերազմական մեքենաները պիտի դնէ, ու իր տապարներովը քու աշտարակներդ պիտի փլցնէ: 10 - Անոր ձիերուն բազմութենէն անոնց փոշին քեզ պիտի ծածկէ. ձիաւորներուն ու անիւներուն և կառքերուն ձայնէն քու պարիսպներդ պիտի սասանին, երբ ինք քու դռներէդ մտնէ՝ պարիսպը փլած քաղաքի մէջ մտնողներուն պէս: 11 - Քու ամէն փողոցներդ իր ձիերուն սմբակներովը պիտի կոխէ, քու ժողո-

վուրդդ սրով պիտի սպաննէ , և քու ամուսնը բերդերդ գեանի հետ հաւասար պիտի ըլլան : 12 - Աւ քու հարբատութիւնդ պիտի թալլեն , ու ապրանքներդ աւար պիտի տանեն , և քու պարիսպներդ պիտի փլցնեն , ու գեղեցիկ տուներդ պիտի քակեն . և քու քարերդ , փայտերդ ու հողդ ջուրերուն մէջ պիտի ձգեն : 13 - Եւ քու երգերուդ ազաղակը պիտի դադրեցնեմ , ու քու քնարներուդ ձայնը մէյմըն ալ պիտի չլսուի : 14 - Եւ քեզ չոր ապառաժի պիտի դարձնեմ , ուսկաններ փութուտեղ պիտի ըլլան , մէյմըն ալ պիտի չշինուիս . վասն զի ես Տէրս խօսեցայ , կ'ըսէ Տէր Եհովա :

15 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ Տիւրոսի . Միթէ քու կործանումիդ ձայնէն կղզիները պիտի շտատանի՞ն , երբ քու մէջդ կոտորած ըլլալով՝ վիրաւորները հեծեն : 16 - Այն ատեն ծովուն բոլոր իշխանները իրենց աթոռներուն վրայէն պիտի իջնեն , և իրենց պատմութեանները պիտի հանեն , ու իրենց նկարագործ հանդերձները պիտի մերկանան , սուկում պիտի հագնին , գեանի վրայ պիտի նստին , և ամէն վայրկեան պիտի սարսափին , ու քու վրայովդ պիտի ազնին . 17 - Եւ քու վրայովդ սղբ *ընելով՝ քեզի պիտի ըսեն , Ինչպէս կործանեցար , ով ծովաբնակ անուանի քաղաք , որ ծովուն մէջ զօրաւոր էիր դուն ու քու բնակիչներդ , որ ահարկու էիք թուգերէն բոլոր բնակիչներուն : 18 - Հիմա քու կործանումիդ օրը կղզիները պիտի դողան , ու ծովու մէջ եղող կղզիները քու բնաջինջ ըլլալուդ վրայով պիտի ազնին :

19 - Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . երբ քեզ աւերակ քաղաք մը ընեմ այն քաղաքներուն պէս՝ որոնք բնակիչ չունին , և քու վրագ անդունդը հանեմ , ու շատ ջուրերը քեզ ծածկեն , 20 - Եւ քեզ գուրը իջնողներուն հետ հին ժողովուրդին իջեցնեմ , ու քեզ գուրը իջնողներուն հետ գեանին տակերը , յաւիտեանական աւերակներուն մէջ նստեցնեմ , այնպէս որ Դեյժըն ալ չբնակուիս , այն ատեն ես կենդանեաց երկրին մէջ փառք պիտի դնեմ : 21 - Քեզ ահա՞ն ստեղծեմ պիտի ընեմ , ու պիտի սննչանաս . ու երբ փնտռուիս ,

ա՛լ յաւիտեան պիտի չգտնուիս , կ'ըսէ Տէր Եհովա :

ԳԼ. ԻԷ

Բարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով , 2 - Իսն , որդի մարդոյ , Տիւրոսի վրայ սղբ ըրէ . 3 - Եւ Տիւրոսի ըսէ , Ով ծովուն մուտքերը բնակող , շատ կղզիներու մէջ ժողովուրդներուն հետ վաճառականութիւն ընող , Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ով Տիւրոս , դուն ըսիր թէ Ես գեղեցկութեան մէջ կատարեալ եմ : 4 - Քու սահմաններդ *ծովուն մէջտեղն՝ են . քեզ շինողները քու գեղեցկութիւնդ կատարեալ ըրին :

5 - Անոնք քու ամէն նախատակներդ Սանիրի մայրէն շինեցին . Լիբանանէ եղևիններ առին , որպէս զի քեզի կայմեր շինեն : 6 - Քու թիերդ Բասանի կաղնիներէն շինեցին , քու քնատարաններդ կիսացուց կղզիներէն էլ՝ առախէ շինեցին փղսկրով ուրոն : 7 - Քու բացած առագաստդ Եգիպտոսի նկարագործ բեհեզն էր . քու ծածկոցդ Եղիսայի կղզիներուն կապուտակ ու ծիրանեգոյն կերպար էր : 8 - Միգանի ու Արուազի բնակիչները քու թիավարներդ էին . քու մէջդ եղող իմաստուններդ , ով Տիւրոս , անոնք քու նաւավարներդ էին : 9 - Գեբաղի ծերերը ու անոր իմաստունները քու մէջդ էին՝ քու ծածկուած նաւերդ նորոգելու համար . ծովուն բոլոր նաւերը ու անոնց նաւատարները քու առուտուրդ ընելու համար քու մէջդ էին : 10 - Քու զօրքերուդ մէջ պատերազմական մարդիկդ Պարսք , Աուգացիք ու Փուգացիք էին . քու մէջդ վահան ու սաղաւարտ կախող անոնք էին , անոնք քեզ փառաւորեցին : 11 - Արուաղացիք քու աշտարակներուդ մէջ էին . անոնք իրենց վահանները շուրջանակի քու պարիսպներուդ վրայ , ու քիւմուսացիք քու աշտարակներուդ մէջ էին . անոնք իրենց վահանները շուրջանակի քու պարիսպներուդ վրայ կը կախէին , անոնք քու գեղեցկութիւնդ կատարեալ ըրին :

12 - Ամէն արեւի ապրանքի շատ ըլ-

*ԵՔԸ. վերցնելով

*ԵՔԸ. ծովերուն սրտին մէջն
 †ԿՄԺ, ստիստականներդ
 ‡ԿՄԺ, քաջասիրտները

լալուն համար՝ Թարսիսի բռնիչները քու վաճառականներդ էին . անոնք քու վաճառանոցներուդ մէջ արծաթի , երկաթի , անագի ու կապարի առուտուր կ'ընէին: 13 - Յաւան, Թութէլ ու Մոսք քու վաճառականներդ էին . անոնք քեզի հետ մարդոց հոգիներու ու պղնձէ ամաններու առուտուր կ'ընէին: 14 - Թորգոմայի առնէն քու վաճառանոցներդ կը բերէին ձիեր ու ձիաւորներ և ջորիներ: 15 - Իեդանի որդիները քու վաճառականներդ էին . շատ կզգիներու վաճառականութիւնը քու ձեռքդ էր . անոնք քեզի հետ փղոսկրի ժանիքներով ու ոպնիազով փոխանակութիւն կ'ընէին: 16 - Ձեռագործներուդ շատութեանը համար Ասորիները քու վաճառականներդ էին . և քու վաճառանոցներուդ մէջ կարկեսանի, ծիրանեգոյնի , նկարագործ կերպարի, բեհեզի, բուսերու ու կարմիր յակինթի առուտուր կ'ընէին: 17 - Յուգա ու Իորայէլի երկիրը քու վաճառականներդ էին . անոնք քեզի հետ Մեննիթի ցորենի , խմորեղէնի , մեղրի , իւղի ու բալլասանի առուտուր կ'ընէին: 18 - Ձեռագործներուդ շատութենէն, ամէն քեզի ապրանքի շատ բլլալուն համար, Իամասկոս քու վաճառականդ էր՝ Բեղբոնի գինիով ու ձերմակ բուրգով: 19 - *Վէդան ու Յաւան քու վաճառանոցներդ մանած կը բերէին . քու վաճառքներուդ մէջ բանուած երկաթ , կտտիա ու խունկեղէզն կար: 20 - Կառքերու համար պատառակալներ բերող վաճառականդ Իեդան էր: 21 - Արաբացիք ու Կեդարի բոլոր իշխանները քու պատրաստ վաճառականներդ էին . անոնք քեզի հետ գաւնուկներու, խոյերու ու նոխազներու առուտուր կ'ընէին: 22 - Սարայի ու Ռեգմայի վաճառականները քու վաճառականներդ էին, անոնք քու վաճառանոցներուդ մէջ ամէն քեզի ընտիր խունկերու , և ամէն քեզի պատուական քարերու ու սկիի առուտուր կ'ընէին: 23 - Խառան, Իֆաննէ ու Եդեմ, Սարայի վաճառականները , Ասրեստան ու Քաղմուգ քու վաճառականներդ էին: 24 - Անոնք քու վաճառա-

նոցներուդ մէջ քեզի հետ շքեղ հանդերձներով , կապուտակ ու նկարագործ վերարկուներով ու երփնագեղ զգեստներով լեցած ու չուաններով կապուած եղենափայտէ սնտուկներու առուտուր կ'ընէին: 25 - Թարսիսի նաւերը քու առուտուրիդ համար կը պտրակէին . ու դուն լեցուեցար ու խիստ փառաւոր եղար ծովուն մէջատեղը:

26 - Քու թիավարներդ քեզ շատ ջուրերուն բերին . արեւելեան հովր քեզ ծովուն մէջատեղը կտարեց: 27 - Քու ապրանքներդ ու վաճառանոցներդ ու առուտուրդ , քու նաւաստիներդ ու նաւավարներդ , քու նաւերդ նորագողները ու քեզի հետ առուտուր ընողները , և քու մէջդ եղող բոլոր պատերազմական մարդիկդ , ու քու մէջդ եղող բոլոր բազմութիւնդ քու կործանումիդ օրը ծովուն մէջատեղը պիտի իյնան: 28 - Քու նաւավարներուդ ազաղակին ձայնէն արուարձանները պիտի սարսին: 29 - Եւ ամէն թի քաշող նաւաստիները , ամէն ծովու նաւավարները իրենց նաւերէն պիտի իջնեն ու ցամաքը պիտի կայնին . 30 - Եւ իրենց ձայնը քու վրայովդ լսել պիտի տան , ու դառնապէս պիտի ազաղակեն , և իրենց գլուխներուն վրայ հող պիտի դնեն , ու մոխրի մէջ պիտի թաւային . 31 - Ու քեզի համար մազերնին պիտի փետեն և քուրձ պիտի հագնին . ու քեզի համար սրտի ցաւով ու դառն ողբով պիտի լան : 32 - Եւ իրենց սուգին մէջ քեզի համար ողբալու յայն պիտի վերցնեն , ու քու վրադ ողբան ըսելով , Ի՞նչ քաղա կար Տիւրոսի նման՝ որ ծովուն մէջ բնաջինջ եղաւ: 33 - Քանի որ քու վաճառքներդ ծովէն կ'ելլէին , շատ ազգեր կը կըշտացնէիր , շատ ապրանքներովդ ու առուտուրներովդ երկրի թագաւորները կը հարստացնէիր : 34 - Չուրերուն խորութեանը մէջ ծովերէն կտարուած ատենդ՝ քու վաճառականութիւնդ ու բոլոր բազմութիւնդ քու մէջդ ինկան: 35 - Կզգիներուն բոլոր բնակիչները քու վրայովդ տաշեցան , ու անոնց թագաւորները խիստ զարհուրեցան , երէնց երեսները դեղնեցան : 36 - Ազգերուն մէջ վաճառականները քու վրադ սուլեցին , դուն ստկուով պարծաւ եղար և յաւիտեան ոչնչացար :

*Կա՛մ, Եւ Իան
†Կա՛մ, Քաղանէ

ԳԼ. ԻԸ

Ե Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարգոյ, Տիւրոսի իշխանին ըսէ թէ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ քու սիրտդ հպարտացաւ, ու ըսիր թէ Ես առաւել մըն եմ, ես ծովուն մէջտեղը Աստուծոյ աթոռը կը նստիմ. սակայն դուն մարգ. ես ու ոչ թէ Աստուած, թէև քու սիրտդ Աստուծոյ սրտին տեղ գրիր. 3-Ահա դուն Գանիէլէ իմաստուն ես, բնաւ գաղանիք մը քեզմէ չպահուեցաւ. 4 - Քու իմաստութիւնովդ ու հանճարովդ քեզի հարստութիւն ստացար, և գանձերուդ մէջ սկիւն ու արծաթ ժողովեցիր: 5 - Շատ իմաստութիւնովդ * - վաճառականութիւնովդ քու հարստութիւնդ շատցուցիր, և քու հարստութեանդ պատճառաւ սիրտդ հպարտացաւ:

6 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ դուն քու սիրտդ Աստուծոյ սրտին տեղ գրիր, 7 - Անոր համար ահա ես քու վրայ օտարներ, աղագց բռնաւորները, պիտի բերեմ. և անոնք քու իմաստութեանդ գեղեցկութեանը վրայ սուրբերնին պիտի քաշեն, ու քու վայելչութիւնդ պիտի ապականեն. 8 - Քեզ գուբը պիտի իջեցրնեն, ու ծովուն մէջտեղը վիրաւորներուն մահովը պիտի մեռնիս: 9 - Միթէ քեզ սպաննողներուն առջև պիտի կրնամ ըսել թէ Ես Աստուած եմ. դուն քեզ մեռցնողներուն ձեռքին մէջ մարդ պիտի ըլլաս ու ոչ թէ Աստուած: 10 - Օտարներուն ձեռքով՝ անթլփառներուն մահովը պիտի մեռնիս, քանզի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա:

11 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 12 - Որդի մարգոյ, Տիւրոսի թագաւորին վրայով սղբ բրէ, ու անոր ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իսկ որ կատարելութեան կնիքն ես, իմաստութեամբ լեցուած՝ ու գեղեցկութեան մէջ կատարեալ ես, 13 - Իսկ Աստուծոյ դրախտին, Եգեմի, մէջ էիր, քու ծածկոցդ ամէն պատուական քարերն էին, սարգիտն, տպագիտն ու ագամանդ, սակեքար, եղնգնաքար և յասպիս, շափիւղայ, կարկէհան և զմբուխտ ու սկիւն. քու թմբուկներուդ ու սրինգներուդ գործը քու սակղման օրդ քեզի պատրաստուեցաւ: 14 - Իսկ

*տարածուած * - ծածկոց քերովրէ մըն էիր, ու ես քեզ դրի. և դուն Աստուծոյ սուրբ լեռանը վրայ էիր, դուն հրեղէն քարերուն մէջտեղերը կը շրջէիր: 15 - Իսկ քու ճամբաներուդ մէջ կատարեալ էիր, քու սակղման օրդ մինչև *յն օրը՝ որ քու վրայ անօրէնութիւն գտնուեցաւ: 16 - Իսկ առաւտուրիդ շատութեանը համար քու մէջդ գրկանքով լեցուցին, ու մեղք գործեցիր. ես ալ քեզ Աստուծոյ լեռնէն իբրև պիղծ վար նետեցի, և քեզ, ով ծածկոց քերովրէ, հրեղէն քարերուն մէջէն բնաջինջ բրի: 17 - Իսկ գեղեցկութեանդ համար սիրտդ հպարտացաւ, քու վայելչութեանդ պատճառաւ քու իմաստութիւնդ աւրեցիր. ես ալ քեզ գետինը նետեցի, քեզ թագաւորներուն առջև դրի տեսարան ըլլալու համար: 18 - Իսկ խարդախ վաճառականութիւնովդ ըբժ շատ անօրէնութիւններովդ քու սրբութիւններդ պղծեցիր. ես ալ քու մէջէդ կրակ հանեցի, անկիւս քեզ կերաւ, ու ամէն քեզ տեսնողներուն առջև քեզ գեանի վրայ մոխիր բրի: 19 - Ազգերուն մէջ ամէն քեզ ճանչցողները քու վրայովդ ապշեցան. դուն սակուածի պատճառաւ եղար ու յաւիտեան ոչնչացար:

20 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 21 - Որդի մարգոյ, երեսդ Սիդոնի դարձուր, ու անոր վրայով մարգարէութիւն բրէ, 22 - Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Սիդոն, և քու մէջդ պիտի փառաւորուիմ. ու երբ անոր մէջ դատաստաններ բնեմ, ու անոր մէջ սուրբ սեպուիմ, պիտի գիանան թէ ես եմ Տէրը: 23 - Վասն զի անոր մէջ ժանտախտ ու անոր փողոցներուն մէջ արիւն պիտի զրկեմ. և շուրջանակի անոր վրայ եղող սրովը անոր մէջ վիրաւորներ պիտի իյնան. ու պիտի գիանան թէ ես եմ Տէրը: 24 - Եւ Իսրայէլի տանը մէյմըն ալ խայթող տատասկ ու ցաւցնող փուշ պիտի չըլլայ՝ իրենց բոլորաիքը եղող զիրենք ամէն նախատողներէն. ու պիտի գիանան թէ ես եմ Տէր Եհովա:

25 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Երբ Իսրայէլի տանը ժողովեմ այն ժողովուրդներէն՝ որոնց մէջ ցրուուած են,

*կամ, օծուած

այն առե՛ն անոնց մէջ ազգաց աչքերուն առջև սուրբ պիտի սեպուիմ. ու անոնք պիտի բնակին իրենց երկրին մէջ, զոր ես իմ Յակոբ ծառայիս տուի: 26 - Եւ անոր մէջ ապահովութեամբ պիտի բնակին, ու տուներ պիտի շինեն և այգիներ պիտի անկեն. ու երբ դատատաններ ի գործ դնեմ՝ ամէն անոնց բոլորաիքը եղողներուն վրայ՝ որ զանոնք նախատեցին, անոնք ապահովութեամբ պիտի բնակին, ու պիտի գիտնան թէ ես եմ՝ իրենց Տէր Աստուածը:

ԳԼ. ԽԹ

Տասներորդ տարին, տասներորդ ամսուն երկուսասներորդ օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, երեսդ Եգիպտոսի Փարաւոն թագաւորին դարձուր, ու անոր դէմ ու բոլոր Եգիպտոսի դէմ՝ մարգարեութիւն ըրէ: 3 - Խօսէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Եգիպտոսի Փարաւոն թագաւոր, քու գետերուդ մէջ պառկող մեծ վիշապ, որ կ'ըսես թէ իմ գետս իմն է, ու զանոնք ես ինծի համար շինեցի: 4 - Բայց ես քու կզակներուդ կարթեր պիտի անցնեմ; և քու գետերուդ ձուկերը քու թեփերուդ պիտի փակցնեմ, ու քեզ գետերուդ մէջէն պիտի հանեմ, ու գետերուդ բոլոր ձուկերը քու թեփերուդ պիտի փակչին: 5 - Եւ քեզ ու գետերուդ բոլոր ձուկերը անապատը պիտի նետեմ. դուն դաշտի երեսին վրայ պիտի իյնաս - պիտի չժողվուիս և չամփոփուիս. քեզ երկրի գազաններուն ու երկինքի թռչուններուն կերակուր տուի: 6 - Աւ Եգիպտոսի բոլոր բնակիչները պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը, վասն զի Խորայէլի տանը եղէգէ ցուպ եղան: 7 - Երբ անոնք քեզ ձեռքով բռնեցին, դուն կոտորեցար ու անոնց բոլոր *բազուկը ճեղքեցիր. ու երբ քեզի կռթնեցան, փշուռեցար ու անոնց բոլոր մէջքը դողացուցիր:

8 - Ասոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քու վրագ սուր պիտի բերեմ և մարդը ու անասունը քեզմէ պիտի կոտորեմ: 9 - Աւ Եգիպտոսի երկիրը աւերակ ու անապատ պիտի ըլլայ, ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը. որով-

հետև անիկա ըսաւ, Գետը իմն է, ու զանոնք ես շինեցի: 10 - Անոր համար ահա ես քեզի և քու գետերուդ դէմ եմ, ու Եգիպտոսի երկիրը Մագդոլէ մինչև Սուհէն ու մինչև Եթէովպացոց սահմանը աւերակ - անշէն անապատ պիտի ընեմ: 11 - Անկէ մարդու սաք պիտի չանցնի, ոչ ալ անասունի սաք անկէ պիտի անցնի, և քառասուն տարի անբնակ պիտի մնայ: 12 - Աւ Եգիպտոսի երկիրը ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ընեմ, և անոր քաղաքները աւրուած քաղաքներու մէջ քառասուն տարի ամայի պիտի մնան, ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, ու զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ:

13 - Սակայն Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Բառասուն տարիէն ետքը Եգիպտացիները պիտի ժողվեմ՝ այն ազգերէն որոնց մէջ ցրուեցան: 14 - Աւ Եգիպտացոց գերութիւնը ետ պիտի դարձրնեմ, և զանոնք Պաթուրէսի երկիրը, իրենց հայրենի երկիրը, պիտի դարձրնեմ, ու հոն ցած թագաւորութիւն մը պիտի ըլլան: 15 - Թագաւորութիւններուն խիստ ցածը պիտի ըլլայ, ու մէյմըն ալ ազգերուն վրայ պիտի չբարձրանայ. վասն զի զանոնք պիտի պզտիկցնեմ, որպէս զի ազգերուն վրայ չաիրեն: 16 - Եւ անոնք մէյմըն ալ Խորայէլի տանը ապաւինութիւն պիտի չըլլան, որ իրենց ետեկէն երթալնուն անօրէնութիւնը յիշուի. ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէր Եհովա:

17 - Աւ եղաւ որ քսանրեօթներորդ տարին, առաջին ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 18 - Որդի մարդոյ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր զօրքը մեծ ծառայութեան գործածեց Տիւրոսի դէմ. ամէն գլուխ կնտացաւ ու ամէն ուսին մորթը ելաւ. սակայն իրեն ու իր զօրքին հասուցում մը չեղաւ Տիւրոսէ այն ծառայութեան համար զոր անոր դէմ ըրաւ: 19 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի երկիրը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին պիտի տամ. ու անոր բազմութիւնը պիտի առնէ, և անոր կողպաւտը պիտի կողպաօք, ու անոր աւարը պիտի յափշտակէ, և ասիկա անոր զօրքին վարձք մը պիտի ըլլայ: 20 - Հոն ըրած գործին համար Եգիպ-

*կամ, սուր

տասի երկիրը անոր տուի, վասն զի ինծի համար աշխատեցան, կ'ըսէ Տէր Եհովա: 21 - Այն օրը Խորայէլի տանը եղջիւրը պիտի բուռցնեմ, ու անոնց մէջ քեզի բերնի բացութիւն պիտի տամ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

ԳԼ Լ

Բարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ողբացէք «- ըհ+», Աւա՛ղ, ցա՛ւի օր. 3 - Վասն զի օրը մօտ է, Տէրոջը օրը մօտ է, անիկա ամպոս օր է. ազգերուն ժամանակը պիտի ըլլայ: 4 - Ու Եգիպտոսի վրայ սուր պիտի գայ, ու Եթէովպոսի մէջ սաստիկ խռովութիւն պիտի ըլլայ, երբ Եգիպտոսի մէջ վիրաւորներ իյնան. և անոր բազմութիւնը պիտի առնեն, ու անոր հիմերը պիտի կործանին: 5 - Եթէովպոսիք, Փուգոսիք և Ղուգոսիք ու բոլոր խառնիճաղանճ ժողովուրդը և Գուգոսիք և ուրտի երկրին որդիները անոնց հետ մէկտեղ սրով պիտի իյնան: 6 - Տէրը այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի օգնականներն ալ պիտի իյնան, ու անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի խոնարհի. Մագդողէ մինչև Սուհէն սրով պիտի իյնան անոր մէջ, կ'ըսէ Տէր Եհովա. 7 - Ու ամոյսացած երկիրներու մէջ ամոյսի պիտի ըլլան, և անոր քաղաքները կործանուած քաղաքներու մէջ պիտի ըլլան: 8 - Ու երբ Եգիպտոսի մէջ կրակ ձգեմ, ու անոր բոլոր օգնականները կտարին, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը: 9 - Այն օրը իմ առջևէս նաւերով դեսպաններ պիտի ելլեն, որպէս զի ապահովութեան մէջ եղող Եթէովպոսիները վախցնեն, և անոնց վրայ սաստիկ խռովութիւն պիտի ըլլայ Եգիպտոսի օրուանը պէս. վասն զի ահա կու գայ:

10 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի բազմութիւնն ալ Բարբելոնի Նարուգոգոնասար թագաւորին ձեռքով ընաջինջ պիտի ընեմ: 11 - Անիկա ու անոր հետ իր ժողովուրդը, ազգերուն բռնաւորները, երկիրը աւերելու պիտի բերուին. անոնք իրենց սուրերը Եգիպտոսի վրայ պիտի քաշեն, ու եր-

կիրը սպաննուածներով պիտի լեցնեն: 12 - Եւ ես գետերը պիտի ցամքեցնեմ, ու երկիրը չարերուն ձեռքը պիտի մտանեմ. ու երկիրը և բոլոր անոր մէջ եղածը օտարներուն ձեռքով պիտի կորսնցնեմ. ես Տէրս խօսեցայ:

13 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Կուռքերն ալ ընաջինջ պիտի ընեմ, ու Մեմփիսէ չտառուածները, պիտի ոչնչացնեմ, ու մէյմըն ալ Եգիպտոսի երկրէն իշխան պիտի չըլլայ. ու Եգիպտոսի երկրին մէջ վախ պիտի դնեմ:

14 - Եւ Պաթուրէօր աւերակ պիտի ընեմ, ու Տայանիօր կրակի պիտի տամ, ու Նովի մէջ դատաստաններ ի գործ պիտի դնեմ: 15 - Եւ Եգիպտոսի ամբուլութիւնը եղող Սինի վրայ իմ սրամբտութիւնս պիտի թափեմ, ու Նովի բազմութիւնը պիտի կտարեմ. 16 - Ու Եգիպտոսի մէջ կրակ պիտի ձգեմ. Սին սաստիկ պիտի տազնապի, ու Նովի պարսպին խրամատութիւն պիտի ըլլայ, և Մեմփիսի ցորեկով պիտի տէրէն թըշնամիները:

17 - Արեգ քաղաքին ու Բուբաստի կարիճները սրով պիտի իյնան, ու անոնց քաղաքները գերութեան պիտի երթան: 18 - Նաև Տափնոսի մէջ ցորեկը խաւար պիտի ըլլայ՝ երբ հոն Եգիպտոսի լուծերը կտարեմ. ու հոն անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի ոչնչանայ. զանիկա ամպ պիտի ծածկէ, և անոր աղջիկները գերութեան պիտի երթան: 19 - Այսպէս Եգիպտոսի մէջ դատաստաններ ի գործ պիտի դնեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

20 - Ու եղաւ որ մետատաներորդ տարին առաջին «Բ»-ը, ամսուն եօթնին, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 21 - Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոն թագաւորին բազուկը կտարեցի. և ահա անիկա պիտի չփաթթուի, ոչ ալ անոր վրայ գեղեր ու կապեր դնելով զանիկա պիտի պատեն, որ զօրանայ սուր բռնելու: 22 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի Փարաւոն թագաւորին դէմ եմ, ու անոր բազուկները պիտի կտարեմ, թէ՛ զօրաւորը և թէ՛ կտարածը, և սուրը անոր ձեռքէն վար ձգել պիտի տամ. 23 - Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ: 24 - Ու Բարբելոնի թագաւորին բազուկները

*Կամ, Նուբիացիք

պիտի զօրացնեմ՝ և իմ սուրս անոր ձեռքը պիտի տամ՝ իսկ Փարաւոնի բազուկները պիտի կտարեմ, ու անիկա անոր առջև ի մահ վիրաւորուածին հեծութիւնովը պիտի հեծէ : 25 - Այս պէս Բաբելոնի թագաւորին բազուկները պիտի զօրացնեմ, ու Փարաւոնի բազուկները պիտի իյնան . ու երբ իմ սուրս Բաբելոնի թագաւորին ձեռքը տամ, և ան ալ զանիկա Եգիպտոսի երկրին վրայ երկնցնէ, պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը : 26 - Աւ Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը :

ԳԼ. ԼԱ.

Աւ եղաւ որ մետասաներորդ տարին, երբորդ աստուծոն աւաջին օրը, Տէրջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոնի թագաւորին ու անոր բազմութեանը ըսէ, Գու՛ն քու մեծութիւնովդ որ՞ւ կը նմանիս : 3 - Ահա Ասորեստանցին Լիբանանի մէջ եղող եղևինի մը պէ՛ էր, անոր ստերը գեղեցիկ, ու տերևախիտ շառաւիղները հսկանաւոր էին, ու հասակը բարձր էր, և անոր գլուխը *խիտ ճիւղերու՝ մէջ էր : 4 - Չուրերը զանիկա մեծցուցին, անդունդները զանիկա բարձրացուցին, իրենց գետերը անոր անկուած տեղին բոլորախորհրդ կը պտըտէին, ու իրենց վտակները դաշտին բոլոր ծառերուն կը զրկէին : 5 - Այս պատճառաւ անոր հասակը դաշտին բոլոր ծառերէն բարձր եղաւ, ու տարածուելով՝ ջուրերուն շատութենէն անոր ստերը շաղցան և շառաւիղները երկրնցան : 6 - Անոր ստերուն վրայ երկինքի բոլոր թռչունները բոյն կը շինէին, ու շառաւիղներուն տակ դաշտի բոլոր գազանները կը ծնանէին, և անոր հովանիին տակ բոլոր մեծ ազգերը կը բնակէին : 7 - Աւ իր մեծութիւնովը ու իր ստերուն երկայնութիւնովը գեղեցիկ էր, վասն զի անոր արմատը շատ ջուրերու քով էր : 8 - Աստուծոյ գրախտին եղևինները զանիկա չէին ծածկեր, մայր ծառերը անոր ստերուն չէին նմաներ, ու սօսիները անոր շառաւիղ-

ներուն պէս չէին . Աստուծոյ գրախտին մէջ բնաւ ծառ մը գեղեցիկութեան կողմանէ անոր նման չէր : 9 - Չանիկա իր ստերուն շատութիւնովը գեղեցիկ շիներ էի, ու Աստուծոյ գրախտին մէջ եղող Եգեմի բոլոր ծառերը անոր կը նախանձէին :

10 - Ասոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև հասակով *բարձրացաւ ու գլուխը խիտ ճիւղերուն մէջ վերցուց, և իր սիրտը իր բարձրութիւնովը հպարտացաւ, 11 - Ես ալ զանիկա ազգերուն զօրաւորին ձեռքը սուսի, որ անշուշտ անոր հարստացաւ՝ պիտի ընէ. զանիկա իր շարութեանը համար քշեցի : 12 - Աւ օտարները, ազգերուն բռնաւորները, զանիկա կարեցին և զանիկա թողուցին. անոր ստերը լեռներու վրայ ու ամէն հովիտներու մէջ ինկան, և անոր շառաւիղները երկրին ամէն ճարերուն մէջ կտարեցան, ու երկրի ամէն թողութուրդները անոր հովանիէն իջան ու զանիկա թողուցին : 13 - Անոր ինկած աստիճանները պիտի բնակին, և անոր շառաւիղներուն վրայ դաշտի բոլոր գազանները պիտի բլլան : 14 - Որպէս զի ջրատուն ծառերը բնաւ իրենց հասակին վրայ չհպարտանան, և իրենց գլուխը խիտ ճիւղերուն մէջ չվերցնեն, ու բոլոր ջրով փռուածները անոնց հպարտութեանը համար անոնց չյարին՝ վասն զի ամէնը գեանի տակերը մահուան ձեռքը արուած են ուրբ իջնող մարդոց որ գիներուն մէջ : 15 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Գերեզմանը իջած օրը սուգ բռնել տուի. անոր համար անդունդը ծածկեցի ու անոր գետերը արգիլեցի, և շատ ջուրեր արգիլուեցան . ու անոր համար Լիբանանի սուգ հագցուցի, և անոր համար դաշտի բոլոր ծառերը թաւամեցան : 16 - Երբ զանիկա դուրը իջնողներուն հետ գերեզմանը իջեցուցի, անոր կործանուածին ձայնէն ազգերը դողացուցի. ու Եգեմի բոլոր ծառերը, Լիբանանի ընտիր ու գեղեցիկ ծառերը, ամէն ջրով ուռուածները, գեանին տակերը մխիթարուեցան : 17 - Անոնք

*Եբբ. բարձրացար
+կա՛մ, ուռուած անոնց կողմինները իրենց հպարտութեանը մէջ հաստատ չկենան

*կա՛մ, ամպերու

ալ անոր հետ՝ սրով սպանուածներուն քով գերեզմանը իջան, ու նաև անոր բազուկը եղողները՝ որոնք անոր հովանին տակ ազգերուն մէջ կը նստէին:

18 - Իսկ այսպիսի փառքով ու մեծութեամբ որո՞ւ կը նմանիս Եդեմի ծառերուն մէջ. դուն Եդեմի ծառերուն հետ գեանին տակ պիտի նետուիս, ու սրով սպաննուածներուն հետ անթլփառներուն մէջ պիտի պառկիս: Փարաւոն ու անոր բոլոր բազմութիւնը այսպէս պիտի ըլլայ, կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ. ԼԻ

Ու եղաւ որ երկոտասաներորդ տարին, երկոտասաներորդ ամիսը, ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոն թագաւորին վրայ ողբ ըրէ ու անոր ըսէ,

Իսկ ազգերու մէջ առոյգ առիւծի կը նմանիս,

Եւ ծովերու մէջ վիշապի պէս ես.

Իսկ գետերու վրայ կը յարձակիս, Ու սաքերովդ ջուրերը կը խառնես,

Եւ անոնց գետերը կը պղտորես:

3 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Ես շատ ազգերու ժողովուրդով իմ՝ ցանցս քու վրայ պիտի տարածեմ,

Եւ քեզ իմ ուռկանովս պիտի հանեն:

4 - Ու քեզ գեանը պիտի նետեմ,

Եւ քեզ դաշտի երեսին վրայ պիտի ձգեմ,

Ու քու վրայ երկինքի բոլոր թռչունները պիտի իջեցնեմ,

Ու բոլոր երկրի գազանները քեզմէ պիտի կշտացնեմ.

5 - Եւ քու մարմինդ լեռներուն վրայ պիտի գնեմ,

Ու քու դէզերովդ ձորերը պիտի լեցրնեմ:

6 - Եւ քու լողացած երկիրդ մինչև լեռները

Քու արիւնովդ պիտի սուրգեմ,

Ու հեղեղատները քեզմէ պիտի լեցուին:

7 - Ու երբ քեզ մարեմ՝ երկինքը պիտի ծածկեմ,

Ու անոր աստղերը պիտի խաւարեցնեմ:

Արևը ամպով պիտի ծածկեմ,

Ու լուսինը իր լոյսը պիտի չտայ:

8 - Քու վրայ երկինքի բոլոր լուսարները պիտի խաւարեցնեմ,

Եւ քու երկրի վրայ մթութիւն պիտի բերեմ,

Կ'ըսէ Տէր Եհովա:

9 - Ու երբ քու կործանումիդ Եւրոպայի ազգերուն ու քու չգիտցած երկիրներու հասցնեմ,

Շատ ժողովուրդներու սիրաբ. պիտի խառնեցնեմ:

10 - Եւ քու պատճառաւ շատ ժողովուրդներ պիտի սպառնանեմ,

Ու քու պատճառաւ անոնց թագաւորները խիստ պիտի զարհուրին,

Երբ իմ սուրս անոնց երեսին առջև երեցնեմ.

Ու քու կործանումիդ օրը

Սմէն մարդ իր հագին համար ամէն վայրկեան պիտի տարտափի:

11 - Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Բաբելոնի թագաւորին սուրը քու վրայ պիտի գայ:

12 - Քու բազմութիւնդ զօրաւորներուն սուրերովը վար պիտի ձգեմ,

Անոնց ամէնը ազգերուն բռնաւորներն են.

Ու անոնք Եգիպտոսի փառքը պիտի կողոպտեն,

Ու անոր բոլոր բազմութիւնը պիտի կորսուի:

13 - Եւ անոր բոլոր անասունները Շատ ջուրերու քովէն պիտի կորոնցրնեմ.

Ու մէյմըն ալ մարդու սաքը զանոնք պիտի չպղտորէ,

Անասունի կ'ծղակներն ալ զանոնք պիտի չպղտորեն:

14 - Այն ատեն անոնց ջուրերը սկանակիա պիտի ընեմ,

Եւ անոնց գետերը իւղի պէս պիտի քայեցնեմ,

Կ'ըսէ Տէր Եհովա,

15 - Երբ Եգիպտոսի երկիրը աւերակ դարձնեմ,

Ու երկիրը *բալորովին ամայի մնայ,

Ու երբ անոր բոլոր բնակիչները զարնեմ,

Եւ պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը:

16 - Այս սղբն է զոր պիտի գրուցեն.

*Եբր. իր լիութենէն

Չանհկա ազգերուն աղջիկները պիտի
 գրուցեն,
 Եգիպտոսի վրայ ու անոր բոլոր բազ-
 մութեանը վրայ զանհկա պիտի
 գրուցեն,
 Կ'ըսէ Տէր Եհովա :
 17 - Ու եղաւ որ երկոտասաներորդ-
 ասրին, ամսուն ասանը Տէրոջը
 խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
 18 - Արգի մարդոյ, Եգիպտոսի բազ-
 մութեանը վրայ ողբա,
 Եւ զանհկա ու երեւելի ազգերուն աղ-
 ջիկները
 Գուրը իջնողներուն հետ գեանին տա-
 կերը իջեցուր :
 19 - Գուն սրմէ՞ գեղեցիկ ես .
 Իջիր ու անթլփատներուն հետ պառկէ :
 20 - Անոնք սրով սպաննուածներուն
 մէջ պիտի իյնան .
 Անհկա սուրի արուեցաւ .
 Չանհկա ու անոր բոլոր բազմութիւնը
 քաշկուտեցէք :
 21 - Գերեզմանին մէջէն զօրաւոր կըտ-
 րիճները
 Անոր օգնութիւն ընողներուն հետ ա-
 նոր պիտի գրուցեն .
 Անոնց սրով սպաննուած անթլփատ-
 ները հա՞ն իջած կը պառկին :
 22 - Ասուր ու իր բոլոր ժողովքը
 հան են .
 Անոր գերեզմանները իր բոլորաիքն են .
 Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են .
 23 - Արուն գերեզմանները գուրին խո-
 րունկ տեղերը տեղաւորուած են,
 Ու անոր ժողովքը իր գերեզմանին բո-
 լորաիքն է .
 Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են ,
 Անոնք որ կենդանիներուն երկրին մէջ
 վախ կու տային :
 24 - Եղամ՝ ու իր բոլոր բազմու-
 թիւնը
 Հա՞ն անոր գերեզմանին բոլորաիքն են .
 Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են,
 Ու գեանին տակերը անթլփատ իջան,
 Անոնք որ կենդանիներուն երկրին մէջ
 իրենց վախը կու տային,
 Սակայն գուրը իջնողներուն հետ իրենց
 ամօթը կը կրեն :
 25 - Սպաննուածներուն մէջ անկողին
 գրին անոր ու իր բոլոր բազմու-
 թեանը .
 Անոր գերեզմանները իր բոլորաիքն են .
 Ամէնը սրով սպաննուած անթլփատ-
 ներ են .

Թէպէտե անոնք կենդանիներուն երկ-
 րին մէջ իրենց վախը կու տա-
 յին ,
 Սակայն գուրը իջնողներուն հետ իրենց
 ամօթը կը կրեն .
 Անհկա սպաննուածներուն մէջ գրուած
 է :
 26 - Մտաք ու Թորէլ և անոր բոլոր
 բազմութիւնը հան են,
 Անոր գերեզմանները իր բոլորաիքն են .
 Ամէնը սրով սպաննուած անթլփատ-
 ներ են,
 Թէպէտե անոնք կենդանիներուն երկ-
 րին մէջ իրենց վախը կու տային :
 27 - Եւ անոնք անթլփատներէն իյ-
 նող զօրաւորներուն հետ պիտի
 չպառկին,
 Արոնք իրենց պատերազմական ղէնքե-
 րովը գերեզման իջան,
 Ու իրենց սուրերը իրենց գլուխներուն
 տակ գրին .
 Սակայն անոնց անօրէնութիւնները ի-
 րենց սակարներուն վրայ պիտի
 ըլլան,
 Թէև անոնք կենդանիներուն երկրին
 մէջ զօրաւորներուն ահարկու-
 թիւն էին :
 28 - Եւ գուն անթլփատներուն մէջ
 պիտի կտարուիս,
 Ու սրով սպաննուածներուն հետ պիտի
 պառկիս :
 29 - Եգովմ, անոր թագաւորները
 ու բոլոր իշխանները հան են,
 Արոնք իրենց զօրութիւնովը սրով
 սպաննուածներուն հետ գըր-
 ուած են .
 Անոնք անթլփատներուն հետ
 Ու գուրը իջնողներուն հետ կը պառ-
 կին :
 30 - Հիւսիսի բոլոր իշխանները և
 բոլոր Աիգանացիք հան են,
 Արոնք սպաննուածներուն հետ իջան .
 Անոնք իրենց ահարկութիւնովը իրենց
 զօրութեանէն կ'ամչնան,
 Եւ անոնք սրով սպաննուածներուն
 հետ անթլփատ կը պառկին,
 Ու գուրը իջնողներուն հետ իրենց ա-
 մօթը կը կրեն :
 31 - Փարաւոն զանոնք պիտի տեսնէ
 Եւ իր բոլոր բազմութեանը համար պի-
 տի մխիթարուի,
 Փարաւոն ու իր բոլոր զօրքը սրոնք
 սրով սպաննուեցան,
 Կ'ըսէ Տէր Եհովա :

32 - *Քանդի կենդանիներուն երկրին մէջ իմ վախս գրի,
 Եւ՝ անիկա անթլփատներուն մէջ սրով սպաննուածներուն հետ պիտի պառկի,
 Այսինքն Փարաւոն ու անոր բոլոր բազմութիւնը,
 Կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ. ԼԳ

Պարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարդոյ, քու ժողովուրդիդ որդիներուն խօսէ ու անոնց ըսէ, Եթէ երկրի մը վրայ սուր բերեմ, ու այն երկրին ժողովուրդը իրենց մէջէն մարդ մը ընտրեն ու զանիկա իրենց համար դէտ դնեն, 3 - Ու անիկա այն երկրին վրայ սուրին գալը տեսնէ, և փողը հնչեցնէ ու ժողովուրդը զգուշացնէ. 4 - Այն տանն եթէ փողին ձայնը լսողը չզգուշանայ, և սուրը գայ՝ զանիկա վերցնէ, անոր արիւնը իր գլուխը պիտի ըլլայ: 5 - Անիկա փողին ձայնը լսեց ու չզգուշացաւ, անոր արիւնը իր վրայ պիտի ըլլայ. բայց զգուշացողը իր հոգին կ'ազատէ: 6 - Իսկ եթէ դէտը սուրին գալը տեսնէ և փողը չհնչեցնէ, ու ժողովուրդը չզգուշանայ, և սուրը գայ ու անոնցմէ հոգի մը վերցնէ, անիկա իր անօրէնութեանը համար վերցուեցաւ. բայց անոր արիւնը դէտին ձեռքէն պիտի պահանջեմ:

7 - Եւ դուն, որդի մարդոյ, քեզ Իսրայէլի տանը դէտ գրի, ու իմ բերնէս խօսք լսես և իմ կողմանէս զանոնք զգուշացնես: 8 - Երբ ամբարշտին ըսեմ, Ով ամբարիշտ, անշուշտ պիտի մեռնիս, ու դուն ամբարիշտը իր ճամբայէն զգուշացնելու համար չխօսիս, այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ: 9 - Իսկ եթէ դուն ամբարիշտը իր ճամբայէն զգուշացնես, որպէս զի անկէ դառնայ, ու անիկա իր ճամբայէն չդառնայ, անիկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց դուն քու հոգիդ ազատած կ'ըլլաս:

10 - Եւ դուն, որդի մարդոյ, Իսրայէլի տանը ըսէ, Իսրայէլի տանը կը խօ-

սիք ու կ'ըսէք, Մեր յանցանքները ու մեղքերը մեր վրայ են, ու մենք անոնց մէջ կը մտնենք, ուրեմն ի՞նչպէս պիտի ապրինք: 11 - Անոնց ըսէ, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր, հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. գործէք, գործէք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչո՞ւ մեռնիք, ով Իսրայէլի տունը:

12 - Եւ դուն, որդի մարդոյ, քու ժողովուրդիդ որդիներուն ըսէ, Արգարին արգարութիւնը՝ անոր յանցանք ըրած օրը զանիկա պիտի չազատէ. ու ամբարիշտին ամբարշտութիւնը՝ իր ամբարիշտութենէն դարձած օրը իրեն գլորման պատճառ պիտի չըլլայ. ոչ ալ արգարը մեղք գործած օրը իր արգարութիւնէն պիտի կրնայ ապրիլ: 13 - Երբ ես արգարին ըսեմ թէ անշուշտ պիտի ապրի. ու անիկա իր արգարութեանը ապաւինելով անօրէնութիւն ընէ, անոր բոլոր արգարութիւնը պիտի չյիշուի, հապա անիկա իր ըրած անօրէնութեանը մէջ պիտի մեռնի: 14 - Ու երբ ամբարիշտին ըսեմ թէ Իսրայէլ անշուշտ պիտի մեռնիս, ու անիկա իր մեղքէն դառնայ և իրաւունք ու արգարութիւն ընէ. 15 - Այն ամբարիշտը գրաւը ետ առայ, ու յափշտակածը հատուցանէ, և անօրէնութիւն չընելով՝ կեանքի կանոններուն համեմատ քալէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի: 16 - Անոր գործած բոլոր մեղքերը իրեն դէմ պիտի չյիշուին. անիկա իրաւունք ու արգարութիւն ըրաւ, անշուշտ պիտի ապրի:

17 - Եւ քու ժողովուրդիդ որդիները կ'ըսեն թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. սակայն իրենց ճամբան է որ ուղիղ չէ:

18 - Երբ արգարը իր արգարութենէն դառնայ ու անօրէնութիւն ընէ, անիկա անոր մէջ պիտի մեռնի: 19 - Ու երբ ամբարիշտը իր ամբարշտութենէն դառնայ և իրաւունք ու արգարութիւն ընէ, անիկա անոնցմով պիտի ապրի: 20 - Բայց դուք կ'ըսէք թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. ես ձեր ամէն մէկուն դատաստանը իր ճամբաներուն համեմատ պիտի տեսնեմ, ով Իսրայէլի տունը:

21 - Ու եղաւ որ մեր գերութեանը երկատասաներորդ տարին, տասներորդ ամսուն հինգերորդ օրը, Երուսաղէմէ

*Կ-Տ, Թէև կենդանիներուն երկրին մէջ անոր վախս գրի, Բայց

ազատուածին մէկը ինծի եկաւ ու ըսաւ, Քաղաքը զարնուեցաւ: 22 - Եւ այն ազատուածը չեկած՝ իրիկունը Տէրոջը ձեռքը իմ՝ վրաս եղաւ, ու իմ բերանս բացաւ մինչև որ առաւօտուն անկկա ինծի եկաւ, ու երբ բերանս բացուեցաւ՝ ալ համը չէի:

23 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 24 - Որդի մարգոյ, այս Խորայէի երկրին աւերակներուն բնակիչները կը խօսին ու կ'ըսեն, Աբրահամ մէ'կ ֆօք էր, ու երկիրը ժառանգեց. մենք որ շատուոր ենք, երկիրը մեզի ժառանգութիւն արուեցաւ: 25 - Անոր համար ըսէ անոնց, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. 'Իսւք ֆօք արիւնով կ'ուտէք, ու աչքերնիդ ձեր կուռքերուն կը վերցնէք, և արիւն կը թափէք. ու երկիրը պիտի ժառանգէ՞ք: 26 - 'Իսւք ձեր տուրերուն կ'ապաւինիք, պղծութիւն կ'ընէք, ու ամէն մէկդ իր ընկերին կինը կը պղծէ. ու երկիրը պիտի ժառանգէ՞ք: 27 - Անոնց այսպէս ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես կենդանի եմ՝ որ աւերակներուն մէջ եղողները սրով պիտի խնան, ու դաշտին երեսը եղողները գազաններուն կերակուր ըլլալու պիտի տամ, և բերդերուն ու քարայրներուն մէջ եղողները ժանտախտով պիտի մեռնին: 28 - Ու երկիրը բոլորովին ամայի պիտի ընեմ, և անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի կորսուի. Խորայէի լեռներն ալ ամայի պիտի ըլլան, և անոնց լբայէն անցնող պիտի չըլլայ: 29 - Ու երբ երկիրը բոլորովին ամայի ընեմ՝ իրենց բրած բոլոր գարշութիւններուն համար, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

30 - Եւ գուն, որդի մարգոյ, քու ժողովուրդիդ սրգիները պատերուն քով ու տուներուն դռները քու վրայովդ խօսակցութիւն կ'ընեն, և իրարու՝ ամէն մարդ իր եղբօրը կը զրուցէ ու կ'ըսէ, Հիմա եկէք ու լսեցէք թէ ի՛նչ է Տէրոջմէ ելած խօսքը: 31 - Անոնք ժողովուրդին գալուն պէս քեզի կու գան, ու քու առջևդ իմ ժողովուրդիս յէ՛ կը նստին, և քու խօսքերդ կը լսեն, բայց զանոնք չեն ըներ. վասն զի անոնք իրենց բերնովը հաճութիւն կը ձեռցնեն, քոյ սիրտերնին իրենց ազահութեանը ետեւէն կ'երթայ: 32 - Եւ ահա գուն անոնց՝ քաղցրածայն ու հմուտ նուագածուի մը ախորժեղի երգին պէս

ես. որոնք քու խօսքերդ կը լսեն, բայց զանոնք ի գործ չեն գներ: 33 - Սակայն երբ ասիկա ըլլայ, (ահա պիտի ըլլայ,) այն ատեն պիտի գիտնան թէ իրենց մէջ մարգարէ կար:

ԳԼ. ԼԴ

Խորձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարգոյ, Խորայէի հովիւներուն դէմ՝ մարգարէութիւն ըրէ, մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ հովիւներուն. Վա՛յ Խորայէի հովիւներուն՝ որոնք ինքզինքնին կ'արածեն. հովիւները հօտը արածելու չե՞ն: 3 - 'Իսւք ճարպը կ'ուտէք ու բուրդը կը հագնիք և գէրը կը մորթէք, քոյ հօտը չէք արածեր: 4 - Տկարները չուժով-ցուցիք, ու հիւանդները չբժշկեցիք, և կտարածը չփաթթեցիք, ու մուրածը չգարձուցիք, և կորսուածը չփնտուցիք. հապա բռնութիւնով ու խստութիւնով անոնց վրայ տիրեցիք: 5 - Եւ անոնք հովիւ չունենալնուն համար ցրուեցան, ու ցրուելով՝ դաշտի բոլոր գազաններուն կերակուր եղան: 6 - Իմ ոչխարներս ամէն լեռներու վրայ ու ամէն բարձր բլուրներու վրայ մուրեցան, և իմ ոչխարներս բոլոր երկրի երեսին վրայ ցրուեցան, ու խնդրող չկայ ու փնտուղ չկայ:

7 - Անոր համար, ով հովիւներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. 8 - Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որովհետև հովիւ չըլլալուն համար իմ հօտս յափրչտակուեցաւ, ու իմ ոչխարներս դաշտի բոլոր գազաններուն կերակուր եղան, և իմ հովիւներս իմ ոչխարներս չփնտուցին, ու հովիւները ինքզինքնին արածեցին ու իմ հօտս չարածեցին. 9 - Անոր համար, ով հովիւներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. 10 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես հովիւներուն դէմ եմ, ու իմ ոչխարներս անոնց ձեռքէն պիտի պահանջեմ, և զանոնք որ խար արածելէն պիտի արգիլեմ՝ ու հովիւները մէյմըն ալ զիրենք պիտի չարածեն. ու իմ ոչխարներս անոնց բերնէն պիտի հանեմ, որպէս զի մէյմըն ալ անոնց կերակուր չըլլան:

11 - Վասն զի Տէր Եհովա այսպէս

*Կա՛մ, կաթը

կ'ըսէ. Ահա ես ինքնին իմ ոչխարներս պիտի խնդրեմ՝ ու պիտի փնտռեմ: 12 - Ինչպէս հովիւը, երբ իր ցրուած ոչխարներուն մէջ կը գտնուի, իր հօտը կը փնտռէ, այնպէս՝ ես իմ ոչխարներս պիտի փնտռեմ ու պիտի ազատեմ զանոնք ամէն տեղերէն, ուր ամպի ու մնառախուղի օրը ցրուեցան: 13 - Եւ զանոնք ժողովուրդներէն պիտի հանեմ, ու զանոնք երկիրներէն պիտի ժողովեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ, և զանոնք Խորայէլի լեռներուն վրայ, ձորերու մէջ ու երկրին ամէն բնակուելու տեղերը պիտի արածեմ: 14 - Չանոնք աղէկ արօտի մէջ պիտի արածեմ, ու անոնց փարախը Խորայէլի բարձր լեռներուն վրայ պիտի ըլլայ. հոն աղէկ փարախի մէջ պիտի պտակին, ու Խորայէլի լեռներուն վրայ պարարտ արօտի մէջ պիտի արածին: 15 - Իմ ոչխարներս ես պիտի արածեմ ու զանոնք ես պիտի պտակեցընեմ, կ'ըսէ Տէր Եհովա: 16 - Կորտուածը պիտի փնտռեմ ու մոլորածը պիտի գործնեմ, և կոտրածը պիտի փոթեմ ու հիւանդը պիտի ուժովցընեմ, բայց պարարտ ու զօրաւորը պիտի կորսնցնեմ. զանոնք իրաւունքով պիտի արածեմ:

17 - Եւ դուք, սվ իմ ոչխարներս, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես ոչխարին ու ոչխարին, խոյերուն ու նոխազներուն մէջտեղ դատաստան պիտի ընեմ: 18 - Միթէ աղէկ արօտի մէջ արածուիլը քի՞չ բան է ձեզի. որ ձեր արօտներուն մնացորդը ձեր սաքերով կը կոխէք, ու մոքուր ջուրերն ալ խմելը՝ որ մնացածները ձեր սաքերով կը պղտորէք: 19 - Եւ իմ ոչխարներս ձեր սաքերուն կոխածը կը ճարակեն, ու ձեր սաքերէն պղտորածը կը խմեն:

20 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ անոնց. Ահա ես ինքնին դատաստան պիտի ընեմ՝ պարարտ ոչխարին ու նիհար ոչխարին մէջտեղ: 21 - Արովհեաե դուք չե՞ր կողով և ուսով հրեցիք, ու ձեր եղջիւրներով բուրր տկարները զարկիք, մինչև որ դուրսը ցրուեցիք զանոնք, 22 - Ես ալ իմ ոչխարներս պիտի ազատեմ, ու մէյմըն ալ պիտի չյափշտակուին, և ոչխարին ու ոչխարին մէջտեղ դատաստան պիտի ընեմ: 23 - Ու անոնց վրայ հովիւ մը, այսինքն իմ ծառաս Գա-

ւիթը, պիտի կեցնեմ, որպէս զի զանոնք հովուէ. անիկա պիտի հովուէ զանոնք, և անիկա պիտի ըլլայ անոնց հովիւը: 24 - Ու ես Տէրս անոնց Ասաուած պիտի ըլլամ, և իմ ծառաս Գաւիթ անոնց մէջ իշխան պիտի ըլլայ. ես Տէրս խօսեցայ: 25 - Եւ անոնց հեախաղաղութեան ուխտ մը պիտի ընեմ, ու այն երկրէն չար գաղանները բնաջինջ պիտի ընեմ. և անապատին մէջ ապահովութեամբ պիտի բնակին, ու անտառներուն մէջ պիտի քնանան: 26 - Եւ զանոնք ու իմ լեռանս շրջակայ տեղերը օրհնութիւնով պիտի լեցընեմ, ու անձրևները իրենց ժամանակին պիտի իջեցնեմ. անոնք օրհնութեան անձրևներ պիտի ըլլան: 27 - Եւ գաշտի ծառերը իրենց պտուղը պիտի տան, ու երկիր իր բերքը պիտի տայ, և անոնք իրենց երկրին վրայ ապահովութեամբ պիտի բնակին. ու երբ անոնց լուծին կապերը կոտրեմ, ու զանոնք իրենց ծառայեցնողներուն ձեռքէն ազատեմ, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը: 28 - Եւ անոնք մէյմըն ալ ազգերէն պիտի չյափշտակուին, ու երկրի գաղանները զանոնք պիտի չուտեն. այլ ապահովութեամբ պիտի բնակին, ու վախճնող մը պիտի չըլլայ: 29 - Եւ անոնց անուանի տունկ մը պիտի բուսցնեմ, ու մէյմըն ալ երկրին վրայ սովով պիտի չսպառին, ու մէյմըն ալ ազգերէն նախատինք պիտի չկրեն: 30 - Եւ պիտի գիտնան թէ ես, անոնց Տէր Ասաուածը, անոնց հեաեմ, ու անոնք Խորայէլի տունը իմ ժողովուրդս են, կ'ըսէ Տէր Եհովա:

31 - Եւ դուք, իմ ոչխարներս, իմ արօտիս ոչխարները, մարդիկ էք, ու ես ձեր Ասաուածն եմ, կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ. ԼԵ

Բարձեալ Տէրջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2-Արդի մարդոյ, երեսդ Սէիր լեռանը վրայ գործուր ու անոր դէմ՝ մարգարեութիւն ըրէ, 3 - Եւ անոր ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, սվ Սէիր լեռ, ու իմ ձեռքս քու վրագ պիտի երկնցընեմ, ու քեզ ըստրովին ամույլի պիտի ընեմ: 4 - Քու քաղաքներդ աւերակ պիտի ընեմ, և դուն ամույլի պիտի ըլլաս,

ու պիտի գիտնաս թէ ես եմ՝ Տէրը :

5 - Որովհետեւ դուն չինաւուրց տակաւթիւն ունեցար, ու Իսրայէլի որդիները, անոնց պատուհասին ժամանակին, անօրէնութեան ժամանակին լրանալուն, սուրին ձեռքը մնանեցիր :

6 - Անոր համար ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ քեզ արեան մէջ պիտի դնեմ, և արիւնը քեզ պիտի հալածէ. դուն արիւնը շատերուդ համար՝ արիւնը քեզ պիտի հալածէ :

7 - Ու Սէիր լեռը բոլորովին ամայի պիտի ընեմ, և անկէ անցնողը ու դարձողը պիտի կտրեմ :

8 - Ու անոր լեռները իր սպաննուածներովը պիտի լեցնեմ. քու բլուրներուդ վրայ, քու հովիտներուդ մէջ ու բոլոր ձորերուդ մէջ որով սպաննուածներ պիտի կյնան :

9 - Քեզ մշտնջենաւոր ամայութիւն պիտի ընեմ, և քու քաղաքներդ Բեյճնալ պիտի *չբնակուին. ու պիտի գիտնաք թէ ես եմ՝ Տէրը :

10 - Որովհետեւ դուն ըսիր թէ Այս երկու ազգը ու այս երկու երկիրը իմն պիտի ըլլան, ու անոնց պիտի տիրենք. (ու Տէրը չոն էր.)

11 - Անոր համար, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ քու թշնամութիւնովդ անոնց դէմ ի գործ դրած բարկութեանդ ու նախանձիգ շափովը հարստացած պիտի ընեմ, և քու դատաստանդ տեսած տանն անոնց մէջ պիտի ճանչցուիմ :

12 - Ու պիտի գիտնաս որ ես Տէրս լսեցի քու բոլոր հայհոյութիւններդ, զորոնք Իսրայէլի լեռներուն դէմ խօսեցար՝ ըսելով, Անոնք աւերակ եղան, անոնք մեզի կերակուր արուեցան :

13 - Եւ ձեր բերնովը ինծի դէմ հպարտացաք, ու խօսքերնիդ ինծի դէմ շառցուցիք, ու ես զանոնք լսեցի :

14 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Բոլոր երկրին ուրախութեան տանը քեզ ամայի պիտի ընեմ :

15 - Ինչպէս դուն Իսրայէլի տանը ժառանգութեանը վրայ ուրախացար՝ որ ամայի եղաւ, քեզի ալ այնպէս պիտի ընեմ. դուն, ով Սէիր լեռ ու բոլոր Եգիպտոս, բոլորովին ամայի պիտի ըլլաս. ու պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը :

Եւ դուն, որդի մարդոյ, Իսրայէլի լեռներուն մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Ով Իսրայէլի լեռներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք :

Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. 2 - Որովհետեւ թշնամին ձեզի համար ըսաւ, Ա՛՛՛՛՛, յաւիտենական բլուրներն ալ մեզի ժառանգութիւն եղան, 3 - Անոր համար մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ ձեզ աւրեցին, ու ամէն կողմէն կլլեցին, այնպէս որ մնացած ազգերուն ժառանգութիւն ըլլաք, ու դուք լեզուանի Բարուքի խօսքը ու ժողովուրդին նախատինքը եղաք :

4 - Անոր համար, ով Իսրայէլի լեռներ, Տէր Եհովայի խօսքը մտիկ ըրէք. Տէր Եհովա այսպէս կ'ըսէ լեռներուն ու բլուրներուն, ձորերուն ու հովիտներուն, և ամայի եղած աւերակներուն ու պարսպ թողուած քաղաքներուն՝ որոնք շրջակայ ազգերուն մնացորդին յափշտակութիւն ու նախատինք եղած են :

5 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Մնացած ազգերուն համար ու բոլոր Եգիպտոսի համար անշուշտ իմ նախանձիս կրակովը խօսեր եմ, վասն զի անոնք բոլոր սրտի ուրախութեամբ ու հոգիի հպարտութեամբ իմ երկիրս իրենց ժառանգութիւն ըլլալու սրտեցին, որպէս զի զանիկա աւարի պէս յափշտակեն :

6 - Անոր համար Իսրայէլի երկրին վրայ մարգարէութիւն ըրէ, և լեռներուն ու բլուրներուն, ձորերուն ու հովիտներուն ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ի՞նչ ազգերէն նախատինք կրելուդ համար՝ ահա ես իմ նախանձովս ու իմ բարկութիւնովս խօսեցայ :

7 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես իմ ձեռքս վերցուցի՝ որ ձեր բոլորախքը եզոզ ազգերը իրենց անարգանքը իրենք պիտի կրեն :

8 - Բայց դուք, ով Իսրայէլի լեռներ, ձեր տաները պիտի երկնցնէք, ու իմ ժողովուրդիս Իսրայէլի համար ձեր պատուները պիտի բերէք, վասն զի անոնք մօտերս պիտի գան :

9 - Քանզի ահա ես ձեր կողմէն եմ ու ձեզի պիտի դատնամ, և դուք պիտի մշակուիք ու պիտի սերմանուիք :

10 - Ու ձեր վրայ մարգիկ, բոլոր Իսրայէլի տունը, ամէնը պիտի շառցնեմ. ու քաղաքները պիտի

բնակուին և աւերակները պիտի շինու-
ուին : 11 - Ու ձեր վրայ մարդը ու
անասունը պիտի շատցնեմ, և անոնք
պիտի շատնան ու պողաբեր պիտի ըլ-
լան. և ձեր առաջուան կացութեանը
պէս ձեզ պիտի բնակեցնեմ, ու ձեր
առաջուան վիճակէն աւելի աղէկ պի-
տի ընեմ յեզի . ու պիտի գիտնաք թէ
ես եմ Տէրը : 12 - Եւ ձեր վրայ մար-
գիկ, իմ ժողովուրդս Իսրայէլը, պիտի
պարտացնեմ, ու անոնք քեզ պիտի ժա-
ռանգեն , և դուն անոնց ժառանգու-
թիւնը պիտի ըլլաս, ու մէյմըն ալ զա-
նոնք *պիտի չսպառես :

13 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ո-
րովհետեւ ձեզի համար կ'ըսեն թէ Իուն
մարգակեր եհիբ մըն ես , քու ազգերդ
սպառեցիր . 14 - Անոր համար մէյմըն
ալ մարդ պիտի շուտես, ու մէյմըն ալ
քու ազգերդ պիտի չսպառես , կ'ըսէ
Տէր Եհովա : 15 - Եւ քու մէջդ մէյմըն
ալ ազգերուն նախատինքը լսել պիտի
չաամ, ու մէյմըն ալ ժողովուրդնե-
րուն անարգանքը պիտի չկրես, և քու
ազգերդ մէյմըն ալ պիտի չսպառես,
կ'ըսէ Տէր Եհովա :

16 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
ըսելով, Որդի մարդոյ , 17 - Իսրայէլի
տունը իրենց երկրին մէջ բնակեցան, և
զանհկա իրենց ճամբայովը ու գործե-
րովը պղծեցին . անոնց ճամբան իմ
առջևս գաշտանաւոր կնոջ անմաքրու-
թեանը պէս եղաւ : 18 - Ուստի իմ
բարկութիւնս անոնց վրայ թափեցի
այն արիւնին համար՝ զոր իրենք թա-
փեցին երկրին վրայ, ու զանհկա իրենց
կուռքերովը պղծեցին . 19 - Եւ զանոնք
ազգերուն մէջ ցրուեցի . ու երկիրնե-
րուն մէջ ցիրուցան եղան . զանոնք
իրենց ճամբուն ու գործերուն համե-
մատ դատեցի : 20 - Եւ իրենց գացած
ազգերուն մէջ երթալնուն պէս՝ իմ
սուրբ անունս պղծեցին, երբ իրենց հա-
մար ըսուեցաւ թէ Ասոնք Եհովայի ժո-
ղովուրդն են, ու անոր երկրէն ելան :
21 - Ասկայն ես խնայեցի իմ՝ սուրբ ան-
ունս համար , զոր Իսրայէլի տունը
իրենց մտած ազգերուն մէջ պղծեցին :

22 - Անոր համար Իսրայէլի տանը
ըսէ որ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ոչ
թէ ձեզի համար կ'ընեմ «*իկ» , ով
Իսրայէլի տունը, հապա իմ՝ սուրբ ան-

ունս համար զոր դուք ձեր մտած
ազգերուն մէջ պղծեցիք : 23 - Եւ սուրբ
պիտի ընեմ իմ՝ մեծ անունս, որ ազգե-
րուն մէջ պղծուեցաւ, զոր դուք անոնց
մէջ պղծեցիք . ու ազգերը պիտի գիտ-
նան թէ ես եմ Տէրը, կ'ըսէ Տէր Եհո-
վա, երբ անոնց աչքերուն առջև ձեր
մէջ սրբուիմ : 24 - Եւ ձեզ ազգերէն
պիտի առնեմ ու ամէն երկիրներէն
ձեզ պիտի ժողովեմ, ու ձեզ ձեր եր-
կիրը պիտի բերեմ, 25 - Եւ ձեր վրայ
մաքրուր ջուր պիտի սրսկեմ, ու պիտի
մաքրուիք . ձեր բոլոր պղծութիւննե-
րէն ու ձեր բոլոր կուռքերէն ձեզ պի-
տի մաքրեմ . 26 - Եւ ձեզի նոր սիրտ
պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հո-
գի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն
քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի
մարմնեղէն սիրտ պիտի տամ . 27 - Եւ
իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ,
ու ձեզի իմ՝ օրէնքներուն մէջ քաղել
պիտի տամ, ու իմ իրաւունքներս պի-
տի պահէք ու ի գործ դնէք . 28 - Եւ
ձեր հայրերուն սուած երկրիս մէջ պի-
տի բնակիք, ու դուք ինծի ժողովուրդ
պիտի ըլլաք , ես ալ ձեզի Աստուած
պիտի ըլլամ : 29 - Եւ ձեր բոլոր պղծու-
թիւններէն ձեզ պիտի ազատեմ, ու
ցորենը պիտի կանչեմ և զանհկա պի-
տի շատցնեմ, ու ձեր վրայ սով պիտի
չբերեմ : 30 - Եւ ծառերուն պատուր
ու արտերուն բերքը պիտի շատցնեմ,
որպէս զի մէյմըն ալ ազգերուն մէջ
սովի նախատինք չկրէք : 31 - Ու ձեր
գէշ ճամբաները և անբարի գործերը
պիտի յիշէք, ու ձեր անօրէնութիւն-
ներուն համար և ձեր պղծութիւննե-
րուն համար դուք ձեր անձերէն պիտի
զուլիք, 32 - Ոչ թէ ձեզի համար կ'ընեմ
«*իկ», կ'ըսէ Տէր Եհովա, ձեզի յայտ-
նի ըլլայ . ձեր ճամբաներէն ամչցէք
ու պատկառեցէք, սվ Իսրայէլի տունը :

33 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Այն
օրը որ ձեր բոլոր անօրէնութիւններէն
ձեզ մաքրեմ, քաղաքները մարդա-
բնակ պիտի ընեմ, ու աւերակները պի-
տի շինուին . 34 - Եւ այն ամայացած
երկիրը, ամէն անցնողին աչքերուն
առջև ամայի ըլլալուն տեղ, պիտի
մշակուի : 35 - Ու պիտի ըսեն, Այս
ամայացած երկիրը Եդեմի դրախտին
պէս եղաւ . և աւերակ, ամայի ու փլած
քաղաքները պարսպաւոր ու մարդա-
բնակ եղան : 36 - Ու ձեր բոլորաիքը

* Եհբ. անզուտակ պիտի չընես

մնացած ազգերը պիտի գիտնան թէ ես Տէրս փրածները կը շինեմ*, — ամուսնացած երեւոյ կը անկեմ*. ես Տէրս խօսեցայ ու պիտի կատարեմ:

37 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իսրայէլի *տանը խնդրուածքը ա՛լ պիտի ընդունիմ", որպէս զի անոնց ասիկա ընեմ, անոնց մարդիկը հօտի պէս պիտի շտացնեմ: 38 - Սուրբ հօտին պէս, Երուսաղէմի հանդիսա՛ւոր տօներուն հօտին պէս, աւրուած քաղաքները մարդոց հօտերով այնպէս լեցուն պիտի ըլլան. ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

ԳԼ. ԼԷ

Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, և Տէրը զիս Հոգիով՝ հանեց ու զիս դաշտին մէջ դրաւ, և անկիս սփորներով լեցուն էր. 2 - Ու զիս անոնց քովերէն պարացուց շուրջանակի և ահա անոնք դաշտին երեսին վրայ խիստ շատ էին, և ահա անոնք խիստ չորցած էին:

3 - Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս սփորները կրնա՞ն կենդանանալ. ու ըսի, Ով Տէր Եհովա, դուն գիտես:

4 - Եւ ինծի ըսաւ, Այս սփորներուն վրայ մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Ով չորցած սփորներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք: 5 - Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա այս սփորներուն. Ահա ես ձեր մէջ հոգի պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. 6 - Եւ ձեր վրայ ջիւղեր պիտի դնեմ, ու ձեզ միտով պիտի պատեմ, ու ձեզ մտրթով պիտի ծածկեմ, և ձեր մէջ շունչ պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. և պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը:

7 - Ու ես մարգարէութիւն ըրի ինչպէս ինծի հրամայուեցաւ. ու մարգարէութիւն ըրածիս պէս ձայն մը եղաւ. և ահա շարժում մը եղաւ, ու սփորները երա՛ւ մօտեցան՝ սփորը իր սփորին: 8 - Եւ տեսայ որ ահա անոնք ջիւղերով ու միտով պատեցան, ու վրայէն մտրթով ծածկուեցան, բայց անոնց մէջ շունչ չկար: 9 - Այն ատեն ինծի ըսաւ, Շունչին մարգարէութիւն ըրէ, մարգարէութիւն ըրէ, որդի մարդոյ,

ու շունչին ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ով շունչ, չորս հովերէն եկա՛ր, ու այս սպաննուածներուն վրայ փչէ որպէս զի կենդանանան: 10 - Եւ ես մարգարէութիւն ըրի՝ ինչպէս ինծի հրամայեց, ու շունչը անոնց մէջ մտաւ, ու կենդանացան և իրենց սաքերուն վրայ կայնեցան, — խիստ մեծ զօրք մը եղաւ:

11 - Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս սփորները բոլոր Իսրայէլի առնն են. ահա անոնք կ'ըսեն, Մեր սփորները չորցան ու մեր յոյսը կարեցաւ. մենք կորսուած ենք: 12 - Անոր համար մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր գերեզմանները պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ, ով իմ ժողովուրդս, և ձեզ Իսրայէլի երկիրը պիտի բերեմ: 13 - Ու երբ ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ, ով իմ ժողովուրդս, պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը: 14 - Եւ իմ Հոգիս ձեր ներսիցին պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. ու ձեր երկրին մէջ ձեզ պիտի հանգստացնեմ, ու պիտի գիտնաք *որ ես Տէրս խօսեցայ ու ըրի", կ'ըսէ Տէրը:

15 - Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 16 - Ու դուն, որդի մարդոյ, քեզի փայտ մը առ ու անոր վրայ գրէ, Յուդայի համար ու անոր ընկերներուն, Իսրայէլի սրգիներուն, համար. ետքը — բէշ փայտ մը առ ու անոր վրայ գրէ, Յովսէփի համար, Եփրեմի ու անոր ընկերներուն բոլոր Իսրայէլի տանը փայտը. 17 - Եւ զանոնք իրարու մօտեցուր, որպէս զի մէկ փայտ ըլլան ու քու ձեռքիդ մէջ միանան: 18 - Ու երբ քու ժողովուրդիդ սրգիները քեզի խօսին ու ըսեն, Ի՞նչ պիտի ըլլան քեզի այս բաները. մեզի չէ՞ս պատմեր: 19 - Անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես պիտի առնեմ՝ Յովսէփի փայտը որ Եփրեմի ձեռքն է, ու անոր ընկերները, Իսրայէլի ցեղերը, և զանոնք անոր հետ մէկտեղ Յուդայի փայտին հետ պիտի դնեմ, ու զանոնք մէկ փայտ պիտի ընեմ. ու իմ ձեռքիս մէջ մէկ պիտի ըլլան: 20 - Եւ այն փայտերը, որոնց վրայ դուն պիտի գրես, անոնց աչքերուն

*Եբբ. առնէն ա՛լ պիտի փնտռուիմ. տես գլ. Ժգ. 3: Կամ, Տէրոջը Հոգիով զիս

*Կամ, թէ ես եմ Տէրը. ես խօսեցայ, ու պիտի կատարեմ

առջև քու ձեռքից մէջ ըլլան: 21 - Ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Իսրայէլի որդիները պիտի առնեմ այն ազգերուն մէջէն՝ ուր գացին, ու զանոնք ամէն կողմէն պիտի ժողովեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ: 22 - Եւ զանոնք երկրին մէջ Իսրայէլի լեռներուն վրայ մէկ ազգ պիտի ընեմ, ու անոնց ամէնուն վրայ մէկ թագաւոր պիտի թագաւորէ. ու մէյմըն ալ երկու ազգ պիտի չըլլան, ու մէյմըն ալ երկու թագաւորութեան պիտի չբաժնուին: 23 - Եւ մէյմըն ալ իրենց կուռքերովը ու գարշութիւններովը ու երենց բոլոր յանցանքներովը պիտի չպղծուին. ու ես զանոնք պիտի ազատեմ իրենց բոլոր բնակութիւններէն՝ որոնց մէջ իրենք մեղք գործեցին, և զանոնք պիտի սրբեմ. ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ անոնց Աստուած պիտի ըլլամ: 24 - Եւ անոնց վրայ իմ ծառաս Գաւթթագաւոր պիտի ըլլայ, ու ամէնը մէկ հովիւ պիտի ունենան. և իմ իրաւունքներուս մէջ պիտի քալեն, ու իմ օրէնքներս պիտի պահեն ու զանոնք պիտի կատարեն: 25 - Եւ պիտի բնակին այն երկրին վրայ զոր իմ Յակոբ ծառայիս տուի, որուն մէջ ձեր հայրերը բնակեցան. ու անոր վրայ իրենք ու իրենց որդիները և իրենց որդւոց որդիները յաւիտեան պիտի բնակին. ու իմ ծառաս Գաւթթագաւոր անոնց իշխան պիտի ըլլայ: 26 - Եւ անոնց հետ խաղաղութեան ուխտ պիտի ընեմ, անկառանց յաւիտեանական ուխտ պիտի ըլլայ. և զանոնք պիտի տեղաւորեմ ու պիտի շտաղենեմ, և իմ սրբարանս անոնց մէջ պիտի գնեմ՝ յաւիտեան: 27 - Ու իմ խորանս անոնց քով պիտի ըլլայ. և ես անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան: 28 - Եւ իմ սրբարանս յաւիտեան անոնց մէջ ըլլալով ազգերը պիտի գիտնան թէ ես եմ՝ Տէրը որ Իսրայէլը կը սրբեմ:

ԳԼ. ԼԸ

Իտարձեայ Տէրօջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2 - Որդի մարգոյ, երեսդ Մագոգի երկիրը եղող Ռովսի, Մասքի ու Թորէլի իշխանին Գոգի գարձուր, և անոր վրայով մարգարէութիւն ըրէ,

3 - Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի գէմ եմ, ով Գոգ, Ռովսի, Մասքի ու Թորէլի իշխան: 4 - Ու քեզ պիտի գարձնեմ, և քու կզակներուդ կարթ եր պիտի անցնեմ, ու քեզ ու քու բոլոր զօրքդ պիտի հանեմ, ձիերը ու ձիաւորները, ամէնն ալ կատարելապէս հագուած. և վահանաւորներուն ու սապարաւորներուն մեծ ժողովքը՝ ամէնն ալ սուր բռնող: 5 - Անոնց հետ Պարսիկները, Եթէովպացիները ու Փուգացիները, ամէնն ալ սապարաւոր ու սաղաւարտաւոր: 6 - Նաև Գամեր ու անոր բոլոր գունդերը, Թորգամոյլեառնը հիւսիսի ծայրերէն, ու անոր բոլոր գունդերը, շատ ժողովուրդներ, քեզի հետ պիտի հանեմ:

7 - Պատրաստ եղիր, և քեզ ու քու քովդ ժողովուած բոլոր ժողովներդ պատրաստէ, ու գուն անոնց պահապան եղիր: 8 - Շատ օրերէն ետքը՝ քու զօրքերդ պիտի համընես. ետքի տարիները պիտի գաս այն երկրին վրայ որ սուրէն ազատուած է, և այն Գոգի քեզի հետ որ շատ ազգերէն ժողովուած է Իսրայէլի լեռներուն վրայ, որոնք մշտնջենաւոր աւերակ էին. բայց անկառ ազգերէն ելած ըլլալով, ամէնը ապահովութեամբ պիտի բնակին: 9 - Իսկ գուն մըրիկի պէս պիտի ելլես գաս, ու երկիրը ծածկելու համար ամպի պէս պիտի ըլլաս, գուն և քու բոլոր գունդերդ ու շատ ժողովուրդներ քեզի հետ:

10 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը պիտի ըլլայ որ քու միտքդ բաներ պիտի գան, ու չար խորհուրդ մը պիտի մտածես: 11 - Ու պիտի ըսես, Անպարկապ գեղերուն երկիրը ելլեմ, հանգրտութեան մէջ եղողներուն, ապահովութեամբ բնակողներուն, վրայ երթեմ. անոնց ամէնը անպարկապ քեզի կը բնակին, և նիգեր ու գուներ չունին: 12 - Որպէս զի աւար յափշտակես և կողոպուտ կողոպտես, և քու ձեռքդ՝ բնակուած աւերակներուն վրայ ու ազգերէն ժողովուած և խաշինք ու ագրանք ստացած ու երկրին բարձր տեղերը բնակած ժողովուրդին վրայ գարձընես: 13 - Սարա ու Իեգան և Թարսիսի վաճառականները ու անոր բոլոր առոյգ աւիւծները քեզի պիտի ըսեն:

*ԵՔԵ. պիտի համրու խ

Միթէ աւար յափշտակելու եկար. կողորպճա կողորպտելու համար քու ժողովքդ ժողվեցիր, որպէս զի արծաթ ու ոսկի վերցնես, խաշինք ու ապրանք աւնես, մեծ աւար յափշտակես:

14 - Անոր համար մարգարէութիւն բրէ, որդի մարգոյ, ու Գոգի ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը որ իմ ժողովուրդս Խորայէլ ապահովութեամբ բնակի՝ ահա դուն պիտի գիտնաս, 15 - Ու քու տեղէդ, հիւսիսի ծայրերէն, պիտի գաս, դուն ու քեզի հետ շատ ժողովուրդներ՝ ամէնը ձիեր հեծած, մեծ բազմութեամբ ու շատ զօրքով. 16 - Եւ իմ ժողովուրդիս Խորայէլի վրայ ամպի պէս երկիրը ծածկելու պիտի ելլես. «իկ» վերջին օրերը պիտի ըլլայ, ու քեզ իմ երկրիս վրայ պիտի բերեմ, որպէս զի ազգերը զիս ճանչնան երբ ես անոնց աչքերուն առջև քու վրայ *փառաւորուիմ՝, ով Գոգ:

17 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Գուն անիկա՞ ես, որ քեզի համար առաջուան օրերը, այն օրերը «- տարիները մարգարէութիւն բնող Խորայէլի մարգարէներուն, իմ ծառաներուն, միջոցով ըսի թէ քեզ անոնց վրայ պիտի բերեմ: 18 - Եւ այն օրը, Գոգի Խորայէլի երկրին վրայ եկած օրը, կ'ըսէ Տէր Եհովա, իմ սրամաութիւնս +երես պիտի ելլէ: 19 - Եւ իմ նախանձովս, իմ բարկութեանս կրակովը, խօսեցայ, որ այն ատեն անշուշտ Խորայէլի երկրին վրայ մեծ խռովութիւն պիտի ըլլայ. 20 - Եւ ծովու ձուկերը ու երկինքի թռչունները և դաշտի գաղանները ու գետնի վրայ սողացող բոլոր սողունները ու երկրի երեսին վրայ եղող բոլոր մարդիկը իմ երեսէս պիտի խռովին. և լեռները պիտի փչին, ու գահավէժ ժայռերը պիտի իյնան, ու բոլոր պարիսպները գետինը պիտի իյնան: 21 - Եւ անոր դէմ՝ իմ բոլոր յեռներուս վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ Տէր Եհովա. մարդուն սուրը իր եղբօրը վրայ պիտի ըլլայ: 22 - Եւ անոր հետ ժանտախտով ու արիւնով պիտի վիճիմ, և անոր վրայ ու անոր զօրեւոր գունդերուն վրայ ու անոր հետ եղող շատ ժողովուրդներուն վրայ յարգահաս

անձրև ու կարկուտի քարեր, կրակ ու ծծումբ պիտի տեղամ: 23 - Եւ շատ ազգերու առջև պիտի փառաւորուիմ ու սրբուիմ և ճանչցուիմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը:

ԳԼ. ԼԹ

Եւ դուն, որդի մարգոյ, Գոգի վրայ յով մարգարէութիւն բրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Գոգ, Ռովսի, Մոաբի ու Թորէլի իշխան. 2 - Ու ես քեզ պիտի դարձնեմ, քեզ պիտի տանիմ և հիւսիսի ծայրերէն քեզ պիտի հանեմ, ու քեզ Խորայէլի լեռներուն վրայ պիտի բերեմ: 3 - Եւ քու աղեղդ քու ձախ ձեռքէդ վար պիտի ձգեմ, ու քու նետերդ աջ ձեռքէդ վար պիտի նետեմ: 4 - Գուն քու բոլոր գունդերովդ ու քեզի հետ եղող ժողովուրդներով Խորայէլի լեռներուն վրայ պիտի իյնաս. քեզ ամէն տեսակ թև ունեցող գիշատիչ թռչունին ու դաշտի գաղաններուն կերակուր պիտի տամ: 5 - Գաշտի երեսին վրայ պիտի իյնաս, վասն զի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա: 6 - Եւ Մագոգի վրայ ու կղզիներուն մէջ ապահովութեամբ բնակողներուն վրայ կրակ պիտի զրկեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը: 7 - Եւ իմ սուրբ անունս իմ ժողովուրդիս Խորայէլի մէջ պիտի ճանչցնեմ. ու պիտի չթողում որ մէյմըն ալ իմ սուրբ անունս պղծուի. ու ազգերը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, Խորայէլի մէջ եղող Սուրբը: 8 - Ահա կու գայ, ու պիտի կատարուի, կ'ըսէ Տէր Եհովա. իմ ըսած օրս ասիկա է: 9 - Եւ Խորայէլի քաղաքներուն բնակիչները պիտի ելլեն, ու կրակ պիտի վառեն, ու զէնքերը պիտի սյրեն. և ասպարներով, վահաններով, աղեղներով, նետերով, բերերով ու նիզակներով եօթը տարի կրակ պիտի վառեն: 10 - Եւ դաշտէն փայտ պիտի չբերեն, ոչ ալ անտառներէն պիտի կտրեն, հապա զէնքերով կրակ պիտի վառեն. ու զիրենք թալլողները պիտի թալլեն, ու զիրենք կողորպտողները պիտի կողորպտեն, կ'ըսէ Տէր Եհովա:

11 - Ու պիտի ըլլայ որ այն օրը հոն Խորայէլի մէջ Գոգի գերեզմանի տեղ պիտի տամ անցաւորաց ձորը՝ ծովուն

* Եբր. սրբուիմ
+ կ-մ, բարկութիւնովս

արևելեան կողմէն . և անիկա անցաւորները պիտի արգելէ, ու հոն Գոգը ու անոր բոլոր բազմութիւնը պիտի թաղեն, և զանիկա Գոգի բազմութեան ձորը պիտի կոչեն: 12 - Ու Խորայէլի որդիները երկիրը մտքրելու համար եօթը ամիս զանոնք պիտի թաղեն: 13 - Ու երկրին բոլոր ժողովուրդը զանիկա պիտի թաղեն . և ասիկա անոնց անուն մը պիտի ըլլայ այն օրը՝ որպէս զի ես փառաւորուիմ, կ'ըսէ Տէր Եհովա: 14 - Ու մարդիկ պիտի որոշեն՝ որ շարունակ երկրին մէջ պարտին, ու անցնողներուն հետ՝ երկրի երեսին վրայ մնացածները թաղեն, որպէս զի զանիկա մտքրեն . անոնք եօթը ամիսէն ետքը պիտի փնտռեն: 15 - Ու երկրին մէջէն անցնողները անցած տաննին երբ մարդու սկոր տեսնեն, քովը նշան մը պիտի կանգնեն մինչև թաղողները զանիկա Գոգի բազմութեան ձորը թաղեն: 16 - Ու քաղաքին անունն ալ *Համոնա պիտի ըլլայ . այսպէս երկիրը պիտի մտքրեն:

17 - Եւ դուն, որդի մարդոյ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Ամէն տեսակ թեւաւոր թաւառնին ու դաշտի բոլոր գազաններուն բոկ, ժողովուրդէք ու եկէք. իմ ձեզի համար զոհած զոհիս, Խորայէլի լեռներուն վրայ կարգաւորեալ մեծ զոհին . ամէն կողմէն մօտեցէք, որպէս զի միս ուտէք ու արիւն խմէք: 18 - Զօրաւորներուն միտք ուտէք, ու երկրի իշխաններուն արիւնը խմէք, խոյրու, գառներու, նոխազներու և զուարակներու՝ որոնց ամէնը Բասանի գէր անատուներ են: 19 - Եւ ձեզի համար զոհած զոհէս՝ մինչև կշտանալնիդ ճարպ ուտէք, ու մինչև գինովնալնիդ արիւն խմէք: 20 - Եւ իմ սեղանիս վրայ ձիերէն ու խոտքի անատուներէն, զօրաւորներէն ու ամէն պատերազմող մարդէն կշտանաք, կ'ըսէ Տէր Եհովա: 21 - Եւ ազգերուն մէջ իմ փառքս պիտի գնեմ, ու ամէն ազգերը իմ բրած գատատաններս ու անոնց վրայ դրած ձեռքս պիտի տեսնեն: 22 - Ու Խորայէլի տունը այն օրէն ետեւ ալ պիտի գիտնան թէ իրենց Տէր Աստուածը ես եմ: 23 - Եւ ազգերը պիտի գիտնան թէ Խորայէլի տունը իրենց

անօրէնութեանը համար, ինծի ապրատամբ ըլլալուն համար, գերի եղան, ու ես իմ երես անոնցմէ ծածկեցի, և զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը տուի, ու ամէնը սրով ինկան: 24 - Իրենց պղծութեանը համեմատ ու իրենց յանցանքներուն համեմատ իրենց հարստութիւնը, ու իմ երես իրենցմէ ծածկեցի:

25 - Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ . Հիմա Յակորի գերութիւնը պիտի դարձնեմ, ու բոլոր Խորայէլի տանը պիտի ողորմիմ, և իմ սուրբ անունս համար նախանձաւոր *պիտի ըլլամ: 26 - Ու երբ անոնք իրենց երկրին մէջ ապահովութեամբ բնակին, ու վախցնող մը չըլլայ, այն տանն իրենց անարգանքը ու իրենց ինծի դէմ բրած բոլոր յանցանքները պիտի կրեն: 27 - Երբ զանոնք ժողովուրդներէն դարձնեմ, ու զանոնք իրենց թշնամիներուն երկիրներէն ժողովեմ, այն տանն անոնց մէջ շատ ազգաց աչքերուն առջև պիտի սրբուիմ: 28 - Եւ պիտի գիտնան թէ ես եմ անոնց Տէր Աստուածը . որովհետեւ զանոնք ազգերու մէջ գերի քշեցի, ու զանոնք նորէն իրենց երկիրը ժողովեցի, և ալ անոնցմէ հոն մարդ մը չթողուցի: 29 - Ու մէյմըն ալ իմ երես անոնցմէ պիտի չծածկեմ. քանզի իմ Հոգիս Խորայէլի տանը վրայ թափեցի, կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ Խ

Սեր գերութեան քսանըհինգերորդ տարին, Գառաջին ամիսը՝ ամսուն տասներորդ օրը, քաղաքին զարնուելուն չորեքտասներորդ տարին, նոյն օրը Տէրօջը ձեռքը իմ վրաս եղաւ, ու զիս հոն տարաւ: 2 - Զիս Աստուծոյ տեսիլքներով Խորայէլի երկիրը տարաւ, և զիս խիստ բարձր լեռան մը վրայ դրաւ. ու անոր վրայ հարաւային կողմը քաղաքի մը շինուածքի պէս երեսն մը կար: 3 - Ու երբ զիս հոն տարաւ, ահա

*Ա. յ. ի. զ. զ., բազմութիւն
 † Ա. յ. զ. զ., կոտ. ք. հեռանալներէն

*Ա. յ. զ. զ., պիտի ըլլամ, երբ կրեն իրենց անարգանքը ու իրենց բոլոր յանցանքները՝ զորոնք ինծի դէմ բրին քանի որ իրենց երկրին մէջ ապահովութեամբ կը բնակէին, ու վախցնող մը չկար
 † Ե. զ. զ. տարւոյն զլու խը

մարդ մը՝ որուն երևոյթը պղնձի երեւութի պէս էր, և անոր ձեռքը քթանէ լար ու չափի եղէգ կար, ու անիկա դուռը կայներ էր: 4 - Եւ այն մարդը ինծի ըսաւ, Որդի մարդոյ, աչքերովդ տես ու սկանջներովդ լսէ, ու քեզի ամէն ցուցուցածներուս ու շագրու-թիւն ըրէ. վասն զի դուն հոս բերուեցար որպէս զի «յ» Բաները քեզի ցուցնեմ: ամէն տեսածդ Խորայելի տանը պատմէ:

5 - Եւ ահա տանը դուրսէն շուրջանակի պարիսպ կար, ու այն մարդուն ձեռքը վեց կանգունի երկայնքով ձեռք չափի եղէգ մը կար, ինչպէս մէկ կանգուն ու չորս մասնաչափ ըլլալով. ու պարիսպին լայնութիւնը եղէգ մը, ու բարձրութիւնը եղէգ մը չափեց:

6 - Եւ անիկա դէպ ի արևելք նայող դուռը եկաւ, ու անոր աստիճաններուն վրայ ելաւ, ու դրանք մէկ սեամբ եղէգ մը լայն, ու միւս սեամբ եղէգ մը լայն չափեց: 7 - Եւ ահա ձի խուցը եղէգ մը երկայն ու եղէգ մը լայն էր, ու խուցերուն միջոցը հինգ կանգուն էր. և դրանք սրահին քով եղող դրանք սեամբ ներսէն մէկ կանգուն էր: 8 - Ու անիկա դրանք սրահը ներսէն մէկ եղէգ չափեց: 9 - Եւ դրանք սրահը ութ կանգուն չափեց ու անոր դրանդիքը երկու կանգուն էր, ու դրանք սրահը ներսի կողմէն էր: 10 - Ու դէպ ի արևելք եղող դրանք խուցերը մէկ կողմէն երեք ու միւս կողմէն երեք էին, ու երեքին չափը մէկ էր. և դրանդիքներուն չափը մէկ կողմէն ու միւս կողմէն մէկ էր: 11 - Ու դրանք մուտքին լայնութիւնը ասոր կանգուն չափեց, «- դրանք երկայնութիւնը աստուիրեք կանգուն: 12 - Եւ խուցերուն առջև ձի խուցէն մէկ կանգունի սահման, ու միւս կողմէն մէկ կանգունի սահման մը կար ու խուցերը մէկ կողմէն վեց կանգուն, ու միւս կողմէն վեց կանգուն էին: 13 - Եւ դուռը չափեց մէկ խուցին աստիճան մինչև միւսին աստիճան. «- լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր, «- մուտքերը դիմացէ դիմաց էին: 14 - Եւ դրանդիքներուն զարդերը վաթսուն կանգուն ըրաւ, մինչև դրանք բարտաիքը եղող գաւիթին դրանդիքը: 15 - Եւ դուրսի դրանք երեսէն մինչև ներսի

դրանք սրահին երեսը յիսուն կանգուն էր: 16 - Ու խուցերուն և անոնց դրանդիքներուն քով, դրանք ներսի կողմէն շուրջանակի *վանդակապատ պատուհաններ կային, սրահներն ալ պայպէս էին, ու ներսի կողմէն շուրջանակի պատուհաններ կային. և դրանդիքներուն վրայ արմաւենիներ կային:

17 - Ու զիս դուրսի գաւիթը բերաւ, և ահա հոն սենեակներ, ու գաւիթին համար շինուած շուրջանակի քարայտակ կար. ու քարայտակին վրայ երեսուն սենեակ կար: 18 - Եւ դռներուն քովի քարայտակը դռներուն երկայնութեանը դիմաց եղող վարի քարայտակն էր: 19 - Ու անիկա վարի դրանք առջևէն մինչև ներքին սրահին առջև դուրսէն՝ դէպ ի արևելք ու հիւսիս լայնութիւնը հարիւր կանգուն չափեց:

20 - Եւ դուրսի գաւիթին դէպ ի հիւսիս նայող դրանք երկայնութիւնը ու լայնութիւնը չափեց: 21 - Ու անոր խուցերը երեք մէկ կողմէն էին, ու երեք միւս կողմէն, և անոր դրանդիքները ու սրահները առաջին դրանք չափովն էին. անոր երկայնութիւնը յիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր: 22 - Եւ պատուհանները ու սրահները ու արմաւենիները դէպ ի արևելք նայող դրանք չափովն էին, ու եօթը աստիճանով այն դուռը կ'ելլէին. և սրահները անոնց առջև էին: 23 - Ու ներսի գաւիթը դուռ մը ունէր՝ հիւսիսային դրանք ու արևելեան դուռը դիմաց, ու մէկ դռնէն մինչև միւս դուռը հարիւր կանգուն չափեց:

24 - Եւ զիս հարաւային կողմը ասորաւ, և ահա հարաւային կողմը դուռ մը կար. ու անոր դրանդիքները ու սրահները չափեց, «- ինչպէս նոյն չափերուն համեմատ էին: 25 - Եւ անիկա ու անոր սրահները նոյն պատուհաններուն պէս պատուհաններ ունէին շուրջանակի. «- երկայնութիւնը յիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր: 26 - Եւ այն դուռը ելլելու համար եօթը աստիճան կար, ու անոր սրահները անոնց առջև էին. ու անոր դրանդիքներուն վրայ մէկ կողմէն ու միւս կողմէն արմաւենիներ կային:

* Եբր. շէնրին

* կամ, ներսէն լայն, դուրսէն նեղ

27 - Ու ներսի գաւիթը դուռ մը ուներ դէպ ի հարաւ, ու մէկ դռնէն մինչև միւս դուռը դէպ ի հարաւ հարիւր կանգուն չափեց: 28 - Եւ զիս հարաւային գուռնէն ներսի գաւիթը բերաւ, ու հարաւային դուռը չափեց, «բ նոյն չափերուն համեմատ էր»: 29 - Եւ անոր խուցերը ու դրանդիքները ու սրահները նոյն չափերուն համեմատ էին . և անիկա ու անոր սրահները շուրջանակի պատուհաններ ունէին . «նաք երկայնութիւնը յիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր»: 30 - Եւ սրահները շուրջանակի քսանըհինգ կանգուն երկայն ու հինգ կանգուն լայն էին: 31 - Եւ սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու դրանդիքներուն վրայ արմուէնիներ կային . և այն դռնը ելլելու համար ութ աստիճան կար:

32 - Եւ զիս ներսի գաւիթը տարաւ դէպ ի արևելք, ու դուռը չափեց, «բ նոյն չափերուն համեմատ էր»: 33 - Եւ անոր խուցերը ու դրանդիքները ու սրահները նոյն չափերուն համեմատ էին . և անիկա ու անոր սրահները շուրջանակի պատուհաններ ունէին . «նաք երկայնութիւնը յիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր»:

34 - Եւ անոր սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու անոր դրանդիքները մէկ կողմէն ու միւս կողմէն արմուէնիներ ունէին . և այն դռնը ելլելու համար ութ աստիճան կար:

35 - Ու զիս հիւսիսային դուռը բերաւ, ու նոյն չափերուն համեմատ չափեց 36 - Խուցերը, դրանդիքները ու սրահները, և շուրջանակի պատուհաններ ունէր . «նաք երկայնութիւնը յիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր»: 37 - Եւ անոր դրանդիքները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու դրանդիքները մէկ կողմէն ու միւս կողմէն արմուէնիներ ունէին . և այն դռնը ելլելու համար ութ աստիճան կար:

38 - Ու սենեակ մը կար որոն մուտքը դռներուն քովի դրանդիքներուն մօտ էր . սղջակէզը հոն կը լուսային:

39 - Եւ դրանը սրահին մէջ մէկ կողմէն երկու սեղան, ու միւս կողմէն երկու սեղան կար, սրպէս զի անոնց վրայ սղջակէզը ու մեզքի պատարագը ու

յանցանքի պատարագը մտնէին: 40 - Եւ հիւսիսային դրանը մուտքը ելլելուն դուրսի կողմը երկու սեղան, ու միւս կողմը եղող դրանը սրահին մէջ երկու սեղան կար: 41 - Իրանը քով մէկ կողմէն չորս սեղան, ու միւս կողմէն չորս սեղան կար, ութ սեղան էր, «- անոնց վրայ կը մտնէին»: 42 - Եւ չորս սեղանները, որոնք սղջակէզի համար էին, տաշուած քարէ մէկ ու կէս կանգուն երկայն ու մէկ ու կէս կանգուն լայն, ու մէկ կանգուն բարձր էին . և սղջակէզը ու զոհը մտնէին: 43 - Ու ներսէն շուրջանակի չորս մատնաչափ *եզերք մը՝ շինուած էր . ու սեղաններուն վրայ զոհին միտը կը դրէին:

44 - Եւ ներսի դրանը դուրսի կողմը, հիւսիսային դրանը քով եղող ներսի գաւիթին մէջ երգեցողներուն սենեակները կային, ու անոնց երեսը դէպ ի հարաւ էր . մէկը արևելեան դրանը քով էր, «- երեսը դէպ ի հիւսիս էր»:

45 - Եւ ինծի ըսաւ, Այս սենեակը որ դէպ ի հարաւ կը նայի, տանը պահպանութիւնը ընող քահանաներուն համար է. 46 - Ու այն սենեակը որ դէպ ի հիւսիս կը նայի, սեղանին պահպանութիւնը ընող քահանաներուն համար է . անոնք Սաղավի որդիներն են, որոնք Ղևի որդիներէն Տէրօջը կը մծտեան՝ անոր ծառայութիւն ընելու համար:

47 - Եւ գաւիթը չափեց, «բն երկայնութիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը հարիւր կանգուն էր, անիկա քառակուսի էր . ու սեղանը տանը առջև էր»:

48 - Եւ զիս տանը սրահը տարաւ, ու սրահին դրանդիքները չափեց, հինգ կանգուն մէկ կողմէն ու հինգ կանգուն միւս կողմէն . և դրանը լայնութիւնը մէկ կողմէն երեք կանգուն, ու միւս կողմէն երեք կանգուն էր: 49 - Սրահին երկայնութիւնը քսան կանգուն, ու լայնութիւնը տասներմէկ կանգուն էր, և հոն [դռնը] աստիճաններով կ'ելլէին . ու դրանդիքներուն քով սիւներ կային, մէկը մէկ կողմէն, միւսն ալ միւս կողմէն:

*կաժ, կարթեր
 †կաժ, էր, այն աստիճաններովը մէկտեղ, որոնցմով հոն կ'ելլէին

ԳԼ. ԽԱ.

Եւ զիս տաճարը տարաւ, ու անոր գրանդիքները չափեց, մէկ կողմէն վեց կանգուն լայն ու միւս կողմէն վեց կանգուն լայն էր, խորանին լայնութեանը համեմատ 2 - Եւ գրանը լայնութիւնը տասը կանգուն էր, ու գրանը քովերը մէկ կողմէն հինգ կանգուն, ու միւս կողմէն հինգ կանգուն էին. և անոր երկայնութիւնը քառասուն կանգուն, ու լայնութիւնը քսան կանգուն չափեց:

3 - Ու ներս մտաւ, և գրանը գրանդիքները երկու կանգուն, ու դուռը վեց կանգուն չափեց. ու գրանը լայնութիւնը եօթը կանգուն էր:

4 - Եւ անոր երկայնութիւնը չափեց քսան կանգուն, ու լայնութիւնը քսան կանգուն՝ տաճարին լայնութեանը համեմատ. ու ինծի բաւ, Ասիկա է սրբութիւն սրբութեանը:

5 - Եւ տանը պատը վեց կանգուն, ու տանը բոլորտիքը եղող սենեակներուն լայնութիւնը չորս կանգուն չափեց:

6 - Ու սենեակները իրարու դրոյ էին երեք դռնով, ու թիւով երեսուն. և անոնց դռանները կը մտնէին տաճարին այն պատին մէջ որ սենեակներուն համար շինուած էր շուրջանակի. որպէս զի անոր կռիւնին, բայց տանը պատին մէջ չէին կռիւններ: 7 - Ու սենեակները ելլելու համար լայնցող ու շրջանակաւոր դռանը ճշ կար, որ տանը բոլորտիքը՝ վեր ելլելու համար տունը կը պարտէր. անոր համար ելլելով տունը կը լայննար, և այսպէս վարի դասիկանէն վերի դասիկանը միջին դասիկանէն կ'ելլէին: 8 - Ու շուրջանակի տանը բարձրութիւնը տասը. սենեակներուն հիմերը ամբողջ մէկ եղէք, վեց մեծ կանգուն էին: 9 - Սենեակներուն պատին լայնութիւնը դուրսէն հինգ կանգուն էր, ու մնացածը սենեակներուն ներսի միջոցն էր: 10 - Եւ դռան սենեակներուն մէջտեղը, տանը բոլորտիքը, քսան կանգուն լայն միջոց մը կար:

11 - Ու սենեակներուն մուտքերը մնացած տեղին կը նայէին. մուտքին մէկը դէպ ի հիւսիս, և մուտքին մէկը դէպ ի հարաւ կը նայէր. ու մնացած տեղին լայնութիւնը շուրջանակի հինգ կանգուն էր:

12 - Եւ զատուած տեղին առջև,

դէպ ի արևմտեան ծայրը եղող շէնքին լայնութիւնը, եօթանասուն կանգուն էր. ու շէնքին պատը շուրջանակի հինգ կանգուն լայն ու երկայնութիւնը իննսուն կանգուն էր: 13 - Եւ տանը երկայնութիւնը հարիւր կանգուն չափեց. ու զատուած տեղը ու շէնքը իր պատերովը հարիւր կանգուն երկայն էր: 14 - Եւ տանը ու զատուած տեղին երեսը դէպ ի արևելք հարիւր կանգուն լայն էր:

15 - Ու դռնը ետևի կողմէն՝ զատուած տեղին դիմաց եղող շէնքին երկայնութիւնը և անոր սիւնազարդ սրահները մէկ կողմէն ու միւս կողմէն, ներքին տաճարին ու դուռի շին սրահներուն հետ, հարիւր կանգուն չափեց:

16 - Իրանը սեմերը ու վանդակապատ պատուհանները. և շուրջանակի այն երեք շէնքերուն սեմերուն դիմաց եղող սիւնազարդ սրահները ամէն կողմէն տախտակամած շէնքերն զեանէն մինչև պատուհանները, ու պատուհանները ծածկուած էին: 17 - Եւ գրանը վրայ ու մինչև ներքին տունը, և դուրսէն ու բոլոր պատը շուրջանակի ներսէն ու դուրսէն իրենց չափերովը:

18 - Այս դռան դռան վրայ քերովբէներ ու արմուէնիներ քանդակուած էին, ու երկու քերովբէներուն մէջտեղ արմուէնի մը, ու ամէն մէկ քերովբէն երկու երեսուն էր: 19 - Այսինքն մէկ կողմէն դէպ ի արմուէնին մարդու երես, ու միւս կողմէն դէպ ի արմուէնին առողջ աւիւծի երես. բոլոր տանը քանդակը շուրջանակի այսպէս էր: 20 - Յատուէն մինչև գրանը վրայ քերովբէներ ու արմուէնիներ քանդակուած էին, նոյնպէս ալ տաճարին պատին վրայ: 21 - Տաճարին գրանդիքները քառակուսի էին, ու սրբարանին երեսը, ճշանդ երկայնութիւնը երկու կանգուն էր:

22 - Փայտէ սեղանը երեք կանգուն բարձր էր, ու երկայնութիւնը երկու կանգուն էր, և անոր անկիւնները իրմէ էին, ու անոր երկայնութիւնը ու քովերը փայտէ էին. ու անկիւս ինծի բաւ, Ասիկա է Տէրաջը առջև եղող սեղանը: 23 - Եւ տաճարը ու սրբարանը երկու դուռ ունէին. 24 - Ու դռները երկերկու փեղկ ունէին, ու փեղկերը երկաքի կը ծալուէին. երկու փեղկ մէկը ունէր, ու երկու փեղկ միւսը: 25 - Եւ անոնց վրայ, տաճարին

դռներուն վրայ, պատերուն վրայի քանդակին պէս քերովբէներ ու արմու-
 ւենիններ քանդակուած էին. ու դուր-
 սէն սրահին երեսը, փայտէ *սանդուխ
 մը կար: 26 - Եւ սրահին քովերը ու
 տանը սենեակներուն մէջ և սանդուխ-
 ներուն վրայ, մէկ կողմէն ու միւս կող-
 մէն, վանդակապատ պատուհաններ
 ու արմոււենիններ կային:

ԳԼ. ԽԲ

Անկէ ետքը զիս դէպի հիւսիս եղող
 ճամբովը արաաքին գաւիթը հանեց,
 և զիս զատուած տեղին դիմաց եղող
 ու դէպի հիւսիս նայող շէնքին դի-
 մացի սենեակները բերաւ: 2 - Այս *էն-
 փերան հիւսիսային մուտքին առջևի
 երկայնութիւնը հարիւր կանգուն, ու
 լայնութիւնը յիսուն կանգուն էր: 3 -
 Ներսի գաւիթին քսան կռփան դէմ
 ու դուրսի գաւիթին քարայտակին
 դէմ, իրարու դիմաց, երեք դասիկոնով
 սիւնազարդ սրահներ կային: 4 - Ու
 սենեակներուն առջև, ներսէն տասը
 կանգուն լայն ճեմելիք մը * - մէկ կան-
 գուն ճամբայ մը կար, և անոնց դռնե-
 րը դէպի հիւսիս էին: 5 - Ու վերի
 սենեակները կարծ էին, վասն զի սիւ-
 նազարդ սրահները անոնցմէ, այսինքն
 շէնքին վարի ու միջին սենեակներէն,
 *եղ կ'առնէին: 6 - Քանզի անոնք երեք
 դասիկոն էին, ու գաւիթներուն սիւ-
 ներուն պէս սիւներ չունէին. անոր հա-
 մար գեանէն, այսինքն վարի ու միջին
 սենեակներէն, կը նեղնային: 7 - Ու
 սենեակներուն դիմաց, դուրսի գաւի-
 թին կողմը, սենեակներուն առջևի
 դուրսի պատին երկայնութիւնը յի-
 սուն կանգուն էր: 8 - Վասն զի դուր-
 սի գաւիթը նոյն սենեակներուն եր-
 կայնութիւնը յիսուն կանգուն էր. և
 ահա տաճարին դիմաց հարիւր կան-
 գուն էր: 9 - Ու այս սենեակներուն
 տակէն, դուրսի գաւիթէն անոնց եր-
 թալու համար արևելեան կողմէն,
 մուտք մը կար: 10 - Եւ գաւիթին
 պարսպին լայնութեանը մէջ դէպի
 արևելք, զատուած տեղին դիմաց ու
 շէնքին դիմաց, սենեակներ կային: 11 -
 Եւ անոնց առջև ճամբայ մը կար դէպ
 ի հիւսիս եղող սենեակներուն երե-

*Կռփ, փայրագաւիթ

ւութիւն պէս, թէ՛ անոնց երկայնու-
 թեանը, թէ՛ անոնց լայնութեանը և
 թէ՛ անոնց բոլոր ելքերուն և անոնց
 ձևերուն ու դռներուն կողմանէ: 12 -
 Նայնպէս էին դէպի հարաւ եղող սեն-
 եակներուն մուտքերը. ճամբուն գլու-
 խը մուտք մը կար, այսինքն արևելեան
 ճամբուն բերանը՝ պատին առջևի շի-
 տակ ճամբան:

13 - Եւ ինծի ըսաւ, Չատուած տե-
 ղին առջև եղող հիւսիսային կողմի
 սենեակները * - հարաւային կողմի սեն-
 եակները սուրբ սենեակներն են, ուր
 Տէրօջը մօտեցող քահանանները ամե-
 նատուրբ բաները պիտի ուտեն. հոն
 պիտի դնեն ամենատուրբ բաները ու
 հացի ընծան ու մեղքի պատարագը և
 յանցանքի պատարագը, քանզի այն
 տեղը սուրբ է: 14 - Երբ քահանաները
 հոն մտնեն, սուրբ տեղէն դուրսի գա-
 ւիթը պիտի չելլեն, հապա իրենց պաշ-
 տօնի զգեստները հոն պիտի թողուն,
 վասն զի անոնք սուրբ են. և ուրիշ հան-
 դերձներ հագնելով ժողովուրդին վե-
 րաբերեալ բաներուն պիտի մօտենան:

15 - Ու երբ անիկա ներքին տունը
 չափեց լմնցուց, զիս դէպի արևելք
 նայող դուռը հանեց, ու զանիկա ա-
 մէն կողմէն չափեց: 16 - Արևելեան
 կողմը չափի եղէգով շուրջանակի
 հինգ հարիւր եղէգ չափեց չափի եղէ-
 գով: 17 - Հիւսիսային կողմը շուրջա-
 նակի չափի եղէգով հինգ հարիւր ե-
 ղէգ չափեց: 18 - Հարաւային կողմը
 չափի եղէգով հինգ հարիւր եղէգ չա-
 փեց: 19 - Արևմտեան կողմը դարձաւ,
 * - չափի եղէգով հինգ հարիւր եղէգ
 չափեց: 20 - Զանիկա չորս կողմէն չա-
 փեց. անիկա հինգ հարիւր եղէգ եր-
 կայն, ու հինգ հարիւր եղէգ լայն էր,
 * - պարիսպ ունէր՝ սուրբ ու անտուրբ
 եղեր - մէջտեղ զատելու համար:

ԳԼ. ԽԳ

Եւ զիս դուռը, դէպի արևելք նա-
 յող դուռը, տարաւ: 2 - Եւ ահա ար-
 ևելեան ճամբայէն Իսրայելի Աստու-
 ծոյն փառքը կու գար. ու անոր ձայնը
 շատ ջուրերու ձայնին պէս էր, ու եր-
 կիր անոր փառքէն լուսաւորուեցաւ:
 3 - Եւ տեսած տեսիլքս նման էր այն
 տեսիլքին զոր տեսայ երբ քաղաքը աւ-
 րելու եկայ. ու տեսիլքները Քորար

գետին քով տեսած տեսիլքիս պէս էին, ու երեսիս վրայ ինկայ. 4 - Եւ Տէրոջը փառքը դէպ ի արևելք նայող դրանը ճամբայէն տունը մտաւ: 5 - Ու Հոգին զիս վերցուց և զիս ներքին գաւիթը տարաւ, և ահա Տէրոջը փառքը տունը լեցուցեր էր: 6 - Եւ յայն ժե լսեցի որ տաճարէն ինծի կը խօսէր (ու իմ քովս մարդ մը կայնէր էր.) 7 - Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Իսրայէլի որդիներուն մէջ յաւիտեան բնակելու աթոռիս տեղը: և իմ սաքերուս գարշապարներուն տեղը ահի է, ու Իսրայէլի տունը, իրենք ու իրենց թագաւորները, իրենց պունկու թիւններովը ու իրենց թագաւորներուն գիերովը իրենց բարձր տեղերուն մէջ ա՛լ իմ սուրբ անունս պիտի չպղծեն: 8 - Վասն զի իրենց սեմերը իմ սեմերուս՝ ու իրենց դրանդիքը իմ դրանդիքներուս մօտ դրին, այնպէս որ իմ ու անոնց մէջտեղ Քայն պատ մը կար, և իրենց ըրած գարշաւթիւններովը իմ սուրբ անունս պղծեցին. ես ալ իմ բարկութիւնովս սպառեցի զանոնք: 9 - Հիմա թող իրենց պունկութիւնը ու իրենց թագաւորներուն գիերը ինծմէ հեռացնեն, ու յաւիտեան անոնց մէջ պիտի բնակիմ:

10 - Դուն, որդի մարդոյ, Իսրայէլի տանը այս տունը գիացուր, որպէս զի իրենց անօրէնութիւններէն ամչնան, ու թող առաջ գաղափարը չափեն: 11 - Եւ եթէ իրենց բոլոր ըրածներէն ամբշնան, տանը ձեռք ու կարգաւորութիւնը, և անոր ելքը ու մուտքը, ու բոլոր ձեերը և բոլոր կանոնները, [ու բոլոր ձեերը] և բոլոր օրէնքները անոնց գիացուր. ու անոնց աչքերուն առջև գրէ, և անոր բոլոր ձեերը ու բոլոր կանոնները պահեն ու զանոնք կատարեն:

12 - Այս է տաճարին օրէնքը, Անոր բոլոր սահմանը շուրջանակի լեռանը գլխուն վրայ ամենատուր պիտի ըլլայ. ահա տաճարին օրէնքը ասիկա է:

13 - Եւ ասոնք են սեղանին չափերը կանգունով. (կանգունը մէկ կանգուն ու չորս մասնաչափ է.) ու խոր տեղը մէկ կանգուն, ու առաջ լայնութիւնը մէկ կանգուն, և անոր սահմանը անոր եզերքին վրայ շուրջանակի մէկ թիզ պիտի ըլլայ. ու այս պիտի ըլլայ սեղանին հիմը: 14 - Ու գեանին խոր տեղէն մինչև վարի շրջանակը երկու կանգուն,

և առաջ լայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ. ու պատիկ շրջանակէն մինչև մեծ շրջանակը չորս կանգուն, ու լայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ: 15 - Եւ կրակարանը չորս կանգուն է առաջ պիտի ըլլայ, ու կրակարանէն վեր չորս եղջիւր պիտի ըլլայ: 16 - Եւ կրակարանը առաւերկու խնայն երկայն ու առաւերկու խայն, չորս կողմն ալ հաստաբ ըլլալով քառակուսի պիտի ըլլայ: 17 - Եւ անոր բոլորաիքը եղող շրջանակը տասներջորս խնայն երկայն ու տասներջորս խնայն պիտի ըլլայ, և բոլորաիքը եղող սահմանը կէս կանգուն, ու խոր տեղը շուրջանակի մէկ կանգուն պիտի ըլլայ, ու անոր ստաւծանները դէպ ի արևելք պիտի ըլլան:

18 - Եւ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ասոնք պիտի ըլլան սեղանին կանոնները՝ այն օրը որ գանկիկա շինեն, անոր վրայ սղջակէզներ մատուցանելու՝ ու անոր վրայ արիւն սրսկելու համար: 19 - Սագովկի սերունդէն եղող Ղևտացի քահանաներուն, (որոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան, կ'ըսէ Տէր Եհովա,) մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը պիտի տաս. 20 - Եւ անոր արիւնէն պիտի առնես, ու «Եզաի» չորս եղջիւրներուն վրայ, ու շրջանակին չորս անկիւններուն վրայ, և շուրջանակի անոր սահմանին վրայ դնես, ու զանկիկա պիտի սրբես և անոր համար քառութիւն ընես:

21 - Ու մեղքի պատարագին զուարակը պիտի առնես, և սրբարանէն դուրս՝ տաճարին որոշուած տեղը պիտի այրուի: 22 - Ու երկրորդ օրը մեղքի պատարագի համար այծերէն անարատ նոխազ մը մատուցանես, ու սեղանը պիտի սրբեն՝ ինչպէս զուարակով սրբեցին: 23 - Երբ սրբելը լինցնես, արջառներէն անարատ զուարակ մը, ու սչխարներէն անարատ խոյ մը պիտի մատուցանես. 24 - Եւ զանոնք Տէրոջը առջև պիտի մօտեցնես, ու քահանաները անոնց վրայ աղ պիտի ցանեն, ու զանոնք Տէրոջը սղջակէզ պիտի մատուցանեն: 25 - Եթէ օր մեղքի պատարագի համար՝ օրը մէյմէկ նոխազ պիտի մատուցանես. նաև արջառներէն զուարակ մը, ու սչխարներ

*Եբր. Արիէլը. Ես. իթ. 4:

բէն խոյ մը պիտի մատուցանեն, որո՞ւմ անարատ դէպք ըլլաւ: 26 - Եթէ օր սեղանին քառութիւն պիտի ընեն և զանիկա պիտի սրբեն ու զանիկա նուիրեն: 27 - Աւերը այն օրերը լմնան, ութերորդ օրը ու անկէ ետքը քահանաները սեղանին վրայ ձեր սղջակէզները ու ձեր խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, և ես ձեզ պիտի ընդունիմ, կ'ըսէ Տէր Եհովա:

ԳԼ. ԽԳ

Եւ զիս սրբարանին գէպ ի արևելք նայող դուրսի դրանը ճամբան գործուց, ու անիկա գոց էր: 2 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Այս դուռը գոց պիտի մնայ, ու պիտի չբացուի, ու անկէ մարդ պիտի չմտնէ. քանզի անկէ Խորայէլի Տէր Աստուածը մտաւ, անոր համար գոց պիտի մնայ: 3 - Անիկա իշխանին համար դէպք ըլլաւ, ինչ որ միայն իշխանը պիտի նստի Տէրոջը առջև հաց ուտելու համար. անիկա դրանը սրահին ճամբայէն պիտի մտնէ, ու նոյն ճամբայէն պիտի ելլէ:

4 - Եւ զիս հիւսիսային դրանը ճամբայէն տանը առջև բերաւ. ու տեսայ որ ահա Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցեր էր. ու երեսիս վրայ ինկայ: 5 - Եւ Տէրը ինծի ըսաւ, Արդի մարդոյ, Տէրոջը տանը բոլոր կանոններուն ու անոր բոլոր օրէնքներուն վրայով քեզի ամէն ըսածս սրտիդ մէջ գիր, ու աչքերովդ նայէ և ականջներովդ լսէ, ու տանը մուտքերը ու սրբարանին բոլոր ելքերը աղէկ գիտէ. 6 - Եւ ապստամբներուն, Խորայէլի տանը, ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այ՛ հերիք է ձեզի ձեր բոլոր պղծութիւնները, սվ Խորայէլի տունը, 7 - Ար դուք սրտով անթիփատ ու մարմնով անթիփատ օտարազգիներ մտցուցիք, որ իմ սրբարանիս մէջ ըլլան ու իմ տունս պղծեն, երբ դուք իմ հացս, ճարպը ու արիւնը կը մատուցանէիք. ու ձեր բոլոր պղծութիւններէն զատ անոնք իմ ուխտս խափանեցին: 8 - Եւ իմ սուրբ բաներուս պահպանութիւնը չպահեցիք, հապա իմ սրբարանիս մէջ ձեր «զան»ին պէս իմ պահպանութեանս վրայ պահպաններ գրիք:

9 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Խորայէլի սրգիներուն մէջ եղող բոլոր

օտարազգիներէն՝ սրտով անթիփատ ու մարմնով անթիփատ ընաւ օտարազգի մը իմ սրբարանս պիտի չմտնէ: 10 - Մանաւանդ Աւտայիները, որոնք ինծմէ հեռացան, երբ Խորայէլի «դէպք» ինծմէ մուրեցան ու իրենց կուռքերուն ետեւէն գացին, իրենց անօրէնութիւնը պիտի կրեն. 11 - Եւ իմ սրբարանիս մէջ տանը դուները սրոշուած ապստամբներ, ու տաճարին նպաստարները պիտի ըլլան. Ժողովուրդին համար սղջակէզները ու զոհերը անոնք պիտի մտնեն, ու անոնց ծառայութիւն ընելու համար անոնց առջև անոնք պիտի կայնին: 12 - Արովհետեւ անոնց համար անոնց կուռքերուն առջև ծառայութիւն ըրին, ու Խորայէլի տանը գայթակղութիւն «անօրէնութեան պարտք» եղան, անոր համար անոնց վրայով իմ ձեռքս վերցուցի, կ'ըսէ Տէր Եհովա, որ իրենց անօրէնութիւնը պիտի կրեն. 13 - Եւ ինծի պիտի չմտնան ինծի քահանայութիւն ընելու՝ ու իմ բոլոր սուրբ բաներուս և ամենասուրբ բաներուս մօտենալու, հապա իրենց անարգանքը ու իրենց բրած պղծութիւնները պիտի կրեն: 14 - Սակայն զանոնք տանը պահպանութեանը վրայ պահպան պիտի դնեմ՝ անոր ամէն ծառայութեանը համար, ու անոր մէջ ըլլալու ամէն գործին համար:

15 - Բայց Աւտայի քահանաները, Սագովի սրգիները, որոնք իմ սրբարանիս պահպանութիւնը պահեցին՝ երբ Խորայէլի սրգիները ինծմէ մուրեցան, անոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան, և ճարպը ու արիւնը ինծի մատուցանելու համար անոնք իմ առջևս պիտի կայնին, կ'ըսէ Տէր Եհովա: 16 - Անոնք իմ սրբարանս պիտի մտնեն, ու ինծի ծառայութիւն ընելու համար անոնք պիտի մօտենան իմ սեղանիս, և իմ պահպանութիւնս պիտի պահեն: 17 - Աւերը ներսի գաւթին դուներէն մտնեն՝ կտակէ զգեստներ պիտի հագնին, ու ներսի գաւթին դուները ու ներսը ծառայութիւն ըրած ատեննին իրենց վրայ բուրդ պիտի *չհագնին. 18 - Իրենց զուխներուն վրայ կտակէ ապարօշներ ըլլան, ու մէջքերնին կտակէ փորտիքներ ըլլան, «քրանցնող բան պիտի

*Եբր. չելլէ

չհագնին: 19 - Ու երբ դուրսի գաւի-
թը ժողովուրդին ելլեն, իրենց պաշա-
տի զգեստները պիտի հանեն, ու զա-
նոնք սուրբ սենեակներուն մէջ դնեն,
և ուրիշ զգեստներ պիտի հագնին, որ-
պէս զի իրենց զգեստներովը ժողովուր-
դը չորբեն: 20 - Եւ գլուխնին պիտի
չածիլին, ոչ ալ վարսքերնին երկըն-
ցընեն, հապա միայն գլուխնուն մա-
զերը փոքրեն: 21 - Ու բնաւ քահանայ
մը գինի չիմէ երբ ներքին գաւիթը կը
մտնէ: 22 - Ու որբեւորին կամ արձակ-
ուածը իրենց կին չառնեն, հապա Իս-
րայէլի տանը սերունդէն եղող կոյրը,
կամ քահանայէ մը որբեւորի մնացած
կինը առնեն: 23 - Ու իմ ժողովուր-
դիս՝ սուրբ ու անսուրբ բաներուն
տարբերութիւնը պիտի սորվեցնեն, և
անմաքուրին ու մաքուրին տարբերու-
թիւնը անոնց գիացնեն: 24 - Ու գա-
տերու վրայ անոնք պիտի կենան գա-
տաստան ընելու համար, ու իմ իրա-
ւունքներուս համեմատ զանոնք գա-
տեն, և իմ բոլոր տօներուս մէջ իմ
օրէնքներս ու կանոններս պիտի պահեն,
ու իմ շարաթներս սրբեն: 25 - Եւ
մարդու մեռելի քով չերթան՝ որ պղղ-
ծուին. հապա միայն հօր համար, կամ
մօր համար, կամ տղու համար, կամ
տղջկան համար, եղբօր համար, կամ
չամուսնացած քրոջ համար պղծուին:
26 - Ու մէկուն սրբուելէն ետքը եօթը
օր պիտի համբէն անոր: 27 - Եւ անիկա
սրբարանին մէջ ծառայութիւն ընելու
համար ներսի գաւիթը սրբարանը մտած
օրը՝ անիկա իր մեղքի պատարագը պի-
տի մատուցանէ, կ'ըսէ Տէր Եհովա:
28 - Եւ ասիկա անոնց ժառանգու-
թիւնը ըլլայ. անոնց ժառանգութիւնը
ես եմ. ու Իսրայէլի մէջ անոնց կալ-
ուածք չտաք. անոնց կալուածքը ես
եմ: 29 - Հացի ընծան ու մեղքի պա-
տարագը և յանցանքի պատարագը ա-
նոնք պիտի սւտեն. ու Իսրայէլի մէջ
ամէն նուէր անոնց պիտի ըլլայ: 30 -
Եւ ամէն քիւրճ բանին բոլոր երախայ-
րիներուն առաջինը, ու ձեր բոլոր ըն-
ծանքէն ամէն բանի ընծային բոլորը
քահանային պիտի ըլլայ. ու ձեր խմոր-
ներուն երախայրին քահանային պիտի
տաք, որպէս զի քու ամեղ վրայ օրհ-
նութիւն *բերես: 31 - Քահանաները

բնաւ մեռած կամ գաղանարեկ ան-
ոնքի մը քիւրճ պիտի չսւտեն, թէ՛ թը-
չուն ըլլայ ան և թէ՛ չորքոտանի:

ԳԼ. ԽԵ

Ու երբ երկիրը վիճակով ժառան-
գութիւն բաժնէք, երկրէն քսանըհինգ
հազար եղէք երկայնութեամբ ու տասը
հազար լայնութեամբ սուրբ ընծայ մա-
տուցանէք Տէրոջը. ասիկա շուրջանակի
իր բոլոր սահմաններուն մէջ սուրբ ըլ-
լայ: 2 - Ասիկէ քառակուսի չափուած՝
հինգ հարիւրով հինգ հարիւրը սրբա-
րանին համար ըլլայ, ու անիկա շուր-
ջանակի յիսուն կանգուն արուարձան
ունենայ: 3 - Եւ այս *չափով՝ երկայ-
նութիւնը քսանըհինգ հազար ու լայ-
նութիւնը տասը հազար չափես, ու ա-
նոր մէջ պիտի ըլլայ սրբարանը, ամե-
նասուրբ տեղը: 4 - Ասիկա Տէրոջը ծա-
ռայութիւն ընելու մօտեցող սրբարանի
պաշտօնեաներուն, քահանաներուն,
համար սուրբ ըլլայ երկրէն, որպէս զի
անոնց՝ տուներու համար տեղ մը ու
սրբարանին համար սուրբ տեղ մը ըլլայ:
5 - Եւ տանը ծառայութիւնը ընող
Ղևտացիները քսանըհինգ հազար եր-
կայնութեամբ ու տասը հազար լայ-
նութեամբ կալուածք պիտի ունենան,
նաև քսան սենեակ:
6 - Եւ հինգ հազար լայնութեամբ ու
քսանըհինգ հազար երկայնութեամբ՝
քաղաքին կալուածքը պիտի տաք սրբ-
արանին ընծային քով. ասիկա բոլոր
Իսրայէլի տանը ըլլայ:
7 - Եւ իշխանին կալուածք՝ սուրբ ըն-
ծային ու քաղաքին կալուածքին մէկ
կողմէն ու միւս կողմէն, սուրբ ընծա-
յին և քաղաքին կալուածքին դիմաց
արեւմտեան ծայրէն դէպ ի արեւմուտք,
ու արեւելեան ծայրէն դէպ ի արեւելք
ըլլայ. ու երկայնութիւնը արեւմտեան
սահմանէն մինչև արեւելեան սահմանը
քիւրճ բաժիններէն մէկուն հետ հաւա-
տար ըլլայ: 8 - Իսրայէլի մէջ երկրէն
ասիկա անոր կալուածք ըլլայ, ու իմ
իշխաններս մէյմըն ալ իմ ժողովուրդս
չհարստահարեն. ու հապա երկիրը Իս-
րայէլի տանը արուի իրենց ցեղերուն
համեմատ:
9 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ալ

*կամ, բերէ

*կամ, չափէն

հերիք է ձեզի, ով Խորայէլի իշխաններ, գրկանքը ու յափշտակութիւնը վերցուցէք, և իրաւունք ու արդարութիւն բրէք. իմ ժողովուրդէս ձեր բունի պահանջումները վերցուցէք, կ'ըսէ Տէր Եհովա: 10 - Ձեր կշիւքները արդար, ձեր արդուն արդար ու ձեր մարը արդար ըլլայ. 11 - Արդուն ու մարը մէկ չափ ըլլան, որպէս զի մարը քուին ասաներորդը պարունակէ՝ ու արդուն այ քուին ասաներորդը. քուին նայելով պիտի ըլլայ անոնց չափը: 12 - Եւ սիկըր քսան կերատ պիտի ըլլայ. ձեր մատը քսան սիկը, քսանը՝ ճինգ սիկը, ասանը՝ ճինգ սիկը պիտի ըլլայ:

13 - Ձեր մատուցանելու ընծան ասիկա ըլլայ. ցորենի քուէն արդունին վեցերորդ մասը՝ ու գարիի քուէն արդունին վեցերորդ մասը. 14 - Ու իւզին կանոնը «իկ» ըլլայ. իւզին մարէն՝ մարին տասներորդը «իկ» քուէն, այսինքն «իկ» խօմէրէն, «ր տասը մար կը պարտաւորուի, վասն զի տասը մարը մէկ խօմէր է. 15 - Եւ Խորայէլի ջրարբի արօտներուն հօտերէն՝ երկու հարիւրէն մէկ ոչխար: Ասան պիտի մարտնչանէ իբրև հացի ընծայ ու ողջակէզ և խաղաղութեան զոհ, որպէս զի իրենց համար քուութիւն ըլլայ, կ'ըսէ Տէր Եհովա: 16 - Երկրին բոլոր ժողովուրդը այս ընծան Խորայէլի մէջ իշխան եղողին պարտաւոր պիտի ըլլան: 17 - Եւ տօներու ու ամառադուխներու ու շաբաթներու մէջ, Խորայէլի տանը ամէն հանգիստար օրերուն մէջ, ողջակէզները ու հացի ընծան և թափելու նուէրը իշխանին վրայ պիտի ըլլան. մեղքի պատարագը ու հացի ընծան ու ողջակէզը և խաղաղութեան զոհը անիկա պիտի մատուցանէ՝ Խորայէլի տանը քուութիւն ընելու համար:

18 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Աւաջին ամսուն աւաջին օրը արջառներէն մէկ անարատ զուարակ տանես, ու օրարանը մարբես. 19 - Եւ քահանան մեղքի պատարագին արիւնէն պիտի տանէ, և տանը դրանդիքներուն վրայ, ու սեղանին շրջանակին չորս անկիւններուն վրայ, և ներքին գաւթի զրանը դրանդիքներուն վրայ դնէ: 20 - Ամսուն եօթներորդ օրն ալ սխալած կամ անմիտ մարդու համար այնպէս ընես, և տանը համար քուութիւն պիտի ընէք:

21 - Աւաջին ամսուն չորեքտասաներորդ օրը ձեզի զատիկ ըլլայ. եօթը օր տօն պիտի պահուի՝ բազարը ու տուի: 22 - Եւ այն օրը իշխանը իրեն համար ու երկրին բոլոր ժողովուրդին համար զուարակ մը պիտի մատուցանէ իբրև մեղքի պատարագ. 23 - Ու տօնին եօթը օրը Տէրոջը ողջակէզ պիտի մատուցանէ, այն եօթը օրուան մէջ՝ օրը եօթը զուարակ ու եօթը անարատ խոյ, և ամէն օր այծերէն մէկ նոխազ իբրև մեղքի պատարագ: 24 - Ու ամէն մէկ զուարակին համար՝ մէկ արդու, և ամէն մէկ խոյին համար՝ մէկ արդու հացի ընծայ, ու ամէն մէկ արդունին համար մէկ հիմէն իւզ մատուցանէ. 25 - Այսպէս ալ եօթներորդ ամսուն հնգետասաներորդ օրը. տօնին տօներ եօթը օր այս մեղքի պատարագին, ողջակէզին, հացի ընծային ու իւզին պէս պիտի մատուցանէ:

ԳԼ. ԽԶ

Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ներքին գաւթի զեպ ի արեւելք նոյսող դուռը գործի վեց օրերը գոց ըլլայ. ու շաբաթ օրը բացուի, ու ամառադուխուն օրը բացուի. 2 - Եւ իշխանը այն դրանը սրահին ճամբայէն գուրսէն պիտի մտնէ, ու դրանը դրանդիքներուն քով կայնի. և քահանաները անոր ողջակէզը ու խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, ու անիկա դրանը սեմին վրայ երկրպագութիւն պիտի ընէ ու ելլէ. և այն դուռը մինչև իրիկուն պիտի չգոցուի: 3 - Ու երկրին ժողովուրդը շաբաթ օրերը ու ամառադուխները Տէրոջը առջև այս դրանը մուտքին մէջ երկրպագութիւն պիտի ընեն:

4 - Եւ իշխանին շաբաթ օրը Տէրոջը մատուցանելու ողջակէզը վեց անարատ գառ ու մէկ անարատ խոյ ըլլայ: 5 - Եւ խոյին համար հացի ընծայ մէկ արդու, ու գառներու համար հացի ընծայ ձեռքէն եկածը, և ամէն մէկ արդունի համար մէկ հիմէն իւզ մարտնչանէ: 6 - Ու ամառադուխուն օրը՝ արջառներէն մէկ անարատ զուարակ ու վեց գառ ու մէկ խոյ, որոնք անարատ պիտի ըլլան: 7 - Եւ զուարակին համար մէկ արդու և խոյին համար մէկ արդու հացի ընծայ մատուցանէ, ու գառներու համար՝ ինչ որ ձեռքէն

կու գայ, և ամէն մէկ արդուի համար մէկ հիմէն իւզ ըլլայ :

8 - Ու երբ իշխանը գայ՝ դրանք սրահին ճամբայէն մանէ, և նոյն ճամբայէն ելլէ :

9 - Ու երկրին ժողովուրդը, հանդիսաւոր օրերուն մէջ երկրպագութիւն ընելու համար Տէրոջը առջև եկած աւտենին, հիւսիսային դրանը ճամբայէն մանողը հարաւային դրանը ճամբայէն ելլէ, ու հարաւային դրանը ճամբայէն մանողը հիւսիսային դրանը ճամբայէն ելլէ :

մտած դրանը ճամբայէն չգաւնայ, հապա անոր դիմացինէն ելլէ :

10 - Եւ իշխանը անոնց մտած առեւնը անոնց հետ մանէ, ու անոնց ելած աւտենը անոնց հետ ելլէ :

11 - Եւ աստուծոյ մէջ ու հանդիսաւոր օրերու մէջ հացի ընծան ամէն զուարակի համար արդու մը, և ամէն խոյի համար արդու մը ըլլայ, ու գառներու համար՝ ձեռքէն եկածը, ու ամէն մէկ արդուի համար մէկ հիմէն իւզ ըլլայ :

12 - Եւ եթէ իշխանը կամաւոր սղջակէզ մը, կամ կամաւոր խաղաղութեան զոհ մը Տէրոջը մատուցանելու ըլլայ, դէպ ի արեւելք նայող դուռը անոր բանան, ու անիկա իր սղջակէզը ու խաղաղութեան զոհը մատուցանէ՝ ինչպէս շաբաթ օրը կը մատուցանէ, ու ելլէ. և անոր ելլելէն ետքը դուռը գոցեն :

13 - Ու ամէն օր մէկ տարեկան անարատ գառնուկ մը Տէրոջը սղջակէզ մատուցանես, զանիկա ամէն առտու մատուցանես :

14 - Եւ անոր հետ ամէն առտու արդուին վեցերորդ մասը հացի ընծայ մատուցանես, ու հիմէնին երրորդ մասը իւզ՝ նաշիհին հետ խառնելու համար :

«Իկ» յաւիտենական կանոնով Տէրոջը մշանջենաւոր հացի ընծայ ըլլայ :

15 - Եւ գառնուկը ու հացի ընծան ու իւզը ամէն առտու մատուցանեն. «Իկ» մշանջենաւոր սղջակէզ ըլլայ :

16 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Երբ իշխանը իր սրդիներէն մէկուն պարգև տայ, անոր ժառանգութիւնը անոր սրդիներուն ըլլայ. անիկա ժառանգութեան կալուածք մը ըլլայ անոնց :

17 - Իսկ երբ իր ժառանգութենէն իր ժառանգորէն մէկուն պարգև տայ, այն աւտեն անիկա մինչև թողութեան տարին անոր պիտի ըլլայ, ետքը իշխանին պիտի գառնայ. վասն զի անոր ժառանգու-

թիւնը միայն իր սրդիներուն պիտի ըլլայ : 18 - Եւ իշխանը ժողովուրդին ժառանգութենէն չառնէ՝ զանոնք իրենց կալուածքէն զրկելով. իր սրդիներուն իր կալուածքէն ժառանգութիւն տայ, որպէս զի իմ ժողովուրդս ամէն մէկը իր կալուածքէն չցրուի :

19 - Եւ զիս դրանք քով եղող մուտքէն քահանաներուն դէպ ի հիւսիս նայող սուրբ սենեակները տարաւ, և ահա հան ետեի կողմերը դէպ ի արեւմուտք տեղ մը կար :

20 - Ու ինծի ըսաւ, Ասիկա այն տեղն է՝ ուր քահանաները յանցանքի պատարագին ու մեղքի պատարագին ֆոշ պիտի խաչեն, «- հոն հացի ընծան պիտի եփեն, որ ըլլայ թէ դուրսի գաւիթը հանեն ու ժողովուրդը սրբեն :

21 - Եւ զիս դուրսի գաւիթը հանեց, ու զիս գաւիթին չորս անկիւններէն անցուց, և ահա գաւիթին ամէն մէկ անկիւնը մէյմէկ գաւիթ կար :

22 - Գաւիթին չորս անկիւններուն մէջ քառասուն խոհանարաններ կ'ուրեւնային երեսունութեամբ ու երեսուն լայնութեամբ՝ շուրջանակի գոցուած՝ գաւիթներ կային. չորսին չափը մէկ էր անկիւններուն մէջ :

23 - Եւ անոնց բոլորտիքը, չորսին ալ բոլորտիքը, շէնքերու կարգ մը կար, ու այն կարգերուն տակ շուրջանակի եփարաններ շինուած էին :

24 - Ու ինծի ըսաւ, Ասանք եփողներուն տեղերն են, ուր տանը պաշտօնեաները ժողովուրդին զոհը պիտի եփեն :

ԳԼ ԽԵ

Ու զիս նորէն տանը դրանք առջև բերաւ, և ահա արեւելեան կողմէն տանը սեմին տակէն ջուրեր կ'ելլէին, քանզի տանը երեսը դէպ ի արեւելք էր. ու ջուրերը տանը աջ կողմին տակէն՝ սեղանին հարաւային կողմէն կ'իջնէին :

2 - Եւ զիս հիւսիսային դրանը ճամբայէն հանեց, ու զիս դուրսի ճամբան, դուրսի դրանը արեւելք նայող ճամբան, պարագուց. և ահա աջ կողմէն ջուրեր կը վազէին :

3 - Այն մարդը որ իր ձեռքը լար ունէր, դէպ ի արեւելք ելաւ, ու հազար կանգուն չափեց, և զիս ջուրերէն անցուց, «- ջուրերը մինչև գարշապարներս կ'ելլեն» :

4 - Հազար ևս չափեց, ու

*Կա՛մ, պզտիկ

զիս ջուրերէն անցուց, «- ջուրերը մինչև ծուկներս կ'ելլէին»։ Նազար և ոչ չափեց, ու զիս ջուրերէն անցուց, «- ջուրերը մինչև մէջքս կ'ելլէին»։ 5 - Նորէն Նազար ու չափեց, «- այնպիսի գետ մը եղած էր, որ չէի կրնար անցնիլ»։ Վասն զի ջուրերը յորդեր էին, * «- այնպիսի գետ մը եղեր էին, ուրկէ մարդ չէր կրնար անցնիլ՝ բայց միայն լողալով»։

6 - Այն ատեն ինծի ըսաւ, Տեսա՞ր, որդի մարդոյ. և զիս տարաւ ու գետին եզերքը պարտացուց։ 7 - Եւ քանի որ հասնէի պարտէի, տեսայ որ գետին եզերքը մէկ կողմէն ու միւս կողմէն խիստ շատ ծառեր կային։ 8 - Եւ ինծի ըսաւ, Այս ջուրերը արեւելեան կողմը կ'ելլեն ու անապատը կ'իջնեն ու ծովը կ'երթան. և ծովը ելլելով՝ անոր ջուրերը բժշկութիւն կը գտնեն։ 9 - Եւ քգետին ամէն գացած տեղը ամէն շարժուն կենդանիները պիտի ապրին, ու ձուկերը խիստ շատ պիտի ըլլան. քանզի այս ջուրերը հոն պիտի երթան, ու գետին ամէն գացած տեղը բժշկութիւն պիտի ըլլայ, ու պիտի ապրին։ 10 - Եւ անոր վրայ Ենգագործ մինչև Ենեգլայիմ՝ ձկնորսներ պիտի կայնին, հասնողները փռելու տեղ պիտի ըլլայ. ձուկերը տեսակ տեսակ պիտի ըլլան, մեծ ծովուն ձուկերուն պէս խիստ շատ պիտի ըլլան։ 11 - Բայ անոր տղամուկ տեղերը ու ճախինները բժշկութիւն պիտի չգտնեն, անոնք տղի համար պիտի սրոշուին։ 12 - Ու գետին եզերքը՝ մէկ կողմէն ու միւս կողմէն ամէն քիչ պաղաքեր ծառեր պիտի բուսնին, որոնց տերեւը պիտի չթառամի ու պտուղը չհամարի. ամէն ամիս նորէն պտուղ պիտի տան, վասն զի անոր ջուրերը սրբարանէն կ'ելլեն. և անոնց պտուղը կերակուրի համար, ու տերեւները բժշկութեան համար պիտի ըլլան։

13 - Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այս է երկրին սահմանը զոր դուք պիտի ժառանգէք Իսրայէլի տասուերկու ցեղերուն համեմատ. (Յովսէփ Երէմ- բաժին Գլխի «-նեւայ»)։ 14 - Ու զանիկա ամէն մարդ իր եղբորը պէս պիտի ժառանգէ, վասն զի իմ ձեռքս վերցուցի որ զանիկա ձեր հայրերուն տամ. և այս երկիրը

ձեզի ժառանգութիւն պիտի իյնայ։ 15 - Ու երկրին սահմանը այս է. Հիւսիսային կողմը՝ մեծ ծովէն Եթիօնի ճամբան մինչև Սեգադ, Եմօթ, 16 - Բերօթա, Սիբրայիմ՝ որ Գամուսկոսի սահմանին ու Եմօթի սահմանին մէջտեղ է, «- Բնու Աւրանի սահմանը եղող Ասեր-աթթիքսնը»։ 17 - Ու Երէրէն սահմանը ծովէն մինչև Ատար-Ենան՝ որ Գամուսկոսի սահմանն է դէպ ի հիւսիս, նաև Եմօթի սահմանը պիտի ըլլայ. և հիւսիսային կողմը «- Ենայ»։ 18 - Ու արեւելեան կողմը՝ Աւրանի մէջէն ու Գամուսկոսի մէջէն և Գաղատադի մէջէն ու Յորդանանու քիչ ելող Իսրայէլի երկրին մէջէն՝ սահմանէն մինչև արեւելեան ծովը չափէք. ու արեւելեան կողմը «- Ենայ»։ 19 - Եւ դէպ ի հարաւ հարաւային կողմը՝ Թամարէ մինչև Վիճաբանութեան ջուրերը կադէսի մէջ՝ «- մինչև մեծ ծովը Ենայ» հեղեղատը պիտի ըլլայ. և դէպ ի հարաւ հարաւային կողմը սահմանը ըլլայ։ 20 - Ու արեւմտեան կողմը մեծ ծովը պիտի ըլլայ՝ սահմանէն մինչև Եմօթի դիմաց. արեւմտեան կողմը սահմանը ըլլայ։

21 - Եւ այս երկիրը ձեզի բաժնէք Իսրայէլի ցեղերուն համեմատ, 22 - Ու զանիկա ժառանգութեան համար վիճակով բաժնէք՝ Թէ՛ ձեզի, և Թէ՛ ձեր մէջ բնակող ու ձեր մէջ զաւակներ ծնանող օտարականներուն. ու անոնք ձեզի բնակներու պէս պիտի ըլլան Իսրայէլի որդիներուն մէջ, «- անոնք ձեզի հետ ժառանգութիւն պիտի տանն Իսրայէլի ցեղերուն մէջ»։ 23 - Եւ ո՛ր ցեղին մէջ որ օտարականը պանդրխտացած է, հոն անոր ժառանգութիւնը պիտի տաք, կ'ըսէ Տէր Եհովա

ԳԼ ԽԸ

Եւ ցեղերուն անունները ասոնք են. Հիւսիսի ծայրէն՝ Եթիօնի ճամբուն քով դէպ ի Եմօթ երթալով՝ մինչև Ատար-Ենան՝ որ Գամուսկոսի սահմանն է դէպ ի հիւսիս մինչև Եմօթի քով, ու արեւելեան կողմէն մինչև արեւմուտք Գանի մէկ քիչ ըլլայ. 2 - Եւ Գանի սահմանին քով. արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը, Ասերի մէկ քիչ ըլլայ. 3 - Ու Ասերի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև

* Երբ. լողալու ջուրեր, անանցանելի գետ, եղեր էին
 † Կամ, երկու գետերուն

արեմտեան կողմը, Նեփթաղիմի մէկ քառակուսի շէնքը : 4 - Ու Նեփթաղիմի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Մանասէի մէկ քառակուսի շէնքը : 5 - Եւ Մանասէի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Կփրեմի մէկ քառակուսի շէնքը : 6 - Ու Կփրեմի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Ռուբէնի մէկ քառակուսի շէնքը : 7 - Եւ Ռուբէնի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Յուզայի մէկ քառակուսի շէնքը :

8 - Եւ Յուզայի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը պիտի ըլլայ սյն ընծան՝ զոր պիտի նուիրէք : 9 - Եւ Կփրեմի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Եւ սրբարանը անոր մէջտեղը պիտի ըլլայ : 10 - Տէրոջը նուիրելու ընծանիդ քանրճինդ հազար երկայնութիւն, ու ասոր հազար լայնութիւն ունենայ : 11 - Եւ ասոր ընծան ասոնց ըլլայ, սյնինքն քահանաներուն : Տիւրքիսէն՝ Երփայնիսէն քանրճինդ հազար, ու արեմուտքէն՝ լայնութիւնը ասոր հազար, և արեւելքէն՝ լայնութիւնը ասոր հազար, ու հարաւէն՝ երկայնութիւնը քանրճինդ հազար Երփայնիսէն, ու Տէրոջը սրբարանը անոր մէջտեղը ըլլայ : 12 - Այս քառակուսի սրբարանը սրբուած քահանաներուն ըլլայ, որոնք իմ պահպանութիւնս պահեցին, ու երբ Իսրայէլի սրբիները մուտքեցան, անոնք չմուտքեցան, ինչպէս Ղևտացիները մուտքեցան : 13 - Ու երկրին ընծայէն՝ սյն ընծան անոնց համար ամենասուրբ պիտի ըլլայ Ղևտացաց սահմանին քով :

13 - Եւ քահանաներուն սահմանին քով Ղևտացաց քառակուսի շէնքը ըլլայ քանրճինդ հազար երկայնութեամբ ու ասոր հազար լայնութեամբ : քոյր երկայնութիւնը քանրճինդ հազար, ու լայնութիւնը ասոր հազար ըլլայ : 14 - Եւ անկէ պիտի չծախեն ու չփոխեն, ու երկրին երախայրին քառակուսի շէնքը չզարձեն, վասն զի անիկա Տէրոջը նուիրուած է :

15 - Եւ քանրճինդ հազարին քով լայնութեան մնացած հինգ հազարը անասուրբ պիտի ըլլայ՝ քաղաքին հա-

մար, բնակութեան համար ու արուարձաններուն համար, և քաղաքը անոր մէջտեղը ըլլայ : 16 - Ու անոր չափերը ասոնք ըլլան : Հիւսիսային կողմը չորս հազար հինգ հարիւր, և հարաւային կողմը չորս հազար հինգ հարիւր, և արեւելեան կողմը չորս հազար հինգ հարիւր, ու արեմտեան կողմը չորս հազար հինգ հարիւր : 17 - Եւ քաղաքին արուարձանը դէպ ի հիւսիս երկու հարիւր յիսուս, ու դէպ ի հարաւ երկու հարիւր յիսուս, և դէպ ի արեւելք երկու հարիւր յիսուս, ու դէպ ի արեմուտք երկու հարիւր յիսուս ըլլայ : 18 - Եւ ասոր ընծային քով երկայնութեան մնացած դէպ ի արեւելք ասոր հազարը, ու դէպ ի արեմուտք ասոր հազարը, (որ ասոր ընծային քով է,) անոր բերքը քաղաքին ծառայութիւնը ընողներուն կերակուր ըլլայ : 19 - Եւ քաղաքին ծառայութիւնը ընողները Իսրայէլի ամէն ցեղերէն պիտի ըլլան :

20 - Բոլոր ընծան քանրճինդ հազարով քանրճինդ հազար ըլլայ, ու ասոր ընծան քաղաքին կալուածքին հետ մէկտեղ քառակուսի մասուցանէք :

21 - Եւ ասոր ընծային ու քաղաքին կալուածքին մէկ կողմէն ու միւս կողմէն մնացածը իշխանին համար ըլլայ : նուիրուած քանրճինդ հազարին դիմաց մինչև արեւելեան սահմանը ու դէպ ի արեմուտք քանրճինդ հազարին դիմաց մինչև արեմտեան սահմանը ցեղերէն բաժնեկիցներուն քով իշխանին համար ըլլայ : Ասիկա պիտի ըլլայ ասոր ընծան, ու ասոր սրբարանը անոր մէջտեղը պիտի ըլլայ : 22 - Իշխանին բաժնին մէջտեղը եղող Ղևտացաց կալուածքէն ու քաղաքին կալուածքէն քառակուսի շէնքը Յուզայի սահմանին ու Բենիամինի սահմանին մէջտեղ իշխանին պիտի ըլլայ :

23 - Եւ մնացած ցեղերուն՝ արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Բենիամինի մէկ քառակուսի շէնքը : 24 - Ու Բենիամինի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Շմուոնի մէկ քառակուսի շէնքը : 25 - Եւ Շմուոնի սահմանին քով արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Իսախարի մէկ քառակուսի շէնքը : 26 - Ու Իսախարի սահմանին քով արեւելեան կողմէն մինչև արեմտեան կողմը, Զարուզանի մէկ քառակուսի շէնքը : 27 - Եւ Զարու-

ղոնի սահմանին քով արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը, Գաղի մէկ բաժին ըլլայ. 28 - Ու Գաղի սահմանին քով հարաւային կողմը դէպ ի հարաւ երէրն սահմանը, Թամարէ Բնչե Վիճաբանութեան ջուրերը կադէսի մէջ, «- Բնչե մեծ ծովը իջնող հեղեղատը պիտի ըլլայ: 29 - Այս է այն երկիրը զոր Իսրայէլի ցեղերուն վիճակով պիտի բաժնէք ժառանգութեան համար. ու անոնց բաժինները ասոնք են, կ'ըսէ Տէր Եհովա:

30 - Եւ քաղաքին ելքերը ասոնք են. Հիւսիսային կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով, 31 - (Ու քաղաքին դռները Իսրայէլի ցեղերուն անուններուն համեմատ պիտի ըլլան.) երեք դուռ դէպ ի հիւսիս. մէկ դուռ

Ռուբէնի, մէկ դուռ Յուդայի «- մէկ դուռ Դևիի. 32 - Եւ արևելեան կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Յովսէփի, մէկ դուռ Բենիամինի «- մէկ դուռ Գանի. 33 - Եւ հարաւային կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Շամուոնի, մէկ դուռ Իսաքարի «- մէկ դուռ Զաբուլոնի. 34 - Արևմտեան կողմէն «- չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Գաղի, մէկ դուռ Ասերի «- մէկ դուռ Նեփթաղիմի: 35 - Բոլոր շրջապատը ասանրութ հազար չափ պիտի ըլլայ. ու այն օրէն քաղաքին անունը *Եհովաշամա պիտի ըլլայ:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

Յուդայի թագաւորին Յովակիմի թագաւորութեան երրորդ տարին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը երուսաղէմ եկաւ, ու զանկիա պաշարեց: 2 - Եւ Տէրը անոր ձեռքը առաւ Յուդայի Յովակիմ թագաւորը, ու Աստուծոյ տանը անօթներուն մէկ մասը. և անկիա զանոնք Ահնասար երկիրը, իր աստուծոյն առնը, տարաւ, ու անօթները իր աստուծոյն գանձատունը դրաւ:

3 - Եւ թագաւորը իր ներքինապետին Ասփանէզի ըսաւ որ Իսրայէլի սրգիններէն ու թագաւորական սերունդէն և իշխաններէն՝ 4 - Բնաւ արտա չունեցող, դեղեցիկ դէմքով ու ամէն իմաստութեան հմուտ, ու գիտութեան տեղեակ՝ հանճարեղ, և թագաւորին պալատին մէջ կայնելու կարողութիւն ունեցող աղաքներ բերէ, և անոնց՝ Քաղգէացոց գիրը ու լեզուն արվեցրնէ: 5 - Ու թագաւորը անոնց օրական ռոճիկ սահմանեց՝ թագաւորին

ազնիւ կերակուրէն ու իր խմած գինիէն, որպէս զի զանոնք երեք տարի «յոդե» անուցանէ, ու ետքը թագաւորին առջև կայնին: 6 - Եւ անոնց մէջ էին Յուդայի սրգիններէն Գանիէլ, Անանիա, Միսայէլ ու Ազարիա: 7 - Ու ներքինապետը անոնց անուններ դրաւ. Գանիէլի Բաղտասատար, Անանիայի Սեզրաք, Միսայէլի Միսաք, ու Ազարիայի Աբեղնագով դրաւ:

8 - Եւ Գանիէլ միտքը դրաւ որ թագաւորին ազնիւ կերակուրովը ու անոր խմած գինիովը չպղծուի և ներքինապետէն Բոյլոս «- Բիւն խնդրեց որ ասոնց մէջ ինքզինք չպղծէ: 9 - Ու Աստուած ներքինապետին առջև շնորհք ու գթութիւն գտնել առաւ Գանիէլի: 10 - Եւ ներքինապետը Գանիէլի ըսաւ, Ես կը վախնամ իմ թագաւոր տէրոջմէս որ ձեր ուտելիքը ու խմելիքը սահմանեց վասն զի ինչո՛ւ համար անկիա ձեր

*Այսինքն, Տէրը հան է. Երեմ. գ. 17: Յովել. գ. 21: Զաք. բ. 10: Յայտ. իա. 3: Իբ. 3:

երեսները ձեզի հասակակից եղող աղոց երեւելէն աւրուած տեսնէ, ու զիս թագաւորին առջև գլխապարտ ընէք : 11 - Եւ Գանիէլ ըսաւ * անտեսին, զոր ներքինապետը Գանիէլի, Անանիայի, Միսայէլի ու Ազարիայի վրայ դրեր էր, 12-Շնորհք ըրէ, քու ծառաներդ տասը օր փորձէ, ու մեզի ուտելու համար ընդեղէն, ու խմելու համար ջուր տրուի. 13 - Եւ քու առջևդ մեր դէմքը, ու թագաւորին ազնիւ կերակուրը ուտող աղոց դէմքը երևնան. և ինչպէս տեսնես՝ անոր համեմատ ըրէ քու ծառաներուդ : 14 - Ու անիկա այս բանին համար անոնց մահի ըրաւ, ու զանոնք տասը օր փորձեց : 15 - Եւ տասը օրէն ետքը անոնց դէմքը՝ թագաւորին ազնիւ կերակուրը ուտող ամէն աղոց Դէմքն աւելի աղէկ ու դէր երևցաւ : 16 - Ուստի անտեսը անոնց ազնիւ կերակուրը ու խմելու գինին կը վերցնէր, ու անոնց ընդեղէն կու տար : 17 - Եւ Աստուած այս չորս աղոց՝ ամէն դպրութեան ու իմաստութեան մէջ գիտութիւն ու հանճար տուաւ. ու Գանիէլ ամէն տեսիլքը ու երազը կը հասկնար : 18 - Եւ այն օրերուն լմենալէն ետքը որ թագաւորը հրաման ըրեր էր որ զանոնք բերեն, ներքինապետը զանոնք Նաբուգոդոնոսորի առջև տարաւ : 19 - Ու թագաւորը անոնց հետ խօսեցաւ, և անոնց ամէնուն մէջ Գանիէլի, Անանիայի, Միսայէլի ու Ազարիայի պէս չգանուեցաւ. ու անոնք թագաւորին առջև կը կայնէին : 20 - Եւ թագաւորը անոնց հարցուցած ամէն իմաստութեան ու գիտութեան վերաբերեալ բաներուն մէջ՝ զանոնք իր բոլոր թագաւորութեանը մէջ եղող բոլոր մտքերէն ու հմայողներէն տասնապատիկ գերազանց գտաւ : 21 - Եւ Գանիէլ մինչև Կիւրոս թագաւորին առաջին տարին մնաց :

ԳԼ Բ

Ու Նաբուգոդոնոսորի թագաւորութեանը երկրորդ տարին Նաբուգոդոնոսոր երազներ տեսաւ, և անոր ոգին խռովեցաւ ու քունը փախաւ : 2 - Եւ թագաւորը հրամայեց որ մտքերը, հմայողները, կախարգները ու Քաղզեա-

ները կանչեն, որպէս զի թագաւորին իր երազները պատմեն. և անոնք եկան ու թագաւորին առջև կայնեցան :

3 - Եւ թագաւորը անոնց ըսաւ, Երազ տեսայ, ու իմ՝ ոգիս կը խռովի որ այն երազը գիտնամ : 4 - Ու Քաղզեաները թագաւորին * Ասորերէն ըսին, Ով թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր. ըսէ երազը քու ծառաներուդ, ու մենք անոր մեկնութիւնը իմացնենք : 5 - Թագաւորը պատասխան տուաւ ու Քաղզեաներուն ըսաւ, Ի՞նչ մէ ելաւ. եթէ երազը ու անոր մեկնութիւնը ինձի չյայտանէք, դուք կտոր կտոր պիտի ըլլաք, ու ձեր տուները աղբանոց պիտի ըլլան : 6 - Բայց եթէ երազը ու անոր մեկնութիւնը ինձի իմացնէք, ինձ մէ պարգևներ, տուրքեր ու շատ պատիւ պիտի տանէք. ուրիշն երազը ու անոր մեկնութիւնը ինձի իմացուցէք : 7 - Անոնք նորէն պատասխան տուին ու ըսին, Թագաւորը թող ըսէ երազը իր ծառաներուն, ու անոր մեկնութիւնը իմացնենք : 8 - Թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Աղէկ գիտեմ՝ որ դուք ժամանակը ծախու կ'առնէք, վասն զի կը տեսնէք որ իբրև ինձ մէ ելած է : 9 - Բայց եթէ դուք երազը ինձի չյայտանէք, ձեզի համար մէկ վճիռ կայ. վասն զի դուք ձեր մէջ որոշեցիք որ իմ՝ առջևս սուտ ու ապականեալ խօսք մը գրուցէք՝ մինչև որ ժամանակը փոխուի. ուստի ըսէք ինձի երազը, որպէս զի գիտնամ թէ պիտի կարենաք անոր մեկնութիւնը իմացնել : 10 - Քաղզեաները թագաւորին առջև պատասխան տուին ու ըսին, Երկրի վրայ այնպիսի մարդ մը չկայ, որ կարող ըլլայ թագաւորին պահանջած բանը իմացնել. անոր համար բնաւ թագաւոր մը, նախարար մը կամ իշխան մը այսպիսի բան պահանջած չէ մտքէ մը կամ՝ հմայողէ մը կամ՝ Քաղզեայէ մը : 11 - Ու թագաւորին պահանջած բանը դժուար է, և ուրիշ մէկը չկայ որ զանիկա թագաւորին առջև իմացնէ, բայց եթէ աստուածները որ մտեղեաց մէջ չեն բնակիր :

12 - Ասոր վրայ թագաւորը սրգողեցաւ ու խիստ բարկացաւ, և հրամայեց որ Բաբելոնի բոլոր իմաստաւները կտա-

* կամ, Քաղզեարէն
 † կամ, Հրամանը ‡ կամ, հրամանը

* կամ, Մեղսարին

րեն: 13 - Ու չրամանը ելաւ, և խմսա-
տունները կը կտարուէին. ու փնտուցին
Դանիէլը ու անոր ընկերները որպէս
զի մեռցնեն: 14 - Այն ատեն Դանիէլ
խմսատուծեամբ ու խոհեմն թեամբ
խօսեցաւ թագաւորին զաճապեալին
Արիովքի չեա, որ Բարեկրնի խմսատուն-
ները կտարելու ելեր էր: 15 - Ու թա-
գաւորին իշխանին Արիովքի խօսեցաւ
ու ըսաւ, Ինչո՞ւ չամար այս չրամանը
թագաւորին երեսէն արտարնօք ելաւ.
այն ատեն Արիովք բանը Դանիէլի
յայտնեց: 16 - Եւ Դանիէլ մտաւ ու
թագաւորէն խնդրեց որ իրեն ժամա-
նակ տայ, որպէս զի մեկնուծիւնը
թագաւորին իմացնէ: 17 - Ու Դանիէլ
իր տունը գնաց, և այս բանը իր ըն-
կերներուն, Անանիայի, Միսայէլի ու
Ազարիայի, յայտնեց: 18 - Որպէս զի
այս գաղանիքին չամար երկինքի Աս-
տուծմէն գթուծիւն խնդրեն, որպէս
զի Դանիէլը ու անոր ընկերները Բա-
րեկրնի միւս իմաստուններուն չեա
չկորսնցնեն:

19 - Եւ գաղանիքը գիշերուան տե-
սիլքի մէջ Դանիէլի յայտնուեցաւ.
այն ատեն Դանիէլ երկինքի Աստ-
ուածը օրհնեց: 20 - Դանիէլ խօսեցաւ
ու ըսաւ, Աստուծոյ անունը յաւիտե-
անս յաւիտենից օրհնեալ ըլլայ,
վասն զի իմաստուծիւնը ու զօրու-
ծիւնը անորն են. 21 - Եւ ատենները
ու ժամանակները փոխողը, թագաւոր-
ներ վերցնողը ու թագաւորներ գնողը
անիկա է. անիկա իմաստուններուն ի-
մաստուծիւն կու տայ, ու հանճարեղ-
ներուն՝ գիտուծիւն. 22 - Խորունկ ու
ժածկուած բաները ինք կը յայտնէ,
մուծի մէջ եղածը գիտէ, ու ըստը
անոր քով կը բնակի: 23 - Ես քեզի
գոհուծիւն ու փառք կը մատուցա-
նեմ, ով իմ՝ հայրերուս Աստուածը,
որ ինծի իմաստուծիւն ու զօրուծիւն
տուիր, ու հիմա ինծի գիտացցիր ինչ
որ քեզմէ խնդրեցինք, քանզի թագա-
ւորին բանը մեզի գիտացցիր:

24 - Ուստի Դանիէլ Արիովքի տաջե-
ելաւ, զոր թագաւորը գրեց էր Բարե-
կրնի իմաստունները կորսնցնելու. գնաց
ու անոր այսպէս ըսաւ. Բարեկրնի ի-
մաստունները մի կորսնցներ, զիս թա-
գաւորին տաջե տար, ու մեկնուծիւնը
թագաւորին իմացնեմ: 25 - Այն ատեն
Արիովք արտարնօք Դանիէլը թագաւո-

րին տաջե հանեց, ու անոր այսպէս
ըսաւ. Հրէաստանի գերիներէն մարդ մը
գտայ, որ մեկնուծիւնը պիտի գիտցնէ
թագաւորին: 26 - Պատասխան տուաւ
թագաւորը ու ըսաւ Դանիէլի, որուն
անունը Բաղտաստար էր. «Յէր, կա-
րո՞ղ ես գուն իմ՝ տեսած երազս ու
անոր մեկնուծիւնը ինծի գիտցնել:

27 - Դանիէլ թագաւորին տաջե պա-
տասխան տուաւ ու ըսաւ, Թագաւորին
հարցուցած գաղանիքը իմաստունները,
հմայողները, մագերը « բազմ հոյսոյ-
ները թագաւորին յայտնելու կարող
չեն. 28 - Բայց երկինքի մէջ գաղանիք-
ներ յայտնող Աստուած կայ, ու Նա-
բուգոգոնսոր թագաւորին կը յայտնէ
ինչ որ վերջին օրերը պիտի ըլլայ:
Երազդ ու անկողինիդ մէջ գլխուդ
տեսիլքը տսիկա է. 29 - Դուն, ով
թագաւոր, քու անկողինիդ մէջ կը
մտածէիր թէ ասկէ ետքը ի՞նչ պիտի
ըլլայ. ու գաղանիքներ յայտնողը ըլ-
լալու բանը քեզի գիտացուց: 30 - Եւ
այս գաղանիքը՝ ոչ թէ ամէն ապրող-
ներէն աւելի իմաստուծիւն ունենա-
լուս համար ինծի յայտնուեցաւ, հա-
պա մեկնուծիւնը թագաւորին գիտ-
ցրնելու համար, և որպէս զի գուն քու
սրտիդ խորհուրդները գիտնաս:

31 - Դուն, ով թագաւոր, կը տես-
նէիր որ ահա մեծ արձան մը կար. այս
մեծ ու խիստ պոյժաւ արձանը քու
գիմացդ կայներ էր, և անոր երևոյթը
ահաւոր էր: 32 - Այս արձանին գլու-
խը զուա սսկիէ, անոր կուրծքը ու
թեքը արծաթէ, մէջքը ու սոգրերը
պղնձէ, 33 - Սրունքները երկաթէ, «-
սոքերուն մէկ մտար կուէ էր: 34 -
Դուն կը տեսնէիր, մինչև քոր մը
կտրուեցաւ առանց ձեռքի, ու այն
արձանին երկաթէ ու կուէ սոքերուն
զարկաւ, ու զանոնք փշրեց: 35 -
Այն ատեն երկաթը, կուը, պղինձը,
արծաթը ու սսկին մէկտեղ փշրուե-
ցան, և ամուռուան կայերուն մըլեղին
պէս եղան. ու հովը զանոնք տարաւ,
ու ամենեկին անոնց տեղ մը չգանուե-
ցաւ. բայց արձանը զարնող քորը մեծ-
յեւ մը եղաւ, ու բոլոր երկիրը լեցուց:
36 - Երազը այս է, ու թագաւորին
տաջե անոր մեկնուծիւնը ըսեմք:

37 - Ով թագաւոր, գուն թագա-
ւորաց թագաւոր ես, վասն զի երկինքի
Աստուածը քեզի թագաւորուծիւն,

կարողութիւն, զօրութիւն ու պատիւ տուեր է. 38 - Եւ մարգոց որդիներուն բոլոր բնակած տեղերուն մէջ՝ դաշտի գազանները ու երկինքի թռչունները քու ձեռքդ տուեր է, և անոնց ամենուն վրայ քեզ իշխան գրեր է. այն սակի գլուխը գունես : 39 - Ու քեզմէ ետքը ուրիշ թագաւորութիւն մը պիտի ելլէ քեզմէ ցած, ու պղինձէ ուրիշ երրորդ թագաւորութիւն մը՝ որ բոլոր երկրին պիտի տիրէ : 40 - Եւ չորրորդ թագաւորութիւնը երկաթի պէս ամուր պիտի ըլլայ . «- Ինչպէս երկաթը ամէն բանը կը փշրէ ու կը մանրէ, ասիկա ալ՝ այս ամէն բաները կտարող երկաթին պէս փշրելով պիտի կտարէ : 41 - Եւ որովհետեւ սաքերը ու մատերը՝ մէկ մասը բրուտի կաւէ ու մէկ մասը երկաթէ տեսար, այն թագաւորութիւնը պիտի բաժնուի, բայց երկաթի պնդութենէ քիչն պիտի ունենայ, քանզի երկաթը աղմուտ կաւի հետ խառնուած տեսար : 42 - Ու սաքերուն մատերուն մէկ մասը երկաթէ ու մէկ մասը կաւէ ըլլալը «յ» է «բ» այն թագաւորութեանը մէկ մասը ամուր՝ ու մէկ մասը գիւրաբեկ պիտի ըլլայ : 43 - Եւ աղմուտ կաւին հետ երկաթը խառնուած տեսնելդ «յ» է «բ» անոնք մարդոց սերունդին հետ պիտի խառնուին, բայց անոնք իրարու պիտի չփակչին, ինչպէս երկաթը կաւին հետ չխառնուիր :

44 - Ու այն թագաւորներուն օրերը երկինքի Աստուածը թագաւորութիւն մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւրի, և այս թագաւորութիւնը ուրիշ ժողովուրդի պիտի չթողուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հասցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ : 45 - Որովհետեւ դուն առանց ձեռքի լեռնէն կտրած քար մը տեսար, և անիկա երկաթը, պղինձը, կաւը, արծաթը ու սակին փշրեց, մեծ Աստուածը ասկէ ետքը ինչ ըլլալիքը թագաւորին գիտցուց. ու երազը ճշմարիտ է, և անոր մեկնութիւնը՝ հաւատարիմ :

46 - Այն ատեն Նաբուգոդոնոսոր թագաւորը իր երեսին վրայ ինկաւ. ու Գանիէլի երկրպագութիւնը ըրաւ, և հրամայեց որ ընծայ ու անոյշ հոտեր մտաուցանեն անոր : 47 - Եւ թագաւորը Գանիէլի պատասխան տուաւ ու

ըրաւ, Իրաւցընէ ձեր Աստուածը ինք է աստուածներուն Աստուածը, և թագաւորներուն Տէրը, ու գաղնիքները յայտնողը, քանզի դուն կտրող եղար այս գաղանիքը յայտնել : 48 - Այն ատեն թագաւորը մեծցուց Գանիէլը, ու անոր շատ «- մեծ պարգևներ տուաւ, և զանիկա Բաբելոնի բոլոր գաւառին վրայ կառավարիչ ու Բաբելոնի բոլոր իմաստուններուն գլխաւորներուն վրայ իշխան դրաւ : 49 - Եւ Գանիէլ թագաւորէն խնդրեց, ու Բաբելոնի գաւառին գործերուն վրայ Սեդրաքը, Միսաքը ու Աբեգնադավը դրաւ. ու Գանիէլ թագաւորին դուռն էր :

ԳԼ. Գ

Նաբուգոդոնոսոր թագաւորը սակիէ արձան մը շինեց, անոր բարձրութիւնը վաթսուն կանգուն «- լայնութիւնը վեց կանգուն. զանիկա Բաբելոնի գաւառը, Գուրա դաշտին մէջ, կանգնեց : 2 - Եւ Նաբուգոդոնոսոր թագաւորը հրահրեց՝ կուսակալները, նախարարները, կառավարիչները, գատաւորները, գանձապետները, խորհրդականները, օրէնագէտները ու գաւառներուն բոլոր իշխանները ժողովելու, որպէս զի Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած արձանին նաւակատիքին գան : 3 - Այն ատեն կուսակալները, նախարարները, կառավարիչները, գատաւորները, գանձապետները, խորհրդականները, օրէնագէտները ու գաւառներուն բոլոր իշխանները Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած արձանին նաւակատիքին ժողովուեցան, ու Նաբուգոդոնոսորի կանգնած արձանին առջև կայնեցան :

4 - Եւ մունեաիկը ու ժով կը կանչէր, Ով ժողովուրդներ, ազգեր ու լեզուներ, ձեզի կը զրուցուի . 5 - Երբ փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին, տիկին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսէք, Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած սակի արձանին առջև իյնաք ու երկրպագութիւն ընէք . 6 - Եւ ով որ չիյնայ ու երկրպագութիւն չընէ, նոյն ժամուն բոքոքած կրակի հնոցին մէջ պիտի նետուի : 7 - Ուստի երբ բոլոր ժողովուրդները փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին ու ամէն

տեսակ նուագարաններուն ձայնը լսեցին, բոլոր ժողովուրդները, ազգերը ու լեզուները կ'իյնային, և Նաբուգոնոսոր թագաւորին կանգնած ոսկի արձանին երկրպագութիւն կ'ընէին:

8 - Աւստի այն ատեն քանի մը Քաղզէացի մարդիկ մտայեցան. ու Հրեաներուն վրայով ամբաստանութիւն ըրին.

9 - Նաբուգոնոսոր թագաւորին խօսեցան ու ըսին, Ով թագաւոր, յաւելիտեան ողջ կեցիր:

10 - Իսւն, ով թագաւոր, հրաման ըրիր որ ամէն մարդ որ փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին, տիկին և ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսէ, իյնայ ու ոսկի արձանին երկրպագութիւն ընէ: 11 - Եւ ով որ չիյնայ ու երկրպագութիւն չընէ, բոլորքած կրակի հնոցին մէջ նետուի: 12 - Քանի մը Հրեայ մարդիկ կան. զորոնք դուն Բաբելոնի դաւառին գործերուն վրայ դրիր, այսինքն Սեդրաք, Միսաք և Աբեգնազով, այս մարդիկը քեզ բանի տեղ չեն սեպեր, ով թագաւոր. քու աստուածներդ չեն պաշտեր, և քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չեն ըներ:

13 - Այն ատեն Նաբուգոնոսոր արամաութեամբ և բարկութեամբ հրամայեց որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեգնազովը բերեն. ուստի այն մարդիկը թագաւորին առջև բերին: 14 - Պատասխան տուաւ Նաբուգոնոսոր ու անոնց ըսաւ, Ով Սեդրաք, Միսաք ու Աբեգնազով, խորհրդով է որ իմ աստուածներս չէք պաշտեր, և իմ կանգնած ոսկի արձանիս երկրպագութիւն չէք ըներ:

15 - Հիմա եթէ պատրաստ էք փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին, տիկին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսած ատեննիդ իյնալու ու իմ շինած արձանիս երկրպագութիւն ընելու, աչիբայց եթէ երկրպագութիւն չընէք, նոյն ժամուսն՝ բոլորքած կրակի հնոցին մէջ պիտի նետուիք. և ո՞վ է այն Աստուածը որ ձեզ իմ ձեռքէս պիտի ազատէ:

16 - Պատասխան տուին Սեդրաք, Միսաք ու Աբեգնազով, ու թագաւորին ըսին, Ով Նաբուգոնոսոր, այս բանին վրայով քեզի պատասխան տալու հարկաւորութիւն մը չունինք: 17 - Ահա մեր պաշտած Աստուածը մեզ

բոլորքած կրակի հնոցէն ազատելու կարող է. քու ձեռքէդ ալ Քեզ պիտի ազատէ, ով թագաւոր: 18 - Ապա թէ ոչ քեզի յայտնի ըլլայ, ով թագաւոր, որ մենք քու աստուածներդ չենք պաշտեր, և քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չենք ըներ:

19 - Այն ատեն Նաբուգոնոսոր բարկութեամբ լեցուեցաւ, ու անոր երեսին երեւոյթը փոխուեցաւ Սեդրաքի, Միսաքի ու Աբեգնազովի վրայ, և պատասխան տալով՝ հրամայեց որ հնոցը վառելու սովորութենէն ետեւ պատահիկ աւելի վառեն.

20 - Ու իր զօրքին մէջ եղող զօրաւոր մարդոցը հրամայեց որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեգնազովը կապեն, ու բոլորքած կրակի հնոցին մէջ նետեն:

21 - Այն ատեն այս մարդիկը իրենց անդրավարտիքներովը, բաճկոններովը, վերարկուներովը ու «Ք» հանդերձներովը կապեցին, ու բոլորքած կրակի հնոցին մէջ նետեցին: 22 - Եւ թագաւորին հրամանին ստիպողական ըլլալուն՝ ու հնոցին շատ տաքցած ըլլալուն համար, Սեդրաքը, Միսաքը ու Աբեգնազովը վերցնող մարդիկը կրակին բոցը սպաննեց: 23 - Եւ այս երեք մարդիկը, Սեդրաք, Միսաք ու Աբեգնազով, կապուած ինկան բոլորքած կրակի հնոցին մէջ:

24 - Այն ատեն Նաբուգոնոսոր թագաւորը ապշած՝ արտօրնօք ոտք ելաւ, իր խորհրդականներուն խօսեցաւ ու ըսաւ, Մենք կրակին մէջ երեք կապուած մարդ չնետեցինք. անոնք պատասխան տուին ու թագաւորին ըսին, Այո, ով թագաւոր: 25 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա ես կրակին մէջ չորս արձակուած մարդ կը տեսնեմ որ կը քալեն, անոնք ամենին փնտ մը չեն քաշեր. ու չորրորդին դէմքը աստուածներու որդիի մը կը նմանի: 26 - Այն ատեն Նաբուգոնոսոր բոլորքած կրակի հնոցին դրանք մօտենալով խօսեցաւ ու ըսաւ, Ով Բարձրեալ Աստուծոյն ծառաները, Սեդրաք, Միսաք և Աբեգնազով, դուրս ելէք ու հա՛ եկէք: Այն ատեն Սեդրաք, Միսաք ու Աբեգնազով կրակին մէջէն ելան:

27 - Եւ կուսակալները, նախարարները ու կառավարիչները ու թագաւորին խորհրդականները ժողովուեցան, և տեսան այս մարդիկը, որոնց մարմիններուն վրայ կրակը ամե-

նեւին չտիրեց, ու անոնց գլխուն մէ՛կ մնալը չխանձեցաւ, ու անոնց անդրա- վարաւիքները գոյներնին չնետեցին. ա- նոնց վրայ կրակին հօտը անգամ՝ չկար:

28 - Պատասխան տուաւ Նաբուգո- գոնոտար ու ըսաւ, Օրհնեալ ըլլայ Սեդ- րաքի, Միտաքի ու Աբեգնազովի Աստ- ուածը, որ իր հրեշտակը զրկեց, ու իր ծառաները ազատեց. վասն զի անոր ա- պուսինեւլով՝ թագաւորին խօսքը անար- գեցին, ու իրենց մարմինները չբռնե- տուին, որպէս զի իրենց Աստուծոն զատ ուրիշ աստուծոյ մը ծառայու- թիւն ու երկրպագութիւն չընեն: 29 - Արդ ես հրաման կու տամ՝ որ ամէն ժո- ղովուրդ, ազգ ու լեզու՝ որ Սեդրաքի, Միտաքի ու Աբեգնազովի Աստուծոյն գէմ սխալ բան մը ըսէ, կտոր կտոր ըլլայ, ու անոր տունը աղբանոց ըլլայ. վասն զի ուրիշ աստուած չկայ, որ կա- ռող ըլլայ այսպէս ազատել: 30 - Այն ատեն թագաւորը աւելի մեծցուց Սեդրաքը, Միտաքը ու Աբեգնազովը Բաբելոնի գաւառին մէջ:

ԳԼ. Դ

Նաբուգոգոնոտար թագաւոր բոլոր երկրին վրայ բնակող բոլոր ժողովուրդ- ներուն, ազգերուն ու լեզուներուն. ձեր խաղաղութիւնը շաանայ: 2 - Իմ առջև հաճոյ երեցաւ որ Բարձրեալ Աստուծոյն ինծի բրած նշանները ու հրաշքները յայտնեմ: 3 - Անոր նշան- ները ի՛նչ մեծ, ու հրաշքները ի՛նչ զօրաւոր են. անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, ու անոր իշխանութիւնը դարէ դար կը մնայ:

4 - Ես Նաբուգոգոնոտար երբ իմ ատնս մէջ հանգիստ էի, ու պալատիս մէջ կը զուարճանայի, 5 - Երազ տե- սայ, որ զիս վախցուց. և անկողինիս վրայ իմ խորհուրդներս ու իմ գլխուս տեսիլքները զիս խռովեցուցին: 6 - Ուստի Բաբելոնի բոլոր իմաստունները իմ առջև բերելու հրաման ըրի, որպէս զի անոնք ինծի երազին մեկ- նութիւնը գիտցնեն: 7 - Այն ատեն մտերը, հմայողները, Քաղդեաները ու բազմ նայողները եկան, ու ես երազը անոնց առջև ըսի, բայց անոնք չկրցան մեկնութիւնը ինծի գիտցնել: 8 - Ու վերջապէս Իսնիէլ առջև

եկաւ, որուն անունը իմ՝ աստուծոյս անուանը համեմատ Բաղասասար կը խոսէ, և որուն ներսիդին սուրբ աստ- ուածներուն հոգին կայ, ու անոր առ- ջև երազը պարօքեցի՝ ըսի, 9 - Ով մտ- գերուն իշխանը Բաղասասար, որով- հետե գիտեմ՝ որ քու ներսիդիդ սուրբ աստուածներուն հոգին կայ, ու քեզի բնաւ գաղանիք մը նեղութիւն չտար. «Հ» տեսած երազիս տեսիլքները, ու դուն անոնց մեկնութիւնը ըսէ:

10 - Իմ անկողինիս մէջ գլխուս տե- սիլքները ասոնք էին. Ես կը տեսնէի որ ահա երկրի մէջ ծառ մը կար, ու անոր բարձրութիւնը մեծ էր: 11 - Այն ծառը մեծցաւ և ուժովցաւ, ու անոր բարձ- րութիւնը մինչև երկինք հասաւ. ու անիկա բոլոր երկրի ծոյրերէն կը տես- նուէր: 12 - Անոր տերեւները գեղեցիկ, ու պտուղը առատ էր, և անոր վրայ ամէնուն համար կերակուր կար. դաշ- տի անասունները անոր շուքին տակ կը նստէին, ու երկինքի թռչունները անոր ստերուն վրայ կը բնակէին, և ամէն մարմին անկէ կը կերակուրէր: 13 - Անկողինիս վրայ գլխուս տեսիլքներուն մէջ կը տեսնէի որ ահա երկինքէն՝ սուրբ պահապան մը՝ իջաւ. 14 - Անիկա ուժով կանչեց ու այսպէս ըսաւ. Ծա- ւը կտրեցէք, ու ստերը մեկգի հա- նեցէք. տերեւները թօթափեցէք, ու պտուղները ցրուեցէք. անոր տակէն անասունները, ու ստերէն թռչուն- ները փախչին. 15 - Բայց արմատներուն բունը երկրի մէջ թողուցէք, ու երկա- թէ և պղնձէ կապանքով դաշտի խո- տերուն մէջ ըլլայ, ու երկինքի ցօղովը թըջուի, և անոր բաժինը անասուն- ներու հետ երկրի խոտին մէջ ըլլայ. 16 - Անոր սիրալ մարդու «բէն» փոխ- ուի, ու անոր անասունի սիրտ արուի, և անոր վրայէն եօթը ժամանակ անցնի: 17 - Այս բանը պահապաննե- րուն վճիռովն է, ու այս խնդիրքը սուրբերուն խօսքովն է. որպէս զի ապ- րողները գիանան թէ Բարձրեալը կը ախրէ մարդոց թագաւորութեանը վրայ, ու զանիկա իր ուզածին կու տայ, ու անոր վրայ մարդոց անարգը կը դնէ: 18 - Ես Նաբուգոգոնոտար թագաւոր այս երազը տեսայ, ու դուն, ով Բաղասասար, անոր մեկ-

*Քաղդ. պահապան ու սուրբ մը

նութիւնը ըսէ . վասն զի իմ՝ թագաւորութեանս բոլոր իմաստունները կարող չեղան անմեկնութիւնը ինծի գիտցնել . բայց գուն կարող ես, քանզի քու ներսիցիդ սուրբ աստուածներուն չոգին կայ:

19 - Այն ատեն Գանիէլ, որուն անունը Բաղտաստար էր, *մէկ ժամու չափ՝ չիացած մնաց, ու անոր խորխուրդները զանիկա խուովեցուցին: Պատասխան տուաւ թագաւորը ու ըսաւ, Ով Բաղտաստար, երազը կամ անոր մեկնութիւնը քեզ չխուովեցնէ. պատասխան տուաւ Բաղտաստար ու ըսաւ, Ով տէր իմ, երազը քեզ ատողներուն՝ ու անոր մեկնութիւնը քու թշնամիներուդ ըլլայ: 20 - Այն տեսած ծառդ որ մեծցաւ և ուժովցաւ, ու անոր բարձրութիւնը մինչև երկինք հասաւ, ու անիկա բոլոր երկրի մէջ կը տեսնուէր, 21 - Եւ անոր տերևները գեղեցիկ, ու պտուղը աւատ էր, ու անոր վրայ ամէնուն համար կերակուր կար, անոր տակ դաշտի անասունները կը բնակէին, ու անոր ոտերուն վրայ երկինքի թռչունները կը կենային, 22 - Անիկա գուն ես, ով թագաւոր, որ մեծցար և ուժովցար. և քու մեծութիւնդ բարձրացաւ ու մինչև երկինք հասաւ, և քու իշխանութիւնդ մինչև երկրի ծայրերը հասաւ: 23 - Եւ որովհետև թագաւորը սուրբ պահապան մը տեսաւ որ երկինքէն իջաւ, ու ըսաւ, Ծառը կտրեցէք ու զանիկա աւրեցէք, բայց անոր արմատներուն բունը երկրի մէջ թողուցէք, ու երկաթէ և պղնձէ կապանքով դաշտի խոտերուն մէջ ըլլայ, ու երկինքի ցօղովը թրջուի, և անոր բաժինը դաշտի անասուններուն հետ ըլլայ, մինչև անոր վրայէն եօթը ժամանակ անցնի. 24 - Այս է մեկնութիւնը, ով թագաւոր, և այս է Բարձրեալին վճիւր՝ որ իմ թագաւոր տէրջոս վրայ հասած է. 25 - Քեզ մարդոց մէջէն պիտի վճնատեն, և քու բնակութիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ. ու քեզ պիտի թողուն որ արջաւներու պէս խոտ ուտես, ու երկինքի ցօղովը թրջուի. և քու վրայէդ եօթը ժամանակ պիտի անցնի, մինչև գիտնաս թէ մարդոց թագաւոր

*կա՛մ, ժամանակ մը

ութեանը վրայ Բարձրեալը կը տիրէ, ու զանիկա իր ուզածին կու տայ: 26 - Եւ որ ըսուեցաւ թէ այն ծառին արմատներուն բունը թողուի, այ՛ է որ քու երկնաւոր իշխանութիւնը ճանչնալէդ ետքը՝ քու թագաւորութիւնդ քեզի պիտի հաստատուի: 27 - Անոր համար, ով թագաւոր, թող իմ խրատս քեզի հաճոյ երևնայ, քու մեղքերդ արգարութեամբ ու քու անօրէնութիւններդ աղքատներուն սղորմելով *մէկգի ձգէ՛. թերևս հանգստութիւնդ երկնայ:

28 - Այս ամէնը Նաբուգոդոնոսոր թագաւորին վրայ եկաւ: 29 - Տասուերկու ամիսէն ետքը երբ Բաբելոնի թագաւորութեան պալատին վրայ կը ճեմէր, 30 - Թագաւորը խօսեցաւ ու ըսաւ, Այս չէ՞ այն մեծ Բաբելոնը զոր ես իմ զօրութիւնովս ու կարողութիւնովս իմ մեծութեանս փառքին համար թագաւորութեան տուն շինեցի: 31 - Երբ խօսքը դեռ թագաւորին բերանն էր, երկինքէն ձայն մը իջաւ, Քեզի կ'ըսուի, ով Նաբուգոդոնոսոր թագաւոր, թագաւորութիւնը քեզմէ գնաց. 32 - Ու քեզ մարդոց մէջէն պիտի վճնատեն, և քու բնակութիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ, քեզ պիտի թողուն որ արջաւներու պէս խոտ ուտես, ու քու վրայէդ եօթը ժամանակ պիտի անցնի, մինչև գիտնաս թէ մարդոց թագաւորութեանը վրայ Բարձրեալը կը տիրէ, ու զանիկա իր ուզածին կու տայ: 33 - Նայն ժամանակ մէջ այս խօսքը Նաբուգոդոնոսորի վրայ կատարուեցաւ, ու մարդոց մէջէն վճնատեցաւ, ու արջաւներու պէս խոտ կ'ուտէր, և անոր մարմինը երկինքի ցօղովը կը թրջուէր, մինչև որ մտղերը արծիւներու փեռներէն պէս, ու ըզունգները թռչուններու ճագի՛ններէն պէս երկնցան:

34 - Եւ այն օրերուն վերջը ես Նաբուգոդոնոսոր աչքերս երկինք վերցուցի, ու խելքս ինծի դարձաւ, և Բարձրեալը օրհնեցի, ու գովեցի ու փառաւորեցի զանիկա որ յաւիտեան կենդանի է, ու անոր իշխանութիւնը յաւիտեանական իշխանութիւն է, և անոր թագաւորութիւնը դարեւ գալը կը մնայ: 35 - Ու երկրի բոլոր բնակիչ-

*կա՛մ, քա՛ն է

ները ոչինչի պէս կը սեպուին . և անիկա երկինքի զօրքերուն մէջ ու երկրի բնակիչներուն մէջ իր ուզածը կը գործէ . ու անոր ձեռքին գէմ՝ դնող, կամ անոր իջնչ կ'ընես՝ բող չկայ : 36 - Այն ատեն խելքս ինծի գարձաւ , ու իմ թագաւորութեանս պատուոյն հետ իմ փառքս ու մեծ վայելչութիւնս ինծի գարձաւ , և իմ խորհրդականներս ու մեծամեծներս զիս փնտուեցին , ու իմ թագաւորութեանս մէջ հաստատուեցայ և ինծի աւելի մեծ վեհափառութիւն արուեցաւ :

37 - Հիմա ես Նաբուգոզոնոսը երկինքի թագաւորը կը գովեմ , և կը բարձրացնեմ ու կը փառաւորեմ : վասն զի անոր բոլոր գործերը ճշմարտութիւն, ու ճամբաները իրաւունք են , ու անիկա կարող է ամբարտաւանութեամբ քալողները ցածցնել :

ԳԼ Ե

Բաղասասար թագաւորը իր մեծամեծներէն հազար հոգիի մեծ կոչունք բրաւ , ու հազարին առջև գինի խմեց : 2 - Աւ երբ Բաղասասար գինիէն զուարթացաւ , հրամայեց որ իր *հօրը Նաբուգոզոնոսի Երուսաղէմի տաճարէն հանած սակիէ ու արծաթէ անօթները բերեն , որպէս զի թագաւորը ու իր մեծամեծները , իր կիները ու հարճերը անոնցմով խմեն : 3 - Աւտի Երուսաղէմ եղող Աստուծոյ սանը տաճարէն հանուած սակի անօթները բերին , և թագաւորը ու իր մեծամեծները , իր կիները ու հարճերը անոնցմով խմեցին : 4 - Անոնք գինի խմեցին , ու սակիէ , արծաթէ , պղնձէ , երկաթէ , փայտէ ու քարէ աստուածները գովեցին :

5 - Նոյն ժամուն մէջ մարդու ձեռքի մատեր ելան , ու աշտանակին դիմաց , թագաւորական պալատին պատին ծեփին վրայ , գրեցին և թագաւորը այն գրող ձեռքին թաթը առաւ : 6 - Այն ատեն թագաւորին գոյնը փոխուեցաւ , ու անոր խորհուրդները զանիկա խռովեցուցին , այնպէս որ մէջքին յօգուածները կը քակուէին ու ծունկերը իրարու կը զարնէին : 7 - Թագա-

ւորը բարձրաձայն աղաղակեց որ հմայողները , Քաղզեաները ու բաղդ նայողները բերեն . թագաւորը Բաբելոնի իմաստուններուն խօսեցաւ ու բտաւ , Ով որ այս գիրը կարդայ ու մեկնութիւնը ինծի իմացնէ , ծիրանի պիտի հագնի ու անոր պարանոցը սակի մանեակ պիտի գրուի , և թագաւորութեան մէջ երրորդ իշխան պիտի ըլլայ : 8 - Աւտի թագաւորին բոլոր իմաստունները եկան , բայց գիրը կարդալու առաջ մեկնութիւնը թագաւորին գիտցրնելու կարող չեղան : 9 - Այն ատեն Բաղասասար թագաւորը սաստիկ խռովեցաւ ու երեսին գոյնը փոխուեցաւ . անոր մեծամեծներն ալ սարսափեցան : 10 - Եւ թագուհին թագաւորին ու անոր մեծամեծներուն խօսքերուն պատճառաւ կոչունքին սունը եկաւ , ու թագուհին խօսեցաւ ու բտաւ , Ով թագաւոր , յաւիտեան ողջ կեցիր . քու խորհուրդներդ քեզ չխաղեցնեն , ու երեսիդ գոյնը չփոխուի . 11 - Քու թագաւորութեանդ մէջ մարդ մը կայ , ու անոր ներսիդին սուրբ աստուածներուն հոգին կայ , և քու հօրդ օրերը անոր վրայ լոյս , հանճար , ու աստուածներուն իմաստութեանը պէս իմաստութիւն գտնուեցաւ , և քու հայրդ Նաբուգոզոնոսը թագաւորը զանիկա մագերան , հմայողներուն , Քաղզեաներուն ու բաղդ նայողներուն վրայ իշխան դրաւ : 12 - Քանզի այս մարդուն քով , այսինքն Գանիէլի , որուն անունը թագաւորը Բաղասասար դրաւ , գերազանց հոգի , գիտութիւն ու հանճար կայ՝ երազներ մեկնելու , աւելի ծուլածներ յայտնելու ու գժուարին ինդիրներ լուծելու . հիմա Գանիէլ թող կանչուի , ու անիկա մեկնութիւնը պիտի իմացնէ :

13 - Այն ատեն Գանիէլ թագաւորին առջև տարուեցաւ . թագաւորը խօսեցաւ ու Գանիէլի բտաւ , իմ թագաւոր հօրս Հրէաստանէ բերած Հրէաստանի գերիներէն եղող Գանիէլը գժուն ես . 14 - Վասն զի քեզի համար լսեցի որ քու ներսիդիդ աստուածներուն հոգին կայ . և քու քովդ լոյս , հանճար ու գերազանց իմաստութիւն կը գրանուի : 15 - Աւ հիմա իմ առջև իմաստուններ ու հմայողներ բերուեցան , որպէս զի այս գրուածը կարգան ու անոր մեկնութիւնը ինծի գիտցնեն ,

* Այսինքն , մեծ հօրը . հմբ . 41, 43 : Բ թագ . թ . 7 : Բ Մն . Ժե . 46 : Երեմ . Իէ . 7 :

բայց անոնք չկրցան այս խօսքին մեկնութիւնը խնայել . 16 - Աւ ես քեզի համար լսեցի որ մեկնութիւններ տալու, և դժուարին խնդիրներ լաճելու կարող ես . չիմա եթէ դուն այն գրուածը կարգալու, և անոր մեկնութիւնը ինձի գիտցնելու կարող ըլլաս, ծիրանի պիտի հագնիս, և քու պարանոցդ սակի մանեակ պիտի քրտի, ու թագաւորութեանը մէջ երրորդ իշխան պիտի ըլլաս:

17 - Այն ատեն Գանիէլ պատասխան տուաւ ու թագաւորին առջև բացաւ, Բու պարգևներդ քեզի ըլլան, ու տուրքերդ ուրիշին տուր. բայց ես այն գրուածը թագաւորին պիտի կարգամ, ու մեկնութիւնը անոր գիտցնեմ: 18 - Ով թագաւոր, Բարձրեալ Աստուածը քու հօրդ Նաբուգոնոսորի թագաւորութիւն ու մեծութիւն և պատիւ ու փառք տուաւ . 19 - Եւ անոր տուած մեծութենէն՝ բոլոր ժողովուրդները, ազգերը ու լեզուները անոր երեսէն կը դողային ու կը վախնային. անիկա ուզածը կը մեռցնէր և ուզածը ողջ կը թողուր. անիկա ուզածը կը բարձրացրէր և ուզածը կը ցածցնէր: 20 - Բայց երբ անոր սիրտը բարձրացաւ, ու անոր հոգին ամբարտաւանութեամբ կարծրացաւ, իր թագաւորութեան ամբողջութիւնը ինկաւ, ու պատիւը անկէ առնուեցաւ . 21 - Եւ անիկա մարդոց որդիներուն մէջէն վաճառուեցաւ, ու անոր սիրտը անասուններու պէս եղաւ, և անոր բնակութիւնը վայրենի էշերուն հետ եղաւ . արջաւորու պէս խոտ կը կերցնէին անոր, ու անոր մարմինը երկինքի ցողովը կը թրջուէր, մինչև գիտցաւ թէ մարդոց թագաւորութեանը վրայ Բարձրեալ Աստուածը կը տիրէ, ու իր ուզած Բարձր անոր վրայ կը դնէ: 22 - Աւ դուն, ով Բաղասատար, անոր որդին, քու սիրտդ չխոնարհեցուցիր, թէև այս ամէնը գիտցար. 23 - Հապա երկինքի Տէրօջը դէմ քեզ բարձրացուցիր, ու անոր ատեն անօթները քու առջևդ բերին. և դուն ու քու մեծամեծներդ, քու կիներդ ու հարձերդ անոնցմով գինի խմեցիք . և դուն արծաթէ, սակիէ, պղնձէ, երկաթէ, փայտէ ու քարէ շինարարութեամբները գովեցիր, որոնք ոչ կը տեսնեն, ոչ կը լսեն, ոչ ալ Բարձր գիտեն. և այն Աստուածը, որուն ձեռքն է

քու շունչդ, և որուն են քու ամէն ճամբաներդ, չփառաւորեցիր . 24 - Անոր համար այն ձեռքի թաթը անոր երեսէն զրկուեցաւ, ու այս գրուածը գրուեցաւ: 25 - Եւ գրուած գիրը ասկա է . *ՄԱՆԷ, ՄԱՆԷ, ԹԵԿԷՂ ՈՒ ՓԱՐՍԻՆ*: 26 - Այս խօսքին մեկնութիւնը այս է . Մանէ, Աստուած քու թագաւորութիւնդ համբեց ու զանկա վերջացուց: 27 - Թեկէղ, կշիւքով կշուեցար ու պակաս գանուեցար: 28 - Փարէս, քու թագաւորութիւնդ բաժնուեցաւ և Մարաց ու Պարսից արուեցաւ:

29 - Այն ատեն Բաղասատար հրամայեց, ու Գանիէլի ծիրանի հագցուցին ու պարանոցը սակի մանեակ քրտի, և անոր համար մանեակի կանչել տուին՝ որ թագաւորութեանը մէջ երրորդ իշխան ըլլայ:

30 - Նայն գիշերը Բաղդէացոց Բաղասատար թագաւորը սպանուեցաւ: Աւ թագաւորութիւնը Մարաց Բարեհ Բարեհ Բարեհ տուաւ, երբ վախճաներկու տարեկանի չափ էր:

ԳԼ. Զ

Բարեհի առջև հաճոյ երեցաւ որ թագաւորութեանը վրայ հարիւր քսան կուսակալներ դնէ, որոնք բոլոր թագաւորութեանը մէջ ըլլան. 2 - Եւ անոնց վրայ երեք հրամանատար՝ որոնց մէկը Գանիէլ էր. որպէս զի այն կուսակալները ասոնց հաշիւ ասան, որպէս զի թագաւորին փնտս չըլլայ: 3 - Աւ այս Գանիէլ Գահրամանատարներէն և կուսակալներէն նախապատիւ էր, վասն զի անոր վրայ գերազանց հոգի կար, ու թագաւորը միտք ունէր որ զանկա բոլոր թագաւորութեանը վրայ դնէ:

4 - Եւ հրամանատարները ու կուսակալները թագաւորութեանը Գահրամանատարներէն կողմէ Գանիէլի դէմ պատճառ մը գտնելու կը ջանային, բայց անոնք բնաւ պատճառ մը կամ չարութիւն մը գտնելու կարող չեղան . վասն զի անիկա հաւատարիմ էր, ու անոր վրայ բնաւ յանցանք մը կամ չարութիւն մը չգտնուեցաւ: 5 - Աւտի այս մարդիկը

*Այսինքն, Համբուած, համբուած, կշուած ու բաժնուած

ըսին, Մենք այս Գանիէլին դէմ՝ ամենեին պատճառ մը պիտի չգտնենք, բայց եթէ անոր դէմ անոր Աստուծոյն օրէնքին կողմանէ գտնենք:

6 - Այն ատեն հրամանատարները ու կուսակալները թագաւորին քով ժողովուեցան, ու անոր այսպէս ըսին. Ով Գարեհ թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր: 7 - Թագաւորութեան բոլոր հրամանատարները, նախարարները, կուսակալները, խորհրդականները ու կառավարիչները խորհուրդ ըրին, որ թագաւորական հրաման մը որոշուի, և արգելիչ օրէնք մը հաստատուի, թէ ով որ մինչև երեսուն օր խնդրուած մը խնդրէ աստուծոյ մը կամ մարդէ մը, բաց ի քեզմէ, ով թագաւոր, առիւծներուն գուրը նետուի: 8 - Հիմա, ով թագաւոր, այս արգելիչ օրէնքը հաստատուէ, ու հրովարտակր ստորագրէ, որպէս զի Մարաց ու Պարսից անխափանելի օրէնքին համեմատ չփոխուի: 9 - Ասոր համար Գարեհ թագաւորը հրովարտակր ու արգելիչ օրէնքը ստորագրեց:

10 - Ու երբ Գանիէլ իմացաւ թէ հրովարտակր ստորագրուեցաւ, իր տունը գնաց, ու իր սենեակին մէջ պատուհանները դէպ ի երուսողէմ՝ բաց էին, և օրը երեք անգամ՝ ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առաջուն սովորութեանը պէս: 11 - Ուստի այս մարդիկը ժողովուեցան, ու Գանիէլը գտան՝ որ իր Աստուծոյն առջև աղօթք ու աղաչանք կ'ընէր: 12 - Այն ատեն մտաեցան, ու թագաւորին առջև թագաւորին արգելիչ օրէնքին վրայով ըսին, Գուն արգելիչ օրէնք մը չստորագրեցիր, թէ ով որ մինչև երեսուն օր քան իջ խնդրէ աստուծոյ մը կամ մարդէ մը, բաց ի քեզմէ, ով թագաւոր, առիւծներուն գուրը նետուի: Թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Այդ խօսքը ճշմարիտ է՝ Մարաց ու Պարսից անխափանելի օրէնքին համեմատ: 13 - Այն ատեն անոնք պատասխան տուին ու թագաւորին առջև ըսին, Հրէաստանի գերութեան օրդիներէն եղող Գանիէլը քեզ և քու ստորագրած արգելիչ օրէնքդ բանի տեղ չսեպեր, ով թագաւոր, հապա օրը երեք անգամ իր խնդրուածքը կը մատուցանէ: 14 - Այն ատեն թագաւորը

այս խօսքերը լսածին պէս՝ ինքնիրեն շատ արտեցաւ, ու իր սիրտը Գանիէլի վրայ դրաւ որպէս զի զանհկա ազատէ, ու մինչև արևուն մանելը կը ջանար որ զանհկա ապրեցնէ: 15 - Բայց այն մարդիկը թագաւորին քով ժողովուեցան, ու թագաւորին ըսին, Ով թագաւոր, գիտցիր որ Մարաց ու Պարսից օրէնքը այս է, որ թագաւորին ամէն հաստատած արգելիչ օրէնքը ու հրամանը չփոխուի: 16 - Այն ատեն թագաւորը հրամայեց, ու Գանիէլը բերին, և զանհկա առիւծներուն գուրը նետեցին: Թագաւորը Գանիէլի խօսեցաւ ու ըսաւ, Քու Աստուածդ, զոր դուն անդադար կը պաշտես, անհկա քեզ պիտի ազատէ: 17 - Ու քար մը բերին ու գուրին բերանը դրին, և թագաւորը զանհկա իր կնիքովը ու իր մեծամեծներուն կնիքովը կնիքեց, որպէս զի Գանիէլի վրայով բան մը չփոխուի: 18 - Ետքը թագաւորը իր տունը գնաց, ու գիշերը անօթի անցուց, և իր առջև *նուագարաններ բերել չտուաւ. ու քունը իրմէ փախաւ:

19 - Եւ թագաւորը արշալոյսին կանուխ ելաւ, ու արտորնօք առիւծներուն գուրը գնաց: 20 - Ու երբ գուրին մտեցաւ, արտում ձայնով մը Գանիէլի պուտաց, և թագաւորը խօսեցաւ ու Գանիէլի ըսաւ, Ով Գանիէլ, կենդանի Աստուծոյ ծառան, քու Աստուածդ զոր դուն անդադար կը պաշտես, կարող եղա՞ւ քեզ առիւծներէն ազատել: 21 - Այն ատեն Գանիէլ թագաւորին ըսաւ, Ով թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր: 22 - Իմ Աստուածս իր հրեշտակը զրկեց, ու առիւծներուն բերանը գոցեց, ու ինծի փեսս չտուին. վասն զի անոր առջև իմ վրաս անմեղութիւն գանուեցաւ, և քու առջևդ ալ, ով թագաւոր, յանցանք մը ըրած չեմ: 23 - Այն ատեն թագաւորը շատ ուրախացաւ, ու հրամայեց որ Գանիէլը գուրէն հանեն. և Գանիէլը գուրէն հանեցին, ու անոր վրայ ամենեւին փեսս մը չգանուեցաւ, վասն զի իր Աստուծոյն հաւատաց: 24 - Եւ թագաւորը հրամայեց, ու Գանիէլի վրայով չարախօսութիւն ընող մարդիկը բերին, և զանոնք * - անոնց աղաքները ու կրները առիւծներուն գուրը նետեցին. ու

* Կա՛մ, համադամ կերակուրներ

անոնք գեռ գուրին յատակը չհասած՝ առիւծները անոնց վրայ ախրեցին, ու անոնց բոլոր սակորները փշրեցին:

25 - Այն ատեն Գարեհի թագաւորը բոլոր երկրի վրայ բնակող ժողովուրդներուն, ազգերուն ու լեզուներուն «յադե» գրեց. Ձեր խաղաղութիւնը շատնայ: 26 - Ինծմէ հրաման ելաւ որ իմ թագաւորութեանս բոլոր իշխանութեանը մէջ՝ Գանիէյի Աստուծոյն երեսն գողան ու վախնան, վասն զի անիկա կենդանի Աստուած է ու յաւիտեան կը կենայ, և անոր թագաւորութիւնը չաւրուիր, ու անոր իշխանութիւնը մինչև վերջը կը հասնի: 27 - Անիկա կ'ազատէ ու կը փրկէ, և երկինքի մէջ ու երկրի վրայ նշաններ ու հրաշքներ կ'ընէ, որ Գանիէյը առիւծներուն *բերնէն ազատեց:

28 - Եւ այս Գանիէյը Գարեհի թագաւորութեանը ու Պարսիկ Կիւրոսի թագաւորութեանը ատեն յաջողութիւն գտաւ:

ԳԼ Է

Բարեւոյնի Բաղասար թագաւորին առաջին տարին Գանիէյ երազ տեսաւ, ու իր անկողինին մէջ՝ իր գլխուն տեսիլքները. և անիկա երազը գրեց «բաներուն համառօտութիւնը բաւ: 2-Գանիէյ խօսեցաւ ու բաւ, Գիշերը տեսիլքիս մէջ տեսայ որ ահա երկինքի չորս հովերը մեծ ծովուն վրայ կը յարձակէին: 3 - Ու ծովէն չորս մեծ գազաններ ելան, որոնք իրարմէ տարբեր էին:

4 - Առաջինը առիւծի պէս էր, ու արծիւի թևեր ուներ. ու կը տեսնէի մինչև անոր թևերը փրցուեցան, ու երկրէն վերացաւ և մարգու պէս սաքերուն վրայ կայնեցաւ. ու անոր մարգու սիրտ արուեցաւ:

5 - Եւ ահա ուրիշ երկրորդ գազան մը արջու նման՝ որ մէկ քովին վրայ կայնեցաւ, ու բերանը, տկուաներուն մէջ, երեք կողի սկոր կար. և անոր այսպէս բոն. Եյիր, շատ միս կեր:

6 - Ասկէ ետքը կը տեսնէի, և ահա բնծու նման ուրիշ մը՝ որուն կանակին վրայ չորս թռչունի թևեր կային. և այս գազանը չորս գլուխ ու-

ներ, ու անոր իշխանութիւն արուեցաւ:

7 - Ասկէ ետքը գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա չորրորդ գազան մը. անիկա ահեղ, սակալի ու խիստ զօրաւոր էր, և անիկա մեծ երկաթէ տկուաներ ուներ, անիկա կ'ուտէր ու կը փշրէր ու մնացածը սաքերովը կը կոխէր, ու իրմէ առաջ եզրղամէն գազաններէն տարբեր էր, և տասը եղջիւր ուներ: 8 - Երբ ես այն եղջիւրները կը գիտէի, ահա անոնց մէջ ուրիշ պզտիկ եղջիւր մը ելաւ, որուն առջևէն առաջուան եղջիւրներէն երեքը խլուեցան. և ահա այս եղջիւրին վրայ մարգու աչքերու պէս աչքեր, ու մեծ բաներ խօսող բերան կար:

9 - Ես կը տեսնէի մինչև ամբողջը գրուեցան, ու Հինաւուրցը նստաւ. անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ, ու գլխուն մազը մարմուր բուրգի պէս էր, անոր ամուր կրակի բոցի պէս, «- անիւները վառած կրակի պէս» էին. 10 - Անոր առջևէն կրակի գեռ կ'ելէր ու կը վազէր. հազարք հազարաց ծառայութիւն կ'ընէին անոր, և բիւրք բիւրուց անոր առջև կը կայնէին. տատանը բազմեցաւ, ու գիրքերը բացուեցան:

11-Այն ատեն կը նայէի այն եղջիւրին խօսած մեծ խօսքերուն ձայնին համար, ու նայեցայ մինչև այն գազանը սպանուեցաւ, և անոր մարմինը կորսուեցաւ ու կրակի բոցերու արուեցաւ:

12 - Եւ միւս գազաններուն իշխանութիւնը վերցուեցաւ, բայց մինչև ժամանակ մը ու ատեն մը կեանքի երկարութիւն արուեցաւ անոնց: 13 - Գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա երկինքի ամպերով Արգւոյն մարգոյ նման ճիւղ կու գար, ու մինչև Հինաւուրցը եկաւ, և զանիկա անոր առջև մօտեցուցին:

14 - Ու անոր իշխանութիւն, պատիւ ու թագաւորութիւն արուեցաւ, որպէս զի ամէն ժողովուրդները, ազգերը ու լեզուները անոր ծառայութիւն ընեն. անոր իշխանութիւնը յաւիտեանիս իշխանութիւն է որ չանցնիր, ու թագաւորութիւնը չաւրուիր:

15 - Ես Գանիէյ հոգեով վշտացայ իմ ներսիցիս, և իմ գլխուն տեսիլքները զիս խռովեցուցին: 16 - Հա կայնողներէն մէկուն մօտեցայ, ու այս ամէն բաներուն ճշմարտութիւնը անոր հարցուցի. և անիկա ինծի խօսեցաւ, ու այս բաներուն մեկնութիւնը ինծի

*Բարդ. ձեռքէն

գիտցուց: 17 - Այս չորս մեծ գազանները չորս թագաւորներ են, որոնք երկրէ պիտի ելլեն: 18 - Եւ թագաւորութիւնը Բարձրեային սուրբերը պիտի առնեն, ու անոնք պիտի ժառանգեն թագաւորութիւնը յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից:

19-Ետքը չորրորդ գազանին վրայով ճշմարիտը գիտնալ ուզեցի, որ բոլոր միւսներէն տարբեր էր, «- խիստ ահեղ էր. անոր ակռաները երկաթէ, և բզուկները պղնձէ էին, անիկա կ'ուտէր, կը փշրէր ու մնացածը սաքերովը կը կոխէր: 20 - Եւ անոր գլուխը եղող տասը եղջիւրներուն վրայով, ու միւս ելումին վրայով՝ որ անոր առջևէն երէքը ինկան, այսինքն այն եղջիւրին վրայով՝ որ աչքեր ու մեծ բաներ խօսող բերան ունէր, և անոր դէմքը միւսներէն մեծ էր: 21 - Ես կը տեսնէի որ այն եղջիւրը սուրբերուն հետ պատերազմ կ'ընէր, ու անոնց յաղթեց, 22 - Մինչև որ Հինաւորացը եկաւ, և Բարձրեային սուրբերուն իրաւունք արուեցաւ, ու ժամանակը հասաւ որ սուրբերը թագաւորութիւնը առին: 23 - Անիկա այսպէս ըսաւ. Չորրորդ գազանը երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն պիտի ըլլայ, որ ամէն թագաւորութիւններէն տարբեր պիտի ըլլայ, ու բոլոր երկիրը պիտի ուտէ, ու զանիկա պիտի կոխէ ու փշրէ: 24 - Եւ այն տասը եղջիւրները այն թագաւորութենէն ելլելու տասը թագաւորներ են, ու անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի ելլէ, ու անիկա առաջուաններէն տարբեր պիտի ըլլայ, և անիկա երէք թագաւոր պիտի կործանէ. 25 - Ու Բարձրեային գէմ խօսքեր պիտի ըսէ, ու Բարձրեային սուրբերը պիտի մուշէ, և պիտի մտածէ ժամանակներ ու օրէնքներ փոխելու. ու անոնք մինչև ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անոր ձեռքը պիտի արուին: 26 - Բայց ատեանը պիտի բազմի, ու անոր իշխանութիւնը պիտի վերցնեն, զանիկա մինչև վերջը բնաջինջ պիտի ընեն ու կորսնցնեն: 27 - Եւ թագաւորութիւնը ու իշխանութիւնը, ու բոլոր երկիրքին տակ եղող թագաւորութիւններուն մեծութիւնը Բարձրեային սուրբերուն ժողովուրդին պիտի արուի. անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, ու բոլոր իշխանները անոր

պիտի ծառայեն ու պիտի հնազանդին: 28 - Խօսքին վերջը մինչև հասէ: Չիս Գանիէլը իմ խորհուրդներս խիստ խոսովեցուն, ու երեսիս գոյնը փոխուեցաւ. և այս խօսքը սրախ մէջ պահեցի:

ԳԼ. Ը

Բազատասար թագաւորին թագաւորութեանը երրորդ տարին ինծի Գանիէլիս տեսիլք երեցաւ՝ այն առաջուան տեսածէս ետքը: 2 - Եւ տեսիլքի մէջ տեսայ. ու եզաւ որ տեսած տեսնա՝ ես Եղամի գաւառին մէջ եղող Շուշան մույրաքաղաքն էի, ու տեսիլքի մէջ տեսայ որ Ուլա գետին քով էի:

3 - Եւ իմ՝ աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա գետին *քով խոյ մը կայնած էր, ու անիկա երկու եղջիւր ունէր, և այն եղջիւրները բարձր էին, ու մէկը միւսէն բարձր էր, ու այն բարձրը ետքէն ելաւ: 4 - Եւ տեսայ այն խոյը՝ որ երգէր՝ «Բնաւ գազան մը անոր առջև չէր կրնար կայնիլ, և անոր ձեռքէն ազատող չկար. հապա անիկա իր ուզածին պէս ըրաւ ու մեծցաւ:

5 - Ու երբ ես կը մտածէի, ահա արեւմուտքէն բոլոր երկրի երեսին վրայ այծերու քօշ մը եկաւ, ու գետնին չէր դպչեր. ու քօշը իր աչքերուն մէջտեղ նշանաւոր եղջիւր մը ունէր. 6 - Եւ անիկա հասաւ մինչև երկու եղջիւր ունեցող խոյը, զոր տեսայ որ գետին քով կայնած էր. ու իր կատաղի զօրութիւնովը անոր վրայ յարձակեցաւ: 7 - Եւ տեսայ որ խոյին մօտեցաւ, ու անոր վրայ կատաղելով՝ խոյը զարկաւ, և անոր երկու եղջիւրը կտարեց: ու խոյը ոյժ չունէր որ անոր առջև կայնի. ու զանիկա գետինը զարկաւ ու զանիկա կոխուեց, և մէկը չկար որ խոյը անոր ձեռքէն ազատէր: 8 - Ու այծերու քօշը խիստ մեծցաւ. ու անիկա ուժովեցածին պէս՝ այն մեծ եղջիւրը կտարեցաւ, և անոր տեղ գէպ ի երկինքի չորս հովերը չորս նշանաւոր եղջիւրներ ելան: 9 - Ու անոնց մէկէն պզտիկ եղջիւր մը ելաւ, և անիկա գէպ ի հարաւ, գէպ ի արեւելք ու գէպ ի փառաւոր երեք խիստ մեծցաւ. 10 - Ու մինչև երկինքի

*Եբբ. առջև

զօրքը մեծցաւ, և զօրքէն ու աստղերէն գեափնը ձգեց ու զանանք կոխկուտեց . 11 - Ու մինչև զօրաց Խշխանը զինք բարձրացուց . ու անկէ մշանջենաւոր զհը վերցուեցաւ , և անոր սրբարանին բնակարանը կործանեցաւ : 12 - Ու *զօրք մը ամբարշտութեամբ մշանջենաւոր զհին դէմ՝ դրաւ՝, ու ճշմարտութիւնը գեափնը զարկաւ , ու բան տեսաւ և յաջողեցաւ : 13 - Ու լսեցի որ սուրբ մը կը խօսէր , և այն խօսողին մէկ սերիչ սուրբ մը ըսաւ, Մշանջենաւոր զհին , ու աւրող ամբարշտութեանը, ու սրբարանին և զօրքին կոխուելու արուելուն տեսիլքը մինչև ե՞րբ պիտի գրէ : 14 - Ու անիկա ինծի ըսաւ, Մինչև երկու հազար երեք հարիւր †օր, ետքը սրբարանը պիտի մաքրուի :

15 - Ու երբ ես Գանիէլ տեսիլքս տեսայ, ու Ռեկոմենտը կը փնտաւէի որ հասկնամ , ահա իմ գլխուս մարդու կերպարանքով մէկը կը կայներ : 16 - Եւ Ուլա գեորին մէջէն մարդու ձայն լսեցի, որ կը կանչէր ու կ'ըսէր , Ով Գարրիէլ , տեսիլքը ատոր հասկցուր : 17 - Ու անիկա իմ՝ կեցած տեղիս մօտ եկաւ . ու երբ եկաւ, վախցայ ու երեօխ վրայ ինկայ . և անիկա ինծի ըսաւ, Հասկցիր, որդի մարդայ, որ այս տեսիլքը վերջին ժամանակին համար է : 18 - Ու երբ անիկա ինծի հեա կը խօսէր , ես թմրած՝ երեսիս վրայ գեափնը ինկած էի . և անիկա ինծի դպաւ, ու զիս իմ՝ կեցած տեղս կայնեցուց . 19 - Ու ըսաւ, Ահա քեզի կ'իմացնեմ՝ բարկութեան վերջը ինչ ըլլալիքը . վասն զի «յ» Կե- լիչ վերջի ժամանակին համար է : 20 - Այն քու տեսած խոյդ, որ երկու եղջիւր ունէր, Մարաց ու Պարսից թագաւորներն է : 21 - Եւ քայծերու քօշը Յունաց թագաւորն է . ու անոր աչքերուն մէջտեղի մեծ եղջիւրը առաջին թագաւորն է : 22 - Եւ ան որ կտարեցաւ, ու անոր տեղը չորսը ելաւ, «յ» է որ այն ազգէն չորս թագաւորութիւն պիտի ելլէ, բայց ոչ թէ անոր զօրութիւնովը : 23 - Ու անանց թագաւորութեան վերջը երբ ամբարիշտները երեւց

ածքարչութեան շաղ լեցնեն, պինդերես ու խորագէտ թագաւոր մը պիտի ելլէ . 24 - Եւ անոր իշխանութիւնը պիտի զօրանայ, բայց ոչ թէ իր զօրութիւնովը . ու անիկա սքանչելի կերպով պիտի աւրէ, և պիտի յաջողի ու բան պիտի տեսնէ, ու զօրաւորները և սրբոց ժողովուրդը պիտի աւրէ . 25 - Ու իր խելքին միջոցով իր ձեռքին մէջ նենգութիւնը պիտի յաջողի, և իր սրտին մէջ պիտի հպարտանայ, ու խաղաղութեան մէջ շատերը պիտի կորսնցնէ , և իշխանաց Խշխանին դէմ՝ պիտի դնէ, բայց առանց ձեռքի պիտի կտարի : 26 - Եւ իրիկուան ու առաւուան տեսիլքը որ ըսուեցաւ՝ ճշմարիտ է . ու դուն տեսիլքը գոյց է , քանզի շատ օրերու համար է :

27 - Ու ես Գանիէլ մտրեցայ և քանի մը օր հիւանդացայ . ետքը ելայ թագաւորին գործը տեսայ . ու տեսիլքին համար զարմացումի մէջ էի , ու մէկը չկար որ *Կե՛ն հասկցնէր :

ԳԼ Թ

Ասուերոսի սրգւոյն Գարեհի առաջին տարին, որ Մարաց սերունդէն էր, ու Քաղդէացաց թագաւորութեանը վրայ թագաւոր դրուեցաւ : 2 - Անոր թագաւորութեանը առաջին տարին ես Գանիէլ գիրքերէն իմացայ այն տարիներուն թիւը՝ որոնց համար Տէրօջը խօսքը եղեր էր Երեմիա մարգարէին , թէ եօթանասուն տարիով պիտի վերջացնէր Երուսաղէմի աւերումները :

3 - Ու ես իմ՝ երեսու Տէր Աստուծոյ դարձուցի , որպէս զի ծամուպահութեամբ , քուրձով ու մոխիրով աղօթք ու աղաչանք մատուցանեմ . 4 - Եւ իմ՝ Տէր Աստուածոյս աղօթք ըրի , խոստովանեցայ ու ըսի, Ոհ, Տէր , մեծ և ահաւոր Աստուած, որ քեզ սիրողներուն և քու պատուիրանքներէդ պահանջներուն ուխտ ու սղորմութիւն կը պահես, 5 - Մենք մեզք գործեցինք , անօրէնութիւն ըրինք, ու ամբարշտութիւն ըրինք , և ասպտամբ եղանք, ու քու պատուիրանքներէդ ու իրաւունքներէդ խոտորեցանք . 6 - Եւ քու ծառաներուդ, մարգարէներուն, մտիկ չըրինք, որոնք մեր թագաւորներուն,

*Կամ, ամբարշտութեան համար՝ մշանջենաւոր զհին դէմ՝ երեւ զօրք արուեցաւ
 †Յէր. իրիկուան առաւուս
 ‡Կամ, մայրս

*Կամ, «յ» Բանը իմանար

մեր իշխաններուն ու մեր հայրերուն ու երկրին բոլոր ժողովուրդին քու առնունովդ խօսեցան : 7 - Ով Տէր, քեզի չէ լայն արգարութիւն, ու մեզի՝ երեսի ամօթ, (ինչպէս այսօր եղաւ,) Յուդայի մարդոց, Երուսաղէմի բնակիչներուն ու ամէն մերձաւոր ու հեռաւոր Իսրայելացիներուն, այն բոլոր երկիրներուն մէջ ուր դուն զանոնք քշեցիր անոնց քեզի դէմ՝ ըրած յանցանքին համար: 8 - Ով Տէր, երեսի ամօթ չէ լայն մեզի, մեր թագաւորներուն, մեր իշխաններուն ու մեր հայրերուն, վասն զի քեզի դէմ մեղք գործեցինք. 9 - Ինչ որ արմութիւն ու ներսողութիւն մեր Տէր Աստուծոյն չէ լայն, վասն զի մենք անկէ ապստամբեցանք, 10 - Եւ մեր Տէր Աստուծոյն ձայնին մօտիկ չըրինք որ անոր օրէնքներովը քալենք, զորոնք իր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով մեր առջև դրաւ: 11 - Ու բոլոր Իսրայէլ քու օրէնքդ զանց բրին, և քու ձայնիդ մօտիկ չընելով՝ խտարեցան. ուստի Աստուծոյ ծառային Մովսէսի օրէնքին մէջ գրուած անէծքը ու երգումը մեր վրայ թափեցան, քանզի Անոր դէմ մեղք գործեցինք. 12 - Ու մեր վրայ մեծ չարիք բերելով՝ հաստատեց իր խօսքերը, զորոնք մեր վրայով ու մեզ գատող մեր գատաւորներուն վրայով խօսեր էր. այնպէս որ Երուսաղէմի մէջ եղածին պէս բոլոր երկիրներին տակ չեղաւ: 13 - Մովսէսի օրէնքին մէջ գրուածին պէս այս բոլոր չարիքը մեր վրայ եկաւ. սակայն մենք մեր անօրէնութիւններէն դառնալու և քու ճշմարտութեանդ խելամուտ ըլլալու համար՝ մեր Տէր Աստուծոյն երեսը չաղաչեցինք: 14 - Եւ Տէրը այս չարիքին համար հսկելով՝ զանիկա մեր վրայ բերաւ, քանզի մեր Տէր Աստուծաւ իր ըրած բոլոր գործերուն մէջ արգար է. բայց մենք անոր ձայնին մօտիկ չըրինք: 15 - Եւ արդ, ով Տէր Աստուծաւ մեր, որ քու ժողովուրդդ զօրաւոր ձեռքով Եգիպտոսի երկրէն հանեցիր, ու քեզի անուն վաստակեցար, ինչպէս այսօր Կերևոյ, մենք մեղք գործեցինք, ամբարշտութիւն ըրինք: 16 - Ով Տէր, քու բոլոր բարութեանդ համեմատ շնորհք բրէ, քու սուրբ լեռնէդ, Երուսաղէմ քաղաքէն, քու սրամտութիւնդ ու

բարկութիւնդ դառնայ, վասն զի մեր մեղքերուն համար ու մեր հայրերուն անօրէնութիւններուն համար՝ Երուսաղէմ ու քու ժողովուրդդ ամէն մեր բոլորաբը եղողներուն նախաաինք եղան: 17 - Եւ հիմա, ով Աստուծաւ մեր, քու ծառայիդ աղօթքը ու աղաչանքը լսէ, ու Տէրոջը համար՝ քու ամոյացած սրբարանիդ վրայ երեսդ փայլեցուր: 18 - Ականջդ խնարհեցուր, ով Աստուծաւ իմ, ու լսէ, աչքերդ բաց ու տես մեր աւերումները և այն քաղաքը որուն վրայ քու անունդ կոչուած է. վասն զի մեր աղաչանքը ոչ թէ մեր արգարութիւններուն համար քու առջևդ կը մատուցանենք, հապա քու մեծ սղորմութեանդ համար: 19 - Ով Տէր, լսէ, ով Տէր, ներէ, ով Տէր, մօտիկ բրէ ու կատարէ. մի ուշանար՝ քեզի համար, ով Աստուծաւ իմ, քանզի քու քաղաքիդ վրայ ու քու ժողովուրդիդ վրայ քու անունդ կոչուած է:

20 - Ու երբ ես տակաւին կը խօսէի, կ'աղօթէի, և իմ մեղքս ու իմ ժողովուրդիս Իսրայէլի մեղքը կը խոտովանէի, և իմ Աստուծոյս սուրբ լեռանը համար իմ աղաչանքս իմ Տէր Աստուծոյս առջև կը մատուցանէի. 21 - Երբ ես տակաւին աղօթքի մէջ կը խօսէի, ահա այն առաջին տեսիլքին մէջ տեսած մարդս Գաբրիէլ շուտ մը թռչելով՝ ինձի դպաւ իրիկուան զօհին տանը, 22 - Ու ինչէ հասկցնելով ինձի հետ խօսեցաւ ու ըսաւ, Ով Գանիէլ, հիմա ելայ՝ որ քեզի իմաստութիւն սորվեցնեմ: 23 - Քու աղաչանքիդ սկիզբը պատգամ ելաւ, ու ես եկայ որպէս զի պատմեմ, վասն զի դուն Աստուծոյ սիրելի ես. ուրեմն պատգամը միտք առ ու տեսիլքը հասկցիր: 24 - Յանցանքը վերջացնելու, ու մեղքը հատցնելու, և անօրէնութիւնը քուելու, ու յաւիտենական արգարութիւնը բերելու, և տեսիլքը ու մարգարէութիւնը կնքելու, ու սրբոց Սուրբը օծելու համար՝ քու ժողովուրդիդ վրայ ու սուրբ քաղաքիդ վրայ եօթանասուն եօթնեակ սրոշուած է: 25 - Եւ գիտցիր ու հասկցիր, որ Երուսաղէմը նորէն շինելու հրամանը ելլելէն մինչև *Օծեալ իշխանը եօթը եօթնեակ ու վաթսուներկու եօթնեակ կայ. և

*Եբբ. արգարութիւններու գ

*Եբբ. Մեսիա

նորէն հրապարակը ու պարիապը պիտի շինուին նեղութեան ժամանակներու մէջ: 26 - Եւ վաթսուներկու եօթնեակէն ետքը Սծեալը պիտի կարուի, բայց ոչ թէ իրեն համար. ու գալու իշխանին ժողովուրդը քաղաքը ու սրբարանը պիտի աւրէ, և վերջը հեղեղով պիտի ըլլայ. ու մինչև պատերազմին վերջը աւերումներ սահմանուած են: 27 - Աւ եօթնեակ մը շատերուն հետ ուխտ պիտի հաստատէ, և եօթնեակին մէջտեղը զոհը ու պատարապը պիտի դադարեցնէ. ու *աւրոզը պղծութեանց աշտարակին վրայ պիտի ըլլայ, մինչև որ աւրուած ին վրայ նախասահմանեալ կորուստը թափուի:

ԳԼ. Ժ

Պարսից կիւրս թագաւորին երրորդ տարին խօսք մը յայտնուեցաւ Գանիէլի, որուն անունը Բաղասասար կոչուած էր. ու այն խօսքը ճշմարիտ էր, ու Գանիէլ տառապանքի չբռնէր. ու անկա խօսքը հասկցաւ ու տեսիլքին տեղեակ եղաւ: 2 - Այն օրերը ես Գանիէլ լման երեք շաբաթ սուգի մէջ էի. 3 - Ախորժեյի կերակուր չկերայ ու բերանս միս կամ գինի չմտաւ, ու ամենին ինչ չօծուեցայ՝ մինչև որ երեք շաբաթը լմնցաւ:

4 - Եւ առաջին ամսուն քսանըչորսերորդ օրը ես Տիգրիս ինչպէս մեծ գետին եզերքն էի. 5 - Աւ աչքերս վերցուցի ու նայեցայ, և ահա կառու հագած ու մէջքը Ուփայի սակիէ գօտի կապած մարդ մը կար. 6 - Եւ անոր մարմինը սակեքարի պէս, ու երեսը փայլակի երևութի պէս, և աչքերը կրակի բոցերու պէս, ու թևերը ու սաքերը փայլուն պղնձի գոյնին պէս, և իր խօսքերուն ձայնը բազմութեան ձայնին պէս էր: 7 - Աւ այս տեսիլքը միայն ես Գանիէլ տեսայ, ու ինծի հետ եղող մարդիկը տեսիլքը չտեսան, հապա անանց վրայ մեծ վախ ինկաւ, ու փախան որպէս զի պահաւորին: 8 - Եւ ես միակ մնացի, ու այս մեծ տեսիլքը տեսայ,

ու իմ վրաս ոյժ չմտաց, և իմ վայելչութիւնս ապականութեան դարձաւ, ու ալ ոյժ չունեցայ: 9 - Եւ անոր խօսքերուն ձայնը լսեցի, ու անոր խօսքերուն ձայնը լսածիս պէս, թմրած երեսիս վրայ գետինը ինկայ:

10 - Եւ ահա ինծի ձեռք մը դպաւ, ու զիս ծունկերուս ու ձեռքերուս թաթերուն վրայ վերցուց. 11 - Եւ ինծի բաւ, Ով Գանիէլ, սիրելի մարդ, քեզի ըսելու խօսքերս հասկցիր, ու եղած տեղդ կայնէ, քանզի հիմա քեզի զրկուեցայ. ու երբ անկա այս խօսքը ինծի բաւ, գողալով կայնեցայ: 12 - Եւ ինծի բաւ, Մի վախնար, ով Գանիէլ, քանզի այն առաջին օրէն ի վեր որ քու սիրտդ տուիր հասկնալու և քու Աստուծոյդ առջև քու անձդ խոնարհեցնելու, քու խօսքերդ լսուեցան, ու ես քու խօսքերուդ համար եկայ:

13 - Բայց Պարսից թագաւորութեան իշխանը քսանըմէկ օր իմ երեսիս դէմ կեցաւ. սակայն ահա Միքայէլ, առաջին իշխաններէն մէկը, ինծի օգնութեան եկաւ, ու ես հոն Պարսից թագաւորներուն քով մնացի. 14 - Աւ հիմա եկայ որպէս զի վերջին օրերը քու ժողովուրդիդ ինչ ըլլալիքը քեզի հասկցնեմ, վասն զի տեսիլքը գալու օրերուն համար է: 15 - Եւ անկա ինծի այսպիսի խօսքեր բաւածին պէս՝ երեսու դէպ ի գետինը ձուեցի ու համբ մնացի:

16 - Եւ ահա մարդու որդիներու կերպարանքով մէկը շրթունքներուս դպաւ, ու բերանս բացի ու խօսեցայ, ու դիմացս կայնողին ըսի, Ով տէր իմ, այս տեսիլքով ցաւերս վրաս դարձան, և ալ ոյժ չունեցայ: 17 - Աւ այս իմ տէրոջս ծառան՝ այս իմ տէրոջս հետ ի՞նչպէս խօսելու կարող ըլլայ, վասն զի հիմակուրնէ վրաս ոյժ չկայ, ու վրաս չունչ չմտաց: 18 - Եւ այն մարդու կերպարանք ունեցողը նորէն ինծի դպաւ և զիս ուժովցուց. 19 - Աւ ըսաւ, Մի վախնար, ով սիրելի մարդ, խաղաղութիւն ըլլայ քեզի, ու ժողովրդը ու քոջ եղիր. ու երբ անկա ինծի հետ խօսեցաւ, ուժովցայ ու ըսի, Թող խօսի իմ տէրս, վասն զի ուժովցուցիք զիս:

20 - Եւ անկա ըսաւ, Գիտե՞՞ս թէ ինչո՞ւ համար քեզի եկայ. ու հիմա Պարսից իշխանին դէմ պատերազմելու

* Կամ, աւրոզ պղծութիւնը աշտարակին վրայ պիտի ըլլայ, և Կամ, պղծութեանց թե ին վրայ աւրոզը պիտի գոյնէ: Ինքը. զօրքը մեծ էր, Կամ, պատերազմը մեծ էր

պիտի դառնամ, ու ելլելուս պէս՝ ահա Յունաց իշխանը պիտի գայ: 21 - Բայց ես ճշմարտութեան գիրքին մէջ գրուածը քեզի պիտի պատմեմ՝ ու ասոնց *մէջ մէկը չկայ որ ինծի օգնէ, բայց միայն ձեր իշխանը Միքայէլ:

ԳԼ. ԺԱ

Ու Մարաց Գարեհ Քաթարին առաջին տարին ես կայնեցայ որպէս զի զանիկա ուժովցնեմ ու զօրացնեմ: 2 - Եւ հիմա քեզի ճշմարտութիւն պիտի պատմեմ. Ահա Պարսից երէնքն մէջ երեք թագաւոր ալ պիտի ելլէ, ու չորրորդը մեծ հարստութիւնով՝ ամէնէն հարուստ պիտի ըլլայ, ու երբ իր հարստութիւնովը ուժովնայ, ամէնը սոք պիտի հանէ Յունաց թագաւորութեան գէմ:

3 - Ետքը զօրաւոր թագաւոր մը պիտի ելլէ, ու մեծ իշխանութիւնով պիտի տիրէ, և իր կամքին պէս պիտի ընէ:

4 - Ու ելլելուն պէս անոր թագաւորութիւնը պիտի կտարի, ու երկինքի չորս հովերուն պիտի բաժնուի. բայց ոչ իր յաջորդներուն, ոչ ալ իր վարած իշխանութեանը պէս. վասն զի անոր թագաւորութիւնը պիտի քակուի, ու անոնցմէ ուրիշներուն պիտի ըլլայ:

5 - Եւ հարաւի թագաւորը պիտի ուժովնայ, ու անոր իշխաններէն մէկը անոր վրայ պիտի ուժովնայ ու պիտի տիրէ. անոր իշխանութիւնը մեծ իշխանութիւն պիտի ըլլայ: 6 - Եւ մէկ քանի տարիէն ետքը իրարու հետ դաշնակցութիւն պիտի ընեն, վասն զի հարաւի թագաւորին աղջիկը հիւսիսի թագաւորին պիտի երթայ հաշտութիւն ընելու համար, բայց բազուկի դժ պիտի չունենայ. և այն Քաթարը ու անոր բազուկը պիտի չկարենայ դիմանալ, հապա այն աղջիկը ու զանիկա բերողները ու զանիկա ծնանոցը և զանիկա ժամանակներուն համեմատ ուժովցնողը ձեռք պիտի արուին:

7-Բայց անոր արմատներուն ընծիւղներէն մէկը պիտի ելլէ անոր տեղ, ու անիկա զօրքով պիտի գայ, և հիւսիսի թագաւորին ամրոցները պիտի մտնէ, ու անոնց մէջ բան պիտի տեսնէ ու յաղթող պիտի ըլլայ: 8 - Եւ

անոնց աստուածներն ալ ձուլածոյ կուռքերուն ու սոկեղէն ու արծաթեղէն ընտիր ամաններուն հետ Եգիպտոս գերութեան պիտի տանի. ու անիկա *հիւսիսի թագաւորէն աւելի շատ տարիներ պիտի կայնի. 9 - Ու հարաւի թագաւորին թագաւորութեանը մէջ պիտի մտնէ, ու նորէն իր երկիրը պիտի դառնայ: 10 - Եւ անոր սրգիները պատերազմի պիտի ելլեն, ու շատ զօրքերու բազմութիւն պիտի ժողովեն. ինք ալ անպատճառ պիտի գայ ու հեղեղի պէս պիտի անցնի, և դարձեալ մինչև անոր ամրոցը պիտի պատերազմի: 11 - Իսկ հարաւի թագաւորը պիտի կտազի ու պիտի ելլէ, և անոր հետ, այսինքն հիւսիսի թագաւորին հետ, պատերազմ պիտի ընէ. ան ալ շատ բազմութիւն սոք պիտի հանէ, բայց բազմութիւնը անոր ձեռքը պիտի արուի: 12 - Ու երբ այն բազմութիւնը առնէ, իր սիրտը պիտի բարձրանայ, ու բիւրաւորներ պիտի կործանէ, բայց պիտի չուժովնայ: 13 - Քանզի հիւսիսի թագաւորը պիտի դառնայ, ու առաջուանէն աւելի բազմութիւն սոք պիտի հանէ, ու մէկ քանի տարիէն ետքը մեծ զօրքով ու մեծ պատրաստութեամբ անշուշտ պիտի գայ: 14 - Եւ այն ժամանակները հարաւի թագաւորին վրայ շատերը պիտի ելլեն, ու քու ժողովուրդիդ բռնաւորներուն սրգիները սոք պիտի ելլեն՝ տեսիլքը կատարելու համար, բայց պիտի գլորին: 15 - Եւ հիւսիսի թագաւորը պիտի գայ, ու հողաբլուրներ պիտի կանգնէ, ու պարսպաւոր քաղաքներ պիտի առնէ. և հարաւի Քաթարէն բազուկները ու անոր ընտրեալները պիտի չգիմանան, ոչ ալ գիմանալու դժ պիտի ունենան: 16 - Եւ անոր վրայ եկողը իր ուզածին պէս պիտի ընէ, ու անոր երեսին գէմ՝ դնող պիտի չըլլայ, և փառաւոր երկրին մէջ պիտի կենայ, որ անոր ձեռքով պիտի աւրի: 17 - Ու երեսը պիտի շիակէ իր բոլոր թագաւորութեանը ուժովը գալու, և իրեն հետ ուղիղներ պիտի ըլլան, ու բան պիտի տեսնէ. և կանանց աղջիկը անոր պիտի տայ, որպէս զի անոր Քաթար-Քիւնը աւրէ, բայց անիկա անոր հետ պիտի չկայնի ու անոր պիտի

*Կամ, մէկ քանի տարի հիւսիսի թագաւորէն աւելի պիտի ուժովնայ

*Կամ, գէմ

չըլլայ : 18 - Եւ քաքը իր երեսը գէպ ի կզգիները պիտի դարձնէ , ու շատերը պիտի առնէ . և իշխան մը անոր նախա-տինքը պիտի դադրեցնէ , ու ասկէ զատ անոր նախատինքը վրան պիտի դարձնէ : 19 - Եւ իր երեսը գէպ ի իր երկրին ամբողջները պիտի դարձնէ , բայց պիտի գլորի , պիտի իյնայ ու պիտի չգտնուի : 20 - Եւ անոր տեղ մէկը պիտի ելլէ , որ հարկապահանջը պիտի զրկէ իջ թագաւորութեանը * փառքին՝ համար՝ . բայց անիկա քիչ օրերու մէջ պիտի կտորի , սակայն ոչ բարկութեամբ և ոչ պատերազմով : 21 - Ու անոր տեղ անարգ մը պիտի ելլէ , որու թագաւորական պատիւ պիտի չտան . բայց անիկա հանդարտութեամբ պիտի գայ , ու շողքորթութիւններով թագաւորութիւնը պիտի առնէ : 22 - Եւ անոր առջևէն հեղեղին բազուկներովը պիտի ընկզմին ու պիտի կտորին , նաև ուխտին իշխանը : 23 - Քանզի անոր հետ գաշնակցութիւն ընելէն ետքը անիկա նենգութիւն պիտի ընէ , և պիտի ելլէ ու պզտիկ ազգով պիտի յաղթէ : 24 - Անիկա հանդարտութեամբ խիստ պարարտ գաւառին մէջ պիտի մտնէ , ու իր հայրերուն ու հարցը հայրերուն չըրածը ինք պիտի ընէ . անոնց մէջ աւար և կողոպուտ ու ստացուածք պիտի բաշխէ , ու մինչև ժամանակ մը պարսկաներուն գէմ իր խորհուրդները պիտի խորհի : 25 - Ու մեծ զօրքով իր զօրութիւնը ու սիրտը պիտի գրգռէ հարաւի թագաւորին գէմ . հարաւի թագաւորն ալ խիստ մեծ ու զօրաւոր զօրքով պատերազմի պիտի ելլէ , բայց պիտի չկարենայ դիմանալ . վասն զի անոր գէմ խորհուրդներ պիտի խորհին : 26 - Անոր ազնիւ կերակուրները ու առջները անգամ զանիկա պիտի կտորեն . և անոր զօրքը պիտի քցուի , ու շատերը սպաննուած պիտի իյնան : 27 - Եւ այս թագաւորներուն երկուքին ալ սիրտը չարութիւն ընելու հախճաթով պիտի ըլլայ , ու մէկ սեղանի վրայ սուտ պիտի խօսին , բայց պիտի չյաջողի . փասն զի վախճանը որոշուած ժամանակի մէջ պիտի ըլլայ : 28 - Ու անիկա շատ հարստութիւնով իր երկիրը պի-

տի դառնայ , և իր սիրտը սուրբ ուխտին գէմ պիտի ըլլայ , ու բան պիտի տեսնէ , ու իր երկիրը պիտի դառնայ : 29 - Որոշուած ժամանակի մէջ պիտի դառնայ , ու հարաւի վրայ պիտի երթայ . բայց վերջինը առաջինին պէս պիտի ըլլայ : 30 - Քանզի կիտացուց նաւերը անոր վրայ պիտի երթան , և անիկա պիտի թուլնայ , ու դառնալով սուրբ ուխտին գէմ պիտի բարկանայ , ու բան պիտի տեսնէ , և պիտի դառնայ , ու սուրբ ուխտը թողոյներուն ու շողքորթիւն պիտի ընէ : 31 - Ու անոր կողմէն բազուկներ պիտի կայնին , և սրբարանը ու ամբողջը պիտի պղծեն , ու մշանջենաւոր զահէ պիտի վերցնեն , ու սուրող պղծութիւնը պիտի դնեն : 32 - Եւ ուխտին գէմ ամբարշտութիւն ընողները շողքորթութիւններով զլխէ պիտի հանէ . բայց իրենց Աստուածը ճանչցողներուն ժողովուրդը ոյժ պիտի գտնեն , ու բան պիտի տեսնեն : 33 - Եւ ժողովուրդին խելացիները շատերուն պիտի սորվեցնեն , ու տտեն մը սուրի , կրակի , գերութեան և յափշտակութեան պիտի հանդիպին : Ու երբ այս քաներուն հանդիպին՝ քիչ մը օգնութիւն պիտի գտնեն , 34 - Ու շատերը շողքորթութիւններով անոնց պիտի յարին : 35 - Եւ խելացիներէն ոմանք այս քաներուն պիտի հանդիպին , որպէս զի մինչև վերջին ժամանակը զանոնք փորձէ , մտքէ ու ճերմկցնէ . քանզի անիկա տակաւին որոշ ժամանակ մը պիտի քեռէ : 36 - Եւ այն թագաւորը իր ուզածը պիտի ընէ , ու զինքը բոլոր աստուածներէն վեր պիտի բարձրացրնէ ու պիտի մեծցնէ , և աստուածներուն Աստուծոյն գէմ ստակալի բաներ պիտի խօսի , ու յաջողութիւն պիտի գտնէ՝ մինչև որ բարկութիւնը կատարուի . քանզի նախասահմանուածը ի գործ պիտի դրուի : 37 - Եւ անիկա իր հայրերուն աստուածները բանի տեղ պիտի չսեպէ , և կանանց ցանկութիւնը , ու բնաւ աստուած մը պիտի չսեպէ , վասն զի զինք ամէնուն վրայ պիտի մեծցնէ : 38 - Հապա բերդերուն աստուածը իր եղած տեղը պիտի պատուէ , ու իր հայրերուն չճանչցած աստուածը սակիով , արծաթով , պատուական քարերով ու ցանկալի բաներով պիտի պատուէ : 39 - Եւ այն օտար աստուծոյն հետ զօրաւոր բերդերու

* կամ, փառաւոր մասէն
 † կամ, կոխէ, ԵՔԷ. յորդի

մէջ բան պիտի տեսնէ, « շնորհաբար ճանչցողներուն փառքը պիտի շատցնէ, և շատերուն վրայ տիրել պիտի ապանանց, ու երկիրը *երբև զարձք՝ պիտի բաժնէ:

40 - Եւ վերջին ժամանակը հարաւի թագաւորը անոր հետ պիտի ծեծ կուի. ու հիւսիսի թագաւորը կառքերով, ձիաւորներով ու շառնաւերով մրրիկի պէս անոր դէմ պիտի երթայ, ու երկիրները պիտի մանէ ու կոխելով պիտի անցնի. 41 - Եւ փառաւոր երկիրը պիտի մանէ, ու շատ երկրներ տակնուվրայ պիտի ըլլան. բայց անոր ձեռքէն աստեք պիտի ազատին. Եզովմ, Մովար ու Սամոնի որդիներուն գլխաւոր քաղաք: 42 - Եւ իր ձեռքը երկիրներուն վրայ պիտի երկնցնէ, ու Եգիպտոսի երկիրը պիտի չկարենայ ազատիլ: 43 - Եւ սակիւր ու արծաթի գանձերուն ու Եգիպտոսի բոլոր պատուական բաներուն պիտի տիրէ, և Լիբէացիք ու Եթովպացիք անոր փեսաւոր պիտի ըլլան: 44 - Բայց արևելքէն ու հիւսիսէն լուրեր պիտի գան, և զանկա պիտի խռովեցնեն. ու մեծ բարկութեամբ պիտի ելլէ որպէս զի շատերը կորսնցնէ ու բնաջինջ ընէ: 45 - Եւ պալատներու պէս վրանները քոյրութեամբ մէջտեղ փառաւոր ու սուրբ լեռան վրայ՝ պիտի կանգնէ. բայց անկա մինչև իր վախճանը պիտի հասնի, ու անոր օգնութիւն ընող պիտի չըլլայ:

ԳԼ. ԺԲ

Եւ այն ժամանակ քու ժողովուրդիդ որդիներուն վրայ կայնող Միքայէլ մեծ իշխանը պիտի ելլէ, ու «յնպիսի նեղութեան ժամանակ պիտի ըլլայ, որ ազգ ըլլալէն մինչև այն ատեն այնպիսին եղած չէ. և այն ժամանակ քու ժողովուրդդ պիտի ազատի, այսինքն ով որ գիրքին մէջ գրուած գտնուի: 2 - Ու երկրի հողին մէջ քնացողներուն շատերը պիտի արթնան, ամանք յաւիտենական կեանքի համար, և ամանք

*Կամ, գնով
†Եբր. քայրերուն մէջ
‡Կամ, ծովերուն ու փառաւոր սուրբ լեռանը մէջտեղ

ալ նախատինքի « յաւիտենական անարգանքի համար: 3 - Եւ իմաստունները երկնքի հաստատութեանը լոյսին պէս, ու անոնք որ շատերը արգարութեան կ'առաջնորդեն՝ աստղերուն պէս պիտի փայլին յաւիտեանս յաւիտենից:

4 - Եւ դուն, ով Իանիէլ, այս խօսքերը գոցէ, ու գիրքը կնքէ մինչև վերջին ժամանակը. շատերը *ուշագրութեամբ պիտի կարգան, ու գիտութիւնը պիտի շատնայ:

5 - Ու ես Իանիէլ տեսայ որ ահա ուրիշ երկու մարդիկ կայներ էին, մէկը գետին մէկ եզերքը՝ ու միւսը գետին միւս եզերքը: 6 - Ու մէկը ըստ այն կտաւ հագած մարդուն որ գետին ջուրերուն վրայ կայնա՞ծ էր, Այս սքանչելի բաներուն վերջը մինչև ե՞րբ պիտի ըլլայ: 7 - Եւ շեցի որ այն կտաւ հագած մարդը որ գետին ջուրերուն վրայ կայնա՞ծ էր, իր աջ ու ձախ ձեռքերը երկնք վերցնելով՝ յաւիտեան կենդանի եղողին վրայ երգում ըրաւ, որ ժամանակ մը, ժամանակներ, ու կէս ժամանակ պիտի ըլլայ. ու երբ սուրբ ժողովուրդին զօրութիւնը բոլորովին ցրուի, ասոնց ամէնը պիտի կատարուի:

8 - Ու ես լսեցի, բայց չհասկցայ. ու ըսի, Ով աէր իմ, ասոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ: 9 - Եւ անկա ըսաւ, Գնա, ով Իանիէլ, քանզի այս խօսքերը մինչև վերջին ժամանակը գոցուած ու կնքուած են: 10 - Շատերը պիտի մաքրուին ու պիտի ճերմկնան ու պիտի փորձուին, բայց ամբարիշտները ամբարշտութիւն պիտի ընեն. ու բնաւ ամբարիշտ մը պիտի չհասկնայ, հազա իմաստունները պիտի հասկնան: 11 - Ու մշանջեանաւոր զոհին քվերցուելուն և աւրող պղծութեանը դրուելուն ժամանակէն՝ հազար երկու հարիւր իննսուն օր պիտի ըլլայ: 12 - Երանի՛ անոր որ պիտի սպասէ, ու հազար երեք հարիւր երեսունըհինգ օրուան պիտի հասնի: 13 - Բայց դուն գնա մինչև վախճանը, վասն զի պիտի հանգչիս, ու օրերուն վերջը քու վիճակիդ մէջ պիտի կայնիս:

*Կամ, հաս հոն պիտի պտրտին
†Կամ, վերցուած ժամանակէն մինչև աւրող պղծութեանը դրուելը

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՎ ԱՆԱՅ



ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը, որ Բէերիի որդւոյն Ավսէէի եղաւ, Յուդոյի թագաւորներուն, Աղիայի, Յովաթամի, Ա.բազի -- Եզեկիայի օրերը և Իսրայէլի թագաւորին Յովասի որդւոյն Յերոբոսի օրերը :

2 - Ավսէէի միջոցով եղած Տէրոջը խօսքին սկիզբը: Եւ Տէրը ըսաւ Ավսէէի, Գնա, քեզի պառնկութեան կին մը ու պառնկութեան աղաքներ տա, քանզի երկիրը Տէրոջմէ խաօսելով իրաւ շատ պառնկեցաւ :

3 - Եւ անիկա գնաց ու Գարեղայիմի աղջիկը Գոմերը առաւ, և անիկա յղացաւ ու անոր որդի մը ծնաւ: 4 - Եւ Տէրը անոր ըսաւ, Անոր անունը Յեզրայէլ գիր, քանզի քիչ տատենէն ետքը Յեզրայէլի Գեջ Բաբելոնի արիւնները Յեուսի տունէն պիտի պահանջեմ, ու Իսրայէլի տանը թագաւորութիւնը պիտի դադարեցնեմ: 5 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը Յեզրայէլի հովիտին մէջ Իսրայէլի աղեղը պիտի կտորեմ:

6 - Եւ Գաբրիէլ դարձեալ յղացաւ ու աղջիկ մը ծնաւ: Եւ Տէրը ըսաւ Ավսէէի, Անոր անունը *Լօրուհամա գիր, քանզի ալ պիտի չողորմիմ Իսրայէլի տանը, + հապա պանիկա բոլորովին պիտի վերցնեմ: 7 - Բայց Յուդոյի տանը ողորմութիւն պիտի ընեմ, ու զանոնք իրենց Տէր Աստուծովը պիտի փրկեմ, և զանոնք աղեղով կամ սրով կամ պատերազմով, ձիերով կամ ձիաւորներով պիտի չփրկեմ:

8 - Ու երբ Լօրուհաման կաթէն կտրեց, նորէն յղացաւ ու որդի մը ծնաւ: 9 - Այն տատեն Տէրը ըսաւ, Անոր անունը †Լօամիմի գիր, քանզի դուք իմ ժողովուրդս չէք, ու ես ձեզի Աբաբել պիտի չըլլամ: 10 - Բայց Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին

*Այսինքն, չողորմեայ
†Այսինքն, որ անոնց մէկ կերպով մը ներեմ
‡Այսինքն, ոչ իմ ժողովուրդս

պէս պիտի ըլլայ, որ անչափ ու անթիւ է. ու այն տեղ ուր անոնց ըսուեցաւ թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք կենդանի Աստուծոյն որդիները պիտի ըսուին: 11 - Եւ Յուդոյի որդիները ու Իսրայէլի որդիները մէկտեղ պիտի ժողովուրդն, ու իրենց վրայ իշխան մը պիտի դնեն, ու երկրէն պիտի ելլեն, քանզի Յեզրայէլի օրը մեծ պիտի ըլլայ:

ԳԼ. Բ

Ձեր եզրայներուն *Ամի, Ու ձեր քոյրերուն †Բուհամա ըսէք. 2 - Վիճեցէք ձեր մօրը հետ, վիճեցէք. Քանզի անիկա իմ կինս չէ, Ու ես անոր այրը չեմ.

Եւ անիկա իր երեսէն իր պառնկութիւնները՝ Ու իր ծրծերուն մէջէն իր շնութիւնները թող վերցնէ.

3 - Որ չըլլայ թէ զանիկա մերկացնեմ, Ու զանիկա իր ծննդեան օրուանը պէս թողում,

Եւ զանիկա անապատի դարձնեմ, Ու զանիկա անջուր երկրի պէս ընեմ, Եւ զանիկա ծարաւով մեռցնեմ:

4 - Ու անոր որդիներուն ողորմութիւն պիտի չընեմ, Քանզի անոնք պառնկութեան որդիներ են:

5 - Քանզի անոնց մայրը պառնկութիւն ըրաւ:

Չանոնք յղացողը խայտառակութիւն գործեց,

Վասն զի ըսաւ, Իմ համանիներուս ետէն երթամ,

Որոնք իմ հացս ու ջուրս, բուրգս ու քթանս,

Իւզս ու խմելիքներս Ինչի կու տան:

6 - Անոր համար ահա ես փուշերով ցանդ պիտի քաշեմ †անոր ճամբուն,

Ու անոր Բաբելոն պատ պիտի չինեմ:

*Այսինքն, իմ ժողովուրդս
†Այսինքն, ողորմեայ
‡Երբ քու ճամբուդ

Որպէս զի իր ճամբաները չկրնայ
 գտնել :

7 - Եւ անիկա իր համանիներուն ետե-
 ւէն պիտի երթայ, բայց անոնց
 պիտի չհասնի,

Ու զանոնք պիտի փնտռէ, բայց պիտի
 չկրնայ գտնել .

Այն տառն պիտի ըսէ, Երթամ իմ ա-
 ւաջուան երկանո գառնամ ,
 Քանզի այն տառն չիմակուրնէ աղէկ
 վեճակի ճշ էի :

8 - Եւ անիկա չգիտցաւ որ ցորենը ու գի-
 նին ու իւզը ես անոր կու տայի,
 Եւ անոր արծաթը ու ոսկին ես կը
 շատցնէի,

Որանչէ՞ր անոնք Բաճաղի խոտեր շի-
 նեցին :

9 - Անոր համար պիտի դառնամ , ու
 իմ ցորենա իր եղանակին մէջ
 Ու իմ գինիս իր սրոշ ժամանակին մէջ
 պիտի տանեմ ,

Եւ անոր մերկութիւնը ծած կազ բուրդս
 ու քթանս ես պիտի տանեմ :

10 - Ու հիմա անոր համանիներուն առջև
 Անոր անզգամութիւնը պիտի յայտ-
 նեմ ,

Ու մարդ մը պիտի չըլլայ որ զանիկա
 իմ ձեռքէս ազատէ :

11 - Եւ անոր բոլոր ուրախութիւնը ,
 Անոր ասոները, ամսագլուխները ու շա-
 բաթները
 Եւ բոլոր հանգիստաւոր օրերը պիտի
 խափանեմ :

12 - Ու պիտի աւրեմ անոր սրթերը ու
 թղենիները,
 Որոնց համար կ'ըսէր թէ Ասոնք իմ
 համանիներուս ինծի տուած
 պարգևներն են ,
 Եւ զանոնք անտառի պիտի դարձնեմ .
 Ու զանոնք դաշտի գազանները պիտի
 ուտեն :

13 - Եւ զանիկա պիտի պատժեմ այն
 օրերուն համար՝
 Որոնց մէջ անիկա Բաճաղիմներուն
 խունկ կը ծխէր ,
 Իր օղերովը ու մանեակներովը կը զար-
 դարուէր ,
 Եւ իր համանիներուն ետեւէն կ'երթար .
 Ու զիս մուցեր էր, կ'ըսէ Տէրը :

14 - Անոր համար ահա ես զանիկա
 պիտի համոզեմ ,
 Եւ զանիկա անապատը պիտի տանիմ ,
 Ու անոր սրտին պէս պիտի խօսիմ :

15 - Եւ անկէ անոր այգիները

Ու Աքովրի ձորը յայտի դրան համար
 անոր պիտի տամ ,
 Եւ հոն իր մանկութեան օրերուն պէս,
 Ու Եգիպտոսի երկրէն ելած օրուանը
 պէս երգէր պիտի երգէ :

16 - Ու պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ
 Տէրը,
 Զիս իմ այրս պիտի կոչես,
 Ու մէյմըն ալ զիս իմ Բաճաղս պիտի
 չկոչես :

17 - Ու անոր բերնէն Բաճաղիմի ա-
 նունները պիտի վերցնեմ ,
 Ու անոնք մէյմըն ալ իրենց անուննե-
 րովը պիտի չյիշուին :

18 - Եւ անոնց համար այն օրը
 Դաշտի գազաններուն հետ ու երկինքի
 թռչուններուն հետ
 Ու երկրի սողուններուն հետ ու խա պի-
 տի ընեմ ,
 Ու երկրէն աղեղը, սուրը ու պատերազ-
 մը պիտի կտարեմ ,
 Եւ զանոնք ապահովութեամբ պիտի
 պառկեցնեմ :

19 - Ու քեզ յաւիտեան ինծի պիտի
 նշանեմ ,
 Եւ քեզ արդարութիւնով , իրաւուն-
 քով ,
 Ողորմութիւնով ու գթութիւնով ին-
 ծի պիտի նշանեմ .

20 - Այո, քեզ ճշմարտութիւնով ին-
 ծի պիտի նշանեմ ,
 Ու Տէրը պիտի ճանչնաս :

21 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ
 Տէրը, պատասխան պիտի տամ .
 Ես երկինքներուն պատասխան պիտի
 տամ ,
 Ու անոնք երկրի պատասխան պիտի
 տան ,

22 - Ու երկիր ցորենին, գինիին ու իւ-
 ղին պատասխան պիտի տայ ,
 Եւ անոնք Յեզրայէլի պատասխան պի-
 տի տան :

23 - Ու զանիկա ինծի համար երկրի
 վրայ պիտի սեռմանեմ ,
 Ու չողորմեալին պիտի ողորմիմ ,
 Եւ իմ ժողովուրդս չեղողին՝ Դուն իմ
 ժողովուրդս ես՝ պիտի ըսեմ .
 Ան ալ ինչի՞ իմ Աստուածս ես՝ պիտի
 ըսէ :

*Այսինքն, տէրս
 †Այսինքն, Աստուծոյ սերմանածին

ԳԼ. Գ

Անկէ ետքը Տէրը ինծի բառ , Նորէն գնա , էր բարեկամէն սիրուած շնացող կին մը սիրէ , ինչպէս Տէրը Իսրայէլի որդիները կը սիրէ , թէև աւանք օտար աստուածներու կը գտանան , ու չամչեղէն կարկանդակներ կը սիրեն : 2 - Ուստի զանկա տասնը՛հինգ *իչ արծաթով ու մէկ ու կէս քաղաքով ինծի աւել : 3 - Եւ անոր ըսի , ինծի համար շատ օրեր նստիս , շնութիւն չընես և *բիշ մարդու մը չմտե՛նաս , ու ես ալ քեզի համար *յնպէ՛ս պիտի ըլլամ :

4 - Քանզի Իսրայէլի որդիները շատ օրեր աւանց թագաւորի , աւանց իշխանի , աւանց զոհի , աւանց կուսքի , աւանց եփուտի ու թերափիմի պիտի նստին : 5 - Ետքը Իսրայէլի որդիները պիտի դառնան , ու իրենց Տէր Աստուածը և իրենց Գաւիթ թագաւորը պիտի փնտռեն , ու վերջին օրերը Տէրոջը ու անոր բարութեանը պիտի ապաստանին :

ԳԼ. Գ

Տէրոջը խօսքը մօտիկ ըրէք , ով Իսրայէլի որդիներ ,
 *Քանզի Տէրը երկրի բնակիչներուն հետ վէճ ունի ,
 *Քանզի երկրի վրայ ճշմարտութիւն չկայ ու ողորմութիւն չկայ
 Ու Աստուծոյ գիտութիւնը չկայ :
 2 - Երգումը , ստախօտութիւնը , մարդասպանութիւնը ,
 Գողութիւնը ու շնութիւնը շատցեր են ,
 Ու արիւնները արիւններու կը հասնին :
 3 - Անոր համար երկիրը սուգ պիտի բռնէ ,
 Ու անոր բոլոր բնակիչները
 Գաշտի գազաններուն ու երկինքի թռչուններուն հետ պիտի նուազին ,
 Ու ծովու ձուկերն ալ պիտի սպառին :
 4 - Սակայն մարդ մը թող չվիճի , ու մարդ մը թող չյանդիմանէ ,
 Քանզի քու ժողովուրդդ քահանային հետ վիճովներու պէս է :
 5 - Ուստի դուն ցրեկով պիտի գլորիս ,
 Ու մարգարէն ալ քեզի հետ գիշերով պիտի գլորի .
 Եւ քու մայրդ բնաջինջ պիտի ընեմ :

6 - Իմ ժողովուրդս գիտութիւն չունենալուն համար բնաջինջ եղաւ .
 Որովհետև դուն գիտութիւնը մերժեցիր ,
 Ես ալ քեզ պիտի մերժեմ , որպէս զի մէյմըն ալ ինծի քահանայ ըլլաւ .
 Եւ որովհետև քու Աստուծոյդ օրէնքը մոռցար ,
 Ես ալ քու որդիներդ պիտի մոռնամ :
 7 - Անոնք որչափ որ բազմացան ,
 Այնչափ ալ ինծի դէմ մեղք գործեցին .
 Ուրի՛նք անոնց փառքը անարգութեան պիտի փոխեմ :
 8 - Անոնք իմ ժողովուրդիս մեղքը կ'ուտեն ,
 Եւ իրենց սիրտերը անոնց անօրէնութեանը կու տան :
 9 - Ուրեմն ինչպէս ժողովուրդին՝ նայնպէս ալ քահանային պիտի ըլլայ .
 Եւ զանոնք իրենց ճամբաներուն համեմատ պիտի պատժեմ ,
 Ու անոնց իրենց գործերուն փոխարէնը պիտի հասուցանեմ :
 10 - Եւ պիտի ուտեն , բայց պիտի չկշտանան .
 Պառնկութիւն պիտի ընեն , բայց պիտի չշտանան .
 Քանզի Տէրոջը ուշադրութիւն ընելը թողուցին :
 11 - Շնութիւնը , գինին ու քաղցուն Սիրար չկը խաբեն :
 12 - Իմ ժողովուրդս իր փայտին կը հարցնէ ,
 Ու իր ցուպը իրեն կ'իմացնէ .
 Քանզի պառնկութեան ոգին զանոնք գլխէ հանեց ,
 Ու իրենց Աստուածը թողելով պառնրկեցան :
 13 - Լեռներուն գլուխները զոհ կը մատուցանեն ,
 Ու բլուրներուն վրայ կաղնիի , կաղամախի ու բեկնիի տակ ,
 Անոնց հովանիին հաճելի ըլլալուն համար , խունկ կը ծխեն .
 Անոր համար ձեր աղջիկները պառնկութիւն պիտի ընեն ,

*Կա՛մ , անոնց սիրտերը իրենց անօրէնութեանը կը համոզեն
 †Եբբ . կ'աւանտ

Ու ձեր հարսերը շնութիւն պիտի ընեն:
 14 - Զեր աղջիկները պիտի չպատժեմ՝
 երբ պառնկութիւն ընեն,
 Ոչ ալ ձեր հարսերը՝ երբ շնութիւն
 ընեն.
 Քանզի հայրէջ իրենք պառնկներուն
 հետ կը զատուին,
 Ու բոզերուն հետ կը զոհեն.
 Ուստի անհանճար ժողովուրդը պիտի
 կործանի:
 15 - Թէեւ դուն պառնկութիւն կ'ը-
 նես, ով Իսրայէլ,
 Յուդա թող յանցաւոր չըլլայ.
 Ու Գաղգաղա մի մանէք, ու Բեթաւան
 մի ելլէք,
 Եւ Տէրը կենդանի է ըսելով՝ երգում
 մի ընէք:
 16 - Քանզի Իսրայէլ կամակոր երինջի
 պէս ապստամբեր է.
 Հիմա Տէրը լայնարձակ տեղ մը գառ-
 ներու պէս պիտի արածէ զա-
 ննք:
 17 - Եփրեմ՝ կուռքերուն յարեր է.
 Զանկա թող տուր:
 18 - Անոնց *խնճոյքը ապականած է.
 Շատ պառնկութիւն ըրին.
 Տուէք ըսել կը սիրեն,
 Աճօթ անոնց իշխաններուն:
 19 - Հովը զանկա իր թւերուն վրայ
 պիտի կապէ,
 Ու անոնք իրենց զոհերէն պիտի ամբը-
 նան:

ԳԼ. Ե

Լսեցէք տիկա, ով քահանաներ,
 Ու մտիկ ըրէք, ով Իսրայէլի տունը,
 Ու տկանջ տուէք, ով թագաւորին
 տունը,
 Վասն զի ձեզի համար դատաստան
 կայ,
 Քանզի դուք Մասփայի մէջ որոգայթ,
 Եւ Թաբորի վրայ տարածուած վարմ՝
 եղաք:
 2 - Մոլորածները սպանութիւն ընելով
 Քրտի Քէլ խորատոյց եղան,
 †Թէեւ ես անոնց ամէնուն իրատ Կո-
 րայի:
 3 - Ես Եփրեմը կը ճանչնամ,
 Ու Իսրայէլ ինձ մէ պահուած չէ.

*Կա՛մ, զինին

†Կա՛մ, Ուստի ես անոնց ամէնուն վրայ
պատիժ պիտի բերեմ՝

Այո, հիմա, ով Եփրեմ, դուն շնու-
 թիւն կ'ընես,
 Ու Իսրայէլ պղծուած է:
 4 - *Անոնք իրենց գործերը չեն շիա-
 կեր՝,
 Որ իրենց Աստուծոյն դառնան.
 Քանզի անոնց մէջ պառնկութեան ոգի
 կայ,
 Ու Տէրը չեն ճանչնար:
 5 - †Ուստի Իսրայէլի հպարտութիւնը
 իր երեսին առջև պիտի խո-
 նարհի՝.
 Եւ Իսրայէլ ու Եփրեմ՝ իրենց անօրէ-
 նութիւնովը պիտի գլորին.
 Յուդա ալ անոնց հետ պիտի գլորի:
 6 - Անոնք իրենց ոչխարներովը ու ար-
 ջառներովը
 Տէրը փնտռելու պիտի երթան, բայց
 պիտի չգտնեն.
 Անկա անոնցմէ քաշուեցաւ:
 7 - Անոնք Տէրոջը անհաւատարմու-
 թիւն ըրին,
 Քանզի օտար աղաքներ ծնան.
 Հիմա իրենց վիճակներովը մէկտեղ
 †Մէկ ամսուան մէջ պիտի սպառին՝:
 8 - Գաբաայի մէջ շեփոր հնչեցու-
 ցէք,
 Եւ Ռամայի մէջ աւագափող.
 Բեթաւանի մէջ բարձրաձայն կանչե-
 ցէք:
 Քու ետեւէդ, ով Բենիամին:
 9 - Յանգիմանութեան օրը Եփրեմ ա-
 մոյի պիտի ըլլայ.
 Իսրայէլի ցեղերուն մէջ ճշմարտար
 գիացուցի:
 10 - Յուդայի իշխանները սահմաններ
 փոխողներու պէս եղան.
 Անոնց վրայ ջուրի պէս պիտի թափեմ
 իմ բարկութիւնս:
 11 - Եփրեմ՝ հարստահարուած ու դա-
 տաստանով կատրուած է,
 Քանզի յօժար կամքով հրամանին ե-
 տակէն քաղեց:
 12 - Ուստի ես Եփրեմի ցեցի պէս,
 Եւ Յուդայի տանը փայտի որդի պէս
 պիտի ըլլամ:
 13 - Երբ Եփրեմ իր տխար և Յուդա
 իր վէրքը տեսաւ,

*Կա՛մ, Իրենց գործերը զերեմ+ չեն թո-
ղուր

†Կա՛մ, Եւ Իսրայէլի հպարտութիւնը
անոր երեսին դէմ կը վկայէ

‡Եբբ. Մէկ ամիսը զանոնք պիտի ստէ

Եփրեմ՝ Ասորեստան զնաց,
 Ու *Յարէբ թագաւորին գեղաններ
 զրկեց .
 Բայց անիկա ձեզ բժշկելու ու ձեր
 վէրքը առողջացնելու կարող չէ :
 14 - Քանզի ես Եփրեմի աւելծի պէս,
 Եւ Յուդայի տանը առայգ աւելծի պէս
 պիտի ըլլամ .
 Ես, ես պիտի պատառեմ՝ ու պիտի եր-
 թամ .
 Պիտի տանիմ՝, ու ազատող մը պիտի
 չըլլայ :
 15 - Ես պիտի երթամ ու իմ՝ անզս
 դառնամ,
 Մինչև անոնք իրենց յանցաւոր ըլլալը
 խոտովանին, ու իմ՝ երեսս
 փնտռեն .
 Երբ նեղութեան մէջ մտնեն, զիս կա-
 նուխ պիտի փնտռեն :

ԳԼ. 2

Եկէք, ու Տէրոջը դառնանք,
 Քանզի անիկա պատառեց, ու անիկա
 մեզ պիտի բժշկէ .
 Անիկա զարկաւ, ու անիկա մեզ պիտի
 պատէ .
 2 - Երկու օրէն ետքը մեզ պիտի կեն-
 դանացնէ .
 Երբորդ օրը մեզ պիտի կանգնեցնէ,
 Ու անոր առջև պիտի տարինք :
 3 - Եւ Տէրը պիտի ճանչնանք, «- զ-
 նիկա՝ ճանչնալու ետեւէ պիտի
 ըլլանք .
 Անոր ելքը արշալոյսի պէս պատրաս-
 տուած է,
 Ու անիկա մեզի պիտի գոյ անձրևի
 պէս,
 Երկիրը թրջող վերջին անձրևին պէս :
 4 - Քեզի ի՞նչ ընեմ, ով Եփրեմ,
 Քեզի ի՞նչ ընեմ, ով Յուդա,
 Վասն զի ձեր բարութիւնը աւաւառ-
 եան ամպին պէս
 Ու կանուխ իջած ցօղին պէս է՝ որ
 կ'անցնի :
 5 - Ասոր համար մարգարէներուն ձեռ-
 քով զանազ + կոտորեցի .
 Բերնիս խօսքերովը զանոնք մեռցուցի,
 Ու ‡քու դատաստաններդ՝ ըլլսի պէ՝
 պիտի կլին :

*կա՛մ, թշնամութիւն ընող
 †Եք. տաշեցի
 ‡կա՛մ, իմ՝ դատաստաններս

6 - Քանզի ես սղորմութիւն կ'ուզեմ
 և ոչ թէ զո՛հ,
 Ու սղջակէզներէն աւելի՝ Աստուծոյ
 գիտութիւնը :
 7 - Իսկ անոնք *Ադամի պէս ուխտա-
 զանց եղան .
 Հոն ինծի անհաւատարմութիւն ըրին :
 8 - Գազաագ անօրէնութիւն ընողնե-
 րու քաղաք է,
 Արեան շաւիղներով լեցուն է :
 9 - Ու ինչպէս աւազակներու գուն-
 դերը
 Մարդու համար դարանամուս կ'ըլլան,
 Այնպէ՛ք՝ քահանաներուն խումբը
 Սիւքէմի ճամբուն մէջ սպանութիւն
 կ'ընեն,
 Քանզի անոնք եղեւնագործութիւն
 կ'ընեն :
 10 - Իսրայէլի տանը մէջ սակալի բան
 տեսայ .
 Եփրեմի պառնկութիւնները հոն են,
 Իսրայէլ պղծուեցաւ :
 11 - Քեզի ալ հունձք մը պատրաս-
 տուած է, ով Յուդա,
 Երբ իմ՝ ժողովուրդիս գերութիւնը
 դարձնեմ :

ԳԼ. Է

Երբ Իսրայէլը պիտի բժշկէի,
 Եփրեմի անօրէնութիւնը
 Ու Սամարիայի չարութիւնները յայտ-
 նուեցան .
 Քանզի անոնք ստութիւն կը գործեն .
 Ու գողը ներս կը մտնէ,
 Ու գուրսը աւազակներուն գունդը կը
 մերկացնէ :
 2 - Եւ իրենց սրտին մէջ չեն մտածեր,
 Թէ ես անոնց բոլոր չարութիւնը կը
 յիշեմ .
 Հիմա անոնց գործերը զիրենք պաշա-
 րեցին,
 Անոնք իմ՝ երեսիս առջև են :
 3 - Իրենց չարութիւնովը թագաւորը,
 Ու իրենց ստութիւններովը իշխանները
 կ'ուերախացնեն :
 4 - Անոնց ամէնը շնացողներ են՝
 Հոց եփողէն վառուած թանիրի պէս,
 Որ զանգուածը շողելէն ետքը՝
 Մինչև անոր խմորիլը վառելէն կը դա-
 դարի :
 5 - Մեր թագաւորին օրը

*կա՛մ, մարդու

- Իշխանները գինիին առքուժ ենէն *Տի-
ւանդացան.
- Անիկա իր ձեռքը ծաղր ընողներուն
երկնցուց:
- 6 - Քանզի անոնք դարանամուտ ըլլա-
լով,
- Իրենց սիրտը թանիրի պէս պատարա-
տեցին.
- Անոնց եփողը բոլոր գիշերը կը քնանայ,
Առտուանց անիկա բոցավառ կրակի
պէս կը վառի:
- 7 - Ամէնը թանիրի պէս առքցան,
Ու իրենց դատաւորները կերան.
Անոնց բոլոր թագաւորները ինկան.
Անոնց մէջ ինծի կանչող մը չկայ:
- 8 - Եփրեմ ժողովուրդներուն հետ
խառնուեցաւ.
- Եփրեմ չգործուած շօթի պէ՛ է:
- 9 - Անոր զօրութիւնը օտարները կե-
րան, ու ինք չգիտեր.
- Մազերուն մէջ անգամ ճերմակ ին-
կաւ, ու ինք չգիտեր:
- 10 - Եւ Իսրայէլի հպարտութիւնը իր
երեսին առջև խոնարհած է.
- Այսու ամենայնիւ անոնք իրենց Տէր
Աստուծոյն չեն դառնար,
Ու զանիկա չեն փնտռեր:
- 11 - Ու Եփրեմ միամիտ ու անխելք
աղաւնիի պէս եղաւ.
- Եգիպտացիները կը կանչեն, Ասորես-
տան կ'երթան:
- 12 - Երբ անոնք երթան, անոնց վրայ
իմ՝ վարմն պիտի պարածեմ,
Որպէս զի զանոնք երկինքի թռչունի
պէս իջեցնեմ,
Ու զանոնք պատժեմ, ինչպէս անոնց
ժողովքը լսեր է.
- 13 - Վա՛յ անոնց, քանզի ինծմէ
փախան.
- Կորուստը անոնց պէտէ հասնի, քանզի
ինծի դէմ՝ յանցաւոր եղան.
- Ու թէև զանոնք ես փրկեցի,
Բայց անոնք ինծի դէմ՝ ստութիւններ
կը խօսին:
- 14 - Ու երբ անոնք իրենց անկողիննե-
րուն վրայ կ'ոգբային,
Իրենց սրտովը ինծի չաղաղակեցին.
Անոնք ցորենի ու գինիի համար կը
ժողվուին
- Ու ինծմէ կ'ապստամբին:
- 15 - Եւ թէպէտ զանոնք խրատեցի
Ու անոնց բազուկները զօրացուցի,

- Սակայն *չայ՝ ինծի չարութիւն սեպե-
ցին,
- 16 - Անոնք կը դառնան, քայց Բարձր-
եային չէ.
- Անոնք խաբերայ տղեղի պէս են,
Անոնց իշխանները իրենց լեզուին կա-
տաղութեանը համար սրով պի-
տի կ'յնան.
- Ասիկա պիտի ըլլայ անոնց նախատինքը
Եգիպտոսի երկրին մէջ:

ԳԼ. Ը

Փողը բերանդ դէր.

- Թշնաֆն Տէրջըր տանը վրայ արծիւի
պէս դէտէ քայ,
- Քանզի իմ՝ ուխտս զանց ըրին,
Ու իմ՝ օրէնքիս դէմ՝ յանցաւոր եղան:
- 2-Իսրայէլ ինծի կ'աղաղակէ ու կ'ըտէ,
Ով իմ՝ Աստուածս, մենք քեզ կը
ճանչնանք:
- 3 - Իսրայէլ բարին մերժեց,
Չանիկա թշնամին պիտի հալածէ:
- 4 - Անոնք թագաւորներ դրին, բայց
ինծմով չէ.
- Իշխաններ ընարեցին, բայց ես չգիտ-
ցայ.
- Իրենց արծաթովը ու ոսկիովը իրենց
կուռքեր շինեցին,
Որպէս զի բնաջինջ ըլլան:
- 5 - Քու որթդ, ով Սամարիա, մեր-
ժուեցաւ.
- Իմ՝ բարկութիւնս անոնց վրայ բորբո-
քեցաւ.
- Մինչև ե՞րբ անմեղութիւնը ձեռք պի-
տի չբերեն:
- 6 - Քանզի ասիկա ալ Իսրայէլէ է.
Չանիկա արուեստաւորը շինեց, ուրեմն
Աստուած չէ.
- Հապա կտոր կտոր պիտի ըլլայ Սամա-
րիայի սրթը:
- 7 - Քանզի հով ցանեցին ու մրրիկ պի-
տի հնձեն.
- Անիկա հասուն ցորեն պիտի չբերէ,
Ու անոր արգիւնքէն ալիւր պիտի չըլ-
լայ.
- Եւ եթէ ըլլայ ալ՝ օտարները պիտի
կլկեն զանիկա:
- 8 - Իսրայէլ կլլուեցաւ,
Հիմա ազգերուն մէջ անպիտան ամա-
նի պէս պիտի ըլլան:
- 9 - Քանզի անոնք առանձնակեաց վայ-

*Կա՛մ, զանիկա՛ հիւանդացուցին

*Կա՛մ, ինծի դէմ՝ չարութիւն խորհեցան

- րենի իշու պէս Ասորեստան գացին .
- Եփրեմ վարձքով սիրականներ բռնեց:
- 10 - Թէև ազգերէն ճգն-իւննէր վարձքով բռնեն ալ, հիմա զանոնք պիտի ժողվեմ.
- Ու իշխաններուն թագաւորին բեռէն քիչ մը նեղութիւն պիտի կրեն:
- 11 - Քանզի Եփրեմ շատ սեղաններ շինեց մեղքի համար,
- Այն սեղանները իրեն մեղքի համար եղան:
- 12 - Իմ օրէնքիս մեծ բաները անոր գրեցի,
- Ասիայն օտար բանի պէս սեպուեցան:
- 13 - Իմ ընծաներուն զոհերուն համար Անոնք միս կը զոհեն ու կ'ուտեն,
- Բայց Տէրը անոնց չհաւնիր.
- Հիմա անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
- Եւ անոնց մեղքերուն այցելութիւն պիտի ընէ.
- Անոնք Եզրիպտոս պիտի դառնան:
- 14 - Քանզի Իսրայէլ իր Ստեղծողը մուցաւ, ու ժմեհեաններ շինեց,
- Եւ Յուդա պարսպաւոր քաղաքներ շատցուց.
- Բայց ես անոր քաղաքները կրակ պիտի զրկեմ,
- Ու անոր պալատները պիտի ուտէ:

ԳԼ Թ

Ժողովուրդներուն պէս ցնծութեամբ մի ուրախանար, ով Իսրայէլ,

Քանզի քու Աստուծմէդ հեռանալով պրօնկութիւն ըրիր,

Ամէն ցորենի կալերուն վրայ պարտաւորութիւն վարձք սիրեցիր:

2 - Կայր ու հնձանը զանոնք պիտի չկերակրեն,

Եւ քաղցուն հոն պիտի չաւրուի:

3 - Անոնք Տէրոջը երկրին մէջ պիտի չբնակին,

Հապա Եփրեմ Եզրիպտոս պիտի դառնայ,

Ու Ասորեստանի մէջ պիղծ բանէր պիտի ուտեն:

*Կա՛մ, թագաւորին ու իշխաններուն բեռէն քիչ մը պիտի հանգստանան
 †Կա՛մ, պալատներ
 ‡Եբօ. ստէ

- 4 - Տէրոջը զինի ինուեր պիտի չմատուցանեն,
- Եւ անոր ընդունելի պիտի չըլլան.
- Անոնց զոհերը սգաւորներու հացին պէս պիտի ըլլան իրենց,
- Զանկաւ ամէն ուսողները պիտի պղծուին.
- Քանզի անոնց հացը իրենց անձերուն համար է,
- Տէրոջը տաւը պիտի չմանէ:
- 5 - Ի՞նչ պիտի ընէք տօնի օրը,
- Ու Տէրոջը տօնախմբութեան օրը:
- 6 - Քանզի ահա կործանուած են քաղաքները կ'երթան.
- Եզրիպտոս զանոնք պիտի ժողվէ,
- Մեմփիս զանոնք պիտի թաղէ.
- Անոնց արծաթին քնով արծաթ ցանկայի տեղերը
- Եզինճը պիտի ժառանգէ,
- Անոնց վրաններուն մէջ փուշեր պիտի բռնին:
- 7 - Այցելութեան օրերը հասան,
- Հատուցման օրերը հասան,
- Իսրայէլ պիտի գիանայ.
- Քու անօրէնութեանդ շատութեանը համար,
- Եւ քան մեծ հակառակութեանդ համար,
- Մարգարէն անմիտ ու հոգևոր մարդը խենդ եղաւ:
- 8 - Եփրեմ իմ Աստուծոյս կը դիտէ,
- Մարգարէն իր ամէն ճամբաներուն մէջ որդայթ կը լարէ.
- Ու իր Աստուծոյն ամէն մէջ հակառակութեան պարտաւոր է:
- 9 - Պարսպայի օրերուն պէս խիտ շատ ապականեցան.
- Անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
- Ու անոնց մեղքերուն այցելութիւն պիտի ընէ:
- 10 - Իսրայէլը անապատի մէջ եղող խաղողի պէս գտայ,
- Զեր հայրերը թղթի ին առաջին կանխահաս պատ զին պէս տեսայ.
- Ասիայն անոնք Բերիեզովր մտան,
- Ու իրենց անձը սմթալից քրթեր համար զատեցին,
- Եւ իրենց սիրած բանին պէս իրենք ալ պիղծ եղան:
- 11 - Եփրեմի փառքը
 Ծնունդէն և արգոյնդէն ու յղութենէն
 Թուչունի պէս պիտի թուչի:
- 12 - Թէև իրենց աղաքները մեծցնեն,
- Զանոնք մարդէ զարկ պիտի թողում.

Նաև վա՛յ անոնց երբ անոնցմէ քաշուիմ՝

13 - Եփրեմ՝ աւ, ինչպէս Տիւրոսը տեսայ, զուարճայի տեղ մը արնկուած էր.

Բայց Եփրեմ՝ իր աղաքները՝ մեռցնողին պիտի հանէ:

14 - Տուր անոնց, ով Տէր. ի՞նչ պիտի տաս .

Անոնց վիժող արգանդ ու չոր ստինքներ տուր:

15 - Անոնց բոլոր չարութիւնը Գաղգաղայի մէջ է,

Քանզի հոն անոնցմէ զզուեցայ.

Անոնց չոր գործերուն պատճառաւ

Չանոնք իմ տունէս պիտի վաճառեմ,

Չանոնք մէյմըն ալ պիտի չսիրեմ.

Անոնց բոլոր իշխանները ապատամբներ են .

16 - Եփրեմ՝ զարնուեցաւ,

Անոնց արմատը չորցաւ, պտուղ պիտի չտան.

Եթէ անոնք ծնանին ալ,

Անոնց արգանդին ցանկայի պտուղներն ալ պիտի մեռցնեմ:

17 - Իմ Աստուածս զանոնք պիտի մերժէ,

Քանզի անոր մտիկ չըրին.

Ու աղգերու մէջ թափառական պիտի ըլլան:

ԳԼ. Ժ

Իսրայէլ լայնատարած որթ մըն է, Իրեն համար պտուղ կը բերէ.

Իր պտուղին շատութեանը չափ սեղաններ շատցուց,

Իր երկրին գեղեցկութեանը պէս գեղեցիկ կուռքեր շինեցին:

2 - Անոնց սիրտը փոփոխական է, հիմա յանցաւոր պիտի ելլեն.

Անիկա անոնց սեղանները պիտի փլցնէ, Անոնց կուռքերը պիտի աւրէ:

3 - Վասն զի հիմա անոնք պիտի ըսեն, Մենք թագաւոր չունինք,

Քանզի Տէրոջմէն չվախցանք .

Ու թագաւորը մեզի ի՞նչ պիտի ընէ:

4 - Ուխտ ըրած ատեննին՝ սուտ երդում ընելով խօսքեր խօսեցան,

Ու դատաստանը արտին ակօսներուն մէջ թունաւոր խոսքերս պէս պիտի բուսնի:

5 - Սամարիայի բնակիչները Բեթա-

ւանի որթերուն պատճառաւ պիտի վախնան,

Քանզի անոր վրայ անոր ժողովուրդը սուգ պիտի ընէ,

Ու անոր քուրմերը անոր փառքին համար պիտի դողան,

Քանզի անիկա իրմէ գերութեան կ'երթայ:

6 - Անիկա ալ Ստրեստան պիտի տարուի՝

Յարէք թագաւորին պարգև ըլլալու. Եփրեմ՝ ամօթ պիտի կրէ,

Ու Իսրայէլ իր խորհուրդէն պիտի ամչնայ:

7 - *Սամարիայի թագաւորը՝ բնաջինջ պիտի ըլլայ

Չուրի երեսին վրայ եղող փրփուրին պէս:

8 - Եւ Աւենի բարձր տեղերը, Իսրայէլի մեղքը, աւերակ պիտի ըլլան.

Անոնց սեղաններուն վրայ փուշ ու տատակ պիտի բուսնի.

Եւ լեռներուն պիտի ըսեն, Մեզ ծածկեցէք .

Ու բլուրներուն՝ Մեր վրայ ինկէք:

9 - Գաբաայի օրերէն ի վեր մեղք գործեցիր, ով Իսրայէլ,

Հոն կայնեցան +*+ի՞նչէրդ .

Գաբաայի մէջ չարութեան արգիներուն դէմ եղած պատերազմը անոնց չհասաւ:

10 - Չանոնք խրատելու կը ցանկամ.

Ու անոնց վրայ ժողովուրդներ պիտի ժողվուին,

Երբ իրենց երկու +անօրէնութիւններուն համար՝ կապուին:

11 - Ու Եփրեմ՝ երինջ մըն է, որ սորված է ու կը սիրէ ցօրեն ծեծել,

Բայց ես անոր պարանոցին գեղեցկութեանը վրայ լ-ձ անցուցի.

Եփրեմը կառքի պիտի լծեմ,

Յուդա պիտի հերկէ,

Յակոբ անոր էփեէն պիտի տափանէ:

12 - Չեզի արգարութիւնով ցանեցէք,

Ու ողորմութիւնով հնձեցէք,

Եւ չմշակուած երկիրը հերկեցէք.

Քանզի Տէրը փնտռելու ատեն է,

Մինչև ինք գայ ու ձեր վրայ արդարութիւն տեղայ:

Ու ողորմութիւնով հնձեցէք,

Եւ չմշակուած երկիրը հերկեցէք.

Քանզի Տէրը փնտռելու ատեն է,

Մինչև ինք գայ ու ձեր վրայ արդարութիւն տեղայ:

*Կա՛մ, Սամարիա իր թագաւորովը

+Կա՛մ, ակօսներուն մէջ

- 13 - Ամբարշտութեամբ հերկեցիք ու անօրէնութիւն հնձեցիք, Ստութեան պտուղը կերայք. Բանդի դունք քու ճամբուդ և քու զօրաւորներուդ բազմութեանը ապաւինեցար :
- 14 - Ուտաի քու ժողովուրդներուդ մէջ խռովութիւն պիտի ելլէ, Եւ քու բոլոր բերգերդ պիտի կործանին , Ինչպէս Սաղման պատերազմին օրը Բեթարբէյը կործանեց, Ուր մայրը իր աղջը վրայ գետինը զարնուեցաւ :
- 15 - Բեթէլ ձեզի ասոր պէս պիտի ընէ, Ձեր չափազանց չարութեանը համար. Արշալոյսին ասեանը Իսրայէլի թագաւորը բոլորովին բնաջինջ պիտի ըլլայ :

ԳԼ ԺԱ

Երբ Իսրայէլ մանուկ էր, զանհկա կը սիրէի,

- Ու իմ սրգիս Եգիպտոսէ կանչեցի :
- 2 - Որչա՛ք զանոնք կանչեցին, այնչափ անոնց երեսէն գացին. Բա՛հաղիմներուն զո՛հ մատուցին, Ու կուռքերուն խունկ ծխեցին :
- 3 - Ու Եփրեմը ես քաղցուցի. Ձանոնք *իրենց թեւերէն՝ կը բռնէի. Սակայն չգիտցան թէ զիրենք բժշկողը ես եմ :
- 4 - Ձանոնք մարդու չուաններով, սիրոյ կապերով, քաշեցի, Ու անոնց Կարանոցէն լուծը հանողներու պէս եղայ իրենց, Եւ անոնց հանգստութեամբ կերցուցի :
- 5 - Անհկա Եգիպտոսի երկիրը պիտի չգառնայ, Հապա Ասորեստանցին պիտի ըլլայ անոր թագաւորը , Բանդի դառնալ չուզեցին :
- 6 - Եւ անոր քաղաքներուն վրայ սուրը պիտի յարձակի, Ու անոր քիշխանները պիտի ուտէ հատուցընէ Անոնց խորհուրդներուն համար :
- 7 - Եւ իմ ժողովուրդս ինձի դէմ ապստամբելու հակամիտեալ է,

*Կ՝, թեւերով
 †ԵՔԷ. ձնօաներէն
 ‡ԵՔԷ. նիգերը

Ու թէև անոնք Բարձրեալին կը հրաւիրուին,

Սա՛յնք բնաւ մէկը չա՛նէ՛ս չբարձրացընէր :

8 - Քեզ ի՞նչպէս տամ, ով Եփրեմ, Քեզ ի՞նչպէ՞ս յանձնեմ, ով Իսրայէլ. Քեզ ի՞նչպէս Ադմայի պէս ընեմ, Քեզ ի՞նչպէ՞ս Սեբոյիմի պէս դնեմ. Իմ սիրտս ներսիդիս կը խռովի, Կարեկցութիւններս ալ միանգամայն կը բռնկին :

9 - Իմ սաստիկ բարկութիւնս ի գործ պիտի չդնեմ,

Եփրեմը աւերելու պիտի չգառնամ, Բանդի ես Աստուած եմ և ոչ թէ մարդ,

Քու մէջդ եղող Սուրբը ե՛ս եմ, Ու *բարկութեամբ պիտի չգամ :

10 - Տէրոջը ետեէն պիտի երթան, Անհկա առիւծի պէս պիտի գոչէ. Երբ անհկա գոչէ,

Արեւմուտքի կողմէն աղաքները արտարնօք պիտի գան :

11 - Անոնք Եգիպտոսէ թռչունի պէս Ու Ասորեստանի երկրէն ազաւնիի պէս արտարնօք պիտի գան.

Ու զանոնք իրենց տուներուն մէջ պիտի բնակեցնեմ, կ'ըսէ Տէրը :

ԳԼ ԺԲ

Եփրեմ զիս կը պաշարէ ստութեամբ,

Ու Իսրայէլի տունը՝ նենգութեամբ. Բայց Յուդա տակաւին Աստուծով կը օրէ,

Ու սուրբերուն մէջ հաւատարիմ է :

2 - Եփրեմ հով կը ճարակէ, ու արեւելեան հովին ետեէն կը վազէ.

Սմէն օր ստութիւնը ու յափշտակութիւնը կը շաացնէ.

Ասորեստանի հեա դաշնակցութիւն կ'ընեն,

Ու Եգիպտոս իւզ կը տանին :

3 - Տէրը Յուդայի հեա ալ վէճ ունի, Ու Յակոբի անոր ճամբաներուն համեմատ այցելութիւն պիտի ընէ,

Ու անոր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ անոր :

4 - Անհկա արգանդի մէջ իր եղբօրը գարշապարէն բռնեց,

*Կ՝, քաղաք չեմ մաներ

Եւ իր ուժովը Աստուծոյ հետ ըմբշամարտեցաւ:

5 - Ու հրեշտակին հետ ըմբշամարտեցաւ և այժը հասաւ,

Լացաւ և անկէ շնորհք խնդրեց.

Չանկկա Բեթէլի մէջ գտաւ,

Ու հոն մեղի հետ խօսեցաւ Անիւ,

6 - Այսինքն զօրաց Տէր Աստուածը,

Որուն յիշատակը Եհովա է:

7 - Ուրեմն դուն քու Աստուծոյդ դարձիր,

Ողորմութիւն ու իրաւունք պահէ,

Ու միշտ քու Աստուծոյդ յուսա:

8 - Եփրեմ վաճառական է, անոր ձեռքը նենգութեան կշիռ կայ,

Անկկա հարստահարելը կը սիրէ:

9 - Ու Եփրեմ ըսաւ, Իրաւցընէ հարրատացայ,

Ինծի ստացուածք գտայ.

Իմ ամէն վաստակներուս կողմէն

Անօրէնութիւն պիտի չգանեն իմ վրաս, որ մեղք ըլլայ:

10 - Իսկ ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ:

Քեզ տակաւին վրաններու մէջ պիտի բնակեցնեմ՝ հանդիսար տօնի օրերուն պէս:

11 - Եւ մարգարէներուն միջոցով խօսեցայ,

Ու տեսիլքները շատցուցի,

Ու մարգարէներուն ձեռքով նմանութիւններ գործածեցի:

12 - Արգարե Գաղատա անօրէն է. արգարե ունայնութիւն եղան.

Գաղգաղայի մէջ առջուներ մորթեցին,

Անոնց սեղանները անգամ արտի ահօսներուն վրայ եղող քարակոյտներու պէս են:

13 - Եւ Յակոբ Ասորոց դաշար փախաւ,

Ու Իսրայէլ կնոջ համար ծառայութիւն ըրաւ,

Ու կնոջ համար հովիւ եղաւ:

14 - Եւ Տէրը մէկ մարգարէով Լեզիպտոսէ հանեց Իսրայէլը,

Ու անկկա մէկ մարգարէով պահպանուեցաւ:

15 - Եփրեմ դառնապէս բարկացուց Սոփոնի.

Անոր համար անոր արիւնները անոր վրայ պիտի ձգէ,

Ու անոր Տէրը անոր նախատիկքը անոր պիտի հատուցանէ:

ԳԼ. ԺԳ

Եփրեմ երբ դողալով կը խօսէր, Իսրայէլի մէջ բարձրացաւ, Բայց երբ Բահաղով յանցաւոր եղաւ, մեռաւ:

2 - Ու հիմա նորէն մեղք կը գործեն, Ու իրենց համար իրենց արժաթէն՝ Իրենց խելքովը ձուլածոյ կուռքեր արձաններ կը շինեն,

Որոնց ամէնը արուեստաւորի գործեր են.

Իրենք անոնց համար կ'ըսեն, Չո՛հ ընող մարդիկը թող սրթերը համբուրեն:

3 - Անոր համար անոնք առաւօտեան ամպին պէս,

Ու կանուխ իջած վաղանցիկ ցօղին պէս, կալէն փոթորիկով վերցուած մղեղին պէս,

Ու ծխնելոյզէն ելած ծուխին պէս պիտի ըլլան.

4 - Սակայն ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ.

Ու ինծմէ ուրիշ աստուած չգիտնաս, Քանզի ինծմէ ուրիշ Փրկիչ մը չկայ:

5 - Ես քեզ անապատի մէջ Խիսա անջուր երկրի մէջ ճանչցայ:

6 - Անոնք իրենց արօտին համեմատ կշտացան,

Կշտացան ու անոնց սիրտը բարձրացաւ.

Անոր համար զիս մոռցան:

7 - Ուստի անոնց առիւծի պէս պիտի ըլլամ,

Ճամբուն քով ընձու պէս դարանամուտ պիտի ըլլամ:

8 - Իր ձագերը կորսնցուցած արջու պէս անոնց պիտի հանդիպիմ,

Ու անոնց սրտին վարագոյրը պիտի պատառեմ,

Եւ զանոնք հոն առիւծի պէս պիտի ուտեմ.

Չանոնք դաշտի գազանը պիտի պատառէ:

9 - Դուն քեզ կորսնցուցիր, ով Իսրայէլ,

Բայց քու օգնութիւնդ ինծմէ է:

10 - Հիմա ո՞ւր է քու թագաւորդ, Որպէս զի քու բոլոր քաղաքներուդ մէջ քեզ պալատէ.

Եւ ո՞ր էն այն դատաւորները, Որոնց համար ըսիր թէ Ինծի թագաւոր ու իշխաններ տուր:

- 11 - Իմ՝ բարկութիւնովս քեզի թա-
գաւոր տաւի,
- Ու իմ՝ սրամտութիւնովս առի :
- 12 - Եփրեմի անօրէնութիւնը կապ-
ուած՝
- Անոր մեղքը պահուած է :
- 13 - Անոր վրայ ծննդական կնոջ ցա-
ւերը պիտի հասնին .
- Անիկա իմաստուն աղայ չէ .
- Ապա թէ ոչ՝ արգանդին բերանը աշ-
խատէն չէր կենար :
- 14 - Չանոնք գերեզմանին ձեռքէն պի-
տի փրկեմ ,
- Չանոնք մահուանէ պիտի ազատեմ .
- Քու ժանտախտդ ո՞ւր է , ով մահ .
- Քու աւերումդ ո՞ւր է , ով գերեզման .
- Իմ աչքերէս զղջումը պիտի ծածկուի :
- 15 - Թէեւ անիկա եղբայրներուն մէջ
պաղաքեր ըլլայ ,
- Արեւելեան հովը պիտի գայ ,
- Ու անապատէն Տէրոջը հովը պիտի
ելլէ .
- Եւ անոր աղբիւրը պիտի ցամքի ,
- Ու անոր աղբերակը պիտի չորնայ .
- Անիկա բոլոր ցանկալի ամաններուն
գանձը պիտի կողոպտէ :
- 16 - Սամարիա աւերակ պիտի ըլլայ ,
- Քանզի իր Աստուծակէն ապստամբեցաւ .
- Անոնք սրով պիտի կլնան ,
- Անոնց պղտիկ աղաքը գետինը պիտի
զարնուին ,
- Ու յղի կիները պիտի ճեղքուին :

ԳԼ ԺԳ

- Ով Իսրայէլ , քու Տէր Աստուծոյդ
դարձիր ,
- Քանզի քու անօրէնութեանդ պատճա-
ռաւ գլորեցար :
- 2 - Ձեզի հեա խօսքեր առէք ու Տէրոջը
դարձէք .
- Անոր ըսէք , Ամէն անօրէնութիւնը վեր-
ցուր
- Եւ Բեշ բարութեամբ ընդունէ ,

- Ու մեր շրթունքներուն *զոհերը պիտի
մտաւոյցանենք :
- 3 - Ասորեստանցին մեզ պիտի չփրկէ .
- Չիրոււ վրայ պիտի չհեծնենք ,
- Ու մէյմըն ալ մեր ձեռքերուն գործին՝
Մեր Աստուածն ես՝ պիտի չըսենք ,
- Քանզի որբը քեզմէ սղորմութիւն կը
գանէ :
- 4 - Անոնց ապստամբութիւնը պիտի
բժշկեմ ,
- Չանոնք ճրիտպէս պիտի սիրեմ ,
- Քանզի իմ՝ բարկութիւնս անոնցմէ
դարձաւ :
- 5 - Իսրայէլի՝ ցօղի պէս պիտի ըլլամ ,
- Անիկա շուշանի պէս պիտի ծաղկի ,
- Եւ իր արմատները Լիբանանի Էզելնի-
բուն պէս պիտի արձակէ :
- 6 - Անոր սասերը պիտի տարածուին ,
- Ու անոր վայելչութիւնը ձիթենիի պէս
պիտի ըլլայ ,
- Եւ անոր անուշահոտութիւնը Լիբա-
նանի պէս պիտի ըլլայ :
- 7 - Անոր հովանիին տակ նստողները
պիտի դառնան ,
- Յորենի պէս՝ պիտի կենդանանան ,
- Ու որթի պէս պիտի ծաղկին .
- Անոր յիշատակը Լիբանանի գինիին
պէս պիտի ըլլայ :
- 8 - Եփրեմ՝ շեշ շեշ , կուռքերու հեա
ալ ի՞նչ բան ունիմ :
- Ես անոր խնդրուածքը լսեցի ու անոր
խնամք տարի .
- Ես կանանչ մայր ծառի պէս եմ ,
- Քու պտուղդ ինձմէ է :
- 9 - Ո՞վ է իմաստուն՝ որ ասոնք հաս-
կընայ ,
- Ամ խոհեմ՝ որ ասոնք գիտնայ .
- Քանզի Տէրոջը ճամբաները շիտակ են ,
- Ու արդարները անոնց մէջ պիտի քա-
լեն .
- Բայց յանցաւորները անոնց մէջ պիտի
գլորին :

*ԵՔԲ. զուարակները



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎԵԼԵԱՅ



ԳԼՈՒԽ Ա.

Տէրոջը խօսքը՝ որ եղաւ Փորթուէլի որդւոյն Յովէլի:

2 - Լսեցէք ասիկա, ով ձերեր, Ու ակամօջ տուէք, ով երկրի բոլոր բնակիչները,
Միթէ այսպիսի բան մը եղա՞ւ ձեր օրերուն մէջ,
Կամ՝ ձեր հայրերուն օրերուն մէջ:

3 - Ասիկա ձեր օրգիններուն պատմեցէք,
Ու ձեր օրգինները իրենց օրգիններուն,
Ու անոնց օրգինները յետագայ ազգին պարօքն:

4 - Խառնիճին թողածը մարտիը կերաւ,
Ու մարտիին թողածը ջրեակը կերաւ,
Ու ջրեակին թողածը գրուիճը կերաւ:

5 - Արթնցէք, ով գինովներ, ու լացէք,
Եւ դուք ամէնդ, ով գինի խմողներ, Սուգ բռնեցէք քաղցուին համար,
Քանզի ձեր բերնէն կտրեցաւ:

6 - Վասն զի իմ՝ երկրիս վրայ Զօրաւոր ու անթիւ ազգ մը ելաւ.
Անոր ակռանները առիւծի ակռաններ են,
Ու անիկա մատակ առիւծի ժանիքներ ունի:

7 - Անիկա իմ՝ որթս աւրեց,
Եւ իմ թզենիս կտորտեց.
Զանիկա բոլորովին մերկացուց ու վարձգեց,
Անոր ուռերը ճերմկցան:

8 - Ողբ բրէ կոյսի մը պէս՝
Որ իր մանկութեան էրկանը համար քուրձ հագած է՝ ողբայ:

9 - Հացի ընծան ու թափելու նուէրը Տէրոջը տունէն կտրեցան.
Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները սուգ կը բռնեն:

10 - Արտերը աւրեցան, երկիրը սուգ կը բռնէ,
Քանզի ցորենը աւրեցաւ,
Նոր գինին չորցաւ, իւզը պակսեցաւ:

11 - Ամչեցէք, ով երկրագործներ,

Ողբացէք, ով այգեգործներ,
Թէ՛ ցորենին համար և թէ՛ գարին համար,
Քանզի արտերուն բերքը կորսուեցաւ:
12 - Որթը չորցաւ ու թզենին նուազեցաւ.
Նանենին, արմուենին, խնձորենին, Արտին բոլոր ծառերը չորցան.
Այսպէս մարդոց օրգիններէն ուրախութիւնը վերցաւ:

13 - Քաջ հագէք ու ողբացէք, ով քահանաներ.
Հառաչեցէք, ով սեղանին պաշտօնեաները.
Եկէք, ով իմ՝ Աստուծոյս ծառաները, Գիշերը քուրձերու մէջ անցուցէք,
Քանզի հացի ընծան ու թափելու նուէրը
Ձեր Աստուծոյն տունէն վերցան:

14 - Ծամապահութեան օր սրտեցէք,
Հանդիսաւոր ժողով քարոզեցէք.
Ծերերը ու երկրին բոլոր բնակիչները
Ձեր Տէր Աստուծոյն տունը ժողովեցէք,
Ու Տէրոջը աղաղակեցէք:

15 - Վաս՛յ այն օրուան համար,
Քանզի Տէրոջը օրը մտա է,
Ու Ամենակարողէն ելա՞ծ աւերումի պէս պիտի գայ:

16 - Ահա մեր աչքին առջևէն կերակուրը,
Մեր Աստուծոյն տունէն ուրախութիւնը ու ցնծութիւնը կտրեցաւ:

17 - *Հողին չոր կոշտերուն տակ սերմերը փակեցան,
Շտեմարանները ամայի մնացին, ամբարները աւրեցան,
Քանզի ցորենը խորշակահար եղաւ:

18 - Ի՛նչպէս կը հեծեն անասունները.
Արջառներուն անդեանները աստանգական կը պարտին,
Քանզի անոնց համար արօտ չկայ,
Ոչխարներուն հօտերն ալ կորսուեցան:

19 - Քեզի պիտի աղաղակեմ, ով Տէր,
Քանզի անապատին արօտները կրակը կերաւ,

*Եբր. Իրենց

Ու դաշտին բոլոր ծառերը բոցը այրեց:
 20 - Գաշտին անասունները անգամ
 քեզի կը նային,
 Քանզի ջուրերուն վտակները ցամքեր
 են,
 Ու անապատին արօտները կրակը կե-
 րեր է:

ԳԼ. Բ

Սրօնի մէջ փող հնչեցուցէք,
 Եւ իմ սուրբ լեռանս վրայ ազգարա-
 րութեան ձայն վերցուցէք.
 Երկրին բոլոր բնակիչները դողան,
 Քանզի Տէրոջը օրը կու գայ, վտան զի
 մօտ է,
 2 - Խաւարի ու մէգի օրը,
 Ամպի ու մառախուղի օրը.
 Ինչպէս արշալոյսը լեռներուն վրայ կը
 տարածուի,
 Այնպէ՞ շատուոր ու զօրաւոր ժողո-
 վուրդ մը պիտի գայ,
 Որուն ի յաւիտենից նմանը չէ եղած,
 Ու անկէ ետքը մէյմըն ալ պիտի չըլլայ
 Յեառագայ ժամանակին մէջ դարէ դար:
 3 - Անոր առջևէն կրակը պիտի սպառէ,
 Ու ետևէն բոցը պիտի այրէ.
 Երկիրը անոր առջև Եդեմի դրախտին
 պէս,
 Եւ անոր ետևը ամայի անապատ պիտի
 ըլլայ,
 Ու անկէ բան մըն ալ պիտի չազատի:
 4 - Անանց կերպարանքը ձերու կեր-
 պարանքին պէս է,
 Ու անոնք ձեռքներու պէս պիտի վա-
 զեն:
 5 - Լեռներու գլուխներուն վրայ կառ-
 քերու ձայնին պէս,
 Յարգը ուտող կրակի բոցին ձայնին
 պէս,
 Պատերազմի շարուած զօրաւոր ժողո-
 վուրդի պէս պիտի ցաթկեն:
 6 - Անանց երեսէն ժողովուրդները պի-
 տի տազնապին,
 Ամէն երեսները գոյներնին պիտի նե-
 տեն:
 7 - Անոնք զօրաւորներու պէս պիտի
 վազեն,
 Պատերազմական մարդոց պէս պա-
 րիսպներու վրայ պիտի ելլեն,
 Եւ ամէն մէկը իրենց ճամբուն մէջ
 պիտի քայլեն,
 Ու իրենց շաւիղները պիտի չփոխեն,
 8 - Ու մէկզմէկ պիտի չՏրեն,

Ամէն մէկը իր ճամբուն մէջ պիտի
 քայլէ.
 Ու եթէ սուրի վրայ ալ կ'յնան՝ պիտի
 չվիրաւորին:
 9 - Քաղաքին մէջ պիտի պարտին,
 Ու պարսպին վրայ պիտի վազեն.
 Տուները պիտի ելլեն,
 Գողի պէս պատուհաններէն պիտի
 մտնեն:
 10 - Անանց երեսէն երկիր պիտի դողայ,
 Երկինք պիտի տարտի,
 Արևը ու լուսինը պիտի խաւարին,
 Ու աստղերը իրենց պայծառութիւնը
 ետ պիտի քաշեն:
 11 - Եւ Տէրը իր զօրքերուն առջև իր
 ձայնը պիտի տայ,
 Քանզի անոր բանակը խիստ մեծ է,
 Քանզի անոր խօսքը ի գործ դնողը զօ-
 րաւոր է,
 Քանզի Տէրոջը օրը մեծ ու խիստ ա-
 ճեղ է,
 Եւ ո՞վ կրնայ անոր դիմանալ:
 12 - Սակայն հիմա ալ Տէրը այնպէ՞
 կ'ըսէ.
 Ինձի դարձէք ձեր բոլոր սրտովը
 Ծամապահութեամբ, լալով ու սգա-
 լով,
 13 - Ու ձեր սիրտերը պատուեցէք և
 ոչ թէ ձեր հանդերձները,
 Եւ ձեր Տէր Աստուծոյն դարձէք.
 Քանզի անիկա սղորմած ու զթած
 Երկայնամիտ ու բազումնողով է,
 Ու չարիքի համար կը զղջայ:
 14 - Ո՞վ գիտէ, թերևս անիկա դառ-
 նայ ու զղջայ,
 Ու իր ետևէն օրհնութիւն թողու,
 Որպէ՞ զի Խաչի շուրջ Տէր Աստուծոյն
 Հացի ընծայ ու թափելու նուէր մա-
 րացանէ:
 15 - Սրօնի մէջ փող հնչեցուցէք,
 Ծամապահութեան օր սրուցէք,
 Հանդիսաւոր ժողով քարոզեցէք.
 16 - Ժողովուրդը ժողվեցէք, ժողովքը
 սրբեցէք, ձերերը հաւաքեցէք.
 Տղաքները ու կաթնկեր մանուկները
 ժողվեցէք.
 Փեսան իր սենեակէն թող ելլէ,
 Ու հարօր՝ իր առաջատան:
 17 - Տէրոջը պաշտօնը կատարող քա-
 հանաները
 Արահին ու սեղանին մէջտեղ թող
 լան,
 Ու ըսեն, Ով Տէր, քու ժողովուրդիդ
 խնայէ,

Եւ քու ժառանգութիւնդ նախատին-
քի մի տար,
Որ ազգերը անոնց վրայ տիրեն.
Ինչո՞ւ համար ժողովուրդներուն մէջ
լսեն թէ
Ո՞ւր է անոնց Աստուածը:
18 - Այն ատեն Տէրը իր երկրին հա-
մար պիտի նախանձի,
Ու իր ժողովուրդին պիտի սղորմի :
19 - Եւ Տէրը պատասխան պիտի տայ,
ու իր ժողովուրդին ըսէ,
Ահա ես ձեզի ցորեն, գինի ու իւղ պի-
տի զրկեմ,
Ու անոնցմով պիտի կշտանաք,
Եւ ձեզ մէյմըն ալ ազգերուն մէջ
նախատինք պիտի չընեմ :
20 - Ու հիւսիսային զբոս ձեր վրայէն
պիտի հեռացնեմ :
Ու անոր երեսը դէպի արեւելեան ծովը,
Ու ետեւը դէպի արեւմտեան ծովը ըլ-
լալով,
Չանհկա չոր ու ամայի երկիր մը պիտի
քշեմ :
Ու անոր գէշ հտար պիտի ելլէ,
Եւ անոր գարշահոտութիւնը պիտի
բարձրանայ,
Քանզի մեծ բաներ ըրաւ :
21 - Մի վախնար, ով երկիր, ցնծաւ և
ուրախացիր,
Քանզի Տէրը մեծ բաներ պիտի ընէ :
22 - Ով դաշտի անասուններ, մի վախ-
նաք,
Քանզի անապատին արօտները կը կա-
նանչին,
Քանզի ծառը իր պտուղը կու տայ,
Թղենին ու սրթը իրենց զօրութիւնը
կու տան :
23 - Եւ դուք, ով Սիօնի սրգիներ,
Ձեր Տէր Աստուծով ցնծացէք և ու-
րախ եղէք,
Քանզի անհկա *չափաւորապէս առա-
ջին անձրևը ձեզի կու տայ,
Ձեզի անձրև կ'իջեցնէ, առաջին անձ-
րևը ու վերջին անձրևը, առա-
ջին ամառն մէջ :
24 - Եւ կաշերը ցորենով պիտի լեցուին,
Ու հնձանները գինիով ու իւղով պի-
տի յորդին :
25 - Ու ձեզի ետ պիտի տամ այն տա-
րիներուն յոս-՛նէբը,
Չորոնք մարտիր, ջրեակը, գրուի՛ծը
ու խաւնի՛ծը,

*Եբբ. արգարութեամբ

Ձեր մէջ զրկած իմ՝ մեծ զօրքս, կե-
րաւ :
26 - Եւ առաստօրէն պիտի ուտէք ու
կշտանաք,
Ու ձեր Տէր Աստուծոյն անունը պիտի
օրհնէք,
Որ ձեզի համար հրաշքներ ըրաւ :
Եւ իմ՝ ժողովուրդս յաւիտեան պիտի
չամչնայ :
27 - Ու պիտի գիտնաք թէ ես Իսրա-
յէլի մէջ եմ,
Եւ թէ ձեր Տէր Աստուածը ես եմ, և
ուրիշ մը չկայ :
Եւ իմ՝ ժողովուրդս յաւիտեան պիտի
չամչնայ :
28 - Ու պիտի ըլլայ որ ասկէ ետեւ
իմ՝ Հոգիս ամէն մարմնի վրայ պիտի
թափեմ :
Ու ձեր աղաքը և ձեր ազջիկները պի-
տի մարգարէանան,
Ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն,
Ու ձեր երիտասարդները տեսիլքներ
պիտի տեսնեն :
29 - Եւ ծառաներուն վրայ ու աղա-
խիներուն վրայ ալ
Այն օրերը իմ՝ Հոգիս պիտի թափեմ :
30 - Ու երկինքի մէջ ու երկրի վրայ
նշաններ պիտի դնեմ,
Արիւն ու կրակ և ծուխի սիւներ :
31 - Արևը խաւարի պիտի դառնայ,
ու լուսինը արիւնի,
Դեռ Տէրօջը մեծ ու ահեղ օրը չեկած :
32 - Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ
Տէրօջը անունը կանչէ, պիտի
ազատի :
Քանզի Տէրօջը ըսածին պէս՝
Սիօն լեռանը վրայ ու Երուսաղէմի մէջ
փրկութիւն պիտի ըլլայ,
Ու նաեւ այն մնացորդներուն մէջ՝ զո-
րոնք Տէրը պիտի կանչէ :

ԳԼ. Գ

Քանզի ահա այն օրերը ու այն ժա-
մանակը,
Որ ես Յուդայի ու Երուսաղէմի գերու-
թիւնը ետ պիտի դարձնեմ,
2 - Այն ատեն բոլոր ազգերը պիտի
ժողովեմ,
Ու զանոնք *Յովսափատու հովիտը պի-
տի իջեցնեմ,
Եւ հոն անոնց հետ դատ պիտի վարեմ,

*Այսինքն, Տէրօջը դատաստանին

Իմ ժողովուրդիս ու իմ ժառանգու-
թեանս Իսրայէլի համար,
 2- Զոր ազգերու մէջ ցրուեցին,
 Աւ իմ երկիրս բաժնեցին,
 3 - Եւ իմ ժողովուրդիս համար վիճակ
 ձգեցին .
 Աւ աղան պունիկի վարչի տեղ տուին,
 Եւ աղջիկը դինիի համար ծախեցին,
 Երպէս զի խմեն :
 4 - Աւ նսե դուք ինծի հեա ի՞նչ բան
 ունիք,
 Ավ Տիւրաս ու Սիզոն, և Փղշտացւոց
 բոլոր սահմանները ,
 Միթէ դուք ինծի հատուցում պիտի
 ընէք .
 Եթէ դուք ինծի հատուցում ընէք,
 Շուտով * - անյապաղ ձեր հատու-
 ցումը ձեր գլուխը պիտի դար-
 ձնեմ :
 5-Քանզի իմ արծաթս ու ոսկիս աւելք,
 Աւ իմ աղէկ ու ցանկալի բաներս ձեր
 մեհեանները տարիք .
 6 - Եւ Յուդայի որդիները ու Երուսա-
 ղէմի որդիները
 Յունաց որդիներուն ծախեցիք,
 Արպէս զի զանոնք իրենց սահմանէն
 հեռացնէք :
 7 - Ահա ես զանոնք պիտի արթնցնեմ
 այն տեղէն՝ ուր դուք զանոնք
 ծախեցիք,
 Եւ ձեր հատուցումը ձեր գլխուն վրայ
 պիտի դարձնեմ .
 8 - Աւ ձեր աղաքներս ու աղջիկները
 Յուդայի որդիներուն ձեռքը
 պիտի ծախեմ ,
 Եւ անոնք հեռաբնակ ազգի , Սաւա-
 յեցւոց, պրտի ծախեն զանոնք,
 Քանզի Տէրը խօսեցաւ :
 9 - Ասիկա ազգերու մէջ հրատարա-
 կեցէք,
 Պատերազմ քարոզեցէք,
 Զօրաւորները արթնցուցէք,
 Բոլոր պատերազմական մարդիկը մօ-
 տենան * - ելլեն :
 10 - Զեր խօփերը սուրեր շինեցէք,
 Աւ ձեր յօտացները՝ նիզակներ .
 Տկար եղողը Ես զօրաւոր եմ՝ թող
 ըսէ :
 11 - Շուտով եկէք, սվ բոլոր շրջակայ
 ազգեր, ու ժողովուրդեցէք .
 Քու զօրաւորներդ, սվ Տէր, հոն իջե-
 ցուր :

*Եբբ. ձեռնեցէք

12 - Ազգերը թող արթնանն ու Յով-
 սափատու հովիտը ելլեն,
 Քանզի բոլոր շրջակայ ազգերը դատե-
 լու համար հոն պիտի նստիմ :
 13 - Մանգաղը երկնցուցէք, քանզի
 հունձքը հասած է .
 Եկէք, իջէք, քանզի հնձանը լեցուե-
 ցաւ,
 Աւազանները կը յորդին .
 Քանզի անոնց շարութիւնը մեծ է :
 14-Բազմութիւններ, բազմութիւններ
 իջէ՛ք * - Եւ Վճուոյ հովիտին մէջ,
 Քանզի Տէրոջը օրը մօտ է Վճուոյ հո-
 վիտին մէջ :
 15 - Արևը ու լուսինը պիտի խաւարին,
 Եւ աստղերը իրենց պայծառութիւնը
 ետ պիտի քաշեն .
 16 - Տէրը Սիօնէ պիտի գոչէ,
 Աւ Երուսաղէմէ իր ձայնը պիտի տայ,
 Եւ երկինք ու երկիր պիտի սարսին .
 Բայց Տէրը իր ժողովուրդին ապաւէն,
 Աւ Իսրայէլի որդիներուն ամբութիւն
 պիտի ըլլայ :
 17 - Եւ պիտի գիտնաք թէ ես եմ ձեր
 Տէր Աստուածը ,
 Ար իմ սուրը լեռանս, Սիօնի, մէջ կը
 բնակիմ .
 Աւ Երուսաղէմ սուրը պիտի ըլլայ,
 Եւ անկէ մէյմըն ալ օտարներ պիտի
 չանցնին :
 18 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը լեռ-
 ները քաղցու պիտի կաթեցնեն,
 Աւ բլուրները կաթ պիտի վազցնեն,
 Եւ Յուդայի բոլոր ձորերը ջուրեր պի-
 տի քաղեցնեն .
 Աւ Տէրոջը տունէն աղբիւր պիտի ելլէ,
 Եւ Սաաիմի ձորը պիտի սուսգէ :
 19 - Յուդայի որդիներուն եղած անի-
 բաւութեանը համար
 Եզրպատս ամուսնութիւն պիտի ըլլայ,
 Աւ Եգիպտոս ամուսնի անապատ պիտի ըլ-
 լայ,
 Քանզի անոնց երկրին մէջ անմեղ ա-
 րիւն թափեցին :
 20 - Բայց Յուդա մարդարնակ պիտի
 ըլլայ յաւիտեան,
 Եւ Երուսաղէմ՝ դարէ դար :
 21 - Եւ *պիտի մտքեմ՝ անոնց արիւնը
 զո՛ր մտքած չէի՝ .
 Եւ Տէրը Սիօնի մէջ պիտի բնակի :

*Կա՛մ, անոնց արեանը վրէժխնդիր պի-
տի ըլլամ, ու անպարտ պիտի չթու-
զում

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄՈՎՍԱՅ



ԳԼՈՒԽ Ա.

Թեկուէի հովիւներուն մէջէն եղող Ամսվոյի խօսքերն են, որոնք Յուդայի թագաւորին Ոգիայի օրերը ու Իսրայէլի թագաւորին Յովտայի օրդւոյն Յերոբոս-վամի օրերը, գեանաշարժէն երկու տարի աւաջ, աեսիլքով անոր յայտ-նուեցան Իսրայէլի վրայով: 2 - Աւ

րասւ:
Տէրը Սիօնէ պիտի գոչէ,
Ու Երուսաղէմէ իր ձայնը պիտի առայ:
Եւ հովիւներուն արօտները սուգ պիտի բռնեն,

Ու Կարմեղոսի գլուխը պիտի չորնայ:
3 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Գամուսկոսի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պարտիճ էս
պիտի չդարձնեմ.

Քանզի անոնք Գաղատազը երկաթէ կամիտապլերով ծեծեցին.
4 - Սակայն Ազայէլի տանը վրայ կրակ պիտի զրկեմ,

Ու Բենադազի պալատները պիտի ուտէ:
5 - Եւ Գամուսկոսի նիգերը պիտի կտարրտեմ,

Ու Աւենի դաշտէն բնակիչը,
Ու Եգեմի տունէն գաւազան բռնողը
պիտի կտարեմ.

Եւ Ատրուց ժողովուրդը Կիր գերի պիտի քշուի, կ'ըսէ Տէրը:
6 - Տէրը այսպէս կ'ըսէ.

Գազայի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պարտիճ էս
պիտի չդարձնեմ.

Քանզի անոնք գերիները բոլորովին գերի քշեցին,
Որպէս զի Եգովմի ձեռքը մատնեն.

7 - Սակայն Գազայի պարսպին վրայ կրակ պիտի զրկեմ,
Ու անոր պալատները պիտի ուտէ.

8 - Եւ Ազովտոսէ բնակիչը,
Ու Ասկաղոնէ գաւազան բռնողը պիտի կտարեմ,

Եւ իմ ձեռքս Ակկարոնի վրայ պիտի դարձնեմ,
Ու Փղշտացուց մնացորդը պիտի կտար-
սուի,

Կ'ըսէ Տէր Եհովա:

9 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Տիւրոսի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պարտիճ էս
պիտի չդարձնեմ.

Քանզի գերիները բոլորովին Եգովմի ձեռքը մատնեցին,
Ու եղբայրական ուխտը չյիշեցին.

10 - Սակայն Տիւրոսի պարսպին վրայ կրակ պիտի զրկեմ,
Ու անոր պալատները պիտի ուտէ:

11 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Եգովմի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պարտիճ էս
պիտի չդարձնեմ.

Քանզի իր եղբայրը սրով հալածեց,
Ու իր սղորմութիւնը կտրեց.

Եւ իր բարկութիւնը միշտ պատուեց,
Ու իր կատաղութիւնը յաւիտեան պա-
հեց.

12 - Սակայն Թեմանի վրայ կրակ պի-
տի զրկեմ,
Ու Բօսրայի պալատները պիտի ուտէ:

13 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Սամանի օրդիւներուն երեք յանցանքին
համար,
Ու չորսին համար անոնց պարտիճ էս
պիտի չդարձնեմ.

Քանզի Գաղատազի յղի կիները ճեղքե-
ցին,

Որպէս զի իրենց սահմանները լայնցնեն:
14 - Սակայն Ռաբբայի պարսպին վրայ
կրակ պիտի բռնկեցնեմ,

Ու անոր պալատները պիտի ուտէ.
Ասիկա պատերազմի օրը ազաղակով
Ու փութորիկի օրը խռովութեամբ պիտի
չլլայ:

15 - Եւ անոնց թագաւորը՝ գերու-
թեան պիտի երթայ,
Ինք ու իր իշխանները մէկտեղ, կ'ըսէ
Տէրը:

ԳԼ. Բ

Տէրը այսպէս կ'ըսէ.
Մովաբի երեք յանցանքին համար,

*Կա՛մ, Մեղքամբ. Երեմ. իթ. 3:

- 11 - չորսին համար անոր պատիժը ետ պիտի չգարձնեմ.
- Քանզի Եգովմի թագաւորին սակորները մինչև կիր դառնալը պրեց.
- 2 - Սակայն Մովսէի վրայ կրակ պիտի զրկեմ,
- Ու կարիօթի պալատները պիտի ուտէ,
- Ու Մովսէ խռովութեամբ, աղաղակով
- փողի ձայնով պիտի մեռնի.
- 3 - Եւ անոր մէջէն դատաւորը բնաջինջ պիտի ընեմ.
- Ու անոր հետ անոր բոլոր իշխանները պիտի մեռցնեմ, կ'ըսէ Տէրը:
- 4 - Տէրը պայպէս կ'ըսէ.
Յուգայի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պատիժը ետ պիտի չգարձնեմ.
Քանզի Տէրսը օրէնքը անարգեցին,
Ու անոր պատաւիրանքները չպահեցին.
Հապա իրենց ստութիւնները զիրենք մոլորեցուցին,
Որոնց հեռուող եղեր էին իրենց հայրերը.
- 5 - Սակայն Յուգայի վրայ կրակ պիտի զրկեմ,
- Ու Երուսաղէմի պալատները պիտի ուտէ:
- 6 - Տէրը պայպէս կ'ըսէ.
Իսրայէլի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պատիժը ետ պիտի չգարձնեմ.
Քանզի անոնք արդարը ստակով
Ու անանկը զոյգ մը կօշիկով ծախեցին.
- 7 - Անոնք *աղքատներուն գլխուն վրայ եղչ երկրի հողին կը ցանկան*,
Ու չքաւորներուն ճամբան կը ծռեն.
Եւ իմ սուրը անունս պղծելու համար Տղան ու հայրը Գեւոր աղջկան կը մանեն.
- 8 - Ու ամէն սեղանի քով
Գրաւ առնուած հանգերձներու վրայ կը պառկին,
Եւ իրենց աստուածներուն ամնը մէջ
Զրկուածներուն գինին կը խմեն:
- 9 - Բայց ես անոնց առջևէն Ամօրհացին բնաջինջ րբի,
Որուն բարձրութիւնը եղեւիններու բարձրութեանը պէս էր,
Եւ անիկա կաղնիներու պէս ամուր էր.
Ու վերէն անոր պատուրը

*Կ-ժ, աղքատներուն գլուխը երկրի հողին վրայ *տ+ւ կը կոխեն

- Եւ վարէն անոր արմատները բնաջինջ րբի:
- 10 - Ու ես ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի,
Եւ ձեզ քառասուն տարի անապատին մէջ պտրացուցի,
Որպէս զի Ամօրհացիին երկիրը ժառանգէք:
- 11 - Ու ձեր աղաքներէն մարգարէներ Եւ ձեր երիտասարդներէն ուխտաւորներ հանեցի.
Հիմա այսպէս չէ՞, ով Իսրայէլի օրդիներ, կ'ըսէ Տէրը:
- 12 - Բայց դուք ուխտաւորներուն գինի խմցուցիք,
Ու մարգարէներուն պատաւիրեցիք՝ ըսելով,
Մարգարէութիւն մի ընէք:
- 13 - Ահա ես *ձեր եղած տեղը ձեզ պիտի կոխեմ,
Ինչպէս որաներով լեցուն սայլը եւ անցա՞ր *բեղ կը կոխէ*:
- 14 - Եւ արագընթացը պիտի չկրնայ փախչիլ,
Եւ ուժով *արքէ պիտի չկրնայ իր պժը դործածել,
Եւ զօրաւորը պիտի չկրնայ իր անձը ազատել,
15 - Ու աղեղ բռնողը պիտի չկրնայ կայնիլ,
Եւ շուտ վազողը պիտի չկրնայ զեւ ազատել:
Ու ձի հեծնողը պիտի չկրնայ իր անձը ազատել.
- 16 - Եւ զօրաւորներուն մէջ քաջասիրտ եղողը
Այն օրը մերկ պիտի փախչի, կ'ըսէ Տէրը:

ԳԼ. Գ

Լսեցէք այս խօսքը, ով Իսրայէլի օրդիներ,
Զոր Տէրը ձեր վրայ կը խօսի,
Այն բոլոր ազգատոհմին վրայ,
Զոր Եգիպտոսի երկրէն հանեցի, ըսելով,
2- Երկրի բոլոր ազգատոհմներէն միայն ձեզ ճանչցայ,
Այս պատճառաւ ձեր բոլոր անօրէնութիւններուն համար ձեզ պիտի պատժեմ:

*Կ-ժ, ձեր տակը ճնշուած եմ, ինչպէս որ որաներով լեցուն սայլը կը ճնշուի

3 - Կարելի՞ է որ երկու ճարտ մէկտեղ
բայէն,
Եթէ միաբանութիւն չունենան:

4 - Միթէ առիւծը անտառին մէջ կը
մանչէ՞,
Եթէ որս մը չունենայ.
Առայգ առիւծը իր մորիէն իր ձայնը
կու տա՞յ,
Եթէ բան մը առած չըլլայ:

5 - Միթէ թռչունը երկրի վրայ վարմի
մէջ կ'իյնա՞յ,
Եթէ անոր համար որագայթ լարուած
չըլլայ.
Ու վարմը երկրէն կը վերցուի՞,
Երբ բան մը բռնած չէ:

6 - Եթէ քաղաքին մէջ փող հնչուի,
Ժողովուրդը չը՞ վախնար.
Միթէ քաղաքին մէջ չարիք մը կ'ըլ-
լա՞յ,
Եթէ Տէրը զանիկա բրած չէ:

7 - Յիրաւի Տէր Եհովա բան մը չը-
նէր,
Մինչև իր գաղանիքը իր ծառաներուն,
մարգարէներուն, չյայտնէ:

8 - Առիւծը մանչեց, ո՞վ պիտի չվախ-
նայ.
Տէր Եհովա խօսեցաւ, ո՞վ պիտի չմար-
գարէանայ:

9- Ազովտոսի մէջ պալատներու վրայ
Ու Եգիպտոսի երկրին մէջ պալատնե-
րու վրայ կանչեցէք ու ըսէք,
Սամարիայի լեռներուն վրայ ժողվուե-
ցէք,
Եւ անոր մէջ շատ խռովութիւններ
Ու անոր մէջ բռնութիւններ տեսէք:

10 - Քանզի ուղղութիւն ընել չեն գի-
տեր, կ'ըսէ Տէրը,
Իրենց պալատներուն մէջ զրկանք ու
յափշտակութիւն կը գիզեն:

11 - Անոր համար Տէր Եհովա այսպէս
կ'ըսէ.
Թշնամին երկրին բոլորտիքը պիտի ըլ-
լայ,
Ու քեզմէ քու ոյժդ պիտի իջեցնէ,
Եւ քու պալատներդ պիտի կողոպ-
տուին:

12 - Տէրը այսպէս կ'ըսէ.
Ինչպէս հովիւը առիւծին բերնէն
Երկու ազգը կամ մէկ ականջի կտոր
կ'ազատէ,
Այնպէս պիտի ազատին Իսրայէլի որ-
դիները,
Որոնք Սամարիայի մէջ բազմոցի ան-
կիւնը,

Ու *Իամասկոսի մէջ՝ անկողինի վրայ
կը նստին:

13 - Լսեցէք ու Յակոբի տանը վկա-
յութիւն ըրէք,
Կ'ըսէ զօրաց Ասաուածը, Տէր Եհովա,
14 - Որ այն օրը ուր Իսրայէլի յան-
ցանքներուն պատիժը անոր վրայ
բերեմ՝
Բեթէլի սեղաններն ալ պիտի պաա-
ծեմ.
Ու սեղանին եղջիւրները պիտի կտորին
ու գետինը պիտի իյնան:

15 - Եւ ձմեռնային տունը ու ամառ-
նային տունը պիտի զարնեմ՝
Ու փղոսկրեայ տուները պիտի կոր-
տուին,
Ու մեծ տուները բնաջինջ պիտի ըլլան,
Կ'ըսէ Տէրը:

ԳԼ Գ

Լսեցէք այս խօսքը, ով Սամարիայի
լեռանը վրայ եղող Բաասնի կո-
վեր,
Որ աղքատներուն զրկանք կ'ընէք,
Ու անանկները ոտքի տակ կ'առնէք,
Եւ ձեր տէրերուն՝ Բեր որ խմենք՝ կ'ը-
սէք:

2 - Տէր Եհովա իր սրբութիւնովը եր-
գում՝ ըրաւ,
Թէ ահա ձեր վրայ օրեր կու գան,
Որ ձեզ կարթերով պիտի վերցնէ,
Ու ձեր սերունդը՝ ձուկի կարթերով:

3 - Եւ փլած տեղերէն պիտի ելլէք ա-
մէն մէկդ իր երեսին դարձած
կողմէն,
Ու բերդը պիտի նետուիք, կ'ըսէ Տէրը:

4 - Բեթէլ եկէք ու յանցանք գործե-
ցէք.
Գաղգաղայի մէջ յանցանք ընելը շաա-
ցուցէք.
Եւ ամէն առտու ձեր զոհերը
Ու ամէն երէք օրը ձեր տասանորդները
բերէք:

5 - Եւ շնորհակալութեան զոհը խմոր-
եալ մատուցէք,
Ու կամուար ընծաներ քարոզեցէք -
հրատարակեցէք,
Քանզի այսպէս սիրեցիք, ով Իսրայէլի
որդիներ,
Կ'ըսէ Տէր Եհովա:

*Կա՛մ, Դամասկոսի կերպասով զար-
դարուած

6 - Եւ ես ալ ձեզի ձեր ամէն քաղաք-
ներուն մէջ ահուայի մաքրու-
թիւն ,

Ու ձեր ամէն տեղերը հացի կարօտու-
թիւն տուի ,

Սակայն ինծի չգարձաք , կ'ըսէ Տէրը :

7 - Ու նաև հունձքէն երեք ամիս ա-
ռաջ անձրևը ձեզմէ արգիլեցի .

Ու մէկ քաղաքին վրայ անձրև իջե-
ցուցի ,

Եւ միւս քաղաքին վրայ անձրև չիջե-
ցուցի .

Մէկ վիճակին վրայ անձրև եկաւ ,
Ու միւս վիճակը , սրուն վրայ անձրև
չեկաւ , չորցաւ :

8 - Ու երկու երեք քաղաք ջուր խմե-
լու համար

Մէկ քաղաքի մէջ ժողովուեցան ,
Բայց բաւական չգտան .

Սակայն ինծի չգարձաք , կ'ըսէ Տէրը :

9 - Ձեզ խորշակահարութեամբ ու
գալուկով զարկի .

Խառնիճը կերաւ ձեր բազմութիւ պար-
տէզները

Ու այգիները և թզենիները ու ձիթե-
նիները ,

Սակայն ինծի չգարձաք , կ'ըսէ Տէրը :

10 - Եզիպտոսի *ճամբուն մէջ՝ ձեր
վրայ ժանտախտ զրկեցի ,

Ձեր երիտասարդները սրով մեռցուցի ,

Ու ձեր ձիերը գերի ըրի ,

Եւ ձեր բանակներուն գարշահաստու-
թիւնը մինչև ձեր քիթը հանե-
ցի ,

Սակայն ինծի չգարձաք , կ'ըսէ Տէրը :

11 - Աստուծոյ կործանած Սոդոմին ու
Գոմորին պէս ձեզ ալ կործա-
նեցի ,

Ու կրակէ հանուած խանձողի պէս ե-
ղաք ,

Սակայն ինծի չգարձաք , կ'ըսէ Տէրը :

12 - Անոր համար քեզի այսպէս պիտի
ընեմ , ով Իսրայէլ ,

Ե- որովհետև քեզի այս բանը պիտի
ընեմ ,

*Բաւ Աստուածդ գիմաւորելու պատ-
րաստուէ , ով Իսրայէլ :

13 - Քանզի ահա ան որ լեռները հաս-
տատեց ու հովը ստեղծեց ,

Եւ կը յայտնէ մարդուն՝ թէ ի՞նչ է
անոր խորհուրդը ,

Արշալոյսը խաւար կ'ընէ ,

*Կամ, կերպովը

Ու երկրի բարձր տեղերուն վրայ կը
քալէ ,

Անոր անունը Եհովա , զորաց Աստ-
ուած է :

ԳԼ. Ե

Լսեցէք այս խօսքը , ձեր վրայ ըրած
ողբս ,

Ով Իսրայէլի տունը :

2 - Իսրայէլի կոյսը ինկած է , մէյմըն
ալ պիտի չելլէ .

Իր երկրին վրայ ձգուած է , զանկա
վերցնող չկայ :

3 - Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ .
Այն քաղաքին մէջ , ուրկէ հազար
կ'ելլէր ,

Հարիւր պիտի մնայ .

Եւ ուրկէ հարիւր կ'ելլէր ,

Տասը պիտի մնայ Իսրայէլի տանը :

4 - Քանզի Տէրը Իսրայէլի տանը այս-
պէս կ'ըսէ .

Ձիս փնտուեցէք , որպէս զի ապրիք :

5 - Բայց Բեթէլը մի փնտուէք ,

Ու Գազգաղա մի մանէք ,

Ու Բերսաբէէ մի անշնիք .

*Քանզի Գազգաղա անշուշտ գերու-
թեան պիտի քշուի ,

Ու Բեթէլ պիտի ոչնչանայ :

6 - Տէրը փնտուեցէք , որպէս զի ապրիք .

Ձրլլայ որ Յովսէփի տանը մէջ կրակի
պէս կ'ընայ ,

Եւ զանիկա ուտէ , ու Բեթէլի մէջ մա-
րող չըլլայ :

7 - Դուք որ իրաւունքը օշինդրի կը
գարձնէք ,

Ու արդարութիւնը գետինը կը ձգէք ,

8 - Փնտրեցէ՛ք զանկա որ Բազմաստե-
ղը ու Հայկը շինեց ,

Ու մահուան ստուերը աւաւտեան
լայի կը գարձնէ ,

Եւ ցորեկը գիշերուան պէս կը մթնցնէ ,

Ու ծովուն ջուրերը կը կանչէ ,

Ու զանոնք երկրի երեսին վրայ կը
թափէ .

Անոր անունը Եհովա է .

9 - Որ զօրաւորին վրայ յանկարծ կա-
րուստ կը բերէ ,

Ու կորուստը մինչև ամբողջ կը հասնի .

10 - Դրանը մէջ յանգիմանողը կ'ա-
տեն ,

Ու շիտակ խօսողէն կը զգուին :

11 - Ուստի , որովհետև աղքատին վրայ
կը կոխէք ,

Ու անկէ ցորենի պարգևներ կ'առնէք,
 Թէև տաշուած քարէ տուներ շինէք,
 Բայց անոնց մէջ պիտի չբնակիք.
 Ու թէև ցանկալի այգիներ անկէք,
 Բայց անոնց գինին պիտի չխմէք:
 12 - Քանզի ձեր շատ յանցանքները ու
 ձեր ծանր մեղքերը գիտեմ.
 Արդարը կը նեղէք, կաշառք կ'առնէք
 Ու դրանը մէջ անանկներուն դարձ
 կը ծուէք:
 13 - Անոր համար խելացի եղաղը այն
 տան պիտի լուէ,
 Քանզի ժամանակը չար է:
 14 - Բարութիւն փնտռեցէք ու ոչ թէ
 չարութիւն, որպէս զի սպրիք.
 Եւ այսպէս զօրաց Տէր Աստուածը ձեզի
 հետ պիտի ըլլայ, ինչպէս ըսիք:
 15 - Չարութիւնը ատեցէք, ու բարու-
 թիւնը սիրեցէք,
 Եւ դրանը մէջ իրաւունքը հաստատե-
 ցէք.
 Թերևս զօրաց Տէր Աստուածը Յովսէփի
 մնացորդին ողորմութիւն ընէ:
 16 - Անոր համար զօրաց Աստուածը,
 Տէր Եհովա, այսպէս կ'ըսէ.
 Ամէն հրապարակներու մէջ ողբ պիտի
 ըլլայ,
 Ու ամէն փողոցներու մէջ Վա՛յ, վա՛յ
 պիտի ըսեն,
 Ու երկրագործը սուգի, ու ողբ գիա-
 ցողները ողբալու պիտի կան-
 չեն:
 17 - Եւ ամէն այգիներու մէջ ողբ
 պիտի ըլլայ,
 Քանզի քու մէջէդ պիտի անցնիմ,
 կ'ըսէ Տէրը:
 18 - Վա՛յ անոնց՝ որ Տէրոջը օրուանը
 կը ցանկան.
 Ձեզի ինչ պիտի ըլլայ Տէրոջը օրը.
 Անիկա խաւար է և ոչ թէ լոյս.
 19 - Ինչպէս երբ մարդ մը առիւծին
 երեսէն փախչի,
 Ու արջ մը անոր հանդիպի,
 Եւ կամ տունը մտնէ ու ձեռքը պա-
 տին վրայ կռթնցնէ,
 Եւ զանիկա օձը խածնէ:
 20 - Ահա Տէրոջը օրը խաւար է և ոչ
 թէ լոյս,
 Ու անոր մէջ մտախուզ կայ և ոչ
 թէ պայծառութիւն:
 21 - Ձեր օտները կ'առեմ -- կը մեր-
 ժեմ,
 Եւ ձեր հանգիստաւոր ժողովներուն մէջ
 հոս պիտի չառնեմ:

22 - Եթէ ինծի ողջակէզներ ու ձեր հա-
 ցի ընծաները մտաուցանէք ալ՝
 Պիտի չընդունիմ,
 Եւ ձեր գէր անասուններուն խաղա-
 ղութեան զոհերուն պիտի չնա-
 յիմ:
 23 - Քու երգերուդ աղաղակը ինծմէ
 հեռացուր,
 Քանզի քու տաւիղներուդ եղանակը
 պիտի չլսեմ:
 24 - Բայց իրաւունքը ջուրի պէս թող
 վազէ,
 Ու արդարութիւնը զօրաւոր գետի
 պէս:
 25 - Միթէ անապատին մէջ քառա-
 տուն տարի
 ինծի զոհեր ու ընծաներ մտաուցիք,
 սվ Խորայէլի տունը.
 26 - Հապա դուք ձեր Մողղբի խորան-
 ները
 Ու ձեր Քիսնի կուռքերը
 Եւ ձեզի համար շինած աստուածներ-
 նուդ աստղը կրեցիք:
 27 - Ուստի ձեզ Դամասկոսէ անդին
 գերի պիտի քշեմ,
 Կ'ըսէ Տէրը, որուն անունը Չօրաց Աստ-
 ուած է:

ԳԼ. 9

Վա՛յ Սիօնի մէջ հանգիստ բնա-
 կողներուն,
 Ու Սամարիայի լեռանը վրայ ապահո-
 վութեամբ նստողներուն,
 Ազգաց գլուխին երեւելիներուն,
 Արոնց կը դիմէ Իսրայէլի տունը:
 2 - Քաղանէ անցէք ու ատէք,
 Ու անկէ մեծ Եմօթը գացէք,
 Ու Փղշտացուց Գէթը իջէք.
 Միթէ անոնք այս թագաւորութիւն-
 ներէն աղէ՞կ են,
 Կամ անոնց սահմանը ձեր սահմանէն
 մե՞ծ է:
 3 - Վա՛յ անոնց՝ որ չար օրը կը հեռա-
 ցընեն,
 Ու բռնութեան ակնուր կը մօտեցնեն,
 4 - Փղսակրեայ մահիճներու մէջ կը
 պառկին,
 Ու իրենց անկողիններուն վրայ կ'եր-
 կըննան,
 Եւ հօտերէն գառնուկները
 Ու գոմերու մէջէն պարարտ որթերը
 կ'ուտեն,
 5 - Տաւիղի ձայնով խաղ կը կանչեն,

Ու Գաւթի պէս իրենց երաժշտական գործիքներ կը հնարեն,
 6 - Գաւթներով գինի կը խմեն,
 Ու ծանրագին իւղերով կ'օծուին,
 Եւ Յովսէփի բեկուածին վրայ չեն ցաւեր :

7 - Անոր համար հիմա աւաջուան գերներուն հետ գերի պիտի բըշուին,
 Ու անգիններս զբայ երկնցողներուն ուրախութեան ձայնը պիտի վերնայ :

8 - Տէր Եհովա իր անձին վրայ երգում բրաւ,
 Կ'ըսէ զօրաց Տէր Աստուածը,
 Ես Յակոբի պարծանքէն կը զգուխմ,
 Ու անոր պալատները կ'առեմ,
 Եւ քաղաքը ու բոլոր անոր մէջ եղողը Բշնօֆին պիտի մատնեմ :

9 - Ու եթէ մէկ տան մէջ տասը մարդ մնալու ըլլայ,
 Անոն ալ պիտի մեռնին :

10 - Եւ մէկուն հօրեղբայրը, կամ Բեւեւ պարոզ մարդը զանկա պիտի վերցնէ :

Ոսկորները տունէն դուրս հանելու համար,
 Ու տանը մէջ եղողին պիտի ըսէ,
 Այլ արեւ Բեւեւ կամ քովդ,
 Եւ անկա պիտի ըսէ, Ոչ :
 Ու Բեւեւ պիտի ըսէ, Ասու կեցիր,
 Քանզի Տէրոջը անունը յիշելու արեւ չէ :

11 - Վասն զի ահա Տէրը կը հրամայէ,
 Ու մեծ տունը կործանուամով
 Ու պղտիկ տունը պատառուամով պիտի գարնէ :

12 - Միթէ ձերը ապառաժի վրայ կը վազե՞ն.
 Կամ անկա եզներով կը հերկուի՞.
 Քանզի դուք իրաւունքը դառնութեան
 Եւ արդարութեան պտուղը օշինդրի դարձուցիք,

13 - Ով ոչինչ բանով ուրախացողներ,
 Որ ըսիք թէ Չէ՞ որ մեր ուժովը մեզի եղջիւրներ տաինք :

14 - Անոր համար ահա ես, ով Իսրայէլի տունը,
 Ձեր վրայ ազգ մը տաք պիտի հանեմ,
 Կ'ըսէ զօրաց Տէր Աստուածը,
 Ու ձեզ Եմաթի մուտքէն մինչև անապատի ձորը պիտի նեղեն :

ԳԼ Է

Տէր Եհովա ինձի այսպէս ցուցուց,
 Որ ահա վերջին խտին բուսնելուն սկիզբը մարտիներ ստեղծեց.
 Եւ ահա վերջին խտը թագաւորին հունձքէն ետքն էր :

2 - Ու եղաւ որ անոնց՝ երկրին խտը բոլորովին ուտելէն ետքը Ես ըսի, Ով Տէր Եհովա, կ'աղաչեմ, ներէ.
 Յակոբ ի՞նչպէս պիտի կանգնի, քանզի քիչուոր է.

3 - Տէրը ասոր համար զղջաց, Ասիկա չըլլայ՝ ըսաւ Տէրը :

4 - Տէր Եհովա ինձի այսպէս ցուցուց,
 Որ ահա Տէր Եհովա կրակը կը կանչէր որպէս զի անով դատաստան ընէ,
 Եւ անիկա մեծ անդունդը կերաւ,
 Ու արտերը սպառեց :

5 - Ու ես ըսի, Ով Տէր Եհովա, կ'աղաչեմ, դադարէ.
 Յակոբ ի՞նչպէս պիտի կանգնի, քանզի քիչուոր է :

6 - Տէրը ասոր համար զղջաց, Ասիկա ալ չըլլայ՝ ըսաւ Տէր Եհովա :

7 - Ինձի այսպէս ցուցուց,
 Որ ահա Տէրը գնաակի լարով շնորհ պարսպի մը վրայ կայներ էր,
 Ու ձեռքը գնաակի մը կար :

8 - Եւ Տէրը ինձի ըսաւ, Ի՞նչ կը տեսնես, ով Ամովա.
 Ու ես ըսի, Գնաակի մը.
 Եւ Տէրը ըսաւ,
 Ահա ես իմ ժողովուրդիս Իսրայէլի մէջ գնաակ մը կը գնեմ.
 Այլ անոնց անօրէնութեան անտես պիտի չընեմ :

9 - Եւ Իսահակի բարձր տեղերը աւերակ պիտի ըլլան.
 Ու Իսրայէլի սրբարանները պիտի տարին,
 Ու Յերոբոամի տանը վրայ սրով պիտի ելլեմ :

10 - Եւ Բեթէլի քուրմը Ամատիա Իսրայէլի Յերոբոամ թագաւորին լարը զրկեց՝ ըսելով,
 Իսրայէլի տանը մէջ Ամովա քեզի դէմ դաւաճանութիւն կ'ընէ.
 Երկիրը չկրնար անոր բոլոր խօսքերը տանիլ.

11 - Քանզի Ամովա այսպէս կ'ըսէ.

Յերուսաղամ սրով պիտի մեռնի,
 Աւ Իսրայէլ իր երկրին վրայէն անշուշտ
 գերութեան պիտի երթայ:
 12 - Եւ Ամսախա ըսաւ Ամսի,
 Ով տեսանող, գնա Յուդայի երկիրը
 փախիր,
 Աւ հոն հաց կեր, և հոն մարգարէութիւն ըրէ,
 13 - Աւ մէջմըն ալ Բեթէլի մէջ մար-
 ցարէութիւն մի ըներ,
 Քանզի անկա թագաւորին սրբա-
 րանն է:
 Աւ թագաւորութեանը տաւնն է:
 14 - Եւ Ամսիս պատասխան տաւաւ
 ու Ամսիայի ըսաւ,
 Ես ոչ մարգարէ էի՝ ոչ ալ մարգարէի
 որդի,
 Հապա ես արջառներու հովիւ ու մն-
 լաթսուզ քաղող էի:
 15 - Եւ Տէրը զիս հօտին ետեւն ա-
 ռաւ,
 Եւ Տէրը ինծի ըսաւ,
 Գնա, իմ՝ ժողովուրդիս Իսրայէլի մար-
 ցարէութիւն ըրէ:
 16 - Եւ հիմա Տէրօջը խօսքը մտիկ
 ըրէ.
 Գուն կ'ըսես որ Իսրայէլի համար մար-
 ցարէութիւն մի ըներ,
 Աւ Իսահակի տանը վրայով խօսք մի
 խօսիր:
 17 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
 Քու կինդ քաղաքին մէջ պառնկու-
 թիւն պիտի ընէ,
 Եւ քու աղաքներդ ու աղջիկներդ
 սրով պիտի խնան,
 Աւ քու երկիրդ լարով պիտի բաժնուի,
 Եւ դուն պիղծ երկրի վրայ պիտի մեռ-
 նիս:
 Աւ Իսրայէլ իր երկրին վրայէն անշուշտ
 գերութեան պիտի երթայ:

ԳԼ Ը

Տէր Եհովա ինծի այսպէս ցուցուց,
 Եւ ահա կողով մը ամառնային պատուղ:
 2 - Աւ ըսաւ, Ի՞նչ կը տեսնես, սվ
 Ամսիս.
 Աւ ես ըսի, Կողով մը ամառնային
 պատուղ.
 Եւ Տէրը ինծի ըսաւ,
 Իմ՝ ժողովուրդիս Իսրայէլի վրայ վախ-
 ճանը հասած է.
 Ալ անոնց անօրէնութիւնը անտես պիտի
 չընես:

3 - Աւ այն օրը *տաճարին երգերը ող-
 բեր պիտի ըլլան,
 Կ'ըսէ Տէր Եհովա.
 Շատ մեռելներ պիտի ըլլան,
 Աւ զանազ ամէն տեղ լուութեամբ պի-
 տի նետեն:
 4 - Ատիկա մտիկ ըրէք,
 Դուք որ անանկը կլլելու,
 Աւ երկրին աղքատները կորսնցնելու
 կը ցանկաք,
 5 - Աւ կ'ըսէք, Ամսագլուխը ե՞րբ պիտի
 անցնի՝ որ ընդեղէն ծախենք,
 Եւ շարթթը՝ որ ցորենը ծախ-
 հանենք,
 Աւ արդուն պզտիկցնենք ու սիկզը
 մեծցնենք,
 Եւ նեղութեամբ խարդախ կշիւքներ
 գործածենք.
 6 - Որպէս զի աղքատները ստակով
 Աւ անանկները զոյգ մը կօշիկով ծա-
 խու առնենք,
 Աւ ցորենին խտանը ծախենք:
 7 - Տէրը Յակոբի մեծվայելչութեանը
 վրայ երգում ըրաւ՝ Եհովա,
 Անոնց բոլոր գործերը յաւիտեան պիտի
 չմոռնամ:
 8 - Զէ՞ որ այս բանին համար երկիրը
 պիտի դողայ,
 Աւ ամէն անոր մէջ բնակողը սուգ պի-
 տի բռնէ,
 Եւ բոլոր երէնք գետի պէս վեր պիտի
 ելլէ,
 Աւ պիտի քշուի ու պիտի ընկզմի որ-
 պէս թէ Եգիպտոսի գետով:
 9 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ
 Տէր Եհովա,
 Արևը կէսօրուան ատենը մարը պիտի
 մոցնեմ,
 Աւ ցորեկուան լոյսին ատենը երկիրը
 պիտի խաւարեցնեմ:
 10 - Եւ ձեր տաւները սուգի
 Աւ ձեր բոլոր երգերը ողբի պիտի
 դարձնեմ.
 Աւ ամէն մէջքերու վրայ քուրծ,
 Եւ ամէն գլխու վրայ կնասութիւն պի-
 տի բերեմ.
 Աւ երբեք չըսէ՛ք պիտի բերեմ՝ մէկ
 հատիկ զաւակի համար եղած
 սուգին պէս,
 Եւ անոր վախճանը դառնութեան օր-
 ուան պէս:
 11 - Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէր
 Եհովա,

*Կամ, պալատի

Որ երկրին վրայ սով մը պիտի զրկեմ՝
Ոչ թէ հացի սով և ոչ թէ ջուրի ծա-
րաւ ,

Հապա Տէրոջը խօսքերը լսելուն :
12 - Ու մէկ ծովէն միւս ծովը,
Եւ հիւսիսէն մինչև արևելք պիտի
թափասին .

Տէրոջը խօսքը փնտռելու համար հո-
սոն պիտի պարաին ,

Բայց պիտի չգանեն :

13 - Այն օրը գեղեցիկ կոյտերը
Ու երիտասարդները ծարաւով պիտի
մտնին ,

14 - Արոնք Սամարիայի յանցանքովը
երգում կ'ընեն ու կ'ըսեն ,

Կենդանի է քու Աստուածդ , ով Գան ,
Ու կենդանի է Բերսաբէէի ճամբան .

Անոնք պիտի իյնան ու մէյմըն ալ պի-
տի շէլլեն :

ԳԼ Թ

Տէրը տեսայ որ սեղանին վրայ կայ-
ներ էր ու ըսաւ ,

Խոյակին զարկ որպէս զի սեմերը դո-
ղան ,

Եւ զանոնք կտոր կտոր բրէ անոնց ա-
մէնուն գլխուն վրայ ,

Ու անոնց մնացորդը սրով պիտի մեռ-
ցընեմ .

Անոնց փախստականը պիտի չկարենայ
փախչիլ ,

Ու անոնց ազատուածը պիտի չկարե-
նայ ազատիլ :

2 - Թէև անոնք մինչև դժոխք փորեն ,
Իմ ձեռքն անկէ պիտի տունէ զանոնք ,
Ու թէև երկինք ելլեն ,

Չանոնք անկէ պիտի իջեցնեմ .

3 - Ու թէև Կարմեղաի գլուխը պահ-
ուրտին ,

Չանոնք պիտի փնտռեմ , անկէ պիտի
տունեմ .

Ու թէև իմ աչքերուս առջևէն ծո-
վուն խորութեանը մէջ ծած-
կուին ,

Հոն օձին պիտի հրամայեմ ու զանոնք
պիտի խածնէ .

4 - Ու թէև անոնք իրենց թշնամիներ
բուն առջևէն գերութեան եր-
թան ,

Հոն աւերին պիտի հրամայեմ ու գա-
նոնք պիտի մեռցնէ .

Եւ իմ աչքս անոնց վրայ պիտի գնեմ
չարիքի համար

Եւ ոչ թէ բարիքի համար :

5 - Քանզի զօրաց Տէր Եհովա ինքն է
Որ երկրիս կը դպչի , ու անիկա կը հալի ,
Ու անոր բոլոր բնակիչները սուգ կը
բռնեն ,

Եւ բոլոր երկրի գետի պէս վեր կ'ելլէ ,
Ու կ'ընկղմի որպէս թէ Եգիպտոսի
գետով :

6 - Ինքն է որ երկինքի մէջ իր վերնա-
տունները կը շինէ ,

Ու անոր կամարը երկրի վրայ կը հիմնէ ,
Ծովուն ջուրերը կը կանչէ ,

Ու զանոնք երկրի երեսին վրայ կը թա-
փէ .

Անոր անունը Եհովա է :

7 - Միթէ դուք ինծի Եթէտվարց-
ւոց որդիներուն պէս չէ՞ք ,

Ով Խորայէի որդիներ , կ'ըսէ Տէրը .
2^օ որ Խորայէյը Եգիպտոսի երկրէն ,

Ու Փղշաացիները կափթօրէ ,
Եւ Ասորիները կիրէ հանեցի :

8 - Ահա Տէր Եհովայի աչքերը այդ
մեղաւոր թագաւորութեանը
վրայ են ,

Ու զանիկա երկրի երեսին վրայէն պի-
տի կորսնցնեմ .

Սակայն Յակոբի տունը բոլորովին պի-
տի չկորսնցնեմ , կ'ըսէ Տէրը :

9 - Քանզի ահա ես կը հրամայեմ ,
Ու Խորայէի տունը բոլոր ազգերուն
մէջ պիտի խարբալեմ ,

Ինչպէս ցրե՛նչ մազով կը խարբալեն ,
Բայց *հաա մը գետինը պիտի չիյնայ :

10 - Իմ ժողովուրդիս բոլոր մեղաւոր-
ները սրով պիտի մեռնին ,

Արոնք կ'ըսեն թէ Չարիքը Տեր էր այս պի-
տի չհասնի ,

Ու մեր առջև պիտի չտունէ :

11 - Այն օրը Գաւթի ինկած խո-
րանը պիտի կանգնեմ .

Եւ անոր փյաճները պիտի նորոգեմ ,
Ու աւրածները պիտի կանգնեմ ,

Եւ զանիկա հին օրերուն պէս պիտի
շինեմ .

12 - Որպէս զի անոնք Եգովմի մնացորդը
Ու բոլոր ազգերը ժառանգեն ,

Արոնց վրայ իմ անունս կոչուած է ,
Կ'ըսէ Տէրը՝ որ այս բանը կ'ընէ :

13 - Ահա օրեր կու գան , կ'ըսէ Տէրը ,
Որ հերկողը հնձողին՝

Եւ խաղող կոխողը սերմանացանին պի-
տի հասնի .

*կ-ժ, իիժ

Ու լեռները քաղցու պիտի կաթեցնեն,
 Եւ ամէն բլուրները պիտի հային :
 14 - Եւ իմ՝ ժողովուրդիս Իսրայէլի
 գերութիւնը պիտի դարձնեմ՝,
 Ու աւրուած քաղաքները պիտի շինեն
 ու անոնց մէջ բնակին,
 Եւ այգիներ պիտի անկեն ու անոնց
 գինին խմեն,

Եւ պարտեղներ պիտի շինեն ու անոնց
 պատեղները ուտեն :
 15 - Եւ զանոնք իրենց երկրին վրայ
 պիտի անկեմ՝,
 Ու մէյմըն ալ պիտի չխլուին իրենց
 երկրէն՝ զոր իրենց տաւի ,
 Կ'ըսէ քու Տէր Աստուածդ :


ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՈՒ

Աբգիու տետրաքը:
 Տէր Եհովա Եգիպտի վրայսլ այսպէս
 կ'ըսէ .
 Տէրօջմէ լուր լտեցինք,
 Ու ազգերուն գեապան զրկուեցաւ՝
 Ըսելով,
 Ելէք , ու անոր վրայ պատերազմի ել-
 լինք :
 2- Ահա քեզ ազգերու մէջ պզտիկ ըրի,
 Գուն խիստ անարգուած ես :
 3 - Քու սրտիդ հպարտութիւնը քեզ
 խաբեց,
 Ով վէմին խառնչներուն մէջ բնակող ,
 Ու բարձր բնակարան ունեցող ,
 Որ սրտիդ մէջ կ'ըսես,
 Ո՞վ զիս գեաինը պիտի իջեցնէ :
 4 - Թէեւ արծիւի պէս բարձրանաս,
 Եւ քու բոյնդ աստղերուն մէջ դնես ,
 Քեզ տնկէ պիտի իջեցնեմ՝ կ'ըսէ Տէրը :
 5 - Եթէ քեզի գողեր կամ գիշերային
 աւազակներ գային,
 (Ի՛նչպէս կործանեցար .)
 Անոնք իրենց բաւական եղածին չափ
 պիտի չգողնային .
 Եթէ քեզի կթողներ գային,
 Միթէ ճիւղեր պիտի չթողութին :
 6 - Եսաւ ի՛նչպէս քննուեցաւ .
 Անոր ծածուկ տեղերը փնտուեցան :
 7 - Քու բոլոր գաշնակիցներդ քեզ
 մինչև սահմանը զրկեցին,
 Քեզի հետ խաղաղութիւն ունեցող
 մարդիկը քեզ խաբեցին
 Ու քեզ յաղթեցին .
 Քու հացդ արտօնէրը քու տակդ սրտ-
 գայթ դրին .

Անոր քով հանճար չկայ :
 8 - Ահա այն օրը, կ'ըսէ Տէրը ,
 Եգիպտէ իմաստունները,
 Ու Եսաւի լեռնէն հանճարը բնաջինջ
 պիտի ընեմ :
 9 - Եւ քու զօրաւորներդ, ով Թեման,
 պիտի զարհուրին,
 Որպէս զի Եսաւի լեռնէն առջև մարդ
 սպաննուելով կտարուի :
 10 - Քու եղբորդ Յակոբի եղած անի-
 բաւութեանը համար
 Ամօթը քեզ պիտի ծածկէ,
 Ու յաւիտեան բնաջինջ պիտի ըլլաս :
 11 - Անո՞ր գիմաց կայնած օրդ,
 Երբ օտարազգիները անոր զօրքը գերի
 տան,
 Ու օտարները անոր դռները մտան,
 Ու Երուսաղէմի վրայ վիճակ ձգեցին ,
 Գուն ալ անոնց մէկուն պէս էիր :
 12 - Ու պէտք չէր որ քու եղբորդ օրը,
 Անոր օտարութեան օրը, արեւոյն նա-
 յէիր ,
 Եւ Յուդայի սրդիներուն վրայ
 Անոնց կորուստին օրը խնդայիր,
 Ու անոնց նեղութեան օրը
 Քու բերանդ մեծցնէիր ,
 13 - Ոչ ալ իմ ժողովուրդիս գուռը
 Անոնց թշուառութեան օրը մտնէիր ,
 Անոնց կործանումին օրը
 Գուն ալ անոնց չարիքին վրայ նայէիր,
 Եւ անոնց կործանումին օրը
 Անոնց ստացուածքին վրայ չե՞ր ձգէիր .
 14- Եւ ոչ անոր ազատուածները կտա-
 րելու համար
 Համբուն բերանը կայնէիր,
 Ու անո՞ր նեղութեան օրը

Անոր մնացորդները մտանկիր:
 15 - Քանզի բոլոր ազգերուն վրայ Տէ-
 րոջը օրը մտա է.
 Քեզի քու ըրածիդ պէս պիտի ընեն.
 Քու հասուցումդ գլուխդ պիտի դառ-
 նայ:
 16 - Քանզի ինչպէս դուք իմ սուրբ
 լեռանս վրայ խմեցիք,
 Բոլոր աղգերն ալ շարունակ պիտի
 խմեն.
 Պիտի խմեն ու պիտի կլլեն,
 Ու չեղածի պէս պիտի ըլլան:
 17 - Բայց Աիօն լեռանը վրայ փրկու-
 թիւն պիտի ըլլայ.
 Եւ սրբութիւն պիտի ըլլայ.
 Ու Յակոբի տունը իրենց կալուածքնե-
 րուն պիտի տիրեն:
 18 - Եւ Յակոբի տունը կրակ,
 Ու Յովսէփի տունը բոց,
 Ու Եսաւի տունը յարդ պիտի ըլ-
 լայ.
 Եւ անոնց մէջ պիտի բռնկին,
 Ու զանոնք պիտի ուտեն ,

Ու Եսաւի տանը մնացորդ մը պիտի
 չըլլայ .
 Քանզի Տէրը խօսեցաւ:
 19 - Եւ հարաւայինները Եսաւի լեռը
 պիտի ժառանգեն .
 Ու դաշտայինները՝ Փղշտացւոց երեւը,
 Նաև Եփրեմի դաշտը ու Սամարիայի
 դաշտը պիտի ժառանգեն .
 Ու Բենիամին Քաղաազը պիտի յա-
 ռանգէ:
 20 - Եւ Իսրայէլի սրգիններուն այս զօր-
 քին գերինները
 Քանանացւոց եղածը պիտի յա-
 ռանգեն մինչև Սարեփթա,
 Ու Երուսաղէմի գերինները, որոնք Աե-
 փարապի մէջ են,
 Հարաւային քաղաքները պիտի ժա-
 ռանգեն:
 21 - Եւ ազատողներ պիտի ելլեն Աիօն
 լեռը՝
 Եսաւի լեռը դատելու համար.
 Ու թագաւորութիւնը Տէրոջը պիտի
 ըլլայ :



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ



ԳԼՈՒԽ Ա

Եւ Տէրոջը խօսքը Ամոթիի սրգւոյն
 Յովսէփի եղաւ՝ ըսելով , 2 - Ելիր, Նին-
 ուէ մեծ քաղաքը գնա, ու անոր դէմ
 քարոզութիւն ըրէ, քանզի անոնց չա-
 րութիւնը իմ առջևս ելաւ : 3 - Բայց
 Յովսէփի եղաւ որ Տէրոջը երեսէն թար-
 սիս փախչի, և Յոպպէ իջաւ ու նաւ մը
 դատաւ որ թարսիս կ'երթար, և անոր
 վարձքը տուաւ ու անոր մէջ մտաւ,
 որպէս զի անոնց հետ թարսիս երթայ
 Տէրոջը երեսէն:
 4 - Եւ Տէրը ծովուն մէջ մեծ հով
 մը հանեց, ու ծովուն մէջ մեծ փոթո-
 րիկ մը եղաւ, այնպէս որ նաւը խոր-
 տակուելու վտանդի մէջ էր: 5 - Ու
 նաւավարները վախցան և ամէն մէկը
 իր աստուծոյն կ'աղաղակէր, ու նա-
 ռուն մէջի կարասիները ծովը նետեցին,
 որպէս զի զանիկա իրենցմէ թեթեւցնեն .

բայց Յովսէփի նաւուն խորշը իջնելով
 պառկեր էր ու խորունկ կը քնանար:
 6 - Եւ նաւապետը անոր մտակցաւ ու
 անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ, ով խո-
 րունկ քնացող . ելիր քու Աստուծոյդ
 աղաղակէ, թերևս Աստուած մեզ
 յիշէ, որ չկորսուինք:
 7 - Եւ իրարու ըսին, Եկէք, վիճակ
 ձգենք, որպէս զի գիտնանք թէ այս չա-
 րիքը որո՞ւն պատճառաւ մեր վրայ
 եկաւ: Եւ վիճակ ձգեցին, ու վիճակը
 Յովսէփի եղաւ: 8 - Եւ անոնք ըսին ա-
 նոր, Հիմա պատմէ մեզի՝ թէ այս չա-
 րիքը որո՞ւն պատճառաւ մեր վրայ
 եկաւ . քու գործդ ի՞նչ է, և ուրկէ՞
 կու գաս. քու երկիրդ ո՞րն է, ու դուն
 ո՞ր ժողովուրդէն ես: 9 - Եւ անիկա
 ըսաւ անոնց, Ես Երրայեցի եմ, և
 ծովը ու ցամաքը ստեղծող երկինքի
 Աստուծմէն, Եհովայէ, կը վախնամ:
 10 - Եւ այն մարդիկը խիստ շատ վախ-

ցան, ու անոր ըսին, Այդ բանը ինչո՞ւ
ըրիր. քանզի այն մարդիկը գիացան որ
Տէրոջը երեսէն կը փախչէր, վասն զի
անոնց պատմեր էր: 11 - Եւ անոր
ըսին, Քեզի ի՞նչ ընենք, որ ծովը
մեզմէ դադարի. քանզի ծովը երթա-
լով աւելի կը սասականար: 12 - Ու
անիկա ըսաւ անոնց, Ձիս վերցուցէք
ու զիս ծովը նետեցէք, ու ծովը ձեզմէ
պիտի դադարի, քանզի ես գիտեմ որ
այս մեծ փոթորիկը իմ պատճառաւ
ձեր վրայ եղաւ:

13 - Եւ այն մարդիկը թի քաշելով
կը ջանային նաեւ ցամաքը դարձնել,
բայց չկրցան, քանզի ծովը երթալով
կը սասականար անոնց վրայ: 14 - Ու
Եհովայի աղաղակեցին ու ըսին, Ոհ,
Եհովա, կ'աղաչենք, այս մարդուն հո-
գիին համար չկորսուինք, ու մեր վրայ
անմեղ արիւն մի դնէր, քանզի դուն,
ով Եհովա, ուզածիդ պէս ըրիր: 15 -
Եւ Յովնանը վերցուցին ու ծովը նետե-
ցին, և ծովը իր սասակութենէն դա-
դարեցաւ: 16 - Ու այն մարդիկը Եհո-
վայէ մեծ վախով վախցան, ու Եհո-
վայի զոհ մատուցին և ուխտեր ըրին:

17 - Եւ Տէրը մեծ ձուկի մը հրամա-
յեց որ Յովնանը կլլէ. ու Յովնան երեք
օր ու երեք գիշեր ձուկին փորը մնաց:

ԳԼ Բ

Եւ Յովնան ձուկին փորէն իր Տէր
Աստուծոյն աղօթք ըրաւ, 2 - Ու ըսաւ,
Իմ նեղութենէս Տէրոջը աղաղակեցի,
Եւ անիկա ինձի պատասխան տուաւ.
Գերեզմանին փորէն կանչեցի,
Ու իմ ձայնս լսեցիր:

3 - Վասն զի զիս ծովերուն մէջ, ան-
դունդը, նետեցիր,
Ու հեղեղները զիս պաշարեցին.
Քու ամէն կոհակներդ ու ալիքներդ
իմ վրայէս անցան:

4 - Ու ես ըսի,
Քու աչքերուդ առջևէն վախտուեցայ,
Բայց տակաւին քու սուրբ տաճարիդ
պիտի նայիմ:

5 - Ձիս մինչև հոգիս ջուրերը պաշա-
րեցին,
Անդունդը ամէն կողմէն զիս շրջապա-
տեց,
Կնիւնները գլուխս փոթթուեցան:

6 - Լեռներուն տակերը իջայ,
Երկիր իր նիգերովը յաւիտեան իմ
բողորտիքս էր,
Բայց դուն իմ կեանքս գուբէն հանե-
ցիր,
Ով իմ Տէր Աստուծաւ:

Երկիր իր նիգերովը յաւիտեան իմ
բողորտիքս էր,
Բայց դուն իմ կեանքս գուբէն հանե-
ցիր,

Ով իմ Տէր Աստուծաւ:
7 - Երբ հոգիս իմ վրաս մարեցաւ,
Տէրը յիշեցի.
Ու իմ աղօթքս քեզի քու սուրբ տա-
ճարդ հասաւ:

8 - Սուա ունայնութիւններու նայող-
ները
Իրենց ըլլալու ողորմութիւնը կը թա-
ղուն:

9 - Բայց ես շնորհակալութեան ձայ-
նով քեզի զոհ պիտի մատու-
ցանեմ,

Ու ըրած ուխտս պիտի կատարեմ:
Փրկութիւնը Տէրոջն է:
10 - Եւ Տէրը ձուկին հրաման ըրաւ.
ան ալ Յովնանը ցամաքը փոխեց:

ԳԼ Գ

Եւ Տէրոջը խօսքը երկրորդ անգամ
Յովնանի եղաւ՝ ըսելով, 2 - Ելիր, Նին-
ուէ մեծ քաղաքը գնա, ու քարոզէ
անոր այն քարոզութիւնը զոր ես քեզի
կը խօսիմ: 3 - Եւ Յովնան Տէրոջը
խօսքին համեմատ ելաւ Նինուէ գնաց:
Իսկ Նինուէ *խիսա մեծ քաղաք մըն
էր՝ երեք օրուան ճամբու քարձո-
րէմէք: 4 - Եւ Յովնան սկսաւ քաղաքը
մանել, ու մէկ օրուան ճամբայ գրե-
տելով կը քարոզէր ու կ'ըսէր, Դեռ
քառասուն օր կայ ու Նինուէ պիտի
կործանի:

5 - Եւ Նինուէի մարդիկը Աստուծոյ
հաւատալով՝ ծամապահութիւն քարո-
զեցին, ու անոնց մէծէն մինչև պղտիկը
քուրձ հագան: 6 - Եւ այս խօսքը Նին-
ուէի թագաւորին հասաւ, ու անիկա
իր ամսունէն ելաւ ու վրայէն պատմու-
ճանը հանեց, և քուրձ հագաւ ու մո-
խիրի վրայ նստաւ: 7 - Եւ Նինուէի
մէջ մուկտիկ կանչել տուաւ, ու
թագաւորին ու իր մեծամեծներուն
հրամանովը պատուիրեց՝ ըսելով,
Մարդ ու անասուն, արջառ ու ոչխար
բան մը չուտեն, չարածին ու ջուր
չխմեն: 8 - Եւ մարդիկ ու անասուններ
քուրձ հագնին, ու քաղաքը ուժով Աս-
տուծոյ աղաղակէն. և ամէն մարդ իր

*Եբբ. Աստուծոյ

չար ճամբայէն ու իր ձեռքերուն մէջ եղած անիրաւութենէն դառնայ . 9 - Ո՞վ գիտէ, թէքե՞ս Աստուած դառնայ ու զղջայ, և իր սաստիկ բարկութենէն դառնայ, ու չկորսուինք: 10-Եւ Աստուած անոնց գործերը տեսաւ՝ որ իրենց չար ճամբաներէն դարձան, ու Աստուած զղջաց այն չարիքին համար զոր քսեր էր թէ անոնց ընէ՝ ու զանիւ՞ չըրաւ:

ԳԼ Դ

Եւ Յովնան խիստ դժուարացաւ ու նեղացաւ . 2 - Ու Տէրոջը աղօթք ըրաւ ու ըսաւ, Ո՛հ, Տէր, երբ ես դեռ իմ՝ երկիրս էի, իմ՝ խօսքս այս չէ՞ր . ասոր համար աւաջ Թարսիս փախչելու եղայ, քանզի գիտէի որ դուն սղորմած, գթած, երկայնամիտ և բազումազոր՝ Աստուած ես, ու չարիքի համար կը զղջաս: 3 - Եւ չիմն, ով Տէր, կ'աղաչեմ, իմ հոգիս ինձմէ առ, քանզի մեռնիլս ապրելէս աղէկ է: 4 - Եւ Տէրը ըսաւ, *Միթէ այդպէ՞ս նեղանալովդ աղէկ կ'ընես:

5-Եւ Յովնան քաղաքէն դուրս ելաւ, ու քաղաքին արևելեան կողմը նստաւ, և հոն իրեն տաղաւար մը շինեց, ու անոր հովանիին տակ նստաւ, մինչև տեսնէ թէ քաղաքին ի՛նչ պիտի ըլլայ:

6 - Եւ Տէր Աստուած դժմենիի մը հրամայեց, ու Յովնանի վրայ ելաւ, որ անոր գլխուն վրայ հովանի ըլլայ, որպէս զի զանկա իր տառապանքէն ազատէ . և Յովնան դժմենիին համար մեծ ուրախութիւնով ուրախացաւ:

7 - Ու հեռեկալ օրը երբ աւառ կ'ըլլար, Աստուած հրամայեց որդի մը, որ դժմենիին զարկաւ, ու անկա չորցաւ: 8 - Ու եղաւ որ երբ արևը կը ծագէր, Աստուած խորշակաբեր արեւելեան հովի մը հրամայեց, ու արևը Յովնանի գլխուն վրայ զարկաւ, այնպէս որ անկա մարեցաւ . ու անկա ինքնիրեն մահը ուզելով՝ ըսաւ, Մեռնիլս ապրելէս աղէկ է:

9 - Եւ Աստուած Յովնանի ըսաւ, Միթէ դժմենիին համար նեղանալովդ աղէկ կ'ընես. ու անկա ըսաւ, Մինչև ի մահ նեղանալովս աղէկ կ'ընեմ:

10 - Այն տան Տէրը ըսաւ, Դուն դժմենիին խնայեցիր, որու համար աշխատութիւն չքաշեցիր ու զանկա չմեծցուցիր, որ մէկ գիշերուան մէջ բուսաւ ու մէկ գիշերուան մէջ կորսուեցաւ . 11 - Ու ես պիտի չխնայե՞մ՝ նինուէի, այն մեծ քաղաքին, որուն մէջ հարիւր քսան հազարէն աւելի մարդիկ կան, որոնք աջ ու ձախ ձեռքին տարբերութիւնը չեն գիտեր, ու նաև շատ անասուններ:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԻՔԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը, որ Յուդայի թագաւորներուն, Յովաթամի, Աքազի և Եզեկիայի օրերը Մօրստացի Միքիայի եղաւ, և Սամարիայի ու Երուսաղէմի վրայով անոր յայտնուեցաւ:

2-Լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ, Մտիկ ըրէ, ով երկիր, ու անոր բոլոր բնակիչները՝

*Կա՛մ, Իրա՞ն է որ խիստ նեղացեր ես + ԵՔԵ . լիութիւնը

Եւ Տէր Եհովա ձեզի դեմ վկայ ըլլայ, Տէրը է՛ս իր սուրբ տաճարէն,

3 - Քանզի տահա Տէրը իր՝ տեղէն կ'ելլէ, Եւ պիտի իջնէ ու երկրի բարձր տեղերուն վրայ պիտի պարտի:

4-Ու լեռները անոր տակ պիտի հալին, Եւ հովիտները պիտի պատահին՝ կրակին առջև հաւած մնալ պէս . Ու զառ ի վայրէն թափուած ջուրի պէս:

5 - Այս ամէնը Յակարի յանցանքին համար . Ու Խորայէլի տանը մեղքին համար է .

Յակոբի յանցանքին պարճաւ զ ս՞վ է .
Սամարիա չէ՞ .

Եւ Յուդայի բարձր տեղերուն պարճաւ զ ս՞վ է . Երուսաղէմ չէ՞ :

6 - Ուստի Սամարիան գաշտի քարակոյտի

Ու պղծի անկեղու տեղի պիտի դարձնեմ ,

Անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեմ ,
Ու անոր հիմերը պիտի բանամ .

7 - Եւ անոր բոլոր կուռքերը պիտի կտարաին ,

Ու անոր բոլոր նուիրուած բաները կրակով պիտի այրին ,

Եւ անոր բոլոր արձանները բնաջինջ պիտի ընեմ .

*Քանզի անձնք ողբի վարձքով ժողովեց ,
Ու ողբի վարձքի պիտի դառնան :

8 - Ասոր համար պիտի սղբամ ու պիտի հառաչեմ ,

Անծածկոյթ ու մերկ պիտի շրջիմ .
Չագալներու պէս կոծ , ու ջայլամներու պէս սուգ պիտի ընեմ :

9 - Քանզի անոր վէրքերը անբժշկելի են ,
Քանզի մինչև Յուդա եկաւ ,
Մինչև իմ ժողովուրդիս դուռը , մինչև Երուսաղէմ , հասաւ :

10 - Գէթի մէջ մի պատմէք ու բնաւ մի լաք .

*Բեթափրայի մէջ փոշիի մէջ թաւալէ :

11 - Ով † Սափիրի բնակիչ , քու մերկութիւնդ բաց ունենալով անցիր .

‡ Սաանանի բնակիչը դուրս չելլեր ,
|| Բեթեսելի կոծը իր օթեանը ձեզմէ կ'առնէ :

12 - Վասն զի § Մարօթի բնակիչը բարեքի համար կը վշտանայ .

Քանզի մինչև Երուսաղէմի դուռը Տէրոջմէ չարիք իջաւ :

13 - Երկվարը կառքին լծէ , ով Լաքիսի բնակիչ .

Սիօնի աղջկան մեղքին սկիզբը անկա է .

Քանզի քու մէջդ Իսրայէլի յանցանքները գանուեցան :

14 - Անոր համար Մօրեսեթ-գէթի ընծաներ պիտի տաս .

* Ա. յ. Ինչո՞ւ , փոշիի տուն
† Ա. յ. Ինչո՞ւ , գեղեցկութիւն
‡ Ա. յ. Ինչո՞ւ , հօտեր ունեցող
|| Ա. յ. Ինչո՞ւ , մերձակայ տուն , կամ , իջեւանի տուն
§ Ա. յ. Ինչո՞ւ , դառնութիւններ

* Ա. քեզիքի տուները Իսրայէլի թագաւորներուն պիտի ստեն :

15 - Տակաւին քեզի ժառանգ պիտի բերեմ , ով † Մարեսայի բնակիչ .

Իսրայէլի փառքը մինչև Ոգոլամ պիտի հասնի :

16 - Քու սիրելի սրգինքուդ համար մտգերդ փեռէ ու կարէ ,

Կնտութիւնդ արծիւի պէս շատցուր ,
Քանզի քեզմէ գերութեան գացին :

Գ Լ . Բ

Վասն անոնց՝ որ անօրէնութիւն կը խորհին ,

Ու իրենց անկողիններուն վրայ չարութիւն կը հնարեն .

Անոնք առաւօտեան լոյսին տառնը զանիկա ի գործ կը դնեն ,

*Քանզի իրենց ձեռքերուն մէջ պիտի կայր :

2 - Ու անոնք ագարակներու կը ցանկան ու զանաւ կը յափշտակեն ,

Եւ տուներու՝ ու զանաւ կ'առնեն .
Եւ մարդուն ու իր տանը ,

Մարդուն ու իր ժառանգութեանը ,
Գրկանք կ'ընեն :

3 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ .
Ահա ես այս ազգին վրայով չարիք մը կը խորհիմ ,

Ուրկէ պիտի չկրնաք ձեր պարանոցը հանել ,

Ու պիտի չկրնաք հպարտութեամբ քալել ,

Վասն զի ժամանակը չար է :

4 - Այն օրը ձեր վրայ առակ պիտի խօսին ,
Ու արամայի սղբով պիտի սղբան ու ըսեն ,

Բոլորովին յափշտակուեցանք .
Իմ ժողովուրդիս բաժինը փոխեց ,

Չանիկա ինչպէս ինծմէ վերցուց .
Մեր ագարակները ետ տալու տեղ բաժնեց :

5 - Անոր համար Տէրոջը ժողովքին մէջ Վիճակով լար քաշող մը պիտի չունենաս :

6 - Մարգարէութիւն ընողներուն՝
Մարգարէութիւն մի ընէք՝ կ'ըսեն .
Անոնց մարգարէութիւն պիտի չընեն ,
+ անզի նախատինքը պիտի չվերնայ :

* Ա. յ. Ինչո՞ւ , ստութիւն
† Ա. յ. Ինչո՞ւ , ժառանգութիւն , կամ , գլխաւոր

- 7 - Ով Յակոբի տուն ըստող, միթէ Տէրոջը սգին կարճըցած, Անոր գործերը սասնք են. Միթէ ուղղութեամբ քալողին իմ խօսքերս աղէկ չե՞ն:
- 8 - Եւ իմ ժողովուրդս շատանցմէ սոք ելաւ թշնամի ըլլալու համար. Ապահովութեամբ անցնողներէն, պատերազմէ դարձողներէն, Հանդերձներուն * վրայէն պատմութեամբ կը կողոպտէք:
- 9 - Իմ ժողովուրդիս կիները իրենց զուարճալի տուներէն կը վաճառէք, Անոնց տղաքներէն յաւիտեան իմ փառքս կ'առնէք:
- 10 - Ելէք ու գացէք, Քանզի ստիկա հանգստութեան տեղ չէ. Պիղծ ըլլալուն պատճառաւ Մեծ կործանումով բնաջինջ պիտի ըլլայ:
- 11 - Եթէ մարդ մը հովի և սենայնութեան ետէէ երթայ, Ու ստութիւն խօսի՝ Ը՛հե՛լ՛, Գինիի ու օղիի համար քեզի մարգարէութիւն ընեմ՝, Անիկա պիտի ըլլայ այս ժողովուրդին մարգարէն:
- 12 - Ով Յակոբ, ամէնդ անշուշտ պիտի ժողովեմ, Իսրայէլի մնացորդը պիտի հաւաքեմ, Ու Բօսրայի սխարներուն պէս, Իրենց փարախին մէջ եղող հօտերուն պէս, մէկտեղ պիտի դնեմ. Մարդոց Բաղձնա՛ն համար աղմուկ պիտի ըլլայ:
- 13 - Խրամատութիւն ընողը անոնց առջև ելաւ. Անոնք խրամատեցին ու դռնէն անցան և անկէ ելան. Ու անոնց թագաւորը անոնց առջև անցաւ, Եւ Տէրը իբրև անոնց գլուխ -- Չէ՛ է՛բէ՛բար:

ԳԼ. Գ.

Ու ըսի, Հիմա մտիկ ըրէք, ով Յակոբի գլխաւորները, Ու Իսրայէլի տանը իշխանները. Պէտք չէ՞ որ դուք իրաւունքը ճանչնաք.

*Կա՛մ, հեա

- 2 - Ի՛նչ որ աղէկութիւնը կ'առնէք ու չարութիւնը կը սիրէք, * Մարդոց վրայէն մտրթերը, ու անոնց սկիւրներէն միտերը կը հանէք.
- 3 - Ու անոնք որ իմ ժողովուրդիս միտը կ'ուտեն, Եւ անոնց վրայէն մտրթերը կը հանեն, Ու անոնց սկիւրները կը փշրեն, Եւ զանոնք պտուկի մէջ ու կաթնայի մէջ Ե՛գե՛լ -- միտի պէս կտոր կտոր կ'ընեն,
- 4 - Այն տան Տէրոջը պիտի ազաղակեն, Բայց անոնց պատասխան պիտի չտայ, Ու այն ժամանակ իր երեսը անոնցմէ պիտի ծածկէ, Վասն զի անոնք չար գործեր ըրին:
- 5 - Այսպէս կ'ըսէ Տէրը այն մարգարէներուն համար՝ Որոնք իմ ժողովուրդս կը մոլորեցնեն, Ու իրենց ակումներովը կը խածնեն, Եւ խաղաղութիւն կը քարոզեն, Ու ով որ անոնց բերանը բան չգնէր, Անոր դէմ պատերազմ կը հրատարակեն:
- 6 - Անոր համար ձեզի գիշեր պիտի ըլլայ, Որպէս զի տեսիլք չաեսնէք. Եւ ձեզի խաւար պիտի ըլլայ, Որպէս զի գուշակութիւն չընէք. Ու մարգարէներուն վրայ արևը պիտի մտնէ, Եւ անոնց վրայ օրը պիտի խաւարի.
- 7 - Ու տեսանողները պիտի ամշնան, Եւ գուշակողները ամօթով պիտի ըլլան. Ամէնն ալ իրենց շրթունքը պիտի ծածկեն,
- Վասն զի Աստուծո՛ւ պատասխան մը պիտի չըլլայ:
- 8 - Ասկայն ես Տէրոջը Հոգիովը՝ Զօրութեամբ, դատաստանով և արիւնութեամբ լեցուած եմ, Որպէս զի Յակոբի իր յանցանքը, Ու Իսրայէլի իր մեղքը յայտնեմ:
- 9 - Հիմա մտիկ ըրէք, Ով Յակոբի տանը գլխաւորները Ու Իսրայէլի տանը իշխանները, Ի՛նչ որ իրաւունքէն կը զզուէք, Ու ամէն ուղղութիւնը կը ծռէք,
- 10 - Արծաթ արիւններով, Ու երուսողէ՛մը անիրաւութեամբ կը շինէք:

*Եբբ. Անոնց

11 - Անոր գլխաւորները կաշաւքով
կը դասեն,
Ու անոր քահանաները վարձքով կը
սորվեցնեն,
Եւ անոր մարգարէները ստակով գու-
շակութիւն կ'ընեն,
Ու Տէրոջը վրայ կը կռթնին ու կ'ըսեն,
Չէ՞ որ Տէրը մեր մէջ է.
Մեր վրայ չարիք պիտի չգայ:
12 - Ուրեմն ձեր պատճառաւ Սիօն
ազարակի պէ՞ պիտի հերկուի,
Ու Երուսաղէմ՝ աւերակներու դէզեր,
Ու Տէր՝ չէ տանը լեռը անասուի բարձր
տեղերու պէ՞ պիտի ըլլայ:

ԳԼ Կ

Բայց վերջին օրերը պիտի ըլլայ որ
Տէրոջը տանը լեռը
Լեռներուն գլխուն վրայ պիտի հաս-
տատուի,
Եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Ու ժողովուրդները հեղեղի պէս անոր
պիտի դիմեն.
2 - Եւ շատ ազգեր պիտի երթան ու
ըսեն,
Եկէք, Եհովայի լեռը,
Յակորի Աստուծոյն տունը, ելլենք,
Որպէս զի մեզի իր ճամբաները սոր-
վեցնէ,
Ու անոր շաւիղներուն մէջ քալենք.
Վասն զի օրէնքը Սիօնէ,
Ու Տէրոջը խօսքը Երուսաղէմէ պիտի
ելլէ.
3 - Եւ անիկա շատ ժողովուրդներու
մէջ դասատան պիտի ընէ,
Ու զօրաւոր ազգեր մինչև հեռաւոր
տեղեր պիտի յանդիմանէ.
Ու անոնք իրենց սուրբը խփեր,
Եւ իրենց նիզակները յօտոցներ պիտի
շինեն.
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ,
Եւ ալ պատերազմ՝ պիտի չսորվին.
4 - Հապա ամէն մարդ իր որթին տակ
Ու իր թղենիին տակ պիտի նստի,
Ու վախցնող պիտի չըլլայ.
Վասն զի զօրաց Տէրոջը բերանը խօ-
սեցաւ:
5 - Քանզի բոլոր ժողովուրդներէն
Ամէն մէկը իր աստուծոյն անունովը
կը քալէ,
Բայց մենք յաւիտեանս յաւիտենից
Մեր Տէր Աստուծոյն անունովը պիտի
քալենք:

6 - Այն օրը, կ'ըսէ Տէրը, կազ-
պիտի ժողովեմ,
Ու աքսորուածը պիտի հաւաքեմ,
Եւ զանիկա ալ զոր նեղեցի.
7 - Եւ կազը մնացորդ պիտի ընեմ,
Ու հեռուն վաճառուածը՝ զօրաւոր ազգ.
Եւ Տէրը Սիօն լեռանը մէջ անոնց վրայ
պիտի թագաւորէ
Հիմակուրնէ մինչև յաւիտեան:
8 - Ու դուն, ով հօտի աշտարակ,
Սիօնի աղջկան բլուրը,
Մինչև քեզի պիտի գայ,
Քեզ պիտի հասնի, աւաջուան իշխա-
նութիւնը,
Ու թագաւորութիւնը՝ Երուսաղէմի
աղջկան:
9 - Հիմա ինչո՞ւ բարձրածայն կը
պուսաս.
Միթէ քու մէջդ թագաւոր չկայ,
Կամ թէ քու խորհրդականդ կորսուե-
ցա՞ւ,
Որ քեզ ճննդական կնոջ պէս ցաւ
բռնեց:
10 - Յաւ քաշէ ու ճննդականի պէս
երկունքի մէջ եղիր, ով Սիօնի
աղջիկ,
Քանզի հիմա քաղաքէն պիտի ելլես,
Ու դաշտի մէջ պիտի բնակիս,
Ու մինչև Բաբելոն պիտի երթաս,
Եւ հոն պիտի ազատիս.
Հոն Տէրը պիտի ազատէ քեզ քու
թշնամիներուդ ձեռքէն:
11 - Ու հիմա քու վրագ շատ ազգեր
ժողովուեցան, որոնք կ'ըսեն,
Թող անիկա պղծուի,
Ու մեր աչքերը Սիօնը տեսնեն:
12 - Բայց անոնք Տէրոջը խորհուրդ-
ները չեն գիտեր,
Ու անոր գլխաւորութիւնը չեն հաս-
կրնար.
Քանզի ինք զանոնք կը ժողովէ՝ ինչպէս
որաները կային մէջ իջ թողչու-
նի:
13 - Ելիր ու կայր ծեծէ, ով Սիօնի
աղջիկ,
Քանզի քու եղջիւրդ երկաթէ պիտի
ընեմ,
Եւ քու կճղակներդ պղնձէ պիտի
ընեմ,
Ու շատ ժողովուրդներ պիտի մանրես.
Ու անոնց վատտակը Եհովայի,
Եւ անոնց ստացուածքը բոլոր երկրին.
Տէրոջը պիտի նուիրեմ:

ԳԼ. Ե

Հիմա, ով գունդի աղջիկ, քեզի գունդ կազմէ.

Մեր վրայ պաշարում՝ դրուեցաւ. Իսրայէլի դատաւորին ծնօտին գաւազանով պիտի զարնեն:

2-Եւ դուն, ով Բեթլէհէմ՝ Եփրաթա, Թէէ ԅուգայի հազարաւորներուն մէջ ըլլալու պզտիկ ես,

Բայց քեզմէ պիտի ելլէ ինծի ան որ Իսրայէլի վրայ իշխան պիտի ըլլայ, Ու անոր ելքը ի հնուց, յաւիտենական օրերէն, է:

3 - Անոր համար զանոնք յեռտ պիտի ապյ՝

Մինչև ծնանողին ծնանելու ժամանակը,

Եւ անոր եղբայրներուն մնացորդը Իսրայէլի որդիներուն պիտի գառնայ :

4 - Ու անիկա պիտի կենայ, ու Տէրօջը գօրութիւնովը

Եւ իր Տէր Աստուծոյն անուանը մեծ֊վայելչութիւնովը պիտի հովուէ,

Ու անոնք պիտի բնակին.

Քանզի հիմա մինչև երկրի ծայրերը պիտի մեծանայ:

5 - Եւ անիկա խաղաղութիւն պիտի ըլլայ

Երբ Ասորեստանցին մեր երկիրը մտնէ, Ու մեր պալատներուն մէջ սաք կոխէ, Անոր դէմ՝ եօթը հովիւ

Եւ ութ իշխանաւոր մարդիկ պիտի հանենք:

6-Ու անոնք Ասորեստանի երկիրը սրով Ու Նեբրովթի երկիրը իր դռներուն մէջ պիտի սպառեն.

Եւ անիկա Ֆղ պիտի ազատէ Ասորեստանցիներէն,

Երբ անոնք մեր երկիրը մտնեն

Ու մեր սահմաններուն մէջ սաք կոխեն:

7 - Եւ Յակորի մնացորդը շատ ժողովուրդներու մէջ

Յօղի պէս պիտի ըլլայ՝ «Ե Տէրօջմէ կռտ»:

Ե- շաղի պէս՝ «Ե կանանչ խտի վրայ կ'էջէ».

Ձոր մարդէ չսպասեր, Ու մարդու որդիներէն չյուսար:

8-Եւ Յակորի մնացորդը ազգերուն մէջ Նատ ժողովուրդներու մէջ, «Եպէ» պիտի ըլլայ,

Ինչպէս առիւծ մը՝ անտառի գազաններուն մէջ,

Կամ առայգ առիւծ մը՝ ոչխարներու հօտերուն մէջ,

Որ եթէ անցնի՝ կը կոխուտէ ու կը պատառէ,

Եւ ազատող մը չըլլար:

9 - Քու ձեռքդ քու հակառակորդներուդ վրայ պիտի վերնայ,

Ու բոլոր թշնամիներդ պիտի կտարին :

10 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը,

Քու ձիերդ քու մէջէդ բնաջինջ պիտի ընեմ՝

Եւ քու կառքերդ պիտի կորսնցնեմ .

11 - Եւ քու երկրիդ քաղաքները բնաջինջ պիտի ընեմ՝

Ու բոլոր պարիսպներդ պիտի փլցնեմ .

12-Եւ քու ձեռքէդ կախարդութիւնները բնաջինջ պիտի ընեմ՝

Ու ա՛լ գուշակութիւն ընողներ պիտի չունենաս.

13 - Եւ քու մէջէդ քու դրօշեալներդ Ու արձաններդ բնաջինջ պիտի ընեմ՝

Ու մէյմըն ալ քու ձեռքերուդ գործերուն երկրպագութիւն պիտի չընես:

14-Եւ քու մէջէդ Աստարովթի կուռքերդ պիտի կործանեմ՝

Ու քու քաղաքներդ պիտի աւրեմ : 15 - Եւ Ինչի մօտիկ չընող ազգերէն Արամութեամբ ու բարկութեամբ վրէժ պիտի առնեմ:

ԳԼ. Զ

Հիմա Տէրօջը ըսածը մօտիկ ըրէք.

Ելիր ու լեռներուն առջև դատ վաւէ, Եւ բլուրները քու ձայնդ թող լսեն :

2-Ով լեռներ ու երկրի ամուր հիմերը, Տէրօջը դատը մօտիկ ըրէք,

Քանզի Տէրը իր ժողովուրդին հետ դատունի,

Ու Իսրայէլի հետ պիտի վիճի:

3-Ով իմ ժողովուրդս, քեզի ի՞նչ ըրի, Ու ի՞նչ բանով քեզ յոգնեցուցի.

Ինծի դէմ՝ պատասխան տուր,

4 - Վասն զի քեզ Եգիպտոսի երկրէն հանեցի,

Ու ծառայութեան տունէն քեզ փրկեցի,

Եւ քու առջևէդ Մովսէսը, Ահարոնը ու Մարիամը զրկեցի:

5 - Ով իմ ժողովուրդս, միաքգ բեր ինչ որ Մովսէսը ասաց Բաղակ թագաւորը խորհեցաւ,

Ու ինչ որ Բեովրեան Բազաամ անոր պատասխանեց.

Ե- Ինչ որ էլա- Սասիմէ մինչև Գաղգաղա,

Որպէս զի Տէրոջը արդարութիւնը գիտնաս:

6 - Տէրոջը առջև ինչով երթամ, Ու Բարձրեալ Աստուծոյն առջև իյնամ: Արդեօք անոր առջև ողջակէզներով, Մէկ տարեկան որթերով երթամ:

7 - Արդեօք Տէրը հազարաւոր խոյերու կամ բիւրաւոր իւզի գետերու պիտի հաւնի՞:

Արդեօք իմ յանցանքիս համար իմ անդրանի՞կս,

Ո- հոգւոյս մեղքին համար որովայնիս պտուղը տամ:

8 - Քեզի յայտնեց, ով մարդ, թէ ի՛նչ է աղէկը.

Ու Տէրը քեզմէ ի՛նչ կը պահանջէ, Բայց միայն իրաւունք ընել, ողորմութիւն սիրել,

Ու խնարհութիւնով քու Աստուծոյդ հետ քալել:

9-Տէրոջը ձայնը քաղաքին կը կանչէ, Ու իմաստունը քու անունդ պիտի տեսնէ.

Փաւազանը ու անոր հրամայողը լսեցէք:

10 - Անօրէնին տանը մէջ տակաւին անօրէնութեան գանձեր կա՞ն,

Ու պակաս արդու՝ որ պիղծ է:

11 - Միթէ անօրէնութեան կշիւներ Ու խարդախ քարերու քսակ ունեցող մտքուր պիտի սեպե՞մ:

12-Քանզի անոր հարուստները զրկանքով լեցուն են,

Եւ անոր բնակիչները սուտ կը խօսին,

Ու իրենց բերնին մէջ նենգաւոր լեզու ունին:

13 - Ուստի ես ալ քեզ զարնելով հիւանդ պիտի ընեմ,

Եւ քու մեղքերուդ համար +եզ աւելերակ պիտի ընեմ:

14 - Իսկն պիտի ուտես ու պիտի չկըշտանաս,

Եւ քու անօթութիւնդ փորիդ մէջ պիտի ըլլայ.

Պիտի յափշտակես, բայց պիտի չկարենաս ազատել,

Ու ազատածդ սուրի պիտի մտանեմ:

15 - Իսկն պիտի սերմանես, բայց պիտի չհնձես.

Իսկն ձիթապատու պիտի կոխես, բայց իւզով պիտի չօծուիս.

Քաղցու պէտէ պարտաստես, բայց գինի պիտի չխմես:

16 - Քանզի Ամրիի հրամանները կը պահուին,

Եւ Ա.քաթի տանը բոլոր գործերը. Եւ դուք անոնց խորհուրդներովը կը քալէք,

Որպէս զի քեզ ամայի ընեմ,

Եւ *քու բնակիչներդ՝ սուլելու են ինչոյ.

Ուստի իմ ժողովուրդիս նախասինքը պիտի կրէք:

ԳԼ. Է

Վ. ո՛յ ինձի, որ ամառնային պտուղը քաղուածի պէս,

Այգեկութեն Զաչա՞ծ ճիւղերու պէս եղայ.

Ուտելու ողկոյզ չկայ.

Հոգիս կանխահաս պտուղներուն կը ցանկայ:

2 - Բարեպաշտը երկրէ կորսուեցաւ, Ու մարդոց մէջ ուղիղ մէկը չկայ.

Ամէնը արիւններու համար դարան կը գործեն,

Ամէն մարդ իր եղբայրը որոգայթով կ'որսոյ,

3 - Ձեռքերով շատ չարութիւն ընելու համար

Իշխանը պարէն կը պահանջէ,

Եւ դատաւորը կաշառքի կը նայէ,

Ու մեծ մարդը իր սրտին ցանկութեանը համեմատ կը խօսի.

Այսպէս զանկա կը ծռեն:

4 - Անոնց աղէկը փուշի պէս Շիտակը փշեղէն ցանգէն գէշ է.

Քու դէտերուդ օրը քու այցելութիւնդ եկաւ,

Անոնց շփոթութիւնը հիմա պիտի ըլլայ:

5 - Բարեկամի մի հաւատառք, Մտերիմ բարեկամի մի ապաւինիք,

Ծոցդ պառկողէն բերնիդ դռները պահէ:

6 - Քանզի տղան իր հայրը կ'անարգէ,

Աղջիկը իր մօրը վրայ, ու հարսը իր կեսուրին վրայ կ'ելլէ.

Մարդուն թշնամիները իր ընտանիքն են:

7 - Բայց ես Տէրոջը պիտի սպասեմ, *Եթէ անոր բնակիչները

Իմ փրկութեանս Աստուծոյն պիտի
 յաւատամ,
 Իմ Աստուածս ինծի պիտի լսէ:
 8 - Ով իմ թշնամիս, վրաս մի խնդար.
 Թէեւ իյնամ՝ պիտի ելլեմ,
 Թէեւ խաւարի մէջ նստիմ՝ Տէրը ինծի
 լոյս պիտի ըլլայ:
 9 - Տէրոջը բարկութիւնը պիտի կրեմ,
 (Քանզի անոր դէմ մեղք գործեցի),
 Մինչև անհկա իմ դատս պաշտպանէ
 ու ինծի իրաւունք ընէ,
 2-իս լոյսը հանէ ու անոր արդարու-
 թիւնը տեսնեմ:
 10 - Այն տանն իմ թշնամիս պիտի
 տեսնէ.
 Ամօթը պիտի ծածկէ զանհկա որ ինծի
 կ'ըսէր թէ
 Ո՞ւր է քու Տէր Աստուածդ.
 Իմ աչքերս զանհկա պիտի տեսնեն.
 Հիմա անհկա փողոցներուն ցեխին պէս
 սոքի կոխան պիտի ըլլայ:
 11 - Այն օրը որ քու պարիսպներդ
 պիտի շինուին,
 Նոյն օրը պատուէրը հեռացած պիտի
 ըլլայ:
 12-Այն օրը Ատրեւտանէ և †պարսպա-
 ւոր քաղաքներէն,
 Ու †պարիսպէն մինչև Գետը,
 Եւ ծովէ ծով ու լեռնէ լեռ քեզի պի-
 տի դան:
 13 - Սակայն երկիրը ամառի պիտի ըլլայ
 իր բնակիչներուն †պատճառաւ,
 Որդե՞ս զի իրենց գործերուն պատուէն
 ուրէն:
 14 - Քու գաւազանովդ հովուէ քու
 ժողովուրդդ,
 Քու ժառանգութեանդ խաշինքը,

Որ առանձին անտառ մը կը Նախ-
 կարմեղոսի մէջ.
 Անոնք առաջուան օրերուն պէս
 Բասանի ու Գաղսադի մէջ թող արա-
 ծին:
 15 - Անոր հրաշքներ պիտի ցուցնեմ,
 Ինչպէս այն օրերը որ Եգիպտոսի երկ-
 րէն ելար:
 16 - Աղգերը պիտի տեսնեն,
 Ու իրենց բոլոր քաջութեանն պիտի
 ամչնան.
 Բերնի վրայ ձեռք պիտի դնեն,
 Ու անոնց սկանջները պիտի խլանան:
 17 - Օձի պէս հող պիտի լզեն,
 Երկրի սողուններուն պէս
 Իրենց պահուրտած տեղերէն պիտի դու-
 ղան,
 Մեր Տէր Աստուծ մէն պիտի զարհուրին,
 Ու քեզմէ պիտի վախնան:
 18 - Քեզի պէս Աստուած ո՞վ կայ,
 Որ անօրէնութիւնը կը ներէ,
 Ու իր ժառանգութեանը մնացորդին
 յանցանքը անտես կ'ընէ.
 Իր բարկութիւնը յաւիտեան չպահէր,
 Քանզի ողորմութիւն կը սիրէ:
 19 - Անհկա պիտի դառնայ, մեզի
 ողորմութիւն պիտի ընէ,
 Մեր անօրէնութիւնները սոքին տակ
 պիտի տանէ.
 Այո, անոնց բոլոր մեղքերը
 Ծովուն խորութեանը մէջ պիտի նե-
 տես:
 20 - Յակորի ճշմարտութիւն պիտի
 ընես,
 Եւ Աբրահամի ողորմութիւն,
 Ինչպէս առաջուան օրերէն ի վեր
 Մեր հոյրերուն երգումով խոստացար:



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՆԱՒՈՒՄԱՅ



ԳԼՈՒԽ Ա.

Նինուէի պատգամը. Ելկեսացի՛ Նա-
 ւուսի տեսիլքին զիրքը:

*Կ-Տ, Եգիպտոսի †Կ-Տ, Եգիպտոսէ
 †Կ-Տ, հեա

2 - Եհովա նախանձուտ ու վրէժ-
 խնդիր Աստուած է.
 Եհովա վրէժ առնող ու բարկութեան
 տէր է.
 Եհովա իր հակառակորդներէն վրէժ
 կ'առնէ,
 Ու իր թշնամիներուն բարեխաբէն կը
 պահէ:

- 3 - Ե՛հովա երկայնամիտ է, ու անոր զօրութիւնը մեծ է, Բայց յանչարէր ամենեկին անպարտ չթողուր.
- Ե՛հովայի ճամբան մրրիկի ու փոթորիկի մէջ է,
- Ու ամպերը անոր սաքերուն փոշին են :
- 4 - Ծովուն կը սաստէ ու զանհկա կը ցամքեցնէ,
- Եւ բոլոր գետերը կը չորցնէ.
- Բասան ու կարմեղս կը թառամին,
- Եւ Լիբանանի ծաղիկը կը թառամի :
- 5 - Լեռները անկէ կը դողան ու բլուրները կը հալին.
- Երկիր անոր երեսէն կը խախտի,
- Աշխարհ ու անոր բոլոր բնակիչները :
- 6 - Անոր ցատումին առջև ո՞վ կրնայ կայնիլ,
- Եւ անոր սաստիկ բարկութեանը ո՞վ կրնայ դէմ գնել.
- Անոր սրամտութիւնը կրակի պէս կը թափի,
- Ու սպառաժները անկէ կը խորտակին:
- 7 - Ե՛հովա բարի է, նեղութեան օրը ամրութիւն է,
- Ու իրեն ապաւինողները կը ճանչնայ:
- 8 - Բայց այն Կառմախ անոր յարգանս հեղեղով բոլորովին պիտի աւրէ,
- Եւ խաւարը պիտի հալածէ անոր թըշնամիները :
- 9 - Ե՛հովայի դէմ ի՞նչ կը խորհիք. Բնաջինջ ընողը անհկա է.
- Նեղութիւնը երկրորդ անգամ պիտի չելլէ:
- 10 - Քանզի քանի որ անոնք փուշերու պէս փաթթուած են,
- Ու իրենց ըմպելիքովը գինովցածի պէս են,
- Բոլորովին չորցած յարդի պէս պիտի այրին:
- 11 - Քեզմէ Ե՛հովայի դէմ չարութիւն մտածող մը,
- Անորէն խորհրդական մը, ելաւ :
- 12 - Տէրը այսպէս կ'ըսէ. Թէև անոնք խաղաղութեան մէջ են ու բազմաթիւ են,
- Սակայն անոնք պիտի կտարին երբ անհկա անցնի.
- Թէև քեզ նեղեցի, ա՛լ պիտի չնեղեմ:
- 13 - Եւ հիմա քու վրայէդ անոր լուծը պիտի կտարեմ,
- Ու քու կապերդ պիտի կտրեմ:
- 14 - Եւ Տէրը քեզի համար հրամայեց,

- Որ մէյմըն ալ քու անունէդ հարգ շտարածուի.
- Քու սատուածներուդ ատենն Գանդակած և ձուլածոյ կուռքերը բնաջինջ պիտի ընեմ.
- Զանչիս քու գերեզմանդ պիտի ընեմ,
- Քանզի դուն անարգ եղար:
- 15 - Ահա լեռներուն վրայ աւետիս բերողին,
- Խաղաղութիւն քարոզողին, սաքերը. Տօներդ պահէ, ով Յուդա, ուխտերդ կատարէ.
- Քանզի մէյմըն ալ քու մէջէդ անօրէն պիտի չանցնի,
- Անհկա բոլորովին կտարեցաւ:

ԳԼ. Բ

- Խորտակողը քու երեսիդ դէմ ելաւ.
- Պարիսպը պահպանէ, ճամբան դիտէ, Մէջքերդ ուժովցուր — բոլոր ոյժդ չար ժողովէ:
- 2 - Քանզի Տէրը Յակոբի վայելչութիւնը Խորայելի վայելչութեանը պէս նորոգեց.
- Վասն զի պարպողները զանոնք պարպեցին,
- Ու անոնց որթի ուռերը աւրեցին:
- 3 - Անոր զօրաւորներուն վահանը կտրմրեցաւ,
- Անոր քաջ մարդիկը կտրմիրով ներկուեցան.
- Անոր պատրաստութեանը օրը կառքը *պողպատի փայլունութիւն՝ պիտի ունենայ,
- Ու նիզակները պիտի երերցունին:
- 4 - Կառքերը փողոցներուն մէջ պիտի կաաղին,
- Հրապարակներուն մէջ իրար պիտի բաղխեն.
- Անոնց երեւթը ջահերու պէս պիտի ըլլայ,
- Ու փայլակներու պէս պիտի վազեն :
- 5 - Իր կտրիճները պիտի յիշէ.
- Անոնք քայած տառննին պիտի գլորին,
- Ինչ ինչ փնտրէր պարսպին հօդէն ալ — պիտի արտարան,
- Ու պատասպարան պիտի պատրաստուի:
- 6 - Գետերուն դռները պիտի բացուին, Եւ պալատը պիտի Իփլչի:

*Կառք, ջահերու լոյս ԻԵՔԵ. հալի

- 7 - Ու նախատասճմանուեցաւ «բ» անիկա գերուածեան պիտի ելլէ, եւ անոր աղախինները կուրծքերնուն զարնելով
- Ու աղաւնիի պէս մնչելով «ն» հետ պիտի երթան :
- 8 - Եւ նինուէ շատ ժամանակէ ի վեր ջուրերու աւազանի պէս էր. Սակայն անոնք փախչելով՝ կայնեցէք, կայնեցէք՝ պիտի շահն,
- Բայց դարձող պիտի չլլայ :
- 9 - Արծաթ յափշտակեցէք, սակի յափշտակեցէք, Գանգի «ն» դարգերը անթիւ են, Ու ամէն ցանկալի սպասներու առատութիւն կայ :
- 10 - Պարտպ ու պարպած ու դատարկացած է. Եւ սիրտերը կը հային, ու ծունկերը իրարու կը զարնեն, Եւ ամէն մէջքերը կը դողան, Ու ամէնուն երեաները գոյներնին կը նետեն :
- 11 - Ո՞ւր է առիւծներուն բնակարանը, Եւ առոյգ առիւծներուն արօար, Ուր արու առիւծը, մատակ առիւծը Ու առիւծի կորիւնը կը պարտէին, Ու զանազ վախցնող մը չկար :
- 12 - Առիւծը իր կորիւններուն բաւական եղածին չափ կը պատառէր Ու իր մատակ առիւծներուն համար կը խեղդէր, Եւ իր մորինները սրտով Ու իր բնակարանները յափշտակութեամբ կը լեցնէր :
- 13 - Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ զօրաց Տէրը, Եւ անոր կառքերը պիտի այրեմ «- ծուխի պիտի դարչնեմ», Եւ քու առոյգ առիւծներդ սուրը պիտի ուտէ. Ու քու սրոգ երկրի վրայէն պիտի ջնջեմ, Եւ քու գետպաններուդ ձայնը մէյմըն ալ պիտի չլսուի :

ԳԼ. Գ

Անոր արիւններու քաղաքին, Բոլորովին ստու թեամբ «- յափշտակութեամբ լեցուն է.

*Կ-ժ, թէ Լ. պատշապաններ դրուած են,

- Հան որսը պակաս չէ :
- 2 - Ահա խարազանին ձայնը, Ու անիւնին շարժման ձայնը, Եւ սրնթաց ձիին ու ցնցուող կառքին շաշննը :
- 3 - Զիաւորը կը վերցնէ *փայլուն սուրը ու շողշողուն նիզակը, Եւ շատ վիրաւորներ ու խիստ շատ մեռելներ կ'ըլլան, Ու գիերը անթիւ են, գիերուն վրայ կը գլորին,
- 4 - Այն պոռնիկին պոռնկութիւններուն շատութեանը համար, Որ խիստ շնորհալի ու կախարդութեանց տէր ըլլալով՝ Իր պոռնկութիւններովը ազգեր, Եւ իր կախարդութիւններովը ազգատոհմներ կը ծախէր :
- 5 - Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ զօրաց Տէրը, Ու քու երեսիդ դէմ քու քղանցքդ պիտի բանամ, Եւ քու մերկութիւնդ ազգերուն, Ու քու անարգանքդ թագաւորութիւններուն պիտի ցուցնեմ :
- 6 - Եւ քու վրագ պղծութիւններ պիտի նետեմ, Ու քեզ խոյտառակ պիտի ընեմ, Ու քեզ օրինակ պիտի դնեմ :
- 7 - Ու պիտի ըլլայ որ ամէն քեզ տեսնողը Գեզմէ պիտի փախչի, ու պիտի ըսէ, Նինուէ աւերակ եղաւ. Անոր վրայ ո՞վ պիտի ողբայ. Գեզի ուրկէ՞ մխթարիչներ փնտռեմ :
- 8 - Միթէ դուն Նովամանէ աղէ՞կ ես, Որ գետերուն մէջ կը բնակէր, Ու ջուրերով շրջապատուած էր, Որու խրամ եղած էր ծովը, Ու ծովը անոր պարիսպն էր.
- 9 - Անոր զօրութիւնը եթէովպիս ու եզրպատու էր, Ու ծայր չունէր. Փուգացիք ու Լիբեացիք քեզի օգնական էին :
- 10 - Անիկա ալ ոքսոր ու գերութեան գնաց, Անոր աղաքները անգամ ամէն ճամբու գլուխ գետինը զարնուեցան. Եւ անոր պատուականներուն վրայ վիճակ ձգեցին,

*Լէբ. սուրին բոցը ու նիզակին փայլակը

Ու անոր բոլոր մեծամեծները շղթա-
ներով կապուեցան:
11 - Դուն ալ պիտի գինովնաս ու ան-
յայտ ըլլաս,
Դուն ալ թշնամիէն ամբանալու տեղ
պիտի փնտռես:
12 - Քու բոլոր բերդերդ կանխահաս
պատուղներ ունեցող թղենինե-
րու յէ՞ պիտի ըլլան,
Որո՞նք երբ թօթփուլին, ուտողին բերա-
նը կ'իյնան:
13 - Ահա քու ժողովուրդդ քու մէջդ
կիններու յէ՞ պիտի ըլլան,
Քու երկրիդ դռները անշուշտ քու
թշնամիներուդ պիտի բացուին,
Կրակը պիտի ուտէ քու նիգերդ:
14 - Պաշարուծի համար քեզի ջուրեր
քաշէ,
Բերդերդ ամբացուր.
Յեխի մէջ մտիր ու կաւը կոխէ,
Եւ աղիւսին փուռը նորոգէ.
15 - Հոն կրակը քեզ պիտի ուտէ,
Սուրը քեզ պիտի կտարէ,
Ու ջորեակի պէս քեզ պիտի հատցնէ.
Քեզ ջորեակի պէս շատցուր,

Քեզ մարտի պէս շատցուր:
16 - Քու վաճառականներդ երկինքի
ստաղերէն աւելի շատցուցիր.
Ջորեակը տարածուեցաւ, ետքը թռաւ:
17 - Քու թագակիրներդ մարտի պէս,
Ու զօրավարներդ անթիւ մարտիներու
պէս են,
Որոնք ցուրտ օրը ցանգերու վրայ կը
հանգչին.
Երբ արևը ծագի՝ կը շուեն,
Ու անանց տեղին ուր ըլլալը չգիտցուի:
18 - Քու հովիւներդ կը քնանան, ով
Ասորեստանի թագաւոր,
Քու ազնուականներդ կը պառկին.
Քու ժողովուրդդ լեռներուն վրայ
ցրուեցան,
Ու մէկը չկայ որ զո՞նք ժողվէ:
19 - Քու բեկուծիդ ճար չկայ,
Քու վէրքդ անդարմանելի է.
Ամէն անոնք որ քու լուրդ կը լսեն՝
քեզի համար ծափ պիտի զար-
նեն,
Քանզի ամէն ժամանակ քու չարու-
թիւնդ որո՞ւ վրայ անցած չէ:



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ



ԳԼՈՒԽ Ա

Ամբակու՛մ մարգարէին տեսիլքով
յայտնուած պատգամը:
2 - Մինչև ե՞րբ, ով Տէր, աղաղա-
կեմ ու չլսես,
Եւ զրկանքի համար քեզի կանչեմ ու
չաղատես:
3 - Ինչո՞ւ համար ինծի անօրէնութիւն
կը ցուցնես,
Եւ նեղութիւն կ'երևցնես.
Քանզի իմ առջև յափշտակութիւն
ու զրկանք կայ,
Եւ դատ ու վէճ հանող կայ:
4 - Անոր համար օրէնքը կը խափանի,
Ու իրաւունքը ի գործ չգրուիր,
Վասն զի անօրէնը արդարին բոլորա-
քը կ'առնէ.
Այս պատճառաւ դատաստանը ծուռ
կ'եղէ:

5-Ազգերուն մէջ նայեցէք ու տեսէք,
Եւ զարմանալով ապշեցէք,
Վասն զի ձեր օրերուն մէջ այնպիսի
գործ մը պիտի գործեմ,
Որ եթէ չեզի պատմուի, պիտի չհաւա-
տար:
6 - Քանզի ահա ես պիտի արթնցնեմ
Քաղաքացիները,
Այն դառն ու արագընթաց ազգը,
Որ իրենը չեղող բնակութիւններուն
տիրելու համար՝
Երկրի լայնութիւնը կը պարտի.
7 - Անիկա ստակալի և ահարկու է,
Անոր դատաստանը ու իշխանութիւնը
իրմէ կ'եղեն:
8 - Անոր ձիերը ինձերէն աւելի արա-
գաշարժ են,
Ու երկոյցեան գայլերէն աւելի կատ-
ղած են.
Եւ անոր ձիաւորները պիտի ցաթկեն,

Ու անոր ձիաւորները հեռուէն պիտի
գան,
Ու կերակուրի վրայ արտորացող ար-
ծիւի պէս պիտի թռչին:
9 - Ամէնը զրկանքի համար պիտի գան,
Գունդերուն երեսները դէպ ի * յաւաջ
պիտի ըլլան,
Ու աւազի պէս գերիներ պիտի ժողվէ:
10 - Եւ անկա թագաւորները ծաղր
պիտի ընէ,
Ու իշխանները անոր խաղաղիկ պիտի
ըլլան.
Անկա ամէն պարսպի վրայ պիտի խըն-
դայ,
Վասն զի հող պիտի դիզէ ու զանկա
պիտի առնէ:
11 - Այն ատեն անոր միաքը պիտի
փոխուի ու պիտի հպարտանայ,
Եւ այս իր զօրութիւնը իր աստուծոյն
* Եղեւ՛ յանցաւոր պիտի ըլլայ:
12 - Միթէ դուն ի յաւիտենից չե՞ս, ով
իմ Տէր Աստուածս, իմ Սուրբս.
Պիտի չմեռնինք:
Ով Տէր, զանկա դատաստանի համար
որոշեցիր,
Ով Վէմ՝ զանկա յանդիմանելու
համար հաստատեցիր:
13 - Դուն, որուն աչքերը չարութիւն
տեսնելէն մաքուր են,
Ու անիրաւութեան նայելու կարող
չես,
Նենգաւորներուն ինչո՞ւ կը նայիս,
Ամբարիշտին իրմէ արդար եղողը կլլած
ատենը ի՞նչ՞ - կը լռես.
14 - Ու մարդը ծովու ձուկերուն պէս
կ'ընես,
Սողուններուն պէս՝ որոնք իրենց վրայ
տիրող չունին:
15 - Անոնց ամէնը կարթով կը հանէ.
Չանոնք իր ուսկանովը կը բռնէ,
Եւ զանոնք իր ցանցովը կը ժողվէ,
Անոր համար կ'ուրախանայ ու կը
ցնծայ.
16 - Անոր համար իր ուսկանին զո՛հ կը
մատուցանէ,
Ու իր ցանցին խունկ կը ծխէ,
Վասն զի անոնցմով իր բաժինը գէր
Ու իր կերակուրը պարարտ է:
17 - Արդեօք այս պատճառաւ իր ուս-
կանը պիտի պարպե՞ս,
Ու միշտ ազգերը կտարելէն պիտի չդա-
դարի՞:

* Կա՛մ, արեւելք

Իմ պահպանութեանս տեղը պիտի
կենամ,
Ու պարսպին վրայ պիտի կայնիմ,
Ու պիտի սպասեմ՝ որ տեսնեմ՝ թէ ին-
ծի հեա ի՞նչ պիտի խօսի,
Եւ թէ իմ՝ կր՞՞ յանդիմանութեանս
վրայ ի՞նչ պատասխան պիտի
տամ:
2 - Եւ Տէրը ինծի պատասխան տուաւ
ու ըսաւ,
Տեսիլքը գրէ ու տախտակներու վրայ
յայտնի նշանակէ,
Որպէս զի զանկա կարգացողը * հա-
մարձակ կարգայ՝.
3 - Քանզի տեսիլքը տակաւին որոշ-
ուած ժամանակի համար է,
Բայց վախճանին կ'արտորայ, սուտ
պիտի չելլէ.
Եթէ ուշանայ՝ անոր սպասէ,
Քանզի անշուշտ պիտի գայ, ետ պիտի
չմնայ:
4 - Ահա հպարտ Բարդուէն հոգին իր
ներսիդին ուղիղ չէ,
Բայց արդարը իր հաւատքովը պիտի
տարի:
5 - Մանաւանդ գինին կը կատղեցնէ,
Հպարտ մարդը հանդարտ չկենար,
Քանզի իր հոգին գերեզմանի պէս կը
կը լայնցնէ,
Ու մահուան պէս ըլլալով՝ չկշտանար,
Հապա բոլոր ազգերը իրեն կը ժողվէ,
Ու բոլոր ժողովուրդները իր քով կը
գումարէ:
6 - Միթէ ատնց ամէնը անոր վրայ ա-
ռակ պիտի չհանե՞ն,
Ու անոր համար ծաղրական խօսքերով
պիտի չըսե՞ն,
Վա՛յ անոր՝ որ իրենը չեղածը կը
չատցնէ,
(Մինչև ե՞րբ պիտի Դե՛ս,
Ու իր վրայ Գրաւներ կը բեռնաւո-
րէ:
7 - Միթէ յանկարձ քեզ խաճնողներ
պիտի չեղլե՞ն,
Ու քեզի նեղութիւն տուողներ պիտի
չարթննա՞ն
Եւ դուն անոնց ա՛տ ար պիտի չըլլա՞ս:
8 - Որովհետև դուն շատ ազգեր կո-
ղպատեցիր,

* Եբբ. վայէ
Կա՛մ, թանձր ցեխ

Քեզ ալ ժողովուրդներուն բոլոր մնացորդները պիտի կողապանն

Մարգոց արիւններուն համար
Ու երկրին, քաղաքին և բոլոր անոր մէջ բնակողներուն զրկանքին համար:

9 - Վա՛յ անոր՝ որ իր ստանը համար չար ագահութեամբ բան կը վատակի,

Որպէս զի իր բոյնը բարձր տեղ դնէ, Չարին ձեռքէն զինք աղատելու համար:

10 - Շատ ժողովուրդներ կտարելովդ Բու տանդ վրայ անարգանք՝ բերիր, Եւ քու հոգւոյդ դէմ՝ մեղք գործեցիր:

11 - Քանզի քարը պատէն պիտի աղաղակէ,

Ու գերանը շէնքին փայտերուն մէջէն պատասխան պիտի տայ անոր:

12 - Վա՛յ անոր՝ որ արիւններով քաղաք կը շինէ,

Ու անիրաւութեամբ աւան կը հաստատէ:

13 - Ահա տարկա զօրաց Տէրոջմէն չէ՞, Որ ժողովուրդները կրակի համար կ'աշխատին,

Ու ազգերը պարտապ տեղ կը յոգնին:

14 - Քանզի երկիր Տէրոջը փառքին գիտութիւնովը պիտի լեցուի, Ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն:

15 - Վա՛յ թե՛ր՝ որ քու ընկերիդ գէնէ կը խմցնես,

Եւ քու Գարբեցուցիչ ըմպելիքդ՝ առատ կը բաշխես,

Որ «-բէշեբն ալ գինովցնես, Որպէս զի անոնց մերկութիւնը տեսնես:

16 - Փառքէն աւելի ամօթով կշտացար,

Գուն ալ խմէ ու մերկացիր .

Տէրոջը աջ ձեռքին բաժակը քեզի պիտի դառնայ,

Եւ քու փառքիդ վրայ անարգանք պիտի գայ:

17 - Քանզի Լիբանանի զրկանքը քեզ պիտի ծածկէ,

Ու գազաններուն յափշտակութիւնը պիտի վախցնէ՝

Մարգոց արիւններուն համար,

Ու երկրին, քաղաքին և բոլոր անոր մէջ բնակողներուն զրկանքին համար:

18 - Ի՞նչ օգուտ ունի արուեստաւորին քանդակած կուռքը, Չուլածոյ կուռքը և ստութիւն սորվեցնողը .

Որ շինողը իր շինած բանին ապաւինի, Ու համը կուռքեր շինէ:

19 - Վա՛յ անոր՝ որ փայտին կ'ըսէ, Արթնցիր,

Եւ համը քարին՝ Ելիր .

Միթէ անիկա բան չէ պիտի սորվեցնէ՞ . Ահա անիկա սակիով ու արծաթով պատած է,

Բայց անոր մէջ ամենևին հոգի չկայ:

20 - Սահայն Տէրը իր սուրբ տաճարին մէջ է .

Անոր երեսին առջև լուռ կեցիր, ով բոլոր երկիր:

ԳԼ. Գ

* Շիկիօնօթի վրայ, Ամբակուժ մարգարէին աղօթքը:

2 - Ով Տէր, քու լուրդ լսեցի «-վախցայ .

Բու գործդ տարիներուն մէջ նորոգէ, ով Տէր,

Տարիներուն մէջ զխցուր,

Բարկութեան մէջ սղարմութիւն յիշէ:

3 - Աստուած Թեմանէ եկաւ, Ու Սուրբը՝ Փառան լեռնէն. (Սէլա.)

Անոր փառքը երկինքը ծածկեց, Ու երկիր անոր գովութիւնովը լեցուեցաւ:

4 - Եւ «նոր պայծառութիւնը լոյսի պէս էր .

Անոր ձեռքէն ճառագայթներ կ'ելլէին,

Ու անոր զօրութեանը ծածկոյթը հոն էր .

5 - Անոր առջևէն ժանտախտը կ'երթար,

Եւ անոր սոքերուն ետէն Գրասագնայ տենդը՝ կ'ելլէր:

6 - Անիկա կայնեցաւ ու երկիրը չափեց, Նայեցաւ և ազգերը դոյզացուց .

Ու յաւիտենական լեռները փշուեցան,

Եւ վաղեմի բլուրները խոնարհեցան .

Անիկա յաւիտենական ճամբաներ ունի:

*Կա՛մ, Մեղեդիներու. տես Սաղ. է. վերնագիրը:
†Կա՛մ, կայծակ. Սաղ. ժը. 8:

*Եբբ. իորհեցար
†Եբբ. տաքութիւնդ

7 - *Քուշանի վրանները նեղութեան տակ տեսայ,
 Մաղիամու երկրին վրանները դողացին :

8- Միթէ գեաերուն բարկացա՞ւ Տէրը ,
 Քու սրամտութիւնդ գեաերուն վրա՞յ էր ,
 Բարկութիւնդ ծովուն վրա՞յ էր ,
 Որ քու ձիերդ «- փրկութեան կառքերդ հեծար :

9 - Քու ազեղդ բոլորովին մերկ եղաւ Խաչիկի ցեղերուն ըստ՝ երգումներուդ ու «- խօսքիդ պէ» . (Սէլա .)

Երկիրը գեաերով պատուեցիր :

10 - Լեռները քեզ տեսան «- դողացին ,
 Ջուրերուն յորդութիւնը անցաւ ,
 Անդունդը իր ձայնը տուաւ ,
 Ո- ձեռքերը վեր վերցուց :

11 - Արևը «- լուսինը իրենց կարգին մէջ կայնեցան ,
 Անոնք քու նեաերուդ լուսովը
 Եւ քու շողշողուն նիզակիդ պայծառութիւնովը քալեցին :

12 - Երկրին վրայ սրամտութեամբ պարտեցար ,
 Ու բարկութեամբ ազգերը կոխեցիր :

13 - Քու ժողովուրդիդ փրկութեանը համար ,
 Քու օժեպիդ հեա փրկութեան համար ,
 Ելար .
 Անօրէնին տունէն գլուխ ճզմեցիր՝
 Հիմը մինչև պարանոցը բանալով :
 (Սէլա .)

14 - Իրենց գաւազաններովը իրենց

գլխաւորներուն գլուխը խորտակեցիր ,
 Ձիս ցրուելու համար փոթորիկի պէս ելան :

Անոնց ուրախութիւնը տնանկը գաղտակ ուտելու պէս էր :

15 - Քու ձիերովդ ծովուն վրայ ,
 Նստա ջուրերուն խռովութեանը վրայ ,
 քալեցիր :

16 - Լսեցի ու սիրտս սարսափեցաւ ,
 Չայնէն շրթունքներս դողացին .
 Ոսկորներուս մէջ փառութիւն մտաւ ,
 Ու եղած տեղս սարսափեցայ ,
 Որպէս զի հանգստութիւն ունենամ նեղութեան օրը ,
 Երբ ժողովուրդին ելլէ ա՛ն «- իր գունդերովը անոր վրայ պիտի յարձակի :

17 - Թէև թղենին ընձիւղ չտայ ,
 Ու որթերուն վրայ պտուղ չբլլայ ,
 Ե- ձիթենիին բերքը ստէ ,
 Ու արտերը կերակուր չտան ,
 Ե- փարախէն ոչխարը կարի ,
 Ու գոմերուն մէջ արջառ չբլլայ ,

18 - Սակայն ես Տէրոջմով պիտի ցընծամ ,
 Իմ փրկութեանս Աստուծովը պիտի ուրախանամ :

19 - Տէր Եհովա իմ զօրութիւնս է ,
 Ու իմ սաքերս եղնիկի «- քերպան պէս պիտի ընէ ,
 Եւ զիս իմ բարձր տեղերուս վրայ պիտի պարացնէ :

Գլխաւոր երաժշտին , իմ զօրներու նուագարաններուս վրայ :

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՓՈՆԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Տերոջը խօսքը, որ Եզեկիայի սրգւոյն Ամարիայի սրգւոյն Գողգոթայի սրգւոյն Քուսիի սրգւոյն Սոփոնիայի եղաւ՝ Յուգոյի թագաւորին Ամնիի սրգւոյն Յովսիայի օրերը :

*Կա՛հ, Եթէսովպիայի

2 - Երկրի երեսէն ամէն բանը բողբոլովին պիտի կորսնցնեմ՝, կ'ըսէ Տէրը :

3 - Մարդը ու տնասունը պիտի կորսնցնեմ ,
 Երկինքի թռչունները ու ծովուն ձուկերը
 Եւ գայլթակղութիւնները ամբարիշտներուն հեա պիտի կորսնցնեմ ,

Ու երկրի երեսէն մարդը պիտի կտրեմ,
 Կ'ըսէ Տէրը:
 4 - Եւ իմ՝ ձեռքս Յուդայի վրայ
 Ու երուսաղէմի բոլոր բնակիչներուն
 վրայ պիտի երկնցնեմ:
 Ու այս տեղէն բնաջինջ պիտի ընեմ՝
 Բաճաղի մնացորդը,
 Քուրմերուն անունը՝ քահանաներուն
 չեա,
 5 - Եւ ամսիքներու վրայ երկինքի զօր-
 քերուն երկրպագութիւն ընող-
 ները,
 Ու երկրպագութիւն ընելով Տէրոջմով
 երդում ընողները,
 Եւ Մեղքմով երդում ընողները,
 6 - Ու Տէրոջմէ ետ դարձողները, ու
 Տէրը չփնտռողները
 Եւ զանկա չխնդրողները:
 7 - Տէր Եհովայի առջև լուռ կեցիր,
 Քանզի Տէրոջը օրը մօտ է,
 Քանզի Տէրը զո՛հ պատրաստեց, իր կոչ-
 նականները *Նրաւիրեց:
 8 - Եւ պիտի ըլլայ որ Տէրոջը զո՛հին
 օրը
 Իշխանները ու թագաւորին տղաքները
 Ու բոլոր օտար զգեստ հագնողները
 պիտի պատժեմ:
 9 - Եւ այն օրը՝ սեմին վրայէն բոլոր
 ցաթկողները,
 Իրենց տէրոջը տունը զրկանքով ու
 նենգութեամբ լեցնողները, պի-
 տի պատժեմ:
 10 - Ու պիտի ըլլայ որ այն օրը, Կ'ըսէ
 Տէրը,
 Ձկանց դռնէն աղաղակի ձայն,
 Եւ Մասենայէ չեծութիւն,
 Ու բլուրներէն մեծ կտորած պիտի
 ըլլայ:
 11 - Ողբացէք, ով Մաթթէսի բնակիչ-
 ներ,
 Քանզի բոլոր վաճառական ժողովուրդը
 կորսուեցաւ,
 Բոլոր արծաթ բերողները կտորեցան:
 12 - Ու պիտի ըլլայ որ այն ժամա-
 նակ
 Երուսաղէմը ճրագներով պիտի քննեմ,
 Ու գի՛նի պէ՛ս իրենց մրուրին վրայ հան-
 գիստ նստող մարդիկը պիտի
 պատժեմ,
 Որոնք իրենց սրտին մէջ կ'ըսեն,
 Տէրը ոչ բարիք պիտի ընէ և ոչ չարիք:
 13 - Եւ անոնց ստացուածքը աւար

Ու անոնց տուները աւերակ պիտի ըլ-
 լան .
 Եւ տուներ պիտի շինեն, բայց անոնց
 ԳՉ պիտի չբնակին,
 Ու այգիներ պիտի տնկեն, բայց անոնց
 գինին պիտի չխմեն:
 14 - Տէրոջը մեծ օրը մօտ է,
 Մօտ է, ու խիստ կ'արտարայ.
 Տէրոջը օրուան ձայնը կ'ու գայ,
 Զօրաւորը հոն դառնապէս պիտի աղա-
 դակէ:
 15 - Այն օրը բարկութեան օր է.
 Նեղութեան ու տառապանքի օր,
 Կործանումի ու աւերումի օր,
 Խաւարի ու մեգի օր,
 Ամպի ու մառախուղի օր է.
 16 - Պարսպաւոր քաղաքներու դէմ
 Եւ բարձր աշտարակներու դէմ՝ փողի
 ու աղաղակի օր է:
 17 - Ու մարդիկը նեղութեան մէջ
 պիտի ձգեմ,
 Եւ կայրերու պէս պիտի պարտին,
 Քանզի Տէրոջը դէմ մեղք գործեցին.
 Ու անոնց արիւնը փոշիի պէս
 Ու մարմինները աղբի պէս պիտի թափ-
 ուին:
 18 - Տէրոջը բարկութեան օրը
 Անոնց արծաթը ու ոսկին անգամ՝
 Չանոնք ազատելու կարող պիտի չըլ-
 լան .
 Հապա բոլոր երկիրը անոր նախանձին
 կրակովը պիտի սպառի,
 Քանզի անկա խիստ շուտով երկրի բո-
 լոր բնակիչները պիտի հատցնէ:

ԳԼ. Բ

*Քննեցէք ձեր անձերը, քննեցէք՝
 Ով չամչցող ազգ,
 2-Իեռ նախաստահմանութիւնը չծնած,
 Օրը միշտի պէս չանցած,
 Իեռ Տէրոջը սաստիկ բարկութիւնը ձեր
 վրայ չեկած,
 Իեռ Տէրոջը բարկութեան օրը ձեր
 վրայ չեկած:
 3 - Տէրը փնտռեցէք, ով երկրի բոլոր
 խոնարհները,
 Իուք որ անոր իրաւունքը ի գործ կը
 դնէք,
 Արդարութիւն փնտռեցէք, խոնարհու-
 թիւն փնտռեցէք,

*Կամ, Ժողովուեցէք, ժողովուեցէք. Յու-
 վել. բ. 16:

*Եբբ. սրբեց

Թերևս Տէրոջը բարկութեան օրը պահուիք :

4 - Քանզի Գազա պիտի թողուի, Ասկաղտն ամայի պիտի ըլլայ . Ազովտար կէսօրուան ատեն պիտի վաճառեն,

Եւ Ակկարոն արմատէն պիտի խլուի :

5 - Վա՛յ ծովեզերքը բնակողներուն, Քերեթիներուն ազգին . Տէրոջը խօսքը քեզի դէմ է, ով Փղըշտացուց երկիրը Քանան . Քեզ ալ պիտի սուրեմ, այնպէս որ բնակիչ չունենաս :

6 - Եւ ծովեզերքը հովիւներու *բնակարաններ «- աւազաններ»
Ու հօտերու փարախներ պիտի ըլլայ :

7 - Եւ ծովեզերքը Յուդայի տանը մնացորդին պիտի ըլլայ, Հոն պիտի արածին . Իրիկունը Ասկաղտնի տուներուն մէջ պիտի պառկին, Քանզի անոնց Տէր Աստուածը անոնց այցելութիւն պիտի ընէ, Եւ անոնց գերութիւնը պիտի դարձնէ :

8 - Մովաբի նախատեցիք Ու Ամմոնի որդիներուն հայհոյութիւնները լսեցի, Որոնք իմ ժողովուրդս նախատեցին, Ու անոնց սահմանին դէմ հպարտացան :

9 - Անոր համար Խորայէլի Աստուածը, զօրաց Տէրը, «յադե» կ'ըսէ . կենդանի եմ ես, որ Մովաբը Սոգամի պէս
Ու Ամմոնի որդիները Գամրի պէս Եղինճներու կալուածք և աղի հանք
Ու յաւիտեան ամայութիւն պիտի ըլլայ . Իմ ժողովուրդիս մնացորդը զանոնք պիտի յափշտակէ, Ու իմ ազգիս մնացորդները զանոնք պիտի ժառանգեն :

10 - Ասիկա անոնց հպարտութեանը համար իրենց պիտի ըլլայ, Քանզի անոնք զօրաց Տէրոջը ժողովուրդը նախատեցին, Ու անոր դէմ հպարտացան :

11 - Տէրը անոնց վրայ ահարկու պիտի ըլլայ, Քանզի անիկա երկրի բոլոր աստուածները բնաջինջ պիտի ընէ, Եւ ազգաց բոլոր կզղինները ,

Ամէն մէկը իր անդէն, երկրպագութիւն պիտի ընեն անոր :

12 - Դուք ալ, ով Լիթէովպացիք, Իմ սրովս պիտի սպաննուիք :

13 - Եւ անիկա իր ձեռքը հիւսիսին վրայ պիտի երկնցնէ, Ու Ասորեստանցին պիտի կորսնցնէ . Եւ Նինուէն աւերակի Ու անապատի պէս չոր երկրի պիտի դարձնէ, 14 - Եւ անոր մէջ հօտեր, Ազգաց բոլոր գաղանները, պիտի պառկին . Հաւարուսը ու ոգնին ալ Անոր խոյակներուն մէջանկերը գիշերը պիտի անցնեն . Պատուհաններէն ձայն պիտի հնչուի, Սեմերուն մէջ աւերում պիտի ըլլայ, Քանզի եղևնափայտը պիտի քակուի :

15 - Զբօսաւէր քաղաքը տսիկա է, որ տպահովութեամբ կը բնակէր . Որ իր սրտին մէջ կ'ըսէր թէ Ես եմ ու ինծմէ ուրիշ չկայ . Ի՛նչպէս աւերակ ու գաղաններու խշտի եղաւ . Անկէ ամէն անցնողը պիտի սուլէ «- ձեռքը պիտի շարժէ :

ԳԼ. Գ

Վա՛յ ապստամբ ու պիղծ «աղախն», Հարստահարութիւն ընող քաղաքին :

2 - Խօսք մտիկ չըրաւ, իրաւ չընդունեց, Տէրոջը չապաւինեցաւ, իր Աստուծոյն չմօտեցաւ :

3 - Անոր իշխանները անոր մէջ մունչող սախւծներ են, Անոր դատաւարները երեկոյեան գայլեր են , Որոնք մինչև առտու բան մը չեն թողուր :

4 - Անոր մարգարէները սնապարծ «- նենգաւոր մարգիկ են, Անոր քահանաները սրբարանը պղծեցին Ու օրէնքը բռնադատեցին : 5 - Արդար Տէրը անոր մէջ է, Անիկա անօրէնութիւն չգործեր . Առտուէ առտու իր իրաւունքը ի լոյս կը հանէ «- ետ չմնար, Բայց անիրաւը ամչնալ չգիտեր : 6 - Ազգերը բնաջինջ բրի, Անոնց աշտարակները կործանեցան .

*Կա՛մ, գեանափոր բնակարաններ

Անոնց փողոցները աւրեցի,
Այնպէս որ անոնցմէ անցնող չըլլայ .
Անոնց քաղաքները ամալյացան,
Անմարդ ու անբնակ եղան:

7 - Ըսի որ Գուն անշուշտ ինձ մէ պիտի վախնաս

Ու խրատ պիտի ընդունիս .
Եւ անոր բնակարանը բնաջինջ չըլլայ,
Որչափ որ զանիկա պատժեմ .
Սակայն անոնք կանուխ ելան,
Ու իրենց բոլոր գործերը ապականեցին:

8 - Ուրեմն ինձի սպասեցէք , կ'ըսէ Տէրը,

Մինչև այն օրը որ որսի համար սաք ելլեմ ,

Քանզի իմ վճիռս ազգերը ժողվել ,
Թագաւորութիւնները գումարել է ,
Որպէս զի անոնց վրայ իմ սրամատութիւնս ,

Իմ բոլոր սաստիկ բարկութիւնս , թափեմ .

Քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս կրակովը պիտի սպառի:

9 - Վասն զի այն ժամանակ ժողովուրդներուն շրճանները

Մաքուր շրթուներէրու պիտի դարձրնեմ ,

Որպէս զի ամէնը Տէրոջը անունը կանչեն ,

Ու մէկ *սրտով անոր ծառայութիւն ընեն:

10 - Եթէովպիայի գետերուն անդրի կողմէն

Իմ աղօթքներս , իմ ցրուածներուս աղջիկը ,

Իմ ընծաս պիտի բերեն:

11 - Այն օրը պիտի չամչնաս քու բոլոր գործերէդ ,

Որոնցմով ինձի դէմ յանցանք ըրիր .
Քանզի այն ատեն քու հպարտութիւնովդ զուարճացողները քու մէջէդ պիտի վերցնեմ ,

Ու մէյմըն ալ իմ սուրբ լեռանա վրայ գոռոզութիւն պիտի չընես:

12 - Եւ քու մէջդ խոնարհ ու աղքատ ժողովուրդ՝ մնացորդ պիտի թողուի ,

Ու Տէրոջը անուանը պիտի յուսան :

*Եբր. ուսով

13 - Իսրայէլի մնացորդը անօրէնութիւն պիտի չընեն ,

Ու սուտ պիտի չխօսին ,
Եւ անոնց բերնին մէջ նենգաւոր լեզու պիտի չգանուի .

Քանզի անոնք պիտի արածին ու պիտի պառկին ,

Ու վախցնող պիտի չըլլայ:

14 - Յնձա , ով Սիօնի աղջիկ ,
Բարձրածայն աղաղակէ , ով Իսրայէլ ,
Բոլոր սրտով ուրախ և զուարթ եղիր ,
Ով Երուսաղէմի աղջիկ:

15 - Տէրը քու դատաստաններդ վերցուց ,

Քու թշնամիդ վաւատեց .
Իսրայէլի Թագաւորը , Տէրը , քու մէջդ է ,

Մէյմըն ալ չարիք պիտի չատենես:

16 - Այն օրը Երուսաղէմի պիտի բուռի , Մի վախնար ,

Ու Սիօնի՝ Զեռքերդ չթուլնան :

17 - Քու Տէր Աստուածդ քու մէջդ զօրաւոր է ,

Անիկա +եզ պիտի փրկէ .
Անիկա քեզի համար ուրախութեամբ պիտի զուարճանայ ,

Ու իր սիրովը +եզի թողութիւն պիտի տայ ,

Եւ քու վրագ ցնծութեամբ պիտի ուրախանայ:

18 - Հանդիսար տօներու համար արբամածները պիտի ժողվեմ ,

Որոնք քեզմէ էին ,
Ու անոնց վրայ նախատինքը բեռ էր :

19 - Ահա ես այն ժամանակ քու բոլոր նեղիչներդ պիտի սպառեմ ,

Եւ կաղը պիտի ազատեմ , ու վաւատուածը պիտի ժողվեմ .

Եւ զանոնք գովելի ու անուանի պիտի ընեմ

Այն բոլոր երկիրներուն մէջ՝ ուր նախատինք կրէր էին:

20 - Այն ատեն ձեզ երկիր պիտի բերեմ ,
Եւ այն ատեն ձեզ պիտի ժողվեմ .

Վասն զի երկրի բոլոր ժողովուրդներուն մէջ ձեզ անուանի ու գովելի պիտի ընեմ ,

Երբ ձեր գերութիւնը ձեր աչքերուն առջև ես դարձնեմ , կ'ըսէ Տէրը:



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՅ



ԳԼՈՒԽ Ա

Դարե՛հ թագաւորին երկրորդ տա-
րին վեցերորդ ամիսը, ամսուն առաջին
օրը, Տէրոջը խօսքը Անգէ մարգարէին
ձեռքով Յուդայի իշխանին Սաղաթի-
ելեան Զօրաբարէլի, ու մեծ քահանա-
յին Յովսեփեկեան Յեսուի եղաւ՝ ըսե-
լով, 2 - Զօրաց Տէրը կը խօսի ու այս-
պէս կ'ըսէ. Այս ժողովուրդը կ'ըսէ թէ
ժամանակը չէ հասած, Տէրոջը տունը
չինելու ժամանակը: 3-Եւ Անգէ մար-
գարէին ձեռքով Տէրոջը խօսքը եղաւ՝
ըսելով.

4 - Արդեօք ժամանակ է որ դուք
ձեզունազարդ տուներնուդ մէջ
բնակիք,

Աւ այս տունը աւերակ մնայ:

5 - Սակայն հիմա զօրաց Տէրը այսպէս
կ'ըսէ.

Զեր ճամբաներուն վրայով մտածեցէք:

6 - Շատ ցանեցիք, բայց քիչ բերիք.
Կերօք, բայց չկշտացաք.

Խմեցիք, բայց ծարաւնիդ չանցուցիք.
Հագուեցաք, բայց չտաքցաք.

Աւ վարձքով բանողը ծակ քսակի հա-
մար կը վատակի եւ վարձքը:

7 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.

Զեր ճամբաներուն վրայով մտածեցէք:

8 - Լեռը ելէք, փայտ բերէք

Աւ տունը շինեցէք, և անոր պիտի հա-
ճիմ՝

Աւ պիտի փառաւորուիմ, կ'ըսէ Տէրը:

9 - Շատին նայեցաք, և ահա քիչ ե-
ղաւ.

Զեր տուները անգամ բերիք, բայց ա-
նոր վրայ փչեցի:

Ինչո՞ւ համար, կ'ըսէ զօրաց Տէրը.

Իմ տանս համար, որ աւերակ է,

Աւ ձեզմէ ամէն մէկը իր տունը կը վա-
զէ:

10 - Անոր համար երկինք ձեր վրայէն
եւ ցօղը ետ կը պահէ,

Աւ երկիր այ իր պտուղը չտար:

11 - Աւ ես երկրի վրայ, ու լեռներուն
վրայ,

Եւ ցօրենին վրայ, ու գինիին վրայ, ու
իւզին վրայ,

Աւ գեանի բերքերուն վրայ,

Եւ մարդոց վրայ, ու անասուններուն
վրայ,

Եւ ձեռքերու բոլոր վատակին վրայ
երաշտութիւն կանչեցի:

12 - Այն տան Սաղաթիելեան Զօ-
րաբարէլ, ու մեծ քահանան Յովսե-
փեկեան Յեսու, և ժողովուրդին բոլոր
մնացորդը մտիկ ըրին իրենց Տէր Աս-
տուծոյն ձայնին ու Անգէ մարգարէին
խօսքերուն, ինչպէս իրենց Տէր Աստ-
ուածը զանկիա զրկեր էր. ու ժողո-
վուրդը Տէրոջը երեսէն վախցաւ: 13 -
Եւ Տէրոջը դեսպանը Անգէ Տէրոջը
դեսպանութիւնովը ժողովուրդին խօ-
սեցաւ ու ըսաւ, Ես ձեզի հետ եմ,
կ'ըսէ Տէրը: 14 - Եւ Տէրը Յուդայի
իշխանին Սաղաթիելեան Զօրաբարէլի
հոգին, ու մեծ քահանային Յովսեփեկ-
եան Յեսուի հոգին, և ժողովուրդին
բոլոր մնացորդին հոգին արթնցուց.
ու գացին և իրենց Աստուծոյն, զօրաց
Տէրոջը, տանը մէջ աշխատեցան, 15 -

Դարե՛հ թագաւորին երկրորդ տարին
վեցերորդ ամսուն քսանըջորսերորդ օրը:

ԳԼ. Բ

Եթներորդ ամսուն քսանըմէկե-
րորդ օրը Անգէ մարգարէին ձեռքով
Տէրոջը խօսքը եղաւ՝ ըսելով, 2 - Հիմա
Յուդայի իշխանին, Սաղաթիելեան Զօ-
րաբարէլի, ու մեծ քահանային Յով-
սեփեկեան Յեսուի, և ժողովուրդին
մնացորդին խօսէ ու ըսէ,

3 - Զեր մէջ մնացած ո՞վ կայ,
Որ այս տունը իր առաջուան փառա-
ւորութիւնովը տեսած ըլլայ.

Աւ հիմա զանկիա ի՞նչպէս կը տեսնէք.
Միթէ ասիկա անոր քով ոչինչ բանի մը
պէս չէ՞ ձեր աչքերուն առջև:

4 - Բայց արդ զօրացիր, ով Զօրաբա-
րէլ, կ'ըսէ Տէրը.

Եւ ով Յովսեփեկեան Յեսու, մեծ քա-
հանայ, զօրացիր.

Աւ դուք, ով երկրին բոլոր ժողովուր-
դը,

Զօրացէք, կ'ըսէ Տէրը, ու աշխատեցէք.

Քանզի ես ձեզի հեա եմ, կ'ըսէ զօրաց
Տէրը :

5 - Ինչպէս ձեր Եզրիպտոսէ ելած ա-
տենը ձեզի հեա խօսք կապեցի,
Իմ Հոգիս ձեր մէջ կը կենայ. մի վախ-
նաք :

6 - Քանզի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Քիչ ատենէն ետքը նորէն երկինքը ու
երկիրը :

Եւ ծովը ու ցամաքը պիտի շարժեմ :

7 - Նսեա ամէն ազգերը պիտի շարժեմ,
Ու ամէն ազգերուն ցանկալի բաները
պիտի գան :

Եւ այս տունը փառքով պիտի լեցնեմ,
կ'ըսէ զօրաց Տէրը :

8 - Արժաթը իմն է ու սակին իմն է,
կ'ըսէ զօրաց Տէրը :

9 - Այս վերջին տանը փառքը առաջ-
ուանէն մեծ պիտի ըլլայ, կ'ըսէ
զօրաց Տէրը :

Ու այս անդ խաղաղութիւն պիտի
տամ, կ'ըսէ զօրաց Տէրը :

10 - Իտրեհի երկրորդ տարին, իննե-
րորդ տարին քանըչորսերորդ օրը Անգէ
մարգարէին ձեռքով Տէրոջը խօսքը
եղաւ՝ ըսելով, 11 - Զօրաց Տէրը այս-
պէս կ'ըսէ. Հիմա օրէնքին վրայով
հարցմունք ըրէ քահանաներուն ու
ըսէ, 12 - Եթէ մարդ մը իր հանգերծին
քղանցքովը սուրբ միս վերցնէ, ու
քղանցքովը հացի կամ ապուրի կամ
գինիի կամ իւղի կամ ինչեւիցէ կերա-
կուրի դաչի, անիկա սուրբ կ'ըլլա՞յ:
Եւ քահանաները պատասխան տուին
ու ըսին, Ոչ: 13 - Եւ Անգէ ըսաւ,
Եթէ մեռելէ պղծուած մը ասանցմէ
մէկուն դաչելու ըլլայ, կը պղծուի՞:
Ու քահանաները պատասխան տուին
ու ըսին, կը պղծուի: 14 - Եւ Անգէ
պատասխան տուաւ ու ըսաւ,

Այսպէս է այս ժողովուրդը,

Եւ այսպէս է այս ազգը իմ առջև,
կ'ըսէ Տէրը,

Ու այսպէս է իրենց ձեռքերուն բոլոր
գործը :

Ու ինչ որ հոն ընծայ կը մտաուցանեն՝
պիղծ է:

15 - Ուրեմն հիմա այս օրէն առաջ
եղածը մտածեցէք,

Երբ դեռ Տէրոջը տաճարին մէջ քար
քարի վրայ դրուած չէր:

16 - Այն ատեն երբ մէկը քսան +
յարեհէ գէզին քով կ'երթար,
Տասը +
կը գանուէր.

Ու երբ էր գինիի աւազանին քով կ'եր-
թար հնձանէն յիսուն մօր հա-
նելու,

Քսան մօր կը գանուէր:

17 - Զեզ +
ձեր ձեռքերուն բոլոր
գործը

Խորշակահարութեամբ և գալուկով
ու կարկուտով զարկի,

Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը :

18 - Հիմա այս օրէն առաջ եղածը
մտածեցէք,

Տէրոջը տաճարին հիմարկութեան օ-
րէն,

Իններորդ տարին քանըչորսերորդ օ-
րէն, առաջ եղածը մտածեցէք.

19 - Հունար աակաւին ամբարին մէջ է.
Եւ որթը ու թղենին և նունենին ու ձի-
թենին

Իեա պտուղ չաուին.

Այս օրէն ի վեր պիտի օրհնեմ:

20 - Եւ Տէրոջը խօսքը երկրորդ ան-
գամ

Անգէի եղաւ ամսուն քանըչորսերորդ
օրը՝ ըսելով,

21 - Յուդայի իշխանին Զօրաբաբէլի
խօսէ ու ըսէ,

Ես երկինքը ու երկիրը պիտի շարժեմ,
22 - Եւ թագաւորութիւններու ամթա-
ուր տակնուվրայ պիտի ընեմ,

Ու ազգաց թագաւորութիւններուն
զօրութիւնը պիտի կորսնցնեմ,

Եւ կառքը ու անոր հեծեալները տակ-
նուվրայ պիտի ընեմ.

Եւ ձիերը ու անոնց հեծեալները պիտի
իյնան,

Ամէն մէկը իր եղբօրը սրովը:

23 - Այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Քեզ պիտի առնեմ, ով Աաղաթիւ-

եան Զօրաբաբէլ, իմ ծառաս,
կ'ըսէ Տէրը,

Ու քեզ կնիքի պէս պիտի դնեմ,

Քանզի քեզ ընարեր եմ, կ'ըսէ զօրաց
Տէրը:



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Դարեհի երկրորդ տարին ութերորդ ամիսը, Տերոջը խօսքը Ադգուլի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ՝ ըսելով,

2 - Տէրը ձեր հայրերուն խիստ բարկացաւ:

3 - Ու անոնց ըսես, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.

Ինծի դարձէք, կ'ըսէ զօրաց Տէրը, Ու ես ձեզի պիտի դառնամ, կ'ըսէ զօրաց Տէրը:

4 - Ձեր հայրերուն պէս մի ըլլաք, Որոնց աւաճուան մարգարէները կը կանչէին՝ ըսելով,

Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ձեր չար ճամբաներէն ու չար գործերէն դարձէք,

Բայց անոնք մտիկ չըրին Ու ինծի ականջ չտուին, կ'ըսէ Տէրը:

5 - Ձեր հայրերը ս'ըր են. Ու մարգարէները յաւիտեան կ'ապրին:

6 - Սակայն իմ խօսքերս ու հրամաններս

Զորոնք իմ ծառաներուս, մարգարէներուն, պատուիրէր էի,

Ձեր հայրերուն չհասան.

Իսկ անոնք դարձան ու ըսին, Զօրաց Տէրը ինչ որ մեզի ընելու որոշէր էր,

Մեր ճամբաներուն ու գործերուն համեմատ,

Զանկա մեր վրայ ի գործ դրաւ:

7 - Դարեհի երկրորդ տարին, մեռատներորդ ամսուն, այսինքն Սեբաթամսուն, քսանըջորսերորդ օրը Տերոջը խօսքը Ադգուլի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ՝ ըսելով,

8 - Գիշերով տեսայ որ ահա աշխատ ձիւս վրայ հեծած մարդ մը ձորին մէջ եղող մրտենիներուն մէջտեղը կը կայնէր, ու անոր ետեւը աշխատ, պիտակ ու ճերմակ ձիեր կային:

9 - Ու ըսի, Աստիք ի՞նչ են, ով տէր իմ, ու ինծի հետ խօսող հրեշտակը ինծի ըսաւ, Աստից ինչ ըլլալը քեզի պիտի

ցուցնեմ: 10 - Եւ մրտենիներուն մէջ կայնող մարդը պատասխան տուաւ ու ըսաւ, Աստիք անոնք են՝ զորոնք Տէրը զրկեց երկիրը պարտելու համար:

11 - Ու մրտենիներուն մէջ կայնող Տերոջը հրեշտակին պատասխան տուին ու ըսին, Երկիրը պարտեցանք, և ահա բոլոր երկիրը հանգստութեամբ կը նստի:

12 - Եւ Տերոջը հրեշտակը պատասխան տուաւ ու ըսաւ, Ով զօրաց Տէր, մինչև ե՞րբ չես սղորմիր Երուսաղէմի ու Յուդայի քաղաքներուն, որոնց այս եօթանասուն տարին բարկացար:

13 - Եւ Տէրը ինծի հետ խօսող հրեշտակին բարի խօսքերով «- մխիթարական խօսքերով պատասխան տուաւ:

14 - Եւ ինծի հետ խօսող հրեշտակը ինծի ըսաւ, Կանչէ ու ըսէ,

Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Երուսաղէմի համար ու Սիօնի համար Մեծ նախանձով կը նախանձիմ:

15 - Եւ հանգիստ եղող ազգերուն խիստ շատ բարկացած եմ,

Քանզի ես քիչ բարկացայ, Ու անոնք չարիքը աւելցուցին:

16 - Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Երուսաղէմի սղորմութեամբ դարձայ. Իմ տունս անոր մէջ պիտի շինուի, կ'ըսէ զօրաց Տէրը,

Ու Երուսաղէմի վրայ լար պիտի քաշուի:

17 - Դարձեալ կանչէ ու ըսէ, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.

Իմ քաղաքներս նորէն բարիքներով պիտի յորդին,

Եւ Տէրը նորէն Սիօնը պիտի մխիթարէ, Ու նորէն Երուսաղէմը պիտի ընարէ:

18 - Եւ աչքերս վերցուցի ու նայեցայ, և ահա չորս եղջիւր:

19 - Ու ինծի հետ խօսող հրեշտակին ըսի, Աստիք ի՞նչ են. ու ինծի ըսաւ, Աստիք են այն եղջիւրները՝ որոնք Յուդան, Իսրայէլը ու Երուսաղէմը ցրուեցին:

20 - Եւ Տէրը ինծի չորս արուեստաւոր ցուցուց:

21 - Ու ըսի, Աստիք ի՞նչ ընելու կու գան. և անկախ խօսեցաւ ու ըսաւ, Աստիք են այն եղջիւրները որոնք Յուդան ցրուեցին,

այնպէս որ մարդ մը չկրցաւ իր գլուխը վերցնել . ուստի ասոնք եկան որպէս զի զանոնք վախցնեն, ու Յուդայի երկրին վրայ՝ զանկիա ցրուելու համար եղջիւր վերցնող ազգերուն եղջիւրները վար ձգեն:

ԳԼ. Բ

Եւ աչքերս վերցուցի ու նայեցայ, և ահա մարդ մը՝ որուն ձեռքին մէջ չափելու չուան կար: 2 - Աւ ըսի, Դուն ո՞ւր կ'երթաս. ու ինծի ըսաւ, Երուսաղէմը չափելու, որպէս զի լայնութիւնը որչափ՝ ու երկայնութիւնը որչափ ըլլալը տեսնեմ: 3 - Եւ ահա ինծի հեռ խօսող հրեշտակը ելաւ, ու անոր դիմաց ուրիշ հրեշտակ մը ելաւ. 4 - Աւ անոր ըսաւ, Վաղէ, այս երիտասարդին խօսէ ու ըսէ,

Երուսաղէմ՝ առանց պարսպի պիտի բնակուի

Մարդու և անասունի բազմութեանը համար՝ որոնք անոր մէջ պիտի ըլլան:

5 - Եւ ես անոր բոլորաբար հրեղէն պարիսպ պիտի ըլլամ. կ'ըսէ Տէրը, Աւ անոր մէջ փառքի համար պիտի ըլլամ:

6 - Աղէ, աղէ, հիւսիսի երկրէն փախէք, կ'ըսէ Տէրը,

Քանզի ձեզ երկինքի չորս հովերուն պէս ցրուեցի, կ'ըսէ Տէրը:

7 - Աղէ, քեզ ազատէ, ով Սիօն, Որ Բաբելոնի աղջկան հեռ կը բնակիս:

8 - Քանզի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Փառքի ետեէն զիս ձեզ կոզրպաող ազգերուն զրկեց,

Քանզի ձեզի դպչողը անոր աչքին բերին կը դպչի:

9 - Վասն զի ահա ես իմ ձեռքս անոնց վրայ պիտի շարժեմ,

Աւ անոնք իրենց ծառաներուն աւար պիտի ըլլան,

Աւ պիտի գիանաք որ զօրաց Տէրը զիս զրկեց է:

10 - Յնծա և ուրախացիր, ով Սիօնի աղջիկ,

Քանզի ահա ես կու գամ՝ Աւ քու մէջդ պիտի բնակիմ, կ'ըսէ Տէրը:

11 - Եւ այն օրը շատ ազգեր Տէրոջը պիտի յարին,

Աւ ինծի ժողովուրդ պիտի ըլլան.

Եւ ես քու մէջդ պիտի բնակիմ, Աւ պիտի գիանաս որ զօրաց Տէրը զիս քեզի զրկեց է:

12 - Եւ Տէրը իր բաժինը Յուդան Սուրբ երկրին մէջ ժառանգութիւն պիտի առնէ,

Աւ նորէն Երուսաղէմը պիտի բնարէ:

13 - Տէրոջը առջև լուս կեցիր, ով բոլոր մարմին, Քանզի անկիա իր սուրբ բնակութենէն արթնցաւ:

ԳԼ. Գ

Եւ Տէրը ինծի ցուցուց մեծ քահանան Յեսուէն, որ Տէրոջը հրեշտակին առջև կայներ էր, ու Սաաանայ անոր աջ կողմը կայներ էր՝ անոր դէմ դնելու համար: 2 - Եւ Տէրը Սաաանայի ըսաւ, Տէրը քեզ յանդիմանէ, ով Սաաանայ, ու քեզ Երուսաղէմը ընտրող Տէրը յանդիմանէ. միթէ ասիկա կրակէ հանուած խանձող չէ՞:

3 - Եւ Յեսուէ աղաթա հանդերձներ հագեր էր, ու հրեշտակին առջև կը կայնէր: 4 - Եւ իր առջև կայնողներուն պատասխան տուաւ, ու խօսեցաւ՝ ըսելով, Աղաթա հանդերձները ատոր վրայէն հանեցէք. և անոր ըսաւ, Նայէ, քու անօրէնութիւնդ վրայէդ վերցուցի, ու քեզի պատուական զգեստներ պիտի հագցնեմ: 5 - Աւ ես ըսի որ անոր գլուխը մտքուր խոյր դնեն. և անոր գլուխը մտքուր խոյրը դրին, ու անոր հանդերձներ հագցուցին, ու Տէրոջը հրեշտակը կայներ էր:

6 - Եւ Տէրոջը հրեշտակը Յեսուէի վկայութիւն ըրաւ ու ըսաւ, 7 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ իմ ճամբաներուս մէջ քալես ու իմ պահպանութիւնս պահես, այն ատեն դուն ալ իմ տունս պիտի դառես և իմ սրահներս ալ պիտի պահես, ու քեզի այս ներկայ գանձողներուն *մէջէն առաջնորդներ՝ պիտի տամ: 8 - Հիմա մտիկ ըրէ, ով Յեսուէ մեծ քահանայ, դուն ու քու առջևդ նստող բարեկամներդ, քանզի անոնք նշան ըլլալու մարդիկ են. վասն զի ահա ես իմ ծառաս Եսուուիդը պիտի բերեմ: 9 - Քանզի ահա Յեսուէի առջև դրած քարս, այն մէկ քարին վրայ եօթը աչք պիտի ըլլայ:

*Կամ, մէջ ճեմելիքներ

աստ ես անոր փորագրուածիւնը պիտի փորագրեմ, կ'ըսէ զօրաց Տէրը, և այն երկրին անօրէնուածիւնը մէկ օրուան մէջ պիտի վերցնեմ: 10 - Այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը, ձեզմէ ամէն մէկը իր դրացին որթի տակ ու թղենիի տակ պիտի կանչէ:

ԳԼ. Գ

Ու ինծի հեա խօսող հրեշտակը դարձաւ, և զիս իր քունէն արթնցող մարդու պէս արթնցուց: 2 - Ու ինծի ըսաւ, Ի՞նչ կը տեսնես. ու ըսի, կը տեսնեմ որ աստ բոլորովին սակիէ աշտանակ մը կայ, ու անոր վրայ բաժակ մը՝ և անոր վրայ եօթը ճրագ՝ ու անոր վրայի եօթը ճրագներուն համար եօթը խողովակ կայ: 3 - Եւ անոր քով երկու ձիթենի կայ, մէկը բաժակին աջ կողմէն՝ ու միւսը ձախ կողմէն: 4 - Եւ պատասխան տուի, ու ինծի հեա խօսող հրեշտակին խօսեցայ ու ըսի, Աստուծոյ ի՞նչ են, ով տէր իմ: 5 - Ու ինծի հեա խօսող հրեշտակը պատասխան տուաւ ու ինծի ըսաւ, Աստուծոյ ինչ ըլլալը չե՞ս գիտեր. ու ես ըսի, Ոչ, ով տէր իմ: 6 - Եւ պատասխան տուաւ ու ինծի խօսեցաւ՝ ըսելով, Այս է Տէրոջը խօսքը որ Զօրաբարէլի կ'ըսուի:

Զօրուածեամբ չէ, և ուժով չէ, Հապա իմ՝ Հոգւովս, կ'ըսէ զօրաց Տէրը, 7 - Իսկ, ով մեծ լեռ, ո՞վ ես. Զօրաբարէլի առջև դաշտ պիտի ըլլաս. Ու գլուխի քարը ինք պիտի հանէ, Ու պիտի աղաղակեն, Շնորհք, շնորհք անոր:

- 8 - Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
- 9 - Այս տունը Զօրաբարէլի ձեռքերը հիմնեցին,
- Եւ անոր ձեռքերը պիտի կատարեն զանիկա,
- Ու պիտի գիանաս որ զօրաց Տէրը զիս ձեզի զրկած է:
- 10 - Քանզի պզտիկ բաներուն օրը ո՞վ անարգեց.
- Վասն զի այն եօթը աշտերը ուրախուածեամբ պիտի տեսնեն գնաակը Զօրաբարէլի ձեռքին մէջ.
- Անոնք Տէրոջը աչքերն են, որոնք բոլոր երկրի մէջ կը պարտին:
- 11 - Եւ ես պատասխան տուի ու անոր ըսի, Աշտանակին աջ կողմը ու ա-

նոր ձախ կողմը եղող այս երկու ձիթենիները ի՞նչ են: 12 - Ու երկրորդ անգամ պատասխան տուի ու անոր ըսի, Երկու սակի խողովակներուն միջոցով է-ը իրենցմէ սակիի պէս թափող երկու ձիթենիի ստերը ի՞նչ են: 13 - Եւ ինծի խօսեցաւ ու ըսաւ, Աստուծոյ ինչ ըլլալը չե՞ս գիտեր. ու ես ըսի, Ոչ, ով տէր իմ: 14 - Ու ըսաւ, Աստուծոյ *օժեակներն են՝ որոնք բոլոր երկրի Տէրոջը առջև կը կայնին:

ԳԼ. Ե

Եւ դարձայ ու աչքերս վերցնելով տեսայ, և աստ թուշող տամ մը: 2 - Ու ինծի ըսաւ, Ի՞նչ կը տեսնես. ու ըսի, Թուշող տամ մը կը տեսնեմ. երկայնուածիւնը քսան կանգուն՝ ու լայնուածիւնը տասը կանգուն է: 3 - Եւ ինծի ըսաւ, Ասիկա բոլոր երկրի երեսին վրայ ելող անէծքն է. քանզի ամէն գողութիւն ընողը այս կողմէն գր-...-չի-համեմատ պիտի կտրուի, ու ամէն երգում ընողը միւս կողմէն գր-...-չի-համեմատ պիտի կտրուի: 4 - Զանիկա ես կը հանեմ, կ'ըսէ զօրաց Տէրը, ու գողին տունը, և իմ անունովս տուա երգում ընողին տունը պիտի մտնէ, ու անոր տանը մէջ պիտի մնայ, և զանիկա իր փայտերովը ու քարերովը պիտի սպառէ:

5 - Եւ ինծի հեա խօսող հրեշտակը ելաւ ու ինծի ըսաւ, Հիմա աչքերդ վերցուր ու նայէ թէ այս ելողը ի՞նչ է. 6 - Ու ես ըսի, Ի՞նչ է. ու ըսաւ, Այս ելողը արգու է. ու ըսաւ, Բոլոր երկրի վրայ անոնց նմանուածիւնը ասիկա է: 7 - Եւ աստ կապարեայ տաղանդ մը վերցուեցաւ, ու կին մը արգուին մէջ կը նստէր: 8 - Եւ ըսաւ, Այս է Զարուածիւնը. ու զանիկա արգուին մէջ ձգեց, և այն կապարեայ կշիռքը այն աշտերէն բերանը ձգեց: 9 - Եւ աչքերս վերցուցի ու տեսայ, և աստ երկու կին ելան, ու հովը անոնց թեւերուն մէջ էր, և անոնք արագիլի թեւերու նման թեւեր ունէին, ու այն արգուն երկրի ու երկինքի մէջտեղ վերցուցին: 10 - Եւ ինծի հեա խօսող հրեշտակին ըսի, Աստուծոյ ո՞ւր կը տանին արգուն: 11 - Եւ անիկա ինծի ըսաւ,

*Եբր. իւղի սրգիններն

Կը քանին որ անոր տուն շինեն Սենտար երկրին մէջ . ու պիտի հաստատուի և հան իր խորտին վրայ պիտի դրուի :

ԳԼ. Զ

Եւ դարձայ ու աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա երկու լեռներու մէջէն չորս կառք կ'ելլէր, ու լեռները պղնձէ լեռներ էին : 2 - Առաջին կառքին աշխէա ձիեր լծած էին, ու երկրորդ կառքին՝ սև ձիեր, 3 - Ու երրորդ կառքին՝ ճերմակ ձիեր, և չորրորդ կառքին՝ պիտակ ու գորշագոյն ձիեր : 4 - Եւ պատասխան տուի, ու ինծի հետ խօսող հրեշտակին ըսի, Ասոնք ի՞նչ են, ով տէր իմ : 5 - Եւ հրեշտակը պատասխան տուաւ ու ինծի ըսաւ, Ասոնք երկիրքի չորս հովերն են, որոնք բուր երկրի Տէրոջը առջև կայնելէն կ'ելլեն. 6 - Ան ձիերը՝ որ այն օրն լծած են, հիւսիսի երկիրը կ'ելլեն, ու ճերմակները անոնց ետեւէն կ'ելլեն, ու պիտակները հարաւի երկիրը կ'ելլեն : 7 - Եւ գորշագոյնները ելան, և ուղեցին որ երթան ու երկրի վրայ պառտին . և անկա ըսաւ, Գացէք, երկրի վրայ պառտեցէք . ու անոնք երկրի վրայ պառտեցան : 8 - Եւ անկա ինծի աղաղակեց ու ինծի խօսեցաւ՝ ըսելով, Նա՛յէ, հիւսիսի երկիրը ելողները իմ հոգիս հիւսիսային երկրին մէջ հանգչեցուցին :

9 - Գարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 10 - Գերութենէ քան զանոնք, Հեղդայէ, Տուբիայէ ու Յեդայիայէ առ, ու նոյն օրը գնա Բաբելոնէ եկող Սափոնիայի որդւոյն Յովսիայի տունը մտիւր. 11 - Արժամթ ու ոսկի առ ու պտակներ շինէ, ու մեծ քահանային Յովսեդեկեան Յետուի գլուխը դիր. 12 - Եւ անոր խօսէ ըսելով,

Զօրաց Տէրը կը խօսի ու այսպէս կ'ըսէ.

Ահա այն մարդը, որուն անունը Շառաւիղ է.

Անկա իր տեղէն պիտի բուսնի, Աւ Տէրոջը տաճարը պիտի շինէ :

13 - Անկա պիտի շինէ Տէրոջը տաճարը, Աւ պատիւ պիտի ունենայ,

Եւ իր ամբողջ վրայ նստելով՝ իշխանութիւն պիտի վարէ,

Աւ քահանայ պիտի ըլլայ իր ամբողջ վրայ.

Ու երկուքին մէջտեղ խաղաղութեան խորհուրդ պիտի ըլլայ :

14 - Եւ պտակները Հելէմի, Տուբիայի ու Յեդայիայի և Սափոնիայի որդւոյն Հենի պիտի ըլլան՝ Տէրոջը տաճարին մէջ յիշատակ ըլլալու համար :

15 - Եւ հեռուն եղողները պիտի գան, ու Տէրոջը տաճարին մէջ պիտի շինեն, և պիտի գիտնաք որ զօրաց Տէրը զիս ձեզի զրկեր է. ու ասիկա պիտի ըլլայ՝ եթէ ուշագրութեամբ ձեր Տէր Աստուծոյն ձայնին մտիկ ընէք :

ԳԼ. Է

Ու եղաւ որ Գարեհ թագաւորին չորրորդ տարին, իններորդ ամսուն, այսինքն Քաղեհին, չորրորդ օրը, Տէրոջը խօսքը Զաքարիայի եղաւ, 2 - Երբ Սարսար ու Ռեկեմմէլէք և անոնց մարդիկը Աստուծոյ տունը զրկուեցան, որպէս զի Տէրոջը առջև աղօթք ընեն, 3 - Ու զօրաց Տէրոջը տանը մէջ եղող քահանաներուն ու մարգարէներուն խօսին ու ըսեն, Արդեօք հինգերորդ ամսուն մէջ իմ անձս զատելով լա՞մ, ինչպէս այսչափ տարիներ ըրի. 4 - Այն տան զօրաց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 5 - Այս երկրին բոլոր ժողովուրդին ու քահանաներուն խօսէ ու ըսէ, Այս եթանատուն տարին, երբ հինգերորդ ու եթներորդ օրերուն մէջ ծամապահութիւն կ'ընէիք ու սուգ կը բռնէիք, միթէ ինծի՞ համար ծամապահութիւն կ'ընէիք : 6 - Ու երբ կ'ուտէիք ու կը խմէիք, ձեզի համար չէի՞ք ուտեր ու ձեզի համար չէի՞ք խմեր : 7 - Ասոնք չէ՞ն այն խօսքերը՝ զորոնք Տէրը առաջուան մարգարէներուն ձեռքով հրատարակեց, երբ Երուսաղէմ ու անոր շրջակայ քաղաքները բնակուած ու հանգիստ էին, և հարաւային ու դաշտային կողմերը բնակուած էին :

8 - Գարձեալ Տէրոջը խօսքը Զաքարիայի եղաւ՝ ըսելով, 9 - Զօրաց Տէրը այսպէս խօսեցաւ ու ըսաւ, Արդար դատաստան տեսէք, և ձեզմէ ամէն մէկը իր եղբօրը սղորմութիւն ու գթութիւն ընէ. 10 - Եւ որբեարին ու որբը, օտարականը և անանկը մի հարստահարէք, ու բնաւ մէկը իր եղբօրը համար իր սրտին մէջ չարութիւն չմտածէ. 11 - Բայց անոնք չուղեցին մտիկ ընել, հապա իրենց ուսը ետ քաշեցին, և

սականջնին ծանրացուցին որպէս զի չլսեն. 12 - Ու իրենց սիրտը ապաման գի պէս ըրին, որպէս զի չլսեն այն օրէնքը ու այն խօսքերը՝ զորոնք զօրաց Տէրը իր Հոգւովը առաջուան մարգարէներուն ձեռքով անոնց զրկեց. անոր համար զօրաց Տէրոջը կողմանէ մեծ բարկութիւն եղաւ : 13 - Ու եղաւ որ ինչպէս անիկա կանչեց ու անոնք մտիկ չըրին, այնպէս անոնք կանչեցին ու ես մտիկ չըրի, կ'ըսէ զօրաց Տէրը . 14 - Հապա զանոնք իրենց չգիացած բոլոր ազգերուն մէջ փոթորիկով ցրուեցի, և անոնց ետեւէն երկիրը անցնողէ ու դարձողէ ամայի մնաց . այնպէս ցանկալի երկիրը ամայի ըրին :

ԳԼ Ը

Բարձեալ զօրաց Տէրոջը խօսքը Ինձի եղաւ՝ ըսելով, 2-Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօնի համար խիստ մեծ նախանձով նախանձեցայ, ու անոր համար մեծ սրամտութիւնով նախանձեցայ : 3 - Տէրը այսպէս կ'ըսէ . Սիօնի դարձած եմ, ու Երուսաղէմի մէջ պիտի բնակիմ, ու Երուսաղէմ ճշմարտութեան քաղաք, և զօրաց Տէրոջը լեռը Սուրբ լեռ պիտի կոչուի :

4-Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Երուսաղէմի հրապարակներուն մէջ տակաւին ծեր մարդիկ ու պառաւ կիներ պիտի նստին, որոնց ամէն մէկուն ձեռքը ցուպ պիտի ըլլայ օրերու շատութեանէն . 5 - Եւ քաղաքին հրապարակները աղաքներով ու աղջիկներով պիտի լեցուին, որոնք անոր հրապարակներուն մէջ պիտի խաղան :

6 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ այն օրերը այս ժողովուրդին մնացորդին աչքերուն տակաւ դժուար երեւնայ, միթէ իմ աչքերս ու ալ դժուար պիտի երեւնայ, կ'ըսէ զօրաց Տէրը :

7 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա իմ ժողովուրդս արեւելեան երկրէն ու արեւմտեան երկրէն պիտի փրկեմ . 8 - Եւ զանոնք պիտի բերեմ, ու Երուսաղէմի մէջ պիտի բնակին. և անոնք ինձի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ ճշմարտութեամբ ու արդարութեամբ անոնց Աստուած պիտի ըլլամ :

9 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ . Չեր ձեռքերը թող ու ժողովան, սլ գուք, որ այս օրերս կը լսէք այս խօսքերը այն

մարգարէներուն բերնէն, որոնք զօրաց Տէրոջը տանը հիմնարկութեան ու տաճարին նորոգութեան օրը Խօսեցան : 10 - Քանզի այն օրերէն առաջ մարդու համար վարձք չկար, ու անասունի համար վարձք չկար. և նեղութեան պատճառաւ՝ ելլողին ու մանողին խաղաղութիւն չկար, քանզի ես ամէն մարդը իր ընկերին դէմ՝ սաք հաներ էի : 11 - Իսկ չհիմա այս ժողովուրդին մնացորդին՝ առաջուան օրերուն պէս պիտի ըլլամ, կ'ըսէ զօրաց Տէրը : 12 - Քանզի հաւնար խաղաղութիւն գիտի Ինձի, որ թը իր պատուը պիտի տայ, ու երկիրը իր բերքը պիտի տայ, ու երկիրը իր ցօղը պիտի տայ. և այս ամէն բաները այս ժողովուրդին մնացորդին ժառանգել պիտի տամ : 13 - Ու պիտի ըլլայ որ ինչպէս գուք ազգերու մէջ անէժք եղաք, սլ Յուդայի տունը ու Իսրայէլի տունը, այնպէս ձեզ պիտի ազատեմ, ու օրհնութիւն պիտի ըլլաք. մի վախնաք, ձեր ձեռքերը թող ու ժողովան : 14 - Քանզի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ինչպէս ձեզի չարիք ընելու գիտաւորութիւն ըրի, երբ ձեր հայրերը զիս որդողցուցին, կ'ըսէ զօրաց Տէրը, ու չզղջացի, 15 - Այնպէս դարձայ ու այս օրերը Երուսաղէմի ու Յուդայի տանը բարիք ընելու գիտաւորութիւն ըրի. մի վախնաք : 16 - Չեր ընելու բաները ասոնք են. ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, ձեր դուներուն մէջ արդարութեամբ և խաղաղութեամբ դատաստան տեսէք . 17 - Ու ձեզմէ մէկը իր սրտին մէջ իր ընկերին համար չարութիւն չմտածէ, և սուտ երգումը մի սիրէք. վասն զի ես այս բոլոր բաները կ'ատեմ, կ'ըսէ Տէրը :

18 - Իբարձեալ զօրաց Տէրոջը խօսքը ինձի եղաւ՝ ըսելով, Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. 19 - Չորրորդ ամսն ծամը, ու հինգերորդին ծամը, ու եօթներորդին ծամը, և տասներորդին ծամը Յուդայի տանը ցնծութիւն և ուրախութիւն ու խնդալից ատներ պիտի ըլլան. ուստի ճշմարտութիւնը ու խաղաղութիւնը սիրեցէք :

20 - Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Նորէն ժողովուրդներ ու շատ քաղաքներու բնակիչներ պիտի գան. 21 - Ու մէկուն բնակիչները միւսին պիտի երթան ու ըսեն, Եկէք Տէրոջը առջև աղօթք ընելու և զօրաց Տէրը փնտաւելու եր-

Թանք . ես ալ պիտի երթամ : 22 - Ու շատ ժողովուրդներ և զօրաւոր ազգեր Երուսաղէմի մէջ զօրաց Տէրը փնտռելու ու Տէրօջը առջև աղօթք ընելու պիտի գան : 23 - Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ . Այն օրերը ազգերուն ամէն լեզուներէն տասը մարդ Գլխին + զանց+ը պիտի բռնեն՝ այսինքն Հրեայ եղող մարդուն քղանցքը պիտի բռնեն, ու ըսեն, Զեզի հետ երթանք, քանզի լսեցինք որ Աստուած ձեզի հետ է :

ԳԼ Թ

Հազարքի երկրին դէմ Տէրօջը խօսքին պատգամն է,

Ու Գամուկոսի վրայ պիտի հանգչի . (Քանզի Տէրօջը աչքը մարդու եւ Իսրայէլի բոլոր ցեղերուն ինչոյն .) 2-Ու Եմաթ ալ անոր սահմանակիցն է, Նաև Տիւրոս ու Սիդոն՝ Թէև շատ իմաստուն են :

3 - Եւ Տիւրոս իրեն ամրոց շինեց . Ու արծաթը հողի պէս Եւ զուտ ոսկին փողոցներու ցեխի պէս դիզեց :

4 - Ահա Տէրը զանհկա պիտի քշէ , Եւ ծովուն մէջ անոր ունեցած զօրութիւնը պիտի զարնէ ,

Ու անհկա կրակով պիտի սպառի :

5 - Ասկաղոն պիտի տեսնէ ու պիտի վախնայ , Գազա ալ՝ ու մեծապէս պիտի տագնապի :

Ահկարոն ալ՝ քանզի իր յոյսը *պարսպ պիտի ելլէ՝ .

Եւ Գազայէ Թագաւորը պիտի կորսուի ,

Ու Ասկաղոն պիտի չբնակուի .

6 - Եւ Ազովտոսի մէջ Գոտարազգի պիտի բնակի ,

Ու Փղշաացուց հպարտութիւնը պիտի ջնջեմ .

7 - Եւ անոնց արիւնը իրենց բերնէն , Ու անոնց պղծութիւնները իրենց ուղուաներուն մէջէն պիտի վերցնեմ .

Ու Ֆնացորդը՝ անհկա ալ մեր Աստուծոյն պիտի ըլլայ ,

Եւ Յուդայի մէջ հազարապետի պէս

Ու Ահկարոն Յերուսացիի պէս պիտի ըլլայ :

8 - Եւ անցնող ու դարձող զօրքին պատճառաւ

Իմ տանն բոլորաիքը պիտի բնակիմ , Ու մէյմըն ալ անոնց մէջէն բռնաւոր պիտի չանցնի ,

Քանզի հիմա իմ աչքերովս տեսայ :

9 - Մեծապէս ուրախացիր , ով Սիօնի աղջիկ ,

Յնծութեամբ աղաղակէ , ով Երուսաղէմի աղջիկ .

Ահա քու Թագաւորդ քեզի կու գայ . Անհկա արգար ու փրկիչ է ,

Հեղ է , ու իշու վրայ հեծած , Եւ իշու ձագի , աւանակի , վրայ :

10 - Ու Եփրեմէ կառքը , Ու Երուսաղէմէ ձին պիտի ջնջեմ ,

Ու պատերազմին աղեղը պիտի կտարի . Եւ անհկա ազգերուն խաղաղութիւն պիտի խօսի .

Ու անոր իշխանութիւնը ծովէ մինչև ծով ,

Ու Գետէն մինչև երկրի ծայրերը պիտի ըլլայ :

11 - Եւ քեզի շայն ըրի , քու ուխտիդ արիւնովը

Քու գերիներդ ջուր չունեցող գուբէն հանեցի :

12 - Ամրոցը դարձէք , ով յուսոյ գերիներ ,

Ես այսօր ալ կը ծանուցանեմ Որ քեզի կրկնապատիկ հատուցում պիտի ընեմ .

13 - Վասն զի Յուդան ինծի համար աղեղի պէս պիտի լարեմ ,

Ու Եփրեմը *նետի պէս պիտի դնեմ՝ , Եւ քու որդիներդ , ով Սիօն ,

Յունաց որդիներուն վրայ պիտի յարուցանեմ .

Ու քեզ զօրաւորին սուրին պէս պիտի ընեմ :

14 - Եւ Տէրը անոնց վրայ պիտի երևնայ ,

Ու անոր նետը փայլակի պէս պիտի ելլէ .

Եւ Տէր Եհովա փող պիտի հնչեցնէ ,

Ու հարաւային մրրիկներով պիտի քալէ :

15 - Զօրաց Տէրը զանոնք պիտի պաշտպանէ .

Եւ անոնք բնաջինջ պիտի ընեն ,

Ու Գոտարաքարերու վրայ՝ պիտի կոխեն ,

*Եբբ . պիտի ամչնայ
†Եբբ . անհարազատ , խաժ , պրունկորդի

*Եբբ . պիտի լեցնեմ
†Կաժ , պարսաքարերով

Եւ պիտի խմեն «- գինովի պէս պիտի
աղաղակեն .
Ու անոնք տաշտի պէս,
Սեղանին անկիւններուն պէս, պիտի
լեցուին:
16 - Եւ այն օրը անոնց Տէր Աստուածը
Զանոնք իր ժողովուրդին հօտին պէս
պիտի փրկէ,
Քանզի անոր երկրին վրայ թագի քա-
րերու ղե- պիտի բարձրանան :
17 - Քանզի անոր բարութիւնը ու
գեղեցկութիւնը ի՛նչ մեծ է .
Յորենը երիտասարդները՝ ու քաղցուն
կոյսերը պիտի մեծցնէ:

ԳԼ . Ժ

Վերջին անձրևին ժամանակը
Տէրոջմէ անձրև խնդրեցէք .
Տէրը փայլակներ պիտի ընէ,
Եւ անոնց աւտա անձրև պիտի տայ,
Ու ամէն մէկուն ագարակին խտրը:
2 - Քանզի թերափիմները ունայնու-
թիւն խօսեցան,
Ու գուշակութիւն ընողները ստութիւն
տեսան,
Եւ սուտ երազներ վրուցեցին,
Պարսպ միթարութիւն տուին,
Անոր համար հօտերու պէս չուեցին,
Հովիւ չըլլալուն համար տագնապեցան:
3- Հովիւներուն վրայ իմ բարկութիւնս
բռնկեցաւ,
Ու նոխազներուն այցելութիւն պիտի
ընեմ .
Քանզի զօրաց Տէրը իր հօտին,
Յուդայի տանը, այցելութիւն բրաւ,
Եւ զանոնք իր պատերազմի մէջ հեծած
գեղեցիկ ձիուն պէս պիտի ընէ:
4 - *Անկիւնը անկէ, բեւուր անկէ*,
Պատերազմի աղեղը անկէ,
Ամէն զօրապետ մէկաեղ անկէ պիտի
ելլէ .
5 - Ու «յնդի» զօրաւորներու պէս պի-
տի ըլլան,
Որոնք պատերազմի մէջ թշուառ փո-
ղցներուն ցեխին մէջ կը կոխեն .
Ու անոնք պատերազմ պիտի ընեն .
Քանզի Տէրը անոնց հետ է,
Ու ձիերու վրայ հեծնողները պիտի
ամջնան:
6 - Եւ Յուդայի տունը պիտի զօրացը-
նեմ .

*կա՛, Իշխանը անկէ, գլխաւորը անկէ

Ու Յովսէփի տունը պիտի փրկեմ,
Եւ զանոնք նորէն պիտի բնակեցնեմ,
Քանզի անոնց ոչըմեցայ .
Ու անոնք «յնդի» պիտի ըլլան,
Որպէս թէ զանոնք երեսէ ձգած չէի .
Քանզի անոնց Տէր Աստուածը ես եմ,
Եւ անոնց պիտի լսեմ:
7 - Ու Եփրեմ՝ զօրաւորի պէս պիտի
ըլլայ,
Եւ անոնց սիրտը ուրախ պիտի ըլլայ
իբր թէ գինիով .
Անոնց աղաքներն ալ պիտի տեսնեն ու
պիտի ուրախանան,
Անոնց սիրտը Տէրոջմով պիտի ցնծայ:
8 - Անոնց պիտի սուլեմ ու զանոնք
պիտի ժողվեմ,
Վասն զի զանոնք փրկեցի .
Ու անոնք պիտի շատնան՝ ինչպէս որ
շատ էին:
9 - Թէեւ զանոնք ժողովուրդներու մէջ
ցանեմ,
Սակայն հեռաւոր տեղեր վրս պիտի
յիշեն,
Եւ իրենց որդիներուն հետ պիտի ապ-
րին ու ետ պիտի դառնան:
10 - Եւ զանոնք Եգիպտոսի երկրէն
պիտի դարձնեմ,
Ու զանոնք Ասորեստանէ պիտի ժող-
վեմ,
Եւ զանոնք Քաղաադու երկիրը
Ու Լիբանան պիտի բերեմ,
Եւ անոնց համար բաւական տեղ պիտի
չգտնուի:
11 - Ու ծովէն նեղութեամբ պիտի
անցնի,
Եւ ծովուն ալիքները պիտի զարնէ .
Ու գետին բոլոր խորութիւնները պիտի
ցամքին,
Եւ Ասորեստանի հպարտութիւնը պիտի
իջնէ,
Ու Եգիպտոսի գաւազանը պիտի վեր-
ցուի:
12 - Եւ զանոնք Տէրոջմով պիտի զօ-
րացնեմ,
Ու անոր անունովը պիտի պաշտին,
կ'ըսէ Տէրը:

ԳԼ . ԺԱ

Բուներդ բաց, սվ Լիբանան,
Ու կրակը քու եղևիններդ ուտէ:
2 - Մայր ծառը թող սղբայ,

*կա՛, նեղութիւն

Քանզի եղևինը ինկաւ,
Վասն զի ազնուականները կողրպատեցան .

Բասանու կաղնիները թող սղբան,
Քանզի անմտաչելի անատաւը *կարուեցաւ :

3 - Հովիւներուն սղբալու ձայնը էւ լո՞ւտի,

Քանզի անոնց փառքը յափշտակուեցաւ .

Առջոյ առիւծներու մունչելուն ձայնը էւ լո՞ւտի,

Քանզի Յորդանանու շքեղութիւնը յափշտակուեցաւ :

4 - Իմ՝ Տէր Աստուածս այսպէս կ'ըսէ .

Մարթուելու ոչխարները արած է ,

5 - Զանոնք՝ որ ծախու աւնողները կը մորթեն

Ու յանցաւոր չեն սեպուիր .

Եւ զանոնք ծախողները կ'ըսեն ,

Տէրը օրհնեալ ըլլայ որ հարստացայ .

Ու անոնց հովիւները անոնց վրայ գութ չունին :

6 - Քանզի ես մէյմըն ալ երկրի բնակիչներուն պիտի չգթամ , կ'ըսէ Տէրը ,

Մանաւանդ՝ ահա ես ամէն մարդը իր բնկերին ձեռքը

Ու իր թագաւորին ձեռքը պիտի մտանեմ .

Ու երկիրը պիտի զարնեն ,

Եւ անոնց ձեռքէն պիտի չփրկեմ :

7 - Ու մորթուելու ոչխարները ,

Այո , հօտին խեղճերը , արածեցի :

Ու ինծի երկու գաւազան առի ,

Մէկուն անունը Գեղեցկութիւն ,

Ու միւսին անունը Կապեր գրի ,

Եւ ոչխարները արածեցի :

8 - Ու մէկ ամսուան մէջ երեք հովիւ կտարեցի ,

Քանզի հոգիս անոնց նեղացաւ ,

Եւ անոնց հոգին ալ ինծմէ զզուեցաւ :

9 - Ու ըսի , Զեզ պիտի չհովուեմ .

Մեռնողը թող մեռնի ,

Ու կտարուողը թող կտարուի ,

Եւ թնացածները թող իրարու միս ուտեն :

10 - Ու Գեղեցկութիւն խո՞ւստ գաւազանս առի և զանիկա կտարեցի ,

Որպէս զի բոլոր ժողովուրդներուն հետ ըրած ուխտս աւրեմ :

11 - Ու նոյն օրը աւրեցաւ ,

Եւ ինծի սպասող հօտին խեղճերը

Հաստատ գիացան որ ասիկա Տէրոջը խօսքն է :

12 - Ու անոնց ըսի ,

Եթէ ձեր աչքերուն հաճոյ կ'երևնայ , իմ՝ վարձքս տուէք ,

Ապա թէ ոչ՝ զանց ըրէք .

Ու իմ՝ վարձքիս համար երեսուն արծաթ կշուեցին :

13 - Եւ Տէրը ինծի ըսաւ ,

Զանիկա *բրուտին նեաէ .

Ասիկա վայելուչ գին մըն է ,

Զոր անոնք ինծի համար կտրեցին .

Ու երեսուն արծաթը առի ,

Եւ զանիկա Տէրոջը տունը *բրուտին նեաեցի :

14 - Ետքը Կապեր խո՞ւստ միւս գաւազանս կտարեցի ,

Որպէս զի Յուդայի ու Իսրայէլի մէջ եղող եղբայրութիւնը աւրեմ :

15 - Եւ Տէրը ինծի ըսաւ ,

Քեզի նորէն յիմար հովիւի գործիքներ առ .

16 - Քանզի ահա ես երկրի վրայ հովիւ մը պիտի հանեմ .

Անիկա կտրուելու վրայ եղողներուն այցելութիւն պիտի չընէ ,

Յրուածը պիտի չփնտուէ ,

Եւ կտարածը պիտի չբժշկէ ,

Ու խոջը պիտի չանուցանէ ,

Հապա գէրերուն միւսը պիտի ուտէ ,

Ու անոնց կճղակները պիտի խորտակէ :

17 - Վաս' ունայնութեան հովուին , որ ոչխարները կը թողու .

Անոր բազուկին վրայ ու աջ աչքին վրայ սուր պիտի ըլլայ ,

Անոր բազուկը բոլորովին պիտի չորնայ ,

Ու աջ աչքը բոլորովին պիտի խաւարի :

ԳԼ. ԺԲ

Իսրայէլի վրայով Տէրոջը խօսքին պատգամը :

Երկինքը տարածող ու երկիրը հիմնարկող

Ու մարգուն հոգին անոր մէջ ստեղծող Տէրը կ'ըսէ ,

2 - Ահա ես Երուսաղէմը բոլոր շրջակայ ազգերուն

Թմրութեան բաժակ պիտի ընեմ .

*Կա՛մ , գանձատուներ

†Կա՛մ , ետ մնացածը

*ԵՔր . իջաւ

Նաև Յուզայի վրայ ալ պիտի ըլլայ Երուսաղէմի պաշարման ատենը:

3 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը Երուսաղէմը

Բոլոր ժողովուրդներուն ծանր քար պիտի ընեմ:

Ամէն անոնք որ անով կը բեռնաւորուին՝ բոլորովին պիտի կտարին ,

Թէև երկրի բոլոր ազգերը անոր վրայ ժողովուրդին:

4 - Այն օրը, կ'ըսէ Տէրը, Ամէն ձի ստկուսնով պիտի զարնեմ ,

Ու անոր չեծեալը՝ ապշուլթեամբ:

Եւ Յուզայի տանը վրայ աչքերս պիտի բանամ ,

Ու ժողովուրդներուն բոլոր ձիերը կուրսլթեամբ պիտի զարնեմ:

5 - Եւ Յուզայի հազարապետները իրենց սրտին մէջ պիտի ըսեն ,

Երուսաղէմի բնակիչները *մեր զօրութիւնն՝ են

Զօրաց Տէրոջմով , իրենց Աստուծովը:

6-Այն օրը Յուզայի հազարապետները կրակի վառարանի պէս պիտի ընեմ՝ փայտերու մէջ ,

Ու կրակի ջաշի պէս՝ որաներու մէջ .

Եւ անոնք աջ կողմէն ու ձախ կողմէն Բոլոր շրջակայ ժողովուրդները պիտի ուտեն .

Եւ դարձեալ Երուսաղէմ իր աեղը, Երուսաղէմի մէջ , պիտի բնակուի:

7 - Եւ Տէրը նախ Յուզայի վրանները պիտի փրկէ ,

Որպէս զի Գաւթի տանը պարծանքը Ու Երուսաղէմի բնակիչներուն պարծանքը

Յուզայի վրայ չհպարտանայ:

8-Այն օրը Տէրը Երուսաղէմի բնակիչներուն պաշտպանութիւն պիտի ընէ .

Ու անոնց մէջ տկար եղողը այն օրը Գաւթի պէս պիտի ըլլայ ,

Եւ Գաւթի տունը Աստուծոյ պէս , Տէրոջը հրեշտակին պէս , պիտի ըլլայ անոնց առջև :

9 - Ու պիտի ըլլայ որ այն օրը Երուսաղէմի վրայ եկող բոլոր ազգերը Բնաջինջ ընելու ետևէ պիտի ըլլամ:

10 - Եւ Գաւթի տանը վրայ Ու Երուսաղէմի բնակիչներուն վրայ Շնորհքի և աղօթքի հոգին պիտի թափեմ ,

Եւ անոնք ինծի , իրենց խոցածին , պիտի նային .

Ու անոր վրայ մէկ հատիկ զաւակի վրայ ողբալու պէս պիտի ողբան ,

Ու անոր վրայ անդրանիկ զաւակի վրայ ցաւելու պէս պիտի ցաւին:

11 - Այն օրը Երուսաղէմի մէջ մեծ ողբ պիտի ըլլայ՝

Մակեդոնի դաշտին մէջ Ագադուե մօնի ողբին պէս .

12 - Ու երկիրը պիտի ողբայ , Ամէն մէկ ազգատոհմը առանձին .

Գաւթի տանը ազգատոհմը առանձին ,

Ու անոնց կիները առանձին ,

Նաթանի տանը ազգատոհմը առանձին ,

Ու անոնց կիները առանձին ,

13 - Ղևիի տանը ազգատոհմը առանձին ,

Ու անոնց կիները առանձին ,

14 - Բոլոր մնացած ազգատոհմերուն ամէն մէկը առանձին ,

Ու անոնց կիները առանձին:

ԳԼ ԺԳ

Այն օրը Գաւթի տանը ու Երուսաղէմի բնակիչներուն

Բացուած ազբիւր մը պիտի ըլլայ Մեղքի համար ու պղծութեան համար :

2 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը , կ'ըսէ զօրաց Տէրը ,

Կուսքերուն անուները երկրէն պիտի ջնջեմ ,

Ու մէյմըն ալ պիտի չյիշուին .

Եւ անոնց մարգարէները ու պիղծ ոգին ալ երկրէն պիտի վերցնեմ:

3 - Ու պիտի ըլլայ որ երբ մարդ մը անկէ ետև մարգարէութիւն ընէ ,

Զանկա ծնանող հայրը ու մայրը անոր պիտի ըսեն ,

Զապրիս , քանզի Տէրոջը անունովը սուտ խօսեցար .

Եւ անոր մարգարէութիւն ըրած ատենը՝

Զանկա ծնանող հայրը ու մայրը զանկա պիտի խոցեն :

4 - Ու պիտի ըլլայ որ այն օրը մարգարէները

Մարգարէութիւն ըրած ատեննին պի-

*Եբբ. իմ զօրութիւնս

տի ամհնան, ամեն մէկը իր տե- սիլքէն,

Ու խարեղու համար մազառ վերարկու պիտի չհագնին:

5 - Ու անոնց անոնք մէկ պիտի ըսէ, Ես մարգարէ չեմ, ես երկրագործ մարդ եմ:

Քանզի իմ՝ մանկութենէս ի վեր զիս *ստացան էքրե հովի-”:

6 - Եւ անոր պիտի ըսուի, Զեռքերուդ մէջ այս վերքերը ի՞նչ են. Ու անիկա պիտի ըսէ,

Ասոնք իմ՝ բարեկամներուս տանը մէջ ընդունած վերքերս են:

7 - Արթնցիր, սվ սուր, իմ Հովիւիս վրայ,

Ու իմ ընկերս եղող մարդուն վրայ, կ’ըսէ զօրաց Տէրը:

Հովիւը վարկ, ու ոչխարները ցրուին, Ու իմ՝ ձեռքս պզտիկներուն վրայ դարձնեմ:

8 - Եւ պիտի ըլլայ բոլոր երկրին մէջ, կ’ըսէ Տէրը,

Որ երկու մասը պիտի կարուի * - պիտի մեռնի,

Ու երրորդ մասը պիտի մնայ անոր մէջ:

9 - Եւ այն երրորդ մասը կրակէ պիտի անցնեմ,

Ու զանոնք պիտի զտեմ՝ ինչպէս ար- ծաթը կը զտուի,

Եւ զանոնք պիտի փորձեմ՝ ինչպէս ոս- կին կը փորձուի:

Անոնք իմ՝ անունս պիտի կանչեն, Ու ես անոնց պատասխան պիտի տամ:

Ես պիտի ըսեմ թէ Անիկա իմ ժողո- վուրդս է:

Անոնք ալ, Տէրը իմ Աստուածս է պի- տի ըսեն:

ԳԼ. ԺԻ

Ահա Տէրոջը օրը կու գայ,

Եւ քու աւարդ քու մէջդ պիտի բաժ- նուի:

2 - Քանզի բոլոր ազգերը պատերազմի համար

Երուսաղէմի վրայ պիտի ժողվեմ, Եւ քաղաքը պիտի առնուի,

Ու տուները պիտի կողոպտուին, Եւ կիները պիտի պղծուին,

Ու քաղաքին կէսը գերութեան պիտի ելլէ,

Բայց ժողովուրդին մնացորդը քաղա- քէն պիտի չկարի:

3 - Եւ Տէրը պիտի ելլէ, Ու այն ազգերուն հետ պիտի պատե- րազմի,

Ինչպէս պատերազմին օրը պատերազ- մեցաւ:

4 - Եւ այն օրը անոր սաքերը Զիթենեաց լեռանը վրայ պիտի կայնին, Որ Երուսաղէմի առջև է գէպ ի արե- ւելք:

Ու Զիթենեաց լեռը գէպ ի արեւելք ու գէպ ի արեւմուտք կէսէն պիտի պատուի,

Ու խիտա մեծ ձոր պիտի ըլլայ. Եւ լեռանը կէտը գէպ ի հիւսիս, Ու կէտը գէպ ի հարաւ պիտի քաշուի:

5 - Եւ դուք լեռներուն ձորը պիտի փախչիք,

Քանզի լեռներուն ձորը մինչև Ասալ պիտի հասնի:

Ու պիտի փախչիք՝ ինչպէս գեանաշար- ժէն փախաք

Յուդայի թագաւորին Ողիայի օրերը. Եւ իմ՝ Տէր Աստուածս պիտի գայ,

Բոլոր սուրբերը քեզի հետ պիտի ըլլան:

6 - Եւ պիտի ըլլայ որ այն օրը *Լոյսը պայծառ կամ՝ աղօս պիտի չըլ- ւայ:

7 - Ու անիկա Տէրոջը յայտնի օր մը, Ոչ ցորեկ ու ոչ գիշեր պիտի ըլլայ, Սակայն երեկոյեան ժամանակը լոյս պիտի ըլլայ,

8 - Եւ այն օրը Երուսաղէմէ կենդանի ջուրեր պիտի ելլեն,

Կէսը գէպ ի արեւելեան ծովը Ու կէտը գէպ ի արեւմտեան ծովը. Ամառ ու ձմեռ այնպէս պիտի ըլլայ:

9 - Եւ Տէրը բոլոր երկրի վրայ Թա- գաւոր պիտի ըլլայ:

Այն օրը Տէրը մէկ, ու անոր անունը մէկ պիտի ըլլայ:

10 - Բոլոր երկիրը դաշտ պիտի դառ- նայ

Պարայէ մինչև Ռեմօն, Երուսաղէմի հարաւային կողմը,

Ու պիտի բարձրանայ ու իր տեղը պի- տի բնակուի

Բենիամինի դռնէն մինչև Առաջին դրանը տեղը, մինչև Անկեանց գուռը,

Ու պիտի բարձրանայ ու իր տեղը պի- տի բնակուի

Բենիամինի դռնէն մինչև Առաջին դրանը տեղը, մինչև Անկեանց գուռը,

Ու պիտի բարձրանայ ու իր տեղը պի- տի բնակուի

Բենիամինի դռնէն մինչև Առաջին դրանը տեղը, մինչև Անկեանց գուռը,

*Կա՛մ, ստացուածքներու վրայ դրին

*Կա՛մ, Լոյս պիտի չըլլայ, հապա ցուրա և սառ

Ու Անանայէլի աշտարակէն մինչև թագաւորին հնձանները:

11 - Եւ հոն պիտի բնակին, ու հոն մէջ մըն ալ նզովք պիտի չըլլայ:

Ու Երուսաղէմ ապահովութեամբ պիտի բնակուի:

12 - Եւ այս պիտի ըլլայ այն հարուածը

Որով Տէրը պիտի զարնէ ամէն ժողովուրդները,

Որոնք Երուսաղէմի դէմ պատերազմեցան:

Ոտքի վրայ կայնած ատեննին անոնց մարմինը պիտի հալի,

Ու անոնց աչքերը իրենց խորշերուն մէջ պիտի հալին,

Եւ անոնց լեզուներն անոնց բերնին մէջ պիտի հալի:

13 - Ու պիտի ըլլայ որ այն օրը անոնց մէջ

Մեծ խռովութիւն պիտի ըլլայ Տէրոջմէ,

Ու ամէն մէկը իր ընկերին ձեռքը պիտի բռնէ,

Ու անոր ձեռքը իր ընկերին ձեռքին դէմ պիտի վերցուի:

14 - Եւ Յուդա ալ Երուսաղէմի * մէջ պիտի պատերազմի:

Ու բոլոր շրջակայ ազգերուն սասցուածքը,

Ոսկի ու արծաթ ու հանդերձներ, մեծ առատութեամբ հոն պիտի ժողովուրին:

15 - Եւ ձիուն, ջորիին, ուղաին ու իշուն

Եւ այն բանակներուն մէջի բոլոր անասուններուն հարուածը

Նոյն հարուածին պէս պիտի ըլլայ:

16 - Ու Երուսաղէմի վրայ եկած բոլոր ազգերէն ամէն մեացորդը

Այն ատեն տարիէ տարի Թագաւորին, զօրաց Տէրոջը, երկրպագութիւն ընելու

Եւ տաղաւարահարաց տօնը կատարելու պիտի ելլեն:

17 - Ու երկրի ազգատոհմներէն ով որ Երուսաղէմ չելլէ

Թագաւորին, զօրաց Տէրոջը, երկրպագութիւն ընելու,

Անոր վրայ անձրև պիտի չըլլայ:

18 - Եւ եթէ Եգիպտոսաց ազգատոհմը չելլէ ու չգայ,

(Որոնք անչիւ չունին,)

Անոնց վրայ պիտի ըլլայ այն հարուածը,

Որով Տէրը պիտի զարնէ այն ազգերը

Որոնք տաղաւարահարաց տօնը կատարելու չեն ելլեր:

19 - Ասիկա պիտի ըլլայ Եգիպտոսի պատիժը,

Եւ տաղաւարահարաց տօնը կատարելու չելլող բոլոր ազգերուն պատիժը:

20 - Այն օրը ձիերուն սանձի զարգերուն վրայ

ՄՐԲՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒՆ պիտի ըլլայ:

Ու Տէրոջը տանը մէջի կաթսաները Սեղանին առջևի կոնքերուն պէս պիտի ըլլան:

21 - Ու Երուսաղէմի մէջ և Յուդայի մէջ ամէն կաթսայ

Զօրաց Տէրոջը սուրբ պիտի ըլլայ:

Եւ ամէն զոհ ընողները պիտի գան,

Ու անոնցմէ պիտի առնեն, ու անոնց մէջ պիտի եփեն:

Եւ այն օրը մէյմըն ալ զօրաց Տէրոջը տանը մէջ Քանանացի պիտի չըլլայ:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԱՂԱՔԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Մաղաքիտյի ձեռքով Իսրայէլի եղած Տէրոջը խօսքին պատգամը:

2 - Ես ձեզ սիրեցի, կ'ըսէ Տէրը, Ու դուք՝ Մեզ ինչով սիրեցիր, կ'ըսէք:

Միթէ Եսաւ Յակոբի եղբայրը չ'ըր, կ'ըսէ Տէրը,

Ու Յակոբը սիրեցի,

3 - Բայց Եսաւը ստեցի,

* կաճ, դէմ

Եւ անոր լեռները ամոյսութեան,
Ու անոր ժառանգութիւնը անապատի
բնակութեան դարձուցի:

4 - Եթէ Եդովմ¹ ըսէ թէ Կործանե-
ցանք,

Բայց պիտի դառնանք ու աւերակները
շինենք,

Չորաց Տէրը այսպէս կ'ըսէ.

Անոնք պիտի շինեն, բայց ես պիտի
փլցնեմ².

Եւ անոնք պիտի կոչուին Անորէնու-
թեան սաՀման,

Ու ժողովուրդ³ որու դէմ Տէրը յա-
ւիտեան բարկացեր է:

5 - Եւ ձեր աչքերը պիտի աեանեն, ու
պիտի ըսէք,

Տէրը Խորայէլի⁴ ԴասՀմանէն անդին՝ փա-
ռաւորուի:

6 - Տղան իր հօրը

Ու ծառան իր տէրոջը պատիւ կ'ընէ.
Եթէ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է,

Ու եթէ աէր եմ, ինձ մէ վախնալը
ո՞ւր է,

Կ'ըսէ ձեզի զօրաց Տէրը,

Ով քահանաներ, որ իմ անունս կ'ա-
նարգէք.

Եւ դուք կ'ըսէք, Քու անունդ ի՞նչ
բանով անարգեցինք:

7 - Իմ սեղանիս վրայ պիղծ հաց կը
մատուցանէք,

Ու կ'ըսէք, Քեզ ինչո՞վ պղծեցինք.
Տէրոջը սեղանը անարգ է ըսելովսիդ:

8 - Ու երբ կայրը զոհի համար կը մա-
տուցանէք, գէշ չէ՞.

Ու երբ կաղը կամ հիւանդը կը մա-
տուցանէք, գէշ չէ՞.

Աղէ, զանիկա քու իշխանիդ ընծայէ.
Միթէ քեզի պիտի հաճի⁵,

Կամ քեզ սիրով⁶ պիտի ընդունի⁷,
կ'ըսէ զօրաց Տէրը:

9 - Եւ հիմա Աստուծոյ երեսը աղաչե-
ցէք,

Որպէս զի մեզի սղորմութիւն ընէ.
Ասիկա ձեր ձեռքէն եղաւ,

Միթէ ձեզ սիրով պիտի ընդունի⁸,
կ'ըսէ զօրաց Տէրը:

10 - Չեր մէջ անգամ դռները յբէ գո-
ցող ո՞վ կայ.

Իմ սեղանիս կրակն ալ ձրի չէք վա-
ռեր:

*Կ-ժ, չազարներուն տուի
†Կ-ժ, սահմանին վրայ
‡Կ-ժ, քու երեսդ

Չեզի չեմ⁹ հաճիր, կ'ըսէ զօրաց Տէրը:
Ու ձեր ձեռքէն ընծայ չեմ¹⁰ ընդունիր:

11 - Քանզի արեւուն ծագած տեղէն
մինչև անոր մտած տեղը,

Ազգերուն մէջ, իմ անունս մեծ պիտի
ըլլայ:

Եւ ամէն տեղ իմ անունս
Խունկ ու սուրբ ընծայ պիտի մատու-
ցուի,

Քանզի իմ անունս ազգերուն մէջ մեծ
պիտի ըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը:

12 - Ու դուք զանիկա կը պղծէք,
Ըսելով թէ Տէրոջը սեղանը պիղծ է,

Ու անոր բերքը, սյսինքն կերակուրը,
անարգ:

13 - Նաև կ'ըսէք, Ահա ի՞նչ աշխա-
տութիւն է,

Ու անոր վրայ կը փչէք, կ'ըսէ զօրաց
Տէրը,

Եւ յափշտակուածը ու կաղը և հի-
ւանդը բերիք:

Այսպէս ընծայ բերիք.
Միթէ զանիկա ձեր ձեռքէն պիտի ըն-
դունի¹¹ մ, կ'ըսէ Տէրը:

14 - Բայց անիծեալ ըլլայ այն խաբե-
բայ մարդը,

Որ իր հօտին մէջ որձ ունենալով՝ ուխտ
կ'ընէ,

Եւ արատաւորը Տէրոջը կը մատու-
ցանէ:

Քանզի ես մեծ Թագաւոր եմ, կ'ըսէ
զօրաց Տէրը,

Ու իմ անունս ազգերուն մէջ ահար-
կու է:

ԳԼ Բ

Եւ հիմա այս պատուերը ձեզի է,
ով քահանաներ:

2 - Եթէ մտիկ չընէք,
Ու եթէ յէր սրտին մէջ չդնէք

Որ իմ անունս պատիւ տաք, կ'ըսէ
զօրաց Տէրը,

Այն ատեն ձեզի անէձք պիտի զրկեմ¹²,
Ու ձեր օրհնութիւնները պիտի անի-
ծեմ:

Այո, զանոնք արդէն անիծեր եմ,
Քանզի դուք յէր սրտին մէջ չէք դներ:

3 - Ահա ես ձեր սերունդը պիտի յան-
գիմանեմ¹³,

Ու ձեր երեսին վրայ աղբ,
Չեր տօներուն աղբը, պիտի ցանեմ¹⁴:

Եւ անիկա ձեզ իրեն հետ պիտի
տանի:

4 - Ու պիտի գիտնաք որ ես ձեզի զրկեցի այս պատուէրը ,
Որպէս զի իմ ուխտս Ղևիի հետ ըլլայ ,
կ'ըսէ զօրաց Տէրը :

5 - Իմ ուխտս անոր հետ էր կեանքի
ու խաղաղութեան համար .

Ու զանոնք անոր տուի այն երկիւղին
քահարէն :

Որով ինծմէ կը վախնար ,
Ու իմ անուանա երեսէն կը սարսափէր :

6 - Ճշմարտութեան օրէնքը անոր բեր-
նին մէջ էր ,

Եւ անոր շրթունքներուն մէջ անիրա-
ուութիւն չգտնուեցաւ .

Ինծի հետ խաղաղութեամբ և ուղղու-
թեամբ կը քալէր ,

Ու շատերը անօրէնութենէ դարձուց :

7 - Քանզի քահանային շրթունքները
գիտութիւն պահէլու են ,

Եւ Բարդէի անոր բերնէն օրէնքը փրնա-
ւելու են .

Քանզի անիկա զօրաց Տէրոջը գեա-
պանն է :

8 - Բայց դուք ճամբայէն խտորեցաք ,
Շատերը օրէնքին մէջ գայթակղեցու-
ցիք ,

Ղևիի ուխտը աւրեցիք , կ'ըսէ զօրաց
Տէրը :

9 - Ուստի ես ալ ձեզ բոլոր ժողո-
վուրդին առջև անարգուած ու
ցած ըրի ,

Ինչպէս դուք իմ ճամբաներս չպահե-
ցիք ,

Ու օրէնքին մէջ ակնառութիւն ըրիք :

10 - Միթէ ամէնս մէկ հայր չու-
նի՞նք .

Միթէ մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ .
Ինչո՞ւ համար մեր հայրերուն ուխտը
աւրելով՝

Մեզմէ ամէն մէկը իր եղբորը նենգու-
թիւն կ'ընէ :

11 - Յուդա նենգութիւն ըրաւ ,
Եւ Խորայէլի մէջ ու Երուսաղէմի մէջ
պղծութիւն գործուեցաւ .

Վասն զի Յուդա պղծեց Տէրոջը սրբա-
րանը զոր ինք կը սիրէր ,

Եւ օտար աստուծոյ ազգիանր այր եղաւ :

12 - Տէրը Յակոբի վրաններէն բնօջինջ
պիտի ընէ այս բանը ընող մար-
դը ,

*Արթուն եղողը ու պատասխան տու-
ողը .

Եւ զօրաց Տէրոջը ընծայ մատուցանողը :
13 - Եւ դարձեալ ասիկա ըրիք .

Տէրոջը սեղանը արցունքներով ,
Լացով ու սղբով ծածկեցիք .

Այնպէս որ Անիկա մէյմըն ալ ընծա-
յին ջնայիր ,

Որ զանիւ՞նք ձեր ձեռքէն հաճութեամբ
ընդունի :

14 - Բայց դուք ըսիք , Ինչո՞ւ .
Անոր համար որ Տէրը վկայ եղաւ քու
և քու երիտասարդութեանդ
կնոջ մէջտեղ ,

Որու հետ անհաւատարմութեամբ
վարուեցար .

Ու անիկա քու ընկերդ ու քու ուխ-
տիդ կինն է :

15 - Եւ մէկը չըրա՞ւ , որ Հոգիին առա-
տութիւնը ունէր .

Եւ այն մէկը ի՞նչ կը փնտռէր . Աս-
տուծոյ սերունդ .

Ուրեմն ձեր հոգիին զգուշութիւն ըրէք ,
Ու ձեզմէ մէ'կը իր երիտասարդութեան
կնոջ հետ անհաւատարմու-
թեամբ չվարուի :

16 - Քանզի Խորայէլի Տէր Աստուածը
կ'ըսէ թէ

*Ինք կ'ատէ կէն արձակելը .
Բայց Բարդէ իր հանդերձովը զրկանքը
կը ծածկէ , կ'ըսէ զօրաց Տէրը .

Ուստի ձեր հոգիին զգուշութիւն ըրէք
ու անհաւատարիմ մի ըլլաք :

17 - Ձեր խօսքովը Տէրը ձանձրացու-
ցիք ,

Բայց դուք կ'ըսէք , Ինչո՞վ ձանձրա-
ցուցինք :

Այոպէ՞ս ըսելովսիդ . Ամէն չարութիւն
ընողը

Տէրոջը աչքերուն առջև հաճոյ է ,
Ու ինք անոնց կը հաւնի ,

Կամ թէ Դատաստանի Աստուածը
սօ՛ւր է :

ԳԼ. Գ.

Ահա ես իմ գեապանս կը զրկեմ ,
Ու իմ առջև ճամբայ պիտի պատ-
րաստէ .

Եւ ձեր փնտռած Տէրը , այսինքն ուխ-
տին հրեշտակը , որու կը հաւ-
նիք ,
Յանկարծ իր սաճարը պիտի գայ .

*Կա՛մ, Ուսուցիչը ու աշակերտը

*Կա՛մ, Եթէ կ'ատէ զանիւնք , թո՛ղ ար-
ձակէ . ք Օր. իդ. 1 :

Ահա կու գայ, կ'ըսէ զօրաց Տէրը :

2 - Ու անոր գալուտարին օրը ո՞վ կրնայ
գիմանալ ,
Եւ անոր երևնալուն տակեր ո՞վ կրնայ
կոչնիլ .
Քանզի անիկա հալեցնողին կրակին պէս,
Ու թափիչներուն օճառին պէս պիտի
ըլլայ .

3 - Եւ անիկա արծաթ հալեցնողի ու
մաքրողի ղէ՞ պիտի նստի,
Ու Ղևիի սրգիները պիտի մաքրէ,
Եւ զանոնք սակիի պէս ու արծաթի
պէս պիտի զտէ .
Ու անոնք արդարութեամբ Տէրոջը
ընծայ մատուցանողներ պիտի
ըլլան .

4 - Եւ Յուդայի ու Երուսաղէմի ընծան
Հին օրերուն պէս ու առաջին տարինե-
րուն պէս
Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ :

5 - Ու դատաստանի համար ձեզի պի-
տի մօտենամ ,
Եւ կախարդներուն ու շնացողներուն
Ու սուտ երգում ընողներուն ,
Եւ վարձկանին իր վարձքին վրայով ,
Որբեարիին ու սրբին զրկանք ընողնե-
րուն ,
Եւ պանդուխտին երբեք խտորցը-
նողներուն ,
Ու ինծմէ չվախցողներուն դէմ արագ
վկայ պիտի ըլլամ , կ'ըսէ զօրաց
Տէրը :

6 - Քանզի ես Եհովա եմ , չեմ փոխ-
ուիր ,
Անոր համար դուք, ով Յակոբի սրգի-
ներ, չսպառեցաք :

7 - Ձեր հայրերուն օրերէն ի վեր
Իմ հրամաններէս զատուեցաք ու զա-
նանք չպահեցիք .
Ինծի դարձէք ու ես ձեզի պիտի դառ-
նամ , կ'ըսէ զօրաց Տէրը .
Սակայն դուք կ'ըսէք , Ինչո՞վ դառ-
նանք :

8 - Միթէ մարդ զԱստուած կը կողոպ-
տէ՞ ,
Որ դուք զիս կը կողոպտէք .
Բայց դուք կ'ըսէք , Քեզմէ ի՞նչ կո-
ղոպտեցինք .
Տասանորդներ ու ընծաներ :

9 - Դուք անէծքով անիծուած էք,
Քանզի դուք բոլոր ազգդ զիս կողոպ-
տեցիք :

10 - Բոլոր տասանորդները գանձատուներ
տարէք ,

Որպէս զի իմ տանս մէջ պաշար ըլլայ .
Եւ ասով զիս փորձեցէք , կ'ըսէ զօրաց
Տէրը ,
Թէ արդեօք ձեզի երկինքի պատուհան-
ները չե՞մ բանար
Ու ձեզի օրհնութիւն թափեր ,
Այնպէս որ անոր բաւական քեզ չըլլայ :

11 - Եւ ձեզի համար ուսողը պիտի
յանդիմանեմ ,
Ու անիկա ձեր երկրին պատուը պիտի
չապականէ ,
Եւ ձեր այգիին մէջ սրթը անպատու
պիտի չըլլայ , կ'ըսէ զօրաց Տէրը :

12 - Եւ ամէն ազգերը ձեզի երանի՞
պիտի ըսեն ,
Քանզի դուք ցանկալի երկիր պիտի ըլ-
լաք , կ'ըսէ զօրաց Տէրը :

13 - Ձեր խօսքերը ինծի դէմ խիստ ե-
ղան , կ'ըսէ Տէրը .
Բայց դուք կ'ըսէք , Քեզի դէմ ի՞նչ
խօսեցանք :

14 - Դուք ըսիք , Աստուծոյ ծառայու-
թիւն ընելը պարտաւ բան է ,
Եւ անոր պահպանութիւնը պահելէն
Ու զօրաց Տէրոջը առջև սուգով քա-
լելէն ի՞նչ շահեցանք .

15 - Եւ հիմա մենք հպարտներուն ե-
րանի՞ կ'ըսենք .
Ամբարշտութիւն ընողները անդամ
բարեշէն կ'ըլլան ,
ՉԱստուած ալ կը փորձեն ու կ'ազա-
տին :

16 - Այն տակն Տէրոջմէ վախցողները
Իրարու հետ խօսեցան ,
Եւ Տէրը մտիկ ըրաւ ու լսեց .
Եւ իր առջև յիշատակի գիրք գրուե-
ցաւ
Տէրոջմէ վախցողներուն համար
Ու անոր անունը մտածողներուն հա-
մար :

17 - Եւ անոնք իմ պիտի ըլլան , կ'ըսէ
զօրաց Տէրը ,
Այն օրը որ իմ սեպհական գանձս ժող-
վեմ ,
Ու անոնց պիտի խնայեմ ,
Ինչպէս մարդ մը կը խնայէ իր սրգույն
Որ իրեն ծառայութիւն կ'ընէ :

18 - Եւ պիտի դառնաք , ու արդարին
և ամբարշտին ,
Աստուծոյ ծառայութիւն ընողին
Եւ անոր ծառայութիւն չընողին
Տարբերութիւնը պիտի տեսնէք :

ԳԼ. Դ .

Քանզի ահա փուռի պէս վառած
օրը կու գայ,

Ու բոլոր հպարտները և բոլոր ամբարշատթիւն ընողները

Յարդի պէս պիտի ըլլան.

Ու գալու օրը զանոնք պիտի այրէ,
կ'ըսէ զօրաց Տէրը,

Այնպէս որ անոնց արմատ կամ սա
պիտի չթողու:

2 - Բայց ձեզի, իմ անունէս վախցող-
ներուդ,

Արդարութեան արեգակը պիտի ծագի,
եւ անոր թևերուն վրայ բժշկութիւն
պիտի ըլլայ.

Ու դուք գոմի պարարտ որթերուն պէս
Դուրս պիտի ելլէք ու պիտի ցաթկէք:

3 - Եւ ամբարիշտները պիտի կոխէք,

Վասն զի իմ գործ տեսնելու օրս
Անոնք ձեր ստից թաթերուն տակ
Մտիւր պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը:
4 - Յիշեցէք իմ ծառայիս Մովսէսի
օրէնքը,

Այսինքն այն կանոնները ու դատաս-
տանները,

Չորոնք անոր պատուիրեցի Քորեբի մէջ
բոլոր Իսրայէլի համար:

5 - Ահա ես Եզրիս մարգարէն ձեզի պի-
տի զրկեմ

Դեռ Տէրոջը մեծ ու ահեղ օրը չեկած.

6 - Ու անկա հայրերուն սիրտը որդի-
ներուն,

Ու որդիներուն սիրտը հայրերուն պի-
տի դարձնէ,

Որ չըլլայ թէ ես գամ, ու երկիրը ա-
նէճքով զարնեմ:

ՎԱԽՃԱՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ



ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1923

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ



ԳԼՈՒԽ Ա

Գիրք ծննդեան Յիսուսի Գրիստոսի, Դաւիթի որդւոյն, Աբրահամի որդւոյն:

2 - Աբրահամ ծնաւ Իսահակը. Իսահակ ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղբայրները. 3 - Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան Թամարէ. Փարէս ծնաւ Եսրոնը. Եսրոն ծնաւ Արամը. 4 - Արամ ծնաւ Ամինադարը. Ամինադար ծնաւ Նասաոնը. Նասաոն ծնաւ Սաղմոնը. 5 - Սաղմոն ծնաւ Բոսոր Թախարէ. Բոսո ծնաւ Ավբէդը Հուսթէ. 6 - Ավբէդ ծնաւ Յեսսէն. Յեսսէ ծնաւ Դաւիթ Թագաւորը. Դաւիթ Թագաւորը ծնաւ Սողոմոնը Աւրիայի կնոջմէն. 7 - Սողոմոն ծնաւ Ռոբովամը. Ռոբովամ ծնաւ Աբիան. 8 - Աբիա ծնաւ Ասան. Ասա ծնաւ Յովսափատը. Յովսափատ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ազիան. 9 - Ազիա ծնաւ Յովաթամը. Յովաթամ ծնաւ Աքազը. Աքազ ծնաւ Եզեկիան. 10 - Եզեկիա ծնաւ Մանասէն. Մանասէ ծնաւ Ամոնը. 11 - Ամոն ծնաւ Յովսիան. Յովսիա ծնաւ Յէքոնիան ու անոր եղբայրները Բաբելոնեան գերութեան տակէնները. 12 - Բաբելոն գերութեան երթալնէն ետեւ Յէքոնիա ծնաւ Սաղաթիէլը. 13 - Սաղաթիէլ ծնաւ Զօքաբաբէլը. Զօքաբաբէլ ծնաւ Աբիուդը. Աբիուդ ծնաւ Եղիակիմը. 14 - Եղիակիմ ծնաւ Ազովրը. Ազովր ծնաւ Սաղովկը. Սաղովկ ծնաւ Աքինը. Աքին ծնաւ Եղիուդը. 15 - Եղիուդ ծնաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մատթանը. 16 - Մատթան ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ զՅովսէփ, զայրն Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ'ըսուի Գրիստոս: 17 - Արդ բոլոր ազգերը Աբրահամէ մինչև Դաւիթ տասնչորս ազգ, և Դաւիթէ մինչև Բաբելոնեան գերութիւնը տասնչորս ազգ, ու Բաբելոնեան գերութիւնէն մինչև Գրիստոս տասնչորս ազգ:

18 - Եւ Յիսուսի Գրիստոսի ծնունդը այս կերպով էր. անոր մայրը Մարիամ

Յովսէփի նշանուած, դեռ իրարու քով չեկած՝ Սուրբ Հոգիէն յղացած գանուեցաւ: 19 - Եւ Յովսէփ անոր այրը արգար Բարդ ըլլալով՝ ու չուզելով որ զանիկա խայտառակ ընէ, մտածեց որ ծածկաբար արձակէ զանիկա: 20 - Եւ քանի որ անիկա այս քանչ կը մտածէր, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեցաւ անոր ու ըսաւ, Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար քեզի առնել քու Մարիամ կինդ, վասն զի անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն է: 21 - Եւ որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յիսուս գնես, քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ: 22 - Եւ այս ամէնը եղաւ, որպէս զի կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, 23 - Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ: 24 - Եւ Յովսէփ քունէն արթննալով՝ ինչպէս Տէրոջը հրեշտակը իրեն հրամայեց, ունիւր ըրաւ ու իր կինը քովն առաւ. 25 - Եւ չէր գիտեր զանիկա՝ մինչև իր անդրանիկ որդին ծնաւ, ու անոր անունը Յիսուս գրաւ:

ԳԼ. Բ

Ու երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլէհէմին մէջ Հերովդէս Թագաւորին օրերը, ահա արևելքէն մոգեր եկան Երուսաղէմ, 2 - Ու ըսին, Ո՞ւր տեղ է ան՝ որ Հրէաներուն Թագաւոր ծնաւ. վասն զի մենք արևելքի մէջ անոր աստղը տեսանք, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու: 3 - Ու երբ Հերովդէս Թագաւորը լսեց, խուզեցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն հետ: 4 - Եւ ժողովելով բոլոր քահանայապետները ու ժողովուրդին դպիրները, հարցուց անոնց թէ Գրիստոսը ո՞ւր պիտի ծնանի: 5 - Անոնք ալ իրեն ըսին, Հրէաստանի Բեթլէհէմին մէջ. վասն զի

*Այսինքն, Փրկիչ

այսպէս գրուած է մարգարէին ձեռքով. 6 - Եւ դուն, Բեթլէհէմ, Յուդայի երկիրը, Յուդայի իշխաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես. վասն զի քեզմէ իշխան մը պիտի ելլէ որ իմ Իսրայէլ ժողովուրդս պիտի հովուէ: 7 - Այն ատեն Հերովդէս ծածկաբար մագերը կանչեց, ու ստուգեց անոնցմէ աստղին երևցած ատենը: 8 - Եւ զանոնք Բեթլէհէմ զրկելով՝ ըսաւ, Գացէք ստոյգը իմացէք այն մանուկին վրայով, ու երբ գտնէք, ինծի իմացուցէք, որպէս զի ես ալ գամ, անոր երկրպագութիւն ընեմ: 9 - Ու երբ անոնք թագաւորէն այս քանչ լսեցին, գացին. և ահա այն աստղը զոր արեւելքի մէջ տեսեր էին, անոնց առջեւն գնաց, մինչև եկաւ կեցաւ մանուկին եղած տեղին վրայ: 10 - Երբ տեսան աստղը, շատ մեծ ուրախութիւնով ուրախացան: 11 - Եւ տունը մտնելով տեսան մանուկը իր մօրը Մարիամի հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տուին անոր, ոսկի ու կնդրուկ և զմուռս: 12 - Ու հրաման առնելով երազի մէջ, որ նորէն Հերովդէսի չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը:

13 - Ու երբ անկէ գացին անոնք, ահա Տերոջը հրեշտակը երազի մէջ երևցաւ Յովսէփի ու ըսաւ, Ելի՛ր, առ մանուկը ու անոր մայրը, ու Եգիպտոս փախիր, և հոն կեցիր մինչև ես քեզի ըսեմ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ այդ մանուկը կորսնցնելու համար: 14 - Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը գիշերով առաւ և գնաց Եգիպտոս, ու մինչև Հերովդէսի մահը հոն էր: 15 - Որպէս զի կատարուի Տերոջմէն ըսուածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, Եգիպտոսէ կանչեցի իմ որդիս:

16 - Այն ատեն երբ տեսաւ Հերովդէս թէ խաբուեցաւ մագերէն, սաստիկ սրդողեցաւ, ու զրկեց ջարդեց Բեթլէհէմի և անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած բոլոր տղաքը՝ երկու տարեկան և անկէ վար, այն ժամանակին համեմատ զոր մագերէն ստուգեց: 17 - Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով ըսուածը, որ կ'ըսէ, Ռամայի մէջ ձայն մը

լսուեցաւ, ողբ, լաց ու մեծ կոծ. 18 - Ռաքէլ կուլար իր տղոցը համար, ու չէր ուզեր մխիթարուիլ, վասն զի չկային:

19 - Ու երբ Հերովդէս մեռաւ, ահա Տերոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփի երևցաւ, 20 - Ու ըսաւ, Ելի՛ր, առ մանուկը ու անոր մայրը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք որ մանուկին կեանքը կը փնտռէին: 21 - Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ Իսրայէլի երկիրը: 22 - Իսկ երբ լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի վրայ իր հօրը Հերովդէսի տեղ, վախցաւ հոն երթալու, ու երազի մէջ պատգամ առնելով՝ Գալիլեայի կողմերը գնաց. 23 - Եւ եկաւ Նազարէթ ըսուած քաղաքը բնակեցաւ, որպէս զի մարգարէներուն խօսքը կատարուի՝ թէ Նազովրեցի պիտի կոչուի:

ԳԼ. Գ

Այն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր, 2 - Ու կ'ըսէր, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտեցած է: 3 - Վասն զի ասիկա ան է՝ որու համար Եսայի մարգարէին ձեռքով ըսուեցաւ, որ կ'ըսէ, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տերոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք: 4 - Եւ այս Յովհաննէսը իր հանդերձը ուղտի մազէ, ու իր մէջքը կաշիէ գօտի ունէր. և իր կերակուրը մարտիս ու վայրենի մեղր էր: 5 - Այն ատեն Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու Յորդանանու բոլոր կողմերը իրեն կ'ելլէին, 6 - Եւ կը մկրտուէին իրմէ Յորդանանու մէջ, ու իրենց մեղքերը կը խոտովանէին: 7 - Ու երբ տեսաւ փարիսեցիներէն ու սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը եկած, ըսաւ անոնց, Ի՞ժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գայու բարկութենէն փախչիլ: 8 - Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղ բերէք. 9 - Եւ մի խորհիք դուք ձեր ներսիդին ըսել, թէ Մենք Թոբ հայր՝ Աբրահամը ունինք. քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ հանել: 10 - Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը

*Յ. 2. ծաղրուեցաւ

գրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 11 - Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց իմ ետեւէս եկողը ինձմէ զօրաւոր է, ու ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ: անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով: 12 - Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կայր պիտի մտքէ ու իր ցորենը համբարը պիտի ժողվէ, և յարգը պիտի սյրէ չմարող կրակով:

13 - Այն ատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ Յովհաննէսի, որպէս զի անկէ մկրտուի: 14 - Եւ Յովհաննէս կ'արգիլէր զանիկա ու կ'ըսէր, ինձի՛ պէտք է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն ինձի՞ կուգաս: 15 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Թող տուր հիմա, վասն զի այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք. ետքը թող տուաւ անոր: 16 - Ու երբ Յիսուս մկրտուեցաւ, շուտ մը ջուրէն դուրս ելաւ, և ահա երկինք անոր բացուեցաւ, ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի պէս կ'իջնէր, ու կու գար իր վրայ: 17 - Եւ ահա երկինքէն ձայն մը ելաւ որ կ'ըսէր, Ասիակա է իմ սիրելի Որդիս, որու հաւնք եմ:

ԳԼ. Դ

Այն ատեն Յիսուս անապատը տարուեցաւ Սաւրէ Հոգիէն, որպէս զի Սատանայէ փորձուի: 2 - Եւ քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծով պահելէն ետքը անօթեցաւ:

3 - Եւ փորձողը անոր մօտենալով ըսաւ, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, ըսէ որ այս քարերը հաց ըլլան: 4 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Գրուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ:

5 - Այն ատեն Սատանայ տուաւ տարաւ զանիկա սուրբ քաղաքը, և կայնեցուց զանիկա տաճարին աշտարակին վրայ, 6 - Ու ըսաւ անոր, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ապա վար ձգէ, վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի ապաստէ քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որպէս զի չըլլայ թէ օտար քարի վարնես: 7 - Յիսուս ըսաւ

անոր, Գարձեալ գրուած է թէ ՔուՏէր Աստուածդ չփորձես:

8 - Սատանայ նորէն առաւ հանեց զանիկա խիստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը:

9 - Ու ըսաւ անոր, Ասոնք ամէնը քեզի կուտամ, եթէ իյնաս ինձի երկրպագութիւն ընես: 10 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, [Ետիս] գնա, Սատանայ, վասն զի գրուած է թէ ՔուՏէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես: 11 - Այն ատեն Սատանայ զանիկա թողուց. և ահա հրեշտակներ եկան ու անոր սպասուորութիւն կ'ընէին:

12 - Եւ երբ լսեց Յիսուս թէ Յովհաննէս մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա, 13 - Ու ձգելով Նազարէթը, եկաւ բնակեցաւ Կափառնայում, ծովեզերեայ առաջ, 2աբուղոնի ու Նեփթաղիմի սահմաններուն մէջ: 14 - Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, 15 - 2աբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անգիի կողմը, Հեթանոսաց Գալիլեան: 16 - Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծագեցաւ անոնց՝ որոնք մահուան երկրին ու շուքին մէջ կը նստէին: 17 - Անկէ ետեւ Յիսուս սկսաւ քարոզել ու ըսել, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի թագաւորութիւնը մօտ է:

18 - Երբ Յիսուս Գալիլեացուց ծովուն քովերը կը պտրտէր, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչուած Սիմոնը և անոր եղբայրը Անդրէասը, որոնք ծովը ուսկան կը ձգէին, վասն զի ձկնորս էին: 19 - Եւ ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ձեզ մարդոց որսորդ ընեմ: 20 - Անոնք ալ շուտ մը ուսկանները թողուցին ու անոր ետեւէն գացին: 21 - Եւ անկէ յառաջ երթալով տեսաւ ուրիշ երկու եղբայրներ, 2աբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, նաեւ մէջ իրենց հօրը 2աբեդեոսի հետ, երբ իրենց ուսկանները կը կարկատէին. ու կանչեց զանոնք: 22 - Անոնք ալ շուտ մը նաւը ու հայրերնին թողուցին ու անոր ետեւէն գացին:

23 - Եւ Յիսուս բոլոր Գալիլեա պտրտելով, կը սորվեցնէր անոնց ժողովա-

բաններուն մէջ, և արքայութեան աւետարանը կը քարոզէր, ու ժողովուրդին մէջի ամէն կերպ հիւանդութիւնները ու ամէն կերպ ցաւերը կը բժշկէր: 24 - Եւ անոր համբաւը բոլոր Սուրիա տարածուեցաւ, և բերին անոր՝ բոլոր հիւանդները որոնք կերպ կերպ ցաւերով ու տանջանքներով կը նեղուէին, և դիւահարները ու լուսնոտները և անգամալոյծները. ու բժշկեց զանոնք: 25 - Եւ շատ ժողովուրդներ անոր ետևէն կ'երթային, Փաղիլեայէ ու Դեկապոլիսէ և Երուսաղէմէ ու Հրէատանէ և Յորդանանու անդիի կողմէն:

ԳԼ. Ե

Եւ տեսնելով ժողովուրդները, լեռը ելաւ. ու երբ նստաւ հին, իր աշակերտները քովը գացին. 2 - Եւ իր բերանը բանալով կը սորվեցնէր անոնց ու կ'ըսէր,

3 - Երանի՛ հոգւով աղքատներուն, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է: 4 - Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին: 5 - Երանի՛ հեղբերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը: 6 - Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արգարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան: 7 - Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն: 8 - Երանի՛ անոնց որ սրտով մտքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն զԱստուած: 9 - Երանի՛ խաղաղութիւնը քննողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: 10 - Երանի՛ անոնց որ հալածուած են արգարութեան համար, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է: 11 - Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն, և սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: 12 - Յնձացէք և ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը. քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները:

13 - Ի՞նչ էք երկրի աղբ. սպասե՛ք աղբ իր համը կորսնցնէ, ինք ինչով պիտի աղուի. անկէ ետև բանի մը չգար, միայն թէ դուրս ձգուելու և մարդոց ստիճան տակ կոխուելու: 14 - Ի՞նչ էք աշխարհի լոյսը. քաղաք մը որ լեռան վրայ կեցած է, չկրնար պահ-

ուիլ: 15 - Աւ ճրագը չէն վառեր և գներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, և լոյս կուտայ բոլոր տանը մէջ եղողներուն: 16 - Այնպէս թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև, որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փառաւորեն ձեր հայրը որ երկինքն է:

17 - Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւերելու. չեկայ աւերելու, հապա կատարելու: 18 - Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, Մինչև երկինք ու երկիր անցնին, օրէնքէն յովս մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչև բոլորն ալ կատարուին: 19 - Աւտի ով որ այս ամենափոքր պատուիրանքներէն մէկը աւրէ, ու մարդոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեանը մէջ. բայց ով որ ընէ և սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեանը մէջ: 20 - Քանզի կ'ըսեմ ձեզի, Եթէ ձեր արգարութիւնը դպիրներուն ու փարիսեցիներուն առջևն աւելի չըլլայ, բնաւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը:

21 - Լսեր էք որ բտուեցաւ առաջիններուն, Սպանութիւն մի ըներ. և ով որ սպանութիւն ընէ, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: 22 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ով որ իր եղբորը պարտաւոր պիտի ըլլայ, և ով որ իր եղբորը Յիմար ըսէ, տեսանի պարտաւոր պիտի ըլլայ. և ով որ իր եղբորը Անմիտ ըսէ, գեհէնի կրակին պարտաւոր պիտի ըլլայ: 23 - Աւրեմն, եթէ քու ընծադ սեղանին վրայ բերես, ու չոն միտքդ գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, 24 - Հոն ձգէ քու ընծադ սեղանին առջև, և գնա առաջ եղբորդ հետ հաշտուէ, ու ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես: 25 - Քու ստիճից հետ շուտով միարանէ, քանի որ անոր հետ ճամբուն մէջ ես. չըլլայ որ քու ստիճ քեզ դատաւորին մատնէ, և դատաւորը դահիճին, և բանտը ձգուիս: 26 - Ըշմարիտ կ'ըսեմ քեզի, Պիտի չելլես անկէ՝ մինչև որ վերջին նաքարակիտը չվճարես:

27 - Լսեր էք որ բտուեցաւ*, Շնու-
թիւն մի ըներ: 28 - Բայց ես ձեզի

*Ո՛հնէ՛ Կ'աւելցնէն, առաջիններուն

կ'ըսեմ, Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկանալու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ: 29 - Արդ եթէ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, չանէ զանիկա ու քեզ մէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, ու քու ըսլոր մարմինդ դժոխքը չձգուի: 30 - Եւ եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, ու քու ըսլոր մարմինդ դժոխքը չձգուի: 31 - Իբրև, ըսուեցաւ թէ Ով որ իր կինը կ'արձակէ, թող անոր արձակման թուղթ տայ. 32 - Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ Ով որ իր կինը կ'արձակէ առանց պառնկութեան պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն, և ով որ այն արձակուածը առնէ, շնութիւն կը գործէ:

33 - Իարձեալ լսեր էք որ լսուեցաւ առաջիններուն, Սուտ երդում մի ըներ, չապա ըրած երդումներդ վճարէ Տէրոջը: 34 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ամենին երդում մի ընէք, ոչ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ ամենն է, 35 - Եւ ոչ երկրի վրայ՝ որ անոր ստքերուն պատուանդանն է, ոչ ալ Երուսաղէմի վրայ՝ որ մեծ Թագաւորին քաղաքն է. 36 - Եւ ոչ քու գիտուղ վրայ երդում ընես, վասն զի չես կրնար մէկ մտղ ճերմկցնել կամ սեցնել: 37 - Հապա ձեր խօսքը ըլլայ այոն՝ այո, է- ոչր՝ ոչ. ու սակէ աւելին չարէն յառաջ կուգայ:

38 - Լսեր էք որ ըսուեցաւ, Աչքի տեղ աչք, ու աղուայի տեղ աղուայ: 39 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Չարին հակառակ մի կենաք, հապա եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսն ալ: 40 - Եւ մէկը որ կ'ուզէ քեզի հետ դատ վարել ու քու շապիկդ առնել, թող սուր անոր գլխարկուղ ալ: 41 - Եւ ով որ քեզ պահակ բռնէ ու մղոն մը ճամբայ քչէ, գնա անոր հետ երկու: 42 - Քեզմէ ուզողին սուր, ու երես մի դարձներ անկէ՝ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել:

43 - Լսեր էք որ ըսուեցաւ, Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես: 44 - Բայց ես ձեզի կ'ըսեմ, Սիրեցէք ձեր թշնամիները, որ հնեցէք ձեզ անիծողները, բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն, և աղօթք ըրէք անոնց համար որ

ձեզ կը շարչրկեն ու կը հալածեն. 45 - Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը սրգիններն ըլլաք. վասն զի իր արևը կը ծագեցնէ թէ՛ շարերուն և թէ՛ բարիներուն վրայ, և անձրև կը զրկէ թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն վրայ: 46 - Վասն զի եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ վարձք կ'ունենաք. չէ՞ որ մտքաւորներն ալ նոյնը կ'ընեն: 47 - Եւ եթէ միայն ձեր եղբայրներուն բարև տաք, ի՞նչ աւելի կ'ընէք «-բիշնեբէն». չէ՞ որ մտքաւորներն ալ նոյնը կ'ընեն: 48 - Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է:

ԳԼ. 9

9 Գոյշ եղէք որ ձեր սղորմութիւնը մարդոց առջև չընէք՝ անոնց երևնալու համար, եթէ ոչ՝ վարձք չէք առներ ձեր Հօրմէն որ երկինքն է: 2 - Ուստի երբ սղորմութիւն կ'ընես, առջևդ փող մի հնչեցներ, ինչպէս կեղծաւորները ժողովարաններուն ու փողոցներուն մէջ կ'ընեն, որպէս զի մարդոցմէ փառաւորուին. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: 3 - Իսկ դուն երբ սղորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող չգիանայ աջ ձեռքիդ ինչ գործելը. 4 - Որպէս զի քու սղորմութիւնդ գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ:

5 - Ու երբ աղօթք կ'ընես, կեղծաւորներուն նման չըլլաս, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ ու հրապարակներուն անկիւնները կայնելով աղօթք ընել, որպէս զի մարդոց երևնան. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: 6 - Իսկ դուն երբ աղօթք կ'ընես, մտիք քուներքին սենեակդ ու դուռդ գոցէ, և աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ իջ գործուի. և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ: 7 - Ու երբ աղօթք կ'ընէք, հեթանոսներուն պէս շատախօս մի ըլլաք, վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին: 8 - Ուրեմն անոնց չնմանիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած: 9 - Ուստի պիտի աղօթք ըրէք դուք.

Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. 10 - Քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ. 11 - Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր. 12 - Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն. 13 - Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

14 - Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ. 15 - Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չներէր ձեր յանցանքները:

16 - Ու երբ ծով կը պահէք, կեղծաւորներուն պէս տրտումերես մի ըլլաք. քանզի իրենց երեսները կ'աւրեն որպէս զի մարդոց երեսան թէ ծով կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: 17 - Բայց դուն երբ ծով կը պահես, գլուխդ օծէ ու երեսդ լուս, 18 - Որպէս զի մարդոց ծով պահողի պէս չերեսաս, հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ է քո՞նք. և քու Հայրդ որ գաղտուկ կը տեսնէ, շքեզի հատուցում պիտի ընէ:

19 - Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր ցեցը ու ժանգը կ'ապականեն, և ուր գողերը առ կը ծակեն ու կը գողնան. 20 - Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ոչ ցեցը և ոչ ժանգը կ'ապականէ, ու ոչ գողերը առ կը ծակեն և կը գողնան: 21 - Քանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ: 22 - Մարմինին ճրագը աչքն է. հապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: 23 - Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ալ այն խաւարը ս'ըջափ է: 24 - Մարդ մը չկրնար երկու տերոջ ծառայութիւն ընել. վասն զի կա՛մ մէկը պիտի առէ և միւր սիրէ, կա՛մ քո՞նք պիտի յարի՝ և միւր պիտի արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի: 25 - Ուստի կ'ը-

սեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, կամ ի՛նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հազուատէն: 26 - Նայեցէք երկինքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ ամբարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լուս էք: 27 - Հիմա ձեզմէ ս՞ով կրնայ իր հոգ ընելով իր հասակին վրայ կանգուն մը աւելցրնել: 28 - Ու հազուատի համար ինչո՞ւ հոգ կ'ընէք. նայեցէք դաշտի շուշաններուն, ի՛նչպէս կ'աճին. ոչ կաշխատին և ոչ կը մտնեն. 29 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկո՞ւն պէս չհազուեցաւ: 30 - Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ և վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հազուեցնէ, հապա ս'ըջափ աւելի ձեզ, թերահաւատներ: 31 - Ուրեմն հոգ մի ընէք՝ ըսելով, Ի՞նչ պիտի ուտենք, կամ Ի՞նչ պիտի խմենք, կամ Ի՞նչ պիտի հագնիք. 32 - (Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են: 33 - Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին: 34 - Ուստի վաղուան համար հոգ մի ընէք, վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իր նեղութիւնը:

ԳԼ. Է

Մի դատէք, որպէս զի չդատուիք: 2 - Քանզի ի՛նչ դատաստանով որ դատէք, ա՛նչ պիտի դատուիք, և ի՛նչ չափով որ չափէք, ա՛նչ պիտի չափուի ձեզի: 3 - Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր: 4 - Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Թող տուր աչքեդ շիւղը հանեմ. և ահա քու աչքիդ մէջ գերան կայ: 5 - Կեղծաւոր, առաջ քու աչքեդ գերանը հանէ, ու ետքը պարզ պիտի տեսնես եղբօրդ աչքէն շիւղը հանելու:

*Ո՛րք, քեզի յայտնապէս
 †Կո՛նք, մէկը պիտի մեծարէ:

6 - Սուրբ բանը շուներուն մի տաք, և ձեր մարգարիաները խողերուն առ ջն մի ձգէք, որպէս զի սաքերնուն տակ չկոխկուտեն զանոնք, ու դառնան ձեզ պատառեն:

7 - Խնդրեցէք, և պիտի տրուի ձեզի. փնտռեցէք, և պիտի գտնէք. Գոհ զարկէք, և պիտի բացուի ձեզի. 8 - Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ Գոհ կը զարնէ՝ պիտի բացուի անոր: 9 - Զեզմէ ո՞ր մարդը կայ՝ որմէ իր որդին եթէ հաց ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. 10 - Եւ կամ եթէ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ անոր: 11 - Ուստի եթէ դուք որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, ո՞րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն:

12 - Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք, քանզի այս է օրէնքը ու մարգարէները:

13 - Նեղ դռնէն ներս մտէք. վասն զի լայն է այն դուռը ու ընդարձակ՝ այն ճամբան, որ դէպ ի կորուստ կը տանի. և շատուոր են անոնք որ անկէ կը մտնեն: 14 - Վասն զի նեղ է այն դուռը ու նեղուացք է այն ճամբան, որ դէպ ի կեանք կը տանի. և քիչուոր են անոնք որ զանհիկա կը գտնեն:

15 - Զգոյշ կեցէք սուտ մարգարէներէն, որոնք ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներսէն յափշտակող գայլեր են: 16 - Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուշերէն խողող կը քաղե՞ն, կամ տատակէն թուղ: 17 - Այսպէս ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ, և չար ծառ չար պտուղ կուտայ: 18 - Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ: 19 - Ամէն ծառ որ բարի պտուղ չտար, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 20 - Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք:

21 - Ոչ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա անհիկա՝ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ: 22 - Շատերը այն օրը ինծի պիտի ըսեն, Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և քու անունովդ

դեեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք: 23 - Եւ այն տանն անոնց յայտնապէս պիտի ըսեմ թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկդի գացէք քովէս՝ դուք որ անօրէնութիւն կը գործէիք:

24 - Արդ ով որ այս իմ խօսքերս կը լսէ և կը կատարէ զանոնք, զանհիկա պիտի նմանցնեմ խելացի մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ շինեց. 25 - Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու չփլաւ, վասն զի վէմի վրայ հաստատուած էր: 26 - Եւ ով որ այս իմ խօսքերս կը լսէ ու չկատարէր զանոնք, կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց. 27 - Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը:

28 - Ու երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը, ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ.

29 - Վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս:

ԳԼ. Ը

Ու երբ այն լեռնէն վար իջաւ, շատ ժողովուրդներ գացին անոր ետեէն: 2 - Եւ ահա բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել: 3 - Եւ Յիսուս իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր ու ըսաւ, Կ'ուզեմ, մաքրուէ. և շուտ մը անոր բորոտութիւնը մաքրուեցաւ: 4 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Զգոյշ կեցիր, մարդո՛ւ չըսես, հապա գնա, քեզ քահանային ցուցուր, և Մովսէսի պատուիրած ընծան տուր, անոնց վկայութիւն ըլլալու համար:

5 - Ու *երբ կափառնայում մտաւ, հարիւրապետ մը եկաւ քովը, կ'ողաչէր անոր, 6 - Ու կ'ըսէր, Տէր, իմ ծառաս տունը անգամաւրջ՝ պառկած չարաչար կը տանջուի: 7 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ես կու գամ ու զանհիկա կը բժշկեմ: 8 - Եւ հարիւրապետը պատասխան տալով ըսաւ, Տէր, ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ

*Ո՛րք, երբ Յիսուս

մտնես. միայն թէ խօսքով զրուցէ, ու իմ ծառաս պիտի բժշկուի: 9 - Վասն զի ես ալ իշխանութեան տակ մարդ մըն եմ, ու իմ՝ իմ զինուորներ ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ թէ Եկուր, ու կուգայ. և ծառայիս՝ թէ Այս բանը ըրէ, ու կ'ընէ: 10 - Յիսուս երբ լսեց, զարմացաւ, և իբր ետեւէն գացողներուն ըսաւ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ: 11 - Եւ ձեզի կ'ըսեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն շատեր պիտի գան, ու երկինքի թագաւորութեանը մէջ պիտի բազմին Աբրահամի ու Իսահակի և Յակոբի հետ. 12 - Իսկ թագաւորութեանը որդիները դուրսի խաւարը պիտի հանուին. հոն պիտի ըլլայ լայ ու տկոսներ կրճտել: 13 - Եւ Յիսուս հարիւրապետին ըսաւ, Գնա, ու ինչպէս դուն հաւատացիր, «յնպէ» թող ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր ծառան բժշկուեցաւ:

14 - Եւ Յիսուս Պետրոսի տունը գալով, տեսաւ որ անոր զոքանչը ջերմէն բռնուած՝ պառկած էր. 15 - Եւ անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը թող տուաւ զանիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ և *անոնց սպասաւորութիւն կ'ընէր:

16 - Երբ իրիկուն եղաւ, շատ դիւախարներ բերին անոր, ու խօսքով հանեց շաբաթ ոգիները և բոլոր հիւանդները բժշկեց. 17 - Որպէս զի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը կատարուի, Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց և ձեր ցաւերը կրեց:

18 - Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան: 19 - Եւ դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վարդապետ, ես քու ետեւէդ պիտի գամ ուր որ երթաս: 20 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները սրջեր ունին, ու երկինքի թռչունները բոյներ, բայց Որդին մարդոյ Կեղծ չընի, ուր իր գլուխը դնէ: 21 - Եւ մէկ ուրիշը, «բ» անոր աշակերտներէն էր, ըսաւ անոր, Տէր, ինձի հրաման տուր, որ երթամ առաջ իմ հայրս թաղեմ: 22 - Յիսուս ըսաւ անոր, Եկուր իմ ետեւէս, ու թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները:

*Ո՛հնէ, անոր

23 - Ու երբ նաւը մտաւ, իր աշակերտները իր ետեւէն գացին. 24 - Եւ ահա մեծ ալէկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ, այնպէս որ նաւը ալիքներէն կը ծածկուէր. իսկ ինք կը քնանար: 25 - Եւ աշակերտները մօտ գացին, արթնցուցին զանիկա ու ըսին, Տէր, ազատէ մեզ, «հ» կը կորսուինք: 26 - Եւ ըսաւ անոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ «յնպէ» վախկոտ էք. այն ատեն ելաւ հովերուն ու ծովուն սատեց, և մեծ խաղաղութիւն եղաւ: 27 - Ու մարդիկը զարմացան և կ'ըսէին, Ի՛նչպիսի մարդ է աս որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին:

28 - Ու երբ միւս կողմը *Գերգեսացուց երկիրը անցաւ, երկու դիւախար պատահեցան իրեն գերեզմաններէն ելած՝ ստտիկ կատաղած, այնպէս որ հնար չէր մարդու այն ծամբայէն անցնիլ: 29 - Եւ ահա աղաղակեցին ու ըսին, Յիսուս, Որդի Աստուծոյ, դուն մեզի հետ ի՛նչ բան ունիս, ատենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար: 30 - Եւ անոնցմէ հեռու շատ խոզերու երամակ մը կար, որոնք կ'արածուէին:

31 - Ու դեերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Եթէ մեզ կը հանես, հրաման տուր մեզի որ երթանք խոզերուն երամակին մէջ մտնիմք: 32 - Եւ ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան գացին խոզերուն երամակին մէջ մտան, և ահա բոլոր երամակը գահավէժ տեղէն ծովը վազեցին, ու ջուրերուն մէջ մեռան: 33 - Խոզարածներն ալ փախան, և քաղաքը երթալով բոլորը պատմեցին, ու դիւախարներուն պատահած բաները: 34 - Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսի դէմը ելաւ, ու երբ տեսան զանիկա, աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ:

ԳԼ. Թ.

Եւ նաւը մտնելով անդիի կողմը անցաւ, ու եկաւ իր քաղաքը: 2 - Եւ ահա բերին իրեն անդամալոյծ մը, որ մահիճի մէջ պառկած էր. և Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին, Գաջալերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են:

*Ո՛հնէ, Գաղարացուց

3 - Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց հարստի մէջ ըսին, Ատիկա հայհոյութիւն կ'ընէ: 4 - Յիսուս ալ անոնց խորհուրդները իմանալով՝ ըսաւ, Ինչո՞ւ սիրտերնուդ մէջ չար բաներ կը խորհիք: 5 - Քանզի ո՞րը աւելի դիւրին է. Քու մեղքերդ ներուած են՝ ըսելը, թէ Ելիր ու քալէ՝ ըսելը: 6 - Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (այն ատեն անդամաւորին ըսաւ,) Ելիր, մահիճդ առ ու տունդ գնա: 7 - Ու անիկա ելաւ իր տունը գնաց: 8 - Ժողովուրդները երբ տեսան, զարմացան, ու փառաւորեցին զԱստուած, որ մարդոց այնպիսի իշխանութիւն տուեր էր:

9 - Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով՝ մարդ մը տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետե՛ս եկուր. ան ալ ելաւ անոր ետե՛ն գնաց: 10 - Ու եղաւ որ տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկած ու սեղան նստած էին Յիսուսի ու անոր աշակերտներուն հետ: 11 - Ու փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ: 12 - Բայց Յիսուս երբ լսեց՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն: 13 - Գացէք սորվեցէք թէ ի՞նչ է այս խօսքը, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զոհ. վասն զի ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները՝ ապաշխարութեան:

14 - Այն ատեն Յովհաննէսի աշակերտները անոր եկան ու ըսին, Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահեր: 15 - Ու Յիսուս ըսաւ անոնց, Մի՞թէ կարելի է որ հարանիքին տղաքը սուգ պահեն, քանի որ փեսան իրենց հետ է. բայց որքան պիտի գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, այն ատեն ծոմ պիտի պահեն: 16 - Ու մէկը չձգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ, քանզի այս ո՞ր անոր լրութեանը համար գրած է, կ'առնէ հանդերձէն, ու պատուուածքը ա՛լ աւելի գեշ կ'ըլլայ: 17 - Ոչ ալ նոր գինին հին տիկե-

րու մէջ կը դնեն. եթէ ոչ՝ տիկերը կը պատռին ու գինին կը թափի, և տիկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն, ու երկուքն ալ կը պահուին:

18 - Երբ անիկա անոնց հետ այս բաները կը խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկս ա՛լ մինչև հիմա մեռած է, բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր, ու պիտի ապրի: 19 - Եւ Յիսուս ելաւ ու իր աշակերտներուն հետ անոր ետե՛ն գնաց:

20 - Եւ ահա տասուերկու տարուան տեռատես կին մը մտեցաւ ետե՛ւէն, անոր հանդերձին քղանցքին դպաւ. 21 - Քանզի իր հարստի մէջ կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձին դպչիմ, պիտի բժշկուիմ: 22 - Բայց Յիսուս երբ ետին դարձաւ ու տեսաւ զանիկա, ըսաւ, Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց. և կինը նոյն ժամէն բժշկուեցաւ:

23 - Ու երբ Յիսուս իշխանին տունը եկաւ, ու տեսաւ փողահարները և խռոված բազմութիւնը, 24 - Ըսաւ անոնց, Մէկդի գացէք, վասն զի աղջիկը մեռած չէ, հապա կը քնանայ. և ծաղր կ'ընէին զանիկա: 25 - Ու երբ բազմութիւնը դուրս ձգուեցաւ, ինք ներս մտաւ, անոր ձեռքէն բըռնեց, ու աղջիկը սոք ելաւ: 26 - Եւ այս լուրը բոլոր երկիրը տարածուեցաւ:

27 - Ու երբ Յիսուս անկէ՝ առաջ անցաւ, երկու կոյր ինկան անոր ետե՛ւէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի, Որդի՛ Քալթի: 28 - Ու երբ տուն եկաւ, կոյրերը իրեն եկան. և Յիսուս անոնց ըսաւ, կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզ ընել. ըսին անոր, Այո, Տէր: 29 - Այն ատեն անոնց աչքերուն դպաւ ու ըսաւ, Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի: 30 - Ու անոնց աչքերը բացուեցան. և Յիսուս սաստիկ պատուէր տուաւ անոնց ու ըսաւ, Ձգոյ՛չ կեցէք, մէ՛կը չիմանայ: 31 - Բայց անոնք ելան, այն բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին:

32 - Եւ երբ անոնք դուրս ելան, ահա համր գիւհաճար մարդ մը բերին իրեն: 33 - Ու երբ դէր ելաւ, համրը խօսեցաւ. և ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին թէ Իսրայէլի մէջ բնաւ այսպիսի բան մը տեսնուած չէ:

*Ոմանք ըսին

34 - Բայց փարիսեցիները կ'ըսէին թէ Ատիկա դեբրուն իշխանովը դեբրը կը հանէ:

35 - Եւ Յիսուս կը պարտէր բոլոր քաղաքները ու գեղերը, և անոնց ժողովարաններուն մէջ կը սարվեցնէր ու կը քարոզէր արքայութեան աւետարանը, և կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ:

36 - Եւ ժողովուրդները տեսնելով, անոնց վրայ խղճաց, վասն զի յոգնած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս:

37 - Այն ատեն ըսաւ իր աշակերտներուն, Հունձքը շատ է, բայց մշակները քիչ: 38 - Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հունձքին:

ԳԼ. Ժ

Եւ իր քով կանչելով իր տասուերկու աշակերտները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ, որպէս զի զանոնք հանեն, և ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն:

2 - Ու տասուերկու առաքեալներուն անունները ստանք են. առաջինը Սիմոն, Պետրոս ըսուածը և անոր եղբայրը Անդրէաս, 3 - Յակոբոս Չերեդեան և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթոլոմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեան և Ղերէոս որ Թադէոս մականուանեցաւ, 4 - Սիմոն կանանացի և Յուդա Իսկարիովացի, որ նաև մատնեց զանիկա:

5 - Այս տասուերկուքը Յիսուս զրկեց, և անոնց պատուիրեց՝ ըսելով, Հեթանոսներու ճամբայ մի երթաք ու Սամարացիներու քաղաք մի մտնէք, 6 - Հապա աւելի Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն գացէք: 7 - Ու երբ կ'երթաք, քարոզեցէք ու ըսէք թէ Երկինքի թագաւորութիւնը մօտեցած է: 8 - Հիւանդները բժշկեցէք, բորոտները՝ մաքրեցէք, դեբրը հանեցէք. ձրի սաւեր էք, ձրի տուէք: 9 - Մի ստանաք ոսկի, և ոչ արծաթ, և ոչ պղինձ ձեր գօտիներուն մէջ, 10 - Ոչ ճամբու համար պարկ, և ոչ կրկին

հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան. վասն զի մշակը իր կերակուրին արժանի է: 11 - Եւ ո՛ր քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք թէ ո՛վ է անոր մէջ արժանաւոր, ու հոն կեցէք մինչև անի ելլէք: 12 - Ու երբ տունը կը մտնէք, բարև տուէք անոր: 13 - Եւ եթէ այն տունը արժանաւոր է, ձեր բարևը անոր վրայ գայ. հապա եթէ արժանաւոր չէ, ձեր բարևը ձեզի դառնայ: 14 - Եւ ով որ ձեզ չընդունի, ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբ այն տունէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին թօթվեցէք: 15 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացոց ու Գոմորացոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան թէ այն քաղաքին:

16 - Ահա ես ձեզ կը զրկեմ իբրև ոչխարներ գայլերու մէջ. ուստի օձերու պէս խորագէտ եղէք և աղաւնիներու պէս միամիտ: 17 - Իսկ մարդոցմէ զգուշացէք. վասն զի ձեզ ատեաններու պիտի մատնեն, ու իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն: 18 - Եւ իմ անսանձ համար կուսակալներու ու թագաւորներու առջև պիտի տարուիք, անոնց և հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար: 19 - Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի ընէք թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պիտի խօսիք, վասն զի ձեզի պիտի արուի այն ժամուն՝ ինչ որ պիտի խօսիք: 20 - Վասն զի ոչ թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հօգին՝ որ ձեր ներսիդին կը խօսի: 21 - Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մտնէ, և հայրը՝ որդին. և որդիներ էրեւոյ ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք: 22 - Եւ իմ անուանս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի: 23 - Ու երբ այս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն, ուրիշ քաղաք փոխէք. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհատցնէք, մինչև Որդին մարդոյ գայ: 24 - Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ, և ոչ ծառան իր տէրոջմէն: 25 - Հերիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տէրոջը պէս. եթէ

*Ո՛հան+, մաքրեցէք, մեռելները յարուցէք

*Ո՛հան+, անոր՝ ու ըսէք, Բարև այս տանը

տանուտէրը Բէեղզերուդ կոչեցին, ո՛ր-
չափ աւելի անոր ընտանիքը: 26 -
Ուստի մի վախնաք անոնցմէ, վասն զի
բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտ-
նուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի:
27 - Ինչ որ ձեզի մուլթի մէջ կ'ըսեմ,
չա՛նիւ լոյսի մէջ խօսեցէք, և ինչ որ
ականջն ի վար կը լսէք, տանիքներուն
վրայ քարոզեցէք: 28 - Եւ մի վախ-
նաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպան-
նեն, ու չեն կրնար հոգին սպաննել.
հապա աւելի անկէ վախցէք դուք, որ
կրնայ հոգին ու մարմինը գեհեհին մէջ
կորսնցնել: 29 - Զէ՞ որ երկու ճընճ-
ղուկ մէկ դանկի կը ծախուին, և ա-
նոնցմէ մէկը գետինը չիյնար առանց
ձեր Հօրը: 30 - Բայց ձեր գիտուն բոլոր
մտղերն ալ համրուած են: 31 - Ուրեմն
մի վախնաք, Վա՛ն զի շատ ճնճղուկ-
ներէն լու էք դուք: 32 - Արդ ով որ
մարդոց առջև զիս կը դաւանի, ես
ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս
առջև՝ որ երկինքն է: 33 - Եւ ով որ
մարդոց առջև զիս կ'ուրանայ, ես ալ
զանիկա պիտի ուրանամ իմ Հօրս առ-
ջև՝ որ երկինքն է: 34 - Մի կարծէք
թէ ես երկրի վրայ խաղաղութիւն
ձգելու եկայ. խաղաղութիւն ձգելու
չեկայ՝ հապա սուր: 35 - Վասն զի
եկայ մարդը իր հօրմէն զատելու, ու
աղջիկը իր մօրմէն, ու հարսը իր կե-
սուրէն: 36 - Եւ մարդուն թշնամի-
ները իր ընտանիքը պիտի ըլլան: 37 -
Ան որ հայրը կամ մայրը ինծմէ աւելի
կը սիրէ, ինծի արժանի չէ. և ան որ
տղան կամ աղջիկը ինծմէ աւելի կը
սիրէ, ինծի արժանի չէ: 38 - Եւ ան
որ իր խաչը չառներ ու իմ ետեւէս գար,
ինծի արժանի չէ: 39 - Ան որ իր անձը
կը գտնէ, պիտի կորսնցնէ զանիկա. և
ան որ իր անձը ինծի համար կը կոր-
սնցնէ, պիտի գտնէ զանիկա: 40 -
Ան որ ձեզ կ'ընդունի, զիս կ'ընդունի.
և ան որ զիս կ'ընդունի, զիս զրկողը կ'ըն-
դունի: 41 - Ան որ մարգարէ մը կ'ըն-
դունի մարգարէի անունով, մարգարէի
վարձք կ'առնէ. և ան որ արդար մը
կ'ընդունի արդարի անունով, արդարի
վարձք կ'առնէ: 42 - Ու ան որ այս
պատիկներէն մէկուն միայն գուտթ մը
պաղ ջուր կը խմցնէ աշակերտի անու-
նով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր
վարձքը պիտի չկորսնցնէ:

ԳԼ. ԺԱ

Եւ եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր
տասուերկու աշակերտներուն պատ-
ուէր տալը, գնաց անկէ անոնց քաղաք-
ներուն մէջ քարոզելու և սորվեցնելու:

2 - Իսկ Յովհաննէս բանտին մէջ երբ
լսեց Քրիստոսի գործերը, իր աշակերտ-
ներէն երկուքը զրկելով՝ 3 - Ըսաւ ա-
նոր, Դու՛ն ա՛ն ես որ գալու էիր, թէ
ուրիշի մը սպասեմք: 4 - Եւ Յիսուս
պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գա-
ցէք պատեցէք Յովհաննէսի ինչ որ կը
լսէք ու կը տեսնէք: 5 - Կայրերը կը
տեսնեն, կաղերը կը քալեն, բարոտները
կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռել-
ները յարութիւն կ'առնեն ու աղքատ-
ներուն աւետարան կը քարոզուի: 6 -
Եւ երանի՛ անոր որ իմ վրայովս չգայ-
թակղիր:

7 - Ու երբ անոնք գացին, Յիսուս
սկսաւ ժողովուրդներուն ըսել Յով-
հաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելաք
անապատին մէջ. եղէ՞ք մը հովէն շար-
ժուած: 8 - Հապա ի՞նչ տեսնելու ե-
լաք. փափուկ հանդերձներ հագած
մարդ մը. ահա փափուկ հանդերձնե-
ր հագնողները թագաւորներուն տուներն
են: 9 - Հապա ի՞նչ տեսնելու ելաք.
մարգարէ՞. այո, կ'ըսեմ ձեզի, մարգա-
րէէ մըն ալ աւելի: 10 - Վասն զի ա-
սիկա է՝ որու համար գրուած է, Ահա
ես իմ դեսպանս կը զրկեմ քու երեսիդ
առջևէն, որ քու ճամբադ պիտի պատ-
րաստէ քու առջևէդ: 11 - Ըշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Կիներէն. ճնածներուն
մէջ Յովհաննէս մկրտիչէն մեծը ելած
չէ. սակայն երկինքի թագաւորու-
թեանը մէջ ամէնէն պզտիկը անկէ
մեծ է: 12 - Ու Յովհաննէս մկրտիչին
օրերէն մինչև հիմա երկինքի թագա-
ւորութիւնը ուժով կ'առնուի, և ու-
ժեղները կը յափշտակեն զանիկա:
13 - Վասն զի բոլոր մարգարէները ու
օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէ-
ութիւն ըրին: 14 - Եւ եթէ կ'ուզէք
ընդունիլ, անիկա է Եղիան՝ որ պիտի
գար: 15 - Ան որ լսելու ականջ ունի,
թող լսէ: 16 - Բայց որո՞ւ նմանցնեմ
այս ազգը. կը նմանի տղոց, որոնք շու-
կաները նստելով՝ իրենց ընկերներուն
կը կանչեն, 17 - Ու կ'ըսեն, Փող հնչե-
ցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, ողբ
կարգացինք ձեզի՝ ու կոծ չըրիք:

18 - Վասն զի Յովհաննէս եկաւ, ոչ կ'ուտէր և ոչ կը խմէր, ու կ'ըսէն, Դե կայ անոր ներսիդին: 19 - Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսէն, Ահա ուտող և արբեցող մարդ մը, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ: և իմաստութիւնը արդարացաւ իր որդիներէն:

20 - Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները, որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներէն շատերը, քանզի չափաշխարհեցին: 21 - Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնցմէ քուրձով ու մոխիրով սպառախարած պիտի ըլլային: 22 - Բայց ձեզի կ'ըսեմ, Տիւրոսի և Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի: 23 - Եւ դուն, Կափառնայում, որ մինչև երկինք բարձրացած ես, մինչև դժոխք պիտի իջնես, վասն զի եթէ Սոգոմի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք քու մէջդ եղան, իբրև որ մինչև այսօր դեռ պիտի մնար: 24 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Սոգոմացուց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ քեզի:

25 - Նոյն ժամանակ պատառիան տուաւ Յիսուս ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկնի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն, ու տողոց յայանեցիր: 26 - Այո, ով Հայր, վասն զի քու առջևդ այսպէս հաճելի եղաւ: 27 - Ամէն բան ինձի տրուեցաւ իմ Հօրմէս, ու մէ'կը չճանչնար Որդին, բայց Հայրը, և մէ'կը չճանչնար Հայրը, բայց Որդին, և ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել: 28 - Եկէք ինձի, բոլոր յաղնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ: 29 - Իմ յուժս ձեր վրայ առէք, և ինձմէ սորվեցէք՝ որ հեղ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանդատութիւն պիտի գտնէք: 30 - Վասն զի իմ յուժս քաղցր է, և իմ բեռս թեթեւ:

ԳԼ ԺԲ

Այն ատեն Յիսուս շարաթ օրը գնաց արտերուն մէջէն, և իր աշակերտները անօթեցան, ու սկսան ցրտէն հասկեր փրցնել և ուտել: 2 - Փարիսե-

ցիները երբ տեսան, ըսին անոր, Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ շարաթ օրը գործել: 3 - Ան ալ անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք ու անսնք որ իրեն հետ էին: 4 - Ի՛նչպէս մնաւ Սասուժոյ սոււնը, և առաջաւորութեան հացերը կերաւ, որ ոչ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ անոնց որ իրեն հետ էին, բայց միայն քահանաներուն: 5 - Կամ՞ թէ օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր, որ քահանաները շարաթ օրերը տաճարին մէջ շարաթը կը պղծեն ու անմեղ են: 6 - Բայց ձեզի կ'ըսեմ որ այս տեղ տաճարէն մեծ մէկը կայ: 7 - Եւ եթէ դիտնայիք թէ ի՛նչ ըսել է, Ողորմութիւն կ'ուզեմ ու ոչ թէ զոհ, այն որքան անպարտները չէիք գատապարտեր: 8 - Քանզի Որդին մարդոյ շարաթին տէրն է:

9 - Եւ անկէ երթալով եկաւ անոնց ժողովարանը: 10 - Եւ հոն մարդ մը կար, որուն ձեռքը չորցած էր. և հարցուցին անոր, ու ըսին թէ Շարաթ օրը բժշկել արժան է, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն: 11 - Ան ալ ըսաւ անոնց, Չեղձե՞մ որ մարդը կայ, որ ոչխար մը ունենայ, և անիկա շարաթ օրը փոսի մէջ լինայ, պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկա: 12 - Արդ ո՛րչափ աւելի է մարդը ոչխարէն. ուրեմն շարաթ օրը բարի գործել արժան է: 13 - Այն ատեն ըսաւ այն մարդուն, Երկնցուր ձեռքդ. ան ալ երկնցուց, ու ողջացաւ միւսին պէս: 14 - Իսկ փարիսեցիները դուրս ելլելով անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս զանիկա կորսնցնեն:

15 - Եւ Յիսուս երբ գիտցաւ, զատուեցաւ անկէ. և շատ ժողովուրդներ անոր ետեւէն դացին, ու ամէնը բժշկեց: 16 - Եւ սասաիկ պատուիրեց անոնց որ զինք մարդոց - չյայտնեն: 17 - Որպէս զի կատարուի Նսայի մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, 18 - Ահա իմ ծառաս, զոր ընարեցի, և իմ սիրելիս, որու հաւնեցաւ իմ անձս. իմ Հօգիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի պատմէ: 19 - Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ, և ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ: 20 - Չախջախուած

*Ո՛րչափ, շարաթին ալ

ճղէզը պիտի չփշրէ, ու պղպլտած պատ-
քոյգը պիտի չմարէ, մինչև որ դատաս-
տանը յաղթութեան հանէ: 21 - Եւ
հեթանոսները անոր անուանը պիտի
յուսան:

22 - Այն ատեն կոյր ու համբ դի-
ւահար մը բերին իրեն, և զանկա
բժշկեց, այնպէս որ համբը ու կոյրը
խօսեցաւ ու տեսաւ: 23 - Եւ բոլոր
ժողովուրդները զարմացան ու կ'ըսէին,
Արդեօք ասիկա՞ է Գաւթի որդին:
24 - Բայց փարիսեցիները երբ լսեցին՝
ըսին, Ասիկա «բէշ քան» չհաներ դե-
ւերը, բայց դեւերուն Բէեղզեբուզ իշ-
խանովը: 25 - Եւ Յիսուս անոնց խոր-
հուրդները իմանալով՝ ըսաւ անոնց,
Ամէն թագաւորութիւն իրեն դէմ
բաժնուած՝ կ'աւերի. և ամէն քաղաք
կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չկր-
նար կենալ: 26 - Եւ եթէ Սատանայ Սա-
տանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուե-
ցաւ. ուստի ի՞նչպէս պիտի կենայ անոր
թագաւորութիւնը: 27 - Ու եթէ ես
Բէեղզեբուզով դեւերը կը հանեմ, ձեր
որդիները ինչով կը հանեն. ուրեմն ա-
նոնք պիտի ըլլան ձեր դատաւորները:
28 - Բայց եթէ ես Աստուծոյ Հոգիովը
կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ
թագաւորութիւնը ձեր վրայ հասած է:
29 - Կամ ի՞նչպէս կրնայ մէկը զօրաւոր
մարդու մը տունը մտնել, և անոր կա-
րասիները յափշտակել. եթէ առաջ
այն զօրաւոր մարդը չկապէ, ու ետքը
անոր տունը կողոպտէ: 30 - Ան որ
ինծի հետ չէ, ինծի հակառակ է, և
ան որ ինծի հետ չժողովէր, ցիր ու ցան
կ'ընէ: 31 - Անոր համար ձեզի կ'ըսեմ,
Ամէն մեզք ու հասցուցութիւն պիտի
ներուի մարդոց, բայց Սաբբ Հոգւոյն
դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներ-
ուի մարդոց: 32 - Եւ ով որ Որդւոյ
մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի
անոր, բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ
կ'ըսէ, պիտի չներուի անոր, ոչ այս
աշխարհին մէջ և ոչ գալու «չբարհին»
մէջ: 33 - Կամ ծառը բարի ըրէք, ու
անոր պտուղը բարի, կամ ծառը չար
ըրէք, ու անոր պտուղը չար. վասն զի
ծառը պտուղէն կը ճանչցուի: 34 -
Իժերու ծնունդներ, ինչպէս կրնաք
բարի խօսիլ, որ չար էք. վասն զի սրտին
աւելցուքէն բերանը կը խօսի: 35 -
Բարի մարդը իր սրտին բարի գանձէն
բարի բաներ կը հանէ, և չար մարդը

եք «բար» չար գանձէն չար բաներ կը
հանէ: 36 - Բայց ձեզի կ'ըսեմ թէ
Ամէն դատարկ խօսքի համար՝ զոր մար-
դիկ կը խօսին, դատաստանին օրը հա-
շիւ պիտի տան: 37 - Վասն զի քու
խօսքերէդ պիտի արդարանաս, և քու
խօսքերէդ պիտի դատապարտուիս:

38 - Այն ատեն դպիրներէն ու փա-
րիսեցիներէն ոմանք պատասխան տուին
իրեն ու ըսին, Վարդապետ, կ'ուզենք
քեզմէ նշան մը տեսնել: 39 - Անկա
պատասխան տուաւ ու անոնց ըսաւ,
Չար և շնացող ազգը նշան կ'ուզէ, և
«բէշ» նշան պիտի չարուի անոր, բայց
միայն Յոգնան մարգարէին նշանը:
40 - Քանզի ինչպէս Յոգնան երեք օր
ու երեք գիշեր կէս ձուկին փորին մէջ
էր, այնպէս Որդին մարդոյ պիտի ըլլայ
երկրի սրտին մէջ երեք օր ու երեք գի-
շեր: 41 - Նինուէի մարդիկը դատաս-
տանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն
ու պիտի դատապարտեն ասիկա, վասն
զի Յոգնանի քարոզութիւնովը զեղջի
եկան. և ահա Յոգնանէ մեծ մէկը կայ
հոս: 42 - Հարաւի թագուհին դա-
տաստանին օրը այս ազգին դէմ պիտի
ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա,
վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ
Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և
ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս:

43 - Ու երբ պիղծ ոգին մարդէ մը
կ'ելլէ, անջուր տեղեր կը պարտի,
հանգստութիւն կը փնտռէ ու չգտներ.
44 - Այն ատեն կ'ըսէ, Գառնամ նորէն
իմ տունս, ուրկէ ելայ. և կու գայ «նիկ»
կը գտնէ պարապ, մաքրուած ու յար-
գարուած: 45 - Այն ատեն կ'երթայ
և իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգի-
ներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն
կը բնակին, և այն մարդուն վերջը
առաջինէն գէշ կ'ըլլայ. այսպէս պիտի
ըլլայ այս չար ազգին ալ:

46 - Ու քանի որ ինք ժողովուրդին
կը խօսէր, ահա իր մայրը ու եղբայր-
ները դուրսը կայներ էին, և կ'ուզէին
իրեն հետ խօսիլ: 47 - Ու մէկը իրեն
ըսաւ, Ահա քու մայրդ ու եղբայրներդ
դուրսը կայներ են, և կ'ուզեն քեզի
հետ խօսիլ: 48 - Ան ալ իրեն ըսողին
պատասխան տուաւ ու ըսաւ, Ո՞վ է
իմ մայրս, և ո՞վ են իմ եղբայրներս:
49 - Եւ իր ձեռքը դէպի իր աշակերտ-
ները երկնցնելով՝ ըսաւ, Ահա իմ մայրս
և իմ եղբայրներս. 50 - Վասն զի ով

որ իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քույրս ու մայրս:

ԳԼ. ԺԳ

Այն օրը Յիսուս տունէն ելլելով՝ ծովուն եզերքը նստաւ: 2 - Եւ շատ ժողովուրդներ քովը ժողովուեցան, այնպէս որ ինք նաւը մտաւ ու նստաւ, և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր: 3 - Ու շատ բաներ խօսեցաւ անոնց առականերով, և ըսաւ,

4 - Ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք: 5 - Եւ ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ինկան, ուր շատ հող չկար, և շուտ մը բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն համար. 6 - Սակայն արևուն ծագած ասեւր պրեցան, ու արմատ չունենալուն համար չարցան: 7 - Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանոնք: 8 - Եւ ուրիշները ինկան աղէկ հողի մէջ, ու պտուղ կուտային՝ ո՛րը մեծն ու մեծ հարիւր, ո՛րը վաթսուս, և ո՛րը երեսուն: 9 - Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ:

10 - Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն, ինչո՞ւ համար առականերով կը խօսիս անոնց: 11 - Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Անոր համար՝ որ ձեզի արուած է գիտնալ երկինքի թագաւորութեան խորհուրդները, և անոնց արուած չէ: 12 - Վասն զի ով որ ունի, անոր պիտի արուի ու պիտի աւելնայ. և ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի: 13 - Անոր համար առականերով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ, և կը լսեն՝ ու չեն լսեր ու միտք չեն առներ: 14 - Եւ անոնց վրայ կը կատարուի Եսայիի մարգարէութիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք, ու պիտի չիմանաք, և տեսնելով պիտի տեսնէք, ու պիտի չտեսնէք: 15 - Վասն զի այս ժողովուրդին սիրտը թանձրացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որպէս զի չըլլայ թէ բնաւ աչքերով տեսնեն և ականջներով լսեն և սրտով իմանան ու դարձի գան, և ես զանոնք բժշկեմ: 16 - Բայց երանի՛ է ձեր աչքերուն որոնք կը տես-

նեն, ու ձեր ականջներուն որոնք կը լսեն: 17 - Քանզի ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել՝ ու չտեսան, և ձեր լսածները լսել ու չլսեցին:

18 - Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք: 19 - Այն ամէնը որ թագաւորութեան խօսքը կը լսէ ու միտք չառներ, չարը կու գայ ու անոր սրտին մէջ ցանուածը կը յափշտակէ. տարիկա այն է որ ճամբուն քով ցանուեցաւ: 20 - Եւ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանիկա. 21 - Բայց իր մէջ արմատ չունենալով, քիչ ժամանակ կը տևէ. ու երբ նեղութիւնկամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը կը գայ թակղի: 22 - Եւ փուշերուն մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զբաղմունքը և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ անպտուղ: 23 - Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ կու տայ, ո՛րը հարիւր, ո՛րը վաթսուս, ու ո՛րը երեսուն:

24 - Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց. 25 - Ու երբ մարդիկ կը քնանային, իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ որոմ ցանեց և գնաց. 26 - Ու երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ ետեւ որոմն ալ երևեցաւ: 27 - Ուստի տանուտէրոջ ծառաները մօտեցան ու իրեն ըսին, Տէր, չէ՞ որ դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն որոմը ուրկէ՞ ունի: 28 - Եւ անիկա ըսաւ անոնց, Թշնամի մարդ մը ըրած է տարիկա. ծառաները իրեն ըսին, Հիմա կ'ուզե՞ս որ երթանք զանիկա մէկդի քաղենք. 29 - Ան ալ ըսաւ, Ոչ, չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն ալ անոր հետ փրցնէք: 30 - Թող տուէք որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչև հունձքի ատենը. և հունձքի ատենը՝ հնձողներուն պիտի ըսեմ, Առաջ որոմը քաղեցէք, և զանիկա խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք:

31 - Ուրիշ առակ մըն ալ յառաջ

քերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թա-
գաւորութիւնը մանանեխի հատի
նման է, զոր մարդ մը առաւ, իր ար-
տին մէջ ցանեց. 32 - Ար ամէն սերմե-
րէն պղտիկ է, ու երբ աճի, ամէն խո-
տեղէններէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ,
այնպէս որ երկինքի թաւուները կուգան
և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին:

33 - Աւրիշ առակ մըն ալ զրուցեց
անոնց « Ը », Երկինքի թագաւորու-
թիւնը խմորի նման է, զոր կին մը ա-
ռաւ, երեք գրիւ այիւրի մէջ պահեց,
մինչև ամէնն ալ խմորեցաւ:

34 - Յիսուս այս ամէն բաները ա-
ռակներով խօսեցաւ ժողովուրդին, ու
առանց առակի բան մը չէր խօսեր ա-
նոնց. 35 - Արպէս զի կատարուի մար-
գարէին ձեռքով ըսուած խօսքը, Ա-
ռակներով պիտի բանամ իմ բերանս,
աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած
բաները յառաջ պիտի բերեմ:

36 - Այն ատեն Յիսուս ժողովուրդ-
ները թողուց, տունը եկաւ, և իր աշա-
կերտները մօտեցան իրեն ու ըսին, Ար-
տին որոմներուն առակը մեկնէ մեզի:

37 - Ան ալ պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց, Բարի սերմը ցանողը Ար-
դին մարդոյ է. 38 - Եւ արտը աշ-
խարհս է. իսկ բարի սերմը անոնք են
որ թագաւորութեանը որդիներն են,
բայց որոմը չարին որդիներն են. 39 -

Եւ թշնամին որ զանիկա ցանեց, Սա-
տանան է, և հունձքը աշխարհիս
վերջն է, ու հնձողները հրեշտակներն
են: 40 - Արդ ինչպէս որ որոմը կը
ժողովուրի ու կրակի մէջ կ'այրի, աշ-
խարհիս վերջն ալ այնպէս պիտի ըլլայ:

41 - Արդին մարդոյ իր հրեշտակները
պիտի զրկէ, ու պիտի ժողվեն անոր
թագաւորութենէն բոլոր գոյթակղու-
թիւնները, և զանոնք որ անօրէնու-
թիւն կը գործեն, 42 - Ու կրակի հնո-
ցին մէջ պիտի ձգեն զանոնք. հոն պի-
տի ըլլայ լալ ու ակռաներ կրճատել:

43 - Այն ատեն արևի պէս պիտի փայ-
լին արգարները իրենց Հօրը թագաւո-
րութեանը մէջ: Ան որ լսելու ականջ
ունի, թող լսէ:

44 - Գարձեալ երկինքի թագաւո-
րութիւնը արտի մէջ պահուած գան-
ձի նման է, զոր մարդ մը գտնելով կը
ծածկէ, և ուրախութենէն կ'երթայ
բոլոր ունեցածը կը ծախէ, ու այն ար-
տը կը գնէ:

45 - Գարձեալ երկինքի թագաւո-
թիւնը վաճառական մարդու մը նման
է, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ.

46 - Եւ պատուական մարգարիտ մը
գտնելով, գնաց իր բոլոր ունեցածը
ծախեց, ու զանիկա գնեց:

47 - Գարձեալ երկինքի թագաւո-
րութիւնը ծովը ձգուած ուռկանի մը
նման է, որ ամէն տեսակէն կը ժողվէ.

48 - Չոր երբ լեցուեցաւ, ցամաքը հա-
նեցին, ու նստան՝ աղէկները տմաննե-
րու մէջ ժողվեցին և անշահը դուրս
ձգեցին: 49 - Այսպէս պիտի ըլլայ
աշխարհիս վերջը. հրեշտակները պիտի
ելլեն, ու արգարներուն մէջէն չարերը
պիտի զատեն, 50 - Եւ պիտի ձգեն
զանոնք կրակի հնոցին մէջ, հոն պիտի
ըլլայ լալ ու ակռաներ կրճատել:

51 - Ըսաւ անոնց Յիսուս, Հասկցա՞ք
այս ամէն բաները. ըսին անոր, Այո,
Տէր: 52 - Եւ անիկա ըսաւ անոնց,
Անոր համար ամէն դպիր որ երկինքի
թագաւորութեան աշակերտեալ է,
նման է տանուտէր մարդու մը որ իր
գանձէն նոր ու հին բաներ կը հանէ:

53 - Ու երբ կատարեց Յիսուս այս
առակները, անկէ մեկնեցաւ. 54 - Եւ
եկաւ իր գառաւը, ու անոնց կը սոր-
վեցնէր իրենց ժողովարանին մէջ. մին-
չև որ կը զարմանային անոնք ու կ'ը-
սէին, Ասիկա ուրկէ՞ ունի այս իմաս-
տութիւնը և հրաշքները. 55 - Ասիկա
հիւսիս որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ
չը՞ կոչուիր, ու ասոր եղբայրները՝ Յա-
կոբոս և Յովսէս ու Սիմոն և Յուդա.

56 - Ու ասոր քոյրերը ամէնը մեր քով
չէ՞ն. ալ ինք ուրկէ՞ ունի այս ամէն բա-
նէրը: 57 - Եւ անոր վրայով կը գոյ-
թակղէին. բայց Յիսուս ըսաւ անոնց,
Մարգարէ մը անպատիւ չէ, բայց մի-
այն իր գաւառին ու իր ս.անը մէջ:

58 - Եւ հոն շատ հրաշքներ չըրաւ ա-
նոնց անհաւատութեանը համար:

ԳԼ. ԺԴ

Այն ժամանակ Հերովդէս չորոր-
դապետը Յիսուսի համբաւը լսեց. 2 -
Ու իր ծառաներուն ըսաւ, Անիկա Յով-
հաննէս մկրտիչն է. անիկա մեռելնե-
րէն յարութիւն առած է, և անոր հա-
մար հրաշքներ կ'ըլլան անով:

3 - Քանզի Հերովդէս Յովհաննէսը
բռներ, զանիկա կապեր ու բանտը դրեր

էր, իր եղբոր Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար: 4 - Վասն զի Յովհաննէս անոր կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ զանհկա կէ՛ն ունենալ: 5 - Ուստի կ'ուզէր զանհկա սպաննել, բայց ժողովուրդէն կը վախնար, վասն զի իբրև մարգարէ կ'ընդունէին զանհկա: 6 - Ու երբ Հերովդէոսի ծննդեան օրը եղաւ, Հերովդիայի աղջիկը խաղաց հանգիստի մէջ, ու Հերովդէոսի հաճելի եղաւ: 7 - Ուստի երգումով խոստացաւ որ տայ անոր ի՛նչ որ ուզելու ըլլայ: 8 - Եւ անհկա առաջ իր մօրմէն խրատուելով՝ ըսաւ, Տուր ինձի հոս Յովհաննէս մկրտչին գլուխը սկուտեղի մը վրայ: 9 - Եւ թագաւորը արամեցաւ. բայց երգումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար հրաման ըրաւ որ արուի: 10 - Եւ հարտ զրկելով՝ Յովհաննէսը բանտին մէջ գլխատեց: 11 - Եւ անոր գլուխը սկուտեղով բերուեցաւ ու տրուեցաւ աղջկան, ան ալ իր մօրը տարաւ: 12 - Եւ անոր աշակերտները եկան ու մարմինը վերցնելով թաղեցին, և գացին Յիսուսի պատմեցին:

13 - Ու երբ լսեց Յիսուս, անկէ նաւով անապատ տեղ մը գնաց առանձին. երբ լսեցին ժողովուրդները, ոտքով անոր ետեւէն գացին իրենց քաղաքներէն:

14 - Ու *երբ դուրս ելաւ, շատ ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, ու անոնց հիւանդները բժշկեց:

15 - Եւ իրիկուան ատեն իր աշակերտները իրեն եկան ու ըսին, Հա՛նապատ տեղ մըն է, և ժամանակը ուշացած է. արձակէ ժողովուրդները, որպէս զի գեղերը երթան ու իրենց կերակուր գնեն: 16 - Եւ Յիսուս անոնց ըսաւ, Հարկ չէ որ ատոնք երթան, դուք տուէք ատոնց որ ուտեն: 17 - Անոնք ալ ըսին անոր, Հոս «բիշ բան» չէ չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ: 18 - Ու ըսաւ անոնց, Հոս ինձի բերէք զանոնք: 19 - Եւ հրաման ըրաւ որ ժողովուրդները խոտին վրայ նստին. և հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ, ու դէպ ի երկինք նայելով օրհնեց, ու կարելով նկանակները աշակերտներուն տուաւ, և աշակերտները՝ ժողովուրդին: 20 - Եւ ամէնը կերան ու կշտացան. և տասուերկու կողով լեցուն աւելցած կտորուանքները վերցուցին: 21 - Եւ անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կրներէն և աղաքներէն զատ:

22 - *Եւ շուտ մը աշակերտները արտարցուց որ նաւը մանեն, և իրմէ առաջ անդիի կողմը անցնին, մինչև որ ինք ժողովուրդները արձակէ: 23 - Եւ ժողովուրդները արձակելէն ետքը, ինք լեռը ելաւ առանձին աղօթք ընելու. ու երբ իրիկուն եղաւ, հսն մինակ էր: 24 - Իսկ նաւը արդէն ծովուն մէջ տեղը ալէկոծութեան մէջ էր, վասն զի հովը դէմ էր: 25 - Ու զիշերուան շորտրդ պահուն Յիսուս դէպ ի անոնք գնաց, ծովուն վրայ քալելով: 26 - Եւ աշակերտները երբ զանհկա տեսան որ ծովուն վրայ կը քալէր, խուսեցան, և ըսին թէ աչքի երևոյթ բան մըն է. ու վախերնէն կանչուըւտեցին: 27 - Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու ըսաւ, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք: 28 - Պետրոս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Տէր, եթէ դուն ես, հրաման ըրէ ինձի որ քեզի գամ ջուրերուն վրայէն: 29 - Ան ալ ըսաւ, Եկուր. Պետրոս ալ նաւէն իջաւ, ջուրերուն վրայէն քալեց որպէս զի Յիսուսի քով երթայ: 30 - Բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ, ու երբ սկսաւ ընկղմիլ, աղաղակեց ու ըսաւ, Տէր, ազատէ զիս: 31 - Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զանհկա ու անոր ըսաւ, Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար: 32 - Ու երբ նաւը ելան, հովը դադարեցաւ: 33 - Եւ անոնք որ նաւուն մէջ էին, եկան երկրպագութիւն ըրին անոր ու ըսին, Իրաւցընէ Որդի Աստուծոյ ես գուն:

34 - Ու անդիի կողմը անցնելով, Գեննեսաթի երկիրը հասան: 35 - Ու երբ այն տեղի մարդիկը ճանչցան զանհկա, հարտ զրկեցին բոլոր շրջակայ տեղերը, ու բոլոր հիւանդները անոր բերին: 36 - Եւ կ'աղաչէին անոր, որ միայն իր հանդերձին քղանցքին դաչին. և անոնք որ դպան, բժշկուեցան:

ԳԼ. ԺԵ

Այն ատեն Յիսուսի եկան դպիրները ու փարիսեցիները, որոնք Երուսաղէմէ էին, ու ըսին, 2 - Ինչո՞ւ քու

*Ո՛հնչ, երբ Յիսուս

*Ո՛հնչ, Եւ Յիսուս

աշակերաններդ ծերերուն աւանդու-
 թիւնը զանց կ'ընեն, վասն զի ձեռքեր-
 նին չեն լուար, երբ հաց կ'ուտեն: 3 - Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ
 անոնց, Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ
 պատուիրանքը զանց կ'ընէք ձեր աւան-
 դութեան պատճառաւ: 4 - Քանզի
 Աստուած պատուիրեց՝ ըսելով, Քու
 հայրդ ու մայրդ պատուէ: 5 - Եւ,
 Ով որ էր հայրը կամ մայրը անիծէ, մա-
 հով թող մեռնի: 6 - Բայց դուք կ'ը-
 սէք, Ով որ էր հօրը կամ մօրը ըսէ թէ
 Այն բանը զոր ինծմէ պիտի շահիս,
 Աստուծոյ ղեռնից է. ու իր հայրը
 կամ իր մայրը չպատուէ, ապա է. և
 «չպէ» ձեր աւանդութեան պատճա-
 ռաւ Աստուծոյ պատուիրանքը խա-
 փանած էք: 7 - Կեղծաւորներ, աղէկ
 մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Ե-
 սայի ու ըսաւ, 8 - Այս ժողովուրդը
 «չ» շրթունքներովը զիս կը պատուէ,
 բայց իրենց սիրտը հեռացած զատուած
 է ինծմէ: 9 - Ու պարապ տեղը զիս կը
 պաշտեն՝ մարդոց պատուիրած բաները
 էբե՛ւ վարդապետութիւն սորվեցնելով:
 10 - Եւ ժողովուրդները իրեն կան-
 չելով՝ ըսաւ անոնց, Լսեցէք ու միտք
 առէք: 11 - Ոչ թէ ինչ որ բերանը կը
 մտնէ՝ կը պղծէ մարդը, հապա ինչ որ
 բերնէն կ'ելլէ՝ անիկա կը պղծէ մարդը:
 12 - Այն ատեն իր աշակերանները
 եկան՝ ըսին իրեն, Քիտե՞ս որ փարիսե-
 ցիները գայթակղեցան երբ լսեցին այն
 խօսքը: 13 - Ան ալ պատասխան տա-
 լով՝ ըսաւ, Ամէն տունկ զոր իմ երկ-
 նաւոր Հայրս չէ անկեր, պիտի խլուի:
 14 - Թող տուէք զանոնք. էբե՛ւ կոյր
 են, կոյրերու առաջնորդ. իսկ եթէ
 կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն
 ալ փոսը պիտի իյնան: 15 - Եւ Պետ-
 րոս պատասխան տալով՝ անոր ըսաւ,
 Մեկնէ մեզի այս առակը: 16 - Ըսաւ
 Յիսուս, Ի՞նչ ալ տակաւին անմիտ
 էք: 17 - Ու չէ՞ք հասկնար թէ ամէն
 ինչ որ բերանը կը մտնէ՝ փորը կ'եր-
 թայ ու արտաքնօցը կը ձգուի: 18 -
 Բայց բերնէն ելած բաները որտէն
 յառաջ կու գան, և անոնք կը պղծեն
 մարդը: 19 - Վասն զի արտէն կ'ելլեն
 չար խորհուրդներ, սպանութիւններ,
 շնութիւններ, պոռնկութիւններ, գո-

ղութիւններ, սուտ վկայութիւններ,
 հայհոյութիւններ: 20 - Ասոնք են որ
 կը պղծեն մարդը, բայց անլուայ ձեռ-
 քով հոյ ուտելը չպղծեր մարդը:
 21 - Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւ-
 րոսի ու Սիգոնի կողմերը գնաց: 22 -
 Եւ ահա Քանանացի կին մը այն սահ-
 մաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու
 կ'ըսէր, Ողորմէ ինծի, Տէր, որդի Գաւ-
 թի. աղջիկս դեէն սաստիկ կը չար-
 չարուի: 23 - Եւ ինք բնաւ պատաս-
 խան մը չտուաւ անոր. ու իր աշա-
 կերանները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն
 ու կ'ըսէին, Արձակէ ատիկա, վասն
 զի մեր ետեէն կ'աղաղակէ: 24 - Եւ
 ինք պատասխան տուաւ ու ըսաւ, Ես
 «բէշ» չե չղրկուեցայ, բայց միայն Իս-
 րայէլի տանը կորսուած սխարներուն:
 25 - Եւ անիկա եկաւ երկրպագու-
 թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր,
 օգնէ ինծի: 26 - Ան ալ պատասխան
 տուաւ ու ըսաւ, Աղէկ չէ աղոց հացը
 աւանել ու շուներուն ձգել: 27 - Եւ
 անիկա ըսաւ, Այո, Տէր, վասն զի
 շուներն ալ իրենց տէրոջ սեղանէն
 ինկած փշրանքներէն կը կերակրուին:
 28 - Այն ատեն Յիսուս պատասխան
 տուաւ անոր ու ըսաւ, Ով կին, քու
 հաւատքդ մեծ է, քու ուզածիդ պէս
 ըլլայ քեզի. և նոյն ժամէն անոր աղ-
 ջիկը բժշկուեցաւ:
 29 - Ու Յիսուս անկէ գնաց, Գա-
 լիլեայի ծովեզերքը եկաւ, և լեռը ել-
 լելով հոն նստաւ: 30 - Եւ շատ ժո-
 ղովուրդներ իրեն եկան, որոնք իրենց
 հեա ունէին կաղեր, կոյրեր, համբեր,
 հաշմանդամներ և ուրիշ շատեր. ու
 ձգեցին զանոնք Յիսուսի ոտքը, և
 բժշկեց զանոնք: 31 - Այնպէս որ ժո-
 ղովուրդները զարմացան, տեսնելով
 որ համբերը կը խօսէին, հաշմանդամ-
 ները կը բժշկուէին, կաղերը կը քա-
 լէին և կոյրերը կը տեսնէին, ու Իս-
 րայէլի Աստուածը կը փռուաւորէին:
 32 - Եւ Յիսուս իր աշակերանները
 քովը կանչելով՝ ըսաւ, Կը խղճամ այդ
 ժողովուրդին վրայ, վասն զի հիմա
 երեք օր է որ իմ քովս են, և բան մը
 չունին ուտելու. ու զանոնք անօթի
 արձակել չեմ ուզեր, չըլլայ որ ճամ-
 բան մտնին: 33 - Իսկ աշակերանները
 անոր ըսին, Մեք անուպատի մէջ ուր-
 կէ՞ պիտի ունենանք այնչափ հաց, որ
 այսչափ բազմութիւնը կշաացնենք:

*Ո՛հան+, բերնովը ինծի կը մօտենայ,
 և շրթունքներովը

34 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք. անոնք ալ ըսին, Եօթը, ու քանի մը մանր ձուկեր: 35 - Եւ հրաման ըրաւ ժողովուրդին որ գեանին վրայ նստին: 36 - Ու եօթը նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ և կարեց ու տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝ ժողովուրդին: 37 - Կերան ամէնը և կշտացան, ու եօթը զամբիւղ լեցուն՝ աւելցած կտորուանքները վերցուցին: 38 - Եւ անոնք որ կերան՝ չորս հազար այր մարդիկ էին, կիներէն և տղաքներէն զատ:

39 - Ու երբ ժողովուրդը արձակեց, նաւը մտաւ ու Մագդաղայի սահմանները եկաւ:

ԳԼ. ԺԶ

Եւ փարիսեցիները ու սադուկեցիները քովը եկան, փորձելով՝ իրմէ կ'ուզէին որ երկինքէն նշան մը ցուցնէ իրենց: 2 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Երբ իրիկուն կ'ըլլայ, կ'ըսէք թէ Պարզ պիտի ըլլայ, վասն զի երկինք կարմրած է: 3 - Եւ առտուանց՝ Այսօր միրիկ պիտի ըլլայ, վասն զի երկինք միզապատ ու կարմրած է: Կեղծաւորներ, երկինքի երեսը քննել զիտէք, բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար գիտնալ: 4 - Չոր ու շնացող ազգը նշան կ'ուզէ, և «-բէշ նշան պիտի չարուի անոր, բայց Յովնան մարգարէին նշանը. և թողուց զանոնք ու գնաց:

5 - Ու երբ իր աշակերտները անդիի կողմը անցան, հաց առնելու մոռցեր էին: 6 - Եւ Յիսուս անոնց ըսաւ, Նայեցէք ու զգուշացէք փարիսեցւոց ու սադուկեցւոց խմորէն: 7 - Անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չբերինք թոյն հեռ: 8 - Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ ըսաւ անոնց, Ձեր մէջ ինչո՞ւ կը խորհիք, թե՛ բահաւատներ, թե՛ հաց չառիք: 9 - Տակաւին չէ՞ք հասկնար և չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին, ու քանի՞ կողով վերցուցիք: 10 - Ո՞չ ալ եօթը նկանակը՝ չորս հազարին, ու քանի՞ զամբիւղ վերցուցիք: 11 - Ի՞նչ պէտք չէք հասկնար թէ ես հացի համար չըսի ձեզի՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն զգոյշ կենալ: 12 - Այն ատեն հասկցան որ հացի խմորէն զգու-

շանալ չըսաւ, հապա փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն:

13 - Եւ Յիսուս Փիլիպոսի կեսաբային կողմերը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ, Մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ՝ ես Արդի մարդոյ: 14 - Ու անոնք ըսին, Ոմանք ՚Է-տէ՛ թէ Յովհաննէս մկրտիչն էս, ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը: 15 - Ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ: 16 - Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ, Իսկ ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Արդին: 17 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Երանի՛ քեզ, Սիմոն, Յովսանի որդի. վասն զի մարմինը և արիւնը քեզի չյայտնեց առի՛ս, հապա իմ՝ Հայրս՝ որ երկինքն է: 18 - Եւ ես քեզի կ'ըսեմ՝ որ Իսկն՝ Պետրոս էս, ու այս վէճին վրայ պիտի շինեմ իմ՝ եկեղեցիս, և զժսխքին դռները զանիկա պիտի չյաղթեն: 19 - Ու երկինքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ. և ինչ որ երկրի վրայ կապես, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ. ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ: 20 - Այն ատեն աշակերտներուն պատուիրեց, որ մարդո՛ւ չըսեն թէ ինք Քրիստոսն է:

21 - Անկէ ետեւ սկսաւ Յիսուս իր աշակերտներուն ցուցնել թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և քահանայապետներէն ու դպիրներէն, և սպաննուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ: 22 - Եւ Պետրոս մէկդի առաւ զանիկա, և սկսաւ յանդիմանել զանիկա ու ըսել, Քա՛ւ լիցի քեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ: 23 - Եւ ինք դառնալով՝ Պետրոսի ըսաւ, Ետիս գնա, Սատանայ, ինծի զայթակղութիւն ես դուն. վասն զի Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները:

24 - Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ, Եթէ մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ և իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ: 25 - Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը սպրեցնել, պիտի կորսնցնէ

*Այսինքն, Վէճ
†Ո՛հ, Յիսուս Քրիստոսն

զանիկա. և ով որ ինձի համար իր ան-
 ձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա:
 26 - Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝
 եթէ բոլոր աշխարհը վաստկի և իր
 անձը կորսնցնէ, կամ իր անձին համար
 ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ: 27 -
 Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառ-
 քովը պիտի գայ իր հրեշտակներուն
 հետ, և այն ատեն ամէն մէկուն իր
 գործերուն համեմատ հատուցում պի-
 տի ընէ: 28 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի
 որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանի-
 ները կան՝ որոնք մահուան համը պիտի
 չառնեն, մինչև տեսնեն Որդին մար-
 դոյ իր [Թագաւորութիւնովը եկած:

ԳԼ. ԺԵ

Եւ վեց օրէն ետև Յիսուս իրեն հետ
 առաւ Պետրոսը ու Յակոբոսը և անոր
 եղբայրը Յովհաննէսը, ու զանոնք
 բարձր լեռ մը հանեց առանձին. 2 -
 Եւ անոնց առջև այլակերպեցաւ, ու
 իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու
 իր հանդերձները ճերմկցան լոյսի պէս:
 3 - Եւ ահա երեցան անոնց Մովսէս
 ու Եղիա ու իրեն հետ կը խօսէին:
 4 - Պատասխան տուաւ Պետրոս ու
 ըսաւ Յիսուսի, Տէր, աղէկ է որ հոս
 կենանք. եթէ կ'ուզես, երեք խրճիթ
 շինենք հոս. մէկը քեզի, և մէկը Մով-
 սէսի, ու մէկը Եղիայի: 5 - Եւ քանի
 որ անիկա կը խօսէր, ահա լուսաւոր
 ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ.
 և ահա ամպէն ձայն մը ելաւ՝ ըսելով,
 Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւ-
 ներ եմ, ատոր մօտիկ ըրէք: 6 - Աշա-
 կերտները երբ լսեցին, երեսնուն վրայ
 ինկան ու խիստ վախցան: 7 - Եւ Յի-
 սուս մօտենալով դպաւ անոնց ու
 ըսաւ, Ելէք ու մի վախնաք: 8 - Աչ-
 քերնին վերցուցին ու մէկը չտեսան,
 բայց միայն Յիսուսը:

9 - Ու երբ այն լեռնէն վար կ'իջնէին,
 Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ,
 Այդ տեսիլքը մարդո՛ւ մի գրուցէք,
 մինչև Որդին մարդոյ մեռելներէն յա-
 րութիւն առնէ: 10 - Եւ իր աշա-
 կերտները իրեն հարցուցին ու ըսին,
 Ուրեմն ինչո՞ւ համար դպիրները կ'ը-
 սեն թէ Պէտք է որ առաջ Եղիա գայ:
 11 - Պատասխան տուաւ Յիսուս ու
 ըսաւ անոնց, Յիրաւի առաջ Եղիա
 կու գայ և ամէն բան կարգի կը դնէ:

12 - Բայց ձեզի կ'ըսեմ՝ որ Եղիա ար-
 դէն եկած է, և զանիկա չճանչցան,
 հապա ինչ որ ուղեցին՝ ըրին անոր.
 նոյնպէս այլ Որդին մարդոյ անոնցմէ
 պիտի չարչարուի: 13 - Այն ատեն
 հասկցան աշակերտները որ Յովհաննէս
 մկրտչին համար ըսաւ անոնց:

14 - Ու երբ ժողովուրդին քով եկան,
 մարդ մը մօտեցաւ անոր, և ծունկի
 վրայ գալով՝ կ'ըսէր, Տէր, իմ որդւոյս
 ողորմէ, որ կը լուսնոտի և չարաչար
 կը տանջուի, քանզի շատ անգամ կրա-
 կի մէջ կ'իյնայ, ու շատ անգամ ջու-
 րի մէջ: 15 - Եւ զանիկա քու աշա-
 կերտներուդ բերի, ու չկրցան զանիկա
 բժշկել: 16 - Յիսուս պատասխան
 տուաւ ու ըսաւ, Ով անհաւատ և խո-
 տորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ
 պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի
 համբերեմ. զանիկա հոս ինձի բերէք:

17 - Եւ Յիսուս սաստեց անոր, ու դէր
 անկէ ելաւ, և բժշկուեցաւ տղան
 նոյն ժամէն: 18 - Այն ատեն աշա-
 կերտները առանձին Յիսուսի քով եր-
 [թալով ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք
 զանիկա հանել: 19 - Եւ Յիսուս ըսաւ
 անոնց, Ձեր [Թերահաւատութեանը
 համար. քանզի ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի,
 եթէ մանանեխի հատի չափ հաւատք
 ունենաք, այս լեռանը պիտի ըսէք,
 Ասկէ անդին փոխադրուէ, և պիտի
 փոխադրուի. ու բան մը անհնարին
 պիտի չըլլայ ձեզի: 20 - Սակայն այս
 տեսակը «-բէշ քան» չելլեր, բայց մի-
 այն ազօթքով և ծամապահութեամբ:

21 - Ու երբ անոնք Գալիլեայի մէջ
 կը պտըտէին, Յիսուս ըսաւ անոնց,
 Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց
 ձեռքը, 22 - Եւ զանիկա պիտի մեռ-
 ցնեն, ու երրորդ օրը յարութիւն պի-
 տի առնէ. ու խիստ տրոմեցան:

23 - Երբ անոնք Կափառնայում ե-
 կան, երկդրամեան «-բէշ» առնողները
 Պետրոսի եկան ու ըսին, Ձեր վարդա-
 պետը երկդրամեանը չը՞ հատուցա-
 ներ. և անիկա ըսաւ, Այո, ի՞նչ հոգո՞-
 ցանք: 24 - Ու երբ տեսնը մտաւ, առաջ
 Յիսուս խօսեցաւ անոր ու ըսաւ, Քեզի
 ի՞նչպէս կ'երևնայ, Սիմոն. երկրի
 [Թագաւորները որմէ՞ կ'առնեն հարկը
 կամ տուրքը. իրենց որդիներէն թէ
 օտարներէն: 25 - Պետրոս անոր ըսաւ
 թէ Օտարներէն. Յիսուս անոր ըսաւ,
 Ուրեմն որդիները ազատ են: 26 - Բայց

չլլայ որ զանոնք գայթակղեցնենք, գնա ծովը և կարթ ձգէ, ու առաջին ձուկը որ կ'ելլէ՝ առ, և անոր բերանը բանալով սասեր մը պիտի գտնես. զանիկա առ, անոնց տուր խնձի և քեզի համար:

ԳԼ. ԺԸ

Սոյն ժամանակ աշակերտները Յիսուսի քով եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ: 2 - Եւ Յիսուս աղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց, 3 - Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, եթէ դարձի չգաք և աղոց պէս ըլլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք: 4 - Ուստի ով որ իր անձը այս աղուն պէս խոնարհեցնէ, անիկա է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ: 5 - Եւ ով որ այսպիսի աղայ մը կ'ընդունի իմ անուանովս, զիս կ'ընդունի: 6 - Եւ ով որ գայթակղեցնէ այս պատիկներէն մէկը որոնք ինձի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի, ու ծովուն անդունդին մէջ ընկղմի:

7 - Վա՛յ աշխարհի՛ գայթակղութիւններու պատճառաւ. վասն զի հարկ է որ գայթակղութիւնները գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով գայթակղութիւնը կու գայ: 8 - Արդ եթէ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կարէ զանիկա ու քեզմէ ձգէ. աղէկ է քեզի կազ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ ու յաւիտենական կրակին մէջ ձգուիլ: 9 - Եւ եթէ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա և քեզմէ ձգէ. աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել, քան թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհեանը ձգուիլ:

10 - Չգոչ կեցէք որ չանարգէք այս պատիկներէն մէկը. քանզի կ'ըսեմ՝ ձեզի որ երկինքի մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է: 11 - Վասն զի Արդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու: 12 - Ի՞նչ պէս կ'երևնայ ձեզի. եթէ մարդ մը հարիւր սխար ունենայ, և անոնցմէ մէկը մոլորի, իննսուներինը «չե՛տէ» լեռները

*Ո՛հնէ, չը՞ ձգեր, ու լեռները

չը՞ ձգեր, ու՛ երթար մոլորածը փրկուներ: 13 - Եւ եթէ գտնելու ըլլայ զանիկա, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ, քան թէ իննսուներինին՝ որոնք մոլորած չեն: 14 - Այսպէս ձեր երկնաւոր Հայրը չհաճիր որ այս պատիկներէն մէկը կորսուի:

15 - Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զանիկա երբ դուն և ան մինակ էք. եթէ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ: 16 - Հապա եթէ մտիկ չընէ «չե՛տէ», քեզի հետ «-բէշ մը կամ երկուք ալ առ, որպէս զի երկու կամ երեք վկաներու բերնէ ամէն բան հաստատուի: 17 - Եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի:

18 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ. ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ: 19 - Դարձեալ կ'ըսեմ՝ ձեզի, եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին, ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս որ երկինքն է: 20 - Քանզի ուր երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան իմ անուանովս, հոն եմ ես անոնց մէջ:

21 - Այն ատեն Պետրոս մօտեցաւ անոր ու ըսաւ, Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս ինձի դէմ մեղանչէ, ներեմ անոր. մինչև ե՞օթը անգամ: 22 - Յիսուս անոր ըսաւ, Քեզի չեմ ըսեր թէ մինչև եօթը անգամ, հապա մինչև եօթանասուն՝ անգամ եօթը: 23 - Ասոր համար երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներէն հաշիւ առնել ուզեց: 24 - Ու երբ սկսաւ առնել, տասը հազար տաղանդի պարտական մը բերուեցաւ իրեն: 25 - Բայց անիկա վճարելու կարողութիւն չունենալով, իր տէրը հրաման քրաւ որ անիկա և անոր կինը ու որդիները և անոր բոլոր ունեցածը ծախուին, ու պարտուի: 26 - Իսկ ծառան անոր առջև իյնալով երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր, Տէր, համբերէ ինձի և ամէնը քեզի կը վճարեմ: 27 - Եւ այն ծառային տէրը վրան խղճալով արձակեց

զանիկա, ու պարտքը շնորհեց անոր: 28 - Եւ նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հարիւր գահեկան պարտք ունէր, ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, Վճարէ ինձի ունեցած պարտքդ: 29 - Ուստի անոր ծառայակիցը անոր ոտքը ինկաւ, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Համբերէ ինձի ու *քեզի՛ կը վըճարեմ: 30 - Եւ ինք չէր ուզեր, հապա գնաց՝ բանար դրաւ զանիկա, մինչև որ պարտքը վճարէ: 31 - Երբ իր ծառայակիցները տեսան եղած բաները, խիստ տրտմեցան, ու եկան իրենց տէրոջը հասկցուցին բոլոր եղածը: 32 - Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ անոր, Չար ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզի շնորհեցի՝ ինձի աղաչելուդ համար: 33 - Ուրե՛հ պէտք չէ՞ր քեզի ալ քու ծառայակցիդ սղորմիլ, ինչպէս ես քեզի սղորմեցայ: 34 - Եւ անոր տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ: 35 - Այսպէս իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի, եթէ ձեր սիրտերէն չէք ներեր ամէն մէկդ իր եղբօրը իրենց յանցանքները:

ՔԼ. ԺԹ

Ու եղաւ որ երբ Յիսուս այս խօսքերը լսնցուց, Գալիլեայէ ելաւ ու եկաւ Հրէաստանի սահմանները Յորդանանու անդիւի կողմը: 2 - Եւ անոր ետեւէն շատ ժողովուրդներ գացին, ու հոն բժշկեց զանոնք:

3 - Եւ փարիսեցիները անոր մօտենալով՝ զանիկա կը փորձէին, ու կ'ըսէին թէ Արժան է որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար: 4 - Անիկա ալ պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր թէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց զանոնք՝ ու ըսաւ, 5 - Ասոր համար մարդ էր հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: 6 - Ուստի ա՛լ երկուք չեն, հապա մէկ մարմին. ուրեմն զայն որ Աստուած միաւորեց՝ մարդ թող չզատէ: 7 - Ըսին իրեն, Հապա Մովսէս

ինչո՞ւ պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել: 8 - Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սիրտերուն կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ կիներնիդ արձակել, բայց սկիզբէն այնպէս չեղաւ: 9 - Սակայն ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց պաշտելութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ. և ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ'ընէ: 10 - Իր աշակերտները ըսին իրեն, Եթէ այդպիսի բան կոյ էրկան ու կնոջ մէջտեղ, չամուսնանալը աղէկ է: 11 - Եւ ինք անոնց ըսաւ, Ամէնը բաւական չէն այդ բանին, հապա անոնք՝ որոնց տրուած է: 12 - Վասն զի կան ներքինիներ՝ որոնք էրէնց մօրը որովայնէն այնպէս ծնան, և կան ներքինիներ՝ որոնք մարդոցմէ ներքինի եղան, և կան ներքինիներ՝ որոնք ինքզինքնին ներքինի ըրին երկինքի թագաւորութեանը համար. ով որ կրնայ տանիլ՝ թող ասնի:

13 - Այն ատեն մանր տղաք բերուեցան իրեն, որպէս զի անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու աշակերտները կը յանդիմանէին զանոնք: 14 - Բայց Յիսուս ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը, և մի արգիլէք ատոնք ինձի գալէն, վասն զի երկինքի թագաւորութիւնը այդպիսիներուն է: 15 - Եւ անոնց վրայ ձեռք դնելէն ետեւ գնաց անկէ:

16 - Եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր, Բարի վարդապետ, ի՞նչ բարի էք զործեմ, որպէս զի յաւիտենական կեանքը ընդունիմ: 17 - Եւ անիկա ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած. հապա եթէ կ'ուզես կեանքը մտնել, պատուիրանքները պահէ: 18 - Ըսաւ անոր, Ար՞նք. և Յիսուս ըսաւ, Ասոնք. Սպանութիւն մի ըներ, Շնութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուս վկայութիւն մի ըներ, 19. Քու հայրդ ու մայրդ պատուէ, և Քու ընկերդ քու անձիդ պէս սիրես: 20 - Պատանին ըսաւ անոր, Ասոնք ա՛մէնը մտնելութենէս ի վեր պահէր եմ. ով ի՞նչ բանով պակաս եմ: 21 - Ըսաւ անոր Յիսուս, Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ

*Ո՛հնէ, ամէնը քեզի

ետեէս: 22 - Երբ պատանին այս խօսքը լսեց՝ տրամած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր:

23 - Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, ձշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը: 24 - Իարձեալ կ'ըսեմ՝ ձեզի, Իբերին է որ *ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: 25 - Աշակերտները երբ լսեցին, շատ զարմացան ու ըսին, Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ: 26 - Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ, Ատիկա մարդոց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է:

27 - Այն ատեն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ահա մենք ամէն բան թողուցինք և քու ետեւդ եկանք. ուստի մեզի ի՞նչ պիտի ըլլայ: 28 - Ըսաւ անոնց Յիսուս, ձըշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ դուք որ իմ ետեւս եկաք, իմիւսանգամ գալուստին՝ երբ Որդին մարդոյ իր փառաց ամթողը նստի, դուք ալ տասուերկու ամթուներու վրայ պիտի նստիք՝ Իսրայելի տասուերկու ցեղերը դատելու: 29 - Եւ սվ որ թողուց տուներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր իմ անուանս համար, հարիւրապատիկ պիտի առնէ, և յաւիտենական կեանք պիտի ժառանգէ: 30 - Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին:

ԳԼ Ի

Քանզի երկինքի թագաւորութիւնը տանուտէր մարդու մը նման է, որ առտուանց կանուխ ելաւ՝ իր այգիին համար բանուորներ բռնելու: 2 - Եւ բանուորներուն հետ օրը մէկ դահեկանի խօսք կապեց, ու զանոնք զրկեց իր այգին: 3 - Եւ ժամը երեքին աւտենները ելաւ՝ ուրիշները տեսաւ, որոնք շուկային մէջ պարապ կայներ էին: 4 - Ու ըսաւ անոնց, Ի՞նչ ալ գացէք ի՞մ այգիս, և ինչ որ արժան է՝ կու տամ ձեզի: 5 - Անոնք ալ գացին. ու նորէն ժամը վեցին և ժամը իննին

ատենները ելաւ՝ այնպէս ըրաւ: 6 - Եւ ժամը տասներմէկին՝ աւտենները ելաւ, ուրիշները գտաւ՝ որոնք պարապ կայներ էին, ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայներ էք: 7 - Ըսին իրեն, Անոր համար որ մէկը մեզ վարձքով չբռնեց. ըսաւ անոնց, Ի՞նչ ալ այգին գացէք, ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք: 8 - Եւ երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը իր անտեսին ըսաւ, Բանուորները կանչէ, և անոնց վարձքը տուր՝ վերջիններէն սկսելով մինչև առաջինները: 9 - Ու երբ եկան անոնք որ ժամը տասներմէկին գացել էին, մէկմէկ դահեկան առին: 10 - Եւ առաջինները գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն, ու անոնք ալ առին մէկմէկ դահեկան: 11 - Երբ առին՝ տանուտէրը դէմ արտունջ կ'ընէին ու կ'ըսէին թէ 12 - Այդ վերջինները մէկ ժամ գործեցին, և զանոնք հաւասար ըրի մեզի, որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք: 13 - Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն ու ըսաւ, Ընկեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն ինծի հետ մէկ դահեկանի խօսք կապեցիր: 14 - Առ քուկդ ու գնա. կ'ուզեմ որ այս վերջինին քեզի *—*—* պէս տամ: 15 - Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ քու աչքդ չա՞ր է՝ որ ես բարերար եմ: 16 - Այսպէս յետինները առաջին պիտի ըլլան, և առաջինները յետին. վասն զի կանչուածները շատ են, բայց ընտրուածները քիչ:

17 - Ու երբ Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր, ճամբան տասուերկու աշակերտները իրեն հետ առաւ առանձին, ու ըսաւ անոնց, 18 - Ահա Երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն: 19 - Եւ զանիկա հէթանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու և խաչք հանելու. ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:

20 - Այն ատեն Չերեզէոսի որդիներուն մայրը իր որդիներուն հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր ու բան մը կը խնդրէր անկէ: 21 - Ան ալ ըսաւ անոր, Ի՞նչ կ'ուզես: Ըսաւ

*Ո՛հ-ն, պարանր
†Յ-ն. վերտտին ծննդեան մէջ

անոր, Ըսէ որ այս իմ երկու որդիներս
 մէկը աջ կողմդ՝ և միւսը ձախ կողմդ
 նստին քու թագաւորութեանդ մէջ:
 22 - Պատասխան տուաւ Յիսուս ու
 ըսաւ, Չէք գիտեր ի՞նչ կը խնդրէք.
 կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես պի-
 տի խմեմ, կամ այն մկրտութիւնով
 մկրտուիլ զոր ես պիտի մկրտուիմ.
 ըսին իրեն, Կրնանք: 23 - Եւ ըսաւ ա-
 նոնց, Իմ գաւաթս պիտի խմէք, և այն
 մկրտութիւնով զոր ես մկրտուելու եմ,
 պիտի մկրտուիք. բայց իմ աջ կողմս
 ու ձախ կողմս նստիլը՝ իմն չէ տալը,
 հապա որոնց որ պատրաստուած է իմ
 Հօրմէս: 24 - Աւ երբ Բ-» տասը աշա-
 փերաները լսեցին, այն երկու եղբայրնե-
 րուն նեղացան: 25 - Իսկ Յիսուս իրեն
 կանչեց զանոնք ու ըսաւ, Գիտէք որ
 ազգերուն իշխանները կը տիրեն ա-
 նոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց.
 26 - Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլ-
 լայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ
 կ'ուզէ, թող անիկա ձեր սպասաւորը
 ըլլայ. 27 - Աւ ձեզմէ ով որ աւաջին
 ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր ծա-
 ոան ըլլայ. 28 - Ինչպէս Որդին մարդոյ
 չեկաւ սպասաւորութիւն ընդունելու,
 հապա սպասաւորութիւն ընելու և իր
 կեանքը շատերու համար փրկանք
 տալու:

29 - Աւ երբ անոնք Երիքովէ ելան,
 մեծ բազմութիւն անոր ետեւէն գնաց:
 30 - Եւ ահա ճամբուն քով երկու
 կայր նստած էին. երբ լսեցին թէ Յի-
 սուս կ'անցնի, աղաղակեցին ու ըսին,
 Ողորմէ մեզի, Տէր, Որդի Դաւթի:
 31 - Եւ բազմութիւնը կը յանդիմա-
 նէր զանոնք որ լռեն, բայց անոնք ա՛լ
 աւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ո-
 ղորմէ մեզի, Տէր, Որդի Դաւթի: 32 -
 Եւ Յիսուս կանգ առնելով կանչեց
 զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ձե-
 զի ընեմ: 33 - Ըսին անոր, Տէր, որ աչ-
 քերնիս բացուին: 34 - Եւ Յիսուս
 խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ, և
 շուտ մը անոնց աչքերը բացուեցան,
 ու անոր ետեւէն գացին:

ԳԼ. ԻԱ.

Աւ երբ Երուսաղէմի մօտեցան ու
 եկան Բեթփագէ գէպ ի Զիթենեաց
 լեռը, այն տանն Յիսուս էր աշակերտ-
 ներէն երկուքը զրկեց. 2 - Եւ ըսաւ

անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գեղը,
 և շուտ մը պիտի գանէք կապուած էջ
 մը ու անոր հետ աւանակ մը. սրձա-
 կեցէք զանոնք ու ինծի բերէք. 3 - Եւ
 եթէ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ
 Տէրոջը պէտք են. և շուտ մը զանոնք
 պիտի զրկէ: 4 - Այս ամէն բաները
 եղան, սրպէս զի կատարուի մարգա-
 րէին խօսքը որ կ'ըսէ. 5 - Ըսէք Սիօնի
 աղջկան, Ահա քու թագաւորդ քեզի
 կու գայ, հեզ, ու իշու վրայ հեծած
 և իշու ձագի, աւանակի, վրայ: 6 -
 Եւ աշակերտները գացին, և ինչպէս
 Յիսուս իրենց պատուիրէր էր՝ ըրին.
 7 - Աւ բերին էջը ու աւանակը, և ա-
 նոնց վրայ իրենց հանդերձները դրին,
 ու նստաւ անոնց վրայ: 8 - Եւ ժո-
 զովուրդէն շատեր իրենց հանդերձ-
 ները ճամբուն վրայ փռեցին, և ու-
 ըրչներ ծառերէն ճիւղեր կը կարէին
 ու ճամբուն վրայ կը տարածէին: 9 -
 Եւ ժողովուրդները, որոնք առջևէն ու
 ետեւէն կ'երթային, կ'աղաղակէին ու
 կ'ըսէին, Ովսաննա՛ Որդւոյ Դաւթի,
 օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը
 կու գայ. Ովսաննա ի բարձունս:

10 - Աւ երբ անիկա Երուսաղէմ մը-
 տաւ, բոլոր քաղաքը շարժեցաւ ու
 ըսաւ, Ո՞վ է սա: 11 - Եւ ժողովուրդ-
 ները ըսին, Ասիկա Յիսուս մարգարէն
 է Գալիլեայի Նազարէթէն:

12 - Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը
 մտաւ, ու դուրս հանեց ամէն անոնք
 որ տաճարին մէջ կը ծախէին ու կը
 գնէին, և ստակ փոխողներուն սեղան-
 ները ու աղաւնի ծախողներուն աթոռ-
 ները կործանեց. 13 - Եւ ըսաւ անոնց,
 Գրուած է թէ Իմ տունս աղօթքի
 տուն պիտի կոչուի. բայց դուք ատի-
 կա աւազակներու այր ըրիք:

14 - Եւ տաճարին մէջ կոյրեր ու
 կաղեր եկան իրեն, և բժշկեց զանոնք:
 15 - Եւ քահանայապետները ու դպի-
 րները տեսան անոր ըրած հրաշքները,
 և աղաքը որոնք տաճարին մէջ կ'ա-
 ղաղակէին ու կ'ըսէին, Ովսաննա Որդ-
 ւոյ Դաւթի, բարկացան. 16 - Աւ ըսին
 անոր, Կը լսե՞ս ի՞նչ կ'ըսեն ատոնք. և
 Յիսուս ըսաւ անոնց, Այո. բնաւ չէ՞ք
 կարդացեր, թէ Մանկանց ու կաթն-
 կեր տղայոց բերնէն զովութիւն կա-
 տարեցիր:

*Ո՛վանս, նստեցուցին

17 - Եւ թողուց զանոնք՝ քաղաքէն դուրս Բեթանիա ելաւ, ու գիշերը հան կեցաւ:

18 - Եւ առտուանց երբ քաղաքը կը դառնար, անօթեցաւ. 19 - Ու ճամբուն վրայ թղենի մը տեսնելով քովը գնաց, և անոր վրայ տերեւներէն զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր, Ասկէ ետեւ քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան. և իսկոյն թղենին չորցաւ: 20 - Եւ աշակերտները երբ տեսան, զարմացան ու ըսին թէ Ի՞նչպէս թղենին շատ մը չորցաւ: 21 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Եթէ հաւատք ունենաք ու չերկմտիք, ոչ թէ միայն այդ թղենիին եղածը պիտի ընէք, հապա նաև եթէ այս լեռանը ըսէք, Ելիր, ու ծովը ինկիր, պիտի ըլլայ: 22 - Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք, պիտի աւնէք:

23 - Ու երբ անիկա տաճարը եկաւ, քահանայապետները և ժողովուրդին ծերերը անոր մօտեցան երբ կը սորվեցնէր, ու ըսին, Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը: 24 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, զոր եթէ ինձի ըսէք, ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ Ի՞նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները: 25 - Յովհաննէսի մկրտութիւնը ուրկէ՞ էր, երկինքէն թէ մարդոցմէ. և անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին, 26 - Եթէ ըսենք՝ Երկինքէն, ձեզի պիտի ըսէ թէ հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վտխանաք, վասն զի բոլորն ալ Յովհաննէսը իրրեւ մարգարէ կ'ընդունին: 27 - Եւ պատասխան տալով Յիսուսի՝ ըսին, Ձեներ գիտեր. և ինք ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ Ի՞նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները:

28 - Բայց ի՞նչպէս կ'երևնայ ձեզի. մարդ մը երկու որդի ունէր, ու գնաց առաջինին ըսաւ, Արդեակ, գնա այսօր այգիիս մէջ գործէ: 29 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ձեմ ուզեր էրբեք բայց ետքը զգջացաւ ու գնաց: 30 - Միւսին ալ գնաց և այնպէս ըսաւ. անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Կ'երթամ, տէր. և չգնաց: 31 - Հիմա այս երկուքէն ո՞րը էր հօրը կամքը

կատարեց. ըսին անոր, Առաջինը. Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մանեն Աստուծոյ թագաւորութիւնը: 32 - Վասն զի Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացիք. բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր հաւատացին. և դուք տեսաք ու ետքը չզղջացիք անոր հաւատալու:

33 - Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Տանուտէր մարդ մը կար՝ որ այգի մը անկէց ու ցանգով պատեց զանիկա, և անոր մէջ հնձան փորեց ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց: 34 - Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ, իր ծառաները մշակներուն զրկեց, որպէս զի անոր պտուղները առնեն: 35 - Եւ մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, մէկ ուրիշը քարկոծեցին: 36 - Նորէն ուրիշ ծառաներ զրկեց առաջիններէն շատ, և անոնց ալ այնպէս ըրին: 37 - Վերջը իր որդին զրկեց անոնց՝ ըսելով, Թե՛րեւս ամէնան իմ որդիէս: 38 - Բայց մշակները երբ տեսան որդին, իրարու ըսին, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննենք ու անոր ժառանգութեանը տիրենք: 39 - Եւ առին զանիկա, այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին: 40 - Ուստի երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այն մշակներուն: 41 - Ըսին իրեն, Այն չարերը չարաչար պիտի կորսնցնէ, և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները իրենց ժամանակին պիտի տան իրեն: 42 - Ըսաւ անոնց Յիսուս, Բնաւ չէք կարգացեր գիրքին մէջ, Այն քարը զոր շինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. ասիկա Տէրոջմէն եղաւ և զարմանալի է մեր աչքերուն: 43 - Ասոր համար կ'ըսեմ՝ ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու այնպիսի ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղները բերէ: 44 - Եւ ով որ այս քարին վրայ իյնայ, պիտի կոտորի, և որու վրայ որ իյնայ, պիտի փտորէ զանիկա:

45 - Ու երբ քահանայապետները և փարիսեցիները անոր առակները լսեցին, խնայան որ իրենց համար կ'ըսէր:

46 - Եւ կը փնտռէին իւր ինչպէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, վասն զի մարգարէի պէս կ'ընդունէին զանիկա:

ԳԼ ԻԲ

Բարձեալ պատասխան տուաւ Յիսուս և առականերով ըսաւ անոնց, 2 - Երկինքի թագաւորութիւնը թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր որդւոյն համար հարսնիք ըրաւ: 3 - Եւ իր ծառաները զրկեց, որպէս զի կանչեն հարսնիքի հրաւիրուածները, և անոնք չուզեցին գալ: 4 - Նորէն ուրիշ ծառաներ զրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրուածներուն, Ահա իմ ճաշ պատրաստեցի, զուարակներս ու գէր կենդանիներս մըթուած են, և ամէն բան պատրաստ է. հարսնիք եկէք: 5 - Բայց անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր արար ու միւսը իր առուտուրին: 6 - Եւ ուրիշները անոր ծառաները բռնեցին, նախատեցին ու սպաննեցին: 7 - Թագաւորն ալ երբ լսեց՝ բարկացաւ, և իր զօրքերը զրկեց ու այն սպաննողները տատկեցուց, ու անոնց քաղաքը այրեց: 8 - Այն ատեն իր ծառաներուն ըսաւ, Հարսնիքը պատրաստ է, բայց հրաւիրուածները արժանի չէին: 9 - Ուստի գացէք ճամբու գլուխները, և ո՛վ որ գանելու ըլլաք, հարսնիքի հրաւիրեցէք: 10 - Եւ այն ծառաները ելան ճամբաներու վրայ, ու ո՛վ որ գտան, թէ՛ չար և թէ՛ բարի, ամէնն ալ ժողովեցին, ու հարսնիքը հարսնեւորներով լեցուեցաւ: 11 - Եւ թագաւորը երբ մտաւ հարսնեւորները տեսնելու, հոն մարդ մը տեսաւ որ հարսնիքի հանդերձ հագած չէր: 12 - Եւ ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար առանց հարսնիքի հանդերձ ունենալու. և անիկա պապանձեցաւ: 13 - Այն ատեն թագաւորը սպասաւորներուն ըսաւ, Կապեցէք ասոր ոտքերը ու ձեռքերը, և առէք ու հանեցէք զանիկա դուրսի թաւարը. հոն պիտի ըլլայ լայ ու ակռաներ կը ճտել: 14 - Վասն զի կանչուածները շատ են ու ընարուածները քիչ:

15 - Այն ատեն փարիսեցիները գացին խորհուրդ ըրին, թէ ինչպէս անոր որոգայթ մը դնեն խօսքով: 16 - Եւ

իրենց աշակերտները Հերովդեսեաններուն հետ մէկտեղ զրկեցին անոր ու ըսին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես, ու մարդո՛ւ համար հոգի չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ: 17 - Ուստի մեզի ըսէ, քեզի ինչպէս կ'երևոյ, Կայսրին տուրք տալ արժան է՝ թէ ոչ: 18 - Յիսուս գիտնալով անոնց խորամանկութիւնը՝ ըսաւ, Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ, 19 - Յուցուցէք ինձի տուրքին գրամը. և անոնք գահեկան մը բերին իրեն: 20 - Ու ըսաւ անոնց, Որո՞ւնն է այս պատկերը ու գիրը: 21 - Ըսին անոր, Կայսրին. այն ատեն ըսաւ անոնց, Ուրեմն զայն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ արեւոյ: 22 - Երբ լսեցին՝ զարմացան, և թողուցին զանիկա ու գացին:

23 - Նայն օրը անոր քով եկան առուկեցիները, որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին՝ 24 - Ըսելով, Վարդապետ, Մովսէս ըսաւ, Եթէ մէկը առանց զաւակի մեռնելու ըլլայ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ: 25 - Արդ եօթը եղբայրներ կային մեր մէջ. և առաջինը կին առաւ՝ ու մեռաւ, և զաւակ չունենալուն համար իր կինը ձգեց իր եղբօրը: 26 - Նայնպէս ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչև եօթներորդը: 27 - Ամենէն ետքը կինն ալ մեռաւ: 28 - Ուրեմն յարութեան ատեն այն եօթնէն որո՞ւն կինը պիտի ըլլայ. վասն զի ամէնն ալ զանիկա ինչ ունեցան: 29 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Իսկ մնորած էք, որ ո՛չ գիրքերը գիտէք և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը: 30 - Քանզի յարութեան ատեն ոչ կին կ'առնեն և ոչ երկան կը սրուին, հապա երկինքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են: 31 - Բայց մեռելներուն յարութիւն տանելուն համար՝ չէ՞ք կարդացեր Աստուծոյ ձեզի ըսուած խօսքը: 32 - Ես եմ՝ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը. Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն: 33 - Ու ժողովուրդները լսելով՝ կը զարմանային անոր վաղապետութեանը վրայ:

34 - Բայց փարիսեցիները երբ լսեցին թէ անիկա պապանձեցուց սադուկեցիները, մէկտեղ ժողովուեցան. 35 - Եւ անոնցմէ մէկը, օրինական մը, հարցուց, զանիկա փորձելով, ու ըսաւ, 36 - Վարդապետ, ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ: 37 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ. 38 - Այս է առաջին ու մեծ պատուիրանքը: 39 - Ու երկրորդը ասոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: 40 - Այս երկու պատուիրանքէն կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները:

41 - Ու երբ փարիսեցիները ժողովուեցան, Յիսուս հարցուց անոնց ու ըսաւ, 42 - Քրիստոսի վրայով ի՞նչ կարծիք ունիք. անիկա որո՞ւն որդին է: 43 - Ըսին իրեն, Դաւիթի: Ըսաւ անոնց Յիսուս, Հապա ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր կը կոչէ ու կ'ըսէ: 44 - Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմաջ կողմն, մինչև քու թշնամիներդ սաքերուդ պատուանդան ընեմ: 45 - Ուրեմն եթէ Դաւիթ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ: 46 - Եւ մէ'կը չէր կրնար անոր խօսք մը պատասխանել. ու այն օրէն ետև մէ'կը չէր համարձակեր անոր բան մը հարցնել:

ԳԼ. ԻԳ

Այն ատեն Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն և իր աշակերտներուն ու ըսաւ, 2 - Մովսէսի աթոռը դպիրները և փարիսեցիները նստած են. 3 - Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու բրէք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք, վասն զի կ'ըսեն ու չեն ըներ: 4 - Քանզի ծանր և տանելու դժուար բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց ուսերուն վրայ, և իրենց մատովը չեն ուզեր զանոնք շարժել: 5 - Եւ իրենց ամէն գործերը մարդոց երևնալու համար կ'ընեն. կը լայնցնեն իրենց գրապանակները ու կ'երկնցնեն իրենց հանդերձներուն քզանցքները. 6 - Ընթրիքներու մէջ առաջին բազմոցները կը սիրեն, և ժողովարաններուն մէջ առաջին աթոռները, ու շուկաներուն մէջ բարենները: 7 - Եւ մարդոցմէ Ռաբբի, Ռաբբի

կոչուիլ: 8 - Բայց դուք Ռաբբի մի կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս. և դուք ամէնդեղբայր էք: 9 - Ու երկրի վրայ մա՛րդ ձեզի Հայր մի կոչէք, վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է: 10 - Եւ դուք ուսուցիչներ մի կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս: 11 - Եւ ձեր մէջէն մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ: 12 - Ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ:

13 - Բայց վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ երկինքի թագաւորութիւնը մարդոց առջև կը գոցէք. քանզի դուք չէք մտնել, և մանողներն ալ չէք թողուր որ մտնեն: 14 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ որբեւորներուն տունները կ'ուտէք, ու մարդոց երևնալու համար աղօթքը կ'երկնցնէք. անոր համար աւելի դատապարտութիւն պիտի ընդունիք: 15 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պալտիք մէկը նորահաւատ ընելու, ու երբ ըլլայ, զանիկայ ձեզմէ երկու անգամ աւելի գեհե՛նի որդի կ'ընէք: 16 - Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ տաճարին մէջի ոսկին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: 17 - Ով յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկին թէ տաճարը որ կը սրբացնէ ոսկին: 18 - Եւ թէ՛ Ով որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ, պարտաւոր կ'ըլլայ: 19 - Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, պատարագը թէ սեղանը որ կը սրբացնէ պատարագը: 20 - Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ և անոր վրայի ամէն բաներուն վրայ. 21 - Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ և անոր մէջ բնակողին վրայ. 22 - Եւ ով որ երկինքի վրայ երդում ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ և անոր վրայ նստողին վրայ: 23 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին ու սամիթին և չամանին տասանորդը կը վճարէք, ու կը

ձգէք օրէնքին ծանր ծանր բաները, դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը. ասոնք պէտք էր ընել, և զանոնք չձգել: 24 - Կոյր աւաջնորդներ, որ մթղուկը կը քամէք և ուղտը կը կլլէք: 25 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ և *անիրաւութեամբ լեցուն են: 26 - Կոյր փարիսեցի, առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որպէս զի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ: 27 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երևան, և ներսէն մեռելներու սոկորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն են: 28 - Նոյնպէս դուք դուրսէն մարգոց արգար կ'երևնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք: 29 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ մարգարէներուն տապանները կը շինէք, և արգարներուն գերեզմանները կը զարգարէք: 30 - Ու կ'ըսէք, Եթէ մեր հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար: 31 - Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք թէ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպաննէին: 32 - Ուրեմն դուք ալ ձեր հայրերուն չափը լեցուցէք: 33 - Օձեր, իժեքու ծնունդներ, ի՞նչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտութենէն: 34 - Ատոր համար ահա ես կը զրկեմ՝ ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և անոնցմէ հէ՛ + անհնչէր պիտի սպաննէք ու խաչը հանէք, և մէկ քանիները ձեր ժողովարաններուն մէջ պիտի ծեծէք, ու քաղաքէ քաղաք հալածէք: 35 - Որպէս զի երկրի վրայ թափուած բոլոր արգար արիւնը ձեր վրայ գայ, արգար Աբելի արիւնէն մինչև Բարաքիայի որդւոյն Զաքարիայի արիւնը, զոր տաճարին ու սեղանին մէջտեղ սպաննեցիք: 36 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Այս ամէն բաները պիտի գան այս ազգին վրայ: 37 - Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու

քեզի զրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու տղաքներդ ժողովել ուզեցի, ինչպէս հաւը իր ձագերը թւերուն տակ կը ժողովէ, և դուք չուզեցիք: 38 - Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ: 39 - Վասն զի ձեզի կ'ըսեմ որ ա՛լ ասկէ ետև պիտի չտեսնէք զիս, մինչև ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրջը անուևովը կու գայ:

ԳԼ ԻԳ

Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար, ու աշակերտները անոր քով գացին տաճարին շէնքերը իրենց ցուցնելու: 2 - Եւ Յիսուս անոնց րաւ. 2^է ք տեսներ այդ ամէն բաները. Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝ որ չքակուի: 3 - Ու երբ անիկա Չիթենեաց լեռը նստեր էր, աշակերտները իրեն եկան առանձին ու ըսին, Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները. և քու գալուտիդ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ: 4 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Զգոյշ կեցէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ: 5 - Վասն զի շատերը պիտի գան իմ անուևովս ու ըսեն թէ Ես եմ՝ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորեցնեն: 6 - Եւ պիտի լսէք պատերազմներ ու պատերազմներու լուրեր. զգոյշ կեցէք - որ չխուզիք. վասն զի այն ամէն բաները պէտք է որ ըլլան, բայց դեռ վերջը չէ: 7 - Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վերայ, և տեղ տեղ սովեր ու մահատարածամներ և երկրաշարժութիւններ պիտի ըլլան: 8 - Բայց ասոնք ամէնը ցաւերուն սկիզբն են: 9 - Այն տատեն ձեզ նեղութեան պիտի մտանեն և ձեզ պիտի սպաննեն, ու իմ անուևնս համար ամէն ազգերուն տաղի պիտի ըլլաք: 10 - Եւ այն տատեն շատերը պիտի գայթակղին, ու մէկզմէկ պիտի մտանեն և մէկզմէկ պիտի տատեն: 11 - Եւ շատ աւա մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն. 12 - Եւ անօրէնութեան շատնալուն համար շատերուն սէրը պիտի պաղի: 13 - Բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի: 14 - Եւ արքայութեան այս աւետարանը

*Ուրեմն, անբարեխառնութեամբ

բովանդակ աշխարհի մէջ պիտի բարոզուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, և անկէ ետե վերջը պիտի գայ:

15 - Ուստի երբ տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Իսանիէլ մարգարէին ձեռքով ըսուած է, թէ սուրբ տեղը կը կենայ. (ով որ կարգայ, թող հասկնայ.) 16 - Այն ատեն Հրէատանի մէջ եղողները լեռները թող փախչին. 17 - Եւ ան որ տանիքին վրայ է, թող չիջնէ իր տունէն բան մը առնելու. 18 - Եւ ան որ արտին մէջ է, թող ետ չգառնայ իր հանդերձները առնելու: 19 - Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն: 20 - Եւ աղօթք բռէք որ ձեր փախչիլը ձեռք չըլլայ, ոչ ալ շաբաթ օրը. 21 - Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որունմանը աշխարհի սկիզբէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: 22 - Եւ եթէ այն օրերը չքիչնային, բնաւ մարմին մը պիտի չսպրէր. բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի քիչանն: 23 - Այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ թէ Ահա հոս է Քրիստոսը կամ Հոն, մի հաւատար. 24 - Վասն զի սուս Քրիստոսներ և սուս մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի է՝ ընտրեալներն ալ մոլորեցնեն: 25 - Ահա ձեզի առաջուրնէ ըսի: 26 - Ուստի եթէ ձեզի ըսեն թէ Ահա անապատին մէջ է, մի ելլէք. և թէ՛ Ահա ներքին սենեակներուն մէջ է, մի հաւատար: 27 - Վասն զի ինչպէս փայլակը արևելքէն կ'ելլէ ու մինչև արևմուտք կ'երևնայ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը: 28 - Քանզի ուր մեռած մարմին կայ, հոն պիտի ժողվուին արծիւները:

29 - Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետե արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պիտի իջնան, ու երկինքի զօրութիւնները պիտի շարժին: 30 - Եւ այն ատեն Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևնայ երկինքի մէջ, ու այն ատեն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու պիտի տեսնեն Որդին մարդոյ երկինքի ամպերուն վրայ եկած զօրութիւնով ու մեծ փառքով: 31 - Եւ անիկա իր հրեշտակները պիտի զրկէ մեծածայն

փողով, ու պիտի ժողվեն իր ընտրեալները շորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը:

32 - Թղենիէն առակ մը սորվեցէք. որ երբ անոր ոտերը կը կակուղնան ու տերեւները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է: 33 - Նոյնպէս դուք երբ այս ամէն բաները տեսնէք, գիտցէք որ մօտ է գոնեւրուն քով: 34 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ այս ազգը պիտի չանցնի մինչև այս ամէն բաները ըլլան: 35 - Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ՝ խօսքերս բնաւ պիտի չանցնին:

36 - Իսկ այն օրուան և այն ժամուն համար մա՛րդ չգիտեր, ոչ ալ երկինքի՝ *հրեշտակները, հապա միայն իմ՝ Հայրս: 37 - Բայց ինչպէս Նոյի օրերը եղաւ, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ: 38 - Քանզի ինչպէս էին այն օրերը ջրհեղեղէն առաջ, կ'ուռէին, կը խմէին, կին կ'առնէին ու երկան կու տային, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ: 39 - Եւ չգիտցան՝ մինչև ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պիտի ըլլայ: 40 - Այն ատեն եթէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. 41 - Եւ եթէ երկու կին մէկ աղօրիքի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի:

42 - Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ: 43 - Բայց վայս գիտցէք, որ եթէ տանուաւորը գիտնար թէ գիշերուած ո՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն: 44 - Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ այնպիսի ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր: 45 - Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու իմաստուն ծառան՝ զոր իր տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որպէս զի ատենին անոնց կերակուր տայ: 46 - Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած ատեն այնպէս բրած պիտի գտնէ: 47 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա: 48 - Հապա

*Ո՛րք, հրեշտակները, և ոչ Որդին

եթէ այն չար ծառան իր սրտին մէջ
ըսէ, Իմ տէրս իր գայլը կ'ուշացնէ:
49 - Եւ սկսի իր ծառայակիցները
ժեծել, ու գինովներուն հետ ուտել
ու խմել, 50 - Այն ծառային տէրը
պիտի գայ «յոպի» որ մը՝ որ չ'սպասեր,
և «յոպի» ժամ մը՝ որ չգիտեր: 51 - Եւ
զանկիւ մէջտեղէն պիտի կարէ, ու
անոր բաժինը կեղծաւորներուն հետ
պիտի դնէ. հոն պիտի ըլլայ լալ ու ակ-
ուաներ կրճատել:

ՔԼ. ԻԵ

Այն ատեն երկինքի թագաւորու-
թիւնը պիտի նմանի տասը կոյսերու,
որոնք իրենց լապտերները առնելով՝
փետան գիմաւորելու ելան: 2 - Ասոնց-
մէ հինգը իմաստուն էին, և հինգը յի-
մար: 3 - Յիմարները առին իրենց լապ-
տերները, ու իրենց հետ իւր չառին.
4 - Բայց իմաստունները իրենց լապ-
տերներուն հետ ամաններով իւր ու
առին: 5 - Եւ երբ փետան ուշացաւ,
ամէնն ալ թմրեցան ու քնացան: 6 -
Եւ կէսգիշերին ձայն մը եղաւ, Ահա
փետան կու գայ. զանկիւ գիմաւորե-
լու ելէք: 7 - Այն ատեն բոլոր կոյ-
սերը ելան ու իրենց լապտերները շիտ-
կեցին: 8 - Եւ յիմարները ըսին իմաս-
տուններուն, Տուէք մեզի ձեր իւրէն,
վասն զի մեր լապտերները մարելու
վրայ են: 9 - Պատասխան տուին իմաս-
տունները ու ըսին, Չըլլայ որ մեզի ու
ձեզի չբաւականանայ, այլ յաւէտ
ծախողներուն գացէք և գնեցէք ձեզի
համար: 10 - Երբ անոնք գացին գնե-
լու, փետան եկաւ, ու պատրաստ եղող-
ները անոր հետ հարսնիքը մտան, և
դուռը գոցուեցաւ: 11 - Ետքը միւս
կոյսերը եկան ու ըսին, Տէր, Տէր, բաց
մեզի: 12 - Բայց անկիւ պատասխան
տուաւ ու ըսաւ, Չչմարիտ կ'ըսեմ
ձեզի թէ Ես ձեզ չեմ ճանչնար: 13 -
Ուրեմն արթուն կեցէք, վասն զի ո՛չ
օրը գիտէք և ո՛չ՝ ժամը:

14 - Քունդի ինչպէս օտար երկիր
գացող մարդ մը կանչեց իր ծառանե-
րը, և իր ունեցածը անոնց յանձնեց:
15 - Մէկուն տուաւ հինգ տաղանդ,
ու մէկուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ,
ամէն մէկուն իր կարողութեանը չափ,
ու անմիջապէս ճամբայ ելաւ: 16 -
Եւ ան որ հինգ տաղանդը առած էր,

գնաց անոնցմով գործ տեսաւ, և ու-
րիշ հինգ տաղանդ շահեցաւ: 17 -
Նմանապէս ան որ երկուքը առած էր,
ուրիշ երկուք ալ շահեցաւ: 18 - Իսկ
ան որ մէկը առած էր, գնաց գետինը
փորեց, ու իր տէրոջը ստակը պահեց:
19 - Շատ ժամանակէ ետեւ այն ծա-
ռաներուն տէրը եկաւ, և անոնցմէ
հաշիւ ուզեց: 20 - Եւ հինգ տաղանդը
առնողը եկաւ՝ ուրիշ հինգ տաղանդ
ալ բերաւ, ու ըսաւ, Տէր, հինգ տա-
ղանդ յանձնեցիր ինձի, ահա ուրիշ
հինգ տաղանդ ալ անոնց վրայ շահե-
ցայ: 21 - Ըսաւ անոր իր տէրը, Ապ-
րիս, բարի ու հաւատարիմ՝ ծառայ.
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ
եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի
կեցնեմ, մտիր քու տէրոջդ ուրախու-
թեանը մէջ: 22 - Երկու տաղանդը
առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, եր-
կու տաղանդ յանձնեցիր ինձի, ահա
ուրիշ երկու տաղանդ ալ անոնց վրայ
շահեցայ: 23 - Ըսաւ անոր իր տէրը,
Ապրիս, բարի ու հաւատարիմ՝ ծառայ.
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ
եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի
կեցնեմ. մտիր քու տէրոջդ ուրախու-
թեանը մէջ: 24 - Մէկ տաղանդը առ-
նողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, գիտէի
որ դուն խիստ մարդ մըն ես, չսերմա-
նած տեղէդ կը հնձես ու չցանած տե-
ղէդ կը ժողվես: 25 - Ուստի վախնա-
լով՝ գացի քու տաղանդդ գետինն
տակ պահեցի. «յոպի» ահա քու կը քե-
զի: 26 - Պատասխան տուաւ անոր տե-
րը ու ըսաւ անոր, Չար և ծոյլ ծա-
ռայ, գիտէիր որ չսերմանած տեղէս
կը հնձեմ ու չցանած տեղէս կը ժող-
վեմ. 27 - Ուրեմն պէտք էր քեզի որ
իմ ստակս սեղանաւորներուն տայիր,
որպէս զի եկած ատենա շահովը առնէի
իմն: 28 - Արդ առէք ատկէ տաղան-
դը, ու տասը տաղանդ ունեցողին
տուէք: 29 - Վասն զի ամէն ունեցո-
ղին պիտի տրուի, ու պիտի աւելնայ,
և չունեցողին ունեցածն ալ անկէ պի-
տի առնուի: 30 - Եւ այդ անպիտան
ծառան դուրսի խաւարը հանեցէք. հոն
պիտի ըլլայ լալ ու տիւաւներ կրճատել:

31 - Ու երբ Որդին մարդոյ իր փառ-
քովը գայ, և բոլոր քուրբ հրեշտակ-

*Ո՛րդ. ժամը, որուն մէջ Որդին մար-
դոյ կու գայ: †Ո՛րդ. շառնիւ:

ները իրեն հետ, այն ատեն իր փառաց
աթուղ պիտի նստի. 32 - Եւ անոր
առջև պիտի ժողվուին բոլոր ազգերը,
ու զանոնք իրարմէ պիտի զատէ, ինչ-
պէս հովիւ մը ոչխարները այծերէն կը
զատէ. 33 - Եւ ոչխարները իր աջ կողմը
պիտի կայնեցնէ, ու այծերը ձախ կողմը:

34 - Այն ատեն Թագաւորը իր աջ
կողմը եղողներուն պիտի ըսէ, Եկէք,
իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզ-
բէն ձեզի համար պատրաստուած Թա-
գաւորութիւնը ժառանգեցէք. 35 -
Վասն զի անօթեցայ, և ինծի ուտելիք
սուիք. ծարաւեցայ, ու ինծի խմցու-
ցիք. օտարական էի, և զիս ներս
սուիք. 36 - Մերկ էի, և զիս հագուե-
ցուցիք. հիւանդ էի, ու ինծի տես ե-
կաք. բանտի մէջ էի, և ինծի եկաք:

37 - Այն ատեն արդարները անոր պա-
տասխան պիտի տան ու ըսեն, Տէր,
ե՞րբ քեզ անօթեցած տեսանք ու կե-
րակրեցինք, կամ ծարւած՝ ու խմցու-
ցինք. 38 - Ե՞րբ քեզ օտարական տե-
սանք և ներս սուինք, կամ մերկ՝ ու
հագուեցուցինք. 39 - Ե՞րբ քեզ հի-
ւանդ կամ բանտի մէջ տեսանք, ու
քեզի եկանք: 40 - Եւ Թագաւորը պա-
տասխան սալով պիտի ըսէ անոնց,

Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Որովհետեւ այս
իմ եղբայրներուս ամէնէն պզտիկներէն
մէկուն ըրիք, ինծի ըրիք:

41 - Այն ատեն ձախ կողմը եղող-
ներուն ալ պիտի ըսէ, Մէկդի գացէք
ինծմէ, անիծեալներ, յաւիտենական
կրակին մէջ՝ որ պատրաստուած է
Սատանայի ու իր հրեշտակներուն:

42 - Վասն զի անօթեցայ, և ինծի ու-
տելիք չտուիք. ծարաւեցայ, ու ինծի
չխմցուցիք. 43 - Օտարական էի, և զիս
ներս չսուիք. մերկ էի, և զիս չհագուե-
ցուցիք. հիւանդ ու բանտի մէջ էի, և
ինծի տես չեկաք: 44 - Այն ատեն
անոնք ալ պատասխան պիտի *տան ու
ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք քեզ անօթե-
ցած, կամ ծարւած, կամ օտարական,
կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի
մէջ, ու քեզի սպասաւորութիւն
չըրինք: 45 - Այն ատեն պատասխան
պիտի տայ անոնց ու ըսէ, Ճշմարիտ
կ'ըսեմ՝ ձեզի, Որովհետեւ սասնց ամէնէն
պզտիկներէն մէկուն չըրիք, ինծի ալ
չըրիք:

*Ո՞ւր, ատան անոր

46 - Եւ ատոնք պիտի երթան յաւի-
տենական տանջանքը, իսկ արդարները՝
յաւիտենական կեանքը:

ԳԼ ԻԶ

Ու երբ Յիսուս լմնցուց այս բոլոր
խոսքերը, ըսաւ իր աշակերտներուն,
2 - Գիտէ՞ք որ երկու օրէն ետև զատիկ
կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը մատնուի
խաչը ելլելու:

3 - Այն ատեն քահանայապետները
ու դպիրները և ժողովուրդին ծերերը
ժողովուեցան քահանայապետին սրահը,
որուն անունը Կայիափա էր. 4 - Ու
խորհուրդ ըրին որ նենգութեամբ
բռնեն Յիսուսը ու մեռցնեն: 5 - Բայց
կ'ըսէին թէ Ոչ տօնին ատենը, որպէս զի
ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ:

6 - Ու երբ Յիսուս Բեթանիա էր,
բորտա Սիմոնի տունը, 7 - Կին մը ե-
կաւ անոր՝ որ ունէր ծանրագին իւզի
շիշ մը, և թափեց անոր գլխուն վրայ՝
երբ անիկա սեղան նստած էր: 8 - Եւ
անոր աշակերտները տեսնելով՝ դժուա-
րեցան ու ըսին, Ինչո՞ւ այս կորուստը
ըլլայ. 9 - Քանզի այդ իւզը կրնար
սուղ գնով ծախուիլ, ու ազքատնե-
րուն տրուիլ: 10 - Եւ Յիսուս իմա-
նալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ տնհան-
գիտա կ'ընէք կինը. քանզի ատիկա
բարի գործ մը գործեց ինծի:

11 - Վասն զի ազքատները ամէն ատեն
ձեզի հետ ունիք, բայց զիս ամէն ա-
տեն չունիք: 12 - Վասն զի ատիկա
որ այդ իւզը իմ մարմնիս վրայ թա-
փեց, իմ թաղութիս համար ըրաւ:
13 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Բոլոր
աշխարհի մէջ՝ ուր որ այս աւետարանը
քարոզուի, ատար ըրածն ալ պիտի
խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար:

14 - Այն ատեն տատուերկուքէն
մէկը, որ Յուդա Իսկարիովտացի
կ'ըսուէր, գնաց քահանայապետնե-
րուն ու ըսաւ, 15 - Ի՞նչ կ'ուզէք ինծի
տայ, ու ես ձեզի մատնեմ՝ զանիկա.
և անոնք երեսուն *իւղ արծաթ՝ խոս-
տացան անոր: 16 - Եւ անկէ ետև
պատահութիւն մը կը փնտռէր, որպէս
զի զանիկա մատնէ անոնց:

17 - Եւ բազարջակերաց սուաջին
օրը աշակերտները Յիսուսի եկան ու

*Կամ, կշռեցին

անոր ըսին, Ո՞ւր կ'ուզես որ քեզի պատրաստենք՝ զատիկը ուտելու համար: 18 - Եւ անիկա ըսաւ, Գացէք քաղաքը այս ինչ մարդուն ու ըսէք անոր, Վարդապետը կ'ըսէ, Փամունակա մօտ է. աշակերաններու հետ մէկտեղ քու քովդ պիտի ընեմ զատիկը: 19 - Աշակերաններն ալ բրին ինչպէս Յիսուս իրենց հրամանն բրաւ, ու պատրաստեցին զատիկը:

20 - Ու երբ իրիկուն եղաւ, տասուերկուքին հետ սեղան նստաւ: 21 - Եւ քանի որ կ'ուտէին, ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ ձեզմէ մէկը զիս պիտի մտանէ: 22 - Ու շատ տրամեցան, և անոնցմէ ամէն մէկը սկսաւ ըսել անոր, Տէր, միթէ ե՞ս եմ: 23 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ան որ ինծի հետ իր ձեռքը պնակը խոթեց, նոյնը պիտի մտանէ զիս: 24 - Յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մտանուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար: 25 - Պատասխան տուաւ Յուդա որ զանիկա պիտի մտանէր՝ ու ըսաւ, Վարդապետ, միթէ ե՞ս եմ. ըսաւ անոր, Ի՞նչ ըսիր:

26 - Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կտրեց, և տուաւ աշակերաններուն ու ըսաւ, Աւէք, կերէք, այս է իմ մարմինս: 27 - Եւ գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց և ըսաւ, Ամէնդ ալ խմեցէք ասկէ. 28 - Վասն զի ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար: 29 - Բայց կ'ըսեմ՝ ձեզի, Ասկէ ետև որթին բերքէն բնաւ պիտի չիսեմ մինչև այն օրը՝ երբ ձեզի հետ զանիկա նոր խմեմ իմ Հօրս թագաւորութեանը մէջ:

30 - Եւ օրհնութիւն մը երգելէ ետև Ձիթենեաց լեռը ելան: 31 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Ի՞նչ ամէնդ այս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու հօտին ոչխարները պիտի ցրուին: 32 - Բայց յարութիւն տունելէս ետև ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ: 33 - Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Թէպէտ ամէնն ալ քու վրայովդ

գայթակղին, բայց ես բնաւ պիտի չգայթակղիմ: 34 - Ըսաւ անոր Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Այս գիշեր դեռ հաւը չիօսած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս: 35 - Ըսաւ անոր Պետրոս, Թէև քեզի հետ մեռնելու ալ ըլլամ, բնաւ քեզ պիտի չուրանամ. այսպէս կ'ըսէին նաև ամէն աշակերանները:

36 - Այն ատեն Յիսուս անոնց հետ տեղ մը եկաւ որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ աշակերաններուն, Հոս նստեցէք մինչև որ ես երթամ հոն աղօթք ընեմ: 37 - Եւ իրեն հետ առնելով Պետրոսը ու Չեբբեդէոսի երկու որդիները, սկսաւ արամիլ ու վշտանալ: 38 - Այն ատեն ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ արտում է. հոս կեցէք և ինծի հետ արթուն մնացէք: 39 - Ու քիչ մը առաջ երթալով իր երեսին վրայ ինկաւ և աղօթք ըրաւ ըսելով, Ով Հայր իմ, եթէ կարելի է, թող այս գաւաթը ինձմէ անցնի. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես: 40 - Եւ եկաւ աշակերաններուն ու զանոնք քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսի, Այդպէս մէկ ժամ ալ չկրցա՞ք ինծի հետ արթուն կենալ: 41 - Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէք. հողին յօժար է, բայց մարմինը տկար: 42 - Իարձեալ երկրորդ անգամ գնաց աղօթք ըրաւ ըսելով, Ով Հայր իմ, եթէ անկարելի է որ այս գաւաթը ինձմէ անցնի առանց անկէ խմելուս, թող քու կամքը ըլլայ: 43 - Եւ եկաւ զանոնք նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր: 44 - Եւ թողուց զանոնք, ու նորէն գնաց երրորդ անգամ աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով: 45 - Այն ատեն եկաւ իր աշակերաններուն ու ըսաւ անոնց, Ասկէ ետև քնացէք ու հանդչեցէք. ահա ժամը հասաւ, և Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մտանուի: 46 - Ելէք ասկէ երթանք. ահա մօտեցաւ անիկա որ զիս պիտի մտանէ:

47 - Եւ գեռ անիկա զայս որ կը խօսէր, ահա Յուդա, տասուերկուքէն մէկը, եկաւ, և իրեն հետ շատ բազմութիւն՝ սուրերով ու բիրերով, քահանայապետներէն և ժողովուրդին ծերերէն: 48 - Եւ զանիկա մտանողը

անոնց նշան մը սուեր էր՝ ըսելով, Ով որ ես համբուրեմ, ան է, բռնեցէք զանիկա: 49 - Եւ շուտ մը Յիսուսի մօտենալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, վարդապետ, ու համբուրեց զանիկա: 50 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն. այն ատեն մօտեցան, ձեռք զարկին Յիսուսի, ու բռնեցին զանիկա: 51 - Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց և իր սուրը հանելով՝ զարկաւ քահանայապետին ծառային, և անոր ականջը մէկդի հանեց: 52 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Սուրդ իր տեղը դարձուր, վասն զի ամէն սուր անողները սրով պիտի կորսուին: 53 - Կը կարծես թէ չե՞մ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, և ինծի հասցնէ աստուերկու *գունդէն աւելի հրեշտակներ: 54 - Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը, թէ պէտք է այսպէս ըլլալ:

55 - Այն ատեն Յիսուս ըսաւ այն բազմութեանը, Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնելու. ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի, և զիս չբռնեցիք: 56 - Բայց այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուին մարգարէներուն գիրքերը: Այն ատեն բոլոր աշակերտները թողուցին զանիկա ու փախան:

57 - Եւ անոնք որ Յիսուսը բռնեցին, Կայիափա քահանայապետին տարին, ուր դպիրները ու ծերերը ժողվուեր էին: 58 - Եւ Պետրոս հեռուանց անոր ետեւէն գնաց մինչև քահանայապետին գաւիթը, ու ներս մտաւ սպասուորներուն հետ նստաւ որպէս զի վերջը տեսնէ: 59 - Իսկ քահանայապետները ու ծերերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վկայութիւն մը կը փնտռէին, որպէս զի զանիկա մեռցնեն. 60 - Ու չգտան. թէ և շատ սուտ վկաներ ալ եկան, բայց չգտան. ետքը երկու սուտ վկայ եկան, 61 - Ու ըսին թէ Ասիկա ըսաւ, Ես կրնամ Աստուծոյ տաճարը քակել, և զանիկա երեք օրուան մէջ շինել: 62 - Եւ քահանայապետը սուր ելլելով ըսաւ անոր, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ:

63 - Եւ Յիսուս ըսաւ կը կենար: Պատասխան սուտաւ քահանայապետը ու ըսաւ անոր, Կենդանի Աստուծով քեզ կ'երդմնցնեմ՝ որ մեզի ըսես, թէ դուն ես Քրիստոս Որդին Աստուծոյ: 64 - Ըսաւ անոր Յիսուս, Դուն ըսիր. բայց կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև պիտի տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերուն վրայ եկած: 65 - Այն ատեն քահանայապետը իր հանդերձները պատուեց ու ըսաւ, Հայհոյութիւն ըրաւ. ալ ի՞նչ պէտք են մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք ատար Հայհոյութիւնը. 66 - Զեզի ի՞նչպէս կ'երևնայ. անոնք պատասխան տուին ու ըսին, Մահապարտ է: 67 - Այն ատեն անոր երեսը թուրին, ու բռունցով ձեռեցին զանիկան. անոնք ալ ապտակ զարնելով՝ ըսին, 68 - Մարգարէացիք մեզի, դուն Քրիստոս, ս՞ով է ան որ քեզի զարկաւ:

69 - Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր, և աղախին մը եկաւ անոր ու ըսաւ, Դուն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր: 70 - Բայց անիկա ամենուն առջև ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր դուն ի՞նչ կը խօսիս: 71 - Ու երբ դուռը ելաւ, ուրիշ աշտին մը զանիկա տեսաւ, և հոն եղողներուն ըսաւ, Ասիկա ալ Յիսուս Նազովրեցիի հետ էր: 72 - Եւ Պետրոս նորէն երդում ընելով ուրացաւ, թէ Ես այն մարդը չեմ՝ ճանչնար:

73 - Ու քիչ մը ատենէն ետև հոն եղողները եկան և ըսին Պետրոսի, Արդարև դուն ալ անոնցմէ ես, վասն զի քու զրուցուածքդ ալ քեզ յայտնի կ'ընէ: 74 - Այն ատեն սկսաւ անիծել ու երդում ընել՝ ըսելով թէ Ես այն մարդը չեմ՝ ճանչնար. և իսկոյն հաւը խօսեցաւ: 75 - Եւ Պետրոս միտքը բերաւ Յիսուսի խօսքը զոր իրեն ըսեր էր թէ Դեռ հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս. ու դուրս ելլելով դառնապէս լացաւ:

ԳԼ. ԻԷ

Երբ սուտաւ եղաւ, բոլոր քահանայապետները ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ ըրին որ զանիկա մեռցնեն: 2 - Եւ կապելով զանիկա տարին, ու Պանտացի Պիղատոս կուսակալին ձեռքը տուին:

*Յուն. լէզէսնէն

3 - Այն ատեն Յուզա, որ զանհկա մասնեց, ատենելով թէ դատապարտուեցաւ, զեղջի եկաւ, ու երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետներուն և ծերերուն, 4 - Ու ըսաւ, Մեղայ, որ անմեղ արիւն մասնեցի. և անոնք ըսին, Մեզի ի՞նչ, դուն նայէ: 5 - Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց ու դուրս ելաւ, և գնաց ինքզինք խեղդեց: 6 - Քահանայապետներն ալ արծաթը ատենելով՝ ըսին, Արժան չէ ատիկա *կորրանին մէջ՝ դնել, վասն զի արեան գին է: 7 - Ուստի խորհուրդ քրին, և անով բրուտին արար ծախու առին՝ օտարներու գերեզմանատուն ըլլալու համար: 8 - Այս պատճառաւ այն արար Արեան արտ ըսուեցաւ մինչև այսօր: 9 - Այն ատեն կատարուեցաւ Վերեմիա մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, Եւ առին երեսուն արծաթը, գին կտրուածին գինը, զոր Իսրայէլի որդիներէն «մահ» գին կարեցին, 10 - Ու տուին զանհկա բրուտին արտին, ինչպէս ինձի հրաման ըրաւ Տէրը: 11 - Եւ Յիսուս կուսակալին առջև կայնեցաւ. և կուսակալը հարցուց անոր ու ըսաւ, Հրէից թագաւորը դո՞ւն ես: Եւ Յիսուս ըսաւ անոր, Ի՞նչ կ'ըսես: 12 - Ու քահանայապետներէն և ծերերէն ամբաստանուած ատենը բնաւ պատասխան մը չտուաւ: 13 - Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր, Չե՞ս լսեր թէ ո՞ր չափքեզի դէմ կը վկայեն ատանք: 14 - Եւ անոր բան մը պատասխան չտուաւ, մինչև շատ զարմացաւ կուսակալը: 15 - Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ տօնին ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին, սվ որ ուզէին: 16 - Այն ատեն Բարաբբա անունով երեւելի բանասարկեալ մը ունէին: 17 - Երբ ժողովուրդեան, ըսաւ անոնց Պիղատոս, Ո՞րք կ'ուզէք որ ձեզի արձակեմ. Բարաբբան թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի: 18 - Քանզի գիտէր թէ նախանձի համար մասնեցին զանհկա: 19 - Ու երբ անհկա ատեանը նստեր էր, անոր կինը Քիչ զրկեց անոր ու ըսաւ, Ի՞նչ այն արգարին հետ բան մը չունենաո, վասն զի այսօր երազիս մէջ շատ դիպուածներ անցան զիսէս անոր համար:

20 - Բայց քահանայապետները և ծերերը ժողովուրդը համոզեցին որ Բարաբբան ինդրեն ու Յիսուսը կորսնցնեն: 21 - Պատասխան տուաւ կուսակալը ու ըսաւ անոնց, Այս երկուքէն ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ. և անոնք ըսին, Բարաբբան: 22 - Ըսաւ անոնց Պիղատոս, Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը, որ Քրիստոս կ'ըսուի: 23 - Ամէնն ալ ըսին անոր, Թող խաչուի. և կուսակալը ըսաւ, Բայց ի՞նչ չար գործ ըրաւ. և անոնք և՛ս առաւել կ'աղաղակէին ու կ'ըսէին, Թող խաչուի: 24 - Եւ Պիղատոս ատենելով որ օգուտ մը չըլլար, հապա ա՛լ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ, ձեռքերը լուաց ժողովուրդին առջև ու ըսաւ, Ես այդ արգարին արիւնէն անպարտեմ. դուք մտածեցէք: 25 - Եւ բոլոր ժողովուրդը պատասխան տալով՝ ըսաւ, Ատոր արիւնը մեր վրայ ու մեր որդիներուն վրայ ըլլայ: 26 - Այն ատեն Բարաբբան արձակեց անոնց, և Յիսուսը ձեռքով անոնց ձեռքը տուաւ որպէս զի խաչուի: 28 - Այն ատեն կուսակալին գինուորները պալատին ներսը առին Յիսուսը, ու բոլոր գինուորներն գունդը անոր վրայ ժողովեցին: 28 - Եւ զանհկա մերկացնելով կարմիր վերարկու մը հագցուցին անոր: 29 - Ու փուշերէ պատկ մը հիւսելով՝ անոր գլուխը դրին, ու եղէգ մը անոր աջ ձեռքը. և անոր առջև ծունկի վրայ գալով ծաղր կ'ընէին զանհկա, ու կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրէից թագաւոր: 30 - Եւ թքնելով անոր վրայ՝ եղէգը կ'առնէին ու անոր գլուխը կը ծեծէին: 31 - Ու երբ ծաղր ըրին զանհկա, վերարկուն վրայէն հանեցին ու իր հանդերձները հագցուցին անոր և տարին զանհկա խաչը հանելու: 32 - Եւ դուրս ելլելով կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անունով, զանհկա պահակ բռնեցին որպէս զի անոր խաչը վերցնէ: 33 - Ու եկան Գողգոթա ըսուած տեղը, որ է գանկի տեղ: 34 - Եւ լեղիով խառնուած քացախ տուին անոր որպէս զի խմէ. ու երբ համը առաւ, խմել չէր ուզեր: 35 - Եւ զանհկա խաչը հանելով, անոր հանդերձները վիճակով բաժնեցին. [որպէս զի մարգարէէն ըսուածը կատարուի, Իմ հանդերձներս իրենց մէջ

*Այսինքն, տաճարին գանձանակը
†Ո՛հնոս շուքին Երեմիա

բաժնեցին, և իմ պատմութեանս վրայ վիճակ ձգեցին:] 36 - Ու նստեր զանիկա կը պահէին: 37 - Եւ անոր գրկուն վրայ իր յանցանքը գրուած դրին, թէ Ասիկա է Յիսուս, Հրէից թագաւորը: 38 - Այն ատեն անոր հետ երկու աւազակ խաչուեցան, մէկը անոր աջ կողմէն, ու մէկը ձախ կողմէն:

39 - Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր, գլուխնին կը շարժէին, 40 - Ու կ'ըսէին, Իսկոն որ տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շինէիր, ինքզինքդ ազատէ. եթէ Աստուծոյ Որդին ես, իջիր այդ խաչէն: 41 - Նոյնպէս ալ քահանայապետները դպիրներուն ու ծերերուն հետ ծաղր ընելով՝ կ'ըսէին, 42 - Ուրիշները ազատեց, ինքզինք չկրնար ազատել. եթէ Իսրայէլի թագաւոր է, թող հիմա իջնէ խաչէն, և իրեն հաւատանք: 43 - Աստուծոյ յուսացեր է, հիմա թող փրկէ ատիկա՝ եթէ կ'ուզէ ատիկա վասն զի ըսաւ, թէ Ես Որդի Աստուծոյ եմ: 44 - Իրեն հետ խաչուած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին զանիկա:

45 - Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամը բոլոր երկրին վրայ խաւար եղաւ: 46 - Եւ ժամը իննին ատենները Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Էյի, Էյի, լիմա սաքաթ թանի. որ ըսել է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր. 47 - Անոնցմէ ոմանք, որ հոն կայներ էին, երբ լսեցին՝ կ'ըսէին, Ատիկա Եղիան կը կանչէ: 48 - Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց ապունգ մը առաւ՝ քացախով լեցուց, ու եղէգի մը անցրնելով տուաւ անոր որպէս զի խմէ: 49 - Ու միւսները կ'ըսէին, Թող տուր, տեսնենք թէ Եղիա կու գո՞յ ատիկա ազատելու:

50 - Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց, ու հոգին աւանդեց:

51 - Եւ ահա տաճարին վարագոյրը վէրէն վար երկուքի ճեղքուեցաւ, ու երկիր շարժեցաւ, և քարերը պատուեցան: 52 - Եւ գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, 53 - Եւ գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետև, մտան սուրբ քաղաքը ու շատերու երևցան:

54 - Բայց հարիւրապետը և անոր

հետ Յիսուսը պահողները, երբ տեսան երկրաշարժը ու եղած բաները, շատ վախցան՝ ու ըսին, Արդարև ատիկա Որդի Աստուծոյ էր:

55 - Եւ հոն շատ կիներ կային որոնք հեռուէն կը նայէին, որոնք Գալիլէայէ Յիսուսի ետևէն եկան իրեն ծառայութիւն ընելու. 56 - Որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի ու Յովսէփ մայրը Մարիամ և Զերեզեսոսի որդիներուն մայրը:

57 - Ու երբ իրիկուն եղաւ, Արիմաթիայէ հարուստ մարդ մը եկաւ, որուն անունը Յովսէփ էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր: 58 - Ատիկա Պիղատոսի քով երթալով՝ Յիսուսի մարմինը խնդրեց. այն ատեն Պիղատոս հրաման ըրաւ որ մարմինը տրուի: 59 - Եւ Յովսէփ մարմինը առաւ, մաքուր կտաւով պատնեց, 60 - Ու դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝ զոր քարէ փորած էր. և գերեզմանին դուռը մեծ քար մը գլորելով գնաց: 61 - Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամը՝ գերեզմանին դիմաց նստած:

62 - Եւ հետևեալ օրը, որ ուրբաթէն ետև էր, քահանայապետները ու փարիսեցիները ժողովուեցան Պիղատոսի քով, 63 - Ու ըսին, Տէր, կը յիշենք որ այն մոլորեցուցիչը իր կենդանութեան ատեն կ'ըսէր թէ Երեք օրէն ետև յարութիւն կ'առնեմ: 64 - Ուստի հրաման ըրէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով գան զանիկա գողնան, և ժողովուրդին ըսեն թէ Մեռելներէն յարութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ: 65 - Պիղատոս անոնց ըսաւ, Իո՞ւք ունիք պահապան զինուորներ. գացէք, զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք: 66 - Անոնք ալ գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը կնքելով ու պահապան զինուորներ Դնելով:

ԳԼ ԻԸ

Եւ շաբաթ գիշերը երբ մէկշաբթին կը լուսնար, եկաւ Մարիամ Մագդաղենացի ու միւս Մարիամը գերեզմանը տեսնելու: 2 - Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, վասն զի Տէրջը հրեշտակը երկինքէն իջնելով, գնաց դռնէն

ձեկդի գլորեց քարը, ու անոր վրայ նստաւ: 3 - Եւ անոր տեսքը փայլակի պէս էր, ու անոր հանդերձները՝ ձիւնի պէս ճերմակ: 4 - Եւ անոր վախէն պահապանները խռովեցան, ու մեռածի պէս եղան: 5 - Պատասխան տուաւ հրեշտակը ու ըսաւ կիներուն, Գուք մի վախնաք, քանզի գիտեմ՝ որ կը փնտռէք Յիսուսը, որ խաչուեցաւ: 6 - Անիկա հոս չէ, վասն զի յարութիւն տուաւ, ինչպէս ըսաւ. եկէք տեսէք այն տեղը, ուր Տէրը պառկած էր: 7 - Եւ շուտ մը գացէք անոր աշակերտներուն ըսէք թէ Անիկա մեռելներէն յարութիւն տուաւ, և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա. ահա ձեզի գրուցեցի: 8 - Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրախութիւնով, և կը վազէին աշակերտներուն պատմել:

9 - Ու երբ կ'երթային անոր աշակերտներուն պատմել, ահա Յիսուս անոնց դէմը ելաւ ու ըսաւ, Ողջոյն ձեզ: Եւ անոնք մօտենալով անոր ոտքերը բռնեցին, ու երկրպագութիւն ըրին անոր: 10 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Մի վախնաք, գացէք իմ եղբայրներուս ըսէք որ Գալիլեա երթան, ու հոն զիս պիտի տեսնեն:

11 - Երբ անոնք կ'երթային, ահա

պահապան զինուորներէն ձեկ քանին քաղաքը եկան, ու քահանայապետներուն պատմեցին բոլոր եղած բաները, 12 - Եւ անոնք ծերերուն հետ մեկտեղ ժողովուելով ու խորհուրդ ընելով, շատ ստակ տուին զինուորներուն, 13 - Ու ըսին, Ըսէք թէ Անոր աշակերտները գիշերով եկան զանիկա գողցան, երբ ձեռք կը քնանայինք: 14 - Եւ եթէ այդ բանը կուսակալին ականջը հասնի, ձեռք զանիկա կը հաճեցնենք, և ձեզ *պահով կ'ընենք: 15 - Անոնք ալ ստակը առին, ու ստիպուեցան պէս ըրին. և այս ձայնը Հրեաներուն մէջ տարածուեցաւ մինչև այսօր:

16 - Իսկ տասնըմէկ աշակերտները գացին Գալիլեա, այն լեռը ուր Յիսուս իրենց սրոշեր էր: 17 - Ու երբ զանիկա տեսան, երկրպագութիւն ըրին անոր, բայց ոմոնք տարակուսեցան: 18 - Եւ Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ամէն իշխանութիւն ինձի արըուեցաւ երկինքի ու երկրի մէջ: 19 - Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. 20 - Ստովեցուցէք անոնց որ այն ամէն բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը: Ամէն:



ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ



ԳԼՈՒԽ Ա

Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետարանին սկիզբը: 2 - Ինչպէս մարգարէներուն մէջ գրուած է. Ահա ես իմ գեսպանս կը զրկեմ քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ: 3 - Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիակեցէք: 4 - Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտութիւն կը քարո-

զէր՝ մեղքերու թողութեան համար: 5 - Եւ բոլոր Հրեաստանի երկիրը ու երուսաղեմոցիք կ'երթային անոր, ու ամէնը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղքերնին խոստովանելով: 6 - Եւ Յովհաննէս հագեր էր ուղտի մազ, և իր մէջքը կաշիէ գօտի. ու իր կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր: 7 - Եւ կը քարոզէր ու կ'ըսէր, Իմ՛ ետևէս ինձմէ զօրաւորը կու գայ, որ ես արժանի չեմ ծռելու

*Յան. անհոգ

և անոր կօշիկներուն կապերը արձակելու: 8 - Եւ ձեզ ջրով մկրտեցի, բայց անիկա ձեզ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ:

9 - Ու եղաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեայի Նազարէթէն եկաւ, ու Յովհաննէսէ մկրտուեցաւ Յորդանանու մէջ: 10 - Եւ շուտ մը ջուրէն ելլելուն պէս երկինքը բացուած տեսաւ, և Հոգին աղաւնիի պէս՝ որ իր վրայ կ'իջնէր: 11 - Եւ ձայն մը եկաւ երկինքէն, որ կ'ըսէր, Իսկուս ես իմ սիրելի Որդիս, որու հաւնէր եմ:

12 - Եւ շուտ մը Հոգին անապատը հանեց զանիկա: 13 - Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ՝ Սատանայէ փորձուած, և գազաններու հետ էր, ու հրեշտակները իրեն սպասաւորութիւն կ'ընէին:

14 - Եւ Յովհաննէսի մատնուելէն ետեւ Յիսուս Գալիլեա եկաւ, Աստուծոյ արքայութեան աւետարանը կը քարոզէր: 15 - Ու կ'ըսէր, Թէ Ժամանակը լրացած է, և Աստուծոյ Թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէք ու աւետարանին հաւատացէք:

16 - Երբ Գալիլեացոց ծովուն քովերը կը պտրտէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնի եղբայրը Անդրէասը, ծովը ուռկան ձգած, վասն զի ձկնորս էին:

17 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք: 18 - Անոնք ալ շուտ մը իրենց ուռկանները թողուցին ու անոր ետեւէն գացին:

19 - Եւ անկէ քիչ մը առաջ երթալով տեսաւ Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ ուռկանները կը կարկտէին:

20 - Եւ շուտ մը զանոնք կանչեց. անոնք ալ իրենց հայրը Զեբեդէոսը վարձկաններուն հետ նաւին մէջ ձգելով՝ անոր ետեւէն գացին:

21 - Ու մտան Կափառնայում. և իսկոյն շաբաթ օրը Ժողովարանը մտնելով կը սորվեցնէր: 22 - Եւ կը վարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս: 23 - Եւ անոնց Ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ սգի ունէր իր ներսիցին, ու աղաղակեց՝ ըսելով, 24 - Թող տուր,

դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազարեցի. միթէ ձեզ կորսնցնելով եկար. գիտեմքեզ՝ ո՞վ ես. Աստուծոյ Սուրբը: 25 - Եւ Յիսուս սաստեց անոր՝ ըսելով, Պապանձէ ու ել ատկէ: 26 - Եւ պիղծ սգին սաստիկ ցնցեց զանիկա, ու մեծ ձայնով մը աղաղակեց ու անկէ ելաւ: 27 - Եւ ամէնը զարմացան, այնպէս որ իրարու հարցուփորձ կ'ընէին ու կ'ըսէին, Այս ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է այս, որ իշխանութիւնով պիղծ սգիններուն ալ կը հրամայէ, ու իրեն կը հնազանդին: 28 - Եւ շուտ մը իր համբուրը Գալիլեացոց առէն կողմերը ելաւ:

29 - Եւ շուտ մը Ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի ու Անդրէասի տունը մտան Յակոբոսի և Յովհաննէսի հետ:

30 - Ու Սիմոնի զբքանչը ջերմէ բրնուած՝ պառկած էր, և շուտ մը անոր համար ըսին իրեն: 31 - Ու Յիսուս մօտեցաւ, անոր ձեռքէն բռնեց, վերցուց զանիկա. և իսկոյն ջերմը թող տուաւ զանիկա, ու անոնց սպասաւորութիւն կ'ընէր:

32 - Ու երբ իրիկուն եղաւ, արեգակին մտած ատենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն կը բերէին:

33 - Ու բոլոր քաղաքը դուռը Ժողովուրդ էր: 34 - Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէ՝ բժշկեց ու շատ դեեր հանեց. ու դեերուն խօսիլ չէր տար, վասն զի զինք կը ճանչնային:

35 - Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դեռ չլուցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և հոն աղօթք կ'ընէր: 36 - Ու Սիմոն և իրեն հետ եղողները գացին անոր ետեւէն: 37 - Ու երբ գտան զանիկա, ըսին անոր թէ Առէնը քեզ կը փնտռեն: 38 - Եւ ըսաւ անոնց, Եկէ՛ք երթանք մերձակայ գիւղաքաղաքները, որպէս զի հոն ալ քարոզեմ, քանզի այս բանին համար էլ եր եմ: 39 - Եւ անոնց Ժողովարաններուն մէջ կը քարոզէր բոլոր Գալիլեայի մէջ, ու դեեր կը հանէր:

40 - Բորոտ մը եկաւ անոր, կ'աղաչէր, ծունկ կը դնէր ու կ'ըսէր անոր, Եթէ ուզես, կրնաս զիս մաքրել: 41 - Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկնցուց, դպաւ անոր ու բաւ անոր, Կ'ուզեմ, մաքրուէ: 42 - Ու երբ շաբաթ օրը ըսաւ անոր, շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց, ու մաքրուեցաւ: 43 - Եւ սաս-

տիկ պատուէր տալով անոր՝ շուտ մը դուրս հանեց զանիկա, ու ըսաւ անոր, 44 - Զգոյշ կեցիր, մարդո՛ւ բան մը չըսես, հապա գնա քեզ քահանային ցուցուր, և տուր քու մաքրուելուդ ընդհանր, զոր Մովսէս պատուիրեց՝ անոնց վկայութիւն ըլլալու համար: 45 - Բայց անիկա ելլելով՝ սկսաւ շատ հրատարակել ու բանը տարածել, այնպէս որ ա՛լ ինք չէր կրնար յայտնի կերպով քաղաք մը մտնել. հապա դուրսը անապատ տեղեր էր, և ամէն կողմերէն իրեն կու գային:

ԳԼ. Բ

Եւ նորէն կափառնայում մտաւ քանի մը օրէն ետեւ. 2 - Ու լսուեցաւ որ անիկա տան մէջ է, և շուտով շատ մարդիկ ժողովուեցան, այնպէս որ ա՛լ տեղ չկար, ոչ ալ դրանք քովերը. ու կը խօսէր անոնց Աստուծոյ խօսքը: 3 - Եւ կու գային իրեն՝ շորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին: 4 - Ու երբ բաղմուտէնէն չէին կրնար անոր մօտենալ, քակեցին քանի յարկը ուր Յիսուս էր, ու ծակ մը բանալով վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը: 5 - Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին, Որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են: 6 - Ու դպիրներէն մէկ քանինքը կային որ հոն նստեր էին, և իրենց սիրտերուն մէջ կը խորհէին՝ Ընչե՛վ, 7 - Ինչո՞ւ համար ստիկա այսպիսի հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած: 8 - Եւ Յիսուս իսկայն իմանալով իր հոգւոյն մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին իրենց մէջ, ըսաւ անոնց, Այդ ի՞նչ կը խորհիք սիրտերնուդ մէջ: 9 - Ո՞րը աւելի գիւրին է, անդամալոյծին ըսե՞լ՝ Քու մեղքերդ ներուած են, թէ ըսել՝ Ելիր, մահիճդ առ ու քալէ: 10 - Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ անդամալոյծին,) 11 - Քեզի կ'ըսեմ, ելիր, մահիճդ առ ու տունդ գնա: 12 - Ան ալ շուտ մը ելաւ, և իր մահիճը առնելով՝ ամէնուն առջև դուրս ելաւ, այնպէս որ ամէնը ապշած մնացին, և փառք

տուին Աստուծոյ, ու ըսին թէ Այսպիսի բան մը ամենեւին տեսած չենք: 13 - Եւ ելաւ նորէն ծովեզերքը, ու բոլոր ժողովուրդը իրեն կու գային, և կը սորվեցներ անոնց: 14 - Ու երբ կ'անցնէր, տեսաւ Ղևի Ալփէսոսեանը, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Եկուր իմ՝ ետեւս. ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց: 15 - Ու եղաւ որ երբ սեղան նստած էր անոր տանը մէջ, շատ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի հետ ու անոր աշակերտներուն հետ. քանզի շատուոր էին, ու անոր ետեւէն կ'երթային: 16 - Եւ դպիրները ու փարիսեցիները երբ տեսան թէ անիկա մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ, բսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ ու կը խմէ: 17 - Եւ Յիսուս երբ լսեց՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն. ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները: 18 - Եւ Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ՝ կը պահէին. և եկան ու բսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ՝ կը պահեն, ու քու աշակերտներդ ծոմ՝ չեն պահեր: 19 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Մի՞թէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը, քանի որ փեսան իրենց հետ է, ծոմ պահեն. որչափ ժամանակ որ փեսան իրենց հետ ունին, կարելի չէ ծոմ պահել: 20 - Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ապա այն օրը ծոմ պիտի պահեն: 21 - Մէկը կարկտան չձգեր նոր լաթի կտոր մը հին հոնգերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը որ անոր լրութեանը համար դրո՞ւմ էր, հինէն կ'առնէ ու պատուուածքը ա՛լ աւելի գէշ կ'ըլլայ, 22 - Ոչ ալ մէկը նոր գինին հին տիկերու մէջ կը դնէ. եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը պատուէ, ու գինին կը թափի և տիկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է: 23 - Ու եղաւ որ շաբաթ օրը ինք արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները երբ կ'երթային, սկսան ցորենի հասկեր փրցնել: 24 - Ու փա-

*Ո՞րն է ի՞նչն էն, ապաշխարութեան

րիսեցիները ըսին իրեն, Նայէ շաբաթ օրը ի՛նչ կ'ընեն, որ արժան չէ: 25 - Ինք ալ անոնց ըսաւ, Բնաւ չէ՞ք կարգացեր դուք 'Իաւիթի ըրածը՝ երբ պէտք ունեցաւ, և անօթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին: 26 - Ի՛նչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրով, և առաջաւորութեան հացերը կերաւ, ու տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, զոր Բի՛ւն օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն: 27 - Եւ ըսաւ անոնց, Շաբաթը մարդուն համար եղաւ, ու ոչ թէ մարդը շաբաթին համար: 28 - Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է:

ԳԼ. Գ

Եւ նորէն ժողովարանը մտաւ, ու հոն մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր: 2 - Եւ իրեն կը սպասէին թէ արդեօք շաբաթ օրը զանկիա պիտի բժշկէ՞, որպէս զի իր վրայով ամբաստանութիւն ընեն: 3 - Եւ ինք ձեռքը չորցած մարդուն ըսաւ, Ելի՛ր մէջտեղը խոյնէ: 4 - Ու ըսաւ անոնց, Շաբաթ օրը բարի՞ք ընել արժան է՝ թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնե՞լ՝ թէ մեռցնել. բայց անոնք լուռ կեցան: 5 - Եւ Յիսուս բարկութեամբ շուրջանակի անոնց վրայ նայելով՝ անոնց սիրտերուն կուրութեանը համար տրտմած, ըսաւ այն մարդուն, Ձեռքդ երկնցուր. ան ալ երկնցուց, և անոր ձեռքը *ողջացաւ: 6 - Ու փարիսեցիները Հերովդեսեաններուն հետ մէկտեղ շուտ մը դուրս ելլելով, անոր դէմ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս կորսնցնեն զանկիա:

7 - Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը գնաց. և շատ բազմութիւն անոր ետեւէն գացին Գալիլեայէ ու Հրէաստանէ, 8 - Եւ Երուսաղէմէ ու Եզովմէ և Յորդանանու անդիի կողմէն. ու անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն էին, շատ բազմութիւն, երբ յտեցին ինչ որ կ'ընէր, իրեն եկան: 9 - Եւ իր աշակերտներուն ըսաւ որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժողովուրդին բազմութեանը պատճառաւ, որպէս զի զինք

չնեղեն: 10 - Քանզի շատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողները վրան կը դիզուէին որպէս զի իրեն դպչին: 11 - Եւ պիղծ ոգիները երբ զինք կը տեսնէին, կ'իյնային իր առջև, կը կանչուըւտէին ու կ'ըսէին, 12 - Իսկ ես Աստուծոյ Որդին. և ինք սաստիկ կը յանդիմանէր զանոնք, որ զինք չյայտնեն:

13 - Եւ լեւուր ելլելով՝ իր ուզածները իրեն կանչեց, ու գացին անոր քով: 14 - Եւ տասուերկու հոգի ուրշեց, որպէս զի իրեն հետ ըլլան, և որպէս զի զանոնք զրկէ քարոզել, 15 - Ու իշխանութիւն ունենալ ցաւերը բժշկելու և դեերը հանելու: 16 - Եւ Սիմոնի անունը Պետրոս դրաւ. 17 - Եւ Ձեբեդեան Յակոբոսի ու Յակոբոսի եղբօրը Յովհաննէսի՝ անոնց անունները Բաներեգէս դրաւ, որ ըսել է Որդիք որոտման. 18 - Եւ Անդրէասը, ու Փիլիպպոսը, և Բարթոլոմէոսը, ու Մատթէոսը, և Թովմասը, ու Ալփետոսեան Յակոբոսը, և Թադէոսը, ու Սիմոն Կանանացին, 19 - Եւ Յուդա Իսկարիովտացին, որ նաև մատնեց զանկիա:

20 - Տուն մը եկան, և նորէն ժողովուրդը ժողովուեցաւ, այնպէս որ հաց ուտելու ալ խա՛մանի չկրցան գտնել: 21 - Ու երբ իրենները լսեցին, ելան որ զինք բռնեն, քանզի կ'ըսէին թէ Խելըւած է: 22 - Եւ այն դպիրները որոնք Երուսաղէմէ իջեր էին, կ'ըսէին թէ Ասոր ներսիդին Բէեզզեբուղ կայ, և դեերուն իշխանովը դեերը կը հանէ: 23 - Եւ իրեն կանչելով զանոնք՝ առակներով կ'ըսէր անոնց, Ի՛նչպէս կրնայ Սատանայ Սատանայ հանել: 24 - Ու եթէ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ: 25 - Եւ եթէ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը չկրնար կենալ: 26 - Ու եթէ Սատանայ իրեն դէմ ելաւ ու բաժնուած է, անկիա չկրնար կենալ, հապա անոր վերջը հասած է: 27 - Մէկը չկրնար զօրաւոր մարդու մը տունը մտնելով՝ անոր կարասիները յափշտակել, եթէ առաջ այն զօրաւոր մարդը չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ: 28 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ Ամէն մեղքերը պիտի ներուին մարդոց որդիներուն, և հայհոյութիւնները՝

*Ո՛ւն, ողջացաւ միւսին պէս

որչափ որ հայհոյեն. 29 - Բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, հապա յաւիտեանական դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: 30 - Վասն զի կ'ըսէին թէ Պիղծ ոգի կայ անոր ներսիդին:

31 - Ետքը անոր մայրը ու եղբայրները եկան, ու դուրսը կայնելով՝ յարգողիցցին ու կը կանչէին զանիկա: 32 - Եւ ժողովուրդը անոր բոլորափքը նըստեր էր, ու իրեն ըսին թէ Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայնէր են և քեզ կ'ուզեն: 33 - Եւ անիկա պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ո՞վ է իմ մայրս կամ եղբայրներս: 34 - Ու իր բոլորափքը նստողներուն նայելով՝ ըսաւ, Ահա իմ մայրս ու իմ եղբայրներս. 35 - Վասն զի ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քոյրս ու մայրս:

ԳԼ. Գ

Բարձեալ սկսաւ սորվեցնել ծովեզերքին վրայ, և շատ ժողովուրդ անոր քով ժողվուեցաւ, այնպէս որ ինք նաւը մտաւ ու նստաւ ծովուն վրայ, և բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն եզերքն էր: 2 - Եւ անոնց շատ բաներ կը սորվեցնէր առականերով, ու կ'ըսէր անոնց իր վարդապետութեանը մէջ, 3 - Լսեցէք. ահա սերմ ցանողը ելաւ որպէս զի սերմ ցանէ: 4 - Ու երբ կը ցանէր, մէկ քանին ճամբուն քով ինկաւ, և թռչունները եկան ու կերան զանիկա: 5 - Եւ ուրիշը ինկաւ ապառաժուտ տեղի վրայ, ուր շատ հող չկար. և շուտ մը բուսաւ՝ հողին խորունկութիւն չունենալուն համար. 6 - Սակայն արևուն ծագած ատենը սյրեցաւ, ու արմատ չունենալուն համար չորցաւ: 7 - Եւ ուրիշը ինկաւ փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանիկա, ու պտուղ չտուաւ: 8 - Եւ ուրիշը ինկաւ աղէկ հողի մէջ, ու պտուղ կուտար, որ ելաւ ու մեծցաւ, և կը բերէր մէկուն տեղ երեսուն, ու մէկուն տեղ վաթսուն, և մէկուն տեղ հարիւր: 9 - Ու կ'ըսէր, Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ:

10 - Ու երբ առանձին էր, իր քով եղողները աստուերկուքին հետ մէկտեղ հարցուցին իրեն այն առակը: 11 - Եւ ըսաւ անոնց, Ձեզի արուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են, ամէն բան առականերով կ'ըլլայ. 12 - Որպէս զի տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն, և լսելով լսեն՝ ու չիմանան, որպէս զի չըլլայ թէ դարձի գան, և իրենց մեղքերուն թողութիւն ըլլայ: 13 - Ու ըսաւ անոնց, Այս առակը չէ՞ք գիտեր. ուրեմն ի՞նչպէս պիտի գիտնաք ամէն առակաները: 14 - Սերմ ցանողը խօսքը կը ցանէ: 15 - Եւ ճամբուն քովիները անոնք են, որոնց մէջ խօսքը կը ցանուի, ու երբ կը լսեն, շուտ մը Սատանայ կու գայ և անոնց սիրտերուն մէջ ցանուած խօսքը կը հանէ: 16 - Նոյնպէս ալ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածները անոնք են, որ երբ կը լսեն խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունին զանիկա. 17 - Եւ իրենց մէջ արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը տևեն, ետքը երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար, շուտ մը կը գայթակղին: 18 - Եւ փուշերուն մէջ ցանուածները անոնք են, որ երբ խօսքը կը լսեն, 19 - Աշխարհիս զբաղմունքները ու հարբատութեան խաբէութիւնները, և ուրիշ բաներուն ցանկութիւնները մէջ մըտնելով, խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ անպտուղ: 20 - Եւ աղէկ հողի մէջ ցանուածները անոնք են, որ խօսքը կը լսեն և կ'ընդունին, ու պտուղ կուտան՝ մէկուն տեղ երեսուն, և մէկուն տեղ վաթսուն, ու մէկուն տեղ հարիւր:

21 - Եւ ըսաւ անոնց, Միթէ ճրագը գրուանին կամ մահիճին տա՞կ դրուելու համար կու գայ, չէ՞ որ աշտանակին վրայ դրուելու համար: 22 - Վասն զի ծածուկ բան մը չկայ, որ պիտի չյայտնուի. և գաղտուկ բան մը չէ եղած, որ երևան պիտի չելլէ: 23 - Եթէ մէկը լսելու ականջ ունի, թող լսէ: 24 - Եւ ըսաւ անոնց, Նայեցէք ի՞նչ կը լսէք. ի՞նչ չափով որ դուք կը չափէք, նոյն չափով պիտի չափուի ձեզի. և ձեզի, որ կը լսէք, պիտի աւելնայ: 25 - Վասն զի ո՞վ որ ունի, անոր պիտի տրուի. և ո՞վ որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի:

*Ո՞վն է, երկինքի Թռչունները

26 - Եւ կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը այսպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ սերմ՝ ձգէ, 27 - Ու քնանայ և արթննայ գիշեր ու ցորեկ, և սերմը բուսնի ու մեծնայ, -- Ինք չգիտեր թէ ի՛նչպէս: 28 - Քանզի հողը ինքիբմէ պատուղ կու տայ. առաջ խոտը, ետքը հասկը, անկէ ետեւ լեցուն ցորենը հասկին մէջ, 29 - Ու երբ պատուզը հասուննայ, շուտ մը մանգաղը կը զրկէ, վասն զի հունձքի սատենը հասած է:

30 - Եւ կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցնենք, կամ ի՞նչ առակով զանիկա բաղդատենք: 31 - Մանանեխի հատին նման է, որ հողին մէջ ցանաւած ատենը՝ երկրի վրայ եղած սերմերուն ամէնէն պզտիկն է. 32 - Ու երբ ցանուի, կը բուսնի և ամէն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլլայ, ու մեծ ճիւղեր կ'արձակէ, այնպէս որ երկինքի թռչուններուն հերիք կ'ըլլայ անոր շուքին տակ բնակելու:

33 - Եւ այսպէս շատ առակներով կը խօսէր անոնց հետ խօսքը, որչափ որ կրնային մտիկ ընել. 34 - Ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց առանձին իր աշակերտներուն կը մեկնէր ամէնը:

35 - Եւ նոյն օրը երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց, Եկե՛ք ծովուն անդիի կողմը անցնինք: 36 - Անոնք ալ ժողովուրդը թող տալով՝ առին զինք ինչպէս էր նաւուն մէջ. և ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ: 37 - Ու հովի մեծ փոթորիկ մը եղաւ. և ալիքները նաւուն վրայ կու գային, այնպէս որ գրեթէ կը լեցուէր: 38 - Ու ինք նաւուն ետեւի կողմը բարձի վրայ կը քնանար. արթնցուցին զանիկա և կ'ըսէին անոր, Վարդապետ, հոգ գչէ՞ որ կը կորսուինք: 39 - Ու ելլելով՝ աստեց հովին, և ծովուն ըսաւ, Իագարէ, լուս կեցիր. ու հովը դադարեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ: 40 - Ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ այդպէս վախկտա էք, ի՞նչպէս կ'ըլլայ որ հաւատք չունիք: 41 - Եւ անոնք խիստ վախցան, ու կ'ըսէին իրարու, Արդեօք ո՞վ է ստիկա: որ հովը ու ծովը ասոր կը հնազանդին:

Եւ եկան ծովուն անդիի կողմը *Գաղարացուց երկիրը: 2 - Ու երբ ինք նաւէն ելաւ, գերեզմաններէն ելա՞մարդ մը պատահեցաւ իրեն, որ պիղծ սգի ունէր. 3 - Որուն բնակած տեղն ալ գերեզմաններուն մէջ էր, ու շրջ-թայով ալ մէկը չէր կրնար զանիկա կտակել. 4 - Որովհետեւ շատ անգամ՝ սանակապերով և շղթաներով կապուէր էր, բայց անիկա շղթաները կտրեր ու սանակապերը կտարտեր էր, և մէկը չէր կրնար զանիկա նուաճել. 5 - Եւ միշտ գիշեր ու ցորեկ †գերեզմաններուն մէջ ու լեռներուն մէջ՝ կը կանչուըռատէր, ու իր մարմինը քարերով կը ճեղքուէր: 6 - Երբ հեռուանց Յիսուսը տեսաւ, վազեց ու երկրպագութիւն ըրաւ անոր. 7 - Եւ մեծ ձայնով մը աղաղակեց ու ըսաւ, Իսն ինձի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ Աստուծով կ'երգմնցնեմ, զիս մի տանջեր: 8 - (Քանզի կ'ըսէր անոր, Պիղծ սգի, ելիր այդ մարդէն:) 9 - Եւ անոր հարցուց թէ Անունդ ի՞նչ է. ու ըսաւ անոր, Իմ անունս Լէզէսն է, վասն զի մենք շատուոր ենք: 10 - Եւ շատ ‡կ'աղաչէին անոր՝ որ զիրենք այն երկրէն դուրս չզրկէ: 11 - Եւ հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը կար՝ որ կ'արածուէին: 12 - Ու բոլոր գեւերը աղաչեցին անոր ու ըսին, Մեզ խոզերուն զրկէ, որպէս զի անոնց մէջ մանենք: 13 - Եւ Յիսուս շուտ մը հրաման տուաւ անոնց. ու երբ պիղծ սգիները ելան, խոզերուն մէջ մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց, (երկու հազարի չափ կային,) ու ծովուն մէջ խեղդուեցան: 14 - Եւ խոզարածները փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները. և մարտիկ ելան տեսնելու՝ թէ ի՛նչ բան է որ եղաւ: 15 - Ու եկան Յիսուսի, և տեսան դիւահարը, որ լէզէսն ունէր, որ հագուած ու խելքը վրան եկած նստեր էր, ու վախցան: 16 - Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց թէ ի՛նչ եղաւ դիւահարին, նաև խո-

*Ո՛հան+, Գերգեսացուց
 †Ո՛հան+, լեռներուն մէջ ու գերեզմաններուն մէջ
 ‡Կա՛մ, կ'աղաչէր

գերուն վրայով: 17 - Եւ սկսան ազաչել անոր, որպէս զի իրենց սոսմաններէն երթայ: 18 - Ու երբ անիկա նաւը մտաւ, դիւահարը կ'աղաչէր անոր՝ որ անոր հետ ըլլայ: 19 - Եւ Յիսուս թող չտուաւ անոր, հապա ըտաւ անոր, Գնաքու տունդ քու ընտանիքիդ, ու պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ, և ողորմեցաւ քեզի: 20 - Ան ալ գնաց, և սկսաւ Իեկապոլիսի մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն ըրաւ. և ամէնը կը զարմանային:

21 - Ու երբ Յիսուս նաւով նորէն Զաւլան անդիլի կողմը անցաւ, շատ բազմութիւն ժողովուեցաւ անոր քով, և ինք ծովեզերքն էր: 22 - Եւ ահա ժողովրդապետներէն մէկը կու գար, որուն անունը Յայրոս էր, ու երբ տեսաւ զանիկա, անոր ոտքը ինկաւ: 23 - Եւ շատ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր թէ Իմ ազգիկս մեռնելու մօտ է, գաս՝ անոր վրայ ձեռք դնես, որպէս զի ազատի, ու պիտի ապրի: 24 - Եւ գնաց անոր հետ, ու շատ բազմութիւն իր ետեէն կ'երթային ու կը նեղէին զինք:

25 - Եւ կին մը, որ տասուերկու տարի արիւնի տեւատեւութեան մէջ էր, 26 - Ու շատ նեղութիւն կրած էր շատ բժիշկներէ, և իր բոլոր ունեցածը վատներ էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս առաւել զայրացեր էր, 27 - Երբ Յիսուսի վրայով լսեց, ետեէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր հանդերձին գպաւ: 28 - Քանզի կ'ըսէր, Եթէ միայն անոր հանդերձներուն դպչիմ, պիտի բժշկուիմ: 29 - Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ, ու իր մարմինին մէջ իմացաւ թէ տանջանքէն բժշկուեցաւ: 30 - Եւ Յիսուս շուտ մը գիտնալով իր անձին մէջ այն զօրութիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ բազմութեանը մէջ ու ըսաւ, Ո՞վ դպաւ իմ հանդերձներուն: 31 - Եւ իր աշակերտները ըսին իրեն, Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ, ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինձի դպաւ: 32 - Եւ իր բոլորտիքը կը նայէր որպէս զի այս բանը ընողը տեսնէ: 33 - Ու կինը վախցաւ ու գողաց, վասն զի գիտէր թէ իրեն ինչ եղաւ, և եկաւ՝ անոր առջև ինկաւ, ու բոլոր բաները շիտակէ շիտակ զրուցեց անոր: 34 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց.

գնա խաղաղութեամբ, ու բժշկուած եղիր քու տանջանքէդ:

35 - Երբ ինք գեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն «ման» եկան ու ըսին թէ Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցնես: 36 - Իսկ Յիսուս ըսաւ թէ խօսքը լսածին պէս ժողովրդապետին ըսաւ, Մի վախնար, միայն թէ հաւատաւ: 37 - Եւ մէկը թող չտուաւ իրեն հետ երթալ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսի եղբայրը Յովհաննէսը: 38 - Ու ժողովրդապետին տունը գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ ու աղաղակներ: 39 - Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ: 40 - Եւ ծաղր կ'ընէին զանիկա. բայց ինք ամէնը դուրս հանելով՝ իրեն հետ առաւ մանուկին հայրը ու մայրը, և զանոնք որ իրեն հետ էին, ու մտաւ հոն ուր մանուկը պառկած էր: 41 - Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր, Տալիթա, կումի. որ կը թարգմանուի, Աղջիկ, (քեզի կ'ըսեմ,) ելի: 42 - Եւ իսկոյն աղջիկը ոտք ելաւ ու կը քալէր, վասն զի տասուերկու տարեկան էր. ու մեծ ապշութեամբ ապշեցան: 43 - Եւ սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մտ'ող չգիտնայ այս բանը, ու ըսաւ որ անոր ուտելիք տան:

ԳԼ. 2

Եւ անկէ ելլելով եկաւ իր երկիրը, ու անոր աշակերտները իր ետեէն գացին: 2 - Եւ երբ շաբաթ օրը հասաւ, սկսաւ ժողովարանին մէջ սորվեցնել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ'ըսէին, Ասիկա ուրիշ ունի այս բաները, և այս ինչ իմաստութիւն է ասոր արուած, որ այսպիսի հրաշքներ կ'ըլլան ասոր ձեռքով: 3 - Ասիկա հիւսր չէ՞, Մարիամի որդին, և Յակոբոսի ու Յովսէսի և Յուդայի ու Սիմոնի եղբայրը. ու ասոր քոյրերը հոս մեր քով չե՞ն. և անոր վրայով կը գայթակղէին: 4 - Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին մէջ ու իր ազգականներուն և իր տանը մէջ: 5 - Ու չէր կրնար հոն մէկ հրաշք ալ ընել, միայն թէ

քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց զանոնք: 6 - Եւ անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար. ու շրջակայ գեղերը պարտելով կը սորվեցնէր:

7 - Եւ իրեն կանչեց տասուերկուքը, ու սկսաւ երկու երկու զրկել զանոնք, ու անոնց իշխանութիւն տուաւ պիղծողիներուն վրայ: 8 - Եւ պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չառնեն, բայց միայն գաւապան մը. ոչ պարկ, ոչ հաց, ոչ ստակ՝ գօտիններուն մէջ: 9 - Հապա հողաթափ հագնին. և կրկին հանդերձ մի հագնիք՝ ըստ: 10 - Ու ըսաւ անոնց, Ո՛ր տուն որ մտնէք, հոն կեցէք մինչև անկէ ելլէք: 11 - Եւ անոնք որ ձեզ չեն ընդունիր ու ձեզի մտիկ չեն ըներ, երբ անկէ կ'ելլէք, ստքերնուդ տակի փոշին թօթվեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար: *Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ այն քաղաքին:

12 - Եւ անոնք ելլելով կը քարոզէին որ Ժառանգի ապաշխարեն: 13 - Եւ շատ դեեր կը հանէին, ու շատ հիւանդներ իւզով կ'օծէին ու կը բժշկէին զանոնք:

14 - Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (քանզի անոր անունը յայտնի եղաւ,) ու կ'ըսէր թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր է, ու անոր համար հրաշքներ կ'ըլլան անով: 15 - Ուրիշները կ'ըսէին թէ Եղիան է. ուրիշներն ալ կ'ըսէին թէ Մարգարէ մըն է, կամ մարգարէներէն մէկուն պէս: 16 - Բայց երբ Հերովդէս լսեց, ըսաւ, Ասիկա Յովհաննէսն է, որուն գլուխը ես կտրեցի, մեռելներէն յարութիւն առեր է:

17 - Քանզի Հերովդէս ինք Ժառանգ զրկեց, Յովհաննէսը բռնեց, ու կապեց բանարդ զբարձր Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար, քանզի իրեն կին առեր էր զանիկա: 18 - Վասն զի Յովհաննէս Հերովդէսի կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ քու եղբորդ կինը ունենալ: 19 - Եւ Հերովդիա սխուներ անոր դէմ, ու կ'ուզէր զանիկա մեռցնել ու չէր կրնար: 20 - Վասն զի Հերովդէս կը վախնար Յովհաննէսէ,

դիտնալով թէ անիկա արդար և սուրբ մարդ մըն է, և անոր բերանը կը նայէր, ու անկէ լսելով՝ շատ բաներ կ'ընէր, և քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր: 21 - Ու երբ դիպուկ օր մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հազարապետներուն ու Գալիլեայի երևելիներուն, 22 - Եւ Հերովդիայի աղջիկը հարգեալ զմանելով խաղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսի և իրեն հետ նստողներուն, թագաւորը ըսաւ աղջկան, Ինչդէ ինձմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ քեզի: 23 - Եւ անոր երգում ըրաւ՝ Ը՛բել, ինչ որ դուն ինձմէ խնդրես, պիտի տամ քեզի, մինչև թագաւորութեանս կէսը: 24 - Եւ անիկա դուրս ելլելով իր մօրը ըսաւ, Ի՞նչ ուզեմ. ան ալ ըսաւ, Յովհաննէս մկրտիչին գլուխը: 25 - Եւ շուտ մը արտորալով թագաւորին քով մտաւ ու խնդրեց՝ ըսելով, Կ'ուզեմ որ շուտով սկուտեղի մը վրայ Յովհաննէս մկրտիչին գլուխը տաս ինձի: 26 - Եւ թագաւորը խիստ արամեցաւ, բայց երգումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար չուզեց որ անոր Ժառանգ մերժէ: 27 - Եւ թագաւորը իսկոյն դահիճ զրկեց, ու հրաման ըրաւ անոր գլուխը բերել. ան ալ գնաց բանաին մէջ գլխատեց զանիկա, 28 - Եւ սկուտեղով մը բերաւ անոր գլուխը ու տուաւ աղջկան. և աղջիկը զանիկա իր մօրը տուաւ: 29 - Եւ անոր աշակերտները լսելով՝ եկան անոր մարմինը վերցուցին ու գերեզմանի մէջ դրին:

30 - Եւ առաքեալները Յիսուսի քով ժողովուեցան, ու պատմեցին անոր ամէն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին: 31 - Եւ անիկա ըսաւ անոնց, Եկէք դուք առանձին անապատ տեղ մը, և քիչ մը հանգչեցէք. քանզի շատերը կային որ կու գային ու կ'երթային. և հոց ուտելու ալ ժամանակ չէին ունենար: 32 - Եւ նաւով անապատ տեղ մը գացին առանձին: 33 - Ու Ժողովուրդները տեսան զանոնք որ կ'երթային, և շատերը զանիկա ճանչցան, ու ստքով բուրբ քաղաքներէն հոն կը վտղէին, և անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով ժողովուեցան: 34 - Ու Յիսուս երբ

*Ո՛ր տուն որ մտնէք

դուրս ելաւ, շատ ժողովուրդ աեսնելով խղճաց անոնց վրայ, վասն զի հովիւ չունեցող ոչխարներու պէս էին, և սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց:

35 - Ու երբ ժամանակը շատ ուշացաւ, իր աշակերտները իրեն եկան ու ըսին, Հո՞ւ անապատ աեղ մըն է, ու ժամանակը ուշացած է: 36 - Արձակէ իւր իւր տեղերը որպէս զի երթան բուրդաբերի ագարակները ու գեղերը ու իրենց հաց գնեն, վասն զի ուտելու բան մը չունին: 37 - Բայց անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Իսկ ատէք ատոնց որ ուտեն: Եւ ըսին իրեն, Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնե՞նք և տանք ատոնց որ ուտեն: 38 - Ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք, գացէք նայեցէք. ու երբ գիտցան՝ ըսին, Հինգ, ու երկու ձուկ: 39 - Եւ հրաման քրտանոնց՝ որ ամէնը կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստեցնեն: 40 - Եւ դաս դաս նստան, հարիւրական ու յիսունական: 41 - Եւ հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ ու դէպ ի երկինք նայելով՝ օրհնեց, և մանրեց նկանակները ու տուաւ իր աշակերտներուն, որպէս զի անոնց առջև դնեն, ու երկու ձուկը ամէնուն ալ բաժնեց: 42 - Եւ ամէնը կերան ու կշտացան: 43 - Եւ տատուերկու կողով լեցուն՝ կտորուանքները վերցուցին, և ձուկերէն ալ: 44 - Եւ այն հացերէն ուտողները հինգ հազարի շափ այր մարդիկ էին:

45 - Եւ շուտ մը իր աշակերտները արտորցուց որ նաւը մտնեն, և իրէ առաջ միւս կողմը Բեթսայի դա անցնին, մինչև ինք ժողովուրդը արձակէ: 46 - Եւ անոնցմէ զատուելով լեռը ելաւ աղօթք ընելու: 47 - Ու երբ իրիկուն եղաւ, նաւը ծովուն մէջտեղն էր, ու ինք մինակ ցամաքն էր: 48 - Եւ տեսաւ զանոնք որ կը տագնապէին հովիւ թի քաշելու ատեն, վասն զի հովը իրենց դէմ էր. և գիշերուան չորրորդ պահուն ատենները ծովուն վրայ քալելով կու գայ անոնց, ու կ'ուզէր անոնցմէ անցնիլ: 49 - Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քայլէր, կարծեցին թէ աչքի երևոյթ բան մըն է, ու կանչուրուտեցին. 50 - Քանզի ամէնն ալ զանիկա տեսան ու խոռ-

վեցան. և ինք շուտ մը խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ անոնց, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք: 51 - Եւ նաւը ելաւ անոնց քով, ու հովը դադարեցաւ. և անոնք մտքերնուն մէջ չափէ դուրս ապշած էին ու կը զարմանային, 52 - Վասն զի հացին վրայ ելա՞ծ հրաշք չիմացան, քանզի սիրտերնին թմրած էր:

53 - Ու միւս կողմը անցնելով Գեննեսարէթի երկիրը հասան ու նաւը տեղաւորեցին: 54 - Ու երբ նաւէն ելան, այն րեզի Բորթիւս խկոյն ճանչցան զանիկա. 55 - Եւ ասդին անդին վազելով բոլոր շրջակայ տեղերը, սկսան մահիճներով հիւանդները բերել՝ ուր որ կը լսէին թէ հոն է: 56 - Եւ ուր որ կը մտնէր, գեղերը կամ քաղաքները կամ ագարակները, հրապարակներուն մէջ կը դնէին հիւանդները, ու կ'աղաչէին իրեն որ գտնէ իր հանդերձին քղանցքին դպչին. և որոնք որ դպան, բժշկուեցան:

ԳԼ. Ե

Եւ իր քով ժողովուրեցան փարիսեցիները ու դպիրներէն սմանք՝ որ Երուսաղէմէ եկած էին: 2 - Ու երբ տեսան որ անոր աշակերտներէն սմանք պիղծ, այսինքն անլուայ, ձեռքերով հաց կ'ուտէին, մեղադրեցին. 3 - Վասն զի փարիսեցիները ու բոլոր Հրեաները մինչև աղէկ մը ձեռքերնին չլուան՝ հաց չեն ուտեր, քանզի ծերերուն աւանդութիւնը կը բռնեն: 4 - Եւ շուկայէն ելա՞ծ արեւմտիկ ելթէ չլուացուին՝ չեն ուտեր. և ուրիշ շատ բաներ կան զորոնք ընդունած են ու կը բռնեն, այսինքն գաւաթներու և փարչերու ու պղնձէ ամաններու և անկողիններու լուացմունքներ: 5 - Այն ատեն փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր, թէ ինչո՞ւ բու աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար, հապա անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն: 6 - Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Աղէկ մարգարէութիւն քրտանալի ձեզի կեղծաւորներուդ համար, ինչպէս գրուած է, Այս ժողովուրդը հոյս չըթուանքներովը զիս կը պատուէ, բայց իրենց սիրար հեռացած զատուած է ինձմէ. 7 - Ու պարտապ

տեղ զիս կը պաշտեն, մարդոց պատուիրած բաները եքրե վարդապետութիւն սորվեցնելով: 8 - Վասն զի Աստուծոյ պատուիրանքը թողելով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք, էնչպէ՛ս՝ փարչերու և գաւաթներու լուացմունքներ, և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք: 9 - Ու ըսաւ անոնց, Ազէկ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը, որպէս զի ձեր աւանդութիւնը պահէք: 10 - Քանզի Մովսէս ըսաւ, Քու չայրդ ու մայրդ պատուէ. և, Ով որ եր չայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի: 11 - Բայց դուք կ'ըսէք, Եթէ մէկը եր չօրը կամ մօրը ըսէ, Այն բանը զոր ինծմէ պիտի շահիս, Աստուծոյ արարածն է, (որ ըսել է ընծայ,) ոչ ոք է՛լ չայր անիւս: 12 - Եւ ա՛լ թող չէք տար անոր բան մը ընել իր չօրը կամ իր մօրը: 13 - Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը զոր կ'աւանդէք. և ասոր նման շատ ուրիշ բաներ կ'ընէք:

14 - Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Լսեցէք ինծի ամենդ ու հասկցէք: 15 - Բան մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ, ու կարող ըլլայ զանիկա պղծել, հասա այն բաները որ անկէ կ'ելլեն, անոնք են որ մարդը կը պղծեն: 16 - Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ:

17 - Ու երբ այն բազմութենէն շատերէ՛լ տուն մտաւ, իր աշակերտները հարցուցին իրեն այն առակին համար: 18 - Ու ըսաւ անոնց, Գո՞ւք ալ այդպէս անմիտ էք. չէ՞ք հասկնար թէ՛ ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսիդին կը մտնէ, չկրնար զանիկա պղծել: 19 - Վասն զի ոչ թէ անոր սրտին մէջ կը մտնէ, հասա փորը, և արտաքնոցը կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մտքրէ: 20 - Եւ կ'ըսէր թէ ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա կը պղծէ մարդը: 21 - Վասն զի ներսէն, մարդոց արտէն, կ'ելլեն չար խորհուրդներ, շնութիւններ, պոռնկութիւններ, սպանութիւններ, 22 - Գողութիւններ, ազահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, զիճութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: 23 - Այս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն մարդը:

24 - Եւ անկէ ելլելով Տիւրոսի ու Արդոնի սահմանները գնաց, և տուն մը մտնելով՝ չէր ուզեր որ մէկուն յայանուի, բայց չկրցաւ ծածկուիլ: 25 - Քանզի կին մը, որուն աղջիկը պիղծ սգի ունէր եր ներսէն, լսեց անոր վրայով, ու եկաւ, անոր սաքը ինկաւ: 26 - Եւ այն կինը *Նեթանոս էր, ազգով Փիւնիկ Ասորի, ու կ'աղաչէր անոր՝ որ դէր իր աղջիկէն հանէ: 27 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Թող սուր որ սուաջ սղաքը կշտանան, քանզի ազէկ չէ սղոց հացը առնել ու շուներուն ձգել: 28 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Այո, Տէր, վասն զի շուներն ալ սեղանին տակ սղոցը փշրանքներէն կը կերակրուին: 29 - Եւ ըսաւ անոր, Այդ խօսքիդ համար գնա, քու աղջիկէդ դէր ելաւ: 30 - Եւ էնք իր տունը երթալով, գաաւ որ դէր ելած՝ ու աղջիկը անկողինին վրայ պառկած էր:

31 - Եւ նորէն Տիւրոսի ու Արդոնի սահմաններէն ելլելով, եկաւ Գալիլեայի ծովեզերքը, Գեկապոլիսի սահմաններուն մէջէն: 32 - Եւ մէկը բերին անոր առջև, խուլ ու դժուարախօս, ու կ'աղաչէին որ անոր վրայ ձեռք դնէ: 33 - Եւ ժողովուրդէն մէկդի առնելով զանիկա, իր մտտերը անոր ականջներուն մէջ խոթեց ու թքաւ, և անոր լեզուին դպաւ, 34 - Ու երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր, Եփփաթա, (որ ըսել է Բացուէ.) 35 - Եւ իսկոյն անոր ականջները բացուեցան, ու անոր լեզուին կապը քակուեցաւ, և շիտակ կը խօսէր: 36 - Ու պատուիրեց անոնց որ մարդո՛ւ չըսեն. և որչափ ինք կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ ուսելի կը քարոզէին: 37 - Ու չափէ դուրս կը գարմանային և կ'ըսէին, Ամէն բաները ազէկ ըրաւ ասիկա, ոչ խուլերուն լսել կու տայ և համբերուն խօսիլ:

ԳԼ Բ

Այն օրերը ժողովուրդը խիստ շատ ըլլալով, և ուտելու բան մը չունենալով, Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները ու ըսաւ անոնց, 2 - Կը խզճամ՝ այդ ժողովուրդին վրայ, վասն

*Յուս. Յոյն

զի հիմա երեք օր է որ իմ քոյս են, և քան մը չունին ուտելու. 3 - Եւ եթէ տատնք անօթի զրկեմ իրենց տուները, ճամբուն մէջ պիտի մտնին, վասն զի տատնցմէ ամանք հեռու տեղէ եկած են: 4 - Եւ իր աշակերաները պատասխան տուին իրեն, Այս անապատին մէջ ուրկէ՞ կրնայ մէկը հացով կշտացընել տատնք: 5 - Եւ հարցուց անոնց, Քանի՞ նկանակ ունիք, ու անոնք ըսին, Եօթը: 6 - Եւ հրաման ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ նստին, ու առաւ եօթը նկանակը, գոհացաւ և կտրեց ու տուաւ աշակերաներուն, որպէս զի ժողովուրդին առջև դնեն, և դրին: 7 - Ու քանի մը մտնը ձուկեր ունէին, և օրհնեց ու ըսաւ որ զանոնք ալ դնեն անոնց առջև: 8 - Եւ կերան ու կշտացան, ու տւելցած կտորուանքները վերցուցին եօթը զամբիւղ: 9 - Եւ ուտողները չորս հազարի չափ էին, ու արձակեց զանոնք: 10 - Եւ շուտ մը նաւը մտնելով աշակերաներուն հետ՝ եկաւ Իսաղմանութայի կողմերը:

11 - Եւ փարիսեցիները ելլելով՝ սկսան անոր հետ վիճաբանութիւն ընել, և զանկա փորձելով՝ իրմէ նըշան մը կ'ուզէին երկինքէն: 12 - Եւ անկա իր հոգիին մէջ հառաչելով ըսաւ, Ի՞նչ է որ այս ազգը նշան կ'ուզէ. Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ այս ազգին նշան պիտի չտրուի: 13 - Ու զանոնք թող տալով նորէն նաւը մտաւ, ու գնաց Ժուզէն միւս կողմը:

14 - Եւ հաց տուելու մտցեր էին, ու նաւուն մէջ իրենց հետ միայն մէկ նկանակ ունէին: 15 - Եւ կը պատուիրէր անոնց ու կ'ըսէր, Նայեցէք և զգուշացէք փարիսեցիներուն խմորէն ու Հերովդէսի խմորէն: 16 - Եւ իրարու հետ կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չունենալնու համար է: 17 - Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը խորհիք թէ հաց չունիք. տակաւին չէ՞ք հասկընար ու չէ՞ք իմանար. դեռ սիրտերնիդ թմրած է: 18 - Աչքեր ունիք ու չէ՞ք տեսներ, և ականջներ ունիք ու չէ՞ք լսեր, և չէ՞ք յիշեր: 19 - Երբ հինգ նկանակը հինգ հազարին կտրեցի, քանի՞ կողով լեցուն կտորուանք վերցուցիք. ըսին անոր, Տասուերկու: 20 - Ու երբ եօթը նկանակ չորս հազարին հարեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կտոր-

ուանք վերցուցիք. անոնք ալ ըսին, Եօթը: 21 - Ու ըսաւ անոնց, Հապա՞ ի՞նչպէս չէք հասկնար:

22 - Եւ Բեթսայիդա եկաւ, ու անոր առջև կոյր մը բերին, ու կ'աղաչէին իրեն որ դպչի անոր. 23 - Եւ անկա կոյրին ձեռքէն բռնելով գեղէն դուրս հանեց, ու անոր աչքերուն թըքնելով՝ ձեռքը անոր վրայ դրաւ, ու կը հարցնէր անոր թէ քան մը կը տեսնէ՞: 24 - Ան ալ նայեցաւ ու կ'ըսէր, Մարդիկ կը տեսնեմ՝ ծառերու պէս որ կը պտրտին: 25 - Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, ու անոր նայիլ տուաւ. և ողջացաւ ու ամէն բան համարձակ կը տեսնէր: 26 - Ետքը զանկա իր տունը զրկելով՝ ըսաւ, Գեղը մի մտնէր ու գեղին մէջ մարդո՛ւ մի բեր:

27 - Եւ Յիսուս իր աշակերաներուն հետ մէկտեղ Փիլիպպոսի Աեսարիային գեղերը ելաւ, ու ճամբուն մէջ կը հարցնէր իր աշակերաներուն ու կ'ըսէր անոնց, Ինձի համար ո՞վ կ'ըսեն մարդիկ թէ եմ: 28 - Եւ անոնք պատասխան տուին «- ըսին, Ո՞՞՞նք՝ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Մարգարէներէն մէկը: 29 - Եւ ինք ըսաւ անոնց, Հապա դուք ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ. պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Իսկ ես Քրիստոսը: 30 - Եւ սաստիկ պատուիրեց անոնց՝ որ իրեն համար մարդո՛ւ չզրուցեն:

31 - Ու սկսաւ սորվեցնել անոնց, թէ Պետք է որ Որդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, ու երէցներէն և քահանայապետներէն ու դպիրներէն մերժուի, ու սպաննուի, և երեք օրէն ետև յարութիւն առնէ: 32 - Ու այս խօսքը յայտնի խօսեցաւ. և Պետրոս մէկգի առաւ զանկա, ու սկսաւ յանդիմանել զանկա: 33 - Եւ ինք դարձաւ ու իր աշակերաներուն նայելով՝ յանդիմանեց Պետրոսը ու ըսաւ, Ետիս գնա, Սատանայ, վասն զի դուն Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները:

34 Եւ ժողովուրդը իր աշակերաներուն հետ մէկտեղ իրեն կանչելով ըսաւ անոնց, Ով որ կ'ուզէ իմ ետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և իր խաչը վերցնէ, ու իմ ետևէս գայ: 35 - Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը

ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա. և ով որ ինձի ու աւետարանին համար իր անձը կորսնցնէ, պիտի ապրեցնէ զանիկա: 36 - Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վատակի, և իր անձը կորսնցնէ. 37 - Կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի սոյ մարդ: 38 - Վասն զի ով որ զիս ու իմ խօսքերս քառնելու ամօթ սեպէ այս շնացող ու մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանիկա քառնելու ամօթ պիտի սեպէ՝ երբ գոյ իր Հօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ: 39 - Եւ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչև տեսնեն Աստուծոյ Թագաւորութիւնը զօրութիւնով եկած:

ԳԼ. Թ

Եւ վեց օրէն ետև Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին, և անոնց առջև այլակերպեցաւ: 2 - Ու իր հանդերձները եղան փայլուն խիստ ճերմակ, այնպէս որ երկրի վրայ Թափիչ մը չկրնար այնպէս ճերմկցնել: 3 - Ու Եղիա Մովսէսի հետ երեցաւ անոնց, և Յիսուսի հետ կը խօսէին: 4 - Եւ Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ Յիսուսի, Ռաբբի, աղէկ է որ հոս կենանք. ու երեք խրճիթ շինենք, մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի: 5 - Վասն զի չէր գիտեր թէ ի՞նչ խօսի, քանզի զարհուրեր էին: 6 - Եւ ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, ու ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս, ատոր մտիկ ըրէք: 7 - Եւ յանկարծ երբ ասդին անդին նայեցան, ալ ուրիշ մէկը չտեսան, հապա միայն Յիսուսը իրենց հետ: 8 - Ու երբ լեռնէն վար կ'իջնէին, պատուիրեց անոնց որ տեսածնին մարդո՛ւ չպատմեն, բայց միայն Որդւոյն մարդոյ մեռելներէն յարութիւն առնելէն ետև: 9 - Եւ անոնք այն խօսքը պահեցին. ու իրենց մէջ հարցութիւն կ'ընէին թէ մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ է: 10 - Եւ իրեն հարցուցին ու ըսին, Այն ի՞նչ է որ դպիրները կ'ըսեն թէ Պէտք է որ ա-

ռաջ Եղիա գոյ: 11 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Յիւրաւի առաջ Եղիա կու գոյ, և ամէն բան կարգի կը դնէ. և թէ ի՞նչպէս գրուած է Որդւոյ մարդոյ համար, որ շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի: 12 - Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիա եկաւ ալ, և ինչ որ ուզեցին՝ ըրին անոր, ինչպէս գրուած է անոր համար: 13 - Ու աշակերաներուն քով գալով տեսաւ շատ ժողովուրդ անոնց բոլորապէս, և դպիրները որ վիճաբանութիւն կ'ընէին անոնց հետ: 14 - Եւ շուտ մը բոլոր ժողովուրդը երբ տեսան զանիկա, խիստ զարմացան, ու առաջ վազելով բարև կու տային անոր: 15 - Եւ հարցուց դպիրներուն թէ ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէք անոնց հետ: 16 - Ու ժողովուրդէն մէկը պատասխան տալով ըսաւ, Վարդապետ, իմ որդիս քեզի բերի, որ համը ոգի ունի: 17 - Եւ ուր որ անոր հասնի, զանիկա գետինը կը զարնէ, ան ալ կը փրփրի և իր աղաները կը կրճտէ ու կը ցամփի. և քու աշակերաներուդ ըսի որ զանիկա հանեն ու չկրցան: 18 - Պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ով անհաւատ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ. ինձի բերէք զանիկա: 19 - Եւ զանիկա բերին իրեն. երբ քառն տեսաւ զանիկա, շուտ մը շարժուեց զանիկա, ու գետինը ինկած կը թաւալէր ու կը փրփրէր: 20 - Եւ Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ, Ո՞րչափ ատեն է որ այդ բանը ատոր եղաւ. ու անիկա ըսաւ, Տղայութենէն ի վեր: 21 - Եւ շատ անգամ կրակի ու ջուրի մէջ կը նետէ ատիկա՝ որպէս զի կորսնցնէ. բայց եթէ կարողութիւն մը ունիս, օգնէ ձեզի, խղճալով մեր վրայ: 22 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Եթէ կարող ես հաւատալու, ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ: 23 - Եւ աղուն հայրը շուտ մը աղաղակեց ու արցունքով ըսաւ, Կը հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատութեանս: 24 - Յիսուս երբ տեսաւ որ ժողովուրդը վրան կը դիզուի, սաստեց պիղծ ոգիին ու ըսաւ անոր, Համբ ու խուլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելիր ատկէ, ու մէյմըն ալ չմտնես ատոր ներսը: 25 - Եւ կանչուըւտելով

աստիկ ցնցեց զանիկա ու ելաւ. և
 ոչ ան մեռելի պէս եղաւ, այնպէս որ
 շատերը ըսին թէ Մեռաւ: 26 - Եւ
 Յիսուս անոր ձեռքէն բռնելով վեր-
 ցուց զանիկա. ան ալ կայնեցաւ: 27 -
 Ու երբ ինք տուն մտաւ, իր աշակերտ-
 ները առանձին հարցուցին իրեն՝ ըսելով,
 Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա:
 28 - Եւ ըսաւ անոնց, Այդ տեսակին կա-
 րելի չէ ոչ իշ բանով մը ելլել, բայց մի-
 այն աղօթքով ու ծովապահանջութեամբ:

29 - Եւ անկէ ելլելով Գալիլեայի
 մէջէն կ'անցնէին, ու չէր ուզեր որ
 մէկը գիտնայ: 30 - Վասն զի կը սոր-
 վեցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր
 անոնց թէ Որդին մարդոյ պիտի մտա-
 նուի մարդոց ձեռքը, և զանիկա պիտի
 սպաննեն. ու երբ սպաննուի՝ երրորդ
 օրը յարութիւն պիտի առնէ: 31 -
 Եւ անոնք չէին հասկնար այն խօսքը,
 ու կը վահնային իրեն հարցնելու:

32 - Եւ եկաւ Կափառնայում, ու
 երբ տուն մտաւ՝ հարցուց անոնց, Ի՞նչ
 վիճաբանութիւն կ'ընէիք ճամբան
 իրարու հետ: 33 - Եւ անոնք լուռ
 կեցան, վասն զի ճամբուն մէջ իրա-
 րու հետ վիճաբանութիւն կ'ընէին
 թէ ո՞վ մեծ է: 34 - Ու երբ նստաւ,
 կանչեց տասուերկուքը ու ըսաւ անոնց,
 Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ, ա-
 մէնուն յետինը պիտի ըլլայ և ամէ-
 նուն սպասաւորը: 35 - Ու աղայ մը
 առաւ կայնեցուց անոնց մէջ, և իր
 գիրկը առնելով զանիկա՝ ըսաւ ան-
 ոնց, 36 - Ով որ այսպիսի տղոցմէն
 մէկը ընդունի իմ անունովս, զիս կ'ըն-
 դունի. և ով որ զիս ընդունի, ոչ թէ
 զիս կ'ընդունի, հապա զիս դրկողը:
 37 - Պատասխան տուաւ անոր Յով-
 հաննէս ու ըսաւ, Վարդապետ, մէկը
 տեսանք որ քու անունովդ դէեր կը
 հանէր, ու մեր ետեւէն չպտրտիր, և
 զանիկա արգիլեցինք՝ մեր ետեւէն
 չպտրտելուն համար: 38 - Եւ Յիսուս
 ըսաւ, Մի արգիլէք զանիկա, վասն զի
 մէկը չկայ որ իմ անունովս հրաշք
 գործէ, ու կարենայ շուտ մը զիս հայ-
 հոյել: 39 - Քանզի ան որ *մեզի հա-
 կառակ չէ, մեր՝ կողմէն է: 40 -
 Վասն զի ով որ ձեզի գաւաթ մը ջուր
 խմցնէ †իմ անունովս՝ թէ դուք Քրիս-

տոսին էք, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի,
 Անիկա իր վարձքը պիտի չկորսնցնէ:
 41 - Եւ ով որ գայթակղեցնէ այս
 պզտիկներէն մէկը որ ինծի կը հաւա-
 տան, ուելի աղէկ էր անոր՝ որ աղաց-
 քի քար մը իր վիզէն կախուէր, ու ծովը
 ձգուէր: 42 - Եւ եթէ քու ձեռքդ
 քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանի-
 կա. աղէկ է քեզի պակասաւոր մանկ
 կեանքը, քան թէ երկու ձեռք ունե-
 նալ ու գեհեանը երթալ չմարելու
 կրակին մէջ, 43 - Ուր անոնց որդը
 չմեռնիր ու կրակը չմարիր: 44 - Եւ
 եթէ քու ոտքդ քեզ կը գայթակղեցնէ,
 կտրէ զանիկա. աղէկ է քեզի կաղ
 մտնել կեանքը, քան թէ երկու ոտք
 ունենալ ու գեհեանը ձգուիլ
 չմարելու կրակին մէջ, 45 - Ուր ա-
 նոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր:
 46 - Եւ եթէ քու աչքդ քեզ կը գայ-
 թակղեցնէ, հանէ զանիկա. աղէկ է
 քեզի մէկ աչքով Աստուծոյ թագաւո-
 րութիւնը մտնել, քան թէ երկու աչք
 ունենալ ու կրակին գեհեանը ձգուիլ,
 47 - Ուր անոնց որդը չմեռնիր ու
 կրակը չմարիր: 48 - Վասն զի ամէն
 մարդ կրակով պիտի աղուի, և ամէն
 զո՛հ աղով պիտի աղուի: 49 - Աղը
 աղէկ է, բայց եթէ աղը անհամայ,
 ինչո՞վ պիտի համովցնէք. ձեր անձին
 մէջ աղ ունեցէք, և իրարու հետ խա-
 ղաղութիւն ըրէք:

ԳԼ. Ժ

Եւ անկէ ելլելով՝ Հրէաստանի
 սահմանները եկաւ Յորդանանու ան-
 դիի կողմէն, ու նորէն ժողովուրդները
 անոր քով կը ժողվուէին. և ինչպէս
 սովորութիւն ունէր, դարձեալ կը սոր-
 վեցնէր անոնց:

2 - Ու փարիսեցիները քովը եկան, և
 զանիկա փորձելով՝ կը հարցնէին անոր
 թէ Արժան է որ այրը եւ կինը արձա-
 կէ: 3 - Եւ անիկա պատասխան տուաւ
 ու անոնց ըսաւ, Մովսէս ձեզի ի՞նչ
 պատուիրեց: 4 - Եւ անոնք ըսին, Մով-
 սէս հրաման տուաւ արձակման գիր
 գրել ու արձակել: 5 - Եւ Յիսուս
 պատասխան տալով՝ անոնց ըսաւ,
 Ձեր սրտին կարծրութեանը համար
 գրեց ձեզի այդ պատուէրը. 6 - Բայց
 ստեղծագործութեան սկիզբէն Աստ-
 ուած զանոնք արու և էգ ըրաւ, ու

*Ո՛հ, ձեզի հակառակ չէ, ձեր
 †Ո՛հ, այս անունով

7 - Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, 8 - Ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան. ուստի ա՛լ երկու չեն, հապա մէկ մարմին. 9 - Ուրեմն զայն որ Աստուած միաւորեց, մարդ թող չզատէ: 10 - Եւ տունը իր աշակերտները նորէն նոյն բանը հարցուցին իրեն: 11 - Ու ըսաւ անոնց, Ով որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, անոր դէմ շնութիւն կ'ընէ: 12 - Ու կին մը եթէ իր էրիկէն զատուի և ուրիշ էրկան մը ըլլայ, շնութիւն կ'ընէ:

13 - Եւ մանր տղաք բերին իրեն, որպէս զի անոնց դպչի, բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները: 14 - Յիսուս երբ տեսաւ, սրգողելով անոնց ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան, և մի արգիլէք ատոնք, վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է: 15 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ: 16 - Եւ զանոնք գիրկը առաւ, անոնց վրայ ձեռք դրաւ ու օրհնեց զանոնք:

17 - Ու երբ անիկա դուրս ելաւ ճամբուն մէջ, «հ» մարդ մը վազեց, ու անոր առջև ծունկ դնելով կը հարցընէր անոր «՛ըհ» Բարի վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ: 18 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած: 19 - Պատուիրանքները գիտես. Շնութիւն մի ըներ, Ապանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Զրկանք մի ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ: 20 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Վարդապետ, ատոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեմ: 21 - Եւ Յիսուս անոր նայելով սիրեց զանիկա, ու ըսաւ անոր, Մէկ բան պակաս է քեզի. գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և խաչը վերցուր ու եկուր իմ ետեւս: 22 - Եւ անիկա այս խօսքին համար խոժոռելով արամած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր: 23 - Եւ Յիսուս իր բոյրատիքը նայելով ըսաւ իր աշակերտներուն, Որչափ դժուար է անոնց

որ հարստութիւն ունին Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 24 - Եւ աշակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վրայ. բայց Յիսուս նորէն պատասխան տալով անոնց ըսաւ, Որդեակներ, ս'ըչափ դժուար է իրենց հարստութեան յաւաստողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 25 - Իիւրին է որ ուղար ասեգին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: 26 - Եւ անոնք խիստ շատ կը զարմանային ու կ'ըսէին իրարու, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ: 27 - Եւ Յիսուս անոնց նայելով ըսաւ, Ատիկա մարդոց կողմանէ անկարելի է, բայց ոչ Աստուծոյ կողմանէ. քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է: 28 - Պետրոս սկսաւ ըսել անոր, Ահա մենք ամէն բան թողուցինք և քու ետեւդ եկանք: 29 - Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մէկը չկայ որ թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝ ինծի համար ու աւետարանին համար, 30 - Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա այս ատենս տուններ, ու եղբայրներ, և քոյրեր, ու մայրեր, և որդիներ, ու արտեր հալածանքներու հետ, և գալու աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանքը: 31 - Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին:

32 - Եւ անոնք դէպ ի Երուսաղէմ կ'ելլէին «ճամբուն մէջ էին. և Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար, ու անոնք կը զարմանային, ու ետեւէն երթալով կը վախնային: Եւ նորէն քովը առնելով տասուերկուքը, սկսաւ ըսել անոնց ինչ բաներ որ իրեն պիտի պատահէին. 33 - Ու ըսաւ, Ահա Երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն, ու զանիկա հեթանոսներուն պիտի մտանեն. 34 - Եւ զանիկա ծաղր պիտի ընեն ու ծեծեն, և անոր վրայ պիտի թքեն, ու զանիկա մեռցնեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:

35 - Եւ անոր քով գացին Յակոբոս ու Յովհաննէս, Զեքեղէոսի որդիները, ու ըսին, Վարդապետ, կ'ուզենք որ

7-րդէ ինչ որ խնդրենք՝ մեզի ընես: 36 - Ան ալ ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ: 37 - Ու անոնք ըսին իրեն, Շնորհէ մեզի որ նստինք մեզմէ մէկը աջ կողմից և միւսը ձախ կողմից քու փառքիդ մէջ: 38 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Չէք գիտեր ի՞նչ կը խնդրէք. կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես կը խմեմ, և այն մկրտութիւնովը մկրտուիլ՝ զոր ես կը մկրտուում: 39 - Եւ անոնք ըսին իրեն, կրնանք. ու Յիսուս ըսաւ անոնց, Այն գաւաթը զոր ես կը խմեմ՝ պիտի խմէք, և այն մկրտութիւնովը զոր ես կը մկրտուում՝ պիտի մկրտուիք: 40 - Բայց իմ աջ կողմն ու ձախ կողմն նստիլը իմն չէ տալը, հապա որոնց որ պատրաստուած է: 41 - Ու երբ Գառնատար առաջնորդները լսեցին, սկսան Յակոբոսի ու Յովհաննէսի նեղանալ: 42 - Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու ըսաւ անոնց, Գիտէք որ ազգերուն իշխան սեպուածները կը տիրեն անոնց, և անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց: 43 - Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, անիկա ձեր սպասաւորը ըլլայ: 44 - Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ, անիկա ամէնուն ծառայ ըլլայ: 45 - Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու, և իր կեանքը շատերու համար փրկանք մը տալու:

46 - Ու եկան Երիքով. ու երբ Երիքովէ կ'ելլէր աշակերտներովը և շատ բազմութիւնով, Տիմէոսի որդին կոյր Բարսիմէոս ճամբուն քով նստեր էր մուրալու: 47 - Ու երբ լսեց թէ Յիսուս նազովրեցին է, սկսաւ աղաղակել ու ըսել, Յիսուս, որդի Դաւթի, ողորմէ ինծի: 48 - Եւ շատերը կը յանդիմանէին զանիկա որպէս զի լուէ, բայց անիկա ա՛լ աւելի կ'աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմէ ինծի: 49 - Եւ Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ զանիկա կանչեն. կանչեցին կոյրը ու ըսին անոր, Քաջ եղիր, եյիր, քեզ կը կանչէ: 50 - Եւ անիկա իր հանդերձը ձգելով, ելաւ ու եկաւ Յիսուսի: 51 - Եւ Յիսուս պատասխան տալու ու անոր ըսաւ, Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ: Կոյրը ըսաւ անոր, Ռաբբունի, որ աչքերս բացուին: 52 - Եւ Յի-

սուս ըսաւ անոր, Գնա. քու հաւատքդ քեզ բժշկեց. և շուտ մը անոր աչքերը բացուեցան, ու ճամբան Յիսուսի ետեէն կ'երթար:

ԳԼ. ԺԱ

Ու երբ Երուսաղէմի մօտեցան, Բեթփագէ ու Բեթանիա դէպ ի Զիթենեաց լեռը, Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց, 2 - Եւ ըսաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի դեղը, և անոր մէջ մանեղնուդ պէս՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը, ու ըսն վրայ մտրդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք: 3 - Եւ եթէ մէկը ըսէ ձեզի թէ Այդ ի՞նչ կ'ընէք, ըսէք թէ Տէրոջը պէտք է. և շուտ մը հաս պիտի զրկէ զանիկա: 4 - Գացին և գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով կապուած, ու արձակեցին զանիկա: 5 - Եւ հոն կայնողներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ կ'ընէք որ կ'արձակէք այդ աւանակը: 6 - Եւ անոնք ըսին անոնց ինչպէս Յիսուս պատուիրեր էր, ու իրենց թողտուին: 7 - Եւ աւանակը Յիսուսի բերին, ու անոր վրայ իրենց հանդերձները դրին, ու նստաւ անոր վրայ: 8 - Եւ շատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին: 9 - Եւ առջևէն ու ետեէն գացողները կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ավասննա. Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ: 10 - Օրհնեալ է մեր Դաւիթ Տորթ թագաւորութիւնը որ *կու գայ. Ավասննա ի բարձունս:

11 - Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ ու տաճարը, և չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց. և արդէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ ատուերկուքին հետ մէկտեղ:

12 - Ու հետեւեալ օրը երբ Բեթանիայէ կ'ելլէին, անօթեցաւ: 13 - Եւ հեռուանց ատրեալից թղթնի մը տեսնելով՝ եկաւ որ թերևս անոր վրայ բան մը գտնէ. ու երբ անոր քով գնաց, ատրեաներէն զատ բան մը չգտաւ, վասն զի դեռ թուղի ատեն չէր: 14 - Ի Եւ

*Ո՞րն է, Տէրոջը անունովը կու գայ
†Ո՞րն է, Եւ Յիսուս

պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ասկէ ետեւ մէկը քեզմէ պտուղ չուտէ յաւիտեան. և իր աշակերտները լսեցին:

15 - Աւ եկան Երուսաղէմ: և Յիսուս տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել զանոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին. և ստակ փոխադներուն սեղանները ու աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց. 16 - Եւ թող չէր տար որ մէկը տաճարին մէջէն աման մը անցնէ: 17 - Եւ կը սորվեցնէր ու կ'ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն. բայց դուք ստիկա աւազակներու այր ըրիք: 18 - Եւ դպիրները ու քահանայապետները զայս լսելով՝ կը փնտռէին թէ ի՞նչպէս կորսնցնեն զանիկա, քանզի անկէ կը վախնային. վասն զի բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդապետութեանը վրայ: 19 - Աւ երբ իրիկուն եղաւ, քաղաքէն դուրս ելաւ:

20 - Եւ առտուանց երբ անկէ կ'անցնէին, թղենին տեսան արմատէն չորցած: 21 - Աւ Պետրոսի միտքը եկաւ ու ըսաւ անոր, Ռաբբի, ահա թղենին զոր անիծեցիր՝ չորցեր է: 22 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Աստուծոյ հաւատք ունեցէք. 23 - Քանզի ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Ով որ այս լեռանը ըսէ, Ելիր ու ծովը ինկիր, և իր սրտին մէջ չերմկտի, հապա հաւատայ թէ ի՞նչ որ ըսէ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր ի՞նչ որ ըսէ: 24 - Ասոր համար կ'ըսեմ՝ ձեզի, Ի՞նչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի առնէք, և պիտի ըլլայ ձեզի: 25 - Աւ երբ աղօթքի կը կայնիք, ներեցէք եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է, ներէ ձեզի ձեր յանցանքները: 26 - Իսկ եթէ դուք չէք ներեր, ձեր Հայրն ալ որ երկինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները:

27 - Եւ նորէն Երուսաղէմ եկան. ու երբ տաճարին մէջ կը պտրտէր, քահանայապետները և դպիրները ու ծերերը անոր եկան, 28 - Աւ ըսին անոր, Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը, որ այդ բաները ընես: 29 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ,

ու եթէ ինձի պատասխան տաք, ես ալ ձեզի պիտի ըսեմ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով կ'ընեմ՝ այս բաները: 30 - Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր՝ թէ մարդոցմէ. պատասխան տուէք ինձի: 31 - Եւ անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին, Եթէ ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. 32 - Իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովուրդէն կը վախնային, վասն զի ամէնը *գիտէին Յովհաննէսը թէ ճշմարտապէս մարգարէ էր: 33 - Եւ պատասխան տալով՝ ըսին Յիսուսի, Չենք գիտեր. և Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՞նչ իշխանութիւնով կ'ընեմ՝ այս բաները:

ԳԼ. ԺԲ

Եւ սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ - Ը՛հ, Մարդ մը այգի անկէց, ու անոր բոլորաիքը ցանգ քաշեց, և ստորահնձան փորեց, ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց: 2 - Եւ առեկին ծառայ մը զրկեց մշակներուն, որպէս զի մշակներէն այգիին պտուղէն առնէ: 3 - Իսկ անոնք բռնեցին, ծեծեցին զանիկա ու պարագ ճամբեցին: 4 - Նորէն ուրիշ ծառայ մըն ալ զրկեց անոնց, և զանիկա քարկոծելով գլուխը վիրաւորեցին ու անարգուած ճամբեցին: 5 - Եւ դարձեալ ուրիշ մը զրկեց, ու զանիկա սպաննեցին. և շատ ուրիշներ ալ զրկեց, *բայ մէկ քանիները ծեծեցին ու մէկ քանիները սպաննեցին: 6 - Ուտի սիրելի որդի մըն ալ ունենալով, վերջապէս զանիկա ալ զրկեց անոնց՝ ըսելով, Թերեւս ամէնան իմ որդիէս: 7 - Բայց այն մշակները ըսին իրարու, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննենք, ու ժառանգութիւնը մերը ըլլայ: 8 - Եւ բռնեցին զանիկա ու սպաննեցին, և այգիէն դուրս հանեցին: 9 - Ուտի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ ու կորսնցնէ մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ: 10 - Եւ այս գիրը չէ՞ք կարդացեր, թէ Այն քարը զոր շինողները

*Յուս. ունէին

անարգեցին, անհկա անկիւնին գլուխը եղաւ. 11 - Ասիկա Տէրոջմէն եղաւ, և զարմանալի է մեր աչքերուն:

12 - Եւ կը փնտուէին թէ ի՛նչպէս բռնեն զանհկա, բայց ժողովուրդէն վախցան, քանզի իմացան որ այն առակը իրենց համար ըսաւ, և ձգեցին զանհկա ու գացին:

13 - Եւ փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն քանի մը հոգի զրկեցին անոր, որպէս զի խօսքով բռնեն զանհկա: 14 - Եւ անոնք եկան ու ըսին անոր, Վարդապետ, գիտե՞նք որ ճշմարիտ էս, և մէկո՛ւն համար հոգի չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չէս ըներ, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես. կայսրին տուրք տալ արժա՞ն է՝ թէ ոչ, տա՞նք՝ թէ չտանք: 15 - Եւ Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք. բերէք ինծի դահեկան մը որ տեսնեմ: 16 - Եւ անոնք բերին. ու ըսաւ անոնց, Որո՞ւն է այս պատկերը ու գիրը. և անոնք ըսին անոր, Կայսրին: 17 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Զայն որ կայսրինն է՝ կայսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք. ու զարմացան անոր վրայ:

18 - Եւ անոր քով եկան սադուկեցիները որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին՝ ըսելով, 19 - Վարդապետ, Մովսէս մեզի գրեց որ եթէ մէկուն եղբայրը մեռնի, ու կինը ձգէ և զաւակ չձգէ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ: 20 - Արդ եթէր եղբայրներ կային, և առաջինը կին առաւ ու մեռաւ և զաւակ չձգեց: 21 - Ու երկրորդը առաւ զանհկա ու մեռաւ, և ան ալ զաւակ չձգեց. նոյնպէս ալ երրորդը: 22 - Ու եթէն ալ զանհկա առին և զաւակ չձգեցին. ամէնէն ետքը կինն ալ մեռաւ: 23 - Ուրեմն յարութեան ատեն, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ. վստան զի եթէն ալ զանհկա կին ունեցան: 24 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Աստուծոյ համար չէ՞ որ մոլորած էք, որ ոչ գիտէք որ և ոչ Աստուծոյ զօրութիւնը: 25 - Քանզի երբ մեռելներէն յարութիւն առնեն, ոչ կին կ'առ-

նեն և ոչ էրկան կը արուին, հապա երկինքի հրեշտակներուն պէս են: 26 - Բայց մեռելներուն համար՝ թէ յարութիւն կ'առնեն, Մովսէսի գիրքին մէջ չէ՞ք կարդացեր մօրենիին վրայ, ի՛նչպէս Աստուած անոր խօսեցաւ՝ ըսելով, Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը: 27 - Անհկա մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն. ուրեմն դուք խիստ մոլորած էք:

28 - Եւ դպիրներէն մէկը եկաւ, ու մտիկ կ'ընէր անոնց՝ երբ վիճարանութիւն կ'ընէին, ու երբ տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր «- Ը-», Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն առաջինը: 29 - Եւ Յիսուս պատասխանեց անոր, Բոլոր պատուիրանքներուն առաջինը «յ» է. Լսէ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր է. 30 - Եւ քու Տէր Աստուածը սիրես քու բոլոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, ու քու բոլոր մտքէդ, և քու բոլոր զօրութենէդ. սահկա է առաջին պատուիրանքը: 31 - Ու երկրորդը ասոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս. ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք չկայ: 32 - Եւ դպիրը ըսաւ անոր, Աղէկ, վարդապետ, շիտակ խօսեցար թէ Աստուած մէկ է, և անկէ զատ ուրիշ մը չկայ. 33 - Եւ բոլոր սրտէ, ու բոլոր մտքէ, և բոլոր անձէ, ու բոլոր զօրութենէ զանհկա սիրելը, ու ընկերը իր անձին պէս սիրելը ամէն ողջակէզներէ ու զոհերէ աւելի է: 34 - Եւ Յիսուս տեսնելով որ անհկա խելացուցութիւնով պատասխան տուաւ, ըսաւ անոր, Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես. և ա՛լ ուրիշ մէկը չէր համարձակեր անոր բան ըլլալ հարցնելու:

35 - Եւ Յիսուս երբ տաճարին մէջ կը սորվեցնէր, պատասխան տուաւ ու ըսաւ, Դպիրները ի՛նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է. 36 - Եւ ինք Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմն, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ: 37 - Ուրեմն Դաւիթ ինք որ զանհկա Տէր կը կոչէ, ի՛նչպէս անհկա անոր որդին կ'ըլլայ. և ժողովուրդէն շատերը յօժարութեամբ մտիկ կ'ընէին անոր:

38 - Եւ իր վարդապետութեանը մէջ կ'ըսէր անոնց, Զգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն փառաւոր հանդերձներով պարտիլ, և շուկաներուն մէջ բարեկներ ինչ քիչքիչ, 39 - Ու ժողովարաններուն մէջ առաջին ակօռները, և ընթրիքներու մէջ առաջին բազմացները. 40 - Որոնք որբեւորիներուն տուները կ'ուստեն, ու Բարքոյ երևնալու համար աղօթքը կ'երկնցնեն. ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին:

41 - Եւ Յիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ ի՛նչպէս ժողովուրդը գանձանակին մէջ ստակ կը ձգէ. և շատ հարուստներ շատ բան ձգեցին: 42 - Աղքատ որբեւորի մըն ալ եկաւ ու երկու լումոյ ձգեց, որ նաքորակիտ մը կ'ընէ: 43 - Եւ իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ Այս աղքատ որբեւորին գանձանակը քառի ձգողներուն ամէնէն աւելի ձգեց. 44 - Վասն զի ամէնը իրենց աւելցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքաւորութենէն՝ ունեցածին բոլորը ձգեց, իր բոլոր սպրուստը:

ԳԼ. ԺԳ

Ու երբ տաճարէն դուրս կ'ելլէր, իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն, Վարդապետ, նայէ ի՛նչպէս քարեր են, և ի՛նչ կերպ շէնքեր: 2 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոր, Ար տեսնե՞ս այդ մեծ շէնքերը. քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի:

3 - Ու երբ անիկա Ձիթենեաց լեւը տաճարին դիմաց նստեր էր, Պետրոս ու Յակոբոս եւ Յովհաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն առանձին, 4 - Ըսէ՞ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՛նչ նշան պիտի ըլլայ այդ ամէն բաներուն կատարուելու տառնը: 5 - Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց ու սկսաւ ըսել, Զգոյշ կեցէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ. 6 - Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոյտրեցնեն: 7 - Բայց երբ լսէք պատերազմներ և պատերազմներու լուրեր՝ մի խռովիք, վասն զի պէտք է ըլլայ, բայց դեռ վերջը չէ: 8 - Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագա-

ւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան. սովեր ու խռովութիւններ ալ պիտի ըլլան. ասոնք ցաւերուն սկիզբներն են: 9 - Զգուշացէք ձեր անձերուն. քանզի ձեզ ատեաններու պիտի մտանեն, ու ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն, և իմ անուան համար կուսակալներու ու թագաւորներու առջեւ պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար: 10 - Եւ առաջ պէտք է որ աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն: 11 - Բայց երբ ձեզ մտանելու տանին, առաջուրնէ հոգ մի ընէք և մի մտածէք թէ ի՛նչ պիտի խօսիք, հապա այն ժամուն ինչ որ ձեզի տրուի՝ գանիկա խօսեցէք. վասն զի ոչ թէ դուք էք որ կը խօսիք, հապա Հոգին Սուրբ:

12 - Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մտանէ, և հայրը՝ որդին, և որդիներ երէն ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք: 13 - Եւ իմ անուան համար ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչեւ վերջը համբերէ՝ անիկա պիտի ապրի: 14 - Ու երբ տեսնէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Իանիէլ մարգարէին ձեռքով ըսուած է, թէ արժան չեղած տեղը կը կենայ, (ով որ կարգայ՝ թող հասկնայ,) այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին. 15 - Եւ ան որ տանիքին վրայ է՝ թող տուն չիջնէ, ու չմտնէ իր տունէն բան մը առնելու. 16 - Եւ ան որ արտին մէջ է՝ թող ետ չդառնայ իր հանդերձը առնելու: 17 - Բայց վա՛յ այն օրերը յի եղողներուն ու ծիծ տուողներուն: 18 - Եւ աղօթքը երբ որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ: 19 - Քանզի այն օրերը այնպիսի նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը Առաւօծոյ ստեղծած արարածներուն սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: 20 - Եւ եթէ Տէրը այն օրերը չկարճեցնէր, բնաւ մարմին մը պիտի չապրէր. բայց ընտելալներուն համար զորոնք ընտրեց՝ այն օրերը կարճեցուց: 21 - Եւ այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ, Ահա հոս է Քրիստոսը՝ կամ Ահա հոն, մի հաւատաք. 22 - Վասն զի սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու նշաններ եւ հրաշքներ պիտի ցուցնեն, որպէս զի եթէ կարելի էր, ընտրեալներն ալ մոլորե-

ցընեն: 23 - Իսկ դուք գզոյշ կեցէք. ահա առաջուրնէ ըսի ձեզի ամէնը: 24 - Բայց այն օրերը այն նեղութեանն ետեւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չապայ, 25 - Եւ աստղերը երկինքէն պիտի թափթըփին, ու երկինքին մէջի զօրութիւնները պիտի շարժին: 26 - Եւ այն ատեն պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամպերու մէջ եկած մեծ զօրութիւնով ու փառքով: 27 - Եւ այն ատեն իր Տրեշտակները պիտի զրկէ, ու իր ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն, երկրի ծայրէն մինչեւ երկինքի ծայրը: 28 - Թզենիէն առակ մը սորվեցէք. երբ անոր ստերը կը կակուղանան ու տերեւները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է: 29 - Նոյնպէս ալ դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ մօտ է դռներուն քով: 30 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի, մինչեւ որ այս ամէն բաները ըլլան: 31 - Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին: 32 - Իսկ այն օրուան ու ժամուն համար մէ'կը չգիտեր, ոչ երկինքի մէջ եղող Տրեշտակները և ոչ Որդին, հապա միայն Հայրը: 33 - Զգոյշ կեցէք, արթուն մնացէք և աղօթք ըրէք, վասն զի չէք գիտեր ատենը ե'րբ է: 34 - Ինչպէս օտար երկիր գացող մարդ մը իր տունը կը թողու, ու իր ծառաններուն իշխանութիւն կու տայ, և ամէն մէկուն իր չորսը, ու դռնապանին կ'ապսպրէ որ արթուն կենայ: 35 - Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ե'րբ կու գայ տանուտերը, իրիկո՞ւնը՝ թէ կէսգիշերի՞ն՝ թէ հաւախօսի՞ն և թէ առտուա՞նց: 36 - Զըլլայ որ յանկարծակի գայ ու ձեզ քունի մէջ գտնէ: 37 - Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզի՝ ամէնուն կ'ըսեմ, Արթուն կեցէք:

ԳԼ. ԺԴ

Եւ երկու օրէն ետեւ զատիկ ու բազարջակերք էր. և քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ի՞նչպէս նենգութեամբ բռնեն զանիկա ու մեռցնեն: 2 - Բայց կ'ըսէին թէ Ոչ տօնին ատենը, որպէս զի ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ: 3 - Ու երբ ինք Բեթանիա էր բորոտ

Միմնի տունը սեղան նստած, կին մը եկաւ՝ որ շիշ մը պատուական սուղ նարդոսի իւղ ունէր, և կտարեց այն շիշը ու անոր գլխուն վրայ թափեց: 4 - Եւ կոյին ամանք որ կը դժուարէին ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար եղաւ այդ իւղին կորուստը: 5 - Քանզի այդ [իւղը] երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար ծախուիլ ու աղքատներուն տրուիլ. և ստատիկ կը յանդիմանէին զանիկա: 6 - Բայց Յիսուս ըսաւ, Թող տուէք ասոր, ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք ատիկա. բարի գործ մը գործեց ինձի: 7 - Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք, ու երբ ուզէք, կրնաք անոնց բարիք ընել, բայց զիս ամէն ատեն չունիք: 8 - Ատիկա ինչ որ ունէր՝ ըրաւ. առաջուրնէ իմ մարմինս օծեց իմ թաղումիս համար: 9 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Բոլոր աշխարհի մէջ, ուր որ այս աւետարանը քարոզուի, ասոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար: 10 - Եւ Յուդա Իսկարիովտացի, տասուերկուքէն մէկը, գնաց քահանայապետներուն, որ զանիկա մտանէ անոնց: 11 - Անոնք ալ լսելով ուրախացան, ու իրեն ստակ տալ խոստացան, և կը փնտռէր թէ ի՞նչպէս պատեհութիւնով մը մտանէ զանիկա: 12 - Եւ բազարջակերաց առաջին օրը, երբ զատիկը կը մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն, Ո՞ւր կ'ուզես երթանք պատրաստենք՝ որպէս զի զատիկը ուտես: 13 - Եւ իր աշակերտներէն երկուքը զրկեց ու ըսաւ անոնց, Քացէք քաղաքը, ու ձեզի մարդ մը պիտի պատահի՝ որ «ին վրայ ջուրի սափսօր մը կը տանի, գացէք անոր ետեւէն: 14 - Եւ ուր որ մտնէ, տանը տերօջը ըսէք, Վարդապետը կ'ըսէ, Ո՞ւր է օթեանը, ուր աշակերտներուս հետ մէկտեղ զատիկը ուտեմ: 15 - Ան ալ ձեզի յարգարուած «պատրաստ մեծ վերնատուն մը պիտի ցուցընէ. հոն պատրաստեցէք ձեզի: 16 - Եւ իր աշակերտները գացին ու քաղաքը մտան, և ինչպէս իրենց ըսաւ՝ «յնդէ» գտան, և զատիկը պատրաստեցին: 17 - Ու երբ իրիկուն եղաւ, տասուերկուքին հետ մէկտեղ եկաւ: 18 - Ու երբ սեղան նստան և կ'ուտէին, ըսաւ Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը որ հի՛մ ինձի հետ

կ'ուտէ, զիս պիտի մատնէ: 19 - Եւ անոնք սկսան տրամիլ, ու մէկիկ մէկիկ ըսել անոր, Միթէ ե՞ս եմ: և ուրիշ մը՝ Միթէ ե՞ս եմ: 20 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Այդ տատուերկուքէն մէկը՝ որ ինծի հետ էր չե՛րս պնակը խոթեց: 21 - Յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մատնուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար:

22 - Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կարեց, և տուաւ անոնց ու ըսաւ, *Առէք, այս է իմ մարմինս: 23 - Եւ գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց, և ամէնն ալ խմեցին անկէ: 24 - Ու ըսաւ անոնց, Ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի: 25-Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետեւ որթին բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև այն օրը երբ զանիկա նոր խմեմ Աստուծոյ թագաւորութեանը մէջ:

26 - Եւ օրհնութիւն մը երգելէ ետեւ Ձիթենեաց լեռը ելան: 27 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ամէնդ ալ այս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու ոչխարները պիտի ցրուին: 28 - Բայց յարութիւն առնելէս ետեւ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ: 29 - Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամէնն ալ գայթակղին, բայց ոչ թէ ես: 30 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ճըշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն ալ այս գիշեր դեռ հաւը երկու անգամ չխօսած երէք անգամ զիս պիտի ուրանաս: 31 - Բայց Պետրոս աւելի կը պնդէր ու կ'ըսէր, Թէև քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ինծի, բնաւ քեզ պիտի չուրանամ. նոյնպէս կ'ըսէին ամէնն ալ:

32 - Եկան այն տեղը որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ իր աշակերտներուն, Հոս նստեցէք, մինչև որ ես աղօթք ընեմ: 33 - Եւ իրեն հետ առնելով Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, սկսաւ խափիլ և վշտանալ: 34 - Այն ատեն ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք և արթուն մնացէք: 35 - Ու քիչ մը առաջ երթալով՝ էր երեւոյն

չե՛րս, գետինը ինկաւ և աղօթք ըրաւ, որ եթէ կարելի է, այն ժամը իրմէ անցնի: 36 - Եւ ըսաւ, Աբբա Հայր, ամէն բան քեզի հնարաւոր է, այս գաւաթը ինծմէ անցուր. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես: 37 - Եւ եկաւ ու զանոնք քնացած գտաւ. և ըսաւ Պետրոսի, Սիմոն, կը քնանաս. չկրցա՞ր ժամ մը արթուն կենալ: 38 - Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէք. հոգին յօժար է, բայց մարմինը տկար: 39 - Եւ նորէն գնաց աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով: 40 - Եւ դարձաւ ու զանոնք նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր, և չէին գիտեր թէ ի՛նչ պատասխան տան անոր: 41 - Երրորդ անգամ ալ եկաւ ու ըսաւ անոնց, Ասկէ ետեւ քնացէք ու հանգչեցէք. բաւական է, ժամը հասաւ. ահա Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը մատնուի: 42 - Ելէք երթանք, ահա մօտեցաւ անիկա որ զիս պիտի մատնէ:

43 - Եւ դեռ անիկա զայս՝ որ կը խօսէր, իսկոյն Յուդա, տատուերկուքէն մէկը, եկաւ, և իրեն հետ քահանայապետներուն և դպիրներուն ու ծերերուն կողմէն շատ բազմութիւն՝ տուրերով ու բիրերով: 44 - Եւ զանիկա մատնողը անոնց նշան մը տուեր էր՝ ըսելով, Ով որ ես համբուրեմ՝ ան է, բռնեցէք զանիկա և զգուշութեամբ տարէք: 45 - Ու անիկա գալով շուտ մը մօտեցաւ անոր և ըսաւ, Ռաբբի, Ռաբբի, ու համբուրեց զանիկա: 46 - Եւ անոնք ձեռք զարկին անոր ու բռնեցին զանիկա: 47 - Եւ քովը կայնողներէն մէկը սուրը քաշեց ու զարկաւ քահանայապետին ծառային, ու անոր ականջը մէկդի հանեց: 48 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնելու: 49 - Ամէն օր ձեր քով էի ու տաճարին մէջ կը տրվեցնէի, և զիս չբռնեցիք. բայց որպէս զի գիրքերը կատարուին: 50 - Այն ատեն բոլոր աշակերտներէն թողուցին զանիկա ու փախան: 51 - Եւ երիտասարդ մը անոր ետեւէն կ'երթար՝ մերկ հարկնին վրայ կտաւ մը առած, ու երիտասարդները զանիկա բռնեցին. 52 - Ան ալ կտաւը թողուց ու մերկ փախաւ անոնցմէ:

*Ո՛հնէ, Առէք, կերէք

53 - Եւ տարին Յիսուսը քահանայապետին, ու անոր քով ժողովուեցան բոլոր քահանայապետները և ծերերը ու դպիրները: 54 - Եւ Պետրոս հեռուանց անոր ետեէն գնաց մինչև ներսը, քահանայապետին գաւիթը, և սպասաւորներուն հետ նստաւ, ու կրակին քով կը տաքնար: 55 - Իսկ քահանայապետները և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ վկայութիւն կը փրնառէին, որպէս զի զանիկա մեռցնեն, և չէին գտներ: 56 - Վասն զի շատերը սուտ վկայութիւն կը վկայէին անոր դէմ, ու վկայութիւնները երբեք - համաձայն չէին: 57 - Եւ ոմանք ելան սուտ վկայութիւն կ'ընէին անոր դէմ՝ ու կ'ըսէին թէ, 58 - Մենք լսեցինք տակէ որ կ'ըսէր, Ես այդ ձեռագործ տաճարը պիտի քակեմ, և երեք օրուան մէջ ուրիշ մը պիտի շինեմ առանց ձեռագործի: 59 - Բայց այնպէս ալ իրենց վկայութիւնը համաձայն չէր: 60 - Եւ քահանայապետը մէջտեղը ոտք ելլելով՝ հարցուց Յիսուսի ու ըսաւ, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասանք քեզի դէմ: 61 - Բայց անիկա լուռ կը կենար և պատասխան մը չէր տար. քահանայապետը նորէն կը հարցնէր անոր ու կ'ըսէր, Ի՞նչն ես ֆրիստոր, օրհնեալ Աստուծոյ Որդին: 62 - Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ. ու պիտի տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերովը եկած: 63 - Եւ քահանայապետը իր հանդերձները պատռեց, ու ըսաւ, Այլ ի՞նչ պէտք են մեզի վկաներ: 64 - Աստուծոյ հայհոյութիւնը լսեցիք. ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. և ամէնը դատապարտեցին զանիկա թէ մահապարտ է: 65 - Եւ ոմանք սկսան թքնել անոր ու երեսը ծածկել և բռունցով ծեծել ու ըսել, Մարգարէացիր. ու սպասաւորները ապտակ կը զարնէին անոր: 66 - Եւ Պետրոս վարը գաւիթն էր, ու քահանայապետին աղախիններէն մէկը եկաւ, 67 - Ու տեսնելով Պետրոսը որ կը տաքնար, նայեցաւ անոր ու ըսաւ, Ի՞նչն ալ Յիսուս նազովրեցիի հետ էիր: 68 - Բայց անիկա ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր և չեմ հասկնար թէ դուն ի՞նչ կը խօսիս. ու երբ դուրս ելաւ գաւիթին դուռը սուղև, հաւը խօսեցաւ: 69 - Եւ աղախինը

նորէն տեսաւ զանիկա, ու սկսաւ բուրբախքը կայնողներուն ըսել թէ Աստուծոնցմէ է: 70 - Եւ անիկա նորէն ուրացաւ: Ու քիչ մը ատենէն ետքը՝ նորէն բուրբախքը կայնողները բին Պետրոսի, Արդարեւ դուն անոնցմէ ես, վասն զի Գալիլեացի ես, և քու գրուցուածքդ ալ նման է ասոյ: 71 - Բայց անիկա սկսաւ անիծել ու երգում՝ ընել՝ ըսելով թէ Ես այն մարդը չեմ ճանչնար, որու համար դուք կ'ըսէք: 72 - Եւ իսկոյն երկրորդ անգամ հաւը խօսեցաւ. ու Պետրոս մտքը բերաւ այն խօսքը զոր Յիսուս իրեն ըսեր էր թէ Ի՞նչ հաւը երկու անգամ չխօսած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս. ու սկսաւ լալ:

ԳԼ. ԺԵ

Եւ առտուանց շուտ մը քահանայապետները ծերերուն ու դպիրներուն հետ՝ և բոլոր ժողովքն ալ խորհուրդ բրին, Յիսուսը կապեցին ու տարին մատնեցին Պիղատոսի: 2 - Եւ Պիղատոս հարցուց անոր - Ե՞ս, Ի՞նչն ես Հրէից թագաւորը. անիկա ալ պատասխան տալով՝ ըսաւ անոր, Ի՞նչն կ'ըսես: 3 - Եւ քահանայապետները շատ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայով: 4 - Ու Պիղատոս նորէն հարցուց անոր՝ ըսելով, Պատասխան մը չե՞ս տար. նայէ ո՞րչափ քեզի դէմ կը վկայեն: 5 - Եւ Յիսուս տակաւին պատասխան մը չտուաւ, մինչև որ Պիղատոս զարմացաւ: 6 - Բայց տօնին տատենը կապուած մը կ'արձակէր անոնց, ո՞րը որ իրենք ուզէին: 7 - Եւ Զիւլ կար Բարաբբաս անուենով իր ընկեր խռովարարներուն հետ կապուած. որոնք խռովութեան տատենը մարդասպանութիւն բրեր էին: 8 - Եւ ժողովուրդը ազազակելով՝ սկսաւ խնդրել - որ շէ ինչպէս միշտ կ'ընէր իրենց: 9 - Եւ Պիղատոս անոնց պատասխան տուաւ ու ըսաւ, Կ'ուզէ՞ք որ Հրէից թագաւորը արձակեմ ձեզի: 10 - Քանզի գիտէր որ քահանայապետները նախանձի համար մատներ էին զանիկա: 11 - Բայց քահանայապետները ժողովուրդը գրգռեցին - որ ինքրեն յաւէտ Բարաբբաս իրենց արձակել: 12 - Նորէն Պիղատոս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Հա-

պա Հրէից թագաւոր ըսածնիդ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ: 13 - Եւ անոնք նորէն կ'աղաղակէին, Խաչը հանեատիկա: 14 - Պիղատոս ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ ըրած է ատիկա: Եւ անոնք ա՛լ աւելի կ'աղաղակէին -- Կ'ըսէին, Խաչը հանեատիկա: 15 - Եւ Պիղատոս ժողովուրդը գո՛հ ընել ուզելով՝ Բարաբբան արձակեց անոնց, ու Յիսուսը ծեծելով՝ ձեռք առաւ որպէս զի խաչուի:

16 - Եւ զինուորները ներս տարին զանիկա գաւիթը, այսինքն պալատը, և բոլոր գունդը մէկտեղ կանչեցին:

17 - Ու հագցուցին անոր ծիրանիններ, և փշեզէն պսակ հիւսելով՝ անոր գլխէ գրին: 18 - Ու սկսան բարե տալ անոր -- ըսել, Ողջոյն քեզ, Հրէից թագաւոր: 19 - Եւ անոր գլուխը եղէգով կը ծեծէին ու կը թքնէին անոր, և ծունկի վրայ գալով երկրպագութիւն կ'ընէին անոր: 20 - Ու երբ ծաղր ըրին զանիկա, ծիրանինները վրայէն հանեցին և իր հանդերձները հագցուցին անոր, ու դուրս հանեցին զանիկա՝ որպէս զի խաչը հանեն:

21 - Եւ Սիմոն Կիւրենացի, Աղեքսանդրոսի և Ռուփոսի հայրը, որ անկէ կ'անցնէր արտէն եկած, պահակ բռնեցին որպէս զի անոր խաչը վերցնէ:

22 - Ու տարին զանիկա Գողգոթա ըստեղը, (որ կը թարգմանուի Գանկի տեղ,) 23 - Եւ անոր զմեւաւոր խառնուած գինի տուին որ խմէ, բայց ինք չառաւ: 24 - Ու խաչը հանեցին զանիկա, և անոր հանդերձները բաժնեցին՝ տնանց վրայ վիճակ ձգելով թէ ո՛վ ի՞նչ պիտի առնէ: 25 - Ժամը երեքն էր ու խաչը հանեցին զանիկա: 26 - Եւ անոր յանցանքի գիրը գրուած էր ՚Ի Հրէից թագաւորն է: 27 - Ու անոր հետ երկու աւագակ խաչը հանեցին. մէկը անոր աջ կողմէն ու մէկը ձախ կողմէն: 28 - Եւ կատարուեցաւ այն գիրը որ կ'ըսէ թէ Անորէններու հետ սեպուեցաւ: 29 - Եւ անոնք որ կ'անցնէին, կը հայհոյէին անոր, գլուխին կը շարժէին ու կ'ըսէին, Աւա՛ղ, որ տաճարը կը քակէիր, և երեք օրուան մէջ կը շինէիր: 30 - Ինքզինքդ ազատէ ու իջիր այդ խաչէն: 31 - Նոյնպէս ալ քահանայապետները գպիրներուն հետ իրենց մէջ ծաղր ընելով՝ կ'ըսէին, Ուրիշները ազատեց,

ինքզինք չկրնար ազատել: 32 - Այդ Գրիստոսը, Իսրայէլի թագաւորը, թող հիմա խաչէն վար իջնէ, որպէս զի տեսնենք ու հաւատանք. և իրեն հետ խաչը ելլողները կը նախատէին զանիկա:

33 - Ու վեցերորդ ժամը հասածին պէս՝ բոլոր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը: 34 - Եւ իններորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Էլօհ, Էլօհ, լու՛մա սարաքթանի. որ կը թարգմանուի, Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ պիտի թողուցիր: 35 - Եւ քովը կայնողներէն ոմանք երբ լսեցին՝ կ'ըսէին թէ Եղիան կը կանչէ: 36 - Ու մէկը վազեց սպունգ մը քացախով լեցուց, ու եղեգի մը անցրնելով՝ առաւ անոր որպէս զի խմէ, և ըսաւ, Թող տուր, տեսնենք թէ Եղիա կու գո՞յ ատիկա վար իջեցնելու:

37 - Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց ու հոգի առաւ: 38 - Ու տաճարին վարագոյրը երկուքի պատռեցաւ վերէն վար: 39 - Եւ հարիւրապետը որ անոր դիմաց կեցեր էր, տեսնելով որ այսպէս աղաղակելով հոգի առաւ, ըսաւ. Արդարեւ Որդի Աստուծոյ էր այս մարդը: 40 - Կիճեր ալ կային, որոնք հեռուանց կը նայէին, որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի, և պզտիկ Յակոբոսի ու Յովսէսի մայրը Մարիամ, և Սողովմէ: 41 - Որոնք երբ Յիսուս Գալիլէա էր, իր ետեւէն կ'երթային, և իրեն սպասաւորութիւն կ'ընէին. և ուրիշ շատ կիներ ալ՝ որոնք իրեն հետ Երուսաղէմ էլեր էին:

42 - Ու երբ իրիկուն եղաւ, այն օրը ուրբաթ, այսինքն շաբաթին առջի օրը, ըլլալով, 43 - Յովսէփ Արիմաթացի, երևելի խորհրդական մը, որ ինք ալ Աստուծոյ թագաւորութեանը կը սպասէր, եկաւ ու համարձակութիւն ընելով՝ Պիղատոսի քով մտաւ, և Յիսուսի մարմինը խնդրեց: 44 - Ու Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած ըլլայ. և հարիւրապետը իրեն կանչելով՝ հարցուց անոր թէ Շա՞տ առեւ է որ մեռաւ: 45 - Ու երբ պոչիք իմացաւ հարիւրապետէն, մարմինը Յովսէփի շնորհեց: 46 - Եւ Յովսէփ կտաւ զնեց, ու զանիկա վար իջեցնելով՝ կտաւովը փաթթեց, ու դրաւ գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորուած էր. և

քար մը գլորեց գերեզմանին դուռը: 47 - Իսկ Մարիամ՝ Մագդաղենացի ու Յովսէփի Բայրը Մարիամ տեսան այն տեղը ուր դրուեցաւ:

ԳԼ. ԺԶ

Ու երբ շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի Բայրը Մարիամ և Սողովմէ խունկեր ծախու առին, որպէս զի գան օծեն զանիկա: 2 - Եւ մէկշաբթի առտուանց շատ կանուխ, երբ արևը կը ծագէր, եկան գերեզմանը, 3 - Ու իրարու կ'ըսէին, Քարը ո՞վ պիտի գլորէ մեզի գերեզմանին դռնէն, 4 - (Ու նայեցան տեսան որ քարը գլորուած էր,) վասն զի շատ մեծ էր: 5 - Եւ ներս գերեզմանը մտնելով երիտասարդ մը տեսան որ աջ կողմը նստեր էր ճերմակ պատմուճան հագած, ու զարհուրեցան: 6 - Եւ անիկա ըսաւ անոնց, Մի զարհուրիք. Յիսուս Նազարեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ. անիկա յարութիւն առաւ. հոս չէ. ահա այն տեղը ուր գրին զանիկա: 7 - Բայց գացէք, ըսէք անոր աշակերտներուն և Պետրոսի, թէ «հ» ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա՝ ինչպէս ձեզի ըսաւ: 8 - Եւ անոնք դողով ու ապշութեամբ բռնուած՝ *ելան ու փախան գերեզմանէն, և մարդո՛ւ բան չըսին, քանզի կը վախնային:

9 - Յիսուս մէկշաբթի առտուանց յարութիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիի երեցաւ, սրմէ եօթը գե հասներ էր: 10 - Անիկա գնաց ա-

նոնց պատմեց՝ որոնք անոր հետ էին, երբ սուգ կ'ընէին ու կու լային: 11 - Իսկ անոնք երբ լսեցին թէ կենդանի է և թէ իրեն երեցաւ, չհաւատացին:


12 - Ետքը ուրիշ կերպորանքով երեցաւ անոնցմէ երկուքին՝ որոնք քալելով արար կ'երթային: 13 - Կէ ա- նոնք գացին ուրիշներուն պատմեցին, ու անոնց ալ չհաւատացին:

14 - Վերջը տասնըմէկին երեցաւ, երբ սեղան նստած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհաւատութիւնը և սիրտերնուն կարծրութիւնը, վասն զի որոնց որ ինք երեցաւ մեռելներէն յարութիւն առած՝ իրենք չհաւատացին:

15 - Եւ ըսաւ անոնց, Գացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն: 16 - Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի, և ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: 17 - Եւ անոնք որ կը հաւատան, այս նշանները անոնց հետ պիտի երթան. Իմ անունովս դուք պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին.

18 - Ձեռքերնին օձեր պիտի բռնեն, և եթէ մահաւիթ դեղ մը խմեն, իրենց պիտի չփրատէ. հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն, ու անոնք պիտի առողջանան:

19 - Արդ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը երկինք համբարձաւ, ու Աստուծոյ աջ կողմը նստաւ: 20 - Եւ անոնք ելան ու ամէն տեղ կը քարոզէին, և Տէրը անոնց գործակից էր, ու խօսքը կը հաստատէր այն նշաններով որոնք անոնց հետ կ'երթային: Ամէն:



ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ



ԳԼՈՒԽ Ա

Որովհետեւ շատերը մեր մէջ հաստատ գիտցուած բաներուն վրայով եղած պատմութիւնը կարգի դնելու

ձեռք զարկին, 2 - Ինչպէս սկիզբէն աչքով տեսնողները և խօսքին սպասաւոր եղողները աւանդեցին մեզի, 3 - Ես ալ որ սկիզբէն այն ամէն բաներուն ճշդութեամբ տեղեկացեր էի, յարմար դատեցի կարգաւ գրել քեզի, ով պատուական Թէոփիլոս, 4 - Որպէս

Ո՛հնէ, շուտ ելան

զի սորված բաներուդ ստուգութիւնը իմանաս:

5 - Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը Աբիսյի դասակարգութենէն Զաքարիա անուևով քահանայ մը կար, որուն կինը Ահարոնի աղջիկներէն էր, և անոր անուևը Եղիսաբեթ, 6 - Ու երկուքն ալ Աստուծոյ առջև արդար էին, և Տէրոջը բոլոր պատուիրանքներուն ու իրաւունքներուն մէջ անարատութեամբ կը քայլէին: 7 - Եւ զաւակ չունէին, վասն զի Եղիսաբեթ ամուլ էր, ու երկուքն ալ օրերնին անցուցած էին:

8 - Ու երբ անիկա իր դասակարգութեան օրերը հասնելուն քահանայական պաշտօնը կը կատարէր Աստուծոյ առջև, 9 - Քահանայութեան սովորութեանը պէս իրեն ինկաւ որ Տէրոջը տաճարը մտնէ խնկարկութիւն ընէ: 10 - Եւ ժողովուրդին բոլոր բազմութիւնը գուշար աղօթքի կայներ էին խունկին ատենը: 11 - Ու երեցաւ անոր՝ Տէրոջը հրեշտակը, որ կայներ էր խունկի սեղանին աջ կողմը: 12 - Եւ Զաքարիա երբ տեսաւ, շփոթեցաւ, ու անոր վրայ վախ մը ինկաւ: 13 - Եւ հրեշտակը ըսաւ անոր, Մի վախնար, Զաքարիա, վասն զի քու աղօթքդ լսուեցաւ, և քու կինդ Եղիսաբեթ քեզի որդի մը պիտի ծնանի, ու անոր անուևը *Յովհաննէս դնես: 14 - Եւ քեզի ուրախութիւն ու ցնծութիւն պիտի ըլլայ, և շատերը անոր ծնանելուն վրայ պիտի ուրախանան: 15 - Վասն զի Տէրոջը առջև մեծ պիտի ըլլայ, և գինի ու օղի պիտի չիսէ. և դեռ իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի: 16 - Ու Իսրայէլի որդիներէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ: 17 - Եւ ինք անոր առջևէն պիտի գոյ Եղիսայի հոգիովը ու զօրութիւնովը, հայրերուն սիրտերը որդիներուն վրայ դարձնելու, և անհնազանդները՝ արդարներուն իմաստութեանը, որպէս զի Տէրոջը բարեկարգ ժողովուրդ մը պատրաստէ: 18 - Եւ Զաքարիա ըսաւ հրեշտակին, Ինչով գիտնամ այդ բանը, որովհետեւ ես ծեր եմ, ու իմ կինս իր օրերը անցուցած է: 19 - Եւ հրեշտակը պատասխան տալով ըսաւ անոր,

Ես եմ Գաբրիէլ որ Աստուծոյ առջև կը կայնիմ, ու զրկուեցայ քեզի զրուցելու և այս բաներուն աւետիսը քեզի տալու: 20 - Եւ ահա համը պիտի ըլլաս դուն, ու պիտի չկրնաս խօսիլ մինչև այն օրը՝ որ այս բաները ըլլան, քանզի չհաւատացիր իմ խօսքերուս, որոնք իրենց ատենին պիտի կատարուին: 21 - Ու ժողովուրդը Զաքարիայի կը սպասէր, և կը զարմանային անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ: 22 - Ու երբ դուրս ելաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ. և իմացան որ տաճարին մէջ տեսելք մը տեսած է. ու ինք նշանով կը խօսէր անոնց հետ, և համը կը կենար: 23 - Ու եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը լմացան, իր սուևը գնաց: 24 - Եւ այն օրերէն ետքը անոր կինը Եղիսաբեթ յղացաւ, ու հինգ ամիս ինքզինք կը պահէր, և կ'ըսէր, 25 - Այսպէս ըրաւ ինծի Տէրը՝ «յ» օրերս, որ իմ վրաս նայեցաւ նախաինքս մարդոց մէջէն վերցնելու:

26 - Ու վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը Աստուծոյ զրկուեցաւ Գալիլէայի մէկ քաղաքը՝ որուն անուևը Նազարէթ էր, 27 - Կոյսի մը՝ մարդու մը նշանուած, որուն անուևը Յովսէփ էր, Գալիլէի տունէն, և այն կոյսին անուևը Մարիամ էր: 28 - Ու հրեշտակը անոր գալով ըսաւ, Ողջոյն քեզ, ով շնորհընկալ է՝ «յ», Տէրը քեզի հետ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես: 29 - Եւ զանի տեսնելով, անոր խօսքին վրայ շփոթեցաւ, ու ինքնիրեն կը մտածէր թէ ի՞նչպէս բան պիտի ըլլայ այս ողջոյնը: 30 - Եւ հրեշտակը անոր ըսաւ, Մի վախնար, Մարիամ, վասն զի Աստուծոյ շնորհք գտար: 31 - Եւ ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանիս, և անոր անուևը Յիսուս պիտի դնես: 32 - Անիկա մեծ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին պիտի ըսուի, և Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Գալիլէի աթուր. ու Յակոբի տանը վրայ յաւիտեան պիտի թագաւորէ, 33 - Եւ անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ: 34 - Ու Մարիամ ըսաւ հրեշտակին, Ի՞նչպէս պիտի ըլլայ այդ բանը, որովհետեւ ես սյր մարդ չեմ գիտեր: 35 - Եւ հրեշտակը պատասխան տալով ըսաւ անոր, Հոգին Սուրբ պիտի գոյ քեզի, ու Բարձրելոյն զօրութիւնը քու վրայ

*Այսինքն, Տէրոջը շնորհքը

հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Արդի պիտի ըսուի: 36 - Եւ ահա քու ազգականդ Եղիաաբեթ՝ անիկա իր պառուութեան առենը արու զաւակով մը յղի է. ու տանկա այն ամուլ ըսուածին վեցերորդ ամիսն է, 37 - Վասն զի Աստուծոյ քով բնաւ բան մը անհնարին չըլլար: 38 - Եւ Մարիամ ըսաւ, Ահա ե՞՞ Տէրոջը աղախինն է՞, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի. ու հրեշտակը անոր քովէն գնաց:

39 - Այն օրերը ելաւ Մարիամ ու արտորնօք լեռնակողմը Յուզայի Բէքաղաքը գնաց. 40 - Եւ մտաւ Զաքարիայի տունը ու Եղիաաբեթի բարետուաւ: 41 - Եւ եղաւ որ երբ լեց Եղիաաբեթ Մարիամի բարեք, մանուկը անոր որովայնին մէջ խաղաց, ու Եղիաաբեթ Սուրբ Հոգիով լեցուեցաւ. 42 - Եւ բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ, Օրհնեալ ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է քու որովայնիդ պատուը: 43 - Եւ այս ինծի ուրկէ՞ եղաւ, որ իմ Տէրոջս մայրը ինծի գայ. 44 - Վասն զի ահա երբ քու բարեքիդ ձայնը ահանջիս եկաւ, մանուկը որովայնիս մէջ խաղաց ուրախութեան: 45 - Եւ երանի՛ անոր որ *հաւատացեր է, քանզի՞ պիտի կատարուին այն բաները որոնք Տէրոջմէ ըսուեցան իրեն: 46 - Եւ Մարիամ ըսաւ, Իմ անձս կը մեծցնէ Տէրը, 47 - Եւ իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծովս: 48 - Վասն զի իր աղախինին խոնարհութեանը նայեցաւ. քանզի ահա առկէ ետեւ բոլոր ազգերը ինծի երանութիւն պիտի տան: 49 - Վասն զի Հօգորը ինծի մեծամեծ բաներ ըրաւ, ու անոր անունը սուրբ է: 50 - Եւ անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է ազգէ ազգ: 51 - Իր բազումովը զօրութիւն ցուցուց, ցիրուցան ըրաւ ամբարտաւանները իրենց սրտին խորհուրդովը: 52 - Զօրաւորները իրենց ամբարտաւաններէն իջեցուց, ու խոնարհները բարձրացուց: 53 - Անօթիները բարիքներով լեցուց, և հարուստները պարապ ճամբեց: 54 - Օգնութիւն ըրաւ իր Խորայէլ ծառային՝ իր ողորմութիւնը միտք բերելով, 55 - Ինչպէս ինք խօսեցաւ մեր հայրերուն,

Աբրահամի ու անոր սերունդին յաւիտեան:

56 - Եւ Մարիամ անոր քով երեք ամիսի չափ կեցաւ, ու իր տունը դարձաւ:

57 - Ու Եղիաաբեթի ծնանելու ժամանակը լեցուեցաւ, ու որդի մը ծնաւ:

58 - Եւ լսեցին անոնք որ անոր բոլոր տիքը կը բնակէին, ու անոր ազգականները, որ Տէրը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը ցուցուց, և անոր հետ կ'ուրախանային:

59 - Ու եղաւ որ ութերորդ օրը տղան թլփատելու եկան, և զանիկա իր հօրը անունովը Զաքարիա կը կոչէին: 60 - Իսկ անոր մայրը պատասխան տուաւ ու ըսաւ, Այ, հապա Յովհաննէս պիտի կոչուի: 61 - Եւ անոր ըսին թէ Քու ազգականներուդ մէջ մէկը չկայ որ այս անունով կոչուի: 62 - Աչք կ'ընէին անոր հօրը թէ ի՞նչ անունով կ'ուզէ որ անիկա կոչուի: 63 - Ան ալ տախտակ մը ուզեց ու գրեց՝ ըսելով, Յովհաննէս է ատոր անունը. ու ամէնը զարմացան: 64 - Եւ իսկայն բացուեցաւ անոր բերանը ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ'օրհնէր զԱստուած: 65 - Եւ վախ մը ինկաւ այն ամէնուն վրայ՝ որոնք անոնց բոլոր տիքը կը բնակէին. ու այս ամէն բաները Հրեաստանի բոլոր լեռնակողմը կը զրուցուէին: 66 - Եւ ամէն լսողները իրենց սիրտերուն մէջ դրին, ու կ'ըսէին, Արդեօք այս տղան ի՞նչ պիտի ըլլայ. ու Տէրոջը ձեռքը անոր հետ էր:

67 - Եւ անոր հայրը Զաքարիա Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարեացաւ ու ըսաւ, 68 - Օրհնեալ ըլլայ Խորայէլի Տէր Աստուածը, որ այցելութեան ելաւ և իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ: 69 - Ու մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ ծառային տունէն. 70 - (Ինչպէս սուրբերուն բերնովը խօսեցաւ, որոնք աշխարհի սկիզբէն ի վեր անոր մարգարէներն էին.) 71 - Փրկութիւն մեր թշնամիներէն և բոլոր մեզ ատողներուն ձեռքէն, 72 - Ողորմութիւն ընելու մեր հայրերուն վրայ, և իր սուրբ ուխտը միտք բերելու, 73 - (Այն երգումը զոր մեր հօրը Աբրահամի ըրաւ,) մեզի տալու, 74 - Որպէս զի մեր թշնամիներուն ձեռքէն ազատուելով՝ առանց վախի զանիկա պաշտենք 75 -

*Կա՛մ, հաւատացեր է թէ

Արբուժիւնով ու արգարուժիւնով անոր առջև մեր Իսահայի բարձր օրերուն մէջ: 76 - Եւ դուն, ով մանուկ, Խորթերդին մարգարէն պիտի կոչուիս, վասն զի Տէրջը երեսին առջևէն պիտի երթաս՝ անոր ճամբաները պատ-բաստելու: 77 - Անոր ժողովուրդին դիտցնելու երեսն փրկուածիւնը իրենց մեղհերուն թողուժիւնովը: 78 - Մեր Աստուծոյն գլխած ողորմութեանը համար, որով Մագող արեւելք վերէն մեզի այցելութեան եկաւ: 79 - Թաւարի և մահաւան ստուերի մէջ նստողներուն լըս ապու, -- մեր սպերը խողա-ղութեան ճամբուն մէջ շիտկելու:

80 - Եւ ազան կը մեծնար ու կը զօրանար հոգիով, և անապատներուն մէջ էր մինչև այն օրը երբ ինք Խրա-յէլի երեցաւ:

ԳԼ Բ

Ու եղաւ որ այն օրերը Օգոստոս կայսրէն հրաման ելաւ որ բոլոր աշխարհ գրուի: 2 - (Այս առաջին աշխարհագիրը եղաւ Կիւրենոսի Սիւրիայի վրայ կուստակալութիւն ըրած ատենը): 3 - Եւ ամէնը կ'երթային աշխարհագիրը մանկուն՝ ամէն մէկը իր քաղաքին մէջ: 4 - Յովսէփ ալ Գալիլեայէ, Նազարէթ քաղաքէն, ելաւ դէպ ի Հրէաստան Գաւիթի քաղաքը որ Բեթլէհէմ կ'ըսուի, (իրեն Գաւիթի տունէն ու ազգաստճմէն ըլլալուն համար): 5 - Աշխարհագիրը մանկու Մարիամի հետ մէկտեղ, որ իր նշանածն էր, և յղի էր: 6 - Ու եղաւ որ երբ անոնք հոն էին, անոր ծնունելու օրերը լեցուեցան: 7 - Եւ իր անգրուելի որդին ծնաւ, ու խանձարուրով փաթթեց և զանիկա մտուրին մէջ պատկեցուց, վասն զի իջեանին մէջ իրենց սեղ չկար:

8 - Եւ այն տեղը հովիւներ կային դաշտի մէջ կեցած, որոնք իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ընէին: 9 - Եւ ահա Տէրջը հրեշտակը անոնց վրայ իջաւ, ու Տէրջը փառքը անոնց բողբոխքը ծագեցաւ: 10 - Եւ ինչպէս շատ վախցան: 11 - Եւ հրեշտակը բաւ անոնց, Մի վառնար, վասն զի ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետար կու տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ: 11 - Վասն

զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Գաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է: 12 - Եւ այս ձեզի նշան մը ըլլայ: մանուկ մը պիտի գտնէք խանձարուրով փաթթուած -- մտուրի մէջ պատկած: 13 - Եւ իսկոյն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք Վաստուած կ'օրհնէին ու կ'ընէին, 14 - Երեսնէ բարձրութեան մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խողաղութիւն, մարգոց մէջ հաճութիւն: 15 - Ու եղաւ որ երբ հրեշտակները անոնցմէ երկինք վերցան, հովիւները իրարու լսին, եկէք մինչև Բեթլէհէմ երթանք, ու տեսնէք Բեթլէհէմ այս եղած բանը, զոր Տէրը մեզի ցուցուց: 16 - Ու եկան արտոնօք, և գտան Մարիամը ու Յովսէփը և մտուրին մէջ պատկած մանուկը: 17 - Ու երբ տեսան, խնայցին այն խօսքին վրայով որ այս մանուկին համար իրենց զրուցուեցաւ: 18 - Եւ ամէնը որ կը լսէին, կը գործնանային այն բաներուն վրայ զորոնք հովիւները իրենց կը զրուցէին: 19 - Իսկ Մարիամ այս ամէն բաները կը պահէր, ու իր սրտին մէջ կը մտածէր: 20 - Եւ հովիւները դարձան, կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած այն ամէն բաներուն համար զորոնք լսեցին ու տեսան, ինչպէս իրենց զրուցուած էր:

21 - Ու երբ ութ օրերը լման եղան *մանուկը թափառելու, անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ հրեշտակէն կոչուած էր՝ դեռ ինք յօրը որովայնին մէջ չյղացած:

22 - Ու Մովսէսի օրէնքին համեմատ երբ Գաւիթի մարգարէութեան օրերը լման, Երուսաղէմ տարին զանիկա Տէրջը առջև հանեցան, 23 - (Ինչպէս զրուած է Տէրջը օրէնքին մէջ, թէ Ամէն արու որ արգանդ կը բանայ՝ Տէրջը սուրբ ըլլուի): 24 - Ու Տէրջը օրէնքին մէջ ըրուածին պէս ընծայ տալու՝ զոյգ մը ստարակ կամ աղաւնիի երկու ձագ: 25 - Եւ ահա Երուսաղէմի մէջ մարդ մը կար, որուն անունը Սիմէօն էր, ու այն մարդը արդար ու ստուածածովսի էր, և Խրայիլի միթարութեանը կը սպասէր, ու Սուրբ Հոգին անոր վրայ էր: 26 - Եւ անոր շայտնուած էր Սուրբ Հոգիէն թէ մահ

*Ո՞ւնչ, զանիկա +Ո՞ւնչ, անոր

պիտի շտեմնէ, մինչև Տէրոջը Օծեայր տեսնէ: 27 - Եւ Հոգիով տաճարը եկաւ. ու երբ ծնողքը բերին Յիսուս մանուկը, որպէս զի օրէնքին սովորութեանը պէս անոր համար ընեն, 28 - Ինք այ զանիկայի զերկը առաւ, և օրհնեց զԱստուած ու բաւ, 29 - Այ հիմա, ով Տէր, արձակես թու ծառայք խաղաղութիւնով քու խօսքիդ համեմատ. 30 - Վասն զի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ, 31 - Չոր բոլոր ժողովուրդներուն առջև պատարասեցիր, 32 - Լոյս մը հեթանոսները լուսաւորեցրու, և փառք քու Խրայէլ ժողովուրդիդ: 33 - Եւ Յովսէփ ու անոր մայրը զարմացած էին այն բաներուն վրայ որոնք անոր համար կը խօսուէին: 34 - Ու Սիմէոն օրհնեց զանկը, և անոր մօրը Մարիամի բաւ, Ահա այս Իսրայէլ Խրայէլի մէջ շատ մարդոց իյնալուն ու ելլելուն համար, ու չսկսուակութեան նպատակ մը բլլալու համար կեցած է. 35 - (Եւ քու սրտեդ ալ թուր մը պիտի անցնի.) որպէս զի «այս» շատ սիրտերէ խորհուրդներ յայտնուին:

36 - Եւ հին էր Աննա մտրգարէն, Փանուելի աղջիկը, Ասերի ցեղէն. տսիկա իր օրերը շատ անցուցած էր, երկանք հետ եօթը տարի կենայով իր կուսութեան ժամանակէն, 37 - Եւ որբևարի էր գրեթէ ու թէտուրչորտ տարուան, որ տաճարէն չէր գատուեր, հապա ծովով և աղօթքով Աստուծոյ ծառայութիւն կ'ընէր զիշեր ու ցորեկ: 38 - Եւ ասիկա նոյն ժամուն եկաւ, ու Տէրոջը զոհութիւն կու տար, ու անոր վրայով կը խօսէր այն ամէնուն՝ որոնք Երուսաղէմի մէջ փրկութեան կը սպասէին:

39 - Ու երբ ամէն բան կատարեցին Տէրոջը օրէնքին համեմատ, նորէն Կալիէա դարձան իրենց Նաղարէթ քաղաքը: 40 - Եւ մանուկը կը մեծնար ու հոգւով կը զօրանար իմաստութիւնով լեցուած, ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր:

41 - Եւ անոր ծնողքը ամէն տարի գատկի ածին Երուսաղէմ կ'երթային: 42 - Ու երբ անիկա տասուերկու տարեկան եղաւ, ածինն սովորութեանը պէս երբ անկը Երուսաղէմ ելան, 43 - Եւ երբ այն օրերը լմնցուցին ու նորէն ետ դարձան, Յիսուս մանուկը

Երուսաղէմ մնաց. և Յովսէփ ու անոր մայրը չէին գիտեր. 44 - Հապա կարծեցով թէ անիկա ճամբորդներուն հետ է, մէկ օրուան ճամբայ զացին, ու կը փնտաւէին զանիկա իրենց աղաւկաններուն և ճանչուորներուն մէջ: 45 - Ու երբ չգտան, նորէն Երուսաղէմ դարձան զանիկա փնտաւելու: 46 - Ու եղաւ որ երեք օրէն ետքը տաճարին մէջ գտան զանիկա, որ վարդապետներուն հետ նստեր էր, անոնց մօտի կ'ընէր ու անոնց բան կը հարցնէր: 47 - Եւ ամէն անոր ախանջ զնոյնները կը զարմանային անոր իմաստութեանը ու պատասխաններուն վրայ: 48 - Ու երբ տեսան զանիկա, ապշած մնացին. և անոր մայրը բաւ անոր, Որդեակ, ինչո՞ւ համար մեզի պիտի պէս ըրիր. ահա քու հայրդ ու ետ խիտ վշտացած քեզ կը փնտաւէինք, 49 - Եւ բաւ անոնց, Չիս ինչո՞ւ կը փնտաւէիք. չէի՞ք զիտք թէ ինձի պէտք է որ իմ Հօրս *աստուծոյ բլլամ: 50 - Եւ անկը չհասկցան այն խօսքը զոր իրենց վրուցեց: 51 - Եւ իջաւ անոնց հետ ու գնաց Նաղարէթ, և անոնց հնազանդ էր. բայց անոր մայրը այս ամէն խօսքերը իր սրտին մէջ կը պահէր:

52 - Եւ Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, և Աստուծո՞ժ ու մտրոցմէ շնորհք բերեալ:

ԳԼ Գ

Տիբերիոս կայսրին թագաւորութեան տասնըհինգերորդ տարին, Պոնտացի Պիղատոսի Հրէաստանի վրայ կուսակալութիւն բրած ատենը, ու Հերովդէտի Գալիլեացաց վրայ չորրորդապետութիւն տեսնելու, և անոր եղբորը Փիլիպպոսի Իտուրացաց և Տրաքոնացաց երկրին վրայ չորրորդապետութեան ատենը, և Լիւսանիայի Արիլինացաց վրայ չորրորդապետութեան ատենը, 2 - Եւ Աննայ ու Կոլիբափայի քահանայապետութեան ատենը Աստուծոյ խօսքը եղաւ Չաքարիայի որդւոյն Յովհաննէսի վրայ անապատին մէջ: 3 - Ու անիկա եկաւ Յորդաննու լոյսը կողմերը, և ա-

* Կ-ժ. Գ-բ. Գ-բ. Գ-բ.

պաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր մեղքերու թողութեան համար. 4 - Ինչպէս Եսայի մարգարէին խօսքերուն գիրքին մէջ գրուած է՝ ըսելով, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք. 5 - Ամէն ձոր պիտի լեցուի, և ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, և ծուռը պիտի շիտկուի, ու խորտուբորտ տեղերը հարթ ճամբաներ պիտի ըլլան: 6 - Եւ ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի տեսնէ:

7 - Աւ իրմէ մկրտուելու ելող ժողովուրդներուն ըսաւ, Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենէն փախչիլ: 8 - Աւրեմն ապաշխարութեան արժանաւոր պատուներ քերէք, և մի սկսիք ձեր ներսիդին ըսել թէ Մենք մեզի հայր՝ Աբրահամը ունինք, քանզի կ'ըսեմ՝ ձեզի որ Աստուած կարող է սյս քարերէն Աբրահամի որդիներ հանել: 9 - Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը դրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի: 10 - Եւ ժողովուրդները կը հարցնէին իրեն ու կ'ըսէին, Աւրեմն ի՞նչ ընենք: 11 - Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ով որ երկու հանդերձ ունի, թող Բէլ չունեցողին տայ. և ով որ կերակուր ունի, նոյնպէս ընէ: 12 - Մաքաւորներ ալ եկան մկրտուելու, ու ըսին անոր, Վարդապետ, մենք ի՞նչ ընենք: 13 - Ան ալ ըսաւ անոնց, Ձեզի հրամայուածէն աւելի բան չպահանջէք: 14 - Զինուորներն ալ կը հարցնէին անոր ու կ'ըսէին, Եւ մենք ի՞նչ ընենք. ըսաւ անոնց, Մէ՛կը մի հարստահարէք. և յարգու՛ - իրայ զբարտաութիւն մի ընէք, ու ձեր թոշակով բաւականացէք:

15 - Երբ ժողովուրդը կը սպասէր, և ամէնը իրենց սիրտերուն մէջ կը մտածէին Յովհաննէսի համար՝ թէ ան է արդեօք Քրիստոսը, 16 - Յովհաննէս պատասխան տուաւ ամէնուն ու ըսաւ, Ես ձեզ ջրով կը մկրտեմ, բայց ինձմէ աւելի զօրաւորը կու գայ, որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ, անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Արքով և կրակով. 17 - Արուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, ու ցորենը իր ամբարը

պիտի ժողովէ, և յարդը չմարող կրակով պիտի այրէ: 18 - Աւրիշ շատ բաներ ալ կը քարոզէր՝ ժողովուրդը յորդորելով:

19 - Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ յանդիմանուելով իր *եղբոր կնոջ, Հերովդիայի, համար, և բոլոր չարութիւններուն համար, զորոնք Հերովդէս գործեց, 20 - Այն ամէնուն վրայ զայս ալ աւելցուց, որ Յովհաննէսը բանախ մէջ գոցեց:

21 - Աւ երբ մկրտուեցաւ բոլոր ժողովուրդը, և Յիսուս ալ մկրտուելով՝ աղօթք կ'ընէր, երկինք բացուեցաւ, 22 - Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երեւութով աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու երկինքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր, Իուն ես իմ սիրելի Արդիս, քեզի հաւնեցայ:

23 - Եւ ինքն Յիսուս սկսեր էր գրեթէ երեսուն տարեկան ըլլալ, որ (ինչպէս կը կարծուէր) որդին էր Յովսէփի, որ Հեղիի, որ Մատաթի, 24 - Ար Ղեւիի, որ Մեղքիի, որ Յաննէի, որ Յովսէփի, 25 - Ար Մատաթիայի, որ Ամովսի, որ Նաուուի, որ Եսդիի, որ Նանգէի, 26 - Ար Մատաթի, որ Մատաթիայի, որ Սէմէիի, որ Յովսէփի, որ Յուդայի, 27 - Ար Յովհաննայի, որ Իսայի, որ Զօրաբաբէլի, որ Սաղաթիէլի, որ Ներիի, 28 - Ար Մեղքիի, որ Ադգիի, որ Կովսամի, որ Եղմովդադի, որ Էրի, 29 - Ար Յովսէսի, որ Եղիազարի, որ Յովրիմի, որ Մատաթի, որ Ղևիի, 30 - Ար Սիմէօնի, որ Յուդայի, որ Յովսէփի, որ Յովսանի, որ Եղիակիմի, 31 - Ար Մէլեայի, որ Մայնանի, որ Մատաթայի, որ Նաթանի, որ Դաւիթի, 32 - Ար Յէսսէի, որ Ովբէթի, որ Բոոսի, որ Սաղմոնի, որ Նաասանի, 33 - Ար Ամինադաբի, որ Աբամի, որ Եսրոնի, որ Փարէսի, որ Յուդայի, 34 - Ար Յակոբի, որ Իսահակի, որ Աբրահամի, որ Թարայի, որ Նաքովրի, 35 - Ար Սերուգի, որ Ռազաւի, որ Փաղէկի, որ Երերի, որ Սաղայի, 36 - Ար Կայնանի, որ Արփաքսադի, որ Սէմի, որ Նոյի, որ Ղամէքի, 37 - Ար Մաթուսաղայի, որ Ենովքի, որ Յարեգի, որ Մաղաղիէլի, որ Կայնանի, 38 - Ար Ենովսի, որ Սէթի, որ Ադամի, որ Աստուծոյ:

*Ո՛հան, եղբոր Փիլիպպոսի

ՊԼ. Գ

Եւ Յիսուս Հոգևով Արբով լեցուած՝ Յորդանանէ դարձաւ, ու Հոգիէն անապատը տարուեցաւ, 2 - Եւ քառասուն օր Սատանայէ փորձուեցաւ. ու այն օրերը բուն մը չկերաւ, և այն օրերն լմննալէն ետև անօթեցաւ:

3 - Աւ Սատանայ ըսաւ անոր, Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ այդ քարին որ հաց ըլլայ: 4 - Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Քրուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա Աստուծոյ ամէն խօսքովը:

5 - Եւ Սատանայ բարձր լեռ մը հանելով զանհկա, աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր վայրկեանի մը մէջ: 6 - Եւ Սատանայ ըսաւ անոր, Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ, վասն զի ինձի յանձնուած է, և որու որ ուզեմ՝ կու տամ զանհկա: 7 - Աւտի եթէ դուն իմ առջևս է՞ս երկրպագութիւն ընես, ամէնը քեզի ըլլայ: 8 - Եւ Յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, *Քրուած է թէ Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանհկա պաշտես:

9 - Եւ զանհկա տարաւ Երուսաղէմ ու տաճարին աշտարակին վրայ կայնեցուց, ու ըսաւ անոր, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար ձգէ: 10 - Վասն զի դրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի ապապրէ քեզի համար որ քեզ պահեն. 11 - Աւ ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես: 12 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ըտուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես: 13 - Աւ երբ Սատանայ ամէն փորձութիւնը կատարեց, ատեն մը ետ կեցաւ անկէ:

14 - Եւ Յիսուս Հոգիին զօրութիւնովը Գալիլեա դարձաւ, ու անոր համբաւը այն գաւառին ամէն կողմերը տարածուեցաւ: 15 - Եւ ինք անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր, ու ամէնէն կը փառաւորուէր:

16 - Աւ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու

ելաւ որ կարդայ: 17 - Եւ տուին անոր Եսայի մարգարէին գիրքը. ու երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր, 18 - Տէրօջը Հոգին իմ վրաս է.

*վասն զի զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս զրկեց կատարած սիրտ ունեցողները բժշկելու, 19 - Գերիներուն ազատութիւն և կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարբատահարութիւն կրողները ազատ թողտալու, Տէրօջը ընդունելի տարին քարոզելու: 20 - Եւ գիրքը դոցելով՝ տուաւ սպասաւորին ու նստաւ. և ժողովարանը եղողներուն ամէնը աչքերնին տնկած անոր կը նայէին: 21 - Եւ սկսաւ անոնց ըսել, Այսօր այս գրուածը կ'անարուեցաւ ու ձեր ականջները լսեցին: 22 - Եւ ամէնը անոր վրայ կը վկայէին, ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, ու կ'ըսէին, Ասիկա Յովսէփի որդին չէ՞: 23 - Եւ ըսաւ անոնց, Իրաւ որ դուք ինձի պիտի ըսէք այս առակը, Բժիշկ, քու անձդ բժշկէ.

որչափ բաներ լսեցինք որ կափառնալու մէջ եղան, հոս ալ ըրէ քու քաղաքիդ մէջ: 24 - Եւ ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ: 25 - Եւ արդարեւ կ'ըսեմ ձեզի, թէ Շատ որբեւորներ կային Եղիայի օրերը Իսրայէլի մէջ, երբ երեք տարի ու վեց ամիս երկինք գոցուեցաւ, այնպէս որ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ. 26 - Բայց Եղիա անոնցմէ մէկուն չզրկուեցաւ, հապա միայն Սիդոնացուց Սարեփթա գաւառին մէջ որբեւորի կնոջ մը: 27 - Եւ շատ բարոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, ու անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, հապա միայն Նէեման Սորի: 28 - Եւ ժողովարանին մէջ ամէնն ալ բարկութիւնով լեցուեցան՝ երբ այս խօսքը լսեցին. 29 - Աւ ելան զանհկա քաղաքէն դուրս հանեցին, ու տարին զանհկա մինչև այն լեռանը ցցուած ծայրը, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր, որպէս զի զանհկա բարձր տեղէն վար ձգեն: 30 - Բայց ինք անոնց մէջէն անցաւ գնաց:

31 - Եւ իջաւ Գալիլեայի Կափառնայում քաղաքը, ու շաբաթ օրերը

*Ո՞ւր, Ետիս գնա, Սատանայ, վասն զի գրուած

*Կա՞մ, անոր համար

էր սորվեցնէր անոնց: 32 - Եւ կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւնով էր անոր խօսքը: 33 - Եւ ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ գեւի ոգի ունէր, ու մեծ ձայնով մը ազազակեց: 34 - Բսելով, թող ատըր, դուն մեզի չես ինչ բան ունիս, Յիսուս նա զտրեցի. միթէ մեզ կորսնցնելով եկար. գիտեմքեզ ո՞վ ես. Աստուծոյ Սուրբը: 35 - Եւ Յիսուս սաստեց անոր՝ բսելով, Պապանձէ ու ել ասիկէ. ու դեր գահիկա շէրսյ քոսնաւնէրսն մէջտեղը գետինը վարկաւ, և ելաւ անկէ, ու ֆնաս մը շտուաւ անոր: 36 - Եւ զարմանք եկաւ ամենուն վրայ, և իրարու չեա կը խօսէին ու կ'ըսէին, Այո՞ ինչ խօսք է, որ իշխանութիւնով և զօրութիւնով կը ճարտուցէ պիղծ ոգիներուն, ու կ'իլլեն: 37 - Եւ անոր ճամբաւը ատրածուեցաւ շրջակայ գաւառին ամէն տեղերը:

38 - Աւ ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի տունը մտաւ: 39 - Սիմոնի զբանջն ուլ սաստիկ ջերմով կը ասնջուէր, ու անոր ճամբար աղաչեցին իրեն: 40 - Եւ Յիսուս անոր վրայ կայելով՝ սաստեց ջերմին, որ թողուց զանիկա. և շատ մը ելաւ ու անոնց սպասաորութիւն կ'ընէր:

41 - Եւ արևին մարը մտած ատենը՝ ամէն անոնք որ ունէին տեսակ տեսակ ցուերով չիւանդներ, իրեն բերին զանոնք. ինք ուլ անոնցմէ ամէն մէկուն վրայ ձեռք դնելով՝ բժշկեց զանոնք: 42 - Դեեր ուլ կ'իլլէին շատերէն, կ'ազազակէին ու կ'ըսէին թէ Դուն ես Քրիստոս, Աստուծոյ Արդին. և ինք կը աստար, ու թող չէր ասը անոնց որ խօսին, վասն զի գիտէին թէ ինք Քրիստոսն է:

43 - Աւ երբ ցորեկ եղաւ, ելաւ ու զնոց անապատ տեղ մը, և ժողովարդները կը փնտռէին զանիկա. եկան մինչև անոր, ու կը ստիպէին զանիկա որ իրենցմէ չ'երթայ. 44 - Բայց անիկա բաւ անոնց, Ատք է ինձի որ ուրիշ քաղաքներու ուլ Աստուծոյ թագաորութիւնը քարոզեմ, քանզի այդ բանին ճամբար զրկուած եմ: 45 - Աւ Գալիլեայի ժողովարաններուն մէջ կը քարոզէր:

Աւ եղաւ որ երբ ժողովուրդը անոր բողբոջէր զիպուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու ճամբար, ինք ուլ Գեննետաւրէթի ծովակին քով կեցեր էր: 2 - Աւ տեսաւ երկու նաւեր որոնք ծովակին քով կեցեր էին, և ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուսկանները կը լուային: 3 - Ինք այն նաւերէն մէկուն մէջ մտաւ որ Սիմոնին էր, և աղաչեց անոր որ քիչ մը ցամաքէն քուսն մէջ տանի, և նստելով նաւուն մէջէն ժողովուրդներուն կը սորվեցնէր:

4 - Աւ երբ խօսելէն դադարեցաւ, բաւ Սիմոնի, Ասաջ ասը նաւը զեպի խորունկը, և ուսկաններնիդ ձրեցէք չափ որսալու: 5 - Աւ Սիմոն պատասխան տալով՝ բաւ անոր, Վարդապետ, բողբոջի շերտ աղխատեցանք ու բուն մը չըսնեցինք. բայց քու խօսքիդ ճամբար ուսկանը ձգեմ: 6 - Աւ երբ զայս բրին, խիտ շատ ձուկեր ժողվեցին մէջը, ու իրենց ուսկանը կը պատուէր: 7 - Եւ ուշք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց. և եկան ու երկու նաւերն ուլ լեցուցին, մինչև որ ընկզմելու մտաէին: 8 - Սիմոն Պետրոս երբ տեսաւ, Յիսուսի ձուկերուն ինկաւ ու բաւ, Տէր, իմ քովէս մէկդի գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ: 9 - Վասն զի սալութիւնը պատեց զանիկա և անոր չեա երող ամէնը՝ այն իրենց բուն ձուկերուն որսին ճամբար. 10 - Երբ պէս ուլ Ձերեգեստի որդիները, Յակորոս և Յովճաննէս, որոնք Սիմոնի ընկերներն էին. ու Յիսուս բաւ Սիմոնի, Եի վախար, սակէ ետե մարդոց որ սարգ պիտի ըլլատ: 11 - Եւ նաւերը ցամաքը ճանելով՝ ամէն բան թողուցին ու անոր ետեկն գացին:

12 - Աւ եղաւ որ երբ ինք քաղաքի մը մէջ էր, Ասոջ մարդ մը բորտութիւնով լեցուն՝ երբ Յիսուսը տեսաւ, երեսի վրայ ինչպով ապաչեց անոր ու բաւ, Տէր, եթէ ուզես՝ կրնաս զիս մարբել: 13 - Եւ Յիսուս իր ձեռքը երկեցնելով զպաւ անոր, ու բաւ, Կ'ուզեմ, մարբուէ. և շատ մը բորտութիւնը անկէ գնաց: 14 - Աւ ինք պատուիրեց անոր որ մարդու չըսէ, ճապա, շաւ, Գնաքեզ քաճանային ցուցուր, և Մովսէսի պատուիրածին

պէս քու մտքորեւելուդ ընծան սուր, անոնց վկայութիւն ըլլալու համար: 15 - Եւ անոր վրայով խօսքը աւելի կը տարածուէր ու շատ ժողովուրդներ կը ժողովուէին մտիկ ընելու, և անով իրենց հիւանդութիւններէն բժշկուելու: 16 - Ու ինք անապատ տեղեր կը քաշուէր և աղօթք կ'ընէր:

17 - Ու եղաւ որ որ մը ինք կը սորվեցնէր, ու փարիսեցիներ և օրինաց վարդապետներ նստած էին, որոնք Գալիլեայի ու Հրէասանիի ու Երուսաղէմի բոլոր գիւղաքաղաքներէն ժողովուած էին. ու Տէրոջը զօրութիւնը Եֆեայ էր գանտք բժշկելու: 18 - Եւ սահա քանի մը մարդիկ անդամայցծ մարդ մը մասիճովը բերին, և հնարը կը փնտռէին թէ ի՞նչպէս զանիկաներս խօթեն ու դնեն անոր առջև: 19 - Ու երբ բազմութենէն ճեփաչ չէին գտներ՝ որ անիկ ներս խօթեն զանիկա, տանիքին վրայ ելան, և զանիկա կը մինտրներուն մէջէն մասիճովը մէջատեղը Յիսուսի առջև իջեցուցին: 20 - Եւ անիկա տեսնելով անոնց հաւատաքը՝ ըսաւ անոր, Ով մարդ, քու մեղքերդ քեզի ներուած են: 21 - Եւ դպիրները ու փարիսեցիները սկսան խորհիլ ու ըսել, Ով է ասիկա՞ որ հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած:

22 - Եւ Յիսուս իմանալով անոնց խորհուրդները՝ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Սիրաբերնուդ մէջ ի՞նչ կը խորհիք: 23 - Ո՞րը աւելի դիւրին է, Քու մեղքերդ քեզի ներուած են՝ ըսե՞լը, թէ Նիլը ու քալի՞ ըսելը: 24 - Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ անդամայցծին,) Քեզի կ'ըսեմ, Նիլը մասիճոգ առ ու սունդ գնա:

25 - Ան ալ իսկոյն անոնց առջև ելաւ, ու վրան սուա ինչ բանի վրայ որ պատկած էր, և գնաց իր տունը, ու Աստուծոյ փառք կու տար: 26 - Եւ ամէնը ապշած մնացին, ու Աստուծոյ փառք կու տային, և վախով լեցուած՝ կ'ըսէին թէ Այսօր նորանշան բաներ տեսանք:

27 - Եւ այս բաներէն ետե ելաւ անիկ, ու տեսաւ մոզբաւոր մը, որուն անունը Ղեւի էր որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետեէս

եկուր: 28 - Ան ալ թողուց ամէնը և ելաւ գնաց անոր ետեէն: 29 - Ու Ղեւի անոր մեծ կոշունք մը բրու իր տանը մէջ. և շատ բազմութիւն կար մաքսաւորներու և ուրիշներու՝ որ անոնց հետ սեղան նստեր էին: 30 - Եւ անոնց դպիրները ու փարիսեցիները տըրտունջ կ'ընէին անոր աշակերտներուն ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ կ'ուտէք ու կը խմէք: 31 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն: 32 - Ես արքարները կանչելու չեկայ, հասպա մեղաւորները՝ ապաշխարութեան:

33 - Անմաք ալ ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն և աղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցիներուն աւախեցորդը. և քուկի՞ններդ կ'ուտեն ու կը խմեն: 34 - Անիկա ալ ըսաւ անոնց, Կրնո՞ք հարմնիքին տոցը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց հետ է: 35 - Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, տպայն օրերը ծոմ պիտի պահեն: 36 - Առակ մըն ալ ըսաւ անոնց, Թէ Մէկը չձգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը պատուածք ալ կ'ընէ, ու հինցածին հետ ալ չմիարանիր այն նոր լաթէն եղած կտորը: 37 - Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ չզդներ. եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը պատուէ, ինք կը թափի ու տիկերը կը կորսուին: 38 - Հապա նոր գինին նոր տիկերու մէջ գնելու է, ու երկուքն ալ կը պահուին: 39 - Եւ մէկը հին գինի խմելէն ետե անմիջապէս նորը չուզեր, քանզի կ'ըսէ թէ Հինը աւելի ախորժիկ է:

ԳԼ Զ

Ու եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը ինք արտուուն մէջէն կ'անցներ, և իր աշակերտները ցրէնէ հասկեր փրցնելով՝ ձեռքերնուն մէջ կը չփէին ու կ'ուտէին: 2 - Ու փարիսեցիներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ կ'ընէք, զոր արժան չէ ընել շաբաթ օրը: 3 - Եւ Յիսուս պատասխան տալով՝

*Ունչ, հին տիկերը

անոնց ըսաւ, 24^օ ք կարդացեր դուք Դաւիթի բրածը, երբ անօթեցաւ ինք և անոնք որ իրեն չեա էին, 4 - Ի՛նչպէս անիկա Աստուծոյ տունը մտաւ, և առաջաւորութեան հացերը առաւ ու կերաւ, և տուաւ անոնց ալ որ իրեն չեա էին. զորոնք Տարգ-՝ օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն: 5 - Եւ ըսաւ անոնց, Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է:

6 - Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինք ժողովարանը մտաւ ու կը սորվեցնէր. և հոն մարդ մը կար որուն աջ ձեռքը չորցած էր: 7 - Եւ դպիրները ու փարիսեցիները անոր կը սպասէին թէ շաբաթ օրը զանիկա կը բժշկէ՞, որպէս զի ամբաստանութեան արի մը գտնեն անոր դէմ: 8 - Իսկ ինք գիտնալով անոնց խորհուրդները, ըսաւ այն մարդուն որուն ձեռքը չորցած էր, Ելի՛ր, մէջտեղը կայնէ. ան ալ ելաւ կայնեցաւ: 9 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Զեզի Բան մը հարցնեմ. Շաբաթ օրը ի՛նչ արժան է. բարի՞ք ընել թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնել թէ մեռցնել: 10 - Եւ շուրջանակի ամենուն վրայ նայելով ըսաւ անոր, Զեռքդ երկնցուր. ան ալ այնպէս ըրաւ, ու անոր ձեռքը ողջացաւ միւսին պէս: 11 - Եւ անոնք կատաղութեամբ լեցուեցան, ու իրարու հետ կը խօսէին թէ ի՛նչ ընեն Յիսուսի:

12 - Ու եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ընելու, ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով անցուց: 13 - Ու երբ առտու եղաւ, կանչեց իր աշակերանները, ու անոնցմէ տասուերկու հոգի ընտրեց, զորոնք առաքեալ ալ անուանեց. 14 - Սիմոն՝ զոր Պետրոս ալ անուանեց, և անոր եզբայրը Անդրէասը, Յակոբոսը ու Յովհաննէսը, 15 - Փիլիպպոսը և Բարթողոմէոսը, Մատթէոսը և Թովմասը, Ալփէոսեան Յակոբոսը և Նախանձայոյզ ըսուած Սիմոնը, 16 - Յակոբոսի եղբայրը Յուդան, և Իսկարիովտացի Յուդան, որ և մատնիչ եղաւ: 17 - Եւ անոնց հետ իջնելով տափարակ տեղ մը կայնեցաւ, նաև իր աշակերաններուն ժողովը՝ ու մեծ բազմութիւն մը ժողովուրդներու՝ բոլոր Հրէաստանէ ու Երուսաղէմէ և Տիւրոսի ու Սիդոնի ծովեզերքէն. 18 - Որոնք եկան անոր խօսելու մտիկ ընելու, ու իրենց հիւանդու-

թիւներէն բժշկուելու. և պիղծ սգիներէն նեղութիւն կրողներն ալ եկան ու կը բժշկուէին: 19 - Եւ բոլոր ժողովուրդը կ'ուզէր իրեն դպչիլ, վասն զի զօրութիւն կ'ելլէր իրմէ ու ամէնք կը բժշկէր:

20 - Եւ ինք իր աչքերը դէպ իր աշակերանները վերցուց ու ըսաւ, Երանի՛ ՚եզի աղքատներուդ, վասն զի ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը: 21 - Երանի՛ ՚եզի որ հիմա անօթի էք, վասն զի պիտի կշտանաք. երանի՛ ՚եզի որ հիմա կուլաք, վասն զի պիտի խնդաք: 22 - Երանի՛ է ձեզի՝ երբ մարդիկ ձեզ տտեն, ու երբ ձեզ իրենց ընկեր-՝ ինչն մերժեն ու նախատեն, և ձեր վրայով գէշ անուն հանեն Որդւոյ մարդոյ պատճառաւ: 23 - Ուրախ եղէք դուք այն օրը ու ցնծացէք, որ ահա ձեր վարձքը շատ է երկինքը. վասն զի իրենց հայրերը այդպէս կ'ընէին մարգարէներուն: 24 - Բայց վա՛յ ձեզի հարուստներուդ, վասն զի ձեր միսթարութիւնը առած էք: 25 - Վա՛յ ձեզի որ կուշտ էք, վասն զի պիտի անօթեանաք. վա՛յ ձեզի որ հիմա կը ծիծաղիք, վասն զի սուգ պիտի ընէք ու լաք: 26 - Վա՛յ ձեզի երբ մարդիկ ձեր վրայով աղէկ խօսին, վասն զի իրենց հայրերը այդպէս կ'ընէին սուտ մարգարէներուն:

27 - Բայց կ'ըսեմ ձեզի որ մտիկ կ'ընէք, Սիրեցէք ձեր թշնամիները, ձեզ ատողներուն բարի ըրէք: 28 - Զեզ անիծողները օրհնեցէք, ձեզի նեղութիւն տաողներուն համար աղօթք ըրէք: 29 - Ան որ քու մէկ ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ մօտեցուր անոր. և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ, մի արգիլեր անկէ շապիկդ ալ: 30 - Այն ամենուն որ քեզմէ կ'ուզէ՝ տուր, ու քու բաներդ առնողէն զանձ մի պահանջեր: 31 - Եւ ինչպէս կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք: 32 - Եւ եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՛նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: 33 - Եւ եթէ դուք ձեզի բարի ընողներուն բարի ընէք, ի՛նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն: 34 - Եւ եթէ այնպիսի մարդոց փոխ տաք՝ որոնցմէ յոյս ունիք

*Ո՛հան+, բոլոր մարդիկ

առնելու, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան, որպէս զի նոյն չափով ետ առնեն: 35 - Հապա սիրեցէք դուք ձեր թշնամիները, ու բարի ըրէք, և փոխ տուէք առանց փոխարէնի մը սպասելու, և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ, ու ճարձրելոյն որդիները պիտի ըլլաք. վասն զի անիկա բարերար է ապերախաներուն ու չարերուն: 36 - Ուրեմն գթած եղէք, ինչպէս ձեր Հայրն ալ գթած է: 37 - Մի դատէք, ու պիտի չդատուիք. մի դատապարտէք, ու պիտի չդատապարտուիք. ներեցէք, ու ձեզի պիտի ներուի. 38 - Տուէք, ու ձեզի պիտի տրուի. աղէկ չափով, հոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գողը. քանզի այն չափովը որով դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի:

39 - Առակ մըն ալ ըստ անոնց, Միթէ կոյրը կուրին կրնա՞յ առաջնորդութիւն ընել. չէ՞ որ երկուքն ալ փոսը պիտի իյնան: 40 - Աշակերտը իր վարդապետէն մեծ չէ, բայց ամէն կատարելապէս վարժուածը իր վարդապետին պէս կ'ըլլայ:

41 - Եւ ինչո՞ւ քու եղբորդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր: 42 - Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբորդ, Եղբայր, թող տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ. և դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ. կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերանը հանէ, ու ետքը պարզ պիտի տեսնես քու եղբորդ աչքին մէջի շիւղը հանելու: 43 - Քանզի չկայ բարի ծառ մը որ չար պտուղ բերէ, ոչ ալ չար ծառ մը որ բարի պտուղ բերէ. 44 - Վասն զի ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի. քանզի փուշերէն թուզ չեն քաղեր, ու մարենիէն խաղող չեն ժողվեր: 45 - Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարութիւն կը բղխէ, և չար մարդը իր սրտին չար գանձէն չարութիւն կը բղխէ. վասն զի իր բերանը սրտին աւելցուքէն կը խօսի:

46 - Եւ ինչո՞ւ զիս Տէր, Տէր, կը կոչէք, ու ըսած բաներս չէք կատարեր: 47 - Այն ամէնը որ ինձի կու գայ և իմ խօսքերս կը լսէ ու զանոնք կը կատարէ, ձեզի ցուցնեմ թէ որո՞ւ կը նմանի: 48 - Անիկա տուն շինող մար-

դու մը կը նմանի, որ փորեց ու խորունկցուց, ու հիմը վէժի վրայ դրաւ. և ջուրերուն յորդած ատենը գետը զարկաւ այն տանը, ու չկրցաւ զանիկա շարժել, վասն զի վէժի վրայ հաստատուած էր: 49 - Բայց ան որ ի՞ Խօտե՞ր կը լսէ ու չկատարեր, կը նմանի այն մարդուն՝ որ հողի վրայ առանց հիմի տուն կը շինէ. որու գետը զարկաւ, և շուտ մը փլաւ, ու այն տանը կործանուամը մեծ էր:

ԳԼ Ե

Ու երբ իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն Խօտե՛լ լսնցուց, մտաւ Կափառնայում: 2 - Եւ հարիւրապետի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր անոր: 3 - Երբ Յիսուսի վրայով լսեց, Հրեաներէն Կանի՛ ճե ծերեր զրկելով՝ ազաչեց անոր որ գայ իր ծառան ապրեցնէ: 4 - Անոնք ալ եկան Յիսուսի և թախանձանօք կ'աղաչէին անոր ու կ'ըսէին թէ Անիկա արժանի է՝ որու այս շնորհը պիտի ընես. 5 - Վասն զի մեր ազգը կը սիրէ, ու ժողովարանը անիկա շինեց մեզի: 6 - Եւ Յիսուս անոնց հետ գնաց. երբ տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը զրկեց անոր Կանի՛ ճե բարեկամներ, ու ըսաւ անոր, Տէր, մի յոգնիր, վասն զի ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ մտնես. 7 - Անոր համար ես ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու. հապա խօսքով զրուցէ, և իմ ծառաս պիտի բժշկուի: 8 - Վասն զի ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ մըն եմ, ու իմ հրամանի տակ զինուորներ ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ թէ Եկուր, ու կու գայ. և ծառայիս՝ թէ Այս բանը ըրէ, ու կ'ընէ: 9 - Յիսուս այս բաները լսելով՝ զարմացաւ անոր վրայ. և իր ետէնէն գացող ժողովուրդին դարձաւ ու ըսաւ, Ձեզի կ'ըսեմ, որ Խորայելի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ: 10 - Ու պատգամաւորները նորէն տուն դարձան, և հիւանդ ծառան առողջացած գտան:

11 - Ու եղաւ որ հետեւեալ օրը քաղաք մը կ'երթար, որուն անունը Նաշին էր, և անոր հետ կ'երթային իր աշակերտներէն շատերը ու մեծ բազ-

մուծիւն: 12 - Ու երբ քաղաքին դրանք մտնեցաւ. ահա մեռել մը դուրս կը հանէին, իր մօրը մէկ հասիկ տղան. և անիկա որբեւորի էր, ու քաղաքին շատ ժողովուրդը անոր հետ էր: 13 - Եւ Տէրը զանիկա տեսնելով՝ խղճաց անոր վրայ, ու ըսաւ անոր, Մի լար: 14 - Եւ մտանալով՝ դազազին դպաւ, ու տանողները կանգ առին. և ըսաւ, Ով պատանի, քեզի կ'ըսեմ, Ելի: 15 - Ու մեռելը ելաւ նստաւ, ու սկսաւ խօսիլ. ու տուաւ զանիկա իր մօրը: 16 - Եւ ամէնն ալ վախով բռնուեցան, ու զԱստուած կը փառաւորէին՝ ըսելով թէ Մեծ մարգարէ մը ելեր է մեր մէջ. և թէ Աստուած իր ժողովուրդին այցելութիւն ըրաւ: 17 - Եւ այս ձայնը անոր վրայով բոլոր Հրէաստան ելաւ, ու բոլոր շրջակայ տեղերը:

18 - Եւ Յովհաննէսի պատմեցին իր աշակերտները այս ամէն բաներուն վրայով: 19 - Յովհաննէս ալ իր աշակերտներէն երկուքը իրեն կանչեց, և զանոսք Գիւսսի զրկեց՝ ըսելով, Դուն ա՞ն էս որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասեմք: 20 - Եւ այն մարդիկը եկան անոր ու ըսին, Յովհաննէս մկրտիչը մեզ զրկեց քեզի, ու կ'ըսէ, Դուն ա՞ն էս որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասեմք: 21 - Եւ նոյն ժամուն շատերը բժշկեց երեւոյ հիւանդութիւններէն ու հարուածներէն և չար ոգիներէն, ու շատ կոյրերու տեսութիւն շնորհեց: 22 - Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Դացէք Յովհաննէսի պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք. որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն, աղքատներուն աւետարան կը քարոզուի: 23 - Եւ երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր:

24 - Ու երբ Յովհաննէսի զրկած մարդիկը գացին, Յիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Յովհաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէջ. եղէ՞ք մը հովէն շարժուած: 25 - Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փափուկ հանդերձներ հագած մարդ մը. ահա անոնք որ փառաւոր հագուստներով ու փափկութեան մէջ են, թագաւորական պալատներն են: 26 - Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞. այո, կ'ըսեմ ձեզի, մարգարէ է մըն ալ ա-

ւելի: 27 - Վասն զի տսիկա է՝ որու համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը զրկեմ քու երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջևէդ: 28 - Քանզի կ'ըսեմ ձեզի, կիներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտիչէն մեծ մարգարէ չկայ. սակայն Աստուծոյ թագաւորութեանը մէջ ամէնէն պզտիկը անկէ մեծ է:

29 - Եւ բոլոր ժողովուրդը ու մաքսաւորները երբ լսեցին արդարացուցին զԱստուած, որ Յովհաննէսի մկրտութիւնովը մկրտուեցան: 30 - Բայց փարիսեցիները և օրինականները իրենց անձին դէմ Աստուծոյ խորհուրդը անարգեցին, և անկէ չմկրտուեցան:

31 - Ուստի որո՞ւ նմանցնեմ այս ազգին մարդիկը, և որո՞ւ կը նմանին: 32 - Կը նմանին տղոց, որոնք շուկաները նստելով՝ իրարու կը կանչեն ու կ'ըսեն, Փող հնչեցուցինք ձեզի, ու չխաղացիք, ողբ կարդացինք ձեզի, ու չլացիք: 33 - Վասն զի Յովհաննէս մկրտիչ եկաւ, ոչ հաց կ'ուտէր և ոչ գինի կը խմէր, ու կ'ըսէք, Դե կայ անոր ներսիդին: 34 - Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսէք, Ահա ուտող և արբեցող մարդ մը, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ: 35 - Եւ իմաստութիւնը արդարացաւ իր բոլոր որդիներէն:

36 - Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր անոր որ իրեն հետ հաց ուտէ. ան ալ փարիսեցիին տունը մտաւ ու սեղան նստաւ: 37 - Եւ ահա քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ իմացաւ թէ անիկա փարիսեցիին տունը սեղան նստեր է, շիշ մը անուշահոտ իւղ բերաւ. 38 - Ու ետևի կողմէն անոր սաքերուն քով կեցեր՝ կուլար, և արցունքովը սկսաւ անոր ոտքերը թրջել, ու իր գլխուն մազերովը կը սրբէր, և կը համբուրէր անոր ոտքերը, ու իւղով կ'օծէր: 39 - Ու երբ տեսաւ փարիսեցին, որ զանիկա հրաւիրեր էր, կ'ըսէր իր միտքին մէջ, Անիկա եթէ մարգարէ ըլլար, պիտի գիտնար թէ ո՞վ և ի՞նչպէս կին է իրեն դպչողը, վասն զի մեղաւոր է: 40 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Սիմոն, քեզի բան մը ունիմ ըսելու. ան ալ ըսաւ, Ըսէ, վարդապետ.

*Ո՞ւն է, Եւ Տէրը ըսաւ, Ուստի

և ըստ, 41 - Փոխ տուող մը երկու պարտական ունէր, մէկը չինգ հարիւր դաճեկան պարտք ունէր, ու միւսը յիսուսն: 42 - Եւ որովհետեւ հասուցանելու խաղաղ-թիւն չունէին, երկուքին ալ շնորհեց. հիմա զրուցէ, Անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանիկա: 43 - Պատասխան տուաւ Սիմոն ու ըսաւ, Ինծի սյուպէս կ'երևնայ, թէ որս'ը որ շատ շնորհեց. ան ալ ըսաւ անոր, Ուզի՞ղ դատեցիր: 44 - Ու դառնալով դէպ ի այն կինը՝ ըսաւ Սիմոնի, Կը տեսնե՞ս այս կինը. ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա է՝ արցունքովը ոտքերս թրջեց, և իր *մազերովը սրբեց: 45 - Գուն ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկա հո՞ մտնէլէս ի վեր ոտքերս համբուրելէն չգաղարեցաւ: 46 - Գուն իմ գլուխս ձէլով չօժեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ իւղով օժեց: 47 - Ասոր համար կ'ըսեմ՝ քեզի, Ներուած են ասոր շատ մեղքերը, վասն զի շատ սիրեց. բայց որու որ քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ: 48 - Ու ըսաւ անոր, Քու մեղքերդ ներուած են: 49 - Եւ անոր հետ սեղան նստողները սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է ասիկա որ մեղքերու թողութիւն ալ կու տայ: 50 - Եւ ինք ըսաւ կնոջը, Քու հաւատքդ քեզ խորհեց, գնա խաղաղութեամբ:

ԳԼ. Ը

Ու եղաւ որ անկէ ետեւ ա՛յ ինք քաղաքէ քաղաք ու գեղէ գեղ պտուտելով կը քարոզէր, և Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւտարանէր, ու տասուերկուքը իրեն հետ էր: 2 - Նաև քանի մը կիներ՝ որոնք շար սգիներէ ու հիւանդութիւններէ բժշկուեր էին. Մարիամ որ Մագդաղենացի կ'ըսուէր, ուրկէ եօթը դե ելեր էր, 3 - Եւ Յովհաննաս, Հերովդէսի տանը վերակացուին Քուզայի կինը, ու Եուշան և շատ ուրիշներ, որոնք իրենց ստացուածքովը քանոր ծառայութիւն կ'ընէին: 4 - Ու երբ մեծ բազմութիւն ժողովուեցաւ և շատ քաղաքներէ իրեն ե-

կան, աւաղով մը ըսաւ անոնց, 5 - Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանելու. ու ցանած տաներ մէկ քանին ճամբուն քով ինկաւ և «*+*» կոխուեցաւ, ու երկինքի թռչունները կերան զանիկա: 6 - Եւ ուրիշը ապաւածի վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ, հոգի՞ հիւթ չունենալուն համար: 7 - Եւ ուրիշը փուշերու մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետ բուսնելով, խեղդեցին զանիկա: 8 - Եւ ուրիշը աղէկ հողի մէջ ինկաւ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ: Երբ այս բաները կը զրուցէր, կ'աղաղակէր, Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ:

9 - Եւ իր աշակերտները կը հարցնէին իրեն՝ ըսելով թէ Ի՞նչ պիտի ըլլայ այն առակը: 10 - Ան ալ ըսաւ, Ձեզի արուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն աւակներով չէ խօսի՞. որպէս զի տեսնելով՝ չտեսնեն, և լսելով՝ չիմանան:

11 - Արդ առակը այս է. Սերմը Աստուծոյ խօսքն է: 12 - Ու ճամբուն քովիները անոնք են՝ որ կը լսեն, ու ետքը Սատանայ կու գայ, անոնց սրտէն կը հանէ խօսքը, որպէս զի չըլլայ թէ հաւատան ու փրկուին: 13 - Եւ ապաւածին վրայիները անոնք են՝ որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը, բայց արմատ չունին. տան մը կը հաւատան, ու փորձութեան ժամանակ կը հեռանան: 14 - Եւ փուշերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց հոգեբով ու հարստութիւնով և այս կեանքին ցանկութիւններովը զրազած ըլլալով կը խեղդուին և անպտուղ կ'ըլլան: 15 - Իսկ աղէկ հողի մէջ ցանածը անոնք են՝ որ բարի և յօժար սրտով լսելով խօսքը կ'ընդունին ու համբերութիւնով պտուղ կուտան:

16 - Չկայ մէկը որ ճրագ վառէ ու ամանի մը տակ կամ մահիճին ներքե դնէ, հապա աշտանակի վրայ կը դնէ, որպէս զի ներս մտնողները լոյսը տեսնեն: 17 - Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտնուի, ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չգիտցուի ու երևան չելլէ: 18 - Ուստի նայեցէք թէ ի՞նչպէս կը լսէք. քանզի ով որ ունի՞ անոր պիտի արուի, և ով որ չունի՞ այն ալ զոր ինք կը կարծէ թէ ունի, անկէ պիտի տանուի:

*Ո՞րս, գլխուն մազերովը
 †Կո՞ւ, բժշկեց
 ‡Ո՞րս, անոնց

19 - Եւ անոր մայրը ու եղբայրները իրեն եկան, ու բազմութենէն չէին կրնար անոր քով երթալ: 20 - Եւ անոր իմացուցին՝ լսելով, Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, ու քեզ տեսնել կ'ուզեն: 21 - Եւ անիկա պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Իմ մայրս ու իմ եղբայրներս ատնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկա կը կատարեն:

22 - Ու եղաւ որ օր մը նաւը մտաւ ինք և իր աշակերտներն ալ, ու ըսաւ անոնց, Մովակին միւս կողմը անցնիք. և ճամբայ ելան: 23 - Ու երբ նաւով կ'երթային, ինք քնացաւ. ու հովի փութորիկ մը իջաւ ծովակին վրայ, և նաւը կը լեցուէր, ու իրենք վտանգի մէջ էին: 24 - Մօտեցան, արթնցուցին զանիկա ու ըսին, Վարդապետ, վարդապետ, «ի» կը կորսուիք. ան ալ ելաւ սաստեց հովին ու ջուրերուն խռովութեանը, և հանդարտեցաւ, ու խաղաղութիւն եղաւ: 25 - Եւ ըսաւ անոնց, Ո՞ւր է ձեր հաւատքը. և անոնք վախի մէջ ինկած՝ զարմացան, ու իրարու կ'ըսէին, Արդեօք ո՞վ է ասիկա՝ որ հովերուն ու ջուրին ալ հրաման կու տայ, և կը հնազանդին ասոր:

26 - Ու նաւելով իջան *Գաղարացւոց երկիրը, որ Գալիլեայի դիմացի կողմն է: 27 - Եւ ինք ցամաքը ելլելուն պէս՝ այն քաղաքէն մարդ մը ելաւ դիմացը, որուն ներսը շատ ատենէ ի վեր դեեր կային. ու անիկա հանդերձ չէր հագներ, ոչ ալ տան մէջ կը բնակէր, հապա գերեզմաններու մէջ: 28 - Եւ Յիսուսը տեսնելով՝ աղաղակեց ու ինկաւ անոր առջև, ու բարձր ձայնով ըսաւ, Դուն ինձի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Արդի Աստուծոյ Բարձրելոյ. կ'աղաչեմ քեզի, զիս մի տանջեր: 29 - (Վասն զի հրամայեց պիղծ ոգիին որ այն մարդէն ելլէ. որովհետեւ շատ ատեն էր որ զանիկա յափշտակեր էր, և անիկա շղթաներով ու ռանակապերով կապուած կը պահուէր, բայց կապերը կը կտարտէր ու դեէն անապատը կը քշուէր:) 30 - Հարցուց անոր Յիսուս ու ըսաւ, Անունդ ի՞նչ է. ան ալ ըսաւ, Լէզէան. վասն զի շատ դեեր մտեր էին անոր ներսիդին: 31 - Եւ կ'աղաչէին անոր որ

անդունդը երթալու հրաման չընէ իրենց: 32 - Եւ այնտեղ շատ խոզերու երամակ մը կար, որոնք լեւը կ'արածուէին. ու աղաչեցին անոր որ իրենց հրաման տայ անոնց մէջ մտնելու. և հրաման տուաւ անոնց: 33 - Ու դեերը մարդէն ելլելով՝ խոզերուն մէջ մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովակը վազեց ու խեղդուեցաւ: 34 - Եւ խոզարածները այս եղած բանը տեսնելով փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները: 35 - Եւ Գալիլեան եղած բանը տեսնելու, ու եկան Յիսուսի, և գտան այն մարդը՝ ուրկէ դեերը ելեր էին, հագուած ու խելքը վրան Յիսուսի ոտքերուն քով նստած, ու վախցան: 36 - Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց թէ ի՞նչպէս դիւահարը աղատեցաւ: 37 - Եւ Գաղարացւոց շրջակայ տեղերը գանուող բոլոր բազմութիւնը կ'աղաչէր անոր, որ իրենցմէ երթայ, վասն զի մեծ վախով բռնուած էին. ան ալ նաւը մտնելով ետ դարձաւ: 38 - Եւ այն մարդը՝ ուրկէ դեերը ելեր էին, կ'աղաչէր անոր որ հետը ըլլայ, բայց Յիսուս արձակեց զանիկա ու ըսաւ, 39 - Դարձիր քու տունդ, ու պատմէ ինչ որ Աստուած քեզի բրաւ. ան ալ գնաց, ու բոլոր քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս իրեն բրաւ:

40 - Ու երբ Յիսուս ետ դարձաւ, ժողովուրդը զանիկա ընդունեց, վասն զի ամէնը անոր կը սպասէին: 41 - Եւ ահա Յայրոս անունով մարդ մը եկաւ, ու ինք ժողովարանին իշխանն էր. և Յիսուսի ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր որ իր տունը մտնէ. 42 - Վասն զի մէկ հափիկ աղջիկ մը ունէր, գրեթէ տասուերկու տարեկան, որ մեռնելու մօտ էր. ու երբ անիկա կ'երթար, բազմութիւնը կը նեղէր զանիկա:

43 - Եւ կին մը, որ տասուերկու տարիէ ի վեր արիւնի տեւատեւութեան մէջ էր, ու իր բոլոր ունեցածը բժիշկներուն ծախք բրած էր, և իրեն ոչ մէկէն բժշկուելու ճար մը եղած էր, 44 - Ետեէն մօտենալով՝ անոր հանդերձին քղանցքին դպաւ, և իսկոյն իր արիւնին հոսումը դադարեցաւ: 45 - Եւ Յիսուս ըսաւ, Ո՞վ էր ան որ ինձի դպաւ. երբ ամէնը կ'ուրանային, ըսաւ Պետրոս ու անոր հետ եղողները, Վարդապետ, բազմութիւնը քեզ կը

*Ո՛ւնի, Գերգեսացւոց

հրէ ու կը նեղէ, ու կը տես թէ Ո՞վ
 ինծի դպաւ: 46 - Եւ Յիսուս ըսաւ,
 Մէկը ինծի դպաւ, քանզի իմացայ որ
 ինծմէ զօրութիւն մը ելաւ: 47 - Երբ
 տեսաւ կինը որ բա՛նջ ա՛նկէ չպահուե-
 ցաւ, դողալով եկաւ ու անոր առջև
 ինկաւ, և բոլոր ժողովուրդին առջև
 անոր պատմեց թէ ի՛նչ բանի համար
 անոր դպեր էր, և թէ ի՛նչպէս ինք իս-
 կոյն բժշկուեցաւ: 48 - Եւ Յիսուս ըսաւ
 անոր, Քաջալերուէ, ազջիկ, քու հա-
 ւատքդ քեզ բժշկեց, գնա խաղաղու-
 թեամբ:

49 - Երբ ինք դեռ կը խօսէր, ժողո-
 վրդապետին տունէն մէկը եկաւ ու
 ըսաւ անոր, Աղջիկդ մեռաւ, աւ վար-
 դապետը մի յոգնեցներ: 50 - Բայց
 Յիսուս երբ լսեց, պատասխան տուաւ
 անոր ու ըսաւ, Մի վախնար, միայն
 հաւատա, ու պիտի ապրի: 51 - Եւ
 երբ տունը մտաւ, ուրիշ մէ՛կը թող
 չտուաւ որ մտնէ, բայց միայն Պետ-
 րոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը ու
 աղջկան հայրը ու մայրը: 52 - Ամէնն
 ալ կուլային ու կ'ողբային անոր վրայ.
 և ինք ըսաւ, Մի լաք, անիկա մեռած
 չէ, հապա կը քնանայ: 53 - Եւ անոնք
 ծաղր կ'ընէին զանիկա, քանզի գիտե-
 ին թէ մեռաւ: 54 - Ու ինք ամէնն ալ
 դուրս հանելով բռնեց անոր ձեռքէն
 ու կանչեց՝ ըսելով, Աղջիկ, ելի: 55 - Եւ
 անոր հոգին դարձաւ, ու իսկոյն ոտք
 ելաւ. և Յիսուս չհրաման ըրաւ որ ուտե-
 լիք տան անոր: 56 - Ու անոր ծնողքը
 ապշած մնացին. և ինք անոնց պատուի-
 րեց որ եղած բանը մարդո՛ւ չզրուցեն:

ԳԼ. Թ

Եւ իր տասուերկու *աշակերտները
 մէկտեղ իրեն կանչելով՝ անոնց զօրու-
 թիւն ու իշխանութիւն տուաւ բոլոր
 դեերուն վրայ և ախարը բժշկելու:
 2 - Ու զանոնք զրկեց որ Աստուծոյ
 թագաւորութիւնը քարոզեն ու հի-
 ւանդները բժշկեն: 3 - Եւ ըսաւ ա-
 նոնց, Ճամբու համար բան չառնէք,
 ոչ գաւազան և ոչ պարկ, ոչ հաց և
 ոչ ստակ, ոչ ալ կրկին հանդերձ ու-
 նենաք: 4 - Եւ ո՛ր տուն որ մտնէք,
 հոն մնացէք ու անկէ ելէք: 5 - Ու ա-
 նոնք որ ձեզ չեն ընդունիր, երբ այն

քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փո-
 չին անգամ թօթվեցէք՝ իրենց դեմ՝
 վկայութիւն ըլլալու համար: 6 - Եւ
 անոնք ելան ու գեղէ գեղ կը պարտե-
 ին, և ամէն տեղ աւետարանը կը քա-
 ռողէին ու բժշկութիւն կ'ընէին:

7 - Եւ Հերովդէս չորրորդապետը ա-
 նոր բոլոր գործերը լսելով՝ տարակու-
 սանքի մէջ էր. որովհետեւ սմանք ըսած
 էին 8 - Թէ Յովհաննէս յարութիւն
 առաւ մեռելներէն, և սմանք՝ թէ
 Եղիա յայտնուեցաւ, և ուրիշներն ալ՝
 թէ Առաջուան մարգարէներէն մէկը
 յարութիւն առաւ: 9 - Եւ Հերովդէս
 ըսաւ, Յովհաննէսը ես գիտատեցի, հա-
 պա տսիկա ո՞վ պիտի ըլլայ, որուն
 վրայով այսպիսի բաներ կը լսեմ. ու
 կ'ուզէր որ տեսնէ զանիկա:

10 - Եւ առաքեալները դարձան ու
 պատմեցին անոր ինչ որ ըրին. և տուաւ
 զանոնք, առանձին անապատ տեղ մը
 քաշուեցաւ քաղաքի մը քով՝ որուն ա-
 նունը Բեթսայիդա էր: 11 - Եւ ժո-
 ղովուրդները երբ իմացան՝ անոր ետե-
 ւէն գացին, ու զանոնք ընդունելով՝
 կը խօսէր անոնց Աստուծոյ թագաւո-
 րութեանը վրայով. և որոնք որ բժըշ-
 կութեան կարօտ էին՝ կը բժշկէր:

12 - Ու երբ օրը սկսաւ իրիկուան
 մօտենալ, տասուերկուքը եկան ու
 ըսին անոր, Արձակէ ժողովուրդները,
 որպէս զի շրջակայ գեղերը ու ազա-
 րակները երթան իջևանին ու կերակուր
 գտնեն, վասն զի հոս անապատ տեղ
 մըն ենք: 13 - Ըսաւ անոնց, Դուք
 տուէք ատոնց ուտելիք. անոնք ալ
 ըսին, Մենք հինգ նկանակէն ու երկու
 ձուկէն աւելի բան չունինք, եթէ չեր-
 թանք այդ բոլոր ժողովուրդին համար
 կերակուր չգտնէք: 14 - (Քանզի հինգ
 հազարի չափ այր մարդիկ կային.) Ու
 ըսաւ իր աշակերտներուն, Ատոնք դաս
 դաս, յիսուն յիսուն, նստեցուցէք:
 15 - Եւ այնպէս ըրին ու ամէնն ալ
 նստեցուցին: 16 - Եւ այն հինգ նկա-
 նակը ու երկու ձուկը առնելով ու
 դէպի երկինք նայելով՝ օրհնեց զանոնք
 ու կտրեց, և կու տար աշակերտնե-
 րուն, որպէս զի ժողովուրդին առջև
 գնեն: 17 - Եւ կերան ու կշտացան
 ամէնն ալ, ու աւելցած կտորուանք-
 ները տասուերկու կողով վերցուցին:

18 - Ու եղաւ որ երբ ինք առանձին
 աղօթք կ'ընէր, աշակերտներն ալ

*Ո՛ւրիշ, առաքեալները

իրեն հետ էին, և հարցուց անոնց՝ ըսելով, Ժողովուրդները ինձի համար ո՞վ կ'ըսեն թէ եմ: 19 - Անոնք ալ պատասխան տալով ըսին, Ա՛հա՛ Զովհաննէս մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիա, ուրիշներ ալ թէ Աւաղուան մարգարէներէն մէկը յարութիւն առեր է: 20 - Եւ ինք ըսաւ անոնց, Հապա դուք ինձի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ: պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ, Աստուծոյ Քրիստոսը: 21 - Եւ ինք սաստիկ պատուիրեց անոնց որ այս բանը մարդո՛ւ չզրուցեն: 22 - Ու ըսաւ թէ Պէտք է որ Արդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, և ծերերէն ու քահանայապետներէն և դպիրներէն մերժուի ու սպաննուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ: 23 - Եւ ամէնուն կ'ըսէր, Եթէ մէկը կ'ուզէ իմ՝ ետեւս գալ, թող իր անձը ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցնէ, ու իմ՝ ետեւս գայ: 24 - Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա. և ով որ ինձի համար իր անձը կորսնցնէ, պիտի ապրեցնէ զանիկա: 25 - Քանզի ինչ կը շահի մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի, և իր անձը կորսնցնէ կամ փնտա ընէ: 26 - Վասն զի ով որ զիս ու իմ՝ խօսքերս Գառնիլէ ամօթ սեպէ, Արդին մարդոյ ալ զանիկա Գառնիլէ ամօթ պիտի սեպէ՝ երբ գայ իր ու Հօրը և սուրբ հրեշտակներուն փառքովը: 27 - Բայց ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ Հոս կայնողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահաւան համը պիտի չառնեն, մինչև տեսնեն Աստուծոյ Թագաւորութիւնը:

28 - Ու եղաւ որ այս խօսքերէն գրեթէ ութ օր ետքը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առնելով, լեռը ելաւ աղօթք ընելու: 29 - Ու երբ ինք աղօթք կ'ընէր, իր երեսին տեքք ուրիշ կերպ մը եղաւ, ու իր հագուստը ձերմակ «- փայլուն եղաւ: 30 - Եւ ահա երկու մարդիկ իրեն հետ կը խօսէին, որոնք Մովսէս ու Եղիա էին, 31 - Փառքով երեցած, և անոր «- Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր: 32 - Բայց Պետրոս և անոր հետ եղողները քունով ծանրացած էին, ու երբ արթնցան, տեսան անոր փառքը և այն երկու մարդիկը որոնք անոր քով կեցեր էին: 33 - Ու եղաւ որ երբ անոնք գտա-

ուեցան անոր քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսի. Վարդապետ, աղէկ է որ հոս կենանք, ու երեք խրճիթ շինենք. մէկը քեզի՝ և մէկը Մովսէսի՝ ու մէկը Եղիայի, վասն զի չէր գիտեր ինչ կը խօսէր: 34 - Եւ քանի որ անիկա այս բաները կը խօսէր, ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ, և ամպին տակ մտած ատեննին վախցան: 35 - Ու ձայն մը եղաւ ամպէն՝ ըսելով, Ատիկա է իմ՝ սիրելի Արդիս, ատար մտիկ ըրէք: 36 - Եւ երբ այն ձայնը եղաւ, Յիսուս մինակ գանուեցաւ: Ու իրենք լուռ կեցան, և իրենց տեսածներէն այն օրերը մարդո՛ւ բան մը չպատմեցին:

37 - Ու եղաւ որ հետեւեալ օրը, երբ անոնք լեռնէն վար իջան, շատ ժողովուրդ անոր դէմը ելաւ: 38 - Եւ ահա ժողովուրդին մէջէն մարդ մը աղաղակեց ու ըսաւ, Վարդապետ, կ'աղաչեմ՝ քեզի, նայէ իմ՝ սրգիլիս, քանզի իմ՝ մէկ հատիկս է. 39 - Եւ ահա սգի մը կը բռնէ զանիկա. ան ալ յանկարծ կը կանչուըւտէ, և զանիկա ցնցելով կը փրփրեցնէ, ու հազիւ կը գտաուի անկէ՝ ջարդուբուրդ ընելով զանիկա. 40 - Եւ քու աշակերտներուդ աղաչեցի որ հանեն զանիկա. ու չկրցան: 41 - Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ, Ով անհաւատ և խտարեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ ու ձեզի համբերեմ: Հոս բեր քու սրգիդ: 42 - Ու երբ դեռ կը մօտենար, դեռ զանիկա գետինը զարկաւ ու սաստիկ ցնցեց: 43 - Իսկ Յիսուս սաստեց պիղծ սգիին, և բժշկեց աղան ու զանիկա իր հօրը տուաւ: 44 - Եւ ամէնը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ:

Ու քանի որ ամէնը կը զարմանային Յիսուսի բրած բոլոր գործերուն վրայ, անիկա ըսաւ իր աշակերտներուն, Դուք այս խօսքերը ականջներնիդ դրէք, վասն զի Արդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը: 45 - Բայց անոնք չէին իմանար այն խօսքը, և անոնցմէ ծածկուած էր սրպէս զի չհասկնան, ու կը վախնային այն խօսքէն համար իրեն հարցնելու:

46 - Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ՝ թէ արդեօք իրենց մէջ ո՞վ է մեծ: 47 - Իսկ Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով՝ աղայ մը առաւ ու զանիկա իր քով կայնեցուց, 48 - Եւ

ըսաւ անոնց, Ով որ այս տղան իմ՝ անունովս կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. և ան որ զիս կ'ընդունի՝ անիկա զիս զըրկողը կ'ընդունի. վասն զի ան որ ձեր ամենուն մէջ պզտիկ է, անիկա մեծ պիտի ըլլայ:

49 - Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըսաւ, Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դուեր կը հանէր, և զանիկա արգիլեցինք, վասն զի մեզի հետ չպտրտիր: 50 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Մի արգիլէք, քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է:

51 - Ու եղաւ որ երբ իր «չիւրհէ» վերանայու օրերը կը կատարուէին, ինք ալ «հաստատ սրուչեց» Երուսաղէմ՝ երթալ: 52 - Եւ իր երեսին առջևէն պատգամաւորներ զրկեց. և երբ գացին, Սամարացւոց մէկ գեղը մտան որպէս զի իրեն համար պատրաստութիւն մը ընեն: 53 - Եւ չընդունեցին զանիկա, վասն զի անոր երեսը դէպ ի Երուսաղէմ՝ երթալու չիւրհէ էր:

54 - Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, տեսան, ըսին, Տէր, կ'ուզե՞ս որ ըսենք, ու երկինքէն կրակ իջնէ և սասկեցնէ զանոնք, ինչպէս Եղիա ալ ըրաւ: 55 - Եւ դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով, Չէք գիտեր թէ ի՞նչ հոգիի «եք էք դուք. 56 - †Վասն զի Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսնցնելու, հապա փրկելու.՝ և ուրիշ գեղ մը գացին:

57 - Ու երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը ըսաւ աւոր, Տէր, քու ետեւդ դամ՝ ուր որ երթաս: 58 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէտները որջեր ունին, ու երկինքի թռչունները՝ բոյներ, բայց Որդին մարդոյ «եղ մը չունի, ուր ի՞նչ գլուխը դնէ:

59 - Ուրիշի մըն ալ ըսաւ, Եկուր իմ ետեւս. ան ալ ըսաւ, Տէր, ինձի հրաման տուր որ առաջ երթամ իմ հայրս թաղեմ: 60 - Յիսուս ըսաւ անոր, Թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները, բայց դուն գնա Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ:

61 - Ուրիշ մըն ալ ըսաւ, Տէր, ես քու ետեւդ պիտի գամ, բայց ինձի հրաման տուր որ առաջ իմ տանս մէջ

*Ո՛ւն+, ձեզի հակառակ չէ, ձեր †Յւն. երեսը հաստատեց ‡Ո՛ւն+ ընդին

եղողներուն հրաժարական սղջոյն տամ: 62 - Յիսուս ըսաւ անոր, Ոչ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար է:

ԳԼ. Ժ

Այս բաներէն ետեւ Տէրը ուրիշ եօթանասուն ալ որոշեց, և զանոնք իր առջևէն երկու երկու զրկեց բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր ինք պիտի երթար: 2 - Եւ կ'ըսէր անոնց, Հունձքը շատ է, ու մշակները քիչ. ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք որ մշակներ հանէ իր հունձքին: 3 - Գացէք. ահա ես ձեզ կը զրկեմ իբրև գառներ գայլերու մէջ: 4 - Չեզի հետ քուսկ մի առնէք, ոչ ալ պարկ, և ոչ կօշիկներ, ու ճամբան մարդու՝ բարև մի տաք: 5 - Եւ ո՛ր տուն որ մտնէք՝ առաջ ըսէք, *Բարև այս տանը: 6 - Ու եթէ հոն †բարևի արժանաւոր մարդ՝ կայ, ձեր բարևը պիտի հանգչի անոր վրայ, ապա թէ ոչ՝ ձեզի պիտի դառնայ: 7 - Եւ այն տանը մէջ մնացէք, ու անոնցմէ կերէք ու խմեցէք, վասն զի մշակը իր վարձքին արժանի է. տունէ տուն մի փոխուիք: 8 - Եւ ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ ընդունին, ինչ որ ձեր առջև դուրսի՝ կերէք. 9 - Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները, և ըսէք անոնց, Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է: 10 - Բայց ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ չընդունին, անոր հրապարակները ելլելով՝ ըսէք, 11 - Այն փոշին ալ որ ձեր քաղաքէն մեր «բերան» փակած է, ձեզի կը թօթվենք. միայն թէ զայս գիտնաք որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է: 12 - Չեզի կ'ըսեմ՝ որ այն օրը Սոդոմի «բերան» աւելի դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ այն քաղաքին: 13 - Վա՛յ քեզ, Գորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատանցմէ քուրձով ու միտիբի մէջ նստելով ապաշխարած պիտի ըլլային: 14 - Բայց դատատանին օրը Տիւրոսի ու Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ քան թէ ձեզի:

*Յւն. Խաղաղութիւն †Յւն. Խաղաղութեան օրդր

15 - Եւ դուն, Կափառնայում, որ մինչև երկինք բարձրացած ես, մինչև դժոխք պիտի իջնես: 16 - Ան որ ձեզի մտիկ կ'ընէ, ինծի մտիկ կ'ընէ. և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ. և ան որ զիս կը մերժէ, զիս զրկողը կը մերժէ:

17 - Եւ եօթանասուն աշխարհիք դարձան ուրախութեամբ ու ըսին, Տէր, քու անունովդ դեւերն ալ ձեզի կը հնազանդին: 18 - Եւ ըսաւ անոնց, Սատանան փայլակի պէս երկինքէն վար ինկած կը տեսնէի: 19 - Ահա ձեզի իշխանութիւն կու տամ՝ օձերու և կարիճներու և թշնամիին բոլոր զօրութեանը վրայ կոխկռտելու. ու բնաւ բան մը ձեզի պիտի չփնտռէ: 20 - Բայց դուք անոր վրայ մի ուրախանաք որ շօքիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէք որ ձեր անունները երկինքը գրուած են:

21 - Այն նոյն ժամուն Յիսուս Հոգիով ուրախացաւ ու ըսաւ, Ենորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկնի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և գիտուններէն, ու տողց յայտնեցիր. այո, ով Հայր, վասն զի քու առջևդ այսպէս հաճելի եղաւ: 22 - Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս, ու մէ'կը չգիտեր թէ ո՛վ է Որդին, բայց միայն Հայրը. և թէ ո՛վ է Հայրը, բայց միայն Որդին, և ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել:

23 - Եւ աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ, Երանի՛ այն աչքերուն՝ որոնք ձեր տեսածները կը տեսնեն. 24 - Քանզի կ'ըսեմ՝ ձեզի, որ շատ մարգարէներ և թագաւորներ ուղեցին ձեր տեսածները տեսնել, ու չտեսան, և ձեր լսածները լսել, ու չլսեցին:

25 - Եւ ահա օրինական մը ելաւ, ու զանիկա փորձելով՝ ըսաւ, Վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ: 26 - Անիկա ալ ըսաւ անոր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է, ի՞նչպէս կը կարդաս: 27 - Պատասխան տուաւ անիկա ու ըսաւ, Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօրութենէդ ու քու բոլոր միտքէդ, և քու ընկերդ քու անձիդ պէս: 28 - Եւ ինք ըսաւ անոր, Շիտակ պա-

տասխան տուիր. ատիկա ըրէ ու պիտի ապրիս: 29 - Իսկ անիկա ուղելով ինքզինք արդարացնել, ըսաւ Յիսուսի, Բայց իմ ընկերս ո՞վ է: 30 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Մարդ մը Երուսաղէմէ Երիքով կ'իջնէր, ու աւազակներու յեռ+ ինկաւ, որոնք մերկացուցին զանիկա ու վիրաւորելով կիսամեռ թողուցին ու գացին: 31 - Եւ պատահեցաւ որ քահանայ մը այն ճամբայէն կ'իջնէր, ու զանիկա տեսնելով՝ անդիի կողմէն անցաւ: 32 - Նոյնպէս Ղևտացի մըն ալ այն տեղ հասնելով՝ գնաց ու տեսաւ, և անդիի կողմէն անցաւ: 33 - Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն կ'ընէր, եկաւ անոր քով, ու զանիկա տեսնելով խղճաց. 34 - Եւ մօտեցաւ անոր վերքերը փաթթեց, վրան ձէթ և գինի թափելով, ու իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ զանիկա պանդոկ մը, և անոր հոգ տարաւ: 35 - Ու հետեւեալ օրը երբ կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին տուաւ և անոր ըսաւ, Հոգ տար ատոր, ու ինչ որ աւելի ծախք ընես, ետ դառնալուս ես քեզի կը վճարեմ: 36 - Հիմա այն երեքէն ո՞րը քեզի կ'երևնայ ընկեր ըլլալ աւազակներուն յեռ+ իյնողին: 37 - Եւ անիկա ըսաւ, Ան որ ողորմումութիւն ըրաւ: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Քնա, դուն ալ այնպէս ըրէ:

38 - Ու եղաւ որ երբ անոնք կ'երթային, ինք գեղ մը մտաւ, և կին մը, Մարթա անունով, զանիկա իր տունը ընդունեց: 39 - Եւ անիկա քոյր մը ունէր, որուն անունը Մարիամ էր, որ էլ+ Յիսուսի ոտքերուն քով նստաւ, ու անոր խօսքերը մտիկ կ'ընէր: 40 - Բայց Մարթա շատ սպասաւորութիւնով զբաղած էր. եկաւ անոր քով ու ըսաւ, Տէր, քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ թողուց սպասաւորութեան մէջ. ուստի ատոր զրուցէ որ ինծի օգնէ: 41 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Մարթա, Մարթա, դուն շատ բաներու համար հոգ ընելով կը տազնապիս. 42 - Բայց մէ'կ բան պէտք է, և Մարիամ այն աղէկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի:

ԳԼ. ԺԱ

Ու եղաւ որ տեղ մը աղօթք կ'ընէր. ու երբ դադարեցաւ, իր աշաներաներէն մէկը ըսաւ իրեն, Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր, ինչպէս Յովհաննէս ալ իր աշակերտներուն սորվեցուց: 2 - Եւ ըսաւ անոնց, Երբ աղօթք կ'ընէք՝ ըսէք, Ով Հայր *մեր, որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. *քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ.՝ 3 - Մեր ամէն օրուան հացը օրէ օր մեզի տուր. 4-Եւ մեզի ներէ մեր մեղքերը, քանզի մենք ալ կը ներենք այն ամէնուն՝ որ մեզի պարտական են. ու մեզ փորձութեան մի տանիր, *հապա չարէն մեզ ազատէ:՝

5 - Եւ ըսաւ անոնց, Ձեզմէ ո՞վ է անոր բարեկամ մը ունենայ, ու կէսգիշերուան մէջ երթայ անոր և ըսէ անոր, Բարեկամ, ինծի երէք նկանակ փոխ տուր. 6 - Վասն զի իմ՝ մէկ բարեկամն ճամբայէ ինծի եկաւ, ու բան մը չունիմ անոր առջև դնելու: 7 - Անիկա ալ ներսէն պատասխան տայ և ըսէ, Ձիս մի յոգնեցներ, արդէն դուռը գոցուած է, ու տղաքս իմ քովս անկողինի մէջ են. չեմ կրնար ելլել ու քեզի հօց տալ: 8 - Ձեզի կ'ըսեմ, Թէև բարեկամութեան համար չելլէ տայ անոր, սակայն անոր թախանձանքին համար պիտի ելլէ ու պէտք եղածը տայ անոր: 9 - Ես ալ կ'ըսեմ՝ ձեզի, Խնդրեցէք և պիտի արուի ձեզի, փնտռեցէք ու պիտի գտնէք, Գոհացէք և պիտի բացուի ձեզի. 10 - Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ Գոհացէ կը զարնէ՝ պիտի բացուի անոր: 11 - Ձեզմէ ո՞վ է այն հայրը, որմէ իր որդին հաց որ ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղ օ՞ճ պիտայ անոր. 12 - Եւ կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարի՞ճ պիտի տայ անոր: 13 - Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծանէր տալ գիտէք, ո՞րչափ աւելի յեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն:

14 - Ու դե մը կը հանէր, և անիկա

համը էր. ու եղաւ որ երբ դեւը ելաւ, համըը խօսեցաւ, և ժողովուրդները զարմացան: 15 - Բայց անոնցմէ մէկ քանինները ըսին, Ասիկա դեւերուն Բէեղզեբուզ իշխանին միջոցով դեւերը կը հանէ: 16 - Ուրիշներն ալ փորձելով երկինքէն նշան մը կ'ուզէին անկէ: 17 - Բայց ինք գիանալով անոնց խորհուրդները՝ ըսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի, և սուսն մը իրեն դէմ բռնուած՝ կը կործանի. 18 - Հապա եթէ Սատանայ իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը ի՞նչպէս պիտի կենայ. որովհետև կ'ըսէք թէ Բէեղզեբուզով դեւերը կը հանեմ: 19 - Իսկ եթէ ես Բէեղզեբուզով դեւերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները: 20 - Բայց եթէ ես Աստուծոյ մատովը կը հանեմ՝ դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեզ վրայ հասած է: 21 - Երբ զօրաւոր Գոհաց մը զէնքերը վրան առած՝ իր Գոհաց բակը կը պահպանէ, անոր բաները խաղաղութեան մէջ կը մնան. 22 - Բայց երբ անկէ աւելի զօրաւորը վրան գալով յաղթէ զանիկա, անոր զէնքերը կ'առնէ՝ որոնց ինք յուսացեր էր, և անկէ Գոհաց կողմաւոր կը բաժնէ: 23 - Ան որ ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ չժողովեր՝ ցիրուցան կ'ընէ:

24 - Երբ պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր տեղեր կը պտրտի, հանգրսութիւն կը փնտռէ. ու երբ չգտնէր կ'ըսէ, Իտառնամ նորէն իմ տունս ուրկէ ելայ: 25 - Եւ կու գայ, զանիկա մաքրուած ու յարգարուած կը գտնէ: 26 - Այն ատեն կ'երթայ, և իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ:

27 - Ու եղաւ որ երբ անիկա այս բաները կը խօսէր, ժողովուրդին մէջէն կին մը ձայնը վերցուց ու ըսաւ անոր, Իբրանի՛ այն որովայնին՝ որ քեզ կրեց, և այն ծիծերուն՝ որոնք քեզի կաթ տուին: 28 - Եւ ինք ըսաւ, Մանաւանդ թէ երանի՛ անոնց որ Աստուծոյ խօսքը կը ըսեն ու կը պահեն:

*Ո՛հնէ, չունին

*Յոն. տան

29 - Ու երբ ժողովուրդները աւելի կը դիզուէին, սկսաւ ըսել, Այս ազգը չար է. նշան կ'ուզէ, և եւրեւ նշան պիտի չարուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: 30 - Քանզի ինչպէս Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ, այնպէս Արդին մարդոյ այս ազգին պիտի ըլլայ: 31 - Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին մարդոցը դէմ պիտի ելլէ, ու պիտի դատապարտէ ասոնք, վասն զի երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս: 32 - Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն, ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնով զեղջի եկան, և ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս:

33 - Մէկը ճրագը չվառեր, ծածուկ տեղ մը դներ, ոչ ալ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, որպէս զի ներս մտնողները ըստ տեսնեն: 34 - Մարմինին ճրագը աչքն է. ուստի երբ աչքդ պարզ է, բոլոր մարմինդ ալ լուսատուոր կ'ըլլայ. բայց երբ աչքդ վատ է, մարմինդ ալ մութ կ'ըլլայ: 35 - Ուրեմն զգոյշ կեցիր, որ քու մէջդ եղած ըստ խաւար չըլլայ: 36 - Արդ եթէ քու բոլոր մարմինդ լուսաւոր է, և մութ մաս մը չունի, բոլորն ալ լուսաւոր կ'ըլլայ, ինչպէս երբ ճրագ մը իր փայլունութիւնովը քեզ կը լուսաւորէ:

37 - Ու երբ այս բաները կը խօսէր, փարիսեցի մը կ'աղաչէր անոր՝ որ իր քով ծաշ ուտէ. անիկա ալ մտաւ սեղան նստաւ: 38 - Իսկ փարիսեցին երբ տեսաւ, զարմացաւ, որ նախ չուացուեցաւ ծաշէն առաջ: 39 - Եւ Տէրը ըսաւ անոր, Հիմա դուք, փարիսեցիներ, գաւաթին ու պնակին դուրսիդին կը մտքէք, ու ձեր ներսիդին յափշտակութեամբ և չարութեամբ լեցուն է: 40 - Անխելքներ, ան որ դուրսինը ըրաւ, ներսինն ալ ինք չըրաւ: 41 - Սակայն անոնց մէջ եղածներէն ողորմութիւն տուէք, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի: 42 - Բայց վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ անանուխին ու փեղեկային և բոլոր խոտեղէններուն տասանորդը կը վճարէք, ու զանց կ'ընէք իրաւունքը և Աստուծոյ սէրը. ասոնք պէտք էր ընել, և զանոնք չձգել: 43 - Վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ

ժողովարաններուն մէջ առաջին աթոռները կը սիրէք, ու շուկաներուն մէջ բարեները: 44 - Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անյայտ գերեզմաններու նման էք, որոնց վրայէն մարդիկ կը քալեն ու չեն գիտեր:

45 - Եւ օրինականներէն մէկը պատասխան տալով՝ ըսաւ անոր, Վարդապետ, այդ խօսքերը զրուցելով՝ մեզ ալ վար կը զարնես: 46 - Եւ անիկա ըսաւ, Զեզի ալ վա՛յ օրինականներուդ, որ տանելու դժուար բեռներ կը բեռցնէք մարդոց, ու դուք ձեր մէկ մատով այն բեռներուն չէք դպչիր: 47 - Վա՛յ ձեզի, որ մարգարէներուն գերեզմանները կը շինէք, ու ձեր հայրերը սպաննեցին զանոնք: 48 - Ուրեմն կը վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հայրերուն ըրածներուն. վասն զի իրենք սպաննեցին զանոնք, ու դուք անոնց գերեզմանները կը շինէք: 49 - Անոր համար ալ Աստուծոյ իմաստութիւնը ըսաւ, Պիտի զրկեմ անոնց մարգարէներ ու առաքեալներ, և անոնցմէ ո՛րը պիտի սպաննեն ու ո՛րը հալածեն. 50 - Որպէս զի աշխարհի սկիզբէն հեռէ թափուած բոլոր մարգարէներուն արիւնը այս ազգէն պահանջուի, 51 - Սբէլի արիւնէն մինչև Զաքարիայի արիւնը, որ սեղանին ու տաճարին մէջտեղ կորսուեցաւ. Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Այս ազգէն պիտի պահանջուի: 52 - Վա՛յ ձեզի օրինականներուդ, որ գիտութեան բանալին վերցուցիք. դուք չմտաք, և մանողներն ալ արգիլեցիք:

53 - Ու երբ այս բաները անոնց կը զրուցէր, դպիրները ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ, և շատ բաներու վրայով անոր բերնէն խօսք փրնտաել. 54 - Եւ անոր դարան պատրաստելով, կը փնտուէին թէ ի՛նչպէս անոր բերնէն բան մը որսան, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն:

ԳԼ ԺԲ

Այս միջոցին երբ բիւրաւոր ժողովուրդներ վրան ժողվուեցան, մինչև մէկզմէկ կը կոխէին, սկսաւ ըսել իր աշակերտներուն, Ամէնէն առաջ ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցիներուն խմորէն, որ է կեղծաւորութիւն: 2 - Վա՛յ զի բան մը չկայ ծածուկ՝ ոչ

պիտի չյայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի: 3 - Ուստի ինչ որ մուժտեղը զրուցեցիք, անհկա լոյս տեղը պիտի լուսի. և այն զոր ներքին սենեակներուն մէջ ականջի խօսեցաք, տանիքներուն վրայ պիտի քարոզուի: 4 - Բայց ձեզի իմ քարեկամներուս կը զրուցեմ, Մի վախնաք անանցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու անկէ ետեւ աւելի բան մը ընելու չուրի: 5 - Հապա ձեզի ցուցնեմ թէ որմէ՛ պիտի վախնաք. Անկէ վախցէք՝ որ սպաննելէն ետեւ իշխանութիւն ունի գեհեանը ձգելու. այս, կ'ըսեմ ձեզի, Անկէ վախցէք: 6 - Զէ՞ որ հինգ ճրնճողուկ երկու դանկի կը ծախուի, և անանցմէ մէ՛կը մուցուած չէ Աստուծոյ առջև: 7 - Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած են. ուրեմն մի վախնաք, իսկ զուր շնճողուկներէն աւելի ազէկ էք: 8 - Եւ ձեզի կ'ըսեմ, Ամէն ով որ զիս կը դաւանի մարդոց առջև, Որդին մարդոյ ալ զանհկա պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն առջև: 9 - Բայց ան որ զիս մարդոց առջև կ'ուրանայ, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջև: 10 - Եւ ամէն ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ, պիտի չներուի անոր: 11 - Ու երբ ձեզ ժողովարանները և իշխանութիւններու ու պետութիւններու առջև տանելու ըլլան, հոգ մի ընէք թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պատասխան պիտի տաք, կամ ի՛նչ պիտի ըսէք. 12 - Վասն զի Սուրբ Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն ինչ որ պէտք է խօսիլ:

13 - Ժողովուրդին մէջէն մէկը ըսաւ անոր, Վարդապետ, զրուցէ եղբօրս, որ ձեզի ինչ՞ ժառանգութիւնը ինձի հետ բաժնէ: 14 - Ան ալ ըսաւ անոր, Մարդ, ո՞վ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին ընող դրաւ: 15 - Եւ ըսաւ անոնց, Նայեցէք և զգուշացէք ագահութենէ. վասն զի մարդուս ստացուածքներուն աւելնալէն իսկ չէ իր կեանքը: 16 - Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով, Հարուստ մարդու մը տրտերը առատ բերքեր տուին. 17 - Եւ ինք կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր, Ի՞նչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, ուր իմ բերքերս ժողվեմ: 18 -

Եւ ըսաւ, Զայս ընեմ. իմ ամբարներս քակեմ ու ա՛լ աւելի մեծ չինեմ, և հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս. 19 - Եւ իմ անձիս ըսեմ. Ով անձս, շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողվուած. հանգչէ, կեր, խմէ և ուրախ եղիր: 20 - Բայց Աստուած ըսաւ անոր, Անմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի. ուստի այն քու պատրաստած բաներդ որո՞ւ պիտի ըլլան: 21 - Այսպէս է անհկա որ իր անձին համար գանձ կը դիզէ, ու Աստուծոյ չհարստանար:

22 - Եւ ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար կ'ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ոչ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. 23 - Վասն զի կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն: 24 - Նայեցէք ագուաներուն, որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն, որոնք ոչ շտեմարաններ ունին, ոչ ալ ամբարներ, ու Աստուած վանոնք կը կերակրէ. դուք ո՛րչափ աւելի լուս էք թաշուններէն: 25 - Եւ ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել: 26 - Հապա եթէ ամենափոքր բանին կարող չէք, ուրիշ բաներու համար ինչո՞ւ հոգ կ'ընէք: 27 - Նայեցէք շուշաններուն, ի՛նչչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն. բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկո՞ւն պէս չհագուեցաւ: 28 - Ուստի եթէ խտրը որ այսօր դաշտի մէջ է, ու վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձեզ, թերահաւատներ: 29 - Ալ դուք մի փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք և ի՛նչ պիտի խմէք, ու մի շփոթիք. 30 - Վասն զի այդ բոլոր բաները աշխարհիս ազգերը կը փնտռեն. ու ձեր Հայրը գիտէ որ այդ բաները ձեզի պէտք են: 31 - Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք, և այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին: 32 - Մի վախնաք, պզտիկ հօտ, վասն զի ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի տայ: 33 - Մտեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն տուէք. ՝ ձեզի չհիննայու քսակներ պատրաստեցէք, ՝ երկինքը՝ չպակսելու գանձ մը, ուր ոչ գողը կը մտնենայ և ոչ ցեցք

կ'ապականէ: 34 - Քանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ: 35 - Ձեր մէջքերը գօտևորուած ըլլան, ու ճրագները վառուած: 36 - Եւ դուք այն մարդոց նման՝ որոնք իրենց տէրոջը կը սպասեն, թէ ե'րբ պիտի դառնայ հարսնիքէն. որպէս զի երբ գայ և դուք զարնէ, իսկոյն բանան անոր: 37 - Երանի՛ այն ծառաներուն, որ տէրը երբ գայ՝ զանոնք արթուն պիտի գանէ. ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ ինք գօտին մէջքը պիտի կապէ ու սեղան նստեցնէ զանոնք, և առաջ անցնելով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց: 38 - Եւ եթէ գիշերուան երկրորդ պահուն գայ, կամ երրորդ պահուն գայ ու այնպէս գանէ, երանելի են այն ծառաները: 39 - Բայց զայս դիտե՛ք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ ո'ր տան գողը կու գայ, արթուն կը կենար ու թող չէր տար որ իր տունը ծակեն: 40 - Ուրեմն դուք ալ պատրաստ կեցե՛ք, քանզի Որդին մարդոյ կու գայ այնպիսի ժամու մը մէջ՝ որ դուք չէք կարծեր:

41 - Եւ Պետրոս ըսաւ անոր, Տէր, այդ առակը մեզի՞ կ'ըսես թէ ամէնուն ալ: 42 - Եւ Տէրը ըսաւ, Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ՝ ու իմաստուն տնտեսը, զոր տէրը իր գերդաստանին վրայ պիտի դնէ, որպէս զի տանին անոնց ուտելիքը տայ: 43 - Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած տանը այնպէս բրած պիտի գանէ: 44 - Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա: 45 - Հապա եթէ այն ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ. և սկսի ծառաները ու աղախինները ծեծել, և ուտել ու խմել ու գինովնալ, 46 - Այն ծառային տէրը պիտի գայ այնպիսի օր մը որ չսպասեր, և այնպիսի ժամ մը որ չգիտեր, և զանիկա մէջ տեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը տնհաւատարիմներուն հետ պիտի դնէ: 47 - Եւ այն ծառան որ իր տէրոջը կամքը գիտէ ու չպատրաստուիր, ոչ ալ անոր կամքը ի գործ կը դնէ, շատ ծեծ պիտի ուտէ: 48 - Բայց ան որ չգիտեր ու ծեծի արժանի բան մը կ'ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ. որու որ շատ արուեցաւ, շատ պիտի ուզուի անկէ, և որու որ աւելի յանձնուեցաւ, ա'լ աւելի պիտի պահանջուի անկէ:

49 - Ես կրակ ձգելու եկայ երկրի վրայ, ու ի՞նչ կ'ուզեմ՝ եթէ արդէն բորբոքած է: 50 - Բայց մկրտութիւն մը ունիմ՝ մկրտուելու, և ի՞նչպէս կը սագնապիմ՝ մինչև կատարուի: 51 - Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՞ւն տալու եկայ. ձեզի կ'ըսեմ, Ոչ, հապա բաժանմունք. 52 - Վասն զի սակէ ետև մէկ տան մէջ հինգը երա՛փ բաժնուած պիտի ըլլան, երեքը երկուքէն ու երկուքը երեքէն. 53 - Հայրը պիտի բաժնուի որդիէն, և որդին հօրմէն, մայրը աղջիկէն ու աղջիկը մօրմէն, կեսուրը իր հարսէն ու հարսը իր կեսուրէն:

54 - Եւ ըսաւ ժողովուրդներուն, Երբ արեւմուտքի կողմէն ամպ մը ելած կը տեսնէք, շուտ մը կ'ըսէք թէ Անձրեւ պիտի գայ, և այնպէս կ'ըլլայ: 55 - Ու երբ հարաւային հովը կը փչէ, կ'ըսէք թէ Տաք պիտի ըլլայ, և այնպէս կ'ըլլայ: 56 - Կեղծաւորներ, երկրի ու երկինքի երեսը քննելը գիտէք, հապա այս ժամանակը ի՞նչպէս չէք քններ: 57 - Եւ ինչո՞ւ դուք ձեզմէ չէք սրտչեր իրաւունքը: 58 - Երբ դուն քու ստիսիդ հետ իշխանին երթալու ըլլաս, ճամբուն մէջ անկէ աղատուելու համար ջանք ըրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջև քաշէ, ու դատաւորը դահիճին ձեռքը տայ քեզ, ու դահիճն ալ բանար դնէ: 59 - Քեզի կ'ըսեմ, բնաւ պիտի չելլես անկէ, մինչև վերջին լուման չվճարես:

ԳԼ ԺԳ

Եւ ոմանք այն տան ներկայ գրտնուելով՝ պատմեցին անոր Գալիլեացուց վրայով, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց: 2 - Եւ Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Կը կարծէ՞ք որ այն Գալիլեացիները բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին: 3 - Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա եթէ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: 4 - Կամ թէ այն տանըթ հոգին որոնց վրայ Սելովամի մէջի աշտարակը ինկաւ, և զանոնք մեռցուց. կը կարծէ՞ք որ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին: 5 - Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա եթէ չապաշ-

խորէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսուիք:

6 - Այս առակն ալ ըսաւ. Մարդ մը իր սյգբիին մէջ անկուած թղենի մը ունէր, ու եկաւ անկէ պտուղ փնտուելու և չգտաւ: 7 - Ուստի ըսաւ սյգեպանին, Ահա երէք տարի է որ կու գամ սյգ թղենիին վրայ պտուղ փնտուելու, ու չեմ գտներ, ու ատիկա կարէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ: 8 - Անիկա պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Տէր, այս տարի ալ ատիկա թող տուր, մինչև ասոր բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ: 9 - Եւ եթէ պտուղ տայ՝ ոչէ, ապա թէ ոչ՝ գալ ասի կարես ատիկա:

10 - Եւ ինք ժողովարաններէն մեկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցնէր: 11 - Եւ ահա կին մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնութ տարիէ ի վեր, ու կծկտած էր և ամենեւին չէր կրնար շիտակ կայնիլ: 12 - Ու Յիսուս զանիկա տեսնելով՝ երէն կանչեց և ըսաւ անոր, Ով կին, դուն քու հիւանդութենէդ արձակուած ես: 13 - Ու ձեռքը անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտակեցաւ ու փառք կու տար Աստուծոյ: 14 - Իսկ ժողովարանին իշխանը պատասխան տուաւ բարկանալով՝ որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց, և ըսաւ ժողովուրդին. Վեց օր կայ, որոնց մէջ արժան է գործ գործել. ուստի այն օրերէ եկէք բժշկուեցէք, ու ոչ թէ շաբաթ օրը: 15 - Այն ատեն Տէրը պատասխան տուաւ անոր ու ըսաւ, *Կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր եզր կամ էջը մտուրէն չարձակեք, որպէս զի տանի ջուր տայ: 16 - Հապա ատիկա որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասնութ տարի Սատանայ զանիկա կապեց, չէ՞ր վայլեր որ շաբաթ օրը այն կապէն արձակուի: 17 - Եւ երբ այս բանը ըսաւ, իրեն հակառակ կեցողները ամէնն ալ ամօթով մնացին. ու բոլոր ժողովուրդը կ'ուրախանար այն ամէն փառաւոր գործերուն համար՝ որոնք անկէ կ'ըլլային:

18 - Եւ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցնեմ զանիկա: 19 - Մանանթիի հասի նման է, զոր մարդ մը առաւ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու մեծ ծառ եղաւ. ու երկինքի

թռչունները անոր ճիւղերուն վրայ բնակեցան:

20 - Իարձեալ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցընեմ: 21 - Իմարի նման է, զոր կին մը առաւ, երէք գրիւ պիւրի մէջ պահեց, մինչև ամէնն ալ խմորեցաւ:

22 - Եւ քաղաքները ու գեղերը պարտելով՝ կը սորվեցնէր, ու դէպ ի Երուսաղէմ՝ ճամբայ կ'ընէր: 23 - Եւ մէկը ըսաւ անոր, Տէր, քիչու՞ր են անոնք որ պիտի փրկուին: 24 - Անիկա ալ ըսաւ անոնց, Չանք ըրէք որ նեղ դռնէն մտնէք, քանզի կ'ըսեմ ձեզի որ շատերը մտնել պիտի ուզեն և պիտի չկրնան: 25 - Անկէ ետեւ երբ տանուտէրը ելլէ ու դուռը գոցէ, և դուք սկսիք դուրսը կենալ, ու դուռը զարնել և ըսել, Տէր, Տէր, բաց մեզի. ան ալ պատասխան տալով՝ պիտի ըսէ ձեզի, Չեզ չեմ ճանչնար ուրկէ՛ եք: 26 - Այն ատեն պիտի սկսիք ըսել, Մենք քու առջև կերանք ու խմեցինք, և դուն մեր փողոցներուն մէջ սորվեցուցիր: 27 - Եւ անիկա պիտի ըսէ, Չեզի կ'ըսեմ, Չեզ չեմ ճանչնար ուրկէ՛ եք. մէկդի կեցէք ինձմէ, բոլոր անիրաւութիւն գործողներդ: 28 - Հոն պիտի ըլլայ լալ ու աղաւանդ կրճատել, երբ տեսնէք Աբրահամը ու Իսահակը և Յակոբը ու բոլոր մարգարէները Աստուծոյ թագաւորութեանը մէջ, ու ձեզ դուրս հանած: 29 - Եւ պիտի գան արևելքէն ու արևմուտքէն և հիւսիսէն ու հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեանը մէջ: 30 - Եւ ահա կան յետիններ՝ որոնք առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ որոնք յետիններ պիտի ըլլան:

31 - Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու ըսին անոր, Ելիր ու գնա սակէ, վասն զի Հերովդէս քեզ սպանել կ'ուզէ: 32 - Եւ ինք ըսաւ անոնց, Գացէք, այն աղուէսին ըսէք, Ահա ես դեւեր կը հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և վաղը, ու երբորդ օրը պիտի կատարուիմ: 33 - Միայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և միւս օրը պարտիմ, վասն զի կարելի չէ որ մարգարէ մը Երուսաղէմէ դուրս կորսուի: 34 - Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի զրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու տղաքներդ

*Ո՞ւն է, կեղծաւորներ

Ժողովել ուզեցի, ինչպէս հաւը իր ձագերը թեւերուն տակ կը թռչէ, և դուք շուղեցիք: 35 - Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ. սակայն ձեզի կ'ըսեմ, որ Ա՛լ պիտի պիտի չտեսնէք, մինչև գոյ այն ժամանակը որ պիտի ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ:

Գ. Ժ. ԺԴ

Ա եղաւ որ երբ ինք շաբաթ օր մը փարիսեցւոց գլխաւորներէն մէկուն տունը մտաւ հաց ուտելու, ու անոնք անոր կը սպասէին: 2 - Եւ ահա հոն ջրգոյնեալ մարդ մը կար իր առջև: 3 - Եւ Յիսուս պատասխան տուաւ ու խօսեցաւ օրինականներուն ու փարիսեցիներուն՝ ըսելով, Արժան է շաբաթ օրը բժշկել: 4 - Անոնք ալ լուռ կեցան. և ինք բռնեց զանիկա, բժշկեց ու ճամբեց. 5 - Եւ պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Ձեզմէ որո՞ւն էշը կամ եզը հորը խնայու ըլլայ, ու շուտ մը չհաներ զանիկա շաբաթ օրը: 6 - Եւ այս բաներուն չկրցան անոր պատասխան տալ:

7 - Առակ մը գրուցեց այն հրաւիրուած մարդոց ալ, երբ տեսաւ թէ ի՛նչպէս առաջին բազմոցները կ'ընտրէին, ու ըսաւ անոնց, 8 - Երբ մարդէ մը հարսնիքի հրաւիրուիս, առաջին բազմոցին վրայ մի նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուաւոր մէկն ալ հրաւիրուած ըլլայ անկէ: 9 - Եւ ան որ քեզ ու զանիկա հրաւիրեց, գոյ գրուցէ քեզի, Ասոր տեղ աուր, և անկէ ետև սկսիս ամօթով յետին տեղը բռնել: 10 - Հապա երբ հրաւիրուիս, գնա յետին տեղը նստէ. որպէս զի երբ քեզ հրաւիրողը գոյ, քեզի ըսէ, Բարեկամ, վեր հրամմէ. այն ատեն քեզի հետ նստողներուն առջև քեզի փառք կ'ըլլայ: 11 - Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի. և ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ:

12 - Ու զինք հրաւիրողին ալ ըսաւ, Երբ ճաշ կամ ընթրիք կ'ընես, մի կանչեր քու բարեկամներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու ազգականներդ, ու ոչ քո՞ հարուստ դրացիներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն, ու քեզի հատուցում ըլլայ:

13 - Հապա երբ հացկերոյթ կ'ընես, աղքատներ, պակասաւորներ, կաղեր ու կոյրեր հրաւիրէ. 14 - Ու երանելի պիտի ըլլաս, վասն զի անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատուցանել. քանզի արդարներուն յարութիւն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հատուցուի:

15 - Եւ սեղան նստողներէն մէկը երբ լսեց այս խօսքը՝ ըսաւ անոր, Երանի՛ անոր որ Աստուծոյ թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ: 16 - Եւ ինք ըսաւ անոր, Մարդ մը մեծ ընթրիք ըրաւ ու շատ մարդիկ հրաւիրեց: 17 - Եւ ընթրիքին ատենը ղրկեց իր ծառան, որպէս զի հրաւիրուածները կանչէ՛ ը՛ելով, Եկէք, վասն զի արդէն ամէն բան պատրաստ է: 18 - Եւ ամէնը մէկէն սկսան ետ քաշուիլ. առաջինը անոր ըսաւ, Ես արտ մը ծախու առի, ու պէտք է որ ելլեմ տեսնեմ զանիկա. կ'աղաչեմ քեզի, զիս հրաւիրուած սեպէ: 19 - Եւ միւսը ըսաւ, Հինգ զոյգ եզ ծախու առի, ու կ'երթամ որ զանոնք փորձեմ. կ'աղաչեմ քեզի, զիս հրաւիրուած սեպէ: 20 - Եւ միւսը ըսաւ, Կին առի, ու անոր համար չեմ կրնար գալ: 21 - Եւ այն ծառան եկաւ ու իր տէրոջը պատմեց այս բաները. այն ատեն բարկացաւ տանուտէրը ու ըսաւ իր ծառային, Շուտով քաղաքին հրապարակները ու փողոցները ելի՛ր, և աղքատները ու պակասաւորները և կաղերը ու կոյրերը հոս մտցուր: 22 - Ծառան ալ ըսաւ, Տէր, եզաւ ինչ որ հրամայեցիր, ու տակաւին տեղ կայ: 23 - Եւ տէրը ըսաւ ծառային, Ելի՛ր ճամբաները սե ցանգերը, և գոռոնք ստիպէ հո՞ մտնելու, որպէս զի տունս լեցուի: 24 - Քանզի կ'ըսեմ ձեզի, որ այն հրաւիրուածներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ:

25 - Ու իրեն հետ շատ ժողովուրդներ կ'երթային. և դառնալով անոնց ըսաւ, 26 - Եթէ մէկը ինձի կու գայ, ու չատեր իր հայրը և մայրը, ու կիներ և զաւակները, ու եղբայրները և քոյրերը, նաև իր կեանքն ալ, չկրնար իմ աշակերտս ըլլալ: 27 - Եւ սվ որ իր խաչը չվերցնէր ու իմ ետևէս գար, չկրնար իմ աշակերտս ըլլալ: 28 - Վասն զի ձեզմէ ո՞վ աշտարակ մը չի նել ուզելով, առաջ նստիր ու հաշիւ

ընէր ծախքը, թէ զանհկա լմնցնելու
 Իւրապ-թիւն ունի՞. 29 - Որ չլլայ թէ
 երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բո-
 լոր տեսնողները սկսին զանհկա ծաղը
 ընել, 30 - Եւ ըսել թէ Այս մարդը
 սկսաւ շինել ու չկրցաւ լմնցնել: 31-
 Կամ թէ ո՞ր թագաւորը ուրիշ թա-
 գաւորի մը հետ պատերազմելու եր-
 թայով, առաջ չնստիր ու խորհիր, թէ
 արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ
 կենալ անոր՝ որ քսան հազարով իր
 վրայ կու գայ: 32 - Ապա թէ ոչ՝
 քանի որ անհկա հեռու է, դեսպան
 զրկելով խաղաղութիւն կը խնդրէ: 33-
 Ահա այսպէս ալ ձեր մէջէն ամէն մէ-
 կը եթէ իր բոլոր ստացուածքէն ետ
 չկենայ, չկրնար իմ աշակերտա ըլլալ:
 34 - Աղը աղէկ բան է. բայց եթէ աղը
 իր համը կորսնցնէ, ինչո՞վ պիտի հա-
 մափնայ: 35 - Ոչ հողի ու ոչ թրիքի
 տեղ օգտակար կ'ըլլայ, հապա զանհ-
 կա դուրս կը նետեն: Ան որ լսելու ա-
 կանջ ունի՝ թող լսէ:

ԳԼ. ԺԵ

Եւ բոլոր մտքաւորները ու մեղա-
 ւորները անոր կը մօտենային իրմէ լսե-
 լու համար: 2 - Եւ փարիսեցիները ու
 դպիրները արտունջ կ'ընէին ու կ'ը-
 սէին, Ասիկա մեղաւորները կ'ընդունին,
 ու անոնց հետ կ'ուտէ:

3 - Եւ անհկա այս առակը խօսեցաւ
 անոնց՝ ըսելով, 4 - Ձեզմէ ո՞վ է այն
 մարդը որ հարիւր ոչխար ունենայ, և
 անոնցմէ մէկը կորսնցնէ, իննսունըինը
 չը՞ ձգեր անապատին մէջ, ու այն կոր-
 սուածին ետեւէն երթար, մինչև զանհ-
 կա գտնէ, 5 - Ու երբ կը գտնէ, ուրա-
 խանալով իր ուսերուն վրայ կը դնէ
 զանհկա: 6 - Եւ տունը գալով, կը
 կանչէ բարեկամները ու դրացիները,
 ու անոնց կ'ըսէ, Ուրախ եղէք ինծի
 հետ, վասն զի իմ՝ կորսուած ոչխարս
 գտայ: 7 - Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ու-
 րախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ
 մեղաւորի համար որ կ'ապաշխարէ,
 քան թէ իննսունըինը արդարներու
 համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք
 չէ: 8 - Կամ թէ ո՞վ է այն կինը որ
 տասը դրամ ունենայ, ու եթէ դրամ մը
 կորսնցնէ, ճրագ չը՞ վառեր, ու տանը
 մէջ աւել դարներ և զգուշութեամբ
 փնտռեր, մինչև գտնէ: 9 - Ու երբ կը

գտնէ, կը կանչէ բարեկամները ու
 դրացիները, և կ'ըսէ, Ուրախ եղէք
 ինծի հետ, վասն զի իմ՝ կորսնցուցած
 դրամս գտայ: 10 - Այնպէս ալ, ձեզի
 կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աս-
 տուծոյ հրեշտակներուն առջև մէկ
 մեղաւորի համար որ կ'ապաշխարէ:

11 - Եւ ըսաւ, Մարդ մը երկու որ-
 դի ունէր. 12 - Ու անոնցմէ պզտիկը
 հօրը ըսաւ, Հայր, քան ստացուած-
 քէդ է՞նի իշխալու բաժինը տուր ին-
 ծի. ան ալ բաժնեց անոնց էր ունե-
 ցածը: 13 - Եւ շատ օրեր շանցած՝
 պզտիկ որդին բոլոր բաները ժողվեց
 ու հեռու երկիր մը գնաց, և հոն ա-
 նառակութեամբ ապրելով իր ունե-
 ցածը փճացուց: 14 - Ու երբ ամէնը
 հասցուց, այն երկրին մէջ սաստիկ
 սով մը եղաւ, ու ինք սկսաւ չքաւոր
 ըլլալ: 15 - Եւ գնաց այն երկրին քա-
 ղաքացիներէն մէկուն քով մտաւ, ան
 ալ իր ագարակը զրկեց զանհկա՝ խո-
 զեր արածելու համար: 16 - Եւ կը
 փափաքէր խոլերուն կերած եղջիւրէն
 իր փորը լեցնել, ու մէ'կը չէր տար ա-
 նոր: 17 - Եւ ինքզինքին գալով՝ ըսաւ,
 Քանի՞ բանուորներ կան իմ հօրս քան
 հացով լեցուած, ու ես հոս սովամահ
 կը կորսուիմ. 18 - Ելլեմ, երթամ
 իմ հօրս, և ըսեմ անոր, Հայր, մեղան-
 չեցի երկինքին դէմ ու քու առջևդ,
 19 - Եւ ալ արժանի չեմ՝ քու որդիդ
 ըսուելու. զիս քու վարձկաններէդ մէ-
 կուն պէս ըրէ: 20 - Ու ելաւ իր հօրը
 եկաւ. և մինչ դեռ ինք շատ հեռու էր,
 հայրը տեսաւ զանհկա ու գութը շար-
 ժեցաւ, և վազելով՝ անոր պարանոցին
 վրայ ինկաւ ու համբուրեց զանհկա:
 21 - Որդին ալ ըսաւ անոր, Հայր, մե-
 ղանչեցի երկինքին դէմ ու քու առ-
 ջևդ, և ալ արժանի չեմ՝ քու որդիդ
 ըսուելու: 22 - Բայց հայրը ըսաւ իր
 ծառաներուն, Հանեցէք առաջին պատ-
 մուճանը ու հագցուցէք անոր, և մա-
 տանի դրէք անոր ձեռքը, ու կօշիկներ՝
 անոր սաքերը: 23 - Եւ պարտա գուա-
 րակը բերէք, մորթեցէք, և ուտենք և
 ուրախ ըլլանք. 24 - Վասն զի այս իմ
 որդիս մեռած էր ու ողջնցաւ, կոր-
 սուած էր ու գտնուեցաւ. և սկսան
 ուրախ ըլլալ: 25 - Ու անոր մեծ որդին
 ագարակն էր, ու երբ կու գար ու տա-
 նը մօտեցաւ, նուագարաններուն և
 պարերուն ձայնը լսեց: 26 - Ու ծառա-

ներէն մէկը իրեն կանչելով՝ կը հարցնէր թէ այս ի՞նչ է: 27 - Անիկա ալ ըսաւ անոր, Եղբայրդ եկաւ, ու հայրդ պարարտ զւարակը մորթեց, վասն զի ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա: 28 - Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր: 29 - Եւ անիկա պատասխան տալով՝ ըսաւ հօրը, Ահա այսչափ տարի է որ քեզի կը ծառայեմ, ու բնաւ քու խօսքէդ դուրս չեկայ, ու ինձի երբէք ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի: 30 - Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուած քոզներու հետ կերաւ, անոր մորթեցիր պարարտ զւարակը: 31 - Եւ անիկա ըսաւ անոր, Որդեակ, դուն միշտ ինձի հետ ես, ու իմ բոլոր ունեցածս քուկդ է: 32 - Սակայն պէտք էր ուրախ ըլլալ և խնդալ, վասն զի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ:

ԳԼ. ԺԶ

Ու իր աշակերտներուն ալ ըսաւ, Հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր, և անոր վրայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ունեցածը կը փճացնէ: 2 - Ուստի կանչեց զանիկա ու ըսաւ անոր, Ի՞նչ է այս զոր քեզի համար կը լսեմ. քու տնտեսութեանդ հաշիւը առը, վասն զի ա՛լ չես կրնար տնտես ըլլալ: 3 - Եւ տնտեսը իր մօզին մէջ ըսաւ, Ի՞նչ ընեմ, որովհետեւ իմ տէրս տնտեսութիւնը ինձմէ կ'առնէ. *հողագործութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամօնամ: 4 - Գիտեմ ի՞նչ պիտի ընեմ, որպէս զի երբ իմ տնտեսութեանէս մերժուիմ, զիս իրենց տունը ընդունին: 5 - Եւ իր տէրոջը պարտականները մէկիկ մէկիկ իրեն կանչելով՝ ըսաւ առաջինին, Ի՞նչ իմ տէրոջս ո՞րչափ պարտք ունիս: 6 - Ան ալ ըսաւ, Հարիւր մար ձէթ. և ըսաւ անոր, Գիրդ առ ու շուտով նստէ յիստեն գրէ: 7 - Ետքը միւսին ըսաւ, Ի՞նչ ալ ո՞րչափ պարտք ունիս. և անիկա ըսաւ, Հարիւր քու ցորեն. ու ըսաւ անոր, Գիրդ առ և ութսուն գրէ: 8 - Ու տէրը անիրաւ տնտեսը գովեց,

որ խելացութիւնով ըրաւ. վասն զի այս աշխարհին որդիները իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խելացի են: 9 - Եւ ես ալ ձեզի կ'ըսեմ, Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ ըրէք, որպէս զի *երբ անիկա պակսի, ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ ընդունին: 10 - Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, շատի մէջ ալ հաւատարիմ է. և ան որ քիչի մէջ անիրաւ է, շատի մէջ ալ անիրաւ է: 11 - Ուստի եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չեղաք, Ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի: 12 - Ու եթէ օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի: 13 - Ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառայութիւն ընել, վասն զի կա՛մ մէկը պիտի տատէ և միւսը սիրէ, կա՛մ խնայուն պիտի յարի՝ և միւսը արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի:

14 - Եւ փարիսեցիներն ալ, որոնք արծաթատէր էին, այս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկա: 15 - Եւ ըսաւ անոնց, Ի՞նչ էք որ մարդոց առջև ինքզինքնիդ կ'արդարացնէք, բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը. վասն զի մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջև պիղծ է: 16 - Օրէնքը ու մարգարէները մինչև Յովհաննէս էին. անկէ ետև Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի, և ամէն մէկը անոր մէջ մտնելու կ'արտօրայ: 17 - Ի՞նչ է որ երկինք ու երկիր անցնին, քան թէ օրէնքէն մէկ նշանագիր իյնայ: 18 - Ով որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, և ով որ երկէ արձակուած կին մը առնէ, շնութիւն կ'ընէ:

19 - Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր, և ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կ'ընէր: 20 - Ու Ղազարոս անունով աղքատ մը կար վերքերով լեցուն, որ անոր դրանը առջև դրուած էր. 21 - Եւ կը փափաքէր որ այն հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը լեցնէ. նաև շուներն ալ կու գային և անոր վերքերը կը լղէին: 22 - Ու ե-

*Յ.՝.՝. չեմ կրնար բրել

*Ա.՝.՝.՝. ձեր կարօտութեան ժամանակը
†Կ.՝.՝.՝. մէկը պիտի մեծարէ

ղաւ որ այն աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զանիկա. հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ: 23 - Եւ դժոխքին մէջ երբ տանջանքի մէջ էր, իր աչքերը վերցընելով՝ հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը անոր գոգը հանդիսանալով: 24 - Եւ ինք աղաղակեց ու ըսաւ, Հայր Աբրահամ, ողորմէ ինձի ու զրկէ Ղազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թաթիսէ, ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ: 25 - Եւ Աբրահամ ըսաւ, Որդեակ, միաքիչ բեր, որ դուն քու կեանքիդ տատենը քու բարիքներդ առիր, նոյնպէս Ղազարոս՝ չարիքներ. հիմա անիկա [հոս] կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս: 26 - Եւ այս ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր մէջտեղ մեծ անդունդ մը կայ հաստատուած, այնպէս որ ձեզի անցնիլ ուզողները չկրնան, ոչ ալ ատկէ մեզի գալու: 27 - Ան ալ ըսաւ, Ուրեմն կ'աղաչեմ քեզի, հայր, որ զանիկա իմ հօրս տունը զրկես, 28 - Քանզի հինգ եղբայր ունիմ, որպէս զի երբայ անոնց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք ալ այս չարչարանքին տեղը գան: 29 - Եւ Աբրահամ ըսաւ անոր, Անոնք Մովսէսը ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն: 30 - Ան ալ ըսաւ, Ոչ, հայր Աբրահամ, հապա եթէ մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն: 31 - Եւ անիկա ըսաւ անոր, Եթէ Մովսէսի ու մարգարէներուն մտիկ չեն ընեն, ոչ ալ եթէ մեռելներէն մէկը յաւրութիւն առնելու ըլլայ, պիտի համոզուին:

ԳԼ. ԺԵ

Եւ ըսաւ իր աշակերտներուն, Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վա՛յ անոր, որուն ձեռքով կու գան: 2 - Անոր աւելի աղէկ է, որ անոր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի, ու անիկա ծովը ձգուի, քան թէ այս պղտիկներէն մէկը գայթակղեցնէ: 3 - Զգուշացէք ձեր անձերուն: Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, յանդիմանէ զանիկա. ու եթէ ապաշխարէ, ներէ անոր: 4 - Եւ եթէ օրը եօթը անգամ քեզի դէմ մե-

ղանչէ, ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու ըսէ, կ'ապաշխարեմ, ներես անոր:

5 - Եւ առաքեալները ըսին Տերօջը, Մեր հաւատքը աւելցուր: 6 - Եւ Տէրը ըսաւ, Եթէ մանանեխի հասի չափ հաւատք ունենայիք, այս թթենիին կրնայիք ըսել, Արմատաքի խլուէ ու ծովուն մէջ անկուէ, ան ալ պիտի հնազանդէր ձեզի:

7 - Բայց ձեզմէ ո՞վ է այն մարդ՝ որ ունենայ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա երբ ազարակէն քան մտնէ, շուտով զրուցէ անոր թէ Սնցիր սեղան նստէ: 8 - Հապա չը՞սեր անոր թէ Պատրաստէ իմ ընթրիքս, ու գօտիդ կապած ինձի սպասաւորութիւն ըրէ, մինչև ես ուտեմ ու խմեմ, ու ետքը դուն ալ կեր ու խմէ: 9 - Միթէ շնորհակա՞լ կ'ըլլայ այն ծառային, իրեն հրամայուած բաները կատարելուն համար. չեմ կարծեր: 10 - Նոյնպէս դուք երբ բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի զայն որ պարտական էինք ընելու՝ ըրինք:

11 - Ու եղաւ որ երբ ինք Երուսաղէմ կ'երթար, Սամարիայի և Գալիլեայի մէջտեղէն կ'անցնէր: 12 - Ու երբ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուէն կայնեցան: 13 - Եւ ձայներնին վերցուցին ու ըսին, Յիսուս վարդապետ, ողորմէ մեզի: 14 - Եւ տեսնելով՝ անոնց ըսաւ, Գացէք դուք ձեզ քահանաներուն ցուցուցէք. ու եղաւ որ երբ կ'երթային, մաքրուեցան: 15 - Եւ անոնցմէ մէկը երբ տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք կու տար Աստուծոյ. 16 - Ու երեսի վրայ անոր ոտքը իյնալով՝ շնորհակալ կ'ըլլար անոր. և ինք Սամարացի էր: 17 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Զէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ այն իննը ո՞ւր են. 18 - Այս օտարազգիէն զատ՝ բնիկ չգրտնուեցա՞ն՝ որ դառնալով Աստուծոյ փառք տան: 19 - Եւ ըսաւ անոր, Ելիր գնա, քու հաւատքդ քեզ բժշկեց:

20 - Ու երբ փարիսեցիները իրեն հարցուցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ, պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը որչա՞նց երև-

ցած բաներով չգար: 21 - Ու պիտի չքսեն թէ Ահա հաս է, կամ Ահա հոն, վասն զի ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է:

22 - Աշակերաներուն ալ ըսաւ, Օրեր պիտի գան որ դուք Որդւոյ մարդոյ օրերէն մէկը տեսնելու պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք: 23 - Եւ էթէ քսեն ձեզի թէ Ահա հաս է, կամ Ահա հոն, մի երթաք ու առնոց մի հետեիք: 24 - Վասն զի ինչպէս փայլակը երկինքին տակ մէկ դիէն փայլատակելով՝ մինչև երկինքին տակ միւս գին ըյս կու տայ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին մարդոյ իր Գաւառ օրը:

25 - Միայն թէ պէտք է որ ինք առաջ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս ազգէն: 26 - Եւ ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ: 27 - Կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին, էրկան կը տրուէին, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ ու ամէնը կորսնցուց: 28 - Նմանապէս, ինչպէս Ղովտի օրերը եղաւ, կ'ուտէին, կը խմէին, ծախու կ'առնէին, կը ծախէին, կը անկէին, կը շինէին: 29 - Բայց այն օրը որ Ղովտ Սոգոմէ ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կորսնցուց: 30 - Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը որուն մէջ Որդին մարդոյ պիտի յայտնուի: 31 - Այն օրը ան որ տանիքին վրայ է և իր կարասիները տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու. և ան որ արտին մէջ է, նոյնպէս թող ետ չգառնայ: 32 - Միտքերնիդ բերէք Ղովտի կինը: 33 - Ով որ իր կեանքը կ'ուզէ ապրեցնել՝ պիտի կորսնցնէ զանիկա, և ով որ կը կորսնցնէ՝ պիտի ապրեցնէ զանիկա: 34 - Ձեզի կ'ըսեմ, Այն գիշերը էթէ երկու հոգի մէկ անկողինի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի: 35 - Եւ էթէ երկու կին մէկտեղ ազալու ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. և էթէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի: 36 - Եւ պատասխան տալով ըսին անոր, Տէր, ս'ըր պիտի ըսոյ՝ այս Գաւառ: 37 - Ան ալ ըսաւ անոնց, Ուր մարմին կայ, հոն պիտի ժողվուին սրժիւնները:

Անոնց առակ մըն ալ ըսաւ այս բանին վրայով թէ պէտք է ամէն տեսնող թաք ընել ու չձանձրանալ: 2 - Ըսաւ, Իստուար մը կար քաղաքի մը մէջ, որ Աստուծոմէ չէր վախնար ու մարդէ չէր ամչնար: 3 - Եւ նոյն քաղաքին մէջ որբեարի մը կար, որ անոր կու գար ու կ'ըսէր, Իրաւունք ըրէ ինձի ու ազատ զի իմ ստիպես: 4 - Եւ անիկա ժամանակ մը չէր ուզեր առնալ իր ընտել. բայց ետքը ըսաւ իր մտքին մէջ, Թէև Աստուծոմէ չեմ վախնար ու մարդէ չեմ ամչնար, 5 - Գոնէ այս որբեարին զիս ձանձրացնելուն համար իրեն իրաւունք ընեմ, որպէս զի չգոյ ամէն տեսնող զիս թախանձէ: 6 - Եւ Տէրը ըսաւ, Լսեցէք, անիրաւ դատաւորը ի'նչ կ'ըսէ: 7 - Հապա Աստուած իր ընտելներուն իրաւունք պիտի չընէ, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն, թէև երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ: 8 - Ձեզի կ'ըսեմ որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ. բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գանէ՞ երկրի վրայ: 9 - Եւ մէկ քանիներուն, որոնք իրենց անձերուն վրայ կը վստահանային թէ արդար են, և ուրիշները կ'անարգէին, այս առակը ըսաւ. 10 - Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր: 11 - Փարիսեցին կայներ էր, ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր. Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ այս մաքսաւորին պէս. 12 - Հապա շարժութիւն երկու անգամ ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացուածքիս տասանորդը կու տամ: 13 - Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ երկինք վերցնել, հապա իր կուրծքը ծեծելով կ'ըսէր, Աստուած, ողորմէ ինձի մեղաւորիս: 14 - Ձեզի կ'ըսեմ թէ տանիկա այն միւսէն աւելի արդարացած իր առնը իջաւ. վասն զի ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ: 15 - Մանր աղաք ալ բերին իրեն, որպէս զի անոնց դպչի. ու աշակերտ-

ները տեսնելով կը յանդիմանէին զանանք: 16 - Բայց Յիսուս զանանք իրեն կանչելով ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան, և մի աղքիլէք ատոնք, վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներուն է: 17 - Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ:

18 - Եւ իշխան մը հարցուց անոր ու ըսաւ, Բարի վարդապետ, ի՞նչ էք գործեմ որպէս զի յաւիտենական կեանքը ժառանգեմ: 19 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած: 20 - Պատուիրանքները գիտես. Ենութիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ: 21 - Ան ալ ըսաւ, Ատոնք ամէնը մտնեցա՞նք ի վեր պահեմ: 22 - Զայս լսելով Յիսուս ըսաւ անոր, Բան մըն ալ պակաս է քեզի. քու բոլոր ունեցածդ ծախէ և աղքատներուն բաշխէ, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ ետեւէս: 23 - Անիկա երբ այս բանը լսեց, արտմեցաւ, վասն զի շատ հարուստ էր: 24 - Եւ Յիսուս երբ զանիկա արտմած տեսաւ, ըսաւ, Ո՛րչափ դժուար է անոնց որ հարստութիւն ունին, Աստուծոյ թագագաւորութիւնը մտնել: 25 - Քանզի դիւրին է որ ուղարկ ստեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: 26 - Եւ անոնք որ լսեցին, կ'ըսէին, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ: 27 - Եւ ինք ըսաւ, Մարդոց կողմանէ անկարելի եղած բաները Աստուծոյ կողմանէ կարելի են: 28 - Ու Պետրոս ըսաւ, Ահա մենք ամէն բան թողուցինք և քու ետեւէդ եկանք: 29 - Ու անիկա ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Մարդ մը չկայ որ թողուց տուն, կամ ծնողք, կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիներ Աստուծոյ թագաւորութեանը համար, 30 - Որ պիտի չառնէ բազմապատիկ այս ատենին մէջ, և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը:

31 - Եւ տասուերկուքը իր քով առնելով ըսաւ անոնց, Ահա մենք Ե-

րուսաղէմ կ'ելլենք, և մարգարէներուն ձեռքով Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին: 32 - Վասն զի հեթանոսներուն պիտի մտանուի, ու ծաղր պիտի ըլլայ և պիտի նախատուի, ու պիտի թքեն անոր, 33 - Եւ պիտի ծեծեն ու սպաննեն զանիկա, ու երբորդ օրը յարութիւն պիտի տանէ: 34 - Բայց անոնք այս բաներէն մէկն ալ չհասկցան. ու այս խօսքը անոնցմէ ծածկուած էր, և ըսած բաները չէին իմանար:

35 - Ու եղաւ որ երբ ինք Երիքովի կը մտնէր, կոյր մը ճամբուն քով նստեր էր մուրալու: 36 - Երբ լսեց բազմութեանը անցնիլը, հարցուց թէ ի՞նչ է այն: 37 - Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազովրեցի կ'անցնի: 38 - Ուստի ազաղակեց ու ըսաւ, Յիսուս, Որդի Իսաթի, ողորմէ ինծի: 39 - Եւ անոնք որ առջեւէն կ'երթային, կը յանդիմանէին զանիկա, որպէս զի լռէ. բայց անիկա ա՛լ աւելի կ'ազաղակէր, Որդի Իսաթի, ողորմէ ինծի: 40 - Եւ Յիսուս կանգ առնելով հրաման ըրաւ որ զանիկա իրեն բերեն, ու երբ ոնիկա մտեցաւ, հարցուց անոր ու ըսաւ, 41 - Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ. անիկա ալ ըսաւ, Տէր, որ աչքերս բացուին: 42 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Թող բացուին. քու հաւատքդ քեզ բժշկեց: 43 - Եւ իսկոյն անոր աչքերը բացուեցան, ու անոր ետեւէն կ'երթար, և փառք կու տար Աստուծոյ. բոլոր ժողովուրդն ալ տեսնելով զԱստուած կը գովաբանէին:

ԳԼ. ԺԹ

Եւ մտնելով Երիքովի մէջէն կ'անցնէր: 2 - Եւ ահա մարդ մը կար, անունը Զաքէոս ըսուած, որ մաքսապետ էր ու ինք հարուստ էր: 3 - Եւ կ'ուզէր տեսնել թէ ո՞վ է Յիսուս, ու բազմութենէն չէր կրնար, վասն զի հասակով կարճ էր: 4 - Եւ առաջ վազեց ու ժանտաթղենի մը վրայ ելաւ, որպէս զի զանիկա տեսնէ, վասն զի անկէ պիտի անցնէր: 5 - Ու երբ Յիսուս այն տեղը եկաւ, վեր նայելով զանիկա տեսաւ, ու ըսաւ անոր, Զաքէոս, շուտ ըրէ, ապէս վար իջիւր, վասն զի պէտք է ինծի այսօր քու տունդ կենայ: 6 - Եւ արտորալով

վար իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զանիկա: 7 - Երբ ամէնն ալ տեսան, կը տրանջէին ու կ'ըսէին թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջեւան ընելու: 8 - Եւ Զաքէոս կայնեցաւ ու ըսաւ Տէրոջը, Տէր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կու տամ, ու եթէ զրպարաութեամբ մէկուն զրկանք ըրած եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ ուրիշ: 9 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Այստ աստ ամենք փրկութիւն եղաւ, քանզի ասիկա ալ Աբրահամի որդի է: 10 - Վասն զի Որդին մարդոյ եկաւ որպէս զի կորսուածը փնտռէ ու փրկէ:

11 - Ու երբ անոնք այս բաները կը լսէին, աւակ մըն ալ ըսաւ իր Երուսաղէմ մօտենալուն համար, և անոնց այնպէս կարծելուն համար թէ շուտ մը Աստուծոյ թագաւորութիւնը պիտի յայտնուի: 12 - Ուստի ըսաւ, Ազնուական մարդ մը հեռու երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առնելու և դառնալու: 13 - Եւ իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաստուաւ անոնց, ու ըսաւ անոնց, Բանեցուցէք ուրիշ միջոց ես գամ: 14 - Եւ անոր քաղաքացիները զանիկա կ'ատէին, ու դեպքաններ զրկեցին անոր ետեւէն, ըսելով թէ Չենք ուզեր որ ասիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ: 15 - Ու եղաւ որ երբ անիկա թագաւորութիւնը առնելով ետ դարձաւ, իրեն կանչել տուաւ այն ծառաները որոնց ստակը տուեր էր, որպէս զի գիտնայ թէ ո՛վ ի՛նչ շահ ըրած է: 16 - Եւ առաջինը եկաւ ու ըսաւ, Տէր, քու մնասդ տասը մնաս շահ ըրաւ: 17 - Եւ ըսաւ անոր, Ապրիս, բարի ծառայ. որովհետեւ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր: 18 - Ու երկրորդը եկաւ ու ըսաւ, Տէր, քու մնասդ հինգ մնաս շահ ըրաւ: 19 - Եւ ըսաւ անոր, Ի՞նչ ալ հինգ քաղաքի վրայ եղիր: 20 - Եւ ուրիշ մը եկաւ ու ըսաւ, Տէր, ահա քու մնասդ՝ զոր թաշկինակի մէջ ծրարած կը պահէի: 21 - Քանզի կը վախնայի քեզմէ, վասն զի դուն խիստ մարդ մըն ես, չգրած բանդ կը վերցընես ու չսերմանածդ կը հնձես: 22 - Եւ անիկա ըսաւ անոր, Քու բերնէդ քեզ պիտի դատեմ, ով չար ծառայ:

գիտէիր որ ես խիստ մարդ մըն եմ, չգրած բանս կը վերցնեմ՝ ու չսերմանածս կը հնձեմ: 23 - Եւ ինչո՞ւ համար իմ ստակս սեղանաւորներուն չաւիր, որպէս զի ես եկած տաեմ շահովը առնէի զանիկա: 24 - Եւ հոն կայնողներուն ըսաւ, Աւէք ասկէ մնասը ու ասէք անոր որ տասը մնաս ունի: 25 - (Եւ ըսին իրեն, Տէր, անիկա տասը մնաս ունի.) 26 - Քանզի կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ունեցողին պիտի տրուի, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի: 27 - Բայց այն իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ, հոս բերէք ու իմ առջեւ սպաննեցէք: 28 - Եւ այս բաները խօսելէն ետեւ՝ յառաջ գնաց Երուսաղէմ ելլելու:

29 - Ու եղաւ որ երբ Բեթփագէի ու Բեթանիայի մօտեցաւ՝ դէպ ի այն լեռը որ Չիթենեաց լեռ կ'ըսուի, իր աշակերտներէն երկուքը զրկեց: 30 - Եւ ըսաւ, Գացէք ձեզ զիմացի գեղը, և անոր մէջ մտնելնուդ պէս պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ բնաւ մարդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք: 31 - Եւ եթէ մէկը ձեզի հարցնէ թէ Ինչո՞ւ կ'արձակէք, այսպէս ըսէք անոր, թէ Տէրոջը պէտք է: 32 - Երբ գացին անոնք որ զրկուեցան, ինչպէս իրենց զրուցեր էր՝ գտան: 33 - Ու երբ աւանակը կ'արձակէին, անոր տէրերը ըսին անոնց, Ինչո՞ւ կ'արձակէք այդ աւանակը: 34 - Անոնք ալ ըսին, Տէրոջը պէտք է: 35 - Եւ զանիկա Յիսուսի բերին ու իրենց հանդերձները աւանակին վրայ ձգելով՝ Յիսուսը հեծցուցին: 36 - Ու երբ կ'երթար, իրենց հանդերձները ծամբուն վրայ կը փռէին: 37 - Ու երբ ա՛լ մօտեցաւ, և Չիթենեաց լեռանը զառ ի վայրէն կ'իջնէր, աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր ձայնով՝ այն բոլոր հրաշքներուն համար զորոնք տեսեր էին: 38 - Ու կ'ըսէին, Օրհնեալ է այդ թագաւորը որ Տէրոջը անունովը կու գայ. երկինքի մէջ խաղաղութիւն, ու փառք՝ բարձրութեան մէջ: 39 - Եւ բազմութեանը մէջէն փարիսեցիներէն մէկ քանիները ըսին անոր, Վարդապետ, այդ քու աշակերտներդ

յանդիմանէ: 40 - Եւ անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Զեզի կ'ըսեմ, եթէ տառնք լուռ կեանան, քարերը պիտի աղաղակեն:

41 - Ու երբ մօտեցաւ, քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ և ըսաւ,

42 - Գոնէ այս քու օրուանդ մէջ գիտնայիր քու խաղաղութիւնդ. բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ:

43 - Վասն զի օրեր պիտի գան քու վրագ՝ որ թշնամիներդ քու բոլորտիքդ պատնէշ պիտի շինեն, ու քեզ պիտի պաշարեն, և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն. 44 - Եւ հիմնայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած զաւակներդ, և քար մը քարի վրայ ամենեւին պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չճանչցար քու այցելութեանդ ժամանակը:

45 - Եւ տաճարը մոնելով՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախողները և գնողները: 46 - Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ իմ տունս աղօթքի տուն է. բայց դուք ատիկա աւազակներու այր ըրիք:

47 - Եւ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէր. բայց քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին գիտաւորները կը փնտռէին թէ ի՞նչպէս կորսընցնեն զանիկա: 48 - Ու բան մը չէին կրնար գտնել թէ ի՞նչ ընեն, վասն զի բոլոր ժողովուրդը անոր կապուեր էին մտիկ ընելու:

ԳԼ Ի

Ու եղաւ որ այն օրերէն մէկը, երբ տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցնէր և աւետարանը կը քարոզէր, քահանայապետները ու դպիրները ծերերուն հետ մէկտեղ վրայ հասան, 2 - Եւ անոր հետ խօսեցան՝ ըսելով, Զրուցէ մեզի, ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզի տուողը: 3 - Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, և ըսէք ինծի. 4 - Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէն էր թէ մարդոցմէ: 5 - Եւ անոնք իրենց մէջ խորհեցան ու ըսին, 6 - Եթէ ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատասցիք անոր. իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, բոլոր ժողովուրդը մեզ պիտի քարկոծեն, վասն

զի հարցաւ համոզուած են թէ Յովհաննէս մարգարէ էր: 7 - Եւ պատասխան տուին թէ չեն գիտեր ուրկէ՛ էր: 8 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՞նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները:

9 - Սկսաւ այս առակը զրուցել ժողովուրդին. Մարդ մը այգի տնկեց և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց: 10 - Եւ ատենին ծառայ մը զրկեց մշակներուն, որպէս զի այգիին պտուղէն անոր տան. իսկ մշակները ծեծեցին զանիկա ու պարապ ճամբեցին: 11 - Եւ ուրիշ ծառայ մըն ալ զրկեց. իսկ անոնք զանիկա ալ ծեծեցին, անարգեցին ու պարապ ճամբեցին: 12 - Ու երրորդ մըն ալ զրկեց. իսկ անոնք զանիկա ալ վիրաւորեցին ու դուրս հանեցին: 13 - Այն ատեն այգիին տերը ըսաւ, Ի՞նչ ընեմ. իմ սիրելի որդիս զրկեմ, թերևս զանիկա տեսնելով ամչնան. 14 - Բայց մշակները երբ տեսան զանիկա, իրարու հետ խորհուրդ ըրին՝ ըսելով, Ասիկա է ժառանգը, եկէք զանիկա սպաննենք, որպէս զի ժառանգութիւնը մերը ըլլայ: 15 - Եւ զանիկա այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին. ուստի այգիին տերը ի՞նչ պիտի ընէ անոնց. 16 - Պիտի գայ ու կորսընցնէ այն մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ: 17 - Երբ զայս լսեցին, ըսին, Քա՛ւ լիցի: Եւ ինք անոնց նայելով՝ ըսաւ, Հապա ի՞նչ է այս գրուածը, թէ Այն քարը զոր շինողները մերժեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ: 18 - Ամէն ով որ այն քարին վրայ իյնայ, պիտի կոտորտի, և որու վրայ որ իյնայ, պիտի փտարէ զանիկա: 19 - Եւ քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ի՞նչպէն այն ժամուն ձեռք զարնեն անոր, բայց ժողովուրդէն վախցան. քանզի իմացան որ այն առակը իրենց համար ըսաւ:

20 - Ու ետքը յարժար արեւի սպասելով, զրկեցին քանի մը խաբեբայ մարդիկ, որոնք կեղծաւորութեամբ ինքզինքնին արդար կը ձևացնէին, որպէս զի զանիկա խօսքով բռնեն՝ տէրութեան և կուսակալին իշխանութեանը զանիկա մտանելու: 21 - Ու անոր հարցուցին՝ ըսելով, Վարդա-

պետ, գիտենք որ շիտակ կը խօսիս ու կը սարվեցնես, և աշառութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սարվեցնես: 22 - Մեզի արժան է Կոյսրին սուրբ սաղթէ ոչ: 23 - Եւ անոնց խորամանկութիւնը հասկնալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք: 24 - Յուցուցէք ինձի դասէկան մը: Որո՞ւն պատկերը ու գիրը ունի վրան: Պատասխան տուին ու ըսին, Կոյսրինը: 25 - Եւ ինք ըսաւ անոնց, Ուրեմն զայն որ Կոյսրինն է՝ Կոյսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ արժէք: 26 - Եւ չկրցան զանհկա խօսքով մը բռնել ժողովուրդին առջեւ, ու զարմանալով անոր պատասխանին վրայ՝ լուսկեցան:

27 - Եւ սաղուկեցիներէն ոմանք եկան, (որոնք հակառակութիւն կ'ընեն թէ յարութիւն չկայ,) և անոր հարցուցին՝ 28 - Ըսելով, Վարդապետ, Մովսէս մեզի գրեց, Եթէ մէկուն եղբայրը կին ունենալով մեռնելու ըլլայ, ու մեռած ատենը զաւակ չունենայ, անոր եղբայրը առնէ այն կինը և իր եղբորը զաւակ հանէ: 29 - Արդ եօթը եղբայրներ կային. ու առաջինը կին մը առնելով՝ զաւակ չունեցած մեռաւ: 30 - Երկրորդն ալ առաւ այն կինը և ինք ալ մեռաւ առանց զաւակի: 31 - Երրորդն ալ առաւ զանհկա. նմանապէս եօթն ալ, ու զաւակ չձգեցին ու մեռան: 32 - Ամէնէն եաքը կինն ալ մեռաւ: 33 - Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ, վասն զի եօթն ալ զանհկա կին ունեցան: 34 - Եւ Յիսուս պատասխան տալով անոնց՝ ըսաւ, Այս աշխարհին որդիները կին կ'առնեն ու էրկան կը արուին: 35 - Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին հասնելու ու մեռելներէն յարութիւն առնելուն, ոչ կին կ'առնեն և ոչ էրկան կը արուին: 36 - Որովհետեւ ա՛լ չեն կրնար մեռնիլ. քանզի Տրեշտակներուն հաւատար են, ու Աստուծոյ որդիներ են, վասն զի յարութեան որդիներ են: 37 - Բայց մեռելներուն յարութիւն առնելը Մովսէս ալ իմացուց մարտիրոսացո՞ւնք մէջ, երբ կը կոչէ Տէրը՝ Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը:

38 - Ու Աստուած մեռելներուն Աստուծոյ չէ, հապա կենդանիներուն, վասն զի ամէնը անոր կենդանի են: 39 - Եւ դպիրներէն մէկ քանին պատասխան տուին ու ըսին, Վարդապետ, աղէկ ըսիր: 40 - Ու ա՛լ մէկը համարձակութիւն չէր ըներ անոր բան մը հարցնելու:

41 - Եւ ըսաւ անոնց, Ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է. 42 - Եւ ինք Դաւիթ Սաղմոսներուն գիրքին մէջ կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմն, 43 - Մինչեւ քու թշնամիներդ ստքերուդ պատուանդան ընեմ: 44 - Ուրեմն Դաւիթ որ զանհկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անհկա անոր որդին կ'ըլլայ:

45 - Եւ բոլոր ժողովուրդին առջեւ ըսաւ իր աշակերտներուն, 46 - Չզուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն փառաւոր հանդերձներով պաքաիլ, և շուկաներուն մէջ բարեւներ կը սիրեն. ու ժողովարաններուն մէջ՝ առաջին օթոսները, և ընթրիքներու մէջ՝ առաջին բաղմոցները: 47 - Որոնք որ բեւարիններուն տուները կ'ուտեն, ու Ժարդոց երեւնալու համար աղօթքը կ'երկնցնեն. ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին:

ԳԼ. ԻԱ.

Ու նայելով տեսաւ հարուստները որոնք իրենց ընծաները գանձանակը կը ձգէին: 2 - Տնանկ որբեւարի մըն ալ տեսաւ, որ հոն երկու լումոյ ձրգեց: 3 - Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի որ այս աղքատ որբեւարին ամէնէն աւելի ձգեց. 4 - Վասն զի ամէն անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ ընծաներուն մէջ ձգեցին, բայց ասիկա ի՞նչ չքաւորութենէն բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց:

5 - Ու երբ մէկ քանիները տաճարին համար կ'ըսէին թէ Գեղեցիկ քարերով ու նուէրներով զարդարուած է, ըսաւ, 6 - Այդ բաները զարոնք կը տեսնէք, օրեր պիտի գան որ այն ատեն քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի: 7 - Հարցուցին իրեն ու ըսին, Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ է նշանը՝ երբ այդ բաները պիտի ըլլան: 8 - Ան ալ ըսաւ, Չգոյշ կեցէք, չխաբուիք, վասն

զի շատերը պիտի գան իմ անուանով
 ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը, ու ժա-
 մանակը մտեցած է. ուրեմն անոնց
 ետեւէն չերթաք: 9 - Բայց երբ լռէք
 պատերազմներ և խռովութիւններ, մի
 վախնաք, վասն զի պէտք է առաջ այս
 բաները ըլլան, բայց վախճանը իսկոյն
 չէ: 10 - Այն ատեն ըսու անոնց, Ազգ
 ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւո-
 րութիւն՝ թագաւորութեան վրայ: 11 - Եւ տեղ տեղ մեծ երկրաշար-
 ժութիւններ պիտի ըլլան, ու սովեր
 և մահատարածամներ, նաև երկինքէն
 սոսկալի բաներ և մեծ նշաններ պիտի
 ըլլան: 12 - Բայց այս ամէն բաներէն
 առաջ իրենց ձեռքերը ձեզի պիտի
 զարնեն ու հալածեն, և ժողովարան-
 ներու ու բանտերու պիտի մտանեն. և
 իմ անուանս համար թագաւորներու
 ու կուսակալներու առջև պիտի տար-
 ուիք: 13 - Եւ այս բաները վերջը ձեզի
 վկայութիւն մը պիտի ըլլան: 14 - Ուս-
 տի ձեր սրտին մէջ դրէք՝ որ առաջ-
 ուրնէ չմտածէք պատասխան տալու
 վրայով: 15 - Վասն զի ես ձեզի բե-
 րան ու իմաստութիւն պիտի տամ, ո-
 րու պիտի չկրնան դէմ խօսիլ կամ
 դէմ կենալ ձեր ամէն հակառակորդ-
 ները: 16 - Եւ պիտի մտանուիք ծը-
 նողքներէ ու եղբայրներէ և ազգա-
 կաններէ ու բարեկամներէ, ու ձեզմէ
 պիտի սպաննեն: 17 - Եւ իմ անուանս
 համար ամէնուն ատելի պիտի ըլլաք:
 18 - Բայց մազ մը ձեր գլխէն պիտի
 չկորսուի: 19 - Ձեր համբերութիւնովը
 հոգինիդ պիտի ստանաք:

20 - Ու երբ տեսնէք Երուսաղէմը
 չորս կողմէն զօրքերով պատած, այն
 ատեն զիտցէք որ անոր աւերումը մտա
 է: 21 - Այն ատեն Հրէաստանի մէջ
 էզդոնները լեռները թող փախչին, ու
 անոր մէջ եզդոնները թող հեռանան,
 և անոնք որ աղարակներն են՝ թող
 չմանեն անոր մէջ: 22 - Վասն զի այն
 օրերը վրէժխնգրութեան օրեր են, որ-
 պէս զի բոլոր գրուածները կատար-
 ուին: 23 - Բայց վա՛յ այն օրերը յղի
 եզդոններուն ու ծիծ տուողներուն,
 վասն զի մեծ նեղութիւն պիտի ըլլայ
 երկրին վրայ. ու բարկութիւն պիտի
 գայ այս ժողովուրդին վրայ: 24 - Եւ
 սուրի բերնով պիտի իյնան, ու բոլոր
 ազգերուն մէջ գերի պիտի տարուին.
 ու Երուսաղէմ ազգերուն սահց կո-

խան պիտի ըլլայ, մինչեւ ազգերուն
 ժամանակները լինան: 25 - Ու արե-
 գակին և լուսնին ու աստղերուն վրայ
 նշաններ պիտի ըլլան, ու երկրի վրայ
 ազգերը ապշութեամբ պիտի տազնա-
 պին, և ծովը ու ալիքները պիտի գո-
 ռան: 26 - Մարդոց սիրտերը պիտի
 նուաղին երէնց վախէն և աշխարհի
 վրայ գալու բաներուն սպասելէն, վասն
 զի երկինքի զօրութիւնները պիտի շար-
 ժին: 27 - Եւ այն ատեն պիտի տեսնեն
 Որդին մարդոց ամպի մէջ եկած զօ-
 րութիւնով ու մեծ փառքով: 28 -
 Ու երբ այս բաները սկսին ըլլալ, ե-
 լէք ու գլուխնիդ բարձրացուցէք, վասն
 զի ձեր փրկութիւնը մտա է:

29 - Եւ առակ մը ըսու անոնց, Տե-
 սէք թզենին ու ամէն ծառերը: 30 -
 Երբ կը բողբօջին, տեսնելով՝ դուք
 ձեզմէ կ'իմանաք թէ ալ ամառը մտա
 է: 31 - Նոյնպէս դուք երբ այս բա-
 ները եղած տեսնէք, զիտցէք որ Աս-
 տուծոյ թագաւորութիւնը մտա է: 32 -
 Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ այս
 ազգը պիտի չանցնի, մինչեւ այս ամէն
 բաները ըլլան: 33 - Երկինք ու երկիր
 պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ
 պիտի չանցնին: 34 - Իսկ դուք զգու-
 շացէք ձեր անձերուն. չըլլայ որ սիր-
 տերնիդ կերուխուսով ու գինովու-
 թիւնով և աշխարհային զբաղմունք-
 ներով ծանրանայ, ու յանկարծակի
 այն օրը ձեր վրայ հասնի: 35 - Վասն
 զի բոլոր երկրին երեսը բնակողներուն
 ամէնուն վրայ սրագոյթի մը պէս պի-
 տի հասնի: 36 - Ուստի արթուն կե-
 ցէք, ու ամէն ատեն աղօթք ըրէք, որ
 արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բա-
 ներէն ազատուելու և Որդւոյ մարդոց
 առջև կայնելու:

37 - Ու ցորեկները տաճարին մէջ
 կը սորվեցնէր. և զիշերները կ'ելէր
 Ձիթենեաց ըսուած լեռը կը կենար:
 38 - Եւ բոլոր ժողովուրդը առատանց
 կանուխ իրեն կ'երթային տաճարը՝ իր
 Խօսքերը լսելու:

ԳԼ ԻԲ

Բաղարջակերաց տօնը մտեցաւ որ
 Ջատիկ կ'ըսուէր. 2 - Եւ քահանայա-
 պետները ու դպիրները կը փնտռէին
 թէ ի՞նչպէս սպաննեն զանիկա, քանզի
 ժողովուրդէն կը վախնային:

3 - Եւ Սատանայ՝ Իսկարիովտացի մականուանեալ Յուդայի ներսը մտաւ, որ տասուերկու քին համբանքէն էր:

4 - Եւ գնաց քահանայապետներուն ու իշխաններուն հետ խօսք ըրաւ թէ ի՛նչպէս զանիկա մտանէ անոնց: 5 - Անոնք ալ ուրախացան և խոստացան անոր ստակ տալ: 6 - Ու ինք վրան առաւ, և պատեհութիւն մը կը փնտուէր որպէս զի զանիկա մտանէ անոնց առանց բազմութեանը ժողովուելուն:

7 - Եւ բաղարջակերաց օրը եկաւ, որուն մէջ պէտք էր զատիկը մորթել:

8 - Ու զրկեց Պետրոսը և Յովհաննէսը ու ըսաւ, Գացէք պատրաստեցէք մեզի զատիկը որպէս զի ուտենք: 9 - Անոնք ալ ըսին անոր, Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք: 10 - Եւ ըսաւ անոնց, Ահա երբ քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի պատահի որ «սին վոյ» ջուրի սափոր մը կը տանի. անոր ետեւէն գացէք այն տունը ուր ինք կը մտնէ:

11 - Եւ այն տանը տէրոջ ըսէք, Վարդապետը կ'ըսէ քեզի, Ո՞ւր է օթեւանը ուր աշակերտներուս հետ մէկտեղ զատիկը ուտեմ: 12 - Ան ալ ձեզի յարգարուած մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ, հոն պատրաստեցէք:

13 - Եւ գացին գտան ինչպէս իրենց ըսաւ, ու զատիկը պատրաստեցին: 14 - Ու երբ ժամը հասաւ, սեղան նստաւ և տասուերկու առաքեալները իրեն հետ: 15 - Ու ըսաւ անոնց, Փափաքելով փափաքեցայ որ այս զատիկը ձեզի հետ ուտեմ իմ չարչարուելէս առաջ: 16 - Քանզի կ'ըսեմ ձեզի որ ալ բնաւ սակէ պիտի չուտեմ՝ մինչև Աստուծոյ թագաւորութեանը մէջ կատարուի: 17 - Եւ գաւաթը առաւ, գոհացաւ ու ըսաւ, Առէք ստիկա ու բաժնեցէք ձեր մէջ: 18 - Վասն զի ձեզի կ'ըսեմ որ բնաւ որթին բերքէն պիտի չխմեմ՝ մինչև Աստուծոյ թագաւորութիւնը գայ:

19 - Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց ու ըսաւ, Այս է իմ մարմինս, որ ձեզի համար արբուած է. ստիկա բրէք զիս յիշելու համար: 20 - Նոյնպէս ալ գաւաթը առաւ, ընթրիքէն ետև ու ըսաւ, Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի: 21 - Բայց ահա զիս մատնողին ձեռքը ինծի հետ այս սեղանն է: 22 - Եւ

յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝ ինչպէս սահմանուած է, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով անիկա կը մտանուի: 23 - Եւ անոնք սկսան իրենց մէջ հարցուփորձ ընել՝ թէ իրենցմէ ո՞վ է որ այն բանը պիտի ընէ:

24 - Վէ՛ճ մըն ալ եղաւ անոնց մէջ՝ թէ իրենցմէ ո՞վ մեծ պիտի սեպուի: 25 - Եւ անիկա ըսաւ անոնց, Ազգաց թագաւորները անոնց կը տիրեն, և անոնք որ կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին: 26 - Բայց դուք այնպէս պիտի չըլլաք, հապա ան որ ձեր մէջ մեծ է, պզտիկին պէս թող ըլլայ, և առաջնորդը սպասաւորին պէս: 27 - Քանզի ո՞վ է մեծը, սեղան նստողը թէ սպասաւորը. չէ՞ որ սեղան նստողը. սակայն ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ: 28 - Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ կը կենայիք իմ փորձութիւններուս մէջ: 29 - Ես ալ ձեզի Բահաւոր-Բեռն յուր կ'ընեմ, ինչպէս իմ Հայրս ինծի թագաւորութիւն մը ուխտ ըրաւ: 30 - Որպէս զի դուք իմ սեղանէս ուտէք ու խմէք իմ թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ նսաիք Իսրայէլի տասուերկու ցեղերը դատելու:

31 - Եւ Տէրը ըսաւ, Սիմոն, Սիմոն, ահա Սատանայ ձեզ փնտուեց, որ ցորենի պէս խարբալէ: 32 - Բայց ես քեզի համար աղօթք ըրի որպէս զի քու հաւատքդ չպակսի. և դուն երբ դարձի գաս, քու եղբայրներդ ալ հաստատէ: 33 - Իսկ ինք ըսաւ անոր, Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ բանա երթալու ալ, մեռնելու ալ: 34 - Եւ անիկա ըսաւ, Պետրոս, քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չխօսի մինչև դուն երեք անգամ ուրանաս՝ ընել թէ զիս չես ճանչնար:

35 - Եւ ըսաւ անոնց, Երբ ձեզ զրկեցի առանց քսակի ու պարկի և կօշիկներու, բանի մը կարօտ եղա՞ք: 36 - Անոնք ալ ըսին, Բանի մըն ալ չէ. ետքը ըսաւ, Բայց հիմա ան որ քսակ ունի, թող իրեն հետ առնէ, նոյնպէս ալ պարկը. և ան որ Բոց չունի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը ծախու առնէ: 37 - Քանզի կ'ըսեմ ձեզի որ այս գրուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի, Եւ անօրէններու հետ սեպուեցաւ. քանզի ինչ որ ինծի համար

38 - Եւ ինչ որ ինծի համար

«բար» է, կատարուելու վրայ է: 38 - Անոնք ալ ըսին, Տէր, ահա հոս երկու թուր կայ. ան ալ ըսաւ անոնց, Հերիք են:

39 - Ու ելաւ իր սովորութեանը պէս Ձիթենեաց լեռը գնաց. աշակերտներն ալ իր ետեւէն գացին: 40 - Երբ այն տեղը հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չմտնէք: 41 - Եւ ինք անոնցմէ զատուեցաւ քարընկէցի մը չափ, ու ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, 42 - Ու կ'ըսէր, Հոյր, եթէ կ'ուզես, այս գաւաթը ինձմէ անցուր. բայց ոչ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ: 43 - Ու երկինքէն հրեշտակ մը երեւցաւ անոր և կը զօրացնէր զանիկա. ու սաստիկ նեղութեան մէջ ըլլալով՝ աւելի ջերմեւանդութեամբ աղօթք կ'ընէր: 44 - Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր, որ գետինը կը թափուէր:

45 - Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն քով եկաւ, ու գտաւ զանոնք տրամուլթենէն քնացած. 46 - Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք. ելէք աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չմտնէք:

47 - Ու երբ դեռ կը խօսէր, ահա բազմութիւն մը, և Յուդա ըսուածն ալ, տասուերկուքէն մէկը, անոնց առջեւէն կ'երթար, ու Յիսուսի մօտեցաւ որպէս զի զանիկա համբուրէ: 48 - Բայց Յիսուս ըսաւ անոր, Յուդա, համբուրելով կը մատնես Որդին մարդոյ: 49 - Երբ անոր բոլորտիքը եղողները տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէր, թուրով զարնե՞նք: 50 - Եւ անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց անոր աջ ախանջը: 51 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Թող տուէք մինչև այդ տեղը. և դպաւ անոր ախանջին ու բժշկեց զանիկա: 52 - Եւ Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ, Իբր թէ աւագակի՞ վրայ ելաք սուրբութիւն ու բիրտութիւն: 53 - Ամէն որ ձեզի հետ էի տաճարին մէջ, և ինձի ձեռք չզարկիք. բայց այս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը:

54 - Ու զանիկա բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին:

Պետրոս ալ հեռուանց անդ ետեւէն կ'երթար: 55 - Երբ կրակ վառեցին գաւթին մէջ ու մէկտեղ նստան, Պետրոս ալ նստաւ անոնց մէջ: 56 - Աղախին մը տեսնելով զանիկա որ կրակին քով նստեր էր, նայեցաւ անոր ու ըսաւ, Ասիկա ալ անոր հետ էր: 57 - Բայց Պետրոս ուրացաւ զանիկա ու ըսաւ, Ով կին, ես զանիկա չեմ ճանչնար: 58 - Եւ քիչ մը ետքը ուրիշ մը տեսաւ զանիկա ու ըսաւ, Գուցէ ալ անոնցմէ ես. և Պետրոս ըսաւ, Ով մարդ, ես անոնցմէ չեմ: 59 - Եւ ժամու մը չափ անցնելէն ետեւ՝ ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր, Յիրաւի ասիկա ալ անոր հետ էր, վասն զի Գալիլեացի է: 60 - Բայց Պետրոս ըսաւ, Ով մարդ, չեմ գիտեր ի՞նչ կը զրուցես դուն. և քանի որ իր խօսքը բերանն էր, իսկոյն հաւը խօսեցաւ: 61 - Եւ Տէրը դարձաւ ու Պետրոսի նայեցաւ. Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը որ իրեն ըսեր էր թէ Դեռ հաւը չխօսած՝ երէք անգամ պիտի ուրանաս զիս: 62 - Ու Պետրոս դուրս ելլելով դառնապէս լացաւ:

63 - Եւ այն մարդիկը որոնք Յիսուսը կը պահէին, ծաղր կ'ընէին զանիկա ու կը ծեծէին. 64 - Եւ անոր առէր ծածկելով՝ անոր երեսին կը զարնէին, ու կը հարցնէին իրեն՝ ըսելով, Մարգարեացիր, Ո՞վ է ան որ քեզի զարկաւ: 65 - Եւ ուրիշ շատ բաներ կը զրուցէին իրեն հայհոյելով:

66 - Ու երբ առտու եղաւ, ժողովուրդին ծերակոյտը, քահանայապետները և դպիրները ժողովուեցան, ու տարին զանիկա իրենց ատեանը և ըսին, Եթէ Քրիստոսը դուն ես, ըսէ մեզի: 67 - Ըսաւ անոնց, Եթէ ձեզի ըսեմ ալ՝ պիտի չհաւատաք. 68 - Եւ եթէ ձեզի քան իչ հարցնեմ, ինձի պատասխան պիտի չտաք, ոչ ալ զե՞ պիտի արձակէք: 69 - Ասկէ ետեւ Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեանը աջ կողմը պիտի նստի: 70 - Եւ ամէնը ըսին, Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես. ինք ալ ըսաւ անոնց, Գուցէ կ'ըսէք թէ ես եմ: 71 - Եւ անոնք ըսին, Ալ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, վասն զի մենք մեզմէ ատար բերնէն լսեցինք:

ԳԼ. ԻԳ

Եւ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով՝ տարին զանիկա Պիղատոսի. 2 - Ու սկսան անոր վրայով ամբաստանութիւն ընել և ըսել, Ասիկա գտանք, որ Քրիստոսն էր, ու կայսրին հարկ տալէ կ'արգիլէր, և իրեն համար կ'ըսէր թէ ինք Քրիստոսն էր: 3 - Իսկ Պիղատոս հարցուց անոր ու ըսաւ, Հրէից թագաւորը դո՞ւն ես. անիկա ալ պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Իսկ ոչ: 4 - Այն ատեն Պիղատոս քահանայապետներուն ու ժողովուրդներուն ըսաւ, Ես այս մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ: 5 - Բայց անոնք ոտք կը կոխէին ու կ'ըսէին թէ ժողովուրդը իրար կ'անցնէ, ու բոլոր Հրէաստանի մէջ կը տարվեցնէ՝ Գալիլեայէ սկսած մինչև այս ատը: 6 - Եւ Պիղատոս երբ լսեց Գալիլեայի համար, հարցուց թէ այդ մարդը Գալիլեացի՞ է: 7 - Ու երբ իմացաւ թէ Հերովդէսի իշխանութեան տակէն էր, զանիկա Հերովդէսի զրկեց, քանզի ան ալ այն օրերը Երուսաղէմ էր:

8 - Եւ Հերովդէս երբ Յիսուսը տեսաւ, շատ ուրախացաւ, վասն զի ինք շատոնցունէ կը փափաքէր զանիկա տեսնել. քանզի անոր վրայով շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ եղած նշան մը տեսնէ: 9 - Ու շատ խօսքերով հարցուփորձ կ'ընէր անոր, բայց անիկա բնաւ իրեն պատասխան մը չտուաւ: 10 - Քահանայապետները ու դպիտներն ալ կ'եցեր էին, և աստիկ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայ: 11 - Իսկ Հերովդէս անարգեց զանիկա իր զօրականներուն հետ, ու ծաղր ընելէն ետև փառաւոր հանդերձներ հազցուց անոր, և նորէն Պիղատոսի զրկեց: 12 - Ու այն օրը Պիղատոս և Հերովդէս իրարու հետ բարեկամ եղան. որովհետև առաջ իրենց մէջտեղ թշնամութիւն կար:

13 - Եւ Պիղատոս քահանայապետները ու իշխանները և ժողովուրդը մէկտեղ կանչեց: 14 - Եւ ըսաւ անոնց, Այս մարդը առջեւ բերիք ժողովուրդը մուտքեցնողի մը պէս, և ահա ես ձեր առջև քննութիւն ընելով՝ ատոր համար ձեր բրած ամբաստանութիւններէն յանցանք մը չգտայ այդ

մարդուն վրայ. 15 - Ոչ ալ Հերովդէս, վասն զի ձեզ անոր զրկեցի, և ահա աստիկա մտնու արժանի գործ մը բրած չէ: 16 - Ուրեմն պատիժ մը տամ ատոր ու արձակեմ: 17 - (Իսկ տօնին ատենը պէտք էր որ մէկը արձակէր անոնց.) 18 - Եւ բոլոր բազմութիւնը մէկտեղ աղաղակեցին ըսելով, Վերցուր աստիկա, ու Բարաբբան արձակէ մեզի. 19 - (Որ քաղաքին մէջ եղած խռովութեան մը և մարդասպանութեան համար բանալ գրուած էր.) 20 - Եւ Պիղատոս Յիսուսը արձակել ուզելով՝ նորէն խօսեցաւ անոնց: 21 - Բայց անոնք կ'աղաղակէին ու կ'ըսէին, Խաչը հանէ աստիկա, խաչը հանէ: 22 - Եւ ինք երրորդ անգամ ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ բրած է աստիկա. ես ատոր վրայ մտնու արժանի յանցանք մը չգտայ. ուրեմն պատիժ մը տամ ատոր ու արձակեմ: 23 - Իսկ անոնք մեծաձայն աղաղակներով ոտք կը կոխէին, ու կ'ուզէին որ անիկա խաչուի. և անոնց ու քահանայապետներուն ձայները զօրաւոր եղան: 24 - Ու Պիղատոս վճռեց որ անոնց խընդիբքը ի գործ դրուի: 25 - Եւ անոնց ուզած Խաչը, որ խռովութեան և մարդասպանութեան համար բանալ գրուած էր, արձակեց անոնց, և Յիսուսը իրենց կամքին յանձնեց:

26 - Ու երբ զանիկա կը տանէին, Սիմոն Կիւրենացի ըսած մէկը բռնեցին՝ որ արտէն կու գար, և խաչը անոր վրայ դրին որպէս զի Յիսուսի ետևէն բերէ: 27 - Ու անոր ետևէն կ'երթար մեծ բազմութիւն ժողովուրդներու, նաև կիներու, որոնք կ'ողբային ու կու լային անոր համար: 28 - Եւ Յիսուս դարձաւ անոնց ու ըսաւ, Ով Երուսաղէմի աղջիկներ, իմ վրաս մի լաք, հապա ձեր անձերուն վրայ ու ձեր զաւակներուն վրայ լացէք: 29 - Վասն զի ահա օրեր կու գան, որոնց մէջ պիտի ըսեն, Երանի՛ ամուլներուն, և այն որովայններուն որոնք չճնան, և ծիծերուն որոնք կաթ չտուին: 30 - Այն ատեն պիտի սկսին ըսել լեռներուն, Մեր վրայ ինկէք, ու բլուրներուն՝ Մեզ ծածկեցէք: 31 - Վասն զի եթէ դալար փայտին այսպէս կ'ընեն, հապա չորին ի՞նչ պիտի բլլայ:

32 - Ուրիշ երկուք ալ, չարագործ-

ներ, բերուեցան անոր հետ սպաննուելու: 33 - Երբ Գազաթ ըստւած տեղը գացին, հոն խաչը հանեցին զանիկա, և այն չարագործներն ալ, մէկը աջ կողմէն ու միւսը ձախ կողմէն, խաչեցին: 34 - Եւ ըսաւ Յիսուս, Հայր, [Ժողովիւն ասուր ատոնց, վասն զի չեն գիտեր ի՛նչ կ'ընեն: Ու անոր հանդերձները բաժնելու ատեննին վիճակ ձգեցին: 35 - Եւ ժողովուրդը կայներ կը նայէր. իշխաններն ալ անոնց հետ կը նախատէին զանիկա ու կ'ըսէին, Ուրիշները ազատեց, [Ժող ինքզինքն ազատէ, եթէ ասիկա է Քրիստոս, Աստուծոյ ընտրեալը: 36 - Ծաղր կ'ընէին զանիկա զինուորներն ալ, ասջևը կու գային քացախ կը մատուցանէին անոր, 37 - Ու կ'ըսէին, Եթէ դուն ես Հրէից [Ժագաւորը, քու անձդ ազատէ: 38 - Եւ գիր մը գրուած էր անոր վրայ Յունարէն ու Լատիներէն և Եբրայեցերէն գիրերով, [Թէ Ասիկա է Հրէից [Ժագաւորը:

39 - Եւ այն կախուած չարագործներէն մէկը հայհոյութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Եթէ դուն Քրիստոսն ես, ապա ահա քու անձդ ու մեզ ալ: 40 - Իսկ միւսը պատասխան ատուաւ և զանիկա յանդիմանելով՝ ըսաւ, Գուն Աստուծո՛ւմ չե՞ս վախնար, որովհետեւ նոյն դատապարտութեան մէջ ես: 41 - Ու մենք իրաւունքով, քանզի «հ» մեր ըրածներուն աշտանաւ:» հաստուցումը կ'առնենք. բայց ասիկա գէշ բան մը չըրաւ: 42 - Եւ ըսաւ Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ քու [Ժագաւորութիւնովդ գաս: 43 - Յիսուս ալ ըսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, Գուն այսօր ինձի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս:

44 - Եւ ժամը վեցին ատեններն էր, ու բոլոր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը. և արևը խաւարեցաւ, 45 - Ու տաճարին վարագոյրը մէջտեղէն պատուեցաւ. 46 - Եւ Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս. ու երբ զայս ըսաւ, հոգի տուաւ:

47 - Եւ հարիւրապետը եղած բանը տեսնելով՝ Աստուծոյ փառք տուաւ ու ըսաւ, Իրաւցընէ այս մարդը արդար էր: 48 - Եւ այս տեսարանը դիտելու համար ժողովուած բոլոր բազմութիւն-

ները եղած բաները տեսնելով՝ կուրծքերնուն կը զարնէին ու ետ կը դառնային: 49 - Ամէն իր ճանչուորներն ալ հեռուն կայներ էին, նայնպէս ալ այն կիները՝ որոնք իր ետեւէն եկեր էին Գալիլեայէ, ու կը տեսնէին այս բաները:

50 - Եւ ահա մարդ մը Յովսէփ անունով, որ խորհրդական էր, բարի ու արդար մարդ մը, 51 - (Ասիկա անոնց խորհուրդին ու գործին հաւանութիւն տուած չէր,) Հրեաներուն Արիմաթիա քաղաքէն, որ ինք ալ Աստուծոյ [Ժագաւորութեանը կը սպասէր: 52 - Ասիկա Պիղատոսի գնաց, ու Յիսուսի մարմինը խնդրեց: 53 - Եւ զանիկա խաչէն իջեցնելով՝ կաւաւով փաթթեց, ու քարէ փորուած գերեզմանի մը մէջ դրաւ, ուր բնաւ մէկը դրուած չէր: 54 - Եւ այն օրը ուրբաթ էր, ու շաբաթը պիտի *սկսէր:

55 - Եւ անոր ետեւէն գացին այն կիները, որոնք իրեն հետ Գալիլեայէ եկած էին, ու տեսան գերեզմանը, և [Թէ ի՛նչպէս անոր մարմինը հո՞ն դրուեցաւ: 56 - Եւ դառնալով՝ խաւնկեր ու իւղեր պատրաստեցին, և շաբաթ օրը հանգստացան պատուիրանքին համեմատ:

ԳԼ ԻԳ

Ու մէկշաբթի օրը աւտուանց շատ կանուխ գերեզմանը եկան, ու բերին այն խաւնկերը զորոնք պատրաստեր էին, և ուրիշ կիներ ալ անոնց հետ: 2 - Ու քարը գերեզմանէն մէկդի զլորուած գտան: 3 - Եւ ներս մտնելով՝ Տէր Յիսուսի մարմինը հո՞ն չգտան: 4 - Ու եղաւ որ երբ անոնք այս բանին համար տարակուսանքի մէջ էին, ահա երկու մարդիկ լուսափայլ հանդերձներով հասան անոնց: 5 - Ու երբ վախով լեցուած՝ երեսնին դէպի գետինը ձուկեցին, «յ» հարգիլը ըսին անոնց, Ինչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ կը փնտռէք. 6 - Հոս չէ ան, հապա յարութիւն տուաւ. միտքերնիդ բերէք ի՛նչպէս խօսեցաւ ձեզի երբ դեռ Գալիլեայի մէջ էր, 7 - Ըսելով [Թէ Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մտանուի ու խաչը ելլէ, ու

*Յո՞ւն. լուսնար

երրորդ օրը յարութիւն առնէ: 8 - Եւ միաքերնին բերին անոր խօսքերը: 9 - Ու գերեզմանէն դառնալով՝ այս ամէն բաները պատմեցին տասնըմէկին ու բոլոր ուրիշներուն: 10 - Եւ էին Մարիամ Մագդաղէնացի ու Յովհաննա և Յակոբոսի Կարճ Մարիամ, ու անոնց հետ ուրիշներ ալ, որոնք այս բաները առաքեալներուն պատմեցին: 11 - Եւ անոնց առջև ցնորական խօսքեր երևցաւ անոնց զրուցածը, ու չէին հաւատար անոնց: 12 - Բայց Պետրոս ելաւ վազեց դէպի գերեզմանը, ու ծռելով նայեցաւ և տեսաւ որ միայն կտուները կը կենային. ու գնաց՝ իր մտքին մէջ զարմանալով այն եղածին վրայ:

13 - Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը գեղ մը կ'երթային, որ Երուսաւոյցէմէ վաթսուն ասպարէզ հեռու էր, և անոր անունը Էմմաուս էր: 14 - Եւ անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր եղած անցքերուն վրայով: 15 - Ու եղաւ որ երբ անոնք կը խօսակցէին ու խորհրդածութիւն կ'ընէին, Յիսուս ինք ալ մօտենալով անոնց հետ կ'երթար: 16 - Բայց անոնց աչքերը բռնուած էին, որպէս զի զինք չճանչնան: 17 - Եւ ըսաւ անոնց, Ի՞նչ են այդ խօսքերը՝ որ քաղելով իրարու հետ կը խօսակցիք, ու տրամամտ ալ էք: 18 - Պատասխան տուաւ անոնցմէ մէկը, որուն անունը Կղէովպաս էր, ու ըսաւ անոր, Ի՞նչն միայն Երուսաղէմի մէջ կը կենաս, ու չես գիտեր թէ ինչե՛ր եղան հոն այս օրերս: 19 - Եւ ինք ըսաւ անոնց, Ի՞նչ. անոնք ալ ըսին իրեն, Նազովրեցի Յիսուսի համար, որ Աստուծոյ և բոլոր ժողովուրդին առջև դործով ու խօսքով զօրաւոր մարգարէ մը եղաւ: 20 - Ի՛նչպէս քահանայապետները ու մեր իշխանները մահուան դատաստանի մատնեցին զանիկա և խաչը հանեցին: 21 - Իսկ մենք կը յուսայինք թէ անիկա էր որ Իսրայէլը պիտի ազատէր. և այս ամէնուն վրայ այս երրորդ օրն է որ այս բաները եղան: 22 - Նոսե մեր մէջէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմացուցին, որոնք առտուանց կանուխ գերեզմանը գացին, 23 - Ու անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ըսին թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսան, որոնք ըսեր են թէ անիկա ողջ է: 24 - Եւ մերիններէն մէկ քանիներն ալ գերեզմանը գացին ու այնպէս

գտան, ինչպէս այն կիները զրուցեցին, միայն թէ զինք չտեսան: 25 - Ան ալ ըսաւ անոնց, Ով անմիաներ ու թուլասիրաներ, հաւատալու այն բոլոր բաներուն, զորոնք մարգարէները խօսեցան: 26 - 2^է որ Քրիստոսի պէտք էր այս չարչարանքները կրել, և իր փառքը մշտնէլ: 27 - Ու սկսելով Մովսէսէ և բոլոր մարգարէներէն, կը մեկնէր անոնց, ինչ որ իշէն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած էր: 28 - Երբ մօտեցան այն գեղին՝ ուր կ'երթային, ինք ալ կը ցուցնէր որպէս թէ աւելի հեռու տեղ մը պիտի երթար: 29 - Բայց ստիպեցին զինք ու ըսին, Մեր քով կեցիր վասն զի իրիկունը մօտ է և օրը իջած է. և մտաւ անոնց հետ կենալու: 30 - Ու եղաւ որ երբ ինք անոնց հետ սեղան նստաւ, հաց առաւ, օրհնեց, ու կտրելով սաւառ անոնց: 31 - Այն ատեն անոնց աչքերը բացուեցան ու զինք ճանչցան, և ինք անոնցմէ աներևոյթ եղաւ: 32 - Ու իրարու կ'ըսէին, 2^է որ սիրտերնիս մեր ներսիդին կը բորբոքէր, երբ ինք մեզի հետ կը խօսէր ճամբուն մէջ, և գիրքերը կը մեկնէր մեզի:


33 - Ու ելան նոյն ժաւ ևն Երուսաղէմ դարձան, ու մէկտեղ ժողովուած գտան տասնըմէկը ու անոնց հետ եղողները, 34 - Որոնք կ'ըսէին թէ Իրուցընէ Տէրը յարութիւն առաւ, ու Սիմոնի երեցաւ: 35 - Եւ իրենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ, և թէ ի՛նչպէս ինքզինք իրենց ճանչցուց հացը կտրած ատենը:

36 - Եւ քանի որ այս բաները կը խօսէին, Յիսուս ինք կայնեցաւ անոնց մէջտեղը ու ըսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի: 37 - Բայց անոնք զարհուրելով կը վախնային, ու կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն: 38 - Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խուժած էք, և ինչո՞ւ սիրտերնուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն: 39 - Տեսէք ձեռքերս ու սաքերս, որ ես ինքնս եմ. շօշափեցէք զիս ու տեսէք, վասն զի ոգին մարմին և սակարներ չունենար, ինչպէս զիս կը տեսնէք որ ունիմ: 40 - Եւ զայս ըսելով՝ ձեռքերը ու սաքերը ցուցուց անոնց: 41 - Ու երբ ասկաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար, և զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց, Ուտելիք մը ունի՞ք հոս: 42 - Անոնք ալ

կտոր մը խորոված ձուկ ու մեղրախորհսի տուին իրեն: 43 - Եւ առաւ կերու անոնց առջև: 44 - Եւ ըսաւ անոնց, Ասանք են այն խօսքերը զորոնք ձեզի խօսեցայ երբ դեռ ձեզի հետ էի, թէ Պէտք է որ կատարուին այն ամէնը՝ որոնք Մովսէսի օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ և սողմաններուն մէջ ինծի համար գրուած են: 45 - Այն ատեն անոնց միտքը բացաւ որպէս զի գիրքերը հասկնան: 46 - Եւ ըսաւ անոնց թէ Այսպէս գրուած է, և այսպէս պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնել: 47 - Եւ անոր անուևովը ապաշխարութիւն ու մեղքերու թողութիւն քարոզուիլ բոլոր

ազգերու մէջ՝ Երուսաղէմէ սկսած: 48 - Ու դուք էք այս բաներուն վկաները: 49 - Եւ ահա ես իմ Հօր խոստմունքը ձեր վրայ կը զրկեմ. բայց դուք Երուսաղէմ քաղաքիս մէջ նստեցէք, մինչեւ վերէն զօրութիւն առնէք ձեր վրայ:

50 - Եւ զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր ձեռքերը վեր վերցնելով օրհնեց զանոնք: 51 - Եւ եղաւ որ երբ զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ ու վեր կ'ելլէր երկինք: 52 - Անոնք ալ երկրպագութիւն ընելով անոր՝ մեծ ուրախութեամբ Երուսաղէմ դարձան: 53 - Եւ ամէն ատեն տաճարին մէջ էին, ու կը գովաբանէին և կ'օրհնէին զԱստուած: Ամէն:



ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ



ԳԼ. Ա

Ակիզքէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քով էր, և Բանը Աստուծոյ քով էր: 2 - Անիկա սկիզբէն Աստուծոյ քով էր: 3 - Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: 4 - Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր: 5 - Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր, ու խաւարը զանիկա չճանչցաւ:

6 - Աստուծմէ զրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: 7 - Ասիկա վկայութեան եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնը անոր միջոցով հաւատան: 8 - Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայութիւն տայ:

9 - Ճշմարիտ Լոյսը ան էր, որ աշխարհ տեղող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: 10 - Ինք աշխարհի մէջ էր, և աշխարհ անով եղաւ, ու աշխարհ զանիկա չճանչցաւ: 11 - Իրեններուն եկաւ, և իրենները զինք չընդունեցին: 12 - Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստու-

ծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը: 13 - Որոնք ոչ արիւնէ և ոչ մարմինէ կամքէ, ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան: 14 - Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (և անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

15 - Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղակեց՝ ըսելով, Ասիկա է, որուն համար կը զրուցէի, Ան որ իմ ետեւէս կուգայ, ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր: 16 - Եւ անոր լեցունութենէն մենք ամէնս շնորհք առինք շնորհքի տեղ: 17 - Վասն զի օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, բայց շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքով եղան: 18 - Մէկը երբէք զԱստուած տեսած չէ, բայց միածին Որդին որ Հօրը ծոցն է, անիկա պատմեց:

19 - Ու Յովհաննէսի վկայութիւնը այս է, երբ Հրեաները Երուսաղէմէ քահանաներ ու Ղևտացիներ զրկեցին որպէս զի հարցնեն անոր թէ Գուև ո՞վ ես: 20 - Եւ անիկա խոստովանեցաւ ու չուրացաւ. խոստովանեցաւ թէ Ես

*Կ-ժ, գալով

Քրիստոսը չեմ : 21 - Ու հարցուցին անոր, Հապա ի՞նչ . Եղիա՞ն ես . և ըստաւ, Չեմ . Այն մարգարէն ես, պատասխան տուաւ թէ Ոչ : 22 - Այն տտեն ըսին անոր, Ի՞նչն ո՞վ ես . Ը՛ի Թի, որպէս զի պատասխան տանինք մեզ զրկողներուն . դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար : 23 - Ըստաւ, Ես անոր ճայնն եմ, որ անապատին մէջ կը կանչէ, Նիսկեցէք Տերոջը ճամբան, ինչպէս Եսայի մարգարէն ըստաւ : 24 - Եւ այն զրկուածները փարիսեցիներէն էին . 25 - Ու հարցուցին իրեն՝ ըսելով, Հապա ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես, եթէ դուն Քրիստոսը չես, ու ոչ Եղիան, և ոչ մարգարէն : 26 - Պատասխան տուաւ անոնց Յովհաննէս ու ըստաւ, Ես ջրով կը մկրտեմ, բայց ձեր մէջ մէկը կայ զոր դուք չէք ճանչնար . 27 - Անիկա է իմ ետեւս եկողը որ ինծմէ առաջ եղաւ, որուն կօշիկին կապը քակելու ես արժանի չեմ : 28 - Այս բաները Բեթաբարայի մէջ եղան Յորդանանու անդիի կողմը, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր :

29 - Հետեւեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ իրեն կու գար, և ըստաւ, Ահա Աստուծոյ Գաւը որ աշխարհի մեղքը կը վերցնէ : 30 - Ասիկա է որու համար ես կը զրուցէի, իմ ետեւս մարդ մը կուգայ որ ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր : 31 - Ու ես զանիկա չէի ճանչնար, բայց անոր համար ես եկայ ջրով մկրտելու, որպէս զի անիկա Իսրայելի յայտնուի : 32 - Եւ Յովհաննէս վկայութիւն տուաւ ըսելով թէ կը տեսնէի Հոգին որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջնէր, ու անոր վրայ կը հանգչէր : 33 - Եւ ես զանիկա չէի ճանչնար, բայց ան որ զիս զրկեց ջրով մկրտելու, ինք ըստաւ ինծի, Որու վրայ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի անոր վրայ, անիկա է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ : 34 - Ես ալ տեսայ, ու վկայեցի թէ ասիկա է Աստուծոյ Որդին :

35 - Հետեւեալ օրը դարձեալ Յովհաննէս կայներ էր, և իր աշակերտներէն երկուքը : 36 - Ու նայելով Յիսուսի վրայ որ կը պտրտէր, ըստաւ, Ահա Աստուծոյ Գաւը : 37 - Եւ լսեցին անկէ երկու աշակերտները երբ կը խօսէր, ու գացին Յիսուսի ետեւէն : 38 - Յիսուս երբ դարձաւ ու տեսաւ զանոնք

որ էր ետեւէն կու գային, ըստաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք . անոնք ալ ըսին իրեն, Ռաբբի, (որ թարգմանուելով վարդապետ ըսել է,) ո՞ր է քու օթեւանդ : 39 - Ըստաւ անոնց, Եկէք ու տեսէք, եկան ու տեսան ուր տեղ որ էր իր օթեւանը . և այն օրը անոր քով կեցան, վասն զի ժամը տասնի տասններն էր : 40 - Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրէաս այն երկուքէն մէկն էր, որոնք լսեցին Յովհաննէսէ և անոր ետեւէն գացին : 41 - Ասիկա նախ իր Սիմոն եղբայրը կը գտնէ և կ'ըսէ անոր, Գտանք Մեսիան, (որ *Քրիստոս կը թարգմանուի .) 42 - Ու տարաւ զանիկա Յիսուսի քով . Յիսուս անոր նայելով ըստաւ, Ի՞նչն ես Յովհաննի որդին Սիմոն . դուն կեփաս պիտի ըսուիս, որ †Պետրոս կը թարգմանուի :

43 - Հետեւեալ օրը Յիսուս Գալիլեա ելլել ուզեց, և Փիլիպպոսը գտնելով ըստաւ անոր, Եկուր իմ ետեւս : 44 - Եւ Փիլիպպոս Բեթսայիդայէ էր . Անդրէասի ու Պետրոսի քաղաքէն : 45 - Փիլիպպոս կը գտնէ Նաթանայէլը և կ'ըսէ անոր . Ան, որու համար Մովսէս օրէնքին մէջ գրեց, և մարգարէներն ալ, զանիկա գտանք, այսինքն Յիսուս Նազովրեցին, Յովսէփի որդին : 46 - Եւ Նաթանայէլ ըստաւ անոր, Նազարէթէ կարելի՞ է որ աղէկ բան մը ըլլայ . ըստաւ անոր Փիլիպպոս, Եկուր ու տես : 47 - Յիսուս երբ տեսաւ Նաթանայէլը որ իրեն կու գար, ըստաւ անոր համար, Ահա իրաւցընէ Իսրայելացի մը, որուն ներքը նենգութիւն չկայ : 48 - Նաթանայէլ ըստաւ անոր, Ուրկէ՞ կը ճանչնաս զիս . պատասխան տուաւ Յիսուս ու ըստաւ անոր, Ի՞նչ Փիլիպպոս քեզ չկանչած, դուն որ թղենիին տակ էիր, ես քեզ տեսայ : 49 - Պատասխան տուաւ Նաթանայէլ ու ըստաւ անոր, Ռաբբի, դուն ես Աստուծոյ Որդին, դուն ես Իսրայելի թագաւորը : 50 - Յիսուս պատասխան տուաւ և ըստաւ անոր, Ասոր համար՝ որ քեզի ըսի թէ քեզ թղենիին տակ տեսայ, կը հաւատաս . ասկէ աւելի մեծ բաներ պիտի տեսնես : 51 - Ու ըստաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետեւ պիտի տեսնէք երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակները՝ որ կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ :

*Ա. յ. Բ. 42, Օձեալ †Ա. յ. Բ. 42, վէմ

ԳԼ. Բ

Աւերարդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի Կանա +աչ+ը, և Յիսուսի մայրը հոն էր: 2 - Յիսուս ալ կանչուեցաւ այն հարսնիքը, ու իր աշակերտներն ալ: 3 - Աւ երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր, Գինի չունին: 4 - Յիսուս ըսաւ անոր, Ով կին, դուն ինձի հետ ի՞նչ բան ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ: 5 - Իր մայրը սպասաւորներուն ըսաւ, Ինչ որ ձեզի ըսէ, ըրէք: 6 - Հոն գեց հաս քարէ կարասներ դրուած էին Հրէից մաքրուելու «Վեր»-ի տնը համեմատ, որոնց ամէն մէկը երկու կամ երեք մար Բան կ'աւնէր: 7 - Յիսուս ըսաւ անոնց, Լեցուցէք այդ կարասները ջրով. ու լեցուցին զանոնք մինչև բերանը: 8 - Եւ ըսաւ անոնց, Հիմա հանեցէք ու սեղանապետին տարէք. անոնք ալ տարին: 9 - Աւ սեղանապետը երբ գինի եղած ջուրին համը տուաւ, և չէր գիտեր ուրկէ ըլլալը, (բայց սպասաւորները որոնք ջուրը քաշեր էին, գիտէին,) սեղանապետը կը խօսի փեսային, 10 - Աւ անոր կ'ըսէ, Ամէն մարդ աղէկ գինին առաջ կը մտաուցանէ, ու երբ խմած կ'ըլլան, այն ատեն ստորնագոյնը. Բայց դուն աղէկ գինին մինչև հիմա պահեցիր: 11 - Յիսուս հրաշքներուն սկիզբը զայս ըրաւ Գալիլեայի Կանա +աչ+ին մէջ, և իր փառքը յայտնեց. ու իր աշակերտները հաւատացին իրեն:

12 - Ասկէ ետեւ Յիսուս Կափառնա-յուժիճաւ, ինք և իր մայրը ու իր եղբայրները և իր աշակերտները, ու շատ օրեր հոն չկեցան:

13 - Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու Յիսուս Երուսաղէմ ելաւ. 14 - Եւ տաճարին մէջ գտաւ արջառ ու ոչխար և աղաւնի ծախողները, ու ստակ փոխողներն ալ որոնք նստեր էին. 15 - Եւ չուանէ խարազան մը շինելով ամէնը տաճարէն դուրս հանեց, ոչխարներն ալ ու արջառներն ալ, և ստակ փոխողներուն պղինձները ցիրուցան ըրաւ, ու սեղանները կործանեց. 16 - Եւ աղաւնի ծախողներուն ըսաւ, Ասկէ վերջուցէք ասանք, իմ Հօրս տունը առուտուրի տուն մի ընէք: 17 - Եւ իր աշակերտները միտքերնին բերին որ գըրուած է, Քու տանդ նախանձր զիս կերաւ:

18 - Այն ատեն պատասխան տուին Հրեաները ու ըսին անոր, Ի՞նչ նշան կը ցուցնես մեզի՝ որ այդ բաները կ'ընես: 19 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Քակեցէք այս տաճարը, ու երեք օրուան մէջ զանիկա պիտի կանգնեմ: 20 - Եւ Հրեաները ըսին, Քառասունըվեց տարուան մէջ շինուեցաւ այս տաճարը, և դուն երեք օրուան մէջ պիտի կանգնե՞ս զանիկա: 21 - Բայց ինք իր մարմնին տաճարին համար կ'ըսէր: 22 - Ուստի երբ ինք մեռելներէն յարութիւն առաւ, իր աշակերտները միտքերնին բերին թէ այս բանը ըսած էր*, ու հաւատացին գիրքին և Յիսուսի ըսած խօսքին:

23 - Աւ երբ զատիկի տօնին ատենը Երուսաղէմ էր, շատ մարդիկ անոր ըրած հրաշքները տեսնելով հաւատացին անոր անուանը: 24 - Բայց ինք Յիսուս իր անձը անոնց չէր հաւատար, վասն զի ինք գիտէր ամէն մարդ. 25 - Աւ պէտք չէր որ մէկը մարդու համար վկայութիւն տար իրեն, քանզի ինք գիտէր թէ ի՞նչ կայ մարդուն ներսիդին:

ԳԼ. Գ

Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նիկոդեմոս անունով, որ Հրէից իշխան էր: 2 - Ասիկա գիշերով +Յիսուսի քով եկաւ, և ըսաւ անոր, Ռարբի, գիտե՞նք որ դուն Աստուծոյ վարդապետ եկած ես, վասն զի մէկը չկրնար ընել այդ հրաշքները զորոնք դուն կ'ընես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ: 3 - Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը քնորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել: 4 - Նիկոդեմոս ըսաւ անոր, Ի՞նչպէս կրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է. հնարաւոր բան է որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի: 5 - Յիսուս պատասխան տուաւ, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 6 - Մարմինէն ծնածը մարմին է, ու

*Ո՛հնէ, (աւելցնեն, իրենց
 †Ո՛հնէ, անոր
 ‡Կա՛մ, վերէն

Հոգիէն ծնածը հոգի է : 7 - Իսկն մի զարմանար որ քեզի ըսի , Պէտք է ձեզի նորէն ծնանիլ : 8 - Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ, և անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուրկէ՝ կու գայ կամ ո՛ւր կերթայ . այսպէս ալ է այն ամէնը որ Հոգիէն կը ծնանի : 9 - Պատասխան տուաւ Նիկողեմոս ու ըսաւ անոր, Այդ ի՞նչպէս կրնայ ըլլալ : 10 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Իսկն Իսրայէլի Քջ վարդապետ մըն էս, և այս բաները չե՞ս գիտեր : 11 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու մեր վկայութիւնը չէք ընդունիր : 12 - Եթէ երկրաւոր բաները ձեզի զրուցեցի ու չէք հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք եթէ երկնաւոր բաները ձեզի զրուցեմ : 13 - Եւ մէ՛կը երկինք չելաւ . բայց անիկա միայն որ երկինքէն իջաւ, Արդին մարդոյ որ երկինքն է : 14 - Եւ ինչպէս Մովսէս անապատին մէջ օծը բարձրացուց, այնպէս պէտք է որ Արդին մարդոյ բարձրանայ : 15 - Արպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ : 16 - Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչև իր միածին Արդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ : 17 - Վասն զի Աստուած իր Արդին չզրկեց աշխարհ, որպէս զի աշխարհը դատէ, հապա՝ որպէս զի աշխարհ անով փրկուի : 18 - Ան որ կը հաւատայ անոր՝ չգատապարտուի . և ան որ չհաւատար՝ անիկա արդէն՝ գատապարտուած է, վասն զի Աստուծոյ միածին Արդւոյն անուանը չհաւատաց . 19 - Եւ այս է գատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, քան զի իրենց գործերը չար էին : 20 - Վասն զի ամէն ով որ չար կը գործէ, անիկա լոյսը կ'ատէ . և լոյսին քով չգար, որպէս զի իր գործերը չյանդիմանուին : 21 - Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ, լոյսին քով կու գայ, որպէս զի իր գործերը յայտնի ըլլան թէ Աստուծով գործուեցան :

22 - Այս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշակերտները Հրէաստանի երկիրը, և հոն կը կենար անոնց հետ

մէկտեղ, ու մկրտութիւն կ'ընէր : 23 - Յովհաննէս ալ Այնտնի մէջ Սաղմոս մօտ մկրտութիւն կ'ընէր, որովհետև հոն շատ ջուր կար, ու կու գային և կը մկրտուէին . 24 - Վասն զի Յովհաննէս գեռ բանար դրուած չէր :

25 - Այն ատեն վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսի աշակերտներէն՝ Հրեաներուն հետ՝ մաքրութեան վերայով : 26 - Աւ եկան Յովհաննէսի և անոր ըսին, Ռաբբի, անիկա որ քեզի հետ Յորդանանու անդիի կողմն էր, որու համար դուն վկայութիւն տուիր, ասոս ինք կը մկրտէ և ամէնը անոր կու գան : 27 - Պատասխան տուաւ Յովհաննէս և ըսաւ, Մարդ մը չկրնար բան մը աւանդել, եթէ երկինքէն տրուած չըլլայ անոր : 28 - Իսկն ձեզմէ կը վկայէք ինծի համար, որ ըսի թէ Ես Քրիստոսը չեմ, հապա անոր առջևէն զրկուած եմ : 29 - Ան որ հարսն ունի, փեսան անիկա է . բայց փեսային բարեկամը որ կը կենայ ու կը լսէ անոր, մեծապէս կ'ուրախանայ փեսային ձայնին համար . ուստի այս իմ ուրախութիւնս լցուած է : 30 - Անիկա պէտք է որ մեծնայ, բայց ես պզտիկնամ : 31 - Ան որ վերէն կու գայ՝ ամէնէն վեր է . ան որ երկրէ է՝ երկրաւոր է, ու երկրէ կը խօսի . ան որ երկինքէն կու գայ՝ ամէնէն վեր է . 32 - Եւ ինչ որ տեսաւ ու լսեց, զայն կը վկայէ, ու անոր վկայութիւնը մէ՛կը չընդունիր : 33 - Ան որ անոր վկայութիւնը կ'ընդունի, կնքեց թէ Աստուած ճշմարիտ է : 34 - Վասն զի ան զոր Աստուած զրկեց, Աստուծոյ խօսքերը կը խօսի, վասն զի Աստուած անոր չափով շտար Հոգին : 35 - Հայրը կը սիրէ Արդին, և ամէն բան անոր ձեռքը տուած է : 36 - Ան որ Արդւոյն կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի . և ան որ Արդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ :

ԳԼ . Դ

Արդ երբ Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեք են՝ թէ Յիսուս Յովհաննէսէ աւելի աշակերտներ կ'ընէ և կը մկրտէ, 2- (Թէպէտ ոչ թէ Յիսուս ինք

*Կամ, Հրեայի մը

Վր մկրտեր, հապա իր աշակերտները,) 3-Թողուց Հրէաստանը ու նորէն Գալիլէա գնաց: 4 - Ու պէտք եղաւ որ Սամարիայի մէջէն անցնի: 5 - Ուստի եկաւ Սամարացուց մէկ քաղաքը, որուն անունը Սուքար էր, այն տեղին մօտ՝ զոր Յակոբ իր որդւոյն Յովսէփի տուաւ: 6 - Եւ հոն Յակոբի մէկ աղբիւրը կար: Յիսուս ալ ճամբայէն յոգնած ըլլալով՝ այն աղբիւրին վրայ նստաւ: և ժամը վեցին տակններն էր:

7 - Սամարիայէ կին մը եկաւ ջուր հանելու: Յիսուս ըսաւ անոր, Ինծի ջուր տուր խմելու: 8 - (Քանզի իր աշակերտները քաղաքը գացեր էին, որպէս զի ուտելիք առնեն): 9 - Այն տակն Սամարացի կինը ըսաւ անոր, Գու՞ն որ Հրէայ ես, Ի՞նչպէս կ'ուզես ջուր խմել ինծմէ, Սամարացի կնոջմէ մը: Վասն զի Հրէաները Սամարացուց հետ հաղորդակցութիւն չեն ըներ: 10 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգևը, և թէ ո՞վ է ան որ քեզի կ'ըսէ, Ինծի ջուր տուր խմելու, դուն անկէ պիտի ուզէիր, և ինք քեզի կենդանի ջուր պիտի տար: 11 - Կինը ըսաւ անոր, Տէր, դուն ջրհան ալ չունիս, ու այս հորը խորունկ է: ուրեմն ուրկէ՞ պիտի ունենաս այն կենդանի ջուրը: 12 - Միթէ դուն մեր Յակոբ հորմէն աւելի մե՞ծ մըն ես, որ այս հորը մեզի տուաւ, և տակէ խմեց ինք ու իր որդիները և իր անասունները: 13 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Ամէն ով որ այդ ջուրէն խմէ, նորէն պիտի ծարաւի, բայց ով որ խմէ այն ջուրէն զոր ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չծարաւի: 14 - Հապա այն ջուրը զոր ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսիդին ջուրի աղբիւր մը՝ որ յաւիտեանական կեանքի համար կը բղիտէ: 15 - Կինը ըսաւ անոր, Տէր, տուր ինծի այն ջուրը, որպէս զի չծարաւիմ, և հոս չգամ ջուր հանելու: 16 - Յիսուս ըսաւ անոր, Գնա քու այրդ կանչէ, ու հոս եկուր: 17 - Կինը պատասխան տալով ըսաւ, Ես այր չունիմ: Յիսուս ըսաւ անոր, Աղէկ ըսիր թէ այր չունիմ: 18 - Վասն զի դուն հինգ այր ունեցեր ես, և ան զոր հիմա ունիս՝ քու այրդ չէ: աւստի կա շիտակ գրուցեցիր: 19 - Կինը ըսաւ անոր, Տէր, կը տեսնեմ որ դուն

մարգարէ մըն ես: 20 - Մեր հայրերը այս լեռան վրայ երկրպագութիւն ըրին, և դուք կ'ըսէք թէ Միայն Երուսաղէմ է տեղը, ուր պէտք է երկրպագութիւն ընել: 21 - Յիսուս ըսաւ անոր, Ով կին, հաւատա ինծի որ ժամանակ կու գայ, երբ ոչ այս լեռան վրայ, և ոչ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօրը: 22 - Ինչքան որ երկրպագութիւն կ'ընէք, զոր չէք ճանչնար, մենք անոր երկրպագութիւն կ'ընենք, զոր կը ճանչնանք: վասն զի փրկութիւնը Հրէաներէն է: 23 - Բայց ժամանակ կու գայ ու հիմա ալ է, երբ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութիւնով, վասն զի Հայրն ալ իրեն այնպիսի երկրպագողներ կ'ուզէ: 24 - Աստուած Հոգի է, և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն: 25 - Կինը ըսաւ անոր, Գիտե՞մ որ Մեսիան կու գայ, (Քրիստոս ըսուածը,) երբ ինք գայ՝ ամէն բան մեզի պիտի պատմէ: 26 - Յիսուս ըսաւ անոր, Ես ան եմ՝ որ քեզի հետ կը խօսիմ: 27 - Եւ այս Խօսքն վրայ իր աշակերտները եկան, ու զարմացան որ ոչ կնոջ հետ կը խօսէր: բայց անոնցմէ մէկը չըսաւ թէ Ի՞նչ կ'ուզես, կամ Ի՞նչ կը խօսիս ասոր հետ: 28 - Այն տակն կինը ձգեց իր ստիորը ու քաղաքը գնաց, և ըսաւ մարդոցը, 29 - Եկէք տեսէք մարդ մը՝ որ ըսաւ ինծի ամէն ինչ որ գործեր եմ. արդեօք անիկա՞ է Քրիստոսը: 30 - Եւ անոնք քաղաքէն ելան ու անոր կու գային:

31 - Եւ այս միջոցին աշակերտները իրեն կ'աղաչէին ու կ'ըսէին, Ռաբբի, հոց կեր: 32 - Անիկա ըսաւ անոնց, Ես կերակուր ունիմ ուտելու՝ զոր դուք չէք գիտեր: 33 - Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու, Արդեօք մէկը ասոր ուտելու բան մը բերա՞ւ: 34 - Յիսուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս այն է որ ես գիս զրկողին կամքը ընեմ, և անոր գործը կատարեմ: 35 - Չէ՞ որ դուք կ'ըսէք թէ Տակաւին չորս ամիս կայ որ հունձքի տակնը գայ. ոհոս ես ձեզի կ'ըսեմ, Աչքերնիդ վերցուցէք ու արտերուն նայեցէք, որ արդէն ճերմկած ու հնձուելու պատրաստ են: 36 - Եւ ան որ կը հնձէ՝ վարձք կ'առնէ, ու

յաւիտենական կեանքի համար պտուղ կը ժողվէ, որպէս զի սերմանողը ու հնձողը մէկտեղ ուրախանան: 37 - Վասն զի այս բանին մէջ ճշմարիտ է այն խօսքը թէ Ուրիշը կը սերմանէ և ուրիշը կը հնձէ: 38 - Ես ձեզ զրկեցի հնձելու զայն որ դուք չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան, ու դուք անոնց աշխատանքին մէջ մտաք:

39 - Եւ այն քաղաքէն շատ Սամուրացիներ իրեն հաւատացին այն կնոջ խօսքին համար որ վկայեց, ընտել թէ ինչ որ ես գործեր էի՝ բոլորը ինձի ըստաւ: 40 - Ու երբ Սամուրացիներն անոր եկան, կ'աղաչէին անոր որ իրենց քով կենայ. ու երկու օր հոն կեցաւ: 41 - Եւ ալ շատերը իրեն հաւատացին իր խօսքին համար: 42 - Ու կ'ըսէին կնոջը, Ասկէ ետեւ ոչ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, վասն զի մենք մեզմէ լսեցինք, և գիտենք որ աստիկա է ճշմարտապէս աշխարհի Փրկիչը, Քրիստոս:

43 - Ու երկու օրէն ետեւ ելաւ անկէ և Գալիլեա գնաց: 44 - Վասն զի Յիսուս ինք վկայեց թէ Մարգարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունենար: 45 - Ու երբ Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զինք ընդունեցին, քանզի տեսած էին այն բոլոր հրաշքերը, զորոնք ինք ըրաւ Երուսաղէմի մէջ տօնին ատենը. վասն զի իրենք ալ այն տօնին գացեր էին:

46 - Եւ Յիսուս նորէն եկաւ Գալիլեացուց Կանա +ազառ, ուր ջուրը գինի ըրած էր. և հոն աղնուական մէկը կար, որուն որդին հիւանդ էր Կափառնայուց մէջ: 47 - Աստիկա լսելով որ Յիսուս Հրէաստանէ Գալիլեա եկեր է, եկաւ անոր ու կ'աղաչէր որ իջնէ և իր որդին բժշկէ, վասն զի մեռնելու վրայ էր: 48 - Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Եթէ նշաններ ու հրաշքներ չտեսնէք, բնաւ պիտի չհաւատաք: 49 - Աղնուականը ըսաւ անոր, Տէր, իջիր քանի որ իմ տղաս մեռած չէ: 50 - Յիսուս ըսաւ անոր, Գնա, քու որդիդ ողջ է. մարդն ալ հաւատաց այն խօսքին զոր Յիսուս իրեն ըսաւ, ու գնաց: 51 - Ու երբ կ'իջնէր, իր ծառաները գիմուարեցին զինք, և աւետիս տուին ըսելով թէ Քու տղադ ողջ է: 52 - Ուստի հարցուց անոնց թէ ո՞ր ժամէն սկսաւ աղէկի դառնալ. և ըսին իրեն,

Երէկ ժամը եօթնին տենդը թողուց զանիկա: 53 - Այն ատեն գիացաւ անոր հայրը թէ այն ժամն էր երբ Յիսուս իրեն ըսաւ թէ Քու որդիդ ողջ է. ու հաւատաց ինք և իր բոլոր տունը: 54 - Այս նորէն երկրորդ հրաշքն էր զոր Յիսուս ըրաւ, երբ Հրէաստանէ Գալիլեա եկաւ:

ԳԼ Ե

Ասկէ ետեւ Հրէից տօն էր, և Յիսուս Երուսաղէմ՝ ելաւ: 2 - Ու Երուսաղէմի մէջ Աշխարաց քահանայ լաւազան մը կայ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա կ'ըսուի, որ հինգ սրահ ունի: 3 - Ասոնց մէջ խիստ շատ հիւանդներ պառկած էին, կոյրեր, կաղեր, չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն: 4 - Վասն զի հրէշտակ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր ու ջուրերը կը խառնէր, և ով որ ջուրին խառնուելէն ետեւ ամէնէն առաջ անոր ձեղ կը մանէր, կը բժշկուէր ինչ հիւանդութիւն որ ունենար: 5 - Եւ հոն մարդ մը կար, որ երեսունըթ տարիէ ի վեր հիւանդութիւն մը ունէր: 6 - Յիսուս երբ տեսաւ զանիկա որ ինկած պառկած էր, ու գիացաւ որ շատ ժամանակէ ի վեր է, ըսաւ անոր, Կ'ուզե՞ս առողջանալ: 7 - Հիւանդը պատասխան տուաւ անոր, Տէր, մարդ մը չունիմ որ երբ ջուրերը խառնուին զիս աւազանը ձգէ. հապա քանի որ ես ծանր կը շարժիմ, ինձմէ առաջ ուրիշ մը կ'իջնէ: 8 - Յիսուս ըսաւ անոր, Եյիր, մահիճդ առ ու քայլէ: 9 - Եւ իսկայն մարդը առողջացաւ, ու իր մահիճը վերցնելով կը քայլէր. ու այն օրը շարժած էր: 10 - Այն ատեն Հրէաները ըսին բժշկուած մարդուն, Դարձա՞ծ է, և արժան չէ որ մահիճդ վերցնես: 11 - Պատասխան տուաւ անոնց -- Ը-- , Ան որ զիս բժշկեց, ինք ինձի ըսաւ, Մահիճդ առ ու քայլէ: 12 - Ուստի հարցուցին անոր, Ո՞վ է այն մարդը որ քեզի ըսաւ, Մահիճդ առ ու քայլէ: 13 - Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ո՞վ է ան, վասն զի Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ այն տեղը բազմութիւն ըլլալուն համար: 14 - Անկէ ետքը Յիսուս զանիկա ամառաբն մէջ գանելով ըսաւ անոր, Ահա բժշկուեցար, ալ մեզք մի գործեր, որ ալ

աւելի չար բան մը չպատահի քեզի: 15 - Գնաց մարդը, ու Հրեաներուն պատմեց թէ Յիսուս էր որ զինք բժըշկեց:

16 - Եւ ասոր համար Հրեաները կը հալածէին Յիսուսը, և կը փնտռէին զանհկա սպաննել, որ այս բաները շաբաթ օրը կ'ընէր: 17 - Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց, իմ' Հոյրս մինչև հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ: 18 - Ասոր համար ա'լ աւելի կը փնտռէին Հրեաները զանհկա սպաննել, վասն զի ոչ թէ միայն շաբաթ օրը կը լուծէր, հապա նաև զԱստուած իր Հոյրը կ'անուանէր, ու այսպէս ինքզինք Աստուծոյ հաւասար կ'ընէր: 19 - Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու բաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Արդին ինքիրմէ բան մըն ալ չկրնար ընել, միայն թէ ինչ որ տեսնէ զոր Հոյրը կ'ընէ. վասն զի ինչ որ անհկա կ'ընէ, նմանապէս Արդին ալ նոյնը կ'ընէ: 20 - Քանզի Հոյրը կը սիրէ Արդին, և ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ. և ասոնցմէ ալ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք: 21 - Վասն զի ինչպէս Հոյրը մեռելները կը յարուցանէ ու կենդանի կ'ընէ, այնպէս ալ Արդին զարնք կ'ուզէ կը կենդանացնէ: 22 - Քանզի Հոյրը մէ'կը չգատեր, հապա ամէն դատաստանը Արդւոյն տուաւ. 23 - Արպէս զի ամէնը պատուեն Արդին, ինչպէս Հոյրը կը պատուեն. ան որ Արդին չպատուեր, զանհկա զրկող Հոյրը չպատուեր: 24 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Ան որ իմ' խօսքս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չիկնար, հապա մահուանէ դէպ ի կեանք անցած է: 25 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ ժամանակ պիտի գայ և ալ հիմա է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Արդւոյն ձայնը, և անոնք որ կը լսեն, պիտի սպրին: 26 - Վասն զի ինչպէս Հոյրը իր անձին մէջ կեանք ունի, այնպէս ալ Արդւոյն տուաւ որ իր անձին մէջ կեանք ունենայ. 27 - Եւ դատաստան ընելու ալ իշխանութիւն տուաւ անոր, քանզի անհկա Արդի մարդոյ է: 28 - Ասոր վրայ մի զարմանաք. վասն զի ժամանակ պիտի գայ՝ երբ

բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, 29 - Ու դուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են՝ կենաց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար: 30 - Ես ինքիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, «յապէ» կը գատեմ, և իմ' դատաստանս արդար է, վասն զի ես իմ' կամքս չեմ փնտռեր, հապա անոր կամքը որ զիս զրկեց: 31 - Եթէ ես ինծի համար վկայեմ, իմ' վկայութիւնս ճշմարիտ չէ: 32 - Աւրիշ մըն է որ ինծի համար կը վկայէ. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը՝ զոր ինք ինծի համար վկայեց: 33 - Իսկ Յովհաննէսի զրկեցիք, և ինք ճշմարտութեանը վկայեց: 34 - Բայց ես ոչ թէ մարդոցմէ վկայութիւն կ'առնեմ, հապա այս բաները կ'ըսեմ՝ որպէս զի դուք փրկուիք: 35 - Անհկա ճրագ մըն էր որ կը վառէր ու լոյս կու տար, և դուք քիչ մը տեսն ու զեցիք անոր լուսովը ուրախանալ: 36 - Բայց ես Յովհաննէսի վկայութիւն ալ մեծ վկայութիւն ունիմ, քանզի այն գործերը զորոնք Հոյրը ինծի տուաւ որ զանոնք կատարեմ, այն նոյն գործերը զորոնք ես կը գործեմ, ինծի համար կը վկայեն թէ Հոյրը զիս զրկեց: 37 - Ու Հոյրը որ զիս զրկեց, ինք վկայեց ինծի համար. դուք բնաւ անոր ձայնը չստեցիք, ոչ ալ անոր կերպարանքը տեսաք: 38 - Եւ ոչ անոր խօսքը ձեր մէջ բնակած ունիք, քանզի զայն որ ինք զրկեց, դուք անոր չէք հաւատար: 39 - Գիրքերը քննեցէք, վասն զի դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ունենալ, և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն: 40 - Եւ դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունենաք: 41 - Ես մարդոցմէ փառք չեմ տաներ: 42 - Բայց գիտեմ՝ ձեզ որ Աստուծոյ սէրը ձեր մէջ չունիք: 43 - Ես իմ' Հօրս անունովը եկայ, ու զիս չէք ընդունիր. եթէ ուրիշ մէկը իր անունովը գայ, զանհկա պիտի ընդունիր: 44 - Իսկ ինչպէս կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք, և այն փառքը որ մէկ Աստուծոմէն է՝ չէք փնտռեր: 45 - Մի կարծէք թէ ես ձեզի համար ամբաս-

*Ո՛հնչ, Հօրը

տանուլթիւն պիտի ընեմ Հօրը. կայ Քիչ որ ձեզի համար ամբաստանուլ թիւն կ'ընէ, Մովսէս՝ որու դուք յուսացած էք: 46 - Վասն զի եթէ դուք Մովսէսի հաւատայիք, ինծի ալ պիտի հաւատայիք, քանզի անկա ինծի համար գրեց: 47-Բայց եթէ անոր գրածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս ի՞նչպէս պիտի հաւատաք:

ԳԼ. 9

Այս բաներէն ետքը Յիսուս Գալիլեայի, սյսինքն Տիբերիայի, ծովուն անդիի կողմը գնաց. 2 - Եւ անոր ետեւէն շատ ժողովուրդ կ'երթար, վասն զի կը տեսնէին այն հրաշքները զորոնք հիւանդներուն վրայ կ'ընէր: 3 - Եւ Յիսուս լեռը ելաւ, ու հոն նստաւ իր աշակերտներուն հետ մէկտեղ: 4 - Եւ Հրէից զտակի տօնը մօտ էր:

5 - Յիսուս երբ էջ աչքերը վեր վերցուց ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն, ըսաւ Փիլիպպոսի, Աւրկէ՞՞ հաց ծախու առնենք որպէս զի ասանք ուտեն: 6 - (Եւ զայս կ'ըսէր զանկա փորձելու համար, քանզի ինք գիտէր ի՞նչ պիտի ընէր:) 7 - Փիլիպպոս պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դասեկանի հաց ասանց հերիք չէ, որ ամէն մէկը քիչ մը առնէ: 8 - Իր աշակերտներէն մէկը, Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրէաս, ըսաւ իրեն, 9 - Հոս պատանի մը կայ, որ հինգ գարեղէն հաց ու երկու ձուկ ունի, բայց անանք ի՞նչ պիտի ըլլան այդչափ մարդոց: 10 - Իսկ Յիսուս ըսաւ, Նստեցուցէք այդ մարդիկը. և այն տեղ շատ խոտ կար, ու մարդիկը նստան թուով հինգ հազարի չափ: 11 - Եւ Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ, և աշակերտներուն բաժնեց, աշակերտներն ալ նրատողներուն, նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուղեցին: 12 - Ու երբ կշտացան, ըսաւ իր աշակերտներուն, Ժողովեցէք աւելցած կտորուանքները, որպէս զի բան մը չկորսուի: 13 - Ուստի ժողովեցին, և տասուերկու կողով լեցուցին այն հինգ գարեղէն հացերէն քառասուկտորուանքները, որոնք ուտողներէն աւելցան: 14 - Իսկ մարդիկը երբ Յիսուսի բրած հրաշքը տեսան, կ'ըսէին թէ Ասիկա է Ճշմարտապէս այն մարգարէն որ աշխարհ պիտի գար: 15 - Եւ

Յիսուս գիտնալով որ պիտի գան զինք յափշտակեն, որպէս զի զինք թագաւոր ընեն, նորէն մինակ լեռը գնաց: 16 - Ու երբ իրիկուն եղաւ, իր աշակերտները ծովեզերքը իջան: 17 - Եւ նաւը մտնելով ծովուն անդիի կողմը կափառնայում կ'երթային և արդէն մնւթը կտեսր էր, ու Յիսուս գեւ իրենց եկած չէր. 18 - Ծովն ալ հովին տաստիկ փչելէն տակնուվրայ կ'ըլլար: 19 - Ու երբ թիքաշէլով քսանըհինգ կամ՝ երեսուն ասպարէզի չափ գացին, տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով նաւուն կը մօտենար, ու վախցան: 20 - Բայց ինք ըսաւ անոնց՝ Լսեմ, մի վախնաք: 21 - Այն ատեն ուղեցին զանկա նաւը առնել. և շուտ մը նաւը այն երկիրը հասաւ՝ ուր կերթային:

22 - Հետեւեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդիի կողմն էր, և տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար հոն այն մէկէն զառ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին, և որ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր, հապա միայն անոր աշակերտները գացեր էին. 23 - (Բայց Տիբերիայէ ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ՝ ուր Տէրաջը գոհանալովը հացը կերեր էին.) 24 - Այն ատեն ժողովուրդը տեսնելով թէ ոչ Յիսուս հոն է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նսուերը մտան ու եկան կափառնայում Յիսուսը փնտռելու: 25 - Ու երբ զանկա ծովուն անդիի կողմը գտան, ըսին անոր, Ռաբբի, ե՞րբ եկար դուն հոս: 26 - Յիսուս պատասխան տուաւ անոնց և ըսաւ, Ճշմարիտ Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Իուք զիս կը փնտռէք՝ ոչ թէ անոր համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար որ հացերէն կերաք ու կշտացաք: 27 - Գացէ՛ք, գործեցէք, ոչ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ, զոր Արդին մարդոյ ձեզի պիտի տայ. վասն զի Հայրն Աստուած զանկա կնքեց: 28 - Այն ատեն ըսին անոր, Ի՞նչ ընենք որպէս զի Աստուծոյ գործերը գործենք: 29 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Այս է Աստուծոյ գործը, որ անոր զրկածին հաւատաք: 30-Ըսին անոր, Բայց դուն ի՞նչ նշան կ'ընես որ տեսնենք ու քեզի

հաւատանք. Ի՞նչ կը գործես: 31 - Մեր հայրերը անապատին մէջ մանաւանդ կերան. ինչպէս գրուած է, Երկինքէն հաց տուաւ անոնց որպէս զի ուտեն: 32 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը: 33 - Վասն զի Աստուծոյ պատգամը հացը այն է որ երկինքէն կ'իջնէ, ու աշխարհի կեանք կու տայ: 34 - Ուստի ըսին անոր, Տէր, ամէն ատեն այդ հացը մեզի տուր: 35 - Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ, երբէք պիտի չանօթենայ, և ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւի: 36 - Բայց ես ձեզի ըսի որ դուք զիս տեսաք ալ, ու չէք հաւատար: 37 - Այն ամէնը զոր Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ, և ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ: 38 - Վասն զի ես երկինքէն իջայ՝ ոչ թէ իմ կամքս ընելու, հապա անոր կամքը՝ որ զիս զրկեց: 39 - Եւ զիս զրկող Հօրը կամքը այս է որ այն ամէնը զոր ինք ինծի տուաւ, չհարսնցընեմ անկէ, հապա անոր յարութիւն առնել տամ վերջին օրը: 40 - Քանզի զիս զրկողին կամքը այս է, որ այն ամէնը որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր, յաւիտենական կեանք ունենայ. ես ալ անոր յարութիւն առնել տամ վերջին օրը:

41 - Ուստի Հրեաները արտունջ կ'ընէին իրեն համար, վասն զի ըսաւ թէ Ես եմ երկինքէն իջած հացը. 42 - Եւ կ'ըսէին, Ասիկա Յովսէփի որդին Յիսուս չէ՞, որուն հայրը ու մայրը մենք կը ճանչնանք. ուրեմն ի՞նչպէս կ'ըսէ ասիկա թէ Ես երկինքէն իջայ: 43 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Տրտունջ մի ընէք ձեր մէջ: 44 - Մէկը չկրնար ինծի գալ, եթէ զիս զրկող Հայրը զանիկա չքաշէ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը: 45 - Մարգարէներուն մէջ գրուած է, Եւ ամէնն ալ Աստուծոյ սորված պիտի ըլլան. այն ամէնը որ Հօրմէն կը լսէ ու կը սորվի, ինծի կու գայ: 46 - Ոչ թէ մէկը Հայրը տեսած է, եթէ ոչ ան որ Աստուծոյ մէջ է, անիկա Հայրը տեսած է: 47 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ

Ան որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի: 48 - Ես եմ կենաց հացը: 49 - Ձեր հայրերը անապատին մէջ մանանան կերան ու մեռան: 50 - Այս է այն հացը որ երկինքէն կ'իջնէ, որպէս զի եթէ մէկը ասկէ ուտէ, չմեռնի: 51 - Ես եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ. 52 - Եթէ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է, զոր ես պիտի տամ՝ աշխարհի կեանքին համար:

53 - Ասոր վրայ Հրեաները իրարու չեա կը վիճէին ու կ'ըսէին, Ի՞նչպէս կրնայ ասիկա իր մարմինը ձեզի տալ ուտելու: 54 - Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար: 55 - Ով որ իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը: 56 - Վասն զի իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է: 57 - Ան որ իմ մարմինս կ'ուտէ և իմ արիւնս կը խմէ, անիկա իմ ներսիդիս կը բնակի ու ես անոր ներսիդին: 58 - Ինչպէս կենդանի Հայրը զիս զրկեց, ու ես կենդանի եմ Հօրը ձեռքով, «յադե» ալ ան որ զիս կ'ուտէ, ինք ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ: 59 - Այս է ան հացը որ երկինքէն իջած է. ոչ թէ ինչպէս հայրերնիդ մանանան կերան ու մեռան. ով որ այս հացը ուտէ, յաւիտեան պիտի ապրի:

60 - Այս բաները զրուցեց ժողովաբանին մէջ՝ երբ Վափառնայումի մէջ կը սորվեցնէր:

61 - Ու աշակերաներէն շատերը երբ լսեցին՝ ըսին, Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ ասոր մտիկ ընել: 62 - Յիսուս երբ ինքնիրեն հասկցաւ որ իր աշակերտները այն բանին համար արտունջ կ'ընէին, ըսաւ անոնց, Ասիկա ձեզ կը գայթակղեցնէ: 63 - Հապա ի՞նչ պիտի խօսէի, եթէ տեսնէք Որդին մարդոյ որ ելլէ ուր առաջ էր: 64 - Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չընէր. այն խօսքերը զորոնք ես ձեզի *կը խօսիմ, հոգի ու կեանք են: 65 - Բայց

*Ո՛հ-ն, խօսեցայ

ձեր մէջէն կան ոմանք որ չեն հաւատար. վասն զի Յիսուս սկիզբէն գիտէր թէ ո՛վ են անոնք որ չեն հաւատար, և ո՛վ է ան որ զինք պիտի մատնէ: 66 - Աւ կ'ըսէր, Ասոր համար ձեզի ըսի որ մէկը չկրնար ինծի գալ, եթէ իմ Հօրմէս տրուած չըլլայ անոր:

67 - Այս պատճառաւ իր աշակերտներէն շատերը ետ գացին, և ալ իրեն հետ չէին պաշտեր: 68 - Այն ատեն Յիսուս տատերկուքին ըսաւ, Միթէ դուք ալ կ'ուզէ՞ք երթալ: 69 - Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր, Տէր, որո՞ւ պիտի երթանք, դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս: 70 - Եւ մենք հաւատացինք ու գիացանք թէ դուն ես Քրիստոսը *Աստուծոյ Որդին: 71 - Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ես ձեզ տատերկուքդ չընտրեցի՞, ու ձեզմէ ալ մէկը սատանայ է: 72 - Չայս կ'ըսէր Իսկարիովտացի Սիմոնեան Յուզայի համար, վասն զի անիկա էր որ զինք պիտի մատնէր, ու տատերկուքէն մէկն էր:

ՔԼ. Է

Եւ այս բաներէն ետև Յիսուս Գալիլէայի մէջ կը պտրտէր, քանզի չէր ուզէր Հրէաստանի մէջ պտրտիլ, վասն զի Հրեաները զինք սպաննել կ'ուզէին:

2 - Եւ Հրեաներուն տաղաւարահարաց տօնը մօտ էր: 3 - Աւտի իր եղբայրները ըսին իրեն, Ելիր սակէ ու Հրէաստան գնա, որպէս զի քու աշակերտներդ ալ տեսնեն քու գործերդ զորոնք կ'ընես. 4 - Վասն զի մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինք յայտնի ըլլալ ուզէ. եթէ դուն այդ բաները կ'ընես, ինքզինքդ աշխարհի յայտնէ: 5 - Քանզի իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն: 6 - Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրատ է: 7 - Աշխարհ ձեզ չկրնար առել, բայց զիս կ'առէ, վասն զի ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործերը չար են: 8 - Իսկ ելէք այս տօնին. ես [դեռ] չեմ ելլեր այս տօնին. վասն զի իմ ժամանակս դեռ լցուած չէ: 9 - Չայս ըսելով անոնց՝ ինք Գալիլէա մնաց: 10 - Բայց երբ իր եղբայրները ե-

լան, ետքը ինք ալ ելաւ տօնին, ոչ թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերպով մը:

11 - Եւ Հրեաները տօնին ատենը կը փնտռէին զինք, ու կ'ըսէին, Ո՛ւր է անիկա: 12 - Եւ ժողովուրդին մէջ շատ շշնջիւն կար անոր վրայով. ոմանք կ'ըսէին թէ Աղէկ Բարբէ, ուրիշները կ'ըսէին, Ոչ, հապա ժողովուրդը կը մոլորեցնէ: 13 - Սակայն մէկը անոր վրայով համարձակ չէր խօսեր Հրեաներուն վախէն:

14 - Իսկ երբ տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը ելաւ ու կը սորվեցնէր: 15 - Եւ Հրեաները կը զարմանային ու կ'ըսէին, Ի՞նչպէս սահկա գիրքերը գիտէ, որ սորված չէ: 16 - Յիսուս պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Իմ վարդապետութիւնս իմն չէ, հապա զիս զրկողինն է: 17-Եթէ մէկը կ'ուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ այս վարդապետութեան համար թէ արդեօք Աստուծմէ՞ է թէ ես ինքիրմէս կը խօսիմ: 18-Ան որ ինքիրմէ կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ, բայց ան որ զինք զրկողին փառքը կը փնտռէ, անիկա ճշմարիտ է, և անոր քով անիրաւութիւն չկայ: 19 - Մովսէս շառու՞մ ձեզի օրէնքը, ու ձեզմէ մէկն ալ չպահեր օրէնքը: 20 - Ինչո՞ւ կը փնտռէք զիս սպաննել. պատասխան տուաւ ժողովուրդը ու ըսաւ, Ի՛նչ կայ քու ներսդ. ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել: 21 - Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց, Գործ մը գործեցի, ու ամենդ ալ զարմացեր էք: 22 - Արդ Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, (որ ոչ թէ Մովսէսէ էր՝ հապա նախնիքներէն,) ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք: 23-Եթէ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ'առնէ՝ որպէս զի Մովսէսի օրէնքը չքակուի, ինծի կը բարկանա՞ք որ ես շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի: 24 - Աչքի երեցածին պէս դատաստան մի ընէք, հապա սրբար դատաստան ըրէք:

25 - Այն ատեն Երուսաղեմացիներէն ոմանք կ'ըսէին, Ասիկա ան չէ՞ զոր կը փնտռեն սպաննել: 26 - Եւ ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր անոր. միթէ իշխանները գիացա՞ծ են թէ սահկա ճշմարտապէս Քրիստոսն է: 27 - Սակայն մենք սահկա գիտենք ուրկէ՛ է. բայց Քրիստոս երբ գայ, մէկը չգիտեր ուրկէ՛ է: 28 - Եւ Յիսուս

*Ո՛ւր, կենդանի Աստուծոյ

քանի որ կը սորվեցնէր, տաճարին մէջ, ազազակեց՝ ըսելով, Ձիս ալ գիտէք, և ուրկէ ըլլալս ալ գիտէք. ու ես ինքիրմէս եկած չեմ, հապա ան որ զիս զրկեց՝ ճշմարիտ է, զոր դուք չէք գիտեր: 29 - Բայց ես գիտեմ՝ զանիկա, վասն զի ես անկէ եմ, և անիկա զիս զրկեց: 30 - Ուստի կը փնտռէին զինք բռնել, բայց մէկն ալ իրեն ձեռք չզարկաւ, վասն զի իր ժամանակը դեռ հասած չէր: 31 - Ու ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն, և կ'ըսէին, Քրիստոս երբ գայ, ասանցմէ աւելի նշաններ պիտի ընէ, որչափ ասիկա կ'ընէ:

32 - Փարիսեցիները լսեցին ժողովուրդին այս շնջիւնը անոր վրայով. ու փարիսեցիները և քահանայապետները սպասաւորներ զրկեցին, որպէս զի զանիկա բռնեն: 33 - Իսկ Յիսուս *ըսաւ, Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ, ու կ'երթամ անոր որ զիս զրկեց: 34 - Ձիս պիտի փնտռէք ու պիտի չգրանէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ: 35 - Այն ատեն Հրեաները ըսին իրարու, Ո՛ր պիտի երթայ ատիկա, որ մենք զինք պիտի չգանենք. միթէ †հեթանոսներուն ճշ ջիրուցան եղածներո՞ւն պիտի երթայ, և հեթանոսներո՞ւն պիտի սորվեցնէ: 36 - Ի՞նչ է այն խօսքը զոր զրուցեց, Ձիս պիտի փնտռէք ու պիտի չգանէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ:

37 - Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կայներ էր, կ'ազազակէր ու կ'ըսէր, Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի գայ ու խմէ: 38 - Ան որ ինծի կը հաւատայ, ինչպէս գիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին: 39 - Չայս ըսաւ Հոգին համար զոր իրեն հաւատացողները պիտի առնէին, վասն զի Սուրբ Հոգին որո՞ւմ չէր տակաւին, քանզի Յիսուս դեռ փառաւորուած չէր: 40 - Ժողովուրդէն շատ մարդիկ երբ այս խօսքը լսեցին՝ կ'ըսէին, Իրաւքընէ ատիկա է մարգարէն: 41 - Ուրիշները կ'ըսէին, Ասիկա է Քրիստոսը. ուրիշներն ալ կ'ըսէին, Միթէ Քրիստոսը Գալիլեայէ՞ կու գայ: 42 - Զէ՞ որ գիրքը կ'ըսէ թէ Քրիստոս Դաւիթի սերունդէն ու Դաւիթի

եղած գեղէն Բեթլէհէմէ կուգայ: 43 - Ուստի ժողովուրդին մէջ երկպառակութիւն եղաւ անոր համար: 44 - Եւ անանցմէ ամենք ուղեցին բռնել զանիկա, բայց մէկը անոր ձեռք չզարկաւ:

45 - Ու սպասաւորները նախ եկան քահանայապետներուն և փարիսեցիներուն. ու ասոնք ըսին անոնց, Ինչո՞ւ զանիկա հո՞ւ չբերիք: 46 - Պատասխան ատին սպասաւորները, Երբէք մէկը այս մարդուն պէս խօսած չէ: 47 - Այն ատեն փարիսեցիները պատասխան ատին անոնց և ըսին, Միթէ դո՞ւք ալ մարդեցաք: 48 - Իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր: 49 - Բայց այս աստիկ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նպոփուած են: 50 - Նիկոգեմոս ըսաւ անոնց, (որ որո՞ւնք գիշեր ատեն իրեն եկեր էր, և անանցմէ մէկն էր,) 51 - Միթէ մեր օրէնքը մարդ կը դատէ՞, եթէ առաջ անկէ բան մը չսէ, և չգիտնայ թէ ի՞նչ կ'ընէ: 52 - Պատասխան ատին ու ըսին անոր, Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէ ես. քննէ ու նայէ որ Գալիլեայէ մարգարէ չելլեր: 53 - Եւ ամէն մէկը իր առնը գնաց:

ԳԼ Ը

Եւ Յիսուս Ձեթենեաց լեռը գնաց: 2 - Ու առտուանց նորէն տաճարը եկաւ, և բոլոր ժողովուրդը իրեն կու գար. ու ինք նստեր կը սորվեցնէր անոնց: 3 - Եւ դպիրները ու փարիսեցիները շնութեան մէջ բռնուած կին մը բերին անոր, ու զանիկա մէջտեղը կայնեցնելով՝ 4 - Ըսին իրեն, Վարդապետ, այս կինը շնութեան մէջ այս մեղքը գործած ատենը բռնուեցաւ: 5 - Եւ օրէնքին մէջ Մովսէս մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել. հիմա դուն ի՞նչ կ'ըսես արքայ հո՞ւր: 6 - Չայս կ'ըսէին՝ զանիկա փորձելով, որպէս զի անոր վրայ ամբաստանութիւն ընելու արի մը ունենան. բայց Յիսուս դէպ ի վար ծռելով՝ մատովը գետնին վրայ կը գրէր: 7 - Սակայն երբ վրան ինկան՝ հարցնելով իրեն, վեր նայեցաւ ու ըսաւ անոնց, Չեզմէ անմեղ եղաղը՝ առաջ անիկա թող քար ձգէ ատոր վրայ: 8 - Եւ նորէն դէպ ի վար ծռելով՝ գետնին վրայ կը գրէր: 9 - Եւ անոնք զայս լսելով ու իրենց խղճմտան-

*Ո՛րո՞ւնք, անոնց ըսաւ
†Յիսուս. Յոյներուն

քէն յանգիմանուելով՝ մէկիկ մէկիկ դուրս կ'ելլէին, ձերերէն սկսած մինչև յետինները. և Յիսուս մինակ մնաց, ու կինը մէջտեղը կայնած: 10 - Եւ Յիսուս վեր նայելով ու կնոջմէն զատ մէ'կը չտեսնելով՝ ըսաւ անոր, Ով կին, ո՞ւր են անոնք որ քու վրայովդ ամբաստանութիւն կ'ընէին. մէ'կը քեզ չգատապարտե՞ց: 11 - Եւ անիկա ըսաւ, Ոչ մէկը, Տէր. ու Յիսուս ըսաւ անոր, Ես ալ չեմ գատապարտեր քեզ. գնա ու սակէ ետև մեզք մի գործեր:

12 - Արդ Յիսուս նորէն խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետևէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքայլէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ: 13 - Իսկ փարիսեցիները ըսին անոր, Իսկ քու անձիդ համար կը վկայես, քու վկայութիւնդ ճշմարիտ չէ: 14 - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Թէև ես իմ անձիս համար կը վկայեմ, բայց իմ վկայութիւնս ճշմարիտ է, վասն զի գիտեմ ուրկէ՛ եկայ և ո՛ւր կ'երթամ. բայց դուք չէք գիտեր ուրկէ՛ կու գամ կամ ո՛ւր կ'երթամ: 15 - Իսկ մարմինին նայելով գատաատան կ'ընէք, ես բնաւ մէկը չեմ գատեր. 16 - Ու թէև գատելու ալ ըլլամ, իմ գատաատանս ճշմարիտ է. վասն զի ես մինակ չեմ, հապա ես՝ և Հայրը որ զիս զրկեց: 17 - Ու ձեր օրէնքին մէջ ալ գրուած է թէ Երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է: 18 - Ես եմ որ իմ անձիս համար կը վկայեմ, ու կը վրկայէ ինձի համար Հայրն ալ որ զիս զրկեց: 19 - Այն ատեն ըսին անոր, Ո՞ւր է քու Հայրդ: Յիսուս պատասխան տուաւ, Ոչ զիս գիտէք՝ և ոչ իմ Հայրս. եթէ զիս գիտնայիք, իմ Հայրս ալ պիտի գիտնայիք:

20 - Յիսուս այս խօսքերը խօսեցաւ գանձատուներ՝ երբ տաճարին մէջ կը սորվեցնէր. ու մէ'կը չբռնեց զանիկա, վասն զի դեռ անոր ժամանակը հասած չէր:

21 - Եւ Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ես կ'երթամ՝ ու զիս պիտի փնտռէք, և ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ: 22 - Ասոր վրայ Հրեաները կ'ըսէին, Միթէ ինքզինք պիտի մեռցնէ՞, որ կ'ըսէ թէ Ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ: 23 - Եւ ըսաւ անոնց,

Իսկ վարէն էք, ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ. 24 - Անոր համար ձեզի ըսի թէ Ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք, վասն զի եթէ չհաւատաք թէ ես եմ, ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք: 25 - Այն ատեն ըսին անոր, Իսկ ո՞վ էս. և Յիսուս ըսաւ անոնց, Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ: 26 - Շատ բաներ ունիմ՝ ձեզի համար խօսելու և դատելու. բայց ան որ զիս զրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ որ իրմէ լսեցի, զանիկա կը խօսիմ՝ աշխարհի մէջ: 27 - Անոնք չիմացան թէ Հօրը համար կը զրուցէր իրենց:

28 - Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Երբ Որդին մարդոյ բարձրացնէք, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ, ու ինքիրմէս բան մը չեմ ընէր, հապա Հայրս ինչպէս ինձի սորվեցուց՝ այնպէս կը խօսիմ. 29 - Եւ զիս զրկողը ինձի հետ է. Հայրը զիս մինակ չթողուց, վասն զի ես միշտ անոր հաճելի եղած բաները կ'ընեմ:

30 - Երբ ատնք խօսեցաւ, շատ մարդիկ իրեն հաւատացին: 31 - Այն ատեն Յիսուս իրեն հաւատացող Հրեաներուն ըսաւ, Եթէ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. 32 - Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ: 33 - Պատասխան տուին իրեն, Մենք Աբրահամի սերունդ ենք, ու երբէք մէկու՛ն չծառայեցինք. դուն ի՞նչպէս կ'ըսես թէ Ազատ պիտի ըլլաք: 34 - Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Ամէն ով որ մեզք կը գործէ, անիկա մեղքի ծառայ է: 35 - Եւ ծառան տանը մէջ յաւիտեան չմնար, բայց որդին յաւիտեան կը մնայ: 36 - Ուստի եթէ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք: 37 - Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք, բայց կը փնտռէք զիս մեռցնել, վասն զի իմ խօսքս ձեր ներսիդին տեղ չունի: 38 - Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քով՝ զայն կը խօսիմ, և դուք ալ ինչ որ տեսաք ձեր Հօրը քով՝ զայն կ'ընէք: 39 - Պատասխան տուին ու ըսին անոր, Մեր հայրը Աբրահամ է. ըսաւ անոնց Յիսուս, Եթէ Աբրահամի որդիներ ըլլայիք, Աբրահամի գործերը պիտի գործէիք:

40 - Բայց չիմա կը փնտռէք սպաննել զիս, - յնպիսի մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ, զոր Աստուծմէ լսեցի. Աբրահամ՝ այդ բանը չըրաւ : 41 - Գուք ձեր հօրը դործերը կ'ընէք. այն տառն ըսին անոր, Մենք պառնկութենէ չենք ծնած, մենք մէկ Հայր ունինք, որ է Աստուած : 42 - Յիսուս ըսաւ անոնց, Եթէ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս. վասն զի ես Աստուծմէ ելայ ու եկայ. և ոչ թէ ես ինքիրմէս եկայ, հապա անիկա զիս զրկեց : 43 - Ինչո՞ւ դուք իմ գրուցուածքս չէք հասկնար. անոր համար որ չէք կրնար իմ խօսքս մտիկ ընել : 44 - Գուք յեր հօրմէն Սատանայէ էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել. անիկա սկիզբէն հետէ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, վասն զի անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ. երբ անիկա ստութիւն խօսի, բուն իրեններէն կը խօսի, քանզի անիկա ստախօս է և անոր հայրը : 45 - Բայց որովհետեւ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար : 46 - Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար. իսկ եթէ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինչո՞ւ ինծի չէք հաւատար : 47 - Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ. դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք : 48 - Պատասխան տուին Հրեաները ու ըսին անոր, Աղէկ չե՞նք ըսեր մենք թէ դուն Սամարացի ես, ու դե կայ քու ներսդ : 49 - Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ, Իմ ներսս դե չկայ, հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և դուք զիս կ'անարգէք : 50 - Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր. կայ Գիշ որ կը փնտռէ ու կը դատէ : 51 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ պիտի չտեսնէ : 52 - Այն տառն Հրեաները ըսին անոր, Հիմա գիտցանք որ քու ներսդ դե կայ. Աբրահամ մեռաւ, ու մարգարէները, և դուն կ'ըսես, Եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահուան համը պիտի չտեսնէ : 53 - Միթէ դուն աւելի՞ մեծ ես մեր հօրմէն Աբրահամէ, որ մեռաւ, ու մարգարէներն ալ մեռան. դուն քեզ ո՞վ կ'ընես : 54 - Յիսուս պատասխան տուաւ, Եթէ ես ինքզինքս փառաւորեմ, իմ փառքս բան մը չէ. իմ Հայրս է որ զիս կը փառաւորէ, ու

ըսէ համար դուք կ'ըսէք թէ *Մէ Աստուածն է. 55 - Եւ զանիկա չէք ճանչնար, բայց ես գիտեմ զանիկա. ու եթէ ըսեմ թէ զանիկա չեմ գիտեր, ձեզի պէս ստախօս պիտի ըլլամ. հապա ես գիտեմ զանիկա, և անոր խօսքը կը պահեմ : 56 - Ձեր հայրը Աբրահամ ցանկացաւ իմ օրս տեսնել, ու տեսաւ և ուրախացաւ : 57 - Իսկ Հրեաները ըսին անոր, Գուն տակաւին յիսուսն տարեկան չես, Աբրահամն ալ տեսար : 58 - Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամի ըլլալէն առաջ եմ ես : 59 - Այն տառն քարեր վերցուցին սրպէս զի անոր վրայ նետեն. բայց Յիսուս ծածկուեցաւ անոնց աչքերէն, և անոնց մէջէն անցնելով տաճարէն դուրս ելաւ, ու այսպէս գնաց :

ԳԼ Թ

Ու երբ կ'անցնէր, մարդ մը տեսաւ կայր ծնած. 2 - Եւ իր աշակերտները հարցուցին իրեն ու ըսին, Ռաբբի, որովհետեւ մեզքը, ասո՞ր թէ իր ծնողքին, որ անիկա կայր ծնաւ : 3 - Պատասխան տուաւ Յիսուս, Ոչ ասորն է մեզքը, ոչ ալ իր ծնողքին, հապա սրպէս զի Աստուծոյ գործերը ատոր վրայ յայտնի ըլլան : 4 - Քանի որ ցորեկ է, պէտք է որ զիս զրկողին գործերը գործեմ. գիշերը կու գայ երբ մէկը չկրնար գործել : 5 - Քանի որ ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ : 6 - Երբ զայս ըսաւ, թքաւ գետինը և թուքով կաւ շինեց, ու այն կաւը կայրին աչքերուն վրայ ծեփեց. 7 - Եւ ըսաւ անոր, Գնա, լուացուէ Աելովամի աւազանին մէջ, (որ զրկուած կը թարգմանուի.) ուստի գնաց ու լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր : 8 - Իսկ դրացիները և անոնք որ առաջուրնէ տեսած էին զանիկա որ շիրտ էր, կ'ըսէին, Ասիկա չէ՞ր որ կը նստէր և կը մուրար. սմանք կ'ըսէին, Անիկա է. 9 - Ուրիշները չ'ըսէին, Անոր նման Գիշ է. Ի՞նչ կ'ըսէր թէ ես եմ : 10 - Ուստի ըսին իրեն, հապա ի՞նչպէս բացուեցան քու աչքերդ : 11 - Ինք պատասխան տուաւ ու ըսաւ, Յի-

*Ո՛հն+, Ձեր
†Ո՛հն+, մուրացկան

տուս կոչուած մարդ մը կաւ շինեց ու աչքերս ծեփեց, և ըսաւ ինձի, Գնա Յելովամի աւազանը ու լուացուէ. ես ալ գացի, լուացուեցայ ու կը տեսնեմ: 12 - Եւ ըսին իրեն, Ո՛ւր է անիկա. ըսաւ անոնց, Չեմ գիտեր:

13 - Փարիսեցիներուն տարին զանիկա որ ատենով կոյր էր: 14 - Եւ շաբաթ օր էր երբ Յիսուս կաւ շինեց, ու անոր աչքերը բացաւ: 15 - Նորէն փարիսեցիներն ալ կը հարցնէին իրեն, Թէ ի՛նչպէս կը տեսնէ. անիկա ալ ըսաւ անոնց, Կաւ դրաւ աչքերուս վրայ, ու լուացուեցայ և կը տեսնեմ:

16 - Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին, Այն մարդը Աստուծմէ չէ, վասն զի շաբաթ օրը չպահէր. ուրիշները կ'ըսէին, Ի՛նչպէս կրնայ մեղաւոր մարդ մը այսպիսի հրաշքներ ընել. ու անոնց մէջ երկպառակութիւն կար:

17 - Նորէն ըսին կոյրին, Իսկ ի՛նչ կ'ըսես անոր համար որ քու աչքերդ բացաւ. ան ալ ըսաւ Թէ Մարգարէ մըն է: 18 - Իսկ Հրեաները չէին հաւատար անոր համար՝ Թէ կոյր էր ու բացուեցաւ, մինչև որ այն աչքը բացուածին ծնողքը կանչեցին:

19 - Եւ անոնց հարցուցին ու ըսին, Ա՛յո է ձեր որդին, որու համար դուք կ'ըսէք Թէ կոյր ծնաւ. հապա հիմա ի՛նչպէս կը տեսնէ: 20 - Անոր ծնողքը պատասխան տուին անոնց ու ըսին, Գիտենք որ ասիկա է մեր որդին, և որ ինք կոյր ծնաւ:

21 - Բայց հիմա ի՛նչպէս կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ Թէ ո՛վ բացաւ ատոր աչքերը՝ մենք չենք գիտեր. ինք չափահաս է, իրեն հարցուցէք. Թող ինք խօսի իրեն համար: 22 - Չայս ըսին անոր ծնողքը՝ Հրեաներէն վախճալուն համար, քանզի Հրեաները միտքան հաւանութեամբ որոշէր էին որ եթէ մէկը զանիկա Քրիստոս դաւանի, ժողովարանէն դուրս ձգուի:

23 - Ասոր համար անոր ծնողքը ըսին Թէ Ինք չափահաս է, իրեն հարցուցէք: 24 - Ետքը նորէն կանչեցին այն մարդը որ կոյր էր, ու ըսին անոր, Աստուծոյ փառք տուր. մենք գիտենք որ այն մարդը մեղաւոր է: 25 - Անիկա ալ պատասխան տուաւ ու ըսաւ, Եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտեր. միայն զայն գիտեմ որ կոյր էի և հիմա կը տեսնեմ: 26 - Նորէն ըսին անոր, Ի՛նչ ըրաւ քեզի, քու աչքերդ ի՛նչպէս բացաւ: 27 - Պատաս-

խան տուաւ անոնց, Հիմա ըսի ձեզի ու չսեցիք. ինչո՞ւ համար նորէն լսել կ'ուզէք. միթէ դո՞ւք ալ կ'ուզէք անոր աշակերտ ըլլալ: 28 - Անոնք նախատելով զանիկա ըսին, Իսկ ես անոր աշակերտը, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք: 29 - Մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ, բայց ասիկա չենք գիտեր Թէ ուրկէ է: 30 - Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց, Ատիկա է զարմանալի բանը՝ որ դուք չէք գիտեր Թէ ուրկէ է, և անիկա իմ՝ աչքերս բացաւ: 31 - Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չընէր, բայց եթէ մէկը աստուածապաշտ ըլլայ ու անոր կամքը կատարէ, անոր մտիկ կ'ընէ: 32 - Աշխարհի սկիզբէն ի վեր լուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած է: 33 - Եթէ Աստուծմէ չըլլար այն մարդը, բան մըն ալ չէր կրնար ընել: 34 - Պատասխան տուին և ըսին անոր, Իսկ բոլորովին մեղքերու մէջ ծնած ես, ու մեզի վարդապետութիւն կ'ընես. և դուրս ըրին զանիկա:

35 - Յիսուս լսեց որ զանիկա դուրս ըրին, ու երբ գտաւ զանիկա, ըսաւ անոր, Իսկ կը հաւատամք Աստուծոյ Որդիին: 36 - Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Տէր, ո՞վ է՝ որ հաւատամք անոր: 37 - Եւ Յիսուս ըսաւ անոր, Տեսար ալ զանիկա, և քեզի հետ խօսողը ան է: 38 - Անիկա ալ ըսաւ, Կը հաւատամք, Տէր. ու անոր երկրպագութիւն ըրաւ: 39 - Եւ Յիսուս ըսաւ, Ես գատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէս զի չտեսնողները տեսնեն և տեսնողները կուրանան:

40 - Եւ փարիսեցիներէն ոմանք որոնք իրեն հետ էին, այս բաները լսելով՝ ըսին իրեն, Միթէ մենք ալ կոյր ենք: 41 - Յիսուս ըսաւ անոնց, Եթէ կոյր ըլլայիք, դուք մեղք չէիք ունենար, բայց հիմա կ'ըսէք Թէ Կը տեսնենք, ատոր համար ձեր մեղքը յետ չե՞ս կը մնայ:

ԳԼ. Ժ

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ան որ դունէն չմտնէր ոչխարներուն բակը, հապա ուրիշ տեղէ կ'ելլէ, անիկա գող ու աւազակ է: 2 - Բայց ան

որ դռնէն կը մտնէ, անկէա ոչխարներու ճովիւն է: 3 - Կռնապանը կը բանայ անոր, և ոչխարները անոր ձայնին կը լսեն, ու իր ոչխարները անուշափն կը կանչէ, և դուրս կը հանէ զանոնք: 4 - Աւերք իր ոչխարները կը հանէ, անոնց առջևէն կ'երթայ, ու ոչխարները իր ետևէն կ'երթան, վասն զի անոր ձայնը կը ճանչնան: 5 - Սակայն օտարի ետևէ չեն երթար, հապտանկէ կը փախչին, վասն զի օտարներուն ձայնը չեն ճանչնար:

6 - Յիսուս այս առակը բաւ անոնց, բայց անոնք չէին իմանար թէ ի՞նչ էր զոր իրենց կը խօսէր: 7 - Եւ Յիսուս նորէն բաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, Ես եմ՝ ոչխարներուն դուռը: 8 - Ամէն անոնք որ ինձմէ առաջ եկան, գող ու աւազակ էին, բայց անոնց շտեղին ոչխարները: 9 - Ես եմ՝ դուռը. եթէ մէկը ինձմէ ներս մտնէ, պիտի փրկուի, ու պիտի մտնէ ու ելլէ և արօտ գտնէ: 10 - Գողը չգար, միայն թէ գողնալու և սպաննելու ու կորսնցնելու համար. ես եկայ որ կեանք ունենան, և ալ աւելի ունենան: 11 - Ես եմ՝ բարի ճովիւր. բարի ճովիւր իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ: 12 - Բայց վարձկանը որ ճովիւ չէ ու ոչխարները իրը չեն, երբ կը տեսնէ գայլը որ կու գայ, կը թողու ոչխարները ու կը փախչի. և գայլը կը յափշտակէ ոչխարները ու զանոնք կը ցրուէ: 13 - Եւ վարձկանը կը փախչի, վասն զի վարձկան է ու իր հոգը չէ ոչխարներուն համար: 14 - Ես եմ՝ բարի ճովիւր, և կը ճանչնամ իմիներս ու կը ճանչցուիմ իմիներէս: 15 - Ինչպէս Հայրը զիս կը ճանչնայ, ես ալ Հայրը կը ճանչնամ, ու իմ կեանքս ոչխարներուն համար կը դնեմ: 16 - Արի՛շ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս բակէն չեն. զանոնք ալ պէտք է որ բերեմ, ու իմ ձայնիս պիտի լսեն, և պիտի ըլլան մէկ հօտ մէկ ճովիւ: 17 - Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ, որ ես իմ կեանքս կը դնեմ, որպէս զի նորէն առնեմ զանիկա: 18 - Մէ՛կը չհաներ զանիկա ինձմէ, հապա ես կը դնեմ զանիկա ինքիրմէս. իշխանութիւն ունիմ զանիկա դնելու, և իշխանութիւն ունիմ զանիկա նորէն առնելու. այս պատուէրը իմ Հօրմէս առի:

19 - Նորէն երկպառակութիւն կ'ըլլար Հրէից մէջ այս խօսքերուն համար: 20 - Եւ անոնցմէ շատերը կ'ըսէին, Կե կայ տար ներսիցին, ու խելը աւած է. ինչո՞ւ տար մտիկ կ'ընէք: 21 - Արի՛շները կ'ըսէին, Այս խօսքերը դիւահարի խօսքն է. միթէ գեր կրնայ կայրերուն աչքերը բանալ: 22 - Այն ատեն երուսողէմ՝ նաւակառիքի քօնը եղաւ, ու ձմեռ էր: 23 - Եւ Յիսուս կը պտրտէր տաճարին մէջ Սողոմոնի սրահը: 24 - Եւ Հրեաները անոր շարս կողմը առին ու ըսին անոր, Մինչե՞ ե՞րբ մեզ տարակուսանքի մէջ կը թողու. եթէ Քրիստոսը դուն ես, մեզի համարձակ ըսէ: 25 - Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ձեզի ըսի ու չէք հաւատար. այն գործերը զորոնք ես իմ Հօրս անուշովը կը գործեմ, անոնք կը վկայեն ինձի համար: 26 - Բայց դուք չէք հաւատար, վասն զի իմ ոչխարներէս չէք, ինչպէս ձեզի ըսի: 27 - Իմ ոչխարներս իմ ձայնիս կը լսեն, ես ալ զանոնք կը ճանչնամ, ու իմ ետևէս կու գան: 28 - Եւ ես անոնց յաւիտեանական կեանք կու տամ, ու յաւիտեան պիտի չկորսուին, և մէ՛կը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք: 29 - Իմ Հայրս որ զանոնք ինձի տուաւ, ամէնէն մեծ է, և մէ՛կը չկրնար իմ Հօրս ձեռքէն յափշտակել: 30 - Ես ու Հայրը մէկ ենք: 31 - Այն ատեն Հրեաները նորէն քարեր վերցուցին, որպէս զի զանիկա քարկոծեն: 32 - Յիսուս պատասխան տուաւ անոնց, Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս, անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը քարկոծէք: 33 - Հրեաները պատասխան տուին անոր՝ ըսելով, Բարի գործի համար քեզ չենք քարկոծեր, հապա հայհոյութեան համար, և քանզի դուն որ մարդ ես, ինքզինքդ Աստուած կ'ընես: 34 - Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ձե՞ք որ ձեր օրէնքին մէջ գրուած է, Ես ըսի թէ դուք աստուածներ էք: 35 - Եթէ աստուածներ կ'անուանէ զանոնք, որոնց Աստուծոյ խօսքը եղաւ, (ու կարելի չէ որ այն գրուածը աւրուի,) 36 - Հապա զայն որ Հայրը սրբեց և աշխարհ զրկեց, դուք անոնք կ'ըսէք թէ Հայհոյութիւն կ'ընես՝ Աս-

*Ո՛րքն+ շոնին

տուժոյ Որդի եմ ըսելու համար: 37-
 Եթէ իմ Հօրս գործերը չեմ գործեր,
 ինծի մի հաւատարք: 38 - Ապա եթէ
 կը գործեմ, թէև ինծի չէք հաւատար,
 քանի գործերուն հաւատացէք, որպէս
 զի գիտնաք ու հաւատարք թէ Հայրը
 իմ մէջս է, և ես անոր մէջ:

39 - Դարձեալ կը փնտաւին զանի-
 կա բռնել, և անոնց ձեռքէն ելաւ:
 40 - Ու նորէն գնաց Յորդանանու ան-
 դիի կողմը, այն տեղը ուր Յովհաննէս
 առաջ կը մկրտէր, ու հոն կեցաւ: 41-
 Եւ շատերը եկան անոր ու կ'ըսէին,
 Իրաւ Յովհաննէս հրաշք մը չըրաւ:
 42 - Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ
 անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր. և
 շատ մարդիկ հոն անոր հաւատացին:

ԳԼ. ԺԱ

Ու Մարիամի և անոր քրոջ Մար-
 թայի գեղէն, Բեթանիայէ, Ղազարոս
 անունով մէկը հիւանդ էր: 2 - Ասիկա
 այն Մարիամն էր որ Տէրը իւղով օծեց,
 ու անոր սաքերը իր մագերովը սքեց,
 որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր:
 3 - Աստի էր քոյրերը Բարթոլոմէոսի
 անոր ու ըսին, Տէր, ահա անիկա զոր
 դուն կը սիրես, հիւանդ է: 4 - Յիսուս
 երբ լսեց՝ ըսաւ, Այո հիւանդութիւնը
 մահուան համար չէ, հապա Աստու-
 ծոյ փառքին համար, որպէս զի Աս-
 տուծոյ Որդին անով փառաւորուի: 5-
 Արդ Յիսուս կը սիրէր Մարթան և ա-
 նոր քոյրը ու Ղազարոսը: 6 - Իսկ երբ
 լսեց թէ հիւանդ է, եղած տեղը եր-
 կու օր ալ կեցաւ: 7 - Եւ անկէ ետքը
 ըսաւ աշակերտներուն, Ելէ՛ք, նորէն
 Հրեատան երթանք: 8 - Աշակերտնե-
 րը իրեն ըսին, Ռաբբի, Հրեաները հի-
 մաքէ կը փնտաւին քարկոծելու,
 ու նորէն հոն կ'երթաս: 9 - Պատաս-
 խան տուաւ Յիսուս, Չէ՞ որ օրը տաս-
 ուերկու ժամ է. եթէ մէկը ցորեկը
 քալէ՝ չասիր, վասն զի այս աշխարհ
 հին լոյսը կը տեսնէ: 10 - Բայց եթէ
 մէկը գիշերը քալէ՝ կը սասի, վասն
 զի իրեն հետ լոյս չկայ: 11 - Այս բա-
 ները ըսելէն ետև ըսաւ անոնց, Ղա-
 զարոս մեր բարեկամը քնացած է,
 բայց կ'երթամ որպէս զի զանիկա ար-
 թընցնեմ: 12-Իր աշակերտները ըսին,

Տէր, եթէ քնացած է, պիտի աւողջա-
 նայ: 13 - Իսկ Յիսուս անոր մեռնելուն
 համար կ'ըսէր, բայց անոնք կը կար-
 ծէին թէ քուն քնանալուն համար կ'ը-
 սէր: 14 - Այն ատեն Յիսուս յայտնա-
 նագէս ըսաւ անոնց, Ղազարոս մեռաւ:
 15 - Եւ ես ուրախ եմ ձեզի համար որ
 հոն չէի, որպէս զի դուք հաւատարք:
 Բայց ելէ՛ք երթանք անոր: 16 - Թով-
 մաս, որ Երկուորեակ կ'ըսուէր, ըսաւ
 էր աշակերտակիցներուն, Մենք ալ եր-
 թանք, որպէս զի անոր հետ մեռնինք:

17 - Յիսուս երբ եկաւ, գտաւ որ
 անիկա արդէն չորս օրուան գերեզմա-
 նը դրած էր: 18 - Ու Բեթանիա Ե-
 րուսաղէմի մօտ էր տասնհինգ տասա-
 րէկի չափ: 19 - Եւ Հրեաներէն շա-
 տերը Մարթայի ու Մարիամի եկած
 էին որպէս զի մխիթարեն զանոնք ի-
 րենց եղբորը համար: 20 - Արդ երբ
 լսեց Մարթա թէ Յիսուս կու գայ,
 զանիկա դիմաւորելու գնաց, բայց
 Մարիամ տանը մէջ նստեր էր: 21 -
 Եւ Մարթա ըսաւ Յիսուսի, Տէր, եթէ
 հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ:
 22 - Բայց գիտեմ որ հիմա ալ դուն
 ինչ որ խնդրես Աստուծմէ, Աստուծ
 պիտի տայ քեզի: 23 - Յիսուս ըսաւ
 անոր, Քու եղբայրդ յարութիւն պի-
 տի առնէ: 24 - Մարթա ըսաւ անոր,
 Գիտեմ որ յարութեան ժամանակը,
 մերջին օրը, յարութիւն պիտի առնէ:
 25 - Յիսուս ըսաւ անոր, Ես եմ յա-
 րութիւնը ու կեանքը. ան որ ինծի կը
 հաւատայ, թէև մեռնի՝ պիտի ապրի:
 26 - Եւ ան ամէնը որ կենդանի է ու
 ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի
 չմեռնի. դուն կը հաւատաս՞ տար:
 27 - Ըսաւ անոր, Այո, Տէր, ես հաւա-
 տացեր եմ որ դուն ես Քրիստոսը, Աս-
 տուծոյ Որդին, որ աշխարհ գալու էիր:
 28 - Ու երբ զայս ըսաւ, գնաց իր քոյ-
 րը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝ ը-
 սելով, Ղարդապետը եկեր է ու քեզ
 կը կանչէ: 29 - Անիկա լսածին պէս՝
 շուտ մը ելաւ ու եկաւ անոր: 30 -
 Իսկ Յիսուս դեռ գեղը եկած չէր, հա-
 պա այն տեղ էր, ուր Մարթա զանի-
 կա դիմաւորեց: 31 - Բայց Հրեաները
 որ անոր հետ տանը մէջ էին ու կը
 մխիթարէին զանիկա, երբ տեսան որ
 Մարիամ շուտ մը ելաւ ու գնաց, ելէ՛ք
 և անոր հետէն գացին՝ ըսելով թէ
 Գերեզմանը կ'երթայ որպէս զի հոն

*Ո՛հնէ, ծանչնաք

ցայ: 32 - Իսկ Մարիամ երբ Յիսուսի եղած տեղը եկաւ ու զանհկա տեսաւ, անոր ոտքը խնայով՝ ըսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլլայիր՝ իմ եզրայրս չէր մեռներ: 33 - Յիսուս երբ տեսաւ զանհկա որ կու լար, և անոր հետ եղող Հրեաները որոնք կու լային, իր հոգւոյն մէջ հաւառչեց ու խուսկեցաւ, 34 - Եւ ըսաւ, Ո՞ւր դրած էք զանհկա. բայց իրեն, Տէր, եկուր ու տես: 35 - Յիսուս լացաւ: 36 - Ուստի Հրեաները կ'ըսէին, Նայեցէք ո՛րչափ կը սիրէր զանհկա: 37 - Անոնցմէ ոմանք ալ կ'ըսէին, Ատիկա որ կոչուին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար ընել որ աս ալ չմեռներ: 38 - Յիսուս նորէն իր «բախ» մէջ հաւառչելով գերեզման կու գայ. և անհկա քարայր մըն էր, ու անոր վրայ քար մը դրուած էր: 39 - Յիսուս ըսաւ, Մէկդի բրէք այդ քարը. մեռելին քոյրը Մարթա ըսաւ անոր, Տէր, արդէն հոտած պիտի ըլլայ, վասն զի չորս օրուան է: 40 - Ըսաւ անոր Յիսուս, Քեզի չքո՞ւ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես: 41 - Այն ատեն մէկդի բրին քարը. և Յիսուս էր աչքերը վեր վերցուց ու ըսաւ, Հայր, շնորհակալ եմ քեզմէ, որ ինձի լսեցիր: 42 - Ու ես գիտէի որ ամէն ատեն ինձի կը լսես. բայց այս բոլորախքս կայնող ժողովուրդին համար ըսի, որպէս զի հաւատան թէ դուն զրկեցիր զիս: 43 - Եւ զայս ըսելէն ետքը՝ մեծ ձայնով մը կանչեց, Ղազարոս, դուրս եկուր: 44 - Մեռելն ալ ելաւ՝ ոտքերը ու ձեռքերը պատանքով կապած և երեսը վարչամակով պատած. Յիսուս ըսաւ անոնց, Արձակեցէք ատիկա ու թողէք որ երթայ:

45 - Եւ Հրեաներէն շատերը որոնք Մարիամի եկեր էին, երբ Յիսուս ըրածը տեսան, հաւատացին իրեն: 46 - Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն, ու Յիսուսի ըրածը անոնց պատմեցին:

47 - Ուստի քահանայապետները և փարիսեցիները ժողով գումարեցին ու ըսին, Ի՞նչ բնէք, քանզի այս մարդը շատ հրաշքներ կ'ընէ: 48 - Եթէ զանհկա այսպէս թող տանք, ամէնն ալ անոր պիտի հաւատան, և Հռովմայե-

ցիք պիտի գան ու մեր տեղը ու ազգը պիտի վերցնեն: 49 - Եւ անոնցմէ մէկը, կայիափա անանաչ, որ այն տարուան քահանայապետն էր, ըսաւ անոնց, 50 - Ի՞նչ բան մը չէք գիտեր, և չէք ալ խորհիր թէ աղէկ է մեզի՝ որ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, ու բոլոր ազգը չկորսուի: 51 - Բայց այս բանը ոչ թէ ինքիւմէ գրուեցեց, հապա այն տարուան քահանայապետը ըլլալով, մարգարեացաւ թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնէր: 52 - Եւ ոչ թէ միայն ազգին համար, հապա որ Աստուծոյ ցիրուցան եղած որդիներն ալ մեկտեղ ժողովէ:

53 - Այլ այն օրէն ետե խորհուրդը ըրին որ սպաննեն զանհկա: 54 - Ուստի Յիսուս անկէ ետքը համարձակ չէր պարտեր Հրէից մէջ, հապա անկէ անապատին մօտ տեղ մը գնաց, քաղաք մը որուն անունը Եփրայիմ էր, ու իր աշակերտներուն հետ մեկտեղ հոն կը կենար:

55 - Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու այն տեղէն շատ մարդիկ զատկէն առաջ Երուսաղէմ ելան, որպէս զի ինքզինքնին մաքրեն: 56 - Եւ կը փրնաւէին Յիսուսը, ու տաճարին մէջ կեցած ատեննին իրարու կ'ըսէին, Ձեզի ի՞նչպէս կ'երեւայ, թէ այս տօնին բնաւ պիտի չգա՞յ: 57 - Իսկ քահանայապետները ու փարիսեցիները պատուէր տուեր էին, որ եթէ մէկը գիտնայ անոր ուր ըլլալը՝ իմացնէ, որպէս զի զանհկա բռնեն:

ԳԼ. ԺԲ

Իսկ Յիսուս զատկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ, ուր էր Ղազարոս մեռեալը, զոր Յիսուս մեռելներէն յարուց: 2 - Եւ հոն անոր ընթրիք մը ըրին, ու Մարթա սպասաւորութիւն կ'ընէր, և Ղազարոս անոր հետ սեղան նստողներէն մէկն էր: 3 - Իսկ Մարիամ մէկ լիար նարգոսի պատուական մեծագին իւղ տունելով, Յիսուսի ոտքերը օծեց ու իր մազերովը անոր ոտքերը սրբեց. և տունը իւղին անուշահոտութիւնովը լեցուեցաւ: 4 - Այն ատեն աշակերտներէն մէկը, Իսկարիովտացի Աիմոնեան Յուդա որ զանհկա պիտի մատներ, ըսաւ, 5 - Ինչո՞ւ համար այդ իւղը չժախուեցաւ երէք հա-

*Ո՞ւր, քարը, ուր պառկած էր մեռելը

րիւր դասեկանի , որ աղքատներուն տրուէր : 6 - Զայս բառ , ոչ թէ աղքատներուն համար իր հոգն էր . հապա որ գող էր ու գանձանակը ինք կը պահէր , և ինչ որ ձգուէր՝ ինք կը կրէր : 7 - Իսկ Յիսուս բառ , թող տուր ատոր . այդ բանը իմ թաղմանս օրուանը համար պահէց : 8 - Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք , բայց զիս ամէն ատեն չունիք :

9 - Ուստի Հրեաներէն շատ ժողովուրդ անոր հոն ըլլալը իմացան , ու եկան ոչ թէ միայն Յիսուսի համար , հապա որպէս զի Ղազարոսն ալ տեսնէն , զոր մեռելներէն յարուց : 10 - Իսկ քահանայապետները խորհուրդ ըրին որ Ղազարոսն ալ մեռցնեն . 11 - Վասն զի Հրեաներէն շատերը անոր պատճառաւ կ'երթային ու կը հաւատային Յիսուսի :

12 - Հետեւեալ օրը շատ ժողովուրդ որ տօնին եկած էին , երբ լսեցին թէ Յիսուս երուսաղէմ՝ կու գայ , 13 - Արմաւենիի սատր առին ու ելան զանիկա դիմաւորելու , և կ'աղաղակէին , Ովսաննա , օրհնեալ է Իսրայէլի թագաւորը՝ որ Տերօջը անունովը կու գայ : 14 - Եւ Յիսուս աւանակ մը գտնելով՝ անոր վրայ նստաւ , ինչպէս գրուած է , 15 - Մի վախնար , ով Սիօնի աղջիկ , ահա քու թագաւորդ կու գայ իշու աւանակի վրայ նստած : 16 - Եւ անոր աշակերտները առաջ չիմացան այս բաները , բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ , այն ատեն միտքերնին բերին թէ այս բաները անոր համար գրուած էին , և թէ իրենք այս բաները ըրին անոր : 17 - Եւ իրեն հետ եղող ժողովուրդը վկայութիւն կու տար թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց , ու մեռելներէն յարուց զանիկա : 18 - Ասոր համար ալ ժողովուրդը զանիկա դիմաւորեց , վասն զի լսեցին թէ անիկա այս հրաշքը ըրած էր : 19 - Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին , Կը տեսնէ՞ք որ օգուտ մը չէք կրնաք բնել . ահա բաւար աշխարհ անոր ետեւէն գնաց :

20 - Եւ հոն քանի մը Յայներ կային տօնին երկրպագութիւն ընելու ելլողներուն մէջ : 21 - Ասոնք Փիլիպպոսի եկան , որ Գալիլեայի Բեթսայիդայէն էր , և կ'աղաչէին անոր ու կ'ըսէին , Տէր , կ'ուզենք Յիսուսը տեսնել : 22 -

Փիլիպպոս եկաւ , ու Անդրէասի բառ , և նորէն Անդրէաս ու Փիլիպպոս Գեթեզ Յիսուսի ըսին : 23 - Յիսուս ալ պատասխան տուաւ անոնց ու բառ , Ժամանակը հասաւ որ փառաւորուի Որդին մարդոյ : 24 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի , Եթէ ցորենին հատը հողին մէջ իյնալով չմեռնի , ինք մինակ կը մնայ , ապա եթէ մեռնի , շատ սրգիւնք կը բերէ : 25 - Ան որ իր անձը կը սիրէ , պիտի կորսնցնէ զանիկա . և ան որ իր անձը այս աշխարհին մէջ կ'ատէ , յաւիտենական կեանքի համար պիտի պահէ զանիկա : 26 - Եթէ մէկը ինծի կը ծառայէ , թող իմ ետեւէս գայ . ու ես ուր որ եմ , իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ . եթէ մէկը ինծի կը ծառայէ , Հայրը պիտի պատուէ զանիկա : 27 - Հիմա իմ հոգիս խռոված է , և ի՞նչ ըսեմ . Հայր , զիս ազատէ այս ժամէն . բայց ես ատոր համար եկայ այս ժամին : 28 - Հայր , փառաւորէ քու անունդ . այն ատեն ձայն մը եկաւ երկինքէն , Փառաւորեցի ալ , ու նորէն պիտի փառաւորեմ : 29 - Եւ ժողովուրդը որ կայներ էր ու կը լսէր , կ'ըսէին , Արտուամ՝ կ'ըլլայ . ոմանք ալ կ'ըսէին , Հրեշտակ խօսեցաւ իրեն հետ : 30 - Յիսուս պատասխան տուաւ ու բառ , Այս ձայնը ինծի համար չեկաւ , հապա ձեզի համար : 31 - Հիմա է այս աշխարհին դատաստանը , հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի ձգուի : 32 - Ես ալ երբ երկրէ բարձրանամ , ամէնն ալ ինծի պիտի քաշեմ : 33 - Այս բանը կը զրուցէր՝ իմացնելով թէ ի՞նչ կերպ մահով պիտի մեռնէր : 34 - Ժողովուրդը անոր պատասխանեց , Մենք օրէնքէն լսեցինք որ Քրիստոս յաւիտեան կը մնայ . և դուն ի՞նչպէս կ'ըսես թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ . ո՞վ է այդ Որդին մարդոյ : 35 - Եւ Յիսուս անոնց բառ , Քիչ մը փոքրն ալ լոյսը ձեզի հետ է . քանի որ լոյսը ունիք , քայլեցէք , որ չըլլայ թէ մութը ձեր վրայ հասնի . վասն զի խաւարի մէջ քալողը չգիտեր թէ ո՞ւր կ'երթայ : 36 - Քանի որ լոյսը ունիք , հաւատացէք այն լոյսին , որպէս զի լուսոյ որդիներ ըլլաք : Յիսուս այս բաները զրուցեց , ու գնաց պահուեցաւ անոնցմէ :

37 - Եւ թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր անոնց առջև , բայց անոնք չէին հաւատար իրեն . 38 - Որպէս զի

կատարուի Եսայի մարգարէին խօսքը՝ զոր ըսաւ, Տէր, ո՞վ հաւատաց մեր ք... լուրին, և Տէրոջը բազուկը ուր՞նչ յայտնուեցաւ: 39 - Անոր համար չէին կրնար հաւատալ, որ դարձեալ կ'ըսէ Եսայի, 40 - Անոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը թմրեցուց, որ չըլլայ թէ աչքովն տեսնեն ու սրտովն իմանան և դարձի գան, ու ես գանոնք բժշկեմ: 41 - Այս քօռքսաւ Եսայի՝ երբ տեսաւ անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով: 42 - Այսու ամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւատացին, բայց փարիսեցիներուն համար զանկա չէին դաւաններ, որպէս զի ժողովարանէն դուրս չձգուին: 43 - Վասնզի մարդոց փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին:

44 - Իսկ Յիսուս կ'ազազակէր ու կ'ըսէր, Ան որ ինծի կը հաւատայ, ինծի չհաւատար, հապա զիս զրկողին: 45 - Եւ ան որ զիս կը տեսնէ, զիս զրկողը կը տեսնէ: 46 - Ես լոյս եկայ աշխարհ, որպէս զի ամէն ով որ ինծի հաւատայ, խաւարի մէջ չմնայ: 47 - Եւ եթէ մէկը իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, ես զանկա չեմ դատեր, քանզի ես չեկայ որպէս զի աշխարհը դատեմ, հապա որպէս զի աշխարհը փրկեմ: 48 - Ան որ զիս կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանկա կը դատէ. այն խօսքը զոր ես խօսեցայ, ան պիտի դատէ զանկա վերջին օրը: 49 - Վասն զի ես ինքիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս զրկեց՝ ինք ինծի պատուիրեց ինչ որ պիտի ըսեմ և ինչ որ պիտի խօսիմ: 50 - Եւ գիտեմ որ անոր պատուիրածը յաւիտենական կեանք է. ուստի ինչ որ ես կը խօսիմ, ինչպէս Հայրը ինծի ըսաւ, այնպէս կը խօսիմ:

ԳԼ. ԺԳ

Չատկի տօնէն առաջ՝ Յիսուս գիտնալով թէ իր ժամանակը հասեր է որ այս աշխարհէն ելլէ Հօրը քով, սիրելով իրենները որոնք աշխարհի մէջ էին, մինչև վերջն ալ սիրեց զանոնք:

2 - Եւ երբ ընթրիքը կ'ըլլար, (Աստանայ արդէն Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի սրտին մէջ դրեր էր, որ զանկա մտանէ.) 3 - Յիսուս գիտնալով թէ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, և թէ ինք Աստուծոյն ելաւ ու Աս-

տուծոյ քով կ'երթայ, 4 - Ընթրիքէն ելաւ, և հանգերձները մէկդի գրաւ ու զենջակ մը առնելով մէջքը փաթթեց: 5 - Ետքը կանքին մէջ ջուր լեցուց, ու սկսաւ աշակերաններուն սօքերը լուսլ, և այն իր փաթթուած զենջակովը սրբել: 6 - Ուստի եկաւ Սիմոն Պետրոսի. ան ալ ըսաւ անոր, Տէր, դո՞ւն իմ սօքերս պիտի լուսաւ: 7 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ես ինչ որ կ'ընեմ, դուն հիմա չես իմանար, հապա ետքը պիտի իմանաս: 8 - Պետրոս ըսաւ անոր, Բնու գուն իմ սօքերս պիտի չլուսաւ. պատասխան տուաւ անոր Յիսուս, Եթէ քեզ չլուսամ, դուն ինծի հետ բաժին չունիս: 9 - Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ոչ թէ միայն սօքերս, հապա նաև ձեռքերս ու գլուխս: 10 - Յիսուս ըսաւ անոր, Լուացուածին՝ սօքերը լուսլէն զատ ուրիշ բան պէտք չէ, այլ բոլորովին մտքուր է. և դուք մտքուր էք, բայց ոչ թէ ամէնդ: 11 - Վասն զի գիտէր զանկա որ զինք պիտի մտանէր. անոր համար ըսաւ, Ոչ թէ ամէնդ ալ մտքուր էք: 12 - Ու երբ անոնց սօքերը լուաց, և իր հանգերձները առնելով նորէն սեղան նրստաւ, ըսաւ անոնց, Գիտէ՞ք, ինչ ըրի՞ ձեզի: 13 - Դուք զիս Վարդապետ ու Տէր կը կոչէք, և աղէկ կ'ըսէք, վասն զի այնպէս եմ: 14 - Հապա եթէ ես Տէրս ու Վարդապետս ձեր սօքերը լուացի, պէտք է որ դուք ալ իրարու սօքերը լուաք: 15 - Վասն ձեզի օրինակ մը տուի, որպէս զի ինչպէս ես ձեզի ըրի՞ դուք ալ ընէք: 16 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ծառան իր տէրջմէն մեծ չէ, ոչ ալ զրկուածը զինք զրկողէն մեծ է: 17 - Եթէ դուք այս բաները գիտէք, երանելի էք եթէ ատոնք կատարէք: 18 - Ոչ թէ ձեր ամէնուն համար կ'ըսեմ, վասն զի ես կը ճանչնամ զանոնք որ ես ընտրեցի: հապա որպէս զի այն գրուածը կատարուի թէ Ան որ ինծի հետ հաց կ'ուտէր, ինծի դեմ կ'ընկ վերցուց: 19 - Հիմակուրէն կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որպէս զի երբ ըլլայ, հաստաք թէ ես ան եմ: 20 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ կ'ընդունի զանկա զոր ես կը զրկեմ, զիս կ'ընդունի. և ով որ զիս կ'ընդունի, զիս զրկողը կ'ընդունի:

21-Յիսուս երբ զոյս ըսաւ, էր հոգիին մէջ խռովեցաւ, և վկայեց ըսելով, Ճրշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, որ ձեզ մէ մէկը զիս պիտի մտանէ: 22-Ուստի աշակերաները տարակուսած իրարու կը նայէին թէ որո՛ւ համար կը զրուցէ: 23 - Ու աշակերաներէն մէկը կար Յիսուսի քով նստած, զոր Յիսուս կը սերէր: 24 - Եւ Սիմոն Պետրոս անոր աչք կ'ընէր հարցնելու թէ ո՛վ պիտի ըլլայ անիկա՝ որու համար կը զրուցէ: 25 - Ան ալ Յիսուսի կուրծքին վրայ իյնալով ըսաւ անոր, Տէր, ո՞վ է ան: 26 - Յիսուս պատասխան տուաւ, Անիկա է՝ որու պատառը թրջելով կուտամ: և թրջելով պատառը Իսկարիովտացի Սիմոնեան Յուզայի տուաւ: 27 - Ու պատառէն ետքը Սաւանայ անոր ներսը մտաւ: Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչ որ պիտի ընես՝ շուտով բրէ: 28-Իսկոյն այս բանը սեղան նստողներէն մէկը չհասկեցաւ, թէ ինչո՛ւ համար ըսաւ անոր: 29 - Վասն զի ոմանք կը խորհէին թէ որովհետեւ գանձանակը Յուդա կը պահէր, Յիսուս անոր կ'ըսէր, Ծախաւ աւ ինչ որ մեզի այս օճնին պէտք է, կամ՝ որպէս զի աղքատներուն բան մը տայ: 30 - Անիկա ալ պատառը առածին պէս շուտ մը գուրս երաւ, ու գիշեր էր:

31 - Ու երբ անիկա գուրս ելաւ, Յիսուս ըսաւ, Հիմա փառաւորուեցաւ Արդին մարդոյ, ու Աստուած փառաւորուեցաւ անով: 32-Եթէ Աստուած անով փառաւորուեցաւ, Աստուած ալ զանիկա իր անձովը պիտի փառաւորէ, և շուտով պիտի փառաւորէ զանիկա: 33 - Արդեակներ, քիչ մը ատեն ալ ձեզի հետ եմ, զիս պիտի փնտռէք. և ինչպէս Հրեաներուն ըսի թէ Ուր ես կ'երթամ, գուք չէք կրնար գալ, հիմա ձեզի ալ կ'ըսեմ: 34 - Նոր պատուիրան մը կուտամ՝ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ գուք ալ մէկզմէկ սիրէք: 35 - Ասով ամենը պիտի գիտնան թէ իմ աշակերաներս էք, եթէ իրարու վրայ սէր ունենաք: 36 - Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ո՛ւր կ'երթաս: Յիսուս պատասխան տուաւ անոր, Ուր ես կ'երթամ, գուն հիմա չես կրնար իմ ետեւէս գալ, բայց ետքը պիտի գաս իմ

ետեւս: 37 - Պետրոս ըսաւ անոր, Տէր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար քու ետեւէ գալ. ես իմ կեանքս ալ քեզի համար պիտի դնեմ: 38 - Յիսուս պատասխան տուաւ անոր, Քու կեանքդ պիտի դնես ինծի համար. ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի, Հաւը պիտի չխօսի՝ մինչև գուն երեք անգամ՝ զիս ուրանաս:

ԳԼ. ԺԳ

Սիրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք: 2-Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի, Հի՛մա կ'երթամ՝ ու ձեզի տեղ կը պատրաստեմ: 3 - Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կու գամ և ձեզ քովս կ'առնեմ, որպէս զի ուր ես եմ՝ գուք ալ հոն ըլլաք: 4 - Եւ ուր ես կ'երթամ՝ գիտէք, ու ճամբան ալ գիտէք:

5 - Թովմաս ըսաւ անոր, Տէր, չենք գիտեր ո՛ւր կ'երթաս, և ի՛նչպէս կրնանք ճամբան գիտնալ: 6 - Յիսուս ըսաւ անոր, Ես եմ՝ ճամբան ու ճրշմարտութիւնը և կեանքը. մէկը Հօրը քով չգար՝ եթէ ոչ ինձմով: 7 - Եթէ զիս ճանչնայիք, իմ Հայրս ալ կը ճանչնայիք. և սակէ ետե կը ճանչնաք զանիկա ու տեսաք զանիկա:

8 - Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը մեզի ցուցուր, ու հերիք է մեզի: 9-Ըսաւ անոր Յիսուս, Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս չճանչցա՞ր, Փիլիպպոս: ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ, և գուն ի՛նչպէս կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր: 10 - Զե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է. այն խօսքերը զորոնք ես ձեզի կը խօսիմ, ոչ թէ ինքիրմէս կը խօսիմ, հապա Հայրը որ իմ մէջս բնակած է, անիկա կը գործէ այն գործերը: 11 - Հաւատացէք ինծի, թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է. 12 - Ապա թէ ոչ՝ գոնէ գործերուն համար ինծի հաւատացէք: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի թէ Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը զորոնք ես կը գործեմ, ինք ալ պիտի գործէ, և անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ, վասն զի ես Հօրս քով կ'երթամ: 13 - Եւ իմ անունովս ինչ որ

*Յ.Ն. գորդ

խնդրէք , պիտի կատարեմ՝ զանհկա , որպէս զի Հայրը Արդիովը փառաւորուի : 14-Եթէ իմ անունովս բան մը խնդրէք , զանհկա՝ պիտի կատարեմ : 15 - Եթէ զիս կը սիրէք , իմ պատուիրանքներս պահեցէք : 16 - Ես ալ Հօրը պիտի ազատեմ , և ուրիշ Միւթարիչ մը պիտի տայ ձեզի , որպէս զի յաւիտեան ձեզի հետ բնակի : 17 - Ճշմարտութեան Հագին , զոր այս աշխարհը չկրնար ընդունիլ , վասն զի շտեմներ զանհկա ու չճանչնար զանհկա . բայց դուք կը ճանչնաք զանհկա , վասն զի ձեր քով կը բնակի և ձեր մէջ պիտի ըլլայ : 18 - Ձեզ որք չեմ թողուր , կու գամ ձեզի : 19-Քիչ մը ատենէն ետև ա՛լ աշխարհ զիս չտեսներ . բայց դուք պիտի տեսնէք զիս , վասն զի ես կենդանի եմ , և դուք կենդանի պիտի ըլլաք : 20 - Այն օրը պիտի գիտնաք թէ ես իմ Հօրս մէջ եմ , և դուք իմ մէջս , ես ալ ձեր մէջ : 21 - Ան որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք , անհկա է զիս սիրողը . և ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի . ու ես զանհկա պիտի սիրեմ , և ինքզինքս անոր պիտի յայանեմ :

22 - Ըսաւ անոր Յուդա , (ոչ Իսկարիովտացին ,) Տէր , ինչպէս կ'ըլլայ որ դուն ինքզինքդ ձեզի պիտի յայանես , և ոչ թէ աշխարհի : 23 - Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր , Եթէ մէկը զիս կը սիրէ , իմ խօսքս պիտի պահէ . ու իմ Հայրս զանհկա պիտի սիրէ , և անոր պիտի գանք ու անոր քով օթեաւան պիտի ընենք : 24 - Ան որ զիս չսիրէր , իմ խօսքերս չպահէր . ու այն խօսքը զոր կը լսէք՝ իմն չէ , հասպա Հօրը՝ որ զիս զրկեց : 25 - Այս բաները ձեզի խօսեցայ , քանի որ ձեր քով եմ : 26 - Բայց Միւթարիչը , Սուրբ Հոգին , զոր Հայրը իմ անունովս պիտի զրկէ , անհկա ձեզի բոլորը պիտի սորվեցնէ , և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ : 27 - Խաղաղութիւն կը թողում ձեզի , իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի . ոչ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ . սիրտերնիդ չխառովի ու չվախնայ : 28 - Լսեցիք որ ես ըսի ձեզի թէ կ'երթամ ու ձեզի կու գամ . եթէ զիս սիրէիք՝ պիտի ուրախանայիք , *թէ

եւ Հօրը քով կ'երթամ , վասն զի իմ Հայրս ինծմէ մեծ է : 29 - Եւ հիմակուրնէ գեռ չեղած ըսի ձեզի , որպէս զի երբ ըլլայ՝ հաւատաք : 30-Ալ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ , վասն զի այս աշխարհին իշխանը կու գայ , և իմ վրաս բան մը չունի . 31-Միայն թէ աշխարհ գիտնայ որ ես Հայրը կը սիրեմ , ու ինչպէս Հայրը ինծի պատուիրեց , այնպէս կ'ընեմ . ելէք , սակէ երթանք :

ԳԼ ԺԵ

Ես եմ ճշմարիտ որթը , և իմ Հայրս մշակն է : 2 - Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չբերեր , կը կտրէ զանհկա . և ամէնը որ պտուղ կը բերէ , կը մտքբէ զանհկա , որպէս զի ալ աւելի պտուղ բերէ : 3 - Դուք հիմակուրնէ մտքուր էք այն խօսքով զոր ձեզի խօսեր եմ : 4 - Իմ մէջս կեցէք , ու ես ձեր մէջ . ինչպէս ճիւղը չկրնար ինքիրմէ պտուղ բերել , եթէ որթին վրայ հաստատուած չըլլայ , նոյնպէս դուք չեք կրնաք , եթէ իմ վրաս հաստատուած չըլլաք : 5-Ես որթն եմ՝ դուք ճիւղերն էք . ան որ իմ վրաս հաստատուած է՝ և ես անոր վրայ , անհկա շատ պտուղ կը բերէ , վասն զի առանց ինծի բան մը չէք կրնար ընել : 6-Եթէ մէկը իմ վրաս հաստատուած չէ , անհկա ճիւղի մը պէս դուրս ձգուած ու չսրցած է . և կը ժողվեն զանոնք ու կրակը կը նետեն , ու կ'այրին : 7 - Եթէ դուք իմ մէջս կենաք , և իմ խօսքերս ալ ձեր մէջ կենան , ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք , ու պիտի ըլլայ ձեզի : 8 - Ասով իմ Հայրս փառաւորուեցաւ , որպէս զի դուք շատ պտուղ բերէք , ու իմ աշակերաններս ըլլաք :

9 - Ինչպէս Հայրը զիս սիրեց , ես ալ ձեզ սիրեցի . իմ սիրոյս մէջ հաստատուեցէք : 10 - Եթէ իմ պատուէրներս պահէք , իմ սիրոյս մէջ պիտի կենաք . ինչպէս ես իմ Հօրս պատուէրները պահեցի , և անոր սիրոյն մէջ կեցեր եմ : 11 - Այս բաները ձեզի խօսեցայ , որպէս զի իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ , ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ : 12 - Այս է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք , ինչպէս ես ձեզ սիրեցի : 13 - Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ , որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ : 14 - Դուք

*Ո՛հնչ , որ ըսի թէ

իմ բարեկամներս էք, եթէ ընելու ըլ-
 րաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ :
 15 - Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ
 անուաներ , վասն զի ծառան չգիտեր
 իր տէրը ի՛նչ կ'ընէ . հապա ես ձեզ
 բարեկամ անուանեցի , վասն զի այն
 ամէն բաները զորոնք իմ Հօրմէս լսեցի,
 ձեզի իմացուցի : 16 - Ոչ թէ դուք
 զիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրե-
 ցի , ու դրի ձեզ որպէս զի դուք եր-
 թաք և պտուղ բերէք , ու ձեր պտու-
 զը մնայ . որպէս զի իմ անուանովս ինչ
 որ Հօրմէն խնդրէք , ձեզի տայ : 17 -
 Զայս կը պատուիրեմ ձեզի որ մէկզմէկ
 սիրէք :

18 - Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ ,
 գիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատեց :
 19 - Եթէ աշխարհէ եղած ըլլայիք ,
 աշխարհ իրենները կը սիրէր . բայց ո-
 րովհետեւ աշխարհէ չէք , հապա ես
 ձեզ աշխարհէ ընտրեցի, անոր համար
 աշխարհ ձեզ կ'ատէ : 20 - Միտքեր-
 նիդ բերէք այն խօսքը զոր ձեզի ըսի
 թէ Մառան իր տէրոջմէն մեծ չէ . ե-
 թէ զիս հալածեցին , ձեզ ալ պիտի
 հալածեն . եթէ իմ խօսքս պահեցին ,
 ձերն ալ պիտի պահեն : 21 - Բայց այս
 ամէն բաները պիտի ընեն ձեզի իմ ան-
 ուանս համար , վասն զի չճանչցան
 զանհկա որ զիս զրկեց : 22 - Եթէ ես
 եկած և անոնց խօսած չըլլայի, անոնք
 մեղք չէին ունենար . բայց հիմա իրենց
 մեղքին պատճառանք մը չունին : 23 -
 Ան որ զիս կ'ատէ, իմ Հայրս ալ կ'ա-
 տէ : 24 - Եթէ այն գործերը իրենց
 մէջ ըրած չըլլայի, զորոնք ուրիշ մէկը
 չէ ըրած, անոնք մեղք չէին ունենար .
 բայց հիմա տեսան , ու ատեցին զիս
 ալ իմ Հայրս ալ : 25 - Սակայն այս ե-
 շտ - որպէս զի կատարուի այն խօսքը
 որ իրենց օրէնքին մէջ գրուած է թէ,
 Զուր տեղը զիս ատեցին : 26 - Բայց
 երբ Միսիթարիչը գայ , զոր ես Հօրմէն
 ձեզի պիտի զրկեմ , ճշմարտութեան
 Հոգին՝ որ Հօրմէն կ'եղէ , անհկա ին-
 ծի համար պիտի վկայէ . 27 - Եւ դուք
 ալ կը վկայէք, վասն զի սկիզբէն ի վեր
 ինծի հետ էք :

ԳԼ. ԺԶ

Այս բաները ձեզի խօսեցայ որպէս
 զի չգայթակղիք : 2 - Իրենց ժողովա-
 բաններէն դուրս պիտի ձգեն ձեզ . ու

ժամանակ ալ պիտի գայ որ ամէն ով
 որ ձեզ սպաննէ, այնպէս պիտի սեպէ
 թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցա-
 նէ : 3 - Եւ այս բաները յեղե պիտի ը-
 նեն՝ անոր համար որ ոչ Հայրը ճանչ-
 ցան, ոչ ալ զիս : 4 - Բայց այս բանե-
 րը ձեզի խօսեցայ, որպէս զի երբ ժա-
 մանակը գայ, միտքերնիդ բերէք թէ
 ես ըսի ձեզի . և այս բաները սկիզբէն
 չըսի ձեզի, վասն զի ես ձեզի հետ էի :
 5 - Սակայն հիմա ես կ'երթամ զիս
 զրկողին քով , և ձեզմէ մէկն ալ
 չհարցնեմ ինծի թէ Ո՛ւր կ'երթաս : 6 -
 Բայց որովհետեւ այս բաները ձեզի խօսե-
 ցայ, ձեր սիրտերը արամուծիւնով լե-
 ցան : 7 - Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ՝ ձե-
 զի . Սղէկ է ձեզի եթէ ես երթամ . քան-
 զի եթէ ես չերթամ, Միսիթարիչը ձեզի
 չգար . հապա եթէ երթամ , զանհկա
 ձեզի կը զրկեմ : 8 - Եւ ինք երբ գայ ,
 աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի
 համար և արդարութեան համար
 ու դատաստանի համար : 9 - Մեղ-
 քի համար՝ որ ինծի չեն հաւատար .
 10 - Արդարութեան համար՝ որ ես իմ
 Հօրս քով կ'երթամ , և ալ զիս չէք
 տեսներ : 11 - Եւ դատաստանի համար՝
 որ այս աշխարհին իշխանը դատապարտ-
 ուած է : 12 - Զեզի տակաւին շատ բա-
 ներ ունիմ ըսելու , բայց հիմա չէք
 կրնար տանիլ : 13 - Իսկ երբ ինք ճըշ-
 մարտութեան Հոգին գայ , ամէն ճըշ-
 մարտութեան պիտի առաջնորդէ ձեզի .
 վասն զի ոչ թէ ինքիրմէ պիտի խօսի,
 հապա ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի
 ու գալիքները ձեզի պիտի պատմէ : 14 -
 Անհկա զիս պիտի փառաւորէ , վասն
 զի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատ-
 մէ : 15 - Այն ամէն բաները զորոնք
 Հայրը ունի՝ իմն են . անոր համար
 ձեզի ըսի թէ իմինէս պիտի առնէ ու
 ձեզի պատմէ : 16 - Քիչ մը ատենէն
 ա՛լ զիս պիտի չտեսնէք , և դարձեալ
 քիչ մը ատենէն զիս պիտի տեսնէք ,
 քանզի ես Հօրը կ'երթամ :

17 - Ասոր համար աշակերաններէն
 «ման» իրարու կ'ըսէին, Ի՞նչ է այս որ
 մեզի կ'ըսէ թէ Քիչ մը ատենէն ա՛լ
 զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ մը
 ատենէն զիս պիտի տեսնէք, և, Քանզի
 ես Հօրը կ'երթամ : 18 - Ու կ'ըսէին ,
 Ի՞նչ պիտի ըլլայ այն Քիչ մըն ալը՝
 զոր կ'ըսէ . չենք գիտեր ի՛նչ կը գրուցէ :
 19 - Իսկ Յիսուս գիանալով որ կ'ու-

զեն իրեն հարցնել , ըստ անոնց , Աստ՞ր համար իրարու կը հարցնէք , որ ըսի թէ Քիչ մը աստենէն ա՛լ զիս պիտի չտեսնէք , և դարձեալ քիչ մը աստենէն զիս պիտի տեսնէք : 20 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի , 'Իսկ պիտի լաք ու սղբաք , բայց աշխարհ պիտի ուրախանայ . դուք պիտի տրտամիք , սակայն ձեր տրամուծիւնը ուրախութեան պիտի փոխուի : 21 - Կին մը երբ ծնանելու վրայ է՝ տրամուծիւն կ'ունենայ , վասն զի իր ժամը հասած է . բայց երբ աղան ծնանի , ալ նեղութիւնը միաք չբերեր ուրախութեանէն՝ որ աշխարհ մարդ մը ծնու : 22 - Եւ յիշուի դուք հիմա տրամուծիւն ունիք . բայց ես ձեզ նորէն պիտի տեսնեմ , և ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան , ու ձեր ուրախութիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ : 23 - Եւ այն օրը ինծի բան մը պիտի չհարցնէք : Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի , որ իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն , պիտի սոյ ձեզի : 24 - Մինչև հիմա իմ անունովս բա՛ն մը չխնդրեցիք . խնդրեցէք ու պիտի առնէք , որպէս զի ձեր ուրախութիւնը լման ըլլայ : 25 - Այս բաները առականերով խօսեցայ ձեզի . քոյ ժամանակ պիտի գայ , որ ալ ձեզի առականերով պիտի չխօսիմ , հապա յայտնապէս Հօրը վրայով պիտի պատմեմ՝ ձեզի : 26 - Այն օրը իմ անունովս պիտի խնդրէք . և չեմ ըսեր ձեզի թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ Հօրը . 27 - Քանզի ինք Հայրը ձեզ կը սիրէ , վասն զի դուք զիս սիրեցիք և հաւատացիք թէ ես Աստուծմէ ելայ : 28 - Հօրմէն ելայ ու աշխարհ եկայ . նորէն կը թողում աշխարհը և Հօրը կ'երթամ :

29 - Ըսին անոր իր աշակերտները , Ահա հիմա յայտնապէս կը խօսիս , և առակ մըն ալ չես ըսեր : 30 - Հիմա իմացանք որ ամէն բան գիտես , և քոն չէ՞ ալ պէտք չէ որ մէկը քեզի հարցնէ . ասով կը հաւատանք որ Աստուծմէ ելար : 31 - Յիսուս պատասխան տուաւ անոնց ու ըսաւ , Հիմա կը հաւատասք . 32 - Ահա ժամանակ պիտի գայ , ու եկած ալ է , որ ցիրուցան պիտի ըլլաք ամէն մէկը իր տեղը , ու զիս մինակ պիտի թողուք . բայց ես մինակ չեմ , վասն զի Հայրը ինծի հետ է : 33 - Այս բաները ձեզի խօսեցայ , որպէս զի ինծ-

մով խաղաղութիւն ունենաք . աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք . բայց քաջասիրտ եղէք , ես աշխարհի յաղթեցի :

ԳԼ. ԺԷ

Յիսուս երբ ատնք խօսեցաւ , իր աչքերը դէպ ի երկինք վերցուց ու ըսաւ , Հայր , ժամանակը հասեր է , փառաւորէ քու Որդիդ , որպէս զի քու Որդիդ ալ քեզ փառաւորէ . 2 - Ինչպէս իրեն իշխանութիւն տուիր ամէն մարմնի վրայ , որ յաւիտեանական կեանք սոյ այն ամէնուն զոր իրեն տուիր : 3 - Եւ այս է յաւիտեանական կեանքը , որ ճանչնան քեզ միմիայն ճշմարիտ Աստուածդ , ու Յիսուս Քրիստոսը զոր դուն զրկեցիր : 4 - Ես քեզ երկրի վրայ փառաւորեցի , այն գործը զոր ինծի տուիր ընելու՝ լմեցուցի : 5 - Եւ հիմա , ով Հայր , փառաւորէ զիս քու քովդ այն փառքովը զոր աշխարհի ըլլալէն առաջ քովդ ունէի : 6 - Քու անունդ յայտնի ըրի այն մարդոց զորոնք աշխարհէ ինծի տուիր . քուկդ էին , ու ինծի տուիր պաննք և քու խօսքդ պահեցին : 7 - Հիմա գիտցան թէ այն ամէն բաները զորոնք ինծի տուիր , քեզմէ են . 8 - Վասն զի այն խօսքերը զորոնք ինծի տուիր , ես անոնց տուի , անոնք ալ ընդունեցին , և ճշմարտութեամբ իմացան որ ես քեզմէ ելայ , ու հաւատացին թէ դուն զրկեցիր զիս : 9 - Ես անոնց համար կ'աղաչեմ . ոչ թէ աշխարհի համար կ'աղաչեմ , հապա անոնց համար՝ զորոնք դուն ինծի տուիր , վասն զի քուկդ են անոնք : 10 - Եւ ինչ որ իմն է՝ այն բոլորը քուկդ է , և ինչ որ քուկդ է՝ այն իմն է , ու ես անոնցմով փառաւորուած եմ : 11 - Եւ ես ա՛լ աշխարհի մէջ չեմ , բայց անոնք աշխարհի մէջ են , ու ես քեզի կու գամ . ով Սուրբ Հայր , քու անունովդ պահէ զանոնք որ դուն ինծի տուիր , որպէս զի մէկ ըլլան , ինչպէս մենք Քի՛ ենք : 12 - Քանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի , ես կը պահէի զանոնք քու անունովդ . զորոնք որ դուն ինծի տուիր , ես պահեցի , և անոնցմէ մէկը չկորսուեցաւ , միայն թէ այն կորստեան օրդին , որպէս զի գրուածը կատարուի : 13 - Ալ հիմա քեզի կու գամ , ու աշխարհի մէջ այս բաները

կը խօսիմ, որպէս զի իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան: 14 - Ես քու խօսքդ անոնց տուի, ու աշխարհ զանոնք ատեց. վասն զի աշխարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ: 15 - Չեմ ազաչեր որ զանոնք աշխարհէ վերցնես, հապա որ զանոնք չարէն պահես: 16 - Անոնք աշխարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ: 17 - Սրբէ զանոնք քու ճշմարտութիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է: 18 - Ինչպէս դուն զիս աշխարհ զրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ զրկեցի: 19 - Եւ անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որպէս զի իրենք ալ ճշմարտութիւնով սրբացած ըլլան: 20 - Բայց ոչ թէ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինծի հաւատացողներուն համար ալ: 21 - Որպէս զի ամէնն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն, ով Հայր, իմ մէջս ու ես քու մէջդ, որպէս զի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, որպէս զի աշխարհ հաւատայ թէ դուն զրկեցիր զիս: 22 - Եւ այն փառքը զոր դուն ինծի տուիր, ես անոնց տուի, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք: 23 - (Ես անոնց մէջ՝ և դուն իմ մէջս.) որպէս զի իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ. ու աշխարհ գիտնայ թէ դուն զրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս զիս սիրեցիր: 24 - Ով Հայր, զանոնք որ դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր որ ես եմ՝ անոնք ալ ինծի հետ ըլլան, որպէս զի տեսնեն իմ փառքս զոր ինծի տուիր. վասն զի դուն զիս սիրեցիր աշխարհի սկիզբէն առաջ: 25 - Ով սրբար Հայր, աշխարհ քեզ ճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ, և ստոնք ճանչցան թէ դուն զիս զրկեցիր: 26 - Եւ քու անունդ անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցնեմ, որպէս զի այն սերը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, ու ես ալ անոնց մէջ:

ԳԼ. ԺԲ

Յիսուս այս բաները ըսելէն ետե՛ իր աշակերտներուն հետ մէկտեղ կեդրոն հեղեղաաին անդիի կողմը ելաւ, ուր պարտեզ մը կար, որուն մէջ մտաւ ինք ու իր աշակերտները: 2 - Եւ Յուդա ալ, որ զանիկա պիտի մտանէր, գիտէր այն տեղը, վասն զի Յիսուս շատ

անգամ իր աշակերտներուն հետ մէկտեղ հան ժողովուած էր: 3 - Ուստի Յուդա զիս սրբերուն գունդը ու քահանայապետներէն և փարիսեցիներէն սպասաւորներ իրեն հետ առնելով՝ այն տեղ եկաւ ջահերով ու լապտերներով և զէնքերով: 4 - Իսկ Յիսուս իր վրայ գալու բոլոր բաները գիտնալով՝ ելաւ ու ըսաւ անոնց, Ո՞վ կը փնտռէք: 5 - Պատասխան տուին անոր, Նազարեցի Յիսուսը. ըսաւ անոնց Յիսուս, Ես եմ. Յուդա ալ, որ զանիկա կը մտանէր, անոնց հետ կայներ էր: 6 - Ու երբ ըսաւ թէ Ես եմ, ետ ետ գացին ու գետինը ինկան: 7 - Եւ նորէն հարցուց անոնց, Ո՞վ կը փնտռէք. անոնք ալ ըսին, Նազարեցի Յիսուսը: 8 - Յիսուս պատասխան տուաւ, Ձեզի ըսի թէ Ես եմ. ուստի եթէ զիս կը փնտռէք, թող տուէք ատոնք որ երթան: 9 - Որպէս զի կատարուի այն խօսքը զոր ինք ըսեր էր թէ Չանոնք որ ինծի տուիր, անոնցմէ մէկն ալ չկորսնցուցի: 10 - Այն ատեն Սիմոն Պետրոս, որ սուր մը ունէր, քաշեց զանիկա ու քահանայապետին ծառային զարնելով՝ անոր աջ ականջը կարեց հանեց. և այն ծառային անունը Մաղքոս էր: 11 - Իսկ Յիսուս ըսաւ Պետրոսի, Սուրդ էք պատեանը դիր. այն գաւաթը զոր Հայրը ինծի տուաւ՝ պիտի չխմե՞մ զանիկա:

12 - Ուստի զիս սրբերուն գունդը ու հազարապետը և Հրէից սպասաւորները բռնեցին Յիսուսը ու կապեցին: 13 - Եւ սուտջ զանիկա Աննայի տարին, քանզի ինք այն տարուան քահանայապետին, Կայիափայի, աներն էր: 14 - Եւ այս Կայիափայն էր, որ Հրէից խրատ տուաւ թէ Աղէկ է որ մարդ մը կորսուի ժողովուրդին համար: 15 - Ու Յիսուսի ետեէն կ'երթային Սիմոն Պետրոս և ուրիշ աշակերտ մը. և այն աշակերտը քահանայապետին ճանչուորը ըլլալով՝ Յիսուսի հետ քահանայապետին գաւաթը մտաւ: 16 - Բայց Պետրոս գուրը դրանը քով կը կենար. ուստի ելաւ միւս աշակերտը, որ քահանայապետին ճանչուորն էր, եւ ըսաւ դռնապանին, ու ներս մտցուց Պետրոսը: 17 - Այն ատեն դռնապան աղջիկը ըսաւ Պետրոսի, Միթէ դուն ալ այն մարդուն աշակերտներէն ես. ան ալ ըսաւ, Չեմ: 18 - Իսկ ծառաները ու սպասաւորները հին կայներ էին, և

կրակ վառած կը տաքնային , քանզի ցուրտ էր : Պետրոս ալ անոնց հետ կայներ էր ու կը տաքնար : 19 - Եւ քահանայապետը Յիսուսի հարցուց անոր աշակերտներուն ու վարդապետութեանը վրայով : 20 - Յիսուս պատասխան տուաւ անոր , ես աշխարհի յայտնի խօսեցայ . ես ամէն ատեն ժողովարաններուն մէջ ու տաճարին մէջ տրվեցուցի , ուր բոլոր Հրեաները կը ժողվուին , ու ծածկաբար բան մը չխօսեցայ : 21 - Ինչո՞ւ ինծի կը հարցնես , լսողներուն հարցուր թէ ի՞նչ խօսեցայ իրենց . ահա ինչ որ խօսեցայ՝ գիտեն իրենք : 22 - Երբ զայս ըսաւ , սպասաւորներէն մէկը որ հոն կայներ էր , Յիսուսի տպասկ մը զարկաւ՝ ըսելով , Այդպէ՞ս պատասխան կու տաս քահանայապետին : 23 - Յիսուս անոր պատասխանեց , Եթէ չար խօսեցայ , վկայէ չարին համար . իսկ եթէ բարի խօսեցայ , ինչո՞ւ կը զարնես ինծի : 24 - Եւ Աննա զանիկա կապած՝ Կայիափա քահանայապետին զրկեց : 25 - Սիմոն Պետրոս ալ հոն կայներ էր ու կը տաքնար . և ըսին իրեն , Միթէ դո՞ւն ալ անոր աշակերտներէն ես . անիկա ուրացաւ ու ըսաւ թէ Չեմ : 26 - Քահանայապետին ծառաններէն մէկն ալ , այն Բարթոլոմայոսը որուն ականջը Պետրոս կտրեր էր , ըսաւ , Չե՞ որ ես քեզ տեսայ պարտէզին մէջ անոր հետ : 27 - Այն ատեն Պետրոս նորէն ուրացաւ , և շուտ մը հաւը խօսեցաւ :

28 - Եւ Յիսուսը Կայիափայի քահանային պալատը տարին , և ալ տուտու էր . ու իրենք պալատը չմտան , որպէս զի չպզծուին , հապա որպէս զի զատիկը ուտեն : 29 - Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց ու ըսաւ , Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ : 30 - Պատասխան տուին ու ըսին իրեն , Եթէ առիկա չարագործ մը չըլլար , քեզի չէինք մտաներ զանիկա : 31 - Այն ատեն Պիղատոս ըսաւ անոնց , Ի՞նչ առէք զանիկա , ու ձեր օրէնքին համեմատ անոր դատաստանը տեսէք : Հրեաները իրեն ըսին , Մեզի օրինաւոր չէ մարդ մը մեռցնել . 32 - Որպէս զի կատարուի Յիսուսի խօսքը , զոր ըսաւ՝ իմացնելով թէ ի՞նչ մահով ինք պիտի մեռնէր : 33 - Իսկ Պիղատոս նորէն պալատը մտաւ , կանչեց Յիսուսը ու ըսաւ անոր , Ի՞նչ ես Հրէից թա-

գաւորը : 34 - Յիսուս պատասխան տուաւ անոր , Առիկա դուն քեզմէ՞ կ'ըսես , թէ ինծի համար ուրիշները քեզի ըսին : 35 - Պատասխան տուաւ Պիղատոս , Միթէ ես Հրեա՞յ եմ . քու ազգք և քահանայապետները քեզ ինծի մտանեցին . ի՞նչ ըրած ես դուն : 36 - Յիսուս պատասխան տուաւ , Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ . եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս , իմ սպասաւորներս կը կռուէին՝ որպէս զի ես Հրէից ձեռքը չմտանուիմ , բայց հիմա իմ թագաւորութիւնս ասկէ չէ : 37 - Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր , Ուրեմն դուն թագաւոր մըն ես . պատասխան տուաւ Յիսուս , Ի՞նչ կ'ըսես , քանզի թագաւոր եմ . ես այս բանին համար ծնած եմ , և ասոր համար աշխարհ եկած , որպէս զի ճշմարտութեան համար վկայեմ . այն ամէնը որ ճշմարտութենէն է՝ իմ՝ ձայնիս ականջ կը դնէ : 38 - Պիղատոս ըսաւ անոր , Ի՞նչ է ճշմարտութիւնը . և զայս ըսելով՝ նորէն դուրս ելաւ Հրեաներուն և ըսաւ անոնց , Ես յանցանք մը չեմ գտներ անոր վրայ : 39 - Բայց սովորութիւն ունիք որ Բարթ մը արձակեմ՝ ձեզի զատիկա . հիմա կ'ուզէ՞ք որ Հրէից թագաւորը արձակեմ՝ ձեզի : 40 - Այն ատեն ամէնն ալ նորէն աղաղակեցին՝ ըսելով , Մի արձակե՛ր առիկա , հապա Բարաբբան . ու Բարաբբա աւազակ մըն էր :

ԳԼ. ԺԹ

Այն ատեն Պիղատոս առաւ Յիսուսը ու ծեծեց : 2 - Չինուորներն ալ փուշերէ պսակ հիւսելով՝ անոր գլուխը գրին , և անոր ծիրանի հանդերձ մը հագցուցին . 3 - Ու կ'ըսէին , Ողջոյն քեզ , Հրէից թագաւոր . և տպակներ կը զարնէին անոր : 4 - Պիղատոս նորէն դուրս ելաւ ու ըսաւ անոնց , Ահա զանիկա դուրս կը բերեմ՝ ձեզի , որպէս զի գիտնաք թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ : 5 - Այն ատեն Յիսուս դուրս ելաւ՝ փշեղէն պսակն ու ծիրանի հանդերձը հագած . և Պիղատոս ըսաւ անոնց , Ահա այն մարդը : 6 - Քահանայապետները ու սպասաւորները երբ տեսան զանիկա , աղաղակեցին ու ըսին , Խաչը հանէ , խաչը հանէ [առիկա] : Պիղատոս ըսաւ անոնց , Ի՞նչ առէք

ատիկա ու խաչը հանեցէք , վասն զի ես ատար վրայ յանցանք մը չեմ գտներ : 7 - Հրեաները պատասխան տուին իրեն , Մենք օրէնք ունինք , և մեր օրէնքին համեմատ պէտք է որ մեռնի , վասն զի ինքզինք Աստուծոյ Որդի ըրաւ : 8 - Երբ Պիղատոս այս խօսքը լսեց , ալ աւելի վախցաւ : 9 - Աւնորէն պալատը մտնելով ըսաւ Յիսուսի , Աւրկէ՞ ես դուն . բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր : 10 - Աւստի Պիղատոս ըսաւ անոր , Ինձի հետ չե՞ս խօսիր . չե՞ս գիտեր որ ես իշխանութիւն ունիմ . քեզ խաչը հանելու , ու իշխանութիւն ունիմ . քեզ արձակելու : 11 - Յիսուս պատասխան տուաւ , Իսկ իմ վրաս մէկ իշխանութիւն ալ չէիր ունենար , եթէ քեզի վերէն արուած չըլլար . անոր համար՝ ան որ զիս քեզի մտանեց , անոր մեղքը աւելի մեծ է : 12 - Ալ անկէ ետեւ Պիղատոս կը փրնաւէր թէ Ինչպէ՞ս զանիկա արձակէ . բայց Հրեաները կ'աղաղակէին ու կ'ըսէին , Եթէ ատիկա արձակես , Կայսրին բարեկամը չես . ամէն ով որ ինքզինք թագաւոր կ'անուանէ , անիկա Կայսրին հակառակ կը խօսի : 13 - Իսկ Պիղատոս երբ այս խօսքը լսեց , դուրս հանեց Յիսուսը , ու նստաւ բեմին վրայ , այն տեղը որ Քարայտասի կ'ըսուէր , և Եբրայեցերէն՝ Կապաթթա . 14 - (Չտակին ուրբաթ օրն էր ու ժամը վեցին տոտեններն էր .) և Հրեաներուն ըսաւ , Ահա ձեր թագաւորը : 15 - Բայց անոնք աղաղակեցին , Վերցուր , վերցուր , խաչը հանէ ատիկա : Պիղատոս ըսաւ անոնց , Ձեր թագաւորը խաչը հանեմ : Քահանայապետները պատասխան տուին , Մենք Կայսրէն զատ թագաւոր չունինք : 16 - Այն ատեն անոնց ձեռքը տուաւ զանիկա որպէս զի խաչուի :

17 - Անոնք ալ տուին Յիսուսը ու կը տանէին . և ինք իր խաչը վերցնելով էլաւ Քապաթթ ըսուած տեղը , որ Եբրայեցերէն Քողգոթթա կ'ըսուի : 18 - Հոն զանիկա խաչը հանեցին , և անոր հետ ուրիշ երկուք ալ՝ մէկ դիէն ու միւս գիէն , և մէջտեղը Յիսուսը : 19 - Տախտակ մըն ալ գրեց Պիղատոս , ու գրաւ խաչին վրայ , և այնպէ՞ս գրուած էր . Յիսուս Կապովրեցի Թագաւոր Հրէից : 20 - Եւ այն տախտակը Հրեաներէն շատերը կարդացին , վասն զի քաղաքին

մօտ էր այն տեղը՝ ուր Յիսուս խաչուեցաւ . ու գրուած էր Եբրայեցերէն , Յունարէն և Լատիներէն : 21 - Այն ատեն Հրէից քահանայապետները Պիղատոսի ըսին , Մի գրեր Թագաւոր Հրէից , հապա թէ Ինք ըսաւ , Թագաւոր եմ Հրէից : 22 - Պիղատոս պատասխան տուաւ , Ինչ որ գրեցի՝ գրեցի :

23 - Եւ զինուորները երբ Յիսուսը խաչը հանեցին , անոր հանդերձները տուին ու չորս բաժին ըրին , ամէն մէկ զինուորին բաժին մը . նաև պատմուճանք . իսկ պատմուճանք առանց կարի էր վերէն վար բոլորը հիւսուած . 24 - Աւստի ըսին իրարու , Ատիկա չպատուենք , հապա վիճակ ձգենք ատար վրայ թէ որո՞ւ պիտի ըլլայ . որպէս զի կատարուի այն գրուածը որ կ'ըսէ , Իմ հանդերձներս իրենց մէջ բաժնեցին , և իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին . ահա զինուորները այս բաները ըրին :

25 - Եւ Յիսուսի խաչին քով կայներ էին իր մայրը և իր մօրը . բայց Մարիամ , Կղէովպասի կին , ու Մարիամ Մագդաղէնացի : 26 - Աւստի Յիսուս երբ տեսաւ իր մայրը , և այն աշակերտը զոր կը սիրէր , որ մօտը կայներ էր , ըսաւ իր մօրը , Ով կին , ահա քու որդիդ : 27 - Ետքը ըսաւ աշակերտին , Ահա քու մայրդ . և այն ժամանակէն աշակերտը զանիկա իր քով աւաւ :

28 - Անկէ ետեւ Յիսուս գիտնալով թէ արդէն ամէն բան լինցած է , (որպէս զի գրուածը կատարուի ,) ըսաւ , Ծարաւ եմ : 29 - Եւ հա՞ն քացախով լեցուն աման մը կար . անոնք ալ քացախով սպունգ մը լեցնելով , զապայի ճշդիկի վրայ փաթթած՝ անոր բերնին մօտեցուցին : 30 - Աւստի Յիսուս երբ քացախը աւաւ՝ ըսաւ , Ահա Բո՞ն կատարուեցաւ . ու գլուխը ծռելով՝ հոգին աւանդեց :

31 - Իսկ Հրեաները , որովհետեւ ուրբաթ օր էր , որ չըլլայ թէ այն մօրմիջները խաչին վրայ մնան մինչև շաբաթ օրը , (վասն զի այն շաբաթը մեծ օր էր ,) Պիղատոսի աղաչեցին որ անոնց սրունքները կտորտեն , ու վերցուին : 32 - Աւստի զինուորները եկան և աւաջինին սրունքները կտորտեցին . նաև միւսինը՝ որ անոր հետ խաչը էլած էր : 33 - Բայց երբ Յիսուսի եկան ու տեսան որ արդէն մեռած էր , անոր սրունքը

ները չկատարեցին. 34- Հապա զինուոր-
ներէն մէկը գեղարգով անոր կողը խո-
ցեց, և շուտ մը արիւն ու ջուր ելաւ :
35 - Եւ ան որ տեսաւ այս բաները՝
վկայեց, ու անոր վկայութիւնը ճշմա-
րիտ է, և ինք գիտէ որ ճշմարիտ կ'ը-
սէ, որպէս զի դուք [այ] հաւատարք :
36 - Վասն զի այս բաները եղան որ-
պէս զի կատարուի այն գրուածը [Թէ
Անոր մէկ սկիորը պիտի չկատարուի :
37 - Եւ մէկ մըն ալ ուրիշ գրուած մը
կ'ըսէ [Թէ Պիտի նային անոր՝ զոր խո-
ցեցին :

38 - Ասկէ ետեւ Յովսէփ, որ Արի-
մաթիայէ էր, (Յիսուսի աշակերտ ե-
ղած՝ բայց գաղտուկ Հրեաներուն վա-
խէն,) աղաչեց Պիղատոսի, որ Յիսուսի
մարմինը վերցնէ. Պիղատոս ալ հրա-
ման տուաւ. ուստի եկաւ ու վերցուց
Յիսուսի մարմինը : 39 - Նիկողոսիմոս ալ
եկաւ, (որ առաջուրնէ գիշերով Յի-
սուսի եկեր էր,) ու բերաւ հարիւր
լիտրի չափ զմուստի ու հալուէի խառ-
նուրդ մը : 40 - Եւ Յիսուսի մարմինը
առին, ու խունկերով փաթ [Թեցին զա-
նիկա կառաներու մէջ. ինչպէս Հրեա-
ները սովորութիւն ունին [Թողելու :
41 - Եւ այն ատեղը ուր խաչուեցաւ,
պարտեզ մը կար, ու այն պարտեզին
մէջ նոր գերեզման մը, որուն մէջ ա-
մենեւին մարդ գրուած չէր : 42- Հրեա-
ներուն ուրբութիւն համար հոն դրին
Յիսուսը. վասն զի գերեզմանը մօտ էր :

ԳԼ. Ի

Եւ մէկշաբթի օրը Մարիամ Մագ-
դաղենացի առտուանց դեռ չըստացած
գերեզմանը կու գայ, ու կը ատենէ որ
քարը գերեզմանին դռնէն վերցուած
է : 2 - Ետքը կը վազէ կու գայ Սիմոն
Պետրոսի և միւս աշակերտին զոր Յի-
սուս կը սիրէր, և կ'ըսէ անոնց, Տէրը
գերեզմանէն վերցուցին, ու չենք գի-
տեր ո՛ւր դրին զանիկա : 3 - Ուստի ե-
լաւ Պետրոս և միւս աշակերտը, ու
գէպ ի գերեզմանը կու գային : 4 - Ու
երկուքն ալ մէկտեղ կը վազէին. և
միւս աշակերտը Պետրոսէ աւելի շուտ
վազելով՝ անկէ առաջ գերեզմանը ե-
կաւ : 5 - Եւ ծռելով նայեցաւ, ու
տեսաւ որ կառաները հօն կը կենային.
Բայց ինք ներս չմտաւ : 6 - Սիմոն Պե-
տրոս ալ հասաւ, որ անոր ետեւէն կու

գար, ու գերեզմանը մտաւ, և տեսաւ
կառաները որոնք հոն կը կենային. 7 -
Ու վարչամակը որ անոր գլուխն էր՝
որիչ կառաներուն հետ չէր, հապա
ծաղլած զատ մէկ կողմը դռնէն էր :
8 - Այն ատեն ներս մտաւ միւս աշա-
կերտն ալ՝ որ առաջ գերեզմանը եկեր
էր, տեսաւ ու հաւատաց : 9 - Վասն
զի դեռ գրուածը չէին գիտեր, [Թէ
Պէտք է որ անիկա մեռելներէն յա-
րութիւն առնէ : 10 - Ետքը աշակերտ-
ները նորէն իրենց դռնը գացին :

11- Բայց Մարիամ գերեզմանին դուր-
որ կայներ էր և կու լար, ու երբ կու լար՝
գէպ ի գերեզմանը ծռեցաւ նայելու .
12- Եւ տեսաւ երկու հրեշտակներ ճեր-
մակ հանդերձներով, որ նստեր էին ուր
Յիսուսի մարմինը գրուած էր, մէկը գլու-
խուն կողմէն՝ ու միւսը ստորին կողմէն :
13 - Եւ անոնք իրեն բոն, Ով կին,
ինչո՞ւ կու լաս. ըսաւ անոնց, Անոր
համար որ իմ Տէրս գերեզմանէն վեր-
ցուցին, ու չեմ գիտեր ո՛ւր դրին զա-
նիկա : 14 - Զայս որ ըսաւ՝ ետին դար-
ձաւ և տեսաւ Յիսուսը որ կայներ էր,
ու չէր գիտեր [Թէ Յիսուս է : 15 - Յի-
սուս անոր ըսաւ, Ով կին, ինչո՞ւ կու
լաս, ո՞վ կը փնտռես : Ինք կարծելով
[Թէ անիկա պարտիզպանն է, ըսաւ ա-
նոր, Տէր, եթէ դուն վերցուցիր զանի-
կա, ըսէ ինձի, ո՛ւր դրիր զայն, որպէս
զի ես զանիկա առնեմ : 16 - Յիսուս ը-
սաւ անոր, Մարիամ. ան ալ դարձաւ
ու [Երբայեցերէն] անոր ըսաւ, Ռաբ-
բունի, որ Վարդապետ ըսել է : 17 -
Յիսուս ըսաւ անոր, Ինձի մի դպչիր,
վասն զի դեռ Հօրս քով ելած չեմ .
հապա գնա եղբայրներուս և ըսէ ան-
ոնց, Ես կ'ելլեմ իմ Հօրս քով ու
ձեր Հօրք քով, և իմ Աստուծոյս քով
ու ձեր Աստուծոյն քով : 18- Մարիամ
Մագդաղենացի եկաւ ու աշակերտնե-
րուն պատմեց [Թէ ինք Տէրը տեսաւ, և
[Թէ անիկա այս բաները իրեն պատմեց :
19 - Եւ նոյն օրը, մէկշաբթի իրի-
կունը, աշակերտներուն ժողովուած
տեղին դռները գոց ըլլալով՝ Հրեանե-
րէն վախնալնուն համար, Յիսուս եկաւ
և անոնց մէջտեղը կայնեցաւ, ու ըսաւ
անոնց, Խաղաղութիւն ձեզի : 20 - Եւ
զայս ըսելով՝ իր ձեռքերը ու կողը ցու-
ցուց անոնց. աշակերտներն ալ ուրա-
խացան երբ Տէրը տեսան : 21 - Եւ Յի-
սուս նորէն ըսաւ անոնց, Խաղաղու-

Թիւն ձեզի. ինչպէս Հայրը զիս զրկեց, ես ալ ձեզ կը զրկեմ : 22 - Եւ զայս ըսելով՝ անոնց վրայ փչեց, ու ըսաւ անոնց, Առէք Հոգի Սուրբ : 23 - Որոնց մեղքերը թողուք, թողուած ըլլայ անոնց, և որոնց հեղեղը ետ բռնէք, բռնուած ըլլայ :

24 - Բայց տասուերկուքէն մէկը, Երկուորեակ ըսուած Թովմաս, անոնց հետ չէր՝ երբ Յիսուս եկաւ : 25 - Ուստի միւս աշակերտները կ'ըսէին անոր թէ՛ Տէրը տեսանք. ան ալ ըսաւ անոնց, Եթէ իր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չտեսնեմ, ու մտտս բեւեռներուն տեղը չխոթեմ, և իմ ձեռքս անոր կողը չխոթեմ՝ չեմ հաւատար :

26 - Եւ ութ օրէն ետե դարձեալ աշակերտները ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ. եկաւ Յիսուս, դռները դոց ըլլալով, ու կայնեցաւ անոնց մէջ՝ տեղը և ըսաւ, Խաղաղութիւն ձեզի : 27 - Ետքը ըսաւ Թովմասի, Մտադհոս բեր և նայէ իմ ձեռքերս, ու բերքու ձեռքդ և իմ կողս խոթէ, ու մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ : 28 - Եւ Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, իմ՝ Տէրս և իմ Աստուածս : 29 - Յիսուս ըսաւ անոր, *Որովհետեւ դուն զիս տեսար՝ հաւատացիր. երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան :

30 - Եւ Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր աշակերտներուն առջև, որոնք այս գիրքին մէջ գրուած չեն : 31 - Բայց ասոնք գրուեցան, որպէս զի հաւատառք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, և որպէս զի հաւատաւորով կեանք ունենաք անոր անուհովը :

ԳԼ. ԻԱ

Ասիկէ ետե Յիսուս նորէն ինքզինք իր աշակերտներուն յայտնեց Տիբերիայի ծովուն եզերքը, և այսպէս յայտնեց : 2 - Մէկտեղ էին Սիմոն Պետրոս ու Թովմաս, Երկուորեակ ըսուածը, և Նոթամնայէլ որ Գալիլէայի Կանա + աղաքէն էր, ու Զեբեդէոսի որդիները և աշակերտներէն ուրիշ երկուք ալ : 3 - Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Ես ձուկ որսալու կ'երթամ. ըսին անոր,

*Ո՛րան, Թովմաս, որովհետեւ

Մենք ալ կու գանք քեզի հետ. ելան և շուտ մը նաւը մտան, ու այն գիշերը բան մը չբռնեցին : 4 - Ու երբ ա՛լ առտու եղաւ, Յիսուս ծովուն եզերքը կայներ էր, բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուս է : 5 - Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Տղաք, ուտելու բան մը ունի՞ք. պատասխան տուին իրեն, Ոչ : 6 - Եւ ըսաւ անոնց, Ուսկանը նաւին աջ կողմը ձգեցէք ու պիտի գտնէք. ուստի ձգեցին, և ձուկերուն շատութենէն՝ ա՛լ չէին կրնար վանիկա քաշել : 7 - Այն ատեն այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսի, Անիկա Տէրն է. իսկ Սիմոն Պետրոս երբ լսեց թէ Տէրն է, վերարկուն վրան առաւ, վստն զի մերկ էր, ու ծովը նետուեցաւ : 8 - Եւ միւս աշակերտները նաւակովը եկան, (վստն զի ցամաքէն հեռու չէին, միայն թէ երկու հարիւր կանգունի չափ,) և ուսկանը ձուկերովը կը քաշէին : 9 - Ու երբ ցամաքը ելան, հոն վառած կրակ տեսան, ու վրան ձուկ դրուած, և հաց : 10 - Յիսուս ըսաւ անոնց, Բերէք այդ ձուկերէն զորոնք դուք հիմա բռնեցիք : 11 - Սիմոն Պետրոս նաւը *մտաւ, և ուսկանը ցամաք քաշեց հարիւր յիսուն ու իրեք խոշոր ձուկերով լեցուն. և այնչափ բան կար ու չպատուեցաւ ուսկանը : 12 - Յիսուս ըսաւ անոնց, Եկէք ձաշ ըրէք. ու աշակերտներէն մէկն ալ չէր համարձակեր անոր հարցնել թէ Ի՞նչն ո՞վ ես. վստն զի գիտէին թէ Տէրն է : 13 - Այն ատեն Յիսուս եկաւ ու առաւ հացը և անոնց տուաւ, նոյնպէս ալ ձուկը : 14 - Այս երրորդ անգամն է որ Յիսուս իր աշակերտներուն երեցաւ՝ մեռելներէն յարու թիւն առնելէն ետե :


15 - Ու երբ ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսի. Սիմոն, Յովնանի *բոլի, զիս տանցմէ աւելի կը սիրե՞ս. անիկա ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ : ըսաւ անոր, Արած է իմ գառնուկներս : 16 - Նորէն երկրորդ անգամ՝ ըսաւ անոր, Սիմոն, Յովնանի *բոլի, զիս կը սիրե՞ս. ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ : ըսաւ անոր, Արած է իմ ոչխարներս : 17 - Ըսաւ անոր երրորդ անգամ, Սիմոն, Յովնանի *բոլի, զիս կը սիրե՞ս. Պետրոս

*Յան. եյաւ

արամեցաւ որ երեք անգամ իրեն ըսաւ թէ Զիս կը սիրե՞ս. և ըսաւ անոր, Տէր, դուն ամէն բան գիտես, դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ. ըսաւ անոր Յիսուս, Արածէ իմ ոչխարներս : 18 - Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ երբ դուն պատանի էիր, ինքիրմէդ գօտի կը կապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր. բայց երբ ծերանաս, ձեռքերդ վեր պիտի բռնես, և ուրիշք քեզի գօտի պիտի կապէ ու պիտի տանի ուր չես ուզեր : 19 - Այս բանը ըսաւ ցուցնելով թէ անիկա ի՞նչ մահով պիտի փառաւորէ զԱստուած. ու երբ զայս զրուցեց՝ ըսաւ անոր, Եկուր իմ հետեւ : 20 - Եւ Պետրոս դարձաւ ու տեսաւ այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, որ ետեւէն կ'երթար, (որ նաև յնթրիքին ատենը անոր կուրծքին վրայ ինկեր և ըսեր էր, Տէր, ս՞ով է որ քեզ պիտի մատնէ :) 21 - Պետրոս զանիկա

տեսնելով՝ ըսաւ Յիսուսի, Տէր, հապա տսիկա ի՞նչ պիտի ըլլայ : 22 - Յիսուս ըսաւ անոր, Եթէ ես ուզեմ՝ որ ասիկա կենայ մինչև ես գամ, քու ի՞նչ հոգդ է. դուն իմ ետեւս եկուր : 23 - Այլ այս խօսքը ելաւ եզրայրներուն մէջ թէ այն աշակերտը պիտի չմեռնի. սակայն Յիսուս չըսաւ անոր թէ Պիտի չմեռնի, հապա՞ Եթէ ես ուզեմ՝ որ ասիկա կենայ մինչև ես գամ, քու ի՞նչ հոգդ է :

24 - Ասիկա այն աշակերտն է՝ որ կը վկայէ այս բաներուն համար, որ գրեց ալ այս բաները. ու գիտենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է : 25 - Եւ ուրիշ շատ բաներ ալ կան, զորոնք Յիսուս ըրաւ, որոնք եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, կարծեմ թէ աշխարհս ալ բաւական պիտի չըլլար պարունակելու այն գիրքերը որ գրուած ըլլային : Ամէն :



ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ



ԳԼՈՒԽ Ա

Առաջին պատմութիւնը ըրի, ով Թէոփիլոս, այն ամէն բաներուն վրայ զորոնք Յիսուս սկսաւ ընել և արվեցրնել, 2 - Մինչև այն օրը որ Հոգւոյն Սրբոյ միջոցով պատուէր տուաւ իր ընտրած առաքեալներուն, ու համբարձաւ. 3 - Որոնց ինքզինք ցուցուց կենդանի իր շարչարանքներէն՝ ետեւ շատ ապացոյցներով, քառասուն օրուան մէջ անոնց երևնալով ու Աստուծոյ թագաւորութեանը վրայ խօսելով : 4 - Եւ անոնց հետ մէկտեղ գտնուած ատենը կ'ապապրէր անոնց որ Երուսաղէմէ չհեռանան, հապա սպասեն Հօրը խոտամուկին, զոր ինձմէ լսեցիք, Կէ՛ր : 5 - Վասն զի իրաւ Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք : 6 - Անոնք ալ մէկտեղ գալով կը հարցնէին իրեն ու

կ'ըսէին, Տէր, Խորայելի թագաւորութիւնը այս ժամանակի՞ն մէջ նորէն պիտի հաստատես : 7 - Եւ ըսաւ անոնց, Զեզի չվերաբերիր ժամերը և ժամանակները գիտնալը, զոր Հայրը եր իշխանութեանը մէջ դրաւ. 8 - Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք, ու ինձի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի ու Ամմորիայի մէջ ու մինչև երկրի ծայրերը : 9 - Եւ երբ այս բաները ըսաւ, մինչ անոնք կը նայէին, համբարձաւ, և ամպ մը զանիկա անոնց աչքէն տուաւ : 10 - Ու քանի որ աչքերնին անկած դէպ ի երկինք կը նայէին անոր երթալուն վրայ, ահա երկու մարդ իրենց քով կայնեցան ճերմակ հանդերձներով. 11 - Որոնք նաև ըսին, Ով Գալիլեացի մարդիկ, ինչո՞ւ կայներ դէպ ի երկինք կը նայիք. այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ ինչպէս տեսաք անոր երկինք երթալը : 12 - Այն ատեն Երուսաղէմ՝ դարձան

*Կ-՛, հաց կերած

Զիթենեաց ըսուած լեռնէն , որ շաբաթ օրուան ճամբու չափ մօտ է Երուսաղէմի : 13 - Ու երբ +աչ+ը մտան , ելան վերնատունը , ուր կը բնակէին Պետրոս և Յակոբոս , Յովհաննէս և Անդրէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բարթողոմէոս և Մատթէոս , Յակոբոս Ալփէոսեան ու Սիմոն Նախանձայոյց և Յուդա *Յակոբեան : 14 - Ատնք ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին կիներուն հետ , և Յիսուսի մօրը Մարիամի ու անոր եղբայրներուն հետ մէկտեղ :

15 - Եւ այն օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն մէջ , (*ու հարիւր քսան հոգիի չափ ժողովուած բազմութիւն կար ,) ու ըսաւ , 16 - Մարդիկ եղբայրներ , պէտք էր որ կատարուէր այս գրուածը , զոր առաջուրն է Հոգին Սուրբ Գաւիթի բերնով ըսաւ Յուդայի համար , որ Յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ . 17 - Վասն զի անիկա մեզի հետ էր մեր համրանքին մէջ , և այս պաշտօնէն ալ բաժին ունէր : 18 - Ասիկա անիրաւութեան վարձքով ագարակ մը ստացաւ , ու գլխիվար իյնալով մէջտեղէն ճեղքուեցաւ , և իր ամէն փորսօիքը դուրս թափեցաւ : 19 - Ու այս բանը Երուսաղէմ բնակողներուն ամէնուն յայտնի եղաւ , մինչև իրենց լեզուովը այն ագարակին անունը Ակեղդամա դրուեցաւ , այսինքն Արեան ագարակ : 20 - Վասն զի Սողմոսներու գիրքին մէջ գրուած է թէ Անոր բնակատանը աւերակ ըլլայ , ու անոր մէջ բնակող մը չըլլայ , և անոր պաշտօնը ուրիշը առնէ : 21 - Ուրեմն պէտք է որ այս մարդոցմէն՝ որոնք մեզի հետ եղան այն բոլոր տաներ , երբ Տէր Յիսուս մեր մէջ մտաւ ու ելաւ , 22 - Յովհաննէսի մկրտութենէն սկսած՝ մինչև այն օրը որ մեզմէ համբարձաւ , ստանցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեանը : 23 - Եւ երկու հոգի կայնեցուցին , Յովսէփը որ Բարսաբա կը կոչուէր , որ Յուստոս ալ մականուանեցաւ , ու Մատթիան : 24 - Եւ աղօթք ընելով՝ ըսին , Իսն , ով Տէր , որ ամէնուն սիրտը գիտես , այս երկուքէն մէկը , զոր բնորոշիր , Բզի յայտնէ . 25 - Արպէս զի այս պաշ-

տօնին և առաքելութեանը վիճակը առնէ , որմէ Յուդա ինկաւ իր տեղը երթալու : 26 - Եւ անոնց հետք վիճակ ձգեցին , ու վիճակը Մատթիայի ելաւ , և անիկա տասնըմէկ առաքեալներուն հետ սեպուեցաւ :

ԳԼ. Բ

Եւ երբ Պէնտէկոստէի օրը հասաւ , ամէնն ալ միաբան մէկտեղ էին : 2 - Ու յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ սաստկաչունչ հովի մը շնչին պէս , և բոլոր տունը լեցուց՝ ուր նստեր էին : 3 - Եւ բաժնուած լեզուներ երեցան իրենց որպէս թէ կրակէ , ու ամէն մէկուն վրայ նստաւ : 4 - Եւ ամէնն ալ Հոգւով Սրբով լեցուեցան , ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ , ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար : 5 - Ու Երուսաղէմի մէջ բնակած Հրեաներ կային , սասուածավախ մարդիկ երկինքի տակ եղած բոլոր ազգերէն յաչաւ : 6 - Ու երբ այս ձայնը եղաւ , բազմութիւնը մէկտեղ եկաւ ու խռովեցաւ , վասն զի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին : 7 - Ամէնն ալ կը սքանչանային ու կը զարմանային և իրարու կ'ըսէին , Չէ՞ որ ահա ստանք ամէնն ալ որ կը խօսին , Գալիլեացի են . 8 - Եւ ի՞նչպէս կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք . 9 - Պարթևներ և Մարեր ու Եղամացիներ , և անոնք որ կը բնակին Միջագետի մէջ , և Հրէաստանի ու Կապադովկիայի մէջ , Պոնտոսի ու Սիսիայի մէջ , 10 - Փռիւզիայի և Պամփիլիայի մէջ , Եգիպտոսի մէջ , և Կիւրենէի մօտ Լիբէացուց կողմերուն մէջ , նաև Հռովմայեցի պանդուխտներ , 11 - Թէ՛ Հրեաներ և թէ՛ նորահաւատներ , Կրեացիներ և Արաբացիներ , կը լսենք անոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին Սասուծոյ մեծամեծ բաները : 12 - Կը սքանչանային ամէնն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին , Ի՞նչ պիտի ըլլայ այս : 13 - Ոմանք ալ ծաղր ընելով կ'ըսէին թէ Անոնք նոր գինիով լեցուեր են :

14 - Բայց Պետրոս ելաւ տասնըմէկին հետ մէկտեղ , ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց , Ով Հրեայ մարդիկ և դուք ամէնք որ Երուսաղէմ կը բնակիք , այս ձեզի յայտնի ըլլայ , ու ականջ

* Այսինքն , Յակոբոսի եղբայրը , ըստ ընդհանուր խորհեաց :

դրէք իմ խօսքերուս : 15 - Քանզի ոչ թէ ասանք գինովցած են, ինչպէս դուք կը կարծէք, վասն զի զի օրուան երրորդ ժամն է. 16 - Հապա ասիկա այն է որ Յովէլ մտորարէին ձեռքով բուսեցաւ. 17 - Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս ամէն մտորմնի վրայ պիտի թափեմ, ու ձեր տղաքը և ձեր տղջիկները պիտի մտորարէանան, ու ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն. 18 - Եւ իմ ծառաներուս վրայ ու իմ տղախիններուս վրայ ալ այն օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ, և պիտի մտորարէանան : 19 - Ու վերը երկինքը հրաշքներ պիտի ցուցնեմ, ու վարը երկիրը՝ նշաններ, արիւն ու կրակ և ծուխի մտախառն. 20 - Արևը խաւարի պիտի դառնայ, և լուսինը՝ արիւնի, դեռ Տէրօջը մեծ ու երևելի օրը չեկած : 21 - Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ Տէրօջը անուներ կանչէ՝ պիտի փրկուի : 22 - Ով Խորայելացի մտորիկ, լսեցէք այս խօսքերը . Յիսուս Նազովրեցին, Աստուծոյ ձեզի ցուցուած մտոր մը զօրութիւններով ու հրաշքներով և նշաններով, զորոնք Աստուած անոր ձեռքով բրաւ ձեր մէջ, ինչպէս դուք ալ գիտէք, 23 - Անիկա Աստուծոյ սրտած խորհրդովը և կանխագիտութիւնովը մասնուած ըլլալով՝ առիք և * անօրէններու ձեռքով փայտի վրայ գամելով ապաննեցիք. 24 - Զոր Աստուած յարուց՝ մահուան ցուերը քակելով, քանզի հնար չէր որ ինք անկէ բռնուի : 25 - Վասն զի Գալիլէոս անոր համար կ'ըսէ, Ամէն տառն Տէրը կը տեսնէի իմ առջևս, քանզի իմ աջ կողմն է, որպէս զի շատասնիմ . 26 - Անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս, ու իմ լեզուս ցնծաց . նաև իմ մտորմինս ալ յաւնով պիտի հանգատանայ. 27 - Վասն զի իմ անձս զգերեզմանին մէջ պիտի չթողուս, ու քու Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի շտա : 28 - Կենաց ճամբաները ինձի ճանչցուցիր . քու երեսիդ ուրախութիւնովը զիս պիտի լեցնես : 29 - Մարգիկ եղբայրներ, արժան է համարձակ գրուցել ձեզի Գալիլէոս նահապետին

համար, թէ մեռաւ ու թաղուեցաւ, և անոր գերեզմանը մինչև այսօր մեր մէջ է : 30 - Արդ որովհետև անիկա մտորարէ էր, և գիտէր թէ Աստուած հաստատ երգում՝ բրաւ իրեն, թէ իր երկամուկներուն պատուէն մտորմնի կողմանէ Քրիստոսը պիտի յարուցանէ որ իր աթոռը նստի, 31 - Ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեանը համար, թէ անոր անձը գերեզմանը չթողուեցաւ, և անոր մտորմինը ապականութիւն չտեսաւ : 32 - Այս Յիսուսը Աստուած յարուց, որու մէջ ամէն ալ վկայ ենք : 33 - Ուստի Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով, ու Հոգւոյն Սրբոյ խտամունքը Հօրմէն առնելով՝ տարածեց ասիկա, զոր դուք հիմա կը տեսնէք և կը լսէք : 34 - Վասն զի Գալիլէոս երկինք չելաւ, բայց ինք կ'ըսէ, Տէրը իմ Տէրօջս բուսաւ, նստէ իմ աջ կողմն, 35 - Մինչև քու թշնամիներդ առքերուդ պատուանդան դնեմ : 36 - Ուստի բոլոր Խորայելի տունը ճշմարտապէս թող գիտնայ, որ Աստուած զանիկա Տէր ալ բրաւ՝ Օծեալ ալ, այն Յիսուսը զոք դուք խաչեցիք : 37 - Ու զայս երբ լսեցին, էրեւոյ սիրտերուն մէջ զզջացին, և ըսին Պետրոսի ու միւս առաքեալներուն, Մարգիկ եղբայրներ, ի՞նչ ընենք : 38 - Եւ Պետրոս ըսաւ անոնց, Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը մեղքերու թողութեան համար, և Հոգւոյն Սրբոյ պարգևը պիտի ընդունիք : 39 - Վասն զի խտամունքը ձեզի է ու ձեր որդիներուն, և ամէն հեռու եղողներուն՝ զորոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ : 40 - Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն կու տար, ու կը յորդորէր զանոնք և կ'ըսէր, Այս խտարած աղգէն ինքզինքնիդ աղատեցէք : 41 - Եւ անոնք որ սրտանց ընդունեցին անոր խօսքերը, մկրտուեցան . ու այն օրը երեք հազար հոգի չափ աւելցան : 42 - Եւ միշտ առաքեալներուն վարդապետութեանը ետեւէ էին, ու միարանութեանը և հաց կարելուն ու աղօթքներուն : 43 - Եւ ամէն մտորու վրայ վախ ինկաւ . և առաքեալներուն ձեռքով շատ հրաշքներ ու նշաններ կը գործուէին : 44 - Ու բոլոր հաստատեալ

*Կա՛մ, անօրէն
†Կա՛մ, դժսիրքին

Ներք մէկտեղ էին, և ամէն բաներնին հասարակաց էր: 45 - Ու ստացուածքնին և ունեցած բաներնին կը ծախէին, ու անոնց քննչ կը բաժնէին ամէնուն, որու որ բան մը պէտք ըլլար: 46 - Եւ ամէն օր միաբանութեամբ տաճարը երթալու ետեւէ էին, և տուներնին հաց կը կտրէին, ու կերակուրնին կ'ուտէին ուրախութեամբ և միամտութեամբ սրտի. 47 - ԶԱստուած կ'օրհնէին, ու բոլոր ժողովուրդին առջև շնորհք կը գտնէին. և Տէրը օրէ օր փրկուածները կ'աւելցնէր եկեղեցիին:

ԳԼ. Գ

Արդ Պետրոս ու Յովհաննէս իննեքսրդ ժամու աղօթքին առեւնք մէկտեղ տաճարը կ'ելլէին: 2 - Եւ իր մօրը ուրովայնէն կաղ շնորհ մարդ մը կը բերուէր, զոր ամէն օր տաճարին Գեղեցիկ կոչուած դրանը քով կը դնէին, որպէս զի տաճարը մանողներէն սղարմութիւն խնդրէ: 3 - Ասիկա տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը որ տաճարը մտնելու վրայ էին, կ'աղաչէր որ սղարմութիւն առնէ: 4 - Իսկ Պետրոս Յովհաննէսի հետ մէկտեղ անոր նայեցաւ ու ըսաւ, Մեզի նայէ. 5 - Ան ալ դէպ ի անոնք դարձաւ ու կը յուսար անոնցմէ բան մը առնել: 6 - Եւ Պետրոս ըսաւ, Արժաթ ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ զայն քեզի կու տամ. Նաշովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը ելիր ու քայէ: 7 - Եւ անոր աջ ձեռքէն բռնեց վերցուց զանի, ու իսկոյն անոր ոտքին թաթերը ու կոճերը զօրացան: 8 - Եւ վեր ցաթկելով կայնեցաւ ու կը քայէր, և անոնց հետ տաճարը մտաւ, քայելով ու ցաթկելով և զԱստուած օրհնելով: 9 - Ու բոլոր ժողովուրդը տեսաւ զանիկա որ կը քայէր ու կ'օրհնէր զԱստուած. 10 - Եւ կը ճանչնային թէ անիկա էր, որ սղարմութեան համար տաճարին Գեղեցիկ կոչուած դրանը քով կը նստէր. և զարմանքով ու ապշութեամբ լեցուեցան անոր եղած բանին համար:

11 - Եւ քանի որ անիկա Պետրոսի ու Յովհաննէսի յարեր էր, բոլոր ժողովուրդը զարմացած մէկտեղ վազե-

ցին անոնց քով այն սրահը որ Սաղամնին կ'ըսուէր: 12 - Զայս տեսնելով Պետրոս՝ պատասխան տուաւ ժողովուրդին, Ով Խորայեղացի մարդիկ, ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ, կամ ինչո՞ւ աչքերնիդ անկած մեզի կը նայիք, որպէս թէ մենք մեր զօրութիւնովը կամ բարեպաշտութիւնովը ասոր քայել տուած ըլլանք: 13 - Աբրահամի ու Իսահակի և Յակոբի Աստուածը, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց իր Որդին Յիսուսը, զոր դուք մասնեցիք, և ուրացաք Պիղատոսի առջև՝ երբ ինք վճռեց որ արձակէ: 14 - Բայց դուք այն Սուրբ և Արդարը ուրացաք, ու խնդրեցիք որ մարդասպան մարդ մը ձեզի շնորհուի. 15 - Եւ կենաց Աւաջնորդը սպաննեցիք, զոր Աստուած մեռելներէն յարուց, որու մենք վկայ ենք. 16 - Եւ անոր անուանը հաւատաքով՝ անոր անունը հաստատեց ասիկա, զոր դուք կը տեսնէք ու գիտէք. և այն հաւատաքը որ անով է՝ այս առողջութիւնը ասոր տուաւ ձեր ամէնուն առջև: 17 - Եւ հիմա, եղբայրներ, գիտե՛մ որ չգիտնալով ըրիք, ինչպէս ձեր իշխաններն ալ: 18 - Բայց Աստուած ինչ որ առաջուրնէ իր բոլոր մարգարէներուն բերնով յայտներ էր Քրիստոսի չարչարուելուն վրայով, սոյպէս կատարեց: 19 - Ուստի ապաշխարեցէք ու դարձի եկէք, որպէս զի մեզքերնիդ ջնջուի. 20 - Որպէս զի սիսոփանաց ժամանակները գան Տէրոջը երեսէն, և առաջուրնէ ՚ձեզի քարոզուած՝ Յիսուս Քրիստոսը զրկէ. 21 - Զոր պէտք է որ երկինք բնդունի մինչև այն տեսները՝ որ ամէն բաները կարգադրուին, որոնց համար Աստուած սկիզբէն ի վեր իր սուրբ մարգարէներուն բերնով խօսած է: 22 - Է՛մ Մովսէս Դէր հայրերուն ըսաւ թէ Զեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինձի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի. անոր մտիկ ըրէք՝ ամէն ինչ որ ձեզի խօսի: 23 - Եւ պիտի ըլլայ թէ ամէն ով որ այն մարգարէին մտիկ չընէ, ժողովուրդին մէջէն պիտի կորսուի: 24 - Ու բոլոր մարգարէները որոնք Աստուէլէ ի վեր խօսեցան,

*Ո՛հն, այն բժ չկուած կաղը

*կամ, ծառան
 †Ո՛հն, ձեզի համար սահմանուած
 ‡Ո՛հն, Բանցի Մովսէս

այս օրերուն համար ալ խնացցին : 25 - Իսուք էք մարգարէներուն օրգիները և այն ուխտին , զոր Աստուած մեր հայրերուն հետ ըրաւ , ու ըսաւ Աբրահամի , Եւ քու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը : 26 - Աստուած իր Պրզին յարուցանելով սուտջ ձեզի զրկեց զանկիա , որպէս զի ձեզ օրհնէ , ամէն մէկդ ձեր շարութիւններէն դարձնելով :

ԳԼ. Գ

Ա երբ անոնք ժողովուրդին կը խօսէին , քահանաները ու տաճարին իշխանը և սագուկեցիները անոնց վրայ հասան , 2 - Իժուարելով որ անոնք ժողովուրդին կը սորվեցնէին , և Յիսուսի միջոցով մեռելներէն յարութիւն առնելը կը քարոզէին . 3 - Առ ձեռք զարկին անոնց և բանտ դրին զանոնք մինչև հեռեկալ օրը , վասն զի ալ իրիկուն էր : 4 - Բայց այն խօսքը լսողներէն շատերը հաւատացին , ու մարդոց թիւը հինգ հազարի չափ եղաւ :

5 - Առ եղաւ որ հեռեկալ օրը մէկտեղ ժողովուրդան անոնց իշխանները և ծերերը ու դպիրները Երուսաղէմի մէջ , 6 - Նաև Աննա քահանայապետը ու Կայիտիա և Յովհաննէս ու Աղեքսանդրոս և այն ամէնը որ քահանայապետի ցեղէ էին . 7 - Եւ զանոնք մէջտեղը կայնեցուցած՝ կը հարցնէին , Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ անուով բրիք դուք այս բանը : 8 - Այն ատեն Պետրոս Հոգևով Սբբով լեցուած՝ ըսաւ անոնց , Ավ ժողովուրդին իշխանները և Իսրայէլի ծերերը , 9 - Եթէ մենք այսօր ահար մարդու մը եղած բարիքին համար կը բնոււինք , թէ ի՞նչ միջոցով անկիա բժշկուեցաւ , 10 - Յայտնի ըլլայ ձեզի ամէնուդ ու բոլոր Իսրայէլի ժողովուրդին , որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը , զոր դուք խաչեցիք , և զոր Աստուած մեռելներէն յարուց , անով ասիկա ձեր առջև բժշկուած կեցեր է : 11 - Անիկա է այն քարը ձեզմէ շինողներէդ անարգուած , որ անկիւնի գլուխ եղաւ . 12 - Եւ ուրիշ մէկով փրկութիւն չկայ . վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ մարդոց

մէջ արուած , որով կարող ըլլանք փրկուիլ : 13 - Իսկ անոնք Պետրոսի ու Յովհաննէսի համարձակութեանը նայելով , և հասկնալով որ ազէտ ու առանց ուսման մարդիկ են , կը զարմանային . և իմօցան որ անոնք Յիսուսի հետ էին . 14 - Առ այն բժշկուած մարդը տեսնելով որ անոնց հետ կայներ էր , չէին կրնար անոնց դէմ՝ բան մը խօսիլ : 15 - Եւ հրամայելով անոնց որ տեսնեն զուրս ելլեն , իրարու հետ խորհուրդ բրին , 16 - Եւ ըսին , Ի՞նչ ընենք այս մարդոց . վասն զի Երուսաղէմի բոլոր բնակիչներուն յայտնի է թէ ասոնց ձեռքով երևելի հրաշք մը եղաւ , ու մենք չենք կրնար ուրանալ : 17 - Միայն թէ ժողովուրդին մէջ ալ աւելի շատրածուելու համար՝ սաստիկ սպառնալիք ընենք անոնց , որ այն անունով մէյմըն ալ չըլլայ որ մարդու բան խօսին : 18 - Եւ զանոնք կանչելով՝ պատուիրեցին անոնց որ ամենեին չխօսին և չսորվեցնեն Յիսուսի անունովը : 19 - Բայց Պետրոս ու Յովհաննէս պատասխան առին անոնց ու ըսին , Եթէ Աստուծոյ առջև ուղիղ է որ Աստուծա՛յ աւելի ձեզի մտիկ ընենք , դուք դատեցէք : 20 - Վասն զի մենք զայն որ տեսանք ու լսեցինք՝ չենք կրնար չխօսիլ : 21 - Իսկ անոնք նորէն սպառնալիք ընելէ ետև արձակեցին զանոնք , բան մը չգանելով թէ ի՞նչ պէտք պատժեն զանոնք , ժողովուրդին համար , քանզի ամէնն ալ զԱստուած կը փառաւորէին եղած բանին համար : 22 - Վասն զի այն մարդը քառասուն տարեկանէ աւելի էր , որուն վրայ այս բժշկութեան հրաշքը եղաւ :

23 - Եւ անկէ արձակուելով՝ իրենցներուն քով եկան , ու պատմեցին ինչ որ քահանայապետները և ծերերը իրենց ըսին : 24 - Անոնք ալ երբ լսեցին , միաբանութեամբ ձայներնին Աստուծոյ վերջուցին՝ ըսելով , Ավ Տէր , դուն ես այն Աստուածը , որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները ստեղծեցիր , 25 - Որ քու ծառայիդ Գաւթի ըրնով խօսեցար , Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն ըրին , ու ժողովուրդները պարագայ բաներ մտածեցին . 26 - Երկրի թագաւորները պատրաստ կայնեցան , և իշխանները մէկտեղ ժողովուրդան Տէրոջդ դէմ՝ և անոր Օձեային դէմ : 27 -

*Ո՛ւնչ , Որդին Յիսուսը

Քանզի արդարև [այս քաղաքին մէջ] ժողովուեցան քու սուրբ Արդւոյդ Յիսուսի վրայ, զոր դուն օծեցիր, Հերովդէս և Պոնտացի Պիղատոս, ազգերուն հետ ու Իսրայէլի ժողովուրդներուն հետ, 28 - Ընել՝ ինչ որ քու ձեռքդ և խորհուրդդ սահմանեց առաջուրնէ որ ըլլայ : 29 - Եւ չիմա, ով Տէր, նայեանոնց սպառնալիքներուն, ու շնորհէ քու ծառաներուդ, որպէս զի բոլոր համարձակութիւնով քու խօսքդ խօսինք, 30 - Քու ձեռքդ երկնցնելով քժշկելու, և քու սուրբ Արդւոյդ Յիսուսի անուևովը նշաններ ու հրաշքներ ըլլալու : 31 - Աւ երբ անոնք աղօթք բրին, շարժեցաւ այն տեղը՝ ուր ժողովուած էին, և ամէնը Հոգւով Սրբով լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը խօսէին :

32 - Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ սիրա ու մէկ հոգի ունէին . և անոնցմէ մէկը չէր բեր իր ստացուածքներէն մէկուն համար՝ թէ իրն է, հապա իրենց ամէն բաները հասարակաց կը սեպէին : 33 - Եւ մեծ գորութիւնով առաքեալները վկայութիւն կու տային Տէր Յիսուսի յարութեանը, և անոնց ամէնուն վրայ մեծ շնորհք կար : 34 - Աւ անոնց մէջ կարօտութիւն քաշող մը չկար, վասն զի անոնք որ ազարակներու կամ տուներու տէր էին, կը ծախէին և ծախուածներուն գիները կը բերէին, 35 - Աւ առաքեալներուն սօքը կը դնէին . և ամէն մէկուն իր կարօտութեանը նայելով կը բաժնուէր : 36 - Եւ Յովսէս, որ առաքեալներէն Բաւնաբոս մականուանեցաւ, (որ կը թարգմանուի Մխիթարութեան որդի,) Լևտացի, ծնունդով Կիպրացի, 37 - Ազարակ մը ունենալով, ծախեց ու ստակը բերաւ՝ առաքեալներուն սօքը դրաւ :

ԳԼ. Ե

Բայց մարդ մը Անանիա անուևով իր կնոջ Սափիրայի հետ մէկտեղ ստացուածք մը ծախեց . 2 - Եւ անոր գինէն խորեց, մինչ կինն ալ պիտէր, ու մէկ բաժինը բերաւ առաքեալներուն սօքը դրաւ : 3 - Եւ Պետրոս բաւաւ, Անանիա, ինչո՞ւ Աստանայ քու սիրտդ լեցուց, որ դուն Հոգւոյն Սրբոյ առաւ խօսիս, ու ազարակին գինէն

խորեա. 4 - Չէ՞ որ քուկդ էր այն՝ քանի որ կեցեր էր, ու ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակ էր . ի՞նչ է որ քու սրտիդ մէջ այս բանը դրիր . ոչ թէ մարդոց սուա խօսեցար, հապա Աստուծոյ : 5 - Եւ Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգի տուաւ . և մեծ վախ ինկաւ ամէնուն վրայ որոնք վայս լսեցին : 6 - Աւ երիտասարդները ելան ու պատնեցին զանկիս, և դուրս հանելով թաղեցին : 7 - Աւ երբ երեք ժամու չափ վրան անցաւ, անոր կինը չգիտնալով ինչ որ եղեր էր, ներս մտաւ . 8 - Եւ Պետրոս բաւանոր, Ըսէ ինձի, ազարակը ա՞յնչափ բնով ծախեցիք . ան ալ բաւաւ, Այո, այնչափ : 9 - Աւ Պետրոս բաւանոր, Այդ ի՞նչ է որ դուք միարանեցաք Տէրոջը Հոգին փորձելու . ահա քու սյրդ թաղողներուն սօքերը դրանք քով են, քեզ ալ դուրս պիտի հանեն : 10 - Եւ իսկոյն անոր սօքերուն քով ինկաւ ու հոգի տուաւ . և երիտասարդները ներս մանելով՝ զանկիս մեռած գաան, ու հանեցին իր երկանք քով թաղեցին : 11 - Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին վրայ ու ամէնուն վրայ որոնք այս բաները լսեցին :

12 - Եւ առաքեալներուն ձեռքով շատ նշաններ ու հրաշքներ կ'ըլլային ժողովուրդին մէջ . և ամէնը միարանութեամբ Սողամոնի սրահին մէջ էին : 13 - Եւ ուրիշներէն մէկը չէր համարձակեր անոնց յարիլ, հապա ժողովուրդը կը մեծարէր զանոնք : 14 - Եւ Տէրոջը հաւատացողները ա՛լ աւելի կը շտանային, բազմութիւն այրերու ու կիներու . 15 - Այնպէս որ հիւանդները հրապարակները կը հանէին, և պաագարակներով ու մահիճներով կը դնէին, որպէս զի Պետրոսի անցնելու ատենը՝ գտնէ անոր շուքը անոնց մէկուն վրայ հասնի : 16 - Աւ շրջակայ քաղաքներուն բազմութիւնը երուսաղէմ՝ կը ժողվուէր, հիւանդներ և պիղծ սգիներէ նեղութիւն կրողներ բերելով, որոնք ամէնն ալ կը բժշկուէին :

17 - Ոտք ելաւ քահանայագետը և բոլոր իրեն հետ եղողները որոնք սագուկեցուց ազանդէն էին, նախանձով լեցուած, 18 - Աւ առաքեալներուն ձեռք գորկին և հասարակաց բանաք դրին զանոնք : 19 - Բայց Տէրոջը հրեշտակը զիշերով բանաին դաները բա-

ցաւ , ու դուրս հանելով զանոնք՝ քա-
տաւ , 20 - Գացէք և տաճարին մէջ
կայնելով ժողովուրդին խօսեցէք այս
կենաց բոլոր խօսքերը , 21 - Ու երբ
զայս լսեցին , տաճարը մտան առտուանց
և կը սորվեցնէին . իսկ քահանայա-
պետը եկաւ ու իրեն հետ եղբայները ,
ու մէկտեղ կանչեցին ժողովքը ու խո-
րայէլի որդիներուն բոլոր ծերակոյսար ,
և մարգարէներէն բանար , որպէս զի
զանոնք բերեն : 22 - Ու երբ սպասա-
ւորները գացին , զանոնք բանաին մէջ
չգանելով՝ ետ դարձան , պատմեցին ,
23 - Եւ ըսին թէ Բանար ամէն զգու-
շութիւնով գոցուած գտանք , ու պա-
հաստները դռներուն առջև կայնած ,
քայց բանալով՝ ներսը մարդ չգտանք :
24 - Ու երբ մէջ քահանան և տաճա-
րին իշխանը ու քահանայապետները
լսեցին այս խօսքերը , կը վարմանային
անոնց համար թէ ի՛նչ պիտի ըլլայ
այն : 25 - Եւ մէկը եկաւ պատմեց ա-
նոնց թէ Ահա այն մարդիկը զորոնք
բանար դրիք , տաճարը կայներ են և
ժողովուրդին կը սորվեցնեն : 26 - Այն
ատեն իշխանը սպասաւորներովը մէկ-
տեղ գնաց զանոնք բերաւ առանց
բռնութեան , քանզի ժողովուրդէն կը
վախնային , որ չբարկածուին : 27 - Ու
բերին զանոնք ատենը կայնեցուցին .
և քահանայապետը անոնց հարցուց՝
28 - Ըսելով , Չէ՞ որ սաստիկ պատուի-
րեցինք ձեզի որ այս անունով չսորվե-
ցընէք . և ահա Երուսաղէմը ձեր ուս-
մունքովը լեցուցիք , և այն մարդուն
տրիւնը կ'ուզէք մեր վրայ բերել :

29 - Պատասխան տուաւ Պետրոս և
մարտնչ առաքեալները ու ըսին , Առա-
ւել Աստուծոյ հնազանդիլ պէտք է
քան թէ մարդոց : 30 - Մեր հայրերուն
Աստուածը Յիսուսը յարուց , զոր դուք
փայտէն կախելով սպաննեցիք : 31 -
Չանիկա Աստուած իր աջ ձեռքով
Առաջնորդ ու Փրկիչ ըլլալու բարձ-
րացուց , Իսրայէլի ապաշխարութիւն
և մեղքերու թողութիւն տալու : 32 -
Եւ մենք այս բաներուն համար անոր
վկաներ ենք , ու Սուրբ Հոգին ալ՝ զոր
Աստուած իրեն հնազանդ եղբայներուն
տուաւ : 33 - Եւ անոնք զայս լսելով
խիստ կառկեցան , ու կը խորհէին որ
զանոնք մեռցնեն :

34 - Եւ ատենին մէջ փարիսեցի
մը սաքի վրայ ելաւ , որուն անունը

Գամաղիէլ էր , օրինաց վարդապետ
մը , բոլոր ժողովուրդին առջև պատ-
ուաւոր մէկը , ու հրաման ըրաւ որ ա-
ռաքեալները քիչ մը դուրս հանեն .
35 - Եւ ըսաւ անոնց , Ով Իսրայէլացի
մարդիկ , դուք ձեզի զգուշացէք այս
մարդոց համար թէ ի՛նչ պիտի ընէք :
36 - Քանզի այս օրերէն առաջ Թե-
ոզաւ ելաւ , իրեն համար ըսելով թէ
Երեւելի մէկն է , ու թուով չորս հար-
իւրի չափ մարդիկ իրեն յարեցան .
ինք սպաննուեցաւ , և այն ամէնը որ
իրեն հնազանդեր էին , ցրուեցան ու
ոչինչ եղան : 37 - Անոր ետեւէն Յու-
զա Գալիլեացի ելաւ աշխարհագիր
եղած օրերը , և շատ ժողովուրդ իր
կողմը ձգեց . ինք ալ կորսուեցաւ , և
այն ամէնը որոնք իրեն հնազանդեր
էին , ցիրուցան եղան : 38 - Եւ հիմա
ձեզի կ'ըսեմ , Այդ մարդոցմէ մէկ-
զի կեցէք ու թող տուէք զանոնք ,
վասն զի եթէ այդ խորհուրդը կամ
գործը մարդոցմէ է՝ պիտի քակուի .
39 - Ապա եթէ Աստուծոմէ է՝ չէք
կրնար ատիկա քակել . չըլլայ թէ Աս-
տուծոյ դէմ մարտնչող ալ գանուիք :
40 - Եւ անոնք հաւանութիւն տուին
անոր . ու առաքեալները կանչելով՝ ծե-
ծեցին , և պատուիրելով որ մէջէն ալ Յի-
սուսի անունով չխօսին , արձակեցին
զանոնք : 41 - Անոնք ալ ժողովքին
առջևէն գացին , ու բախանալով որ
Տերջէ անուանը համար արժանի ե-
ղան անարգուելու : 42 - Եւ ամէն օր
տաճարը ու տուներուն մէջ չէին դա-
դարիւր սորվեցնելէ ու Յիսուս Քրիս-
տոսը քարոզելէ :

ԳԼ. 9

Եւ այն օրերը երբ աշակերտները
շատցան , * Հելլենացեալց կողմէն արե-
տուենջ մը եղաւ Եբրայեցուց դէմ , վասն
զի իրենց որբեւորիները ամէն օրուան
առաջին ժամ մատակարարուելուն մէջ
անտես կ'ըլլային : 2 - Եւ աստուերկու-
քը կանչեցին աշակերտներուն բազմու-
թիւնը ու ըսին , Մեզի չվայլեր Աս-
տուծոյ խօսքը ձգել ու սեղաններու
ծառայութիւն ընել : 3 - Ուստի եղ-
բայրներ , ձեզմէ եօթը հոգի ընարեցէք՝
Բարի վկայուած , Հոգևով Արքով և

* Այսինքն , Հելլենախօս Հրէից

իմաստութիւնով լեցուն , որպէս զի զանոնք այս գործին վրայ դնենք . 4 - Եւ ձենք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պաշտօնին պարսպինք : 5 - Եւ այս խօսքը բոլոր բազմութեան առջև հաճոյ երեցաւ . ու ընտրեցին Ստեփանոսը , հաւատքով ու հոգւով Սրբով լեցուն մարդ մը , ու Փիլիպպոսը , և Պրոքորոնը , ու Նիկանովրան , և Տիմոթեան , ու Պարմենան և Նիկողայոս նորահաւատ Անտիոքացին : 6 - Ասոնք առաքեալներուն առջև կայնեցուցին . անոնք ալ աղօթք ընելով՝ ձեռքերնին անոնց վրայ դրին : 7 - Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր , ու աշակերաններուն թիւը խիստ կը շատնար Երուսաղէմի մէջ . և քահանաներէն մեծ բազմութիւն հաւատարին կը հնազանդէին :

8 - Եւ Ստեփանոս , որ * հաւատքով ու զօրութիւնով լցուած մարդ մըն էր , մեծ շրաշքներ և նշաններ կ'ընէր ժողովուրդին մէջ : 9 - Բայց ոմանք այն ժողովարանէն , որ Ագատանգելոց և Կիւրենացոց ու Աղէքսանդրացոց Ժուդէոսն կ'ըսուէր , և * անոնք որ Կիլիկիայէ ու Ասիայէ էին , ելան ու Ստեփանոսի հետ վիճաբանութիւն կ'ընէին : 10 - Եւ չէին կրնար դէմ դնել այն իմաստութեանը ու հոգիին , որով կը խօսէր : 11 - Այն ատեն հրապուրեցին քանի մը մարդիկ , որպէս զի ըսեն թէ Մենք լսեցինք որ ասիկա հայհոյական խօսքեր կը խօսի Մովսէսի ու Աստուծոյ դէմ : 12 - Եւ զրգուցին ժողովուրդը ու ծերերը և դպիրները , ու անոր վրայ հասնելով զինք բռնեցին ու ատեանը տարին : 13 - Եւ սուս վկաներ կայնեցուցին , որոնք կ'ըսէին , Այս մարդը չգաղարիք հայհոյական բաներ խօսելէ սուրբ տեղիս և օրէնքին դէմ : 14 - Քանզի լսեցինք ասկէ որ կ'ըսէր թէ այս Նազովրեցի Յիսուսը պիտի քակէ այս տեղը , ու պիտի փոխէ Մովսէսի մեզի աւանդած սովորութիւնները : 15 - Եւ ատեանը նստողներուն ամէնը երբ անոր նայեցան , անոր երեսը հրեշտակի երեսի պէս տեսան :

ԳԼ Է

Այն ատեն քահանայապետը ըսաւ , Երաւցրնէ այդ բաները այդպէ՞ս են :

* Ո՛ւ՜ն , շնորհքով .

2 - Եւ անիկա ըսաւ , Մարդիկ եղբայրներ ու հայրեր , մտիկ ըրէք . Փառաս Աստուածը մեր հօրը Աբրահամի երեցաւ , քանի որ Միջագետի մէջ էր , դեռ Խառանի մէջ չբնակած , և ըսաւ անոր , 3 - Ելիր քու երկրէդ և քու ազգականներէդ , ու եկուր այն երկիրը զոր ես քեզի պիտի ցուցնեմ : 4 - Այն ատեն Քաղդէացոց երկրէն ելլելով՝ Խառանի մէջ բնակեցաւ . և անոր հօրը մեռնելէն ետև անկէ փոխադրեց զանիկա այս երկիրը , ուր դուք հիմակը բնակիք : 5 - Եւ ասոր մէջ անոր ժառանգութիւն չտուաւ , ոչ ալ ուսքի քայլ մը * էր , բայց խոստացաւ որ ասիկա իրեն ասոյ իրը կալուածք , և իրմէ ետև իր սերունդին , երբ դեռ ինք որդի չունէր : 6 - Եւ Աստուած այսպէս խօսեցաւ , թէ անոր սերունդը օտար երկրի մէջ պանդուխտ պիտի ըլլայ , ու պիտի ծառայեցնեն զանիկա և չարչարեն չորս հարիւր տարի : 7 - Եւ այն ազգը , որու պիտի ծառայեն , ես պիտի դատեմ , ըսաւ Աստուած , և անկէ ետև պիտի ելլեն ու այս տեղ զիս պաշտեն : 8 - Եւ անոր թլփատութեան ուխտը տուաւ , ու ետքը Աբրահամ Խառանի դնաւ , և թլփատեց զանիկա ու թերորդ օրը . Խառանի ալ Յակոբը * , Յակոբ ալ՝ տասուերկու նահապեաները : 9 - Եւ նահապեաները Յովսէփի վրայ նախանձելով՝ Եգիպտոս * Երուսաղէմ ծախեցին . բայց Աստուած անոր հետ էր , 10 - Ու փրկեց զանիկա իր ամէն նեղութիւններէն , և անոր շնորհք ու իմաստութիւն տուաւ Եգիպտոսի Փարաօնի թագաւորին առջև . ան ալ զանիկա իշխան դրաւ Եգիպտոսի ու իր բոլոր ասանք վրայ : 11 - Ու Եգիպտոսի և Քանանու բոլոր երկրին վրայ սով մը եկաւ ու մեծ նեղութիւն , և մեր հայրերը ու տեղիք չէին դաներ : 12 - Եւ Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը գտնուի , առաջին անգամին մեր հայրերը զրկեց : 13 - Եւ երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչցուց ինքզինք . ու Յովսէփի ազգը փարաօնի յայտնի եղաւ : 14 - Եւ Յովսէփ զրկեց՝ ու կանչեց իր հայրը Յակոբը ու բոլոր ազգատոհմը , եօթանասունը հինգ հոգի : 15 - Եւ Յակոբ Եգիպտոս իջաւ , ու մեռաւ ինք ու մեր հայրերը . 16 - Եւ Սիւքեմ տարուելով՝ այն գերեզմանին մէջ

գրուեցան, զոր Աբրահամ արծաթի գնով ծախու առեր էր Սիւքեմի հօրը Եմօլի որդիներէն: 17 - Աւերք մօտեցաւ խոտամունքին ատենը, զոր Աստուած երգումով խոտացեր էր Աբրահամի, ժողովուրդը ածեցաւ ու շատցաւ Եգիպտոսի մէջ, 18 - Մինչև ուրիշ թագաւոր մը ելաւ, որ Յովսէփը չէր ճանչնար: 19 - Անիկա հնարք բանեցուց մեր ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը, մինչև անգամ անոնց տղաքը գուրս ձգել էր, որպէս զի չտարին: 20 - Այն ժամանակ Մովսէս ալ ծնաւ, և Աստուծոյ առջև գեղեցիկ էր, որ իր հօրը սուներ մեծցաւ երեք ամիս: 21 - Աւերք անիկա գուրս ձգուեցաւ, Փարաօնի աղջիկը զանիկա վերցուց, և իրեն իբրև որդի մեծցուց: 22 - Աւ Մովսէս Եգիպտոսացոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործերովը: 23 - Աւերք քառասուն տարեկան եղաւ, իր սիրտը ինկաւ իր եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, այցելուածիւն ընել: 24 - Աւ Իսրայէլացիներէն մէկը հարստահարուած տեսնելով պաշտպանեց, և զրկուածին վրէժը առաւ՝ այն Եգիպտացին սպաննելով: 25 - Կը կարծէր թէ իր եղբայրները պիտի իմանային որ Աստուած իր ձեռքով անոնց ազատութիւն պիտի տար, բայց անոնք չիմացան: 26 - Աւ հեռեկայ օրը անոնց դիմաց ելաւ երբ կը կուռէին, և խողաղութիւն ընելու ստիպեց զանոնք՝ ըսելով, Մարդիկ, դուք եղբայրներ էք, ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք: 27 - Բայց ան որ ընկերը կը զրկէր, մերժեց զանիկա, ու ըսաւ, Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ: 28 - Զի՞ն ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ Եգիպտացին սպաննեցիր: 29 - Եւ Մովսէս այս խօսքին վրայ փախաւ, ու Մարիամու երկրին մէջ պանդուխտ եղաւ, ուր երկու օրդի ծնաւ: 30 - Եւ քառասուն տարի անցնելէն ետե՛ Երնալեռանը անապատին մէջ Տերօջը հրեշտակը երեցաւ անոր մորենի կրակի բոցով: 31 - Մովսէս ալ երբ տեսաւ, զարմացաւ այն տեսիլքին վրայ, ու երբ մօտեցաւ զննելու, Տերօջը ձայնը եկաւ անոր « Ե՛րբ, 32 - Ես եմ՝ քու հայրերուդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի

Աստուածը. Մովսէս ալ լսելէ՛ն դողալով՝ չէր համարձակեր զննել: 33 - Եւ Տերը ըսաւ անոր, Ոտքերուդ կօշիկները հանէ, վասն զի այդ տեղը ուր դուն կայնիր ես՝ սուրբ երկիր է: 34 - Յիրաւի Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը տեսայ, ու լսեցի անոնց հաւառանքը, և իջայ զանոնք ազատելու. և հիմա եկուր քեզ Եգիպտոս զրկեմ: 35 - Այն Մովսէսը զոր ուրացան ու կ'ըսէին, Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր դրաւ, Աստուած զանիկա իշխան և փրկիչ զրկեց այն հրեշտակին ձեռքով որ մորենիին մէջ անոր երեցաւ: 36 - Անիկա հանեց զանոնք, հրաշքներ ու նշաններ ընելով Եգիպտոսի երկրին ու կարմիր ծովուն մէջ, և անապատին մէջ քառասուն տարի: 37 - Այս Մովսէսն է որ ըսաւ Իսրայէլի որդիներուն, Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի, անոր մօտիկ ըլլէք: 38 - Ասիկա ան է որ անապատը ժողովքին մէջ էր՝ Մինալեռան վրայ իրեն խօսող հրեշտակին հետ ու մեր հայրերուն հետ, որ կենդանի պատգամներ առաւ մեզի տալու: 39 - Արու մեր հայրերը չուզեցին հնազանդ ըլլալ, հապա մերժեցին և իրենց սիրտերովը Եգիպտոս դարձան, 40 - Եւ ըսին Ահարոնի, Մեզի աստուածներ չինէ, որպէս զի մեր առջևէն երթան. քանզի այն Մովսէսը որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց, չէնք գիտեր թէ ի՞նչ եղաւ անոր: 41 - Եւ այն օրերը որթ մը շինեցին, ու կուռքին զո՞հ մատուցին, և իրենց ձեռքերուն գործերովը կը զուարճանային: 42 - Աստուած ալ երէ՛ գարձուց, ու թողուց զանոնք որ երկինքի զօրքը պաշտեն. ինչպէս գրուած է մարգարէներուն գիրքին մէջ, Միթէ անապատին մէջ քառասուն տարի զոհեր ու պատարագներ մատուցիք ինծի, ով Իսրայէլի սուներ: 43 - Եւ Մօզսքի վրանը առիք ու ձեր Հռեմփա աստուծոյն աստղը, այն պատկերները զորոնք շինեցիք անոնց երկրպագութիւն ընելու. ես ալ ձեզ Բաբելոնէ անգին պիտի փոխադրեմ: 44 - Վկայութեան խորանը անապատին մէջ մեր հայրերուն հետ էր, ինչպէս Մովսէսի հետ խօսողը հրաման ըրաւ որ տեսած օրինակին պէս շինէ զանիկա: 45 - Զոր մեր հայրերն ալ յաջորդաբար առնելով

Յետուի հետ բերին զանիկա այն ազգե-
 դերուն կալուածքը, զարնք Աստուած
 վռնտեց մեր հայրերուն առջևէն մին-
 չև Գաւթի օրերը, 46 - Որ Աստուծոյ
 առջև շնորհք գտաւ, և ուզեց որ Յակո-
 բի Աստուծոյն բնակարան մը գտնէ :
 47 - Ու Սողոմոն անոր տուն մը շինեց :
 48 - Սակայն Բարձրեայր ձեռքով շին-
 ուած տաճարներու մէջ չբնակիր, ինչ-
 պէս մարգարէն կ'ըսէ, 49 - Երկինք
 իմ աթոռս է, ու երկիր իմ սաքերուս
 պատուանդանն է. ո՞րպիսի տուն պիտի
 շինէք ինձի, կ'ըսէ Տէրը, կամ ի՞նչ
 պիտի ըլլայ իմ հանգստութեանս տե-
 որ. 50 - 2^է որ այս ամէնը իմ ձեռքս
 ինէր է : 51 - Ով խոտապարանոցներ
 ու սրտով և ականջով չթլփատուած-
 ներ, գուք ամէն տառն Հոգւոյն Սրբոյ
 հակառակ կը կենաք, ինչպէս ձեր հոյ-
 րերը՝ այնպէս ալ գուք : 52 - Մարգա-
 րէներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրե-
 րը, ու սպաննեցին զանոնք որ առաջ-
 ուրնէ պատմեցին այն Արդարին գա-
 լուն համար, որուն գուք հիմա մտա-
 նիչները և սպաննողները եղաք . 53 -
 Դուք որ օրէնքը առիք հրեշտակնե-
 րուն մտասկարարութիւնովը ու չպա-
 հեցիք :

54 - Եւ անոնք այս բաները լսելով
 սիրտերնուն մէջ կը կատողէին ու ակ-
 ուաներնին անոր վրայ կը կրճտէին :
 55 - Բայց անիկա Հոգւով Սրբով լեց-
 ուած՝ երկինք նայեցաւ և տեսաւ Աս-
 տուծոյ փառքը, ու Յիսուսն ալ որ Աս-
 տուծոյ աջ կողմը կայներ էր, և ըսաւ,
 Ահա կը տեսնեմ երկինքը բացուած,
 ու Արդին մարդոյ՝ Աստուծոյ աջ կող-
 մը կայնած : 56 - Իսկ անոնք մեծածայն
 աղաղակելով՝ ականջներնին գոցեցին,
 և ամէնը մէկէն վազեցին անոր վրայ .
 57 - Ու քաղաքէն դուրս հանելով՝ կը
 քարկոծէին զանիկա. և վկաները իրենց
 հանդերձները ահ կը գնէին երիտա-
 սարդի մը սաքերուն քով, որ Սողոմ
 կ'ըսուէր : 58 - Եւ կը քարկոծէին Սաե-
 փանոսը, որ աղօթք կ'ընէր ու կ'ըսէր,
 Տէր Յիսուս, բնդունէ իմ հոգիս : 59 -
 Ու ծունկի վրայ գայով բարձրածայն
 աղաղակեց, Տէր, այս մեզքը մի սե-
 պեր ատոնց . և գոյս բտելով ննջեց :
 Սողոմ ալ կամակից էր անոր սպան-
 նուելուն :

ԳԼ. Ը

Եւ այն օրը մեծ հալածում եղաւ
 Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին
 վրայ, և առաքեալներէն զատ ամէնն
 ալ ցիրուցան եղան Հրէաստանի ու
 Սամարիայի երկիրներուն մէջ : 2 - Եւ
 աստուածավախ մարդիկ Սաեփանոսը
 վերցուցին, ու անոր վրայ մեծ սղբ ը-
 րին : 3 - Բայց Սօզոս եկեղեցիին շատ
 վնաս կու տար, տուները կը մտնէր,
 սյրեր ու կիներ կը քաշէր՝ բանա գնել
 կու տար :

4 - Եւ այն ցիրուցան եղածները կը
 պարտէին ու խօսքը կը քարոզէին : 5 -
 Փիլիպպոս ալ Սամարիայի մէկ քա-
 ղաքը իջնելով՝ Քրիստոսը կը քարո-
 շէր անոնց : 6 - Եւ ժողովուրդները
 միաբան Փիլիպպոսի ըսածներուն
 ու շաղբութիւն կու տային՝ լսե-
 լով ու տեսնելով այն նշանները զո-
 րոնք կ'ընէր : 7 - Վասն զի շատ դի-
 ւահարներէն պիղծ սգիները մեծածայն
 աղաղակելով կ'ելլէին : 8 - Եւ շատ
 անդամալոյծներ ու կաղեր կը բժըշ-
 կուէին . 9 - Ու մեծ ուրախութիւն ե-
 ղաւ այն քաղաքին մէջ : Բայց Սիմոն
 անուևով մարդ մը կար, որ առաջուր-
 նէ այն քաղաքին մէջ մագութիւն կը-
 նէր, ու Սամարացւոց սպգը կ'ապշե-
 ցընէր, իրեն համար լսելով թէ մեծ
 մէկն է . 10 - Որու ուշադրութիւն կու
 տային ամէնն ալ, պզտիկէն մինչև
 մեծը, և կ'ըսէին, Ասիկա Աստուծոյ
 մեծ [ըսուած] զօրութիւնն է : 11 -
 Շատ ժամանակէ ի վեր կախարհու-
 թիւններով զանոնք ապշեցնելուն հա-
 մար՝ իրեն ուշադրութիւն կու տային :
 12 - Բայց երբ Փիլիպպոսի հաւատա-
 ցին, որ Աստուծոյ թագաւորութեանը
 ու Յիսուս Քրիստոսի անուանը վրայով
 կը քարոզէր, կը մկրտուէին թէ՛ տղերք
 և թէ՛ կիներ : 13 - Եւ Սիմոն ինք ալ
 հաւատաց, ու մկրտուելով՝ միշտ Փի-
 լիպպոսի հետ էր . և տեսնելով այն
 նշանները ու մեծ զօրութիւնները ո-
 րոնք կ'ըլլային՝ կը զարմանար : 14 -
 Իսկ Երուսաղէմի մէջ եղող առաք-
 եալները երբ լսեցին թէ Սամարացիք
 Աստուծոյ խօսքը բնդունէր են, Պեա-
 րոսը ու Յովհաննէսը անոնց զրկեցին .
 15 - Որոնք իջնելով՝ աղօթք րբին ա-
 նոնց համար որպէս զի Սուրբ Հոգին
 առնեն . 16 - (Վասն զի դեռ անոնց

մէկո՛ւն վրայ իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտուած էին .) 17 - Այն ստե՛ն ձեռքերնին գրին անոնց վրայ , ու Սուրբ Հոգին կ'առնէին : 18 - Երբ տեսաւ Սիմոն թէ առաքեալներուն անոնց վրայ ձեռք դնելովը Սուրբ Հոգին կը արուի , անոնց ստակ մատուց ու ըսաւ , 19 - Ինձի ալ այս իշխանութիւնը տուէք , որպէս զի որս'ւ վրայ ձեռք դնեմ՝ անիկա Սուրբ Հոգին առնէ : 20 - Բայց Պետրոս ըսաւ անոր , Քու արժաթդ քեզի հետ թող կորուի , վասն զի Աստուծոյ պարգևը կարծեցիր թէ ստակով կ'առնուի : 21 - Իսկ այդ բանին մէջ մասն ու բաժին չունիս , վասն զի քու սիրող Աստուծոյ առջև շիտակ չէ : 22 - Ուստի այդ քու չարութենէդ զեղջի եկուր ու Աստուծոյ աղաչէ , թերևս ներուի քեզի քու սրտիդ շոք խորհուրդը : 23 - Վասն զի ես քեզ մտղծի դառնութեան մէջ և անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ : 24 - Սիմոն պատասխան տուաւ ու ըսաւ , Իսկ ինձի համար աղօթք ըրէք Տէրոջը , որպէս զի այդ ձեր ըսածներէն բան մը իմ վրաս չգայ : 25 - Անոնք ալ վկայութիւն տալով Տէրոջը խօսքը խօսելէն ետև դարձան Երուսաղէմ՝ , և Սամարացոց շատ գեղերուն մէջ աւետարանը քարոզեցին :

26 - Եւ Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսի խօսեցաւ՝ ըսելով , Ելիր ու գնա դուն հարաւային կողմը , այն ճամբան , որ Երուսաղէմէ դէպի Գազա կ'իջնէ , որ անապատ քեզ ղ ղն է : 27 - Ան ալ ելաւ գնաց . և ահա Եթէովպոցի ներքինի մարդ մը , Եթէովպոցոց կանդակա թագուհին մէկ զօրաւորը , որ անոր բոլոր գանձերուն վրայ էր , որ Երուսաղէմ եկեր էր երկրպագութիւն ընելու . 28 - Եւ անիկ ետ կը դառնար , ու իր կառքը նստած Եսայի մարգարէին գէրեց կը կարդար : 29 - Եւ Հոգին ըսաւ Փիլիպպոսի , Մօտեցիր և այդ կառքին քով գնա : 30 - Փիլիպպոս ալ վազելով մօտ գնաց , ու մտիկ կ'ընէր որ Եսայի մարգարէին գէրեց կը կարդար , և ըսաւ , Կարգացածդ կը հասկնամ արդեօք : 31 - Ան ալ ըսաւ , Ի՞նչպէս կրնամ հասկնալ , եթէ մէկը ինձի շառաջնորդէ . ու աղաչեց Փիլիպպոսի , որ ելլէ իր քով նստի : 32 - Եւ գիրքին ձէջ կարգացած տեղը այս

էր . Ոչխարի պէս մտթուելու տարուեցաւ , ու իր խաղողին առջև մննձ խեղճ գառնուկի պէս՝ այնպէս իր բերանը չբանար . 33 - Իր խանարհութեանը մէջ իր դատաստանը վերցուեցաւ , և անոր ազգասոյմը ո՞վ պիտի պատմէ . վասն զի անոր կեանքը երկրէ կը վերցուի : 34 - Ներքինին պատասխան տուաւ Փիլիպպոսի ու ըսաւ , Կ'աղաչեմ՝ քեզի , մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ զայս . իրե՞ն համար թէ ուրիշի մը համար : 35 - Իսկ Փիլիպպոս իր բերանը բացաւ , և գիրքին այս բօռէն սկսելով Յիսուսը քարոզեց անոր : 36 - Ու երբ իրե՛ն ճամբան կ'երթային , ջուրի մը քով եկան . ու ըսաւ ներքինին , Ահա ջուր , ալ ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուելէ : 37 - [Եւ Փիլիպպոս ըսաւ անոր , Եթէ քու բոլոր սրտովդ կը հաւատաս՝ կարելի է . անիկա պատասխան տուաւ ու ըսաւ , Կը հաւատամ թէ Յիսուս Գրիստոս Որդի Աստուծոյ է :] 38 - Ու հրաման ըրաւ որ կառքը կայնեցնեն . և երկուքն ալ ջուրը իջան , Փիլիպպոս ու ներքինին , և մկրտեց զանիկա : 39 - Ու երբ ջուրէն դուրս ելան , Տէրոջը Հոգին յափշտակեց Փիլիպպոսը , և ա՛լ ներքինին զանիկա չաեսաւ , ու իր ճամբան կ'երթար ուրախութեամբ : 40 - Բայց Փիլիպպոս Ազովտոսի մէջ գանուեցաւ . ու պաշտելով բոլոր քաղաքներուն աւետարան կը քարոզէր , մինչև ինք կեսարիա եկաւ :

ԳԼ Թ

Բայց Սողոս տակաւին Տէրոջը աշակերաններուն դէմ սպառնալիք ու մտհփչելով՝ քահանայապետին քով գնաց . 2 - Եւ անիկ թուղթ եր ուզեց Իամասկոս ժողովարանները քանելու , որպէս զի եթէ այն ճամբուն հեռաւորներ գանելու ըլլայ , այրեր կամ կիներ , կապած Երուսաղէմ բերէ : 3 - Ու երբ կ'երթար ու Իամասկոսի մօտեցաւ , յանկարծ իր բոլորաիքը երկինքէն լոյս մը փայլատակեց . 4 - Եւ ինք գետինը իյնալով՝ ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն , Սաւա՛ւղ , Սաւա՛ւղ , ինչո՞ւ զիս կը հաւածես : 5 - Եւ անիկա ըսաւ , Ո՞վ ես դուն , Տէր . և Տէրը ըսաւ , Ես եմ Յիսուսը զոր դուն կը հալածես . *գժուար

*Ո՛ւրիշ լուրեր

բան է քեզի խթանի դէմ կից զարնել : 6 - Ան ալ դողով ու ապշութեամբ ըսաւ, Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ : 7 - Եւ Տէրը ըստ անոր, Ելի՛ր ու քաղաքը մտիր, և քեզի պիտի գրուցուի ինչ որ պարտիս ընել . իսկ այն մարդիկը որոնք իրեն հետ կ'երթային, ապշած կեցեր էին, ձայնը միայն կը լսէին, բայց մէ'կը չէին տեսներ : 8 - Եւ Սողոս գետնէն ելաւ, ու բաց աչքերով մէ'կը չէր տեսներ . ուստի անոր ձեռքէն բռնեցին ու Գամասկոս մտցուցին : 9 - Եւ երեք օր կեցաւ առանց տեսնելու, և ոչ կերաւ, ոչ ալ խմեց :

10 - Աւանիս անունով աշակերտ մը կար Գամասկոսի մէջ . և Տէրը տեսիլքի մէջ անոր ըսաւ, Անանիա . ան ալ ըսաւ, Տէր, ահա հո՞ւ եմ : 11 - Եւ Տէրը ըստ անոր, Ելի՛ր ու գնա այն փողոցը որ Ուղիղ կ'ըսուի, և հոն Յուդայի տանը մէջ փնտռէ Սողոս անունով Տարսնացի մը . վասն զի ահա անիկա աղօթք կ'ընէ : 12 - Ու տեսիլքի մէջ մարդ մը տեսաւ Անանիա անունով + և մտած և ձեռքը իր վրայ դրած, որպէս զի տեսնէ : 13 - Անանիա ալ պատասխան տուաւ, Տէր, շատերէ լսեցի այն մարդուն համար թէ ո՛րչափ չարիքներ ըրաւ քու սուրբերուդ Երուսաղէմի մէջ : 14 - Եւ հոս ալ քահանայապետներէն իշխանութիւն ունի կապելու այն ամէնը որոնք քու անունդ կը կանչեն : 15 - Եւ Տէրը ըսաւ անոր, Գնա դուն, վասն զի անիկա ինծի ընտիր աման մըն է, իմ անունս կրելու հեթանոսներուն ու թագաւորներուն և Իսրայէլի սրգիններուն տուջև : 16 - Քանզի ես անոր պիտի ցուցնեմ թէ ո՛րչափ պետք է իրեն իմ անունս համար նեղութիւն կրել : 17 - Եւ Անանիա գնաց ու այն տունը մտաւ, և ձեռքերը անոր վրայ դնելով ըսաւ, Սաւուղ եղբայր, Տէրը զիս զրկեց, այն Յիսուսը որ ճամբուն մէջ քեզի երեցաւ երբ կու գայիր, որպէս զի տեսութիւնդ ստանաս, ու Հոգւով Արբով լեցուիս : 18 - Եւ շուտ մը անոր աչքերէն թեփերու պէս քանի ինկան . և իսկոյն տեսաւ ու ելաւ մկրտուեցաւ : 19 - Եւ կերակուր ուտելով ոյժը վրան եկաւ, * ու քանի մը օր Գա-

մասկոսի մէջ եղող աշակերտներուն հետ կեցաւ :

20 - Եւ անմիջապէս ժողովարաններուն մէջ կը քարոզէր Յիսուսը, թէ անիկա է Ասասուծոյ Արգին : 21 - Եւ ամէն լողները մեծապէս զարմացեր էին, ու կ'ըսէին . Սահկա ան չէ՞ որ Երուսաղէմի մէջ կը կործանէր զանոնք որ այս անունը կը կանչէին . և հոս ալ այն բանին համար եկած էր, որպէս զի զանոնք կապած՝ քահանայապետներուն տանի : 22 - Բայց Սողոս ա՛լ աւելի կը զօրանար, և Գամասկոսի մէջ բնակող Հրեաները կը պապանձեցնէր, ապացուցանելով թէ Քրիստոսը տաիկա է : 23 - Ու շատ օրեր անցնելէն ետքը Հրեաները խորհուրդ բրին որ զանիկա սպաննեն : 24 - Բայց Սողոսի յայտնուեցաւ անոնց նենգութիւնը . և ցարեկ ու գիշեր դռները կը սպասէին, որպէս զի զանիկա սպաննեն : 25 - Իսկ աշակերտները գիշերով առին զանիկա, ու զամբիւղով մը կախելով պատէն վար իջեցուցին :

26 - Երբ Սողոս Երուսաղէմ՝ եկաւ, կը ջանար աշակերտներուն յարել, բայց ամէնն ալ կը վախնային անկէ, չհաւատարով թէ անիկա աշակերտ էր : 27 - Բայց Բառնաբաս զանիկա առնելով՝ առաքեալներուն տարաւ, ու պատմեց անոնց թէ ի՛նչպէս ճամբուն վրայ Տէրը տեսաւ, և թէ անոր հետ խօսեցաւ, և թէ ի՛նչպէս Գամասկոսի մէջ համարձակ քարոզեց Յիսուսի անունովը : 28 - Ու Երուսաղէմի մէջ անոնց հետ կը մտնէր ու կ'ելլէր՝ Տէր Յիսուսի անունովը համարձակ քարոզելով : 29 - Նաև + Հեյլենացելոց դէմ՝ կը խօսէր և վիճարանա թիւն կ'ընէր . անոնք ալ կը փնտռէին զանիկա սպաննել : 30 - Իսկ եզրայրները իմանալով զանիկա կեսարիա իջեցուցին, և անկէ Տարսն գրկեցին զանիկա :

31 - Այն ատեն եկեղեցիները բոլոր Հրեաստանի և Գալիլեայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն ունեցան, և շինութիւն կ'ընդունէին, ու Տէրոջը երկիւղովը և Հոգւոյն Արբոյ մխիթարութիւնովը քայելով կ'աճէին :

32 - Ու երբ Պետրոս ամէն տեղ կը պտրտէր, Լիւդդեա բնակող սուրբ-

*Ո՛ւտ, ու Սաւուղ

*Ո՛ւտ, Քրիստոսը + Այլնայն, Հեյլենասիոս Հրէից

բուն քով ալ իջաւ : 33 - Եւ հոն մարդ մը գտաւ , որուն անունը Ենեա էր , ութ տարիէ ի վեր մահի՞ծը պառկած անդամաւորս . 34 - Եւ ըսաւ անոր Պետրոս , Ենեա , Յիսուս Քրիստոս քեզ կը բժշկէ . ելիր ու քու անկողինդ շիակէ . ան ալ շուտ մը ելաւ : 35 - Եւ Լիւզգդեայի ու Սարօնի մէջ բնակողներուն ամէնը զանիկա տեսան , ու Տէրոջը դարձան : 36 - Եւ Յոպպէի մէջ աշակերտ եղած կին մը կար , անունը Տարիթա . (որ թարգմանուելով Այծեմնիկ կ'ըսուի .) տարկա լեցուած էր բարի գործերով ու սղարմութիւններով զարմաք ինք կրնէր : 37 - Աւ եղաւ որ այն օրերը ինք հիւանդացաւ ու մեռաւ . լուացին զանիկա և վերի սենեակ մը դրին : 38 - Աւ Լիւզգդեա Յոպպէի մօտ էր . ուստի աշակերտները լսելով թէ Պետրոս հոն է , անոր երկու մարդ զրկեցին , աղաչելով որ չուշանայ իրենց գալու : 39 - Պետրոս ալ ելաւ անոնց հետ եկաւ . ու երբ եկաւ , վերի սենեակը հանեցին զանիկա . և բոլոր սրբաւորները անոր բոլորախք կայնեցան , կու լային ու կը ցուցնէին այն բաճկոնները և հանդերձները զորոնք կ'ընէր Այծեմնիկ՝ քանի որ իրենց հետ էր : 40 - Պետրոս ալ ամէնը դուրս հանելով՝ ծունկի վրայ եկաւ ու աղօթք ըրաւ , և դէպ ի մարմինը դառնալով՝ ըսաւ , Տարիթա , ելիր կայնէ . ան ալ իր աչքերը բացաւ , ու Պետրոսը տեսնելով՝ ելաւ շիտակ նստաւ : 41 - Ինք ալ ձեռքը անոր տուաւ , ու վերցուց զանիկա , և սուրբերը ու սրբաւորները կանչելով՝ անոնց առջև ողջ կայնեցուց զանիկա : 42 - Եւ այժմ քանի բոլոր Յոպպէի մէջ իմացուեցաւ , ու շատերը Տէրոջը հաւատացին : 43 - Եւ եղաւ որ ինք շատ օրեր Յոպպէ կեցաւ Սիմոն անունով կաշի բանողի մը քով :

ԳԼ. Ժ

Կետարիայի մէջ մարդ մը կար Կուներիոս անունով , հարիւրապետ Իսաւրացի ըսուած գունդէն . 2 - Բարեպաշտ ու աստուածավախ իր բոլոր տունովը , որ ժողովուրդին շատ սղարմութիւններ կու տար , և ամէն ատեն Աստուծոյ աղօթք կ'ընէր : 3 - Անիկա օրուան ժամը իննին ատենները տեսիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ ,

որ իր քով մտաւ և իրեն ըսաւ , Կուներիոս . 4 - Ան ալ անոր նայելով ու խիստ վախնալով ըսաւ , Ի՞նչ է , Տէր . ան ալ ըսաւ անոր , Քու աղօթքներդ ու սղարմութիւններդ Աստուծոյ առջև ելան յիշատակի համար : 5 - Եւ հիմա Յոպպէ մարդիկ զրկէ , ու կանչէ Սիմոն անունով մէկը որ Պետրոս մականուանեալ է . 6 - Անիկա իբրև հիւր կը կենայ Սիմոն անունով կաշի բանողի մը քով , որուն տունը ծովուն մօտ է : 7 - Աւ երբ գնաց այն հրեշտակը որ իրեն հետ կը խօսէր , իր ծառաներէն երկուքը կանչեց , ու իր քով սպասողներէն ալ բարեպաշտ զինուոր մը , 8 - Եւ բոլորը անոնց պատմելով՝ Յոպպէ զրկեց զանոնք :

9 - Աւ հետեւեալ օրը երբ անոնք ճամբայ երթալով քաղաքին մօտեցան , Պետրոս ժամը վեցին ատենները տանիքը ելաւ աղօթք ընելու . 10 - Եւ խիստ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշ ընել . ու քանի որ իբրև սպասարատու թիւն կը տեսնէին , իր վրայ մտքի յափշտակութիւն մը եկաւ . 11 - Եւ տեսաւ երկինքը բացուած , ու չորս ծայրէն կապուած աման մը մեծ կատուի մը պէս , որ քիջաւ երկրի վրայ . 12 - Որուն մէջ կային երկրի բոլոր չորքատանիները ու գազանները և սողունները ու երկինքի թռչունները : 13 - Եւ ձայն մը եկաւ իրեն , Ելիր , Պետրոս , մորթէ ու կեր : 14 - Բայց Պետրոս ըսաւ , Քա՛ւ լիցի , Տէր , վասն զի ես ամենևին պիղծ կամ անմաքուր բան կերած չեմ : 15 - Նորէն մէյմըն ալ ձայն եկաւ իրեն , Ձայն որ Աստուած մաքրեց , դուն պիղծ մի սեպեր : 16 - Ասիկա երեք անգամ եղաւ , և ամանը երկինք վերցաւ : 17 - Աւ Պետրոս երբ իր մտքին մէջ կը զարմանար թէ ի՞նչ պիտի ըլլայ այն իր տեսած տեսիլքը , ահա Կուներիոսէ զրկուած մարդիկը Սիմոնի տունը հարցուցին , ու դրանք առջև կայնեցան . 18 - Եւ կանչելով՝ կը հարցնէին թէ Սիմոն որ Պետրոս կ'ըսուի , հո՞նք կը կենայ : 19 - Աւ երբ Պետրոս այն տեսիլքին վրայով կը մտածէր , Հոգին Ս-բէ ըսաւ անոր ,

*Ո՛հնէ+ ի՞նչ-էլնէն, Անիկա քեզի պիտի գրուցէ ինչ որ պարտիս ընել ,
 +Ո՛հնէ+ , Կուներիոսի
 †Ո՛հնէ+ , իրեն իջու

Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն .
 20 - Ուստի ելիր իջիր, և անոնց հետ
 գնա առանց խղճահարութեան, վասն
 զի ես զրկեցի զանոնք : 21 - Պետրոս
 ալ *այն մարդոց քով իջնելով՝ ըսաւ,
 Ահա ես եմ անիկա զոր դուք կը փնտ-
 ռէք. ի՞նչ բանի համար եկած էք: 22-
 Անոնք ալ ըսին, Կռռնելիոս հարիւրա-
 պետը, արդար և աստուածավախ
 մարդ, բոլոր Հրէից ազգէն վկայուած,
 սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ,
 որ քեզ իր տունը կանչէ և քեզմէ
 խօսքեր լսէ: 23-Այն ատեն ներս կան-
 չեց զանոնք և իր քով վար դրաւ :

Ու հետեւեալ օրը Պետրոս ելաւ, ան-
 ոնց հետ գնաց, և քանի մըն ալ Յուդ-
 պէէ եզոզ եղբայրներէն իրեն հետ գա-
 ցին: 24 - Ու հետեւեալ օրը Կեսարիա
 մտան. Կռռնելիոս ալ իր ազգակոններ-
 րը և մտերիմ բարեկամները կանչած՝
 անոնց կը սպասէր: 25 - Ու երբ Պե-
 տրոս ներս կը մտնէր, Կռռնելիոս անոր
 դիմաց ելաւ, ու անոր սոքը իյնալով
 երկրպագութիւն կ'ընէր: 26 - Բայց
 Պետրոս զանիկա կանգնեցուց ու ըսաւ,
 Ելիր կայնէ . Ես ինքնս ալ մարդ եմ:
 27 - Եւ անոր հետ խօսակցելով ներս
 մտաւ, ու հա՛տ շատ մարդիկ ժողվուած
 գտաւ . 28 - Եւ ըսաւ անոնց, Դուք
 գիտէք թէ ի՛նչպէս ապօրինաւոր բան
 է Հրեայ մարդու մը օտարազգիի հետ
 հաղորդակցութիւն ընելը կամ անոր
 մօտենալը. բայց Աստուած ինձի ցու-
 ցուց որ մարդոցմէ մէկո՛ւն պիղծ կամ
 անմաքուր չըսեմ: 29 - Անոր համար
 ես ալ որ կանչուեցայ, առանց դէմ
 խօսելու եկայ. բայց հիմա կը հարցնեմ,
 ի՞նչ բանի համար զիս կանչեցիք: 30-
 Կռռնելիոս ալ ըսաւ, Չորս օր առաջ
 մինչև այս ժամը ծով կը պահէի, ու
 ժամը իննին տանա մէջ աղօթք կ'ը-
 նէի. և ահա փայլուն հանդերձներով
 մարդ մը կայնեցաւ առջևս ու ըսաւ,
 31 - Կռռնելիոս, քու աղօթքդ լսուե-
 ցաւ, և քու սղորմութիւններդ Աս-
 տուծոյ առջև յիշուեցան. 32 - Ուստի
 հարգիր զրկէ Յուդպէ, ու կանչէ Սիմոնը
 որ Պետրոս ալ կ'ըսուի. անիկա ծու-
 փուն մտա Սիմոն անուշիկ կաշի բանո-
 զի մը տանը մէջ իբրև հիւր կը կենայ.
 որ երբ գայ, քեզի պիտի խօսի: 33 -
 Ուստի անմիջապէս հարգի՛ր զրկէցի քե-

զի, դուն ալ աղէկ ըրիր որ եկար . և
 հիմա մենք ամէնա Աստուծոյ առջև
 կեցեր ենք՝ լսելու այն ամէն բաները ո-
 րոնք Աստուծմէ հրամայուած են քեզի:

34 - Պետրոս իր բերանը բացաւ ու
 ըսաւ, Ճշմարտութեամբ կը հասկնամ
 որ Աստուծոյ քով աչառութիւն չկայ.

35 - Հապա ամէն ազգի մէջ ան որ
 անկէ կը վախնայ ու արդարութիւն
 կը գործէ, անոր ընդունելի է: 36 -
 Այն խօսքը շուրջ իսրայելի որդիներուն
 զրկեց Աստուծոյ խաղաղութիւն քա-
 լուելու Յիսուս Քրիստոսի ձեռքով .

(տաիկա է ամէնուն Տէրը.) 37 - Դուք
 աղէկ գիտէք այն բանը, որ բոլոր
 Հրէաստանի մէջ եղաւ Գալիլեայէ
 սկսած, այն մկրտութենէն ետև զոր
 Յովհաննէս քարոզեց. 38 - Յիսուսը որ
 Կազարէթէ էր, զոր Աստուած օծեց
 Սուրբ Հոգիով և զօրութիւնով, որ
 պարտեցաւ բարիք ընելով ու Աստու-
 նայէ բոլոր տանջուածները բժշկելով,
 քանզի Աստուած իրեն հետ էր: 39 -
 Եւ մենք վկայ ենք այն ամէն բանե-
 րուն զորոնք ըրաւ Հրէաստանի երկրին
 մէջ ու Երուսաղէմի մէջ, զոր փայ-
 տէն կախած սպաննեցին ալ: 40 -
 Աստուած զանիկա երրորդ օրը յա-
 րուց, և յայտնի ըրաւ զանիկա, 41 -
 Ոչ թէ բոլոր ժողովուրդին, հապա
 մեզի, առաջուրնէ Աստուծմէ վկայ ըլ-
 լալու ընտրուածներուս, որ իրեն հետ
 կերանք ու խմեցինք ալ անոր մե-
 սելներէն յարութիւն առնելէն ետքը:

42 - Եւ ինք պատուիրեց մեզի՝ որ ժո-
 ղովուրդին քարոզենք ու վկայութիւն
 տանք, թէ անիկա է Աստուծմէ սահ-
 մանուած՝ կենդանիներուն ու մեռել-
 ներուն Գառաւորը: 43 Անոր կը վկա-
 յեն բոլոր մարգարէները, թէ ամէն ի-
 րեն հաւատացողները իր անունով
 մեղքերու թողութիւն կ'առնեն:

44 - Ու երբ Պետրոս այս խօսքերը կը
 խօսէր, Հոգին Սուրբ իջաւ ամէնուն
 վրայ՝ որոնք խօսքը կը լսէին: 45 - Եւ
 թիփաատուածներէն եզոզ հաւատաց-
 եալները, որոնք Պետրոսի հետ եկած
 էին, զարմացան որ հեթանոսներուն
 վրայ ալ Հոգւոյն Սրբոյ պարգևը կը
 լեցուէր: 46-Քանզի կը լսէին անոնցմէ
 որ զուրկ լեզուներով կը խօսէին, և
 զԱստուած կը փառաւորէին: 47 -
 Այն ատեն Պետրոս պատասխան ար-
 ւաւ, Կրնա՞յ մէկը ջուրը արգելել որ

*Ո՛րք, Կռռնելիոսէ իրեն զրկուած

տանք չմկրտուին, որոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցին մեզի պէս : 48 - Ու հրաման ըրաւ որ Տէրոջը անունովը մկրտուին. այն ատեն իրեն աղաչեցին որ քանի մը որ հօն մնայ :

ԳԼ. ԺԱ.

Եւ աւաքեալները ու եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին որ հեթանոսներն ալ Աստուծոյ խօսքը ընդունեցին : 2 - Ու երբ Պետրոս Երուսաղէմ ելաւ, թլփատուածներէն եղողները անոր հետ կը վիճէին, 3 - Ու կ'ըսէին թէ Իսւն անթլփատ մարգոց քով մտար, և անոնց հետ հօն կերար : 4 - Պետրոս ալ սկսաւ բանը կարգով պատմել անոնց, ու ըսաւ, 5 - Ես Յոպպէ քաղաքը աղօթք կ'ընէի, ու մտքի յափշտակութեան մէջ տեսիլք մը տեսայ. աման մը մեծ կառւի պէս՝ շորս ծայրերէն երկինքէն կախուած իջաւ, ու մինչև ինծի հասաւ. 6 - Որուն վրայ աչքս անկեր կը նայէի, և տեսայ երկրի շորքտանիները ու գազանները և սողունները ու երկինքի թռչունները : 7 - Եւ ձայն մը լսեցի որ կ'ըսէր ինծի, Ելի՛ր, Պետրոս, մտնի՛ր ու կեր : 8 - Բայց ես ըսի, Քա՛ւ լիցի, Տէր, վասն զի պիղծ կամ անմաքուր բան մը ամենեւին մտած չէ իմ բերանս : 9 - Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ՝ այն ձայնը երկինքէն, Չայն որ Աստուած մտքրեց, դուն պիղծ մի սեպեր : 10 - Այս երեք անգամ՝ եղաւ, ու նորէն բոլորը երկինք քաշուեցաւ : 11 - Եւ ահա խոկոյն երեք մարդ կեսարիայէ ինծի զրկուած՝ եկան իմ եղած տանս առջև կեցան : 12 - Հոգին ալ ինծի ըսաւ որ անոնց հետ երթամ՝ առանց խղճահարութեան. այս վեց եղբայրներն ալ ինծի հետ գացին, ու մտանք այն մարդուն տունը : 13 - Եւ անիկա մեզի պատմեց թէ ի՛նչպէս իր տանը մէջ հրեշտակը տեսաւ, որ կայներ էր և իրեն կ'ըսէր, Մտնի՛ր զրկէ Յոպպէ, ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կը կոչուի. 14 - Ան քեզի խօսքեր պիտի խօսի, որոնցմով փրկուիս դուն և քու բոլոր տունդ : 15 - Ու երբ սկսայ խօսիլ, Հոգին Սուրբ անոնց վրայ իջաւ, ինչպէս առաջուրնէ մեր վրայ ալ : 16 - Այն ատեն յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր, Յովհաննէս ջրով

մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք : 17 - Ուստի եթէ Աստուած միեկնոյն շնորհքը տուաւ անոնց, ինչպէս մեզի ալ, երբ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացին, ևս ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ դէմ գնել : 18 - Այս բաները լսելով՝ ձայներնին կարեցին, և զԱստուած կը փառաւորէին ու կ'ըսէին, Ուրեմն Աստուած հեթանոսներուն ալ կեանքի համար ապաշխարութիւն տուաւ :

19 - Եւ Ստեփանոսի հօնովը վրայ եկած նեղութենէն ցիրուցան եղածները մինչև Փիլենիկէ ու Կիպրոս և Անտիոք հասան, ու մէկու՛ն Աստուծոյ խօսքը չէին խօսեր, միայն թէ Հրէաներուն : 20 - Բայց անոնցմէ սմանք Կիպրոցի և Կիւրենացի մարդիկ էին, որոնք երբ Անտիոք մտան, *Հելլենացեաց հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարոզելով : 21 - Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր, և բազմաթիւ մարդիկ հաւատարով Տէրոջը դարձան : 22 - Եւ անոնց վրայով այս լուրը Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ. ու Բառնաբարս զրկեցին որպէս զի մինչև Անտիոք երթայ. 23 - Որ երբ եկաւ և Աստուծոյ շնորհքը տեսաւ՝ ու բախացաւ, ու կը յորդորէր ամէնն ալ որ յօժար սրտով Տէրոջը հետ հօնով մնան. 24 - Քանզի ինք բարի մարդ էր, ու Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն. ու Տէրոջը շատ ժողովուրդ աւելցաւ : 25 - Ետքը Բառնաբարս Տարսն ելաւ Սողոսը փնտռելու, և գանձիկա գանելով Անտիոք բերաւ : 26 - Ու եղաւ որ անոնք լման տարի մը եկեղեցիին հետ մէկատեղ ժողովուրով շատ ժողովուրդի ստրվեցուցին. ու ամէնէն առաջ Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ անուանեցան :

27 - Այն օրերը Երուսաղէմէ մարգարէներ իջան Անտիոք : 28 - Եւ անոնցմէ մէկը, Ագաբոս անունով, ելաւ իմացուց Հոգիին զօրութիւնովը, թէ մեծ սով մը պիտի ըլլայ բոլոր աշխարհ, որ և եղաւ Կղոզիոսի օրերը : 29 - Եւ աշակերտները սրոշեցին որ իրենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ Հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն օգնութիւն զրկեն. 30 - Զոր կատարե-

*Ո՛հնէ, Յոյներուն
†Ո՛հնէ, Կղոզիոս կայսրին

ցին ալ , երէցներուն զրկելով Բառնաբասի ու Սողոսի ձեռքով :

ԳԼ. ԺԲ

Այն ատենները Հերովդէս թագաւորը ձեռք զարկաւ եկեղեցիէն մէկ քանինները շարչարել : 2 - Եւ Յովհաննէսի եղբայրը Յակոբոսը որով սպաննեց : 3 - Աւ տեսնելով որ Հրեաներուն հաճելի է, անոր վրայ Պետրոսն ալ բռնեց . ու բազարջակերքի օրերն էին : 4 - Զանկա երբ բռնեց , բանար դրաւ . և շորս կարգ չորսական զինուորներու յանձնեց, որպէս զի պահէն, և կ'ուզէր զտակէն ետև ժողովուրդին հանել զանկա : 5 - Աւստի Պետրոս բանտին մէջ պահուած էր, բայց եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ անոր համար : 6 - Աւ երբ Հերովդէս ուզեց զանկա դուրս բերել , այն գիշերը Պետրոս երկու զինուորներու մէջտեղ կը քնանար կրկին շղթաներով կապուած . ու պահապանները դրանք առջև բանար կը պահպանէին : 7 - Եւ ահա Տերօջը հրեշտակը եկան կայնեցաւ, ու տանը մէջ լոյս մը ծագեց, և Պետրոսի կողք խթելով՝ արթնցուց զանկա , ու ըսաւ, Ծուտով ելիր . ու շղթաները անոր ձեռքերէն վար ինկան : 8 - Եւ հրեշտակը ըսաւ անոր , Գօտիդ կապէ ու հողաթափներդ օտքդ հագիր . անկա ալ այնպէս ըրաւ . և ըսաւ անոր , Հանդերձդ վրագ առ ու եկուր իմ՝ ետևէս : 9 - Ան ալ ելլելով անոր ետևէն կ'երթար, և չէր գիտեր թէ այն հրեշտակէն եղած բանը իրաւ է , հապա կը կարծէր թէ տեսիլք կը տեսնէ : 10 - Աւ երբ անոնք առաջին ու երկրորդ պահապաններէն անցան , եկան մինչև երկաթի դուռը՝ որ քաղաքին մէջ կը հանէր, որ ինքիմէ բացուեցաւ անոնց . և անի ելլելով՝ փողոց մը անցան, հրեշտակն ալ իսկոյն անկէ գատուեցաւ : 11 - Աւ Պետրոս ինքզինքին գալով՝ ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ որ Տէրը իր հրեշտակը զրկեց, և ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու Հրէից ժողովուրդին ըսյոր ակնկալութենէն : 12 - Եւ մտածելով՝ եկաւ Մարկոս ըսուած Յովհաննէսի մօրը Մարիամի տունը, ուր շատեր ժողովուած աղօթք կ'ընէին : 13 - Եւ անը դուրսի դուռը

երբ *զարկաւ, Հաովդէ անունով աղախին մը գնաց ահանջ գնելու . 14 - Աւ երբ Պետրոսի ձայնը ճանչցաւ , սրախաւթենէն դուռը շրայցաւ, հապաներու վազելով պատմեց թէ Պետրոս դրանք առջև կայներ է : 15 - Իսկ անոնք՝ ըսին անոր , Խենթեցեր ես . բայց ինք կը պնդէր թէ այնպէս է . անոնք ալ կ'ըսէին , Անոր հրեշտակը պիտի ըլլայ : 16 - Սակայն Պետրոս անդադար կը զարնէր . ու երբ բացին , զինք տեսնելով ապշեցան : 17 - Բայց անկա ձեռքով նշան կ'ընէր անոնց՝ որ լուս կենան , ու պատմեց անոնց թէ ի'նչպէս Տէրը զինք բանաէն հանեց . և ըսաւ , Ասկա Յակոբոսի ու եղբայրներուն պատմեցէք . և ելաւ ուրիշ տեղ գնաց : 18 - Աւ երբ առտու եղաւ , մեծ խուժութիւն կար զինուորներուն մէջ՝ թէ արդեօք ի'նչ եղաւ Պետրոս : 19 - Հերովդէս ալ երբ ուզեց զանկա ու չգտաւ, պահապաններուն հարցուփորձ ընելով՝ հրաման ըրաւ որ սպաննուին . և ինք Հրէաստանէ կետարիա իջաւ , ու հոն կը կենար :

20 - Եւ Հերովդէս խիստ թշնամացած էր Տիւրացիներուն ու Սիգոնացիներուն հետ . անոնք ալ միաբանութեամբ իրեն եկան , ու թագաւորին Բղաստոս սենեկապետը համոզելով՝ հաշտութիւն կը խնդրէին . վասն զի իրենց երկիրը թագաւորին երէն սպրուստ կ'առնէր : 21 - Եւ որոշուած օր մը Հերովդէս թագաւորական հանդերձը հագած ու ատենը նստած՝ անոնց ատենաբանութիւն կ'ընէր : 22 - Ժողովուրդն ալ կ'աղաղակէր թէ Ասիկա Աստուծոյ ձայն է՝ ու ոչ թէ մարդու : 23 - Եւ իսկոյն Տերօջը հրեշտակը զանկա զարկաւ , Աստուծոյ փառք շտալուն համար . և որդնալից ըլլալով մեւաւ :

24 - Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը շատնար : 25 - Եւ Բառնաբաս ու Սողոս երբ երէն յանձնարարաւ յանցուցին, Երուսաղէմէ դարձան, Մարկոս ըսուած Յովհաննէսն ալ իրենց հետ առնելով :

ԳԼ. ԺԳ

Եւ Անտիոքի մէջ եղած եկեղեցիէն քանի մը մարգարէներ ու վարդա-

*Ո՛հնէ, Պետրոս զարկաւ

պետներ կային, Բառնաբառ ու Նմա-
 լոն, որ Նիւգէր կ'ըսուէր, և Ղուկիոս
 կիւրեանացի ու Մանայէն, Հերովդէս
 չորրորդապետին սննդակիցը, և Սոզոս
 2 - Երբ ասոնք Տէրոջը պաշտօնին մէջ
 էին, և ծով կը պահէին, Հոգին Սուրբ
 բառ, Զատեցէք ինձի Բառնաբառը և
 Սոզոսը այն գործին համար, որու ես
 կանչեր եմ ասոնք: 3-Այն ատեն ծով
 պահելով և աղօթք ընելով՝ ձեռք
 դրին անոնց վրայ ու զրկեցին: 4 - Ա-
 նոնք ալ Սուրբ Հոգիէն զրկուած՝ Սե-
 լեկիա իջան, ու անկէ նաւով կիպ-
 րոս գացին: 5 - Եւ Սաղամինա հաս-
 նելով՝ Հրէից ժողովարաններուն մէջ
 Աստուծոյ խօսքը կը քարոզէին, ու
 Յովհաննէան ալ իրենց սպասաւոր ու-
 նէին: 6 - Եւ պարտելով այն [բոլոր]
 կղզին մինչև Պափոս, հոն գտան սուս
 մարգարէ՝ Հրեայ մագ մը, որուն անու,
 նը Բարէյեսու էր: 7 - Ար փոխանորդ
 բզեչիին հետ էր, որ իւր-իւր Սերգիոս
 Պոզոս, խելացի մարդ մը. սահկա Բառ-
 նաբառը և Սոզոսը հրաւիրելով՝ ուզեց
 Աստուծոյ խօսքը լսել: 8 - Սակայն ա-
 նոնց դէմ կեցաւ Եղիմաս մագ, (քան-
 զի պայտէս կը թարգմանուի անոր ա-
 նունը,) որ կ'ուզէր փոխանորդ բզեչիը
 հաւատարէն դարձնել: 9 - Բայց Սոզոս,
 որ Պոզոս ալ իւր-իւր, Հոգւով Սրբով
 լեցուած, աչքերը անոր վրայ տնկեց,
 10 - Աւ ըսաւ, Ով ամէն խաբէբայու-
 թիւնով և ամէն խորամանկութիւնով
 լեցուած՝ Սասանայի որդի, թշնամի բո-
 լոր արդարութեան, պիտի չդադարի՞ս
 Տէրոջը շիտակ ճամբաները ծռելէ:
 11 - Եւ հիմա Տէրոջը ձեռքը ահա քու
 վրագ է, ու կոյր պիտի ըլլաս՝ ատեն
 մը արևը չտեսնելով: Եւ իսկոյն անոր
 վրայ մէգ ու խաւար մը իջաւ, ու
 պարտելով առաջնորդ կը փնտռէր:
 12 - Այն ատեն փոխանորդ բզեչիը
 երբ այս բաները տեսաւ՝ հաւատաց,
 մեծապէս զարմանալով Տէրոջը վար-
 դապետութեանը վրայ:
 13 - Եւ Պոզոս ու իր ընկերները Պա-
 փոսէ ելան, ու եկան Պամփիլիայի
 Պերգէն. բայց Յովհաննէս անոնցմէ
 գատուելով՝ Երուսաղէմ դարձաւ: 14-
 Անոնք ալ Պերգէէ գացին ու եկան
 Պիսիդիայի Անտիոքը, և շաբաթ օրը
 ժողովարանը մանելով՝ նստան: 15-Աւ
 օրէնքին և մարգարէներուն կարգաց-
 ուելէն ետև՝ ժողովրդապետները մար-

զրկեցին իրենց ու ըսին, Մարգիկ եղ-
 բայրներ, եթէ դուք ժողովուրդին իօ-
 ռել- յորդորական խօսք մը ունիք՝
 խօսեցէք: 16 - Այն ատեն Պոզոս սա-
 քի վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ու
 ըսաւ, Ով Իսրայէլացի մարգիկ, և
 դուք որ Աստուծոյ կը վախնաք, մտիկ
 ըրէք: 17 - Այս Իսրայէլ ժողովուր-
 դին Աստուծոյ մեր հայրերը ընտրեց,
 ու ժողովուրդը բարձրացուց Եգիպտո-
 սի երկրին մէջ պանդխտութեան ա-
 տենը, և բարձր բազուկով զանոնք
 հանեց: 18 - Աւ քառասուն տարուան
 ժամանակի չափ անապատին մէջ կե-
 րակրեց զանոնք: 19 - Եւ Քանանու
 երկրին մէջ եօթը ազգ կործանելով՝
 անոնց երկիրը իրենց տուաւ որ ժա-
 ուանդէն: 20 - Եւ անկէ ետև չորս
 հարիւր յիսուն տարիի չափ դատա-
 ւորներ տուաւ անոնց մինչև Սամուէլ
 մարգարէն: 21 - Աւ ետքը թագաւոր
 ուզեցին. և Աստուծոյ կիսի որդին Սա-
 ւուղը տուաւ անոնց, Բենիամինի ցե-
 ղէն մարդ մը, քառասուն տարի: 22-
 Աւ երբ զանիկա փոխեց, Իսաիթը հա-
 նեց իրենց թագաւոր, որու համար
 վկայութիւն տալով՝ ըսաւ, Յեսուէի
 որդին Իսաիթը գտայ իմ՝ սրախ հա-
 մեմաս մարդ, որ իմ բոլոր կամքս պի-
 տի կատարէ: 23 - Ասոր սերունդէն
 Աստուծոյ իր խոստմունքին պէս Իսրա-
 յէլի՝ Փրկիչ Յիսուսը հանեց. 24 - Եւ
 դեռ անիկա իր պաշտօնը չսկսած՝ Յով-
 հաննէս առաջուրնէ Իսրայէլի բոլոր
 ժողովուրդին ապաշխարութեան մկր-
 տութիւնը քարոզեց. 25-Աւ երբ Յով-
 հաննէս իր ընթացքը կը կատարէր՝ ը-
 սաւ, Ով կը կարծէք թէ եմ ես Քրի-
 ստոս չեմ, հապա անիկա ահա իմ ե-
 տեւն կու գայ, որուն սաքերուն կօ-
 չիկները քակելու արժանի չեմ: 26 -
 Մարգիկ եղբայրներ, Աբրահամի սոս-
 մին որդիները, ու անոնք որ ձեր մէջ
 աստուծոյ վախ են, այս փրկութեան
 խօսքը ձեզի զրկուեցաւ: 27 - Քանզի
 Երուսաղէմ բնակողները և անոնց իշ-
 խանները ոչ զանիկա ճանչցան, ոչ
 ալ մարգարէներուն ձայները՝ որոնք
 ամէն շաբաթ օրերը կը կարգաց-
 ուին, հապա զանոնք կատարեցին՝ զի
 դատապարտելով: 28 - Եւ մահուան
 պատճառ մըն ալ չգաւ՝ Պիղատոսէ
 խնդրեցին որ անիկա սպաննուի: 29 -
 Աւ երբ անոր համար բոլոր գրուած

բաները կատարեցին , փայտէն վար իջեցնելով գերեզմանի մէջ դրին . 30 - Բայց Աստուած զանիկա յարուց մեռելներէն . որ շատ օրեր երեցաւ անոնց 31 - Ար իրեն չեա Գալիլեայէ Երուսաղէմ ելեր էին , որոնք չիմա անոր վկաներն են ժողովուրդին սաջև : 32 - Մենք ալ ձեզի կը քարոզենք այն խոստմունքը որ հայրերուն եղած էր , 33 - Չոր Աստուած կատարեց մեզի որ անոնց գաւակներն ենք , Յիսուսը յարուցանելով , ինչպէս երկրորդ սաղմոսին մէջ ալ գրուած է , 'Իուն իմ' Արդիս ես , ես այսօր քեզ ծնայ : 34 - Եւ որ զանիկա մեռելներէն յարուց , ու մէջմին ալ ապականութիւն պիտի չտեսնէ , այսպէս կ'ըսէ թէ Ձեզի պիտի տամ 'Իաւիթի հաւատարիմ' սուրբ խոստմունքները : 35 - Աւտի ուրիշ սաղմոսի մը մէջ ալ կ'ըսէ , Քու Սուրբիդ ապականութիւն տեսնել պիտի չտաս : 36 - Վասն զի 'Իաւիթ իր դարուն մէջ Աստուծոյ կամքին ծառայելով' մեռաւ , ու իր հայրերուն քով գրուեցաւ և ապականութիւն տեսաւ : 37 - Բայց ան զոր Աստուած յարուց՝ ապականութիւն չտեսաւ : 38 - Աւրեմն յայտնի ըլլայ ձեզի , մարդիկ եղբայրներ , որ ասոր միջոցով ձեզի մեղքերութաղութիւն կը քարոզուի . 39 - Եւ այն ամէն բաներէն՝ որոնցմէ Մովսէսի օրէնքովը չկրցաք արգարանալ , ասով ամէն ով որ հաւատայ , կ'արգարանայ : 40 - Արդ զգուշացէք որ ըլլայ թէ ձեր վրայ գայ այն որ մարգարէներուն մէջ ըսուած է , 41 - Նայեցէք , արհամարհողներ , և զարմացէք ու սննչացէք . վասն զի գործ մը պիտի ընեմ ձեր օրերուն մէջ , այնպիսի գործ մը՝ զոր եթէ մէկը ձեզի պատմէ , պիտի չհաւատար :

42 - Աւ երբ անկէ դուրս ելան , *կազաչէին որ 'չեաւեալ շարթ' ալ նոյն խօսքերը իրենց խօսուին : 43 - Եւ ժողովուրդը երբ արձակուեցաւ , Հրեաներէն ու նորասաւատ բարեպաշաներէն շատերը Պողոսի ու Բառնարատի ետեէն կ'երթային . որոնք կը խօսէին անոնց չեա ու կը յարգօրէին զանոնք , որ միշտ Աստուծոյ շնորհքին մէջ հաստատ կենան : 44 - Եւ չեաւեալ շա-

րթ օրը գրեթէ բոլոր քաղաքը ժողովուրեցաւ Աստուծոյ խօսքը լսելու : 45 - Իսկ Հրեաները երբ տեսան այն բազմութիւնը , նախանձով լեցուեցան , ու Պողոսի գրուածներուն դէմ՝ կը խօսէին հակառակելով ու հայհոյութիւն ընելով : 46 - Այն ատեն Պողոս և Բառնարատ համարձակեցան ու ըսին , Պէտք էր որ առաջ ձեզի խօսուէր Աստուծոյ խօսքը , բայց որովհետև դուք զանիկա կը մերժէք , ու ինքզինքնիդ յաւիտենական կեանքի արժանի չէք սեպեր , ահա մենք ճեթանոսներուն կը դառնանք : 47 - Վասն զի Տէրը այսպէս պատուիրած է մեզի . 'Բեզ ճեթանոսներուն լոյս դրի , որպէս զի դուն փրկութեան պատճառ ըլլաս մինչև երկրի ծայրերը : 48 - Չայ՝ լսելով ճեթանոսները կ'ուրախանային , ու Աստուծոյ խօսքը կը փառաւորէին . և որոնք որ յաւիտենական կեանքի սահմանուած էին , հաւատացին : 49 - Աւ Տէրոջը խօսքը բոլոր գաւառը կը տարածուէր : 50 - Բայց Հրեաները գրգռեցին բարեպաշա և պատուաւոր կիները ու քաղաքին մեծերը , և Պողոսի ու Բառնարատի վրայ հալածանք հանելով զանոնք իրենց սահմաններէն դուրս ըրին : 51 - Անոնք ալ իրենց առքերուն փոշին անոնց դէմ թօթվելով՝ Իկոնիոն եկան : 52 - Աւ աշակերտները ուրախութեամբ և Հոգւով Սրբով կը լեցուէին :

ԳԼ. ԺԻ

Աւ եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք մէկտեղ Հրեաներուն ժողովարանը մտան , և այնպէս խօսեցան որ խիստ շատ Հրեաներ և Յոյներ հաւատացին : 2 - Բայց չհաւատացող Հրեաները գրգռեցին ու շարութեան գրգռեցին ճեթանոսներուն սիրար եղբայրներուն դէմ : 3 - Իսկ անոնք շատ ժամանակ հան կենայով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմով , որ իր շնորհաց խօսքին կը վկայէր , և նշաններ ու հրաշքներ ընել կու տար անոնց ձեռքով : 4 - Եւ քաղաքին բազմութեանը մէջ երկպառակութիւն մը եղաւ . ոմանք Հրեաներուն կողմէն եղան , ոմանք ալ առաքեալներուն : 5 - Աւ երբ ճեթանոսները և Հրեաները իրենց իշխաններովը անոնց վրայ յարձակեցան՝ զանոնք նախատելու ու քարկոծելու , 6 - Իրենք

*Ո՛րոնք , ճեթանոսները կ'աղաչէին 'Կ'աւ , շարթ ու մէջ

Իմանալով Լիկայնացւոց քաղաքները փախան, Լիւսարա և Դերբէ և շրջակայ տեղերը, ու հոն աւետարանը կը քարոզէին:

7 - Եւ Լիւսարայի մէջ մարդ մը նստեր էր սաքերովը ակար՛ իր մօրը ստովայնէն կազ ձնա՛, որ բնաւ քալած չէր: 8 - Ասիկա Պողոսի խօսքերը մտիկ կ'ընէր, ան ալ աչքը անոր անկելով և տեսնելով թէ բժշկուելու հաւատք ունի, 9 - Բարձր ձայնով մը բաւ, Ելիր սաքերուդ վրայ շիտակ կայնէ. ան ալ ցաթկելով կը քալէր: 10 - Եւ ժողովուրդները երբ Պողոսի բրածը տեսան, ձայներնին վերցնելով Լիկայնաբէն բաին, Աստուածները մարդոց նմանութիւնով մեզի իջեր են: 11 - Ու Բառնաբասի Իրա կը կոչէին, և Պողոսի՛ Հերմէս, վասն զի անիկա էր պիտաւոր խօսողը: 12 - Իսկ քաղաքին առջև եղած Իրոսի քուրմը ցուլեր և զբակներ բերելով դռներուն առջև, բազմութեանը հետ մէկտեղ կ'ուզէր որ զո՛հ ընէ: 13 - Բայց Բառնաբաս ու Պողոս առաքեալները երբ լսեցին, իրենց հանդերձները պատուելով՝ դուրս ցաթկեցին բազմութեանը մէջ, կ'աղաղակէին, 14 - Ու կ'ըսէին, Մարդիկ, ինչո՞ւ համար այդ բաները կ'ընէք. մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ ենք, ու կը քարոզէնք ձեզի որ այդ փուճ բաներէն կենդանի Աստուծոյն դառնաք, որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները: 15 - Որ անցած դարերուն մէջ թող տուաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները երթալու: 16 - Այստեղ ամենայնիւ ինքզինք առանց վկայութեան չթողուց, բարերարութիւնով երկինքէն *մեզի անձրևներ ու պողոտքեր եղանակներ տալով, կերակուրներով և ուրախութիւնով շներ սիրտերը լեցնելով: 17 - Ու այս բաները ըսելով՝ հազիւ կրցան ժողովուրդները դադարեցնել, որ իրենց զո՛հ չընեն:

18 - Սակայն Անտիոքէ ու Իկոնիոնէ Հրեաներ հասան. ու ժողովուրդները համոզեցին, և Պողոսը քարկոծեցին ու քաղաքէն դուրս քաշեցին՝ կարծելով թէ մեռած է: 19 - Բայց աշակերանները երբ անոր բոլորաբքը պատեցին, ելաւ քաղաքը մտաւ, ու հե-

տեկալ օրը Բառնաբասի հետ մէկտեղ Դերբէ ելաւ: 20 - Եւ անոնք այն քաղաքին մէջ աւետարանը քարոզելով, ու շատերը աշակերտ ընելով՝ Լիւսարա և Իկոնիոն և Անտիոք գարձան, 21 - Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յորդորելով որ հաստատ մնան հաւատքի մէջ. և ՚բ՛էն թէ շատ նեղութիւններով պէտք է մեզի Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: 22 - Ու երբ անոնց ամէն մէկ եկեղեցիին երէցներ ձեռնադրեցին, ծամպահուցութեամբ աղօթք ընելով զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որու հաւատացեր էին: 23 - Եւ Պիտիոքիայի մէջէն պարտելով՝ եկան Պամփիլիա: 24 - Պերգէի մէջ ալ Տէրոջը խօսքը խօսելէ ետեւ Ատալիա իջան: 25 - Անկէ ալ նաւով Անտիոք գացին, ուրկէ Աստուծոյ շնորհքին յանձնուած էին այն գործին համար զոր կատարեցին: 26 - Ու երբ եկան, եկեղեցին մէկտեղ ժողովելով՝ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ, և որ հեթանոսներուն հաւատքի դուռ բացեր էր: 27 - Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ կեցան:

ԳԼ. ԺԵ

Եւ մէկ քանինները Հրեաստանէ իջած՝ եղբայրներուն կը սորվեցնէին որ թէ Մովսէսի «անդա՛» սովորութեանը համեմատ չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ: 2 - Ուստի Պողոսի և Բառնաբասի անոնց դէմ՝ շատ մը հակառակութիւն ու վէճ ընելէն ետքը, վճռեցին որ Պողոս ու Բառնաբաս և մէկ քանիններն ալ անոնցմէ՝ Երուսաղէմ՝ ելլեն առաքեալներուն ու երէցներուն այս խնդրին համար: 3 - Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դուրսած՝ Փիլնիկէէ ու Սամարիայէ անցնելով, հեթանոսներուն դարձի գալը կը պատմէին, և մեծ ուրախութիւն կու տային բոլոր եղբայրներուն: 4 - Ու երբ Երուսաղէմ հասան, եկեղեցիէն ու առաքեալներէն և երէցներէն ընդունուեցան, և պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ: 5 - Փարիսեցւոց աղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան, ու կ'ըսէին թէ Պէտք է թլփատել զանոնք ու պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն:

*Ո՛ւն, ձեզի + Ո՛ւն, ձեր

36 - Եւ քանի մը օրերէ ետե Պօղոս լսաւ Բառնարասի, Գառնանք ու այցելութիւն ընենք եղբայրներուն՝ ամէն մէկ քաղաքները, ուր Տէրոջը խօսքը քարոզեցինք, և Գեօնէն թէ ի՛նչպէս են: 37 - Իսկ Բառնարաս կ'ուզէր որ Յովհաննէսն ալ առնեն, որ Մարկոս կ'ըսուէր: 38 - Իայց Պօղոս արժան շտեպեց որ Պամփիլիայի մէջ իրենցմէ զատուողը ու իրենց հետ գործի չեկողը իրենց հետ առնեն: 39 - Այսպէս անոնց հը գժտութիւն մը եղաւ, մինչև իրարմէ զատուեցան. և Բառնարաս առաւ Մարկոսը ու նաւով Կիպրոս գնաց: 40 - Պօղոս ալ Շիղան ընարեց ու ելաւ, եղբայրներէն Ասաուծոյ շնորհքին յանձնուելով, 41 - Եւ Սիւրիայի ու Կիլիկիայի մէջ կը պարտէր ու եկեղեցիները կը հաստատէր:

ԳԼ ԺԶ

Եւ հասաւ Գերբէ ու Լիւսարա. և ահա հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անունով, որ հաւատացեալ Հրեայ կնոջ մը զաւակ էր, և հայրը Յոյն էր: 2 - Որ Լիւսարացի ու Իկոնացի եղբայրներէն ալ բարի վկայուած էր: 3 - Պօղոս ուզեց որ ասիկա իրեն հետ ելլէ, և առաւ Թիփատեց զանիկա այն տեղերը եղած Հրեաներուն համար, վասն զի ամէնն ալ գիտէին թէ անոր հայրը Յոյն էր: 4 - Եւ քաղաքներէն անցնելով, Երուսաղէմ՝ եղած առաքեալներէն ու երէցներէն ապսպրուած հրամանները կ'աւանդէին անոնց՝ որ պահէն: 5 - Եկեղեցիներն ալ հաւատաքի մէջ կը հաստատուէին, և օրէ օր անոնց թիւը կ'աւելնար:

6 - Եւ Փռիւզիա ու Գաղատացոց կողմերը պարտեցան. և Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Ասիայի խօսքը Ասիայի մէջ չխօսին, 7 - Երբ Միւսիայի կողմերը եկան, կը ջանային դէպ ի Բիւթանիա երթալ. և [Յիսուսի] Հոգին թող շտուաւ անոնց: 8 - Եւ Միւսիայի քովէն անցնելով Տրովագոս իջան: 9 - Եւ հոն գիշերը Պօղոսի տեսիլք մը երեցաւ. Մակեդոնացի մարդ մը կայներ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Մակեդոնիա անցիր և օգնէ մեզի: 10 - Ու երբ այն տեսիլքը տեսաւ, շուտ մը ուզեցինք Մակեդոնիա ելլել, հաս-

կընալով որ Տէրը մեզ կը հրաւիրէ անոնց աւետարան քարոզելու:

11 - Ուստի նաւով Տրովագոսէ ելանք ու շիտակ Սամոթրակէ գացինք, ու հեռեեալ օրը Նէապոլիս: 12 - Եւ անկէ ալ Փիլիպպէ, որ է Մակեդոնիայի հի մասին գլխաւոր քաղաքը՝ կոչովնիս. և այն քաղաքին մէջ քանի մը օր կեցանք: 13 - Ու շարաթ օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերքին քով՝ ուր սովորութիւն ունէին աղօթք ընելու, ու նստելով ժողովուած կիներուն կը խօսէինք: 14 - Եւ Թիւատիր քաղաքէն ծիրանավաճառ կին մը Լիզիա անուն, որ աստուածավախ մէկն էր, մտիկ կ'ընէր. որուն սիրտը Տէրը բացաւ Պօղոսի ըսածներուն ու շարաթութիւն ընելու: 15 - Ու երբ մկրտուեցանք և իր տունը, աղաչեց ու ըսաւ, Եթէ զիս Տէրոջը հաւատացեալ կը սեպէք. իմ տունս մտէք բնակեցէք. և ստիպելով տարաւ մեզ:

16 - Ու եղաւ որ երբ մենք աղօթքի կ'երթայինք, աղախին մը պատահեցաւ մեզի որ հարցուկ ոգի ունէր, որ գուշակութիւն ընելով՝ իր տէրերուն շատ վատտակ կը բերէր: 17 - Ասիկա Պօղոսի և մեր ետեէն իյնալով՝ կը պառտք ու կ'ըսէր, Այս մարդիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որոնք Ժեզի փրկութեան ճամբան կը քարոզեն: 18 - Եւ այս բանը շատ օրեր կ'ընէր. իսկ Պօղոս վշտանալով՝ գարձաւ ու ըսաւ այն ոգիին, Յիսուս Քրիստոսի անունովը հրաման կ'ընեմ՝ քեզի, Ելիր ասկէ. և նոյն ժամուն ելաւ: 19 - Երբ տեսան անոր տէրերը որ իրենց վատտակին յոյսը կտրեցաւ, Պօղոսը ու Շիղան բռնեցին ու հրապարակք քաշեցին իշխաններուն առջև: 20 - Եւ ասորին զանոնք զօրագլուխներուն քով ու ըսին, Այս մարդիկը մեր քաղաքը իրար կ'անցնեն. իրենք Հրեայ են: 21 - Եւ այնպիսի սովորութիւններ կը քարոզեն, զորոնք արժան չէ մեզի ընդունիլ, ոչ ալ ընել, վասն զի Հռովմայեցի ենք: 22 - Եւ բազմութիւնը անոնց վրայ դիզուեցաւ. զօրագլուխներն ալ բռնութեամբ անոնց հանդերձները հանեցին, և հրաման ըրին որ զանոնք ծեծեն: 23 - Եւ անոնց շատ

*Այսինքն, գաղթականներու տեղ լիւսարա, ձեզի

վէրքեր տալէ ետև բանտը դրին, պատուիրելով բանտապետին որ զգուշութեամբ պահէ զանոնք : 24 - Ան ալ այսպէս չրաման տանելով՝ զանոնք ներսի բանտը դրաւ ու ստքերնին կոծղի մէջ ամուրցուց :

25 - Եւ կէսգիշերին Պողոս ու Նիղա աղօթք կ'ընէին և զԱստուած կ'օրհնէին, ու բանտարկեալներն ալ անոնց մտիկ կ'ընէին: 26 - Եւ յանկարծակի մեծ շարժ մը եղաւ, այնպէս որ բանտին չիմերը սասանեցան, և անմիջապէս բոլոր դռները բացուեցան, ու ամէնուն կապերը արձակուեցան: 27 - Եւ բանտապետը, երբ արթնցաւ ու բանտին դռները բացուած տեսաւ, թուրը քաշեց և ինքզինք պիտի սպաննէր, կարծելով թէ կապուածները փախեր են: 28 - Բայց Պողոս բարձր ձայնով կանչեց ու ըսաւ, Դուն քու անձիդ վնաս մը մի ըներ, վասն զի ամէնա ալ չոս ենք: 29 - Եւ անիկա ծրագ մը ուղեց ու ներս վազեց, և դռնալով Պողոսի ու Նիղայի առջև ինկաւ: 30 - Եւ զանոնք դուրս բերելով ըսաւ, Տէրեր, ինձի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ: 31 - Անոնք ալ ըսին, Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի, ու պիտի փրկուիս դուն և քու տունդ: 32 - Եւ Տէրոջը խօսքը խօսեցան անոր, ու այն ամէնուն որոնք իր տանը մէջ էին: 33 - Եւ առաւ զանոնք գիշերուան նոյն ժամուան ու անոնց վէրքերը լուաց, և շուտ մը մկրտուեցաւ ինք ու բոլոր իրենները: 34 - Եւ զանոնք իր տունը տանելով՝ անոնց առջև սեղան դրաւ, և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով: 35 - Եւ երբ առտու եղաւ, զօրագլուխները զրկեցին սպասաւորները ու ըսին, Արձակե այդ մարդիկը: 36 - Բանտապետն ալ այն խօսքերը Պողոսի պատմեց, թէ Չօրագլուխները զրկեցին որ արձակուիք ուստի Տիմո ելէք և խաղաղութեամբ գացէք: 37 - Բայց Պողոս ըսաւ անոնց, Մեզ յայտնապէս ծեծելով որ չգապարտուած Հռովմայեցի մարդիկ ենք, բանտը դրին, ու Տիմո գաղտնակ կը հանեն մեզ. ոչ այդպէս, հապա թող իրենք դան ու մեզ հանեն: 38 - Եւ սպասաւորները զօրագլուխներուն պատմեցին այն խօսքերը. անոնք ալ երբ լսեցին թէ Հռովմայեցի են՝ վախցան, ու եկան քաղցրութեամբ խօսեցան և

նոնց հետ . 39 - Եւ դուրս հանելով՝ կ'աղաչէին որ այն քաղաքէն երթան: 40 - Անոնք ալ բանտէն ելլելով՝ Լիդիայի քաղաք մտան, ու եղբայրները տեսնելով՝ մխիթարեցին զանոնք և գացին:

ԳԼ. ԺԷ

Եւ Ամփիպոլիսէ ու Ապոզոնիայէ պարտելով թեսաղոնիկէ եկան, ուր էր Հրեաներուն ժողովարանը: 2 - Պողոս ալ իր սովորութեանը պէս անոնց մէջ մտաւ, և երեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ գիրքերէն, 3 - Մեկնելով՝ և անոնց առջև դնելով թէ պէտք էր Քրիստոսի շարձարուիլ, ու մեռելներէն յարութիւն առնել, և թէ Այն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ, ըստ Քրիստոսն է: 4 - Եւ անոնցմէ ոմանք հաւատացին ու Պողոսի և Նիղայի հետ միացան. սաստուածավախ Յոյներէն ալ մեծ բազմութիւն, ու երևելի կիներէն ալ հասարակները քիչուոր չէին: 5 - Բայց չհաւատացող Հրեաները նախանձեցան, և քանի մը դատարկապարտ անօրէն մարդիկ առնելով՝ աղմուկ հանեցին ու քաղաքը տակնուվրայ ըրին, և Յասանի տանը վրայ յարձակելով՝ կ'ուզէին զանոնք ժողովքին առջև տանիլ: 6 - Ու երբ զանոնք չգտան, Յասանը ու մէկ քանի եղբայրներ քաշելով տարին քաղաքապետներուն առջև, կանչուըռտելով թէ Անոնք որ աշխարհը տակնուվրայ ըրին՝ չոս ալ հասեր են: 7 - Զորոնք Յասան ընդուներ է. և ասոնք ամէնը կոյսրին հրամաններուն դէմ կը դործեն, ըսելով թէ ուրիշ թագաւոր մը կայ Յիսուս: 8 - Եւ խռովեցուցին ժողովուրդը ու քաղաքապետները, որոնք այս բաները կը լսէին: 9 - Բայց երբ Յասանէ և ուրիշներէն երաշխաւորութիւն առին, արձակեցին զանոնք: 10 - Իսկ եղբայրները շուտ մը գիշերով Պողոսը և Նիղան Բերիա զրկեցին. որոնք հոն հասնելով՝ Հրէից ժողովարանը գացին: 11 - Ասոնք թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որոնք Աստուծոյ խօսքը կատարեայ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն օր գիրքերը կը քննէին թէ այս բաները այսպէս են: 12 - Ուստի անոնցմէ շատերը հաւատացին. և պատ-

ուսուոր Յոյն կիճերէն ու այրերէն հո-
 -տարացիքն ալ քիչուոր չէին : 13 -
 Բայց երբ իմացան թեոսաղոնիկեցի
 Հրեաները թէ Բերիայի մէջ ալ Աս-
 տուծոյ խօսքը քարոզուեցաւ Պողոսէ ,
 հոն ալ եկան ու ժողովուրդը զրգուե-
 ցին : 14 - Այն ատեն եղբայրները շուտ
 մը Պողոսը զրկեցին՝ որ մինչև ծովե-
 զերքը երթայ . բայց Շիզա ու Տիմոթէ-
 ոս հոն մնացին : 15 - Եւ անոնք՝ որ Պո-
 ղոսը կը տանէին , մինչև Աթէնք բերին
 զանհկա . և իբր հրաման տանելով Շի-
 զայի ու Տիմոթէոսի համար որ շուտով
 իրեն գան , գացին :

16 - Եւ Պողոս Աթէնքի մէջ անոնց
 սպասելով՝ իր հոգին անհանգիստ էր
 ներսիդին , վասն զի քաղաքը բոլորո-
 վին կուսապաշտութեան մէջ՝ ընկղմած
 կը տեսնէր : 17 - Աւտի ժողովարանին
 մէջ կը խօսէր Հրեաներուն ու բարե-
 պաշտ մարդոց , և ամէն օր հրապա-
 րակներուն մէջ՝ որոնց պատահէր : 18 -
 Աւ Եպիկուրեան և Ստոյիկեան փիլի-
 սոփաներէն մէկ քանիները իրեն հեռ
 հակաճառութիւն կ'ընէին . և ամանք
 կ'ըսէին , Այս սերմանաքաղը ի՞նչ ը-
 սեղ կ'ուզէ . ուրիշներն ալ ի՞նչէն ,
 կ'երևի թէ օտար աստուածներու քա-
 ռոզիչ է . վասն զի Յիսուսը ու յարու-
 թիւնը կ'աւետարանէր անոնց : 19 -
 Եւ առին զանհկա Արիստագոս ասորին
 ու կ'ըսէին , Կրնա՞նք իմանալ թէ ի՞նչ
 է այդ նոր վարդապետութիւնը զոր
 դուն կը զրուցես . 20 - Քանզի մեր ա-
 կանջներուն օտար բաներ կը բերես .
 ուրեմն կ'ուզենք իմանալ թէ ի՞նչ պի-
 տի ըլլան անոնք . 21 - (Վասն զի Ա-
 թէնացիները ամէնն ալ , ու հոն կե-
 ցող օտարականները ուրիշ բանի չէին
 պարապեր , բայց միայն նոր բան զրու-
 ցելու կամ լսելու :)

22 - Այն ատեն Պողոս Արիստագոսի
 մէջ կայնեցաւ ու ըսաւ , Ով Աթէնացի
 մարդիկ , ամէն կողմանէ խիստ կրօնա-
 սէր կը տեսնեմ ձեզ : 23 - Քանզի ես պար-
 տելով ու ձեր պաշտամունքը զննելով
 սեղան մը գտայ , որուն վրայ զրուած
 էր , ԱՆԾԱՆՈԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ . ուս-
 տի զանհկա զոր դուք չճանչնալով
 կը պաշտէք , ես նոյնը ձեզի կը քա-
 ռոզեմ : 24 - Աստուած որ աշխար-
 հը ստեղծեց , և անոր մէջի բոլոր
 բաները , անհկա երկինքի ու երկրի
 Տէրն ըլլալով՝ ոչ ձեռագործ տաճար-

ներու մէջ կը բնակի , 25 - Ոչ ալ
 մարդոց ձեռքով կը պաշտուի՝ բանի
 մը կարօտի պէս . քանզի ինք կու տայ
 ամէնուն կեանք ու շունչ և ամէն
 բան . 26 - Աւ բոլոր մարդոց ազգերը
 մէկ արիւնէ բրաւ , որպէս զի բոլոր
 երկրի երեսին վրայ բնակին . և որոշ-
 ուած ժամանակներ հաստատեց , ու
 անոնց բնակութեան սահմանները՝
 զԱստուած փնտաւելու . 27 - Որ ըլլայ
 թէ խորհափելով զինք զանեն . թէ-
 պէտե մեր ամէն մէկէն ալ հեռու չէ .
 28 - Վասն զի անով կ'ապրինք և կը
 շարժինք ու կանք , ինչպէս ձեր բա-
 նաստեղծներէն մէկ քանիներն ալ ը-
 սին , Քանզի մենք անոր ցեղէն ալ ենք :
 29 - Աւտի , որովհետեւ Աստուծոյ ցե-
 ղէն ենք , պէտք չէ որ այնպէս սեպենք
 թէ Աստուածութիւնը նման ըլլայ ս-
 կիի կամ արծաթի կամ քարի , որ
 մարդու վարպետութիւնով ու խելքով
 քանդակուած է : 30 - Արդ Աստուած
 ազիտութեան առեկները անտես ընե-
 լով՝ հիմա ամէն տեղ կը պատուիրէ
 բոլոր մարդոց որ ապաշխարեն : 31 -
 Վասն զի ինք օր մը սահմանեց , որուն
 մէջ աշխարհս արգարութեամբ պիտի
 գաակ այն մարդուն ձեռքով՝ զոր ո-
 րոշեց , ու ամէնուն հաւատացուց՝ զա-
 նհկա մեռելներէն յարուցանելով :

32 - Երբ մեռելներուն յարութիւնը
 լսեցին , ամանք ծաղր կ'ընէին , ամանք
 ալ կ'ըսէին , Այդ բանին համար ու-
 րիշ անգամ մտիկ պիտի ընենք քեզի :
 33 - Եւ այսպէս Պողոս անոնց մէջէն
 ելաւ : 34 - Սակայն քանի մը մարդիկ
 իրեն յարելով հաւատացին , որոնց
 մէջ էր Իիոնեսիոս Արիստագոսի և
 Դամարիս անունով կին մը , ու անոնց
 հետ ուրիշներ ալ :

ԳԼ ԺԸ

Ասկէ ետեւ Պողոս Աթէնքէ զատ-
 ուելով՝ Կորնթոս եկաւ , 2 - Եւ Հրեայ
 մը գտաւ Ակիլղաս անունով , ծնուն-
 դով Պնատացի , որ իր Պրիսկիլա կնոջ
 հետ նոր եկեր էր Իտալիայէ , (Կղզի-
 սոսի հանած հրամանին համար որ բո-
 լոր Հրեաները Հուովմէ հեռանան ,) ու
 անոնց քով գնաց : 3 - Եւ որովհետեւ
 ինք արհեստակից էր , անոնց քով կե-
 ցաւ և կը բանէր , վասն զի արհեստով
 վրանագործ էին : 4 - Աւ ամէն շաբաթ

օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները ու Յոյները կը համնդէր: 5 - Ու երբ Շիզա և Տիմոթէոս Մակեդոնիայէ իջան, Պողոսի հոգին եռանդով վառուած ըլլալով, Հրեաներուն վկայութիւնով կը հաստատէր թէ Յիսուսը Քրիստոսն է: 6 - Անոնք ալ երբ դէմ կեցան ու կը հայհոյէին, ինք հանդերձները թօթվելով՝ ըսաւ անոնց, Ձեր արիւնը ձեր գլուխը, ես անպարտ եմ. սակէ ետև հեթանոսներուն պիտի երթամ: 7 - Եւ անկէ երթալով մտաւ մէկուն տունը, որուն անունը *Յուստոս էր, աստուածավախ Բարդէ, որուն տունը ժողովարանին կից էր: 8 - Եւ ժողովրդապետը, Կրիսպոս, իր բոլոր տունովը հաւատաց Տէրոջը. և Կորնթացիներէն շատերը լսելով հաւատացին, ու մկրտուեցան: 9 - Եւ գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ Պողոսի, Մի վախնար, հապա խօսէ և լուռ մի կենար, 10 - Վասն զի ես քեզի հետ եմ, և մէկը քեզի դէմ պիտի չեղէ՝ քեզի փաս մը հասցնելու. քանզի այս քաղաքին մէջ ես շատ ժողովուրդ ունիմ: 11 - Եւ հին տարի մը ու վեց ամիս կեցաւ, ու Աստուծոյ խօսքը անոնց մէջ կը սորվեցնէր:

12 - Եւ Աքսիայի փոխանորդ բարձրիկն, Գաղիոնի, օրերը Հրեաները միաբանելով Պողոսի դէմ էլան, և զանիկա տաեանը տարին, 13 - Ըսելով թէ Ասիկա կը հրապուրէ մարգիկ օրէնքէն դուրս զԱստուած պաշտել: 14 - Ու երբ Պողոս իր բերանը բանալու պատրաստ էր, Գաղիոն ըսաւ Հրեաներուն, Եթէ անիրաւութեան մը կամ չար գործի մը համար ըլլար, ով Հրեաներ, արժան էր ինծի որ ձեզի մտիկ ընէի: 15 - Բայց եթէ վէճը խօսքի ու անուններու և ձեր օրէնքին վրայով է, դուք ձեզմէ տեսէք. վասն զի ես այդպիսի բաներու դատաւոր ըլլալ չեմ ուզեր: 16 - Եւ զանոնք տոտանէն վընաց: 17 - Այն ատեն բոլոր Յոյները Սոթիսնէս ժողովրդապետը բռնեցին ու տաեանին առջև կը ծեծէին, և այս բաներուն վրայով Գաղիոն բնաւ հոգ չէր ընէր:

18 - Պողոս ալ տակաւին շատ մը օրեր հին մնալէ ետքը, եղբայրներէն հրաժարելով՝ նաւով դէպ ի Սիւրիա

գնաց, ու իրեն հետ ալ Պրիսկիլա և Ակիւղաս, ու շարք կենքրոյցի մէջ եւ գլուխը փոքրած, վասն զի ուխտաւոր էր: 19 - Ու երբ Եփեսոս հասաւ, զանոնք հին ձգեց, և ինք ժողովարանը մտնելով՝ Հրեաներուն հետ կը խօսէր: 20 - Եւ իրեն կ'աղաչէին որ ա'լ աւելի ժամանակ իրենց քով մնայ, բայց յանձնառու չեղաւ. 21 - Հապա հրաժարեցաւ անոնցմէ՝ ըսելով, *Պէտք է որ անպատճառ այս առաջիկայ տօնը Երուսաղէմի մէջ ընեմ, բայց՝ Աստուծոյ կամքովը նորէն ձեզի կը դառնամ. ու Եփեսոսէ նաւով ճամբայ ելաւ. 22 - Եւ Կեսարիա հասնելով՝ Երուսաղէմ ելաւ, ու եկեղեցիին բարև տուաւ, ու ետքը իջաւ Սնիտոք. 23 - Եւ ատեն մը հին կենալէ ետև ելաւ, ու կարգաւ Գաղատացուց երկիրը ու Փուլգիա կը պտրտէր, ու բոլոր աշակերտները կը հաստատէր:

24 - Եւ Ապողոս անունով Հրեայ մը, ծնունդով Աղէքսանդրացի, ճարտասան մարդ մը, եկաւ հասաւ Եփեսոս, որ զօրաւոր էր ուրիշ գիրքերով: 25 - Ասիկա Տէրոջը ճամբուն մէջ վարժուած էր, և ջերմեւանդ հոգի ունենալով կը խօսէր ու կը սորվեցնէր ճշդութեամբ Տէրոջը վրայով. բայց ինք միայն Յովհաննէսի մկրտութիւնը գիտէր: 26 - Ասիկա սկսաւ ժողովարանին մէջ համարձակ խօսիլ. ու երբ Ակիւղաս ու Պրիսկիլա լսեցին անկէ, ալ զանիկա իրենց քով առին, և աւելի ճշդիւ Աստուծոյ ճամբան անոր հասկցուցին: 27 - Ու երբ անիկա ուզեց Աքսիայա երթալ, եղբայրները քաջալերեցին զանիկա, ու քիչ գրեցին այն րեզի աշակերտներուն որ զանիկա ընդունին. որ հին հասնելով՝ շատ օգտակար եղաւ շնորհքով հաւատացեալներուն. 28 - Քանզի հրապարակաւ սաստիկ կը յանդիմանէր Հրեաները, ուրիշ գիրքերէն ցուցնելով թէ Յիսուսը Քրիստոսն է:

ԳԼ ԺԹ

Եւ քանի որ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պողոս վերի կողմերը պտրտելով Եփեսոս եկաւ, և քանի մը աշակերտներ գտնելով՝ 2 - Ըսաւ անոնց,

*Ո՛հնէ, Տիտոս Յուստոս

*Ո՛հնէ, շունչ

Երբ հաւատացիր, Սուրբ Հոգին առի՞ք արդեօք. անոնք ալ ըսին իրեն, Բայց մենք լսած ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ: 3 - Եւ ըսաւ անոնց, Հապա ինչով մկրտուեցաք. անոնք ալ ըսին, Յովհաննէսի մկրտութիւնովը: 4 - Պողոս ալ ըսաւ, Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնով մկրտեց, Ժողովուրդին ըսելով թէ ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այսինքն Քրիստոս Յիսուսի: 5 - Ու երբ շա՞ր լսեցին, Տէր Յիսուսի անունովը մկրտուեցան: 6 - Եւ Պողոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ, և լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային: 7 - Եւ այն բոլոր մարդիկը տատուերկուքի շափ էին: 8 - Ու Ժողովարանը մտնելով երէք ամիս համարձակութեամբ Աստուծոյ թագաւորութեանը վրայով կը խօսէր ու կը համարէր: 9 - Իսկ երբ մէկ քանինները կը յամուէին ու դէմ կը դնէին՝ բաղմութեան առջև այն ճամբան բամբասելով, ինք անոնցմէ հեռացաւ և աշակերանները վատեց, ու ամէն օր Տիւրան անուն մէկուն դպրատանը մէջ կը խօսէր: 10 - Եւ ասիկա երկու տարի տեւեց, մինչև բոլոր Ասիայի մէջ բնակող Հրեաները ու Յայները *Տէրոջը խօսքը լսեցին: 11 - Եւ Աստուած նշանաւոր հրաշքներ կ'ընէր Պողոսի ձեռքով: 12 - Այնպէս որ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ կը տանէին հիւանդներուն, և իրենց ցաւերէն կը բժշկուէին, ու չար ոգիները կ'ելլէին: 13 - Բայց աստանդական Հրեաներէն մէկ քանինները, որոնք երդմնեցուցիչ էին, †յանդգնեցան Տէր Յիսուսի անունը կանչել անոնց վրայ որոնք չար ոգիներ ունէին, և կ'ըսէին, Ձեզ կ'երդմնցնենք Յիսուսով, զոր Պողոս կը քարոզէ: 14 - Եւ այս բանը ընողները Ակեա շա՞ր Հրեայ քահանայապետի մը եօթը որդիներն էին: 15 - Իսկ չար ոգին պատասխան տուաւ ու ըսաւ, Յիսուսը կը ճանչնամ ու Պողոսը գիտեմ, բայց դուք ո՞վ էք: 16 - Եւ այն մարդը որուն ներսիդին էր չար ոգին, անոնց վրայ ցաթկելով՝ բռնեց զանոնք ու յաղթեց, մինչև որ այն տունէն մերկ

ու վերաւորուած դուքս փախան: 17 - Եւ այս բանը Եփեսոսի մէջ բնակող բոլոր Հրեաներուն ու Յայներուն յայտնի եղաւ. և անոնց ամէնուն վրայ վախ մը ինկաւ, ու Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր: 18 - Եւ հաւատացեալներէն շատերը կու գային, ու կը խոստովանէին ու կը պատմէին իրենց ըրածները: 19 - Եւ կախարգութեան հեռեղնութեան շատերը գիրքերնին մէկտեղ բերելով՝ ամէնուն առջև կ'այրէին. և անոնց զինք հաշուեցին ու յիսուն հազար արծաթ քահիւն գտան: 20 - Այսպէս Տէրոջը խօսքը մեծապէս կ'աճէր և կը զօրանար:

21 - Ու երբ այս բաները լսեցան, Պողոս միտքը դրաւ որ Մակեդոնիայէ ու Աքայիայէ պարտելով՝ Երուսաղէմ երթայ. ու կ'ըսէր թէ Հոն երթալէս ետքը պէտք է ինծի որ Հռովմ ալ տեսնեմ: 22 - Եւ իրեն սպասաւորութիւն ընողներէն երկուքը, Տիմոթէոսը ու Երաստոսը, զրկեց Մակեդոնիա, ու ինք ատեն մըն ալ Ասիայի մէջ կեցաւ:

23 - Եւ այն ատենները շատ խուփութիւն եղաւ Տէրոջը ճամբուն համար: 24 - Քանզի 'Իեմեարիոս անունով արծաթագործ մը Արտեմիսի փոքրիկ տաճարներ կը շինէր արծաթէ, ու քիչ շահ չէր բերէր վարպետներուն: 25 - Զորոնք ասիկա մէկտեղ ժողովեց նոյն արհեստին բանուորներուն հետ, ու ըսաւ, Մարդիկ, դուք գիտէք որ այս գործէն է մեր շահը: 26 - Եւ կը տեսնէք ու կը լսէք որ այս Պողոսը ոչ միայն Եփեսացոց, հապա գրեթէ բոլոր Ասիացոց շատ ժողովուրդները համարելով՝ միտքերնին դարձուց, ըսելով թէ Ձեռքով շինուածները աստուածներ չեն: 27 - Ուստի վտանգ կայ որ ոչ միայն այս մեր *կողմը պիտի նախատուի, հապա մեծ աստուածուհւոյն, Արտեմիսի, տաճարն ալ ոչինչ պիտի սեպուի, և անոր մեծափառութիւնը պիտի խափանուի, զոր բոլոր Ասիա ու աշխարհ կը պաշտեն: 28 - Ու երբ շա՞ր լսեցին, բարկութեամբ լեցուած կը կանչուըւտէին ու կ'ըսէին, Մեծ է Եփեսացոց Արտեմիսը: 29 - Եւ բոլոր քաղաքը խռովութեամբ լեցուեցաւ. և յափշտակելով Քայիոս

*Ուստի, Տէր Յիսուսի
†Յոն. ձեռք զարկին

*Կա՞մ, արհեստը

ու Արիստարքոս Մակեդոնացիները , Պողոսի ճանապարհորդակիցները , ա-
 մէնը մէկէն թէաարոնը վազեցին : 30-
 Իսկ Պողոս երբ ուզեց ժողովուրդին
 մէջ մտնել , աշակերաները թող
 շտուին զինք : 31 - Ասիապեաներէն ալ
 ամանք որոնք իր բարեկամներն էին ,
 *բարձր զրկելով իրեն՝ կ'աղաչէին որ
 չհամարձակի թէաարոնը երթալ :
 32 - Ուստի մէկը մէկ կերպ ու միւսը
 ուրիշ կերպ բան կը կանչուըւտէին ,
 վասն զի ժողովքը շփոթութեան մէջ
 էր , և շատերը չէին գիտեր թէ ինչ
 բանի համար ժողովուած են : 33 - Եւ
 բազմութեանը մէջէն յառաջ բերին
 Աղեքսանդրոսը , զոր Հրեաները յառաջ
 քշեցին . Աղեքսանդրոս ալ ձեռքը
 շարժելով՝ կուզէր որ ժողովուրդին
 պատասխան տայ : 34 - Իսկ երբ գիտ-
 ցան թէ անիկա Հրեայ է , ամէնը մէկ
 բերան եղած՝ երկու ժամու չափ կը
 կանչուըւտէին թէ Մեծ է Եփեսաց-
 ւոց Արտեմիսը : 35 - Սակայն ատենա-
 դպիրը բազմութիւնը հանդարտեցնե-
 լով՝ ըսաւ , Ով Եփեսացի մարդիկ , ո՞ր
 մարդն է որ չգիտնայ թէ Եփեսացւոց
 քաղաքը *մեծ Արտեմիսի և Իիսուէ ին-
 կած կուսքին տաճարին պաշտօնեան
 է : 36 - Ուրեմն այս որ անվիճելի բան
 մըն է , պէտք է ձեզի հանդարտ կենալ ,
 և յանդգնութեամբ բան մը չընել :
 37 - Քանզի դուք այդ մարդիկը հո-
 բերիք , որոնք ոչ տաճար կողոպտող-
 ներ են , ոչ ալ ձեր աստուածուհւոյն
 հայհոյանք բրեր են : 38 - Ուստի եթէ
 Իեմեսարիոս և իրեն հետ եղած վար-
 պետները մէկուսն հետ բան մը ունին ,
 դատի օրեր կան ու փոխանորդ բռեչի
 կայ . թող իրարու դէմ ամբաստանու-
 թիւն ընեն . 39 - Իսկ եթէ ուրիշ բա-
 ներու համար է ձեր պահանջմունքը ,
 օրինաւոր ժողովքի մէջ թող որոշուի :
 40 - Վասն զի մենք ալ այսօրուան ե-
 ղածին համար իրրե խառվայրյոյզ մար-
 դիկ ամբաստանուելու փոանգի մէջ
 ենք , քանզի պատճառ մը չկայ որով
 կարող ըլլանք այս խառնամբխ բազ-
 մութեանը համար պատասխան տալ :
 Եւ այսպէս ըսելով ժողովքը արձա-
 կեց :

Եւ աղմուկին դադարելէն ետև Պո-
 ղոս աշակերաները իրեն կանչեց , ու
 հրաժարական ողջոյն տալով՝ ելաւ որ
 Մակեդոնիա երթայ : 2 - Եւ այն կող-
 մերը պարտելէ ու շատ խօսքերով զա-
 նանք յորդորելէ ետև Ելլադա եկաւ :
 3 - Եւ հոն երեք ամիս կենալէ ետքը ,
 Հրեաները իրեն դէմ նենգութեան
 խորհուրդ բրին երբ կ'ուզէր Սիւրիա
 ելլել . աւար համար որոշեց Մակեդոնի-
 այի վրայէն դառնալ : 4 - Ու մինչև
 Ասիա իրեն հետ կ'երթար Բերիացի
 [Պրուսի *բրին] Սուպատրոս , և Թեոս-
 զանկեցիներէն Արիստարքոս ու Սե-
 կունդոս , և Գայիոս Գերբացի ու Տի-
 մոթէոս , և Ասիացիք , Տիւքիկոս ու
 Տրոփիմոս : 5 - Ասանք առաջ գացին
 ու Տրովագայի մէջ մեզի կը սպասէին :
 6 - Մենք ալ բազարջակերքի օրերէն
 ետև Փիլիպպէէ նաւեցինք , և հինգ օր-
 ուան մէջ Տրովագա եկանք անոնց
 քով , ու հոն եթէ օր կեցանք :
 7 - Եւ մէկշաբթի օրը երբ *ժող-
 վուեր էինք՝ հաց կարելու , Պողոս ա-
 նոնց կը քարոզէր , վասն զի հեռեկալ
 օրը ճամբայ պիտի ելլէր . և խօսքը եր-
 կրնցուց մինչև կէս գիշեր : 8 - Ու շատ
 լապատերներ կային այն վերի սենեակը՝
 ուր մենք ժողովուած էինք : 9 - Եւ երի-
 տասարդ մը , Եւախքոս անուն , պա-
 տուհանին վրայ նստած՝ խորունկ քու-
 նի մէջ մտեր էր . երբ Պողոս խօսքը
 երկնցուց , անիկա խորունկ քնով բըռ-
 նուած՝ երրորդ դասիկոնէն վարինկաւ ,
 ու զանիկա մեռած վերցուցին : 10 -
 Եւ Պողոս վար իջնելով՝ անոր վրայ ին-
 կաւ ու զրկեց զանիւս ու կ'ըսէր , Մի
 խռովիք , վասն զի ասոր հագին իր մէջ
 է : 11 - Եւ վեր ելլելով՝ հացը կարեց
 ու կերաւ . ու երկար խօսելով մինչև
 առտու , ետքը ելաւ գնաց : 12 - Եւ
 այն պատանին ողջ բերին . ու մեծա-
 պէս մխիթարուեցան : 13 - Իսկ մենք
 նաւը մտնելով՝ ճամբայ ելանք գէպի
 Ասան , ուրկէ Պողոսը պիտի ունէինք ,
 վասն զի այնպէս տպապրեր էր , որովհե-
 տև ինք Դցամաքով պիտի երթար : 14 -
 Ու երբ Ասանի մէջ մեզի հանդիպե-
 ցաւ , առինք զանիկա և Միաիլինէ

*Ունէս, մեծ աստուածուհւոյն

*Ունէս, աշակերաները ժողովուեր էին
 †Կոմ, քայելով

եկանք : 15 - Անկէ ալ նաւելով Տե-
տեկալ օրը Քիտի գիմոց հասանք . և
միւս օրը Սամսո հասանք , ու էէչէբը
Տրոգիլիոն կենալով՝ միւս օրը Մելիտոս
եկանք . 16 - Վասն զի Պոզոս միաքը
դրեր էր որ նաւով անցնի Եփեսոսի
քովէն , որ չըլլայ թէ Ասիայի մէջ ժա-
մանակ անցնէ , որովհետեւ կ'արտարար
որ եթէ կարելի է իրեն , Պէնակկոստէ-
ին օրը Երուսաղէմ՝ ըլլայ :

17 - Եւ Մելիտոսէ Բարդ զրկեց Եփե-
սոս ու եկեղեցիին երէցները կանչեց :

18 - Ու երբ իրեն եկան , ըսաւ անոնց ,
Դուք գիտէք որ այն առաջին օրէն
հետէ որ ես Ասիա եկայ , ի՛նչպէս ձե-
զի հետ վարուեցայ բոլոր ժամանակը .

19 - Ամենայն խոնարհութեամբ Տէրո-
ջը ծառայելով , և շատ արցունքով
ու փորձութիւններով որոնք Հրէից
նենգութիւններէն ինծի պատահեցան .

20 - Ի՛նչպէս լախուշով ես չկեցայ օգ-
տակար բաներէն բնաւ մէկը ձեզի
գրուցելէ , ու ձեզի հրապարակաւ և
տան մէջ սորվեցնելէ . 21 - Վկայու-
թիւն տալով Հրէից և Յունաց «-ը»՝
դէպ ի Աստուած սպաշխարութեան
համար , ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի
վրայ եղած հաւատքին համար :

22 - Եւ հիմա ահա ես հոգիով կապուած՝
Երուսաղէմ՝ կ'երթամ , և հոն ինչ որ
ինծի պիտի պատահի՝ չեմ գիտեր . 23 -
Միայն թէ Հոգին Սուրբ ամէն քաղա-
քի մէջ է՛նչ կը վկայէ ու կ'ըսէ թէ
կապեր ու նեղութիւններ ինծի կը
սպասեն :

24 - Բայց ես բանի մը հա-
մար հոգ չեմ՝ ըներ , և իմ անձս պատ-
ուական չեմ՝ սեպեր , միայն թէ իմ
ընթացքս ուրախութեամբ կատարեմ ,
և այն պաշտօնը՝ զոր Տէր Յիսուսէ ա-
ռի Աստուծոյ շնորհաց աւետարանին
վկայ ըլլալու :

25 - Եւ հիմա ահա ես
գիտեմ որ ա՛լ իմ երես պիտի չտես-
նէք դուք ամէնդ , որոնց մէջ պարտե-
ցայ Աստուծոյ թագաւորութիւնը քա-
րոզելով :

26 - Ուստի այսօր կը վկա-
յեմ՝ ձեզի , որ ես անպարտ եմ ամէնուն
արիւնէն : 27 - Վասն զի ես չկեցայ
Աստուծոյ բոլոր կամքը ձեզի յայտնե-
լէ :

28 - Ուրեմն զգուշացէք ձեր ան-
ձերուն և բոլոր հօտին , որուն վրայ
Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ *Աս-
տուծոյ եկեղեցին հովուելու զոր իր

արիւնովը ստացաւ : 29 - Քանզի գի-
տեմ՝ որ իմ զատուելէս ետքը ձեր մէջ
* յափշտակող գայլեր պիտի մտնեն ,
որոնք պիտի չխնայեն հօտին :

30 - Եւ
ձեզմէ ալ «-նշ»՝ մարդիկ պիտի ել-
լեն , որոնք ծուռ բաներ պիտի խօսին՝
աշակերանները իրենց ետեւէն քաշելու
համար :

31 - Ուստի արթուն կեցէք ,
և միտքերնիդ բերէք՝ որ երեք տարի
գիշեր ու ցորեկ չդադարեցայ ամէն մէ-
կը արցունքով խրատելէ :

32 - Եւ հի-
մա , եղբայրներ , կը յանձնեմ ձեզ
Աստուծոյ ու անոր շնորհաց խօսքին , որ
կարող է շինելու և բոլոր սրբուածնե-
րուն հետ ձեզի ժառանգութիւն տա-
լու :

33 - Մէկո՛ւն արծաթին կամ
սոկիին կամ հագուստին չցանկացայ .
34 - Դուք ձեզմէ գիտէք որ ինծի և
ինծի հետ եղողներուն պէտքերը այս
ձեռքերս հագացին :

35 - Ամէն բան
ձեզի ցուցուցի , թէ այսպէս պէտք է
աշխատիլ ու տկարներուն օգնութիւն
ընել , և միտք բերել Տէր Յիսուսի
խօսքը՝ զոր ինք ըսաւ , Աւելի երանելի
է տալը քան թէ առնելը :

36 - Եւ երբ
զայս ըսաւ , անոնց ամէնուն հետ ծուն-
կի վրայ գալով՝ աղօթք ըրաւ : 37 -
ամէնն ալ ստատիկ կուլային , ու Պո-
զոսի պարանոցին վրայ իյնալով՝ զանի-
կա կը համբուրէին :

38 - Սիրաբերնին կը
ցաւէր միանաւանդ այն խօսքին համար՝
որ կ'ըսէր թէ ա՛լ պիտի չտեսնեն իր
երեսը . և զանիկա ճամբայ դրին մին-
չև նաւը երթալ :

ԳԼ. ԻԱ.

Ու երբ ելանք ու անոնցմէ զատ-
ուեցանք , շիտակ նաւելով կով եկանք ,
և միւս օրը Հառոսն , ու անկէ Պատա-
րա : 2 - Եւ նաւ մը գտանք որ Փիւնի-
կէ կ'երթար , ու անոր մէջ մտնելով՝
ճամբայ ելանք : 3 - Եւ երբ կիպրոս երև-
ցաւ , զանիկա ձախ կողմերնիս թողե-
լով՝ դէպ ի Սիւրիա նաւեցինք և Տիւ-
րոս ելանք , վասն զի նաւը հոն պիտի
թափէր էր բեռը : 4 - Եւ աշակերանե-
րը գտնելով՝ եօթը օր հոն կեցանք ,
որոնք Սուրբ Հոգիով կ'ըսէին Պոզոսի
որ Երուսաղէմ՝ չելլէ : 5 - Ու երբ այն
օրերը անցուցինք , ելանք ու կերթա-
լինք . ամէնն ալ կիներով ու տղաք-

*Ուրեմ, Տէրոջը

*կ-մ, վնասակար

ներով մինչև քաղաքէն դուրս մեզ ճամբայ դրին. և ծովուն եզերքը ծունկի վրայ գալով աղօթք բրինք : 6 - Ու իրարու հրաժարական ողջոյն տալով մենք նաւը ելանք, անոնք ալ տեղերնին դարձան: 7 - Իսկ մենք Տիրուէ զարեւելի և ծովու ճամբորդութիւնը լմնցնելով Պատղէմայիս հասանք, ու եղբայրները բարեւելով օր մը անոնց քով կեցանք: 8 - Եւ հետեւալ օրը անկէ ելանք ու կեսօրիս եկանք, և Փիլիպպոս աւետարանչին տունը մտնելով, որ եօթնէն մէկն էր, անոր քով կեցանք: 9 - Անիկա չորս կոյս աղջիկ ունէր, որոնք մարգարէութիւն կ'ընէին: 10 - Եւ երբ հոն շատ օրեր կեցանք, Հրէաստանէ մարգարէ մը իջաւ Ագաբոս անունով. 11 - Ու երբ մեզի եկաւ, Պողոսի գօտին առնելով իր ձեռքերը ու ստքերը կապեց, և ըսաւ, Այսպէս կ'ըսէ Հոգին Սուրբ. Այն մարդը՝ որուն է այս գօտին, այսպէս պիտի կապեն Հրեաները Երուսաղէմի մէջ, ու հեթանոսներուն ձեռքը պիտի մտանեն: 12 - Ու երբ զայս լսեցինք, աղաչեցինք մենք ալ և տեղացիք ալ որ Երուսաղէմ չելլէ: 13 - Իսկ Պողոս պատասխան տուաւ, Ի՞նչ կ'ընէք, Ինչ՞ - կու լաք ու իմ սիրտս կը ճմլէք, քանզի ես ոչ թէ միայն Երուսաղէմի մէջ կապուելու, հապա նաև մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուսի անուանը համար: 14 - Եւ երբ ինք մտիկ չըրաւ՝ լուռ կեցանք, ու ըսինք, Տէրոջը կամքը թող ըլլայ: 15 - Եւ այն օրերէն ետև պատրաստուելով Երուսաղէմ ելանք: 16 - Կեսարացի աշակերտներէն ալ մէկ քանինները մեզի հետ եկան, և Բզ տարին նախնի աշակերտի մը, Կիպրացի Մնասոնի, որուն քով պիտի կենայինք: 17 - Ու երբ Երուսաղէմ մտանք, եղբայրները ուրախութեամբ մեզ ընդունեցին: 18 - Եւ հետեւալ օրը Պողոս մեզի հետ Յակոբոսի քով գնաց, ու բոլոր երէցներն ալ եկան: 19 - Եւ զանոնք բարեւելով մի ըստ միջէ կը պատմէր ինչ որ Աստուած հեթանոսներուն մէջ ըրաւ իր ծառայութիւնովը: 20 - Անանք ալ լսելով՝ փառք կու տային + Տէրոջը.

և ըսին իրեն, Կը տեսնե՞ս, եղբայր, քանի՛ բերաւոր հաւատացեալ Հրեաներ կան, ու ամէնն ալ օրէնքին նախանձաւոր են: 21 - Բայց քու վրայովդ իմացան թէ դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրեաներուն Մովսէսէ սպասամբիլ կը սորվեցնես, ըսելով որ տղաքնին չթլփատեն, և սովորութիւններուն համեմատ չվարուին: 22 - Արդ ի՞նչ պիտի ըլլայ. անշուշտ բազմութիւն պիտի ժողվուի, վասն զի պիտի լսեն թէ եկեր ես: 23 - Ուստի այս բանը ըրէ զոր քեզի կ'ըսենք. Մեր քով չորս մարդ կայ, որոնք իրենց վրայ ուխտ դրած են. 24 - Զանոնք առ, իրենց հետ մտքուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ իրենց գլուխը ածիլեն. որպէս զի ամէնն ալ գիանան թէ քու վրայովդ իմացած բաներնին ոչինչ է, հապա դուն ալ Բզի հետ կը քալես օրէնքը պահելու մէջ: 25 - Բայց հաւատքի եկող հեթանոսներուն համար մենք թուղթ զրկեցինք՝ ինչպէս սրոշեցինք, որ անոնք բնաւ այսպիսի բաներ չպահեն. միայն թէ զգուշանան կուռքերու զոհուածէ ու արիւնէ և խեղճուածէ ու պոռնկութենէ: 26 - Այն ատեն Պողոս այն մարդիկը տուաւ, ու հետեւալ օրը անոնց հետ մտքուած՝ տաճարը մտաւ, մտքութեան օրերուն լմնալը ցուցնելու համար, մինչև որ անոնց ամէն մէկուն համար պատարագ մատուցուեցաւ:

27 - Ու երբ եօթը օրերը լմնալու վրայ էին, Ասիացի Հրեաները զանիկա տաճարին մէջ տեսնելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին, և անոր ձեռք վարկած՝ կը կանչուըռտէին, 28 - Իսրայելացի մարդիկ, օգնութեան հասէք. աս այն մարդն է՝ որ ամէն տեղ ժողովուրդին և օրէնքին ու այս տեղին դէմ բան կը սորվեցնէ ամէնուն. մինչև տաճարին մէջ Յոյներ ալ մըտցուց, և այս սուրբ տեղը պղծեց. 29 - (Վասն զի առաջուընէ Եփեսացի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջ տեսեր էին, և կը կարծէին թէ Պողոս զանիկա տաճարը մտցուց.) 30 - Ու բոլոր քաղաքը շարժեցաւ և ժողովուրդը դիպուեցաւ, ու բռնեցին Պողոսը տաճարէն դուրս քաշեցին. և շուտ մը դռները գոցուեցան: 31 - Ու երբ անոնք կ'ուզէին զանիկա սպաննել, լուր հասաւ գուեղին հապարապետին թէ բու-

*Ման+ Ի-եյնէն, մենք որ Պողոսի ընկերներն էինք՝
+Ման+, Աստուծոյ

թր Երուսաղէմ իրար անցեր է : 32 - Կն ալ անմիջապէս զինուորներ և հարիւրապետներ առած՝ անոնց վրայ վազեց. անոնք ալ հազարապետը և զինուորները ականելով՝ Պողոսը ձեռեկէ գաղափարեցան : 33 - Այն ատեն հազարապետը մտանալով բռնեց զանիկա , և հրաման քրաւ որ կրկին շղթայով կապեն . ու կը հարցնէր թէ անիկա ո՞վ է ու ի՞նչ ըրեր է : 34 - Եւ բազմութեանը մէջէն մէկը մէկ կերպ ու միւսը սւրիշ կերպ բան կը կանչուըւտէին . իսկ երբ չկրցաւ այն շփոթութեանէն ստոյգը գիանալ , հրաման քրաւ որ զանիկա բերդը տանին : 35 - Ու երբ սանդուխը հասաւ , այնպէս պատահեցաւ որ զինուորները վեր վերցնեն զանիկա , ժողովուրդին բռնութեանը համար . 36 - Վասն զի ժողովուրդին բազմութիւնը ետեւէն կ'երթար , ու կ'ըսէին , Վերցուր ստիկա : 37 - Ու երբ Պողոս բերդը մտնելու վրայ էր , հազարապետին քաւ , Արդեօք կարեբելի՞ է որ քեզի բան մը խօսիմ : Ան ալ քաւ , Յունարէն գիտե՞ս . 38 - Չէ՞ որ դուն այն Եգիպտացին ես , որ այս օրերէն առաջ չորս հազար *սրիկայ մարդիկ ապստամբեցուցիր , ու անպատը հանեցիր : 39 - Պողոս ալ քաւ , Ես Հրեայ մարդ մըն եմ՝ Կիլիկիոյ Տարսոնէն , ոչ թէ աննշան քաղաքի մը քաղաքացի , ու կ'աղաչեմ՝ քեզի ինծի հրամանն առը որ ժողովուրդին խօսիմ : 40 - Ու երբ անիկա հրամանն առաւ , Պողոս սանդուխին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողովուրդին , ու երբ ազէկ մը լուծիւն եղաւ , Եբրայական լեզուով խօսեցաւ անոնց , ու քաւ ,

ԳԼ. ԻԲ

Մարդիկ եղբայրներ և հայրեր , ինծի մտիկ ըրէք որ հիմա ձեզի պատասխան կու տամ . 2 - (Երբ լսեցին որ Եբրայական լեզուով կը խօսէր իրենց , ալ աւելի լուռ կեցան . 3 - Եւ անիկա քաւ ,) Ես Հրեայ մարդ մըն եմ՝ Կիլիկիոյ Տարսոնին մէջ ծնած , և այս քաղաքին մէջ Գամաղիէլի ոտքը մեծցած , ու Դէր հայրենի օրէնքին ճշգրութեանը պէս կրթուած , նախան-

*Յուն. սրիկարեան , այսինքն , դաշնակակիր մարդասպան

ձաւոր էի Աստուծոյ , ինչպէս այսօր դուք ամէնգ էք : 4 - Որ այրեր ու կիներ կապելով , ու բանտերու մատնելով այս ճամբան հալածեցի մինչև ի մահ . 5 - Ինչպէս քահանայապետն ալ կը վկայէ ինծի համար , և բոլոր ծերակոյտը . սրնցմէ թող թեր ալ տանելով եղբայրներուն՝ Գամաղիոս կ'երթայի , որպէս զի հոն եղածներն ալ կապուած Երուսաղէմ՝ բերեմ որ պատժուին : 6 - Ու եղաւ որ երբ կ'երթայի ու Գամաղիոսի մօտեցայ , կէսօրուան դէմ՝ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ բոլորտիքս . 7 - Եւ գեօփնը ինկայ , ու ձայն մը լսեցի որ ինծի կ'ըսէր , Սաւուղ , Սաւուղ , ինչո՞ւ զիս կը հալածես : 8 - Ես ալ պատասխան տուի թէ Գուն ո՞վ ես , Տէր . ան ալ ինծի քաւ , Ես Յիսուս Նազարեցին եմ , զոր դուն կը հալածես : 9 - Բայց անոնք որ ինծի հետ էին , լոյսը տեսան ու վախով լեցուեցան , սակայն ինծի խօսողին ձայնը չլսեցին : 10 - Եւ ըսի , Ի՞նչ ընեմ , Տէր . և Տէրը ինծի քաւ , Ելիր գնա Գամաղիոս , ու հոն քեզի պիտի զրուցուի այն ամէն բաներուն համար , որ սահմանուած է որ ընես : 11 - Ու երբ չէի տեսներ այն լոյսին փառքէն , ինծի հետ եղողները ձեռքէս բռնած՝ Գամաղիոս մտայ : 12 - Եւ Անանիա անուն մարդ մը , օրէնքին համեմատ աստուածավախ , ու Գամաղիոս բնակող բոլոր Հրեաներէն Բարի վկայուած , 13 - Ինծի եկաւ , ու քովս կայնելով՝ ինծի քաւ , Սաւուղ եղբայր , վեր նայէ : 14 - Ես ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն , և անիկա քաւ , Մեր հայրերուն Աստուածը առաջուընէ քեզ ընտրեց , որպէս զի իր կամքը ճանչնաս ու այն Արդարը տեսնես , և անոր բերնէն ձայն լսես : 15 - Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ պիտի ըլլաս այն բաներուն համար , զորոնք տեսար ու լսեցիր : 16 - Եւ հիմա , ալ ի՞նչ կ'ուշանաս . ելիր , մկրտուէ ու մեղքերդ լուսանոր անուընը կանչելով : 17 - Եւ եղաւ որ երբ Երուսաղէմ դարձայ , ու տաճարին մէջ աղօթք կ'ընէի , մտքի յափրշտակութիւն մը եկաւ վրաս , 18 - Եւ զինք տեսայ , որ ինծի կ'ըսէր , Արատրցիր , շուտով Երուսաղէմէ ելիր ,

*Ունի , Տէրոջը

վան զի քու ինծի համար ըրած վկայութիւնդ պիտի չընդունին : 19 - Ես ալ ըսի, Տէր, իրենք ոչէ՛ գիտեն թէ ես էի որ քեզի հաւատացողները բանաւոր կը գնէի, և ժողովարաններուն մէջ կը ծեծէի. 20 - Ու երբ քու Ստեփանոս վկայիդ արիւնը կը թափուէր, ես ինքս ալ ներկայ էի և կամակից էի *անոր սպաննուելուն՝. ու զանհկա սպաննողներուն հանդերձները ես կը պահէի : 21 - Եւ ինծի ըսաւ, Փնա, վասն զի ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի զրկեմ :

22 - Եւ անոնք մինչև այս խօսքը ականջ դրին իրեն, ետքը ձայներնին վերցուցին ու ըսին, Վերցուր աշխարհէ այդպիսի մարդը, քանզի չվայլերատար ողջ մնալ : 23 - Ու երբ կը կանչուըւտէին ու հանդերձնին կը նետէին և փոշին դէպ ի օդը կը ցանէին, 24 - Հազարապետը հրաման ըրաւ որ զանհկա բերդը մոցնեն, ու ըսաւ որ ծեծով հարցուփորձ ընեն անոր, որպէս զի գիտնայ թէ ի՛նչ յանցանքի համար անոր դէմ այնպէս կը կանչուըւտէին : 25 - Ու երբ կաշի կապերով գինք կապեցին, Պողոս վերակացու հարիւրապետին ըսաւ, Արժան է ձեզի Հռովմայեցի ու չդատապարտուած մարդ մը ծեծել : 26 - Հարիւրապետը երբ աչք լսեց, գնաց հազարապետին պատմեց ու ըսաւ, †Ո՛րչ պիտի ընես, վասն զի այս մարդը Հռովմայեցի է : 27 - Հազարապետն ալ քովը գնաց ու ըսաւ անոր, Ըսէ ինծի, դուն Հռովմայեցի՞ ես. ան ալ ըսաւ, Այո : 28 - Հազարապետը պատասխան տուաւ, Ես շատ ստակով ձեռք բերի այս քաղաքացիութեան իրաւունքը. և Պողոս ըսաւ, Ես բուն քաղ ծնած եմ : 29 - Ու անոնք որ իրեն հարցուփորձ պիտի ընէին, շուտ մը ետ կեցան իրմէ. և հազարապետն ալ վախցաւ, երբ իմացաւ թէ Հռովմայեցի է, և որովհետև զանհկա կապեր էր :

30 - Ու հետևեալ օրը ուզելով որ շիտակը գիտնայ թէ ի՛նչ է Հրեաներուն ըրած ամբաստանութիւնը անոր դէմ, ‡արձակեց զանհկա, և հրաման ըրաւ որ քահանայապետները ու բո-

լոր ժողովքը մեկտեղ դան. և Պողոսը իջեցնելով անոնց առջև կայնեցուց :

ԳԼ ԻԳ

Եւ Պողոս իր աչքերը ժողովքին վրայ դարձնելով ըսաւ, Մարդիկ եղբայրներ, ես բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարեք եմ՝ Աստուծոյ առջև մինչև այսօր : 2 - Անանիա քահանայապետն ալ հրաման ըրաւ իր քով կայնողներուն՝ որ անոր բերնին զարնեն : 3 - Այն ատեն Պողոս ըսաւ անոր, Աստուած քեզի պիտի զարնէ, ծեփած պատ. և դուն նստեր ես օրէնքին համեմատ զիս դատելու, և օրէնքէն դուրս հրաման կ'ընես որ ինծի զարնեն : 4 - Եւ բոլորախքը կայնողները ըսին, Աստուծոյ քահանայապետը կը նախատես : 5 - Պողոս ալ ըսաւ, Եղբայրներ, չէի գիտեր որ քահանայապետ է վասն զի գրուած է, Քու ժողովուրդի իջխանին դէմ՝ շարախօսութիւն մը ընէր : 6 - Եւ Պողոս գիտնալով որ մէկ կողմը սագուկեցիներ են ու միւսը փարիսեցիներ, կ'աղաղակէր ժողովքին մէջ, Մարդիկ եղբայրներ, ես փարիսեցի եմ, փարիսեցիի որդի. մեռելաց յարութեանը յոյսին համար կը դատուիմ : 7 - Ու երբ զայս ըսաւ, փարիսեցուց և սագուկեցուց մէջ երկպառակութիւն ինկաւ, և բազմութիւնը բաժնուեցաւ : 8 - Քանզի սագուկեցիք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և ոչ հրեշտակ, ոչ ալ հոգի. բայց փարիսեցիք երկուքն ալ կը դաւանին : 9 - Եւ մեծ աղաղակ մը եղաւ. ու փարիսեցուց կողմէն եղող դպիրները սաքի վրայ ելլելով՝ դէմ՝ կը կենային ու կ'ըսէին, Մենք այս մարդուն վրայ շարութիւն մը չենք գտներ. հապա եթէ հոգի մը կամ հրեշտակ մը տար խօսած է, *Ի՞նչ : 10 - Ու երբ աղմուկը շատցաւ, հազարապետը, վախնալով որ չըլլայ թէ Պողոս անոնցմէ պատառուի, զինուորներուն հրաման ըրաւ որ իջնեն զանհկա անոնց մէջէն յափրշտակեն ու բերդը բերեն : 11 - Եւ հետևեալ գիշերը Տէրը անոր քով կայնեցաւ ու ըսաւ, Քաջասիրտ եղիր, Պողոս, վասն զի ինչպէս Երուսաղէմի

*Ո՛րչ, ընեն
 †Ո՛րչ, կայէ ի՛նչ
 ‡Ո՛րչ, կապերն արձակեց

*Ո՛րչ, Աստուծոյ հետ չմարտընչինք

մէջ ինծի համար վկայեցիր , այնպէս պէտք է քեզի որ Հռովմայ մէջ ալ վկայես :

12 - Աւ երբ առաւ եղաւ , Հրեաներէն ոմանք միաբանեցան , ու ինքզինքնին անէծքի տակ գրին՝ ըսելով որ չուտեն ու չիսեն մինչև որ Պօղոսը սպաննեն : 13 - Եւ քառասունէ աւելի էին որ այս երգումը իրարու հետ բրին . 14 - Արանք քահանայապետներուն և ծերերուն գացին ու ըսին , Անէծքով անիծեցինք անձերնիս որ բան մը չուտենք մինչև որ Պօղոսը սպաննենք : 15 - Աւտի դուք ժողով բին հետ մէկտեղ հազարապետին խնայուցէք որ վաղը զանկա ձեզի իջեցնէ , որպէս թէ դուք աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզէք անոր վրայով . և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ ենք զանկա սպաննելու : 16 - Եւ Պօղոսի քրոջ որդին երբ այս դաւաճանութիւնը լսեց , եկաւ բերդը մտաւ ու Պօղոսի պատմեց : 17 - Պօղոս ալ հարիւրապետներէն մէկը իրեն կանչելով՝ ըսաւ , Այս պատանին հազարապետին տար , վասն զի բան մը ունի անոր իմացնելու : 18 - Ան ալ առաւ զանկա և տարաւ հազարապետին ու ըսաւ , Բանտարկեալ Պօղոս զիս կանչեց , և աղաչեց որ այս պատանին քեզի բերեմ , որ քեզի խօսելիք ունի : 19 - Եւ հազարապետը անոր ձեռքէն բռնելով մէկդի գնաց , ու հարցուց թէ Ի՞նչ բան ունիս ինծի իմացնելու : 20 - Եւ անկա ըսաւ , Հրեաները միաբանեցան քեզի աղաչելու որ վաղը Պօղոսը տառանք իջեցնես , որպէս թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննութիւն մը ընել անոր վրայով : 21 - Բայց դուն անոնց մտիկ չընես , վասն զի անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դարանամուտ եղած են անոր համար , որոնք ինքզինքնին անէծքի տակ գրին որ չուտեն ու չիսեն մինչև զանկա սպաննեն . ու հիմա պատրաստ են , և քու հրամանիդ կը սպասեն : 22 - Այն ատեն հազարապետը պատանին ճամբեց , պատուիրելով թէ Մարգո՛ւ մի ըսեր որ այս բանը ինծի իմացուցիր :

23 - Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց ու ըսաւ , Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք , ու եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր գեղարդաւոր , որպէս զի մինչև Կեսարիա եր-

թան զիշերուան ժամը երեքին . 24 - Եւ գրասաներ պատրաստեցէք , որպէս զի Պօղոսը հեծցնեն ու ապահովութեամբ Փեղիքս կուսակալին տանին : 25 - Եւ թուղթ մը գրեց այս օրինակին պէս . 26 - Կղզիոս Լիւսիոս , պատուական Փեղիքս կուսակալիդ ողջոյն : 27 - Այս մարդը Հրեաներէն բռնուեր էր , և անոնցմէ պիտի սպաննուէր , իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազատեցի զանկա , խնայելով որ Հռովմայեցի է : 28 - Եւ ուզելով պատճառը գիանալ , որու համար տար վրայ ամբաստանութիւն կ'ընէին , իջեցուցի տակա անոնց տականք . 29 - Չոր գտայ ամբաստանուած իրենց օրէնքին վերաբերեալ խնդիրներու համար , և մեռնելու կամ՝ կապուելու արժանի յանցանք մը չուներ : 30 - Աւ երբ լուր առի որ Հրեաները այդ մարդուն համար սրողայթ պիտի լարեն , խկոյն քեզի զրկեցի , հրաման ընելով ամբաստանողներուն ալ՝ որ քու առջև գ խօսին ատոր վրայով : Աղջ եղիր : 31 - Չինուորներն ալ իրենց հրամայումին համեմատ առին Պօղոսը ու զիշերով Անտիպատրոս տարին : 32 - Եւ հեռեկալ օրը թողուցին ձիաւորները անոր հետ երթալու , ու իրենք բերդը դարձան : 33 - Անոնք ալ Կեսարիա մտան , ու թուղթը կուսակալին տուին , և Պօղոսը անոր առջև կայնեցուցին : 34 - Երբ կարգաց , հարցուց թէ ո՞ր գաւառէն է , և խնայելով որ Կիլիկիայէ է , 35 - Ըսաւ , Պիտի լսեմ՝ քեզի՛ երբ քու ամբաստանողներդ ալ դան . և հրաման ըրաւ որ զանկա Հերովդէսի պալատը պահեն :

ԳԼ ԻԳ

Եւ հինգ օրէ ետքը Անանիա քահանայապետը ծերերուն հետ ու Տերտիլղոս առնն ճարտասանի մը հետ իջաւ . և ասոնք կուսակալին խնայուցին իրենց մեքսաքանոնիչ Պօղոսի դէմ : 2 - Աւ երբ կանչեցին զանկա , Տերտիլղոս սկսաւ ամբաստանել ու ըսել , Արովհետեւ քու ձեռքովդ շատ խաղաղութիւն , ու քու խնամքովդ այս ազգին բաներուն աղէկ կարգադրութիւնը կը վայելենք , 3 - Ամէն կերպով

*Ո՞ւ՞, կուսակալը կարգաց

ու ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով , շնորհակալ ենք , ով պատուական Փեղիքս : 4 - Բայց չըլլայ որ ալ աւելի ձանձրութիւն տամ՝ քեզի , կ'աղաչեմ՝ որ քու քաղցրութիւնովդ մեզի ականջ դնես , որ համառօտաբար պիտի իօ՞ւննէ : 5 - Այսին զի մենք այս մտորդը գտանք ապականիչ և խռովարար բոլոր Հրեաներուն որոնք աշխարհի մէջ են , և Նազարեցաց աղանդին առաջնորդ . 6 - Ար տաճարն ալ ուղեց պղծել . զոր բռնեցինք ու մեր օրէնքին համեմատ ուղեցինք դատաստանը ընել . 7 - Բայց Լիւսիաս հաղարապետը եկաւ մեծ բռնութեամբ մեր ձեռքէն առաւ , 8 - Եւ հրաման ըրաւ որ անոր դատախազները քեզի գան , զոր դուն քննելով կարող պիտի ըլլաս տեղեկանալ այն ամէն բաներուն , որոնց համար մենք ամբաստանութիւն կ'ընենք՝ ատոր վրայ : 9 - Հրեաներն ալ ամէնը մէկ եղամ՝ ըսին թէ այդպէս է :

10 - Պատասխան տուաւ Պօղոս , (երբ կուտակալը անոր աչք ըրաւ որ խօսի ,) Գիտնալով որ շատ տարիներէ հետէ դուն այս ազգին դատաւորն ես , աւելի յօժարութեամբ ինծի վերաբերեալ բաներուն համար պատասխան կու տամ . 11 - Արովհետեւ կրնաս գիտնալ որ ես տասուերկու օրէ աւելի չէ՛ քանի որ Երուսաղէմ՝ ելայ երկրպագութիւն ընելու : 12 - Եւ զիս տաճարին մէջ մէկո՛ւն հետ վիճարանութիւն ընելու վրայ , կամ բազմութիւնը մէկտեղ ժողոված չգտան , ոչ ալ ժողովարաններուն մէջ , 13 - Եւ ոչ քաղաքին մէջ . ոչ ալ կրնան ապացուցանել այն բաները , որոնց համար հիմն ամբաստանութիւն կ'ընեն ինծի դէմ : 14 - Բայց զայս կը խոստովանիմ՝ քեզի՝ թէ այն ճամբուն համեմատ զոր ասոնք հերձուած կ'ըսեն , ես այնպէս կը պաշտեմ իմ հայրենի Աստուածս , հաւատարմով այն ամէն բաներուն որոնք օրէնքին և մարգարէներուն մէջ գրուած են . 15 - Եւ յոյս ունիմ առ Աստուած , ինչպէս ասոնք ալ ակնկալութիւն ունին , որ մեռելներու յարութիւն պիտի ըլլայ , թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն : 16 - Եւ ես այս բանին համար կը ջանամ , որ ամէն առեւ մտքուր իղձմտանք ունենամ Աստուծոյ առջև ու մտորոց առջև : 17 - Արդ ես շատ տարիներէ ետեւ եկայ իմ ազ-

գիս սղորմութիւններ բերելու ու ընծաներ գալու . 18 - Այսպէս քանի մը Ասիացի Հրեաներ զիս տաճարին մէջ մտքուած գտան , ոչ բազմութիւնով և ոչ ամբոխով , 19 - Արոնց պէտք էր առջևդ գալ ու ամբաստանութիւն ընել , եթէ իմ վրայոյս ըսելու բան մը ունէին : 20 - Կամ թէ ասոնք իրենք թող ըսեն , ի՞նչ անիրաւութիւն գտան իմ վրաս , երբ ասեանք կայներ էի . 21 - Միայն թէ այս մէկ խօսքիս համար , որ երբ իրենց մէջ կայներ էի , կանչեցի թէ Մեռելներու յարութեանը համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ : 22 - Եւ Փելիքս *ուրիշ անգամի թողուց զանոնք , վասն զի աղէկ տեղեկութիւն ունէր այն ճամբուն վրայով . ու ըսաւ , Երբ Լիւսիաս հաղարապետը հո՞ւ իջնէ , պիտի քննեմ՝ ձեր գործը : 23 - Եւ հարիւրապետին հրաման ըրաւ որ զանիկա պաշէ , և ընդարձակութիւն տայ , ու իրեններէն մէկը չարգիլէ անոր սպասաւորութիւն ընելէ կամ անոր քով երթալէ :

24 - Եւ քանի մը օրէն ետեւ Փելիքս եկաւ իր Իրուսիղա կնոջ հետ որ Հըրեայ էր , ու Պօղոսը կանչել տուաւ , և լսեց անկէ այն հաւատքին համար որ Քրիստոս Յիսուսի վրայ է : 25 - Ու երբ անիկա արդարութեան ու ժուժկալութեան և գալու գատաստանին վրայով կը խօսէր , Փելիքս գորհոյս ըլլով պատասխան տուաւ , Իսկ հիմն գնա , ու երբ ժամանակ ունենամ , ես քեզ նորէն կը կանչեմ : 26 - Նաեւ յոյս ունէր որ Պօղոսի կողմէն իրեն ստակ Գորուի , անոր համար շատ անգամ կանչել կու տար զանիկա ու անոր հետ կը խօսակցէր : 27 - Բայց երբ երկու տարի եղաւ , Փելիքսի տեղ Պարկիոս Փետտոս եկաւ . Փելիքս ալ Հրեաներուն շնորհք ընել ուղեւով՝ Պօղոսը կապուած թողուց :

ԳԼ ԻԵ

Արդ երբ Փետտոս իր իշխանութեան գաւառը հասաւ , երեք օրէն ետեւ կեսարիայէ Երուսաղէմ՝ ելաւ : 2 - Եւ

*Ո՞ւրիշ , այս բաները լսելով ուրիշ Գորուի , արպէս զի զանիկա արձակէ

քահանայապետը ու Հրէից գլխաւորները անոր իմացուցին իրենց ամբարշտանքի մասին Պողոսի գէմ՝ 3 - Եւ կ'ազաչէին իրեն և շնորհք կը խնդրէին անոր գէմ՝ որպէս զի զանհկա Երուսաղէմ բերել ապ. ու իրենք դարան կը պատրաստէին ճամբուն մէջ զանհկա սպաննելու: 4 - Բայց Փետոս պատասխան տուաւ, որ Պողոս Կեսարիայի մէջ պահուի, և որ ինք շատ չանցած հոն պիտի երթար: 5 - Ուստի ձեզմէ որոնք որ կարող են, ըսաւ, ինչի հետ թող իջնեն, և եթէ այն մարդուն վրայ յանցանք մը կայ, թող անոր գէմ ամբաստանութիւն ընեն: 6 - Եւ հոն *ութ կամ տար օրէ աւելի չկենալով՝ Կեսարիա իջաւ. ու հետեւեալ օրը ատենը նստելով՝ հրաման ըրաւ որ Պողոսը բերեն: 7 - Ու երբ անհկա եկաւ, Երուսաղէմէ իջնող Հրեաները անոր բոլորափքը կայնելով, շատ ու ծանր ամբաստանութիւններ կը բերէին Պողոսի գէմ՝ զորոնք չէին կրնար տարացուցանել: 8 - Վասն զի Պողոս պատասխան կու տար թէ Ես ոչ Հրեաներուն օրէնքին, և ոչ տաճարին, ոչ ալ Կայսրին գէմ յանցանք մը ըրած եմ: 9 - Բայց Փետոս ուզելով որ Հրեաներուն շնորհք ընէ, պատասխան տուաւ Պողոսի ու ըսաւ, Կ'ուզե՞ս Երուսաղէմ ելլել, և հոն այդ քաներուն վրայով իմ առջև դատուիլ: 10 - Պողոս ալ ըսաւ, Կայսրին ատենը կայներ եմ, ուր պէտք է ինծի դատուիլ. ես Հրեաներուն անիրաւութիւն մը ըրած չեմ, ինչպէս դուն ալ աղէկ գիտես: 11 - Քանզի եթէ անիրաւութիւն մը և մահուան արժանի բան մը ըրած եմ, ես մեռնելէ չեմ քաշուիր, բայց եթէ չկայ ի՞նչ այն քաներէն մէկն ալ որոնց համար ատենք ինծի գէմ ամբաստանութիւն կ'ընեն, մէկը չկրնար զիս ատենց շնորհել. Կայսրին կը բողոքեմ: 12 - Այն ատեն Փետոս խորհրդականներուն հետ խօսելով պատասխան տուաւ թէ Կայսրին բողոքեցիր, Կայսրին պիտի երթաս: 13 - Եւ քանի մը օր անցնելէն ետեւ՝ Ագրիպաս թագաւորը և Բերինիկէ Կեսարիա եկան Փետոսը ողջունելու: 14 - Եւ երբ շատ օրեր հոն անցուցին, Փետոս Պողոսի համար թագաւորին

իմացուց ու ըսաւ, Հոն մարդ մը կայ զոր Փելիքս բանտարկուած թողուցեր է, 15 - Որուն վրայով, երբ Երուսաղէմ գացի, քահանայապետները ու Հրեաներուն ձերերը իմացուցին ինծի, և կը խնդրէին որ անոր գէմ դատապարտութեան վճիռ արտ. 16 - Որոնց պատասխան տուի թէ Հռովմայեցաց սովորութիւնը չէ մարդ մը կորստեան շնորհել, մինչև ամբաստանուածը ամբաստանողները գիմացը չունենայ, ու այն ամբաստանութեանը պատասխան տալու պատահութիւն չարուի իրեն: 17 - Ուստի երբ անոնք ինչի հետ հոս եկան, ամենեւին չուշուցուցի, հապա հետեւեալ օրը ատենը նստելով՝ հրաման ըրի որ մարդը բերեն: 18 - Անոր դատախազներն ալ ներկայանալով, իմ կասկած ըրած յանցանքներէս մէկն ալ յառաջ չէին բերեր: 19 - Հապա մէկ քանի խնդիրներ ունէին անոր հետ իրենց կրօնքին վրայ, և Յիսուս անոնք մեռածի մը վրայ, որու համար Պողոս կ'ըսէր թէ կենդանի է: 20 - Ու երբ տարակուսանքի մէջ էի այս բանին քննութեանը վրայով, ըսի թէ Կ'ուզե՞ս Երուսաղէմ երթալ, և հոն այս բաներուն համար դատուիլ: 21 - Բայց Պողոս երբ բողոքեց որ պահուի Վէհափառ Կայսրին *գիմաց ելլելու, հրաման ըրի որ զինք պահեն՝ մինչև Կայսրին զրկեմ: 22 - Եւ Ագրիպաս ըսաւ Փետոսի, Ես ալ կ'ուզէի այդ մարդը մտիկ ընել. ան ալ ըսաւ, Վաղը մտիկ կ'ընես: 23 - Ու հետեւեալ օրը երբ Ագրիպաս ու Բերինիկէ մեծ հանդէսով եկան, ու ատենը մասն հազարապետներով և քաղաքին պատուաւոր մարդոցմով մէկտեղ, Փետոս ալ հրաման ընելով բերին Պողոսը: 24 - Եւ ըսաւ Փետոս, Ագրիպաս արքայ, և դուք ալ բոլոր մարդիկ որ մեզի հետ էք, ատիկա կը տեսնէք. ասոր վրայով Հրեաներուն բոլոր բազմութիւնը ինծի ներկայացան Երուսաղէմի մէջ և հոս ալ, ու կ'աղաղակէին թէ Պէտք չէ որ ալ ատիկա ողջ մնայ: 25 - Բայց ես որ հասկցայ թէ անհկա մեռնելու արժանի բան մը ըրած չէ, և ինք որ Վէհափառ Կայսրին բողոքեց, որոշեցի որ

*Ուստի, տար օրէ աւելի կենալով

*Յիսուս. քննութեանը

զրկեմ զանհկա . 26 - Որու համար հաստատ բան մը չունիմ՝ գրելու իմ տերոջս . ուստի առնկա ձեր առջև բերի, և մանաւանդ քու առջևդ , ով Ագրիպպաս արքայ , որպէս զի քննութիւն ըլլալէ ետև գրելու բան մը ունենամ . 27 - Վասն զի ինծի անվայել կ'երևնայ որ բանտարկեալ մը զրկեմ , և անոր վրայ Գործի յանցանքները չի մտցնեմ :

ԳԼ ԻԶ

Եւ Ագրիպպաս ըսաւ Պողոսի, Հրաման է քեզի որ դուն քեզի համար խօսիս : Այն ատեն Պողոս ձեռքը երկընցնելով՝ իրեն համար պատասխան տուաւ . 2 - Հրեաներուն իմ վրաս բրած բոլոր ամբաստանութիւններուն համար , ով Ագրիպպաս արքայ , ես զիս երանելի կը սեպեմ , որ այսօր քու առջև պատասխան պիտի տամ . 3 - Մանաւանդ որ դուն Հրեաներուն բոլոր սովորութիւնները և խնդիրները աղէկ գիտես, անոր համար կ'աղաչեմ որ երկայնամութեամբ ինծի մտիկ ընես : 4 - Արդ իմ մանկութենէս ի վեր իմ ինչպէս ապրելուս , սկիզբէն Երուսաղէմ իմ աղգիս մէջ ըլլալովս , բոլոր Հրեաները տեղեակ են : 5 - Քանզի առաջուրնէ ի վեր զիս գիտեն , (եթէ ուզեն վկայել ,) որ մեր կրօնքին ամենէն զգուշաւոր ճամբուն պէս՝ փարիսեցի ապրեի եմ . 6 - Եւ հիմա Գործի կեցիք կը դատուիմ Աստուծոյ մեր հայրերուն եղած խօստմունքին յոյսին համար . 7 - Որու , մեր տասուերկու ցեղը անդադար գիշեր ու ցորեկ պաշտելով , կը յուսան հասնիլ . ես այս յոյսին համար Հրեաներէն կ'ամբաստանուիմ , ով Ագրիպպաս արքայ : 8 - Ինչ . չհաւատալով բան կ'երևնայ ձեզի թէ Աստուած մեռելները կը յարուցանէ : 9 - Ես ինքս ալ ինծի պարտք կը սեպէի Յիսուս Նազովրեցիի անուան դէմ շատ բաներ ընել . 10 - Չոր բրիսայ կըստաղէմի մէջ , և քահանայապետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն շատերը բանտարկեցի , ու անոնց սպաննուած ատենը հաւանութիւն տուի : 11 - Եւ բոլոր ժողովաբաններուն մէջ շատ անգամ զանոնք պատժելով՝ կը բռնադատէի որ հայհոյեն , և անոնց դէմ աստիկ կատ-

լած՝ մինչև օտար քաղաքները կը հաւածէի : 12 - Այսպէս երբ Իամասկոս ալ կ'երթայի , քահանայապետներէն իշխանութիւն ու հրաման առած , 13 - կէսօրուան ատենը ճամբուն վրայ , ով արքայ , երկինքէն լոյս մը տեսայ արեւին լուսաւորութենէն աւելի՝ բոլորաբաժնի ծագած , նաև անոնց բոլորաբաժնի որոնք ինծի հետ կ'երթային : 14 - Ու երբ մենք ամէնս գետինը ինկանք , ձայն մը լսեցի որ Եբրայական լեզուով ինծի կ'ըսէր , Սաւուղ , Սաւուղ , ինչո՞ւ զիս կը հաւածես . դրժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել : 15 - Ես ալ ըսի, Իուն ո՞վ ես, Տէր . և անհկա ըսաւ , Ես եմ Յիսուս զոր դուն կը հաւածես . 16 - Բայց ելիք ու ստիգ վրայ կայնէ . վասն զի ասոր համար քեզի երեցայ , որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ ընելու այն բաներուն զորոնք տեսար , ու այն բաներուն որոնցմով պիտի երևնամ քեզի , 17 - Քեզ ազատելով այդ ժողովուրդէն ու հեթանոսներէն , որոնց հիմա քեզ կը զրկեմ , 18 - Անոնց աչքերը բանալու , խաւարէն լոյսի , ու Սատանայի իշխանութենէն Աստուծոյ դարձնելու , որպէս զի անոնք մեղքերու թողութիւն առնեն , և սուրբերուն հետ մասնակից ըլլան ինծի հաւատալով : 19 - Ուստի, Ագրիպպաս արքայ , այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես . 20 - Հապա առաջ Իամասկոս ու Երուսաղէմ եղողներուն , և բոլոր Հրէաստանի երկիրը ու հեթանոսներուն քարոզեցի որ ապաշխարեն ու Աստուծոյ դառնան . և ապաշխարութեան արժանաւոր գործեր դորձեն : 21 - Այս պատճառաւ Հրեաները զիս տաճարին մէջ բռնեցին , և կը ջանային որ սպաննեն : 22 - Սակայն Աստուծոյ օգնութիւն հասնելով մինչև այսօր ոչ մի մնացի՝ պղտիկի ու մեծի վկայութիւն տալով , բան մը չզրուցելով այն բաներէն դուրս՝ զորոնք մարգարէները և Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլային . 23 - Թէ Բրիտանոս պիտի չտարչարուէր , և թէ անհկա ամէնէն առաջ մեռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէր ժողովուրդին ու հեթանոսներուն : 24 - Եւ քանի որ անհկա այսպէս պատասխան կու տար իրեն համար , Փետոս բարձր ձայնով մը ըսաւ , կը

խելագարիս , Պօղոս . շատ կարգացու-
 զութիւնդ քեզ կը յիմարեցնէ : 25 -
 Պօղոս ալ ըսաւ , Ես չեմ խելագարիր ,
 ով պատուական Փետտոս , հապա
 ճշմարտութեան և զգաստութեան
 խօսքեր կը զրուցեմ : 26 - Քանզի այս
 բաները թագաւորը գիտէ , որուն սու-
 ջե ես ալ համարձակ կը խօսիմ . քան-
 զի չեմ կարծեր թէ ասոնցմէ՝ բան մը
 անկէ ծածկուած ըլլայ , վասն զի այս
 բանը անկիւնի մը մէջ եղած չէ : 27 -
 Մարգարէներուն կը հաւատաս , Ագ-
 րիպպոս արքայ . գիտեմ որ կը հաւա-
 տաս : 28 - Եւ Ագրիպպոս ըսաւ Պօ-
 ղոսի , Քիչ մնաց որ զիս համուզես Քրիս-
 տոնեայ ըլլալու : 29 - Պօղոս ալ ըսաւ ,
 Աստուծմէ կը խնդրէի որ թէ՛ քիչով
 և թէ՛ շատով , ոչ թէ միայն դուն ,
 հապա ամէնն ալ որոնք այսօր ինծի
 կը լսեն , այնպէս ըլլան ինչպէս ես եմ ,
 այս կապերէն զատ :

30 - *Ոտքի վրայ ելաւ թագաւորը
 և կուսակալը ու Բերինիկէ , և անոնք
 որ իրենց հետ նստեր էին : 31 - Ու
 դուրս ելլելէ ետե , իրարու հետ խօ-
 սեցան ու ըսին թէ Այս մարգը մեռ-
 նելու կամ կապուելու արժանի բան
 մը չընէր : 32 - Ագրիպպոս ալ Փե-
 տոսի ըսաւ , Կարելի էր այս մարգը
 արձակել , եթէ Կայսրին բողոքած
 չըլլար :

ԳԼ ԻԷ

Երբ որոշուեցաւ որ նաւով Իտա-
 լիա երթանք , Պօղոս և ուրիշ քանի
 մը կապուածներ յանձնեցին հարիւ-
 րապետի մը , որուն անունը Յուլիոս էր ,
 Սեբաստեան գունդէն : 2 - Եւ Ագրա-
 մինտոսի նաւ մը մտնելով Ճամբայ
 ելանք , ու Ասիայի կողմերէն պիտի
 նաւէինք . Թեսաղոնիկէէ եղող Արիս-
 տարքոս Մակեդոնացի ալ մեզի հետ
 էր : 3 - Եւ հետեեալ օրը Սիդոն իջանք .
 և Յուլիոս մարգարութիւն ցուցնե-
 լով Պօղոսի , հրաման սուաւ որ բա-
 րեկամներուն երթայ ու դարման գտնէ :
 4 - Եւ անկէ ելլելով՝ Կիպրոսի վարի
 կողմէն նաւեցինք հովին՝ դէմ ըլլալուն
 համար : 5 - Ետքը Կիլիկիայի ու Պամ-
 փիլիսիայի ծովուն մէջտեղէն նաւելով՝

*Ունէ , Եւ երբ այս բաները ըսաւ ,
 ոտքի

Լիկիայի Միւսա քաղաք իջանք : 6 -
 Եւ հարիւրապետը հոն Աղէքսանդրացի
 նաւ մը գտնելով , որ Իտալիա կ'եր-
 թար , մեզ անոր մէջ մտցուց : 7 - Եւ
 շատ օրեր կամոց կամաց նաւելով՝
 հագիւ թէ Կնիդոսի քովերը հասանք .
 և հովը մեզի դէմ ըլլալով՝ Կրետէի
 վարի կողմէն Սաղմոնայի քովէն նա-
 ւեցինք : 8 - Եւ դժուարաւ անկէ անց-
 նելով՝ աեղ մը եկանք , որ Գեղեցիկ
 նաւահանգիստ կ'ըսուէր , որու մօտ էր
 Ղատեա քաղաքը :

9 - Ու երբ շատ ժամանակ անցաւ ,
 և նաւին ճամբայ ելլելն ալ վասնգա-
 ւոր էր , ծովին առեմն ալ արգէն ան-
 ցած ըլլալով , Պօղոս խրատ կու տար ,
 10 - Եւ կ'ըսէր անոնց , Մարդիկ , ես
 կը տեսնեմ որ այս նաւին ճամբայ ընե-
 լը տառապանքով ու շատ վնասով
 պիտի ըլլայ , ոչ թէ միայն բեռին ու
 նաւին՝ հապա մեր անձերուն ալ : 11 -
 Բայց հարիւրապետը աւելի նաւապե-
 տին և նաւավարին մտիկ կ'ընէր՝ քան
 թէ Պօղոսի խօսքերուն : 12 - Ու սրով-
 հետե այն նաւահանգիստը յարմար
 չէր ձմեռը հոն անցընելու , շատերը
 խորհեցան անկէ երթալ , որ թերեւ
 կարող ըլլան Փիւնիկէ հասնիլ ու ձմե-
 ուր հոն կենալ , որ Կրետէի նաւահան-
 գիստ մըն է , ու դէպ ի հարաւ և ա-
 ըւմտեան հիւսիս կը նայի : 13 - Ու երբ
 հարաւային մեղմ հով մը փչեց , կար-
 ծելով թէ իրենց գիտաւորութեանք
 հասեր են , ճամբայ ելան ու Կրետէի
 քովերէն կ'անցնէին : 14 - Եւ շատ ա-
 տեն շանցած՝ մրրկալից հով մը ելաւ
 անոր դէմ , որ Եւրակիկլան կ'ըսուի :
 15 - Երբ նաւը յափշտակուեցաւ և
 հովին դէմ չկրցաւ դիմանալ , թող
 սուած կ'երթայինք կու գայինք : 16 -
 Եւ դէպ ի փոքր կղզիի մը ետեի կողմը
 դիմելով , որ Կլօզա կ'ըսուէր , հագիւ
 կրցանք մտկոյկը բռնել : 17 - Չոր ա-
 ուին ու օգնութիւններ գործածելով՝
 նաւը սակէն կապեցին . և վախնալով
 որ չըլլայ թէ *յորձանուար իյնան ,
 առագաստը իջեցուցած՝ այնպէս կ'եր-
 թային ու կու գային : 18 - Եւ սրով-
 հետե սաստիկ ալէկոծութեան մէջ
 էինք , հետեեալ օրը բեռերը դուրս
 նետեցին : 19 - Ու երբորդ օրը նաւին
 գործիքները ձեռքովնիս դուրս նետե-

*Կո՛ւ , ծանծաղուար

ցինք: 20 - Ու երբ շատ օրեր ոչ արև ոչ ալ աստղեր կ'երևնային, և փոթօքիկը քիչ չէր մեր վրայ, ալ բոլորովին մեր ազատուելու յոյսը վերցաւ: 21 - Եւ որովհետև շատ օրերէ ի վեր անօթի էին, այն ատեն Պօղոս անոնց մէջ կայնելով ըսաւ, Ով մարդիկ, պէտք էր ձեզի որ ինծի մտիկ ընէիք ու կրեաէէ չելլէիք, և այս սառապանքը ու փսասը չքաշէիք: 22 - Ու ճիմաւ ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք, քանզի ձեզմէ մեկո՛ւն անձին փսաս մը պիտի չըլլայ, բայց միայն նաւին: 23 - Վասն զի այս գիշեր երեցաւ ինծի հրեշտակը այն Աստուծոյն, որունն եմ ես և զոր կը պաշտեմ, 24 - Եւ ըսաւ Մի վախնար, Պօղոս, Կայսրին դիմաց պէտք է որ ելլես դուն. և ահա Աստուած՝ քեզի շնորհեց այն ամէնը, որոնք քեզի հետ նաւին մէջ են: 25 - Ուստի, մարդիկ, սիրտ առէք, վասն զի ես կը հաւատամ Աստուծոյ՝ որ այսպէս պիտի ըլլայ, ինչպէս ինծի զրուցուեցաւ: 26 - Միայն թէ պէտք է որ կղզի մը կ'ընանք: 27 - Ու երբ տասնըօրսերորդ գիշերն էր որ Ագրիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէսգիշերին նաւավարները կը կարծէին թէ երկրի մը մօտեցեր են: 28 - Եւ գնտակը ձգելով՝ քսան գրկաչափ գտան. ու քիչ մըն ալ յառաջ երթալով՝ նորէն ձգեցին, և ասանը ճինգ գրկաչափ գտան: 29 - Ու վախնալով որ չըլլայ թէ քարոտ տեղեր կ'ընան, ետեւի կողմէն շորս խարխիւ ձգեցին, և առտու ըլլալուն կը փափաքէին: 30 - Իսկ նաւավարները նաւէն փախչիլ ուզելով՝ մտկոյկը ծովը իջեցուցին, պառճառելով որպէս թէ առջևի կողմէն ալ խարխիւներ պիտի ձգեն: 31 - Բայց Պօղոս ըսաւ հարիւրապետին ու զինուորներուն, Եթէ ատոնք նաւին մէջ չկենան՝ դուք չէք կրնար ազատիլ: 32 - Այն ատեն զինուորները մտկոյկին չուանները կարեցին, և թողուցին որ դուրս կ'ընայ: 33 - Ու երբ առտու ըլլալու վրայ էր, Պօղոս կ'աղաչէր ամէնուն որ կերակուր ուտեն, ըսելով, Այսօր տասնըօրս օր է որ դուք սպասելով անօթի մնացեր էք, ու բան մը կերած չէք: 34 - Աւստի կ'աղաչեմ ձեզի որ կերակուր ուտէք, վասն զի այս ալ ձեր ազատութեանը համար է. քանզի ձեզմէ մեկո՛ւն գիւն մտալ մը պիտի չկորսուի:

35 - Եւ այսպէս ըսելով՝ հաց առաւ, ու ամէնուն առջև Աստուծմէ գոհացաւ, և կարելով սկսաւ ուտել: 36 - Եւ ամէնն ալ սիրտ առին, ու իրենք ալ կերակուր կերան: 37 - Եւ նաւին մէջ ամէնս երկու հարիւր եօթանասուներկեց հոգի էինք: 38 - Երբ կշտացան կերակուրով, նաւը թէթեցուցին՝ ցրեներ ծովը թափելով: 39 - Ու երբ առտու եղաւ, ցամաքը չէին ճանչնար, միայն թէ ծոց մը կը նշմարէին որ ծովեզերք ունէր, ու կը խորհէին որ եթէ կարելի է նաւը անոր մէջ մխեն: 40 - Եւ խարխիւները կարելով՝ ծովը ձգեցին, ու ղեկերուն կապերը թուլցուցին, և առազասար հովին բանալով՝ դէպի այն ծովեզերքը կ'երթային: 41 - Եւ այնպիսի տեղ մը կ'ընալով որուն երկու կողմը ծով էր, նաւը նստեցուցին. և նաւին առջևի կողմը խրելով՝ անշարժ մնաց, ու ետեւի կողմը ալիքներուն սաստիկութենէն կը քակուէր: 42 - Զինուորներն ալ խորհուրդ ըրին որ կապուածները սպաննեն, որ չըլլայ թէ մէկը լողայ ու փախչի: 43 - Բայց հարիւրապետը, որ Պօղոսը ազատել կ'ուզէր, արգիլեց զանոնք այն խորհուրդէն, և հրաման ըրաւ թէ որոնք որ կրնան լողալ, թող անոնք առաջ նետուին ու ցամաքը ելլեն: 44 - Եւ մնացածները, սմանք տախտակներով և սմանք նաւին «բէլ բաներովը. և այսպէս ամէնը ազատեցան, ցամաք ելան:

ԳԼ ԻԸ

Ու երբ ազատեցան, գիացան որ այն կղզին անունը Մելիտէ էր. և բարբարոսները քիչ մարդասիրութիւն չցուցուցին ձեզի: 2 - Վասն զի կրակ վառեցին, և մեզ ամէնս ալ ընդունեցին՝ մեր վրայ հասած անձրևին համար ու ցուրտին համար: 3 - Ու երբ Պօղոս շատ մը խալ ժողովեց և կրակին վրայ դրաւ, տաքութենէն իժ մը ելաւ, անոր ձեռքը բռնեց: 4 - Բարբարոսներն ալ երբ այն գազանը տեսան անոր ձեռքէն կախուած՝ իրարու կ'ընէին, Անշուշտ տարկա մարդասպան մըն է, որ թէպէտ ծովէն ազատեցաւ, բայց իրաւունքը թող շտուաւ որ ապրի: 5 - Իսկ անիկա գազանը կրակին մէջ թօթ վելով՝ իրեն փսաս մը չեղաւ:

6 - Աւ անոնք կը սպասէին որ անիկա ուռեանայ, կամ յանկարծակի մեռած իյնայ. բայց երբ շատ մը սպասեցին, ու տեսան որ իրեն փստա մը չեղաւ, կարծիքնին փոխելով՝ կ'ըսէին թէ սասուած մըն է: 7 - Եւ այն տեղին բոլորաւիքը կղզիին գլխաւոր մարդուն ազարակները կային, որուն անունը Պապղիտոս էր, որ մեզ ընդունեց և երեք օր հիւրասիրութեամբ իրեն քով պահեց: 8 - Աւ եղաւ որ Պապղիտոս հայրը ջերմով և թանջ քով հիւանդացած պատկած էր. ու Պողոս անոր քով մտաւ, և աղօթք ընելով ձեռքերը անոր վրայ դրաւ ու բժշկեց զանիկա: 9 - Աւ երբ ստիկա եղաւ, ուրիշ հիւանդներ, որոնք այն կղզիին մէջ էին, կու գային և կը բժշկուէին: 10 - Արոնք շատ պատիւներով ալ մեզ պատուեցին, ու մեր երթալու ատենը պէտք եղած բաները տուին:

11 - Եւ երեք ամիսէն ետե Աղեքսանդրացի նաւով մը ճամբոյ ելանք, որ ձմեռը այն կղզին անցուցեր էր, ու Իսոսկուրացուց նշանը ունէր: 12 - Եւ Սիրակուսա իջնելով՝ երեք օր հոն կեցանք: 13 - Անկէ ալ պտոյտ մը ընելով՝ Հռեգիոն հասանք. և մէկ օրէն ետե երբ հարաւ փչեց, երկրորդ օրը Պատիսղոս եկանք: 14 - Աւ հոն եղբայրներ գտանք, որոնք աղաչեցին որ եօթը օր իրենց քով մնանք. ու ետքը Հռովմ՝ ելանք: 15 - Եւ անկէ եղբայրները, երբ մեր վրայով լսեցին, մեզ դիմաւորելու ելան մինչև Ապփիոսի վաճառանցը ու երեք պանդոկները. և Պողոս զանոնք տեսնելով՝ գոհութիւն տուաւ Աստուծոյ և սիրտ առաւ:

16 - Աւ երբ Հռովմ մտանք, հարիւրապետը կապուածները զօրապետին յանձնեց. իսկ Պողոսի հրաման եղաւ որ իր պահապան զինուորին հետ զատ կենայ: 17 - Աւ եղաւ որ երեք օրէն ետե անիկա Հրէից գլխաւորները կանչեց. ու երբ մէկտեղ եկան, ըսաւ անոնց, Մարգիկ եղբայրներ, ես ժողովուրդին կամ հայրենական սովորութիւններու դէմ բան մը չըրած, Երուսաղէմէ կապուած՝ Հռովմայեցուց ձեռքը մատնուեցայ: 18 - Արոնք երբ զիս քննեցին, ուզեցին որ արձակեն, վասն զի իմ վրաս մեռնելու յանցանք մը չկար: 19 - Բայց երբ Հրեաները հակառակ կեցան, պէտք եղաւ

որ կայսրին բողոքեմ, ոչ թէ իմ ազգիս դէմ ամբաստանութիւն մը ունեցողի պէս: 20 - Աւստի այս պատճառաւ աղաչեցի որ ձեզ տեսնեմ ու ձեզի խօսիմ. վասն զի Իսրայէլի յայտին համար ես այս շղթան վրաս ունիմ: 21 - Անոնք ալ ըսին իրեն, Մենք քու վրայովդ Հրեաստանէ ոչ թուղթեր առինք, և ոչ եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու վրայովդ չարութիւն մը պատմեց կամ խօսեցաւ: 22 - Բայց կ'աղաչենք որ քեզմէ լսենք թէ դուն ի՞նչ մտաքի վրայ ես. վասն զի մենք այդ աղանդին վրայով տեղեկացած ենք՝ որ ամէն տեղ տառ դէմ կը խօսին: 23 - Աւ օր մը սրոշելով անոր, շատերը անոր գացին իր բնակած տեղը, որոնց Աստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր վկայութիւնով, և կը համոզէր զանոնք Յիսուսի վրայով Մովսէսի օրէնքէն ու մարգարէներէն՝ առտուրնէ մինչև իրիկուն: 24 - Եւ ոմանք կը հաւատային ըսածներուն, ու ոմանք չէին հաւատար: 25 - Եւ իրարու հետ չմիաբանած՝ գացին, երբ Պողոս խծք մը ըսաւ, թէ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրերուն, Եսայի մարգարէին ձեռքով, 26 - Եւ ըսաւ, Գնա այս ժողովուրդին ու ըսէ, Լսելով պիտի լսէք ու չիմանաք, և տեսնելով պիտի տեսնէք՝ ու չտեսնէք: 27 - Վասն զի այս ժողովուրդին սիրտը թանձրացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ իրենց աչքերովը տեսնեն, ու ականջներովը լսեն, և սիրտերովը իմանան, ու դարձի գան, և ես բժշկեմ զանոնք: 28 - Աւստի յայտնի ըլլայ ձեզի որ Աստուծոյ փրկուցութիւնը հեթանոսներուն զրկուեցաւ, և անոնք մտիկ պիտի ընեն: 29 - *Աւ երբ զայս զրուցեց, Հրեաները դուրս ելան, շատ փիճաբանութիւն ունենալով իրենց մէջ:

30 - Եւ ըման երկու տարի իր վարձքով բռնած տունը կեցաւ: 31 - Եւ իրեն եկողներուն ամէնը կ'ընդունէր: 32 - Կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը, և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգիլուելու կը սովորեցնէր ամենայն համարձակութեամբ:

*Ոմանք չունին այս 29-րդ համարը

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՅԻՍ



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Յիսուսի Քրիստոսի ծառայ, շուքաքալ ըլլալու կանչուած, Աստուծոյ աւետարանին համար որչաւուած, 2 - (Որ առաջուրնէ իր մարգարէներուն ձեռքով սուրբ գիրքերով խոստացաւ,) 3 - Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայով, որ մարմնի կողմանէ Գուլթի սերունդէն եղաւ, 4 - Որ սրբութեան հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայանուեցաւ զօրութեամբ՝ մեռելներէն յարութիւն առնելով. 5 - Որով շնորհք և առաքելութեան համար բոլոր ազգերուն մէջ, անոր անուանը համար. 6 - Որոնց մէջ դուք ալ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք. 7 - Ձեր ամէնուն որ Հոովմոյ մէջ էք, Աստուծոյ սիրելիներուդ, եւրբ ըլլալու կանչուածներուդ, շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծոմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

8 - Եսաի կը գոհանամ իմ Աստուծէս Յիսուս Քրիստոսի ձեռքով ձեր ամէնուն համար, որ ձեր հաւատքը բոլոր աշխարհ կը պատմուի: 9-Քանզի վկայ է ինծի Աստուած, զոր ես կը պաշտեմ իմ հոգիովս անոր Որդւոյն աւետարանին մէջ, 10 - Թէ ի՛նչպէս անդադար ձեզ կը յիշեմ, ամէն տակն իմ աղօթքներուս մէջ խնդրելով՝ որ թերևս անգամ մը Աստուծոյ կամքովը ինծի յաջողութիւն մը բլլայ ձեզի դարու: 11 - Քանզի կը փափաքիմ ձեզ տեսնել, որ ձեզի հոգևոր շնորհք մը հաղորդեմ, որպէս զի հաստատուիք. 12 - Այսինքն ձեզի հետ ես ալ միթարակից բլլամ իմ ու ձեր փախադարձ հաւատքին միջոցով: 13 - Ասկայն չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, և զրայրներ, որ շատ անգամ ուզեցի զայ ձեզի, (և մինչև հիմա արգիլուե-

ցայ,) որպէս զի ձեր մէջ ալ պատուը մը ունենամ. ինչպէս ուրիշ հեթանոսներու մէջ ալ: 14 - Յոյներուն ու Բարբարոսներուն, իմաստուններուն ու անմիաներուն ալ պարտական եմ: 15 - Ուստի որչափ որ ձեռքէս կու գայ, յօժարութիւն ունիմ ձեզի ալ, որ Հոովմոյ մէջ էք, աւետարանը քարոզելու:

16 - Վասն զի ես ամօթ չեմ սեպեր *աւետարանը, քանզի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար, առաջ Հրեային ու ետքը Յոյնին: 17 - Վասն զի անով Աստուծոյ արդարութիւնը, որ է հաւատքէն, հաւատքի համար կը յայանուի. ինչպէս գրուած է Թէ Արդարը հաւատքէն պիտի ապրի:

18-Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայանուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են: 19 - Վասն զի Աստուծոյ վրայով գիանալու բանը իրենց մէջ յայանի է, որովհետև Աստուած անոնց յայանեց: 20 - Քանզի աներևոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղծուածներովը կ'իմացուին, կը տեսնուին, այսինքն է իր մշանջեմուտը զօրութիւնը ու աստուածութիւնը, որպէս զի անպատասխանի մեան: 21 - Վասն զի իրենք զԱստուած ճանչնալով Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան. հապա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան, և Խորհերնին անմտութիւնով խաւարեցաւ: 22 - Իրենք իմաստուն ենք՝ բռելով յիմարեցան. 23 - Էւ անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին, նմանցնելով եղծանելի մարդու և թռչուններու ու շորքոտանիներու և սողուններու:

*Ման, Քրիստոսի աւետարանը +Յոյն. անմիտ սիրահրնին

քու պատկերին : 24 - Անոր համար Աստուած ալ պղծութեան մատնեց զանոնք իրենց սիրտերուն ցանկութիւններովը՝ իրենց մարմինները իրենց մէջ խայտառակելու . 25 - Որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փութեցին, ու երկրպագութիւն և պաշտօն մատուցին ստեղծուածներուն քան թէ Ստեղծողին , որ յաւիտեան օրհնեալ է : Ամէն : 26 - Անոր համար Աստուած զանոնք անարգ կիրքերու մատնեց , որ իրենց էգերը անգամ բնական պէտքը բնութեան դէմ եղող պէտքի փոխեցին : 27 - Նոյնպէս ալ արուները կնոջ բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան . արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին , և իրենց մոլութեանը վայլած հասուցումը իրենց վրայ կ'ընդունէին : 28 - Եւ որովհետեւ չուզեցին զԱստուած երէն, գիտութեանը մէջ պահել , Աստուած ալ զանոնք անարգ խորհուրդներու մատնեց անվայել բաներ քնելու . 29 - Որոնք լեցուած էին ամէն անիրաւութիւնով , պոռնկութիւնով , անզգամութիւնով , ագահութիւնով , չարութիւնով , նախանձով չեցուն , մարդասպանութիւնով , հակառակութիւնով , նենգութիւնով , չարասրտութիւնով , և էին քուներ , 30 - Զարախօսներ , զԱստուած ատողներ , նախատողներ , հպարտներ , ամբարտաւաններ , չար բաներ հնարողներ , ծնողաց անհնազանդներ , 31 - Անմիտներ , ուխտ չպահողներ , անգութներ , անհաշաններ , անողորմներ . 32 - Որոնք գիանալով Աստուծոյ դատաստանը, թէ անոնք որ այսպիսի բաներ կ'ընեն՝ մահուան արժանի են, ոչ թէ միայն այն բաները կ'ընեն , հապաքնողներուն հաւանութիւն ալ կուտան :

ԳԼ. Բ

Ուստի, ով մարդ , ով որ ըլլաս դուն որ կը դատես, պատասխան չունիս տալու . քանզի ի՛նչ բանով որ ուրիշը կը դատես , ա՛յլ քու անձդ կը դատապարտես . վասն զի դուն ալ որ կը դատես՝ նոյն բաները կ'ընես : 2 - Բայց գիտե՛ք որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ ա-

նոնց վրայ՝ որ այնպիսի բաներ կը գործեն : 3 - Արդ, ով մարդ, դուն որ այսպիսի բաներ ընողները կը դատես , և դուն նոյն բաները կ'ընես , զայս միտքէդ կ'անցնե՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն ազատ պիտի մնաս . 4 - Կամ թէ անոր անչափ քաղցրութիւնը և համբերութիւնը ու երկայնամտութիւնը կ'արհամարհե՞ս , չգիանալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ ի ապաշխարութիւն կ'առաջնորդէ : 5 - Բայց դուն քու խատութիւնովդ և անզեղջ սրտովդ քու անձիգ բարկութիւն կը դիզես՝ բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանին յայանուելու օրուանը համար . 6 - Որ ամէն մէկուն իր գործերուն փոխարէնը պիտի հատուցանէ . 7 - Յաւիտեանական կեանք՝ անոնց որոնք բարի գործերու մէջ համբերութեամբ յարատեւելով փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն . 8 - Բայց անոնց որ հակառակ են , և ճշմարտութեան անհնազանդ ու անիրաւութեան հնազանդած՝ պէտք ըլլայ բարկութիւն և սրտամրտութիւն , 9 - Նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ որ չար կը գործէ , առաջ Հրեային ու ետքը Յոյնին . 10 - Իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն այն ամէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրեային ու ետքը Յոյնին : 11 - Վասն զի Աստուծոյ քով աշառութիւն չկայ : 12 - Քանզի անոնք որ առանց օրէնքի մեղք գործեցին , առանց օրէնքի պիտի կորսուին , և անոնք որ օրէնքի առկա մեղք գործեցին, օրէնքով պիտի դատուին , 13 - (Վասն զի ոչ թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջև արդար են, հապա օրէնքը կատարողները պիտի արդարանան : 14 - Քանզի հեթանոսները , որոնք օրէնք չունին , երբ բնականաբար օրէնքին գործերը կը գործեն , օրէնք չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը բուն իրենք կ'ըլլան , 15 - Որոնք օրէնքին գործը իրենց սրտին մէջ գրուած կը ցուցնեն իրենց խղճմտանքին վկայութիւնովը , և իրենց խորհուրդներուն իրար յանդիմանելովը կամ իրաւունք տալովը ,) 16 - Այն օրը երբ Աստուած մարդոց ծածուկ բաները պիտի դատէ Յիսուս Քրիստոսի ձեռքով՝ իմ + քո - զո՛ւ սուետարանիս համեմատ : 17 - Ահա դուն Հրեայ ըսուեր ես ,

և օրէնքին կռթներ ես, ու Աստուծով կը պարծենաս, 18 - Եւ առ կամքը գիտես, ու տարբեր բաները կը զանազանես՝ օրէնքէն խրատուած ըլլալով . 19 - Եւ քու անձիդ վրայ՝ վատահալթիւն ունիս՝ թէ կայրերուն աւաջնորդ ես, խաւարածներուն լոյս, 20 - Անմիաներուն խրատ տուող, տղայոց վարժապետ, և թէ գիտութեան ու ճշմարտութեան կերպարանքը օրէնքէն ունիս: 21 - Իսկ արդ՝ դուն որ բնկերիդ կը սորվեցնես, քու անձիդ չե՞ս սորվեցներ. որ կը քարոզես գողութիւն չընել, կը գողնա՞ս . 22 - Որ կ'ըսես շնութիւն չընել, շնութիւն կ'ընես. որ կը զգուխ կուռքերէն, սրբապղծութիւն կ'ընես . 23 - Որ օրէնքով կը պարծենաս, օրինազանց ըլլալով՝ զԱստուած կ'անարգե՞ս: 24 - Վասն զի Աստուծոյ անունը ձեր պատճառաւ չեթանոսներուն մէջ կը հայհոյուի, ինչպէս գրուած է:

25 - Արդ թիփատութիւնը շահ կ'ունենայ, եթէ օրէնքը պահես. իսկ եթէ օրէնքին դէմ՝ յանցաւոր ես, քու թիփատութիւնդ անթիփատութիւն եղաւ: 26 - Ուստի եթէ անթիփատութիւնը օրէնքին իրաւունքները պահէ, չե՞ որ անոր անթիփատութիւնը թիփատութիւն պիտի սեպուի . 27 - Եւ ի բնէ եղած անթիփատութիւնը օրէնքը կատարելով՝ պիտի դատապարտէ քեզ, որ գիրով ու թիփատութիւնով օրէնքին յանցաւոր ես: 28 - Վասն զի Հրեայ չէ ան որ դրսուանց է, և թիփատութիւն չէ այն որ դրսուանց մարմինով է. 29 - Հապա Հրեայ ան է որ ներսուանց է, և թիփատութիւն՝ սրտինը հոգիով, ու ոչ թէ գրով, որուն գողութիւնը ոչ թէ մարդոցմէ է, հապա Աստուծմէ:

Գ Լ Կ

Ուրեմն Հրեան ի՞նչ աւելի բան ունի, կամ թիփատութենէն ի՞նչ շահ կայ: 2 - Եւստ՝ ամէն կերպով . ամէնէն առաջ այն՝ որ Աստուծոյ պատգամները անոնց հաւատացուեցան: 3 - Քանզի եթէ առնցձե ամանք չհաւատացին, ի՞նչ . միթէ անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատարմութիւնը կը խափանէ՞ր. քա՛ւ լիցի: 4 - Ասկայն Աստուած ճշմարիտ թող ըլլայ, և բոլոր

մարդիկ՝ սուտ. ինչպէս գրուած է, Արպէս զի քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուելու ասենդ դուն յազթես: 5 - Ուրեմն եթէ մեր անիրաւութիւնը Աստուծոյ արդարութիւնը յայտնի կը ցուցնէ, ի՞նչ բռնաբարձութեան իրա՞ւ է Աստուած որ էր բարկութիւնը ձեր չե՞ս կը բերէ. 6 - (Մարդկօրէն կ'ըսեմ՝) . քա՛ւ լիցի . ապա թէ ոչ ի՞նչպէս Աստուած պիտի դատէ աշխարհը: 7 - Վասն զի եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը իմ՝ ստութիւնովս կ'աւելնայ իր փառքին համար, ալ ես ինչո՞ւ մեղաւորի մը պէս կը դատուիմ: 8 - Եւ ինչո՞ւ համար պէտք չէ ըսել, ինչպէս ամանք մեր վրայ չարախօսութիւն ընելով՝ կ'ըսեն թէ մենք կ'ըսենք, Չարը գործենք սրպէս զի բարին գայ. որոնց դատապարտութիւնը իրաւունքով է:

9 - Ուստի ալ ի՞նչ ըսենք. բանով մը աւելի՞ ենք հեթանոսներէն . իրաւ որ բանով մըն ալ չենք. վասն զի առաջ մեղադրեցինք Հրեաները և հեթանոսները թէ ամէնը մեղքի տակ են. 10 - Ինչպէս գրուած է թէ Արդար մը չկայ, և ոչ մէկ . 11 - Մէկը չկայ որ հասկընայ, մէկը չկայ որ զԱստուած փրկուէ: 12 - Ամէնը խտորեցան, մէկտեղ անպիտան եղան . աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ: 13 - Անոնց կոկորդը բաց գերեզման է, իրենց լեզուովը նենգաւոր եղան, իժերու թոյն կայ անոնց շրթունքներուն տակ. 14 - Անոնց բերանը անէծքով ու դառնութիւնով լեցուն է. 15 - Անոնց ուրբերը շուտ են արիւն թափելու . 16 - Կործանում և թշուառութիւն կայ իրենց ճամբաներուն մէջ . 17 - Եւ խաղաղութեան ճամբան չճանչցան: 18 - Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջև: 19 - Սակայն գիտենք որ օրէնքը ինչ որ կ'ըսէ, անոնց կ'ըսէ՝ որոնք օրէնքին տակ են. սրպէս զի ամէն բերան գոցուի, և բոյոր աշխարհ՝ դատապարտուած ըլլայ Աստուծոյ առջև: 20 - Վասն զի անոր առջև մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը, քանզի օրէնքով է մեզրը ճանչնալը:

21 - Բայց հիմա աւանց՝ օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրէնքէն և մարգարէներէն վկայուած ըլլալով . 22 - Այսինքն Աստուծոյ արդարութիւնը, որ Յիսուս Քրիստոսն է:

տոսի հաւատքէն է , ամէն հաւատա-
ցողներուն ու անոնց ամէնուն վրայ
կ'ըլլայ . քանզի խարութիւն չկայ : 23-
Վասն զի ամէնը մեղք գործեցին , և
Աստուծոյ փառքէն պակասած են : 24-
Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան
Քրիստոս Յիսուսով եղած փրկութիւ-
նովը . 25 - Չոր առաջուրնէ սահմանեց
Աստուած՝ քառութիւն ըլլալու անոր
արիւնին հաւատքով , Աստուծոյ եր-
կայեմտութեան ատենները առաջուր-
նէ գործուած մեղքերուն թողութիւն
տալովը՝ իր արդարութիւնը ցուցնելու
համար . 26 - Այսինքն իր արդարու-
թիւնը այս ժամանակին մէջ ցուցնե-
լու համար , որպէս զի ինք արդար ըլ-
լայ , և արդարացնէ Յիսուսի հաւատ-
քէն եղողը : 27 - Ուրեմն ո՞ւր մնաց
պարծենալը . խափանեցաւ . ո՞ր օրէն-
քէն , գործերո՞ւ օրէնքէն . ոչ , հապա
հաւատքի օրէնքէն : 28 - Վասն զի կը
սեպենք թէ մարդ հաւատքով կ'ար-
դարանայ առանց օրէնքին գործերուն :
29 - Միթէ Աստուած միայն Հրեա-
նեցո՞ւն է ու հեթանոսներուն չէ՞ .
այո , հեթանոսներուն ալ : 30 - Որով-
հետեւ . Աստուած մէկ է՝ որ թլփա-
տութիւնը հաւատքէն կ'արդարացնէ ,
և անթլփատութիւնը՝ ոչինչ հաւատ-
քով : 31 - Ուստի մենք հաւատքով
օրէնքը կը խափանե՞նք . քա՛ւ լիցի .
հապա օրէնքը կը հաստատենք :

ԳԼ. Դ

Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ
Աբրահամ՝ մեր նահապետը մարմնի
կողմանէ : 2 - Վասն զի եթէ Աբրա-
համ գործով արդարացած ըլլար ,
էր ոչ զպարծանք կ'ունենար , բայց
ոչ թէ Աստուծոյ առջև : 3 - Քանզի
գիրքը ի՞նչ կ'ըսէ . Աբրահամ՝ Աստու-
ծոյ հաւատաց , և այն իրեն արդարու-
թիւն սեպուեցաւ : 4 - Բայց ան որ
գործ մը կ'ընէ , վարձքը շնորհք է-
ղած չսեպուիր անոր , հապա պարտքէ :
5 - Իսկ ան որ չգործեր , բայց կը հա-
ւատայ անոր որ ամբարիշտը կ'արդար-
ացնէ , անոր հաւատքը իրեն արդար-
ութիւն կը սեպուի : 6 - Ինչպէս Իս-
ահթ ալ կը զրուցէ այն մարդուն երա-
նութիւնը , որու Աստուած արդարու-
թիւն կը սեպէ առանց գործերու : 7 -
Երանի՛ անոնց , ի՞նչ , որոնց անօրէնու-

թիւնները ներուեցան , և որոնց մեղ-
քերը ծածկուեցան : 8 - Երանի՛ այն
մարդուն որու մեղք չսեպեր Տէրը : 9 -
Ուստի այս երանութիւնը թլփատու-
թեան վրայ է , թէ անթլփատութեան
վրայ ալ . քանզի կ'ըսենք թէ հաւատ-
քը Աբրահամի արդարութիւն սեպուե-
ցաւ : 10 - Ուրեմն ի՞նչպէս սեպուեցաւ .
թլփատութեան մէջ եղած ատենը ,
թէ անթլփատութեան մէջ . ոչ թէ
թլփատութեան մէջ , հապա անթլփա-
տութեան : 11 - Ու երբեք թլփատու-
թեան նշանը առաւ՝ էբրեւ անթլփա-
տութեան ատենէն ունէ՞ցա՞՜ հաւատ-
քին արդարութեանը կնիք մը , որպէս
զի ինք հայր ըլլայ այն բոլոր հաւա-
տացողներուն որոնք անթլփատութեան
են , (անոնց ալ արդարութիւն սեպ-
ուելու համար ,) 12 - Եւ հայր թլփա-
տութեան՝ ոչ թէ միայն թլփատու-
թեան եղողներուն , հապա անոնց ալ՝
որոնք մեր հօրը Աբրահամի անթլփա-
տութեան ատենի հաւատքին շաւիղ-
ներուն մէջ կը քայլեն . 13 - Վասն զի
Աբրահամ և անոր սերունդին՝ աշխար-
հը ժառանգելու համար որո՞ւնք խոստ-
մունքը ոչ թէ օրէնքով եղաւ , հապա
հաւատքին արդարութիւնովը : 14 -
Քանզի եթէ օրէնքէն եղողները ժա-
ռանգ ըլլային , հաւատքը փուճ պիտի
ըլլար , և խոստմունքը պիտի խափան-
ուեր : 15 - Վասն զի օրէնքը բարկու-
թիւն կը գործէ . քանզի ուր օրէնք
չկայ , օրինազանցութիւն ալ չկայ : 16 -
Ասոր համար ի՞նչ ըլլաւ հաւատքէն
է , որպէս զի շնորհքով եղած ըլլայ ,
խոստմունքը հաստատուն ըլլալու հա-
մար բոլոր սերունդին , ոչ թէ միայն
անոր որ օրէնքէն է , հապա անոր ալ՝
որ Աբրահամի հաւատքէն է , որ մեր
ամէնուն հայրն է , 17 - (Ինչպէս գրուած
է թէ՛ Քեզ շատ ազգերու հայր ըրի ,)
Աստուծոյ առջև , որու ինք հաւատաց ,
ան որ մեռելները կ'ողջնցնէ , և չեղած
բաները եղածներու պէս կը կանչէ :
18 - Որ չյուսացուելու բանին յուսով
հաւատաց՝ թէ ինք շատ ազգերու հայր
պիտի ըլլայ , (ինչպէս ըսուեցաւ ալ ,
թէ՛ Քու սերունդդ այսպէս պիտի ըլ-
լայ .) 19 - Եւ ինք հաւատքի մէջ
չակարացած՝ չնայեցաւ իր մարմինին
արդէն մեռածի պէս ըլլալուն , (որով-
հետեւ ինք հարիւր տարեկանի չափ էր ,)
ոչ ալ Սաւայի արգանդին մեռած

ըլլալուն . 20 - Եւ անհաւատութիւնով շտարակուսեցաւ Աստուծոյ խոստմունքէն, հապա հաւատքով զօրացած՝ Աստուծոյ փառք սուաւ, 21 - Եւ իր մտքին մէջ հաստատ պահեց թէ ան որ խօսք սուաւ, կարող է ընելու ալ : 22 - Ասոր համար իրեն արդարութիւն սեպուեցաւ :

23 - Բայց ոչ թէ միայն անոր համար գրուեցաւ որ իրեն սեպուեցաւ . 24 - Հապա մեզի համար ալ՝ որոնց պիտի սեպուի, որ կը հաւատանք անոր որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը , 25 - Որ մեր յանցանքներուն համար մատնուեցաւ, և մեզ արդարացնելու համար յարութիւն սուաւ :

ԳԼ Ե

Աստի մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով . 2 - Որուն միջոցով ընդունեցինք հաւատքով այս շնորհքին մօտենայն ալ, որուն մէջ կեցեր ենք, և Աստուծոյ փառքին յուսովը կը պարծինք : 3 - Եւ ոչ միայն այսքան՝ հապա նաև նեղութիւններու մէջ կը պարծինք . վասն զի գիտենք թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ , 4 - Եւ համբերութիւնը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս . 5 - Եւ յոյսը ամօթով չձգեր . վասն զի Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջ տարածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռքով, որ մեզի տրուեցաւ : 6 - Վասն զի երբ մենք դեռ ակար էինք, յարմար ժամանակին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ : 7 - Վասն զի արդարի մը համար հազիւ կ'ըլլայ որ մէկը մեռնի . (բայց բարի մարդու մը համար՝ կարելի է որ մէկը համարձակի մեռնիլ .) 8 - Սակայն Աստուած իր սէրը չօր մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, 9 - Քրիստոս մեզի համար մեռաւ . ուրեմն հիմա որ իր արիւնով արդարացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատինք բարկութենէն : 10 - Վասն զի եթէ մեր թշնամի եղած ատենը Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն մահովը, ո՛րչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի սպրինք անոր կեանքովը : 11 - Եւ ոչ միայն

այս, հապա Աստուծով կը պարծենանք ալ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով, որով հիմա հաշտութիւնը ընդունեցինք :

12 - Վասն զի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, և այն մեղքէն մահը, և այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, * քանզի ամէնը մեղանչեցին : 13 - (Վասն զի մինչև օրէնքին ատենը աշխարհի մէջ մեղք կար . բայց մեղք չսեպուիր՝ ուր օրէնք չկայ : 14 - Սակայն մահը Ադամէ մինչև Մովսէս թագաւորեց, նաև Ադամի յանցանքին նման չմեղանչողներուն վրայ ալ, որ օրինակ էր անոր որ ետքը պիտի գար : 15 - Բայց ոչ թէ ինչպէս յանցանքը՝ այնպէս շնորհքն է . վասն զի եթէ մէկուն յանցանքովը շատեր մեռան, ալ ո՛րչափ աւելի Աստուծոյ շնորհքը և այն պարգևը որ Յիսուս Քրիստոս մէկ մարդուն շնորհքովն է, շատերու վրայ աւելցաւ : 16 - Եւ ոչ թէ այս պարգևը «յնչէ» է՝ ինչպէս մէկէն որ մեղանչեց . վասն զի դատաստանը մէկ Բեզէն դատապարտութեան մէջ յօնոյ, բայց շնորհքը շատ մեղքերէ արդարութեան արքայ : 17 - Վասն զի եթէ մէկ մարդուն մեղքովը մահը թագաւորեց այն մէկովը, ո՛րչափ աւելի անանք որ շնորհքի ու արդարութեան պարգևին տուտութիւնը կ'առնեն, կեանքի մէջ պիտի թագաւորեն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռքով :) 18 - Ուրեմն ինչպէս մէկուն յանցանքովը բոլոր մարդոց դատապարտութեան վէճ էլաւ, այնպէս մէկուն արդարութիւնովը բոլոր մարդոց կեանքի արդարութեան շնորհ էլաւ . 19 - Վասն զի ինչպէս մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան, այնպէս մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան : 20 - Սակայն օրէնքը մէջտեղ ինկաւ որպէս զի յանցանքը շատնայ . բայց ուր աւելի եղաւ մեղքը, ալ աւելի եղաւ շնորհքը . 21 - Որպէս զի ինչպէս մեղքը թագաւորեց մահով, այնպէս շնորհքը թագաւորէ արդարութիւնով մինչև յաւիտենական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով :

*Վճ, սրով

ԳԼ. 2

Այս հիմա ի՞նչ պիտի ըսենք . մեզ-
քի մէջ մնա՞նք արդեօք , որպէս զի
շնորհքը շատնայ : 2 - Քա՛ւ լիցի . մենք
որ մեղքին մեռանք , ի՞նչպէս դեռ ա-
նոր մէջ կենանք : 3 - Չէ՞ք գիտեր , թէ
մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուե-
ցանք , անոր մահուանը մկրտուեցանք :
4 - Անոր հետ թաղուեցանք մկրտու-
թիւնով մահուան համար . որպէս զի
ինչպէս Քրիստոս Հօրը փառքովը յա-
րութիւն առաւ մեռելներէն , այնպէս
մենք կեանքի նորոգութեան մէջ պար-
տինք : 5 - Վասն զի եթէ մենք անկա-
կից եղանք անոր մահուանը նմանու-
թիւնովը , նաև անոր յարութեանը
նմանութիւնովը ալ կ'որդ պիտի ըլլանք :
6 - Չայո գիտնանք որ մեր հին մարդը
անոր հետ խաչուեցաւ , որ մեղքի մար-
մինը փճանայ , որպէս զի տակէ ետև
մեղքի չժառայենք : 7 - Վասն զի ան
որ Եդի՛ մեռած է , մեղքէ արդարա-
ցած է : 8 - Արդ եթէ մենք Քրիստոսի
հետ մեռանք , կը հաւատանք որ անոր
հետ պիտի ապրինք ալ : 9 - Քանզի
գիտենք որ Քրիստոս մեռելներէն յա-
րութիւն առած ըլլալով՝ նորէն չմեռ-
նիր , ալ մահը անոր վրայ իշխանու-
թիւն չունի : 10 - Վասն զի քանի որ
մեռաւ՝ մեղքի մեռաւ մէկ անգամ ,
և որ կենդանի է՝ Աստուծոյ կենդա-
նի է : 11 - Այսպէս դուք ձեր անձերը
մեղքի մեռած սեպեցէք , բայց Աստու-
ծոյ կենդանի՝ մեր Տէրոջը Քրիստոս
Յիսուսի ձեռքով : 12 - Ուստի ա՛լ մեղ-
քը չթագաւորէ ձեր մահուանացու
մարմինին վրայ , որ անոր ցանկութիւն-
ներուն հնազանդիք : 13 - Եւ ձեր ան-
դամները անիրաւութեան գործիք ըլ-
լալու մի ընծայէք մեղքի , հապա ձեր
անձերը Աստուծոյ ընծայեցէք , որպէս
թէ մեռելներէն ողջնցած . և ձեր ան-
դամները արդարութեան գործիքներ՝
Աստուծոյ : 14 - Քանզի մեղքը ձեր
վրայ պիտի չիշխէ . վասն զի օրէնքի
տակ չէք , հապա շնորհքի տակ :

15 - Ուրեմն ի՞նչ . մե՞ղք գործենք
վասն զի օրէնքի տակ չենք , հապա
շնորհքի տակ . քա՛ւ լիցի : 16 - Չէ՞ք
գիտեր թէ որու որ անձերնիդ ծառայ
կ'ընծայէք հնազանդելու , ծառայ էք
անոր՝ որու որ կը հնազանդիք , թէ՛
մեղքի՝ որ մահուան կը քանի , և թէ՛

հնազանդելու՝ որ արդարութեան : 17 -
Բայց գոհութիւն Աստուծոյ , որ թէև
դուք մեղքի ծառայ էիք , սակայն
սրտանց հնազանդեցաք այն վարդապե-
տութեան գաղափարին որ ձեզի յանձ-
նուեցաւ : 18 - Ուստի դուք մեղքէ
ազատ ըլլալով՝ արդարութեան ծառայ
եղաք . 19 - (Մարդու սովորութեան
պէս կ'ըսեմ՝ ձեր մարմինին տկարու-
թեանը համար .) քանզի ինչպէս ձեր
անդամները անօրէնութեան համար
ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնու-
թեան ծառաներ ըլլալու , այնպէս հի-
մա ձեր անդամները սրբութեան հա-
մար ընծայեցէք՝ արդարութեան ծա-
ռաներ ըլլալու : 20 - Վասն զի երբ
դուք մեղքի ծառաներ էիք , արդա-
րութեանէ ազատ էիք : 21 - Ուրեմն այն
ժամանակ ի՞նչ պտուղ ունէիք այն
բաներէն՝ որոնցմով հիմա կ'ամօճնաք .
վասն զի անոնց վերջը մահ է : 22 -
Բայց հիմա մեղքէ ազատուած և Աս-
տուծոյ ծառաներ եղած՝ ձեր պտուղը
ունիք սրբութիւնով , ու վերջը յա-
ւիտենական կեանք : 23 - Քանզի մեղ-
քին վարձքը մահ է , բայց Աստուծոյ
ձրի պարգևը յաւիտենական կեանք՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով :

ԳԼ. Է

Միթէ չէ՞ք գիտեր , եղբայրներ ,
(քանզի ես օրէնքը գիացողներուն կը
խօսիմ ,) որ օրէնքը մարդուս վրայ
կ'իշխէ՝ որչափ ժամանակ որ ողջ է :
2 - Վասն զի այր ունեցող կինը իր ողջ
երկանը կապուած է օրէնքով . բայց
եթէ այրը մեռնի , արձակուած է եր-
կանը օրէնքէն : 3 - Ուրեմն քանի որ
այրը ողջ է , շուն պիտի ըսուի՝ եթէ
ուրիշ երկան մը ըլլայ . բայց եթէ այ-
րը մեռնի , այն օրէնքէն ազատ կ'ըլլայ ,
այնպէս որ շնացող չըլլար՝ եթէ ուրիշ
երկան մը ըլլայ : 4 - Ուստի դուք ալ ,
իմ եղբայրներս , Քրիստոսի մարմնովը
օրէնքին մեռաք . որպէս զի ուրիշի մը
ըլլաք , անոր՝ որ մեռելներէն յարու-
թիւն առեր է , որպէս զի Աստուծոյ
պտուղ բերող ըլլանք : 5 - Քանզի քա-
նի որ մենք մարմնով էինք՝ մեղքերու
կիրքերը սրնք օրէնքով կ'ըլլային , մեր
անդամներուն մէջ կը ներգործէին ,
որպէս զի մենք մահուան պտուղ բե-
րենք : 6 - Բայց հիմա այն օրէնքէն ար-

ձակուեցանք. վասն զի մեռանք անոր՝ սրով բռնուած էինք, որպէս զի մենք ծառայենք հոգիին նորոգութիւնովը, և ոչ թէ գրին հնութիւնովը:

7 - Աւրեմն ի՞նչ բանք. օրէնքը մի՞ գրէ. քա՛ւ լիցի. բայց ես մեղքը չէի ճանչնար, եթէ ոչ՝ օրէնքով. ինչպէս ցանկութիւնն ալ չէի գիտեր, եթէ օրէնքը բաժ չըլլար, Մի ցանկար: 8 - Բայց մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ իմ՝ մէջս բոլոր ցանկութիւնները գոյացուց. վասն զի առանց օրէնքի մեղքը մեռած է: 9 - Ես ալ առանց օրէնքի տառն մը կենդանի էի. բայց երբ պատուիրանքը ինձ հասաւ, մեղքը սղջնցաւ, 10 - Եւ ես մեռայ. ու այն պատուիրանքը որ կեանքի համար էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ: 11 - Վասն զի մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ զիս խաբեց, ու անով մեռցուց: 12 - Առտի օրէնքը սուրբ է, ու պատուիրանքը սուրբ և արդար ու բարի:

13 - Աւրեմն բարին ինծի մահ է եղաւ. քա՛ւ լիցի. հապա մեղքը, որպէս զի երևնայ մեղքը որ այն բարի բանով ինծի մահ գործեց, որպէս զի մեղքը պատուիրանքով աւելի մեղաւոր ըլլայ: 14 - Վասն զի գիտենք որ օրէնքը հոգևոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքի տակ ծախուած: 15 - Քանզի ինչ որ կ'ընեմ՝ չեմ ճանչնար. ոչ թէ ինչ որ կ'ուզեմ՝ զայն կրնեմ, հապա ինչ որ կ'առեմ՝ զայն կ'ընեմ: 16 - Բայց եթէ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն կու տամ օրէնքին թէ բարի է: 17 - Իսկ արդ ոչ թէ ես կ'ընեմ զանհկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիցիս կը բնակի: 18 - Քանզի գիտեմ որ իմ ներսիցիս, այսինքն իմ մարմինիս մէջ, բարի բան մը չբնակիր. վասն զի կամեցողութիւն կայ քովս, բայց բարին ի գործ դնելը չեմ գտներ: 19 - Քանզի ոչ թէ բարին զոր կ'ուզեմ, կ'ընեմ, հապա չարը զոր չեմ ուզեր, զայն կ'ընեմ: 20 - Իսկ եթէ չուզած բանս կ'ընեմ, ալ ոչ թէ ես կ'ընեմ զանհկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիցիս բնակած է: 21 - Առտի ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ բարին բնելը կը կամենամ, չարը իմ քովս է: 22 - Վասն զի ներսի մարդուն նայելով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ. 23 - Բայց սուրիչ օրէնք մը կը տեսնեմ իմ

անդամներուս մէջ, որ իմ մաքիս օրէնքին դէմ կը պատերազմի, և զիս գերի կ'ընէ մեղքի օրէնքին որ իմ անդամներուս մէջ է: 24 - Ի՛նչ խղճայի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմինէն: 25 - Գոհութիւն Աստուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով: Աւրեմն ես ինքնս մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, ու մարմնով՝ մեղքի օրէնքին:

ԳԼ. Ը

Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր*: 2 - Քանզի Քրիստոս Յիսուսով կեանքի հոգիին օրէնքը զիս ազատեց մեղքի և մահուան օրէնքէն: 3 - Վասն զի այն որ անկարելի էր օրէնքին, սրով ճետե տկար էր մարմնով, Աստուած իր Արդին զրկեց մեղանչական մարմինի նմանութեամբ ու մեղքի համար, և դատապարտեց մեղքը այն մարմինին մէջ. 4 - Արպէս զի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ, որ մարմնաւորապէս չենք քայեր, հապա հոգևորապէս: 5 - Քանզի մարմնաւոր եղողները մարմինին բաները կը մտածեն, ու հոգևոր եղողները՝ հոգիին բաները: 6 - Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղաղութիւն: 7 - Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. վասն զի Աստուծոյ օրէնքին չճնազանդիր, մանաւանդ չկրնար ալ: 8 - Վասն զի մարմինով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ: 9 - Բայց դուք մարմինով չէք՝ հապա հոգիով, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, անհկա անորը չէ: 10 - Եւ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ալ մարմինը մեռած է մեղքի համար, ու հոգին կենդանի է արդարութեան համար: 11 - Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնակած է, ալ անհկա որ Քրիստոսը մեռելներէն յարուց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմինները իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի:

*Ո՛հան+! - Ելնէն, այլ հոգևոր կերպով

12 - Ապա ուրեմն, եղբայրներ, պարտապան ենք, ոչ թէ մարմինին՝ մարմնաւորապէս ապրելու . 13 - Վասն զի եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի մեռնիք . բայց եթէ Հոգիով մարմինին գործերը սպաննէք, պիտի ապրիք : 14 - Վասն զի որսնք որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն են : 15 - Քանզի դուք ծառայութեան Հոգին չառիք կրկին վախնալու, հապա որդեգրութեան Հոգին առիք, որ անով կը կանչենք Արքա Հայր : 16 - Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք . 17 - Եւ եթէ որդիներ, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ . որպէս զի, եթէ էր չարչարանքներուն կցորդ ըլլանք, էր փառքին ալ հաղորդ ըլլանք :

18 - Վասն զի ես այսպէս կը դատեմ որ այս ժամանակին չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի : 19 - Քանզի ստեղծուածներուն եռանդուն ակնկալութիւնը Աստուծոյ որդիներուն յայտնուելուն կը սպասէ : 20 - Վասն զի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները, (ոչ թէ իրենց կամքովը՝ հապա անոր համար որ հնազանդեցուց,) 21 - Այն յուսով, որ ստեղծուածները իրենք ալ սպականութեան ծառայութենէն ազատուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին : 22 - Քանզի գիտենք որ ամէն ստեղծուածները մինչև հիմա մէկտեղ կը հառաչեն ու ծնանելու ցաւ կը քաշեն : 23 - Եւ ոչ միայն այսօր, հապա մենք ալ որ Հոգիին առաջին պտուղը ունինք, մենք մեզմէ մեր անձերուն մէջ կը հառաչենք որդեգրութեան, այսինքն մեր մարմինին ազատութեանը, սպասելով : 24 - Վասն զի յուսով փրկուեցանք . բայց յոյսը որ կը տեսնուի, յոյս չէ . վասն զի այն բանին, զոր կը տեսնէ մէկը, ալ ինչո՞ւ պիտի յուսայ : 25 - Իսկ եթէ չտեսած բաներնուս կը յուսանք, ալ համբերութիւնով կը սպասենք առաջ : 26 - Նոյնպէս Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն . քանզի ի՛նչ բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն՝ չենք գիտեր .

բայց ինք Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով : 27 - Եւ սիրաբերը Քննողը զիտէ Հոգիին ի՛նչ խորհիր, քանզի Աստուծոյ համար համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար :

28 - Սակայն զիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն, որոնք առաջ նախաասհմանութիւնովը կանչուած են : 29 - Վասն զի զանոնք որ առաջ կը ճանչնար, առաջուրնէ ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու . որպէս զի անիկա անդրանիկ ըլլայ շատ եղբայրներու մէջ : 30 - Եւ զորոնք առաջուրնէ սահմանեց, նաև կանչեց զանոնք . և զորոնք կանչեց, նաև արդարացուց զանոնք . և զորոնք արդարացուց, նաև փառաւորեց զանոնք : 31 - Ուրեմն ի՛նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ : 32 - Ան որ իր Որդւոյն չիմայեց, հապա մեր ամէնուն համար մատնեց զանիկա, ալ ի՛նչպէս անոր հետ ամէն բաները մեզի չպարգևեր : 33 - Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ՝ մեղադիր ըլլայ . Աստուած է որ կ'արդարացնէ : 34 - Ուրեմն ո՞վ է որ կը դատապարտէ . Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ թէ յարութիւն ալ առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաև մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ : 35 - Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն . տառապանքը, կամ նեղութիւնը, կամ հալածանքը, կամ անօր, կամ մերկութիւնը, կամ վտանգը, կամ անօրը . 36 - (Ինչպէս գրուած է, Ամէն օր քեզի համար կը սպաննուինք . մորթութուելու ոչխարի պէս կը սեպուինք :) 37 - Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք անով որ մեզ սիրեց : 38 - Վասն զի ես հաստատ գիտեմ թէ ոչ մահ՛ը, և ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, և ոչ իշխանութիւնները, ու ոչ զօրութիւնները, և ոչ ներկայ բաները, ու ոչ գայու բաները, 39 - Եւ ոչ բարձրութիւնը, ու ոչ խորունկութիւնը, և ոչ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրօջմով է :

ԳԼ. Թ

Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով -- չեմ ստեր, (իմ խիղճս ալ ինծի կը վկայէ Հոգևով Արքով,) 2 - Ար մեծ արամուծիւն է ինծի, ու իմ սրտիս անպակաս ցաւ: 3 - Քանզի ես ինքնս կը խնդրէի նզովուած ըլլալ Քրիստոսէ, իմ մարմնի կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս համար, 4 - Արոնք Իսրայէլացի են. սրոնցն է սրդեգրութիւնը ու փառքը և ուխտերը ու օրինադրութիւնը և պաշտօնը ու խոստմունքները: 5 - Իրենցն են նա հապետները, իրենցմէ էլ -- Քրիստոս ալ մարմնի կողմանէ, որ է ամէնուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս: Ամէն: 6 - Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը գետին ինկած է. քանզի ոչ թէ ամէն Իսրայէլէ եղողները Իսրայէլացի են: 7 - Եւ ոչ թէ Աբրահամի սերունդ ըլլանուն համար ամէնը որդիներ են. հապա Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի: 8 - Այսինքն՝ ոչ թէ անոնք որ մարմնի որդիներ են՝ Աստուծոյ որդիներ ալ են, հապա խոստմունքի որդիները սերունդ կը սեպուին: 9 - Վասն զի խոստմունքին խօսքը այս էր, թէ Այս ատեն պիտի գամ, ու Սաւա որդի պիտի ունենայ: 10 - Եւ ոչ միայն այսքան, հապա Ռեբեկայէ ալ յայտնի է որ յղացաւ մէկէն, այսինքն մեր Իսահակ հօրմէն: 11 - Վասն զի ոչ ոք զեռ չծնած, և զեռ աղէկ կամ գէշ բան մը չգործած, (որպէս զի Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատ մնայ ընտրութեանը պէս, 12 - Այ թէ գործերէն, հապա անկէ որ կանչեց,) իրեն ըսուեցաւ թէ, 13 - Մեծը պզտիկին պիտի ծառայէ. ինչպէս գրուած է թէ Յակոբը սիրեցի, բայց Եսաւը ստեցի: 14 - Աւրեմն ի՞նչ ըսենք. Միթէ Աստուծոյ քով անիրաւութիւն կայ. քա՛ւ լիցի: 15 - Վասն զի Մովսէսի կ'ըսէ, Արու որ պիտի սղորմիմ՝ կ'ողորմիմ, ու որու վրայ որ պիտի զթամ՝ կը գթամ: 16 - Աւրեմն ոչ անկէ է որ կը կամի, ու ոչ անկէ՝ որ կը վազէ, հապա Աստուծմէ՝ որ կ'ողորմի: 17 - Քանզի գիւրքը Փարաւոնի կ'ըսէ, Անոր համար քեզ վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, ու բոյսը երկրի մէջ իմ անունս պատմուի:

18 - Աւառի սրու որ կ'ուզէ՝ կ'ողորմի, և զոր կ'ուզէ՝ կը խոստացնէ: 19 - Աւրեմն ինծի պիտի ըսես թէ Այ ինչո՞ւ մեղադիր կ'ըլլայ. վասն զի ո՞վ անոր կամքին դեմ դրաւ: 20 - Բայց դուն ո՞վ ես, ով մարդ, որ Աստուծոյ դեմ պատասխան կու տաս. միթէ ստեղծուածը էր Ստեղծողին կրնա՞յ ըսել թէ Զիս ինչո՞ւ այդպէս շինեցիր: 21 - Բրուար իշխանութիւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն շաղաւածքէն աման շինելու, մէկը պատուի՝ և միւր անարգանքի համար: 22 - Հապա ի՞նչ ըսելի է -- անի հիւ, եթէ Աստուած էր բարկութիւնը ցուցնել՝ ու իր զօրութիւնը յայտնել ուզելով, շատ երկայնամուտ, թեամբ համբերեց կորուելու պատրաստուած բարկութեան ամաններուն: 23 - Եւ ի՞նչ որպէս զի իր փառքին մեծութիւնը յայտնի ընէ սղորմելու ամաններուն վրայ, զորոնք փառքի համար առաջուրնէ պատրաստեց: 24 - Այսինքն մեզ զորոնք կանչեց, ոչ թէ միայն Հրեաներէն, հապա հեթանոսներէն ալ: 25 - Ինչպէս Ավսէէի մէջ ալ կ'ըսէ, իմ ժողովուրդս չեղողին իմ ժողովուրդս պիտի կանչեմ, ու սիրելի չեղողին՝ սիրելի: 26 - Եւ պիտի ըլլայ թէ այն տեղ ուր անոնց ըսուեցաւ թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք կենդանի Աստուծոյն որդիները պիտի ըսուին: 27 - Եսայի ալ Իսրայէլի համար կ'ազազակէ, թէ և Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին պէս ըլլայ, հոն մնացորդ մը պիտի ազատի: 28 - Քանզի Տերը համառօտ և կարճ բան մը կ'ընէ արդարութեամբ. վասն զի Տերը կարճ բան մը պիտի ընէ երկրի վրայ: 29 - Եւ ինչպէս Եսայի առաջուրնէ ըսաւ, եթէ զօրաց Տերը մեզի սերունդ մը թողուցած չըլլար, մենք Սողոմի պէս պիտի ըլլայինք, ու Գամորի պիտի նմանէինք: 30 - Աւրեմն ի՞նչ ըսենք. թէ հեթանոսները որոնք արդարութեան չէին հետեւր՝ արդարութեան հասան, այն արդարութեան՝ որ հաւատաքէն է: 31 - Բայց Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը հետեւր, արդարութեան օրէնքին չհասաւ: 32 - Ինչո՞ւ համար. վասն զի ոչ թէ հաւատաքէն, հապա որպէս թէ օրէնքին գործերէն -- ոչ ոք ոչ ոք -- վասն զի գայթակղութեան վէճին վրայ գլորեցան: 33 - Ինչ-

պէս գրուած է, Ահա Սիօնի մէջ գայ-
թակղութեան քար մը կը գնեմ՝ ու
գլորելու վէճ մը . և ամէն ով որ ա-
նոր հաւատայ, պիտի չամչնայ:

ԳԼ. Ժ

Եղբայրներ, իմ սրտիս փափաքը
ու ազօթքը առ Աստուած *Խորայելի
փրկուելուն համար է: 2 - Վասն զի ես
կը վկայեմ՝ անոնց համար, թէ Աստու-
ծոյ նախանձաւորութիւնը ունին, բայց
ոչ թէ գիտութեամբ: 3 - Վասն զի ա-
նոնք Աստուծոյ արդարութիւնը չգիտ-
նալով, ու իրենց արդարութիւնը հաւ-
տատել ուզելով, Աստուծոյ արդարու-
թեանը չհնազանդեցան: 4 - Քանզի օ-
րէնքին վախճանը Քրիստոս է ամէն հա-
ւատացեալի արդարութեան համար:

5 - Վասն զի Մովսէս օրէնքէն եղած
արդարութիւնը կը ստորագրէ թէ,
Զանոնք կատարող մարդը անոնցմով
պիտի ապրի: 6 - Բայց հաւատքէն ե-
ղած արդարութիւնը այսպէս կ'ըսէ,
Մի բերք քու սրտիդ մէջ, Ո՞վ պիտի
ելլէ երկինք, (այսինքն Քրիստոսը իջե-
ցընելու.) 7 - Կամ թէ Ո՞վ պիտի իջնէ
անդունդը, (այսինքն Քրիստոսը մե-
ռելներէն հանելու:) 8 - Հապա ի՞նչ
կ'ըսէ. Խօսքը քեզի մտտէ, քու բեր-
նիդ մէջ և քու սրտիդ մէջ է. այսինքն
հաւատքին խօսքը զոր մենք կը քարո-
զենք: 9 - Վասն զի եթէ քու բերնովդ
Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու
սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած
զանկա մեռելներէն յարուց, պիտի
փրկուիս. 10 - (Վասն զի սրտով կը
հաւատայ մէկը արդարանալու, ու
չերնով կը խոստովանի փրկուելու:)
11 - Քանզի գիրքը կ'ըսէ, Ամէն ով որ
անոր հաւատայ, պիտի չամչնայ: 12 -
Վասն զի խորութիւն չկայ Հրեային
ու Յոյնին մէջաեղ. վասն զի ամէնուն
Տէրը նոյնն է, առատ ամէնուն որոնք
իրեն կը կանչեն: 13 - Քանզի ով որ
Տէրջը անունը կանչէ, պիտի փրկուի:

14 - Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն
անոր՝ որու չհաւատացին. կամ ի՞նչ-
պէս պիտի հաւատան անոր՝ որուն վը-
րայով չլսեցին. կամ ի՞նչպէս պիտի
լսեն՝ առանց մէկուն քարոզելուն: 15 -
Կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ եթէ

չգրկուին. ինչպէս գրուած է, Ի՛նչպէս
գեղեցիկ են խաղաղութիւն աւետա-
րանողներուն - բարի բաներու աւե-
տիս առողներուն սաքերը: 16 - Բայց
ամէնը հնազանդ չեղան աւետարանին.
Քանզի Եսայի կ'ըսէ, Տէր, ո՞վ հաւա-
տաց մեր - - - լուրին: 17 - Ուրեմն
հաւատաքը լսելէն է, ու լսելը Աստու-
ծոյ խօսքէն: 18 - Բայց կ'ըսեմ, Մի՛թէ
չլսեցի՞ն. մանաւանդ Բոլոր երկիր ելաւ
անոնց հնչիւնը. ու անոնց խօսքը՝ մին-
չև աշխարհի ծայրերը: 19 - Բայց կ'ը-
սեմ, Մի՛թէ Խորայել չգիտցա՞ւ. ա-
ռաջ Մովսէս կ'ըսէ, Ես ձեզ նախանձի
պիտի գրգռեմ՝ *անպիտան ժողովուր-
դով մը, ու անմիտ ազգով մը ձեզ
պիտի բարկացնեմ: 20 - Բայց Եսայի
կը համարձակի ու կ'ըսէ, Ես անոնց
գանուեցայ՝ որոնք զիս չէին փնտեր,
յայտնի եղայ անոնց՝ որոնք զիս չէին
հարցներ: 21 - Սակայն Խորայելի վրա-
յով կ'ըսէ, Բոլոր օրը իմ ձեռքերս
երկնցուցի անհնազանդ ու հակառա-
կող ժողովուրդի մը:

ԳԼ. ԺԱ

Ուրեմն կ'ըսեմ, Մի՛թէ Աստուած
իր ժողովուրդը մերժե՞ց. քա՛ւ լիցի .
վասն զի ես ալ Խորայելացի եմ, Աբ-
րահամի սերունդէն, Բենիամինի ցե-
ղէն: 2 - Չմերժեց Աստուած իր ժողու-
վուրդը զոր ինք առաջունէ ճանչցաւ.
մի՛թէ չէ՞ք գիտեր Եղիսայի պատմու-
թեան մէջ գիրքը ի՛նչ կ'ըսէ. ի՛նչպէս
անկա Խորայելի համար գանգատ կ'ը-
նէ Աստուծոյ, ըսելով, 3 - Տէր, քու
մարգարէներդ մեռցուցին ու քու սե-
ղաններդ փլցուցին, ու միայն ես մնա-
ցեր եմ, և իմ անձս կը փնտռեն: 4 -
Բայց ի՞նչ կ'ըսէ անոր՝ աստուածային
պատասխանը. Ինձի թողուցի, ՚լուէ,
եթէր հազար մարդիկ՝ որոնք Բահայի
ծնրագրութիւն չըրին: 5 - Նոյնպէս
ալ այս ատեն շնորհքի ընտրութեանը
համեմատ մնացորդ մը կայ, 6 - Եւ
եթէ շնորհքով, ուրեմն ա՛լ գործերէն
չէ. ապա թէ ոչ՝ շնորհքը ա՛լ շնորհք
չլլար. †իսկ եթէ գործերէն է, ա՛լ
շնորհք չէ. ապա թէ ոչ՝ գործը ա՛լ
գործ չլլար: 7 - Ուրեմն ի՞նչ. Խորա-
յել չհասաւ այն բանին զոր կը փրնա-

*Ո՛հնէ, անոնց

*Յան. ոչ

†Ո՛հնէ, ըսնին

ուէր. բայց ընտրուածները հասան, ու Քնացածները կուրցան, 8 - (Ինչպէս գրուած է, Աստուած անոնց թմբու- թեան ոգի սուաւ, աչքեր՝ սրոնցմով պիտի շտեմենն, ու սկանջներ՝ սրոնց- մով պիտի չլսեն,) մինչև այսօր : 9 - Եւ Վաւիթ կ'ըսէ, Անոնց սեղանը ի- րենց սրագայթ ու որս և գայթակղու- թիւն ու հասուցում ըլլայ : 10 - Ա- նոնց աչքերը մթանան, որպէս զի շտե- նեն, ու անոնց կռնակը միշտ վարժուէ : 11 - Աւրեմն կ'ըսեմ, Միթէ անօր համար անոնք յանցանք ըրին որ կոր- ծանին. քա՛ւ լիցի. հապա իրենց յան- ցանքովը հեթանոսներուն փրկութիւն եղաւ, որպէս զի զիրենք նախանձի գրգռէ : 12 - Աւասի եթէ անոնց յան- ցանքը աշխարհի մեծութիւն եղաւ, ու անոնց նուաստութիւնը՝ հեթանոս- ներուն մեծութիւն, ալ ս'ըջափ աւելի անոնց լրութիւնը : 13 - Բայց ձեզի կ'ըսեմ հեթանոսներուդ, Որովհետև հեթանոսներուն առաքեալ եմ, իմ պաշտօնս կը մեծարեմ : 14 - Որպէս զի թերևս իմ՝ մարմինս եղողները նա- խանձի գրգռեմ, ու անոնցմէ մէկ քա- նինները ապրեցնեմ : 15 - Վասն զի եթէ անոնց մերժուիլը աշխարհի հաշտու- թիւն է, հապա անոնց ընդունուիլը ի՞նչ պիտի ըլլայ, բայց եթէ՝ մեռել- ներէն կենդանի ըլլայ : 16 - Արդ եթէ երախայրին սուրբ է, նաև զանգուածը. և եթէ արմատը սուրբ է, «-բէ՛ն ճիւ- ղերն ալ : 17 - Եթէ այն ճիւղերէն մէկ քանինները կտրեցան, ու դուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուաստուեցար, ու ձիթենիին ար- մատին և պարարտութեանը հաղորդ եղար, 18 - Ճիւղերուն դէմ մի պար- ծենար. իսկ եթէ պարծենաս, ոչ թէ դուն արմատը վեր բռներես, հապա արմատը քեզ : 19 - Աւրեմն պիտի ը- սես, Ճիւղերը կտրեցան որպէս զի ես պատուաստուիմ : 20 - Աղէկ, անոնք անհաւատութիւնով կտրեցան, ու դուն հաւատաքով հաստատուեցար. մի հպարտանար, հապա վախցիր : 21 - Վասն զի եթէ Աստուած բնական ճիւ- ղերուն չիմայեց, գուցէ քեզի ալ չիմայէ : 22 - Աւասի տես Աստուծոյ քաղցրութիւնը ու խոտութիւնը. կոր- ծանուածներուն վրայ խոտութիւնը, և քու վրայ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութեանը մէջ կենաս. ապա

թէ ոչ՝ դուն ալ պիտի կարուիս : 23 - Եւ անոնք ալ եթէ իբե՛ն անհաւատու- թեանը մէջ չկենան, պիտի պատուա- տուին, վասն զի կարող է Աստուած զանոնք նորէն պատուաստել : 24 - Քանզի եթէ դուն +եզի բնական եղող վայրենի ձիթենիէն կտրուեցար, ու այն բարի ձիթենիին վրայ, որ +եզի բնա- կան չէր, պատուաստուեցար, ալ ս'ը- չափ աւելի անոնք որ բնական ճիւղե- րէն, պիտի պատուաստուին իրենց ձի- թենիին վրայ : 25 - Վասն զի չեմ ու- ղեր, եղբայրներ, որ չգիտնաք այս խոր- հուրդը, (որպէս զի ինքզինքնիդ իմաս- տուն չսեպէք,) որ բոս մտին կուրու- թիւն եղաւ Իսրայէլի, մինչև հեթա- նոսներուն լրութիւնը մտնէ : 26 - Եւ այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի. ինչպէս գրուած է, Սիօնէ պիտի գայ Փրկիչը, ու Յակոբէ ամբարշտութիւն- ները մէկդի պիտի դարձնէ : 27 - Եւ այս է իմ ուխտս անոնց, երբ անոնց մեղքերը վերցնեմ : 28 - Աւետարանին նայելով՝ անոնք թշնամի են ձեր սիրոյն համար. բայց ընտրութեանը նայելով՝ սիրելի են իբե՛ն հայրերուն սիրոյն հա- մար : 29 - Վասն զի Աստուծոյ պար- գաները ու կոչումը առանց զղջանա- լու են : 30 - Վասն զի ինչպէս դուք ալ տախն մը Աստուծոյ չէիք հաւա- տար, ու հիմա ողորմութիւն գտաք *անոնց անհաւատութիւնովը, 31 - Նոյնպէս անոնք ալ հիմա անհաւատ եղան, որպէս զի ձեր ողորմութիւն Գոթելովը՝ անոնք՝ ալ ողորմութիւն գտնեն : 32 - Վասն զի Աստուած ա- մէնն ալ անհաւատութեան մէջ ար- գելեց, որպէս զի ամէնուն ողորմի : 33 - Ո՛վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան և գիտութեան խորուն- կութիւնը. ի՛նչպէս անքննելի են իր գատասանները, ու անզննելի են իր ճամբաները : 34 - Վասն զի ո՛վ գիտ- ցաւ Տէրոջը միտքը, կամ ո՛վ անոր խորհրդակից եղաւ : 35 - Կամ ո՛վ ա- ռաջուրնէ անոր Բանձը տուաւ, որ փո- խարէնը իրեն արուի : 36 - Վասն զի ամէն բաները անկէ ու անով և անոր համար են. իրեն փառք յաւիտեանս : Ամէն :

*Կամ, անոնց անհաւատութեան ա- տեն, Նոյնպէս անոնք ալ հիմա ան- հաւատ եղան ձեր ողորմութիւն Գոթ- ատներ՝ որպէս զի անոնք

ԳԼ. ԺԲ

Արդ կ'աղաչեմ՝ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը: 2 - Եւ մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէք, որպէս զի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի և կատարեալ է: 3 - Քանզի ինծի տրուած *չնորհքով զայս կ'ըսեմ՝ ձեր մէջ եղող ամէն մէկուն, որ արժան եղածը մտածելէն աւելի բան չմտածէ, հապա զգաստ կենալ մտածէ; ինչպէս Աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը: 4 - Վասն զի ինչպէս մէկ մարմինի մէջ շատ անդամներ ունինք, ու այն ամէն անդամները միեւնոյն գործը չունին. 5 - Նոյնպէս մենք շատուորներս մէկ մարմին ենք Քրիստոսով. և ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք: 6 - Ուստի մենք զանազան պարգևներ ունենալով այն շնորհքին համեմատ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն՝ հաւատքին չափովը Գործածե՛նք. 7 - Եթէ սպասաւորութիւն՝ սպասաւորութեան մէջ ըլլանք. եթէ ան որ կը սորվեցնէ՝ սորվեցնելու ետեւ ըլլայ. 8 - Եթէ ան որ կը յորդորէ՝ յորդորելու ետեւ, ան որ կը բաշխէ՝ պարզմտութեամբ Բողոքէ, ան որ վերահացու է՝ ջանքով, ան որ կ'ողորմի՝ յօժարութեամբ. 9 - Սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ, շարէն զգուելով, բարիին յարելով. 10 - Եղբայրսիրութեան մէջ իրարու վրայ գորովալից եղէք. պատուելու մէջ իրարմէ անցէք. 11 - Զանքի մէջ թուլասիրտ չըլլաք. հոգիով բորբոքեցէք. Տերօջր ծառայեցէք. 12 - Յուսով ուրախ եղէք. նեղութեան մէջ համբերեցէք. ստեպ աղօթքի կեցէք. 13 - Սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէք. հիւրասիրութեան ետեւ եղէք. 14 - Զեզ հալածողները օրհնեցէք, օրհնեցէք ու մի անիծէք. 15 - Խնդացողներուն հետ խնդացէք, և լացողներուն հետ լացէք. 16 - Իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէք. ամբարտաւանութիւն մի ընէք, հապա խոնարհ-

ներուն հետ խոնարհեցէք. ինքզինքնիդ իմաստունի տեղ մի զնէք. 17 - Զարութեան փոխարէն մէկրուն շարութիւն մի հասուցանէք. ամէն մարդոց առջև բարի բաներ ընէլ՝ հոգ տարէք: 18 - Որչափ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք: 19 - Սիրելիներ, վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար, հապա բարկութեան տեղ տուէք. վասն զի գրուած է, Վրէժխնդրութիւնը իմս է, ես պիտի հասուցանեմ, կ'ըսէ Տէրը: 20 - Ուստի եթէ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց սուր անոր, և եթէ ծարաւ է՝ ջուր տուր անոր. քանզի զայս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի գիզես: 21 - Զարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին:

ԳԼ. ԺԳ

Ամէն մարդ ի՞նչ վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի. վասն զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծոյ չըլլայ. և *անոնք որ կան՝ Աստուծոյ կարգուած են: 2 - Ուրեմն ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ կը կենայ. և անոնք որ դէմ կը կենան, անձերնուն դատապարտութիւն կ'ընդունին: 3 - Վասն զի իշխանները բարի գործերու վախ Գործեն, հապա չարերու. կ'ուզե՞ս չվախնալ իշխանութեանէն. բարի գործէ, ու անկէ գովութիւն պիտի ընդունիս. 4 - Վասն զի անիկա Աստուծոյ սպասաւորն է քեզի բարիի համար. բայց եթէ դուն չար կը գործես՝ վախցիր. վասն զի դատարկ տեղ մէջքը թուր չէ կոպեր, քանզի Աստուծոյ սպասաւորն է, և վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ որ չար կը գործէ: 5 - Ասոր համար պէտք է հնազանդ ըլլալ, ոչ թէ միայն բարկութեանը համար, հապա խղճմասանքի համար ալ: 6 - Այս պատճառաւ է որ սուրբ ալ կու տաք. վասն զի Աստուծոյ սպասաւորներն են այն նոյն բանին հոգ տանելու: 7 - Ուստի հասուցէք պէտք եղածը ամէնուն. որու որ սուրբ Գործէ՝ տուրքը, որու որ մտքս՝ մտքսը, որու որ վախ՝ վախնալը, որու որ պատիւ՝ պատիւը:

*Ո՛հնէ, Աստուծոյ շնորհքով

*Ո՛հնէ, այն իշխանութիւնները

8 - Բնաւ մէկուն պարտական մի գանուիք, միայն թէ մէկզմէկ սիրելու. վասն զի ով որ ընկերը կը սիրէ՝ օրէնքը կը կատարէ. 9 - Վասն զի այն Մի շնարը, Մի սպանաները, Մի գողանարը, Սուա վկայութիւն մի ընկերը, Մի ցանկարը, և ուրիշ ինչ պատուէր որ կայ՝ Բարբառ այս խօսքին մէջ կը բովանդակուի, թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: 10 - Սէրը ընկերին գէշութիւն չընէր. ուրեմն օրէնքին լրուամբ սէր է:

11 - Եւ այսպէս ըրէ+, գիտնալով այս ատեն, որ հիմն ժամանակ է մեզի քունէ արթննալու. վասն զի հիմն մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք: 12 - Գիշերը շատ անցած է ու ցորեկը մօտեցած. ուստի մէկզի ընենք խաւարին գործերը, ու մեր վրայ հագնինք լուսոյ զէնքերը: 13 - Որպէս թէ ցորեկ ատեն՝ պարկեշտութեամբ պտրտինք, ոչ թէ անառակութիւններով ու գինովութիւններով, և ոչ թէ Բարբառ անկողիններով ու պղծութիւններով, և ոչ թէ հակառակութիւնով ու նախանձով. 14 - Հապա Յէր լեայ հագէք Տէր Յիսուս Քրիստոսը, ու մարմնի խնամք մի տանիք ցանկութիւններու համար:

ԳԼ. ԺԴ

Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէք՝ ոչ թէ *տարակուսական որոշմունքներով: 2 - Մէկը կը հաւատայ որ ամէն բան կրնայ ուտել, և ան որ տկար է՝ կանանչեղէն կ'ուտէ: 3 - Ան որ կ'ուտէ՝ չուտողը թող չանարգէ, ու ան որ չուտեր՝ ուտողը թող չդատէ, վասն զի Աստուած զանիկա ընդունէր է: 4 - Իսկն ո՞վ էս որ ուրիշին ծառան կը դատես. իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ. բայց պիտի կանգնի, վասն զի †Աստուած կարող է զանիկա կանգնեցնել: 5 - Մէկը մէկ օրը ուրիշ օրէ աւելի կը սեպէ, մէկն ալ ամէն օրը Բի կը սեպէ. թող ամէն մարդ իր միտքը հաճեցնէ: 6 - Ան որ կը հոգայ օրը, Տէրոջը կը հոգայ, և ան որ չհոգար օրը, Տէրոջը չհոգար. ու ան որ կ'ուտէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի

Աստուծոյ կը գոհանայ. և ան որ չուտեր, Տէրոջը չուտեր, ու Աստուծոյ կը գոհանայ: 7 - Վասն զի մեզմէ մէկը իր անձին համար չապրիր, ու մէկը իր անձին համար չմեռնիր: 8 - Քանզի եթէ ապրինք, Տէրոջը համար կ'ապրինք, և եթէ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք. ուրեմն թէ՛ ապրինք և թէ՛ մեռնինք, մենք Տէրոջն ենք: 9 - Վասն զի Քրիստոս ալ անոր համար մեռաւ *ու ապրեցաւ, որ Բարբառ մեռելներուն ու կենդանիներուն իշխէ: 10 - Իսկ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես, կամ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կ'անարգես. վասն զի ամէն ալ Քրիստոսի ատեանին առջև պիտի կայնինք: 11 - Վասն զի գրուած է, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինծի պիտի ծռի, և ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստովանի: 12 - Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին համար: 13 - Ուստի ալ զիրար չդատենք, հապա աւելի այս որոշումը ըրէք միաքերնուդ մէջ՝ խոչ կամ գայթակղութիւն չդնել եղբօրը: 14 - Զայս գիտեմ՝ ու հաստատուած եմ Տէր Յիսուսով, որ բա՛ն մը ինքիրմէ պիղծ չէ, բայց ով որ պիղծ կը սեպէ բան մը, անոր պիղծ է այն: 15 - Իսկ եթէ կերակուրի համար քու եղբայրդ արամի, ալ դուն սիրով չվարուեցար. քու կերակուրովդ մի կորսնցնէր զանիկա՝ որու համար Քրիստոս մեռաւ: 16 - Արդ չըլլայ որ ձեր բարիին համար չար խօսին: 17 - Վասն զի Աստուծոյ արքայութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն և խաղաղութիւն ու խնդութիւն Հոգևով Արբով: 18 - Քանզի եթէ մէկը այս բաներով Քրիստոսի կը ծառայէ, անիկա Աստուծոյ հաճելի է՝ ու մարդոց գովելի: 19 - Ապա ուրեմն խաղաղութեան և իրարու շինութեան ետեւ ըլլանք: 20 - Զըլլայ որ կերակուրի պատճառաւ Աստուծոյ գործը քակես. ամէն բան մաքուր է. միայն թէ այն մարդուն է գէշ, որ Բարբառ գայթակղութիւն տալով կ'ուտէ: 21 - Աղէկ է միս չուտել և գինի չխմել, ոչ ալ Բարբառ ընել որով քու եղբայրդ կը դժուրի կամ

Բարբառ. կարծեաց †ՈՒՄԻՆ, Տէրը

*ՈՒՄԻՆ+, ու յարութիւն առաւ, և նորէն

Ար գայթակղի կամ կը տկարանայ : 22 - Իսուն հաւատաք ունի՞ս . զանիկա քեզի պահէ Աստուծոյ առջև . երանի՛ տնոր որ իր անձը չգատապարտեր ա- նով , զոր ինք *կ'ընդունի : 23 - Բայց ան որ խիղճ կ'ընէ , եթէ սուտէ՛ կը գա- տապարտուի , վասն զի ոչ թէ հաւատա- քով կ'ապէ , քանզի ինչ բան որ հա-ւատքով չէ՛ մեղք է :

ՔԼ. ԺԵ

Պէտք է մեզի որ կարող ենք՝ տկար- ներուն տկարութիւնը վերցնել , և ոչ թէ Բայն մեր անձին հաճոյ ըլլալ . 2 - Հապա մեզմէ ամէն մէկը շինու- թեան համար իր ընկերին հաճոյ ըլլայ քարի բաներու մէջ : 3 - Քանզի Քրիս- տոս ալ ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ , հապա ինչպէս գրուած է , Քեզ նախա- տողներուն նախասինքները իմ վրաս ինկան : 4 - Վասն զի ինչ որ առաջուրնէ գրուեցաւ , մեր սորվելուն համար գրուեցաւ , որպէս զի համբերութիւ- նով ու Գիրքերուն մխիթարութիւնովը յոյս ունենանք : 5 - Եւ համբերու- թեան ու մխիթարութեան Աստուածը տայ ձեզի իրարու հետ միեւնոյն խոր- հուրդը ունենալ Քրիստոս Յիսուսի «-չաճէ՛ պէս . 6 - Որպէս զի մէկ սրտով «- մէկ բերնով փառաւորէք զԱստ- ուած ու մեր Տէրսը Յիսուս Քրիստոսի Հայրը : 7 - Ասոր համար մէկզմէկ ըն- դունեցէք , վասն զի Քրիստոս ալ լմեզ ընդունեց Աստուծոյ փառքին համար :

8 - Բայց կ'ըսեմ՝ թէ Յիսուս Քրիս- տոսի թլփատութեան պաշտօնեայ ըլ- լալը Աստուծոյ ճշմարտութեանը հա- մար էր , որպէս զի նախահայրերուն քր-«-ա՛ խոտամունքները հաստատէ . 9 - Սակայն հեթանոսները ողորմութեան համար զԱստուած փառաւորեն . ինչ- պէս գրուած է , Ասոր համար ազգե- րուն մէջ քեզ պիտի գովեմ՝ , և քու անուանդ սաղմոս պիտի երգեմ : 10 - Եւ դարձեալ կ'ըսէ թէ , Ով ազգեր , անոր ժողովուրդին ուրախակից եղէք : 11 - Եւ դարձեալ թէ , Օրհնեցէք Տէ- րը , ով բոլոր ազգեր , ու գովեցէք գա- նիկա , ով բոլոր ժողովուրդներ : 12 - Եւ դարձեալ Եսայի կ'ըսէ , Յետէի մէկ արմատը պիտի ըլլայ , ու ան որ

ազգերուն իշխան պիտի կայնի , ազգե- րը անոր պիտի յուսան : 13 - Արդ յու- սոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրա- խութիւնով ու խաղաղութիւնով հա-ւատալու մէջ , որպէս զի առատանաք յուսով Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը :

14 - Ես ինքնս ալ հաստատուած եմ՝ ձեզի համար , իմ եղբայրներս , որ դուք լեցուն էք բարութիւնով , լեց- ուած էք ամէն գիտութիւնով , և կրնաք մէկզմէկ խրատել : 15 - Սակայն մէկ կողմանէ համարձակաբար գրեցի ձեզի , իմ եղբայրներս , որպէս թէ միա- քերնիդ ձգելով «- Բայն ոչ շնորհ- քին պատճառաւ որ Աստուծմէ ինձի արուած է , 16 - Որպէս զի ես Յիսուս Քրիստոսի սպասուորը ըլլամ՝ հեթա- նոսներուն մէջ , և Աստուծոյ աւետա- րանը մատակարարեմ , որպէս զի հե- թանոսներուն ընծայուելը ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգիով որբուելով : 17 - Ուստի Աստուծոյ քով պարծանք ու- նիմ՝ Քրիստոս Յիսուսով : 18 - Վասն զի չեմ համարձակիր խօսիլ այն բա- ներէն մէկը , զոր Քրիստոս իմ ձեռքովս գործած չէ հեթանոսները հնազան- դեցնելու համար՝ խօսքով ու գործով , 19 - Նշաններու ու հրաշքներու զօ- րութիւնով , *Աստուծոյ Հոգւոյն զօ- րութիւնովը . այնպէս որ ես Երուսա-ղէմէ «- Բայն՝ և շրջան ընելով մինչև Լիւբիկացուց կողմերը Քրիստոսի աւե- տարանը լեցուցի : 20 - Այնպէս ջա- նացի աւետարանը քարոզել , ոչ թէ ուր որ Քրիստոսի անունը յիշուած էր , որ չըլլայ թէ ուրիշի մը քր-«՝ հիման վրայ չինեմ . հապա ինչպէս գրուած է թէ , 21 - Որոնց չպատմուեցաւ անոր վրայով՝ պիտի տեսնեն , ու որոնք չլսե- ցին՝ պիտի իմանան : 22 - Անոր համար ալ շատ արգիլուեցայ ձեզի գալ : 23 - Բայց հիմա որ այս կողմերը ա՛լ ինձի տեղ չկայ , ու շատ տարիներէ ի վեր խիտ կը փափաքիմ՝ ձեզի գալ , 24 - Երբ դէպ ի Սպանիա ելթամ , ի կը յուսամ որ անցնելու ատենս ձեզ տեսնեմ , ու ձեզմէ յուղարկուիմ՝ հոն երթալ , եթէ առաջ քիչ մը ձեզմով լեցուիմ : 25 - Բայց հիմա Երուսաղէմ կ'երթամ՝ սուրբերուն սպասուորելու :

*Ո՛հա՛ , Սուրբ
†Ո՛հա՛ , ձեզի պիտի գամ . վասն զի կը յուսամ

*Կա՛մ , կը փորձէ †Ո՛հա՛ , ձեզ

26 - Վասն զի Մակեդոնացիք և Աքայացիք յօժարեցան որ Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ մը հաղորդութիւն ընեն : 27 - Ծօժարեցան, քանզի անոնց պարտական ալ են. վասն զի եթէ անոնց հոգեւոր բաներուն հաղորդ եղան հեթանոսները, կը պարտաւորին որ հաղորդութիւն ընեն անոնց՝ մարմնաւոր բաներու մէջ ալ : 28 - Արեմն տակա կատարելով, ու կնքելով անոնց այս պտուղը, ձեզմէ Սպանիա պիտի անցնիմ : 29 - Եւ զայս գիտեմ որ իմ ձեզի գալու ատենս՝ Քրիստոսի *աւետարանին լեցուն օրհնութիւնովը պիտի գամ :

30 - Ձեզի կ'աղաչեմ, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսով ու Հոգւոյն սիրովը, որ ինծի հետ պատերազմակից ըլլաք յէր աղօթքներուն մէջ առ Աստուած ինծի համար, 31 - Արպէս զի Հրէաստանի մէջ հաւատքի չհնազանդողներէն ազատուիմ, ու իմ Երուսաղէմ ընելու՝ սպասաւորութիւնս սուրբերուն ընդունելի ըլլայ, 32 - Արպէս զի Աստուծոյ կամքովը ուրախութեամբ ձեզի գալով ձեզի հետ հանգչիմ : Եւ խաղաղութեան Աստուածը ձեր ամէնուղ հետ ըլլայ : Ամէն :

ԳԼ. ԺԶ

Ձեզի կը յանձնեմ մեր Փիլէքսյորը, որ կենքայի եկեղեցւոյն սպասաւորն է. 2 - Արպէս զի զանհկա ընդունիք Տէրոջմով ինչպէս սուրբերուն օրժան է. և անոր ինամք տանիք ինչ բանի մէջ որ ձեր օգնութեանը կարօտի. քանզի ինք ալ շատերու ինամք տաբաւ, ու ինծի ալ :

3 - Բարև ըրէք Պրիսկէի ու Ակիւղասի՝ Քրիստոս Յիսուսով իմ գործակիցներուս. 4 - (Որոնք իմ կեանքիս համար իրենց պարանոցները տաին. որոնցմէ ոչ թէ միայն ես շնորհակալ կ'ըլլամ, հապա հեթանոսներուն բոլոր եկեղեցիներն ալ.) 5 - Եւ անոնց տանը մէջի եկեղեցիին ալ : Բարև ըրէք Եպեմետոս իմ սիրելիիս, որ ՝ Աքայիայէ առաջին պտուղ մըն է Քրիստոսի : 6 - Բարև ըրէք Մարիամի, որ մեր վրայ շատ աշխատեցաւ : 7 - Բարև ըրէք Անդրանիկոսի ու Յունիայի, իմ ազգա-

կաններուս և գերութեան ընկերներուս, որոնք առաքեալներուն մէջ երևելիներ են, որոնք ինծմէ ալ առաջ Քրիստոսի եղան : 8 - Բարև ըրէք Ամպղիա իմ սիրելիիս Տէրոջմով : 9 - Բարև ըրէք Աւրբանոս մեր գործակցին Քրիստոսով, ու Ստաքէս իմ սիրելիիս : 10 - Բարև ըրէք Ապեղէսի որ ընտրեալ է Քրիստոսով : 11 - Բարև ըրէք անոնց որոնք Արիստաբուղոսի տունէն են : Բարև ըրէք Հերովդիոն իմ ազգակալիս : Բարև ըրէք անոնց որոնք Նարկէսի տունէն են, Տէրոջմով : 12 - Բարև ըրէք Տրիփոնէի ու Տրիփոսէի, Տէրոջմով աշխատողներուն : Բարև ըրէք Պերսիգէ սիրելիին, որ շատ աշխատեցաւ Տէրոջմով : 13 - Բարև ըրէք Ռուփոսի, Տէրոջմով ընտրուածին, ու անոր մօրը և իմին : 14 - Բարև ըրէք Ասինկրիտոսի, Փղեգոնի, Երմասի, Պատրսբայի, Երմէսի ու անոնց հետ եղող եղբայրներուն : 15 - Բարև ըրէք Փիղոզոգոսի ու Յուլիայի, Ներէոսի ու անոր քրոջը, և Ողիմպոսի ու անոնց հետ եղող բոլոր սուրբերուն : 16 - Բարև ըրէք Իրարու սրբութեան համբուրով : Բարև կ'ընեն ձեզի Քրիստոսի [բոլոր] եկեղեցիները :

17 - Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, որ գիտէք այնպիսիները որոնք ձեր սարված վարդապետութենէն դուրս հերձուածողութիւններ ու գայթակղութիւններ կ'ընեն, և անոնցմէ ետ կեցէք : 18 - Վասն զի այնպիսիները մեր Տէրոջը *Քրիստոսի չեն ծառայեր, հապա իրենց որովայնին. և անոյշ խօսքերով ու գովութիւններով պարզամիտներուն սիրտերը կը խաբեն : 19 - Քանզի ձեր հնազանդութիւնը ամէնուն հասած է. ուստի ձեր վրայ ուրախ եմ. բայց կ'ուզեմ որ դուք իմաստուն ըլլաք բարիին, ու միամիտ չարին : 20 - Եւ խաղաղութեան Աստուածը խորտակէ Սատանան շուտով ձեր օտարներուն տակ : Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ : †

21 - Բարև կ'ընէ ձեզի Տիմոթէոս իմ գործակիցս, և Ղուկիոս ու Յասան և Սոսիպատոս, իմ ազգականներս : 22 - (Բարև կ'ընեմ ձեզի Տէրոջմով ես ալ Տերափոս, որ այս թուղթը

*ՈՒՍՆՆԻՆ ԸՆՆԻՆ


†ԿՈՄ, Ասիայէ

*ՈՒՍՆՆՆԻՆ, Յիսուս Քրիստոսի †ՈՒՍՆՆՆԻՆ ԿՈՄԵԼԵՆԵՆ, ԱՄԷՆ :

գրեցի: 23 - Բարև կ'ընէ ձեզի Գայիոս, իմ ու բոլոր եկեղեցիին չիւրընկալը: Բարև կ'ընէ ձեզի Երաստոս, քաղաքիս գանձապետը, ու Կուարտոս եղբայրը: 24 - Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամէնուն չեա ըլլայ: Ամէն:

25 - Արդ անոր, որ կարող է ձեզ հաստատել իմ աւետարանիս պէս ու Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս, այն խորհուրդին յայտնուելուն պէս՝

որ յաւիտենական տաճաններէն ի վեր ծածկուած էր, 26 - Եւ հիմա յայտնուեցաւ, ու մարգարէական գիրքերով յաւիտենական Աստուծոյ հրամանով բոլոր հեթանոսներուն ճանչցուեցաւ հաւատքի շնորհանգեւոյն համար, 27 - Մի միայն իմաստուն Աստուծոյն, Յիսուս Քրիստոսի ձեռքով, փառք յաւիտեանս: Ամէն:



ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՍ



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Աստուծոյ կամքովը Յիսուս Քրիստոսի աւաքեալ ըլլալու կանչուած, ու Սաթթենէս եղբայրը, 2 - Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցւոյն, Քրիստոս Յիսուսով սրբուածներուն, սուրբեր ըլլալու կանչուածներուն, այն ամէնուն չեա՝ որոնք ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը կը կանչեն, իրենցը ու մերը. 3 - Ձեզի շնորհք և խաղաղութիւն Աստուծոյ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

4 - Ամէն տաճն իմ Աստուծոյ ձեզի համար կը գոհանամ Աստուծոյ շնորհքին վրայ, որ ձեզի տրուած է Քրիստոս Յիսուսով. 5 - Որ դուք անով ամէն բանի մէջ հարստացաք ամէն խօսքով և ամէն գիտութիւնով. 6 - Ինչպէս Քրիստոսի վկայութիւնը ձեր մէջ հաստատուեցաւ. 7 - Որպէս զի դուք բնու շնորհքով մըն ալ չնուագիք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնուելուն սպասելով. 8 - Որ նաև ձեզ պիտի հաստատէ մինչև վերջը՝ անմեղադրելի ըլլալու մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը: 9 - Հաւատարիմ է Աստուած, որով կանչուեցաք հաղորդ ըլլալու իր Որդւոյն, մեր Տէր Յիսուս Քրիստոսի:

10 - Ձեզի կ'աղաչեմ, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ միեւնոյն խօսքը ունենաք ամէնդ, ու երկպառակութիւններ չըլլան ձեր մէջ. հապա դուք մէկ միաքի ու մէկ խորհուրդի վրայ՝ հաստատուած ըլլաք: 11 - Վասն զի ձեզի համար ինծի լուր հասաւ, եղբայրներ, Քղուէի անէն եղողներէն, թէ ձեր մէջ հակառակութիւններ կան: 12 - Հիմա զոյս կը զրուցեմ, որ ձեզմէ ամէն մէկը կ'ըսէ եղեր թէ Ես Պօղոսեան եմ, ու Գրեգորի թէ Ես Ապողոսեան, և Գրեգորի թէ Ես Կեփասեան, ու Գրեգորի թէ Ես Քրիստոսեան: 13 - Միթէ Քրիստոս բաժնուած է. միթէ Պօղոս խաչը ելաւ ձեզի համար, կամ թէ Պօղոսի անունով մկրտուեցաք: 14 - Կը գոհանամ Աստուծոյ որ ձեզմէ մէկը չմկրտեցի, միայն թէ Կրիսպոսը ու Գալիոսը. որպէս զի մէկը չըսէ 15 - Թէ իմ անունովս մկրտեցի: 16 - Իրաւ, Ստեփանէսի բնատանիքն ալ մկրտեցի. ալ ուրիշ մէկը չեմ գիտեր ամենեւին թէ մկրտեցի:

17 - Վասն զի Քրիստոս զիս մկրտելու չղրկեց, հապա աւետարանը քարոզելու, ոչ թէ խօսքերու ճարտարութիւնով, որպէս զի Քրիստոսի խաչը

*Յ. և. կատարելագործուած

ոչինչ չըլլայ: 18 - Քանզի խաչին քարոզութիւնը կորսուածներուն յիմարութիւն է, բայց մեզի փրկուածներուն Աստուծոյ զօրութիւնն է: 19 - Վասն զի գրուած է, իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեմ, ու հանճարեղներուն հանճարը պիտի խափանեմ: 20 - Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է դպիրը, ո՞ւր է այս աշխարհին քրննողը: Է՞՞ որ Աստուած յիմարեցուց այս աշխարհին իմաստութիւնը: 21 - Քանզի սրովհետեւ Աստուծոյ իմաստութիւնովը աշխարհ չճանչցաւ զԱստուած իբր իմաստութիւնովը, Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցրնել: 22 - Վասն զի Հրեաները նշան կ'ուզեն, և Յոյները իմաստութիւն կը փնտռեն. 23 - Իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, Հրեաներուն գոյթակզութիւն, ու Յոյներուն յիմարութիւն: 24 - Բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն և թէ՛ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ իմաստութիւնը: 25 - Վասն զի Աստուծոյ յիմարը մարդոցմէ աւելի իմաստուն է, և Աստուծոյ տկարը մարդոցմէ աւելի զօրաւոր է: 26 - Արդարեւ դուք ձեր կոչումը կը տեսնէք, եղբայրներ, որ ոչ թէ մարմնի կողմանէ շատ իմաստուններ, և ոչ թէ շատ զօրաւորներ, և ոչ թէ շատ ազնուականներ կանչուած էք: 27 - Բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէս զի ամօթով ընէ իմաստունները. ու աշխարհիս տկարները ընտրեց Աստուած, որպէս զի ամօթով ընէ զօրաւորները. 28 - Եւ աշխարհիս ցածազգիները ու անարգները ընտրեց Աստուած, և ոչինչները, որպէս զի բան մը եղողները խափանէ. 29 - Որպէս զի մարմին մը չպարծի Աստուծոյ առջև: 30 - Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ մեզի Աստուծմէ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն եղաւ. 31 - Որպէս զի, ինչպէս գրուած է, Ան որ կը պարծենայ, Տէրողնով թող պարծենայ:

ԳԼ. Բ

Եւ ես, եղբայրներ, որ ձեզի եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաստութեան գե-

րազանցութիւնով մը Աստուծոյ վկայութիւնը ձեզի յայտնելու եկայ: 2 - Վասն զի ես միտքս չդրի ձեր մէջ ուրիշ բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, ու զայն՝ խաչք ելած: 3 - Եւ ես տկարութիւնով ու վախով և շատ դողով ձեր քով կեցայ. 4 - Ու իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ *մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն և զօրութեան ապացուցութիւնովը. 5 - Որպէս զի ձեր հաւատքը մարդոց իմաստութիւնովը չըլլայ, հապա Աստուծոյ զօրութիւնովը: 6 - Սակայն կատարեալներուն հեռ իմաստութիւն կը խօսինք, բայց ոչ թէ այս աշխարհի իմաստութիւնը, և ոչ այս աշխարհի ոչնչանալու իշխաններունը. 7 - Հապա Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք խորհրդով, զոր աշխարհէ առաջ սահմանեց Աստուած մեր փառքին համար. 8 - Չոր այս աշխարհի իշխաններէն մէ՛կը չճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլային, ալ փառաց Տէրը խաչը չէին հաներ. 9 - Հապա ինչպէս գրուած է, Այն բաները զորոնք աչք չէ տեսեր և տկանջ չէ լսեր ու *անմարդու սրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինք սիրողներուն պատրաստեց: 10 - Բայց Աստուած մեզի յայտնեց իր Հոգիովը, վասն զի Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ: 11 - Վասն զի մարդոցմէ ո՞վ գիտէ մարդուն բաները, բայց միայն մարդուն հոգին որ իր մէջ է. նոյնպէս ալ Աստուծոյ բաները մէ՛կը չգիտեր, բայց միայն Աստուծոյ Հոգին: 12 - Իսկ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, հապա այն Հոգին որ Աստուծմէ է. որպէս զի մենք ճանչնանք այն բաները որոնք Աստուծմէ արուեցան մեզի. 13 - Չորոնք նաև կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստութեան սովեցուցած խօսքերովը, հապա †Հոգիին սովեցուցածներովը, և հոգևոր բաները հոգևորի հեռ կը յարմարցնենք: 14 - Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, վասն զի անոնք իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ գիտնալ, վասն զի

*Ո՛ւն+ շունին
†Ո՛ւն+, Սուրբ Հոգիին

Հոգևոր կերպով կը քննուին : 15 - Բայց ան որ հոգևոր է՝ ամէն բան կը քննէ , ու ինք մէկէ՛ն չքննուիր : 16 - Քանզի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը , որ անոր խրատ սուտղ ալ ըլլայ . բայց մենք Քրիստոսի միտքը ունինք :

ԳԼ. Գ

Եւ ես, եղբայրներ , չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս թէ Հոգևորներու , հապա որպէս թէ մարմնաւորներու , 2 - Որպէս թէ Քրիստոսով աղայոց . ձեզի կաթ կերցուցի և ոչ թէ կերակուր , վասն զի դեռ կարող չէիք , ու հիմա ալ տակաւին կարող չէք , վասն զի դեռ մարմնաւոր էք : 3 - Որովհետեւ տակաւին ձեր մէջ նախանձ ու հակառակութիւն և բաժանումներ կան , չէ՞ որ մարմնաւոր էք , ու մարդկօրէն կը քաղէք : 4 - Քանզի երբ յեզէ մէկը կ'ըսէ թէ Ես Պօղոսեան եմ՝ , և միւսը՝ թէ ես Ապօղոսեան , չէ՞ որ մարմնաւոր էք : 5 - Ուրեմն ո՞վ է Պօղոս կամ ո՞վ է Ապօղոս . պաշտօնեաներ են , որոնցմով հաւատացիք , և ինչպէս Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : 6 - Ես տնկեցի , Ապօղոս ջուր տուաւ , բայց Աստուած աճեցուց : 7 - Ուստի ոչ տնկողը բան մըն է , և ոչ ջուր տուողը , հապա Աստուած՝ որ աճեցուց : 8 - Տնկողը ու ջուր տուողը մէկ են , և ամէն մէկը իր վարձքը պիտի առնէ իր աշխատութեան չափովը : 9 - Վասն զի մենք Աստուծոյ գործակից ենք . դուք Աստուծոյ մշակութիւնն էք , Աստուծոյ շնորհքին չափովը , որ ինծի տրուեցաւ , իմաստուն ճարտարապետի մը պէս հիմ՝ դրի , բայց անոր վրայ շինողը ուրիշ է . միայն թէ ամէն մէկը թող զգուշանայ թէ ի՛նչպէս կը շինէ : 11 - Վասն զի մէկը ա՛լ ուրիշ հիմ՝ չկրնար դնել գրուածէն զատ , որ է Յիսուս Քրիստոս : 12 - Եթէ մէկը այս հիմին վրայ կը շինէ սակի , արծաթ , պատուական քարեր , փայտ , խոտ , եղէգ , 13 - Ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլլայ . քանզի օրը երևան պիտի հանէ , վասն զի կրակով պիտի յայտնուի . և ամէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլայը կրակը պիտի փորձէ : 14 - Եթէ մէկուն շինած գործը մնալու ըլլայ , ինք վարձք պիտի առնէ . 15 - Ե- եթէ մէկուն

չինածը այրելու ըլլայ , անիկա փրատ պիտի քաշէ . բայց ինք պիտի սալասի , սակայն այնպէս՝ իր թէ կրակի մէջէ : 16 - Չէք՞ գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք , և Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է : 17 - Եթէ մէկը Աստուծոյ տաճարը կ'ապականէ , Աստուած զանիկա պիտի ապականէ , վասն զի Աստուծոյ տաճարը սուրբ է , որ դուք էք :

18 - Չըլլայ որ մէկը ինքզինք խարէ . եթէ ձեզմէ մէկը զինք իմաստուն կը սեպէ այս աշխարհի մէջ , թող յիմար ըլլայ՝ որպէս զի իմաստուն ըլլայ : 19 - Վասն զի այս աշխարհի իմաստութիւնը Աստուծոյ առջև յիմարութիւն է . վասն զի գրուած է թէ Անիկա իմաստունները իրենց խորամանկութեան մէջ կը բռնէ : 20 - Եւ դարձեալ՝ թէ Տէրը գիտէ իմաստուններուն խորհուրդները , որոնք ունայն են : 21 - Ուրեմն մէ՛կը թող չպարծենայ մարդոցմով . 22 - Վասն զի ամէն բան ձերն է . թէ՛ Պօղոս , թէ՛ Ապօղոս , թէ՛ կեփաս , թէ՛ աշխարհ , թէ՛ կեանք , թէ՛ մահ , թէ՛ ներկայ բաները և թէ՛ գալիքները . ամէն բան ձերն է . 23 - Դուք ալ Քրիստոսի էք , և Քրիստոս՝ Աստուծոյ :

ԳԼ. Գ

Թող մարդիկ մեզ այսպէս սեպեն , որպէս թէ Քրիստոսի սպասաւորները ու Աստուծոյ խորհուրդներուն անտեսները : 2 - Ուստի անտեսներուն մէջ կը փնտուելի որ մէկը հաւատարիմ՝ գրանուի : 3 - Բայց ինծի ասիկա ոչինչ բան մըն է , որ ձեզմէ գատուիմ , կամ մարդոց *գատողութենէն , մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր . 4 - (Վասն զի ես իմ անձիս վրայով բան մը չեմ գիտեր . բայց ոչ թէ անով կ'արդարանամ .) հապա զիս գատողը Տէրն է : 5 - Ուրեմն ժամանակէն առաջ գատողութիւն մի ընէք , մինչև գայ Տէրը՝ որ խաւարին գաղանիքը ի լոյս պիտի հանէ , ու սիրտերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ . և այն ատեն ամէն մէկուն գովութիւնը Աստուծմէ պիտի ըլլայ :

6 - Ասոնք օրինակ բերի , եղբայրներ ,

*Յռն. օրուրնէն

իմ վրաս ու Ապոստոլի վրայ ձեզի համար, որպէս զի դուք մեզմէ սորվիք հարցոյ վրայ՝ գրուած են աւելի բան մը չխորհիլ, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը հպարտանայ մէկուն համար ուրիշի մը գէմ: 7 - Քանզի ո՞վ է ան որ քեզ տարբեր կ'ընէ «-բէշնէրէն» . և ի՞նչ ունիս զոր չես առեր դուն. և եթէ աւելի, ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս:

8 - Արդէն կշտացած էք, արդէն հարուստացաք, առանց մեզի թագաւորեցիք. և երանի՛ թէ թագաւորեիք. որպէս զի մենք ալ ձեզի հետ թագաւորեինք: 9 - Քանզի կարծեմ թէ Աստուած յետիններ ըրաւ մեզ աւաքեալներս մահապարտներու նման. վասն զի աետարան եղանք աշխարհի և հրեշտակներուն ու մարդոց: 10 - Մենք յիմարներ ենք Քրիստոսի համար, և դուք իմաստուններ՝ Քրիստոսով. մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ: 11 - Մինչև այսօրուան առեն կ'անօթենանք ալ, կը ծարաւինք ալ, մերկ ալ կը մնանք, կը ծեծուինք ալ, աստանդական ալ կը պարտինք, 12 - Եւ մեր ձեռքերով գործելով կ'աշխատինք. երբ մեզ կը նախատեն՝ կ'օրհնենք. երբ կը հալածեն՝ կը համբերենք. 13 - Երբ գէշ կը խօսին՝ կ'աղաչենք. իբրև աշխարհի աղտեղութիւնը՝ ամենուն անարգը ըլլալով մինչև հիմա:

14 - Այս բաները կը գրեմ՝ ոչ թէ ձեզ ամչցնելու համար, հապա կը խրատեմ ձեզ սիրելի որդիներուս պէս:

15 - Վասն զի թէև դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, բայց ոչ թէ շատ հայրեր «-նի», վասն զի Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ աւետարանովը: 16 - Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, ինծի նմանող եղէք:

17 - Ասոր համար ձեզի զրկեցի Տիմոթէոսը, որ իմ սիրելի որդիս է, ու Տերջմով հաւատարիմ. որ ձեր միաբար պիտի ձգէ Քրիստոսով իմ բռնած ճամբաներս, ինչպէս ամէն աեղ ամէն եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ:

18 - Մէկ քանինները հպարտացան, որպէս թէ ես պիտի չգամ ձեզի: 19 - Բայց շուտով պիտի գամ ձեզի, և թէ Տերը կամենայ, և պիտի հասկնամ ոչ թէ հպարտացողներուն խօսքերը, հապա զօրութիւնը: 20 - Վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ոչ թէ

խօսքով է, հապա զօրութիւնով: 21 - Ի՞նչպէս կ'ուզէք. գաւազանով գամ ձեզի, թէ սիրով և հեղութեան հոգիով:

ԳԼ Ե

Ան հասարակ կը լսուի ձեր մէջ պոռնիութիւն ըլլալ. և այնպիսի պոռնիութիւն՝ որ հեթանոսներուն մէջ ալ չկայ, որպէս թէ մէկը իր հօրը կինը ունենայ: 2 - Ու դուք հպարտացեր էք, և ոչ մանաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վերցուի այս բանը: 3 - Վասն զի թէպէտ ես մարմնով հեռու եմ, բայց հոգիով ներկայ եմ. ուստի հիմա որպէս թէ ներկայ ըլլալով՝ որոշեցի, որ այս բանը ընողը, 4 - Երբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը մէկատեղ ժողովուրդ դուք ու իմ հոգիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնովը, 5 - Այնպիսին Ստասանոյի մատնէք, մարմին կորսուելուն համար, որպէս զի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը: 6 - Այդ ձեր պարծանքը աղէկ չէ. չէ՞ք գիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ: 7 - Մաքրեցէք ձին խմորը մէկգի, որպէս զի ըլլաք նոր զանգուած, ինչպէս անխմոր էք. վասն զի Քրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ: 8 - Ուստի տօն կատարենք, ոչ թէ ձին խմորով և ոչ թէ չարութեան ու անզգամութեան խմորովը, հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը: 9 - Գրեցի ձեզի թուղթին մէջ, որ պոռնիկներուն հետ չխառնուիք: 10 - Եւ հրած՝ ոչ թէ այս աշխարհի պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ, կամ յափրշտակողներուն հետ, կամ կռապաշտներուն հետ. ապա թէ ոչ պէտք էր որ դուք աշխարհէ դուրս ելլէիք: 11 - Բայց հիմա ձեզի գրեցի չխառնուիլ, այսինքն եթէ մէկը եղբայր ըսուած՝ կա՛մ պոռնիկ ըլլայ, կա՛մ ագահ, կա՛մ կռապաշտ, կա՛մ նախատող, կա՛մ գինով, կա՛մ յափշտակող, այնպիսին հետ հաց ալ չուտել: 12 - Վասն զի ի՞նչ պէտք է ինծի դուրսիններն ալ դատել. չէ՞ որ դուք ներսինները կը դատէք: 13 - Իսկ դուրսինները

*Ո՛հնի, չյիշուիք

Աստուած պիտի դատէ . ուստի չարը
ձեր մէջէն վերցուցէք :

ԳԼ. 2

Չեզմէ մէկը, եթէ բան մը ունենայ
իր բնկերին հետ, կը համարձակի՞ ա-
նիրաւներուն առջև դատուիլ, ու ոչ
թէ սուրբերուն առջև : 2 - Չէ՞ք գի-
տեր որ սուրբերը պիտի դատեն աշ-
խարհը . ու եթէ աշխարհ ձեզմէ կը
դատուի, ուրեմն արժանի չէ՞ք դուք
չնչին դատեր «բռնել» : 3 - Չէ՞ք գիտեր
որ մենք հրեշտակներ պիտի դատենք .
ո՞ւր կը մնան հապա աշխարհային բա-
ները : 4 - Ուրեմն եթէ ձեր մէջ աշ-
խարհային դատեր ունիք, եկեղեցիին
անարգները ձեզի դատաւոր դրէք :
5 - Չեզ ամչցնելու համար կը զրու-
ցեմ . այնչափ եղաւ որ ձեր մէջ իմաս-
տուն մը չկայ, որ կարող ըլլայ իրա-
ւունքը սրտէլ իր եղբայրներուն մէջ .
6 - Հապա եղբայր եղբօր հետ դատի
կը մտնէ, այն ալ անհաւատներուն
առջև : 7 - Սրգարեւ բոլորովին յան-
ցանք մըն է այս ձեր մէջ, որ իրարու
հետ դատեր ունիք . ինչո՞ւ մանաւանդ
դուք անիրաւութիւն չէք կրեր . ին-
չո՞ւ մանաւանդ դուք զրկանք չէք
քաշեր : 8 - Հապա դուք անիրաւու-
թիւն ու զրկանք կ'ընէք, և այն ալ
եղբայրներուն : 9 - Չէ՞ք գիտեր որ անի-
րուները Աստուծոյ արքայութիւնը
պիտի չժառանգեն . մի խաբուիք . ոչ
պառնիկները, ոչ կռապաշտները, ոչ
չնացողները, 10 - Ոչ իգացեալները,
ոչ արուագէտները, ոչ գողերը, ոչ
սագահները, ոչ գիննափները, ոչ նախա-
տողները «- ոչ յափշտակողները Աս-
տուծոյ թագաւորութիւնը պիտի չժա-
ռանգեն : 11 - Եւ դուք մէկ քանիներդ
այնպիսիներ էիք . բայց լուացուեցաք,
բայց սրբուեցաք, բայց արդարացաք
Տէր Յիսուսի անունովը ու մեր Աստու-
ծոյն Հոգիովը :

12 - Ամէն բան ինծի օրինաւոր է,
բայց ոչ թէ ամէն բան օգտակար .
ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ես
բանի մը իշխանութեան տակ պիտի
չըլլամ : 13 - Կերակուրները փորին հա-
մար են, փորն ալ կերակուրներուն .
բայց Աստուած զայս ալ, զանոնք ալ
պիտի խափանէ : Իսկ մարմինը պառնը-
կութեան համար չէ, հապա Տէրոջը ,

ու Տէրը՝ մարմինին համար : 14 - Եւ
Աստուած որ Տէրը յարուց, մեզ ալ
պիտի յարուցանէ իր զօրութիւնովը :
15 - Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները
Քրիստոսի անդամներն են . ուստի
Քրիստոսի անդամները առնելով՝ պառ-
նիկի անդամները բնեմ . քա՛ւ լիցի :
16 - Չէ՞ք գիտեր թէ ան որ պառնիկի
կը մօտենայ, անոր հետ մէկ մարմին
կ'ըլլայ . քանզի գերեզ կ'ըսէ, Երկուքը
մէկ մարմին պիտի ըլլան : 17 - Իսկ ան
որ Տէրոջը կը մօտենայ, անոր հետ մէկ
հոգի կ'ըլլայ : 18 - Պառնկութենէ փա-
խէք . ամէն մեզք զոր մարդ կը դարձէ,
իր մարմինէն դուրս է . բայց ան որ կը
պառնկի, իր մարմինին դէմ կը մե-
ղանչէ : 19 - Չէ՞ք գիտեր որ ձեր մար-
մինները տաճար են Սուրբ Հոգիին որ
ձեր մէջ է, զոր Աստուծմէ ունիք, ու
դուք ձեր անձին «բեր» չէք . 20 - Քանզի
գնով ծախու առնուեցաք . ուստի փա-
ռաւորեցէք զԱստուած ձեր մարմիննե-
րուն ու հոգիներուն մէջ, որոնք Աստու-
ծոյ են :

ԳԼ. Է

Արդ այն բաներուն համար որ դուք
ինծի գրեցիք, աղէկ է մարդուս որ
կնոջ չմօտենայ : 2 - Բայց պառնկու-
թիւնը «բռնել» համար ամէն մարդ
թող իր կինը ունենայ, ու ամէն կին
իր այրը թող ունենայ : 3 - Այլը իր
կնոջ թող պարտքը վճարէ, նոյնպէս
կինն ալ իր էրկան : 4 - Կինը իր մար-
մինին չիշխեր, հապա այրը . նոյնպէս
այրն ալ իր մարմինին չիշխեր, հապա
կինը : 5 - Մէկզմէկ մի զրկէք, եթէ
ոչ՝ միաբանութեամբ ապեն մը, ա-
ղօթքի պարապելու համար, ու նորէն
իրարու դարձէք, որպէս զի Սատանայ
ձեզ չփորձէ ձեր անժուժկալութեան
համար : 6 - Չայս կը զրուցեմ թոյլ
տալով՝ և ոչ թէ հրամայելով : 7 -
Քանզի կ'ուզէի որ ամէն մարդիկ ինծի
պէս ըլլային . բայց ամէն մէկը իր պար-
գելը ունի Աստուծմէ, մէկը սոցապէս
ու միւսը այնպէս : 8 - Բայց չամուս-
նացածներուն ու որբւարիներուն կ'ը-
սեմ, Աղէկ է անոնց՝ եթէ ինծի պէս
կենան : 9 - Հապա եթէ ժուժկալու-
թիւն չունին՝ թող ամուսնանան,
վասն զի աղէկ է ամուսնանալ քան
թէ բորբոքիլ : 10 - Բայց ամուսնա-
ցածներուն կը պատուիրեմ ոչ թէ ես,

հապա Տէրը, որ կինը այրէն չզատուի 11 - (Իսկ եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ, կամ իր էրկան հետ հաշտուի,) ու այրը իր կինը թող չձգէ: 12 - Բայց ուրիշներուն ես կ'ըսեմ, ոչ թէ Տէրը. եթէ եղբայր մը անհաւատ կին ունենայ, ու անոր հաճելի ըլլայ իրեն հետ բնակիլ, թող չձգէ զանիկա: 13 - Եւ կին մը որ անհաւատ այր ունենայ, ու անոր հաճելի ըլլայ իրեն հետ բնակիլ, թող չձգէ զանիկա: 14 - Սէն զի անհաւատ այրը սրբուած է կնոջմովը, և անհաւատ կինը սրբուած է այրովը. ապա թէ ոչ՝ ձեր սրգիները պիղծ պիտի ըլլային, բայց հիմա սուրբ են: 15 - Իսկ եթէ անհաւատը զատուի թող զատուի. եղբայր մը կամ քոյր մը այնպիսի պարագաներու մէջ գերի չէ. սակայն Աստուած խաղաղութեան կանչեց մեզ: 16 - Քանզի ի՞նչ գիտես դուն, ով կին, թերևս քու այրդ պիտի ապրեցնես. կամ դուն ի՞նչ գիտես, ով այր, թերևս քու կինդ պիտի ապրեցնես: 17 - Միայն թէ ամէն մէկուն ինչպէս Տէրը բաժնեց, ամէն մէկը ինչպէս Աստուած կանչեց, այնպէս թող երթայ, ու ամէն եկեղեցիներուն մէջ ես այսպէս պատուէր կու տամ:

18 - Եթէ թլփատուած մէկը հասարակ կանչուեցաւ, թող նորէն անթլփատա չըլլայ. չթլփատուածներէն մէկը կանչուեցաւ, թող չթլփատուի: 19 - Վասն զի թլփատութիւնը բան մը չէ, ու անթլփատութիւնը բան մը չէ. հապա Աստուծոյ պատուիրանքներուն պահպանութիւնը պէտք է: 20 - Բայց ամէն մէկը ի՞նչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, թող անոր մէջ կենայ: 21 - Ծառայ կանչուեցար, հոգ չըլլայ քեզի. բայց եթէ կրնաս ազատ ըլլալ, զայն ընտրէ: 22 - Վասն զի այն ծառան որ Տէրոջմով կանչուած է, Տէրոջը ազատացեալն է անիկա. նոյնպէս այն ազատը որ կանչուած է, Քրիստոսի ծառան է: 23 - Իսկ քեզմով ծախու առնուեցար, մարդոց ծառայ մի ըլլաք: 24 - Կղբայրներ, ամէն մէկը ի՞նչ խառն մէջ որ կանչուեցաւ, թող անոր մէջ կենայ Աստուծոյ ասօջև:

25 - Բայց կոյսերուն համար Տէրոջմէն հրաման մը չունիմ, միայն թէ Տէրոջմէն հաւատարիմ ըլլալու սորմութիւն գտածի մը պէս խրատ կու

տամ: 26 - Ուրեմն ես կը սեպեմ որ ասիկա աղէկ է հիմակուան նեղութեանը համար, այսինքն աղէկ է մարդուս որ այսպէս ըլլայ: 27 - Կապուած ես կնոջ, մի փնտեր արձակուիլ. արձակուած ես կնոջմէ, մի փնտեր կին: 28 - Իսկ եթէ ամուսնանաս՝ չմեղանչեցիր, և եթէ կոյսը ամուսնանայ՝ չմեղանչեց. բայց այնպիսիները մարմնի նեղութիւն պիտի ունենան. սակայն ես ձեզի կը խնայեմ: 29 - Բայց զոյս կ'ըսեմ, եղբայրներ, որ ժամանակը կարճըցած է. ալ անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին, 30 - Եւ անոնք որ կու լան՝ որպէս թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան՝ որպէս թէ չեն խնդար, և անոնք որ ծախու կ'առնեն՝ որպէս թէ քան չունին, 31 - Եւ անոնք որ աշխարհս կը գործածեն՝ որպէս թէ գէշ կերպով չեն գործածեր. վասն զի այս աշխարհի կերպարանքը կ'անցնի: 32 - Բայց ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլլաք. Վասն զի չամուսնացած մարդը Տէրոջը բաները կը հոգայ, թէ ի՞նչպէս Տէրոջը հաճելի ըլլայ: 33 - Իսկ ամուսնացածը աշխարհիս բաները կը հոգայ, թէ ի՞նչպէս իր կնոջ հաճելի ըլլայ: 34 - Եւ ամուսնացած կինը ու կոյսը կը տարբերին իրարմէ. Վասն զի կոյսը Տէրոջը բաները կը հոգայ, որպէս զի ինք սուրբ ըլլայ հոգևով ու մարմնով. իսկ ամուսնացած կինը աշխարհիս բաները կը հոգայ, թէ ի՞նչպէս իր էրկան հաճելի ըլլայ: 35 - Բայց այս բանը ձեր օգուտին համար կը զրուցեմ, ոչ թէ ձեր վրայ վարմ' մը ձգելու, հապա պարկեշտութեան համար ու առանց զբաղանքի Տէրոջը ծառայելու համար: 36 - Իսկ եթէ մէկը ամօթ կը սեպէ իր կոյսին համար՝ եթէ չափը անցեր է, ու պէտք է այնպէս ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ թող ընէ, մեզք չգործեր. թող ամուսնանան: 37 - Բայց ան որ իր սրտին մէջ հաւատա կը կենայ, ու իր վրայ հարկ մըն ալ չկայ, հապա իր կամքին վրայ իշխանութիւն ունի, ու իր սրտին մէջ այսպէս որոշեր է որ իր կոյսը պահէ, աղէկ կ'ընէ: 38 - Ուստի ան որ երկոյսը կ'ամուսնացնէ, աղէկ կ'ընէ. ու ան որ չամուսնացնէ, աւելի աղէկ կ'ընէ: 39 - Կինը՝ կապուած է՝ որչափ ժամա-

*Ո՞րքա, օրէնքով կապուած

նակ որ իր այրը սղջ է. ապա եթէ իր այրը մեռնի, ազատ է ամուսնանալու որու որ ուզէ, միայն թէ Տէրոջմով: 40 - Բայց իմ գաաու միս նայելով աւելի երանելի է եթէ այնպէս կենայ. և կարծեմ թէ ես ալ Աստուծոյ Հոգին ունիմ:

ԳԼ. Ը

Բայց կուռքերու զոհերուն վրայով գիտենք որ ամէնս ալ գիտութիւն ունինք. գիտութիւնը կը հպարտացնէ, բայց սէրը շինութիւն կ'ընէ: 2 - Եւ եթէ մէկը կը կարծէ թէ բան մը գիտէ, դեռ բնաւ բան մը չգիտեր՝ ինչպէս պէտք է գիտնալ: 3 - Իսկ եթէ մէկը զԱստուած կը սիրէ, ինք անկէ ճանչցուած է: 4 - Ուստի կուռքերու զոհուածները ուտելու վրայով գիտենք որ կուռքը ոչինչ է աշխարհի մէջ, և որ մէկէն զատ ուրիշ Աստուած մը չկայ: 5 - Քանզի թէ և ըլլան ալ անունով աստուածներ, թէ՛ երկինքը և թէ՛ երկրի վրայ, (ինչպէս կան շատ աստուածներ ու շատ տէրեր,) 6 - Բայց մենք մէկ Աստուած ունինք, Հայրը, որմէ են ամէն բաները, և մենք ալ *անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որմէ են ամէն բաները, ու մենք ալ անով: 7 - Բայց ամէնուն քով գիտութիւն չկայ. և ոմանք կուռքի վրայով խղճմտանք ունենալով՝ մինչև հիմա կ'ուտեն կուռքերու զոհուածի պէս, և իրենց խղճմտանքը, որովհետև տկար է, կը պղծուի: 8 - Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ առջև չկեցրներ. քանզի ոչ եթէ ուտենք՝ կ'աւելնանք. և ոչ եթէ չուտենք՝ կը պակսինք: 9 - Բայց զգոյշ կեցէք, որ չըլլայ թէ այդ ձեր իշխանութիւնը տկարներուն գոյթակղութիւն ըլլայ: 10 - Քանզի եթէ մէկը տեսնէ քեզ, որ գիտութիւն ունիս, կուստունի մէջ սեղան նստած, չէ՞ որ այն տկար մարդուն խղճմտանքը համարձակութիւն պիտի տունէ կուռքերու զոհուածը ուտելու, 11 - Եւ քու գիտութիւնովդ այն տկար եղբայրը կորսուի, որու համար Քրիստոս մեռաւ: 12 - Եւ այսպէս եղբայրներուն դէմ՝ սեղանչելով ու անոնց տկար խղճմտանքը վիրաւորելով՝ Քրիս-

տոսի դէմ՝ կը մեղանչէք: 13 - Ուստի եթէ կերակուրը կը գոյթակղեցնէ իմ եղբայրս, միս պիտի չուտեմ՝ յաւիտեան՝ որպէս զի իմ եղբայրս չգոյթակղեցնեմ:

ԳԼ. Թ

2^է որ ես առաքեալ եմ. չէ՞ որ ես ազատ եմ. չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը *չ*ու*տեայ. չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրոջմով: 2 - Թէպէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ ալ, բայց անտարակոյս ձեզի եմ. վասն զի իմ առաքելութեանս կնիքը դուք էք Տէրոջմով: 3 - Իմ պատասխանս անոնց որ զիս կը քննեն, այս է. 4 - Միթէ մենք իշխանութիւն չունինք ուտելու և խմելու: 5 - Միթէ մենք իշխանութիւն չունինք Քրիստոսով քոյր եղբայր կին մը ձեզի հետ պարագնելու, ինչպէս ուրիշ առաքեալները ու Տէրոջը եղբայրները ու կեփաս լ'ընէ: 6 - Միթէ ես ու Քառնարա՞ս միայն իշխանութիւն չունինք չգործելու: 7 - Ո՞վ իր ապրուստով զինուորութիւն կ'ընէ. ո՞վ այգի կը անկէ ու անոր պատուէն չուտեր. կամ ո՞վ ոչխարներ կ'արածէ ու ոչխարներուն կաթէն չուտեր: 8 - Միթէ մարդկօրէն կը գրուցեմ այս բաները, կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը գրուցէ: 9 - Քանզի Մովսէսի օրէնքին մէջ ալ գրուած է, Կալի մէջ աշխատող եզին դունչը չկապես: Միթէ եզերսն չամար Աստուծոյ հոգն էր. 10 - 2^է որ մանաւանդ մեզի համար կ'ըսէ. վասն զի մեզի համար գրուցաւ. որովհետև ան որ կը հերկէ՛ պէտք է որ յուսով հերկէ, և ան որ ցորենը կը ծեծէ՛ դեռ *է* որ *վայելելու յուսով՝ ընէ: 11 - Եթէ մենք ձեզի հոգևոր բաներ սերմանեցինք, մե՞ծ բան մըն է՝ եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք: 12 - Եթէ ուրիշները ձեր վրայ այս իշխանութիւնը ունին, չէ՞ որ ալ աւելի մենք. բայց մենք այս իշխանութիւնը չգործածեցինք, հապա ամէն բանի կը համբերենք, որպէս զի Քրիստոսի աւետարանին արգելք մը չըլլանք: 13 - 2^է ք գիտեր որ տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ'ուտեն, * - անոնք որ սեղանին պաշտօնեաներն են՝ սեղանէն բաժին կ'առ-

*Կամ, անոր համար

*Ո՞րքան, իր յոյսը վայելելու համար

նեն : 14 - Նոյնպէս ալ Տէրը հրաման տուաւ, որ աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին : 15 - Բայց ես այս բաներուն մէ՛կը չգործածեցի , ոչ ալ այդ բաները գրեցի որ ինծի այսպէս ըլլայ . քանզի աւելի աղէկ է ինծի որ մեռնիմ , քան թէ մէկը իմ պարծանքըս պարսպ հանէ : 16 - Վասն զի եթէ ես աւետարանը քարոզեմ , ինծի պարծանք մը չկայ , վասն զի իմ վրաս հարկ մըն է . մանաւանդ վայ է ինծի՝ եթէ աւետարանը չքարոզեմ : 17 - Քանզի եթէ ասիկա կամուս ընեմ , վարձք կ'ունենամ . իսկ եթէ ակամայ՝ այն ինծի յանձնուած անտեսութիւն մըն է : 18 - Արեմն ի՞նչ վարձք կ'ըլլայ ինծի . այս է՛ւրջ : որ քարոզելու ատենս Քրիստոսի աւետարանը ձրի տամ , որ չըլլայ թէ աւետարանին մէջ իմ իշխանութիւնս գէշ կերպով գործածեմ : 19 - Քանզի թէ ես ամէնէն ազատ էի , իմ անձս ամէնուն ծառայ ըրի , որպէս զի շատերը շահիմ : 20 - Հրեաներուն հետ Հրեայի պէս եղայ , որպէս զի Հրեաները շահիմ . 21 - Օրէնքի տակ եղողներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ , [ոչ թէ ես օրէնքի տակ էի ,] որպէս զի օրէնքի տակ եղողներն ալ շահիմ . օրէնքի տակ չեղողներուն հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ , (ոչ թէ ես Աստուծոմէ օրէնք չունէի , հապա Քրիստոսի օրէնքին տակ էի ,) որպէս զի օրէնք չունեցողներն ալ շահիմ . 22 - Տկառներուն հետ տկարի պէս եղայ , որպէս զի տկարները շահիմ . ամէնուն հետ ամէն բան եղայ , որ ըլլայ թէ մէկ բանիները ապրեցնեմ : 23 - Եւ ասիկա աւետարանին համար կ'ընեմ , որպէս զի անոր կցորդ ըլլամ : 24 - Չէ՞ք գիտեր որ ասպարէզին մէջ վազողները իրաւ կը վազեն ամէնը , բայց մէկը կ'առնէ մրցանակը . այնպէս վազեցէք որ հասնիք : 25 - Եւ ամէն ով որ կը մրցի , ամէն բանի մէջ չափաւորութիւն կը պահէ . անոնք եղձանելի պրակը տանելու համար , ու մենք՝ անեղձանելին : 26 - Աւստի ես այնպէս կը վազեմ , ոչ թէ որպէս թէ անասու գութեամբ . ես այնպէս բռնամարտութիւն կ'ընեմ , ոչ թէ որպէս թէ հովր ծեծելով . 27 - Բայց իմ մարմինս կը ճնշեմ ու կը նուաճեմ , որպէս զի չըլլայ թէ սերիշներուն քարոզելէս ետեւ ես ինքնս խտտելի գտնուիմ :

Չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք , եղբայրներ , որ մեր հայրերը ամէնն ալ ամպին տակ էին , ու ամէնն ալ ծովէն անցան , 2 - Եւ ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ , 3 - Եւ ամէնն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան , 4 - Աւ ամէնն ալ նոյն հոգևոր խմելիքը խմեցին , վասն զի կը խմէին այն հոգևոր վէմէն որ անոնց հետ կ'երթար . ու այն վէմը Քրիստոս էր : 5 - Բայց ոչ թէ անոնցմէ շատերուն հաւնեցաւ Աստուած , վասն զի անապատին մէջ փուռած ինկան : 6 - Աւ այն բաները մեզի օրինակ եղան , որպէս զի չար բաներու ցանկացող չըլլանք , ինչպէս անոնք ցանկացան : 7 - Աչ ալ կուտպաշտ ըլլաք , ինչպէս անոնցմէ ոմանք . ինչպէս գրուած է , Ժողովուրդը նստաւ ուտելու և խմելու , ու ելան խաղալու : 8 - Եւ պրունրկութիւն չընենք , ինչպէս անոնցմէ ոմանք պրունրկեցան , ու մէկ օրուան մէջ քսանուիրեք հազար հոգի ինկան : 9 - Եւ Քրիստոսը չփորձենք , ինչպէս անոնցմէ ոմանք փորձեցին , ու օձերէն ջարդուեցան : 10 - Եւ արտունջ չընենք , ինչպէս անոնցմէ ոմանք արտունջ ըրին , ու աստակիչէն ջարդուեցան : 11 - Բայց այս ամէն բաները իբրև օրինակ կը պատահէին անոնց . իսկ մեզի , որոնց գարերուն վերջը հասաւ , խրատ ըլլալու համար գրուեցան : 12 - Աւստի ան որ կը սեպէ թէ հասարակ կեցած է , թող զգուշանայ որ չըլլայ թէ իյնայ : 13 - Չեղի մարդկային փորձութենէ զտա ուրիշ չէ պատահած . բայց Աստուած հաւատարիմ է , որ ձեզ պիտի չթողու ձեր կարողութենէն աւելի փորձուիլ , հապա փորձութեանք հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ , որպէս զի կարող ըլլաք համբերել :

14 - Անոր համար , իմ սիրելիներս , կուտպաշտութենէ փախէք : 15 - Արպէս թէ իմաստուններու հետ կը խօսիմ . դուք դատեցէք ինչ որ կը զրուցեմ : 16 - Օրհնութեան գաւաթը զոր մենք կ'օրհնենք , չէ՞ որ Քրիստոսի արեանը հաղորդութիւնն է . հացը զոր մենք կը կտրենք , չէ՞ որ Քրիստոսի մարմինն հաղորդութիւնն է : 17 - Քանզի մենք շատերս մէկ հաց մէկ

մարմին ենք, վասն զի ամենս ալ այն մէկ հացէն կը վայելենք: 18 - Նայեցէք մարմնաւոր Խորայելի. չէ՞ որ այն զոհուածները ուտողները սեղանին հաղորդ են: 19 - Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ, թէ կուսքը բա՞ն մըն է, կամ թէ կուսքերու զոհուածը բա՞ն մըն է: 20 - Բայց զո՞չ ի՞շտե՞մ թէ այն բաները զորանք հեթանոսները զոհ կ'ընեն, գեւերուն կը զոհեն ու ոչ թէ Աստուծոյ. ու չեմ ուզեր որ դուք գեւերուն հաղորդ ըլլաք. չէք կրնար խմել Տէրոջը գաւաթը ու գեւերուն գաւաթը. 21 - Չէք կրնար վայելել Տէրոջը սեղանէն ու գեւերուն սեղանէն: 22 - Նախանձի՞ գրգռենք Տէրը. միթէ մենք անկէ զօրաւոր ենք:

23 - Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան շինութիւն կ'ընէ: 24 - Չըլլայ որ մէկը Բո՞ն իր անձին օգուտ փնտռէ, հապա իր ընկերինն ալ: 25 - Ամէն ինչ որ սպանդանոցին մէջ կը ծախուի՝ կերէք, ու քննութիւն մի ընէք խղճմանքի համար. 26 - Վասն զի երկիր իր լիութիւնովը Տէրոջն է: 27 - Եւ եթէ անհաւատներէն մէկը ձեզ Իբրաիմի հրաւիրէ, և ուզէք երթալ, ամէն ինչ որ ձեր առջև դրուի՝ կերէք, ու քննութիւն մի ընէք խղճմանքի համար: 28 - Ապա եթէ մէկը ձեզի ըսէ թէ Ասիկա կուսքի զոհուած է, ոչ ոք իրեն համար որ չեզի իմացուց՝ ու խղճմանքի համար մի ուտէք: 29 - Սակայն խղճմանք կ'ըսեմ՝ ոչ թէ ձերը, հապա ընկերինը: Բայց ինչո՞ւ իմ՝ ազատութիւնս պիտի գատուի ուրիշին խղճմանքէն: 30 - Եթէ ես շնորհակալութեամբ կը վայելեմ՝ ինչո՞ւ հայհոյուիմ, որու համար կը գոհանամ: 31 - Արդ թէ՛ ուտէք, թէ՛ խմէք և թէ ի՞նչ գործ որ քնէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք: 32 - Գոյթակալութեան պատճառ մի ըլլաք՝ ոչ Հրեաներուն, ոչ քրիստոնէներուն և ոչ Աստուծոյ եկեղեցիին: 33 - Ինչպէս ես ալ ամէն կերպով ամէնուն հաճոյ կ'ըլլամ, ու

չեմ փնտռեր իմ՝ անձիս օգուտը, հապա շատերունը՝ որպէս զի փրկուին:

ԳԼ ԺԱ

Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի: 2 - Արդ ձեզ կը գովեմ, եղբայրներ, որ ամէն բանի մէջ զիս կը յիշէք, ու ազատութիւնս կը բռնէք՝ ինչպէս ես ձեզի աւանդեցի: 3 - Բայց կ'ուզեմ որ գիտնաք թէ ամէն այր մարդու գլուխը Քրիստոս է, ու կնոջ գլուխը՝ այր մարդը, և Քրիստոսի գլուխը՝ Աստուած: 4 - Ամէն այր մարդ որ գլուխը գոց աղօթքի կը կայնի կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը: 5 - Եւ ամէն կին որ գլուխը բաց աղօթքի կը կայնի կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը. վասն զի միեւնոյն բան կը եղաւ՝ որպէս թէ ամիլուած էր: 6 - Վասն զի եթէ կինը չծածկուիր, թող իր մազերն ալ կտրէ. իսկ եթէ ամօթ է կնոջ մը իր մազերը կտրել կամ ամիլուիլ, թող ծածկուի: 7 - Այս մարդու պէտք չէ իր գլուխը ծածկել, վասն զի Աստուծոյ պատկերը ու փառքն է. բայց կինը եւ երկանը փառքն է: 8 - Քանզի ոչ թէ այր մարդը կնոջմէն է, հապա կինը՝ այր մարդէն: 9 - Վասն զի այր մարդը շտեղծուեցաւ կնոջը համար, հապա կինը՝ երկանը համար: 10 - Այս պատճառաւ պէտք է որ կինը իր գլխուն *չուք դնէ հրեշտակներուն համար: 11 - Բայց ոչ կինը առանց այր մարդու կ'ըլլայ, ու ոչ այր մարդը առանց կնոջ՝ Տէրոջմով: 12 - Վասն զի ինչպէս կինը այր մարդէն է, նոյնպէս այր մարդը կնոջ միջոցաւ, բայց ամէնը Աստուծոմէ: 13 - Գուք ձեզմէ գատեցէք. կը վայլէ՞ կին մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ Աստուծոյ առջև. 14 - Չէ՞ որ բնութիւնն ալ կը արվեցնէ ձեզի որ այր մարդ մը եթէ երկար մազերով է, իրեն անարգանք է. 15 - Բայց կինը եթէ երկար մազերով է, իրեն փառք է. վասն զի մազերը ծածկացի տեղ արուած են իրեն: 16 - Սակայն եթէ մէկը հակառակող ըլլալ կ'ուզէ, մենք այնպիսի սովորու-

*Ո՛րան+ ի՛նչպէն, վասն զի երկիր իր լիութիւնովը Տէրոջն է:
 †Կամ, շնորհքով
 ‡Յան. Յոյներուն

*Յան. իշխանութիւն

թիւն չունինք, ոչ ալ Աստուծոյ եկեղեցիները :

17 - Բայց զայս պատուիրելով չե՛ղ չեմ գովեր, վասն զի ձեր ժողովուրդը ոչ թէ աղէկ՝ հապա գէշ արդիւնք կ'ունենայ: 18 - Քանզի նախ՝ երբ մեկտեղ կը ժողովուրդ եկեղեցիին մէջ, կը լսեմ որ բաժանմանքներ կան ձեր մէջ, և ըստ մասին կը հաւատամ: 19 - Վասն զի հարկաւ ձեր մէջ հերձուածողութիւններ ալ պիտի ըլլան, որպէս զի ձեր մէջ եղող ընտիրները երեւան: 20 - Ուստի դուք որ մեկտեղ կը ժողովուրդ, տաիկա Տէրունական ընթրիքը ուտել չէ. 21 - Վասն զի ուտելու տանն ամէն մէկը առաջ իր ընթրիքը կ'առնէ. ու մէկը անօթի կը մնայ ու միւսը կը դինոփայ: 22 - Միթէ ուտելու և խմելու համար տուն չունի՞ք, կամ թէ Աստուծոյ եկեղեցի՞ն կ'անարգէք, և ամօթով կ'ընէք չքաւորները. ձեզի ի՞նչ ըսեմ, ձեզ գովե՞մ. այդ բանին մէջ չեմ գովեր: 23 - Վասն զի ես Տէրոջմէն ընդունեցի զայն որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց առաւ. 24 - Եւ գոհանալով՝ կտրեց ու ըսաւ, Առէք -- կերէք, այս է իմ մարմինս որ ձեզի համար կը կտրուի. տաիկա ըրէք զիս յիշելու համար: 25 - Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ետեւ -- ու ըսաւ, Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս. տաիկա ըրէք քանի անգամ որ խմելու ըլլաք՝ զիս յիշելու համար: 26 - Վասն զի քանի անգամ որ այս հացը ուտէք ու այս գաւաթը խմէք, Տէրոջը մահը կը պատմէք՝ մինչև ինք գայ: 27 - Ուստի ով որ այս հացը ուտէ կամ Տէրոջը գաւաթը խմէ անարժանաբար, պարտակուն պիտի ըլլայ Տէրոջը մարմինն և արիւնին: 28 - Ուրեմն թող մարդ իր անձը փորձէ, ու այսպէս այն հոցէն ուտէ և այն գաւաթէն խմէ: 29 - Վասն զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ, վասն զի Տէրոջը մարմինը չորոչեր: 30 - Ասոր համար ձեր մէջ շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, և շատեր ալ կը նշոյն: 31 - Վասն զի եթէ ինքզինքնիս դատելու ըլլայինք, պիտի չդատուէինք: 32 - Իսկ երբ կը դատուինք, Տէրոջմէ կը խրատուինք, որպէս զի աշխարհի հետ չդատապար-

տուինք: 33 - Ուստի, իմ եղբայրներս, երբ մեկտեղ կը ժողովուրդ ուտելու, իրարու սպասեցէք: 34 - Իսկ եթէ մէկը անօթի է՝ թող էջ տանը մէջ ուտէ, որ չըլլայ թէ դատապարտութեան համար ժողովուրդ: Եւ ուրիշ բաները չե՛ղ եկած տանն պիտի պատուիրեմ:

ԳԼ. ԺԲ

Բայց հոգևոր պարգևներուն վրայով՝ չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտցող ըլլաք: 2 - Ինչքա գիտէք որ երբ հեթանոս էիք, մունջ կուռքերուն կը տարուէիք՝ ինչպէս կ'առաջնորդուէիք: 3 - Ուստի շոյ՞ ձեզի կ'իմացնեմ թէ մէկը չըլլար որ Աստուծոյ Հոգիովը խօսի՝ ու Յիսուսը նշովեալ կոչէ. և մէկն ալ չկրնար Յիսուսը Տէր կոչել՝ եթէ ոչ Հոգւով Սրբով: 4 - Եւ պարգևները զանազան են, բայց նոյն Հոգին է: 5 - Նաև պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրն է: 6 - Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուծն է՝ որ կը ներգործէ ամէնը ամէն բանի մէջ: 7 - Բայց ամէն մէկուն Հոգւոյն յայտնութիւնը արուած է օգուտի համար: 8 - Մէկուն՝ Հոգիով իմաստութեան խօսք արուած է, ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին քաջ չափովը. 9 - Միւսին հաւատք՝ նոյն Հոգիով. ուրիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն Հոգիով. 10 - Ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու ընտրութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն: 11 - Բայց զայս ամէնը միեւնոյն Հոգին կը ներգործէ, և ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ՝ ինչպէս կ'ուզէ:

12 - Քանզի ինչպէս մարմինը մէկ է ու շատ անդամներ ունի, և *այն մարմինին բոլոր անդամները, որոնք շատ են, մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ: 13 - Վասն զի մենք ամէնս մէկ Հոգիով մէկ մարմին ըլլալու մկրտուեցանք, թէ՛ Հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծաւաւներ, թէ՛ ազգաներ, և ամէնս ալ մէկ Հոգիէ խմեցինք: 14 - Վասն զի մարմինը մէկ անդամ չէ, հապա շատ: 15 - Եթէ ոտքը ըսէ,

*Ունի, այն մէկ

Որովհետև ես ձեռք չեմ՝ մարմինն չեմ, ոչ թէ անով այն մարմինն չէ : 16 - Եւ եթէ ականջը ըսէ, Որովհետև ես աչք չեմ՝ մարմինն չեմ, ոչ թէ անով այն մարմինն չէ : 17 - Եթէ բոլոր մարմինը աչք ըլլար, լսելիք ո՞ւր պիտի ըլլար. և եթէ բոլորը լսելիք ըլլար, ո՞ւր պիտի ըլլար հաստակիքը : 18 - Բայց հիմա Աստուած անդամները դրաւ՝ անոնց ամէն մէկը մարմինն մէջ, ինչպէս ինք ուզեց : 19 - Ապա եթէ ամէնը մէկ անդամ ըլլար, մարմինը ո՞ւր պիտի ըլլար : 20 - Բայց հիմա անդամները շատ են, ու մարմինը՝ մէկ : 21 - Չկրնար աչքը ըսել ձեռքին թէ 'Իսկ ինձի պէտք չեմ. և ոչ դարձեալ գլուխը ստորուն՝ թէ 'Ինձի պէտք չէք : 22 - Մանաւանդ մարմինն այն անդամները որոնք շատ ակար կ'երևան, աւելի հարկաւոր են . 23 - Ու մարմինն այն անդամները զորոնք յաւելտ անպատիւ ըլլալ կը սեպենք, անոնց վրայ աւելի պատիւ կը դնենք . ու այսպէս մեր անվայելուչ անդամները աւելի վայելչութիւն ունին : 24 - Ու մեր վայելուչ անդամներուն բան մը պէտք չէ . բայց Աստուած մարմինը բարեխառնեց, ու պակասութիւն ունեցողին աւելի պատիւ տուաւ , 25 - Որպէս զի մարմինն մէջ երկպառակութիւն չըլլայ, հասարակ անդամները միեւնոյն հոգը ունենան իրարու վրայ : 26 - Եւ եթէ մէկ անդամը նեղութիւն կրէ, բոլոր անդամները կը նեղուին անոր հետ . և եթէ փառաւորութի մէկ անդամը, բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետ : 27 - Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անդամները : 28 - Եւ Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիները, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը հրաշքներ, և ետքը բժշկութիւններու պարգևներ, օգնութիւններ, կառավարութիւններ, լեզուներու տեսակներ : 29 - Միթէ ամէնը առաքեալներ են . միթէ ամէնը մարգարէներ են. միթէ ամէնը վարդապետներ են. միթէ ամէնը հրաշքներ և բժշկներ . 30 - Միթէ ամէնը բժշկութեան պարգևներ ունին. միթէ ամէնը լեզուներ կը խօսին . միթէ ամէնը թարգմանութիւն կ'ընեն :

31 - Բայց դուք նախանձաւոր եղէք

այն շնորհքներուն որոնք լաւագոյն են. և ես՝ ալ աւելի ազէ՛ ճամբայ մը կը ցուցնեմ՝ ձեզի :

ԳԼ. ԺԳ

Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչեցող ձնձղաներու պէս : 2 - Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, ու հասկնամ՝ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, և եթէ ունենամ՝ ամէն հաւատքը մինչև լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ : 3 - Եւ եթէ իմ՝ բոլոր սասցուածքս ազատներուն կերցնեմ, ու իմ մարմինս սյրուելու տամ, և սէր չունենամ, օգուտ մը չեմ ունենար : 4 - Աէրը երկայնամիտ է, քաղցր է. սէրը շնորհանձիր, սէրը չգուռանար, չհպարտանար, 5 - Անվայել վարմունք չունենար, իրենը չփնտաւեր, բարկութեան չզրգրուուիր, չարութիւն չխորհիր, 6 - Անիրաւութեան վրայ չինդար. հասարակ ճամբարութեան խնդակից կ'ըլլայ : 7 - Ամէն բանի կը զիջանի, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը համբերէ : 8 - Աէրը բնու չիյնար . բայց եթէ մարգարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դադարին, եթէ գիտութիւն՝ պիտի խափանի : 9 - Վասն զի շատէն քիչը գիտենք, ու շատէն քիչը կը մարգարէանանք . 10 - Բայց երբ կատարեալը գայ, այն ատեն շատէն քիչը պիտի խափանի : 11 - Երբ աղայ էի, աղայի պէս կը խօսէի, աղայի պէս կը խորհէի, աղայի պէս համարում ունէի. բայց երբ սյր եղայ, աղայութեան բաները մէկդի ձգեցի : 12 - Քանզի հիմա մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց այն ատեն երես աւ երես . հիմա շատէն քիչ մը անդեակ եմ, բայց այն ատեն այնպէս պիտի ճանչնամ՝ ինչպէս ճանչցուեցայ : 13 - Աւտի հիմա կը մնայ հաւատք, յայտ, սէր, այս երեքը . ու ասոնց մեծագոյնը սէրն է :

ԳԼ. ԺԵ

Սիրոյ ետեւն գացէք, ու հոգևոր ազատներուն նախանձաւոր եղէք, մասնաւորապէս

նաւանդ մտադարեւութիւնն ընելու : 2 - Վասն զի ան որ օրօր լեզուով կը խօսի՝ ոչ թէ մտադոց կը խօսի , հասպա Աստուծոյ . վասն զի մէկը չկայ որ իմանայ , բայց անիկա հոգիով խորհուրդներ կը խօսի : 3 - Սակայն ան որ կը մտադարեանայ , մտադոց կը խօսի՝ շինութիւնն ու յորդորանք և մխիթարութիւնն արար : 4 - Ան որ օրօր լեզուով կը խօսի՝ իր անձին շինութիւնն կ'ընէ , ու ան որ կը մտադարեանայ՝ եկեղեցիին շինութիւնն կ'ընէ : 5 - Կ'ուզեմ որ դուք ամէնդ լեզուներ խօսիք , բայց մանաւանդ որ մտադարեւութիւնն ընէք , վասն զի ա՛լ աղէկ է ան՝ որ կը մտադարեանայ , քան թէ ան՝ որ լեզուներ կը խօսի . միայն եթէ թարգմանելու ըլլայ , որպէս զի եկեղեցին շինութիւնն առնէ :

6 - Եւ հիմա , եղբայրներ , եթէ ես ձեզի գամ լեզուներ խօսելով , ի՞նչ օգուտ պիտի ընեմ՝ ձեզի՝ եթէ չխօսիմ ձեզի կա՛մ յայտնութիւնով , կա՛մ գիտութիւնով , կա՛մ մտադարեւութիւնով , կա՛մ վարդապետութիւնով : 7 - Եւ ձայն տուող անկենդան բաները անգամ , թէ՛ սրինգ և թէ՛ քնար , եթէ ձայներու զանազանութիւնն չընեն , ի՞նչպէս պիտի ճանչցուի սրինգով կամ քնարով հնչածը : 8 - Վասն զի եթէ փողն ալ անորոշ ձայն հանէ , ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի : 9 - Նոյնպէս դուք ալ եթէ լեզուով բացայայտ խօսք չգրուցէք , խօսուածը ի՞նչպէս պիտի հասկցուի . վասն զի օգին խօսողներ պիտի ըլլաք : 10 - Ահա աշխարհի մէջ այնքան տեսակ ձայներ կան , և անոնց մէ՛կը առանց նշանակութեան չէ : 11 - Ուստի եթէ այն ձայնին զօրութիւնը չգիտնամ , ես խօսողին բարբարոս մը պիտի ըլլամ , խօսողն ալ ինձի բարբարոս մը պիտի ըլլայ : 12 - Նոյնպէս դուք ալ , որովհետեւ հոգևոր պարգևներու նախանձաւոր էք , եկեղեցիին շինութեանը համար խնդրեցէք որ աւելնաք նոյն պարգևներով : 13 - Անոր համար ան որ օրօր լեզուով կը խօսի , աղօթք թող ընէ որ թարգմանէ ալ : 14 - Քանզի եթէ ես աղօթք ընեմ օրօր լեզուով , իմ հոգիս աղօթք կ'ընէ , բայց միտքս անպատու է : 15 - Ուրեմն ի՞նչ է . աղօթք ընեմ հոգիով , աղօթք ընեմ մտադարեւութեամբ ալ . սաղմոս

երգեմ հոգիով , սաղմոս երգեմ մտադարեւութեամբ ալ : 16 - Ապա թէ ոչ եթէ դուն հոգիով օրհնութիւնն ընես , անիկա որ տգէտի տեղ կայներ է , ի՞նչպէս Ամէն պիտի ըսէ քու գոհութիւնն տալու ատենդ . վասն զի ան քու զրուցածդ չիմանար : 17 - Թէպէտ դուն աղէկ գոհութիւն կ'ընես , բայց միւսը շինութիւնն չառնէր : 18 - * Աստուծամէ կը գոհանամ որ ձեր ամէնէն աւելի լեզուներով կը խօսիմ . 19 - Բայց եկեղեցիին մէջ կ'ուզեմ հինգ խօսք մտադարեւութեամբ խօսիլ , որպէս զի ուրիշներուն ալ սորվեցնեմ , քան թէ բիւրաւոր խօսքեր օրօր լեզուով :

20 - Եղբայրներ , միտքով աղաք մի ըլլաք , հասպա շարութիւնն գիտնալու աղաք եղէք , ու միտքով չափահաս եղէք : 21 - Օրէնքին մէջ գրուած է թէ Օտար լեզուներով ու օտար շրթութուններով այդ ժողովուրդին հետ պիտի խօսիմ , սակայն և այնպէս ինձի մտիկ պիտի չընեն , կ'ըսէ Տէրը : 22 - Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներուն , հասպա անհաւատներուն , բայց մտադարեւութիւնը ոչ թէ անհաւատներուն , հասպա հաւատացեալներուն : 23 - Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկտեղ գայ , ու ամէնն ալ օրօր լեզուներով խօսելու ըլլան , և հա՛մ մտնեն տգէտներ կամ անհաւատներ , պիտի չըսէ՞ թէ դուք խենթեցեր էք : 24 - Իսկ եթէ ամէնն ալ մտադարեանան , ու հա՛մ անհաւատ մը կամ տգէտ մը մտնէ , ամէնէն ալ կը յանդիմանուի , ամէնէն ալ կը քննուի , 25 - Ու անոր սրտին ծածուկ բաները յայտնի կ'ըլլան , և այսպէս երեսի վրայ ինկած՝ Աստուծոյ երկրպագութիւնն պիտի ընէ , ու խստավանի թէ իրաւքնէ Աստուծո՞ւ ձեր մէջ է :

26 - Ուստի ի՞նչ է , եղբայրներ . երբ մէկտեղ կը ժողովուրդ , ձեզմէ ամէն մէկը սաղմոս ունի , վարդապետութիւն ունի , լեզու ունի , յայտնութիւնն ունի , թարգմանութիւնն ունի . ամէնը շինութեան համար թող ըլլայ : 27 - Եթէ մէկը օրօր լեզու կը խօսի , երկու հոգի , և թէ շատը՝ երեք թող ըլլան , և այն ալ՝ մէկիկ մէկիկ , ու մէկը թող թարգմանէ : 28 - Բայց եթէ թարգմանող չըլլայ , եկեղեցիին

*Ո՛ւնչ , իմ Աստուծո՞ւ

մէջ լուռ թող կենայ, և ինքնիրեն ու
 Աստուծոյ թող խօսի : 29 - Իսկ մար-
 գարէները երկու կամ՝ երեք հոգի թող
 խօսին, ու միւսները թող քննութիւն
 ընեն : 30 - Իսկ եթէ նատողներէն ու-
 ըիշ մէկուն ալ քահնէ յայտնուելու
 ըլլայ, առաջինը թող լռէ : 31 - Վասն
 զի ամէնդ ալ կրնաք մէկիկ մէկիկ
 մարգարէանալ, որպէս զի ամէնն ալ
 սորվին ու ամէնն ալ մխիթարուին :
 32 - Եւ մարգարէներուն հոգիները մար-
 գարէներուն հնազանդ են : 33 - Վասն
 զի Աստուած իռավութեան Աստուծոյ
 չէ, հապա խաղաղութեան, ինչպէս
 սուրբերուն բոլոր եկեղեցիներուն մէջ :
 34 - Ձեր կիները եկեղեցիներուն մէջ
 լուռ կենան, վասն զի անոնց հրաման
 չկայ խօսելու, հապա հնազանդ ըլլա-
 լու, ինչպէս օրէնքն ալ կ'ըսէ : 35 -
 Բայց եթէ բան սորվիլ կ'ուզեն, տունը
 իրենց պրերուն թող հարցնեն. քանզի
 կիներուն անվայել է եկեղեցիի մէջ
 խօսիլ : 36 - Միթէ Աստուծոյ խօսքը
 ձեզմէ՞ ելաւ, կամ թէ միայն ձեզի՞
 հասաւ : 37 - Եթէ մէկը կը կարծէ թէ
 ինք մարգարէ է, կամ հոգևոր, թող
 հաստատ գիանայ թէ ինչ որ ձեզի
 գրեցի՝ Տերօջը պատուէրներն են. 38 -
 Բայց եթէ մէկը ազէտ է՝ թող ազէտ
 ըլլայ : 39 - Ուստի, եղբայրներ, մար-
 գարէութիւն ընելու նախանձաւոր ե-
 ղէք, ու լեզուներ խօսիլն ալ մի արգի-
 լէք : 40 - Եւ ամէն բան վայելչու-
 թեամբ և կարգաւ թող ըլլայ :

ԳԼ. ԺԵ

Եղբայրներ, ձեզի կ'իմացնեմ այն
 աւետարանը զոր ես ձեզի քարոզեցի,
 զոր նաև ընդունեցիք ու անոր վրայ
 հաստատուած էք. 2 - Որով կը փրկ-
 կուիք ալ, եթէ ամուր բռնէք այն
 խօսքը զոր ես ձեզի քարոզեցի, միայն ե-
 թէ պարապ աեղ հաւատացած չէք : 3 -
 Վասն զի ամէնէն առաջ ես ձեզի ա-
 ւանդեցի զանիկա, զոր ես ալ ընդու-
 նեցի, թէ Քրիստոս մեր մեղքերուն
 համար մեռաւ, գիրքերուն շնորհիւ հա-
 մեմտա, 4 - Եւ թէ թաղուեցաւ ու
 յարութիւն առաւ երրորդ օրը, գիր-
 քերուն շնորհիւ համեմտա, 5 - Եւ թէ
 երևցաւ Կեֆառի, ու ետքը տասուեր-
 կուքին. 6 - Ետքը հինգ հարիւրէ ա-
 ւելի եղբայրներուն մէկատեղ երևցաւ,

որոնցմէ շատերը մինչև հիմա կան, և
 ոմանք ալ ննջեցին. 7 - Ու ետքը երև-
 ցաւ Յակոբոսի, ետքը բոլոր առաք-
 եալներուն : 8 - Ամէնէն ետքը որպէս
 թէ վիժածի մը՝ ինծի ալ երևցաւ : 9 -
 Վասն զի ես առաքեալներուն ամէնէն
 յետինն եմ, որ արժանի ալ չեմ ա-
 ռաքեալ ըսուելու, վասն զի Աստուծոյ
 եկեղեցին հալածեցի : 10 - Միայն թէ
 Աստուծոյ շնորհքով եմ՝ ինչ որ եմ.
 և անոր շնորհքը որ իմ վրաս է, պարապ
 քահնէ չեղաւ, հապա ես անոնց ամէ-
 նէն աւելի աշխատեցայ. և ոչ թէ ես,
 հապա Աստուծոյ շնորհքը որ ինծի հետ
 էր : 11 - Ուստի թէ՛ ես և թէ՛ անոնք
 պայպէս կը քարոզենք, ու դուք այս-
 պէս հաւատացիք :

12 - Ուրեմն եթէ Քրիստոս կը քա-
 րոզուի, որ մեռելներէն յարութիւն
 առած է, ինչպէս ձեզմէ մէկ քանի-
 ները կ'ըսեն թէ Մեռելներու յարու-
 թիւն չկայ : 13 - Եթէ մեռելներու
 յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս
 ալ յարութիւն առած չէ : 14 - Եւ
 եթէ Քրիստոս յարութիւն առած չէ,
 ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է,
 ու ձեր հաւատքն ալ պարապ է. 15 -
 Եւ մենք ալ Աստուծոյ սուտ
 վկաները գանուած կ'ըլլանք. որովհե-
 աև Աստուծոյ համար վկայութիւն
 տուինք, թէ ինք զեմբերէն յարուց
 Քրիստոսը. որ իրաւ չյարուց զանիկա,
 եթէ մեռելները յարութիւն չեն առ-
 ներ : 16 - Քանզի եթէ մեռելները յա-
 րութիւն չեն առներ, Քրիստոս ալ
 յարութիւն առած չէ. 17 - Եւ եթէ
 Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր
 հաւատքը պարապ է, -- տակաւին
 ձեր մեղքերուն մէջ էք. 18 - Նոյնպէս
 Քրիստոսով ննջողներն ալ կորսուած
 են : 19 - Եթէ միայն այս կեանքին հա-
 մար Քրիստոսի յուսացած ենք, մենք
 բոլոր մարգոցմէն աւելի խղճալի ենք :
 20 - Բայց հիմա Քրիստոս մեռելներէն
 յարութիւն առած է, ննջեցեալներուն
 առաջին պատուը : 21 - Քանզի որով-
 հեաև մարգով եղաւ մահը, մարգով
 ալ մեռելներու յարութիւնը : 22 -
 Վասն զի ինչպէս Ադամով ամէնը կը
 մեռնին, նոյնպէս ալ Քրիստոսով ա-
 մէնը կենդանի պիտի ըլլան. 23 - Բայց
 ամէն մէկը իր կարգովը, առաջին
 պատուը Քրիստոս, ետքը Քրիստոսինե-
 րը՝ իր գալու ստեղծ. 24 - Անկէ ետև

Ինչպէս վախճանը , երբ թագաւորութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը, երբ խափանէ ամէն իշխանութիւնը և ամէն պետութիւնը ու զօրութիւնը: 25 - Վասն զի անոր պէտք է թագաւորութիւն ընել՝ մինչև բարձր թշնամիները իր ստեղծութեան ամէն գնէ: 26 - Վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մասն է վասն զի գերեզմանէ, Ամէն բան անոր ստեղծութեան ամէն գնէ: 27 - Բայց երբ կ'ըսէ թէ Ամէն բան անոր ճշտութեամբ է, յայտնի է թէ բաց ի անկէ՝ որ ամէնը անոր ճշտութեամբ: 28 - Ու երբ ամէնը անոր ճշտութեամբ ըլլայ, այն ատեն Որդին ինք ալ պիտի ճշտութեամբ անոր՝ որ իրեն ճշտութեամբ ամէնը, որպէս զի Աստուծոյ ըլլայ ամէնը ամէն բանի մէջ: 29 - Ապա թէ ոչ ի՞նչ պիտի ընեն անոնք որ մեռելներուն համար կը մկրտուին, եթէ մեռելները բնաւ յարութիւն չառնեն. ինչո՞ւ ուրեմն անոնց համար կը մկրտուին. 30 - Ինչո՞ւ համար մեռնալ ալ վասն զի մէջ կը մտնենք ամէն ժամ: 31 - Վկայ կը բերեմ այն պարծանքը՝ զոր ձեր վրայ ունիմ՝ Բրիտանոս Յիսուս մեր Տէրջմով, որ ես ամէն օր կը մեռնիմ: 32 - Եթէ Եփեսոսի մէջ մարդոց նման գազաններու հետ մարտնչեցայ, ի՞նչ օգուտ է ինձի, եթէ մեռելները յարութիւն չառնեն. ուտենք ու խմենք, վասն զի վաղը կը մեռնինք: 33 - Մի խաբուիք չար բնկերակցութիւնները աղէկ բարքը կ'ապականեն: 34 - Արդարութիւնով զգաստացէք ու մեղք մի գործէք, վասն զի յեզե՛ս սմանք Աստուծոյ գիտութիւնը չունին. ձեզ ամօճեցու համար կը գրուցեմ:

35 - Բայց պիտի ըսէ մէկը թէ ի՞նչ պէտք մեռելները յարութիւն կ'առնեն, կամ թէ ի՞նչ մարմնով կու գան: 36 - Անմիտ, անիկա զոր գուն կը սերմանես, եթէ չմեռնի՝ չկենդանարար. 37 - Ու զայն որ կը սերմանես, ոչ թէ այն մարմինը որ պիտի բուսնի՝ կը սերմանես, հապա մերկ հատ մը՝ թէ՛ ցորենի ըլլայ և թէ՛ մէկ ուրիշ «երֆ». 38 - Ու Աստուծոյ անոր մարմին կու տայ ինչպէս կ'ուզէ, և ամէն մէկ սերմին իր յարմար մարմինը: 39 - Ամէն մարմին

մէկ մարմին չէ. հապա մարդոց մարմինը ուրիշ է, ու անասուններուն մարմինը ուրիշ, ձուկերուն ալ ուրիշ, և թռչուններուն ուրիշ: 40 - Երկնաւոր մարմիններ ալ կան, երկրաւոր մարմիններ ալ, բայց երկնաւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւորներուն ուրիշ: 41 - Արևուն փառքը ուրիշ է, ու լուսնին փառքը ուրիշ, և աստղերուն փառքը ուրիշ. ու մէկ աստղը միւս աստղէն ասարբեր է փառքով: 42 - Այսպէս է մեռելներուն յարութիւնն ալ. մարմնը ապականութիւնով կը սերմանուի, «- անապականութիւնով յարութիւն կ'առնէ. 43 - Անարգութիւնով կը սերմանուի, «- փառքով յարութիւն կ'առնէ. ակարութիւնով կը սերմանուի, «- զօրութիւնով յարութիւն կ'առնէ. 44 - Կը սերմանուի շնչաւոր մարմին, և յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին. շնչաւոր մարմին կայ, հոգեւոր մարմին ալ կայ: 45 - Եւ այսպէս գրուած է, Առաջին մարդը Ադամ կենդանի շունչ եղաւ, վերջին Ադամը՝ կենդանարար հոգի: 46 - Բայց ոչ թէ առաջ հոգեւորը, հապա շնչաւորը, «- ետքը հոգեւորը: 47 - Առաջին մարդը երկրէ է՝ հողեղէն, բայց երկրորդ մարդը Տէր է՝ երկինքէ: 48 - Ինչպէս էր հողեղէնը՝ նոյնպէս ալ հողեղէնները, ու ինչպէս երկնաւորը՝ նոյնպէս ալ երկնաւորները. 49 - Եւ ինչպէս հողեղէնին կերպարանքը հոգեւոր ենք, երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք: 50 - Բայց զայս կ'ըսեմ, եղբայրներ, որ մարմին ու արիւն Աստուծոյ թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել. ոչ ալ ապականութիւնը կը ժառանգէ անապականութիւն:

51 - Ահա ձեզի խորհուրդ մը կը գրուցեմ. Ամէնս պիտի շնչենք, բայց ամէնս ալ պիտի փոխուինք, 52 - Յանկարծակի աչք գոցել բանալու մէջ՝ վերջին փողին հնչելու ատենը. որովհետեւ փողը պիտի հնչուի, ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան, և մենք ալ պիտի փոխուինք: 53 - Վասն զի պէտք է որ այս ապականացու մարմնը անապականութիւն հագնի, ու այս մահկանացուն անմահութիւն հագնի: 54 - Բայց երբ այս ապականացու մարմնը անապականութիւն հագնի, և այս

*կամ, ինձի. եթէ մեռելները յարութիւն չառնեն, ուտենք, և լն.

մահականացուն անմահութիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ թէ Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ: 55 - Ո՞ւր է, ով մահ, քու խայթոցդ. ո՞ւր է, ով գերեզման, քու յաղթութիւնդ: 56 - Մահուան խայթոցը մեղքն է, ու մեղքին պիտի օրէնքը: 57 - Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կուտայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով: 58 - Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատ եղէք, անշարժ կեցե՛ք և ամէն ատեն աւելցէք Տէրոջը գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով:

ՓԼ. ԺԶ

Բայց սուրբերուն համար «չբժանի»-ն ժողովելու վրայով, ինչպէս պատուէր տուի Քաղատացուց եկեղեցիներուն, դուք ալ այնպէս ըրէք: 2 - Ամէն մեկշաբթի օրերը ձեզմէ ամէն մեկը իր քով թող դիզէ ինչ որ կը յաջողի, 3 - Որ չըլլայ թէ երբ գամ, այն ատեն ժողովումներ ըլլան. ու երբ գամ, որոնց որ դուք *հաճիք, ես զանոնք թուղթերով պիտի զրկեմ՝ ձեր պարգևները Երուսաղէմ տանելու: 4 - Եւ եթէ իմ երթալս ալ արժան սեպուի, ինծի հետ թող երթան: 5 - Սակայն ես ձեզի պիտի գամ՝ երբ Մակեդոնիայէ անցնիմ. (քանզի Մակեդոնիայէ կ'անցնիմ.) 6 - Եւ կարելի է որ ձեր քով մնամ, կամ ձմեռն ալ անցնեմ. որպէս զի դուք զիս ճամբոյ դնէք, ուր որ ես պիտի երթամ: 7 - Վասն զի չեմ ուզեր ձեզ հիմա հարեանցի մը տեսնել, բայց յոյս ունիմ որ ատեն մը ձեր քով կենամ, եթէ Տէրը հրաման տայ: 8 - Սակայն հիմա ես Եփեսոս պիտի մնամ մինչև Պենտեկոստէ. 9 - Վասն զի ինծի մեծ ու արգիւնաւոր դուռ մը բացուած է, ու շատ հակառակորդներ կան:

*Կամ, յանձնարարութիւն ընէք թուղթերով, ես զանոնք

10 - Արդ եթէ Տիմոթէոս գայ, նայեցէք որ ձեր քով առանց վախի ըլլայ. քանզի անիկա Տէրոջը գործը կը գործէ, ինչպէս ես ալ: 11 - Ուստի չըլլայ որ մեկը զանիկա արհամարհէ, հապա խաղաղութեամբ զանիկա ճամբոյ դէք, որպէս զի ինծի գայ. վասն զի անոր կը սպասեմ՝ եղբայրներով մեկտեղ: 12 - Իսկ Ապոլոս եղբօրը համար, շատ աղաչեցի անոր, որ ձեզի գայ եղբայրներուն հետ մեկտեղ. ու բնաւ կամք չունեցաւ որ հիմա գայ, բայց պիտի գայ՝ երբ յարմար ժամանակ գտնէ:


13 - Արթուն կեցէք, հաւատքի մէջ հաստատ կեցէք, ժիր եղէք, զօրացէք: 14 - Ձեր ամէն բաները սիրով ըլլան:

15 - Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, (զիտէք դուք Ստեփանէսի ընտանիքը թէ Աքայիայի առաջին պատուըն է, ու անձերնին սուրբերուն սպասուորութեանը նուիրեցին.) 16 - Որ հնազանդ ըլլաք այնպիսիներուն, և ամէնուն որ Թղի հեռ մեկտեղ կը գործեն ու կ'աշխատին: 17 - Ուրախ եմ ես Ստեփանէսի ու Փորաունատոսի ու Աքայիկոսի գալուն վրայ, որ ձեր պակասութիւնը անոնք լեցուցին. 18 - Քանզի հանգստացուցին իմ հոգիս ու ձերը. ուստի այնպիսիները ճանչցէք:

19 - Բարև կ'ընեն ձեզի Ասիայի եկեղեցիները. շատ բարև կ'ընեն ձեզի Տէրոջմով Ակիւղոս ու Պրիսկիլոս՝ իրենց տանը մէջի եկեղեցիով մեկտեղ: 20 - Բարև կ'ընեն ձեզի բոլոր եղբայրները. բարև տուէք իրարու սուրբ համբուրով:

21 - Այս բարևը իմ ձեռքիս՝ Պողոսին է: 22 - Եթէ մեկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր, նզովեալ ըլլայ՝ *եթմեր Տէրը գայ: 23 - Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ. 24 - Իմ սերս ձեր ամէնուն հետ ըլլայ Քրիստոս Յիսուսով: Ամէն:

Յան. (Ասորիբնին) Մարան ամթա



ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Կ Ո Ր Ն Թ Ա Ց Ի Ս



ԳՂՈՒԽ Ա

Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ կամքովը, ու Տիմոթէոս Զբե եղբայրը. Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բոլոր Աքայիայի մէջ եղող ամէն սուրբերուն. 2 - Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ :

3 - Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, գթութեան Հայրը և ամէն մխիթարութեան Աստուածը. 4 - Որ մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որպէս զի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններու մէջ են, այն մխիթարութիւնովը՝ որով մենք Աստուծմէ կը մխիթարուինք.

5 - Քանզի ինչպէս Քրիստոսի չարչարանքները մեր վրայ շատ եղան, նմանապէս Քրիստոսի ձեռքով մեր մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ: 6 - Եւ եթէ նեղութիւն քաշենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, և եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, որ կը յաջողի համբերելով այն չարչարանքներուն՝ որոնցմով մենք ալ կը չարչարուինք. 7 - Եւ մեր յոյսը հաստատուն է ձեզի համար, վասն զի գիտենք թէ ինչպէս չարչարանքներուն հաղորդ էք, նայնպէս ալ մխիթարութեանը պիտի ըլլաք:

8 - Վասն զի Ասիայի մէջ մեզի պատահած նեղութիւններուն վրայով՝ չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, թէ Զբե կարողութենէն շատ աւելի ծանրաբեռնեցանք. մինչև կեանքերնէս ալ անյոյս եղանք: 9 - Բայց մահուան վճիռը մենք մեր վրայ պահեցինք, որպէս զի ինքզինքնուս չապաւինինք, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը

յարուցանէ. 10 - Որ այնպիսի մեծ մահուանէ մեզ փրկեց ու կը փրկէ. 11 - Որու կը յուսանք թէ տակաւին պիտի փրկէ, մեզի համար ձեր ըրած աղօթքին օգնականութիւնովը. որպէս զի շատերուն «ըֆ+ին» պատճառաւ մեզի եղած շնորհքին համար՝ շատերէն գոհութիւն տրուի մեզի համար:

12 - Վասն զի մեր պարծանքը այս է, մեր խղճմանքին վկայութիւնը, թէ մենք Աստուծոյ «ըֆ» պարզմտութեամբ ու անկեղծութեամբ, և ոչ թէ մարմնաւոր իմաստութիւնով մը, հապա Աստուծոյ շնորհքովը աշխարհի մէջ վարուեցանք, բայց աւելի դէպ ի ձեզ: 13 - Քանզի ուրիշ բան չենք գրեր ձեզի, հապա զայն որ դուք կը կարգաք ու կը ծանչնաք. և կը յուսամ թէ մինչև վերջը պիտի ծանչնաք. 14 - Ինչպէս քիչ շատ ծանչցաք մեզ, որ ձեր պարծանքն ենք, ինչպէս դուք ալ մերը՝ Տէր Յիսուսի օրը:

15 - Եւ այս վստահութիւնով կ'ուզէի առաջ ձեզի գալ, որպէս զի դուք երկրորդ անգամ շնորհք ընդունիք.

16 - Ու ձեզմէ անցնիլ դէպ ի Մակեդոնիա, և դարձեալ Մակեդոնիայէ ձեզի գալ, ու ձեզմէ ծամբայ գրուիլ դէպ ի Հրէաստան: 17 - Ուստի զայս որ ես մտածեցի, միթէ թեթեւութիւնով շարժեցայ. կամ թէ զայն որ ես կը խորհիմ, մարմնաւորապէս կը խորհիմ, *որպէս զի իմ կողմանէս այս այս և ոչ ոչ ըլլայ՝:

18 - Սակայն հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքը ձեզի «ըֆ» այս և ոչ չէր: 19 - Վասն զի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս, որ մեզմով ձեզի քարոզուեցաւ, (ինծմով և Սիղուանասով ու Տիմոթէոսով,) այս ու ոչ չեղաւ, հապա իր

*կամ, ոչ. հապա որպէս զի իմ կողմանէս այսն այս ըլլայ, ու ոչ ոչ

մէջ եղաւ այսն: 20 - Քանզի որչափ որ Աստուծոյ խոտմունքները կան՝ իր մէջ Այս են, ու իր մէջ Ամէն են Աստուծոյ փառքին համար մեր ձեռքով: 21 - Բայց ան որ մեզ ձեզի հետ մէկտեղ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օժեց, Աստուած է: 22 - Որ մեզ կնքեց ալ, և Քրի տուաւ Հոգւոյն գրաւը մեր սիրտերուն մէջ: 23 - Բայց ես զԱստուած վկայ կը կանչեմ իմ անձիս, որ ձեզի խնայելուս համար տակաւին կորնթոս չեկայ. «իշ» ոչ թէ ձեր հաւատքին վրայ կը տիրապետենք, հապա գործակից ենք ձեր ուրախութեանը. վասն զի դուք հաւատքով կը կենաք:

ԳԼ. Բ

Սակայն ես ինձմէ զայս որոշեցի, որ նորէն արամնութիւնով չգամ ձեզի: 2 - Վասն զի եթէ ես ձեզ արամեցընեմ, ալ ո՞վ է որ զիս պիտի ուրախացնէ, եթէ ոչ ան՝ որ ինձմէ կը արամի: 3 - Ու զայս գրեցի, որ չըլլայ թէ երբ գամ՝ արամնութիւն մը կրեմ անոնցմէ, ուրկէ պէտք է ինձի ուրախ ըլլալ. քանզի ձեր ամէնուն վրայ վատահեմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամէնունն է: 4 - Վասն զի շատ նեղութենէ և սրտի տագնապէ ես ձեզի գրեցի շատ արցունքով. ոչ թէ՛ որպէս զի դուք արամիք, հապա որպէս զի գիտնաք այն սէրը զոր ես ունիմ՝ աւելի ձեր վրայ:

5 - Բայց եթէ մէկը արամեցուց, ոչ թէ զիս արամեցուց, հապա շրտ մասին (որպէս զի «ոչ» ծանր չընեմ) ձեզ ամէնդ: 6 - Հերիք է այնպիսի մարդուն այն պատիժը, որ շատերէ եղաւ: 7 - Ուստի ընդհակառակն պէտք է աւելի ներել անոր ու մխիթարել, որ չըլլայ թէ այնպիսին աւելի արամնութենէն ընկղմի: 8 - Ուստի կ'աղաչեմ ձեզի, որ անոր վրայ յէր սէրը հաստատեք: 9 - (Քանզի ասոր համար ալ գրեցի, որպէս զի ձեզ փորձելով գիտնամ թէ ամէն բանի մէջ հնազանդ էք: 10 - Եւ որու դուք բան մը կրնէրէք, ես ալ չը ներեմ. վասն զի եթէ ես

ալ ներեմ, որու որ ներեմ՝ ձեզի համար է Քրիստոսի *կողմանէ.) 11 - Որ չըլլայ թէ զրկանք մը կրենք Աստուծոյէ. քանզի անոր խորհուրդները չգիտցող չենք:

12 - Արդ երբ ես Տրովադոս հասայ Քրիստոսի աւետարանը *առաջելու, և ինձի դուռ մը բաց էր Տէրութնով, 13 - Իմ հոգւոյս մէջ հանգստութիւն չունէի, վասն զի իմ Տիտոս եղբայրս հանչատայ. հապա անոնցմէ հրաժարելով՝ Մակեդոնիս գացի:

14 - Բայց գոհութիւն Աստուծոյ, որ միշտ յաղթող կ'ընէ մեզ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հարբ մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ:

15 - Վասն զի մենք Աստուծոյ առջև Քրիստոսի անոյշ հոտն ենք փրկուածներուն մէջ և կորուսածներուն մէջ:

16 - Ոմանց մասուան հոտ դէպ ի մահ, և ոմանց կենդանութեան հոտ դէպ ի կեանք. և այս բաներուն ո՞վ բաւական է. 17 - Քանզի մենք շատերուն պէս չենք, որոնք Աստուծոյ խօսքին խորհախուսութիւն կ'ընեն. հապա որպէս թէ անկեղծութեամբ, հապա որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսինք:

ԳԼ. Գ

Կը սկսինք նորէն անձերնիս յանձն ընել. կամ թէ ոմանց պէս պէ՞տք է մեզի յանձնարարութեան թուղթեր ձեզի կամ ձեզմէ: 2 - Հապա մեր թուղթը դուք էք մեր սիրտերուն մէջ գրուած, ճանչցուած ու կարգացուած ամէն մարդոցմէ. 3 - Յայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թուղթն էք մեր սպասուորութիւնովը, ոչ թէ մեղանով գրուած, հապա կենդանի Աստուծոյ Հոգիովը, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա սրտին մարմնեղէն տախտակներուն վրայ: 4 - Եւ այսպիսի վատահեմութիւն ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիստոսի ձեռքով. 5 - Ոչ թէ մենք ինքնիրեննիս բաւական ենք բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ, հապա մեր բաւականութիւնք Աստուծմէ է. 6 - Որ մեզ բաւական ալ ըրաւ նոր կտակարանին պաշտօնեաներ ըլլալու, ոչ թէ գիրին, հապա

*Կամ, առջև

*Ո՛հ, գրեցի ձեզի
†Կամ, ըստ մասին, որ ձեր ամէնուն վրայ ծանրութիւն չձգեմ

Տոգիին . վասն զի գիրը կը սպաննէ , բայց Տոգին կ'ապրեցնէ : 7 - Իսկ եթէ քարերու վրայ գրով փորուած մահուան պաշտօնը փառքով եղաւ , որ Խորայէլի որդիները կարող չեղան Մովսէսի երեսը նայելու՝ անոր երեսին փառքին համար , որ պիտի խափանուէր . 8 - Ուրե՛հ Տոգիին պաշտօնը ի՞նչպէս աւելի փառքով պիտի չլլայ : 9 - Վասն զի եթէ դատապարտութեան պաշտօնը փառքով էր , ո՛րչափ աւելի արդարութեան պաշտօնը փառքով պիտի ըլլայ : 10 - Վասն զի այն որ փառաւոր էր՝ այս մասին փառաւոր չէ գերազանց փառքին պատճառաւ : 11 - Քանզի եթէ այն որ պիտի խափանուէր՝ փառքով էր , ո՛րչափ աւելի այն որ կը կենայ՝ փառքով ուրե՛ք չէլաւ : 12 - Ուստի այսպիսի յոյս որ ունինք , շատ համարձակութեամբ կը վարուինք մէջ խօսքին մէջ . 13 - Եւ ոչ թէ ինչպէս Մովսէս իր երեսին վրայ ծածկոց կը ձգէր , որպէս զի Խորայէլի որդիները չնայէին այն խափանուելու բաներուն վախճանին : 14 - Սակայն անոնց միտքերը կուրցան . վասն զի մինչև այսօր նոյն ծածկոցը ձգուած է հին կտակարանին ընթերցմունքին վրայ , ու չվերնար , (վասն զի Քրիստոսով կը խափանուի ,) 15 - Հապա մինչև այսօր , երբ Մովսէսի գիրքը կը կարգան , անոնց սրտին վրայ ծածկոց մը կը կենայ : 16 - Բայց երբ Տէրօջը դառնան , այն ատեն պիտի վերնայ այն ծածկոցը : 17 - Արդ Տէրը Հոգին է . և ուր Տէրօջը Հոգին կայ , հոն ազատութիւն կայ : 18 - Բայց մենք ամէնա , բաց երեսով Տէրօջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով , նոյն պատկերին կը նորոգուինք փառաց ի փառս , որպէս թէ Տէրօջը Հոգիէն :

ԳԼ. Կ

Ուստի այս պաշտօնը ունենալով՝ ինչպէս ողորմութիւն գտանք , չենք ձանձրանար . 2 - Հապա հրաժարեանք ամօթայի ծածուկ բաներէն , ու խորամանկութիւնով չենք վարուիր , և խարդախութիւն չենք ընելի Աստուծոյ խօսքին մէջ . հապա ճշմարտութիւնը յայտնելով՝ անձերնիս մարդոց ամէն խղճմտանքին կ'ընծայենք Աստուծոյ առջև : 3 - Իսկ եթէ մեր աւե-

տարանը ծածկուած ալ է , կորսուածներուն մէջ ծածկուած է . 4 - Որոնց մէջ այս աշխարհի աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց , որպէս զի Քրիստոսի փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ , որ է Աստուծոյ պատկերը : 5 - Վասն զի ոչ թէ անձերնիս կը քարոզենք , հապա Քրիստոս Յիսուս Տէրը , ու մեզ՝ ձեր ծառաները Յիսուսի համար : 6 - Վասն զի Աստուած որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել՝ ինք մեր սիրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը : 7 - Արդ մենք այս գանձը հողէ ամաններու մէջ ունինք , որպէս զի զօրութեան առաւելութիւնը Աստուծմէ ըլլայ , ու ոչ թէ մեզմէ : 8 - Ամէն կողմանէ վշտացած ենք , բայց նեղը ինկած չենք . կարօտեալ ենք , բայց յուսահատած չենք . 9 - Հալածուած ենք , բայց երեսէ ձգուած չենք . վար ձգուած ենք , բայց կորսուած չենք . 10 - Ամէն ատեն *Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի : 11 - Վասն զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի համար միշտ մահուան կը մատնուինք , որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն մէջ յայտնի ըլլայ : 12 - Ուստի մահը մեր մէջ կը ներգործէ , և կեանքը՝ ձեր մէջ : 13 - Բայց հաւատքին նոյն Տոգին ունինք , ինչպէս գրուած է , Հաւատացի , անոր համար խօսեցայ . մենք՝ ալ կը հաւատանք , ու անոր համար կը խօսինք . 14 - Զայս գիտնալով թէ ան որ Տէր Յիսուսը յարուց՝ մեզ ալ Յիսուսով պիտի յարուցանէ , ու անոյ առջև պիտի կայնեցնէ ձեզմով մեկտեղ : 15 - Վասն զի ամէն բան ձեզի համար է , որպէս զի այն շնորհքը առատացած՝ շատերուն գոհութիւն ընելովը աւելնայ Աստուծոյ փառքին համար : 16 - Վասն որոյ չենք ձանձրանար . բայց թէպէտ այս մեր դուրսի մարդը կ'ապականի , սակայն մեր ներսի մարդը որ է որ կը նորոգուի : 17 - Վասն զի մեր վայրկեանական թեթեւեմները առաւել քան զառաւել փառաց յաւաքեանական գերազանցութիւն կը գոր-

*Ունե՛ք, Տէր Յիսուսի

Ճէ մեզի: 18 - Վասն զի մենք երեցած քաներուն չենք նայիր, հապա չերեցածներուն. քանզի երեցած բաները ժամանակաւոր են, բայց չերեցածները՝ յաւիտեանական:

ԳԼ. Ե

Վասն զի գիտենք որ եթէ մեր վրանի նման երկրաւոր տունը քակուի, շինուածք մը ունինք Աստուծմէ, անձեռագործ յաւիտեանական տուն մը երկինքի մէջ: 2 - Եւ յիրաւի ասոր մէջ կը հաւաչենք՝ մեր երկնաւոր բնակութիւնը հազնելու փափագելով. 3 - Միայն թէ երբ զայն հազնելու ըլլանք, մերկ չգտնուինք: 4 - Վասն զի մենք որ այս վրանին տակ ենք, կը հաւաչենք ծանրութիւն քաշելով. վասն զի չենք ուզեր մեր վրայէն հանել, հապա զանիստ անոր վրայէն հազնել, որպէս զի մահկանացութիւնը ընկղմի կեանքէն: 5 - Իսկ ան որ մեզ այս բանին կը պատրաստէ, Աստուած է, որ նաև մեզի տուաւ Հոգւոյն գրաւը: 6 - Ուստի ամէն ատեն վստահութիւն ունինք, և գիտենք թէ որչափ մարմնի մէջ կը կենանք, Տէրօջմէ հեռու ենք. 7 - (Վասն զի հաւատքով կը քալենք, ու ոչ թէ երևութով.) 8 - Ուստի վստահութիւն ունինք՝ և ալ աւելի կ'ուզենք մարմնէն հեռանալ ու Տէրօջը քով կենալ: 9 - Ասոր համար կը ջանանք ալ, որ թէ՛ կենանք և թէ՛ հեռանանք՝ անոր հաճոյ ըլլանք: 10 - Վասն զի պէտք է որ ամէն ալ Քրիստոսի ատեանին առջև ներկայանանք, որպէս զի ամէն մէկը իր մարմնովը բրածներուն փոխաբէնը առնէ՝ ինչ որ գործեր է, թէ՛ բարի և թէ՛ չար:

11 - Ուստի Տէրօջը վախը գիտնալով՝ մարդոց միտքը կը հաճեցնենք. սակայն մենք Աստուծոյ առջև յայտնի ենք, և կը յուսամ որ ձեր խղճմտանքին մէջ ալ յայտնի ենք: 12 - Ոչ թէ նորէն անձերնիս ձեզի կ'ընծայենք. հապա առիթ կու տանք ձեզի՝ մեր վրայով պարծենալու. որպէս զի քան իջ ունենաք պարտախանելու՝ անոնց՝ որ աչքի երեցածով կը պարծենան, ու ոչ թէ սրտով: 13 - Վասն զի եթէ խելըւած ենք՝ այն Աստուծոյ համար է, և եթէ զգաստ ենք՝ այն ձեզի հա-

մար է. 14 - Վասն զի Քրիստոսի սէրը մեզ կը ստիպէ. քանզի մեր դատումը այս է որ եթէ մէկը ամէնուն համար մեռաւ, ուրեմն ամէնն ալ մեռան.

15 - Եւ ամէնուն համար մեռաւ, որպէս զի կենդանի եղողները ա՛լ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն տուաւ: 16 - Ուստի ատկէ ետև մենք մէ՛կը մարմնով չենք գիտեր. ու թէ և Քրիստոսը մարմնով ճանչցանք, բայց հիմա ա՛լ «յնպէս» չենք ճանչնար: 17 - Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է. հիները անցան, և ահա ամէն բան նոր եղաւ: 18 - Սակայն ամէն բան Աստուծմէ է, որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով, ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը: 19 - Այսինքն Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չսեպեց, ու հաշտութեան խօսքը մեր մէջ դրաւ: 20 - Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեպքանութիւն կ'ընենք, իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով. կ'աղաչենք յեզի՝ Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ: 21 - Վասն զի Աստուծոյ զանիկա որ մեզք չէր գիտեր, մեզի համար «մեզաւոր սեպեց», որպէս զի մենք անոր միջոցով Աստուծոյ արդարներն ըլլանք:

ԳԼ. Զ

Ուստի մենք ալ գործակից ըլլալով կ'աղաչենք որ Աստուծոյ շնորհքը պարտապատեղ ընդունած չըլլաք: 2 - Վասն զի՝ Ընդունելի ժամանակի մը մէջ լսեցի քեզի, կ'ըսէ, և փրկութեան օրը օգնութիւն ըրի քեզի. ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը: 3 - Ինչու բանով մը գայթակղութիւն չենք ասոր, որպէս զի Ձեզ պաշտօնը չարատաւորի. 4 - Ինչոք ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք Աստուծոյ սպասաւորներու պէս՝ շատ համբերութիւնով վիշտերու մէջ, տառապանքներու, նեղութիւններու, 5 - Մեծերու, բանաբերու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծուծերու մէջ,

*Յ. 2. մեզք ըրաւ

6 - Մաքրութիւնով , գիտութիւնով , երկայնամտութիւնով , քաղցրութիւնով , Սուրբ Հոգիով , անկեղծ սիրով ,
 7 - Ճշմարտութեան խօսքով , Աստուծոյ զօրութիւնով , արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է . 8 - Փառքով ու անարգութիւնով , պարսաւանքով և գովութիւնով . մեղքեցնողներու պէս՝ ու ճշմարիտներ .
 9 - Անծանօթներու պէս՝ և ծանօթներ . մեռնողներու պէս՝ և ահա կենդանի ենք . պատժուածներու պէս՝ ու չսպաննուածներ . 10 - Տրամածներու պէս՝ ու միշտ ուրախ ենք . աղքատներու պէս՝ ու շատերը կը հարստացնենք . բան մը չունեցողներու պէս՝ և ամէն բան ստացած ենք : 11 - Մեր բերանը ձեզի բացուած է , ով Կորնթացիք , և մեր սիրտը լայնցած : 12 - Իսկ մեր կողմէն չէք նեղուիր , հապա * ձեր «նեցած գութին կողմէ» կը նեղուիք : 13 - Ուստի անոր հասուցումը ընելու համար (իբրև որդիներուս կը խօսիմ ձեզի ,) դուք ալ գեղ յիւ լայնցէք :

14 - Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի ըլլաք . քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ , և ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ , 15 - Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ , կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ . 16 - Եւ ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերու հետ , վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք . ինչպէս Աստուած ըսաւ , թէ Անոնց մէջ պիտի բնակիմ , ու «նեց մէջ պիտի քայլեմ , և անոնց Աստուած պիտի ըլլամ , ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան : 17 - Ասոր համար ելէք անոնց մէջէն ու զատուեցէք , կ'ըսէ Տէրը , և պիղծ բանի մի դպչիք . 18 - Ու ես ձեզ պիտի ընդունիմ , և ես ձեզի Հայր պիտի ըլլամ , ու դուք ինծի աղաբներ ու աղջիկներ պիտի ըլլաք , կ'ըսէ Ամենակալ Տէրը :

ԳԼ Է

Ուստի , սիրելիներ , որովհետև մենք այս խոստմունքները ունինք , մեր անձերը մարմինի ու հոգիի ամէն չեղ պղղ-

* կամ , ձեր ներսիցին

ծութենէ մաքրենք , և սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը :
 2 - * Ընդունեցէք մեզ՝ . մարդո՛ւ վնաս չտուինք , ոչ մէկը եղծեցինք , և ոչ մէկը զրկեցինք : 3 - Ոչ թէ ձեզ դատապարտելու համար «այ» կը զրուցեմ . որովհետև ես առաջուքնէ ըսեր եմ՝ որ դուք մեր սիրտերուն մէջ էք՝ մեռնելու և ապրելու ձեզի հետ : 4 - Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ . շատ է իմ պարծանքս ձեզի համար . լեցուն եմ մխիթարութիւնով , աւելցած եմ ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջ : 5 - Վասն զի երբ մենք Մակեդոնիա հասանք , բնաւ մեր մարմինը հանգստութիւն չունեցաւ , հապա ամէն կողմանէ նեղութիւն կը քաշէինք . դուքէն պատերազմներ կային , « ներսէն՝ վախեր : 6 - Բայց Աստուած , որ խանարհները կը մխիթարէ , մեզ մխիթարեց Տիտոսի գալովը : 7 - Եւ ոչ թէ միայն անոր գալովը , հապա այն մխիթարութիւնովն ալ՝ որով ինք մխիթարուեր էր ձեզմով , երբ մեզի պատմեց ձեր բաղձանքը , ձեր ողբը , ձեր ինծի համար «նեցած նախանձաւորութիւնը , այնպէս որ ալ աւելի ուրախ եղայ : 8 - Վասն զի եթէ ձեզ արամեցուցի այն թուղթով , չեմ զղջար , (թէև զղջացեր էի ,) քանզի կը տեսնեմ՝ որ այն թուղթը ձեզ արամեցուց , թէև քիչ մը ատեն : 9 - Արդ ուրախ եմ , ոչ թէ՛ որ արամեցաք , հապա որ ապաշխարութեան համար արամեցաք . որովհետև դուք Աստուծոյ «չա՞նի» պէս արամեցաք , այնպէս որ բանով մին ալ մեզմէ վնաս չքաշէք : 10 - Վասն զի Աստուծոյ «չա՞նի» պէս եղած արամութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ , որ զղջանալու բան չէ . բայց աշխարհի արամութիւնը մահ կը գործէ : 11 - Քանզի ահա այս բանը որ դուք Աստուծոյ «չա՞նի» պէս արամեցաք , ձեր մէջ ս'ըջափ ջանք գործեց , ս'ըջափ չքմեղութիւն , ս'ըջափ սրամտութիւն , ս'ըջափ վախ , ս'ըջափ բաղձանք , ս'ըջափ նախանձաւորութիւն , ս'ըջափ վրէժխնդրութիւն . ամէն կերպով ինքզինքնիդ ցուցուցիք թէ այդ բանին մէջ մտքուր էք : 12 - Ուրեմն այն զոր ես ձեզի գրեցի , ոչ թէ զրկանքը ընողին

* կամ , Համբերեցէք մեզի

Համար էր, և ոչ թէ զրկանքը կրողին համար, հապա որպէս զի ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ առջև : 13 - Ուստի այն ձեր միթարութեանը համար մենք միթարութեանք . շատ աւելի ալ ուրախացանք Տիտոսի ուրախութեանը համար, վասն զի անոր հոգին ձեր ամէնէն հանգստութիւն գտեր էր : 14 - Վասն զի ինչ որ ես անոր առջև ձեզի համար պարծենցոյ՝ ամօթով չեղոյ . հապա ինչպէս ամէն բան ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջև պարծենալնիս ալ ճշմարիտ եղաւ : 15 - Նաև անոր սերը աւելի է ձեր վրայ, երբ կը յիշէ ձեր ամէնուն հնազանդութիւնը, թէ ինչպէս վախով ու դողով զանկաւ ընդունեք էք : 16 - Ուստի ուրախ եմ որ ամէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն ունիմ :

ԳԼ Ը

Արդ, եղբայրներ, ձեզի կը ծանուցանենք Աստուծոյ շնորհքը, որ Մակեդոնացուց եկեղեցիներուն տրուած է . 2 - Որ նեղութեան մեծ փորձին մէջ իրենց ուրախութեանը առաւելութիւնը երեւցաւ, և իրենց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առատաձեւութիւն եղաւ : 3 - Վասն զի ես կը վկայեմ որ իրենց կարողութեան չափով՝ ու կարողութենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով, 4 - Շատ աղաչանքով կ'աղաչէին որ տուրքերը ու սուրբերուն համար եղած պաշտօնին մասնակցութիւնը ընդունինք : 5 - Եւ ոչ թէ որչափ մենք կը յուսայինք, հապա անձերնին ալ սուին առաջ Տէրոջը ու երբ մեզի՝ Աստուծոյ կամքովը . 6 - Որ Տիտոսի աղաչեցինք թէ ինչպէս անկաւ առաջուրնէ սկսեց, նոյնպէս ալ ձեր մէջ կատարէ այդ շնորհքն ալ : 7 - Բայց ինչպէս ամէն բանով առատացած էք դուք, (հաւատքով ու խօսքով ու գիտութիւնով և ամէն ջանքով ու ձեզմէ մեր վրայ եղած սիրովը,) նայեցէ՛ որ այդ շնորհքով ալ առատանաք . 8 - Ոչ թէ հրամայելով մը կը գրուցեմ, հապա ուրիշներուն ջանքին պատճառաւ, և որպէս զի փորձեմ ձեր սիրոյն հարազատութիւնը : 9 - Քանզի դուք գիտէք մեր Տէր

Յիսուս Քրիստոսի շնորհքը, թէ ինք ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր, որպէս զի դուք անոր աղքատանալովը հարստանաք : 10 - Եւ այս բանին մէջ խրատ մը կու տամ : վասն զի ասիկա ձեր օգտին համար է, դուք որ ոչ թէ միայն ընելը, հապա կամենալն ալ առաջուրնէ սկսեցիք անցած ասրուրնէ հետէ . 11 - Ուստի հիմա ընելն ալ կատարեցէք, որպէս զի ինչպէս կամքի յօժարութիւն կայ, նոյնպէս ալ ընելը ունեցածներնուդ չափովը ըլլայ : 12 - Վասն զի եթէ առաջ յօժարութիւնը ըլլայ՝ քաջ ունեցածին չափովը ընդունելի է, ու ոչ թէ չունեցածին չափովը : 13 - Վասն զի ոչ թէ ե՞ ուրիշներուն հանգստութիւն կ'ապրէ ու ձեզի նեղութիւն . 14 - Հապա հաւատարութիւնով՝ հիմակուան ատենը ձեր աւելին անոնց պակասութիւնը լծի՛, որպէս զի անոնց աւելին ալ օր ՚ը օգնութիւն ըլլայ ձեր պակասութեանը, որպէս զի հաւատարութիւն ըլլայ . 15 - Ինչպէս գրուած է, թէ Ան որ շատ թողցի՝ չաւելցաւ, ու ան որ քիչ՝ չպակսեցաւ : 16 - Բայց գոհութիւն Աստուծոյ, որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսի սիրաւ ձգեց . 17 - Վասն զի մեր աղաչանքը ընդունեց, և իր յօժարամտութիւնը շատ ըլլալով՝ իր կամքովը ելաւ ձեզի գալու : 18 - Ու անոր հետ զրկեցինք այն եղբայրը, որուն գովութիւնը աւետարանին մէջ է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ : 19 - Եւ ոչ միայն այսքան, հապա նաև եկեղեցիներէն ընարութեամբ մեզի ճամբորդութեան ընկեր ըլլալու այս տուրքերուն մէջ, որ մենք կը ծառայենք Տէրոջը փառքին համար, ու ձեր յօժարութիւնովը : 20 - Բայց այս մասին զգուշութիւն կ'ընէինք, որ չըլլայ թէ մէկը արտա մը դնէ մեր վրայ այս առատութեանը մէջ, որու մենք կը ծառայենք : 21 - Քանզի ոչ թէ միայն Տէրոջը առջև, հապա մարդոց առջև ալ բարի բաներ ընելու հոգ կը տանինք : 22 - Եւ անոնց հետ մեր եղբայրը զրկեցինք, զոր շատ բաներու մէջ փորձելով՝ շատ անգամ յօժարամիտ գտեր ենք, ու հիմա ալ աւելի յօժարամիտ՝ այն մեծ վստահութիւնովը զոր ձեր վրայ ունի : 23 - Բայց եթէ Տիտոսի

*Ո՛հնէ, մեր

համար իջ հարցի, անիկա իմ ընկերու է, և ձեր մէջ իմ գործակիցս . իսկ եթէ մեր եղբայրներուն համար՝ անոնք եկեղեցիներուն զրկածներն են, — Քրիստոսի փառքը : 24 - Ուստի ձեր սիրոյն և մեր ձեր վրայով պարծենալուն ապացոյցը ստանց վրայ ցուցուցէք եկեղեցիներուն առջև :

ԳԼ. Թ

Քանգի սուրբերուն ըլլալու պաշտօնին վրայով ինծի աւելորդ է ձեզի գրել : 2 - Վասն զի գիտեմ ես ձեր յօժարամտութիւնը, որուն վրայով կը պարծենամ ձեզի համար Մակեդոնացուց մէջ, թէ Աքայեցիք անցած տարուրնէ հետէ պատրաստ են . ու ձեր Բարէ նախանձը շատերը գրգռեց : 3 - Եւ «ի» եղբայրները զրկեցի, որպէս զի մեր ձեզի համար պարծենալը այդ մասին մէջ պարապ չելլէ, հարկ պատրաստ գտնուիք, ինչպէս ըսեր եմ . 4 - Որ չըլլայ թէ երբ Մակեդոնացիք ինծի հետ գան ու ձեզ անպատրաստ գտնեն, ալ մենք (որ չըսենք թէ դուք,) ամօթով մնանք այս *պարծանքին վստահութեանը մէջ : 5 - Ուստի հարկաւոր սեպեցի եղբայրներուն աղաչել, որ առաջուրնէ ձեզի գան, ու առաջուրնէ կարգի դնեն այն ձեր առաջուրնէ ծանուցուած ընծան, որպէս զի պատրաստ ըլլայ, այնպէս որ ընծայի պէս ըլլայ, ու ոչ թէ սգահութեան պէս : 6 - Բայց ստիկա իջ շանս-ցանեմ թէ Ան որ խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու ան որ առատութիւնով կը սերմանէ՝ առատութիւնով պիտի հնձէ : 7 - Ամէն մէկը ինչպէս իր սրտովը կը յօժարի՝ Բար-յանքս *այ, ոչ թէ արամութեամբ կամ ստիպմամբ . վասն զի Աստուած յօժարակամ տուողը կը սիրէ : 8 - Բայց կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առատօրէն տալ, որպէս զի ամէն բանի մէջ ամէն տառն բոլոր ձեզի պէտք եղածը ունենալով՝ ամէն բարի գործերով առատանաք . 9 - Ինչպէս գրուած է, Տարածեց « աղքատներուն տուաւ . անոր արգարութիւնը յաւիտեան կը մնայ : 10 - Եւ անիկա որ սերմ ցանս-

դին սերմ կը պարգևէ, *և կերակուրի համար հաց, ձեր սերմանիքը պարգևէ և աւելցնէ», ու ձեր արգարութեան պտուղները շատցնէ . 11 - Որպէս զի ամէն բանի մէջ հարստանաք ամէն կերպ առատութիւնով, որ մեր ձեռքով կը պատճառէ գոհութիւն *ու Աստուծոյ : 12 - Վասն զի այս պաշտօնին մատակարարութիւնը ոչ թէ միայն սուրբերուն պակասութիւնը լեցնելու համար է, հապա նաև աւելի շատցնելու Աստուծոյ գոհութիւն տալը . 13 - Երբ այս յեր պաշտօնին փորձովը փառաւորեն զԱստուած՝ Քրիստոսի աւետարանը խոստովանելունդ հնազանդութեանը համար, և այն առատածեռութեանը համար՝ որով հաղորդակցութիւն կ'ընէք անոնց ու ամէնուն . 14 - Եւ իրենց աղօթքը ձեզի համար «ար-յանէն», փափաք ունենալով ձեր վրայ՝ Աստուծոյ գերազանց շնորհքին համար որ ձեր մէջ է : 15 - Ալ գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգևին համար :

ԳԼ. Ժ

Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ՝ Քրիստոսի հեզութիւնովը ու քողցրութիւնովը, որ երես աւ երես քանս-աթ-արէն խոնարհ եմ ձեր մէջ, բայց հեռուէն կը համարձակիմ ձեզի . 2 - Կ'աղաչեմ որ չըլլայ թէ մօտէն ալ համարձակիմ այն վստահութիւնովը՝ որով միտք ունիմ՝ յանդգնիլ մէկ քանիներուն վրայ, որոնք մեր վրայով այնպէս կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք : 3 - Քանգի թէպէտ մարմնի մէջ կը քալենք, բայց ոչ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընենք . 4 - Վասն զի մեր զինուորութեան պէնքերը մարմնաւոր չեն, հապա Աստուծմէ զօրութիւն առած՝ ամրոցներ քակելու . մենք խորհուրդներ կը քակենք, 5 - Եւ Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտքերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք . 6 - Եւ

*Ո՛հնէ, շանս-ցանէն

*Ո՛հնէ, կերակուրի համար հաց ալ պիտի պարգևէ, և ձեր սերմանիքը պիտի աւելցնէ
 †Ո՛հնէ, պիտի շատցնէ

ԳԼ. ԺԱ

պատրաստութիւն ունինք վրէժ առնելու ամէն անհնազանդութենէ, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ : 7 - Կուրսի երեւոյթի՞ն կը նայիք. եթէ մէկը վստահ ըլլայ իր անձին վրայ՝ թէ ինք Քրիստոսին է, զայս նորէն ինքիւրմէ խորհի՞ որ ինչպէս ինք Քրիստոսին է, նոյնպէս ալ մենք* : 8 - Քանզի եթէ աւելի ալ պարծենալու ըլլամ՝ այս մեր իշխանութեանը վրայով՝ զոր Տէրը մեզի տուաւ՝ ձեզ շինելու և ոչ թէ քակելու համար, պիտի չամչնամ . 9 - Որպէս զի սոյնպէս չսեպուիմ՝ որպէս թէ ես թուղթերով ձեզի վախ մը կը ձգեմ . 10 - Քանզի Աստուծոյ թուղթերը, կ'ըսէ Քիչ, ծանր ու զօրաւոր են, բայց աստուծոյ մարմինն երեւոյթը սկար է, ու խօսքը՝ անարգ . 11 - Այնպիսի մարդը զայս թող խորհի, որ մենք հեռուէն ինչպէս ենք խօսքով մեր թուղթերովը, մօտէն ալ սոյնպէս պիտի ըլլանք դործով : 12 - Վասն զի մենք չենք համարձակիր մեր անձը կշիռքի դնել ու բազդատել ումանց հետ, որ ինքզինքնին կը գովեն. բայց անոնք իրենցմով իրենց անձերը չափելով, և զիրենք իրենց հետ բազդատելով՝ չեն հասկնար : 13 - Բայց մենք չափէ դուրս բաներով պիտի չպարծենանք, հապա այն կանոնին չափովը՝ զոր Աստուած մեզի բաժին տուաւ մինչև ձեզի հասնելու . 14 - Ոչ թէ որպէս թէ մենք ձեզի հասած չենք, ու ինքզինքնին չափէն աւելի կ'երկնցնենք. վասն զի Քրիստոսի աւետարանովը մինչև ձեզի հասանք : 15 - Եւ ոչ թէ չափէ դուրս բաներով ուրիշներուն աշխատանքովը կը պարծենանք, հապա յոյս ունինք որ ձեր հաւատքը աւելնալուն՝ մեր կանոնին չափովը ձեզմով աւելի ընդարձակինք, 16 - Ձեզմէ անդի ի կողմերը աւետարանը քարոզելու, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծենալու ուրիշ մը կանանով : 17 - Բայց ան որ կը պարծենայ՝ թող Տէրոջմով պարծենայ : 18 - Վասն զի ոչ թէ ան որ իր անձը կը գովէ՝ անիկա է ընտրուածը, հապա ան զոր Տէրը կը գովէ :

Երանի՛ թէ քիչ մը ներէիք իմ անմտութեանս . և իրաւցընէ համբերեցէք ինձի : 2 - Վասն զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը. վասն զի ես ձեզ երկան մը նշանցի՝ մտքուր կոյսի մը պէս Քրիստոսի գիմնոց հանելու : 3 - Միայն թէ կը վախնամ՝ չըլլայ թէ ինչպէս օձը կ'ուան խարեց իր խորամանկութիւնովը, նոյնպէս ալ ձեր միտքերը ապականին Քրիստոսի վրայ եղած միամտութենէն : 4 - Վասն զի եթէ մէկը գալու ըլլայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ զոր մենք չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի տունէք՝ զոր չառէք, կամ ուրիշ աւետարան՝ զոր չէք ընդունած, այնպիսիներուն աղէկ կը համբերէիք : 5 - Քանզի ես սոյնպէս կը սեպեմ՝ որ ամէնէն երեւելի աւաքեալներէն բանով մըն ալ պակաս չեմ : 6 - Եւ թէպէտ խօսքի կողմէ անկիրթ եմ, բայց ոչ թէ գիտութեան կողմէ. սակայն ամէն բանի մէջ բողոքովին անձերնիս ձեզի յայտնի ըրինք : 7 - Միթէ յանցածք գործած եղայ՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի, որպէս զի դուք բարձրանաք : 8 - Ուրիշ եկեղեցիները կողոպտեցի, անանջէ թոշակ առնելով ձեզի ծառայելու համար : 9 - Ու ձեր քով գանուած ատենս երբ պակասութիւն մը ունեցայ, չեզէ մէկս'ւն ձանձրութիւն չտուի. վասն զի իմ պակասութիւնս լեցուցին Մակեդոնիայէ եկող եղբայրները. և ամէն կերպով ձեզի ծանրութիւն տալէ իմ անձս պահեցի ու պիտի պահեմ ալ : 10 - Քրիստոսի ճշմարտութիւնը իմ ներսիդիս է, որ սոյս իմ պարծենալս պիտի չխափանուի ինձմէ Աքայիայի կողմերը : 11 - Ինչո՞ւ. որպէս թէ չեմ սիրեր ձեզ. զայն Աստուած գիտէ : 12 - Բայց ինչ որ կ'ընեմ՝ պիտի ընեմ ալ, որպէս զի կարեմ անոնց պատճառը՝ որոնք պատճառ կը փնտռեն, որպէս զի ի՞նչ բանով որ կը պարծենան, իրենք ալ մեզի պէս գլուխուին : 13 - Վասն զի այնպիսիները սուտ աւաքեալներ, խարեայ բանուորներ, ըլլալով, Քրիստոսի աւաքեալներուն կերպարանքը իրենց վրայ կ'առնեն : 14 - Եւ զարմանք մը չէ. վասն զի ինք Աստուծոյ ալ լուսաւոր

*Ո՛հ-ն-ի-ն-է-ն-է-ն, Քրիստոսին ենք

Տրեշտակի կերպարանք կ'առնէ. 15 - Այլ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արգարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. որոնց վերջը իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ: 16 - Գարձեալ կ'ըսեմ, Չըլլայ որ մէկը զիս անմիտ սեպէ, ապա թէ ոչ գտնէ անմիտի մը պէս զիս ընդունեցէք, որպէս զի ես ալ քիչ մը պարծենամ: 17 - Ինչ որ ես կը խօսիմ, ոչ թէ Տէրոջը համար պէս կը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը այդ պարծենալուն վատահոլութիւնովը: 18 - Որովհետեւ շատերը մարմնի կողմանէ կը պարծենան, ես ալ պիտի պարծենամ: 19 - Քանզի դուք իմուտուն ըլլալով, յօժարութեամբ կը համբերէք անմիտներուն: 20 - Վասն զի կը համբերէք, եթէ մէկը ձեզ ծառայեցնէ, եթէ մէկը ձեր ստացուածքը ուտէ, եթէ մէկը ձեզի բան մը առնէ, եթէ մէկը ձեր զբոս հպարտանայ, եթէ մէկը ձեր երեսին զարնէ: 21 - Քամահարանքի ձեռով կը խօսիմ, իբր թէ մենք տկար էինք. բայց ինչ բանով որ մէկը պարծենալու կը համարձակի, (անմտութեամբ կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ: 22 - Անոնք եբրայեցի՞ են, ես ալ. Իսրայելացի՞ են, ես ալ. 23 - Աբրահամի՞ սերունդ են, ես ալ. Քրիստոսի՞ պաշտօնեաներ են, (յիմարաբար կը խօսիմ,) ալ աւելի ես. աշխատանքներով աւելի, ծեծերով ալ աւելի, բանտարկութիւններով աւելի, մահուան վտանգներով շատ անգամ. 24 - Հրեաներէն հինգ անգամ քառասունէն մէկ պակաս թիւ կերայ. 25 - Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւարկութեան հանդիպեցայ. գիշեր մը ու ցորեկ մը ձաղկով անդունդը մնացի. 26 - Ես անգամ ճամբորդութիւններու մէջ շարժուեցայ. գետերէն վտանգներ, աւազակներէն վրտանգներ, ի՞նչ ազգէս վտանգներ, հեթանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովու վրայ վտանգներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ կրեցի. 27 - Չանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ քնահատութեան մէջ, անօթութեան ու ծարաւութեան մէջ, շատ անգամ ծով կենսալու մէջ, ցուրտի ու մերկութեան մէջ էի. 28 -

Չգէ արտաքին նշանները, ամէն օրուան զբաղմունքը, բոլոր եկեղեցիներուն հոգը, վրաս կը դիպուէր: 29 - Ո՞վ կը տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՞վ կը գայթակղի, ու իմ սիրտս չայրիւր: 30 - Եթէ պարծենալ պէտք ըլլայ, տկարութեանս բաներուն վրայ պարծենամ: 31 - Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ սուտ չեմ զրուցեր: 32 - Իամասկոսի մէջ Արեաա թագաւորին ազգապետը զիս բռնել ուզելով Իամասկոսցոց քաղաքը պահապաններ դրեր էր. 33 - Եւ ես պատուհանէ մը զամբիւղով պարսպէն վար թող արուեցայ, ու անոր ձեռքէն փախայ:

ԳԼ. ԺԲ

Պարծենալ իրուցընէ ինծի անօգուտ է. միայն թէ Տէրոջը տեսիլքներուն ու յայտնութիւններուն գամ: 2 - Մարդ մը գիտեմ՝ Քրիստոսով տասնըչորս տարի առաջ, (եթէ մարմինով էր՝ չեմ գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը: 3 - Ու գիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր. Աստուած գիտէ,) 4 - Որ գրախար յափշտակուեցաւ ու լսեց չպատմուելու խօսքեր, զորոնք մարդու արժան չէ խօսիլ: 5 - Ես այնպիսիին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ: 6 - Վասն զի եթէ պարծենալ ալ ուզեմ, անմիտ պիտի չըլլամ, որովհետեւ շիտակը պիտի գրուցեմ. բայց կը խնայեմ ինքնի՞նչ որ չըլլայ թէ մէկը իմ վրաս աւելի համարում ունենայ, քան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ: 7 - Եւ որ չըլլայ թէ ես հպարտանամ խիտ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմինի խոյթոց մը տրուեցաւ, Աստուանայի Տրեշտակ մը, զիս նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ: 8 - Ասոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մէկդի ընէ ինծմէ: 9 - Ու ըսաւ ինծի, իմ շնորհքս հերիք է քեզի, վասն զի

*Ո՞րքա, պէտք է, բայց

իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի. ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի : 10 - Անոր համար հաւնէր եմ ես տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու և նեղութիւններու՝ Քրիստոսի համար. վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն զօրաւոր եմ : 11 - Ես անմիտ եղայ պարծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել, քանզի ես երեւելի առաքեալներէն բանով մը պակաս չգանուեցայ, թէև ես ոչինչ եմ : 12 - Յիրուսի ձեր մէջ առաքեալի նշաններ գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով և սքանչելիքներով ու զօրութիւններով : 13 - Վասն զի ալ ի՞նչ կայ, որով պակաս գանուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն թէ անով որ ես ձեզի ձանձրութիւն չտուի. ներեցէք ինծի այդ յանցանքը :

14 - Ահա այս երրորդ անգամ է որ կը պատրաստուիմ ձեզի գալու. և ես ձեզի ձանձրութիւն պիտի չտամ, վասն զի ձեր «անեցած» չեմ փնտուեր, հապա ձեզ. որովհետև որդիները պարտաւոր չեն ծնողքներուն համար բան դիզել, հապա ծնողքները՝ որդիներուն համար : 15 - Եւ ես մեծ յօժարութեամբ ծախք պիտի ընեմ, ու ծախք պիտի ըլլամ ալ ձեր անձերուն համար, թէպէտև ձեզ աւելի սիրելովս չեմքիչ սիրուիմ ալ :

16 - Սակայն թող ըլլայ որ ես ձեզի ծանրութիւն մը չտաւի, բայց Գոթեհեզ Էթի խորագէտ ըլլալովս նենգութեամբ ձեզ բռնեցի : 17 - Միթէ իմ ձեզի զրկածներէս մէկուն ձեռքով ձեզմէ բան մը քաշեցի՞ : 18 - Տիտոսի ազաչեցի, ու անոր հետ այն եղբայրը զրկեցի. միթէ Տիտոս ձեզմէ բան մը քաշեց. չէ՞ որ երբեք ունայն հողիով քալեցիք, չէ՞ որ նայն ճամբով գոթեցան :

19 - Իարձեալ, կը կարծէք որ ձեր առջև ջատագովութիւն կ'ընենք մեր անձերուն. Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսինք. և ամէն բան, սիրելիներ, ձեր շինութեանը համար է. 20 -

Քանզի կը վախճամ որ չըլլայ թէ երբ գամ՝ ձեզ ուղածիս պէս չգտնեմ, և ես ալ ձեզի ձեր շուղածին պէս գտնուիմ. չըլլայ թէ յէր Դեզ Գոթեհեզ, նախանձներ, սրամտութիւններ, զրգուցութիւններ, չարախօսութիւններ, բանասրկութիւններ, ամբարաւանութիւններ, խուճութիւններ. 21 - Զըլլայ թէ երբ նորէն գամ, իմ Աստուծոս զիս նկունընէ ձեր քով, ու սուգ ընեմ շատերուն համար, որոնք առաջուրնէ մեզք գործեցին, ու չարաշխարհեցին իրենց գործած պղծութեանը և պոռնկութեանը ու զիճութեանը վրայ :

ԳԼ ԺԳ


Այս երրորդ անգամ է որ ձեզի կու գամ. երկու կամ երեք վկաներու բերնէ պիտի հաստատուի ամէն բան : 2 - Առաջուրնէ լսեր եմ՝ և նախ առաջուրնէ կը զրուցեմ (որպէս թէ երկրորդ անգամ ներկայ կը գտնուիմ՝ թէև հիմն հեռուէն կը գրեմ) առաջուան մեղանչողներուն և ուրիշ ամէնուն, որ եթէ նորէն գամ՝ պիտի չխնայեմ. 3 - Որովհետև Քրիստոսի ինծմով խօսելուն ապացոյցը կը փնտուէք, որ ձեր վրայ տկարացած չէ, հապա ձեր մէջ զօրացած է. 4 - Որ թէպէտ խաչուեցաւ տկարութիւնով, բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնով. քանզի մենք ալ թէպէտ կը տկարանանք անով, բայց կենդանի պիտի ըլլանք անոր հետ Աստուծոյ զօրութիւնովը ձեր մէջ : 5 - Փորձեցէք ձեր անձերը թէ հաւատաքին մէջ էք. քննեցէք ձեր անձերը. չէ՞ք զիտեր ինքզինքնիդ, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջ է, միայն եթէ խօսելի չըլլաք : 6 - Իայց կը յուսամ որ պիտի գիտնաք թէ մենք խօսելի չենք : 7 - Եւ կը խնդրեմ Աստուծմէ որ դուք չարութիւն մը չընէք. ոչ թէ որպէս զի մենք ընտիր երեւինք, հապա որպէս զի դուք բարին գործէք, թէև մենք իբրև խօսելի ըլլանք : 8 - Վասն զի ճշմարտութեան դէմ կարողութիւն մը չունինք, հապա ճշմարտութեան համար : 9 - Քանզի ուրախ ենք՝ երբ մենք կը տկարանանք ու դուք զօրաւոր կ'ըլլաք, և մենք ալ այդ ձեր հաստատութեանը համար կ'աղօթենք : 10 - Ուստի զայս կը արեմ ձեզի հեռուէն,

*Ո՞րն է շուքին

որ ըլլայ թէ երբ գամ սաստիկութեամբ վարուիմ այն իշխանութեանը համեմատ, զոր Տէրը ինծի տուաւ շինելու և ոչ թէ քակելու համար:

11 - Վերջապէս, եղբայրներ, ողջ եղէք, հաստատ կեցէք, միխթարուեցէք, միաբան եղէք, խաղաղութիւն ըրէք. և սիրոյ ու խաղաղութեան

Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ: 12 - Բարև տուէք իրարու սուրբ համբուրով. բարև կ'ընեն ձեզի բոլոր սուրբերը: 13 - Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ: Ամէն:



Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Գ Ա Ղ Ա Տ Ա Յ Ի Ս



ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, առաքեալ եղած, ոչ թէ մարդոցմէ ու ոչ թէ մարդու ձեռքով, հապա Յիսուս Քրիստոսի ձեռքով, և Հօր Աստուծոյ՝ որ զանիկա մեռելներէն յարուց, 2 - Եւ բոլոր եղբայրները որոնք ինծի հետ են, Գաղատիոյ եկեղեցիներուդ. 3 - Շնորհք և խաղաղութիւն ձեզի Հօր Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէ, 4 - Որ իր անձը տուաւ մեր մեղքերուն համար, որպէս զի մեզ փրկէ հիմակուան շար աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը կամքին համեմատ, 5 - Որու փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

6 - Կը զարմանամ որ այդպէս շուտով ուրիշ աւետարանի կը փոխուիք անկէ՝ որ ձեզ Քրիստոսի շնորհքին կանչեց. 7 - Որ չկայ ուրիշ աւետարան. միայն թէ կան ամանք՝ որոնք ձեզ կը խռովեցնեն, ու կ'ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարել: 8 - Բայց եթէ մենք կամ երկինքէն հրեշտակ մը գոյ, աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ զոր մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ: 9 - Ինչպէս առաջ ըսինք, հիմա ալ նորէն կ'ըսեմ, եթէ մէկը ձեր ընդունածէն ուրիշ աւետարան քարոզելու ըլլայ ձեզի, նզովեալ ըլլայ: 10 - Քանզի հիմա մարդի՞կ կը հաճեցընեմ թէ զԱստուած. կամ մարդո՞ց

հաճելի ըլլալ կը փնտռեմ. քանզի եթէ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ալ Քրիստոսի ծառայ չէի ըլլար:

11 - Կը ծանուցանեմ ձեզի, եղբայրներ, այն աւետարանը որ ինծմէ քարոզուեցաւ, թէ անիկա մարդու բան չէ: 12 - Որովհետեւ ես ալ մարդէ չառի զանիկա, և ճշե՛ն ու շարվեցայ, հապա Յիսուս Քրիստոսի յայտնութեանէն: 13 - Վասն զի լած էք դուք իմ առաջուան ժամանակի վարմանքս Հրեութեան մէջ, ի՛նչպէս չափէ դուրս կը հալածէի Աստուծոյ եկեղեցին, ու կը կործանէի զանիկա. 14 - Եւ իմ հայրենի տւանդութիւններուս խիստ նախանձաւոր ըլլալով՝ իմ ազգիս մէջ եղած շատ հասակակիցներէս աւելի յառաջադէմ էի Հրեութեան մէջ: 15 - Բայց երբ ուզեց Աստուած, (որ սրտեց պիս իմ մօրս որովայնէն, և իր շնորհքովը դի՛ւ կանչեց,) 16 - Ինծի իր Որդին յայտնել, որպէս զի զանիկա հեթանոսներուն մէջ քարոզեմ, մեկէն ի մեկ բան մը չիմացուցի մարմինին ու արիւնին, 17 - Ոչ ալ Երուսաղէմ ելայ ինծմէ առաջ առաքեալ եղողներուն քով, հապա Արաբիա գացի, ու նորէն Իամուսկոս դարձայ: 18 - Եւսքը երեք տարիէն ետեւ Երուսաղէմ ելայ Պետրոսը տեսնելու, և տասնըհինգ

կամ, ինծմով

օր անոր քով կեցայ . 19 - Սակայն առաքելայնքէն ուրիշ մէկը չտեսայ , բայց միայն Յակոբոս , Տերոջը եղբայրը : 20 - Բայց զայս որ կը գրեմ՝ ձեզի՝ ահա Աստուծոյ առջև ինչ հարգեմք , որ սուտ չեմ գրուցեր : 21 - Անկէ ետքը եկայ Սիւրիայի ու Կիլիկիայի կողմերը . 22 - Եւ զիս դեմ առ դեմ չէին ճանչնար այն եկեղեցիները՝ որոնք Հրէաստանի մէջ էին Քրիստոսով . 23 - Միայն թէ անոնք լսած էին թէ Ան որ աստեօք մեզ կը չալածէր , չիմա ինք այն հաւատքը կը քարոզէ՝ զոր աստէն մը կը կործանէր . 24 - Ու ինծմով զԱստուած կը փառաւորէին :

ԳԼ . Բ

Ետքը տասնըջորս տարիէն ետև նորէն Երուսաղէմ՝ ելայ Բառնարասի հետ՝ Տիտոսն ալ մէկտեղ առնելով : 2 - Ու ելայ յայտնութիւնով , և անոնց իմացուցի այն աւետարանը՝ զոր հեթանոսներուն մէջ կը քարոզեմ , բայց առանձին անոնց՝ որոնք երեւելիներ էին , որ չլլայ թէ պարսպ տեղ վազեմ կամ վազած ըլլամ : 3 - Բայց ոչ թէ ինծի հետ եղող Տիտոսն ալ , որ Յոյն էր , պարտաւորեցաւ թլփատուիլ . 4 - Մանաւանդ ներս սպրդող սուտ եղբայրներուն համար՝ որոնք ասհելով ներս մասն Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու համար , որպէս զի մեզ ծառայեցրնեն . 5 - Որոնց քիչ մը աստէն անգամ մտիկ չըրինք հնազանդելու , որպէս զի աւետարանին ճշմարտութիւնը հաստատուն մնայ ձեր մէջ : 6 - Բայց անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ , ինչ որ էին՝ այն իմ հոգս չէ . Աստուած մարդոց աչառութիւն չըներ . վասն զի «յնչէն» կարծուածները բան մը չիմացուցին ինծի : 7 - Հապա անոր հակառակը՝ երբ տեսան որ անթլփատներուն աւետարանը ինծի յանձնուած է , ինչպէս Պետրոսի ալ թլփատուածներունը , 8 - (Վասն զի ան որ Պետրոսի յաջողեց թլփատուածներուն առաքելութիւն ընել , ինծի ալ յաջողեց հեթանոսներունը ,) 9 - Ու երբ ինծի տրուած շնորհքը գիտցան Յակոբոս ու Կեփաս և Յովհաննէս , որոնք սիւներ սեպուած էին , աջ ձեռքերնին տուին ինծի ու Բառնարասի ինչպէս հազար-

դակցութեան , որպէս զի մենք հեթանոսներուն մէջ էրինք , ու անոնք՝ թլփատուածներուն : 10 - Միայն թէ ինչպէս որ աղքատները յիշեմք . զոր ես ալ փոյթ ունեցայ այն բանը ընելու : 11 - Բայց երբ Պետրոս Անտիոք եկաւ , ես անոր դեմ կեցայ . որովհետև ինք մեղադրուելու էր : 12 - Վասն զի դեռ Յակոբոսի քովէն մէկ քանի հոգի չեկած , ինք հեթանոսներուն հետ «խորհար» կ'ուտէր . բայց երբ եկան՝ մէկդի կը քաշուէր , և ինքզինք կը վատէր , վախնալով անոնցմէ՝ որոնք թլփատուածներէն էին : 13 - Եւ անոր հետ կեղծաւորեցան միւս Հրէաներն ալ , այնպէս որ Բառնարաս ալ անոնց կեղծաւորութեանը ծռեցաւ : 14 - Բայց ես երբ տեսայ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ շիտակ չեն քալեր , ամէնուն առջև Պետրոսի գրուցեցի , եթէ դուն , որ Հրէայ ես , հեթանոսի պէս ու ոչ թէ Հրէայի պէս կ'ապրիս , ինչպէս հեթանոսները կը ստիպես Հրէայի պէս վարուելու : 15 - Մենք որ բուն Հրէայ ենք , և ոչ թէ հեթանոսներէն մեղաւորներ , 16 - Զայս գիտնալով որ մարդ օրէնքին գործերէն չկրնար արդարանալ , հապա Յիսուս Քրիստոսի հաւատաքէն , մենք ալ Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որպէս զի արդարանանք Քրիստոսի հաւատաքէն , և ոչ թէ օրէնքին գործերէն , որովհետև օրէնքին գործերէն մարմին մը պիտի չարդարանայ : 17 - Իսկ եթէ մենք , որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ , մեղաւոր գանուինք , ուրեմն Քրիստոս մեղքի պաշտօնեայ եղաւ . քա՛ւ լիցի : 18 - Քանզի եթէ իմ քակած բաներս նորէն կը շինեմ , իմ անձս յանցաւոր կը ցուցնեմ : 19 - Վասն զի ես օրէնքով մեռայ օրէնքին , որպէս զի Աստուծոյ կենդանի ըլլամ : 20 - Քրիստոսի հետ խաչը ելայ . և ալ կենդանի եմ ոչ թէ ես , հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս . բայց ես որ հիմա մարմինովս կ'ապրեմ՝ Աստուծոյ Որդւոյն հաւատաքովը կ'ապրեմ , որ զիս սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց : 21 - Ես Աստուծոյ շնորհքը չեմ խափաներ . վասն զի եթէ արդարութիւնը օրէնքէն էր , ուրեմն Քրիստոս պարսպ տեղ մեռաւ :

ԳԼ. Գ

Ով անմիտ Գաղատացիներ, ո՞վ ձեզ հրապուրեց* . որոնց աչքերուն առջև Յիսուս Քրիստոս ձեր մէջ խաչը ելած նկարագրուեցաւ : 2 - Ասիկա միայն կ'ուզեմ ձեզմէ սորվիլ . Օրէնքի՞ն գործերովը դուք Հոգին առիք՝ թէ հաւատաքին լսելովը : 3 - Այդչափ անմիտ էք . հոգիով սկսեցիք, ու հիմա մարմինով կը վերջանաք : 4 - Այնչափ դիպուածները պարտաւոր տեղ ձեր վրայէն անցան, (եթէ պարտաւոր ըլլայ ալ) : 5 - Ուստի ան որ ձեզի Հոգին բաշխեց և ձեր մէջ զօրութիւններ գործեց, օրէնքի՞ն գործերովն էր՝ թէ հաւատաքին լսելովը : 6 - Ինչպէս Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու անոր արդարութիւն սեպուեցաւ : 7 - Ուրեմն գիտցէք թէ անոնք որ հաւատաքէն են՝ անոնք են Աբրահամի որդիները : 8 - Եւ գիրքը առաջուրնէ գիտնալով թէ Աստուած հեթանոսները հաւատաքով կ'արդարացնէ, առաջուրնէ աւետիս տուաւ Աբրահամի, թէ Քեզմով պիտի օրհնուին բոլոր ազգերը : 9 - Ուստի անոնք որ հաւատաքէն են, կ'օրհնուին հաւատացեալ Աբրահամի հետ : 10 - Վասն զի անոնք որ օրէնքին գործերէն են, անէծքի տակ են . վասն զի գրուած է թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ : 11 - Եւ թէ օրէնքով մէկը չկրնար արդարանալ Աստուծոյ առջև, այն յայտնի է . քանզի Արդարը հաւատաքէն պիտի ապրի : 12 - Բայց օրէնքը հաւատաքէն չէ, հապա Ան որ կը կատարէ այն բաները՝ անոնցմով պիտի ապրի : 13 - Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ ինք մեզի համար անէծք ըլլալով . (վասն զի գրուած է թէ Անիծեալ է այն ամէնը՝ որ փայտէ կը կախուի .) 14 - Որպէս զի Աբրահամի օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով . որպէս զի մենք ալ Հոգւոյն խոստամունքը առնենք հաւատաքով : 15 - Մարդու «ովոր»-ի ետեւ կը կրուցեմ . եղբայրներ, իրաւ որ Տալգու մը հաստատած կտակը մէկը չխափաներ, ոչ ալ անոր վրայ ուրիշ

պատուէր մը կ'աւելցնէ : 16 - Արդ խոստամունքները Աբրահամի ու անոր սերունդին եղան, չըսեր, Եւ աս սերունդներուդ՝ որպէս թէ շատերու համար, հապա որպէս թէ մէկի համար, Եւ քու սերունդիդ, որ Քրիստոս է : 17 - Բայց զայս կը կրուցեմ : Այն կտակը, որ առաջուրնէ Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով, օրէնքը չորս հարիւր երեսուն տարիէն ետեւ որ գրուեցաւ, չկրնար անվաւեր ընել խոստամունքը խափանելու համար : 18 - Վասն զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն կ'ըլլայ, ուրեմն ա՛լ խոստամունքէն չէ . բայց Աբրահամի խոստամունքով շնորհեց Աստուած : 19 - Հապա ինչո՞ւ համար է օրէնքը . յանցանքի համար վրայ աւելցաւ, (մինչև գոյ այն սերունդը՝ որու խոստացուեր էր,) հրեշտակներով տրուած՝ միջնորդի մը ձեռքով : 20 - Բայց միջնորդը մէկի միջոցով չէ . սակայն Աստուած մէկ է : 21 - Ուրեմն օրէնքը հակառակ բան չէ Աստուծոյ խոստամունքներուն . քա՛ւ լիցի . քանզի եթէ տրուած ըլլար «ովոր» օրէնք մը, որ կարող ըլլար կենդանի ընել, այն ապէն իրաւցընէ արդարութիւնը օրէնքէն կ'ըլլար : 22 - Բայց գիրքը ամէնը մեղքի տակ գոցեց, որպէս զի խոստամունքը Յիսուս Քրիստոսի հաւատաքովը տրուի հաւատացեալներուն : 23 - Բայց քանի որ հաւատաքը չէր եկած, օրէնքին տակ գոցուած կը պահուէինք, «ովոր»-ով այն հաւատաքին որ պիտի յայտնուէր : 24 - Ուրեմն օրէնքը մեր դատարարակը եղաւ՝ մեզ Քրիստոսի բերելու, որպէս զի մենք հաւատաքով արդարանանք : 25 - Բայց երբ հաւատաքը եկաւ, ալ դատարարակի տակ չենք : 26 - Վասն զի ամէնդ ալ Աստուծոյ որդիներ էք, Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատաքով : 27 - Քանզի դուք ամէնդ որ Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը վրանիդ հագած էք . 28 - Այսպէս որ ոչ Հրեայ կայ, ոչ ալ Յոյն . ոչ ծառայ կայ, ոչ ալ ազատ . ոչ արու կայ, ոչ ալ էգ . վասն զի դուք ամէնդ ալ մէկ էք Քրիստոս Յիսուսով : 29 - Ապա եթէ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամի սերունդն էք, ու խոստամունքին նայելով ժառանգներ :

*Ո՞ւրեք է՝ «-ելցնել», ճշմարտութեանը չհնարանդիլ

ԳԼ. Գ

Բայց զայս կը զրուցեմ, որչափ ժամանակ որ ժառանգը աղայ է, ծառայէ տարբերութիւն մը չունի, թէեւ ամէնուն տէրն է. 2 - Հապա խնամակալներու ու հոգաբարձուներու տակ է, մինչև հօրը որոշած ժամանակը: 3 - Նոյնպէս մենք ալ երբ աղայ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ծառայ եղած էինք: 4 - Բայց երբ ժամանակը լեցուեցաւ, զրկեց Աստուած իր Որդին՝ որ կնոջմէ եղաւ, «- օրէնքին տակ մտաւ. 5 - Որպէս զի օրէնքին տակ եղողները փրկէ, որպէս զի մենք որդեգրութիւնը ընդունինք: 6 - Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդւոյն Հոգին՝ *ձեր սիրտերուն մէջ զրկեց, որ կ'աղաղակէ Աբրա Հայր: 7 - Ուստի ա՛լ ծառայ չես, հապա որդի. և եթէ որդի, ա՛լ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով: 8 - Բայց այն ատեն որ չէիք գիտեր զԱստուած, կը ծառայէիք անոնց՝ որոնք ի բնէ Աստուածներ չէին: 9 - Սակայն հիմա որ ճանչցուք զԱստուած, մանաւանդ որ դուք Աստուծմէ ճանչցուեցաք, ի՞նչպէս նորէն կը դառնաք այն տկար ու չքաւոր սկզբունքներուն, որոնց նորէն կ'ուզէք ծառայութիւն ընել: 10 - Օրերը կը զանազանէք, ու ամիսները և ժամանակները ու տարիները: 11 - Կը վախնամ՝ ձեզմէ, որ գուցէ պարտապէս ձեր վրայ աշխատած ըլլամ:

12 - Ինծի պէս եղէք, վասն զի ես ալ ձեզի պէս եղայ, եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ. դուք ինծի փնաս մը հասուցած չէք: 13 - Գիտէք դուք որ մարմինիս տկարութիւնովը ձեզի առաջին անգամ աւետարանը քարոզեցի. եւ իմ մարմինիս վրայ չեմ փորձութիւնս: 14 - Չանարգեցիք ու չարհամարհեցիք, հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս զիս ընդունեցիք՝ Քրիստոս Յիսուսի պէս: 15 - Ուրեմն ի՞նչ էր՝ այն ձեր երանութիւնը. քանզի ես կը վկայեմ՝ ձեզի, որ եթէ կարելի էր, ձեր աչքերը պիտի հանէիք ու ինծի տայիք: 16 - Ուստի ձեր թշնամի՞ն եղայ ձեզի ճշմարիտը խօսելու համար: 17 - Ձեզի նախանձաւոր են անոնք՝ ոչ թէ բա-

րիին, և կ'ուզեն *ձեզ արգիլել, որպէս զի իրենց նախանձաւոր ըլլաք: 18 - Սակայն աղէկ է ամէն ատեն բարիին նախանձաւոր ըլլալ, ու ոչ թէ միայն երբ ձեր մէջ ըլլամ: 19 - Իմ որդեակներս, որ ձեզմով նորէն ծննդաւորան ցաւ կը քաշեմ, մինչև Քրիստոս ձեր մէջ ձեւակերպի, 20 - Կ'ուզէի հիմա ձեր մէջ ներկայ ըլլալ, ու փախել իմ ձայնս. վասն զի ես ձեր վրայով տարակուսած եմ:

21 - Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակ կ'ուզէք ըլլալ, օրէնքը չէ՞ք լսեր: 22 - Վասն զի գրուած է թէ Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ աղախինէն, ու միւրը՝ ազատ կնոջմէն: 23 - Բայց ան որ աղախինէն էր, մարմնի կողմանէ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն՝ խոստմունքին համեմատ: 24 - Այս բաները այլաբանօրէն կը մեկնուին. վասն զի ասոնք են երկու կտակարանները, մէկը Սինա լեռնէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի, որ է Հագար. 25 - Վասն զի Հագար Աբրախայի մէջ Սինա լեռն է, և կը համեմատի հիմակուան Երուսաղէմի, որ իր զաւակներով մէկտեղ կը ծառայէ: 26 - Բայց վերի Երուսաղէմը ազատ է, որ մեր Գամէնուն մայրն է: 27 - Վասն զի գրուած է, Ով չճնանող ամուլ, ցնծասով ծննդական ցաւ չքաշող, գոչէ և աղաղակէ. քանզի երեսէ ձգուածին աղաքները այր ունեցողին՝ Գառնիբէն շատ պիտի ըլլան: 28 - Ուստի մենք, եղբայրներ, Իսահակի պէս խոստմունքին որդիներն ենք: 29 - Բայց ինչպէս այն ատեն մարմնի կողմանէ ծնածը կը հալածէր զանիկա որ հոգիին կողմանէ էր, նոյնպէս հիմա ալ: 30 - Սակայն գիտէք ի՞նչ կ'ըսէ. Իսուր հանէ այդ աղախինը ու անոր որդին, վասն զի աղախինին որդին ազատ կնոջը որդւոյն հետ ժառանգութիւն պիտի չառնէ: 31 - Ուստի, եղբայրներ, մենք աղախինին զաւակները չենք, հապա աղախին:

ԳԼ. Ե

Ուստի ամուր կեցէք այն ազատութիւնով, որով Քրիստոս ձեզ ազատեց. և նորէն ծառայութեան լուծի տակ մի մտնէք: 2 - Ահա ես Պողոս կը

*Ո՛հնոյ, մեր
†Կա՛մ, ս՛ր է

*Ո՛հնոյ, մեզ
†Ո՛հնոյ շա՛նին

զրուցեմ՝ ձեզի որ եթէ թլփատուիք , Բրիտանոս ձեզի օգուտ մը չընէր : 3 - Եւ դարձեալ ամէն թլփատուող մարդու կը վկայեմ թէ պարտական է բոլոր օրէնքը կատարել : 4 - Խափանուած էք դուք Բրիտանոսէ , որ օրէնքով արգարանայ կ'ուզէք , -- շնորհքէն ինկած էք : 5 - Վասն զի մենք Հոգիով կը սպասենք արդարութեան յոյսին՝ հաւատքով : 6 - Վասն զի Բրիտանոս Յիսուսի քով ոչ թլփատութիւնը բանի մը կարող է , ոչ ալ անթլփատութիւնը , հապա հաւատքը , որ սիրով ի գործ կը դրուի : 7 - Իսկ աղէկ կը վազէիք . ո՞վ ձեզ ետ կեցուց՝ որ ճշմարտութեան չհնազանդիք : 8 - Այս դրդումը անկէ չէ՝ որ ձեզ կանչեց : 9 - Քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ : 10 - Բայց ես յոյս ունիմ՝ ձեր վրայ Տէրօջմով , որ ուրիշ կերպ բան մը պիտի չխորհիք . և ան որ ձեզ կը խռովեցնէ , դատապարտութիւն պիտի կրէ՝ ով որ ըլլայ : 11 - Ասկայն , եղբայրներ , եթէ ես տակաւին թլփատութիւն կը քարոզեմ , ալ ինչո՞ւ կը հալածուիմ . ուրեմն խաչին գայթակղութիւնը խափանուած է : 12 - Երանի՛ թէ բոլորովին կարուէին անոնք որ ձեզ կը խռովեցնեն :

13 - Վասն զի դուք ազատութեան կանչուած էք , եղբայրներ . միայն թէ չե՛ր ազատութիւնը մարմնի ցանկանալէն -- պատճառ չըլլայ , հապա սիրով իրարու ծառայութիւն ըրէք : 14 - Վասն զի բոլոր օրէնքը այս մէկ խօսքին մէջ կը կատարուի , թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս : 15 - Ապա եթէ իրար խածնէք և ուտէք , զգոյշ կեցէք որ չըլլայ թէ իրարմէ սպառիք : 16 - Միայն թէ զայս կը զրուցեմ . Հոգիով գացէք , ու մարմինին ցանկութիւնը պիտի չկատարէք : 17 - Վասն զի մարմինը կը ցանկայ հոգիին հակառակ , ու հոգին՝ մարմինին հակառակ . և ասոնք իրարու հակառակ են , որ չըլլայ թէ ինչ որ կ'ուզէք՝ զայն ընէք : 18 - Բայց եթէ Հոգիէն կ'առաջնորդուիք , այ օրէնքին տակ չէք : 19 - Արդ մարմինին գործերը յոյսնի են , որ ասոնք են . շնութիւն , պաշտութիւն , պղծութիւն , գիծութիւն , 20 - կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ , կոխներ , նախանձներ , բարկութիւններ , հակառակութիւններ ,

երկպառակութիւններ , բաժանումներ , 21 - Չար նոյաւածքներ , մարդասպանութիւններ , գինովութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են . զոր հիմակուրնէ ես ձեզի կը զրուցեմ , ինչպէս առաջուրնէ ալ կը զրուցէի , որ այսպիսի բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն : 22 - Բայց Հոգիին պառզը այս է . սէր , խնդութիւն , խաղաղութիւն , երկայնամտութիւն , 23 - Քաղցրութիւն , բարութիւն , հաւատարմութիւն , հեզութիւն , ժուժկայութիւն . այսպիսի բաներու գէմ օրէնք չկայ : 24 - Եւ անոնք որ Բրիտանոսներն են՝ էրէնց մարմինը խաչ հանեցին Բնական կիրքերով ու ցանկութիւններով մեկտեղ : 25 - Եթէ Հոգիով կ'ապրինք , Հոգիին համեմատ քայլենք : 26 - Սնապարծ չըլլանք՝ մեկզմէկ զրգուելով -- իրարու վրայ նախանձելով :

ԳԼ. 9

Եղբայրներ , եթէ մէկը յանկարծ ինչ և իցէ յանցանքով բռնուելու ըլլայ , դուք որ հոգևոր էք , այնպիսին հեզութեան հոգիով ուղղութեան բերէք . քու անձիդ ալ զգուշութիւն րրէ որ չըլլայ թէ փորձութեան մէջ իյնաս : 2 - Իրարու նեղութիւնները կրեցէք , և այնպէս Բրիտանոսի օրէնքը կատարեցէք : 3 - Քանզի եթէ մէկը ինքզինք բան մը ըլլալ կը սեպէ ու չէ , անիկա իր անձը կը խաբէ : 4 - Բայց ամէն մարդ իր գործը թող կշուէ , ու ետքը միայն իր անձին վրայ պարծանք ունենայ , և ոչ թէ ուրիշի վրայ : 5 - Վասն զի ամէն մէկը իր բեռը պիտի կրէ :

6 - Խօսքին աշակերտութիւն ընողը ե՛ր վարդապետը ամէն բարի բաներու մասնակից ընէ : 7 - Մի խաբուիք , Աստուած ծաղր չըլլար : 8 - Վասն զի ինչ որ մարդ կը սօրմանէ , նոյնը պիտի հնձէ . ան որ իր մարմինին կը սերմանէ , այն մարմինէն սպականութիւն պիտի հնձէ . ու ան որ Հոգիին կը սերմանէ , այն Հոգիէն յաւիտեանական կեանք պիտի հնձէ : 9 - Բայց բարի գործելէն չձանձրանանք , քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք՝ եթէ չթույնանք : 10 - Ուստի քանի որ ժամանակը ձեռքերնիս է , բարիք ընենք

ամէնուն, մանաւանդ հաւատքին ընտանիներուն:

11 - Նայեցէք՝ ի՛նչպիսի գիրերով գրեցի ձեզի իմ՝ ձեռքովս: 12 - Որոնք որ կ'ուզեն մարմնի կողմանէ բարի երևնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ թլփատուիք, միայն որ Քրիստոսի խաչին համար չհալածուին: 13 - Քանզի անոնք ալ որ թլփատուած են, իրենք օրէնքը չեն պահեր, հապա կ'ուզեն որ դուք թլփատուիք, որպէս զի իրենք ձեր մարմինով պարծենան: 14 - Բայց ես՝ քա՛ւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որով աշխարհ ինձի խաչը ելած

է, ես ալ աշխարհի: 15 - Վասն զի Քրիստոս Յիսուսով ոչ թլփատուիմք իւր բան մըն է, ոչ ալ անթլփատուիմք, հապա նոր ստեղծուած ըլլալէ քա՛ւ: 16 - Եւ ան ամէնք որ այս կանոնին համեմատ կը քալեն, խաղաղութիւն ու սղորմութիւն ըլլայ անոնց վրայ, ու Աստուծոյ Իսրայէլին վրայ: 17 - Ասկէ ետեւ մէ՛կը զիս թող չյոգնեցնէ. վասն զի ես Տէր Յիսուսի վերքի նշանները իմ մարմնիս վրայ կը կրեմ: 18 - Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ: Ամէն:



Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌԵՓԵՍԱՅԻՍ



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքելալը Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն և Քրիստոս Յիսուսի հաւատացողներուն. 2 - Շնորհք և խաղաղութիւն ձեզի՝ Աստուծոյ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

3 - Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամէն հոգևոր օրհնութիւններով երկնաւորներուն մէջ Քրիստոսով. 4 - Ինչպէս մեզ անով աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց, որպէս զի մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջև սիրով.

5 - Եւ առաջուրնէ մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալ Յիսուս Քրիստոսի ձեռքով իր կամքին հաճութեանը պէս, 6 - Իր փառաւոր շնորհքին գովութեանը համար, որով մեզ զարգարեց Սիրելիին ձեռքով. 7 - Որով փրկութիւն ունինք մենք իր արեանը միջոցով, մեզքի թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեան չափովը. 8 - Չոր մեր վրայ աւելցուց բոլոր իմաստութեամբ

ու գիտութեամբ, 9 - Մեզի յայանելով իր կամքին խորհուրդը իր հաճութեանը պէս, զոր *իր մէջ՝ նախատահմաներ էր. 10 - Որպէս զի ժամանակներուն լրանալուն անտեսութեանը մէջ ամէն բան բովանդակէ Քրիստոսով, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ կայ, անով. 11 - Որով մենք ալ ժառանգութիւն առինք, առաջուրնէ որոշուած ըլլալով անոր նախատահմանութիւնովը, որ ամէն բան իր կամքին խորհրդովը ի գործ կը դնէ. 12 - Որպէս զի մենք անոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուրնէ Քրիստոսի վրայ յաւատացողներս. 13 - Որուն վրայ դուք ալ յո՞ւստէ՛ք երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, որու նաև հաւատալով խոստացեալ Սուրբ Հոգւոյն շնորհքովը կնքուեցաք. 14 - Որ մեր ժառանգ ըլլալուն գրաւն է մինչև ստացուածքին փրկութիւնը՝ իր փառքին գովութեանը համար:

*Ո՞ւստէ, անով

15 - Ուստի ես ալ երբ լսեցի Տէր Յիսուսի վրայ ունեցած հաւատքնիդ , ու բոլոր սուրբերուն վրայ յեր - նեցած սէրը , 16 - Չեմ գաղարիր ձեզի համար գոհութիւն ընելէ՝ ձեզ իմ աղօթքներու մէջ յիշելով . 17 - Որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը , փառաց Հայրը , տայ ձեզի իմաստութեան ու յայտնութեան հոգին իր գիտութիւնովը . 18 - Որպէս զի սիրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝ գիտնաք թէ ի՛նչ է անոր ձեզ կանչելուն յայտը , ու ի՛նչ է անոր ժառանգութեանը փառքին ճոխութիւնը սուրբերուն մէջ , 19 - Եւ ի՛նչ է իր զօրութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներու մէջ՝ իր կարող զօրութեանը գործադրութիւնովը , 20 - Չոր Քրիստոսի վրայ ի գործ դրաւ , երբ զանհկա մեռելներէն յարուց , ու նստեցուց իր աջ կողմը երկինքի մէջ 21 - Ամէն իշխանութեան ու պետութեան և զօրութեան ու տէրութեան վրայ , և ամէն անունի վրայ որ կ'անուանի , ոչ թէ միայն այս աշխարհին մէջ , հապա գալիքին մէջ ալ . 22 - Եւ ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց , և զանհկա ամէն բաներու վրայ եկեղեցիին գլուխ դրաւ , 23 - Որ անոր մարմինն է , անոր լրումը՝ որ կը լեցնէ ամէնը ամէն բանի մէջ .

ԳԼ Բ

Եւ դուք որ յանցանքներու և մեղքերու մէջ մեռած էիք , ինչ յեզ ֆինդանայոց . 2 - Որոնց մէջ ատենօք կը քալէիք այս աշխարհին բռնած ճամբովը , այս օգին իշխանութեանը իշխանին «չաճի» պէս , այն ոգիին՝ որ հիմա ապստամբութեան որդիներուն ներսիդին կը ներգործէ . 3 - Որոնց մէջ ատենօք մենք ամէնա ալ կը պարտէինք մեր մարմինին ցանկութիւններովը , և մարմինին ու միտքին ուղածը կը կատարէինք . և բնութեամբ բարկութեան որդիներ էինք՝ ինչպէս ուրիշները . 4 - Բայց Աստուած , որ մեծ է ողորմութիւնով , իր առատ սիրոյն համար , որով մեզ սիրեց , 5 - Երբ յանցանքներու մէջ մեռած էինք , մեզ Քրիստոսի հետ կենդանացուց , (դուք շնորհքով փրկուած էք ,) 6 - Եւ անոր հետ զի յարուց , ու անոր հետ նստե-

ցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով , 7 - Որպէս զի գալու դարերուն մէջ ցուցնէ իր շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի ցոյցած քաղցրութիւնովը : 8 - Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով . և այս ոչ թէ ձեզմէ է , հապա Աստուծոյ պարգևն է . 9 - Ոչ թէ գործերէն , որ մէկը չպարծի . 10 - Վասն զի մենք անոր ձեռագործն ենք , Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար , որոնց Աստուած առաջուրնէ պատրաստեց զի , որպէս զի անոնց մէջ քալենք : 11 - Ուստի միտքերնիդ բերէք որ դուք ատեն մը մարմինով հեթանոսներ ըլլալով , (որոնք անթլփատութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թլփատութիւն կ'ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած ,) 12 - Որ այն ատեն դուք առանց Քրիստոսի էիք , ու հեռացած էիք Իսրայէլի քաղաքակցութենէն , և օտարացած՝ խոսամունքին ուխտերէն , ու յոյս մըն ալ չունէիք , և աշխարհի մէջ անաստուած էիք : 13 - Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ ատեն մը հեռաւոր էիք , մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնովը : 14 - Վասն զի անհկա է մեր խաղաղութիւնը , որ երկուքը մէկ ըրաւ , ու մէջտեղի բաժանող պատը , այսինքն իբրև « հեռեզմ » թշնամութիւնը , իր մարմինովը քակեց , 15 - Եւ հրամաններով եղած պատուիրանքներուն օրէնքը խափանեց . որպէս զի իրմով այն երկուքը նոր մարդ մը հաստատե , ու այսպէս խաղաղութիւն ընէ . 16 - Եւ երկուքն ալ մէկ մարմին եղած հաշտեցնէ Աստուծոյ հետ իր խաչովը . վասն զի անով սպաննեց թշնամութիւնը . 17 - Եւ եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի որ հեռուն էիք , ու անոնց՝ որ մօտ էին : 18 - Քանզի անոր ձեռքով մենք երկուքս ալ մէկ Հոգիով՝ Հօրը մօտենալու «բո՞՞նի»-նը ունինք : 19 - Ուրեմն ա՛լ տակէ ետե դուք օտար ու պանդուխտ չէք , հապա սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ ընտանիքը՝ 20 - Առաքեալներուն ու մարգարէներուն հիման վրայ շինուած , որուն անհիւնին գլուխը Յիսուս Քրիստոս է . 21 - Որով բոլոր շէնքը մէկտեղ յարմարութեամբ կազմուած՝ կ'աճի սուրբ տաճար մը կ'ըլլայ Տէրջմով . 22 -

Որով դուք ալ մեկտեղ կը շինուիք՝ Աստուծոյ բնակարանն ըլլալու Հոգւով Սրբով:

ԳԼ. Գ

Ուստի ես Պողոս, Յիսուս Քրիստոսի Կապուածը ձեզի հեթանոսներուդ համար. 2 - Դուք անշուշտ լսած էք Աստուծոյ շնորհքին անտեսութիւնը, որ ինծի արուած է ձեզի համար, 3 - Թէ ինծի այն խորհուրդը յայտնութիւնով ցուցուեցաւ. (ինչպէս առաջուրնէ ալ ձեզի համառօտաբար գրեցի, 4 - Որով կրնաք կարգալ ու միաք առնել իմ տեղեակ ըլլալս Քրիստոսի խորհուրդին վրայով.) 5 - Որ ուրիշ գարերուն մէջ մարդոց սրդիներուն չերեցաւ, ինչպէս հիմա Հոգւով Սրբով յայտնուեցաւ իր սուրբ առաքեալներուն ու մարգարէներուն. 6 - Որպէս զի հեթանոսները Քրիստոսով ժառանգակից ու մարմնակից և անոր խոստմունքին հաղորդ ըլլան աւետարանով. 7 - Որու ես սպասուոր եղայ՝ Աստուծոյ շնորհաց պարգևին համեմատ՝ որ ինծի արուեցաւ իր զօրութեան ներգործութիւնովը, 8 - (Ինծի՛ որ ամէն սուրբերուն փոքրագոյնն եմ, այս շնորհքը արուեցաւ,) հեթանոսներուն մէջ Քրիստոսի անքննելի ճոխութիւնը քարոզելու, 9 - Եւ ամէնը լուսաւորելու, որպէս զի գիշան թէ ի՞նչ է այն խորհուրդին անօրէնութիւնը՝ որ ի յաւիտենից ծածկուած էր Աստուծոյ քով, որ ամէն բանը ստեղծեց. 10 - Որպէս զի հիմա Աստուծոյ բազմաստեասկ իմաստութիւնը եկեղեցիին ձեռքով յայտնի ըլլայ երկինքը եղող իշխանութիւններուն ու պետութիւններուն, 11 - Իբ յաւիտենական նախասահմանութեանը համեմատ, զոր ըրաւ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով. 12 - Որով մենք ալ համարձակութիւն ու մօտենալու արժանութիւն ունինք վստահութեամբ՝ իրեն հաւատալով:

13 - Ուստի կ'աղաչեմ որ չձանձրանաք իմ նեղութիւններու պատճառաւ, որոնք ձեզի համար են, և որոնք ձեր փառքն են: 14 - Ասոր համար ծունկի վրայ գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը առջև, 15 - Ուրկէ ամէն

ազգաստոյ՝ երկինքի մէջ ու երկրի վրայ անուն կ'առնէ, 16 - Կ'աղաչեմ որ տայ ձեզի իր փառքին ճոխութեանը չափով՝ զօրութիւնով հաստատուիլ իր Հօգիովը ներսի մարգուն մէջ. 17 - Որպէս զի Քրիստոս հաւատաքով ձեր սիրտերուն մէջ բնակի, և դուք սիրով արմատացած ու հաստատուած ըլլաք, 18 - Որպէս զի կարենաք հասկնալ բոլոր սուրբերուն հեռ մեկտեղ, թէ ի՞նչ է լայնութիւնը ու երկայնութիւնը և խորութիւնը ու բարձրութիւնը. 19 - Այսինքն ճանչնալ Քրիստոսի սէրը, որ գիտութենէ գերազանց է, որպէս զի լցուիք Աստուծոյ ամէն լրութիւնովը: 20 - Արդ անոր որ կարող է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՛ զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործուի, 21 - Իրեն փառք եկեղեցիին մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր գարերուն մէջ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳԼ. Գ

Ուստի կ'աղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար կապուած եմ՝ որ դուք այնպէս քալէք՝ ինչպէս կը վայլէ այն կոչումին որով կանչուեցաք, 2 - Բոլոր խոնարհութիւնով ու հեղութիւնով, երկայնմտութեամբ. սիրով իրարուներողամիտ ըլլալով. 3 - Զանալով Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել. 4 - Մէկ մարմին ու մէկ հոգի, ինչպէս կանչուեցաք ձեր կոչումին մէկ յուսովը. 5 - Տէրը մէկ է, հաւատաքը մէկ, մկրտութիւնը մէկ. 6 - Մէկ է Աստուած և ամէնուն Հայրը, որ ամէնուն վրայ ու ամէնուն հեռ և ձեր ամէնուն մէջ է: 7 - Բայց մեր ամէն մէկուն ալ շնորհք արուած է Քրիստոսի պարգևին չափովը: 8 - Անոր համար կ'ըսէ թէ Բարձրը ելաւ, գերութիւնը գերի բռնեց ու մարդոց պարգևներ տուաւ: 9 - Այն ելաւ շէնք ինչ է, միայն թէ՛ որ ինք առաջ երկրի վարի կողմերը իջաւ: 10 - Ան որ իջաւ՝ նոյն ինքն է, որ բոլոր երկինքներէն վեր ելաւ, որպէս զի ամէն բան լեցնէ: 11 - Եւ ինք մէկ քանին սուառ առաքեալներ ըլլալու, մէկ

*Ո՛հան+, Յիսուս Քրիստոսով ստեղծեց

*Ո՛հան+, մեր

քանին մարդարէներ, մէկ քանին աւետարանիչներ, մէկ քանին հովիւներ ու վարդապետներ . 12 - Սուրբերուն կատարելութեանը համար , պաշտօնին գործին համար , Քրիստոսի մարմին շինութեանը համար . 13 - Մինչև ամէն ալ հասնինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը , կատարեալ մարդ ըլլալու , Քրիստոսի լման հասակին չափը ունենալու . 14 - Որպէս զի ա՛լ սակե՛ ետև տղաք չըլլանք , երբեք ու վարդապետութեան ամէն հովերէն առդին անդին տարուբերուած՝ մարդոց խաբէութիւնովը , որոնք խորամանկութեամբ կը խաբեն մնլորեցնելու . 15 - Հապա սիրով ճշմարտութեան հետևելով՝ ամէն բան Անով աճեցնենք որ գլուխ է , այսինքն Քրիստոս . 16 - Որմէ բոլոր մարմինը մէկտեղ կազմուած , և ամէն յօդուածները իրարու հաղորդուելով կցուած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով՝ մարմինին աճում կու տայ իրեն շինութեանը համար սիրով :

17 - Ուստի զայս կ'ըսեմ ու Տէրոջմով վկայութիւն կ'ընեմ , որ դուք մէյմըն ալ «յնպէ» չբալէք , ինչպէս ուրիշ հեթանոսները կը քալեն իրենց մտքին ունայնութեանը մէջ . 18 - Որոնց իմացողութիւնը խաւարած է , ու օտարացած են Աստուծոյ կեանքէն , իրենց մէջ եղած տգիտութեան պատճառաւ իրենց սրտին *կուրութեանը համար . 19 - Որոնք անզգայ ըլլալով , ինքզինքնին անառակութեան տալին , ամէն կերպ պղծութիւն գործելու թագահութիւնով : 20 - Բայց դուք այսպէս չտրվեցաք Քրիստոսը , 21 - Եթէ անոր վրայով լսեցիք ու անկէ ստրված էք , ինչպէս ճշմարտութիւնը Յիսուսի մէջ է . 22 - Որպէս զի ձեր վրայէն մէկդի հանէք այն յէր առաջուան վարմունքին պէս եղած հին մարդը , խաբեբայ ցանկութիւններով ապականուածը . 23 - Եւ ձեր միաքին հոգիովը նարսուիք , 24 - Եւ նոր մարդը ձեր վրայ հագնիք , որ Աստուծոյ պարտքին պէս ստեղծուած է արդարութիւնով ու ճշմարտ սրբութիւնով : 25 - Ուստի ստութիւնը մէկդի ձգելով՝ ճշմարտութիւն խօսեցէք ամէն

մէկդ իր ընկերին հետ , վասն զի մենք իրարու անդամներ ենք , 26 - Ե՛րբարկանաք՝ մեզք մի գործէք . արևը ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ : 27 - Ու Սատանայի տեղ մի տաք : 28 - Ան որ գողութիւն կ'ընէր , ալ թող չգողնայ . այլ մանաւանդ աղէկ գործի մը պարապելով՝ իր ձեռքերովը աշխատի , որպէս զի կարող ըլլայ *տալ կարօտ եղողին : 29 - Բնաւ ձեր բերնէն ապականեալ խօսք մը չեղէ , հապա ինչ որ աղէկ է՝ պէտք եղած շինութեանը համար , որպէս զի լսողներուն շնորհք տայ : 30 - Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրամեցնէք , որով դուք կնքուեցաք փրկութեան օրուանը համար : 31 - Ամէն դառնութիւն և բարկութիւն ու սրամտութիւն և աղաղակ ու հայհույութիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւններով մէկտեղ : 32 - Եւ իրարու հետ քաղցր եղէք , զթած , ներելով իրարու , ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի :

ԳԼ Ե

Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս . 2 - Եւ սիրով վարուեցէք , ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց , ու իր անձը մեզի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ : 3 - Բայց պտունրկութեան և ամէն կեղ պղծութեան կամ ագահութեան անունը անգամ չյիշուի ձեր մէջ , (ինչպէս կը վայլէ սուրբերուն ,) 4 - Եւ գարշելի բաներ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն , որ չվայլէր , այլ մանաւանդ գոհութիւն . 5 - *Քանզի զայս գիտէք՝ որ ամէն պտունրկ կամ պիղծ կամ ագահ , որ կուտպաշտ է , Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի : 6 - Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով . վասն զի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ : 7 - Ուստի անոնց հաղորդ մի ըլլաք : 8 - Քանզի ի՛նչ տաէն մը դուք խաւար էիք , բայց հիմա լյս էք Տէրոջմով . լուսոյ որդիներու պէս քալեցէք-

*Յան. ըթութեանը
† կամ, անյագութիւնով

*Յան. հաղորդել
† կամ, Զայս իմանալով՝ գիտնաք

9 - Վասն զի *Հոգւոյն պատուը ամէն
 Կերպարութիւնով, և արդարութիւ-
 նով ու ճշմարտութիւնով է : 10 -
 Քննեցէք ի՞նչ է Տէրոջը հաճելին . 11 -
 Աւ հցորդ մի ըլլաք խաւարին անպատու
 գործերուն , այլ մանաւանդ զանա-
 յանդիմանեցէք : 12 - Վասն զի անոնց
 մէջ գողտուկ գործուած բաները խո-
 սիլն ալ ամօթ է : 13 - Բայց ամէն բան
 յանդիմանուած՝ լուսով յայտնի կ'ըլ-
 լայ . վասն զի ամէն բան որ յայտնի
 կ'ըլլայ՝ լոյս է : 14 - Անոր համար կ'ը-
 սէ : Արթնցիր դուն որ կը քնանաս , և
 կանգնէ մեռելներէն , ու Քրիստոս քե-
 զի լոյս պիտի տայ :

15 - Աւտի նայեցէք թէ ի՞նչպէս զգու-
 շութեամբ պիտի քալէք , ոչ թէ ան-
 միաներու պէս , 16 - Հապա իմաստու-
 ներու պէս . ժամանակը ծախու առէք ,
 վասն զի օրերս չար են : 17 - Անոր հա-
 մար անմիտ մի ըլլաք , հապա իմացէք
 թէ ի՞նչ է Տէրոջը կամքը : 18 - Եւ մի
 գինովաբար գինիով , սրուն մէջ անա-
 ռակութիւն կայ , հապա Հոգիով լեց-
 ուեցէք . 19 - Եւ սաղմոսներով ու օրհ-
 նութիւններով և հոգևոր երգերով ձեր
 մէջ խօսակցելով՝ երգեցէք ու սաղմոս
 բոցէք Տէրոջը ձեր սիրտերուն մէջ : 20 -
 Ամէն ատեն ամէն բանի համար գո-
 հութիւն առէք Աստուծոյ ու Հօրը՝
 մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը :

21 - Իրարու հնազանդ եղէք + Աս-
 տուծոյ վախովը : 22 - Կիները իրենց
 սյրերուն հնազանդ ըլլան՝ որպէս թէ
 Տէրոջը . 23 - Վասն զի այրը կնոջ
 գլուխն է , ինչպէս Քրիստոս ալ եկե-
 ղեցիին գլուխն է , ու ինք մարմինին
 Փրկիչն է : 24 - Աւտի ինչպէս եկեղե-
 ցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսի , նոյն-
 պէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց
 սյրերուն : 25 - Այրեր , սիրեցէք ձեր
 կիները , ինչպէս Քրիստոս ալ սիրեց
 եկեղեցին , ու իր անձը մտանեց անոր
 համար . 26 - Որպէս զի զանկա սրբէ
 ու մաքրէ աւազանին ջրովը՝ խօսքով .
 27 - Որպէս զի ինք իր դիմաց փառա-
 ւոր կեցնէ եկեղեցին , որ արատ մը
 կամ խորշումութիւն կամ ուրիշ ատնց
 պէս բան մը չունենայ , հապա որ սուրբ
 ու անարատ ըլլայ : 28 - Նոյնպէս ալ
 պէտք է որ այրերը իրենց կիները սի-
 բեն իրենց մարմիններուն պէս . ան որ

իր կինը կը սիրէ , իր անձը կը սիրէ .
 29 - Վասն զի մէկը բնաւ իր անձը չա-
 տեր , հապա կը սնուցանէ ու կը խնամէ
 զանկա , ինչպէս *Տէրն ալ եկեղեցին .
 30 - Վասն զի մէկը անոր մարմինին
 անդամներն ենք , անոր մարմինէն ու
 անոր սկորներէն : 31 - Ասոր համար
 մարդը պիտի ձգէ իր հայրը ու մայրը՝
 և իր կնոջ պիտի յարի , ու երկուքը
 մէկ մարմին պիտի ըլլան : 32 - Այս
 խորհուրդը մեծ է , բայց ես կը զրու-
 ցեմ՝ Քրիստոսի ու եկեղեցիին վրայով :
 33 - Սակայն ձեզմէ ամէն մէկն ալ իր
 կինը այնպէս սիրէ՝ որպէս թէ իր ան-
 ձը , ու կինը իր այրէն ակնածու-
 թիւն ընէ :

ԳԼ. 2

Որդիներ , ձեր ծնողներուն հնա-
 զանդ եղէք Տէրոջմով , վասն զի այն է
 արժանը : 2 - Պատուէ քու հայրդ ու
 մայրդ , (որ առաջին պատուիրանքն է
 խտտմունքով ,) 3 - Որպէս զի քեզի աղէկ
 ըլլայ , ու երկար կեանք ունենաս երկ-
 րի վրայ : 4 - Եւ դուք , հայրեր , ձեր սր-
 գինները մի բարկացնէք , հապա զանոնք
 մեծցուցէք Տէրոջը վարժութիւնովը ու
 խրատովը : 5 - Ծառաներ , հնազանդ
 եղէք ձեր մարմնաւոր տէրերուն աջով
 ու դողով՝ ձեր սրտին միամտութիւնու-
 վը , որպէս թէ Քրիստոսի . 6 - Ոչ թէ
 մարդահամոզի պէս աչքի առջև ծա-
 ուսցելով , հապա Քրիստոսի ծառանե-
 րու պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը
 ընելով . 7 - Յօժարութեամբ ծառա-
 յելով որպէս թէ Տէրոջը , ու ոչ թէ
 մարդոց . 8 - Գիտնալով որ ամէն մէկը
 ինչ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն
 պիտի ընդունի , թէ՛ ծառայ ըլլայ և
 թէ՛ ազատ : 9 - 'Իուք ալ , տէրեր ,
 նոյնը բրէք անոնց , ու սպառնալիքը
 թող առէք , գիտնալով որ անոնք ալ
 ձեր ալ Տէրը երկինքն է . ու անոր քով
 աչառութիւն չկայ :

10 - Ալ տակէ ետև , եղբայրներս ,
 զօրացէք Տէրոջմով ու անոր զօրու-
 թեան կարողութիւնովը : 11 - Ձեր
 վրայ հագէք Աստուծոյ սպառազինու-
 թիւնը , որպէս զի կարող ըլլաք Աս-
 տանայի հնարքներուն դէմ դնել : 12 -
 Վասն զի մեր պատերազմը արիւնի ու

*Ո՛հնէ , լուսոյ +Ո՛հնէ , Քրիստոսի


*Ո՛հնէ , Քրիստոս

մարմինի հետ չէ, հապա իշխանութիւններու «- պետութիւններու հետ, և այս *խաւար աշխարհին» իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ոգիներուն հետ: 13-Ասոր համար ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէս զի կարող ըլլաք չարութեան օրը դէմ՝ դնել, 14 - Ու ա՛մէն բանը լմնցնելէ ետե՛ հաստատուն կայնիլ: Ուստի յէր Դեղ կայնեցէք, մէջքերնիդ ճշմարտութեամբ ամուրցընելով, ու արգարութեան զրօհը հագնելով. 15 - Ու ոտքերնուդ հագցընելով խաղաղութեան աւետարանին պատրաստութիւնը. 16 - Եւ ա՛մէն բանին վրայ հաւատաքին վահանը առէք, որով կարող պիտի ըլլաք չարին ա՛մէն կրակոս նետերը մարել. 17 - Եւ փրկութեան սաղաւարտը առէք, ու Հոգիին սուրբ՝ որ Աստուծոյ խօսքն է. 18 - Ա՛մէն աղօթքով ու խնդրումքով ա՛մէն տանն աղօթք քրէք Հոգիով, ու այս բանին վրայ հօկե-

ցէք կատարեալ յարատեւութեամբ ու աղաչանքով՝ բոլոր սուրբերուն համար, 19 - Ինծի համար ալ, որպէս զի ինծի խօսք տրուի որ բերանս բանամ՝ համարձակութեամբ աւետարանին խորհուրդը յայտնելու. 20-Որու համար ես գեպանութիւն կ'ընեմ՝ կապանքովս, որպէս զի անով համարձակութիւն ունենամ՝ խօսելու՝ ինչպէս պէտք է:

21 - Բայց որպէս զի դուք ալ գիտնաք իմ՝ վրայովս՝ թէ ի՛նչ կ'ընեմ՝ ես, ա՛մէն բանը պիտի ցուցնէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշտօնեան Տէրօջմով. 22-Ձոր յապկէս այդ բանին համար ձեզի զրկեցի, որպէս զի գիտնաք դուք մեր վրայով, ու ինք ձեր սիրտերը մխիթարէ:

23 - Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատքով մէկտեղ Հօր Աստուծո՛մէ ու Տէր Յիսուս Քրիստո՛սէ: 24-Շնորհք այն ա՛մէնուն հեա՛ որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կը սիրեն: Ա՛մէն:



Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Փ Ի Լ Ի Պ Պ Ե Յ Ի Ս



ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Տիմոթէոս, Յիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որոնք Փիլիպպեցոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւազներով. 2-Շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծո՛մէ մեր Հօր՛մէն ու Տէր Յիսուս Քրիստո՛սէ:

3 - Կը գոհանամ իմ Աստուծո՛մէն ա՛մէն անգամ՝ որ ձեզ կը յիշեմ, 4 - (Միշտ իմ ա՛մէն խնդրումքիս մէջ, ձեր ա՛մէնուն համար ուրախութեամբ աղօթք կ'ընեմ,) 5-Աւետարանին հաղորդ ըլլալնուդ համար աւաջին օրուրնէ մինչև հիմա. 6 - Այս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջ

բարի գործ մը սկսեց, մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ. 7 - Ինչպէս ինծի արժան ալ է ձեր ա՛մէնուն վրայ այս բանը խորհիլ՝ *ձեզ ի՞նչ որտիս մէջ ունենալու» համար իմ կապերու մէջ, և աւետարանին ջատագովութեանը ու հաստատութեանը մէջ, և ա՛մէնդ ինծի եղած շնորհքին հաղորդ ըլլալնուդ համար: 8 - Քանզի վկայ է ինծի Աստուծո՛մ, որ ի՛նչպէս փափաք ունիմ՝ ձեր ա՛մէնուն վրայ Քրիստոս Յիսուսի գութովը: 9 - Եւ այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հեազհեաէ աւելի շաանայ գիտութիւնով ու բոլոր ընարողութիւնով, 10 - Որպէս զի դուք տարբեր բաները զա-

*Յուս. աշխարհիս խաւարին

*Կամ, զիս յէր սիրտերուն մէջ ունենալնուդ

նազանէք, որպէս զի Դուք Քրիստոսի օրը անկեղծ և աւանց գայթակղութեան ըլլաք . 11 - Արգարութեան պատուհներով լցուած Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ փառքին ու գովեստին համար :

12 - Կ'ուզեմ որ գիտնաք, եղբայրներ, թէ ինչ որ ինծի պատահեցաւ՝ ա՛լ աւելի աւետարանին յաւաքման մեթոտներ պատճառ եղաւ . 13 - Մինչև և իմ կապերս, որոնք Քրիստոսի համար են, բոլոր պաշտօնին մէջ և ուրիշ ամէնուն ալ յայտնի եղան . 14 - Եւ Տէրջմով եղբայրներուն շատերը սիրտ առին իմ՝ կապերէս՝ ա՛լ աւելի համարձակիլ Աստուծոյ խօսքը խօսելու աւանց վախի :

15 - Ոմանք նախանձէ ու հակառակութենէ և ոմանք բարեսիրութենէ շարժեալ Քրիստոսը կը քարոզեն . 16 - *Անոնք հակառակութեան համար Քրիստոսը կը պատմեն, ոչ թէ անկեղծութեամբ, կարծելով վիշտ աւելցնել իմ կապերու վրայ . 17 - Իսկ ասոնք սիրոյ համար, վասն զի գիտեն թէ ես աւետարանին համար պատասխան տալու կեցեր եմ :

18 - Բայց ի՞նչ է . ս'ր կերպով որ ըլլայ, թէ՛ պատճառանքով և թէ՛ ճշմարտութիւնով, Քրիստոս կը պատմուի, ու ասոր վրայ ուրախ եմ՝ և ուրախ ալ պիտի ըլլամ :

19 - Փանզի գիտեմ որ ասոր վախճանը իմ փրկութեան համար պիտի ըլլայ ձեր խրնդրուածքովը, ու Յիսուս Քրիստոսի Հոգւոյն օգնականութիւնովը, 20 - Իմ եւսանդուն ակնկալութեանս ու իմ յոյսիս համեմատ, որ բանտ՝ մը ամօթով պիտի չըլլամ . հապա կատարեալ համարձակութիւնով ինչպէս ամէն աւտեն՝ նոյնպէս ալ հիմա Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի փառաւորի՝ թէ՛ ապրելովս և թէ՛ մեռնելովս :

21 - Վասն զի ինծի համար՝ ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը՝ օգուտ . 22 - Ապա եթէ մարմինի մէջ ապրիլս իմ գործիս պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր ս'րը ընտրեմ :

23 - Երկու կողմանէ ալ նեղը մնացած եմ, մեկնելու ու Քրիստոսի հետ ըլլալու փոփոք ունենալով . քանզի այն շատ աւելի աղէկ է, 24 - Բայց մարմինի մէջ կենալը ձեզի հա-

մար աւելի հարկաւոր : 25 - Եւ այս բանին համալրուած ըլլալով՝ գիտեմ որ ձեր ամէնուն հետ պիտի կենամ ու մնամ, որպէս զի դուք զարգանաք և ուրախ ըլլաք հաւատաքով . 26 - Որպէս զի ձեր պարծանքը իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով՝ իմ նորէն ձեզի գալուս պատճառաւ :

27 - Միայն թէ Քրիստոսի աւետարանին ինչպէս կը վայլէ՝ այնպէս վարուեցէք . որպէս զի եթէ գամ ու ձեզ տեսնեմ, և կամ հեռու ըլլամ, ձեր վրայովը լսեմ որ դուք հաստատուն կը կենաք մէկ հոգիով, ու մէկ շունչով պատերազմակից կ'ըլլաք աւետարանին հաւատքին համար . 28 - Եւ բանով մըն ալ մի զարհուրիք հակառակորդներէն, որ անոնց կորուստին ապացոյց մըն է, ու ձեզի՝ փրկութեան . 29 - Այն ալ Աստուծոյ է . վասն զի ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա անոր համար չարչարուիլ ալ, 30 - Նոյն պատերազմը ունենալով՝ զոր իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը լսէք :

ԳԼ Բ

Աւտի եթէ Քրիստոսով միթաւրութիւն մը կայ, եթէ սիրոյ սփոփանք մը, եթէ Հոգիի հաղորդութիւն մը, եթէ գթութիւն ու ողորմութիւն մը, 2 - Իմ ուրախութիւնս դուք լեցուցէք, նոյն խորհուրդը ունեցէք, միևնոյն սէրը ձեր մէջ ունենալով, մէկ շունչ, մէկ մտածմունք : 3 - Բան մը գրգռութիւնով կամ սնապարծութիւնով մի ընէք . հապա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք . 4 - Միայն անձերնուդ շահը մի նայիք . հապա ամէն մէկը էր ընկերինն ալ : 5 - Ձեզմէ ամէն մէկը՝ նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջ էր . 6 - Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, * յոփշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւատար ըլլալը . 7 - Հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով . և կերպարանքովը մարդու պէս գտնուելով, 8 - Ինքզինք խոնարհեցուց, մինչև մահուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին մահուանը : 9 - Ասոր համար

*Ոմանք 17երորդ դարու 16երորդին աւելի քան

*կամ, յոփշտակելու բան

Աստուած ալ զանհկա խիստ բարձրացուց, ու անոր անուն մը ասուաւ՝ որ ամէն անունէ վեր է. 10-Որպէս զի Յիսուսի անունին ամէն ծուռնկ ծռի, երկնաւորներուն ու երկրաւորներուն և սանգարամետականներուն, 11 - Եւ ամէն լեզու գաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին համար: 12-Ուստի, իմ սիրելիներս, ինչպէս ամէն տառն հնազանդ եղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ա՛լ աւելի հիմա, իմ բացակայութեանս տառն, ահով ու գողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք. 13 - Վասն զի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու բնելը էր հաճութեանը համար: 14 - Ամէն բան առանց տրտուելներու ու վիճաբանութիւններու բրէք. 15 - Որպէս զի ըլլաք ամբիծ ու անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհի մէջ, 16 - Կենաց խօսքը ամուր բռնելով՝ ինծի պանծանք ըլլալու համար Քրիստոսի օրը, թէ պարապ տեղ չքալեցի, և պարապ տեղ չաշխատեցայ: 17 - Բայց թէպէտև ձեր հաւատքին պատարագին ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ և ձեր ամէնուն ուրախակից կ'ըլլամ: 18 - Նոյնպէս ալ դուք ուրախացէք ու ինծի ուրախակից եղէք:

19 - Արդ կը յուսամ՝ Տէր Յիսուսով որ Տիմոթէոսը շուտով ձեզի զրկեմ, որպէս զի իմ սիրտս ալ հանգչի, երբ ձեր վիճակը գիտնամ: 20 - Վասն զի անոր նման սրտակից մէկը չունիմ, որ մտերմաբար ձեզի համար հոգ տանի: 21 - Քանզի ամէնը իրենցը կը փնտռեն՝ ու ոչ թէ Յիսուս Քրիստոսին: 22 - Բայց դուք անոր փորձը գիտէք, որ ինչպէս որդի մը հօրը հեա՝ «յնպէս» ինծի հետ ծառայութիւն ըրաւ աւետարանին մէջ: 23 - Ուստի կը յուսամ՝ զանհկա զրկել շուտ մը՝ իմ ինչպէս ըլլալիքս ստուգածիս պէտ: 24 - Բայց վստահութիւն ունիմ՝ Տէրոջմով՝ որ ես ալ քիչ ստենէն պիտի դամ: 25 - Միայն թէ հարկաւոր սեպեցի հիմա ձեզի զրկել՝ Նպափրոդիտոս իմ եղբայրս և գործակիցս ու զինուորակիցս, ձեր զրկածը ու իմ պիտոյքիս ծառայողը: 26 - Որովհետև ինք ալ շատ փափաք ունէր ձեզ ամէնզ ալ [տեսնելու]. ու

կը տրտմէր, որ դուք լսած էիք թէ ինք հիւանդացաւ: 27 - Եւ արդարև ինք հիւանդացաւ մահուան մօտ, բայց Աստուած ողորմեցաւ անոր. ոչ թէ միայն անոր՝ հապա ինծի ալ, որպէս զի արամութեան վրայ արամութիւն չունենամ: 28 - Ասոր համար աւելի փութով զրկեցի, որպէս զի դուք զանհկա տեսնելով նորէն ուրախ ըլլաք, ու ես առանց արամութեան ըլլամ: 29 - Ուրեմն ընդունեցէք զանհկա Տէրոջմով ամէն ուրախութեամբ, ու այնպիսիները պատուականներու կարգը բռնեցէք. 30 - Քանզի Քրիստոսի գործին համար մինչև մահուան մօտեցաւ՝ իր կեանքը վտանգի մէջ ձգելով, որպէս զի ձեր ինծի ծառայելու պակասութիւնը ինք լեցնէ:

ԳԼ. Գ

Ուստի, իմ եղբայրներս, ուրախ եղէք Տէրոջմով. նոյն բաները ձեզի գրել ինծի ձանձրութիւն չէ, ու ձեզի ապահովութիւն է: 2 - Զգուշացէք շուներէն, զգուշացէք չար մշակներէն, զգուշացէք կրճատութենէն, 3 - Վասն զի թլփատութիւնը մենք ենք, որ հոգիով զԱստուած կը պաշտենք, ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, և մարմինի վրայ չէ վստահութիւննիս: 4 - Թէպէտ ես ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմինի վրայ. եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմինի վրայ, ալ աւելի ես. 5 - Ութ օրուան թլփատուած, Խորայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէ, օրէնքին նայելով փարիսեցի. 6 - Նախանձաւոր ըլլալու կողմանէ՝ եկեղեցին կը հալածէի. օրէնքին արդարութեանը կողմանէ անարատ էի: 7 - Բայց ինչ որ ինծի շահ էր, զանհկա Քրիստոսի համար փնտս սեպեցի: 8 - Եւ իրաւ բոլոր բաներն ալ փնտս կը սեպեմ՝ իմ Տէրոջմ Քրիստոս Յիսուսի գերազանց գիտութեանը համար. որու համար ամէն բանէն զրկուեցայ, և աղտեղութիւն կը սեպեմ, որպէս զի Քրիստոսը շահիմ, 9 - Ու իր մէջ գրտնուիմ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, հապա Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէ է հաւատքով. 10 - Ճանչնալու զանհկա և անոր յա-

բուժեանք զբուժիւնք ու անոր չար-
 չարանքներուն հազորդ ըլլալը, անոր
 մահուան կերպարանքը տունելով. 11 -
 Որ ըլլայ թէ մեռելներուն յարուժեա-
 նը հասնիմ: 12 - Ոչ թէ ես արդէն
 աւեր եմ, կամ արդէն կատարեալ
 եղեր եմ, հապա ետեւէ ինկած եմ որ
 բռնեմ ճշմարտիչ, որու համար ալ
 բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ: 13 -
 Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռներ
 եմ. բայց բան մը կայ, որ ետեւի ե-
 զածները մոռցած եմ, ու առջևի ե-
 զածներուն կը դիմեմ: 14 - Նպատակը
 գիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած
 Աստուծոյ վերին կոչումին մրցանակին
 կը վազեմ: 15 - Ուստի մենք ամէնա
 որ կատարեալ ենք՝ ստիկա խորհիւնք,
 և եթէ բան մը ուրիշ կերպով խորհե-
 լու ըլլաք, զանիկա ալ ձեզի պիտի
 յայտնէ Աստուած: 16 - Միայն թէ
 ինչ աստիճանի որ հասեր ենք, նոյն կա-
 նանին համեմատ քայլենք, նոյն խոր-
 հուրդը ունենանք: 17 - Ինծի նմանող
 եղէք, եղբայրներ, ու նայեցէք անոնց
 որ այնպէս կը քալեն, ինչպէս մեզ
 չեղի օրինակ ունիք: 18 - Վասն զի շա-
 տերը կը քալեն, որոնց համար շատ
 անգամ ձեզի կ'ըսէի, և հիմա լալով
 ալ կը զրուցեմ, այսինքն Քրիստոսի
 խաչին թշնամիներուն համար. 19 -
 Որոնց վերջը կորուստ է, որոնց աստ-
 ուածը իրենց որովայնն է, ու անոնց
 փառքը իրենց ամօթն է, որոնք Բայն
 երկրաւոր բաները կը մոռածեն: 20 -
 Բայց մեր քաղաքականութիւնը եր-
 կինքն է, ուրկէ ալ Փրկչին կը սպա-
 սենք, Տէր Յիսուս Քրիստոսի. 21 - Որ
 պիտի նարագէ մեր խոնարհ մարմինը՝
 իր փառաւոր մարմինին կերպարանակից
 ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող
 է ամէնը իրեն տակ հնազանդեցնելու:

ԳԼ. Դ

Ուստի, իմ սիրելի ու բաղձալի
 եղբայրներս, իմ ուրախութիւնս ու
 պատկա, այսպէս հաստատուն կեցէք
 Տէրոջմով, սիրելիներս:

2 - Եւոզիայի կ'աղաչեմ ու Սիւն-
 տիքի կ'աղաչեմ, որ միւսնոյն խորհուր-
 դը ունենան Տէրոջմով: 3 - Իրաւ քե-
 զի ալ կ'աղաչեմ, ի՞մ հարազատ լծա-

կիցս, դուն ալ օգնական եղիր անոնց,
 որոնք ինծի հետ աշխատեցան աւետա-
 րանին մէջ կղեմէսի և իմ ուրիշ գոր-
 ծակիցներու հետ, որոնց անունները
 կենաց գիրքին մէջ են. 4 - Ուրախ ե-
 ղէք Տէրոջմով ամէն տան. դարձեալ
 կ'ըսեմ, ուրախ եղէք: 5 - Ձեր քաղց-
 րութիւնը ամէն մարդոց թող յայտնի
 ըլլայ. Տէրը մօտ է: 6 - Բանի մը հա-
 մար հոգ մի ընէք. հապա ամէն բանի
 մէջ աղօթքով ու աղաչանքով, գո-
 հութիւնով մէկտեղ, ձեր խնդրուած-
 քը Աստուծոյ յայտնի ըլլայ: 7 - Եւ
 Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն
 միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքե-
 րը Քրիստոս Յիսուսով պիտի պահպա-
 նէ: 8 - Վերջապէս, եղբայրներ, ինչ
 որ ճշմարտութիւնով է, ինչ որ պար-
 կեշտութիւնով, ինչ որ արդարութիւ-
 նով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ
 սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ
 առաքինութիւն և ինչ գովութիւն որ
 կայ, այն բաները խորհեցէք: 9 - Ինչ
 որ սորվեցաք ու աւելք և լսեցիք ու
 տեսաք իմ վրաս, զայն բրէք. և խա-
 ղաղութեան Աստուածը ձեզի հետ
 պիտի ըլլայ:

10 - Մեծապէս ուրախացայ Տէրոջմով,
 որ իմ վրաս ունեցած հոգերնիդ հիմա
 նորոգուեցաւ, ինչպէս կը հոգայիք ալ,
 միայն թէ պատեհութիւն չունէիք: 11 -
 Ոչ թէ կարօտութեան համար
 կ'ըսեմ. վասն զի ես սորվեցայ գոհ ըլ-
 քալ իմ գանուած վիճակիս մէջ: 12 -
 Գիտեմ չքաւորութիւն քաշելը, զի-
 տեմ շատը ունենալը. ամէն բանի մէջ
 ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛
 կշտանալը, թէ՛ անօթենալը, թէ՛ շատ
 ունենալը և թէ՛ պակասութիւն քաշելը:
 13 - Ամէն բանի կարող եմ անով՝ որ
 զիս զօրացուց: 14 - Բայց աղէկ ըրիք որ
 իմ նեղութեանս մէջ ինծի հազորդ
 եղաք: 15 - Իսկ ալ գիտէք, Փիլիպ-
 պեցիներ, որ աւետարանին սկիզբը երբ
 ես Մակեդոնիայէ ելայ, եկեղեցի մըն
 ալ ինծի հետ հազորդութիւն չըրաւ
 տալու և առնելու կողմէ, հապա մի-
 այն դուք. 16 - Որ Թեսաղոնիկէի մէջ
 ալ մէկ երկու անգամ ինծի պէտք ե-
 զածը զրկեցիք: 17 - Ոչ թէ ես տուրք
 կը փնտուեմ, հապա պտուղ կը փրճա-
 ուեմ՝ որ ձեր հաշիւին վրայ աւելնայ:

*Կամ, կենցաղավարութիւնը

*Ո՛հան, Քրիստոսով

18 - Բայց ես ամէն բան առած եմ՝ ու առատօրէն ունիմ՝ լցուած եմ՝ Եպափրօզիտոսի ձեռքով՝ ձեր զբօնները ընդունելով, որ անոյշ հոս մըն է, ընդունելի պատարագ, Աստուծոյ հաճելի : 19 - Եւ իմ՝ Աստուծոս ձեր ամէն պիտոյքը պիտի լեցնէ իր ճոխութեանը չափովը փառքով՝ Քրիստոս Յիսուսի ձեռքով : 20 - Արդ Աստուծոյ ու մեր

Հօրը փառք յաւիտեանս յաւիտեանից : Ամէն : 21 - Բարեւ բրէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յիսուսով : 22 - Ձեզի բարեւ կ'ընեն ինծի հետ եղող եղբայրները : 23 - Ձեզի բարեւ կ'ընեն բոլոր սուրբերը, մանաւանդ անոնք որ Կայսրին սունէն են : 24 - Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ : Ամէն :

Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌԿՈՍԱՅԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս. Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, և Տիմոթէոս եղբայրը, 2-Կողոսայի մէջ եղող սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն Քրիստոսով . 3 - Ենորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծոյ մեր Հօրմէն՝ *և Տէր Յիսուս Քրիստոսէ՝ :

Ամէն ատեն ձեզի համար աղօթք ընելով՝ կը գոհանանք Աստուծոյ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրմէն, 4-Լսելով ձեր հաւատքը՝ զոր Քրիստոս Յիսուսի վրայ, և այն սէրը՝ զոր բոլոր սուրբերուն վրայ ունիք . 5 - Այն յոյսին համար որ երկինքը կը պահուի ձեզի, որուն վրայով առաջուրնէ լսեցիք աւետարանին ճշմարտութեան խօսքովը . 6 - Որ ձեզի հասաւ՝ ինչպէս բոլոր աշխարհ, ու պաղաքեր ըլլալով [կ'աճի], ինչպէս ձեր մէջ ալ, այն օրուրնէ որ դուք լսեցիք ու ճանչցաք Աստուծոյ շնորհքը ճշմարտութիւնով . 7 - Ինչպէս սորվեցաք մեր սիրելի ծառայակցէն Եպափրատէ, որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մըն է Քրիստոսի . 8 - Որ ինք ալ ձեզի պատմեց ձեր սէրը հոգիով :

9 - Անոր համար մենք ալ, այն օրուրնէ որ լսեցինք, չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէ ու խնդրուածք

մատուցանելէ, որ կատարեալ ըլլաք անոր կամքին գիտութիւնովը բոլոր իմաստութիւնով ու հոգեւոր հանճարով . 10 - Որպէս զի դուք Տէրոջը արժանի կերպով քալէք ամէն բանի մէջ զի՛ս հաճեցնելով, ամէն բարի գործերու մէջ պաղաքեր ըլլալով, ու աճեցուն՝ Աստուծոյ գիտութիւնովը . 11 - Իր փառաւոր զօրութեանը համեմատ ամենայն ուժով ուժովցած՝ բոլոր համբերութեան ու երկայնամտութեան համար սերտութեամբ . 12 - Գոհանալով Հօր Առաքելի, որ մեզ լուսոյ մէջ բնակող սուրբերուն վիճակին մասնակից ըլլալու արժանացուց . 13 - Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն, ու իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը փոխադրեց . 14 - Որով մենք փրկութիւն ունինք իր արիւնովը, այսինքն մեզի թողութիւն . 15-Որ աներևոյթ Աստուծոյ պատկերն է, բոլոր ստեղծուածներուն անգրանիկը . 16 - Վասն զի անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երևնան և անոնք որ չեն երևնար, թէ՛ արժաները, թէ՛ ակերութիւնները, թէ՛ պետութիւնները, թէ՛ իշխանութիւնները, բոլոր բաները անով ու անոր համար ստեղծուեցան . 17 - Ու անիկա ամէն բանէ առաջ է, և ամէն բան անով հաստատ կը կենայ . 18 - Եւ անիկա է մարմինին, այսինքն եկեղեցւոյն, զլուսիւր . որ սկիզբն

*Ո՛հնէք զո՛նին

է, մեռելներէն անգրանիկը, որպէս զի
ինք ըլլայ ամէն բանի մէջ նախապա-
տիւ. 19 - Վասն զի Հայրը հաճեցաւ
որ Աստուծոյ թիւն բոլոր լեցունու-
թիւնը անոր մէջ բնակի. 20 - Եւ ու-
նով ամէնը հաշտեցնէ իրեն հետ, խա-
ղաղութիւն ընելով անոր խաչին իւր
Բագնա տրիւնովը, թէ՛ երկրի վրայ և
թէ՛ երկինքի մէջ եղողները:

21 - Եւ ձեզ ալ, որ առեն մը օտա-
րացած էիք, ու չար գործերով թշնա-
միներ՝ յէր խորհուրդներովը, 22 - Հիմա
հաշտեցուց բուն իր մարմինովը՝ մաս-
ուամբ, որպէս զի ձեզ անոր դիմաց
սուրբ ու ամբիժ և անարատ կայնեցնէ.

23 - Եթէ կենաք հաւատքին մէջ հիմ-
նուած ու հաստատ և առանց խախտե-
լու աւետարանին յոյսէն զոր լսեցիք,
որ երկինքի տակ եղած բոլոր ստեղծ-
ուածներուն քարոզուեցաւ, որու ես
Պողոս սպասաւոր եղայ: 24 - Հիմա ու-

րախ եմ ձեզի համար իւր չարչարանք-
ներու վրայ, ու Քրիստոսի իւր ներդա-
թիւններուն պակասութիւնը իմ մար-
մինիս մէջ կը լեցնեմ անոր մարմինին
համար, որ եկեղեցին է. 25 - Որու ես
սպասաւոր եղայ Աստուծոյ տնտեսու-

թիւնովը՝ որ ինծի արուեցաւ ձեզի հա-
մար՝ Աստուծոյ խօսքը լման քարոզելու,
26 - Այն խորհուրդը՝ որ ծածկուած
էր անպարտ զարերէն ու ազգերէն
հետէ, ու հիմա իր սուրբերուն յայտ-
նուեցաւ. 27 - Որոնց ուզեց Աստուած
գիտցնել, թէ ի՞նչ է այս խորհուրդին
փառաւոր ճոխութիւնը հեթանոսնե-
րուն մէջ. որ է Քրիստոս ձեր մէջ,
փառաց յոյսը. 28 - Զոր մենք կը քա-

րողենք, ու ամէն մարդ կը խրատենք,
և կը սորվեցնենք ամէն մարդ բոլոր
իմաստութիւնով, որպէս զի ամէն մարդ
կատարեալ կեցնենք Քրիստոս Յիսու-
սով. 29 - Որու համար ես ալ կ'աշխա-
տիմ, ջանք ընելով իր ներգործու-

թեանը համեմատ, որ զօրութիւնով
իմ մէջս ի գործ կը գրուի:

ԳԼ Բ

Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ
ի՞նչպէս մեծ անձկութիւն ունիմ ձեզի
համար ու Լաւոգիկեցուց համար, ու
ամէն անոնց համար՝ որոնք իմ երեսս
մարմինով չեն առեր. 2 - Որպէս զի
անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով

միացած, ու կատարեալ իմացողու-
թեան բոլոր ճոխութեանը հասնին, այս-
ինքն Հօր Աստուծոյ և Քրիստոսի խոր-
հուրդին գիտութեանը. 3 - Որուն մէջ
իմաստութեան ու գիտութեան բոլոր
զանձերը պահուած են: 4 - Եւ զայս
կ'ըսեմ, որ չըլլայ թէ մէկը հրապու-

րական խօսքերով ձեզ մոլորեցնէ: 5 -
Որ թէպէտ մարմնով հեռու եմ, բայց
հոգևով ձեզի հետ եմ, և կ'ուրախա-
նամ երբ ձեր բարեկարգութիւնը կը
տեսնեմ, ու ձեր հաւատքին հաստա-

տութիւնը՝ Քրիստոսի վրայ: 6 - Ուստի
ինչպէս ընդունեցիք Քրիստոս Յիսուս
Տէրը, անով քալեցէք, 7 - Արմատ կա-
պած ու անոր վրայ շինուած, ու հա-
ւատքին մէջ հաստատուած՝ ինչպէս
սորվեցաք, և անոր մէջ աճեցէք գո-

հուցութիւնով: 8 - Զգուշացէք, ըլլայ
որ մէկը ձեզ գերի վարէ փիլիսոփայու-
թիւնով ու փուճ խաբէութիւնով, որ
մարդոց աւանդութեան պէս է ու աշ-

խարհի սկզբունքներուն պէս, և ոչ թէ
Քրիստոսի լաւագոյն թիւնը պէս. 9 -
Վասն զի անոր մէջ կը բնակի Աստ-
ուածութեան բոլոր լեցունութիւնը
մարմնապէս: 10 - Եւ դուք ալ անով
լցուած էք, որ գլուխ է բոլոր իշխա-

նութեան ու պետութեան. 11 - Որով
դուք անձեռագործ թլփատութիւնով
թլփատուեցաք՝ մեղաց մարմինը մեր-

կանալով, Քրիստոսի թլփատութիւ-
նովը. 12 - Թաղուելով անոր հետ
մկրտութիւնով, որով նաև անոր հետ
յարութիւն առիք Աստուծոյ զօրու-

թեանը հաւատալով, որ զանիկա մե-
ռելներէն յարուց: 13 - Եւ ձեզ, որ
ապի յայտնացանքներու մէջ ու ձեր
մարմինին անթլփատութեանը մէջ մե-

ռած էիք, կենդանացուց անոր հետ.
Դեր ամէն յանցանքները ներեց ձեզի,
14 - Ու հրամաններով եղած ձեզի հա-
կառակ եղող ձեռագիրը, որ ձեզի դէմ
կը կենար, ջնջեց, զանիկա մէջտեղէն
վերցուց, ու խաչափայտին վրայ գա-

մեց, 15 - Եւ իշխանութիւնները ու
պետութիւնները մերկացուց, ու յայտ-
նապէս խայտառակեց՝ յաղթելով ա-
նոնց Գանով:

16 - Ուստի ալ մէկը թող չգատէ
ձեզ ուտելու կամ խմելու, կամ սօ-

*Յան. մարմնի մեղաց
Կամ, իր անձովը

ներու կամ ամսագլուխներու կամ շաբաթներու կողմանէ, 17 - Որոնք գալու բաներուն շաքն են, բայց Բան մարմինը Քրիստոսին է: 18 - Չբլլայ որ մէկը զրկէ ձեզ մրցանակէն, որ ուզէ խնարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով շտեմած բաներուն միջամուխ ըլլալ, իր մարմինն միաքովը փուճ տեղ հպարտանալով: 19 - Եւ չբռնէ գլուխը՝ ուրկէ բոլոր մարմինը յօգուածներով ու խաղերով հաղորդուած ու մէկտեղ կցուած՝ Աստուծոյ աճումովը կ'աճի: 20 - Իսկ եթէ դուք Քրիստոսի հետ այս աշխարհին սկզբունքներէն մեռաք, ալ ինչո՞ւ համար աշխարհի մէջ կենդանի եղողներու պէս այսպիսի կանոններու կը հնազանդիք, ընէ՛ւ՛՛վ, 21 - Մի մօտենար, համը մի տուներ, մի դպչիր, 22 - (Որոնց ամէնը ապականութեան համար են գործածութեամբ,) մարդոց պատուիրանքներուն ու սորվեցուցածներուն համեմատ, 23 - Որոնք իմաստութեան կերպարանք մը ունին ինքնակամ կրօնքով ու խնարհութիւնով և մարմինի չխնայելով, Բայց ոչ թէ պատիւի մը արժանի են, հասարակ մարմինը յագեցնելու չը ծառայեն:

ԳԼ. Գ

Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը: 2 - Վերի բաները մտածեցէք, ոչ թէ այս երկրին վրայի ինները: 3 - Վասն զի դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած է Աստուծոյ քով Քրիստոսի հետ: 4 - Երբ Քրիստոս, մեր կեանքը, յայտնուի, այն տառն դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնուիք:

5 - Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէք. պոռնկութիւնը, պղծութիւնը, անանց կիրքը, չար ցանկութիւնը և ագահութիւնը, որ կուսպաշտութիւն է. 6 - Որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան սրգիններուն վրայ կու գայ. 7 - Որոնց մէջ տառն մը դուք ալ կը քուրէիք, երբ անոնց մէջ կ'ապրէիք: 8 - Բայց հիմա մէկզի ձգեցէք դուք ալ այն ամէնը. բարկութիւնը, սրամտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անհամեստ խօսքերը ձեր բերաններէն:

9 - Իրարու սուտ մի զրուցէք. հին մարդը իր գործերովը ձեր վրայէն հանեցէք. 10 - Եւ հագէք այն նորը գիտութիւնով նորագուած՝ իր Ստեղծողին պատկերին պէս. 11 - Ուր Յիսն ու Հրեայ, թլփատութիւն ու անթլփատութիւն, Բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ. հապա Քրիստոս է ամէնը՝ և ամէն բանի մէջ: 12 - Ուստի Աստուծոյ ընտրեալ սուբեքրու և սիրելիներու պէս ձեր վրայ հագէք գութը, սղորմութիւնը, քաղցրութիւնը, խնարհութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը, 13 - Իրարու համբերելով և իրարու ներելով՝ եթէ մէկը մէկուն դէմ՝ արտունջ մը ունենայ. ինչպէս Քրիստոս ձեզի ներեց, նոյնպէս ալ դուք: 14 - Եւ այս ամէն բաներուն վրայ սերը հագէ՛ք, որ կատարելութեան կապն է: 15 - Ու *Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սիրտերուն մէջ թագաւորէ, որու դուք կանչուեցաք մէկ մարմինով. ու գոհացող եղէք: 16 - Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի առատապէս ամէն իմաստութիւնով՝ իրար սորվեցնելու ու խրատելու՝ սաղմոսներով և օրհնութիւններով ու հոգևոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհքով պատուած օրհնելու: 17 - Եւ ամէն ինչ որ կ'ընէք թէ՛ խօսքով և թէ՛ գործով՝ բոլորը Տէր Յիսուսի անունովը ըրէ՛ք, Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցանելով անոր ձեռքով: 18 - Կիներ, հնազանդ եղէք ձեր սյրերուն, ինչպէս կը վայրէ Տէրօջմով: 19 - Այրեր, սիրեցէք ձեր կիները, ու դառն մի բլլաք անոնց: 20 - Որդիներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողներուն, վասն զի այն է Տէրօջը առջև հաճելի: 21 - Հայրեր, ձեր որդիները մի բարկացնէք, որպէս զի չվհատին: 22 - Ծառաներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տերերուն, ոչ թէ աչքի առջև ծառայելով մարդահաճոսներու պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տէրօջմէ վախնալով: 23 - Ինչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրօջը ու ոչ թէ մարդոց, 24 - Գիտնալով որ ժառանգութեան հատուցումը Տէրօջմէ պիտի ստանէք. վասն զի Տէր Քրիստոսի կը ծառայէք: 25 - Բայց անօրէնը իր անօ-

*ՈՒՆՔ. Քրիստոսի

քենութեան պատիւը պիտի ընդունի, և աշառութիւն չկայ:


ԳԼ. Գ.

Տէրեր, ձեր ծառաներուն իրաւունք ու հաւատարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը:

2 - Շարունակ աղօթքի ետեւէ եղէք, անոր մէջ արթուն մնալով գոհութեամբ: 3 - Աղօթք ըրէք նաև մեզի համար, որպէս զի Աստուած խօսքին գուռը բանայ մեզի Քրիստոսի խորհուրդը խօսելու, որու համար կապուած ալ եմ, 4 - Որպէս զի յայտնի ընեմ զանիկա՝ ինչպէս ինծի կը վայլէ խօսիլ: 5 - Խոհեմութեամբ վարուեցէք դուրսիններուն հետ՝ ժամանակը ծախու առնելով: 6 - Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով, «բոլոր» թէ աղով, համովցած ըլլայ, ու գիտնաք թէ ի՞նչպէս կը վայլէ ձեզի ամէն մէկուն պատասխան տալ:

7 - Ալ իմ վրայովս բոլորը պիտի իմացնէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան ու ծառայակիցը Տէրոջմով: 8 - Չոր այդ բանին համար ձեզի զրկեցի, որպէս զի «գիտնայ ձեր վրայով, ու ձեր» սիրտը մխիթարէ, 9 - Ոնեսիմոս հաւատարիմ ու սիրելի եղբոր հետ մէկտեղ, որ ձեզմէ հին է. իրենք ամէն բանը ձեզի պիտի իմացնեն՝ ինչ որ հոս կայ: 10 -

Բարև կ'ընէ ձեզի Արիստարքոս, իմ գերութեան ընկերս, և Մարկոս, Բառնարասի եղբորդին, (որու համար պատուէր աւիր. եթէ ձեզի գողու ըլլայ, ընդունեցէք զանիկա,) 11 - Եւ Յիսուս՝ որ Յուստոս ըսուած է, որոնք թրփատութենէն են. ասոնք միայն՝ էնչէ գործակից եղան Աստուծոյ թագաւորութեանը մէջ, որոնք ինծի մխիթարութիւն եղան: 12 - Բարև կ'ընէ ձեզի Եպափրաս, Քրիստոսի ծառան, որ ձեզմէ հին է, ամէն ատեն աղօթքի մէջ ձեզի համար ջանք ընելով, որպէս զի դուք կատարեալ ու լման կենաք Աստուծոյ բոլոր կամքին մէջ: 13 - Քանզի անոր վրայով ես կը վկայեմ, թէ շատ նախանձաւորութիւն ունի ձեզի համար ու Լաւոդիկէի և Յերասպոլիսի մէջ եղողներուն համար: 14 - Բարև կ'ընէ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկը ու Դեմոս: 15 - Բարև ըրէք եղբայրներուն, որոնք Լաւոդիկիա են, և Նիմփոսի ու անոր ասանը մէջի եկեղեցիին: 16 - Ու երբ այս թուղթը ձեր մէջ կարդացուի, Լաւոդիկեցոց եկեղեցիին մէջ ալ կարդալ տուէք. և դուք ալ Լաւոդիկիայէ ելա՞ծ Բոզը կարդացէք: 17 - Ու ըսէք Արքիպպոսի, Չգոյշ եղիր քու սպասաւորութեանդ վր Տէրոջմով աւիր, որ զանիկա կատարես: 18 - Այս բարևը իմ ձեռքիս՝ Պողոսին է. իմ կապերս միաքերնիդ թող ըլլան: Շնորհքը ձեզի հետ: Ամէն:



ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՅԻՍ



ԳԼՈՒԻ Ա.

Պողոս և Սիզուանոս ու Տիմոթէոս, Թեազոնիկեցոց եկեղեցիիդ Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով: 2 - Շնորհք և խաղաղութիւն ձեզի

*Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝:

Կը գոհանանք Աստուծմէ ամէն ատեն ձեր ամէնուն համար՝ ձեզ յիշելով մեր աղօթքներուն մէջ: 3 - Անդադար յիշելով ձեր հաւատարին գործը ու սիրոյ աշխատութիւնը և մեր

*Ո՛հնէ, գիտնաք մեր վրայով, ու ինք ձեր

*Ո՛հնէ, շնորհք

Տէր Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօրը առջև. 4 - Եւ գիտնալով, Աստուծոյ սիրուած եղբայրներ, ձեր ընտանիքներ. 5 - Որ մեր աւետարանը ոչ թէ միայն խօսքով եղաւ ձեզի, հապա դօրութիւնով ալ և Հոգւով Սրբով ու շատ ազդուութիւնով, ինչպէս գիտէք ալ թէ ի՞նչպէս կեցանք ձեր մէջ ձեզի համար: 6 - Իսկ ալ մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունեցիք խօսքը շատ նեղութեան մէջ Հոգւոյն Սրբոյ ուրախութիւնովը. 7 - Այնպէս որ դուք օրինակ եղաք բոլոր հաւատացեալներուն, որոնք Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ են: 8 - Վասն զի ձեզմէ հաշակուեցաւ Տէրոջը խօսքը, ոչ թէ միայն Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ, հապա նաև ամէն տեղ ձեր հաւատքը, որ դէպ ի Աստուած է, տարածուեցաւ, այնպէս որ ա՛լ պէտք չէ մեզի բան մը խօսիլ: 9 - Քանզի իրենք կը պատմեն մեզի համար, թէ ի՞նչպէս եղաւ մեր ձեր քով մտնելը, և ի՞նչպէս դուք կուռքերէն Աստուծոյ դարձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու, 10 - Եւ սպասելու անոր Արդւոյն՝ երկինքէն. զոր ինք մեռելներէն յարուց, այսինքն Յիսուսը, որ շո՛ղաակէ մեզ գալու բարկութենէն:

ԳԼ Բ

Քանզի, եղբայրներ, դուք ինքնիրեննիք գիտէք ձեր մէջ մտնելնիս՝ որ պարտապ տեղ չեղաւ. 2- Հապա առաջ Ֆիլիպպէի մէջ շարչարանք կրելով ու անարգուելով, ինչպէս գիտէք, համարձակութիւն ըրինք մեր Աստուծովը ձեզի պատմել Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութեան մէջ: 3 - Վասն զի մեր յորդորանքը ոչ մնորութենէ է ու ոչ պղծութենէ և ոչ խաբէութեամբ. 4 - Հապա ինչպէս մենք Աստուծոյ ընտանեացանք ու աւետարանը ձեզ հաւատացուեցաւ, այնպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, հապա Աստուծոյ՝ որ մեր սիրտերը կը քննէ. 5 - Վասն զի մենք բնաւ շողաքորթութեան խօսքեր չգործածեցինք, ինչպէս գիտէք, ոչ ալ ազատութեան պատճառանք, Աստուած վկայ է, 6 - Եւ մարդոցմէ փառք

չփնտռեցինք, ոչ ձեզմէ՝ ոչ ալ ուրիշներէն, 7 - Թէև կրնայինք իբրև Քրիստոսի աւաքեալներ ծանրութիւն առնել. բայց մենք հեղ եղանք ձեր մէջ, ինչպէս գոյեակ մը իր երախտները կը խնամէ: 8 - Նոյնպէս ալ մենք ձեր վրայ փափաք ունենալով՝ կը յօժարէինք, ոչ միայն Աստուծոյ աւետարանը ձեզի տալ, հապա մեր անձերն ալ. վասն զի դուք մեզի սիրելիներ եղաք: 9 - Քանզի կը յիշէք, եղբայրներ, մեր աշխատութիւնը ու ջանքը, որ ձեզմէ մեկո՛ւն ծանրութիւն չտալու համար գիշեր ու ցորեկ գործելով՝ ձեզի Աստուծոյ աւետարանը քարոզեցինք: 10- Իսկ վկայ էք, և Աստուած ալ թէ ի՞նչպէս սրբութիւնով ու արդարութիւնով և անարատութիւնով վարուեցանք ձեզի հետ՝ որ հաւատացիք. 11 - Ինչպէս գիտէք ալ, որ ձեզմէ ամէն մէկը, ինչպէս հայր մը իր սրգինները՝ 12 - Այնպէս՝ կը յորդորէինք ու կը միմիկարէինք և վկայութիւն կը դնէինք, որպէս զի դուք Աստուծոյ վայլածին պէս քալէք, որ ձեզ իր թագաւորութեանը ու փառքին կանչեց: 13 - Ասոր համար մենք ալ անդադար կը գոհանանք Աստուծոյ, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով ընդունեցիք, ոչ թէ էբբեմարդոց խօսք, հապա, ինչպէս ճշմարտապէս է, Աստուծոյ խօսք, որ նաև կը ներգործէ ձեր մէջ որ կը հաւատաք: 14 - Քանզի դուք, եղբայրներ, նմանող եղաք Աստուծոյ եկեղեցիներուն, որոնք Հրէաստանի մէջ են Քրիստոս Յիսուսով. վասն զի դուք ալ նոյն շարժարանները կրեցիք ձեր համազգիներէն, ինչպէս անոնք ալ՝ Հրեաներէն. 15 - Որոնք Տէր Յիսուսն ալ մեռցուցին՝ մարգարէներն ալ, և մեզ հաւածեցին, ու Աստուծոյ անհաճոյ՝ և բոլոր մարդոց հակառակ են. 16 - Ու մեզ կ'արգիլէն հեթանոսներուն խօսելէ անոնց փրկութեանը համար, որպէս զի իրենց մեղքերուն շո՛ղալը լեցնեն ամէն ատեն. և բարկութիւնը անոնց վրայ հասեր է մինչև վերջը: 17 - Իսկ մենք, եղբայրներ, իրաւքիչ մը ատեն ձեզմէ սրբ մտացինք երեսով ու ոչ թէ սրտով, բայց աւելի ջանացինք ձեր երեսը ատենել մեծ փափաքով: 18 - Անոր համար էս Պո-

*Ո՛հնէ, իրենց մարգարէներն

դաս մէկ երկու անգամ՝ ուղեցի ձեզի գալ, բայց Սատանայ մեզ արգիլեց: 19 - Քանզի ս'վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը կամ Ֆէ պարծանքին պատկը, եթէ ոչ դուք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առջև անոր գալու ատենը: 20 - Որովհետև դուք էք մեր փառքը և ուրախութիւնը:

ԳԼ. Գ

Ուտի ա՛լ չկրնալով աւելի համբերել, ազէկ երեցաւ մեզի մինակ Աթէնք մնալ. 2 - Եւ Տրմոթէոս մեր եղբայրը ու Աստուծոյ պաշտօնեան և մեր գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ, զրկեցինք ձեզ հաստատելու ու մխիթարելու մեր հաւատքին համար. 3 - Որպէս զի այս նեղութիւններուն մէջ Յեզէ մէ՛կը չխախտի. վասն զի դուք ինքնիրեննիդ գիտէք որ մենք այդ բաներուն համար կեցեր ենք: 4 - Քանզի երբ մենք ձեր քով էինք, առաջուրնէ ձեզի կը զրուցէինք թէ նեղութիւններու պիտի հանդիպինք, ինչպէս եղաւ ալ, ու գիտէք: 5 - Ասոր համար էս ալ չկրնալով աւելի համբերել, մարդ զրկեցի ձեր հաւատքը գիտնալու, որ չըլլայ թէ փորձողը ձեզ փորձած ըլլայ, և մեր աշխատութիւնը պարապ ըլլայ: 6 - Բայց հիմա երբ Տրմոթէոս ձեզմէ մեզի եկաւ, ու ձեր հաւատքին և սիրոյն աւետարար մեզի տուաւ, որ ամէն ժամանակ մեր բարի յիշատակը Բրտեթէոս ունիք, և կը փափաքիք մեզ տեսնել, ինչպէս մենք ալ ձեզ, 7 - Ասոր համար, եղբայրներ, ձեր վրայ մխիթարուեցանք մեր բոլոր վիշտերուն ու նեղութիւններուն վրայ ձեր հաւատքովը. 8 - Վասն զի կենդանի ենք մենք, եթէ դուք հաստատուն կենաք Տէրոջմով. 9 - Քանզի ի՞նչ գոհութիւն կրնանք մտաուցանել Աստուծոյ ձեր վրայով, այն ամէն ուրախութեանը համար զոր կ'ուրախանանք ձեզի համար մեր Աստուծոյն առջև, 10 - Եւ գիշեր ու ցորեկ խիստ շատ աղաչանք կ'ընենք ձեր երեսը տեսնելու, ու ձեր հաւատքին պակասութիւնները լեցնելու: 11 - Բայց Աստուածինք ու մեր Հայրը և մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեր ճամբան դէպ թէ ձեզ յաջողէ: 12 - Եւ Տէրը աճեցնէ ու աւելցնէ ձեր սէրը իրարու վրայ ու ամէ-

նուն վրայ, ինչպէս մենք ալ ձեր վրայ Ենիս, 13 - Հաստատելով ձեր սիրտերը անարտա, սրբութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջև, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալու ատենը իր բոլոր սուրբերուն հետ մէկտեղ:

ԳԼ. Ի

Ալ հիմա, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք ու կը յորգորենք Տէր Յիսուսով, որ ինչպէս մեզմէ առիք՝ թէ ի՞նչ պէտք է ձեզի քալել ու Աստուծոյ հաճոյ ըլլալ, ալ աւելի անոր Ֆջ շատնաք: 2 - Քանզի գիտէք թէ ի՞նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսով: 3 - Վասն զի Աստուծոյ կամքը այս է, այսինքն ձեր սուրբ ըլլալը, որ դուք ետ կենաք պաւնկութենէ. 4 - Ձեզմէ ամէն մէկը գիտնայ իր ամանը սրբութիւնով ու պատուով ստանալ. 5 - Ոչ թէ ցանկութեան կիրքով՝ ինչպէս հեթանոսները, որոնք զԱստուած չեն ճանչնար: 6 - Չըլլայ որ *այդ բանին՝ մէջ չափէ անցնի Ֆէջ ու իր եղբայրը զրկէ, վասն զի Տէրը այդ բոլոր բաներուն համար վրէժխնդիր է. ինչպէս առաջուրնէ լսինք ձեզի ու վկայութիւն տուինք: 7 - Վասն զի Աստուած մեզ պղծութեան չկանչեց, հապա սրբութեան: 8 - Ուտի ան որ կ'անարգէ՝ ոչ թէ մարդ մը կ'անարգէ, հապա զԱստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ լ'մեզի տուաւ:

9 - Բայց եղբայրսիրութեան վրայով պէտք չէ ձեզի բան գրել, վասն զի դուք ինքնիրեննիդ Աստուծմէ արված էք մէկզմէկ սիրել. 10 - Եւ իրաւ այդ բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի մէջ եղող ամէն եղբայրներուն. սակայն կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, որ ա՛լ աւելի առատանաք. 11 - Եւ ջանք ընէք որ հանգարտ կենաք, ու ամէն մէկդ իր գործը գործէ, ու ձեր ձեռքերովը աշխատիք, (ինչպէս ձեզի պատուիրեցինք,) որպէս զի դուրսիններուն հետ պարկեշտութեամբ վարուիք, ու քրտնի մը՝ կարօտ չըլլաք:

12 - Ձեք ուզեր, եղբայրներ, որ տգէտ ըլլաք ննջեցեալներուն վրայով, որպէս զի շարտմիք ինչպէս ուրիշները՝

*Կ-ժ, բանի մը †Ո՛հան, ձեզի ‡Կ-ժ, մէկս'ն

որոնք յայս շունին : 13 - Քանզի եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ : 14 - Վասն զի զայս կը գրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը , թէ մենք որ մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, բնաւ ննջեցեալներէն աւաջ պիտի չանցնինք : 15 - Վասն զի Տէրը ինք ազգարարութեան հրամանով , հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները աւաջ յարութիւն պիտի առնեն : 16 - Ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անանցմով մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջև ելլելու օգին մէջ , և այնպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք : 17 - Ուստի մէկզմէկ մխիթարեցէք այս խօսքերով :

ԳԼ Ե

Բայց այն ժամերուն ու ժամանակներուն համար, եղբայրներ , պէտք չէ բան մը գրել ձեզի . 2 - Քանզի գուք ինքնիրեննիդ աղէկ գիտէք՝ թէ Տէրոջը օրը գիշերուան գողի պէս այնպէս կը հասնի : 3 - Երբ ըսելու ըլլան թէ խաղաղութիւն ու ապահովութիւն է , այն ատեն կորուստը յանկարծակի աննց վրայ պիտի հասնի յղին երկունքին պէս , ու պիտի չազատին : 4 - Բայց գուք, եղբայրներ, խաւարի մէջ չէք, որ այն օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի . 5 - Վասն զի գուք ամէնդ լուսոյ սրգիներ էք, ու ցորեկուան սրգիներ, գիշերուանը չենք, խաւարինը չենք : 6 - Ուրեմն չքնանանք ինչպէս օւրիշները, հապա արթուն ու զգաստ ըլլանք : 7 - Քանզի անոնք որ կը քնանան, գիշերը կը քնանան, և անոնք որ կ'արբենան, գիշերը կ'արբենան : 8 - Բայց մենք, որովհետև ցորեկուան ենք, զգաստ ըլլանք, և հաւատքի ու սիրոյ գրահը մեր վրայ հագնինք, ու փրկութեան յոյսին սողաւարաբ Գլ-Ինի գնին : 9 - Վասն զի Աստուած մեզ

բարկութեան համար չորոշեց , հապա փրկութիւն ստանալու համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով . 10 - Որ մեզի համար մեռաւ, որպէս զի թէ՛ արթուն ըլլանք և թէ՛ քնանանք , իրեն հետ մէկտեղ ապրինք : 11 - Անոր համար մէկզմէկ մխիթարեցէք և իրարու շինութիւն առէք , ինչպէս կ'ընէք ալ :

12 - Եւ ձեզի կ'աղաչենք , եղբայրներ, որ ճանչնաք ձեր աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով , ու ձեզի իրատ առողջները . 13 - Եւ զանոնք մեծապէս պատուեցէք սիրով իրենց գործին համար . իրարու հետ խաղաղութիւն ունեցէք : 14 - Եւ ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, անկարգ վարմունք ունեցողները իրատեցէք, վատասիրտները մխիթարեցէք, ակարներուն ձեռնառ եղէք, ամէնուն ալ երկայնամիտ եղէք : 15 - Զգուշացէք, չըլլայ որ մէկը չարութեան փոխարէն չարութիւն հասուցանէ մէկուն . հապա ամէն ատեն բարիք ընելու ետևէ եղէք թէ՛ իրարու և թէ՛ ամէնուն : 16 - Ամէն ատեն ուրախ եղէք : 17 - Անդադար աղօթք ըրէք : 18 - Ամէն բանի մէջ գոհութիւն տուէք . վասն զի այս է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ : 19 - Սուրբ Հոգին մի մտրէք : 20 - Մարգարէութիւնները մի արհամարհէք : 21 - Ամէն բան փորձեցէք, բարին ամուր բունեցէք : 22 - Ամէն տեսակ գէշ բաներէ ետ կեցէք : 23 - Եւ ինք խաղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ ընէ , ու ձեր բոլոր հոգին և շունչը ու մարմինը անարատ պահուի Գլ-Ի մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու ատենը : 24 - Հաւատարիմ է ան որ ձեզ կանչեց, որ պիտի կատարէ ալ :

25 - Եղբայրներ, աղօթք ըրէք ձեզի համար : 26 - Իտրև տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համբուրով : 27 - Կերգմացնեմ ձեզ Տէրոջմով , որ այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն կարգացուի : 28 - Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ : Ամէն :



ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՅԻՍ



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս և Սիզուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցոց եկեղեցւոյդ մեր Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով: 2 - Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

3 - Պարտիմք ամէն ասէն Աստուծմէ գոհանալ ձեզի համար, եղբայրներ, ինչպէս կը վայլէ. քանզի ձեր հաւատքը շատ աճելու վրայ է, և ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը շատնայ:

4 - Այնպէս որ մենք ալ ձեզմով կը պարծենանք Աստուծոյ եկեղեցիներուն մէջ՝ ձեր համբերութեանը ու հաւատքին համար ձեր բոլոր հալածանքներուն ու նեղութիւններուն մէջ՝ որոնց դուք կը համբերէք: 5 - Որ է Աստուծոյ արդար դատաստանին սպասոյցը՝ որպէս զի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեանը, որու համար ալ նեղութիւն կը կրէք: 6 - Քանզի Աստուծոյ առջև իրաւունք է՝ ձեզի նեղութիւն աւաղներուն նեղութիւն հասուցանել, 7 - Եւ ձեզի նեղութիւն կրողներուդ՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի երկինքէն յայանուելու ատենը իր զօրաւոր հրեշտակներովը:

8 - Բորբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուծ չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր: 9 - Որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն, 10 - Երբ ինք դայ փառաւորուիլ իր սուրբերուն մէջ, և հիանալի բլլայ բոլոր հաւատացեալներուն մէջ, (վասն զի մեր վկայութիւնը ձեր մէջ հաւատացուեցաւ,) այն օրը: 11 - Այս պատճառաւ ալ ամէն ասէն ձեզի համար աղօթք կ'ընենք, որ մեր Աստուծը ձեզ արժանի ընէ յէր կոչումին, և իբր արութեան բոլոր հաճութիւնը կա-

տարէ, ու հաւատքին գործը՝ զօրութիւնով: 12 - Որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, և դուք ալ անոր մէջ՝ մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համեմատ:

ԳԼ. Բ

Կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին ու մեր անոր քով ժողովուելուն համար, 2 - Զբլլայ որ շուտ մը խախտիք յէր միաքէն, ու չբլլայ որ խափուիք՝ ոչ հոգիով ու ոչ խօսքով, ոչ ալ թուղթով մը իբր թէ մեզմէ հրեշտակ, որպէս թէ Քրիստոսի օրը եկած հասած բլլայ: 3 - Զբլլայ որ մէկը ձեզ խաբէ կերպով մը. վասն զի այն օրը պիտի չգայ՝ եթէ ապատամբութիւնը առաջ չգայ, ու յայանուի մեղաց մարդը, կորստեան օրդին, 4 - Այն հակառակօրդը հպարտացած ամէնուն վրայ, որ Աստուծ կ'ըսուի կամ կը պաշտուի, մինչև անիկա Աստուծոյ առճարին մէջ՝ պիտի նստի, և ինքզինք ցուցնէ թէ Աստուծ է: 5 - Զէք յիշեր որ երբ ձեր քով էի, այս բաները կ'ըսէի ձեզի: 6 - Եւ հիմա դուք ինքնինքն գիտէք ինչ է ան որ կ'արգիլէ, որպէս զի ինք իր աստեանին յայանուի: 7 - Վասն զի անօրէնութեան խորհուրդը հիմակուրնէ կը զօրանայ. բայց ան որ հիմա կ'արգիլէ, պիտի արգիլէ՝ մինչև ինք մեջտեղէն վերնայ: 8 - Աւետքը պիտի յայանուի այն անօրէնը, զոր Տէր [Յիսուս] իր բերնին հոգիովը պիտի սպառէ, ու իր գալուն յայանուելովը պիտի կորսրնցնէ: 9 - Որուն գայր Աստանայի ազգեցութիւնովն է բոլոր զօրութիւնով և նշաններով ու սուտ հրաշքներով, 10 - Եւ կորսուածներուն վրայ անիրաւութեան բոլոր խաբէութիւն-

*Ոճանդ, Աստուծոյ պէս պիտի

նովր. որովհետև անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին՝ որ փրկուին, անոր համար Աստուած ալ պիտի զրկէ անոնց ուժով մուրաւթիւն մը՝ որ ստույթեան հաւատան. 11 - Որպէս զի դատապարտուին ամէն անոնք որ չհաւատացին ճշմարտութեան, հապա անօրէնութեան յօժարեցան:

12 - Բայց մեզի պէտք է միշտ Աստուծոյ գոհմանը ձեզի համար, Երոջմէ սիրուած եղբայրներ, վասն զի Աստուած առաջուրնէ ձեզ ընարեց փրկուելու՝ Հոգիին սրբելովը ու ճշմարտութեան հաւատքովը. 13 - Որով ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստանայու:

14 - Ուստի, եղբայրներ, հաստատ կեցէք, ու պինդ բռնեցէք այն աւանդութիւնները զորոնք սորվեցաք թէ՛ խօսքով ու թէ՛ մեր թուղթովը: 15 - Եւ ինք մեր Տէր Յիսուս Քրիստոս ու մեր Հայրը Աստուած, որ մեզ սիրեց ու տուաւ մեզի յաւիտենական մխիթարութիւն և բարի յոյս շնորհքով, 16 - Ձեր սիրտերը մխիթարէ և ձեզ հաստատէ ամէն բարի խօսքերու և գործերու մէջ:


ԳԼ. Գ

1. Երջապէս, եղբայրներ, մեզի համար աղօթք րէք, որպէս զի Տէրոջը խօսքը յառաջանայ ու փառաւոր ըլլայ, ինչպէս ձեր մէջ. 2 - Եւ որպէս զի անիրաւ ու չար մարդոցմէ ազատինք. վասն զի ամէնը *հաւատք չունին. 3 - Բայց Տէրը հաւատարիմ է, որ ձեզ պիտի հաստատէ, ու չարէն պահէ: 4 - Եւ ձեր վրայ վստահութիւն ունինք Տէրոջմով, թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք՝ կ'ընէք, ու պիտի ընէք ալ: 5 - Եւ Տէրը ձեր սիրտերը Աստու-

*Կա՛մ, հաւատարմութիւն

ծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը ուղղէ:

6 - Եւ ձեզի կը պատուիրենք, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ ետ քաշուիք ամէն եղբորմէ՝ որ անկարգութեամբ կը վարուի, ու ոչ թէ այն աւանդութեանը պէս՝ զոր մեզմէ առաւ: 7 - Վասն զի դուք ինքնիրեննիդ գիտէք թէ ի՛նչպէս պարտիք մեզի նմանող ըլլալ. քանզի մենք ձեր մէջ անկարգութեամբ չվարուեցանք. 8 - Ոչ ալ մէկուն հացը ձրի կերանք. հապա ջանքով և աշխատանքով դիշեր ու ցորեկ կը գործէինք՝ ձեզմէ մէկո՛ւն ծանրութիւն չտալու համար. 9 - Ոչ թէ՛ որ մենք իշխանութիւն չունէինք, հապա որ անձերնիս ձեզի օրինակ ընէինք՝ որպէս զի մեզի նմանող ըլլաք: 10 - Վասն զի երբ մենք ձեր քով էինք՝ զայս ձեզի կը պատուիրէինք, թէ Ան որ չուզեր գործ գործել, հոյ ալ թող չուտէ: 11 - Արդ կը լսենք որ ձեր մէջէն ոմանք անկարգութեամբ կը վարուին, ու գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պարտին: 12 - Այնպիսիներուն պատուէր կու տանք ու կ'աղաչենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ հանդարտութեամբ գործեն և իրենց հացը ուտեն: 13 - Բայց դուք, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք գործելէ: 14 - Իսկ եթէ մէկը չհնազանդիր մեր խօսքին այս թուղթով, դուք նշանակեցէք զանիկա, ու անոր հետ մի խառնուիք, որպէս զի ամչնայ: 15 - Բայց չըլլայ թէ թշնամի պէս սեպէք զանիս, հապա եղբօր պէս խրատեցէք: 16 - Եւ ինք խաղաղութեան Տէրը ամէն կերպով ձեզի խաղաղութիւն տայ ամէն ատեն. Տէրը ձեր ամէնուն հետ ըլլայ: 17 - Այս ողջոյնը իմ ձեռքիս՝ Պողոսին է, որ ամէն թուղթերուն մէջ նշան է. այսպէս կը գրեմ: 18 - Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ. Ամէն:



ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա. Ռ. Տ Ի Մ Ո Թ Է Ո Ս



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, մեր Փրկիչ Աստուծոյ և մեր յոյսը եղող *Քրիստոս Յիսուսի՝ հրամանովը, 2 - Տիմոթէոսի, ի՛հ հարազատ որդւոյս հաւատքով, շնորհք, ողորմութիւն «- խաղաղութիւն Աստուծոյ մէ մեր Հօրմէն և Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն:

3 - Ինչպէս քեզի աղաչեցի Եփեսոս մնալ, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որ պատուիրես մէկ քանիներուն օտար ուսմունք չսորվեցնել, 4 - Եւ շնայիլ առաապելներու ու ազգահամարներու՝ որոնք վերջ չունին, որոնք աւելի վէճեր կը պատճառեն քան թէ Աստուծոյ հոօօելի շինութիւնը՝ որ կ'ըլլայ հաւատքով: 5 - Իսկ պատուիրանքին վախճանը սէր է սուրբ սրտով ու բարի խղճմտանքով և անկեղծ հաւատքով. 6 - Որոնցմէ խոտորելով՝ ամանք փուճ խօսքերու ետևէ գացին. 7 - Օրինաց վարդապետ ըլլալ կ'ուզեն, Բայց իրենք չեն հասկնար ինչ որ կը խօսին, ոչ ալ այն բաները՝ որոնց համար օտք կը կոխեն: 8 - Արդ գիտենք որ օրէնքը աղէկ է, եթէ մէկը զանիկա օրինաւոր կերպով գործածելու ըլլայ: 9 - Բայց զայս թող գիտնայ որ արդարներուն համար չէ օրէնքը, հապա անօրէններուն ու անհնազանդներուն համար, ամբարիշտներուն և մեղաւորներուն, անսուրբներուն և պիղծերուն, հայր ու մայր վարնողներուն, մարդասպաններուն, 10 - Պռնիկներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, սուտ զրուցներուն, սուտ երգում՝ ընողներուն, և թէ ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, 11 - Որ երանելի Աստուծոյ փառաւոր աւե-

տարանին համեմատ է, որ ինծի յանձնուեցաւ: 12 - Եւ շնորհակալ եմ անոր՝ որ զիս զօրացուց, այսինքն Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը, որ հաւատարիմ՝ սեպելով զիս՝ այս սպասաւորութեան մէջ դրաւ. 13 - Ար առաջ հայհոյիչ էի ու հալածող և թշնամանող. բայց ողորմութիւն գտայ, վասն զի անհաւատութեան մէջ չգիտնալով ըրի. 14 - Եւ մեր Տէրոջը շնորհքը խիստ շատ եղաւ ինձի հաւատքով ու սիրով որ Քրիստոս Յիսուսով է: 15 - Այս խօսքը հաւատարիմ է ու բարոյսին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց գլուխը ես եմ. 16 - Բայց անոր համար ողորմութիւն գտայ, որ ամենէն առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցուցնէ բոլոր երկայնամտութիւնը՝ օրինակ ըլլալու անոնց որոնք պիտի հաւատային իրեն յաւիտեանական կեանքի համար: 17 - Արդ յաւիտեանական Թագաւորին, որ անեղծ «- աներևոյթ է, մի *միայն Աստուծոյն փառք ու պատիւ յաւիտեանս յաւիտեանից: Ամէն:

18 - Այս պատուէրը կ'աւանդեմ՝ քեզի, իմ որդեակս Տիմոթէոս, քու վրայովդ առաջուրնէ եղած մարգարէութիւններուն համեմատ, որ անոնցմով պատերազմիս այն բարի պատերազմը, 19 - Եւ ունենաս հաւատք ու մարտը խղճմտանք, զոր մէկ քանիները իրենցմէ մէկգի ձգելով՝ նաւակոծութիւն կրեցին հաւատքին կողմանէ. 20 - Որոնցմէ են Հիմենոս ու Աղեքսանդրոս, զորոնք ես Սատանայի մտանեցի, որպէս զի սարվին հոյհոյութիւն չընել:

ԳԼ. Բ

Արդ կ'աղաչեմ՝ ամէն բանէ առաջ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք.

*Ո՛հ, Տէր Յիսուս Քրիստոսի Վա՛հ, կենցաղավարութիւնը

*Ո՛հ, միայն իմաստուն

գոհութիւն ամէն մարդոց համար, 2 - Մանուկ թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար . որպէս զի խաղաղ ու հանդարտ կեանք վարենք բոլորովին աստուած պաշտութիւնով ու պարկեշտութիւնով : 3 - Վասն զի այն է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջև , 4 - Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնալու գան : 5 - Քանզի մէկ Աստուած կայ , ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջաեղ , Քրիստոս Յիսուս մարդը , 6 - Որ իր անձը ամէնուն տեղ փրկանք տուաւ իր տանին վկայութիւն ըլլալու , 7 - Որուես քարոզիչ ու առաքեալ գրուեցայ , (ճշմարտա կ'ըսեմ՝ *Քրիստոսով և սուս չեմ խօսիր,) հեթանոսներուն վարդապետ եղայ հաւատաքով ու ճշմարտութիւնով : 8 - Արդ կ'ուզեմ որ այր մարդիկ ամէն տեղ աղօթք ընեն՝ սուրբ ձեռքեր վերցնելով առանց բարկութեան ու երկմտութեան : 9 - Նոյնպէս ալ կիները վայելուչ հագուստով , ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ ինքզինքնին զարգարեն , ոչ թէ հիւսուածքներով կամ սակիով կամ մարգարիաներով կամ մեծածախ հանդերձներով , 10 - Հապա բարի գործերով ինչպէս կը վայլէ աստուած պաշտութիւնը դաւանող կիներուն : 11 - Կին մարդը թող սարվի լուսութեամբ՝ ամենայն հնազանդութիւնով : 12 - Բայց կին մարդու հրաման չեմ տար սարվեցնելու , ոչ ալ այր մարդուն իշխելու , հապա լուռ կենալու : 13 - Վասն զի առաջ Ադամ ստեղծուեցաւ , ու ետքը Եւա : 14 - Եւ Ադամ չխաբուեցաւ , հապա կինը խաբուեցաւ ու յանցանք գործեց . 15 - Սակայն պիտի փրկուի անիկա որդեծնութեամբ , եթէ կենան հաւտաքի և սիրոյ ու սրբութեան մէջ պարկեշտութիւնով :

ԳԼ. Գ

Այս խօսքը հաւատարիմ է . եթէ մէկը եպիսկոպոսութեան կը ցանկայ , աղէկ գործի կը ցանկայ : 2 - Ուստի պէտք է եպիսկոպոսին անարատ ըլլայ , մէկ կնոջ այր , զգաստ , խոհեմ , պարկեշտ , հիւրասէր , սարվեցնելու յար-

*Ո՛հնէ , ընենին

մար , 3 - Ոչ գինեմոլ , ոչ զարնող , *հապա հանդարտ , ոչ կռուող , ոչ արծաթասէր , 4 - Որ իր տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլայ , իր զաւակները հնազանդութեան մէջ պահելով՝ բոլոր ծանրաբարոյութեամբ . 5 - (Սպա եթէ մէկը իր տանը վերակացութիւն ընել չգիտնայ , ինչպէս Աստուծոյ եկեղեցին հոգաբարձու պիտի ըլլայ .) 6 - Ոչ ալ նորահաւատ ըլլայ , որ չըլլայ թէ հպարտանալով Սասանայի դատապարտութեանը մէջ կ'յնայ : 7 - Հապա պէտք է անոր դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունենալ , որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու Սասանայի սրագոյթին մէջ կ'յնայ :

8 - Նոյնպէս ալ սարկուազները ըլլան ծանրաբարոյ , ո՛չ երկկեղու , ո՛չ գինեասէր , ո՛չ անարգ շահախնդրութեան ետեւէ եղող . 9 - Հապա հաւտաքին խորհուրդը պահեն մաքուր խղճմրտանքով : 10 - Եւ տանք ալ առաջ թող փորձուին , ետքը՝ եթէ անմեղադրելի գտնուին , սարկուազութեան պաշտօնը կատարեն : 11 - Նոյնպէս ալ անոնց կիները ծանրաբարոյ ըլլան , ոչ չարախօս , հապա զգաստ , ամէն բանի մէջ հաւատարիմ : 12 - Սարկուազները մէկ կնոջ այր ըլլան , և երեսն զաւակներուն ու իրենց տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլան : 13 - Քանզի անոնք որ սարկուազութեան պաշտօնը աղէկ կը կատարեն , բարի աստիճան մը իրենց կը շահին , ու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւտաքին մէջ շատ համարձակութիւն :

14 - Այս բաները կը գրեմ քեզի , յուսալով մօտերս քեզի գալ : 15 - Բայց եթէ ուշանալու ըլլամ , որպէս զի գիտնաս թէ ինչպէս պէտք է քեզի Աստուծոյ տանը մէջ պարտիլ , որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է , ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւնը : 16 - Եւ յայանապէս մեծ է աստուած պաշտութեան խորհուրդը . Աստուած մարմինով յայանուեցաւ , Հոգիով արդարացաւ , հրեշտակներուն երևցաւ , հեթանոսներուն մէջ քարոզուեցաւ , աշխարհի մէջ հաւտացուեցաւ ու փառքով համբարձու :

*Ո՛հնէ , ոչ անարգ շահախնդրութեան ետեւէ եղող , հապա

ԳԼ. Գ

Բայց հոգին յայանի կ'ըսէ թէ վերջին աստեանները մէկ քանինները հաւատաքէն պիտի ապաստամբին, և մնորեցուցիչ ոգիներու ու դեերու ուսմունքներու ու շարժութիւն պիտի տան, 2 - Աստիսուներուն կեղծաւորութիւնովը, որոնց խղճմտանքը խանձուած է . 3 - Արոնք ամուսնանալէ պիտի արգիլեն, - ետ պիտի պահեն կերակուրներէն՝ զորոնք Աստուած ստեղծեր է որպէս զի հաւատացեալները և ճշմարտութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելեն : 4 - Վասն զի Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է, ու մերժելու բան մը չկայ, եթէ գոհութեամբ ընդունուի . 5 - Բանզի Աստուծոյ խօսքովը ու աղօթքով կը սրբուի : 6 - Այս բաները եղբայրներուն յիշեցնելով՝ Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ մը պիտի ըլլաս, ու պիտի սնանիս հաւատքին խօսքերովը և այն բարի վարդապետութիւնովը՝ որու հետեւող եղար : 7 - Բայց պիղծ ու պառաւական առապելներէն ետ կեցիր, և քու անձդ աստուածաբաշտութեան վարժեցուր . 8 - Վասն զի մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուածաբաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ և թէ՛ ապանի կեանքին խոստմունքը ունի : 9 - Այս խօսքը հաւատարիմ է և բոլորովին ընդունուելու արժանի : 10 - Վասն զի քուն ասոր համար կ'աշխատինք ու նախատինք կը կրենք, քանզի կենդանի Աստուծոյ յուսացեր ենք, որ ամէն մարդոց Փրկիչն է, մանաւանդ հաւատացեալներուն : 11 - Այս բաները պատուիրէ ու սորվեցուր : 12 - Զըլլայ որ մէկը քու մանկութիւնդ անարգէ, հապա գուն օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարմունքով, սիրով, * հաւատքով և մարքութեամբ : 13 - Մինչև ես գամ՝ միտք դիր կարգալու, յորդորելու, սորվեցնելու : 14 - Անհոգ մի ըլլար քու վրագ եղած պարգևին վրայով, որ մարգարեութեամբ քեզի տրուեցաւ՝ երէցներուն ձեռքերը + - վրագ դրուելովը : 15 - Ասանց վրայ խորհէ ու ասանց մէջ պարապէ, որպէս զի քու յառաջադիմութիւնդ

* ամէնուն յայանի ըլլայ : 16 - Զգուշացիր քու անձիդ ու վարդապետութեանը, - միշտ ասանց մէջ կեցիր . քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ապրեցնես, ու զանոնք ալ որոնք քեզի մօտիկ կ'ընեն :

ԳԼ. Ե

Օերը աստիկ մի յանդիմաներ, հապա հօր պէս յորդորէ շնորհք . երիտասարդները՝ եղբայրներու պէս, 2 - Պառաւները՝ մայրերու պէս, դեռահասակ կիները՝ քոյրերու պէս ամէն կերպ մարքութիւնով : 3 - Որբեարիները պատուէ՝ զանոնք որ ճշմարտապէս որբեարի են : 4 - Իսկ եթէ որբեարի մը զաւակներ կամ թոռներ ունենայ, թող անոնք առաջ սորվին իրենց ասանք մէջ որդիական գութ ցուցնել, ու փոխարէն հասուցանել իրենց ծնողներուն . վասն զի այն է բարի և ընդունելի Աստուծոյ առջև : 5 - Բայց ան որ ճշմարտապէս որբեարի է ու մինակ մնացած, իր յոյսը Աստուծոյ վրայ դրած է, և գիշեր ցորեկ աղօթքի ու աղաչանքի կը պարապի : 6 - Բայց փափկասէր «բեւեռ» կենդանւոյն մեռած է : 7 - Եւ այս բաները պատուիրէ որպէս զի անարատ ըլլան : 8 - Բայց եթէ մէկը իրեններուն ու մանաւանդ իր ընտանիքին հոգ չտանիր, անիկա հաւատքը ուրացած է, ու անհաւատէ մըն ալ գէշ է : 9 - Որբեարին «բեւեռ» կարգը թող սեպուի, որ վաթսուն տարուրնէ պակաս չէ, մէկ երկան կին եղած, 10 - Բարի գործերով վկայուած . եթէ զաւակներ մեծցուցած ըլլայ, եթէ հիւրեր ընդունած ըլլայ, եթէ սուրբերուն սոքերը լուացած ըլլայ, եթէ նեղեալներուն օգնութիւն ըրած ըլլայ, եթէ ամէն «բեւեռ» բարեգործութեան մէջ յարատեւած ըլլայ : 11 - Բայց դեռահասակ որբեարիները մերժէ . քանզի երբ Քրիստոսի գէժ յանդիմանով հեշտասիրութեան անձնատուր կ'ըլլան, ամուսնանալ կ'ուզեն : 12 - Եւ դատապարտութիւն կ'ընդունին, վասն զի առաջուան հաւատքնին մէկդի ձգեցին : 13 - Նաև ծոյլ ըլլալ կը սորվին, տունէ տուն պարտողներ . և ոչ միայն ծոյլ, հապա

* Ո՞րք, հոգևով, հաւատքով

* Կ-Տ, ամէն բանի մէջ

չատախօսներ ու հետաքրքիրներ , և անպատեհ բաներ կը խօսին : 14 - Ուստի կ'ուզեմ որ դեռահասակ կիները ամուսնանան , զուակներ ծնանին , տնաշէն ըլլան «- նախատինքի պատճառ չտան հակառակորդին : 15 - Քանզի արդէն ամուսնք Սատանայի ետեւէն երբեք խտարեցան : 16 - Եթէ հաւատացեալ այր մարդ մը կամ կին մը սրբևարիներ ունենայ , թող օգնութիւն ընէ անոնց , և եկեղեցին չծանրաբեռնի , որպէս զի ճշմարտապէս սրբևարիներուն օգնութիւն ընէ :

17 - Աղէկ վերակացութիւն ընող երէցները կրկին պատուոյ արժանի թող սեպուին , մանաւանդ անոնք որ կ'աշխատին խօսքը «բարեւոյ՛ւ ու սորվեցնելով : 18 - Վասն զի գերբը կ'ըսէ թէ կայի մէջ աշխատող եզին դունչը չկապես . և թէ Մշակը իր վարձքին արժանի է : 19 - Երէցի վրայով ամբաստանութիւն մի ընդունիր , բայց միայն երկու կամ երեք վկաներով : 20 - Չանոնք որ մեղք կը գործեն , ամենուն առջև յանդիմանէ , որպէս զի ուրիշներն ալ վախնան : 21 - Վկայութիւն կը դնեմ Աստուծոյ առջև . և Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ Տրեշտակներուն , որ այս բաները պահեստաւնց նախապաշարման , բան մը աշառութեամբ չընելով : 22 - Շուտով մէկուն վրայ ձեռք չդնես , և ուրիշներուն մեղքերուն հաղորդ չըլլաս . դուն քեզ մաքուր պահէ :

23 - Ասկէ ետեւ լոկ ջուր չխմես , հապա քիչ մըն ալ գինի գործածէ քու ստամիքսիդ ու յաճախ հիւանդութիւններուդ համար :

24 - Կան մարդիկ՝ որոնց մեղքերը յայտնի են , ու առաջուրնէ դատաստանի հասած . և կան՝ որոնց ետեւէն կ'երթան : 25 - Նոյնպէս ալ ամուսն բարի գործերը յայտնի են . ու անոնք որ ուրիշ կերպ բան մըն են , չեն կրնար ծածուկ մնալ :

ԳԼ. 2

Այն ամէնը որ ծառայութեան լուծի տակ են , իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սեպեն , որպէս զի Աստուծոյ անունը ու վարդապետու-

թիւնը չհայհոյուի : 2 - Եւ անոնք որ հաւատացեալ տէրեր ունին , թող շարհամարհեն՝ եղբայրներ ըլլալուն պատճառաւ , հապա աւելի ծառայութիւն ընեն , վասն զի անոնք հաւատացեալ են ու սիրելի , որոնք բարերարութիւն ընելու մէջ մասնակից են . այս բաները սորվեցուր ու յորդորէ : 3 - Եթէ մէկը ուրիշ կերպ բան մը սորվեցընէ , ու մտիկ չընէ մեր Տերոջը Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերուն , և այն վարդապետութեանը որ աստուածպաշտութեան համեմատ է , 4 - Այնպէս հպարտացած է ու բան մը չգիտեր , հապա վէճերով ու հակառակութիւններով ախտացած է . որոնցմէ կ'ըլլայ նախանձ , կռիւ , հայհոյութիւններ , գէշ կասկածներ , 5 - Միտքով ապականած ու ճշմարտութենէն հեռացած մարդոց զրաբանութիւնները , որոնք աստուածպաշտութիւնը շահավաճառութիւն մը կը սեպեն . այնպիսիներէն մէկդի կեցիր : 6 - Սակայն աստուածպաշտութիւնը գոհունակութիւնով մէկտեղ մեծ շահավաճառութիւն մըն է : 7 - Վասն զի բան մը չբերինք աշխարհ , ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան մը տանիլ : 8 - Հապա կերակուր ու հանդերձ ունենալով՝ անոնցմով բաւականանանք : 9 - Բայց անոնք որ հարստանալ կ'ուզեն , կ'իյնան փորձութեան ու սրգայթի և շատ յիմարական ու փնասակար ցանկութիւններու մէջ , որոնք ստատկուծի ու կորուստի մէջ կ'ընկղմեն մարդիկ : 10 - Վասն զի ամէն շարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է . որու մէկ քանիները անձնատուր ըլլալով՝ հաւատքէն մոլորեցան , ու ինքզինքնին շատ ցուերով խոցեցին :

11 - Բայց դուն , ով մարդ Աստուծոյ , փախիր այս բաներէն , ու գնա արդարութեան , աստուածպաշտութեան , հաւատքի , սիրոյ , համբերութեան «- հեզութեան ետեւէն : 12 - Պատերազմէ հաւատքին բարի պատերազմը , բունէ յուստենական կեանքը՝ որու կանչուեցար , և շատ վկաներու առջև դաւանեցար բարի դատանութիւնը : 13 - Կը պատուիրեմ՝ քեզի Աստուծոյ առջև , որ կենդանի կ'ընէ բոլորը , և Քրիստոս Յիսուսի «- ըստ , որ Պանաղի Պիղատոսի առջև վկայեց բարի դատանութիւնը , 14 - Որ դուն

*Ո՛ւնչ, Տէր Յիսուս

այն պատուէրը ամբիժ . անարատ պահես՝ մինչև մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը . 15 - Չոր իր տենին պիտի ցուցնէ Երանելին ու միմիայն Հըօրը , թագաւորներուն թագաւորը ու տէրերուն Տէրը . 16 - Արմիայն ունի անմահութիւն՝ անմերձեանայի լոյսի մէջ բնակած , զոր մարդոցմէ մէկը չտեսաւ , ոչ ալ տեսնելու կարող է , որու պատիւ և զօրութիւն յաւիտեանս : Ամէն :

17 - Այս աշխարհին մէջ հարսուս եղբայրներուն պատուէր տուր որ չհպարտանան , և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն , հապա կենդա-

նի Աստուծոյ վրայ , որ ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու , 18 - Բարիք գործեն , բարի գործերով հարստանան , առատաձեռն , և արեւին պիտոյ գործեն հաղորդ ըլլան . 19 - Բարի հիմ՝ գանձեն անձերնուն հանդերձեային համար , որպէս զի * յաւիտեան կան կեանքը ձեռք ձգեն :

20 - Ով Տիմոթէոս , քիչի քիչ աւանդը պահէ , փախչելով պիղծ անոյնարանութիւններէն և սուտանուն գիտութեան հակառակութիւններէն ,

21 - Չորսնք մէկ քանիները դաւանելով՝ հաւատքէն մոլորեցան : Ենորձքը քեզի հետ ըլլայ : Ամէն :

ԵՐԿՐՈՐԴԻ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՆՍ

ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս , Յիսուս Քրիստոսի առաքեալ , Աստուծոյ կամքովը կենաց խոստմունքին պէս՝ որ Քրիստոս Յիսուսով է , 2 - Տիմոթէոսի , ի՛մ սիրելի որդիիս , շնորհք , սղարմութիւն և խաղաղութիւն շօր Աստուծմէ ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն :

3 - Ենորհակալ եմ՝ Աստուծոյ , զոր կը պաշտեմ ի՛մ նախնիքներէս՝ մաքուր խղճմունքով , (երբ անպակաս քեզ իմ աղօթքներուս մէջ կը յիշեմ՝ գիշեր ու ցորեկ , 4 - Յանկալով քեզ տեսնել , ու միտք բերելով քու արցունքներդ , որպէս զի սերախութիւնով լեցուիմ ,) 5 - Մտածելով քու վրագ եղած անկեղծ հաւատքը , որ առաջ քու մեծ մօրդ Լաւողեայի ու քու մօրդ Եւնիկէի վրայ բնակեցաւ , և համազուած եմ՝ որ քու վրագ ալ կայ : 6 - Անոր համար քու միտքդ կը ձգեմ որ արծարծես Աստուծոյ պարգևը , որ քեզի քիչ քիչ իմ ձեռքերուս քիչ վրագ դրուելովը : 7 - Վասն զի Աստուած մեզի երկչտութեան հոգի չտուաւ , հապա զօրութեան ու սիրոյ և զգաստութեան : 8 - Ուստի ամօթ մի սեպեր մեր Տէրոջը

վկայութիւնը , ոչ ալ զիս անոր հօժօր կապուածս . հապա մասնակից եղիր աւետարանին շարչարանքներուն , Աստուծոյ զօրութեանը համեմատ . 9 - Արմեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց , ոչ թէ մեր գործերուն նայելով , հապա իր նախասահմանութեանը ու շնորհքին նայելով , որ Քրիստոս Յիսուսով մեզի արուեցաւ յաւիտեան կան դարերէն առաջ . 10 - Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երևնալովը . որ մահը խափանեց , և ի լոյս հանեց կեանքը ու անմահութիւնը աւետարանին միջոցաւ : 11 - Արուես քարոզիչ ու առաքեալ դրուեցայ ու հեթանոսներուն վարդապետ : 12 - Անոր համար այս շարչարանքներն ալ կը կրեմ . բայց ամօթ չեմ սեպեր , վասն զի գիտեմ թէ որո՛ւ եմ՝ հաւատացեր , և համոզուած եմ՝ որ իմ էրէ՛ն աւանդած բանս կրնայ պահել մինչև այն օրը : 13 - Ահօ՛ր բունէ այն սղջամիտ խօսքերուն օրինակը զորսնք ինձմէ լսեցիր , հաւատաքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է :

*Ո՛հնէ , ճշմարիտ

14 - Այն բարի աւանդը պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռքով որ մեր մէջ բնակած է: 15 - Ձայս գիտես որ ինձ մէ երես դարձուցին այն ամէնը որոնք Ասիա էին, որոնցմէ են Փիգեղոս ու Հերմոգիւնէս: 16 - Տէրը սղորմութիւն տայ Ոնեասիփորոսի տանը, վասն զի շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթաս ամօթ չսեպեց: 17 - Հապա երբ Հռովմ եկաւ, շատ ջանքով փնտռեց զիս ու գտաւ: 18 - (Տէրը իրեն տայ որ այն օրը Տէրօջմէն սղորմութիւն գտնէ.) և Եփեսոսի մէջ ալ որչափ սպասաւորութիւն որ բրաւ է՞նք, դուն վանկա շատ ազէկ գիտես:

ԳԼ. Բ

Արդ դուն, իմ որդեակս, զօրացիր այն շնորհքով որ Քրիստոս Յիսուսով է: 2 - Եւ այն բաները զորոնք ինձ մէ լսեցիր շատ վկաներով՝ հաւատարիմ մարդոց յանձնէ, որոնք կարող ըլլան ուրիշներու ալ արվեցնել: 3 - Արդ դուն նեղութիւններու համբերէ Յիսուս Քրիստոսի բարի զինուորի մը պէս: 4 - Զինուորեալ մը այս կեանքին գործառնութիւններովը չգբաղիր, որպէս զի զօրավարին հաճոյ ըլլայ: 5 - Եւ եթէ մէկը մըցի, չպտակուիր՝ եթէ ըստ օրինի չմըցի: 6 - Աշխատող երկրագործին պէտք է աւաջ պտուղներէն վաճելէ: 7 - Իմացիր ինչ որ կ'ըսեմ՝ Տէրը քեզի իմաստութիւն տայ ամէն բանի մէջ: 8 - Միտքդ բեր՝ Իսաիթի ցեղէն եղող Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն աւած, իմ Գործառնութիւն տեսարանիս համեմատ: 9 - Արուն մէջ չարագործի մը պէս կը շարչարուիմ մինչև անգամ կոպերով. բայց Աստուծոյ խօսքը կոպուած չէ: 10 - Ուստի ամէն բանի կը համբերեմ՝ ընտրեալներուն համար, որպէս զի անոնք ալ հասնին այն փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է յաւիտենական փառքով: 11 - Այս խօսքը հաւատարիմ է. վասն զի եթէ անոր հետ մեռանք, անոր հետ պիտի ապրինք ալ: 12 - Եթէ համբերեմք, անոր հետ պիտի թագաւորենք ալ. եթէ զինք ուրանանք, ինք ալ մեզ պիտի ուրանայ: 13 - Եթէ չհաւատանք, ինք հաւատարիմ կը մնայ, իր անձը չկրնար ուրանալ: 14 - Այս բաները անոնց միտքը

ձգէ՝ Տէրօջը առջև վկայութիւն դնելով, խօսքերու վրայ վէճ չընել՝ որ բանի մը օգտակար չէ, հապա հապա լսողներուն կործանումին համար է: 15 - Ձանք ըրէ քու անձդ բնաիր ցուցնել Աստուծոյ առջև, այնպիսի բանուօր մը ըլլալով որ պիտի չամօջնայ, ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով: 16 - Բայց պիղծ ու փուճ խօսքերէն մէկդի կեցիր, քանզի անոնք աւելի յառաջ կ'երթան ամբարշտութեան մէջ: 17 - Եւ անոնց խօսքը քաղցկեղի պէս կը ճարակէ. որոնց կարգն են Հիմենոս ու Փիղետոս: 18 - Որոնք ճշմարտութենէն մնլորեցան, ու կ'ըսեն թէ Դեւերն են յարութիւնը արդէն եղած է, և կը կործանեն մէկ քանիններուն հաւատքը: 19 - Բայց Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու այս կնիքը ունի, թէ Տէրը կը ճանչնայ զանոնք որ իրն են. և՛ Անիրաւութենէ մէկդի թող կենայ այն ամէնը որ Քրիստոսի անունը կանուանէ: 20 - Սակայն մեծ տան մը մէջ ոչ թէ միայն սակիէ ու արծաթէ ամաններ կան, հապա փայտէ ու հողէ ամաններ ալ կան. և ամանք պատուոյ համար են ու ամանք անարգանքի համար: 21 - Ուստի եթէ մէկը իր անձը այնպիսի բաներէն մաքրէ, անիկա պատուական անօթ մը պիտի ըլլայ, որքուած ու էր Տէրօջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած: 22 - Երիտասարդական ցանկութիւններէն ալ փախիր, ու գնա արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ետեւ անոնց հետ որ Տէրօջը անունը կը կանչեն մաքուօր սրտով: 23 - Բայց յիմարական ու անիւնիմաստ վէճերէն մէկդի քաշուէ, գիտնալով որ անոնցմէ կռիւներ կը ծնանին: 24 - Ու Տէրօջը ծառային պէտք չէ կռիւ ընել, հապա հեղահոգի ըլլալ ամէնուն, արվեցնող, սիւ չպահող: 25 - Քաղցրութեամբ խրատել հակառակ կեցողները, որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու համար, 26 - Եւ Սատանայի սրագոյթէն զգտտանան, որմէ բռնուած են իր կամքին ճարտարութեամբ:

*Ո՞րքն է Տէրօջը

ԳԼ. Գ

Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան . 2 - Վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր , արձաթասէր , ամբարտաւան , հպարտ , հայհոյիչ , ծնողներու անհնազանդ , ապերախտ , անսուբը , 3 - Անգութ , անհաշտ , բանասարկու , անժուժկալ , դատանաբարոյ , բարին չսիրող , 4 - Մասնիչ , յանդուգն , գուռաղ , աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր . 5 - Արոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին , բայց անոր զօրութիւնը ուրացած են . և դուն ասոնցմէ մէկդի կեցիր : 6 - Վասն զի ասոնցմէ են որ տուներէն ներս կը մտնեն , ու գերի կ'ընեն մեզքով բեռնաւորուած տկարամիտ կիները զանազան ցանկութիւններէ վարուած , 7 - Ար միշտ կը սորվին , ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնալու չեն կրնար հասնիլ : 8 - Հապա ինչպէս Յանէս ու Յամբէս հակառակ կեցան Մովսէսի , նոյնպէս ասոնք ալ ճշմարտութեանը հակառակ կը կենան . ապակամած միտքով մարդիկ , հաւատքի մէջ անպիտաններ են : 9 - Բայց աւելի յառաջ պիտի չերթան , վասն զի ասոնց անմըտութիւնը ամէնուն յայտնի պիտի ըլլայ , ինչպէս անոնցը եղաւ : 10 - Իսկ դուն տեղեակ եղար իմ վարդապետութեանս , վարմունքիս , դիտաւորութեանս , հաւատքիս , երկայնմտութեանս , սիրոյս , համբերութեանս , 11 - Հալածանքներուս , չարչարանքներուս , ինչպէս ինձի եղան Անտիոքի և Իկոնիոնի - Լիւսարայի մէջ . ինչպէս հալածանքներու համբերեցի , ու ամէնէն զիս ազատեց Տէրը : 12 - Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով հալածանք պիտի կրեն : 13 - Բայց չար ու խաբէբոյ մարդիկ չարութեան մէջ պիտի յառաջանան՝ մնորեցնելով ու մնորեցնելով : 14 - Սակայն դուն հաստատուն կեցիր այն բաներուն մէջ զորոնք սորվեցար ու հաւատացիր , վասն զի գիտես թէ որմէ՛ սորված ես . 15 - Նաև +- մանկութենէդ ի վեր սուրբ գիրքերը գիտես , որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը : 16 -

*Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է , և օգտակար է սորվեցնելու , յանդիմանելու , շիտկելու և արդարութեան խրատելու համար , 17 - Արպէս զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած :

ԳԼ. Կ

Այս վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջև և Յիսուս Քրիստոսի , որ պիտի դատէ կենդանիները ու մեռեալները իր յայտնուելուն ու թագաւորութեանը ատենը : 2 - Խօսքը քարոզէ , մտադրութեամբ գործիչ պարապէ ատենին ու ատենէ դուրս , յանդիմանէ , աստէ , յորդորէ ամենայն երկայնմտութեամբ ու վարդապետութեամբ : 3 - Վասն զի ժամանակ պիտի գայ որ ողջամիտ վարդապետութեանը պիտի չհամբերեն , հապա իրենց լսելիքին եւ քովը իրենց ցանկութիւններուն համեմատ վարդապետներ պիտի դիպեն իրենց . 4 - Եւ ճշմարտութենէն ականջներնին պիտի դարձրնեն , ու առտապելներու ետեւ պիտի մնորին : 5 - Բայց դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր , նեղութիւններու համբերէ , աւետարանիչի գործ գործէ , քու պաշտօնդ կատարէ : 6 - Վասն զի ես արդէն զոհ ըլլալու նախապատրաստ եմ , ու իմ՝ մեկնելուս ատենը հասեր է : 7 - Բարի պատերազմը պատերազմեցայ , ընթացքը կատարեցի , հաւատքը պահեցի : 8 - Ասկէ ետե կայ կը մնայ ինձի արդարութեան պատկը , զոր Տէրը , արդար Գատաւորը , պիտի հաստեցանէ ինձի այն օրը . ու ոչ թէ միայն ինձի , հապա այն ամէնուն ալ՝ որ անոր յայտնուելը սիրեցին :

9 - Զանք բրէ շուտով ինձի գալ . 10 - Վասն զի Գեմաս զիս թողուց ու այս աշխարհը սիրեց , և գնաց թեսաղանիկէ . կրէսկէս քնաց Գաղատիա , Տիտոս՝ Գաղմատիա . 11 - Միայն Լուկաս ինձի հետ է . Մարկոսը առնես՝ քեզի հետ բերես , վասն զի ինձի օգտակար է ապաստարանութեան համար : 12 - Եւ ես Տիւքիկոսը եփեսոս զրկեցի : 13 - Այն վերաբիւն՝ զոր Տրովագա թողուցի Կարպոսի քով , երբ գաս՝ բեր ,

*Կա՛մ , Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ .

գիրքերն ալ՝ մանաւանդ մագաղաթ-
ները: 14 - Դարբին Աղեքսանդրոս շատ
չարութիւն ըրաւ ինծի . Տէրը անոր
* հասուցանէ իր գործերուն համեմատ:
15 - Իսւն ալ անկէ զգուշանաս, վասն
զի մեր խօսքերուն շատ դէմ կեցաւ:
16 - Առաջին անգամ՝ առեանին առ-
ջև պատասխան տալու՝ իմ կողմանէս
մէկը չկայնեցաւ ինծի հետ, հապա
ամէնն ալ զիս թողուցին . այս իրենց
չսեպուի: 17 - Բայց Տէրը իմ քովս
կայնեցաւ ու զիս զօրացուց, որպէս զի
քարոզութիւնը իմ միջոցովս լման ըլ-
լայ, ու բոլոր հեթանոսները լսեն . և
ես առիւծին բերնէն ազատեցայ: 18 -

Եւ Տէրը ամէն չար գործէ պիտի ազա-
տէ զիս, և ապահովութեամբ իր երկ-
նային թագաւորութեանը պիտի հաս-
ցնէ. իրեն փառք յաւիտեանս յաւի-
տենից: Ամէն:

19 - Բարև սուր Պրիսկէի և Ակիւ-
ղասի, ու Ռնեսիփորոսի սանը: 20 -
Երաստոս Կորնթոսի մէջ մնաց. և Տրո-
փիմոսը Մելիտոսի մէջ թողուցի հի-
ւանդացած: 21 - Չանք ըրէ՝ ձեռնէն
առաջ գայ: Բարև կ'ընեն քեզի Եւ-
բուզոս ու Պուզէս և Լինոս ու Կղօզիս
և բոլոր եղբայրները: 22 - Տէր Յիսուս
Քրիստոս քու հոգիիդ հետ ըլլայ .
չնորհքը ձեզի հետ: Ամէն:



Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Տ Ի Տ Ո Ս



ԳԼՈՒԽ Ա.

Պօղոս, Աստուծոյ ծառայ և Յիսուս
Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտ-
րեալներուն հաւատքին ու աստուած-
պաշտութեան հետ կից եղող ճշմար-
տութեան գիտութեանը համեմատ,
2 - Յաւիտեանական կեանքի յուսովը,
զոր ինք անսուան Աստուած խոստացաւ
յաւիտեանական դարերէն առաջ, 3 -
Բայց իր խօսքը իր ժամանակին յայտ-
նեց քարոզութիւնով, որ ինծի յանձ-
նուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամա-
նովը, 4 - Տրտոսի ի՞մ հարաչատորդոյս
հասարակաց հաւատքովը՝ շնորհք + և
խաղաղութիւն շօր Աստուծմէն ու
մեր Փրկչէն, Տէր Յիսուս Քրիստոսէ:

5 - Ասոր համար ես քեզ Կրեոտէ թու-
ղուցի, որ ինչ պակաս բան որ կայ,
չիտկես, ու ամէն մէկ քաղաքի մէջ
երէցներ կարգես, ինչպէս ես քեզի
պատուիրեցի . 6 - Եթէ մէկը անմե-
ղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր, հաւա-
տացեալ զաւակներ ունենայ, որոնք

անառակութեան համար ամբաստան-
ուած կամ անհնազանդ ըլլան: 7 -
Վասն զի եպիսկոպոսին պէտք է ան-
մեղադրելի ըլլալ Աստուծոյ անտեփն
պէս . ոչ յանդուգն, ոչ բարկացող,
ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անարգ
չահախնդրութեան ետէ եղող, 8 -
Հապա հիւրասէր, բարեհէր, խոհեմ,
արդար, սուրբ, ժուժկալ, 9 - Հաստատ
բռնելով վարդապետութեան հաւա-
տարիմ խօսքը, որպէս զի կարող ըլլայ
ողջամիտ վարդապետութիւնով յոր-
դորել, և հակառակ կեցողները յան-
գիմանել: 10 - Քանզի շատ են անհնա-
զանդները, ու նայնութիւն խօսողները
ու միտք խարողները, մանաւանդ ա-
նանք որ թլփատութենէն են. 11 - Չո-
րոնք պէտք է պապանձեցնել, որոնք
ամբողջ տուներ կը կործանեն, ու ան-
պատեհ բաներ կը սորվեցնեն անարգ
չահախնդրութեան համար. 12 - Անոնց-
մէ մէկը զրուցեց, որ իրենց բուն մար-
գարէն էր, Կրեոտացիները միշտ սուտ-
զրոյց են, շար գազաններ, դատարկա-
պորաներ: 13 - Այս վկայութիւնը
ճշմարիտ է . անոր համար սաստիկ
յանդիմանէ զանոնք, որպէս զի առող-

*Ո՛հնէ, պիտի հասուցանէ
+Ո՛հնէ, սորսմութիւնն է

ջանան հաւատքին մէջ . 14 - Ու չնային Հրեական առապելներուն և ճշմարտութենէն հեռացող մարդոց պատուէրներուն : 15 - Ամէն բան մաքուր է մաքուրներուն , բայց պիղծերուն ու անհաւատներուն բա՛ն մը մաքուր չէ , հապա անոնց միտքն ալ խղճմտանքն ալ պղծուած են : 16 - Կը խոտովանին թէ զԱստուած կը ծանչնան , և էրէնց գործերովը կ'ուբանան , պիղծ ու անհնազանդ ըլլալովսին , և ամէն բարի գործի անպիտան :

ԳԼ . Բ

Բայց դուն խօսէ ինչ որ կը վայլէ ողջամիտ վարդապետութեանը . 2 - Ծերերուն զգաստ ըլլալ , ծանրաբարոյ , խոհեմ , ողջամիտ՝ հաւատքով , սիրով , համբերութիւնով : 3 - Նոյնպէս ալ պառաւներուն այնպիսի վարմունք ունենալ , ինչպէս կը վայլէ սրբութեան . ոչ բանասրկու ըլլալ , ոչ *գինեմոլ , հապա բարի խրատ տուող . 4 - Որ խրատեն նորահատակ կիները՝ այրերնին սիրող , զաւակներնին սիրող ըլլալ , 5 - Խոհեմ , ողջախոհ , անաշէն , բարեգործ , իրենց այրերուն հնազանդ , որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը հայհոյուի : 6 - Նոյնպէս ալ երիտասարդները յորդորէ խոհեմ ըլլալ : 7 - Ամէն կողմէ քու անձդ բարի գործերու օրինակ ցուցնելով , վարդապետութեան մէջ անեղծութիւն , պարկեշտութիւն , 8 - Ողջամիտ ու անմեղադրելի խօսք , որպէս զի հակառակ կեցողը ամչնայ , ու մեր վրայով գէշ բան մը չունենայ բտելու : 9 - Ծառաներուն «բժեշ»-ը իրենց տէրերուն հնազանդ ըլլալ , և ամէն բանի մէջ հաճելի . ոչ հակառակախօսներ , 10 - Ոչ խորողներ , հապա բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցնեն , որպէս զի մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը ամէն բանի մէջ զարդարեն : 11 - Բանգի Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր մարդոց երեցու . 12 - Որ մեզ կը խրատէ՝ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք , և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրինք այս աշխարհին մէջ : 13 - Ու սպասենք այն երջանիկ յոյսին , և մեծ Աստուծոյ ու

մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին յայտնուելուն . 14 - Որ իր անձը մեզի համար սուաւ , որպէս զի մեզ ամէն անօրէնութենէ ազատէ , ու մաքրէ իրեն սեպհական ժողովուրդ ընէ՝ բարի գործերու նախանձաւոր : 15 - Այդ բաները խօսէ և յորդորէ ու յանգիմանէ բոլորովին սաստելով . չըլլայ որ մէկը քեզ անարգէ :

ԳԼ . Գ

Անոնց միտքը ձգէ իշխանութիւններուն և պետութիւններուն հնազանդիլ ու հպատակ ըլլալ , ու ամէն բարի գործերու պատրաստ գանուիլ . 2 - Մէկո՛ւն հահոյութիւն չընել , կռուարար չըլլալ , հապա հեզահոգի , ամէն մարդոց բոլորովին քաղցրութիւն ցուցնել : 3 - Վասն զի մենք ալ ատեն մը անմիտ էինք , անհնազանդ , մոլորեալ , և զանազան ցանկութիւններու ու հեշտութիւններու կը ծառայէինք . չարութիւնով ու նախանձով կը վարուէինք , ատելի էինք և մէկզմէկ կ'ատէինք , 4 - Բայց երբ մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնը ու մարդասիրութիւնը յայտնուեցաւ , 5 - Ոչ թէ արգարութեան գործերէն՝ զորոնք մենք բրինք , հապա իր սղորմութեանը համեմատ մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին միջոցաւ ու Սուրբ Հոգիին նորոգելովը , 6 - Զոր առատօրէն թափեց մեր վրայ Յիսուս Քրիստոս մեր Փրկիչին ձեռքով , 7 - Որպէս զի անոր շնորհքովը արդարացած՝ յաւիտենական կեանքի յոյսով ժառանգ ըլլանք : 8 - Այս խօսքը հաւատարիմ է . և կ'ուզեմ որ ասոնք հաստատեն , որպէս զի Աստուծոյ հաւատացողները հոգ տանին բարի գործերը ընելու վրայ ըլլալ . ասոնք են բարի ու մարդոց օգտակար բաները : 9 - Բայց դուն յիմարական վէճերէն ու ազգահամարներէն ու հակառակութիւններէն և օրէնքի վրայով եղած կռիւններէն մէկզի կեցիր , վասն զի անօգուտ են ու սնտախ : 10 - Հերձուածող մարդէ՝ առաջին ու երկրորդ անգամ խրատելէ ետեւ ետ քաշուէ , 11 - Գիտնալով որ այնպիսին խոտորած է , և մեղք կը գործէ ինքզինք զատապարտելով :

12 - Երբ Արտեման կամ Տիւքիկոսը քեզի զրկեմ , ջանք բրէ ինձի գալ

*Յ--ն. շատ գինիի ծառայ եղած

Նիկողայիս, վասն զի միաքս դրի ձմեռը
 հան անցնել : 13 - Զենաս օրինականը
 ու Ապողոսը փութով ճամբայ դիր ,
 հոգ Կանելու որ անոնց բա՛ն մը չպակոխի :
 14 - Եւ մերիններն ալ թող սորվին
 բարի գործեր ընելու վրայ ըլլալ հար-

կաւոր պարագաներու մէջ , որպէս զի
 անպառազ չըլլան : 15 - Բարե կ'ընեն
 քեզի ամէնն ալ որ ինծի հետ են . բա-
 րե տուր անոնց որ մեզ կը սիրեն հա-
 ւատքով . շնորհքը ձեր ամէնուն հետ
 ըլլայ : Ամէն :

Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ



Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապեալը,
 և Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի , մեր
 սիրելիին ու գործակցին , 2 - Եւ Ապ-
 փիա սիրելիին , ու Արքիպպոս մեր զին-
 ուորակցին , ու քու ամուգ մէջի եկե-
 ղեցիին . 3 - Շնորհք և խաղաղութիւն
 ձեզի Աստուծոյ մեր Հօրովն և Տէր
 Յիսուս Քրիստոսէ :

4 - Կը դո՛հանամ միշտ իմ Աստուծ-
 մէս՝ քեզ իմ աղօթքներուս մէջ յի-
 շելով , 5 - Երբ կը լսեմ՝ քու սերդ ու
 հաւատքդ՝ զոր ունիս Տէր Յիսուսի վրայ
 և բոլոր սուրբերուն վրայ , 6 - Որպէս
 զի քու հաւատքիդ հազարդակցութիւ-
 նը պողաքեր ըլլայ՝ Քրիստոս Յիսու-
 սով *ձեր վրայ եղած ամէն բարու-
 թեանը ճանչցուելովր : 7 - Քանզի շատ
 ուրախութիւն և մխիթարութիւն ու-
 նինք քու սիրոյդ վրայ , որ սուրբերուն
 սիրտերը քեզմով հանգստացած են ,
 եղբայր :

8 - Ասոր համար թէև շատ համար-
 ձակութիւն ունիմ Քրիստոսով վայե-
 յուչ եղածը քեզի հրամայելու , 9 -
 Բայց յաւետ սիրոյ համար կ'աղաչեմ՝
 այնպիսի մէկը ըլլալով ինչպէս եմ ես
 Պօղոս ձերացած , ու հիմա Յիսուս
 Քրիստոսի համար կապուած ալ : 10 -
 Կ'աղաչեմ քեզի իմ որդւոյս Ոնեսիմո-
 սի համար, զոր իմ կապանքներուս մէջ
 ծնայ , 11 - Որ աստէն մը անպիտան էր
 քեզի , բայց հիմա քեզի ալ ինծի ալ

պիտանի է . 12 - Զանկա ետ զրկեցի .
 դուն ալ ընդունէ զանկա , որ է իմ
 աղիքս . 13 - Զոր կ'ուզէի իմ քովս
 պահել , որպէս զի քու տեղդ ինծի
 սպասուորութիւն ընէ աւետարանին
 կապանքներուն մէջ : 14 - Բայց առանց
 քու կամքիդ չուզեցի բան մը ընել ,
 որպէս զի քու բարեբարութիւնդ իբր
 թէ ստիպմամբ եղած չըլլայ , հապա
 կամու : 15 - Քանզի թերևս այս պատ-
 ճառու անկա քիչ մը աստէն զատ-
 ուեցաւ , որպէս զի զանկա յաւիտ-
 եան ունենաս , 16 - Ոչ թէ ալ ծառա-
 յի մը պէս , հապա ծառայէ վեր , սի-
 րելի եղբօր պէս . Ե ի՞նչ ինծի այսպէս
 *եքե՛ք է , ո՛րչափ աւելի պիտի ըլլայ
 քեզի՝ թէ՛ մարմինի կողմանէ ու թէ՛
 Տէրոջը : 17 - Ուստի եթէ զիս +եզի հա-
 զորդ կը սեպես , ընդունէ զանկա՝ որ-
 պէս թէ զիս : 18 - Եւ եթէ քեզի անի-
 բաւութիւն մը ըրած է կամ պարտք մը
 ունի , զայն իմ հաշիւիս անցուր : 19 -
 Ես Պօղոս իմ ձեռքովս գրեցի , ես կը
 վճարեմ . որ չըսեմ՝ քեզի թէ դուն
 ալ քու անձդ ինծի պարտական ես :
 20 - Այո , եղբայր , թող քեզմէ ունե-
 նամ այս օգուար Տէրոջմով . հանգչե-
 ցուր իմ աղիքս *Տէրոջմով : 21 - Քու
 հնազանդութեանդ փաստհանալով
 քեզի գրեցի , քանզի զիտեմ որ ըստ-
 ձէս ալ աւելի պիտի ընես :

22 - Ասկէ զատ ինծի բնակարան մըն
 ալ պատրաստէ , վասն զի կը յուսամ

*Ո՛հնէ , մեր

*Ո՛հնէ , Քրիստոսով

Թէ ձեր աղօթքներուն միջոցաւ ձեզի պիտի շնորհուիմ : 23 - Բարև կ'ընէք զի Եպոփրաս, իմ գերութեան ընկերս Քրիստոս Յիսուսով : 24 - Նաև

Մարկոս, Արիստարքոս, Գեմաս, Դուկաս, իմ գործակիցներս : 25 - Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ : Ամէն :

Թ Ո Ւ Ղ Թ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Ա Ռ Ե Բ Բ Ա Յ Ե Յ Ի Ս

ԳԼՈՒԽ Ա

Շատ մասերով ու շատ կերպերով առաջուրնէ խօսելով Աստուած հայրերուն հետ մարգարէներով, 2 - Այս վերջին օրերս եւ Արդիովը խօսեցաւ մեզի հետ, զոր ամէն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց : 3 - Որ իր փառաց լոյսն է և իր էութեան բուն պատկերը. որ իր զօրութեան խօսքովը ամէն բան կը բռնէ, իր անձով մեր մեղքերը սրբելով բարձրերը, Աստուծոյ մեծութեան աջ կողմը, նստաւ : 4 - Եւ այնչափ աւելի եղաւ հրեշտակներէն, որչափ անոնցմէ աւելի աղէկ անուն ժառանգեց : 5 - Վասն զի հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբէք, Գուն իմ Արդիս ես, ես այսօր քեզ ծնայ. և դարձեալ Ես անոր Հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի Արդի պիտի ըլլայ : 6 - Եւ դարձեալ երբ Անդրանիկը աշխարհ կը մտցնէ՝ կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն : 7 - Եւ հրեշտակներուն վրայով կ'ըսէ, Ար իր հրեշտակները հոգիներ կ'ընէ, ու իր պաշտօնեաները՝ կրակի բոց, 8 - Սակայն Արդիին ի՞նչէ, Քու աթոռդ, ով Աստուած, յաւիտեանս յաւիտենից է. քու թագաւորութեան գաւազանդ ուղղութեան դաւազան է : 9 - Արդարութիւնը սիրեցիր ու անօրէնութիւնը ատեցիր. անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի : 10 - Եւ՛ Գուն, ով Տէր, սկիզբէն երկրի հիմերը դրիր,

ու երկինք քու ձեռքերուդ գործն է : 11 - Անոնք պիտի կորսուին, բայց դուն կը կենաս ու կը մնաս. ու ամէնը լաթի պէս պիտի մաշին, 12 - Ու վերարկուի պէս պիտի գալարես զանոնք, և պիտի փոխուին. բայց դուն նոյն ինքն ես, ու քու տարիներդ պիտի չպակսին : 13 - Եւ հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբէք, իմ աջ կողմն նստէ, մինչև քու թշնամիներդ օտքերուդ պատուանդան դնեմ : 14 - Զէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը զրկուին անոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն :

ԳԼ. Բ

Անոր համար պէտք է մեզի ալ աւելի ուշադրութիւն տալ ձեր լսած բաներուն, որ ըլլայ թէ երբէք պակսինք : 2 - Վասն զի եթէ այն խօսքը որ հրեշտակներուն ձեռքով զրուցուեցաւ, հաստատուն եղաւ, և ամէն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն արդար հատուցում առաւ, 3 - Հապճեանք ինչպէս պիտի ազատինք՝ եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութեան մը, որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքով մեզի հաստատուեցաւ : 4 - Աստուած ալ վկայեց նշաններով ու հրաշքներով և զանազան զօրութիւններով ու Սուրբ Հոգիին պարգևներովը, ինչպէս ինք կ'ամեցաւ : 5 - Վասն զի ոչ թէ հրեշտակներուն հնազանդեցուց այն գալու աշ-

խարհը, որուն վրայով մենք կը խօսինք.
 6 - Հապա մէկը աեղ մը վկայեց ու
 ըսաւ, Մարդը ի՞նչ է՝ որ զանհկա կը
 յիշես, կամ՝ մարդու որդին՝ որ անոր
 այցելուութիւն կ'ընես. 7 - Քիչ մը վար
 ըրիր զանհկա հրեշտակներէն. փառքով
 ու պատուով պատկեցիր զանհկա, և
 քու ձեռքերուդ գործերուն վրայ կե-
 ցուցիր զանհկա. 8 - Ամէն բան անքր
 ոտքերուն ասկ հնազանդեցուցիր. ուս-
 տի ամէնը որ անոր հնազանդեցուց,
 անոր չհնազանդած բան մը չձգեց.
 բայց հիմա դեռ չենք տեսներ ամէնը
 անոր հնազանդած: 9 - Սակայն Յիսու-
 սը փառքով ու պատուով պատկուած
 կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը
 վար եղած էր մահուան չարչարանքին
 համար, որպէս զի Աստուծոյ շնորհքովը
 ամէնուն համար մահ ճաշակէ: 10 -
 Որովհետեւ կը վայլէր Անոր, (որու հա-
 մար ամէնը, և անով ամէն բաները
 եղած են,) շատ որդիներ փառքին մէջ
 մացնելու տատենը՝ անոնց փրկութեան
 Աւաջնորդը չարչարանքով կատարել:
 11 - Վասն զի ան որ կը սրբէ ու ան
 որ կը սրբուի, ամէնն ալ մէկէ են. ա-
 նոր համար ինք ամօթ չսեպեր եղ-
 բայր կոչել զանոնք՝ ըսելով, 12 - Քու
 անունդ եղբայրներուս պիտի պատմեմ,
 ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ:
 13 - Եւ դարձեալ՝ Ես անոր պիտի յու-
 սամ. ու դարձեալ՝ Ահա ես ու այն
 զաւակները զորոնք Աստուած ինծի
 տուաւ: 14 - Ուստի որովհետեւ զա-
 վակները մարմինին ու արիւնին հաղորդ
 եղան, ինք ալ նմանապէս անոնց բա-
 ժանորդ եղաւ, որպէս զի իր մահովը
 փճացնէ զանհկա որ մահուան իշխա-
 նութիւնը ունէր, այսինքն է Աստու-
 նան. 15 - Եւ ազատէ զանոնք որ մահ-
 ուան վախովը միշտ ծառայութեան
 մէջ կ'ապրէին: 16 - Քանզի բնաւ
 հրեշտակներուն ձեռք չընէր, հապա
 Աբրահամի սերունդին ձեռք կը բռնէ:
 17 - Անոր համար պէտք էր անոր
 բոլորովին եղբայրներուն նման ըլլալ,
 որպէս զի ինք սղորմած ըլլայ ու հաւա-
 տարիմ քահանայապետ՝ Աստուծոյ
 կողմանէ, ժողովուրդին մեղքերը քա-
 ւելու համար: 18 - Քանզի ինչ բանով
 որ ինք չարչարուեցաւ փորձութիւն
 կրելով, կրնայ փորձանաւորներուն ալ
 օգնական ըլլալ:

Ուստի, սուրբ եղբայրներ, երկնա-
 յին կոչուածին մասնակիցներ, նայեցէք
 մեր դաւանութեանը Առաքեալին ու
 Քահանայապետին, Քրիստոս Յիսուսի.
 2 - Որ հաւատարիմ է անոր՝ որ զինք
 դրաւ, ինչպէս Մովսէս ալ՝ անոր բոլոր
 տանը մէջ: 3 - Վասն զի ինք Մովսէսէ
 առաջ աւելի փառքի արժանացաւ,
 որչափ աւելի պատիւ կ'ունենայ քան
 շինողը քան թէ տունը: 4 - Քանզի ամէն
 տուն մէկէ կը շինուի. բայց ան որ ամէն
 բաները ըրաւ՝ Աստուած է: 5 - Եւ յի-
 բաւի Մովսէս անոր բոլոր տանը մէջ հա-
 ւատարիմ էր ծառայի մը պէս՝ զրուց-
 ուելու բաներուն վկայ ըլլալու համար.
 6 - Բայց Քրիստոս որդիի մը պէս իր տանը
 վրայ, որուն տունը մենք ենք, միայն թէ
 այն համարձակութիւնը և յոյսին պար-
 ծանքը մինչև վերջը հաստատ բռնենք:
 7 - Ուստի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ,
 Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք,
 8 - Ձեր սիրտերը մի խտացնէք բար-
 կացնելու տատենին պէս անապատին մէջ
 փորձութեան օրը, 9 - Ուր ձեր հայրե-
 րը զիս փորձեցին, քննեցին զիս, Իեղե-
 քառասուն տարի իմ գործերս տեսան:
 10 - Անոր համար զուրեցայ այն ազգէն
 ու ըսի, Միշտ մնորած են սրտովնին, և
 իմ ճամբաներս չճանչցան անոնք. 11 -
 Ուստի երգում ըրի իմ բարկութեանս
 մէջ թէ իմ հանդիստս պիտի չմանեն:
 12 - Նայեցէք, եղբայրներ, չըլլայ որ
 ձեզմէ մէկուն ներսիդին անհաւատու-
 թեան չար սիրտ ըլլայ՝ տպատամբ ըլ-
 լալու կենդանի Աստուծմէն. 13 - Հա-
 պա ամէն օր մէկզմէկ յորդորեցէք,
 քանի որ Այսօր կ'ըսուի, որ չըլլայ թէ
 ձեզմէ մէկը խտանայ մեղքին խաբէու-
 թիւնովը: 14 - Քանզի մենք Քրիստոսի
 մասնակից եղած ենք, միայն թէ այն
 հաստատութեան սկիզբը մինչև վերջը
 պինդ բռնենք. 15 - Քանի որ կ'ըսուի,
 Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք,
 ձեր սիրտերը մի խտացնէք բարկացնե-
 լու տատենին պէս: 16 - Քանզի *ոմանք
 լսեցին ու բարկացուցին, բայց ոչ թէ՛
 ամէնը որ եզրպտոսէ ելած էին Մովսէ-
 սի ձեռքով: 17 - Որոնցմէ՞ զրուցու
 այն քառասուն տարին. չէ՞ որ մեզան-

*Կամ, որոնք լսեցին ու բարկացուցին.
 չէ՞ որ

չողներէն, որոնց սոկորները անապատին մէջ ինկան: 18 - Եւ որոնց համար երգում ըրաւ իր հանգիստը չմանել, եթէ ոչ անհաւատներուն համար: 19 - Եւ կը տեսնենք որ չկրցան մտնել երէն: անհաւատութեանը համար:

ԳԼ. Գ

Աւրեմն ա՛լ վախնանք, որ չըլլայ թէ անոր հանգիստը մտնելու խոտամունքէն, որ Բեգի մնացեր է, ձեզմէ մէկը զրկուած գանուի: 2 - Վասն զի մենք ալ անոնց պէս աւեախա առած ենք. բայց անոնց շահ մը չըրաւ այն խօսքը լսելը, քանզի հաւատքով խառնուած չէր լողներուն մէջ: 3 - Իսկ մենք որ հաւատացինք, հանգիստը կը մտնենք. ինչպէս ըսաւ, Ուստի երգում ըրի իմ բարկութեանս մէջ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն. թէեւ երգործերը աշխարհի սկիզբէն եղած էին: 4 - Վասն զի Բեգը այսպէս կ'ըսէ տեղ մը եօթներորդ օրո՞ւմ համար, Եւ Աստուած եօթներորդ օրը հանգչեցաւ իր բոլոր գործերէն. 5 - Ու հոս նորէն կ'ըսէ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն: 6 - Ուստի որովհետեւ անոնց կը մնայ հոն մտնել, և անոնք որ առաջուրնէ աւեախար առած էին, անհաւատութեան համար չմտան, 7 - Նորէն օր մը կը տահմանէ՝ ու կ'ըսէ Այսօրը Դաւիթի բերնով այնքան ժամանակէ ետեւ, ինչպէս ըսուեցաւ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտացնէք: 8 - Վասն զի եթէ Յեսու հանգչեցուցած ըլլար վանանք, ալ անկէ ետքը ուրիշ օրուան համար չէր զրուցեր: 9 - Աւրեմն Աստուծոյ ժողովուրդին Գե- հանգիստ մը կը մնայ: 10 - Վասն զի ան որ անոր հանգիստը մտու, ալ հանգչեցաւ իր գործերէն, ինչպէս Աստուած ալ իրեններէն: 11 - Աւրեմն ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատութեան օրինակին պէս իյնայ: 12 - Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ, և ամէն երկասյրի սուրէ կարուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու սգին և յօգուածները ու ծուծը բաժնելու, և կը քննէ որտի՛ն խորհուրդները ու մտածամունքները. 13 - Եւ չկայ արարած մը անոր գիմաց չերեցած, հապա ամէն բան բաց ու յայտնի է

անոր աչքերուն առջև, որու պէտէ Գե- մեր հաշիւը:

14 - Արդ մենք որ մեծ Քահանայապետ մը ունինք երկինքը անցած, Յիսուսը, Աստուծոյ Որդին, ամուր բռնենք Բեգ գաւանդութիւնը: 15 - Քանզի ոչ թէ այնպիսի քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալ, հապա ինք ամէն կերպով փորձը առած է Բեգի նման, Բայց առանց մեղքի: 16 - Ուստի ա՛լ համարձակութիւնով մօտենանք շնորհաց ակթուին առջև, որպէս զի ողորմութիւն ընդունինք ու շնորհք գրանենք պէտք եղած ատեն Բեգի օգնելու:

ԳԼ. Ե

Վասն զի ամէն քահանայապետ մարդոց մէջէն առնուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը, որպէս զի պատարագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար. 2 - Եւ կարող է կարեկից ըլլալ անոնց՝ որ տգէտ ու մնորեալ են, վասն զի ինք ալ տկարութիւնով պաշարուած է. 3 - Եւ այս պատճառաւ պարտաւոր է ինչպէս ժողովուրդին համար՝ նոյնպէս ալ իր անձին համար մեղքի պատարագ մատուցանել: 4 - Եւ ոչ թէ մէկը ինքիմէ այս պատիւը կ'առնէ, հապա ան՝ որ Աստուծմէ կանչուած է, ինչպէս Ահարոն: 5 - Նոյնպէս ալ Քրիստոս ոչ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հապա անիկա՝ որ զրուցեց անոր թէ Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. 6 - Ինչպէս ուրիշ Գեղ մըն ալ կ'ըսէ, Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս: 7 - Որ իր մարմինին օրերը սաստիկ գոչումով ու արցունքով աղօթք և աղաչանք մատուց անոր որ կարող էր զինք մահուանէ ազատել, ու լսուեցաւ երբ քարեպաշտութեանը պատճառաւ: 8 - Թէպէտ ինք Որդի է, Բայց իր չարչարանքներէն հնազանդութիւն ստիպեցաւ. 9 - Ու երբ կատարուեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտեանական փրկութեան պատճառ եղաւ. 10 - Ու Աստուծմէ կոչուեցաւ Քահանայապետ Մելքիսեդեկի կարգին պէս: 11 - Որուն վրայով շատ լսելիք ունինք, որ դըժ-

*Վա՛մ, երկիւղէն ապարտելով

ուարին ալ է մեկնել, վասն զի ձեր լսելիքները բխացած են . 12 - Վասն զի թէպէտ պէտք էր ձեզի ժամանակին նայելով արվեցնող ըլլալ , բայց նորէն պէտք է ձեզի արվիլ թէ ի՛նչ են Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքները . ու դուք կաթի կարօտ եղաք՝ և ոչ թէ հաստատուն կերակուրի : 13 - Քանզի այն ամէնը որ կաթնկեր է՝ արդարութեան խօսքին անհմուտ է , որովհետեւ տղայ է : 14 - Բայց հաստատուն կերակուրը կատարեալներուն է , որոնց զգայարանքները սովորութեամբ կրթուած են բարին ու չարը զանազանել :

ԳԼ . 9

Աւտի Քրիստոսի վրայով առաջին արվելիքները ձգելով՝ կատարեալին գանք, առանց նորէն հիմ՝ ձգելու մեռած գործերէն ապաշխարելու , ու առ Աստուած հաւատք ունենալու , 2 - Եւ մկրտութիւններուն վարդապետութեանը , ու ձեռք դնելուն , և մեռելներուն յարութեանը , ու յաւիտեանական դատաստանին : 3 - Եւ զոյս պիտի ընենք՝ եթէ Աստուած հրաման տայ : 4 - Վասն զի անհնար է մէկ անգամ լուսաւորուածներուն , որոնք երկնաւոր պարգևին համը առին , ու Հոգւոյն Արքայ հաղորդ եղան , 5 - Եւ Աստուծոյ բարի խօսքին ու գալու աշխարհին զօրութիւններուն համը առին , 6 - Եթէ իյնան՝ նորէն ապաշխարութիւնով նորգուիլ . որովհետեւ կրկին Աստուծոյ Արդին խաչը կը հանեն իրենց անձին , ու կը խոյտառակեն : 7 - Վասն զի այն երկիրը որ իր վրայ շատ անգամ եկած անձրևը կը խմէ , և արդիւնք կը բերէ պիտանի անանց՝ որոնց համար կը մշակուի , Աստուծմէ օրհնութիւն կ'ընդունի . 8 - Բայց այն որ փուշեր ու ատասկներ կը բերէ՝ անպիտան է ու անէճքի մօտ , և անոր վերջը այրուիլ է : 9 - Իսկ մենք , սիրելիներ , ձեր վրայով լուսագոյն և փրկութեան վերաբերեալ յոյսեր ունինք , թէ և այսպէս կը խօսին : 10 - Քանզի Աստուած անիրաւ չէ , որ ձեր գործը մտնայ , ու այն սէրը զոր իր անուանը համար ցուցուցիք , որ սուրբերուն ծառայեցիք ու կը ծառայէք :

11 - Բայց մենք կը բողձանք որ ձեզ-

մէ ամէն մէկը նոյն ջանքը ցուցնէ յոյսին հաստատուելուն մինչև վերջը . 12 - Արպէս զի դուք չհեղգանաք , հապտնմանող ըլլաք անոնց որ հաւատքով ու համբերութիւնով խոստմունքները ժառանգեցին : 13 - Վասն զի երբ Աստուած Աբրահամի խոստմունք ըրաւ , որովհետեւ իրմէ մեծը չկար՝ որ անոր վրայ երգում՝ ընէր , 14 - Իր անձին վրայ երգում՝ ըրաւ ու ըսաւ , Այո , օրհնելով պիտի օրհնեմ քեզ , ու շատցնելով պիտի շատցնեմ քեզ : 15 - Եւ այսպէս համբերելով խոստմունքին հասաւ : 16 - Քանզի մարդիկ իրենցմէ մեծին վրայ երգում կ'ընեն , ու անոնց բոլոր հակառակութեանը հաստատվծիւ քաջ երգումն է : 17 - Արով Աստուած իր խորհուրդին անփոփոխ ըլլալը ա՛լ աւելի ցուցնել ուզելով խոստմունքին ժառանգաւորներուն , երգումը մէջ ձգեց . 18 - Արպէս զի երկու անփոփոխելի բաներով , որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ գրուցել , հաստատուն միթարութիւն ունենանք մենք , որ ապաստանեցանք մեր առջև դրուած յոյսը ամուր բռնելու . 19 - Չոր ունինք իբրև հաստատ ու անշարժ խարխիս մը մեր անձին , որ վարագուրին ներսի կողմն ալ կը մտնէ . 20 - Աւր Յիսուս իբրև Աւաջնորդ մտաւ մեզի համար՝ յաւիտեանական Քահանայապետ ըլլալով Մելքիսեդեկի կարգին պէս :

ԳԼ . Է

Քանզի այս Մելքիսեդեկը Սաղէմի թագաւորն էր , Բարձրեալ Աստուծոյ քահանան , որ Աբրահամը գիմուորեց՝ երբ անիկա թագաւորներուն կոտորածէն կը դառնար , ու օրհնեց զանիկա . 2 - Արու Աբրահամ ալ ատասնորդ սուտ բոլոր բաներէն . որ նախ Արդարութեան թագաւոր կը թարգմանուի , ետքը Սաղէմի թագաւոր՝ որ է Խաղաղութեան թագաւոր . 3 - Առանց հօր , առանց մօր , ազգահամար չունեցող , որուն ոչ օրերուն սկիզբը կայ , ոչ ալ կեանքին վերջը . և Աստուծոյ Արդւոյն նման ըլլալով , կը կենայ ու կը մնայ միշտ քահանայ :

4 - Արդ նայեցէք թէ ո՛րչափ մեծ մէկն էր առիկա , որու Աբրահամ նահապեան ալ ատասնորդ սուտաւ աւա-

րէն: 5 - Եւ Ղևիի որդիներէն եղաղները, որոնք քահանայութիւն կ'առնեն, պատուէր ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն օրէնքին համեմատ, այսինքն իրենց եղբայրներէն. Թէպէտև անոնք Արքայաճամբ երանքէն ելեր են. 6 - Բայց անիկա, որուն ազգահամարը անոնցմէ չէր, Աբրահամէ տասանորդ առաւ, ու օրհնեց զանիկա՝ որ խոտամուկները առած էր: 7 - Սակայն ասիկա անհապառակելի բան մըն է, որ պղտիկը մեծէն կ'օրհնուի:

8 - Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ կ'առնեն, բայց հոն անիկա կ'առնէ, որու համար վկայուած է թէ կենդանի է: 9 - Եւ կրնայ ըսուիլ թէ Ղևի ալ, որ տասանորդ կ'առնէ, Աբրահամի ձեռքով տասանորդ առաւ. 10 - Վասն զի տակաւին իր հօրը երանքն էր, երբ Մելքիսեղեկ զանիկա գիմուորեց:

11 - Արդ եթէ կատարելութիւնը Ղևտացուց քահանայութեան ձեռքով ըլլար, (որովհետև ժողովուրդը անոր ատենը օրէնքին տակ դրուեցաւ,) ալ ինչ պէտք էր որ Մելքիսեղեկի կարգին պէս ուրիշ քահանայ մը ելլէ, ու չըսուի Ահարոնի կարգին պէս: 12 - Արդ քահանայութիւնը փոխուելուն պէս՝ հարկ էր որ օրէնքին ալ փոխութիւն ըլլար: 13 - Եւ երբեք, վասն զի ան որու համար այսպէս կ'ըսուի, ուրիշ ցեղի հաղորդութիւն ունեցաւ, որմէ բնաւ մէկը սեղանին չմտեցաւ. 14 - Քանզի յայտնի է թէ Յուդայի ցեղէն յառաջ եկաւ մեր Տէրը, որ ցեղին վրայով Մովսէս բան մը չգրուցեց քահանայութեան համար: 15 - Աւ ալ աւելի յայտնի է որ քահանայութիւնովը ուրիշ քահանայ մը կ'ելլէ, 16 - Ար ոչ թէ մարմնաւոր պատուէրի օրէնքին պէս եղաւ, հապա անվախճան կեանքին զօրութեանը պէս: 17 - Վասն զի կը վկայէ թէ Գուն յաւիտեան քահանայ եւ Մելքիսեղեկի կարգին պէս: 18 - Քանզի առաջին պատուէրը կը խափանուի իր ակարութեանը ու անշահութեանը համար, 19 - (Վասն զի օրէնքը բան մը կատարեալ չըրաւ,) և անոր տեղ կը մտնէ լուսագոյն յոյս մը՝ որով Աստուծոյ կը մտնենանք:

20 - Եւ որքան որ Յիսուս ոչ թէ ա-

ռանց երգումի բանաց, (վասն զի անոնք առանց երգումի քահանայ եղած են. 21 - Բայց ասիկա երգումով անոր ձեռքով որ իրեն ըսաւ, Տէրը երգումը ըրաւ ու պիտի չզղջայ, Գուն յաւիտեան քահանայ եւ Մելքիսեղեկի կարգին պէս,) 22 - Այնքան աւելի աղէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս:

23 - Աւ անոնք շատ քահանաներ եղած են՝ իրենց միշտ մնալուն մահը արգելք ըլլալուն համար. 24 - Բայց ասիկա յաւիտեան կենալուն համար անանցանելի ունի քահանայութիւնը:

25 - Առաի բարբաբին կարող ալ է ապրեցնելու զանոնք որ իրմով Աստուծոյ կու գան. որովհետև ինք միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու:

26 - Վասն զի մեզի հիշք այսպիսի քահանայապետ մը կը վայլէր, սուրբ, անմեղ, անարտա, մեղաւորներէն զատուած ու երկինքէն վեր բարձրացած.

27 - Արու ամէն օր հարկ չէ ինչպէս որիք քահանայապետներուն՝ առաջ իր մեղքերուն համար պատարագ մատուցանել, ու ետքը ժողովուրդին մեղքերուն համար. վասն զի ինք մէկ անգամ ըրաւ ասիկա՝ իր անձը պատարագ մատուցանելով: 28 - Վասն զի օրէնքը ակարութիւնով պաշարուած մարդիկը քահանայապետ կը կարգէ, բայց երգումին խօսքը, որ օրէնքէն ետև էր, Արդին՝ որ յաւիտեան կատարեալ է:

ԳԼ Ը

Եւ զրուցած խօսքերուս բովանդակութիւնը այս է. այնպիսի քահանայապետ մը ունինք մենք՝ որ երկինքը Աստուծոյ մեծութեանը աթոռին աջ կողմը նստաւ. 2 - Սրբարանին պաշտօնեայ, ու ճշմարիտ խորանին՝ զոր Տէրը կանգնեց և ոչ թէ մարդ: 3 - Քանզի ամէն քահանայապետ պատարագներ ու զոհեր մատուցանելու համար սրոշուած է. ուստի հարկ է որ ասիկա ալ բան մը ունենայ մատուցանելու: 4 - Ար եթէ երկրի վրայ ըլլար, քահանայ անգամ պիտի չըլլար, վասն զի կան քահանաներ՝ որոնք պատարագներ կը մատուցանեն օրէնքին համեմատ. 5 - (Որոնք երկնային բանե-

բուն նմանութիւնովը ու շուքովը կը ծառայեն, ինչպէս Մովսէսի հրամայուեցաւ, երբ խորանը պիտի շինէր. քանզի ըսաւ, Նայէ որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես ամէնը.)

6 - Բայց հիմա Յիսուս ա՛լ աւելի գերազանց պաշտօնի մը հասաւ, որչափ որ լաւագոյն խոստմունքներով հաստատուած լաւագոյն ուխտի մը միջնորդ է:

7 - Վասն զի եթէ առաջինը անմեղադրելի ըլլար, «-բէ՛ն երկրորդին տեղ չէր փնտռուեր:

8 - Քանզի կը յանդիմանէ զանոնք ու կ'ըսէ, Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ Խորայէլի տանը հետ ու Յուդայի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ. 9 - Ոչ թէ այն ուխտին պէս՝ զոր անոնց հայրերուն հետ ըրի, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանելու համար. վասն զի անոնք իմ ուխտիս մէջ չկեցան, ես ալ անհոգ եղայ անոնց վրայով, կ'ըսէ Տէրը:

10 - Քանզի այս է այն ուխտը՝ զոր Խորայէլի տանը հետ պիտի ընեմ՝ այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. իմ օրէնքներս անոնց միտքին մէջ պիտի դնեմ, և անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան: 11 - Ու բնաւ պիտի չտարվեցնեն ամէն մէկը իր ընկերին, և ամէն մէկը իր եղբօրը, ըսելով թէ Տէրը ճանչցիր. քանզի անոնց պզտիկէն մինչև մեծը ամէնը զիս պիտի ճանչնան. 12 - Վասն զի ես անոնց անիրաւութիւններուն ներող պիտի ըլլամ, և անոնց մեղքերը ու անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ:

13 - Նոր «-բ» ըսելովը առաջինը հինցուց. ու այն որ կը հիննայ և կը ծերանայ, ա՛լ կորուստի մօտ է:

ԳԼ. Թ

Արդարև առաջին «-բ»-ն ալ ունէր պաշտամունքին կանոնադրութիւնները ու աշխարհային սուրբ տեղը: 2-Վասն զի առաջին խորանը, որ Սրբութիւն կ'ըսուէր, «-բ» կազմուեցաւ, որուն մէջ կար աշտանակը ու սեղանը և առաջաւարութեան հացը: 3-Եւ երկրորդ վարագուրին ետին այն խորանը՝ որ Սրբութիւն սրբութեանց կ'ըսուէր. 4-Որուն մէջ էր սակի բուրփաւը, և ուխտին տապանակը, ամէն կողմէն սակիով

պատած. որուն մէջ էր սակիէ տափօրը մանանայով լեցուն, և Ահարոնի գաւազանը որ ծաղկեցաւ, և ուխտին տախտակները, 5-Եւ անոր վրայէն փառաց քերովբէները՝ որ քաւութիւնին վրայ հովանի կ'ընէին. որոնց համար «-բ» չէ հիմա մէկիկ մէկիկ գրուցել:

6 - Եւ այս բաները այսպէս կարգադրուած ըլլալով, առաջին խորանը ամէն ատեն կը մտնէին քահանաները՝ պաշտամունքը կատարելու. 7 - Բայց երկրորդը՝ տարին անգամ մը միայն քահանայապետը կը մտնէր, ոչ թէ առանց արիւնի, զոր իրեն համար ու ժողովուրդին սխալմունքներուն համար կը մատուցանէր. 8-Հոգին Սուրբ զայս ցուցնելով թէ սրբարանին ճանապարհը յայտնի եղած չէր, քանի որ տակաւին առաջին խորանը կը կենար. 9-Որ օրինակ մըն էր այն ժամանակին՝ որ պատարագներ ու զսհեր կը մատուցուէին, որոնք խղճմտանքի կողմանէ չէին կրնար կատարեալ ընել պաշտօն մատուցանողը, հապա միայն կերակուրներով ու խմելիքներով, 10 - Եւ կերպ կերպ լաւացումներով՝ մարմնաւոր արարողութիւններ էին, որոնք մինչև ուղղութեան ատենը կը կենային: 11-

Բայց երբ Քրիստոս եկաւ, դալու բարիքներուն Քահանայապետը, աւելի մեծ ու կատարեալ և անձեռագործ խորանով, այսինքն անով որ այս ստեղծուածներէն չէ, 12 - Ոչ ալ նոխաղներու ու զուարակներու արիւնով, հապա իր արիւնովը մէկ անգամ սրբարանը մտաւ՝ յաւիտենական փրկութիւն ստանալով: 13 - Վասն զի եթէ ցուէրուն ու նոխաղներուն արիւնը և երինջին մոխիրը սրկուելով՝ պղծեալները կը սրբէր մարմինի մաքրութեան կողմանէ, 14 - Ալ որչափ աւելի Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգին ձեռքով իր անձը անարատ «-բ»-բ» մատուց Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած գործերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու:

15 - Եւ ատոր համար ինք նոր ուխտին միջնորդն է, որպէս զի իջ մտնը առաջին ուխտին ժամանակը «-բ»-բ» յանցանքներուն քաւութեանը համար եղած ըլլալով, հրաւիրուածները յաւիտենական ժառանգութեան խոստմունքը առնեն: 16 - Քանզի ուր կտակ մը ըլլայ, հարկ է որ կտակը ընտղին

մահը մէջ մտնէ . 17 - Վասն զի կտակը մեռնելէն ետե հաստատ կ'ըլլայ . քանզի բնաւ վաւերականութիւն չունենար քանի որ կտակը ընողը ողջ է : 18 - Անոր համար առաջին «-բ»-ն ալ առանց արիւնի չէր հաստատուեր : 19 - Վասն զի երբ Մովսէս օրէնքին տմէն պատուէրները բոլոր ժողովուրդին պատմեց, ցուլերուն ու նոխազներուն արիւնը առնելով՝ ջուրով ու կարմիր բուրդով և զոպայով բուն գիրքին և բոլոր ժողովուրդին վրայ սրկեց . 20 - Եւ ըսաւ, Ասիկա է այն ուխտին արիւնը, զոր Աստուած ձեզի պատուիրեց : 21 - Եւ խորանին վրայ ու պաշտօնին բոլոր գործիքներուն վրայ նոյնպէս սրկեց արիւնը : 22 - Եւ գրեթէ տմէն բան արիւնով կը մտքորուի օրէնքին նայելով , ու արիւն չթափուած թողութիւն չըլլար :

23 - Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները ասոնցմով մտքորուէին . բայց բուն երկնաւորները՝ ասոնցմէ աւելի աղէկ զօհերով : 24 - Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ , որ ճշմարիտին օրինակն է, հապա բուն երկինքը՝ սրպէս զի հիմա մեզի համար Աստուծոյ առջև ներկայանայ . 25 - Ոչ թէ՛ սրպէս զի շատ անգամ իր անձը «-բ»-ն մատուցանէ , ինչպէս քահանայապետը՝ որ տմէն տարի սրբարանը կը մտնէ իրը չեղած արիւնով . 26 - Ապա թէ ոչ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետե շատ անգամ չարչարուիլ . բայց հիմա մէկ անգամ դարերուն վերջը իր անձին պատարագովը յայանուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու համար : 27 - Եւ ինչպէս մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան , 28 - Նոյնպէս ալ Քրիստոս մէկ անգամ «-բ»-ն մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայանուի փրկութեան համար ասոնց որոնք անոր կը սպասեն :

ԳԼ Ժ

Քանզի օրէնքը գալու բարիքներուն շուքը, ու ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով , ժիշտ տմէն տարի մատուցուած նոյն զօհերով երբէք չկրնար կատարեալ ընել զանոնք :

որ կը մօտենան : 2 - Ապա թէ ոչ պիտի չդադարէի՞ն մատուցուելէն, պաշտօն մատուցանողներուն մէկ անգամ մտքորուելէն ետե ա՛լ մեղքի վրայով խղճմտանքի յանդիմանութիւն մը չունենալու համար : 3 - Բայց անանցմով տմէն տարի մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ . 4 - Վասն զի նոխազներուն ու ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցնել : 5 - Անոր համար իր աշխարհ մտնելու տատենը կ'ըսէ, Չո՛հ ու ընծայ չուզեցիր դու, հապա ինձի մարմին մը պատարասեցիր . 6 - Ողջակէզներու ու մեղքի պատարագներու չհաւանեցար : 7 - Այն տատեն ըսի, Ահա կու գամ ես , (գիրքի տամի մէջ ինձի համար գրուած է ,) քու կամքդ ընելու , ով Աստուած : 8 - Վերը ըսելով թէ Չո՛հ ու ընծայ և ողջակէզներ ու մեղքի պատարագներ չուզեցիր՝ ու անոնց չհաւանեցար, (որոնք օրէնքին համեմատ կը մատուցուին,) 9 - Ետքը կ'ըսէ , Ահա կու գամ ես քու կամքդ ընելու, ով Աստուած . առաջինը կը հերքէ սրպէս զի երկրորդը հաստատէ . 10 - Որ կամքով մենք ալ սրբուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինն մէկ անգամ պատարագուելովը :

11 - Եւ տմէն քահանայ օր ըստ օրէ իր պաշտօնին մէջ կը կենայ , և նոյն զօհերը շատ անգամ կը մատուցանէ, որոնք երբէք չեն կրնար մեղքերը վերցնել . 12 - Բայց ստիկա մէկ զօհ մատուցանելով մեղքերու համար, մշտնջենաւորապէս Աստուծոյ աջ կողմը նստաւ . 13 - Եւ ասկէ ետե կը սպասէ, մինչև իր թշնամիները իր ստքերուն պատուանդան դրուին : 14 - Վասն զի մէկ պատարագով մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները :

15 - Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կու տայ, քանզի առաջուրնէ ըսելէն ետե 16 - Թէ Այս է այն ուխտը՝ զոր ես անոնց հետ պիտի ընեմ՝ այն օրերէն ետքը , (կ'ըսէ Տէրը,) իմ օրէնքներս անոնց սրտին մէջ պիտի դնեմ , ու անոնց միտքին մէջ պիտի գրեմ զանոնք . 17 - Ետքը ՚Է-է թէ Անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ : 18 - Իսկ ուր ասոնց թողութիւն կայ, ա՛լ մեղքի համար պատարագ պէ՛տ չէ :

19 - Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունենալով սուրբ տեղը

մտնելու Յիսուսի արիւնովը, 20 - Այն նոր ու կենդանի ճամբովը՝ զոր բացաւ մեզի վարագուրին մէջէն, որ է իր մարմինը, 21 - Եւ մեծ քահանայ մը «նեշու» Աստուծոյ տանը վրայ, 22 - Մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն հաւատաքով, սիրտերնիս չար խիղճէն մնաքուած, ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած . 23 - Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ : 24 - Եւ իրարու հոգ տանինք՝ սիրոյ և բարեգործութեան գրգռելով . 25 - Եւ մէկտեղ ժողովուիրը չթողունք, ինչպէս ամանք սովորութիւն ունին . հապա Բելզէի յորդորենք, ու այնչափ աւելի՝ որչափ այն օրուան մօտենալը կը տեսնէք :

26 - Վասն զի եթէ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէ ետև կամուս մեղք գործելու ըլլանք, ալ անկէ ետև մեղքերու համար «բիշ շահ մը չմնար, 27 - Հապա զարհուրելի սպասել մը դատաստանին, ու կրակի բարկութիւն մը չը հայ, որ պիտի լրփէ հակառակորդները : 28 - Մէկը եթէ Մովսէսի օրէնքը անարգէր, առանց ողորմութեան երկու կամ երեք վկաներով կը մեռնէր . 29 - Ալ ս'ըչափ սաստիկ պատժի արժանի պիտի սեպուի կը կարծէք անիկա, որ Աստուծոյ Որդին սաքի տակ առաւ, և ուխտին արիւնը անմաքուր սեպեց, որով ինք սրբուեցաւ, և շնորհաց Հոգին նախատեց : 30 - Քանզի գիտենք զանիկա որ ըսաւ, Իմն է վրէժխնդրութիւնը, ես պիտի հասուցանեմ, կ'ըսէ Տէրը . և դարձեալ՝ Տէրը պիտի գատէ իր ժողովուրդը : 31 - Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը խնայը :

32 - Արդ միաբերնիդ բերէք այն առաջին օրերը, որոնց մէջ լուսաւորուելէ ետև շատ սաստիկ չարչարանքներ կրեցիք . 33 - Երբեմն նախատինքներով ու վիշտերով խայտառակուած, երբեմն ալ այսպիսի վիճակի մէջ եղողներուն կցորդ ըլլալով : 34 - Վասն զի իմ կապերուս մէջ ինձի՝ չարչարակից եղաք, ու ձեր ստացուածքին կողոպտուիլը ուրախութեամբ ընդունեցիք, գիտնալով որ լուսագոյն և մնայուն ստացուածքներ ունիք ձեզի երկիրքը :

35 - Ուստի յեզէ մի ձգէք ձեր վատահութիւնը, որ մեծ վարձքի հասուցում ունի : 36 - Վասն զի պէտք է ձեզի համբերութիւն, որպէս զի Աստուծոյ կամքը ընելով՝ խոսամունքը վայելէք . 37 - Քանզի ալ ասկէ քիչ մը տեսնէն ան որ գալու է՝ պիտի գոյ ու պիտի չուշանայ : 38 - Եւ Արդարը հաւատքէն պիտի ապրի . ու եթէ մէկը ետ քաշուի, իմ հոգիս անոր չհաճիր : 39 - Բայց մենք ետ չենք քաշուիր որ կորսուինք, հապա կը հաւատանք որ Դէ հոգին փրկուի :

ԳԼ ԺԱ

Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւնը «չերեցած բաներուն ապացոյցն է . 2 - Վասն զի անով առաջինները վկայութիւն ընդունեցին :

3 - Հաւատքով կ'իմանանք թէ աշխարհ Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ, ու աներևոյթ բաներէն այս երեցածները եղան :

4 - Հաւատքով Աբէլ կայէնէ աւելի աղէկ զո՛հ մատուց Աստուծոյ, որով վկայուեցաւ արդար ըլլալը . վասն զի իր պատարագներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ իրեն . և անով, թէպէտ մեռաւ, Բայց տակաւին կը խօսի :

5 - Հաւատքով Ենովք երէք փոխադրուեցաւ որպէս զի մահ չտեսնէ . ու Կիզը չէր գանուեր, վասն զի Աստուած փոխադրեց զանիկա . քանզի անոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ հաճելի էր : 6 - Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ . վասն զի ան որ Աստուծոյ կը մօտենայ, պէտք է ոչ հաւատայ թէ Աստուծոյ կայ, և թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց որ զինք կը փնտուեն :

7 - Հաւատքով Նոյ պատգամ տունելով Աստուծոյ՝ դեռ չերեցած բաներուն համար, վախնալով տապանք շինեց իր տունը փրկելու համար, որով աշխարհս դատապարտեց, և ժառանգաւոր եղաւ այն արդարութեանը որ հաւատքով կ'ըլլայ :

8 - Հաւատքով, երբ Աբրահամ կանչուեցաւ, մտիկ ըրաւ այն տեղը ելլելու, զոր ժառանգութիւն պիտի առնէր . և ելաւ գնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ : 9 - Հաւատքով պան-

*Ո՛ւն, կապուածներուն

դրխտացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտարութեան մէջ, և վրաններու մէջ բնակեցաւ Իսահակի ու Յակոբի հետ մէկտեղ, որոնք իրեն հետ ժառանգորդ էին նոյն խոտամունքին:

10 - Վասն զի ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարապետը ու արարիչը Աստուած է:

11 - Հաւատքով ինք Աստուայ որդիքն սերմը առնելու զօրութիւն ընդունեց, և ատենը անցած հասակի մէջ զառնեց ծնաւ. վասն զի հաւատարիմ սեպեց զանկա որ խոտամունքը բեր էր: 12 - Աւտի այն մէկէն ծնան, (այն ալ մեռածի պէս,) շատութեան կողմէ երկինքի աստղերուն պէս, ու ծովեզերքը եղած աւազին պէս աւանց համբանքի:

13 - Ասոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոտամունքները չաւած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, և խոտամունքացան թէ իրենք օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ: 14 - Քանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ գաւառ մը կը փնտռեն: 15 - Եւ յիրաւի է թէ զանկա յիշէին՝ ուրկէ որ ելան, ժամանակ ունէին հոն դառնալու: 16 - Բայց հիմա լաւագոյն գործ մը կը փափաքին, այսինքն երկնաւորին. ուստի ամօթ չսեպեր Աստուած անոնց Աստուածը ըսուիլ, վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց:

17 - Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պարտադրեց մատուց. և ան որ խոտամունքները աւած էր, էր մէկ հասիկ որդին կը մատուցանէր: 18 - Արու ըսուեցաւ թէ Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի: 19 - Քանզի կը մտածէր թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցանել. ուրկէ օրինակով մը ընդունեց զանկա:

20 - Հաւատքով Իսահակ գալու բաներուն համար մարգարէանով օրհնեց Յակոբը ու Եսաւը: 21 - Հաւատքով Յակոբ իր մեռնելու ատենը՝ Յովսէփի որդիներէն ամէն մէկը օրհնեց, ու երկրպագութիւն բրաւ իր գաւազանին գլխուն վրայ: 22 - Հաւատքով Յովսէփ իր վախճանելու ատենը յիշեցուց Իսրայէլի որդիներուն Եփթափէ

եկելը, ու իր սակորներուն համար պատուէր աւաւա:

23 - Հաւատքով, երբ ծնաւ Մովսէս, իր ծնողներուն ձեռքով երեք ամիս գաղաւկ պահուեցաւ. վասն զի աղան գեղեցիկ տեսան, ու չվախցան թագաւորին հրամանէն: 24 - Հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, չընդունեց Փարաւոնի աղջկան որդի ըսուիլ: 25 - Քանզի աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելէլ: 26 - Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախափնքը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը. վասն զի գիտելով կը սպասէր վարձքի հասուցումին: 27 - Հաւատքով Եգիպտոսը թողուց, ու չվախցաւ թագաւորին բարկութենէն. վասն զի համբերեց՝ որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր:

28 - Հաւատքով բրաւ գատիկը և արիւն սրսկելը, որպէս զի անդրանիկները ստակեցնողը իրենց չբազի:

29 - Հաւատքով Կարմիր ծովէն անցան որպէս թէ ցամաքէ. որուն փորձը ընելով Եգիպտացիները ընկղմեցան:

30 - Հաւատքով Երեքովի պարիսպները ինկան՝ եօթը օր անոնց բոլորափքը պարտելով:

31 - Հաւատքով Ռախաբ պրոնիկը անհաւատներուն հետ չկորսուեցաւ, որ լրտեսները խաղաղութեամբ ընդունէր էր:

32 - Եւ ալ ի՞նչ ըսեմ. վասն զի ժամանակը բաւական չէ որ պատմեմ Գեղեօծի ու Բարակի և Սամիսանի ու Յեփթայէի և Իսաիթի ու Սամուէլի և ուրիշ մարգարէներուն համար: 33 - Արոնք հաւատքով թագաւորութիւններու յաղթեցին, արդարութիւն գործեցին, խոտամունքներու հասան, աւելուներու բերաններ գոցեցին, 34 - Կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերնէ ազատեցան, տկարութենէ ու ժողջան, պատերազմի մէջ զօրաւոր եղան, օտարներու բանակներ ցրուեցին, 35 - Կիներ իրենց մեռելները ընդունեցին յարութիւն աւած. ոմանք չարչարուեցան և չընդունեցին ազատութիւնը, որպէս զի լաւագոյն յարութեան հասնին: 36 - Աւրիշներ ալ նախափնքներու ու ծեծերու, նաև կապերու ու բանտերու փորձը առին: 37 - Քարկսուեցան, սղոցուեցան, փոր-

*Ո՛հնէ, հաւատալով ողջունեցին

ձանքի մէջ ինկան, որով սպաննուելով շեւան, ոչխարի մորթ երով ու այծի մորթ երով պարտեցան, կարօտութիւն քաշելով, նեղը իյնալով, չարչարուելով, 38 - (Որոնց արժանի չէր աշխարհս,) անապատներու ու լեռներու և այրերու ու երկրի խուռչներու մէջ մնորելով:

39 - Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստմունքը չառին. 40 - Քանզի Աստուած մեզի համար աւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որպէս զի անոնք առանց մեզի չկատարուին:

ԳԼ. ԺԲ

Աւտի մենք ալ, որ այսչափ վկաներուն *բազմութիւնը մեր բողոքաբեր պատած ունինք, ամէն ծանրութիւն մեր վրայէն մէկդի ձգենք, և Բզ դիւքաւ պաշարող մեղքը, ու համբերութիւնով վազենք մեր առջև դրուած ասպարէզի ընթացքը. 2 - Յիսուսի նաշինք, Բբ հաւատքին առաջնորդին ու կատարողին. որ այն ուրախութեանը համար որ իր առջև կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ:

3 - Արդ միտք բերէք զանհկա, որ այսպէս համբերեց մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսելուն, որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլնաք: 4 - Տակաւին արիւն Բաթելը - չափ պատերազմելով հակառակ չկեցաք մեղքին. 5 - Եւ մուցաք այն յորդորանքը որ ձեզի հետ կը խօսի որպէս թէ որդիներու հետ, Որդեակ իմ, Տէրօջը խրատը մի անարգեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի թուլնար: 6 - Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ, և կը ծեծէ ամէն որդին զոր կ'ընդունի: 7 - Եթէ խրատի համբերէք, Աստուած ձեզի հետ որպէս թէ որդիներու հետ կը վարուի. քանզի ո՞ր որդին է ան՝ զոր հայրը չպատժեր: 8 - Իսկ եթէ դուք առանց խրատի ըլլաք, որու ամէնը մասնակից եղան, ուրեմն խորթ էք դուք ու ոչ թէ որդիներ: 9 - Նաև մեր մարմնաւոր հայրերը Բբ խրատիչ ունենալով՝ անոնցմէ կ'ամչնայինք. չէ՞ որ ալ աւելի պիտի հնազանդինք հոգիներուն Հօրը ու ապրինք: 10 - Վասն զի ասոնք քիչ օրեր Բզ կը խրատեն

իրենց հաճոյ երեցածին պէս, բայց անհկա Բբ օգուտին համար՝ որպէս զի իր սրբութեանը հաղորդ ըլլանք: 11 - Եւ յիսուսի ամէն խրատ նոյն առան ուրախարար չթուիր, հապա տրամական, բայց ետքը արդարութեան խաղարար պտուղը կը հատուցանէ անով վարժուողներուն:

12 - Աւտի թուլցած ձեռքերը ու սկար ծունկերը հաստատեցէք. 13 - Եւ շիտակ ճամբաներ ըրէք ձեր ուղեբուն, որ չըլլայ թէ ան որ կաղ է՝ *խտարի, այլ մանաւանդ բժշկուի: 14 - Խաղաղութեան ետեւ եղէք ամէնուն հետ և սրբութեան, առանց որոյ մէկը պիտի չտեսնէ Տէրը: 15 - Զգուշացէք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ. չըլլայ որ դաւնութեան արմատ մը վեր երեւնալով՝ յեղ նեղէ, ու անով շատերը պղծուին. 16 - Զըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ, կամ անտուրբ՝ Ետուի պէս, որ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախեց: 17 - Քանզի գիտէք որ թէպէտ ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել, Բայ մերժուեցաւ. վասն զի ապաշխարութեան տեղ չգտաւ հօրը Բայ, թէպէտև արցունքով խնդրեց զանհկա:

18 - Վասն զի դուք մօտեցած չէք շօշափելի լեռանը, որ կրակով կը վառէր, ոչ ալ մեզին և խաւարին ու մրրիկին, 19 - Եւ փողին հնչուելուն, ու խօսքերուն ձայնին, զոր լսողները աղաչեցին որ մէյմըն ալ այն խօսքը չըսուի իրենց. 20 - Վասն զի չէին կրնար աանիլ այն հրամանին, Եթէ գազան մըն ալ լեռանը դպչի՝ պիտի քարկոծուի†: 21 - Եւ այնպէս ահագին էր այն երեւոյթը՝ որ Մովսէս ըսաւ, Ստաիկ կը վախնամ ու կը դողամ: 22 - Բայց դուք Սիօն լեռանը մօտեցեր էք, ու կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմի, և բիւրաւոր հրեշտակներուն: 23 - Ու երկինքը գրուած անդրանիկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին, և Աստուծոյ՝ որ ամէնուն Դատաւորն է, ու արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարուեր են, 24 - Եւ Յիսուսի՝ որ նոր ուխտին միջնորդն է, ու սրկուելու արիւնին՝ որ Արեւի տեղէն աւելի աղէկ կը խօսի:

*Յան. ամպը

*կամ, գլորի †Ո՞՞նչ է՝ Եւսեմն, կամ նետով զարնուի

25 - Զգուշացէք, չըլլայ որ մերժէք զանկիւս որ յեղի կը խօսի. վասն զի եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ պատգամները խօսողը մերժելով չազատեցան, ո՛րչափ աւելի մենք՝ եթէ երկինքէն Խօսողն երես դարձնենք . 26 - Որուն ձայնը այն ատեն երկիրը շարժեց , և Տիմա խատացեր է ու կ'ըսէ , Նորէն պիտի շարժեմ , ոչ թէ միայն երկիրը, հապա նաև երկինքը : 27 - Եւ այն Նորէն Բարը կը ցուցնէ շարժուած բաներուն յեղափոխութիւնը շինուած բաներու պէս, որպէս զի անշարժ բաները հաստատուն մնան : 28 - Ուստի անշարժ Թագաւորութիւնը առած ըլլալով ասոր բռնենք այն շնորհքը, որով զԱստուած պաշտենք հաճոյական կերպով , ակնածութեամբ և բարեպաշտութեամբ . 29 - Վասն զի մեր Աստուածը մաշող կրակ է :

ԳԼ. ԺԳ

Եղբայրսիրութիւնը յեր Տէջ հաստատ մնայ : 2 - Հիւրասիրութիւնը մի մոռնաք, վասն զի անով մանք հրեշտակներ ընդունեցին չգիտնալով : 3 - Միտքերնիդ ըլլան կապուածները , որպէս թէ անոնց հետ դուք ալ կապուած էք . և շարչարուածները՝ որպէս թէ դուք ալ մարմին ունեցող էք : 4 - Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, ու անկողինը անարատ է. բայց պոռնիկները ու շնացողները Աստուած պիտի դատէ : 5 - Բարքերնիդ արծաթաէր չըլլայ, բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռքերնիդ կայ. վասն զի ինք զրուցեց թէ Բնաւ քեզ պիտի չթողում , ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ . 6 - Այնպէս որ համարձակ ըլլանք ըսելու, Տէրը իմ օգնականս է, ու ես պիտի չվախնամ . մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ : 7 - Յիշեցէք ձեր առաջնորդները որոնք Աստուծոյ խօսքը ձեզի խօսեցան, և անոնց վարմունքին վախճանին նայելով՝ էրեւոյ հաւատքին նմանող եղէք : 8 - Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւիտեանս : 9 - Կերպ կերպ և օտարաձայն ուսմունքներով մի տարուբերիք , քանզի աղէկ է որ սիրտը շնորհքով հաստատուի ու ոչ թէ կերակուրներով . որոնցմով օգուտ մը չունեցան անոնք որ այնպէս գացին : 10 - Սեղան մը ունինք

մենք , ուրկէ իշխանութիւն չունին ուտելու անոնք որ խորանին ծառայութիւն կ'ընեն : 11 - Քանզի ո՛ր անատուներուն արիւնը որ սուրբ տեղը կը տարուի մեղքի համար քահանայապետին ձեռքով , անոնց մարմինները բանակէն դուրս կ'այրուին : 12 - Ուստի Յիսուս ալ , իր արիւնովը ժողովուրդը սրբելու համար, դունէն դուրս շարչարուեցաւ : 13 - Ուրեմն էլէ՛ք իրեն ելլենք բանակէն դուրս, մեր վրայ առնելով անոր նախատինքը : 14 - Վասն զի մենք հոս մնայուն քաղաք չունինք , հապա հանդերձեալը կը փնտուենք : 15 - Ուստի անոր ձեռքով ամէն ատեն Աստուծոյ օրհնութեան պատարագ մատուցանենք , այսինքն Տէր շրթունքներուն պտուղը, որոնք իր անունը կը դաւանին : 16 - Իսկ բարերարութիւնը ու Խօսողութեան հաղորդակցութիւնը մի մոռնաք, վասն զի Աստուած այնպիսի պատարագներու կը հաւնի : 17 - Զեր առաջնորդներուն մտիկ ըրէք ու անոնց հնազանդ կեցէք, վասն զի անոնք ձեր հոգիներուն համար կը հսկեն , որպէս թէ հաշիւ պիտի տան . որպէս զի ինդութիւնով ընեն այն Բարը , և ոչ թէ հոռաչելով , վասն զի այն ձեզի օգտակար չէ : 18 - Մեզի համար աղօթք ըրէք, վասն զի մենք համոզուած ենք թէ աղէկ խղճմունք ունինք, և ամէն բանի մէջ կ'ուզենք աղէկ վարմունք ունենալ : 19 - Եւ մանաւանդ կ'աղաչեմ որ զայս ընէք , որպէս զի աւելի շուտով ձեզի դառնամ :

20 - Եւ խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտեանական ուխտին արիւնովը սշխարներուն մեծ Հովիւն է, 21 - Զեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ իր կամքը ընելու , և ձեր մէջ իր առջև հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքով , որու փառք յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

22 - Կ'աղաչեմ ձեզի , եղբայրներ , այս յորդորական խօսքիս համբերել , վասն զի համառօտաբար գրեցի ձեզի : 23 - Գիտցէք որ Տէր եղբայրը Տիմութեոս արձակուած է, որու հետ, եթէ շուտով գայ, պիտի ատենեմ ձեզ : 24 - Բարև ըրէք ձեր բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն. ձեզի բարև կ'ընեն անոնք որ Իտալիայէ են : Շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ : Ամէն :

ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ



ԳԼՈՒԽ Ա.

Յակոբոս, Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ, աստուերկու ցեղերուդ, որ «Քն իւղ» ցրուած էք, ողջայն:

2 - Եզբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք, 3-Գիանալով որ ձեր հաւատաքին փորձառութիւնը համբերութիւն կը գործէ: 4 - Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որպէս զի կատարեալ ու ամբողջ ըլլաք, ու բանի մը պակասութիւն չունենաք:

5 - Ապա եթէ ձեզմէ մէկը իմաստութեան պակաս ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ, որ ամէնուն առատապէս կու տայ ու շնախատեր, և անոր պիտի տրուի: 6-Միայն թէ հաւատաքով թող խնդրէ ու չերկմտի. վասն զի ան որ երկմտ է, ծովուն հողմակոծեալ ու աստանեալ պիքներուն նման է. 7 - Այն մարդը թող չկարծէ որ Տէրոջմէ բան մը պիտի առնէ. 8 - Երկմտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ:

9 - Խանարհ եզբայրը իր բարձրութեանը վրայ թող պարծենայ, 10 - Եւ ան որ հարուստ է, իր խանարհութեանը վրայ, վասն զի անիկա խափ ծաղկին պէս պիտի անցնի. 11 - Քանզի արևը աստաիկ տաքութիւնով մը կը ծագի ու կը ցամքեցնէ խտոր, և անոր ծաղիկը կը թափի, ու անոր երևութին գեղեցկութիւնն ալ կը կորսուի. նոյնպէս ալ հարուստը իր ճամբաներուն մէջ պիտի թաւաւաի:

12 - Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ. վասն զի եթէ փորձուելով ընտիր գտնուի, կենաց պատկը պիտի առնէ, զոր Տէրը զինք սիրողներուն խոստացաւ: 13 - Զրկւոյ որ մէկը, որ փորձութեան մէջ է, բսէ թէ Աստուծմէ կը փորձուիմ. վասն զի Աստուած չար բաներով չփորձուիր, ոչ ալ ինք մէկը կը փորձէ: 14-Սակայն

ամէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն հրապուրուած ու խաբուած. 15 - Անկէ ետե ցանկութիւնը յղանալով մեզք կը ծնանի, և մեզքը որ կատարուի՝ մահ կը ծնանի: 16 - Մի խարուիք, իմ՝ սիրելի եզբայրներս. 17 - Ամէն բարի առաք ու ամէն կատարեալ պարգև վերէն է, և լուսոյ Հորմէն կ'իջնէ, որուն մէջ բնաւ փոփոխութիւն կամ դաւնալու շուք մը չկայ: 18 - Ի՞ր ուզելովը մեզ ծնաւ Ճշմարտութեան խօսքովը, որպէս զի մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք: 19 - Ուստի, իմ՝ սիրելի եզբայրներս, ամէն մարդ թող շուտ ըլլայ լսելու, ու ծանր՝ խօսելու, և ծանր՝ բարկանալու. 20 - Վասն զի մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չգործեր:

21 - Ուստի ամէն աղտեղութիւնը ու չարութեան առաւելութիւնը մէկզի ձգելով, հեղութեամբ ընդունեցէք Յէր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել:

22 - Բայց խօսքը կատարողներ եղէք, և ոչ թէ միայն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով: 23 - Վասն զի եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատարող չըլլայ, անիկա նման է մարդու մը՝ որ հայելիի մէջ աչքերը անկած իր բնական երեսը կը դիտէ. 24 - Վասն զի դիտելով տեսաւ ինքզինք ու անցաւ գնաց, և շուտ մը մոռցաւ թէ ի՞նչ պիտի մէկն էր: 25 - Բայց ան որ ապաստութեան կատարեալ օրէնքին աչք անկելով կը նայի, և անոր մէջ կը կենայ, անիկա Խոսք լսող «մոռցող չըլլալով, հապա գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելուն մէջ: 26 - Եթէ մէկը զինք կրօնասէր կը սեպէ ու իր լեզուին սանձ չգնէր, հապա իր սիրտը կը խաբէ, այնպիսւոյն կրօնասիրութիւնը փուճ է: 27 - Աստուծոյ ու Հօրը քով մտքուր ու անա-

*Ո՛հան+, ձեզմէ մէկը

կառավարենք . 4 - Ահա նաւերն ալ ո՛րչափ մեծ բաներ են, և սաստիկ հովերէն կը քշուին , բայց ամենափոքր զեկով մը կը կառավարուին՝ զեկավարին կամքը ո՛ր կողմը որ ուզէ : 5 - Այսպէս ալ լեզուն պզտիկ անգամ մըն է, ու մեծ բաներ կը խօսի . ահա քիչ մը կրակը ո՛րչափ բան բոցի կուտայ : 6 - Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան տիեզերք մը . լեզուն մեր անգամներուն մէջ այնպէս գրուած է, որ բոլոր մարմինը կ'ապականէ, և բնութեան շրջանը կը բռնկցնէ, ու ինք գեհեանէն կը բռնկի : 7 - Բոլոր գազաններուն ու թռչուններուն և սողուններուն ու ծովու մէջ եղածներուն բնութիւնը կը նուաճի՝ և նուաճուած է մարդկային բնութենէն : 8 - Բայց լեզուն մարդոց մէ՛կը չկրնար նուաճել . անիկա անգուսպ շար է, «մահաբեր թունով լեցուն» : 9 - Անով կ'օրհնենք զԱստուած ու Հայրը, և անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են : 10 - Միւսնայն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անէծք . եղբայրներս , պէտք չէ որ այս այսպէս ըլլայ : 11 - Միթէ աղբիւր մը միւսնայն բերնէն անոյշ ու լեզի կը բզկէ՞ : 12 - Միթէ կարելի՞ է , եղբայրներս , որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ որթը՝ թուղ . նմանապէս Խբեի չէ որ աղբիւրէ մը աղի ու անոյշ ջուր ելլէ : 13 - Ձեր մէջ իմաստուն ու խելացի ո՞վ կայ . թող անիկա բարի վարմունքովը ցուցնէ իր գործերը իմաստութեան հեզութիւնով : 14 - Ապա եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունենաք սիրտերնուդ մէջ, մի պարծենաք ու ճշմարտութիւնը սուտ հանէք : 15 - Այս իմաստութիւնը վերէն իջած չէ, հապա երկրաւոր , շնչաւոր և դիւական է : 16 - Քանզի ուր նախանձ ու կռիւ կայ, հոն է անկարգութիւնը և ամէն շար բաները : 17 - Հապա վերին իմաստութիւնը նախ սուրբ է, ետքը խաղաւարար, հեզ , հլու , ողորմութիւնով ու բարի պատուիրով լեցուն, անկողմնատէր ու անկեղծ : 18 - Եւ արդարութեան պատուը խաղաղութիւնով կը սերմանուի անանց՝ որոնք խաղաղութիւն կ'ընեն :

Աւրկէ՞ են պատերազմները, և ուրկէ՞ կռիւները ձեր մէջ . չէ՞ որ ձեր ցանկութիւններէն՝ որոնք ձեր անգամներուն մէջ կը պատերազմին : 2-Ար ցանկաք ու շունիք, կը սպաննէք ու կը նախանձիք , և չէք կրնար չէր «-չ-ծի» հասնիլ . կը պատերազմիք ու կը կրուիք , բայց շունիք , վասն զի չէք խնդրեր . 3-Ար խնդրէք ու չէք առներ, վասն զի շարաշար կը խնդրէք՝ որպէս զի ձեր ցանկութիւններուն բանեցնէք : 4 - Շնացողներ, չէ՞ք գիտեր որ այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է . ուստի ով որ կուզէ աշխարհի բարեկամ ըլլալ , ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ : 5 - Կամ թէ կը կարծէք որ գիրքը պարսօպ տեղ *կրսէ թէ նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող հոգին» . 6 - Սակայն աւելի շնորհք կու տայ . անոր համար կ'ըսէ , Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ : 7-Ուստի հնազանդեցէք Աստուծոյ . Սատանայի հակառակ կեցէք, և անիկա ձեզմէ պիտի փախչի : 8 - Աստուծոյ մօտեցէք, ու անիկա ձեզի պիտի մօտենայ . սրբեցէք ձեռքերնիդ, մեղաւորներ, և մաքրեցէք սիրտերնիդ, երկմիտներ : 9 - Տառապանք քաշեցէք , սուգ ըրէք ու լացէք . ձեր ծիծաղը սուգի դառնայ , ու ձեր ուրախութիւնը՝ արամութեան : 10 - Տէրօջը առջև խոնարհեցէք, ու ան ձեզ պիտի բարձրացընէ :

11 - Մէկզմէկ մի բամբասէք , եղբայրներ . ան որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը դատէ . սպա եթէ օրէնքը դատես , ալ դուն օրէնքը կատարող չես , հապա դատաւոր : 12 - Միւս մէկ Օրէնդիր [ու Գատաւոր] կայ, որ կարող է փրկելու և կորսնցնելու . դուն ո՞վ ես որ ուրիշը կը դատես :

13 - Հիմա մտիկ ըրէք դուք որ կ'ըսէք, Այսօր կամ վաղը երթանք այս անուն քաղաքը ու հոն տարի մը կենանք, և առուստուր ընենք ու վատարկինք . 14 - (Իսկ որ վաղը չէք գիտեր .

*Կ-ժ, կը խօսի . նախանձի՞ կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին

15 - Քանզի ի՞նչ է ձեր կեանքը . յի-
րաւի շագի մըն է , որ քիչ մը ատեն
կ'երեւնայ ու ետքը կ'ոչնչանայ .) անոր
տեղ ըսելու էիք . Եթէ Տէրը կամենայ
ու ապրինք , այս կամ այն բանը ընենք :
16 - Ի՞նչ չիմա ձեր ամբարտաւանու-
թիւնովը կը պարծենաք . բոլոր այսպի-
սի պարծանքները չարութիւն են : 17 -
Ուստի ով որ բարին ընելը գիանայ ու
չընէ , այն մեղք է անոր :

ԳԼ. Ե

Աղէ չիմա , հարուստներ , լացէք
ու ողբացէք այն թշուառութիւննե-
րուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի
գան : 2 - Ձեր հարստութիւնը ապա-
կանած է , ու ձեր հանդերձները՝ ցեցի
կերակուր եղած : 3 - Ձեր սակին ու
արծաթը ժանգոտած է , և անոնց
ժանգը ձեզի դէմ՝ վկայ պիտի ըլլայ ,
ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի
պէս . վերջին օրերուն համար գանձ
գիղեցիք : 4 - Ահա ձեր արտերը հնձող
բանուորներուն վարձքը զոր ետ պահե-
ցիք՝ կ'ազազակէ , ու հնձողներուն բո-
զքը զօրութեանց Տէրոջը ականջնե-
րուն հասաւ : 5 - Երկրի վրայ փափ-
կութեամբ և հեշտութեամբ ապրե-
ցաք , սիրտերնիդ անուցիք՝ որպէս թէ
մտրթուելու օրուան համար : 6 - Դա-
տապարտեցիք — սպաննեցիք արդարը ,
որ ձեզի հակառակ չկենար :

7 - Ուստի համբերող եղէք , եղբայր-
ներ , մինչև Տէրոջը գալուստը . ահա
երկրագործը կը սպասէ երկրի պատ-
ուական պառզին՝ անոր համար համ-
բերելով , մինչև առաջին ու վերջին
անձրևը տունէ : 8 - Դուք ալ համբե-
րութիւն բրէք , սիրտերնիդ հաստատ
բռնեցէք . վասն զի Տէրոջը գալուստը
մօտ է : 9 - Իրարու դէմ մի հառաչէք ,
եղբայրներ , որպէս զի չգատապարտ-

ուիք . ահա Դատաւորը գրանը քով
կայներ է : 10 - Եղբայրներս , չարչա-
րանքներու և համբերութեան օրինակ
տուէք մարգարէները , որոնք Տէրոջը
անուանովը խօսեցան : 11 - Ահա համ-
բերողներուն երանի կու տանք . Յարի
համբերութիւնը լսեցիք դուք , և Տէ-
րոջը անոր ըրած վախճանը տեսաք , որ
Տէրը բազմագութ ու սղորմած է :

12 - Արդ ամէն բանէ առաջ , եղ-
բայրներս , երգում չընէք , ոչ երկինքի
վրայ , ոչ երկրի վրայ , ոչ ալ ուրիշ
երգում մը . հապա ձեր այսն այս ըլլայ ,
և ոչը՝ ոչ , որ չըլլայ թէ գատապար-
տութեան ասկ իյնաք :

13 - Եթէ ձեզմէ մէկը նեղութեան
մէջ է , աղօթք թող ընէ . եթէ մէկը ու-
րախ է , սաղմոս թող երգէ : 14 - Եթէ
ձեզմէ մէկը հիւանդ է , եկեղեցին ե-
րեցները թող կանչէ , ու անոր վրայ
աղօթք թող ընեն , ու Տէրոջը անուանովը
իւզով օծեն զանիկա . 15 - Եւ հաւատա-
քով եղած աղօթքը պիտի փրկէ հիւան-
դը , ու Տէրը զանիկա սաք պիտի հանէ .
և եթէ մեղք ալ գործեր է , պիտի ներ-
ուի անոր : 16 - Ձեր յանցանքները
իրարու խոստովանեցէք , ու աղօթք
բրէք իրարու համար , որպէս զի բժշ-
կուիք . արդարին ջերմեռանդ աղօթքը
շատ ազդուութիւն ունի : 17 - Եղիա
մեզի պէս կիրքերու ենթակայ մարդ
մըն էր , ու աղօթք ըրաւ որ անձրև
չգայ , և երեք տարի ու վեց ամիս երկրի
վրայ անձրև չեկաւ : 18 - Եւ նորէն
աղօթք ըրաւ , ու երկինք անձրև տուաւ
և երկիր իր պատուը բուսցուց :

19 - Եղբայրներ , եթէ ձեզմէ մէկը
ճշմարտութեանն մոլորի , ու մէկը զա-
նիկա դարձի բերէ , 20 - Գիացած ըլ-
լայ թէ ան որ մեղաւորը իր մոլորու-
թեան ճամբայէն կը դարձնէ , հոգի
մը մոհոտանէ կ'ազատէ , ու մեղքերու
բազմութիւնը կը ծածկէ :



ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ



ԳԼՈՒԽ Ա

Պետրոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, օտարականներուդ որ ցրուած էք Պանտոսի, Գաղատայի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի մէջ, ընտրուած 2-Հօր Աստուծոյ կանխադիտութեանը համեմատ՝ Հոգիին սրբացրնելովը, հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի արիւնին սրկուելուն համար. շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ շահնայ:

3 - Օրհնեալ է Աստուած ու ձեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առաա ողորմութեանը համեմատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը, 4 - Անեղծ ու անարատ և անթառամ ժառանգութեանը համար՝ որ երկինքը պահուած է ձեզի, 5 - Որ Աստուծոյ զօրութիւնովը պահանուած էք հաւատքով այն փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը յայանուելու. 6 - Որով կ'ուրախանաք, թէ և հիմա, ինչպէս հարկը կը պահանջէ, քիչ մը ատեն արամած էք զանազան փորձութիւններով. 7 - Որպէս զի ձեր հաւատաքին փորձառութիւնը (որ կորստական սոկիէն աւելի պատուական է, թէ և անիկա կրակով կը փորձուի,) գտնուի գովութիւնով ու պատուով և փառքով Յիսուս Քրիստոսի յայանուելու ատենը. 8 - Չոր դուք չտեսած՝ կը սիրէք, զոր հիմա չէք տեսներ, բայց կը հաւատաք, և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով. 9 - Չեր հաւատաքին վախճանը ընդունելով, այսինքն հոգիներնուդ փրկութիւնը, 10 - Որ այն փրկութեանը համար փնտռեցին ու քննեցին մարգարէները՝ որոնք մարգարէացան ձեզի բլլալու շնորհքին համար. 11 - Ու կը քննէին թէ ե՛րբ կամ ի՛նչպիսի ատեն կ'իմացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի Հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի

չարչարուիլը, ու անկէ ետե փառաւորուիլը: 12 - Որոնց յայանուեցաւ, որոնք ոչ թէ իրենց՝ հապա մեզի մատակարարեցին այն բաները, որոնք հիմա ձեզի պատմուեցան անոնց ձեռքով՝ որ աւետարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով որ երկինքէն զրկուեցաւ. որ այն բաներուն՝ հրեշաակները կը ցանկան տկնկառոյց նայիլ:

13 - Ուստի ձեր միտքերուն մէջքը դօտուորած՝ արթուն կեցած, կատարելագէտ յուսացէք այն ձեր վրայ հասնելու շնորհքին, Յիսուս Քրիստոսի յայանուելու ատենը, 14 - Հնազանդաւակներու պէս, ոչ թէ ձեր ազիտութեան ատենին առաջին ցանկութիւններովը վարուելով, 15 - Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեռք բոլոր վարմունքներուն մէջ. 16 - Վասն զի գրուած է թէ Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ: 17 - Եւ եթէ Հայր կը կոչէք զանիկա՝ որ առանց աչառութեան կը դատէ ամէն մէկուն գործին համեմատ, ուրե՛քն ձեր պանդխտութեան ժամանակը վախով անցուցէք. 18 - Գիտնալով որ դուք ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն առանգուած ունայն ճամբաներէն, 19 - Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս թէ ամբիժ ու անարատ գառի մը. 20 - Որ առաջաւրնէ ճանչցուած էր աշխարհի սկիզբէն առաջ, ու վերջին ատենները յայանուեցաւ ձեզի համար, 21 - Որուն միջոցով Աստուծոյ հաւատացիք, որ զանիկա մեռելներէն յարուց, և անոր փառաւորութիւն առաւ. որպէս զի ձեր հաւատաքը ու յոյսը Աստուծոյ վրայ բլլայ: 22 - Չեր անձերը մագրելով Հոգիին միջոցաւ՝ ճշմարտութեանը հնազանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ բլլալով, սուրբ սրտով մէկզմէկ պինդ սիրեցէք, 23 - Նորէն ծնած բլլալով՝ ոչ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ

կենդանի ու յաւիտեանական խօսքովը : 24 - Վասն զի ամէն մարմին խօսի պէս է, և մարդուն բոլոր փառաւորութիւնը՝ խօսի ծաղիկի պէս. խօսք կը չարնայ ու անոր ծաղիկը կը թափթփի . 25 - Բայց Տէրօջը խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն է այն խօսքը որ աւետարանով ձեզի քարոզուեցաւ :

ԳԼ. Բ

Աւրեմն մէկզի ձգելով ամէն շարութիւնը ու ամէն խաբէութիւնը ու կեղծաւորութիւնները, և նախանձը ու ամէն շարախօսութիւնը, 2 - Նորածին մանուկներու պէս բանական -- անխորդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք [մինչև փրկութիւնը], 3 - Եթէ Տէրօջը քաղցր ըլլալուն համը առիք. 4 - Որու մօտեանալով, այն կենդանի Վէմին, որ թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծմէ ընտրուած -- պատուական է, 5 - Իսկ ալ կենդանի քարերու պէս շինուիք հոգևոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ հաճելի հոգևոր պատարագներ մատուցանելու : 6 - Որովհետև գիրքին մէջ ալ կայ թէ Ահա Սիօնի մէջ ընտիր, պատուական անկիւնի վէմ մը կը դնեմ . և ով որ անոր հաւատայ՝ բնաւ պիտի չամչնայ : 7 - Աւստի ձեզի հաւատացեալներուդ պատուական է ան, բայց անհաւատներուն՝ այն քարը զոր շինողները անարգեցին՝ անիկա անկիւնին գլուխը եղաւ . 8 - Եւ գլորման վէմ ու գայթակղութեան քար անանց՝ որ չհաւատալով խօսքէն կը գայթակղին, որու սահմանուած ալ էին : 9 - Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեպհական ժողովուրդ մը, որպէս զի քարոզէք անոր աւաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց . 10 - Որ ատեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք :

11 - Սիրելիներ, կ'աղաչեմ, պանդուխտներու և օտարականներու պէս մէկզի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն, որոնք հոգիի դէմ կը պատերազմին, 12 - Ձեր վարմունքը հետա-

նաներուն մէջ բարի պահելով, որպէս զի ինչ բանով որ ձեզ չարագործներու պէս կը բամբասեն, ձեր բարի գործերը տեսնելով փառաւորեն զԱստուած այցելութեան օրը : 13 - Աւստի հնազանդ եղէք ամէն մարդկային սահմանադրութեան Տէրօջը համար, թէ՛ թագաւորին՝ վերնագոյն մէկուն պէս, 14 - Թէ՛ կուսակալներուն՝ անոր կողմէն զրկուածներու պէս, չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար : 15 - Վասն զի Աստուծոյ կամքը այսպէս է, որ բարեգործ ըլլալով անխելք մարդոց ազիտութիւնը պապանձեցնէք. 16 - Ազատներու պէս ըլլալով, և ոչ թէ չէր ազատութիւնը շարութեան ծածկոցի մը պէս գործածելով, հապա Աստուծոյ ծառաներու պէս : 17 - Ամէնը պատուեցէք. եղբայրութիւնը սիրեցէք. Աստուծմէ վախեցէք . թագաւորը պատուեցէք :

18 - Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ ըլլան երեւոյ տերերուն, ոչ թէ միայն բարերարներուն ու հեղերուն, հապա ժանտաբարաններուն ալ : 19 - Քանզի այս շնորհք մըն է, եթէ մէկը առ Աստուած ունեցած խղճմտանքովը անիրաւ տեղ կրած վիշտերուն համբերելու ըլլայ : 20 - Վասն զի ինչ գովութիւն կ'ըլլայ չէզի, եթէ մեզք գործելով ձեռուիք ու համբերէք. ապա եթէ բարիք գործելով չարչարուիք ու համբերէք, ասիկա Աստուծոյ քով շնորհք մըն է : 21 - Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք. վասն զի Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ, ու ձեզի օրինակ թողուց՝ որպէս զի իր շաւիղներուն հետեիք . 22 - Որ մեզք մը չգործեց, ու իր բերնին մէջ նենգութիւն մը չգանուեցաւ . 23 - Որ կը նախատուէր, և փոխարէնը չէր նախատեր. կը չարչարուէր, ու սպառնալիք չէր ըներ. հապա ինքզինք արդարութեամբ դատողին կը յանձնէր . 24 - Որ մեր մեզքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, որպէս զի մենք մեզքերէն ազատիք, ու արդարութեան համար ապրինք. որուն վերքերովը դուք բժշկուեցաք : 25 - Վասն զի մկրտեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմա ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք :

ԳԼ. Գ

Մամնապէս կիները հնազանդ ըլլան իրենց այրերուն, որպէս զի եթէ ոմանք խօսքին հնազանդ չըլլան ալ, առանց խօսքի շահուն կիներուն վարմունքովը, 2 - Տեանելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը: 3 - Որոնց զարդարանքը չըլլայ դրսէն մագերու հիւսուածքներով և սոկիներու շարքերով կամ չեղ հանդերձներ հագնելով. 4 - Հապա սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հեզ ու հանդարտ հոգիին զԵՐԵԷ ԲՆՂ ԸԼԼՅ, որ Աստուծոյ առջև խիստ պատուական է: 5 - Վասն զի առեւտր սուրբ կիները, որոնք իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած էին, անձերնին այսպէս կը վարդարէին՝ իրենց այրերուն հնազանդ ըլլալով. 6 - Ինչպէս Սաուա հնազանդ էր Աբրահամի, և զանկա տէր կը կոչէր. որ դուք բարեգործ ըլլալով ու երկիւղէ մը չվախնալով անոր զուակները կ'ըլլաք:

7 - Նամնապէս այրերը խոհեմութիւնով անոնց հետ բնակին, ահար անօթի պէս պատիւ տալով կիներուն, իբրև կենաց շնորհքին ժառանգակիցներու, որպէս զի ձեր աղօթքներուն արգելք չըլլայ:

8 - Վերջապէս ամէնդ մէկ միտքի վրայ ըլլաք, կարեկից, եղբայրատէր, ողորմած - * քաղցրաբարոյ: 9 - Չըլլայ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք, կամ նախատինքի փոխարէն նախատինք. այլ ընդհակառակն օրհնեցէք: զիմնալով որ այս բանին համար կանչուեցաք, որպէս զի օրհնութիւն ժառանգէք: 10 - Վասն զի ան որ կ'ուղէ կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իր լեղուն թող դադրեցնէ չարութենէ, ու իր շրթունքները՝ նենգութիւն խօսելէ. 11 - Չարութենէ ետ քաշուի ու բարութիւն ընէ, խաղաղութիւն փնտռէ և անոր ետեւէն երթայ: 12 - Վասն զի Տերոջը աչքերը արդարներուն վրայ են, ու իր ահանջները՝ անոնց աղօթքին. բայց Տերոջը երեսը չարագործներուն վրայ է: 13 - Եւ ո՞վ ձեզի չարիք մը պիտի հասցնէ՝ եթէ դուք բարիին հետևող ըլլաք: 14 - Ինչոյց եթէ արդարութեան համար չարչարուիք ալ՝ երանելի էք. և անոնց

ասէն մի վախնաք ու մի շփոթիք. 15 - Հապա Տէր Աստուածը սիրտերնուդ մէջ սուրբ պահեցէք. և միշտ պատրաստ եղէք հեղութեամբ ու երկիւղածութեամբ պատասխան տալու ամէնուն որ ձեր ունեցած յոյսին պատճառը ձեզի կը հարցնեն: 16 - Եւ բարի խղճմանք ունենաք, որպէս զի ի՛նչ բանով որ ձեզ կը բամբասեն իբրև չարագործներ, ամօթով մնան անոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի վարմունքը կը պախարակեն: 17 - Վասն զի աւելի աղէկ է բարեգործութիւն ընելով չարչարուիլ, եթէ Աստուծոյ կամքը այն ըլլայ, քան թէ չարագործութիւն ընելով: 18 - Վասն զի Քրիստոս ալ մեզքի համար մէկ անգամ՝ չարչարուեցաւ, Արդարը անարդարներուն վրայ, որպէս զի մեզ Աստուծոյ մօտեցնէ. որ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի եղաւ հոգիով. 19 - Որով բանաի մէջ եղած հոգիներուն ալ գնաց ու քարոզեց. 20 - Որոնք ատեն մը տպասամբ էին, երբ Աստուծոյ երկայնամտութիւնը կը համբերէր անոնց նոյն օրերը՝ երբ տապանը կը շինուէր, որուն մէջ քիչ անձեր, այսինքն ութ հոգի, ջուրէն տպեցան. 21 - Որ մեզ ալ այն օրինակին պէս մկրտութիւնը հիմա կ'ապրեցնէ; (ուչ թէ մարմինին աղաը մէկզի ձգելը, հապա բարի խղճմանքին վկայութիւնը առ Աստուած,) Յիսուս Քրիստոսի յարութիւնովը. 22 - Որ երկինք գացած՝ Աստուծոյ աջ կողմն է, հրեշտակներուն ու իշխանութիւններուն և զօրութիւններուն իրեն հնազանդելովը:

ԳԼ. Գ

Ուստի որովհետև Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմինով, դուք ալ նոյն միտքով զինուորեցէք. վասն զի ան որ մարմինով չարչարուեցաւ, մեզքէն դադարած է. 2 - Որպէս զի ա՛լ ոչ թէ մարդոց ցանկութիւններուն պէս՝ հապա Աստուծոյ կամքին պէս տպրիք մարմինի մէջ մնացած ատեն: 3 - Վասն զի հերիք է մեզի կեանքի անցեալ ժամանակը, որուն մէջ հեթանոսներուն կամքը կատարեցինք, ու զի ճութիւններով, ցանկութիւններով, զինեմոյութիւններով, անտառ.

*Ո՛ր-նէ, խանարհ

կութիւններով , արբեցութիւններով
 ու անօրէն կուպաշաութիւններով
 վարուեցանք : 4 - Ու այս բանին կը
 զարմանան՝ որ դուք նոյն չափազանց
 անառակութեան մէջ ա՛նոնց հետ չէք
 վազեր, ու հոյհոյութիւն կ'ընեն. 5 -
 Որոնք պատասխան պիտի տան անոր՝
 որ պատրաստ է դատել կենդանիները
 ու մեռելիները : 6 - Քանզի ասոր համար
 մեռելներուն ալ աւետարանը քարոզ-
 ուեցաւ, որպէս զի դատուին մարդոց
 կողմանէ մարմնով, ու կենդանի ըլ-
 լան Աստուծոյ կողմանէ հոգիով :

7 - Սակայն ամէն բանի վախճանը
 մօտեցեր է. ուստի զգտատ եղէք ու ա-
 զօթքի մէջ արթուն կեցէք : 8 - Եւ
 ամէն բանէ աւաջ իրարու հետ սրտանց
 սէր ունեցէք. վասն զի սերը մեղքերու
 բազմութիւնը կը ծածկէ : 9 - Իրարու
 հիւրասիրութիւն ցուցուցէք առանց
 տրտունջ ընելու : 10 - Ամէն մէկը ինչ
 տեսակ շնորհք որ առաւ, զանկա
 իրարու մատակարարեցէք Աստուծոյ
 զանազան շնորհաց բարի անտեսներուն
 պէս : 11 - Եթէ մէկը խօսի, Աստուծոյ
 պատգամներուն պէս Բաբելոնի . եթէ
 մէկը մատակարարութիւն ընէ, որպէս
 թէ Աստուծոյ շնորհաց զօրութենէն
 Բաբելոն, որպէս զի ամէն բանի մէջ
 Աստուած փառաւորուի Յիսուս Քրիս-
 տոսի ձեռքով . որու փառք և զօրու-
 թիւն յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

12 - Սիրելիներ, օտար բան մի սե-
 պէք այն նեղութեան բորբոքը, որ ձեզ
 փորձելու համար կ'ըլլայ : որպէս թէ
 օտար բան մը ձեզի հանդիպած է .

13 - Հապա ուրախ եղէք՝ բանի որ
 Քրիստոսի շարչարանքներուն հաղորդ-
 եղած էք, որպէս զի անոր փառքին
 յայանուելու ատենն ալ ցնծութեամբ
 ուրախանաք : 14 - Եթէ Քրիստոսի ան-
 ուանը համար նախատուիք, երանելի
 էք. վասն զի փառաց [և զօրութեան]
 և Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգ-
 չած է. *արգարե անոնց կողմանէ կը
 հոյհոյութի անկա, բայց ձեր կողմանէ
 կը փառաւորուի : 15 - Չըլլայ որ ձեզ-
 մէ մէկը շարչարուի իբրև մարդասպան,
 կամ գող, կամ շարագործ, կամ իբ-
 րև ուրիշին բանին խառնուող . 16 -
 Բայց եթէ շարչարուի իբրև Քրիստոն-
 եայ՝ թող չամչնայ, հապա այս մտտին

թող Աստուծոյ փառք տայ : 17 -
 Քանզի ժամանակ է որ դատաստանը
 Աստուծոյ տունէն սկսի. և եթէ աւաջ
 մեզմէ չընէ, հապա անոնց վերջը ի՞նչ
 պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ աւետա-
 րանին չեն հնազանդիր : 18 - Եւ եթէ
 արդարը դժուարաւ կը փրկուի, հա-
 ամբարիշտը ու մեղաւորը ո՛րք պիտի
 գտնուին : 19 - Ուստի անոնք որ Աս-
 տուծոյ կամքին համեմատ կը շարչար-
 ուին, բարիք գործելով իրենց հոգի-
 ները թող ա՛նք յանձնեն, իբրև հա-
 ւատարիմ՝ Ստեղծարարին :

ԳԼ Ե

Չեր մէջ եղող երէցներուն կ'ա-
 զաչեմ, է՛ւ ա՛նոնց պէս երէց ըլլա-
 լեվս, ու Քրիստոսի շարչարանքներուն
 վկայ, և յայանուելու հանդերձեալ
 փառքին մասնակից . 2 - Աստուծոյ
 հօտը որ ձեր մէջ է՝ արածեցէք, վե-
 րահացու ըլլալով ոչ թէ ակամայ՝
 հապա կամաւ, ոչ թէ անարդ շա-
 հախնդրութեամբ՝ հապա յօժարու-
 թեամբ, 3 - Ոչ թէ վիճակներուն վրայ
 տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլա-
 լով . 4 - Եւ Հովուապետին երեցած
 ատենը փառաց անթառամ՝ պասկը
 պիտի ընդունիք :

5 - Նմանապէս դուք, երիտասարդ-
 ներ, հնազանդ եղէք ձերերուն. և ա-
 մէնդ իրարու հնազանդ ըլլալով՝ խո-
 նարհութիւն հաղէք. վասն զի Աստ-
 ուած ամբարտաւաններուն հակառակ
 կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք
 կու տայ : 6 - Ուրեմն Աստուծոյ հօր
 ձեռքին տակ խոնարհեցէք, որպէս զի
 ձեզ ժամանակին բարձրացնէ : 7 - Չեր
 ամէն հօգը անոր ձգեցէք, վասն զի ա-
 նկա ձեզի համար կը հոգայ :

8 - Արթուն կեցէք, հակեցէք, վասն
 զի ձեր հակառակորդը, Սատանայ,
 մունչող առիւծի պէս կը պտրտի, ու
 կը փնտռէ թէ ո՛վ կլլէ . 9 - Որու դէմ՝
 կեցէք հաւատքով հաստատուած,
 գիտնալով որ ձեր եղբայրներն ա՛ւաշ-
 խարհի մէջ նոյն շարչարանքները կը
 կրեն :

10 - Եւ բոլոր շնորհաց Աստուածը,
 որ ձեզ իր յաւիտենական փառքին
 կանչեց Քրիստոս Յիսուսի ձեռքով,
 քիչ մը ատեն նեղութիւն կրելնէ գ
 ետքը, ինք ձեզ կատարեալ ընէ, հաս-

*Ո՛րքն է շարչարուի

տասէ, զօրացնէ - - հիմնէ: 11 - Իրեն փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

12 - Սիզուանոս հաւատարիմ եղբօր ձեռքով, (ինչպէս ես կը կարծեմ,) համառօտ մը ձեզի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ

կեցեր էք: 13 - Բարև կ'ընէ ձեզի Բարեւանի մէջ եղած եկեղեցին որ յեզի հետ ընտրուած է, ու իմ որդիս Մարկոս սալ: 14 - Բարև տուէք իրարու սիրոյ համբուրով. խաղաղութիւն ձեր ամէնուն հետ որ Քրիստոս Յիսուսի մէջ էք: Ամէն:

ԵՐԿՐՈՐԴԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

Եման Պետրոս, Յիսուս Քրիստոսի ծառայ և առաքեալ, յեզի՝ որ մեզի հետ նոյն պատուական հաւատքին հասաք մեր Աստուծոյն ու Փրկչին Յիսուս Քրիստոսի արգարութիւնովը. 2 - Շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ աւելնայ Աստուծոյ ու մեր Տէրջը Յիսուսի գիտութիւնովը:

3 - Ինչպէս իր աստուածային զօրութիւնը կենաց և աստուածապաշտութեան վերաբերեալ ամէն բաները մեզի տուաւ անոր գիտութիւնովը՝ որ մեզ փառքով ու առաքինութիւնով հրաւիրեց. 4 - Արանցմով ամենամեծ ու պատուական խոստմունքներ տրուած են մեզի, որպէս զի ասանցմով աստուածային բնութեանը հաղորդ ըլլաք՝ աշխարհի մէջ ցանկութենէ յառաջ եկած սպականութենէն փախչելով: 5 - Եւ այս բանին համար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքին վրայ առաքինութիւն աւելցուցէք, ու առաքինութեան վրայ գիտութիւն, 6 - Եւ գիտութեան վրայ ժուժկալութիւն, ու ժուժկալութեան վրայ համբերութիւն, և համբերութեան վրայ աստուածապաշտութիւն, 7 - Ու աստուածապաշտութեան վրայ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ սէր: 8 - Վասն զի քանի որ այս բաները ձեր վրայ կը գտնուին ու կ'աճին, պարտաւոր ու անպտուղ չեն ընէր յեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ճանչնալուն մէջ:

9 - Բայց որուն քով որ այս բաները չկան, անիկա կոյր է ու կարծատես, որ մոռցեր է իր առաջուան մեղքերէն մտքուելը: 10 - Ասոր համար, եղբայրներ, աւելի ջանք ըրէք որ ձեր կոչումը ու ընտրութիւնը հաստատէք, վասն զի պայս ընելով՝ բնաւ պիտի չվրիպէք. 11 - Քանզի այսպէս ձեզի առատօրէն պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը մանեղ:

12 - Ուստի ես միշտ այս բաները միտքերնիդ ձգելու վրայով զանցառու պիտի չըլլամ, թէև գիտէք և հաստատուած էք ներկայ ճշմարտութեանը վրայ: 13 - Եւ իրաւունք կը սեպեմ, թէ քանի որ այս *մարմինին մէջ եմ, միտքերնիդ ձգելով ձեզ արթնցնեմ. 14 - Քանզի գիտեմ՝ որ ես շուտով այս իմ մարմինս պիտի մերկանամ, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայանեց ինձի: 15 - Ուստի պիտի ջանամ որ իմ աշխարհէ ելլելէս ետքն սալ միշտ կարող ըլլաք այս բաները յիշել: 16 - Վասն զի ոչ թէ մենք վարպետութեամբ շինուած առասպելներու ետեւէ երթալով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու գալուստը ձեզի ցուցուցինք, հապա անոր մեծափառութեանը ականատես ըլլալով: 17 - Վասն զի ինք Հօր Աստուծոյ փառք ու պատիւ տուաւ, այն մեծ վայելչութեան փառքէն այնպիսի ձայն մը գալով, թէ

*Յ. - ն. վրանին

Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւնէր եմ: 18 - Եւ այս երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, որու հետ էինք սուրբ լեռանը վրայ: 19 - Եւ մարգարէական խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաստատուն է. ու աղէկ կ'ընէք՝ եթէ անոր մտադրութիւն ընէք, որպէս թէ մութ տեղը լոյս առող ճրագի մը, մինչև ցորեկը լուսնայ ու արուստակը սիրտերնուդ մէջ ծագի: 20 - Բայց առաջ զայս գիտնաք, որ գրոց ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի: 21 - Վասն զի մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չարուեցաւ, հապա Աստուծոյ սուրբ մարգիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան:

ԳԼ. Բ

Բայց սուտ մարգարէներ ալ կ'ըլլային ժողովուրդին մէջ, ինչպէս ձեր մէջ ալ սուտ վարդապետներ պիտի ըլլան, որոնք գաղաւկ պիտի մտցնեն կորուսիչ հերձուածողութիւններ, ու զիրենք ծախու առնող Տէրը ուրանալով իրենց վրայ պիտի բերեն արագահաս կորուստը. 2 - Եւ շատերը անոնց *կորստական ընթացքներուն՝ ետեւն պիտի երթան, որոնց համար ճշմարտութեան ճամբան պիտի հայհոյուի. 3 - Եւ ազահութիւնով՝ խորամանկութեամբ ճնարուած խօսքերով ձեզ վաճառաշահութեան պիտի գործածեն. որոնց դատապարտութիւնը շատոնցմէ պարտաւ ըլլալ չուշանար, ու անոնց կորուստը չմտափեր:

4 - Վասն զի եթէ Աստուած մեզք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարսոր ձգած՝ դատաստանի պահել տուաւ. 5 - Ու առաջուան աշխարհին ալ չխնայեց. միայն թէ Նոյ ութերորդ աշխարհարութեան քարոզիչը, պահեց, երբ ջրհեղեղը ամբարիշտներուն աշխարհին վրայ բերաւ, 6 - Եւ Սողոմոն ու Գոմորի քաղաքները միմիւր գարձրնելով -- կործանելով դատապարտեց, ետքը ամբարշտութիւն ընելու մարդոց օրինակ ընելով զանոնք. 7 - Եւ ազատեց արդար Ղովտը, որ անօրէններուն անառակ վարմունքէն ձանձ-

րացեր էր. 8 - (Վասն զի այն արդարը անոնց մէջ կենալով՝ աչքովը տեսնելով ու ականջովը լսելով, օրէ օր էր արդար հոգին կը տանջէր անոնց անօրէն վարմունքովը.) 9 - Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատել, և անիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան պահել:

10 - Անաւանդ անոնք որ պղծալից ցանկութեամբ մարմնի ետեւէ կ'երթան, և տէրութիւնը կ'անարգեն, ինքնահաւան ու յանդուգն են, չեն վախնար փառաւորներուն դէմ հայհոյել. 11 - Երբ հրեշտակները, որ անոնց շատ մեծ են զօրութիւնով ու կարողութիւնով, Տէրոջը առջև հայհոյութեամբ դատապարտութիւն չեն բերեր անոնց վրայ: 12 - Բայց ասոնք անբան անասուններու պէս, (որ բնականաբար որսի ու ապականութեան համար եղած են,) չգիտցած բաներնուն դէմ կը հայհոյեն, և իրենց ապականութիւնովը պիտի ապականին, 13 - Անիրաւութեան վարձքը ընդունելով, որ ցորեկուան մէջ եղած զեղխութիւնը զուարճութիւն կը սեպեն. արտա ու բիծ են, իրենց խաբէութիւններովը զուարճանալով՝ երբ ձեզի հետ կերուխումի կը նստին. 14 - Շնութեամբ լեցուն աչքեր ունին, որ մեղքէ չեն դադարիր. անհաստատ հոգիները կը խաբեն. ազահութեան սովորած սիրտեր ունին. անիծեալ զաւակներ են. 15 - Շիտակ ճամբան ձգելով մուրեցան՝ Բեովրեան Բաղամի ճամբուն հետեւելով, որ անիրաւութեան վարձքը սիրեց. 16 - Բայց իր անօրէնութեանը յանդիմանութիւնը առաւ. անխօս էջը մարդկային ձայնով խօսելով՝ մարգարէին յիմարութիւնը արգիլեց: 17 - Ասոնք ջուր չունեցող աղբիւրներ են, ու փոթորիկէ քշուած մէգեր, որոնց համար թանձր խաւարը պահուած է յաւիտեան: 18 - Քանզի ունայնութեան հպարտ խօսքեր ընելով՝ գիճութիւններով, մարմնի ցանկութիւններով կը խաբեն զանոնք որ քիչ մը առաջ փախեր էին անոնցմէ՝ որ մոլորութեան մէջ կը պառտին. 19 - Անոնց ազատութիւն կը խոտանան, և իրենք ապականութեան ծառաներ են. վասն զի ինչ բանէ որ մէկը յաղթուի, անոր ծառայ ալ կ'ըլլայ: 20 - Վասն զի եթէ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսը

*Ո՛ր-նոք, անառակութիւններուն

գիտու թիւնովը աշխարհի պղծութիւններէն հրաժարելէ ետե՛ դարձեալ այն բաներէն ընտրած յաղթունն, անոնց վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ : 21 - Վասն զի աղէկ էր անոնց՝ որ բնորդարութեան ճամբան ճանչցած չըլլային , քան թէ ճանչնալով ետ դառնային այն սուրբ պատուիրանքէն՝ որ իրենց յանձնուեցաւ : 22 - Սակայն անոնց հանդիպեցաւ այն ճշմարիտ առակին բանը , թէ Նունը նորէն իր փոխածին կը դառնայ , ու լուսացուած խոզը՝ ցեխի մէջ թապալակելու :


ԳԼ . Գ

Սիրելիներ, այս երկրորդ թուղթը հիմա ձեզի կը գրեմ , որոնցմով ձեր անկեղծ միտքը կ'արթնցնեմ՝ յիշելու , 2 - Որպէս զի սուրբ մարգարէնէրէն առաջուրնէ գրուցուած խօսքերը , և մեր, այսինքն Տէրոջը ու Փրկչին առաքեալներուն , պատուէրները միաքերնիդ բերէք : 3 - Բայց առաջ զայս գիանաք , որ վերջին օրերը ծաղր բնողներ պիտի գան , որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քայեն , 4 - Եւ պիտի բսեն , Ո՛ւր է անոր գալուն խոստմունքը , վասն զի քանի որ հայրերը քնացան , ամէն բան այնպէս կայ կը մնայ արարածներուն սկիզբէն հետէ : 5 - Քանզի անոնք (որոնց ուզածը այս է ,) այն բանը մտացեր են , թէ երկինք առաջուրնէ եղաւ , ու երկիր ջուրերէն և ջուրերով հաստատ կեցեր է Աստուծոյ խօսքովը . 6 - Որով հին աշխարհը՝ ջրհեղեղով ապականուած կորսուեցաւ . 7 - Եւ հիմակուան երկինքը ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են , մինչև դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորուստին օրը կրակի համար պահուած : 8 - Եւ այս մէկ բանը ձեզմէ ծածուկ չմնայ , սիրելիներ , որ Տէրոջը քով մէկ օրը հազար տարուան պէս է , ու հազար տարին՝ մէկ օրուան պէս : 9 - Տէրը շուշացներ եւ

խոստմունքը , ինչպէս սմանք ու շացուցած կը սեպեն , հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ . վասն զի շուզեր որ մէ'կը կորուսի , հապա որ ամէնը ապաշխարանքի գան : 10 - Սակայն Տէրոջը օրը * գողի պէս պիտի գայ , որ ստեն երկինք սաստիկ շառաչելով պիտի անցնի , ու տարերքները բռնկած պիտի լուծուին , երկիր ալ , ու ինչ գործեր որ անոր մէջ կը գանուին , պիտի այրուին : 11 - Ուստի որովհետեւ այս ամէն բաները պիտի լուծուին , ձեզի ի՞նչպիտի մարդիկ ըլլալ կը վայելէ սուրբ վարմունքով ու բարեպաշտութեամբ , սպասելով 12 - Ու արարուով Աստուծոյ օրուանը գալուն , որուն մէջ երկինք կրակով այրուած պիտի լուծուի , ու տարերքները բռնկած պիտի հային : 13 - Սակայն իր խոստմունքին համեմատ , նոր երկինքի ու նոր երկրի մը կը սպասենք , որոնց մէջ արդարութիւն կը բնակի :

14 - Ուստի , սիրելիներ , ատոնց սպասելով ջանացէք , որ ան ձեզ անբիծ ու անարատ գանէ խաղաղութիւնով . 15 - Եւ մեր Տէրոջը երկայնամտութիւնը փրկութիւն սեպեցէք . ինչպէս մեր սիրելի եղբայրը Պօղոս ալ իրեն արուած իմաստութիւնովը գրեց ձեզի . 16 - Ինչպէս ամէն թուղթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի . որոնց մէջ քանի մը գծուարիմոց Խօփեց կը գանուին , զորոնք ազէաները ու անհաւատները ծուռ կողմը կը դարձնեն , ինչպէս սերիշ գիրքերն ալ՝ իրենց անձին կորուստին համար : 17 - Ուրեքն գուք , սիրելիներ , առաջուրնէ գիտնալով զգոյշ եղէք , որ չըլլայ թէ անօրէններուն խաբէութենէն բռնուած՝ ձեր հաստատութենէն իյնաք . 18 - Հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը . անոր փառք հիմա ալ ու մինչև յաւիտենական օրն ալ : Ամէն :

*Ո՛ւրն է , գիշերուան գողի



ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ



ԳԼՈՒԽ Ա.

Կենաց Բանին վրայով որ սկիզբէն էր, որու համար լեցինք, զոր մեր աչքերովը տեսանք, որու նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին. 2 - (Եւ կեանքը յայանուեցաւ, ու տեսանք և կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յաւիտենական կեանքը, որ Հօրը քով էր ու մեզի յայանուեցաւ.) 3 - Զայն որ տեսանք ու լեցինք, ձեզի կը պատմենք, որպէս զի դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք. և մեր հաղորդութիւնը Հօրը հետ է՝ ու իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ : 4 - Եւ այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ :

5 - Եւ տակաւ է այն պատգամը զոր իրմէ լեցինք ու ձեզի կը պատմենք, թէ Աստուած լոյս է, ու անոր մէջ բնաւ խաւար չկայ : 6 - Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդութիւն ունինք, ու խաւարի մէջ պտըտինք, սուտ կը գրուցենք և ճշմարտութիւնը չենք բնէր : 7 - Ապա եթէ լոյսի մէջ քայլենք, ինչպէս անհկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք, ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ : 8 - Եթէ ըսենք թէ Մենք մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջ ճշմարտութիւն չկայ : 9 - Եթէ խտտովանինք մեղքերնիս, հաւատարիմ՝ ու արդար է անհկա մեր մեղքերուն թողութիւն ապաւ, և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու : 10 - Եթէ ըսենք թէ Մեզ մը չգործեցինք, սուտորոյց կ'ընենք զանհկա, ու անոր խօսքը մեր մէջ չէ :

ԳԼ. Բ

Իմ որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէս զի մեզք չգործէք. և եթէ մէկը մեզք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիս-

տոս արդարը. 2 - Եւ անհկա մեր մեղքերուն քաւութիւն է, և ոչ թէ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհի ալ :

3 - Ու ասով գիտենք թէ զանհկա ճանչցանք, եթէ անոր պատուիրանքները պահենք : 4 - Ան որ կ'ըսէ թէ Ես զանհկա ճանչցայ, ու անոր պատուիրանքները չպահեր, ստախօս է, ու անոր մէջ ճշմարտութիւն չկայ : 5 - Բայց ան որ անոր խօսքը կը պահէ, իրաւցընէ իր մէջ կատարեալ է Աստուծոյ սէրը. ասով կը ճանչնանք թէ անոր մէջ ենք : 6 - Ան որ կ'ըսէ թէ անոր մէջ կը բնակի, այնպէս պէտք է քայլէ՝ ինչպէս անհկա քայլեց :

7 - *Եղբայրներ, ոչ թէ նոր պատուիրանք մը կը գրեմ՝ ձեզի, հապա այն հին պատուիրանքը զոր սկիզբէն ի վեր ունէիք. և հին պատուիրանքը այն խօսքն է, զոր դուք սկիզբէն լեցիք : 8 - Իտարձեալ նոր պատուիրանք մը կը գրեմ՝ ձեզի, որ ճշմարիտ է անոր մէջ ու ձեր մէջ. վասն զի խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երևնայ : 9 - Ան որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է, ու իր եղբայրը կ'ատէ, անհկա տակաւին խաւարի մէջ է : 10 - Ան որ իր եղբայրը կը սիրէ, լոյսի մէջ կը բնակի, ու իր մէջ գայթակղութիւն չկայ. 11 - Բայց ան որ իր եղբայրը կ'ատէ, խաւարի մէջ է ու խաւարի մէջ կը քայլէ, ու չգիտեր թէ ո՛ւր կ'երթայ, վասն զի խաւարը անոր աչքերը կուրցուցեր է :

12 - Կը գրեմ ձեզի, որդեակներ, վասն զի ձեր մեղքերը թողուած են անոր անուան համար : 13 - Կը գրեմ ձեզի, հայրեր, վասն զի դուք ճանչցաք զանհկա որ սկիզբէն է : Կը գրեմ ձեզի, երիտասարդներ, վասն զի դուք չարին յաղթեցիք : 14 - Կը գրեմ ձեզի, տղաքներ, վասն զի դուք ճանչցաք Հայրը : Գրեցի ձեզի, հայրեր, վասն զի դուք ճանչցաք զանհկա որ սկիզբէն է :

*ԲՆՆԷ, Արեւիկներ

Գրեցի ձեզի, երիտասարդներ, վասն զի գուբ ուժով էք, և Աստուծոյ խօսքը ձեր մէջ կը բնակի, ու չարին յաղթեցիք: 15 - Մի սիրէք աշխարհը, ոչ այլ ինչ որ աշխարհի մէջ է: 16 - Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսի-դին Հօրը սէրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը և այլ կեանքին ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է: 17 - Աշխարհս ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ Աստուծոյ կամքը կը կատարէ, յաւիտեան կը մնայ:

18-Որդեակներ, վերջին ժամանակն է. ու ինչպէս լսեցիք թէ Նեաւը պիտի գայ, և արգէն շատ նեաւեր եկած են, անկէ կ'իմանանք թէ վերջին ժամանակ է: 19 - Մեզմէ ելան «մահ», բայց մեզմէ չէին. վասն զի եթէ մեզմէ ըլլային, մեզի հեա պիտի մնային. հապա մեզմէ ելան, որպէս զի յայտնի ըլլան թէ անոնք ամէնը մեզմէ չէին: 20 - Բայց դուք օծութիւն ունիք Սուրբէն, ու ամէն բան զիտէք: 21 - Չգրեցի ձեզի՝ իրր թէ ճշմարտութիւնը չէք գիտեր, հապա թէ գիտէք զանհկա, ու նաև թէ ամէն ստութիւն ճշմարտութենէն չէ: 22 - Ո՞վ է ստախօս, եթէ ոչ ան որ կ'ուրանայ թէ Յիսուս՝ Քրիստոս չէ. անհկա է Նեաւը որ կ'ուրանայ Հայրը ու Որդին: 23-Ամէն ով որ կ'ուրանայ Որդին, անհկա Հայրն ալ չընգունիր. [Բայց ան որ կը խոստովանի Որդին, անհկա Հայրն ալ կ'ընգունի:] 24 - Ուրեմն ինչ որ դուք սկիզբէն լսեցիք, թող անհկա ձեր մէջ բնակի. եթէ այն սկիզբէն լսածնիգ ձեր մէջ բնակի, դուք ալ Որդւոյն ու Հօրը մէջ պիտի բնակիք: 25 - Եւ տօնիկա է այն խոստմունքը զոր ինք մեզի խոստացաւ, այսինքն յաւիտեանական կեանքը: 26 - Այս բաները ձեզի գրեցի՝ ձեզ մնորեցնողներուն համար: 27 - Եւ այն օծութիւնը զոր դուք իրմէ ընգունեցիք, ձեր մէջ կը մնայ, ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ. հապա ինչպէս նոյն օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրայով, և ճշմարիտ է ու սուս չէ, և ինչպէս տօնիկա ձեզի սորվեցուց, անոր մէջ կեցէք:

28-Ու հիմա, որդեակներ, անոր մէջ կեցէք, որպէս զի երբ անհկա յայտ-

նուի, մենք համարձակութիւն ունենանք, ու անկէ չամհնանք իր գալու տատենը: 29-Եթէ գիտէք թէ անհկա արդար է, կ'իմանաք թէ ամէն ով որ արդարութիւն կը գործէ, անկէ ծնած է:

ԳԼ. Գ.

Տեսէք, Հայրը ի՛նչպիսի սէր շնորհեց ձեզի, որպէս զի մենք Աստուծոյ որդիներ ըտուինք. ասոր համար աշխարհ մեզ չճանչնար, վասն զի զանհկա ու չճանչցաւ: 2 - Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներն ենք, և տակաւին յայտնի չէ թէ ի՛նչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ անհկա յայտնուի, անոր պէս պիտի ըլլանք. վասն զի զանհկա պիտի տեսնենք՝ ինչպէս է:

3 - Եւ ամէն ով որ այս յոյսը անոր վրայ ունի, ինքզինք կը մտքէ, ինչպէս անհկա մտքուր է: 4-Ամէն ով որ մեզք կը գործէ, անհկա անօրէնութիւն ալ կը գործէ, և քան մեզքը անօրէնութիւն է: 5 - Եւ գիտէք որ անհկա անոր համար յայտնուեցաւ, որ մեր մեզքերը վերցնէ. ու իր մէջ մեզք չկայ: 6 - Ամէն ով որ անոր մէջ կը կենայ, մեզք չգործեր. ամէն ով որ մեզք կը գործէ, զանհկա տեսած չէ ու զանհկա ճանչցած չէ: 7 - Որդեակներ, մէկը ձեզ չիտարէ. ան որ արդարութիւն կը գործէ, արդար է, ինչպէս Անհկա արդար է: 8 - Եւ ան որ մեզք կը գործէ, Սատանայէ է, վասն զի Սատանայ սկիզբէն ի վեր կը մեղանչէ. ասոր համար Աստուծոյ Որդին յայտնուեցաւ, որ Սատանայի գործերը քակէ: 9 - Ամէն ով որ Աստուծմէ ծնած է, մեզք չգործեր, վասն զի անոր սերմը իր մէջ կը մնայ, ու չկրնար մեզք գործել, քանզի Աստուծմէ ծնած է: 10-Ասով յայտնի են Աստուծոյ որդիները ու Սատանայի որդիները: Ամէն ով որ արդարութիւն չգործեր, անհկա Աստուծմէ չէ, և ան ով որ իր եղբայրը չսիրեր: 11 - Վասն զի տօնիկա այն պատուիրանքն է զոր դուք սկիզբէն լսեցիք, որ մեկմէկ սիրենք: 12 - Ոչ թէ կայինի պէս որ չտրին էր, ու իր եղբայրը սպաննեց. և ինչօր համար զանհկա սպաննեց. անոր համար որ իր գործերը չար էին, ու իր եղբորը Գործերը՝ արդար: 13 - Մի զարմանաք, եղբայրներս, եթէ աշխարհ

Յեզ ատէ: 14 - Մենք գիտենք որ մասնէն կեանքի փոխուեցանք, վասն զի եղբայրները կը սիրենք. ան որ եղբայրը չսիրեր՝ մահուան մէջ կը մնայ: 15 - Ամէն ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարգասապան է, ու գիտէք որ ամէն մարգասապան իր մէջ բնակած յաւիտեանական կեանք չունի: 16 - Ասով գիտցանք Քրիստոսի սէրը, որ անիկա իր կեանքը մեզի համար դրաւ. մենք ալ պարտաւոր ենք ձեր եղբայրներուն համար դնել մեր կեանքը: 17 - Բայց ան որ աշխարհի բարիքը ունի, և իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ ու իր գութը անկէ կը գոցէ, ի՞նչպէս Աստուծոյ սէրը անոր մէջ բնակած կ'ըլլայ: 18 - Արդեակներս, ոչ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ճշմարտութիւնով:

19 - Եւ ասով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն ենք, ու մեր սիրտերուն համարձակութիւնովը անոր առջև պիտի երևնանք: 20 - Բանզի եթէ մեր սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա Աստուած մեր սիրտերէն մեծ է՝ և ամէն բան գիտէ: 21 - Սիրելիներ, եթէ մեր սիրտերը մեզ չմեղադրեն, համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջև: 22 - Եւ ինչ որ խրնդրենք՝ կ'առնենք անկէ, վասն զի իր պատուիրանքները կը պահենք, ու իր առջև հաճոյ եղած բաները կ'ընենք: 23 - Եւ ասիկա է անոր պատուիրանքը, որ իր Արդւոյն Յիսուս Քրիստոսի անուանը հաւատանք ու մէկզմէկ սիրենք, ինչպէս մեզի պատուէր տուաւ: 24 - Եւ ան որ անոր պատուիրանքները կը պահէ՝ անոր մէջ կը կենայ, ու անիկա ալ ասոր մէջ. և ասկէ գիտենք որ անիկա մեր մէջ կը կենայ, այսինքն այն Հոգիէն զոր մեզի տուաւ:

ԳԼ. Գ

Սիրելիներ, ամէն հոգիի մի հաւատաք, հապա հոգիները փորձեցէք՝ թէ արդեօք Աստուծմէ՝ են. վասն զի աշխարհի մէջ շատ սուտ մարգարէներ ելած են: 2 - Ասով կրնաք ճանչնալ Աստուծոյ Հոգին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմինով եկած կը խոստովանի, անիկա Աստուծմէ է: 3 - Եւ ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմինով եկած չխոստովանիր, անիկա

Աստուծմէ չէ. ու ասիկա Նեոսի շարքէն է, որու համար լսեցիք թէ պիտի գայ, ու ճիմակուրնէ ալ աշխարհի մէջ է: 4 - Իսկ Աստուծմէ էք, որդեակներ, ու անոնց յաղթեցիք. քանզի մեծ է անիկա որ ձեր մէջ է, քան թէ անիկա որ աշխարհի մէջ է: 5 - Անոնք աշխարհէ են. անոր համար աշխարհի վրայով կը խօսին, և աշխարհ մտիկ կ'ընէ անոնց: 6 - Մենք Աստուծմէ ենք. ան որ զԱստուած կը ճանչնայ, մեզի մտիկ կ'ընէ. ան որ Աստուծմէ չէ, մեզի մտիկ չընէր. ասով կը ճանչնանք ճշմարտութեան Հոգին ու խաբէութեան հոգին:

7 - Սիրելիներ, մէկզմէկ սիրենք, վասն զի սէրը Աստուծմէ է. ու ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է, ու կը ճանչնայ զԱստուած: 8 - Ան որ չսիրեր՝ զԱստուած չճանչնար. վասն զի Աստուած սէր է: 9 - Այս բանին մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ, որ Աստուած իր միածին Արդին աշխարհ զրկեց, որպէս զի անոր միջոցով ապրինք: 10 - Այս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ անիկա մեզ սիրեց, ու իր Արդին զրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու: 11 - Սիրելիներ, եթէ Աստուած մեզ այսպէս սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտաւորինք մէկզմէկ սիրել: 12 - Մէկը երբէք զԱստուած տեսած չէ. եթէ մէկզմէկ կը սիրենք, Աստուած մեր մէջ կը բնակի, ու անոր սէրը մեր մէջ կատարեալ է: 13 - Ասով գիտենք թէ մենք անոր մէջ կը բնակինք, ու անիկա մեր մէջ, որ իր Հոգիէն մեզի տուաւ: 14 - Եւ մենք տեսանք ու կը վկայենք որ Հայրը եւ Արդին զրկեց աշխարհի Փրկիչը ըլլալու: 15 - Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Արդի Աստուծոյ է, Աստուած անոր մէջ կը բնակի, ան ալ՝ Աստուծոյ մէջ: 16 - Եւ մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է. և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ: 17 - Ասով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որպէս զի համարձակութիւն ունենանք դասապատանին օրը. վասն զի ինչպէս է ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ: 18 - Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը

վախը մեկդի կը ձգէ. վասն զի վախը տանջանքի ենթակայ է. ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ: 19 - Մենք զանհիկա կը սիրենք, վասն զի աւաջ անհիկա մեզ սիրեց: 20 - Եթէ մէկը կ'ըսէ թէ Ես զԱստուած կը սիրեմ, ու իր եղբայրը առէ, անհիկա ստախոս է. քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝ զոր կը տեսնէ, զԱստուած՝ զոր չտեսներ, ի՞նչպէս կրնայ սիրել: 21 - Եւ անկէ այս պատուէրը ունինք, թէ ան որ զԱստուած կը սիրէ, իր եղբայրն ալ կը սիրէ:

ԳԼ Ե

Ամէն ով որ կը հաւատայ թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ ծնած է. և ամէն ով որ ծնողը կը սիրէ՝ անկէ ծնածն ալ կը սիրէ: 2 - Ասով կը ճանչնանք թէ Աստուծոյ որդիները կը սիրենք, երբ զԱստուած սիրենք ու անոր պատուիրանքները պահենք: 3 - Վասն զի ստիկա է Աստուծոյ սէրը, որ անոր պատուիրանքները պահենք. և անոր պատուիրանքները ծանր բան չեն: 4 - Վասն զի այն ամէնը որ Աստուծոյ ծնած է՝ աշխարհի կը յաղթէ. և ստիկա է յաղթութիւնը որ աշխարհի կը յաղթէ. այսինքն մեր հաւատաքը: 5 - Ո՞վ է որ աշխարհի կը յաղթէ, եթէ ոչ անհիկա որ կը հաւատայ թէ Յիսուս որդի Աստուծոյ է:

6 - Աստիկա է որ եկաւ ջուրով և արիւնով, այսինքն Յիսուս Քրիստոս. ոչ թէ միայն ջուրով, հապա ջուրով ու արիւնով. և Հոգին է որ կը վկայէ, վասն զի Հոգին ճշմարտութիւն է: 7 - Վասն զի երեք են որ *երկինքի մէջ կը վկայեն. Հայրը, Բանը ու Սուրբ Հոգին, և այս երեքը մէկ են: 8 - Ու երեք են որ երկրի վրայ՝ կը վկայեն. Հոգին, ջուրը ու արիւնը, և երեքը միաբան են: 9 - Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է. վասն զի ստիկա է Աստուծոյ վկայութիւնը, որ իր Որդւոյն հա-

մար վկայեց: 10 - Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ՝ վկայութիւնը իր մէջ ունի. ան որ Աստուծոյ չհաւատար՝ ստախոս կ'ընէ զանհիկա, վասն զի չհաւատար այն վկայութեանը՝ զոր Աստուած իր Որդւոյն համար վկայեց: 11 - Եւ վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը անոր Որդւոյն մէջ է: 12 - Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի:

13 - Այս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիանաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդւոյն անուանը կը հաւատաք: 14 - Եւ այն համար ձախութիւնը զոր մենք անոր քով ունինք՝ այս է, որ ինչ բան որ խնդրելու ըլլանք իր կամքին համեմատ, կը լսէ մեզի: 15 - Եւ եթէ գիանանք թէ մեզի կը լսէ ինչ որ խնդրելու ըլլանք, *բէ՛՞ կը գիանանք թէ կ'աւնենք խնդրքնիս զոր կը խնդրենք իրմէ:

16 - Եթէ մէկը տեսնէ որ իր եղբայրը մեզք մը գործեց, ոչ թէ մահացու, թող խնդրէ, ու Աստուծոյ անոր կեանք պիտի տայ այն մահացու չեղած մեզքը գործողին. մեզք կայ որ մահացու է, չեմ՝ բտեր որ անոր համար խնդրէ: 17 - Ամէն անիրաւութիւն մեզք է, և մեզք կայ որ մահացու չէ:

18 - Գիտենք որ այն ամէնը որ Աստուծոյ ծնած է՝ մեզք չգործեր. հապա ան որ Աստուծոյ ծնած է՝ իր անձը կը պահէ, ու չարք իրեն չդպչիր: 19 - Գիտենք որ մենք Աստուծոյ ենք, ու բոլոր աշխարհ չարին մէջ է: 20 - Եւ գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ, ու մեզի միաք տուաւ, որպէս զի ճշմարտար ճանչնանք. և այն ճշմարտին մէջ ենք, իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ. ստիկա է ճշմարտ Աստուած ու յաւիտենական կեանք: 21 - Որդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք:†

*Ո՞րքն է կ'աւնենէն, և որպէս զի Աստուծոյ Որդւոյն անուանը հաւատաք †Ո՞րքն է կ'աւնենէն, Ամէն:

*Շատ հին ձեռագիրներ չունին



ՅՈՎ, ՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ



Երէցէն ընտրեալ տիկնոջը ու անոր որդիներուն, զորոնք ես ճշմարտութեամբ կը սիրեմ, (և ոչ թէ միայն ես, հապա ամէնն ալ՝ որոնք ճշմարտութիւնը կը ճանչնան,) 2 - Այն ճշմարտութեանը համար՝ որ մեր մէջ կը մնայ, ու յաւիտեան մեզի հետ պիտի ըլլայ. 3 - Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Հայր Աստուծմէն և Տէր Յիսուս Քրիստոսէ, Հօրը Որդիէն, ձեզի հետ ըլլայ ճշմարտութիւնով ու սիրով:

4 - Շատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ գտայ որոնք ճշմարտութեամբ կը քալեն այն պատուիրանքին համեմատ՝ զոր Հօրմէն աւանդէ: 5 - Եւ հիմա քեզի կ'աղաչեմ, ով տիկին, ոչ իբր թէ նոր պատուիրանք մը քեզի կը գրեմ, հապա զայն որ սկիզբէն ունեւինք, որ մէկզմէկ սիրենք: 6 - Եւ սէրը այս է՝ որ անոր պատուիրանքներուն համեմատ քալենք. «- պատուիրանքը այս է՝ որ ինչպէս սկիզբէն ի վեր լսեցիք, անոր համեմատ քալէք: 7 - Վասն

զի շատ մնորեցուցիչներ ելան աշխարհի մէջ, որոնք Յիսուս Քրիստոսը մարմնով եկած չեն խոստովանիր. այնպիսի մէկը մնորեցուցիչ ու Նեո է: 8 - Զգուշացէք ձեր անձերուն, որպէս զի աշխատանքնիս չկորսնցնենք, հապա որպէս զի լման վարձք առնենք: 9 - Ամէն ալ որ յանցանք կը գործէ ու Քրիստոսի վարդապետութեանը մէջ չկենար, անիկա զԱստուած չունի. ան որ Քրիստոսի վարդապետութեանը մէջ կը կենայ, անիկա Հայրն ալ ունի Որդին ալ: 10 - Եթէ մէկը ձեզի գայ ու այս վարդապետութիւնը չբերէ, զանիկա սուներնիդ մի ընդունիք, և անոր Բարև մի ըսէք: 11 - Քանզի ով որ անոր Բարև կ'ըսէ, անոր չար գործերուն հարդ կ'ըլլայ:

12 - Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց չուզեցի թղթով ու մելանով գրել. վասն զի յոյս ունիմ որ ձեզի գամ, ու բերան առ բերան խօսիմ, որպէս զի մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: 13 - Բարև կ'ընեն քեզի քու ընտրեալ քրոջդ որդիները:*



ՅՈՎ, ՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ



Երէցէն Գայիոս սիրելիին, զոր ես կը սիրեմ ճշմարտութեամբ: 2 - Սիրելի, աղօթք կ'ընեմ որ ամէն կողմէ յաջողութեան մէջ ու առողջ ըլլաս, ինչպէս քու հոգիդ ալ յաջողութեան մէջ է: 3 - Վասն զի շատ ուրախացայ, երբ քանի մը եղբայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայեցին,

ինչպէս դուն ճշմարտութեամբ կը քալես: 4 - Ասկէ մեծ ուրախութիւն մը չունիմ, որ կը լսեմ թէ իմ որդիներս ճշմարտութեան մէջ կը քալեն: 5 - Սիրելի, դուն հաւատարմաբար կ'ընես, ինչ որ կ'ընես եղբայրներուն և օտարներուն. 6 - Որոնք եկեղեցիին


*Ո՛հնէ+ ի՛նչպէս, Ամէն:

առջև վկայեցին քու սիրոյդ վրայով . որ եթէ աստուածահաճոյ կերպով գանձեք ճամբոյ դնես , աղէկ պիտի ընես : 7 - Վասն զի Ս. Գրքի անուանը համար ելան , ու հեթանոսներէն բան մը չեն առներ : 8 - Ուստի մենք պարտաւոր ենք այնպիսիները ընդունիլ , որպէս զի ճշմարտութեանը գործակից ըլլանք :

9 - Եկեղեցիին գրեցի . բայց Իրաւրեփէս , որ անոնց մէջ առաջին ըլլալ կ'ուզէ , մեզ չընդունիր : 10 - Ստոր համար եթէ գամ , անոր ըրած գործերը պիտի յիշեմ , որ մեզի դէմ շաղակրատելով չարախօսութիւն կ'ընէ . և ասով ալ գոհ չեղած՝ ինք չընդունիր եղբայրները , ու անոնք որ կ'ուզեն ընդունիլ կ'արգիլէ , ու եկեղեցիէն ալ

կը հանէ : 11 - Սիրելի , չարին նմանող մի ըլլար , հապա բարիին . ան որ բարիք կը գործէ , Աստուծմէ է . բայց ան որ չարիք կը գործէ , անիկա զԱստուծ տեսած չէ : 12 - Իեմեարիտսի համար ամէնն ալ կը վկայեն , բուն իսկ ճշմարտութիւնն ալ . մենք ալ կը վկայենք , և դուք գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է :

13 - Շատ բան ունէի գրելու , բայց չեմ ուզեր մեղանով ու գրիչով քեզի գրել : 14 - Սակայն յոյս ունիմ մօտերս քեզ տեսնել , ու բերան առ բերան պիտի խօսինք : 15 - Խաղաղութիւն քեզի բարեկամները քեզի բարե կ'ընեն . բարե բրէ Թէ բարեկամներուն ամէն մէկուն անունովը :



ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

Յուդա , Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակոբոսի եղբայրը , ձեզի որ Հայր Աստուծմէն սրբուած էք , և Յիսուս Քրիստոսէ պահուած «- կանչուած . 2 - Ողորմութիւն ու խաղաղութիւն և սէր ձեր վրայ շաանայ :

3 - Սիրելիներ , բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի գրելու հասարակաց փրկութեանը համար , ի՞մ «նչի» հարկ սեպեցի ձեզի գրել ու յորդորել որ միջիք այն հաւատքին համար որ անգամ մը սուրբերուն աւանդուեցաւ :

4 - Քանզի մէկ քանի մարդիկ գաղտուկ մտան , որ առաջուրնէ այս դատապարտութեանը համար որոշուած էին , ամբարիշտներ , որոնք մեր Աստուծոյ շնորհքը անառակութեան դարձուցին , և միմիայն *Իշխանը ու մեր Տէր Յիսուս Քրիստոսը սերացան : 5 - Արդ կ'ուզեմ միտքերնիդ բերել , թէ և արդէն գիտէք ասիկա , թէ Տէրը որ Ժողովուրդը Եզրպատոսի երկրէն ազա-

տեց , ետքը չհաւատացողները կորսնցուց : 6 - Եւ այն հրեշտակները , որոնք իրենց իշխանութիւնը չպահեցին , հապա իրենց բնակութիւնը ձգեցին , մշանջենաւոր կապերով խաւարի մէջ պահեց մեծ օրուան դատաստանին : 7 - Ինչպէս Սոգամ ու Գոմար և անոնց բուրախքը եղած քաղաքները , որոնք ասոնց նման պունկեցան ընկերներուն մարմինին ետեէն երթալով , մեր առջև օրինակ կեցեր են՝ յաւիտեանական կրակին դատապարտութիւնը ընդունելով : 8 - Նմանապէս այս ցնորածներն ալ մարմինը կը պղծեն , տէրութիւնը կ'անարգեն , փառաւորներուն դէմ կը հայհոյեն : 9 - Բայց Միքայէլ հրեշտակապետը երբ Սատանայի դէմ դնելով Մովսէսի մարմինին համար կը վիճէր , չհամարձակեցաւ հայհոյութեան դատապարտութիւն բերել «նոր վրայ , հապա բաւ , Տէրը յանդիմանէ քեզ : 10 - Իսկ ասոնք այն բաներուն զորոնք չեն հասկնար , հայհոյութիւն կ'ընեն . և այն բաները զորոնք բնականաբար անբան անասուններու պէս գի-

*Ո՛հնչ , Աստուած իշխանը

տեն, անոնց մէջ կ'ապականին : 11 - Վա՛յ անոնց, որոնք Կայէնի ճամբովը գացին, ու Բաղամարի մոլորութեանը պէ՛տ ցանկութեամբ վարձքի ետեւէ գացին, ու Կորխի հակառակութեանը պէ՛տ կորսուեցան : 12 - Ատոնք ձեր սիրոյ ինչոքքներուն մէջ արամներ են, ու երբ ձեզի հետ կերուխաւսի կը նստին, աներկիւղ իրենց անձը կը կերակրեն. անջուր ամպեր՝ հովերէն քշուած . պտուղին կորսնցուցած ծառեր, բերք չունեցող, երկու անգամ մեռած, արմատէն խլուած : 13 - Ծովու կատաղած ալիքներ, որոնք իրենց անձերուն ամօթը կը փրփրցնեն. մոլորական աստղեր, որոնց համար խաւարին մէզը պահուած է յաւիտեան :

14 - Անոնց վրայ մարգարէացաւ Ենովք ալ, որ եօթներորդ էր Ագամէ, ու ըսաւ, Ահա Տէրը իր բիւրաւոր սուրբերովը եկաւ, 15 - Ամէնուն դատաստան ընելու, ու բոլոր ամբարիշտները յանդիմանելու իրենց ըրած ամբարշտութեանը բոլոր գործերուն համար, և բոլոր խիստ խօսքերուն համար, զորոնք ամբարիշտ մեղաւորները անոր դէմ խօսեցան : 16 - Ատոնք արանջողներ «-բրթմնջողներ են, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ կ'երթան, և իրենց բերանները ամբարտաւան խօսքեր կը զրուցեն, և շահի հա-

մար երեսպաշտութիւն կ'ընեն : 17 - Բայց դուք, սիրելիներ, միաքերնիդ բերէք այն խօսքերը որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալներէն առաջ ուրնէ զրուցուեցան. 18 - Արոնք ձեզի կ'ըսէին թէ Վերջին ժամանակը ծաղր ընողներ պիտի ըլլան, որոնք իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համեմատ պիտի երթան :

19 - Ատոնք ինքզինքնին զատող շնչաւորներ են, որոնք Հոգին չունին : 20 - Բայց դուք, սիրելիներ, անձերնիդ շինելով ձեր ամենատուրբ հաւատքին վրայ, և Սուրբ Հոգիով աղօթք ընելով, 21 - Անձերնիդ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի սղորմութեանը պատելով յաւիտեանական կեանքի համար : 22 - Եւ խարութիւն ընելով՝ ամանց սղորմեցէք : 23 - Եւ ամոնք վախով ազատեցէք՝ կրակէն յափշտակելով զանոնք, առելով մարմինէն աղտոտուած հանդերձն ալ :

24 - Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիժ պահել, և իր փառքին առջև անարատ կայնեցնել ցնծութիւնով : 25 - Մեր Փրկչին, միմիայն *Աստուծոյ, [մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով] փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն [բոլոր դարերէն առաջ,] և հիմա ու բոլոր դարերու մէջ : Ամէն :



Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱԻԵՏԱՐԱՆՉԻՆ



ԳԼՈՒԽ Ա.

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, զոր Աստուած անոր տուաւ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ . և իր հրեշտակին ձեռքով զրկելով իր Յովհաննէս ծառային իմացուց, 2 - Ար Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տեսաւ : 3 -

Երանի՛ անոր որ կը կարգայ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է. վասն զի ժամանակը մօտ է :

4 - Յովհաննէսէ եօթը եկեղեցիներուն որոնք Ասիայի մէջ են . շնորհք և խաղաղութիւն ձեզի Անկէ որ է և որ էր և որ պիտի գայ, ու եօթը Հոգի-

*Ո՛հնո, իմաստուն Աստուծոյ

ներէն՝ որոնք անոր ամառին առջև են, 5 - Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը. անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, 6 - Եւ մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը. անոր փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

7 - Ահա ամպերով կու գայ. ու ամէն աչք պիտի տեսնէ զանիկա, և անոնք որ զանիկա խոցեցին, և անոր վրայ կոծ պիտի ընեն երկրի բոլոր ազգերը: 8 - Այո, Ամէն: Ես եմ՝ Այֆա և Օմէղա, *կ'ըսէ Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ, Ամենակալը:

9 - Ես Յովհաննէս ձեր եղբայրը, և Յիսուս Քրիստոսի նեղութեանը ու արքայութեանը և համբերութեանը մէջ ընկերակիցը, Պատմոս ըսուած կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս Քրիստոսի վկայութեանը համար:

10 - Եւ †կիրակի օրը Հոգին իմ՝ վրաս եկաւ, ու ետեւէս մեծ ձայն մը լսեցի փողի ջայնօ պէս, որ կ'ըսէր, 11 - ‡Ինչ որ կը տեսնես, գիրքի մը մէջ գրէ, ու զրկէ †եօթը եկեղեցիներուն, որոնք Եփեսոսի, ու Չմիււնիոյի, և Պերգամոնի, ու Թիւատիրի, և Սարգիկէի, ու Փիղոպոլիոսի, և Լաւոզիկիոսի մէջ են: 12 - Եւ դարձայ այն ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր. ու երբ դարձայ՝ եօթը սակեղէն աշտանակներ տեսայ. 13 - Եւ եօթը աշտանակներուն մէջ՝ մէկը Որդւոյ մարդոյ նման, պճղնաւոր պատմուճան մը հագած ու կարծքին վրայ սակի գօտի մը կապած. 14 - Եւ իր դրուխը ու մազերը՝ բուրդի պէս ճերմակ ու ձիւնի պէս, ու իր աչքերը՝ կրակի բոցի պէս. 15 - Եւ իր ոտքերը՝ սակեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած, ու իր ձայնը՝ շատ ջուրերու ձայնի պէս. 16 - Եւ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղ ունէր, ու իր բերնէն սրած երկբերան սուր մը կ'ելլէր, և իր երեսը արևու պէս էր՝ որ իր զօրութիւնովը կը փայլի:

17 - Ու երբ տեսայ զանիկա, իր ոտքը ինկոյ մեռելի պէս, ու իր աջ ձեռքը իմ՝ վրաս դրաւ ու ըսաւ ինծի, Մի վախնար. ես եմ՝ Առաջինը ու Վերջինը. 18 - Եւ ես կենդանի եմ, ու ես ան եմ՝ որ մեռայ, և ահա կենդանի եմ՝ յաւիտեանս յաւիտենից.* և ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները: 19 - [Ուստի] գրէ ինչ որ կը տեսնես, զայն որ կայ ու զայն որ ետքը պիտի ըլլայ. 20 - Եօթը աստղերուն խորհուրդը՝ զոր իմ՝ աջ ձեռքիս մէջ տեսար, և եօթը սակեղէն աշտանակները. այն եօթը աստղերը եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են. և եօթը աշտանակները՝ եօթը եկեղեցիներն են:

ԳԼ Բ

Եփեսոսի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղերը ունի, ու եօթը սակեղէն աշտանակներուն մէջ կը պարտի. 2 - Գիտեմ քու գործերդ և քու աշխատութիւնդ ու քու համբերութիւնդ, և որ չարերուն չես կրնար ամառիլ, ու փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ են, ու չեն, և գտար թէ ստախոս են. 3 - Ու համբերութիւն ունենալով՝ նեղութիւն կրեցիր իմ՝ անուանս համար՝ ու չթուլցար: 4 - Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ քու առաջուան սէրդ ձգեցիր: 5 - Միտք բեր հիմա ուրկէ որ ինկար, ու ապաշխարէ և †առաջուան գործերդ ըրէ. եթէ ոչ՝ շուտով կու գամ քեզի, ու քու աշտանակդ իր տեղէն պիտի շարժեմ՝ եթէ չապաշխարես: 6 - Բայց սիրկա ունիս, որ Նիկոլայոսեանց գործերը կ'ատես, զորոնք ես ալ կ'ատեմ: 7 - Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն՝ որ Աստուծոյ դրախտին մէջ է:

8 - Եւ Չմիււնիոյի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Առաջինը ու Վերջինը, որ մեռաւ

*Ո՛հնէ+ ՚՝ա-ելցնէն, Առաջինը ու Վերջինը, †Այսինքն, տերունական ‡Ո՛հնէ+, Ես եմ՝ Այֆա և Օմէղա, Առաջինը և Վերջինը. և ինչ †Ո՛հնէ+, Ասիա եղած եօթը

*Ո՛հնէ+ ՚՝ա-ելցնէն, Ամէն. †Ո՛հնէ+ ՚՝ա-ելցնէն, զորոնք տեսար, ‡Ո՛հնէ+, և իմ՝ անուանս համար աշխատեցար

ու կենդանացաւ . 9 - Գիտեմ՝ քու գործերդ ու նեղութիւնդ և ազքատութիւնդ , (բայց հարուստ ես ,) ու անոնց հայհոյութիւնը՝ որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են ; ու չեն , հապա Սատանայի ժողովք մը : 10 - Բնաւ մի վախնար այն բաներէն զորոնք պիտի կրես . ահա Բանասրկուն ձեզմէ մէկ քանիները բանտը պիտի ձգէ որպէս զի փորձուիք , և տասը օր նեղութիւն պիտի ունենաք . մինչև ի մահ հաւատարիմ եղիր , ու քեզի կենաց պատկը պիտի տամ : 11 - Ան որ ահանջ ունի , թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն : Ան որ կը յաղթէ , երկրորդ մահէն պիտի չփախուի :

12 - Եւ Պերգամոնի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ անիկա որ սրած երկբերան սուրը ունի . 13 - Գիտեմ՝ քու գործերդ , և թէ ո՛ւր կը բնակիս , այսինքն Սատանայի աթոռին եղած տեղը , ու իմ անունս կը պահես , և իմ հաւատքս չուրացար այն օրերը անգամ՝ որ Անթիպաս իմ հաւատարիմ՝ վկաս սպանուեցաւ ձեր մէջ , ուր Սատանայ կը բնակի : 14 - Բայց քեզի դէմ՝ քիչ մը բան ունիմ , որ հոգ Բաղասամի վարդապետութիւնը բռնողներ ունիս , որ Բաղակի սարվեցուց Իսրայէլի որդիներուն առջև գայթակղութիւն գնել , որպէս զի անոնք կուռքերու զոհուածներ ուտեն ու պառնկութիւն ընեն : 15 - Այսպէս ալ դուն Նիկողայոսեանց վարդապետութիւնը բռնողներ ունիս , զոր ես կ'ատեմ : 16 - [Ուտի] ապաշխարէ . եթէ ոչ՝ շուտով կու գամ՝ քեզի , ու իմ բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց հետ : 17 - Ան որ ահանջ ունի , թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն . Այլ որ կը յաղթէ , պահուած մանանայէն ուտել պիտի տամ անոր , ու ճերմակ խիճ մը պիտի տամ անոր , և այն խիճին վրայ նոր անուն մը գրուած , զոր մէ՛կը չգիտեր , բայց միայն ան՝ որ կ'ընդունի :

18 - Եւ Թիւատիրի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ Ասատուծոյ Որդին , որ կրակի բոցի պէս աչքեր ունի , ու իր սաքերը ոսկեպղինձի նման են . 19 - Գիտեմ՝ քու գործերդ և սէրդ ու ծառայութիւնդ , և քու հաւատքդ ու համբերութիւնդ , և թէ քու վերջին գործերդ աւաջին .

նրէն շտա են : 20 - Բայց քեզի դէմ՝ *բան մը՝ ունիմ , որ թող կու տաս Յեզարէլ կինը , որ ինքզինք մարգարէութիւն կ'անուանէ , ու իմ ծառաներս մալքրեցնելով՝ կը սարվեցնէ պառնկութիւն ընել և կուռքերու զոհուածներ ուտել : 21 - Եւ ես անոր ժամանակ տուի իր պառնկութեանը վրայ ապաշխարելու , ու չապաշխարեց : 22 - Ահա ես զանիկա անկողին պիտի ձգեմ , ու անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ , եթէ իրենց գործերուն վրայ չապաշխարեն : 23 - Եւ անոր վաւակները մահով պիտի սպաննեմ . ու բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ երկամունքները ու սիրտերը կը քննեմ . և ամէն մէկուդ ձեր գործերուն համեմատ պիտի հատուցանեմ : 24 - Բայց ձեզի կ'ըսեմ միւսներուդ որ Թիւատիրի մէջ էք , ու այս վարդապետութիւնը չունիք , որ չճանչցաք Սատանայի խորունկ բաները , (ինչպէս կ'ըսեն ,) Ձեր վրայ ուրիշ ծանրութիւն չեմ՝ ձգեր . 25 - Հապա զայն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ : 26 - Եւ ան որ կը յաղթէ ու իմ գործերս մինչև վերջը կը պահէ , անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ , 27 - (Եւ պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով . անոնք բրուտի ամաններու պէս պիտի փշրուին .) 28 - Ինչպէս ես ալ իմ Հօրմէս առի . ու անոր պիտի տամ աւաւտեանասաղը : 29 - Ան որ ահանջ ունի , թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն :

ԳԼ . Գ

Եւ Սարգիկէի մէջեղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ անիկա որ ունի Սատուծոյ եօթը Հոգիները ու եօթը աստղերը . Գիտեմ՝ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի ես , ու մեռած ես : 2 - Արթուն կեցիր և հաստատէ մնացած բաները որոնք մեռնելու վրայ են , վասն զի քու գործերդ Ասատուծոյ առջև կատարեալ չգտայ : 3 - Հիմա միտքդ բեր թէ ի՛նչպէս ընդունեցիր ու լսեցիր , ու պահէ և ապաշխարէ . բայց եթէ արթննալու չըլլաս , գոյի պէս քու վրագ պիտի գամ , ու բնաւ պիտի չգիտնաս թէ ո՛ր

*Ռանգ , քիչ մը բան

Ժամունք քու վրադ պիտի գամ : 4 - Սակայն քանի մը անձեր ունին՝ Սարգիկէի մէջ, որոնք իրենց հանդերձները չաղատեցին, և ճերմակներով պիտի պտրաին ինծի հետ, քանզի արժանի են : 5 - Ան որ կը յաղթէ՝ ճերմակներ պիտի հագնի, ու ես անոր անունը կենաց գիրքէն պիտի չաւրեմ : և անոր անունը պիտի գաւանդիմ իմ Հօրս առջև ու անոր հրեշտակներուն առջև : 6 - Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն :

7 - Եւ Փիղագեղփոյի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ այն Սուրբը, այն ճշմարիտը որ Գաւթի բանալին ունի . կը բանայ ու մէ'կը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու մէ'կը չկայ որ բանայ . 8 - Գիտեմ՝ քու գործերդ . ահա քու առջևդ բացուած դուռ մը դրի, զոր մէ'կը չկրնար գոցել . վասն զի դուն քիչ մը կարողութիւն ունիս, և իմ խօսքս պահեցիր ու իմ անունս չուրացար : 9 - Ահա ես քեզի կու տամ՝ Սատանայի ժողովքէն եղողները, որոնք կ'ըսեն թէ իրենք Հրեայ են ու չեն, հապա սուտ կ'ըսեն . ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան ու երկրպագութիւն ընեն քու ոտքերուդ առջև, և ճանչնան թէ ես քեզ սիրեցի : 10 - Որովհետեւ իմ համբերութեանս խօսքը պահեցիր, ես ալ քեզ պիտի պահեմ՝ փորձութեան ժամանակ, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրի երեսը բնակողները փորձելու համար : 11 - Ահա ես շուտով կու գամ . ունեցածդ առէ, որպէս զի մէ'կը չառնէ քու պտակդ : 12 - Ան որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյս տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու ալ դուրս պիտի չեղլէ . և անոր վրայ իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի, որ երկինքէն իմ Աստուծմէս կ'իջնէ, և իմ նոր անունս . 13 - Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն :

14 - Եւ Լաւողիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ ու ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը . 15 - Գիտեմ՝ քու գործերդ, որ ոչ պաղ ես ու ոչ տաք . երանի՛ թէ պաղ ըլլայիր կամ տաք : 16 - Ուստի դուն որ գաղջ ես, ու ոչ տաք՝ ոչ ալ

պաղ, քեզ բերնէս դուրս փոխելու վրայ եմ . 17 - Քանզի կ'ըսես, ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը կարօտ չեմ . ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես, և աղքատ ու կոյր ու մերկ : 18 - Ես քեզի խորհուրդ կու տամ . ինձմէ կրակի մէջ փորձուած սակի ծախու առ, որպէս զի հարստանաս, ու ճերմակ հանդերձներ՝ որպէս զի հագնիս, որպէս զի քու ամօթալի մերկութիւնդ չերևայ . և աչքերդ դեղ գիր որպէս զի աեանես : 19 - Ես իմ ամէն սիրածս կը յանդիմանեմ ու կը խրատեմ . ուստի նախանձաւոր եղիր ու ապաշխարէ : 20 - Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ . եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ և անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ : 21 - Ան որ կը յաղթէ, ինծի հետ իմ աթոռս նստել պիտի տամ անոր, ինչպէս ես ալ յաղթեցի ու իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ : 22 - Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն :

ԳԼ Գ

Այս բաներէն ետքը տեսայ, և ահա երկինքի մէջ բացուած դուռ մը կար, և առաջին ձայնը զոր լսեցի՝ փողի նման էր, որ ինծի հետ կը խօսէր ու կ'ըսէր . Հոս ելիր ու սակէ ետքը ըլլալու բաները քեզի ցուցնեմ : 2 - Եւ շուտ մը Հոգին իմ վրաս եկաւ . և ահա աթոռ մը դրուած էր երկինքի մէջ . 3 - Ու աթոռին վրայ մէկը նստեր էր . և նստողը յասպիս ու սարգիոն քարերու երեսութիւն նման էր : 4 - Եւ աթոռին բոլորափքը ծիածան՝ զմրուխտի երևութի նման . ու աթոռին բոլորափքը քսանըչորս աթոռներ, և այն աթոռներուն վրայ քսանըչորս երէցներ՝ նստեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած, ու գլուխնին սակիէ պսակներ առնէին : 5 - Եւ աթոռէն փայլակներ ու ձայներ և որոտումներ կ'եղլէին, ու աթոռին առջև եօթը հաս բորբոքած կրակի դամբարներ կային . որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են : 6 - Եւ աթոռին առջև իրբև ապակեղէն ծով մը՝ ակնվանի նման, և աթոռին մէջ ու աթոռին

*Պատմ., նստած տեսայ

բոլորտիքը՝ չորս կենդանիներ , որոնք աչքերով լեցուն էին առջևէ ու ետեւէ : 7 - Եւ առաջին կենդանին առիւծի նման էր , ու երկրորդ կենդանին՝ զուարակի նման , և երրորդ կենդանին մարդու երես ունէր , ու չորրորդ կենդանին՝ թռչող արծիւի նման : 8 - Եւ չորս կենդանիներուն ամէն մէկը շուրջանակի վեց վեց թև ունէր , ու ներսէն աչքերով լեցուն էին . ու չէին հանգչեր ոչ ցորեկը ոչ ալ գիշերը՝ ըսելով , Սուբբ , Սուբբ , Սուբբ Տէր Աստուած Ամենակալ , որ էր և որ է և որ պիտի գայ : 9 - Ու երբ այն կենդանիները փառք ու պատիւ և գոհութիւն կուտային աթուին վրայ նստողին , որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից . 10 - Քսանրչորս երէցները աթուին վրայ նստողին առջև կ'իյնային ու երկրպագութիւն կ'ընէին յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին , և իրենց պատկները աթուին առջև կը ձգէին՝ ըսելով , Արժանի ես , Տէր , փառք ու պատիւ և զօրութիւն առնելու , վասն զի ամէն բան դուն ստեղծեցիր , և քու կամքովդ եղան ու ստեղծուեցան :

ԳԼ. Ե

Եւ աթուին վրայ նստողին աջ ձեռքը գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրուած , և եօթը կնիքով կնքուած : 2 - Ու զօրաւոր հրեշտակ մը տեսայ՝ որ մեծ ձայնով կը կանչէր , Ո՞վ արժանի է այդ գիրքը բանալու և ատար կնիքները քակելու : 3 - Եւ ոչ երկինքի մէջ , ոչ երկրի վրայ ու ոչ երկրի սակ չ'ուրեցա՝ մէկը՝ որ կարող ըլլար այն գիրքը բանալ , ոչ ալ անոր նայելու : 4 - Ես ալ սաստիկ կուլայի՝ որ մէկը արժանի չգտնուեցաւ այն գիրքը բանալու* , ոչ ալ անոր նայելու : 5 - Ու երէցներէն մէկը ըսաւ ինծի , Մի լար . ահա Յուդայի ցեղէն եղող Աւիււքը , Գաւթի Սրմաար , յաղթեց այն գիրքը բանալու ու անոր եօթը կնիքները քակելու : 6 - Եւ տեսայ որ աթուին ու չորս կենդանիներուն մէջտեղ և երէցներուն մէջտեղ կայնած Գառնուկ մը կար , որպէս թէ մարթուած , որ եօթը եղջիւր ու եօթը աչք ունէր , որոնք Աստուծոյ եօթը Հո-

գիներն են՝ որ բոլոր երկիր կը զրկուին : 7 - Եւ անիկա եկաւ ու աթուին վրայ նստողին աջ ձեռքէն գիրքը առաւ : 8 - Ու երբ գիրքը առաւ , չորս կենդանիները ու քսանրչորս երէցները Գառնուկին առջև ինկան , և ամէնն ալ քնարներ ունէին , ու սկիւէ ինկամաններ՝ խուկով լեցուն , որ սուրբերուն աղօթքն է : 9 - Եւ նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով , Արժանի ես դուն այդ գիրքը առնելու և ատար կնիքները բանալու . վասն զի մարթուեցար , ու մեզ ծախու առիր Աստուծոյ՝ քու արիւնովդ ամէն ցեղէ ու լեզուէ և ժողովուրդէ ու ազգէ . 10 - Եւ *մեզ մեր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրիր , ու երկրի վրայ պիտի թագաւորենք : 11 - Եւ նայեցայ՝ ու շատ հրեշտակներու ձայն լսեցի , որոնք աթուին ու կենդանիներուն և երէցներուն բոլորտիքն էին . ու անոնց թիւն էր բիւրք բիւրուց և հազարք հազարաց . 12 - Որոնք մեծ ձայնով կ'ըսէին , Այդ մարթուած Գառնուկը արժանի է զօրութիւն ու հարստութիւն և իմաստութիւն ու կարողութիւն և պատիւ ու փառք և օրհնութիւն առնելու : 13 - Եւ բոլոր արարածները , որ երկինքի մէջ ու երկրի վրայ ու երկրի սակ և ծովու մէջ , ու ամէն ինչ որ անոնց մէջ կայ՝ լսեցի որ կ'ըսէին , Աթուին վրայ նստողին և Գառնուկին օրհնութիւն ու պատիւ և փառք ու զօրութիւն յաւիտեանս յաւիտենից : 14 - Եւ չորս կենդանիները կ'ըսէին , Ամէն . ու քերէցները ինկան ու երկրպագութիւն ըրին :

ԳԼ. Զ

Եւ տեսայ , երբ Գառնուկը Տնիքներէն մէկը՝ բացաւ , ու չորս կենդանիներուն մէկէն որստուծի պէս ձայն մը լսեցի որ կ'ըսէր , Եկուր ու տես : 2 - Ու տեսայ , և ահա ճերմակ ձի մը , ու անոր վրայ հեծնողը աղեղ մը ունէր . և պսակ մը արուեցաւ անոր , և անի-

*Ո՞ւնէ , ասոնք
 †Ո՞ւնէ , թագաւորեն
 ‡Ո՞ւնէ , քսանրչորս երէցները
 ||Ո՞ւնէ + !՝-եւրոն , յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին
 §Ո՞ւնէ , եօթը կնիքները

*Ո՞ւնէ + !՝-եւրոն , և կարգալու

կա յաղթող էր ու յաղթելու ելաւ :

3 - Աւ երբ երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, *Եկուր: 4 - Եւ ուրիշ ձի մը ելաւ շառագոյն, ու անոր վրայ հեծնողին էջառնաւ: Եւ արուեցաւ որ երկրէ խաղաղութիւնը առնէ, որպէս զի իրար սպաննեն. ու անոր մեծ սուր մը արուեցաւ:

5 - Աւ երբ երրորդ կնիքը բացաւ, երրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես. ու տեսայ, և ահա սև ձի մը, ու անոր վրայ հեծնողը իր ձեռքը կշիւ մը ունէր: 6 - Աւ չորս կենդանիներուն մէջէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Կապիճ՝ մը ցորենը մէկ գահեկանի, ու երեք կապիճ գարին մէկ գահեկանի. և ձէթին ու գինիին փնտս չընես:

7 - Աւ երբ չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կենդանիէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես: 8 - Աւ տեսայ, և ահա դեղին ձի մը, ու անոր վրայ հեծնողին անունը Մահ էր, և Դժոխքը անոր ետեւէն կ'երթար. ու անոնց իշխանութիւն արուեցաւ երկրի չորրորդ մասին վրայ, որ սրով ու սովով և մահով ու երկրի գազաններով սասկեցընեն:

9 - Աւ երբ հինգերորդ կնիքը բացաւ, սեղանին տակ տեսայ այն մարդոց հագինները, որոնք սպաննուած էին Աստուծոյ խօսքին համար, ու անոր վկայութեանը համար՝ զոր իրենք ունէին:

10 - Եւ մեծ ձայնով աղաղակեցին ու ըսին, Ով սուրբ ու ճշմարիտ Տէր, մինչև ե՞րբ չես դատեր ու մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր:

11 - Եւ ճերմակ հանդերձներ արուեցան անոնց, ու ըսուեցաւ անոնց որ քիչ մը տատեն ալ հանգչին, մինչև անոնց ծառայակիցները ու անոնց եղբայրները լման ըլլան, որոնք իրենց պէս պիտի սպաննուէին:

12 - Եւ տեսայ, երբ վեցերորդ կնիքը բացաւ, ու մեծ շարժ մը եղաւ, ու արևը սեցաւ մտղեղէն քուրձի մը պէս, և լուսինը [բոյրտօյին] արիւնի պէս եղաւ:

13 - Աւ երկինքի աստղերը գեղանք թափթփեցան, ինչպէս աստիկ հովէն շարժուած թղենին իր ահաս պատուէները կը թափէ. 14 - Եւ երկինք գա-

լարուող սամսի մը պէս կը քաշուէր. ու բոլոր լեռները և կղզիները իրենց տեղերէն շարժեցան: 15 - Աւ երկրի թագաւորները և մեծամեծները ու հարուստները, հազարապետները և զորաւորները, ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները այրերուն և լեռներու ապառաժներուն մէջ պահուեցան. 16 - Եւ լեռներուն ու ապառաժներուն կ'ըսէին, Մեր վրայ ինկէք ու մեզ ծածկեցէք անոր երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին բարկութեանէն: 17 - Վասն զի անոր բարկութեանը մեծ օրը եկաւ, և ո՞վ կրնայ դիմանալ:

ԳԼ Է

Եւ անկէ ետև տեսայ չորս հրեշտակներ՝ որոնք երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու երկրի չորս հովերը բռներ էին, որպէս զի երկրի վրայ հով չփչէ, ու ոչ ծովու վրայ, ոչ ալ ծառի մը վրայ: 2 - Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արևելքէն ելաւ, ու Կենդանի Աստուծոյ կնիքը սնէր. և մեծ ձայնով մը աղաղակեց այն չորս հրեշտակներուն, որոնց էջառնաւ արուած էր երկրի ու ծովուն փնտսելու, 3 - Աւ ըսաւ, Երկրի փնտս մի ընէք, ոչ ծովուն, ոչ ալ ծառերուն, մինչև մեր Աստուծոյն ծառաներուն ճակատները կնքենք: 4 - Եւ կնքուածներուն համարանքը լսեցի՝ որ էր հարիւր քառասունչորս հազար՝ Իսրայէլի որդիներուն բոլոր ցեղերէն կնքուած. 5 - Յուդայի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Ռուբէնի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Գադի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Սաբրի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Նեփթալիմի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Մանասէի ցեղէն՝ ատասերկու հազար կնքուած, 7 - Շմաոնի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Դեբի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Իսաքարի ցեղէն ատասերկու հազար կնքուած, 8 - Զարուզանի ցեղէն ատասերկու հազար կնքուած, 3ովսեփի ցեղէն ատասերկու հազար կնքուած, Բենիամինի ցեղէն ատասերկու հազար կնքուած:

9 - Ասկէ ետքը տեսայ, և ահա մեծ բազմութիւն՝ զոր մէ'կը չէր կրնար

*Ո՛հնո, Էկուր ու տես

Համբերել, բոլոր ազգերէն ու ցեղերէն և ժողովուրդներէն ու լեզուներէն, որոնք աթոռին առջև ու Գառնուակին առջև կեցեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած և ձեռքերնին արմուեաններ բռնած. 10 - Եւ մեծածայն կ'ազազակէին ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուակին: 11 - Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն և չորս կենդանիներուն բոլորախփր կեցեր էին, ու իրենց երեսներուն վրայ աթոռին առջև ինկան ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին, 12 - Ըսելով, Ամէն. օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յաւիտենից: Ամէն: 13 - Աւ երէցներէն մէկը պատասխան տալով ինծի ըսաւ, Ասոնք որ ճերմակ հանդերձներ հագած են՝ սով են, և ուրկէ՞ եկան: 14 - Ես ալ ըսի անոր, Տէր իմ, դուն գիտես. ու ըսաւ ինծի, Ասոնք են մեծ նեղութենէ եկողները, որոնք իրենց հանդերձները լուացին, ու զանոնք Գառնուակին արիւնովը ճերմակցուցին. 15 - Անոր համար Աստուծոյ աթոռին առջև են, և իրեն կը ծառայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէջ. և աթոռին վրայ նստողը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ: 16 - Այսուհետև ոչ պիտի անօթեանն ու ոչ ծարաւին, ոչ ալ արևը կամ տաքութիւն մը անոնց վրայ պիտի իյնայ. 17 - Վասն զի Գառնուակը որ աթոռին մէջ է, պիտի հովուէ զանոնք, ու կենդանի ջուրերու աղբիւրները պիտի առաջնորդէ զանոնք. և Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն:

ԳԼ. Ը

Աւ երբ եօթներորդ կնիքը բացաւ, լուսութիւն եղաւ երկինքը կէս ժամուշտի:

2 - Եւ տեսայ այն եօթը հրեշտակները, որոնք Աստուծոյ առջև կը կայնէին. ու անոնց եօթը փող տրուեցաւ:

3 - Եւ ուրիշ հրեշտակ մը եկաւ սեղանին առջև կայնեցաւ, ու սակեղէն խնկանոց մը ունէր. և իրեն շատ խուճիկ տրուեցաւ, որպէս զի բոլոր սրբոց ազօթքներուն հետ աթոռին առջև եղող

սակի սեղանին վրայ մնառուցանէ: 4 - Եւ խուճիկերուն ծուխը սրբոց ազօթքներուն հետ հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջև ելաւ: 5 - Աւ հրեշտակը առաւ խնկանոցը ու զանկա սեղանին կրակէն լեցուց, և ձգեց երկրի վրայ. ու եղան ձայներ և սրտաւմներ ու փայլակներ ու երկրաշարժ: 6 - Եւ եօթը հրեշտակները, որոնք եօթը փողերը ունէին, պատրաստուեցան որ հնչեցնեն:

7 - Եւ առաջին հրեշտակը փողը հնչեցուց, ու եղաւ կարկուտ ու կրակ արիւնով խառնուած, ու երկրի վրայ ձգուեցաւ, [ու երկրի երրորդ մասը այրեցաւ,] և ծառերուն երրորդ մասը այրեցաւ, ու ամէն կանանչ խոտ այրեցաւ:

8 - Աւ երկրորդ հրեշտակը փողը հնչեցուց, և որպէս թէ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ ծովը ձգուեցաւ, ու ծովուն երրորդ մասը արիւն եղաւ. 9 - Եւ ծովուն մէջի շնչաւոր արարածներուն երրորդ մասը մեռաւ, ու նաւերուն երրորդ մասը կորսուեցաւ:

10 - Աւ երրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու երկինքէն մեծ աստղ մը ինկաւ զամբարի պէս բորբոքած, և գետերուն ու ջուրի աղբիւրներուն երրորդ մասին վրայ ինկաւ: 11 - Եւ այն աստղին անունը Օշինդր էր. ու ջուրերուն երրորդ մասը օշինդր եղաւ, և շատ մարդիկ ջուրերէն մեռան, քանզի դառն եղան:

12 - Եւ չորրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու արևին երրորդ մասը և լուսնին երրորդ մասը ու աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ, այնպէս որ անոնց երրորդ մասը խուարի, և օրուան երրորդ մասը լոյս չտայ, նոյնպէս ալ գիշերուանը:

13 - Եւ նայեցայ՝ ու երկինքի մէջ թռչող *հրեշտակի մը շարժ լսեցի, որ մեծ ձայնով կ'ըսէր, Վա՛յ, վա՛յ, վա՛յ երկրի վրայ բնակողներուն՝ այն մնացած փողի ձայներուն համար, զորոնք երեք հրեշտակները պիտի հնչեցնեն:

ԳԼ. Թ

Եւ հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու տեսայ որ երկինքէն աստղ

*Ո՛հնչ, արծիւի

մը ինկաւ երկրի վրայ . և անդունդի գուբին բանալին անոր արուեցաւ . 2 - Ու անդունդին գուբը բացաւ, ու այն գուբէն ծուխ կ'ելլէր մեծ հնացի մը ծուխին պէս . ու խաւարեցաւ արևը ու օդը գուբին ծուխէն :

3 - Եւ ծուխէն մարտիներ կ'ելլէին երկրի վրայ , ու անոնց զօրութիւն արուեցաւ երկրի կարիճներուն ունեցած զօրութեանը պէս . 4 - Եւ անոնց ըսուեցաւ որ չփաստեն երկրի խոտին , ոչ ալ կանանչեղէնի մը և ոչ ծառի մը , հապա միայն այն մարդոց , որոնք իրենց ճակատներուն վրայ Աստուծոյ կնիքը չունին : 5 - Եւ անոնց հրաման արուեցաւ որ չսպաննեն զանոնք , հապա չարչարեն զանոնք հինգ ամիս . ու անոնց *--* չարչարանքը կարիճի *--* չարչարանքին պէս էր՝ երբ մարդը կը զարնէ : 6 - Եւ այն օրերը մարդիկ մասը պիտի փնտռեն ու պիտի չգանեն . և պիտի ուզեն մեռնիլ , ու մասը անոնցմէ պիտի փախչի : 7 - Եւ մարտիներուն նմանութիւնը՝ պատերազմի պատրաստուած ձիերու պէս , ու անոնց գլուխներուն վրայ *սկեղէն պատկներու պէս , և անոնց երեսները մարդոց երեսներու պէս էին . 8 - Ու անոնք մտեր ունէին կիներու մտերուն պէս , ու անոնց սկուաները առիւծներու *--* պէս էին : 9 - Եւ զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս . ու անոնց թևերուն ձայնը պատերազմի վազող շատ ձիեր *--* կառքերու ձայնին պէս էր : 10 - Եւ կարիճներու նման պոչեր ունէին , ու պոչերնուն վրայ խայթոց . և իշխանութիւն ունէին հինգ ամիս մարդոց փնտալու : 11 - Եւ իրենց վրայ թագաւոր ունէին անդունդին հրեշտակը , որուն անունը Եբրայեցիքէն †Աւրադան , և Յոյն լեզուով կ'ըսուի ‡Ապոլլոն : 12 - Մէկ վայր անցաւ . ապէ ետեւ հաս երկու վայր ալ կու գան :

13 - Եւ վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց , ու ձայն մը լսեցի Աստուծոյ առջև եզոզ սկի սեղանին չորս եղջիւրներէն , 14 - Որ կ'ըսէր վեցերորդ հրեշտակին որ փողը ունէր , Եփրատ մեծ գետին վրայ կապուած չորս հրեշտակները արձակէ : 15 - Եւ այն չորս

հրեշտակները արձակուեցան , որ պատրաստուած էին ժամի ու օրուան և ամիսի ու տարիի համար , որպէս զի մարդոց երրորդ մասը մեռցնեն : 16 - Եւ ձիաւոր զօրքերուն համրանքը երկու բիւք բիւքուց էր , ու լսեցի անոնց համրանքը : 17 - Եւ տեսիլքին մէջ այսպէս տեսայ ձիերը , ու անոնց վրայ հեծնողները՝ որոնք ունէին հրեղէն ու յակնթեղէն և ծծմբեղէն զրահներ . և ձիերուն գլուխները առիւծներու գլուխներուն պէս էին , ու անոնց բերնէն կրակ ու ծուխ և ծծումբ կ'ելլէր : 18 - Այս երեք [հարուած]ներէն մարդոց երրորդ մասը մեռաւ , այսինքն կրակէն ու ծուխէն ու ծծումբէն , որոնք անոնց բերնէն կ'ելլէին : 19 - Վասն զի *անոնց զօրութիւնը բերաններնուն մէջ է ու պոչերնուն մէջ . քանզի անոնց պոչերը օձերու նման էին , ու գլուխներ ունէին որոնցմով կը փնտալին : 20 - Եւ ուրիշ մարդիկ որոնք այս հարուածներէն չսպաննուեցան , իրենց ձեռքերուն գործերէն չապաշխարեցին , որ երկրպագութիւն չընեն դեւերուն , ու սակիէ և արծաթէ ու պղնձէ և քարէ ու փայտէ շինուած կուռքերուն , որոնք ոչ կրնան տեսնել , ոչ ալ լսել ու ոչ քայլել . 21 - Նաև չապաշխարեցին իրենց մարդասպանութիւններէն , ոչ ալ իրենց կախարչութիւններէն , ոչ ալ իրենց պոռնկութենէն և ոչ իրենց գողութիւններէն :

ԳԼ. Ժ

Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը որ երկինքէն կ'իջնէր , ու ամպ հագած էր և իր գլխուն վրայ ծիածան կար . ու իր երեսը արևի պէս էր , և իր սաքերը՝ կրակի սիւներու պէս . 2 - Եւ իր ձեռքը զբքոյկ մը ունէր բացուած , ու իր աջ սաքը ծովուն վրայ դրաւ , և ձախը՝ ցամաքին վրայ . 3 - Եւ մեծ ձայնով աղաղակեց առիւծի մը գոչելուն պէս . ու երբ աղաղակեց , եօթը սրտաւմները իրենց ձայներովը խօսեցան : 4 - Ու երբ եօթը սրտաւմները †խօսեցան , պիտի գրէի . ու երկինքէն ձայն մը լսեցի որ ‡կ'ըսէր , Կնքէ այն բաները

*Ո՛հնէ+ , սակիի նման
†Այսինքն , կորուսիչ
‡Այսինքն , կորուսիչ

*Ո՛հնէ+ , այն ձիերուն
†Ո՛հնէ+ , իրենց ձայներովը խօսեցան
‡Ո՛հնէ+ , ինձ կ'ըսէր

զորոնք եօթը որսառւմները խօսեցան ,
 ու զանոնք մի գրեր : 5 - Եւ այն չրեշ-
 տակը զոր ծովուն վրայ ու ցամաքին
 վրայ կայնած տեսայ , իր [աջ] ձեռքը
 երկինք վերցուց . 6 - Ու երգում ըրաւ
 յաւիտեանս յաւիտենից Կենդանի ե-
 ղողին վրայ , որ ստեղծեց երկինքը ու
 ինչ որ անոր մէջ է , ու երկիրը և ինչ
 որ անոր մէջ է , և ծովը ու ինչ որ ա-
 նոր մէջ է , թէ ո՛ր ժամանակ պիտի
 չըլլայ : 7 - Հապա եօթներորդ չրեշ-
 տակին ձայնին օրերը՝ երբ փողը հնչե-
 ցրնէ , Աստուծոյ խորհուրդը պիտի կա-
 տարուի , ինչպէս իր ծառաներուն ,
 մարգարէներուն , աւետիս տուաւ :

8 - Եւ այն ձայնը զոր երկինքէն
 լսեցի , նորէն խօսեցաւ ինծի ու ըսաւ ,
 Գնա առ այն բաց գրքայկը՝ որ ծովուն
 ու ցամաքին վրայ կայնող հրեշտակին
 ձեռքն է : 9 - Ես ալ հրեշտակին գացի
 ու ըսի անոր , Տուր ինծի այդ գրքայկը .
 ու ըսաւ ինծի , Առ տակա ու կեր . և
 քու փորիդ մէջ դառնաւ թիւն պիտի
 պատճառէ , բայց բերնիդ մէջ մեղրի
 պէս անոյշ պիտի ըլլայ : 10 - Եւ գրք-
 քայկը հրեշտակին ձեռքէն սառի ու
 կերայ զանիկա . և իմ՝ բերնիս մէջ
 մեղրի պէս անոյշ էր , և ուտելէս ետ-
 քը փորիս մէջ դառնաւ թիւն եղաւ :
 11 - Ու ըսաւ ինծի , Պէտք է որ դուն
 նորէն մարգարէութիւն ընես շատ ժո-
 ղովուրդներու և ազգերու ու լեզուե-
 րու և թագաւորներու *վրայով :

ԳԼ. ԺԱ.

Եւ ինծի եղէգ մը արուեցաւ գա-
 ւազանի պէս , և հրեշտակը կայներ էր
 ու կ'ըսէր , Ելիք ու չափէ Աստուծոյ
 տաճարը ու սեղանը , և անոր մէջ եր-
 կրրպագութիւն ընողները : 2 - Ու գա-
 ւիթը որ տաճարին դուրսն է , ձգէ և
 մի չափեր , վասն զի անիկա հեթանոս-
 ներուն արուած է , ու անոնք սուրբ
 քաղաքը պիտի կոխկռտեն քառասուն-
 ուերկու տարի : 3 - Եւ իմ՝ երկու վկա-
 ներուս զբռնելով պիտի տամ , և անոնք
 քուրձ հագած հազար երկու հարիւր
 ու վաթսուս օր մարգարէութիւն պի-
 տի ընեն : 4 - Ասոնք այն երկու ձիթե-
 նիները ու երկու աշտանակներն են ,
 որոնք երկրի Տէրոջը առջև կը կենան :

*Կամ, առջև

5 - Եւ եթէ մէկը ուզէ անոնց փնտ-
 րել , անոնց բերաններէն կրակ կ'ելլէ ,
 ու իրենց թշնամիները կ'ուտէ . և եթէ
 մէկը ուզէ անոնց փնտ րել , պէտք է
 որ անիկա այսպէս սպաննուի . 6 - Ասոնք
 իշխանութիւն ունին երկինքը գոցելու ,
 սրպէս զի իրենց մարգարէութեան օրե-
 րը անձրև չգայ , ու ջուրերուն վրայ
 իշխանութիւն ունին՝ զանոնք արիւն
 դարձնելու , և ամէն կէրդ պատուհաս-
 ներով երկիրը զարնելու՝ քանի անգամ
 որ ուզեն : 7 - Ու երբ իրենց վկայու-
 թիւնը կատարեն , այն ատեն անգուն-
 դէն ելլող գազանը անոնց հետ պատե-
 րազով՝ պիտի ընէ , և անոնց պիտի յաղ-
 թէ ու պիտի սպաննէ զանոնք : 8 - Եւ
 անոնց դիերը ինչպէ՞ պիտի ճանայն մեծ
 քաղաքին հրապարակին մէջ , որ հո-
 գևորապէս կ'ըսուի Սոգոմ՝ ու Եգիպ-
 տոս ; ուր *մեր Տէրն ալ խաչուեցաւ :
 9 - Եւ ժողովուրդներէն ու ցեղերէն և
 լեզուներէն ու ազգերէն պիտի տեսնեն
 անոնց դիերը երեք ու կէս օր . ու թող
 պիտի չտան անոնց դիերը գերեզման-
 ներու մէջ թաղել : 10 - Եւ անոնք որ
 երկրի վրայ կը բնակին , ուրախ պիտի
 ըլլան ու խնդան անոնց վրայ , մինչև
 անգամ իրարու ընծաներ պիտի զրկեն .
 վասն զի այս երկու մարգարէները երկ-
 րի բնակիչները չարչարեցին :

11 - Եւ երեք ու կէս օրէն ետև Աս-
 տուծմէ կենդանութեան հոգի մտաւ
 անոնց մէջ , ու իրենց ոտքերուն վրայ
 կայնեցան . և զանոնք տեսնողներուն
 վրայ մեծ վախ ինկաւ : 12 - Ու երկին-
 քէն մեծ ձայն մը լսեցին , որ կ'ըսէր
 անոնց , Վեր ելէք , հոս եկէք . և անոնք
 ամպով երկինք վերացան , ու անոնց
 թշնամիները զանոնք տեսան : 13 - Եւ
 նոյն ժամուն մեծ երկրաշարժ մը եղաւ ,
 ու քաղաքին տասներորդ մասը կործա-
 նեցաւ , և այն երկրաշարժէն եօթը հա-
 զար մարդիկ մեռան , ու մնացածները
 վախով լեցուեցան ու փառք տուին
 երկնից Աստուծոյն : 14 - Երկրորդ վայր
 անցաւ . ահա երրորդ վայր շուտով
 կու գայ :

15 - Ու եօթներորդ հրեշտակը փողը
 հնչեցուց . ու երկինքի մէջ մեծ ձայ-
 ներ եղան որ կ'ըսէին , Աշխարհի թա-
 գաւորութիւնները մեր Տէրոջը ու իր
 Օծեալինը եղան , և ինք պիտի թագա-

*Ո՛րտէր, իրենց †Ո՛րտէր, լսեցի

ւորէ յաւիտեանս յաւիտենից : 16 - Եւ քոանըչորս երէցները որոնք իրենց աթոռներուն վրայ նստած էին Աստուծոյ առջև, իրենց երեսներուն վրայ ինկան և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով, 17 - Քեզի գոհութիւն կը մատուցանենք, Ամենակալ Տէր Աստուած, որ ես և որ էիր*, որ քու մեծ զօրութիւնդ առիր ու թագաւորեցիր : 18 - Եւ ազգերը բարկացան . ու քու բարկութիւնդ եկաւ, և մեռելներուն ժամանակը՝ որպէս զի դատուին, ու վարձք տաս քու ծառաններուդ, մարգարէներուն, և սուրբերուն ու քու անունէդ վախցողներուն, պղտիկներուն ու մեծերուն, և երկրի ապակաւնիչները ապականես :

19 - Ու երկինքի մէջ Աստուծոյ տաճարը բացուեցաւ, և †անոր ուխտին տապանակը իր տաճարին մէջ երևցաւ . ու եղան փայլակներ ու ձայներ և սրտաւմներ ու երկրաշարժ և խոշոր կարկուտ :

ԳԼ ԺԲ

Ու երկինքի մէջ մեծ նշան մը երևցաւ . կին մը արևը իր վրայ առած, ու լուսինը իր ստքերուն տակ . և իր գլխուն վրայ տասուերկու աստղէ պսակ մը . 2 - Եւ յղի էր, ու երկունքի մէջ ըլլալով և ծնանելու համար շատ նեղութիւն քաշելով՝ կը պուար :

3 - Ու երկինքի մէջ ուրիշ նշան մը երևցաւ, և ահա մեծ շառագոյն վիշապ մը, որ եօթը գլուխ ու տասը եղջիւր ունէր, և իր գլուխներուն վրայ եօթը թագ : 4 - Եւ անոր պոչը երկինքի աստղերուն երրորդ մասը կը քաշէր, ու զանոնք երկրի վրայ ձգեց . և վիշապը կեցեր էր այն կնոջ առջև որ ծնանելու վրայ էր, որպէս զի երբ ծնանի, անոր զուակը կլլէ : 5 - Ու կնոջ արու զուակ մը ծնաւ, որ երկաթէ գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը . և անոր զուակը յափշտակուեցաւ Աստուծոյ քով ու անոր աթոռին քով : 6 - Եւ կինը անապատը փախաւ, ուր անոր տեղ պատրաստուած էր Աստուծոյ, որպէս զի հոն կերակրուի հազար երկու հարիւր ու վաթսուս օր :

*Ո՛հան+, Կ'ու-ելցնէն, և որ պիտի գաս †Ո՛հան+, Տէրոջը

7 - Ու երկինքի մէջ պատերազմ եղաւ . Միքայէլ ու իր հրեշտակները վիշապին հետ պատերազմեցան . վիշապն ալ իր հրեշտակներովը պատերազմեցաւ . 8 - Ու չկրցան դէմ՝ կենալ, ու երկինքի մէջ ա՛լ տեղ չգանուեցաւ անոնց : 9 - Եւ վա՛ր ձգուեցաւ մեծ վիշապը, այն առաջուան օձը որ Բանասարկու ու Սատանայ կ'ըսուի, որ բուլը աշխարհ մնորեցուց . ու իր հրեշտակները իրեն հետ վա՛ր ձգուեցան երկրի վրայ : 10 - Եւ մեծ ձայն մը լսեցի երկինքի մէջ՝ որ կ'ըսէր, Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւնը ու զօրութիւնը և թագաւորութիւնը, ու անոր Օծեալին իշխանութիւնը . վասն զի մեր եղբայրներուն դէմ՝ չար խօսողը վար ձգուեցաւ, որ անոնց դէմ՝ չարախօսութիւն կ'ընէր մեր Աստուծոյն առջև ցորեկ ու գիշեր : 11 - Եւ անոնք անոր յաղթեցին Գառնուկին արիւնովը, ու իրենց վկայութեանը խօսքովը . և իրենց կեանքը չսիրեցին մինչև ի մահ : 12 - Ասոր համար ուրախացէք, ով երկինք ու անոր մէջ բնակողներ . վա՛յ երկրի ու ծովու*, վասն զի Բանասարկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ գիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ :

13 - Ու երբ վիշապը տեսաւ որ ինք երկրի վրայ ձգուեցաւ, արու զուակ ծնանող կնոջ հակէն ինկաւ : 14 - Եւ այն կնոջ մեծ արծիւի երկու թեւեր արուեցան, որպէս զի անապատ իր տեղը թռչի, ուր պիտի կերակրուէր ժամանակ ու ժամանակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն : 15 - Եւ օձը իր բերնէն գետի պէս ջուր վազցուց կնոջ ետևէն, որպէս զի զանիկա հեղեղով ընկղմէ : 16 - Ու երկիր օգնեց կնոջը . ու երկիր իր բերանը բացաւ և կլլեց այն գետը զոր վիշապը իր բերնէն վազցուց : 17 - Ու վիշապը բարկացաւ կնոջ դէմ, և գնաց պատերազմելու անոր ուրիշ զուակներուն հետ, որոնք Աստուծոյ պատուիրանքները կը պահէին, ու †Յիսուսի վկայութիւնը ունէին :

18 - Եւ †կայնեցայ ծովուն աւազին վրայ :

*Ո՛հան+, Կ'ու-ելցնէն, բնակիչներուդ †Ո՛հան+, Յիսուս Քրիստոսի ‡Ո՛հան+, կայնեցաւ

ԳԼ. ԺԳ

Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր, և ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր. և անոր եղջիւրներուն վրայ տասը թագ, ու անոր գլուխներուն վրայ հայհոյութեան անուաններ կային: 2 - Եւ այն գազանը զոր տեսայ, ընծունման էր, ու իր սաքերը առջու «+էր» պէս, և իր բերանը առիւծի բերնի պէս. ու վիշապը անոր առաւ իր զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխանութիւն: 3 - Եւ անոր գլուխներէն մէկը մահու շափ վիրաւորուածի պէս էր. ու անոր մահուան վէրքը առողջացաւ. և բոլոր երկիր գազանին ետէն զարմացաւ: 4 - Եւ երկրագագութիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանութիւն տուաւ, ու երկրագագութիւն ըրին գազանին՝ ըսելով, Ո՞վ է այդ գազանին նման. և ո՞վ կրնայ ատոր հետ պատերազմ ընել: 5 - Եւ անոր մեծ բաներ ու հայհոյութիւններ խօսող բերան արուեցաւ. և քառասունուերկու տմիս անոր իշխանութիւն արուեցաւ իր հոգի ընելու: 6 - Ու իր բերանը հայհոյութեամբ Ասատուծոյ գէմ բացաւ, անոր անունը ու անոր խորանը ու երկինքը բնակողները հայհոյելու: 7 - Եւ անոր իշխանութիւն արուեցաւ սուրբերուն հետ պատերազմ ընելու ու անոնց յաղթելու. և անոր իշխանութիւն արուեցաւ բոլոր ցեղերու [և ժողովուրդներու] ու լեզուներու և ազգերու վրայ: 8 - Եւ անոր երկրագագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր մարթուած Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած չեն: 9 - Ով որ ահանջ ունի, թող լսէ: 10 - Ով որ գերութեան քչէ, ինք գերի պիտի տարուի. ով որ սրով սպաննէ, պէտք է որ ինք սրով սպաննուի. հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը:

11 - Եւ ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէ կ'ելլէր, ու գառնուկի նման երկու եղջիւր ունէր, ու կը խօսէր վիշապի պէս: 12 - Եւ առաջին գազանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջև, ու երկիրը † և անոր բնակիչները կը ստիպէր որ երկրագագութիւն ընեն

առաջին գազանին՝ որուն մահուան վէրքը առողջացաւ: 13 - Եւ մեծ նշաններ կ'ընէր, ու մինչև անգամ երկինքէն կրակ կ'իջեցնէր երկրի վրայ մարդոց առջև: 14 - Ու երկրի վրայ բնակողները կը մնարեցնէր այն նշաններով, որ իր ձեռքը արուած էր գազանին առջև ընելու. ու երկրի բնակիչներուն կ'ըսէր որ պատկեր շինեն այն գազանին, որ սրով վիրաւորուած էր ու առողջացաւ: 15 - Եւ իշխանութիւն արուեցաւ անոր, որ գազանին պատկերին հոգի տայ, որպէս զի գազանին պատկերը խօսի, և ով որ գազանին պատկերին երկրագագութիւն չընէ, զանիկա սպաննել տայ: 16 - Եւ կը ստիպէր ամէնը, այսինքն պզտիկները ու մեծերը և հարուստները ու աղքատները և ազատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակատին վրայ գրուած ընգունին. 17 - Եւ որ մէ'կը չկրնայ գնել կամ ծախել, բայց միայն ան՝ որ ունի գրոջմը կամ գազանին անունը կամ անոր անունը թիւր: 18 - Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի, թող հաշուէ գազանին թիւր. քանզի մարդու մը թիւ է, ու անոր թիւը վեց հարիւր վաթսուներկու է:

ԳԼ. ԺԵ

Եւ տեսայ, և ահա Գառնուկը կայներ էր Սիօն լեռանը վրայ, ու անոր հետ հարիւր քառասունըչորս հազարը, որոնք ունէին [անոր անունը և] անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ գրուած: 2 - Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ու մեծ որոտումի ձայնի մը պէս, ու լսած ձայնս քնարահարներուն իրենց քնարները զարնելու ջանի՝ կը նմանէր: 3 - Եւ անոր երգ կ'երգէին աթոռին առջև ու չորս կենդանիներուն ու երէցներուն առջև. և մէ'կը չէր կրնար այն երգը սորվիլ բաց ի այն հարիւր քառասունըչորս հազարէն, որոնք երկրէ գնուած էին: 4 - Ասոնք անոնք են որ կիներու հետ չխառնակեցան, քանզի կոյս են. ասոնք Գառնուկին ետէն կ'երթան՝ ուր որ ան երթայ. ասոնք մարդոց մէջէն գնուեցան Ասատուծոյ ու Գառնուկին երախայրի ըլլալու:

*Ո՞վ է, տեսայ

†Ո՞վ է, և բոլոր

*Ո՞վ է, որպէս թէ նոր

5 - Եւ անոնց բերանը սուտ չգանուեցաւ, վասն զի անբիծ են*:

6 - Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ, որ կը թռչէր երկինքի մէջ, և ունէր յաւիտեանական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որոնք երկրի վրայ կը բնակին: 7 - Եւ մեծ ձայնով կ'ըսէր, Աստուծոյ վախցէք ու փառք տուէք անոր, վասն զի անոր դատաստանին ժամը եկաւ, ու երկրպագութիւն ըրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու ջուրերուն աղբիւրները:

8 - Եւ անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ ու ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ Իֆաբելոն, վասն զի բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պառնկութեանը գինիէն:

9 - Եւ անոնց ետեւէն քերթող հրեշտակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ, Ով որ գազանին ու՝ անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ՝ իր ձեռքին վրայ կ'ընդունի, 10 - Անիկա Աստուծոյ սրամտութեան գինիէն պիտի խմէ, որ անխառն լեցուած է անոր բարկութեանը գաւաթին մէջ, և կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւ ու Գառնուկին առջեւ: 11 - Եւ անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանա յաւիտենից, և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չունին անոնք՝ որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը դրոշմը կ'ընդունին:

12 - Հոս է սուրբերուն համբերութիւնը, և որոնք Աստուծոյ պատուիրանքները ու Յիսուսի հաւատաքը կը պահեն:

13 - Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ որ Տէրը կ'ըսէր, Գրէ՛ք, Այստեղ երանելի են այն մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն, այո, կ'ըսէ Հոգին, որ իրենց աշխատութեան հանգչին, ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան:

14 - Եւ տեսայ, և ահա ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման, և իր

գլուխը սփռէ պսակ մը՝ ու իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր:

15 - Եւ տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելլէր, որ ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'աղաղակէր «- Ի՛շտ, Երկնցուքաւ մանգաղդ ու հնձէ, վասն զի հնձելու ժամանակը *եկաւ, վասն զի երկրի հունձքը հասունցած է: 16 - Եւ ան որ ամպին վրայ կը նստէր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկիրը հնձուեցաւ:

17 - Ու երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, և ասիկա ալ սուր մանգաղ մը ունէր: 18 - Ու սեղանէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, որ կրակի վրայ իշխանութիւն ունէր, ու մեծ ձայնով կանչեց անոր՝ որ սուր մանգաղը ունէր, ու ըսաւ, Երկնցուքաւ սուր մանգաղդ, ու երկրի սյգիին ողկոյզները կ'իծէ, վասն զի անոր խաղողները հասունցած են: 19 - Եւ այն հրեշտակը իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկրի սյգիին Խաղողները կ'իծեց, ու Աստուծոյ բարկութեան մեծ հնձանին մէջ ձգեց: 20 - Եւ հնձանը քաղաքին դուրսը կոխուեցաւ, ու հնձանէն արիւն կ'ելլէր, ու մինչև ձիւրուն սանձերը «- հազար վեց հարիւր ասպարէզ կը հասնէր:

ԳԼ. ԺԵ

Եւ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ երկինքի մէջ, եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը վերջին հարուածները ունէին, որովհետև անոնցմով կը կատարուէր Աստուծոյ բարկութիւնը:

2 - Ու տեսայ որպէս թէ ապակեղէն ծով մը կրակով խառնուած, և անոնք որ յաղթեցին գազանին ու անոր պատկերին և անոր անուան թիւին, ապակեղէն ծովուն վրայ կայներ էին, ու Աստուծոյ քնարները ունէին: 3 - Եւ Աստուծոյ ծառային, Մովսէսի, երգը կ'երգէին, ու Գառնուկին երգը՝ ըսելով, Մեծ ու զարմանալի են քու գործերդ, ով Տէր Աստուած Ամենակալ, արդար ու ճշմարիտ են քու ճամբաներդ, ով Թագաւոր Գորբոս:

4 - Տէր, ո՞վ պիտի չվախնայ քեզմէ, *Ո՛հ, քեզի եկաւ
†Ո՛հ, և անոր դրոշմին և
‡Ո՛հ, ազգաց

*Ո՛հ, և անոր գործերը
†Ո՛հ, և անոր գործերը
‡Ո՛հ, և անոր գործերը
§Ո՛հ, և անոր գործերը

ու քու անունդ չփառաւորէ, վասն զի քոն միայն սուրբ է. քանզի բոլոր ազգերը պիտի գան ու քու առջևդ երկրպագութիւն պիտի բնեն, վասն զի քու արդար գառաստաններդ յայտնուեցան:

5 - Եւ ասկէ ետեւ տեսայ, ու բացուեցաւ վկայութեան խորանին աստուծորը որ երկինքն էր. 6-Ու եօթը հարուածները սենեցող եօթը հրեշտակները մաքուր ու պայծառ կտաւ հագած՝ և իրենց կուրծքերուն վրայովը սկեղէն գօտի կապած՝ տաճարէն ելան: 7 - Եւ չորս կենդանիներէն մէկը եօթը հրեշտակներուն եօթը սկեղէն սկաւառակներ տուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանի եղող Աստուծոյ բարկութիւնովը լեցուն: 8 - Եւ աստուծորը Աստուծոյ փառքէն ու անոր զօրութենէն ծուխով լեցուեցաւ. ու մէկը չէր կրնար աստուծորը մտնել, մինչև կատարուին եօթը հրեշտակներուն եօթը հարուածները:

ԳԼ. ԺԶ

Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ եօթը հրեշտակներուն կ'ըսէր, Գացէք Աստուծոյ բարկութեան [եօթը] սկաւառակները երկրի վրայ թափեցէք:

2 - Եւ առաջին հրեշտակը գնաց ու իր սկաւառակը երկրի վրայ թափեց. ու չորաչար պալարներ եղան այն մարդոց վրայ որոնք գազանին դրոշմը ունէին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէին:

3 - Ու երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծովուն վրայ թափեց, ու ջրերը մեռած մարդոն արիւն դարձան, և ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան:

4 - Ու երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետերուն ու ջուրերու աղբիւրներուն վրայ թափեց, ու անոնք արիւն դարձան: 5 - Եւ ջուրերուն հրեշտակէն լսեցի՝ որ կ'ըսէր, Արդար ես գուն, որ ես և որ էիր, և սուրբ ես, որ այսպիսի գառաստաններ ըրիր. 6-Վասն զի անոնք սուրբերուն ու մարգարէներուն արիւնը թափեցին. և գուն անոնց արիւն խմել տուիր, քանզի արժանի են:

7-Եւ սեղանէն լսեցի՝ որ կ'ըսէր, Այո Ամենակալ Տէր Աստուած, քու գառաստաններդ արդար ու ճշմարիտ են:

8 - Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակը արեւին վրայ թափեց: 9 - Ու անոր զօրութեան արուեցաւ որ խորշակահար բնէ մարդիկը կրակով. և աստիկ աաքէն խորշակահար եղան մարդիկ, և հայհոյեցին Աստուծոյ անունը, որ այս հարուածներուն վրայ իշխանութիւն ունի. ու չապաշխարեցին որ անոր փառք տան:

10 - Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակը գազանին աթուղին վրայ թափեց, ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ. և ցաւէն լեզուներին կը ծամէին. 11 - Ու երկինքի Աստուածը հայհոյեցին իրենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճառաւ. ու իրենց գործերէն չապաշխարեցին:

12 - Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակը մեծ գետին, Եփրատի, վրայ թափեց, ու անոր ջուրերը ցամքեցան, որպէս զի արեւելքի թագաւորներուն ճամբան պատրաստուի: 13 - Եւ տեսայ որ վիշապին բերնէն ու գազանին բերնէն և սուա մարգարէին բերնէն երեք պիղծ ոգիներ ՚Ելլէին գորտերունման: 14 - Վասն զի անոնք դեւերու ոգիներ են՝ որ նշաններ կ'ընեն, քու բոլոր աշխարհի թագաւորներուն կ'երթան, որպէս զի զանոնք Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուանը պատերազմին համար ժողովեն: 15 - (Ահա գողի պէս կու գամ. երանի՛ անոր որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պահէ, որպէս զի մերկ չպտրտի ու իր ամօթը երևնայ.) 16 - Եւ զանոնք տեղ մը ժողովեցին, որ Եբրայեցիներէն Արմազեդոն կ'ըսուի:

17 - Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակը օդին վրայ թափեց, ու երկինքի տաճարէն, աթուղէն, մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով, Եղաւ: 18 - Եւ քիփայլակներ ու ձայներ և որոտումներ՝ եղան ու մեծ երկրաշարժ մը եղաւ, այնպէս որ մարդոց երկրի վրայ ըլլալէն ի վեր այնպիսի մեծ երկրաշարժ մը եղած չէր: 19 - Եւ մեծ քաղաքը

17 - Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակը օդին վրայ թափեց, ու երկինքի տաճարէն, աթուղէն, մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով, Եղաւ: 18 - Եւ քիփայլակներ ու ձայներ և որոտումներ՝ եղան ու մեծ երկրաշարժ մը եղաւ, այնպէս որ մարդոց երկրի վրայ ըլլալէն ի վեր այնպիսի մեծ երկրաշարժ մը եղած չէր: 19 - Եւ մեծ քաղաքը

*Ո՛հ, ու ըրիչ մը լսեցի

*Ո՛հ, ու ըրիչ մը լսեցի
†Ո՛հ, ու երկրի և
‡Ո՛հ, ձայներ և որոտումներ ու փայլակներ

երեք մաս եղաւ, ու ազգերուն քաղաքները կործանեցան, և մեծ Բաբելոնը Աստուծոյ առջև յիշուեցաւ, որպէս զի իր աստիկ բարկութեան գիննին գաւաթը անոր տայ: 20 - Եւ ամէն կղզի փախաւ, ու լեռները չգանուեցան: 21 - Եւ խոշոր կարկուտ գրեթէ տաղանդի մը կշիւքով երկինքէն կ'իջնէր մարգոց վրայ. ու մարգիկ հայհոյեցին զԱստուած կարկուտին հարուածին համար, վասն զի խիստ մեծ էր այն հարուածը:

ԳԼ. ԺԷ

Եւ եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը եկաւ, ու ինծի հետ խօսեցաւ՝ ըսելով, Եկուք, ու քեզի ցուցնեմ այն մեծ պոռնիկին գատասանը, որ շատ ջուրերու վրայ կը նստի. 2 - Որու հետ երկրի թագաւորները պոռնկեցան, ու երկրի բնակիչները անոր պոռնկութեան գիննովը գինովցան: 3 - Եւ զիս «—» անապատը տարաւ հոգիով. ու տեսայ կին մը՝ որ կարմիր գազանի մը վրայ նստեր էր. և այն գազանը լեցուն էր հայհոյութեան անուններով, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունէր: 4 - Եւ կինը ծիրանի ու կարմիր հագած էր, և զարդարուած էր սակիով ու պատուական քարերով և մարգարիտներով, և իր ձեռքը սակիէ գաւաթ մը ունէր պղծութիւններով ու իր պոռնկութեանը անմաքութիւններով լեցուն. 5 - Եւ անոր ճակատին վրայ անուն մը գրուած էր. Խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկներուն ու երկրի պղծութիւններուն մայրը: 6 - Եւ տեսայ այն կինը որ սուրբերուն արիւնովը ու Յիսուսի վկաներուն արիւնովը գինովցած էր. ու երբ տեսայ զանիկա, մեծ զարմանքով զարմացայ: 7 - Եւ հրեշտակը ինծի ըսաւ, Ինչո՞ւ զարմացար. ես քեզի ըսեմ՝ այն կնոջ խորհուրդը, ու այն գազանին՝ որ զանիկա իր վրայ կը կրէ, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունի: 8 - Այն գազանը զոր տեսար, կար ու չկայ, և անգունդէն ելլելու ու կորուստը երթալու վրայ է. ու երկրի վրայ բնակողները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր կենաց գիրքին մէջ գրուած չեն, պիտի զարմանան երբ տեսնեն այն գազանը թէ կար ու չկայ,

*Թէ և կայ: 9 - Հոս պէտք է իմաստութիւն ունեցող միտք մը. այն եօթը գլուխը եօթը լեռներ են, ուր կինը անոնց վրայ կը նստի. և եօթը թագաւորներ են. 10 - Հինգը ինկած են, մէկը կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, ու երբ գայ՝ քիչ ատեն պիտի մնայ: 11 - Եւ այն գազանը որ կար ու չկայ, անիկա ալ ութերորդ է, ու եօթնէն է, ու դէպ ի կորուստ կ'երթայ: 12 - Եւ տասը եղջիւրը զորոնք տեսար՝ տասը թագաւորներ են, որոնք դեռ թագաւորութիւն աւած չեն, հապա գազանին հետ մէկ ժամու չափ թագաւորներու պէս իշխանութիւն կ'աւանդեն: 13 - Անոնք մէկ կամք ունին, ու իրենց զօրութիւնը և իշխանութիւնը գազանին կու տան: 14 - Ասոնք Գառնուկին հետ պիտի պատերազմին. և Գառնուկը անոնց պիտի յաղթէ, քանզի անիկա տէրերուն Տէրն է ու թագաւորներուն թագաւորը. և անոր հետ եղողները կանչուած ու ընտրուած և հաւատարիմ են: 15 - Ու ըսաւ ինծի, Այն ջուրերը զորոնք տեսար, որոնց վրայ պոռնիկը նստեր էր, ժողովուրդներ են ու բազմութիւններ և ազգեր ու լեզուներ: 16 - Եւ տասը եղջիւրները զորոնք գազանին վրայ տեսար, անոնք պիտի առեն պոռնիկը, ու զանիկա ամոյի ու մերկ պիտի ընեն, և անոր մարմինը պիտի ուտեն, ու զանիկա կրտկով այրեն: 17 - Վասն զի Աստուած անոնց սրտին մէջ դրաւ որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ըլլան, և իրենց թագաւորութիւնը գազանին տան, մինչև Աստուծոյ խօսքերը կատարուին: 18 - Եւ կինը զոր տեսար, այն մեծ քաղաքն է, որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ:

ԳԼ. ԺԸ

Եւ ասկէ ետքը [ուրիշ] հրեշտակ մը տեսայ որ երկինքէն կ'իջնէր, և մեծ իշխանութիւն ունէր, ու երկիր անոր փառքէն լուսաւորուեցաւ: 2 - Եւ Կորուստը ձայնով ազաղակեց՝ ըսելով, Ինչա՞ւ, ինչա՞ւ մեծ Բաբելոն, և դեերու բնակարան եղաւ, ու բոլոր պիղծ սգիներու արգելանոց, և բոլոր պիղծ ու ա-

*Ո՛հնէ, և մօտ է
 †Ո՛հնէ, զօրութեամբ՝ մեծ

տելի թուչուններու վանդակ. 3-Վասն զի անոր կատաղի պռունկութեանը գինիէն խմեցին բոլոր ազգերը, ու երկրի թագաւորները անոր հետ պռունկեցան, և երկրի վաճառականները անոր չափազանց վեղխութեմէն հարստացան : 4 - Ու երկինքէն ուրիշ ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Ելէք ատոր մէջէն, իմ ժողովուրդս, որպէս զի ատոր մեղքերուն հազարդ չըլլաք, ու ատոր հարուածներէն քաշի՛ն չառնէք. 5-Վասն զի ատոր մեղքերը մինչև երկինք հասան կցուեցան. ու Աստուած ատոր անիրաւութիւնները յիշեց : 6 - Հատուցէք ատոր ինչպէս ինք *հատուց. ու իր գործերուն համեմատ կրկնապատիկ փոխարինեցէք ատոր. այն գաւաթը զոր ինք լեցուց՝ կրկնապատիկ լեցուցէք իրեն : 7 - Արչափ որ փառաւորեց զինք և զեղխութեամբ սպրեցաւ, այնչափ ալ տանջանք և սուգ հատուցէք անոր. վասն զի իր սրտին մէջ կ'ըսէ թէ Ես թագաւորի կը նստիմ, ու որբեւորի չեմ, ու բնաւ սուգ պիտի չտեսնեմ : 8 - Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան ատոր հարուածները, մահ ու սուգ և սով, ու կրակով պիտի այրի. վասն զի հզօր է Տէր Աստուած որ զանրկա դատեց : 9 - Ու երկրի թագաւորները, որ ատոր հետ պռունկեցան ու հեշտացան, պիտի լան ու կոծեն ատոր վրայ երբ ատոր հրկիզութեանը ծուխը տեսնեն. 10 - Եւ ատոր տանջանքին վախէն հեռուն պիտի կայնին ու ըսեն, Վա՛յ, վա՛յ +եպի, մեծ Բարեւոյն քաղաք, հզօր քաղաք, որ մէկ ժամու մէջ եկաւ քու դատաստանդ : 11 - Ու երկրի վաճառականները պիտի ողբան ու սուգ ընեն անոր վրայ. վասն զի ալ մէկը ծախու չառներ անոնց վաճառքը : 12 - Ասկիի, ու արծաթի, և արծառական քարերու, ու մարգարիտներու, և բեհեզի, ու ծիրանիի, և մետաքսի, ու որգան կարմիրի վաճառքը, և ամէն խունկի փայտերը, ու ամէն փղոսկրեայ ամանները, և ամէն պատուական փայտէ ու պղնձէ և երկաթէ ու մարմարիոնէ ամանները, 13 - Եւ կինամանը, [ու ամամանը] և խունկերը, ու անուշահոտ իւզը, ու կնդրուկը, և գինին, ու ձէթը, և նաշիհ, ու ցորենը, և արջառները, ու ոչխարները, և ձիերը, ու

կառքերը, և մարմինները ու մարդոց հոգիները : 14 - Եւ քու հոգիիդ ցանկացած պատուները քեզմէ գացին, ու բոլոր շքեղ ու փայլուն բաները քեզմէ կորսուեցան, և ա՛լ բնաւ պիտի չգտնես զանոնք : 15 - Այս բաներուն վաճառականները, որոնք անկէ հարստացած էին, հեռուն պիտի կայնին անոր տանջանքին վախէն՝ լալով ու սուգ ընելով, 16 - Ու պիտի ըսեն, Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք, որ բեհեզ ու ծիրանի և որգան կարմիր հագած էիր, ու ոսկիով և պատուական քարերով ու մարգարիտներով զարդարուած էիր. 17 - Վասն զի այնքան հարստութիւնը մէկ ժամու մէջ փճացաւ : Ու ամէն նաւավարները, և այն ամէնը որ նաւով տեղ տեղ կ'երթան, ու նաւատարները և որոնք որ ծովու մէջ կը բնակին, հեռուն կայնեցան. 18 - Եւ տեսնելով անոր հրկիզութեան ծուխը՝ կ'աղաղակէին՝ ըսելով, Ո՞վ նման է այս մեծ քաղաքին. 19 - Ու իրենց գլուխներուն վրայ հող ցանեցին, և լալով ու սուգ ընելով՝ կ'աղաղակէին՝ ըսելով, Վա՛յ, վա՛յ այն մեծ քաղաքին, որուն մէջ իր պատուականութեմէն հարստացան ամէնը որոնք նաւերունէին ծովուն վրայ. վասն զի մէկ ժամու մէջ ամայացաւ : 20 - Աւրախացէք անոր վրայ, երկինք ու սուրբ աւուրքեայներ և մարգարէներ, որ Աստուած ձեր վրէժը անկէ սուաւ : 21 - Եւ զօրաւոր հրեշտակ մը քար մը սուաւ աղօրիքի մեծ +արի նման, ու ծովը ձգեց՝ ըսելով, Այսպէս ուժով վար պիտի ձգուի Բարեւոյն մեծ քաղաքը, ու ա՛լ պիտի չգտնուի : 22 - Եւ քնարահարներուն ու երաժիշտներուն և արնգահարներուն ու փողահարներուն ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. և արհեստի վարպետ մը ա՛լ պիտի չգտնուի քու մէջդ. ու աղօրիքի՛ն ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. 23 - Եւ ճրագին լոյսը ա՛լ պիտի չերեւոյքու մէջդ. ու փետային ձայնը և հարսին ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. քանզի քու վաճառականներդ երկրի մեծամեծներն էին. վասն զի քու կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորեցան : 24 - Եւ մարգարէներուն ու սուրբերուն ու երկրի վրայ բոլոր սպաննուածներուն արիւնը անոր մէջ գըլանուեցաւ :

*Ո՞ւրիշ, ձեզի հատուց

ԳԼ. ԺԹ

Եւ անկէ ետքը շատ բազմութեան մեծ ձայն մը լսեցի երկինքը՝ ըսելով, Ալէլուիա: փրկութիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր *Աստուծոյն. 2 - Վասն զի ճշմարիտ ու արդար են անոր դատաստանները, քանզի դատեց այն մեծ պառնիկը, որ իր պառնկութիւնովը երկիրը սպախանեց, ու իր ծառաներուն արեան վրէժը անոր ձեռքէն պահանջեց: 3 - Եւ կրկին անգամ՝ ըսին, Ալէլուիա. ու անոր ծուխը յաւիտեանս յաւիտենից կ'ելլէ: 4 - Եւ քսանըջորս երէցները ու չորս կենդանիները ինկան ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ՝ որ աթոռը կը նստի, ըսելով, Ամէն, Ալէլուիա: 5 - Եւ աթոռէն ձայն մը ելաւ՝ ըսելով, Մեր Աստուծոյն օրհնութիւն սուէք, իր բոլոր ծառաները, ու դուք որ իրմէ կը վախնաք, պզտիկներ ու մեծեր: 6 - Եւ լսեցի շատ բազմութեան ձայնի պէս, ու շատ ջուրերու ձայնի պէս, ու սաստիկ որոտումներու ձայնի պէս, որոնք կ'ըսէին, Ալէլուիա, վասն զի [մեր] Ամենակալ Տէր Աստուածը [թագաւորեց. 7 - Խնդանք և ուրախանանք ու փառք տանք անոր, քանզի Գառնուկին հարանիքը հասաւ, ու անոր կինը ինքզինք պատրաստեց: 8 - Եւ իրեն արուեցաւ որ մաքուր ու լուսափայլ բեհեզ հագնի, (քանզի այն բեհեզը սուրբերուն արդարութիւնն է:) 9 - Եւ ինծի ըսաւ, Գրէ. Երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուած են. ու ինծի ըսաւ, Ասոնք են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը: 10 - Ես ալ անոր սօքերուն առջև ինկայ, որպէս զի անոր երկրպագութիւն ընեմ. ու ըսաւ ինծի, Զգուշացիր, մի ընէր. Վասն զի ես ալ քու ծառայակիցդ եմ ու քու եղբայրներուդ՝ որոնք Յիսուսի վկայութիւնը ունին. Աստուծոյ երկրպագութիւն ըրէ. (վասն զի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է:) 11 - Եւ տեսայ երկինքը բացուած. և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւատարիմ՝ ու ճշմարիտ կ'ըսուի, և արդարութեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի.

12 - Եւ անոր աչքերը կրակի բոցի պէս էին, ու անոր գլխուն վրայ շատ [թագեր կային, ու գրուած անուն մը ունէր՝ զոր մէ'կը չգիտեր, բայց միայն ինք. 13 - Եւ արիւնով ներկուած հանդերձ մը հագեր էր. ու անոր անունը Բան Աստուծոյ կ'ըսուի: 14 - Ու երկինքի մէջ եղող զօրքերը անոր ետեւէն կ'երթային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած: 15 - Եւ անոր բերնէն սրած սուր մը կ'ելլէր, որպէս զի անով ազգերը զարնէ. ու ինք երկաթէ գաւազանով պիտի հովուէ զանոնք, ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը գինիին հնձանը ինք պիտի կոխէ: 16 - Եւ իր պատմութեան ձայնին վրայ ու իր ազգրին վրայ գրուած գիր մը ունէր, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐՍՅ ԵՒ ՏԵՐՏԵՐՍԱՆՅ:

17 - Եւ հրեշտակ մը տեսայ, որ արևին մէջ կայներ էր, ու մեծ ձայնով աղաղակեց երկինքի մէջ [թուշող բոլոր թուշուներուն՝ ըսելով, Եկէք, *Աստուծոյ մեծ ընթրիքին՝ ժողովուեցէք, 18 - Որպէս զի ուտէք [թագաւորներուն մարմինները, ու հազարապետներուն մարմինները, զօրաւորներուն մարմինները, ու ձիերուն և անոնց վրայ հեծնողներուն մարմինները, ու ամենուն մարմինները, [թէ՛ աղաաններուն և [թէ՛ ծառաներուն, [թէ՛ պզտիկներուն և [թէ՛ մեծերուն:

19 - Եւ տեսայ գազանը ու երկրի [թագաւորները ու անոնց զօրքերը մէկտեղ ժողովուած պատերազմ ընելու անոր հետ՝ որ ձիուն վրայ հեծեր էր, ու անոր զօրքերուն հետ: 20 - Եւ գազանը բռնուեցաւ, ու անոր հետ սուս մարգարէն՝ որ անոր առջև նշաններ ըրաւ, որոնցմով մուրեցուց գազանին գրոշմը ընդունողները, և անոր պատկերին երկրպագութիւն ընողները. երկուքն ալ ողջ ողջ ծծումբով վառած կրակին լիճը ձգուեցան: 21 - Եւ ուրիշներն ալ սպաննուեցան ձիուն վրայ հեծնողին սուրէն՝ որ իր բերնէն կ'ելլէր, ու բոլոր թուշուները անոնց մարմիններէն կշտացան:

*Ո՛հան+, մեծ Աստուծոյ ընթրիքին

*Ո՛հան+, Տէր Աստուծոյն

ԳԼ. Ի

Եւ հրեշտակ մը տեսայ, որ երկինքէն կ'իջնէր, ու անդուներին բանալին և մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը . 2 - Ու բռնեց վիշապը, այսինքն առաջին օձը, որ Բանասարկուն ու Սատանան է, և կապեց զանիկա հազար տարի . 3 - Ու անդուներ ձգեց զանիկա, և գոցեց ու վրայէն կնքեց, որ ա՛լ չմտրեցնէ ազգերը՝ մինչև հազար տարին լմնայ, և անկէ ետքը պէտք է որ արձակուի անիկա քիչ մը ժամանակ:

4 - Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ . և անոնց դատաւորութիւն տրուեցաւ . նաև Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ խօսքին համար զլիսատուածներուն հոգիները քեռայ, և զանոնք որ երկրպագութիւն չըրին գազանին, ոչ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չընդունեցին . և ապրեցան ու Քրիստոսի հետ հազար տարի թագաւորեցին: 5 - Եւ ուրիշ մեռելները չապրեցան մինչև հազար տարին կատարուեցաւ . ասիկա է առաջին յարութիւնը: 6 - Եւ քանիցի և սուրբ է ան որ առաջին յարութեանը մէջ բաժին ունի . ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի, հապա անոնք Աստուծոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան, ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն:

7 - Եւ հազար տարուան լրանալուն՝ պիտի արձակուի Սատանայ իր բանալն . և պիտի ելլէ ու մտրեցնէ երկրի չորս անկիւնները եղող ազգերը, Գոգը ու Մագոգը, որպէս զի զանոնք պատերազմի ժողովէ, որոնց համբանքը ծովու աւազին չափ է: 8 - Ու երկրի ընդարձակութեանը մէջ ելան, և սուրբերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին: 9 - Եւ երկինքէն Աստուծակէ կրակ իջաւ ու սպառեց զանոնք . և Բանասարկուն որ զանոնք մտրեցուց, ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ, ուր էր գազանը, 10 - Եւ սուտ մարգարէն . ու պիտի չարչարուին ցորեկ ու գիշեր յաւիտեանս յաւիտենից:

11 - Եւ մեծ ճերմակ աթոռ մը տեսայ, ու անոր վրայ մէկը նստած, որուն երեսէն երկիր ու երկինք փախան,

և տեղ չգտնուեցաւ անոնց: 12 - Եւ տեսայ պղտիկ ու մեծ մեռելները, որոնք *Աստուծոյ առջև կայնած էին . ու գիրքերը բացուեցան, և ուրիշ գիրք մը բացուեցաւ, այսինքն կենաց գիրք . և գիրքերուն մէջ գրուածներէն մեռելները դատուեցան իրենց գործերուն համեմատ: 13 - Եւ ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին . ու ամէն մէկը իրենց գործերուն համեմատ դատուեցան: 14 - Եւ մահը ու դժոխքը կրակի լիճին մէջ ձգուեցան . ասիկա է երկրորդ մահը: 15 - Եւ սվ որ կենաց գիրքին մէջ գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ:

ԳԼ. ԻԱ

Եւ նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ . վասն զի առաջին երկինքը ու առաջին երկիրը անցան, և ա՛լ ծով չկար: 2 - †Եւ սուրբ քաղաքը, նոր Երուսաղէմը, տեսայ, որ երկինքէն Աստուծակէ կ'իջնէր, իր երկանը համար զարդարուած հարսի մը պէս պատրաստուած: 3 - Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խորանը մտրող մէջ, ու անիկա անոնց հետ պիտի բնակի . և անոնք անոր ժողովուրդը պիտի ըլլան, և Աստուծոյ անոնց հետ պիտի ըլլայ էֆէւ անոնց Աստուածը: 4 - Եւ քիչք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, և ա՛լ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետև . վասն զի առաջուան բաները անցան: 5 - Եւ ան որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա ամէն բաները նոր կ'ընեմ . ու ըսաւ ինծի, Գրէ, վասն զի այս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են: 6 - Նաև ըսաւ ինծի, Եղաւ . ես եմ Ալֆա և Օմէղա, Սկիզբը ու Վերջը . ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց ջուրին աղբիւրէն: 7 - Ան որ կը յաղթէ, յամէն բաները պիտի ժառանգէ . ու ես անոր Աստուած պիտի ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլլայ: 8 - Բայց վախկոտներուն, ու անհաւատներուն, և պիղծերուն,

*Ո՛հնչ, աթոռին
 †Ո՛հնչ, Եւ ես Յովհաննէս
 ‡Ո՛հնչ, Աստուած ||Ո՛հնչ, այս

ու մարդասպաններուն, ու պռնիկներուն, և կախարդներուն, ու կռապաշաններուն, և բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մասը:

9 - Եւ եօթը վերջին հարուածներով լեցուն եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը ինծի եկաւ, և ինծի հետ խօսեցաւ ու ըսաւ, Եկուր ցուցնեմ քեզի հարար, Գառնուկին կինը: 10 - Եւ հոգիով մեծ ու բարձր լեռան մը վրայ տարաւ զիս, և ցուցուց ինծի սուրբ Երուսաղէմ՝ քաղաքը, որ երկինքէն Աստուծոյ կ'իջնէր: 11 - Ու Աստուծոյ փառքը ունէր, և անոր լուսաւորութիւնը խիստ պատուական քարի նման էր, տկնվանիի երևութով յասպիս քարի պէս: 12 - Եւ անոր պարիսպը մեծ ու բարձր էր, և տասուերկու դռներ ունէր, ու դռներուն վրայ տասուերկու հրեշտակներ կային, և դռներուն վրայ անուններ գրուած էին՝ այսինքն Խորայէլի որդիներուն տասուերկու ցեղերուն անունները: 13 - Արևելեան կողմէն երեք դուռ, ու հիւսիսային կողմէն երեք դուռ, և հարաւային կողմէն երեք դուռ, ու արեւմտեան կողմէն երեք դուռ: 14 - Եւ քաղաքին պարիսպը տասուերկու հիմեր ունէր, ու անոնց վրայ Գառնուկին տասուերկու առաքեալներուն [տասուերկու] անունները գրուած էին: 15 - Եւ ինծի հետ խօսողը ձեռքը սակիէ եղէզ մը ունէր, որպէս զի անո՛ւ քաղաքը և անոր դռները ու անոր պարիսպները չափէ: 16 - Եւ քաղաքը քառակուսի էր, ու անոր երկայնութիւնը լայնութեանը չափ էր, և քաղաքը անո՛ւ եղէգով տասուերկու հազար սապարէզ չափեց, անոր երկայնութիւնը ու լայնութիւնը և բարձրութիւնը հաւասար էին: 17 - Եւ անոր պարիսպը հարիւր քառասուներորս կանգուն չափեց, մարդու չափով, այսինքն հրեշտակին չափով: 18 - Եւ անոր պարսպին շինուածքը յասպիս քարէ էր, ու քաղաքը զուտ սակի էր մաքուր սպակիի նման: 19 - Եւ քաղաքին պարսպին հիմերը ամէն քիւսի պատուական քարերով զարդարուած էին, առաջին հիմը յասպիս էր, երկրորդը՝

չափիւղայ, երրորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխա, 20 - Հինգերորդը՝ եղնգնաքար, վեցերորդը՝ սարգիսն, եօթներորդը՝ սակեքար, ութերորդը՝ բիւրեղ, իններորդը՝ տպագիսն, տասներորդը՝ քրիստապրատոս, մեասասներորդը՝ յակինթ, երկասասներորդը՝ ամեթիստ: 21 - Եւ տասուերկու դռները տասուերկու մարգարիտ էին, ամէն մէկ դուռը մէյմէկ անո՛ւ մարգարիտէ էր, ու քաղաքին հրապարակը մաքուր սակի էր [Թափանցիկ սպակիի նման]: 22 - Եւ անոր մէջ տաճար չուսայ, վասն զի Տէր Աստուծո՛ւ Ամենակալն ու Գառնուկը անոր տաճարն են: 23 - Եւ քաղաքը արևի ու լուսնի պէտք չունի, որ զանիկա լուսաւորեն, վասն զի Աստուծոյ փառքը զանիկա կը լուսաւորէ, ու անոր ճրագը Գառնուկն է: 24 - Եւ [փրկուած] ազգերը անոր լուսովը պիտի քաղեն, ու երկրի [Թագաւորները իրենց փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն]: 25 - Եւ անոր դռները ցորեկը պիտի չգոցուին. (վասն զի հոն գիշեր պիտի չըլլայ.) 26 - Եւ ազգերուն փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն: 27 - Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը, հապա միայն անոնք՝ որ Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած են:

ԳԼ ԻԲ

Եւ ինծի կենաց ջուրի շքեա մը ցուցուց սկնվանիի պէս պայծառ, որ կ'ելլէր Աստուծոյ ու Գառնուկին աթոռէն: 2 - Եւ այն քաղաքին հրապարակին մէջ, ու այն գետին մէկ կողմէն ու միւս կողմէն կենաց ծառ կար՝ որ տասուերկու կերպ պտուղ կը բերէր, ու ամէն ամիս իր պտուղը կու տար, և այն ծառին տերևները՝ հեթանոսներուն բժշկութիւն կ'ըլլար: 3 - Եւ ա՛լ բնաւ նզովք պիտի չըլլայ, ու անոր մէջ պիտի ըլլայ Աստուծոյ ու Գառնուկին աթոռը, և անոր ծառանները պիտի պաշտեն զանիկա: 4 - Եւ անոր երեսը պիտի տեսնեն, ու անոր անունը իրենց ճակատներուն վրայ պիտի ըլլայ:

*Ո՛հնէ, մեծ քաղաքը

*Ո՛հնէ, անմաքրութիւն ընող
†Ո՛հնէ, մաքուր գետ

5 - Եւ հոն ա՛լ գիշեր պիտի ըլլայ, և ճրագ ու արևու լոյս պէտք չէ. քանզի Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք, և յաւիտեանս յաւիտենից պիտի թագաւորեն :

6 - Եւ ըսաւ ինծի, Այս խօսքերը հաւատարիմ են ու ճշմարիտ. և սուրբ մտորգարէներուն՝ Տէր Աստուածը իր հրեշտակը զրկեց՝ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ : 7 - Ահա ես շուտով կու գամ. երանի՛ անոր որ կը պահէ այս գիրքին մտորգարէութեան խօսքերը :

8 - Եւ ես Յովհաննէս լսեցի ու տեսայ այս բաները. և երբ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ՝ այն հրեշտակին ոտքերուն առջև՝ որ այս բաները ինծի կը ցուցնէր : 9 - Եւ ըսաւ ինծի, Զգուշացիր, մի ընէր. վասն զի ես քու կին ու քու եղբայրներուդ, մտորգարէներուն, և այս գիրքին խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ. Աստուծոյ երկրպագութիւն ըրէ :

10 - Եւ ըսաւ ինծի, Այս գիրքին մտորգարէութեան խօսքերը մի կնքեր, վասն զի ժամանակը մօտ է : 11 - Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ, և ան որ արգար է՝ ալ արգար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ : 12 - Ահա ես շուտով կու գամ, և իմ վարձքս ինծի հետ է՝ ամէն մէկուն իր գործին համեմատ հատուցանելու : 13 - Ես եմ՝ Ալֆա և Օմէղա, Առաջինը ու Վերջինը, Սկիզբը և Վախճանը : 14 - Երանելի են ա-

նոնք որ անոր պատուիրանքները կը կատարեն, որպէս զի իշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ, և դռներէն ներս քաղաքը մտնեն : 15 - Բայց դուրս գիտի հաշտութիւնները ու կախարհները և պաշտօնները ու սպանութիւն ընողները և կռապաշտները ու այն ամէնը որ ստութիւն կը սիրէ և կ'ընէ :

16 - Ես Յիսուս իմ հրեշտակս զրկեցի՝ այս բաները ձեզի վկայելու եկեղեցիներուն մէջ. ես Կաթիլի արմատը ու ցեղն եմ, ու առաւուսեան պայծառ սատարը : 17 - Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկուր. և ան որ կը լսէ՝ թող ըսէ, Եկուր. ու ան որ ծարաւ է՝ թող գայ, և ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ :

18 - Ի՞նչ կը վկայեմ ամէնուն՝ որ այս գիրքին մտորգարէութեան խօսքերը կը լսէ. եթէ մէկը ասանց վրայ բան մը աւելցնէ, Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցնէ այն հարուածները որոնք այս գիրքին մէջ գրուած են : 19 - Եւ եթէ մէկը այս մտորգարէութեան գիրքին խօսքերէն բան մը պակսեցնէ, Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցնէ կենաց քաղաքէն և սուրբ քաղաքէն՝ որ այս գիրքին մէջ գրուած են : 20 - Այս բաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ, Այո, շուտով կու գամ ես : Ամէն, Եկուր, Տէր Յիսուս : 21 - Մեր Տէրօջր Յիսուս Քրիստոսի շնորհքը Տէր ամէնուն՝ հետ ըլլայ : Ամէն :

*Ո՛հ, մտորգարէից հոգիներուն

*Կո՛մ, վրայով +Ո՛հ, Քանզի
+Ո՛հ, ծառէն
||Ո՛հ, և այն բաներէն որ
§Ո՛հ, բոլոր սուրբերուն



ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԷՋ ՅԻՇՈՒԱԾ ՉԱՓԵՐՈՒՆ, ԿՇԻՌՆԵՐՈՒՆ ԵՒ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ



1. ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

| | Լիտրայե և 100-րդ | Մեթր և 100-րդ |
|---------------------------------|------------------|---------------|
| Ուղուկ, չորս մատնաչափ, | 0 . 12 | 0 . 03 |
| Թիզ, 3 ուղուկ, | 0 . 36 | 0 . 23 |
| Կանգուն, 2 թիզ, | 0 . 71 | 0 . 46 |
| Գրկաչափ, 4 կանգուն, | 2 . 85 | 1 . 85 |
| Եզեկիէլի եղէգը, 6 կանգուն, | 4 . 27 | 2 . 77 |
| Ասպարէզ, 100 գրկաչափ, | 284 . 62 | 184 . 94 |
| Շաքաթ օրուան ճամբայ, 6 ասպարէզ, | 1,707 . 71 | 1,109 . 62 |
| Մշոն, 8 ասպարէզ, | 2,276 . 95 | 1,479 . 50 |

2. ՀԵՂԱՆԻԹՈՑ ՉԱՓԵՐ*

| | Օգիտ և 100 | Լիտր և 100-րդ |
|------------------------|------------|---------------|
| Ճաշակ, | 0 . 100 | 0 . 32 |
| Հիմէն, 12 ճաշակ, | 3 | 3 . 83 |
| Մար, 6 Հիմէն, | 18 | 22 . 97 |
| Քոռ կամ խօմէր, 10 մար, | 180 | 229 . 68 |

3. ԱՐՄՏԵԱՅ ՉԱՓԵՐ*

| | Օգիտ և 100 | Լիտր և 100-րդ |
|---|------------|---------------|
| Կապիճ, | 1 | 1 . 27 |
| Թմէր, կամ տասանորդ, արդուին 10երորդ մասը, | 1 . 320 | 2 . 30 |
| Գրիւ, 6 կապիճ, | 6 | 7 . 65 |
| Արդու, 3 գրիւ, | 18 | 22 . 97 |
| Քոռ կամ խօմէր, 10 արդու, | 180 | 229 . 68 |

4. ԿՇԻՌՆԵՐ

| | Օգիտ և 100-րդ | Կրամ և 100-րդ |
|--------------------|---------------|---------------|
| Կերատ, | 0 . 23 | 0 . 71 |
| Սիկղ, 20 կերատ, | 4 . 68 | 14 . 25 |
| Մնաս, 100 սիկղ, | 1 . 46 . 83 | 1,425 . 51 |
| Տաղանդ, 3000 սիկղ, | 33 . 206 . 10 | 42,765 . 50 |

5. ԵՐԿԱՅԵՑԻՈՑ ԱՐԾԱԹ ՈՒ ՈՍԿԻ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿՇԻՌՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ

ԱՐԾԱԹԻ

| | Ղրլ. Փր. Գրանտ և 100-րդ | |
|---------|-------------------------|------------|
| Սիկղ, | 12 . 24 | 2 . 86 |
| Մնաս, | 1,260 . 16 | 286 . 46 |
| Տաղանդ, | 37,812 . 20 | 8,593 . 75 |

ՈՍԿԻՈՑ

| | | |
|---------|-------------|------------|
| Սիկղ, | 301 . 27 | 45 . 83 |
| Մնաս, | 20,166 . 27 | 4,588 . 33 |
| Տաղանդ, | 605,000 | 137,500 |

6. ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ

| | Ղրլ. Փր. և 100-րդ | Պրանտ և 100-րդ |
|------------------------|-------------------|----------------|
| Ղումայ, | 1 . 57 | 0 . 91 |
| Նաքարակիտ, 2 Ղումայ, | 3 . 15 | 0 . 02 |
| Դանկ, 4 նաքարակիտ, | 12 . 60 | 0 . 07 |
| Դանկեկան, 10 դանկ, | 3 . 06 | 0 . 72 |
| Երկդրամեան, 2 դանկեկան | 6 . 12 | 1 . 43 |
| Սատեր, 4 դանկեկան, | 12 . 24 | 2 . 86 |
| Մնաս, 100 դանկեկան, | 315 . 00 | 71 . 59 |

* Յիշեալ չափերը, յատկապէս հեղանիւթոց և արմուեաց, ոմանք աւելի և ոմանք պակաս կը հաշուեն:

